

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (նախագահ),
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ (փոխնախագահ-գլխ. խմբագիր),
ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՆՈՐԱՅՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ,
ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ,
ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ,
ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ, ՎԻՈԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ, ՀՐԱՆՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ԱՀՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ, ՅՈՒՐԻ ՀՈՒՔՈՒՐՅԱՆ, ՅՈՒՐԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ,
ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ,
ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ.
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ԱՅ
ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐՔԱՐՎԵՍՏ

Գլխավոր խմբագիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ԳԻՏԱԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՍՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ (պատ. քարտուղար),
ԷՍԹԵՐ ԽԱՆԻԿՅԱՆ, ԷԼՄԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ (հատորի պատասխանատուներ),
ԼՈՒԻԶԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆ,
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ՀԱՅԿԱՆՈՒՀ ՂԱԶԱՐՅԱՆ, ԿՈՐՅՈՒՆ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ,
ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ, ՎԱԼԻԴԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ԳԱԳԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 002 : 030
ԳՄԴ 76.11 + 92
Հ 240

Տպագրված է պետական պատվերով

Հ 240 Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան:
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, -Եր., Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2015: 1120 էջ: Պատկերազարդ:

ՀԱՏՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ

Պատասխանատու քարտուղար՝ Հասմիկ Գուլակյան

Լեզվի և գրականության խմբագրությունը
Էսթեր Խանիկյան (վարիչ), գիտխմբագիրներ՝ Էլմիրա Մարգարյան, Աշոտ Գաբրիելյան, Արուսյակ Ղարիբյան, Սահակ Սահակյան, Դավիթ Մարգսյան

Արվեստի և ճարտարապետության խմբագրությունը
Վալիդա Մելքումյան (վարիչ), գիտխմբագիրներ՝ Լուիզա Առաքելյան, Մարինե Գրիգորյան

Բառացանկի, մատենագիտության և սրբագրության բաժինը
Գայանե Դրացյան (վարիչ), Հռիփսիմե Գրիգորյան (բառացանկ-գիտխմբագիր), Ժանետ Սարգսյան (մատենագետ-գիտխմբագիր), Օֆելյա Միքայելյան (ոճաբան-գիտխմբագիր)

Համակարգչային բաժինը
Աննա Ղազարյան (վարիչ), Մարիամ Աբոյան, Գայանե Աղամալյան, Վահե Այվազյան, Մարինե Բեյբության, Աղավնի Ժամկոչյան, Անահիտ Յայլոյան

Պատկերների մշակումը՝ Անդրանիկ Գրիգորյանի

Անվանաթերթը՝ Արա Բաղդասարյանի

Կազմը՝ Արամ Ուռուտյանի

Տեքստը շարվել է Էդիկ Ղաբուզյանի «GHEA Narek Serif» տառատեսակով:

ISBN 978-5-89700-042-5

ՀՏԴ 002 : 030
ԳՄԴ 76.11 + 92

© Հայկական հանրագիտարան. հրատ., 2015

ՀԱՅ ԳՐՔԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՎԵՐԸՆԹԱՑԸ

Մեսրոպյան գրի հայտնագործումով՝ 1600 տարուց ավելի սկսվել է հայ ժողովրդի գրավոր մշակույթի պատմությունը: Սկիզբ առնելով մեզ համար ճակատագրական մի ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտություն առաջացավ թարգմանելու Սուրբ գիրքն ու մայրենի լեզվով քարոզելու քրիստոնեությունը, հայոց գիրը դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնությունն ամբողջացնող, ազգային նկարագրի կողմնորոշիչները սահմանող և ինքնատիպ գրական լեզվի, գրականության, արվեստի ու մշակույթի ստեղծման հզոր գործոն: Նախ թարգմանվեց Աստվածաշունչը, որով, ըստ էության, սկիզբ առավ ձեռագիր մատյանների ստեղծման մի գործընթաց, որը հայ մարդուն ուղեկցեց մինչև XIX դարի կեսերը:

Չևավորվեցին գրչատներ, ասպարեզ եկան մատյաններ գրող ու ընդօրինակող վարպետներ՝ գրիչներ, գրանյութ (մագաղաթ, հետագայում՝ նաև թուղթ) պատրաստողներ, որոնք առավելագույնն արեցին (հաճախ՝ վանքերի խցերում՝ մոմի կամ ճրագի լույսի տակ) գրի լույսը տարածելու համար:

Ձեռագիր մատյանների զարգացման հաջորդ փուլը դրանց պատկերազարդումն էր, որը վերածվեց արվեստի յուրահատուկ բնագավառի՝ մանրանկարչության, ձևավորվեց մանրանկարիչների մի փաղանգ (Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Սիմիկ և ուրիշներ), որոնց ստեղծած մանրանկարները, լինելով ձեռագիր մատյանների պատկերազարդման լավագույն ստեղծագործություններ, արվեստի կատարյալ նմուշներ են: Զարգացավ նաև մատյանների կազմման արվեստը՝ կազմարարությունը. կազմարար-վարպետների առանձին գործեր (Ավետարանների, հայ պատմիչների երկերի և այլ կազմեր) նույնպես արվեստի գլուխգործոցներ են:

Սույն հանրագիտարանում, պատշաճը մատուցելով այս ոլորտի երախտավորներին, ներկայացվել են գրեթե բոլոր բացառիկ (անվանական) ձեռագիր մատյանները, դրանք ընդօրինակող գրիչները, պատկերազարդող մանրանկարիչները՝ իրենց կենսագրության ուշագրավ դրվագներով: Մի շարք ձեռագիր մատյաններ հայ ժողովրդի նման անցել են պայքարի ու մաքառումի ծանր ու դժվար ճանապարհ (վկան՝ «Մշո Ճառընտիր» մատյանի ողիսականը)՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում կամ աշխարհասփյուռ այլ մատենադարաններում իրենց վերջնական հանգրվանը գտնելուց առաջ:

Եվ բոլորովին զարմանալի չէ, որ արաբ նվաճողը Հայաստան արշավելիս ասել է. «Գրքի աշխարհ ենք մտել»: Ահա այդ «գրքի աշխարհում» շրջադարձային եղավ նաև գրատպության մուտքը, որի շնորհիվ հազար տարուց ավելի ստեղծված ինքնուրույն ու թարգմանական գրականությունը նոր շունչ առավ, բազմացվեց և տարածվեց որքան հնարավոր էր շատ ու հեռու:

Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը 1512-13-ին Վենետիկում տպագրեց հայերեն առաջին գրքերը՝ Ուրբաթագիրք, Պարզատումար, Պատարագատետր, Աղթարք, Տաղարան, որոնց հաջորդեցին նոր հրատարակություններ՝ աշխարհի շուրջ 30՝ Հռոմ, Ամստերդամ, Լվով, Նոր Զուղա, Լիվոռնո, Միլան, Կոստանդնուպոլիս, Փարիզ, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա, Մադրաս, Կալկաթա, Թիֆլիս, Բաքու, Շուշի և այլ քաղաքներում:

Հայ պարբերական մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը» (1794-96, խմբագիր՝ Հարություն Շմավոնյան), նույնպես լույս ընծայվեց Հայաստանից դուրս՝ հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում:

Հայկական տպագրության սկզբնավորումից 260 տարի անց տպագրական գործն արմատավորվեց նաև բուն Հայաստանում՝ Վաղարշապատում, որտեղ առաջինը հրատարակվեց այդ գործի ջատագով, Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու «Քբօսարան հոգևոր» գրքույկը: 1870-ական թթ-ին տպագրությունը մուտք գործեց նաև Երևան, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) և Հայաստանի այլ քաղաքներ: Իսկ Հայոց պետականության վերականգնումից (1918) հետո Երևանն աստիճանաբար վերածվեց աշխարհում հայ մշակույթի և տպագրության խոշորագույն կենտրոնի, որտեղ տարեկան տպագրվում են ավելի քան 1,5 հզ. անուն գիրք և 200-ից ավելի պարբերական ու հանդես:

Հայ տպագիր գրքի 500-ամյա պատմական ընթացքը (տպագրվել է շուրջ 130 հզ. անուն գրականություն) պայմանականորեն բաժանվում է 3 փուլի՝ հնատիպ գրքի շրջան՝ 1512–1800, նոր շրջան՝ 1801–1918, և նորագույն շրջան՝ 1918-ից՝ խորհրդային և արդի ենթաշրջաններով:

Սույն հանրագիտարանում առանձին-առանձին ներկայացված են հնատիպ շրջանում հրատարակված գրեթե բոլոր գրքերը (շուրջ 1100 անուն, նաև մեկ կամ մի քանի էջանոց հրովարտակներ, պատկերներ, հատուկ հրատարակություններ և այլն)՝ իրենց մատենագիտական բնութագրերով՝ անկախ բնույթից, բովանդակությունից, ծավալից, հեղինակից և այլ առանձնահատկություններից: Դրանց զգալի մասը, ժամանակին տպագրված լինելով նվազագույն տպաքանակներով, այսօր պահպանվել է ընդամենը մի քանի օրինակով, որոնք մատենագիտական հազվագյուտ նմուշներ են: Բոլոր հնատիպ գրքերը, որպես կանոն, ունեն փայտե կաշեպատ զարդարուն կազմեր, ծավալուն տիտղոսաթերթեր, զարդագիր գլխագրեր, գլխազարդեր, վերջազարդեր ու հիշատակարաններ, ավանդույթ, որ շարունակվել է նաև հետագայում:

Առանձին հոդվածներով ներկայացված են հնատիպ գրքերի հեղինակները (մասամբ՝ նաև օտար), հրատարակիչ-տպագրիչները, որոնք հիմնականում կատարել են նաև խմբագրական ու սրբագրական աշխատանքներ, պատկերափորագիր, տառաստեղծ ու տառաձույլ վարպետները, անձինք, որոնք լրջորեն նպաստել են հայկական գրատպության ու պոլիգրաֆիայի կայացմանը:

Նոր և նորագույն ժամանակների հրատարակություններից առանձին ներկայացված են միայն կոթողային տպագրությունները (բառարաններ, հանրագիտարաններ, մատենաշարեր և այլն), որոնք վաղուց արդեն իրենց ուրույն տեղն ունեն հայ մշակույթի մնայուն արժեքների շարքում:

Հանրագիտարանում բազմաթիվ հոդվածներ կան ՀՀ-ում, ԼՂՀ-ում և Սփյուռքում տպագրված և տպագրվող թերթերի ու հանդեսների, դրանց խմբագիրների ու հրատարակիչների մասին, որոնք նաև ժամանակի երևելիներից են:

Հատորում ներկայացված է նաև հայ գրողների մեծ մասը, որոնք, իրենց ստեղծագործություններից բացի, հայտնի են մշակութալուսավորական, կրթական ու հասարակական գործունեությամբ: Հատուկ ուշադրություն է դարձված բառարաններին, դասագրքերին, դրանց հեղինակներին, հրատարակիչներին ու հրատարակչություններին: Ընդ որում, այդ ամենն արված է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում ու Սփյուռքում գործող հրատարակչությունների, պարբերականների և անձանց լայն ընդգրկումով:

Գրքում որոշակի անդրադարձ կա նաև հայ տպագրության 1912-ի՝ 400-ամյա, և 2012-ի՝ 500-ամյա հոբելյաններին: Առաջինը՝ հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակներին նվիրված հանդիսությունը, կազմակերպվել է Հայոց պետականության բացակայության պայմաններում՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի գլխավորությամբ ու հանդիսապետությամբ՝ Օշական, Էջմիածնում, ինչպես նաև Թիֆլիսում, Կ. Պոլսում, Ս. Պետերբուրգում, ԱՄՆ-ում և այլուր:

Հայ գրատպության 500-ամյակը նշվել է մեծ շուքով ու համահայկական մակարդակով. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն անձամբ գլխավորել է միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, իսկ միջոցառումները համակարգել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը:

2012-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երևանը հռչակել է գրքի համաշխարհային մայրաքաղաք (12-րդը), որտեղ, տոնակատարության շրջանակներում, կանգնեցվել են «Վարք հավերժության» կոթողը (խորհրդանշում է հայուհիների՝ «Սշո Ճառընտիրը» փրկելու պատմությունը) և «Ընթերցողի արձանը» (2013, Խնկո Ապոր անվ. մանկական գրադարանի առջև), Մխիթարյան միաբանությունը ՀՀ սփյուռքի նախարարության հետ թողարկել է «Հայ տպագրություն – 500» հուշամեդալը, աշխարհաբարի է փոխադրվել և բնագրի հետ վերատպագրվել Ուրբաթագիրքը, մի շարք երկրներում հրավիրվել են այդ իրադարձությանը նվիրված գիտաժողովներ, հրատարակվել են գիտական աշխատություններ, կազմակերպվել հայ հնատիպ գրքերի ցուցահանդեսներ (նաև Անթիլիասում, Փարիզում, Մոսկվայում, Թբիլիսիում, ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում և այլուր), տեղի են ունեցել բազմաթիվ ու բազմաբնույթ այլ միջոցառումներ: Առաջին հայատառ գրքի տպագրության օրրան Վենետիկում՝ «Վիտորիանո» թանգարանում և «Մարչյանա» գրադարանում, բացվել է «Մեկ քաղաքակրթության դրոշմը» վերտառությամբ ցուցահանդես, իտալական հայտնի «Սկիրա» հրատարակչությունը լույս է ընծայել հայ քաղաքակրթությանն ու հայատառ գրատպությանը նվիրված գիտական հատոր:

ՀՀ անկախացումով և ԼՂՀ հռչակումով նոր հեռանկար է բացվել հայ գրքի նորովի զարգացման համար, և հայ գրատպությունը շարունակում է իր անխոտոր վերընթացը:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Ա

Ա, հայերեն այբուբենի առաջին տառը, անվանումը՝ «այբ»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 հաստ ուղղաձիգ՝ երկար և դրա աջ կողմում հավասար հեռավորությամբ կարճ ու լայն տարրերից. երկարը ստորին ծայրից՝ հորիզոն., իսկ կարճը 2 ուղղաձիգ նուրբերով միանում է լայնին: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ա, որպես այբուբենի առաջին տառ, նշանակել է մեկ և առաջին, բյուրի նշանով (Ա՝)՝ հազար: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ա–մաս առաջին):

Գրկ. **Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ.,** *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վնտ., 1836:* **Յարութիւնեան Ի.,** *Հայոց գիրը, Թ., 1892:* **Տաշեան Յ.,** *Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վնն., 1898:* **Ղաֆադարյան Կ.,** *Հայկական գրի սկզբնական փեսակները, Ե., 1939:* **Աբրահամյան Ա.,** *Հայկական պալեոգրաֆիա, Ե., 1948:* **Ամատյան Հ.,** *Հայոց գրերը, Ե., 1968:* **Զահուկյան Գ.,** *Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 277–330:*

ԱԲԱՄԵԼԻՔ-ԼԱԶԱՐԵՎԱ (Լազարյան) Աննա Դավթի (ամուսնական ազգանունը՝ Բարատինսկայա, 15.4.1814, Ս. Պետերբուրգ – 25.11.1889, Ս. Պետերբուրգ), թարգմանչուհի: Ծանոթ է եղել Ա. Պուշկինի հետ, որը նրան բանաստեղծություն է ձոնել:


Անգլ., ֆրանս., գերմ. թարգմանել և Եվրոպայում հրատարակել է Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ֆ. Տյուտչևի, Ա. Տոլստոյի, Ն. Նեկրասովի ստեղծագործություններից: Ռուս. է թարգմանել է Յ. Վ. Գյոթեի, Հ. Հայնեի, Ֆ. Շիլլերի գործերից:

ԱԲԳԱՐ ԹՈՒԽԱԹԵՑԻ, **Աբգար Եվդոկացի, Աբգար Սաֆար, Աբգար Դպիր** [մոտ 1520, Թոխաթ/Թոքաթ/Եվդոկիա–մոտ 1572], տպագրիչ, հոգևորական, հաս–քաղ. գործիչ, ծածկագրերի մասնագետ: Իրեն համարել է Արծրունյաց թագավոր. տան շառավիղներից: 1562–ից Հայոց կաթողիկոս Միքայել Ա Սեբաստացու հանձնարարությամբ ազգ–ազատագր. և դավանաբան. հարցերով մեկնել է Հռոմ: Թեպետ այդ առաքելությունը նպատակին չի ծառայել, սակայն նպաստել է հայ տպագրության զարգացմանը: Ա. Թ., Հռոմի Պիոս IV պապից և Վենետիկի Հերոնիմոս Բրիոլի դոժից հայ. գրքեր տպագրելու իրավունք ստանալով, 1565–ին լույս է ընծայել «Խառնայ. փնթուր տումարի...» օրացույցը (1–էջանոց) և առաջին հայ. Սաղմոսարանը (մինչև 1880–ական թթ. համարվել է հայ. 1–ին տպագիր գիրքը, իսկ Ա. Թ՝ առաջին հայ տպագրիչը, բայց հետագայում պարզվել է, որ Ա. Թ. տպագր.





Աբգար Թոխաթեցի



Աբգար Թոխաթեցու *տպագրած Սաղմոսարանի (1565–66, Վնտ.) 1 էջ*

աշխատանքներն սկսելիս ձեռքի տակ ունեցել է ***Հակոբ Մեղապարտի*** տպագրած գրքերը): Այնուհետև Թոխաթեցին տպարանը տեղափոխել է Կ. Պոլիս և Սբ Նիկողայոս եկեղեցում իր որդի ***Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցու*** գործակցությամբ հիմնադրել Կ. Պոլսի հայկ. 1-ին տպարանը, որտեղ տպագրել է ևս 6 գիրք՝ «Փոքր քերականութիւն» (1567), ժամերգությունների համար եկեղեցածիս. Պարզատումար, Ժամագիրք (Պատարագամատոյց), Տօնացոյց, Տաղարան (բոլորը՝ 1568), ծիս. կարգերի և աղոթքների Մաշտոց (1569):

Պահպանվել է հայկ. դավանանքի և ազգ. սովորությունների վերաբերյալ Պիոս պապի առաջարկով Ա. Թ-ու հեղինակած մի գրություն (լատ. թարգմանությամբ):

Գրկ. **Չամչեան Մ.**, *Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786:* **Լէօ**, *Հայկական տպագրութիւն, 2-րդ տպ. փոփոխված և լրց., հ. 1, Թ., 1904:* **Զարդարեան Վ.**, *Յիշատակարան (1512–1933), հ. 5, Կահիրէ, 1939:* **Լեոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012:* **Անասյան Հ.**, *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:*

ԱԲԳԱՐԻՈՍ Իսքանդար Հակոբի (1826, Բեյրութ–1885, Բեյրութ), բանաստեղծ, պատմաբան: Յուհաննա ***Արգարիոսի*** եղբայրը: Սովորել է Բեյրութում, ապա՝ Անգլիայում: Գրել է խոհափիլ. բանաստեղծություններ, պատմագր. աշխատություններ (արաբ.): Հայտնի է «Շահրիար առյուծակերպ անհաղթ արքայի պատմության մասին մտքերի բուրմունք» (1880) դյուցազներգությամբ: Արաբ ժողովրդի պատմությանն ու գրակ-յանն են նվիրված Ա-ի «Արաբների պատմության ասպարեզում ցանկությունների լրումը» (1852), «Արաբ քերթողների դասակարգման գրական ծաղկաստան» (1858), «Հոգու ղղձանքը Անթար Աբսի քերթվածներում» (1864), «Ցանկությունների ճոխացված լրումը» (1867), «Արտասովոր անցուդարձեր Լեռնային Լիբանանի կյանքում» (1869, հայ. հրտ.՝ «Սարսափներու գիրքը», 1933) աշխատությունները: Արժեքավոր են «Խըդիվ Իբրահիմի արժանիքներն ու սխրանքները» (1883) ներբողը, «Հոգու զբոսանք գեղեցկազարդ էջերում» բանաստեղծությունների ժող-ը:

ԱԲԳԱՐԻՈՍ Յուհաննա (Հովհաննես, Ձան) Հակոբի [1832, Բեյրութ–1886, Այթեթ (Լիբանան)], պետ. գործիչ, գրող, թարգմանիչ: Իսքանդար ***Արգարիոսի*** եղբայրը: Եղել է Բեյրութում Անգլիայի հյուպատոսության թարգմանիչը, Եգիպտոսում՝ Հոլանդիայի հյուպատոսը: Գրել է բարոյախրատ. պատմվածքներ և նորավեպեր (արաբ.), կազմել անգլ-արաբ. բառարան (հրտ.՝ 1887):

Գրկ. **Վարժապետեան Ս.**, *Հայերը Լիբանանի մէջ, Բ., 1982:*



Գևորգ Աբգարյանի *«Հայ տպագրության նախապատմություն» (2001, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի փիփղոսաթերթը*

ԱԲԳԱՐՅԱՆ Գևորգ Վահագնի [Վարագի, 14.9.1920, գ. Հոռոմ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–15.5.1998, Երևան], բանասեր, ձեռագրագետ, մատենագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1965): Ավարտել է ԵՊՀ (1946): 1940–98-ին՝ Մատենադարանի ավագ գիտաշխատող:

Հրատարակել է Փավստոս Բուզանդի, Սեբեոսի, Գրիգոր Նարեկացու և ուր. երկեր: «Հայ տպագրության նախապատմություն» (2001) աշխատության մեջ անդրադարձել է հայ գրատպության ձևավորման հարցերին: Լույս են տեսել Ա-ի «Մատենադարան» (1962), «Սեբեոսի «Պատմությունը» և Անանունի առեղծվածը» (1965) աշխատությունները:

Գերմ-ից թարգմանել է հայագիտ. ուսումնասիրություններ:

Գրկ. Գևորգ Աբգարյան: Կենսագրագիտություն (կազմ.՝ Վ. Աբգարյան), Ե., 2005:

ԱԲԳԱՐՈՎԻՉ Կաետան, **Սոլթան Աբգար** [1856, գ. Չեռնյովե (այժմ՝ Ուկրաինայի Իվանո-Ֆրանկովսկի մարզում)–27.7.1909, Տրուսկավեց (այժմ՝ Ուկրաինայի Լվովի մարզում)], հայազգի լեհագիր գրող: Ապրել և ստեղծագործել է Լեհաստանում: Աշխատակցել է «Հողագործ» (լեհ.) ամսագրին:


Լույս են տեսել Ա-ի «Ամուրիների ակումբը» (հ. 1–2, 1892), «Ցարական կայսրությունից» (1892), «Խաբված հույս» (1894), «Սիբրային համաձայնություն» (1894), «Գյուղական բակից» (1895), «Բավական ուշ է» (1909), «Էմիրի մահը» (1909) երկերը:

«ԱԲԴԻԱՍ ՀԱՅԵՐԷՆ», Անդրեաս Ակոլութոսի լատ., հայ. և հուն. երկը: Տպագրվել է 1680-ին Լայպցիգում՝ Յուստին Բրանդիի տպարանում (83 էջ, 4^0, 18 x 14 սմ):

ԱԲԵԼՅԱՆ Ալեքսանդր Հարությունի (5.6.1858, Շամախի–6.5.1940, Դոնի Ռոստով), դրամատուրգ: Աշխատակցել է «Մշակ», «Արձագանք», «Տարազ», «Մուրճ» և այլ պարբ-ների: Ա-ի կատակերգություններն ու դրամաներն արտացոլում են մանր արհեստավոր. խավի կյանքն ու կենցաղը [«Մարուող ճրագներ» (1903, Թ., Ա. Քութաթելաձեի տպ.), «Մկիճի հարսանիքը» (1895, Բաքու, «Արոր» տպ.), «Նաֆթի ֆանտան» (1895, նույն տպ.), «Նշանուածներ» (1911, Նոր Նախիջևան, Մերովբե Ավագյանի տպ.)]: Թարգմանել է Վ. Հյուգոյի «Սահապարտի վերջին օրը» (1887, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Կլօդ գէօ» (1886, նույն տպ.) գործերը:

Երկ. Պիեսներ, Ե., 1936:

ԱԲԵԼՅԱՆ Ներսես Հարությունի (1855, Շամախի–1933, Թիֆլիս), հաս-գրական գործիչ: Սովորել է տեղի հայկ., Բաքվի ռեալ., Մոսկվայի տեխ. դպրոցներում: 1875-ին Մոսկովյան ծածկանունով թղթակցել է «Մշակ» թերթին: 1881-ին Մոսկվայում հիմնադրել է Հայրենասերների միությունը: 1887–88-ին Կովկասի տնտ. կյանքին նվիրված ուսումնասիրություններ է տպագրել «Արձագանք», «Զակավկազսկոյե օբոզրենիե» (ռուս.) թերթերում:



«Աբդիաս հայերէն» *(Անդրեաս Ակոլութոս, 1680, Լայպցիգ) երկի փիփղոսաթերթը*

ԱԲԵՂՅԱՆ Արտաշես Գաբրիելի [1.1.1878, գ. Աստապատ (այժմ՝ Թազաքենդ՝ Նախիջևանի Բաբեկի շրջանում)–13.3.1955, Մյունխենի, բանասեր, մանկավարժ, պատմաբան, հաս-քաղ. գործիչ: Մանուկ *Աբեղյանի* եղբորորդին: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Շուշիի թեմ. (1890), Թիֆլիսի Ներսիսյան (1895) դպրոցները, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1899): Սովորել է Սարբուրգի, Բեռլինի, Լայպցիգի համալսարաններում (1899–1904): 1919–20-ին՝ ՀՀ խորհրդարանի անդամ: 1920-ին մեկնել է Գերմանիա: 1922–45-ին՝ Բեռլինի և Մյունխենի համալսարանների պրոֆ.: Գլխավորել է 1942-ին Բեռլինում ստեղծված Հայ ազգ. խորհուրդը, որի նպատակը «բոլշևիկյան լծից ու ռուսական տիրապետությունից» Հայաստանի ազատագրումն էր Գերմանիայի օգնությամբ:



Արտաշես Աբեղյան

Լույս են տեսել Ա-ի «Թլուատ Դաւիթ» (1902, Թ., Կ. Մարտիրոսյանի տպ.), «Քնութիւն Աստուածաշնչի հին հայերէնի թարգմանութեան» (1906), «Քերովբէ Պատկանեան Դորպատում» (1949, Վնն., Մխիթարյան տպ.), «Ստեփանոս Նազարեան եւ Դորպատ» (1954, Բուենոս Այրես, «Արմենիա» տպ.) աշխատությունները: Կազմել է բառարաններ [«Ուղղագրական բառգրքոյկ» (1909, Թ., Նվարդ Աղանյանի տպ., վերահրտ.՝ 1962, 1999, Թեհրան), «Ուղղագրական բառարան հայերէն լեզուի» (1947, Շտուտգարդ, «Մաշտոց» տպ.)], դասագրքեր («Աշխարհագրութեան դասագիրք», մաս 1–3, 1909–10, Թ., համապատասխանաբար՝ Նվարդ Աղանյանի, «Պրոգրես» և Ի. Յ. Շապսոնի տպ-ներ), «Հայրենագիտութեան ուսուցում» (1910, Թ., «Կուլտուրա» տպ.) ուղեցույց-ձեռնարկը, «Հայ միջնադարյան առակները» (առաջաբ. և աշխարհաբարի փոխադր.՝ Ա-ի, 1998) ժող-ը:

Հրատարակվել է նաև Ա-ի «Հիւսիսային տիպերը Հայաստանում» («Հայկականութիւն-արիականութիւն», 2001, թարգմ.՝ գերմ-ից) հոդվածների ժող-ը:


Թարգմանել է Զ. Վեռների «Բանուորական հարց» (1906, Թ., «Հերմես» տպ.) աշխատությունը, Գ. Իվանովի «Ընդհանուր աշխարհագրութեան դասագիրք»-ը (մաս 1, 2, 1907, 1908, Թ., Նվարդ Աղանյանցի տպ.), Յ. Վ. Գյոթեի «Թատերգութիւնները» (հրտ.՝ 1995, Ե.):

ԱԲԵՂՅԱՆ Մանուկ Խաչատուրի [5(17).3.1865, գ. Աստապատ (այժմ՝ Թազաքենդ՝ Նախիջևանի Բաբեկի շրջանում)–25.9.1944, Երևան], բանագետ, լեզվաբան, գրականագետ, բառարանագիր: Փիլ. (1898) և բանասիր. գիտ-ների (1935) դ-ր, պրոֆ. (1926): ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): Գիտ. վաստ. գործիչ (1935): Մոր *Աբեղյանի* հայրը, Արտաշես *Աբեղյանի* հորեղբայրը: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1876–85), Ենայի, Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում (1893–98). մասնագիտացել է գրակ-յան և բանասիրության մեջ: Դասավանդել է



Մանուկ Աբեղյան

Մանուկ Աբեղյան


ԳԷՈՐԳ Դ.
ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
1899

«Գէորգ Դ. մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց» (1899, Վաղ-պատ) գրքի տիտղոսաթերթը


ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ

«Ժողովրդական խաղիկներ» (1940, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1885–87 և 1898–1914), Շուշիի թեմ. (1887–89), Թիֆլիսի Հովնանյան (1889–93), Ներսիսյան դպրոցներում ու հայկ. պետ. գիմնազիայում (1914–19):

Ա. աշխատակցել է հայ պարբ. մամուլին («Նոր-Դար», «Մուրճ», «Արարատ», «Ազգագրական հանդէս», «Նորք» ևն): Եղել է ԵՊՀ հիմնադիր-դասախոսներից, պատմագր. ֆակ-ի դեկան (1923–25), ամբիոնի վարիչ: 1925–30-ին գլխավորել է Խորհրդ. Հայաստանի 1-ին ԳՀ հաստատությունը՝ Գիտ-յան և արվ-ի ինստ-ը:

Ա. հետազոտել է հայ ժող. բանահյուսությունը, գրակ-ը, ժամանակակից հայոց լեզուն, ուսումնասիրել և համակարգել է պատմավիպ. ու քնար. ժանրերի ժող. ստեղծագործությունները, մշակել դրանց գոյացման և պատմատիպարան. զարգացման տեսությունները: Հայտնաբերել է «Սասնա ծռերի» 2-րդ տարբերակը: 1889-ին Շուշիում հրատարակել է «Դաւիթ եւ Մհեր: ժողովրդական դիւցազնական վէպ» (Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպ.) էպոսի պատումը (գրառել է 1886-ին Էջմիածնում՝ Գևորգյան ճեմարանի դռնապան Նախո քեռուց): Հետազոտել է «Սասնա ծռերի» ժանրային-գեղ. հատկանիշները: Հայ պատմիչների (Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Սեբեոս) երկերում պահպանված վիպ. հատվածների բանասիր. քննությամբ ապացուցել է հնում ժող. այլ վեպերի («Վիպասանք», «Պարսից պատերազմը», «Տարօնի պատերազմը») գոյությունը:

Ա. հիմնադրել է հայկ. ուրույն վերածննդի տեսություն, որը մաքառման գրակ-յան տեսության հետ կարևոր ներդրում է հայագիտ-յան մեջ:

«Հայոց լեզվի տաղաչափության» (1933) մեջ Ա. մշակել է տաղաչափ. տարրերի և հիմունքների ամբողջ. տեսություն: Ստեփան Մալխասյանցի, Գալուստ Տեր-Մկրտչյանի և Ստեփան Կանայանի հետ հայ քննական-բաղդատ. տեքստաբանության հիմնադիրն է: Հրատարակել է բաղդատ. բնագրեր (Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», 1913, Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ, և Կորյուն, «Վարք Մաշտոցի», 1941, աշխարհաբարի փոխադրությամբ): Կարապետ ***Մելիք-Օհանջանյանի*** հետ կազմել ու հրատ-յան է պատրաստել «Սասնա ծռեր» (հ. 1, 1936, հ. 2, մաս 1–2, 1944–51) ժող. վեպի տարբերակները, Արամ ***Ղանալանյանի*** և Գևորգ ***Աբովի*** աշխատակցությամբ կազմել է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը (1939), կազմել և հրատարակել է հայկ. խաղիկների («Ժողովրդական խաղիկներ», 1940) և միջնադարյան հայրենների («Գուսանական ժողովրդական տաղեր», 1940) գիտ. համահավաք բնագիրը: Մեծ արժեք ունեն նրա գրականագիտ., լեզվաբ-քերական. աշխատությունները. «Հայոց լեզուի ուղղագրութիւնը» (1892, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ» (1899), «Գէորգ Դ. մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց» (1899), «Աշխարհաբարի քերականութիւն» (1906), «Գրաբարի համառօտ քերականութիւն» (1907), «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909), «Աշխարհաբարի շարահիւսութիւն» (1912, բոլորը՝ Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ընդհանուր տեսութիւն հայոց հին բանաստեղծութեան» (1917, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Ուղղագրության ռեֆորմը» (1925, Ե., Պետհրատի 1-ին տպ.), «Հայոց լեզվի տեսություն» (1931, 1965) ևն:

Ա. կազմել է առաջին «Ռուս-հայերէն ռազմական բառարանը» (1925, Ե., Տպագր. տրեստի 2-րդ տպ.), մասնակցել «Ռուս-հայերէն իրաւաբանական առձեռն բառարանի» (1919, Թ., «Սլովո» տպ.), «Լատին-ռուս-հայերէն բժշկական բառարանի» (հրտ.՝ 1951) ստեղծմանը:

Խորհրդ. տարիներին տպագրվել են նաև Ա-ի «Երկերը» (հ. 1–8, 1966–85), «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարա-

բերությունները նրանց մեջ» (1935), «Գրաբարի քերականություն» (2–րդ հրտ., 1936), ««Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» (1941), «Հայոց հին գրականության պատմություն» (հ. 1, 2, 1944, 1946) աշխատությունները:

Ա.–ի անվան հետ է կապված 1922–ի մարտի 4–ի հռչակագրով Հայաստանում կատարված ուղղագրության բարեփոխությունը, որն արևելահայ–ի արդի ուղղագրության հիմքն է:

Ա.–ի անվամբ է կոչվել ՀՀ ԳԱԱ գրակ–յան ինստ–ը (1944–ից):

Գրկ. Ղանալանյան Ա., Մ. Աբեղյանի կյանքն ու գործունեությունը, «ՍԳ», 1955, № 12: **Մելիք-Օհանջանյան Կ.,** *Սմանուկ Աբեղյան, «ՊՀՀ», 1965, № 3:* **Հարությունյան Ս.,** *Սմանուկ Աբեղյան: Կյանքն ու գործը, Ե., 1970: Սմանուկ Խաչատրուր Աբեղյան: Կենսագրական տեղեկագիր, Ե., 1963:*

ԱԲԵՂՅԱՆ Միհեր Մանուկի (13(26).1.1909, Վաղարշապատ–20.11.1994, Երևան), նկարիչ: Ժող. նկարիչ (1960): Մանուկ *Աբեղյանի* որդին: Սովորել է ԵԳԱՏ–ում (1922–27), Մոսկվայի բարձրագույն գեղ–տեխ. (1927–30) և Լենինգրադի Պրոլետ. կերպարվ–ի (1930–31) ինստ–ներում: 1937–45–ին դասավանդել է ԵԳՈՒ–ում, 1954–59–ին՝ ԵԳԹԻ–ում: 1939–45 և 1967–68–ին եղել է ՀՆՄ վարչության նախագահ: Նկարազարդել է «Սասունցի Դավիթ» էպոսը (1939), Վ. Անանյանի «Արագիլներ» (ռուս., 1952), Հ. Շիրազի «Օձն ու մեղուն» (1953), Վ. Մայակովսկու «Այս գրքույկը պիտի խոսի ծովի մասին և փարոսի» (1953) և այլ գրքեր:

Ուշագրավ են հատկապես Հ. Թումանյանի «Ախթամար» բալլադի (1959) նկարազարդումները, որոնք աչքի են ընկնում խոր հուզականությամբ ու դրամատիզմով:

Գրկ. Միհեր Աբեղյան: Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ (կազմ.՝ Ա. Հարությունյան), Ե., 1989: **Каменский А.,** *Мегер Манукович Абегян, М., 1966;* **Микаелян К.,** *Мгер Абегян. Живопись (альбом), М., 1982.*

ԱԲԻԽ (Abich) Հերման Վիլհելմ [11.12.1806, Բեռլին–1.7.1886, Դրաց (Գերմանիա)], գերմանացի երկրաբան: Ս. Պետերբուրգի ԳԱ ակադ. (1853) և պատվ. անդամ (1866): Ավարտել է Բեռլինի համալսարանը (1831): Ակոռիի երկրաշարժի (1840) պատճառներն ուսումնասիրելու նպատակով 1844–ին եկել է Հայաստան, 1845–ին բարձրացել է Արարատ լեռը՝ Խ. Աբովյանի ուղեկցությամբ:

Ա. հրատարակել է «Կովկասյան երկրների երկրաբանության ներածական տեսություն» (1859), «Երկրաբանական դիտումներ Կուրի և Արաքսի միջև եղած լեռնաշխարհում» (1867) աշխատությունները: 1876–ից Ա. հիմնականում զբաղվել է Կովկասում հավաքած նյութերի մշակմամբ, հրատարակել է «Երկրաբանական հետազոտություններ Կովկասյան երկրներում» (հ. 1–3, 1878–87) աշխատությունը, որի 2–րդ և 3–րդ հատորները նվիրված են Հայկ. լեռնաշխարհին: 3–րդ հատորին, որպես հավելված, կցված է ընդարձակ ատլաս՝ Հայաստանի քարտեզով, մասշտաբը՝ 1:420 000: Ա. նկարագրել է Մեղրիի ու Կապանի պղնձի, Նախիջևանի քարաղի հանքավայրերը:

ԱԲՈՎ (Աբովյան) Գևորգ Արշակի (27.11.1897, Թիֆլիս–11.3.1965, Երևան), գրող, թարգմանիչ, գրականագետ, խմբագիր: Պրոֆ. (1937): Արվ. վաստ. գործիչ (1945): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Գրական «Երեքի խմբակի» (Ե. Չարենցի և Ա. Վշտունու հետ) անդամ, Խորհրդ. Հայաստանի գրական 1–ին հռչակագրի՝ «Երեքի դեկլարացիայի» (1922) հեղինակներից: 1925–31–ին՝ Հայաստանի պրոլետգրողների ընկերակցության քարտուղար, 1928–31–ին, միաժամանակ՝ Երևանի 1–ին պետ. թատրոնի, 1940–52–ին՝ Սատենադարանի տնօրեն, «Սատենադարանի գիտական նյութերի ժողովածուի» (1956–ից՝ «*Բանբեր Մատենադարանի*») 1–ին և 2–րդ ժող–ների, 1961–64–ին՝ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» (1965–ից՝ «*Լրաբեր հասարակական գիտությունների*») հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Ա.–ի «Միայն կինը» (1919, Թ., Ընդհանուր հայ աշակերտ. միության հրատ.), «Դանակը բկին» (1923, Մ., Հայերի գրական–գեղարվ.



Միհեր Աբեղյան. *Հ. Թումանյանի «Ախթամար» (1959, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Գևորգ Աբով




Գ. Աբովի *«Դանակը բկին» (1923, Մոսկվա, ձևավորող՝ Մ. Մազմանյան) գրքի կազմը*


ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ՀՑԱՅՈՑ ՑԱՂԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հրատարակութիւն
1869

Գևորգ Աբովյանի *«Համառօտութիւն հայոց ազգի պատմութեան» (1869, Թիֆլիս) դասագրքի փիփղոսաթերթը*



Խաչատուր Աբովյան


ՎԷՐՔ
ՀԱՅՈՑՏԱՆԻ
1838

Խ. Աբովյանի *«Վէրք Հայաստանի» վեպի 1-ին հրատ-յան (1858, Թիֆլիս) փիփղոսաթերթը*

խմբակի տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Պատմվածքները» (1928, Ե., Պետհրատի 1-ին տպ.), «Սիրո և արդարության մեծ երգիչը՝ Սայաթ-Նովան» (1945), «Խաչատուր Աբովյան» (1948), «Գաբրիել Սունդուկյան» (1953) աշխատությունները:

Թարգմանել է Մ. Գորկու, Մ. Լերմոնտովի, Վ. Մայակովսկու, Ա. Գրիբոյեդովի և ուր. ստեղծագործություններից: Մասնակցել է «Սասունցի Դավիթ» (1939) էպոսի համահավաք բնագրի պատրաստման աշխատանքներին:

ԱԲՈՎՅԱՆ Գևորգ Կարապետի [1837, գ. Օձուն (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–անհետացել է, 1866], մանկավարժ, հաս. գործիչ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1854): 1854–60-ին եղել է ուսուցիչ Թիֆլիսում: Ա-ի «Համառօտութիւն հայոց ազգի պատմութեան» (1869, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) աշխարհաբար դասագիրքն ունեցել է 4 հրատ.: Գրել է «Շուշանիկ» պատմ. ողբերգության (բեմադրվել է Թիֆլիսում 1859-ին) երաժշտությունը:

ԱԲՈՎՅԱՆ Խաչատուր Ավետիքի [15.10.1809, Քանաքեռ (այժմ՝ Երևանի շրջագծում)–անհետացել է, 2(14).4.1848], գրող, մանկավարժ, լուսավորիչ-դեմոկրատ, հայ նոր գրակ-յան և մանկավարժության հիմնադիր: 1819–22-ին սովորել է Էջմիածնի վանական, 1824–26-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում: Ողջունել է Արլ. Հայաստանի ազատագրումը Պարսկաստանից և միացումը Ռուսաստանին (1828): 1829-ից Էջմիածնում եղել է կաթողիկոսի և սինոդի թարգմանիչն ու քարտուղարը: Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆ. Պարրոտի արշավախմբի հետ 1829-ի սեպտ. 27-ին (հոկտ. 9) բարձրացել է Արարատ լեռան գագաթը: Պարրոտի աջակցությամբ Ա. 1830–35-ին պետ. թոշակով սովորել է Դորպատի համալսարանում, հատուկ ծրագրով նախապատրաստվել ուսուցչ. գործունեության: 1836-ին վերադարձել է հայրենիք: 1843–48-ին եղել է Երևանի գավառ. դպրոցի տեսուչ, կազմել է դպրոցի գրադարանի գրացուցակը և գրքամատյանները:

Ա-ի **«Վէրք Հայաստանի»** վեպը դարձել է հայ նոր գրակ-յան պատմության շրջադարձային կետը: Այն նորություն էր լեզվով, ոճով, կերպարներով ու արծարծած գաղափարներով և նշանավորել է հայկ. ռոմանտիզմի սկիզբը: Վեպում պատկերված են հայ ժողովրդի վիճակը Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ, հայության ազատագր. կոիվները և Արլ. Հայաստանի միացումը Ռուսաստանին: Երկը հարուստ է ժող. կենդանի խոսքով, հայոց բնաշխարհի գունեղ պատկերներով: Վեպն առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում 1858-ին՝ Ներսիսյան դպրոցի տպարանում, և բազմիցս վերահրատարակվել է (1939, 1981, 1984, 2004, Ե., 2011, Բ.):

Լույս են տեսել նաև Ա-ի «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից» (2 մաս, 1837–40, հրտ.՝ 1862, Թ., Գաբրիել Մելքումյանի և Համբարձում Էնֆիաճյանի տպ-ներ, 1940), «Պարապ վախտի խաղալիք» (1838–41, հրտ.՝ 1864, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ.), «Հազարփեշէն» (1840), «Երկերը» (1897, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ., խմբագիր՝ Ստեփանոս Տեր-Սարգսյան, հրատարակիչ՝ Իսահակ Ժամհարյան): Տպագրվել են նաև Ա-ի «ԵԼԺ»-ն (հ. 1–10, 1947–61), «Ընտիր երկերը» (հ. 1–3, 1939), «Դիվան Խաչատուր Աբովյանի»-ն (հ. 1–2, 1940–48), «Երկերը» (1984):

Ա. հավաքել ու մշակել է առակներ, առածներ, ավանդություններ, երգեր՝ սկզբնավորելով հայ բանագիտությունն ու ազգագրությունը («Գիւղական տների կառուցուածքը», 1835, «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կեանքի...», 1840), հիմք դրել քրդագիտ-յանը Հայաստանում («Քրդեր եւ եզդիներ», գերմ.՝ 1846, հայ.՝ 1958): Թարգմանել է Հոմերոսի, Յ. Վ. Գյոթեի, Ֆ. Շիլլերի, Ն. Կարամզինի որոշ գործեր: Հույժ կարևորել է լեզվի՝ որպես ազգապահպանման կարևոր գործոնի, հաս. դերն ու նշանակությունը: Զբաղվել է նաև քերակ-յան հարցերով. «Նախաշաւիղի» 2-րդ մասում շարադրել է աշխարհաբարի քերակ-ը, բաղդատել գրաբարի և աշխարհաբարի լեզվաքերական. իրողությունները, մատնանշել նրանց տարբերությունները: Ա. Տապպեի «Ռուս-գերմանական քերականության» օրինակով կազմել է «Նոր տեսական եւ գործնական քերականութիւն ռուսաց վասն հայոց» (1838–39, հրտ.՝ 1959) ձեռնարկը:

Ա.-ի մանկավարժ. հայացքներն ու սկզբունքները մարմնավորված են «Նախաշաւիղ»-ում և «Պատմութիւն Տիգրանի կամ Բարոյական խրատներ մանուկների համար» (1840-ական թթ.) վեպում: 1836-ին Ա. առաջ է քաշել Հայաստանում մանկավարժ. ինստ. և ժող. դպրոցներ բացելու հարցը:

Ա.-ի մատնանշած գրական ուղիով են ընթացել Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը՝ զարգացնելով նրա գրական ավանդները և նոր գրական լեզուն:

Ա.-ի երկերը թարգմանվել են ռուս., ուկր., վրաց., էստոն., լատիշ., լիտվ.:

Ա.-ի անվամբ ՀՀ-ում կոչվել են շրջան, քաղաք, երկաթուղու կայարան, Երևանի հայկ. մանկավարժ. ինստ-ը (այժմ՝ ՀՊՄՀ) և այլ հաստատություններ, պուրակներ, փողոցներ, սահմանվել են մրցանակ, կրթաթոշակ: Գրողի հուշարձանները կանգնեցված են Երևանում՝ համանուն պուրակում, և Քանաքեռում՝ տուն-թանգարանի (գործում է 1939-ից) բակում:

Գրկ. **Հակստհաուզեն Ո.,** *Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու. այն է ի Հայս եւ ի Վիրս, Վաղ-պատ, 1872:* **Տէր-Կարապետեան Ն.,** *Խաչատուր Աբովեան, Թ., 1897:* **Տերտերյան Ա.,** *Աբովյանի ստեղծագործությունը, Ե., 1941:* **Ղանալանյան Ա.,** *Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Ե., 1941:* **Շահազիզ Ե.,** *Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Ե., 1945: Դորպատյան օրագրեր (1830–1835), Ե., 1955: Ուղեգրություններ, թարգմանություններ, Ե., 1956: Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1958:* **Հակոբյան Պ.,** *Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), Ե., 1967:* **Նույնի,** *Վերելք, Ե., 1982:* **Նույնի,** *Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները, Էջմիածին, 1997:* **Բագյան Ս.,** *Աբովյանի բանաստեղծական աշխարհը, Ե., 1977:* **Սուքիասյան Ն.,** *Աբովյանի պոետիկան, Ե., 1979:*

ԱԲՐԱՀԱՄ, XV դ-ի 2-րդ կեսի–XVI դ-ի սկզբի մանրանկարիչ, գրիչ, կազմող: Աշակերտել է Դանիել Աստվածաբան րաբունապետին՝ Սևանավանքում, և իր հորեղբորը՝ գրիչ Ավագտեր վարդապետին՝ Բոլորաբերդ անապատում (Սրկղունք՝ Վայոց ձոր): Անունը հիշատակվում է 1461-ից: 1495-ի Ավետարանի (ձեռ. № 5303) «Պայծառակերպություն» մանրանկարի ներքևում զետեղել է իր և եղբոր՝ Զաքարիայի պատկերները:

1471–1502-ին պատկերազարդած 10 մատյան [Ավետարաններ (ձեռ. № 8409, 2634, 221, 7770, 6865, 5303), Հայսմավուրք (№ 6268), Ճաշոց (№ 2781), Ճառընտիր (№ 942), Շարակնոց (№ 1579)] պահվում է Մատենադարանում, մեկը՝ Երուսաղեմի (№ 3230), մեկը՝ Վիեննայի (№ 403), երկուսը՝ Էջմիածնի (№ 129, 322) մատենադարաններում, որոնցում նկատելի է Գլաձորի մանրանկարչության դպրոցի և **Թորոս Տարոնացու** ազդեցությունը:

Ենթադրաբար Սևանի Առաքելոց վանքի հարավային դուռը կերտող քանդակագործ Աբրահամին (XV դ.) նույնացնում են Ա.-ի հետ:

Գրկ. Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 2–3, Ե., 1958–67:

ԱԲՐԱՀԱՄ Ա. ԱՂԲԱԹԱՆԵՑԻ [VI դ-ի կես, գ. Աղբաթանք (Ռշտունիք գավառ)–մոտ 613], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 607-ից: Նրա օրոք Վրաց եկեղեցին բաժանվել է Հայ եկեղեցուց: VI–VII դդ-ում Հայ և բյուզ. եկեղեցիների միջև սրվել է պայքարը դավան. հարցերի շուրջ: Ա. Ա Ա-ուն չի հաջողվել Վրաց Կյուրիոն կաթողիկոսին հետ պահել քաղկեդոնականություն ընդունելուց և հույների հետ դավան. միություն հաստատելուց. 608-ին Վրաց եկեղեցին ընդունել է քաղկեդոնականություն: Այդ շրջանի իրադարձությունների, դավան. թեժ պայքարի կարևոր վավերաթղթեր են «**Գիրք թղթոց**»-ում (էջ 146–211) պահպանված Ա. Ա Ա-ու եպիսկոպոս. և կաթողիկոս. գործունեությանը վերաբերող թղթերը և շրջաբերականները: Հատկապես Վրաց Կյուրիոն կաթողիկոսին գրած թղթերում Ա. Ա Ա. շեշտել է Հայոց, Վրաց և Աղվանից եկեղեցիների միությունը VI դ-ի սկզբին, երբ նրանք միասնաբար պայքարել են Հույն եկեղեցու նկրտումների և քաղկեդոնականության դեմ (նույն տեղում, Գ թուղթ, էջ 182–183): Հայոց կաթողիկոսն իր թղթերում կարևոր տեղեկություններ է հաղորդել Դվինի 506-ի Ա ժողովի ընդունած որոշումների և Հայ եկեղեցու հակաքաղկեդոն. դիրքորոշման վերաբերյալ:

Խաչատուր Աբովյան



«Երկերը» (1897, Մոսկվա) ժող-ի փիփղոսաթերթը



«Վերք Հայաստանի» (1939, Ե., Հայպետհրատ) վեպի փիփղոսաթերթը




Աբրահամ. *«Պայծառակերպություն», մանրանկար, 1495-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 5303)*

Ա. Ա Ա–ու գրվածքներն օգտագործել են հետագա դարերի հայ պատմիչներն ու մատենագիրները՝ Հայ և Վրաց եկեղեցիների բաժանման դեպքերը շարադրելիս, իսկ Ուխտանես պատմիչը Ա. Ա Ա–ու 14 թղթերից 11–ը զետեղել է իր «Պատմութիւն Հայոց» երկի «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» հատվածում:

Ա. Ա Ա. գրել է նաև դավան. ճառեր:

Գրկ. **Տեր–Մինասեան Ե.,** *Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, 2009:* **Ակինեան Ն.,** *Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վնն., 1910:* **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:* **Օրմանեան Մ.,** *Ազգապատում, հ. 1, Էջմիածին, 2001:*




Աբրահամ Անկյուրացու *«Ողբ ի վերայ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ...» (Մատենադարան, ձեռ. № 10721) երկի 1 էջ*

ԱԲՐԱՀԱՄ ԱՆԿՅՈՒՐԱՑԻ, XV դ–ի տաղերգու, 1453–ին թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավման ականատես: Գրել է «Ողբ ի վերայ մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ՝ վասն տիրելոյն տաճկաց. ասացեալ ի յԱբրահամ ականատես վարդապետէ» երկը (Մատենադարան, ձեռ. № 10721): Կազմել է «Հայոց պատմութեան ժամանակագրութիւն» (ընդգրկում է հայոց ազգաբանությունից մինչև 1358–ի դեպքերը): Աշխատության վերջին մասում ներկայացրել է հույն և հռոմեացի կայսրերի գործունեության համառոտ պատմությունը: Գրել է նաև հոգևոր տաղեր:

Գրկ. **Պատկանեան Ք.,** *Նշխարք մատենագրութեան հայոց, ՍՊր, 1884:*

ԱԲՐԱՀԱՄ Գ ԿՐԵՏԱՑԻ [ծ. թ. անհտ, ք. Կանդիա (Կրետե կղզի)–18.4.1737, Վաղարշապատ, ամփոփվել է Սբ Շողակաթ վանքում], պատմագիր, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1734–ից: 1709–34–ին եղել է Թրակիայի Թեքիրդաղի (Ռոդոսթո) թեմի առաջնորդ: Վերականգնել է Էջմիածնի կաթողիկոս. աթոռի կալվածատիր. իրավունքները՝ Նադիր ղուլի խանի (1736–ից՝ Նադիր շահ) օգնությամբ, գերությունից և աքսորից փրկել բազմաթիվ հայերի: Նրա միջնորդությամբ շահը թույլատրել է Մելիք Հակոբջանյանին Երևանում հիմնադրել դրամատուն և հատել արծաթե ու պղնձե դրամներ:

Ա. Գ Կ. **«Պատմութիւն անցից: - Առարկութիւն ընդդէմ ախտացելոց յախտս մանիքական մոլութեան»** երկում շարադրել է իր կաթողիկոսության օրոք և Նադիր շահի իշխանության առաջին տարիներին (1734–36) տեղի ունեցած իրադարձությունները: Գրառել է Նադիր շահի հետ հանդիպումների արդյունքները, նկարագրել է ճանապարհորդությունը Սուղան և վերադարձը: Նադիր շահի թագադրման արարողությունը Սուղանի դաշտում, պարսկ. բայրամի՝ կրոն. տոնի ծիսակատարությունները: Օրագիրն ուշագրավ տեղեկություններ է պարունակում պարսկ. պալատ. կանոնների, վարչակարգի, բանակի կառուցվածքի ու սպառազինման, բարքերի, նիստուկացի, ինչպես նաև թուրք–պարսկ. վերջին պատերազմների՝ հատկապես 1735–ի Եղվարդի ճակատամարտի մասին:



Աբրահամ Գ Կրետացու *«Պատմութիւն անցից...» (1796, Կալկաթա, Հովսեփ Սրեփիանոսյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*

«Պատմութիւնը» առաջին անգամ տպագրվել է Կալկաթայում 1796–ին՝ Հովսեփ Ստեփանոսյանի տպարանում (277 էջ, 4^0, 17,4 x 11,6 սմ):

1870–ին երկը տպագրվել է Սբ Էջմիածնի տպարանում՝ «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր Շահին պարսից» վերնագրով:

Երկը 1876–ին Մ. Բրոսսեն թարգմանել է ֆրանս. և հրատարակել «Collection d' historiens arméniens» ժող–ում (հ. 2), իսկ քնն. բնագիրը և ռուս. թարգմանությունը տպագրվել է 1973–ին (թարգմ. և ծնթգր.՝ Ն. Ղորղանյանի):

Ա. Գ Կ–ու պատմագր. գործերից են նաև «Յիշատակարանը» և «Պատմութիւն Անի քաղաքի» երկը:

Գրկ. **Բաբայան Լ.,** *Աբրահամ Կրետացի, «ՊԲՀ», 1977, № 4:*

ԱԲՐԱՀԱՄ ԵՐԵՎԱՆՑԻ, XVIII դ–ի պատմագիր: Գրել է **«Պատմութիւն պատերազմացն 1721–1736 թուի»** (հրտ.՝ 1938, Ե., 1977, Վնտ., Սբ Ղազարի տպ., ռուս.՝ 1939) երկը, որն արժեքավոր աղբյուր է Այսրկովկասի և թուրք–պարսկ. հարաբերությունների 1721–36–ի

պատմության ուսումնասիրության համար: Գրքի 2-րդ գլխում մանրամասն նկարագրված է Երևանի պաշտպանությունը 1724-ին, հետաքրքիր տեղագր. տվյալներ կան հին Երևանի մասին:

«Պատմության» բնագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, ընդօրինակը՝ Սատենադարանում (ձեռ. № 8069):

ԱԲՐԱՀԱՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ, Աբրահամ Զենակացի [ծ. թ. անհտ, գ. Զենակս (Տայք)–մ. թ. անհտ], V դ-ի մատենագիր: Ղազար Փարպեցու վկայությամբ՝ Ա. Խ. ինքնակամ միացել է Վարդանանց պատերազմից հետո Պարսկաստան տարվող հայ նախարարներին ու հոգևորականներին և 454-ին նրանց հետ աքսորվել Ասորիք: 462-ին վերադարձել է Հայաստան, ձեռնադրվել Բզնունիք գավառի եպիսկոպոս:

Ա. Խ. ասոր-ից հայ. է թարգմանել Սարութա Նփրկերտցու «Վկայք Արևելից» երկը: Թովմա Արծրունու վկայությամբ՝ Ա. Խ. գրել է Վարդանանց պատերազմի մասին երկ (չի պահպանվել): Ըստ ավանդության՝ Ա. Խ. թաղված է Հայոց ձորի (Վասպուրական) Աբրահամու անապատում (այստեղից էլ՝ անապատի անվանումը):

ԱԲՐԱՀԱՄ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, XVI–XVII դդ-ի կենդանաբան: Ապրել և ստեղծագործել է Կ. Պոլսում: 1611-ին գրել է մեզ հասած հայ. ամենահին կենդր. աշխատությունը՝ «Պատմութիւն անասնոց եւ գազանաց, չորքոտանեաց, սողնոց եւ թիւնաւորաց, թռչնոց եւ մարդկանց, ծովային ձկանց եւ անասնոց եւ գազանաց եւ այլ ժժմակաց ծովու եւ ցամաքի» (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 1418), որտեղ նկարագրել է առասպել. կենդանիների ու մարդկանց («սովորաբար Հրեշք կոչվածքն»)՝ հաճախ բարոյախոս. գրքերից քաղած նյութերով, և 180 կենդանիների՝ չորքոտանիներ (ըստ դրանց մի մասի մորթու կամ մուշտակի), թռչուններ, ձկներ, խեցեմորթներ, միջատներ: Ա. Կ. հետևել է XVI դ-ի նշանավոր կենդանաբանների (Գեսներ, Ռոնգելեն, Բելոն, Ալգրովանդի) գործածած դասակարգմանը:

Գրկ. **Տեր-Պողոսյան Ա.,** *Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում սկզբից մինչև XVIII դ., Ե., 1960:*



Աբրահամ Երևանցու *«Պատմութիւն պատերազմացն 1721–1736 թուի» (1977, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

ԱԲՐԱՀԱՄ ՂՌԱՄԱՏԻԿՈՍ, Գրամատիկոս, Քերական, XII դ-ի հույն հայագետ: 1141-ին հայ. է թարգմանել հույն հեղինակ Հովհան Ոսկեբերանի՝ Գրիգոր Լուսավորչին նվիրած ներբողը, որը հետագայում չափածոյի է վերածել ***Ներսես Շնորհալին***:

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Յուշիկք հայրենեաց հայոց, հ. 2, 2-րդ հրտ., Վնտ., 1921, էջ 52:*

ԱԲՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԻՑ, Մամիկոնյան, VI դ-ի մատենագիր, եկեղեց. գործիչ, Տարոնի հոգևոր առաջնորդ: Աղվանից Վաչագան Գ Բարեպաշտ թագավորի խնդրանքով գրել է «Թուղթ առ Վաչագան արքայ Աղուանից» և «Կանոնք Աբրահամու Սամիկոնէից եպիսկոպոսի» խրատականները: Հայտնի է նաև «Պատմութիւն վասն ժողովոյն Եփեսոսի» գրվածքը, որի մեկ այլ խմբագրությունը վերագրում են Նաբովկ քաղաքի ասորի եպս. Փիլոքսենոսին:

Երկ. Աբրահամ Սամիկոնէից եպիսկոպոսն եւ յիւր առ Վաչագան գրած թուղթն, Վնտ., 1899 (հրտ.՝ Բ. Սարգիսյան):

ԱԲՐԱՀԱՄ ՇԱՔԵՑԻ, XVIII դ-ի մշակույթի գործիչ: 1791-ին Հարություն Շաքեցու հետ կազմել է XVIII դ-ի կեսերին վերաբերող պաշտոն. գրությունների ժող.՝ «Գրագրութեան գիրք» (Սատենադարան, ձեռ. № 3592), որտեղ կան նաև Աղվանից հակաթոռ կաթողիկոս Ներսեսի (1720–63) և նրա ժամանակակից մի շարք անձանց կոնդակների, բանադրագրերի, խնդրագրերի պատճեններ:

ԱԲՐԱՀԱՄ ՎԱՆԱԿԱՆ, Արտավազդ Վանական, VIII դ-ի մատենագիր: Գրել է Վահան Գողթնեցու վկայաբանությունը (737)՝ պատկերելով նաև Հայաստանում արաբների տիրապետության շրջանի անցքերը: Վկայաբանությունն առաջինը հիշատակել է Ասողիկը:



Աշոտ Արսենի Աբրահամյան



Աշոտ Գարեգինի Աբրահամյան



Լևոն Աբրահամյան. *Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (2009, ե., «Զանգակ») գրքի պատկերազարդումներից*

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Աշոտ Արսենի [17.9.1918, գ. Շահրիզ (այժմ՝ գ. Գեղամավան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–16.4.1985, Երևան], լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1964), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1977): Գիտ. վաստ. գործիչ (1965): 1944-ից դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվ. մանկավարժ. ինստ-ում: 1950–59 և 1978–85-ին՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ա-ի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953), «Բայը ժամանակակից հայերենում» (1962), «Արսեն Այտինյանի լեզվաբանական հայացքները» (1984), «Հետազոտություններ, խոհեր, մտորումներ» (2001) աշխատությունները, «Գրաբարի ձեռնարկ» (1952) բուհ. դասագիրքը, աշխարհաբարի է փոխադրել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (1970), Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» (1986) երկերը:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Աշոտ Գարեգինի [31.1.1903, գ. Ղուշչի (այժմ՝ գ. Կեչուտ՝ ՀՀ Վայքի մարզում)–31.4.1983, Երևան], պատմաբան-աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1943), պրոֆ. (1944): Գիտ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է ԵՊՀ (1933): 1944–49 և 1968–76-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ: 1944, 1949–54-ին խմբագրել է «*Էջմիածին*» ամսագիրը:

Լույս են տեսել Ա-ի «Հայկական պալեոգրաֆիա» (1948, 2012), «Հայ գրի և գրչության պատմություն» (1959, 2012), «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» (հ. 1, 2, 1964, 1967), «Հայոց գիր և գրչություն» (1973), «Հայկական ծածկագրություն» (1978), «Իսրայել Օրի» (1978), «Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն» (1982) աշխատությունները ևն: Կազմել և հրատարակել է Անանիա Շիրակացու, Հովհաննես Իմաստասերի և Ջենոբ Գլակի մատենագիտությունները:

Գրկ. Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի գրական աշխատությունների մատենագիտություն, Ե., 1979:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արամ Լևոնի (ծ. 17.2.1960, Երևան), խմբագիր, հրապարակախոս: Արվեստագիտ. թեկնածու (1988): Ավարտել է Երևանի պետ. կոնսերվատորիան (1983): 1991–92-ին եղել է «A^{1+}» հեռուստաընկերության գլխ. խմբագիր, 1992–94-ին՝ ՀՀ նախագահի մամուլի քարտուղար, 1994-ից՝ «*Առավոտ*» օրաթերթի գլխ. խմբագիր. առաջնորդողներում անդրադառնում է քաղ., տնտ. և հաս. հրատապ խնդիրներին, հանդես է գալիս հաս., քաղ. վերլուծություններով: 2011-ից վարում է «Շանթ» հեռուստաընկերության կիրակնօրյա «Հորիզոն» լրատվավերլուծ. ծրագիրը:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Լևոն Գագիկի (ծ. 17.5.1979, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒՀ (1996), ԵԳԱ (2002): 2006-ից՝ Միջազգ. տիկնիկային գործիչների միության անդամ:

Ա. նկարազարդել է Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (2009), Ա. Խնկոյանի «Առակներ» (2010), Հ. Թումանյանի և Ղ. Աղայանի «Դասական հերոսներ» (2011), «Ժամանակակից հեքիաթներ» (2011), Գերդա Սուլայի «Վազել արագ» (2011), «Արտասահմանյան հեքիաթներ» (2013), Ա. Վաթյանի «Հսկան, որը կարողանում է նվագել ջութակի վրա» (ռուս., 2014) գրքերը:

Երիտասարդ. ցուցահանդեսի 1-ին (2010), մանկ. գրքի մրցույթի 1-ին (2011, երկուսն էլ՝ Երևան), գրքի ամենամյա ցուցահանդես-տոնավաճառի Հատուկ (2011, «Ժամանակակից հեքիաթներ» գրքի պլաստիլինե նկարազարդումների համար, Մոսկվա) մրց-ներ:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ռուբեն Թադևոսի [3.2.1881, գ. Գնիշիկ (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում)–26.10.1951, Երևան], իրանագետ-լեզվաբան, բառարանագիր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ-ր, պրոֆ. (1935): Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1899), Երևանի արական գիմնազիան (1906), սովորել Կիևի, Լայպցիգի, Ս. Պետերբուրգի համալսարաններում (1907–11): 1912–20-ին ուսուցիչ է եղել Թիֆլիսում, 1921–46-ին՝ Իրանում: 1935-ին Թեհրանի համալսարանում հիմնադրել է հին պարսկ-ի և պահլավ-ի ամբիոն: Զբաղվել է պարսկ-ի պատմության պարբերացման հարցերով: 1946-ին վերադարձել է հայրենիք:

Լույս է տեսել Ա-ի «Ֆէրդովսին եւ իր Շահնամէն» (1934) աշխատությունը: Կազմել է «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառա-

բան» (հրտ.՝ 1965), որտեղ պահլավ. համարժեքների դիմաց տրված են հայ. փոխառյալ բառեր: Պարսկ-ից թարգմանել է Բաբա Համադանիի, Ֆիրդուսու ստեղծագործություններից, պահլավ-ից՝ «Արտա Վիրապ նամակ: Յուշտի Ֆրիան» (1958) երկը:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Սերգեյ Գյանջումի [14.2.1925, գ. Տումի (այժմ՝ ԼՂՀ Հադրութի շրջանում)–30.3.2005, Երևան], լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1970): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Ավարտել է ԵՊՀ (1950): 1959–92-ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի բաժնի վարիչ, 1992-ից՝ խմբի ղեկավար:

Լույս են տեսել Ա-ի «Արդի հայերենի դերանունները» (1956), «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965), «Ժամանակակից հայերենի քերականություն» (1969), «Ժամանակակից հայոց լեզու» (համահեղ., հ. 2, 3, 1974, 1976), «Ժամանակակից հայերենի քերականություն» (1975) աշխատությունները: Գործն. նշանակություն ունեն «Ժամանակակից գրական հայերեն» (1981) ուսումնասիրությունը, «Հայերենի կետադրություն» (1999, 2002, 2004) ուս. ձեռնարկը:

2001-ին Ա-ի անունով է կոչվել ծննդավայրի միջնակարգ դպրոցը:

ՀՊՄՀ Խաչատուր Աբովյանի անվ. մեդալ:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Վլադիմիր Գուրգենի [ծ. 1.5.1930, գ. Լեռնային Ձագիր (այժմ՝ Ադրբեջանի Շամխորի շրջանում)], բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1953): Աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (հայ.) օրաթերթի խմբագրությունում. 1965–81-ին՝ բաժնի վարիչ: 1981–89-ին՝ «*Գրական Ադրբեջան*» հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Բողբոջներ» (1959), «Սարի շուշաններ» (1963), «Կարոտ և կանչեր» (1966), «Ես իջել եմ լեռներից» (1968, աղբր.՝ 1975), «Ուրցի բույրը» (1972), «Յոթ ծիածան» (1976), «Աստղ լուսո» (1983) բանաստեղծությունների ժող-ները (բոլորը՝ Բաքու): Ադրբ-ից թարգմանել է Վագիֆի, աշուղ Ալեսկերի, Ն. Խազրիի, Ս. Ռուստամի, Ս. Վուրղունի, Մ. Դիլբազիի ստեղծագործություններից:

ԱԲՐՈՅԱՆ Վլադիմիր Օսիկի (ծ. 29.10.1939, Թբիլիսի), ծաղրանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (2009): Ավարտել է Թբիլիսիի մանկավարժ. ինստ-ը (1963), Վրաստանի գեղարվ-ի ակադ-ի դասընթացները: 1965-ին տեղափոխվել է Երևան: 1994-ից «Գոլոս Արմենիի» (ռուս.) թերթի ծաղրանկարիչն է:

Պատկերազարդել է Հ. Հարությունյանի «Հետաքրքրաշարժ հայոց լեզու» (1975, 1979), Վ. Նալբանդյանի «Կրկեսային երազանքներ» (1977), Ժ. Հարությունյանի «Խաչմերուկ» (1979), Գ. Տեր-Գրիգորյանի «Դրամաներ և կոմեդիաներ» (ռուս., 1981), Յ. Հաշեկի «Երգիծանքի և հումորի այբբենարան» (1983), Ա. Սահակյանի «Զվարճալի հարցազրույցներ» (1985), Ռ. Կարայանի «Յամաք ափեր» (1985), նաև «Գաբրովյան ժպիտներ. անեկդոտներ» (1990) և այլ գրքեր: Լույս է տեսել Ա-ի «Երգիծանկարներ» (2012) albomը:

Ա-ի կենսագրությունը զետեղված է «Ծաղրանկարի միջազգային հանրագիտարանում» (Տուրին՝ Իտալիա): Աշխատանքները տպագրվել են «Ծաղրանկարի համաշխարհային անթոլոգիայում» (Գաբրովո՝ Բուլղարիա), նաև հանրապետ. (*«Ոզնի», «Ավանգարդ», «Երեկոյան Երևան», «Հայոց աշխարհ»* ևն), Ռուսաստանի («Կրոկոդիլ», «Օգոնյոկ», «Սմենա» ևն) և այլ երկրների պարբ. մամուլում:

Արծաթե (1999, Անկոնա՝ Իտալիա, 2010, Բրազիլիա), Հատուկ (1992, 1993, Հոկայդո-Օխոտսկ՝ Ճապոնիա, 1998, Տուրին՝ Իտալիա, 2012, Ֆրանսիա), Չեզարե Մարկորելիի անվ. (1995, Տոլենտինո՝ Իտալիա) և այլ մրց-ներ:

ԱԲՈՒԼԱՁԵ Իլյա Վլադիմիրի [24.11.1901, գ. Զեդա-Սաքարա (Վրաստանի Զեստափոնի շրջան)–9.10.1968, Թբիլիսի], վրացի բանասեր, հայագետ: ՎԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1950): Ավարտել է Թբիլիսիի պետ. համալսարանը: Աշակերտել է Հ. Աճառյանին, Լ. Մելիքսեթ-Բեկին, Ա. Շանիձեին: Ուսումնասիրել է հայ և վրաց բանասիրության հարցեր:

Հրատ-յան է պատրաստել «Վկայաբանություն Շուշանիկի» (1938) վարքագրության վրաց. և հայ. տեքստերը: Գրել է «Հայ-վրացական գրական կապերը IX–X դդ-ում» (1944) աշխատությունը, տպագրել



Ռուբեն Աբրահամյան



Սերգեյ Աբրահամյան




Վլադիմիր Աբրոյան. *Ռ. Կարայանի «Յամաք ափեր» (1985, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

Ագաթանգեղոս



Հատված Վարդան Բաղիշեցու 1569-ին ծաղկած Ժող-ի մանրանկարից (Մատենադարան, ձեռ. № 1920)



Հարթաքանդակ Մոսկվայի Սբ Պայծառակերպություն հայկ. առաջնորդանիստ եկեղեցու պատին

վրաց ժողովրդի հնագույն պատմության՝ ««Քարթլիս ցխովրեբա» կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը» գրաբար տեքստը, վրաց. թարգմանությունը՝ բառագրքով (1953, Թ.): Ա.-ի «Հովհաննես Դրասխանակերտցի» (1937) ուսումնասիրությունը վրաց հայագիտության նվաճումներից է: Կազմել է գրաբարի (1935), վրաց.-ի (հայկ. դպրոցների համար, 1965) դասագրքեր և «Հին վրացերեն-գրաբար բառարան» (անտիպ): 1937-ին Մատենադարանի № 7117 ձեռագրում հայտնաբերել է աղվան. գիրը:

Երկ. Աշխատություններ, հ. 1–2, Թ., 1975–76:

ԱԲՈՒՍԱՀԼ, Աբուսահլ Հայ, արաբ.՝ Աբու Սալիհ ալ-Արմանի, XII–XIII դդ.-ի հայազգի արաբ. մատենագիր, մաթեմատիկոս: Գրել է Եգիպտոսի եկեղեցիների ու վանքերի 1170–1208-ի պատմությունը, որտեղ տեղեկություններ է հաղորդում Եգիպտոսի հայերի, ղպտիների, լիբիացիների, արաբների, նուբիացիների մասին: Երկի ձեռագիր ընդօրինակությունը (1338) Փարիզի ազգ. մատենադարանում է, բնօրինակը և անգլ. թարգմանությունը հրատարակել է Բ. Էվետսը (1895), որից Ղևոնդ Ալիշանը քաղել, թարգմանել, ծանոթագրել և տպագրել է հայերին վերաբերող հատվածները «Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եգիպտոսի» (1-ին հրտ.՝ 1895, 2-րդ հրտ.՝ 1933, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատության մեջ:

Երկ. The Churches and Monasteries of Egypt and some Neighbouring Countries, Attributed to Abu Salih, the Armenian. Translated from arabic by B. T. A. Evetts, Oxford, 1895.

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Հայապատում, Վնտ., 1901 (մաս I):* **Մքսրլեան Գ.**, *Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Կահիրէ, 1947:*

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (հուն. է, նշանակում է բարի հրեշտակ, լրաբեր), V դ.-ի պատմիչ, հեղինակը հայ պատմագրության և եկեղեց. մատենագրության հնագույն՝ «**Պատմութիւն Հայոց**» երկի, որը միջնադարում միջազգ. ճանաչման արժանացած եզակի երկասիրություններից է:

Ա.-ի անձի և երկի ստեղծման ժամանակաշրջանի մասին կան տարակարծություններ (Ն. Բյուզանդացի, Մ. Չամչյան, Ս. Մալխասյանց, Հ. Տաշյան, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Ն. Ադոնց, Կ. Մելիք-Օհանջանյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Ա. Մուշեղյան և ուր., օտարազգի հայագետներ՝ Վ. Լանգլուա, Ա. Գուտշմիդ, Ն. Մառ, Ժ. Գարիտ և ուր.):

Ա.-ի երկն ընդգրկում է III դ.-ի և IV դ.-ի սկզբի դեպքերը՝ Սասանյանների՝ իշխանության գլուխ անցնելուց (226) մինչև Հայոց Տրդատ Գ Մեծ (250-ական թթ.–մոտ 330) արքայի գահակալության վերջին տարիները: Բաղկացած է առաջաբանից (ներառում է երկի շարադրման շարժառիթներն ու նպատակները) և 3 մասից. 1-ին՝ «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը», 2-րդ՝ «Վարդապետություն Սուրբ Գրիգորի» (ամենաընդարձակ մասն է և, ի տարբերություն մյուսների, մեզ է հասել միայն հայ. բնագիրը), 3-րդ՝ «Հայաստան աշխարհիս փրկության դարձը»:

Որպես պատմ. աղբյուր՝ այն իր տեսակի մեջ թերևս միակն է, որ ներկայացնում է Հայաստանի դարձը: Ա. արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի պատմ. աշխարհագրության, արքունիքի, պետ. գործակալությունների, զինված ուժերի, նախարար. կարգի, հայոց հեթանոս կրոնի, երկրի ներքին կյանքին վերաբերող այլևայլ հարցերի մասին: «Պատմութիւն Հայոցը» միջնադարում թարգմանվել է հուն., արաբ., վրաց., հաբեշ., լատ. և ունեցել շուրջ 2 տասնյակ խմբագրություն՝ 9 լեզվով: Առաջինը և ամենակարևորը հուն. թարգմանությունն է (VI դ.), որն ամբողջությամբ հայտնի է միայն մեկ ձեռագրում, որը պահվում է Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանում (Laurentianus VII, 25):

«Պատմութիւն Հայոցը» առաջին անգամ տպագրվել է 1709–10-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում, տպակից է «Դաշանց

թուղթ»-ին: Տիտղթ-ին՝ «Գիրք վիպասանութեան՝ որ կոչի Հոմանունական Ագաթանգեղոս....» (441 էջ, 8⁰, 15,8 x 11 սմ):

«Պատմութիւն Հայոցի» գիտ. արժեք ունեցող առաջին հրատ-ը լույս է տեսել 1835-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Քննական բնագիրը հրատարակվել է 1909-ին Թիֆլիսում (Մնացական Մարտիրոսյանի տպ.)՝ Գ. Տեր-Մկրտչյանի, Ս. Մալխասյանի և Ս. Կանայանի աշխատասիրությամբ, 1911-ին Վիեննայում լույս է տեսել Վիեննայի կրկնագիր ձեռագրի բնագիրը (Մխիթարյան տպ.): «Պատմությունը» հրատարակվել է նաև Կ. Պոլսում 1822-ին, 1824-ին (երկուսն էլ՝ Արապյան տպ.), Վենետիկում՝ 1835-ին, 1862-ին, 1930-ին (երեքն էլ՝ Սբ Ղազարի տպ.), Թիֆլիսում՝ 1882-ին (Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), 1914-ին (Նվարդ Աղանյանի տպ.), աշխարհաբար լիակատար փոխադրությամբ (Ա. Տեր-Ղևոնդյան)՝ 1977-ին և 1983-ին Երևանում, «Պատմութիւն Ագաթանգեղոսի» վերնագրով՝ 1995-ին Բեյրութում («Հայոգի մատենաշար»):

Ա-ի երկը թարգմանվել, շարադրվել և հրատարակվել է իտալ., ֆրանս., գերմ., անգլ. և այլ լեզուներով [Storia di Agatangelo. Versione italiana, illustrata dai monaci armeni Mechitaristi, riveduta quanto allo stile da N. Tommaseo, Venezia, 1843; Agathange. Histoire du règne de Tiridate et de la prédication de Saint Grégoire l illuminateur; traduite..., V. Langlois, նրա Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. 1, P., 1867; Марр Н., Крещение Армян, Грузии, Абхазов и Алланов Святым Григорием (Арабская версия), СПб, 1905 (հայ. հրտ., Վաղ-պատ, 1911); Acta auctore Agathangelo; ex Bibliotheca Medicaea Florent. S. Laurentii, interprete J. Stiltingo, «Acta Sanctorum», Septembris, 1762, t. 8; Vida de S. Gregorio, patriarca da Armenia. Conversão dos Armenios ao cristianismo. Versão etiopica, publ. por Francisco Maria Esteves Pareira, Lisboa, 1903].


Գրկ. **Սարգիսեան Բ.**, *Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վնտ., 1890:* **Տաշեան Յ.**, *Ագաթանգեղոս ատ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վնն., 1891:* **Տէր-Մկրտչեան Գ.**, *Ագաթանգեղոսի աղբիւրներից: Յիշատակ դարակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից, որ վկայեցին յՈւռհա, Վաղ-պատ, 1896:* **Բիւզանդացի Ն.**, *Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900:* **Անասյան Հ. Մ.**, *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 161-213:* **Մելիք-Օհանջանյան Կ.**, *Ագաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները, «Սասո և հայագիտության հարցերը» [ժողվածու], Ե., 1968:* **Տեր-Ղևոնդյան Ա.**, *Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբ., բնագիր և ուսումնասիրություն), Ե., 1968:* **Աղոնց Ն.**, *Հայաստանը Հռափսիմեանոսի դարաշրջանում, Ե., 1987:* **Սուշեղյան Ա.**, *Ագաթանգեղոսի Հայոց պատմությունը և հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը, «ԼՀԳ», 1987, № 4, էջ 62-81:* **Նույնի**, *Կորյունն, թէ՞ Ագաթանգեղոս (բնագրերի քննություն նոր տեսանկյունից), «ԼՀԳ», 1996, № 2, էջ 49-57:* **Նույնի**, *Ագաթանգեղոսի Պատմության գրության ժամանակը և հեղինակի հարցը, «ԼՀԳ», 1996, № 2, էջ 57-64:* **Gutschmid A.**, *Agathangelos, Lpz., 1877;* **Thoumaian G.**, *Agathangelos et la doctrine de l'Eglise Arménienne au V^e siécle, Lauzanne, 1879;* **Ryssel V.**, *Ein Brief Georgs, Bischofs der Araber, an den Presbyter Jesus, aus dem Syrischben übersetzt und erläutert..., «Erweiterter Separatabdruck aus den Theologischen Studien und Kritik», Gotha, 1883;* **Lagarde P.**, *Agathangelus und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1887;* **Carrière A.**, *Les huit sanctuaires de l'Arménie payenne d'aprés Agathange et Moise de Khoren, P., 1899;* **Weber S.**, *Die Katholische Kirche in Armenien..., Freiburg im Breisgau, 1903;* **Carritte G.**, *Documents pour l'étude du livre d'Agathange, Roma, 1946;* **Նույնի**, *Une version arabe de l'Agathange grec dans le Sin, ar 395, Louvain, 1950.*

ԱԳԱԹՈՆ, **Ագադրոն անհաղթ փիլիսոփա, Ագադրոն հայրապետ, Սուրբ Ագադրոն**, կեղծանուն հեղինակ: Մեզ է հասել նրա «Վասն ժամանակին, որ յայտնելոց է...» երկը («Բազմավէպ», 1913, № 9-10)՝ գրված հավանաբար XIII դ-ի սկզբին: Այնտեղ պատմվում է հայ Արշակունիների թագավորությունը վերականգնելու մասին միջնադարյան Հայաստանում տարածված զրույցը, ըստ որի՝ մի օր պիտի գա ոմն Վաղարշակ արքա և հռոմեացիների օգնությամբ երկրից վտարի «իսմայելացիներին» (թուրքեր): Ֆլանդրիացի ճանապարհորդ Վ. Ռուբրուքը, 1255-ին լինելով Հայաստանում, վկայում է, որ «ամբողջ Հայաստանում պատմում էին այս մարգարեությունը»:

Ագաթանգեղոս



«Գիրք վիպասանութեան՝ որ կոչի Հոմանունակի Ագաթանգեղոս...» (1709-10, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) երկի փիրղոսաթերթը



«Պատմութիւն Ագաթանգեղոսի» (1995, Բեյրութ) գրքի կազմը

Գրկ. Սարգիսեան Բ., *Ուսումնասիրութիւնք Հին կրպակարանի անվաւեր գրոց վրայ, Վնտ., 1898, էջ 156–217:* Հովհաննիսյան Ա., *Դիվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Ե., 1957:*

ԱԳԱՊՅԱՆ Արշակ Սարգսի [20.5.1860, գ. Լալի (այժմ՝ գ. Վազաշեն՝ ՀՀ Տավուշի մարզում)–10.10.1905, գ. Լալի], գյուղագիր, մանկավարժ, հրապարակախոս: Ավարտել է Թիֆլիսի Ալեքսանդրյան ռուս. ուսուցչ. ինստ-ը (1886): Եղել է ուսուցիչ: 1881-ից աշխատակցել է «Մեղու Հայաստանի», 1888-ից՝ «Նոր-Դար» պարբ-ներին:



Սրեփանոս Ագոնց

Լույս են տեսել Ա-ի «Մուսինի գանգատը» (1890, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Գիւղի ճամփէն» (1896) պատմվածքները: Հեղինակ է նաև «Մարդասպան» (1896) վիպակի: Երևանում հրատարակվել են Ա-ի «Երկերը» (1934, 1966):

Գրկ. Դանիելյան Ս., *Արշակ Ագապյան, Ե., 1968:*

«ԱԳԻՏԱՏՈՐ ԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏ», ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի երկշաբաթյա հանդես: Լույս է տեսել Երևանում 1933–91-ին [1935-ին՝ «Պրոպագանդիստ» (ամսագիր), 1936–65-ին՝ «Ագիտատորի բլոկնոտ» (երկշաբաթյա հանդես), 1965–71-ին՝ «Ագիտատորի և պրոպագանդիստի բլոկնոտ», 1971–91-ին՝ «Ա. և պ.»]: 1991-ից՝ *«Քաղաքական գրուցակից»:*

ԱԳՈՆՑ Ստեփանոս Գյուվեր (Ագոնց Ամիրա Գրիգորի) [20.11.1740, Ջուրջով (Տրանսիլվանիա)–29.1.1824, Սբ Ղազար], հայագետ, աշխարհագետ: Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայր՝ 1800-ից: 1757-ին մեկնել է Վենետիկ, սովորել Սբ Ղազար վանքի դպրոցում, ձեռնադրվել քահանա: Տիրապետել է մի քանի հին և նոր լեզուների, դասավանդել է հայոց լեզու, ճարտասան. արվ., աշխարհագրություն, աստվածաբանություն: 1785–90-ին եղել է աբբահայր Ստեփանոս Մելքոնյանի աթոռակալը (փոխանորդ): 1790–1800-ին դասավանդել և քարոզել է Տրանսիլվանիայի հայկ. գաղութներում: Ֆրանս. տիրապետության տարիներին (1806–14), երբ վերացվել են բոլոր կրոն. միաբանությունները, Ա., Նապոլեոն I-ի հետ բանակցելով, կարողացել է պահպանել հայկ. միաբանությունը, և կայսեր 1810-ի օգոստ. 17-ի հրովարտակով այն ճանաչվել է գիտ. հաստատություն՝ «Հայկական ճեմարան» անվանումով: Ա-ի ջանքերով մադրասցի մեծահարուստներ Ռաֆայել Ղարամյանը և Սամվել Մուրադյանը միաբանությանը կտակել են խոշոր դրամագլուխ (մոտ 2 մլն ֆրանկ), որով ընդարձակվել են վանական շինություններն ու տպարանը, իսկ հետագայում բացվել են հայկ. դպրոցներ, տպագրվել գրքեր, հանդեսներ, քարտեզներ:



Ս. Ագոնցի *«Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ...» (1810, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

Ա. գրել է պատմաաշխարհագր., ճարտասան., կրոնաբարոյախոս. և այլ բնույթի ծավալուն երկեր: **«Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»** 11-հատորանոց (1-ին, 5-րդ և 6-րդ հատորները գրել է Ղ. Ինճիճյանը) երկում (1802–08) հավաստի ու արժեքավոր տեղեկություններ կան աշխարհի բազմաթիվ երկրների աշխարհագրության, պատմության, ժողովուրդների բարքերի ու սովորույթների, կենցաղի, քաղ., տնտ. ու մշակութ. կյանքի մասին:

Ա-ի **«Ճարտասանութիւն»** ուս. գիրքը տպագրվել է 1775-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ճարտասանութիւն բովանդակեալ ի հինգ գիրս...» (595 էջ, 8^0, 16,2 x 9,2 սմ):

Վենետիկում լույս են տեսել նաև Ա-ի «Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ րաբունապետի եւ աբբայի» (1810), «Հասարակախօսութիւն աշխարհագրութեան» (1817), «Տետութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց» (հ. 1–4, 1819), «Տետութիւն Նոր կտակարանաց Աստուածաշունչ Սուրբ Գրոց» (հ. 1–3, 1824, բոլորը՝ Սբ Ղազարի տպ.) երկերը:

Գրկ. [Սեթեան Ե.], *Նկարագիր վարուց Ստեփաննոսի Ագոնց Գիւվէր արքեպիսկոպոսի ընդհանրական Աբբայի Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1825:*

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ», գիտատեխ. ամսագիր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսության աջակցության հանրապետ. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1958-ից Երևանում (մինչև

2002-ը՝ «Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր», ապա՝ «Ագրոարդ գիտություն և արտադրություն»): Խմբագիրներ՝ Կոլյա Խոջոյան, Արմեն Խոջոյան, Ռաֆայել Սարուխանյան, Սեն Հովհաննիսյան, Վարդան Հայկազյան (2013-ից): Տպագրում է ՀՀ ագրոպարենային համակարգի գիտ. ձեռքբերումներին, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիաների ներդրմանը, ԳՀ աշխատանքների արդյունքներին վերաբերող հոդվածներ՝ հայ., ռուս., անգլ.՝ ամփոփումներով:

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ», գյուղատնտ. տեղեկատու շաբաթաթերթ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսության աջակցության հանրապետ. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1951-ից Երևանում (մինչև 1994-ը՝ «Օգնություն մեխանիզատորներին և ագիտտեխնիկական դասընթացների ունկնդիրներին», «Ագրոարդյունաբերության աշխատող», «Ռանչպար»): Խմբագիրներ՝ Սամսոն Բարսեղյան, Արմեն Բլրգյան, Կոլյա Խոջոյան, Արմեն Խոջոյան, Ռևիկ Գրիգորյան: Լուսաբանում է ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը՝ գյուղի ու գյուղատնտեսության առաջընթացի ռազմավարության, սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման, տոհմային գործի, հեռավոր ու սահմանամերձ համայնքների կենսամակարդակի բարելավմանը միտված ծրագրերի կենսագործման, ագրոբիզնեսի կազմակերպման, բյուջետային եկամուտների ավելացման գործընթացները:



«Ագրոգիտություն», *1958-ից, Երևան (№ 7-8, 2013)*

ԱԳՈՒԼԻՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XIV–XVIII դդ-ում Ագուլիսի Սբ Թովմա առաքյալի վանքում, որտեղ ընդօրինակվել է մոտ 90 ձեռագիր: Մեզ հասած ինագույն ձեռագիրը Վարդան գրիչի՝ 1375-ին ընդօրինակած Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմն է: Ա. գ. կ. ընդլայնել է գործունեությունը XV դ-ում՝ Հակոբ րաբունապետի ջանքերով: 1425-ին Մատթեոս գրիչն ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը», 1447-ին՝ «Տօնական», իսկ Թումա գրիչը 1432-ին՝ Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնը», ապա՝ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան», Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկերը: XVI դ-ից վկայություններ կան միայն ձեռագրերի նորոգման մասին, իսկ XVII դ-ից պահպանվել է 8 ձեռագիր:

Ա. գ. կ. 1752-ին կողոպտել են Ատրպատականի Ազատ խանի, 1789-ին՝ Մուստաֆա խանի հրոսակները: Վանքի սպասքից բացի՝ նրանք հափշտակել են նաև ձեռագրերը (1477-ի Ճաշոցը 3900 արծաթով Պետրոս տիրացուն գնել է և վերադարձրել վանքին):

Ա. գ. կ-ում գրված 10 ձեռագիր պահվում է Մատենադարանում:

«ԱԴԱԲԻ ԷՐՄԱՆԻՍՏԱՆ» (ադրբ., «Գրական Հայաստան»), գրական տարեգիրք: Լույս է տեսել 1957–89-ին Երևանում՝ ադրբ.: Խմբագիրներ՝ Սահառամ Բայրամով, Արշավիր Դարբնի, Աքպեր Երևանլի: Տպագրել է հայաստանաբնակ ադրբեջանցի գրողների ստեղծագործություններ, ներկայացրել հայ խորհրդ. գրակ-ը, հրատարակել հայ-ադրբ. գրական-թատեր. կապերին նվիրված հոդվածներ: Նույն տարիներին Բաքվում լույս է տեսել *«Գրական Ադրբեջան»* հայ. թերթը:



«Ագրոլրատու», *1951-ից, Երևան*

ԱԴԱԼՅԱՆ Նորայր Մարտիրոսի (ծ. 30.7.1936, Սիմֆերոպոլ), գրող, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1994): Մշակույթի վաստ. գործիչ (2010): Ավարտել է ԵՊՀ (1960): 1982–86 և 2002–06-ին՝ «Գրական թերթի» խմբագիր, 1986–88-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:



Նորայր Ադալյան

Լույս են տեսել Ա-ի «Խաղաղ զորանոցներ» (1973), «Դավայաթաղ» (1997), «Ապոկալիպսիս» (1999), «Համաճարակ» (2003), «Միջնանոց» (2006), «Ծաղրածու մեծ քաղաքում» (2010) վեպերը, «Շոգ ամառ» (1965), «Տեսիլք» (2004, գերմ.՝ 2007, սլովեն.՝ 2010), «Փոխակերպություններ» (2006) վիպակները և «Եփրատը» (1980), «Մենախոսության ժամեր» (1981), «Կապույտ Երզնկա» (1985) պատմվածքների, «Սայիս» (2005) պիեսների, «Քննադատության



Ն. Ադալյանի *«Կապույտ երգնկա» (1985, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Ռ. Ադալյան) գրքի կազմը*



Արթուր Ադամով



Գ. Ադդարյանի *«Վազգէն Շուշանեան» (1966, Բեյրութ) գրքի շապիկը*

ժամանակը» (1977), «Ճամփաներ և ճամփորդներ» (1988), «Սփյուռքի բառեկամիս» (1995) գրաքննադատ. և հրապարակախոս. հոդվածների ժող-ները, «Թոթովենց» (1994) գրականագիտ. աշխատությունը: Ա-ի պիեսները («Ներկաներ և բացականեր», 1985, «Սպանության վկաները», 1991, «Կինը և տղամարդը», 1999) բեմադրվել են Երևանի դրամատիկ. թատրոնում: Ա-ի պատմվածքների հիման վրա նկարահանվել է «Վերջին կիրակին» (1984) գեղ. կինոնկարը:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի (1981) և Լ. Շանթի (2006) անվ., «Վահագն» համահայկ. (2000), ՀՀ նախագահի (2009) մրց-ներ, ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալ (2012):

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1986: Թաղման թափոր (պատմվածքներ), Ե., 2000: Սև քառակուսի կարմիր անապատում, Ե., 2008: Պարականոն վիպակներ և պատմվածքներ (ժող.), Ե., 2012:

Գրկ. **Հարությունյան Ա.,** *Գրական հերոսի ինքնության որոնումները. մենության թեման և հասարակությունից օտարվող մարդը Նորայր Ադալյանի ստեղծագործության մեջ, Ե., 2010:* **Դոլուխանյան Ա.,** *Նորայր Ադալյանի ստեղծագործությունը, Ե., 2011:*

ԱԴԱՄՅԱՆ Կարապետ (Շառլ) Մկրտչի (1872, Կ. Պոլիս–1947, Փարիզ), նկարիչ: Սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում (1887–93): Ստեղծագործել է Կ. Պոլսում, 1897-ից՝ Փարիզում: 1927-ից՝ Փարիզի գեղ. ազգ. ընկերության անդամ: Ֆրանսահայ նկարիչների «Անի» ընկերության հիմնադիրներից:

Ա. զբաղվել է գրքի գեղ. ձևավորմամբ. պատկերազարդել է Ա. Ֆրանսի, Գի դը Մոպասանի, Հ. Բորդոյի, Է. Բուլվեր-Լիտոնի և ուր. շուրջ 150 անուն գիրք: Աշխատակցել է ֆրանս. հայտնի «Իլյուստրասիոն», «Լը մոնդ իլյուստրե» և այլ պարբ-ների:

Գրկ. **Շիշմանյան Ռ.,** *Հանկարծ ու հայ նկարիչները, Ե., 1958:*

ԱԴԱՄՅԱՆ Սանվել (ծ. 16.12.1935, Բեյրութ), բանաստեղծ, դրամատուրգ, հրատարակիչ: Ավարտել է Բեյրութի Աբգարյան ազգ. վարժարանը (1952), ԵՊՀ (1968): 1971–87-ին եղել է Բեյրութի Սահակ-Մեսրոպյան վարժարանի տնօրեն, միաժամանակ դասավանդել է ՀԲԸՄ Երվանդ Հյուսիսյան համալսարանում: Հիմնադրել է «Կոչնակ», ***«Նոր սերունդի ձայն»*** (հայ-անգլ.) ամսագրերը:

Լույս են տեսել Ա-ի «Կռունկները երգեցին» (1963), «Տաք մոխիր» (1984), «Հատուցում» (1990), «Քարէ ծաղիկ» (1991), «Այֆան և Օմեղան» (2004) բանաստեղծությունների, «Փաստեր եւ մտորումներ» (1997) հրապարակախոս. հոդվածների, «Թատերգութիւններ» (2011) պիեսների ժող-ները:

ԼՂՀ մշակույթի նախարարության (2010), ՀՀ «Մովսես Խորենացի» (2010) մեդալներ:

ԱԴԱՄՈՎ Արթուր (Ադամյան Հարություն Սուրենի, 23.8.1908, Կիսլովոդսկ–15.3.1970, Փարիզ), թատերագիր, գրող: Ֆրանսիայի գրողների ազգ. կոմիտեի անդամ: 1914-ին ծնողների հետ տեղափոխվել է Եվրոպա, 1924-ին հաստատվել Փարիզում: Սովորել է Մայնցում, Ժնևում: Կառավարության դեմ ելույթների համար բանտարկվել է Արժելեի համակենտրոնացման ճամբարում (1941): 1946-ին հրատարակել է «Խոստովանություն» ինքնակենսագր. վիպակը:

Լույս են տեսել Ա-ի «Պարոդիա», «Ներխուժում» (երկուսն էլ՝ 1950), «Բոլորը բոլորի դեմ» (1951), «Ուսուցիչ Տարանը» (1952, հայ. հրտ.՝ «Պրոֆեսոր Տարանը», 1983), «Մարդիկ իրար վերազտնում են» (1953), «Պինգ-պոնգ» (1955) պիեսները: «Պաոլո Պաոլի» (1957) պիեսում պատկերել է Առաջին համաշխ. պատերազմին նախորդող տարիների սոցիալ-պատմ. իրականությունը: «Յոթանասունմեկի գարունը» (1961) ողբերգության մեջ արտացոլել է Փարիզի կոմունայի դեպքերը: Կյանքի վերջին տարիներին գրել է «Մնացուկների քաղաքականությունը» (1962), «Սրբազան Եվրոպա» (1966), «Մուտքն արգելված է» (1966), «Պարոն Չափավորը» (1968), «Չափից դուրս» (1968) երկերը: Պիեսի է վերածել Ն. Գոգոլի «Մեռած հոգիները»: Ա. նաև բանաստեղծությունների, թատեր. տես. ուսումնասիրությունների («Աստ և Արդ», 1964), արձակ գործերի («Այր և Մանուկ», 1968) հեղինակ է:

Երկ. The'âtre, v. 1–4, P., 1953–68.

Գրկ. **Մխիթարյան Ս.,** *Ֆրանսերենով արտահայտվող հայ արվեստագետներ, Փարիզ, 1969:* **Tacguart E.,** *Le the'âtre de dirision, P., 1974.*

ԱԴԱՆԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XIII–XVIII դդ-ում: Հիշատակվող առաջին գրիչը Ստեփանոսն է, որը 1244-ին Սմբատ Սպարապետի պատվերով ընդօրինակել է Արիստոտելի «Ստորոգութիւնքը»: 1284-ին Ա. գ. կ-ում Կոստանդին գրիչն ընդօրինակել է Ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 4207), իսկ 1290-ին Խաչատուր գրիչը՝ Ավետարան: XIII դ-ի վերջին նշանավոր գրիչներ Ստեփանոս Գոյներերիցանցը, Պետրոսը և ուր. ընդօրինակել են Աստվածաշունչ, որը սրբագրել ու գլխագրել են Գևորգ Սկևռացի և Խաչատուր վարդապետները: XIV–XVI դդ-ից ձեռագրեր չեն պահպանվել: 1610-ին Ա. գ. կ-ում ընդօրինակվել է Մաշտոց: Հիշատակություններ են մնացել գրչության ուսուցիչ Աբրահամի մասին, որից մեզ է հասել 1639-ին ընդօրինակած Շարակնոց: Շարակնոց են ընդօրինակել նաև Մանուկ Մովսեսը (1646) և Սահակը (1659): XVII–XVIII դդ-ից հայտնի են 10-ից ավելի ձեռագրեր, որոնց մի մասը պահվում է Մատենադարանում:

ԱԴԱՐՅԱՆ Գառնիկ Հովսեփի (23.3.1925, Հալեպ–30.11.1986, Բեյրութ), բանաստեղծ, հրապարակախոս, խմբագիր, հաս-քաղ. գործիչ: Ավարտել է Հալեպի ֆրանս. վարժարանը: 1954–55-ին՝ «Մշակոյթ», 1955–56 և 1959-ին՝ «Գիրք գրականութեան եւ արուեստի» (Գեղամ *Սևանի* հետ) պարբ-ների, 1965–72-ին՝ «*Էջեր գրականութեան եւ արուեստի*» (Գ. Սևանի և ուր. հետ) պարբերագրքի խմբագիր: Իր խմբագրած հայկ. պարբ-ներում և արաբ. («Ալ-Նիդա», «Աթ-Թարիք» ևն) մամուլում հանդես է եկել հայ-արաբ. բարեկամությանը և սփյուռքահայության գոյատևմանը վերաբերող հոդվածներով:

Բեյրութում լույս են տեսել Ա-ի «Պատնէշին վրայ» (1954), «Ապրիմ-մեռնիմ» (1968) բանաստեղծությունների ժող-ները, «Սատեան ցաւի եւ հատուցման» (1965) պոեմը, «Սեւ եւ կարմիր» (1978) պատմվածքների ժող-ը, «Երկերը» (հ. 1, 2, 1988, 1991), «Վազգէն Շուշանեան» (1966) աշխատությունը, Երևանում՝ «Երկերը» (1988):

Երևանի № 133 դպրոցը կոչվել է Ա-ի անունով:

Գրկ. **Թորանեան Թ.,** *Գառնիկ Ադդարեան: Կեանքն ու գործը, Հալեպ, 1989:* **Սևան Գ.,** *Գառնիկ Ադդարյան (Կյանքը և ստեղծագործությունը), Ե., 1998:*



Գառնիկ Ադդարյան

ԱԴՅԱՆ Լևոն (Լավրենտի) Ոսկանի [ծ. 30.8.1940, գ. Չլդրան (ԼՂՀ Մարտակերտի շրջան)], արձակագիր, թարգմանիչ: Սովորել է Բաքվի մանկավարժ. ինստ-ում, ավարտել է (1964) ԵՊՀ: 1964-ից աշխատել է Բաքվի «*Գրական Ադրբեջան*» հանդեսում՝ որպես բաժնի վարիչ, 1979–81-ին՝ գլխ. խմբագրի պաշտոնակատար:

Լույս են տեսել Ա-ի «Կյանքի ճանապարհին» (1967), «Հեռու լեռներում» (1968), «Իմ երկրի մարդիկ» (1970), «Տունը գյուղի ծայրին» (1971), «Այն հեռավոր ամռանը» (1975), «Ձորով մի գետ է հոսում» (ադրբ., Բաքու, 1977), «Կորսված բարդիներ» (1979), «Լեռների մարդը» (ադրբ., Բաքու, 1981), «Սառացված երգը» (1981), «Աշնանային ցրտեր» (1982), «Անկն ընդ ական» (1983), «Հայրական տուն» (1984), «Հավերժական վերադարձ» (ադրբ., Բաքու, 1984), «Ձորի տունը» (ադրբ., Բաքու, 1985) արձակ գործերի ժող-ները:


Ադրբ-ից թարգմանել է Մ. Իբրահիմովի, Հ. Աբասզադեի, Ի. Կասումովի, Ջ. Ջաբարլիի, Ս. Կասպարովի, Էյչինի, Ն. Նարիմանովի ստեղծագործություններից:



Ա-Դո

Ա-ԴՈ [Տեր-Մարտիրոսյան Հովհաննես Գրիգորի, 14.1.1867, Նոր Բայազետ (այժմ՝ ք. Գավառ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–7.2.1954, Երևան], պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Երևանի թեմ. դպրոցը (1891), սովորել Խարկովի համալսարանում և Ս.Պետերբուրգի հոգևնյարդաբան. ինստ-ում:

Լույս են տեսել Ա-Դ-ի փաստ., վիճակագր., տեղագր. լուսաբանություններով հարուստ «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906)» (1907, Ե., Այվազյանի և Նազարյանի տպ.), «Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից» (1908, Ե., «Լույս» տպ.), «Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները» (1912, Ե., «Կուլտուրա» տպ.), «Մեծ դէպքերը Վասպուրականում. 1914–1915 թուականներին» (1917, Ե., «Լույս» տպ.) պատմ. աշխատությունները: Հեղինակ է նաև գրականագիտ. աշխատությունների, որոնք 1913–17-ին տպագրվել են «Նոր հոսանք» և «Գործ» հանդեսներում: 2013-ին հրատարակվել է Ա-Դ-ի «Ռուսական ցարերը և Հայկական հարցը» աշխատությունը:



Ա-Դոյի *«Ռուսական ցարերը և Հայկական հարցը» (2013, Ե., «Գիտություն») գրքի կազմը*



Նիկողայոս Ադոնց



«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1987, Ե., «Հայաստան») գրքի կազմը



«Երկեր»-ի (հ. Ա, 2006, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը

ԱԴՈՅԱՆ Ադո Գրիգորի [1.9.1905, գ. Խորգոմ (Վանի նահանգի Հայոց ձոր գավառ)–1986, Երևան], լրագրող, խմբագիր, հաս. գործիչ: Սշակույթի վաստ. գործիչ (1967): Ավարտել է Անդրկովկասյան կոմ. համալսարանը (1929): 1935–36-ին սովորել է Մոսկվայի համաշխ. տնտեսության և համաշխ. քաղաքականության կարմիր պրոֆեսուրայի ինստ-ում: 1956–86-ին՝ «*Լենինյան ուղիով*» ամսագրի գլխ. խմբագիր: Տպագրել է բարոյագիտ., քաղ., սոցիոլոգ., հայագիտ. հոդվածներ:

Լույս է տեսել Ա-ի «Սիրո և ընտանիքի էվոլյուցիան» (հ. 1, 2, 1967, 1972, բրփխ. հրտ.՝ 1990) մենագրությունը:

ԱԴՈՆՑ (Տեր-Ավետիքյան) Նիկողայոս Գևորգի [10.1.1871, գ. Բռնակոթ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–27.1.1942, Բրյուսել], պատմաբան, բյուզանդագետ, բանասեր: Բանասիրության դ-ր, պրոֆ. (1916): Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանը (1899): Դասավանդել է նույն համալսարանում, պրիվատ-դոցենտ՝ 1909-ից: 1903–04-ին խմբագրել է *«Բանբեր գրականութեան եւ արուեստի»* պարբ-ը: 1916–17-ին մասնակցել է Վանի, Մուշի և Էրզրումի հնագիտ. արշավախմբերի աշխատանքներին: 1920-ից ապրել է Լոնդոնում, Փարիզում: 1931–42-ին դասավանդել է Բրյուսելի համալսարանում, ղեկավարել հայագիտ-յան ամբիոնը:

Ա-ի շուրջ 100 գիտ. աշխատություններ վերաբերում են հայոց միջնադարյան պատմությանն ու գրակ-յանը, հայ-բյուզ. հարաբերություններին («Պատմական ուսումնասիրություններ», 1948), հայ-հուն. բանասիրությանը («Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները», ռուս., 1915): «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (ռուս., 1908, հայ. հրտ.՝ 1987) կոթողային մենագրության մեջ հետազոտել է Հայաստանի պատմաաշխարհագր. և հաս-քաղ. կառուցվածքին, հայ-բյուզ. հարաբերություններին, նախարար. տոհմերին առնչվող խնդիրներ, առաջին անգամ գիտականորեն վերլուծել հայկ. ավատատիրության, հայ գյուղացիության հարցերը: Արժեքավոր են Ա-ի աղբյուրագիտ. և բանասիր. ուսումնասիրությունները՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցին («Մաշթոց եւ նրա աշակերտները, ըստ օտար աղբիւրների», Վնտ., 1925), Մովսես Խորենացուն, Փավստոս Բուզանդին, Կորյունին, Եզնիկ Կողբացուն, Մովսես Կաղանկատվացուն, Ղևոնդին: 1930-ական թթ-ի վերջին Ա. ձեռնարկել է շարադրելու հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, որի 1-ին հատորը լույս է տեսել ֆրանս. (1946) և հայ. («Հայաստանի պատմություն», 1972):

«Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» (1927) աշխատության մեջ Ա. հին Հայաստանի պատմության հիմն. շարժիչ ուժը համարել է ազնվականությանը: Անդրադարձել է նաև հայ եկեղեցու պատմության զանազան հարցերի («Հայոց առաքելութիւնը Յոնաց աշխարհում», 1902, «Հայ ծաթերի ծագման մասին», ռուս., 1911, «Պատկերների խնդիրը Հայոց եկեղեցու մեջ», 2003, ևն): «Հայացած Աստվածաշունչն ու նրա պատմական տարողությունը» (ֆրանս., 1936) երկում Ա. վերլուծել է Աստվածաշնչի հայ. թարգմանության գրական-գեղ. արժանիքները: Ա-ի՝ հայկ. հարցի վերաբերյալ հոդվածները լույս են տեսել «Հայկական հարց» ժող-ում (1996): Ուշագրավ են Բրոքհաուզի և Եֆրոնի հանրագիտարանի Հայաստանի մասին Ա-ի հոդվածները:


Երևանում լույս են տեսել Ա-ի «Հայկական հարցի լուծման շուրջ» (1989), «Երկեր» (հ. Ա–Ջ, 2006–12), «Հայաստանի ոսկե հանքը» (2006), Էջմիածնում՝ «Քննություն Մովսես Կաղանկատվացու» (աշխատասիր., ծնթգր. և ներածությունը՝ Պ. Հովհաննիսյանի, 2005), «Տիգրան մեծ: Ուսումնասիրություններ» (2010) աշխատությունները:

Գրկ. Ուսուցչապետ Նիկողայեոս Ադոնց (աշխատությունների ամբողջ. ցանկը), «ՀԱ», 1947, № 5: **Յուզբաշյան Կ.,** *Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, «ՊԲՀ», 1962, № 4:*

«ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ», գրվել և պատկերազարդվել է 1007-ին Ադրիանապոլսում՝ ազնվական Հովհաննես Պրոքսիմոսի պատվերով: Գրիչը Կիրակոս Երեցն է, նկարիչը հայտնի չէ: Ձեռագիրը զարդարված է խորաններով, 2 խաչապատկերով, ավետարանիչների, «Տիրամայրը մանկան հետ» մանրանկարներով և պատվիրատուի դիմանկարներով:

1883-ին Կ. Պոլսից բերվել է Սբ Ղազար կղզի, պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում (ձեռ. № 887/116, 32 x 42 սմ):

Գրկ. Հայկական մանրանկարչութիւն. Մխիթարեան մատենադարան ձեռագրաց, [հ.] 1, Վնտ., 1966:



«Ադրիանուպոլսի Աւետարան»-ի *1 էջ (1007, Վենետիկի մատենադարան, ձեռ. № 887/116)*

«ԱԶԱԴ ՄԱԳԱԶԻՆ» («Azad Magazine»–«Ազատ ամսագիր»), եռամսյա պատկերազարդ հանդես: Գրենոբլի հայ մշակույթի տան հրատ.: Լույս է տեսնում 1977-ից Գրենոբլում (Ֆրանսիա)՝ ֆրանս., 2 էջ՝ հայ.: Խմբագիր՝ Գրիգոր (Գրեգուար) Ադամյան: Լուսաբանում է մշակույթի տան գործունեությունը, Ֆրանսիայի, մասնավորապես՝ Գրենոբլի հայկ. համայնքի կյանքը: Անդրադառնում է ՀՀ-ի և ԼՂՀ-ի կարևոր իրադարձություններին: Ունի մարզ., մշակութ. և տեղեկատվ. բաժիններ:

«ԱԶԱՏ ԱՐՑԱԽ», հաս-քաղ. երկօրյա թերթ (մինչև 1967-ը՝ շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա, 1991-ից՝ օրաթերթ): ԼՂՀ ԱԺ և Կառավարության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1923-ից. մինչև 1925-ը՝ Շուշիում, 1925-ից՝ Ստեփանակերտում (1923-ին՝ «Ղարաբաղի գեղջուկ», 1923–40 և 1989–92-ին՝ «Խորհրդային Ղարաբաղ», 1940–89-ին՝ «Սովետական Ղարաբաղ», 1992–95-ին՝ «Արցախ», 1995–98-ին՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» անվանումներով, 1923–89-ին՝ Ադրբեջանի ԿԿ ԼՂԻՄ մարզկոմի և ժող. պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի, 1989-ի փետր. 17-ից 1990-ի հունվ. 6-ը՝ ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի, 1990-ի հունվ. 7–18-ը՝ ԼՂԻՄ Ազգ. խորհրդի, 1990-ի հունվ. 19-ից մարտի 29-ը՝ ԼՂ մարզային կուս. կազմակերպությունների և ժող. պատգամավորների խորհուրդների, 1990-ի մարտի 30-ից 1991-ի հունվ. 29-ը՝ ԼՂ մարզային կուս. կազմակերպությունների և ժող. պատգամավորների ԼՂԻՄ խորհրդի, 1991–1996-ին՝ ԼՂՀ ԳԽ պաշտոնաթերթ): Հայրեն. պատերազմի (1941–45) տարիներին և 1980-ից հրատարակվել է նաև ռուս. («Սովետսկի Կարաբախ», այժմ՝ «Սվոբոդնի Արցախ») տարբերակը: Խմբագիրներ՝ Սերո Մանուցյան, Սուրեն Հախումյան, Անդրանիկ Ավագյան, Գրիգոր Խաչյան, Մեդրակ Վարդանյան, Արմենակ Կարապետյան (Կարմեն), Գրիգոր Հովհաննիսյան, Հրանտ Շահրամանյան, Գրիգոր Ղազարյան, Սերգեյ Յարամիշյան, Սամիկոն Մարգարյան, Արսեն Եղիազարյան, Արտաշես Բալայան, Բագրատ ***Ալուրաբյան***, Լազր Գասպարյան, Եղիշե Սարգսյան, Արամայիս Ավագյան, Հովհաննես Արզումանյան, Մաքսիմ ***Հովհաննիսյան***, Կոմիտաս Դանիելյան, Գերսամ Բաղդասարյան, Միքայել Հաջյան, Հայկազ Ղահրիյան (2000-ից): Լուսաբանել է մարզի առօրյան, հաս-քաղ., մշակութ. և կրթ. կյանքը, երիտասարդության խնդիրները, Հայաստանի կարևորագույն իրադարձությունները, ունեցել է գրական ու մշակութ. էջեր:



«Ազատ մագազին», *1977-ից, Գրենոբլ [№ 140 (4), 2012]*

Ազգ-ազատագր. շարժման տարիներին ներկայացրել է Արցախյան ազատամարտը, մեծ տեղ է հատկացրել մարզի իրական պատմությանը, բազմաթիվ նյութեր ու փաստաթղթեր տպագրել Հայկ. հարցի պատմության խեղաթյուրումների, ադրբ. իշխանությունների՝ Արցախը հայաթափելու գործողությունների մասին, մերկացրել նրանց թշնամական վերաբերմունքը մարզի հայ բնակչության նկատմամբ: 1990-ի հունվ-ին Ղարաբաղում արտակարգ դրություն մտցնելուց հետո թերթը ենթարկվել է խիստ գրաքննության: Զինադադարից (1994) հետո հիմնականում անդրադառնում է երկրի տնտեսության վերականգնման, նորաստեղծ հանրապետության պետ. կառույցների



«Ազատ Արցախ», *1923-ից, Սրեփանակերտ*



«Ազատ բեմ»,
1903–07, Ալեքսանդրիա, Կահիրե



«Ազատ խօսք»,
1949–51, Փարիզ



«Ազատ օր»,
1945-ից, Աթենք



«Ազատամարտ»,
1909–21, Կ. Պոլիս

ստեղծման գործընթացին, Արցախյան հիմնախնդիրը համաշխ. հանրությանը ներկայացնելու, հանրապետության մշակութ., սոցիալ-տնտ. բարեփոխումների, կրթ., առողջապահ. և այլ հարցերի:

«ԱԶԱՏ ԲԵՄ», ազգ., գրական և քաղ. շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա: Լույս է տեսել 1903–05-ին Ալեքսանդրիայում, 1906–07-ին՝ Կահիրեում: Խմբագիրներ՝ Երվանդ *Օտյան*, Միքայել *Կյուրճյան*, Վահան *Թեքեյան*, 1906-ից՝ Լևոն Լարենց (Քիրիշճյան), Բարսեղ Օհանյան, Օննիկ Թաշճյան: Սկզբում ունեցել է վերակազմյալ հնչակյան ուղղվածություն, հետագայում դարձել է նույն կուս-յան պաշտոնաթերթը: Տպագրել է տեղ. լուրեր, գրական նյութեր, անդրադարձել այլ գաղութների, օսմ. տիրապետության տակ ապրող հայության կյանքին և Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին: Զգալի տեղ է հատկացրել Ռուս-ճապոն. պատերազմին, ռուս. առաջին հեղափոխությանը և Այսրկովկասի ազգամիջյան ընդհարումներին: «Ա. բ.»-ին աշխատակցել են Վ. Թեքեյանը (Վ. Տիրանյան կեղծանունով), Ա. Արփիարյանը, Վ. Մալեզյանը, Տ. Կամսարականը, Մ. Պեյլերյանը և ուր.:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ», ամսագիր, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել Փարիզում 1901-ին, 1902–03 և 1906–08-ին՝ Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Խմբագիր՝ Երվանդ Օտյան: Լուսաբանել է Ֆրանսիայի, ապա՝ Եգիպտոսի հայկ. գաղութների կյանքը, ծաղրել եգիպտահայ «ազգային ջոջերին», անդրադարձել է միջազգ. կարևոր իրադարձություններին, մասնավորապես Թուրքիայում տիրող իրավիճակին: Պարբ-ին աշխատակցել են Ա. Արփիարյանը, Մ. Կյուրճյանը, Վ. Թեքեյանը, Բ. Շահպազը և ուր.:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ», օրաթերթ: Հայկ. հրատարակչ. ընկերության պաշտոնաթերթ: Լույս է տեսել Փարիզում 1949–51-ին: Խմբագիր՝ Աբել Նազարյան: Տպագրել է հաս-քաղ. և գրական-գեղ. նյութեր: Արտացոլել է սփյուռքահայ, հատկապես ֆրանսահայ գաղութի կյանքը, Խորհրդ. Հայաստանի տնտ. ու մշակութ. վերելքը: Նյութեր է տպագրել նաև ԽՍՀՄ հետպատերազմյան շրջանի տնտ. կյանքի, արտաքին քաղաքականության մասին:

«ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ», ընդհատակյա պարբ.: Հայ բանվոր-հեղափոխականների ընկերակցության պաշտոնաթերթ: Հրատարակվել է 1893–94-ին Թիֆլիսում, սակայն թերթի ճակատին գրել են Բրյուսել՝ ցար. գրաքննությանը թյուրիմացության մեջ գցելու համար: Խմբագիրներ՝ Սարգիս Խանոյան, Աշոտ Խումարյան, Ստեփան Տեր-Սիմոնյան, Արշակ Խաժակյան, Պետրոս Մնացականյան: «Ա. Հ.» հայ. առաջին բանվոր. թերթն էր Այսրկովկասում: Արծարծել է աշխատավորությանը հուզող հարցեր, հատուկ համար նվիրել Մայիսմեկյան տոնին, թարգմանաբար տպագրել Կարլ Մարքսի հոդվածներից:

«ԱԶԱՏ ՕՐ», ազգ., հաս., քաղ., գրական օրաթերթ: ՀՅԴ պատասխանատու մարմնի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1945-ից Աթենքում՝ հայ. և հուն.: «Նոր օր» (1923–40, խմբագիր՝ Գաբրիել Լազյան) օրաթերթի շարունակությունն է: Խմբագիրներ՝ Սեդրակ Գոհարունի, Անտոն Կազել, Վազգեն Եսայան, Ահարոն Ստեփանյան, այժմ՝ խմբագր. խորհուրդ (ղեկ.՝ Հռիփսիմե Հարությունյան): Տպագրում է հաս-քաղ. նյութեր, վերլուծ. հոդվածներ, հարցազրույցներ քաղ. և մշակույթի գործիչների հետ, լուսաբանում հունահայ համայնքի կյանքը, սփյուռքահայ միությունների գործունեությունը, անդրադառնում միջազգ. և հայաստանյան իրադարձություններին, հոդվածներ է արտատպում ՀՀ, ԼՂՀ և սփյուռքահայ մամուլից: Յուրաքանչյուր տարվա ավարտին թերթը լույս է ընծայում գունավոր բացառիկ համար և «Օրացույց»՝ հայ-հուն. տոնացույցով, ինչպես նաև հոբելյան. հատուկ հրատ-ներ: Ունի սեփական կայքէջ: Տարածվում է Հունաստանում և եվրոպ. որոշ քաղաքներում:

«Ա.ԶԱՏԱՄԱՐՏ», ազգ., քաղ., սոցիալ. օրաթերթ: ՀՅԴ արմ. բյուրոյի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1909–14 և 1918–21-ին Կ. Պոլսում (1912-ից հաջորդաբար տպագրվել է «Առաջամարտ», «Բագին», «Բիւթանիա», «Ազդակ», «Մեղու», «Շանթ», «Ճակատամարտ», «Արդարամարտ», «Արիամարտ» անվանումներով): Խմբագիրներ՝ Ռուբեն *Զարդարյան*, Հակոբ *Միրունի*, Գեղամ *Բարսեղյան*: Լուսաբանել է կուսյան գործունեությունը, գաղափարախոսությունը, անդրադարձել պոլսահայ համայնքի կյանքին, ազգ. խնդիրներին: 1910–12-ին ունեցել է «Ազատամարտ» (1912-ին՝ «Բագին») գրական-գեղ., գիտ. հավելված-շաբաթաթերթը (խմբագիր՝ Ռուբեն Զարդարյան):

Ա.ԶԱՏՅԱՆ Երվանդ (Կոտալազյան Էդմոն) Նազարեթի (ծ. 13.5.1935, Բեյրութ), գրող, հրապարակախոս, հաս. գործիչ, խմբագիր: ԵՊՀ պատվ. դ-ր (1988): ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (2008): Ավարտել է Բեյրութի ամերիկյան (1958), Բոստոնի «Նորդ Հիսթըրն» և Դետրոյտի «Ուեյն Սթեյթ» (1973) համալսարանները: 1954–58-ին՝ Բեյրութի «Զարթօնք-սպորտ» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր, 1959–67-ին՝ Կահիրեի *«Արեւ»* օրաթերթի խմբագրապետ, 1967–72-ին՝ Բոստոնի «Պայքար» հաստատության վարիչ-տնօրեն, 1971-ից՝ Մոնրեալի «*Ապագայ*» շաբաթաթերթի, 1986-ից՝ Նյու Յորքի *«Արարատ»* (անգլ.) հանդեսի, 1991-ից՝ Երևանի *«Ազգ»* օրաթերթի, 2006-ից՝ Բեյրութի *«Կամար»* գրական հանդեսի հիմնադիր-աշխատակիցներից: 1972–97-ին՝ ՀԲԸՄ Ալեք Մանուկյան մշակութ. հիմնադրամի ատենապետ, 1973-ից՝ Դետրոյտի «Հայ մշակույթի ժառանգություն» (անգլ.) ռադիոծրագրի տնօրեն, 1994–97-ին՝ ԱՄՆ-ի և Կանադայի ԹՄՄ կենտր. վարչության ատենապետ, 1997-ից՝ փոխատենապետ: Վերլուծ. հոդվածներով հանդես է գալիս «Ազգ» (Երևան) և այլ թերթերում:

Լույս են տեսել Ա-ի «Կեանք ու երազ Հայաստան» (1964) ուղեգրությունը, «Գրական գեղարուեստական սեւեռումներ» (1988, Լոս Անջելես), «Դիմա-նկարներ ու դիմաստվերներ» (անգլ., 1995) գրականագիտ. ուսումնասիրությունները, «Պատմությունը ընթացքի մեջ» (անգլ., 1999), «Դիտումներ եւ դատումներ» (2006) էսսեների, հրապարակախոս. հոդվածների ժող-ները:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (1989) շքանշան, ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (1981), ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2009) մեդալներ:

Գրկ. Երուանդ Ազատեան: Մատեան մեծարանքի, Լոս Անջելես, 1988:

Ա.ԶԱՏՅԱՆ Թորոս Մարտիրոսի, **Ազատունի** [5.5.1898, գ. Ապուչեխ (Ակնի գավառ)–15.11.1955, Ստամբուլ], բանասեր, բանաստեղծ, խմբագիր, հաս. գործիչ: Սովորել է Ակնի, Վարագի և Չմշկածագի վարժարաններում: Կ. Պոլսում 1921–31-ին խմբագրել է *«Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկչեան ազգային հիւանդանոցի»* տարեգիրքը, 1931–39-ին՝ «Արեւելք», 1932–33-ին, միաժամանակ՝ «Զարթօնք» պարբ-ները, 1951–54-ին՝ «Աստղաբերդ» հայագիտ. ազգագր. ամսագիրը: Հիմնադրել է «Մշակույթ» (1948) հրատարակչությունը:

Լույս են տեսել Ա-ի «Աղբիւր անմահութեան» (1927, 1928, 1933) բանաստեղծությունների շարքերը, «Քառասնակ» (1930) արձակ գործերի ժող-ը, «Միսաք Մեծարենց» (1922), «Կոմիտաս վարդապետ. իր կեանքն ու գործունէութիւնը» (1931), «Զապել եւ Հրանդ Ասատուր» (1937), «Ակն եւ ակնցիք» (1943) գրականագիտ. և բանասիր. աշխատությունները: Կազմել է Կ. Պոլսի մի շարք դպրոցների, վարժարանների, թերթերի մասին գրքեր, հիշատակարաններ («Պեզճեան մայր վարժարանի Գում Գաբու 1830–1930 հարիւրամեայ յոբելեան», 1930, «Պատմութիւն էսաեան վարժարանի 1895–1945» (1945, Ստամբուլ), ««Ժամանակ» թերթի քառասնամեայ յիշատակարանը», 1948), «Մշակոյթ» ազգագր. տարեգիրքը (Ա տարի, 1948):

Ա.ԶԱՏՅԱՆ Հայկ Նահապետի [25.9.1881, Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր)–13.11.1964, Թբիլիսի, թաղված է Երևանում], տնտեսագետ, հաս-քաղ. գործիչ, խմբագիր: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956), պրոֆ. (1928): Սովորել է Թիֆլիսի ռեալ. ուսումնարանում, 1903–05-ին՝ Բեռնի համալսարանի բժշկ. ֆակ-ում, Փարիզում և Բեռլինում հետևել է հաս.



Երվանդ Ազատյան



Ե. Ազատյանի *«Գրական գեղարուեստական սեւեռումներ» (1988, Լոս Անջելես) գրքի կազմը*



Թորոս Ազատյանի *«Ակն և ակնցիք» (1943, Սպտամբուլ) գրքի կազմը*



Հայկ Ազատյան

գիտ-ների դասընթացների: 1913-ին բանտարկվել է հեղ. գործունեության համար: 1915–17-ին աշխատակցել է «Պայքար» թերթին: 1918-ի կեսերից հարել է սոցիալ-դեմոկրատ. ինտերնացիոնալիստների խմբակին, իսկ 1920-ի դեկտ-ին անդամակցել կոմկուսին: Եղել է Խորհրդ. Հայաստանի Արհմիությունների խորհրդի առաջին նախագահը, ՀԿԿ ԿԿ քարտուղար (1921) և ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ (1924–28): Համամիութ. գյուղատնտ. գիտ-ների ակադ-ի փոխնախագահ (1930), ապա՝ Անդրկովկասի մասնաճյուղի տնօրեն (1931–34):


Ա. խմբագրել է Կարս Մարքսի «Կապիտալի» հայ. հրատ-յան 3-րդ հատորի 1-ին գիրքը (1947) և 1-ին հատորի 2-րդ հրատ-ը (1954):

Լույս են տեսել Ա-ի «ԽՍՀ Միության տնտեսական զարգացումը և գյուղատնտեսական կոոպերացիան» (1926), «Աշխատավարձի խնդիրները» (1929) աշխատությունները:

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ», շաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ, վերջում՝ կիսամսյա: Լույս է տեսել 1890–92-ին Նյու Յորքում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հայկակ *Էկինյան*: Ամերիկահայ առաջին թերթերից է («*Արեգակ*» և «*Սուրհանդակ*» պարբ-ներից հետո): Տպագրել է նյութեր տեղի հայ գաղութի կյանքից, լուրեր՝ Հայաստանից:

ԱԶԱՐԻԱ ԳՐԻՉ, XV դ-ի գրիչ: Գրչության արվ-ը սովորել է նախ հորից՝ Կարապետից, որը Մեծոփավանքի դպրոցի հայտնի գործիչներից էր, ապա՝ *Հովհաննես Սանկասարենցից* և իր հորեղբորից՝ գրիչ Վարդանից: Գործել է Վանի և Վասպուրականի վանքերում: Հայտնի է 1463–90-ին նրա ընդօրինակած 10 ձեռագիր՝ 2 Հայսմավուրք, 2 Ճառընտիր, 4 Ավետարան, 1 Մաշտոց, 1 Գանձարան [մի քանիսը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 428, 955, 3857, 4517, 4992)]:

ԱԶԱՐԻԱ ՋՈՒՂԱՅԵՑԻ, որդի Երիջանի, XVI դ-ի տոմարագետ: Ապրել և գործել է Ջուղայում: Կազմել է «Ազարիայի կամ Ջուղայեցիների տոմար» անունով հայտնի նոր օրացույց, որտեղ հիմնականում պահպանված էր հայկ. նախկին օրացույցի սկզբունքը. տարին անշարժ էր, ուներ 12 ամիս՝ 30-ական օրով, ու հավելյալ ամիս՝ 3 օրով: Նահանջ տարիներին 12-րդ ամիսն ունենում էր 31 օր: Ա. Ջ-ու տոմարով տարեսկիզբն օգոստոսի 11-ից տեղափոխված էր գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը: Ամիսների անունները մեծ մասամբ արաբ. էին, որոնք հետագայում Ա. Ջ. փորձել է փոխարինել հայկականով: Ջուղայեցիների թվականն ստանալու համար մեր թվականից պետք է հանել 1615՝ մարտի 21-ից մինչև հունվ. 1-ը, և 1616՝ հունվ. 1-ից մինչև մարտի 21-ը ժամանակամիջոցների համար:



Ազարիա Ջուղայեցու *«Պատճէն Տօմարին Ազարիայի» (1685, Վնտ.) երկի 25-րդ էջը*

Ազարիայի տոմարը գործածվել է Նոր Ջուղայի և Հնդկաստանի հայկ. գաղութներում:

Ա. Ջ-ու «**Պատճէն Տօմարին Ազարիայի**» տոմարագիտ. երկը տպագրվել է 1685-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում՝ «Գիրգ տօմարաց Հայոց, Ազարիայի, եւ Հռոմայեցւոց...»-ի մեջ (320 էջ, 8 x 5,5 սմ, էջ 22–39):

Գրկ. **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 272–276, 1177–1186:* **Թումանյան Բ.,** *Հայ աստղագիտության պատմություն, գիրք 1, Ե., 1964, էջ 103–105:*



Արհիստակես Ազարյան

ԱԶԱՐԻԱ ՍԱՄՆԵՑԻ, *Հլու* (ծ. թ. անհտ–1628), տաղասաց, աստղագետ, տոմարագետ: Առավել հայտնի է աստղագիտ. և տոմարագիտ. աշխատություններով («Յաղագս գիտութեան Երկնից բարձրութեան եւ եօթն պարունակացն», «Յաղագս գիտութեան, Արեգական թաւալմանցն»): Գրել է պատմագիտ. աշխատություններ, թարգմանել իտալ-ից: «**Ողբ ի վերայ հարուածոց Արեւելեան գաւառացն եւ աշխարհին Հայոց ի ձեռաց Ճելալեանց**» երկում նկարագրել է Ջալալիների արշավանքները, Արմ. Հայաստանի գավառների և Փոքր Հայքի, մասնավորապես՝ Սեբաստիայի ասպատակությունն ու ավերումը:

Գրկ. **Ակինեան Ն.,** *Ազարիա վրդ. Սամնեցի, աստղագէտ, տօմարագէտ եւ տաղաչափ, «ՀԱ», 1936, № 7–9:*

ԱԶԱՐՅԱՆ Արիստակես (1782–1855), բառարանագիր, հրատարակիչ: Եղել է Կեսարիայի հոգևոր առաջնորդը, Վիեննայի Մխիթարյանների 2-րդ աբբահայրը: Ա.-ի օրոք կարգավորվել է միաբանության հրատարակչ. գործը, 1838-ին 25 լեզվով տպագրվել է «Որ օրինես զայնոսիկ» աղոթքը:

Ա. Վիեննայի Մխիթարյան միաբանության վանքում հիմնադրել է դրամագիտության բաժին: Իր եղբոր՝ Ստեփանոսի հետ կազմել է ընդարձակ բառարան՝ «**Նոր բառգիրք յունարէն, իտալերէն, հայերէն, տաճկերէն**» (1848, Վնն., Մխիթարյան տպ.):

Գրկ. Perillustri ac reverendissimo domino domino Aristaci Azariae..., Viennae, 1842.



Ա. Ազարյանի *«Նոր բառգիրք յունարէն, իտալերէն, հայերէն, տաճկերէն»-ի (1848, Վնն.) տիտղոսաթերթը*

«ԱԶԳ», ազգ., գրական, քաղ. օրաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա): Լույս է տեսել 1907–21-ին Բոստոնում (ԱՄՆ): Մինչև 1914-ը՝ Վերակազմյալ հնչակյան կուս-յան ընդդիմադիր ճյուղի հրատ., այնուհետև՝ ՌԱԿ-ի ԱՄՆ-ի շրջանակի պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Սուրեն *Պարթևյան*, Երվանդ Ճյուհերյան, Գևորգ Սարաֆյան, Գաբրիել Փափազյան, Արմենակ Նազարեթյան: Անդրադարձել է արևմտահայության վիճակին, կարևորել հայ ազգ-ազատագր. պայքարը նև:

1921-ի հոկտ-ին միացել է «*Պահակ*»-ին և կոչվել «Ազգ-Պահակ», 1922-ից՝ «*Պայքար*»: 1921-ին հրատարակել է գրական-բանասիր., պատմագիտ. տարեգիրք:




«Ազգ», *1907–21, Բոստոն*

«ԱԶԳ», հաս-քաղ., մշակութ. օրաթերթ (սկզբում՝ եռօրյա), 2014-ից՝ շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1991-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Հակոբ *Ավետիքյան*: ՀՀ առաջին անկախ պարբ-ներից է, առաջինն է հրատարակվել համակարգչային տեխնիկայով: Տպագրում է հաս-քաղ., տնտ., իրավ., մշակութ., մարզ. և այլ բովանդակության հոդվածներ: Լուսաբանում է նաև սփյուռքահայ կյանքը, Հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը և Արցախյան հիմնախնդրին վերաբերող միջազգ. անդրադարձները, արտերկրի ուշագրավ իրադարձությունները: 2006-ից տպագրում է *«Ազգ-Մշակույթ»* երկշաբաթյա հավելված-ներդիրը, որտեղ անդրադառնում է ՀՀ-ում և Սփյուռքում տեղի ունեցող մշակութ. կարևոր միջոցառումներին, հայ մշակույթի պատմությանը, անվանի դեմքերին: 1999-ից ունի նաև էլեկտրոնային տարբերակ՝ 6 լեզվով՝ հայ., ռուս., անգլ., թուրք., արաբ., պարսկ.: 1993-ի 1-ին կեսին տպագրվել է նաև ԱՄՆ-ում:



«Ազգ», *1991-ից, Երևան*

«ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ», հայ ազգագր. առաջին պարբ-ը: Լույս է տեսել 1896–1916-ին: Խմբագիր-հրատարակիչ՝ Երվանդ *Լալայան*: Հրատարակվել է 26 հատոր (1-ինը՝ Շուշիում, մյուսները՝ Թիֆլիսում): Տպագրել է հայ ազգագրությանը, բանահյուսությանը, հնագիտությանը, վիմագրությանը, պատմությանը, իրավունքին, արվ-ին վերաբերող նյութեր և ուսումնասիրություններ: Արժեքավոր են Ջավախքի, Զանգեզուրի, Արցախի, Գողթնի, Գեղարքունիքի, Վասպուրականի, Բուլանըխի և այլ շրջանների ազգագր. նյութերի, Ալաշկերտի, Կ. Պոլսի, Կապանի բանահյուս. հավաքածուների, «Սասնա ծռեր» էպոսի տարբերակների, «Ռոստամ Զալ» վեպի հայկ. պատումների, Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրության և այլ հրապարակումներ: Աշխատակցել են Խ. Սամուելյանը, Թ. Թորամանյանը, Գ. Հովսեփյանը, Գ. Լևոնյանը և ժամանակի ուր. անվանի մտավորականներ:



«Ազգագրական հանդէս», *1896–1916, Շուշի, Թիֆլիս (Բ գիրք, 1897)*

Հանդեսը էապես նպաստել է Հայոց ազգագր. ընկերության ստեղծմանը և հայ ազգագրության զարգացմանը:

«ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», Վիեննայի Մխիթարյան միաբանության հայագիտ. հրատ-ների մատենաշար: Լույս է տեսնում 1890-ից: «Ա. մ.» ընդգրկում է հայագիտ-յան տարբեր բնագավառների վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ և փաստացի հարուստ նյութեր: Հրատարակված աշխատությունները մեծ մասամբ նախապես տպագրվել են «Հանդէս ամսօրեայ»-ում: «Ա. մ.»-ի հատորները համա-



«Ազգային մատենադարան»*մ ափենաշարի (գիրք Իե, Հենրիկոս Գելցերի «Համառօտ պատմութիւն հայոց», 1897, Վնն.) շապիկը*



«Ազգասէր», *1845–48, Կալկաթա (Դ հատոր, 1847)*



«Ազգասէր Արարատեան», *1848–52, Կալկաթա*



Ազդագիր

րակալված են հայ. այբուբենի տառերով. 240-րդը լույս է տեսել 2012-ին: Բացի Վիեննայի Մխիթարյաններից (Հ. Տաշյան, Գ. Մենևիշյան, Ղ. Հովնանյան, Գ. Գալեմքյարյան, Ն. Ակինյան, Հ. Ոսկյան և ուր.)՝ «Ա. մ.»-ի հրատարակմանը մասնակցել են հայ և օտարազգի բազմաթիվ այլ գիտնականներ (Գ. Խալաթյան, Ն. Ադոնց, Բ. Կյուլեսերյան, Ա. Սարուխան, Գ. Տեր-Մկրտչյան, Հ. Աճառյան, Խ. Սամուելյան, Հ. Մանանդյան, Թ. Ավդալբեգյան, Ն. Մառ, Օ. Կարիեր, Հ. Հյուբշման, Յ. Մարկվարտ, Հ. Գելցեր, Հ. Պեդերսեն և ուր.):

«ԱԶԳԱՍԷՐ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1845–48-ին Կալկաթայում (Հնդկաստան): Տեղի մշակութ. Արարատյան ընկերության հրատ.: Խմբագիր՝ Մեսրոպ ***Թաղիադյան***: Լեզուն՝ աշխարհաբար, հետո՝ գրաբար: Հայությանը կոչ է արել համախմբվել մայր հայրենիքում, զարգացնել նրա տնտեսությունն ու մշակույթը, կարևորել է հայոց լեզվի պահպանությունը՝ որպես ազգի գոյատևման և առաջադիմության գործոն: Լուսաբանել է Բոմբեյի, Մադրասի, Նոր Ջուղայի, Զմյուռնիայի հայ հաս-մշակութ. կյանքը, արծարծել ուսումնադաստիարակչ., տնտեսագիտ., կրոն. հարցեր: Քննադատել է Անգլիայի գաղութատիր. քաղաքականությունը, նշել Ռուսաստանի պատմ. առաջադիմ. դերը հայ ժողովրդի ճակատագրում: Տպագրել է հայ հեղինակների չափածո և արձակ ստեղծագործություններ, թարգմանություններ (Ֆիրդուսի, Վ. Շեքսպիր, Ռ. Բյոռնս, Ջ. Բայրոն, Չ. Դիքենս, Հ. Լոնգֆելլո, Պ. Պեստել), արտատպել այլ նյութեր: Կարճատև ընդմիջումից հետո հրատարակվել է ***«Ազգասէր Արարատեան»*** վերնագրով:

«ԱԶԳԱՍԷՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ», տասնօրյա, ապա՝ կիսամսյա պարբ.: ***«Ազգասէրի»*** շարունակությունն է: Լույս է տեսել 1848–52-ին Կալկաթայում (Հնդկաստան): Խմբագիր-հրատարակիչ՝ Մեսրոպ ***Թաղիադյան***, նյութերի մեծ մասի հեղինակը ինքը՝ խմբագիրն էր: Տպագրել է հրապարակախոս., հետազոտ., տես. հոդվածներ, որոնք առնչվել են հայության համախմբման հարցերին, ինչպես նաև լուրեր՝ գաղութահայ կյանքից, գրական ստեղծագործություններ, թարգմանություններ, պատմ. գործեր, որոնցից ուշագրավ է Թովմաս Խոջամալյանի «Պատմութիւն հնդկաց» գրքի 2-րդ մասը (1849):

ԱԶԴԱԳԻՐ, հայտարարություն ներկայացումների, համերգների, հյուրախաղերի, դասախոսությունների և այլ միջոցառումների մասին: Տարածվում է ՋԼՄ-ներով, զետեղվում պատերին, ազդասյուներին, ցուցափեղկերին ևն:

ՀՀ-ում լույս տեսնող թերթերի մեծ մասն ունի մշակութ. Ա-եր, որտեղ ներկայացվում են առաջիկա շաբաթվա կամ 3 օրերին թատրոններում և համերգասրահներում նախատեսված ներկայացումների ու համերգների ցանկը:

«ԱԶԴԱԿ», ազգ., գրական, հաս-քաղ. օրաթերթ (մինչև 1932-ը՝ եռօրյա, ապա՝ երկօրյա): ՀՅԴ Լիբանանի շրջանի պաշտոնաթերթ (1965-ի հունիսից): Լույս է տեսնում 1927-ից Բեյրութում: Խմբագիրներ՝ Արամ Սահակյան, Վարդան Գևորգյան, Մանուկ Ալանյան, ***Մուշեղ Իշխան***, Կարո ***Սասունի***, Գասպար ***Իփեկյան***, Անդրանիկ ***Ծառուկյան***, Ներսես Քյուփելյան, Արսեն Աճեմյան, Հակոբ Սիմոնի, Կարո Գանթարճյան, Զարեհ Զարգուն, Մինաս ***Թոյլոյլյան***, Լևոն Գարմեն, Տիգրան Ոսկունի, Երվանդ Փամպուքյան, Պողոս ***Մսապյան***, Վարդանդ Փափազյան, Վարուժան Թենպելյան, Սարգիս Սահսերեճյան, Շահան ***Գանտահարյան*** (2002-ից): Լուսաբանում է Լիբանանում, մերձավորարլ. տարածաշրջանում և ՀՀ-ում տեղի ունեցող քաղ., տնտ., գիտ., մշակութ., մարզ. կարևոր իրադարձությունները, անդրադառնում միջազգ. անցուդարձներին: 1970-ական թթ-ի կեսից, մերձավորարլ. ճգնաժամի պայմաններում, համայնքի քաղ. մյուս

ուժերի հետ պայքարում է Լիբանանի և հայկ. մյուս գաղթավայրերի հայությանն սպառնացող ձուլման վտանգի դեմ, հանդես է գալիս հանուն հայապահպանության, Հայ դատի արդարացի լուծման: Ներկայում հայ տպագիր մամուլի առաջատարներից է: Հրատարակում է բացառիկ համարներ՝ նվիրված ազգ. և կուս-յան նշանակալի հոբելյաններին, ինչպես նաև Ամանորի առիթով: Ունեցել է «Հարդագող», «Ազդակ-շաբաթօրեակ», «Ազդակ-մարզական» և այլ հավելվածներ, 2002-ից լույս են տեսնում մանկապատանեկան «Պզտիկ-մզտիկ», մարզ. «Նաւասարդ», կանանց համար՝ «Անահիտ» հավելվածները, 2003-ից՝ «Ազդակ» ամսաթերթը:

«ԱԶԴԱԿ ՇԱԲԱԹՕՐԵԱԿ-ԴՐՕՇԱԿ», հաս-քաղ. շաբաթաթերթ: ՀՅԴ Գերագույն մարմնի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1969–85-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Բաբկեն Փափազյան, Սարգիս Զեյթլյան, Նազարեթ Պերպերյան, Վարդգես Էթիյեմեզյան: Լուսաբանել է ՀՅԴ գործունեությունը, Խորհրդ. Հայաստանի և Լիբանանի հաս-քաղ. կյանքը, միջազգ. կարևոր իրադարձությունները, տպագրել քաղ. վերլուծություններ: Ունեցել է մատենաշար:



«Ազդակ», *1927-ից, Բեյրութ*



«Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ», *1969–85, Բեյրութ*

«Ա.ԶԴԱՐԱՐ», ամսագիր, հայ. առաջին պարբ-ը: Լույս է տեսել 1794–96-ին Մադրասում (ընդամենը՝ 18 համար)՝ գրաբարով, մասամբ՝ հնդկահայ և Նոր Ջուղայի բարբառներով: Խմբագիր-հրատարակիչ՝ Հարություն *Շմավոնյան*: Տարածվել է Մադրասում, Կ. Պոլսում, Նոր Նախիջևանում: Ի տարբերություն եվրոպ. առաջին պարբ-ների, որոնք հիմնականում առևտր. տեղեկատուներ էին, «Ա.» գիտաճանաչող., պատմագիտ., գրական, հաս. հանդես էր և արտացոլել է հնդկահայ կյանքը, անդրադարձել հայ ժողովրդի լուսավորության, ազգ. ինքնագիտակցության, ազատագրության խնդիրներին: Տպագրել է գրական և պատմագիտ. (ինքնուրույն ու թարգման.) նյութեր [Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից», Հակոբ Սիմոնյան Այուբյանցի «Պատմութիւն Հեյդարլի խանի», անգլ-ից՝ Թոմաս Դեյի «Փոքրիկ Ջեկի պատմութիւնը» ևն]: Հիշարժան են նաև Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ *Արղությանի* «Օրինութեան թուղթը», ուղերձներն ու նամակները, որտեղ նա զարգացրել է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը Թուրքիայի և Պարսկաստանի լծից ազատագրելու գաղափարը: «Ա.»-ում գրական ստեղծագործություններ են տպագրել Հայ Որդի Հայի, Ազգակից, Ուրախակից, Սատանի Չարխ, Բարեկամ ծածկանուններով հեղինակները: Ուշագրավ է Հայ Որդի Հայի և Ազգակցի բանավեճը, որը հայ հրապարակախոսության առաջին նմուշներից է:




«Ազդարարի»-ի *3 տարվա համարները՝ 1 գրքով (1970, ՀԱԳ)*

Լույս է ընծայել նաև բարոյախրատ. բանաստեղծություններ, առակներ, զրույցներ, պատմվածքներ, դաստիարակչ. հոդվածներ, իրազեկել Այսրկովկասում տեղի ունեցող քաղ. իրադարձությունների, մասնավորապես՝ Աղա Մահմեդ խանի արշավանքների մասին: Ամսագրի առանձին համարներ տպագրվել են պատկերազարդ, կարմիր տառերով:

1970-ին, «Ա.»-ի լույսընծայման 175-ամյակի առթիվ, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը 2 հատորով ամբողջությամբ վերատպագրել է ամսագիրը:

1994-ին նշվել է «Ա.»-ի տպագրության 200-ամյակը: 2004-ին ՀԺՄ-ն սահմանել է «Ազդարար» մրց.: 2006-ից «Ա.»-ի 1-ին համարի լույսընծայման օրը՝ հոկտ. 16-ը, ՀՀ-ում հայտարարվել է մամուլի օր:

2007-ից Կալկաթայում (1-ին համարը թվագրվել է 19-րդ) խմբագիրներ Մարտիկ Սարգսյանի և Գրետա Անդրեասյանի ջանքերով



«Ազդարար». *1794–96, Մադրաս, հայերեն առաջին պարբերականի 1-ին համարը*



«Ազդարար», *2007-ից, Կալկաթա- Երևան [№ 4 (24) 2009]*



«Ազդարար», *1942–55, Բեյրութ*



Զարեհ Ազնավորյան

վերականգնվել է «Ա.»-ի հրատ-ը: Ամսագիրը շարունակում է հետամտել ազգապահպանության խնդիրներ, տպագրում է մշակութ. և գիտ. հոդվածներ, անդրադառնում ջավախքահայության, սփյուռքահայության, մասնավորապես՝ հնդկահայերի խնդիրներին, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: 2010-ից լույս է տեսնում Երևանում:

Գրկ. Գալէմքեարեան Գ., *Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, հ. Ա, Վնն., 1893:* Լեւոնեան Գ., *Հայոց պարբերական մամուլը, Ալեք-պոլ, 1895:* Կարինյան Ա., *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Ե., 1956:* Մխիթարյան Մ., *Առաջին հայ պարբերականը, «ՊՀՀ», 1964, № 4:* Ավդալբեգյան Թ., *Հայագիտական հետազոտություններ, Ե., 1969, էջ 233–242, 246–254:*

«ԱԶԴԱՐԱՐ», երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1846–47-ին Մադրասում: Խմբագիրներ՝ Ստեփանոս Հովհաննիսյան, Փիլիպոս Մելիտոնյան: Հրատարակվել է վիմատիպ եղանակով (17 համար): Տպագրել է քաղ., գրական նյութեր և տեղեկություններ հնդկահայ գաղութի կյանքից:

«ԱԶԴԱՐԱՐ», հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ, 1953-ից՝ օրաթերթ: Լույս է տեսել 1942–55-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Մանուկ Ասլանյան, Օննիկ Թոփուզյան, Խոսրով Թյությունճյան, Զարեհ Զարգուն: Տպագրել է նյութեր Լիբանանի և Հայաստանի ներքաղ. կյանքի մասին, միջազգ. լուրեր, էջեր հայ և համաշխ. գրակ-ից, արտատպել ուշագրավ հրապարակումներ հայաստանյան պարբ-ներից, ունեցել է բժշկության բաժին: Առանձնակի ուշադրություն է դարձրել Թուրքիայում տեղի ունեցող քաղ. անցուդարձերին: Աշխատակցել են Ն. Աղբալյանը, Ա. Խոնդկարյանը, Ս. Սեզան, Ն. Պեշիկթաշլյանը, Խ. Գաբիկյանը, Բ. Եղիայանը և ուր.:

«ԱԶԴԱՐԱՐ», ազգ., հաս-քաղ. շաբաթաթերթ: Քուվեյթի հայ երիտասարդաց միության հրատ.: Լույս է տեսնում 1996-ից էլ Քուվեյթում: Խմբագիր՝ Կարո Մսրլյան: Լուսաբանում է տեղի հայ համայնքի կյանքը, տպագրում է լուրեր ՀՀ-ից և Սփյուռքի տարբեր համայնքներից, անդրադառնում է միջազգ. կարևոր իրադարձություններին:

«ԱԶԴԱՐԱՐ ԲԻԶԱՆԴԵԱՆ», հաս., քաղ., առևտր. և բանասիր. շաբաթաթերթ: Լույս է տեսել Կ. Պոլսում 1840–41-ին (4 համար՝ աշխարհաբար, այնուհետև՝ հայատառ թուրք.): Խմբագիր-հրատարակիչ՝ Խաչատուր Ոսկանյան: Թերթի նշանաբանն էր՝ «Ազգի մը լուսաւորութիւնը գիտութենէն ու կրթութենէն կուգայ»: Տպագրել է գիտ-յան և արվ-ի վերաբերյալ տեղեկություններ: Առաջադիմ. և լուսավոր. գաղափարների տարածման համար «Ա. Բ.» իր դեմ է տրամադրել Կ. Պոլսի ամիրայական խավին, որից ընկրկելով՝ խմբագիրը դադարեցրել է պարբ-ի հրատ-ը:

ԱԶԻԶՅԱՆ Հատիկ Գեղամի (6.1.1899, Երևան–16.5.1977, Մոսկվա), կուս. գործիչ, լրագրող, պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1967): ՌՍԴԲԿ անդամ՝ 1917-ից: Ավարտել է Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստ-ը (1931): Մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին (1918) և Մայիսյան ապստամբությանը (1920): Եղել է «Խօսք» (1919) թերթի խմբագրի տեղակալ: 1932–72-ին՝ բաժնի վարիչ «Պրավդա» թերթի խմբագրությունում, ապա՝ խմբագիր:

Լույս է տեսել Ա-ի «Լենինյան ազգային քաղաքականության զարգացումները և գործողությունները» (ռուս., Մ., 1972):

ՀԽՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի և Մարտական կարմիր դրոշի շքանշաններ:

ԱԶՆԱՎՈՐՅԱՆ Զարեհ (1947, Բեյրութ–30.4.2013, Անթիլիաս), եկեղեց. գործիչ, խմբագիր, բնագրագետ, թարգմանիչ: 1969-ին օծվել է վարդապետ, 1995-ից՝ արքեպիսկոպոս: Հռոմում պաշտպանել է վարդապետ. ատենախոսություն՝ «Սբ Ներսես Լամբրոնացու կյանքը և եկեղեցական բարեկարգությունը» թեմայով: Դասավանդել է Անթիլիասի դպրեվանքում և լիբանանահայ մի շարք դպրոցներում,

եղել «Գլաձոր» և *«Հասկ»* պարբ–ների խմբագիր, Ջիբեյլի (Լիբա–նան) «Թոչնոց բույն» որբանոցի տնօրեն, ապա՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության քրիստ. դաստիարակության բաժանմունքի վարիչ:

Լույս են տեսել Ա–ի «Զայնագրեալ շարական Մեծ պահոց կիրակիներու» (հ. Ա, 1981), «Զայնագրեալ շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» (հ. Բ., «Աւագ շաբաթ», 1984), «Զայնագրեալ շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» (հ. Գ., «Աւագ օրինութիւններ», 1985), «Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր Հայաստա–նեայց եկեղեցւոյ» (1990), «Եհովայի վկաներու այլափոխուած Աստուածաշուն–չը» (1992), «Կանոն Սուրբ միւռոնի օրինութեան» (1996, բոլորը՝ Անթիլիաս), «Լոյս եւ հաղորդութիւն» (2005, Նիկոզիա), «Սերտողութիւն Յայտնութեան գիրքի» (2006, Մոնրեալ) երկերը: Ա–ի խմբագրությամբ Անթիլիասում հրա–տարակվել է Նոր կտակարանը:

Կիլիկիո կաթողիկոսարանում ստեղծվել է Ա–ի անվ. քրիստ. դաստիա–րակության հիմնադրամ:

Ա.ԶՐՈՅԱՆ Կորյուն (Սիսակ) Ղազարի [7.11.1903, գ. Լիզ (Բիթլիսի նահանգի Բուլանըխի գավառ)–27.10.1969, Թբիլիսի], արձակագիր, գրա–քննադատ, լրագրող: Ավարտել է Թիֆլիսի բանֆակ–ը (1926), Մոսկվայի պետ. համալսարանի գրական–խմբագր. ֆակ–ը (1932): Աշխատել է Թիֆլիսի «Պրոլետար» օրաթերթում՝ որպես գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ: 1934–ին՝ Ղարաքիլիսայի «Սոցարշավ», ապա՝ Արթիկի «Լեռնագործ» թերթերի խմբագիր: Եղել է Վրաստանի պրոլետգրող–ների միության հայկ. մասնաճյուղի քարտուղար, հետագայում՝ Վրաս–տանի գրողների միության հայկ. բաժանմունքի նախագահ:

Լույս են տեսել Ա–ի «Կանաչ ավանի մարդիկ» (1948) պատմվածքների ժող–ը, «Լեռան արշալույս» (1958) վեպը, «Սպիտակ արծվի երգը» (վրաց., 1969) երկը:


ԱԹԱԲԵԿՅԱՆ Ներսես Յուրիի (ծ. 1.6.1960, Երևան), լրագրող, խմբագիր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. թեկնածու (1992): Ավարտել է ԵՊՀ (1984): 1984–90–ին աշխատել է «Շինարար» թերթում, 1980–92–ին՝ «Պիոներ» հանդեսում, 1995–ից՝ *«02»* շաբաթաթերթում (2011–ից՝ գլխ. խմբագիր):

Լույս են տեսել Ա–ի «Կյանք մինչև առավոտ» (1993), «Երկվորյակ» (2004), «Տարընթերցումներ» (2008) բանաստեղծությունների ժող–ները: Ռուս–ից թարգմանել է Ի. Բրոդսկու, Ռ. Բախի, Լ. Հուրունցի, Մ. Շագալի, Մ. Բուլգա–կովի, Ս. Դովլաթովի, Վ. Շալամովի ստեղծագործություններից:

ՀԳՄ, Մայր աթոռի «Կանթեղ» (2008), «Հայաստան» հրատարակչության և ՀԳՄ Մ. Սարգսյանի անվ. (2011) մրց–ներ, ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2011), ՀՀ «Մովսես Խորենացի» (2013) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմ–նադրամի ոսկե (2011) հուշամեդալ:

ԱԹԱԲԵԿՅԱՆՑ Հովսեփ Ներսեսի [20.10.1870, գ. Դաղքիսաման (այժմ՝ Ադրբեջանի Ղազախի շրջանում)–15.1.1916, Կարս (ինքնասպան է եղել)], հրապարակախոս, թարգմանիչ, գյուղատնտես: Սովորել է Ս. Պետերբուրգի համալսարանում, ապա՝ Հոհենհայմի գյուղատնտ. ակադ–ում (Գերմանիա): 1895–ին հրապարակախոս. հոդվածներ է տպագրել Գերմանիայի «Նոյե Ցայտ» հանդեսում: Ա–ի գլխավորու–թյամբ բնագրից առաջին անգամ հայ. է թարգմանվել Ֆ. Էնգելսի «Սո–ցիալիզմի զարգացումն ուտոպիայից դեպի գիտություն» աշխատու–թյունը (տպագրվել է 1894–ին՝ «Գիտական սոցիալիզմ» վերնագրով, Վնն., Դաշնակցության ազատ տպ.): 1894–ին Ա–ի մասնակցությամբ պատրաստվել է նաև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայ. թարգմանությունը (չի տպագրվել): Ա. նամակով դիմել է Էնգելսին (1894–ի նոյեմբ.), որտեղ տեղեկու–թյուններ է հաղորդել հայոց պատմության, հայ ազգ–ազատագր. շարժման մասին, նաև խնդրել է գրել «Մանիֆեստի» հայ. հրատ–յան առաջաբանը, բայց Էնգելսը հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ հրատարակվող գրքի լեզուն իրեն անծանոթ է:

Գրկ. **Եղիազարյան Ա.,** *Հովսեփ Աթաբեկյան, «ՊԲՀ», 1959, № 2–3:* **Иоаннисян А. Г.,** *Письмо Иосифа Атабекянца Ф. Энгельсу по поводу перевода на армянский язык Коммунистического манифеста,* նույն տեղում.



Զ. Ազնավորյանի *«Լոյս եւ հաղորդութիւն» (2005, Նիկոզիա) գրքի կազմը*



Հովսեփ Աթաբեկյանց



Արշակ Աթայան

ԱԹԱՅԱՆ Արշակ Գևորգի [20.6.1877, գ. Մեծ Թաղլար (այժմ՝ Մեծ Թաղեր՝ ԼՂՀ Հադրութի շրջանում)–1938, անհատի պաշտամունքի զոհ], գրող, թարգմանիչ, մանկավարժ: Ռաֆայել և Ռոբերտ ***Աթայանների*** հայրը: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան և Շուշիի թեմ. դպրոցներում: 1895-ից ոտանավորներ է տպագրել «Աղբյուր», «Տարազ» և «Մուրճ» ամսագրերում:


Լույս են տեսել Ա.-ի «Թոյն» (1897, Բաքու, Հ. Գյուլբասարյանի տպ.) վեպը, «Զգացմունք» (1898, Բաքու, Ա. Ղազարյանի տպ.) երգիծ. վիպակը, «Սալմաստ» (1906, Նոր Ջուղա, Սբ Ամենափրկիչ վանքի տպ.) տեղագր. ուսումնասիրությունը, «Սասունցի Դավիթ» (հրտ.՝ 1925, նույն տպ.) դրաման: Թարգմանել է Մ. Գորկու «Դանկոյի սիրտը» (1904), «Կլիմ Սամգինի կյանքը» (1935), «Մայրը» (1938) վեպերը, Օմար Խայամի քառյակներից, Մ. Լերմոնտովի, Լ. Անդրեևի, Ն. Գոգոլի և ուր. ստեղծագործություններից:

ԱԹԱՅԱՆ Էդվարդ Ռաֆայելի (10.2.1932, Երևան–1.1.2002, Երևան), լեզվաբան, փիլիսոփա: Փիլ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1986), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): Ռաֆայել ***Աթայանի*** որդին: Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1953): 1957-ից դասավանդել է ԵՊՀ-ում, 1969–70-ին ԵՌՕԼՄԻ-ում հիմնադրել և ղեկավարել է ընդհանուր լեզվաբանության ամբիոնը, 1976–82 և 1988–96-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ա.-ի «Կառուցվածքային շարահյուսության հիմնական հասկացությունները և առարկան» (1968), «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառման հայեցակերպերը» (1976), «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» (1981), «Լեզուն և արտալեզվական իրականությունը (գոյաբանական համեմատության փորձ)» (1987) լեզվաբ., «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն» (1992), «Առողջների հիվանդությունը. անազատության բնութաբանություն և տիպաբանություն (1997, բոլորը՝ ռուս.), «Հոգի և ազատություն» (2005) փիլ.-հոգեբ. աշխատությունները: Թարգմանել է Հերմես Եռամեծի, Վ. ֆոն Հումբոլտի, Ֆ. Շիլլերի, Ռ. Շտայների, Ն. Բերդյաևի, Պ. Ֆլորենսկու, Բ. Համվաշի, Գ. Գաչևի և ուր. գործերից:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ:

Գրկ. Նշան. համակարգ. հաղորդակցում: Հոդվածների ժող.՝ նվիրված Էդվարդ Աթայանի հիշատակին, Ե., 2011:



Էդվարդ Աթայանի
«Հոգի և ազատություն» (2005, Ե., «Սարգիս Խաչենց») գրքի կազմը

ԱԹԱՅԱՆ Ռաֆայել Արշակի (30.10.1907, Նոր Ջուղա–4.12.1990, Երևան), գրող, գրականագետ, մանկավարժ: Արշակ ***Աթայանի*** որդին, Ռոբերտ ***Աթայանի*** եղբայրը, Էդվարդ ***Աթայանի*** հայրը:

Լույս են տեսել Ա.-ի «Մայա» (1952) վիպակը, «Սպարտակ» (1976) եռերգությունը [«Ջարթոնք» (1958), «Սպարտակ» (1963), «Մրրիկի թևով» (1964, վեպեր)] և «Մատաղ լորենին» (1987) վիպակների ժող.-ը, «Ակնարկներ հայկական դպրոցներում ռուս գրականության դասավանդման» (ռուս., 1949), «Դպրոցական այգի» (1963), «Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը» (1974), «Գեղեցիկ խոսքը մայրենի լեզվի ուսուցման գործոն» (1983) աշխատությունները: Թարգմանել է ռուս.-ից:

Անհիմն բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

ԱԹԱՅԱՆ Ռոբերտ Արշակի (7.11.1915, Թեհրան–5.3.1994, Լոս Անջելես, թաղված է Երևանում), երաժշտագետ, կոմպոզիտոր: Արշակ ***Աթայանի*** որդին, Ռաֆայել ***Աթայանի*** եղբայրը: Արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Երևանի կոնսերվատորիան (1941): 1944-ից դասավանդել է նույն կոնսերվատորիայում (երաժշտության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆ.՝ 1977-ից):



Ռոբերտ Աթայան

Կազմել և խմբագրել է Կոմիտասի երկերի ակադեմ. հրատ-ը, գրել կամերային-գործիքային և վոկալ երկեր, մշակել ժող. և գուսան. երգեր, միջնադարյան մեղեդիներ:

Լույս են տեսել Ա.-ի «Ձեռնարկ հայկական ձայնագրության» (1950), «Հայկական խազային նոտագրությունը» (1959), «Գուսան Հավասի» (1963), «Հայկական ժողովրդական երգ» (ռուս., Մ., 1965) աշխատությունները: Հեղինակ է նաև «Երաժշտության տարրական տեսություն» (2006) դասագրքի:

ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, սուրբ Աթանաս Մեծ (295, Ալեքսանդրիա–373, Ալեքսանդրիա), Ընդհանրական եկեղեցու հայրապետներից, Հայ առաքել. եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ: Ալեքսանդրիայի պատրիարք՝ 326-ից: Սերել է հույն քրիստոնյա ըն-

տանիքից: Պայքարել է արիոսականության (պաշտպանել է Աստծու կատարյալ միակության գաղափարը) դեմ, պաշտպանել Նիկիական ուղղափառ դավանանքը:

Ա. Ա–ու աշխատությունների զգալի մասը հայ. է թարգմանվել V դ–ում՝ թարգմանիչ հայրերի, իսկ մյուս մասը VIII դ–ում՝ ***Սկևիա–նոս Մյունեցու*** ջանքերով: Թարգմանված առավել կարևոր երկերից են՝ «Յաղագս ամենասուրբ Երրորդութեան», «Ի Հոգին Աստուծոյ», «Յաղագս մարմնաւորութեանն Որդւոյն եւ Սրբոյ Երրորդութեանն», «Յաղագս փրկական յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդդէմ Մարկիոնի», «Ի ծնունդն Քրիստոսի» ևն: Ա. Ա–ու գործերի հայ. թարգմանությունների մի մասը «Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք» վերնագրով հրատարակվել է 1899–ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), տարբեր աշխատություններից հատվածներ և վկայություններ՝ «***Կնիք հաւատոյ***» դավանաբան. ժող–ում:

Ա. Ա–ու երկերը բացառիկ կարևոր դեր են կատարել Հայ եկեղեցու որդեգրած դավան. դրության, մասնավորապես՝ քրիստոսաբանության և երրորդաբանության մեջ: Ուստի և նրա մատենագրության տարբեր հատվածներ լայնորեն վկայակոչվել են հայ դավանաբան. գրակ–յան մեջ («Կնիք հաւատոյ», «Արմատ հաւատոյ», ***Անանիա Սանահնեցու*** «Հակաճառութիւն», ***Պողոս Տարոնեցու*** «Ընդդէմ Թեոփիստեայ հոռոմ փիլիսոփայի» ևն): Ա. Ա. իր ուրույն տեղն ունի նաև հայ մեկնող. գրակ–յան մեջ:

Ա. Ա–ու «***Թուղթ առ Եպիկտիմոն***» երկը տպագրվել է 1717–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տպակից է ***Կյուրեղ Աղեքսանդրացու*** «Գիրք պարապմանց» և ***Գրիգոր Տաթևացու*** «Լուծմունք ի պարապմունս սրբոյն Կիւրղի» երկերին (800 էջ, 8^0, 15,8x11 սմ):

«**Գիրք պատասխանական**»–ը տպագրվել է Կ. Պոլսում՝ Ջնչին Հովհաննեսի տպարանում՝ առանց տպագրության թվականի հիշատակության: Բնագիրը վերնագրեր չունի, փակագծում Կյուրեղ Երուսաղեմցու հարցերն են՝ «Հարցումն», և Ա. Ա–ու պատասխանները՝ «Պատասխանի» վերնագրերով: Գրքի տպագրության հավանական թվականը 1749–ն է (204 էջ, 8^0, 12,5 x 7,8 սմ):

«**Վարք սրբոյ Անտոնի Աբբայի**» երկը Անտոն Մեծին նվիրված Ա. Ա–ու վարքաբանությունն է. գրել է մոտ 356–357–ին: Լատ–ից թարգմ.՝ Բարսեղ վրդ. Լասլովյան Կերլացու: Տպագրվել է 1794–ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Տիտղթ–ին՝ «Վարք սրբոյ հօրն մերոյ Անտոնի Աբբայի Մեծի...» (126 էջ, 8^0, 13,9 x 7,5 սմ): Գիրքն սկսվում է «Բան թարգմանչի առ ընթերցօղս» առաջաբանով: Ա. Ա. Անտոն Աբբայի կերպարը ներկայացրել է իբրև ճգնական նվիրումի չափանիշ: Երկն զգալի ազդեցություն է թողել սրբախոս. գրակ–յան վրա:


Հրատարակվել է նաև Ա. Ա–ու «Սաղմոսների մեկնություն» (թրգմ.՝ Մ. Ղազարյանի, Ե., 1999) երկը:

Գրկ. Զարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889: Գալթրճեան Հ., Սրբազան պատարագամատոյցք Հայոց, Վնն., 1897, էջ 217–318: Հատիտյան Ա., Մովսէս Աթանաս հայրապետ Ալեքսանդրացի, «Էջմիածին», 1977, № 2: Քեոսէեան Հ., Յովնաղէն բնագրով անյայտ ճառ ս. Աթանաս Ալեքսանդրացու անուամբ, «Գանձասար», № 5, 1994: Նույնի, Ս. Աթանաս Ալեքսանդրացու՝ հունարէն բնագրով անհայտ Անտիոքի եկեղեցուն հղած թղթի հայերէն թարգմանութիւնը, «Էջմիածին», 1995, № 2–3:


ԱԹԱՆԱՍ ՄԵՐԱՍՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ (1710–20–ական թթ., Կ. Պոլիս–1781–ից հետո, Հռոմ), գիտնական, մատենագիր, թարգմանիչ: Կ. Պոլսում աշակերտել է ***Մխիթար Սեբաստացուն***: Սկզբում եղել է Հովհաննես Կոլոտ պատրիարքի քարտուղարը, հետագայում Հռոմից ստացած լիազորություններով Կ. Պոլսում քարոզչ. աշխատանք է կատարել հօգուտ կաթոլիկության: Ապրել է Վենետիկում, ապա՝ Հռոմում, սովորել լատ. և իտալ.:



Ռ. Աթայանի *«Գուսան Հավասի» (1963, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Աթանաս Աղեքսանդրացու *«Գիրք պատասխանական» (1749, Կ. Պոլիս, Ջնչին Հովհաննեսի տպ.) գրքի տիտղոսաթերթը*



Աթանաս Մերասյան Կոստանդնուպոլսեցու *«Քերականութիւն» (1774, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Աշոտ Աթանասյան

Հեղինակ է կրոն. տաղերի, հորդորակների, որոնք պահվում են Մատենադարանում: Նրա նամակներից ներառվել են Ղևոնդ Տայյանի լույս ընծայած «Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի ս. Ղազար 1707–1773...» (1930, Վնտ., Սբ Ղազարի տպ.) ժող–ում:

Ա. Մ. Կ. իտալ–ից թարգմանել է Հովսեփ Կրոնավորի *«Քահանայ համբակագոյն»* (1748), Ֆրանչիսկոս Դունելլյանի *«Ասրուածաբանական մեկնութիւն կաթուղիկեայց գրոց երանելոյ Յակորու Առաքելոյն...»* (1749) և կարդինալ Ռոբերտոս Բելլարմինոսի *«Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն»* (1768, բոլորը՝ Վնտ., Անտոնի Բորտոլիի տպ.) երկերը:

Ա. Մ. Կ–ու կազմած **«Ծառ կենաց»** ժող–ը ներառում է Սբ Պատարագի խորհրդի պարզաբանությունը, հատվածներ Հին և Նոր կտակարաններից, աղոթքներ ևն: Տպագրվել է 1750–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Ծառ կենաց, յորում նախ պարունակին սքանչելաբար պարզաբանութիւնք սուրբ խորհրդոյ Պատարագին» (214 էջ, 8^0, 9,5 x 5,5 սմ): Վերահրատարակվել է 1781–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (213 էջ, 6^0 և 12^0, 9,4 x 6,2 սմ):

Լույս է տեսել նաև Ա. Մ. Կ–ու **«Քերականութիւն»** երկը (1774, նույն տպ.): Տիտղթ–ին՝ «Համառօտ քերականութիւն. արարեալ իտալական, հայկական եւ տաճկական լեզուաւ» (303 էջ, 8^0, 11,8 x 7,6 սմ):

ԱԹԱՆԱՍՅԱՆ Աշոտ Նահապետի [15(27).2.1870, Երևան–22.4.1941, Երևան], գյուղատնտես, խմբագիր–հրատարակիչ, երգիծաբան: Ավարտել է Լայպցիգի համալսարանը (1895):

Թիֆլիսում հիմնադրել ու խմբագրել է «Աշխատանք», ապա՝ «Նոր աշխատանք» շաբաթաթերթերը (1906–07), Այսրկովկասում՝ հայկ. առաջին մասնագիտ. *«Գյուղատնտես»* հանդեսը: 1903–20–ին հոդված–ներով և ֆելիետոններով թղթակցել է «Մուրճ» և «Մշակ» պարբ–ներին, երգիծ. գործերում ծաղրել է ժամանակի բարքերն ու կենցաղը:

Լույս են տեսել Ա–ի «Ռուս–տաճկական պատերազմը (1877–1878) եւ նրա հայազգի հերոսները» (1914, Թ., «Հերմես» տպ., 1915, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Ձրվէժ» (1915), «Սևան» (1932) պատմ. պիեսները, «Բամբակենին յեվ նրա մշակությունը» (1930), «Տեխնիկական բույսերի յեվ նրանց մշակությունը» (1933, Ե., Պետհրատ), «Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ)» (1937, Փ., Հ. Թեուրապյանի տպ.) աշխատությունները:

Հանդես է եկել նաև Ստորա–Կետ, Սալ–Սան, Դոն–Պեդրո և այլ կեղծանուններով:

Գրկ. **Իշխանյան Ս.,** *Հայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Ե., 1962:* **Ալոյան Լ.,** *Աշոտ Աթանասյանը խմբագիր, հրապարակախոս, 2013:*



Ա. Աթանասյանի *«Ռուս–տաճկական պատերազմը (1877–1878) եւ նրա հայազգի հերոսները» (1914, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*

ԱԹԱՆԵՍՅԱՆ Վահրամ Սերգեյի [ծ. 7.12.1959, գ. Առաջաձոր (ԼՂՀ Մարտակերտի շրջան)], լրագրող, մանկավարժ, հաս–քաղ. գործիչ: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժ. ինստ–ը (1981): 1989–94–ին աշխատել է *«Ազատ Արցախ»* թերթի խմբագրությունում (1992–94–ին՝ գլխ. խմբագիր), 1995–96–ին՝ *«Մարտիկ»* թերթի գլխ. խմբագիր: 1994–95–ին՝ ԼՂՀ Կառավարությանն առընթեր լրատվության և մամուլի դեպարտամենտի բաժնի վարիչ, 1998–2000–ին՝ «Ազատություն» ռադիոկայանի թղթակից, 2001–12–ին՝ *«Հայրենիք»* թերթի հիմնադիր–խմբագիր:

ԼՂՀ Եղիշեի անվ. (2002), ՀԺՄ «Ազգարար» (2011) մրց–ներ, ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ (2011):

Գրկ. **Պողոսյան Ա.** *Մարդը, մանկավարժը, քաղաքացին, Ստեփանակերտ, 2012:*

ԱԹԱՋԱՆՅԱՆ Վալերի Աբգարի [ծ. 29.7.1947, ք. Վալդենբուրգ (այժմ՝ Վալբժիխ՝ Լեհաստանում)], քաղ., պետ. գործիչ, խմբագիր–հրատարակիչ: Ավարտել է ԵՊՀ (1970): 1965–70–ին՝ *«Կոմսոմոլեց»* (ռուս.) պաշտոնաթերթի արտահաստիքային թղթակից: 1989–90–ին՝ Ստեփանակերտի քաղկոմի 1–ին քարտուղար, 1990–93–ին՝ «Աշտոց» հրատարակչության տնօրեն, 1993–95–ին՝ *«Մարտիկ»* թերթի հրատարակիչ–համակարգող, «Գազետա գազետ» (1998), «Քաղաքացիական ծառայություն» (2006–08) թերթերի հիմնադիր–խմբագիր:

Լույս են տեսել Ա.-ի «Ղարաբաղյան հարց: Ակունքներն ու էությունը ըստ փաստաթղթերի և փաստերի» (1991, համահեղ.), «Խաչին, Բուբուլը և ուրիշները: Պատերազմական զվարճապատումներ» (1994) գրքերը:

ԼՂՀ գրողների միության մրց. (1992):

ԱԹՄԱՃՅԱՆ Գեղամ Միհիրանի, **Ա. Սեմա** [18.11.1910, ք. Բաֆրա (Թուրքիա)–19.5.1940, Ֆրանսիա, զոհվել է մարտի դաշտում], գրող, խմբագիր: Մարի ***Աթմաճյանի*** եղբայրը: Մեծ եղեռնից փրկվելով՝ ապաստանել է որբանոցներում (Կ. Պոլիս, Կորֆու), ապա ապրել է Հալեպում: 1929-ին հաստատվել է Փարիզում, հետևել Սորբոնի համալսարանի գրակ-յան ու սոցիոլոգիայի դասընթացներին: 1930-ին հրատարակել է «Ձանք» (Միասք ***Մանուշյանի*** հետ), 1935–37-ին՝ ***«Մշակույթ»*** (Պետրոս Զարոյանի հետ) գրական ամսագրերը:

Փարիզում լույս են տեսել Ա.-ի «Ջրահաւոր գարուն» (1936) բանաստեղծությունների, «Պարոն Կալունի» (1937), «Շամիրամ» (1938) պիեսների ժող-ները, Երևանում՝ «Երկերը» (1966): Հեղինակ է նաև հրապարակախոս. հոդվածների:

Գրկ. Լուսամատեան բանաստղծ Ա. Սեմայի (Գեղամ Աթմաճեան. 1910–1940) յիշատակին, կազմ.՝ Մառի Աթմաճյան, Փ., 1970: Գեղամ Աթմաճեան (Ա. Սեմա), Փ., 1984:

ԱԹՄԱՃՅԱՆ Մառի (Մարի) Միհիրանի [19.3.1913, Բաֆրա (Թուրքիա)–13.6.1999, Փարիզ], բանաստեղծուհի, գրական-հաս. գործիչ: Գեղամ ***Աթմաճյանի*** քույրը: Նախն. կրթությունն ստացել է Կ. Պոլսի Դպրոցասեր տիկնանց վարժարանում, 1922-ին որբերի հետ տարվել է Հունաստան: Ավարտելով հայկ. նախակրթարանը՝ մեկ տարի հաճախել է Սալոնիկի ֆրանս. իգական լիցեյը: 1925-ին ընտանիքով տեղափոխվել է Հալեպ, 1928-ին՝ Եթովպիա, 1929-ից ապրել է Փարիզում, եղել է ֆրանսահայ գրողների միության նախագահը, հետևել է Մարգարիտ Բաբայանի երաժշտ. և Սորբոնի համալսարանի գրական. դասընթացներին: 1930-ական թթ-ի սկզբներից Ա.-ի բանաստեղծությունները տպագրվել են «Ձանք» գրական-հաս. ամսագրում և «Մշակույթ» հանդեսում, հետագայում՝ «Անահիտ», «Պայքար», «Լուսաղբիւր», «Հայաստանի կոչնակ», «Բազմավէպ», «Նոր գիր», «Զուարթնոց» և այլ պարբ-ներում:

Լույս են տեսել Ա.-ի «Տէգրէշէնտո» (1939) պիեսը, «Գողգոթայի շուշաններ» (1948, Փ.), «Աստեղաքաղ» (1951), «Յաւիտենական ուղիներ» (1956), «Գաղթաշխարհի երգեր» (1961), «Ոսկի գեղօն» (1967), «Վերջալոյսէն առաջ» (1974), «Յավերժական ուղիներով» (1974) բանաստեղծությունների ժող-ները. պատկերել է սփյուռքահայերի կյանքը, նրանց հայրենաբաղձ ոգորումները:

Երկ. Հրեղեն աշխարհ, Ե., 1970:

ԱԼԱԴԱԹՅԱՆ Նիկողայոս Հովհաննեսի (1833, Թիֆլիս–25.7.1875, Թիֆլիս), դրամատուրգ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում: Հայտնի է «Վայ, իմ կորած հիսուն ոսկին» («Հայկական աշխարհ», 1866, № 6–7) մեկ գործողությամբ վոդևիլով: Այն առաջին անգամ բեմադրել են Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները 1859-ի հունվ. 27-ին՝ հեղինակի մասնակցությամբ:

ԱԼԱԶԱՆ (Գաբուզյան) Վահրամ Մարտիրոսի [6(19).5.1903, Վան–17.5.1966, Երևան], գրող, գրական-հաս. գործիչ, խմբագիր: 1914-ին հաստատվել է Երևանում: 1922–30-ին աշխատել է տպարանում, խմբագրել «Տպագրական բանվոր» թերթը: 1923–32-ին՝ Հայաստանի պրոլետգրողների ընկերակցության նախագահ, 1933–36-ին՝ ՀԳՄ վարչության առաջին քարտուղար, 1932–36-ին, միաժամանակ՝ ***«Գրական թերթի»*** խմբագիր:


Լույս են տեսել Ա.-ի «Երգեր կառուցման և հաղթանակի» (1930), «Մաքառումներ» (1933), «Բանաստեղծի սիրտը» (1954), «Հորիզոններ» (1957) բանաստեղծությունների, «Պատմվածքներ» (1929) պատմվածքների ժող-ները, «Դասալիքը» (1927) պատմվածքը, «Վաթսուներորդ հորիզոնում» (1934), «Հյուսիսային աստղ» (1958) վեպերը, «Հուշեր» (1967), «Տառապանքի ուղիներով» (1990) հուշագրությունները, «Անտիպ երգեր» (1972) բանաստեղծությունների ժող-ը:

1937-ին անհիմն բռնադատվել է, 1954-ին՝ արդարացվել:


Գրկ. Սովետահայ գրականության պատմություն, հ. 1, էջ 558–562, Ե., 1961:




Մառի Աթմաճյանի *«Գողգոթայի շուշաններ» (1948, Փարիզ) գրքի շապիկը*



Վահրամ Ալազան




Վ. Ալազանի *«Տառապանքի ուղիներով» (1990, Ե., «Խորհրդային գրող») գրքի փիփղոսաթերթը*


ՀԱՒԱՔԱԾՈՅ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՈՅ
Ի ՊԵՏՍ
ՆՈՐԱՎԱՐԺ ՈՒԱՍՏԱՂԱՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
1862

Համբարձում Ալաճաճյանի *«Հաւաքածոյ հայկական ասացուածոց ի պէտս նորավարժ ուսանողաց» (1862, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Հարություն Ալամդարյան


ՀԱՐՈՒԹԻՒՆ
Ի ՊԱՏՄԱՆ

1847

«Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց...» (թարգմ.՝ **Հ. Ալամդարյանի,** *1847, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*

ԱԼԱՃԱՃՅԱՆ Համբարձում (1840, Կ. Պոլիս–15.3.1907, Կ.Պոլիս), հրապարակախոս: Սովորել է Կ. Պոլսի ազգ. որբանոցում, ապա աշխատել է որպես ուսուցիչ: 1860–1907-ին հրատարակել է ***«Փունջ»*** շաբաթաթերթը:

Կ. Պոլսում լույս են տեսել Ա-ի «Նեկտարինէ կոյս նահատակ» (1861, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), «Հաւաքածոյ հայկական ասացուածոց ի պէտս նորավարժ ուսանողաց» (1862, Հարություն Փափազյանի տպ.), «Տողիկք» (1874, Ճանիկ Արամյանի տպ.) երկերը:

ԱԼԱՄԴԱՐՅԱՆ Հարություն (Գևորգ) Մանուկի (25.1.1795, Աստրախան–6.6.1834, Նոր Նախիջևան, սպանվել է դիպվածով, թաղված է Սբ Խաչ վանքի բակում), բանաստեղծ, մանկավարժ, հաս-քաղ. և եկեղեց. գործիչ, հրատարակիչ: Ավարտել է Աստրախանի Աղաբաբյան դպրոցը: 1813-ին Լազարյանները Ա-ին հրավիրել են Մոսկվա՝ որպես դպիր: Եղել է Լազարյան ճեմարանի առաջին տեսուչը (նաև դասավանդել է), 1824–30-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ. այդ տարիները դպրոցի պատմության մեջ հայտնի են «դար Ալամդարյան» անունով: Ղեկավարել է նաև դպրոցի տպարանի աշխատանքները: 1824–28-ին Ա-ի ջանքերով տպագրվել է շուրջ 30 անուն գիրք: 1828-ին հրատարակել է «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» ժող-ը (գիրք Ա–Բ, Ներսիսյան դպրոցի տպ.):

Մեղադրվել է որպես ***Ներսես Ե Աշտարակեցու*** գաղափարակից, և գեն. Իվան Պասկևիչի թելադրանքով Էջմիածնի սինոդը նրան 1830-ին աքսորել է Հաղպատ: 1831-ին ձեռնադրվել է Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանքի վանահայր, որտեղ էլ սպանվել է:

Գրել է բանաստեղծություններ, ճոներ, կրոն. տաղեր, առակներ, պատմ. ողբերգություն («Հռադամիզդ եւ Զենոբիա», 1824–28, անավարտ), բազմաթիվ նամակներ, ճառեր, հոդվածներ, թարգմանել է հատվածներ Տորկվատո Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմ»-ից, զբաղվել է բառարանագրությամբ և լեզվի հարցերով, կարևոր է համարել ռուսաց լեզվի ուսուցումը հայկ. դպրոցներում: Կազմել է «Համառօտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» (1821, Մ., Օգոստոս Սեմենի տպ.), «Ռուս-հայերէն գործնական համառօտ քերականութիւն» (1814–16, Մատենադարան, ձեռ. № 3754) ձեռնարկները: Աշակել է Ներսիսյան դպրոցի վարչ., բարոյակրթ. աշխատանքների կանոնները, թարգմանել «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» (1825 և 1847, Թ., Ներսիսյան դպրոցի տպ., 1846, Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.):

1884-ին Ս. Պետերբուրգում տպագրվել է Ա-ի «Չափաբերականք» բանաստեղծությունների ժող-ը (Ա. Ա. Կրաևսկու տպ.):

Գրկ. **Շավարշյան Ա.,** *Հայ մանկավարժներ, գիրք 1, Ե., 1958:* **Նազարյան Շ.,** *Հ. Ալամդարյանի գործունեության մոսկովյան տարիները, «ԲՄ», 1960, № 5:* ***Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962:*** **Գևորգյան Է.,** *Հարություն Ալամդարյան, Ե., 1977:* **Մակարյան Ա.,** *Հարություն Ալամդարյան, Ե., 2005:*

ԱԼԱՋԱՋՅԱՆ Ստեփան Եղիայի (3.1.1924, Հալեպ–22.12.2010, Լոս Անջելես), գրող, թարգմանիչ, հրատարակիչ-խմբագիր: Մշակույթի վաստ. գործիչ (1970): Նախն. կրթությունն ստացել է Հալեպի Ուսումնասիրաց վարժարանում և ամերիկյան քոլեջում, ապա սովորել է Բեյրութի ամերիկյան համալսարանում: Ավարտել է ԵՊՀ (1951), Մոսկվայի գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1957):

1942-ին Հալեպում հրատարակել է «Վշտի ծաղիկներ» ժող-ը, աշխատակցել Հալեպի և Բեյրութի հայկ. պարբ-ներին: 1946-ին հայրենադարձել է: 1967–75-ին եղել է ՀԳՄ վարչության քարտուղար, 1980–1986-ին՝ ԳԱԹ-ի տնօրեն: 1992-ից ապրել է ԱՄՆ-ում: Աշխատակցել է «Նոր օր», «Նոր կեանք» պարբ-ներին: 2001–10-ին Գլենդելում դստեր՝ Թերեզ Ալաջաջյան-Հայրապետյանի հետ հիմնադրել և հրատարակել է ***«Առագաստ»*** հանդեսը (պատվ. խմբագիր):

Լույս են տեսել Ա-ի «Անապատում» (1953), «Պարտություն» (1957), «Առանց հայրենիքի» (1963), «Եղեգները չխոնարհվեցին» (գիրք 1–2, 1966–67), «Մադլենն ապրում է Փարիզում» (1975), «Ոսկեգույն Ծիրկաթին» (1981), «Չսպիացած վերք» (հ. 1–3, 1989–93), «Ճամբեզրի վրա» (1998), «Վաթսու-

նականք» (2002), «Յորձանուտ» (2009), «Հայ մամուլի էջերում (1957–2005): Հոդվածներ, ակնարկներ...» (2008) գրքերը: Տպագրվել են նաև Ա-ի «Երկերը» (գիրք 1–3, 1976–79), «Ընտիր երկերը» (1986): Ա-ի «Անապատում» և «Պարտություն» վեպերը թարգմանվել են ռուս. և հրատարակվել Մոսկվայում՝ «Տափակ կտուրներ» (1961) խորագրով: Ա. թարգմանել է Վ. Շեքսպիրի, Հ. Ուելսի, Վ. Սարոյանի, Ժ.-Պ. Սարտրի գործերից:


Գրկ. **Արզումանյան Ս.**, *Սրեփան Ալաջաջյան, Ե., 2008:*



Սրեփան Ալաջաջյան

ԱԼԲԵՐՏ ՄԵԾ, **Ալբերտ ֆոն Բոլշտեդտ** (Albertus Magnus, Albert von Bollstadt, մոտ 1193–1280), գերմանացի փիլիսոփա, աստվածաբան, բնագետ, ուղղափառ սխոլաստիկայի ներկայացուցիչ: Ա. Մ-ի մի քանի աշխատություններ հայ. թարգմանվել են դեռևս ձեռագրից, որոնցից «Յաղագս բնութեան խոտից, ականց եւ կենդանեաց» (Անկյուրիայի Կարմիր վանք, ձեռ. № 2), «Յաղագս գաղտնեաց կանանց» (Մատենադարան, ձեռ. № 4607), «Յաղագս գաղտնեաց արանց» (Անկյուրիայի Կարմիր վանք, ձեռ. № 2) անտիպ են:

Ա. Մ-ի **«Համառօտութիւն աստուածաբանութեան»** երկը տպագրվել է 1715-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում՝ Մխիթար Սեբաստացու աշխատասիրությամբ: Գրքի վերջում, որպես հավելված, զետեղված է վերջինիս «Լուծմունք դժուարիմացից եւ տարակուսականաց բանից Ալպերտին» գործը: Ա գրքի տիտղթ-ին՝ «Համառօտութիւն աստուածաբանութեան, երանելոյն Մեծին Ալպերտի», Բ-ի տիտղթ-ին՝ «Լուծմունք դժուարիմացից, եւ տարակուսականաց բանից Ալպերտին» (680 էջ, 8^0, 13,7 x 7,4 սմ):




Ս. Ալաջաջյանի *«Ճամբեզրի վրա» (1998, Լոս Անջելես) գրքի կազմը*

«Դրախտ հոգւոյ» կրոնաբարոյախրատ. երկն առաջին անգամ տպագրվել է 1724-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Լատ-ից թարգմ.՝ Մխիթար Սեբաստացու և նրա աշակերտ Հովհաննեսի: Հավանաբար Մխիթար Սեբաստացու հրատ-ն է: Վերահրատարակվել է 1729-ին Վենետիկում՝ Բատիստա Ալբրիցի Ձերոլիմոյի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք երանելոյն Ալպերտի որ կոչի դրախտ հոգւոյ ...» (300 էջ, 8^0, 10,3 x 6,4 սմ):

ԱԼԲՈՄ (ֆրանս.՝ album), 1. մաքուր թերթերից՝ գրքի կամ տետրի տեսքով կազմած թղթե արտադրանք՝ գծագրելու, ինչպես նաև լուսանկարներ ու բացիկներ պահելու համար: 2. Պատկերների, լուսանկարների, գծագրերի ևնի վերատպություններով ու համառոտ բացատր. տեղեկություններով հրատ.:

Ըստ ընդգրկած նյութի՝ լինում են՝ ա. գեղ. Ա-ներ, որոնք ընդգրկում են արվ-ի ստեղծագործություններ կամ բնագրային (հեղինակային) գրաֆիկ. աշխատանքներ (փորագրություն, վիմագրություն, մենատիպ), բ. լուսանկարչ. Ա-ներ՝ լուսապատկերների և լուսանկարների, տեխ. գծագրերի, գիտ. ու տեխ. պատկերների, սխեմաների ևնի վերատպություններ, գ. նպատակային նշանակության Ա-ներ՝ գիտ., գիտահանրամատչելի, արտադր., ուսուցող., բժշկ. ևն:

ԱԼԵՄԱԹՃՅԱՆ Գրիգորիս (1840, Կ. Պոլիս–1899, Կ. Պոլիս), կրթ. գործիչ: Կ. Պոլսում եղել է ուսուցիչ: 1863–66-ին հրատարակել է *«Պեզաաեան թռչնիկ»* պարբ-ը: 1870-ական թթ-ից եղել է Խարբերդի, Երզնկայի, Մուշի և Վանի թեմերի առաջնորդ: Վերադառնալով Կ. Պոլիս՝ պաշտոնավարել է Սկյուտարի Սբ Խաչ եկեղեցում:



Ալբերտ Մեծի *«Համառօտութիւն աստուածաբանութեան» (1715, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

ԱԼԵՔՅԱՆ Բագրատ Գևորգի [ծ. 12.4.1949, գ. Կարծախ (Վրաստանի Ախալքալաքի շրջան)], բանաստեղծ, լրագրող, խմբագիր-հրատարակիչ: Ավարտել է ԵՊՀ (1973): 1991–93-ին եղել է «Հայ գրող» թերթի խմբագիր, 1993–96-ին՝ «Պարույր Սևակ», 1997–2001-ին՝ «ՆորԴար», 2002-ից՝ ՀԳՄ հրատարակչությունների տնօրեն:

Լույս են տեսել Ա-ի «Բաց արմատներ» (1980), «Բառերի լույսը» (1984), «Ծանրացող երակ» (1989), «Վարուժան» (1995), «Արծվախաչ» (2001), «Դարավերջի քամին» (2004), «Հրաբխե գիշերներ» (2008), «Մերկ լեռը» (2010) բանաստեղծությունների ժող-ները:


ՀԳՄ Պ. Սևակի անվ. մրց. (1992):



Սարգիս Ալեքսանյան. *«Սասունցի Դավիթ» (1939, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Վառլեն Ալեքսանյանի *«Կասկածի ջրերի վրա» (2009, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



Ղևոնդ Ալիշան

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տես *Գյումրիի տպագրություն* հոդվածում:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Սարգիս Թորոսի (10.1.1910, Էրզրում–1942, զոհվել է Հայրենական մեծ պատերազմում), նկարիչ: Ավարտել է ԵԳԱՏ, Մոսկվայի կերպարվ–ի ինստ–ը (1937): Պատկերազարդել է «Սասունցի Դավիթ» (1939) էպոսը, Հ. Թումանյանի «Անուշ» (հրտ.՝ 1948) պոեմը, նաև Պ. Մերիմեի ստեղծագործություններից: Տիրապետել է փայտափորագրության և ջրաներկի տեխնիկային:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Վառլեն Գուրգենի [8.1.1942, գ. Գառնահովիտ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–19.6.2015, Երևան], բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1970): 1972–91-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի խմբագրությունում, 1990–94-ին եղել է «Հայաստան», 2002–08-ին՝ ՀԳՄ հրատարակչության գլխ. խմբագիր, 1995–97-ին՝ «Արմենպրես» գործակալության, 1997–98-ին՝ «Պայքար» ամսագրի պատ., 2013–15-ին՝ ***«Հոգևոր հայրենիք»*** ամսաթերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա.-ի «Օրերի սերը» (1978), «Անհասցե նամակներ» (1983), «Կաթիլներ ապակու վրա» (1988), «Ծանր խաչ» (1996), «Կյանքին դեմառդեմ» (2002), «Մինչև վերջին անձրևը» (2007), «Կասկածի ջրերի վրա» (2009), «Կարուսել» (2011) բանաստեղծությունների ժող–ները:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1992) և ԹՄՄ (1988) մրց–ներ, ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2007), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2012) մեդալներ:

ԱԼԹՈՒՆՅԱՆ Արիստակես, **Ալթուն Տյուրի** (1804, Կ. Պոլիս–1868, Կ. Պոլիս), հաս. գործիչ: Սովորել է Զմյուռնիայի Ազգ. վարժարանում, ապա՝ ֆրանս. դպրոցում: Հետագայում Եգիպտոսում կատարելագործել է լեզուների իմացությունը, դարձել Մուհամմեդ Ալի փաշայի քարտուղարը, եղել «Էլ Մասըր» արաբ. թերթի խմբագիր: Փաշայի մահից հետո վերադարձել է Զմյուռնիա: Մասնակցել է արևմտահայերի «Ազգային սահմանադրության» (1860) ստեղծմանը:

ԱԼԹՈՒՆՅԱՆ Գևորգ Կարապետի (10.8.1881, Ախալքալաք–1947), գրականագետ, թարգմանիչ, դրամատուրգ: Ավարտել է Բեռլինի համալսարանը (1911): Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Լույս են տեսել Ա.-ի «Հայոց նախնական պատմութիւնը ըստ Մոմզէնի» (1904), «Գերմանական նոր գրականութեան պատմութիւն» (1914), «Հայ գրի եւ տպագրութեան մեծ յոբելեանը... 1512–1912» (1912) աշխատությունները, խմբագրել է Է. Մայերի «Պատմութեան տեսական եւ մեթոդաբանական խնդիրներ» (1912) ուսումնասիրությունը, կազմել դպրոց. դասագրքեր («Կենդանաբանութեան դասագիրք», 1906), թարգմանել Յ. Վ. Գյոթեի «Ստելլա» (1902, բոլորը՝ Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), Ի. Բերդնիկովի «Նոր պետութեան վերաբերմունքը դէպի կրօնը» (1902, Ալեք–պոլ, Սանոյանի և Ստեփանյանի տպ.), «Իփիգենիան Տավրոսում» (1914, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), Հ. Զուդերմանի «Հոգսը» (1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) գործերը: Կրասնոդարի Հայկական թատրոնում բեմադրվել են նրա, «Արտաշէս թագաւոր եւ Սաթէնիկ» (1921, անտիպ), «Սասունցի Դաւիթ» (1922) պիեսները:

ԱԼԹՈՒՆՅԱՆ Ստեփան Զարմայրի (1893, Ախալքալաք–1945, Լենինական), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է Կիևի գեղարվ–ի ուսումնարանը (1918): 1919–31-ին դասավանդել է Լենինականի դպրոցներում, կազմակերպել ու ղեկավարել է տեղի Գեղարվ–ի ստուդիան: 1936–ից աշխատել է Հայպետհրատում: Ձևավորել և նկարազարդել է «Սասունցի Դավիթ» (1939, Մհեր ***Արեղյանի*** հետ) էպոսը, Ա. Շահենի «Երեք պատմվածք», Ա. Վշտունու «Երեխան և կատվիկը» և այլ գրքեր:

ԱԼԻՇԱՆ Ղևոնդ [իսկական անուն-ազգանունը՝ Քերովբե Ալիշանյան Պետրոս Մարգարի, 6(18).7.1820, Կ. Պոլիս–9(22).11.1901, Սբ Ղազար (Վենետիկ)], պատմաբան, բանաստեղծ, բանասեր, աշխարհագետ, խմբագիր, թարգմանիչ: Ենայի փիլ. ակադ–ի պատվ. անդամ և դ–ր (1897): 1830–32-ին սովորել է Կ. Պոլսի Վ. Չալըխյանի վարժարանում, 1832–41-ին՝ Վենետիկի Մխիթարյանների դպրոցում: 1838–ից՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: 1849–51-ին

խմբագրել է *«Բազմավէպ»* հանդեսը: 1870-ից վարել է միաբանության աթոռակալի պարտականությունը:

1847–60-ին «Բազմավէպ»-ում Նահապետ ստորագրությամբ տպագրել է բանաստեղծություններ և պոեմներ: Սկզբում գրել է գրաբարով, ապա՝ աշխարհաբարով. պատկերել է հայ ժողովրդի պատմ. անցյալի հերոս. դրվագներ («Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», «Հրազդան», «Մասիսու սարերն», «Հայոց աշխարհիկ», «Վերջին երգ վիրաւոր բամբռահարին», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ», «Պլպուլըն Աւարայրի», «Շուշանն Շաւարշանայ»): Հայ ժողովրդի ազգ-ազատագր. ձգտումներն է արտացոլել «Յուշիկք հայրենեաց հայոց» (հ. 1–2, 1869–70) գեղ. արձակ ստեղծագործության մեջ, «Կարմիր Վարդան», «Արգար Դպիր» բանաստեղծություններում կոչ է արել «զենքն ի ձեռին» ազատագրել հայրենիքը, պայքարով ձեռք բերել սեփական ազատությունն ու անկախությունը»:

«Հայոց երգք ռամկականք» (1852, համատեղ տրված են հայ. բնագրերն ու անգլ. թարգմանությունները) ժող-ը հայ բանագիտյան առաջին աշխատություններից է: **«Աշխարհագրութիւն քաղաքական...»** (1852) ծավալուն աշխատությունը ներառում է նաև պատկերներ ու գունավոր քարտեզներ: **«Տեղագիր հայոց մեծաց»** (1855) աշխատության մեջ ներկայացրել է Հայաստանի գավառների գիտաաշխարհագր. նկարագրերը, **«Նշմարք հայկականք»**-ում (1870) անդրադարձել է Հայաստանի տեղանուններին, պատմ. իրադարձություններին ու նյութ. մշակույթի հուշարձաններին: Ա. նախատեսել էր գրել (20 հատորով) պատմ. Հայաստանի բոլոր՝ 15 աշխարհների մասին պատմաաշխարհագր. բնույթի աշխատություններ, սակայն գրել է միայն 4-ը՝ «Շիրակ: Տեղագրութիւն պատկերացոյց» (1881, 2010), «Սիսուան: Համագրութիւն հայկական Կիլիկիոյ...» (1885), «Այրարատ: Բնաշխարհ Հայաստանեայց» (1890) և «Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» (1893, 2009), «Արցախ» (հրտ.՝ 1993):

«Հայբուսակ կամ Հայկական բուսաբառութիւն» (1895, 1992) մեծ նագրության մեջ Ա. գիտականորեն բնութագրել է հայկ. բնաշխարհի ավելի քան 3400 բույսեր և ծաղկատեսակներ (150-ից ավելի նկարներով), անդրադարձել դրանց մասին ժող. գրույցներին, բուժ. հատկություններին, **«Հին հաւատք կամ Հեթանոսական կրօնք հայոց»** (1895, 2002) երկում քննել է հայկ. հեթանոսության ծագումնաբան. ակունքները, ներկայացրել հեթանոս. պաշտամունքներն ու հավատալիքները:


Լույս են տեսել նաև Ա-ի «Նուագք» (հ. 1–5, 1857–58, 1926, 1944, «Նվագներ»՝ 1957, Ե.), «Յոյգք Աստուծոյ կամ Նուէր տղայոց կամ Ընթերցարան նոր» (1866, 1886, 1895), «Շնորհալի եւ պարագայ իւր» (1873), «Ընդ եղեւնեաւ» (1874, «Եղևնինին տակ»՝ 1930), «Հայ-Վենետ...» (1896), «Արշալոյս քրիստոնէութեան հայոց» (1901), «Հայապատում» (1902), «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան» (1904), «Աղուանք» («Բազմավէպ», 1970, № 11–12) աշխատությունները: Տպագրվել են նաև Ա-ի «Երկերը» (1981, Ե.), «Նամակները» (1969, Ե.):

Կարևոր է Ա-ի ներդրումը Անաղալիոս Պոնիոսի «Գիրք վաստակոցի» (1877), մի շարք պատմագիրների՝ Վարդան Արևելցու (1862), Կիրակոս Գանձակեցու (1865), Լաբուբնայի (1868), Խորսրով Անձևացու (1869), Սմբատ Սպարապետի (1876) երկերի, «Սոփերք հայկականք» (հ. 1–22, 1853–61) մատենաշարի գիտ. հրատարակման գործում: Թարգմանել է Ջ. Միլտոնի, Ջ. Բայրոնի, Ֆ. Շիլլերի, Հ. Լոնգֆելլոյի և ուր. ստեղծագործություններից:

Ա-ի գրքերի մեծ մասը տպագրվել է Վենետիկի Սբ Ղազարի տպարանում: Ֆրանսիայի ակադ-ի Պատվո լեգեոնի ասպետ (1886):

Գրկ. **Երեմեան Ս.,** *Կենսագրութիւն հ. Ալիշանի, Վնտ., 1902:* **Շտիկյան Ս.,** *Ղևոնդ Ալիշանի հայրենասիրական պոեզիան, Ե., 1959:* **Նույնի,** *Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Ե., 1967:* **Սարինյան Ս.,** *Հայկական ռոմանտիզմ, Ե., 1966: Ալիշանը ժամանակակիցների հուշերում (կազմ.՝ Ս. Շտիկյան), Ե., 1974:* **Մարգսյան Ս.,** *Ալիշան: Պատկերներ կյանքից, Ե., 1978:* **ՃէՎմճէմեան Ս. Հ.,** *Ղեւոնդ Ալիշան, Վնտ., 1980:*

«ԱԼԻՍ», Սեբաստիայի վերաշինաց միության (1926-ից՝ Նոր Սեբաստիայի համագործակցական ընկերություն) տեղեկագիր: Լույս է տեսել 1920–35-ին Նյու Յորքում: Արտոնատերեր՝ Վարդան Հովհաննիսյան, Արտաշես Բաբայան, Ռոստոմ Ստեփանյան, Ալբերտ



«Սիսուան» (1885, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Նուագք» (1926, Վնտ.) գրքի կազմը



«Ալիս», *1920–35, Նյու Յորք*



«Ալիք», *1931-ից, Թեհրան*



Աբրահամ Ալիքյան



Ա. Ալիքյանի
«Ծղրիթը» (1993, Բեյրութ) գրքի կազմը



Ավետիս Ալիքսանյան

Ահեմյան: Խմբագիր՝ Մեսրոպ Պաճագյան: Տպագրել է նյութեր հայոց պատմության, սեբաստահայերի կենցաղի, սովորույթների, Մեծ եղեռնի արհավիրքների մասին, գիտ. և մշակութ. հոդվածներ, հայ գրողների ստեղծագործություններ:

«ԱԼԻՔ», հաս-քաղ., գրական-գեղ. օրաթերթ (մինչև 1941-ը՝ շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա): ՀՅԴ պաշտոնաթերթ: Լույս է տենում 1931-ից Թեհրանում: Արտոնատերեր՝ Վարդան Հովհաննիսյան, Արտաշես Բաբալյան, Ռոստոմ Ստեփանյան, Ալբերտ Ահեմյան: Խմբագիրներ՝ Հովսեփ ***Թադևոսյան***, Երվանդ ***Հայրապետյան***, Անդրե ***Տեր-Օհանյան***, Մանուել Մարության, Հովսեփ ***Հովհաննիսյան***, Տաճատ ***Պողոսյան***, Անուշավան Գրիգորյան, Բաղդիկ ***Մինասյան,*** Նորայր Պահլավունի, Հրայր Խալաթյան, Էդվարդ Երիցյան, Էդվարդ Ղահրամանյան, Նորայր ***Էլապյան***, Սեդա Դավթյան, Դերենիկ ***Մելիքյան*** (2004-ից): Անդրադառնում է իրանահայ կյանքին, Իրանի ներքին և արտաքին քաղաքականությանը, տպագրում ՀՀ-ի, Արցախի, Սփյուռքի մասին ուշագրավ տեղեկատվություն, ՀՅԴ գործունեությանը, գաղափարախոսությանը վերաբերող նյութեր: Նախապես ունեցել է շեշտված հակախորհրդ. ուղղվածություն, ՀՀ անկախացումից հետո պաշտպանել է Իրան-Հայաստան կապերի ամրապնդումը:

«Ա.»-ի առանցքային թեմաներից է հայ դատի հիմնախնդիրը: Ունեցել է «Շարժում», «Հայ երիտասարդ», «Ուսանողական էջ», «Գրական էջ» հավելվածները: Ներկայումս լույս է ընծայում երիտասարդ. «Խաչմերուկ» և «Մանկական էջ» հավելվածները, 1997-ից՝ «Կանթեղ» օրացույցը (1960-97-ը՝ ինքնուրույն հրատ., հիմնադիր-խմբագիր՝ Հովհաննես Տեր-Պետրոսյան): Ունի սեփական տպարան. հրատարակում է նաև դասագրքեր իրանահայ դպրոցների համար, գեղ. և այլ բնույթի գրքեր՝ հայ. ու պարսկ.:

1961-63-ին հրատարակել է «Ալիք» ամսագիրը, 1969-78-ին՝ Թեհրանի հայ պատանեկան միության «Ալիք պատանեկան» (խմբագիր՝ Ժիրայր Ղարիբյան, ապա՝ խմբագրակազմ) պատկերազարդ պաշտոն. երկշաբաթաթերթը (2010-ից վերահրատարակվում է որպես ամսագիր): 2001-ից «Ա.» ունի համացանցային կայքէջ: 2011-ին տպագրվել է ծավալուն հուշագիրք՝ հիմնադրման 80-ամյակի առթիվ:

ԱԼԻՔՅԱՆ Աբրահամ Սարգսի [21.5.1928, ք. Ալեքսանդրետ (Թուրքիա)-15.6.2013, Բեյրութ], բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Բեյրութի Սահակյան վարժարանը, ապա՝ Նշան Փալանճյան ճեմարանը (1946): 1947-ին հայրենադարձել է: 1954-ին ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ը, որտեղ դասավանդել է նույն թվականից: Բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Հորիզոն» ժող-ը, տպագրվել է 1947-ին Բեյրութում:

Լույս են տեսել նաև Ա-ի «Կանաչ սոսափ» (1959), «Բարեհուսո հրվանդան» (1965), «Աչքեր» (1968), «Նժար» (1974), «Արևմաղ» (1983), «Ֆարայա» (1998), «Հեզ իրիկուն» (1995, 2008, երկուսն էլ՝ Անթիլիաս) բանաստեղծությունների, «Ծղրիթը» (1993), «Հանդիպակաց ափեր» (2009) հոդվածների, էսսեների, գրախոսությունների և հարցազրույցների ժող-ները: 1958-ին Մոսկվայում ռուս. տպագրվել է նրա «Վերադարձված երգ» գիրքը: Ֆրանս-ից թարգմանել է Շ. Ազնավուրի «Մեր սրտի չափով» (1968) և Գ. Ապոլիների «Բլուրներ» (1970) բանաստեղծությունների ժող-ները, ինչպես նաև Գ. Ֆլոբերի, Ռ. Մարտեն դյու Գարի, Ա. Սիրուայի, Է. Բազենի, Ա. Ստիլի, Ռ. Մելիքի և ուր. հեղինակների գործերից:

ԱԼԻՔՍԱՆՅԱՆ Ավետիս Ավետիսի (Հովհաննեսի) (10.5.1910, Կ. Պոլիս-20.9.1984, Փարիզ), գրող, խմբագիր, հաս. գործիչ: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան և Կեդրոն. վարժարանները: Կ. Պոլսում խմբագրել և հրատարակել է «Կիթառ» (1930), ***«Պատկեր»*** (1932-45), «Վոսփոր» (1933), «Ամսուան գիրքը» (1938), «Գրականութիւն եւ արուեստ» (1940), «Նոր օր» (1945-46), «Այսօր» (1947-48) պարբ-ները:

1948-ից տեղափոխվել է Ֆրանսիա (Մարսել, ապա՝ Փարիզ): 1952–71-ին (ընդհատումներով) խմբագրել և հրատարակել է «Լուսաղբիւր», 1957–59-ին՝ «Լոյս Փարիզի» պարբ-ները: 1960–84-ին՝ *«Աշխարհ»* շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Անունը Սասիս դրինք» (1964, 1968), «Երջանկութիւն» (1966) բանաստեղծությունների և պատմվածքների ժող-ները:

Եղել է Ֆրանսահայ մշակութ. միության պատվ., Ֆրանսահայ գրողների ընկերակցության նախագահը:

ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամության շքանշան»:

ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ Հակոբ Հովսեփի (1848, Կ. Պոլիս–մոտ 1918), բանահավաք, մանկավարժ, հաս. գործիչ:

Լույս են տեսել Ա-ի «Ուլնիա կամ Ձէյթուն» [1884, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի (Արամյան) տպ.] ազգագր-բանահյուս. ուսումնասիրությունը, «Անձնասպանի մը բողոքը» (1909, ԿՊ, Հարություն Ասատրյանի տպ.) ինքնակենսագր. և «Համայնասնունդ եւ սեղան ի քառակերպն» (1911, ԿՊ, Արշակ Կարոյանի տպ.) գրքույկները:

ԱԼՄԱՆԱԽ (<արաբ. ալ-մանախ–օրացույց), որևէ ընդհանուր հատկանիշի (թեմատիկ, ժանրային, գաղափարագեղ., տեղային) հիման վրա կազմված գրական ստեղծագործությունների ժող., ժամանակացույց, տարեգիրք: Միջնադարում Ա. են անվանել արաբներից փոխառված աստղաբաշխ. օրացույցները, որոնք աստիճանաբար լրացվել են պատմ. իրադարձությունների մասին տեղեկություններով, անեկդոտներով, բանաստեղծություններով: Հետագայում Ա. կորցրել է իր նախն. նշանակությունը:

Հայ իրականության մեջ մինչև 1890-ական թթ. Ա-ները կոչվել են «Ժողովածու», «Զբոսարան» ևն: Նախախորհրդ. տարիներին լույս են տեսել *«Գարուն»* (գիրք 1, 2, Մ., 1910, 1912), *«Ասպարէզ»* (գիրք 1–6, Ալեք-պոլ, 1912–13), խորհրդ. տարիներին՝ «Արագած» (Ե., 1958), *«Կամուրջ»* (Թ., 1961–66) և հայ. այլ Ա-ներ:

ԱԼՈՅԱՆ Լենդրուշ Արամի (ծ. 12. 8. 1941, Կիրովական), բանասեր, լրագրող: Բանասիր. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (2000): Ավարտել է ԵՊՀ (1966): 1999–2007-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ: Լույս են տեսել Ա-ի հայ մամուլի պատմությանը վերաբերող «Գրականության, արվեստի և լուսավորության հարցերը «Մշակ» լրագրում 1892–1905 թթ.» (1989), ««Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905–1921 թթ.» (2003), ««Մշակը» 1893–1913 թթ.» (2013) աշխատությունները: Հեղինակ է նաև բազմաթիվ գիտ. և հրապարակախոս. հոդվածների:

ԱԼՊԱԳՈ ՆՈՎԵԼԼՈ (Alpago Novello) Ադրիանո [20.7.1932, Բելլունո (Իտալիա)–4.6.2005, Բելլունո], իտալացի ճարտարապետ, արվեստաբան: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (2003): 1968-ին Միլանի պոլիտեխ. ինստ-ում հիմնադրել է Հայկ. միջնադարյան ճարտ-յան ուսումնասիրության կենտրոն: 1964-ին գրել է «Լէ Մուզե» («Le Muse») արվ-ի հանրագիտարանի «Հայկական ճարտարապետություն» հոդվածը, 1969-ին թարգմանել է Բ. Ֆլեչերի «Ճարտարապետության պատմությունը համեմատական մեթոդով» գիրքը՝ լրացնելով հայկ. ճարտ-յանը վերաբերող նյութերով: Գլխավորել է գիտարշավախմբեր Խորհրդ. Հայաստան (1967), Վասպուրական, Անի, Կիլիկիա (1970):


1968-ին Ա. Ն. Արմենն և Հակոբ Մանուկյան եղբայրների հետ ստեղծել է *«Հայ ճարտարապետության վավերագրեր»* (իտալ., «Documenti di architettura Armena») մատենաշարը: Հեղինակել է այդ մատենաշարի «Հաղպատ» («Hakhpat», 1968), «Սանահին» («Sanahin», 1970), «Ամբերդ» («Amberd», 1972), «Երերույք» («Ererouk», 1977), «Կեչառիս» («Ketcharis», 1982), «Ամաղու Նորավանք» («Amaghu Noravank», 1985), «Սորհուլ» («Sorhul», 1989) հատորները: 1988-ին Իտալիայում անգլ. և իտալ. հրատարակել է «Ղարաբաղ» հատորը: Միլանի հայկ. համայնքի աջակցությամբ կազմակերպել է «Հայկական ճարտարապետությունը IV–XVIII դդ.-ում» ցուցահանդեսը, որը ներկայացվել է նաև մի շարք այլ երկրներում: Հեղինակ է հայ միջնադարյան ճարտ-յանը վերաբերող աշխատությունների, համահեղ.՝ «Հայերը...» (անգլ., 1995) գրքի:



Հակոբ Ալլահվերդյանի *«Ուլնիա կամ Ձէյթուն» (1884, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Ալմանախ *(1941, Թբիլիսի, Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի 20-ամյակի առթիվ, ձևավորումը՝ Հ. Կոջոյանի), շապիկը*



Ադրիանո Ալպագո Նովելլոյի *«Հայերը...» (համահեղ., անգլ., 1995) գրքի կազմը*

ՀԽՍՀ ԳԱ Թ. Թորամանյանի անվ. մրց. (1990):

Երկ. Ville della Provincia di Belluno, Milano, 1968; Grecia Bizantina, Milano, 1969; La Fortezza di Amberd sul monte Aragatz (Armenia S.S.R.), «Castellum», 1969, № 9; La basilica di Tanaat nello Zangezur e il problema dell arco oltrepassato nell ambito dell architettura protocristiana Armena, «Atti del 2, Congresso Nazionale di Archeologia cristiana», Matera, 1970.

Գրկ. Հասրաթյան Մ., Ադրիանո Ալպագո Նովելլո, «ԼՀԳ», 2005, № 3:



Արշակ Ալպոյաճյան

ԱԼՊՈՅԱՃՅԱՆ Արշակ Աստվածատուրի (17.6.1879, Կ. Պոլիս–24.6.1962, Կահիրե), պատմաբան, բանասեր, մանկավարժ, խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում, ավարտել Կեդրոն. վարժարանը (1899): 1897-ից պատմաբանասիր. հոդվածներ է տպագրել «Ծաղիկ», «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Կոչնակ», «Բիւրակն», «Մասիս» և այլ պարբ-ներում: Տարբեր տարիների խմբագրել է ***«Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկչեան ազգային հիւանդանոցի»***, ***«Բիւզանդիոն»*** պարբ-ները, 1912-ին Կ. Պոլսում հիմնադրել է ***«Ռահվիրա»*** օրաթերթը: Աշխատակցել է Թեոդիկի «Ամէնուն տարեցոյց»-ին: 1910–22-ին՝ Կ. Պոլսի պատրիարքարանի քարտուղար. եղել է Կահիրեի Հայոց ազգ. առաջնորդարանի դիվանապետ: 1936–37-ին խմբագրել և հրատարակել է ***«Ազատ միտք»***, 1938–49-ին՝ ***«Գրասէրի առաջնորդ»*** (ընդհատումներով) պարբ-ները, 1944–50-ին՝ ***«Կեանք եւ գիր»*** (Դավիթ Շահլամյանի հետ) տարեգիրքը:



Ա. Ալպոյաճյանի *«Մինաս Չերազ» (1927, Կահիրե) գրքի փիփղոսաթերթը*

Լույս են տեսել Ա-ի «Ուսումնասիրութիւն Սրբուհի Տիւսաբի» (1901, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Պուլկարաց պատմութիւնը: Անոնց ծագումէն մինչեւ մեր օրերը» (1910, Վառնա, «Իրավունքի» տպ.), «Անհետացող դէմքեր: Գրիգոր Զօհրապ» (1919, ԿՊ., Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան եղբ. տպ.), «Մինաս Չերազ» (1927, Կահիրե) «Գրիգոր Կեսարացի պատրիարք եւ իր ժամանակը» (1936), «Թորգոմ պատրիարք Գուշակեան» (1940), «Հայ եկեղեցիին սահմանադրութեան հարցերը» (1945, Կահիրե, «Նոր Աստղ» տպ.), «Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապեշիստան ԺԷ դարուն» (1946), Վահան Թէքէեան: Իբր հանրային մարդ եւ հրապարակագիր» (հրտ.՝ 1988) աշխատությունները: Հայագիտության բնագավառում Ա-ի ամենամեծ ներդրումը հայկ. գաղթավայրերի պատմության վերաբերյալ «Հայք ի Ռումելի» (անտիպ, Իզմիրյան գրական մրց.՝ 1905), «Պատմութիւն հայ Կեսարիոյ» (հ. 1–2, 1937), «Պատմութիւն Եւդոկիոյ հայոց» (1952), «Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը» (1960), «Պատմութիւն Սալաթիոյ հայոց» (1961), «Յուշամատեան Կուտինահայերու» (1961) ուսումնասիրություններն են: Գրել է նաև հայկ. գաղթավայրերի առաջին ամբողջական՝ «Պատմութիւն հայ գաղթականութեան» (հ. 1–3, 1941–61), և հայ դպրոցի մասին «Պատմութիւն հայ դպրոցի» (հ. 1, 1947) և այլ ուսումնասիրություններ: Հեղինակ է նաև տպագրությանը և լրագրությանը նվիրված երկերի («Տպագրութեան արուեստը եւ Հայք», «Ակնարկ մը հայ լրագրութեան վրայ», երկուսն էլ՝ ձեռագիր, Սատենադարան, Ա-ի ֆոնդ, «Զմյուռնիոյ տպարանները», 1964): Նրա «Պատմական Հայաստանի սահմանները» (1950) աշխատությունն արժեքավոր է Հայաստանի պատմ. աշխարհագրությանը և հաս-քաղ. պատմությանը վերաբերող նյութերով:

Ա. մամուլում տպագրել է «Անհետացող դէմքեր» շարքը, որն ուրույն հանրագիտարան է ժամանակի մշակույթի հայտնի հայ գործիչների մասին: Հանդես է եկել նաև Ս. Անգեղյան և Շավարշ կեղծանուններով:

Երկ. Իրաքի հայերը, Ե., 2003: Les Dadians traduction de Anna Naguib Boutros Ghali, Le Caire, 1965.



Հարություն Ալփիար

ԱԼՓԻԱՐ Հարություն (1864, Զմյուռնիա–1919), երգիծաբան, լրագրող: Սովորել է Կ. Պոլսի Արամյան և Շահնազարյան վարժարաններում: Կահիրեում հրատարակել է ***«Փարոս»*** (1896–98, 1901–02) երգիծ. թերթը: Աշխատակցել է Զմյուռնիայի և Կ. Պոլսի թերթերին՝ «Արեւելեան մամուլ», «Մասիս», «Սուրհանդակ» ևն: Գրել է երգիծ. քրոնիկներ և նովելներ:

Լույս են տեսել Ա-ի «Առաջին անգամը: Ֆանթէզի նորավէպ» (1908, ԿՊ, «Մանզումեի էֆքեարի» տպ.), «Որքան տեւելու է: Շոգ-մոգ» (1909, ԿՊ, Գաբրեգին Պաղտատլյանի տպ.), «Ֆանթազիօ» (1913, ԿՊ, «Շանթ» տպ.), «Քմայքի ծաղիկներ: Զուարթ գրականութիւն» (1917, ԿՊ, Ասատրյան և որդ. տպ.), «Արձակ համարձակ (երգիծանք)» (1986) երկերի ժող-ները:

Հանդես է եկել նաև Ռատամես, Քրիզանթեմ ծածկանուններով:

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Վրաստանում հայկ. առաջին գավառ. տպարանը հիմնադրվել է Ախալցխայում 1880-ական թթ-ի սկզբներին, երբ վրացաբնակ գավառներում դեռևս տպարաններ չկային: Հիմնադիր՝ Մկրտիչ Ղալամքարյան: 1885-ին Խորեն Ստեփանեի խմբագրությամբ այստեղ լույս է տեսել ***«Մանկավարժանոց»*** հանդեսը (4 համար) և, որպես հավելված, «Մի կողով ելակ» մանկ. դրաման: Այստեղ են տպագրվել նաև Հ. Մարաղյանի «Քանդած օջախ» (1889), «Որբուկի օրը» (1891, թարգմ.) գրքույկները, «Հաշիւ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Ախալցխայի ճիւղին» (1898) հաշվետվությունը:

XIX դ-ի վերջերին տպարան է հիմնադրել նաև Խորեն Ասմարյանը. 1896-ին լույս է ընծայել Հ. Սենկևիչի «Գնանք նորա յետեւից» պատմվածքը, երաժշտագետ Շահան Սիմոնի «Պատարագի երգեցողութիւն»-ի 4 գրքույկը (1900, 1906, 1907, 1909), Նիկողայոս Հովհաննիսյանի «Լիզա» (1907) կատակերգությունը ևն:

Մյուս տպարանը պատկանել է Մ. Ճուլարտյանին, որտեղ տպագրվել են տեղեկատվ. գրքույկներ՝ հայ կաթոլիկների գործունեության վերաբերյալ: 1907-ին այստեղ հրատարակվել է Պողոս Քաջվորյանի «Սգոյ գիշեր» գրքույկը, 1909-ին՝ «Ի սգալի մահ վաղամեռիկ Անտոնի կիսասարկաւագի Փիլոսեան Արդուինցւոյ» մահագրականը ևն:

XX դ-ի սկզբներին տպարան են հիմնադրել Մարտիրոս և Հայկ Մարտիրոսյան եղբայրները: 1905-ին լույս են ընծայել 3 գիրք՝ Ս. Կլայեկչյանի «Բարի ընկերս» վեպը, Սարգիս Խոջայան-Խաչատրյանի «Նոր վէպիկը» և «Արեան վրէժ» գրքույկը, ապա՝ «Ազգային քնար: Երգարան» (1906) հայրենասիր. երգերի ժող-ը, Պերճ Գայֆեճյանի «Հովիկ» արձակ բանաստեղծությունների 2 պրակը (1906) և «Կեանքի գնով» (1909) ժող-ը, «Մարդկային կրքերի դաստիարակութեան կանոններ» (1907) թարգման. գիրքը, Սիոն վրդ. Տեր-Մանվելյանի «Եզիդի կուրմանժ» (1910) ուսումնասիրությունը ևն: Այստեղ է լույս տեսել նաև ՀՅԴ Ախալցխայի կազմակերպության ***«Շարժում»*** (1917–18) պաշտոնաթերթը՝ հավելվածներով՝ Մ. Զարաֆյանի «Ինչպէս հիմնենք սպառողական ընկերութիւններ գիւղում», Վ. Գայֆեճյանի «Սահմանադիր ժողով» (երկուսն էլ՝ 1917) ուսումնասիրությունները ևն:

1910-ական թթ-ի կեսերից գործել է նաև Հեպիպյան եղբայրների տպարանը. լույս է ընծայել գովազդային նյութեր, հայտարարություններ, ինչպես նաև Կովկասի հայոց բարեգործ. ընկերության Ախալցխայի մասնաճյուղի գործունեությունը լուսաբանող թերթ (1917):

Ախալցխայի հայկ. տպարաններում տպագրվել են նաև վրաց., ռուս. և թուրք. առանձին թերթոններ ու հայտարարություններ:

Տպարանները գործել են մինչև 1918-ի կեսերը, երբ թուրք. զորքերը պաշարել են քաղաքը:

Վրաստանում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո Ախալցխայում մնացել է միայն Մարտիրոսյան եղբայրների տպարանը, որը պետականացվել է: 1931–34-ին այնտեղ տպագրվել է «Դեպի սոցիալիզմ» (հայ., թուրք.) շրջ. թերթը, որին հաջորդել են «Կոմունիստ» (1934–38), «Ունևոր կյանք» (1939–44), «Ծիթելի դրոշա-Կարմիր դրոշ» (հայ., ռուս., վրաց., 1944–91) թերթերը:

Գրկ. **Մաղալյան Վ.,** *Հայ գեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Ե., 2012:*

Վլադիմիր Մաղալյան

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Ախալքալաքի միակ տպարանը հիմնադրել են Միսաք և Ալեքսանդր Գրիգորյան եղբայրները XIX դ-ի վերջերին: Սարքավորումները հավանաբար բերել են իրենց ծննդավայրի՝ Ախալցխայի տպարաններից, 1905–06-ին նոր սարքավորումներ ձեռք են բերել Գերմանիայից:

1908-ին լույս է տեսել առաջին գրքույկը՝ «Ախալքալաքայ հայոց սուրբ Մեսրոբեան եւ սուրբ Սանդուխտեան ծխական երկսեռ երկդա-

Ախալցխայի հայկական տպագրություն



«Մանկավարժանոց» (1885, Մ. Ղալամքարյանի տպ.) հանդեսի 1-ին էջը



«Դեպի սոցիալիզմ» (1931–34) շրջանային թերթի գլխագիրը

Ախալքալաքի հայկական տպագրություն



Հովհաննես Մալխասյանի «Զավախքի երազը» (1913, Մ. Գրիգորյանի տպ.) գրքի կազմը



«Փարոս» (1965–99) շրջանային թերթի գլխագիրը



Վրթանես Ախիկյան. *Զարդատառերի նմուշներ*

սեան ուսումնարանների 1905–06, 1906–07 եւ 1907–08 թուականների հաշիւը», ապա՝ Մ. Մութաֆյանի «Տանջանքի բովից» արձակ ստեղծագործությունների ժող–ը, իսկ 1917–ին՝ Գ. Նովոտորժսկու «Ազգային հարց: Աւտոնօմիա եւ ֆեդերացիա» աշխատության հայ. թարգմանությունը. հրատարակվել է ««Յառաջի» գրադարան» մատենաշարով:

Այս տպարանում է տպագրվել նաև Վարդան ***Շահպարոնյանի*** հիմնադրած ***«Զաւախք»*** շաբաթաթերթը (1913–16)՝ հավելվածներով:

1918–ին թուրքերը գրավել են Ախալքալաքը, տպարանը քանդել են և սարքավորումները տեղափոխել են Արդահան: Պատերազմի ավարտից հետո տպարանատերերին հաջողվել է դրանք Արդահանից փոխադրել Ախալքալաք և տպարանը վերագործարկել:

Վրաստանում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո տպարանը պետականացվել է, 1924–25–ին այնտեղ տպագրվող գավառ. թերթի անունով կոչվել է «Կարմիր Զավախք», 1925–26–ին հրատարակել է նաև «Ռանչպար» թերթը: 1931–ին տպարանի հիմքի վրա ստեղծվել է Ախալքալաքի շրջ. տպարանը, որտեղ տպագրվել է «Սոցիալիստական անասնաբուծություն» թերթը: Հետագա տասնամյակներում այստեղ հրատարակվել են հայ., վրաց. ու թուրք. մի շարք թերթեր՝ «Բոլշևիկյան կոլխոզ» (1933–49), «Ստալինյան ուղիով» (1934–35), «Բոլշևիկուրի կոլմեուրնեոբա» (1937–42), «Օքտոմբրիս դրոշիթ» (1950–55, երկուսն էլ՝ վրաց.), «Հոկտեմբերի դրոշով» (1956–61), «Կարմիր դրոշ» (1962–65), «Փարոս» (1965–99) ևն:

Ախալքալաքում 1967–ից վերականգնվել է նաև գրատպությունը. լույս են տեսել Վրաստանի գրողների միության հայկ. մասնաճյուղի անդամների և Զավախքի երիտասարդ ստեղծագործողների գրքերը:

Վերջին 4 տասնամյակում Ախալքալաքի տպարանում լույս են տեսել շուրջ 100 անուն հայ. գրքեր՝ ավելի քան 200 հզ. ընդհանուր տպաքանակով. «Զավախքի կանչեր» (1979), Աշուղ Թիֆիլու «Երգերը» (1982), «Զավախքի ժողովրդական երգեր» (1985), «Զավախքի գուսանների երգեր» (1987), «Զավախքի ղողանջներ» (1990) և այլ ժող–ներ: Մինչև դարավերջ տպագրվել են Դ. Բագրատունու, Վ. Ավագյանի, Ս. Սիմավորյանի, Ն. Կիրակոսյանի, Ա. Նուրբեկյանի, Գ. Եթերի, Ռ. Զավախի, Կ. Ղարսլյանի, Գ. Հայասայի, Վ. Հովսեփյանի, Գ. Արոյանի, Օ. Օքրոյանի, Ս. Արոյանի և ուր. ստեղծագործությունների ժող–ները, նաև վրաց. ու ռուս. գրքեր, կատարվել Ախալցխայի, Ասպինձայի, Ադիգենի, Նինոծմինդայի, Ծալկայի և այլ շրջանների տպագր. պատվերներ, պատրաստվել ազդագրեր ու պաստառներ, գովազդային նյութեր:

Ներկայում այստեղ են տպագրվում «Քաջատուն», ***«Հարավային դարպաս»*** և Զավախքի գրողների միության պաշտոնաթերթ «Ձայն հարության» ամսաթերթերը:

Գրկ. **Մաղալյան Վ.,** *Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Ե., 2012:*

Վլադիմիր Մաղալյան

ԱԽԻԿՅԱՆ Վրթանես Գալուստի (1872, Վան–21.2.1936, Երևան), գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1935): Սովորել է Ս. Պետերբուրգի գեղ. ակադ–ի բարձրագույն ուսումնարանում (1899–1912): Աշխատակցել է «Հասկեր», «Լուսաբեր», «Հոկտեմբերիկ», «Պատկում», «Մաճկալ», «Հայաստանի աշխատավորուհի» պարբ–ներին: 1912–15–ին դասավանդել է Վանի Կենտր. վարժարանում, 1915–18–ին՝ Թիֆլիսի Գայանյան դպրոցում, 1921–29–ին՝ ԵԳԱՏ–ում:

ԱԽՎԵՐԴՅԱՆ Գևորգ Ախվերդիի (5.6.1818, Թիֆլիս–17.11.1861, Թիֆլիս), բանասեր, բժիշկ, տնտեսագետ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1834) և Մոսկվայի համալսարանի բժշկ. բաժինը (1839): Եղել է Ռուսաստանի ռազմ. նախարարի անձն. բժիշկը Ս. Պետերբուրգում, 1846–ից՝ փոխարքայի գրասենյակի պաշտոնյա

Թիֆլիսում: Ղեկավարել է Կովկասյան ուս. օկրուգի դասագրքերը հաստատող կոմիտեի հայոց լեզվի բաժինը: Գրել է ուսումնասիրություն Թիֆլիսի համքարությունների մասին:

Ա. հայտնաբերել է ***Սայաթ-Նովայի*** «Դավթարը» (հայատառ աղբր.՝ 114, վրացատառ հայ.՝ 46, և մի քանի վրաց. երգեր): Վերծանել է հայ. երգերը, դրանց գրառման համար մշակել ինչյունային տառադարձման հատուկ համակարգ: 1852-ին Մոսկվայում՝ Վ. Գոթիեի տպարանում լույս է ընծայել «Սայեաթ-Նովայ» («Գուսանք», հ. 1) գիրքը, որին կցել է ընդարձակ առաջաբան և Թիֆլիսի բարբառի մասին ուսումնասիրություն: Ա-ի հավաքած հայ աշուղ. երգերի հաջորդ հատորը («Գուսանք», հ. 2) հրատարակել է նրա դուստրը՝ Սանե Ախվերդյանը, 1903-ին Թիֆլիսում (Մնացական Սարտիրոսյանի տպ.): Ա. տպագրության է պատրաստել նաև Պետրոս դի Սարգիս ***Դիվանենցի*** օրագրերը՝ Ջուղայի բարբառի ուսումնասիրությամբ («Կռունկ Հայոց աշխարհին», 1863, № 2–3): Գրել է «Նյութեր Վրաստանի պատմության համար՝ հայկական աղբյուրների հաղորդած տեղեկություններով» աշխատությունը (անտիպ, պահվում է ԳԱԹ-ում):

1964-ին տպագրվել է Ա-ի «Նամակները» (ծնթգր.՝ Ա. Ավետիսյանի):

Գրկ. **Ավետիսյան Ա.,** *Գևորգ Ախվերդյան, Ե., 1963:* **Մադոյան Գ.,** *Գևորգ Ախվերդյան, Ե., 1969:*



Գևորգ Ախվերդյան



Գ. Ախվերդյանի *«Սայեաթ-Նովայ» (1852, Մոսկվա) գրքի փիփղոսաթերթը*

«ԱԽՏԻԱՐԱԹ», անտիպ բժշկարան, հայտնի է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 84 ձեռագրով: Կրում է «Ախտիարաթ կասեն գրքիս» խորագիրը: Ընդօրինակված է 1636-ից առաջ: Դեղաբան-բանասեր Կարապետ Բասմաջյանի կարծիքով՝ այս երկը հավանաբար «Էխթիարաթ-ե բադի'ի» կոչված պարսկ. բժշկարանի հայ. թարգմանությունն է, որի հեղինակը Զեյն Էդ Դին Ալի Իբն Էլ Հոսեյն Էլ Անսարի անունով բժիշկն է:

Գրկ. **Քիւրտեան Հ.,** *Նոր Ջուղայի Ամենափրկչեան վանքին ձեռագրաց հաւաքման բժշկարանները, «Հասկ», 1939, № 6:* **Բասմաջեան Կ.,** *Բժշկարան Ասարայ Սերաստացւոյ, «Հասկ», 1940, № 5:*

«ԱԽՐԱՊԱՏԻՆ» (արաբ.՝ ակրաբադին-դեղաբանություն), հայ հին գրակ-յան մեջ այսպես են անվանվել թարգման. կամ ինքնագիր դեղաբան. և դեղագործ. գրվածքները: XII դ-ում Մխիթար Հերացին օգտագործել է արաբ. «ակրաբադին» ձևը, բայց հետագա դարերում, միջին հայ-ի ազդեցությամբ ձևափոխվելով, դարձել է **ախրապատին**: «Ա.»-ներ ունեն ***Ամիրդովլաթ Ամասիացին***, Գալուստ Ամասիացին և ուր. բժիշկներ: Բժշկ. ձեռագրերում կան նաև «Ա.» խորագրով կամ անխորագիր դեղաբան. բազմաթիվ անանուն երկեր, որոնք ընդհանրապես ուրույն հրատ-ներ են, իսկ երբեմն նաև տարբեր աղբյուրներից վերցված և խմբագրված երկեր (Մատենադարան, ձեռ. № 412, Թբիլիսիի Հին ձեռագրերի ինստ., հայ. ձեռ. № 210, ևն):

Գրկ. **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, 1959, էջ 468–476:*

«ԱԽՈՒՐԵԱՆ», հաս., գրական օրաթերթ: Լույս է տեսել 1907–15-ին Ալեքսանդրապոլում: Խմբագիր-հրատարակիչ՝ Կարապետ ***Ափինյան***: Քաղաքի առաջին հայ. պարբ-ն է: Տպագրվել է խմբագրի «Շիրակ» տպարանում: Լուսաբանել է Շիրակի հաս., տնտ. և մշակութ. կյանքը, արժեքավոր են Անիի պեղումներին նվիրված գիտ. նյութերը: «Ա.»-ին աշխատակցել են Թ. Թորամանյանը, Ա. Տիգրանյանը և ուր.:

ԱԿԱՆՑ ԱՆԱՊԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գրչության, մանրանկարչության և գիտ-յան կենտրոն՝ Սսից մոտ 40 կմ հս-արմ.՝ Ակներ գյուղի մերձակայքում: Ա. ա. գ. կ-ի մասին վկայություններ են թողել Սամվել Անեցին (XII դ.), Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Վահրամ Րաբունին (XIII դ.), Հեթում Պատմիչը (XIV դ.), Դավիթ Բաղիշեցին (XVII դ.):

Գրչության դպրոցից մեզ հասած ամենահին ձեռագիրը 1215-ից է, ամենաուշը՝ 1342-ից. ընդօրինակվել են հոգևոր ճառերի ժող-ներ, ժամանակագրություններ, Ավետարաններ, Սաշտոց, Նարեկ, Շարակնոց,




Ականց անապատի գրչության կենտրոն. *Եվսեբիոս Էպիփանոսի նամակը, մանրանկար, 1287-ի Ավետարան (գրիչ՝ Հովհաննես Արքաեղբայր, ծաղկող՝ հավանաբար Թորոս Ռոսլին, Մատենադարան, ձեռ. № 197)*



Ներսես Ակինյան



«Կիւրիոն կաթողիկոս Վրաց...» (1910, Վնն., «Ազգային մատենադարան», հ. Կ) գրքի փիփղոսաթերթը



«Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան» (1933, Վնն., «Ազգային մատենադարան», հ. ՃԼԷ) գրքի փիփղոսաթերթը

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոցը», Մեկնություններ ևն (մեզ է հասել շուրջ 30 ձեռագիր): Բարձրարվեստ են գրիչներ Պետրոսի, Դավթի, Բարսեղի, Ղազարի, Վարդանի, Ներսեսի, նրա որդի Սերովբեի և այլոց ձեռագրերը: Առանձնանում է գրիչ ***Գրիգոր Ակներցին***:

Ա. ա. գ. կ. Գոռների և Բարձրբերդի գրչատների հետ կազմել է ***Հովհաննես Արքաեղբայր*** րաբունապետի մանրանկարչ. «դպրոցը», որտեղ մշակվել է գրքի գեղ. ձևավորման նոր ոճ, որին բնորոշ են մարդու մարմնի համաչափությունների և զարդապատկերների առանձին դրվագների ճիշտ վերարտադրությունը, պատկերագր. որոշ կանոնների ինքնատիպ լուծման ձգտումը, կատարման յուրահատուկ գրաֆիկ. տեխնիկայի կիրառումը: Ա. ա. գ. կ–ում ընդօրինակված և պատկերազարդված ձեռագրերից նշանավոր են 1287–ի Ավետարանը, «Վասակ իշխանի Աւետարանը», որոնց նախատիպը եղել է «Կեռան թագուհու Աւետարանը» (1272)՝ նվիրված «Ի վանս որ կոչի Ակներ»: Ա. ա. գ. կ–ում են գործել Պողոս, ***Գրիգոր,*** Կարապետ, ***Հովհաննես*** ծաղկողները, Ըռուբեն, Բարսեղ քահանա կազմողները և ուր.:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Միսռան, Վնտ., 1885:* **Ակինեան Ն.**, *Ականց կամ Ակների վանքը, տես նրա «Մատենագրական հետազօտութիւններ» գրքում, հ. 5, Վնն., 1953:* **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964, էջ 76–88:* **Մելիք-Բախշյան Ս.**, *Ակների գրչության դպրոցը, «ԲԵՀ, հաս. գիտ.», 1968, № 3(6):*

ԱԿԻՆՅԱՆ Ներսես Հակոբի (ավազանի անունը՝ Գաբրիել, 10.9.1883, Արդվին–28.10.1963, Վիեննա), բանասեր, ձեռագրագետ, պատմաբան, մատենագետ, մանկավարժ, խմբագիր: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1901–ից): Վիեննայի համալսարանի փիլ–յան պատվ. դ–ր (1954): 1895–ին ընդունվել է Վիեննայի Մխիթարյանների վարժարանը, աշակերտել Հակոբոս ***Տաշյանին***: Վիեննայի համալսարանում հմտացել է աստվածաբանության ու փիլ–յան մեջ, աշակերտել է ավստրիացի արվեստաբան Յոզեֆ ***Ստրժիգովսկուն***: 1907–ին ձեռնադրվել է քահանա և պաշտոնավարել Վիեննայի Մխիթարյանների Մայրավանքում. 1909–63–ին՝ միաբանության մատենադարանապետ և ***«Հանդէս ամսօրեայ»***–ի խմբագիր (ընդհատումներով): Հանդեսի շուրջ համախմբել է նշանավոր գիտնականների և մեծապես նպաստել հայագիտ–յան զարգացմանը Եվրոպայում: 1923–29–ին աշխատել է Սբ Էջմիածնի ձեռագրատանը: 1929–ին կալանավորվել է, 40 օր անց ազատվելով՝ ստիպված հեռացել է Խորհրդ. Հայաստանից:

Լույս են տեսել Ա–ի «Տիմոթեոս Կուզ մատենագրութեան մէջ» (1909), «Մատենագրական հետազօտութիւններ» (հ. 1–6, 1922–64), «Դասական հայերէնը եւ վիեննական Մխիթարեան դպրոցը» (1932), «Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան: Կեանքն եւ գրական գործունէութիւնը» (1933) և այլ աշխատություններ: Առաջարկել է հայ մատենագրության ինքնատիպ ժամանակագրություն:

Ա–ի ջանքերով հրատարակվել են Կիպրոսում, Լեհաստանում, Ուկրաինայում, Իտալիայում պահվող հավաքածուների ձեռագրացուցակները. «Յուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս» (1961), «Յուցակ հայերէն ձեռագրաց Լվովի համալսարանի» (1961), «Յուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց...» (1961): Անդրադարձել է Հայ և Վրաց եկեղեցիների փոխհարաբերությունների («Հայ–վրացական յարաբերութիւնք Դ–Է դարուն մէջ», 1907, «Կիւրիոն կաթողիկոս Վրաց...», 1910), հայ միջնադարյան բանաստեղծների կյանքին և ստեղծագործությանը («Տաղասացներ եւ տաղեր», 1908, 1968, «Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք», 1911, «Հինգ պանդուխտ տաղասացներ», 1921), հայ իշխան. տոհմերին («Հայ Բագրատունիներու տոհմածառը», 1930):

Ա. ուսումնասիրել է նաև Հայ եկեղեցու հոգևոր հայրերի պատմությունը («Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», 1920, «Մովսէս Գ Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը», 1936, «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան եւ Վրաստան», 1949, «Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի. կեանքը եւ գրական վաստակները...», 1956), Ընդհանրական եկեղեցու հայրերի ու մատենագիրների գործունեությունները («Եւսեբիա եպիսկոպոսի Եմեսացւոյ ճառք», «ՀԱ», 1956–59): Ուսումնասիրել և հրատարակել է «Ջաքարիա եպիսկոպոս Գնունեաց եւ իւր տաղերը» (1910) ժող–ը:

Տպագրվել են նաև Ա.-ի «Բաղէշի դպրոցը» (1922), «Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան. Կեանքն եւ գրական գործունէութիւնը» (1933), «Դաւիթ Հարքացի Անյաղթ փիլիսոփա. Կեանքն եւ գործերը» (1959), «Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի. Կեանքն եւ քերթուածները» (1958) աշխատությունները:

Ա.-ի աշխատություններն ու հոդվածները հիմնականում տպագրվել են «Հանդէս ամսօրեայ»-ում, ապա արտատպվել *«Ազգային մատենադարան»* մատենաշարի հատորներում:

Գրկ. **Արմէն Հրանտ,** *Խորենացի, Եղիշէ եւ ի. Ներսէս Ակինեան, Երուսաղէմ, 1951:* **Ինգլիզեան Վ.,** *Հ. Ներսէս վրդ. Ակինեան-հայ բանասէրը, Վնս., 1954:*

«ԱԿՏԻ ԿԱՎԿԱԶԿՈՅ ԱՐԽԵՈԳՐԱՖԻՉԵՍԿՈՅ ԿՈՄԻՍՍԻԻ» ("Акты Кавказской археографической комиссии"–«Կովկասի հնագրական հանձնաժողովի ակտեր»), Կովկասի փոխարքայության գլխ. վարչության արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հավաքածու: Լույս է տեսել 12 հատորով (6-րդը՝ 2 մասից)՝ Թիֆլիսում 1866–1904-ին: Ընդգրկում է 1762–1862-ի փաստաթղթեր, ռուս., մասամբ՝ հայ., վրաց., պարսկ., թուրք., արաբ. և թաթար. զեկուցագրեր, հաշվետվություններ, գրագրություններ, ռազմ. գործողությունների օրագրեր ևն, XIV–XIX դդ.-ի Արլ. Հայաստանի, ինչպես նաև Թուրքիայի տիրապետության տակ գտնվող սահմանամերձ հայկ. շրջանների պատմության, վարչ. վիճակի, ժողովրդի կացության, լեռնադդ-յան զարգացման, Հայ եկեղեցու, պարսկահայերի և արևմտահայերի վերաբնակեցման, ազատագր. շարժման մասին կարևոր նյութեր: Ժող-ն արժեքավոր սկզբնաղբյուր է այնտեղ զետեղված նյութերի բնագրերի մի մասի կորստյան պատճառով:



«Ակտի Կավկազսկոյ արխեոգրաֆիչեսկոյ կոմիսսիի» *(1866, Թիֆլիս) հավաքածուի շապիկը*

ԱԿՑԻԴԵՆՑԻԱ (<լատ. accidentia–դեպք, պատահականություն), փոքրաչափ տպագիր արտադրանք (հայտարարություն, ազդագիր, հրավիրատոմս, համերգի տոմս, այցեքարտ, լիազորագիր ևն), որոնց շարվածքի ձևավորման համար օգտագործվում են գեղազարդային տառեր, զարդանկարներ, ոճավորված տողագծեր, տեքստի տողերի դասավորման (անկյունագծով, շրջանաձև, ձվաձև, բրգաձև ևն) հատուկ եղանակներ ևն:

«ԱԿՈՒՆՔ», հասարակագիտ. հոդվածների քառամսյա ժող.: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հրատ.: Լույս է տեսնում 2011-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Աշոտ *Ներսիսյան*: Տպագրում է պատմագիտ., գրականագիտ., լեզվաբ., իմաստասիր., մշակութաբան., տնտեսագիտ., ուսումնամեթոդ. հոդվածներ:




«Ակօս», *1944-60, Բեյրութ*

«ԱԿՕՍ», գրական-գեղ. երկամսյա պարբերագիրք, 1953-ից՝ ամսագիր: Համազգ. մշակութ. միության Հայ ճեմարանի շրջանավարտների մասնաճյուղի հրատ.: Լույս է տեսել 1944–60-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Գառնիկ Բանյան, Հարություն Գեղարդ, Աշոտ Նուրյան, Հակոբ Ժամկոչյան, Շաքե Տեր-Մելքոնյան: Հրատարակել է արձակ և չափածո գեղ. ստեղծագործություններ, պատմաբանասիր. ուսումնասիրություններ, մշակութ. նորություններ, համաշխ. գրակ-յան լավագույն նմուշների թարգմանություններ, լուսաբանել է միության գործունեությունը: Աշխատակցել են Գ. Հովսեփյանը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Գ. Իփեկյանը, Հ. և Վ. Օշականները, Համաստեղը, Ս. Վրացյանը, Վ. Նավասարդյանը և ուր.:




«Ակօս», *1996-ից, Սփամբուլ*

«ԱԿՕՍ», հաս-քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1996-ից Ստամբուլում՝ 20 էջ՝ թուրք., 4 էջ՝ հայ. ներդիրով: Հիմնադիր-խմբագիր՝ Հրանտ *Դինք*, խմբագրապետ՝ Ռոբեր Քոբդաշ (2007-ից), հայ. էջերի պատասխանատու՝ Սարգիս Սերոբյան, ապա՝ Բագրատ Էստուկյան (ղեկ.՝ Էթյեն Սահչուպյան): Նախատեսված է հիմնականում թրքախոս հայության համար: Տպագրում է Հայոց ցեղասպանության մասին վերլուծ. նյութեր, թուրք. կառավարության քաղաքականությունը քննադատող, ժողովրդավարության տարածմանը նպաստող հոդվածներ, անդրադառնում է ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, միջազգ. անցուդարձին, թուրքահայ



Ավետիս Ահարոնյան



Ա. Ահարոնյանի *«Խաւարի մէջ» (1910, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*



Գերսամ Ահարոնյանի *«Խոհեր յիսնամեակի աւարտին» (1966, Բեյրութ) գրքի կազմը*

համայնքի կյանքին ևն: Թղթակցում են նաև ճանաչված թուրք լրագրողներ: Տարածվում է Թուրքիայում, ՀՀ-ում և Սփյուռքում:

ԱՀԱՐՈՆՅԱՆ Ավետիս Առաքելի [4.1.1866, Իգդիր Մավա (Սուրմալուի գավառ)–20.3.1948, Փարիզ, թաղված է Պեր Լաշեզ գերեզմանատանը], հաս-քաղ. գործիչ, գրող, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1886), Լոզանի համալսարանը (1901), հետևել Սորբոնի (Փարիզ) համալսարանի դասընթացներին (1901–02): 1902–05-ին աշխատել է «Մուրճի» խմբագրությունում, 1907–09-ին եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տնօրեն: 1909–11-ին բանտարկվել է «դաշնակցության գործով»: 1917-ին ընտրվել է Թիֆլիսի Հայոց ազգ. խորհրդի նախագահ, 1919-ին՝ ՀՀ (1918–20) խորհրդարանի անդամ, ապա՝ նախագահ: 1919–20-ին ղեկավարել է ՀՀ պատվիրակությունը Փարիզի հաշտության խորհրդաժողովում: Ա. ստորագրել է Սևրի հաշտության պայմանագիրը (1920), մասնակցել Լոնդոնի (1921) և Լոզանի (1922–23) խորհրդաժողովներին, մեծ ջանքեր է գործադրել ի նպաստ Հայ դատի («Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան», 1943, 2001): Լոզանի դաշնագրի կապակցությամբ դաշնակիցներին և Խորհրդ. Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինին հղել է բողոքագրեր, այնուհետև հեռացել է քաղ. գործունեությունից:

Ա. աշխատակցել է «Արձագանք», «Տարազ», «Յառաջ», «Ալիք» պարբ-ներին: 1894-ին «Մշակ»-ում հրապարակվել է Ա-ի «Լուրեր սահմանի այն կողմից» հոդվածաշարը, 1898-ից «Դրօշակ»-ում՝ «Ազատութեան ճանապարհին» պատմվածաշարը:

Լույս են տեսել Ա-ի «Պատկերներ...» (1900, Մ., Վարվառե Գատցուկի տպ.), «Մայրերը» (1902, Թ., Վրաց. հրատարակչ. ընկերության տպ.), «Կեանքի դասը» (1903, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Աշուղը» (1904, Թ., «Մեփական» տպ.), «Արազը» (1904, Թ., «Հերմես» տպ.), «Լռութիւնը» (1904, նույն տպ., 1923, ԿՊ, Վաղինակ Բյուրատի տպ.), «Երկերի ժողովածուն» (1904, ՍՊբ, «Պուշկինյան» տպ.), «Կեանքի վէպը» (1908, «Հերմես» տպ.), «Անդունդը» (1910, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Խաւարի մէջ» (1910, նույն տպ.), «Սիխիրների տակից» (1910, նույն տպ.), «Պարտուածներ» (1912, ԿՊ, «Արաքս» տպ.), «Ճամբորդը» (1926), «Կարօտ հայրենի» (1927), «Մենութեանս մէջ» (1938), «Իմ բանտը եւ երազներիս աշխարհը» (1943), «Ճնճղուկի մահը: Դատաստանը: «Խենթը»» (1944, Հալեպ, «Տիգրիս» տպ.) պատմվածքների ժող-ները, «ԵԼԺ»-ն (հ. 1–10, 1946–51, Բոստոն), «Երկերի ժողովածուն» (հ. 1–10, 1982, Թեհրան) և այլ երկեր: Հեղինակ է նաև ինքնակենսագր. և կենսագր. վեպերի («Քրիստափոր Միքայէլեան», 1926, 1945, Բուենոս Այրես, «Արմենիա» տպ., «Իմ գիրքը», հ. 1, 2, 1927, 1930, Փ.), ուղեգրությունների («Իտալիայում», 1903, Թ., Մնացական Սարտիրոսյանի տպ., «Ծվէյցարական գիւղը», 1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), աշխատությունների («Հայկական հարցը խաղաղության ժողովին առջեւ», 1919, համահեղ., Բոստոն, «Հայրենիքի» տպ.): Խորհրդ. տարիներին Ա-ի գործերը Հայաստանում չեն հրատարակվել:

1934-ին Մարսելում հրապարակային ելույթի ժամանակ կաթվածահար է եղել և այլևս չի կարողացել ստեղծագործել:

Հանդես է եկել նաև Ղարիբ, Վաստակավոր, Avesta կեղծանուններով:

Գրկ. **Պարսամեան Մ.,** *Աւետիս Ահարոնեան. իր կեանքը եւ գրականութիւնը, Փ., 1930:* **Թոփչյան Ս.,** *Կյանք դարերի համար, Ե., 2003:* **Խաչիկյան Գ.,** *Ավետիս Ահարոնյանի գեղարվեստական արձակը, Ե., 2011:*

ԱՀԱՐՈՆՅԱՆ Գերսամ Փանոսի [9.11.1916, ք. Մարաշ (Կիլիկյան Հայաստան)–20.1.1981, Բեյրութ], հրապարակախոս, մանկավարժ, խմբագիր: Նյու Յորքի ամերիկյան միջազգ. ակադ-ի պատվ. դ-ր (1969): ՌԱԿ-ի ղեկավարներից: Սովորել է Հալեպի ավետարան. Բեթել վարժարանում, ապա՝ «Ալեփփո» քոլեջում, ավարտել է Կիպրոսի Մելգոնյան վարժարանը (1937). 1937-ից աշխատել է որպես ուսուցիչ: ԹՄՄ հիմնադիրներից է, ՀԲԸՄ Լիբանանի կրթ. հանձնախմբի ատենադպիրը: 1948–81-ին եղել է *«Զարթօնք»*-ի խմբագրապետը: Աջակցել է *«Անի»* ամսագրի հիմնադրմանը:

Լույս են տեսել Ա-ի «Մեծ երազի ճամբուն վրայ» (1964) և «Խոհեր յիսնամեակի աւարտին» (1966) հրապարակախոս. նյութերի ժող-ները, որտեղ

անդրադարձել է հայ դատին և հայ ժողովրդի մեծ երազի իրականացման պայքարին: Կազմել է *«Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915–1965»* (1965, Հայկաշեն Ուզունյան գրական մրց.) հրապարակագրությունների ժող-ը (Նազարեթ Թոփալյանի աշխատակցությամբ), արաբ. հրատարակել է «Հայկական հարցը արաբ ժողովուրդի հանրային կարծիքին առջեւ» (1965) աշխատությունը:

Ա-ի գրքերը տպագրվել են Բեյրութի «Ատլաս» տպարանում:

2006-ին ԹՄՄ-ն սահմանել է Գերսամ Ահարոնյանի անվ. գրական մրց.:

«ԱՀԵԿԱՆ», մշակութ. եռամսյա հանդես: Լույս է տեսել 1966–70-ին (երկրորդ համարը՝ «Նավասարդ-66» անունով) Բեյրութում: Խմբագիր՝ Գրիգոր Շահինյան: Լուսաբանել է բեյրութահայության մշակութ. և հոգևոր կյանքը: Տպագրել է արձակ ու չափածո գեղ. ստեղծագործություններ, Լիբանանի արաբագիր և ֆրանսագիր (թարգմանաբար), նաև խորհրդահայ հեղինակների գործերից, գրականագիտ., բանասիր. ուսումնասիրություններ: Անդրադարձել է հայկ. և միջազգ. կինոյին, թատրոնին, նկարչությանը, երաժշտությանը, ճարտ-յանը ևն: Աշխատակցել են Հ. Քյուրքճյանը, Գ. Պըլտյանը, Գ. Ադդարյանը, Ա. Դարյանը, Գ. Աճեմյանը, Վ. Օշականը, Հ. Թորոսյանը, Պ. Ճելալյանը, Գ. Տիշը, Պ. Սիմոնյանը, Զ. Գիրեջյանը, Ր. Սեթյանը, Հ. Փիլիկյանը, Ժ. Հակոբյանը, Զահրատը, Զ. Խրախունին, Ռ. Հատտեճյանը, Մ. Նշանյանը և ուր.:

ԱՂԱԲԱԲ (Աղաբաբյան) Հակոբ Բեժանի [26.11.1875, գ. Սևքար (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–28.11.1926, Թիֆլիս], մանկավարժ, գրող: Ռուբեն *Աղաբաբյանի* հայրը: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Աշխատակցել է «Հասկեր», «Կարմիր ծիլեր» և այլ պարբ-ների: Խնկո Ապոր և Հ. Ապրեսյանի հետ կազմել է «Մեր դպրոցը», «Հայրենի աշխարհ» և «Հայրենագիտություն» դասագրքերը:

Ա-ի բանաստեղծությունները տպագրվել են (առաջինը՝ «Աղբիւր» ամսագրում 1895-ին) «Մանկական ալբոմ» (2 փունջ, 1907, Թ., Նվարդ Աղանյանի տպ., 1908, Թ., Մուղդուսի Հակոբյանի տպ.), «Ծաղիկներ» (2 փունջ, 1911, Թ., «Էսպերանտո» տպ., 1920, Թ., «Պրոգրես» տպ.) ժող-ներում:

Լույս են տեսել Ա-ի «Թուխսը» (1914, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Պախրախոտ» (1935), «Ծաղկեփունջ» (1976), «Ծաղկահանդես» (1985), «Ձախորդ փիսոն» (1991), «Նանա» (1992), «Մանկական բանաստեղծություններ» (2001) լեգենդների, մանկ. բանաստեղծությունների, հեքիաթների ժող-ները: Հեղինակ է «Հաղթված բազեն» հայկ. առաջին մանկ. օպերայի լիբրետոյի (երաժշտությունը՝ Դանիել Ղազարյանի):

Հանդես է եկել նաև Նեկտար, Ալմազ կեղծանուններով:

Գրկ. Մխիթարյան Ա., Վրաստանի սովետահայ գրականությունը, Ե., 1966, էջ 84–92: Հակոբ Աղաբաբ: Մատենագիտություն, Ե., 1979:

ԱՂԱԲԱԲՅԱՆ Աշոտ Լիպարիտի [ծ. 28.1.1959, գ. Կողբ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], լրագրող, գրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1989): 1987–90-ին աշխատել է Նոյեմբերյանի «Ծիածան» շրջ. թերթի, 1990–2001-ին՝ *«Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթի խմբագրություններում. 1998–2001-ին՝ գլխ. խմբագիր: 2002–04-ին՝ Ռազմավար. ազգ. հայկ. կենտրոնի հանրային կապերի վարչության պետ: 2007–10-ին խմբագրել է *«Հայաստանի գրուցակից»* շաբաթաթերթը (հայ. և ռուս.), 2010–13-ին՝ *«Հայացք»* օրաթերթի հիմնադիր-խմբագիր, 2013-ին հիմնադրել է nyut.am լրատվ. կայքը:

Լույս են տեսել Ա-ի «Ռեզիդենտը» (2004), «Մենակը» (2013) վեպերը:

Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2007):

ԱՂԱԲԱԲՅԱՆ (Աղաբաբ) Ռուբեն Հակոբի (29.11.1911, Թիֆլիս–6.12.1970, Թբիլիսի), բանաստեղծ, խմբագիր, ճարտարապետ: Հակոբ *Աղաբաբի* որդին: Ճարտ-յան դ-ր, պրոֆ. (1949): Ավարտել է Թիֆլիսի պոլիտեխ. ինստ-ը (1932): 1933–41-ին Թիֆլիսում խմբագրել է *«Կարմիր ծիլեր»* մանկ. պատկերազարդ և *«Արշալույս»* գրական, գեղ., հաս., 1941-ին՝ «Գրական հանդես» պարբ-ները: 1941–45 և 1966–70-ին՝ Վրաստանի գրողների միության հայկ. մասնաճյուղի նախագահ:

Լույս են տեսել Ա-ի «Լիրիկա» (1930), «Առաջին ծաղիկներ» (1939), «Այգ» (1948) բանաստեղծությունների ժող-ները, «Ուղևորություն դեպի անցյալն ու ներկան» (1965), «Հանդիպում դարերի հետ» (1982) ուղեգրությունները:



Հակոբ Աղաբաբի *«Մանկական բանաստեղծություններ» (2001, Ե., «Արևիկ», ձևավորող՝ Ն. Սաֆարյան) գրքի կազմը*



Աշոտ Աղաբաբյանի *«Մենակը» (2013, Ե., հեղ. հրտ., ձևավորող՝ Գ. Գրիգորյան) գրքի կազմը*



Ռուբեն Աղաբաբյան



Սուրեն Աղաբաբյան

ԱՂԱԲԱԲՅԱՆ Սուրեն Բարդուղի [22.1.1922, Ղարաքիլիսա–19.3.1986, Երևան], գրականագետ-քննադատ: Բանասիր. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1969): Գիտ. վաստ. գործիչ (1974): Ավարտել է ԵՊՀ (1944): 1954–86-ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ա-ի «Ստեփան Զորյան» (1955), «Ակսել Բակունց» (1963), «Արձագանքներ» (1963), «Արդիականություն և գրականություն» (1965), «Եղիշե Չարենց» (գիրք 1, 2, 1973, 1977), «XX դարի հայ գրականության զուգահեռականներում» (գիրք 1–2, 1983–84) և այլ աշխատություններ: Նրա ղեկավարությամբ կազմվել, խմբագրվել են «Սովետահայ գրականության պատմություն» (հ. 1, 2, 1961, 1965) և «Հայ սովետական գրականության պատմություն» (ռուս., 1966) աշխատությունները: Գրել է «Սովետական բազմազգ գրականության պատմություն» 6-հատորյակի 1-ին և 3-րդ հատորների (ռուս., 1970)՝ հայ գրակ-յանը նվիրված գլուխները: Հեղինակ է «Հայ սովետական գրականություն» դպրոց. դասագրքի (1969, ունեցել է մի քանի հրատ.):

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1972), ՀԽՍՀ Պետ. մրց. (1979):

Երկ. Դեպի աղբյուրը լույսի (հոդվածների ժող.), Ե., 1979: Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Ե., 1982: Հովհաննես Շիրազ (գրական էսքիզներ), Ե., 1984: Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Ե., 1986: Դասականներ և ժամանակակիցներ (գրականագիտ. հոդվածներ), Ե., 1986: Արդի հայ գրականության պատմություն, հ. 1–2, Ե., 1993:




Գրիգոր Աղաթոն

ԱՂԱԲԵԿՅԱՆ Մարկոս (1830, Զմյուռնիա–1908, Կ. Պոլիս), հրապարակախոս, խմբագիր, մանկավարժ: Սովորել է Զմյուռնիայի Մեսրոպյան, 1843–49-ին՝ Փարիզի Սամվել Մուրադյան վարժարաններում: 1860–63-ին Թիֆլիսում խմբագրել է *«Կռունկ Հայոց աշխարհին»* ամսագիրը, 1866–67-ին Կ. Պոլսում՝ *«Ծիլն Ասպարայի»* պարբ-ը: Աշխատակցել է նաև «Լոյս», «Արեւելեան մամուլ», «Բիւզանդիոն», «Ծաղիկ», «Լումայ» պարբ-ներին: Քննադատել է Հայ եկեղեցու իրավունքները սահմանափակող «Պոլոժենիե» կանոնադրությունը [«Խնդիր կաթուղիկոսութեան Ամենայն հայոց: Քննութիւն 1836-ի Սահմանադրութեան (Պալաժենիայի)», 1865, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.]:

Լույս են տեսել Ա-ի «Գարեգին Սրուանձտեան» (1861, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) ողբերգությունը, «Տեղեկագիր Ամենայն հայոց կաթուղիկոսութեան այժմեան վիճակին վրայ» (1865, ԿՊ, Ճ. Արամյանի տպ.), «Թուղթ Մարկոսի Աղաբէգեան՝ հայոց աշխարհի, ազգի եւ եկեղեցու ազգայնութեան մասին» (1878, նույն տպ.) աշխատությունները: Հեղինակ է նաև «Հայ ժողովրդի պատմութիւն» (հ. 1–2, ձեռագիր, Մատենադարան) ուսումնասիրության: Թարգմանել է Վ. Լանգլուայի «Մովսէս Խորենացի եւ նորա պատմութիւնը» (1860, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ.) երկը:

Գրկ. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, Ե., 1956:



Երվանդ Աղաթոնի *«Օգտակար գիտելիքներ...» (1932, Վնն.) գրքի կազմը*

ԱՂԱԶԱՐՅԱՆ Միհրան Կարապետի [5.9.1892, Ալբիստան (Կիլիկիա)–14.10.1933, Բեյրութ, սպանվել է ահաբեկչի ձեռքով], հրապարակագիր, խմբագիր, մանկավարժ: Հնչակյան կուս-յան անդամ: 1909–14-ին սովորել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում: Աշխատակցել է Կ. Պոլսի «Կայծ» ամսաթերթին: 1915-ին աքսորվել է Դեյր էզ Զոր: 1924-ին հաստատվել է Բեյրութում: 1924–33-ին խմբագրել է *«Լիբանան»*, 1932-ին, միաժամանակ՝ *«Ժողովուրդ»* թերթերը, որտեղ հանդես է եկել Խորհրդ. Հայաստանին վերաբերող հոդվածներով:

Լույս են տեսել Ա-ի «Ինչպէս կը գողնան...», «Սիսի վերջին աթոռակալը եւ իր մեղապարտ գաւառականը» (երկուսն էլ՝ 1926) և այլ գործեր:

Գրկ. **Աղազարյան Մ.**, *Միհրան Աղազարյան, Ե., 1983:*

ԱՂԱԹՈՆ (Աղաթոնյան) Գրիգոր (4.7.1825, Կ. Պոլիս–27.4.1868, Փարիզ), հաս. գործիչ: Երվանդ *Աղաթոնի* հայրը, Մկրտիչ *Աղաթոնի* եղբայրը: Ֆրանսիայի Պարտիզպանության կայսեր. ընկերության (1853) և Տուրինի (Իտալիա) երկրագործ. ակադ-ի թղթ. (1859) անդամ: Սովորել է Կ. Պոլսի Ներսեսյան վարժարանում, այնուհետև՝ Փարիզի Գրինյոնի երկրագործ. բարձրագույն դպրոցում: 1848-ից Կ. Պոլսում զբաղվել է մանկավարժությամբ, եղել Ներսեսյան վարժարանի հոգաբարձու, ազգ. երեսփոխան, Հայոց բարեգործ. ընկերության (1860, սեպտ.) հիմնադիրներից, մասնակցել արևմտահայերի Ազգ. սահ-

մանադրության (1860) մշակմանը: 1848-ից Կ. Պոլսի «Հայաստան» շաբաթաթերթում և այլ պարբ-ներում տպագրել է երկրագործության և տնտեսագիտ-յան վերաբերյալ հոդվածներ:

Ֆրանսիայի Պատվո լեգեոնի խաչ (1867):

Գրկ. Տաղավարեան Ն., Գրիգոր Աղաթոն, 2-րդ հրտ., Վնտ., 1900:

ԱՂԱԹՈՆ Երվանդ (1860, Կ. Պոլիս–24.3.1935, Կահիրե), գյուղատնտես, մշակույթի գործիչ: Գրիգոր ***Աղաթոնի*** որդին: Սովորել է ծննդավայրի Ներսիսյան և Նուպար-Շահնազարյան վարժարաններում, Ռոբերտ քոլեջում, 1877-ին՝ Փարիզի Գրինյոնի գյուղատնտ. դպրոցում, ավարտելուց հետո վերադարձել է Կ. Պոլիս: 1896-ի հայերի կոտորածներից հետո կրկին մեկնել է Փարիզ, ստացել համալսարան. կրթություն, ապա տեղափոխվել է Բուլղարիա, հետագայում՝ Եգիպտոս:

Լույս են տեսել Ա-ի «Հայաստանի վերաշինութիւնը» (1924), «Հայաստանի մէջ հայ հողագործներու յատկանալի տիպար գիւղի մը ծրագիրը» (1926), «Օգտակար գիտելիքներ եւ գործնական խրատներ հայ երկրագործներուն» (1932), «Պոլսոյ 1860-ի եւ Գահիրէի 1905-ի Բարեգործականներուն ծնունդը եւ պատմութիւնը», «Յորենի մշակութիւն» (երկուսն էլ՝ 1933), «Գաղափարի նշխարներ» (1934) և այլ երկեր, «Կեանքիս յիշատակները» (1931) հուշագրությունը:

ԱՂԱԹՈՆ (Աղաթոնյան) Մկրտիչ (1818, Կ. Պոլիս–1890, Փարիզ), հաս-քաղ. գործիչ, խմբագիր: Գրիգոր ***Աղաթոնի*** եղբայրը: Սովորել է Կ. Պոլսի Ներսեսյան վարժարանում, այնուհետև Ֆլորենցիայում հետևել է վաճառական. դասընթացների:

1846–52-ին Կ. Պոլսում խմբագրել է ***«Հայասփան»*** շաբաթաթերթը (Հովհաննես ***Չամուռճյանի*** հետ): Մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) մշակմանը, Կ. Պոլսի Հայոց բարեգործ. ընկերության հիմնադրմանը (1862-ին՝ նախագահ): 1861-ին ընտրվել է Փարիզի Արլ. կենդանի լեզուների դպրոցի մասնաժողովի անդամ:

Ֆրանս-ից թարգմանել է «Քաղաքավարութիւն համառօտ» (ԿՊ, 1851, Հովհաննես Սյուհենտիայանի տպ.) երկը:

Գրկ. Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. 1, ԿՊ, 1910: Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-փնտրեական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Ե., 1967:

ԱՂԱՄԱԼՅԱՆՑ Սուքիաս [11.12.1738, գ. Շոռոթ (Սյունիքի Երնջակ գավառ, այժմ՝ Նախիջևանում)–18.3.1789, Վենետիկ], մաթեմատիկոս, մանկավարժ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: Հիմն. աշխատությունը՝ «Թուաբանութիւն»-ը, ի տարբերություն ***«Արիեպ համարողութեան»*** (1675) հայ. աշխարհաբար առաջին տպագիր գրքի, ունի հարուստ բովանդակություն, շարադրանքը համապատասխանում է Արմ. Եվրոպայի XVIII դ-ի մաթ. ուս. գրակ-յան պահանջներին:


«Թուաբանութիւն»-ը տպագրվել է 1781-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ-ին՝ «Թուաբանութիւն յերկուս գիրս բաժանեալ (527 էջ, 8^0, 16,8 x 9,5 սմ):

ԱՂԱՅԱՆ Էդուարդ Բագրատի [16.3.1913, Մեղրի (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–29.12.1992, Երևան], լեզվաբան, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1946), ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1953-ից): 1939–92-ին դասավանդել է ԵՊՀ-ում, 1956–86-ին՝ ԵՊՀ ամբիոնի, միաժամանակ, 1952–92-ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի բաժնի վարիչ, 1986–92-ին, միաժամանակ՝ ***«Բանբեր Երևանի համալսարանի»*** հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Լեզվի ծագումը և զարգացումը» (1948), «Լատիներեն լեզվի քերականություն» (գիրք 1, 1950), «Լեզվաբանության ներածություն» (1952), «Հայ լեզվաբանության պատմություն» (հ. 1, 2, 1958, 1962), «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (1967), «Արդի հայերենի բացատրական բառարան» (հ. 1–2, 1976, պարունակում է 135 600 բառ և 11 000 դարձվածաբան. միավոր), «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984) աշխատությունները: Հեղինակ է նաև դպրոց. դասագրքերի, բուհ. ձեռնարկների («Լեզվաբանության հիմունքներ», 1987):



Սուքիաս Աղամալյանցի *«Թուաբանութիւն» (1781, Վնտ.) գրքի փիլոսոփերթը*



Էդուարդ Աղայան




Է. Աղայանի *«Արդի հայերենի բացատրական բառարան»-ի (հ. 1, Ե., «Հայաստան», 1976) կազմը*



Ծատուր Աղայան



Ծ. Աղայանի
«Անդրանիկ» (1994, Ե.)
գրքի կազմը



Ղազարոս Աղայան

Երկ. Պատմա-համեմատական մեթոդը լեզվաբանության մեջ, Ե., 1957: Գրաբարի քերականություն, Ե., 1964: Բառաքննական և սրտագաբանական հետազոտություններ, Ե., 1974: Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե., 1977: Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Ե., 1986: Մեսրոպ Մաշտոց: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1986: Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003:

Գրկ. Բադիկյան Խ., Էդուարդ Աղայան: Կյանքը և գործը, Ե., 2010: Էդուարդ Բագրատի Աղայան: Կենսագրական ակնարկ, Ե., 1985:

ԱՂԱՅԱՆ Ծատուր Պավելի [12.1.1912, գ. Փիփ (այժմ՝ գ. Զագլիկ՝ Ադրբեջանի Դաշքեսանի շրջանում)–3.12.1982, Երևան], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1948), պրոֆ., ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1968, թղթ. անդամ՝ 1950-ից): Ավարտել է Երևանի հեռակա մանկավարժ. ինստ-ը (1936), Մոսկվայի Ն. Չեռնիշևսկու անվ. պատմափիլ. ինստ-ը (1938): 1954–61 և 1977–79-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի նոր պատմության, 1951–54-ին՝ ՀԿԿ ԿԿ գիտ-յան և մշակույթի բաժնի վարիչ, 1961–68-ին՝ ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ հայկ. մասնաճյուղի տնօրեն, 1968–77-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ. բաժանմունքի ակադ. քարտուղար, 1979–82-ին՝ ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ: 1949–52 և 1969–73-ին, միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»*** ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» (1976), «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» (1982) աշխատությունները: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմ. բազմահատորյակի (հ. 6, 7, 1967, 1981) ստեղծման աշխատանքներին: Համահեղինակ է մի շարք աշխատությունների և դասագրքերի:

Երկ. Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Ե., 1957: Արշավիր Մելիքյան, Ե., 1969: Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981: Անդրանիկ: Դարաշրջան, դեպքեր, դեմքեր, Ե., 1994: Вековая дружба народов Закавказья, ч. 1–4, Е., 1970–80.

Գրկ. Ծատուր Պավելի Աղայան: Կենսագրական տեղեկատու (կազմ. և առաջար.՝ Պ. Հովհաննիսյանի), Ե., 1983:

ԱՂԱՅԱՆ Ղազարոս Ստեփանի [4(16).4.1840, գ. Բոլնիս-Խաչեն (այժմ՝ գ. Բոլնիս՝ Վրաստանի Բոլնիսի շրջանում)–20.6.1911, Թիֆլիս, թաղված է Խոջիվանքի պանթեոնում], գրող, մանկավարժ, հրապարակախոս, խմբագիր: Սկզբն. կրթությունն ստացել է ծննդավայրում, 1853–54-ին սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1859–62-ին որպես գրաշար աշխատել է Թիֆլիսում, 1862–67-ին՝ Մոսկվայում և Ս. Պետերբուրգում: 1867-ին վերադարձել է Այսրկովկաս: Աշխատակցել է «Մեղու Հայաստանի» լրագրին, եղել Էջմիածնի տպարանի կառավարիչ, 1869–70-ին խմբագրել է ***«Արարատ»*** ամսագիրը: 1870–82-ին դասավանդել է Ախալցխայի, Ալեքսանդրապոլի, Շուշիի դպրոցներում, եղել Վրաստանի և Իմերեթիայի հայկ. դպրոցների թեմ. տեսուչ: Մասնակցել է ***«Փորձ»*** հանդեսի (խմբագրության քարտուղար) և ***«Աղբիւր»*** մանկ. պատկերազարդ ամսագրի խմբագրման աշխատանքներին:

Ա. «Արութիւն եւ Սանուէլ»-ով (հ. 1, 1867, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ., հ. 2, 1889, Թ., Սիմսես Վարդանյանի տպ.) ինքնակենսագր. վեպի ժանրի հիմքն է դրել հայ նոր գրակ-յան մեջ: Ա. հեղինակ է «Երկու քոյր» (1872, Հ. Էնֆիաճյանի տպ.) վեպի, «Բաժանութիւն» (1881), «Սէրը արտաքսուած» (1889) պատմվածքների, «Բանաստեղծութիւններ» (1890, Թ., «Արոր» տպ.) ժող-ի, «Թեմական տեսուչ» (1881) անավարտ գործի, «Իմ կէանքի գլխաւոր դէպքերը» (1893, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.) հուշագրության, մշակել է երեք դրվագ «Քեռրօղլի» (1887, 1893) վիպերգից: Արձակում ներկայացրել է 1850–80-ական թթ-ի հայ հաս. կյանքի համակողմանի պատկերը, հատկապես՝ գյուղում կատարվող սոցիալ. տեղաշարժերը:

Ա-ի «Ժամանակակից ատենախօսութիւն» (1898) հրապարակախոս. երկում նկատելի է Մ. Նալբանդյանի և սոց. ուտոպիստների ազդեցությունը: Մարդու և ներդաշնակ սոցիալ. հարաբերությունների մասին նրա իդեալն ավելի ամբողջական արտահայտված է «Տորք Անգեղ եւ Հայկանուշ-Գեղեցիկ» (1888, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) պոեմում: Արժեքավոր են Ա-ի մանկ. բանաստեղծությունները, որոնցով նա մեծ ժողովրդականություն է վայելել («Սրինգ հովուական», 1882, Թ., Մ. Վարդանյանի տպ.):

Հայ հեքիաթագրության մեջ առանձնանում են Ա–ի հեքիաթները [«Անահիտ» (հրտ.՝ 1881, Թ., Մ. Վարդանյանի տպ.), «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» (1887, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Վիշապին հաղթողը», «Հազարան բլբուլ», «Եղեգնուհին» ևն]: Սիշակել է ինքնուրույն կրթադաստիարակչ. համակարգ («Խորհրդածութիւն դաստիարակութեան վերայ», 1869), կազմել և 1875–ից հրատարակել է I–IV դասարանների համար «Ուսումն մայրենի լեզուի» դասագրքերը (նրա կազմած Այբբենարանով շուրջ 40 տարի՝ 1875–1916–ին, դասավանդել են հայկ. դպրոցներում), 1908–ին՝ «Արեւիկ» (Թ., «Էպոխա» տպ.) այբբենարանը ևն, գրել է մանկավարժ–մեթոդ. աշխատություններ:

Ա. հանդես է եկել նաև բազմաթիվ գրական–քննադատ. հոդվածներով, որտեղ պաշտպանել է ռեալիզմի սկզբունքները («Բանաստեղծութիւններ Յովհաննէս Յովհաննիսեանի», 1887, «Պերճ Պռօշեանց եւ իր «Սօս եւ Վարդիթերը»», 1888, «Հայոց այժմեան բանաւոր երգերը», 1890, «Յովհաննէս Թումանեանի «Անուշ»–ից մի ճաշակ», 1893): «Մի երես մեր նորագոյն պատմութիւնից» (1891, Մ., Մկրտիչ Բարխուդարյանի տպ.) գործում անդրադարձել է պատմ. հարցերի:

Ա–ին հետաքրքրել են հայոց լեզվի պատմությանը, տեսությանը, բարբառագիտ–յանը և ուղղագրությանը վերաբերող հարցերը («Հայկական հնչիւնների մասին», 1874, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ., «Նախագիտելիք գիտակցաբար կարդացնելու մասին», 1885, նույն տպ., «Գրաբար եւ աշխարհիկ լեզուների տարբերութիւնը», 1890, «Հայոց լեզու», 1890, «Հայոց գրի մասին», 1892):

Խորհրդ. տարիներին և հետագայում Ա–ի երկերը բազմիցս տպագրվել են [«Երկեր» (հ. 1–4, 1962–63, 1979, 1981, 2007)]:

Ա. թարգմանել ու փոխադրել է ռուս և արևմտաեվրոպ. գրողների՝ Ա. Պուշկինի, Ի. Կռիլովի, Լ. Տոլստոյի, Ֆ. Շիլլերի, Հ. Հայնեի, Վ. Շեքսպիրի ստեղծագործություններից:

Բոլնիսում 1965–ից գործում է Ա–ի տուն–թանգարանը, որտեղ կազմակերպվում են ամենամյա (ապրիլի 16–ին) աղայանական գրական տոներ:

Գրկ. **Աստղիկյան Ա.**, *Ղազարոս Աղայան: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1940:* **Աստվածատրյան Վ.**, *Ղ. Աղայանը մանկավարժ, Ե., 1947:* **Ավթանդիլյան Ա.**, *Ղազարոս Աղայանի աշխարհայացքը, Ե., 1983: Ղազարոս Աղայան (1840–1911): Մատենագիտություն, Ե., 1972:* **Հակոբջանյան Ա.**, *Ղազարոս Աղայան: Գեղարվեստական ժառանգությունը, Սեւեփանակերտ, 2007:*

ԱՂԱՅԱՆ Մուշեղ Ղազարոսի (17.11.1883, Թիֆլիս–11.9.1966, Երևան), երաժշտագետ, կոմպոզիտոր: Արվ. վաստ. գործիչ (1939): Ղազարոս ***Աղայանի*** որդին: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Ս. Պետերբուրգի (1907–11) և Մոսկվայի (1925–30) կոնսերվատորիաներում: 1930–ից ապրել է Երևանում: 1934–39–ին՝ ՀԿՄ նախագահ: Շարա Տալյանի հետ կազմել ու հրատարակել է Սայաթ–Նովայի (1946) և Ջիվանու (1955) նոտագրված ժող–ները, կազմել է Կոմիտասի «Ազգագրական ժողովածու»–ի 2–րդ գիրքը (1950), խմբագրել Ս. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգեր ու պարեղանակներ» ժող–ի 1–ին և 2–րդ հատորները (1949, 1952), Շերամի երգերի (1959) ժող–ը: Գրել է երգեր, ռոմանսներ, խմբերգեր, մշակել ժող. և գուսան. երգեր:


Երկ. Երաժշտական ակնարկներ, Մ., 1927: Հայ գուսանները և գուսանա–աշուղական արվեստը, Ե., 1959:

ԱՂԱՆՅԱՆ Գյուտ, **Գյուտ քահանա** (Տեր–Առաքելյան Հարություն, 1.3.1856, Թիֆլիս–1920, Թիֆլիս), պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, խմբագիր–հրատարակիչ, թարգմանիչ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1873), որտեղ և դասավանդել է 1876–ից: 1880–ին ձեռնադրվել է քահանա:


1896–1912–ին խմբագրել և հրատարակել է ***«Լումայ»*** հանդեսը, աշխատակցել է «Մեղու», «Արձագանք», «Նոր–Դար» և այլ պարբ–նեբի: Գրել է կրոնի դասագրքեր և տոմար. աշխատություններ («Կարգ աստուածապաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ», 1895, Թ., Մ. Շարաձեի տպ., վերահրտ.՝ 2008): Հրատարակել է արևելահայ. առաջին պատի օրացույցը (1889–1903):

Ա–ի մեծարժեք գործը հայ ժողովրդի պատմությանը վերաբերող ***«Դիւան հայոց պատմութեան»*** (գիրք 1–13, 1893–1917, Թ., Մ. Շարաձեի, Նվարդ Աղանյանի և այլ տպ–ներ) մատենաշարն է: Կազմել է «Նամակագիրք» (1915, Թ., Ն. Աղանյանի տպ.) ժող–ը:

Ղազարոս Աղայան



«Արութիւն եւ Մանուէլ» (1867, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը



«Անահիտ» (1971, Բեյրութ) գրքի կազմը



Գյուտ Աղանյանի *«Դիւան հայոց պատմութեան» մատենաշարի Գ գրքի (1894, Թիֆլիս) կազմը*

Թարգմանել է Մ. Սերվանտեսի, Չ. Դիքենսի, Հ. Սենկևիչի, Ֆ. Հոֆմանի, Դ. Դեֆոյի ստեղծագործություններից, գրաբարից աշխարհաբարի է փոխադրել Եղիշեի «Վարդանանց պատմությունը»:

ԱՂԱՋԱՆՅԱՆ Գևորգ Միքայելի [ծ. 25.8.1931, գ. Դաշուշեն (ԼՂՀ Ստեփանակերտի շրջան)], բանաստեղծ, լրագրող: Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1956): 1962–67-ին եղել է մարզային ռադիոհաղորդումների ավագ խմբագիր, 1967–74-ին՝ Ադրբեջանի գրողների միության ԼՂԻՄ մարզային բաժանմունքի պատ. քարտուղար:

Լույս են տեսել Ա-ի «Խոսիր, առվակ» (1966), «Անհանգիստ է սիրտս» (1972, աղբր.՝ 1972), «Օջախ և ծուխ» (1977), «Ծառերը նայում են երկնքին» (1979), «Եզերք» (1981), «Ապրող կարոտներ» (1988), «Հավատ» (1989), «Արցախն իմ տունն է» (1993) բանաստեղծությունների ժող-ները:

Կազմել ու խմբագրել է Հայրենական մեծ պատերազմում (1941–45) զոհված ղարաբաղցի բանաստեղծների գործերի «Երդում» (1973, Բաքու) ժող-ը:



Արարատ Աղասյանի *«Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» (2009, Ե., «Ոսկան Երևանցի») գրքի կազմը*

ԱՂԱՋԱՆՅԱՆ (Աղաջանովա-Շուտկո) Նինա (Նունե) Փիլարդոսի [8.11.1889, Եկատերինոդար (այժմ՝ Ք. Կրասնոդար՝ ՌԴ-ում)–27.12.1974, Մոսկվա], կինոսցենարիստ, խմբագիր: Սովորել է Եկատերինոդարի մանկավարժ. դասընթացներում: 1914-ին եղել է Ս. Պետերբուրգի «Ռաբոտնիցա» (ռուս.) ամսագրի պատ. քարտուղար:

Ա-ի սցենարով Ս. Էյզենշտեյնը 1925-ին նկարահանել է «Պոտյոմկին զրահանավը» կինոնկարը:

Գրկ. **Эйзенштейн С.,** *Избр. произвед., т. 1, М., 1964 (гл. «Нунэ»); Герои Октября, т. 1, Л., 1967;* **Лейберов И., Перегудова З.,** *Подвиг Нунэ, Л., 1985.*

ԱՂԱՄՅԱՆ Արարատ Վլադիմիրի (ծ. 11.8.1956, ք. Սիսիան), արվ-ի պատմաբան: Արվեստագիտ. դ-ր (2007), պրոֆ. (2007-ից): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014-ից): Արվ. վաստ. գործիչ (2008): Ավարտել է ՄՊՀ (1978): Դասավանդում է ԵԳՊԱ-ում (1986-ից), ԵՊՀ-ում (1996-ից): 2003-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի տնօրեն, 2004-ից՝ ՀՀ ԳԱԱ գիտահիրատարակչ. խորհրդի անդամ, 2009-ից՝ Ս. Պետերբուրգի Պետրոս Մեծի անվ. գիտ-ների և արվ-ների, 2011-ից՝ Փիլ. միջազգ. (Երևան) ակադ-ների թղթ. անդամ: ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գիտության աշխարհում», նաև ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսների խմբագր. խորհուրդների անդամ:

Լույս են տեսել Ա-ի «Մարտիրոս Սարյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն» (համահեղ., 1980), «Քաջազի մշտավառ կանթեղը» (2009, հայ., անգլ.), «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» (2009), «Հայ արվեստի պատմություն» (համահեղ., 2009, ՀՀ Պետ. մրց., 2009), «Երվանդ Քոչարի տարածության մեջ» (2013) և այլ աշխատություններ, «Ռուսական պոեզիայի գանձարանից» (թարգմանություններ, 2013) ժող-ը:

ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալ (2008), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2008), ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2012) մեդալներ:

Երկ. Мартирос Сарьян, Раннее творчество, Е., 1992; Символизм и творчество Мартироса Сарьяна, Е., 2012.

ԱՂԱՄՅԱՆ Գրիգոր Խորենի (13.4.1926, Երևան–16.10.2009, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1961), Արվ. վաստ. գործիչ (1981): Ավարտել է ԵԳՈՒ (1944), Մոսկվայի Սուրիկովի անվ. գեղարվ-ի ինստ-ը (1950): 1950-ից դասավանդել է ԵԳՈՒ-ում, ԵԳԹԻ-ում, ԵԳԻ-ում (պրոֆ.՝ 1981-ից), 1979–92-ին՝ ամբիոնի վարիչ: 1950–60-ական թթ-ին աշխատակցել է «Պիոներ» ամսագրին, 1950–2004-ին համագործակցել է Հայպետհրատ, «Սովետական գրող», «Հայաստան» հրատարակչությունների հետ:




Գրիգոր Աղասյան. *Մ. Աբրահամյանի «Տեսնես ինչից է» (1959, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

Նկարազարդել և ձևավորել է Աղավնու «Մեր բակային ճամբարում» (1952), Ջ. Ռոդարիի «Հեռավոր ճամփորդություն» (1954), Մ. Աբրահամյանի «Տեսնես ինչից է» (1959), «Կեռասի կորիզը» (1961), Վ. Աղայանի «Նվեր երեխաներին» (1958), Ա. Շահինյանի «Ինչպես պատահեց» (1959), Մ. Դարբինյանի «Սուլդին ու Բուլդին» (1965), Հ. Աղաբաբի «Պստիկ տղան» (1968), Վ. Թեքերեյի «Ունայնության տոնավաճառ» (2004), «Հայկական կենցաղային և սպորտային խաղեր» և այլ գրքեր:

Լույս են տեսել Ա–ի «Գծանկարում տոնի, նյութականության և առանձին մասերի մանրակրկիտ մշակման դերը ուսումնական պրոցեսում» (1977), «Կերպարվեստում կենցաղային ժանրի ծագման և կազմավորման մասին», «Ինտերյերը կերպարվեստում» աշխատությունները:

Արծաթե (1970, ԺՏՆՑ, 1980, Մոսկվա), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2005) մեդալներ, ՀՆՄ 2–րդ (1977, 2008), Հայաստանում քրիստոնեությունը որպես պետ. կրոն ընդունման 1700–ամյակին նվիրված ցուցահանդեսի 3–րդ (2001) մրց–ներ:

Գրկ. Գրիգոր Աղասյան, կատալոգ (հայ., ռուս.), Ե., 1979: Գրիգոր Աղասյան, կատալոգ (հայ., անգլ.), Ե., 2006:



Աղավնի

ԱՂԱՎՆԻ Գրիգորյան Աղավնի Արշակի, 15.7.1911, գ. Տայլար (Կարսի մարզ)–3.2.1992, Երևան), գրող, խմբագիր: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Ավարտել է Լենինականի մանկավարժ. տեխնիկումը (1931): 1930–51–ին աշխատել է «Պիոներ կանչ», «Ավանգարդ», «Գրական թերթ», «Սովետական Հայաստան» թերթերի խմբագրություններում:

Լույս են տեսել Ա–ի «Արտերի լիրիկա» (1930), «Բանաստեղծություններ» (գիրք 1, 2, 1936, 1939) բանաստեղծությունների, «Ճամփաների ղողանջը» (1977) պատմվածքների ժող–ները, «Ինչ տեսել եմ ու սովորել, ականջ արեք պատմեմ ձեզ էլ» (1947), «Բարի լույս, Արեգ» (1980), «Միշտ կանչող ձայներ» (1983) վիպակները, «Նրա մտերմական աշխարհում» (1975) հուշերը: Ա. հայտնի է դարձել «Շիրակ» ինքնակենսագր. վեպով (գիրք 1, 2, 1954, 1957 և 1963, 1964, ամբողջ. հրտ.՝ 1973): Թարգմանել է Ա. Ծերեթելու, Ի. Գրիշաշվիլու, Ս. Մարշակի, Կ. Սիմոնովի, Մ. Լերմոնտովի, Ա. Պուշկինի, Պ. Տիչինայի և ուր. ստեղծագործություններից:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985):

Երկ. Երկեր, հ. 1, 2, Ե., 1981, 1982:



Նիկոլ Աղբալյան

ԱՂԲԱԼՅԱՆ Նիկոլ Պողոսի (24.3.1875, Թիֆլիս–15.8.1947, Բեյրութ), ազգ–հաս. գործիչ, գրականագետ, խմբագիր, մանկավարժ: ՀՅԴ կուս–յան անդամ (1904): Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Սովորել է Մոսկվայի, Լոզանի (1906), Սորբոնի (Փարիզ) համալսարաններում:

Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին եղել է Ազգ. բյուրոյի, ապա՝ խորհրդի և կամավոր. գնդերի կարգադրիչ մարմնի անդամ, զբաղվել է հայ գաղթականների տեղափոխման հարցերով: ՀՀ խորհրդարանի (1918–20) անդամ, 1919–20–ին՝ ՀՀ լուսավորության և արվ–ի նախարար: Աշխատակցել է «Մուրճ», «Հորիզոն», «Հանդէս ամսօրեայ», «Ակօս», «Հայրենիք» և այլ պարբ–ների, 1919–ից՝ «Մշակ» օրաթերթին: 1913–15–ին *«Նոր հասանք»* ամսագրի համախմբագիրն էր, 1917–ին խմբագրել է *«Ազատամարտը»*: *«Վերնապան»* և Հայ գրողների ընկերության անդամ էր: Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատումից հետո՝ 1921–ին հեռացել է երկրից: 1930–ից ապրել է Բեյրութում: 1931–ին՝ *«Վահէ Մեթյան»* տպարան–հրատարակչության հիմնադիր–տնօրեն:

Ա–ի հրապարակախոսության մեջ ուշագրավ են կրթության, դաստիարակության և ազգ. ուսուցման խնդիրները: Անդրադարձել է հայ գրակ–յան պատմությանը, Հ. Թումանյանի, Սայաթ–Նովայի ստեղծագործություններին:

Լույս են տեսել Ա–ի «Պատմութիւն հայոց գրականութեան» (1944), «Սայաթ–Նովայի հետ» (1966) աշխատությունները, «Գրական–քննադատական երկերը» (1959, Բ.), «Ամբողջական երկերը» (հ. 1–4, 1959–70, Բ.), «Նամակներ, պաշտոնական գրություններ» (2003, Ե.,) ժող–ը, «Ընտրանին» (2005, Ե.): Ա–ի լեզվաբ. հոդվածների՝ հայ–ի հնչյուն. համակարգին վերաբերող շարքը, առանձին պրակներով՝ «Բանասէրի յուշագիրը» վերնագրով, տպագրվել է 1937–38–ին Բեյրութում:

Խորհրդ. տարիներին Ա–ի երկերը Հայաստանում չեն հրատարակվել:

Երևանում 1991–ից գործում է ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանող. միությունը:



Ն. Աղբալյանի *«Գրական–քննադատական երկեր»–ի (1959, Բեյրութ) կազմը*

Գրկ. **Լազեան Գ.,** *Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Կահիրե, 1949, Էջ 265–284:* **Անանյան Գ.,** *Նիկոլ Աղբալյան: Կյանքը և գրական հրապարակախոսական գործունեությունը, Ե., 2002:* **Խաչիկյան Յ.,** *Գեղագիտության հարցերը Նիկոլ Աղբալյանի աշխատություններում, Ե., 2003:* **Պետրոսյան Ա.,** *Նիկոլ Աղբալյան. գրականագիտական հայացքները, Ե., 2005: Նիկոլ Աղբալյան: Մատենագիտություն (1896–1920), կազմ.՝ Գ. Անանյան, Ե., 2003:*



«Աղբիւր», *1883–1918, Թիֆլիս (1885, հունվար)*

«ԱՂԲԻՒՐ», պատկերազարդ ամսագիր: Արևելահայ առաջին մանկ. պարբ-ը: Լույս է տեսել 1883–1918-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Տիգրան ***Նազարյան***: Տպագրել է գրական-գեղ., բնագիտ., աշխարհագր. հոդվածներ, կենսագր. ակնարկներ նշանավոր մարդկանց մասին, ինչպես նաև հեքիաթներ, զվարճալի ու հետաքրքրաշարժ նյութեր, խաղեր, թվաբ. խնդիրներ, հանելուկներ, թարգմանություններ՝ Հ. Ք. Անդերսենի, Է. Հոֆմանի, Վ. Հյուգոյի, Վ. Գյոթեի, Ա. Պուշկինի, Ի. Տուրգենևի, Ն. Նեկրասովի և այլ հեղինակների մանկ. երկերից: Հրատարակել է Ս. Մանդինյանի, Ղ. Աղայանի, Տ. Ռաշմաճյանի մանկավարժ. հոդվածներն ու ուսումնասիրությունները: Որպես ամսագրի հավելված՝ հրատարակվել են գրքույկներ, նկարներ, «Մանկական աշխարհ» պարբերաթերթը՝ երեխաների ստեղծագործություններով և թարգման. նյութերով: Աշխատակցել են Րաֆֆին, Պ. Պռոշյանը, Լեոն, Հ. Հովհաննիսյանը, Հ. Թումանյանը, Ա. Ծատուրյանը, Ա. Իսահակյանը, Ս. Բեկ-Նազարյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը և ուր.:

Գրկ. Քաան եւ հինգ ամեակ «Աղբիւր» մանկական ամսագրի (1883–1908), կազմ.՝ Նար-Դոս, Թ., 1908: Գյուլնազարյան Խ. Ս., Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Ե., 1961, էջ 63–73: Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի, Ե., 1987:



«Աղբյուր», *1923-ից, Երևան*

«ԱՂԲՅՈՒՐ», մանկապատանեկան պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսնում 1923-ից Երևանում. 1923–24-ին՝ «Պատկոմ», 1925–28 և 1950–90-ին՝ «Պիոներ», 1929–50-ին՝ «Հոկտեմբերիկ»: Խմբագիրներ՝ Գարեգին ***Սևունց***, Վազգեն ***Տալյան***, Սաղաթել ***Հարությունյան***, Անահիտ ***Սահինյան***, Պերճ ***Զեյթունցյան***, Թադևոս ***Տոնոյան*** (1990-ից): Մեծ տեղ է հատկացնում մանուկների ու պատանիների առօրյային, տպագրում նրանց ոտանավորները, պատմվածքները, նկարչ. աշխատանքները, հայ և օտարազգի (թարգմանաբար) ժամանակակից ու դաս. մանկագիրների ստեղծագործություններ, ճանաչող. նյութեր՝ բուս. և կենդ. աշխարհների մասին, ծանոթացնում է գիտ-յան ու տեխնիկայի նորություններին: Անդրադառնում է հայ, ինչպես նաև աշխարհի ժողովուրդների պատմությանն ու մշակույթին, ազգագրությանը: «Ա.» լուսաբանել է Ղարաբաղյան ազգ-ազատագր. շարժումը, հրապարակել նյութեր հայոց պատմությունից:

Գրկ. «Աղբյուր» մանկապատանեկան ամսագրի անթոլոգիա (1923–2008), Ե., 2010:



«Աղբյուր», *1994-ից, Բաթում*

«ԱՂԲՅՈՒՐ», ազգ., հաս-քաղ., տեղեկատվ. ամսաթերթ: Աջարիայի հայերի միության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1994-ից (2008–11-ին ընդհատվել է) Բաթումում՝ ռուս. (1-ական էջ՝ հայ. և վրաց.): Խմբագիր՝ Արթուր Հովհաննիսյան: Լուսաբանում է տեղի հայ համայնքի կյանքը, անդրադառնում Վրաստանի և Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանը, հայապահպանության խնդիրներին, միջազգ. իրադարձություններին:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա ՋՈՒՂԱՅԵՑԻ (ծ. թ. անհտ–1714), Հայոց կաթողիկոս՝ 1706-ից: Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի առաջնորդ՝ 1697–1706-ին: Հայ եկեղեցու դավան. սկզբունքները Նոր Ջուղայի կաթոլիկ քարոզիչներից պաշտպանելու նպատակով 1682-ին գրել է **«Գիրք ատենական, որ ասի վիճաբանական»** երկը: Առաջին անգամ տպագրվել է 1687-ին Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի տպարանում (288 էջ, 8^0, 6 x 4.5 սմ): Վերահրատարակվել է 1783-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տպակից է «Տաղարան»-ին: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Ատենական վիճաբանութիւն...» (151 էջ, 8^0, 13,4 x 8,1 սմ):

Ա. Ա Ջ-ու **«Գրքոյկ, որ կոչի Աղօթամատոյց»**-ը տպագրվել է 1790-ին Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանքի տպարանում: Տպակից է Սիմեոն Երևանցու **«Ջբօսարան հոգեւոր»** (67 էջ, 8^0, 11,7 x 7 սմ) գրքին: Հրատարակվել է նաև 1790-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում՝ «Աղօթամատոյց» (76 էջ) վերնագրով:

Ա. Ա Ձ. հարել է Իսրայել Օրու ազատագր. գաղափարներին, ունեցել է ռուս. կողմնորոշում:

Գրկ. **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:*

ԱՂԹԱՄԱՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հայտնի է X դ–ից, աշխուժացել է Աղթամարի կաթողիկոսության հիմնադրումից (1113) հետո: Վերելք է ապրել Զաքարիա Ա Սեֆեդինյան կաթողիկոսի (1296–1336) օրոք: Գրիչ Դանիել Աղթամարցին Ստեփանոս Օրբելյանի խորհրդով և Զաքարիա կաթողիկոսի հոգածությամբ 1303-ին ընդօրինակել է Թովմա Արծրունու «Պատմութիւն Արծրունեաց տան» երկը, իսկ 1330-ական թթ-ին Անանուն մատենագիրը գրել է այդ պատմության հավելվածը:

Դանիելի սերունդները մոտ 2 դար զբաղվել են գրչությամբ. մեզ է հասել շուրջ 100 ձեռագիր: Հայտնի է Զաքարիա ծաղկողը (XIV դ–ի վերջ–XV դ–ի սկիզբ), որն Աղթամարի մանրանկարչության նշանավոր ներկայացուցիչներից է, գրիչներից՝ Թովմա Մինասենցը, Ներսես և Ստեփանոս (կաթողիկոս) եղբայրները (XV դ.), Գրիգորիս Աղթամարցին (XVI դ.) և ուր.: Դպրոցը մեծ հռչակ ուներ, և այնտեղ ձեռագրեր ընդօրինակելու էին գալիս տարբեր վայրերից, նաև Գլաձորի ու Հերմոնի դպրոցներից:

Ա. գ. կ–ից մեզ են հասել պատմ. և գեղ. երկեր, բազմաթիվ նկարազարդ Ավետարաններ, Սաշտոցներ, Հայսմավուրքներ, Տաղարաններ և այլ ձեռագրեր:

Գրկ. **Ոսկեան Հ.,** *Վասպուրական-Վանի վանքերը, Վնն., 1940, էջ 110–132: Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. 1, Ե., 1965, էջ 102–103: Աղթամարի պատրիարքարանական ժառանգությունը (համահեղ-ներ՝ Կ. Մաթևոսյան, Լ. Թոմանյան, Ա. Ասրյան, կազմ.՝ Կ. Մաթևոսյան), Էջմիածին, 2013:*



Աղեքսանդր Ա Զուղայեցու *«Գիրք որ կոչի Ախտենական վիճաբանութիւն» (1783, Կ. Պոլիս) երկի տիտղոսաթերթը*

ԱՂԹԱՐՔ, **Ախտարք**, բժշկ., աստղաբաշխ., կախարդ., սնոտիապաշտ. բովանդակությամբ գիրք: «Ախտար» (axtar) բառը պահլ. է, նշանակում է կենդանակերպ, համաստեղություն:



Աղթարքի *(1513, Վնտ., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ) բացվածքով էջեր (ձախում), էջադիր պատկերազարդում (ներքևում)*


Հայ մատենագրության մեջ Ա-ները հարուստ նյութ են պարունակում հայկ. ազգագրության մասին և առանձնանում են կենցաղի ու ժող. հավատալիքների նկարագրություններով, ժող. բժշկության ավանդույթներով, ախտաբան., բուսաբ., կենդր. և այլ տերմիններով ու բարբառային բառապաշարով, ինչպես նաև հայկ. անգիր դպրության՝ ժող. բանահյուսության հետաքրքիր նմուշներով:

Առաջին անգամ տպագրել է ***Հակոբ Մեղապարտը*** 1513-ին Վենետիկում: Տիտղթ-ին՝ «Աղթարք արանց եւ կանանց»: Գրքի վերջին հատվածը կոչվում է «Բժշկարան եւ հաքիմարան ըստոյգ եւ զարմանալի: Մեծին Ճալալիոս հաքիմէն արարեալ»: Սա միջնադարյան բժշկարան է, որտեղ ընդգրկված են տարբեր ցավերի, հիվանդությունների, մասնավորապես՝ ատամնացավի, փորացավի, մեջքացավի, աչքացավի, սրտի, լյարդի, կանանց և այլ հիվանդությունների դեմ դարմաններ, դեղատոմսեր, այլ բուժամիջոցներ: Միջնադարում տարածված այսպիսի առձեռն այլ բժշկարանների նման՝ այստեղ էլ բուժիչ և օգտակար դեղամիջոցների կողքին առկա են նաև կեղծ ու հնարովի «դարմանումներ»:




Բաղկացած է 24 մամուլից (190 թերթ՝ 380 էջ), վերջին մամուլը՝ 6 թերթ, 8-ծալ, համարակալված են միայն մամուլները և յուրաքանչյուր մամուլի առաջին 3 թերթերը, շարվ-ը՝ 11 x 6,5 սմ: Օգտագործված են ***Ուրբաթագրքի*** 8 և ***Պատարագատետրի*** 16 շրջանակները: Ունի փորագիր՝ կենդանակամարի պատկեր և զարդագրեր: Բնագրի վերջում տպարանանիշն է՝ առանց հիշագրերի, տպագրությունը՝ երկգույն՝ Ուրբաթագրքի տառատեսակով:

Աղոթագիրք



«Աղօթք հասարակաց քրիստոնէից...» (1618, Լվով, տպագրիչ՝ Հովհաննես Քարմատանենց) գրքի փիփղոսաթերթը



«Պարտէզ հոգեւոր» (1683–84, Մարսել, տպագրիչ՝ Մատթեոս Վանանդեցի) գրքի փիփղոսաթերթը

Գրկ. Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., *Հայ գիրքը 1512–1800 թվականներին, Ե., 1988, էջ 4–5:* Իշխանյան Ռ., *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:*

ԱՂՈԹԱԳԻՐՔ, **Գիրք աղոթից**, աղոթքների ժող.: Աղոթագրությունը, որպես միջնադարյան հայ մատենագրության տեսակ, սկիզբ է առել V դ–ից՝ հայ գրերի գյուտից անմիջապես հետո, և կանոնացվել Հայ եկեղեցու կողմից: Հայ աղոթագրությունը հիմնականում ամփոփված է զանազան Ա–երի, Ժամագրքի, Պատարագամատույցի, Շարականոցի, Սաշտոցի, Գանձարան–Տաղարանների մեջ: Այն զարգացրել են Սահակ Ա Պարթևը, Մեսրոպ Սաշտոցը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Հովհաննես Սարկավագը և ուր.: V դ–ից զարգացում է ապրել նաև հայ թարգման. աղոթագրությունը: Թարգմանվել են Ընդհանրական եկեղեցու սբ հայրերի (Հովհան Ոսկեբերան, Բարսեղ Կեսարացի, Եփրեմ Խուրի Ասորի և ուր.) աղոթքներն ու Ա–երը, որոնք նույնպես տեղ են գտել հայ ծիս. և աղոթքների ժող–ներում:

Հայ. առաջին Ա. տպագրվել է 1618–ին Լվովում՝ Հովհաննես Քարմատանենցի տպարանում՝ հայատառ ղփչաղ.: Տիտղթ–ին՝ «Աղօթք հասարակաց քրիստոնէից....» (168 էջ):

Ա–ներ՝ տարբեր վերնագրերով, տպագրվել են նաև՝

1667–ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ–ին՝ «Գիրք աղօթից....» (66 էջ, 8^0, 10,5 x 6,3 սմ):

1670–ին Լիվոռնոյում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ–ին՝ «Giardino Spirituale. Պարտէզ հոգեւոր, պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից ... ըստ պատշաճաւորութեան տեղւոյ եւ ժամանակի»: Լատ–ից թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու:

1683–ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Մատթեոս Վանանդեցի: Տիտղթ–ին՝ «Ակն հոգեկան. օժանդակ պահողաց եւ ընթերցողաց» (133 էջ, 16^0): Վերահրատարակվել է 1683–84–ին՝ նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Պարտէզ հոգեւոր: Պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից...» (166 էջ, 8^0, 7,5 x 4,5 սմ):

1685–ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբռնիի տպարանում: Լատ–ից թարգմ.՝ Ստեփանոս Լեհացու: Տիտղթ–ին՝ «Բուրաստան աղօթից. յորում պարունակին բան....» (323 էջ, 8^0, 10,9 x 6,7 սմ):

1701–ին Կ. Պոլսում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Լատ–ից թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու: Տիտղթ–ին՝ «Գիրգ մտածական աղօթից: Բանալի ջերմեռանդակերտ, որ բանայ ըզ դրունս սրտից, մեղօք փակեցելոց....» (128 էջ, 8^0, 12,2 x 7,4 սմ):

1704–ին Կ. Պոլսում՝ «Ի թաղն Պեկօղլի» տպարանում: Լատ–ից թարգմ.՝ Ստեփանոս Լեհացու: Տիտղթ–ին՝ «Գիրք Բուրաստան աղօթից. յորում պարունակին բանք մաղթանաց....» (232 էջ, 8^0, 12 x 7 սմ):

1704–ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Հեղինակ՝ Վարդան Մարաթացի: Տիտղթ–ին՝ «Գիրք աղօթից»:

1704–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տիտղթ–ին՝ «Պարտէզ ոգեւոր: Պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից....» (329 էջ, 8^0, 9,5 x 5,5 սմ):

1705–ին Կ. Պոլսում՝ Գեորգ Սարգսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Խոկումն վարուց: Պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից....» (96 էջ, 8^0):

1707–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Լատ–ից թարգմ.՝ Ստեփանոս Լեհացու: Տիտղթ–ին՝ «Բուրաստան աղօթից, յորում պարունակին ջերմեռանդ աղօթք...» (497 էջ):

1708–ին Մարսելում՝ առանց տպարանի հիշատակության: Թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու: Տիտղթ–ին՝ «Գիրք մտածական աղօթից: Բանալի ջերմեռանդակերտ, որ բանայ զդրունս սրտից: Մեղօք փակեցելոյ....» (144 էջ, 12^0, 9,4 x 5,4 սմ):

1710–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տիտղթ–ին՝ «Պարտէզ հոգեւոր» (329 էջ, 6^0, 9,5 x 4,8 սմ):

1714–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Հեղինակ՝ Գրիգոր Եվդոկիացի: Տիտղթ–ին՝ «Օրինեցգութիւնք ոգեւորք. եւ մաղթանք աղօթականք առ սուրբ ոգի....» (24 էջ, 12^0, 8,3 x 6,7 սմ):

1719-ին Վենետիկում՝ Ջիովաննի Բաշոյի տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու, հրատարակիչ՝ Մխիթար Սեբաստացի: Տիտղթ-ին՝ «Պարտէզ հոգեւոր. պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից....»:

1721-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Համառօտ գիրք աղօթից....» (256 էջ, 8^0, 12 x 7,2 սմ):

1722-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու: Տիտղթ-ին՝ «Գիրգ, որ կոչի Աղբիւր բարի» (395 էջ, 12^0, 9,5 x 5 սմ):

1727-ին, տիտղթ-ն ընկած է (382 էջ, 14 x 10 սմ):

1728-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Հեղինակ՝ Մաբիամ Քարաքաշյան: Տիտղթ-ին՝ «Ակն հոգւոյ արարեցեալ ի Մարիամայ Քարաքաշեան....» (16 էջ):

1734-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Հեղինակ՝ Վարդան Սարաթացի: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից...» (464 էջ, 8^0, 9,3 x 6 սմ):

1737-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Քերմեռանդագունեղ աղօթք առ Երանուհեղ Կոյսն....» (16 էջ):

1738-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Պարտէզ հոգեւոր պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից....» (214 էջ, 12^0 և 8^0, 8,5 x 5 սմ):

1741-ին նույն տպարանում: Լատ-ից թարգմ.՝ Ստեփանոս Լեհացու: Տիտղթ-ին՝ «Բուրաստան աղօթից Յորում պարունակին աղօթք ըստ եօթանցաւուրցն շաբաթու» (395 էջ, 6^0 և 120, 8,6 x 4,8 սմ):

1747-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից....» (224 էջ, 8^0, 8,1 x 6,1 սմ):

1748-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ակն հոգւոյ. յորում գտանին սքանչելի աղօթք....» (63 էջ, 8^0):

1752-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում: Տպակից է «Համառօտ կրթութիւն հանապազօրեայ»-ին: Տիտղթ-ին՝ «Պարտէզ հոգեւոր պարունակող բազմաց եւ զանազանից ջերմեռանդականաց աղօթից....» (343 էջ, 12^0, 10 x 5 սմ):

1759-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Հեղինակ՝ Մկրտիչ Անանյան Կոստանդնուպոլսեցի: Տիտղթ-ին՝ «Աղօթամատոյց սրբոյն Յովսեփայ....» (299 էջ, 6^0 և 8^0, 9,8 x 5 սմ):

1760-ին նույն տպարանում: Հեղինակ՝ Հակոբ Շամախեցի: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից, որ կոչի հաց նեղելոց....» (512 էջ, 8^0, 13,3 x 7,3 սմ):

1770-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տպակից է «Համառօտ կրթութիւն հանապազօրեայ»-ին: Տիտղթ-ին՝ «Ակն հոգւոյ, յորում գտանին պիտանի աղօթք....» (95 էջ, 12^0, 9 x 5 սմ):

1772-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տպակից է «Համառօտ կրթութիւն հանապազօրեայ»-ին: Տիտղթ-ին՝ «Պարտէզ հոգեւոր պարունակող բազում եւ զանազան ջերմեռանդական աղօթից....» (346 էջ, 6^0 և 12^0, 9,4 x 5,2 սմ):

1781-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ-ին՝ «Աղօթամատոյց սրբոյն Յովսեփայ....» (214 էջ, 12^0 և 6^0, 10,9 x 5,9 սմ):

1783-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ հայատառ թուրք.: Ա տիտղթ-ին՝ «Մտածական աղօթք քիթապը....», Բ-ին՝ նույնը (320 էջ,13 x 8,5 սմ):

1785-ին Վենետիկում՝ Պիետրո Վալվազիանիի տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տպակից է «Համառօտ կրթութիւն հանապազօրեայ»-ին: Տիտղթ-ին՝ «Ակն հոգւոյ, յորում գտանին պիտանի աղօթք....» (93 էջ, 12^0, 9,1 x 5,1 սմ):

1785-ին նույն տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տիտղթ-ին՝ «Պարտէզ հոգեւոր պարունակող բազում եւ զանազան ջերմեռանդական աղօթից....» (322 էջ, 9,5 x 5 սմ):

1786-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ հայատառ. թուրք.՝ «Մտածական աղօթք քիթապը»: Թարգմ.՝ Էնկյուրեցի տիրացու Եղիազարի (214 էջ, 12^0):

1786-ին նույն տպարանում՝ հայատառ թուրք.՝ «Մտածական տուալեր Մանուկն Յիսուսուն» («Մտածական իննօրյա աղոթքներ հանուն Մանուկ Հիսուսի»): Գերմ-ից թարգմ.՝ Պետրոս Երեմյանի: Տպակից է «Խաչ եօլունու գիարեթ իտէճէք թարիք տիր» («Խաչի ճանապարհի այցելության պատմությունը») գրքին: Տիտղթ-ին՝ «Մտածական տուալէր Մանուկ Յիսուսուն...» (178 էջ, 8^0, 11 x 6 սմ):

1787-ին նույն տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Ա տիտղթ-ին՝ «Պարտէզ հոգեւոր:», Բ-ին՝ «Պարտէզ հոգեւոր պարունակող բազում եւ զանազան ջերմեռանդական աղօթից» (312 էջ, 12^0, 9 x 4,7 սմ):

Աղոթագիրք




«Գիրգ մտածական աղօթից....»-ի (1701, Կ. Պոլիս, Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպ.) տիպղոսաթերթը




«Բուրաստան աղօթից...»-ի (1741, Վնտ.) տիպղոսաթերթը


Աղոթագիրք



«Պարտէզ հոգեւոր»-ի (1787, Տրիեստ, Մխիթարյան տպ.) տիտղոսաթերթը



«Գիրք աղօթից վասն ամենայն ցեղ...»-ի (1798, Կ. Պոլիս, Մատթեոս Դպիրի տպ.) տիտղոսաթերթը



Հովհաննես Աղպաշյանի *«Պայքարի ոլորապտոյտին մէջ» (2001, Բեյրութ) գրքի կազմը*

1788-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տպակից է «Համառօտ կրթութիւն հանապազօրեայ»-ին: Տիտղթ-ին՝ «Ակն հոգւոյ, յորում գտանին պիտանի աղօթք....» (93 էջ, 12^0, 8,3 x 4,3 սմ):

1793-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից....» (254 էջ, 8^0):

1794-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Հեղինակ՝ Հակոբ Ստեփանյան: Տիտղթ-ին՝ «Պսակ Կուսին: Նուիրմունք զանազան աղօթից....» (72 էջ, 12^0, 9,8 x 5 սմ):

1796-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ հայատառ թուրք.: Թարգմ.՝ Էնկյուրեցի տիրացու Եղիազարի: Տիտղթ-ին՝ «Մնաճական աղօթք քիթապը....» (235 էջ, 18^0, 10,2 x 6,2 սմ):

1798-ին Կ. Պոլսում՝ Մատթեոս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից վասն ամենայն ցեղ....» [126 (՞) էջ, 8^0, 8 x 4,9 սմ]:

1798-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից....» (76 էջ, 8 x 4,9 սմ):

1799–1800-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի և տպագրության թվականի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից վասն ամենայն ցեղ....» (96 էջ, 8^0, 8,7 x 5,8 սմ):

1801-ից հետո Ա. տպագրվել է՝

1801, 1832, 1833, 1854-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1827-ին (Կալկաթա, Մարդասիր. ճեմարանի տպ.), 1840-ին (Մ., Լազարյան ճեմարանի տպ.), 1848-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1887-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1869-ին (Շուշի, Հայոց հոգևոր տեսչության տպ.), «Աղօթագիրք...» վերնագրով՝ 1838, 1840, 1849, 1851, 1853, 1883, 1889, 1899, 1934-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1867, 1883, 1885, 1887, 1891, 1895, 1899-ին (ԿՊ, Ճ. Արամյանի, Գարեգին Պաղտատլյանի, Նշան Պերպերյանի տպ-ներ), 1875-ին [Սեբաստիա (Սվազ), Անդրանիկ Վարդանյանի տպ.], 1883, 1895-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1867, 1877, 1886-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Աղօթգիրք մանկանց» վերնագրով՝ 1849, 1878, 1879, 1890-ին (Վնն., Մխիթարյան տպ.), «Աղօթք...» վերնագրով՝ 1833, 1865, 1876, 1883, 1887, 1895-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1880, 1895, 1899-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1869, 1870, 1891-ին (ԿՊ, Հարություն Մինասյանի, Հ. Պոյաճյանի տպ-ներ), 1876-ին (Լոնդոն), «Աղօթատետր...» վերնագրով՝ 1884, 1889, 1898-ին (Թ., Հովհաննես Սարտիրոսյանի, Մովսես Վարդանյանի, Մ. Շարաձեի տպ-ներ):

Գրկ. ***Անասյան Հ.****, Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 626–635: Աղոթագիրք, Ե., 1992:*

ԱՂՊԱՃՅԱՆ Հովհաննես, **Խիկար** [1910, գ. Ճյուճյուն (Կեսարիա)–1987, Բեյրութ], երգիծաբան, հրապարակախոս, խմբագիր: Աշխատակցել է Բեյրութի մի շարք պարբ-ների, եղել ***«Ժողովուրդի ձայն»*** հաս-քաղ. օրաթերթի, 1943-ին՝ նույնանուն գրական, գիտ. ամսաթերթի, 1948-ին՝ «Ժողովուրդի պայքար» պարբ-ի, «Մեր նշանաբանն է «յառաջ» (1965-ից՝ ***«Յառաջ»***) շաբաթաթերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Մեր խմբագիրները» (1970), «Բաղաճայն սենֆոնի հայ անաւարտ դատի» (1973), «Ա՛խ, լաճեր տնաւեր եւ Ապու Հասսուն եւ իր էշն ասուն» (1980), «Մեղրամոմէ կիսանդրիներ» (1986) երգիծ., «Պայքարի ոլորապտոյտին մէջ» (2001) երկերը, «Անուրախ մանկութիւն» (1985) հուշագրությունը: Արաբագիր մամուլում տպագրվել են Ա-ի՝ Պ. Դուրյանի, Գ. Զոհրապի, Երուխանի, Ռ. Զարդարյանի և ուր. ստեղծագործություններից թարգմանություններ, արաբ. թարգմանել և առանձին գրքով հրատարակել է Ե. Օտյանի «Ընկ. Փանջունի ի Ծապլվար» վեպը, արաբ-ից հայ.՝ Մարտուն Ապպուտի «Ֆարէս աղա» («Յառաջ», 1968, ապրիլ-նոյեմբ.) երգիծ. վեպը: Հեղինակ է նաև «Արաբական ազգային ազատագրական զարթօնքը» (1959) աշխատության:

«ԱՂՈՒԷՍԱԳԻՐՔ», հայկ. միջնադարյան առակների ժող.: Անվանումը տարածվել է XVII դ-ից՝ ***Ոսկան Երևանցու***՝ 1668-ի հրատ-ից հետո: «Ա.» վերագրվել է ***Վարդան Այգեկցուն***, իսկ ըստ ***Նիկողայոս Մառի***՝ այն «վարդանյան» առակախմբի ուրույն խմբագրությունն է: «Ա.» ուշ միջնադարում թարգմանվել է վրաց. և արաբ.:

Առաջին անգամ տպագրվել է 1668-ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տպակից է Մովսես Խորենացու «Գիրք աշխարհաց»-ին: Տիտղթ-ին՝ «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք...» (312 էջ, 8^0):

Վերահրատարակվել է՝

1683-ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Սողոմոն Լևոնյան: Դարձյալ տպակից է Մովսես Խորենացու «Գիրք աշխարհաց»-ին և «Համառօտ վիպասանութիւն»-ին: Տիտղթ-ին՝ «Գիրգ աշխարհաց եւ առասպելաբանութեանց. որ է Աղուէսագիրգ.....» (320 էջ, 8^0, 10,7 x 6 սմ):

1698-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Տպագրիչ՝ Երեմիա Մեղրեցի: Տպակից է Մովսես Խորենացու «Գիրք աշխարհաց»-ին: Տիտղթ-ին՝ «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց: Որ է Աղուէսագիրք....» (181 էջ, 8^0, 13 x 7,4 սմ):

1801-ից հետո Ա. տպագրվել է Կ. Պոլսում՝ 1827-ին (Արապյան տպ.), Երևանում՝ 1935, 1955, 1981-ին, Անթիլիասում՝ 1993-ին, 2002-ին (ա. տ.), Հալեպում՝ 2008-ին, ևն:

Գրկ. Զարբհանալեան Գ., Հայկական մատենագիտութիւն, Վնտ., 1883: Թէոդիկ, Տիպ ու տպաւ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համանահանություն): Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2013:*


Ա.ՃԱՌՅԱՆ Հրաչյա Հակոբի [8 (20). 3. 1876, Կ. Պոլիս–16. 4. 1953, Երևան], լեզվաբան, բանասեր: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943), պրոֆ. (1924): Ավարտել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանը: 1895-ից սովորել է Սորբոնի համալսարանում (Փարիզ)՝ աշակերտելով Անտուան ***Մեյեին***, ապա՝ Ստրասբուրգում՝ Հայնրիխ ***Հյուբշմանին***: 1898–1923-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Շուշիի, Նոր Բայազետի, Նոր Նախիջևանի, Թեհրանի, Թավրիզի դպրոցներում: 1923-ից՝ ԵՊՀ դասախոս, ամբիոնի վարիչ:

Ա. հիմնադրել է հայագիտ-յան մի շարք ճյուղեր (հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն ևն): Նրա բարբառագիտ. կարևորագույն հետազոտություններից են «Հայ բարբառների դասակարգումը» (ֆրանս., 1909), «Հայ բարբառագիտութիւնը...» (1911, Մ., Նոր Նախիջևան, «Էմինեան ազգագրական ժողովածու», Ե. Ավետիքյանի և Ս. Ավագյանի տպ.) և «Հայերէն գաւառական բառարանը» (1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), որը պարունակում է շուրջ 30 000 բառ: Հայագիտ-յան մեջ առաջին անգամ Ա. առաջարկել է հայ-ի բարբառների ձևաբան. դասակարգումը՝ ըստ ***ում, կը*** և ***լ*** ճյուղերի («Քննութիւն Սուչաւայի բարբառի», 1899, «Բազմավէպ», «Քննութիւն Ղարաբաղի բարբառի», 1901, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., «Քննություն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի», 1925, «Քննություն Մարաղայի բարբառի», 1926, «Քննություն Ագուլիսի բարբառի», 1935, «Քննություն Նոր-Ջուղայի բարբառի», 1940, «Քննություն պոլսահայ բարբառի», 1941, «Քննություն Համշենի բարբառի», 1947, «Քննություն Վանի բարբառի», 1952, «Քննություն Առտիալի բարբառի», 1953, «Քննություն Կիլիկիայի բարբառի», 2003):

Հայ բառարանագրության մեջ բացառիկ է Ա-ի ***«Հայերէն արմատական բառարանը»*** (հ. 1–7, 1926–35, 2-րդ հրտ.՝ հ. 1–4, 1971–79), որը պարունակում է հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ գործածված 11 000 արմատական բառերի և 5095 արմատի ստուգաբանություններ:

«Հայոց անձնանունների բառարանում» (հ. 1–5, 1942–62, վերահրտ.՝ 2006) Ա. հավաքել և ուսումնասիրել է V–XIII դդ-ի հայ մատենագրության մեջ հիշատակված անձնանունները, տվել դրանց մեծ մասի ստուգաբանությունը:

«Հայոց լեզվի պատմություն» (հ. 1, 2, 1940, 1951, 2013) աշխատության մեջ քննել է հայ-ի ծագման ու պատմ. զարգացման ընթացքը: Հայ-ի պատմահամեմատ. ուսումնասիրությանն է նվիրված Ա-ի «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» (հ. 1–6, 1952–71, Ներածություն, 1955, 2005) աշխատությունը, որտեղ ի մի է բերել XIX–XX դդ-ի հայ-ի պատմ. ու համեմատ. ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված նվաճումները:



«Աղուեսագիրք...»-ի (1827, Կ. Պոլիս, Պողոս Արապյանի տպ.) տիտղոսաթերթը



Հրաչյա Աճառյան



Հ. Աճառյանի *«Հայերէն նոր բառեր...» (1908, Վնն.) գրքի տիտղոսաթերթը*



Հ. Աճառյանի *«Հայոց գրերը» (1984, Ե., «Հայաստան») գրքի կազմը*


Ա. ուսումնասիրել է Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը («Մ. Մեսրոբի եւ գրերու գիւտի պատմութեան աղբիւրներն ու անոնց քննութիւնը», 1907, Փ., «Բանասերի» տպ., «Հայոց գրերը», 1928, Վնն., Մխիթարյան տպ., Ե., 1984), կազմել հայ հին ձեռագրերի ցուցակներ [«Յուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին» (1900, Վնն., Մխիթարյան տպ.), «Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի» (1910, նույն տպ.), «Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազէտի» (1924, նույն տպ.), «Յուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի» (1936, նույն տպ.) ևն]: Բանասիր. ուշագրավ ուսումնասիրություն է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի պահպանված միակ ձեռագրի համեմատությունը հրատարակված բնագրի հետ («Քննութիւն եւ համեմատութիւն Եզնկայ նորգիւտ ձեռագրին», Գ. Տեր-Մկրտչյանի հետ, 1904, նույն տպ.): Ա.-ի հոդվածները հրապարակվել են «Հանդէս ամսօրեայ», «Բազմավէպ», «Բիւրակն», «Նոր-Դար», «Արարատ», «Տարազ», «Մշակ», «Բանասէր», «Ազգագրական հանդէս», «Լումայ», «Լոյս», «Ուստա», «Արեւ», «Նորք», «Ասպարէզ», «Անահիտ», «Էջմիածին», «Սովետական Հայաստան», «Հասկ», ՀԽՍՀ ԳԱ-ի և ԵՊՀ-ի հրատ-ներում, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և այլ երկրների գիտ. պարբ-ներում:

Լույս են տեսել Ա.-ի «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ» (1902, Մ.-Վաղ-պատ, Վարվառե Գատցուկի տպ.), «Պատմութիւն հայոց նոր գրականութեան» (պր. 1–3, 1906–12, Վաղ-պատ-Նոր Նախիջևան, Սբ Էջմիածնի, Սերովբե Ավագյանի տպ-ներ), «Ձեռագրական սրբագրութիւններ Փաւստոսի մէջ» (1907, Փ., «Բանասերի» տպ.), «Հայերէն նոր բառեր նորագիւտ մնացորդաց գրոց մէջ» (1908, Վնն., Մխիթարյան տպ., «Ազգային մատենադարան» մատենաշար), «Պատմութիւն Եղիա քահանայի» (1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Բանասիրական ուսումնասիրություններ» (1976), «Հայ գաղթականության պատմություն» (2002), «Պարսից լեզվի պատմություն» (2005), «Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ)» (2004), «Պոլսահայ անգիր բանահյուսություն» (2009) աշխատությունները, «Կյանքիս հուշերից» (1967) հուշագրությունը, «Նամակները» (կազմ՝ Բ. Աճառյան, Մ. Եղիազարյան, 2003):

Փարիզի լեզվաբ. ընկերության անդամ (1897), Չեխոսլովակիայի արևելագիտ. ինստ-ի գիտ. բաժնի թղթ. անդամ (1937):

Ա.-ի անունով են կոչվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ը, համալսարան, դպրոց, փողոց՝ Երևանում:

Գրկ. **Աղայան Է.,** *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962:* **Ղարիբյան Ա.,** *Հայ լեզվաբանության խոշորագույն ներկայացուցիչը, «ՊԲՀ», 1966, № 2:* **Բադիկյան Խ.,** *Հրաչյա Աճառյան մարդը և գիտնականը, Ե., 2005:* **Ստեփանյան Գ.,** *Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը, Ե., 2013: Հրաչյա Հակոբի Աճառյան: Կենսամատենագիտություն, Ե., 1956:*



Գևորգ Աճեմյանի *«Խօսք ճանապարհի» (1999 , Ե., հեղ. հրտ.) գրքի կազմը*

ԱՃԵՄՅԱՆ Գևորգ Վարդանի [23.5.1932, ք. Մումպուճ (Սիրիա)–27.12.1998, Լիոն (Ֆրանսիա)], հրապարակախոս, գրող, գրաքննադատ և տեսաբան: ՀԱՀԳԲ-ի հիմնադիրներից է և գինված ազատագր. պայքարի գաղափարախոսը: Սովորել է Հալեպի Հայկազյան և Կյուլլապի Կյուլպենկյան վարժարաններում, ավարտել է «Ալեփփո» քոլեջը (1948) և Բեյրութի ամերիկյան համալսարանը (1958): Դասավանդել է Բեյրութի երկրորդ. վարժարաններում և Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունում: Բեյրութում հիմնադրել է «Օգնություն» գրատունը, աշխատակցել է «Գրասէր» (1942–52, Հալեպ), «Զարթօնք», «Շիրակ» և «Բագին» (երեքն էլ՝ Բեյրութ) պարբ-ներին, որպես խմբագիր՝ «Դեյլի Սթար» (անգլ., Բեյրութ) օրաթերթին, հիմնադրման օրվանից՝ ***«Սփիւռք»*** պարբ-ին (1965-ին՝ պատ. խմբագիր, 1975–78-ին՝ խմբագիր):

Լույս են տեսել Ա.-ի «Պիտի չարչարեմ բառերը» (1967), «Միակ լուծումը» (1972), «Արդի քաղաքականության պատրանքը» [անգլ., Վիրջինիա (ԱՄՆ), 1986], «Քաղաքական իրապաշտութիւնն թէ անձնատուութեան պատրաստակամութիւն» (1992), «Ահաբեկչության ժամանակը» [անգլ., Դալլաս (ԱՄՆ), 1997], «Պիտի յիշենք երբեւիցէ Արեւմտեան Հայաստանը» (1998) աշխատությունները, «Անկարելիպատմութիւն» (1956), «Օրերէնետք» (1958), «Անապահովութեանփողոցներ» (1964) պատմվածքների ժող-ները, «Անորոշութեամբ եւ մասամբնորին» (1959), «Ակամայ ծաղրածուն եւ այլ դերասաններ» (1968), «Յաւերժական ճանապարհ» (1975), «Յարդագողի ժառանգորդները» (1983) վեպերը, «Ապագայի հետքերով» (1982) վիպակը, «Տեսական քննադատական փորձեր» (1962, 1982) գրականագիտ., «Խօսք ճանապարհի» (1999) հրապարակախոս. նյութերի, «Գեղարվեստական երկեր» (հ. Ա–Բ, 2012) ժող-ները:

Ա.ՃԵՄՅԱՆ Հովհաննես(1840, Կ. Պոլիս–1895), երգիչ, խմբագիր: Սովորել է ծննդավայրի ֆրանս. դպրոցում: Հայ երաժշտ. թատրոնի հիմնադիրներից է, մեծ հաջողությամբ հանդես է եկել հատկապես Տ. Չուխաճյանիօպերետներում: Եվրոպ. մամուլում բազմաթիվ հոդվածներ է տպագրել թատրոնի մասին: Եղել է ֆրանս. թերթերի թատեր. քննադատ, խմբագրել է «Ֆար դյու Բոսֆոր» (ֆրանս.) պարբ–ը: Գրել է «Արիֆ» օպերետի լիբրետոն:

Ա.ՃԵՄՅԱՆ Շահե Արմենի (ավազանի անունը՝ Հովհաննես, 24.7.1926, Հալեպ–13.7.2005, Երևան, ամփոփված է Էջմիածնի Սբ Գայանե վանքի գերեզմանատանը), արքեպիսկոպոս (1975), հաս. գործիչ: Բանասիրության և փիլ–յան դ–ր (1951, Բրյուսել), ՀՀ ԳԱԱ պատվ. դ–ր (1996), Գերագույն հոգևոր խորհրդի անդամ (1975–85), ԵՀԽ–ում Մայր աթոռի ներկայացուցիչ (1975–86), ԵՊՀ աստվածաբանության ֆակ–ի հիմնադիր–դեկան (1995–ից): Ավարտել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը (1947), Բրյուսելի համալսարանը (1951): 1951–60–ին՝ կաթողիկոսարանի, 1960–94–ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության դիվանապետ, 1978–94–ին՝ *«Միտն»* ամսագրի խմբագիր: 1994–ին հաստատվել է ՀՀ–ում: Հրատարակության է պատրաստել «Գիրք Սաղմոսաց Դաւթի» (1982), «Հաւատոյ հանգանակ: Դաւանանք Հայ եկեղեցւոյ» (2001) երկերը:

Լույս են տեսել Ա–ի «Հոգեմատեան» (1952) քարոզների ժող–ը, «Յուցակ Աստուածաշունչ Մատեանի հայերէն ձեռագիրներուն» (1992), «Մեր հաւատքը» (2001), «Հայերէն Աստուածաշունչը» (2006) երկերը: Կազմել է «Քրիստոնէական» (1953) դասագիրքը:

ԵՊՀ աստվածաբանության ֆակ–ին է նվիրել իր գրադարանը, հիմնադրել իր անունը կրող մասնագիտացված գրադարան: Ա–ի նախաձեռնությամբ 2001–ին ստեղծվել է «Ա.Ճեմյան մատենաշարը», բացվել է աստվածաբանության ասպիրանտուրան:

Գրկ. Բարխուդարյան Վ., Վարդանյան Ռ., Կարախանյան Գ., Շահե արքեպիսկոպոս Ա.Ճեմյան: Կյանքը և գործը, Ե., 2001:


Ա.ՃԵՄՅԱՆ Տիրան Մարտիրոսի (21.7.1902, Հալեպ–1991, Բեյրութ), ծաղրանկարիչ, դերասան: Սովորել է Հալեպի գերմ. վարժարանում: Առաջին ծաղրանկարները տպագրվել են 1919–ին՝ Կ. Պոլսի «Կավոշ» երգիծաթերթում: 1925–ից ապրել է Բեյրութում, ժամանակի քաղ. և սոցիալ. կյանքն արտացոլող ծաղրանկարներ տպագրել հայկ., ֆրանս. («Լ'Օրիան», «Լը Սուար») և արաբ. մամուլում, նկարազարդել է Հ. Թումանյանի «Քաջ Նազար» (1986) հեքիաթը:

Ա.ՄԱՏՈՒՆԻ Սահակ Գևորգի [Բաղդասարյան Բաղդասար, 1856, գ. Օշական (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–1917, Վաղարշապատ], բառարանագիր: Էջմիածնի միաբանության անդամ, վարդապետ: «Արարատ» ամսագրում տպագրել է բանաստեղծություններ, հոդվածներ, թարգմանություններ:

Լույս են տեսել Ա–ի կազմած «Հին եւ նոր պարականոն ու անվաւեր շարականներ» (1911, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) ժող–ը, «Հայոց բառ ու բան» (1912, նույն տպ.) բառարանը, որը պարունակում է Արարատյան և այլ բարբառների 14 000 բառ ու դարձվածք, «Ի վերայ լերանց Խնկաբերաց» (1913, նույն տպ.) բանաստեղծությունների ժող–ը:

«Ա.ՄԱՐԱՍ», գրահրատարակչ. համալիր: Ստեղծվել է 1995–ին՝ ՀԽՍՀ մամուլի պետ. կոմիտեի № 2 տպարանի (հիմն.՝ 1972) արտադր. հիմքի վրա: Հիմնադիր–տնօրեն՝ Արկադի Ասրյան:


«Ա.» լույս է ընծայել հայ. և օտարալեզու ավելի քան 500 անուն գիրք, մասնագիտ. բառարաններ, հայկ., հատկապես Արցախի մշակույթն ու պատմությունը ներկայացնող գրակ., հրապարակախոս. նյութեր, գիրք–ալբոմներ՝ Մ. Բարխուդարյանի «Արցախ» (1996), Հ. Խաչատրյանի «Արքայապատում» (1998), «Հայոց թագուհիները» (1998), Ա. Սարգսյանի «XX դարի հայ ռազմական գիտնականներ, կոնստրուկտորներ, արդյունաբերողներ և փորձարկողներ» (ռուս., հ.



Շահե Ա.Ճեմյան



Շ. Ա.Ճեմյանի *«Հայերէն Աստուածաշունչը» (2006, Ե., ԵՊՀ հրտր., ձևավորող՝ Տ. Ապիկյան) գրքի կազմը*



Սահակ Ամատունու *«Ի վերայ լերանց Խնկաբերաց» (1913, Վաղ–պատ) գրքի փիփղոսաթերթը*


«Ամարաս»
հրատարակչության տպագրած գրքերից



Հ. Խաչատրյանի «Արքայապատում» (1998, Ե.) գրքի կազմը



Վ. Կրիվոպուսկովի «Խոռվահույզ Ղարաբաղ» (2008, Ե.) գրքի կազմը



«Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», *1925–26, Բոստոն (Ա. գիրք, 1925)*

1–3, 1998, 2005), Ս. Հասրաթյանի «Ղարաբաղյան պատերազմ» (2001), Վ. Բալայանի «Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը» (2002), Հ. Խաչատրյանի և Տ. Պետրոսյանցի «Հայկազունք» (2002), Ս. Հասրաթյանի «Գեներալ Իվանյան» (2004), Ա. Սարգսյանի «Հետախուզություն և հակահետախուզություն. Հայկական հետք» (2005), Շ. Մկրտչյանի և Շ. Դավթյանի «Շուշի. Ողբերգական ճակատագրի քաղաքը» (2008), Վ. Կրիվոպուսկովի «Խռովահույզ Ղարաբաղ» (2008), Ա. Նույկինի «Ղարաբաղն իմ ցավն է» (2009), Շ. Բոդլերի «Փարիզյան ձանձրախտ», Ֆ. Վիդըլիեի «Թուրքական գիշեր…», «Հայուհիներ» երկհատոր հանրագիտարանը (բոլորը՝ 2010), Ա. Վարդանյանի «Վանի վերջին նահանջը» (2011), Ե. Չարենցի, Զ. Բալայանի ստեղծագործություններից:

«Ա.» Արցախյան ազատագր. պատերազմի տարիներին տպագրել է ռազմ. գործողությունների գաղտնի քարտեզներ, ԼՂՀ Անկախության հռչակագիրը, նորանկախ պետության ընտրաթերթիկներ ևն:

ԼՂՀ ԳԽ «Մենք ենք, մեր սարերը» հուշամեդալ (1995):

«ԱՄԱՐԱՍ», հաս–քաղ. ամսաթերթ: ԼՂՀ Մարտունու շրջվարչակազմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1936–ից Մարտունիում (մինչև 1952–ը՝ «Բոլշևիկյան հաղթանակ», 1952–61–ին՝ «Դեպի կոմունիզմ», 1964–90–ին՝ «Աշխատանք», 1961–64–ին ընդհատվել է): Խմբագիրներ՝ Գրիգոր Հովհաննիսյան, Հ. Բաղալյան, Մ. Ղահրամանյան, Ե. Եսայան, Մ. Ադամյան, Մ. Մինասյան, Վ. Հայրապետյան, Ն. Հայրումյան, Է. Իշխանյան, Ն. Ավանեսյան, Ն. Բաղրյան: Լուսաբանել է շրջանի սոցիալ–տնտ., մշակութ., ժողովրդագր. խնդիրներ, 1988–94–ին՝ Ղարաբաղյան շարժումը, կամավոր. ջոկատների, ազատամարտիկների ծավալած ռազմ. գործողություններն ու հերոս. առօրյան: Զինադադարից հետո տպագրում է նաև տնտեսության վերականգնմանը, ազատագրված տարածքների բնակեցմանը, Ղարաբաղյան պատերազմին վերաբերող նյութեր:

«ԱՄԵՐԻԿԱ», քարտեզ: Տպագրվել է 1787–ին Վենետիկում: Փորագրիչ՝ Եղիա *Էնտագյան:* Անվանացույց՝ «Ամերիկա ըստ նոր Աշխարհագրական զննութեանց փորագրէալ ի Վէնէտիկ ի վանն սրբոյն ղազարու…»: Չափերը՝ 79 x 57 սմ, անվանացույցը քարտեզի վերևի ձախ անկյունում է՝ զարդանկարի մեջ: Ներքևի ձախ անկյունում հս. Ամերիկայի փոքրադիր քարտեզն է:

«ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ՏԱՐԵԳԻՐՔ», հանրագիտ. հրատ.: Լույս է տեսել 1925–26–ին Բոստոնում (2 գիրք): Կազմել է Հակոբ Խաչմանյանը: «Ա. հ. տ.» հայ հաս. կյանքի, մասնավորապես՝ ամերիկահայ գաղութի կարևոր իրադարձություններին, դեպքերին ու դեմքերին վերաբերող հոդվածների հետ զգալի տեղ է հատկացրել հայտարարություններին ու գովազդներին, ԱՄՆ գաղթած հայերին ծանոթացրել է երկրի վարք ու բարքին: «Խորհրդային Հայաստանը 1925–ին» ընդարձակ հոդվածում (2–րդ գիրք) ներկայացված են հայ ժողովրդի ազգ. վերածնության առաջին նվաճումները:

«Ա. հ. տ.»–ում տեղեկություններ կան նաև ամերիկահայ տարբեր հայրենակց. ընկերությունների ու միությունների գործունեության մասին, տպագրել է հոդվածներ՝ նվիրված նկարիչներ Հովսեփ Փուշմանին և Հովհաննես Այվազյանին, քանդակագործ Հ. Գյուրջյանին, ռումինացի ականավոր փիլիսոփա, հայազգի Վասիլ Գոնտային և նշանավոր մշակույթի այլ գործիչների:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆ (Armenian Library and Museum of America), հիմնադրվել է 1985–ին Բելմոնդում՝ դեռևս 1971–ից մի խումբ հայ մտավորականների ու գործարարների ջանքերով հավաքված հայկ. գրքերի և արվ–ի գործերի հիման վրա: Գրադարանն ունի շուրջ 12 հզ. անուն գիրք, իսկ թան–

գարանը՝ շուրջ 6 հզ. ցուցանմուշ, այդ թվում՝ ձեռագրեր, նոտաներ, քարտեզներ, լուսանկարներ: Հաստատության նպատակը հայկ. մշակութ. արժեքները հավաքելն ու պահպանելն է, հաջորդ սերունդներին դրանց փոխանցումն ապահովելը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՆ-ում հայկ. տպագրությունն սկզբնավորվել է 1850-ական թթ-ին: Առաջին տպագիր գիրքը՝ «Ապաշխարացոյց»-ը, լույս է տեսել 1857-ին Նյու Յորքում՝ Աստվածաշնչային ընկերության տպարանում, որտեղ տպագրվել են նաև «Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր կտակարանց» (1859), «Սաղմոս» (1864), «Աւետարան ըստ Մարկոսի» (1869, աշխարհաբար) գրքերը: Նյու Յորքում XIX դ-ի 2-րդ կեսին հայ. գրքեր են տպագրվել նաև «Ամերիկայի տետրակի ընկերության» («Հաւաքումն վկայութեանց Սբ Գրոց», 1860, Հ. Պնյանի «Քրիստիանոսին եւ Քրիստինէին ճամբորդութիւնը», 1861, «Առաջին դասագիրք մանկանց», 1869, ևն), Սմբատ *Գաբրիելյանի* (Ս. Գաբրիելյանի «Արուեստ ատենախօսութեան...», 1891), Հայկակ *Էկինյանի*, Էլիաս Խալավի, «Արարատյան», «Տիգրիս» և այլ տպարաններում (68 անուն գիրք), Բոստոնում 1900–20-ին՝ «Հայրենիք», «Երան», «Կիլիկիա», «Ձայն հայրենյաց» և այլ տպարաններում՝ շուրջ 180 անուն գիրք (Հ. Պողոսյանի «Ռամկավարութեան ոգին...», 1920, «Ազգի» տպ., ևն), Ֆրեզնոյում («Քնար ժողովրդական» ևն) 1899-ից՝ 17 անուն. Չիկագոյում 1917–19-ին՝ 14 անուն (Ք. Կարմիրյանի «Ազգայնական շարժումներ», 1919, «Պահակի» տպ., ևն), Փրովիդենսում 1913–16-ին՝ 11 անուն, ինչպես նաև Ուստրում (1911, 1913), Դետրոյտում (1918) ևն:

XX դ-ի 2-րդ քառորդից հրատարակչ. բեղուն գործունեությամբ աչքի են ընկել նաև Հս. Ամերիկայի արլ. թեմի ազգ. առաջնորդարանի, «Երիտասարդ Հայաստան», «Կոչնակ», «Հայկ» (բոլորը՝ Նյու Յորք), «Պայքար», «Պահակ», «Ատլանտյան», «Ազգ» (բոլորը՝ Բոստոն), Հս. Ամերիկայի արմ. թեմի ազգ. առաջնորդարանի, «Արաքս», «Ապրիլ», «Թերճանյան», «Երևան», «Նոր կյանք», «Մշակ», «Դրազարկ», «Անի», «Վան», «Նոր Հայաստան», «Դիջիթլ Գրաֆիքս», «Ֆաունթեյն», «Քալըր Տիփո», «Նավասարդ», «Նոր դար», «Ոսկետառ» (բոլորը՝ Լոս Անջելես), «Արոր», «Ասպարեզ» (Ֆրեզնո) և այլ հրատարակչատներ ու տպարաններ, որոնք լույս են ընծայում հայ. և այլ լեզուներով բազմաթիվ և բազմաբնույթ գրքեր, որոնք մեծապես նպաստում են հայոց պատմությունը, հայ մշակույթն ու արվ-ը, հայ գրակ-ը ամերիկահայությանը և օտար ընթեցողին ներկայացնելու գործում:

ԱՄՆ-ում առաջին հայ. պարբ-ը՝ «Արեգակը», լույս է տեսել 1888-ին Ջերսի Սիթիում, որին հաջորդել են «Սուրհանդակ» (1889–90), «Ազատութիւն» (1890–92), «Արարատ» (1891–92, 1902), «Հայք» (1891–1898), «Տիգրիս» (1897–98, բոլորը՝ Նյու Յորք), «Եփրատ» (1897, Ուստր) պարբ-ները: Կուս-ներից, մշակութ. և բարեգործ. խոշոր կազմակերպություններից բացի՝ պարբ-ներ հրատարակում են նաև եկեղեց. կառույցները, զանազան միություններ, առանձին անհատներ: Ցայսօր լույս է տեսել ավելի քան 300 անուն պարբ., մեծ մասը՝ Բոստոնում՝ «Ազգ», «Արմինիըն Միրըր-Սփեքթեյթըր», «Արմինիըն Ռիվյու», «Արմինիըն Ուիքլի», «Ծիրանի գոտի», «Հայ սիրտ», «Հայաստանի կոչնակ», «Հայրենիք», «Նոր Խարբերդ», «Պայքար» ևն, Նյու Յորքում՝ «Ալիս», «Արմինիըն Դայջեսթ» (1970–74), «Արմինիըն Րիփորթըր», «Երիտասարդ Հայաստան», «ԷյՋիԲիՅու Նյուզ», «Յուշարար-Միութիւն», «Նոր աշխարհ», «Նոր Արաբկիր», «Նոր գիր», «Նոր Կեսարիա», «Նոր Սերաստիա» ևն, Լոս Անջելեսում՝ «Ապրիլ», «Ասպարէզ», «Արմինիըն Օբզըրվըր», «Գրամարտիկ» (1954–60), «Լրաբեր», «Լոյս», «Համայնապատկեր», «Նոր Հայաստան», «Նոր սերունդ», «Փարոս», «Քաջ Նազար» ևն, Գլենդելում՝ «Այգ», «Աւետաբեր-Վերելք», «Արմինիըն Ամերիքըն Ալմանախ», «Ար-

Ամերիկայի հայկական տպագրություն



«Արուեստ ատենախօսութեան ի պէտս ազգային վարժարանաց» (1891, Նյու Յորք, Սմբատ Գաբրիելյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Ազգայնական շարժումներ» (1919, Չիկագո, «Պահակի» տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Ամերիկահայ գիրքի պատմութիւն» (2011, Լոս Անջելես) մատենագիտության կազմը



«Ամէնուն նոր տարեցոյցը», *1937–42, Բեյրութ (Ա տարի, 1937)*



«Ամէնուն տարեգիրքը», *1954–68, Բեյրութ (ԺԲ տարի, 1965)*



«Ամէնուն տարեցոյցը», *1907–23, Բեյրութ (Ի տարի, 1908)*

մինիըն Ինթերնեշնըլ Մեգըզին», «Հայ բոյժ», «Հայ կեանք», «Հայկական հեռացանկ», «Նաւասարդ», «Նոր կեանք», «Վարագ» ևն, Ֆրեզնոյում՝ «Արծուի Վասպուրական», «Կալիֆոռնիա Կուրիեր», «Հայ շարժում», «Մշակ», «Նոր օր» ևն, ինչպես նաև 1 կամ 2 պարբ–ներ՝ այլ քաղաքներում:

Գրկ. **Տխրունի Ա.,** *Ամերիկահայ գաղթականութիւն, ԿՊ, 1916:* **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1, Կահիրէ, 1941:* **Աբրահամյան Ա. Գ.,** *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Ե., 1967:* **Մարտիրոսեան Լ.,** *Ամերիկահայութիւնը երէկ եւ այսօր, Բ., 1973:* **Դալլաքյան Կ.,** *Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 1998:* **Ավագյան Ք.,** *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Ե., 2000: Ամերիկահայ գիրքի պատմութիւն: Մատենագիտութիւն 1858–2011 (կազմ.՝ Հ. Նալբանդյան), Լոս Անջելես, 2011:*

«ԱՄԷՆՈՒՆ ՆՈՐ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ», հաս., մշակութ. տարեգիրք: Ունեցել է ինչական ուղղվածություն: Լույս է տեսել 1937–42-ին Բեյրութում: Հաջորդել է «Լիբանանահայ պատկերազարդ օրացույց» (1936) տարեգրքին: Հրատարակիչ–խմբագիր՝ Եղիա ***Տոլպագյան***: Տպագրել է գրական, գիտ., պատմ., բանասիր., բժշկագիտ., առողջապահ. և այլ բովանդակության հոդվածներ, ուսումնասիրություններ, լիբանանահայ հաս. գործիչների կենսագրություններ, տեղեկություններ է հաղորդել Լիբանանի, Ռումինիայի, Իրաքի, Աստրախանի և այլ հայ գաղթավայրերի մասին: Լուսաբանել է Հայաստանի տնտ. և մշակութ. ձեռքբերումները: Աշխատակցել են Գ. Դավիթյանը, Նորայր վրդ. Պողարյանը, Մ. Նաթանյանը, Ա. Կիտուրը, Բ. Եղիայանը և ուր.:

«ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ», հաս–քաղ., մշակութ. տարեգիրք: Լույս է տեսել 1954–68-ին Բեյրութում: Խմբագիր՝ Կարո Գևորգյան: Ներկայացրել է հայ և օտարազգի արվեստագետների, անդրադարձել Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, հրապարակել է ուսումնասիրություններ Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Իրանի, Իրաքի, Կիպրոսի, Հնդկաստանի, Եվրոպայի, ԱՄՆ–ի հայկ. գաղթավայրերի մասին: Ունեցել է հաս., գրական, պատմ., ազգագր., կրոնագիտ., մարզ., երգիծ. և այլ բաժիններ:

«ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ», «**Թէոդիկ**», տարեգիրք: Լույս է տեսել 1907–23-ին (Ա–ԺԷ տարիներ) Կ. Պոլսում, 1925-ին (ԺԹ տարի)՝ Վիեննայում, 1926-ին (Ի տարի)՝ Վենետիկում, 1924 և 1927–29-ին (ԺԸ և ԻԱ–ԻԳ տարիներ)՝ Փարիզում: Հիմնադիր–խմբագիր՝ ***Թէոդիկ*** (կնոջ՝ Արշակուհու հետ): Տպագրել է հայագիտ., բանասիր., բանահյուս., պատմահրապարակախոս., արվեստագիտ., կենսագր. հոդվածներ, գրական–գեղ. ստեղծագործություններ, տոմար., ժամանցային և գիտ. նյութեր, հուշեր, նամակներ ևն: Տարեգրքում տպագրվել են Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ռ. Սևակի և ուր. գործեր, հայ և համաշխ. մշակույթին վերաբերող ուսումնասիրություններ: Ուշագրավ են Գ. Զոհրապի, Սիրանույշի, Մ. Մնակյանի հոդվածները թատրոնի և դերասանի կոչման մասին, Կոմիտասի մի շարք երաժշտագիտ. հոդվածներն ու դասախոսությունները, Գ. Ֆնտգլյանի «Շեքսպիրը եւ իր հնչեակները» (1914), ֆրանսիացի հայագետ Ֆ. Մակլերի «Հայ արուեստն ու ճարտարապետութիւնը» (1924) ուսումնասիրությունները ևն: Լուսաբանել է հայ ազգ–ազատագր. պայքարը, ներկայացրել Հայաստանի տնտեսության, գիտ–յան և մշակույթի ձեռքբերումները: Տպագրել է արժեքավոր թարգմանություններ անգլ., պարսկ., հնդկ., հուն., իտալ., չին., ամերիկյան, իսպ. և այլ գրակ–ներից:

«Ա. տ.»–ի հատորները մեծածավալ գրքեր են (296–786 էջ), պատկերազարդված են վավերագր. արժեք ունեցող լուսանկարներով: Կարևոր դեր է կատարել հայ հոգևոր արժեքները ժողովրդականացնելու, աշխարհասփյուռ հայ մտավորականության ներուժը հայրենիքի բարգավաճմանն ի սպաս դնելու համար:

«Ա. տ.» արտերկրում լույս տեսած հանրագիտարանային լավագույն հրատ–ներից է:

ԱՄԻՐԲԵԿՅԱՆ Վազգեն Միքայելի (24.3.1915, Ղարաքիլիսա–18.11.1984, Երևան), արձակագիր, լրագրող: Բանասիր. գիտ. թեկնածու (1948): 1934–40-ին աշխատել է «Ավանգարդ», 1944–49-ին՝ «Սովետական Հայաստան» պարբ-ներում՝ որպես բաժնի վարիչ, 1949–50-ին՝ «Բանվոր» (Լենինական) թերթի խմբագիր: 1960–76-ին եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի հայ պարբ. մամուլի պատմության բաժնի ավագ գիտաշխատող:

Լույս են տեսել Ա-ի «Անքուն գիշերներ» (1949), «Վաչե Չինարյան» (1958), «Կոմերիտականները» (1959) վիպակները, «Մենավոր ծառը» (1974) վեպը, «Կոլտնտեսային բազմատիրաժ թերթերը» (1961), «Սովետահայ տեղական մամուլը, 1921–1925 թթ.» (1964), «Հայաստանի մամուլը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, 1941–1945» (1971) աշխատությունները:

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ, որդի Եղիայի [մոտ 1420/1425, Ամասիա (Սեբաստիայի նահանգ)–8.12.1496, Բրուսա], բնագետ, բժիշկ, մատենագիր, բառարանագիր:

Ա. Ա-ու՝ միջնադարյան բժշկության գրեթե բոլոր ճյուղերին վերաբերող ձեռագիր աշխատությունները մինչև XX դ. պահվել են տարբեր մատենադարաններում:

Առաջինը տպագրվել է **«Անգիտաց անպէտ»** (նշանակում է՝ անգետների համար ոչ պիտանի, 1482) դեղագիտ. աշխատությունը՝ 1926-ին Վիեննայում (Մխիթարյան տպ., Կարապետ Բասմաջյանի աշխատասիրությամբ, 2-րդ լրց. հրտ.՝ 2005, ռուս.՝ 2012, Ե.): Գիրքը շարադրված է միջին հայ-ով: Ինքնագիրը չի պահպանվել: Մատենադարանում պահվում է երկի 20 գրչագիր՝ ընդօրինակված XVII–XIX դդ-ում:

Երկը դեղանյութերի բազմալեզու (հայ., հուն., պարսկ., թուրք., արաբ., լատ.) հանրագիտ. բառարան է, որտեղ նկարագրված են հին և միջնադարյան բժշկագիտությանը հայտնի գրեթե բոլոր բուս., կենդ. ու հանք. ծագման 3754 անուն դեղանյութեր, նրանց տարբեր զուգորդումների, բուժամիջոցների պատրաստման եղանակները և օգտագործման ձևերը, անդրադարձել նաև հանք. ջրերով բուժման, օրգանաթերապիայի ու տեղային անզգայացման հարցերի: Կարևոր նշանակություն է ունեցել միջնադարյան հայ բժշկության ու դեղագիտության զարգացման համար:

«Ուսումն բժշկութեան» (1459) աշխատության մեջ Ա. Ա. քննել է մարդու անատոմիայի, սաղմնաբանության, հիգիենայի, ախտաբանության և դեղագիտ-յան հարցեր: ***«Օգուտ բժշկութեան»*** (1469, հրտ.՝ 1940) աշխատությունը նախորդ երկի վերամշակումն է, որտեղ մանրամասն նկարագրված են հիվանդությունների պատճառագիտությունը, կլինիկ. պատկերը ընորոշող ախտանշանները, հիվանդի բուժումն ու խնամքը:

Ա. Ա-ու **«Ախրապատին»** (1459) աշխատությունը բաղկացած է 2 մասից՝ դեղագործություն և դեղագիտություն (25 գլուխ): 23-րդ գլուխը (հայտնի է «Աղիւսակերպ բառարան» անվանումով) հայ-հուն-ֆրանս-պարսկ. դեղաբան. բառարան է՝ դեղերի ֆիզքիմ. հատկությունների, դեղապատրաստուկների ձևերի, օրգանիզմի վրա նրանց ազդեցության վերաբերյալ:


«Բառք այբուբենական ի վերայ ցաւոցն» (կազմվել է 1468-ին, ձեռագիր տարբերակները պահվում են Մատենադարանում) աշխատության մեջ Ա. Ա. մեծ տեղ է հատկացրել բուսաբուժությանը, որպես դեղամիջոց առաջարկել է օգտագործել նաև կենդանիների օրգանները և հանք. ծագման դեղանյութեր:

Արաբ-ից թարգմանել է **«Գիրք ռամկական»** (1474) երկը: Ա. Ա-ու **«Վասն նշանաց հիւանդին, զկենաց եւ զմահուն»** աշխատության միակ օրինակը պահվում է Փարիզի Ազգ. մատենադարանում:


Գրկ. **Սեպետճյան Հ.**, *Դեղագործությունը Հայաստանում ըստ Ամիրդովլաթի, «Աշխատություններ ՀՍՍՌ ԳԱ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի», 1949, № 2:* **Վարդանյան Ս.**, *Բժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1982:* **Vardanian S.**, *Amirdovlat Amasiatsi, A Fifteenth Century Armenian Natural Historian and Physician, Delmar, N.Y., 1999.*



Ամիրդովլաթ Ամասիացի




«Անգիտաց անպէտ» գրքի փիփղոսաթերթը (1926, Վնն.)՝ վերևում, և կազմը (2005, Ե., «Լուսաբաց»)՝ ներքևում





Արսեն Ամիրյան

Ամստերդամի հայկական տպագրություն



Մաշտոցի (1667, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի) տիտղոսաթերթը



«Ոսկեայ դուռն դպրատան» (1699, տպագրիչ՝ Թովմաս Վանանդեցի) գրքի Ա տիտղոսաթերթը

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Համո Ազիզի [10.5.1906, գ. Մաշտակ (Վասպուրականի նահանգի Հայոց ձոր գավառ)–1986], գրականագետ, լրագրող: Բանասիր. գիտ. թեկնածու: Ավարտել է Ադրբ. հեռակա մանկավարժ. ինստ-ը (1945): 1933–34, 1948–54-ին աշխատել է Բաքվի *«Կոմունիստ»* (հայ.) թերթի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ, պատ. քարտուղար, խմբագրի տեղակալ, 1941-ից՝ խմբագիր: 1944–48-ին՝ Ադրբ. ԽՍՀ լուսավորության նախարարի տեղակալ, Ադրբեջանի կոմկուսի ԿԿ մամուլի բաժնի աշխատակից: 1954–68-ին՝ Ադրբեջանի ռադիոկոմիտեի հայկ. հաղորդումների խմբագրության գլխ. խմբագիր, 1964–67-ին՝ Ադրբեջանի գրողների միության հայկ. մասնաճյուղի նախագահ:

Լույս է տեսել Ա-ի «Սովետահայ գրականության զարգացումը Ադրբեջանում» (1949, Բաքու) աշխատությունը:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան:

ԱՄԻՐՅԱՆ Արսեն Մինասի (1881, Բաքու–20.9.1918, Թուրքմենստանի Ախչա-Կումայի ավազուտներ), Բաքվի 26 կոմիսարներից, լրագրող: ՌՍԴԲԿ անդամ՝ 1910-ից: Ավարտել է Բաքվի գիմնազիան (1898): 1899-ին ընդունվել է Կիևի համալսարան, սովորել է Մոսկվայի համալսարանում. 1902-ին հեռացվել է հեղ. գործունեության համար: 1902–06-ին հարել է ՀՅԴ կուս-յանը: Հեռանալով ՀՅԴ-ից՝ 1906–07-ին Ա. Միավյան կեղծանունով հրատարակել է կուս-յան քաղաքականությունը քննադատող գրքույկներ՝ «Ժամանակ է սթափուելու» (1906, Վնն., Հակոբյան եղբ. տպ.), «Դաշնակցութեան կրիզիսը» (1907, նույն տպ.), գրել է նաև «Թիւրքիայի յեղափոխութիւնը» (1909, ԿՊ, ա. տպ.) աշխատությունը: Եղել է Բաքվի կոմունայի (1918) ղեկավարներից: 1917–18-ին խմբագրել է «Բակինսկի ռաբոչի» (ռուս.) թերթը:

Ա-ի անունով Երևանում կոչվել է փողոց:

Գրկ. **Արզումանյան Մ.,** *Արսեն Ամիրյան, Ե., 1961:*

ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Ամստերդամում առաջին հայկ. տպարանը 1658-ին հիմնադրել է Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու հանձնարարությամբ այնտեղ գործուղված Մայր աթոռի նոտար ***Մատթեոս Ծարեցին:*** 1660-ին նա սկսել է տպագրել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» չափածո երկը, սակայն ֆինանս. դժվարությունների պատճառով ավարտին չի հասցրել: Մատթեոս Ծարեցու մահից հետո (1661) գիրքը լույս է ընծայել ***Ավետիս Ղլիճենցը***, իսկ տպարանը, համաձայն Ծարեցու հետ նախապայմանավորվածության, անվանել է Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարան՝ այն կտակելով Սբ Էջմիածնի և Ուշիի Սբ Սարգիս զորավար վանքերին: 1661-ից տպարանը ղեկավարել է Ոսկան Երևանցու աշակերտ ***Կարապետ Անդրիանացին***:

1664-ից տպարանի տնօրինությունն ստանձնել է ***Ոսկան Երևանցին***, որի օրոք տպագր. գործը բավական կատարելագործվել է, իսկ տպարանը նրա պատվին կոչվել է նաև Ոսկանյան. գործել է 3 քաղաքներում՝ Ամստերդամում (մինչև 1669-ը), Լիվոռնոյում (մինչև 1672-ը), Մարսելում (մինչև 1686-ը), հրատարակել է 42 անուն հայ. գրքեր: Ամստերդամում լույս է ընծայվել 22 անուն գիրք՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1660–61) պոեմը, Սաղմոսարաններ, Շարակնոց (1664), Աստուածաշունչ (1666), Մաշտոց, Նոր կտակարան, Այբբենարան, Ոսկան Երևանցու «Քերականութեան գիրք...»-ը (1666), Մովսես Խորենացուն վերագրված «Աշխարհացոյցը», Վարդան Այգեկցու առակները՝ 1 գրքով՝ «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք» (1668), Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» (1669) երկը, մեծ Ժամագրքեր, Տոնացույցներ: Ոսկան Երևանցին հայ. հրատ-ների տպաքանակը մի քանի հարյուրից հասցրել է մի քանի հազարի:

1685-ին Ոսկան Երևանցու աշակերտներից ***Մատթեոս Վանանդեցին*** Ամստերդամում հիմնադրել է հայկ. 2-րդ տպարանը, որի տնօրինությունը 1694-ին ստանձնել է ***Թոմաս Վանանդեցին***, իսկ նրա մահից (1703) հետո՝ ***Ղուկաս Վանանդեցին***: Վանանդեցիների գրահրատարակչ. տունը (տպարանը) գործել է 32 տարի: Այստեղ առաջին անգամ տպագրվել է առաջին հայ. քարտեզը՝ ***«Համապարած աշխարհացոյցը»*** (1695), Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոցը» (1695), Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիների աշխատությունները («Ոսկեայ դուռն դպրատան», 1699, «Համբոյր սրբութեան», 1704, ևն), Արիստոտելի «Յաղագս առաքինութեանց»-ը, Շարակնոց և այլ գրքեր: Ամստերդամում է տպագրվել նաև գերմանացի լեզվաբան Յովակիմ Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» (1711) աշխատությունը:

Ամստերդամում Վանանդեցիների հետ բարեկամական հարաբերություններ են ունեցել գերմանացի փիլիսոփա, մաթեմատիկոս Գոտֆրիդ Լայբնիցը, Յ. Շրյոդերը, նրանց այցելել է Ռուսաստանի Պետրոս I կայսրը: Վանանդեցիների գրահրատարակչ. տունը փակվել է 1717-ին: 1717–20-ին տպարանը պարտքերի դիմաց գրավադրվել է, որոնց մի մասը վճարելով՝ ***Միխթար Սեբաստացին*** պիտանի տառերը տարել է Վենետիկ, իսկ մնացած տառերն ու տառամայրերը 1819-ին Գևորգ ***Արծրունին*** գնել և ընծայել է նորաբաց Ներսիսյան դպրոցի տպարանին:

Գրկ. **Սարուխան Ա.**, *Հոլլանդան եւ հայերը ԺԶ-ԺԹ դարերում, Վնն., 1926:* **Իշխանյան Ռ.**, *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 2012:* **Դևրիկյան Վ.**, *Հայ գիրքը աշխարհի հաչվառումներում, մաս Բ, Ե., 2014:*

«ԱՄՍՕՐԵԱՅ», գրական-գեղ. ամսաթերթ: Լույս է տեսել 1958-ի հունվ–հոկտ-ին Փարիզում: Խմբագրակազմ՝ Հրաչ Զարդարյան, Գրիգոր Ճիզմեճյան և Զարեհ Որբունի (Էոքսուզյան): Տպագրել է գեղ., քննադատ-բանասիր. նյութեր, գրախոսականներ: «Ա.»-ին աշխատակցել են սփյուռքահայ գրողներ ու մտավորականներ Բ. Թոփալյանը, Ե. Այվազյանը, Գ. Ֆեներճյանը, Մ. Պարսամյանը և ուր.:

ԱՄԵՐԻԿՅԱՆ Միհրդատ (Ամերիկյան Հովհաննես) Հովհաննեսի [1(13).5.1843, գ. Ծինուբան (այժմ՝ Վրաստանի Ախալցխայի շրջանում)–5(17).2.1879, Թիֆլիս], դերասան, գրող: Արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներից: 1853–58-ին սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1860-ին Սարգիս Վանանդեցու «Միհրդատ» ողբերգության գլխ. դերը հաջողությամբ կատարելու համար նրան անվանել են Միհրդատ:

Եղել է «Մշակ»-ի աշխատակիցներից. 1872–73-ին ղեկավարել է թերթի երգիծանքի բաժինը: «Զաքուճ» ստորագրությամբ տպագրել է ֆելիետոնների շարք («Ֆելիետոններ», հրտ.՝ 2008): Հեղինակ է նաև բանաստեղծությունների, թարգմանությունների:

Գրկ. **Զմշկեան Գ.**, *Միհրդատ Ամրիկեանց, «Փորձ», 1879, № 3, էջ 154–161:* **Պոռշեան Պ.**, *Միհրդատ Ամրիկեանց, «Թատրոն», 1895, № 3:* **Հարությունյան Ս.**, *Միհրդատ Ամերիկյան: Կյանքն ու բեմական գործունեությունը, Ե., 1959:*

«ԱՄՐՈՑ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1997-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Վլադիմիր Խաչատրյան:

Տպագրում է երաժշտ. գիտահանրամատչելի գրակ., երաժշտ. հաստատությունների համար նախատեսված նոտաներ ու դասագրքեր, մանկ. երգարաններ և այլ գրքեր:

Լույս է ընծայել «Խնկի ծառ» երգարանը, Հ. Ավետիսյանի «Ռուսական կայսրության հայ գեներալները» (ռուս.), Ա. Քոչարյանի «Երաժշտական գործիքները Հայաստանում», Ս. Ամատունու «Երաժշտական գրականություն» (բոլորը՝ 2008), Ռ. Ամիրխանյանի «Դաշնամուրային պիեսները» (2009), «Հայ ավանդական երաժշտություն» (պր. 1–9, 2008–12) մատենաշարը, «Սուրեն Սաֆարյան» (2010), «Բենիկ Պետրոսյան» (2011) ալբոմները և այլ գրքեր:

«Գրքարվեստ» հանրապետ. մրցույթի 1-ին և 2-րդ կարգի մրց-ներ (2008):

Ամստերդամի հայկական տպագրություն



«Պարզապտօմար Ազարիայի» (1714, տպագրիչ՝ Ղուկաս Վանանդեցի) գրքի տիտղոսաթերթը

«Ամրոց» *հրատարակչության տպագրած գրքերից*




«Խնկի ծառ» (2008, Ե.) երգարանի կազմը



«Բենիկ Պետրոսյան» (2011, Ե.) ալբոմի կազմը


Այբբենարան


ALPHABETVM
ARMENVM
Iussu S. D. N. Gregorij XV. & Sacræ Congregationis de Propaganda Fide impressum.
ROMÆ, Ex Typographia Sac. Congregationis de Propaganda Fide. MDCLXXIII.
SVPERIORVM PERMISSV.

«Այբուբեն հայոց»-ի (1673, Հռոմ) փիփղոսաթերթը



«Գիրք այբուբենաց»-ի (1712, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) փիփղոսաթերթը


ՏԵՏՐԱԿ
ԱՅԲՐԲԵՆԱԿԱՆ
ՏՊԱՒՈՐԵՑԱՒ ՅԱՄԻՍ ՌՈՍԿԱՆ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅՈՑ
ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՀԱՅՈՑ.
ՀՌՈՄ. ՌՈՍԿԱՆ
ՏՊԱՐԱՆԱՊԵՏ
ՀԱՅՈՑ.
ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՏՊԱՐԱՆԱՊԵՏ
ՀԱՅՈՑ.
ՀՌՈՄ. ՌՈՍԿԱՆ

1784-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում («Այբուբենք հայոց»)՝ հայ. և լատ.: Տիտղթ-ին՝ «Alphabetum armenum cum oratione dominicall…» (32 էջ, 8^0, 12,8 x 7,9 սմ):

1786-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ աշխարհաբար հատված-ներով: Տիտղթ-ին՝ «Նոր այբբենարան հանդերձ մեկնութեամբ տաճկական բառից հայկական աշխարհաբառ լեզուաւ….» (71 էջ, 8^0):

1788-ին նույն տպարանում՝ հայ. և գերմ.: Ա տիտղթ-ին՝ «Հայնակ եւ նէմէց-նակ այբուբենի թուղթ…», Բ տիտղթ-ին՝«ABC Armenisch und Deutsch oder…» (48 էջ, 8^0, 13 x 8 սմ):

1788-ին նույն տպարանում՝ հայ. և գերմ.: Տիտղթ-ին՝ «Հայնակ եւ նէմէց-նակ այբուբենի թուղթ…» (56 էջ, 8^0):

1797-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Այբբենարան համառօտ: Արա-բեալ յուսումն նորահաս տղայոց…» (55 էջ, 8^0):

1797-ին նույն տպարանում՝ աշխարհաբար և թուրք.: Տիտղթ-ին՝ «Նոր այբբենարան հանդերձ մեկնութեամբ տաճկական բառից՝ հայկական աշ-խարհաբառ լեզուաւ….», 3-րդ հրատ. (104 էջ, 8^0, 11 x 7,5 սմ):

Ա-ներ են լույս ընծայել նաև ***Պաղտրասար Դպիրն*** (1723) ու ***Մխիթար Սեբաստացին*** (1725, 1750):

Անթվակիր հնատիպ Ա-ներ են տպագրվել՝

Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-երին՝ «Տետրակ այբբենական, որ է դուռն ընթերցական ուսման…»: Հայտնի է 2 հրատ. (32 էջ, 8^0): Գրքերը հավանաբար տպագրվել են 1778–96-ին, քանի որ Հովհաննես և Պողոս տպագրիչները համատեղ աշխատել են այդ տարիներին:

Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Տետրակ այբբենական, որ է դուռն ընթերցական ուսման….» (32 էջ), հավանաբար տպագրվել է 1782–92-ին Կ. Պոլսում:

Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Այբուբենական տետրակ, որ է դուռն ընթերցման ուսման…» (64 էջ, 8^0):

XVIII դ-ի 2-րդ կեսին Տրիեստում (՞) (108 էջ, 11,5 x 6 սմ):

Ա-ներ են տպագրվել նաև Սադրասում (1809), Կալկաթայում (1811), Վիեն-նայում՝ «Այբբենարան հայնակ եւ մաճառնակ» (1834, Մխիթարյան տպ.). Նախատեսված էր Տրանսիլվանիայի հայերի համար:

Աշխարհաբարի ուսուցման և ժողովրդավար. մանկավարժ. մե-թողների բարելավման համար նոր ժամանակներում տպագրվել են Ա-ներ, որոնցից առանձնանում են «Գիրք նախակրթութեան հայկա-զեան լեզուի» (1838, ՍՊը, Ալեքսանդր Խուդաբաշյանի տպ.), «Այբբե-նարան հայոց ի պէտս նորուսումն մանկանց» (1838, Թ., Դավիթ և Հակոբ Արզանյան տպ.), Խ. Աբովյանի «Նախաշաւիղ կրթութեան…» (1844, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), Ն. Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու: Այբբենարան…» (1871, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ., վերահրտ.՝ 1899, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), Ղազարոս Աղայանի «Ուսումն մայրենի լեզուի» (1875, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ.), որն ունեցել է 33 հրատ. և շուրջ 40 տարի (1875–1916) գործածվել է հայկ. դպրոցներում, Մ. Սամուրյանի «Գիտելիք ու պարտիք տղայոց» (1879, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.) և «Առաջին ընթերցարան» (1881, նույն տպ.), Ա. Բահաթրյանի «Այբբենարան առաջին տարուայ», «Առաջին ընթերցարան» (երկուսն էլ՝ 1882, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), Ս. Մանդինյանի «Նոր այբբենարան» (1909, Թ., «Կուլտուրա» տպ.), Կ. Պոպովի «Նախադուռն վարժութեան…» (1838, Մ., Լազարյան ճեմարանի տպ.), Մ. Թաղիադյանի «Մեսրովբեան այբբենարան…» (1840, Կալկաթա, Եպիսկոպոս. ճեմարանի տպ.), «Առաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխաների համար» (1853, Մ., Վլադիմիր Գո-թիեի տպ.), Մ. Բժշկյանի «Վարժութիւն մանկանց» (1856, Վնտ., Սբ Ղազարի տպ.), Ա. Բագրատունու «Նոր այբբենարան եւ հեգերէն…» (1856, նույն տպ.), Ա. Գալֆայանի «Պատկերազարդ այբբենարան վասն մանկանց» (1860, Փ., Ա. Պուրտիեի տպ.), Ճ. Արամյանի «Դա-սարան հայկազն մանկանց» (1860, Փ., Ճ. Արամյանի տպ.), «Այբբե-նարան նոր եւ դիւրիմաց ոճով» (1865, Թեոդոսիա, Խալիպյան տպ.), «Այբբենարան համառօտ» (1866, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Այբբե-նարան հայերէն լեզուի» (1866, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ.), Գ. Սրվանձ-

Այբբենարան



«Նոր այբբենարան»-ի (1797, Տրիեստ, Մխիթարյան տպ.) փիփղոսաթերթը



Ղ. Աղայանի «Արեւիկ. պատկերաւոր այբբենարան»-ի (1908, Թիֆլիս) կազմը



Վ. Սարգսյանի **«Այբբենարան»**-ի *(2010, Ե., «Մանմար», ձևավորող՝ Խ. Հակոբյան) կազմը*

տյանի «Նոր ընթերցարան...» (1875, ԿՊ, Եղիա Տատեսյանի տպ.), Ա. Գուլամիրյանի «Պարտէզ մանկական փոքրիկ երեխաների համար» (1895, Ե., Ա. Գուլամիրյանի տպ.), Հ. Տեր-Միրաքյանի «Այբբենարան առանց ուսուցչի կարդալ սովորելու համար» (1897, Նոր Նախիջևան, Աբրահամ Զամինյանի և Վ. Քիրլյանի տպ.), Հ. Պոնճոքյանի «Նոր ընթերցարան» (1899, Վառնա, Գնչո Նիկոլովի տպ.):

1900–20-ին հրատարակվել են նոր Ա-ներ, որոնցից հիշարժան են՝ արևմտահայ իրականության մեջ՝ Մխիթար Պոնտացու «Քերական-ընթերցարան պատկերազարդ նախակրթարան» (1900, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.), Սանատրուկ Գումբասյանի «Նոր քերական կամ Եղանակ արտասանութեան հայերէն այբուբենին եւ սկզբունք ընթերցանութեան» (1900, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), Հմայակ քհն. Էքսերճյանի «Տարերք աշխարհիկ լեզուի, պատկերազարդ այբբենարան, հեգարան, ընթերցարան» (1903, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ.), Հ. Նալբանդյանի «Բնական սանդուխ: Պատկերազարդ» (1905, ԿՊ, նույն տպ.), Ս. Դավթյանի «Առաջին վարժութիւն մանուկներու» (1907, ԿՊ, «Ճիհան» տպ.), Ն. Մեզպուրյանի «Առաջնորդ հայ ընթերցանութեան կամ Պատկերազարդ նոր քերական ի պէտս մանկապարտէզի տղոց» (1909, ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.), Գ. Մալաթյանի «Մայրենի լեզու: Քերական-ընթերցարան, գրել-կարդալու» (1910, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), Ա. Անտոնյանի «Դայլայլիկ: Այբբենարան» (1912, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.):

Արևելահայ իրականության մեջ՝ Հ. Առնաուտյանի «Այբբենարան կամ Առաջին գիրքը մանկանց» (1902, Թ., Թավարթքիլաձեի տպ.), Հ. Արաբաջյանի «Մայրենի լեզու» (1903, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), Գրիգոր Վանցյանի «Հայ-լեզու: Պատկերազարդ այբբենարան» (1907, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), Ա. Ադամյանի «Գրել եւ կարդալ մայրենի լեզուով: Պատկերազարդ այբբենարաններ» (1907, Ալեք-պոլ, Գ. Սանոյանի տպ.), Հ. Հայկազունու «Այբբենարան եւ ընթերցարան» (1909, Թ., «Նադեժդա» տպ.), Թ. Խզմալյանի և Գ. Միքայելյանի «Կայծեր» (1914, Ալեք-պոլ, Գ. Սանոյանի տպ.), Գուրգեն Էդիլյանի «Փայլուն արեւ» (1918, Թ., «Աշխատավոր» տպ.):

Արևելահայ. դասագրքերից լավագույնն էին Ս. Լիսիցյանի, Հ. Թումանյանի և Լ. Շանթի «Լուսաբեր» (1907, Թ., Ն. Աղամյանի տպ.), Ա. Չիլինկիրյանի, Տ. Ռաշմաճյանի և Ա. Իսահակյանի «Դասընկեր» (1909, նույն տպ.) Ա-ները:

Խորհրդ. տարիներին տպագրվել են Զ. Ահեմյանի «Խաղ և աշխատանք» (1927, ունեցել է 5 հրատ.), Լ. Խուդոյանի և Հ. Հայրապետյանի (1935), Ա. Ճուղուրյանի (1938), Հ. Հայրապետյանի և Ա. Մուշեղյանի (1938, Ա-ների մրցանակաբաշխության մրց.), Հ. Հայրապետյանի և Ա. Ճուղուրյանի (1947, ունեցել է 20 հրատ.) Ա-ները: 1965–80-ական թթ-ին գործածության մեջ էին Ա. Սարգսյանի և Ն. Մազմանյանի, Աշոտ Տեր-Գրիգորյանի և Ա. Վարդանյանի Ա-ները, Ա. Վարդանյանի «Այբբենարանը» (1974, ունեցել է 7 հրատ., հետագայում անվանվել է «Արևիկ»):

1990-ականներից տպագրվել են Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի (1993–94, հրատարակվում է ցայսօր), Վ. Սարգսյանի (1998, վերահրտ.՝ 2006) Ա-ները:

Սփյուռքի հայկ. դպրոցների համար տպագրվել են Ա. Տեր-Գրիգորյանի, Ռ. Տիրարյանի, Ա. Փըստոգյանի, Ա. Տատրյանի, Ա. Չալըքյանի, Բ. Թևյանի, Հ. Համբարյանի, Հ. Կյուրեղյանի Ա-ները:

Այբուբեն



«Հայոց այբուբեն»-ը (1976, ոսկեձոյլ՝ թանկարժեք քարերով, հեղինակներ՝ Բ. Արզումանյան, Ժ. Չուլոյան, Էջմիածին, Մայր աթոռի վեհարան)

ԱՅԲՈՒԲԵՆ, **այբբեն**, յուրաքանչյուր լեզվի համար գործածվող տառերի ամբողջությունը՝ ավանդաբար պահպանվող որոշակի դասավորությամբ: Այս հասկացության համար շատ ժողովուրդներ գործածում են alphabet (<հուն. alphabet) անվանումը, որը կազմված է հին հուն. այբուբենի առաջին տառերի՝ α-ի (αλφα– ալֆա) և β-ի (βητα–բետա) անուններից: Նույն սկզբունքով տարբեր ժողովուրդ-

ներ կազմել են իրենց Ա-ների անվանումներ. հայ-ը՝ ա-ի (այբ) և բ-ի (բեն) անուններից:

Ա-ի յուրաքանչյուր տառ սովորաբար մեկ հնչյունի (հնչույթի) նշան է, թեև որոշ դեպքերում մեկ հնչյունը (հնչույթը) նշվում է մեկից ավելի տառերով, կամ, ընդհակառակը, մեկ տառը մեկից ավելի հնչյուններ-ի նշան է լինում: Հս. սեմ. (ըստ շատ մասնագետների՝ գյունիկյան հայտնի ամենահին Ա., մ.թ.ա. II հազարամյակի 2-րդ կեսից է) գրերի համակարգը, որն ունեցել է 22 տառ (ձայնավորներ չուներ), հիմք է դարձել մի շարք լեզուների, այդ թվում՝ հուն. գրության: Հին հուն. Ա. ունեցել է 24 (այստեղ արդեն ձայնավորների համար կային տառեր), լատ-ը՝ 23 (միջնադարից հետո՝ 24) տառ:


Մեսրոպյան Ա. ունեցել է 36 տառ, տարբեր ժամանակներում նեբառավել են **օ, ֆ, ու, և** տառերը: 1922-ի ուղղագր. բարեփոխումների ժամանակ արևելահայ-ի այբուբենից հանվել է **ւ** տառը: Այժմ հայ. Ա-ում կա 39 տառ:

Սովորաբար նոր Ա. ստեղծվում է Ա-ներից որևէ մեկի նմանությամբ, և ըստ այդմ էլ Ա-ներին տրվում են լատինագիր, հունագիր, սեմագիր և այլ անվանումներ: Հայոց և աղվան. գրերը հայագիր են: Ըստ Կորյունի՝ վրաց-ի և աղվան-ի Ա-ները հայ-ի Ա-ի հիման վրա ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Հին Ա-ները ծառայել են նաև թվեր արտահայտելու համար: Մեսրոպյան Ա-ի 36 տառերը 4 շարքով ներկայացրել են միավորները (Ա–Թ՝ 1–9), տասնավորները (Ժ–Ղ՝ 10–90), հարյուրավորները (Ճ–Ք՝ 100–900), հազարավորները (Ռ–Ֆ՝ 1000–9000):


Հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի առթիվ հայկ. այբուբենը՝ պատկերված մագաղաթանման թղթի վրա, 2013-ի փետր-ին ուղարկվել է տիեզերք [տիեզերագնացներ՝ Յուրի Մալչենկո (ՌԴ), Սանիտա Ուիլիամս (ԱՄՆ), Ակիհիկո Հոշիդա (Ճապոնիա)]:

Գրկ. **Աճառյան Հ.,** *Հայոց գրերը, Ե., 1968:*



«Այբուբենք հայոց»-ում (1784, Հռոմ) զետեղված հայկ. այբուբենը

«Ա.ՅԳ», շաբաթաթերթ, ապա՝ հաս-քաղ. եռօրյա, վերջում՝ երկօրյա թերթ: ՀՅԴ պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1914–22-ին Թավրիզում: Խմբագիրներ՝ Մկրտում Սահակյան, Գասպար Հակոբյան: Լուսաբանել է կուս-յան գործունեությունը, դատապարտել երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը, անդրադարձել է ժամանակի կարևոր իրադարձություններին, համայնքային խնդիրներին:



«Այգ», 1937–98, Նիկոզիա

«Ա.ՅԳ», պարբերագիրք: Մելգոնյան կրթ. հաստատության հրատ.: Լույս է տեսել Նիկոզիայում (Կիպրոս) 1937–79 և 1990–98-ին (ընդհատումներով): Խմբագր. խորհրդում եղել են միայն հաստատության սաներ, գործել է գրակ-յան ուսուցչի հսկողությամբ: Տպագրել է սովորողների ստեղծագործություններ, գրականագիտ., գիտ. և հասարակագիտ. ուսումնասիրություններ, գիտ-յան, արվ-ի ու գրակ-յան նորություններ, թարգմանություններ՝ անգլ-ից, ֆրանս-ից, հուն-ից:

«Ա.ՅԳ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսել 1953–75-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Երվանդ ***Կոպեյան***, Եղիա Նաճարյան, Մինաս ***Թոյոյան***, Նազարեթ Պերթիզյան, Շահանդուխտ: Ներկայացրել է Լիբանանի, Հայաստանի, ինչպես նաև միջազգ. քաղ. անցուդարձերը, տպագրել է տնտ., մշակութ., մարզ. լուրեր, գրական հոդվածներ, գեղ. ստեղծագործություններ: Աշխատակցել են Խ. Գաբիկյանը, Սուշեղ Իշխանը, Տ. Աճեմյանը, Ն. Պեշիկթաշլյանը, Հ. Մնձուրին, Մ. Կյուրճյանը, Ս. Շահպազը, Մ. Սևակը, Զ. Մարտիկյանը և ուր.: Փակվել է Լիբանանում քաղաքաց. պատերազմի սկսվելու պատճառով:




«Այգ», 1953–75, Բեյրութ

«Ա.ՅԳ», եռամսյա պարբ.: Լույս է տեսնում 1994-ից Գլենդելում (ԱՄՆ): Հրատարակիչ՝ Լոս Անջելեսի Մխիթարյան կրթ. հիմնարկ: Տպագրում է հայագիտ. նյութեր, հայ մշակութ. կյանքին վերաբերող հոդվածներ:



Աբրահամ Այվազյանի
«Շար հայ կենսագրութեանց» (հ. 2, 1893, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը



Աղասի Այվազյան



Ա. Այվազյանի
«Պիեսներ» (2009, Ե., «Էդիթ Պրինտ», ձևավորող՝ Գ. Վերդյան) գրքի կազմը

ԱՅՎԱԶ ՀԱԿՈԲ (Այվազյան Հակոբ Կարապետի, 2.4.1911, Կ. Պոլիս–29.9.2006, Ստամբուլ), խմբագիր, թատեր. գործիչ: Մերձ. Արևելքի եզակի թատեր. հանդեսի՝ *«Քոլխա»*-ի (1946–96) հիմնադիրը և միակ խմբագիրը: Հանդեսում լուսաբանել է հայ թատերարվ-ը Սփյուռքում և Հայրենիքում: Հեղինակ է նաև պիեսների, երգիծ. պատմվածքների, հուշերի, թարգմանությունների, որոնք ամփոփվել են «Լուցիքա տուտու» (2001) ժող-ում: Աշխատակցել է «Ակօս» թերթին: «Վերհուշումներ» և «Բարեկամներս» խորագրերով տպագրել է հոդվածներ և հուշեր:

ՀԹԳՄ «Արտավազդ» մրց. (2004), Թուրքիայի գրողների միության «Մամուլի ծառայության համար» մեդալ:

ԱՅՎԱԶՅԱՆ Աբրահամ (1846, Կ. Պոլիս–1909, Կ. Պոլիս), բանաստեր, բանաստեղծ: Գևորգ *Այվազյանի* եղբայրը: Սովորել է ծննդավայրի Պեզճյան մայր վարժարանում: 1869-ին Կ. Պոլսում եղբորհետ հիմնադրել է *«Մամուլ»* երգիծաթերթը: Այդ և այլ թերթերում տպագրել է հոդվածներ, ակնարկներ, «Բիւզանդիոն» թերթում՝ մի շարք նշանավոր հայերի կենսագրություններ:

Լույս են տեսել Ա-ի բանաստեղծությունների մի քանի գրքույկներ՝ «Արտասուք հայ մանկան», «Ի մահ Մամիկոնեան Վարդանայ հայ դիւցազնին» (1862, ԿՊ), «Առաջին մրմունջք» (1864, ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), «Անակրեոնեան նուագք» (1865, նույն տպ.) ևն: Առավել ուշագրավ է «Շար հայ կենսագրութեանց» (հ. 1–3, 1893, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.) աշխատությունը: Հակառակ արդուլհամիդյան գրաքնն. խստություններին՝ այնտեղ, ի թիվս XVIII–XIX դդ-ի մշակույթի մի շարք գործիչների, զետեղել է նաև Խ. Աբովյանի ու Մ. Նալբանդյանի կենսագրությունները, գրաքնն. նկատառումներով Աբովյանին ներկայացրել է որպես Քանաքեռցի Խաչատուր, Նալբանդյանին՝ Միքայել Պայտարյան:

ԱՅՎԱԶՅԱՆ Աղասի Սիմոնի (7.9.1925, Ախալցխա–21.11.2007, Երևան), գրող, սցենարիստ, կինոռեժիսոր: Արվ. վաստ. գործիչ (1982): Սովորել է Թբիլիսիի գեղ. ակադ-ում (1942), Թբիլիսիի համալսարանում, ԵԳԹԻ-ում և ՖԿՀՊԻ-ում (1945–48): 1965–73-ին՝ *«Գրական թերթի»* բաժնի վարիչ, 1973–81-ին՝ *«Էկրան»* ամսագրի, 1992–97-ին՝ *«Հայություն»* թերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Անձրևը» (1959) նովելների, «Ճանապարհորդություն իր շուրջը» (1963) հումորեսկների, «Ընտանիքի հայրը» (1968), «Փառահամար» (1973), «Սինյոր Սարտիրոսի արկածները» (1977), «Եռանկյունին» (1983), «Դիպլիպիտո» (1985), «Օբյեկտիվ-18» (1986), «Ամերիկյան աջաբսանդալ» (1997), «Թատրոն» (1999), «Ալիբի» (2000), «Մանչերը» (2001), «Պոեմ վասն շենքի և շինության» (2002), «Տոիփ» (2003), «Եղած չեղածը մի կյանք» (2005), «Մեղքով հղացածը» (2006), «Խորքի խորությունը» (2010) պիեսների, վիպակների, պատմվածքների ժող-ները, վեպերը: Ա-ի սցենարներով ստեղծվել են կինոնկարներ («Խաթաբալա», համահեղ., 1971, «Հայրիկ», 1972, «Մեզանից երեքը», 1989, «Ձայն բարբառոյ», 1991):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1975)՝ «Եռանկյունին» (համանուն վիպակ՝ 1965) կինոնկարի (1967) սցենարի համար:

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1987: Ընտիր երկեր, Ե., 2001: Պիեսներ, Ե., 2009:

ԱՅՎԱԶՅԱՆ Արարատ [1923, գ. Ներքին Զեյվա (այժմ՝ գ. Առատաշեն՝ ՀՀ Արմավիրի մարզում)–1967, Երևան], բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1955): 1957–60-ին՝ «Էջմիածնի կոլտնտեսական» թերթի պատ. քարտուղար, 1960–62-ին՝ Էջմիածնի «Կոմունիզմի ուղիով» թերթի խմբագիր, 1962–67-ին՝ խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Ա-ի «Թովչանք» (1948), «Գյուղի առավոտը» (1955), «Արաքսի այս ափին» (1959), «Հողի ու խաղողի երգեր» (1967), «Մինուճարը» (1968), «Կապույտ աղբյուր» (1970) բանաստեղծությունների ժող-ները:

ԱՅՎԱԶՅԱՆ Արգամ Արարատի [ծ. 20.7.1947, գ. Առինջ (Նախիջևանի Շահբուզի շրջան)], ճարտ-յան և մշակույթի պատմաբան, արվեստաբան: Մշակույթի վաստ. գործիչ (2009): Ավարտել է ՀՊՄԻ (1984): 1989–93-ին՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի, 1992–2000-ին՝ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ների ավագ գիտաշխատող: 2007-ից՝ ՀՀ մշա-

կույթի նախարարության պատմամշակութ. արգելոց-թանգարանների և պատմ. միջավայրի պահպանության ծառայության փոխտնօրեն, 2011-ից՝ բաժնի վարիչ: 1965-ից զբաղվում է Նախիջևանի պատմ. գավառների պատմաճարտ. ժառանգության, պատմության ու մշակույթի, արվ-ի, վիմագրության ուսումնասիրությամբ:

Լույս են տեսել Ա-ի «Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները» (1978), «Ջուղա», «Ագուլիս» (երկուսն էլ՝ 1984), «Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները» (1987), «Նախիջևան. Բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ» (1995), «Նախիջևանի խաչքարերը» (հայ. և անգլ., 1996), «Նախիջևանի որմնանկարչական արվեստը» (1998), «Նախիջևանի վիմագրական ժառանգությունը» (հ. Ա–Ջ, 2004–10), «Ջուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան» (հայ., անգլ. և ռուս., 2007, պատկերագիրք), «Ագուլիսի բարբառի մասունքներ» (2011, 2012), «Մեզ պետք են մտքի զորավարներ» (2012), «Աշակոյթային արժէքների Գալֆեան հաւաքածոյի արձանագիր իրերը» (2013, գիրք-ալբոմ) աշխատությունները:

ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Ֆրանսիայում, Հունաստանում, Իրանում և այլ երկրներում ներկայացրել է (2002-ից) «Խզված մեղեդի՝ Ջուղա» տեսաֆիլմը և Նախիջևանի պատմամշակութային հուշարձանների հեղինակային փաստավավերագրական լուսանկարների ցուցահանդեսը:

ԹՄՄ (2006), ՀՕՖ-ի գիտ-յան և կրթության հայկ. ազգ. հիմնադրամի (2010), ՀՀ նախագահի (2010) մրց-ներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե (2009), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2009), ՀՀ վարչապետի (2011) հուշամեդալներ, ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2011) մեդալ:

ԱՅՎԱԶՅԱՆ Բագրատ Հովակիմի (20.6.1862, Թիֆլիս–3.3.1934, Թիֆլիս), գրող: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1882):

Լույս են տեսել Ա-ի «Աշոտ Երկաթ» (մաս 1, 2, 1893, 1894, Թ., Մ. Շարաձեի, Մարկիանոս Ռոտինյանի տպ-ներ, 1985, Թեհրան), «Հիւսիսի արծիւը» (1901, Թ., Մովսես Վարդանյանի տպ., 1985, Թեհրան), «Անիի կործանումը» (նաև «Անին ծախուեցավ» վերնագրով, 1905, Փ., «Բանասէրի» տպ.) պատմավեպերը, «Տանջանքի բովից» (1895, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) վեպը և «Սասունը այրւում է» (1913, Թ., «Էսպերանտո» տպ.) դրաման:

Հանդես է եկել նաև Ռաշիդ կեղծանվամբ:

Երկ. Աշոտ Երկաթ: Անիի կործանումը, Ե., 1964:

ԱՅՎԱԶՅԱՆ Գևորգ (ծ. թ. անհտ, Կ. Պոլիս–1895, Կ. Պոլիս), խմբագիր, հրապարակախոս: Աբրահամ ***Այվազյանի*** եղբայրը: Սովորել է ծննդավայրում: 1860-ական թթ-ից տպագրվել է պոլսահայ մամուլում, մասնավորապես՝ հայատառ թուրք. «Մանզումէի Էֆքէար» և այլ թերթերում: 1869-ին եղբոր հետ հիմնադրել և մինչև 1883-ը տպագրել է ***«Մնամուլ»*** երգիծաթերթը, հակադրվել Հ. Պարոնյանի ***«Մեղու»***, ապա՝ ***«Թատրոն»*** պարբ-ներին:

ԱՅՎԱԶՅԱՆ Հակոբ Հովհաննեսի [20.12.1890, գ. Շահնազար (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–19.4.1924, գ. Շահնազար], գրող: 4 տարի սովորել է Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1912):

Աշխատակցել է «Կոմունիստ» (Բաքու), «Կարմիր աստղ», ապա՝ «Մարտակոչ» օրաթերթերին (երկուսն էլ՝ Թիֆլիս): Գրել է բանաստեղծություններ: 1922-ին մասնակցել է Վրաստանի պրոլետ. գրողների ընկերակցության հայկ. բաժանմունքի հիմնադրմանն ու նրա պաշտոն. պարբ-ի՝ ***«Դարբնոց»*** ամսագրի հրատարակմանը:

Երկ. Բանաստեղծություններ, Ե., 1959:

ԱՅՎԱԶՅԱՆ Հովհաննես Խաչատուրի [ծ. 3.3.1950, գ. Սաքոբո (Վրաստանի Սղնախի շրջանում)], խմբագիր, հրատարակիչ, թարգմանիչ: Սովորել է ԵՊՀ-ում (1973–76), ավարտել է ՄՊՀ (1979): Աշխատել է տարբեր պարբ-ների խմբագրություններում, 1995–2000-ին՝ «Նոր դպրոց», 2006–09-ին՝ «Նաիրի» հրատարակչությունների գլխ. խմբագիր, 2013-ից՝ «Արմենպրես» լրատվ. գործակալության պատ. խմբագիր:

Ռուս-ից թարգմանել է Վ. Ստուպիշինի «Իմ առաքելությունը Հայաստանում» (2005), Գ. Կունցևի «Կար-չկար մի Փարաջանով» (2008), Լ. Ենգիբարյանի «Ծաղրածուն աշունը սրտում» (2010) գրքերը, Ա. Դոմբրովսկու, Կ.



Արգամ Այվազյանի
«Նախիջևան: Բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ» (1995, Ե., «Գիտություն») գրքի կազմը




Բագրատ Այվազյանի
«Աշոտ Երկաթ: Անիի կործանումը» (1964, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը



Հովհաննես Մնացականի Այվազյան



Հ. Այվազյանի *«Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան» (2004, Ե., «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն») գրքի կազմը*



Ս. Այվազյանի *«Խնձորեսկ» (1982, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Մ. Կարապետյան) գրքի կազմը*

Համսունի, Գ. Մարկեսի և ուր. երկերից: Կազմել է «Կյանքի վայրիվերումներ» (2004), Ս. Եսենինի «Բանաստեղծություններ» (2006, թարգմ.՝ Հ. Սահյանի), «Քաջ Նազար» (չուվաշ., 2011) հեքիաթների, «Տաղ վերածննդի» (2011) հայ միջնադարյան քնարերգության ժող-ները:

ՀԺՄ մրց. (1987), «Համո Սահյան» հուշամեդալ (2011):

ԱՅՎԱԶՅԱՆ Հովհաննես Մնացականի [ծ. 7.11.1947, գ. Փոքր Խանչալի, Վրաստանի Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդայի) շրջան], խմբագիր, հրատարակիչ, հաս. և մշակույթի գործիչ: Քիմ. գիտ. դ-ր (1998): Ավարտել է ԵՊԻ (1974): 1972–74-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Գորիսի ֆիզտեխ. կենտրոնում, 1974–79-ին՝ Փորձարար. կենսաբանության ինստ-ում, 1979–99-ին՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրի տեղակալ, 1999-ից՝ «Հայկական հանրագիտարան. հրատարակչության» գլխ. խմբագիր-տնօրեն:

Ա-ի գլխավորությամբ հրատարակվել են «Տնային տնտեսության» (1997), «Հանրամատչելի բժշկական» (2001), «Քրիստոնյա Հայաստան» (2002), «Հայ Սփյուռք» (2003), «Հայաստանի բնաշխարհ» (2006), «Ով ով է. հայեր» կենսագր. երկհատոր (2005–07), «Դպրոցական մեծ» (քառահատոր, 2007–10), «Հայաստան» (2012) հանրագիտարանները:

Լույս են տեսել Ա-ի «Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրները» (1998) մենագրությունը, «Հաղթանակած բանակի գեներալը» (2001), «Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան» (2004), «Հաղթանակի և վերհուշի ճամփաներով» (2006), «Հարսանիք» (գեղ., 2008), «Մի հայտնագործության պատմություն» (2009), «Հաղթելու արվեստը» (2011) գրքերը:

Եղել է «Ջավախք» հայրենակց. բարեգործ. միության (1994–2006), նրա *«Ասպնջական»* պաշտոնաթերթի խմբագր. խորհրդի (2001–06) նախագահ:

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2012), Ֆրիտյոֆ Նանսենն միջազգ. հիմնադրամի ոսկե (2002), ՀՀ վարչապետի (2013) հուշամեդալներ:

ԱՅՎԱԶՅԱՆ Սուրեն Բախշիի [1.9.1915, գ. Խնձորեսկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–20.5.1981, Երևան, թաղված է Խնձորեսկում], գրող: Ավարտել է Բաքվի համալսարանը (1942):

Լույս են տեսել Ա-ի «Անավարտ գործը» (1947), «Խորաձորցիք» (1951) պատմվածքների ժող-ները, «Լեռնցիներ» (1955) վեպը: «Ճակատագիրն հայոց» (1966) պատմավեպում պատկերել է հայ ժողովրդի պայքարը պարսից և թուրք բռնակալների դեմ XVIII դ-ում:

Երկ. Կա և հետմահու կյանք (ժող.), Ե., 1971: Առավոտ լուսո, Ե., 1976: Խնձորեսկ, Ե., 1982: Ասուր, հէյ Ասուր, Ե., 1985: Այր հայրենյաց, Ե., 2007:

ԱՅՎԱԶՅԱՆ Վարուժան Սերգեյի [ծ. 29.5.1958, գ. Այազմա (Վրաստանի Ծալկայի շրջան)], արձակագիր: Ավարտել է ԵՊՀ (1985): 1987-ից աշխատում է *«Գարուն»* ամսագրի խմբագրությունում (2001-ից՝ գլխ. խմբագիր), 1993-ից, միաժամանակ՝ «Ապոլոն» հրատարակչության գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Հին ահ» (1991), «Առավոտ պայծառ, զվարթ ծիրանի», (2003) պատմվածքների ժող-ները, «Ճանճի ամիսը» (1998), «Համեմատական կենսագրություններ» (2004), «Պատմություն մեծն Կովկասի» (2013) վեպերը:

Համաշխ. հայկ. կոնգրեսի, ՌՀՄ և ՀԳՄ հատուկ (բոլորը՝ 2008) մրց-ներ:

ԱՅՎԱԶՈՎՍԿԻ (Այվազյան) Գաբրիել Կոստանդինի (Գևորգի) [10.5.1812, Թեոդոսիա (Ղրիմ)–8.4.1880, Թիֆլիս], մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, եկեղեց. գործիչ, խմբագիր-հրատարակիչ: 1826–30-ին սովորել է Սբ Ղազարի Մխիթարյան վարժարանում: Մխիթարյան միաբանության անդամ (1830), վարդապետ (1834), արքեպիսկոպոս (1871), 1830-ից՝ միաբանության ընդհանուր քարտուղար: 1842–48-ին դասավանդել է Վենետիկի Սուրբ-Ռափայելյան, 1848–1856-ին՝ Փարիզի Սամվել Սուրադյան (տնօրեն) վարժարաններում: 1843-ին հիմնադրել և խմբագրել է (մինչև 1848-ը) *«Բազմավէպ»* հայագիտ. հանդեսը: Գժտվելով Մխիթարյանների հետ՝ 1856-ին ընդունել է Հայ առաքել. եկեղեցու դավանանքը և Փարիզում Ս. Թեոդորյանի և Ա. Գալֆայանի հետ հիմնադրել ու ղեկավարել է

Հայկազյան վարժարանը: 1855–58-ին՝ Փարիզում, 1860–65-ին Թեոդոսիայում խմբագրել ու հրատարակել է *«Սեաւեաց աղաւնի»* ամսագիրը: 1858-ին նշանակվել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմ. առաջնորդ: Մեծահարուստ Հարություն Խալիպյանի միջոցներով 1858-ին Թեոդոսիայում հիմնադրել է Խալիպյան վարժարանը (մինչև 1865-ը՝ տեսուչ): Գևորգ Դ կաթողիկոսի հրավերով կարգվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ (1875–76) և Թիֆլիսի թեմի առաջնորդ:

Աշխատությունները վերաբերում են պատմությանը («Համառօտ պատմութիւն Ռուսաց», 1836, Վնտ., Սբ Ղազարի տպ., «Պատմութիւն Օսմանեան պետութեան», հ. 1, 2, 1841, նույն տպ.), լեզվաբանությանը («Խանգարմունք հայկաբանութեան ի հնումն եւ ի նորումս», 1869, Թեոդոսիա, Խալիպյան տպ., «Տեսութիւն կարծեաց տեառն հ. Արսէնի Վ. Բագրատունւոյ յաղագս հնչման Ղ եւ Լ տառից», 1852, Վնտ., Սբ Ղազարի տպ.), կրոնին, աստվածաբանությանը («Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն», 1877, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.): Գրել է նաև դասագրքեր [«Նախակրթանք հայերէն լեզուի...» (մաս 1–3, 1860–77, նույն տպ.), «Ընթերցարան լեզուին ռուսաց ի պէտս ժողովրդական դպրոցաց» (թարգմ., 1862), «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» (1869, երկուսն էլ՝ Թեոդոսիա, Խալիպյան տպ.), «Դասագիրք քրիստոնէական վարդապետութեան ըստ ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ» (մաս 1, 1875, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.)]: Լույս են տեսել նաև Ա–ու «Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» (1857, Փ., Ճանիկ Արամյանի տպ., 2–րդ հրտ.՝ 1876, Թեոդոսիա, Խալիպյան տպ.), «Հազար եւ մի առակաւոր բանք ազգայինք եւ օտարք» (1874, ԿՊ, Ճ. Արամյանի տպ.), «Խրիմու հայոց լեզուովը շարադրուած առակներ» (1875, Ռոստով, Հովհաննես Տեր–Աբրահամյանի տպ.) գրքերը:

Ա. տիրապետել է եվրոպ. և արլ. 12 լեզուների, թարգմանել է իտալ–ից (Սիլվիո Բելլիքո, «Բանտը իմ», 1853, վիպակ), ֆրանս–ից (Հովսեփ Տրոզ, «Խորհրդածութիւնք», 1854, աշխատություն), ռուս–ից (Իվան Կռիլովի առակները), հայ–ից՝ իտալ.՝ Մովսես Խորենացու (1841) և Ագաթանգեղոսի (1843) երկերից:

Գրկ. Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. 2, Կահիրէ, 1933: **Նալբանդյան Մ.,** *Երկու փող, ԵԼԺ, հ. 2, Ե., 1949:* **Հովհաննիսյան Ա.,** *Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 252–283:*

ԱՅՎԱՏՅԱՆ Փառնակ (1860, Կ. Պոլիս–1940, Նյու Յորք), խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Ռոբերտ քոլեջում: 1880-ական թթ–ի կեսերին ընտանիքի հետ տեղափոխվել է Նյու Յորք: Երկար տարիներ պաշտոնավարել է «Նյու Յորք Թայմս» (անգլ.) թերթի արտասահմ. բաժանորդագրության գրասենյակում: 1891–93-ին Նյու Յորքում հրատարակել է *«Արարատ»* պարբ–ը: Տասը տարի անց փորձել է վերահրատարակել այն՝ որպես ամսագիր, սակայն լույս է ընծայել ընդամենը 2 համար:

ԱՅՏԸՆՅԱՆ Արսեն (Վիչեն) Պետրոսի [7(19).1.1825, Կ. Պոլիս–8(21).7.1902, Վիեննա], լեզվաբան, բանասեր, խմբագիր–հրատարակիչ: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1842), աբբահայր (1886): 1835-ից սովորել է Վիեննայի Մխիթարյան դպրոցում, ուսումնասիրել հայ մատենագրություն: Դասավանդել է Զմյուռնիայի և Կ. Պոլսի Մխիթարյանների վարժարաններում: Աշակել, հարստացրել ու հրատարակել է Վրթանես Չալըխյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի...» (1885) աշխատությունը: 1887-ին հիմնադրել է *«Հանդէս ամսօրեայ»* հայագիտ. պարբ–ը, որտեղ հրատարակել է լեզվաբ. հոդվածներ:

Ա–ի գիտ. ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ ունի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1866, վերահրտ.՝ 1987) աշխատությունը, որը հայերենագիտ. արժեքավոր գործերից է: Ա. առաջինն է կատարել հայոց լեզվի պատմության գիտ. շրջանաբաժանումը (գրաբար, միջին հայ. և աշխարհաբար), բարբառները դասակարգել է ըստ աշխարհագր. սկզբունքի: Գրել է արևմտահայ աշխարհաբարի քերակ–ը: Գծագրել և հրատ–յան է պատրաստել «Նոր երկրագունտ» (1856) քարտեզը: Լույս է տեսել նաև Ա–ի «Երգք սրբոյ պատարագի եկեղեցւոյ Հայաստանեայց...» (1877) աշխատությունը: Տիրապետել է եվրոպ. և արլ. մի շարք լեզուների:

Ա–ի գրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:



Վարուժան Այվազյան



Գաբրիել Այվազովսկի



Գ. Այվազովսկու *«Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» (1857, Փարիզ) գրքի տիտղոսաթերթը*

Գրկ. **Մենեւիշեան Գ.**, *Կենսագրական ակնարկ գեր. Արսէն արքեպիսկոպոս Այտընեան արբայի..., Վնն., 1895:* **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958, էջ 269–288:* **Զահուկյան Գ.**, *Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960, էջ 433–436:* **Աբրահամյան Ա.**, *Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները, Ե., 1984:*



Արսեն Այտընյան

«Ա.ՆԱԲԱՍԻՍ», «**Նահանջ Բյուրոց**» (հուն.՝ αναβας–վերելք, շարժում երկրի խորքով), հույն պատմիչ Քսենոփոնի պատմահուշագր. երկը: Բաղկացած է 7 գրքից, որտեղ նկարագրված է մ. թ. ա. 401-ին Կյուրոս Կրտսերի վարձկանների՝ 10 հզ. հույների անհաջող արշավանքը Աքեմենյան թագավոր Արտաքսերքսես II-ի դեմ և Կունաքսայի (Միջագետք) ճակատամարտում պարտվելուց հետո նրանց նահանջը Հայաստանի տարածքով դեպի Սև ծով: Հեղինակը մասնակցել է ամբողջ արշավանքին ու նահանջին (հելլեն զորավարների սպանվելուց հետո եղել է նահանջող զորքի հրամանատարը): «Ա.» հատկապես Հայաստանի հնագույն պատմության արժանահավատ և անփոխարինելի սկզբնաղբյուր է:

«Ա.»-ում Հայաստանը պատկերված է որպես ընդարձակ երկիր, որի սատրապն էր Օրոնտեսը (Երվանդ Բ): Ըստ «Ա.»-ի՝ հայկ. լեռնաշխարհը բնակեցված է եղել հիմնականում հայերով: Արլ. Տիգրիսից մինչև Արաքսի վերին հոսանքը հելլեններն անցել են հայկ. գյուղերով: «Ա.»-ի տվյալների համաձայն՝ Հայաստանի բնակչության գլխ. զբաղմունքը գյուղատնտեսությունն էր: Գյուղերում տները լեցուն էին մթերքով (ցորեն, գարի, հաց, գարեջուր, անուշաբույր գինիներ, ընդեղեն, քնջութի, նշի և բևեկնի յուղ, կենդ. ճարպ ևն): Երկը որոշ պատկերացում է տալիս մ. թ. ա. V–IV դդ.-ում Հայաստանի քաղ. վիճակի մասին: Իր պատմագիտ. ու զեղ. արժանիքների համար դարեր շարունակ այն եղել է ընթերցանության գիրք: Հայ. (թարգմ. և ծնթգր.՝ Ս. Կրկյաշարյանի) տպագրվել է Երևանում 1970-ին:



«Անահիտ», *1898–1949, Փարիզ*

«Ա.ՆԱՀԻՏ», գրական-գեղ. և հաս. հանդես: Լույս է տեսել 1898–1911, 1929–40 և 1946–49-ին Փարիզում: Խմբագիր-հրատարակիչ Արշակ ***Չոպանյան***: Տպագրել է ուսումնասիրություններ հայ գրակ-յան, արվ-ի ու մշակույթի վերաբերյալ, միջնադարյան տաղեր, բանահյուս. նմուշներ, թարգմանություններ՝ համաշխ. դասականներից (Էսքիլես, Վ. Շեքսպիր, Մ. Սերվանտես, Գ. Ֆլոբեր, Ա. Ֆրանս, Է. Վերհառն, Ի. Տուրգենև, Մ. Գորկի, Ա. Միցկևիչ և ուր.): Լուսաբանել է հայկ. հարցը, հայ ժողովրդի ազգ-ազատագր. պայքարը, մեծապես նպաստել է հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը: Աշխատակցել են Ա. Իսահակյանը, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Գ. Զոհրապը, Շիրվանզադեն, Հ. Թումանյանը, Ռ. Զարդարյանը, Կ. Զարյանը, Կոմիտասը, Թ. Թորամանյանը և ուր.:

Գրկ. «Անահիտ»-ի մատենագիտութիւն, Անթիլիաս, 1998: **Ավետիսյան Յ.**, *«Անահիտ» հանդեսը, Ե., 1999:*

«Ա.ՆԱՀԻՏ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1990-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Արտակ ***Ոսկանյան***:



«Էդվարդ Իսաբեկյան» (2004, Ե., «Անահիտ») ալբոմի կազմը

Լույս է ընծայում հայ նկարիչների ալբոմներ (եռալեզու), արվեստաբանության, երաժշտության, ճարտ-յան, կինոյի և թատրոնի վերաբերյալ գրակ.: Հրատարակել է հայ մանրանկարչությանն ու մանրանկարիչներին նվիրված մատենաշար՝ «Հայկական մանրանկարչություն. զարդատառեր» (1992), «Հայկական մանրանկարչություն. կենդանազարդեր» (1996), «Էջմիածնի Ավետարանը» (2000) ևն: Դաս. ու ժամանանակից կերպարվ-ը և կիրառ. արվ-ը ներկայացված են «Վարդգես Սուրենյանց» (2003), «Էդվարդ Իսաբեկյան» (2004), «Հայկական որմնագործ» (2004), «Հրաչյա Ռուխկյան» (2006) և այլ ալբոմներով: Հայկ. ճարտ-յանն են նվիրված Գ. Շախկյանի «Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքները» (2001), Ա. Թորամանյանի «Ճարտարապետական պատկերազարդ բառարանը» (2007) ևն: Լույս են տեսել նաև Կոմիտասի «Երկերի ժողովածուի» 7 հատորը, երգարաններ, երաժշտագիտ. հետազոտություններ՝ Սահուրի Գևորգի «Աշուղի աշխարհը» (1991), Ռ. Դավթյանի «Վահան Տերյանի պոեզիան

երաժշտության մեջ» (2007), Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովել» (2003): Հրատարակում է նաև մանկ. գրակ.:

ԱՆԱՅԻՍ (Ավետիսյան Եվփիմե Միհրանի, 1872, Կ.Պոլիս–1950, Փարիզ), բանաստեղծուհի, արձակագիր: Սովորել է ծննդավայրի Մաքրուհյաց վարժարանում, ապա՝ ֆրանսիացի Ֆյուրեի մասնավոր դպրոցում: Հայ-ը կատարելագործելու համար մասնավոր դասեր է առել բանաստեղծներ Թովմաս Թերզյանից և Խորեն Գալֆայանից: 1893-ին «Մասիս» հանդեսում լույս է տեսել նրա առաջին բանաստեղծությունը:

Աբդուլհամիդյան կոտորածների տարիներին մեկնել է Շվեյցարիա, օսմ. սահմանադրությունից հետո վերադարձել է Կ.Պոլիս, աշխատակցել «Բիւզանդիոն», «Արեւելյան մամուլ», «Շանթ», «Հայ կին» պարբերներին: 1922-ին տեղափոխվել է Փարիզ, թղթակցել է սփյուռքահայ մամուլին («Հայաստանի կոչնակ», «Անահիտ» ևն): Նրա բանաստեղծություններն ամփոփված են «Այգ ու վերջալոյս» ժող-ում (1942, Փ.):

Լույս է տեսել Ա-ի «Ուղեցոյց հայ աղջկան» (1940) դասագիրքը, «Յուշերս» (1949) հուշագրությունը:

ԱՆԱՆԻԱ Ա ՄՈԿԱՑԻ [ծ. թ. անհտ, գ. Փաս (Սոկք նահանգ)–մոտ 968], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 946-ից: Նախն. կրթությունն ստացել է Աղթամարի և Վարագա վանքերում: Եղել է Վարագավանքի առաջնորդը: Ա. Ա Մ. խափանել է Աղվանից կաթողիկոսության և Սյունիքի եպիսկոպոսության՝ Մայր աթոռից անջատվելու փորձերը:

Ա. Ա Մ-ու հեղինակած բազմաթիվ թղթերից մեզ է հասել 4 «Թուղթ» («Արարատ», 1896–97), որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Բագրատունիների, Արծրունիների, Հայոց Արևելից կողմանց, Սյունիքի վերաբերյալ: ***Սրեփհանոս Օրբելյանի*** վկայությամբ՝ Ա. Ա Մ. կազմել է նաև «Հաւատոյ նամակ» ժող-ը:

Գրկ. Տեր-Մկրտչյան Գ., *Հայագիտական ուսումնասիրություններ, առաջար. և մնթգր.՝ Պ. Հակոբյանի, հ. 2, Էջմիածին, 1998:*


ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ, Անանիա Սյունեցի, Անանիաս, Անանե, V դ-ի թարգմանիչ: Աշակերտել է ***Մեսրոպ Մաշտոցին***, նրան օգնել աղվան. գիրն ստեղծելիս: Ձեռնադրվել է Սյունյաց եպիսկոպոս, հիմնադրել տեղի դպրոցը: Ա. Թ-ին են վերագրում «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի», «Ճաղագս Յովհաննու Մկրտչի» ճառերը և մատենագիրներ Փիլոն Ալեքսանդրացու ու Իրենիոս Լուգդունացու գործերի թարգմանությունները:

Գրկ. Անանիա Թարգմանիչն եւ իւր գրական գործոց նմոյշներ, Վնտ., 1899 (հրտ.՝ Բ. Սարգիսյան):

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ, **Անանե Նարեկացի** (ծ. թ. անհտ–մոտ 980, թաղված է Նարեկա վանքի ժամատան մեջ), մատենագիր, փիլիսոփա, Նարեկավանքի վանահայր և դպրոցի հիմնադիր: ***Գրիգոր Նարեկացու*** մոր հորեղբայրը: Կասկածվել է Թոնդրակյան շարժմանը հարելու մեջ, որը հերքելու նպատակով ***Անանիա Ա Մոկացի*** կաթողիկոսի առաջարկությամբ գրել է «Գիր խոստովանութեան» (հրտ.՝ 1892, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., հրատ.՝ Միաբանի) և «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց» գործերը: Նրա աշակերտ Ուխտանեսը հիշատակում է նաև «Հաւատարմատ» (973) գործը, որտեղ Ա. Ն. ձաղկել է երկաբնակներին: Ա. Ն-ու գործերը կարևոր աղբյուր են թոնդրակեցիների գաղափարախոսությունն ուսումնասիրելու համար: Ա. Ն-ուն աշակերտել է Գրիգոր Նարեկացին:

Գրկ. Թամրազյան Հ., Անանիա Նարեկացի, Ե., 1986:


ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, **Շիրակունի, Շիրակավանցի** [605–610-ի միջև, Շիրակի Շիրակավան (Երազգավորս) կամ Անանիա (Անեանք) գ., այլ կարծիքով՝ Անի–685–690-ի միջև], VII դ-ի գիտնական՝ մաթեմատիկոս, փիլիսոփա, տիեզերագետ, տոմարագետ, աշխարհագետ: Ճշգրիտ գիտ-ների և բնագիտ-յան հիմնադիրը Հայաստանում: Ա. Շ.



«Հայկական որմնագորգ» (2004, Ե., **«Անահիտ»***) ալբոմի կազմը*



Անայիսի *«Այգ ու վերջալոյս» (1942, Փարիզ) գրքի կազմը*



Անանիա Նարեկացու *«Գիր խոստովանութեան» (1892, Վաղ-պատ) գրքի տիտղոսաթերթը*



Անանիա Շիրակացի



«Գիրք համարողութեան» աշխատության ձեռագրի (1283) 1 էջ



«Մատենագրություն» (1979, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

սովորել է Դպրեվանքի (Շիրակի գավառ) դպրոցում, ապա 8 տարի՝ տրապիզոնցի Նշանավոր հույն գիտնական Տյուքիկոսի դպրոցում:

Ա. Շ–ու կյանքի և գիտ. գործունեության մասին ամենաարժեքավորը իր գրած ինքնակենսագրությունն է՝ «Անանիա Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց» վերնագրով, որը մեզ է հասել 10 ձեռագիր ընդօրինակություններով, որոնցից 5–ը պահպանվում են Երևանի, 1–ական օրինակ՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան, Կ. Պոլսի ազգ. մատենադարաններում, Բրիտ. թանգարանում: Հայտնի է տեքստի 2 տարբերակ՝ համառոտ և ընդարձակ: Վերջինիս բնագիրը 1895–ին հրատարակել է Հ. Տաշյանը՝ Վիեննայի Մխիթարյանների ձեռագրերի ցուցակում (էջ 174–178), իսկ համառոտ խմբագրության բնագիրը հրատարակել է պրոֆ. Ք. Պատկանյանը 1877–ին Ս. Պետերբուրգում՝ «Անանիա Շիրակունւոյ մնացորդք բանից» (Կայսեր. գիտ–ների ակադ–ի տպ.), Ղ. Ալիշանը 1901–ին այն ներառել է «Հայապատումի» մեջ (էջ 232–233, Վնտ., Սբ Ղազարի տպ.):

Ա. Շ. 630–ական թթ–ի վերջին հիմնադրել է բարձրագույն տիպի բնագիտ–մաթ. դպրոց: Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսի հրամանով կազմել է «Քննիկոն» ձեռնարկը՝ հայկ. բարձրագույն հոգևոր դպրոցների համար: Այն բաղկացած է 2 մասից. 1–ինում ներառված են «Ներածութիւն» և «Թուաբանութիւն», «Երաժշտութիւն», «Երկրաչափութիւն», «Աստղաբաշխութիւն», 2–րդում՝ «Ներածութիւն» և «Տօմար», «Տիեզերագիտութիւն», «Մականծութիւնք», «Մատենագիտութիւն», «Հռետորական ուսումն» բաժինները:

Հետագայում այս նյութերը հիմք են ծառայել ինքնուրույն մատենագիտ. երկերի համար, որոնց մեջ Ա. Շ–ու գործերը պահպանված են և՛ ամբողջական՝ մեծ կամ փոքր հատվածներով, և՛ վերաշարադրված ու համառոտված, հաճախ՝ նաև աղավաղված:

Ա. Շ–ու թվաբանության դասագիրքը հնագույններից է համաշխ. մաթ. գրակ–յան մեջ. այն պարունակում է թվար. աղյուսակներ, խնդիրներ, խրախճանականններ, որոնք մինչև այժմ չեն կորցրել իրենց ճանաչող., ուսումնամեթոդ. նշանակությունը: Նրա տոմարագիտ. աշխատությունները բովանդակում են տոմար. բազմաթիվ հաշվումներ, աղյուսակներ, բոլորակներ, 532 տարվա զուգացանկ, հայկ. և այլ օրացույցների ամսանունները, ժամանունները ևն:

Կաթողիկոսի հանձնարարությամբ Ա. Շ. կազմել է նաև հայկ. առաջին անշարժ տոմարը, սակայն մինչ եպիսկոպոս. ժողովը կվավերացներ այն, կաթողիկոսը մահացել է, և այդ տոմարը չի հաստատվել: Արժեքավոր են նրա չափագիտ., օդերևութաբան., թանկարժեք քարերին նվիրված գիտ. երկերը:

Լույս են տեսել Ա. Շ–ու «Մնացորդք բանից» (1877, ՍՊբ, Կայսեր. գիտ–ների ակադ–ի տպ.), «Յաղագս հարցման եւ լուծման» [1918, ՍՊբ, հրատարակիչ՝ Հովսեփ Օրբելի (հայ. և ռուս.)], «Տիեզերագիտութիւն եւ տօմար» (1940, հայ., աշխատասիր.՝ Ա. Աբրահամյանի, ռուս.՝ 1962, թարգմ., ծնթգր. և առաջաբ.՝ Կ. Տեր–Դավթյանի և Ս. Արևշատյանի), «Լուսնի պարբերաշրջանները» (1962, աշխատասիր.՝ Ա. Աբրահամյանի), «Մատենագրություն» (1979, աշխարհաբարի փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի) երկերը:

Գրկ. **Տէր–Մկրտչեան Գ.,** *Անանիա Շիրակացի, Հաղպատ, 1896:* **Աբրահամյան Ա.,** *Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն, Ե., 1944: Անանիա Շիրակացի, Ե., 1952:* **Առաքելյան Ա.,** *Անանիա Շիրակացի, Ե., 1955:* **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. Ա, 1959, էջ 734–735:* **Պետրոսյան Գ.,** *Սութեմափրիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959:* **Խրլոպյան Գ.,** *Անանիա Շիրակացու աշխարհացոյցը, Ե., 1964:* **Թումանյան Բ.,** *Անանիա Շիրակացի, Ե., 1991:* **Բրուտյան Գ.,** *Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Էջմիածին, 1998:* **Նազարյան Լ.,** *Անանիա Շիրակացի: Միջնադարի մեծ մտածողն ու գիտնականը, Ե., 2006: Անանիա Շիրակացի: Հոդվածների ժող., Ե., 2012:* **Միրումյան Կ.,** *Անանիա Շիրակացի, Ե., 2012:* **Դոլուխանյան Ա.,** *Անանիա Շիրակացին միջնադարյան հայ մատենագիրների գնահատմամբ, «Գրականագիտական հանդես», 2012:* **Petri W.,** *Ananiya Schirakazi–ein armenischer Kosmograph des 7 Jahrhunderts, "Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft", B. 114, München, 1964.*

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ (ծ. թ. անհտ–1070-ական թթ.), մատենագիր, մեկնիչ, դավանաբան: Եղել է Հաղբատ-Սանահինի միաբանության անդամ: Ա. Ս-ու երկերը կարևոր դեր են կատարել հայ աստվածաբան-դավանաբան. մտքի զարգացման և մեկնողական գրակ-յան մեջ: «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» հակաճառական-դավանաբան. աշխատությունը հեղինակը շարադրել է Պետրոս Ա Գետադարձ կաթող/կոսի կարգադրությամբ և ավարտել Խաչիկ Բ Անեցի կաթող/կոսի օրոք: Երկը բաղկացած է 14 ճառից («Սակս անխտիր հաղորդելոյ», «Վասն Մեծի Հինգշաբթին», «Առ ապականացու ասողան է զմարմինն Տեառն», «Վասն պատկերապաշտից», «Վասն բաժանմանն Վրաց» ևն), ունի նաև աղբյուրագիտ. նշանակություն: Արժեքավոր են հատկապես ***Անանիա Նարեկացու*** «Հաւատարմատ»-ի, ինչպես նաև եկեղեցու հայրերի զանազան երկերի տարբեր հատվածները, որոնց ամբողջական բնագրերը մեզ չեն հասել: 1055-ին Ա. Ս. գրել է Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունը («Մեկնութիւն չորքետասան թղթոցն Պօղոսի առաքելոյն»), որտեղ օգտվել է ***Եփրեմ Խուրի Ատրու, Հովհան Ոսկերերանի, Կյուրեղ Աղեքսանդրացու*** և ուր. համաբնույթ աշխատություններից: Հեղինակ է նաև «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» և «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու» մեկնաբան. երկերի, որոնք հետագայում որպես դասագիրք օգտագործվել են վանական դպրոցներում և վարդապետարաններում:

Ա. Ս. գրել է նաև ճառեր ու ներբողներ («Ցաղագս Յովհաննու Մկրտչի», «Ի խաչելութիւն Պետրոսի», «Ներբողեան ասացեալ ի սուրբ Կաթող/կէ եկեղեցի»), նաև տոմար. երկ, որի մի հատված պահպանվել է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դավանաբան. աշխատության մեջ:

Ա.Ս-ու «Ներբողեան» երկը տպագրվել է 1747-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղ-ին՝ «Գիրք, որ կոչի Ժողովածու» (492 էջ, 8^0, 16,4 x 11,1 սմ):


«Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկը հրատարակվել է Էջմիածնում 2007-ին (աշխատասիր.՝ Հ. Քյոսեյանի):

Գրկ. **Տէր-Մինասեան Ե.,** *Հաղբատ եւ Սանահին վանքերը (967–1300), «Արարատ», 1901, էջ 271–277, 338–344:* **Օրմանեան Մ.,** *Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:* **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959:* **Քյոսեյան Հ.,** *Աստվածաբանական բնագրեր: Ուսումնասիրություններ, 1, Անանիա Սանահնեցի, Էջմիածին, 2000:* **Conybeare F., A** *Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, L., 1913, p. 339.*

ԱՆԱՆԻԿՅԱՆ Սարտիրոս Հարությունի (25.12.1875, Սեբաստիա–4.8.1924, Դամասկոս), բանասեր, հրապարակախոս, ՌԱԿ գործիչ: Ավարտել է Այնթապի Կեդրոն. Թուրքիո քոլեջը (1895) և Հարթֆորդի (ԱՄՆ) Աստվածաբան. ճեմարանը (1901): Զբաղվել է հնդեվրոպ. և սեմ. հին ու նոր լեզուների, ինչպես նաև հին ու նոր կրոնների ուսումնասիրությամբ: Ա-ի «Հայոց հին կրօնը» հոդվածը տպագրվել է «Հաստինգսի կրոնի և էթիկայի հանրագիտարանում» («Hastings Encyclopaedia of Religions and Ethics»), իսկ «Հայոց դիցաբանութիւնը»՝ «Դիցաբանության հանրագիտարանում» («Encyclopaedia of Mythology of Races»), «Մեծն Ներսէս Պարթեւ», «Հայ ազգին ծագումը», «Քննական պատմութիւն հայոց», «Նարեկացին եւ Նարեկը» և այլ գործեր տպագրվել են «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթում:

Լույս են տեսել Ա-ի «Վարդանանց պատերազմը» (1918, «Կոչնակի» տպ.) և «Քննական ուսումնասիրութիւններ» (1932, Նյու Յորք, Հայ կրթ. հիմնարկության տպ.):

ԱՆԱՆՅԱՆ Գառնիկ Գուրգենի (22.6.1934, Իջևան–20.11.2007, Երևան), գրականագետ, հրապարակախոս: Բանասիր. գիտ. դ-ր (1983), պրոֆ. (1986), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Ավարտել է ԵՊՀ (1958): 1977–85-ին՝ ԵՊՀ հրատարակչության տնօրեն, 1996–97-ին՝ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, 1985–96-ին՝ բանասիր., 2000–07-ին՝ ժուռնալիստիկայի ֆակ-ների դեկան:




Անանիա Սանահնեցու *«Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» (2007, Էջմիածին) գրքի փիփ-ղոսաթերթը*



Գառնիկ Անանյան



Գ. Անանյանի *«Ներսէս Լամբրոնացին հրապարակախօս» (1995, Անթիլիաս) գրքի կազմը*



Ժիրայր Անանյանի
«Պիեսներ: Ընտրանի» (2008, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը

Լույս են տեսել Ա-ի «Հայ գրականությունը «Մուրճ» ամսագրում» (1972), «Որոնումներ» (1974), «Եղիշե Չարենցը և ռուս գրականությունը» (1979), «Ավետիք Արասխանյան» (1987), «Եղիշե Չարենց» (1987), «Ներսէս Լամբրոնացին հրապարակախօս» (1995), «Ի սկզբանէ էր բանն...» (1998), «Վերականգնենք մեր հիշողությունը» (2000), «Նիկոլ Աղբալյան (կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը)» (2002), «Վերադարձ ինքներս մեզ կամ ինքնության որոնումներ» (2009) աշխատությունները:

ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. մրց. (2003):

Երկ. Հրապարակախոսություն և քննադատություն, Ե., 1996: Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Ե., 2001: Հանուն և ընդդեմ գլոբալիզացիայի, Ե., 2003: Անկարկներ հայոց հին և միջնադարյան գրականության, Ե., 2005:

ԱՆԱՆՅԱՆ (Տեր-Անանյան) Ժիրայր Հրայրի [14.7.1934, ք. Բերդ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–24.4.2004, Երևան], դրամատուրգ: Ավարտել է ՀՊՄԻ (1958): 1959–80-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում:

Լույս են տեսել Ա-ի «Տաքսի, տաքսի» (1973), «Անծանոթ ամուսիններ» (1979), «Իմ տունը քո տունը չէ» (1982), «Իրարանցում» (1983), «Կարուսել» (1988), «Սրբապատկեր» (1991), «Ընդունելություն՝ երկուսից մինչև վեցը» (1994), «Զգույշ, նա է» (1998), «Տեր, մի թող մեզ անտեր» (2000), «Կեսգիշերին» (2002), «Բրավո» (2003), «Մեր տան տերերը կամ Ես չեմ ուզում դառնալ միլիոնատեր» (2003) պիեսները, որոնց մեծ մասը բեմադրվել է Երևանում (Գ. Սունդուկյանի անվ. թատրոն), Թբիլիսիում, Թեհերանում, Հալեպում, Բեյրութում, Նյու Յորքում և այլուր:

«Վահագն» համահայկ. մրց. (2002, «Լույս քսանյոթի գիշերը», 2002, պիեսների ժող-ի համար):

Երկ. Տաքսի, տաքսի, Ե., 1987: Թռչող ափսեից իջած մարդը, Ե., 1992: Լույս քեզ տեսնողին, Ե., 2003 (բոլորն էլ՝ պիեսների ժող-ներ): Պիեսներ: Ընտրանի, Ե., 2008:

Գրկ. Ուղևորություն «Տաքսի տաքսիով». Ժիրայր Անանյանի հետ (կազմ. և խմբ.՝ Լ. Մանուչարյանի), Ե., 2002: Ժիրայր Անանյան: Կենսամատենագիտություն, Ե., 2009:



Լևոն Անանյան

ԱՆԱՆՅԱՆ Լևոն Զաքարի [13.10.1946, գ. Կողբ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–2.9.2013, Երևան], գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր-հրատարակիչ: ՀԳՄ նախագահ (2001–13): Մշակույթի վաստ. գործիչ (2008): Ավարտել է ԵՊՀ (1968): 1990–2001-ին խմբագրել է ***«Գարուն»*** ամսագիրը, 1991-ին հիմնադրել է ***«Ապոլոն»*** հրատարակչությունը: 2001-ից դասավանդել է ԵՊՀ-ում:

Լույս են տեսել Ա-ի «Արմատ և սաղարթ» (1987), «Թատրոնը բեմում և էկրանին» (1996) թատերագիտ., «Տագնապներ» (2004) հոդվածների, ակնարկների, էսսեների, «Հուշանվեր» (2006), «Հավերժ պահմտոցի» (2011), «Վայրի կակաչ» (2011) բանաստեղծությունների, «Դիմակայություն» (2006), «Ժամանակ և ոգի» (2013) հրապարակախոսությունների ժող-ները: Կազմել է «Ի սկզբանէ էր բանն» (2013, 27 երկրների ճանաչված բանաստեղծների ստեղծագործություններ՝ անգլ. և հայ. զուգադիր թարգմանությամբ), «Արդի եվրոպական պոեզիա» (2005) ժող-ները:

ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1983), ԼՂՀ ԳՄ Մուրացանի անվ. (2005) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2006):



Պողոս Անանյանի
«Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները» (1960, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը

ԱՆԱՆՅԱՆ Մկրտիչ Կոստանդնուպոլսեցի (1715, Կ. Պոլիս–1777, Սալոնիկ), բանասեր, բառարանագիր: Սովորել է Սբ Ղազարի Մխիթարյան վարժարանում, աշակերտել է ***Մխիթար Սեբաստացուն***: 1759-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում լույս է ընծայել «Աղօթամատոյց Սրբոյն Յովսէփայ-Աստուածահօրն...» (տես ***Աղոթագիրք***), որտեղ, սակայն, հեղինակի անունը նշված չէ. տրված է ըստ Ա. Ղազիկյանի (վերահրտ.՝ 1781, Վնտ., Դեմետրիոս Թեոդոսիուի տպ.): Մասնակցել է Մխիթար Սեբաստացու կազմած ***«Բառգիրք հայկազեան լեզուի»*** բառարանի (հ. 1, 2, 1749, 1769, նույն տպ.) կազմման աշխատանքներին:

ԱՆԱՆՅԱՆ Պողոս (Անտոն) Գրիգորի (27.4.1922, Կ. Պոլիս–11.7.1998, Բեյրութ), բանասեր, պատմաբան: 1943-ից՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, 1970-ից՝ աբբահայր: Հռոմի Գրիգորյան համալսարանում ուսումնասիրել է փիլ. և աստվածաբանություն: 1960-ին ձեռնադրվել է վարդապետ, 1964-ից միաբանության ներկայացուցիչն էր Վատիկանում:

Լույս են տեսել Ա-ի «Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները» (1960, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի» (1964, նույն տպ.), «Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարօզութենէն առաջ» (1979, նույն տպ.): Ա-ի աշխատասիրությամբ հրատարակվել են Զաքարիա Ձագեցու «Ճառք» (1995), Կորյունի «Վարք Մաշտոցի» (1998) երկերը:

ԱՆԱՆՅԱՆ Վախթանգ Ստեփանի [8.8.1905, գ. Պողոսքիլիսա (այժմ՝ Դիլիջանի շրջագծում)–4.3.1980, Երևան], գրող: Աշակույթի վաստ. գործիչ (1968): Աշխատել է «Ռոման-թերթ» (1929–30) պատանեկան, «Մաճկալ» (1930–31), «Սոցիալիստական գյուղատնտեսություն» (1931–35) թերթերի խմբագրություններում, 1935-ին եղել է *«Կոլխոզնիկ»* թերթի պատ. խմբագիրը:

Լույս են տեսել Ա-ի «Որս» (1934), «Որսորդական պատմվածքներ» (պր. 1–8, 1947–77), «Մանկությունը լեռներում» (1955), «Լեռներ հայրենի» (1963) պատմվածքների ժող-ները, «Կրակե օղակի մեջ» (1930), «Սևանի ափին» (1951), «Հովազաձորի գերիները» (1956) վիպակները [վերջին երկուսի հիման վրա ստեղծվել են «Լեռնային լճի գաղտնիքը» (1954) և «Հովազաձորի գերիները» (1957) կինոնկարները (երկուսն էլ՝ Հայֆիլմ)], «Երկերը» (հ. 1–6, 1968–71, հ. 1–4, 1984):

Ուշագրավ է Ա-ի «Հայաստանի կենդանական աշխարհը» (հ. 1–5, 1961–75) աշխատությունը, որտեղ ամփոփված են Հայաստանում երբևէ ապրած և ապրող կենդանիների մասին տեղեկություններ: Ա-ի ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1970):

Գրկ. **Գյուլնազարյան Խ.**, *Վախթանգ Անանյան. Կյանքն ու գրական գործունեությունը, Ե., 1963: Վախթանգ Անանյան: Մատենագիտություն, Ե., 1980:*



Վախթանգ Անանյան



Վ. Անանյանի *«Երկեր»-ի (հ. 2, 1984, Ե., «Սովետական գրող») կազմը*

ԱՆԱՆՈՒԿ (Տեր-Դանիելյան) Դավիթ Հովհաննեսի [1879, գ. Մեծշեն (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–1942, Աստրախան], հրապարակախոս, պատմաբան: Սկզբում եղել է ՀՅԴ անդամ, 1905-ից անդամակցել է Հայ սոցիալ-դեմոկրատ. բանվոր. կազմակերպությանը (սպեցիֆիկներ), դարձել նրա գաղափարախոսը: Աշխատակցել է «Մշակ» և «Նոր հոսանք» (1913–15, Թիֆլիս) թերթերին, կազմակերպել *«Մեր ուղին»* (1912), *«Գործ»* (1917–18, երկուսն էլ՝ Բաքու), «Հայաստանի կոոպերացիա» (1919–20), *«Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի»* (1921), «Նորք» (1922–28, երեքն էլ՝ Երևան) պարբ-ների հրատ-ը:

Լույս են տեսել Ա-ի «Բանուորական նոր օրէնքները» (1914, Բաքու, Ն. Երևանցյանի տպ.) բանվորների ապահովագրության մասին գրքույկը, «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» (հ. 1, 1916, Բաքու, «Աշխատանք» տպ., հ. 2, 1922, Էջմիածին, Գիտ. ինստ-ի տպ., հ. 3, 1926, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը, որտեղ շարադրել է Արլ. Հայաստանի հասքաղ. և մշակութ. կյանքի զարգացման պատմությունը: «Նոր հոսանք» (1913, № 1–2) թերթում տպագրած «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածաշարով պաշտպանել է մշակութազգ. ինքնավարությունը՝ հակադրվելով ազգերի ինքնորոշման ծրագրին, որի համար Ստեփան Շահումյանը քննադատել է նրան:

1927-ին աքսորվել է Ուֆա, այնտեղից 1937-ին անցել է Աստրախան:

ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆԻՉ, V կամ VII դ-ի քերական, Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստ» աշխատության հայ. թարգմանության առաջին մեկնիչներից: Հայ բարբառների գոյության և դրանց ինչյուն. տարբերությունների մասին արժեքավոր վկայություններ տալով՝ կարծում է, որ «խոսքի տեսակներում» (բարբառներ) մի ինչյունի փոխարեն օրինաչափորեն հանդես է գալիս մեկ այլ ինչյուն, ինչպես՝ բազուկ-պազուկ-փազուկ:

Գրկ. **Ջահուկյան Գ.**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5–15-րդ դդ.), Ե., 1954:* **Адонц Н.**, *Дионисий Фракийский и армянские толкователи, П., 1915.*



Դավիթ Անանուն

«ԱՆԱՊԱՏԻՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ», գրական հանդես: Լույս է տեսել 1916–17-ին Կահիրեում: Խմբագիր-հրատարակիչ՝ Սուրեն *Պարթևյան:* Հրատարակվել է տարեկան 1 հատոր՝ առանձին տետրակներով: Տպագրել է գրական-գեղ. ստեղծագործություններ, հրապարակախոս. հոդվածներ:



Անապատին ձուշարձանը

ԶԱՑՆ ԲԱՐԲԱՌՈՑ...

«Անապատին յուշարձանը» *հանդեսի (հ. Ա, 1916, Կահիրե) 1-ին էջը*



Հակոբ Անասյան


Հ. ԱՆԱՍՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՐ Բ

Հ. Անասյանի *«Հայկական մատենագիտություն» (հ. Բ, 1976, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

Հիմնականում անդրադարձել է հայ մարդու և հայրենիքի ողբերգությանը: Մշակույթի զարգացումը համարել է հայ ժողովրդի վերածննդի զորեղ միջոց: Հանդեսին աշխատակցել է Ռ. Որբերյանը:

Ա. ԱՆԱՍՅԱՆ Հակոբ Սեդրակի [15.5.1904, ք. Էսքիշեհիր (Խարբերդի նահանգ)–28.1.1988, Լոս Անջելես], պատմաբան-աղբյուրագետ, ձեռագրագետ, մատենագետ: Կալիֆոռնիայի համալսարանի պատվ. դ-ր (1984): Ավարտել է Սբ Ղազարի Մխիթարյան վարժարանը (1925): 1936-ին հայրենադարձել է: 1936–47-ին աշխատել է ԵՊՀ-ում, 1947–77-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ում: 1978-ից ապրել է ԱՄՆ-ում, 1979–88-ին՝ Կալիֆոռնիայի համալսարանի Մերձավորարլ. ուսումնասիրությունների կենտրոնի աշխատակից: Թղթակցել է «Էջմիածին», «Պատմա-բանասիրական հանդես», «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Սիօն» և այլ պարբ-ների:

Հայ ազգ-ազատագր. շարժումների և թուրք-պարսկ. տիրապետության տակ հայերի ծանր վիճակի մասին են Ա-ի «Նպաստ մը հայոց ազատագրական պատմութեան (ԺԷ դար) Մահտեսի Շահմուրատ եւ Յովհաննէս Թութունջի» (1934), «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» (1961), «Ստեփանոս Սալմաստեցի» (1981) երկերը: Աղբյուրագիտ., բնագիտ. կարևոր նշանակություն ունեն «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» (1957), «Հովհաննես Կամենացի. Պատմություն պատերազմին Խոթինու» (1964), «Գրիգոր Շղթայակրի պատմական մեծ հիշատակարանը» (1980) և այլ աշխատություններ:

Ա-ի «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» (1969) ուսումնասիրությունը նշանակալի ներդրում է հայ մատենագիտ-յան պատմության մեջ: Ա. հայտնաբերել է Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» (Մատենադարան, ձեռ. № 2080) դավանաբան. ժող-ը, «Վասն անհիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց» գրվածքն ու «Վասն շատահաջ քննողացն հանդիմանութիւն» նամակը և նորովի ներկայացրել դրանք: Ա-ի «Հայկական մատենագիտություն» (հ. 1–3, 1959–2004) մեծածավալ աշխատության մեջ ներկայացված է հայ մատենագիտության ձեռագիր և տպագիր ժառանգությունը:

Ա. գիտականորեն դասակարգել է հայկ. բնագրերը, բացահայտել խմբագրությունների ժամանակային սահմանները, փոխադարձ աղերսներն ու առնչությունները, նշել հիմն. ու օժանդակ գրակ-ը, աշխատությունների մասին հրապարակված գրախոսությունները: «Էջմիածնի տպարանի սուրբ գրային հրատարակությունները» (1972) աշխատության մեջ անդրադարձել է տպագրությանն առնչվող խնդիրներին: Կազմել և հրատ-յան է պատրաստել Փավստոս Բուզանդի (1953), Մխիթար Գոշի (1954), Եղիշեի (1957), Կիրակոս Գանձակեցու (1961), Կոստանդին Երզնկացու (1962), Արիստակես Լաստիվերցու (1963), Սայաթ-Նովայի (1968) երկերի մատենագիտ-ները: Մեծ է նաև Ա-ի դերը Հայ եկեղեցու պատմության, դավանանքի, աստվածաբան. գրակ-յան ուսումնասիրության և Աստվածաշնչի հայ. թարգմանության գործում («Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը», 1966, 1972, 1976):

Երկ. Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, Ե., 1972: Հերազօտական անկարկներ, հ. 1, Վնն., 1984: Մանր երկեր, Լոս Անջելես, 1987: «Հայկական հարցը» եւ հայկական կոտորածները: Համապարփակ մատենագիտութեան փորձ, Կահիրե, 1995 (համահեղ.): Նամականի: Ընտրանի, Ե., 2004:

Գրկ. Յակոբ Սեդրակի Անասեան, Լոս Անջելես, 1984:

«Ա ն ա ս տ վ ա ծ», պատկերազարդ հանդես (1933–ից՝ երկշաբաթաթերթ): ՀԿ(բ)Կ և ՀԼԿԵՄ Երևանի կոմիտեների հրատ., ապա՝ ՀԽՍՀ մարտնչող անաստվածների միության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1928–35-ին Երևանում: Խմբագրակազմ, պատ. խմբագիրներ՝ Պետիկ Թորոսյան, Էդվարդ *Խոճիկ*, Կարո Ղազարյան, Վարդգես Թաթիկյան, Լևոն Վարդունի, Երվանդ Խոջամիրյան: Քննադատել է կրոնը, արծարծել հակակրոն. պայքարի կազմակերպման հարցեր, տպագրել բնագիտ. գրույցներ և նպաստել մատերիալիստ. գիտելիքների տարածմանը:

«Ա ն գ ի տ ա յ ա ն պ է ս», 1. *Ամիրդովլաթ Ամասիացու* դեղանյութերի բազմալեզու բառարանը:

2. Հովհաննես Ավդալյանցի կազմած ժող-ը: Տպագրվել է 1821-ին Կալկաթայում՝ Պողոս Հորդանանյանի տպարանում: Տպագրիչ՝

Հովհաննես Տեր-Հակոբյան: Անգլիացի մատենագիրների երկերից քաղվածաբար կազմված խրատական և հոգեզվարճ գիտելիքների ձեռնարկ է:

«ԱՆԴԱՍՏԱՆ», գրակ-յան և արվ-ի եռամսյա հանդես, ապա՝ տարեգիրք: Լույս է տեսել 1952–69-ին Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Բյուզանդ *Թոփալյան:* Տպագրել է գեղ. գործեր, գրակ-յան, արվ-ի, գեղագիտ-յան հարցերին նվիրված հոդվածներ, հայ նկարիչների գործերի գունավոր վերարտադրություններ: Զգալի տեղ է հատկացրել խորհրդահայ և թարգման. (հիմնականում՝ ֆրանս-ից) գրակ-յանը, հայ դասականների (Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Հ. Թումանյան, Դ. Վարուժան, Ե. Չարենց և ուր.) ստեղծագործություններին: Աշխատակցել են Հ. Զարդարյանը, Զ. Որբունին, Վ. Քաչան, Վ. Մավյանը և ուր.: 1980-ին լույս է տեսել «Ա.»-ի հավելված «Կամ» հանդեսը (3 համար, հիմնադիր-խմբագիր՝ Մարկ Նշանյան):



«Անդաստան»,
1952–69, Փարիզ
(№ 18, 1952)

«ԱՆԴՐԱԴԱՐՁ», ազգ., մարզ. ամսաթերթ: Հայոց ազգ. մարզ. միության հրատ.: Լույս է տեսնում 1993-ից Ամմանում (Հորդանան): Խմբագիր՝ Հայկավետ Չըգրըճյան: Լուսաբանում է միության գործունեությունը, հայկ. համայնքի ազգ. կյանքը, տպագրում լուրեր ՀՀ-ից, Սփյուռքից, միջազգ. անցուդարձից:



«Անդրադարձ»,
1993-ից, Ամման
(№ 9, 2012)

ԱՆԴՐԱՆԻԿ [Օզանյան Անդրանիկ Թորոսի, 25.2.1865, Շապին-Գարահիսար–31. 8. 1927, Չիկո (Սակրամենտոյի մոտ, ԱՄՆ), թաղվել է Ֆրեզնոյում (ԱՄՆ), 1928-ին աճյունը տեղափոխվել է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատուն, 2000-ին՝ Երևան, ամփոփված է Եռաբլուրում], ազգ-ազատագր. շարժման գործիչ, զորավար: Հայաստանի Ազգ. և Բուլղարիայի ժող. հերոս, գեն-մայոր (1918): Նրան մեծ համբավ են բերել հատկապես Առաքելոց վանքի (1901, նոյեմբ.) ու Աղթամարի (1904, օգոստ.) կռիվները և Դիլմանի ճակատամարտը (1915, ապրիլ):



Անդրանիկ Օզանյան

Բալկանյան 1-ին պատերազմում (1912–13) Գարեգին Նժդեհի հրամանատարության ներքո Ա. կազմավորել է Հայկ. կամավոր. վաշտ և բուլղ. բանակի կազմում մարտնչել թուրք. զորքերի դեմ, արժանացել սպայի կոչման ու մարտ. շքանշանների: Առաջին աշխարհամարտի (1914–18) սկզբին եկել է Թիֆլիս, նշանակվել Հայկ. 1-ին կամավոր. ջոկատի (Կովկասյան բանակի կազմում) հրամանատար:

1917-ին նախաձեռնել է Արևմտահայերի 1-ին համագումարի հրավիրումը (մայիսի 2–11), ընտրվել համագումարի պատվ. նախագահ և Արևմտահայ ազգ. խորհրդի անդամ: 1917–18-ին Թիֆլիսում հրատարակել է «Հայաստան» թերթը (կոչվել է նաև Անդրանիկի պաշտոնաթերթ)՝ պատերազմից ունեզրկված, գաղթական արևմտահայության խնդիրները լուսաբանելու համար: Ա-ին թերթի պատրաստման գործում մեծապես աջակցել են Հովհաննես Թումանյանը և Վահան Թոթովենցը:

1918-ի հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի պայմանները չընդունելով՝ Ա. հեռացել է նորահռչակ Հայաստանի Հանրապետությունից, բայց Վան անցնել չի հաջողվել և զորքով ու գաղթականներով մնացել է Զանգեզուրում: 1919-ի ապրիլին վերադարձել է Էջմիածին, զորքը ցրել և մեկնել է արտասահման: 1922-ից հաստատվել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում:

Լույս են տեսել Ա-ի «Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը (1932, Բ.), «Մարտական հրահանգներ...» (1992, Ե.), «Առաքելոց վանքին կռիւը» (1992, Ե.), «Զօրավար Անդրանիկ կը խօսի...» (1994, Բոստոն) երկերը:

Հայաստանի բազմաթիվ վայրերում Ա-ի անունով կոչվել են փողոցներ, հրապարակներ, կանգնեցվել են նրա հուշարձանները, հյուսվել երգեր, գրվել վեպեր, բանաստեղծություններ:



Անդրանիկի
«Առաքելոց վանքին կռիւը» (1992, Ե., ԵՊՀ հրտր.) գրքի կազմը


Գրկ. **Մարմարեան Ա.,** *Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, ԿՊ, 1920:* ***Զօրավար Անդրանիկի կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը (1914–1917), Բոստոն, 1924:*** **Թերզիբաշեան Ա.,** *Անդրանիկ, Փ., 1942:* **Ահարոնեան Վ.,** *Անդրանիկ: Մարդը եւ ռազմիկը, Բոստոն, 1957:* **Չելեպյան Ա.,** *Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Ե., 1990:* **Կարապետյան Հ.,** *Անդրանիկ (կյանքն ու գործունեությունը), Ե., 1992:* **Աղայան Ծ.,** *Անդրանիկ, Ե., 1994:* **Սիմոնյան Հ.,** *Անդրանիկի ժամանակը, գիրք 1–2, Ե., 1996:* **Այվազյան Հ.,** *Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Ե., 2004:*



Անդրանիկ Անդրեասյան



Ա. Անդրեասյանի *«Անմարմին սէրը» (1983, Լոս Անջելես) գրքի կազմը*



Վազգեն Անդրեասյանի *«Հազարհատ» (հ. Գ, 1994, Բեյրութ) գրքի կազմը*

ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾԿԵԱՑԻ ՊԱՐՈՆՏԵՐ, հավանաբար XVII դ–ի տաղերգու: Հայտնի են «Տաղ վարդի եւ պլպուլի...» (Մատենադարան, ձեռ. № 2339), «Տաղ սեղանոյ եւ ուրախութեան» (ձեռ. № 3751) երգերը: Գրել է նաև պանդխտության երգեր՝ «Տաղ դարիպի...» (ձեռ. № 2339), «Տաղ ի վերայ ղարիպի...» (ձեռ. № 8274, նաև Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 412):

ԱՆԴՐԵԱՍ ԵՎԴՈԿԱՑԻ (1541, Եվդոկիա–մ. թ. անհտ), գրիչ, ժամանակագիր: Նրա ժամանակագրությունն ընդգրկում է 1453–1668–ի իրադարձությունները: Տեղեկություններ է հաղորդում թուրք–պարսկ. պատերազմների, ջալալիների 1601–ի արշավանքների, Եվդոկիայի հայերի վերաբերյալ: Օգտվել է գրավոր աղբյուրներից, իսկ XVI դ–ի կեսից հետո տեղի ունեցած իրադարձությունները շարադրել է որպես ականատես:

Երկ. Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., կազմ.՝ Վ. Հակոբյան, հ. 1, Ե., 1951, էջ 154–164:

Գրկ. Պատկանեան Ք., Նշխարք մատենագրութեան հայոց, ՍՊր, 1884, էջ 41–49:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Անդրանիկ Վահանի [4.10.1909, գ. Հազարի (Խարբերդի նահանգ)–4.7.1996, Լաս Վեգաս (ԱՄՆ), աճյունասափորը թաղված է Երևանում], գրող, խմբագիր: Մեծ եղեռնից մազապուրծ՝ ապաստանել է Ալեքսանդրապոլի, ապա՝ Կ. Պոլսի և Հունաստանի որբանոցներում: 1928–ին հաստատվել է ԱՄՆ–ում: 1936–37–ին՝ ***«Նոր գիր»*** ամսաթերթի, 1957–69–ին՝ ***«Պայքար»*** օրաթերթի, 1963–68–ին, միաժամանակ՝ «Պայքար» հանդեսի, 1937–57–ին և 1970–ից՝ ***«Նոր օր»*** օրաթերթի խմբագիր:

Լույս են տեսել Ա–ի «Սպիտակ արդարութիւն» (1938), «Կարմիր ասպատակի օրագրէն» (1947, Բոստոն), «Վերջին կայանը» (1956), «Մփիւռքը եւ հայրենիքը» (1962, Բ., «Զարթոնքի» տպ.), «Տարագիր երկինքի տակ» (1967), «Անմարմին սէրը» (1983, Լոս Անջելես, «Ապրիլ» տպ.), «Դառնության բաժակը» (1984) պատմվածքների, ուղեգրությունների ժող–ները, «Երկար գիշերին մէջէն» (1974), «Փլուզում եւ վերածնունդ» (հ. 1–3, 1985–93, Բոստոն, «Պայքարի» տպ.) վեպերը, «Խոհեր» (հ. 1–3, 1961–80), «Հայկական դատին նոր հանգրուանը» (1967) աշխատությունները:

ՀԳՄ Խ. Աբովյանի անվ. (1985), ԹՄՄ «Հայկազեն Ուզունյան» գրական (1987) մրց–ներ:

Երկ. Երկերի ժող., գիրք 1–3, Ե., 2006: Գրականութեան եւ գրողների մասին: Դատումներ եւ գնահատումներ, Լոս Անջելես, 1988:

Գրկ. Դանիելյան Ս., Ամերիկահայ վիպագիրներ, Ե., 1990:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Գալուստ Սարգսի (1.1.1869, Մուշ–17.3.1906, Կ. Պոլիս), հրապարակախոս, խմբագիր: Աշխատակցել է Կ. Պոլսի «Մասիս» պարբ–ին, 1898–ից՝ ***«Բիւրակն»*** թերթի խմբագիր: Հոդվածներում հաճախակի անդրադարձել է արևմտահայ գրական լեզվի մաքրության և գրակ–յան ժողովրդայնության հարցերին: Հայ. է թարգմանել Հաքսլիի «Գիտական զրույցներ» ժող–ը և նրա ազդեցությամբ գրել ու հրատարակել «Գիտութիւններու վրայ ժողովրդական դասեր: Հետեւողութեամբ Հըքսլէյի» (ԿՊ, 1897, Ճանիկ Արամյանի տպ.) աշխատությունը:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Վազգեն [10.4.1903, գ. Հազարի (Խարբերդի նահանգ)–30.11.1995, Փարիզ], ճարտարագետ, խմբագիր: 1915–ին Երզնկայում աշակերտել է Վահան ***Թոթովենցին***, տեղահանության ժամանակ ապաստանել է Թիֆլիսում, որտեղ նորից հանդիպել է ուսուցչին և նրա հետ աշխատել Անդրանիկի «Հայաստան» թերթի խմբագրությունում: Քինադադարից հետո (1918) տեղափոխվել է Կ. Պոլիս: 1923–ին ավարտել է Ազգ. կեդրն. վարժարանը: 1923–ին գաղթել է Ֆրանսիա, ապաստանել նախ Մարսելում, ապա՝ Փարիզում, որտեղ 1927–ին ավարտել է (Զատիկ ***Խանզադյանի*** մեկենասությամբ) Ազգ. արվ–ի և ճարտարագիտ–յան դպրոցը: Աշխատել է Arsenal de l'Aeronautique պետ. օդանավաշին. ընկերությունում: 1913–ից անդա–

մակցել է հայ սկաուտ. շարժմանը, 1918-ին՝ ՀՄԸՄ անդամ: 1924-ին հիմնադրել է Մարսելի ՀՄԸՄ մասնաճյուղը:

Լույս են տեսել Ա-ի «Հայ սկաուտին առաջնորդը» (1946, Փ., Տեր-Հակոբյանի տպ.), «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի» (1977, Բ., «Սևան» տպ.), «Անդրանիկ-Պետրոս Մարզպանեան» (1982, Բ., Տոնիկյան տպ.), «Հազարիա-պատում» (հ. Ա-Գ, 1985–94, նույն տպ.) աշխատությունները:

«ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ», պատկերազարդ ամսագիր: ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի կինբաժնի պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1922–24-ին Թիֆլիսում: Պարբ-ի նպատակը աշխատավոր կանանց կրթելն ու լուսավորելն էր, նրանց հաս-քաղ. իրադարձությունների ոլորտ ներգրավելը: Ունեցել է «Քաղաքական», «Գիտական», «Գրական» բաժիններ: «Անդրկովկասի աշխատավորուհու կյանքից», «Տուն և տնտեսություն» խորագրերով տպագրել է լուրեր, տեղեկություններ կանանց հաս. գործունեության և առօրյայի մասին:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ, XIV դ-ի հայ գրիչ: 1327-ին Իտալիայի Սալեռնո քաղաքում ընդօրինակել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (Մատենադարան, ձեռ. № 1562) պոեմը:

«ԱՆԻ» («Ani»), հայագիտ. եռամսյա հանդես, ապա՝ տարեգիրք: Լույս է տեսել 1935–38 և 1941–43-ին [որպես տարեգիրք (2 գիրք)] Բուխարեստում՝ ռում.: Խմբագիր՝ Հակոբ *Միրունի*: Ռումին ժողովրդին ծանոթացրել է հայոց պատմությանն ու մշակույթին, լուսաբանել հայագիտ. խնդիրներ, արտացոլել հայերի դերը Ռումինիայի մշակութ. կյանքում: Տարեգրքում զետեղվել են Հ. Աաստուրի, Յ. Լեվսիուսի, Լ. Հաուպտի, Ն. Յորգայի, Ն. Ադոնցի, Ա. Թիրյաքյանի, Շ. Դիլի, Ն. Մառի, Կ. Պարտուտցիի, Ա. Ալպոյաճյանի, Գ. Մեսրոպի, Ն. Գասապյանի և ուր. հայագիտ. հոդվածները: Թարգմանաբար տպագրել է հայ գրողների ստեղծագործություններից:



«Անի», *1946–55, Բեյրութ (№ 5, 1955)*

«ԱՆԻ», գրակ-յան և արվ-ի ամսագիր: Լույս է տեսել 1946–55-ին (ընդհատումներով) Բեյրութում: Խմբագիր-հրատարակիչ՝ *Վահե-Վահյան*: Տպագրել է հայ և օտար գրողների գործեր, անդրադարձել խորհրդահայ գրակ-յան զարգացման ուղիներին, զգալի տեղ է հատկացրել բանասիր., գրաքննադատ., մշակութ. հոդվածներին, լուսաբանել սփյուռքահայ աշխատավորության կյանքը: Նպաստել է Հայրենիք-Սփյուռք մշակութ. կապերի ամրապնդմանը: Ունեցել է «Անի» մատենաշար: Աշխատակցել են Ս. Տերունյանը, Զ. Մելքոնյանը, Դևը, Բ. Թոփալյանը, Ս. Փանոսյանը, Ա. Անդրեասյանը, Տ. Վարժապետյանը, Զ. Որբունին, Հ. Զարդարյանը, Գ. Սևանը, Ա. Դարյանը և ուր.:



«Անի», *1986–94, Փարիզ (№ 1, 1986)*

«ԱՆԻ» («Ani»), ազգ., գրական-գեղ. պարբերաթերթ: Լույս է տեսել 1986–94-ին Փարիզում՝ ֆրանս.՝ «Արշակ Չոպանյան» ակումբի մեկենասությամբ: Հայ սփյուռքի հետազոտության կենտրոնի հրատ.: Հիմնադիր՝ Ժան-Կլոդ Քեպապճյան, խմբագիր՝ Պետրոս Տեր-Սարգսյան: Ձանացել է համախմբել ֆրանսահայ մտավորականությանը, տպագրել է պատմագիտ-յան, գրակ-յան և մշակույթի խնդիրներին նվիրված հոդվածներ: Աշխատակցել են նաև ֆրանսիացի անվանի պատմաբաններ ու գրողներ:

ԱՆԻԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, ձևավորվել է Անիի գրչության կենտրոնում՝ բուն քաղաքի և մերձակա գրչատներում (Հոռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի վանքեր) XI–XIV դդ-ում: XI դ-ի 2-րդ կեսին Արշարունիքի Սանդղկավանքում ստեղծվել են ինքնատիպ ձեռագրեր, որոնք հավանաբար Բագրատունյաց շրջանի գրքարվ-ի դպրոցի վերջին շքեղ նմուշներից են՝ 1053-ի Ավետարանը (ձեռ. № 3793), *«Մողնու Աւետարանը»* (1060, ձեռ. № 7736, երկուսն էլ՝ Մատենադարան), որոնց գրիչը Հովհաննեսն է (ավարտել է նաև մեծ կորուստներով մեզ հասած *«Բեգոյնց Աւետարանը»*, 1060, Մատենադարան, ձեռ. № 10919): Այս ձեռագրերից է Հայաստանում



«Քրիստոսի հայտնությունը աշակերտներին», մանրանկար, «Կարսի Աւետարան» (XI դ., Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2556)



Խորան, «Հաղպատի Աւետարան» (1211, ծաղկող՝ Մարգարե, Մատենադարան, ձեռ. № 6288)



«Խաչելություն», մանրանկար, «Մողնու Աւետարան» (1060, ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի, Մատենադարան, ձեռ. № 7736)

սկզբնավորվել ավետարանիչների, յուրաքանչյուր Ավետարանի անվանաթերթի (կիսախորան՝ բուս. և կենդ. զարդերով, վրան՝ խաչ, ավետարանչի խորհրդանիշով զարդարուն սկզբնատառ) պատկերման կանոնական տիպը: Փոխվել է նաև խորանների գլխամասը (կամարի կիսաշրջանը՝ զարդարուն ուղղանկյան մեջ): Խորանների կամարամեջերում հանդիպում են «Նեղոսյան տեսարաններ» («Մողնու Աւետարան»), բազմապիսի իրական և երևակայական կենդանիներ ու թռչուններ: Թերթի 1-ին էջը ծածկված է տերուն. նկարներով, մյուսը դատարկ է:

Սանդղկավանքում Հովհաննեսի ընդօրինակած 3 Ավետարաններից ամենաշքեղը «Մողնու Աւետարանն» է: Հուն. ազդեցությունն արտահայտված է «Բեգյունց Աւետարանի» և 1053-ի Ավետարանի ավետարանիչների պատկերներում և հուն. անվանատառերում:

Առանձին խումբ են «բյուզանդամետ» համարվող ***«Տրապիզոնի Աւետարանը»***, ***«Կարսի Աւետարանը»***, 1071–78-ի Ավետարանները (Մատենադարան, ձեռ. № 6975 և 10434): «Տրապիզոնի Աւետարանն» ավելի է հակված բյուզանդա-հելլենիստ. ազդեցություններին ու վերապրուկներին: «Կարսի Աւետարանում» առկա են Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի գրքարվ-ի զարգացման սաղմերը:

XI դ-ի մատյանները մեծ մասամբ խոշոր են, իսկ XII դ-ի ձեռագրերի չափերն ավելի փոքր են (Մատենադարան, ձեռ. № 7779՝ Կարին, ձեռ. № 2877՝ Երզնկա, ձեռ. № 6249՝ Սյունիք, ձեռ. № 313, 379, 4753՝ Եղեսիա, ձեռ. № 7635, 10360՝ Խարբերդ, Վենետիկի № 961/87 ձեռագիրը՝ Անի, ևն):

XII դ-ում ձեռագրերի ձևավորումը համեստ է, հաճախ բացակայում են սյուժետային մանրանկարներն ու ավետարանիչների պատկերները: Փոխվել է գլխազարդի և սյուների համամասնությունը, խորանները վերածվել են դեկորատիվ զարդարուն թերթերի, գլխազարդերի շուրջը պատկերվել են բազմաթիվ խորհրդանշ. կենդանիներ, թռչուններ, բույսեր: Վերջնական տեսք են ստացել 4 Ավետարանների անվանաթերթերը, մեծացել են գլխազարդի չափերը, հարստացել է գծագիրը: Տեքստերը գրվել են ուղղագիծ, երբեմն՝ բոլորագիծ երկաթագրով: Գլխ. Ավետարանների սկզբնատառերը գրված են ոսկով (Մատենադարան, ձեռ. № 2952, 7737):

XII դ-ի վերջի–XIII դ-ի սկզբի Ա. մ. դ-ի գործերից մեզ են հասել *Իգնատիոսի*՝ Անիում ծաղկած մի քանի ձեռագրեր:

Ա. մ. դ. վերելք է ապրել XIII դ-ի 1-ին տասնամյակներին: ***Մարգարեն*** 1211-ին Բեխենց վանքում պատկերազարդել է ***«Հաղպատի Աւետարանը»*** (Մատենադարան, ձեռ. № 6288), որն այդ դպրոցին ամենաբնորոշ ձեռագիր մատյան է: Նույն գրչատանն է ստեղծագործել ծաղկող Տիրացուն: Բազմաթիվ ձեռագրերի հեղինակ է գրիչ և մանրանկարիչ Իգնատիոսը, որի լավագույն գործերից են ***«Բագնայրի Աւետարանը»*** (1232, Մատենադարան, ձեռ. № 1519) և 1236-ի Ավետարանը (Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանք, ձեռ. № 36): 1298-ին ձեռագիր է ընդօրինակել և ծաղկել գրիչ Եղբայրիկը (տերուն. և ավետարանիչների պատկերների հեղինակ՝ Խաչատուր): Անիի դպրոցում է ձևավորվել նկարիչ Մխիթար Անեցու արվ-ը: Մեզ հասած վերջին ձեռագիրն ստեղծել է Անի քաղաքի եպս. Հովհաննես Ոսկեփորիկը XV դ-ի սկզբին (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 55): Անիի բազմակի ավերումների և անեցիների արտագաղթի հետևանքով կորել են բազմաթիվ ձեռագրեր, սակայն պահպանված փոքրաթիվ մատյանները վկայում են այդ դպրոցի բարձր մշակույթի մասին:

Գրկ. Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, Ե., 1983: **Մաթևոսյան Կ.,** *Նկարիչ Մարգարեի «Մոպր Երուսաղեմ» մանրանկարը, «ԼՀԳ», 1982, № 9:* **Der Nersessian S., Mekhitarian A.,** *Miniatures arméniennes d'Ispahan, Bruxelles, 1986.*

ԱՆԻՍՈՆՅԱՆ Գրիգոր Յուրիի (ծ. 13.9.1951, Թբիլիսի), լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1973): Աշխատել է Երևանի մի շարք հրատարակչություններում, 1984-ից՝ ՀԳՄ-ում, ապա թղթակցել է Արմենպրես և «Նոյյան տապան» լրատվ. գործակալություններին: 1997-ին Քիշնևում հիմնադրել է *«Նոյև կովչեգ»* (ռուս.) տեղեկատվա-վերլուծ. թերթը և «Նոյյան տապան մեդիա» ընկերությունը: 1999-ից իր գործունեությունը շարունակում է Մոսկվայում:

ՌԺՄ (1998-ից) և ՌՀՄ (2000-ից) անդամ:

ՌԺՄ մրց., «Անվտանգության, պաշտպանության և իրավակարգի հիմնահարցերի ակադեմիա» համառուս. ՀԿ-ի Մ. Լոմոնոսովի անվ., ՌՀՄ «Փառքի սուտակե խաչ» շքանշաններ:

«ԱՆԻՎ» («Анив»), մշակութ., պատմ., հաս-քաղ. հանդես: Լույս է տեսնում 2005-ից Մինսկում՝ ռուս.: Խմբագիրներ՝ Արմեն Խեչոյան, Կարեն Աղեկյան: Անդրադառնում է հայ գրական-մշակութ., հաս-քաղ. կարևոր իրադարձություններին, պատմ. անցյալին, ականավոր դեմքերին, ճարտ. հուշարձաններին: «Մենք» խորագրով ներկայացնում է հայ լուսանկարչության պատմությանը նվիրված նյութեր և լուսանկարներ:

«ԱՆԿԱԽ», հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 2009-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Վարդուհի Իշխանյան: Անդրադառնում է ՀՀ հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. բնագավառների կարևոր իրադարձություններին, տպագրում է նյութեր անվանի մարդկանց, հայ ժողովրդի պատմ. և մշակութ. անցյալի վերաբերյալ, բժշկ. հոդվածներ, հարցազրույցներ, էսսեներ, մարզ. նյութեր ևն: Ունի էլեկտրոնային տարբերակ՝ հայ., ռուս. և անգլ.:

«ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ», հրապարակախոս-քարոզչ. շաբաթաթերթ: ԱԻՄ պաշտոնաթերթ: Առաջին բացահայտ ընդդիմադիր թերթը Խորհրդ. Հայաստանում: Լույս է տեսել 1987–2003-ին Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Պարույր *Հայրիկյան*, խմբագիրներ՝ Ռաֆայել Համբարձումյան, Գևորգ Միրզոյան, Երազիկ Գրիգորյան, Վահան Իշխանյան, Աշոտ Մաշուրյան, Սուսաննա Գրիգորյան: Նպաստել է անկախության և ինքնորոշման գաղափարների տարածմանը, տպագրել է պատմ., քաղ. վերլուծականներ, ներքաղ. կյանքի տեղեկություններ: 1997-ից լույս է տեսել որպես ներկուս. շրջաբերական:

ԱՆԿԱՆՈՆ ԳՐՔԵՐ, անկանոնական կամ ապոկրիֆ գրքեր, քրիստ. գրակ-յան պատմության մեջ այն գրվածքները, որոնք բովանդակությամբ առնչվում են Աստվածաշնչին, բայց դուրս են մնում նրա կանոնական կազմից: Ա. գ-ում ամփոփված են կրոն. ավանդություններ՝ մեծ մասամբ վիպ., երբեմն՝ նաև պատմ. հիմք ունեցող գրություններ: Դրանք ստեղծվել են քրիստոնեության վաղ շրջանում և միջին դարերում:

Ա. գ. միջին դարերում թարգմանվել են հուն., ասոր., լատ., հայ., եթովպ., արաբ. և այլ լեզուներով:

Հայ. Ա. գ. հիշատակվում են VI դ-ից մնացած «սուտ գրքերի» մի ցուցակում: Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) ավանդել է արգելված և ընդունելի գրքերի 3 ցուցակ՝ մի շարք անկանոնականների հիշատակմամբ: Վենետիկի Մխիթարյանները Սբ Ղազարի տպարանում հրատարակել են հայ. Ա. գ-ի 3 ժող.՝ «Անկանոն գիրք Հին Կտակարանաց» (1896), «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց» (1898) և «Անկանոն գիրք առաքելականաք» (1904):

Գրկ. **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 898–913:*

«ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1998-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Խաչիկ Գրիգորյան:


Լույս է ընծայում երկլեզու և բացատր. բառարաններ: Հրատարակվել են հին և միջնադարյան հայ ու օտարազգի հեղինակների փիլ. և աստվածաբան. երկեր՝ Է. Դանիելյանի «Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին» (2000), Օգոստինոս Երանելու «Խոստովանությունները» (2002), Եղիշեի «Վարդապե-



«Անիվ», *2005-ից, Մինսկ (№ 1, 2005)*



«Անկախ», *2009-ից, Երևան*



«Անկախություն», *1987–2003, Երևան*



Մ. Օրմանյանի «Հայ եկեղեցին» (ռուս., 2012, Ե., **«Անկյունաքար»***) գրքի կազմը*

«Անտարես մեդիա հոլդինգի» *հրատարակած գրքերից*



Նար-Դոսի «Երկեր»-ի (2012, Ե.) կազմը



Վ. Հյուգոյի «Փարիզի աստվածամոր տաճարը» (2012, Ե.) գրքի կազմը



Ու. Էկոյի «Վարդի անունը» (2014, Ե.) գրքի կազմը

տություն Տիրոջ չարչարանքների մասին...» (2006), «Երգ երգոցի մեկնությունը» (2007), Գրիգոր Տաթևացու «Սողոմոնի գրքերի մեկնությունը» (2009), «Նոր անգլերեն-հայերեն բառարան» (2011), Մ. Օրմանյանի «Հայ եկեղեցին» (ռուս., 2012) ևն:

ԱՆՆԱԼՆԵՐ (լատ.՝ annales, <annus–տարի), ***ժամանակագրություն***, պատմ. դեպքերի գրառումը՝ ըստ տարիների: Հին Հռոմում մ. թ. ա. V դ–ից գերագույն քրմի հրամանով բոլոր կարևոր իրադարձությունները ամեն տարի գրանցվել են գիպսապատ տախտակների վրա՝ համընդհանուր ցուցադրության համար: Ոչնչացած (հավանաբար մ. թ. ա. 387–ին՝ Հռոմի հրդեհի ժամանակ) Ա. վերականգնել են հիշողությամբ և ամփոփել 80 գրքում: Գրառումն ընդհատվել է մ. թ. ա. 123–ի և 114–ի միջև:

Ա. չեն պահպանվել, նրանց բովանդակությունը հայտնի է անալիստների (հին հռոմ. առաջին պատմիչներ) երկերից, որոնք նույնպես կոչվել են Ա.:

Ա. հետագայում երևան են եկել VI դ–ում Արմ. Եվրոպայում և գոյատևել մինչև XIV դ.: Կազմվել են հիմնականում վանքերում: Հայ իրականության մեջ նման գրառումները հայտնի են «տարեգրություն» կամ «ժամանակագրություն» անվամբ:

ԱՆՈՏԱՑԻԱ (լատ.՝ annotatio–նկատառում), **սեղմագիր,** գրքերի, պարբ–ների, հոդվածների (տպագիր կամ ձեռագիր) ևն հրատ–ների բովանդակության սեղմ շարադրանքը՝ արժանիքների և առանձնահատկությունների ընդգծումով: Լինում են նկարագր. կամ հանձնարարական, ընդհանուր կամ մասնագիտ.: Ընթերցողին օգնում են նախն. պատկերացում կազմելու երկի մասին և կողմնորոշվելու գրակ. ընտրելիս:

ԱՆՎԱՆԱԹԵՐԹ, նույնն է, ինչ ***տիտղոսաթերթը:***

ԱՆՎԱՎԵՐ ԳՐՔԵՐ, **անվավերական գրքեր**, Հին աշխարհում սրբազան համարված, բայց ոչ պաշտամունքային գրվածքները, որոնք գաղտնի պահվել են մեհյաններում: Ա. գ. էին, օր., Հին եգիպտ. դիցաբանության մեջ Թոթ աստծուն վերագրվող 42 նվիրական գրքերը, հուն–հռոմ. աշխարհում հայտնի «Սիբիլլյան պատգամները»: Հրեաները նույնպես ունեցել են Ա. գ., որոնք, որպես սրբազան գրակ., պահվել են Երուսաղեմի Սողոմոնյան տաճարում: ***Մխիթար Այրիվանեցին*** ավանդել է XIII դ–ի մի փոքրիկ ցուցակ՝ «Գիրք զոր ունին հրեայքն ի ծածուկ» խորագրով (պարունակում է 10 անուն): Այդ ցուցակում թերևս նշված էին միայն այն գրքերը, որոնք թարգմանված էին հայ.:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ Ա. գ. կոչվել են «գաղտնի գրեանք» կամ «ծածուկ գրեանք»: Հետագայում «անվավերական» անվան տակ երբեմն հասկացվել են նաև Սուրբ գրքի բովանդակությանն առնչվող, բայց նրա մեջ չընդգրկված գրվածքները: Այստեղից էլ Ա. գ. հաճախ նույնացվել է ***անկանոն գրքեր*** հասկացության հետ:

Արդի բանասիր. գրակ–յան մեջ «անվավերական» անունն օգտագործվում է ցույց տալու համար այն գրվածքները, որոնց ստեղծման ժամանակը և հեղինակը վիճելի են: Հայ մատենագրության մեջ Ա. գ–ից են՝ «Թուղթ դաշանց», «Հարցմունք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի եւ պատասխանի հրեշտակին» ևն:

«ԱՆՏԱՐԵՍ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ», հրատարակչության, տպարանի, գովազդային գործակալության համալիր, ներկայացուցչ. ընկերություն: Հիմնադրվել է 1992–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Արմեն ***Սարգսյան***, գլխ. խմբագիր՝ Արքմենիկ ***Նիկողոսյան:***

Հրատարակում է գեղարվ., գիտ., մանկ., թարգման. գրակ., դպրոց. դասագրքեր, բուկլետներ, ամսագրեր, թերթեր, ***«Գրանիշ»*** գրական հանդեսը, ***«Գրեթերթ»*** երիտասարդ. պարբ–ը, «Դատական իշխանություն» գիտամեթոդ. ամսագիրը ևն:

«Ա. մ. հ.» հրատարակում է «Պարտադիր ընթերցանություն», «Ինչո՞ւ և ինչպե՞ս», «Աղմուկ հանած գրքեր», «Արգելված գրքեր»,

«XXI», «XX դարի արձակ», «Նորելյան մրցանակակիրներ» և այլ մատենաշարեր: Արժանացել է գրքի հայրեն. և միջազգ. ցուցահանդես-տոնավաճառների մի շարք մրց-ների: Հրատարակչությունը նաև կազմակերպում է գրական մրցանակաբաշխություն:

«ԱՆՏԻՈՔԻ ԱՍԻՋՆԵՐ», **«Անտիոքի անսիզներ»,** Անտիոքի դքսության օրենքների ժող.: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ կազմվել է Բոհեմունդ IV դուքսի օրոք (1201–35):

Անտիոքի դքսության և նրա հարևան Կիլիկիայի հայկ. թագավորության քաղաքացիները միմյանց հետ ունեցել են առևտր., մշակութ. և քաղ. սերտ կապեր: Ուստի «Ա. ա.»-ի օրենքները կիրառվել են նաև Կիլիկիայում՝ հայերի ու խաչակիրների միջև ծագած վեճերը լուծելիս: ***Մխիթար Սպարապետն*** «Ա. ա.» թարգմանել է հայ. (XIII դ.), Ղևոնդ Ալիշանը 1876-ին՝ հայ-ից ֆրանս.: 1958-ին հրատարակվել է նաև ռուս. (թարգմ.՝ Ա. Պապովյանի):

ԱՆՏՈՆ, XIV դ-ի գրիչ: Կաֆայի (Թեոդոսիա) գրչության դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչներից: Ընդօրինակել է Շառընտիր (1352), Տոնապատճառ (1357), Ժողովածու (1359, բոլորը՝ Մատենադարան, ձեռ. № 7443, 2039, 783):

ԱՆՏՈՆ Ա. (աշխարհիկ անունը՝ Թեյմուրազ Բագրատիոն, 1720–1788), Արլ. Վրաստանի կաթողիկոս-պատրիարք (1744-ից), մատենագիր: 1755-ին գահընկեց է արվել կաթոլիկությանը հարելու պատճառով, այնուհետև անցել է Ռուսաստան: 1762-ին վերադարձել է հայրենիք, 1764-ին վերագրավել կաթողիկոս. աթոռը: Տիրապետել է հուն-ին և հայ-ին: Հեղինակ է ինքնուրույն և թարգման. գործերի (23 հատոր): Ա. Ա-ի «Հակաճառութիւն» (բառացի՝ «Պատրաստաբանութիւն», գիրք Ա-Գ, 1750–52, հրտ.՝ 1892) դավանաբան-ընդդիմախոս. մեծածավալ երկի Բ գրքի IV և Գ գրքի XXIII գլուխները վերաբերում են հայերին: Ուշագրավ են նրա թարգմանությունները հայ-ից՝ Թիֆլիսի հայոց կաթողիկե (այժմ՝ Սբ Գևորգ) եկեղեցու միաբան Փիլիպպե քհն. Ղայթմազաշվիլու աշխատակցությամբ («Եփեսոսի պատմութիւն», թրգմ.՝ 1776, Կյուրեղ Աղեքսանդրացու «Գանձ», թրգմ.՝ 1788, «Քերականութիւն», որը Մխիթար Սեբաստացու «Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի» գրքի թարգմանությունն է, 1730): Գրել է նաև վարքաբան-վկայաբան. գործեր, որոնցից նշանավոր է «Վկայաբանութիւններ» երկը:

Գրկ. **Մելիքսեթ-Բեկ Լ.,** *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 3, Ե., 1955, էջ 95–103:*




Անտոն Ա



Արամ Անտոնյան

ԱՆՏՈՆՅԱՆ Արամ (1875, Կ. Պոլիս–23.12.1952, Փարիզ), գրող, պատմաբան, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի հայկ. և ֆրանս. վարժարաններում: 1901–05-ին խմբագրել է *«Ծաղիկ»*, 1908-ին՝ *«Լոյս»*, 1909-ին՝ «Խարազան», 1909–10-ին՝ *«Կառափնապատ»* (վերջին երկուսը՝ Երվանդ *Օտյանի* հետ) պարբ-ները: 1915-ի ապրիլի 24-ին հայ մտավորականների առաջին խմբի հետ աքսորվել է Մեսքենե, որտեղից հաջողվել է փախչել Հալեպ:



Ա. Անտոնյանի *«Մեծ ոճիրը» (1919, Բեյրութ) գրքի կազմը*

1928–51-ին եղել է Փարիզի ***Նուբարյան մատենադարանի*** տնօրենը: Հավաքել է հայոց պատմությանը և գրակ-յանը վերաբերող արժեքավոր նյութեր ու վավերագրեր:

Լույս են տեսել Ա-ի «Դրամի քօղին տակ» (1904, ԿՊ) վեպը, «Ճշմարտութիւնը» (1909, ԿՊ, «Սանզումէի Էֆքեարի» տպ.) վիպակը, «Կաւէ արձաններ» (1910, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) երգիծ. երկը, «Շիրուանզադէ» (1911, ԿՊ, «Շանթ» տպ.), «Պատկերազարդ ընդարձակ պատմութիւն Պալքանեան պատերազմին» (հ. 1–5, 1912–13, Օ. Արզումանի տպ.) աշխատությունները, «Այն սեւ օրերուն պատկերներ...» (1919, Բոստոն, «Հայրենիքի» տպ., վերահրտ.՝ 1985) հուշագրությունը, «Մեծ ոճիրը» (1919, Բ., «Զարթոնքի» տպ., 1921, Բոստոն, «Պահակի» տպ., վերահրտ.՝ 1990) փաստագր. նյութերի ժող-ը: Հեղինակ է «Գանձարան բարոյական դաստիարակութեան» (1907, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.), «Գանձարան: Ընթերցանութեան գիրք:



Խորեն Աշըգյանի *«Կենցաղ եկեղեցակա-նաց» (1891, Կ. Պոլիս) գրքի կազմը*



«Աշխատանք», 1944–47, Կահիրե

Միջին դասընթացքի համար» (1910, ԿՊ, Հ. Գլճյանի տպ.), «Գանձարան: Բարձրագոյն դասընթացք» (1912, ԿՊ, Օ. Արզումանի տպ.), «Դայլայլիկ: Այբբենարան» (1912, նույն տպ.) և այլ դասագրքերի, որոնք բազմիցս վերահրատարակվել են:

ԱՆՏՈՆՅԱՆ Հակոբ (1887, Կ. Պոլիս–1967, Նյու Յորք), բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Կ. Պոլսի Ռոբերտ քոլեջը (1906), ապա՝ Նյու Յորքի համալսարանը (1921): Եղել է Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի քարտուղարը և թարգմանիչը: Առաջին գիրքը («Բիւրեղներ», 1921, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) բանաստեղծությունների, 2-րդը («Բիւրեղներ», 1960, Բ., «Սևան» տպ.) արձակ և չափածո գործերի ժող-ներ են: Թարգմանել է Վ. Շեքսպիրի, Վ. Հյուգոյի, Ա. Լամարթինի, Պ. Վեռլենի, Շ. Բոդլերի, Պ. Շելլիի ստեղծագործություններից:

ԱՇԸԳՅԱՆ Խորեն [աշխարհիկ անունը՝ Գաբրիել, 4(16).11.1842, գ. Քերեմեթ (Թուրքիայի Նիկոմեդիայի գավառ)–26.10(7.11).1899, Կ. Պոլիս], փիլիսոփա, կրոն. գործիչ, արքեպիսկոպոս, խմբագիր: 1864–77-ին Արմաշում խմբագրել է *«Յոյս»* պարբ-ը: 1888–94-ին ձեռնադրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք: 1889-ին հիմնել է Արմաշի դպրեվանքը:

Լույս են տեսել Ա-ի «Համառօտ տրամաբանութիւն» (1871, Արմաշ, Զարխափան Սբ Աստվածածնի վանքի տպ., վերահրտ.՝ 1884, նույն տպ.), «Խնդիր Արեւելեան Եւրոպայի արդի վիճակին մէջ» (1876, նույն տպ.), «Համառօտ փիլիսոփայութիւն» (1885, նույն տպ.), «Կենցաղ եկեղեցականաց» (1891, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ., վերահրտ.՝ 1993) տրամաբան., փիլ., պատմ., կրոն. աշխատությունները:

«ԱՇԽԱՏԱՆՔ», հաս., տնտ., քաղ. շաբաթաթերթ, վերջում՝ եռօրյա: Լույս է տեսել 1910–14-ին Զմյուռնիայում: Արտոնատեր՝ Սեդրակ Թոքաճյան: Տպագրել է հոդվածներ արևմտահայ գավառի իրավազուրկ վիճակի, արևմտահայության Ազգ. սահմանադրության (1860) անգործադրելիության մասին: Հակադրվել է թուրք. կառավարության հայահալած քաղաքականությանը, ունեցել է եվրոպ. կողմնորոշում: «Աշխատանքի թերթոն» խորագրով տպագրել է հայ և օտարազգի հեղինակների պատմվածքներ ու վիպակներ, Ռ. Սևակի, Ի. Տխրունու, Տ. Սյուրմեյանի, Ա. Երկաթի և ուր. բանաստեղծություններից:

«ԱՇԽԱՏԱՆՔ», շաբաթաթերթ (1924-ից՝ երկշաբաթաթերթ): Հայաստանի արհմիությունների խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1922–25 և 1927–29-ին Երևանում: Խմբագիրներ՝ Հարութիկ Գասպարյան, Հայկ *Ազատյան*, Եղիա *Չուբար*, Հովհաննես Պետրոսյան և ուր.: «Արհեստակցական շարժում» հանդեսի (Երևան, 1921–22) շարունակությունն է: Արծարծել է արհմիութ. շարժման, աշխատանքի կազմակերպման և սոցիալ. ապահովագրության հարցեր: Տպագրել է երգիծ. նյութեր և ծաղրանկարներ:

1927–29-ին «Ա.» նկարազարդել են Հակոբ *Կոջոյանն* ու Մարտիրոս *Սարյանը*:

«ԱՇԽԱՏԱՆՔ», եռօրյա թերթ: Հունաստանի կոմկուսի հայկ. բաժանմունքի հրատ.: Լույս է տեսել 1926–27-ին Սալոնիկում: Խմբագիրներ՝ Ստեփան *Կուրտիկյան*, Անտուան Միքայելյան, Պետրոս Ախիկյան: Ձգտել է հունահայ աշխատավորությանը համախմբել պրոլետ. ինտերնացիոնալիզմի գաղափարի շուրջ, ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի հոգևոր և տնտ. ձեռքբերումները: «Ա.»-ին զուգընթաց լույս է ընծայվել «Աշխատանքի մոծակ» (խմորատիպ) երգիծ. շաբաթաթերթը:

«ԱՇԽԱՏԱՆՔ», գրական նյութերի և հաս. թեմաներով հոդվածների ժող.: Կահիրեի հայկ. ընթերցասրահի հրատ.: Լույս է տեսել 1944–47-ին Կահիրեում: Խմբագիր՝ Մաոի *Պեյլերյան*: Սփյուռքահայ, մասնավորապես՝ եգիպտահայ գաղութին ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի կյանքին: Տպագրել է նաև խորհրդահայ գրողների ստեղծագործություններից:

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՐՕՇԱԿ», Ռուսաստանի սոցիալիստ-հեղափոխականների (էսէռ) կուս-յան Անդրկովկասի շրջ. և Թիֆլիսի կոմիտեների պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1918–19-ին Թիֆլիսում: Խմբագր. խորհուրդ (փաստացի խմբագիր՝ Արշամ Խոնդկարյան): 1918-ի հունիսի 29-ի համարում «Բորբա» (ռուս.) պարբ-ից արտատպել է «Բոլշևիկները Ն. Ժորդանիայի մոտ» լուրը, որտեղ խոսվում է Ստեփան *Շահումյանի*՝ հունիսի 6-ի նամակի մասին (տեղն անհայտ է): Նամակում Շահումյանը վրաց կառավարությանն առաջարկել է գործակցել բոլշևիկների հետ՝ թուրք. արշավանքը կասեցնելու համար:

«ԱՇԽԱՐՀ», գրական, հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1960-ից Փարիզում՝ ֆրանս. (8 էջ) և հայ. (4 էջ): Հիմնադիր-խմբագիր՝ Ավետիս *Ալիքանյան,* խմբագիրներ՝ Պարգև Շամիկյան, Գևորգ Սարյան, Ժիրայր *Դեղեյան* (2005-ից): Հայրենիքի շուրջ սփյուռքահայության համախմբման գաղափարի ջատագով է, ֆրանսահայերին ծանոթացնում է ՀՀ-ի ներքին և արտաքին քաղաքականությանը, տնտ. և մշակութ. ձեռքբերումներին, անդրադառնում Հայ դատին, Արցախյան հիմնախնդրին, սատարում Ֆրանսիայում հայապահպանությանը: «Ա.»-ին աշխատակցել են ֆրանսահայ հայտնի մտավորականներ Զ. Խանզատյանը, Մ. Աթմաճյանը, Գառզուն, Հ. Զարդարյանը, Պ. Զարոյանը, Բ. Թոփալյանը, Մ. Մավիյանը և ուր.:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ», V կամ VII դդ-ում կազմված տիեզերագիտության և աշխարհագրության հայ. ձեռնարկ, որին կից եղել է 15 քարտեզ: «Ա.» նշանակում է աշխարհի ատլաս (քարտեզների ժող.): Մեզ են հասել «Ա.»-ի քարտեզները նկարագրող ընդարձակ և համառոտ բնութագրեր: «Ա.»-ի հեղինակի ստույգ անունը հայտնի չէ: Դասավանդվել է միջնադարյան Հայաստանի դպրոցներում՝ Մովսես Խորենացու (V դ.) «Պատմութիւն Հայոց» և Անանիա Շիրակացու (VII դ.) մաթ. ու տիեզերագիտ. աշխատությունների հետ. սովորաբար կցվել է դրանց: Ուստի մեզ հասած ձեռագրերի մի մասում հեղինակ է համարվում Մովսես Խորենացին, մյուսում՝ Անանիա Շիրակացին:

«Ա.» կառուցվածքով նման է հույն աշխարհագիր Կլավդիոս Պտղոմեոսի (90–168) «Աշխարհագրությանը»: «Ա.»-ի ներածականում («Հասարակախօսութիւն») երկրակենտրոն տեսության դիրքերից շարադրված է տիեզերագիտությունը: Երկրի միջօրեականը տրվում է ըստ հույն աշխարհագիր Երատոսթենեսի (մ. թ. ա. 276–194):

Երկի բուն մասը՝ «Երկրաչափը», բաղկացած է 2 բաժնից: Առաջինում («Աշխարհագիր» կամ «Աշխարհագրութիւն») աշխարհի քարտեզագր. նկարագրությունն է, որի հիման վրա կազմվել է աշխարհի քարտեզը՝ «Աշխարհացոյց քարտէզ տիեզերացը»: Հասարակածի նկարագրությանը հետևում է ջրագրությունը՝ Ատլանտյան, Հնդկական օվկիանոսների, Հունական (Միջերկրական ու Սև ծովեր) և Կասպից ծովերի նկարագրությունը՝ նրանց մեջ թափվող գետերով: Մայրցամաքը բաժանվում է 3 մասի՝ «Եվրոպա», «Լիբիա» (Աֆրիկա) և «Ասիա»:

2-րդում («Երկրագրութիւն») առանձին երկրամասերի նկարագրությունն է՝ ըստ մայրցամաքների: Հայաստանի ու հարակից երկրների մոտ ու հեռավոր երկրամասերին վերաբերող բաժինները հիմնականում Պտղոմեոսի աշխատության համապատասխան գլուխների համառոտ շարադրանքն են (առանձին քարտեզներով)՝ հագեցված նոր նյութերով և համապատասխանեցված «Ա.»-ի ստեղծման ժամանակաշրջանին: Հատկապես արժեքավոր են Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Պարսկաստանի, մասամբ՝ Կողքիսի, Հս. Կովկասի («Ասիական Սարմատիա») ու Փոքր Ասիայի («Միջերկրեայք»), Միջագետքի և Ասորիքի նկարագրություններ, որոնց նվիրված է «Ա.»-ի բնագրի մեծ մասը: Հեղինակը, Պտղոմեոսի երկերից բացի, օգտագործել է նաև մեզ չհասած այլ աղբյուրներ, ստեղծել գիտ. եզակի կարևորության կոթող:



«Աշխարհ», *1960-ից, Փարիզ*



«Աշխարհացոյց». *«Աշխարհացոյց Մօսէսի Խորենացւոյ» (1668, Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի, վերևում) և «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց..» (1698, տպագրիչ՝ Երեմիա Մեղրեցի, ներքևում) հրատների փիփղոսափները*



«Ա.» վկայում է, որ վաղմիջնադարյան Հայաստանում եղել է զարգացած քարտեզագրություն, որը նախորդել է արաբ. քարտեզագրությանը: Պահպանվել է նաև XIII դ-ի «Ա.»՝ Վարդան Արևելցու անունով:

Սովսես Խորենացուն վերագրված «Ա.» տպագրվել է 1668-ին (Ամստերդամ, Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպ.), 1683-ին (Սարսել, Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպ.) և 1698-ին (ա. տ., Երեմիա Մեղրեցու տպագրություն)՝ «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք» վերնագրով՝ *«Աղուէսագրքի»* հետ:

Գրկ. **Երեմյան Ս.,** *Հայապատում ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963:* **Патканов К.,** *Армянская география VII века, СПб, 1877; Géographie de Moïse de Corène d'après Ptolémée. Texte arménien, traduit en frangais par le P. A. Soukry, Venise, 1881;* **Marquart J.,** *Eransahr nach der Geographie des ps. Moses Xorenaci, B., 1901.*



«Աշխարհացոյց Հայաստանեայց» *(1778, Վնտ.) քարտեզի անվանացույցը*


«ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ», քարտեզ: Տպագրվել է Վենետիկում 1778-ին: Անվանացույց՝ «Աշխարհացոյց Հայաստանեայց փորագրեալ արդեամբք՝ աղայ Շամիրի, մեծի շամիրեանց՝ տանըն պանծալի.....», չափերը՝ 82 x 82 սմ: Քարտեզի ներքևում՝ անվանացույցի կենտրոնում՝ շքեղ զարդաշրջանակի մեջ, Հայկի, Արամի, Տիգրան Մեծի և Տրդատ Մեծի պատկերներն են, ներքևի ձախ անկյունում՝ հողմացույց:

Քարտեզը փորագրվել է Շահամիր Շահամիրյանի պատվերով ու ծախսերով՝ ի հիշատակ իր վաղամեռիկ Հակոբ որդու: Ըստ Բարսեղ Սարգիսյանի՝ այն տպագրվել է Իգնատիոս Խաչատուրյանի խմբագրությամբ:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԸՍՏ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱՑ», քարտեզ: Տպագրվել է 1751-ին Վենետիկում: Անվանացույց՝ «Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին եւ նոր աշխարհագրաց.....», չափերը՝ 37,5 x 51 սմ: Անվանացույցը քարտեզի ներքևի ձախ անկյունում է՝ զարդաշրջանակի մեջ, մեջտեղում՝ «Աստիճանք մղոնաչափութեան» (մասշտաբ)՝ նույնպես զարդաշրջանակի մեջ: Քարտեզի վրա կան նաև պայման. նշաններ՝ հրաբխի, սարերի ևնի մասին:

«Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին եւ նոր աշխարհագրաց» *(1751, Վնտ.) քարտեզը*

Քարտեզը, որպես ներդիր, զետեղված է Մխիթար Սեբաստացու *«Բառգիրք հայկազեան լեզուի»* (Վնտ., 1769, հ. 2) գրքի Բ էջակալության 232–233 էջերի միջև: Գ. Զարբհանալյանը և Ա. Ղազիկյանն այն անվանել են «Հայաստանեայց փոքր», իսկ Հ. Ստեփանյանը՝ «Հայաստան աշխարհի» փոքրադիր քարտեզ: Ըստ Ս. Ճեմճեմյանի՝ փորագրիչը Զուզեպպե Յուկկին է:


ՈՒՌՈՒՄԻԱՆ
ՄԱՐՏԱՐԱՆ ՄԱՆԱՆԶ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ՀԱՐԱՎ ՄԱՍՆԶ
ՀՅՈՍԻՍ
ՀԱՐԱՎ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ՀԱՐԱՎ ՄԱՍՆԶ
ՄԱՐՏԱՐԱՆ ՄԱՆԱՆԶ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ՀԱՐԱՎ ՄԱՍ

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ», քարտեզ: Տպագրվել է 1791-ին Վենետիկում: Անվանացույց՝ «Աշխարհացոյց Օսմանեան տէրութեան որ ի Եւրոպայ այլեւ փոքր թաթարաց. մասին անատոլիոյ...», չափերը՝ 41 x 24,5 սմ: Անվանացույցը քարտեզի վերևի աջ անկյունում է՝ գծափակ շրջանակի մեջ: Հավանաբար, սա նույն «Աշխարհացոյց տախտակ Սեաւ ծովու եւ շրջակայիցն» քարտեզն է:

Ըստ Բարսեղ Սարգիսյանի՝ քարտեզը փորագրել է Եղիա Էնտազյանը՝ Մխիթարյան տպարանում, իսկ Ս. Ճեմճեմյանի կարծիքով՝ փորագրիչը իտալացի Ալեսսանդրին է:

ԱՇՃՅԱՆ Արամ (1855, Կ. Պոլիս–1909, Կ. Պոլիս), խմբագիր-հրատարակիչ: Կրթությունն ստացել է ծննդավայրում: 1870-ական թթ-ին աշխատակցել է պոլսահայ մամուլին: 1878-ին Ե. Տնտեսյանի հետ հիմնադրել է տպարան և տպագրել հայ. գրքեր: Խմբագրել է *«Ընտանիք»* (1883–84), միաժամանակ՝ *«Լապտեր դիոգինեան»* (1883–88) պարբ-ները:

ԱՇՃՅԱՆ Մեսրոպ [ավազանի անունը՝ Հրայր, 3.1.1941, Բեյրութ–2.12.2003, Նյու Յորք, ամփոփվել է Անթիլիասում (Լիբանան)], եկեղեց., հաս. գործիչ, հրատարակիչ, արքեպիսկոպոս: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (2001): Ավարտել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը (1961): 1970-ին ԱՄՆ-ի Նյու Ջերսիի Փրինստոնի համալսարանում սովորել է աստվածաբանություն: 1963-ին ձեռնադրվել է վարդապետ, 1977-ին՝ եպիսկոպոս:

1964–70-ին դասավանդել է Անթիլիասում և Հալեպում, եղել դպրեվանքի տեսուչ և Բեյրութի Սարտիկյան վարժարանի տնօրեն: 1973–77-ին՝ Սպահանի, 1978–98-ին՝ Հս. Ամերիկայի և Կանադայի թեմերի առաջնորդ: Ա-ի թեմակալության ընթացքում օծվել է 13 եկեղեցի, բացվել 4 վարժարան, հրատարակվել են ավելի քան 60 անուն կրոն. և պատմ. գրքեր (հայ., անգլ.): 1978-ից հրատարակել է «Աւութրիչ» (անգլ.) ամսաթերթը: 1992-ից՝ «Մեծն Ներսես» բարեգործ., հաս. և «Արամ Սանուկյան» մշակութ. ու հաս. կազմակերպությունների նախագահ: 1996–2000-ին՝ Սբ Էջմիածնի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի տնօրեն: 2000-ից՝ *«Մուղնի»* հրատարակչության հիմնադիր-տնօրեն, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի խմբագր. խորհրդի անդամ:

Լույս են տեսել Ա-ի «Սուրբ Ներսես Լամբրոնացի» (անգլ., 1993,). «Կեանքի եւ հաւատքի էջեր» (1993), «Հանդիպումներ» (1993, երկուսն էլ՝ Նյու Ջերսի), «Էջեր հայ եկեղեցւոյ պատմութենէն» (1994, Նյու Յորք), «Լուսավորչի լոյս նշխարները» (2000) աստվածաբան., հայագիտ., գրական ու հրապարակախոս. աշխատությունները: Կազմել է «Անհի հազարամյա փառքը» (2002), «111 հատընտիր հայ բանաստեղծություններ» (2002), «Ս. Էջմիածին. ուղեգրութիւններ» (2003) գրքերը:

Ա-ի մեկենասությամբ տպագրվել են բազմաթիվ գրքեր: 2005-ից ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ում բացվել է Աշճյանի անվ. կենտրոն, որտեղ գործում են գիտ. գրադարան, տպարան, թանգարան: Նրա անվամբ հրատարակվում է մատենաշար:

Կարինթիայի ասպետ. ընկերության հոգևոր խորհրդատուի Սբ Գևորգի մեծ շղթա (1984):

Երկ. Պահն ու յաւերժութիւնը, Ե., 2002: Սրտագահաս Մտրք Սարգիս, Ե., 2002: Armenian Church Patristic and other Essays, N. Y., 1994; The Catholicosi of Etchmiadzin, N. Y., 1995.

Գրկ. Մեր դժուար ժամանակների մեծ հայր (կազմ.՝ Ա. Մելքոնյան, Հ. Մկրտչյան, Հ. Աշճյան), Ե., 2007: Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան: Կենսագրական ակնարկ, Ե., 2011:

«ԱԶՈՒՂ ՂԱՐԻԲ», արլ. ժող. երգախառն սիրավեպ: Ստեղծվել է XVII դ-ում: Գովերգում է ազնիվ, նվիրական սերը, քննադատում մարդու երջանկությունը խորտակող ավատ. օրենքները: Սիրավեպը բազմաթիվ տարբերակներով տարածվել է Այսրկովկասում, Իրանում և Թուրքիայում: Գրառել են Գևորգ Տեր-Աղեքսանդրյանը, Զիվանին և ուր.:


Ալեքսանդրապոլում և Թիֆլիսում 1882–1918-ին մի քանի անգամ տպագրվել է Զիվանու «Աշըղ Ղարիբի հեքեաթը» (փոխադր.՝ տաճկերենից):



Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան



Մ. Աշճյանի *«Լուսավորչի լոյս նշխարները» (2000, Ե., «Մուղնի») գրքի կազմը*



Զիվանու «Աշըղ Ղարիբի հեքեաթը» (1906, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը




«Ապագա բժիշկ», *1958-ից, Երևան*



«Ապագա մանկավարժ», *2002-ից, Վանաձոր*



«Ապագայ», *1975-ից, Մոնրեալ*



Հ. Հեսսեի «Ներսը և դուրսը» (1991, Ե., **«Ապոլոն»***) գրքի կազմը*

Գրկ. Տէր-Աղեքսանդրեան Գ., *Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մաս 1, Թ., 1885, էջ 334–341:*

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ», ԵՊԲՀ պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1958-ից Երևանում: Խմբագիրներ՝ Ամալյա Բաբախանյան, Միքայել Դարբինյան, Արծրուն Կծոյան, Սուրեն Սարուխանյան, Մեդա Թորոսյան: Ծանոթացնում է բուհի գիտակրթ., մշակութ. և մարզ. առօրյային, առավել ուշադրություն է դարձնում առողջության բնագավառի (ՀՀ-ում և արտերկրում) նվաճումներին: Արցախյան ազատամարտի տարինեբին լուսաբանել է ՀՀ-ում և Արցախում ստեղծված իրավիճակը (ռուս. թողարկումները տարածվել են նաև ԽՍՀՄ բժշկ. բուհերում): Հրատարակում է նաև ռուս., անգլ. նյութեր, ունի էլեկտրոնային տարբերակ:

«ԱՊԱԳԱ ՄԱՆԿԱՎԱՐԺ», բուհ. երկշաբաթաթերթ (մինչև 2008-ը՝ ամսաթերթ): ՎՊՄԻ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2002-ից Վանաձորում: Խմբագիր՝ Լևոն Սարգսյան: Լուսաբանում է բուհի գիտակրթ., մշակութ., մարզ. առօրյան, տպագրում է դասախոսների և ուսանողների հոդվածները, ներկայացնում է համալսարանի կերպարվ-ի բաժնի շնորհալի սաների ստեղծագործությունները ևն: Անդրադառնում է նաև բուհի գիտխորհրդի ամենամսյա նիստերում քննարկվող հարցերին:

«ԱՊԱԳԱՅ», հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ: ՌԱԿ-ի պաշտոն. պարբ.: Լույս է տեսնում 1975-ից Մոնրեալում (Կանադա): Խմբագիր՝ Արսեն-Նուբար Սամուրյան: Ծանոթացնում է կանադահայ համայնքի և Սփյուռքի առօրյային, ներկայացնում ՀՀ-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը, մշակութ. կյանքը: Գրական բաժնում տպագրում է հայ գրողների գործեր: 12 հայ. էջերից բացի՝ ունի նաև 2-ական էջ անգլ. և ֆրանս. հավելվածներ:

«ԱՊԱԳԱՅ», մշակութ., հաս. ամսագիր, 2000-ից՝ հայագիտ-իրանագիտ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1995-ից Թեհրանում: Արտոնատեր-խմբագիր՝ Էդիկ ***Բաղդասարյան***: «Ա.» (որպես ամսագիր լույս է տեսել 15 համար՝ ընդմիջումներով՝ հայ. և պարսկ.) մեծ տեղ է հատկացրել իրանահայ համայնքում և ՀՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին, ներկայացրել է հայ և պարսիկ ժողովուրդների մշակութ. արժեքները:

2000-ից տպագրում է հայ, պարսիկ և օտարազգի այլ հայագետների, իրանագետների հոդվածներ, ուսումնասիրություններ (հայ., պարսկ. և անգլ.):

«ԱՊԱՌԱԺ», հաս-քաղ. երկշաբաթաթերթ: ՀՅԴ Արցախի կենտկոմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1991-ից Ստեփանակերտում: Խմբագիրներ՝ Սերգեյ Շահվերդյան, Արկադի Թովմասյան, 2008-ից՝ խմբագր. խորհուրդ: Տպագրում է հայտնի քաղ. գործիչների և մտավորականների՝ կրթության և ազգ. հարցերին վերաբերող վերլուծական հոդվածներ, ակնարկներ Արցախյան պատերազմում (1992–94) զոհված ազատամարտիկների մասին ևն: Մեծ տեղ է հատկացնում Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, սփյուռքահայ հեղինակներին (Ա. Գաթրճյան, Հ. Սասունյան և ուր.), արտատպում է նյութեր ՀՀ և սփյուռքահայ մամուլից:

«ԱՊՈԼՈՆ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1991-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Լևոն ***Մևանյան,*** տնօրեն՝ Աղավնի Գրիգորյան (2014-ից): Բնագրից թարգմանում և հրատարակում է օտարերկրյա գրողների ստեղծագործություններ:

Առանձին մատենաշարով լույս է ընծայել շուրջ 40 անուն գիրք, գլխավորապես՝ XX դ-ի եվրոպ. գրակ-յան դասականների և ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ (Ա. Քամյու, «Ժանտախտը», 1991, Ա. Ռեմբո, «Բանաստեղծություններ», 1991, Վ. Ֆոլկներ, «Չոր սեպտեմբեր», 1991, Հ. Հեսսե, «Ներսը և դուրսը», 1991, Կ. Մարկո, «Ժամանակակից եվրոպական պոեզիա», 2004, «Արդի

ռուսական պատմվածք», 2006, «Բուլղարական էպոս», 2009, ևն): Մեծ ուշադրություն է հատկացվում ժամանակակից հայ գրողների ստեղծագործությունների հրատարակմանը [«Հայկական պոեզիա» (անգլ., 2006), «Այվազյանական ընթերցումներ» (2008), «Արդի հայ պոեզիան» (անգլ., գերմ., ֆրանս., շվեդ., 2012), «Արդի հայ արձակը» (անգլ., 2012), «Արդի գերմանական պոեզիան» (գերմ., անգլ., 2012)]:

«ԱՊՏԱԿ», երգիծ-քաղ. ամսագիր: Հնչակյան կուս-յան պաշտոն. հանդեսը: Լույս է տեսել 1894–97-ին Աթենքում, ապա՝ Լոնդոնում: Խմբագիրներ՝ Ավետիս *Նազարբեկ*, Պետրոս Մարիմյան: Արծարծել է արևմտահայերի քաղ. ազատագրության խնդիրները: Դատապարտել է թուրք. կառավարության հայաջինջ քաղաքականությունը, քննադատել ազատագր. շարժումներին անտարբեր հայ հարուստներին ու կղերին: Տպագրել է երգիծ. բանաստեղծություններ, ֆելիետոններ, ծաղրանկարներ:

«ԱՊՐԻԼ», հայկ. գրատուն-հրատարակչատուն և հանդես Գլենդելում (ԱՄՆ): Լոս Անջելեսի ամենահին հայկ. գրատունն է: Հիմնադրվել է 1978-ին (մինչև 1998-ը գործել է Հոլիվուդում): Հիմնադիր-տնօրեններ՝ Նուբար և Հարութ Երիցյան եղբայրներ, տնօրեն՝ Առնո Երիցյան (2010-ից): 1977-ին Երիցյան եղբայրները հրատարակել են «Ապրիլ» մշակութ. ամսագիրը (Լոս Անջելեսի առաջին հայալեզու պարբ-ը), որը 1978-ից տպագրում են իրենց նորաստեղծ տպարանում:

Ի սկզբանե գրատանը վաճառվող գրքերի 80 %-ը հայ. էր, 20 %-ը՝ անգլ., վերջին տարիներին անգլիախոս հայերի թվի աճին զուգընթաց՝ ավելացել են անգլ., մասնավորապես՝ Հայ դատին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող գիտ., պատմավավերագր. ու գեղ. գրքեր (50 %): Պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում հայ և օտարազգի գրողների հետ, անդրադառնում նոր հրատ-ներին, մշտապես մասնակցում է «Լոս Անջելես Թայմս» թերթի կազմակերպած գրքի ամենամյա փառատոնին:


«ԱՌԱԳԱՍՏ», գրական, մշակութ., հաս. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսնում 2001-ից Գլենդելում (ԱՄՆ): Խմբագիրներ՝ Ստեփան *Ալաջաջյան*, Թերեզ Ալաջաջյան-Հայրապետյան (2009-ից): Ունի «Գրական էջեր», «Դիմանկար», «Ազգային գաղափարախոսություն», «Դեմքեր... Դեպքեր...», «Ակնարկ», «Տեսակետ», «Դիտարկումներ», «Հայաստանյան խճանկար» և այլ խորագրեր: «Ա.»-ին թղթակցում են մշակույթի անվանի գործիչներ Սփյուռքից և ՀՀ-ից:

«ԱՌԱԳԱՍՏ», գրական-գեղ., հաս., հրապարակախոս. հանդես-տարեգիրք: Լույս է տեսնում 2004-ից Մոսկվայում: Հրատարակիչ՝ Գ. Տեր-Գաբրիելյանց, խմբագիր՝ Լևոն Հովսեփյան: Մշտական խորագրերն են՝ «Նախաձեռնություններ», «Տպավորություններ», «Հիշողություններ», «Անոնսներ», «Թարգմանություններ», «Հայ արվեստագետներ», «Նոր գրքեր», «Մշակույթ», «Երկխոսություն» ևն:


«ԱՌԱԿԲ ԵԶՈՐՈՍԻ», առակների ժող.: Հայ. առաջին անգամ տպագրվել է 1784-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում, անգլ-ից թարգմ.՝ Մարգար Շահրիմանյանցի, իտալ. օրինակը սրբագրել է Մխիթարյան միաբան Կոմիտաս վրդ. Կարապետյան Կոստանդնուպոլսեցին: Տիտղթ-ին՝ «Առակք Եզոբոսի փռիւգիացւոյ...» (240 էջ, 8^0, 15 x 8,2 սմ):

Տպագրվել է նաև 1818, 1827, 1849, 1860, 1886-ին (բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Հատընտիր եւ պատկերազարդ առակք Եզոպոսի եւ առածք պէսպէս ազգաց» վերնագրով՝ 1857-ին (Թ., Ալադաթյանի տպ.), 1859-ին (ՍՊր, Ռափայել Պատկանյանի տպ.):


ԱՌԱՆՁԱՐ [Գոյումճյան Միսաք Քերովբեի, 8.9.1877, գ-ք. Թալաս (Կեսարիա)–13.9.1913, Ադանա (Կիլիկիա)], գրող, երգիծաբան: Սովորել է Կարինի Սանասարյան վարժարանում, ավարտել Յուրիխի համալսարանը: 1907-ին եղել է Ալեքսանդրիայի, 1908–13-ին՝ Ադանայի ազգ. վարժարանների տնօրեն:



«Ապրիլ», 1977-ից (1983, № 9, **«Ապրիլ» գրատուն***), շապիկը*




«Առագաստ», *2001-ից, Գլենդել (նոյեմբեր, 2003)*



«Առակք եզոբոսի» *(1784, Տրիեստ) գրքի փիփղոսաթերթը*




Առանձար



«Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» *(1630, Հռոմ) գրքի տիտղոսաթերթը*



«Առավոտ», *1994-ից, Երևան*



«Առաւօտ», *1938-47, Բեյրութ*

Լույս են տեսել Ա-ի «Վշտի ծիծաղ» (1905, Թ., «Հերմես» տպ.) երգիծ. նորավեպերի ժող-ը, «Փրկիչներ» (1907, Ալեքսանդրիա, «Րաֆֆի» տպ.) դրաման: Սամուլում տպագրել է պատմվածքներ, որտեղ պատկերել է հայ ժողովրդի վիճակը սուլթան. Թուրքիայում («Կախաղանէ՛ն...ամուսնութիւն», «Բուրդի վաճառականութիւն», «Սորուքի սանտրը», «Երկու պատկեր», բոլորը՝ 1905, ևն), պաշտպանել հայ ազգ-ազատագր. պայքարի գաղափարը: 1961-ին հրատարակվել է Ա-ի «Վշտի ծիծաղ» պատմվածքների ժող-ը:

Գրկ. **Հակոբջանյան Ա.,** *Առանձար, Ե., 1972:*

ԱՌԱՋԱԲԱՆ, հրատարակության բաղկացուցիչ մաս, որտեղ հեղինակը կամ մեկ ուրիշը ներկայացնում է տվյալ երկի գրության հանգամանքները, նրա նշանակությունն ու առանձնահատկությունները: Ձետեղվում է հիմն. տեքստից առաջ: Ա. հաճախ լինում է «Երկու խոսք», «Հեղինակի կողմից», «Հրատարակչության կողմից», «Նախաբանի փոխարեն», «Գրքի և հեղինակի մասին» և այլ վերնագրերով կամ անվերնագիր:

«ԱՌԱՒԵԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ», քրիստ. վարդապետության ձեռնարկ: Իտալ-ից թարգմանել է Պետրոս Պողոս քահանան՝ Հռոմի Ուրբանոս VIII պապի և Հավատի հաստատության սբ ժողովի որոշմամբ:

Տպագրվել է 1630-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ հայ. և իտալ.: Տիտղթ-ին՝ «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան... Dichiartatione piucopiofa della Dottrina Christiana….» (287 էջ, 4^0, 17,3 x 11,2 սմ):

Վերահրատարակվել է 1634-ին Փարիզում՝ Արքունի տպարանում՝ լատ. և հայ.: Տիտղթ-ին՝ «Doctrina Christiana, a Petro Pavlo, sacerdote, Armeno, versa, in lingvam Armenam. առաւել պարզաբանութիւն» (291 էջ, 4^0, 18,4 x 12 սմ):

«ԱՌԱՎՈՏ», օրաթերթ: Լույս է տեսնում 1994-ից Երևանում: Խմբագիրներ՝ Այդին ***Մորիկյան***, Արամ ***Աբրահամյան*** (1994-ից): Անդրադառնում է քաղ. կուս-ների գործունեությանը, ՀՀ-ի հաս-քաղ., տնտ., սոցիալ., իրավ., մշակութ., մարզ. կարևոր իրադարձություններին, միջազգ. անցուդարձին: Ուշագրավ են «Ա.»-ի առաջնորդողները (հեղ.՝ Ա. Աբրահամյան), որտեղ վերլուծվում են օրվա հրատապ թեմաները:

«ԱՌԱՒՕՏ», ազգ., քաղ. շաբաթաթերթ, ապա՝ օրաթերթ: Լույս է տեսել 1909-24-ին Կ. Պոլսում [Առաջին համաշխ. պատերազմի (1914-18) տարիներին ընդհատվել է]: Եղել է Վերակազմյալ Հնչակյան կուս-յան, 1920-ից՝ Ազգ. ազատագր. կուս-յան Կ. Պոլսի նահանգային վարչության, 1921-ից՝ ՌԱԿ-ի պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Մ՛իսաք Սուրյան, Հրաչ Երվանդ, Ենովք ***Արմեն***, Երվանդ Տեր-Անդրեասյան, Աշոտ Քեչյան: Լուսաբանել է արևմտահայերի ազգ-քաղ. խնդիրները, պահանջել է արևմտահայերի ինքնորոշումը փոխարինել ներքին ինքնավարությամբ, քննադատել 1920-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, դատապարտել 1921-ի Փետրվարյան ապստամբությունը: «Ա.»-ին աշխատակցել են Ե. Օտյանը, Հ. Մառքը, Վ. Զարդարյանը, Մ. Նաթանյանը, Պ. Քեչյանը, Վ. Շահրիմանը, Վ. Թոթովենցը, Վ. Շուշանյանը և ուր.:

«ԱՌԱՒՕՏ», քաղ., ազգ., գրական և մարզ. շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա, վերջում՝ օրաթերթ: Լույս է տեսել 1938-47-ին Բեյրութում: Տնօրեն-խմբագիր՝ Հրանտ ***Դևեճյան***: Երկրորդ աշխարհամարտի (1939-45) տարիներին հանդես է եկել հօգուտ խորհրդ. ժողովրդի մղած հակաֆաշիստ. պայքարի, անդրադարձել է Խորհրդ. Հայաստանում հետպատերազմյան ձեռքբերումներին, խրախուսել ներգաղթը:

Թերթը փակվել է խմբագրի հայրենադարձության պատճառով: 1948-ին հնչակյան գործիչ Հարություն Կուժնունին (Ճերեճյան) վերսկսել է (կարճ ժամանակով) «Ա.»-ի հրատարակումը՝ որպես ազգ., քաղ. անկախ օրաթերթ: Խմբագիրներ՝ Սեդրակ Ապաճյան, Պետրոս Մինասյան: Աշխատակցել են Ա. Կիտուրը, Լ. Չորմիսյանը և ուր.:

ԱՌԱՔԵԼ, XIV դ–ի մանրանկարիչ: Ստեղծագործել է Սուրխաթում, Կաֆայում (Ղրիմ): Նկարազարդել է 2 Ճաշոց (1347, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 22, 1356, Մատենադարան, ձեռ. № 7408): Նրան են վերագրվում նաև Կաֆայում ծաղկված 1360–ի Ճաշոցի (ձեռ. № 7741) և Կոքսուում ընդօրինակված XIV դ–ի Ժողովածուի (ձեռ. № 8029, երկուսն էլ՝ Մատենադարան) մանրանկարները:

Ա. շարունակել է հայ մանրանկարչության ավանդույթները՝ մասնակիորեն կիրառելով նաև Ղրիմի ժողովուրդների գեղանկարչության տարրերը:

Գրկ. **Կորխմազյան Է.,** *Ղրիմի հայ մանրանկարիչ Առաքելը, «ԲՄ», 1962, № 6:*

ԱՌԱՔԵԼ, Առաքել Գեղամեցի [ծ. թ. անհտ, գ. Չըոչըռ (այժմ՝ Վարսեր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–մ. թ. անհտ], XVI դ–ի վերջի և XVII դ–ի 1–ին կեսի գրիչ ու մանրանկարիչ: Ստեղծագործել է Կարինի գավառի Թրվանձ գյուղում: 1601–ին Ա–ի ընդօրինակած Ավետարանի (Մատենադարան, ձեռ. № 7555) հիշատակարանում տեղեկություններ կան նրա տոհմի մասին: 1576–1632–ին պատկերազարդած 15–ից ավելի ձեռագրերի մեծ մասը Ավետարաններ են (ձեռ. № 4100, 7555, 7633, 7634, 7646, 7869, 8931, 10805 ևն) և 1 Սաղմոսարան (ձեռ. № 2660) պահվում են Մատենադարանում: Ա–ի արվ–ին բնորոշ են մարդկային ֆիգուրների պատկերման սխեմատիզմը, զարդաձևերի առատությունը, գունագեղությունը:

Գրկ. **Свирин А.,** *Миниатюра древней Армении, М.–Л., 1939, с. 126–128;* **Измайлова Т., Айвазян М.,** *Искусство Армении, М., 1962, с. 131, 135.*

ԱՌԱՔԵԼ (Առաքելյան) Գևորգ Աբրահամի (ծ. 1.1.1937, Կիրովական), գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է Մոսկվայի գեղարվ–ի ստուդիան (1963): Պատկերազարդել է Լ. Անթառանյանի «Թափուր կառամատույց» (2000), Մ. Մուրադյանի «Վասպուրականի հեքիաթներ» (2006) գրքերը:

Ստեղծել է գրաֆիկ. գործեր՝ «Դանտեի «Աստվածային կատակերգություն»» (1977), «Թումանյան. քառյակներ» (1999) ևն, շարքեր՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700–ամյակին, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000–ամյակին (2001):

Գրկ. Գևորգ Առաքել. Ալբոմ, Ե., 2010:

ԱՌԱՔԵԼ ԱԲԵՂԱ ԱՆԵՑԻ, Առաքել Արեղա Շիրակավանցի, Առաքել Վարդապետ, XII–XIII դդ–ի թարգմանիչ: 1222–ին արաբ–ից թարգմանել է «Աղեկախօս» երազահանը, ենթադրաբար՝ նաև «Պղնձէ քաղաք» վեպը:

ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ, Առաքել Պոռեցի [մոտ 1380, գ. Պոռ (Վասպուրական)–1454], տաղերգու, մատենագիր, մանկավարժ, երաժիշտ: Աշակերտել է *Գրիգոր Խլաթեցուն*: Գրել է «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գրիգորի վարդապետի Խլաթեցւոյ» (1425) և «Պատմութիւն քաջ եւ տիեզերալոյս վարդապետին մերոյ Գրիգորի Խլաթեցւոյ Ծերենցն» (1426) պոեմները:

Ա. Բ. ստեղծագործություններում արտահայտել է հայոց պետականության վերականգնման գաղափարը: Հայ ժողովրդի քաղ. տրամադրություններն արտացոլվել են հատկապես «Ողբ մայրաքաղաքին Ստըմպօլայ» (1453) պատմաքաղ. պոեմում: Ա. Բ. գրել է նաև Գրիգոր Լուսավորչին, Ներսես Մեծին նվիրված վարքագր. պոեմներ: ***Ներսես Շնորհալու*** «Յիսուս Որդի» երաժշտ. քերթվածի օրինակով Ա. Բ. տաղաչափել է Հովասափի և Բարաղամի մասին վարքաբան. միջնադարյան վեպը («Տաղ Յովասափու», 1434), որը եղանակավոր պատմել ու հատվածաբար երգել են: Նպաստել է գրակ–յան աշխարհականացմանը: Հորինել է տաղեր, գանձեր, ողբեր:

Երկ. Տաղեր: Ուսումնասիրություն [քնն. բնագրեր և ծնթգր.՝ Արշալույս Ղազինյանի], Ե., 1971:


Գրկ. **Ղազար Ճահկեցի,** *Դիրք աւտրուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, ԿՊ, 1735:* **Ալիշան Ղ.,** *Հայապատում, Վնտ., 1901, մաս I, էջ 126:* **Աբեղյան Մ.,** *Երկեր,*



Առաքել. *մանրանկար, 1356-ի Ճաշոց (Սուրխաթ, Մատենադարան, ձեռ. № 7408)*



Գևորգ Առաքել.
Լ. Անթառանյանի «Թափուր կառամատույց» (2000, Ե., «Վան Արյան») գրքի կազմը



Առաքել Բաղիշեցու
«Տաղեր»-ի (1971, Ե., ԳԱ հրտ.) կազմը

Առաքել Դավրիժեցի



«Գիրք պատմութեանց...»-ի (1669, Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի) տիտղոսաթերթը



«Բոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ...» (1884, ՍՊբ) գրքի կազմը

հ. 4, Ե., 1970, էջ 441–443: Անասյան Հ., *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ 1106–1143:* Ղազինյան Ա., *Առաքել Բաղիշեցու «Տաղ Յովասափու» պոեմը, «ՊԲՀ», 1965, № 4:* Նույնի, *Առաքել Բաղիշեցի: Կյանքը, «ԼՀԳ», 1966, № 11:*

ԱՌԱՔԵԼ ԳՐԻԶ, XV դ–ի գրիչ: Երզնկայի Ավագ վանքի համալսարանի սան: Ընդօրինակել է խազագրքեր, Շարականոցներ և Գանձարաններ: Հայտնի է 10 ձեռագիր՝ 7 Շարականոց, 2 Գանձարան և 1 Մաշտոց (վերջինս պահվում է Մատենադարանում, ձեռ. № 9671, մյուսները՝ Երուսաղեմում և Վենետիկում):

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ (մոտ 1590, Թավրիզ–1670, Վաղարշապատ, թաղված է Մայր աթոռ Սբ Էջմիածնի բակում), պատմագիր, եկեղեց. գործիչ: Դավրիժեցի (Թավրիզեցի) կոչվել է ծննդավայրի անունով: Սովորել է Սբ Էջմիածնի հոգևոր վարժարանում. աշակերտել է Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսին: Ձեռնադրվել է վարդապետ, 1636–ին եղել է ուսուցիչ, Հովհաննավանքի վանահայր, որպես կաթողիկոսի նվիրակ այցելել է Սպահան, Ուրֆա, Հալեպ, Աթենք, Երուսաղեմ:

1651–ից, կաթողիկոսի առաջարկությամբ, շարադրել է «Պատմութիւնը», որն ավարտել է 1662–ին: Հայ. առաջին երկն է, որը լույս է տեսել հեղինակի կենդանության օրոք՝ 1669–ին: Ներկայացրել է 1602–62–ի Հայաստանի քաղ. ու տնտ. դրությունը, թուրք–պարսկ. պատերազմների պատմությունը, ջալալիների շարժումը, Պարսից շահ Աբբաս I–ի հրամանով կազմակերպված հայերի բռնագաղթը (1604), Նոր Ջուղայի հիմնադրման ու ծաղկման, արհեստների, առևտրի զարգացման պատմությունը ևն: Երկը կարևոր տեղեկություններ է հաղորդում ժամանակի հոգևոր–մշակութ. գործիչների, Պարսկաստանի հայկ. գաղութի, տարբեր երկրներում հայ առևտր. խավի գործունեության, Վրաստանում ծավալված ազատագր. շարժման վերաբերյալ: Առանձին հատվածներ նվիրել է Աղվանից աշխարհի պատմությանը ևն: Այն արժեքավոր ու եզակի սկզբնաղբյուր է Պարսկաստանի, Թուրքիայի, Վրաստանի և Մերձ. Արևելքի երկրների պատմության ուսումնասիրության համար: Ունի համառոտ ժամանակագրություն (613 – XVII դ–ի 1–ին կես): Գրքում զետեղված են նաև թուրք. և պարսկ. տիրակալների, Սսի և Էջմիածնի կաթողիկոսների ժամանակագրությունները:

Երկը կարևոր տեղեկություններ է պարունակում նաև Լվովի հայերի կյանքի, կենցաղի, ինքնավարության, դատակարգի, լեհահայ գաղութի բռնի կաթոլիկացման, Նիկոլ եպս. Թորոսովիչի ազգադավ գործունեության մասին: Այդ պատճառով Լեհաստանի կաթոլիկ եկեղեցին գիրքը համարել է «վտանգավոր ու մոլորական» և ներառել արգելված գրքերի ցանկի մեջ: Գրքի ԻԸ գլուխը՝ «Պատմութիւն նեղութեանց եւ վշտաց, զոր կրեցին հայ ազգաւ քրիստոնեայքն, որ բնակեալք են ի քաղաքն Իլով», լույս է տեսել նաև առանձին՝ «Բոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. ժամանակակից յիշատակարանք» վերնագրով (1884, ՍՊբ, Ա. Ա. Կրաևսկու տպ.):

Ա. Դ–ու «**Պատմութիւնը**» առաջին անգամ տպագրվել է 1669–ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ–ին՝ «Գիրք պատմութեանց. Շարադրեալ Վարդապետին Առաքելոյ Դավրէժացւոյ…» (650 էջ, 8^0, 14 x 8 սմ):

Տպագրվել է նաև 1896–ին Վաղարշապատում՝ Սբ Էջմիածնի տպարանում, 1988–ին՝ Երևանում (աշխարհաբարի փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Առաքելյանի), քնն. հրատ–ը՝ 1990–ին (աշխատասիր.՝ Է. Խանլարյանի): Երկը լույս է տեսել նաև ֆրանս. (1874, թարգմ.՝ Մարի Բրոսսեի), ռուս. (1973), լեհ. (1981), հատվածաբար՝ վրաց. (1974) և անգլ. (2010):

Ա. Դ. հեղինակ է նաև կրոն. բովանդակությամբ 2 տաղի («Տաղ վասն մահրամայի», «Տաղ անուշ եւ գեղեցկազան»):

Թավրիզում պահպանվել է Ա. Դ–ու տունը: Նրա սերունդները ցայսօր բնակվում են այնտեղ և կրում են Պատմագրյան ազգանունը:

Գրկ. Աբեղյան Մ., *Երկեր, հ. 4, 1970, էջ 512–525:* Առաքելյան Վ., *Առաքել Դավրիժեցի, «ՊՀՀ», 1970, №3:* Դանեղյան Լ., *Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի 17–րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978:* Բաբայան Լ., *Դրվագներ Հայաստանի 14–18–րդ դդ. պատմագրության, Ե., 1984, էջ 79–131:* Նիկողոսյան Ա., *Առաքել Դավրիժեցու պատմությունն իբրև գրական երկ, Ե., 2012:*

ԱՌԱՔԵԼ ՀՆԱՋԱՆԴԵՆՑ, XIII դ–ի 2–րդ կեսի կազմարար: Ապրել և աշխատել է Կիլիկիայում: Աշակերտել է Սարգիս Կազմարարին: Կազմել է Դրազարկի, Հռոմկլայի, Մաշկևորի, Մեծքարի և այլ գրչության կենտրոնների, նաև թագավոր. տան անդամների և կաթողիկոսի համար գրված ձեռագրերը: Աշխատել է ***Թորոս Ռոսլինի*** (կազմել է 1260–ի Ավետարանը), գրիչ Ավետիսի և ուր. հետ: Տիրապետել է կազմարար. բարձր արվ–ին, մեծ համբավ է վայելել:

Ա. Հ. հիշվում է Մատենադարանի 4 ձեռագրում, սակայն միայն 1271–ի «Մասունք Աստուածաշնչի» կազմի հեղինակն է (ձեռ. № 199), մյուս 3–ի (ձեռ. № 234, 468, 9509) կազմերը հետագայում փոխվել են:

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ (մոտ 1350–1425), տաղերգու, փիլիսոփա, քերական, երաժշտության տեսաբան, եկեղեց. գործիչ: 1407–ից՝ Սյունյաց արքեպիսկոպոս: Սովորել է Տաթևի համալսարանում, աշակերտել *Հովհան Որոտնեցուն* և *Գրիգոր Տաթևացուն*. վերջինիս քրոջորդին էր: Ա. Ս. պաշտպանել է Աստծու գոյության տիեզերագիտ. ապացուցման թեզը: Առանձնացրել է իմացության զգայական և բնական աստիճանները: Դավիթ Անհաղթի ոգով առաջադրել է մարդու ճանաչող. ունակությունների, գիտելիքի ձևերի, արվ–ի և փիլ–յան դասակարգումը:

«Մեկնութիւն քերականին» ուս. ձեռնարկում քերակ–ը համարել է բոլոր իմաստությունների նախադուռ, կարևորել լեզուների, մանավանդ՝ մայրենիի իմացությունը:

Ա. Ս–ու **«Ադամգիրքը»** (1403) բաղկացած է 3 պոեմից, կորուսյալ դրախտի մասին արլ. տարբերակ է, որին սերտորեն աղերսվում է «Դրախտագիրքը» (հրտ.՝ 1956, Վնտ, Սբ Ղազարի տպ.):

«Ադամգիրքը» առաջին անգամ տպագրվել է 1721–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Ադամ գիրք: Անցք Ադամայ նախաստեղծին.....», Բ–ին՝ «Ադամ գիրք: Յորում պարունակին: Բանք յարմարականք եւ պատմութիւնք պատշաճաւորք յաղագս նախնեացն մերոց Ադամայ եւ Եւայի.....» (288 էջ, 8^0, 11,5 x 7 սմ): Վերահրատարակվել է 1799–ին Կ. Պոլսում՝ Մատթեոս Դպիրի տպարանում (276 էջ, 8^0, 13 x 7,5 սմ):

Տպագրվել է նաև 1907–ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

«Ադամգիրքը» 1918–ին քաղվածաբար ֆրանս. է թարգմանել Արշակ Չոպանյանը, իսկ 2007–ին Հրեական համալսարանի պրոֆ. Մայքլ Սթոունի թարգմանությամբ և առաջաբանով Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել անգլ.:

Ենթադրվում է, որ Ա. Ս–ու «Ադամգրքի» առանձին հատվածներ երգել են որպես տաղեր:

Ա. Ս–ու **«Լուծմունք սահմանանցն Դաւթի»** երկը տպագրվել է 1797–ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյանի տպարանում: Տպակից է Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»–ին. սկսվում է 147 էջից: Տիտղթ–ին՝ «Լուծմունք յաղագս սահմանանցս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» (520 էջ, 12,8 x 9,2 սմ):

Ա. Ս. հայ միջնադարյան երաժշտ. մշակույթի քաջագիտակ բանաստեղծ–երաժիշտ է: Մեզ են հասել նրա «Աղօթք ոտնալուին ի վերայ ջրոյն եւ իւղոյն», «Տաղ ձեռնադրութեան» և մի շարք երգված տաղեր, որոնք հրատարակվել են որպես «քերթված»: Մի քանիսը ներառվել են հայկ. Պատարագի մեջ և մեզ են հասել իրենց եղանակներով («Ով պարտիզպան»):

Լույս է տեսել նաև «Առաքել Սիւնեցի եւ իր քերթուածները» (ուսումնասիր.՝ Մ. Պոտուրյանի, 1914, Վնտ., Սբ Ղազարի տպ.) գիրքը:

Առաքել Սյունեցի



«Ադամգիրք»–ի (1721, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) պատկերազարդ (6–րդ) էջ



«Լուծմունք յաղագս սահմանանցս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» (1797, Մադրաս, Հարություն Շմավոնյանի տպ.) փիփղոսապատ՝ գլխա– և վերջազարդերով



Առաքել Առաքելյանի *«Հռոմեական գրականության պատմություն» (1956, Ե., Հայպետուսմանկհրատ) գրքի կազմը*



Արտաշես Առաքելյան



Բաբկեն Առաքելյան

Երկ. Յաղագս քերականութեան համառաւտ լուծմունք (աշխատասիր.՝ Լևոն Խաչեւյանի), Լոս Անջելես, 1982: Ադամգիրք (աշխատասիր.՝ Ա. Մադոյանի), Ե., 1989: Ամբողջ չարդ գանջանքի ևնթակա է, Էջմիածին, 1996:

Գրկ. Մադոյան Ա., *Առաքել Սյունեցի բանաստեղծը, Ե., 1987:* Զաքարյան Ս., *Մատթեոս Ջուղայեցի, Առաքել Սյունեցի, Ե., 1997:*

ԱՌԱՔԵԼ ՏԱՐՈՆԱՑԻ, XIV դ-ի սկզբի գրիչ և ծաղկող: Գործել է Սչո Սբ Առաքելոց և Սբ Կարապետ վանքերի գրչատներում: Ընդօրինակել է Ավետարան (1314, Նոր Ջուղայի մատենադարան, ձեռ. № 41) և Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» (1315, Մատենադարան, ձեռ. № 3651):

ԱՌԱՔԵԼՅԱՆ Առաքել Գևորգի [13.1.1887, գ. Խնածախ (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–5.5.1980, Երևան], բանասեր, գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1956), պրոֆ. (1959): Գիտ. վաստ. գործիչ (1955): Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1907): Եղել է ուսուցիչ, 1925–27-ին՝ ԼՂԻՄ լուսժողկոմ: Դասավանդել է Երևանի բուհերում:

Լույս են տեսել Ա-ի «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» (հ. 1–3, 1959–75) աշխատությունը, «Գրաբարի դասագիրք» (մաս 1, 2, 1944, 1945), «Հունական գրականության պատմություն» (1962, 3-րդ լրց. և բրփխ. հրտ.՝ 1968), «Հռոմեական գրականության պատմություն» (1956, 2-րդ բրփխ. հրտ.՝ 1975) ուս. ձեռնարկները:

Գերմ-ից թարգմանել է Ֆ. Էնգելսի «Բնության դիալեկտիկա» (1936, Հ. Հարությունյանի հետ), ռուս-ից՝ Գ. Պլեխանովի «Իդեալիզմից դեպի մատերիալիզմ» (1931) աշխատությունները:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Արտաշես Արկադիի [Արշակի, 28.4(11.5).1909, Շուշի–10.11.1993, Մոսկվա], տնտեսագետ: Տնտեսագիտ. դ-ր (1954), պրոֆ. (1955), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1960): Գիտ. վաստ. գործիչ (1970): Ավարտել է Բաքվի ժողտնտեսության ինստ-ը (1932): 1960–87-ին՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտ-յան ինստ-ի տնօրեն:

Հեղինակ է միջազգ. ճանաչում ստացած «ԽՍՀՄ արդյունաբերության էկոնոմիկա» (ռուս., 1956, թարգմանվել է 40 լեզվով) աշխատության, «Սոցիալիզմի քաղաքատնտեսություն» (1960) ուս. ձեռնարկի, համահեղ.՝ «Հիմնական ֆոնդերի վերարտադրությունը ԽՍՀՄ-ում» (ռուս., 1970) աշխատության և «Քաղաքատնտեսության դասընթաց» (ռուս., 2-րդ հրտ., 1970) բուհ. դասագրքի:

Երկ. Աշխատանքի արտադրողականությունը սոցիալիստական հասարակության մեջ, Ե., 1955: Армения–индустриальная республика, Е., 1967; Научно-технический прогресс в СССР, Е., 1978; Методы оптимизации диалоговых информационных систем контроля, Е., 1985.

Գրկ. Արտաշես Արկադիի Առաքելյան: Մատենագիտություն, Ե., 1981:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Բաբկեն Նիկոլայի [1.2.1912, գ. Մրգաշատ (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)–16.8.2004, Երևան], պատմաբան, ինագետ: Պատմ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1957), ՀՀ ԳԱԱ ակադ. (1974, թղթ. անդամ՝ 1968-ից): Գիտ. վաստ. գործիչ: Ավարտել է ԵՊՀ (1938): 1949–59-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ինագիտ-յան և վիմագրության բաժնի վարիչ, 1959–86-ին՝ Հնագիտ-յան և ազգագրության ինստ-ի տնօրեն, 1982–90-ին՝ նաև ԳԱ պատմության և տնտեսագիտ-յան բաժանմունքի ակադ. քարտուղար:

Լույս են տեսել Ա-ի «Հայկական պատկերաքանդակները IV–VII դարերում» (1949), «Գառնի» [հ. 1–3, 1951–62. հ. 1–2՝ ռուս., հ. 3՝ հայ. (համահեղ.)], «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում» (հ. 1, 2, 1958, 1964), «Հին Արտաշատ» (1975), «Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության» (1976) աշխատությունները: Մասնակցել է ***«Հայ ժողովրդի պատմություն»*** (հ. 1, 2, 1967, 1984) բազմահատորյակի և դպրոց. դասագրքերի ստեղծման աշխատանքներին, ծավալել գիտամանկավարժ. գործունեություն:

ՀԽՍՀ Պետ. մրց-ներ (1978, 1986):

Գրկ. Բաբկեն Նիկոլայի Առաքելյան: Կենսամատենագիտություն, Ե., 1984:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գուրգեն Աշոտի (26.8.1925, Երևան–18.8.1996, Երևան), լրագրող: Բանասիր. գիտ. թեկնածու (1980): Մշակույթի վաստ. գործիչ (1967): Ավարտել է Երևանի հատուկ ռազմահրետանային դպրոցը (1944), ԵՒՕԼՄԻ (1949): 1946–58-ին աշխատել է ***«Պիոներ կանչ»*** և ***«Ավանգարդ»*** թերթերի խմբագրություններում՝ որ-

պես բաժնի վարիչ, խմբագրի տեղակալ, գլխ. խմբագիր: 1958–59-ին՝ *«Երեկոյան Երևան»*թերթի խմբագիր, 1959–74-ին՝ «Պրավդա»թերթի ՀԽՍՀ թղթակից, 1980–85-ին՝ մշակույթի նախարար, 1985–96-ին՝ *«Սովետական արվեստ»* ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա.-ի «Տափաստանի մարդիկ» (1955), «Անհայտ հերոսը» (1960) ակնարկների, «Կամուրջի մոտ» (1962), «Օվկիանոսն ու նավապետը» (1965) պատմվածքների, վիպակների, ակնարկների, «Հանդիպում» (1968), «Հունգարական պատկերներ» (1968), «Հեռավոր ափերում...» (1982), «Լեռները հարազատ են մնում» (1986) արձակ գործերի ժող-ները, «Գրականություն ծնված պարբերական մամուլում» (1971) ուսումնասիրությունը: Ռուս. լույս են տեսել «Կռունկ» (1965), ««Պրավդա» թերթը Հայաստանի մասին» (համահեղ., 1973), ««Պրավդան» և հայ կուլտուրան» (1978) աշխատությունները, «Կարուսել» (1975) երգիծ. պատմվածքների ժող-ը:

Ա.-ի սցենարներով հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիան նկարահանել է «Թունելի մարդիկ» (1965),Հայֆիլմ կինոստուդիան՝ «Ապրում էր մարդը» (համահեղ., 1968), «Արևիկ» գեղ. կինոնկարները (համահեղ., 1978, Պրահայի միջազգ. կինոփառատոնի Մեծ մրց., 1979):

ԱՌԱՔԵԼՅԱՆ Համբարձում Աստվածատուրի, **Շահրիար** [29.4.1855, Շուշի–6.7.1918, Թիֆլիս (սպանվել է պատահական կրակոցից՝ հանրահավաքի ժամանակ)], հրապարակախոս, հաս-քաղ. գործիչ, խմբագիր-հրատարակիչ, գրող: Հայ ժող. կուս-յան (1917) հիմնադիրներից: Ավարտել է Բաքվի ռեալ. ուսումնարանը (1879), սովորել Մոսկվայի երկրագործ. ուսումնարանում: 1881-ին Շուշիում հիմնադրել է Կովկասի հայոց բարեգործ. ընկերության մասնաճյուղ, 1892-ին հաստատվել է Թիֆլիսում, մինչև 1898-ը եղել է բարեգործ. ընկերության քարտուղար, 1898-ից՝ Ազգ. հոգաբարձության նախագահ:

1872-ից թղթակցել է *«Մշակին»*, 1892-ից եղել է խմբագրակազմի մշտ. անդամ, 1913–18-ին՝ խմբագիր-հրատարակիչ:

1910–13-ին հրատարակել է «Արօր» ամսագիրը: 1917-ին հիմնադրել է Հայ ազգաբնակչության մեջ գրագիտություն տարածելու ընկերությունը:

Լույս են տեսել Ա.-ի «Ձհուդ Քուշան» (1902, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.) վեպը, «Մի ամիս Արեւելքում» (1904, Թ., «Հերմես» տպ.) ուղեգր. ակնարկների ժող-ը, «Արամի պսակը» (1906, Թ., Ս. Սողոմոնյանի տպ.) վիպակը, «Տասն եւ երկու պատմվածք» (1908, Թ., «Էպոխա» տպ.) պատմվածքները, «Ճանապարհորդութիւն Դաւրէժից Նախիջեւան» (1876, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Ազգայնութիւն եւ նորա պրինցիպներ» (1883, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Ձէյթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն» (1896, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Միլտօն: Նրա կեանքը եւ գիտական գործունէութիւնը» (1900, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Պարսկաստանի հայերը: Նրանց անցեալը, ներկան եւ ապագան» (1911, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունները, «Ձեռնարկ տարրական տրամաբանութեան, հոգեբանութեան եւ բանահիւսութեան» (1907, Թ., «Էպոխա» տպ.) դասագիրքը: Ֆրանս-ից թարգմանել է Գի դը Մոպասանի, Շ. Սամսոնի, Ա. Լամարթինի, Վ. Գարշինի ստեղծագործություններից: «Հանրամատչելի Մեսրոպյան գրադարան» խորագրով հրատարակել է գիտահանրամատչելի և գեղ. գրքեր, կազմել «Հանրագիտական բառարան» (հ. 1, 1915, Թ., «Էպոխա» տպ., հ. 2, անտիպ, ձեռագիրը պահվում է ԳԱԹ-ում):

Ռուս. աշխարհագր., Փարիզի «Ասիական միություն» և միջազգ. այլ ընկերությունների անդամ:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Սեդրակ Առաքելի [17(29).12.1884, գ. Ձահուկ (այժմ՝ Նախիջևանի Բարեկի շրջանում)–6.3.1942, Երևան], գեղանկարիչ: Արվ. վաստ. գործիչ (1935): Ավարտել է Գեղեցիկ արվ-ները խրախուսող կովկասյան ընկերության Թիֆլիսի գեղանկարչության և քանդ-յան դպրոցը (1908), Մոսկվայի գեղանկարչության, քանդ-յան և ճարտ-յան ուսումնարանը (1916): 1921–37-ին եղել է ԵԳՈՒՀ-ի հիմնադիր դասատուներից, 1921–25-ին՝ վարիչ: 1905–08-ին Ա. աշխատակցել է «Հասկեր» ամսագրին, «Մաճկալ» թերթին ևն: «Արմկավոոստայի» պատվերով նկարել է քաղ. շարժեր, ծաղրանկարներ, պլակատներ, գեղանկարչ. գործերով մասնակցել է Ա. Պուշկինի մահվան 100-րդ



Համբարձում Առաքելյան




Հ. Առաքելյանի *«Պարսկաստանի հայերը...» (1911, Վնն.) գրքի շապիկը*



Սեդրակ Առաքելյան. *Այրիվանքի «Սուրբ գիրքը»*

տարելիցին (1937) և «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին (1939) նվիրված գրքի մոսկովյան ցուցահանդեսներին:

Գրկ. **Մաթևոսյան Վ.,** *Մեդրակ Առաքելյան, Ե., 1963:* **Գյուրջյան Գ.,** *Մեդրակ Առաքելյան: Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1967:*



Վարագ Առաքելյան

ԱՌԱՔԵԼՅԱՆ Վարագ Դավթի [1.10.1910, գ. Եղլովան (այժմ՝ գ. Կոտայք՝ ՀՀ Կոտայքի մարզում)–7.8.2001, Երևան], լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1960): Ավարտել է ԵՊՀ (1938): 1958–87-ին՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ա-ի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957), «Հայերենի շարահյուսություն» (հ. 1, 2, 1958, 1964), «Հայերենի պարբերույթը» (1968), «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը» (1975), «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, V դար» (1981), «Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը» (1984), «Նժդեհ: Կյանքն ու գործունեությունը» (1989), «Գրաբարի քերականություն» (2010) աշխատությունները, «Ճակատագրի խաչմերուկներում» (2003) հուշապատումը:

Ա. գրաբարից աշխարհաբարի է փոխադրել Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» (1969), Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» (1982), Առաքել Դավրիժեցու «Պատմություն հայոց» (1988), Ուխտանես Եպիսկոպոսի «Հայոց պատմություն» (2006), Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն. Հայոց պատմություն» (2013) երկերը: Հեղինակ է նաև «Առաքել Դավրիժեցի» («ՊԲՀ», 1970, № 3) ուսումնասիրության: Կազմել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» 2-րդ հատորը (1972):



Մայքլ Առլեն Կրտսեր

ԱՌԼԵՆ Մայքլ [Գույումջյան Տիգրան, 16.11.1895, ք. Ռուսչուկ (այժմ՝ Ռուսե՝ Բուլղարիայում)–21.6.1956, Նյու Յորք], գրող: Մայքլ ***Առլենի*** Կրտսերի հայրը: Գրել է անգլ.: 1900-ից ապրել է Մեծ Բրիտանիայում:

Լույս են տեսել Ա-ի «Լոնդոնյան արկածախնդրություն» (1920), «Ռոմանտիկ կինը» (1921), «Ծովահենություն» (1923), «Այս հմայիչ ժողովուրդը» (1924) գործերը: «Կանաչ գլխարկը» (1924, հայ. հրտ.՝ 1925) և «Մեյ Ֆեըր» վիպակներով ձեռք է բերել համաշխ. ճանաչում: 1954-ին տպագրվել է Ա-ի «Մի գաղտնի պատմություն» վիպակը: Նրա երկերի հիման վրա ստեղծվել են կինոնկարներ:

Գրկ. **Keyishian H.,** *Michael Arlen, Boston, 1975.*



«Առողջ կեանք», *1917, Բաքու (№ 1)*

ԱՌԼԵՆ Մայքլ Կրտսեր (ծ. 9.12.1932, Լոնդոն), գրող: Մայքլ ***Առլենի*** որդին: Գրում է անգլ.: Սովորել է Հարվարդի համալսարանում: 1973-ին և 1989-ին այցելել է Հայաստան: Նրա ստեղծագործության մեջ նշանակալի տեղ են գրավում հայկ. նյութը, հուշագրությունը:

Լույս են տեսել Ա-ի «Պատերազմական ընդհանուր սենյակ» (1969), «Աքսորականներ» (1970), «Հայկական մի դատավճիռ» (1973), «Տեսարանը Հայուեյից» (1976), «Երեսուն վայրկյան» (1980), «Լուսանկարչական ապարատի ժամանակաշրջանը» (1981), «Յոտեսություն ասա Սեմին» (1985), «Հայկական օրագրություն» (1991) և այլ գործեր: Ուշագրավ է «Ուղևորություն դեպի Արարատ» (1975, հայ հրտ.՝ «Դեպի Արարատ», 2000) ուղեգրությունը, որտեղ Ա. բացահայտում է իր ինքնությունը և շեշտում ազգ. ակունքներին վերադառնալու ձգտումը:

«ԱՌՈՂՋ ԿԵԱՆՔ», ժող. առողջապահիկ ամսագիր: Բաքվի հայոց կուլտուրական միության բժշկ. բաժանմունքի հրատ.: Լույս է տեսել 1917-ին Բաքվում (9 համար): Խմբագիր՝ Թադևոս Զաքարյան: Լուսաբանել է տեղի հայության բժշկասան. պայմանները, տարածել բժշկաառողջապահ. մատչելի գիտելիքներ, «Փոստարկղ» խորագրով տպագրել բժիշկների պատասխաններն ընթերցողների հարցերին:



«Առողջ կեանք», *1931-32, Փարիզ (№ 5, 1931)*

«ԱՌՈՂՋ ԿԵԱՆՔ», բժշկ. և առողջապահ. ամսագիր: Լույս է տեսել 1931–32-ին Փարիզում: Խմբագիր-տնօրեն՝ Միհիրան Քեշիշյան: Ծանոթացրել է առավել տարածված հիվանդությունների ախտանշաններին և դրանց կանխարգելման միջոցներին, տարածել առողջապահ. գիտելիքներ: Հատուկ ուշադրություն է դարձրել երեխաների և մայրերի հիգիենայի հարցերին, հոդվածներ է տպագրել ՀԽՍՀ-ում առողջապահ-յան ոլորտի վերաբերյալ:

«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ», ամսագիր: Լույս է տեսել 1881–84-ին Երևանում: Հայ. բժշկ. առաջին հանդեսը: Խմբագիր՝ Լևոն *Տիգրանյան*: Տպագրել է բժշկագիտ. հոդվածներ, թարգմանություններ ռուս. և եվրոպ. բժշկ. հանդեսներից, օգտակար խորհուրդներ՝ նորածինների խնամքի և այլ հարցերի շուրջ, ծանոթացրել է տարբեր հիվանդությունների ախտանշաններին, կարևորել առողջ ապրելակերպի և ֆիզկուլտուրայի դերը:

«ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ», առողջապահ. ամսագիր: Երևանի բժշկ. ընկերության հրատ.: Լույս է տեսել 1920-ին Երևանում: Խմբագիր՝ Վահան *Արծրունի*: Ծանոթացրել է առողջ ապրելակերպի կանոններին, վարակիչ հիվանդությունների ախտանշաններին ու բուժման միջոցներին: Տպագրել է նյութեր հայ բժշկության պատմությունից, տվյալներ Երևանի նահանգում հիվանդությունների տարածման մասին:

«ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ», բժշկասան. հանրամատչելի հանդես: Լույս է տեսել 1903–05-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Վահան *Արծրունի*: Նպատակը առողջապահության և սանհիգիենայի մասին գիտելիքներ տարածելն էր: «Բժշկի գրույցներ» ընդհանուր խորագրով հանդեսին կից հրատարակվել են 35 անուն հանրամատչելի գրքույկներ:

«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՈՒ», կիսամսյա (մինչև 2011-ը՝ շաբաթաթերթ) պարբ.: ՀՀ ԱՆ պաշտոնաթերթ: Հրատարակիչ՝ Առողջապահ-յան ազգ. ինստ.: Լույս է տեսնում 1998-ից Երևանում: Խմբագիրներ՝ Լիլիթ Թաղևոսյան, Աիդա Հովնանյան (1999-ից): Տպագրում է նախարարության ձեռնարկած բարեփոխումներին, ծրագրերին, ՀՀ-ում առողջապահ-յան գերակա խնդիրներին վերաբերող նյութեր, գիտաբժշկ. և գիտահանրամատչելի հոդվածներ, ակնարկներ վաստակաշատ բժիշկների, բուժքույրերի մասին, անդրադառնում է համաշխ. բժշկագիտ-յան նորություններին:

«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ», տեղեկատվ. և վերլուծ. գիտահանրամատչելի եռամսյա (սկզբում՝ երկամսյա) հանդես: ՀՀ ԱՆ հրատ.: Լույս է տեսնում 1956-ից Երևանում: Խմբագիրներ՝ Ռաֆայել Փարսադանյան, Նիկոլայ Ավագյան, Ռոբերտ Մկրտչյան, Մարտունի Մուրադյան, Գեղամ Խանդանյան (2010-ից): Լուսաբանում է նախարարության գործունեությունը, ոլորտի արդիականացման ծրագրերն ու դրանց իրականացման գործընթացները, տես., գիտամեթոդ., գործն. բժշկության հարցեր, տպագրում տարբեր հիվանդությունների կանխարգելման ու բուժման վերաբերյալ հոդվածներ, հարցազրույցներ վաստակաշատ բժիշկների ու ղեկավար բուժաշխատողների հետ, դեղերի ու դեղաբույսերի դերին առնչվող քննարկումներ, հայ բժշկության պատմության մասին նյութեր ևն:

ԱՍԱՏՐՅԱՆ Ասատուր [3.10.1903, գ. Բերդակ (Վանի նահանգ)–9.12.1964, Երևան], գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1941): Ավարտել է ԵՊՄԻ (1933): «Բամբակի համար» (1931–35, Վաղ-պատ), 1935–36-ին՝ «Խորհրդային դպրոց» (այժմ՝ *«Կրթություն»*), «Հիդրոշինարար» (1957–69, Երևան) թերթերի խմբագիր:1938-ից՝ ԱրմՖԱՆ-ի, ապա՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի գիտաշխատող, ապա՝ բաժնի վարիչ: Մասնակցել է «Հայ դասականներ» մատենաշարի ակադ. հրատ-ների պատրաստմանը: Գրել է բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը տպագրել էԱսուր Վերկառնածականունով:

Լույս են տեսել Ա.-ի «Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը» (1940), «Ղազարոս Աղայան» (1940), «Հակոբ Հակոբյան» (1947, 1955), «Սովետահայ գրականության պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը» (1947), «Գրական-քննադատական ակնարկներ» (1951), «Հայ գրականությունը և ռուսական առաջին ռևոլյուցիան» (1956), «Սոցիալիստական վերածննդի հայ գրականության պատմությունից»(1959), «Հարություն Սվաճյան» (1967) աշխատությունները: Համահեղինակ է «Սովետահայ գրականության պատմություն» (հ. 1, 1961), *«Հայ նոր գրականության պատմություն»* (հ. 2–4, 1962, 1967, 1972) բազմահատորյակների:



«Առողջապահական թերթ», *1881–84, Երևան (№ 2–3, 1883)*



«Առողջապահության լրատու», *1998-ից, Երևան*



«Առողջապահություն», *1956-ից, Երևան (№ 1, 1956)*



Ասատուր Ասատրյանի *«Հարություն Սվաճյան» (1967, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Հայկ Ասատրյանի *«Հատընտիր»-ի (2004, Ե., «Ամարաս») կազմը*



Օգսեն Ասատրյան. *Վ. Հարությունյանի «Անի քաղաքը» (1964, Ե., Հայպետհրատ) գրքի փիփղոսաթերթը*

ԱՍԱՏՐՅԱՆ Գառնիկ Սերոբի (ծ. 7.3.1953, Թեհրան), բանասեր-պատմաբան, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1995): Ավարտել է ԵՊՀ (1976): 1983–89-ին եղել է ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ի արլ. բանասիրության, 1989–96-ին՝ Իրանի բաժինների, 1997-ից՝ ԵՊՀ իրանագիտ-յան ամբիոնի վարիչ, միաժամանակ, 1996-ից՝ Իրանագիտ-յան կովկասյան կենտրոնի տնօրեն: 1993-ից՝ ***«Իրան-Նամե»***, 1997-ից՝ ***«Իրան և Կովկաս»*** հանդեսների հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Բախտիարների ազգագրությունը» (1987), «Բախտիարների պոեզիան» (1995), «Իրանի զրադաշտականների ազգագրությունը և մշակույթը» (2001, երեքն էլ՝ անգլ.), «Միջին պարսկերենի և պարթևերենի դերբայական համակարգը» (ռուս., 1989) աշխատությունները:

ԱՍԱՏՐՅԱՆ Հակոբ Լեոնիդի (ծ. 16.11.1967, Կիրովական), լրագրող, խմբագիր: Սովորել է ԵՊՀ-ում (1984–87), ավարտել է ՄՊՀ (1990): 1991–98-ին՝ «Ազգ» օրաթերթի աշխատակից, 1992–98-ին, միաժամանակ՝ ՀՀ-ում «Ազատություն» ռադիոկայանի ռուս. ծառայության, 1993–97-ին՝ «Արմինիոլն Ինտերնեշընըլ Մեգըզին» (Գլենդել, ԱՄՆ) և «Նուվել դ'Արմենի» (Փարիզ) ամսագրերի թղթակից: 1991-ից «Ազգի» սեփական թղթակիցն է Չեխիայում: 1999-ին Պրահայում հիմնադրել է «Կովկաս-Արևելյան Եվրոպա» լրատվ. կենտրոնը, ***«Օրեր»*** ամսագիրը, որի գլխ. խմբագիրն է:

ԹՄՄ Վարդգես և Ռիտա Պալյանների «Տարվա լավագույն լրագրող» (1995), ՀԺՄ և Համաշխ. հայկ. կոնգրեսի (2011, լավագույն լրագրող. հրապարակումների համար) մրց-ներ:

ԱՍԱՏՐՅԱՆ Հայկ Կիրակոսի [5.2.1900, գ. Երից (Ալաշկերտի գավառ)–13.1.1956, Սոֆիա], փիլիսոփա, ազգ-քաղ. գործիչ, խմբագիր: Փիլ-յան գիտ. դ-ր (1930): ՀՅԴ կուս-յան անդամ (մինչև 1937-ը): Ավարտել է Բեռլինի բարձրագույն քաղ. դպրոցը, ապա՝ Պրահայի համալսարանը (1930): Մասնակցել է 1921-ի Փետրվարյան ապստամբությանը, որի պարտությունից հետո, խուսափելով ձերբակալությունից, հեռացել է Հայաստանից: Հաստատվել է Թավրիզում, այնուհետև մեկնել է Բուլղարիա: Սոֆիայում դասավանդել է Գևորգ Մեսրոպ ճեմարանում, հիմնադրել և խմբագրել է «Խոռվք» (1932), «Ցեղ եւ Հայրենիք» (1936, Ն. Աստվածատրյանի հետ), «Տարօնի արծիւ» (1938–39), ***«Ռազմիկ»*** (1937–44, Գարեգին ***Նժդեհի*** հետ) պարբ-ները: Ազգ. գործունեության համար ԽՍՀՄ անվտանգության մարմինները Ա-ին 1944-ին ձերբակալել են Բուլղարիայում, մինչև 1955-ը եղել է Ուրալի բանտում: Համաներումով ազատվելով բանտից՝ վերադարձել է Սոֆիա:

Ա. եղել է Գարեգին Նժդեհի նվիրյալ համախոհն ու զինակիցը 1930-ական թթ-ին Ցեղակրոն շարժման հիմնավորման ու ծավալման գործում, նրա երկերի լավագույն մեկնիչն ու խմբագիրը: Հեղինակ է «Ցեղանենգ շէյթանը» (1933), «Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ յեղափոխութեան եւ մայիս 28-ի մասին» (1933, վերահրտ.՝ 2010) գրքույկների և բազմաթիվ հոդվածների, Հայկ. հարցին և հայկ. արժեհամակարգին նվիրված «Հայաստան: Արիական նախաղիրք Առաջաւոր Ասիայում» [1942, գիրք Ա, վերահրտ.՝ 2000 (Բ գիրքն անտիպ է)] աշխատության: Վերջինիս Ա մասը (առաջաբ.՝ Գ. Նժդեհի) գերմ. թարգմանվել և հրատարակվել է գերմ. տիրապետության տարածքում ապրող 400 հզ. հայերի անվտանգությունն ապահովելու նպատակով:

2008-ին «Հայրենիք» ակումբը հրատարակել է Ա-ի «Տարոնականության ռահվիրան» գիրքը:

Երկ. Արթնացիր, հայ մարդ, Ե., 1998: Հատընտիր, Ե., 2004:

Գրկ. **Լալայան Մ.**, *Ցեղակրոն և գարոնական շարժումները. Գ. Նժդեհի և Հ. Ասատրյանի գաղափարախոսությունը, Ե., 2011:*

ԱՍԱՏՐՅԱՆ Օգսեն Ավետիսի [1914, գ. Բերդակ (Թուրքիա)–27.12.1991, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳԱՏ (1934): 1934-ին աշխատել է «Ավանգարդ», 1937-ին՝ «Խորհրդային Հայաստան» թերթերում՝ որպես նկարիչ, ապա՝ պատկերազարդման բաժնի վարիչ, 1950–86-ին՝ Հայպետհրատի գեղ. խմբագիր:

Նկարազարդել և ձևավորել է Է. Բուլվեր-Լիտտոնի «Պոմպեյի վերջին օրերը» (1961), Վ. Հարությունյանի «Անի քաղաքը» (1964), Ա. Թաղևոսյանի «Սպիրիդոն Մելիքյանը և հայ ժողովրդական երգը» (1964), Վ. Փափազյանի «Համլետը ինչպես տեսա...» (1968), Չ. Չապլինի «Իմ կենսագրությունը» (1971), Լ. Գրիգորյանի «Գամմա և արպեջիո» (ռուս., անգլ., 1980), Մ. Սարգսյանի «Ստեփանոս Ներսիսյան» (1985), նաև Ա. Փահլևանյանի «Հայրենի երգեր» (1980), «Հայկական բազմաձայնության երգարան» (1981) և այլ գրքեր:

ԱՍԱՏՈՒՐ (Աստվածատրյան) Գևորգ Կոնստանտինի (6.6.1868, Թիֆլիս–7.10.1937, Երևան), բանաստեր, մանկավարժ, թարգմանիչ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Ս. Պետերբուրգի հնագիտ-յան ինստ-ը և արլ. լեզուների դասընթացները: 1921-ից դասավանդել է ԵՊՀ-ում:

Ա-ի առաջին ոտանավորները տպագրվել են 1886-ին «Նոր-դար»-ում: 1887-ից հավաքել և մշակել է հայ ժող. ավանդազրույցներ, որոնք հրատարակվել են «Հայավանդ» (1927) խորագրով: Գրել է ուսումնասիրություններ Սայաթ-Նովայի, Շոթա Ռուսթավելու և Շամչի Մելքոյի կյանքի ու ստեղծագործությունների մասին, հրատարակել է «Մերձարևելքի գրականության պատմությունը» (1931), կազմել Գ. Սունդուկյանի լեզվի բառարան: Ա. մշակել է Նահապետ Քուչակի քառյակները («Սիրու երգիչ: Նահապետ Քուչակի երգերը», 1905, Թ., «Հերմես» տպ.): Թարգմանել է Ա. Պուշկինի «Գնչուներ» պոեմը (1899), Ֆիրդուսու «Շահնամե» պոեմից՝ «Ռոստամ և Սոհրաբ» հատվածը (1935), Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» պոեմը (1937), Ի. Ճավճավաձեի, Ն. Բարաթաշվիլու, Ա. Ծերեթելու, Վ. Փշավելայի բանաստեղծություններից:

Գրկ. Խանոյան Ս., Գևորգ Ասատուր (գրական գործունեության 50 տարին), «ՍՍ», 1936, № 9: Դաւրիբէգանյան Լ., Երևանի պետական համալսարանը, Ե., 1965, էջ 246:

ԱՍԱՏՈՒՐ Ջապել, տես *Սիպիլ*:

ԱՍԱՏՈՒՐ (Ասատուրյան) Հրանդ [10(22).8.1862, Կ.Պոլիս–5.6.1928, Կ. Պոլիս], գրական-հաս. գործիչ, խմբագիր, գրաքննադատ: ***Սիպիլի*** ամուսինը: Սովորել է Կ. Պոլսի Մեզպուրյան վարժարանում, ապա՝ Ռոբերտ քոլեջում, ավարտել է Փարիզի իրավաբ. վարժարանը (1884):


1879-ին հիմնադրել է Կիլիկյան ընկերություն բարեգործ. կազմակերպությունը: Աշխատակցել է Կ. Պոլսի «Արեւելք» պարբ-ին, որտեղ Արաքս կեղծանունով հրատարակել է Ֆրանսիա կատարած ուղևորության (1882–84) տպավորությունները («Կեանքը ի Ֆրանսա»): 1892–93-ին (Գրիգոր ***Զոհրապի*** հետ) և 1898-ին (Սիպիլի և Գ. Զոհրապի հետ) եղել է ***«Մասիս»*** պարբ-ի խմբագիրը:

Լույս են տեսել Ա-ի «Պատանեկան ներշնչումներ» (1879, ԿՊ, Արամ Աշճյանի տպ.) բանաստեղծությունների, «Դիմաստուերներ» (1921, ԿՊ, Կ. Քեշիշյան և որդի տպ., 2-րդ հրտ.՝ 1984) գրաքննադատ. հոդվածների ժող-ները, որտեղ ներկայացրել է ժամանակի մի շարք գրական-հաս. գործիչների՝ Ս. Տյուսաբի, Գ. Օտյանի, Հ. Պարոնյանի, Մ. Մամուրյանի, Գ. Չիլինկիրյանի կյանքն ու գործունեությունը: Սիպիլի հետ կազմել է հայոց լեզվի և գրակ-յան դասագրքեր («Թանգարան հատընտիր հատուածներու», 1905, ԿՊ, Հակոբ Մատթեոսյանի տպ., «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի», գիրք Ա-Գ, 1908–11, ԿՊ, նույն տպ., «Թանգարան հատընտիր հատուածներու», 1908, նույն տպ., «Նոր թանգարան հայերէն լեզուի», 1929, ԿՊ, Սելամեթ Դանիել Հովհաննեսյանի տպ.): Հրատարակվել են Ա-ի «Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները» (2011, Ստամբուլ) աշխատությունը, նաև Սիպիլի և Ա-ի «Սիրային նամակներ» (աշխատասիր.՝ Գ. Հակոբյանի, 2001) նամականին:

Ա-ի արևմտահայ թատրոնի պատմության մասին հոդվածները 1925–27-ին տպագրվել են «Ընդարձակ տարեցոյց Սր Փրկչեան ազգային հիւանդանոցի» տարեգրքում:

Գրկ. Ազատեան Թ., Ժամանակակից դէմքեր. Զապել եւ Հրանդ Ասատուր, ԿՊ, 1937: Հայրապետեան Ս., Հրանդ Ասատուր: Կեանքը եւ գործը, Լոս Անջելես, 1979:

ԱՍԱՏՈՒՐՅԱՆ Հակոբ Հովհաննեսի [3.3.1903, գ. Չոմախլու (Կեսարիայի գավառ)–11.8.2003, Նյու Ջերսի (ԱՄՆ)], գրող: Սովորել է ծննդավայրի Խրիմյան վարժարանում: Փրկվելով Մեծ եղեռնից՝ 1920-ին հաստատվել է ԱՄՆ-ում: Ա-ի առաջին ստեղծագործությունները լույս են տեսել 1923-ին «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթում: 1936-ից «Նոր գիր» գրական հանդեսում տպագրել է արձակ ու չա-




«Սիրու երգիչ: Նահապետ Քուչակի երգերը» (1905, Թիֆլիս, մշակումը՝ **Գևորգ Ասատուրի***) գրքի փիփղոսաթերթը*



Հրանդ Ասատուր




Հ. Ասատուրի *«Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները» (2011, Ստամբուլ) գրքի փիփղոսաթերթը*



Հակոբ Ասատուրյանի *«Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը» (1962, Նյու Յորք) գրքի տիտղոսաթերթը*



Ասար Սեբաստացու *«Գիրք բժշկական արհեստի» (1993, Ե., ԳԱ հրտր.) բժշկարանի տիտղոսաթերթը*



Ասաքի Գեորգե

փաձո ստեղծագործություններ, գրական-քննադատ. տեսություններ, երաժշտության վերաբերյալ ակնարկներ: Աշխատակցել է նաև «Պայքար», «Անի», «Շիրակ», «Նոր աշխարհ», «Արեւ» պարբ-ներին:

Ա-ի «Անդաստան» (1946) բանաստեղծությունների գիրքն արտացոլում է հայրենի հողից կտրված հայի տվայտանքը: Նրա «Յովակիմի թոռները» (1965), «Յովակիմի թոռնորդիները» (1982) վեպերը սփյուռքահայ արձակի ուշագրավ էջերից են:

Լույս են տեսել Ա-ի «Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը» (1962), «Կոմիտաս վարդապետի հետ» (1994) աշխատությունները, Հայաստանի առօրյային ու մշակույթին նվիրված երկեր («Քարի եւ հողի պատմութիւն», 1969, «Պարոյր Սեւակի հետ», 1971), «Հարիւրամեակ, հանդիպումներ, յուշեր» (1978) գիրքը, «Ո՞ւր, Վահրամ» (1990), «Վերջալոյսի հոյզեր» (1996), «Սերունդները մխացող» (2000) ակնարկների, պատմվածքների ժող-ները:

Հանդես է եկել նաև Յ. Յ. Ա., Սաժակցի կեղծանուններով:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (1983) շքանշան:

Գրկ. Թամրազյան Հ., Հակոբ Ասատուրյան: Կյանքը և գործը, Ե., 1993: **Բրուտյան** *Մ., Հակոբ Ասատուրյան: Սփյուռքահայ գրողն ու երաժիշտը, Ե., 1999:*

ԱՍԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, XVII դ-ի գիտնական, բժիշկ: Սեբաստիայի հայ բժշկ. դպրոցի ներկայացուցիչ: Գրել է «Գիրք բժշկական արհեստի» (1614) բժշկարանը՝ 5-լեզվյան բժշկ. բառարան-հավելվածով (Մատենադարան, ձեռ. № 413): Այն բաղկացած է 140 գլխից, օտարազգի և հայ (*Միխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի* և ուր.) բժիշկների կորած աշխատությունների պատառիկների խմբագրություն է: 1625-ին Ա. Ս. խմբագրել է XII դ-ի ասորի բժիշկ Աբու Սահդի «Յաղագս կազմութեան մարդոյ» (հրտ.՝ 1974, ռուս., հայ.) երկը. ընդգրկել է աչքի կազմության մասին Մխիթար Հերացու ակնաբուժության վերաբերյալ աշխատությունից (այժմ՝ կորած) մի հատված: Ենթադրվում է, որ Ա. Ս-ուն է պատկանում նաև «Դուռն որ ցուցանէ զպատճառներն» խորագրով անանուն բժշկ. բնագիրը: Կազմել է նաև տոմար. աղյուսակներ (լուսնացույց, ամսացույց):

1993-ին Երևանում հրատարակվել է Ա. Ս-ու «Գիրք բժշկական արհեստի» քնն. բնագիրը (աշխատասիր.՝ Դ. Կարապետյանի):

ԱՍԱՔԻ ԳԵՈՐԳԵ [1(12).3.1788, Հերցա (Բուկովինա)–12(24).11.1869, Յասսի (Ռումինիա)], հայազգի ռումինագիր գրող, լուսավորիչ, հրատարակիչ, խմբագիր: Փիլ-յան դ-ր: Սովորել է Լվովում (1796–1804), ապա՝ Վիեննայում և Իտալիայում: Մոլդովայում բացել է առաջին ազգ. դպրոցը և ճարտարագիտ. ուսումնարանը (1813): 1835-ին Յասսիում հիմնադրել է փիլ-յան, իրավունքի, արվ-ի և աստվածաբանության Միհրյյան ակադ-ը, 1836-ին՝ երաժշտադրամատիկ. դպրոց: Իր հիմնադրած «Ալբինա» (1835) տպարանում հրատարակել է լրագրեր և գիտ. պարբ-ներ («Ալբինա Ռոմընեասկը», 1829–49), «Գազետա դը Մոլդովա», 1850–59, երկուսն էլ՝ ռում.), որտեղ լուսաբանել է նաև հայկ. մշակութ. հարցեր, տպագրել լուրեր Հայաստանից և նմուշներ հայ գրակ-ից: Կազմել է «Ֆրանս-ռումինական հանրագիտարանը» (1839):

Լույս են տեսել Ա. Գ-ի «Բանաստեղծություններ»-ի (1836), «Ընտիր առակներ»-ի (1836), «Իշխանուհի Ռուքսանա» (1841) և «Ճերմակ հովիտը» (1855) նորավեպերի ժող-ները: Թարգմանել է Եզոպոսի, Ժ. Լաֆոնտենի և Ի. Կռիլովի առակներից: Ռումինիայում իր հիմնադրած հայկ. տպագրատանը բացել է «Արամյան» բաժինը, որտեղ 1847–53-ին հրատարակել է հայ. դասագրքեր և այլ գործեր: 1853-ին լույս է ընծայել «Վավերաթղթերի հավաքածու» (ռում.) ժող-ը, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Մոլդովայի հայերի մասին:

Ա. Գ-ի պատվին Պիատրա Նեամցում հրատարակվել է «Ասաքի» (1881–85) գիտագրական հանդեսը, Յասսիում 1890-ին կանգնեցվել է նրա հուշարձանը:

«ԱՍԻԱ», քաղ. և բանասիր. լրագիր (շաբաթաթերթ, այնուհետև՝ եռօրյա, 1874-ի մայիսից՝ օրաթերթ): Լույս է տեսել 1872–75-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիրներ՝ Հովակիմ Րեհեյան, Հակոբ Խանճյան, Մկրտիչ *Փորթուգալյան*: Վերջինիս խմբագրության շրջանում «Ա.» դարձել է ավելի մարտնչող, տպագրել է նամակներ Վասպուրակա-

նից, հանդես եկել հայկ. գավառներում թուրք հարստահարիչների անօրինականությունների դեմ:

«Ա.»-ի նյութերը փաստական հիմք են դարձել Կ. Պոլսի Հայոց ազգ. ժողովի՝ Բարձր դռանն ուղղած բողոքագրերի համար: 1872–73-ին պարբ-ը տպագրել է հայատառ թուրք. հոդվածներ:

«ԱՍԻԱ», քարտեզ: Տպագրվել է 1787-ին Վենետիկում: Փորագրիչ՝ Եղիա *Էնպագյան:* Անվանացույցը՝ «Ասիա ըստ նոր Աշխարհագրական զննութեանց փորագրէալ ի Վէնէտիկ ի վանս սրբոյն Ղազարու...», չափերը՝ 79 x 57 սմ: Անվանացույցը քարտեզի ներքևի ձախ անկյունում է՝ զարդանկարի մեջ:



«Ասիա», *քարտեզ (1787, Վնտ.)*

ԱՍԼԱՆՅԱՆ Հայկազ (Հայկ) Գաբրիելի [1.5.1903, գ. Կողբ (Երևանի նահանգի Սուրմալուի գավառ)–6.10.1980, Երևան], փիլիսոփա: Փիլ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1967): Գիտ. վաստ. գործիչ (1963): Ավարտել է Թիֆլիսի կոմ. համալսարանը (1926): 1935-ին՝ *«Հայկական խորհրդային հանրագիտարան»*-ի (հ. 1, պր. 1) գիտ. քարտուղար, 1956–69-ին՝ ՀԽՍՀ ԳԱ փիլ-յան և իրավունքի բաժանմունքի, 1969–73-ին՝ Փիլ-յան և իրավունքի ինստ-ի բաժնի վարիչ:

Ա. «Դիալեկտիկական մատերիալիզմ» (1930) հայ. առաջին դասագրքի հեղինակն է, մասնակցել է Վ. Լենինի «Ընտիր երկերի» հայ. հրատ-յան նախապատրաստմանը:

Երկ. Идея прогресса в буржуазной философии истории, Е., 1965.



Ալբերտ Ասլյան. *«Ո՛չ» (1958, պլակատ)*

«ԱՍԼԻ ԵՎ ՔՅԱՐԱՄ», արլ. ժող. երգախառն սիրավեպ: Ստեղծվել է XVII–XVIII դդ-ում: Գովերգում է հայուհի Ասլիի (իսկական անունը՝ Մարիամ) և մահմեդական Քյարամի ազնիվ ու անդավաճան սերը: Հայ. մշակել է Զիվանին՝ «Քեարամ եւ Ասլիի հէքեաթը...» (1888, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.):

ԱՍԼՅԱՆ Ալբերտ Արտեմի (5.10.1922, Ալավերդի–23.8.2003, Երևան), նկարիչ: Վաստ. նկարիչ (1977): Ավարտել է ԵԳԻ (1952): 1973–83-ին եղել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության պատկերազարդման բաժնի վարիչ. ղեկավարել է «ՀՍՀ» 1–9-րդ հատորների պատկերազարդման աշխատանքները:

Ստեղծել է նաև պլակատներ՝ «Խաղաղության և բարեկամության համար» (1957), «Ո՛չ» (1958), «Այդ մենք ենք» (1959), «Անցյալը չի մոռացվի» (1962), «Հաղթանակի արցունքներ» (1985, եռանկար) ևն:

«Խաղաղություն աշխարհին» ցուցահանդեսի (1959, Բեռլին) հատուկ դիպլոմ:

ԱՍԿԵՐՅԱՆ Վրթանես (15.3.1720, Կ. Պոլիս–1810, Վենետիկ, Սբ Ղազար), լեզվաբան, տոմարագետ, թարգմանիչ: Սբ Ղազարում ստացել է իմաստասիր. և աստվածաբան. կրթություն: 1743-ին ձեռնադրվել է քահանա, դարձել միաբանության անդամ:

Ա-ի **«Աշտնջենաւոր պարզատօմար...»** երկը լույս է տեսել 1782-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ-ին՝ «Աշտնջենաւոր պարզատօմար Աղիւսակեալ շարադասութեամբ ամենայն տօնից տէրունականաց եւ տօնից սրբոյն եւ աւուրց պահոց ...» (136 էջ, 4º, 18,6 x 12,5 սմ):

Լատ-ից, հուն-ից, իտալ-ից թարգմանել է լատին եկեղեցու՝ հայոց մասին գրվածքները: Ա-ի թարգմանությամբ (բնագրից՝ գրաբար) լույս են տեսել ֆրանսիացի աստվածաբան Անտոն Կովդինի *«Փիլիտիայութիւն»* աշխատության Ա–Դ հատորները (1750–51, Վնտ., Ստեֆանո Օլանդոյի և Անտոնի Բորտոլիի տպ-ներ), Դոմինիկոս Բոհուրսիի *«Խոկմունք քրիստոնէականք»* (1771, Վնտ., Անտոնի Բորտոլիի տպ.), Ղուկաս Փինելեոսի *«Խրատք յաղագս կրօնաւորական կատարելութեան»* (1779), քարոզիչ Քսավերիոս Դոռնյացի *«Քարոզք համառօտք»* (1781, երկուսն էլ՝ Վնտ., Դեմետրիոս Թեոդոսիուի տպ.), ֆրանսիացի պատմաբան Շառլ Ռոլենի «Պատմութիւն հռովմէական...» աշխատությունները (հ. 1–6, 1816–17, Վնտ., Սբ Ղազարի տպ.):



Վրթանես Ասկերյանի *«Աշտնջենաւոր պարզատօմար...» (1782, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

ԱՍՈՐԱ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, ասոր. (սիրիական) իրավունքի նորմերի ժող.: Կազմվել է Փոքր Ասիայում 476–477-ին՝ Արլ. Հռոմ. կայսրության (Բյուզանդիա) կազմավորման ժամանակաշրջանում: Ժող-ում հիշատակված IV–V դդ-ի կայսրերի անուններով հայտնի է նաև որպես «Օրէնք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի, Թեոդոսի եւ Լեւոնի»:

Ա-հ. դ. տարածված էր նաև Հայաստանում, նրա մի շարք հոդվածներ արտացոլվել են ***Մխիթար Գոշի*** «Դատաստանագրքում»:

Դատաստանագիրքը բնագրից հայ. է թարգմանել ***Ներսես Լամբրոնացին*** 1197-ին, թեև բացառված չէ, որ այն նաև ավելի վաղ է թարգմանվել: Ավելի ուշ այն Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հետ թարգմանվել է վրաց. և ներառվել Վախթանգ IV թագավորի օրենքների ժող-ում՝ «Հայկական օրենքներ» ընդհանուր վերնագրով:

Գրկ. Առոգական դատաստանագիրք, լոյս ընծայեց Արսէն վրդ. Դյուզեանց, Էջմիածին, 1917: Սամուելյան Խ., *Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Ե., 1939:* Թովմասյան Ա., *Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Ե., 1977:*



«Ասպարէզ», *1908-ից, Ֆրեզնո, Լոս Անջելես*

«ԱՍՊԱՐԷԶ», հաս-քաղ., գրական պարբերաթերթ (սկզբում՝ եռօրյա, ապա՝ երկօրյա, 1978-ից՝ օրաթերթ): ՀՅԴ ԱՄՆ-ի արմ. շրջանի կենտր. կոմիտեի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1908-ից Ֆրեզնոյում՝ հայ., 1970-ից՝ Լոս Անջելեսում՝ հայ. և անգլ.: Խմբագիրներ՝ Աբրահամ Սեքլեմյան, Ալեքսանդր Մելիք, Արտավազդ Ռստիկյան, Արսեն Միքայելյան, Արմեն Պարտիզյան, Մանուկ Համբարձումյան, Ասատուր Խտրյան, Հովհաննես Ամատունի, Մինաս Վերածին, Մելիք Շահ, Անդրե Տեր-Օհանյան (Ամուրյան), Սարգիս Սարունի (Տոնկլիկյան), Ժիրայր Լիպարիտյան, Վահե Գյուրջանյան, Աբո ***Պողիկյան*** (1985–90-ին և 2008-ից՝ հայ. բաժնի), Արա Խաչատրյան (անգլ. բաժնի): Թերթն ի սկզբանե հասցեագրված էր Ֆրեզնոյի հայ համայնքին: Լուսաբանում է ամերիկահայ համայնքի ազգ., գրական, մշակութ., մարզ. կյանքը, ծանոթացնում է կուս-յան որոշումներին, անդրադառնում ՀՀ-ում և աշխարհում, մասնավորապես՝ Թուրքիայում, Ադրբեջանում, Վրաստանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, առանձին խորագրերով՝ նաև Արցախին ու Ջավախքին: Նյութեր է արտատպում նաև ամերիկյան լրատվամիջոցներից: Համագործակցում է ՀՀ-ում և Սփյուռքում տպագրվող ՀՅԴ պարբ-ների խմբագրությունների հետ: Ամերիկյան մամուլը («Los Angeles Times» և Վաշինգտոնում լույս տեսնող «Politico» օրաթերթերը ևն) հաճախ մեջբերումներ է անում «Ա.»-ից՝ կարևորելով Սփյուռքի տեսակետը հատկապես Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման, Հայ դատի հանձնաժողովի գործունեության և Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման վերաբերյալ:



«Ասպարէզ», *1912–13, Ալեքսանդրապոլ*

«Ա.» հայ հաս-քաղ. մամուլի ամենաերկարակյաց պարբ-ներից է: 2008-ին նշվել է թերթի լույսընծայման 100-ամյակը:

«ԱՍՊԱՐԷԶ», գրական ժող.: Լույս է տեսել 1912–13-ին Ալեքսանդրապոլում (ընդամենը՝ 6 գիրք): Կազմող-խմբագիր՝ Նորդ (Մարուքե Խաչատրյան): Տպագրել է հայ սկսնակ գրողների բանաստեղծություններ ու պատմվածքներ, թարգմանություններ համաշխ. գրակ-ից:

ԱՍՊԻՍԱԿԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XIII–XIV դդ-ում Քաջբերունիք գավառի Ասպիսակ գյուղին մերձակա Սբ Աստվածածնին վանքում: Հիմնադրել է Քաջբերունիքի տեսուչ տեր Աբրահամը՝ 1256–65-ին վանքը վերակառուցելուց հետո (նվիրատու՝ Ավետենց Սահմադին): Ա. գ. կ-ից մեզ հասած առաջին ձեռագիրն ընդօրինակել է Հովսեփ գրիչը 1281-ին (Բրիտ. թանգարան, ձեռ. № 2670): Մատենադարանում (ձեռ. № 193) պահվում է նույն գրչի 1299-ին ընդօրինակած Աստվածաշունչը: Կենտրոնի նշանավոր գրիչներից էր Ղազարը, որը նաև ծաղկող էր: Գրչության արվեստն այստեղ առավել զարգացման

է հասել XIV դ–ի սկզբին, երբ վանքի առաջնորդ է կարգվել Գլաձորի համալսարանն ավարտած Ստեփանոսը: Նրա օրոք վանքի մատենադարանը հարստացել է հին գրքերի ընդօրինակություններով:

«ԱՍՊՆԶԱԿ», հաս–քաղ., գրական–մշակութ., ազգագր. պարբ.: «Զավախք» հայրենակց. բարեգործ. միության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1990–96 և 2001–06–ին Երևանում (առաջին շրջանում՝ 16 համար՝ անկանոն պարբերականությամբ, երկրորդում՝ կիսամսյա, ապա՝ ամսաթերթ): Հիմնադիր–խմբագիր՝ Մերուժան ***Տեր–Գուլանյան***, 2001–ից՝ խմբագր. խորհուրդ, նախագահ՝ Հովհաննես ***Այվազյան***, խմբագիր՝ Վահան Սաղաթելյան: Ծանոթացրել է միության աշխատանքներին, հատուկ ուշադրություն է դարձրել Զավախքում հայապահպանության խնդիրներին, կրթ. և մշակութ. կյանքին: Անդրադարձել է վրաց. մամուլում Զավախքի և վրացահայության մասին տպագրված հոդվածներին, տարածաշրջանի հայության ազգագրությանը, ավանդույթներին, Հայ առաքել. եկեղեցու Վիրահայոց թեմի գործունեությանը: Տպագրել է ազգագրագետ Վ. Բդոյանի «Զավախք. պատմաաշխարհագրական ակնարկ» աշխատությունը (№ 3–69):



«Ասպնջակ», 1990–96, 2001–06, Երևան

Լուսաբանել է Ղարաբաղյան ազատագր. պատերազմին (1992–94) ջավախքահայության մասնակցությունը: Հոդվածներ է հրապարակել երևելի ջավախքահայերի կյանքի ու գործունեության մասին, անդրադարձել Զավախքում ավանդաբար կազմակերպվող ջիվանիական, տերյանական, հավասիական գրական–երաժշտ. տոնահանդեսներին:

1996–ին ունեցել է հատուկ թողարկում՝ նվիրված Ջիվանու ծննդյան 150–ամյակին (խմբագիր՝ Ռոզա Սահտեսյան): 2006–ին տպագրվել է «Հայրենիք» վերնագրով (մի քանի համար):





«Աստղաբերդ»,
1951–54, Սփամբուլ

«ԱՍՏՂԱԲԵՐԴ», հայագիտ. և մշակութ. ամսագիր: Լույս է տեսել 1951–54–ին Ստամբուլում: Խմբագիր՝ Թորոս ***Ազատյան***: Տպագրել է գրական–գեղ. գործեր, ժող. ստեղծագործության պատառիկներ, ազգագր. նյութեր, հոդվածներ հայ գրողների (Գրիգոր Նարեկացի, Ֆրիկ, Պ. Դուրյան, Դ. Վարուժան և ուր.) մասին: Հրապարակել է հայ մտավորականների անտիպ գործեր, նամակներ (Գ. Օտյան, Ռ. Սևակ, Սերվիչեն, Մ. Չերազ, Ե. Տեմիրճիպաշյան, Թլկատինցի, Գ. Սրվանձտյան, Ռ. Մելիքյան և ուր.), Ակնի մշակույթին ու պատմությանը վերաբերող նյութեր:

«ԱՍՏՂԱԼԻՑ ԵՐԿԻՆՔ», հայկ. առաջին աստղագիտ. տպագիր քարտեզը (եթե նկատի չունենանք երկնոլորտի պատկերումը հիմնականում աշխարհագր. բնույթի *«Համատարած աշխարհացոյց»*–ի վրա): «Ա. ե.» (չափերը՝ 39 x 25,7 սմ) որպես ներդիր զետեղված է ***Մխիթար Սեբաստացու*** «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 500–501 էջերի միջև, 1749) գրքում, կենտրոնում երկնոլորտի կիսագնդերն են՝ համաստեղությունների նկարներով (63), միգամածություններով և անզեն աչքով տեսանելի աստղերով: Պատկերված են Ծիր Կաթինը, բևեռները, հակման շրջանները, Խավարածիրը նև: Ստորին մասում երկնոլորտի տարած. պրոյեկցիաներն են, անկյուններում՝ Յուպիտերը (նույնիսկ ցույց է տրված նրա մթնոլորտում դիտվող շերտերը) և Սատուռնը՝ իրենց 4–ական արբանյակներով, Լուսինն ու Մարսը: Քարտեզի նկարներից մեկի կենտրոնում Երկիրն է, որի շուրջ պտտվում են Լուսինը, Արեգակը, Մարսը, Յուպիտերը և Սատուռնը, իսկ Մերկուրին ու Վեներան պտտվում են Արեգակի շուրջը, այսինքն՝ տրված է աշխարհի կառուցվածքը՝ ըստ այսպես կոչված հին եգիպտ. համակարգի:




«Աստղալից երկինք»,
քարտեզ (1749, Վնտ.)

Ըստ Ս. Շեմճեմյանի՝ քարտեզը փորագրվել է 1746–47-ին՝ Հ. Զաքարյանի նախաձեռնությամբ:

Գրկ. Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, հ. 1, Ե., 1964, էջ 213–215:

«ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1965-ից Երևանում՝ ռուս. և անգլ.: Հիմնադիր-խմբագիր՝ Վիկտոր *Համբարձումյան* (մինչև 1988-ը), խմբագիրներ՝ Լյուդվիգ Միրզոյան, Դավիթ Սեդրակյան (2000-ից), պատ. խմբագիր՝ Արսեն Քալլօղլյան (1979-ից): Խմբագրակազմի 16 անդամից 6-ը ՀՀ-ից են, 7-ը՝ ՌԴ-ից, և 1-ական անդամ՝ Վրաստանից, Ֆրանսիայից ու ԱՄՆ-ից: Առաջին իսկ համարից «Springer» հրատարակչությունը «Ա.» թարգմանում է անգլ.: Տպագրում է աստղերի, միգամածությունների, գալակտիկաների և աստղաֆիզիկայի հիմնախնդիրներին վերաբերող տես. ուսումնասիրություններ: Աշխատակցում են Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի ճանաչված գիտնականներ, հանդեսում տպագրվում են նաև այլ երկրների (Վրաստան, Ուկրաինա, Իրան, Չինաստան, Հնդկաստան ևն) հեղինակների հոդվածներ: Խմբագրակազմի անդամներ են եղել ԽՍՀՄ անվանի գիտնականներ Վիկտոր Սորոչևը, Վլադիմիր Գորբացկին և ուր.:



«Աստղիկ», *1988-ից, Երևան (№ 25, 2013)*

«ԱՍՏՂԻԿ», գրական, մշակութ., թարգման. տարեգիրք: ԵՊՀ հրատ.: Լույս է տեսնում 1988-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Սոնա *Սեֆերյան*: Առաջին թարգման. պարբ-ն է ՀՀ-ում: Տպագրում է թարգմանություններ տարբեր լեզուներից, հիմնականում՝ բնագրերից, ինչպես նաև գիտ. հոդվածներ՝ թարգման. արվ-ի վերաբերյալ: Հրատարակվել են Դ. Լորենսի, Վ. Շեքսպիրի, Լ. Քերոլի, Ռ. Քիփլինգի, Գ. Քենեթի, Գ. Լորկայի և ուր. գործերից: «Ա.» տպագրում է նաև հայ գրողների (Հ. Թումանյան, Վ. Տերյան, Պ. Սևակ, Նար-Դոս, Շիրվանզադե) ստեղծագործությունների թարգմանություններ:


ԱՍՏՂԻԿ
ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՕՐԱԳԻՐ
1855

«Աստղիկ արեւելեան», *1855–56, Կ. Պոլիս (հ. Ա, 1855)*

«ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ», բանասիր., գիտ. ամսագիր: Մեսրոպյան ընկերության հրատ.: Լույս է տեսել 1855–56-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Հովհաննես Գաբրիելյան: Տպագրել է ինքնուրույն ու թարգման. նյութեր՝ բարոյախոս. զրույցներ, բանաստեղծություններ, պատմվածքներ, հոդվածներ առողջապահ-յան, դպրոցի և մանկավարժության վերաբերյալ, աշխարհագրությանը և բնական գիտ-ներին առնչվող օգտակար տեղեկություններ: Մեսրոպյան ընկերության լուծարումից հետո ամսագիրն այլևս լույս չի տեսել:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ, **Սուրբ գրոց գիրք**, հնագույն տեքստերի (գրվել են Աստծուց ներշնչված) ժողովածու, որոնք կանոնացրել են հրեաներն ու քրիստոնյաները և ընդունել որպես Սուրբ գիրք: Բաղկացած է 2 մասից՝ Հին կտակարան (ուխտ, պայման, մ. թ . ա. VIII–մ. թ. II դդ., հին եբր., մասամբ՝ արամեերեն, 39 գիրք), որը, քրիստ. ավանդույթի համաձայն, կնքվել է հրեաների և Աստծու միջև՝ Մովսես մարգարեի միջոցով. ընդունում են հրեաներն ու քրիստոնյաները, և Նոր կտակարան (I դ-ի 2-րդ կես–II դ-ի սկիզբ, 27 գիրք), որը կնքվել է Հիսուս Քրիստոսի հայտնությամբ՝ նրա և ողջ ժողովրդի միջև. ընդունում են միայն քրիստոնյաները:



Հայերեն առաջին տպագիր **Աստվածաշունչը** *(1666–68, Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի)*

Ա. հայ. թարգմանվել է V դ-ում՝ գրերի գյուտից անմիջապես հետո՝ ասոր. բնագրից, որի թերի լինելու պատճառով հետագայում լրացվել և սրբագրվել է «Յոթանասնից» թարգմանության հիման վրա: Առաջինը թարգմանվել է Սողոմոնի «Գիրք առակացը», ապա՝ մյուս մասերը: Հայ. թարգմանել են հիմնականում ***Մեսրոպ Մաշտոցն*** ու ***Սահակ Պարթևը*** և նրանց աշակերտները՝ ***Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Պաղնացին, Եզնիկ Կողբացին, Ղևոնդ Վանանդեցին, Կորյունը***: Ա-ի հայ. թարգմանությունը ֆրանսիացի

արևելագետ-հայագետ Լա Կրոզը համարել է «Թագուհի թարգմանությանց»:

Ա. հայ. առաջին անգամ տպագրվել է 1650-ին Նոր Ջուղայում՝ Սբ Ամենափրկիչ վանքի տպարանում, տպագրիչ՝ Հովհաննես Ջուղայեցի Քթռեշենց (տպագրությունն անավարտ է): Ա-ի քննական լավագույն բնագիրը լույս է տեսել Հովհաննես *Զոհրապյանի* աշխատասիրությամբ 1805-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (1 ամբողջ. և 4 առանձին հատորներով): Հիշարժան է նաև ***Արևեն Բագրատունու*** հրատ-ը («Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր կտակարանաց») 1860-ին՝ դարձյալ Վենետիկում (նույն տպ.): 1994-ին Մայր աթոռ Սբ Էջմիածնի հրատարակած Ա. արևելահայ-ի է փոխադրվել Ա. Բագրատունու բնագրի հիման վրա:

Տպագրվել են «Բառարան Սուրբ Գրոց» (1881, ԿՊ, Հակոբ Պոյաճյանի տպ.), Թ. Աստվածատուրյանի «Համաբարբառ Հին եւ Նոր կտակարանաց» (1895, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) աշխատությունները:

Հայ հնատիպ գրքի շրջանում Ա-ներ տպագրվել են՝

1666–68-ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչ՝ ***Ոսկան Երևանցի***: Ա-ի առաջին լիարժեք տպագրությունն է: Տիտղթ-ին՝ **«Աստուածաշունչ հնոց եւ նորոց կտակարանաց ներպարունակող. շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց…»** (1470 էջ, 4^0, 21 x 14,7 սմ): Տիտղթ-ը զարդափակ է: Ունի պատկերներ (հիմնականում՝ Ալբրեխտ Դյուրերի գործերից)՝ փորագրիչ Քրիստոֆեր վան Զիխեմի անվանատառերով՝ CVZ:

Համարվում է հայ գրքի հնատիպ շրջանի տպագրության պսակը. կազմը կարմիր կաշեպատ հաստ տախտակից է, բացվածքի 3 կողմը՝ ոսկեգույն փայլով և խազավոր ծաղկանկարներով:

1705–07-ին Կ. Պոլսում՝ Պետրոս Լատինացու տպարանում: Տիտղթ-ին՝ **«Աստուածաշունչ հնոց եւ նորոց կտակարանաց ներպարունակող …»** (1158 էջ, 4^0, 16,8 x 11 սմ):

1733-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում, հրատարակիչ՝ Մխիթար Սեբաստացի: Ա տիտղթ-ին՝ **«Աստուածաշունչ գիրք»**, Բ-ին՝ **«Աստուածաշունչ գիրք հնոց եւ նորոց կտակարանաց…»** (1290 էջ, 4^0, 24,2 x 14,2 սմ):

Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվում է նկարների մի ալբոմ (№ Ժ1404)՝ 1733-ի հրատ-յան պատկերներով (առանց բնագրի): Բաղկացած է 157 թերթից, որոնց վրա կան տարբեր չափերի պատկերներ՝ մակագրություններով: Առաջին 4 նկարների մակագրությունները տպագիր են, մյուսները՝ ձեռագիր: Ի տարբերություն գրքի պատկերների՝ ալբոմի նկարների դարձերեսներին տպագրություն չկա: Ալբոմում նկարների քանակը գրքի համեմատությամբ մեկով ավելի է. այնտեղ պատկերված են Մարիամ Աստվածածինը և Հիսուսը՝ «Յիսուս ննջէ յօրօրոցին սրբուհի կոյսն շարժմամբ ձեռին լռել ազդէ սուրբ մկրտչին» մակագրությամբ:

1801-ից հետո Ա. տպագրվել է 1805, 1816-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1817-ին (ՍՊբ, Հովսեփ Հովհաննիսյանի տպ., և գ-ք. Սիրամփուրում՝ Կալկաթայի մոտ), 1875, 1878, 1880, 1881, 1883, 1884, 1888, 1889, 1895, 1896, 1898, 1899, 1902, 1903, 1905, 1906, 1910, 1911, 1912, 1913-ին (ԿՊ, Հակոբ Պոյաճյանի տպ.), 1895-ին (ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.), 1914, 1920, 1921, 1922, 1923, 1933-ին (ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.), 1917, 1981-ին (Նյու Յորք, Աստվածաշնչի ընկ. տպ.), 1928, 1942, 1947, 1955, 2001-ին (Բ., Լիբանանի աստվածաշնչ. ընկ. տպ.), 1929, 1930, 1931, 1932, 1957-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1943-ին (Բուենոս Այրես, «Հայ կեդրոն» տպ.), 1959, 1960-ին (Լոնդոն), 1962, 1966, 1981-ին (Բ.), 1989-ին (Գերմանիա), 1966-ին (Թեհրան, «Մոդեռն» տպ.), 1995-ին (Թեհրան, «Նայիրի» տպ.), 2001–02, 2003, 2010-ին (Թեհրան, «Ալիքի» տպ.):

Աստվածաշունչ



1705–07 (Կ. Պոլիս, Պետրոս Լատինացու տպ.), տիտղոսաթերթը



1733 (Վնտ.), գլխազարդով (491-րդ) էջ



2001 (Բեյրութ), կազմը



Աստվածատուր Աբեղա. *«Հարություն», մանրանկար, 1419-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 2670)*

Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու *տպագրած գրքերից*



Շարակնոց (1703, Կ. Պոլիս), պատկերազարդ (20-րդ) էջ



Ներսես Շնորհալու «Ցիսուս Որդի» (1746–1747, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը

Հայապատկան ապրվածաշնչային ընկերությունը նույնպես հրատարակել է Ա-ներ (1989, 1990, 1994, 1997, 1998, 2010):

Գրկ. Զարբհանալեան Գ., *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889:* Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեակի, *Երուսաղեմ, 1938:* Անասյան Հ., *Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, «Էջմիածին», 1966, № 11–12:* Մելքոնյան Հ., *Աստվածաշնչի ասորերեն և հայերեն թարգմանությունների պատմությունից,* նույն տեղում: Իշխանյան Ռ., *Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը,* նույն տեղում: Կոսիդովսկի Զ., *Բիբլիական ավանդապատումներ, Ե., 1970:* Եղիայեան Բ., *Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, գիրք 1–5, Անթիլիաս, 1976:* Մանուկեան Ա., *Աստուածաշունչ մատեանը, Թեհրան, 1998:* Тер-Мовсесян М., *История перевода Библии на армянский язык, СПб, 1902.*

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Ա. ՀԱՄԱԴԱՆՑԻ [ծ. թ. անհտ–10.10.1725, գ. Օշական (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում, ամփոփվել է Վաղարշապատում՝ Սբ Հռիփսիմե եկեղեցու գավթում)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1715-ից: Ա. Ա. Հ. համակրանքով է վերաբերվել Դավիթ Բեկի գլխավորած ազատագր. շարժմանը և ռուս. զորքերի՝ Կովկաս ու Պարսկաստան ծրագրված արշավանքին: Այդ պատճառով պարսիկները հալածել են նրան:

Ա. Ա Հ-ուց մեզ են հասել մի շարք մատենագր. վկայությունների քաղվածքներ («Վկայութիւնք յԱստուածաշունչ գրոց, այսինքն՝ ի Հին եւ Նոր Կտակարանաց, ի պէտս ուսումնասէր մանկանց Սիօնի», Մատենադարան, ձեռ. № 3637, հրտ.՝ 1988, «Վկայութիւնք սրբոց վարդապետացն մերոց աստուածիմաստից եւ բանիբուն իմաստասիրաց, ի պէտս ուսումնասէր մանկանց Սիօնի», Մատենադարան, ձեռ. № 3281, «Աստուածատրոյ Համադանեցւոյ իբրու բանասիրէ արարեալ ժողովածու գիրքս՝ ի պէտս քարոզողաց եւ ի գբօսանս մանկանց եկեղեցւոյ», Մատենադարան, ձեռ. № 56) և կոնդակներ: Նրա պատվերով Ավետիք Տիգրանակերտցին կազմել է Գաւազանագիրք (Մատենադարան, ձեռ. № 1492):

Գրկ. Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914:* Անասյան Հ., *Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976:* Կարապետյան Մ., *«Իմամ Զաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII–XVIII դարեր), «ՊԲՀ», 1988, № 1:*

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԱԲԵՂԱ (1387–մ. թ. անհտ), գրիչ և մանրանկարիչ: Ուսանել է Ռշտունյաց գավառի Սբ Վարդան անապատում, իր մորեղբայր Հակոբ վարդապետից սովորել է «...զգիր, զծաղիկ, զոսկել եւ զկազմել եւ այլ բազում բարութիւն»: Ակոռիի ու Ոստանի վանքերում և Անձնանապատում ընդօրինակել է նաև կիլիկյան (հատկապես ***Սարգիս Պիծակի***) ձեռագրերից՝ զուգակցելով Վասպուրականի մանրանկարչության դպրոցի և Կիլիկիայի XIV դ-ի գեղանկարչության ավանդույթները: Պատկերազարդել է 1417-ի (ձեռ. № 4841), 1419-ի (ձեռ. № 2670) Ավետարանները, Սաշտոց (1418, ձեռ. № 4151, բոլորը՝ Մատենադարան), Ճաշոց (XV դ., ձեռ. 4551), Ոսկեփորիկ (1403, Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 705):

Գրկ. Երեմյան Ա., *Մանրանկարիչ Աստվածատուր Աբեղա, «Էջմիածին», 1958, № 8:* Հակոբյան Հ., *Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք 1, 2, Ե., 1976, 1982:* Уваров А., *Эчмиадзинская библиотека, в кн.: Пятый археологический съезд в Тифлисе, М., 1882, с. 368.*

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԳՐԻՉ, XIV դ-ի գրիչ: Աշակերտել է Պողոս և Աստվածատուր վարդապետներին: Գործել է Մոկաց սարի Սբ Գևորգ վանքի դպրոցում: Նրա ընդօրինակած ձեռագրերից պահպանվել է 2 Ավետարան, որոնցից մեկը Բրիտ. թանգարանում է (ձեռ. № 2680), մյուսը պահվել է Ագուլիսի Սբ Թովմա առաքյալի վանքում (այժմյան տեղը հայտնի չէ):

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԴՊԻՐ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ (ծ. թ. անհտ–մոտ 1748), տպագրիչ, հրատարակիչ: Տպագր. գործունեությունն սկսել է 1698-ից Կ. Պոլսում՝ ***Գրիգոր Սարգվանեցու*** հետ: 1699-ին հիմնադրել է սեփական տպարան, հրատարակել կրոն. և աշխարհիկ բովանդակության մոտ 60 անուն գիրք՝ Գրիգոր Նարեկացու «Ճառ Խաչի» (1702), Եփրեմ Խուրի Ասորու «Յաղագս ապաշխարհութեան» (1703), Հակոբ Տյառնեղբոր «Կտակգիրք» (1710), Հովհաննես Սիքուզի «Դա-

ւանութիւն հաւատոյ» (1713–14), Առաքել Սյունեցու «Ադամգիրք» (1721), Սիմեոն Ջուղայեցու «Տրամաբանութիւն» (1728), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» (1729), Խոսրով Անձևացու «Մեկնութիւն աղօթից» (1730), Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց» (1731), Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1746–47) ևն, նաև այբբենարաններ, շարակնոցներ, տաղարաններ, օրացույցներ [«Դպրութեան գիրք եւ տաղարան» (1701, 1723–24), Ժամագիրք (1699, 1701, 1719, 1721, 1725), Շարակնոց (1699, 1703, 1724, 1727), Տօնացոյց (1703, 1722), Մաշտոց (1704, 1714, 1726), Յայսմաւուրք (1706–08), «Սկիզբն գրոցս որ կոչի ժողովածու» (1717–18), «Հարանց վարք» (1720–23), «Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի» (1721), «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» (1721), Այբբենարան (1722), Շաշոց (1722), «Տօմար» (1725–26), Աւետարան (1729) ևն]: Ա. Դ. Կ–ու հրատ–ներն աչքի են ընկնում բարձրարվ. տպագրությամբ և գեղ. ձևավորմամբ: Նրա հիմնած տպարանում աշխատել են բանաստեղծ Պաղտասար Դպիրը (սրբագրիչ) և իր որդին՝ Հովհաննեսը, որը Ա.Դ.Կ–ու մահից հետո դարձել է տպարանապետ (1748–77): Այնուհետև տպարանն անցել է Արապյան տպագրիչների ընտանիքին (տես *Արապյաններ*):

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՆԵՐՍԵՍՈՎԻՉ, **Դեոդատ Ներսեսովիչ, Աստվածատուր Ներսիսյան, Աստվածատուր Լեհացի** [1647, գ. Յազլովեց (այժմ՝ Ուկրաինայի Տեռնոպոլի մարզի Բուչագի շրջանում)–1709, Լվով)], բառարանագիր, աստվածաբան, մանկավարժ: Սովորել է Լվովի հայոց պապական դպրանոցում (1665–68): Գրել է իտալ. և հայ.: Եղել է Տրայանուպոլսի եպիսկոպոս, 1681–86-ին՝ Լեհահայոց թեմի առաջնորդ. տեղապահ, 1698–1709-ին՝ առաջնորդ:


Ա. Ն–ի «Բառգիրք լատինեայ» (լատ–հայ.) բառարանը (17 500 բառահոդված) տպագրվել է 1695-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Dictionarivm Latino–Armenvn.», Բ–ին՝ «Dictionarivm Latino–Armenvn. Super Sacram Scripturam, et libros Divini Officii Ecclesiae Armenae, compositum per D. N. E. T. բառգիրք Լատինացւոց եւ Հայոց ի վերայ Աստուածաշունչ եւ ժամակարգութեան գրոց Հայոց եկեղեցւոյն, շարադրեալ ի Ա. Ն. Է. Դ...» (618 էջ, 4^0, 17 x 11,8 սմ): Սկսվում է «Aa–Aա, Aaron–Ահարոն–լեառն կամ լեռնական և վերջանում Zythum–գարեջուր» բառահոդվածով:

Թեպետ բառարանը լատ–հայ. է, սակայն քերական. նշումներում շեշտվում է հայ–ը: Բառգրքում կան բառեր, որոնց աղբյուրը հայտնի չէ, և միայն այստեղ են հանդիպում:


1684-ին լեհ. լույս է տեսել Ա. Ն–ի ներբող. ճառը՝ նվիրված 1683-ին թուրքերի դեմ լեհերի տարած հաղթանակին: Ալոյիսիոս Պիդուի «Սրբուհի Պուլքերիա» լատ. ողբերգության համար 1668-ին լեհ. գրել է միջախաղեր՝ նախերգանքով ու վերջաբանով: Վերանայել և լրացրել է լատ. Ծիսարանի հայ. թարգմանությունը, լատ–ից լեհ. է թարգմանել Լավրենտիոս Սկուպոլիի «Հոգևորական պատերազմ» աշխատությունը: Ունի հայ. աստվածաբան. անտիպ աշխատություններ («Վիճաբանութիւնք աստուածաբանութեան», «Ծանօթութիւնք բարոյականից աստուածաբանութեանց», «Արդարացութիւն եկեղեցւոյն Հայոց»):

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵԴԵՍԱՑԻ (1606, Ուռհա–մոտ 1690), գրիչ և ծաղկող: Նրա անունով հայտնի է 18 ձեռագիր, որոնք պահվում են Երևանի և Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների մատենադարաններում:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՅԱՆ (Եկավյան) Թադևոս [1831, Արաբկիր–1.4.1906, Երուսաղեմ], բառարանագիր, Երուսաղեմի միաբան: 1860–67-ին գրել է «Համաբարբառ Հին եւ Նոր կտակարանաց» ստվարածավալ աշխատությունը (հրտ.՝ 1892, 1895, 2010՝ նմանահանություն, բոլորը՝ Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.): Գլխաբառ–վերնագրի տակ



DICTIONARIVM
LATINO-ARMENVM
D. N. E. T.
ROMAE, Typis Sacrae Congr. de Propag. Fide.
M. DC. XCV.
Superiorum Permissu.

Աստվածատուր Ներսեսովիչի *«Բառգիրք լատինեայ»-ի (1695, Հռոմ) տիտղոսաթերթը (վերևում) և 1-ին էջը (ներքևում)*


DICTIONARIVM
LATINO-ARMENVM


1895

Թադևոս Աստվածատուրյանի *«Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» (1895, Երուսաղեմ) գրքի տիտղոսաթերթը*



«Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի» (1797, Աստրախան) գրքի տիտղոսաթերթը



«Աստուածաբանական մեկնութիւն կաթուղիկեաց...» *(Ֆրանչիսկոս Դունելլյան, 1749, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Միհրան Ասքանազյանի *« Գրագիտութիւն տեսական եւ գործնական» (մաս 1, հ. Ա, 1891, Կ. Պոլիս) գրքի շապիկը*

ներկայացրել է ***Ասլվածաշնչում*** գործածված գրեթե բոլոր բառերը՝ իրենց նախադասություններով, նշել գործածության տեղը: Գրել է նաև «Քարոզագիրք» (1860, անտիպ):

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ, Նոր Նախիջևանի հայկական տպարանն է, որը 1796-ին տեղափոխվել է Աստրախան: Գործել է մինչև 1800-ը՝ արք. Հովսեփ ***Արղությանի*** տնօրինությամբ: Հայտնի է նաև որպես Արղությանի տպարան: Տպագրել է 8 գիրք՝ Եկատերինա II-ի «Հրովարտակը» (հայ., ռուս., 1796), Ժամագիրք (1796), Հ. Արղությանի «Խօսք ասացեալ ի վերափոխման աստուածածնայ յեկեղեցւոջն Հայոց» և «Կոնդակ օրինութեան» (երկուսն էլ՝ 1796), «Էֆիմէրտէ» (1797–99), Վարդան Բարձրբերդցու (Արևելցու) «Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի» (1797), «Տարեցոյց եւ օրացոյց» (1797), «Թարգմանութիւն Պրիվէլէկացն Հայոց» (1800):

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, ավատատիր. հայ իրավունքի օրենսգիրք, որով կարգավորվել են Հվ. Ռուսաստանի հայկ. գաղութների (Աստրախան, Նոր Նախիջևան, Մոզդոկ, Ղզլար) բնակչության իրավահարաբերությունները: Մշակվել է Ռուսաստանի Սենատի՝ 1746-ի սեպտ. 17-ին հայերի և մյուս օտարերկրացիների տնտ., իրավ. ու կրոն. դրության մասին հրամանագրի ընդունումից հետո՝ 1747–65-ին: Կազմել են Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր դի Սաֆար Կամպանյանը և Օհանի որդի Սարգիսը՝ ***Միխթար Գոշի*** Դատաստանագրքի և հայկ. սովորութային իրավունքի հիման վրա:

Գրկ. Դատաստանագիրք Ազրախանի հայոց, աշխատասիր.՝ Ֆ. Պողոսյանի, Ե., 1967:

«ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ...», հիսուսյան աստվածաբան, վարդապետ Ֆրանչիսկոս Դունելլյանի՝ հակոբ առաքյալի քարոզների մեկնությունները: Իտալ-ից թարգմանել և հրատարակել է ***Աթանաս Մերսյան Կոստանդնուպոլսեցին***:

Տպագրվել է 1749-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Բաղկացած է 2 մասից. Ա և Բ տիտղթ-ին՝ «Աստուածաբանական մեկնութիւն Կաթուղիկեաց գրոց երանելոյ Յակոբու Առաքելոյն....» (459 էջ, 4^0, 16,3 x 11,5 սմ):

ԱՄՐՅԱՆ Արկադի Գուրգենի [ծ. 30.4.1947, ք. Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)], հրատարակիչ: Ավարտել է Լվովի պոլիգրաֆիայի ինստ-ը (1970): 1973–78-ին՝ ***«Լույս»*** հրատարակչության փոխտնօրեն, 1978–83-ին՝ Գունավոր տպագրության տպարանի գլխ. ինժեներ: 1983-ին Չարենցավանում հիմնադրել է տպարան, 1986–94-ին աշխատել է Երևանի № 2 տպարանում (1994-ին՝ տնօրեն), 1995-ին գործող տպագր. հենքի վրա կազմավորել է ***«Ամարաս»*** հրատարակչություն-տպագրատունը, որի նախագահն է: 2001–09-ին միաժամանակ ղեկավարել է ՀՀ ՊՆ զինվոր. տպարանը:

ԱՍՔԱՆԱԶՅԱՆ Միհրան (1854, Կ. Պոլիս–1904, Ալեքսանդրիա), հրապարակախոս, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում: Դասավանդել է տեղի Պերպերյան, Մեզպուրյան, Կեդրոն., Արամյան վարժարաններում, եղել Ռոդոսթոյի ազգ. վարժարանի տեսուչ: 1889–93-ին Կ. Պոլսում խմբագրել և հրատարակել է ***«Ծաղիկ մանկանց»*** մանկապատանեկան կիսամյա հանդեսը, 1903–04-ին Ալեքսանդրիայում՝ ***«Պարտէզ»*** շաբաթաթերթը: Հեղինակ է «Գրագիտութիւն տեսական եւ գործնական» դասագրքի (մաս 1, հ. Ա–Բ, 1884, ԿՊ, Գարեգին Պաղտատյանի տպ., 1891, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.):

ԱՎԱԳ, XIV դ-ի 1-ին կեսի մանրանկարիչ, գրիչ և կազմող: Գլաձորի համալսարանում աշակերտել է ***Եսայի Նչեցուն*** և ***Թորոս Տարոնացուն***: 1329–58-ին ստեղծագործել է Սյունիքում, Սուլթանիայում, Փայտակարանում, Թավրիզում: 1350-ական թթ-ին եղել է Կիլիկիայում:

Հայտնի է Ա-ի 8 ձեռագիր (200-ից ավելի մանրանկարներով)՝ 3 Ավետարան (1329, ձեռ. № 7650, 1337, ձեռ. № 212, 1352, № 7631), 2

Աստվածաշունչ (1338, ձեռ. № 4429, 1356–58, ձեռ. № 6230, բոլորը՝ Մատենադարան), Ավետարան (1334, Երուսաղեմի մատենադարան), Աստվածաշունչ (1341, Վենետիկի Մխիթարյան մատենադարան), Խազգիրք (1337, Բեռլինի կայսեր. գրադարան), Ավետարան (XIV դ., Լոնդոնի Բրիտ. թանգարան):

Գրկ. Յովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պոշեանք հայոց պատմութեան մէջ, մաս 2, Երուսաղեմ, 1942, էջ 202: **Ավետիսյան Ա.,** *Հայկական մանրանկարչության դպրոցը, Ե., 1971:*

ԱՎԱԳՅԱՆ Աբիգ Համազասպի (14.9.1919, Թեհրան–25.1.1983, Երևան), գրող: 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվ. ինստ-ի գրակ-յան բարձրագույն դասընթացները (1957): 1959–83-ին՝ ՀԳՄ խորհրդական:

Լույս են տեսել Ա-ի «Վաղը» (1951), «Շիկացած հող» (1955), «Նազելի Դալարյան» (1959) վեպերը, «Հարավային տենդ» (1971, 2009), «Եղել է, չի եղել» (1973), «Մարդը անապատում» (1981) պատմվածքների ժող-ները:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1971):

Երկ. Հարված (վիպակ և պատմվածքներ), Ե., 1978: Վերջին հանգրվան (պատմվածքներ, վիպակ), Ե., 1982:

Գրկ. **Թևանյան Մ.,** *Աբիգ Ավագյան, Ե., 1999:*

ԱՎԱԳՅԱՆ Արևշատ Խոսրովի (ծ. 24.7.1940, Աշտարակ), գրող, նկարիչ, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ (1966): 1966–71-ին աշխատել է «Ավանգարդ», 1973–75-ին՝ *«Գարուն»* (1976–1983-ին՝ գլխ. խմբագրի տեղակալ) պարբ-ներում, 1984–86-ին եղել է ՀԳՄ Արարատյան գրական միավորման պատ. քարտուղար, 1986–94-ին՝ Հեռուստառադիոպետկոմի գրական-գեղ. հաղորդումների գլխ. խմբագրության գլխ. խմբագիր:1994-ից Աշակույթի հայկ. ֆոնդինախագահն է:

Լույս են տեսել Ա-ի «Ակունքներ» (1963), «Օրերի հայտնությունը» (1968), «Մաքրվող հեռուներ» (1974), «Նավը ուռկանի մեջ» (1976), «Երկնային պատուհաններ» (1980), «Աստղի ծնունդը» (1980), «Վաղը դպրոց ենք գնալու» (1982), «Սիրո տաղարան» (1983) բանաստեղծությունների, «Անթառամներ» (1984) արձակ գործերի, «Լույսի արմատներ» (1985) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Հոգենյութ» (2000) երկը, «Բառերի բանալին» (2003), «Հանգրվաններ» (2003), «Մերմացու լույս» (2004), «Խոսք և գույն» (2006), «Աստղալույսերի ձայնը» (2010), «Հոգեգույներ ծածկագրերով» (2011) գրքերը: Կազմել է «Արդի հայ քնարերգություն» (2008) անթոլոգիան (ՀԳՄ պոեզիայի ամենամյա մրց.՝ 2010): Թարգմանել է Թ. Ռուժևիչի, Վ. Գոդելի, Մ. Չակլյասի, Գ. Աբաշիձեի, Պ. Տիչինայի, Դ. Տեր-Հովհաննիսյանի ստեղծագործություններից:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1986), Տարվա լավագույն գիրք (2010) մրց-ներ, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2010), ՌԴ գրողների միության Մ. Լերմոնտովի անվ. (2014) մեդալներ:

ԱՎԱԳՅԱՆ Գրիգոր Մկրտչի [1899, Ակքերման (այժմ՝ ք. Դնեստրի Բելգորոդ՝ Ուկրաինայում)–1982, Բուխարեստ], պատմաբան, հնագետ, թարգմանիչ: Պատմ. գիտ. դ-ր, պրոֆ.: 1955-ից աշխատել է Ռումինիայի ակադ-ի մարդաբանության ինստ-ում: Ակքերմանում հայտնաբերել է Կիլիկիայի հայկ. թագավորների դրամներ, նշել հայ առևտրականների կապերն այդ շրջանի հետ: Աշխատությունները (ռում. և հայ.) վերաբերում են Ռումինիայի հայերի պատմությանը: Ռում. է թարգմանել հայ միջնադարյան տաղերգուների գործերից:

1935-ին Հռոմում լույս է տեսել Ա-ի «Անտիպ նկարներ էտրուսկյան և հռոմեական ճարտարապետական հուշարձաններից» (իտալ.) երկը:

ԱՎԱԳՅԱՆ Էդուարդ Սամվելի (19.8.1927, Թիֆլիս–13.3.2010, Երևան), գրող, թարգմանիչ, հրապարակախոս: Աշակույթի վաստ. աշխատող (1987): Ավարտել է ԵՊՀ (1952):

Լույս են տեսել Ա-ի «Ծովը և ճայերը» (1961), «Ջրույց գարնան հետ» (1977), «Հույսի սահմանը» (1983), «Աստծո մարդը» (1996), «Արևորդիներ: Երևանի խաչմերուկներում» (2001), «Էրիվանի հայրերն ու այրերը» (2002), «Երևանա ծոեր» (2002), «Երկիր հիշատակաց» (2003), «Երևանյան խճանկար» (2004), «Փոքրերի մեծ աշխարհը» (2007) պատմվածքների ժող-ները, «Մենք ապրում ենք Կոնդում» (մաս 1, 1965), «Մարդը՝ մարդուն» (մաս 2, 1970), «Կոնդի



Ավագ. *մանրանկարներ, 1337-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 212)*



Աբիգ Ավագյան



Արևշատ Ավագյանի *«Աստղալույսերի ձայնը» (2010, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



Էդուարդ Ավագյան

մարմանդ վերջալույսը» (մաս 3, 1989) եռագրությունը, «Հավատ և սեր» (1974), «Մի կյանքը քիչ է» (հ. 1–2, 1979–80), «Ուրֆայի վերջին ահազանգը» (1990) պատմավեպերը: Գրել է նաև մանուկների համար, մշակել հայկ. ժող. մանկ. բանաստեղծություններ («Ոսկե հասկեր», 1975): Թարգմանել է Ֆ. Պետրարկայի, Ն. Նեկրասովի, Ջ. Լոնդոնի, Վ. Կոչևսկու, Ա. Պուշկինի, Ա. Բլոկի և ուր. ստեղծագործություններից: Ա-ի երկերից թարգմանվել են տարբեր լեզուներով:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. (1990), «Հայ գրականության բարեկամներ» միության Ս. Սիմոնյանի անվ. (1996), ՀԳՄ և Երևանի քաղաքապետարանի 1-ին (2001), ՀԳՄ Վ. Անանյանի անվ. (2004) մրց-ներ:

Գրկ. Էդուարդ Ավագյան: Կենսամատենագիտություն, Ե., 2003:

ԱՎԱԳՅԱՆ Հովհաննես Սարգսի [12.10.1882, գ. Բինկյան (Ակնի գավառ)–10.6.1959, Նյու Յորք], գրականագետ, գրող, խմբագիր: 1909–15-ին դասավանդել է Վանի ամերիկյան վարժարանում, 1911–1912-ին՝ ***«Վան-Տուպ»***, 1917–19-ին՝ «Ազգ» (ԱՄՆ), 1919–59-ին՝ ***«Հայաստանի կոչնակ»*** (ԱՄՆ) թերթերի խմբագիր:

Ա. կազմել է (Պ. Հովնանյանի հետ) «Գոհարներ հայ գրականութեան» (1916, Բոստոն, «Հայրենիքի» տպ.) ժող-ը, տպագրել «Գրական դէմքեր» (1925) աշխատությունը: Հեղինակ է նաև վիպակների, պատմվածքների: Թարգմանել է Ա. Տոլստոյի «Ցար Ֆեոդոր Իվանովիչ» դրաման (1928, «Հայաստանի կոչնակ»-ի տպ.):

Հանդես է եկել նաև Վաղարշ Վաղարշյան, Հրայր, Ասպարունի, Գրասեր ծածկանուններով:

Երկ. Նշանաւոր օրերանուններ, Նյու Յորք, 1927: Ա. Ահարոնեան, Նյու Յորք, 1930: Այսպես ապրեցանք [ժող.], Նյու Յորք, 1930:




Նվարդ Ավագյանի *«Թալիո» (2006, Սփեֆանակերտ, «Տոնա») գրքի կազմը*

ԱՎԱԳՅԱՆ Նվարդ Արամի [ծ. 21.12.1940, գ. Սղնախ (ԼՂՀ Ասկերանի շրջան)], լրագրող, խմբագիր, գրող, թարգմանչուհի: ԼՂՀ վաստ. լրագրող (2008): Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1962): 1967–2005-ին աշխատել է «Ազատ Արցախ» օրաթերթում (1992–95-ին՝ պատ. քարտուղար, 1995–2005-ին՝ գլխ. խմբագրի տեղակալ): 1995-ին՝ ԼՂՀ լրատվության և մամուլի ծառայության տեղեկատվ-վերլուծ. բաժնի վարիչ, 2005–08-ին՝ ԼՂՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահի խորհրդական, 2009-ից՝ ԼՂՀ ԱՆ «Առողջապահության մունետիկ» ամսաթերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Կորած մեղեդի» պատմվածքների (1969), «Երկրորդ շնչառություն» (1978, երկուսն էլ՝ Բաքու), «Մատյան հառներգության» (1997), «Ծանր լույս» (2004) բանաստեղծությունների, «Սահմանային գոտի» (2009) պատմվածքների, վիպակների ժող-ները, «Թալիո» (2006) վեպը, «Ժամանակի սերնդի և իմ մասին» (2012) հուշագրությունը ևն: Ռուս-ից հայ. է թարգմանել Յ. Կուբլանովսկու, Ս. Վերմիշևայի, Լ. Պուզիրևսկայայի, Վ. Վոլկովի, Է. Չայկովսկայայի և ուր. գործերից:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց. (1998, 2001), «Վաչագան Բարեպաշտ» (2001), «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (2002) մեդալներ, ՌԳՄ Մ. Շոլոխովի անվ. հուշամեդալ (2004):

Գրկ. Խանյան Ս., Նվարդ Ավագյանի պոեզիան, Սփեֆանակերտ, 2000:



Սմբատ Ավագյանի *«Համառոտ ակնարկներ...» (1989, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

ԱՎԱԳՅԱՆ Սմբատ Դարչինի [15.10.1922, գ. Խանածախ (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–14.3.1994, Երևան], բանասեր, լրագրող: Բանասիր. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1973): Ավարտել է ԵՊՀ (1957): 1958-ից դասավանդել է ԵՊՀ-ում:

Լույս են տեսել Ա-ի «Բաքվի կոմունայի պարբերական մամուլի պատմությունից» (1962), «Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից» (1969) «Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից» (1982), «Լրագրային ելույթների պրոբլեմատիկան» (1986), «Համառոտ ակնարկներ Սովետական Հայաստանի պարբերական մամուլի պատմության» (1989), «Ղարաբաղի մամուլի պատմություն (1828–1920)» (1989), «Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ» (1991) աշխատությունները:

«ԱՎԱՆԳԱՐԴ», հաս-քաղ. քառօրյա թերթ (մինչև 1987-ը՝ երկօրյա, մինչև 2012-ը՝ շաբաթաթերթ): Լույս է տեսնում 1923-ից Երևանում: 1923–87-ին՝ ՀԼԿԵՄ ԿԿ պաշտոնաթերթը (Հայրեն. պատերազմի տարիներին չի տպագրվել), 1991-ից՝ անկախ: 1923–33-ին՝ խմբագր. խորհուրդ, 1933-ից խմբագիրներ՝ Հ. Միրզոյան, Մ. Նահապետյան, Ս. Նազարյան,

Անդրանիկ Ղազարյան, Մկրտիչ Մանուկյան, Արամայիս Մնացական-յան, Արշալույս Սիմոնյան, Աշոտ Թադևոսյան, Արտաշես Խաչիկյան, Մարտին Թութխալյան, Գուրգեն ***Առաքելյան***, Լորիս ***Գրոյան***, Լևոն ***Մանուկյան***, Գագիկ Հայրումյան, Մնացական ***Զոհրաբյան***, Ջուլիետ Մարտիրոսյան (1997–ից): Լուսաբանել է ՀԼԿԵՄ կազմակերպություննե-րի աշխատանքը գիտակրթ., տնտեսության և մշակույթի բնագավառ-ներում, անդրադարձել է հայ երիտասարդության մասնակցությանը ԽՍՀՄ կարևոր կառույցներին, զգալի տեղ հատկացրել ժողովուրդ-ների բարեկամությանը: Պարբերաբար հրատարակել է «Ծիածան» էջը՝ նվիրված սփյուռքահայ երիտասարդության կյանքին:

Անկախացումից հետո թերթի ուշադրության կենտրոնում են ՀՀ–ի տնտ., հաս–քաղ., կրթ., մշակութ. կյանքը, շարունակում է մեծ տեղ հատկացնել նոր օրերի բարոյական կերպարի ձևավորման, դեռա-հասների ֆիզ. և գեղագիտ. դաստիարակության խնդիրներին, մշտա-պես անդրադառնում է Սփյուռքի կարևոր իրադարձություններին, միջազգ. անցուդարձերին ևն: Թերթի էջերում հաճախակի հանդես են գալիս ՀՀ բուհերի ժուռնալիստիկայի ֆակ-ների ուսանողները:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1973):

ԱՎԱՆԵՍՈՎ Ռուբեն Իվանի (14.2.1902, Շուշի–1.5.1982, Մոսկվա), լեզվաբան, ռուսագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1948), պրոֆ. (1937): ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1958): Մոսկովյան հնչույթաբան. դպրոցի հիմնադիրներից: Ավարտել է ՄՊՀ (1925): 1944–ից՝ ԽՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստ–ի պատմ. քերակ–յան և բարբառագիտ–յան բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ա–ի «Ռուս բարբառագիտության ուրվագծեր» (մաս 1, 1949), «Շեշտը ժամանակակից ռուսաց գրական լեզվում» (2–րդ հրտ.՝ 1958), «Հնչյունաբանությունը ժամանակակից ռուսաց գրական լեզվում» (1956, բո-լորը՝ ռուս.) աշխատությունները: Նրա ղեկավարությամբ ու խմբագրությամբ կազմվել է «Մոսկվայից արևելք ընկած կենտրոնական մարզերի ռուսերենի ժողովրդական խոսվածքների ատլասը» (մաս 1–2, 1957, ռուս.):

Չեխոսլովակիայի ԳԱ լեզվաբ. ընկերության պատվ. անդամ (1965), Մի-ջազգ. հնչյունաբան. ընկերության փոխնախագահ (1967):

ԽՍՀՄ Պետ. մրց. (1971):

Երկ. Русская литература и диалектная фонетика, М., 1974.

ԱՎԳԵՐՅԱՆ Հարություն Հայրապետի (հունիս, 1774, Անկա-րա–24.11.1854, Վենետիկ), լեզվաբան, բառարանագիր: Մկրտիչ ***Ավգերյանի*** եղբայրը: Վենետիկի Մխիթարյան միաբանության ան-դամ (1792): 1786–ից ապրել է Վենետիկում: Տիրապետել է հուն–ին, եբր–ին, լատ–ին, իտալ–ին, ֆրանս–ին, անգլ–ին, հունգ–ին, գերմ–ին, թուրք–ին: Կազմել է «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ» (հ. 1, 1812, հ. 2, 1817), «Բառարան անգղիերէն եւ հայերէն» (հ. Ա, 1821, հ. Բ, 1825), «Բառգիրք ի գաղղիականէ ի հայ եւ ի տաճիկ բարբառս» (1840) բառարանները: «Բացատրութիւն չափուց եւ կշռոց նախնեաց: Առաջնորդութեամբ Եպիփանու, Խորենացւոյ եւ Շիրակացւոյ» (1821) աշխատության մեջ ստուգաբանել է պարսկ–ից, հուն–ից և այլ լեզու-ներից փոխառված 124 բառ, բացատրել հնում օգտագործված չափերն ու կշիռները: Եղել է Ջ. Բայրոնի հայ–ի ուսուցիչը, նրա հետ կազմել է անգլ–հայ. (1817) և հայ–անգլ. (1819) քերակ–յան ձեռնարկներ: Գրա-բար է թարգմանել Ջ. Միլտոնի «Դրախտ կորուսեալ» (1824), հայ–ից իտալ.՝ Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութիւն» (1812), Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» (1823) և այլ գործեր: Կազմել է նաև գերմ–հայ. և հուն–հայ. բառարաններ (անտիպ):

Լույս են տեսել Ա–ի «Համառօտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան» (հայ., իտալ., 1819), «Դաւանութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց» (հայ., լատ.՝ հեղինակի թարգմանությամբ, 1845) աշխատությունները:

Ա–ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. Հանգիստ յաւիտենից փեաոն հ. Յարութիւն Աւգեր վարդապետի Մխիթարեան ուխտէն, «Բազմավէպ», 1854, № 23: Մխիթարեան յոբելեան, Վնտ., 1901, էջ 108–113: **Աղայան Է.,** *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958, էջ 139–142:*




«Ավանգարդ», *1923–ից, Երևան*



Ռուբեն Ավանեսով




Հարություն Ավգերյան



Հ. Ավգերյանի *«Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ»-ի (հ. 1, 1812, Վնտ.) տիտղոսաթերթը*



Մկրտիչ Ավգերյան



Մ. Ավգերյանի
«Ծաղիկ վարուց սրբոց» (1800, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



Թադևոս Ավդալբեգյան

ԱՎԳԵՐՅԱՆ Մկրտիչ Հայրապետի (11.11.1762, Անկարա–3.3.1854, Վենետիկ), լեզվաբան, բառարանագիր, աստվածաբան, թարգմանիչ: Հարություն *Ավգերյանի* եղբայրը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, քահանա (1786): Եղել է Մխիթարյան միաբանության խորհրդական, ընդհանուր աթոռակալ:

Ա–ի առավել հայտնի երկերից է «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց, որք կան ի հին տօնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց» (հ. 1–12, 1810–15) վարքագր. աշխատությունը, որտեղ ամփոփված և լուսաբանված է «սրբերի կյանքը», կատարված են բանասիր. վերլուծություններ և ճշգրտումներ: Առանձնահատուկ արժեք ունի 12–րդ հատորը՝ «Մնացորդք վարուց սրբոց արտաքոյ տօնացուցին մերոյ, յիշատակելոց ի Յայսմաւուրս կամ ի Ճառընտիրս հայոց, որպէս եւ յունաց եւ լատինացւոց» (1815), որն այբբեն. սկզբունքով կազմված սրբանունների բառարան է և ուշագրավ է տոնացույցից դուրս մնացած սրբերի վերաբերյալ տվյալներով:

Ա–ի գլուխգործոցը *«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»* կամ «Նոր հայկազեան բառարանն» է (հ. 1–2, 1836–37, համահեղ.). կազմել և խմբագրել է է–ֆ տառերի բառացանկը և հոդվածները, գրել է առաջաբանը և հավելվածը, անդրադարձել բառերի ստուգաբանությանը: Համառոտելով «Նոր հայկազեան բառարանը»՝ կազմել է «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» (1846) ձեռնարկը: Լատ–ից գրաբար է թարգմանել լատին եկեղեցու հայրերի և վարդապետների գործերից՝ Ալեքսանդր Տասսոնի «Ապացոյցք կրօնի եւ պատասխանատուութիւնք» (1844), Սենեկայի «Ճառք իմաստասիրականք» (1849), Յիցերոնի «Յաղագս պատշաճից» (1845), Գրիգոր Մեծի «Կանոն հովուական» (1846) և այլ երկեր, հայ–ից լատ.՝ Հայ եկեղեցու հայրերի երկերից՝ Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց» (1842), գրաբարից լատ.՝ Փիլոն Երբայեցու ճառերը և Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» (մաս 1–2, 1818), որոնց հուն. բնագրերը կորած են:

Ա. գրել է նաև կրոնաբարոյախոս. բնույթի չափածո և արձակ երկեր: Ա–ի որոշ աշխատություններ («Բարի խորհուրդներ ամէն օրուան համար...», 1809, «Դեղ կենաց, իբր հոգեւոր բժշկարան», 1810) արևմտահայ. են:

Հայ եկեղեցու տոնելի սրբերի վարքը ներկայացնող **«Ծաղիկ վարուց սրբոց»** երկը շարադրված է այբբեն. կարգով: Տպագրվել է 1800–ին: Տիտղթ–ին՝ «Ծաղիկ վարուց սրբոց զորս տօնէ եկեղեցի Հայաստանեայց....» (312 էջ, 12^0, 9,6 x 4,8 սմ):

Հեղինակ է նաև «Քրիստոնէական վարդապետութիւն ոտանաւորեալ առ հեշտին մտառութիւն համբակաց» (1805), «Մենկնութիւն թղթոցն Պօղոսի» (1806), «Դիմառնութիւն չորից վերջնոց» (1810), «Կարճառօտ աղօթագիրք ամմէն օրուան...» (1832), «Նուէր սիրոյ առ ամենասուրբ կոյսն Սարիամ Աստուածածին» (1854) և այլ երկերի:

Ա–ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. Հանգիպ հօր վարդապետի Մխիթարեան Այգերեան ի. Մկրտչի, «Բազմավէպ», 1854, № 5: Մխիթարեան յոբելեան, Վնտ., 1901, էջ 101–108: **Աղայան Է.,** *Հայ լեզվաբանության պատմություն, Ե., 1958:* **Գասպարյան Գ.,** *Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 121–133:*

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ Թադևոս Հայրապետի [15.10.1885, ք. Մակու (Իրան)–1937, անհատի պաշտամունքի զոհ], տնտեսագետ, հայագետ, գրականագետ, պատմաբան, բառարանագիր, հրապարակախոս: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1907): 1921–ից դասավանդել է ԵՊՀ–ում:

Աշխատությունները վերաբերում են տնտեսագիտ–յան, Հայաստանի հողերի ոռոգման պատմության, հայ հաս. հոսանքների ձևավորման, հայ գրակ–յան, պատմագիտ–յան և ճարտ–յան հարցերին: Ա. ուսումնասիրել է հայկ. վիմա–

գրերը, հայ շինականի վարձատրության կարգը V դ–ում, հարկատեսակները («Հաս, սակ ու բաժ», 1926): Գերմ–ից թարգմանել է Կ. Մարքսի «Կապիտալի» 1–ին հատորը (հրտ.՝ 1933): Հրատ–յան է պատրաստել Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւն» և Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն...» երկերը (1938, ռուս.՝ 1939): Հեղինակ է նաև «Խաչատուր Աբովեան» (1910), «Հողի վիշտը Մուրացանի երկերում» (1912), «Միքայէլ Նալբանդեան» (1913, երեքն էլ՝ Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) գրականագիտ. աշխատությունների, կազմել է «Ռուս–հայերեն նոր բառարանը» (համահեղ., հ. 1, 2, 1933, 1935), «Ռուս–հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանը» (հրտ.՝ 1964):

Երկ. Հայագիտական հետազոտություններ, Ե., 1969: Բանասիրական և հրապարակախոսական երկեր, նամակներ, Ե., 2011:

ԱՎԴԱԼՅԱՆՑ Հովհաննես [1803, ք. Շիրազ (Իրան)–11.7.1870, Կալկաթա], թարգմանիչ, մանկավարժ: Դասավանդել է Կալկաթայի Հայոց մարդասիր. ճեմարանում, եղել է տնօրեն:

Կալկաթայում լույս են տեսել Ա–ի՝ անգլիացի մատենագիրների աշխատություններից քաղվածաբար կազմած «Անգիտաց անպէտ» ձեռնարկը (1821, Հովհաննես Տեր–Հակոբյանի տպ.), «Աշտիկ, որ է բանահիւսութիւն իմն» (1823, Օճանասփյուռյան տպ.), «Յորդորակ յաղագս հաստատելոյ Հայկեան ճեմարան ի մեծի մայրաքաղաքին Անգղիոյ ի Լոնդոն» (1825, Մարդասիր. ճեմ. տպ.), «Քրիստոնէական կրթութիւնք եւ այլ աղօթք ի պէտս մանկանց...» (1841, Եպիսկոպոս. ճեմ. տպ.) աշխատությունները:

Անգլ. է թարգմանել (քաղվածաբար) Մ. Չամչյանի «Խրախճան պատմութեան հայոց» (1827) երկը, հայ.՝ Ֆ. Ռ. Շատորբրիանի («Ատալա», 1826, Կալկաթա, Մարդասիր. ճեմ. տպ.), Ս. Ջոնսոնի («Հռասսելաս...», 1826, նույն տպ., «Աստուածաշունչն է մատեան երկնային», 1828, նույն տպ.) և այլ գրողների ստեղծագործություններից:

ԱՎԵՏԱՐԱՆ, Նոր կտակարանի առաջին 4 գրքերը, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրը՝ առանձին: Ա–ի բովանդակությունը Քրիստոսի երկրային կյանքի պատմություններն են և քրիստ. դավանանքի հիմն. դրույթները: Ըստ եկեղեց. ավանդության՝ Ա. գրել են Քրիստոսի առաքյալներից Մատթեոսն ու Հովհաննեսը և նրանց հետնորդներ Մարկոսն ու Ղուկասը, որի համար նրանց անվանել են ավետարանիչներ:

Մատենադարանում պահվում են շուրջ 1750 ձեռագիր Ա–ներ: Հնագույններից են *«Վեհամոր Աւետարանը»* (VII դ.), *«Սիրէ թագուհու Աւետարանը»* (862), *«Լազարեան Աւետարանը»* (887) և *«Վեհափառի Աւետարանը»* (IX դ.):

X–XI դդ–ում նկարազարդվել են *«Էջմիածնի Աւետարանը»* (989), *«Տրապիզոնի Աւետարանը»* (X դ.), *«Ծուղրութի Աւետարանը»* (974), *«Ադրիանուպոլսի Աւետարանը»* (1007), Երուսաղեմի մատենադարանում պահվող՝ 1038–ին ընդօրինակված Ա. (ձեռ. № 2555), *«Կարսի Աւետարանը»* (1064), *«Մողնու Աւետարանը»* (1060) ևն: *«Հաղպատի Աւետարանի»* (1221), «Խաչենի Աւետարանի» (1224) և *«Թարգմանչաց Աւետարանի»* (1232) մանրանկարներում շեշտված են առավելապես ազգ. հոգեբանության և տեղի գեղագիտ. նախասիրություններից բխող առանձնահատկությունները: Պատկերաշարի ընդգրկման և թեմատիկ մեկնաբանության տեսակետից Ա–ների նկարազարդումները կատարելագործվել են XII–XIV դդ–ում՝ Բարձր Հայքի, Սյունիքի, Արցախի, Անի–Շիրակի, Գլաձորի, Ղրիմի, հատկապես՝ Վասպուրականի և Կիլիկիայի մանրանկարչության դպրոցներում: Լավագույն նմուշներից են Մատենադարանի № 7644 ձեռագիրը (XIII դ.), *«Ութ մանրանկարիչների Աւետարանը»* (XIII դ., ձեռ. № 7651), 1260–ին ընդօրինակված Ա., նկարազարդել է Թորոս Ռոսլինը (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 251), 1302–ին ընդօրինակված Ա. (Մատենադարան, ձեռ. № 6792) ևն: Ա–ների հարդարանքն ամբողջացնում են դրոշմազարդ և այլ կազմերը, խորանազարդերը, անվանաթերթերն ու լուսանցազարդերը (բույսերի, կենդանիների պատկերներ, երկրաչափ. զարդանախշեր):



Թ. Ավդալբեգյանի *«Խաչատուր Աբովեան» (1910, Վաղ–պատ) գրքի փիփղոսաթերթը*



Հովհաննես Ավդալ–յանցի *«Քրիստոնէական կրթութիւնք եւ այլ աղօթք ի պէտս մանկանց ...» (1841, Կալկաթա) գրքի փիփղոսաթերթը*



Քառավետարանի դրվագված կազմի դիմերես՝ «Խաչելություն» պատկերով (1325, Ջենովա, կազմը՝ 1347)

Ավետարան



1680 (Վնտ.), փիփղոսաթերթը



1710 (Կ. Պոլիս, Էփկեար Գնդևանցու տպ.), փիփղոսաթերթը



1729 (Կ. Պոլիս, Ասփվածափուր Կոստանդնուպոլսեցու տպ.), փիփղոսաթերթը

Հայ հնատիպ գրքի շրջանում Ա-ներ տպագրվել են՝

1680-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի, ըստ Մարկոսի, ըստ Ղուկասու եւ ըստ Յոհաննու...» (548 էջ, 8^0, 9,5 x 5,5 սմ):

1685-86-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրգ սրբոյ Աւետարանին Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի...» (450 էջ, 4^0, 12,4 x 9,2 սմ), տիտղթ-ը՝ պատկերազարդ շրջանակի մեջ, տպագր. տվյալներից առաջ՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանի նշանը:

1710-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Նոր կտակարան սրբոյ Աւետարանի, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», Բ-ին՝ «Նոր կտակարան պարունակող զգործս առաքելոց եւ զթուղթս Պօղոսի, եւ Կաթուղիկեայց, եւ զյայտնութիւն Յոհաննու» (905 էջ, 6^0 և 12^0, 10,2 x 5 սմ):

1710-ին Կ. Պոլսում՝ Էտկեար Գնդևանցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրգ սրբոյ Աւետարանին Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի...» (479 էջ, 4^0, 13 x 11 սմ):

1729-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (460 էջ, 8^0, 15,4 x 10,3 սմ):

1732-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (552 էջ, 8^0, 11 x 6,2 սմ):

1740-ին՝ նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (760 էջ, 8^0, 13 x 6,2 սմ): Հավանաբար ***Մխիթար Սեբաստացու*** հրատ-ն է:

1740-ին Կ. Պոլսում՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանում: Տիտղթ-ին՝ «Սուրբ Ավետարան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի որ ըստ չորից աւետարանչացն սրբոց, Մատթէոսի., Մարկոսի, Ղուկասու եւ Յոհաննու» (390 էջ, 8^0, 16 x 11,2 սմ):

1752-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում: Տիտղթ-ին՝ «Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (407 էջ, 8^0, 13 x 7 սմ):

1752-ին՝ նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի....» (919 էջ, 8^0, 13,5 x 8,5 սմ):

1759-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին «Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (552 էջ, 8^0, 11 x 6 սմ):

1769-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Հակոբի տպարանում: Տիտղթ-ին՝ «Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (463 էջ, 8^0, 17,5 x 12 սմ):

1786-ին Վենետիկում: Տիտղթ-ն ընկած է (444 էջ, 12,3 x 9,3 սմ):

1786-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Ա. տիտղթ-ին՝ «Աւետարան ճաշու Եւ տօնք իւրաքանչիւր աւուրց ի բոլոր տարւոջն ըստ Նորոյ Տօնացուցին....», Բ-ին՝ «Տօնացոյց... երկրորդ հատոր, որ է քանօն եւ կառավարիչ առաջնոյ հատորին...» (341 էջ, 4^0, 20,2 x 13,2 սմ):

1789-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (728 էջ, 8^0, 13,5 x 7,5 սմ):

1789-ին Վենետիկում (237 էջ, 8^0):

1796-ին Կ. Պոլսում՝ Մատթեոս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (364 էջ, 4^0, 18,7 x 12,2 սմ):

1801-ից հետո Ա. տպագրվել է՝

1804, 1805, 1818, 1849, 1868, 1871, 1877, 1898-ին (բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1807-ին (Տրիեստ, Մխիթարյան տպ.), 1837-ին (Զմյուռնիա, Հոման Հալլոկի տպ.), 1866, 1884, 1891-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1868, 1875, 1899-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1870, 1872, 1875, 1876, 1877, 1881, 1882, 1884, 1888, 1899-ին (ԿՊ, Ռուբեն Քյուրքջյանի, Հակոբ Պոյաճյանի, Հարություն Փափազյանի, Վահրամ Մարգարյանի տպ-ներ), 1870-ին (Շուշի, Հ. Հովնանյանի տպ.), 1899-ին (Մ., Լազարյան ճեմ. տպ.) ևն:

Տես նաև *«Նոր կտակարան»:*

ԱՎԵՏԻՍ, Ավետիք, XIII դ-ի 2-րդ կեսի գրիչ, գեղագիր: Ապրել է Կիլիկյան Հայաստանում, ստեղծագործել Սսում, Հռոմկլայում: Եղել է ժամանակի կիլիկյան ամենահռչակավոր գրիչը: Արքուն. ընտանիքի անդամների և բարձրաստիճան հոգևորականների պատվերով ընդօրինակել է մատյաններ: Համագործակցել է ***Թորոս Ռոսլինի*** հետ: Հայտնի է Ա-ի ընդօրինակած 4 ձեռագիր (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2660, 2027, 2563, Մատենադարան, ձեռ.

№ 7651), այդ թվում՝ նշանավոր «Կեռան թագուհու Աւետարանը» և «Ութ մանրանկարիչների Աւետարանը»:

Հնարավոր է, որ Ա. մասնակցել է նաև 1271-ին Դրազարկում գրիչ Կոստանդինի արտագրած Աստվածաշունչ մատյանի ստեղծմանը (Մատենադարան, ձեռ. № 199), որի գլխատառերը, ըստ ձեռագրի հիշատակարանի, գրել է «զընտիր գրչաւորն»: Հիշատակարանում Ա. իրեն անվանել է Ավետիս կամ Ավետիք քահանա (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2027):

Ա.-ի ստեղծած մատյանները կիլիկյան կանոնավոր բոլորգրով են (հայկ. մինուսկուլով), աչքի են ընկնում արտակարգ գեղեցկությամբ, հղկվածությամբ և գրի հավասար մակարդակով:

Ձեռագրերը հին գրչության արվ.-ի կիլիկյան բոլորգրի դաս. օրինակներ են:

Գրկ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ. (կազմ.՝ Ա. Մնաթևոյան), Ե., 1984, էջ 407:

ԱՎԵՏԻՍ, **Ավետիք** (ծ. թ. անհտ–մոտ 1381), XIV դ.-ի 2-րդ կեսի մանրանկարիչ, գրիչ և կազմող: Ստեղծագործել է Սուրխաթում (Ղրիմ): Գրչության արվ. սովորել է հորից՝ ***Նապերից***: Մատենադարանում պահվում են Ա.-ի 1344–48-ին ընդօրինակած ու պատկերազարդած Ավետարանները (ձեռ. № 7636, 7637, 7742, 7857), 1364 և 1371-ի Շաշոցները (ձեռ. № 4656, 7449), 1355-ին ընդօրինակած Ժողովածուն (ձեռ. № 6938): Ա.-ի ձեռագրերից պահվում են նաև Լոնդոնի Բրիտ. թանգարանում, Վիեննայի Մխիթարյան մատենադարանում և Թբիլիսիի հին ձեռագրերի ինստ-ում: Ա. զուգորդել է Հայաստանի և կիլիկյան գեղանկարչության ավանդույթները՝ գերադասելով կապույտ խորքով նկարների մոնումենտալ լուծումը:

Գրկ. **Կորխմազյան Է.**, *XIV–XV դդ. Ղրիմի հայ մանրանկարչության առանձնահատկությունները, «ԲՄ», 1969, № 9:* **Նույնի**, *Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978.*

ԱՎԵՏԻՍ ՂԼԻՃԵՆՑ, **Երևանցի,** (ծ. թ. անհտ, Սպահան–1682-ից հետո), վաճառական, հրատարակիչ: ***Ոսկան Երևանցու*** եղբայրը: Ամստերդամում ***Մատթեոս Ծարեցու*** տպագր. գործունեությանն աջակցելու նպատակով փակել է նրա տպարանի պարտքերը, նախապես Ծարեցու հետ պայմանավորվելով՝ տպարանը կոչել Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի անվան, և կտակել է Սբ Էջմիածնի և Ուշիի Սբ Սարգիս զորավար վանքերին (այդ անվամբ տպարանը գործել է շուրջ 28 տարի): Ծարեցու մահվանից հետո ստանձնել է տպարանի տնօրինությունը, ավարտել է նրա սկսած Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմի տպագրությունը (1660–61): Տպագր. գործը շարունակելու նպատակով դիմել է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին՝ եղբորը՝ Ոսկանին, Ամստերդամ ուղարկելու խնդրանքով: Ա. Ղ. ստիպված է եղել տպարանում կատարել նաև սրբագր. աշխատանք՝ չտիրապետելով գրաբարին: Տպագրել է «Տետր ժամու եւ պարզատօմարի» (1661) համառոտ ժամագիրքը, ***Կարապետ Անդրիանացու*** հետ՝ Սաղմոսարան (1661–62), ժամագիրք (1662–63), նաև վերջինիս «Այբբենարանը» (1662): 1663-ին, տպարանի և տպատառերի փոխանցման փաստաթուղթը պատրաստելուց հետո, Ա. Ղ. մեկնել է Զմյուռնիա: 1664-ին տպարանի տնօրինությունն ստանձնել է Ոսկան Երևանցին, որին տպագրության գործում շարունակել է օգնել Կարապետ Անդրիանացին: Հետագայում վերադարձել է Ամստերդամ՝ աջակցելու եղբորը:

Գրկ. **Զարբհանալեան Գ.**, *Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895:* **Սարուխան Ա.**, *Հոլլանդան եւ հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վնն., 1926:*

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ավետիք Արամայիսի [ծ. 25.1.1952, գ. Եղեգնուտ (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1972), ԵԳԹԻ (1982): 1982-ից դասավանդում է ԵԳԹԻ-ում (1994-ից՝ ԵԳԱ): Պրոֆ. (1998): 1980-ական թթ-ին աշխատակցել է «Պիոներ», «Ծիծեռնակ», «Գարուն», «Հայաստանի աշխատավորուհի»

Ավետարան



1786 (ՍՊԲ, Գրիգոր Խալդարյանի փպ.), փիփղոսաթերթը




Ավետիս. *«Ութ մանրանկարիչների Աւետարանի» պատկերազարդ էջ (Մատենադարան, ձեռ. № 7651)*



Ավետիք Ավետիսյան. *Խ. Դաշտենցի «Խոդեդան» (2000, Ե., Գրահրատ. ազգ. միութ. հրտ.) գրքի կազմը*



Ջավեն Ավետիսյանի *«Տեքստաբանություն» (2008, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Ժիրայր Ավետիսյանի *«Սիմոն որդի Սիմոնի» (1984, Ե., «Նաիրի») գրքի կազմը*



Կամսար Ավետիսյանի *«Աշխարհագրական անունների բացատրական բառարան»-ի (1969, Ե., «Լույս») կազմը*

ամսագրերին: Նկարազարդել է հայոց լեզվի դասագիրք (1985) տարր. դասարանների համար, Խաչիկ Դաշտենցի «Խոդեդան» (2000) վեպը:

Ստեղծել է գրաֆիկ. («Քավարան», 2001, ըստ Դանտեի, ևն) գործեր:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ջավեն Վասիլի [ծ. 16.11.1933, գ. Խաշթառակ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1996): Ավարտել է ԵՊՀ (1963): 1965–98-ին՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի գիտաշխատող: 1998-ից դասավանդում է ԵՊՀ-ում:

Լույս են տեսել Ա-ի «Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան» (1973), «Գեղարվեստական մտածողության հետքերով» (1985), «Հայ պատմավեպի պոետիկան» (1986), «Մարդը Ե դարի հայ գրականության մեջ» (1994), «Խորենացին մշակույթի գիտակցության մեջ» (2001), «Նորագույն գրականության զարգացման միտումները» (2003, հոդվածների ժող.), «Նարեկացու Մատյանը» (2005), «Հնի և նորի զուգահեռներում» (2008), «Գրական ստեղծագործության հոգեբանություն» (2011) աշխատությունները:

Մասնակցել է «Հայ պոեզիայի անթոլոգիա» (ֆրանս., 1973), «Մարզարիտներ հայ քնարերգության» (1971), «Քսաներորդ դարի հայ պոեզիա» (2005) ժող-ների, Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Շիրազի երկերի կազմման, ծանոթագրման և հրատարակման աշխատանքներին: Կազմել է բուհ. և դպրոց. դասագրքեր [«Գրականության տեսություն» (1998), «Տեքստաբանություն» (2008)]:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ժիրայր Նորայրի [21.11.1932, գ. Օշական (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–26.12.2001, Երևան], գրող: Ավարտել է ԵՊՀ (1955): 1958–63-ին աշխատել է Հայպետհրատում, 1972–75-ին՝ «Հայաստան» հրատարակչությունում, 1960–69-ին՝ Հայֆիլմ կինոստուդիայում:

Լույս են տեսել Ա-ի «Մանուշակ» (1956) բանաստեղծությունների, «Վերջին նամակը» (1961), «Պատուհանները բաց պահիր» (1963), «Աստղեր հարազատ և օտար» (1966), «Առուներ և կածաններ» (1971), «Ճանապարհներ, կամուրջներ» (1973) պատմվածքների և վիպակների, «Լուսաստղ: Պապը» (1981), «Ամպ ու ծիածան» (1981) պատմվածքների ժող-ները, «Կապույտ արյուն» (1968) և «Երկնագույն աղավնիներ» (1978) վեպերը, «Սիմոն որդի Սիմոնի» վեպ-հեքիաթը (գիրք 1–4, 1984–99) ևն: Ա-ի պիեսների մեծ մասը բեմադրվել է հեռուստատեսությամբ և մի շարք թատրոններում: Թարգմանել է Լ. Սոլովյովի, Օ. Լուտսի, Յ. Ռայնիսի, Շե Լաոյի և ուր. ստեղծագործություններից:

Երկ. Շիվոս Ավագի երկրային արկածները, գիրք 1–2, Ե., 1990–91: Մերորումներ ժամանակների մասին, Ե., 2000: Քառյակներ, Ե., 2003:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Կամսար Մելքոնի [4 (17).7.1904, ք. Բայազետ (Էրզրումի նահանգ)–24.10.1976, Երևան], աշխարհագետ, Հայաստանում աշխարհագր. մանկապատանեկան գիտահանրամատչելի գրակ-յան սկզբնավորողներից: Ավարտել է ԵՊՀ (1937): Դասավանդել է հանրապետության բուհերում:

Լույս են տեսել Ա-ի «Անվանի աշխարհագրագետ ճանապարհորդներ» (1951), «Ինչ է պատմում քարտեզը» (1953), «Արևմտյան կիսագնդի երկրները» (1959), «Արևելքի մարգարիտը» (1964), «Երևանի պատմությունը անունների մեջ» (1969), «Հրաշալիքների աշխարհում» (1969), «Իմաստուն խոսքերի աշխարհում» (1973), «Հայրենագիտական էտյուդներ» (համահեղ., 1979), «Պատանի աշխարհագրագետ» (1985) և այլ գրքեր: Ուշագրավ է «Աշխարհագրական անունների բացատրական բառարանը» (1969, 1983):

ԱՎԵՏԻՍՅԱՆ (Թերլեմեզյան) Մկրտիչ Ավետիսի [12.4.1864, Վան–11.6.1896, Սբ Բարդուղիմեոս վանք (Վանի Աղբակ գավառ)], հրատարակիչ-խմբագիր, հայ ազգ-ազատագր. շարժման գործիչ, հրապարակախոս: Արմենական կազմակերպության (1885, Վան) հիմնադիրներից է, Վանի մասնաճյուղի ղեկ.:

1889-ին Սարսելում աշխատակցել է «Արմենիա» շաբաթաթերթին, կազմակերպել նրա տարածումը Եվրոպայում և Հս. Ամերիկայում: 1890-ին (Մարսել, Մկրտիչ Փորթուգալյանի տպ.) հրատարակել է «Թիւրքիահայերն եւ իրենց դրացիները» գրքույկը: 1891-ին հրատարակչ. գործերով մեկնել է ԱՄՆ: 1893-ից՝ Սալմաստի, Խոյի, Ուրմիայի և Թավրիզի հայկ. թեմ. դպրոցների տեսուչ:

1894–ին՝ որպես «Արմենիայի» թղթակից, մասնակցել է Մկրտիչ Խրիմյանի առաքելությանը՝ Ս. Պետերբուրգ: 1896–ի արևմտահայերի կոտորածների ժամանակ կազմակերպել է Վանի ինքնապաշտպանությունը. զոհվել է մարտում:

Գրկ. Տէր-Մկրտիչեան Ե., *Գանձեր Վասպուրականի, հ. 1, Բոստոն, 1967, էջ 454–493:* Վարդանյան Հ., *Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում, Ե., 1967:*

ԱՎԵՏԻՍՅԱՆ Յուրի Սրապիոնի [ծ.12.4.1961, գ. Դեղձուտ (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում)], լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (2002): Ավարտել է ԵՊՀ (1983): 1988–ից դասավանդում է ԵՊՀ–ում. 2008–13–ին՝ սփյուռքագիտ–յան, 2013–ից՝ հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ա–ի ««Անահիտ» հանդեսը» (1999), «Արևմտահայ բանաստեղծության լեզուն» (2002), «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն» (2007), «Պաշտոնական ոճ», «Տեղաշարժեր արդի գրական հայերենում», «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն» (երեքն էլ՝ 2011), «Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ» (2012) աշխատությունները:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Վարդան Ավետիսի [13(26).2.1911, Վան–22.10.1975, Երևան], պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (1945): Գիտ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ (1932): 1948–54–ին եղել է ԽՄԿԿ Կ–ին առընթեր ՄԼԻ հայկ. մասնաճյուղի տնօրեն, միաժամանակ՝ «Պարտիական կյանք» (1957–ից՝ ***«Լենինյան ուղիով»***) ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա–ի «Սուրեն Սպանդարյան» (2–րդ վերամշկ. հրտ.՝ 1957), «Ստեփան Շահումյան» (1953), «Հայկ Ադամյան» (1968), «Հայ հասարակական մտքի զարգացման մարքս–լենինյան փուլի սկզբնավորումը» (1976) աշխատությունները:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Տիգրան Մուշեղի (ծ. 6.4.1941, Թբիլիսի), լեզվաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1988), պրոֆ. (1989): Ավարտել է ԵՊՀ (1963): 1975–ից դասավանդում է ՎՊՄԻ–ում (1987–ից՝ հայոց լեզվի ամբիոնի վարիչ):

Լույս են տեսել «Ժամանակակից հայոց լեզվի բառի կառուցվածքը» (1975, «Հայոց լեզվի կառուցվածքը» ժող–ում), «Հայկական ազգանուն» (1987) աշխատությունները, «Հայոց ազգանունների բառարանը» (2000, ՀՀ նախագահի մրց.՝ 2001):

ԱՎԵՏԻՍՅԱՆ Օննիկ Հակոբի [20.11.1898, Բրուսա (Թուրքիա)–1974, Կահիրե], նկարիչ, արվեստաբան, մանկավարժ: Սովորել է Վիեննայի գրաֆիկ. արվ–ի դպրոցում (1921–24), ավարտել Հռոմի գեղարվ–ի ակադ–ը (1927): 1929–34–ին դասավանդել է Կահիրեի Նուպարյան ազգ. և Պերպերյան վարժարաններում, 1936–41–ին՝ Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունում:

Բարեփոխել է հայկ. տպատառերը, հրատարակել «Փորձ մը հայ տպագրական տառերու բարեփոխութեան եւ արդիականացման» (1946, ՀԽՍՀ–ում հայտարարված մրցույթի հատուկ մրց.) աշխատությունը: Հեղինակ է նաև «Հայ նկարիչներ և քանդակագործներ» (ֆրանս., 1959) աշխատության:

ԱՎԵՏԻՔ, հավանաբար XIV դ–ի մանրանկարիչ: XIII դ–ի կիլիկյան մի Ավետարանում (Մատենադարան, ձեռ. № 7644, ստացող՝ Սմբատ Գունդստաբլ) Քրիստոսի կյանքին նվիրված 7 մանրանկարներից մեկի տակ պահպանվել է հեղինակի հիշատակագրությունը. «զԱւետիքս յիշէ տէր զնկարող»: Ենթադրվում է, որ հիշյալ 7 մանրանկարները ձեռագրին ավելացվել են հետագայում:

Երկ. Յովսէփեան Գ., *Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Անթիլիաս, 1951:*

ԱՎԵՏԻՔ ԵՎԴՈԿԱՅԻ, **Ավետիք Թոխաթեցի** (1.4.1657, Եվդոկիա–10.7.1711, Փարիզ), գրիչ, տաղերգու, եկեղեց. գործիչ: 1691–ին Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս, կարգվել Կարինի թեմի առաջնորդ: 1702–ի փետր. 24–ին սուլթան. արքունիքի հովանավորությամբ նշանակվել է Կ. Պոլսի, հուլիսի 13–ին՝ նաև Երուսաղեմի պատրիարք: Հակակաթոլիկ. գործունեության համար աքսորվել է



Մկրտիչ Ավետիսյան



Տիգրան Ավետիսյանի *«Հայկական ազգանուն» (1987, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*




Ավետիք. *«Խաչելություն», մանրանկար, «Սմբատ Սպարապետի Աւետարան» (XIII դ., Մատենադարան, ձեռ. № 7644)*



Գաբրիել Ավետիքյան



«Քերականութիւն թօսբանեան...» (1792, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը



«Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ» (հ. 1, 1806, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը

Ասորիք, 1704-ին ազատվել է և վերականգնվել Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնում: Նույն թվականի նոյեմբ-ին, Երուսաղեմի հայոց պատրիարք Մինաս Ամդեցու մահից հետո, միավորել է Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարք. աթոռները:

Պատմ. արժեքավոր սկզբնաղբյուր է Ա. Ե-ու «Կենսագրութիւնը» (1709, հրտ.՝ 1874, «Մասիս», № 1490–96, 1498–1500): Ա. Ե. գրել է նաև տաղեր («Տաղ ի վերայ գարնան...», «Տաղ Աւետիքէ ասացեալ», Մատենադարան, ձեռ. № 6517, 10167, «Տաղ սուրբ Աստուածածնայ...», Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 156, «Ահա եղեւ օրինեալ գարուն...», 1873, «Բազմավէպ», ևն) և «Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք համահաւաքացեալ հին գաւազանագրաց»-ը: Ընդօրինակել է նաև 6 ձեռագիր:

Գրկ. **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Կահիրե, 1952:* **Անասեան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 980–983: Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխատասիր.՝ Հ. Սիմոնյանի, հ. 2, Ե., 1987:*

ԱՎԵՏԻՔ ԼՈՒԿԱՉ [Ավետիքյան Ղուկաս, 18.10.1847, ք. Եղիսաբեթուպոլիս (այժմ՝ Դումբրվեն՝ Ռումինիայում)–1909, Եղիսաբեթուպոլիս], պատմաբան, հայագետ: 1870–77-ին դասավանդել է տեղի հայկ. դպրոցում, մինչև 1891-ը եղել է նախակրթարանի տնօրեն:

Լույս են տեսել Ա. Լ-ի «Հայոց պատմություն» (1877), «Հայ գիտական ակադեմիա» (1883), «Առանձնաշնորհյալ Եղիսաբեթուպոլիս քաղաքի իրավունքներն ու պարտավորությունները» (1891), «Քրիստոնեության մուտքը հայոց մոտ» (1904, բոլորը՝ հունգ.) աշխատությունները: Ա. Լ. բազմաթիվ հոդվածներ է հրապարակել Գեղայի *«Արմենիա»* (հունգ.) ամսագրում:

Բուդապեշտի փողոցներից մեկը կոչվել է Ավետիք (Ավետիքյան):

Հունգարիայի ասպետ. կարգի շքանշան:

ԱՎԵՏԻՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅԻ, Ավետիք Ամդեցի, Ավետիք Պաղտասարյան, XVII դ-ի վերջի–XVIII դ-ի սկզբի մշակույթի գործիչ, տոմարագետ, պատմիչ և գրիչ: Ծնվել է Տիգրանակերտում: Ուսումնառության նպատակով մեկնել է Պարսկաստան, Արաբիա: Տիրապետել է արաբ-ին, պարսկ-ին, ասոր-ին, վրաց-ին, եբր-ին, ղպտ-ին, թուրք-ին, հուն-ին, լատ-ին և ֆրանս-ին:

1684–1709-ին գրել է աստղագիտ-տոմարագիտ. «Դեֆթեր գիրքը», 1700-ին՝ «Ոսկեփորիկը», 1695–1709-ին կազմել է «Ըստուոլապ» աշխատությունը, որտեղ նկարագրված են աստղաբաշխ. զանազան գործիքներ, 1719-ին՝ «Զիճ գիրքը», այնուհետև՝ «Ախտարացոյցը» ևն: 1701–14-ին հայ և օտար պատմիչների երկերի հիման վրա շարադրել է «Աղիւսակապատմագիր» ժամանակագրությունը (աշխարհի արարչագործությունից մինչև 1714-ը), որտեղ արժեքավոր տեղեկություններ կան Հայաստանում XVI–XVII դդ-ում տեղի ունեցած քաղ. դեպքերի վերաբերյալ:

Փոքր Ասիայի հայաբնակ վայրերի և Կիլիկիայի մասին ականատեսի հավաստի տվյալներ է պարունակում նրա կազմած «Աշխարհացոյցը»:

Ա. Տ-ու աշխատությունների ձեռագրերի մեծ մասը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում: Պահպանվել է նրա ժամանակագրության 3 օրինակ [ձեռ. № 1492 (Ա. Տ-ու ինքնագիրն է՝ արտագրված իր իսկ սղագիր օրինակից), 6243, 7424]:

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Աւետիք Պաղտասարեան, ընթերցող Տիգրանակերտցի, «Բազմավէպ», 1897, № 7–10:* **Զորանյան Պ.,** *Նոր նյութեր Ավետիք Տիգրանակերտցու մասին, «ԼՀԳ», 1996, № 1:*

ԱՎԵՏԻՔՅԱՆ Գաբրիել (19.9.1751, Կ. Պոլիս–24.12.1827, Վենետիկ), լեզվաբան, քերական-բառարանագիր, բանասեր, աստվածաբան: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ՝ 1773-ից: Ավարտել է Վենետիկի Մխիթարյան միաբանության վարժարանը, 1785-ին նշանակվել «Նորընծայից» ուսուցիչ, 1786-ին ձեռնադրվել է քահանա, 1799-ին՝ ընդհանուր աթոռակալ: 1824-ին հրաժարվել է հոգևոր պաշտոններից: Եղել է գրաբարի քաջ գիտակ, տիրապետել է հուն-ին, լատ-ին, իտալ-ին և այլ լեզուների:

Հայ հնատիպ գրքի շրջանում լույս են տեսել Ա–ի՝

«Իտալերէն–հայերէն հայատառ թուրքերէն թօսքանեան բառարանը». 1775–ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության:

«Քերականութիւն թօսքանեան լեզուի աւանդեալ ի հայ լեզու հանդերձ տաճկական թարգմանութեամբ» (իտալ–հայ. համեմատ. քերականություն է) երկը. 1792–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (504 էջ, 8^0, 12,5 x 7 սմ):

Ա. **«Քերականութիւն հայկական...»** (1815) աշխատությամբ ստեղծել է գրաբարի համապարփակ քերակ–ը, նոր տեսանկյունից մեկնաբանել քերական. բազմաթիվ իրողություններ: Կազմել է «Նոր հայկազեան բառարանի» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, 2, 1836, 1837) «Ա.» տառով հոդվածները, կատարել մի շարք ստուգաբանություններ:

Ա. հեղինակ է մեկնող. երկերի. «Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ» (հ. 1–3, 1806–12) աշխատության մեջ Պողոսի Թղթերի հին հայ. թարգմանությունը բաղդատել է հուն., լատ., ասոր. և այլ լեզուներով թարգմանությունների հետ, կատարել բնագրային ճշգրտումներ: Ուսումնասիրել է նաև հայ հոգևոր բանաստեղծությունը, քննել շարականների ցանկը, տեղեկություններ հաղորդել դրանց հեղինակների ու կիրառության մասին («Բացատրութիւն շարականաց...», 1814, «Ճառ բդխման...» հատվածը՝ իտալ. հանդիպադիր թարգմանությամբ, 1824): Բացառիկ արժեք ունի Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի մեկնությունը [«Նարեկ աղօթից, հարազատ եւ զգուշաւոր լուծմունքն նորոց բացայայտեալ» («Նարեկլուծ»), 1801, «Մեկնութիւն կամ լուծումն Նարեկայ», 1801, 1822, «Նարեկ. ճառից լուծումն», 1827], որտեղ, օգտագործելով ձեռագիր ու տպագիր աղբյուրները, բնագիրը մաքրել է աղճատումներից: Նույն եղանակով մեկնաբանել է նաև Գրիգոր Նարեկացու ներբողներն ու գանձը («Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ երկրորդ մատեան ճառից», 1827):

Լույս են տեսել Ա–ի «Մտածութիւնք ի վերայ եօթն գլխաւոր ցաւոց Սուրբ Աստուածածնի» (1810), «Խորհրդածութիւնք...» (1836) գրքերը, հեղինակ է նաև թատերգությունների, բանաստեղծությունների, կատարել է թարգմանություններ:

Ա–ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. **Սարգիսեան Բ.,** *Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Միխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905, էջ 64–76:* **Երեմեան Ս.,** *Ազգային դէմքեր. Գրագէտ հայեր, շարք 2, Վնտ., 1913, էջ 227–229:*

ԱՎԵՏԻՔՅԱՆ Հակոբ Դանիելի (ծ. 21.11.1945, Բեյրութ), խմբագիր: Վաստ. լրագրող (2009): Սովորել է Բեյրութի ՀԲԸՄ Հովակիմյան–Մանուկյան և Հայ ավետարան. կենտր. վարժարաններում: Ավարտել է ԵՊՀ (1970): 1977–90–ին աշխատել է *«Զարթօնք»* օրաթերթի (1980–90–ին՝ գլխ. խմբագիր) խմբագրությունում: 1990–ից *«Ազգ»* (Երևան) թերթի գլխ. խմբագիրն է: 2012–ից՝ ՌԱԿ հանրապետ. վարչության ատենապետ:


Վարդգես և Ռիտա Պալյան հիմնադրամի (1989), ՀԺՄ «Ազդարար» (2004) և «Ոսկե գրիչ» (2009) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2005) մեդալ, Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (2006) շքանշան:

ԱՎԵՏՈՒՄՅԱՆ Թադևոս (Խաչիկ) (1811, Նոր Ջուղա–13.2.1863, Կալկաթա), գրող, հրապարակախոս, թարգմանիչ: Սովորել և գործել է Կալկաթայում, տեղի Արարատյան ընկերության հիմնադիրներից է:

Լույս է տեսել Ա–ի «Ճառ ի վերայ ազգային յառաջադիմութեան» (1845, Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.) ճառը: «Արամայիս, որէ բարոյական ստեղծաբանութիւն» (1846, նույն տպ.) վիպակում արծարծել է լուսավոր. գաղափարներ, հայոց լեզուն և մշակույթն անաղարտ պահելու հարցեր: Թարգմանել է Բ. դը Սեն Պիեռի «Նաւակոծութիւն կամ Պաւղոս եւ Վիրգինիա» (1830, Կալկաթա, Մարդասիր. ճեմ. տպ.), Օ. Գոլդսմիթի «Փոխերէցն Վէկֆիլդայ» (1848) և այլ գործեր:



Հակոբ Ավետիքյան



Թադևոս Ավետումյանի *«Արամայիս, որէ...» (1846, Կալկաթա) գրքի փիփղոսաթերթը*



«Աւետաբեր-Վերելք», *2000-ից, Գլենդել (№ 3, 2000)*



«Աւետագիր», *1945–47, Նյու Յորք*



«Աւետիք», *1932-ից, Բեյրութ (№ 1–3, 2005)*

ԱՎՉՅԱՆ Սուրեն Գևորգի (5.8.1904, Թիֆլիս–2.6.1985, Թբիլիսի), գրող, թարգմանիչ: ՎԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1964): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում:

Առաջին բանաստեղծությունները տպագրվել են 1923-ին «Կարմիր ծիլեր» հանդեսում: Թբիլիսիում և այլուր բեմադրվել են Ա-ի «Սայաթ-Նովա», «Պըլը-Պուղի», «Քյոռ-օղլի» և այլ պիեսներ: Գրել է «Վրաց-հայկական թատերական փոխհարաբերությունները» (վրաց., 1961), «Հայերը Վրաստանում» (անտիպ) աշխատությունները: Հայ. է թարգմանել Ա. Ղազրեգիի, Է. Նինոշվիլու, Կ. Գամսախուրդիայի և վրացի այլ գրողների երկեր, վրաց.՝ Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի, Հ. Պարոնյանի, Հ. Շիրազի և ուր. ստեղծագործություններից:

Լույս են տեսել Ա-ի «Բանաստեղծություններ» (1959), «Գրական ակնարկներ» (1978) ժող-ները:

«ԱՒԵՏԱԲԵՐ», կրոն., ուս., ընտանեկան և քաղ. շաբաթաթերթ (հայ. և հայատառ թուրք.): Ամերիկյան միսիոներների ընկերության հրատ.: Լույս է տեսել 1855–1915-ին Կ. Պոլսում (1855–65-ին՝ «Աւետաբեր եւ շտեմարան պիտանի գիտելեաց»): Խմբագիրներ՝ Մ. Մինասյան, Հակոբ Ճեճիզյան, Հովհաննես Գրիգորյան, Սամուել Հարությունյան և ուր. (ունեցել է նաև ամերիկացի խմբագիրներ): Նպատակն արևմտահայության շրջանում բողոքականություն և ամերիկյան ազդեցությունը տարածելն էր: Կրոնաբարոյախոս. նյութերից զատ՝ տպագրել է նաև հայագիտ. և գեղ. գործեր: 1872–1915-ին լույս են տեսել «Ա.»-ի «Աւետաբեր տղայոց համար», «Աւետաբեր մանկանց» և «Աւետաբեր չոճուքլար իչյուն» (հայատառ թուրք.) հավելված-հանդեսները: Լինելով արևմտահայ. աշխարհաբարով առաջին պարբ-ներից՝ «Ա.» նպաստել է նրա զարգացմանը: Աշխատակցել են Ե. Քասունին, Հ. Պուճիգանյանը, Գ. Մեսրոպը, Հ. Սիմբյանը և ուր.:

«ԱՒԵՏԱԲԵՐ-ՎԵՐԵԼՔ», կրոն., ազգ., բարոյախոս. ամսագիր: ԱՄՆ-ի արմ. հատվածի հայ կաթոլիկ համայնքի պաշտոն. պարբ.: Լույս է տեսնում 2000-ից Գլենդելում՝ հայ. և անգլ.: Խմբագիր՝ Ռաֆայել Մինասյան: Ստեղծվել է Լոս Անջելեսում հրատարակվող «Վերելք» (1982–99, խմբագիր՝ Բարսեղ Ֆերհաթյան) և «Աւետաբեր» (1985-ից, խմբագիրներ՝ Մեսրոպ Թոփալյան, Ռ. Մինասյան) պարբերաթերթերի միավորումով: Լուսաբանում է ամերիկահայ կաթոլիկ համայնքի կյանքը, տպագրում է գրական, մշակութ., կրթադաստիարակչ. հոդվածներ ևն:

«ԱՒԵՏԱԳԻՐ», կրոն. ամսագիր: Հայ ավետարանչ. միության հրատ.: Լույս է տեսել 1945–47-ին Նյու Յորքում՝ հայ. և անգլ.: Տնօրենն՝ Մ. Գալայճյան, խմբագիր՝ Անդրանիկ Պետիկյան: Տպագրել է Աստվածաշնչի տարբեր հատվածները մեկնաբանող աստվածաբան., կրոնաբարոյական հոդվածներ, լուրեր Սփյուռքի, մասնավորապես՝ ամերիկահայ ավետարանականների կյանքից:

«ԱՒԵՏԻՔ», կրոնաբանասիր. հանդես: Լիբանանում հայ կաթողիկե պատրիարքության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1932-ից Բեյրութում (1971–83-ին չի հրատարակվել), սկզբում՝ ամսաթերթ, 1984-ից՝ եռամսյա, 1994-ից՝ քառամսյա հանդես, 2005-ից՝ անկանոն պարբերականությամբ: Խմբագիրներ՝ Մեսրոպ եպս. Թերզյան, Վարդան վրդ. Թեքեյան, Մեսրոպ վրդ. Ճուրյան, Սանուել եպս. Պաթագյան, Վարդան եպս. Աշգարյան, Կոմիտաս եպս. Պյոճյուքյան, Գևորգ վրդ. Եղիայան, Հովսեփ վրդ. Քելեկյան: Լուսաբանում է Հայ կաթողիկե եկեղեցու դերն ու հայապահպան գործունեությունը Սփյուռքում, ՀՀ-ի անկախացումից հետո՝ նաև հայրենիքում, հրատարակում է հայ ժողովրդի պատմության, մշակույթի տարբեր ոլորտներին վերաբերող գիտ., գիտահանրամատչելի և բարոյագիտ. հոդվածներ:

«ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ», Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոն. հրատ–ներ, Հայոց ազգ. ժողովի նիստերի արձանագրություններ: Տպագրվել են Ազգ. ընդհանուր ժողովի գործունեության (1860–1915, ընդմիջումներով) շրջանում Կ. Պոլսում՝ Հովհաննես Մյուհենտիսյանի, Սիմոն Միքայելյանի, Հարություն Պարոնյանի, Միքայել Սարյանի տպարաններում:

Ատենագրությունները կարևոր տեղեկություններ են տալիս XIX դ–ի 60–90–ական թթ–ի արևմտահայ հոգևոր, հաս–քաղ., դիվանագիտ. գործընթացների, Ազգ. ժողովի ու նրա վարչ. մարմինների գործունեության մասին և նշված ժամանակահատվածում Արմ. Հայաստանի և Օսմ. կայսրության հայաբնակ տարածքներում ապրող հայության պատմության ուսումնասիրման հիմնական սկզբնաղբյուրներից են:

Ատենագրությունների տպագրությունն սկսվել է 1870–ից: Ժամանակագր. առումով ամենածավալունն առաջին հատորն է՝ «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860–1870» (435 էջ). ընդգրկում է 1860–70–ի Ազգ. ժողովի 34 նիստերի արձանագրությունները: Սկզբում եղել են ձեռագիր, բայց Ազգ. ժողովի 1883–ի հունիսի 10–ի նիստում տպագրելու որոշում է ընդունվել: 2–րդ գիրքն ընդգրկում է 1870–74–ը (1016 էջ): Մյուսները 1 կամ 2 տարեշրջանի ատենագրություններ են՝ 1874–76–ը, 1876–78, 1878–79 ... մինչև 1896–ը: 1908–ից վերսկսվել է նիստերի ատենագրությունների տպագրումը և շարունակվել մինչև 1915–ը: Կան նաև այլ հրատ–ներ (օր.՝ «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1874–1875», «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1875–1876»):



«Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860–1870» *(1889, Կ.Պոլիս), փիփղոսա–թերթը*

Ազգ. ժողովի ատենագրությունները պահվում են Ե. Չարենցի անվան գրակ–յան և արվ–ի թանգարանում (ԳԱԹ), ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ. գրադարանում, ՀԱԳ–ում: Փարիզի Ազգ. գրադարանում պահվում է 1950–ի 1–ին նիստի արձանագրությունը («Ատենագրութիւն Ազգային ընդհանուր ժողովոյ», 1950, Ստամբուլ), որը վերաբերում է Գարեգին արք. Խաչատուրյանի՝ Կ. Պոլսի պատրիարք ընտրվելուն:

ԱՏԼԱՍ, 1. քարտեզագիրք, հաճախ՝ բացատր. տեքստերով և պատկերազարդումներով: Լինում են գրքի կամ թղթապանակում թեմատիկ քարտեզների հավաքածուի ձևով:

Անցյալում քարտեզագրքերի կազմերի վրա պատկերվել է երկրագունդն (գլոբուս) իր ուսերին պահող դիցաբան. տիտան Ատլասը, որի անունով ֆլամանդացի քարտեզագիր Գերհարդ Մերկատորը (1595) դրանք անվանել է «Ա.»:

Ա–ները, աշխարհագր. քարտեզից բացի, ներառում են նաև կլիմ., քաղ., կրոն. (տարածման), ժողովրդագր. (բնակչության խտության, ծնելիության, ազգ. կազմի, միջին եկամտի ևն), տնտ. (արդ–յան տարբեր ոլորտների զարգացման) և այլ քարտեզներ: Ա–ի դաս. օրինակ է ***Հայաստանի ազգային ատլասը***: 2. Դիդակտիկ պատկերազարդումներով հատուկ ալբոմներ (օր.՝ Դեղաբույսերի Ա., Անատոմ. Ա. ևն):



«Հայաստանի ազգային ատլաս»–ի (հ. 1, 2007, Ե., «Տիգրան Մեծ») կազմը

ԱՏՈՄ ԱՆՁԵՎԱՑԻ, IX–X դդ–ի քաղ. գործիչ, մատենագիր: Արծրունյաց Գուրգեն իշխանի կրտսեր որդին: Կյանքի վերջին տարիներին՝ 938–ից հետո, ձեռնադրվել է եպիսկոպոս: Ա. Ա. գործուն մասնակցություն է ունեցել երկրի ռազմաքաղ. կյանքին. օգնել է (902–ին) Հայոց Սմբատ և Վասպուրականի Գագիկ Արծրունի (914–ին) արքաներին:

Ա. Ա–ու և նրա հոր պատվերով են ընդօրինակվել Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» աշխատությունն ու Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի» երկը: Նրա հանձնարարությամբ

գրել են Արամի, Արտավազդ Մազազունու և Թովմա քահանայի աստվածաբան. թղթերն ու լուծմունքները: Ա. Ա. գրել է Հովհաննես Մկրտչին ձոնված մի ներբող (հավանաբար 940-ական թթ.):

Գրկ. Հովսեփյան Գ., Իններորդ դարի ձեռագրական մի հատակտոր և Ատոմ Անձևացյաց իշխան, «Էջմիածին», 1946, № 8–10: Քոլանջյան Ս., Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի ձեռագրից, «ԲՄ», № 5, 1960: Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976, էջ 704–705: Քեոսէյան Հ., Ատոմ Անձևացին և նրա ներբողը՝ նոտիրուած Յովհաննէս Մկրտչին, «ՀԱ», 1987, էջ 513–526:



Վարդան Ատրյանի *«Արյունոտ քառուղիներով» (հ. 2, 1957, Թբիլիսի) գրքի կազմը*

Ա.ՏՐՅԱՆ (Աստվածատրյան) Վարդան Հովհաննեսի (13.7.1896, Թիֆլիս–6.1.1974, Երևան), գրող, լրագրող: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1917), Տրանսպորտի ճարտարագետների անդրկովկասյան ինստ-ը (1934): 1930–34-ին՝ *«Պրոլետար»* օրաթերթի, միաժամանակ՝ *«Արշավ»* և «Հոկտեմբեր» հանդեսների, 1932–34-ին՝ *«Գրոհ»* ամսագրի խմբագիր, 1942–55-ին՝ Վրաստանի գրողների միության հայկ. բաժանմունքի նախագահ:

Լույս են տեսել Ա-ի «Ջրահագնացքը» (1930) վիպակը, «Արյունոտ քառուղիներով» (գիրք 1, 2, 1955, 1957, գիրք 3, «Կարմիր ձիավոր», 1965) եռապատումը, «Երկերը» (1947), «Հողի ձայնը» (1959), «Պատմվածքներ» (1969) ժող-ները:



Ատրպետ

Ա.ՏՐՊԵՏ, Ատրպետյան Սարգիս (Մուրայաջյան Սարգիս Մկրտչի, 31.1.1860, Կարս–27.5.1937, Լենինական), գրող, հաս. գործիչ: Ավարտել է Կ. Պոլսի Օսմ. լիցեյը (1877): 1907–08-ին Թիֆլիսում հրատարակել է «Ապագայ» թերթը: «Ալմաստ» (1891, Մ., Մկրտիչ Բարխուդարյանի տպ.) վեպում պատկերել է «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության գործունեությունը: Աբդուլհամիդյան վարչակարգը տապալելու համար կարևորել է հայ-թուրք. «հեղափոխական համագործակցությունը»:

Արևմտահայ կյանքի ուշագրավ պատկեր է նրա «Տժվժիկը» (1938, 1948, 1969, 1975, 2000, համանուն կինոնկար՝ 1961) պատմվածքը:

Լույս են տեսել նաև Ա-ի «Խեւ Կարապետ» (1889, Թ., Սվսեա Վարդանյանի տպ.), «Քոռ-Եղիկ» (1898, նույն տպ.), «Բէրսաի Առաքելը» (1899, Նոր Նախիջևան, Հ. և Ս. Ավագյանների տպ.) վեպերը, «Շխնոց» (1898, նույն տպ.), «Ժառանգներ» (1899, նույն տպ.) վիպակները, «Պատկերներ թուրքահայերի կեանքից» (հ. 1, 1904, Թավրիզ, Հայոց առաջնորդ. տպ.) ժող-ը, «Խալիֆաթ» (1899, Նոր Նախիջևան, Հ. և Ս. Ավագյանների տպ.), «Հողատիրութիւնը Կովկասում» (1906, Ալեք-պոլ, «Շիրակ» տպ.), «Հայ թագաւորների եւ քաղաքների դրամները նախնական ժամանակներից մինչեւ Տրդատ...» (1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Ճորոխի ավազանը» (1929, Վնն., Մխիթարյան տպ., «Ազգային մատենադարան» մատենաշար) աշխատությունները: Տպագրվել են նաև Ա-ի «Երկերի ժողովածուն» (հ. 1–10, 1904–11, Թավրիզ–Ալեք-պոլ), խորհրդ. տարիներին՝ «Երկերը» (1964):



Ատրպետի *«Ճորոխի ավազանը» (1929, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*

Ա.ՏՐՈՒՆԻ Պետրոս (1862, Կ. Պոլիս–1922, Կ. Պոլիս), խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Թարգմանչաց վարժարանում: Խմբագրել է «Կրթաբան» (1888–89) գրականագիտ. հանդեսը: 1891–95-ին աշխատել է «Հայրենիք» օրաթերթի խմբագրությունում: Նրա թարգմանությամբ, որպես թերթոն, «Հայրենիքում» տպագրվել են ֆրանս. գրակ-ից մի քանի վեպեր: Թարգմանել է նաև Է. Սյուի, Ա. Դյումա-որդու և ուր. գործերից:


Ա.ՏՐՈՒՆԻ Պետրոս (1883, Կ. Պոլիս–1944, Կ. Պոլիս), կրթ. գործիչ: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը (1900), սովորել համալսարանի մաթ. բաժնում: Դասավանդել է հայկ. և օտար վարժարաններում, այդ թվում՝ Կեդրոն. վարժարանում, որի տնօրենն ու ազգ. կենտր. վարչության ուս. խորհրդի ատենապետն է եղել 1928–1933-ին: Հեղինակ է թվաբանության դասագրքերի՝ «Ամբողջական դասընթացք թուաբանութեան: Մանկական ընթացք» (1911), «Միջին ընթացք» (1913), «Բարձրագոյն ընթացք» (1914, բոլորը՝ ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Ամբողջական դասընթացք թուաբանութեան և գործնական երկրաչափութեան: Բարձրագոյն դասընթացք» (1922, ԿՊ, Հ. Ասատրյան և որդ. տպ.): 1914-ին լույս է տեսել նաև Ա-ի «Նախնական ծանօթութիւն վաճառականական գիտելիքներու եւ տոմարակալութեան» (ԿՊ, «Ամիրե» տպ.) դասագիրքը:

«ԱՏՐՈՒՇԱՆ», գրական, գիտ. և գեղ. կիսամսյա հանդես: Լույս է տեսել Զմյուռնիայում 1919-ին: Տնօրեն-խմբագիր՝ Միքայել Բարթիկյան, խմբագիրներ՝ Ռուբեն Մինասյան, Անտոն Կազել: Զգալի տեղ է հատկացրել Մեծ եղեռնին: «Գրական հորիզոն» բաժնում գրախոսել է Հարություն Ալփիարի, Տիգրան Սյուրմեյանի և ուր. ստեղծագործություններ: Տպագրել է նաև թարգմանություններ ֆրանսիացի գրողների երկերից:

«ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ», հայկ. ժող. առասպել Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին: Ավանդվել է ***Մովսես Խորենացու*** մշակմամբ, այլ պատմագիրների ընդօրինակմամբ և ուշ շրջանի ժող. զրույցների ձևով: Ըստ պատումի՝ Ասորեստանի թագուհի Շամիրամը, հրապուրվելով Հայոց թագավոր Արայի գեղեցկությամբ, ընծաներով պատվիրակներ է ուղարկել նրա մոտ, խնդրել ամուսնանալ իր հետ և դառնալ Ասորեստանի թագավորը: Սակայն Արան հավատարիմ է մնացել իր ժողովրդին ու հայրենիքին և մերժել է նրան: Շամիրամը վճռել է զենքի ուժով հասնել իր նպատակին և մեծ զորքով արշավել է Հայաստան: Ճակատամարտում Արան զոհվել է: Գտնելով մարտում զոհված Արայի դին՝ ցանկացել է արալեզների օգնությամբ վերակենդանացնել նրան:

Առասպելի հիման վրա ստեղծվել են հայ գրակ-յան և արվ-ի մի շարք գործեր (Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմ. ողբերգությունը, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Վ. Թեքեյանի, Գ. Էմինի բանաստեղծությունները, Վ. Սուրենյանցի «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» կտավը, Գ. Եղիազարյանի համանուն բալետը):

Գրկ. **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց (աշխարհաբարի փոխադր., ներածութ. և ծնթգր.՝ Ս. Մալխասյանցի), Ե., 1997:* **Սեբեոս**, *Պատմութիւն (աշխատասիր.՝ Գ. Աբգարյանի), Ե., 1979:* **Էմին Մ.**, *Վէպք հնոյն Հայաստանի, Մ., 1850:* **Սրվանձտեանց Գ.**, *Դրոց եւ ըրոց, ԿՊ, 1874:* **Աբեղեան Մ.**, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ, Վաղ-պատ, 1901:* **Մատիկեան Ա.**, *Արա Գեղեցիկ, Վնն., 1930:* **Ղափանցյան Գ.**, *Արա Գեղեցիկի պաշտամունքը, Ե., 1944:*



«Արա Գեղեցիկ և Շամիրամ». *«Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» (նկարիչ՝ Վ. Սուրենյանց, 1899, ՀԱՊ)*


ԱՐԱԲԱԿԱՆ ԹՎԱՆՇԱՆՆԵՐ, 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 թվանշանների ավանդ. անվանումը. օգտագործվում են հաշվարկման 10-ական համակարգով թվերը գրելու համար: Ստեղծվել են Հնդկաստանում՝ հավանաբար V դ-ից առաջ, և Եվրոպա են բերվել X–XIII դդ-ում՝ արաբների միջոցով (այստեղից էլ՝ անվանումը):

Հրատարակչ. գործում Ա. թ. օգտագործվում են՝ էջահամարները, տեքստերում անհրաժեշտ թվերն ու թվականները, ինչպես նաև թողարկման տվյալներում՝ հատորային գրակ-յան հերթական համարը, հատորի, գրքի և նրա մասի համարը, հրատ-յան տարեթիվը, տպաքանակը, ձևաչափը ևն նշանակելու համար:

Մատենագիտ. նկարագրության մեջ Ա. թ. կարող են օգտագործվել հռոմ. թվերի և քանակական թվականների փոխարեն՝ համապատասխան վերջավորություններով (օր.՝ 1-ին, 2-րդ, 3-րդ ևն):

Մինչև Ա. թ-ի գործածմանն անցնելը հայ. ձեռագիր և տպագիր գրքերում մամուլներն ու էջերը համարակալել են այբուբենի տառերով:

Արաբական թվանշաններ





ԱՐԱԲԱՋՅԱՆ Հովհաննես Ալեքսանի (1873, Ալեքսանդրապոլ–1918), մանկավարժ, թարգմանիչ: Սովորել է հոր հիմնադրած Արաբաջյան դպրոցում: Կազմել է հայոց լեզվի դասագրքեր («Մայրենի լեզու», 1-ին տարի, 1901, 2-րդ տարի, 1902, 3-րդ տարի, 1903, երեքն էլ՝ Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.): Թարգմանել է Ա. Աննենսկայայի «Մեծ քոյրը» (1891) պատմվածքը, Մ. Բլոկի «Մեծ մարդկանց մայրերը» (1896, երկուսն էլ՝ նույն տպ.), Ի. Վազովի «Լծի տակ» (մաս 1, 2, 1903, 1905, ՍՊր, «Պուշկինյան» տպ.) վեպերը:

«ԱՐԱԳԱԾ», գրական-գեղ., քաղ. պատկերազարդ շաբաթաթերթ: Վերակազմյալ հնչակյան կուս-յան պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1911-ին Նյու Յորքում: Խմբագիր՝ Հրաչ *Երվանդ:* Լուսաբանել է արևմտահայ ազգ-հաս. կյանքը, Թուրքիայի արտաքին ու ներքին քաղաքականությունը, դատապարտել երիտթուրքերի ազգայնամոլ,




«Արագած», *1994-ից, Կիև*



«Արազ», *1932–44, Բուխարեստ*



Արազու *«Իսրայել Օրի» (գիրք 1, 2, 1961, Ե., Հայպետհրատ) գրքի տիտղոսաթերթը*



«Արահետ», *1975–86, Փարիզ (№ 11, 1980)*

պանիսլամ. և հայահալած քաղաքականությունը: «Ա.»-ին աշխատակցել են Զ. Եսայանը, Ռ. Սևակը, Սարոյդին (Մ. Շահինյան), Լ. Էսաճանյանը, Է. Գոլանճյանը, Ա. Երկաթը, Լ. Լարենցը, Ա. Հարությունյանը, Ե. Արմենը և ուր.: «Ա.» անդրադարձել է նաև կանանց միջազգ. շարժմանը և ազգ-հաս. կյանքում հայ կնոջ դերին:

«ԱՐԱԳԱԾ», ազգ., հաս., մշակութ. ամսաթերթ: Լույս է տեսնում 1994-ից Կիևում՝ հայ., ռուս. և ուկր.՝ Ուկրաինայի Ռադայի «Գոլոս Ուկրաինի» պաշտոնաթերթի նախաձեռնությամբ ու կառավարության ֆինանսավորմամբ: Հիմնադիր-խմբագիր՝ Ժենյա Ծերունյան: Լուսաբանում է ուկրաինահայ համայնքի առօրյան, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձությունները, հայ-ուկր. միջպետ. հարաբերությունները, ներկայացնում է Ուկրաինայի անվանի հայերին, ուկրաինացի թարգմանիչներին, մեծապես նպաստում է Լվովի, Խարկովի, Օդեսայի, Ղրիմի, Սումիի, Լուգանսկի, Զապորոժիեի և Կիևի հայկ. համայնքների համախմբմանը:

«ԱՐԱԶ», ազգ., գրական շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: Լույս է տեսել 1932–44-ին Բուխարեստում: Խմբագիրներ՝ Հովհաննես *Դևեջյան*, Հակոբ *Միրունի*: Տպագրել է քաղ. լուրեր, տեղեկություններ սփյուռքահայության և Խորհրդ. Հայաստանի առօրյայից, պատմաբանասիր., կենսագր. հոդվածներ, թարգմանաբար ներկայացրել է ռումին և հունգար գրողների գործեր, թուրք. մամուլից արտատպել է հայերին վերաբերող նյութեր:

ԱՐԱԶԻ [Հարությունյան Մովսես Մելիքի, 1.4.1878, գ. Շուլավեր (այժմ՝ Շահումյան ավան՝ Վրաստանում)–22.12.1964, Երևան], գրող: Սովորել է Թիֆլիսի ռեալ. դպրոցում, 1899-ին ընդունվել Ս. Պետերբուրգի տեխնոլոգ. ինստ-ը: 1906-ին վերադարձել է Թիֆլիս:

Անդրանիկ պատմվածքը՝ «Դոն Կարապետիչի արշավանքը դեպի Կղերըստան» (Ֆերնանդո ծածկանունով), տպագրել է «Մուրճ» ամսագրում: Գրել է պատմվածքներ («Մենաւոր լապտերը», 1912, «Վերջին երազը», 1912, «Արեւը», 1913, «Կիսատ տունը», 1913, «Արիւնոտ ծաղիկները», 1916): Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին Հակոբ Հակոբյանի հետ հրատարակել է «Կարմիր մեխակներ» և «Բանուորի ալբոմ» ժող-ները: 1920–30-ական թթ-ի պատմվածքներում և վիպակներում ներկայացրել է այդ ժամանակ նոր ձևավորվող անհատին («Ընկեր Մուկուչը», 1924, «Հազար գլխանի», 1931, «Լուսնի շողերով», 1932, «Ձրվեժի ցոլքում», 1933, «Այրվող հորիզոնը», 1940):

Լույս են տեսել նաև Ա-ու «Հայրենիքի կանչը» (1942) և «Անհաղթները» (1944) պատմվածքների ժող-ները, «Իսրայել Օրի» (գիրք 1, 1959, գիրք 1–2, 1961, գիրք 1–3, 1963 և 1964) պատմավեպը, «Երկեր»-ը (հ. 1, 1937), «Ընտիր երկերը» (1948), «Երկերի ժողովածուն» (հ. 1–3, 1955–57): Ռուս-ից թարգմանել է Գ. Նիկիֆորովի և Մ. Գորկու ստեղծագործություններից:

ԽՍՀՄ Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններ:

Գրկ. Թերզիբաշյան Վ., Արազի, Ե., 1940: **Ստեփանյան Գ.**, *Մովսես Արազի: Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1954:*

«ԱՐԱՀԵՏ», գրական-գեղ. պարբերաթերթ: Ֆրանսահայ գրողների ընկերակցության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1975–86-ին Փարիզում (1975-ին՝ «Տեղեկատու»): Տնօրեններ՝ Շահան Էլեկյան, Կարիկ *Պասմաճյան*, Ավետիս *Ալիքսանյան,* խմբագիր՝ Սարգիս Քեչյան (Զանգու): Տպագրել է ժամանակակից հայ, մասնավորապես՝ ֆրանսահայ հեղինակների գործեր, էջեր հայ դաս. գրակ-ից, անդրադարձել գրական աշխարհի նորություններին, լուսաբանել ընկերակցության առօրյան:

ԱՐԱՄ Ա. ՔԵՇԻՇՅԱՆ (ավազանի անունը՝ Պետրոս, ծ. 8.3.1947, Բեյրութ), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (1995-ից), աստվածաբան: Եկեղեց. պատմության և փիլ-յան դ-ր (1978): Ավարտել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքի (Անթիլիաս) ժառանգավորաց (1965) և ընծայարանի (1968) բաժինները: 1968–78-ին սովորել է

Շվեյցարիայի Պոսե էկումենիկ հաստատությունում, Բեյրութի ամերիկյան, Նյու Յորքի Ֆորդհամի, Օքսֆորդի համալսարաններում: 1968–75-ին եղել է Անթիլիասի դպրեվանքի փոխտեսուչ, աստվածաբանության դասախոս, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի միջեկեղեց. հարաբերությունների ընդհանուր քարտուղար: 1972–75-ին դասավանդել է Հայկազյան քոլեջում, Բեյրութի համալսարանում և Ամերիկյան համալսարանում: 1978-ին Լիբանանի թեմի առաջնորդ. տեղապահն էր, 1979–95-ին՝ առաջնորդը: 1980-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1985-ին ստացել արքության տիտղոս: 1991-ին ԵՀԽ Կանբեռայի (Ավստրալիա) VII համաժողովում ընտրվել է կենտր. ու գործադիր վարչության ատենապետ, վերընտրվել 1998-ին՝ Հարարեի (Զիմբաբվե) VIII համաժողովում: Աշխատությունները վերաբերում են աստվածաբանությանը, Մերձ. Արևելքի եկեղեցիների պատմությանն ու էկումենյան շարժմանը:

Լույս են տեսել Ա. Ա. Ք-ի «Հայ եկեղեցւոյ ճշմարիտ դիմագիծը» (1979), «Ներսէս Շնորհալի, Աստուածաբան ու էքիւմէնիստ» (1974), «Ազգ, եկեղեցի, հայրենիք» (1999), «Կեանքը արժէքներով իմաստաւորել» (2009, բոլորը՝ Բ.) աշխատությունները:

Երկ. Հաւատքի առաքեալը, Հալեպ, 2007: The Challenge to be a Church in a Changing World, N. Y., 1997; Defis et Perspectives Ecumeniques, Antelias, 2000.

«ԱՐԱՄԵԱՆ ԼԵԶՈՒԻՆ ԳԱՆՁ», Յոախիմ *Շրյոդերի* գրաբարի և աշխարհաբարի քերակ-յան գիրքը՝ լատ.: Տպագրվել է 1711-ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության (570 էջ, 4^0, 14 x 10 սմ): Հեղինակը փորձել է հայ-ը ձերբազատել լատինաբանության խորթ երևույթներից: Հետագայում նրան հետևել են Մխիթար Սեբաստացին («Դուռն քերականութեան: Բառգիրք», 1727, «Քերականութիւն գրաբառի լեզուի», 1730), Պաղտասար Դպիրը («Քերականութիւն», 1736–38), Միքայել Չամչյանը («Քերականութիւն հայկազեան լեզուի», 1779) և ուր.:

«ԱՐԱՄՅԱՆ», հայկ. տառատեսակ: Ստեղծել է Շանիկ *Արամյանը* 1855-ին Փարիզում: Որոշ հատկանիշներով նման է եվրոպ. տառատեսակներին, տարբեր՝ մինչ այդ հայկ. տպագրության մեջ գործածվող *բոլորգրից*: Գրանշանները ուղղահայաց են, ունեն գծագրումների նրբաճաշակ լուծումներ, զերծ են երկար ծայրագծերից և բոլորգրի համեմատությամբ ավելի քիչ տարածություն են զբաղեցնում: Փոքրատառ շ-ն փոխարինված է գլխատառի փոքրաչափ նկարվածքով, տ, ր և ք գրանշանները՝ լատ. «հնաշխարհիկի» (անտիկվա) s, r և f գրանշաններով:

Այս տառատեսակը, իր կամայական նորամուծություններով, ոչ միայն լայնորեն տարածվել է տպագրության մեջ, այլև օգտագործվել նոր՝ թվանշանային տառատեսակների մշակման համար:

ԱՐԱՄՅԱՆ Հակոբ Սահակի [1908, ք. Անտիոք (Կիլիկիա)–20.11.1955, Երևան], արձակագիր: 1922-ին տեղափոխվել է Եգիպտոս: Ավարտել է Կահիրեի Գալուստյան վարժարանը և ֆրանս. քոլեջը: 1940–47-ին՝ *«Արև»* թերթի խմբագիր: 1947-ին հայրենադարձել է: 1948–49-ին աշխատել է Հայպետհրատում:

Լույս են տեսել Ա-ի «Կանաչ հովիտէն» (1945) բանաստեղծությունների, պատմվածքների ժող-ը, «Նեղոսի հովտում» (1954, 1958) վեպը, «Փարիզի նեգրուհին» (1956) երկը:

ԱՐԱՄՅԱՆ Շանիկ [Թ. Կրկռիկյան, 1820, Նիկոմեդիա (այժմ՝ Իզմիթ՝ Թուրքիայում)–16.4.1879, Կ. Պոլիս], տպագրիչ, վիմագրիչ, բառարանագիր, հրապարակախոս: Կ. Պոլսում աշխատել է որպես գրաշար: 1846-ին տեղափոխվել է Փարիզ, հմտացել գրաձուլման և տպագրության գործում: 1855-ի գրքերը տպագրել է Վալտերի տպարանում, 1856-ին հիմնադրել է սեփական՝ «Շանիկ Արամյան» տպարանը և լույս ընծայել շուրջ 20 անուն գիրք: 1862-ից տպագր. գործը շարունակել է Մարսելում, 1864-ից՝ Կ. Պոլսում, եղել է Կ. Պոլսի արքունի տպարանի տեսուչ:




Արամ Ա. Քեշիշյան




Արամ Ա. Քեշիշյանի *«Հաւատքի առաքեալը» (2007, Հալեպ) գրքի կազմը*



«Արամեան լեզուին գանձ» *(Յոախիմ Շրյոդեր, 1711, Ամստերդամ) գրքի տիտղոսաթերթը*



«Արամյան» *տառատեսակի նմուշներ*



Ճանիկ Արամյան



Ճ. Արամյանի
«Համառօտ բառգրքուկ...»-ի (1860, Փարիզ) փիփղոսաթերթը



Վալտեր Արամյանի
«Խոտորջուրցիներ» (1987, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

Տպագրել է Եզնիկ Կողբացու, Գրիգոր Նարեկացու, Մ. Նալբանդյանի, Ծերենցի, Մ. Չերազի, Պ. Դուրյանի, Գ. Սրվանձտյանի և ուր. երկեր, նաև Փարիզի «Մասեաց աղաւնի», «Արեւելք», «Արեւմուտք», «Փարիզ» պարբ-ները, դասագրքեր (Ա. Գալֆայան, «Այբբենարան պատկերազարդ վասն մանկանց», 1856, Ս. Միքայելյան, «Թուաբանութիւն երկհատոր», 1856, «Համառօտ աշխարհագրութիւն», 1866, Հ. Չիլինկիրյան, «Պատմութիւն ազգային երկամեայ անցից», 1866, «Թուաբանութիւն», 1870, Մ. Հյուսյան Պաղտասարյան, «Առաջնորդ խօսակցութեան անգլիերէն լեզուի», 1879, Հ. Հինդլյան, «Նոր դասագիրք ֆրանսերէնէ ի հայ թարգմանութեան», 1891, Բ. Էքսերճյան, «Ընդարձակ կենսագրութիւն բարեյիշատակ Պետրոս Դուրեանի», 1893, Բ. Պոզաճյան, «Տեսական եւ գործնական քերականութիւն հայերէն աշխարհաբար լեզուի», 1898, ևն):

Ա-ի հրատ-ներն աչքի են ընկնում բարձրարվ. տպագրությամբ: 1855-ին ստեղծել է տպատառի նոր տեսակ՝ «***Արամյան***», որոնք ավելի գեղեցիկ են, դյուրընթեռնելի և հեշտ շարվող:

Ա. գրել և հրատարակել է «Ընդունելութիւն ընծայի» (1856, Փ., Վալտերի տպ.) երգիծ. երկը, «Դասարան հայկազն մանկանց» (1860) դասագիրքը, որի 236 պատկերազարդումների համահեղինակ է («Հայկի պատերազմը», «Վահեի մահը», «Տիգրան Բ-ի պատերազմը հռոմեացիների դեմ», «Ավարայրի ճակատամարտը» ևն), «Համառօտ բառգրքուկ հայերէն-տաճկերէն-ֆռանսերէն» (1860), «Համառօտագոյն բառարան արդեան լեզուի» (1860, երեքն էլ՝ Փ., Ա-ի տպ.) բառարանները, «Վաւերագիրք. խնդիր ազգային եկամտի» (1864, ԿՊ, «Մասիսի» տպ.), «Ռուսիա եւ Ընդհանուր ժողով հայոց ի Կոստանդնուպօլիս» (1866, ԿՊ, Ա-ի տպ), «Դիտողութիւն ի վերայ տեղեկագրի կաթուղիկոսական Յանձնաժողովոյ» (1866), «Զէյթունցիք եւ լուսաւորչական հայք» (1867, երկուսն էլ՝ նույն տպ.) գրքույկները:

Գրկ. Թէոդիկ, *Տիպ ու գառ, ԿՊ, 1812, էջ 92–95, Ե., 2012 (համահանուրյուն):* Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, էջ 203–208:*

ԱՐԱՄՅԱՆ Մեսրոպ Հենրիկի (ծ. 20.6.1966, Երևան), խմբագիր, եկեղեց. գործիչ: Ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխ. ինստ-ը (1990), Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քահանայից լսարանը (1991), ձեռնադրվել է քահանա: 1991-ից՝ «Գանձասար» աստվածաբան. կենտրոնի հիմնադիր-տնօրեն և ***«Գանձասար»*** հանդեսի գլխ. խմբագիր, 2002-ից, միաժամանակ՝ «ՎԷՄ» ռադիոկայանի գլխ. խմբագիր-տնօրեն, 2004-ից՝ «Վեմ մեդիա արվեստների» ստուդիայի հիմնադիր-տնօրեն, 2006-ից՝ «Այբ» կրթ. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, 2013-ից՝ ՀՀ նախագահի խորհրդական: Ա-ի հոդվածները տպագրվել են «Գանձասար» հանդեսում: Հեղինակ է «Արարատից Սիոն» փաստագր. կինոնկարի սցենարի (2010):

ԱՐԱՄՅԱՆ Ռաֆայել Գևորգի (29.11.1921, Վաղարշապատ–7.8.1978, Երևան), արձակագիր: Վալտեր ***Արամյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1941):

Լույս են տեսել Ա-ի «Ռուբինյան եղբայրները» (1954) վեպը, «Չթամբած ձիեր» (1963, 1964), «Ով զարմանալի» (1969), «Մեռած քաղաքի պարիսպների տակ» (1970), «Արևոտ անձրև» (1980) պատմվածքների, ակնարկների ժող-ները:

ԱՐԱՄՅԱՆ Վալտեր Գևորգի (15.7.1909, Վաղարշապատ–18.12.1994, Երևան), արձակագիր: Ռաֆայել ***Արամյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1932):

Լույս են տեսել Ա-ի «Ռուսա, որդի Արգիշտի» (1957) պատմ. վիպակը, «Մարդը» (1959), «Ընկած ծառը» (1964), «Մի՛թե բոլորը հող դարձան» (1970), «Թանաքագույն ծաղիկներ» (1973), «Արահետներ» (1977), «Վերադարձ» (1983), «Զարմանալի տարիներ» (1985) պատմվածքների ժող-ները, «Երանոս Կոմանցի: Հեքիաթ-վիպակը» (1991): Թարգմանություններ է արել ռուս-ից:

Բռնադատվել է, աքսորվել, հետագայում՝ արդարացվել:

Երկ. Խոտորջուրցիներ, Ե., 1987 (վիպակ, պատմվածքներ): Կոլիմա, Անթիլիաս, 1994, Ե., 2006:

ԱՐԱՊՅԱՆ Պողոս Հովհաննեսի [1742, գ–ք. Ապուչեխ (Ակն գավառ)–1835, Կ. Պոլիս], տպագրիչ, գրաճուլող: Պատանի հասակում տեղափոխվել է Կ. Պոլիս, հորից սովորել տպագրիչի արհեստը և 70 տարի աշխատել է տպագրության ոլորտում՝ դառնալով Թուրքիայի ամենահայտնի տպագրիչը: Մեծարվել է «հայազգի Գուտենբերգ» պատվանունով: 1766–69-ին աշխատել է Կ. Պոլսի «Հակոբի և Հովհաննեսի» (հոր) տպարանում, 1777-ին հոր հետ բացել է նոր՝ «Հովհաննեսի և Պողոսի» տպարանը, կոչվել է նաև Պողոս Հովհաննիսյանի, 1820-ից՝ «Արապյան» տպարան: Ա-ի մահից հետո տպագր. գործը շարունակել են նրա որդիները (տես ***Արապյաններ***):

Ա. ստեղծել է հայ. զարդագրեր, փորագրել ու ձուլել է հայ. տպատառեր, 1791-ին ստեղծել է թուրք-ի «նեսիհ» և «թալիգ» տառատեսակները, որոնք նրա անունով կոչվում են «Արապ օղլու»: 1781-ին Վրաց Հերակլ թագավորի հրավերով եղել է Թիֆլիսում, պատրաստել վրաց. տպատառեր, կահավորել տպարան և 1781–83-ին տպագրել է վրաց. գրքեր, ապա Էջմիածնում աջակցել տպարանի կատարելագործմանը:


Ա. սուլթան Մահմուդ II-ի հրովարտակով 1816-ին նշանակվել է Արքունի տպարանի տեսուչ: Նա և իր 4 որդիներն ազատվել են հարկերից ու տուրքերից, նրանց շնորհվել է հատուկ կարգավիճակ: Արքունի տպարանում 1831-ի նոյեմբ–ից տպագրել է Օսմ. կայսրության առաջին պաշտոն. թերթը՝ «Թագվիմի վէգային», և նրա հայ. տարբերակը՝ ***«Լրոյ գիրը»***:

Սուլթանն Ա-ին շնորհել է գլխարկի վրա «Մամուլ-նշանը» (տպագր. մամլիչի պատկերով) կրելու իրավունք:

ԱՐԱՊՅԱՆՆԵՐ, տպագրիչ-հրատարակիչներ Կ. Պոլսում: Գործել են 1750–1880-ական թթ. (3 սերունդ): Ակնի Ապուչեխ գ–ք-ի բնակիչ Աստվածատուր Արապօղլու որդի Հովհաննեսը (մահացել է մոտ 1810-ին) Կ. Պոլսում 1750-ին հիմնադրել է տպարան՝ «Հովհաննես Աստվածատուրյան» (տպագրել է 29 անուն գիրք), 1766-ից համագործակցել է Հակոբ Սոխիկօղլի տպագրիչի հետ («Հակոբի և Հովհաննեսի» տպ.) և 1768–69-ին տպագրել Շարակնոց, Պաղտասար Դպիրի «Տաղարանը», «Տաղարանիկը», Ավետարան և այլ երկեր: 1777-ին Հովհաննեսն իր որդի Պողոսի (տես ***Արապյան*** Պողոս) հետ ստեղծել է նոր տպարան, որին միացրել է Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու որդի Հովհաննեսի տպարանի կայքն ու անվանել «Հովհաննեսի և Պողոսի» (1796-ից՝ Պողոս Հովհաննիսյանի, 1820-ից՝ «Արապյան», 1835-ից՝ «Արապյան եղբայրներ») տպարան, որտեղ 1-ին գրքերը՝ Սաղմոսարան և «Տետրակ Տօնացոյցի», տպագրվել են 1778-ին:

1822-ից Ա-ի տպարանում Պողոսի հետ աշխատել են նրա որդիները՝ Աստվածատուրը, Գեորգը և Գալուստը: Աստվածատուրի 3 որդիները նույնպես եղել են տպագրիչներ: Գեորգի որդի Խաչիկ Արապյանը Օրթագյուղի (Կ. Պոլիս) տպարանում ձուլել է հայ. և թուրք. տառատեսակներ, տպարանը կոչվել է «Պօղոսի և երից որդոց իմոց»: Գալուստի որդի Հարությունը (1826–1890) նույնպես աշխատել է Ա-ի տոհմ. տպարանում, տպագրել է Մատթեոս Կոստանդնուպոլսեցու «Հանդիսարան ուղղափառութեան հայոց եկեղեցւոյ» (1854) գիրքը: 1854-ին Ա-ի Օրթագյուղի տպարանը հրդեհվել է, 1855-ին հիմնադրել են նոր՝ այդ գերդաստանի վերջին՝ «Արապյան եղբայրներ» տպարանը (գործել է մինչև 1883-ը):

Ա-ի տպարանում շուրջ 130 տարվա ընթացքում հրատարակվել են 176 անուն գիրք՝ Եփրեմ Խուրի Ասորու «Գիրք աղօթից» (1779, 1803, 1810), Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից» (1782, 1802, 1807, 1812, «Մատեան ողբերգութեան»՝ 1852), Հովհաննես Հաննայի «Պատմութիւն Երուսաղէմի» (1782), Գեորգ Մխալչիմ Կոստանդնուպոլսեցու «Ճառ վասն ծննդեան...» (1787, 1796, 1804), Գրիգոր Գապասախալյանի «Գիրք երաժշտական...», «Գրքոյկս կոչեցեալ երգարան», «Նուագարան




Պողոս Արապյանի *մշակած զարդապատառերը*



«Մամուլ-նշանը», որը Պ. Արապյանին շնորհել է սուլթան Մահմուդ II-ը՝ գլխարկին կրելու համար



*Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից»-ի (1802, Կ. Պոլիս, **Արապյան** տպ.) գլխա- և լուսանցազարդերով (2-րդ) էջ*



Ագաթանգեղոսի «Յորում պարունակի պատմութիւն...» (1824, Կ. Պոլիս, **Արապյան** *տպ.) գրքի փիփղոսաթերթը*

«Արաս»-*ի լոգոն*



Զապել Եսայանի «Աւերակներուն մէջ» (2010, Սփամբուլ, **«Արաս»***) գրքի կազմը*



Ավետիք Արասխանյան

երաժշտական» (բոլորը՝ 1803), Աղաբիդոս Սարկավագի «Բացատրութիւն յորդորական գլխոցն...» (1806, 1808), Աբրահամ Աստապատցու «Ներբողեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի» (1807), Ներսես Շնորհալու «Ներբող սրբոց հրեշտակապետաց...» (1808), Պաղտասար Դպիրի «Գրիգոր Լուսաւորչի պատմութիւնը» (հայատառ թուրք., 1820), Ագաթանգեղոսի «Յորում պարունակի պատմութիւն Տրդատայ արքայի եւ սրբոյն Գրիգորի» (1824), Մեսրովբ Տեր-Հարությունյանի «Քերականութիւն հայոց լեզուի» (1826), Հովսեփ Սաղմկեցու «Քննութիւն խնդրոյ» (1851), Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» (1852), Հակոբ Տիվիթցյանի «Գիրք ընութեան» (1856) և այլ հեղինակների երկեր, Սաղմոսարան (1778, 1780, 1787), Ժամագիրք (1779, 1799, 1803, 1813), Մաշտոց (1785), Տոնացույց (1779, 1799, 1802, 1803), Շաշոց (1799, 1801), Շարակնոց (1802), Ավետարան (1805), «Կրթութիւն քրիստոնէական...» (1801), «Գիրք սաղմոսաց Դաւթի» (1801, 1815, 1851), «Գործք առաքելոց...» (1802, 1851), «Տետրակ գովասանաց առ համօրէն տնօրինական սուրբ ուխտատեղիսն...» (1805), «Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք» (1807, 1820), «Քրիստոնէական վարդապետութիւն...» (1814, 1851), «Տաղարան հարուստ, վայելուչ եւ գեղեցիկ» (1803, 1816, 1825), «Տետրակ այբբենական, որ է դուռն ընթերցական ուսման» (1816) ևն:

1815-ից նաև վերահրատարակվել են Ա-ի տպագրած առանձին գրքեր:

Ա-ի տպարանում է լույս է ընծայվել «Սուրհանդակ Բիւզանդեան» (1849–50) պարբ-ը (տես *«Լրոյ գիր»*):

«ԱՐԱՍ», հրատարակչատուն: Հիմնադրվել է 1993-ին Ստամբուլում: Հիմնադիր-տնօրեն՝ Մկրտիչ ***Մարկոսյան***: Տպագրում է հայ. և թուրք. երկեր (տարեկան 8–10 անուն). նպատակը հայ գիրքը թուրքախոս հայությանը և ընդհանրապես թուրքալեզու ընթերցողին հասցնելն է: «Ա.» լույս է ընծայել Ա. Անտոնյանի «Բալկանեան պատերազմը» (1999), Ա. Փեհլիվանյանի «Անկախութիւնը երկու քայլ այն կողմ չէ» (1999), Ր. Քեպապճյանի «Խօսիր Հալիլ Բէյ» (2000), Հ. Մնձուրու «Աթէնք, աղ ունես» (2000), Հ. Ասլանյանի «Անունս Յակոբ է, ծննդավայրս՝ Թոքատ» (2005), Զահրատի «Դդումի համ» (2009), Զ. Եսայանի «Աւերակներուն մէջ» (2010), Զ. Մինդանօղլու «Հայ պարբերական մամուլը 1794–2000 թթ.» (թուրք., 2014) և այլ գրքեր:

ԱՐԱՄԽԱՆՅԱՆ Ավետիք Մկրտումի (13.2.1857, Ագուլիս–3.12.1912, Ախալքալաք), հրապարակախոս, գրականագետ, խմբագիր, տնտեսագետ: Տնտեսագիտ-յան դ-ր (1882): Սովորել է ծննդավայրում, ապա՝ Թիֆլիսի ռեալ. ուսումնարանում, 1876-ից՝ Լայպցիգի, Փարիզի և Ստրասբուրգի համալսարաններում: 1883–85-ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, 1901–11-ին՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա եղել է Ախալքալաքի ծխական դպրոցի տեսուչ: 1875–1887-ին աշխատակցել է «Մշակ»-ին: 1889-ին հիմնադրել և մինչև 1901-ը խմբագրել է ***«Մուրճ»*** ամսագիրը: «Քաղաքատնտեսագիտական դասախօսութիւններ» խորագրով հրատարակվել են Ա-ի «Ազգաբնակութիւնը եւ ազգաբնակչական շարժումները» (1883), «Հողի արդիւնաբերութիւնը եւ հասարակութիւնը» (1884, երկուսն էլ՝ Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Արեւելեան ազգերի հին պատմութիւնը» (1891, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.) աշխատությունները: Պաշտպանել է 1861-ի գյուղաց. ռեֆորմը, որով Ռուսաստանում վերացվել է ճորտատիր. իրավունքը: Ա. «Մուրճ» ամսագրի շուրջն է համախմբել հայ գրողների, հրապարակախոսների (Լ. Շանթ, Դ. Դեմիրճյան, Մ. Մանվելյան, Հ. Հակոբյան և ուր.), բարձր է գնահատել հին ու նոր սերնդի գրական դեմքերին (Փավստոս Բուզանդ, Սայաթ-Նովա, Րաֆֆի և ուր.) և հայ մամուլը: Թարգմանել է Կ. Մարքսի «Կապիտալ» երկի առանձին գլուխներ, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»:

Գրկ. Ղարաջեան Գ., *Անցեալի յիշողութիւններից, Թ., 1928:* **Սարինյան Ռ.**, *Ավետիք Արասխանյան, Ե., 1980:* **Անանյան Գ.**, *Ավետիք Արասխանյան, Ե., 1987:*

«ԱՐԱՐԱՏ», եռօրյա թերթ, ապա՝ կիսամսյա հանդես: Հայ լեգեոնականների պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1920–21-ին Ադանայում: Արտոնատեր՝ Հայկ Սաստիճյան, խմբագիր՝ Գեղարդ-Շառա: Տպագրել է առավելապես Կիլիկիան ազատագրելու համար մղված մարտերի մասնակից հայ լեգեոնականների (կամավոր. գնդերի զինվորներ) հուշերը, գրական-գեղ., հեղինակային և թարգման. նյութեր (պատմվածքներ, բանաստեղծություններ), ինչպես նաև հոդվածներ ու տեղ. լուրեր, գրախոսություններ ևն: Պարբերաթերթին աշխատակցել են լեգեոնականները և Կիլիկիայի մտավորականությունը:

Ա.ՐԱՐԱՏ (Նաճարյան) Անդրանիկ Տիգրանի (1922, Հալեպ–11.12.1991, Դամասկոս), գրող, խմբագիր-հրատարակիչ: 1951-ին Հալեպում հիմնադրել է «Շիրազ» տպարանը, 1945–49-ին հրատարակել է (ընկերների հետ) *«Դէպի երկիր»*, խմբագրել և հրատարակել է *«Աշակոյթ»* գրակ-յան, արվ-ի և գիտ-յան տարեգիրքը (1967, 1970, 1972, 3 հատոր):

Լույս են տեսել Ա-ի «Կրակէ արդարութիւն» (1946), «Ծիլ մը անապատին մէջը» (1965) պատմվածքների, «Յաւերժական մարդը» (1953), «Անաւարտ ուղին» (1964), «Հինգտողանի» (1986, Դամասկոս) բանաստեղծությունների ժող-ները, «Մատեան հոգեդարձի» (1985, Բեյրութ, «Ալթափրես» տպ.) պոեմը:


«ԱՐԱՐԱՏ», քաղ., առևտր. և բանասիր. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1850–51-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Գաբրիել *Պատկանյան*: Աշխարհաբար առաջին պարբ-ն է Կովկասում: Տպագրել է Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Մսերյանի և ուր. բանաստեղծություններից, առակներ, հանելուկներ, նյութեր՝ հայկ. տպագրության և մամուլի պատմությունից, հոդվածներ՝ պատմ., մանկավարժ. թեմաներով:

«ԱՐԱՐԱՏ», կրոնաբարոյական, բանասիր. և հայագիտ. ամսագիր: Սայր աթոռ Սբ Էջմիածնի առաջին պաշտոն. հրատ-ը: Լույս է տեսել 1868–1919-ին Էջմիածնում: Խմբագիրներ՝ Աբել արք. *Միքթարյան*, Խորեն *Ստեփանե*, Արիստակես եպս. Դավթյան, Կարապետ եպս. *Տեր-Մկրտչյան*, Գալուստ *Տեր-Մկրտչյան*, Գարեգին *Հովսեփյան*, Մ. Տեր-Մկրտչյան, Հուսիկ արք. Տեր-Սովսիսյան, Աբել արք. Աբրահամյան (Նազարյան), Մեսրոպ եպս. Տեր-Սովսիսյան (Մագիստրոս), Ներսես վրդ. Միքայելյան, Բաբկեն վրդ. Աղավելյան, *Տիրայր վարդապետ* (Տեր-Հովհաննիսյան), Գյուտ վրդ. Տեր-Ղազարյան: Խմբագրի գործակցի պաշտոնում աշխատել են Ղ. Աղայանը, Պ. Սիմեոնյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Մանանդյանը: Հրատարակել է կաթողիկոս. կոնդակներ ու քաղվածքներ՝ սինոդի գրագրություններից, կրոնադավանաբան. ուսումնասիրություններ:

«Ա.» հայագիտ. առաջին հանդեսն է Կովկասում և մեծապես նպաստել է գիտ-յան այդ ճյուղի զարգացմանը: Հրատարակել է մատենագիտ. բնագրեր, վավերագրեր, հիշատակարաններ, ուղեգրություններ, միջնադարյան հայ տաղերգուների երգեր: Տպագրել է սեպագիր արձանագրությունների նկարներ և դրանց վերծանությունը (պրոֆ. Ք. Պատկանյան), Գ. Տեր-Մկրտչյանի, Գ. Հովսեփյանի, Կ. Տեր-Մովսիսյանի, Տիրայր եպիսկոպոսի ուսումնասիրությունները, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Ա. Հովհաննիսյանի, Լ. Մելիքսեթ-Բեկի, Հ. Օրբելու աշխատություններն ու հոդվածները, նաև Կոմիտասի՝ հայ և համաշխ.. երաժշտությանը վերաբերող ուսումնասիրությունները: «Ա.»-ի էջերում մեծ տեղ է հատկացվել գրակ-յան հարցերին. տպագրվել են Մ. Բերբերյանի, Ա. Տերտերյանի, Թ. Ավդալբեկյանի և ուր. հոդվածները՝ նվիրված հայ և համաշխ. գրակ-յան դաս. հեղինակներին:

«Ա.» լուսաբանել է դպրոց. գործերի վիճակը երկրում, տպագրել հոդվածներ տես-մանկավարժ. թեմաներով (Ս. Մանդինյան, Գ. Էդիլյան) ևն:

2006-ից Սայր աթոռ Սբ Էջմիածինը ««Արարատի» ժառանգությունը» խորագրով առանձին հատորներով շարունակաբար լույս է ընծայում հոգևորականների՝ հանդեսի էջերում տեղ գտած գիտ.,



Անդրանիկ Արարատի «Մատեան հոգեդարձի» (1985, Բեյրութ) գրքի կազմը



«Արարատ», *1850–51, Թիֆլիս*



«Արարատ», *1868–1919, Էջմիածին (№ Բ, 1902)*

կրոն. հրապարակումները. տպագրվել են Աբել Մխիթարյանի, Հուսիկ Տեր-Մովսիսյանի, Խաչիկ Դադյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Կարապետ Տեր-Մկրտչյանի, Արշակ Տեր-Միքայելյանի, Մեսրոպ Տեր-Մովսիսյանի, Երվանդ Տեր-Մինասյանի հոդվածների ժող-ները, «Սուրբ Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը» հատորը:

Գրկ. Մատենագիտություն «Արարատ» ամսագրի (կազմ.՝ Ս. Կոժինյան), Էջմիածին, 1970:



«Արարատ», *1913-20, Լոնդոն (№ 2, 1913)*

«ԱՐԱՐԱՏ», քաղ. ու հաս. օրաթերթ: Լույս է տեսել 1869–76-ին Կ. Պոլսում՝ հայատառ թուրք. և հայ.: Խմբագիր՝ Մատթեոս Այվատյան: «Ա.» աշխատել է թրքախոս հայ ընթերցողին ներգրավել հաս. կյանքի մեջ: Առաջնորդողներում և թղթակցություններում քննադատել է թուրք. կառավարության հայահալած քաղաքականությունը, որի պատճառով Բարձր դուռը փակել է թերթը: «Ա.» պայքարել է դավան. երկպառակությունների դեմ, սատարել ժամանակի արևմտահայ ժողովրդավար. մամուլին («Մեղու», «Մանզումէի Էֆքեար») և բանավիճել «Օրագիր», «Մասիս» պարբ-ների հետ: Տպագրել է հայրենասիր. բանաստեղծություններ:

«ԱՐԱՐԱՏ», ազգ., քաղ. ամսագիր, ապա՝ երկամսյա հանդես: Լոնդոնի հայոց միացյալ կազմակերպության հրատ.: Լույս է տեսել 1913–20-ին Լոնդոնում՝ անգլ.: Խմբագիր՝ Գ. Մ. Գրեգորի: Տպագրել է նյութեր Արմ. Հայաստանում երիտթուրքերի սանձազերծած կոտորածների, հայերի բռնի տեղահանության, հայ գաղթականության աղետալի վիճակի մասին, ներկայացրել եվրոպ. դիվանագիտության դիրքորոշումները Հայկ. հարցի, հայկ. կոտորածների վերաբերյալ:



«Արարատ», *1924-42 և 1990-ից, Բուխարեստ [№ 21 (450), 2010]*

«ԱՐԱՐԱՏ», հայագիտ. հանդես, 1942-ին՝ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1924–42-ին Բուխարեստում՝ ռում.: Խմբագիրներ՝ Վարդան ***Մնձկրտչյան***, Վ. Կեմիճյան (Արամազդ, 1942-ին): Լուսաբանել է գաղթավայրերի, մասնավորապես՝ ռումինահայության կյանքը, ծանոթացրել Սփյուռքում և Խորհրդ. Հայաստանում տեղի ունեցող անցուդարձերին, տպագրել գրախոսություններ, ճամփորդ. նոթեր, գիտաառող ջապահ. հոդվածներ, երգիծ. նյութեր, Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի, Հ. Պարոնյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Շիրվանզադեի, Գ. Զոհրապի, Ե. Օտյանի, Վ. Տերյանի և ուր. ստեղծագործություններից (հիմնականում Վ. Մնձտուճյանի թարգմանությամբ), Շ. Դիլի, Ա. Մեյեի, Ֆ. Մակլերի, Ֆ. Վերֆելի, Ն. Յորգայի, Կ. Բասմաճյանի, Ա. Չոպանյանի և ուր. հայագիտ. ուսումնասիրություններից: Մեծ է «Ա.»-ի դերը հայ գրակ-ն ու մշակույթը ռումինահայերին ու ռումինացիներին ճանաչելի դարձնելու գործում, նպաստել է նաև ռումինահայ գաղութի պատմության ուսումնասիրմանը:

Վերահրատարակվում է 1990-ից (երկշաբաթաթերթ)՝ որպես Ռումինիայի հայերի միության (նախագահ՝ Վարուժան ***Ոսկանյան***) պաշտոնաթերթ՝ ռում.: Տնօրեն-խմբագիր՝ Միքայել-Ստեփան Գազազյան, խմբագիրներ՝ Էդուարդ Անտոնյան, Վարդան Մարթայան: Տպագրում է լուրեր ՀՀ-ից, ԼՂՀ-ից, ռումինահայ համայնքի կյանքից, նյութեր՝ հայ գրակ-յան և մշակույթի վերաբերյալ: Գործում է նաև «Արարատ» հրատարակչությունը (տնօրեն՝ Սիրուն Թերզյան):



«Արարատ», *1937-ից, Բեյրութ*

«ԱՐԱՐԱՏ», ազգ., քաղ. և գրական երկօրյա, հետագայում՝ օրաթերթ, 2001-ից՝ շաբաթաթերթ, 2010-ից՝ օրաթերթ: ՍԴՀԿ կենտր. վարչության և Լիբանանի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1937-ից (ընդհատումներով) Բեյրութում: Խմբագիրներ՝ Օննիկ Ճամպուլյան, Արմենակ Էլոյան, Արսեն ***Կիփուր***, Միհրան Սեֆերյան, Արմեն Ղարիպ, Վահան Տոնապետյան, Հովսեփ Ճիոյան, Ասատուր Էլճանյան, Հրանտ Գանգրունի, Ժիրայր Նայիրի, Ավետիս Փոշօղլյան, Ահարոն Շիրտման, Անի Եփրեմյան: Լուսաբանում է ՍԴՀԿ-ի գործունեությունը, անդրադառնում արևմտահայության պատմ.

ճակատագրին, ծանոթացնում ՀՀ-ի, ԼՂՀ-ի, Սփյուռքի և Լիբանանի հաս-քաղ., տնտ., գիտ., մշակութ. և մարզ. կարևոր իրադարձություններին, վերլուծում միջազգ. անցուդարձը: Հրատարակում է հորելյան. բացառիկ համարներ (նաև արաբ.): Ունեցել է «Արարատ շաբաթօրեակ» (1949–54, խմբագիր՝ Հակոբ Պարսումյան), ***«Արարատ գրական»***, «Արարատ մարզական» (1956–58, 1992-ին, խմբագիրներ՝ Գևորգ Տարոնի, Գրիգոր Քյոշկերյան, Կարո Գոճավագյան, Ա. Փոշօղլյան) և «Արարատ երիտասարդական» (1985–92, խմբագիրներ՝ Եղիկ Ճերեճյան, Ա. Փոշօղլյան) հավելվածները:

«ԱՐԱՐԱՏ», ամսօրյա հանդես: Լույս է տեսել 1943–47-ին Բուենոս Այրեսում՝ հայ. և իսպ.: Հրատարակիչ-խմբագիր՝ Գարեգին արք. *Խաչատրյան*: Տպագրել է ուսումնասիրություններ, էսսեներ, գրական նյութեր, մշակութ. լուրեր, իսպ-ով՝ հայագիտ. արժեքավոր երկերի թարգմանություններ, հայ պոեզիայի նմուշներ: Հրատարակել է առանձին մատենաշար:

«ԱՐԱՐԱՏ» («Ararat»), հաս-քաղ., գրական-գեղ. եռամսյա հանդես: ՀԲԸՄ ԱՄՆ-ի վարչության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1960-ից Նյու Յորքում՝ անգլ.: Խմբագիրներ՝ Զեկ Անդրեասյան, Լեո Համալյան, Արամ Արկան: Տպագրում է անգլիագիր հայ հեղինակների (Վ. Սարոյան, Լ.-Զ. Սյուրմելյան, Մ. Հուսեփյան և ուր.), հայ դաս. և ժամանակակից գրողների ստեղծագործություններից (թարգմանաբար), ծանոթացնում հայ մշակութ. կյանքին: Հանդեսում տպագրված գործերի զգալի մասը լույս է ընծայվել ԱՄՆ-ի «Տարվա լավագույն պատմվածքներ» ժող-ով:



«Արարատ», *1960-ից, Նյու Յորք (№ 1, 1964)*

«ԱՐԱՐԱՏ», ազգ., մշակութ. թերթ: Հիմնադրվել է 1991-ին Ռիգայում (լույս է տեսել 1 տարի), հրատարակումը վերսկսվել է 2002-ից: Լատվիայի հայկ. համայնքի հրատ.: Խմբագիր՝ Ալեքսանդր Գերոնյան: Ներկայացնում է տեղի հայկ. համայնքի կյանքը, հայտնի հայերին, տպագրում լուրեր ՀՀ-ից և ԼՂՀ-ից, ծանոթացնում է միջազգ. կարևոր իրադարձություններին: Տարածվում է նաև Էստոնիայում, Լիտվայում, Ս. Պետերբուրգում, Մինսկում և այլուր:



«Արարատ», *1995-ից, Բուդապեշտ [№ 4 (109), 2002]*


«ԱՐԱՐԱՏ», ազգ., մշակութ. ամսաթերթ: Հունգարիայի Հայ ազգ. փոքրամասնության ինքնավարության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1995-ից Բուդապեշտում՝ հայ. և հունգ.: Խմբագիր-հրատարակիչ՝ Ալեքսան Ավանեսյան: Տպագրում է նյութեր հունգարահայ գաղութի պատմության վերաբերյալ, անդրադառնում ՀՀ-ի, ԼՂՀ-ի և միջազգ. նորություններին: Նպաստում է հայկ. մշակույթի և ազգ. ավանդույթների պահպանմանն ու տարածմանը, հայ-հունգ. կապերի ամրապնդմանը:

«ԱՐԱՐԱՏ», հաս-քաղ., տնտ., մշակութ. ամսաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ): Լույս է տեսնում 1996-ից Արտաշատում: Խմբագիրներ՝ Պետրոս Կարեյան, Կարինե Աշուղյան, Նելլի Բեգլարյան (2008-ից): Խորագրերից են՝ «Մարզխորհրդի նիստում», «Մարզը ափի մեջ», «Համայնքներն ինչպես որ կան», «Գյուղապետարաններ. հայացք դրսից», «Գյուղատնտեսական տարի», «Բերքի տոն», «Գեներդերը և քաղաքականությունը», «Ինչ է տեսնում կինը», «Ծառայում եմ հայրենիքին», «Առողջապահական թեմաներով», «Արձագանքում են տպագրվածին», «Պատմության էջերից», «Մեր փոստից», «Մարզաշխարհ», «Լրագրողի մտահոգությամբ» ևն:



«Արարատ», *1996-ից, Արտաշատ*

«ԱՐԱՐԱՏ», մանկապատանեկան եռամսյա հանդես: Լույս է տեսել 1997–2003-ին Փարիզում: Ձգտել է երեխաների մեջ սերմանել հայրենասիրություն, ազնվություն, գնահատել գեղեցիկն ու վեհը, ծանոթացրել է ազգ. և եկեղեց. տոներին, տպագրել հայ անվանի մտավորականների կենսագրություններ: Պարբ-ի վաճառքից ստացված գումարն օգտագործվել է բարեգործ. նպատակներով (հատկացվել է ՀՀ-ի կարիքավոր ընտանիքներին ևն):



«Արարատ գրական», *1956–65, Բեյրութ (№ 6-7, 1958)*

«ԱՐԱՐԱՏ ԳՐԱԿԱՆ», կիսամսյա, ապա՝ ամսագիր, Բեյրութի *«Արարատ»* օրաթերթի գրական հավելվածը: «Նոր սերունդ մշակութային շարժում» ինչակյան երիտասարդ. միության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1956–65-ին: Պատ. խմբագիր՝ Հակոբ *Նորունի* (Նորաշխարհյան): Պաշտպանել է «արվեստը ժողովրդի համար» սկզբունքը: Լույս է ընծայել չափածո և արձակ գործեր, գրաքննադատ. հոդվածներ, լուրեր սփյուռքահայ, մասնավորապես՝ լիբանանահայ գրական կյանքից:

«Ա. գ.» սերտ կապեր է պահպանել Հայաստանի հետ, տպագրել խորհրդահայ հեղինակների ստեղծագործություններից: Ունեցել է համաշխ. գրակ-յան բաժին, մեծ տեղ է հատկացրել արաբ. գրակ-յանը:

ԱՐԱՐԱՏՅԱՆ Ալեքսանդր Պետրոսի [1855, գ. Շամշուլդա (այժմ՝ Վրաստանի Սամցխեի շրջանում)–13.12.1885, Թիֆլիս], գյուղագիր, դրամատուրգ, մանկավարժ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1868–70): Եղել է ուսուցիչ, բացել է դպրոցներ:

Լույս են տեսել Ա.-ի «Երկու թումբ կամ Խեղճ սիրահարներ» (1876, Գանձակ, Ֆեողորովի և Թառումյանի տպ., 1895, Թ., Սիվսես Վարդանյանի տպ., 1912, Թ., «Կուլտուրա» տպ.), «Խղճութեան արգասիք» (1877) գրքերը, «Քնարիկ մանկական» (1880, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ., Գանձակ, Ֆեողորովի և Թառումյանի տպ.) ժող-ը, «Գիւղական խալիֆայ» (1883) ինքնակենսագր. երկը, «Հիմնարկութիւն գաւառական ուսումնարանի» (1889) վիպակը, «Սուտ ճգնաւոր» (1891, 1904, երեքն էլ՝ Թ., Մ. Վարդանյանի տպ.) վոդևիլը: Հեղինակ է «Կրակի մէջ եմ ընկել», «Տըլոտ Կարո», «Փոքրիկ ախտեանները» պիեսների:

ԱՐԱՐԱՏՅԱՆ Առաքել Աստվածատուրի (13.9.1808, Թիֆլիս–3.2.1887, Թիֆլիս), բանասեր, մանկավարժ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1828–87-ին հայոց լեզու է դասավանդել Թիֆլիսի ռուս. գիմնազիայում: Քննադատել է Ս. Նազարյանի «Հանդէս նոր հայախօսութեան» երկի լեզվաքերական. հայացքները («Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս հայոց», 1858), պայքարել է գրաբարի անաղարտությունը պահպանելու համար: Գրել է նաև «Սխալանք գրոցն որ կոչի Վարդապետարան կրօնի» (1858) և «Համառօտ վարք Յովհաննու աւագ քահանայի Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ...» (1859, բոլորը՝ Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) աշխատությունները:



Արաքսի *«Փոթորկից հետո» (1980, Ե., «Սովետական գրող») գրքի փիփղոսաթերթը*

ԱՐԱՔՍ (Ավետիսյան Արաքս Սիւրադի, 25.12.1903, ք. Ղարաքիլիսա–15.6.1978, Երևան), արձակագիր, մանկագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1967): Ավարտել է Թիֆլիսի Հովնանյան-Սարիամյան օրիորդաց ուսումնարանը (1923), Սոսկվայի կոմ. ժուռնալիստիկայի ինստ-ը (1933): 1934–37-ին՝ *«Հոկտեմբերիկ»* մանկ. անսագրի խմբագիր, 1939–42-ին՝ *«Գրական թերթի»* խմբագրի տեղակալ, 1942–45-ին՝ Ռադիոկոմիտեի գրական բաժնի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա.-ի «Էս ջուրն իրա ճամփով կգնա...» (1928), «Լիպո» (1942) վիպակները, «Ալվանը», «Նարգո» (1928), «Ձիմմի» (1931, 1973), «Կոմերիտուհու նամակները» (1934), «Լաուրիկի արկածները» (1941), «Տափաստանի առյուծը» (1942), «Ամենակրտսերը» (1944), «Ազատության հրթիռներ» (1945), «Հպարտ

սեր» (1947), «Կարմիր դրոշ» (1949), «Զվարթ ձայներ» (1951), «Բիբլի» (1956), «Պատանիներ» (1960), «Ծաղկաձորցի Թաթիկը» (1972), «Արևածիններ» (1977), «Փոթորկից հետո» (1980) պատմվածքների, նովելների և հեքիաթների ժողովները, «Երկերը» (1954): Ա.-ի գործերից թարգմանվել և հրատարակվել են ռուս. ու աղբր.: Ռուս.-ից թարգմանել է Ա. Ուլյանովայի ստեղծագործություններից:

«ԱՐԱՔՍ», գրական-գեղ. պատկերազարդ կիսամյա հանդես: Լույս է տեսել 1887–98-ին Ս. Պետերբուրգում: Խմբագիր-հրատարակիչ՝ Սիմեոն *Գուլամիրյան*: Ունեցել է հաս.-քաղ., ազգագր. և գիտ. բաժիններ, նյութեր է զետեղել Հայաստանի բնաշխարհի մասին, գրական բաժնում տպագրել է Րաֆֆու, Ռ. Պատկանյանի, Պ. Պռոշյանի, Նար-Դոսի և հայ այլ գրողների գործերից, ինչպես նաև թարգմանություններ՝ ռուս և եվրոպ. դասականներից (Մ. Լերմոնտով, Լ. Տոլստոյ, Ի. Տուրգենև, Վ. Շեքսպիր և ուր.) ստեղծագործություններից: Տես. և քննադատ. հոդվածներ է հրատարակել Հ. Այվազովսկու, Գ. Բաշինջաղյանի, Վ. Վերեշչագինի և այլ արվեստագետների մասին:



«Արաքս», *1887–98, Ս. Պետերբուրգ*

«ԱՐԱՔՍ», գրական-հաս., պատմագիտ. և քաղ. շաբաթաթերթ (1907-ին՝ ամսաթերթ): Լույս է տեսել 1905–07-ին Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում: Խմբագիր՝ *Վարդ Շահենի* (Հովհաննես Հակոբյան): Տպագրել է նամակներ արևմտահայ գավառներից, ներկայացրել հայ գյուղացու տնտ. ու քաղ. ծանր դրությունը: Չհարելով որևէ կուս-յան՝ «Ա.» քարոզել է արևմտահայ ազգ.-ազատագր. պայքարի գաղափարը, դատապարտել ազգամիջյան ընդհարումները Կովկասում՝ համարելով այն որպես ցարիզմի ազգ. քաղաքականության հետևանք, տպագրել է ռուս գրող Մ. Գորկու նամակը Ս. Հ. Բայթին, որտեղ բացատրված են կոտորածների բուն շարժառիթները, դրանց հակադրել է Կովկասի ժողովուրդների բարեկամության գաղափարը: «Ա.» համակրանքով է հետևել ռուս. առաջին բուրժուադեմոկրատ. հեղափոխությանը, տպագրել «Ընկերվարութիւն» ծավալուն հոդվածաշարը:



«Արաքս», *1925–65, Ալեքսանդրիա*

«ԱՐԱՔՍ», պարբերաթերթ: Լույս է տեսել 1924–29-ին Լառնակայում (Կիպրոս)՝ հայ., անգլ.: Տնօրեն՝ Մարտիրոս Մոստիճյան: Լուսաբանել է կիպրահայ գաղութի կյանքը, պարբերաբար հոդվածներ ու լուրեր է արտատպել «Խորհրդային Հայաստան» թերթից: Մեծ տեղ է հատկացրել քաղ. ընթացիկ լուրերին:


«ԱՐԱՔՍ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1925–65-ին Ալեքսանդրիայում: Խմբագիրներ՝ Արամ Ստեփանյան, Շավարշ Ստեփանյան: Լուսաբանել է եգիպտահայերի առօրյան, անդրադարձել է սփյուռքահայ համայնքների կյանքին, միջազգ. կարևոր իրադարձություններին, աջակցել է հայապահպան ձեռնարկումներին, նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

«ԱՐԱՔՍ», մանկապատանեկան ամսաթերթ: Լույս է տեսել 1952–55-ին Փարիզում: Տնօրեն՝ Ն. Հովհաննիսյան: Խմբագիր՝ Շաքե Տեր-Մելքոնյան: Տպագրել է հայ գրողների (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Խնկո Ապեր և ուր.) մանկ. ստեղծագործություններից, առակներ, երգեր, պատկեր-պատմվածքներ, բանաստեղծություններ: «Ա.» աշխատել է մանուկ ընթերցողներին դաստիարակել հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացումներով, տպագրել է տեղեկություններ Խորհրդ. Հայաստանի արվ.-ի և մշակույթի գործիչների մասին:



«Արաքս», *1952–55, Փարիզ (№ 17, 1953)*

«ԱՐԱՔՍ», գրական, մշակութ., հաս. ամսագիր: Լույս է տեսնում 1987-ից Թեհրանում՝ հայ. և պարսկ.: Տեղի առաջին երկլեզվյան հայկ. պարբ-ն է: Արտոնատեր՝ Սևակ Հովսեփյան: Խմբագիր՝ Մովսես Քեշիշյան: Առաջին 3 համարները տպագրվել են «Արազ» անվանումով, մինչև 8-ը՝ միայն հայ.: Ծանոթացնում է Իրանի և իրանահայ կյանքին, առանցքային թեմաներից է Հայկ. հարցը: Տպագրում է հաս-քաղ. վերլուծ. հոդվածներ, անդրադառնում ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Յուրաքանչյուր համարում ավելի քան 10 էջ



«Արաքս», *1987-ից, Թեհրան (№ 30–32, 2002)*



Ալեքսանդր Արաքսմանյան



«Արդարադատություն», *2008-ից, Երևան [1(16), 2012]*

պարսկ. հրապարակումներ են՝ Հայկ. հարցի, հայոց պատմության, հայ գրակ-յան ու մշակույթի մասին: Ունեցել է մանկապատանեկան, մարզ., առողջապահ. հավելվածներ: Ունի նաև հայ. և պարսկ. կայքէջեր:

ԱՐԱՔՍՄԱՆ-ՄԱՆՈՒԿՅԱՆ Էմանվել Ալեքսանդրի (ծ. 18.7.1935, Լենինական), լրագրող, մշակույթի գործիչ: Ալեքսանդր ***Արաքսմանյանի*** որդին: Ավարտել է ԵՊՀ (1957), Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ը (1962): 1957–62-ին աշխատել է «Երեկոյան Երևան», 1962–76-ին՝ «Սովետական արվեստ» պարբ-ներում, 1985–88-ին խմբագրել է ***«Խորհրդային Հայաստան»*** օրաթերթը, 1988–91-ին եղել է Հեռուստառադիոպետկոմի նախագահ, 1971–76-ին՝ Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության վարչության քարտուղար, 1985–91-ին՝ ՀԺՄ վարչության նախագահ, 1992-ից դասավանդում է «Գլաձոր» համալսարանում (2000-ից՝ ամբիոնի վարիչ):

Գրել է հեռուստահաղորդումների, հեռուստատեսային ֆիլմերի սցենարներ [«Ave, Գոհար», «Fortissimo! Արամ Խաչատրյան–100», «Բարի հետք»՝ Օբերհաուզենի (Գերմանիա) փառատոնի Գլխ. մրց.՝ 1981, «Դեմք»՝ Վիլնյուսի փառատոնի 1-ին մրց.՝ 1982, ևն]:

ԱՐԱՔՍՄԱՆՅԱՆ (Մանուկյան) Ալեքսանդր Արմենի [3.6.1911, Ալեքսանդրապոլ–12.3.1982, Յալթա (թաղված է Երևանում)], դրամատուրգ, արձակագիր, թատերագետ: Արվ. վաստ. գործիչ (1965): Էմանվել ***Արաքսման-Մանուկյանի*** հայրը: Սովորել է Թիֆլիսի Ս. Լիսիցյանի մասնավոր դպրոցում: 1943–67-ին աշխատել է Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնում և Հայֆիլմ կինոստուդիայում, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում, 1968–73-ին՝ ***«Էկրան»*** հանդեսի խմբագիր: Բեմադրվել են Ա-ի «Վարդեր և արյուն» (1957), «Քո սրտի կրակը» (1958), «60 տարի և երեք ժամ» (1965), «Հինգ րոպե ճշմարտություն» (1980, Գ. Սունդուկյանի անվ. մրց.՝ 1980), «Արիստոտելի երկար րոպեները» (1981) և այլ պիեսներ:

Լույս են տեսել Ա-ի «Ճանապարհ դեպի Կամիշին» (1945), «Ազատությունն աքսորական» (գիրք 1–2, 1954–55, 2-րդ վերամշկ. հրտ.՝ 1979), «Ճամփաներ, ճամփաներ» (1964), «Հրդեհ» (1976) վեպերը, «Դավիթ Մալյան» (1957), «Արուս Ասբյան» (1964), «Վարդուհի Վարդերեսյան» (1972), «Արև Բաղդասարյան» (1973), «Թատրոնի արահետներով» (1976) թատերագիտ. երկերը, «Գյազբել լեռան գաղտնիքը» (1946), «Ոստան» (1982) վիպակները:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (1971):

Երկ. Պատեր անդունդի եզրին: Դրամատրիկական երկեր, Ե., 1974:
Գրկ. Ալեքսանդր Արաքսմանյան (ժող.), Ե., 1981:

ԱՐԳՈՒՏԻՆՄԿԱՅԱ (Արղության) Լյուսյա Ալեքսանդրի [3(15).7.1897, Թիֆլիս–1.8.1968, Մոսկվա], գրող: Խորհրդ. առաջին կին զինթղթակիցը: Ավարտել է Թիֆլիսի ռուս. գիմնազիան, ապա՝ Մոսկվայի համալսարանի բժշկ. ֆակ-ը: Առաջին համաշխ. պատերազմի, քաղաքաց. կռիվների, Խորհրդա-ֆինն. և Հայրեն. պատերազմների մասնակից: 1916-ին զինվոր. բուժքույր է եղել Սարիղամիշում, Էրզրումում, Կարսում: Գրել է ռուս.:

Լույս են տեսել Ա-ի «Ջրապտույտում» (1928) վիպակը, «Մեծ գրքի էջը» (1930) վեպը, «Հրե ճամփա» (1932), «Տատյանա Սոլոմախա» (1937), «Մեծ սրտի մարդիկ» (1942), «Ցասման բոց» (1943), «Արյունոտ հողը» (1943), «Թևավոր մարդիկ» (1964) ակնարկների, պատմվածքների ժող-ները:

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանության ինստ-ի հրատ.: Լույս է տեսնում 2008-ից Երևանում: Խմբագր. խորհուրդ: Տպագրում է իրավագիտ-յան բնագավառի տարբեր հիմնախնդիրների, ներպետ. ու միջազգ. օրենսդրության, ինչպես նաև իրավաբ. այլ հարցերի վերաբերյալ գիտագործն. հոդվածներ և ուսումնասիրություններ՝ ռուս. ու անգլ. ամփոփումներով, ծանոթացնում է ինստ-ի առօրյային՝ համագործակցություններ, համաձայնագրեր, դասընթացներ, հրատարակած գրքեր, ուս. ձեռնարկներ, հոբելյան. միջոցառումներ ևն:

«ԱՐԵԳ», գրական, գիտ., հաս. ամսագիր: Լույս է տեսել 1922–24-ին (1924-ի հունվ–հունիսին՝ երկշաբաթաթերթ) Վիեննայում, Բեռլինում, ապա նորից՝ Վիեննայում: Խմբագիր-հրատարակիչ՝ Սիմոն Հակոբյան: Տպագրել է հայ գրողների ստեղծագործություններ, թարգմանություններ ռուս և եվրոպացի հեղինակներից, գրական-քննադատ. ուսումնասիրություններ: Լուսաբանել է Խորհրդ. Հայաստանի և ընդհանրապես Այսրկովկասի տնտ., հաս. ու մշակութ. կյանքի առաջընթացը: Նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

«ԱՐԵԳ», քաղ. և տնտ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1932–33-ին Մարսելում: Տնօրեն-խմբագիր՝ Թագվոր Խաչիկյան: Տպագրել է նյութեր ու հաղորդագրություններ միջազգ. կյանքի, ֆրանս-խորհրդ. մերձեցման, կապիտալիստ. երկրների տնտ. ճգնաժամի ու նրա հետևանքների մասին: Մեծ տեղ է հատկացրել մարսելահայության կյանքին, Խորհրդ. Հայաստանի նվաճումների լուսաբանմանը, նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Լինելով ներգաղթի եռանդուն կողմնակից՝ «Ա.» պաշտպանել է ՀՕԿ-ի հայրենակցական-վերաշինաց միությունների գործունեությունը:

«ԱՐԵԳ-93», հրատարակչություն: Հիմնադրվել է 1993-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Սամվել Գասպարյան:

Հրատարակում է հիմնականում մանկ. գրակ., հանրագիտարաններ, հայ., ռուս., անգլ., ֆրանս. և այլ լեզուներով բառարաններ: Օտարալեզու ընթերցողին է ներկայացնում Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված գրքեր: Լույս է ընծայել «Մանկական քրիստոնեական հանրագիտարան» (1998), «Մոռացված գանձերի արձագանքը» (2001), «Հայաստանի հրաշալիքները» (հայ.՝ 2000 և 2009, ռուս.՝ 2004), «Շախմատի հանրագիտարան» (2006), «Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն» (2009), «Ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն» (2012) բառարանները, Պարույր Սևակի «Ընտիր էջեր» (2012) ժող-ը և այլ գրքեր:

«ԱՐԵԳԱԿ», գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1888-ին (12 համար) Ձերսի Սիթիում (ԱՄՆ): Ամերիկահայ առաջին պարբ-ը: Խմբագիր-հրատարակիչ՝ Հայկակ ***Էկինյան***: Տպագրել է նյութեր՝ Արմ. Հայաստանի և հայկ. գաղթավայրերի մասին, լուրեր ու թղթակցություններ ամերիկահայ համայնքի կյանքից, քննադատել է արդուլհամիդյան հայահալած քաղաքականությունը, հանդես եկել բնաշխարհից հայերի արտագաղթի դեմ:

«ԱՐԵԳԱԿ», գրական, հաս. ամսաթերթ: Լույս է տեսել 1964–67-ին Լոնդոնում (տպագրվել է Փարիզում): Հիմնադիր-խմբագրապետ՝ Հայկ Գալուստյան, խմբագիր՝ Ասատուր Կյուզելյան: Ներկայացրել է սփյուռքահայ, մասնավորապես՝ անգլիահայ ազգ. ու մշակութ. կյանքը, արձագանքել հայրենի մշակույթի և գիտ-յան նվաճումներին, նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Տպագրել է արտերկրի հայ գրողների և հաս. գործիչների ստեղծագործություններ ու հոդվածներ, մեծ տեղ հատկացրել խորհրդահայ գրողներին, արվեստագետներին և գիտնականներին:


ԱՐԵՇՅԱՆ Սալոմե Գրիգորի (5.1.1913, Թիֆլիս–29.12.1966, Երևան), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1958): Գիտ. վաստ. գործիչ (1964): Ավարտել է Լենինգրադի պատմության, փիլ-յան, գրակ-յան և լեզվի ինստ-ը (1934): 1943–46-ին եղել է *«Կոմունիստ»* (ռուս., Երևան) թերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Ռուս գրողները Հայաստանի մասին» (1946), «Լև Տոլստոյ» (1960) աշխատությունները: Զբաղվել է հայ մամուլի պատմության հարցերով («Հայ մամուլը և ցարական գրաքննությունը», ռուս., 1957):


«ԱՐԵԻ», գրական, քաղ. օրաթերթ: Լույս է տեսել 1908-ին Ալեքսանդրիայում: Խմբագիր՝ Երվանդ ***Օտյան***: Տպագրել է նյութեր եգիպտահայ գաղութի, Արմ. Հայաստանի և Անդրկովկասի հայության մասին, միջազգ. լուրեր, տեղեկություններ՝ Թուրքիայի, Եգիպտոսի



«Արեգ», *1922–24, Վիեննա, Բեռլին (№ 10, 1924)*



«Մանկական քրիստոնեական հանրագիտարան»-ի (1998, Ե., **«Արեգ-93»***) կազմը*



«Արեգակ», *1964–67, Լոնդոն*

և արաբ. այլ երկրների կյանքից: Անդրադարձել է երիտթուրքերի քաղաքականությանը: Գրական բաժնում ներկայացրել է Ե. Օտյանի պամֆլետները՝ «Առտուան սուրճի տեղ» խորագրով: Թղթակցել են Լևոն Մկրտիչյանը, Բ. Շահրազը, Վ. Մալեզյանը, Վ. Թեքեյանը, Աբրահամ Ճիզմեճյանը և ուր.: 1909-ի հունվ-ին, միանալով «Լուսաբեր»-ին, դարձել է *«Լուսաբեր-Արեւ»*:



«Արեւ», *1915-ից, Ալեքսանդրիա, Կահիրե*

«ԱՐԵԻ», ազգ., հաս-քաղ. օրաթերթ: ՌԱԿ-ի Եգիպտոսի շրջանի պաշտոնաթերթը (1922-ից): Լույս է տեսնում 1915-ից Ալեքսանդրիայում, 1924-ից՝ Կահիրեում՝ եռօրյա պարբերականությամբ, 1970-ական թթ-ի վերջերից՝ Հայ ազգ. հիմնադրամի հովանավորությամբ: Արտոնատեր՝ Լևոն Մկրտիչյան, խմբագիրներ՝ Վահան ***Թեքեյան***, Միքայել ***Կյուրճյան***, Հովհաննես Պողոսյան, Հակոբ Փափազյան, Պողոս ***Արամյան***, Նուբար Պերպերյան, Ավետիս ***Յափուճյան***, Հովհաննես Տեր-Պետրոսյան, Ասպետ Արթինյան (2004-ից): Ներկայացնում է ՀԲԸՄ-ի գործունեությունը, լուսաբանում եգիպտահայ համայնքի և Սփյուռքի ազգ. կյանքը, հայաստանյան ու միջազգ. իրադարձությունները:

1998–2014-ին լույս է տեսել «Ա.»-ի արաբ. նույնանուն հավելվածը (ամսագիր, խմբագիր՝ եգիպտացի ցեղասպանագետ Մուհամմեդ Ռեֆաաթ ալ-Իմամ): Տպագրել է հայ և եգիպտացի ժողովուրդների պատմությանն ու մշակույթին վերաբերող պատկերազարդ նյութեր, անդրադարձել 2 երկրների պատմ. առնչություններին, ազգ. արժեքներին:



«Արեւելյան դար», *1860–63, Կ. Պոլիս*

Գրկ. «Արեւ» օրաթերթի մատենագիտութիւն, հ. Ա. (կազմ.՝ Հ. Տեր-Պետրոսյան), Կահիրե, 1999:

«ԱՐԵՎԴԱԼ», գրակ-յան և արվ-ի պարբերաթերթ: «Հայ մտքի տուն» մշակութ. կազմակերպության հրատ.: Լույս է տեսել 1937–39-ին Աթենքում: Հրատարակիչ-խմբագիրներ՝ Գևորգ Կառվարենց, Վազգեն Եսայան: Տպագրել է հայ դաս. և ժամանակակից հեղինակների ստեղծագործություններից, գրական-գեղ. թարգմանություններ, մշակութ. նյութեր, անդրադարձել է գրական, մշակութ. նորություններին, ներկայացրել նոր անուններ:

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴԱՐ», կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1860–63-ին Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրեն՝ Գրիգոր Տեյիրմենճյան: Քարոզել է ազգ. միաբանություն, ավանդույթների ու բարքերի, եկեղեցու և դավանանքի պահպանում: Տեղեկություններ է հաղորդել հայկ. դպրոցների մասին, հետամտել գավառի կրթ. կյանքի զարգացմանը, դավանաբան. սուր պայքար է մղել «Մեճմասյը Հավատիս» պարբ-ի դեմ: «Ա. դ.» սահմանադրության շուրջ բանավիճել է նաև «Մեղու» հանդեսի հետ, հակադրվել ժողովրդավար-սահմանադրականներին: Տպագրել է գրական նյութեր, հրապարակախոս. հոդվածներ, Եզոպոսի առակներից, թարգմանություններ հուն. գեղ. արձակից:



«Արեւելեան մամուլ», *1871–1922, Զմյուռնիա*

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱՅ ԼՐԱԳԻՐ», վիմատիպ լրագիր: Լույս է տեսել 1862–65-ին Կալկաթայում: Խմբագիր՝ Հովսեփ Սեթյան: Անդրադարձել է Կալկաթայի և հնդկահայ մյուս համայնքների հաս. կյանքին, ազգ. լեզվի ու կրոնի պահպանության և այլ հարցերի, հնդկահայ գաղթավայրերի քայքայման պատճառներին: Հնդկահայ ազգ-եկեղեց. վարչության անունից պաշտպանել է հնդկահայ հետադիմ. կղերին ու աշխարհիկ վերնախավին, Անգլիայի իշխանությունների աջակցությամբ պայքարել առաջադիմականների «Եղբայրասէր» պաշտոնաթերթի դեմ:

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ», ազգ., գրական, քաղ. պարբ. (ամսագիր, կիսամսյա հանդես, շաբաթաթերթ, վերջում՝ օրաթերթ): Լույս է տեսել 1871–1909 և 1919–22-ին Զմյուռնիայում: Խմբագիրներ՝ Մատթեոս ***Մամուրյան***, ապա որդին՝ Հրանտ Մամուրյան: Քննադատել է սուլթան. բռնապետությունը, անդրադարձել է Կիլիկիայի 1909-ի կոտորածներին, ավելի ուշ շրջանի իրադարձություններին, հույն-թուրք.

պատերազմներին (1897, 1919–22): 1919–22-ին ունեցել է ռամկավար. ուղղվածություն: Տպագրել է հրապարակախոս., բնափիլ., մանկավարժ., գրաքննադատ. և այլ բովանդակության հոդվածներ, Ծերենցի, Գ. Չիլինկիրյանի, Հ. Իփեքչյանի, Փ. Վարդանյանի, Գ. Պատկանյանի, Դ. Վարուժանի, Ս. Տյուսաբի, Մ. Նուպարյանի ստեղծագործություններից, Ժ. Լաֆոնտենի, Ա. Լամարթինի, Ա. Մյուսեի, Վ. Հյուգոյի և ուր. գործերի թարգմանություններ: Մեծ ներդրում ունի աշխարհաբարի ձևավորման և զարգացման մեջ: 1908-ին ունեցել է նույնանուն եռամսյա հանդես-հավելված: 1909-ից, որպես «Ա. մ.»-ի շարունակություն, լույս է տեսել «Դաշինք» օրաթերթը:

Գրկ. Խառատյան Ա., *«Արևելյան մամուլ» հանդեսի մատենագիտություն (1871–1909), Ե., 1976:*



«Արեւելեան ծանուցմունք», *1816, Աստրախան*

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ» ("Восточныя известія"), շաբաթաթերթ, ռուսահայ առաջին պարբ-ը: Կաթոլիկ միսիոներների հրատ.: Լույս է տեսել 1816-ին (27 համար) Աստրախանում՝ որպես 1813-ի հունվ-ից հրատարակվող «Վոստոչնիյա իզվեստիա» (ռուս.) թերթի հայ. տարբերակ: Խմբագիր՝ Կղեմես Շահվերդյան: Հրատարակումը նախաձեռնել են խմբագիրը և Աստրախանի գիմնազիայի գերմ-ի դասատու Ի. ֆոն Վեյսքոֆենը: Տպագրել է գավառագիտ., գիտահանրամատչելի և գրական հոդվածներ, օդերևութաբան. հաղորդագրություններ, հայոց պատմությանն ու ազգագրությանը վերաբերող նյութեր ևն: Հրապարակվել են նաև տեղեկություններ Կասպից ծովում նավագնացության մասին, առևտր. հայտարարություններ վաճառականների համար:



«Արեւելք», *1855–56, Փարիզ*

«ԱՐԵՒԵԼՔ», կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1855–56-ին Փարիզում: Խմբագիր՝ Ստեփան ***Ոսկանյան*** (Ոսկան): Տպագրել է պատմ., գեղ., քննադատ. երկեր: Արծարծել է հայ հաս. կյանքի վերափոխման հարցեր: Ունեցել է գիտ., վիպ., պատմ., բանահյուս., ազգ., երկրագործ. և այլ բաժիններ: Հիմն. նյութերը գրել կամ թարգմանել է խմբագիրը՝ երբեմն Հարմա, Հրանտ, Վահե ծածկանուններով:

«Ա.» առաջադրել է ազատագր. գաղափարներ, քննադատել ազգ-քաղ. բռնությունները Թուրքիայում: Տպագրել է հակիրճ տեսություններ եվրոպացի (մասնավորապես՝ ֆրանսիացի) գրողների (Պ. Կոռնել, Ժ. Լաֆոնտեն, Մ. Ֆլորիան, Ժ.-Ժ. Ռուսո, Ֆ. Շատոբրիան, Ա. Միցկևիչ, Ա. Դյումա-որդի և ուր.) երկերի մասին և թարգմանաբար տպագրել նրանց գործերից: Նպաստել է աշխարհաբարի զարգացմանն ու մշակմանը, հայ-ի բառաշինությանը:



«Արեւելք», *1884–1912, Կ. Պոլիս*

«ԱՐԵՒԵԼՔ», գրական, քաղ. և ազգ. օրաթերթ: Լույս է տեսել 1884–96, 1898, 1912-ին Կ. Պոլսում: 1912-ից տպագրվել է «Լուսին», «Պայքար», «Լրաբեր», «Չէզօք» անվանումներով: Խմբագիրներ՝ Բյուզանդ ***Քէչյան,*** Արփիար ***Արփիարյան***, Լևոն ***Բաշալյան***, Վահան ***Թեքեյան***, Տիգրան Արփիարյան, ***Երուխան***, Երվանդ ***Օտյան***, Գրիգոր ***Զոհրապ:***

«Ա.»-ի հրատարակումով 1880-ական թթ-ին նոր փուլ է սկսվել արևմտահայ լրագրության մեջ. մամուլը հատուկ ուշադրություն է դարձրել Արմ. Հայաստանի տնտեսությանն ու հայ բնակչության հաս. կյանքին, կենցաղին, սովորույթներին, իրավազուրկ վիճակին, քրդ. վերնախավի ճնշումներին, օսմ. իշխանությունների չարաշահումներին:

«Ա.» ազդեցիկ դեր է ունեցել արևմտահայության հաս-քաղ. կյանքում, անդրադարձել է տնտ., մշակութ., կրոն. խնդիրներին, քննադատել ազգ. իշխանավորների գործունեությունը, առաջադրել է գավառի տնտ. քայքայումը կանխելու, գյուղացու ծանր դրությունը մեղմելու միջոցներ: «Օրվան կյանքը» խորագրով տպագրել է Ա. Արփիարյանի ժողովրդավար. ոգով գրված քրոնիկները (Հրազդան կեղծանունով), «Ազգային լուրեր» խորագրով՝ արևմտահայ և արևելահայ հատվածների



«Արեւելք», *1930-36, Սալոնիկ*



«Արեւելք», *1946-63, Հալեպ*



«Արեւելք-Արձան», 1933, *Սփամբուլ*



«Արեւմուտք», *1859, 1864–65, Փարիզ*

ազգ-քաղ. կյանքին, հաս. կարևոր իրադարձություններին վերաբերող հոդվածներ ու թղթակցություններ, Րաֆֆու («Խամսայի մելիքություններ», «Խաչագողի հիշատակարանը», «Սամվել» վեպի մի մասը), Վ. Թոթովենցի, Գ. Զոհրապի և ուր. ստեղծագործություններից:

«ԱՐԵՒԵԼՔ», հաս-քաղ. օրաթերթ: 1934-ից՝ ՌԱԿ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1930–36-ին Սալոնիկում (Հունաստան): Խմբագիրներ՝ Վ. Բագրևանդյան, Ա. Քիրեճյան, Խ. Ներսեսյան, Մ. Քիրեճյան: Ներկայացրել է միջազգ. լուրեր, արտացոլել սփյուռքահայության, մասնավորապես հունահայ գաղութի հաս. կյանքը: «Ա.» գաղ. հակամարտության մեջ է եղել դաշնակցության հետ, սատարել է ներգաղթը և լուսաբանել Խորհրդ. Հայաստանի տնտ. և մշակութ. կյանքը: Թերթոնի ձևով տպագրել է վեպեր:

«ԱՐԵՒԵԼՔ», քաղ., տնտ., գրական օրաթերթ: Լույս է տեսել 1931–39-ին Ստամբուլում: Խմբագիրներ՝ Խորեն Ճամճյան, Թորոս *Ազատյան*, Թագվոր Փափազյան, Տիգրան Հաճյան: Լուսաբանել է Թուրքիայի հաս-տնտ. կյանքը, միջազգ. անցուդարձը, անդրադարձել է սփյուռքահայ համայնքներին: Ունեցել է Խորհրդ. Հայաստանին նվիրված մշտ. բաժին, հրատարակել Հայաստան այցելած սփյուռքահայ անվանի դեմքերի (Ա. Չոպանյան, Լ. Կյումուշկերտան և ուր.) տպավորությունները, տպագրել է հայ և համաշխ. գրողների գործեր, գրաքննադատ. հոդվածներ: 1932-ին հրատարակել է նույնանուն գրական հավելված:

«ԱՐԵՒԵԼՔ», քաղ., հաս., գրական շաբաթաթերթ, 1945-ից՝ եռօրյա: Լույս է տեսել 1943–46-ին Թավրիզում (1943–44-ին՝ «Հակաֆաշիստական թերթիկ», 1944–45-ին՝ «Հակաֆաշիստ»): Խմբագիր՝ Դ. Գևորգյան: Լուսաբանել է Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) ընթացքը, տպագրել է «Սովինֆորմբյուրո» տեղեկատվ. գործակալության հաղորդագրությունները, հոդվածներ և ակնարկներ հայ ռազմիկների քաջագործությունների մասին, բանաստեղծություններ, պատմվածքներ, լուրեր Խորհրդ. Հայաստանի տնտ., գիտ. ու մշակութ. կյանքից:

«ԱՐԵՒԵԼՔ», հաս-քաղ., գրական-գեղ. օրաթերթ: ՀՅԴ Սիրիայի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1946–63-ին Հալեպում: Խմբագիրներ՝ Անդրանիկ *Ծառուկյան*, Մինաս *Թոյլոյլյան*, Նշան Իսրայելյան, Լյութեր Մասպանաճյան, Երվանդ Մինոճարյան: 1951-ից ունեցել է սեփական տպարան: Լուսաբանել է կուս-յան գործունեությունը, անդրադարձել սիրիահայ համայնքի առօրյային, միջազգ. անցուդարձին նև: 1952-ին հրատարակել է «Վահագն» պատանեկան ամսօրյա հավելվածը, 1957–63-ին՝ «Արեւելք-մարզաշխարհ» շաբաթաթերթը, ՀՅԴ-ի 60-ամյակին նվիրված բացառիկ համար նև:

«ԱՐԵՒԵԼՔ-ԱՐՁԱՆ», գրական և մշակութ. հանդես: Լույս է տեսել 1933-ին Ստամբուլում: Հրատարակիչ-տնօրեն՝ Վահան Պերպերյան: Ստեղծվել է Ստամբուլում հրատարակվող *«Արեւելք»* օրաթերթի գրական հավելվածի (1932) և «Արձան» (1932) գրական պարբ-ի միացումով: Տպագրել է ստամբուլահայ գրողների ստեղծագործություններ, եվրոպ. դաս. գրակ-յան նմուշներ, գրախոսականներ հայ և օտար գրողների մասին, ընթերցողներին ծանոթացրել խորհրդահայ գրակ-յանը: Պարբ-ին աշխատակցել են Վ. Թեքեյանը, Շ. Նարդունին, Մ. Թոյլոյլյանը և սփյուռքահայ այլ գրողներ:

«ԱՐԵՒՄՈՒՏՔ», կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1859, 1864–65-ին Փարիզում: Խմբագիր՝ Ստեփան *Ոսկանյան* (Ոսկան): Ունեցել է ժողովրդավար. դիրքորոշում, պամֆլետներով և հրապարակախոս. հոդվածներով հանդես է եկել ազգ. առաջընթացը խոչընդոտող գործիչների դեմ: Մեծ տեղ է հատկացրել հայ գեղ. գրակ-յանը, ընդարձակ գրախոսական է տպագրել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մասին, թարգմանաբար հրատարակել ֆրանսիացի գրողների

գործեր: Նպաստել է հայ երգարվ-ի զարգացմանը, հրատարակել է երգերի տեքստեր: Զետեղել է նյութեր արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) վերաբերյալ, համակրանքով արտահայտվել *«Հիւսիսափայլի»* և Մ. Նալբանդյանի, ազատագր. պայքարի հույն և իտալացի հերոսների՝ հատկապես Ջուզեպպե Գարիբալդիի մասին:

«Ա.»-ն նշանակալի դեր է ունեցել աշխարհաբարի զարգացման գործում:

«ԱՐԵՒՄՈՒՏՔ», ազգ., գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1945–52-ին Փարիզում: 1946-ից՝ Կիլիկյան ընդհանուր միության հրատ.: Խմբագիրներ՝ Լևոն Մոզյան, Լևոն Չորմիսյան, Բյուզանդ *Թոփալյան*: Ունեցել է ժողովրդավար-հայրենասիր. ուղղվածություն, նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Ծանոթացրել է հետպատերազմյան Հայաստանի տնտեսության, շին-յան վերելքին, մշակութ. ձեռքբերումներին: Տպագրել է հայ և համաշխ. գրակ-յան գործեր, պատմաբանասիր., գրաքննադատ., արվեստաբան. նյութեր, ինչպես նաև լուրեր Սփյուռքի տարբեր համայնքներից, միջազգ. անցուդարձից:

«Ա.»-ին աշխատակցել են Զ. Որբունին, Մ. Պարսամյանը և ուր.:



«Արեւմուտք», *1945–52, Փարիզ*

«ԱՐԵՎԻԿ», հրատարակչություն: Ստեղծվել է 1986-ին Երևանում՝ *«Սովետական գրող»* հրատարակչության մանկապատանեկան բաժնի հիման վրա: Հիմնադիր-տնօրեն՝ Վարդգես *Քալանթարյան*, գլխ. խմբագիր՝ Գևորգ *Դևրիկյան*, տնօրեններ՝ Դավիթ *Հովհաննես* (1991–99), Աստղիկ Ստեփանյան (1999-ից): Հրատարակում է մանկապատանեկան գեղ., ուս. և ուսումնամեթոդ. գրակ., ինքնատիպ ձևավորմամբ մանկ. գունազարդ գրքեր, խաղ-գրքույկներ:



«Արևիկ» *հրատարակչության գրքերից*

1986–91-ին հրատարակել է «Համաշխարհային գրականություն պատանիների համար» և «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ» մատենաշարերը (50 հգ. տպաքանակով): 1999-ից ՀՀ հանրակրթ. դպրոցների համար լույս է ընծայել աշխարհագրության, մաթեմատիկայի, քիմիայի, անգլ-ի և այլ դասագրքեր, ուսուցչի մեթոդ. ձեռնարկներ:

«Ա.»-ի հրատ-ները Մոսկվայի գրքի միջազգ. ցուցահանդես-տոնավաճառների «Գրքարվեստ» մրցույթում արժանացել են մրց-ների (2004, 2005, 2007):

ԱՐԵՎՅԱՆ (Ալավերդյան) Գաբրիել Խաչատուրի [29.5.1914, գ. Քարահունջ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–11.3.1968, Երևան], գրող, լրագրող: Եղել է Կապանի «Պղնձի համար» (1938–45, 1954–56), «Կապան» և Լենինականի *«Բանվոր»* (1951–53) թերթերի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա.-ի «Ուրալյան տպավորություններ» (1951), «Հանքաշխարհ» (1959), «Հարուստ երակ» (1959), «Ասք ժամանակի» (1968) ակնարկների, վիպակների ժող-ները:

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Սեն Սուրենի (5.1.1928, Երևան–25.7.2014, Երևան), փիլիսոփա, պատմաբան, հայագետ, մատենագետ, խմբագիր: Փիլ. գիտ. դ-ր (1971), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1982-ից): Հայկ. հանրագիտարանի գիտահրատարակչ. խորհրդի անդամ (1974-ից): Ավարտել է ԵՊՀ (1951): 1959-ից աշխատել է Մատենադարանում. 1982–2007-ին՝ տնօրեն, *«Բանբեր Մատենադարանի»* հանդեսի գլխ. խմբագիր, 2007–14-ին՝ Մատենադարանի կառավարման խորհրդի նախագահ:



Սեն Արևշատյան

Լույս են տեսել Ա.-ի «Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում» (1962), «Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը» (1971), «Դավիթ Անհաղթը հին Հայաստանի ականավոր փիլիսոփա» (1980), «Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (համահեղ., 1984), «Հայ փիլիսոփայության պատմություն: Հին շրջան և վաղ միջնադար» (2007), «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» (2007), «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները» (ռուս., 1957) աշխատությունները: Կազմել և աշխարհաբար փոխադրությամբ հրատարակել է հայ. փիլ. բնագրերի քննական տեքստեր, ռուս. թարգմանություններ



Օննիկ Արզուման



Լիլիթ Արզումանյանի
«Բարև, փոքրիկ»
(2006, Ե., «Նշանակ») գրքի կազմը



Մակիչ Արզումանյան

[«Անանուն մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի», 1961, Անանիա Շիրակացու «Տիեզերագիտությունը», 1962, համահեղ., Դավիթ Անհաղթի «Երկերը», 1975, 1980 (հայ.՝ 1980, 1999), Գրիգոր Տաթևացու «Սողոմոնի առակների մեկնությունը», 1999, ևն]:

Հայաստանի մշակույթի հիմնադրամի հիմնադիր-նախագահ (1987–88): Մի շարք միջազգ. ակադ-ների անդամ:

ՀՀ Պետ. մրց. (1978), Երևանի պատվ. քաղաքացի (2001), Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2004) շքանշան:

Երկ. Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Е., 1973; К истории философских школ средневековой Армении (XIV в.), Е., 1980.

ԱՐԶՈՒՄԱՆ Օննիկ (1.3.1880, Կ. Պոլիս–1922–ից հետո, Կ. Պոլիս), գրաշար, հրատարակիչ, տպարանատեր: 12 տարեկանից սովորել է գրաշարություն (նաև բուլղ.) և մինչև 1896-ը աշխատել Կ. Պոլսի ամենամեծ՝ Պոյաճյանի տպարանում, 1896–98-ին՝ Վառնայում (Բուլղարիա): Կ. Պոլիս վերադառնալով՝ աշխատել է «Արեւելք» պարբ-ի տպարանում, որտեղ տպագրել է նաև «Մասիս» օրաթերթը, 1899-ին Գ. Գայսերյանի տպարանում՝ Ղ. Բոլատի «Հանրագիտակ»-ը, եղել նրա «Ծաղիկ» օրաթերթի գրաշարապետը: Վերջինիս հրատ-յան դադարեցումից (1900) հետո որպես հրատարակիչ աշխատել է տարբեր տպարաններում («Ծաղիկի», Ռոգոս Սագայանի ևն): 1908-ին հիմնադրել է սեփական տպարան, որը գործել է մինչև 1920-ական թթ., տպագրել է գեղ. [Զ. Եսայան («Կեղծ հանճարներ», 1909), Թեոդիկ («Կաղանդ», 1910), Տ. Չյոկյուրյան («Վանքը», 1914), Վ. Թեքեյան, Սիամանթո, Խրիմյան Հայրիկ և ուր.], թարգման., կրոն. գրքեր, դասագրքեր ևն (ավելի քան 200 անուն), ինչպես նաև «Կառափնատ», «Պարտիզակ», «Կավոջ», «Մարմնամարզ», «Փարոս», «Ուստան», «Տաճար», «Բահնյումա», «Բժիշկ» և այլ պարբ-ներ (գրաշարապետ՝ Վահրամ Գևորգյան):

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ Սևակի (ծ. 5.3.1957, Երևան), գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (2001): Սևակ ***Արզումանյանի*** դուստրը: Ավարտել է ԵՊՀ (1978): 1979–90-ին աշխատել է ԵՊՀ հրատարակչությունում, 1990–92-ին՝ Հայկ. հանրագիտարանի խմբագրությունում՝ գիտխմբագիր, 1993–2014-ին՝ ՀՀ ԲՈՀ-ի փոխնախագահ, 2014-ից՝ նախագահ, 2001-ից, միաժամանակ՝ ***«Կանթեղ»*** պարբ-ի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Արևելքը հայ արձակում» (1998), «Պարույր Սևակի պոեմները» (2001) աշխատությունները, «Իմ աշունը» (2002) վիպակը, «Բարև, փոքրիկ» (2006), «Ի հեճուկս տխրության» (ռուս., 2010), «Գրառումներ աբսուրդի երկրից» (2012) արձակ ստեղծագործությունները:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Մակիչ Վահանի [25.10.1919, գ. Գառնակեր (այժմ՝ գ. Բարում՝ Ադրբեջանի Շամխորի շրջանում)–20.7.1988, Երևան], պատմաբան, խմբագիր-հրատարակիչ: Պատմ. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1964): Ավարտել է ԵՊՀ (1942): Աշխատել է ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ հայկ. մասնաճյուղում, ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ում, դասավանդել է ԵՊՀ-ում, 1962–79-ին՝ ԵՌՕԼՄԻ ամբիոնի վարիչ, 1979–88-ին՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» («ՀՍՀ») գլխ. խմբագիր (5–12-րդ, +1 հատորներ):

Լույս են տեսել Ա-ի «Ասքանազ Մռավյան» (1955), «Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907–1917 թվականներին» (1959), «Արսեն Ամիրյան» (1961), «Հայաստան. 1914–1917» (1969), «Արհավիրքից վերածնունդ» (1973), «Ստեփան Շահումյան» (1978), «Սուրեն Սպանդարյան» (1982), «Նանսենը և Հայաստանը» (1977, 1986), «Դարավոր գոյամարտ» (1989) աշխատությունները:

ՀԽՍՀ Պետ. մրց. [1988, հետմահու՝ «ՀՍՀ»-ի (1974–87) հրատարակման համար]:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Սևակ Հարությունի [22.11.1929, գ. Մեյդիշեն (այժմ՝ գ. Խաչեն՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–13.3.2004, Երևան], գրականագետ-քննադատ: Լիլիթ ***Արզումանյանի*** հայրը: Բանասիր. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Ավարտել է ԵՊՀ (1951): 1978-ից դասավանդել է ՀՊՄՀ-ում:

Լույս են տեսել Ա.-ի «Վահան Թոթովենց» (1961), «Զապել Եսայան» (1965), «Սովետահայ վեպը» (գիրք 1–3, 1967–86), «Խորհրդահայ վեպը» (գիրք 4, 1990), «Վահրամ Հաճյան» (1997), «Արդի հայ վեպը» (գիրք 5, 2003) աշխատությունները:

ՀՀ «Սովսես Խորենացի» մեդալ (2003):

Երկ. Յաւսաքող աղբիւրներ, Ե., 1997: Բանասւեղծության ազգային հողը, Ե., 1998: Հսմդրի սսպեսրը /(Գևորգ) Ժորա Հարությունյանի, Ե., 1999: Սրեփան Զևսջյան, Ե., 2008:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԳՐԻՉ, XII դ.-ի 2-րդ կեսի գրիչ, բառարանագիր, հայ. առաջին ուղղագր. բառարանի հեղինակը: Սովորել է Կիլիկիայի Սկևռա վանքում, ծավալել գիտ. գործունեություն, գրել «Վերծանութիւնք բացերեւութապէս բազմազան բայից» աշխատությունը, որով հիմնադրել է գրչության արվ.-ի լեզվաքերական. տեսությունը: Ա. Գ. քննել է ուղղագրությանը, գրելու արվ.-ին, տառադարձությանը, կետադրությանը, տողատմանը, պարբերություններին և գրչությանը վերաբերող այլ հարցեր:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԳՐԻՉ, **Ռըստակես Գրիչ, որդի Խոցադեղի և Գրամիկի**, XIII–XIV դդ.-ի գրիչ: Գործել է Արտազի Թադեի վանքում: Պահպանվել է 1315-ին նրա ընդօրինակած Ներսես Շնորհալու «Մեկնութիւն Սաղմոսացը» (Մատենադարան, ձեռ. № 3778), նաև մի Ավետարան (1330, Նոր Ջուղայի մատենադարան, ձեռ. № 47):

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԳՐԻՉ, **որդի Զանփաշի և Նուկրարի**, XV դ.-ի գրիչ: *Հովհաննես Սանահնեցու* աշակերտը. գործել է Սանահինի վանքում (1463–97): Հայտնի է նրա ընդօրինակած 6 ձեռագիր, որոնցից 2-ը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 3333, 6383): Եղել է նաև գրչության ուսուցիչ ու ծաղկող:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, **Արիստակես Լաստիվերտցի** [մոտ 1002, գ. Լաստիվեր (Բարձր Հայքի Կարնո գավառ)–1080], պատմագիր: Տիրապետել է հուն.-ին, ուսումնասիրել է Հայաստանի և Բյուզանդիայի պատմությունը, խորացել աստվածաբանության և ճարտասանության մեջ:

Ա. Լ.-ու «**Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցւոյ...**» (1072–79) երկը միջնադարյան հայ գեղ. արձակի լավագույն գործերից է: Բաղկացած է չափածո նախերգանքից, 25 գլխից և հիշատակարանից: Բուն շարադրանքն ընդգրկում է 1000–45-ի հայ-բյուզ. հարաբերությունները, սելջուկյան արշավանքները՝ 1047–48-ից մինչև Անիի գրավումը (1064), և Մանազկերտի ճակատամարտը (1071): Թոնդրակյան շարժմանը նվիրված 22–23-րդ գլուխներն ունեն աղբյուրագիտ. բացառիկ արժեք: Երկը կարևորագույն սկզբնաղբյուր է նաև հարևան երկրների պատմության համար:

«Պատմութիւնը...» առաջին անգամ տպագրվել է 1844-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ «Մատենագրությունք նախնյաց» մատենաշարով, աշխարհաբար՝ 1893-ին Ալեքսանդրապոլում (Մինաս քհն. Տեր-Պետրոսյանցի փոխադրությամբ, Աբրահամ Մալխասյանի տպ.), վերահրատարակվել 1901-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1912-ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.): Երկի քնն. բնագիրը լույս է տեսել 1963-ին Երևանում, թարգմանվել է ֆրանս. (1863), ռուս., վրաց.: «Պատմության» ձեռագրերը պահվում են Երևանի, Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի մատենադարաններում և այլուր:

Ա. Լ.-ու երկերից են նաև «Մեկնութիւն ընթերցուածոցը»՝ Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոնի ընթերցվածքների մեկնությունը, և «Քարոզ նոր Կիւրակէի» ճառը:

Երկ. Պատմութիւն, Ե., 1971:

Գրկ. **Մանուկյան Գ.,** *Արիստակես Լաստիվերցի. Մատենագրության բանասիրական քննություն, Ե., 1977:*

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՄԵԲԱՍՏԱՑԻ, **Ռըստակես Սեբաստացի**, XIV–XV դդ.-ի գրիչ, կազմող: Սովորել է Երզնկայի Ավագ վանքի դպրոցում: Ա. Ս. իր «Խրատ ուսումնականաց անձանց» գործը զետեղել է իր ընդօրինակած Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկում»: Մատենադարանում



Սևակ Արզումանյանի *«Արդի հայ վեպը» (գիրք 5, 2003, ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



Արիստակես Լաստիվերցու *«Պատմութիւն...» գրքի տիտղոսաթերթը (1844, Վնտ.՝ վերևում, և կազմը (1971, Ե., «Հայաստան»)՝ ներքևում*





Ալբերտ Արիստակեսյան

պահվում են Ա. Ս–ու 1405–ին և 1408–ին ընդօրինակած 2 Խազգիրք–Մանրուսումները (ձեռ. № 753, 763) և 2 ժող.՝ Հովհաննես Որոտնեցու «Լուծմունք իմաստասիրական գրոցը» (1412, ձեռ. № 1701) ու Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկը» (1412, ձեռ. № 5118): Հայտնի են նաև նրա 1383–ին և 1409–ին ընդօրինակած Ավետարանն ու Ժամագիրքը:

ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ Ալբերտ Վրթանեսի [10.8.1928, գ. Չանախչի (այժմ՝ գ. Զանգակատուն՝ ՀՀ Արարատի մարզում)–22.6.1979, Երևան], գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1975): Ավարտել է ԵՊՀ (1950): 1953–62–ին եղել է «Գրական թերթի» բաժնի վարիչ, պատ. քարտուղար, 1962–65–ին՝ «Սովետական գրականություն» ամսագրի բաժնի վարիչ, 1965–70–ին՝ «Պատմա–բանասիրական հանդեսի» ավագ գիտաշխատող, 1970–79–ին՝ գլխ. խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Ա–ի «Բանաստեղծների և բանաստեղծության մասին» (1971), «Պարույր Սևակ» (1974, 1984), «Սիլվա Կապուտիկյան» (1983) աշխատությունները: Կազմել է «Պարույր Սևակ: Կենսամատենագիտություն»–ը (1983), «Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան»–ը (1986):

ԱՐԻՍՏՈՏԵԼ (մ. թ. ա. 384–322), հույն փիլիսոփա և գիտնական: Ա. ընդհանրացրել է Հին աշխարհի բնագիտ–յան նվաճումները, որպես հանճարեղ նորարար՝ նոր էջ է բացել գիտ–յան գրեթե բոլոր բնագավառներում:

Ա–ի երկերը լայնորեն տարածվել են նաև Հայաստանում: Հունաբան դպրոցի (V–VI դդ.) հետևորդները հայ. են թարգմանել նրա «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունները, ինչպես նաև Ա–ին վերագրված «Աշխարհի մասին» և «Առաքինության մասին» աշխատությունները:

Ա–ի երկերի հայ. թարգմանությունները հնագույններից են աշխարհում և աչքի են ընկնում մեծ ճշգրտությամբ: ***Դավիթ Անհաղթը*** (V–VI դդ.) հատուկ աշխատություններ է նվիրել Արիստոտելի «Անալիտիկա», «Կատեգորիաներ» և Պորփյուրիոսի «Ներածություն» երկերին, իսկ իր հիմն.՝ «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության մեջ ներկայացրել և յուրովի մեկնաբանել է Ա–ի իմացաբանությունը, գոյարան. հայացքներն ու բարոյագիտությունը: ***Անանիա Շիրակացին*** (VII դ.) «Տիեզերագիտութիւն» երկում լուսաբանել ու մեկնաբանել է Ա–ի բնափիլ. և տիեզերաբան. ուսմունքը:



«Գիրք պատճառաց»–ի (1750, Կ. Պոլիս, Գաբրիել Սեբաստացի Բարսեղյանի տպ.) տիտղոսաթերթը

Ա–ի փիլ–յանը քաջատեղյակ են եղել Գրիգոր Մագիստրոսը (XI դ.) և Հովհաննես Սարկավագը (XI–XII դդ.): XIII–XIV դդ–ում Ա–ի իմացաբանությունն ու տրամաբանությունը լայնորեն տարածվել են հայ փիլ. կենտրոններում՝ մեծապես ազդելով նոմինալիստներ Վահրամ Բաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, ինչպես նաև Սիմեոն Ջուղայեցու և Ստեփանոս Լեհացու հայացքների ձևավորման վրա: Վերջինս լատ–ից հայ. է թարգմանել Ա–ի «Մետաֆիզիկան» (Մատենադարան, ձեռ. № 5249): Ա–ի երկերի հին հայ. թարգմանություններն ու մեկնաբանությունները մեծ արժեք ունեն փիլ–յան պատմության և Ա–ի գիտ. ժառանգության ուսումնասիրման համար:



«Յաղագս մեկնութեան»–ի (1794 , Կ. Պոլիս, Հովհաննեսի և Պողոսի տպ.) տիտղոսաթերթը

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Ա–ի՝

«Գիրք պատճառաց» աշխատությունը. 1750–ին Կ. Պոլսում՝ Գաբրիել Սեբաստացի Բարսեղյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գրգուկ որ կոչի պատճառաց...» (78 էջ, 8^0, 11,1 x 6,7 սմ):

«Յաղագս մեկնութեան» երկը. 1794–ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տպակից է Սիմեոն Ջուղայեցու «Տրամաբանութիւն» երկին: Սկսվում է 277 էջից: Թարգմ. և մեկնաբանությունը՝ Դավթի (Անհաղթի): Տիտղթ–ին՝ «Սկիզբն եւ նախադրութիւն գրոցն, որ ասի ըստ յունացն՝ Պէրիհարմէնիաս, եւ հայերէն՝ Յաղագս մեկնութեան» (414 էջ, 12,5 x 7,8 սմ):

Երկ. Պոետիկա (թրգմ.՝ Ա. Կարապետյանի), Ե., 1955: Աթենական հասարակարգը, Ե., 2000:

Գրկ. Էլիաս Իմաստասէր, *Մեկնութիւն Սփորոգութեանցն Արիստոտէլի... (խմբ.՝ Հ. Մանանդյանի), ՄՊր, 1911:* Հովհան Որոտնեցի, *Վերլուծութիւն «Սփորոգութեանց» Արիստոտէլի, Ե., 1956:* Դավիթ Անհաղթ, *Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի, Ե., 1967: Անանուն մեկնութիւն «Սփորոգութեանցն» Արիստոտէլի, Ե., 1961:* Վահրամ Բաբունի, *Լուծմունք «Սփորոգութեանցն» Արիստոտէլի, Ե., 1967: Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը (հոդվածների ժող.), Ե., 1980:* Մինասյան Ա., *Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ, Ե., 2004:* Кечекьян С., *Учение Аристотеля о государстве и праве, М.–Л., 1947.*

ԱՐԽԻՎ (<լատ. archivum–ատյան, պաշտոնատուն), ինքնուրույն հիմնարկներ կամ առանձին բաժիններ հաստատություններում, ձեռնարկություններում, կազմակերպություններում, որտեղ պահվում են վավերագրեր, ինչպես նաև տարբեր հիմնարկների ու անհատների գործունեության վերաբերյալ ժամանակի ընթացքում ստեղծված փաստաթղթերի հավաքածուներ: Որպես աղբյուրների հավաքածու՝ Ա-ները ծառայում են ԳՀ նպատակների, օգտագործվում տնտեսության և պետության կառավարման գործն. կարիքների համար:

Ա-ների հետքեր հայտնաբերվել են Հին աշխարհի բոլոր պետություններում, Եգիպտոսում և Փոքր Ասիայում, մասնավորապես՝ օրենքներ, դատավարություններ, դիվանագիտ. տեքստեր պարունակող մեծ Ա-ներ՝ գրված կավե աղյուսների, փայտի, մետաղի, պապիրուսի, հետագայում՝ մագաղաթի վրա: Հին Հունաստանում մեծ համբավ ուներ Հին Աթենքի Ա.: Անտիկ աշխարհում և միջնադարում վավերագրերը պահվում էին հոգևոր հաստատություններում, պետ. գրասենյակներում (դիվաններում):

Հայաստանում հնագույն գրավոր հուշարձաններ (սեպագիր արձանագրություններ) հայտնաբերվել են Արին բերդում և Կարմիր բլուրում (մ. թ. ա. VIII–VI դդ.): Սմվսես Խորենացու վկայությամբ՝ Ա-ներ եղել են նաև վաղ ավատատիրության ժամանակաշրջանի հայկ. թագավորություններում: Կարևորագույն փաստաթղթերի արխիվային հավաքածուներ են եղել Կիլիկիայի հայկ. թագավորությունում: Միջնադարյան Հայաստանի շատ վանքեր պահպանում էին երկրի քաղ., տնտ. կյանքին վերաբերող բազմաթիվ պատմ. փաստաթղթեր: Հայտնի է, օր., որ Տաթևի վանքի Ա-ից մեծ չափով օգտվել է XIII դ-ի պատմիչ ***Ստեփանոս Օրբելյանը*** «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը գրելիս: Էջմիածնի Ա. հարուստ նյութ է տվել ***Սիմեոն Երևանցուն***՝ «Ջամբռ» պատմ. աշխատությունը շարադրելու համար: Սանահինի վանքի Ա-ում պահպանվել են արժեքավոր նյութեր, որոնք ամփոփված են վանքի մայր մատյանի՝ «Քոթուկ»-ի մեջ:

Հայաստանի ազգ. արխիվը (ՀԱԱ) ստեղծվել է ՀԽՍՀ Կենտգործկոմի 1923-ի սեպտ. 26-ի որոշմամբ. բացվել է 1924-ի հոկտ. 1-ին: Սկզբն. շրջանում այստեղ կենտրոնացվել են Ռուս. կայսրության օրոք Հայաստանի տարածքում գործող հիմնարկների և կազմակերպությունների Ա-ները, ինչպես նաև Հայ եկեղեցու՝ Էջմիածնում պահվող արխիվային հավաքածուները:

1935-ի սեպտ-ին Պետ. կենտր. արխիվի հիմքի վրա ստեղծվել են Հոկտեմբերյան հեղափոխության և Պատմության կենտր. պետ. արխիվները, 1936-ի ապրիլի 1-ին՝ ՀԿԿ ԿԿ արխիվը:

1943-ին հիմնադրվել է Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի պետ. կենտր. արխիվը: Հանրապետությունում ստեղծվել են նաև Հայ պարբ. մամուլի (հետագայում՝ Արվ-ի և գրակ-յան), Գիտատեխ. փաստաթղթերի կենտր. պետ., Երևանի քաղաքային Ա-ները:

ԽՍՀՄ փլուզումից հետո 1991-ին ՀԿԿ ԿԿ արխիվը վերանվանվել է ՀՀ հաս-քաղ. կազմակերպությունների փաստաթղթերի կենտր. պետ. արխիվի:

Նորանկախ ՀՀ-ում Կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչությունը վերակազմավորվել է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության աշխատակազմի արխիվային

Հայաստանի ազգային արխիվի հրատարակություններից



«Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918–1920 թթ.» (2010, Ե., «Հայկառլի») գրքի կազմը



«Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ» (հ. 1, 2012, Ե., «Զանգակ») գրքի կազմը

Հայաստանի ազգային արխիվի հրատարակություններից



Մ. Թումանյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտության պատմություն. 1918–1920 թթ.» (ռուս., 2012, Ե., «Հայկառլի») գրքի կազմը



«Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945–1946 թթ-ի դիվանագիտական փաստաթղթերում» (ռուս., 2010, Ե., «Տիգրան Մեծ») գրքի կազմը

գործի գործակալության, 2003-ի մարտին՝ Հայաստանի ազգ. արխիվի, մարզերի պետ. արխիվները՝ Ազգ. արխիվի մասնաճյուղերի, իսկ դրանց նախկին մասնաճյուղերը՝ տարածքային ներկայացուցչությունների:

1999-ից ՀՀ պետ. արխիվային ծառայությունն անդամակցում է Արխիվների միջազգ. խորհրդին, 2000-ի սեպտ-ից՝ «Եվրասիկա» տարածքային բաժանմունքին:

ՀԱԱ-ում պահվող ամենահին վավերագիրը Պարսից շահ Աբբասի 1607-ի հրովարտակն է՝ ուղղված Ղարաբաղի մելիքներին:

Կարևոր են Հայ եկեղեցու բոլոր թեմերի պատմության վերաբերյալ մեծաքանակ վավերագրերը (XVIII դ-ից մինչև մեր օրերը):

Փաստաթղթերի մի ստվար մասը վերաբերում է Հայկ. հարցին և Հայոց ցեղասպանությանը. դրանք վավերագրեր, վկայություններ ու լուսանկարներ են թուրքերի բարբարոսությունների, եվրոպ. պետությունների դիվանագիտ. խաղերի ու հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների մասին: Ուշագրավ և արժեքավոր են հայ ազգ-ա-զատագր. շարժումների, կամավոր. ջոկատների, ֆիդայիների, Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերին վերաբերող փաստաթղթերը:

Պատմ. և ճանաչող. տեսակետից առանձնահատուկ կարևորություն ունեն Հայաստանի առաջին հանրապետության պատմության վերաբերյալ վավերագրերը, որոնք ներառում են նաև այդ ժամանակաշրջանի պետ., քաղ., կուս. և ռազմ. գործիչների (Ս. Վրացյան, Ա. Խատիսյան, Դ. Կանայան, Ա. Մանուկյան, Խ. Կարճիկյան, Հ. Օհանջանյան, Թ. Նազարբեկյան և ուր.) ձեռագրեր ու նրանց մասին պատմող նյութեր: Արժեքավոր են նաև ՀՅԴ-ի, ՀԿԿ-ի, ՌԱԿ-ի (ինչական, արմենական), ՀԺԿ-ի գործունեությունների մասին վավերագրերը:

ՀԱԱ-ում պահվում են Խորհրդ. Հայաստանի հաս-քաղ. կյանքի, գիտ-յան, մշակույթի, ժողտնտեսության պատմության կարևոր իրադարձությունների վերաբերյալ մեծածավալ փաստաթղթեր: Այստեղ են կենտրոնացված նաև հայ բազմաթիվ նշանավոր հոգևոր, պետ., քաղ., ռազմ., գիտ-յան ու մշակույթի գործիչների (Թ. Նազարբեկյան, Ս. Շահումյան, Ա. Մյասնիկյան, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Դարբինյան, Ա. Չոպանյան, Գ. Նորատունկյան, Գ. Աղանյան, Անդրանիկ, Գարեգին Նժդեհ, Գևորգ Զ Չորեքչյան, Հ. Բաղրամյան, Հ. Իսակով, Ա. Քոչինյան և ուր.) անձն. Ա-ները, հայ գաղթավայրերի պատմությունը լուսաբանող բազմաթիվ նյութեր:

ՀԱԱ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության ԳՀ հարուստ կենտրոն է: Արխիվային նյութերի հիման վրա հանրապետության և Սփյուռքի բազմաթիվ գիտնականներ կատարել են հետազոտ. աշխատանքներ, գրել ատենախոսություններ, կազմել փաստաթղթերի ժող-ներ ու հավաքածուներ:

ՀԱԱ-ի տնօրեններ են եղել Խաչիկ Սամվելյանը, Լևոն Յաղուբյանը, Սուրեն Մարկոսյանը, Կարապետ Ստեփանյանը, Վարդգես Կզարթմյանը, Աշոտ ***Հարությունյանը***, Պավել Սաֆյանը, Հարություն ***Ֆելեքյանը***, Ամատունի ***Վիրաբյանը*** (2001-ից):

Գրկ. Քալաշյան Վ., Հարությունյանց Գ., Գրիգորյան Հ., Արխիվային շինարարությունը Հայաստանում, Ե., 1960:

«ԱՐԾԻՒ» («Ardziv»), ազգ., քաղ., երիտասարդ. եռամսյա թերթ: ՀՅԴ Կանադայի երիտասարդ. միության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1991–92-ին Մոնրեալում: Խմբագրակազմ՝ Շողեր Մարգարյան, Լիլիթ Սարաֆյան, Ծովինար Տեր-Իսաչատուրյան: Վերահրատարակվում է 2012-ից՝ հայ., ֆրանս., անգլ.: Անդրադառնում է Սփյուռքի, մասնավորապես՝ կանադահայ երիտասարդության խնդիրներին, Հայ դատին, հայոց պատմությանը, հայ մշակույթին, Հայրենիք-Սփյուռք կապերին: Տպագրում է նյութեր ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող հաս., քաղ., սոցիալ-տնտ., մշակութ. կարևոր իրադարձությունների մասին:

Տարածվում է Տորոնտոյի, Մոնրեալի, Լավալի, Քեմբրիջի, Սենտ Գաթյինզի, Համիլտոնի հայկ. կենտրոններում:

«ԱՐԾԻՒ», գրական, կրոն., հաս. երկշաբաթաթերթ, 1997–ից՝ ամսաթերթ: Լույս է տեսնում 1992–ից Բեյրութում: Արտոնատեր և խմբագիր՝ Վարուժան եպս. Հերկելյան: Տպագրում է հայ գրողների գործերից, լուսաբանում Լիբանանում, ՀՀ-ում, ԼՂՀ-ում և սփյուռքահայ համայնքներում տեղի ունեցող մշակութ. իրադարձությունները: Ունեցել է արաբ. բաժին, որտեղ ներկայացվել են հայոց պատմության կարևոր դրվագները, հայ մշակութ. կյանքը: 1997–98-ին լույս է ընծայել «Արցախյան աշխարհ» հավելվածը՝ նվիրված Ղարաբաղյան ազատագր. պատերազմին, Արցախի հաս-քաղ. և մշակութ. անցուդարձին:



«Արծիւ», 1992-ից, Բեյրութ

ԱՐԾՐՈՒՆԻ Անդրեաս (Անդրե) Երեմիայի [15(27).1.1847, Մոսկվա–10(22).9.1898, Հոհենհոֆ (Գերմանիա)], երկրաբան, հրատարակիչ: Քիմ. գիտ. դ-ր (1871): Ս. Պետերբուրգի (1895), Տուրինի (Իտալիա) թագավոր. և Բավարիայի (Գերմանիա) ԳԱ-ների թղթ. անդամ: Երեմիա ***Արծրունու*** որդին, Գրիգոր ***Արծրունու*** եղբայրը: Սովորել է Ս. Պետերբուրգի, Դորպատի, ապա՝ Հայդելբերգի համալսարաններում: ***«Մշակի»*** հրատարակման գործում աջակցել է եղբորը՝ Գ. Արծրունուն, որի մահից հետո 1895–98-ին եղել է թերթի անվանական հրատարակիչը: Ուսումնասիրել է Հայաստանի երկրբ. կառուցվածքն ու օգտակար հանածոները: 1894-ին բարձրացել է Փոքր Մասիսի գագաթը, հերքել Հայաստանի հրաբուխների ուղղաձիգ տեղադիրքի մասին տարածված վարկածը:



Անդրեաս Արծրունի

Ա-ու անունով է կոչվել արծրունիտ միներալը: Ախենի պոլիտեխնիկումի շենքի առջև կանգնեցվել է նրա կիսանդրին:

Գրկ. Տիգրանյան Ս., Անդրեաս Երեմի Արծրունի, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ. Ֆիզմաթ, բնական և տեխն. գիտություններ», 1948, № 1(5), էջ 429–444:

ԱՐԾՐՈՒՆԻ Գևորգ Երեմիայի (1771, Վան–6.8.1830, Թիֆլիս), հաս. գործիչ: Երեմիա ***Արծրունու*** հայրը: 1813-ին հաստատվել է Թիֆլիսում և ընդունել ռուս. հպատակություն: 1820-ին կայսեր. հրովարտակով Ա-ուն շնորհվել է ռուս. ժառանգ. ազնվականի տիտղոս: Ծավալել է առևտր., շին., հաս. բուռն գործունեություն, հիմնել իջևանատներ, միջոցներ տրամադրել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824) կառուցմանը նև: 1819-ին Ամստերդամում գնել է հայկ. տպարան և նվիրել Ներսիսյան դպրոցին: Ներսես արք. Աշտարակեցու՝ Քիշնև աքսորվելուց հետո Ա. դարձել է դպրոցի փաստացի տնօրենը: Հեղինակ է «Դարաստան խրատուց... ի վայելս մանկանց Հայաստանեայց» (1830, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) ուսումնասիրության:

Գրկ. Լեո, Գրիգոր Արծրունի, Երկերի ժող., հ. 6, Ե., 1987:

ԱՐԾՐՈՒՆԻ Գրիգոր Երեմիայի (27.2.1845, Մոսկվա–17.12.1892, Թիֆլիս), հրապարակախոս, գրական-հաս. գործիչ, հրատարակիչ-խմբագիր: Երեմիա ***Արծրունու*** որդին, Անդրեաս ***Արծրունու*** եղբայրը: Ավարտել է Թիֆլիսի ռուս. գիմնազիան (1863), Հայդելբերգի համալսարանը (1869)՝ ստանալով քաղաքատնտեսության և փիլ-յան դ-րի գիտ. աստիճան: 1869–70-ին հայ. է սովորել Վիեննայի, ապա՝ Վենետիկի Մխիթարյանների հաստատություններում: 1865–70-ին թղթակցել է «Մեղու Հայաստանի», «Հայկական աշխարհ» պարբերներին: 1872-ին հիմնադրել և հրատարակել է ***«Մշակ»*** օրաթերթը և եղել նրա ցկյանս խմբագիրն ու տնօրենը:



Գրիգոր Արծրունի

Ա. հայ ազատականության հայտնի գաղափարախոսներից է: Հաս. կյանքի, ժողովրդի մտավոր և բարոյական զարգացման հիմքը համարել է նյութ. արտադրությունը: Ազգ. առաջադիմության տեսանկյունից վտանգավոր է համարել օտարերկրյա կապիտալի մուտքը Այսրկովկաս: Մերժել է հասարակությունը հեղափոխության միջոցով վերափոխելու գաղափարը: Մասնակցել է թուրք. իշխանության

դեմ կազմակերպվող հայ ազատագր. պայքարի խմբակների և կազմակերպությունների աշխատանքներին, նյութապես ու բարոյապես աջակցել նրանց: Հայկ. հարցի լուծումը կապել է Ռուսաստանի ռազմ. օգնության և թուրք. բռնակալության դեմ համատեղ պայքարի հետ:

Լույս են տեսել Ա–ու «Էվելինա» (1891, Թ., «Արոր» տպ.) վեպը, «Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը» (1894, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.) աշխատությունները, «Լրագրության մասին» (կազմ. և խմբ.՝ Գ. Անանյանի, 2003), «Գրականություն, արվեստ, գեղագիտություն» (2009) հոդվածների ժող–ները, «Նամակներ Փարիզից» (2009) նամականին, «Հրապարակախոսական հատընտիրը» (աշխատասիր.՝ Լ. Գևորգյանի, 2010): «Աշակի» խմբագրության նախաձեռնությամբ 1904–ին հրատարակվել է Ա–ու «Աշխատութիւններ. 1865–71» ժող–ը՝ «Նվեր «Աշակի» բաժանորդներին խորագրով» (հ. 1, Թ., Վրաց հրատարակչ. ընկ. տպ.): Գրել է նաև հուշագրություններ, պատմվածքներ, ակնարկներ, ֆելիետոններ:

Հանդես է եկել նաև Նիորե, Ասիացի, Է. Շատիրավացի ծածկանուններով:

Երկ. Восточный вопрос, Тифлис, 1876.

Գրկ. **Լևո**, *Գրիգոր Արծրունի, Երկերի ժող., հ. 6, Ե., 1987:* **Հակոբյան Գ.**, *Գրիգոր Արծրունու էսթետիկական հայացքները, տես Հայ էսթետիկական մտքի պատմությունից (հետազոտությունների ժող.), գիրք 1, Ե., 1974:* **Թովմասյան Ն., Թամազյան Հ., Պապիկյան Գ.**, *Հայ փնտրեապագիտական մտքի պատմությունից, Ե., 1988:* **Գևորգյան Լ.**, *Գրիգոր Արծրունին և նրա «Աշակը», Ե., 1996:*




Գրիգոր Արծրունու *«Նամակներ Փարիզից» (2009, Ե., «ՄՈՒ») գրքի կազմը*



Վահան Արծրունի

ԱՐԾՐՈՒՆԻ Երեմիա Գևորգի (1804, Վան–1877, Թիֆլիս), պետ., հաս. գործիչ, գեն–մայոր (1861): Գևորգ ***Արծրունու*** որդին, Գրիգոր և Անդրեաս ***Արծրունիների*** հայրը: Սովորել է Թիֆլիսի ազնվական. դպրոցում, ապա՝ Ս. Պետերբուրգի ռազմ. ուսումնարանում: Որպես սպա մասնակցել է 1826–28–ի ռուս–պարսկ. և 1828–29–ի ռուս–թուրք. պատերազմներին: 1830–ականների վերջին գնդապետ Ա. նշանակվել է Կովկասյան բանակի գլխ. մատակարար: 1867–ին եղել է Թիֆլիսի առաջին քաղաքագլուխը: Մասնակցել է թիֆլիսահայերի հաս., մշակութ. կյանքին, զբաղվել կրթ. հարցերով: Ա. հրատարակել է «Խնդիր երկաթէ ճանապարհի վերայ դէպ ի Հնդկաստան» (1872, Թ., Կովկասի գլխ. կառավարչության տպ.) գրքույկը (հայ. և ռուս.), որտեղ արծարծել է Այսրկովկասից (Պարսկաստանի տարածքով) Հնդկաստան տանող երկաթգծի կառուցման գաղափարը:

Գրկ. **Լևո**, *Գրիգոր Արծրունի, Երկերի ժող., հ. 6, Ե., 1987:*



Վ. Արծրունու *«Ռուս–լատին–հայ բժշկագիտական բառարան»–ի (1924, Ե., Հայպետհրատ) տիտղոսաթերթը*

ԱՐԾՐՈՒՆԻ Սենեքերիմ Մարգարի [1847, Նոր Բայազետ (այժմ՝ Ք. Գավառ)–1918, Թիֆլիս], դրամատուրգ, թարգմանիչ: Վահան ***Արծրունու*** եղբայրը: Աշխատակցել է «Մեղու Հայաստանի» թերթին, որտեղ տպագրվել է նրա «Սամուել Մուրատեանի կտակի խնդիրը» դասախոսությունը (հրտ.՝ 1897, Թ., Համբարձում Էնֆիաճյան և ընկ. տպ.): Գրել է «Տփղիսեցի Ասպետեաններ» (1882) պիեսը: Թարգմանել է Վ. Շեքսպիրի «Լիր արքա», «Համլետ» (1889, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.) ողբերգությունները:

Գրկ. **Թերզիբաշյան Վ.**, *Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 2, Ե., 1964, էջ 448–453:*

ԱՐԾՐՈՒՆԻ Վահան Մարգարի [10(23).6.1857, Նոր Բայազետ (այժմ՝ Ք. Գավառ)–29.7.1947, Երևան], անատոմ, խմբագիր: Բժշկ. գիտ. դ–ր (1936), պրոֆ. (1926): Գիտ. վաստ. գործիչ (1930): Սենեքերիմ ***Արծրունու*** եղբայրը: Ավարտել է Փարիզի համալսարանը (1885): Ա–ու նախաձեռնությամբ հայկ. դպրոցներում սկսել են դասավանդել «Հիգիենա» առարկան: Ուսումնասիրել է ֆիզ. դաստիարակության գիտ. հիմունքները («Դպրոցական առողջապահութիւն», 1895), հրատարակել բժշկ. հանրամատչելի գրքույկներ: 1903–05–ին՝ ***«Առողջապահիկ թերթ»***–ի խմբագիր: ԵՊՀ բժշկ. ֆակ–ում հիմնադրել է (1922) մարդու նորմալ անատոմիայի ամբիոնը և ղեկավարել ցկյանս:

Հրատարակել է նորմալ անատոմիայի հայ. 1–ին դասագիրքը («Մարդակազմություն», 1923), մշակել և տպագրել է «Ռուս–լատին–հայ բժշկագիտական բառարանը» (1924, 1956)՝ սկզբնավորելով բժշկ.

հայ. տերմինաբանությունը: ԵՔԻ-ում հիմնադրել է անատոմիայի թանգարան (1947-ից՝ Ա-ու անվ.):

Թիֆլիսում լույս են տեսել նաև Ա-ու «Հիպնոտիզմ» (մաս 1–2, 1892, Մարկիանոս Ռոտինյանի տպ., 1895, նույն տպ.), «Խնամատարութիւն առողջ երեխաների» (1899, Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Սիֆիլիս» (1900, Մնացական Մարտիրոսյանի տպ.), «Աղջիկ» (հ. 1, 1903, Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.), «Մանկիկ» (1903, «Հերմես» տպ.) և այլ աշխատություններ:

ԽՍՀՄ «Կարմիր դրոշ» շքանշան (1943):

Գրկ. Վարդանյան Վ., Վահան Արծրունի: Կյանքն ու գործը, Ե., 1987:

«ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ», կրոն., քաղ., մշակութ. ամսաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1855–56 և 1872–74-ին Կ. Պոլսում, 1858–64-ին՝ Վարագավանքում (Վան): Հիմնադիր-խմբագիր՝ Մկրտիչ Խրիմյան *(Մկրտիչ Ա. Վանեցի)*, խմբագիրներ՝ Գարեգին *Սրվանձտյան*, Մանուել Անանյան: «Ա. Վ.» Արմ. Հայաստանում տպագրված հայ. առաջին պարբ-ն է, ունեցել է ազգ-պահպանող. ուղղվածություն: Հանդես է եկել հանուն լուսավորության ու կրթության տարածման, արտահայտել է գավառի հայության բողոքը թուրք. բռնությունների դեմ, քարոզել է ազգ-ազատագր. պայքարի գաղափարներ, պահանջել է կիրառել Ազգ. սահմանադրությունը (1860): Աստվածաբան. հոդվածներում քննարկվել են քրիստ. կրոնի դոգմաները, գնահատվել է Հայ եկեղեցու դերն ազգ. կյանքում, արժևորվել եկեղեցու հիմնախնդիրների ու սրբերի գործունեությունը: Հանդեսը մեծ տեղ է հատկացրել հայկ. եկեղեցիների ու վանքերի տեղագրությանն ու նկարագրությանը:

Հոդվածների մեծ մասի հեղինակը Մ. Խրիմյանն էր: Թերթին աշխատակցել են Րաֆֆին, Պ. Մադաթյանը, Ա. Թոխմախյանը, Տևկանց եղբայրները, Մ. Աղաբեկյանը և ուր.:

Գրկ. «Արծուի Վասպուրական» ամսագրի մատենագիտություն (1855–1856, 1858–1864), Ե., 2006:

«ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ», միամսյա, ապա՝ երկամսյա հանդես: ԱՄՆ-ի Վասպուրական միության հրատ.: Լույս է տեսել 1940–45-ին Բոստոնում, 1951–67-ին՝ Ֆրեզնոյում (1–9-րդ համարները՝ «Վասպուրական» անվանումով): Խմբագիրներ՝ Երվանդ Տեր-Մկրտիչյան, Արշակ Հյուսյան, Մարկոս Տեր-Մարկոսյան, Արշավիր Ավետյան: Տպագրել է հոդվածներ Վասպուրականի պատմության, աշխարհագրության, կենցաղի, կրթ. կյանքի վերաբերյալ: «Գրական մշակներ» բաժնում ներկայացրել է Վասպուրականի մշակութ., գրական գործիչներին, առանձին ստեղծագործություններ տպագրել Վանի բարբառով: Աշխատակցել են Գարեգին Հովսեփյանը, Տիգրան Չիթունին, Կարապետ Սիտալը և ուր.:

«ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՕՆՑԻ», երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1863–65-ին Մշո Սբ Կարապետ վանքում: Խմբագիր՝ Գարեգին *Սրվանձտյան,* հրատարակիչ՝ Մկրտիչ Խրիմյան *(Մկրտիչ Ա. Վանեցի):* Արծարծել է գավառահայությանը հուզող կենս. խնդիրներ, ջանացել, որ հայ գյուղացիներին վերադարձվեն նրանցից խլված հողերը, փորձել է դիմագրավել գյուղն ամայացնող պանդխտությանը, պահանջել է Ազգ. սահմանադրությունը (1860) կիրառել գավառում: Նպաստել է Արմ. Հայաստանում մշակութ. միությունների և դպրոցների հիմնադրմանը, արևմտահայերին լուսավորելու աշխատանքներին: Թերթին աշխատակցել են Գլակա ժառանգավորաց վարժարանի և Կարինի ժառանգավորաց ուսումնարանի բազմաթիվ սաներ:


«ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ», թվաբանության դասագիրք վաճառականների համար: Առաջաբանը և վերջաբանը գրաբար է, տեքստը՝ աշխարհաբար: «Ա. հ.» աշխարհաբար առաջին հրատ-ն է և մաթ-ի հայ. առաջին տպագիր գիրքը: Ըստ Գարեգին Պետրոսյանի՝ «Ա. հ.» ազատ թարգմանություն է գերմանացի մաթեմատիկոս




«Արծուի Վասպուրական», *1855–74, Կ. Պոլիս, Վարագավանք*



«Արծուի Վասպուրական», *1940–67, Բոստոն, Ֆրեզնո (№ 3, 1959)*



«Արիեստ համարողութեան» *(1675, Սարսել, տպագրիչ՝ Սողոմոն Լևոնյան) գրքի տիտղոսաթերթը*



«Արհեստ փրկութեան» *(1760, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Արձագանգ», *1986-ից, Ժնև*



«Արձագանգ Փարիզի», *1916–56, Փարիզ (№ 22, 1923)*

Քրիստափոր Կլավիուսի «Գործնական թվաբանության համառոտ շարադրանք» լատ. ձեռնարկից: Գրքում մաթ. սահմանումներ և ապացույցներ չկան, տրված են միայն գործն. հաշվումներ կատարելու եղանակներ, գործածված են տարբեր երկրների (Իտալիա, Ֆրանսիա, Իրան) չափ ու կշռի միավորներ: Թարգմանիչը հայտնի չէ. կան տարբեր կարծիքներ՝ Ոսկան Երևանցի, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի, Մատթեոս Վանանդեցի:

«Ա. հ.» նախապես ծրագրված է եղել հրատարակել *«Գիրք վայելուչ եւ հարկաւոր հանուրց»*-ի մեջ՝ որպես նրա մի մաս:

Տպագրվել է 1675-ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Սողոմոն *Լևոնյան:* Տիտղթ-ին՝ «Արհեստ համարողութեան: Ամբողջ եւ կատարեալ…» (151 էջ, 8^0, 8,7 x 5 սմ):

Գրկ. Պետրոսյան Գ., *Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959:*

«ԱՐՀԵՍՏ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ» (լրիվ խորագիրը՝ «Յաղագս արհեստի ճարտասանութեան»), հոետոր. անտիպ դասագիրք, որը գրվել է XVII դ-ի 1-ին կեսից ոչ ուշ (Մատենադարան, ձեռ. № 8333): Հեղինակը հայտնի չէ: Բաղկացած է 6 գրքից: XVII դ-ի կեսերին *Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին* այս երկից է համառոտել, վերամշակել ու վերաշարադրել իր «Համառօտութիւն ճարտասանական արհեստի» (հրտ.՝ 1674) գիրքը: XVIII դ-ի սկզբներին *Խաչատուր Էրզրումցին* իր «Ճարտասանութիւն» (հրտ.՝ 1713) երկը գրելիս օգտագործել է այս նույն դասագիրքը՝ գրեթե ամբողջությամբ հետևելով նաև նրա տերմինաբանությանը:

«ԱՐՀԵՍՏ ՓՐԿՈՒԹԵԱՆ», քրիստ. բարեպաշտության գիրք: Իտալ. թարգմ.՝ Մխիթար Սեբաստացու: Տպագրվել է 1760-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Արհեստ փրկութեան, կամ հրահանգ քրիստոնէական վարուց…»: Տպակից է Հովհաննես Պոնայի «Կերակուր քահանայից» գրքին (101 էջ, 8^0, 8,5 x 5,5 սմ):

«ԱՐՁԱԳԱՆԳ», տեղեկատվ. պարբերաթերթ: ՀԲԸՄ Կիպրոսի մասնաճյուղերի հրատ.: Տպագրվել է 1958–59-ին Բեյրութում: Խմբագիր՝ Կարապետ Փափազյան: Լուսաբանել է ՀԲԸՄ Կիպրոսի մասնաճյուղերի (Նիկոզիա, Լառնակա, Լիմասոլ, Ֆամագուստա) գործունեությունը, տեղի հայ հաս. և կրթամշակութ. կյանքը: Տպագրել է Հ. Գասպարյանի, Վ. Մալեզյանի հոդվածները ՀԲԸՄ գործունեության և նշանակության մասին: Անդրադարձել է սփյուռքահայ իրականությանը:

«ԱՐՁԱԳԱՆԳ», պարբերաթերթ: Ժնևի Հայ տիկնանց միության հրատ.: Լույս է տեսնում 1986-ից՝ հայ., ֆրանս.: Խմբագիրներ՝ Անի Մեսրոպյան, Մարալ-Սիմսար Թոնպազյան (1988-ից): Լուսաբանում է Շվեյցարիայի հայկ. համայնքի կյանքը, անդրադառնում է ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող հաս-քաղ., տնտ., մշակութ. կարևոր իրադարձություններին, տեղ. նորություններին, միջազգ. անցուդարձին:

«ԱՐՁԱԳԱՆԳ», օրաթերթ: ՀՅԴ «Ազատամարտ» երիտասարդ. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1995-ից Նիկոզիայում: Խմբագիր՝ Հրայր Գևորգյան: Լուսաբանում է համայնքի առօրյան, ՀՀ-ում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները, վերլուծում պատանեկան ու երիտասարդ. խնդիրներ, ներկայացնում մշակութ., մարզ. լուրեր ևն: Տպագրում է կիպրահայ գրողների և այլ հեղինակների ստեղծագործություններ:

«ԱՐՁԱԳԱՆԳ ՓԱՐԻԶԻ», ազգ., քաղ. երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Հնչակյան կուս-յան պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1916–25 և 1955–56-ին Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Հակոբ Թյուրապյան (Բ. Վարազդատ): Տպագրել է նյութեր ֆրանսահայ համայնքի կյանքի, միջազգ. քաղ. իրադարձությունների, հայ ազգ-քաղ. կուսների և հաս. կազմակերպությունների գործունեության վերաբերյալ:

Շարունակաբար անդրադարձել է Հայկ. հարցին, Խորհրդ. Հայաստանի առօրյային, Սփյուռքին: Լույս է ընծայել նաև գեղ. գործեր: Ունեցել է բացառիկ համարներ:

«ԱՐՁԱԳԱՆՔ», գրական-քաղ. շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա: Լույս է տեսել 1882–98-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Աբգար *Հովհաննիսյան:* Նպաստել է հայ գրակ-յան զարգացմանը, տպագրել է Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Շիրվանզադեի, Մուրացանի, Վրթ. Փափազյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Պարոնյանի, Գ. Զոհրապի, Պ. Դուրյանի և հայ այլ անվանի հեղինակների ստեղծագործություններ, թարգմանություններ՝ Մ. Լերմոնտովի, Ի. Տուրգենևի, Շ. Պետեֆիի, Ֆ. Շիլլերի, Ա. Ֆրանսի, Ա. Դոդեի, Է. Զոլայի, Գի դը Մոպասանի, Հ. Իբսենի և համաշխ. ճանաչում ունեցող այլ գրողների ստեղծագործություններից, գրաքննադատ. նյութեր, նկարիչների (Ռաֆայել, Տիցիան և ուր.) գործերի վերատպություններ, տեղագր. և ինագիտ. լուսանկարներ՝ մասնագիտ. մեկնաբանություններով: Հայ ժողովրդի գոյատևման հիմն. երաշխիքը համարել է եկեղեցին, մայրենի լեզուն, գրակ-ը, թատրոնը, դպրոցն ու լուսավորությունը: Անդրադարձել է արևմտահայության կյանքին, քաղ., տնտ. ու բարոյական վիճակին, սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերին, հայկ. նահանգներում անցկացվելիք բարենորոգումների ծրագրի ձախողման համար մեղադրել է նաև եվրոպացի դիվանագետներին:



«Արձագանք», *1882-98, Թիֆլիս*

«Ա.»-ի հրատ-ը դադարեցվել է Կովկասի փոխարքա Գ. Գոլիցինի հրամանով:


ԱՐՋԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ (Արջևան, Արղևան, Արզևան), V դ-ի առաջին հայ թարգմանիչներից: Աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին: Ա. Ա-ու անվամբ հայտնի է «Հարցմունք Արձանայ եւ պատասխանիք Եզնկայ» գործը, որի ձեռագրերը պահվում են Մատենադարանում և այլ ձեռագրատներում:

ԱՐՂՈՒԹՅԱՆ Հովսեփ Շիշորեկի [23.5.1743, գ. Սանահին (այժմ՝ Ալավերդի ք-ի շրջագծում)–9.3.1801, Թիֆլիս], արքեպիսկոպոս, հայ ազգ-ազատագր. շարժման գործիչ, տպագրիչ: Արղության-Երկայնաբազուկների իշխան. տոհմից: Սովորել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, աշակերտել է Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսին: 1769-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, ապա ստացել արքության տիտղոս: 1773-ին նշանակվել է Ռուսահայոց թեմի, 1780-ից, միաժամանակ՝ ղրիմահայության հոգևոր առաջնորդ: 1778-ին Ա-ի առաջնորդությամբ ղրիմահայերը Ռուսաստանում ձեռնամուխ են եղել Նոր Նախիջևան քաղաքի, 1792-ին՝ Սուդովայից և Բեսարաբիայից գաղթած հայերը Ռումինիայում՝ Գրիգորիուպոլսի (Գրիգոր Ա Լուսավորչի անունով) հիմնադրմանը:



Հովսեփ Արղության

Ա. հայոց պետականությունը Ռուսաստանի աջակցությամբ վերականգնելու նպատակով 1783-ին կազմել է նախագիծ և ներկայացրել ռուս. արքունիքին: Եղել է Եկատերինա II թագուհու մտերիմներից, 1789-ին Պավել I ցարը Ա-ին է հանձնել հայերի պաշտպանության մասին հրովարտակը: Աջակցել է Ռուսաստանում հայկ. առաջին՝ Խալդարյան (1781–88, Ս. Պետերբուրգ), այնուհետև Նոր Նախիջևանում (1789–95) և Աստրախանում (1796–1800) հայկ. տպարանների հիմնադրմանն ու հրատարակչ. գործի կազմակերպմանը: Նրա ջանքերով տպագրվել է ավելի քան 40 անուն գիրք: Ա. 1801-ին ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն չի օծվել. Էջմիածին մեկնելիս Թիֆլիսում հիվանդացել է ու վախճանվել:



Հ. Արղության *«Դուռն ողորմութեան» (1792, Նոր Նախիջևան) գրքի փիփղոսաթերթը*

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Ա-ի՝

«**Օրինակ հանդիսաւոր ծանուցման եւ ողբոյ...**» Հռոմի Հովսեփ Մեծ Կայսեր մահվան կապակցությամբ արտասանած մահախոսականը. 1792-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպա-

Արճեշի գրչության կենտրոն



«Մարկոս Ավետարանիչ», մանրանկար, 1303-ի Ավետարան (ծաղկող՝ Սրեփհանոս, Մատենադարան, ձեռ. № 4052)



«Հոգեգալուստ», մանրանկար, 1305-ի Ավետարան (ծաղկող՝ Սիմեոն Արճիշեցի, Մատենադարան, ձեռ. № 2744)

րանում (40 էջ, 4⁰, 14,2 x 12 սմ): Վերահրատարակվել է նույն տեղում (48 էջ, 18 x 12):

«Դուռն ողորմութեան» ատենաբանությունը (Գրիգորիոպոլիս քաղաքի հիմնադրման մասին). 1792-ին Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանքի տպարանում (16 էջ, 15 x 9,6 սմ), 1796-ին Աստրախանում՝ Ա-ի տպարանում, տիտղթ-ին՝ «Կոնդակ օրհնութեան. եւ նամակ բազմազան...» (34 էջ, 17,5 x 11,5 սմ):

«Քարոզ»-ը. 1795-ին՝ նույն տպարանում (27 էջ, 4⁰, 16,2 x 10,5 սմ):

«Խօսք ասացեալ ի վերափոխման Աստուածածնայ յեկեղեցւոյն Հայոց»-ը. 1796-ին Աստրախանում՝ Ա-ի տպարանում (9 էջ):

Գրկ. Տէր-Աբրահամեան Յ., Յովսէփ չորրորդ Երկայնաբազուկ Արղութեանց, ՄՊր, 1868: Լէօ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թ., 1902: Աղանեան Գ., *Յովսէփ կաթողիկոս Արղութեան, տես «Դիւան Հայոց պատմութեան», գիրք 9, մաս 1, Թ., 1911:* Ղուկասյան Ս., *Հովսեփ Արղությանը ռուսական զորքերի 1796 թ. Մնդրկովկասյան արշավանքի ժամանակ, «ՊԲՀ», 1987, № 3:*

ԱՐՃԵՇԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XIII–XVII դդ-ում Վասպուրականի Արճեշ քաղաքում: Հիշատակվող առաջին գրիչը Ստեփանոսն է: Սակայն գրչության ծաղկումը կապվում է Սիմեոն Արճիշեցու անվան հետ, որը խոր հետք է թողել ոչ միայն Արճեշի, այլև ողջ Վասպուրականի գրչության, հատկապես մանրանկարչության արվ-ում: Նրանից պահպանվել է 5 ձեռագիր, 4-ը՝ Մատենադարանում, 1-ը՝ ԱՄՆ-ում (Քյուրդյանի հավաքածու): Հիշվում է նաև Գրիգոր Տաուշեցի գրիչը (1287): XIII դ-ի վերջերին և XIV դ-ի սկզբներին Արճեշում ձեռագրեր են ընդօրինակել, կազմել ու նկարազարդել Աբրահամ, Խաչատուր, Ստեփանոս և Հակոբ գրիչները: Նրանց գործը շարունակել են աշակերտները: Հայտնի են Սիմեոնի որդի Դեռսկուրոսը և նրա ընկեր Հովհաննեսը, որոնցից մեզ են հասել 2 մեծ Ճաշոցներ:

Արճեշում գրչությունն առավել զարգացել է XV դ-ի 1-ին կեսին, երբ Մեծոփավանքում սկսել է գործել *Գրիգոր Տաթևացու* հիմնադրած և *Թումա Մեծոփեցու* գլխավորած բարձր տիպի գրչության դպրոցը: Արճիշեցի Կարապետ գրիչը հետագայում դարձել է Մեծոփավանքի դպրոցի ուսուցիչ: Նրան աշակերտել են իր որդիներ Ստեփանոսն ու Ազարիան, Մանկասարի որդի Հովհաննեսը, որոնք դպրոցն ավարտելուց հետո վերադարձել են Արճեշ: Այստեղ են գործել նաև նույն դպրոցի սաներ Մինասը, կազմարար Հերպերը, Խալիֆան և ուր., որոնց ջանքերով XV դ-ում Արճեշը հռչակվել է որպես հայ գրչության արգասավոր կենտրոն: Հովհաննես Մանկասարենց գրիչն ընդօրինակել է 132 ձեռագիր, մեծ մասը՝ Արճեշում: Մանկասարենցի դպրոցից հայտնի է 10 աշակերտ, որոնց մի մասը Արճեշում շարունակել է իրենց ուսուցչի գործը: Ա. գ. կ-ից մեզ հասած ձեռագրերից մոտ 40-ը պահվում են Մատենադարանում: Մի քանիսի մասին պահպանվել են միայն հիշատակություններ:

«ԱՐՄԱՇ», եկեղեցապատմ., կրոն. հանդես: Լույս է տեսել 1983–94-ին Մոնրեալում: Խմբագիր՝ Բարկեն Թոփչյան: Տպագրել է սուրբգրային պատմություններ, Հայ եկեղեցու հայրերի աշխատություններից, հոգևոր երաժշտությանը վերաբերող հոդվածներ, թարգման. նյութեր: Անդրադարձել է հայ եկեղեց. կյանքի կարևոր իրադարձություններին ևն:


ԱՐՄԱՇԻ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, Արմաշի Չարխափան վանքում գրչագրեր են ժողովվել դեռևս XVII դ-ից: 1786-ին կառուցվել է մատենադարանի հատուկ շենք: XVIII դ-ի վերջին, Չակր Հասանի արշավանքի ժամանակ, ոչնչացվել են վանքի բոլոր գրչագրերը: Նոր հավաքածուն ստեղծվել է XIX դ-ի սկզբին: Նվիրատվությունների և տեղում ընդօրինակված ձեռագրերի հիման վրա 1889-ին բացվել է դպրեվանքի մատենադարանը: 1904-ին Ա. դ. մ-ի գրչագրերի թիվը հասել է 223-ի (գիտականորեն ցուցակագրել է Հ. Թոփճյա-

նը): Մինչև Առաջին համաշխ. պատերազմը (1914–18) դրանց թիվը կրկնապատկվել է: Մեծ եղեռնի ժամանակ այդ ամենը ոչնչացվել է:

Ա. դ. մ–ի ձեռագրերն ընդօրինակվել են XIV–XIX դդ–ում: Հնագույնը 1351–ից է, սակայն եղել են նաև ձեռագրեր՝ մեսրոպյան երկաթագրով գրված պահպանակներով: XIV դ–ում եղել է 4, XV դ–ում՝ 7, XVI դ–ում՝ 8, XVII դ–ում՝ 30, XVIII դ–ում՝ 58, XIX դ–ում՝ 116 ձեռագիր: Մեծ մասը գրվել է Արմաշում, նաև Կ. Պոլսում, Մեբաստիայում, Կեսարիայում, Ամասիայում, Եկեղյաց գավառում, Կարինում, Էջմիածնում, Հռոմում, Ղրիմում, Լեհաստանում, Երուսաղեմում և հայաբնակ այլ վայրերում: Ա. դ. մ–ում են պահվել ***Թովմա Մեծոփեցու*** «Պատմութեան» 1597–ին ընդօրինակված մի գրչագիրը, Հովհան Ոսկեբերանի անտիպ գործերը, Սիմեոն Երևանցու ինքնագիր քարոզգիրքը, բժշկարաններ, բառարաններ, խազագրված ձեռագրեր, Մ. Չամչյանի նամականին, Կիլիկիայի հայկ. թագավորության անտիպ մի դատաստանագիրք ևն: Սակավաթիվ մանրանկարչ. ձեռագրերում եղել են Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու և ուր. դիմանկարներ:

Գրկ. Թոփճէան Յ., Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վնտ., 1962: Քոլանջյան Ս., Մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1967, № 5: Արմաշի դպրեվանքը (կազմ.՝ Պ. Մուրադյան, Ա. Մուշեղյան), Ե., 1998:

«ԱՐՄԱՒԵՆԻ», քաղ., ազգ., կրոն., բանասիր. կիսամսյա թերթ: Եգիպտահայ անդրանիկ պարբ–ը: Լույս է տեսել 1865–ին Կահիրեում (4 համար): Հիմնադիր–խմբագիր՝ Մկրտիչ արք. Քեֆսիզյան, խմբագիր՝ Աբրահամ ***Մուրադյան:*** Ձգտել է ամբապնդել Հայ առաքել. եկեղեցու դերը համայնքի կյանքում: Տպագրել է կրոնաբարոյական նյութեր, հոդվածներ, լուրեր Եգիպտոսի, ինչպես նաև հայկ. մյուս գաղթավայրերի մասին, արձագանքել է միջազգ. քաղ. և առևտր. կյանքին, արծարծել գաղութահայ մշակութ. հարցեր: Ունեցել է ուշագրավ տեղեկությունների, զվարթ ժամանցի, հանելուկների, ծանուցումների ընդարձակ բաժին:




«Արմաւենի», *1865–ին, Կահիրե*

2009–ից Կահիրեում բացվել է «Արմաւենի» հայ. լրատվ. կայքէջ՝ որպես «Ա.»–ի շարունակություն: Խմբագիր՝ Մուրադ Հարությունյան: Լուսաբանում է եգիպտահայության առօրյան, անդրադառնում է հայաստանյան և միջազգ. իրադարձություններին:

«ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ», **«Հաւատարմատ»**, միջնադարում քաղկեդոնականության և միաբնակության դավանաբան. վեճերին նվիրված պատմադավանաբան. նյութերի հայ. ժող–ներ: Հայտնի են 4–ը (3–ը պաշտպանել են Հայ եկեղեցու միաբնակության դավանանքը, մեկը՝ քաղկեդոնականությունը). 1. VII դ–ում Հովհան Մայրագոմեցու գրքերից մեկը՝ «Հաւատարմատը» (ըստ Ստեփանոս Ասողիկի և Վարդան Արևելցու), նույնն է համարվում, ինչ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի (615–628) օրոք կազմված «Կնիք հաւատոյ» հակաքաղկեդոն. ժող–ը՝ իր նախն. խմբագրությամբ: Այստեղ դրսևորվել է քաղկեդոն. Բյուզանդիայի դեմ պայքարի տրամադրությունը: 2. X դ–ում Անանիա Նարեկացին կազմել է «Հաւատարմատ» վերնագրով հակաքաղկեդոն. նոր ժող. (ըստ Ուխտանեսի), որը մեզ չի հասել: 3. Վարդան Այգեկցու 1205–ին կազմած հակաքաղկեդոն. «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» ժող–ը. մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով՝ ընդարձակ և համառոտ խմբագրությամբ (լավագույնները Մատենադարանի № 2080 և № 3295 ձեռագրերն են): XIII և XIV դդ–ում այն կարևոր դեր է խաղացել Կիլիկիայի հայկ. եկեղեցին հռոմ. եկեղեցու ազդեցությունից հեռու պահելու գործում: 4. XIII դ–ի 2–րդ կեսին Կիլիկիայում ստեղծվել է ևս մի «Ա. հ.». կազմել են քաղկեդոնականությանը հետևող հայերը՝ Վարդան Այգեկցու «Ա. հ.»–ին հակազդելու, Արևմուտքի քաղ. ազդեցությունը երկրում ամրացնելու նպատակով:



Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան եւ **Արմատ հաւատոյ***»-ի (1998, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը*



Ենովք Արմենի *«Կինը» (1906, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



Մկրտիչ Արմեն



Մ. Արմենի *«Պատվիրեցին հանձնել ձեզ» (1964, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

Գրկ. Կնիք հաւատոյ, հրտ.՝ Կարապետ եպիսկոպոս (Տեր-Մկրտչյան), Էջմիածին, 1914 (Ներածություն, Էջ XXVI–XXXI, CVIII–CIX), Բ., 1998: **Անասեան Հ.,** *Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լոյսի տակ, Վնտ., 1969:* **Նույնի,** *Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը, «Էջմիածին», 1972, № 8–9:* **Վարդան Այգեկցի,** *Գիրք հաւատատութեան եւ Արմատ հաւատոյ, հրտ.՝ Շահէ քհն. Հայրապետյանի (ներած.՝ Հ. Բյոնյանի), Ե., 1998:*

ԱՐՄԵՆ Ենովք [1883, գ. Էֆքերե (այժմ՝ Կայսերի՝ Թուրքիա-յում)–6.5.1968, Մարսել], գրող, մշակույթի գործիչ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում և Ռոբերտ քոլեջում: 1900–05-ին աշխատել է «Բիւրակն» թերթի խմբագրությունում, 1906–08-ին խմբագրել է «Մասիս», 1909–10-ին՝ ***«Առաւօտ»***, 1910–11-ին՝ «Չեզօք» թերթերը: 1911–14-ին եղել է ուսուցիչ: 1931-ին տեղափոխվել է Մարսել. հիմնադրել է տպարան և հրատարակել գրքեր: Եղել է Ֆրանսահայ մշակութ. միության Մարսելի մասնաճյուղի նախագահը:

Լույս են տեսել Ա.-ի «Կինը» (1906, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ.) պատմ-վածքների ժող-ը,«Վեղարաւոր սատանան» (1908, ա. տպ.) պատմվածքը, «Թրքահայ գրականութիւնը մամուլի ազատութեան թուականին» (1909, ԿՊ, «Շանթ» տպ.), «Հայ նոր բանաստեղծները: Հրանտ Նազարէթեանց» (1911, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյաններ տպ.), «Արշակ Չօպանեան: Կեանքը եւ հասարակական գործունէութիւնը» (1913, ԿՊ, Ռ. Սագայանի տպ.) գրականագիտ. աշխատությունները, թարգմանել է «Ամերիկեան դեսպան մր. Մօրկընթաուի յիշատակները...» (1919, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., 1990) գիրքը:

ԱՐՄԵՆ Մկրտիչ (Ալիքյան-Հարությունյան Մկրտիչ Գրիգորի, 27.12.1906, Ալեքսանդրապոլ–22.12.1972, Երևան), գրող: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Լենինականի «Հոկտեմբեր» գրողների միու-թյան հիմնադիրներից:

Առաջին բանաստեղծությունը («Անդրկովկաս») տպագրվել է ***«Բանվոր»*** թերթում 1923-ին: Լույս են տեսել Ա.-ի «Շիրկանալ» (1925), «Երկաթավորվող երկրի երգեր» (1927) բանաստեղծությունների ժող-ները, «Քաղաքը բլուրի վրա» (1930), «Սկաուտ № 89» (1933, վերամշկ. հրտ.՝ «Կարմիր և կապույտ փողկապներ», 1954), «Յասվա» (1953), «Ժիրայր Գլենց» (1967) վեպերը, «Երեք սիրավեպ» (1936) պատմվածքների ժող-ը, «Գույնզգույն թագավորություն» (1959) հեքիաթ-վիպակը, «Հեղնար աղբյուր» (1935, համանուն կինոնկար՝ 1970) վիպակը, «Պատվիրեցին հանձնել ձեզ» (1964) պատմվածքների և վեպի ժող-ը, «Երկերը» (հ. 1–5, 1966–73): Թարգմանել է Մ. Գորկու, Վ. Կավերինի, Յ. Օլեշայի, Ա. Ֆաղեևի և ուր. գործերից:

1937-ին անհիմն բռնադատվել է, աքսորվել, 1946-ին՝ արդարացվել:

Գրկ. **Չարենց Ե.,** *«Կոմսոմոլիա», «Նորք», 1926, գիրք I:* **Մելքոնյան Մ.,** *Մկրտիչ Արմեն: Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1981:*

«ԱՐՄԵՆԻԱ», հայագիտ. հանդես: Լույս է տեսել 1887–1907 և 1912–13-ին Տրանսիլվանիայի Գեռլա քաղաքում՝ հունգ.: Խմբագիրներ՝ Քրիստափոր Գովրիկյան, Խաչիկ ***Մոնգուրյան***, Մկրտիչ ***Պոդուրյան***, Անտալ Հերման, Գուստավ Պապ: Տպագրել է Հայաստանի, Տրանսիլ-վանիայի և հայկ. այլ գաղթավայրերի կյանքին նվիրված հոդվածներ, պատմաբանասիր., ազգագր. նյութեր, հունգարահայերին և օտարազ-գի ընթերցողներին ներկայացրել հայոց պատմությունն ու մշակույթը: Հանդեսում նյութեր են տպագրել Յանուշ Յեցը, հունգարացի պետ. գործիչ, հայազգի Լ. Գոպչան, Ժ. Մերզան, Յ. Սիմային, Ղ. Բադրու-պանյանը, Հ. Չիլինգարյանը և ուր.: 1992-ին որպես թերթ (1 համար) վերահրատարակվել է Կլուժում (Ռումինիա):

«ԱՐՄԵՆԻԱ», գրական և քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1929–33-ին (ընդհատումներով) Լոս Անջելեսում՝ հայ. և անգլ.: Պա-տասխանատու տնօրեն՝ Միհրան Էլվան: Տպագրել է նյութեր հայ գաղթավայրերի, մասնավորապես՝ Կալիֆոռնիայի հայերի կյան-քից, տեղեկություններ Խորհրդ. Հայաստանից, միջազգ. լուրեր ևն: 1932-ի մարտ–հունիսին «Ա.» հրատարակվել է դաշնակցությունից հեռացած Մ. Ֆերահյանի ղեկավարությամբ՝ հակվելով դեպի ազ-գայնականություն:

«ԱՐՄԵՆԻԱ», ազգ., քաղ. շաբաթաթերթ (1954–89-ին՝ օրաթերթ): ՀՅԴ պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1931-ից Բուենոս Այրեսում՝ հայ. և իսպ.: Խմբագիրներ՝ Սարգիս Թոփչյան, Ռեն (Ռուբեն Վարդանյան), Արսեն Միքայելյան, Աշոտ Արծրունի, Վարդան Գևորգյան, Հովհաննես Դևեջյան, Պետրոս Հաջյան, Խաչիկ Տեր-Ղուկասյան, Ռուբեն Ղազանչյան, Գևորգ Ազանդյան: Լուսաբանում է արգենտինահայ համայնքի հաս-քաղ., ազգ. կյանքը, տպագրում է միջազգ. լուրեր, գրական նյութեր, տեղեկություններ ՀՀ-ից: 1931–82-ին ունեցել է սեփական տպարան:


«ԱՐՄԵՆԻԱ», ազգ., քաղ. շաբաթաթերթ (մինչև 1994-ը՝ ամսաթերթ): ՀՅԴ պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1975-ից Սիդնեյում (մինչև 1979-ը՝ «Հայ դատ»): Խմբագրակազմ: Լինելով ավստրալահայ գաղթավայրի միակ շաբաթաթերթը՝ «Ա.» լայնորեն տարածվում է ընթերցողների շրջանում: Լուսաբանում է համայնքի կյանքը, կրթամշակութ. խնդիրները, նյութեր տպագրում ՀՀ-ում, ԼՂՀ-ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին: Ունի նաև անգլ. բաժին և կայքէջ:

«ԱՐՄԵՆԻԱ», ազգ., կրթ., մշակութ. ամսագիր: «Շարժում հանուն հայերենի դասավանդման և հայ մշակույթի» խմբակցության հրատ.: Լույս է տեսել 1977–89-ին Մարսելում՝ ֆրանս.: Հիմնադիր-խմբագիր՝ Ժան Գաբրիելյան: Աջակցել է հայապահպան ծրագրերին, տպագրել է հայոց պատմությանը, հայ գրակ-յանը, կերպարվեստին, ճարտ-յանը, քանդակագործությանը վերաբերող հոդվածներ, հայ դաս. և ժամանակակից հեղինակների գործեր, թարգմանություններ:



«Արմենիա», *1977–89-ին, Մարսել (№ 22, 1977)*

«ԱՐՄԵՆԻԱ», ազգ., հաս. ամսագիր: Լույս է տեսնում 1998-ից Աթենքում՝ հուն.: Խմբագիր՝ Գրիգոր-Գեորգ Մխիկյան: Լուսաբանում է հունահայ համայնքի առօրյան, երկրի տնտ. վիճակը, ներկայացնում Հայաստանում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները և դրանց վերաբերյալ ադրբ. լրատվամիջոցների արձագանքները: «Քաղաքական քննարկումներ» խորագրով տպագրում է Հայ դատին, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին, վերջին շրջանում նաև սիրիահայության սատարման խնդրին վերաբերող վերլուծ. հոդվածներ: Մեծ ուշադրություն է դարձնում ՀՀ-Հունաստան միջպետ. հարաբերություններին: Տպագրում է Հայաստանի ճանաչված մտավորականների հետ հարցազրույցներ, հայ գրողների ստեղծագործություններ ևն:



«Արմենիա», *2003-ից, Բուդապեշտ (№ 6, 2011)*

«ԱՐՄԵՆԻԱ», ազգ., քաղ., մշակութ. երկամսյա հանդես: Լույս է տեսնում 2003-ից Բուդապեշտում՝ հայ. և հունգ., 2012-ից՝ որպես առանձին պարբ-ներ (հայ.՝ «Արմենիա», խմբագիր՝ Գագիկ Ջոթյան, հունգ.՝ «Դիասպորա 21», խմբագիր՝ հայագետ Կրայչիր Պիրոշկա): Փորձում է համախմբել ուծացման եզրին կանգնած հունգարահայությանը, ներկայացնում է Հայաստանը, հայկ. մշակույթը, գրակ-ը, ազգագրությունը, հայոց պատմությունը: Հետևում է հայկ. հարցի, Հայոց ցեղասպանության, Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացներին և միջազգ. անցուդարձին:

«ԱՐՄԵՆԻԱ Ի ՄԻՐ» («Армения и мир»-«Հայաստանը և աշխարհը»), քաղ., տնտեսագիտ., մշակութ. պատկերազարդ եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1995-ից Մոսկվայում՝ ռուս.: Խմբագիր՝ Լուսիկ Ղուկասյան: Հոգաբարձուների խորհրդի կազմում են Աբել Աղանբեգյանը, Արմեն Ջիգարխանյանը, Անդրանիկ Միհրանյանը, Արթուր Չիլինգարովը և ուր.: Համագործակցում է *«Նուվել դ' Արմենի»* և *«Արմինիոն Ինթերնեշընալ Մեգըզին»* հայկ. ամսագրերի հետ: Լուսաբանում է Ռուսաստանի և Սփյուռքի այլ համայնքների մշակութ. կյանքը, անդրադառնում հաս-քաղ. և մշակութ. կյանքի տարբեր բնագավառների: Տարածվում է ՌԴ-ում, ՀՀ-ում, ԱՄՆ-ում, եվրոպ. մի շարք երկրներում:



«Արմենիա ի միր», *1995-ից, Մոսկվա*



«Արմէնիա», *1885–1923, Մարսել (№ 24, 1898)*



«Արմենիշ–Դոյչե Քորեսփոնդենց», *1973-ից, Քյոլն*



Արմենպրեսի լրատվական կենտրոնում

«ԱՐՄԵՆԻԱ ՊՐԵՍՍ», ազգ., հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 2009-ից Վալենսիայում (Ֆրանսիա): «Վեգա պրեսս» լրատվ. ծառայության հրատ.: Տպագրվում է արևելահայ., արևմտահայ., ֆրանս., անգլ. և իսպ.:

«ԱՐՄԷՆԻԱ», ազգ., քաղ., գրական շաբաթաթերթ (սկզբում՝ եռօրյա): Հայոց հայրենասիր. միության հրատ.: Լույս է տեսել 1885–1923-ին Մարսելում: Խմբագիրներ՝ Մկրտիչ ***Փորթուգալյան***, Եղիշե Թորոսյան: Քննադատել է եվրոպ. տերությունների շահախնդիր նպատակները Թուրքիայում, ընդգծել արևմտահայության՝ սեփական ուժերով ազատություն ձեռք բերելու գաղափարը: Հրատարակել է նյութեր արևմտահայ գավառների կացության և Կ. Պոլսի ազգ. հիմնարկների գործունեության: «Ա.» ողջունել է 1905-ի ռուս. հեղափոխությունը: Համակրանքով է արտահայտվել 1908-ի թուրք. սահմանադրության մասին, սակայն շուտով ըմբռնել է դրա մնայնությունը: Տպագրել է բանասիր., հայագիտ. հոդվածներ, գեղ. ստեղծագործություններ: 1890-ին լույս է տեսել «Արմէնիայի յուշարար» հավելվածը, որտեղ ընդգրկվել են Մ. Փորթուգալյանի 1885–86-ին «Ա.»-ում տպագրված առաջնորդողները:

«Ա.»-ի գաղափարներին հետևելու համար հայկ. առաջին քաղ. կուս-ը կոչվել է «Արմենական»:

«ԱՐՄԵՆԻՇ–ԴՈՅՉԵ ՔՈՐԵՍՓՈՆԴԵՆՑ» («Armenisch–Deutsche Korrespondenz»–«Հայ–գերմանական թղթակցություն»), եռամսյա թերթ: Գերմանա–հայկ. ընկերության պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1973-ից Քյոլնում՝ գերմ.: Խմբագիր՝ Էլվիրա Քինդլ: Լուսաբանում է Գերմանիայի հայկ. համայնքի հաս–քաղ., ազգ. կյանքը, անդրադառնում է հայ–գերմ. հարաբերություններին, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, միջազգ. անցուդարձին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ, հայկ. լրատվ. գործակալություն: Հիմնադրվել է 1918-ին՝ որպես Հայաստանի հեռագր. գործակալություն, 1920–22-ին կոչվել է Արմենկավոռոստա, ապա՝ Արմենռոստա, 1922–72-ին՝ Արմենտա, ապա՝ ՀՀԳ (Հայկ. հեռագր. գործակալություն), 1972-ից՝ Ա.: Լուսաբանել է Խորհրդ. Հայաստանի աշխատավորության նվաճումները տնտեսության, գիտ-յան և մշակույթի, ժող. կրթության և առողջապահ-յան բնագավառներում: Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) տարիներին թողարկել է ավելի քան 100 «ՀՀԳ-ի պատուհան»: Հետպատերազմյան տարիներին տեղեկատու ծառայությունը բարելավվել է. 1959-ին ստեղծվել է ՀՀԳ-ի ֆոտոխրոնիկան՝ Խորհրդ. Միության հեռագր. գործակալության (ՏԱՍՍ) հետ լուսահեռագիր կապով: Ա. հեռատիպ կապ է ունեցել հանրապետության շրջանների, Մոսկվայի, Վրաց. և Ադրբ. ԽՍՀ-ների հեռագր. գործակալությունների հետ և տարեկան թողարկել է ավելի քան 7 հզ. տեղեկատվություն ու 3 հզ. ֆոտոտեղեկատվություն՝ միութ. և արտասահմ. մամուլի, հանրապետության թերթերի և տեղեկատու այլ պարբ-ների համար: 1967-ից գործակալությունն օգտվել է Երևան–Մոսկվա–Բեյրութ, 1970-ից՝ Երևան–Մոսկվա–Նյու Յորք, 1972-ից՝ Երևան–Մոսկվա–Փարիզ հեռատիպ կապերից, որոնք հանրապետության մասին նյութեր են հաղորդել սփյուռքահայ պարբ. մամուլին: Թարգմանել է ՏԱՍՍ-ից ստացված նյութեր, միութ. ու արտասահմ. տեղեկատվություն և տրամադրել մամուլի տեղ. միջոցներին, հեռուստատեսությանն ու ռադիոյին:

1998-ից Ա. ՊՓԲԸ է: Թողարկում է 10-ից ավելի եռալեզու (հայ., ռուս., անգլ.) հաղորդագրություններ՝ պաշտոն., քաղ., տնտ., հաս., մարզային, տարածաշրջ., միջազգ., մշակութ., մարզ., ինչպես նաև հարցազրույցներ, լուսանկարչ. նյութեր:

Ա. ԱՊՀ երկրների ազգ. գործակալությունների, Սևծովյան տարածաշրջանի տեղեկատվ. ընկերակցությունների ու Համաշխ. գործակալությունների ֆորումի անդամ է, համագործակցում է նաև Սփյուռքի համապատասխան կառույցների հետ:

Ա.-ի տնօրեններ են եղել Սիմոն *Վրացյանը*, Հակոբ Տեր-Հակոբյանը, Վարդգես *Ահարոնյանը*, Միքայել Յիցիկյանը, Հակոբ Խաչատրյանը, Աղասի *Վարդանյանը*, Աշիկ *Ղազարյանը*, Աշոտ Ստեփանյանը, Ռաֆայել Շիրոյանը, Արամայիս Սարգսյանը, Արտավազդ *Խաչիկյանը*, Մարտունի Խաչատրյանը, Ստեփան *Պողոսյանը*, Արտակ *Վարդազարյանը*, Տիգրան Հակոբյանը, Մեսրոպ Հարությունյանը, Հրայր Զորյանը, Արամ Անանյանը (2011-ից):

«ԱՐՄԵՆՈՒՀԻ», գրական, պատմագիտ. և արվ.-ի ամսօրյա հանդես: Լույս է տեսել 1949–55-ին Թեհրանում: Արտոնատեր՝ Անդրե *Տեր-Օհանյան*, խմբագրակազմ՝ Արամ Անտոնյան, Նորայր Սամյան, Սամվել Խաչիկյան: Տպագրել է գրական, պատմ., գիտաբժշկ. և առողջապահ., արվեստաբան. և դաստիարակչ. հանրամատչելի հոդվածներ, նպաստել Իրանի հայերի, հատկապես կանանց հոգևոր զարգացմանը, ի հայտ է բերել գրական-գեղ. կարողություն ունեցողներին: Լույս է ընծայել հայ և համաշխ. դաս. հեղինակների գործերից (Վ. Թեքեյան, Ա. Արփիարյան, Օմար Խայամ, Լ. Տոլստոյ, Ջ. Բայրոն, Ա. Պուշկին, Ս. Եսենին, Ի. Տուրգենև, Վ. Բրյուսով, Ֆ. Վերֆել), մեծ տեղ հատկացրել խորհրդահայ գրակ-յանը, ինչպես նաև իրանցի և իրանահայ անվանի ու սկսնակ գրողներին, տեղեկություններ է հաղորդել իրանահայ կրթ., մշակութ. և ազգ. կյանքի մասին:



«Արմենուհի», *1949–55, Թեհրան*

«ԱՐՄԻՆԻԸՆ ԱՄԵՐԻՔԸՆ ԱԼՄԱՆԱԽ» («Armenian American Almanac»-«Հայ-ամերիկյան տարեգիրք»): Լույս է տեսնում 1985-ից Լոս Անջելեսում (Գլենդել)՝ անգլ.: Խմբագիր՝ Համո Վասիլյան: Տեղեկություններ է հաղորդում ԱՄՆ-ի հայկ. հաստատությունների (եկեղեցիներ, որբանոցներ, միություններ, մամուլ, գրադարաններ, հրատարակչություններ, գրատներ, դպրոցներ ևն) մասին: Ունի մատենագիտ-յան բաժին:



«Արմինիըն Ամերիքըն Ալմանախ», *1985-ից, Լոս Անջելես*

«ԱՐՄԻՆԻԸՆ ԳԱՐԴԻԱՆ» («The Armenian Guardian»-«Հայոց պահապան»), կրոն., երիտ. հանդես: Հայաստանյայց առաքել. եկեղեցու Ամերիկայի արևելյան թեմի հրատ.: Լույս է տեսել 1946–70-ին Նյու Յորքում՝ անգլ.: Խմբագրակազմ, խմբագիր՝ Մկրտիչ Սուրադյան: Ծանոթացրել է Մայր աթոռի և թեմերի ուշագրավ իրադարձություններին, Հայ եկեղեցու տոներին, տպագրել է կրոն., եկեղեց., ազգ., մշակութ., հրատարակչ. նյութեր:



«Արմինիըն Գարդիան», *1946–70, Նյու Յորք*

«ԱՐՄԻՆԻԸՆ ԴԱՅՋԵՍԹ» («Armenian Digest»-«Հայկական բանբեր»), հայագիտ. ամսագիր: Լույս է տեսել 1970–74-ին Նյու Յորքում՝ անգլ.: Հրատարակիչ-տնօրեն՝ Հ. Թանգյան (Նազարենց), գլխ. խմբագիր՝ Ջ. Օ. Բրայըն: Անգլիախոս ամերիկահայերին և ամերիկացիներին ծանոթացրել է հայ գրակ-յանը, արվ-ին ու հայոց պատմությանը, ներկայացրել Սփյուռքի և Խորհրդ. Հայաստանի մշակութ. կյանքը: Հրատարակել է օտարազգի հեղինակների՝ հայագիտ-յանը, հայոց պատմությանը, հայկ. մշակութ. արժեքներին վերաբերող հոդվածներ: Հայ դաս. գրակ-ից թարգմանաբար տպագրել է Հ. Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթը, «Գիքորը» պատմվածքը, Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը ևն: Յուրաքանչյուր համարում զետեղել է հայկ. երգ: Աշխատակցել են Ա. Կարապը, Ա. Ջերեջյանը, Ռ. Ֆաուքեսը, Պ. Ժամկոչյանը և ուր.:

«ԱՐՄԻՆԻԸՆ ԹԱՅՄՍ» («Armenian Times»-«Հայկական ժամանակներ»), հաս-քաղ., պատմ., մշակութ. պատկերազարդ պարբերաթերթ: Լույս է տեսնում 1994-ից Մոսկվայում՝ հայ., ռուս. և անգլ. (տպաքանակը՝ 50 000): Հիմնադիր-խմբագիր՝ Արթուր Խանումյան: Հովանավոր՝ «Տաշիր Գրուպ» ընկերություն: Անդրադառնում է ՀՀ-ի հաս., քաղ., սոցիալ-տնտ. կարևոր իրադարձություններին, ՌԴ-ի հետ միջպետ. հարաբերություններին, լուսաբանում է ռուսահայ համայնքի կյանքը: Մեծապես նպաստում է արտերկրում հայապահպանությանը միտված ծրագրերին: Տպագրում է հայ անվանի մտավորականների, ռազմ. գործիչների, արվեստագետների մասին հոդվածներ, հայկ. պատմագիտ., մշակութ. նյութեր ևն: Պարբ-ն անվճար տարածվում է



«Արմինիըն Թայմս»
1994-ից, Մոսկվա



«Արմինիըն Ինթերնեշընըլ Մեգըզին», *1990-ից, Գլենդել (հոկտ., 2001)*



«Արմինիըն Միրըր-Սփեքթեյթըր», *1932-ից, Բոստոն (№ 2, 1942)*



«Արմինիըն Ռիվյու», *1949-ից, Բոստոն, Ուոթերթաուն (№ 3, 1976)*

ՌԴ-ի, ԱՊՀ-ի և Եվրոպայի մի շարք երկրների հայաշատ վայրերում: ՀՀ սփյուռքի նախարարության համաձայնությամբ 2011-ից տպագրվում է նաև ՀՀ-ում (1000 օրինակ):

«ԱՐՄԻՆԻԸՆ ԻՆԹԵՐՆԵՇԸՆԼ ՄԵԳԸԶԻՆ» («Armenian International Magazin»-«Հայկական միջազգային ամսաթերթ»), քաղ., գիտ., գրական-գեղ. պատկերազարդ ամսաթերթ: Լույս է տեսնում 1990-ից Գլենդելում՝ անգլ. (1991-92-ին՝ նաև հայ.): Խմբագիրներ՝ Չառլզ Նազարյան, Սալբի Հարությունյան-Ղազարյան, Թոնի Հալֆին: Տպագրում է հաս-քաղ., գրական, մշակութ. վերլուծ. հոդվածներ, անդրադառնում ամերիկահայ համայնքի կյանքին, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՄԻՐԸՐ-ՍՓԵՔԹԵՅԹԸՐ» («The Armenian Mirror-Spectator»-«Հայկական հայելի-հանդիսատես»), հաս-քաղ. և մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1932-ից Բոստոնում՝ անգլ.: ՌԱԿ-ի Հս. Ամերիկայի շրջ. վարչության պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Պետրոս Նորհատ, Վ. Քելլի, Վ. Սամվելյան, Բարբարա Մերգերյան, Անի Գալայջյան, Ալեն Գրիգորյան, Հակոբ Վարդիվառյան: Տպագրում է միջազգ. իրադարձություններին, սփյուռքահայ կյանքին վերաբերող նյութեր, վերլուծ. հոդվածներ, անդրադառնում է նաև ՀՀ-ի, Արցախի քաղ., տնտ., մշակութ. առօրյային: Թերթի մշտ. աշխատակիցներից է Երվանդ *Ազատյանը* (նաև վարչ. խորհրդի անդամ):

«ԱՐՄԻՆԻԸՆ ՉԸրՉ» («The Armenian Church»-«Հայաստանյայց եկեղեցի»), կրոնաբարոյախոս., բարեսիր. եռամսյա հանդես: Հայաստանյայց առաքել. եկեղեցու Ամերիկայի արևելյան թեմի պաշտոն. հանդես: Լույս է տեսնում 1958-ից Նյու Յորքում՝ անգլ., հայ.: Գլխ. խմբագիր՝ Խաժակ արք. Պարսամյան, հայկ. բաժնի խմբագիր՝ Գրիգոր Մաքսուդյան, անգլ-ինը՝ Արփի Նագաշյան Մըք Քուին: Լուսաբանում է թեմի հոգևոր կյանքը, արծարծում է քրիստ. դաստիարակության խնդիրներ, ծանոթացնում է Հայ եկեղեցու տոներին: Անդրադարձել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՌԻՎՅՈՒ» («The Armenian Review»-«Հայկական ամփոփագիր»), հայագիտ., պատմաքաղ. կիսամյա (մինչև 2008-ը՝ եռամսյա) հանդես: Լույս է տեսնում 1949-ից Բոստոնում, ապա՝ Ուոթերթաունում՝ անգլ.: Խմբագիրներ՝ Զեյմս Մանտալյան, Զեյմս Թաշճյան, Ժիրայր Լիպարիտյան, Հայկ Օշական, Ասպետ Կոչիկյան, Թաթուլ Սոնենց-Փափազյան: Տպագրում է հայագիտ., քաղ. հոդվածներ: Հանդեսում նյութեր են տպագրել Վ. Սարոյանը, Ռ. Հովհաննիսյանը, Ռուբեն Շուքուրյանը և ուր.: Անդրադառնում է նաև ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, սփյուռքահայ համայնքների կյանքին, միջազգ. անցուդարձին:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՐԻՓՈՐԹԸՐ» («The Armenian Reporter»-«Հայկական լրատու»), շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1954-ից Նյու Յորքում, ապա՝ Նյու Ջերսիում, Վաշինգտոնում՝ անգլ., 2010-ից՝ էլեկտրոնային տարբերակով: Խմբագիրներ՝ Շոն-Ռոյ Կառլսթոն, Արթուր Դերունյան, Էդվարդ Պողոսյան, Վինսենտ Լիմա, Էմիլ Սանամյան, Սիլվա Պողոսյան: Տպագրում է առաջնորդողներ, լուրեր ամերիկահայ համայնքի, ՀՀ-ի և Արցախի կյանքից: Առանցքային են Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման հիմնախնդրին և ԱՄՆ-ՀՀ քաղ-տնտ. հարաբերություններին առնչվող թեմաները: Թերթից հաճախակի նյութեր են արտատպում ամերիկյան հայտնի պարբ-ներ, ՀՀ-ի, ինչպես նաև թուրք. և ադրբ. լրատվամիջոցներ:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՈՒԻՔԼԻ» («The Armenian Weekly»-«Հայկական շաբաթաթերթ», 1934-69-ին՝ «Hairenik Weekly»), շաբաթաթերթ: ՀՅԴ ԱՄՆ-ի Արլ. շրջանի կենտկոմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1934-ից Բոստոնում՝ անգլ.: Խմբագիրներ՝ Արմեն Բարթիզյան, Զեյմս Մանտալյան, Վ. Հաբեշյան, Խաչիկ Մուրադյան (2007-ից): Երկրի անգ-

լիախոս հայ երիտասարդությանը հաղորդակից է դաձնում ՀՅԴ գաղափարախոսությանը, Հայ դատին, Արցախյան հիմնախնդրին, հայոց պատմությանը, մշակույթին: Առաջին անգամ այստեղ է տպագրվել Վ. Սարոյանի անդրանիկ պատմվածքը՝ «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա» (1934): Պարբ-ում հայ-թուրք. հակամարտության թեմաներով հանդես են գալիս նաև թուրք հեղինակներ (Ռ. Զարաքոլու, Թ. Աքչամ, Ա. Գյունայսու, Է. Քեսքին և ուր.): Ունի էլեկտրոնային տարբերակ, որի այցելուների (ամիսը՝ շուրջ 17 հզ.) զգալի մասն օտարազգի է:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՕԲՋԸՐՎԸՐ» («The Armenian Observer»–«Հայկական մեկնաբան»), անկախ շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1970-ից Լոս Անջելեսում՝ անգլ.: Խմբագիր՝ Օշին Քեշիշյան: Տպագրում է տեղեկատվ. նյութեր, քաղ., սոցիալ., տնտ. թեմաներով հոդվածներ:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՖՈԼԻԱ ԱՆԳԼԻՍՏԻԿԱ» («Armenian Folia Anglistika»–«Անգլիական հետազոտությունների հայկական հանդես»), միջազգ. ակադեմ. հանդես: Անգլ-ի ուսումնասիրության հայկ. ընկերակցության հրատ.: Լույս է տեսնում 2005-ից Երևանում՝ անգլ.: Գլխ. խմբագիր՝ Սեդա *Գասպարյան:* Խմբագր. խորհրդի անդամներ են նաև օտարազգի ճանաչված մասնագետներ: Ներկայացնում է լեզվաբ., գրական, գիտակրթ., մշակութ. ուսումնասիրությունները ՀՀ-ում և արտերկրում՝ անգլ-ի ոլորտում , հայագիտ. բաժնում զետեղված նյութերի միջոցով միջազգ. գիտ. շրջանակներին հասանելի է դարձնում նաև հայոց լեզվի, գրակ-յան, պատմագիտ-յան և մշակույթի բնագավառներում հայ գիտ. մտքի ձեռքբերումները: Հանդեսը նպաստում է ՀՀ-ում անգլիագիտ. հետազոտությունների շարունակական զարգացմանը, աշխարհի տարբեր երկրների հետ կապերի հաստատմանը, հայկ. մշակույթի տարածմանն ու ճանաչմանը:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՖՈՐՈՒՄ» («The Armenian Forum»–«Հայկական համաժողով»), հանդես: Լույս է տեսնում 1998-ից Թրենթոնում, ապա՝ Փրինստոնում (ԱՄՆ)՝ անգլ.: Հրատարակիչ՝ «Կոմիտաս» ինստ.: Խմբագիրներ՝ Վինսենտ Լիմա, Ա. Սարաֆյան: Տպագրում է գիտ. հոդվածներ ՀՀ-ի, Արցախի, Սփյուռքի արդի հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև նյութեր՝ պատմ., քաղ., տնտ., իրավագիտ. թեմաներով:

«ԱՐՄՅԱՆԵ Ի ՎՈՅՆԱ» («Армяне и война»–«Հայերը և պատերազմը»), ամենամսյա հանդես: Լույս է տեսել 1916–17-ին Օդեսայում՝ ռուս. (12 համար): Խմբագիր՝ Ա. Լ. Հունանով: Տպագրել է հոդվածներ Հայկ. հարցի և կամավոր. շարժման մասին, թղթակցություններ՝ Կովկասյան ռազմաճակատից, արծարծել է հայ փախստականների խնդիրներ ևն: Լույս է ընծայել նաև Հայաստանին նվիրված գեղ. ստեղծագործություններ: Հանդեսում նյութեր են տպագրել ճանաչված ռուս և հայ գրողներ, գրականագետներ, հաս. գործիչներ (Յ. Վեսելովսկի, Ս. Գորոդեցկի, Ա. Քիվելեգով, Ա. Ծատուրյան, Մ. Շահինյան):

«ԱՐՄՅԱՆՍԿԻ ՎԵՍՏՆԻԿ» («Армянскій вѣстник»–«Հայկական լրատու»), հաս-քաղ. և գրական հանդես: Լույս է տեսել 1916–18-ին Մոսկվայում՝ ռուս.: Խմբագիր-հրատարակիչ՝ Իվան Ամիրով: Փաստական խմբագիր՝ Ալեքսեյ *Քիվելեգով*: Հիմնադրվել է Մոսկվայի հայկ. կոմիտեի և մոսկվաբնակ մի շարք հայ գործիչների նախաձեռնությամբ: «Ա. վ.»-ի հրատ-ն առնչվում է Առաջին համաշխ. պատերազմին (1914–18), Հայոց ցեղասպանությանը: Ռուս ընթերցողին ծանոթացրել է հայ ժողովրդի հաս-քաղ. կյանքին և նրա հոգևոր արժեքներին. լուսաբանել է Հայկ. հարցը, հայկ. կամավոր. շարժումը, կովկասյան բանակի գործողությունները, Հայաստանի տնտ. կյանքը, աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: «Հայկական կյանքի ժամանակագրություն» բաժնում տեղեկություններ է հաղորդել հայկ. մշակույթի մասին: Մեծ տեղ է հատկացրել հայ գրակ-յանը և արվ-ին: «Ա. վ.»-ի «Հայերը և Եվրոպան» բաժինը լուսաբանել է




«Արմինիըն Ռիփորթըր», *1954-ից, Նյու Յորք, Նյու Ջերսի, Վաշինգտոն*



«Արմինիըն Ուիքլի», *1934-ից, Բոստոն*




«Արմինիըն Ֆոլիա Անգլիստիկա», *2005-ից, Երևան*



«Արմինիըն Ֆորում», *1998-ից, Թրենթոն, Փրինստոն (№ 2, 2003)*



«Արմյանսկի վեստնիկ», *1916–18, Մոսկվա (№ 1, 1916)*



«Արմյանսկի վեստնիկ», *1990–2002, Մոսկվա (№ 1, 2000)*



«Արշալոյս», *1905–06, Թիֆլիս*

տվյալ ժամանակաշրջանում եվրոպ. տերությունների վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Տպագրել է «Թուրքահայաստանի մասին» խորհրդ. կառավարության դեկրետը: Հանդեսին աշխատակցել են Վ. Բրյուսովը, Ա. Վեսելովսկին, Յ. Վեսելովսկին, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն, Տ. Հախումյանը, Մ. Շահինյանը և ուր.:

«ԱՐՄՅԱՆՍԿԻ ՎԵՍՏՆԻԿ» («Армянскій вѣстник»–«Հայկական լրատու»), հաս-քաղ. պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1990–2002-ին Մոսկվայում՝ ռուս.՝ որպես 1916–18-ին Մոսկվայում տպագրված նույնանուն հանդեսի վերականգնված հրատ.: Խմբագիր՝ Կարեն Միքայելյան: Անդրադարձել է Հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը, Արցախյան խնդրին, կարևորել է Համաշխ. հայկ. կոնգրես հրավիրելու (հրավիրվել է 2011-ին) և համահայկ. ներկայացուցչ. մարմիններ ստեղծելու հարցը, քարոզել ՀՀ-ի և Սփյուռքի միջև համագործակցության և ազգ. միաբանության գաղափարներ: Մեծ տեղ է հատկացրել քաղաքագիտ. վերլուծություններին, ՀՀ-ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին: Ունեցել է նաև գրակ-յան և մշակույթի բաժիններ:

«ԱՐՅՈՒՆ», գիտագործն. եռամսյա, ապա՝ կիսամյա ամսագիր: ՀՀ ԱՆ Ռուբեն Յոլյանի անվ. արյունաբան. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 2005-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Սմբատ Դաղբաշյան, պատ. խմբագիր՝ Պետրոս Ղազարյան: Տպագրում է արյունաբանության և հարակից բժշկականսբ. գիտ-ներին վերաբերող գիտ. և տես. հոդվածներ, մեթոդ. աշխատանքներ, կարճ հաղորդագրություններ, միջազգ. և հանրապետ. գիտաժողովների նյութեր, գրախոսություններ (հայ., անգլ. և ռուս.): Առանձին համարներով անդրադառնում է բժշկագիտ-յան տարբեր ոլորտների նվիրված համաժողովներին:

«ԱՐՇԱԼՈՅՍ», ազգ., գրական, գիտ. և քաղ. եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: Ազգ. անկախ միության հրատ.: Լույս է տեսել 1899–1905 և 1908–14-ին Կահիրեում: Խմբագիրներ՝ Եղիշե ***Թորոսյան***, Գևորգ Փափազյան, Շահեն Հաֆեթյան: Լուսաբանել է եգիպտահայ համայնքի ազգ., հաս. կյանքը, կրթ. և մշակութ. հարցեր:

«ԱՐՇԱԼՈՅՍ», գրական, հաս., քաղ. և տնտեսագիտ. օրաթերթ: Լույս է տեսել 1905–06-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Գևորգ Մելիք-Կարագյոզյան: Արծարծել է հայ հաս. կյանքի խնդիրներ, նկարագրել արևմտահայության ծանր վիճակը, քննադատել է Ռուսաստանի Պետ. դումայի գործունեությունը, ընդգծել, որ այդ երկրում ոտնահարվում են ժողովրդի ընտրական իրավունքները, դատապարտել է ազգամիջյան ընդհարումներն Այսրկովկասում: Լուսաբանել է հայկ. մշակութ. կյանքը, հատկապես՝ Թիֆլիսի հայ դրամատիկ. թատրոնի ներկայացումները: Տպագրել է հայ գրողների ստեղծագործություններից, նմուշներ՝ ռուս և եվրոպ. գրակ-ներից: «Ա.»-ին կից լույս է տեսել երկշաբաթյա պատկերազարդ հավելված:

«ԱՐՇԱԼՈՅՍ», հաս., գրական, գիտ. և առևտր. օրաթերթ: Լույս է տեսել 1907–08-ին Զմյուռնիայում: Հրատարակիչ և խմբագիր՝ Բարսեղ Քեշիշյան: «Պաշտոնական», «Ներքին», «Արտաքին» և այլ բաժիններում անդրադարձել է Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին և միջազգ. կյանքին:

«Ա.» կարևորել է հայ կնոջը լուսավորելու ու կրթելու խնդիրները, շոշափել կնոջ ազատագրության հարցեր: Տպագրել է զմյուռնահայ գրողների գործեր, թարգմանություններ՝ եվրոպ. գրակ-ից, անդրադարձել է ժամանակի հայ գրողների ստեղծագործություններին:

«ԱՐՇԱԼՈՅՍ», գրական, գեղ. և քննադատ. ալմանախ: Լույս է տեսել 1915–17-ին Թիֆլիսում, ապա՝ Ալեքսանդրապոլում: Խմբագիրներ՝ Երվանդ Սաղոյան և Ա. Մելքումյան: Տպագրել է գեղ. գործեր, գրաքննադատ. հոդվածներ, թարգմանություններ, մասնավորապես՝ սերբ. գրակ-ից:

«ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ», քաղ–հաս., բանասիր. և առևտր. թերթ: Լույս է տեսել 1840–87-ին (ընդհատվել է 1882-ի հունիսից 1883-ի հունիսը) Զմյուռնիայում: Խմբագիրներ՝ Սարգիս Պալապանյան, Ղուկաս *Պարտազարյան*, Հայրապետ Սավալանյան, Նշան Միրզա, Հարություն *Սվաճյան:* Ունեցել է ներքին տեսությունների, արտաքին, առևտր., ազգ. և լուրերի բաժիններ, տպագրել է բանասիր. նյութեր, ուս. և բարոյախոս. հոդվածներ, վեպեր, գրական այլ ստեղծագործություններ, գրախոսականներ: Արժեքավոր են ազգ. բաժնի նյութերը, հայկ. գաղթավայրերի վերաբերյալ հոդվածներն ու բազմազան լուրերը, սկզբնաղբյուրի նշանակություն ձեռք բերած որոշ հրապարակումներ (Խ. Աբովյանի «Աշխարհիկ բարբառ երեւանցի հայոց», 1850, № 360, Գ. Պատկանյանի ուշ շրջանի բանաստեղծություններն ու պոեմները ևն): Լեզուն աշխարհաբար էր:

«Ա. Ա.» լայնորեն տարածվել է Կովկասում և հայկ. գաղթավայրերում: Ընդհատվել է 1886-ին, երբ թուրք. կառավարությունը բանտարկել է Հ. Սվաճյանին: Ծանր հիվանդ վիճակում բանտից ազատված խմբագիրը վերսկսել է թերթի լույսընծայումը, սակայն շուտով, նրա մահից հետո, «Ա. Ա.» դադարել է լույս տեսնելուց:

«ԱՐՇԱԼՈՒՅՍ», շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա, վերջին շրջանում՝ ամսաթերթ: Լույս է տեսնում 1935-ից Բոգդանովկայում (այժմ՝ Նինոծմինդա՝ Վրաստան), 1 էջը՝ ռուս. (1935–61-ին՝ «Ստալինյան ուղի», 1962–66-ին՝ «Կրասնոյե զնամյա»): Խմբագիրներ՝ Հայկ Մկրտչյան, Բագրատ Թանգյան, Արտուշ Կիրակոսյան, Երվանդ Սավոյան, Սաղաթել Սարգսյան, Հուսիկ Ղազարյան, Սենեքերիմ Թոփուզյան, Հմայակ Դուրգարյան, Արամ Հախվերդյան, Աղվան Վարդանյան, Վիկտոր Ղարսլյան, Արտաշես Վարդապետյան, Միլիկ Սեդրակյան, Մանուկ Կարախանյան (1984-ից): Լուսաբանում է շրջանի հաս–քաղ., տնտ., կրթամշակութ., առողջապահ., մարզ., հոգևոր կյանքին նվիրված հարցեր: Ունի նաև «Գրական Փարվանա» էջ:

ԱՐՇԱԿ Հակոբ (ծ. թ. անհտ, Կ. Պոլիս–1890, Կ. Պոլիս), խմբագիր, մշակույթի գործիչ: Կրթությունն ստացել է Կ. Պոլսում: Հիմնադրել է Կ. Պոլսի Ղալաթիա թաղամասի Ազգ. մատենադարանը, խմբագրել *«Տպտևս»* հանդեսը:

«ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՀ», ժող. ավանդազրույց Արշակ Բ և Շապուհ արքաների մասին, բանաքաղել է Փավստոս Բուզանդը («Պատմութիւն Հայոց», գլ. ԾԴ): Ըստ զրույցի՝ Պարսից Շապուհ II Սասանյան թագավորը հաշտություն կնքելու պատրվակով Հայոց արքա Արշակ Բ–ին և սպարապետ Վասակ Մամիկոնյանին հրավիրել է Տիզբոն: Նրանց բանտարկել է Խուժիստան նահանգի Անհուշ բերդում: Արշակի հավատարմությունը փորձելու համար Շապուհը վիուկների ու աստղահմանների խորհրդով հրամայել է Հայաստանից հող բերել, փռել է տվել իր ճեմասրահի հատակի կես մասի վրա և Արշակի հետ զբոսնել այնտեղ: Շապուհի այն հարցին, թե ինչու է Հայոց թագավորը մերժել Պարսկաստանի հետ բարեկամություն հաստատելու առաջարկները և 3 տասնամյակ պատերազմել իր դեմ, Արշակը պարսկ. հողի վրա խեղճացել և ներում է խնդրել, իսկ հայկ. հողի վրա ըմբոստացել է և սպառնացել Հայաստան վերադառնալուց հետո պատժել Շապուհին: Շապուհի հրամանով Արշակին կուրացրել և տանջամահ են արել, իսկ Վասակին՝ մորթազերծել:

Արշակ Բ–ին և հայոց պատմության այդ ժամանակաշրջանին են վերաբերում Րաֆֆու «Սամվել», Ս. Զորյանի «Հայոց բերդ», Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպերը, Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերան:

Գրկ. **Փավստոս Բյուզանդ**, *Հայոց պատմություն (աշխարհաբարի փոխադր. և ծնթգր.՝ Ս. Մալխասյանի), Ե., 1987:*



«Արշալոյս», *1915–17, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ*



«Արշալոյս Արարատեան», *1840–87, Զմյուռնիա*



«Արշալույս», *1935-ից, Նինոծմինդա*



«Արշավ», *1932–41, Թիֆլիս [№ 1 (3–4)]*



Արշալույս Արշարունու *«Մոսկվայի հայ մամուլը» (1971, Ե., «Հայաստան») գրքի տիտղոսաթերթը*



Արսեն Դպիր Կոստանդնուպոլսեցու *«Գիրք սահմանաց...»-ի (1749, Կ. Պոլիս, Ընչին Հովհաննեսի տպ.) տիտղոսաթերթը*

ԱՐՇԱԿՅԱՆ Գևորգ Լիպարիտի [28.2.1928, ք. Արմավիր (այժմ՝ ՌԴ Կրասնոդարի երկրամասում)–31.12.2002, Երևան], գրող: 1966–78-ին՝ *«Սովետական գրող»* հրատարակչության գլխ. խմբագրի տեղակալ, 1979–81-ին՝ մանկապատանեկան գրակ-յան խմբագրության գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Թրաշուշաններ» (1963), «Սև և սպիտակ կարապներ» (1966) վիպակները, «Դաղձի բույրը» (1972) վեպը, «Գնացքներ» (1977) պատմվածքների ժող-ը: Հեղինակ է նաև պիեսների՝ «Այս աշխարհի փոքրերը» (բեմ.՝ 1971), «Բակի վերջին գիշերը» (բեմ.՝ 1975):

Երկ. Հոգով խնդարը: Հուշապատում, Ե., 2003:

«ԱՐՇԱՎ», գրական-գեղ., հաս-քննադատ. հանդես: Լույս է տեսել 1932–41-ին Թբիլիսիում (1941-ին՝ «Գրական հանդես»): Խմբագիրներ՝ Վարդան ***Ալդյան***, Մ. Փիլթակյան, Ռուբեն ***Աղաբաբ:*** Նախապես եղել է Վրաստանի պրոլետ. գրողների ընկերակցության հայկ. բաժանմունքի, ապա՝ Վրաստանի գրողների միության պաշտոնաթերթը: Տպագրել է գրական-քննադատ. հոդվածներ, արձագանքել գրակ-յան և արվ-ի վերաբերյալ պաշտոն. որոշումներին, իր շուրջն է համախմբել Վրաստանի հայ գրողներին: Աշխատակցել են Հ. Հակոբյանը, Ս. Զորյանը, Ռ. Զարյանը, Մ. Դավթյանը, Հ. Սուրխաթյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Մ. Պետրոսյանը, Ծ. Թորգոմյանը, Մ. Դարբինյանը, Բ. Սեյրանյանը և ուր.: Տպագրել է նաև նմուշներ ԽՍՀՄ ժողովուրդների գրակ-ներից:

ԱՐՇԱՐՈՒՆՅԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գրական-հրատարակչ. հաստատություն: Հիմնադրվել է 1812-ին Կ. Պոլսում՝ Ղուկաս ***Ինճիճյանի*** գլխավորությամբ և մեծահարուստ Տյուզյանների դրամ. աջակցությամբ: Հրատարակել է *«Դիտակ Բիւզանդեան»* երկշաբաթաթերթը, շարունակել *«Եղանակ Բիւզանդեան»* տարեգրքի հրատ-ը, տպագրել Ղ. Ինճիճյանի «Ազգասէր» (1815) գիրքը ևն: Լուսավոր-ա-ռաջադիմ. գործունեությամբ այն մեծապես նպաստել է XIX դ-ի հայկ. մշակույթի զարգացմանը:

ԱՐՇԱՐՈՒՆԻ Արշալույս Միքայելի [17(29).11.1896, Կաղզվան (Կարսի մարզ)–21.10.1985, Մոսկվա], գրականագետ, բանասեր, թատերագետ: Պրոֆ. (1929): Արվ. վաստ. գործիչ (1960): Ալեքսանդրապոլում խմբագրել է «Կոմունիստ» (1920–21) և «Պրոլետար» (1921) թերթերը: Ա. Լունաչարսկու, Վ. Ֆրիչեի, Ն. Մառի հետ մասնակցել է ռուս. առաջին՝ «Գրական հանրագիտարանի» հիմնադրմանն ու խմբագրմանը:

Լույս են տեսել Ա-ու «Ըմբոստացումի ժամեր» (1918, Նոր Նախիջևան, Ս. Ավագյանի տպ.), «Հրուտ արփի» (1922) բանաստեղծությունների ժող-ները, «Հայ թատերագիտական մտքի պատմությունից» (1956), «Հայ ժողովրդական թատերախաղեր» (1961), «Մոսկվայի հայ մամուլը» (1971), «Նշանավոր գրքերի ճակատագրերը» (1973), «Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը» (1955, 2-րդ բրվիխ. հրտ.՝ 1982), «Բեխաիզմ» (ռուս., 1930), «Բաբիզմ» (ռուս., 1931) աշխատությունները: Ռուս. է թարգմանել հայ դասականների (Գ. Սունդուկյան, Շիրվանզադե, Նար-Դոս, Հ. Քոչար և ուր.) երկերից:

Երկ. Հանդիպումներ անցյալի հետ, Ե., 1969: Հուշանովելներ, Ե., 1977:
Գրկ. **Ավագյան Ս.**, *Արշալույս Արշարունի, Ե., 1981:*

ԱՐՍԵՆ ԴՊԻՐ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ (Արսեն Հարությունի Կեսարյան), XVIII դ-ի մշակույթի գործիչ, հանրագիտակ: Սովորել է Կ. Պոլսի Գում Գափուի Սայր դպրատանը: Կազմել է հայ. առաջին հանրագիտարանային (այբբեն.) բառարանը՝ **«Գիրք սահմանաց...»**-ը: Տպագրվել է 1749-ին Կ. Պոլսում՝ Ընչին Հովհաննեսի տպարանում՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հակոբ ***Նալյանի*** հրամանով: Գրաշարներ՝ տիրացու Անտոն և Սևանցի Իգնատիոս: Տիտղթ-ին՝ «Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց» (528 էջ, 8^0, 16 x 11,5 սմ): Բաղկացած է առաջաբանից, վերջաբանից, 2 աղոթքից և բուն բառարանից, ինչպես նաև Ղուկաս Վանանդեցու «Ի ըզբօսանս Հայկազունեաց» գրքից վերցրած «Բարք ոմանց կենդանեաց» համառոտ բառարանից: Բառարանը պարունակում է հին և միջնադարյան գիտ-յան տարբեր

բնագավառների՝ փիլ–յանը, աստվածաբանությանը, ինչպես նաև արվ–ներին ու արհեստներին վերաբերող շուրջ 1200 բառահոդված:

«ԱՐՎԵՍՏ», պատկերազարդ երկամսյա հանդես: Լույս է տեսել 1926–27–ին Երևանում: Խմբագիր՝ Արամ ***Երևման***: Անդրադարձել է ԽՍՀՄ ժողովուրդների, եվրոպ. ու արլ. արվ–ների հանգուցային հիմնահարցերին, հեղափոխությանը խորթ հոսանքներին (իմաժինիզմ, ֆուտուրիզմ) հակադրել խորհրդ. նոր արվ–ի սկզբունքները: Ճարտ–յան, երաժշտության և գեղարվ–ի տարբեր բնագավառների մասին հոդվածներ են տպագրել Վ. Գայֆեճյանը, Գ. Գյուրջյանը, Ն. Բունիաթյանը, Ա. Մայիլյանը, Մ. Դեմուրյանը, Կ. Զաքարյանը, Ս. Օգանեզաշվիլին և ուր.:

«ԱՐՎԵՍՏ», գիտատես., քննադատ. և գեղ. պատկերազարդ ամսագիր: ՀՀ մշակույթի նախարարության հրատ.: Լույս է տեսել 1932–96–ին Երևանում (1940–41–ին՝ «Խորհրդային արվեստ», 1943–55–ին՝ «Սովետական գրականություն և արվեստ» խորագրով՝ «Սովետական գրականություն» ամսագրի հետ, 1955–89–ին՝ «Սովետական արվեստ», 1989–ից՝ «Ա.»): Խմբագիրներ՝ Ազատ ***Վշտունի***, Սարգիս ***Մելիքսեթյան***, Գուրգեն ***Հովնան***, Սարգիս ***Բայանդուր***, Գուրգեն ***Առաքելյան***: Նպաստել է ժամանակի հայ արվ–ի ձևավորմանն ու զարգացմանը, ժող. ինքնագործունեության ծավալմանը, անդրադարձել է երկրում մշակութ. կյանքի լուսաբանմանը, ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի, Սփյուռքի և արտերկրի մշակութ. նորությունները, կազմակերպել բանավեճեր հայկ. երգի, ժող. երգարվ–ի, պարարվ–ի և այլ հարցերի շուրջ: Թղթակցել են անվանի արվեստագետներ, արվեստաբաններ, գրողներ (Մ. Սարյան, Փ. Թերլեմեզյան, Հ. Օրբելի, Գ. Լևոնյան, Հ. Բեկնազարյան, Հ. Գյուլիքևխյան, Դ. Դեմիրճյան, Վ. Թոթովենց, Գ. Մահարի և ուր.):



«Արվեստ», *1926–27, Երևան*

«ԱՐՏԲՐԻՋ» (“ArtBridge”), գրատուն–սրճարան Երևանում: Բացվել է 2001–ին: Հիմնադիր–տնօրեն՝ Շաքե Հավան Կարապետյան: Իր տեսակի մեջ բացառիկ է ՀՀ–ում, նպատակը գիրքն ու արվ–ը միասին ներկայացնելն է, համաշխ. մշակույթի և հայ արվեստասերի միջև կամուրջ դառնալը: «Ա.»–ում մշտապես ցուցադրվում են ժամանակակից նկարիչների ու արվեստագետների աշխատանքներ, կազմակերպվում գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ, ՀՀ մարզերում, սահմանամերձ գյուղերում, Ջավախքում՝ գրքի բարեգործ. ցուցահանդեսներ, ցուցահանդես–վաճառքներ, նվիրատվություններ գյուղ. գրադարաններին, մասնակցում է գրքի միջազգ. ցուցահանդեսների: Ջրաղվում է նաև հրատարակչ. գործունեությամբ:



«Արվեստ», *1932–96, Երևան (№ 1–2, 1993)*

«ԱՐՏԱՇԱՏ», հաս–քաղ., գրական–գեղ. կիսամսյա (մինչև 1990–ը՝ երկօրյա) թերթ: Արտաշատի քաղաքապետարանի (մինչև 1990–ը՝ ՀԿԿ Արտաշատի շրջկոմի, ժողպատգամավորների շրջ. և քաղ. խորհուրդների) պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1931–ից Արտաշատում (մինչև 1958–ը՝ «Հարվածային բրիգադ», ապա՝ «Հարվածային թեմա», «Բոլշևիկյան կոլխոզ», «Կոլտնտեսական կյանք»): Խմբագիրներ՝ Նորայր Մանուկյան, Մարգարիտ Հովհաննիսյան, Նելլի Բեգլարյան, Անահիտ Նիկողոսյան (2008–ից): Լուսաբանում է Արտաշատի մարզկենտրոնի և մարզի համայնքների կյանքը, անդրադառնում սոցիալ., տնտ., կրթ. և մշակույթի հիմնախնդիրներին, ծանոթացնում է տարածքի պատմ. հուշարձաններին, մշակութ. ու մարզ. առօրյային ևն: 1982–2010–ին լույս է ընծայել «Նավասարդ» գրական–գեղ., հաս–քաղ. հավելվածը, որը 2009–ին արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության «Հատուկ մրցանակի»:




«ԱրտԲրիջ» *գրատուն–սրճարանը Երևանում*

«ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ՍԱԹԵՆԻԿ», ժող. ավանդազրույց՝ հյուսված Հայոց Արտաշես Ա թագավորի և Ալանաց արքայադուստր Սաթենիկի ամուսնության շուրջ: V դ–ի ժող. երգիչներից բանաքաղել է Պատմահայր Մովսես Խորենացին («Պատմութիւն Հայոց», գիրք II, գլ. Ը): Ըստ զրույցի՝ ալանները, զավթելով Վրաց աշխարհի կեսը, խուժել են Հայաստան: Արտաշես արքան հաղթել է ալաններին և գերել նրանց



«Արտաշես և Սաթենիկ» *(2004, նկարիչ՝ Խորեն Հակոբյան)*



«Արտասահմանյան գրականություն», *2000-ից, Երևան (№ 1–2, 2012)*



«Արտէմիս», *1902–03, Կահիրե (№ 1, 1902)*

պատանի արքայազնին: Ալանաց թագավորը հաշտություն է խնդրել Արտաշեսից, որը կնքվել է Արտաշեսի և ալանաց արքայադստեր՝ գեղանի Սաթենիկի ամուսնության դաշինքով: Ըստ ավանդազրույցի՝ «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»:

Գրկ. **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց (աշխարհաբարի փոխադր., ներածությունը և ծնթգր.՝ Ս. Մալխասյանցի), Ե., 1997:*

«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», **«Արտգրականություն»,** թարգմ. գրակ-յան եռամսյա հանդես: ՀԳՄ հրատ.: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Խմբագիրներ՝ Աշոտ Խաչատրյան, Հակոբ Մովսես, Սամվել Մկրտչյան (2002–14): Տպագրում է համաշխ. գրակ-յան դաս. և ժամանակակից հայտնի գրողների արձակ ու չափածո ստեղծագործություններ (2002-ից՝ բացառապես բնագրից), հայ ընթերցողին է ներկայացնում հեղինակների գրական համառոտ կենսագրությունները:

«ԱՐՏԱՎԱԶԴ», ժող. ավանդազրույց Հայոց Արտավազդ Ա թագավորի մասին: Գողթն գավառի ժող. երգիչներից V դ-ում բանաքաղել է Մովսես Խորենացին («Պատմութիւն Հայոց», գիրք II, գլ. ԿԱ): Ըստ ավանդազրույցի, երբ մահացել է Արտավազդի հայրը՝ Արտաշես Ա թագավորը, հեթանոս. սովորության համաձայն, կատարվել են բազմաթիվ զոհաբերումներ: Գահաժառանգ Արտավազդը սրտնեղելով՝ հորն ասել է. «Մինչ դու գնացեր եւ զերկիրս ամէնայն ընդ քեզ տարար, Ես աւերակացս որպէս թագաւորեմ», որի համար Արտաշեսն անիծել է որդուն: Ըստ Պատմահոր՝ Արտավազդը շղթայակապ բանտված է Մասիսի մի քարանձավում, և դարբինների անընդհատ կռանահարության ձայնից ամրանում են նրա շղթաները, որպեսզի նա չկարողանա դուրս գալ:

Ըստ Եզնիկ Կողբացու՝ հին հայերն Արտավազդին վերագրել են նաև դրական հատկանիշներ: Նրանք հավատացել են, որ կգա ժամանակ, երբ աշխարհի գոյության սպառնալից պահին Արտավազդը կխորտակի իր կապանքները, կմարտնչի չարի դեմ և կհաղթանակի: Զրույցում Արտավազդը նմանության գծեր ունի հայկ. էպոսի՝ «Սասնա ծռերի» հերոս Փոքր Մհերի հետ:


Գրկ. **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց (աշխարհաբարի փոխադր., ներածությունը և ծնթգր.՝ Ս. Մալխասյանցի), Ե., 1997:* **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց, Ե., 1994:* **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. Ա, Ե., 1960, էջ 148–149:* **Ավդալբեգյան Թ.**, *Միհրը հայոց մեջ, «Հայագիտական հետազոտություններ», Ե., 1960, էջ 62–63:*

«ԱՐՏԷՄԻՍ», ընտանեկան և գրական հանդես: Լույս է տեսել 1902–03-ին Կահիրեում, ապա՝ Ալեքսանդրիայում («Օրգան քսաներորդ դարու հայ կանանց» վերտառությամբ): Հիմնադիր և տնօրեն-խմբագիր՝ Մառի *Պէյլերյան* (Նագգուշյան): Եղել է հայ կանանց հաս. ձգտումների արտահայտիչն ու շահերի պաշտպանը, նպաստել նրանց մտավոր և ֆիզ. զարգացմանը, արծարծել կանանց իրավահավասարության հարցեր, անդրադարձել բնաշխարհից կտրված գաղթական կանանց բարոյական նկարագրին: Տպագրել է Վ. Թեքեյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Զ. Գալեմքյարյանի և ուր. գրական ստեղծագործություններից, ռուս և արևմտաեվրոպացի դաս. գրողների՝ Լ. Տոլստոյի, Յ. Վ. Գյոթեի, Պ. Շելլիի, Վ. Սկոտի, Ա. Ս. Բլեքուելի, Ք. Ռոզետտիի՝ գլխավորապես կնոջ ներաշխարհը պատկերող գործերի թարգմանություններ (Ռ. Փ. Դեունգի «Կինը, իր հրապոյրը եւ ուժը»): «Մատենախոսություն» բաժնում գրախոսվել են գրական հրատ-ներ, արձագանքել է մշակութ. իրադարձություններին:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», ԱրՊՀ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1997-ից Ստեփանակերտում (1994-ին մի քանի համար տպագրվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համալսարան» անվանումով, խմբագիր՝ Արտակ Ղուլյան): Խմբագիրներ՝

Գրիգոր Դանիելյան, Սեյրան Բալայան: Լուսաբանում է համալսարանի գիտակրթ. կյանքը, ուսանողության մարզամշակութ. առօրյան, անդրադառնում է միջհամալսարան. կապերին, համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին: Տպագրում է բուհի շնորհալի ուսանողների գրական գործերից:

«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», գիտաուսումնամեթոդ. հանդես: ԱրՊՀ-ի հրատ.: Լույս է տեսնում 1998-ից Ստեփանակերտում (անկանոն պարբերականությամբ): Խմբագիրներ՝ Համլետ Գրիգորյան, Ստեփան Դադայան (2008-ից), պատ. խմբագիր՝ Սոկրատ *Խանյան:* Տպագրում է համալսարանում կազմակերպվող գիտաժողովների նյութերը, բուհի դասախոսների և երիտասարդ մասնագետների հայ. և ռուս. ուսումնասիրություններ (ամփոփումներով), հոդվածներ:



«Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», *1998-ից, Ստեփանակերտ [№ 3(16), 2007]*

ԱՐՈՒԶ ԽԱԹՈՒՆ, հավանաբար XVII դ-ի մանրանկարչուհի: XIV, XV, XVII դդ-ի Ավետարանների պատառիկներից բաղկացած մի ձեռագրում (Մատենադարան, ձեռ. № 9230) պահպանվել են Ա. Խ-ի նկարազարդած Ավետարանի 9 տերուն. պատկերները («Ավետում», «Ոտնլվա», «Քրիստոսի չարչարանքները», «Ծառազարդար», «Դժոխքի ավերումը», «Համբարձում», «Հոգեգալուստ» ևն): «Ավետում» պատկերի դարձերեսին Ա. Խ. թողել է իր ստորագրությունը:

ԱՐՈՒՏՅԱՆ Միքայել Ավետի [6(18).7.1897, Շուշի–9.7.1961, Մոսկվա, գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1935), ժող. նկարիչ (1958): Սերգեյ *Արուտյանի* եղբայրը: Ավարտել է Սարատովի բարձրագույն գեղ-տեխ. արվեստանոցները (1919), սովորել Բեռլինի համալսարանում (1921–23), Փարիզի Կոլառոսսի գեղարվ-ի ակադ-ում (1924–25): 1925–29-ին դասավանդել է ԵԳՈՒՀ-ում: 1926–27-ին եղել է «Կարմիր մոծակ» երգիծ. թերթի գլխ. նկարիչը: 1949-ից ապրել է Մոսկվայում:

Ա. նկարազարդել և ձևավորել է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» (1927), Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» (1931), Մ. Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմություն» (1934), Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտ» (1934–35), Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» (1934), Ա. Պուշկինի «Կապիտանի աղջիկը» (1936), «Եվգենի Օնեգին» (1949), Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1948), Պ. Պոռշյանի «Հացի խնդիրը» (ռուս., 1950), Գրիգոլ Աբաշիձեի «Սարեր և ժայռեր» (ռուս., 1956), Ֆ. Վոլտերի «Ընտիր երկեր» (1958) գրքերը:

Գրկ. Միքայել Արուտչյան (ալբոմ, կազմ.՝ Ն. Մազմանյան), Ե., 1984: Արուտչյան Միքայել, Սերգեյ, Ռուբեն (ալբոմ-կատալոգ), Ե., 2013:




Միքայել Արուտչյան. *Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» (1934, Ե., Հայպետհրատ) գրքի պատկերազարդումներից*

ԱՐՈՒՏՅԱՆ Ռուբեն Սերգեյի (ծ. 18.6.1947, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող, ճարտարապետ: Վաստ. նկարիչ (2012): Սերգեյ *Արուտչյանի* որդին: Ավարտել է ԵԳՈՒ (1964), ԵՊԻ (1970): 1978–92-ին դասավանդել է ԵԳԹԻ-ում: 1990–92-ին և 2001-ին եղել է Երևան ք-ի գլխ. նկարիչը:

Ձևավորել է Սիմոն Հակոբյանի «Գոտեմարտ» (1994), Սամվել Ղարիբյանի «Նոր Բաբելոն» (ռուս., 1995), Նելլի Աղաջանովայի «19 տարվա կյանքը» (ռուս., 1997) գրքերը, «Արուտչյան Միքայել, Սերգեյ, Ռուբեն» (հայ., ռուս., անգլ., 2013) ալբոմը: Հեղինակ է ծանրամարտի աշխարհի առաջնության (1983, Երևան), Հայաստանի անկախության հանրաքվեի (1991, Երևան) և այլ միջոցառումների ձևավորումների, ՀՀ 50-հզ-անոց թղթադրամի էսքիզի (ՀՀ Կենտր. բանկի 1-ին մրց., 2000), ՀՀ ՊՆ զինանշանի, շքանշանների, մեդալների:

1-ին մրց-ներ (ՀՀ Կենտր. բանկի, 2001՝ հայկ. դրամի խորհրդանշանի էսքիզի, 2007՝ ԼՂՀ Շուշի ք-ի զինանշանի համար), ԼՂՀ «Երախտագիտություն» մեդալ (2012):

Գրկ. Արուտչյան Միքայել, Սերգեյ, Ռուբեն [ալբոմ-կատալոգ], Ե., 2013:



Ռուբեն Արուտչյան. *Ս. Հակոբյանի «Գոտեմարտ» (1994, Ե., «Տնտեսագետ») գրքի կազմը*


ԱՐՈՒՏՅԱՆ Սերգեյ Ավետի [6 (19).6.1912, Բաքու–27. 8. 1986, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1956), ժող. նկարիչ (1965): Միքայել *Արուտչյանի* եղբայրը, Ռուբեն *Արուտչյանի* հայրը: Ավարտել է ԵՊԻ (1937): 1933-ից հանրապետ. և միութ. մամուլում




Սերգեյ Արուտչյան. *«Ժպիտ և ցասում» (1962, Ե., Հայպետհրատ) ալբոմի կազմը*



«Արփի», *1913-14, Թիֆլիս*



«Արփի», *1932-39, Օլսթոն (№ 2, 1932)*



«Արփի», *1949–56, Թեհրան (№ 6, 1950)*

պարբերաբար տպագրվել են Ա-ի ծաղրանկարներն ու պլակատները: 1941–45-ին եղել է «Հայկական հեռագրական գործակալության պատուհանի», 1954–64-ին՝ *«Ոզնի»* հանդեսի գլխ. նկարիչը:

Հրատարակել է «Ժպիտ և ցասում» (1962), «Նայում եմ տեսնում» (1967), «Առանց դիմակի» (1972) ծաղրանկարների ալբոմ-ժող-ները, «Ս. Ա. Արուտչյան» (1982) ալբոմը:

Գրկ. Արուտչյան Միքայել, Սերգեյ, Ռուբեն (ալբոմ-կատալոգ), Ե., 2013:

«ԱՐՓԻ», պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1913–14-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հայկ Տեր-Աստվածատրյան: Քննարկել է հաս., քաղ. խնդիրներ, անդրադարձել Բալկանյան պատերազմներին (1912–13), արևմտահայության ապագան կապել Ռուսաստանի արլ. քաղաքականության հետ: Անդրկովկասում կապիտալիստ. հարաբերությունների զարգացման ջատագովներից էր, խրախուսել է տեղ. արդ-յան հզորացումը: «Թատրոն», «Երաժշտություն», «Ծիծաղ», «Խելքի աշխարհ» և այլ բաժիններում լուսաբանել է Թիֆլիսի և ընդհանրապես հայկ. մշակութ. կյանքը, տպագրել երգիծ. մանրապատումներ ու ծաղրանկարներ:

«Ա.»-ում հրապարակվել են հայ գրողների ստեղծագործություններ, թարգմանություններ ռուս և եվրոպ. գրակ-ից:

«ԱՐՓԻ», գրական-հաս. ամսագիր (սկզբում՝ կիսամսյա): Հայ ընտանեկան պարբ.: Լույս է տեսել 1932–36-ին Օլսթոնում (ԱՄՆ): Խմբագիր՝ Արմենակ Բարսեղյան: Ամերիկաբնակ հայերին ծանոթացրել է հայ ժողովրդի անցյալի ու ներկայի հոգևոր-մշակութ. արժեքներին, նպաստել հայապահպան ծրագրերին: Տպագրել է հանրամատչելի նյութեր հայոց պատմության ու գրակ-յան, Հայաստանի աշխարհագրության, ազգ. ավանդույթների ու սովորույթների վերաբերյալ: «Մեր նոր սերունդը» բաժնում մշտապես հրապարակել է երեխաների գրած հայրենասիր. թեմաներով շարադրություններ, սփյուռքահայ դպրոցների մասին լուրեր են: Տպագրել է հեքիաթներ, պատմվածքներ, ոտանավորներ ու առակներ:

«ԱՐՓԻ», գրական, գիտ. և հաս. ամսագիր: Լույս է տեսել 1949–1956-ին Թեհրանում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հովսեփ *Թադևոսյան*: Տպագրել է գրական-գեղ., արվեստաբան. նյութեր, տեղեկություններ, թարգմանություններ եվրոպ. և հատկապես ռուս գրակ-ից (Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ի. Տուրգենև և ուր.), մեծ տեղ է հատկացրել խորհրդահայ գրակ-յանը: «Ա.» անդրադարձել է հայկ. (առավելապես՝ իրանահայ) կյանքին, ինչպես նաև միջազգ. քաղ. կարևոր նորություններին: Աշխատակցել են Դևը, Լ. Բզնունին, Հ. Թամրազյանը և ուր.:

1950-ից ամսագրին կից հրատարակվել է «Արփի» մանկ. հավելվածը, որտեղ տպագրվել են բանաստեղծություններ, հեքիաթներ, պատմվածքներ, մանկ. խաղեր:

«ԱՐՓԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ», բանասիր., ազգ., ուս. և տնտ. ամսաթերթ: Լույս է տեսել 1853–56-ին Զմյուռնիայում: Խմբագիրներ՝ Պ. Հայրապետյան, Շահվեքիլյան, հրատարակիչներ՝ Հարություն, Կարապետ և Սարգիս *Տեփեյաններ:* Առաջին հայ. պարբ-ն է, որն ունեցել է հավելվածներ: Կարևորել է ազգ. լուսավորության և կրթամշակութ. ընկերություններ հիմնելու խնդիրները: Ազգ. հոգևոր արժեքները և հայոց պատմ. անցյալն արժևորելու նպատակով տպագրել է բանասիր. հոդվածներ, հայ թագավորների զինանշաններ, պատմ. թեմաներով չափածո գործեր: Տպագրել է Հ. Ալամդարյանի, Ռ. Փափազյանի, Հ. Անդրեյանի բանաստեղծություններից, Ֆ. Շատոբրիանի, Ա. Լամարթինի գործերից, նաև «Մարսելյոզ»-ի հայ. թարգմանությունը: Ամսաթերթում նյութեր են հրատարակել Գ. Չիլինկիրյանը, Հ. Պալապանյանը, Մեսրոպյան վարժարանի աշակերտներ:

ԱՐՓԻԱՐՅԱՆ Արփիար Փիլիպոսի [21.12.1851, Սամսուն (Թուրքիա)–12.2.1908, Կահիրե, սպանվել է ահաբեկչի ձեռքով], գրող, հրապարակախոս, գրաքննադատ, խմբագիր, հաս-քաղ. գործիչ: Հնչակյան կուս-յան անդամ (1895–1901): Տիգրան ***Արփիարյանի*** եղբայրը: Սովորել է Կ. Պոլսի Թարգմանչաց, ապա՝ Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարաններում. աշակերտել է Ղևոնդ ***Ալիշանին:*** 1870-ին վերադարձել է Կ. Պոլիս, որպես քարտուղար՝ պաշտոնավարել պատրիարքարանում: Մի խումբ ընկերների հետ 1876-ին ստեղծել է Արարատյան ընկերություն հայոցը, որն ունեցել է կրթ. և լուսավոր. նպատակներ: 1878-ից թղթակցել է «Մշակ» թերթին: 1884-ին համախոհների հետ հիմնել է ***«Արեւելք»*** օրաթերթը: 1884–90-ին (փոքր ընդմիջումներով) խմբագրել է ***«Մասիս»***, 1891–95-ին՝ ***«Հայրենիք»*** պարբ-ները, որոնց շուրջ համախմբել է ժամանակի ականավոր գրողների՝ Գ. Զոհրապին, Տ. Կամսարականին, Լ. Բաշալյանին և ուր.:

1897–1901-ին Լոնդոնում խմբագրել է ***«Մարտ»***, 1898–1901-ին՝ ***«Նոր կյանք»*** (Լևոն ***Բաշալյանի*** հետ) պարբ-ները: 1901–03-ին Վենետիկում հրատարակել է ***«Հայ հանդէսը»***, որտեղ տպագրվել է նաև նրա լավագույն գործերից՝ «Կարմիր ժամուց» վեպը՝ 1880–90-ական թթ-ին Արմ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: 1905-ից ապրել է Կահիրեում, խմբագրել ***«Լուսաբեր»*** թերթն ու ***«Շիրակ»*** հանդեսը: Հոդվածներում արծարծել է սոցիալ-քաղ. ու մշակութ. հարցեր:

Ա. գեղ. երկերում արտացոլել է սոցիալ-բարոյական խնդիրներ, արևմտահայության քաղ. ծանր վիճակը:

Լույս են տեսել Ա-ի «Նորավէպք: Երազի մը գինը», «Կատակ մը», «Դատապարտեալը» (երեքն էլ՝ 1885), «Ապուշը» (1886, բոլորը՝ ԿՊ, «Արեւելքի» տպ.) նորավեպերը, «Կարմիր ժամուց» (1909, Վառնա, «Իրավունքի» տպ., 1920, 1937, Բ., «Ազդակի» տպ., 1950, Կահիրե, «Նուպար» տպ., 1979, 1992, Բ.) վեպը, «Ոսկի ապրջան» (հրտ.՝ 1988, 2011, Բ.) վիպակը: Ա. բարձր է գնահատել արևելահայ գրակ-ը և ջանացել է մերձեցնել արևելահայ ու արևմտահայ հատվածների գրական ուժերը:

Հանդես է եկել նաև Հայկակ, Հրազդան, Սկեպտիկ, Հրպետ և այլ գրական կեղծանուններով:

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1951: Ամբողջական երկեր, Երեւաղեմ, 1972: Երկեր, Ե., 1987: Պատմուածքներ եւ վիպակներ, Փարիզ, 1931: Պատմութիւն ԺԹ դարու Թուրքիոյ հայոց գրականութեան, Կահիրե, 1943: Ժամանակակից պատմութեան էջեր, Բոստոն, 1979:

Գրկ. **Յակոբեան Ս.**, *Արփիար Արփիարեան: Կեանքն ու գրական գործունէութիւնը, Վնն., 1922:* **Մտեփանյան Գ.**, *Արփիար Արփիարյան, Ե., 1955:* **Շահպազ Ս.**, *Արփիար Արփիարեան, Բ., 1987:* **Մուրադյան Լ.**, *Արփիար Արփիարյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1991:*




Արփիար Արփիարյան



Ա. Արփիարյանի *«Կարմիր ժամուց» (1992, Բեյրութ, ձևավորող՝ Ա. Մանգասարյան) գրքի կազմը*

ԱՐՓԻԱՐՅԱՆ Տիգրան Փիլիպոսի (1854, Կ. Պոլիս–1914), հրապարակախոս: Արփիար ***Արփիարյանի*** եղբայրը: Սովորել է Կ. Պոլսի Թարգմանչաց վարժարանում: 1885–86-ից աշխատակցել է ***«Արեւելք»***, ***«Մասիս»*** պարբ-ներին, ապա եղել խմբագիրը: Գրել է հրապարակախոս. հոդվածներ, նովելներ:

«ԱՐՕՐ», գրական, հաս-քաղ., գիտ. միամսյա հանդես: Լույս է տեսել 1910–13-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Համբարձում ***Առաքելյան***: Ծանոթացրել է ազգ. գրակ-յանը, հայագիտ. ուսումնասիրություններին, համաշխ. գրակ-յան լավագույն երկերին, նպաստել երիտասարդ ու շնորհալի գրական և գիտ. ուժերի հրապարակ գալուն: «Ա.»-ում տպագրվել են Ա. Արփիարյանի, Ա. Աբելյանի, Լ. Մանվելյանի, Հ. Առաքելյանի (Շահիրիար), Գ. Բաշինջաղյանի, Հ. Սոլովյանի, Հ. Թիրյաքյանի, Ռ. Խանազատի գրական գործերից, Գ. Դոդոխյանի, Պ. Ադամյանի բանաստեղծություններից, թարգմանություններ՝ Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Լ. Տոլստոյի, Տ. Շևչենկոյի, Ա. Չեխովի, Մ. Գորկու, Ռ. Բյոռնսի, Հ. Հայնեի, Է. Զոլայի ստեղծագործություններից: 1910–11-ին առանձին թերթոնով հրատարակվել է Վ. Հյուգոյի «Իննսուներեքը» վեպը: Բանասիր., լեզվաբ., պատմագիտ. նյութեր



«Արօր», *1910–13, Թիֆլիս (№ 1, 1912)*



««Արօր»-ի պատկերազարդ օրացոյց», *1893–96, Բաքու*



«Ափ», *2008-ից, Երևան (№ 1–2, 2012)*



Աբգար Ափինյանի *«Արդի գրականություն» (2010, ե., «Նոր-Դար») գրքի կազմը*

են տպագրել Ս. Մալխասյանը, Դ. Անանունը, Հ. Սուրխաթյանը, Պ. Թումանյանը, գիտնականներից՝ Ն. Մառը, Յ. Վեսելովսկին և ուր.: Արժեքավոր են Ա. Սարուխանի «Օսմանեան հայերի ազգային Սահմանադրութիւնը» (28 առանձին և միացյալ համարներում) աշխատությունը, Մ. Նաթանյանի «Արփիար Արփիարեան», Խ. Սամուելյանի «Եկեղեցական-պետական յարաբերութիւնները հին Հայաստանում» ուսումնասիրությունները:

Տպագրվել են Լ. Հաուպտի «Հայաստանն առաջ և հիմա» աշխատությունը, Ի. Մեչնիկովի, Հ. Հելմհոլցի գիտ. հոդվածները: «Հայկական կյանք» բաժնում «Ա.» հետևողականորեն լուսաբանել է արևելահայ ու արևմտահայ հաս. կյանքը, անդրադարձել Ռուսաստանում և աշխարհում տեղի ունեցող քաղ. իրադարձություններին:

««ԱՐՕՐ»-Ի ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑ», հանրագիտ. տարեգիրք: Լույս է տեսել 1893–96-ին (1894–97 թթ-ի համար) Բաքվում, միջին ծավալը՝ 160 էջ: Տպագրել է պատմ. փաստաթղթեր Արլ. Հայաստանի Ռուսաստանին միանալու վերաբերյալ, հայկ. գաղթավայրերի մասին ընդարձակ հոդվածներ ու վիճակագր. տեղեկագրեր, հայ և այլազգի հաս. ու գրական գործիչների կենսագրականներ, մշակութ. լուրեր:

«ԱՈՒՐՈՐԱ» («Aurora»), հայագիտ. կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1906-ին Բուխարեստում՝ ռում.: Խմբագիր՝ Վարդան ***Մեշտուճյան:*** Տպագրել է հայոց պատմությանը նվիրված Վ. Մեշտուճյանի ընդարձակ ուսումնասիրությունը, պատմաբանասիր. և հայագիտ. նյութեր, աշխատություններ՝ հայկ. գաղթավայրերի պատմության, ռումինահայ արվ-ի և ճարտ-յան, այդ թվում՝ նշանավոր մարդկանց կենսագրություններ, ռումին գիտնական Բ. Հաժդեայի ուսումնասիրությունը Ռումինիայի Արճեշ վանքի վերաբերյալ, թարգմանություններ՝ հայ գեղ. գրակ-ից (Պ. Դուրյան, Մ. Պեշիկթաշլյան, Գ. Զոհրապ և ուր.): Անդրադարձել է Սիլդովայի Հայ կտրիճվորաց եղբայրության գործունեությանը: «Ա.» նպաստել է հայ և ռումին ժողովուրդների բարեկամությանը:

«ԱՓ», հաս., մշակութ., բնապահպան. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 2008-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Նովիկ Դարբինյան: Անդրադառնում է ՀՀ հաս-քաղ., տնտ., սոցիալ., էկոլոգ., գրական-մշակութ. կյանքին: Աշտ. խորագրերն են՝ «Օրը ափի մեջ», «Գորդյան հանգույցներ», «Բեթհովենը, թե Գյոթեն», «Մենք թռչուններ չենք, որ ցրտերին չվենք մեր երկրից...», «Ռոմեո և Ջուլիետ», «Կանացիությունը գեղեցիկ հատկանիշ է...», «Այս ինչ է կատարվում աշխարհում», «Ակոս» ևն:

ԱՓԻՆՅԱՆ Աբգար Գևորգի (ծ. 5.2.1960, Վանաձոր), գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1986): Ավարտել է ԵՊՀ (1982): 1987-ից դասավանդում է Երևանի բուհերում: 1994–96-ին՝ Սայր աթոռ Սբ Էջմիածնի մամլո դիվանի պետ, 1995–2003-ին՝ ***«Նոր-Դար»*** ամսագրի հիմնադիր-խմբագիր, միաժամանակ, 1996–2001-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 2001-ից՝ ՀԳՄ «Նոր-Դար» ընկերության նախագահ: 2011-ից «Մշակույթ» համահայկ. հիմնադրամի գործադիր տնօրենն է. հիմնադրամն աջակցում է ՀՀ-ի և Սփյուռքի հայ արվեստագետների ստեղծագործությունների հրատարակմանը, տարածմանը, նպաստում նրանց մշակութ. համագործակցությանը, պաշտպանում հեղինակային իրավունքները:

Լույս են տեսել Ա-ի «Ստեփան Զորյանը և ռուս գրականությունը» (1988), «Գրականություն և ճակատագիր» (1997), «Կարմիր լիալուսին. Վարդան Գրիգորյանի պատմավեպը» (1997), «Սիրո տարածություն» (1999), «Ստ. Զորյան. Արձակի արվեստը» (2009), «Արդի գրականություն» (2010), «Մշակույթ և գրականություն» (2012) աշխատությունները:

ԱՓԻՆՅԱՆ Կարապետ Գևորգի (31.10.1870, Ալեքսանդրապոլ–26.6.1944, Երևան), հրատարակիչ-խմբագիր, մանկավարժ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1894): Լույս է ընծայել «Շիրակ» պատի և գրպանի օրացույցները 1899–1921 թթ-ի համար: 1902–07-ին տպագրել է «Ալեքսանդրապոլսկիե օբյավլենիյա» ռուս. թերթը: 1907–14-ին խմբագրել և հրատարակել է ***«Ախուրեան»*** օրաթերթը: Գրել է հրապարակախոս. հոդվածներ, «Ս. Էջմիածնի հիմնարկութեան 1600 ամեակը» (1902, Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.) ուսումնասիրությունը:

ԱՓԻՆՅԱՆ Նվարդ Աղաբեկի, **Ոստիկ** (2.4.1882, Ալեքսանդրապոլ–2.7.1958, Երևան), հաս-գրական գործիչ, մանկավարժ, խմբագիր: Սովորել է Ալեքսանդրապոլի ռուս. իգական գիմնազիայում: 1903 թվականի համար հրատարակել է հայ կանանց «Ախուրեան» օրացույց-հանդեսը (1902, Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.): Հրապարակախոս. հոդվածներ է տպագրել «Գեղարուեստ», «Յուշարար», «Ախուրեան» և «Շիրակ» պարբ-ներում: Թարգմանել է Ն. Կրուպսկայայի, Վ. Հյուգոյի, Օ. Ուայլդի և ուր. մանկավարժ. և գեղ. ստեղծագործություններից:

«ԱՓՐԻԿԷ», քարտեզ: Տպագրվել է 1786-ին Վենետիկում: Փորագրիչ՝ Եղիա ***Էնփազյան:*** Անվանացույց՝ «Ափրիկէ ըստ նոր աշխարհագրական զննութեանց՝ փորագրեալ ի Վէնէտիկ ի վանս սրբոյն Ղազարու...», չափերը՝ 79 x 57 սմ, անվանացույցը քարտեզի ներքևի ձախ անկյունում է՝ զարդանկարի մեջ:

«Ափրիկէ», *քարտեզ (1786, Վնտ., փորագրիչ՝ Եղիա Էնփազյան)*



ԱՓՈՒՋԱՆՅԱՆ Ֆահրադ Արամայիսի [ծ. 10.9.1950, գ. Արևաշող (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], մանկավարժ, լրագրող, խմբագիր: Ավարտել է Գյումրիի (1972) և Վանաձորի (1978) մանկավարժ. ինստ-ները: 1996-ից՝ ***«Լուսարձակ»*** թերթի խմբագիր:

Լույս են տեսել Ա-ի «Քնարավան» (2004) ուղեգրությունը, «Արևաշող» (2009), «Երանելի երկիր... Սպիտակ» (2012) ազգագր., պատմ. գործերը:

Ժուռնալիստների միջազգ. դաշնության դիպլոմ (2004), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2006), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ:

ԱՔԻՄՅԱՆ Գևորգ (1829, Թիֆլիս–1911, Թիֆլիս), հաս. գործիչ, թարգմանիչ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1844–46) և Դորպատի համալսարանում (1848–52): Դորպատում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը (ձեռագիր) տարածել է ուսանողների շրջանում, իսկ 1858-ին Հովսեփ Փոնդոյանի հետ տպագրել է Թիֆլիսում (Ներսիսյան դպրոցի տպ.): Հայ. է թարգմանել գերմ. մանկ. գրակ-յան նմուշներ:

ԱՔՐԸՅԱՆ Կարապետ (1867–1900), բանասեր, հանրագիտակ: Սովորել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում: 1891-ին Վենետիկի Սբ Ղազարի տպարանում լույս է ընծայել «Նոր կաղանդչէք: Համառօտ կենսագրութեամբ երեւելի արանց» հանրագիտ. բնույթի գիրքը:

ԱՖՐԻԿՅԱՆ Ֆրեդ Գուրգենի [ծ. 25.3.1937, ք. Արթիկ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], ճարտարապետ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵՊԻ (1961):

Ֆրեդ Աֆրիկյան



Զարդապատ



«Մարդ միստիկական» (2007, Ե., «Ասողիկ») գրքի կազմը

Ձևավորել է շուրջ 400 գիրք՝ Պ. Սևակի Երկերի ժող-ը (հ. 1–6, 1972–76), Ա. Իսահակյանի «Ծանոթ և անծանոթ էջեր» (1988), Գ. Բրուտյանի «Իմաստասիրությունը երկխոսություններում» (1975), Մ. Քոչարյանի «Հոլբախը և արդիականությունը» (ռուս., 1987), Գրիգոր Նարեկացու «Սատյան ողբերգության» (ռուս., 1984), «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (ռուս., 1982), Ռ. Մելիքյանի «Զմրուխտի» (1983), Գ. Կարապետյանի «Աշխարհի ողջ ոսկին» (1987), Վ. Աստվածատրյանի և Ա. Հարությունյանի «Բժշկական էթիկա» (1984), «Նամակներ փառքի և անմահության» (1975), «Աֆորիզմներ» (1995), «Պոեմ էակի» (2000), «Օրհներգումն արեգական» (2000), «Մարդ միստիկական» (2007, վերջին 4-ի հեղինակ՝ Ա.) գրքերի կազմերը: 1984-ին հրատարակել է «Տառարվեստ» ալբոմը (150 հայկ. գեղ. տառատեսակներ), 2011-ին՝ «Հայ գիր» կատալոգը (200 նոր տպագր. տառատեսակ): Հեղինակ է թերթերի գլխագրերի («Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Գրքերի աշխարհ», «Հայաստանի Հանրապետություն», «Ազատամարտ»), տարբերանշանների (Ճարտարապետների միության, Հայպետնախագիծ ինստ-ի), ՀՀ մեդալների («Հայրենիքին մատուցած ծառայության համար», «Արիության», «Մարտական ծառայության»):


Երևան-Ապարան խճուղու ձախ կողմում 2005-ին տեղադրվել են Ա-ի հայոց այբուբենի տուֆակերտ տառարձանները («Տառերի պուրակ»):

Գրքարվ-ի հանրապետ. մրցանակաբաշխության 3-րդ կարգի մրց. (2012, Երևան), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2012):

Բ

Բ, հայ. այբուբենի 2-րդ տառը, անվանումը՝ «բեն»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար և դրա աջ կողմում հավասար հեռավորությամբ կարճ և լայն տարրերից. կարճը հորիզոն. նուրբով երկարին է միանում վերին ծայրից, լայնը՝ մեջտեղից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Բ, որպես այբուբենի 2-րդ տառ, նշանակել է երկու և երկրորդ, բյուրի նշանով (Բ՝)՝ 20 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Բ-մաս 2-րդ):



ԲԱԲԱՅԱՆ Արամ Սահակի [1904, գ. Փայաջուկ (Իրանի Սալմաստի գավառ)–1982, Երևան], բանասեր, մատենագետ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ավարտել է ԵՊՀ իրավատնտեսագիտության ֆակ-ը (1928), Մոսկվայի բարձրագույն մատենագիտ. դասընթացները: Աշակել է հայկ. գրադարանային տերմինաբանություն:

Լույս են տեսել Բ-ի «Գրադարանային տերմինների բառարան. ռուս-հայերեն, հայ-ռուսերեն» (1950), «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում» (1959), «Հայ գիրքը և տպագրությունը» (1963), «Լրացումներ և փոփոխություններ տպագիր երկերի նկարագրության միասնական կանոնների մեջ» (1969) և այլ աշխատություններ, «Հեղինակային աղյուսակներ: Երկանիշ և եռանիշ» (1977) ձեռնարկը: Խմբագրել է «Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ» (1955) մատենագիտ. գիրքը, «Հայաստան» (1965) երկրագիտ-հայագիտ. տարեգիրքը:

Երկ. Армянские литературные связи (1920–1960). Материалы к библиографии, Е., 1960.



Արշալույս Բաբայան

ԲԱԲԱՅԱՆ Արշալույս Հարությունի [27.12.1906, գ. Խդրանց (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–30.7.1990, Երևան], գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1965): Գիտ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ (1929): 1938–45-ին՝ ՀՊՄԻ բանասիր. ֆակ-ի դեկան, 1960–64-ին՝ պրոռեկտոր, 1944–48-ին՝ *«Գրական թերթի»* խմբագիր:

Լույս են տեսել Բ-ի «Հայրենական մեծ պատերազմի շրջանի սովետահայ գրականության մի քանի բնորոշ գծերը» (1952), «Չարենցը Հոկտեմբերի երգիչ» (1958), «Պերճ Պռոշյան» (1962), «Չարենցը և Հոկտեմբերը» (1967) աշխատությունները:

ԲԱԲԱՅԱՆ Վարդգես Հակոբի [15.5.1925, գ. Այգեստան (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում)–23.5.2005, գ. Այգեստան], բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր, լրագրող: Ավարտել է ՀՊՄԻ (1950), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ը (1957): Եղել է «Սովետական Հայաստան» թերթի սեփական թղթ., դպրոցի տնօրեն, 1966–90-ին՝ *«Սովետական գրող»* հրատարակչության բաժնի վարիչ:

Լույս են տեսել Բ–ի «Բողբոջներ» (1956), «Մասրենի» (1959), «Յուրայինները» (ռուս., 1967), «Անունը քո» (ռուս., 1970), «Աշխարհը իմ տունն է» (ադրբ., 1980), «Սոսյաց անտառ» (1981), «Բարդի» (վրաց., 1985), «Փոթորկի ծարավ» (1985), «Հեքիաթ ճշմարտության մասին» (1987), «Երկինք և երկիր» (1990), «Սևեռումներ» (1992), «Առանց թզենու տերևի: Երգիծանք» (2004) բանաստեղծությունների և պոեմների ժող–ները: Թարգմանել է Ց. Ռայնիսի, Ս. Մարշակի, Ա. Սուրկովի, Վ. Կուզնեցովի, Հ. Ռեգիստանի և ուր. ստեղծագործություններից:

Հայրեն. մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշան:

ՀԳՄ Պ. Սևակի անվ. մրց. (1991):



Աստվածատուր Բաբիկյան

ԲԱԲԻԿՅԱՆ Աստվածատուր (5.8.1738, Նոր Ջուղա–18.4.1825, Վիեննա), գրող, թարգմանիչ, հրատարակիչ: Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադիրներից և առաջին աբբահայրը: 1772–ին Վենետիկի Մխիթարյան միաբանությունից 11 համախոհների հետ հեռացել է Տրիեստ, ստեղծել նոր Մխիթարյան միաբանություն և տպարան: 1810–ին տեղափոխվել է Վիեննա, 1812–ին այնտեղ ևս հիմնադրել է տպարան, շարունակել գրահրատարակչ. գործունեությունը:

Բ. գրել է «Համառօտ յայտ յանդիմանութիւն երկուց ճշմարտութեանց ընդդէմ երկուց մոլար դրութեանց» (1817) հայրաբան. աշխատությունը, լատ–ից թարգմանել է Կառլոս Պիլլուարտ Հռենատոսի «Բովանդակութիւն բովանդակութեան սրբոյն Թովմայի կամ Համառօտութիւն աստուածաբանութեան» (հ. 1–3, 1810–13) փիլ., աստվածաբան. երկը: Բ–ի երկերը տպագրվել են Վիեննայում՝ իր հիմնադրած տպարանում:

Գրկ. Յուշարձան (գրական ժող.), Վնն., 1911:



Մանվել Բաբլոյան

ԲԱԲԼՈՅԱՆ Մանվել Ավետիքի [1910, գ. Փայաջուկ (Պարսկաստանի Սալմաստի գավառ)–1990, Երևան], մատենագետ: 1914–ին ծնողների հետ հաստատվել է Թիֆլիսում: Ավարտել է ԵՊՀ (1937): Դասավանդել է Հայաստանի գյուղերում, ապա՝ Թբիլիսիի հայկ. դպրոցներում:

Լույս են տեսել Բ–ի «Սփյուռքահայ մամուլի պատմությունից. ««Անի. 1946–1955» ամսագիրը» (1965), «Հայ լրագրության առաջին պատմաբանները» (1981) աշխատությունները: Կազմել է «Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ. 1794–1980» (1986) մատենագիտությունը:

2008–ին ՀՊՄՀ–ի «Սփյուռք» գիտաուս. կենտրոնում բացվել է «Մանվել Բաբլոյան» ֆոնդը, որտեղ պահվում են Բ–ի անձն. գրադարանի հայագիտ. գրքերն ու ամսագրերը:



«Բագին», *1962–ից, Բեյրութ (№ 1, 2012)*

ԲԱԲԿԵՆՅ (Մնացականյան) Գաբրիել Դոլուխանի [1860, գ. Դավալու (այժմ՝ ք. Արարատ՝ ՀՀ Արարատի մարզում)–24.11.1917, Երևան), գյուղագիր, հրապարակախոս: Սովորել է Երևանի նախագիմնազիայում, ավարտել Թիֆլիսի ռեալ. դպրոցը, ապա՝ Օդեսայի համալսարանը:

«Արձագանք» և «Մուրճ» պարբ–ներում հրատարակած պատմվածքներում պաշտպանել է իրավազուրկ գյուղացու դատը («Մի պատկեր հայկական կեանքից», 1883, «Անանուն վէպ», 1884, «Գեղը կանգնի–գերան կկոտրի», 1894):

Լույս են տեսել Բ–ի «Նորեկ» (1896, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ., վերահրտ.՝ 1961) վեպը, «Գիւղատնտեսական վարժարանները եւ նոցա կարեւորութիւնը Անդրկովկասի համար» (1884) աշխատությունը:

Սմմուլում հանդես է եկել Գաբրիել–Սաճկալ անունով:

«ԲԱԳԻՆ», գրակ–յան և արվ–ի եռամսյա հանդես: ՀՅԴ բյուրոյի և Համազգայինի կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսնում 1962–ից (մինչև 1989–ը՝ ամենամսյա, 1989–94–ին՝ երկամսյա) Բեյրութում: Խմբագիրներ՝ Կարո ***Սասունի***, Պողոս ***Մասպյան***, Հակոբ Պալյան: Հրատարակում է արևմտահայ և արևելահայ հեղինակների գործեր,

արաբ և ճանաչված օտարազգի այլ գրողների արձակ ու չափածո ստեղծագործությունների թարգմանություններ, հայ միջնադարյան, նոր և նորագույն գրակ–յան խնդիրներին վերաբերող հոդվածներ և ուսում–նասիրություններ, մշակութ. նյութեր: Ներկայացնում է նոր անուններ, նոր հրատ–ներ: Բացառիկ համարներ են նվիրվել Սայաթ–Նովային, Ա. Բակունցին, Համաստեղին, Հ. Շիրազին, Պ. Սևակին: Աշխատակ–ցել են Է. Պոյաճյանը, Տ. Ոսկունին, Բ. Փափազյանը, Ն. Պարթևյանը, Ժ. Աթթարյանը, Վ. Օշականը, Հ. Պերպերյանը, Մ. Կիրակոսյանը և ուր.:

«ԲԱԳՆԱՅՐԻ ԱՒԵՏԱՐԱՆ», մագաղաթե ձեռագիր (Մատենադա–րան, ձեռ. № 1519): 1232–ին Հոռոմոսի վանքում գրել և նկարազարդել է *Իգնատիոսը:* Ձեռագրի պատվիրատուն՝ Զաքարե և Իվանե Զաքա–րյանների քեռորդի պատրոն Խոռասը, մատյանը նվիրել է Բագնայրի վանքին (այստեղից էլ՝ անվանումը):

Ձեռագիրն աչքի է ընկնում վայելչագեղ երկաթագիր գրչությամբ: Պահպանվել են 3 շքեղ անվանաթերթեր, 135 լուսանցազարդ և 145 զարդագիր: Ձեռագրից հանվել են տերունական մանրանկարներն ու խորանները: 1960–ին ձեռք բերված պատառիկների թվում հայտնա–բերվել է «Բ. Ա.»–ի 4 խորան (Մատենադարան, պատառիկ № 9871): Մատյանը հարուստ է մանրանկարչության բարձրարժեք նմուշներով:

«Բ. Ա.» XIII–XIV դդ–ում 2 անգամ գերեվարվել է, սակայն անեցի–ները փրկագնել, նորոգել և վերադարձրել են Բագնայր:

Գրկ. **Մաթևոսյան Կ.,** *Չորս խորան «Բագնայրի Ավետարանից», «ԼՀԳ», 1985, № 10:*



«Բագնայրի Աւետա–րան»–*ի անվանա–թերթը (1232, գրիչ և ծաղկող՝ Իգնատիոս, Մատենադարան, ձեռ. № 1519)*

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (Անթիմոսյան) Արսեն Կոմիտաս (21.8.1790, Կ. Պոլիս–24.12.1866, Վենետիկ, Սբ Ղազար), բանաստեղծ, բանասեր, լեզվաբան–քերական, փիլիսոփա, թարգմանիչ: Մխիթարյան միաբա–նության անդամ՝ 1810–ից:

Բ–ու ստեղծագործության մեջ առանձնանում է «Հայկ Դիւցազն» (1858, վերահրտ.՝ 1896) էպիկ–հերոս. պոեմը, որի հիմքում Հայկի և Բելի առասպելն է: Գրել է նաև կրոնապատմ. թեմայով թատերագրու–թյուններ («Ի ծնունդ Տեառն», «Ի յայտնութիւն Տեառն», «Երուանդ», հրտ.՝ 1869, «Բազմավէպ»): «Քերականութիւն գաղղիական» (1821) աշխատության մեջ ներկայացրել է ֆրանս–ի ինչյուն. կազմը, ձևաբա–նությունը, շարահյուսությունը: Աշխարհաբարով կազմել է «Տարերք հայերէն քերականութեան» (1846) դասագիրքը, որը մինչև 1875–ը հրատարակվել է 8 անգամ: Հետազոտել է V–VII դդ–ի մատենագրու–թյան լեզուն, գրել «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» (1852) աշխատությունը:



Արսեն Բագրատունի

Լույս են տեսել նաև Բ–ու «Տաղք» (1852) բանաստեղծությունների ժող–ը, «Արարողութիւն եւ մեկնութիւն խորհրդոյ սրբոյ պատարագի Հայաստանեայց եկեղեցւոյ...» (1884, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Քորք երկոքին», «Մի պտոյտ հայ մամուլի, հոգեւորականների եւ ժողովրդի շուրջը» (երկուսն էլ՝ 1905, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) աշխատությունները, «Ձեռնարկ կրօնական գիտելիքների» (հ. 1–3, 1905, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.) ուս. ձեռնարկը:

Բ. թարգմանել է Հոմերոսի, Վիրգիլիոսի, Էսքիլեսի, Դեմոսթենեսի, Ցի–ցերոնի, Սոֆոկլեսի, Ջ. Միլթոնի, Ժ. Ռասինի, Մ. Վոլտերի, Ալֆիերիի ստեղ–ծագործություններից, որոնք ամփոփված են «Ճաշակ հելլէն եւ լատին ճար–տարախօսութեան» (1863) և «Ճաշակք հին եւ նոր ողբերգութեանց...» (1869) ժող–ներում: Բ–ու ղեկավարությամբ ու խմբագրությամբ հրատարակվել են «Սկզբունք ուղիղ խորհելոյ եւ բարւոք կելոյ» (1857) աշխատությունը, Աստ–վածաշունչ, Ագաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու երկերը:



Ա. Բագրատունու *«Տարերք հայերէն քերականութեան» (1846, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

Բ. որոշակի դեր ունի նաև XIX դ–ի հայ փիլ. մտքի զարգացման պատ–մության մեջ:


Բ–ու գրքերի որոշ մասը տպագրվել է Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. Միխթարեան յոբելեան, Վնտ., 1901: **Ա.ճառեան Հ.,** *Պատմութիւն հայոց նոր գրականութեան, պր. 1, Վաղ–պատ, 1906:* **Երեմեան Ս.,** *Ազգային դէմքեր. գրագէտ հայեր, հ. 1, Վնտ., 1913:* **Թևոսյան Ա.,** *Արսեն Բագրատունին որպես փիլիսոփա («XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից» ժող.), Ե., 1969:* **Աբեղյան Մ.,** *Եր–կեր, հ. 4, Ե., 1970:*



Մուշեղ Բագրատունի

«Բազմավէպ»



1-ին հատորի (1843) շապիկը



№ 10–12, 1964

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Մուշեղ Արսենի, **Փալանդուզ Մկո** [2.11.1870, գ. Կարբի (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–15.11.1945, Երևան], երգիծաբան, լրագրող, հաս. գործիչ: Երևանում հրատարակել է «Կռան» (1911–13), «Նոր մամուլ» (1913–15) թերթերը, թղթակցել «Կայծ», «Նոր խօսք», «Օրեր», «Պայքար», «Խօսք», «Պահակ» պարբ-ներին:

Լույս է տեսել Բ-ու «Ծիծաղի արցունքներ» (1914, Ե., «Լույս» տպ.) երգիծ. պատմվածքների ժող-ը, որի «Շօշօռաքարափ» պատմվածքի հիման վրա Հայֆիլմը նկարահանել է «Շոր և Շորշոր» (1926) կինոնկարը: Հեղինակ է նաև «Կրոնի թույնը» (1930) երգիծ. պատմվածքների ժող-ի: 1993-ին տպագրվել է Բ-ու «Շոռն ու Շորշորը: Պատմվածք, երգիծական զրույցներ» ժող-ը:

ԲԱԴՐՈՒՊԱՆՅԱՆ (Patrubany) Ղուկաս Գրիգորի [23.1.1861, Եղիսաբեթուպոլիս (Տրանսիլվանիա)–1.6.1926, Բուդապեշտ], հունգարահայ լեզվաբան, բանասեր: Ավարտել է Բուդապեշտի համալսարանը (1884): 1897-ին հիմնադրել է «Լեզվաբանական հոդվածներ» (գերմ.) ամսագիրը: Հայագիտ., ազգագր., պատմագիտ., բանահյուս. և լեզվաբ. հոդվածներով թղթակցել է «Հանդէս ամսօրեայ», «Բանասէր» (Փարիզ) և այլ պարբ-ների:

ԲԱԶՄԱԳՈՒՅՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գունավոր տպագրություն, թղթի, գործվածքի կամ այլ նյութերի վրա գունավոր պատկերների (գեղանկար, գունավոր լուսանկար ևն) տպագր. վերարտադրության եղանակ՝ 3 և ավելի գույներով՝ միմյանց վրա վերադրման միջոցով: Իրականացվում է տպագրության բոլոր՝ բարձր, հարթ և խոր եղանակներով: Բոլորի սկզբունքը նույնն է. ստացվում են տպագրության հիմն. գույներով (դեղին, կարմիր, կապույտ ու սև) տպածոներ և վրադրվում միմյանց վրա: Բ. տ. ներդրվել է XVIII դ-ի վերջից, երբ կարողացել են պատկերի յուրաքանչյուր գույնի համար պատրաստել առանձին վիմագիր տպաձև:

«ԲԱԶՄԱՎԷՊ», հայագիտ. հանդես: Վենետիկի Մխիթարյան միաբանության հրատ.: Լույս է տեսնում 1843-ից Վենետիկի Սբ Ղազար կղզում: Առանց ընդհատումների լույս տեսնող հայ. ամենաերկարակյաց պարբ-ն է: «Բ.»-նաև Իտալիայում հրատարակվող ամենահին պարբ-ն է և 4-րդը՝ աշխարհի հնագույն հանդեսների շարքում: Իր գոյության 170 տարվա ընթացքում փոփոխվել են «Բ.»-ի կառուցվածքը և գիտ. նպատակը: 1843–57-ին եղել է բնական, տնտ. և բանասիր. երկշաբաթաթերթ: Լույս է տեսել «Բազմավէպ, օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց, աշխատասիրութիւն Մխիթարեան միաբանից» վերտառությամբ: Հիմնադիր-խմբագիր Գաբրիել *Այվազովսկին* հանդեսը հրատարակել է աշխարհաբարով՝ «ժողովրդեան» դյուրըմբռնելի լեզվով ընթերցողներին լուսավոր. գաղափարներ և օգտակար խորհուրդներ հասցնելու, տնտ., քաղ. ու հոգևոր կյանքի վերածնման ուղիներ նշելու նպատակով: Պարբ-ի խմբագրակազմն ու հեղինակները միաժամանակ չեն հրաժարվել գրաբարը բոլորին սովորեցնելու նպատակից՝ հիշեցնելով, որ այն «մեր հարց, մեր նախնեաց եւ թագաւորաց լեզուն է»:

Հավատարիմ իր անվանը («Բազմավէպ»՝ բազում բաներ վիպող, պատմող)՝ հանդեսը նույն համարում տպագրել է և՛ պատմաբանասիր. լուրջ քննություններ, և՛ տվել կենցաղօգուտ ու տարրական գիտելիքներ, հաղորդակից դարձրել աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, գիտ. նորություններին ևն: Հանդեսի յուրաքանչյուր հատոր նման էր մի փոքր հանրագիտարանի, որը համատեղել է ժող. թերթի և ուսումնագիտ. հանդեսի տարրերը:

Առաջին շրջանում «Բ.»-ում մեծ տեղ են հատկացրել կրոնաբարոյախոս. նյութերին, գիտ-յան և արդ-յան նորագույն հայտնագործություններին, աշխարհագր. ու հնագիտ. գյուտերի, բնության և ընդերքի հարստությունների մասին ճանաչող. տեղեկություններին:

1858–72-ին դարձել է ամսագիր, և աստիճանաբար բնական ու տնտ. գիտելիքներին հատկացվող էջերը փոխարինվել են գրական-գեղ. նյութերով, համաշխ. գրակ-յան լավագույն գործերի թարգմանություններով:

1872–89-ին «Բ.» եղել է եռամսյա ուսումնաթերթ («պրակ եռամսեայ»): Արձագանքել է Եվրոպայում տեղի ունեցող քաղ. և հեղ. անցքերին, տպագրել է առավելապես հայագիտ., պատմ., բանասիր., լեզվաբ., տեղագր., մատենագիտ. ուսումնասիրություններ, ուղիներ է որոնել քրիստ. կրոնի ոգով բացատրելու հաս-քաղ. անցուդարձերը, գիտ. առաջընթացը և նորագույն հայտնագործությունները: Զգալի տեղ են զբաղեցրել եկեղեցապատմ. թեմաներով նյութերի լուսաբանությունները, սակայն առանցքային չի համարել դավանաբան. խնդիրները, որով ընդունելի է եղել թե՛ առաքել., թե՛ կաթոլիկ հայրերի համար:

1890-ից «Բ.» կրկին դարձել է ամսագիր, 1971-ից՝ եռամսյա, ապա՝ երկամսյա: Ներկայում տարեկան լույս է տեսնում 4 համար, որոնք հաճախ միացվում են 1 ծավալուն հատորի մեջ: «Բ.» հրատարակել է նաև բացառիկ համարներ՝ նվիրված Աստվածաշնչի հայ. թարգմանության 1500-ամյակին, Մխիթար Սեբաստացու, Ա. Դանտեի, Ջ. Բայրոնի, Նապոլեոն Բոնապարտի, հայ և համաշխ. գրական ու պատմ. այլ դեմքերի ու իրադարձությունների հոբելյաններին: Անգնահատելի են նաև հանդեսի ծառայությունները եվրոպ. միտքն ու գաղափարները հայոց միջավայր ներբերելու առումով: «Բ.»-ում օտար լեզուներով տպագրված հայագիտ. հոդվածները եվրոպացիներին ծանոթացրել ու ծանոթացնում են հայոց պատմությանն ու հայկ. մշակույթին:

1973-ից «Բ.»-ին կից հրատարակվում է համանուն մատենաշար. լույս տեսած ավելի քան 40 հատորներն ընդգրկում են հայկ. մշակույթի գրեթե բոլոր բնագավառները:

Հանդեսի խմբագիրներ են եղել Ղևոնդ *Ալիշանը*, Ավքսենտիոս *Գուրգենյանը*, Գրիգոր Ճելալյանը, Հմայակ Պապիկյանը, Ա. Սիոնիկը, Նորայր *Բյուզանդացին*, Աթագինես Ղաբթանյանը, Հակոբոս *Իսավերտենցը*, Կոմիտաս Իսկենտերյանը, Արսեն Սուքրյանը, Արիստակես Քասբանտիլյանը, Աթանաս *Տիրոյանը*, Հովհաննես Թորոսյանը, Թ. Էֆտյանը, Ե. Տայեցին, Ս. Սարյանը, Սիմոն Երեմյանը, Դ. Նազարեթյանը, Կարապետ *Տեր-Մահակյանը*, Ն. Տիրացույանը, Վարդան *Հացունին*, Մկրտիչ *Պոտուրյանը*, Ն. Անդրանիկյանը, Հաբրություն *Ավգերյանը*, Գաբրիել *Նահապետյանը*, Քերովբե Չրաքյանը, Ղևոնդ *Տայյանը*, Կյուրեղ Քիպարյանը, Վահան *Հովհաննիսյանը*, Եղիա Փեչիկյանը, Ե. Գոռուգյանը, Մեսրոպ *Ճանաշյանը*, Ներսես *Տեր-Ներսիսյանը*, Եփրեմ Տեր-Ղազարյանը, Սահակ *Ճեմճեմյանը*, Պողոս-Լևոն *Զեքիյանը*, Հարություն *Պզտիկյանը*, Տաճատ *Յարդումյանը* և ուր.: Հանդեսին իրենց գործուն նպաստն են բերել Է. Հյուրմյուզյանը, Գ. Զարբհանալյանը, Ա. Ղազիկյանը, Բ. Սարգիսյանը, Հ. Քյուրդյանը, Պ. Անանյանը, Է. Տեզան, Ֆ. Ֆեյդին, Ջ. Ֆրասսոնը և ուր., այժմ աշխատակցում են հայ և այլազգի ճանաչված գիտնականներ, գրողներ, արվեստագետներ:

Գրկ. **Շտիկյան Ս.**, *«Բազմավեպ» հանդեսը, «ԼՀԳ», 1993, № 4:* **Զեքիյան Պ-Լ.**, *«Բազմավէպ». հայագիտական հանդէսներու նահապետը, «ՊԲՀ», 1993, № 4:* **Հակոբյան Պ.**, *«Բազմավեպի» մեկուկես դարը, «ԲԵՀ», 1993, № 3:*

ԲԱԶՄԱՏԻՐԱԺ ԹԵՐԹ, արտադր. և ուս. հաստատություններում լույս տեսնող և հիմնականում նրանց ներքին կյանքն արտացոլող թերթեր: Հայաստանում Բ. թ-երը ծնունդ են առել 1930-ական թթ-ին, որոնցից առավել հայտնի էին արտադր. «Կիրովեց» (1935–90, Երևանի Կիրովի անվ. քիմկոմբինատ), «Տեքստիլագործ» (1960–88, Լենինականի Մայիսյան ապստամբության անվ. տեքստիլ կոմբինատ), «Քաջարան» (1950–90, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ), բուհ. *«Երևանի համալսարան»* (1955-ից, ԵՊՀ), «Ճարտարապետ» (1957-ից, մինչև 1992-ը՝ «Պոլիտեխնիկ», ՀՊՃՀ), *«Ապագա բժիշկ»* (1958-ից, ԵՊԲՀ), *«Հասկ»* (1958-ից, մինչև 2000-ը՝ «Գյուղատնտես», ՀՊԱՀ), *«Մանկավարժական համալսարան»* (1965-ից, մինչև 2002-ը՝



№ 1–2, 2011

Բազմատիրաժ թերթեր





*Գ. Բալասանյանի «Պստիկ Մհեր» (1904, **Բաթում,** Ն. Գուրոկյանի տպ.) գրքի շապիկը*



Գուրգեն Բալայան. *Է. Մեժելայտիսի «Հայ մայրի օրագիրը» (2006, ե., «Ծիծեռնակ») գրքի կազմը*



Զ. Բալայանի *«Կիլիկիա. Դեպի օվկիանոս» (2006, ե., «Ամարաս») գրքի կազմը*

«Մանկավարժ», ՀՊՄՀ), «Տնտեսագետ» (1977–ից, ՀՊՏՀ), «Պոլիգլոտ» (2005–ից, ԵՊԼՀ), «Երաժիշտ» (2005–ից, Երևանի պետ. կոնսերվատորիա), «Ինժեներ» (2006–ից, ԵՃՇՊՀ) ևն:

Նմանատիպ հրատ–ներ են ունեցել (ունեն) նաև առանձին կուսներ, հայրենակց. միություններ, հաս. կազմակերպություններ ևն:

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XX դ–ի սկզբին Բաթումում գործող տպարաններից 4–ը լույս են ընծայել հայ. գրքեր: Առաջին տպարանը հիմնադրել է Ն. Գուրոկյանը (Գուրսկի). տպագրած անդրանիկ հրատ–ներն են «Հաշիւ Բաթումի ս. Փրկիչ եկեղեցւոյ երեցփոխ Ս. Յարութիւնեանի 1898 թուից 1901 թիւը» գրքույկը, «Ընթերցողների ուշադրութեանը մատուցանում է Մեսրոպ Մելեանը» (1901) հրապարակախոս. նյութերի ժող–ը: 1904–ին լույս է տեսել Գ. Բալասանյանի «Որբիկների արցունքները» բանաստեղծությունների գրքույկը և «Պստիկ Մհեր» դյուցազներգ–պատմ. պոեմը, 1906–ին՝ Վ. Գարշինի «Ազդանշանը» պատմվածքը, Ի. Սիզովի «Ինչ է ազատութիւնը» աշխատությունը (երկուսի թարգմ.՝ Ս. Հարությունյանի)՝ «Յօգուտ Բաթումի հայ բանուորների» խորագրով, նաև Ս. Հարությունյանի «Գաղափարի մարդը» (1906) գրքույկը՝ ««Պայքարի» ժողովրդական գրադարան» մատենաշարով ևն:

Բաթումի մյուս տպարանը պատկանել է Խ. Շմաևսկուն: Այստեղ հիշյալ մատենաշարով 1906–ին տպագրվել են Ա. Աննենսկայայի «Ինչ է հասարակապետութիւնը» աշխատությունը (թարգմ.՝ Ս. Հարությունյանի), Ն. Սաքսիմովի «Աշխատանքի տօնը», 1917–ին՝ «Կանոնադրութիւն բաբերդցիների հայրենակցական միութեան» գրքույկները:

«Պրոսվեշչենիե» տպարանում 1909–ին տպագրվել է Ե. Չիրիկովի «Կեանքի շէմքին» (թարգմ.՝ Հ. Խաչատրյանի) գիրքը: 1917–ին մի խումբ հայ բոլշևիկներ հիմնադրել են հայկ. ընդհատակյա տպարան: 1917–18–ին Հ. Հակոբյանի, Ս. Խանոյանի, Ա. Սարուխանյանի, Ս. Զուբաբյանի, Գ. Գրիգորյանի նախաձեռնությամբ այստեղ տպագրվել է «Բանուոր եւ գիւղացի» հայ. թերթը (չի պահպանվել): Բաթումում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո այստեղ տպագրվել են Աջարիայի «Կոմունիստ» (1921) և «Բաթումի բանուոր» (1922) պարբ–ները: Հետագայում Բաթումում հայ. ոչինչ չի տպագրվել:

Գրկ. **Մաղալյան Վ.,** *Հայ գեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990), Ե., 2012:*

Վլադիմիր Մաղալյան

ԲԱԺԱՆԱՔԱՐԴ, ձեռագիր մատյանի, տպագիր գրքի հատվածները միմյանցից անջատող ***զարդապատկեր***: Բ–երը հայկ. ձեռագրերին բնորոշ մանրանկարչ. պատկերներ են՝ ***զարդագրերի, լուսանցազարդերի, գլխազարդերի*** և կիսախորանների ձևով: Տպագիր գրքերում կիրառվում են պոլիգրաֆ. զարդանիշներ կամ նկարիչ–ձևավորողի՝ տվյալ գրքի համար ստեղծած Բ–երը:

ԲԱԼԱՅԱՆ Գուրգեն Գևորգի, **Լոռեցի** [ծ. 15.5.1950, գ. Կիանեթ (Վրաստանի Բոլնիսի շրջան)], ծաղրանկարիչ, նկարիչ–ձևավորող: Սովորել է ԵԳՈՒ–ում, ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրականության ինստ–ը (1984): 1975–77–ին աշխատել է Երևանի պոլիգրաֆկոմբինատում, 1977–81–ին՝ «Սովետական գրող» հրատարակչությունում (խմբագիր), 1981–ից՝ ***«Ոզնի»*** երգիծաթերթի (գեղ. խմբագիր, նկարիչ, 2013–ից՝ պատ. խմբագիր), միաժամանակ, 1986–2000–ին՝ ***«Հայաստանի բնություն»*** ամսագրի (գեղ. խմբագիր, պատ. քարտուղար), 1989–1992–ին՝ «Հայկազունք» շաբաթաթերթի, 1990–91–ին՝ «Համշեն» թերթի (նկարիչ–ձևավորող, պատ. քարտուղար) խմբագրություններում:

Բ–ի հրապարակախոս. հոդվածները, ծաղրանկարները, երգիծ. պատմվածքները տպագրվել են հանրապետ., սփյուռքի, արտերկրի մամուլում: Հեղինակ է «Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ» (2002), «Հումորի տոնավաճառ» (2006), «Ծաղկող հուշեր» (2007), «55 +» (2009) գրքերի: Նկարազարդել և ձևավորել է Ա. Սահակյանի «Խորհրդավոր խորհրդարան» (1992), «Խաչ և սուր»

(1995), Է. Մեժելայտիսի «Դայնայի օրագիրը» (2006), նաև «Առձեռն հումոր» (2009), «Սրամտում է հայկական ռադիոն» (2009), «Պարկեշտ հումոր» (2010), «Հումորի և երգիծանքի 19 ակնթարթ» (2011) և այլ գրքեր:

«Ոզնի» երգիծաթերթի մրց. (1988):

ԲԱԼԱՅԱՆ Զորի Հայկի (ծ. 10.2.1935, Ստեփանակերտ), գրող, Արցախյան ազգ-ազատագր. շարժման ղեկավարներից: ԽՍՀՄ սպորտի վարպետ (1967): Արցախի հերոս (2008): Ավարտել է Ռյազանի (Ռուսաստան) բժշկ. ինստ-ը (1963): 1975-ից եղել է միութ. «Լիտերատուրնայա գազետա» (ռուս., Մոսկվա) թերթի սեփական թղթակիցը Հայաստանում:



Զորի Բալայան

Լույս են տեսել Բ-ի «Հիպոկրատի գլխարկը» (1972), «Երկնագույն ճանապարհներ» (1975), «Սպիտակ մարաթոն» (ռուս., 1980), «Օջախ» (1981), «Չգրված օրենք» (1986), «Տագնապ» (1987), «Թևեր» (հայ. և ռուս., 1988) ակնարկների, էսսեների, պատմվածքների ժող-ները, «Երկերի ժողովածուն» (ռուս., գիրք 1–8, 2010–14): Նրա սցենարով նկարահանվել է «Գոտեմարտ» (1976) երկսերիանոց ֆիլմ (1982): Ղարաբաղյան շարժմանը, ազգ-ազատագր. պատերազմին ու մասնակիցներին են նվիրված Բ-ի «Հայկաշեն» (1990), «Դժոխք և դրախտ» (1995), «Երեկ, այսօր, վաղը» (համահեղ.) երկերը, «Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում»» (1999) հուշագրությունը:

«Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994» հանրագիտարանի (2004) նախաձեռնողներից է և գիտախմբագր. հանձնաժողովի նախագահը: 2004–05-ին «Կիլիկիա» հայկ. առագաստանավով (անձնակազմի հետ) անցել է կիլիկյան առևտր. ծովագնացների ուղիով («Կիլիկիա. Դեպի օվկիանոս», 2006, «Կիլիկիա. Վերադարձ», 2007): 2009–10-ին «Արմենիա» առագաստանավով կատարել է շուրջերկրյա ճամփորդություն:

ՀՀ «Ոսկե արծիվ» (2008), «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2010), Հայ եկեղեցու «Սբ Գրիգոր Լուսավորիչ» (2010), ԼՂՀ «Գրիգոր Լուսավորիչ» (2011) շքանշաններ, ՀՀ «Սիմսես Խորենացի» (1998), ԼՂՀ Արիության և «Նելսոն Ստեփանյան» (2011) և այլ մեդալներ: Երևանի պատվ. քաղաքացի (2005), ԽՍՀՄ ժուռնալիստների միության (1983) և ՀԽՍՀ Պետ. (1988) մրց-ներ:

Երկ. Յավ, Ե., 1978: Խիղճ, Ե., 1978: Ճանապարհ, Ե., 1989: Դիմակայում, Ե., 1989: Կյանքը մահից հետո (հուշեր Զոն Կիրակոսյանի 70-ամյակին), Ե., 1999: Անդունդ (հրապարակախոսություն), առաջաբ.՝ Ս. Սարինյանի, Ե., 2004: Հաղթելով մահին: Հուշապատում, Ե., 2009: Нужен мужской разговор, Е., 1974; Ураган, Е., 1977; Красная Яранга, М., 1979; Хлеб, М., 1984; Расплата, М., 1986; Дорога, М., 1988; Авария, Е., 1988.


Գրկ. **Սարինյան Ս.**, *Շարունակվող լեգենդ, Ե., 2008:* **Նույնի**, *Ապաշխարանք և թողություն, Ե., 2010:*

ԲԱԼԱՅԱՆ Վիկտոր Ռուբենի (16.7.1931, Ստեփանավան–31.1.1995, Երևան, թաղված է ՀՀ Լոռու մարզի Գարգառ գ-ում), արձակագիր, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1954): 1956–58-ին աշխատել է «Ավանգարդ», 1958–59-ին՝ *«Պիոներ կանչ»* թերթերի խմբագրություններում, 1968–74-ին՝ *«Հայաստան»* հրատարակչությունում (1970–74-ին՝ գլխ. խմբագիր), 1974–79-ին՝ *«Սովետական գրող»* հրատարակչության գլխ. խմբագիր, 1979–84-ին՝ Հեռուստառադիոպետկոմի նախագահի առաջին տեղակալ, 1984-ից՝ Հայֆիլմ կինոստուդիայի տնօրեն:



Վիկտոր Բալայան

Լույս են տեսել Բ-ի «Անտեսանելի հետքեր» (1968), «Մշուշը ցրվում է» (1971), «Անցյալը երբեմն մեռնում է մեզ հետ» (գիրք 1–2, 1980–81), «Որոգայթներ» (1983), «Հավատ» (1986), «Աստվածային կայծի բռնկումը» (1988), «Կրակոց մշուշում» (1990) պատմվածքների, վիպակների ժող-ները, «Մարգո Մուրադյան» (1973), «Խորեն Աբրահամյան» (1983) գրքերը: Թարգմանել է Զ. Նենացկու, Ի. Մատյուշովսկու, Հ. Պրոշկովայի, Ու. Այրիշի, Լ. Նորմանի գործերից:



Վ. Բալայանի *«Ընտրանի»-ի (2011, Ե., «Ոսկան Երևանցի») կազմը*

Երկ. Ընտրանի (կազմ.՝ Վ. Սանթրյան), Ե., 2011:

Գրկ. Հիշատակի պսակ Վիկտոր Բալայանին (կազմ.՝ Հ. Մելքոնյան), Ե., 2001:


ԲԱԼԱՍԱՆՅԱՆ Գրիգոր Գրիգորի [15.9.1919, գ. Գետաշեն (Ադրբեջանի Խանլարի շրջան)–24.5.2003, Երևան], արձակագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1975): Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ-ը (1946): 1948–52-ին դասավանդել է նույն բուհում, 1953–57-ին՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի պետպլանի նախագահի տեղակալ, 1957–61-ին՝ *Հայպետհրատի* տնօրեն, 1961–64-ին՝ Հեռուստառադիոպետկոմի նախագահի տեղակալ, 1964–74-ին՝ Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետ. կոմիտեի գլխ. խմբագիր, 1974–81-ին՝ *«Լույս»* հրատարակչության տնօրեն:



Գրիգոր Բալասանյանի *«Մի բուռ կյանք» (1989, Ե., «Արևիկ») գրքի կազմը*



Հենրիկ Բախչինյանի *«XV դարի հայ գրականությունը» (2004, Ե., «Գիտություն») գրքի կազմը*



Ֆելիքս Բախչինյանի *«Ֆրիտյոֆ Նանսենը և Հայաստանը» (2011, Ե., «Գասպրինտ») գրքի կազմը*

Լույս են տեսել Բ–ի «Փորձության ժամին» (1958), «Մեժի ապոր զրույցները» (1987, 1996), «Միայն թե խիղճդ հանգիստ լինի» (1963), «Սիրում եմ անամպ երկինքը» (1965), «Ապրելու գաղտնիքը» (1971), «Ով հանզցրեց լույսը» (1981), «Դարերի ճամփորդը» (1986) պատմվածքների և վիպակների ժողովները, «Պատուհանի տակ ծղրիդն է երգում» (1975), «Միթե հանգավ լույսը» (1984), «Մի բուռ կյանք» (1989) վեպերը:

ԲԱԽՇՈՒՆԻ Աբրահամ Դավթի [Բախշի Աբրահամյան, 2.5.1915, գ. Թալիշ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–2005, Մոսկվա], բանաստեղծ, խմբագիր: Սովորել է ԵՊՀ–ում: 1937–40–ին եղել է «Ազնիվ աշխատանք» թերթի (Ադրբեջանի Խանլարի շրջան) պատ. քարտուղար, 1940–ից՝ խմբագիր, 1942–46–ին՝ Ադրբեջանի ԿԿ Խանլարի շրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1946–47–ին՝ Դաշքեսանի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար, 1947–74–ին՝ Բաքվի «Կոմունիստ» (հայ.) թերթի սեփական թղթակից Կիրովաբադի գոտու հայաբնակ շրջաններում:

Լույս են տեսել Բ–ու «Բանաստեղծություններ» (1948), «Սրտի կանչը» (1955, երկուսն էլ՝ Բաքու, Ազերնեշր), «Սրտիս հետ» (1958), «Այրվող միջօրե» (1965), «Միջօրեից հետո» (1974), «Բարի լույս» (1975, Բաքու, Ազերնեշր), «Փոթորկված լռություն» (1980), «Թթենի» (1986) բանաստեղծությունների ժող–ները:

ԲԱԽՉԻՆՅԱՆ Հենրիկ Գրիգորի (ծ. 16.2.1948, Թբիլիսի), գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1989): Ավարտել է ԵՊՀ (1970): 1970–ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ–յան ինստ–ի գիտաշխատող, 1992– 2011–ին՝ ԳԱԹ–ի տնօրեն:

Լույս են տեսել Բ–ի «Հայկական ձեռագրերի հիշատակարանները» (1980), «Սայաթ–Նովա: Կյանքը և գործը» (1988), «Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի» (1997), «Պաղտասար Դպիր (Ուսումնասիրություն և բնագրեր)» (1999), «XVII–XVIII դարերի հայ գրականությունը» (1999), «XV դարի հայ գրականությունը» (2004), «Դրվագներ ֆրանսիական գրականության պատմության» (2004), «Շարականի գրապատմական ուղին (5–14–րդ դարեր)» (2012) աշխատությունները: Բ–ի աշխատասիրությամբ հրատարակվել է Սայաթ–Նովայի երգերի 4 ժող. (1984–2003): Կազմել, աշխարահաբարի է փոխադրել «Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև: Օրհներգեր» (2010), «Մովսես Խորենացի, Ստեփանոս Սյունեցի, Հովհան Մանդակունի. Օրհներգեր» (2011), «Ներսես Շնորհալի. Ժամերգեր» (2012), «Օրհներգեր. 7–11–րդ դարեր» (2013) ժող–ները:

Ֆրանս–ից թարգմանել է Ն. Բուալոյի, Ժ. Դիդրոյի, Շ. Բոդլերի, Վ. Հյուգոյի, Ա. դը Վինյիի, Պ. Վեռլենի և այլ հեղինակների ստեղծագործություններից:

Գրկ. Հենրիկ Բախչինյան: Կենսամատենագիտություն, Ե., 2008:

ԲԱԽՉԻՆՅԱՆ Ֆելիքս Բարդուղիմեոսի (ծ. 22.9.1950, ք. Ալավերդի), գրականագետ, թարգմանիչ: Ավարտել է Էջմիածնի ակումբա–գրադարանային տեխնիկումը (1973), ՎՄՊԻ (1978), սովորել Վիլնյուսի պետ. համալսարանում (1978–81): Հիմնադրել է «Հայոց–Քարթլոս» գրակ. հանդեսը (1993–2000–ին՝ նաև խմբագիր), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամը (1994–ին՝ Մոսկվայում, 2002–ից վերագրանցվել է ՀՀ–ում):

Լույս են տեսել Բ–ի «Աստեղնային խոստովանանք» (ռուս., 1989), «Չենչենական օրագիր» (թուրք., 1998), «Խաչվածին մահ չկա» (վրաց., 2000), «Նամակներ Հայաստանից» (ռուս. և վրաց. հոդվածների ժող., 2001), «Հայ լինելու քաղցրությունը» (2003), «Տիեզերքի սիրեցյալները» (հ. 1–5, 2002–05), «Գթասրտության ռահվիրան» (2003), «Կարոտի թագավորություն» (2003), «Բանաստեղծության հայելու խորքում» (2004), «Հայոց հարյուր երեսունմեկերորդ հայրապետը» (2011), «Ֆրիտյոֆ Նանսենը և Հայաստանը» (2011), «Հայ զորական ուժի ժառանգորդը. Սեյրան Մուշեղի Օհանյան» (2012), «Անպատմելի պատմութիւնը հայի» (2013) և այլ գրքեր:

Բ–ի թարգմանությամբ հայ. լույս են տեսել լիտվացի, լատվիացի, ուկրաինացի գրողների ստեղծագործություններից [«Արևային քնար» (1983), Տ. Շևչենկոյի «Կոբզար» (2008), Ք. Դոնելայտիսի «Տարվա եղանակներ» (2013), բանաստեղծությունների ժող–ներ, «Կալևալա» (2007) ֆինն., «Լաչպլեսիս» (2012) լատվ., էպոսներ], կազմել և հայ. հրատարակել է Է. Մեժելայտիսի հայկ. թեմաներով գրած գործերը:

«Համաստեղություն» ծրագրի լավագույն թարգմանչի վկայագիր (2000), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե (2003), ՀՀ վարչապետի (2010)

հուշամեդալներ, ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2008), ԵՊՀ ոսկե (2010), Ուկրաինայի գրողների միության «Պատվո նշան» (2006), Ուկրաինայի ԳԱ (2008) մեդալներ:

ԲԱԿՇԻ Կիմ Նաումի (1.3.1931, Մոսկվա), բաշկիր գրող, կինոդրամատուրգ, հայագետ: Ավարտել է ՄՊՀ: 1964-ից զբաղվում է Երևանի, Վենետիկի, Վիեննայի, Անթիլիասի, Երուսաղեմի մատենադարաններում պահվող և այլ հավաքածուների հայ. մագաղաթե ձեռագրերի, ինչպես նաև Հայաստանի հին և ժամանակակից մշակույթի ուսումնասիրությամբ: Բ-ի սցենարով նկարահանվել է «Մատենադարան» 20-մասանոց հեռուստատեսային ֆիլմաշարը (1983–2002, համահեղ. և ռեժիսոր՝ Հ. Հախվերդյան, ՀՀ Պետ. մրց.՝ 1988):

Լույս են տեսել Բ-ի՝ Հայաստանին և հայ մշակույթին նվիրված «Սուրբ Ղազարի հարությունը» (1960, հայ.՝ 1996), «Արծիվ և սուր» (1970, հայ.՝ 1980), «Ճակատագիր և քար» (1983, հայ.՝ 1985, էսսեներ), «Մենաստանից սիրով» (2000), «Մեր աշխարհը նման է անիվի» (2003), «Սառեցված ժամանակը» (2006), «Կապույտ երկնքի տակ» (2007), «Արցախի հոգևոր գանձերը» (ռուս., 2012) գրքերը:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2001) մեդալ, Հայ-ռուս. (Սլավոն.) համալսարանի «Պատվո շքանշան» (2006), ՀԳՄ Հ. Թումանյանի անվ., «Կարպիս Փափազյան» հիմնադրամի (Վիեննա) մրց-ներ:

ԲԱԿՈՒՆՑ Ակսել (Թևոսյան Ալեքսանդր Ստեփանի, 25.6.1899, Գորիս–8.7.1937, անհատի պաշտամունքի զոհ), գրող, բանասեր, թարգմանիչ, կինոդրամատուրգ: Ավարտել է Գորիսի ծխական դպրոցը (1910), Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1917), Խարկովի գյուղատնտ. ինստ-ը (1923): 1915-ին Շուշիի «Փայլակ» թերթում տպագրել է ֆելիետոն, 1918-ին Երևանի «Ժողովուրդ» թերթում՝ ակնարկներ պատերազմ. թեմայով: 1920-ական թթ-ին նախաձեռնել է «Գյուղացու գրադարան» մատենաշարը, որտեղ ընդգրկվել են նրա հանրամատչելի ագրոզրույցները: 1918-ին կամավոր. խմբերի հետ մասնակցել է Էրզրումի (Կարին), Կարսի և Սարդարապատի կռիվներին: 1923–25-ին «Մարտակոչ» (Թիֆլիս) և «Խորհրդային Հայաստան» թերթերում տպագրվել են նրա «Մեր գյուղերում», «Գավառական նամականի», «Նամակներ գյուղից» ակնարկաշարերը:

Բ. հրատարակել է «Մթնաձոր» (1927, «Ալպիական մանուշակ», «Լառ Մարգար», «Միրհավ», «Խոնարհ աղջիկը», «Այու սարի լանջին», «Մթնաձորի չարքը» ևն), «Սև ցեղերի սերմնացանը» (1933, «Նամակ ռուսաց թագավորին», «Սպիտակ ձին», «Բրուտի տղան», «Սև ցեղերի սերմնացանը» ևն) պատմվածքների ժող-ները, որտեղ գեղ. վարպետությամբ է պատկերել հայրենի բնությունը, հայ գեղջուկի միամտությունն ու հոգու գեղեցկությունը, աշխատավոր մարդու հոգեկան արժանիքները:

Լույս են տեսել Բ-ի «Հովնաթան Մարչ» (1927) երգիծ. վիպակը, «Անձրևը» (1935), «Եղբայրության ընկուզենիները» (1936), «Պատմվածքներ. Ա շարք» (1938, Փ.) պատմվածքների ժող-ները (ներառում է նաև «Կյորես» երգիծ. վիպակը): Գրողի «Խաչատուր Աբովյան», «Կարմրաքար», «Որդի որոտման» վեպերն անավարտ են: Տպագրվել են նաև Բ-ի «Երկերը» (հ. 1–2, 1964, հ. 1–4, 1976–84), «Ժառանգություն (անտիպ ու չհավաքված էջեր)» (1999), «Բան ու գործ: Զրույցներ, հրապարակախոսություն...» (2000), «Մթնաձոր: Կյորես» (2007) ժող-ները, «Ընտրանին» (2009):

Բ-ի սցենարներով Հայֆիլմում նկարահանվել են «Սև թևի տակ» (1930), «Արևի զավակը» (Պ. Բարխուդարյանի հետ, 1933), «Զանգեզուր» (1938), «Լուսաբացից առաջ» (1961, ըստ Բ-ի նովելների), «Այս կանաչ, կարմիր աշխարհը» (1975) կինոնկարները:

Բ. հեղինակ է նաև «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը»» (1932), «Գրականության մասին» (1959) բանասիր. աշխատությունների: Ռուս-ից թարգմանել է Ն. Գոգոլի «Տարաս Բուլբա» (1934) վիպակը, աշխարհաբարի է փոխադրել միջնադարյան առակների «Աղվեսագիրք» (1935) հավաքածուն:

Գրկ. **Իշխանյան Ռ.**, *Ակսել Բակունց: Կենսագրություն և մատենագիտություն, Ե., 1960:* **Աղաբաբյան Ս.**, *Ակսել Բակունց, Ե., 1971: Ակսել Բակունց Ստեփանի: Մեղադրական գործ № 4131 (կազմ. և առաջաբ.՝ Դ. Գասպարյանի), Ե., 1999: Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, Ե., 1999:* **Գասպարյան Դ.**, *Ակսել Բակունց, Ե., 2009:*



Կիմ Բակշիի *«Արցախի հոգևոր գանձերը» (ռուս., 2012, Մոսկվա) գրքի տիտղոսաթերթը*



Ակսել Բակունց



Ա. Բակունցի
«Մթնաձոր: Կյորես» (2007, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը

ԲԱՀԱԹՐՅԱՆ Առաքել (1848, Շուշի–5.2.1883, Խարկով), մանկավարժ, հոգեբան, հաս. գործիչ: 1874-ին ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (գիտ. թեկնածուի աստիճանով): 1874–76-ին Գերմանիայում սովորել է մանկավարժություն: 1876-ից աշխատել է Սիմֆերոպոլում (Ղրիմ)՝ որպես ուսուցչ. սեմինարիայի տեսուչ, հիմնադրել է Հայ կանանց ընկերությունը և հաս. գրադարան-ընթերցարան: 1881–82-ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան, ապա՝ Նոր Նախիջևանի հայոց թեմ. դպրոցում: Կրթադաստիարակչ. և մայրենի լեզվի ուսուցման խնդիրների վերաբերյալ հոդվածներ է տպագրել «Մանկավարժական թերթ» (1878–79) և «Վարժարան» (1883–84) պարբ-ներում:



Առաքել Բահաթրյան

Լույս են տեսել Բ-ի «Քերականութիւն աշխարհիկ լեզուի» (1879, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Ծաղկոցը կամ մանկանց պարտէզը...» (1882, նույն տպ.), «Այբբենարան առաջին տարուայ» (1881, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Առաջին ընթերցարան» (1882, նույն տպ.), «Համառօտ գործնական հոգեբանութիւն...» (1882, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Ուղեցոյց հայ ուսուցչի» (1882, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) դասագրքերը և մանկավարժ. աշխատությունները:

Գրկ. Հարությունյան Ն., Առաքել Բահաթրյան, Ե., 1992:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Անդրանիկ Բախշիի (5.11.1918–3.4.1991, Երևան), աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. դ-ր (1952), պրոֆ. (1960): ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1971): Ավարտել է ԵՊՀ (1942): 1943-ից զբաղվել է ՀԽՍՀ կլիմայի, բժշկ. աշխարհագրության հարցերի և լանդշաֆտների ուսումնասիրությամբ: Ղեկավարել է ՀԽՍՀ առաջին համալիր ատլասի հրատ-ը՝ «Հայկական ՍՍՌ» (1961): Նրա ղեկավարությամբ կազմվել են «ՀԽՍՀ բնական ռեսուրսները», «ՀԽՍՀ ջրագրությունը» ատլասները, «ՀԽՍՀ աշխարհագրական ուսումնական ատլասը» և բազմաթիվ առանձին քարտեզներ: Հեղինակ է «Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն» (1971) բուհ. դասագրքի:



Անդրանիկ Բաղդասարյան

Հայկ. աշխարհագր. ընկերության (1955–75), Հայկ. հանրագիտարանի աշխարհագրության գիտաճյուղային խորհրդի (1974–87) նախագահ, Ազգ. ատլասների միջազգ. աշխարհագր. միության անդամ (1964-ից, Լոնդոն):

Երկ. Արեգակի էներգիայի ռեսուրսները և նրանց օգտագործման հեռանկարները Սովետական Հայաստանում, Ե., 1957: Климат Армянской ССР, Е., 1958; Климат Еревана, Е., 1986.

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Աշոտ Միքայելի (ծ. 7.8.1945, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Միքայել ***Բաղդասարյանի*** որդին: Ավարտել է ԵԳՈՒ (1964), ԵԳԹԻ (1972): 1992–96-ին դասավանդել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, 1993-ին՝ «Ռոսլին» արվ-ի ինստ-ում (1995–2010-ին՝ պրոռեկտոր), 2008-ից՝ ԵՃՇՊՀ-ում (2010-ից՝ ամբիոնի վարիչ): 1995–2008-ին՝ Հայաստանի դիզայներների միության նախագահ: 2003-ից՝ ՀՊԱՀ-ի «Տեղեկագիր» գիտ. միջազգ. ամսագրի գեղ. խմբագիր (ձևավորել է 40-ից ավելի համար):



Աշոտ Բաղդասարյան. *Վ. Պետրոսյանի «Գրական երաժշտական խաղեր» (1972, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

Նկարազարդել և ձևավորել է Վ. Պետրոսյանի «Գրական երաժշտական խաղեր» (1972), նաև «Հայաստանի քաղաքացիական ծառայություն» (2005), Գ. Ավագյանի և Ա. Նազարյանի «Պտուղների, բանջարեղենի և կարտոֆիլի հիվանդությունները պահպանման ժամանակ» (2006), Ա. Մորիկյանի «Միայնակ ծերունին, որ զրուցակից է փնտրում» (2010, Հրանտ Թաղևոսյանի նկարներով), «80-ամյակի հոբելյանական ձեռնարկ» (2010, նվիրված է ՀՊԱՀ-ին) գրքերը, «Ալմաստ» կատալոգը (2005), «Լևոն Մանասերյան» (2009) ալբոմը ևն:

ՀՊԱՀ (2010), ԵՃՇՊՀ «Ջիմ Թորոսյան» (2012) ոսկե մեդալներ:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Արա Անդրանիկի [ծ. 25.1.1940, գ. Մանթաշ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է Մոսկվայի պոլիգրաֆիայի ինստ-ը (1971): 1975–79-ին եղել է «Երեկոյան Տաշքենդ» թերթի նկարիչն ու գեղ. խմբագիրը, միաժամանակ համագործակցել է Տաշքենդի Գաֆուր Գուլյամի անվ. գրակ-յան և արվ-ի, 1978-ից՝ «Սովետական գրող», «Լույս» և այլ հրատարակչությունների հետ: 1998-ից ***«Զանգակ»*** հրատարակչության նկարիչն ու

գեղ. խմբագիրն է: 1983-ից դասավանդում է ԵԳՊԱ-ում, 2005-ից՝ ամբիոնի վարիչ, պրոֆ.՝ 1995-ից:

Բ. ստեղծել է տեքստային տառատեսակի ընտանիք՝ «AraRusa»-ն (հայկ., ռուս., լատ. տարբերակներ), և ակցիդենտային տառատեսակներ: Հեղինակ է «Կերպարվեստ» (ռուս., թարգմ.՝ ղրղըզ., տաջիկ., ուզբ.) դասագրքի (I–IV դասարանների համար), նաև «Ակնթարթ» (2009) հոկկուների ժող-ի, «Ինչպե՞ս է ստեղծվում գիրքը» (2010) մենագրության:

Նկարազարդել և ձևավորել է «Ուզբեկական դասական պոեզիայի ընտրանի» (ռուս., գիրք 1–5, 1976–80, Տաշքենդ), «Ի՞նչ է, ո՞վ է» մանկ. հանրագիտարանը (հ. 1–4, 1984–87), Ա. Դյումայի «Երեք հրացանակիրներ» (ռուս., 1984) և «Վիկոնտ դը Բրաժելոն» (ռուս., 1985, 2 գրքով), Մ. Բուլգակովի «Վեպեր» (ռուս., 1986), Ռ. Պատկանյանի «Աստղիկներ» (1987, ժող.), Պ. Սևակի «Մուտք» (1988), Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (ռուս., 1988), Ս. Կապուտիկյանի «Ընտրանի» (1999), «Պարտեզ» (2001), Հ. Խաչատրյանի «Մանկագիտարան» (2001), Վ. Տերյանի «Քնարերգություն» (հայ., ռուս., 2006), Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն» (2009, 10 լեզվով), Ռ. Նազարյանի «Սողոմոն Իմաստունի առակները» (2011), Ք. Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» (2012) և այլ գրքեր, «Երաժշտություն» (II–VI, 2008–15), «Անգլերեն» (V–VIII, 2007–15) և այլ դասագրքեր, ձևավորել է «Արևելյան մանրանկարչություն» (ռուս., անգլ. և ուզբ., 1976–80), Շ. Մկրտչյանի «Արցախի գանձերը» (2000), «Վարդգես Սուրենյանց» (2003) ալբոմները, «Հայ արվեստի պատմություն» (2009) գիրք-ալբոմը:

Գրկ. Արա Բաղդասարյան. գրաֆիկա, ալբոմ, Ե., 2010:


ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Արկադի Զինովարի, **Արկո** (ծ. 25.8.1945, Բաքու), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (2003): Ավարտել է Բաքվի գեղարվ-ի ուսումնարանը (1965), ԵԳԹԻ (1971): 1974–82-ին դասավանդել է ԵԳԹԻ-ում: Համագործակցել է «Սովետական գրող» հրատարակչության հետ, աշխատակցել «Գարուն» ամսագրին:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Գրիգորյանի «Քո առաջին բառերը» (1980), Լ. Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» (ռուս.՝ 2001, հայ.՝ 2002), Է. Հեմինգուեյի «Ծերունին ու ծովը» (2008), Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», «Համլետ» (երկուսն էլ՝ 2008), Ի. Կռիլովի «Առակներ» (2009), Է. Միլիտոնյանի «Չիպո» (ռուս., 2009), Վ. Սարոյանի «Հին երկրից բերած խրատական առակներ» (2009), Ա. Վարդանյանի «Վերջին ծխնելույզ մաքրողի հեքիաթը» (2009) և այլ գրքեր:

Գրկ. Arko Baghdasaryan. "Mythos und Moderne", 1997; Deutschland, Brüder Grimm-Museum, Kassel; Arko Baghdasaryan. "Fenster zur kontem plation", Printinfo, 2001.

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Էդիկ Բարդուղիմեոսի, **Էդ. Գերմանիկ** (ծ. 6.8.1955, Թեհրան), ճարտարապետ, պատմաբան, խմբագիր: Ավարտել է Շիրազի (Իրան, 1977), Իրանի ազգ. (1981), Սպահանի պետ. (1986) համալսարանները: 1981-ից՝ Թեհրանում Հայկ. ուսումնասիրությունների կենտրոնի [2002-ից գործում է Տորոնտոյում (Կանադա)] հիմնադիր-տնօրեն, 1995–99-ին՝ *«Ապագայ»* ամսագրի, 2000-ից՝ նույնանուն արևելագիտ. եռամսյա հանդեսի և *«Լույս»* մշակութ., հաս. ամսագրի արտոնատեր և գլխ. խմբագիր:


Լույս են տեսել Բ-ի «Հայ ժողովրդի պատմութիւն» (հ. 1–2, 1981), «Հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ. 5–18-րդ դարեր» (1982), «Իրանի Քեամարա գաւառի հայկական գաղթօջախի պատմութիւն», «Համառօտ ակնարկ իրանահայ համայնքի պատմութեան» (հայ., պարսկ.), «Թեհրանահայ գաղութի պատմություն» (հայ., պարսկ., երեքն էլ՝ 2002), «Հայ եկեղեցու պատմություն» (պարսկ., 2001), «Արցախի պատմություն» (պարսկ., 2002), «Ակնարկ հայոց ցեղասպանութեան» (2005) աշխատությունները, «Հայերէն սովորենք» (1984), «Շահնամեն, Ֆիրդուսին և հայերը» (պարսկ., 2002) գրքերը, «Իրանահայ տպագրություն» («Հայ գրադարանների միջազգային համաժողովի նյութեր», ժող., 2012) հոդվածը, պարսկ. է թարգմանել «Ավստրիական փաստաթղթերը Հայոց ցեղասպանության մասին» (1999, աշխատասիր.՝ Ա. Օհանյանի), Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (2002, ծնթգր.՝ Բ-ի), «Հայկական ճարտարապետություն» (2002) և այլ երկեր: Կազմել է «Պարսկերէն–հայերէն–անգլերէն զրուցարան» (1998), «Անգլերէն–հայերէն–պարսկերէն պատկերազարդ բառարան» (2006):



Արա Բաղդասարյան. *«Ինչպես է ստեղծվում գիրքը» (2010, Ե., «Զանգակ») ձեռնարկի կազմը*



Արկադի Բաղդասարյան. *Լ. Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» (2002, Ե., «Անահիտ») գրքի շապիկը*




Էդիկ Բաղդասարյանի *«Թեհրանահայ գաղութի պատմություն» (2002, Թեհրան) գրքի կազմը*



Միքայել Բաղդասարյան. *Դ. Դեմիրճյանի «Պույպույ մուկիկը» (1958, Ե., Հայպետհրատ) գրքույկի կազմը*



Հովհաննես Բաղրամյան



Հ. Բաղրամյանի *«Այսպես մենք հասանք հաղթանակի» (1979, Ե., «Հայաստան») գրքի փիփղոսաթերթը*

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Միքայել Միքայելի [7.11.1913, Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–20.12.1985, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Աշոտ *Բաղդասարյանի* հայրը: Վաստ. նկարիչ (1971): Ավարտել է ԵԳՈՒՀ (1936), ԵԳԻ (1950): 1956-ին վերապատրաստվել է Մոսկվայի պոլիգրաֆիայի ինստ-ում (գրքի ձևավորում և նկարազարդում): 1931–1936-ին եղել է *«Ավանգարդ»* թերթի, «Հոկտեմբերիկ» մանկ. հանդեսի (նաև 1945–48-ին) նկարիչը և պատկերազարդման բաժնի վարիչը: 1950–85-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում (խմբագիր, նկարիչ): 1966-ից աշխատակցել է «Պոլիգրաֆիստ» հանդեսին:

Նկարազարդել և ձևավորել է շուրջ 300 գիրք՝ Մ. Արմենի «Հիանալի սերմեր» (1934), Մ. Դարբինյանի «Սուլթին ու Բուլթին» (1936), Ն. Զարյանի «Մանկական» (1940), Խ. Աբովյանի «Մանուկներին» (1948), Ա. Խնկոյանի «Առակներ» (1953), Դ. Դեմիրճյանի «Պույպույ մուկիկը» (1958), Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» (1958), «Հայ գրողների դիմանկարներ» (1962, 35 դիմապատկեր), Ռ. Գաբրիելյանի «Բնագիտական գրույցներ» (գիրք Ա, Բ, 1956, 1959), Բ. Պոլևոյի «Պատմություն իսկական մարդու մասին» (1960), «Արկածային գրադարան» (1961–66) մատենաշարի 22 անուն գիրք, Վ. Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը» (հ. 1–4, 1961–67), Մ. Ռիդի «Անգլուխ ձիավորը», Ս. Սարգսյանի «Պետրոս Դուրյան» ևն: Հեղինակ է ծաղրանկարների, 120-ից ավելի մատենանիշների, գրաֆիկ. գործերի: Մասնակցել է գրքարվին նվիրված բազմաթիվ ցուցահանդեսների, արժանացել պարգևների:

Երկ. Մատենանիշեր (կազմ.՝ Ս. Ղազարյան), Ե., 1987:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Սպարտակ Բենիամինի (24.6.1929, ք. Կապան–2004, Երևան), պետ. աշխատող: Փիլ. գիտ. թեկնածու: Ավարտել է ԵՊՀ (1952): 1951–71-ին աշխատել է ՀԼԿԵՄ և ՀԿԿ մարմիններում, 1971–81-ին՝ Հրատապետկոմի նախագահ:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի 2 շքանշան:

ԲԱՂՐԱՄՅԱՆ Հովհաննես (Իվան) Քրիստափորի (Խաչատուրի) [19.11(2.12).1897, գ. Չարդախլու (Ելիզավետպոլի նահանգ, այժմ՝ Ադրբեջանի Շամխորի շրջանում)–21.9.1982, Մոսկվա, աճյունասափորն ամփոփված է Կրեմլի պատի մեջ], ռազմ. գործիչ, Խորհրդ. Միության մարշալ (1955-ից), Խորհրդ. Միության կրկնակի հերոս (1944, 1977):

Հայրենական մեծ պատերազմի (1941–45) տարիներին Բ. գլխավորել է Հվ-արմ. ճակատի և նույն ուղղության շտաբները, եղել գվարդ. բանակի և ռազմաճակատի, 1942-ի հուլիսից՝ բանակի, 1943-ից՝ Մերձբալթյան 1-ին ճակատի, 1945-ի ապրիլից՝ Բելոռուս. 3-րդ ճակատի զորքերի հրամանատար: Բ-ի հրամանատարությամբ զորամասերն ակտիվորեն մասնակցել են ֆաշիստ. զորքերի ջախջախմանը Կուրսկի աղեղում, Բելոռուս., Մերձբալթյան, Արևելապրուս. և այլ ռազմ. գործողություններում, Քյոնիգսբերգի ամրոցի գրավմանը:

Բ. եղել է «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը» (1941–45)» (ռուս.) վեցհատորյակի խմբագր. խորհրդի անդամ, ԽՍՀՄ ՊՆ բարձրագույն ռազմ. դասագրքերի և բուհ. ռազմագիտ. աշխատությունների պատ. խմբագիր:

Լույս են տեսել Բ-ի «Այսպես է սկսվել պատերազմը» (1975), «Այսպես մենք հասանք հաղթանակի» (1979), «Մեծ ժողովրդի զավակները» (1987), «Իմ հիշողությունները» (ռուս., 1979) ռազմագիտ–վերլուծ. հուշագրությունները:

Երևանում Բ-ի անունով կոչվել են մետրոպոլիտենի կայարան, պողոտա, որտեղ կանգնեցված է Բ-ի ձիարձանը (քանդ.՝ Ն. Կարգանյան), փողոցներ՝ Բելառուսի Գորոդոկ և Պոլոցկ քաղաքներում:

Գրկ. **Մերժանով Մ.**, *Զինվոր, զեներալ, մարշալ, Ե., 1975:* **Մնացականյան Ա.**, *Մարշալ Բաղրամյան: Կյանքի և գործունեության ուրվագիծ, Ե., 1978:* **Դաւիթբէկեան Գ.**, *Հայ մեծ զորավարը: Մարշալ Հովհաննես Բաղրամյանի կյանքն ու գործունեությունը, Ե., 1997:* **Հարությունյան Կ.**, *Մարշալ Բաղրամյան, Ե., 1997:* **Гаспарян А.**, *И. Х. Баграмян, Е., 1987; Маршал Багрямян: Сборник документов, Е., 1997.*

ԲԱՂՐԱՄՅԱՆ Մովսես, XVIII դ-ի 2-րդ կեսի հայ ազգ-ազատագր. շարժման գործիչ, լուսավորիչ: Նախն. կրթությունն ստացել է Ջուղայում. աշակերտել է Գևորգ վարդապետին: Ապրել է Ռուսաստանում: 1762–67-ին *Հովսեփ Էմինի* հետ եկել է Կովկաս՝ թուրք-պարսկ. լծի

դեմ Հայաստանում ապստամբ. շարժում կազմակերպելու նպատակով: 1768–ից հաստատվել է Հնդկաստանի Մադրաս քաղաքում: Շահամիր *Շահամիրյանի* հետ հիմնադրել է Մադրասի քաղ. խմբակը (1770–ական թթ.):

Բ. Հայաստանի ազատագրման վերաբերյալ իր հայացքները շարադրել է **«Նոր տետրակ որ կոչի յորդորակ»** աշխատության մեջ, որտեղ հայ ժողովրդի հերոս. անցյալի և ժամանակի դժվար կացության խորապատկերի վրա երիտասարդներին կոչ է արել դուրս գալ օտար բռնակալների դեմ ու զենքի ուժով հասնել ազատության: Ըստ հեղինակի՝ եկել է ժամանակը, որպեսզի հայերն ունենան սեփական պետությունը՝ «Մեծ Հայաստան», որը պետք է ընդգրկի պատմ. Հայաստանի բոլոր երկրամասերը, ինչպես նաև Կիլիկիան: Երկն ունի նաև ընթերցողին ուղղված խոսք:

Տպագրվել է 1772–73–ին Մադրասում՝ Հակոբ Շահամիրյանի անվ. տպարանում (240 էջ, 4^0, 13,5 սմ):

Գրքի համառոտ տարբերակը 1786–ին ռուս. թարգմանվել ու հրատարակվել է Ս. Պետերբուրգում, ապա՝ նաև վրաց.: Աշխարհաբար առաջին անգամ տպագրվել է 1991–ին Երևանում՝ «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ» (աշխարհաբարի փոխադր. և ծնթգր.՝ Պ. Խաչատրյանի):

Գրկ. Լեո, Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973: Պողոսյան Ս., Ազատագրական գաղափարախոսությունը «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գրքում, «ԲԵՀ», 1972, № 2:



Մովսես Բաղրամյանի *«Նոր տետրակ որ կոչի յորդորակ» (1772–73, Մադրաս, Հակոբ Շահամիրյանի անվ. տպ.) գրքի տիտղոսաթերթը*

ԲԱՄՊՈՒՔՃՅԱՆ Գևորգ Միքայելի (Սահտեսի) (23.2.1923, Կ. Պոլիս–24.9.1996, Ստամբուլ), բանասեր, պատմաբան, խմբագիր: 1967–77–ին եղել է Թուրքիայի հայոց պատրիարքարանի դիվանի վարիչ, 1977–82–ին՝ ավագ քարտուղար, միաժամանակ խմբագրել է *«Շողակաթ»* պարբ–ը:

Լույս են տեսել Բ–ի «Յակոբ Պատրիարք Նալեան (1706–64): Կեանքը, գործերը եւ աշակերտները» (1981), «Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678–1741) եւ իր աշակերտները» (1984, Ստամբուլ, «Շողակաթ») կրոնաբանասիր. աշխատությունները, խմբագրել և ծանոթագրել է Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի «Իսթանպուլ Թարիհի» (թուրք., 1988), «Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպոլսոյ (1660 տարւոյ)» (1991, «Շողակաթ», № 3), Միքայել ավագ քհն. Երամյանի «Պատմութիւն Արմաշու» (1991), Տ. Ուղուրլյանի «Պատմութիւն Կիւլպէնկեան գերդաստանի» (2006) աշխատությունները: 1942–56–ին Բ. հավաքել և հրատարակել է Կ. Պոլսի գերեզմանատների շուրջ 2300 հայկ. տապանագրեր: Մասնակցել է թուրք. մի շարք հանրագիտարանների ստեղծման աշխատանքներին:



Գևորգ Բամպուքճյանի *«Յովհաննէս Պատրիարք Կոլոտ» (1984, Սրտամբուլ) գրքի կազմը*

ԲԱՅԱՆԴՈՒՐ Աշոտ Սարգսի [1.1.1947, Երևան–11.6.2003, Լյուբլյանա (Սլովենիա)], գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1966), ԵԳԹԻ (1971): Սարգիս *Բայանդուրի* և Սարո *Մարգարյանի* որդին: 1980–ական թթ–ին աշխատակցել է «Պիոներ» մանկապատանեկան ամսագրին: Ձևավորել է Ա. Այվազյանի «Սինյոր Մարտիրոսի արկածները» (1977), Օ. Սանահյանի «Հեքիաթներ և պատմվածքներ» (1979) գրքերի կազմերը, պատկերազարդել Գրիմ եղբայրների «Հեքիաթները» (ռուս., 1984) և այլ գրքեր:


Ստեղծել է նկարազարդումներ «Սասունցի Դավիթ» էպոսի մոտիվներով (1988–97): Որոշ աշխատանքներում իմաստավորել է թվերն ու գրերը («12 թիվը որպես թռչուն», «Կոտրված դեղին քառակուսին», երկուսն էլ՝ 1996–97, ևն):

ԲԱՅԱՆԴՈՒՐ Սարգիս Բագրատի (11.1.1912, Թիֆլիս–15.2.2000, Երևան), արվեստաբան, խմբագիր: Արվ. վաստ. գործիչ (1967): Աշոտ *Բայանդուրի* հայրը: Ավարտել է Մոսկվայի հաս. գիտ–ների ակադ–ը (1952): 1952–55–ին՝ Հայպետհրատի գլխ. խմբագիր, 1940–41 և 1955–1985–ին՝ *«Սովետական արվեստ»* ամսագրի խմբագիր:

Լույս են տեսել Բ–ի «Աղմկալից փողոց» (1962), «Հանդիպումներ» (1973) արվեստաբան. հոդվածների և պիեսների ժող–ները:



Աշոտ Բայանդուր. *«Պիոներ» (1989, № 10) ամսագրի շապիկը*



Սուրեն Բայրամյանի *«Հայ մամուլը եգիպտոսի մէջ» (2005, Կահիրե) գրքի կազմը*

ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ (Բայբուրդ) Վանիկ (Վան) Վաղարշակի (ծ. 11.7.1940, Թբիլիսի), խմբագիր, հաս. գործիչ: Ավարտել է Թբիլիսիի պետ. համալսարանը (1966): 1966–75-ին՝ «Սովետսկի սպորտ», ապա՝ «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերի սեփական թղթակից Հայաստանում: 1976–86-ին՝ Մոսկվայի Սամուլի նորությունների գործակալության սեփական թղթակից Վրաստանում: 1986–87-ին՝ ***«Վրաստան»*** թերթի խմբագրի տեղակալ, 1987-ից՝ խմբագիր: 1987–2000-ին, միաժամանակ՝ Վրաստանի ժուռնալիստների դաշնության քարտուղար, 1988–91-ին՝ Վրաստանի ԿԿ կենտկոմի, 1990–91-ին՝ բյուրոյի անդամ, 1991–95-ին՝ Վրաստանի հայկ. մշակութ–բարեգործ. ընկերության նախագահ, 1995-ից՝ առաջին փոխնախագահ:

Վրաստանի «Պատվո շքանշան» (1995), ՀՀ «Մովսես Խորենացի» (2012) մեդալ:

ԲԱՅՐԱՄՅԱՆ Սուրեն Նարպեյի (ծ. 10.3.1943, Կահիրե), բժիշկ, խմբագիր, մատենագետ: Ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգ. (1955), Մարոնիտների երկրորդ. (1960) վարժարանները, Կահիրեի համալսարանը (1965): 1975-ից՝ ազգ. երեսփոխան, Կահիրեի Պատկառելի թեմ. ժողովի անդամ–ատենադպիր, 2011-ից՝ «Հուսաբեր» մշակութ. ընկերակցության ատենապետ: 1982–87-ին՝ ***«Յուսաբեր»*** օրաթերթի խմբագիր: Բժշկ. և գիտ. հոդվածներ է տպագրում եգիպտահայ և Սփյուռքի այլ պարբ–ներում:

Լույս են տեսել Բ–ի «Հայ մամուլը Եգիպտոսի մէջ» (հայ.՝ 2005, արաբ.՝ 2013), «Հայ գիրքը Եգիպտոսի մէջ. 1888–2011» (2012, Կահիրե, Փոլ Քիլիճյան հրտ.) մատենագիտ. աշխատությունները:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» (1999), ՀՄԸՄ կեդրոն. վարչության «Արտակարգ» (1999), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2012) շքանշաններ, ՀԱԳ–ի «Հակոբ Մեղապարտ» (2010), Մատենադարանի «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2010) հուշամեդալներ:



Ջորջ Բայրոն

ԲԱՅՐՈՆ (Byron) Ջորջ Նոել Գորդոն [22.1.1788, Լոնդոն–19.4.1824, Միսսոլունգ (Հունաստան)], անգլիացի բանաստեղծ: Սովորել է Քեմբրիջի համալսարանում: 1807-ին հրատարակել է առաջին ժող–ը՝ «Պարապության ժամեր», ապա՝ «Անգլիական երգիչները և շոտլանդական տեսարանները» (1809) երգիծ. պոեմը, «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» (I–II երգերը՝ 1812, III–IV երգերը՝ 1816–17), «Գյավուր», «Աբիդոսյան հարսնացուն» (երկուսն էլ՝ 1813), «Ծովահենը» (1814), «Լարա» (1814), «Կորնթոսի պաշարումը», «Փարիզինա», «Շիլիոնի կալանավորը» (երեքն էլ՝ 1816), «Տասսոյի գանգատը», «Մանֆրեդ» (երկուսն էլ՝ 1817), «Մազեպա» (1818) և այլ պոեմներ: Հետագայում անցել է դրամատիկ. ժանրին. գրել է «Մարինո Ֆալիերո. Վենետիկի դոժ», «Երկու Ֆոսկարի», «Սարդանապալ» ողբերգությունները և փիլ. «Կայեն» դրաման (բոլորը՝ 1821):

Բ–ի գրական գործունեության պսակը «Դոն Ժուան» (16 երգ՝ 1818, 17–րդը՝ անավարտ) չափածո վեպն է, որտեղ առաջ է քաշել ազգ–ազատագր. շարժումների հարցը, սարկազմով ներկայացրել սուլթանության արյունոտ իշխանությունը:



Ջ. Բայրոնի *«Երկերի ժողովածու»-ի (1965, Ե., «Հայաստան») փիփղոսաթերթը*

1816-ին Բ. այցելել է Սբ Ղազար կղզի, ծանոթացել Մխիթարյան միաբանների հետ: Հարություն ***Ավգերյանից*** սովորել է հայոց լեզու, ուսումնասիրել հայոց պատմության դասընթացները, նրա հետ հրատարակել է «Քերականութիւն անգղիական եւ հայերէն» (1817), «Քերականութիւն հայերէն եւ անգղիական» (1819) դասագրքերը՝ օգտագործելով հատկապես հայ հին և միջնադարյան գրակ–յան նմուշներ, օգնել «Բառարան անգղիերէն ու հայերէն»–ի (1821) ստեղծմանը և գրել իր նշանավոր «Առաջաբանը», որտեղ արծարծել է հայ ժողովրդին թուրք. փաշաների և պարսկ. սատրապների բռնակալությունից ազատագրելու խնդիրը: Հայ–ից անգլ. է թարգմանել Սբ Պողոսի Կորնթացիներին ուղղված 2 թուղթը (1817), Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ից 2 գլուխ և Ներսես Լամբրոնացու

«Ճարտասանութիւն»-ից հատվածներ: Ծանոթացել է Աստվածաշնչի հայ. թարգմանությանը, անգլ-ում պակաս մասերը թարգմանել և լրացրել է հայ-ից: Բ-ի հետաքրքրությունն այդ ուղղությամբ այնքան մեծ է եղել, որ ցանկացել է «Կայեն»-ի համար օգտագործել առասպելի հայկ. օրինակը: Նա իր հեղինակությամբ նպաստել է Եվրոպայում հայագիտ-յան տարածմանը և զարգացմանը: 1823-ին Բ. մեկնել է Հունաստան, մասնակցել հակաթուրք. ապստամբությանը, ստանձնել ապստամբ գնդերից մեկի հրամանատարությունը: 1824-ի ապրիլին հիվանդացել է տենդախտով և մահացել:

Բ-ի ստեղծագործությունները հայ. թարգմանվել և նրա մասին հոդվածներ գրվել են 1810–20-ական թթ-ից Կ. Պոլսում, Մոսկվայում, Թիֆլիսում, Վենետիկում և Վիեննայում լույս տեսնող պարբ-ներում: Սկզբն. շրջանում թարգմանվել են ֆրանս-ից, ավելի ուշ՝ բնագրից, թարգմանաբար տպագրվել են «Բազմավէպ», «Գեղունի» և «Հայ ընտանիք» հանդեսներում:

1846-ին «Բազմավէպ»-ում տպագրվել է «Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը» պոեմից հատված, որը ներառվել է 1852-ին լույս տեսած «Ծաղկաքաղ քերթողաց անգղեայց» (անգլ. և հայ., Վնտ., Սբ Ղազարի տպ.) ժող-ում, որտեղ, ի թիվս այլ բանաստեղծությունների, զետեղվել են նաև Բ-ի 6 բանաստեղծություն՝ «Քերթուածք» խորագրով, Հ. Ավգերյանի «Քերականութեան» համար գրած Բ-ի «Առաջաբանը» և մյուս թարգմանությունները, նրա ստորագրությունը (անգլ. և հայ.). թարգմանիչը հավանաբար Ղ. Ալիշանն է: «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի 2-րդ հրատ-ը՝ «Իտալիա» վերնագրով (անգլ. և հայ.), լույս է տեսել 1860-ին (վերահրտ.՝ 1889, 1891, 1901, 1905, 1907): 1895-ին տպագրված Գ. Ա. Շրուսպֆի «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԹ–ԺԹ) դար» (Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատության մեջ զետեղվել են նաև «Լորտ Պայրընի» հոդվածը՝ Բ-ի՝ հայերի վերաբերյալ նամակներից հատվածներով, ինչպես նաև նրա «Քերականութեան» համար գրած «Առաջաբանը»:

Բ-ի ստեղծագործություններից թարգմանել են Գ. Բարխուդարյանը, Հ. Միրզայանը, Տ. Վարդապետը, Ա. Ծատուրյանը: Գեղ. կատարելությամբ ուշագրավ է «Շիլիոնի կալանաւորը» (1896, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) պոեմի՝ Հ. Թումանյանի թարգմանությունը:

Հայ. լույս են տեսել նաև Բ-ի «Երկինք եւ երկիր» (1874, ԿՊ), «Մանֆրէդ» (1906, Վնտ., Սբ Ղազարի տպ., թարգմ.՝ Ա. Եզեկյանի, 1913, Թ., Հայոց հրատ. ընկ. տպ., թարգմ.՝ Տ. Վարդապետի, 1922, Վնն., Մխիթարյան տպ., թարգմ.՝ Հ. Մասեհյանի), «Ծովահէնը» (1911, Թեհրան, «Փարոս» տպ., թարգմ.՝ Հ. Միրզայանի), «Փարիզինա», «Կորնթոսի պաշարումը», «Աբիդոսի հարազատը», «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» (ամբողջությամբ), «Լարա» (1965, թարգմ.՝ Հ. Սևանի) պոեմները, «Քերթուածք Լորտ Պայրընի կամ Ծաղկաքաղ Լ. Պայրընի...» (1907, Վնտ., Սբ Ղազարի տպ.) բանաստեղծությունների և պոեմների ժող-ը, «Երկերի ժողովածուն» (1965), «Պոեմները» (1979, 2005), «Էջեր նամակներից» (1986) գիրքը, «Դոն Ժուան» (1988) պոեմը:

Բ-ի անունով կոչվել են փողոցներ Երևանում և հանրապետության այլ քաղաքներում, դպրոց՝ Գյումրիում:

Գրկ. **Պետրոսյան Է.,** *Բայրոնի կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1941:* **Դաշտենց Խ.,** *Բայրոնը և հայերը, Ե., 1959: Բայրոնը Հայաստանի և հայերի մասին, Ե., 1983:* **Բեքարյան Ա.,** *Բայրոնի «Հայկական» նամականին, Ե., 2001, 2013:*




Ջ. Բայրոնի *«Դոն Ժուան» (1988, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Խաչիկ Դաշտենցի «Բայրոնը և հայերը» (1959, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, **ֆոլկլորագիտություն**, բանասիր. գիտների բնագավառ, որի ուսումնասիրության առարկան ժող. բանահյուսությունն է: Որպես առանձին գիտություն ձևավորվել է XIX դ-ի 1-ին տասնամյակներին՝ համեմատ. լեզվաբանության հետ գրեթե միաժամանակ: Բ-յան հիմնադիրներից են գերմանացի Գրիմ եղբայրները, հատկապես՝ Յակոբ Գրիմը, որն իր «Գերմանական առասպելաբանություն» (1835) աշխատությամբ հիմնադրել է համեմատ. առասպելաբանությունը կամ առասպելաբան. դպրոցը:


Հայ Բ. ձևավորվել է XIX դ-ի կեսերին՝ միջնադարյան մատենագիրների ավանդած հին բանահյուս. երկերի ուսումնասիրությամբ (Մկրտիչ Էմին, «Վէպք հնոյն Հայաստանի», 1850, Մ., Վլադիմիր Գոթիեի տպ., Հ. Գաթըրճյան, «Պատմութիւն մատենագրութեան հայոց», 1851, Վնն., Մխիթարյան տպ., Ս. Պալասանյան, «Պատմութիւն հայոց



Մկրտիչ Էմինի «Վէպք հնոյն Հայաստանի» (1850, Մոսկվա) գրքի փիփղոսաթերթը



Հովսեփ Գաթըրճյանի «Պատմութիւն մատենագրութեան հայոց» (1851, Վնն.) գրքի փիփղոսաթերթը



Գարեգին Հովսեփյանի «Սասմայ ծռեր» (1892, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը

գրականութեան. Բանավոր գրականութիւն», հ. 1, 1865, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.): Ժող. նոր բանահյուսության կարգավորված հավաքումն ու հետազոտությունն սկզբնավորել է Գարեգին ***Սրվանձտյանը*** («Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ», 1874, ԿՊ, Եղիա Տնտեսյանի տպ.):

Գ. Սրվանձտյանի և նրա հետևորդների ջանքերով հավաքվել են Հայաստանի ազգագր. տարբեր շրջաններում ստեղծված «Սասնա ծռերի» նորահայտ պատումներ և հրապարակվել (Գ. Հովսեփյան, «Սասմայ ծռեր», 1892, Թ., Մ. Շարաձեի տպ., ևն):

Բ–յան տես. մտքի սկզբնավորման և զարգացման մեջ բացառիկ դեր է ունեցել Մհեր ***Արեղյանը***՝ իր «Դաւիթ եւ Մհեր: Ժողովրդական դիւցազնական վէպ» (1889, Շուշի, Միրզաջան Հակոբյանի տպ.), «Հայոց ժողովրդական հավատքը» (գերմ., 1898), «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ» (1899, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ժողովրդական խաղեր» (1904, նույն տպ.), «Հայ ժողովրդական վէպը» (1908, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Հին գուսանական ժողովրդական երգեր» (1931), «Սասնա ծռեր» (հ. 1, 1936, հ. 2, մաս 1, 2, 1944, 1951, Կ. Մելիք–Օհանջանյանի աշխատակցությամբ), «Հայ վիպական բանահյուսություն» (Երկեր, հ. 1, 1966) աշխատություններով:

Հետագայում զարգացնելով դաս. Բ–յան ավանդները՝ հիմնականում կատարվել են բանահյուս. առանձին ժանրերի գիտ. համահավաք բնագրերի հրատ–յան, ուսումնասիրության, գրակ–յան ու բանահյուս. առնչությունների հետազոտման աշխատանքներ: Հիշարժան են Հ. Օրբելու «Միթրա–Միհրը «Սասնա ծռեր»–ի մեջ» (1946), «Հայկական հերոսական էպոսը» (հայ. և ռուս., 1956), «Միջնադարյան Հայաստանի առակները» (ռուս., 1956), Ա. Ղանալանյանի «Հայ շինականի աշխատանքի երգերը» (1937), «Պոռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1938), «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1941), «Հայկական առածանի» (1951), «Առածանի» (1960), «Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1955), «Սայաթ–Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1963), «Ավանդապատում» (1969), Ա. Նազինյանի «Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» (1954), «Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը» (1957), «Հայ ժողովրդական հեքիաթներ»–ի (հ. 1–17, 1959–2012, խմբագր.՝ Ա. Նազինյանի) գիտ. բազմահատորյակը, Ա. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգերը» (1956), Գ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» (1960), «Հայ ժողովրդական բանահյուսություն» (1960, 2–րդ հրտ.՝ 1980), «Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը» (1965), «Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը» (գիրք 1, 2, 4, 5, 1972, 1981, 1965, 1986), «Էպոսի ժանրային հատկանիշները» (1985), ««Սասունցի Դավիթ» էպոսի պոետիկան» (1988), Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկները» (գիրք 1, 2, 1960, 1965), Մ. Մկրտչյանի «Հայ ժողովրդական պանդխտության երգերը» (1961), Ռ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերը» (1970) և այլ աշխատություններ:

Այժմ աշխատանքներ են կատարվում բանահյուս. նյութերը մաթ. մեթոդներով ու հաշվիչ տեխնիկայով վերամշակելու և համակարգելու ուղղությամբ, որը լայն հեռանկարներ է բացում բանահյուսության համակողմանի ուսումնասիրության և գիտ. հրատ–յան համար:

Գրկ. **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 1, Ե., 1966, էջ 10–15:* **Ղանալանյան Ա.**, *Հայ ժողովրդական բանահյուսություն, պր. 1, 8, 9, 11, Ե., 1945–46:* **Նույնի**, *Սովետահայ բանագիտությունը հիմուն փարում, «ՊԲՀ», 1970, № 3:* **Նույնի**, *Դրվագներ հայ բանագիտության պատմության, Ե., 1985:* **Նույնի**, *Հայ գրականությունը և բանահյուսությունը, Ե., 1986:* **Գրիգորյան Գ.**, *Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1967:* **Հարությունյան Ս.**, *Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Ե., 1975:* **Նույնի**, *Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Ե., 2006:* **Նույնի**, *Բանագիտական ակնարկներ, Ե., 2010:*

«ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ», Կլեոպատրա Սարաֆյանի դասագիրքը մանուկների համար՝ հայ. և ռուս.: Բաղկացած է այբբենարանից, բառարանից և ուս. այլ նյութերից: Առաջին հայ կին հեղինակի հրատարակած երկն է:

Տպագրվել է 1788-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Բանալի գիտութեան...», Բ-ին՝ «Книга, содержащая въ себѣ ключь...» (295 էջ, 4^0, 15,3 x 12,2 սմ):


«ԲԱՆԱՍԷՐ», քաղ., գրական և առևտր. տասնօրյա թերթ (վիմատիպ): Լույս է տեսել 1848–49-ին Մադրասում: Խմբագիր՝ Ստեփանոս Հովհաննեսյան: Արտացոլել է հնդկահայության կյանքը, քննադատել գաղութի ազգ. վարչությունների՝ աղքատ և իրավազուրկ մարդկանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը: «Բ.» գաղ. տարաձայնություններ է ունեցել *«Արշալոյս Արարատեան»* թերթի հետ: Լեզուն գրաբար էր, տպագրել է առևտր. լուրեր և տեղեկություններ, եկեղեցկրոն. և աշխարհիկ կյանքին վերաբերող հոդվածներ:

«ԲԱՆԱՍԷՐ», պարբերագիրք-ժողովածու: Լույս է տեսել 1851–52 և 1859-ին (1 համար) Կ. Պոլսում՝ աշխարհաբար: Խմբագիր՝ Հովհաննես *Հիսարյան*: Հրատարակվել է «Ամսական տետր ազգային, բանասիրական եւ քաղաքական» ենթավերնագրով՝ 2 հատորով: Ունեցել է ներածություն, վերջաբան և հրատարակված նյութերի ցանկ: Տպագրել է պատմաբանասիր., մանկավարժ., մատենագիտ., հայրենագիտ., հայագիտ., գրաքննադատ., կրոնաբարոյական հոդվածներ, նմուշներ՝ հայկ. ժող. բանահյուսությունից, գրական ստեղծագործություններ, թարգմանություններ, նաև Հ. Հիսարյանի «Խոսրով եւ Մաքրուհի» (1852) վեպը: «Բ.»-ի նյութերի մեծ մասի հեղինակը խմբագիրն էր:

«ԲԱՆԱՍԷՐ», հայագիտ. հանդես: Լույս է տեսել 1899–1907-ին Փարիզում: Մինչև 1902-ը՝ եռամսյա, ապա՝ ամսաթերթ, 1906-ից՝ կրկին եռամսյա: Խմբագիր-տնօրեն՝ Կարապետ *Բասմաջյան*: Մինչև 1902-ն ունեցել է բանասիր. թեքում. հրատարակել է նշանավոր հայագետների աշխատություններ ու հոդվածներ, արժեքավոր ուսումնասիրություններ բժշկության պատմության վերաբերյալ, հնախոս., մատենագր., քնն., ազգագր., բանասիր. և այլ բաժիններում՝ Կ. Բասմաջյանի, Գ. Խալաթյանցի, Ֆ. Կոնիբերի, Օ. Կարիերի, Հ. Աճառյանի, Ն. Բյուզանդացու, Մ. Դավիթ-Բեկի, Բ. Կյուլեսերյանի և նշանավոր այլ հայագետների հետազոտություններ ու հոդվածներ: 1902-ից մեծ տեղ է հատկացրել հայ և համաշխ. գրակ-յանը. տպագրել է Պ. Պոռշյանի, Ա. Ծատուրյանի, Հ. Մառքի, Հ. Ալյանաքի, Վ. Հյուգոյի, Հ. Հայնեի, Վ. Սարդուի և ուր. ստեղծագործություններից:

Հանդեսն անդրադարձել է ազգ-հաս. խնդիրների, տպագրել տնտեսագիտ., արվեստագիտ., գրականագիտ. տես. հոդվածներ: «Բ.» առանձին գրքերով լույս է ընծայել հայագիտ., արևելագիտ. աշխատություններ, գեղ. գործեր, որոնց մի մասը հատվածաբար տպագրվել էր հանդեսում:


«ԲԱՆԲԵՐ», հոգևոր եռամսյա հանդես (սկզբում՝ ամսաթերթ): Լույս է տեսնում 1925-ից Մարսելում: Ֆրանսահայ ավետարան. եկեղեցիների միության պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Հովհաննես Ղազարոսյան, Գրիգոր Խայիկյան, Վ. Սահակյան, Սամվել Պազգալյան, Շահեն Սակարյան, Անի Թոփուզխանյան, Ժիլպեր Լևոնյան: Տպագրում է աստվածաբան., կրոն., բարոյադաստիարակչ., մշակութ. հոդվածներ, Աստվածաշնչի հատվածների մեկնաբանություններ, լուրեր՝ Սփյուռքի, մասնավորապես՝ Ֆրանսիայի հայ ավետարանականների կյանքից: 1925–37-ին զուգահեռ հրատարակվել է նաև նույնանուն հայատառ թուրք. ամսաթերթ (խմբագիրներ՝ Ժոզեֆ Պարսամյան, Լևոն Նիկողոսյան):



Կլեոպատրա Սարաֆյանի **«Բանալի գիտութեան»** *(1788, ՍՊԲ, Գրիգոր Խալդարյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*



«Բանասէր», *1899–1907-ին, Փարիզ (№ 12)*



«Բանբեր», *1925-ից, Մարսել (№ 14, 2008)*



«Բանբեր», *2006-ից, Վանաձոր (№ 1, 2007)*



«Բանբեր գրականութեան եւ արուեստի», *1903-04, Ս. Պետերբուրգ*



«Բանբեր Երևանի համալսարանի», *1967-ից, Երևան (№ 138.1, 2012)*

«ԲԱՆԲԵՐ», գրական-հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1933–34-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Էդվարդ Սիմքեշյան: Լուսաբանել է Կ. Պոլսի հաս. և մշակութ. կյանքը, ընթերցողներին իրազեկել ժամանակի գիտ., մշակութ., գրական և քաղ. իրադարձությունների մասին: Ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի վերելքը տնտեսության, գիտ-յան և արվ-ի բնագավառներում: Գրական բաժնում տպագրել է պոլսահայ գրողների ստեղծագործություններից, ինչպես նաև թարգմանություններ ֆրանս., իտալ. և թուրք. գրակ-ներից:

«ԲԱՆԲԵՐ», գիտ. աշխատությունների ժող.: ՎՊՄԻ հրատ.: Լույս է տենում 2006-ից Վանաձորում: Գլխ. խմբագիր՝ Գուրգեն Խաչատրյան: Տպագրում է գրականագիտ., լեզվաբ., պատմագիտ., քաղաքագիտ., տնտեսագիտ., հոգեբ., մշակութաբան., մանկավարժ. հոդվածներ, ուսումնասիրություններ, առանձին գիտաժողովների և գիտագործն. համաժողովների նյութեր: 2011-ից հրատարակվում է մասնագիտ. առանձին պրակներով՝ «Բանասիրություն», «Մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմագիտություն», «Փիլիսոփայություն», «Տնտեսագիտություն», «Հոգեբանություն», «Մաթեմատիկա և ֆիզիկա», «Ինֆորմատիկա», որոնցից յուրաքանչյուրն ունի մասնագիտ. խմբագր. խորհուրդ:

«ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ», գրական-գեղ. կիսամյա հանդես: Հրատարակվել է 1903–04-ին Ս. Պետերբուրգում: Խմբագիր՝ Նիկողայոս ***Ադոնց:*** Վիպ., բանաստեղծ., տես. ու գրական-պատմ. բաժիններում ներկայացել է հայ գրողներին և գրական կյանքի ընդհանուր պատկերը, աշխատել է բացահայտել հայության տարանջատ հատվածների սոցիալ-տնտ. և հաս. կացությունը, նպաստել է արևելահայ ու արևմտահայ գրակ-ների մերձեցմանը: Տպագրել է Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Վ. Թեքեյանի, Ա. Իսահակյանի, Սիամանթոյի, Մ. Կյուրճյանի, Վ. Մալեզյանի, Ա. Արփիարյանի, Վրթ. Փափազյանի, Լ. Շանթի, Ե. Օտյանի, Առանձարի և ուր. ստեղծագործություններից, Մ. Նալբանդյանի «Կայսպակ» (անտիպ) պոեմը և Ս. Նազարյանցի նամակները, անդրադարձել է ժամանակի եվրոպ. գրական ուղղություններին: Ծանոթացրել է հայկ. և համաշխ. կերպարվ-ին և քանդ-յանը, զետեղել է Վ. Սուրենյանցի, Է. Շահինի, Ե. Թադևոսյանի, Ա. Բաբայանի, Մ. Սահտեսյանի, ինչպես նաև եվրոպացի արվեստագետների գործեր՝ հանրամատչելի բացատրություններով: Հրատարակել է թարգմանություններ եվրոպ. պոեզիայից:

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», հաս. գիտ-ների քառամսյա հանդես: Լույս է տեսնում 1967-ից Երևանում: «ՀԽՍՀ պետական համալսարանի գիտ. տեղեկագիր» (1925–30), «Աշխատություններ» (1934–36), «Գիտական աշխատություններ» (1939–61), «Գիտական տեղեկագիր» (1962–66) պարբ-ների շարունակությունն է: Խմբագիրներ՝ Էդվարդ ***Զրբաշյան***, Հարություն ***Ֆելեքյան***, Էդվարդ ***Աղայան***, Հրաչիկ ***Միրզոյան*** (1992-ից): Ներկայացնում է ԵՊՀ-ում հումանիտար ոլորտում կատարվող ԳՀ աշխատանքները, զգալի տեղ է հատկացնում հայագիտ. հարցերին: Հոդվածները տպագրվում են հայ., ռուս. և անգլ.՝ ամփոփումներով:

2010-ից հանդեսը լույս է տեսնում 6 առանձին մասնագիտ. շարքերով՝ «Հայագիտություն» (պատ. խմբագիր՝ Հրաչիկ Միրզոյան), «Բանասիրություն» (պատ. խմբագիր՝ Լիանա Հովսեփյան), «Իրավագիտություն» (պատ. խմբագիր՝ Արա Գաբուզյան), «Փիլիսոփայություն և հոգեբանություն» (պատ. խմբագիր՝ Երվանդ Հարությունյան), «Սոցիոլոգիա և տնտեսագիտություն» (պատ. խմբագիր՝ Արթուր Աթանեսյան), «Միջազգային հարաբերություններ և քաղաքագիտություն» (պատ. խմբագիր՝ Էդիկ Զոհրաբյան, 2013-ից՝ Աշոտ Ալեքսանյան)՝ իրենց համարանիշներով, 5 մամուլ ծավալով: Յուրաքանչյուր շարք ունի խմբագր. խորհուրդ:

Վերջին տարիներին հանդեսը տպագրվում է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության աջակցությամբ:

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», գիտ. հանդես: ԵՊԼՀ հրատ.: Լույս է տեսնում 2011-ից Երևանում: Տպագրում է հոդվածներ լեզվաբանության, գրականագիտ-յան, ռոման. լեզվաբանության, ռուս. և եվրոպ. գրակ-յան, փիլ-յան, քաղաքագիտ-յան, երկրագիտ-յան, մարդու իրավունքի և պատմության, մշակութաբանության, լեզվաքաղաքականության, կրթության կառավարման, մանկավարժության, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի, հաս. գիտ-ների, հայագիտ-յան, ռուսաց լեզվի, թարգմանության տեսության վերաբերյալ: 2012-ից հրատարակվում է 5 մասնագիտ. պրակներով՝ «Լեզու, մշակույթ, հաղորդակցություն», «Ռոմանա-գերմանական բանասիրություն», «Կրթության կառավարում», «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», «Ռուսաստանագիտության խնդիրներ»:

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ», հայագիտ. միջազգ. քառամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 2013-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Պավել *Չոբանյան:* Հրապարակում է հայ և օտարազգի հայագետների երկեր, հետազոտություններ՝ Հայաստանի և սփյուռքահայ համայնքների պատմության վերաբերյալ, հայոց պատմությանն առնչվող այլ լեզուներով պահպանված սկզբնաղբյուրների գիտ. ուսումնասիրություններ, ներկայացնում արդի հայագիտ-յան ձեռքբերումները: Անդրադառնում է Հայաստանի պատմության խեղաթյուրումներին ու նենգափոխումներին, քննարկում հայագիտ-յան զարգացման ուղիները, նորովի է լուսաբանում հայոց պատմության հիմնահարցերը: Հոդվածները հայ., անգլ., ռուս., ֆրանս. և գերմ. են (երկլեզու ամփոփումներով):

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ», գիտատեղեկատվ. կիսամյա հանդես (2003-ից, սկզբում՝ տարեգիրք, 1963–90-ին՝ քառամսյա, ապա՝ տարեգիրք): Հայաստանի ազգ. արխիվի պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1960-ից Երևանում (1997–2001-ին ընդհատվել է)՝ հայ. և ռուս.: Խմբագիրներ՝ Վարդգես Կզարթմյան, Աշոտ *Հարությունյան,* Պավել Սաֆյան, Հարություն *Ֆելեքյան*, Ամատունի *Վիրաբյան* (2001-ից): Հրապարակում է հայոց նոր ու նորագույն ժամանակաշրջանի պատմության (1800-ից ցայսօր) տարբեր հիմնահարցերի, պատմ. իրադարձությունների, ականավոր անհատների կյանքին ու գործունեությանը վերաբերող նորահայտ փաստաթղթեր, արխիվային նյութերի հիման վրա գրված մենկնություններ ու հոդվածներ, ինչպես նաև մասնագիտ. ոլորտներին առնչվող հաղորդագրություններ, տեսություններ, արխիվագիտ. մշակումներ ևն: «Բ. Հ. ա.»-ում հոդվածներ են տպագրել Ա. Հովհաննիսյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ծ. Աղայանը, Հ. Բաղրամյանը և ուր.:

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ», գիտ. տարեգիրք: ՀԽՍՀ լուսժողկոմատի հրատ.: Լույս է տեսել 1921–22-ին Վաղարշապատում: Գիտնական քարտուղար՝ Երվանդ *Տեր-Մինասյան*: Տպագրել է Հայաստանի աշխարհագրությանը, տնտ. հարաբերություններին ու իրավիճակին, ազգագրությանը վերաբերող հոդվածներ, գրականագիտ., պատմագիտ., արվեստագիտ. ուսումնասիրություններ: Տարեգրքում հոդվածներ են հրատարակել Խ. Սամուելյանը («Տոտեմիզմը հայոց մեջ»), Լեոն («Մի գիծ հայ մամուլի կյանքից»), Թ. Թորամանյանը («Նախաքրիստոնեական հայ ճարտարապետություն»), Ա. Տերտերյանը, Թ. Ավդալբեգյանը, Դավիթ Անանունը և ուր.:

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», գիտ. եռամսյա (մինչև 2012-ը՝ քառամսյա) հանդես: ՀՊՏՀ հրատ.: Լույս է տեսնում 2004-ից (մինչև 2006-ը՝ «Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի») Երևանում: Խմբագիրներ՝ Համազ Ղուշչյան, Յուրի Սուվարյան, Կորյուն Աթոյան,




«Բանբեր Երևանի պետական լեզվաբանական համալսարանի», *2011-ից, Երևան (№ 2, 2012)*



«Բանբեր հայագիտության», *2013-ից, Երևան (№ 1, 2013)*




«Բանբեր Հայաստանի արխիվների», *1960-ից, Երևան (№ 1, 1960)*



«Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», *2004-ից, Երևան (№ 1, 2011)*



«Բանբեր Մատենադարանի», *1941-ից, Երևան (№ 12)*



«Բանվոր», *1923-90, Լենինական*



«Բանվոր-Պարիզ», *1924–25, Փարիզ*

Հովսեփ Աղաջանյան (2012-ից): Տպագրում է տնտեսագիտ. տես. ու գործն. ուսումնասիրություններ, բուհի ասպիրանտների, հայցորդների, մագիստրոսների գիտ. աշխատությունները՝ ռուս. և անգլ. ամփոփումներով:

Հանդեսն անդրադառնում է նաև գիտ. նստաշրջաններին, մասնագիտ. հրապարակումներին, մենագրությունների և դասագրքերի հրատ-յանը:

«ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ», հայագիտ. աշխատությունների ժող.: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. մատենադարանի հրատ.: Լույս է տեսնում 1941-ից (1941 և 1950-ին՝ «Գիտական նյութերի ժողովածու», 1956-ից՝ «Բ. Մ.». ցայսօր՝ 20 հատոր) Երևանում: Խմբագիրներ՝ Գևորգ ***Աբով***, Լևոն ***Խաչիկյան***, Սեն ***Արևշատյան***, Հրաչյա ***Թամրազյան*** (2008-ից): Հրատարակում է ուսումնասիրություններ հաս. և բնական գիտ-ների, հայ փիլ. մտքի, գրակ-յան և արվ-ի վերաբերյալ, բնագրեր՝ ձեռագիր մատյաններից և վավերագրերից, մատենագիտ. և ձեռագրագիտ. հաղորդումներ, գրախոսություններ՝ հայ. և ռուս. (ֆրանս. և ռուս. ամփոփումներով): Տպագրվում են նաև սփյուռքահայ հայագետների ու օտարազգի գիտնականների հոդվածներ:

«ԲԱՆՎՈՐ», օրաթերթ: Լույս է տեսել 1923–90-ին Լենինականում, 1990-ից՝ *«Կումայրի»*:

«ԲԱՆՎՈՐ-ՊԱՐԻԶ», ամսաթերթ, ապա՝ շաբաթաթերթ, կիսամսյա: Լույս է տեսել 1924–25-ին Փարիզում: Ֆրանսիայի կոմկուսի հայկ. բաժանմունքի («Հայ աշխատանքի խմբի») պաշտոնաթերթ: Ֆրանսիայում հայ. բանվոր-համայնավար. առաջին թերթն է: Նպատակը Ֆրանսիայի հայ բանվորների դասակարգային գիտակցությունը բարձրացնելն էր, արհմիությունների մեջ նրանց ներգրավելը և երկրի բանվոր. շարժմանը մասնակից դարձնելը:

«ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՐԵՎԱՆ», օրաթերթ: ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի և քաղխորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1933–34-ին Երևանում: Խմբագիրներ՝ Ստեփան ***Կուրտիկյան***, Տիգրան ***Խորունի***: Լուսաբանել է Երևանի արդ. ձեռնարկությունների, նորակառույցների աշխատանքը, անդրադարձել տրանսպորտի, բուժհիմնարկների, ուս. հաստատությունների, մշակույթի օջախների, քաղաքաշինության, բնակչության կենցաղային սպասարկման խնդիրներին: Տպագրել է գրական նյութեր, ֆելիետոններ: Թղթակցել են Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը, Վ. Ալազանը, Գ. Մահարին, Լեո Կամսարը և ուր.: Տպագրել է Հ. Շավարշի ծաղրանկարները:

«ԲԱՆԻՒՈՐ», քաղ., հաս. և գրական շաբաթաթերթ (հետագայում՝ եռօրյա, օրաթերթ): Ամերիկայի բանվոր. կուս-յան հայկ. հատվածի, այնուհետև՝ ԱՄՆ-ի կոմկուսի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1922–24 և 1930–38-ին Նյու Յորքում: Խմբագիրներ՝ Ս. Մնարյան, Խաչիկ Գյոսյան, Պատրիկ Սելյան: Արտացոլել է ամերիկահայ բանվորների առօրյան, լուսաբանել ԱՄՆ-ի կոմկուսի և նրա հայկ. բյուրոյի, Կոմինտերնի գործունեությունը, համաամերիկյան բանվոր. շարժումը: Ընթերցողներին ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի առաջընթացին: Սատարել է ՀՕԿ-ի գործունեությանը, խրախուսել հայրենակց. միությունների շին. աշխատանքները: Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–45) նախօրյակին «Բ.» մեծ տեղ է հատկացրել հակաֆաշիստ. ընդհանուր ճակատ ստեղծելու ԱՄՆ-ի կոմկուսի փորձերին, տպագրել նյութեր Իսպանիայում կռվող ամերիկահայ կամավորների մասին: Զետեղել է հրապարակախոս. նյութեր, արձակ և չափածո գրական ստեղծագործություններ:

«ԲԱՆԻՒՈՐ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1923–25-ին Թեհրանում: Արտոնատեր՝ Ծերուն Գինոսյան, հրատարակել է խմբագր. խորհուրդը: Լուսաբանել է Իրանի բանվորների և գյուղացիների (հատկապես՝ հայերի) կյանքը, անդրադարձել կրթադաստիարակչ.

հարցերին և հայկ. դպրոցներին, հաս. կյանքի դժվարություններին, մեծ տեղ է հատկացրել Խորհրդ. Հայաստանի մշակույթի, գիտ-յան և շին-յան ձեռքբերումներին:

«ԲԱՆԻՒՈՐ», աշխատավոր-համայնավար. երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1928–29-ին Փարիզում: Հայ բանվոր. շրջաններում քարոզել է համայնավար. գաղափարներ, լուսաբանել Ֆրանսիայի կոմկուսի գործունեությունը, հայ աշխատավորությանը կոչ արել ակտիվորեն մասնակցել Ֆրանսիայի բանվոր. շարժմանը: Մեծ տեղ է հատկացրել հակապատերազմ. քարոզչությանը, նյութեր է տպագրել ԽՍՀՄ-ի և Խորհրդ. Հայաստանի հաս-քաղ., տնտ. ու մշակութ. կյանքի մասին: Պատկերել է ֆրանսահայ գաղութի կյանքը, մասնավորապես՝ հայ աշխատավորների վիճակը, պաշտպանել նրանց շահերը: Փակվել է ֆրանս. իշխանությունների պահանջով:



«Բանվորական Յերևան», *1933–34, Երևան*

«ԲԱՆԴ ՔԵՐԹՈՂԱԿԱՆՔ», միջնադարյան ձեռագիր բառարան. հայտնի է տասնյակ գրչագիր օրինակներով: Հնագույնը, ընդօրինակված 1282-ին, պահվում է Փարիզի ազգ. գրադարանում: Կան «Բ. ք.»-ի 10-ից ավելի տարբերակներ (Մատենադարան, ձեռ. № 267, 451, 531, 1654, 2019, 2381, 3170, 3937, 4149, 4612, 7250, 8198): Բառարանի ամենահին ձեռագիրը Երզնկայում 1303–05-ին Կարապետ Երեց, Սարգիս և Շահինշահ գրիչների ընդօրինակածն է: «Բ. ք.» շարունակ փոփոխվել ու համալրվել է, բառացանկ են ներառվել խոսակց. լեզվում և գրական երկերում օգտագործված նոր բառեր (ընդգրկում է շուրջ 9500 բառ):

Բառարանի համառոտ գրչագրերից մեկի հիման վրա ***Երևմիա Մեղրեցին*** 1485-ին կազմել է ***«Բառգիրք հայոց»***-ը, որն ավելի ուշ համալրվել և տպագրվել է 1698-ին՝ դառնալով հայ. առաջին տպագիր բացատր. բառարանը:



«Բանւոր», *1922-38, Նյու Յորք*

ԲԱՇԱԼՅԱՆ Լևոն [24.9.1868, Կ. Պոլիս–2.2.1943, Վիշի (Ֆրանսիա), թաղված է Փարիզում], գրող, հրապարակագիր, թարգմանիչ, խմբագիր: «Ռւթսունականներ» գրական-գեղագիտ. շարժման նշանավոր գործիչներից է: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը (1883): 1884–95-ին Կ. Պոլսում խմբագրել է ***«Արեւելք», «Մասիս», «Հայրենիք»***, 1898–1901-ին Լոնդոնում՝ ***«Նոր կեանք»*** պարբ-ները: 1902–20-ին ապրել ու աշխատել է Բաքվում, որոշ ժամանակ՝ նաև Ս. Պետերբուրգում, 1920-ից՝ Փարիզում: 1928–32-ին խմբագրել է «Լը Ֆուայե» ֆրանս-հայ. ամսաթերթը: 1922–23-ին մասնակցել է Լոզանի վեհաժողովին՝ որպես Հայոց ազգ. պատվիրակության խորհրդական: 1924-ին այցելել է Հայաստան: Ֆրանսահայ մտավորականների հետ մասնակցել է ՀՕԿ-ի աշխատանքներին:



Լևոն Բաշալյան

Կ. Պոլսի պարբ-ներում լույս են տեսել Բ-ի «Ղալաթիոյ րէսդը» (1889), «Խաչախչին» (1890), «Պալըխճի Գեւորգ» (1890), «Տէրտէրին ուխտը» (1890, Հայֆիլմ՝ 1964), «Աղաւնիներ» (1893), «Կաղանդ» (1898), «Յեղին ձայնը» (1898) նորավեպերը, «Միջերկրական յիշատակներ» (1891–92), «Արմաշի ուխտագնացութիւնը» (1892), «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմի ատեն» (1939) ակնարկ-ուղեգրությունները, քրոնիկներ, հրապարակախոս. հոդվածներ, քաղ. տեսություններ, ֆրանս-ից թարգմանել է Ժ. Մառի, Ժ. Վեռնի, Վ. Սարդուի և ուր. ստեղծագործություններից:

Հրատարակվել են նաև Բ-ի «Նորավէպներ եւ պատմուածքներ» (1943, Փ. «Անահիտի» տպ.) ժող-ը, «Ընտիր երկերը» (1962), «Երկերը» (1994, Անթիլիաս): Հանդես է եկել նաև Թափառիկ, Ծիծեռնակ, Զարթուփյան կեղծանուններով:



Լ. Բաշալյանի *«Նորավէպներ եւ պատմուածքներ» (1943, Փարիզ) գրքի փիփղոսաթերթը*

Գրկ. **Փափազյան Վ.,** *Արտիս պարտքը, Ե., 1959:* **Սանուկյան Ս.,** *Լևոն Բաշալյան, Ե., 1969:* **Պարիկյան Հ.,** *Լեւոն Բաշալեան, Հալեպ, 1970:* **Աղպաշեան Պ.,** *Լեւոն Բաշալեանի բառապաշարը, Բ., 1971:*


ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ Գևորգ Ջաքարի [16(28).9.1857, Սղնախ (Վրաստան)–4.10.1925, Թիֆլիս], նկարիչ, ազգ. ռեալիստ. բնանկարչության հիմնադիրը: Ջաքար ***Բաշինջաղյանի*** հայրը: Սովորել է Թիֆլիսի գեղանկարչության և քանդ-յան դպրոցում (1876–78), Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում (1879–83):



«Գևորգ Բաշինջաղյան» *(1985, Ե., «Սովետական գրող») ալբոմի կազմը*



Ջաքար Բաշինջաղյան


DICTIONARIVM
ARMENO-LATINVM.
LITERA

«Բառագիրք հայոց»-*ի (Ֆրանչիսկոս Ռիվոլա, 1633, Փարիզ) փիփ-ղոսաթերթը*

Նկարազարդել է Շոթա Ռուսթավելու «Ընձենավոր» պոեմի որոշ տեսարաններ («Թինաթինայի երազը», «Ֆաթմանը պատմում է Ավթանդիլին»):

Լույս են տեսել Բ-ի «Նկարչի կեանքից յիշողութիւններ» (1903, ՍՊը, «Պուշկինյան» տպ., վերահրտ.՝ 1950, Ե.) հուշագրությունը, «Էսքիզներ» (1913, Թ., «Էսպերանտո» տպ.) նովելների ժող-ը, «Ճանապարհորդական նոթեր...» (1957) ուղեգրությունը, «Երկերը» (1966), «Ընտիր երկերը» (ռուս. 1986): Բ-ի նովելներից թարգմանվել են ռուս., «Իշխան Վաչնաձեի ազարակումը»՝ վրաց.: Նրա նկարների (շուրջ 1000) մեծ մասը հայկ. բնանկարներ են: Զբաղվել է Սայաթ-Նովայի տաղերի հավաքման ու հրատարակման, հայկ. ճարտ. կոթողների նորոգման խնդիրներով:

Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ի արծաթե մեդալ՝ «Կեչիների պուրակ» (1883) նկարի համար:

Երկ. Ալբոմ, Ե., 1985 (կազմ. և առաջաբ.՝ Մ. Միքայելյանի):

Գրկ. **Սարգսյան Մ.,** *Գևորգ Բաշինջաղյան: Կյանքը, Ե., 1957: Գևորգ Բաշինջաղյան 150, Ե., 2007:*

ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ Ջաքար Գևորգի [26.5(7.6).1895, Թիֆլիս–2.3.1971, Երևան], տնտեսագետ: Պրոֆ. (1937): Գիտ. վաստ. գործիչ (1956): Գևորգ ***Բաշինջաղյանի*** որդին: Ավարտել է Պետրոգրադի համալսարանի իրավաբ. (1917), Թիֆլիսի պոլիտեխ. ինստ-ի հաս. գիտ-ների (1923), Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստ-ի տնտեսագիտ. (1933) ֆակ-ները: 1936–71-ին՝ ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ: 1945–48-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** ամսագրի գլխ. խմբագիր: 1949–50-ին՝ ԵՌՕԼՄԻ ռեկտոր:

Լույս են տեսել Բ-ի «Կարլ Մարքս: Կյանքը և գործը» (1968), «Ֆրիդրիխ Էնգելս: Կյանքը և գործը» (1971) աշխատությունները, «Քաղաքատնտեսության ձեռնարկ» (1971) ուս. դասագիրքը:

Գրկ. Պրոֆ. Զ. Գ. Բաշինջաղյանի փոպագիր աշխատությունների մատենագիտություն (կազմ.՝ Ս. Սրամբոլցյան, Ե. Քալանթարյան), Ե., 1975:

ԲԱՌ, լեզվի նվազագույն հիմն. միավորը, որն իր ինչյուն. կազմով արտահայտում է հասկացություն առարկայի, գործողության, իրականության երևույթների, նրանց կառուցվածքի կամ փոխհարաբերությունների մասին:

«ԲԱՌ ԳԻՐՔ ՏԱԼԻԱՆԻ», հայ-իտալ. բառարան: Տպագրության վայրը, տպարանը և թվականը հայտնի չեն: Վերնագրից հետո առաջին տողը՝ «Ած.-տիօ ածութի-տիվինիթայ...» (80 էջ, 8^0, 9 x 6 սմ): Ենթադրվում է, որ տպագրվել է Վենետիկում՝ Միքելանջելո Բորբոնիի տպարանում. տպագրությունը նման է 1681-ին այնտեղ լույս ընծայված ժամագրքին:

1–64-րդ էջերում բուն բառարանն է, որտեղ հայ. բառերը ներկայացված են հայատառ իտալ. թարգմանությամբ, 65–80-րդ էջերում՝ «Խօսք Տալիանի» խոսակցարանը (զրուցարան), որտեղ հայ. բառերն ու բառակապակցությունները տրված են հայատառ իտալ. թարգմանություններով: Առաջին տողը՝ «Բարով հազար բարի պարոնին....»:

«ԲԱՌԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ», Ֆրանչիսկոս *Ռիվոլայի* հայ. և լատ. բառարանը: Հայ. առաջին տպագիր բառարանն է: Տպագրվել 1621-ին Միլանում՝ Ամբրոսյան վարժարանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Բառագիրք հայոց. Dictionarivm armeno-latinvm...» (487 էջ, 4^0):

«Բ. հ.»-ում ի մի են բերված հիմնականում խոսակցական բառերն ու դարձվածքները: Բառացանկը կազմելիս հեղինակն օգտվել է ջուղայեցի վաճառականների բառապաշարից և լրացրել գրական բառերով՝ ընդհանուր թիվը հասցնելով 11 000-ի, հանդիպում են նաև գրաբար, թուրք. և խոսակց. բառեր ու դարձվածքներ:

Վերահրատարակվել է 1633-ին Փարիզում՝ Տպագր. միավորման եկեղեց. կոմիտեի տպարանում (414 էջ, 4^0, 18,5 x 12,4 սմ):

Բառարանը XVII–XVIII դդ-ում եղել է չափազանց գործածական: Կղեմես Գալանոսը, Յակոբ Վիլլոտը, Հ. Պերպերյանը և ուր. օգտվել են «Բ. հ.»-ից:


ԲԱՌԱՐԱՆ, մեկ կամ ավելի լեզուների բառերի ժող., որը կազմվում է հիմնականում այբբեն., երբեմն՝ այլ եղանակով: Ընդհանուր առմամբ տարբերում են 2 տեսակ՝ հանրագիտ. և լեզվաբ.: Հանրագիտ. Բ–ներում (հանրագիտարան) նկարագրվում և պարզաբանվում են ոչ թե բառերը, այլ նրանցով նշանակվող հասկացությունները, առարկաները, երևույթները, դեպքերը: Լեզվաբ. Բ–ներում տրվում են բառերի նկարագրությունը, նշանակությունները կամ իմաստները, գործածությունները, ծագումը, քերական. բնութագիրը: Առավել գործնական են բացատր. Բ–ները, որոնք ընդգրկում են տվյալ լեզվի բառերը՝ իրենց իմաստների բացատրությամբ ու քերական. բնութագրմամբ:

Ուղղագր. Բ–ները սովորաբար պարունակում են տվյալ լեզվի որևէ շրջանի բառապաշարը՝ յուրաքանչյուր բառի ընդունված ուղղագրությամբ: Ուղղախոս. Բ–ները բառերը ներկայացնում են գրական լեզվին հատուկ արտասան. ձևերով: Միալեզվյան Բ–ների մեծ մասն ունի գիտ. նշանակություն: Գործն. կիրառություն ունեն նաև թարգման. Բ–ները: Թե՛ երկլեզվյան (մի լեզվի բառերը թարգմանվում են մեկ այլ լեզվի բառերով), թե՛ բազմալեզվյան (մի լեզվի բառերը թարգմանվում են 2 կամ ավելի լեզուներով) Բ–ները կարևոր ձեռնարկներ են օտար լեզուներ սովորելու և ուսումնասիրելու համար, ունեն տես. ու գործն. նշանակություն, նպաստում են լեզվաբանության (հատկապես՝ բառագիտ–յան) և գրական լեզվի զարգացմանը:


Համակարգչային տեխնիկայի զարգացմանը զուգընթաց լայն տարածում են գտնում էլեկտրոնային և առցանց Բ–ները:

Հայ բառարանագրությունն սկզբնավորվել է V դ–ում: Մինչև XI դ. կուտակվել է բառարանային, բառաբացատր. հարուստ նյութ, որի հիման վրա XI–XV դդ–ում ստեղծել են մի շարք Բ–ներ [Արիստակես Գրիչ, «Վերծանութիւնք…» (այլ ձեռագրերում՝ «Վերլուծութիւնք բացերեւութապէս բազմազան բայից եւ բառից») ուղղագր. բառարանը, նաև «Բառք քերականին», «Հանդէս բանաստեղծաց», «Բառք քերթողական» ևն]: Հայ. առաջին տպագիր բառարանը Ֆրանչիսկոս Ռիվոլայի *«Բառագիրք հայոց…»*-ն (1621) է: Այնուհետև լույս են տեսել այլ, մեծ մասամբ՝ երկլեզվյան բառարաններ (*Ապրվածատուր Ներսեսովիչ*, «Բառգիրք լատինացւոց եւ հայոց…», 1695, Երեմիա Մեղրեցի, *«Բառգիրք հայոց»*, 1698, ևն):


Հայ բառարանագրությունն առավել զարգացել է XVIII դ–ում: Մ. Ավգերյանի «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի» (1846, Վնտ., Սբ Ղազարի տպ.), Մխիթար Սեբաստացու *«Բառգիրք հայկազեան լեզուի»* (հ. 1, 2, 1749, 1769) Բ–ներով հիմնադրվել է հայ նոր բառարանագրությունը, որը հետագայում հասել է զարգացման բարձր աստիճանի: Ստեղծվել են հայ. բացատր., գավառ., արմատ–ստուգաբան., հոմանիշների, անձնանունների, մասնագիտ., երկլեզվյան կամ թարգման. և այլ Բ–ներ: Արժեքավոր են հատկապես Պողոս Տյուրիկեցի Թորոսյանի հայատառ չափածո հայ–թուրք. «Տետրակ համառօտ բառարանի» (1794, Նոր Նախիջևան, Սբ Խաչ վանքի տպ., 96 էջ, 2^0, 12,5 x 7,5 սմ), Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմելյանի և Մ. Ավգերյանի *«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»* (հ. 1–2, 1836–37, Վնտ., Սբ Ղազար տպ.), Ն. Բյուզանդացու «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» (1884, ԿՊ, Հակոբ Պոյաճյանի տպ.), Հ. Դաղբաշյանի «Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն» (1903, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), Ս. Գաբամաճյանի «Նոր բառագիրք հայերէն լեզուի» (1910, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ.) Բ–ները, Հ. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանը» (1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), *«Հայերէն արմատական բառարանը»* (հ. 1–7, 1926–35), *«Հայոց անձնանունների բառարանը»* (հ. 1–5, 1942–62), Ս. Մալխասյանցի *«Հայերէն բացատրական*


ՏԵՏՐԱԿ
ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆԻ

Պողոս Տյուրիկեցի Թորոսյանի «Տետրակ համառօտ բառարան»-ի (1794, Նոր Նախիջևան) տիտղոսաթերթը


ԱՐՄԱՏԱԿԱՆ ԵՒ ԴԻՏԱԿԱՆ

Մանուել Քաջունու «Բառագիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց»-ի (1891, Վնտ.) տիտղոսաթերթը



Կ. Բասմաջյանի «Առձեռն բառարան...»-ի (1915, Կ. Պոլիս) փիփղոսաթերթը



Գ. Ճերեճյանի, Կ. Տոնիկյանի, Ա. Տեր-Խաչատուրյանի «Հայոց լեզուի նոր բառարան»-ի (հ. 2, 1992, Բեյրութ) կազմը



Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ի (2003, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը

բառարանը» (հ. 1–4, 1944–45), «Ռուս-հայերեն բառարանը» (հ. 1–4, 1954–58), Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (1967) և «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը» (2003), Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը» (1968), Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973), Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (1975), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (հ. 1, 2, 1976), «Հայ-ռուսերեն բառարանը» (1984), Թ. Հակոբյանի, Ս. Մելիք-Բախշյանի և Հ. Բարսեղյանի ***«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»*** (հ. 1–5, 1986–2001), Լ. Հախվերդյանի «Թատերգիտական բառարանը» (1986), Զ. Հացագործյանի, Ա. Դարբինյանի, Ն. Հովսեփյանի, Գ. Սրվանձտյանի «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (1988), Գ. Ճերեճյանի, Կ. Տոնիկյանի, Ա. Տեր-Խաչատուրյանի «Հայոց լեզուի նոր բառարանը» (1968, վերահրտ.՝ հ. 1, 2, 1992, Բ., Տոնիկյան տպ.), Հայոց լեզվի բարբառային բառարան (հ. 1–6, 2001–10), Ե. Գևորգյանի «Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարանը» («Շարժութարան», 2003), Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանը» (հ. 1–2, 2000), «Գրաբարի հոմանիշների բառարանը» (2006) և «Գրաբարի դարձուածաբանական բառարանը» (2012), Բ. Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարանը» (2005), Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանը» (2011), Ն. Բարաթյանի «Անգլերեն-հայերեն բառարանը» (2011), Մ. Կարապետյանի «Ֆրանսերեն-հայերեն հասարակական-քաղաքական տերմինների բառարանը» (2012) ևն:

Բառարանագիտությունը, որպես տեսություն, հենվելով բառագիտ-յան վրա, սահմանում է Բ-ների տեսակներն ու նպատակները, մշակում նրանց կազմման սկզբունքները, բառահոդվածների կառուցման հիմունքները, պարզում բառերի բնույթը, գործածության ոլորտները, հատուկ քերական. նշումների միջոցով տալիս նրանց ընդհանուր բնութագիրը:

Գրկ. **Ամալյան Հ.,** *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V–XV դդ.), հ. 1, Ե., 1966, հ. 2 (XVI–XVII դդ.), Ե., 1971:* **Նույնի,** *Հայ միջնադարյան բառարանագրությունը, Ե., 2007:* **Գասպարյան Գ.,** *Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:* **Աճառյան Հ.,** *Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971 (առաջաբան):*

ԲԱՌԱՑԱՆԿ, հանրագիտ. կամ բառարանային հրատ-յան մեջ ներառվող հոդվածների (տերմինների) ամբողջ. ցանկը: Որպես կանոն՝ կազմվում է համառոտ բացատրագրով և հոդվածների ծավալների (նիշ) նշումով:

Բ., որպես լեզվաբ. տերմին, ստեղծվել է բացատր. և թարգման. բառարանների համար, իսկ XVII–XVIII դդ-ում արմատացել է ներկայիս նշանակությամբ:

Հանրագիտարանի (համապարփակ, տարածաշրջ., ճյուղային, կենսագր. ևն) Բ. հրատ-յան ինքնատիպ ուրվագիծն է (բովանդակությունը), որն արտացոլում է նրա հիմն. մտահղացումը, հայեցակարգը, նպատակը, հասցեականությունը, ինչպես նաև մեթոդ. կառուցվածքը՝ ուղղվածությունը, տեղեկատվության գիտ. բաժինները, գիտ-ների ժամանակակից դասակարգումն ու ձևավորված նոր գիտ. ուղղությունները: Բ., ամբողջ հրատ-յան նյութերի մատուցման համակարգից բացի, նաև հղումների համակարգի հիմքն է: Նրանով են կարգավորվում նաև մատենագիտ., պատկերազարդման և քարտեզագր. նյութերի տեղադրման, ինչպես նաև ցուցիչների ու հավելվածների առկայության հարցերը:

Հանրագիտ. հրատ-յան նախապատրաստությունը սովորաբար սկսում են ըստ գիտաճյուղերի Բ-երի (թեմատիկ Բ-եր) կազմմամբ, որոնք ունենում են տերմինաբան. ստորակարգությունն արտահայ-

տող (ընդհանուրից դեպի մասնավոր հասկացություն) ենթախորագրեր: Թեմատիկ Բ–երի հիման վրա կազմվում են առանձին խոշոր բաժինների, ապա՝ ամբողջ հրատ–յան Բ.:

Բ–երը սովորաբար արտացոլում են ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի գիտ. հասկացությունները, այլև մշակույթի և գիտ. տեղեկույթի պատմականորեն կայուն, սերնդեսերունդ փոխանցվող մասը: Այդ պատճառով բոլոր հաջորդ հրատ–ների Բ–երը, որպես կանոն, հիմնվում են նախորդների Բ–երի վրա: Դրա դաս. օրինակ է Դ. Դիդրոյի և Ժ. Դ'Ալամբերի ֆրանս. հանրագիտարանի Բ., որը կազմվել է Է. Չեմբերսի անգլ. հանրագիտարանի Բ–ի հիման վրա և իր հերթին հիմք է ծառայել գերմ., իտալ. և այլ հանրագիտարանների համար:

Հանրագիտարանների Բ–երը երբեմն տպագրվում են նաև որպես ինքնուրույն գրքեր:

«ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ», *Մխիթար Սեբաստացու* և իր աշակերտների նախաձեռնությամբ կազմված հայ. երկհատոր բառարան: Դարակազմիկ կոթողային աշխատություն է, աչքի է ընկնում գիտ. բարձր արժեքով, հայ–ի լեզվ. իրողությունները քննելու խորիմացությամբ, լեզվի նախկին անաղարտությունը վերականգնելու հմտությամբ: Այն նշանակալի երևույթ է ոչ միայն հայ, այլև համաշխ. բառարանագրության մեջ: Նախաբանում հեղինակը (արդեն՝ մահամերձ) այն ընծայել է մայր ժողովրդին. «Խոնարհամիտ սրտիւ ընծայեմ քեզ՝ զպտուղ բազմամեայ աշխատութեանս՝ նուէր սիրոյ. զի ցանկալի է ինձ յինէն առնուլ եւ քեզ տալ» («Բան առ ընթերցօղս», էջ 19):



Հ. 1-ի (1749, Վնտ.) նախապիտղոսաթերթը

Բառարանը ներառում է Աստվածաշնչի հայ. թարգմանության բառապաշարը և հայ մատենագրության մեջ օգտագործված բառերը (անուանք, կենդանաց, տնկոց, ականց, չափուց, դրամոց, գործեաց եւ այլոց կահուց, եւ կարասեաց), որոնց զգալի մասը ստուգաբանված է, գիտ. բացատրություն է տրվել հատկապես հուն–ից, պարսկ–ից և երբ–ից փոխառյալ բառերին:



Հ. 2-ի (1769, Վնտ.) պատկերազարդ (26–րդ) էջ (ձախից աջ)՝ Սբ Սահակ Պարթև, Սբ Մեսրոպ վրդ., Սբ Ներսես Շնորհալի և Սբ Գրիգոր Նարեկացի (վերևում) և զարդագիր «Ո» (էջ 837) փառը (ներքևում)

Բառարանի 2–րդ հատորը, որն ըստ էության 1–ին հատորի հավելվածն է, ներառում է այնտեղից դուրս մնացած բառերը, ինչպես նաև հատուկ անունների բառարանը, գրաբար–աշխարհաբար և աշխարհաբար–գրաբար բառարանները: Աշխարհաբար–գրաբար բառարանում արձանագրված են այդ ժամանակ արդեն մեր ժող. լեզվում օգտագործված թուրք. բառերը. այն փաստորեն նաև թուրք–ից փոխառյալ բառերի առաջին բառարանն է:

«Բ. հ. լ.»–ի 1–ին հատորը տպագրվել է 1749–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (1273 էջ, 4^0, 20,8 x 12,8 սմ), 2–րդը՝ 1769–ին նույն տպարանում (1770 էջ, 4^0, 20,8 x 12,8 սմ):


Վերահրատարակվել է 1846–ին (ԿՊ, Պողոս Արապյանի տպ.):

«ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ», Երեմիա *Մեղրևցու* կազմած հայ. բառերի առաջին տպագիր բացատր. բառարանը: Հիմն. բառապաշարը վերցված է *«Բառք քերթողականք»* բառարանի մի գրչագիր տարբերակից, որին, Սարգիս եպիսկոպոսի աշխատասիրությամբ, ավելացված են Աստվածաշնչի և այլ բառարանների բառահոդվածներ: Այն որպես սկզբնաղբյուր օգտագործել են Մխիթար Սեբաստացին, Ստեփանոս Օրբելյանը, Գ. Փեշտմալճյանը, Ն. Բյուզանդացին, Հ. Ագճայանը և ուր.:



Տպագրվել է 1698–ին Լիվոռնոյում, տպագրիչ՝ Սարգիս Եվդոկիացի Սահեթճի: Բառարանը վերջում ունի «Աշխարհացոյց» վերնագրով հավելված և տեղանունների համառոտ ցանկ: Ընդգրկում է շուրջ 8550 բառ: Տիտղթ–ին՝ «Բառգիրք հայոց, արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիայ վարդապետէ…» (344 էջ, 8^0, 13 x 7,4 սմ):

1728–ին վերահրատարակվել է Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ նույնը: Տպակից է Վարդան Արևելցու «Աշխարհացոյց»–ին (576 էջ, 8^0, 13,3 x 8 սմ):



Երեմիա Մեղրեցու **«Բառգիրք հայոց»**-*ի (1698, Լիվոռնո) տիտղոսաթերթը*



Կարապետ Բասմաջյան



Կ. Բասմաջյանի *«Լեւոն Ե Լուսինեան՝ վերջին թագաւոր հայոց» (1908, Փարիզ) գրքի տիտղոսաթերթը*

1975-ին Հ. Ամալյանի աշխատասիրությամբ տպագրվել է «Բ. հ.»-ի քնն. բնագիրը:

ԲԱՍՄԱՋՅԱՆ (Պասմաճյան) Կարապետ (1864, Կ. Պոլիս–17.5.1942, Փարիզ), բժիշկ, պատմաբան, բառարանագիր, խմբագիր: Սովորել է Բանկալթիի Սբ Հակոբի, ապա՝ դեղագործ. վարժարաններում, որն ավարտելուց հետո մեկնել է Փարիզ, ստացել պատմաբանասիր. կրթություն: Ուսումնասիրել է արլ. լեզուներ: 1899–1907-ին Փարիզում հրատարակել է ***«Բանասէր»*** պատմ., հնախոս., գրական հանդեսը, որտեղ տպագրել է նաև հայ բժշկության պատմությանը վերաբերող ուսումնասիրություններ:

Լույս են տեսել Բ-ի «Անիի յիշատակ»-ը (1904). «Լեւոն Ե Լուսինեան՝ վերջին թագաւոր հայոց» (1908, Փ., Տիգրան Տողրամաճյանի տպ.), «Իզմիրլեան աքսորավայրին մէջ» (1911, Բոստոն, «Հայրենիքի» տպ.), «Ժամանակագրական պատմութիւն հայոց» (Ա մաս, 1914, ԿՊ, Հովակիմյանի տպ.), «Իսկական պատմութիւն հայոց» (1914, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., Ա և Բ մասեր, 1927, Փ., Հ. Բալենցի տպ.), «Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Սարմաշինու» (կից՝ ֆրանս. թարգմ., 1931), «Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացւոյ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի: Թագաւորաց հռովմայեցւոց» (1907, Փ., «Բանասերի» տպ.), «Հայոց հին գեղարուեստի վարպետները» (1926, Փ., Հ. Թյուրապյանի տպ.) աշխատությունները, ինչպես նաև «Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն»-ը (1915, Գվիդոն Լուսինյանի հետ, ԿՊ, Օ. Արզումանի տպ., ընդգրկում է շուրջ 42 000 բառահոդված), Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» (1926) աշխատությունը (արաբ. աղբյուրների բաղդատմամբ և ծանոթագրություններով), որի 200-ից ավելի դեղանյութերի արաբ. և հայ. անվանումները թարգմանել է ֆրանս. և լատ., քննել միջնադարյան հայ բժշկագիտ-յան տերմինաբանության հարցեր: Առաջին անգամ հայ իրականության մեջ անդրադարձել է դրամագիտ-յան պատմությանը («Հայկական ընդհանուր դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամներ», 1936): Հեղինակ է նաև «Նոր դասագիրք հայոց պատմութեան» (Ա տարի, 1909, Բ տարի, 1913, ԿՊ, Օ. Արզումանի տպ.) ուս. ձեռնարկի:

ԲԱՍՏԱՄՅԱՆ Վահան (ավազանի անունը՝ Եղիա, 1842, Թիֆլիս–30.9.1881, Էջմիածին), մանկավարժ, բանասեր, գրող, հրատարակիչ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1867), Մոսկվայի համալսարանը (1868): Դասավանդել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում: 1874–76-ին Վաղարշապատում իր հիմնադրած տպարանում հրատարակել է արևելահայ առաջին մանկավարժ. ***«Դպրոց»*** պարբ-ը: Բ-ի հոդվածներն ու աշխատությունները տպագրվել են նաև «Արարատ», «Փորձ», «Լումայ» և այլ պարբ-ներում:

Լույս է տեսել Բ-ի «Նկարագրութիւն Մայր եկեղեցւոյն հայոց Սբ Էջմիածնի» (1877, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) աշխատությունը: Հրատարակել է Մխիթար Գոշի «Դատաստանագիրք հայոց: Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք...» (1880, նույն տպ.) ընդարձակ երկասիրությունը: Հեղինակ է նաև թվաբանության դասագրքի: Թարգմանել է «Սօրէի իշխան» (1898–99, «Լումայ») պատմավեպը:

ԲԱՏԻԿՅԱՆ Հրանտ Գևորգի (26.12.1909, Բաքու–31.3.1983, Երևան), կենսաբան-գենետիկ, խմբագիր: Գիտ. վաստ. գործիչ (1962): Կենսբ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1950): Ավարտել է ԵՊՀ (1930): 1937–40-ին՝ ԱրմՖԱՆ-ի գիտ. քարտուղար: 1950-ից աշխատել է ԵՊՀ-ում. 1963–66-ին՝ ռեկտոր: 1954–78-ին՝ ***«Հայաստանի կենսաբանական հանդեսի»*** գլխ. խմբագիր:

Լույս է տեսել Բ-ի «Գիտությունը և սնոտիապաշտությունը» (1957) աշխատությունը:

«ԲԱՏՐԱԿ», երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Հայաստանի Գյուղանտառ միության կենտր. վարչության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1928–31-ին Երևանում (1–7 համարները հրատարակվել են որպես ***«Մանկակ»*** թերթի հավելված, 1930-ի հոկտ-ից՝ «Գյուղատնտեսական բանվոր»): Խմբագիր՝ Արտաշես Պետրոսյան: Լուսաբանել է կոլտնտեսային շին-յան հարցեր, անդրադարձել չքավոր գյուղացիու-

թյան և բատրակների առօրյային՝ վարձատրության, բնակարանային շին–յան, բանվոր. սննդի մատակարարման, մշակութակենցաղային սպասարկման խնդիրներին:

ԲԱՐԴԱՂ, **Բարդողիմե,** XIV դ–ի 1–ին կեսի գրիչ և մանրանկարիչ: Ստեղծագործել է Եղեգիսում (Սյունիք): Աշակերտել է Խաչատուր Կեչառեցուն: 1314–15–ին գրել և նկարազարդել է Ավետարան (ձեռ. № 9721), նկարազարդել Հայրապետ գրիչի ընդօրինակած անթվակիր Ավետարանը (ձեռ. № 4924, երկուսն էլ՝ Մատենադարան): Բ–ի մանրանկարները (ավետարանիչների պատկերներ, խորաններ ու կիսախորաններ) կատարման եղանակով աղերսվում են որմնանկարչության, զարդաքանդակների, հատկապես՝ խաչքարերի արվ–ին:


ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԲՈԼՈՆԻԱՑԻ, **Բարթուղիմեոս Մարաղացի** (Bartholomeo da Bologna կամ Bofeozzi, ծ. թ. անհտ–1333, Քոնայի վանք), իտալացի աստվածաբան և փիլիսոփա, դոմինիկյան քարոզիչ, Մարաղայի առաջին լատին եպիսկոպոսը, ունիթոր. շարժման գաղափարախոս: Հայերի մեջ կաթոլիկություն տարածելու և նրանց Հռոմի պապին ենթարկելու նպատակով 1318–ին Հովհաննես XXII պապը նրան *Պետրոս Արագոնացու* և Հովհաննես Սվինֆորդի հետ ուղարկել է Մարաղա: Բ. Բ–ու Մարաղայում հաստատած դոմինիկյան վանքն ու դպրոցը դարձել են ունիթորների հոգևոր և կրթ. կենտրոն, որը քայքայիչ աշխատանք է ծավալել հայոց եկեղեցու դեմ: Բ. Բ. ունեցել է հայ աշակերտներ, կաթոլիկությանը հարող գործիչներ (Քոնայի վանքի առաջնորդ *Հովհան Քոնեցի*, Հակոբ Քոնեցի և ուր.): 1330–ին տեղափոխվել է Քոնա (Նախիջևանի գավառ) և ընդլայնել իր քարոզչ. ու գիտ. ուսուցող. գործունեությունը:

Բ. Բ–ու երկերը՝ «Քարոզգիրք», «Մեկնութիւն վեցօրէից», «Տրամաբանութիւն» ևն, թարգմանվել են նրա հայ գործակիցների և աշակերտների (մեծ մասամբ՝ Հակոբ Քոնեցու) աջակցությամբ. պահպանվել են միայն հայ.: Ուսուցող. նշանակությունից բացի՝ նրանք որոշ դեր են խաղացել նաև հայ փիլ. մտքի աշխուժացման գործում: Ըստ երևույթին՝ Բ. Բ–ու և Պետրոս Արագոնացու ղեկավարությամբ հայ ունիթորները թարգմանել են Թովմա Աքվինացու, Ալբերտ Մեծի և Ջիլբերտոս Պոռետացու երկերը, որոնք հայ մտածողներին ծանոթացրել են փիլ. մտքին միջնադարյան Եվրոպայում, նպաստել Եվրոպայի հետ գիտամշակութ. կապերի խորացմանը, հայ փիլ. մտքի աշխուժացմանը:

Բ. Բ–ու և Պետրոս Արագոնացու **«Խրատականք եւ հոգեշահ քարոզք»** դավանաբան. երկը տպագրվել է 1704–ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության (272 էջ, 8^0, 7,6 x 13,5 սմ):

«ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՁԱՅՆ», տեղեկատու ամսաթերթ: ՀԲԸՄ Բուլղարիայի շրջ. հանձնաժողովի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2004–ից Պլովդիվում՝ բուլղ. և հայ.: Խմբագիր՝ Հռիփսիմե Երնիյազյան: Լուսաբանում է ՀԲԸՄ կենտր. վարչության և մասնաճյուղերի գործունեությունը, բարեգործ. միջոցառումները, ներկայացնում է միության հիմնադիր և նվիրյալ անհատներին, հոբելյան. տարեթվեր, անդրադառնում ՀԲԸՄ կրթ., մշակութ., մարզ. հաստատությունների առօրյային, ծանոթացնում է Հայ առաքել. եկեղեցու պատմությանը, բուլղարահայ համայնքի անցյալին ու ներկային, ՀՀ–ում, ԼՂՀ–ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Տպագրում է նաև գրականագեղ. ստեղծագործություններ, մշակութ. և գիտ. նյութեր:

ԲԱՐԹԻԿՅԱՆ Հրաչ Միքայելի (7.7.1927, Աթենք–17.8.2011, Երևան), պատմաբան, աղբյուրագետ: Միքայել *Բարթիկյանի* որդին: ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990–ից): Աթենքի ակադ–ի թղթ. անդամ (1980): Ավարտել է Աթենքի հուն. գիմնազիան (1945), ԵՊՀ (1953): 1957–ից աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստ–ում (1980–ից՝ բաժնի վարիչ):



Բարդուղիմեոս Բոլոնիացու *«Խրատականք եւ հոգեշահ քարոզք» (համահեղ.՝ Պետրոս Արագոնացի, 1704, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«Բարեգործականի ձայն», *2004–ից, Պլովդիվ*

Բ. աշխարհաբարի է փոխադրել Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» (1973): Հայ. է թարգմանել բյուզ. պատմագիրների երկերից, «Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում (1918–1920)» (1998) ժող-ը, «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» (1978) բյուզ. ազգ. էպոսը: Հուն. հրատարակել է «Բյուզանդիան հայկական աղբյուրներում» (1981), «Բյուզանդիա և Հայաստան» (1991), «Գավրոսների բյուզանդական ազնվականական ընտանիքը» (1993) աշխատությունները:

Բյուզանդագետների հուն. ընկերության պատվ. (1981), Հռոմի հաս. գիտների և արվ-ի «Տիբերինա» ակադ-ի թղթ. (1987) անդամ:

ՀՀ ԳԱԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. (1980), ՀՀ նախագահի (2005) մրց-ներ, Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարանի Արիստոտելի անվ. մեդալ (1981):

Երկ. Պավլիկյան շարժման գաղափարախոսությունը, Ե., 1979: Հայ-բյուզանդական հեղափոխություններ, հ. 1–3, Ե., 2002–06: Источники для изучения истории павликианского движения, Е., 1961.

Գրկ. Հրաչ Բարթիկյան: Կենսամատենագիտություն, Ե., 2012:



Հրաչ Բարթիկյան

ԲԱՐԹԻԿՅԱՆ Միքայել Հակոբի [5.5.1887, Կոնիա (Թուրքիա)–27.2.1968, Երևան], հրապարակախոս, հաս. գործիչ: Հրաչ ***Բարթիկյանի*** հայրը: 1907-ին ավարտել է ծննդավայրի Շենանյան քոլեջը, որտեղ էլ դասավանդել և խմբագրել է «Իկոնիոն» (1912–14) ամսաթերթը: 1911-ին Կոնիայում հիմնադրել է «Շավիղ» տպարանը: 1919-ին Զմյուռնիայում հրատարակել է ***«Ափրուշան»*** կիսամսյա հանդեսը, 1924–25-ին Աթենքում՝ «Փորթի Փոր» («44», 1925-ին՝ «Խիկար») երգիծաթերթը: 1935-ին Աթենքում հիմնադրել է «Ատրուշան» տպարան-հրատարակչությունը և 1936–37-ին լույս ընծայել ***«Ամրոց»*** շաբաթաթերթը: 1946-ին հայրենադարձել է, աշխատել ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ում, ապա՝ ԳԱ հիմնարար գրադարանում:

Լույս են տեսել Բ-ի «Դիցապաշտ Հելլադան կամ Հելլեն դիք» (1936) աշխատության 1-ին հատորը, «Գերիի մը հիշատակները», «Այդ սև օրերուն» գրքերը և հատվածներ «Հայկական հետքեր Հունաստանի մեջ» աշխատությունից (ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 3 և «Էջմիածին», 1958, № 5):



«Բարի լուր», *1906–17, Բաքու*

«ԲԱՐԻ ԼՈՒՐ», հայ ավետարանականների երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1906–17-ին Բաքվում: Խմբագիր-հրատարակիչ՝ Պատվական Թառայանց: Տպագրել է հատվածներ Աստվածաշնչից, ավետարան. թեմաներով (հիմնականում՝ թարգմ.) պատմվածքներ, բանաստեղծություններ, մանկ. գրույցներ: Փորձել է մերձեցման եզրեր գտնել Հայ առաքել. եկեղեցու հետ: Լուրերի բաժնում հիմնականում ներկայացրել է եվրոպացի միսիոներների աշխատանքն Ասիայում և Աֆրիկայում՝ շրջանցելով հայկ. կյանքի իրադարձությունները, հայոց ազգ., կրթամշակութ. և քաղ. գործունեությունը: Առաջընթացի միակ ուղին համարել է կրոնը:

«ԲԱՐԻՋ-ԱՐԵՒԵԼՔ», բժշկաառողջապահ. ամսաթերթ: Լույս է տեսել 1939-ին Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Ալլահվերդի Որդի: Տպագրել է բժշկագիտ-առողջապահ. հոդվածներ, օգտակար գրույցներ, ծանոթացրել հիվանդությունների ախտանշաններին ևն, «Լրատու էջ»-ում զետեղել է լուրեր Ֆրանսիայում և այլ երկրներում բժշկագիտ-յան նվաճումների, նաև Խորհրդ. Հայաստանի առողջապահ. ձեռնարկումների մասին: Ունեցել է ֆրանս. բաժին:



Գևորգ Բարխուդարյան

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Գևորգ (1835, Թիֆլիս–1913, Թիֆլիս), թարգմանիչ, գրող, մանկավարժ: Ավարտել է Թիֆլիսի գիմնազիան, 1851-ից սովորել է Դորպատի համալսարանում: 1855–76-ին դասավանդել է Նախիջևանի, Ագուլիսի, Ախալցխայի հայկ., Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում: Աշխատակցել է «Հիւսիսափայլ», «Փորձ», «Լումայ», «Մուրճ» ամսագրերին:

Լույս են տեսել Բ-ի «Սէր կամ մահ» (1869, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) ողբերգությունը, «Բարեպաշտ մարդիկ, առակ չափահասների համար» (1889, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) առակների, «Բանաստեղծութիւններ»-ի (1897, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.) ժող-ները: Գերմ-ից թարգմանել է Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ» ողբերգությունը, Ֆ. Շիլլերի «Դոն Կառլոս», «Վիլհելմ Տելլ», «Օռլեանի կույսը» դրամաները, Գ. Լեսինգի «Նաթան իմաստունը» պոեմը ևն:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Մակար [1832, գ. Խնածախ (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–1906, Վաղարշապատ], պատմաբան, ազգագրագետ, բանասեր, եպիսկոպոս (1894): Ավարտել է Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցը (1868): Շրջելով հայկ. բազմաթիվ գավառներում և հայաբնակ այլ վայրերում՝ գրի է առել ժողովրդի կենցաղի, բանահյուսության, հնությունների վերաբերյալ նյութեր: Պատմագիտ. և աղբյուրագիտ. կարևոր արժեք ունեն Բ-ի «Աղուանից երկիր եւ դրացիք» (1893, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Արցախ» (1895, Բաքու, «Ադոր» տպ., 1996), «Պատմութիւն Աղուանից» (հ. 1, 2, 1900, 1907, Թ., 1-ինը՝ Մնացական Մարտիրոսյանի տպ., 2-րդը՝ Նվարդ Աղանյանի տպ.) աշխատությունները:

Լույս են տեսել նաև Բ-ի «Ձնաշխարհիկ տղայ» (1886, Շուշի, Հայոց հոգևոր տեսչության տպ.), «Քննադատութիւն քննադատութեանց» (1888, Թ., Մարկիսնոս Ռոտինյանի տպ.), «Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց առաքելական եւ Սուրբ եկեղեցւոյ» (1895, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Մատչելի քարոզներ հայ ժողովրդականաց կարդալու համար» (1900, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) բանասիր., կրոն. աշխատությունները:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Մկրտիչ Կարապետի (1862, Ագուլիս–1927, Մոսկվա), գրականագետ, թարգմանիչ, խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի համալսարանը (1889): 1888–96-ին Մոսկվայում հրատարակել է ***«Հանդէս գրականական եւ պատմական»*** տարեգիրքը, որտեղ տպագրվել են Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Ա. Արփիարյանի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Ծատուրյանի, Գ. Բարխուդարյանի, Ե. Շահազիզի և ուր. արձակ, չափածո, գրականագիտ., թարգման. գործերից: 1890–1915-ին Մոսկվայում գործել է Բ-ի հիմնադրած տպարանը, որտեղ տպագրվել են հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններից (Հ. Թումանյանի «Բանաստեղծութիւններ», 1890–92, Րաֆֆու «Խենթը» և «Ջալալէդդին», 1890, Ա. Մեհրաբյանի «Բանաստեղծութիւններ», 1891, Լ. Սարգսյանի «Ժողովրդի կրթութեան գործը մեզանում», Սանդալի «Փոքրիկ աստղ», Հ. Սենկևիչի «Փարոսի վերայ», Վ. Փափազյանի «Սասունցի Օհան», բոլորը՝ 1892, ևն, ավելի քան 50 անուն գիրք), ինչպես նաև ***«Մարտ»*** (1911–16) թերթը: Տպարանի աշխատանքներին մեծապես աջակցել, իսկ 1900-ից տնօրինությունն ստանձնել է կինը՝ Քրիստինե Բարխուդարյանը:

Բ. հեղինակ է նաև «Անգլիայի պետական կազմը եւ քաղաքական կուսակցութիւնները» (1907, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.) աշխատության: Թարգմանել է Յ. Անտոնիոսի «Լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը» (1903, Բաքու, Ս. Անտոնյանի տպ.), Լ. Տոլստոյի «Հաջի Մուրադ» վիպակը, Մ. Գորկու պատմվածքներից, Վիպպերի «Հին Արեւելքը եւ Էգեյեան կուլտուրան» գիրքը: 1920-ական թթ-ին մասնակցել է Մոսկվայում արլ. լեզուներով բառարանների հրատ-յան աշխատանքներին:



Մակար Բարխուդարյանի «Արցախ» (1996, Ե., «Ամարաս») գրքի կազմը



Րաֆֆու «Խենթը» և «Ջալալէդդին» (1890, Մոսկվա, տպագրիչ՝ **Մկրտիչ Բարխուդարյան***) գրքի տիտղոսաթերթը*

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Սեդրակ Գևորգի [21.3.1898, գ. Հավթվան (Իրանի Սալմաստ գավառ)–8.5.1970, Երևան], հնագետ, պատմաբան, վիմագրագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1957): Ավարտել է ԵՊՀ (1928): 1932–37-ին՝ Հայաստանի պատմության պետ. թանգարանի, 1954-ից՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի գիտաշխատող:

Լույս են տեսել Բ-ի «Վելիքուխի երկիրը» (1935) աշխատությունը, «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» (1963) մենագրությունը: Կազմել է ***«Դիվան հայ վիմագրության»*** (պր. 2–5, 1960–82) մատենաշարը: 2011-ին տպագրվել է Բ-ի «Էջեր Արցախի և հայ աղվանական հարաբերությունների պատմությունից» աշխատությունը:

1937-ին անհիմն բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:



Սեդրակ Բարխուդարյան

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Վլադիմիր Բախշիի [ծ. 22.9.1927, գ. Աղքյորփի (Վրաստանի Մառնեուլի շրջան)], պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1968), ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1986-ից): Գիտ. վաստ. գործիչ (2003): Ավարտել է ԵՊՀ (1950): 1958–90-ին աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ում (1967–90-ին՝ փոխտնօրեն, 1980–87-ին՝ նաև բաժնի



Վլադիմիր Բարխուդարյան

վարիչ): 1990-ից՝ ԳԱԱ ակադ. քարտուղար, 2000-ից, միաժամանակ՝ փոխնախագահ, 2004–11-ին՝ հումանիտար գիտ-ների բաժանմունքի ակադ. քարտուղար, 2011-ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական:


Լույս են տեսել Բ-ի «Նոր Նախիջևանի հայ գաղութի պատմություն (1779–1861)» (1967), «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861–1971 թթ.)» (1985), «Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (համահեղ., 1978), «Պատմագիտության հարցեր» (2008, ժող.), «Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես–XX դարի սկիզբ)» (2010) աշխատությունները:

Մասնակցել է ***«Հայ ժողովրդի պատմություն»*** (հ. 1, 2, 1967, 1984) ակադեմ. բազմահատորյակի ստեղծմանը: Հեղինակել և խմբագրել է դպրոց. դասագրքեր:

ԽՍՀՄ «Պատվո նշան», ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց», Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշաններ, ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (երեքն էլ՝ 2007), Հունգարիայի ԳԱ մեդալ (1985), Բնության և հասարակության մասին գիտ-ների միջազգ. ակադ-ի անդամ (1998):

ԲԱՐԽՈՒԴԱՐՈՎ, Ստեփան Գրիգորի (7.3.1894, Բաքու–3.10.1983, Մոսկվա), լեզվաբան, մանկավարժ, բառարանագիր: Պրոֆ. (1932), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1946): 1938–46-ին՝ «Ռուսկի յազիկ վ շկոլե» (ռուս.) համամիութ. ամսագրի խմբագիր: Համահեղինակ է «Ռուսաց լեզու» (1929), «Ռուսաց լեզվի դասագիրք» (միջնակարգ դպրոցների համար), «Ռուսաց լեզվի պատմության քրեստոմատիա» (մաս 1, 1938, մաս 2, պր. 1, 2, 1944, 1948) և այլ աշխատությունների (բոլորը՝ ռուս.): Մասնակցել է «Ժամանակակից գրական ռուսաց լեզվի բառարանի» (հ. 1–17, 1948–65, Լենինյան մրց.՝ 1970) ստեղծմանը:

ԲԱՐՁՐ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տպագրության տեսակ, երբ տպաձևի տպվող տարրերը չտպվող բացատների հարթությունից բարձր են: Բ. տ-յան առաջին եղանակը ***փայտափորագրությունն*** է, որը հայտնի էր դեռևս 704–751-ից Կորեայում: Իսկ 1436–44-ին Յոհան ***Գուտենբերգը*** հայտնաբերել է կապարից շարժ. տպատառերի պատրաստման եղանակը և 1445-ին կատարել Բ. տ-յան եղանակով առաջին տպագրությունը Եվրոպայում:



Բարձր տպագրության *սխեմատիկ պատկեր*

Հայ առաջին տպագրիչ ***Հակոբ Մեղապարտի*** հրատարակած բոլոր գրքերը տպագրվել են Բ. տ-յան եղանակով:

«ԲԱՐՁՐԱԳԱՀ, ԻՆՔՆԱԿԱԼ...», խնդրագիր, ամստերդամաբնակ հայերի դիմումը Ամենայն հայոց կաթողիկոս ***Աղեքսանդր Ա Ջուղայեցուն***, որով հայտնում են, թե եկեղեցի են կառուցել և խնդրում են քահանա ուղարկել՝ այն օրհնելու և Ամստերդամում հաստատվելու համար: Տպագրվել է 1714-ի հունիսի 10-ին Ամստերդամում՝ Ղուկաս Վանանդեցու տպարանում: Խորագիրը՝ «Բարձրագահ, ինքնակալ, երանակենցաղ, երջանկապատիվ եւ վեհափառ...» (2 էջ, 25,3 x 14,8 սմ):



Ստեփան Բարխուդարով

«ԲԱՐՁՐԱՎԱՆՔ», միամսյա գրական-գեղ. հանդես: Լույս է տեսել 1922-ին Կ. Պոլսում: Հրատարակիչ-խմբագիրներ՝ Գարեգին Գավաֆյան, Կոստան ***Զարյան***, Վահան ***Թեքեյան***, Շահան ***Պերպերյան*** (պատ. տնօրեն), Հակոբ ***Օշական***: Հանդեսի շուրջ համախմբվել են Մեծ եղեռնից փրկված մտավորականներ՝ արևմտահայ հոգևոր կյանքը վերակերտելու ձգտումով: Ուշագրավ են Հ. Օշականի «Հայ գրականություն» հոդվածաշարից Դ. Վարուժանին, Շիրվանզադեին, Ա. Իսահակյանին, Զ. Եսայանին, Կ. Սիտալին, Արսեն Երկաթին նվիրված գրաքննադատ. հոդվածները, Գ. Ֆեներճյանի «Շրջան մը՝ 1900–1908» գրականագիտ. վերլուծությունը: «Բ.» զգալի տեղ է հատկացրել արվ-ի խնդիրներին, նորագույն ուղղություններին, տպագրել է Շ. Պերպերյանի «Արդի երաժշտության ձգտումները և հայ երգը», «Արվեստի ուղղությունները» ուսումնասիրությունները, Կ. Զարյանի և Վ. Թեքեյանի հոդվածները արվ-ի վերաբերյալ, ինչպես և Փ. Թերլեմեզյանի հուշագրությունները, անգլիագիր հայ գրողներ Ս.

Ալեքսանդերի (Ա. Շաքյան), Մ. Արապյանի (Շ. Շավարշ), Մ. Առլենի (Տ. Գույումճյան) ստեղծագործություններից, Վ. Թեքեյանի «Մայրերը» դրաման, հատված՝ Հ. Օշականի «Նոր պսակը» պիեսից, վերահրատարակել Մ. Մեծարենցի, աշուղ Սեյադի գործերից:

ԲԱՐՍԵՂ, XIII դ–ի գրիչ: 1275–ին հաստատվել է Սչո Առաքելոց վանքում. Ներսես Մշեցի րաբունապետի պատվերով նրա ընդօրինակած ձեռագրերից մեկը պահվում է Մատենադարանում (ձեռ. № 3932), իսկ մյուսի մասին հիշատակվում է № 6273 ձեռագրում: 1281–ին Հաղպատի վանքում Բ–ի ընդօրինակած ձեռագրերից մեկը Երուսաղեմի մատենադարանում է (ձեռ. № 1758), իսկ մյուս կիսատ ձեռագիրն ավարտել են Հաղպատի վանքի գրիչներ Հովհաննեսը և Աբրահամը:

ԲԱՐՍԵՂ ԱՍՊԻՍԱԿՅԻ, Արճիշեցի, XV–XVI դդ–ի գրիչ, տարեգիր: Սովորել է Մեծոփավանքի դպրոցում: Ապրել և ստեղծագործել է Քաջբերունիքի Ասպիսակ գյուղում: Ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանները հարուստ են պատմ. տեղեկություններով և հրատարակվել են որպես տարեգրություններ: Բ. Ա–ու ընդօրինակություններից հայտնի են Ավետարաններ (1480, Հալեպ, 1486, 1495, 1498, Իրան) և մեկ Շարակնոց (1488, Մատենադարան, ձեռ. № 1624):

Գրկ. Մանր ժամանակագրություններ (կազմ.՝ Վ. Հակոբյան), հ. 1, Ե., 1951:

ԲԱՐՍԵՂ ԱՐՃԻՇԵՑԻ, XVI դ–ի սկզբի ժամանակագիր: Բ. Ա–ու տարեգրությունն ընդգրկել է 1501–04–ի դեպքերը՝ շահ Իսմայիլի գահակալ. կռիվները, ասպատակությունները Վասպուրականում և Տուրուբերանում:

Գրկ. Մանր ժամանակագրություններ (կազմ.՝ Վ. Հակոբյան), հ. 1, Ե., 1951:

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ, **Բարսեղ Մեծ, Բարսեղ Սրբազան** [329, Կեսարիա (Կապադովկիա)–379, Կեսարիա], հույն փիլիսոփա, մատենագիր, հոգևորական, հայրաբանության ներկայացուցիչ: Ընդհանրական եկեղեցու նշանավոր հայրապետներից, Հայ առաքել. եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ: ***Գրիգոր Նյուսացու*** եղբայրը: Ավանդել է հարուստ գրական ժառանգություն (գրույցներ, ճառեր, քարոզներ, մեկնություններ, շուրջ 250 նամակ):

Բ. Կ–ու երկերն զգալիորեն ազդել են քրիստ. աշխարհի գիտ. մտքի վրա և սկզբնաղբյուր են անտիկ մտածողների (որոնցից առատորեն բանաքաղել է ինքը) ուսմունքներին ծանոթանալու համար: Բ. Կ–ու երկերը հայ. թարգմանվել են V դ–ից: «Ճառք վասն վեցօրեայ արարչութեան» (1830, Վնտ., Սբ Ղազարի տպ., հրտ.՝ Ա. Բագրատունու, քնն. բնագիրը՝ 1984, աշխատասիր.՝ Կ. Մուրադյանի) երկում 9 ճառով գիտականորեն մեկնաբանել է Արարչագործության 6 օրերը: Գրիգոր Նազիանզացու հետ կազմել և խմբագրել է «Սուրբ Գիրքը և նրա մեկնաբանը՝ Որոգինեսը» («Ֆիլոկալիա») աշխատությունը: Ուշագրավ են Բ. Կ–ու սաղմոնների և Եսայու մարգարեության մեկնությունները, «Հորդոր պատանիներին՝ ինչպես օգտվել հեթանոս գրողների գրվածքներից», «Պատարագամատոյց» (հայ., 1897) երկերը:

2008–ին հայ. հրատարակվել է Բ. Կ–ու «Գիրք պահոց» (աշխատասիր.՝ Կ. Մուրադյանի) երկը:

Գրկ. **Սուքրեան Ա.,** *Սուրբ Բարսեղ եւ իր երկասիրութիւնքն, «Բազմավէպ», 1873, հ. 31, էջ 112–126:* **Գարագաշեան Ա.,** *Հատընտիր քաղուածք ի Սուրբ գրոց..., «Մատենադարան նախնյաց» մատենաշար, ԿՊ, 1876:* **Զարբհանալեան Գ.,** *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889:* **Մուրադյան Կ.,** *Սրբագրություններ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ռաի, «ԲՄ», 1971, № 10:* **Նույնի,** *Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեայ»-ն հայ մատենագրության մեջ, Ե., 1976:* **Հատիտյան Ա.,** *Սուրբ Բարսեղ հայրապետ Կեսարացի, «Էջմիածին», 1977, № 5–7:* **Պապադոպուլոս Ս.,** *Մի մեծի կյանքը, Էջմիածին, 2009:*


ԲԱՐՍԵՂ ԿԻԼԻԿԵՑԻ, XIII դ–ի գրիչ: Աշխատել է ***Հովհաննես Արքաեղբոր*** գրչության դպրոցում, ունեցել է բազմաթիվ աշակերտներ: 1270–ին Հովհաննես Արքաեղբոր համար ընդօրինակել է Աստվածաշունչ (Մատենադարան, ձեռ. № 345), որտեղ առաջին անգամ հանդի-




«Բարձրավանք», *1922, Կ. Պոլիս*



Բարսեղ Կեսարացու *«Ճառք վասն վեցօրեայ արարչութեան» (1830, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Բարսեղ Ճոնի *«Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի» (1826, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



Խիկար Բարսեղյան *«Շիրազ» (1990, Ե., «Արևիկ») գրքի կազմը*



Հովհաննես Բարսեղյանի *«Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»-ի (1973, Ե., «Լույս») կազմը*

պում են Գևորգ Սկևռացու կազմած ավետարան. նախադրություններն ու գլխակարգությունները: Մոտ 800-էջանոց այս ձեռագրում պահպանվել են Կոստանդին V-ի 2 ինքնագիր հիշատակարաններ:

ԲԱՐՍԵՂ ՃՈՆ, VII դ-ի երգահան, երաժիշտ-տեսաբան: Եղել է Շիրակի դպրեվանքի (Կարմիր վանք, ապա՝ Բարսեղ Ճոնի դպրեվանք) վանահայր: Հավաքել, ընտրել ու կանոնացրել է հայկ. հոգևոր կցուրդ երգերը, որը նշանակալի երևույթ էր հայ և ընդհանրապես արլ. քրիստ. երաժշտության պատմության մեջ: Նրա կազմած «Ճոնընտիր» ժող-ը դարձել է ավելի ուշ կանոնացված շարականոցների հիմքը և ձուլվել դրանց: Բ. Ճ-ի երգահան լինելու մասին տեղեկացնում է Վարդան Արևելցին՝ Սբ Ծննդյան «Անթառամ ծաղիկ» շարականի մեկնության մեջ («Տեսութիւն Անթառամ ծաղկի...», 1834, էջ 6):

1826-ին Կ. Պոլսում Անդրեաս վրդ. Նարինյան Սյունեցու աշխատասիրությամբ տպագրվել է Բ. Ճ-ի «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի» (Աբրահամ Թերզյանի տպ.) գրքի 2-րդ հատորը (1-ինը կորել է. այդ մասին ասվում է հիշատակարանում):

Գրկ. Թահմիզյան Ն., Բարսեղ Ճոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում VII դ-ում, «ԲԵՀ», 1973, № 1:

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑԻ, XVI դ-ի վերջի և XVII դ-ի սկզբի հիշատակագիր, վարդապետ: Սովորել է Վարագավանքում, դասավանդել գրչություն և երաժշտություն: Գրել է հիշատակարաններ, որոնցից մեկը վերաբերում է 1580-ական թթ-ի թուրք-պարսկ. արշավանքներին:

Գրկ. Աղանեան Գ., Բարսեղ Վարագեցի, «Դիւան հայոց պատմութեան», հ. 10, Թ., 1912:

ԲԱՐՍԵՂՅԱՆ Գեղամ (1885, Կ. Պոլիս–1915, Մեծ եղեռնի զոհ), գրող, հրապարակախոս: Սովորել է Կ. Պոլսի Պեզճյան և Կեդրոն. վարժարաններում: Խմբագրել է ***«Ազդակ», «Մեհեան»*** հանդեսները, ***«Ազատամարտ»*** օրաթերթը:

Լույս են տեսել Բ-ի պատմվածքները, նորավեպերը, արձակ բանաստեղծությունները, այլաբան. գրույցները («Ապագայ քաղաքին խուզարկիչը», «Սպասումս կախաղանին վրայ», «Այսպէս պատմեց Վրիժաբիբ Ազատութիւնը», «Ձիւնամրրիկը» ևն): 1931-ին Փարիզում հրատարակվել է Բ-ի «Ամբողջական գործը» ժող-ը:

ԲԱՐՍԵՂՅԱՆ Խիկար Հակոբի [7.6.1918, գ. Շինուհայր (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–10.1.1996, Երևան], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1966): Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ-ը (1941): 1944-ից աշխատել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1948–49 և 1952–53-ին՝ Լենինականի ***«Բանվոր»*** թերթի խմբագիր, 1967–70-ին՝ ***«Հայաստան»*** հրատարակչության, 1970–84-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ-ների գիտ. տեղեկատվ. կենտրոնի, 1984–90-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հրատարակչության տնօրեն:

Լույս են տեսել Բ-ի «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» (գիրք 1, 2, 1967, 1975), «Ստեփան Շահումյան: Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն (1878–1918)» (1968), «Կրակների միջով (Հայ ժողովրդի մասնակցությունը 1941–45 թթ. Հայրենական մեծ պատերազմին)» (1982), «Այսպես ապրեցին» (1985) աշխատությունները, «Շիրազ» (1990) ժող-ը: Հեղինակ է «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն. 1900–1920» (1956) աշխատության:

ԲԱՐՍԵՂՅԱՆ Հովհաննես Խաչատուրի [25.10.1920, գ. Մաստարա (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–2.8.2014, Երևան], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1981), պրոֆ. (1982): Գիտ. վաստ. գործիչ (1970): Ավարտել է ԵՊՀ (1944): 1958-ից՝ ԵՊՀ դասախոս. 1969–76-ին՝ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի վարիչ, 1977–85-ին՝ բանասիր. ֆակ-ի դեկան, 1985–90-ին՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Բ-ի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (1953), «Հատուկ անուն» (1964), «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» (1967), «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» (1980), «Հայերենի ուղղագրության հարցերը՝ հայագիտության

և գրականության դասականների քննությամբ» (2004) աշխատությունները, «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուն» (2006): Համահեղինակ է *«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»*-ի (հ. 1–5, 1986–2001, ՀՀ նախագահի մրց., 2003), հայոց լեզվի դպրոց. դասագրքերի: Կազմել է «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973), տերմինաբան. ուղեցույցներ:

Գրկ. Հովհաննես Բարսեղյան: Կենսաամատենագիտություն (կազմ.՝ Հ. Հայրապետյան), Ե., 2011:

ԲԱՔՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, առաջին տպարանը 1870-ին հիմնադրել է *Հայոց մարդասիրական ընկերությունը* (կառավարիչ՝ Նիկողայոս Արտեմով): Հայկ. տառերը բերվել են Թիֆլիսից՝ «Համբարձում Էնֆիաճյան և ընկ.» տպարանից: Գործունեության 13 տարվա ընթացքում տպարանը հրատարակել է ավելի քան 20 անուն գիրք՝ «Հնդկացւոյ անցքը անմարդաբնակ կղզիներում» (1872) վիպակը (թարգմ.՝ Ավագ Գրիգորյանի), Մխիթար Գոշի, Ողոմպիանոսի և Եզոպոսի առակները (1878), դասագրքեր, Մարդասիր. ընկերության հաշվետվությունները ևն: 1877–78-ին այստեղ է տպագրվել Խորեն Ստեփանեի *«Հայկական աշխարհ»* ամսագիրը:

1873-ից գործել են Ս. Մինասյանի, 1874-ից՝ Ն. Մալաֆյանի [«Սոխակ Հայաստանի» երգարանի 4 պրակ (1874–78), Խորեն Միրզաբեկյանի «Պարտիզիկ» (1875) բանաստեղծությունների ժող-ը ևն], 1876-ից՝ Ալեքսանդր Ղասաբյանի [Գ. Սարգսյանի «Սիօնի երգեր» (1884) ևն] տպարանները: 1885-ից մինչև դարավերջ բացվել են «Արոր» (կառավարիչ՝ Ս. Շահիազյան, տպագրությունը կատարվել է Ս. Պետերբուրգից բերված «Արամյան» տառատեսակով, գործել է մինչև 1920-ը, տպագրել ավելի քան 100 անուն գիրք, ինչպես նաև *«Արոր»-ի պատկերազարդ օրացոյցը»*), Սահակ Տեր-Հովհաննիսյանի, Հ. Գյուլբասարյանի, Ս. Շահիազյանի [Ս. Կուկունյանի «Վերջին օրերս Սախալինում» (1910) ևն], Ղազարյան եղբայրների տպարանները: XX դ-ի սկզբին հիմնադրվել են Ն. Երևանցյանի [Ե. Գեղամյանի «Հայերի ազատագրական շարժումները...» (1915) ևն], Ս. Անտոնյանի, Ա. Թառայանի, Լ. Միրզայանի, Կ. Խատիսյանի, «Արծվաբերդ», «Արամազդ», «Բաքվի հայոց կուլտուրական միության», Կարապետյան եղբայրների, «Կովկասի հայ աշակերտական միության», «Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության», «Հրատարակչական ընկերության», «Մամուլ» և այլ տպարաններ: XX դ-ի սկզբին Բաքվում գործել է հայապատկան շուրջ 18 տպարան, որտեղ տպագրվել են ոչ միայն հայ. պարբ-ներ, այլև հայ ու այլազգի հաս-քաղ. գործիչների և գրողների տասնյակ գրքեր, տեղեկատու գրակ., քարտեզներ ևն: Մեծ չափերի է հասել պատմագիտ., բանասիր., տեղագր., գեղ. գործերի, դասագրքերի և բառարանների հրատ-ը, ընդլայնվել է նաև թարգման. գրակ-յան տպագրությունը:


Գրատպությանը զուգահեռ՝ Բաքվում կազմակերպվել է նաև գրավաճառ ցանց: Մեփական գրատներ են ունեցել Ս. Տեր-Հովհաննիսյանը, Ս. Հարությունյանը, Մ. Միրզաբեկյանը, Գ. Սահարյանը, Ա. Ղասաբյանը, գործել են «Արոր» և «Րաֆֆի» և այլ գրատներ: Քաղաքում լայնորեն ճանաչված էին Մարիա Սունդուկյանի «Սոտրուդնիկ» գրատունը և համանուն գրքի գործակալությունը: Այդ գրատներում վաճառվել է Բաքվում, Թիֆլիսում, ինչպես նաև Ռուսաստանի ու Այսրկովկասի այլ քաղաքներում լույս տեսած հայ. և ռուս. գիտահանրամատչելի գրակ.:

Բաքվի մի շարք ոչ հայկ. տպարաններում (Մ. Վոլչկինի տպարանը՝ XIX դ-ի վերջին, ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի «Նինա» ընդհատակյա տպարանը՝ XX դ-ի սկզբին, Տարաևի և Միրզոյանի, Շեյդերովի, Ելեկանցովայի, «Տրուդ», Բաքվի քաղաքապետարանի, «Տրուժեննիկ», «Բաքու» ևն) նույնպես տպագրվել են հայ. գրքեր ու պարբ-ներ:

Բաքվի հայկական տպագրություն



«Սոխակ Հայաստանի» (հ. 1, 1874, Ն. Մալաֆյանի տպ.) երգարանի փիփղոսաթերթը




«Գոշ Մխիթարի, Ողոմպիանու եւ Եզովպոսի ընտիր առակները» (1878, Հայոց մարդասիր. ընկ. տպ.) գրքի փիփղոսաթերթը



Գ. Սարգսյանի «Սիօնի երգեր» (1884, Ալեքսանդր Ղասաբյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը

Բաքվի հայկական տպագրություն



Ս. Կուկունյանի «Վերջին օրերս Սախալինում» (1910, Ս. Շահբազյանի տպ.) գրքի կազմը



Ե. Գեղամյան. «Հայերի ազատագրական շարժումները ...» (1915, Ն. Երևանցյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



«Ճիլ» գրական-գեղ. ալմանախի (1914–16) շապիկը

Բաքվի հայ հաս-մշակութ. կյանքում նշանակալի դեր է ունեցել հայ պարբ. մամուլը, որի ձևավորման համար նպաստավոր պայմաններ են ստեղծվել 1870-ական թթ-ի սկզբներին՝ պայմանավորված ազգ. ինքնագիտակցության, մշակույթի և հաս. մտքի զարգացմամբ: Մինչև 1920-ը Բաքվում հրատարակվել են 60-ից ավելի պարբ-ներ [«Հոյս» (1903), «Սոցիալիստ» (1904–05), «Արշալոյս» (1904–05), «Գրոհ» (1906–07), «Բարի լուր» (1906–17), «Թռուցիկ» (1906), «Կիրակնօրեայ թերթ» (1906), «Օրեր» (1907), «Մոծակ» (1907), «Անիւ», «Շեփոր», «Պատանեկան գրադարան» (երեքն էլ՝ 1908), «Զանգ» (1908–09), «Նոր օրեր» (1908–09), «Առաւոտ», «Ուղի», «Զնդան» (երեքն էլ՝ 1909), «Փարոս» (1910), «Թատրոն եւ երաժշտութիւն» (1910–17), «Նոր կեանք» (1911–12), «Կոչ» (1911), «Նոր խօսք» (1911–12), «Կիրակի» (1912), «Մեր ուղին» (1912), «Եռանդ» (1912), «Բագուի ձայն» (1913–14), «Գործ» (1914), «Շաւիղ» (1914), «Նաւակ» (1914–15), «Արեւ» (1914–19), «Առողջ կեանք» (1917), «Յառաջ» (1917), «Գործ» (1917–18), «Բանւոր» (1917–18), «Վերածնունդ» (1917–18), «Աշխատանքի դրօշակ» (1917–19), «Աշխատաւորի ձայնը» (1918), «Երկիր» (1919) ևն]:

XIX դ-ի վերջին–XX դ-ի սկզբին Բաքվում լույս տեսած ռուսալեզու քաղ., տնտ., գիտ., բանասիր., մանկավարժ. մի շարք պարբ-ների խմբագիրներ նույնպես եղել են հայեր. «Բակինսկիե իզվեստիա» (1875, Ստեփան Գուլիշամբարով), «Նեֆտյանոյե դելո» (Ա. Պարթևյան), «Բաքու» (Պ. Կարա-Մուրզա, Ք. Վերմիշյան, Գ. Ենգիբարյան), «Լիստոկ աբյավլենիյ» (1908-ից, Ռ. Օհանջանյան), «Բակինսկի վեչեր» (1908-ից, Ս. Շահբազյան), «Բակինսկիյե նովոստի» (Պ. Թուրյան) ևն:

Քաղաքի գրական կյանքի աշխուժացմանը նպաստել են 1880-ական թթ-ի վերջերին ստեղծված «Հույս» միությունը՝ իր համանուն ձեռագիր հանդեսով, և 1890-ական թթ-ին Ս. Հովվյանի, Ա. Նազարեթյանի ու Սեդրակ (Արսեն) Բալայանի ջանքերով կազմակերպված «Օջախ» գրական-գեղ. ակումբը. լույս են ընծայել երիտասարդ. գրական հանդեսներ, որոնցից առաջինն ու նշանակալի հրատ-ը «Ծիլ» (1914–16) գրական-գեղ. ալմանախն էր:

Բաքվի հայ կրթամշակութ. և գրատպության գործը կասեցվել է 1918-ին, երբ թուրք. զորքերը գրավել են Բաքուն, կոտորել ավելի քան 30 000 հայերի, ավերել ու կողոպտել քաղաքի կրթալուսավոր. օջախները, այդ թվում՝ տպագրատները: Հայ բնակչության նկատմամբ մշակութ. ցեղասպանությունը շարունակվել է նաև մուսավաթ. Ադրբեջանում (1918–20):

Խորհրդ. տարիներին Ադրբեջանում պետականացվել են հայապատկան ձեռնարկությունները, այդ թվում՝ տպարանները, կողոպտվել է Հայոց մարդասիրական ընկերության հարուստ գրադարանը:

1925-ի մարտին Բաքվում հիմնադրվել է «Հայարտուն» գրական-մշակութ. կազմակերպությունը՝ գրական, նկարչ., երաժշտ. և թատեր. մասնաճյուղերով: Հրատարակվել է «Հայարտուն» թերթը, որը կարողացել է իր շուրջը համախմբել գրակ-յան և մշակույթի գործիչներին (բանաստեղծներ՝ Թ. Հուրյան, Ա. Գրաշի, Հ. Սահյան, Ս. Այվազյան, Ս. Գրիգորյան, Ա. Սենալ, Վ. Աբրահամյան, արձակագիրներ՝ Գ. Բես, Գ. Սևունց, Մ. Դավթյան, դրամատուրգներ՝ Ա. Դարբնի, Ա. Բարսեղյան, Լ. Ադյան և ուր.): Հետագայում լույս են ընծայվել նաև «Սովետական գրող» (1938–41) ամսագիրը, «Գրական ալմանախ» տարեգիրքը (3 գիրք, 1951–1957), «Գրական Ադրբեջան» գրական-գեղ. երկամյա հանդեսը (1957–1989), որտեղ տպագրվել են հայ գրողների ստեղծագործություններից:

Այն տարիներին բազմաթիվ հայ. գրքեր են տպագրվել նաև Ադրբեջանի պետ. Ազերնեշր հրատարակչությունում:

1920-ից հետո Բաքվում լույս են տեսել շուրջ 25 անուն հայ. պարբ-ներ՝ «Տեղեկագիր» (1920), «Բյուլետեն» (1923), «Լրաբեր» (1928–29),

«Մետաղագործ» (1931–39), «Նավթաթորող ստալինեց» (1935–41), «Տեղեկագիր (Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի)» (1938–40), «Օգնություն ագիտատորին և պրոպագանդիստին» (1942–46), «Ագիտատորի բլոկնոտ» (1948–59), «Սոցիալիստական բուխտա» (1931–34), «Լենինյան դաստիարակության համար» (1933–39), «Ագիտատոր» (1966–88) ևն, որոնցից ամենաերկարակյացը «Կոմունիստ» (1920–89) օրաթերթն էր:


1990-ի հունվ-ին Բաքվի հայության ջարդերից և այնտեղից նրանց վերջին հատվածի բռնագաղթից հետո ավարտվել է Բաքվի հայկ. գրատպության և առհասարակ կրթամշակութ. կյանքը:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու փառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նամանահանութիւն): **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012:* **Ստեփանյան Գ.,** *Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 2011:*

Գևորգ Ստեփանյան

ԲԴՈՅԱՆ Վարդ Հարությունի [4.3.1910, գ. Փոքր Խանչալի (այժմ՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջանում)–19.2.1986, Երևան], ազգագրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1970): 1959–86-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ինագիտ-յան և ազգագրության ինստ-ի ավագ գիտաշխատող:

Լույս են տեսել Բ-ի «Հայ ժողովրդական խաղեր» (հ. 1–3, 1963–83), «Երկրագործական մշակույթը Հայաստանում» (1972), «Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ» (1974), «Հայկական աղամաններ» (1986), «Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանաստեղծությունը» (2014, առաջաբ. և ծնթգր.՝ Ռ. Ղարիբյանի) աշխատությունները:



Վարդ Բդոյանի *«Հայկական աղամաններ» (1986, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

ԲԵԳԼԱՐՅԱՆ Հրաչյա Մուխանի (Միքայելի) [1.5.1934, գ. Կոլխոզաշեն (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)–8.10.2009, Ստեփանակերտ], բանաստեղծ, խմբագիր: ԼՂՀ մշակույթի վաստ. գործիչ: Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1966): 1969–89-ին աշխատել է «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունում, 1990-ից, որոշ ընդմիջումներով, խմբագրել է *«Պըլը Պուղի»* հանդեսը:

Լույս են տեսել Բ-ի «Կամուրջ» (1961), «Լեռան աղբյուր» (1966), «Կաղնին ժայռի վրա» (1973), «Կապույտ լեռների երգը» (1975), «Արևային հնձան-ներ» (1979), «Գետերը չեն հոգնում» (1981), «Իմ տունը» (1987), «Մասրենու թուփը» (1989), «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ» (1990), «Քնար Ղարաբաղի» (2004), «Դրախտի պատուհան» (2006) բանաստեղծությունների ժող-ները, «Թոլոլ Դավիթ» (2009) վեպը: «Ղարաբաղցին» երգի խոսքերի հեղինակն է (երաժշտությունը՝ Ա. Հեքիմյանի):



Հրաչյա Բեգլարյան

Ադրբեջանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» (1981), ԼՂՀ Եղիշեի անվ. (1993, 2002, 2003), ՀԳՄ Ղ. Աղայանի անվ. (1989) մրց-ներ, ԼՂՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2008) շքանշան, «Վաչագան Բարեպաշտ» (2011), ՀՀ «Մովսես Խորենացի» (2009), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2009), ԼՂՀ «Հայրենյաց պաշտպան» (2009) մեդալներ:

ԲԵԴԻՐՅԱՆ Պետրոս Սարգսի (ծ. 7.4.1931, Հալեպ), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1991), պրոֆ. (1990): Սովորել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունում (1943–46): Ավարտել է ՀՊՄԻ (1952): 1955–95-ին դասավանդել է նույն բուհում:

Լույս են տեսել Բ-ի «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» (1973), «Բառերի խորհրդավոր աշխարհում: Զրույցներ» (2003), «Հայերենագիտական հոդվածներ ու նոթեր» (2012) և այլ աշխատություններ, «Նօթեր արեւմտահայերէնի դասավանդութեան մասին» (2013) ուս. ձեռնարկը: Կազմել է «Ղեւոնդի «Պատմութեան» համաբարբառը» (1978), «Հայերեն շրջասությունների բառարանը» (2006), «Հայերէն-անգլերէն, անգլերէն-հայերէն գործնական բառարանը (անգլիախոս արևմտահայերի և արևելահայերի համար)» (2010), «Հայ-ռուսերեն գործնական բառարանը» (2010), «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանը» (2011):

Գրել է ուս. ձեռնարկներ («Եկէք ճիշդ խօսինք ու գրենք», 1993, Բոստոն, «Հայաստան աշխարհ», 2010, Կահիրե, 2011) ևն, դասագրքեր՝ «Լեզու նախնեաց (գրաբարի դասագիրք Սփյուռքի դպրոցների համար)» (1972, Բ., 1989, Նիկոզիա), «Լեզու նախնեաց (գրաբարի դասագիրք Գևորգյան ճեմարանի համար)» (1997, 2000, 2006), «Հայոց լեզվի դասագիրք (ռուսախոս հայերի համար)» (ռուս., 2002, 2006), ուղեցույցներ ևն:



Պետրոս Բեդիրյանի *«Հայ-ռուսերեն գործնական բառարան»-ի (2010, Ե., «Անտարես») կազմը*



Ռուբեն Բեդրոսով. *Հ. Շիրազի «Քնար Հայաստանի» (1958, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Վահրամ Բեկչյանի *«Ռուս-հայերեն զրուցարան»-ի (2001, Կալուգա, «Շահանե») կազմը*



«Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարի ե գրքի (կազմ.՝ **Սանդրո Բեհբուդյան***, 1999, Ե., «Ոսկան Երևանցի») կազմը*

ՀԽՍՀ լուսավորության նախարարության Խ. Աբովյանի անվ. (1981), ՀՀ ԿԳՆ ոսկե (2011), սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» (2011) մեդալներ, ԽՍՀՄ «Պատվո նշան» (1986), Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2004) շքանշաններ:

ԲԵԴՐՈՍՈՎ (Բեդրոսյան) Ռուբեն Սերգեյի [28.9(11.10).1905, Արմավիր (Ռուսաստան)–20.9.1974, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Արվ-ի վաստ. գործիչ (1960): Ավարտել է ԵԳԱՏ (1929), Լենինգրադի գեղարվ-ի ակադ-ի գեղանկարչության, քանդ-յան և ճարտ-յան ինստ-ը (1936): 1952–70-ին եղել է *«Հայաստան»* հրատարակչության գլխ. նկարիչը:

Նկարազարդել և ձևավորել է Յ. Վ. Գյոթեի «Բանաստեղծություններ» (1946), «Հայաստանի բանաստեղծները» (1950) ժող-ները, «Հայկական հեքիաթներ» (1953), «Ուկրաինական քնար» (1954), Ն. Զարյանի «Հացավան» (հայ., ռուս.), «Հայ գրականության անթոլոգիա» (1957), Հ. Շիրազի «Երկեր» (1957) և «Քնար Հայաստանի» (1958), Սաադիի «Գոլեստան» (1958), Վ. Թեքեյանի «Երկեր» (1958), Վ. Շեքսպիրի «Երկեր» (հ. 1–2, 1963), Ջ. Ռիդի «Տաս օր, որոնք ցնցեցին աշխարհը», Ջ. Բոկաչչոյի «Դեկամերոն» գրքերը, նաև Ա. Պուշկինի, Ե. Չարենցի, Րաֆֆու, Ա. Բակունցի, Հ. Հայնեի, Ֆիրդուսու գործերից:

ԲԵԿՉՅԱՆ Վահրամ Վլադիմիրի (ծ. 11.7.1960, Վանաձոր), խմբագիր, հրատարակիչ: Ավարտել է ՎՊՀԻ (1981), ՌԴ Կալուգայի բիզնես-դպրոցը (1997): 1994-ից ապրում է Կալուգայում. 1999-ից՝ *«Գործարար»* ամսագրի և նրան կից «Բարի լույս» թերթի հիմնադիր-խմբագիր, 2000-ից, միաժամանակ՝ «Շահանե» հրատարակչության հիմնադիր-տնօրեն:

Լույս են տեսել Բ-ի «Անունների աշխարհ» (2002) գիրքը, «Հայ-ռուսերեն, ռուս-հայերեն բառարանը» (2005), «Ռուս-հայերեն զրուցարանը» (2001) ևն:

ՌԺՄ անդամ (2008):

ԲԵՀԲՈՒԴՅԱՆ Սանդրո Արտաշեսի [18.10.1934, ք. Շաքի (Ադրբեջան)–8.6.2004, Երևան], պատմաբան, բանասեր, արխիվագետ: Ավարտել է Էջմիածնի հոգևոր ճեմարանը (1959), ԵՊՀ (1968): 1973–2003-ին՝ Գրակ-յան, արվ-ի և մամուլի փաստաթղթերի կենտր. պետ. արխիվի տնօրեն, միաժամանակ դասավանդել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

Կազմել է *«Վավերագրեր հայ եկեղեցու պատմության»* (գիրք Ա–ԺԵ, 1994–2007) արխիվային նյութերի և փաստաթղթերի մատենաշարը, «Երվանդ Մելքոնյան: Բանասերն ու դիվանագետը (1944–1997)» (2003) ժող-ը, հրատ-յան է պատրաստել «Սուրբ Էջմիածինը տաղերի մեջ» (2003) արխիվային նյութերի ժող-ը:

Բնության և հասարակության մասին միջազգ. ԳԱ հայկ. մասնաճյուղի պատվ. դ-ր (2001): Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2000):

Գրկ. Անխոնջ մշակը (հոդվածներ, ուսումնասիրություններ Սանդրո Բեհբուդյանի, առաջար.՝ Ա. Սադոյանի), Ե., 2005:

ԲԵՆԻԱՄԻՆ ԵՐԵՑ, V դ-ի 1-ին կեսի գրական-կրթ. գործիչ: Աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին: Այունիքից հրավիրվել է Աղվանք, եղել է Մեսրոպ Մաշտոցի թարգմանը, որը Բ. Ե-ի (ոմանց կարծիքով՝ նաև Անանիա եպիսկոպոսի) օգնությամբ հորինել է աղվան. գիրը: Դրանից հետո Աղվանքում եղել է ուսուցիչ, զբաղվել թարգման. գործունեությամբ:

Գրկ. **Կորյուն,** *Վարք Մաշտոցի, Ե., 1994:* **Մովսես Խորենացի,** *Հայոց պատմություն, Ե., 1997:* **Ստեփանոս Օրբելյան,** *Այունիքի պատմություն, Ե., 1986:* **Ա.ճառոյան Հ.,** *Հայոց գրերը, Ե., 1968:*

ԲԵՆՈՒԵ [Սահակ Մովսիսյան, 1867, գ-ք. Կոփ (Մուշի գավառ)–1939, Լենինական], բանահավաք, մանկավարժ: Սողոմոն *Տարոնցու* հայրը: 1879–84-ին սովորել է Մուշի ազգ. կենտր. վարժարանում: Երկար տարիներ դասավանդել է հայրենի գյուղում, Ալաշկերտում, Խնուսում, Բիթլիսում, Այսրկովկասի տարբեր քաղաքներում ու գյուղերում: 1896-ին տեղափոխվել է Թիֆլիս: 1899–1900-ին՝ «Ազգագրական հանդէս»-ում, իսկ 1901-ին առանձին գրքով լույս է ընծայել «Բուլանըխ կամ Հարք գաւառ» (Թ., Կ. Մարտիրոսյանի տպ.) ազգագր. ուսումնասիրությու-

նը: Գրի է առել հայկ. ժող. հեքիաթներ, առածներ, ավանդություններ, որոնց մեծ մասը հետագայում հրատարակվել է «Հայ ժողովրդական հեքիաթների» 10-րդ հատորում (1967) և «Հայ ազգագրություն ու բանահյուսություն» մատենաշարի 3-րդ գրքում (1972):

ԲԵՆՎԵՆԻՍՏ (Benveniste) Էմիլ (27.5.1902, Հալեպ–3.10.1976, Փարիզ), ֆրանսիացի լեզվաբան, իրանագետ, հայագետ: Աշակերտել է Անտուան *Մեյեին*: Զբաղվել է հնդեվրոպ. հիմք լեզվի նախապատմության և կառուցվածքի հնագույն տարրերի ուսումնասիրությամբ: Իր հիմն. աշխատություններում և հայագիտ. հոդվածներում Բ. անդրադարձել է հայոց լեզվին վերաբերող մի շարք հարցերի (գրաբարի ձայնեղների շնչեղություն ևն), կատարել բազմաթիվ դիտողություններ և կարևոր ստուգաբանություններ: 1964-ին վերահրատարակել և մինչև 1975-ը խմբագրել է *«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»* (ֆրանս.) տարեգիրքը:



Բենսե

ԲԵԲԵՐՅԱՆ Մինաս Հովհաննեսի [16(28).4.1871, Նոր Նախիջևան–11.1.1919, Երևան], գրականագետ, թարգմանիչ, իրավաբան: Սովորել է ծննդավայրի դպրոցում, ապա՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբ. բաժինը (1894): 1894–95-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում. 1907-ին՝ տեսուչ: 1893-ին Յ. Վեսելովսկու հետ հրատարակել է «Արմյանսկիե բելետրիստի» ժող-ի 1-ին հատորը: 2-րդը լույս է տեսել 1894-ին, սակայն ցար. գրաքննությունն արգելել է: «Գրական ակնարկներ» խորագրով *«Արարատ»*-ում տպագրել է ռուս և հայ դասականներին նվիրված հոդվածաշար:

Լույս են տեսել Բ-ի «Մմբատ Շահ-Ազիզ» (1902, ա. տպ.), «Գրական ակնարկներ» (1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Տխուր մեղեդիներ» (1908, նույն տպ.) աշխատությունները, թարգմանություններ է արել ռուս-ից հայ. և հայ-ից ռուս.:



Էմիլ Բենվենիստ

ԲԵՔԱՐՅԱՆ Արա Վաղինակի [30.5(12.6).1913, ք. Աֆիոն-Կարահիսար (Թուրքիա)–18.6.1986, Երևան], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1960), ժող. նկարիչ (1965): Ավարտել է ԵԳԱՏ (1932), Լենինգրադի գեղարվ-ի ակադ-ը (1939): 1945–86-ին դասավանդել է ԵԳԻ-ում, ԵԳԹԻ-ում (պրոֆ.՝ 1964-ից): 1950–70-ական թթ-ին աշխատակցել է «Ոզնի», «Պիոներ» ամսագրերին, համագործակցել «Սովետական գրող», «Հայաստան» հրատարակչությունների հետ:



Արա Բեքարյան. *Վ. Բեքարյանի «Զեզնից անմեղը» (1970, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

Նկարազարդել և ձևավորել է Մ. Գորկու «Հեքիաթներ» (1953), Հ. Պարոնյանի «Ընտիր երկեր» (հ. 1, 2, 1954), «Քաղաքավարության վնասները» (1959), «Երկեր» (1969), «Մեծապատիվ մուրացկաններ» (1975, 1980, ռուս.՝ 1982), Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» (1956, 1973, ռուս.՝ 1977), Ե. Օտյանի «Համբարձում աղա» (1956, 1971), Վ. Թոթովենցի «Աղավնիներ» (1957) և «Կյանքը հին հոովմեական ճանապարհի վրա» (1979), Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» (ռուս.՝ 1960, հայ.՝ 1977), Հ. Թումանյանի «Ոսկի քաղաքը» (1969, ռուս.՝ 1960), Ռ. Քոչանյոլիի «Սպարտակ» (1982), Վ. Բեքարյանի «Սուտ հարսը» (1963), «Զեզնից անմեղը» (1970) և այլ գրքեր: Հոդվածներ է տպագրել «Սովետական արվեստ», «Ավանգարդ», «Գրքերի աշխարհ», «Հայրենիքի ձայն» և այլ պարբ-ներում:

Հեղինակ է գրաֆիկ. թերթերի («Մեծապատիվ մուրացկաններ», 1962, ևն):

2013-ին Բ-ի ծննդյան 100-ամյակի առթիվ ստեղծվել է արծաթե հուշադրամ (ըստ «Աշտարակ» գործի, 1960):

Գրկ. Արա Բեքարյան, գիրք-ալբոմ (հայ., ռուս. և անգլ., կազմ.՝ Սեդա Բեքարյան), Ե., 2012: **Казарян М.,** *Ара Бекарян, М., 1976.*


«ԲԺԻՇԿ», բժշկ. և առողջապահ. ամսաթերթ: Լույս է տեսել 1911–12-ին Տրապիզոնում, 1912–14-ին՝ Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրենն՝ Վահան Ղազարյան: Տպագրել է բժշկ. զրույցներ, լուրեր ազգ. հիվանդանոցներից, առաջարկել է հայկ. վարժարաններում սահմանել բժշկ. վերահսկողություն, պաշտպանել է հայ բժիշկների շահերը, բողոքել Թուրքիայում ազգ. խտրականության դեմ: Հրատարակել է «Բժշկական տարեցոյցը» (1914):



***«Բժիշկ»**, 1911–14, Տրապիզոն, Կ. Պոլիս*



«Բժշկական գիտական տեղեկատու», *1965–69, Երևան (№ 2, 1965)*



«Բժշկական հանդես», *1926–27, Երևան (№ 1, 1926)*



«Բժշկարան ձիոյ...» *(1980, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

«ԲԺԻՇԿ», բժշկ. և առողջապահ. ամսաթերթ: Լույս է տեսել 1955–84-ին (ընդհատումներով) Բեյրութում: 1964-ից հրատարակվել է Լիբանանահայ բժշկ. միության հովանավորությամբ: Խմբագիրներ՝ Վարուժան Սահակյան, Մելգոն Էպլիղաթյան, Հարություն Գեղարդ: Ծանոթացրել է բժշկագիտ-յան նորություններին, տպագրել նշանավոր բժիշկների կյանքին և գործին վերաբերող հոդվածներ: Զգալի տեղ է հատկացրել առողջապահ-յան բնագավառում Հայաստանի ձեռքբերումներին:

«ԲԺՇԿԱԿԱՆ ԲՅՈՒԼԵՏԵՆ», գիտահանրամատչելի բժշկ. կիսամսյա թերթ: Երևանի Սանդուս տան հրատ.: Լույս է տեսել 1958–91-ին Երևանում: Խմբագիրներ՝ Նիկողայ Ավագյան, Վ. Ցականյան: Տպագրել է հանրամատչելի զրույցներ մարդու անատոմիայի, կենսբ. առանձնահատկությունների, անձն. հիգիենայի, հղի կանանց ռեժիմի, նորածինների խնամքի, նաև վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման, ախտորոշման, կանխարգելման և բուժման միջոցների մասին: Լուսաբանել է բժշկագիտ-յան, դեղագործության նորությունները:

«ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ», բժշկագիտ. եռամսյա հանդես: ՀԽՍՀ ԱՆ բժշկագիտ. խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1965–69-ին Երևանում (հայ., ռուս., անգլ.): Խմբագիր՝ Անդրանիկ Մեհրաբյան: Ներկայացրել է բժշկագիտ-յան և տեխնիկայի նվաճումները, նպաստել դրանց ներդրմանը: Տպագրել է համառոտ ծանոթագրություններ Հայաստանի, ԽՍՀՄ-ի և արտերկրի բժշկ. պարբ-ներում հրապարակված առանձին մասնագիտությունների վերաբերող հոդվածների, ԳՀ աշխատանքների մասին:

«ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», տարեգիրք: ՀԽՍՀ առողջապահ-յան ժողկոմատի հրատ.: Լույս է տեսել 1926–27-ին Երևանում: Խմբագիր՝ Ս. Լազարյան: Ծանոթացրել է բժշկագիտ-յան նվաճումներին, անդրադարձել մայրությանը, նորածինների խնամքին, բժշկ. մարզանքին, կենցաղային և սոցիալ. բժշկությանը, լուսաբանել առողջապահ. գործը շրջաններում: Հրատարակել է վիճակագր. տվյալներ, զեկուցումներ, արտատպել մասնագիտ. հոդվածներ օտարալեզու մամուլից, նաև առժողկոմատի որոշումները, հրահանգներ, կանոնադրություններ, հայտարարություններ: Թղթակցել են Հ. Քեչեկը, Ա. Արզումանյանը, Ա. Արեշյանը, Ք. Փիրումյանը և ուր.:

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ», XIV դ-ի ձեռագիր՝ անասնաբուժության և մասնավորապես ձիաբուժության մասին: Կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը՝ գրիչ Թորոս քահանայի օժանդակությամբ՝ արաբ. աղբյուրների հիման վրա՝ Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Սսում՝ Սմբատ (1296–98) արքայի հրամանով: Բայց հայ. ձեռագիրը բնագրի նույնական թարգմանությունը չէ, այլ նմանօրինակ տարբեր աղբյուրներից կազմված համառոտ ձեռնարկ:

Տպագրվել է 1980-ին Երևանում՝ Բ. Չուգասզյանի աշխատասիրությամբ: Բաղկացած է ներածությունից, բուն տեքստից (բնագրային մի քանի նկարներով), հավելվածից, մատենակից բառարանից, ունի ռուս. ամփոփում, բնագրում հիշատակվող հիվանդությունների ու դեղերի ցանկեր: Ձեռագիրը դեռևս 1906-ին Թավրիզում նկարագրել է Հ. Աճառյանը: 1971-ին (մինչ այդ համարվել է կորած) այն հայտնաբերվել է լոսանջելեսաբնակ Զարեհ Սարաջյանի մոտ: Լեզուն հարուստ է բազմաթիվ նոր բառերով, բառաբարդություններով, անասնաբուժ. տերմիններով և բուսանուններով: «Բժշկարան ձիոյ....»-ի հայ. թարգմանությունը վկայում է, որ միջնադարում Հայաստանի անասնաբույժները ծանոթ են եղել Հին Արևելքի անասնաբուժ. նվաճումներին և օգտվել դրանցից:

ԲԺՇԿՅԱՆ Մինաս Սանուկի [15.10.1777, Տրապիզոն–26.11.1861, Վենետիկ], բանասեր, մանկավարժ, քերական, պատմաբան, ազգագրագետ, երաժշտագետ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, վարդապետ (1804): Սովորել է Վենետիկի Մխիթարյան միա-

բանության դպրոցում: 1808–ին մեկնել է Սբ Ղազարից, Կ. Պոլսում և Տրապիզոնում հիմնադրել է դպրոցներ: 1825–45–ին ապրել է Ղարասուբազարում (այժմ՝ Բելոգորսկ՝ Ղրիմում), հիմնադրել է եկեղեցի և դպրոց, ապա հաստատվել Վենետիկում:

Լույս են տեսել Բ–ի «Ճեմարան գիտելեաց» (1815, 1818), «Հմտութիւն մանկանց...» (մաս 1–4, 1818, աշխարհաբար՝ 1832, 1850), «Վարժութիւն մանկանց» (1824) դասագրքերը, «Յայտնութիւն աստուածագիտութեան, ի հրահանգ մանկանց եկեղեցւոյ» (1820) աշխատությունը: 1817–19–ին ճանապարհորդել է Սև ծովի ափերով և գրել «Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով» (1819) երկը, որտեղ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայերի, թուրքերի, հույների և այլ ժողովուրդների մասին: Բ–ի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» (1830) ուղեգրությունը Անի քաղաքի և հայերի՝ Լեհաստան գաղթերի (1062 և 1239–ին) պատմության մասին է: «Քերականութիւն ռուսերէն–հայերէն» (1828) աշխատության մեջ զուգադիր ներկայացրել է ռուս–ի և հայ–ի քերակ–ները, «Քերականութիւն հայկազեան լեզուի...» (1840) աշխատության մեջ քննել է հայ–ի ինչյունաբանության, ձևաբանության ու շարահյուսության մի շարք հարցեր: «Քերականութիւն բազմալեզու...»–ն (1844, Ռուս. կայսրության ոսկե մեծ մեդալ) ներառում է հայ–ի և արլ. այլ լեզուների քերակ–յան սկզբունքները: Գրել է նաև «Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց» (1850) կենսագր. բառարանը, որը հանրագիտարանային արժեք ունի, «Երաժշտութիւն, որ է համառօտ տեղեկութիւն երաժշտական սկզբանց եւ ելեւէջութեանց եղանակաց եւ նշանագրաց խազից» (1815, հրտ.՝ 1997) աշխատությունը, ֆրանս–ից գրաբար է թարգմանել Եզոպոսի առակները («Առակք Եզոբոսի», 1818) և Յ. Բ. Կամպեի «Նոր Ռոբինզոնը» («Պատմութիւն վարուց Ռօպէնսօնին Քռիւզօէ», 1817):

Բ–ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:



Մինաս Բժշկյանի *«Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց» (1850, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

Գրկ. **Տայեան Ղ.,** *Հայ արդի ձայնագրութիւնը եւ Մինաս Բժշկեան, «Գեղունի», 1927, էջ 60:* **Բդոյան Վ.,** *Հայ ազգագրություն. հատոր պատմություն, Ե., 1974:* **Զահուկյան Գ.,** *Գրաբարի քերականության պատմություն (XVI–XIX դդ.), Ե., 1974:*

«ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ», գիտատեղեկատվ. եռամսյա հանդես: ԵՊԲՀ հրատ.: Լույս է տեսնում 2009–ից Երևանում: Խմբագիրներ՝ Գոհար Բյալյան, Դերենիկ Դումանյան, Միքայել Նարիմանյան (2012–ից), խմբագրի տեղակալ՝ Լարիսա Ավետիսյան: Հրապարակում է տես. և կլինիկ. բժշկությանը, բարձրագույն և հետբուհ. բժշկ. կրթությանը վերաբերող գիտ. ու տեղեկատվ. նյութեր՝ հայ., ռուս. և անգլ. (ամփոփումներով):



Ֆերդինանդ Բիշոֆի *«Ուսումնասիրութիւնք լեհահայոց դպատրանագրոցն» (1890, Վնն.) գրքի նախատիտղոսաթերթը*

ԲԻՇՈՖ (Bischoff), **Պիշոֆ**, Ֆերդինանդ [24.4.1826, Օլոմոուց (Չեխիա)–6.8.1915, Գրաց (Ավստրիա)], ավստրիացի իրավաբան, իրավունքի պատմաբան: Ավստրիայի ԳԱ թղթ. անդամ: Հրատարակել է լեհահայոց 1519–ի հայկ. դատաստանագրքի քնն. բնագիրը («Հայոց հին իրավունքը Լեհաստանում», 1857, «Հայոց հին իրավունքը Լեմբերգում», 1862, երկուսն էլ՝ գերմ.), Լվովի հայկ. գաղութի 1377–1736–ի պատմության վերաբերյալ 69 փաստաթուղթ («Հրովարտակներ Լվովի հայերի պատմության», 1865), ինչպես նաև «Լեհահայոց հին իրաւունքը» հոդվածը «Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոցն» (Վնն., 1890, էջ 1–85, թարգմ.՝ Գ. Գալեմքյարյանի) ժող–ում:

Գրկ. **Дашкевич Я.,** *Армянские колонии на Украине в источниках и литературе XV–XIX веков, Е., 1962, с. 151–153.*

«ԲԻԶԱՆԴԻՈՆ», քաղ., գրական և գիտ. օրաթերթ: Լույս է տեսել 1896–1918–ին Կ. Պոլսում: Արտոնատեր՝ Բյուզանդ *Քեչյան:* Խմբագիրներ՝ Պարույր և Աշոտ Քեչյաններ, Զարմայր Կեզյուրյան, Արշակ *Ալպոյաճյան*: Ունեցել է ազգ–պահպանող. ուղղվածություն: Պաշտպանել է առևտրականների, արհեստավորության շահերը, Հայկ. հարցում ունեցել է անգլիամետ կողմնորոշում: Տպագրել է հայագիտ., բանասիր., գրական–գեղ., մանկավարժ–հոգեբ., ազգագր. նյութեր, թարգմանություններ, գրախոսություններ: Աշխատակցել են Անայիսը, Հ. Հինդլյանը, Սիպիլը, Ռ. Պերպերյանը, Հ. Ասատուրը, Զ. Գալեմքյարյանը և ուր.:



«Բիւզանդիոն», *1896–1918, Կ. Պոլիս*



«Բիւրակն», *1882-1908, Կ.Պոլիս (№ 14, 1904)*



«Բիւրակն», *1961-66, Փարիզ (№ 7, 1966)*



Անդրեյ Բիփով



Նորայր Բյուզանդացի

«ԲԻԲԼԱԿՆ», հանդես (ամսագիր, ապա՝ կիսամսյա): Լույս է տեսել 1882–1908-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Ստեփան Ութուճյան, Գալուստ Անդրեասյան, Հակոբոս Ճեճիզյան, Ենովք ***Արմեն***, Սիմոն Չեոմելեքճյան, Արտաշես ***Գալփակճյան:*** Սկզբում եղել է գիտ. և քաղ., այնուհետև՝ բանասիր., լեզվաբ. և գրական, ապա՝ «պիտանի և օգտակար գիտելիքների» հանդես: 1906–08-ին հրատարակվել է որպես առևտր. շաբաթաթերթ (1908-ի վերջերին՝ «Առեւտուր» խորագրով): Լույս է ընծայել բանասիր., ազգագր., կրոն., տնտեսագիտ., մատենագիտ., մանկավարժ. նյութեր, թարգմանություններ: «Բ.»-ին թղթակցել են Ռ. Որբերյանը, Հ. Աճառյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Սիպիլը, Հ. Մառքը, Ա. Հարությունյանը և ուր.:

«ԲԻԲԼԱԿՆ», գրական ամսաթերթ, կիսամսյա հանդես, վերջում՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1961–66-ին Փարիզում: Խմբագիր՝ Լևոն Չորմիսյան: Տպագրել է նյութեր ֆրանսահայ և Սփյուռքի այլ գաղթավայրերի մշակութ. կյանքի և հաս. կազմակերպությունների գործունեության մասին, արծարծել է հայրենադարձության և Հայրենիք–Սփյուռք հարաբերություններին առնչվող հարցեր, սփյուռքահայության ապագան կապել Հայաստանի հետ: «Հայ մշակույթի աշխարհեն» բաժնում լուրեր է հաղորդել Խորհրդ. Հայաստանի արվ-ի, գրակ-յան, մշակույթի մասին:

ԲԻՏՈՎ Անդրեյ Գեորգևիչ (ծ. 27.5.1937, Լենինգրադ), ռուս գրող: Ավարտել է Լենինգրադի լեռնային ինստ-ը (1962):

1969-ին Մոսկվայում լույս է տեսել Բ-ի «Հայաստանի դասերը» («Յոթ գարունների երկրում», կրճատումներով) էսսեների հանրահայտ ժող-ը (հայ.՝ 1983, 2003), հետագայում բազմիցս վերահրատարակվել է, տպագրվել է նաև բազմաթիվ այլ լեզուներով: Գիրքը հայ. գրերի գյուտի, հայոց լեզվի, Հայաստանի աշխարհագրության ու պատմության, հայկ. մշակույթի ու ճարտ-յան, Հայոց ցեղասպանության և Սփյուռքի, հայ մարդու մասին է: Բ. առաջին ռուս գրողն է, որ խորհրդ. տարիներին խոսել է Մեծ եղեռնի մասին ու դատապարտել այն:

Լույս են տեսել Բ-ի «Պուշկինի տունը» (1978, ԱՄՆ, 1990-ին Ֆրանսիայում ճանաչվել է տարվա լավագույն արտասահմ. գիրք), «Թռչող Մինախովը» (1990, ՌԴ Պետ. մրց.՝ 1992), «Խելառները» (1995, ՌԴ Պետ. մրց.՝ 1997) վեպերը, «Վիպակներ և պատմվածքներ» (1969) ժող-ը, «Դոկտորի հուղարկավորությունը» (1999), «Սիմետրիայի ուսուցիչը» (2008) երկերը ևն:

Երևանի պատվ. քաղաքացի (1997), ԵՊՀ պատվ. դ-ր (1997), ՀՀ «Սովսես Խորենացի» մեդալ (1999), ՌԴ և արտերկրի մի շարք մրց-ներ:

Երկ. Ապրելու մտադրություն (պատմվածքներ, խոհագրություններ, գրականագիտական հոդվածներ), Ե., 2004:

ԲԼՐՅՅԱՆ Հակոբ Արամի [1912, գ. Չամդուրա (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–1993, Ախալքալաք], խմբագիր: Ավարտել է Թբիլիսիի պետ. համալսարանը (1944): Եղել է Ախալքալաքի շրջանի կրթության բաժնի վարիչ, ***«Փարոս»*** շրջ., 1959–86-ին՝ «Սովետական Վրաստան» (այժմ՝ ***«Վրաստան»***) թերթի խմբագիր:

ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻ Նորայր (Ստեփան Գազեզյան), **Ճիզմեճյան, Հարություն Թերզյան** (4.3.1844, Կ.Պոլիս–1916, Կ. Պոլիս, 1924-ին աճյունը տեղափոխվել է Ստոկհոլմ), լեզվաբան, հայագետ, մատենագետ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Բերա թաղամասի Մխիթարյան վարժարանում, 1854-ին տեղափոխվել է Սբ Ղազար, աշակերտել Ղևոնդ ***Ալիշանին***: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, քահանա (1866-ից): 1866–68-ին դասավանդել է Վենետիկի Սուրբ-Ռափայելյան, ապա՝ Քաղկեդոնի (Գադը Քյոյ) Մխիթարյան վարժարաններում, 1867-ին միաժամանակ վարել է ***«Բազմավէպ»***-ի տեսչությունը, 1868–69-ին՝ միաբանության մատենադարանապետ: 1870-ին հրաժարվել է հոգևոր կոչումից, 1887-ին Ստոկհոլմում հիմնադրել և հրատարակել է «Քննասէր» հանդեսը (ընդհատվել է 1889-ին):

Լույս են տեսել Բ–ու «Հայկական բառաքննութիւն...» (1880, ԿՊ, Պողոս Քիրիշչյանի տպ.) աշխատությունը, «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» (1884, ԿՊ, Հակոբ Պոյաճյանի տպ.) երկլեզվյան բառարանը, «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» (1900, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.) երկը, որը Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանի լեզվաբ. և բանասիր. քննությունն է, «Նամակներ Վիեննայի Մխիթարեաններին» (1992, Բ.) նամականին, «Հայ պարտէզ» (2001), «Հաւելուած հատընտիր տաղարանիս» (երկուսն էլ՝ Ժնև, 2002) ժող–ները: 1921–ին՝ «Հանդէս ամսօրեայ»–ում, 1925–ին Վիեննայում (Մխիթարյան տպ.) առանձին գրքով տպագրվել է «Քննադատութիւն Հայբուսակի» աշխատությունը, որտեղ արժևորել է Ղ. Ալիշանի «Հայբուսակ կամ....» երկը: Բ. անդրադարձել է Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և այլ պատմիչների մատյաններին: Հեղինակ է նաև «Բառագիրք ստորին հայերէնի մատենագրութեանց ԺԱ–ԺԷ դարուց» (հրտ.՝ 2000), «Ուսումնասիրութիւններ, քնագրեր, բառարանագրութիւն» (հրտ.՝ Ժնև, 2003) հայագիտ. աշխատությունների:


Գրկ. **Վարդանյան Ա., Վարդանյան Վ.,** *Նորայր Բյուզանդացու անտիպ նամակներից, Ե., 1979:* **Մինասեան Մ.,** *Նորայր Ն. Բիւզանդացու կեանքը: Հրապարակութիւնների եւ դիւանի ցանկը, Վնտ., 1983:*

«ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ», ՀԽՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանի գիտ. ուսումնասիրությունների ժող.: Լույս է տեսել 1946–89–ին Երևանում: Հիմնադիր–խմբագիր՝ Վիկտոր *Համբարձումյան*, խմբագիր՝ Հրանտ Թովմասյան: «Աստղադիտարանի 1935 թ. աշխատությունների բյուլետեն» (1938), «Հայաստանի պետական աստղադիտարանի աշխատությունների բյուլետեն» (1938), «Երևանի աստղադիտարանի բյուլետեն» (1940–45) պարբ–ների շարունակությունն է: Տպագրել է աստղաֆիզիկայի, աստղագիտ–յան, աստղային վիճակագրության, ինչպես նաև կառավարվող տիեզ. սարքերի, տիեզերագնացության, տիեզ. ճառագայթների և ռադիոկապի վերաբերյալ գիտ. հոդվածներ՝ հայ., ռուս., անգլ. (ամփոփումներով):

ԲՅՈՒՐԱՏ Սմբատ [Տեր–Ղազարենց, 3(15).3.1862, Զեյթուն–1915, Մեծ եղեռնի զոհ], գրող, մանկավարժ, հաս., ազգ–ազատագր. պայքարի գործիչ, խմբագիր–հրատարակիչ: Վաղինակ *Բյուրատի* հայրը: Հսչական կուս–յան անդամ: Ավարտել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը (1880), սովորել Սորբոնի համալսարանում: Դասավանդել է Մարաշի, Զեյթունի, Սսի, Սամսունի, Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի և Կահիրեի (իր հիմնադրած) հայկ. դպրոցներում: 1880–ին Մարաշում հիմնադրել է «Կիլիկիո պահապան» ընկերությունը, խմբագրել *«Փիւնիկ», «Նոր օր», «Սանզումէի Էֆքեար»* պարբ–ները, հրատարակել «Գաղափար» (ԿՊ, 1909) թերթը: Թուրք. սահմանադրության հռչակումից (1908) հետո վերադարձել է Կ. Պոլիս, որտեղ 1909–ին որդու՝ Վաղինակի հետ հիմնադրել է հրատարակչատուն և գրքեր հրատարակել «Ժամանակակից մատենաշար»–ով: Թուրք. իշխանությունները նրան քանիցս բանտարկել են:

Բ. հեղինակ է հայ ժողովրդի հերոս. անցյալին նվիրված բանաստեղծությունների, պատմվածքների, դրամաների, վեպերի, պատմ. ուսումնասիրությունների [«Բուրգերէ՛ն: Բանաստեղծական երկեր» (հ. Ա, 1909), «Աւարայրի արծիւը կամ Վարդանանք» (1909, երկուսն էլ՝ ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.), «Բանտէ բանտ» (1910), «Եղլտըզէ Սասուն» (1910), «Իննսուն վեց: Արիւնի մէջէն» (հ. 1–6, 1911), «Ազատութեան համար: Զէյթունի վրէժը» (հ. 1–4, 1911), «Հայկական ընդհանուր պատմութիւն» (1912), «Եղլտըզի պօմպան» (հ. 1–2, 1912), «Որդեսպան ծնողք» (1912), «Վերջին բերդը» (1914), «Արիւնի ձորը» (1919, բոլորը՝ ԿՊ, Վ. Բյուրատի տպ.), «Տէմիր Մուշլու» (1916, Բուխարեստ, ա. տպ.), «Արիւնի ճամբէն» (1916, Կահիրե, Սոկրատ Սարաֆյանի տպ.): Արևմտահայ–ի է փոխադրել և տպագրել Բ. Այվազյանի «Անիի կործանումը (1034–1064)» պատմավեպը (1910, ԿՊ, Վ. Բյուրատի տպ.): Հրատարակվել են նաև Բ–ի «Երկերը» (2001), «Սմբատ Բյուրատի վիպաշխարհը» (2002) վեպերի, վերապատումների, քնագրերի ժող–ը:

Հանդես է եկել նաև Հայկ–Լևոն, Թաբ, Մտրակ, Լեռնորդի կեղծանուններով:



Ն. Բյուզանդացու *«Քննադատութիւն Հայբուսակի» (1925, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



Սմբատ Բյուրատ



Ս. Բյուրատի *«Աւարայրի արծիւը...» (1909, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Վաղինակ Բյուրատ



«Բերայի գիշերները: Անկուտի անցնելու արուեստը» (1914, Կ. Պոլիս, տպագրիչ՝ **Վ. Բյուրատ***)*



Վ. Բյուրատի *«Ընտիր էջեր» (2002, Ե., ԳԱԹ հրտ.) գրքի կազմը*

ԲՅՈՒՐԱՏ Վաղինակ Սմբատի [10(22).9.1886, Զեյթուն–1972, Երևան], հրատարակիչ, թարգմանիչ, մշակույթի գործիչ: Սմբատ *Բյուրատի* որդին: Սովորել է նախ Կ. Պոլսի Արամյան վարժարանում, ապա՝ Կահիրեում՝ հոր հիմնադրած կրթարանում, Ալեքսանդրիայի շվեյցար. դպրոցում և Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարանում: 1909–ին Կ. Պոլսում հոր հետ հիմնադրել է հրատարակչատուն և գրքեր հրատարակել «Ժամանակակից մատենաշար»–ով: Մինչև 1914–ը տպագրել է 32 անուն գիրք, հիմնականում՝ արևմտահայ ժամանակակից գրողների (Գ. Զոհրապ, Լ. Շանթ, Ա. Չոպանյան, Տ. Չյոկյուրյան և ուր.) ստեղծագործություններ: 1914–ին թուրք. իշխանությունը բռնագրավել է տպարանը: Բ. հրատարակչ. գործը վերսկսել է 1920–ին և մինչև 1924–ը տպագրել ևս 21 անուն գիրք: Եղել է ֆրանս. «Մարին» օրաթերթի թղթակցի անձն. թարգմանը: 1925–ին Կ. Պոլսից նա մեկնել է՝ հրատարակչ. գործը հանձնելով Սիրիայի հրատարակչ. ընկերությանը: 1936–ին Բեյրութում վերսկսել է տպագր. գործը և մինչև 1941–ը լույս ընծայել 41 անուն գիրք՝ իր հրատ–ների թիվը հասցնելով 94–ի, այդ թվում՝ Ա. Իսահակյանի «Աբու–Լալա Մահարի» պոեմը (պատկերազարդ) և Ժ. Լերմինայի «Մնետե Քրիստոյի որդին» ստվարածավալ (6 հատոր) երկը՝ իր թարգմանությամբ: 1946–ին Ա. Իսահակյանի միջնորդությամբ և պետ. հրավերով հայրենադարձել է:

Օգտվելով Կ. Պոլսի պատրիարքարանի արխիվի նյութերից՝ պատրաստել է «Պանթյուրքիզմ և քեմալական շրջան», «Իմ հուշերը արևմտահայ գրողների մասին» ուսումնասիրությունները. ձեռագրերը հանձնել է ԳԱԹ–ին, որոնք ընտրողաբար տպագրվել են («Իմ կյանքի հուշերից», 1999, «Ընտիր էջեր», 2002):

«ԲՅՈՒՐՕԿՐԱՏ», գրատուն–հրատարակչություն Երևանում: Հիմնադրվել է 2010–ին: Հիմնադիր–տնօրեն՝ Սամվել Հովհաննիսյան, տնօրեն՝ Շուշան Արզաքանյան (2012–ից): Գրախանութում վաճառվում են «Տաշեն» (Գերմանիա), «Սկիրա» (Իտալիա–Կանադա), «Ֆեյդըն» (Մեծ Բրիտանիա) և արտերկրի հայտնի այլ հրատարակչությունների լույս ընծայած գրքեր ու ալբոմներ, ՌԴ–ում հրատարակված համաշխ. և ժամանակակից հայտնի հեղինակների երկեր՝ ռուս., անգլ. և այլ լեզուներով, դաս. ու արդի հայ գրողների գործեր:

«Բ.»–ում կազմակերպվում են գրքերի, ամսագրերի և այլ հրատ–ների շնորհանդեսներ, դասախոսություններ, հանդիպումներ հեղինակների, հրատարակիչների հետ, ցուցահանդես–վաճառքներ:

Հրատարակչությունը սկզբն. շրջանում թողարկել է միայն «խոսող գրքեր» («Հայ սիրերգակներ», Հ. Թումանյանի «Հեքիաթները» ևն): Լույս է ընծայել «Ռուբեն Հախվերդյան» (կազմ.՝ Շ. Արզաքանյան) ժող–ը, Սևենկայի «Նամակներ Լուցիլիոսին բարոյական կյանքի մասին», Սուն Ցզիի «Ստրատեգիայի արվեստը» (երեքն էլ՝ 2011) և Դ. Ռիդի «Գաղտնախորհուրդ Սիոնը» (2012) գրքերը, «Բուսիդոյի օրենսգիրք»–ը (2014, 4–ն էլ ռուս–ից թարգմ.՝ Ա. Տեր–Հովհաննիսյանի):

ԲՆԱԲԱՆ, **էպիգրաֆ** (հուն.՝ epigrafe–մակագրություն), ստեղծագործության կամ նրա մի մասի սկզբում զետեղվող արձակ կամ չափածո հատված, որը, որպես կանոն, քաղված է մեկ այլ աղբյուրից և արտահայտում է տվյալ երկի հիմն. թեման, գաղափարը: Հայ գրակ–յան մեջ որպես Բ. հաճախ է օգտագործվել Եղիշեի՝ «Մահ իմացեալ անմահութիւն է...» թևավոր խոսքը:


«ԲՆԱԳԵՏ», գիտամեթոդ. և գիտահանրամատչելի հանդես: ԵՊՀ հրատ.: Լույս է տեսնում 1998–ից Երևանում: Գլխ. խմբագիրներ՝ Էդվարդ *Ղազարյան*, Ալբերտ Կիրակոսյան (2008–ից): Տպագրում է ֆիզիկական, մաթեմատիկական, քիմիական, կենսաբանությանը, էկոլոգիական, ինֆորմատիկական, ֆիզ. աշխարհագրությանը, աստղագիտ–յանը վերաբերող հոդվածներ, անդրադառնում այդ ոլորտների

գիտ. հայտնագործություններին: ՀՀ ԿԳՆ-ի միջոցներով 2000 օրինակ տրամադրվում է ՀՀ-ի և Սփյուռքի կրթ. հաստատություններին:

ԲՆԱԳԻՐ, 1. **հեղինակային**. հեղինակի իսկական ստեղծագործությունը (ի տարբերություն պատճենի), որը նա ներկայացնում է հրատարակչություն տպագրության համար: Կարող է լինել ձեռագիր, մեքենագիր կամ որևէ կրիչի վրա: Միայն այդպիսի Բ-երի համար են առաջանում հեղինակային և սեփականության իրավունքներով պայմանավորված իրավահարաբերություններ:

Հեղինակային Բ-երի թարգմանության դեպքում հեղինակի իրավունքներն առաջնային են, թարգմանչինը՝ ածանցյալ:

2. **Հրատարակչական**. տեքստային կամ գրաֆիկ. ստեղծագործություն, որը խմբագրվել, մշակվել և պատրաստվել է տպագրության: Հրատարակչ. Բ-երը անցյալում փոխանցվում էին տպարան՝ շարվածքի, պատկերազարդումների մշակման, ձևավորման, էջկապի, կազմման ենի՝ համապատասխան հանձնարարագրով՝ հրատարակչության պատասխանատու անձի ստորագրությամբ: Ներկայում այդ ամենն արվում է հրատարակչություններում, իսկ տպարաններում կատարվում են միայն տպագրությունն ու կազմարար. աշխատանքները: Բ-երը տպարան ներկայացնելու պահանջները սահմանվում են օրենքով կամ համապատասխան պայմանագրով:



«Բնագետ», *1998-ից, Երևան (№ 2, 2011)*

«ԲՈԲՈԽ», հաս., երգիծազավեշտ. երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1920–38-ին Թեհրանում: Խմբագիր՝ Հայկ *Գաբրագյան*: Իրանահայության առաջին երգիծաթերթն է, խարազանել է հայ հաս. կյանքի ստվերոտ կողմերը, արտացոլել իրանահայության առօրյան, հաս-քաղ. հոսանքների ձգտումներն ու տրամադրությունները:

1933-ից ունեցել է «Մանկական բոբոխ» էջը: 1938–49-ին հրատարակվել է որպես *«Վերածնունդ»* պարբ-ի հավելված:



«Բոբոխ», *1920–38, Թեհրան*

ԲՈԼԱՏ Ղազար (12.5.1861, Կ. Պոլիս–3.4.1927, Կահիրե), գյուղատնտես, հրատարակիչ-խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Մեսրոպյան, ապա՝ Ղալաթիայի Ամենափրկչյան վարժարաններում: Ավարտել է Ֆրանսիայի Սյոզ գավառի Մեռլինեի երկրագործ. վարժարանը (1881): 1896-ին հիմնադրել և մինչև 1899-ը խմբագրել է *«Հանրագիտարակ»* շաբաթաթերթը, 1899–1900-ին՝ *«Ծաղիկ»* հանդեսը:

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, սկզբնավորումն ու գործունեությունը հայ իրականության մեջ կապված է Ռուսաստանի մարքսիստ-հեղ. մամուլի պատմության հետ: 1902-ին Ստեփան *Շահումյանի*, Բոգդան *Կնունյանցի*, Աշոտ *Խումարյանի* և ուր. նախաձեռնությամբ Թիֆլիսում անլեգալ լույս է տեսել առաջին՝ Հայ սոցիալ-դեմոկրատների միության «Պրոլետարիատ» թերթը, որը հրատարակվել է ՌՍԴԲԿ-ի գրիֆով և «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանով: Հրատարակել է նաև թերթիկներ, որտեղ անդրադարձել են աշխատավորների դրությանը, տեղեկություններ հաղորդել Այսրկովկասի բանվոր. շարժումների, գյուղաց. հուզումների վերաբերյալ: Թերթում տպագրվել է Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը:



Ղազար Բոլպտ

1903-ի մարտին Թիֆլիսում գումարված Կովկասի սոցիալ-դեմոկրատ. կազմակերպությունների առաջին համագումարի որոշմամբ հայկ. «Պրոլետարիատ» և վրաց. «Բրձոլա» թերթերը միավորվել են և հրատարակվել «Պրոլետարիատի կռիվ» անվանումով (հայ., վրաց., 1905-ից՝ նաև ռուս.): Առաջին համարը լույս է տեսել 1903-ի ապրիլ-մայիսին, վերջինը՝ 1905-ի հոկտ-ին: Խմբագիրներ՝ Ս. Շահումյան, Իոսիֆ Ստալին, Ականի Ծուլուկիձե, Միխա Ցխակայա և ուր.: Քարոզել է Լենինյան «Իսկրա»-ի գաղափարները, կազմակերպել մարքսիստ. գրակ-յան թարգմանություն ու տպագրություն, պրոլետ. ինտերնացիոնալիզմի դիրքերից քննադատել ազգայնականությունը: Տպագրել է բանվորների և հեղ. գործիչների բազմաթիվ նամակներ ու թղթակցություններ, լու-

սաբանել գործադուլային շարժման ընթացքը, մերկացրել Ռուս–ճապոն. (1904–05) պատերազմի իմպերիալիստ. բնույթը:

Ռուս. առաջին հեղափոխության վերելքի շրջանում Թիֆլիսում լույս է տեսել հայ բոլշևիկների անդրանիկ լեգալ «Կայծ» (1906, 47 համար) եռօրյա թերթը: Խմբագիրներ՝ Ս. Շահումյան, Սուրեն ***Սպանդարյան,*** Սարգիս ***Կասյան***: Այդ թերթում է տպագրվել Շահումյանի ավելի քան 40 հոդված (հիմնականում՝ առաջնորդողներ), որտեղ հեղինակը քննադատել է ցար. կարգերը, պաշտպանել մարքսիստ. նոր տիպի կուս–յան ստեղծման անհրաժեշտությունը:

«Կայծ»–ի փակվելուց հետո 1906–ի օգոստ–ից լույս է տեսել «Նոր խօսք» բոլշևիկյան թերթը՝ որպես «Կայծ»–ի շարունակություն. լուսաբանել է Ալավերդու պղնձահանքերի գործադուլը և գյուղաց. շարժումները Արլ. Հայաստանում, նյութեր է տպագրել ցարիզմի դեմ ժող. ելույթների մասին: Ս. Սպանդարյանը «Դպրոցական հարցը և սոցիալ–դեմոկրատիան» ծավալուն հոդվածում հայ պարբ. մամուլում առաջին անգամ պարզաբանել է բոլշևիկների դիրքորոշումը դպրոցի, կրթության, մշակույթի վերաբերյալ:

Բ. հ. մ–ում առանձնապես կարևորվել են ժողովուրդների բարեկամության ամրապնդման, բուրժուաազգայնական կուս–ների հակահեղ. գործունեության մերկացման հարցերը: Այս առումով նշանակալի է 1906–ին Բաքվում հրատարակված բոլշևիկյան լեգալ «Կոչ–դէվէթ» (երկլեզու) թերթը, որը ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի հայկ. բաժանմունքի և ադրբ. «Հումմեթ» («Եռանդ») կազմակերպության պաշտոնաթերթն էր: Թերթի հրատարակմանը մասնակցել են Ս. Շահումյանը, Ա. Ձափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Լ. Կնունյանցը:

1906–ին ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության նախաձեռնությամբ տպագրվել է «Բանուորի ձայնը» թերթը (խմբագիր՝ Ս. Կասյան), բացահայտել է 1905–ի հոկտ. 17–ի ցար. մանիֆեստի հակաժող. էությունը, պաշտպանել ճնշված ազգությունների ինքնորոշման իրավունքը:

Ռուս. հեղափոխության շրջանի բոլշևիկյան վերջին լեգալ պարբ–ը՝ «Օրեր» թերթը, տպագրվել է 1907–ին Բաքվում՝ Ս. Սպանդարյանի նախաձեռնությամբ և Ս. Շահումյանի ու Ս. Կասյանի մասնակցությամբ: «Օրեր»–ի հրատ–ը զուգադիպել է Պետ. II դումայի ընտրություններին, որը և նախանշել է թերթի գործունեության հիմն. ուղին: «Օրեր»–ում Ս. Շահումյանը և Ս. Սպանդարյանը հետևողականորեն պաշտպանել են դումայի ընտրությունները բոյկոտելու բոլշևիկների դիրքորոշումը, քննադատել կադետների ու մենշևիկների հակահեղ. քաղաքականությունը:

Ռեակցիայի տարիներին (1907–11) հայ. բոլշևիկյան պարբ–ներ չեն հրատարակվել. հայ բոլշևիկներն աշխատակցել են Բաքվում, Թիֆլիսում և այլ քաղաքներում լույս տեսնող ռուս. հրատ–ներին:

1911–ին Բաքվում տպագրվել է հայ. առաջին լեգալ մարքսիստ. պարբ–ը՝ «Նոր խօսք» գրական, հաս–քաղ. հանդեսը (խմբագիր՝ Ս. Շահումյան), որի ստեղծմանը մասնակցել են Ա. Կարինյանը, Հ. Հակոբյանը, Վ. Տերյանը, Ռ. Դաշտոյանը և ուր.: «Նոր խօսք»–ը հրապարակել է հոդվածներ մարքսիզմի տեսության, միջազգ. բանվոր. շարժման, բանվորների ու գյուղացիների դրության մասին, մարքսիզմի դիրքերից լուսաբանել հայոց պատմության կարևոր դրվագները:

Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին հայ բոլշևիկները Թիֆլիսում լույս են ընծայել «Պայքար» (1915–19) գրական, հաս., քաղ. և տնտ. շաբաթաթերթը, որի խնդիրը հայ աշխատավորությանը պրոլետ. ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելն էր, պատերազմի հարցում բոլշևիկյան կուս–յան դիրքորոշումը պաշտպանելը: 1917–ի հունիսից (100–րդ համարից) թերթն անցել է մենշևիկների ձեռքը: Ի հակակշիռ մենշևիկյան «Պայքար»–ի՝ բոլշևիկները Թիֆ–

Բոլշևիկյան հայկական մամուլ





լիսում հրատարակել են «Բանւորի կռիւ» (1917–18), «Բանւոր» (1918) օրաթերթերը, Շուշիում՝ «Նեցուկ» (1917) շաբաթաթերթը, Ալեքսանդրապոլում՝ «Նոր կեանք» (1917) եռօրյա թերթը. վերջինը մարքսիստ. առաջին պարբ-ն էր Արլ. Հայաստանում:

1917-ի մայիս-օգոստ-ին Բաքվում Ս. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսել ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի «Սոցիալ-դեմոկրատ» շաբաթաթերթը, որտեղ Ս. Շահումյանը վերլուծել է ռուս. հեղափոխության ընթացքը, պաշտպանել «Ամբողջ իշխանությունը սովետներին» կարգախոսը: Թերթը լայնորեն տարածվել է Հայաստանում, հատկապես՝ բանվոր. շրջաններում:

Բաքվի կոմունայի հաղթանակից հետո 1918-ին հրատարակվել են ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի պաշտոնաթերթ «Բանւորի խօսք» շաբաթաթերթը, Բանվորների, զինվորների և նավաստիների պատգամավորների Բաքվի խորհրդի պաշտոնաթերթ «Տեղեկատու» օրաթերթը, որի գաղ. ղեկավարը եղել է Ս. Շահումյանը, աշխատակցել են Ա. Միկոյանը, Ա. Ամիրյանը, Ա. Հովսեփյանը, Ա. Կարինյանը և ուր.: Թերթի հիմն. խնդիրն Այսրկովկասի աշխատավորությանը համախմբելն էր, Բաքվի կոմունան պաշտպանելը:

1920-ին Դոնի Ռոստովում լույս է տեսել ՌԿ(բ)Կ Ռոստով-Նախիջևանի կազմակերպության հայկ. բաժանմունքի «Բանւորի կռիւ» պաշտոնաթերթը:

1902–20-ին հրատարակվել են բոլշևիկյան 46 հայկ. պարբ-ներ, բազմաթիվ հեղ. կոչեր, թռուցիկներ:

Գրկ. **Բարսեղյան Խ.**, *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն. 1900–1920, Ե., 1956:* **Նույնի**, *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Ե., 1959:*

ԲՈԼՈՐԳԻՐ, **բոլորակ գիր**, հայկ. գրատեսակ: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Ի տարբերություն *երկաթագրի* և *գրչագրի*՝ Բ. նստում է տողագծի վրա՝ իր բոլորակով: Տառերի տարրերը միմյանց միանում են անկյան տակ, որոնք նրանց տալիս են անկյունավոր ուրվագիծ, հիմն. գծերը տողագծի նկատմամբ թույլ թեքադիր են: Ավելի հավաք տառատեսակ է. տառերը միմյանց ավելի մոտ են գրվում, և էջի տարողությունը մեծանում է: Օգտագործվել է որպես առօրյա գիր: X դ-ում Բ. դարձել է գրչության, XIII դ-ի 2-րդ կեսից՝ հիմն. գրատեսակներից, XVI դ-ից՝ տպագրության գիր: Ըստ գծապատկերի տեսակի՝ միջնադարում տարբերակվել է Բ-ի 4 ենթատեսակ՝ «մարմնածիրք» (ա, ռ, ո, տ ևն), «գլխածիրք» (բ, գ, դ, զ ևն), «վերջածիրք» (ե, ժ, ծ, մ ևն) և «միջածիրք» (ի, խ, կ, վ ևն): Բ-ով պահպանված ամենահին ձեռագիրը գրվել է 981-ին: Բ-ից առաջացել են *շղագիրը* և *նոտրգիրը:*


Գրկ. **Մատթէոս եւ Ղուկաս Վանանդեցիներ**, *Ոսկեայ դռան դպրատան, Ամստերդամ, 1699:* **Տաշեան Յ.**, *Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վնն., 1898:* **Ղաֆադարյան Կ.**, *Հայկական գրի սկզբնական տեսակները, Ե., 1939:* **Հովսեփյան Գ.**, *Ինն դարու ձեռագրական մի հատկանշական եւ Ազգս Անձեւացեաց իշխան, «Էջմիածին», 1946, № 8–10:*

ԲՈԼՈՐՉՅԱՆ Թաթուլ Պողոսի [14.4.1931, գ. Գումբուրդո (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–20.2.2014, Երևան], բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1965): 1966–74-ին՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի աշխատակից, 1985–2003-ին՝ Խ. Աբովյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող:

Լույս են տեսել Բ-ի «Արևի մտերմությունը» (1965), «Կիսված գիշեր» (1971), «Արմատներ» (1980), «Արմատներ և աստղեր» (ռուս., 1985), «Երկնային ծաղիկներ» (1987), «Արմատի կանչը» (1997), «Ծարավ ջրեր» (2000), «Երկինքն աստղի ծաղկման» (2006), «Լուսնթագ» (2007), «Եռաձայն» (2008), «Ուխտավորը» (2011) բանաստեղծությունների ժող-ները: Գրել է նաև մանուկների համար («Գույների խաղը», 1976, «Ստի պոչը», 1995, «Ոգու ծաղիկներ», 2003, ժող-ներ):

Գրկ. **Սարիբեկյան Կ.**, *Այս լռաեղեն հեքիաթը, Ե., 2004:*


Բոլորգիր




Չեռագիր նմուշ (1338-ի Աստվածաշունչ, Մատենադարան, ձեռ. № 2627)



Տպագիր նմուշ (1800, Սաղմոսարան, տպագրիչ՝ Մատթեոս Դպիր)



Թաթուլ Բոլորչյանի *«Ոգու ծաղիկներ» (2003, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



«Բովանդակութիւն սրբոյն Թովմայի»
(Կարոլոս Րենարտոս Պիլլվարտ, հ. 3, 1788, Տրիեստ) գրքի փիտղոսաթերթը



«Բորգես» *փառատեսակով շարված էջ («Հայկական խորհրդային հանրագիտարան», հ. 1, պր. 1, 1935)*



Գուրգեն Բորյան

«ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ», աստվածաբան-վարդապետ Կարոլոս Րենարտոս Պիլլվարտի կրոնադավանաբան. եռահատոր աշխատությունը, եկեղեց. պատմության դասագիրք Թովմայան դպրոցների համար: 2-րդ հատորը հայ. չի տպագրվել: Լատ-ից թարգմանել են Մխիթար Սեբաստացու աշակերտները: 1-ին և 3-րդ հատորները տպագրվել են 1788-ին Տրիեստում՝ Մխիթարյանների տպարանում: 1-ին հատորի տիտղթ-ին՝ «Բովանդակութիւն սրբոյն Թովմայի: Յերիւրեալ ըստ օրինի արդի դպրոցաց...» [464 էջ (՞), 8⁰, 15 x 7,6 սմ], 3-րդ հատորի տիտղթ-ին՝ նույնը (708 էջ, 8⁰, 13,7 x 7,5 սմ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, հրատ-յան տեքստի բաղկացուցիչ մաս, գրքում ներառված ստեղծագործությունների, նրանց ներքին բաժանումների՝ գլուխների, վերնագրերի ևն *ցանկը*՝ էջահամարներով: Տեղադրվում է հրատ-յան սկզբում կամ վերջում:

«ԲՈՐԳԵՍ» (գերմ.՝ Borgis, < իտալ. borghese–քաղաքային), 9 *կէփ*-ի (3,375 մմ) լատինատառ տպատառ՝ սովորական, քաղաքաց. գրքերի (ի տարբերություն եկեղեցականի) տպագրության համար: «Բ.» գործածվել է 1498-ից Վենետիկում՝ առավելապես թերթերի, հետագայում՝ նաև գրքերի ու ամսագրերի տեքստեր շարելու համար:

1933-ին Միսակ *Էփրիկյանի* ղեկավարությամբ ստեղծվել է հայկ. «Բ.»՝ *«Հայկական խորհրդային հանրագիտարանը»* շարելու համար (1-ին պրակի ազդօրինակը լույս է տեսել 1935-ին):

ԲՈՐՅԱՆ Բագրատ Հարությունի [19.9.1882, գ. Ներքին Ճամբարակ (այժմ՝ ՀՀ Ճամբարակ ք-ի շրջագծում)–1938, անհատի պաշտամունքի զոհ], կուս., պետ. գործիչ, պատմաբան: ՌՍԴԲԿ անդամ՝ 1903-ից: Ավարտել է (էքստեռն) Թիֆլիսի առևտր. դասընթացները (1913), Երևանի սեմինարիան (1914), Մոսկվայի համալսարանը (1922): Թղթակցել է «Պրավդա» (ռուս.) պարբ-ին, օգնել է «Մեր խօսքը» (1914) բոլշևիկյան օրաթերթի հրատարակմանը և ընդհատակյա տպարանների ստեղծմանը, 1913–14-ին աշխատակցել է «Խօսք» (Երևան) թերթին:

Բ. գրել է «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» (ռուս., հ. 1–2, 1928–29) աշխատությունը, որտեղ 1921-ի Մոսկվայի և Կարսի պայմանագրերն անվանել է «վատթարագույն» ու «ամենաանամոթ» հաշտությունները Հայաստանի համար:

ԲՈՐՅԱՆ Գուրգեն Միքայելի (20.6.1915, Շուշի–15.4.1971, Երևան), բանաստեղծ, դրամատուրգ, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1971): 1938–41-ին՝ *«Գրական թերթ»*-ի, 1958–62-ին՝ *«Լիտերատուրնայա Արմենիա»* (ռուս.) ամսագրի գլխ. խմբագիր, 1968–71-ին՝ ՀԽՍՀ մշակույթի փոխնախարար: Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) տարիներին եղել է զինվոր. թղթակից:

Լույս են տեսել Բ-ի «Ճանապարհ դեպի ծով» (1940), «Հրացոլք» (1945), «Երևանյան լուսաբաց» (1947), «Հատընտիր» (1953), «Բանաստեղծություններ» (1957), «Ընտիր երկեր» (1966), «Նույն հարկի տակ (դրամաներ)» (1972) ժող-ները: Գրել է պիեսներ, որոնք բեմադրվել են հայկ. թատրոններում: «Նույն հարկի տակ» (1947) պիեսի մոտիվներով 1968-ին նկարահանվել է «Սարոյան եղբայրներ» (ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970) կինոնկարը: Ստեղծագործել է նաև մանուկների համար: Թարգմանել է Մ. Լերմոնտովի, Վ. Մայակովսկու, Վ. Զվյագինցևայի և ուր. ստեղծագործություններից:

ԲՐԱԲԻՈՆ ՆՈՏԱՐ ՊԱԼԱՏԵՑԻ, Բրաբիոն գրագրուհի (1750, Կ. Պոլիս–1835, Կ. Պոլիս), գրչուհի, մանկավարժ: *Մատթեոս Դպիր Պալատեցու* քույրը: Գործել է Պալատի Սբ Հրեշտակապետ եկեղեցու դպրատանը (դպրոցում): Բ. Ն. Պ-ուց պահպանվել է 17 ձեռագիր. 8-ը պահվում են Մատենադարանում, մնացածը՝ տարբեր երկրներում: Բ. Ն. Պ. առաջին հայ կինն է, որ զբաղվել է գրչությամբ՝ այն զուգակցելով մանկավարժ. աշխատանքին:


Գրկ. Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. 1, ԿՊ, 1910:

ԲՐԱՅԼԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Սան Պաուլոյում տարբեր տարիների տպագրվել են շուրջ 15 անուն հայ. պարբ–ներ, որոնք, սակայն, կարճատև կյանք են ունեցել: Առաջինը Հնչակյան ուսանող. միության պաշտոնաթերթ «Կայծ» ազգ., գրական, գեղ. ամսագիրն է: Լույս է տեսել 1933–37–ին [խմբագիր՝ Ե. Կարմրակ (Երվանդ Մխիթարյան)]:

Հետագա տարիներին հրատարակվել են «Վերելք» (1946–47), «Հայաստանի ձայն» (1947–50), «Հայաստան» (1965–67), «Սիփան» (1983–87), «Նոր Անի», «Տրիբունա Արմենիա» (պորտուգալ.) պարբ–ները: Ներկայում լույս են տեսնում «Իրիս» («Ծիածան», Սան Պաուլո), «Մասիս» (Ռիո դե Ժանեյրո, հրատարակիչ՝ Արա Նևրուզ), «Լրատու» (հայ., պորտուգալ.) պարբ–ները: 1995–ից վերահրատարակվում է բրազիլահայ թեմի «Սիփան» (Սան Պաուլո) երկամսյա պաշտոնաթերթը (հայ., պորտուգալ., խմբագիր՝ Տաթև արք. Ղարիբյան):

Բրազիլ. պարբ–ներում հաճախ տպագրվում են լրագրող Մաքս Պարոնյանի նյութերը, իսկ քաղ. բնույթի հրապարակումներով հայտնի է Ֆեռնանդո Գասպարյանը:

Գրկ. **Մխիթարեան Գ.**, *Պրազիլահայ գաղութը սկիզբէն մինչեւ մեր օրերը, Փ., 1938:* **Վարդանեան Ե.**, *Պրազիլիոյ հայ գաղութը, Բուենոս Այրես, 1948:*



Բրայլի գրառերը

ԲՐԱՅԼԻ ԳՐԱՏԻՊ, ուռուցիկ–կետավոր տառատեսակ՝ կույրերին գրել ու կարդալ սովորեցնելու համար: Ստեղծել է ֆրանսիացի մանկավարժ Լուի Բրայլը (1809–1852) 1829–ին: Հիմքում 6 կետերի համակցությունն է՝ ըստ լատ. այբուբենի: Բ. գ–ով արտահայտվում են նաև թվանշանները, կետադր., մաթ., քիմ., նոտայի նշանները: Բրայլի սկզբունքով որոշ նշանների ավելացմամբ և նոր կետերի համակցություններով՝ Բ. գ. հարմարեցվել է նաև հայ. այբուբենին, որն առաջինը կիրառել է կոմպոզիտոր Ն. Տիգրանյանը՝ Ալեքսանդրապոլում իր հիմնադրած կույրերի դպրոցում (1921):

Տպագրությունն իրականացվում է թեթևակի խոնավ թղթի վրա՝ տեքստի աններկ դրոշմատպմամբ:



Վալերի Բրյուսով

ԲՐԵՆՆԵՐ (Brenner) Հենրիկ [1669, Վեստ Բոտնի (Շվեդիա)–1732, Ստոկհոլմ], շվեդ հայագետ: Բ. առաջինն է ամբողջությամբ լատ. թարգմանել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ը՝ ծանոթագրություններով (հրտ.՝ 1723, Ստոկհոլմ, «Moses Khorenaci Epitonie commentariorum Moysis Armeni de origine et regibus Armenorum et Pathorum item serios observationibus»):

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.**, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալեանի, Վնտ., 1895:*

ԲՐՅՈՒՍՈՎ Վալերի Յակովլևիչ [1(13).12.1873, Մոսկվա–9.10.1924, Մոսկվա], ռուս գրող, գրականագետ, թարգմանիչ: Հայաստանի ժող. բանաստեղծ (1923): Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1899): Լույս է տեսել Բ–ի «Ռուս սիմվոլիստներ» (1894–95) վերնագրով չափածո ժող–ը:



«Հայ պոեզիան...» (ռուս., 1916, առաջաբ., խմբ. և ծնթգր.՝ **Վ. Բրյուսովի***) անթոլոգիայի փիտղոսաթերթը (նկարիչ՝ Մ. Սարյան, 1915)*

Բ. ղեկավարել է Մոսկվայի գրապալատը, ՌԽՖՍՀ լուսժողկոմատի գիտ. գրադարանների, ապա՝ նաև գրական բաժինը, մասնակցել «Սովետական մեծ հանրագիտարանի» առաջին հրատ–յան լույսընծայմանը: 1921–ին Բ. հիմնադրել է Գրական–գեղ. բարձրագույն ինստ–ը, որը 1923–ին կոչվել է նրա անունով:

1915–ի հունիսին Բ. Մոսկվայի հայկ. կոմիտեի առաջարկությամբ նախաձեռնել է «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիայի համար հայ բանաստեղծների գործերի թարգմանության և խմբագրման աշխատանքը (լույս է տեսել 1916–ին): Անթոլոգիայի համար գրել է «Հայ պոեզիան և նրա միասնությունը դարերի ընթացքում» ընդարձակ պատմագր. ակնարկը: Հեղինակ է նաև «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը» աշխատության:

1916-ի հունվ-ին Բ. եկել է Այսրկովկաս. Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և Էջմիածնում զեկուցումներ է կարդացել հայոց պատմության ու պոեզիայի մասին, ներկայացրել հայ բանաստեղծների գործերի իր թարգմանություններից:

Բ. թարգմանել է հայկ. պոեզիայի 170-ից ավելի նմուշներ. ռուս ընթերցողին առաջին անգամ ծանոթացրել է հայ ժող., հին և միջնադարյան բանաստեղծությանը, ժամանակակից հայ բանաստեղծների գործերին: Բ. մտադիր էր ռուս ընթերցողին ներկայացնել նաև հայ պատմիչների ու գրողների ստեղծագործությունների առավել բնորոշ և ուշագրավ հատվածները, բայց այդ մտահղացումը մնացել է անկատար: Մահից 1 տարի առաջ նա թարգմանել է Ե. Չարենցի «Ամենապոեմը»: Հայաստանն ու նրա պատմ. անցյալը Բ-ին ոգեշնչել են ստեղծելու բանաստեղծությունների շարք («Հայերին», «Հայաստանին», «Արարատին», «Արարատը Երևանից», «Տիգրան Մեծ» ևն):




Բրոշյուր

Լույս են տեսել Բ-ի «Վերջին երազանքները» (1920), «Այդպիսի օրերին» (1921), «Ակնթարթ» (1922), «Հեռաստաններ» (1922), «Շտապիր» (1924) բանաստեղծությունների ժող-ները: Հայ. հրատարակվել են Բ-ի «Բանաստեղծություններ» (կազմ., ծնթգր. և խմբ.՝ Ս. Տարոնցու, 1957, Ե.) ժող-ը, «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» (1967, Ե.) աշխատությունը:

Բ-ի անունով Երևանում կոչվել են դպրոց, փողոց, Երևանի ռուսաց և օտար լեզուների պետ. մանկավարժ. ինստ-ը (այժմ՝ ԵՊԼՀ):

Երկ. Поэзия Армении с древнейших времен до наших дней, под редакцией, вступительным очерком и примечаниями Валерия Брюсова, М., 1916 (2 изд., Е., 1973); Летопись исторических судеб армянского народа, Е., 1940; Поэзия Армении в переводах и оценке В. Я. Брюсова, Е., 1963; Армения в поэзии Брюсова, Е., 1966.


Գրկ. **Տերտերյան Ա.,** *Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան, Ե., 1944:* **Գրիգորյան Կ.,** *Վալերի Բրյուսովը և հայ պոեզիան, Ե., 1959:* **Մարգարյան Ա.,** *Վալերի Բրյուսով, Ե., 1963: Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին (կազմ.՝ Գ. Հովհան), Ե., 1975:*



Բրոշյուրավորում

ԲՐՈՇՅՈՒՐ (ֆրանս.՝ brochure-կարել), **գրքույկ,** 5 էջից ոչ պակաս և 48 էջից ոչ ավելի ծավալով, փափուկ կազմով տեքստային ոչ պարբ. հրատ.: Բ-ի թերթերն իրար միացվում են կարով, ամրակով, պարուրաձև լարով ևն: Հրատարակչ. առումով՝ Բ. են բոլոր այն հրատ-ները, որոնք ավարտվում են ***բրոշյուրավորման*** գործողությամբ: Առաջին Բ-ները երևան են եկել Ռեֆորմացիայի դարաշրջանում, լայնորեն տարածվել 1789-ի ֆրանս. բուրժ. հեղափոխության ժամանակ՝ որպես քարոզչության միջոց:

Ներկայում ՀՀ-ում տարեկան լույս է տեսնում շուրջ 400 անուն Բ., որոնք գիտահանրամատչելի գրքույկներ են՝ առանց թեմատիկ սահմանափակման:



Մարի Ֆելիսիտե Բրոսսե

ԲՐՈՇՅՈՒՐԱՎՈՐՈՒՄ, հրատ-յան տպված էջերն ու կազմերը միավորելու, շապկելու կամ կազմելու գործողությունների ամբողջություն: Կախված գրքի հրատարակչ. կառուցվածքից (շապկով կամ կազմակողով), ծավալից, արտաքին ձևավորման պահանջներից՝ Բ-ի տեխնոլոգ. գործողությունների (մամուլների ծալում, առանձին տպված ներդիրների և կողաթերթերի տեղադրում, բլոկի համալրում, շապկում, դրվագում ևն) քանակն ու կազմությունը տարբեր են: Շապկով հրատ-ների կառուցվածքը համեմատաբար պարզ է: ***Գրքի բլոկի*** Բ. ներառում է նաև ***պահպանակների*** սոսնձումը բլոկի առաջին և վերջին տետրերին, ծածկափակումը, կռնակի մամլումը, կլորացումը կամ մակաշերտումը, ամրացնող տարրերի սոսնձումը ևն:

ԲՐՈՍՍԵ (Brosset) Մարի Ֆելիսիտե [5.2.1802, Փարիզ–3.9.1880 (Շաթելռո, Ֆրանսիա)], ֆրանսիացի արևելագետ (հայագետ, վրացագետ), պատմաբան, աղբյուրագետ: Ֆրանսիայի ԳԱ ակադ. (1838-ից): 1837-ին հրավիրվել է Ս. Պետերբուրգ: Ասիական թանգարանում աշխատելուն զուգընթաց՝ 1840-ական թթ-ին Ս. Պետերբուրգի համալսարանում դասախոսություններ է կարդացել Հայաստանի և Վրաստանի պատմության վերաբերյալ: 1845-ին այցելել է Վենետիկի

Մխիթարյաններին, ուսումնասիրել է հայկ. ձեռագրեր, ծանոթացել Գ. Այվազովսկու, Ղ. Ալիշանի և ուր. հետ: 1847–48-ին ճանապարհորդել է Հայաստանում և Վրաստանում, հավաքել ու հրատարակել է վիմագիր և վավերագիր նյութեր («Տեղեկագիր Հայաստանում և Վրաստանում կատարած հնագիտական ճանապարհորդության», 1851):

Բ. ֆրանս. թարգմանել և ընդարձակ ծանոթագրություններով հրատարակել է հայ պատմագիրների (Թովմա Արծրունի, Մխիթար Այրիվանեցի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Սարկավագ, Աբրահամ Կրետացի և ուր.) երկերը («Ժողովածու հայ պատմիչների», հ. 1, 2, 1874, 1876), Ս. Պետերբուրգում տպագրել է «Անիի ավերակները» աշխատությունը (հ. 1–2, 1860–61) ևն:

Բ-ի գիտ. գործունեությունը մեծապես նպաստել է Հայաստանի և Վրաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրությանը և աղբյուրագիտ. հիմքի ընդլայնմանը:

Գրկ. Շրումպֆ Գ. Ա., *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* Դոլուխանյան Ա., *Սարի Ֆելիխիւէ Բրոսսեն հայագէտ, Ե., 2002:* *Ակադեմիկոս Սարի Բրոսսե, կազմ. և խմբ.՝ Պ. Մուրադյանի, Ե., 2002:* Mapp H., *К столетию со дня рождения М. Броссе, сб. "Записки Восточного отделения русского археологического общества", 1902, т. 14, вып. 4, СПб, 1902;* Brosset L., *Bibliographie Analytique des ouvrages de M. F. Brosset, St-Pb., 1887.*



Գեորգ Բրուտյան

ԲՐՈՒՏՅԱՆ Գեորգ Աբելի [ծ. 24.3.1926, գ. Սևքար (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], փիլիսոփա: Փիլ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1963), ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1971-ից): Հայոց փիլ. ակադ-ի հիմնադիր-նախագահ (1987): Ավարտել է ԵՊԻ (1947) և ԵՊՀ (1950): 1970–86-ին՝ ԵՊՀ դիալեկտիկ. մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնի հիմնադիր-վարիչ, 1977-ից՝ ՀՀ ԳԱԱ փիլ-յան և բանասիրության բաժանմունքի ակադ. քարտուղար, ԽՍՀՄ փիլ. ընկերության հայկ. բաժանմունքի նախագահ (1982-ից՝ բաժանմունքի ***«Տարեգրքի»*** գլխ. խմբագիր), 1994–2002-ին՝ փոխնախագահ, 2002-ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական, 1997–2001-ին՝ «Հայ միտք» (անգլ.), 2003-ից՝ Փիլ. միջազգ. ակադ-ի «Նորություններ և հայացք» (անգլ.) հանդեսների հիմնադիր-գլխ. խմբագիր: Բ. զգալի ավանդ ունի հայ փիլ. և տրամաբան. մտքի պատմության, մասնավորապես՝ ***Դավիթ Անհաղթի*** տես. ժառանգության հետազոտման գործում: Բ-ի աշխատությունները հրատարակվել են ավելի քան 20 երկրում:

Լույս են տեսել Բ-ի «Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածություն» (1968), «Փիլիսոփայություն և լեզու» (1972), «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին» (1980), «Իմաստասիրական երկխոսություններ» (հ. 1–2, 1985–86), «Հայագիտություն և մետահայագիտություն» (2004) աշխատությունները:

Փաստարկման միջազգ. ինստ-ի (1991, Երևան, 2004-ից՝ Ամստերդամ), Փիլ. միջազգ. ակադ-ի (2001) հիմնադիր-նախագահ, մի շարք միջազգ. ակադ-ների խմբագր. խորհուրդների և ընկերակցությունների անդամ:

ՀՀ ԱԺ նախագահի շնորհակալագիր, ԿԳՆ և ԵՊՀ ոսկե մեդալներ (երեքն էլ՝ 2006):

Երկ. Очерки по анализу философского знания, Е., 1979; Трансформационная логика, Е., 1983; Очерки теории аргументации, Е., 1992; Logic, Language and Argumentation in Projection of Philosophical Knowledge, Lisbon, 1998.



Գ. Բրուտյանի *«Հայագիտություն և մետահայագիտություն» (2004, Ե., «Գիտություն») գրքի կազմը*

ԲՐՈՒՏՅԱՆ Գևորգ Արշակի [14(26).10.1888, Ալեքսանդրապոլ–26.12.1952, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Սովորել է Թիֆլիսի գեղարվ-ի ուսումնարանում (1908–10): 1921–37-ին եղել է «Բանվոր» թերթի նկարիչ-փորագրիչը, միաժամանակ աշխատակցել «Խորհրդային Հայաստան», «Խորհրդային արվեստ», «Կարմիր ծիլեր», «Երկաթուղային» և այլ պարբ-ների: 1937-ին տեղափոխվել է Երևան, աշխատակցել «Հոկտեմբերիկ» մանկ. ամսագրին: Պատկերազարդել է մանկ. գրքեր [Ա. Տիտանյանի «Մանկական պատմվածքներ» (1938), Մ. Խերանյանի «Ծտի գուլպաները» (1939), Աղավնու «Ֆրունզեի տղան-Թիմուրը» (1943), Ս. Ճուղուրյանի «Այբբենարան» (1950) ևն]: Ստեղծել է քաղ. պլակատներ, լինոփորագրություններ («Հարազատ հողում», 1947), գծանկարներ («Մայիսյան ապստամբությունը Ալեքսանդրա-



Գևորգ Բրուտյան. *Աղավնիի «Ֆրունզեի տղան-Թիմուրը» (1943, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Ղազարոս Բուդաղյան




«Բուժանք», *1926–30, Փարիզ (№ 2, 1926)*

Բուլղարիայի հայկական տպագրություն



Մ. Զգոնյանի «Արտասուաթոր» (Վառնա, 1901, «Վզաիմնոսք») գրքի փիփղոսաթերթը



Հ. Արամյանի «Սեւ հարսանիք» (Ռուսչուկ, 1904, Բ. Մալջիևի տպ.) գրքի փիփղոսաթերթը

պոլում», 1949, ևն)։ 1921-ին՝ Արմկավոռոստայի (1972-ից՝ ***Արմենպրես***) գեղ. բաժնի վարիչ։ Երգիծանկարները տպագրվել են «Կարմիր նաբաթ» (1920–21, Ալեքսանդրապոլ) շաբաթաթերթում։

ԲՈՒԴԱՂՅԱՆ (Բուդաղով) Ղազարոս Զաքարի (1812, Աստրախան–30.12.1878, Ս. Պետերբուրգ), արևելագետ, բառարանագիր։ Ավարտել է Կազանի համալսարանը (1840)։ Ս. Պետերբուրգի համալսարանում դասավանդել է թաթար.։ Հեղինակ է «Համեմատական բառարան թուրք-թաթարերեն բարբառների՝ ռուսերեն թարգմանությամբ» (1868–71, վերջին հրտ.՝ 1960) արժեքավոր աշխատության։ Կազմել է նաև դասագրքեր և ուս. ձեռնարկներ։

Երկ. Турецко-татарский букварь, Тб., 1844; Практическое руководство к изучению татарского наречия, СПб, 1857.

ԲՈՒԴԱՂՈՎ, Ռուբեն Ալեքսանդրի [23.8(5.9).1910, ք. Դոնի Ռոստով– 8.7.2001, Մոսկվա], լեզվաբան։ ԽՍՀՄ ԳԱ (1970, 1991-ից՝ ՌԴԱ) թղթ. անդամ։ Ավարտել է Ռոստովի մանկավարժ. ինստ-ը (1933)։

Լույս են տեսել Բ-ի «Ֆրանսիական քաղաքական տերմինաբանության զարգացումը» (1940), «Ռումիներենի շարահյուսության ուրվագծեր» (1958), «Ռոմանական գրական լեզուների ուսումնասիրման պրոբլեմներ» (1961), «Լեզվի գիտության ներածություն» (2-րդ հրտ.՝ 1965, օգտագործվել է որպես բուհ. ձեռնարկ), «Բառերի պատմությունը հասարակության պատմության մեջ» (1971), «Մարդը և նրա լեզուն» (6-րդ հրտ.՝ 1976), «19–20-րդ դդ. լեզվաբանների դիմանկարներ» (1988), «Լեզուն և խոսքը մարդու մտահորիզոնում» (2000, բոլորը՝ ռուս.) աշխատությունները։

«ԲՈՒԺԱԿ», բժշկ. և առողջապահ. ամսօրյա հանդես։ Լույս է տեսել 1917–19-ին Փրովիդենսում և Բոստոնում։ Տնօրեն-խմբագիր՝ Արշակ Տեր-Մարկոսյան։ Տպագրել է հոդվածներ մարդու կազմախոսության և բնախոսության մասին, շարադրել տարբեր հիվանդությունների ծագումն ու զարգացման ընթացքը։ «Բ.» առաջարկել է Միացյալ Նահանգներում ստեղծել հայ բժիշկների միություն։

«ԲՈՒԺԱՆՔ», առողջապահ. ամսագիր։ Լույս է տեսել 1926–30-ին Փարիզում։ Տպագրել է առողջապահ. և գիտաբժշկ. հոդվածներ, նյութեր՝ հայ բժշկության պատմության, անվանի բժիշկների, սպորտի, դպրոցի, առողջապահ. հարցերի, բուժման ժող. եղանակների վերաբերյալ։ Պարբերաբար լուրեր է տպագրել Խորհրդ. Հայաստանում առողջապահ. գործի մասին։

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայկ. առաջին տպարանը հիմնադրվել է Վառնայում, որտեղ 1884-ին լույս է տեսել «Հույս» (“Huis”) քաղ., ազգ., կրոն. և ուս. լատինատառ հայ-ով անդրանիկ պարբ-ը [խմբագիրներ՝ Անդրանիկ Յոհաննեսկու (Հովհաննիսյան) և Բ. Ատրունի]։ Վառնայում XIX դ-ի վերջին–XX դ-ի սկզբին հայ. գրքեր են տպագրվել Գնջո Նիկոլովի, «Իրավունքի», «Շարժումի», «Վզաիմնոստ», Օննիկ Բարսեղյանի («Արևելյան»), Դ. Թոդորով և ընկ., Մ. Գալփաքճյանի, «Ոսկեդար» և այլ տպարաններում։ Հայ. գրքեր տպագրվել են նաև Ռուսչուկում 1892-ից՝ «Դանուբ», Հրատարակչական ընկերության, Մ. Թյութունճևի, «Նաղեժդա», Գառնիկ Մազմանյանի, , Բ. Մալջիևի, «Վերածնություն» և այլ տպարաններում, Պլովդիվում 1897-ից՝ «Եդինստվո», «Առևտրական» տպարաններում, Սոֆիայում 1904-ից՝ «Բալկանյան մամուլի», Գ. Չինգովի, «Հայաստանի», Պ. Գլուշկովի տպարաններում։

Ցայսօր Բուլղարիայում հրատարակվել են ավելի քան 80 անուն հայկ. պարբ-ներ։ Անդրանիկ պարբ-ները կարճատև կյանք են ունեցել, հրատարակվել են մասամբ նաև հայատառ թուրք-ով կամ ֆրանս-ով։ Պարբ-ների զգալի մասն ունեցել է քաղ. ուղղվածություն, եղել այս կամ այն կուս-յան պաշտոնաթերթը կամ նրա դավանած սկզբունքների արտահայտիչը. արմենականների գաղափարախոսությունն արտահայտել է *«Դանուբ»*, դաշնակցականներինը՝

«Շարժում» (1898–1907, Վառնա), «Ռազմիկ» (1905–09, Պլովդիվ), *«Հայաստան»,* ինչպես նաև նրանց՝ «Վերածնութիւն» (1903–04), «Ապագայ» (1905, 1905–07-ին՝ Փարիզում), *«Պալքանյան մամուլ»* (1920–21), ռամկավարներինը՝ *«Լուսարձակ», «Փարոս»,* համայնավարներինը՝ *«Կարմիր լուրեր»* պարբ-ները: Հրատարակվել են նաև մանկավարժ. *«Ռահվիրա»,* դպրոց. *«Ուսումնարան»* հանդեսները, հաս-քաղ. *«Իրաւունք»* շաբաթաթերթերը, գրական, ուս., մանկ., երգիծ. այլ թերթեր ու ամսագրեր, որոնց մի մասի հրատ-ը դադարել է հիմնականում 1930-ական թթ-ին: Բուլղարիայում համայնավար. վարչակարգի հաստատումից (1944) հետո հայկ. բոլոր թերթերի հրատարակումն արգելվել է:

Ներկայում Բուլղարիայում լույս են տեսնում «Երևան» կրթա-մշակութ. միության *«Երեւան»* (Սոֆիա, 1944-ից), Համազգայինի *«Վահան»* (Պլովդիվ, 1991-ից) շաբաթաթերթերը, ՀԲԸՄ-ի *«Բարեգործականի ձայն»* (Պլովդիվ, 2004-ից) ամսաթերթը: 1993–2008-ին Բուրգասում լույս է ընծայվել *«Հայեր»* երկշաբաթաթերթը:

Գրկ. Գասապյան Ն., *Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլղարիայէ, «ՀԱ», 1941–47:* Նույնի, *Մատենագիտութիւն հայերէն ու հայատառ տպագրեալ գրքերէն եւ պօէմներ հրատարակուած Պոլկարիոյ մէջ (1885–1944–1989), 2010 (համահեղ.):* Ալպոյաճեան Ա., *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1, 2, Կահիրէ, 1941, 1955:* Աբրահամյան Ա., *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Ե., 1964:* Ճինգոզյան Կ., *Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից, XIX դար, Ե., 1966:* Գասպարյան Զ., *Անվանի բուլղարահայ հասարակական-քաղաքական գործիչներ, Ե., 1986:* Ղարիբջանյան Գ., *Անվանի հայ-բուլղարական բարեկամության պատմության, Ե., 1989:*

«ԲՈՒԿԻՆԻՍՏ», «Գրքերի աշխարհ», գրահրատարակչատուն-գրախանութ: Ստեղծվել է 1997-ին Երևանում՝ խորհրդ. շրջանում Երևանի գլխ. մասնագիտացված բուկինիստ. գրախանութի (գործել է 1937-ից) հիման վրա: Հիմնադիր-տնօրենն՝ Խաչատուր Վարդանյան: «Բ.» գրքի առևտրի առաջատարներից է ՀՀ-ում: «Բ.»-ին է պատկանում ՀՀ-ում ամենամեծ համացանց-գրախանութը: Օտար լեզուներով գրքի ամենախոշոր ներմուծողն է (ՌԴ-ից, Մեծ Բրիտանիայից և այլ երկրներից) ՀՀ-ում: Զբաղվում է նաև հրատարակչ. գործունեությամբ՝ լույս է ընծայել ավելի քան 60 անուն գիրք:

ԱՊՀ երկրների Գիրք տարածողների ընկերակցության անդամ (2004-ից):



«Բուկինիստ» *գրախանութում (Երևան)*

ԲՈՒԿԼԵՏ (անգլ.՝ booklet–բրոշյուր), 1 թերթի 2 երեսին տպագրված, սովորաբար 2 կամ ավելի ծալքերով, առանց կարի հրատ.: Բ-ի ձևով, որպես կանոն, թողարկվում են ուղեցույցներ, տեղեկատուներ, գովազդի թերթիկներ, ինչպես նաև մանկ. հրատ-ներ:



Բուկլետ. *«Հայկական հանրագիտարան. հրատարակչության»*

ԲՈՒՆԻԱԹ ՍԵԲԱՍՏԱՑԻ, XVII դ-ի բժիշկ: Ծնվել է Սեբաստիայում: Ապրել ու ստեղծագործել է հիմնականում Սամսուն քաղաքում: 1626-ին Մարզվանում խմբագրել է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատությունը՝ արժեքավոր լրացումներով: Օգտվելով հայ և արաբ բժիշկների գործերից՝ 1630-ին գրել է «Գիրք բժշկութեան տոմարի» աշխատությունը՝ բաղկացած 50 գլխից. նկարագրել է ստամոքսի, աղիների, լյարդի, երիկամների, սեռ. օրգանների, աչքի, ականջի, քթի հիվանդությունների, թուլամտության, լուծանքի և թերլուծանքի, ջերմերի, ուռուցքների ախտանշանագիտությունը, բուժման եղանակները, հիվանդի խնամքն ու սննդակարգը: Գրքի մի քանի գլուխներ վերաբերում են դեղամիջոցներին և նրանց բաղադրությանը: Պահպանվել են աշխատության 4 ձեռագիր ընդօրինակություններ [Մատենադարան (ձեռ. № 1023), Վրաստանի ԳԱ ձեռագրերի ինստ. (ձեռ. № 52), Վենետիկի (ձեռ. № 1285) և Վիեննայի (ձեռ. № 830) Մխիթարյան մատենադարանները]:



Բունիաթ Սեբաստացու *«Գիրք բժշկութեան» (1987, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

«Գիրք բժշկութեան (ԺԷ դար)» գիրքն ամբողջությամբ տպագրվել է 1987-ին՝ Դ. Կարապետյանի աշխատասիրությամբ:

Գրկ. Оганесян Л., *История медицины в Армении, т. 3, Е., 1946, с. 117–123.*



«Բուրաստան մանկանց», *1882–93, Կ. Պոլիս (հ. Ա, 1882)*



«Բուրաստան Սուրբ Սահակեան», *1851–53, Կ. Պոլիս (№ 12, 1851)*

ԲՈՒՔԻԿԱՆՅԱՆ Հրաչ Պողոսի [15.12.1914, ք. Խարբերդ (Արմ. Հայաստան)–13.4.1985, Երևան], խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է Բեյրութի ավետարան. քոլեջը (1931): Աշխատել է Լիբանանի և Կիպրոսի հայկ. թերթերի խմբագրություններում: Դասավանդել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունում, եղել է Բեյրութի *«Ժողովրդի ձայն»* հաս–քաղ. գրական թերթի, *«Նոր ուղի»* եռամսյա պարբերագրքի խմբագիր: 1946-ին հայրենադարձել է: 1946–65-ին աշխատել է Արտասահմ. երկրների հետ բարեկամության և մշակութ. կապի հայկ. ընկերությունում և ԳԱ հրատարակչությունում: Բնագրից թարգմանել է Հ. Ֆաստի, Հ. Բիչըր-Սթոուի, Ջ. Սթայնբեկի, Լ.-Ջ. Սյուր-մելյանի, Օ. դը Բալզակի, Դ. Դիդրոյի ստեղծագործություններից:

«ԲՈՒԲԱՍՏԱՆ», կրոնաբարոյական, մշակութ., հաս. երկամսյա հանդես, Մոնրեալի Սբ Գրիգոր Լուսավորիչ հայ առաքել. եկեղեցու պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1964-ից: Տպագրում է կրոն., հայ եկեղեցու պատմության, ինչպես նաև գրակ-յան, մշակույթի և այլ բնագավառների վերաբերյալ հոդվածներ:

«ԲՈՒԲԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ», մանկապատանեկան կիսամսյա պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1882–93-ին (1889–93-ին՝ «Ծաղիկ մանկանց») Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Կ. Կարակյուլյան, Սարգիս Տեովլեթյան, Միհրան *Ասքանազյան:* Հրատարակիչ՝ Նշան Պերպերյան: Տպագրել է մանկ., գրական-գեղ. գործեր, հոդվածներ՝ արվ-ի, առողջապահ-յան, բժշկության, ֆիզ. դաստիարակության, Հայաստանի պատմության ու պատմ. վայրերի մասին, հիշատակու-թյուններ՝ նշանավոր մարդկանց կենսագրություններից ևն: Հանդեսի հրատարակմանն աջակցել են Մ. Մամուրյանը, Ռ. Պերպերյանը, Ա. Փանոսյանը (Ալփասլան), Ա. Չոպանյանը, Ե. Տեմիրճիպաշյանը և ուր.: Թղթակցել են նաև Կ. Պոլսի, Զմյուռնիայի և այլ շրջանների հայկ. դպրոցների սաները:

«ԲՈՒԲԱՍՏԱՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԵԱՆ», բանասիր., տնտ. և ուս. ամսագիր: Հրատարակել են Կ. Պոլսի Սբ Սահակյան դպրոցի բարձր դասարանների աշակերտները: Լույս է տեսել 1851–53-ին: Տպագրել է մանկավարժ., ուսումնակրթ. հոդվածներ, թարգմանություններ, նմուշներ՝ գեղ. գրակ-ից: Անդրադարձել է կրթությանն ու լուսա-վորությանը, ծանոթացրել է բնագիտ. նորություններին, տպագրել թարգման. նյութեր: Հանդեսին թղթակցել են Կ. Պոլսի Ներսեսյան և Զմյուռնիայի Մեսրոպյան դպրոցների սաները:

Գ

Գ, հայ. այբուբենի 3–րդ տառը, անվանումը՝ «գիմ»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Ի տարբերություն Բ տառի՝ Գ–ի կարճ տարրը երկարի ձախ կողմում է, 3 ուղղաձիգ տարրերն իջնում են վերից վար, իսկ լայնը մնում է աջ կողմում: Հորիզոն. նուրբերը երկարին են միացնում կարճը՝ վերին և ստորին ծայրերից, իսկ լայնը՝ միջին մասին՝ վերին ծայրից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակներ՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:


Գ, որպես այբուբենի 3–րդ տառ, նշանակել է երեք և երրորդ, բյուրի նշանով (Գ՝)՝ 30 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Գ –մաս 3–րդ):

ԳԱԲԱՄԱՃՅԱՆ (Գափամաճյան) Մինաս (1842, Կ. Պոլիս–1892, Կ. Պոլիս), խմբագիր, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսում: Եղել է ուսուցիչ, զբաղվել է գրական–հրապարակախոս. գործունեությամբ: 1862–67–ին խմբագրել և հրատարակել է *«Զեփիւռ հայրենեաց»*, 1870–90–ին՝ «Հայրենիք», 1877–ին՝ *«Ապագայ»*, 1874–85–ին՝ *«Լոյս»* պարբ–ները:

Լույս են տեսել Գ–ի «Դասագիրք հայ–ազգային պատմութեան...» (հ. Ա, 1879, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ., 2–րդ հրտ.՝ 1888, ԿՊ, Հայ գրաշարների ընկ. տպ.), «Նոր դասագիրք հայոց պատմութեան» [1888, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի (Արամյան) տպ.] դասագրքերը, «Հատընտիր հաւաքածոյ–արձակ եւ ոտանաւոր...» (մաս 1, 1882, ԿՊ, Պողոս Հակոբյանի տպ., մաս 2, 1890, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ., 2–րդ հրտ.՝ 1891, ԿՊ, Պ. Հակոբյանի տպ.) ժող–ը, «Պատկերազարդ Սուրբ գրոց պատմութիւն» (1891, ԿՊ, Պ. Հակոբյանի տպ.), «Համառօտ պատմութիւն հայոց: Սկիզբէն մինչեւ մեր օրերը» (1908, ԿՊ, Գ. Պաղտատլյանի տպ.) աշխատությունները:

ԳԱԲԱՄԱՃՅԱՆ (Գափամաճյան) Սիմոն (1863, Կ. Պոլիս–29.3.1942, Փարիզ), բառարանագիր, գրող, բանասեր: Սովորել է Կ. Պոլսի Սբ Խաչ վարժարանում, ապա՝ Սկյուտարի ճեմարանում, որտեղ և դասավանդել է 1880–85–ին:

Լույս են տեսել Գ–ի «Հատուածք ի Ս. գրոց»–ը (1882, ԿՊ, Արամ Աշճյանի տպ.), «Թէոդորոս Սալհունի կամ Քրիստոնեայ նահատակը» (1884, նույն տպ.) ողբերգությունը, «Պատկերազարդ հաւաքածոյ ընտիր գրուածոց ազգային եւ օտար մատենագրաց» (մաս Ա, 1888, ԿՊ, Տիգրան Ճիվելեկյանի տպ., մաս Բ, 1890, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ., 3–րդ տպագր., 1901, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.) ընթերցանության, «Նոր քերականութիւն հայերէն գրաբար լեզուի» (1897, ԿՊ, նույն տպ.) քերակ–յան, «Առձեռն նամականի» (1893, ԿՊ, Ն. Պերպերյանի տպ.), «Փնջիկ» (1894, ԿՊ, Հ. Մաթևոսյանի տպ.) հայ. արտասանության աշխարհաբար ժող–ը, «Նոր ծաղկաքաղ հաւաքածոյ աշխարհիկ լեզուաւ» (1898, նույն տպ.) ընթերցանության և արտասանության դասա–





Սիմոն Գաբամաճյանի *«Պատկերազարդ հաւաքածոյ...» (մաս Բ, 1901, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Կարապետ Գաբիկյանի *«Բառգիրք սեբաստացւոց գաւառալեզուի» (1952, Երուսաղեմ) գրքի փիփղոսաթերթը*

գրքերը, «Փոքրիկ ընթերցարան» (1900, նույն տպ.) պատկերազարդ մանկ. հանրագիտարանը, «Արարատ. Այբբենարան-ընթերցարանը» (ԿՊ, 1920, Կ. Քեշիշյանի տպ.): Ֆրանս-ից թարգմանել և հրատարակել է «Բարեկիրթ աղջիկ. Առողջապահութիւն-բարեկրթութիւն» (1900, նույն տպ.) ընթերցարանը օրիորդաց վարժարանների համար ևն: 1892-ին հրատարակել է «Նոր բառագիրք հայերէն լեզուի» (ԿՊ, Ն. Պերպերյանի տպ.) վերամշակված և լրացրած պատկերազարդ բառարանը (1910, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ., Իզմիրյան մրց.): 1919–40-ին՝ Կ. Պոլսում, ապա Փարիզում պարբերաբար տպագրել է «Գրպանի տարեցոյց»-ներ՝ տոմար. և բանասիր. նյութերով:

Գրել է «Բառարան հայերէն լեզուի» (հրտ.՝ 1953), չափածո, արձակ, դրամատիկ. երկեր, կենսագր. ուսումնասիրություններ («Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Ս. արքեպիսկոպոս Իզմիրլեան», 1908, ԿՊ, Ն. Պերպերյանի տպ., «Րաֆֆի: Կենսագրութիւն», 1914, ԿՊ, Գրիգոր Պաղտատյանի տպ.):


ԳԱԲԻԿՅԱՆ Կարապետ Նշանի (1861, Սեբաստիա–19.1.1925, Երուսաղեմ), բառարանագիր, ազգագրագետ: Սովորել է Սեբաստիայի վարժարանում: 1920-ից բնակվել է Երուսաղեմում:

Գրել է «Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի» (հրտ.՝ 1952) աշխատությունը, «Հայ բուսաշխարհ» (հրտ.՝ 1968, երկուսն էլ՝ Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) բուսաբ. բառարանը, «Հայ բժշկութեան շուրջը» («Բիւզանդիոն», 1906) հոդվածում անդրադարձել է Հակոբ Մեղապարտի տպագրած «Աղթարքին»: Հեղինակ է «Եղեռնապատում...» (1924, Բոստոն, «Հայրենիքի» տպ., վերահրտ.՝ 2006) գրքի:

Հանդես է եկել նաև Գուժկան Սեբաստիո, Դիոնեսիոսյան ականջ, Կռչնակ Սեբաստիո ծածկանուններով:

ԳԱԲՐԻԵԼ ԴՊԻՐ, Գաբրիել Ծաղկարար (1640/1645, Կ. Պոլիս–1712, Կ. Պոլիս), մանրանկարիչ: Աշակերտել է հորը՝ ***Մարկոս Ծաղկարարին***, եղել պալատ. նկարիչ: Նկարազարդել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (1667), «Սաղմոս» (1672, երկուսն էլ՝ Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 205, 1596), Խորհրդատետր (1703, Մատենադարան, ձեռ. № 392, պարունակում է 7 ծիս. մանրանկար):

Գրկ. Բասմաջեան Կ., Հայոց հին գեղարուեստի վարպետները, Փ., 1926: Բամպուքճեան Գ., Մարկոս Ծաղկարար եւ իր որդին Գաբրիէլ Դպիր, «Հայաստանի կոչնակ», 1955, № 31:



Գաբրիել Շապինգարահիսարցու *«Ժամանակագրության» («Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.», հ. 2, 1956, Ե., ԳԱ հրտ.) 1-ին էջը*

ԳԱԲՐԻԵԼ ՇԱՊԻՆԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ, Գաբրիել Թոխատցի, XVII դ-ի ժամանակագիր: Գ. Շ-ու «Ժամանակագրությունը» («Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.», հ. 2, 1956, կազմ.՝ Վ. Հակոբյան) գործն արժեքավոր տեղեկություններ է պարունակում 1680-ական թթ-ին Արմ. Հայաստան, Թուրքիա, Իրաք, Եգիպտոս, Ավստրիա, Լեհաստան, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա կատարած ուղևորության մասին:

Գրկ. Տաշեան Յ., *Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վնտ., 1891:* Ոսկեան Հ. *Ներսէս Երեանցի եւ Բոդայեանցի ազատագրութեան համար գրուած հայերէն ծածկագիր նամակները, «ՀԱ», 1967, էջ 272–282:* Քոլանջյան Ս., *Հայերի մասնակցությունը հակաթուրքական լիգայի ստեղծման և Հունգարիայի ազատագրման գործում (XVII դ.), տես «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» (ժող.), Ե., 1983:*

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Աշոտ Հրանտի [ծ. 13.12.1979, գ. Սուրենավան (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում)], բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (2007): *«Գրանիշ»* հանդեսի խմբագրակազմի անդամ: Հիմնադրել է «Լիտոպեդիա» էլեկտրոնային հանրագիտարանը: Պատրաստել է «Հայ գրատպության և գրքարվեստի հանրագիտարանի» առանձին հոդվածներ:

Լույս են տեսել Գ-ի «Հրեշտակները ասեղի ծայրին» (2001), «Հավատացեք, քանի որ չեք հավատալու» (2004), «Գրպանի բանաստեղծություններ» (2012) ժող-ները: Թարգմանել է Մ.-Լ. Վերի, Ա. Պուրրայի, Ռ. Սյոյի բանաստեղծություններից:

«Գրեթերթի» պոեզիայի (2009), թարգմանության (2010), հրապարակախոսության (2011), Վրաստանի գրողների միության Վ. Փշավելայի անվ. երիտասարդ բանաստեղծների հարավկովկասյան 1-ին կարգի (2011) մրց-ներ:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Գուրգեն Արտեմի [11.6.1927, գ. Խանցք (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–15.11.2005, Ստեփանակերտ], բանաստեղծ, մանկագիր: Ադրբ. ԽՍՀ մշակույթի վաստ. աշխատող (1986): Ավարտել է Ստեփանակերտի երկամյա (1949) և Ադրբեջանի հեռակա (1955) մանկավարժ. ինստ-ները: 1963–66-ին եղել է ԼՂԻՄ մարզխորհրդի մշակույթի վարչության պետ, 1971–74 և 1978–88-ին աշխատել է «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ, 1996-ից՝ *ԼՂՀ հանրապետական մանկական գրադարանի* տնօրեն:

Լույս են տեսել Գ-ի «Ճուտիկներ» (1960), «Այբուբենը երգերի մեջ» (1967), «Գույների երգը» (1973), «Ձրվեժի երգը» (1976), «Ակունքներ» (1982), «Երգող ծառը» (1982), «Ուրախ հայերեն» (2000), «Աշնան հանդես» (1999) մանկ. բանաստեղծությունների ժող-ները:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1983), ՀՀ Պետ. (2000), ԼՂՀ Եղիշեի անվ. (2002) մրց-ներ:

Երկ. Արցախյան նվազարան: Ընտիր երկեր, Ե., 2002: Ղարաբաղի հորովել, Ե., 2003:
Գրկ. **Մելյան Բ.,** *Գուրգեն Գաբրիելյան (Գրական հետագիծ), Ե., 1992:* **Խանյան Ս.,** *Գուրգեն Գաբրիելյանի աշխարհը, Ե., 1997:*



Գուրգեն Գաբրիելյան

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Հենրի (Հարություն) Գաբրիելի [3(16).11.1903, գ. Պատականց (Վանի նահանգի Գավաշ գավառ)–10.4.1981, Երևան], փիլիսոփա: Փիլ. գիտ. դ-ր (1945), պրոֆ. (1936): Գիտ. վաստ. գործիչ (1963): Ավարտել է ԵՊՀ (1928): 1921-ից՝ *«Ավանգարդի»*, ապա՝ *«Գրական թերթի»* խմբագիր, ԱրմՖԱՆ-ի պատմության և գրակ-յան ինստ-ի տնօրեն, 1937-ին՝ ԵՊՀ ռեկտոր: 1945–48-ին և 1955-ից դասավանդել է ԵՊՀ-ում, 1948–55-ին՝ Վիլնյուսի համալսարանում: Հայ փիլ-յան ամբողջական պատմության առաջին հետազոտողներից է:

Լույս են տեսել Գ-ի «Հայ փիլիսոփայական մտքի պատմություն» (հ. 1–4, 1956–65), «Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն» (1966), «Հայ փիլիսոփայության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը)» (1976) աշխատությունները, «Դեպքեր և դեմքեր» (1979) հուշերը:

Գրկ. Պրոֆ. Հ. Գ. Գաբրիելյանի գրագիր աշխատությունների մատենագիտություն, կազմ.՝ Ս. Սրամբոլցյան, Ե., 1974:



Գ. Գաբրիելյանի *«Ղարաբաղի հորովել» (2003, Ե., «Անահիտ») գրքի կազմը*

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Յուրի Միքայելի [ծ. 1.10.1952, գ. Աղին (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (2001), պրոֆ. (2004): Ավարտել է ԵՊՀ (1981): 1991–95-ին՝ ԵՊՀ բանասիր. ֆակ-ի դեկանի տեղակալ, 1995-ից՝ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Գ-ի «Հայերենի ցեղակցության հարցը» (1991), «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» (2001) աշխատությունները, «Գերմաներեն լեզվի տիպաբանություն» (2006) ուս. ձեռնարկը: Համահեղինակ է «Գերմաներեն-հայերեն բառարանի» (1998) և «Հայ-գերմաներեն բառարանի» (2000):

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ռուբեն Իսրայելի (ծ. 27.7.1926, Բաքու), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է Բաքվի նկարչ. ուսումնարանը (1949), Լենինգրադի գեղարվ-ի ակադ-ը (1955): 1986-ից ապրում և ստեղծագործում է Երևանում:

Պատկերազարդել է Կ. Չուկովսկու «Խավարասերները», Պ. Բաժովի «Մալաքիտե զարդատուփը», Ե. Պերմյակի «Հեքիաթները» (երեքն էլ՝ ռուս.), ձևավորել է Բ. Ուլուբաբյանի «Գանձասար» (1981), «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» (1994), Լ. Սարգսյանի «Բանաստեղծություններ» գրքերի կազմերը:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց. (1995), «Վաչագան Բարեպաշտ» մեդալ (2002):

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Սմբատ Մկրտչի [15.12.1856, գ-ք. Ակն (Արմ. Հայաստան)–3.6.1919, Ուիհոքն (ԱՄՆ)], բանասեր, բժիշկ, հրատարակիչ-խմբագիր, տպարանատեր: Սովորել է Ակնում, ապա՝ Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում: Լեզուներ և բժշկագիտություն է դասավանդել Ակնում և Խարբերդում: 1886-ից ապրել է Նյու Յորքում, հիմնադրել է տպարան, որտեղ տպագրել է 7 անուն գիրք, 1891–98-ին խմբագրել և հրատարակել է նաև *«Հայք»* կիսամսյա հանդեսը:

Լույս են տեսել Գ-ի «Արուեստ ատենախօսութեան...» (1891), «Խրիմեան Հայրիկ» (1892), «Ատենախօսութիւնք» (1893, 1903), «Ազգային քաղաքականութիւն» (1893), «Քրիստոնեայ Հայաստանն եւ քրիստոնեայ տէրութիւնք» (հայ. և անգլ., 1897, բոլորը՝ Նյու Յորք, Գ-ի տպ.), «Հայկական ճգնաժամն եւ



Ռուբեն Գաբրիելյան. *Բ. Ուլուբաբյանի «Արցախի պատմությունը...» (1994, Ե., «Միքայել Վարանդյան») գրքի փիփողոսաթերթը*

վերածնութիւն» (1905, Բոստոն, «Ատլանտյան» տպ.), «Ակնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն» (1912, Վնն., Մխիթարյան տպ.), «Սեռային առողջաբանութիւն» (1915, Բոստոն, «Հայրենիքի» տպ.) աշխատությունները:


Գրկ. Փափազեան Մ., Սմբատ Գաբրիէլեան, Լոս Անջելես, 1939:

«ԳԱԳԻԿ-ՀԵԹՈՒՄԵԱՆ ԲԺՇԿԱՐԱՆ», միջնադարյան հնագույն բժշկարան: Հեղինակն անհայտ է, ստեղծվել է Անիում՝ Գագիկ Ա թագավորի օրոք: Առաջին անգամ խմբագրվել է Կիլիկյան Հայաստանում XII դ-ի վերջին՝ Ներսես Լամբրոնացու եղբոր՝ Հեթումի մասնակցությամբ, երկրորդ անգամ՝ 1294-ին՝ Հեթում պատմիչի հրամանով (այստեղից էլ՝ «Գ-Հ. բ.» անվանումը):



«Գագիկ-Հեթումեան բժշկարան» *(1294, Վենետիկի մատենադարան, ձեռ. № 1281)*

Մեզ է հասել 2 գրչագիր՝ Երուսաղեմի մատենադարանի № 370 թղթե ձեռագիրը և Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 1281 մագաղաթե մատյանը: Բժշկարանի մի շարք գլուխներ պահպանվել են նաև Մատենադարանի № 8382 ժող-ի մեջ և «Յովհաննէս հեքիմի բժշկարանում» (Վիեննայի Սխիթարյան մատենադարան, ձեռ. № 310):



Զուլալ Գազանճյանի *«Արեւծաղկի մը նման» (1975, Փարիզ) գրքի կազմը*


Բաղկացած է 3 մասից՝ անհական դպրոցի դեղագիտարանից (35 գլուխ), Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» երկի համառոտ խմբագրությունից (30 գլուխ) և կիլիկյան դպրոցի անանուն բժշկարանից (91 գլուխ): Բժշկարանում նկարագրված են ժող. բժշկության մեջ օգտագործվող դեղանյութեր ու սննդանյութեր, ախտաբանության, մահճաբուժության, բուսաբուժության և սննդաբուժության հարցեր:

Բժշկարանից ընդարձակ մեջբերումներ են արել հայ բժշկապետներ Ամիրդովլաթ Ամասիացին, Գրիգորիսը, Ասար Սեբաստացին և ուր.:

Գրկ. Վարդանյան Ս., «Գագիկ-Հեթումյան բժշկարանը» և նրա խմբագրական տարբերակները, «ՊԲՀ», 1985, № 2:

ԳԱԶԱՆՃՅԱՆ Զուլալ (10.10.1934, Մուսալեռ–19.2.2009, Փարիզ), բանաստեղծ: 1949-ին ընդունվել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարան, որն ավարտելուց հետո 1954–61-ին դասավանդել է Հալեպի հայկ. դպրոցներում: 1961-ին տեղափոխվել է Փարիզ, դասավանդել է Սամվել Մուրադյան վարժարանում, աշխատակցել «Յառաջ» պարբ-ին:

Լույս են տեսել Գ-ի «Արեւծաղկի մը նման» (1975, Փ., «Յառաջի» մատենաշար), «Շարունակելի» (1988, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Նորատուզ» (1992, Փ.), «Բանաստեղծություններ» (1996, Ե.), «Քերթուածներ» (2008, Հալեպ, «Այգ» մատենաշարով) բանաստեղծությունների ժող-ները: Կազմել է «Հատընտիր հայ հին բանաստեղծութեան» (1995), կազմել և խմբագրել է «Հայրէններ անտունիներ» (1997, երկուսն էլ՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) ժող-ները:



Հովհաննես Գազանճյանի *«Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը» (մաս 1, 1899, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*

ԳԱԶԱՆՃՅԱՆ Հովհաննես (3.4.1870, Եվդոկիա–15.3.1915, Եվդոկիա, Մեծ եղեռնի զոհ), լեզվաբան, գրականագետ:

Լույս են տեսել Գ-ի «Գաղտնիք եւ արուեստ մոգութեան» (1889, համահեղ.՝ Հ. Գասարճյան, ԿՊ, «Արեւելքի» տպ.), «Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը» (մաս 1–2, 1899, Վնն., Մխիթարյան տպ., «Ազգային մատենադարան» մատենաշար, Իզմիրյան մրց.), «Մագնիսականութիւն եւ ոգեհարցութիւն» (1909, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Հայերէնէ փոխառեալ բառեր թրքերէնի մէջ» (1911, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունները, «Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի» (տարրական դասընթացք, 1907, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան տպ., միջին դասընթացք, 1909, Օ. Արզումանի տպ., բարձրագույն և լրացուցիչ դասընթացք, 1910, նույն տպ.) դասագիրքը: Գ. «Պատմութիւն հայ գրականութեան» (հ. 1–2, հրտ.՝ 1970) ուսումնասիրությանն մեջ հակիրճ նկարագրել է հայ գրակ-յան անցած ուղին՝ սկզբից մինչև XX դ-ի սկիզբը:

ԳԱԹԸՐՃՅԱՆ Հովսեփ (ավազանի անունը՝ Ավետիք, 19.2.1820, Կ. Պոլիս–9.1. 1882, Կ. Պոլիս), պատմաբան, աստվածաբան, թարգմանիչ, լեզվաբան: Մխիթարյան միաբանության անդամ (1838), քահանա (1841): Սովորել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում (1828–33), Վիեննայի Մխիթարյան դպրոցում (1833–38): 1861-ից եղել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանի վերատեսուչ:

Լույս են տեսել Գ-ի «Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս» (հ. 1, 2, 1849, 1852, Վնն., Մխիթարյան տպ.) համաշխ. պատմության հայ. առաջին ձեռնարկը, «Հիմնական տարբերութիւն Կաթուղիկէ եւ Էջմիածնական դաւանութեանց» (1864, ԿՊ, Արևելյան համազգ. տպ.), «Հանգանակ հաւատոյ...» (1891, Վնն., Մխիթարյան տպ., նույնը՝ լատ., 1893) աշխատությունները: Թարգմանել է Քսենոփոնի («Կիւրոսի խրատու պատմութիւնք», 1843), Կուրտիոս Ռուֆոսի («Վասն գործոց եւ արութեանց Աղեքսանդրի Մեծի», 1844), Ցիցերոնի («Վասն գերութեան», 1843, բոլորը՝ Վնն., Մխիթարյան տպ.) և այլ հեղինակների երկեր: Գ. Անտոն Գարագաշյանի և Ղևոնդ Հովնանյանի հետ թարգմանել է եպս. Բոսյուեի «Խօսք վասն տիեզերական պատմութեան» (1841, նույն տպ.) երկը, որտեղ դաս. հայ-ը մաքրված է օտարաբանություններից, ոչ հարազատ ձևերից ու բառերից: Ըստ Գ-ի՝ հայ-ն անցել է զարգացման 2 ժամանակաշրջան՝ նախաքրիստ. («Պատմութիւն մատենագրութեան հայոց», 1851, Վնն., Մխիթարյան տպ.) և հետքրիստ.՝ մի քանի փուլերով: Հայ-ը համարել է հնդեվրոպ. նախալեզվի հնդ-իրան. լեզվախմբի իրան. ճյուղ:

Գրկ. **Ակինեան Ն.,** *Դասական հայերէնը եւ Վիեննական Մխիթարեան դպրոցը, Վնն., 1932:*

ԳԱԼԵՄՔՅԱՐՅԱՆ Գրիգորիս (15.3.1862, Կ. Պոլիս–20.5.1917, Վենետիկ), բանասեր, լեզվաբան, մատենագետ, խմբագիր, մամուլի պատմաբան: Սովորել է Կ. Պոլսի Անտոնյան վարժարանում: 1875-ին մեկնել է Վիեննա, ուսումը շարունակել Մխիթարյան միաբանության վարժարանում: Միաբանության անդամ՝ 1880-ից: 1885-ից դասավանդել է Մխիթարյան դպրոցներում, եղել է ***«Հանդէս ամսօրեայ»***-ի խմբագիր:

Գ-ի մատենագիտ. արժեքավոր աշխատություններից են «Յուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն» (հ. Բ, տետր Ա, 1892) ձեռնարկը, որը համարվում է Մյունխենի արքայական գրադարանի հայ. ձեռագրերին վերաբերող միակ աղբյուրը, «Պատմութիւն հայ լրագրութեան, ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը» (հ. 1, 1893) երկը, որտեղ առաջին անգամ համակարգել է 1794–1860-ի հայ լրագրության պատմությունը: «Ոսկեդարեան եւ ոչ-ոսկեդարեան հայերէնի խնդիրը» (1903, ԿՊ), «Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ ընդդէմ աղանդոց մատենին» (հրտ.՝ 1919, «Ազգային մատենադարան» մատենաշար) աշխատություններում պարզաբանել է դաս. հայ-ի տարածման սահմանները, քննել Եզնիկ Կողբացու մատյանն ու նրա աղբյուրները, վերականգնել «Եղծ աղանդոց» երկի գիտ. ճշգրտված բնագիրը: Գրել է նաև «Գործնական մեկնութիւն Առաքելական Աթոռոյ Սահմանադրութեան...» (1890), «Կենսագրութիւն Սարգիս արքեպ-ի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք. 1720–1775» (1908), «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկեայք» (1915) աշխատությունները, թարգմանել Դ. Տանի «Արեւելեան Հայք ի Պուքովինա» (1891), Հ. Գելցերի «Համառօտ պատմութիւն հայոց» (1897) գործը:

Գ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:

Գրկ. **Ակինեան Ն.,** *Հ. Գրիգորիս, ծ. վ. Գալեմքեարեան, «ՀԱ», 1917–18, էջ 113–130:*

ԳԱԼԵՄՔՅԱՐՅԱՆ Զարուհի, Եվտերպե, Զ. Սեֆերյան (18.7.1874, Կ. Պոլիս–20.7.1971, Նյու Յորք), գրող: Սովորել է Կ. Պոլսի Արամյան վարժարանում: Աշխատակցել է Նյու Յորքում լույս տեսնող «Լրաբեր», «Պայքար», «Հայաստանի կոչնակ» թերթերին: Առաջին բանաստեղծությունը տպագրվել է «Բիւզանդիոն» օրաթերթում:


Գրել է բանաստեղծություններ, հուշագրություններ, ճամփորդ. նոթեր [«Զարթօնք» (1893, ԿՊ, Գրիգոր Պաղտատյանի տպ.), «Սիմունջք» (1894, ԿՊ, նույն տպ.), «Թոռնիկիս գիրքը» (1936, Ստամբուլ), «Կեանքիս ճամբէն» (1952, Անթիլիաս), «Օրեր եւ դէմքեր» (1965, Երուսաղեմ), «Հասկաքաղ» (1965) ժող.]:



Հովսեփ Գաթըրճյան




Հ. Գաթըրճյանի «Հիմնական տարբերութիւն կաթուղիկէ եւ էջմիածնական դաւանութեանց» (1864, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը



Գրիգորիս Գալեմքյարյանի *«Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ...» (1919, Վնն.) գրքի տիտղոսաթերթը*

ԳԱԼԻԿՅԱՆ Հրանտ Ավետիսի [5(17).3.1889, Վան–18.5.1938, Երևան], իրավաբան, պետ. գործիչ, լրագրող: Պրոֆ. (1936): ՍԴՀԿ անդամ (1908–22): 1915-ի Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարող զինվոր. մարմնի անդամներից: Սովորել է Կ. Պոլսի համալսարանում (1908–12): 1919–21-ին՝ *«Երկիր»* (Կ. Պոլիս) օրաթերթի խմբագիր: 1922-ին տեղափոխվել է Հայաստան, աշխատել դատ. համակարգում:

Լույս են տեսել Գ-ի «Կանանց աշխատանքի պաշտպանությունը» (1930), «Ամուսնության և ընտանիքի իրավունք» (1933), «Հասարակական դատաբաններ» (1933) աշխատությունները:



Մուշեղ Գալշոյանի *«Ընտրանի»-ի (2009, Ե., ՀԳՄ հրտ.) կազմը*

ԳԱԼՇՈՅԱՆ (Մանուկյան) Մուշեղ Հովեի [13.12.1933, գ. Մեհրիբան (այժմ՝ գ. Կաթնաղբյուր՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–15.10.1980, գ. Կաթնաղբյուր], արձակագիր, խմբագիր: Ավարտել է ՀԳԻ (1957), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1971): 1960–61-ին աշխատել է Թալինի շրջ. «Կոմունիզմի դրոշով», 1961–1962-ին՝ Աշտարակի «Արագած», 1964–67-ին՝ «Ավանգարդ» թերթերի, 1967–69-ին՝ «Գարուն» ամսագրի խմբագրություններում, 1975–77-ին՝ *«Սովետական գրող»* հրատարակչության բաժնի վարիչ: 1968-ին «Գարուն» ամսագրում տպագրվել է Գ-ի «Ձորի Միրոն» վիպակը (առանձին գրքով՝ 1983-ին):

Լույս են տեսել նաև Գ-ի «Կռունկ» (1969), «Ծաղկած քարերը» (1973), «Մարութա սարի ամպերը» (1981, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1981) պատմվածքների ժող-ները, «Բովտուն» (1974, ՀԳՄ առաջին կարգի մրց.՝ 1973, վերահրտ.՝ 1982) վեպը: Հայֆիլմում նկարահանվել են «Քարե հովիտ» (ըստ «Բովտուն» վեպի, 1977), «Ձորի Միրոն» (ըստ համանուն վիպակի, 1979–80) կինոնկարները, հայկ. հեռուստաթատրոնում բեմադրվել են «Մամփրե արքան», «Կանչը» պատմվածքները:

Երկ. Բովտուն (վեպ, էսսեներ, ակնարկներ, հոդվածներ), Ե., 1982: Պայուսակը, Ե., 1988: Ագռավաքար, Ե., 1990: Հափրնափիր, Անթիլիաս, 1994: Ընտրանի, Ե., 2009:

Գրկ. **Գրիգորյան Վ.**, *Մուշեղ Գալշոյան. Սկևռծագործությունը, Ե., 1998:* **Տիգրանյան Ս.**, *Մուշեղ Գալշոյան, Կալիֆոռնիա, 1999:* **Վարդանյան Վ.**, *Հող և ցավ, Ե., 2011:*



Գալուստ Գալոյան

ԳԱԼՈՅԱՆ Գալուստ Անուշավանի [1.3.1927, գ. Փոքր Պարնի (այժմ՝ գ. Անուշավան՝ ՀՀ Շիրակի մարզում)–21.8.2003, Երևան], պատմաբան, կուս. գործիչ: Պատմ. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1964), ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1971-ից): Ավարտել է ԵՊՀ (1950), ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր հաս. գիտ-ների ակադ-ը (1955, Մոսկվա): 1963–79-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի տնօրեն, 1979–82-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ակադ. քարտուղար, 1982–88-ին՝ փոխնախագահ, 1988–91-ին՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար:

Լույս են տեսել Գ-ի «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում 1900–1922» (ռուս., 1969), «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները» (ռուս., 1976, հայ. հրտ.՝ 1978), «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անդրկովկասի ժողովուրդների վերածնունդը» (ռուս., 1977) աշխատությունները: «Պատմության քառուղիներում» (1982) ուսումնասիրության մեջ վերլուծել է Հայոց ցեղասպանության պատճառներն ու նախադրյալները: Համահեղինակ է «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» (1967) ժող-ի, *«Հայ ժողովրդի պատմություն»* (հ. 7, 1967) ակադեմ. բազմահատորյակի: «ՀՍՀ»-ի հեղինակներից էր և գլխ. խմբագրության անդամ:

Երկ. Մայիսյան հերոսական ապստամբությունը, Ե., 1960: Հայաստանը մեծ տերությունները 1917–1923 թթ., Ե., 1999: Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում (XVI–1917 թ.), Ե., 2004: Борьба за Советскую власть в Армении, М., 1957; Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960.

Գրկ. Գալուստ Անուշավանի Գալոյան: Կենսագրություն, Ե., 2005:



Գ. Գալոյանի *«Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում (XVI–1917 թ.)» (2004, Ե., «Գիտություն») գրքի կազմը*

ԳԱԼՉՅԱՆ Ռուբեն Արամի (ծ. 30.11.1938, Թավրիզ), քարտեզագետ: ՀՀ ԳԱԱ պատվ. դ-ր (2008): Ավարտել է Բիրմինգհեմի (Մեծ Բրիտանիա) «Աստոն» համալսարանը (1963): 1981-ից ապրում է Լոնդոնում: Հետազոտել է Մեծ Բրիտանիայի և Եվրոպայի գրադարաններում պահվող հայկ. քարտեզագրության ու պատմության հարուստ ժառանգությունը:

Լույս են տեսել Գ-ի «Հայաստանի պատմական քարտեզներ» (անգլ., 2004), «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» (հայ., ռուս., 2005), «Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում» (2007), «Հորինված պատմություն. Հայաստան և Ադրբեջան. Կեղծիքներ և փաս-

տեր» (անգլ., ռուս. և հայ., 2010), «Ադրբեջանի պատմաաշխարհագրական զեղծարարությունները» (ռուս.՝ 2013, անգլ.՝ «Պատմությունների բախումը Հարավային Կովկասում. Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի քարտեզների վերագծումը», 2012) և այլ աշխատություններ:

ԳԱԼՈՍՅԱՆ Լիլիթ Սերյոժայի (ծ. 28.11.1962, Երևան), թարգմանիչ, հրապարակախոս: Բանասիր. գիտ. թեկնածու (2006): Ավարտել է ԵՊՀ (1986), Հայաստանի ամերիկյան համալսարանը (1996): 1991–99-ին՝ Համազգ. հայ կրթ. և մշակութ. միության Հայաստանի գրասենյակի գործադիր տնօրեն, 1999-ից՝ նախագահ:

Կազմել և խմբագրել է «18–33. արդի հայ արձակ» (2009, 2012, Բ.), «18–33. արդի հայ պոեզիա» (2013, երկուսն էլ՝ անթոլոգիա) և այլ ժող-ներ, անգլ-ից թարգմանել է «12 պատմվածք և 1 պիես» (XX դար. ամերիկյան արձակ, 1999), «XX դարի անգլիագիր արձակ» (2002) նն:

Կանադայի դեսպանատան մրց. (2002):

ԳԱԼՈՒՍՏ ԱՄԱՍԻԱՅԻ, XVII դ-ի բժիշկ: 1669-ից գործունեություն է ծավալել Սվասում, Սամսունում, Կ. Պոլսում, Հալեպում, Վանում, Ադանայում, Մարաշում, Ամիդում և այլուր: Զբաղվել է ակնաբուժությամբ, վիրաբուժությամբ, ներքին հիվանդությունների բուժմամբ: Գ. Ա-ու բժշկարանը մեզ է հասել 2 տարբերակով (առաջինը՝ 600 էջ, երկրորդը՝ նախորդի համառոտ տարբերակը՝ 428 էջ): Վերջինս սկսվում է բժշկ. որոշ բացատր. տեղեկություններով, այնուհետև շարադրվում են անատոմիայի, ախտաբանության և հիգիենայի, ֆիզիոլոգիայի, բարդ դեղաձևերի պատրաստման մասին տեղեկություններ, ունի նաև բժշկ. տերմինների բառարան: Գրքում մեջբերումներ կան ***Ամիդովլաթ Ամասիացուց*** և Ստեփանոսից, անատոմիայի բաժինը կազմված է Աբու Սահդի «Յաղագս կազմութեան մարդոյ» (հրտ.՝ 1974) երկի հիման վրա:

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԳԿՀ), բարեսիր. և գիտամշակութ. հաստատություն: Հիմնադրվել է 1956-ին Լիսաբոնում (Պորտուգալիա)՝ հայ մեծահարուստ նավթարդյունաբեր Գալուստ Կյուլպենկյանի (1869–1955) կտակի (1953) համաձայն: Նպատակը գիտ-յան, կրթության, առողջապահ-յան և արվ-ի զարգացմանը նպաստելն է: ԳԿՀ-ն հանձնախմբեր կամ ներկայացուցչություններ ունի Լոնդոնում և Փարիզում:

Գ. Կյուլպենկյանի կտակով՝ միայն էջմիածնի Մայր տաճարի նորոգման համար նախատեսվել էր 450 հզ. դոլարի հատկացում: Սակայն Կտակարար մարմնի անդամ Գ. Կյուլպենկյանի դստեր ամուսնու՝ Գևորգ Եսայանի ջանքերով ստեղծվել է Հայկ. համայնքների բաժանմունք՝ Սփյուռքի և հատկապես Միջին Արևելքի հայ համայնքների կրթ., առողջապահ. և մշակութ. խնդիրների լուծմանը նպաստելու համար: 1964-ից այդ բաժանմունքն օժանդակել է նաև Հայաստանի որոշ մշակութ. և առողջապահ. հաստատությունների:


ԳԿՀ-ի Հայկ. բաժանմունքը (տնօրեն՝ Ռազմիկ Փանոսյան՝ 2013-ից) կապեր ունի աշխարհի 27 երկրների հայկ. համայնքների հետ: Զգալի գումարներ է տրամադրել Մատենադարանին, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ. գրադարանին, ՀԱԳ-ին և ԵՊՀ-ին, աջակցում է հայ. գրքերի, հայկ. թեմաներ շոշափող հրատ-ների, կարևոր հայագիտ. հանդեսների (***«Պատմա-բանասիրական հանդես», «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Ռևյու դևզ էթյուդ արմենիեն», «Հասկ», «Բանբեր Երևանի համալսարանի»*** նն) տպագրությանը, հայագիտ. և մշակութ. կենտրոնների գործունեությանը:

ԳԿՀ-ն ունի գրադարան՝ 180 հզ. անուն գրքով, հրատարակում է «Գրական հանդես» և «Գիտություն ու գեղարվեստ» ամսագրերը (պորտուգալ.):

Գրկ. **Ուղուրլեան Տ.,** *Պատմութիւն Կիւլպենկեան գերդաստանի, Անթիլիաս, 2006:* **Զամբերթէն Ա.,** *Երդասաղէմ եւ Կիւլպէնկեաններ, Լիսաբոն, 2007:* **Նույնի,** *Գալուստ Սարգիս Կիւլպէնկեան. Մարդը եւ իր գործը, 2-րդ լրց. հրտ., Լիսաբոն, 2012:* **Ղարախանյան Վ.,** *Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956–2006 թթ., Ե., 2008:*



Ռուբեն Գալչյանի *«Հորինված պատմություն...» (2010, Ե., «Փրինթինֆո») գրքի կազմը*



*Վահրամ Ղարախանյանի «***Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության** *հայանպաստ գործունեությունը. 1956–2006 թթ.» (2008, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Շնորհք Գալուստյան

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Շնորհք [ավազանի անունը՝ Արշակ, 1913, գ. Իյտե (Թուրքիայի Յոզկաթ գավառ)–7. 3. 1990, Սբ Էջմիածին, թաղված է Կ. Պոլսի Շիշլիի գերեզմանատանը], եկեղեց. և գրական գործիչ: 1961–90-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք: Ավարտել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը (1935): 1955-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: Գ-ի հովանավորությամբ Կ. Պոլսում նորոգվել են եկեղեցիներ և դրանց կից դպրոցներ, կառուցվել են պատրիարքարանի նոր դիվանատունը և այլ շինություններ:

Լույս են տեսել Գ-ի «Գունագեղ կիրակիներ եւ հոգեգալուստ» (1972), «Աւագ շաբաթ» (1976, 2005), «Համառօտ ակնարկ հայոց եկեղեցւոյ ընդհանուր ժողովներուն կազմութեան վրայ» (1986), «Ուխտագնացութիւն եւ հովուապետական այցելութիւն գաւառի մեր եկեղեցիներուն եւ համայնքներուն» (1989), «Աստվածաշնչական սուրբեր» (1997), «Համաքրիստոնէական սուրբեր» (1997), «Հայազգի սուրբեր» (1997, 2008, Թեհրան, «Ալիքի» տպ.), «Տաղաւար տօներ» (2009, Թեհրան) աշխատությունները:

Գրկ. Հատտէճեան Ռ., Շնորհք արք. Գալուստեան պատրիարք Հայոց Թուրքիոյ: Կեանքը եւ գործը, Սփամբոյլ, 1987: Յակոբեան Գ., Շնորհք պատրիարքի վերջին հինգ տարիները, Սփամբոյլ, 1991:



Շ. Գալուստյանի *«Հայազգի սուրբեր» (2008, Թեհրան) գրքի կազմը*

ԳԱԼՓԱԿՃՅԱՆ Արտաշես (ծ. թ. անհտ, Կ. Պոլիս–1942), խմբագիր, հրապարակախոս: 1900-ական թթ-ից աշխատակցել է պոլսահայ մամուլին, եղել է *«Ընդարձակ տարեցոյց Սբ Փրկչեան ազգային հիւանդանոցի», «Բիւրակն»*, «Առևտուր», «Վաստակ», *«Աւետարեր»*, «Լուսարձակ» (1925), *«Վերջին լուր»* (1925–32, բոլորն էլ՝ Կ. Պոլիս) պարբ-ների գլխ. խմբագիր:

ԳԱԼՓԱԿՃՅԱՆ Վաղարշակ (1873, Կ. Պոլիս–1923, Մարսել), խմբագիր, հրապարակախոս: Աշխատակցել է Կ. Պոլսի հայկ. մամուլին («Բիւզանդիոն» ևն), 1909-ին խմբագրել է «Գարուն» պարբ-ը, 1919–20-ին՝ «Նոր այգ» թերթը, ապա տեղափոխվել է Ֆրանսիա:

ԳԱԼՖԱՅԱՆ Ամբրոսիոս, **Լուսինյան Գվիդոն** (Նար Պեյ) (24.8.1826, Կ. Պոլիս–1906, Փարիզ), բանասեր, բառարանագիր, մանկավարժ, պատմաբան: Խորեն *Գալֆայանի* եղբայրը: Սովորել է Վենետիկի Մխիթարյան դպրոցում, 1847-ին ձեռնադրվել է վարդապետ: Դասավանդել է Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանում: Հրաժարվել է կաթոլիկությունից և ընդունել Հայ առաքել. եկեղեցու դավանանքը: Գաբրիել *Այվազովսկու* հետ հիմնադրել է *«Մասեաց աղաւնի»* (1855–58) հանդեսը:

Լույս են տեսել Գ-ի «Առաջնորդ գաղղիարէն եւ հայերէն զրուցատրութեան» (1855, Փ., Շիլլերի տպ.), «Զրուցատրութիւն ի տաճիկ լեզուէ ի հայ» (1864, Թեոդոսիա, Խալիպյան տպ.), «Բառգիրք հայ-գաղղիարէն եւ գաղղիարէն-հայերէն» (1861, Փ.), «Նոր բառգիրք: Պատկերազարդ ֆրանսահայ» (հ. 1, 2, 1900, 1903, Փ., Մորիս և որդի տպ.) բառարանները. վերջինս պարունակում է 120 հզ. բառ-հոդված: Հեղինակ է թվաբանության, հայկ. գեղագրության, պատմության, աշխարհագրության և այլ դասագրքերի [«Համառօտ պատմութիւն հին եւ նոր ազգաց» (հ. 1–5, 1849–51, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Պատկերազարդ այբբենարան մանկանց» (1855, Փ., Ա. Պուրտիեի տպ.), «Աշխարհագրութիւն» (1861, Թեոդոսիա, Խալիպյան տպ.), «Նոր ընթերցարան» (1861, Փ., Ա. Պուրտիեի տպ.), «Պատմութիւն Աստուածաշունչ սուրբ գրոց Հին կտակարանի» (1862, Թեոդոսիա, Խալիպյան տպ., 2-րդ հրտ.՝ 1897, Վաղպատ, Սբ Էջմիածնի տպ.), «Հայկական գեղագրութիւն» (1869, Փ.)]: 1869-ին Գ. հրատարակել է «Հայոց եկեղեցին եւ անդրալեռնականք» (ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.) աշխատությունը:



Ամբրոսիոս Գալֆայան

ԳԱԼՖՅԱՆ Գրիգոր (1868, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), խմբագիր, հրապարակախոս: Ապրել է Աթենքում, ապա՝ Եգիպտոսում: 1902–07-ին Եգիպտոսում հրատարակել է «Իջիպշըն Գրաֆիկ» և «Կաիրո Ուիքլի» (Տիրան Քելեկյանի հետ, երկուսն էլ՝ անգլ.), 1909-ից Կ. Պոլսում՝ «Գազեթ Ֆինանսիե» (ֆրանս.) պարբ-ները: 1912-ին եղել է «Սև կատու» երգիծաթերթի տնօրենը (խմբագրապետ՝ Ե. Օտյան):

ԳԱԼՖԱՅԱՆ Խորեն, **Նար Պեյ** (1.10.1832, Կ. Պոլիս–4.11.1892), բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս, եկեղեց. գործիչ: Ամբրոսիոս *Գալֆայանի* եղբայրը: Տիրապետել է 7 լեզվի: Սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Մասնակցել է *«Բազմավէպ»*, *«Մասեաց աղաւնի»* հանդեսների հրատարակմանը: 1861-ին դասավանդել է Թեոդոսիայի Խալիպյան վարժարանում: 1867-ին Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս: Անձնական կապեր է ունեցել Ա. Լամարթինի, Վ. Հյուգոյի և ուր. հետ: Թարգմանել և հրատարակել է Ա. Լամարթինի «Դաշնակք Լամարթինեայ» (1859, Փ., Վալտերի տպ.) բանաստեղծությունների ժող-ը:

Լույս են տեսել Գ-ի «Բառգիրք յանգաց կամ Յանգարան» (1860, Թեոդոսիա, Խալիպյան տպ.) աշխատությունը, «Արշակ Երկրորդ» (1861, նույն տպ.) ողբերգությունը, «Ալաֆրանկա» (1862, նույն տպ.) կատակերգությունը, «Վարդենիք» տաղերի առաջին ժող-ը (1863, նույն տպ.), «Քնար պանդխտին» (1868, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.), «Հայկականք ստուերք» (1872, նույն տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Քրիստոնէական նախնական, բազմապատկեր» (1872, ԿՊ, նույն տպ.) աշխատությունը, «Նախակրթարան ֆրանսերէն լեզուի» (1873, նույն տպ.), «Նախնական սրբազան պատմութիւն պատկերազարդ» (1896, Փ., Մորիս և որդի տպ.) դասագրքերը:

Մկրտիչ Խրիմյանի ազգ. պատվիրակության կազմում մասնակցել է Բեռլինի վեհաժողովին (1878)՝ որպես թարգմանիչ–խորհրդական:

ԳԱԼՖԱՅԱՆ Նշան (1865, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), խմբագիր, գյուղատնտես: Ֆրանսիայի ակադ-ի թղթ. անդամ: Սովորել է Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանում, ավարտել Պերպերյան վարժարանը (1882):

Շերամապահությանը վերաբերող հոդվածներ է տպագրել եվրոպ. և ճապոն. հանդեսներում: Խմբագրել է «Ռեսիմլի զրաաթ ղազեթասը» («Գյուղատնտեսական պատկերազարդ թերթ», 1904–06, Կ. Պոլիս) շաբաթաթերթը և «Զրաաթ թաքվիմի» («Գյուղատնտեսական նորություններ», Սուլեյման բեյի հետ) պարբ-ը (1910, երկուսն էլ՝ թուրք.): Աշխատակցել է «Արևելք» թերթին: Հոդվածներ է տպագրել ֆրանս. մամուլում:

ԳԱԼՖԱՅԱՆ Պետրոս [1868, գ. Իջմե (Խարբերդի նահանգ)–1915, Մեծ եղեռնի զոհ], մշակույթի գործիչ: Սովորել է Կ. Պոլսի Խորենյան դպրոցում: Մասնակցել է 1896-ի քաղ. ցույցին: Փախել է Ռումինիա, ապա՝ Լոնդոն: Ռուսչուկում (Բուլղարիա) հրատարակել է *«Վերածնութիւն»* շաբաթաթերթը, որը հետագայում շարունակել է Փարիզում՝ *«Ապագայ»* անունով: 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո վերադարձել է Կ. Պոլիս. ձերբակալվել է 1915-ի ապրիլի 24-ին և նահատակվել:

ԳԱԼՖԱՅԱՆ Վահան (16. 1. 1886, ք. Շամախի–14. 12. 1976, Երևան), գրող, մանկավարժ, խմբագիր: Ավարտել է Մոսկվայի առևտրի ինստ-ը (1915): Դասավանդել է Երևանի բժշկ. ինստ-ում (1928–30), Թբիլիսիի հայկ. դպրոցներում (1930–42 և 1944–64): 1964-ից բնակվել է Երևանում: 1942–43-ին՝ Հվ. ռազմաճակատի «Սուվորովական» (հայ.) թերթի պատ. քարտուղար, ապա՝ խմբագիր:

Լույս են տեսել Գ-ի «Շիրիմների կղզին» (1913, Թ., «Էպոխա» տպ.), «Արփիկի երազը» (1926, Ե., «Հերմես» տպ.), «Հարազատ դեմքեր, հուշեր» (1964) գործերը:

ԳԱՀՆԱՄԱԿ, Հայոց արքունիքում իշխանների կամ նախարարների տեղերի, գահերի կամ պատվաստիճանների ցուցակ: Աստիճանակարգությունը պայմանավորվել է նրանց ռազմ. և տնտ. հզորությամբ (տես *Զորանամակ*), ինչպես նաև ինագույն ավանդ. հիմքով: Մովսես Խորենացին հայ իշխանների գահակարգության առաջին հրովարտակը վերագրել է Հայոց Վաղարշակ թագավորին: Նախարար. գահակարգությունը գործել է Արշակունիների թագավորության (I–V դդ.) և մարզպան. (V–VII դդ.) ժամանակաշրջանում:

Առաջին Գ. հայտնաբերել է Գևորգ *Ախվերդյանը* 1851-ին: Մ. Էմինը 1858-ին այն հրատարակել է (մեկնաբանություններով) Մովսես Խորենացու «Հայոց պատմության» իր ռուս. թարգմանության հավելվածում:



Ա. Գալֆայանի *«Համառօտ պատմութիւն նոր ազգաց» (հ. 5, 1851, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Խորեն Գալֆայան



Խ. Գալֆայանի *«Վարդենիք» (1863, Թեոդոսիա) գրքի փիփղոսաթերթը*



«Գաղափար», *1916–17, Թիֆլիս*



«Գաղափար», *1925–27, Թեհրան*



Գաղափարագրի *նմուշ*



«Գաղութահայ տարեգիրք», *1939–41, Բուխարեստ (Գ տարի, 1941)*

Գ–ի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հայագետներ Ղ. Ալիշանը, Գ. Խալաթյանցը, Խ. Ստեփանեն, Ն. Ադոնցը, Լեոն, Ս. Մալխասյանցը և ուր.:

Գրկ. Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի, «Սուփերք հայկականք», մաս 6, Վնտ., 1853: **Ալիշան Ղ.**, *Այրարատ, Վնտ., 1890:* **Ադոնց Ն.**, *Հայաստանը Հռափինեանոսի դարաշրջանում, Ե., 1987: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, Ե., 2013:*

«ԳԱՂԱՓԱՐ», գրական, հաս., քաղ., տնտ. երկօրյա թերթ: Լույս է տեսել 1916–17-ին Թիֆլիսում: Ունեցել է ինչակյան ուղղվածություն: Խմբագիր–հրատարակիչներ՝ Ավագ Մահտեսի–Հակոբյան, Սիմոն Հովվյան: Հրապարակախոս. հոդվածներով անդրադարձել է ժամանակի հրատապ խնդիրներին, լուսաբանել Կովկասի, Ռուսաստանի և այլ վայրերի հայության առօրյան: Ներկայացրել է Արմ. Հայաստանի վիճակը, անդրադարձել նրա ազատագրման խնդրին: Դատապարտել է Առաջին համաշխ. պատերազմը (1914–18) և այն հրահրող պետությունների նվաճող. քաղաքականությունը: Տպագրել է գրակ–յանը, թատրոնին ու երաժշտությանը նվիրված հոդվածներ և լուրեր:

«ԳԱՂԱՓԱՐ», քաղ., հաս., գրական տասնօրյա թերթ: Լույս է տեսել 1925–27-ին Թեհրանում: Խմբագիր՝ Արշակ Ղազարյան: Նպաստել է Հայրենիք–Սփյուռք կապի ամրապնդմանը, խրախուսել է հայահավաքման գաղափարը: Մեծ տեղ է հատկացրել ԽՍՀՄ–ի և Խորհրդ. Հայաստանի տնտ. ու մշակութ. կյանքին: Տպագրել է գիտ., գրական և գեղ. նյութեր, թարգմանություններ: «Գ.»–ին կից (1926–27) լույս է տեսել «Նոր գաղափար» եռամսյա հավելվածը:

ԳԱՂԱՓԱՐԱԳԻՐ, գրի տեսակ, որի գրաֆիկ. նշանագրերը ամբողջ. բառ կամ բառարմատ են: Գրության հնագույն ձևերից է: Հնագույն Գ–երը հինեգիպտական, շումերական և չինական են: Առաջին երկուսը ներկայում չեն կիրառվում, իսկ չինականը կոչվում է հիերոգլիֆ: Հայաստանում Գ–եր օգտագործվել են հնագույն ժամանակներից: Դրանք պահպանվել են ժայռապատկերներում, կենցաղային որոշ իրերի վրա, նաև տոմարին, տիեզերքին, ալքիմիային, արհեստագործությանը վերաբերող ձեռագրերում:

«ԳԱՂՈՒԹ», գրական, քաղ., հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1914–16-ին Նոր Նախիջևանում: Խմբագիրներ՝ Ա. Տոմբայան, Սահակ Մյասնիկյան: Լուսաբանել է Ռուսաստանի, Ղրիմի և Հս. Կովկասի հայերի կյանքը, սպառող. և կոոպերատիվ ընկերությունների, բարեգործ. կազմակերպությունների գործունեությունը, անդրադարձել ժող. առողջապահ–յան, թատեր., դպրոց. և այլ հարցերի: Աշխատակցել են Ա. Մյասնիկյանը, Վ. Տերյանը, Շ. Կուրղինյանը, Ա. Ծատուրյանը, Գ. Չուբարը և ուր.:

«ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ», Բուխարեստի «Գաղութահայ հրատարակչականի» հրատ.: Լույս է տեսել 1939–41-ին Բուխարեստում (3 գիրք): Խմբագիր՝ Մկրտիչ ***Պոտուրյան***: Տպագրել է պատմաբանասիր. հոդվածներ, հայկ. գաղթավայրերի, ինչպես նաև բժշկության, դրամագիտ–յան, երաժշտության պատմության վերաբերյալ նյութեր, ծանոթացրել հայկ. և հուն. դիցաբանություններին: Տարեգրքում տեղ են գտել Կոմիտասի, Թեոդիկի նամակները, հայ նշանավոր գործիչների կենսագրություններ, հուշագրություններ, թարգմանություններ՝ եվրոպ. գրակ–ից:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ, գրական ընկերություն: Հիմնադրել են Ռափայել ***Պատկանյանը***, Մնացական Թիմուրյանը և Գևորգ Քանանյանը 1854–ին Մոսկվայում: Անվանումը կազմվել է հիմնադիրների անուն–ազգանվան սկզբնատառերից և առաջին վանկերից, որը հետագայում Ռ. Պատկանյանը դարձրել է իր գրական կեղծանունը: Ընկերության նպատակը նոր ձևավորվող գրական լեզուն՝ աշխարհաբարը, մշակելն էր, հայ հասարակության մեջ ընթերցասիրություն սերմանելը, մարդկանց ազգ. գիտակցության մղելը: Հրատարակել է «Արձակ եւ չափաբերական

աշխատութիւններ» (1856, մաս 1, ԱՊր, Ա. Ֆրիդրիխսոնի տպ., մաս 2–3, ԱՊր, Հակոբ Յանսոնի տպ.), «Ազգային երգարան հայոց» (1856, նույն տպ.) տաղարանը և «Նոր այբբենարան հայկական» (1856, նույն տպ.) դասագիրքը: Նյութ. միջոցների սղության պատճառով գրքույկների պարբ. տպագրությունը 1857-ին դադարեցվել է, ընկերությունը՝ լուծարվել:

Գրկ. Պատկանյան Ռ., Երկերի ժող., հ. 6, Ե., 1970 (նամակ № 23):

ԳԱՅԱՅԱՆ Հովհաննես, **Մխիթար Պոնտացի** [1864, Մարզվանի Հաջի Քյոյ ավան (Սեբաստիայի նահանգ)–11.6.1934, Կահիրե], բառարանագիր, մանկավարժ: Սովորել է Էդինբուրգի (Շոտլանդիա) համալսարանում: Երկար տարիներ զբաղվել է մանկավարժությամբ, գրել դասագրքեր (Մխիթար Պոնտացի ստորագրությամբ), բանաստեղծություններ («Առաջին մրմունջք», 1889, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ., ժող.), կատարել թարգմանություններ: Գ-ի «Բառարան-գանձարան հայերէն լեզուի»-ն (հրտ.՝ 1938, Կահիրե, 1967, 1983, 1994, 2006, բոլորը՝ Բ.) հայ բառարանագրության եզակի նմուշներից է:

ԳԱՅՖԵՃՅԱՆ (Գայֆեջյան) Վահրամ Մկրտչի [14(26).4.1879, Ախալցխա–30.11.1960, Երևան], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1954): Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1891–1901), Մոսկվայի պետ. համալսարանի բժշկ. և իրավաբ. ֆակ-ներում (1901–09), միաժամանակ՝ գեղանկարչության, քանդ-յան և ճարտ-յան ուսումնարանում (1902–07): 1924-ից ապրել է Երևանում: 1924–55-ին դասավանդել է ԵԳԱՏ-ում (1924–28-ին՝ տնօրեն): 1904–06-ին Մոսկվայում հրատարակել է «Արուեստ» ուսանող. թերթը, 1926–28-ին Երևանում՝ նույնանուն երկամսյա հանդեսը (խմբագիր՝ Արամ *Երևյան*): 1930-ական թթ-ին աշխատակցել է «Հոկտեմբերիկ» մանկ. ամսագրին: 1905–57-ին մամուլում տպագրել է արվ-ին վերաբերող քննադատ. և տես. հոդվածներ:


Պատկերազարդել է Ս. Տարոնցու «Կռիվ Դնեպրի հետ» (1932, ըստ Ս. Մարշակի), Հ. Թումանյանի «Շունն ու ծիտիկը», Արազու «Անբախտ որսկաններ», «Միշիկը», Ս. Զորյանի «Վանուշը», Մ. Մանվելյանի «Առյուծաձագը», Հաջիե Ջնդիի «Բզդո», Դ. Դեմիրճյանի «Ագռավը և խեցգետինը», Լ. Տոլստոյի «Պառավ ձին» և այլ գործեր: Համահեղինակ է «Գևորգ Բաշինջաղյան» (հայ. և ռուս., 1957) մենագրության:

Երկ. Ваграм Гайфеджян: Альбом (рус., хай., англ., кагм.՝ Է. Գայֆեճյան), Е., 2002; Ваграм Гайфеджян (կազմ.՝ Է. Գայֆեճյան), Е., 2013.

ԳԱՆԹԱՐՅԱՆ Սամվել (22.9.1838, Կ. Պոլիս–25.10.1908, Վենետիկ), բառարանագիր: Սովորել է Վենետիկի Մխիթարյան դպրոցում: Մխիթարյան միաբանության անդամ (1855-ից): 1863–65-ին՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր: Գրել է «Տարերք հռետորական արուեստին» (1875) աշխատությունը, կազմել բառարաններ («Բառարան գաղղիերէն-հայերէն-տաճկերէն», 1886, 1912, «Բառարան իտալերէն-հայերէն», 1908): Հայ-ից ֆրանս. է թարգմանել Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոցը» (1869), ֆրանս-ից հայ.՝ Ա. Լամարթինի երկերից:

Գ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

«ԳԱՆՁԱՍԱՐ», կրոն., հաս., մշակութ. երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Բերիո թեմի ազգ. առաջնորդարանի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1978-ից (1978–81-ին՝ «Պարբերաթերթ», 1982–91-ին՝ «Օշական») Հալեպում: Խմբագիրներ՝ Հակոբ *Չոլաքյան,* Արարատ Թոսունյան, Զավեն Սապունճյան, Մարի Մերտխանյան, Խաչիկ Շահինյան-Տարագճյան, Զարմիկ Չիլապոշյան-Պողիկյան (2012-ից): Տպագրում է եկեղեց., կրոնաբարոյական, ազգ., հաս-քաղ., գրական, մշակութ., մարզ. և այլ նյութեր: Անդրադառնում է Հայ դատին, ՀՀ-ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, վերջին տարիներին Սիրիայում տիրող պատերազմ. իրավիճակին, սիրիահայության ճակատագրին:



Հովհաննես Գայայանի *«Բառարան-գանձարան հայերէն լեզուի»-ի (1983, Բեյրութ) տիտղոսաթերթը*



Վահրամ Գայֆեճյան. *Ս. Տարոնցու «Կռիվ Դնեպրի հետ» (1932, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*




«Գանձասար», *1978-ից, Հալեպ (№ 3, 2013)*



«Գանձասար», *1991-ից, Երևան (հ. 1)*



Շահան Գանտահարյան



Գրիգոր Գապասաքալյանի *«Նուագարան երաժշտական» (1803, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*

«ԳԱՆՁԱՍԱՐ», աստվածաբան. հանդես: Հայ առաքել. եկեղեցու Արցախի թեմի համանուն աստվածաբան. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1991-ից Երևանում (հ. 1–8...): Գլխ. խմբագիր՝ Մեսրոպ քհն. *Արամյան*: Տպագրում է անտիպ ձեռագրեր, քնն. բնագրեր, աշխարհաբարի է փոխադրում ու հրապարակում գրաբար և օտար լեզուներով լույս տեսած հայրաբան. աշխատություններ, Հայ եկեղեցու հայրերի և նշանավոր վարդապետների երկերի ուսումնասիրություններ, վերլուծականներ, անդրադառնում է հայ հոգևոր մշակույթի (ճարտարապետություն, երաժշտություն, մանրանկարչություն ևն) զարգացման օրինաչափություններին, կանոններին:

Կենտրոնը ցայսօր տպագրել է նաև դավան., խրատ., մեկնաբան., ծիս., հայագիտ. ավելի քան 50 անուն գիրք:

ԳԱՆՁԱՐԱՆ, եկեղեց. տոներին նվիրված հանդիսավոր երգաշարերն ամփոփող հայկ. միջնադարյան ձեռագիր խազավոր մատյան: Ձևավորվել է հավանաբար X–XI դդ-ում: Գ-ի երգաշարերի կամ գանձ-շարերի ստեղծումը վերագրվում է Գրիգոր Նարեկացուն. այն որոշակի կառուցվածքով երգարան-ժող. է, որն արտացոլում է առավելապես X–XIV դդ-ում հոգևոր հիմներգության, տաղատիպ ժանրերի ծաղկումը: Գ-ի ձևավորման և հարստացման մեջ մեծ ավանդ ունեն նաև Ներսես Շնորհալին (XII դ.), Կոստանդին Սսեցին (XIII դ.), Գրիգոր Խլաթեցին (XIV դ.): Ուշ միջնադարում Գ-ին բնորոշ էր աշխարհականացման միտումը՝ զուտ ծիս. և ժող. ծագմամբ ստեղծագործությունների թափանցումը: Ուշագրավ Գ-ներից են Մատենադարանի № 3503, 4068, 7785, Փարիզի ազգ. գրադարանի № 79, Երուսաղեմի մատենադարանի № 231 ձեռագրերը: Տաղարանի երևան գալով՝ Գ. աստիճանաբար կորցրել է իր նախն. նշանակությունը:

Գրկ. Քյոշկերյան Ա., Գրիգոր Նարեկացու գանձերն ու Գանձարանների սկզբնավորումը, «ԲՄ», № 10, 1971: Հարությունյան Է., Մխիթար Այրիվանեցի, Ե., 1985: Արևշատյան Ա., «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991:

ԳԱՆՏԱՀԱՐՅԱՆ Շահան Գևորգի [ծ. 14.9.1964, Անթիլիաս (Լիբանան)], խմբագիր: Սովորել է Բեյրութի Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարանում (1971–82): Ավարտել է Հայկազյան համալսարանը (1987), ԵՊՀ մագիստրատուրան (1992), Մարդկային գիտ-ների ամերիկյան համալսարանը (հեռակա): Բեյրութում 1984–2000-ին խմբագրել է ***«Հայծեր»*** պարբ-ը, 2002-ից՝ ***«Ազդակ»*** օրաթերթի տնօրեն-գլխ. խմբագիր:

Հեղինակ է հայ-թուրք. հարաբերություններին, կիպրական հարցին, Արցախյան հիմնախնդրին և ազատամարտին, տեղեկատվ. դաշտին վերաբերող հոդվածների և հրապարակախոսությունների:

Լիբանանի և Հայաստանի լրագրողների միությունների, Լրագրողների միջազգ. ընկերակցության, Հայ լրագրողների համակարգող մարմնի գործադիր խորհրդի անդամ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պետ. հանձնաժողովի փոխատենապետ:

ՀՀ «Մովսես Խորենացի», ՀՀ ՊՆ հոբելյան. մեդալներ:

ԳԱՊԱՍԱՔԱԼՅԱՆ (Գապասախալյան) Գրիգոր Գասպարի (1740, Կեսարիա–1808, Կ. Պոլիս), երաժիշտ, բանաստեղծ, հայկ. արդի խազաբանության հիմնադիրը: Սովորել է ծննդավայրի Սբ Կարապետ վանքի դպրոցում, Կ. Պոլսում մասնագիտացել հայկ. և հուն. երաժշտության մեջ: Պաշտոնավարել է Կեսարիայի Սբ Կարապետ վանքում, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում, Գում Գափուի Սայր եկեղեցու դպրոցում դասավանդել երաժշտություն:

Գրել է երաժշտագիտ. 4 աշխատություն, որոնցում փորձել է բացահայտել միջնադարյան խազագրության գաղտնիքը, մշակել է հայկ. խազագրության նոր համակարգ:

Գ-ի **«Նուագարանը»** տպագրվել է 1794-ին Կ. Պոլսում՝ Սայր դպրատան տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրքոյկ, որ կոչի նուագարան» (432 էջ, 8º, 11,8 x 7,3 սմ):

1803-ին Կ. Պոլսի Արապյան տպարանում լույս են տեսել նաև Գ-ի «Գիրք երաժշտականը», «Նուագարան երաժշտականը» (2-րդ հրտ.) և «Գրքոյկս կոչեցեալ երգարանը»:

«Համառօտութիւն երաժշտականի գիտութեանը» լույս է տեսել 1973-ին Երևանում («ԲՄ», № 11), 4-րդ աշխատությունը համարվում է կորած:

Գրկ. **Աթայան Ռ.,** *Գրիգոր Գապասաքալյանը և իազաբանությունը, «ԲՄ», № 1960:* **Թահմիզյան Ն.,** *Գրիգոր Գապասաքալյանի «Համառօտութիւն երաժշտական գիտութեան» անտիպ աշխատությունը, «ԲՄ», 1973, № 11:*

ԳԱՊԱՌԱՃՅԱՆ Գրիգոր (Կարապետ, 1779, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), բանասեր, խմբագիր: Սովորել է Վենետիկի Մխիթարյան դպրոցում: 1812–16-ին՝ Արշարունյաց ընկերության *«Դիտակ Բիւզանդեան»* շաբաթաթերթի խմբագիր:

Լույս է տեսել Գ-ի «Գիւաւոր աստղ կամ Պատմութիւն գիւաւոր աստղերու» (1812, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը: Ֆրանս. է թարգմանել և 1844-ին Փարիզում հրատարակել Եղիշեի «Վասն Վարդանանց պատերազմին» գիրքը:

Հանդես է եկել նաև Կարապետ Խապարաճի կեղծանունով:



Գառզու

ԳԱՌԶՈՒ (Զուլումյան Գառնիկ Հարությունի, 1.1.1907, Հալեպ–22.8.2000, Փարիզ), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ֆրանսիայի գեղարվ-ի ակադ-ի անդամ (1979-ից): Սովորել է Կահիրեի Գալուստյան վարժարանում և ֆրանս. լիցեյում, ավարտել Փարիզի ճարտ-յան դպրոցը (1929), հաճախել Մոնպառնասի «ազատ ակադեմիաները»: 1932-ին հեքիաթների և պատմվածքների նկարազարդումներով, նաև ծաղրանկարներով հանդես է եկել «Լե Ռեմպար», «Վենդրեդի», «Ինդանսիժեն», «Կոմեդի» (բոլորը՝ ֆրանս.), «Կավոշ» (հայ.) պարբ-ներում:

Պատկերազարդել և ձևավորել է Ա. Սորուայի «Ֆրանսիա» (1958), Է. Հեմինգուեյի «Հրաժեշտ զենքին» (1965), Ա. Քամյուի «Հուշատետր» (1965), Է. Պոյի «Սպանություն Մորգ փողոցում» (1969), Ժ. Վեռնի «Երկրից դեպի լուսին» և այլ գրքեր: 1966-ին Երևանում կազմակերպել է շուրջ 150 գունավոր վիմագրությունների և գրքերի ձևավորումների ցուցահանդես (նվիրել է ՀԱՊ-ին):



Գառզու. *Ա. Մորուայի «Ֆրանսիա» (1958, Փարիզ) գրքի պատկերազարդումներից*

Ֆրանսիացի նկարիչների ցուցահանդեսի 1-ին մրց. (1929, Փարիզ), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշան (1956) և Ասպետի աստիճան (1971), Արվ-ի և գրակ-յան ասպետի տիտղոս (1958), Հալմարկի (1943, 1951, 1953), «Իլ դը Ֆրանս» (1954), Տոկիոյի միջազգ. բիենալեի Մեծ (1955), ՀՆՄ Մ. Սարյանի անվ. (1981) մրց-ներ և այլ պարգևներ:

Գրկ. **Քեոսեան Գ.,** *Գառզու (Մոգական աշխարհի մը նկարիչը), [ա.թ., ա.փ.]:* **Հաբությունյան Վ.,** *Գառզու. նկարիչը և ժամանակը, Ե., 1987:* **Թորանեան Թ.,** *Գառզու: Իր ժամանակի վկան եւ ապագայի դեսպանը, Հալեպ, 1990:* **Խաչատրյան Շ.,** *Ֆրանսահայ կերպարվեստը, Ե., 1991:* **Lambertin P.,** *Garzou, P., 1962;* **Campagne J. M.,** *Garzou, P., 1981.*


ԳԱՍՍԱՊՅԱՆ Ներսես Լևոնի [6 (19).10.1904, Կ. Պոլիս–1985, Պլովդիվ], բանաստեղծ, մատենագետ: Ավարտել է Կ. Պոլսի Խորենյան և Կեդրոն. վարժարանները: 1922-ից ապրել է Պլովդիվում: Աշխատակցել է «Հայ մամուլ», «Մասիս», «Արևելք» պարբ-ներին: 1938-ին Հակոբ Մարաշլյանի հետ խմբագրել է «Հայրենի տարեցոյցը»: «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Պատմա-բանասիրական հանդես» պարբ-ներում տպագրել է հոդվածներ, ուսումնասիրություններ հայ մամուլի և բուլղարահայ գաղութի պատմության մասին: Կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլղարիայէ» («ՀԱ», 1941–47), գրել է «Հարիւրամեակ պոլսահայ լրագրութեան», «Մատենագիտութիւն հայերէն ու հայատառ թրքերէն գրքեր եւ պօէմներ հրատարակուած Պոլկարիոյ մէջ (1885–1944–1989)» (համահեղ., 2010) աշխատությունները:



Անուշավան Գասպարյան. *Պ. Պռոշյանի «Հունոն» (1960, Ե., Հայպետհրատ) գրքի պատկերազարդումներից*

ԳԱՍՊԱՐՅԱՆ Անուշավան Վարդանի (1.5.1914, Վան–29.10.1986, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1971): Ավարտել է ԵԳՈՒ (1937), ԵԳԻ (1950), 1937-ին աշխատել է Հայպետհրատում:

Պատկերազարդել և ձևավորել է շուրջ 500 գիրք՝ Գ. Սևունցի «Թեհրան» (1952), Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1955), Տ. Շնչենկոյի «Կոբզար» (1957), Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» (1956), «Տերն ու ծառան» (1960), «Ոսկու կարասը» (1972), Ռուդաքիի «Հատընտիր» (1958), Պ. Պռոշյանի «Հունոն» (1960), Սայաթ-Նովայի «Երգեր», Վ. Միրաքյանի «Լալվարի որսը» (1968), Բաֆֆու «Սամվել» (1961), Գ. Ֆլոբերի «Սալամբո» (1959), Հ. Կամսարականի «Վարժա-



Գասպարյան. *Ս. Զաքարյանի «Հոգու վերադարձ» (2002, Ե., «Զանգակ») գրքի կազմը*



Դավիթ Գասպարյան



Դ. Գասպարյանի *«Փակ դռների գաղտնիքը» (1994, Ե., «Ապոլոն», ձևավորող՝ Արտակ Բաղդասարյան) գրքի տիտղոսաթերթը*

պետին աղջիկը» (1956), Զ. Դարյանի «Սայաթ-Նովա» (1960–63), Վ. Անանյանի «Սևանի ափին» (1961), Հ. Հայրապետյանի «Խանն ու հովիվը» (1959), Ա. Ավդալի «Քրդական ժողովրդական հեքիաթներ» (1957), Ա. Խնկոյանի «Գայլն ու կատուն» (1957), Վ. Վարդանյանի «Գարնանային առավոտ» (1956) և այլ գրքեր:

ԳԱՍՊԱՐՅԱՆ Գասպար Կարապետի (15.9.1901, Երևան–15.2.1981, Երևան), բառարանագետ, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1969): Ավարտել է ԵՊՀ (1929):

Լույս է տեսել Գ-ի «Հայ բառարանագրության պատմություն» (1968) աշխատությունը, որը հայ., հայ-օտար և օտար-հայ. բառարանների պատմությունն է սկզբից մինչև 1965-ը: Մասնակցել է բառարանների կազմման և խմբագրման աշխատանքներին:

ԳԱՍՊԱՐՅԱՆ Գաստելլո Ավետիսի (ծ. 18.12.1941, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1966): 1980-ական թթ-ին աշխատակցել է «Գարուն» ամսագրին:

Նկարազարդել և ձևավորել է Ա. Պետրոսյանի «Ես մի ծառ եմ ծիրանի» (1984), Ժ. Ավետիսյանի «Սիմոն որդի Սիմոնի» (1984, հեքիաթ-վեպ, 4 գիրք), Պ. Սևակի եռահատոր «Ընտրանի» (հ. 1, 1991), Ս. Զաքարյանի «Հոգու վերադարձ» (2002) և այլ գրքեր, ձևավորել է նաև Վ. Բադալյանի «Գեորգի Յակուլով» (ռուս., 2010) մենագրության, «XVI–XIX դարերի իտալական և հոլանդական գծանկարը՝ Հայաստանի ազգային պատկերասրահում» (ռուս., 2001), «Դիմանկարը հայկական գրաֆիկայում» (2004) կատալոգների շապիկները:

ԳԱՍՊԱՐՅԱՆ Դավիթ Վազգենի (ծ. 18.10.1947, Երևան), գրականագետ, գրաքննադատ: Բանասիր. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (2002): Արվ. վաստ. գործիչ (2011): Ավարտել է ԵՊՀ (1970): 1971-ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի աշխատակից, 1985–89-ին՝ փոխտնօրեն, 1992–95-ին՝ առաջատար գիտաշխատող, 1995–98-ին՝ ԵՊՀ հրատարակչության տնօրեն, 1999-ից աշխատել է ՀՊՄՀ-ում. 2001–05-ին՝ ամբիոնի վարիչ, միաժամանակ, 1999-ից՝ ՀՀ կրթության ազգ. ինստ-ում, 1985–90-ին՝ «Քննադատական տարեգիրք» հանդեսի, 2000-ից՝ ***«Հայոց լեզու և գրականություն»*** ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Գ-ի «Սովետահայ գրականության տարեգրություն. 1957–1975» (համահեղ., 1977), «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը» (1979), «Բանաստեղծության ոգին» (1980), «Եղիշե Չարենցը և 20-ական թվականների սովետահայ պոեզիան» (1983), «Ժամանակ և շարժում» (1984), «Հայ սովետական պոեզիայի պատմություն» (համահեղ., 1987), «Հելիկոնի աստղը» (1988), «Հայ խորհրդային գրականության պատմական զարգացման ուղին» (1989), «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը» (1990), «Ողբերգական Չարենցը» (1990), «Հայրենիք և ճակատագիր» (1991), «Փակ դռների գաղտնիքը» (1994), «Եղիշե Չարենց. հայ բանաստեղծության մայրաքաղաքը» (1996), «Պարույր Սևակ» (2001), «Համո Սահյան» (2003), «Վահագն Դավթյան» (2007), «Ակսել Բակունց» (2009), «Գուրգեն Մահարի» (2013) աշխատությունները, «Հայ գրականություն» (հ. 1–4, 2000–10), «Քննադատություն ընդդեմ քննադատության» (2012) հոդվածների ժող-ները: 2010-ին թարգմանել, կազմել և տպագրության է պատրաստել «Ամերիկահայ անգլիագիր բանաստեղծներ» գրական անթոլոգիան: Կազմել է «Ոսկե շղթա» (2014) հայ քնարերգության ընտրանին, դպրոց. և բուհ. [«Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն» (2009), «Գրականության տեսություն» (2012), «Հայոց բանահյուսություն» (համահեղ., 2015)] դասագրքեր, գրել գիտամեթոդ. ձեռնարկներ:

ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. մրց. (1983), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2015):

Երկ.: Երկնային շուշան: Ազգային մշակույթ և ազգային ինքնագիտակցություն, Ե., 2004: Հայկական ապագայապաշտություն (ֆուտուրիզմ), Ե., 2009: Մարդասիրական բռնատիպություն (համահեղ.), Ե., 2014:

Գրկ.: Դավիթ Գասպարյան: Կենսամատենագիտություն, Ե., 2005:

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ջանիկ Երեմի [10.11.1939, գ. Հացառատ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–19.7.1993, Երևան], գեղանկարիչ, գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1960), Մոսկվայի պոլիգրաֆիայի ինստ-ը (1969): Դասավանդել է ԵԳՈՒ-ում (1969–77), ԵԳԹԻ-ում (1976–80): Ստեղծագործել է հիմնականում հաստոցային գրաֆիկայի և գրքի ձևավորման բնագավառներում: Եղել է «Հայաստան» (1969–77), «Սովետական գրող» (1982–91) հրատարակչությունների, «Հայրենիքի ձայն» թերթի (1980–82) գեղ. խմբագիրը:

Նկարազարդել և ձևավորել է Գ. Բանդուրյանի «Ողջակիզվող հոգին» (1968), Լ. Միրիջանյանի «Երգի հովիվը» (1969), Ի. Աբաշիձեի «Մերձեցում» (ռուս., 1969), Ա. Իսահակյանի «Հատընտիր» (ռուս., 1970), Զ. Լանգի «Շեքսպիրը մանուկների համար» (1970), Լ. Դուրյանի «Դառնամ փառաբանեմ» (1970) և «Արեգակն արդար» (1976), Հ. Ռեգիստանի «Առաջին տերևաթափ» (1971), Մ. Սարգսյանի «Քեռի Սիմոնը» (1971), Ռ. Համզաթովի «Լեռնցի աղջիկը» (1971), Ա. Մալդոնիսի «Բանաստեղծություններ» (ռուս., 1971), Պ. Սևակի «Ձեր ծանոթները» (1971), Ս. Ցվյագի «Շախմատային նովել» (1973), Շ. Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ» (ռուս., 1973), Ա. Պուշկինի «Փոքրիկ ողբերգություններ» (1974), Ե. Չարենցի «Հատընտիր» (1977), Ա. Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» (1978) և այլ գրքեր:

ՀԽՍՀ մշակույթի նախարարության 2-րդ կարգի մրց. (1967, «Այրվող հորիզոններ» շարքի համար. առանձին ալբոմով տպագրվել է 1977-ին):

ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա Քերոբի (ծ. 30.6.1946, Երևան), լեզվաբան, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1994), պրոֆ. (1996), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): Գիտ. վաստ. գործիչ (2013): Ավարտել է ԵՊՀ (1968): 1968-ից դասավանդում է ԵՊՀ-ում, 1993-ից՝ անգլ. բանասիրության ամբիոնի վարիչ: 2005-ից՝ *«Արմինիըն Ֆոլիա Անգլիպրիկա»* (անգլ.) միջազգ. գիտ. ամսագրի գլխ. խմբագիր: 2006-ից՝ «Յուրոփիըն Ջըրնըլ ըվ Ինգլիշ Ստադիզ» («Անգլիագիտական հետազոտությունների եվրոպական հանդես») ամսագրի, 2013-ից՝ «Սայընս ընդ Էդյուքեյշըն: Ը Նյու Դայմենշըն» («Գիտություն և կրթություն. նոր չափանիշներ») էլեկտրոնային ամսագրի խմբագր. խորհրդի անդամ: 2010-ից ղեկավարում է «Հայոց ցեղասպանության միջազգային արծարծումների տեքստաբանական քննություն» թեմայով ԳՀ աշխատանքները, որի շրջանակներում տպագրվում են գիտ. ուսումնասիրություններ:

Լույս են տեսել Գ-ի «Գեղարվեստական համեմատությունը որպես լեզվաբանաստեղծական հնար» (1991, 2008), «Համեմատության գործառական-հաղորդակցական քննություն» (2000, 2013), «Գեղարվեստական համեմատության լեզվապոետիկան» (ռուս., 2008), «Գործառական ոճագիտություն (անգլերենի գործառության արդիական հարցեր)» (2011), «Հայկական ցեղասպանությունը լեզվաճանաչողական մեկնակետ» (անգլ., 2014) աշխատությունները: Համահեղինակ է բուհ. դասագրքերի, ձեռնարկների [«Անգլերենի դասագիրք (զարգացրու լեզվական հմտություններդ)» (2005, 2013), «Բանասիրական ներթափանցումներ» (2007), «Անգլերենի ոճական գործառությունը» (2008, 2011), «Անգլերենի դասագիրք (մասնագիտական բաժինների ուսանողների համար)» (2013)]:

ԵՊՀ օտար լեզուների մասնագիտ. խորհրդի (1995-ից), Անգլ-ի ուսումնասիրության հայկ. ընկերակցության (2003-ից) նախագահ:


ՀՀ վարչապետի (2009), ԵՊՀ արծաթե և ոսկե (1999, 2006) հուշամեդալներ:

ԳԱՎԱՍԱՆԱԳԻՐՔ, միջնադարյան գիրք կամ պատմ. երկ. ամփոփում է աշխարհիկ և հոգևոր իշխանավորների ժամանակագր. կամ հաջորդության ցանկը, կարգը, աղյուսակը: Հնագույն Գ. վերագրվում է Եզնիկ Կողբացուն: Հայտնի է նաև նույն ցանկի Կանոնագրքի տարբերակը, որը կազմվել է Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք (897–898): Նմանօրինակ երկերից են «Գաւազանագիրք Հռոմայեցւոց պապից եւ կայսերաց»-ը, որը 1348–51-ին լատ-ից թարգմանել է ունիթոր մատենագիր *Ներսես Պալիանենցը* (երկի վերջում հայոց կաթողիկոսների, թագավորների և իշխանների անվանացանկերն են), *Ավետիք Եվդոկացու* «Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք համահաւաքացեալ հին գաւազանագրաց»-ը, *Ավետիք Տիգրանակերտցու* «Աղիւսակապատմագիրը», Մաղաքիա *Օրմանյանի* «Ազգապատումը» (հ. 3, մաս 3), Կարապետ Լուսարարյանի «Գաւազանագիրքը» (1912, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) են:

«ԳԱՒԱՌԻ ՁԱՅՆ», գրական, հաս., գյուղատնտ. եռօրյա լրագիր: Լույս է տեսել 1913–16-ին Ալեքսանդրապոլում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հովսեփ Միրզոյան: Հոդվածներ է տպագրել գավառի գյուղատնտեսության, կոոպերատիվ շարժման խնդիրների մասին, արծարծել է քաղաքի սան. վիճակի, կրթ. գործի և բնակարանային պայմանների բարելավման հարցեր: Լուսաբանել է Ալեքսանդրապո-



Զանիկ Գասպարյան. *Ռ. Համզաթովի «Լեռնցի աղջիկը» (1971, ե., «Հայաստան») գրքի կազմը*



Սեդա Գասպարյանի *«Հայկական ցեղասպանությունը լեզվաճանաչողական մեկնակետ» (անգլ., 2014, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*




Կ. Լուսարարյանի **«Գաւազանագիրք»**-*ի (1912, Երուսաղեմ) տիտղոսաթերթը*



Հայկ Գարագաշ



Անտոն Գարագաշյան



Ա. Գարագաշյանի
«Հատընտիր քաղուածք Աւետարաններէն...» (հ. 1, 1867, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը

լի մշակութ., հատկապես՝ թատեր. կյանքը: Մեծ տեղ է հատկացրել պատերազմ. իրադարձություններին և Հայկ. հարցին: Տպագրել է գրախոսականներ, չափածո և արձակ գործեր:

ԳԱՐԱԳԱՇ Հայկ Արտաշեսի (1893, Թեհրան–2.5.1960, Թեհրան), մանկավարժ, խմբագիր: Սովորել է Թեհրանի Լուի քոլեջում: Դասավանդել է հայկ. և պարսկ. դպրոցներում: Տիրապետել է պարսկ-ին, անգլ-ին, ֆրանս-ին, հուն-ին: Թեհրանում ստեղծել է թատեր. միություն: Հիմնադրել ու խմբագրել է *«Բոբոխ»* (1920–38) և *«Վերածնունդ»* (1930–53) թերթերը, «Բոբոխի» համար թարգմանություններ է արել ֆրանս. թերթերից, 1927, 1929 և 1930-ին հրատարակել է «Պարսկահայ տարեցոյց»-ը (Թեհրան, «Փարոս» տպ.): Ֆրանս-ից թարգմանել է Պ. Լուիի «Պիլդիսի երգերը» (1928, նույն տպ.), հայ-ից պարսկ.՝ Շիրվանզադեի «Ով է նրա մայրը», Նար-Դոսի «Ես և նա», Հ. Թումանյանի «Գիքորը», 4 պատմվածք՝ Ռ. Սևակից, և հրատարակել «Հայկական պատմվածքներ» (1957) վերնագրով:

ԳԱՐԱԳԱՇՅԱՆ Անտոն (Սատաթիա) Գրիգորի (11.2.1818, Կ. Պոլիս–19.11.1903, Կ. Պոլիս), պատմաբան, փիլիսոփա, լեզվաբան: Սովորել է Վիեննայի Մխիթարյան դպրոցում, ապա՝ Վիեննայի համալսարանում: Մխիթարյան միաբանության անդամ (1836-ից), քահանա (1840-ից): 1856-ին հրաժարվել է կրոն. գաղափարախոսությունից և առաջինը հայ իրականության մեջ իրեն հայտարարել մատերիալիստ և աթեիստ:

Գ. հայ քնն. պատմագրության հիմնադիրն է: Պատմագիտ. հայացքները դրսևորվել են «Նկարագիր ուսմանց, որ է բնութիւն, պատմութիւն, հարկ եւ օգուտ իւրաքանչիւր մասանց գիտութեան...» (1845, Վնն., Մխիթարյան տպ.), որտեղ անդրադարձել է նաև առաջին թարգմանությունների և պատմիչների լեզվին, և «Քննական պատմութիւն Հայոց» (մաս Ա–Դ, 1895, Թ., մաս Ա՝ Մ. Շարաձեի տպ., մաս Բ–Դ՝ Մարկիանոս Ռոտինյանի տպ.) աշխատություններում: Վերջինս ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև V դ-ի ազատագր. շարժումների ավարտը (484) ընկած ժամանակաշրջանը:

Գ. Հովսեփ *Գաթրճյանի* և Ղևոնդ *Հովհաննյանի* հետ թարգմանել է եպս. Բոսյուեի «Խօսք վասն տիեզերական պատմութեան» (1841, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունը, որտեղ գրաբարը բաժանել է դաս. և հետդաս. շրջանների: Գրել է աշխարհագրության («Տիեզերագիտութիւն կամ ուսումնական աշխարհագրութիւն...», 1872, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), հայ. քերակ-յան («Գործնական քերականութիւն հայկական լեզուի», 1870, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.) դասագրքեր, կազմել ընթերցարաններ, որոնք բազմիցս վերահրատարակվել են:

Լույս են տեսել նաև Գ-ի «Արուեստ ճարտարախօսութեան» (1844, Վնն., Մխիթարյան տպ.), «Սկզբունք տրամաբանութեան» (1864, ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), «Հատընտիր քաղուածք Աւետարաններէն...» (1866, հ. Ա, ԿՊ, Ճ. Արամյանի տպ., 1867, նույն տպ., «Մատենադարան նախնյաց» մատենաշար, 1891, ԿՊ, Միհրան Փափազյանի տպ.), «Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան» (1868, ԿՊ, Ռ. Քյուրքչյանի տպ.,), «Համառօտ փիլիսոփայութիւն կամ սկզբունք հոգեբանութեան...» (1868, ԿՊ, նույն տպ.), «Քննական պատմութիւն հայոց» (մաս Ա, 1880, ԿՊ, Հ. Գավաֆյանի տպ., մաս Բ–Դ, երկուսն էլ՝ 1885, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Աշխարհաբար քերականութիւն կամ Քերականութիւն արդի հայերէնի» (1885, ԿՊ, Հ. Գավաֆյանի տպ., 1891, ԿՊ, Մ. Փափազյանի տպ.), «Համառօտ պատմութիւն Ս. Գրոց: Պատկերազարդ» (1896, նույն տպ.) աշխատությունները: Թարգմանել է Ա. Լաֆոնտենի առակներից:

Գրկ. **Ակինեան Ն.,** *Գարագաշեան Մատաթիա, «ՀՍ», 1932, № 1–2:* **Շաքարյան Հ.,** *Ա. Մ. Գարագաշյանի աշխարհայացքը, Ե., 1962:* **Թևոսյան Ա.,** *Ա. Մ. Գարագաշյանի փիլիսոփայական և դրամաբանական հայացքները, Ե., 1962:*

ԳԱՐԱԳԱՇՅԱՆ (Գարագաշ) Կարապետ (1840, Կ. Պոլիս–1902, Կ. Պոլիս), հրապարակախոս, խմբագիր: Սովորել է նախ Կ. Պոլսում, ապա՝ Փարիզում: 1885-ին վերադարձել է Կ. Պոլիս, պաշտոնավարել եվմտական նախարարությունում: Թղթակցել է մի շարք թերթերի, խմբագրել «Գազետ էքոնոմիքե ֆինանսիե» (ֆրանս.) շաբաթաթերթը: Հրատարակել է «Քանի մը թարգմանութիւնք ի գաղղիականէ» (1878, թարգմ.՝ Գ. Այվազյանի, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.) գիրքը, կազմել և թարգմանել է «Ծաղկաքաղ յօտարազգի քերթողաց» (մաս 1, 3, 1879, 1880, ԿՊ, Պողոս Քիրիշչյանի տպ., մաս 2, 1880, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Հատընտիր թարգմանութիւնք յօտարազգի քերթողաց» (1886, ԿՊ, Գարեգին Պաղտատյանի տպ.) ժող-ները, թարգմանել Վ. Հյուգոյի «Առ սքողեալն» (1886, նույն տպ.) վեպը:

ԳԱՐԱԳԱՇՅԱՆ Վահագն Վազգենի [ծ. 1967, գ. Այնճար (Լիբանան)], խմբագիր, բանաստեղծ: Սովորել է ծննդավայրի Հառաջ-Գալուստ Կյուլպենկյան, ապա՝ Բեյրութի Սուրեն Խանամիրյան ազգ. վարժարաններում (1984–86), Հայկազյան համալսարանում (1986–89), Մելբուռնի Մոնաշե համալսարանում (1992): 1991-ին հաստատվել է Ավստրալիայում, 1 տարի եղել Սիդնեյի «Հորիզոն» ռադիոժամի տնօրենը: 1995-ին փոխադրվել է ԱՄՆ: 1995–96-ին՝ ***«Հայրենիք»*** շաբաթաթերթի խմբագրի օգնական, 1996–99-ին՝ խմբագիր, 1999-ից՝ ՀՅԴ Կանադայի կենտկոմի ***«Հորիզոն»*** պաշտոնաթերթի խմբագրապետ:

Լույս են տեսել Գ-ի «Երկնքի եւ երկրի արարողութիւնները» (2004), «Աստուածամօր զինեալները», «Սիրոյ եղանակները» (երկուսն էլ՝ 2007) բանաստեղծությունների ժող-ները: Հաս-քաղ. հոդվածներ է տպագրել ՀՅԴ «Երկիր», «Ազդակ», «Ասպարէզ», «Ազատ օր», «Կամք», «Հայրենիք», «Ալիք» պարբ-ներում:

ԳԱՐԱԿՅՈՉՅԱՆ Վարդերես Խնկիհանոսի (18.9.1939, Ստամբուլ–25.1.2013, Լոս Անջելես), բանաստեղծ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում (1957): Ավարտել է ԵՊՀ (1967): Ստամբուլում հիմնադրել է «Թո» հրատարակչությունը, հրատարակել 11 անուն գիրք, խմբագրել համանուն գրական-մշակութ. ամսագիրը (1959, 9 համար): 1968-ին Փարիզում հիմնադրել է ***«Էրևումնի»*** հրատարակչությունը:

Լույս են տեսել Գ-ի «Իմ Մասիս» (1961, 1966, Ե.), «Զոյգ աչքերէս» (1962, Ստամբուլ, 1967), «Վերցրէք մի պուտ երկնքի մովից» (1989), «Կեանքին զուգահեռ» (1981), «Արարման հետ» (2005), «Դեռ չեմ սպառել» (2005) բանաստեղծությունների ժող-ները, «Շնիկիս հետ», «Կենդանիներս խաղերով» (երկուսն էլ՝ 1962, Ստամբուլ) մանկ. գրքույկները:

ԳԱՐԱՆՖԻԼՅԱՆ Գարեգին (Արմենակ, 1877, Կ. Պոլիս–1955), բանասեր, խմբագիր: Սովորել է Վիեննայի Մխիթարյան դպրոցում: Մխիթարյան միաբանության անդամ (1895): Որպես ուսուցիչ և տեսուչ՝ պաշտոնավարել է Մխիթարյան վարժարաններում (Զմյուռնիա, Կ. Պոլիս): 1911–15-ին՝ ***«Ուռուվարան»*** դպրոց. ամսաթերթի (Կ. Պոլիս) գլխ. խմբագիր:

Գ-ի աշխատասիրությամբ և առաջաբանով հրատարակվել են Կ. Էքիարդի «Տիգրան Բ եւ հայ-լուկուլլեան պատերազմները» (1926, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունը, «Համառօտ ընդհանուր պատմութիւն ի պէտս բարձրագոյն նախակրթարաններու» (մաս Ա–Գ, Կահիրե, 1944–49) դասագիրքը: Թարգմանել է Հ. Գելցերի «Սկզբնաւորութիւնք բիւզանդեան բանակաթեմներու դրութեան» (1903), Հ. Պետերսենի «Նպաստ մը հայ լեզուի պատմութեան» (1904, երկուսն էլ՝ Վնն., Մխիթարյան տպ.) երկերը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՍԱՐԳԻՍՅԱՆ [ավազանի անունը՝ Նշան, 27.8.1932, Քեսաբ (Սիրիա)–29.6.1999, Սբ Էջմիածին], Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (Գարեգին Բ, 1983–95), Ամենայն հայոց կաթողիկոս (Գարեգին Ա, 1995–99): Սովորել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում (1946–52), Օքսֆորդի համալսարանում (1957–59): 1964-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1973-ին ստացել արքության տիտղոս:


Ընդարձակել ու արդիականացրել է Անթիլիասի դպրեվանքը (1977-ից Անթիլիասից փոխադրվել է Բիկֆայա), 1980-ին սկսել է



Վարդերես Գարակյոզյանի *«Կենդանիներս խաղերով» (1962, Սրամբուլ) գրքի կազմը*



Գարեգին Ա Սարգիսյան



Գարեգին Ա Սարգիսյանի *«Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց» (2002, Ե., «Մուղնի») գրքի փիփղոսաթերթը*

տպագրել *«Հաւակ հայագիտական տարեգիրքը»*, 1983–95-ին խմբագրել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության *«Հաւակ»* կրոն., կրթ., գրական և բանասիր. ամսագիրը, նախաձեռնել թանգարան-մատենադարանի շենքի շինարարությունը: 1995-ի սեպտ-ին Գ. Ա Ս-ի կոնդակով Սբ Գայանե վանքում ստեղծվել է Հայաստանյայց առաքել. եկեղեցու Քրիստ. դաստիարակության և քարոզչության կենտրոնը: Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարևանությամբ՝ նախկին դպրոցի վերանորոգված շենքում, հիմնադրել է Սբ Մեսրոպ Մաշտոցի անվ. դպրատունը:




Գարեգին Բ Ներսիսյան

Լույս են տեսել Գ. Ա Ս-ի «Արեւելեան ուղղափառ եկեղեցիների վկայութիւնը» (1968, Անթիլիաս), «Հայ եկեղեցին այժմ» (1970, Նյու Յորք), «Իրանը եւ հայերը» (1971, Թեհրան), «Հայկական քրիստոնէական աւանդոյթը Իրանում» (1974, Նոր Ջուղա), «Անցեալը անցած չէ» (1985), «Հայ մարդը հայ գիրքին դիմաց» (1990, 2002), «Հոգևոր կեանքի փնտրտուքի մէջ» (1991), «Յարութիւն եւ հայութիւն» (1993), «Անժամանակը ժամանակի մէջ» (1995), «Խորհէ եւ մտիր» (1995), «Արեան վկայութիւն» (1996), «Միւռոնուած ժողովուրդ միւռոնելի առաքելութիւն» (1996), «Բեթղեհէմի աստղին լոյսը՝ Ս. Էջմիածնի պրիսմակէն» (1997), «Հայրապետական գիր առ հայոց որ ի Ֆրանսա» (1997), «Խաչի ճանապարհ» (1998), «Հոգեմտաւոր ճառագայթումներ» (1999), «Կրօնական աստուածաբանական եւ հայագիտական երկեր» (2004, բոլորը՝ Անթիլիաս) աստվածաբան., հայագիտ., փիլ., բարոյագիտ. և գրական աշխատությունները, «Ձեռնարկ հովուական աստուածաբանութեան» (1995, Սբ Էջմիածին) դասագիրքը:

ՀՀ ԳԱԱ պատվ. անդամ, աշխարհի մի շարք կրոն. ու գիտ. հաստատությունների պատվ. դ-ր:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՆԵՐՍԻՍՅԱՆ [ավազանի անունը՝ Կտրիճ, ծ. 21.8.1951, գ. Ոսկեհատ (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1999–ից: 1965–71-ին սովորել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, 1972–75-ին՝ Վիեննայի համալսարանի աստվածաբանության ֆակ-ում: 1983-ին նշանակվել է Արարատյան հայրապետ. թեմի առաջնորդ. փոխանորդ, հոկտ-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1992-ին ստացել արքության տիտղոս: 1990-ից Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է: 1989-ին Արարատյան հայրապետ. թեմի հովանու ներքո հիմնադրել է Վազգենյան հոգևոր դպրանոցը (Սևանի թերակղզում), թեմում՝ Քրիստ. դաստիարակության կենտրոնը: 1998-ին ընտրվել է կաթողիկոս. ընդհանուր փոխանորդ, 1999-ին Մայր աթոռում հիմնադրել է Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի անվ. աստվածաբան. հայագիտ. կենտրոնը: Գ. Բ Ն-ի օրոք ձեռնադրվել են 300-ից ավելի եկեղեցականներ (քահանա, արեղա, վարդապետ, եպիսկոպոս), 2001-ի սեպտ. 23-ին՝ Քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակելու 1700-ամյակի հոբելյան. հանդիսությունների շրջանակներում օծվել է Երևանի Սբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին: 2003-ին նրա տնօրինությամբ նշվել են Սբ Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակները:



Գարեգին Բ Ներսիսյանի *«Հատընտիր պաշտոնականք» (2010, Էջմիածին) ժողովածուի կազմը*

Գ. Բ Ն-ի օրոք՝ 2006-ի մարտին, Քրիստ. դաստիարակության և քարոզչության կենտրոնից առանձնացվել է հրատարակչ. բաժինը. լույս են ընծայվել շուրջ 2000 անուն գիրք և բազմահազար տոնախոս-բացատր. թերթոններ:

Լույս են տեսել Գ. Բ Ն-ի «Յոթ խորհուրդ... յոթ ճանապարհ առ Աստված» գրքույկը (2001), «Հատընտիր պաշտոնականք» (2010), «Լուսաւորչի կանթեղին մէջ նոր ձէթ», «Հայոց Հայրապետի պատգամները» ժող-ները:

Գ. Բ Ն. «Մատենադարանի բարեկամներ» բարեգործ. հիմնադրամի նախագահն է: Միջազգ. ինֆորմատիզացիայի ակադ-ի անդամ (2000) և փիլ. դ-ր (2001), ԱրՊՀ (2000), ՀՀ ԳԱԱ (2002), ԵՊՀ (2004) պատվ. դ-ր:

Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության պատվ. մրց. (2010): ՀՀ, Հորդանանի, Պաղեստինի, Ռումինիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ֆրանսիայի պետ. ու եկեղեց. բարձրագույն պարգևներ:

Գրկ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի մատենագիտությունը. 1970–2010 թթ., «Էջմիածին» ամսագիր (կազմ.՝ Արտաւազդ քհն. Պողոսյան), Սբ Էջմիածին, 2011:

ԳԱՐԻՖ (Garritte) Ժերար (1915–1992), բելգիացի արևելագետ, հայագետ: 1936-ին ավարտել է Լուվենի (Բելգիա) կաթոլիկ. համալսարանը, որտեղ էլ դասավանդել է: Ուսումնասիրել է Բյուզանդիայի և Արևելքի քրիստոնյա ժողովուրդների (հայեր, վրացիներ, ասորիներ, ղպտիներ, եթովպացիներ) միջնադարյան մատենագրությունները: 1952-ից Լուվենում խմբագրել է «Մուսեոն» (ֆրանս.) բանասիր. հանդեսը: Գ-ի և նրա գործընկերների ջանքերով Բելգիայում ստեղծվել է հայագիտ. կենտրոն:

«Բնագրեր Ագաթանգեղոսի գրքի ուսումնասիրման համար» (1946, Վնտ.) աշխատության մեջ Գ. հրատարակել է Ագաթանգեղոսի պատմության հուն. նոր խմբագրությունը («Վարք»): Լույս է ընծայել նաև Ագաթանգեղոսի արաբ., վրաց. համառոտ խմբագրությունները և պատառիկներ: Ուսումնասիրելով հայ քաղկեդոնականների գրեթե կորած մատենագրությունը՝ հրատարակել է VII դ-ի վերջին կամ VIII դ-ի սկզբին հայ-քաղկեդոն. մատենագրի հայ. գրած՝ Հայ եկեղեցու IV–VII դդ-ի պատմության հուն. թարգմանությունը: Գ-ի ուսումնասիրությունների զգալի մասը նվիրված է հուն-ից հայ-ի (Ֆրենքուի գիտ. մրց.՝ 1959, Բելգիա) թարգմանություններին:

Երկ. Documents pour l'étude du livre d'Agathang, Vatican, 1946, p. 98–100.

Գրկ. **Բարթիկյան Հ.**, *«La Narratio de Rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «ԲՄ», 1962, № 6:* **Lamotte E.**, *Garritte, «Orbis», 1960, IX, № 1.*

ԳԱՐՍՈՅԱՆ Նինա Գևորգի (ծ. 1923, Փարիզ), պատմաբան, արևելագետ: Պատմ. գիտ. դ-ր (1958): Կոլումբիայի (ԱՄՆ) համալսարանի պրոֆ., հայագիտ-յան և Բյուզանդիայի պատմության ամբիոնի վարիչ: Աշխատությունները վերաբերում են միջնադարյան Հայաստանի պատմությանը, աղբյուրագիտ-յանը և մշակույթին, հայ-բյուզ., հայ-պարսկ., պարսկա-բյուզ. հարաբերություններին, Պավլիկյան շարժմանը [«Պավլիկյան աղանդը» (անգլ., 1967, Փ.)]: Անգլ. է թարգմանել Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» և Հ. Մանանդյանի «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին...» աշխատությունները: Հայոց պատմության մի շարք հանգուցային հարցերում Գ. պաշտպանել է հայագիտության մեջ մերժված առանձին տեսակետներ:

Երկ. The Iranian Substratum of the "Agatangelos" Cycle, W., 1982; Armenia between Bysantinum and The Sasanians, L., 1985; The Book of a Thousand Judgements (coauthors – Anahit Perikhanian, A. G. Perikhanian), 1997 (Mazda Publishing); Church and Culture in Early Medieval Armenia, 1999 (Ashgate Publishing).

«ԳԱՐՈՒՆ», մանկավարժ. ամսագիր: Լույս է տեսել 1866-ին Թիֆլիսում: Հրատարակիչ-խմբագիր՝ Սեդրակ ***Մանդինյան***: Տպագրել է կրթությանը, պատմությանը, պատմաաշխարհագր. հայտնագործություններին նվիրված և կրոնաբարոյական, դաստիարակչ. հոդվածներ, երեխաներին մատչելի տեղեկություններ հաղորդել բնության, մարդակազմության ու հաս. կյանքի մասին: Անդրադարձել է Ս. Նազարյանցի «Հանդէս նոր հայախօսութեան» աշխատությանը, տպագրել զանազան հաղորդումներ: Աշխատակցել են Ա. Տեր-Հակոբյանցը, Վ. Շահվերդյանցը, Կ. Օձնեցին և ուր.:

«ԳԱՐՈՒՆ», գրական-գեղ., ապա՝ գրական-քննադատ. ալմանախ: Լույս է տեսել 1910–12-ին Մոսկվայում (3 գիրք): Հրատարակել է «Մոսկվայի գրական խմբակը» (Վ. Տերյան, Ա. Ծատուրյան, Յ. Խանզադյան, Պ. Մակինցյան, Կ. Միքայելյան, Կ. Կուսիկյան, Ա. Մյասնիկյան և ուր.): Տպագրել է Ա. Իսահակյանի, Շիրվանզադեի, Լ. Շանթի, Դ. Դեմիրճյանի, Ռ. Սևակի, Ա. Ծատուրյանի, Հ. Հակոբյանի, Մ. Մանվելյանի, Շ. Կուրղինյանի և ժամանակի հայ այլ հեղինակների ստեղծագործություններ, գրաքննադատ. հոդվածներ: «Գ.»-ի տիտղոսաթերթը ձևավորել է Սարտիրոս ***Սարյանը***:



Ժերար Գարիփ



Նինա Գարսոյանի *«Պավլիկյան աղանդը» (անգլ., 1967, Փարիզ) գրքի կազմը*



«Գարուն» *ալմանախի (գիրք 1, 1910, ձևավորումը՝ Մ. Սարյանի) տիտղոսաթերթը*



«Գարուն», *1967-ից, Երևան (№ 7–8, 2012)*


«ԳԱՐՈՒՆ», գրական-գեղ., հաս-քաղ. ամսագիր: Լույս է տեսնում 1967-ից Երևանում: Մինչև 1990-ական թթ-ի սկիզբը՝ ՀԼԿԵՄ ԿԿ և ՀԳՄ վարչության հրատ.: Խմբագիրներ՝ Վարդգես *Պետրոսյան*, Անժիկ *Հակոբյան*, Մերուժան *Տեր-Գրիգորյան*, Լևոն *Անանյան*, Վարուժան *Այվազյան* (2001-ից): Տպագրում է հայ դաս. և ժամանակակից երիտասարդ գրողների ստեղծագործություններ, գրական բանավեճեր, գրախոսություններ, տեսաքննադատ. հոդվածներ: Ներկայացնում է սփյուռքահայ գրողների (Հ. Մնձուրի, Ե. Արմեն, Շ. Շահնուր, Զ. Որբունի, Վ. Մավյան, Ս. Տերունյան, Գ. Աճեմյան և ուր.), պարբերաբար լույս է ընծայում հայ և համաշխ. (թարգմանաբար) դաս. հեղինակների անտիպ գործեր, հուշագրություններ, գրաբար նորահայտ տեքստեր՝ ժամանակակից հայ-ի փոխադրված, ևն: Անդրադառնում է հանրապետության սոցիալ-տնտ., շրջակա միջավայրի պահպանության, ժողովրդագր. հարցերին, լուսաբանում է նաև հայոց պատմության, նյութ. և հոգևոր արժեքների պահպանման, արվ-ի, քաղաքաշինության խնդիրներ:



«Գեղամա աշխարհ», *1996-ից, Գավառ*

«ԳԵՂԱՄԱ ԱՇԽԱՐՀ», հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ: Գեղարքունիքի մարզպետարանի հրատ.: Լույս է տեսնում 1996-ից Գավառում (1996–2001-ին՝ «Գեղարքունիք»): Խմբագիրներ՝ Յուրի Խաչատրյան, Նաիրի Օհանյան, Խոսրով Խլղաթյան (2008-ից): Անդրադառնում է մարզպետարանի աշխատանքներին, մարզի հաս., տնտ., կրթ. և մշակութ. կյանքին, Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի կենսապաշարների պահպանման ու զարգացման հիմնախնդիրներին, ժողովրդագրությանը, շրջանի պատմությանը, անվանի դեմքերին, մշակութ. հուշարձաններին: Լուսաբանում է համահայկ. միջոցառումները: Առանձնակի տեղ է հատկացրել Արցախյան ազատամարտին և գեղարքունիքցի ազատամարտիկներին: Տպագրում է գեղ. ստեղծագործություններ, գրականագիտ. և պատմագիտ. հոդվածներ:

ԳԵՂԱՄՅԱՆ Եղիշե, **Հովակիմ Հայկունի** (1844, Ախալցխա–1920, Թիֆլիս), պատմաբան, հրապարակագիր, քահանա: Ավարտել է Թեոդոսիայի Խալիպյան վարժարանը: Աշխատակցել է «Հայկական աշխարհի», «Արարատ», «Մեղու Հայաստանի», «Մշակ» և այլ պարբ-ների:



Եղիշե Գեղամյանի «*Հայերի ազատագրական շարժումները...*» *(1915, Բաքու) գրքի փիփղոսաթերթը*

Լույս են տեսել Գ-ի կազմած «Պատմական քաղուածներ» (պր. 1–10, 1909–15, Բաքու, Ն. Երևանցյանի և «Աշխատավոր» տպ-ներ), «Հրապարակախօսական մանրուք» (1915, Բաքու, «Աշխատավոր» տպ.), «Պատմութեան դասերը» (1915), «Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում...» (1915), «Հայերի ազատագրական շարժումները XX դարում...» (1917), «Պատմական զրոյցներ» (1917, բոլորը՝ Բաքու, Ն. Երևանցյանի տպ.), «Ռուս բիւրոկրատիան եւ հայերը» (2-րդ հրտ.՝ 1917, Բաքու, «Վերա» տպ.), «Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը» (պր. 1–2, 1919, Բաքու, Արշակ Կարապետյանի տպ., վերահրտ.՝ 1994, Ե.), «Կարապետ արքեպիսկոպոս: Կենսագրություն» (առաջաբ. և ծնթգր.՝ Ա. Մելքոնյանի, հրտ.՝ 1999, առաջին անգամ տպագրվել է 1892-ին Թիֆլիսի «Արձագանք» պարբ-ում), «Ուղեգնացական ակնարկներ» (2010) աշխատությունները:

ԳԵՂԱՄՅԱՆ Սեյրանուհի Հայկազի [ծ. 10.1.1952, գ. Կամարիս (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզում)], արձակագիր, հրապարակախոս, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ (1973): 1977–92-ին աշխատել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրությունում, 1992–98-ին՝ ՀՀ նախագահի աշխատակազմում, 1999–2002-ին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր գրահրատարակչության և տեղեկատվության վարչությունում, 2010–14-ին՝ ՀՀ մշակույթի նախարարության ժամանակակից արվ-ի վարչության պետ:

Լույս են տեսել Գ-ի «Զրույցներ էթիկայի և էթիկետի մասին» (2003), «Հեռացող հիշատակներ» (2005), «Շարունակվող երկխոսություն» (2007), «Ես

Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ» (2008, 2010) էսսեների և հոդվածների, ակնարկների, «Փոքրիկ պատմություններ մեծ արվեստագետների մասին» (2007) գեղ. պատումների ժող-ները, «Աստծո առաքյալներից մեկը» (2010) վավերագր. վիպակը: Կազմել և խմբագրել է «Զարմանահրաշ փաստեր» (2004) զրույցների ժող-ը, «Ճանաչենք և սիրենք կենդանիներին» (2008) մանկ. հանրագիտարանը:

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2011), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2012) մեդալներ:

«ԳԵՂԱՐԴ», գրական, մշակութ. եռամսյա պարբերաթերթ: Մինրեալի Պոլսահայ մշակութ. միության հրատ.: Լույս է տեսնում 1969–ից Մինրեալում: Խմբագիրներ՝ Գևորգ Միքայելյան, Գևորգ Պաղճյան, Գաբրիել Պասմաճյան, Արա Կարմիրյան: Տպագրում է հայ հեղինակների ստեղծագործություններ, քննադատ., հրապարակախոս. հոդվածներ, լուրեր, լուսաբանում է կանադահայ համայնքի առօրյան:

«ԳԵՂԱՐԴ», տարեգիրք: Լույս է տեսել 1975–2000–ին (6 գիրք) Հալեպում՝ ՀԲԸՄ մատենագիտ. հանձնախմբի հովանավորությամբ: Խմբագիրներ՝ Հայկ Պարիկյան, Ռոպեր *Ճնպեճյան:* Տպագրել է գրական–գեղ., պատմաբանասիր. նյութեր, անդրադարձել է նաև սիրիահայ համայնքի կյանքին, Հայրենիք–Սփյուռք հարաբերություններին ևն:

«ԳԵՂARM», գրական–գեղ. պատկերազարդ եռամսյա հանդես: «Ոգի–Նաիրի» գեղարվ–ի կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 2002–ից Ստեփանակերտում: Հիմնադիր–խմբագիր՝ Հրանտ Ալեքսանյան: Տպագրում է ժամանակակից հայ և այլազգի հեղինակների գործեր, ինչպես նաև նմուշներ արդի հայ պոեզիայից՝ անգլ. թարգմանությամբ (2–3 էջ), հայ արձակից՝ ռուս. թարգմանությամբ (3–4 էջ): «Գրքերի տեսություն» բաժնում ներկայացնում է գեղ. գրակ–յան նոր հրատ–ները:

«ԳԵՂԱՐՈՒԵՍՏ», գրական, արվեստագիտ., երաժշտ. պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1908–21–ին Թիֆլիսում (7 գիրք, տպագրվել է նաև Վենետիկում): Խմբագիր՝ Գարեգին *Լևոնյան*: Լուսաբանել է գեղագիտ–յան, պատմության, գրակ–յան, կրթալուսավոր. հարցեր: Տպագրել է հայկ. արվ–ին, հայագիտ–յանը նվիրված հոդվածներ, որտեղ քննվել են ազգագրության, պարարվ–ի, ճարտ–յան, կերպարվ–ի և երաժշտության պատմության հարցեր, հրատարակել է նաև քննադատ. հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ՝ ժամանակի հայ, ռուս և արևմտաեվրոպ. գրակ–յան ու թատրոնի մասին, հայ ու եվրոպացի հայտնի նկարիչների գործերի վերատպություններ: «Գ.»–ում են առաջին անգամ տպագրվել Խ. Աբովյանի, Ա. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Վ. Փափազյանի, Մ. Մանվելյանի, Ե. Չարենցի և ուր. մի շարք գործեր:

Գրկ. Գալստյան Թ., Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Ե., 1979:

«ԳԵՂԱՓՆՋԻԿ», գրական–գեղ. պատկերազարդ ամսագիր, *«Տարազի»* հավելվածը: Լույս է տեսել 1907–ին Թիֆլիսում: Խմբագիր–հրատարակիչ՝ Տիգրան *Նազարյան*: Տպագրել է եվրոպ. տերությունների ու Ռուսաստանի փոխհարաբերություններին վերաբերող նյութեր, բողոքել է բռնությունների դեմ: Աշխատակցել են Նար–Դոսը, Ատրպետը, Գ. Բաշինջաղյանը, Մ. Խրիմյանը և ուր.: Եղել է ժամանակի բարձրորակ տպագրություն ունեցող հրատ–ներից:

«ԳԵՂՈՒՆԻ», պատմաբանասիր. և գրական–գեղ. պատկերազարդ հանդես: Մխիթարյան միաբանության հրատ.: Լույս է տեսել 1901–06, 1909, 1927, 1947, 1950–ին Վենետիկում: Խմբագիրներ՝ Սիմեոն *Երևյան*, Մկրտիչ *Պոտուրյան*: Ծանոթացրել է հայ և համաշխ. գրակ–յան, նկարչության, երաժշտության, ճարտ–յան դասականների գործերին (Է. Շահին, Հ. Այվազովսկի, Կոմիտաս, Մ. Սարյան, Գառզու, Հ. Ալխազյան, Վ. Սախոխյան, Գ. Շլղյան, Ջ. Ռոսինի, Ջ. Դոնիցետտի, Վ. Բելլինի, Ջ. Վերդի, Տ. Տասսո և ուր.), նպաստել է ընթերցողների գեղագիտ. ճաշակի ձևավորմանը, հետաքրքրություն առաջացրել հայ արվեստագետների նկատմամբ: Հանդեսի պատմաբանասիր., գրա–



«Գեղarm», *2002–ից, Ստեփանակերտ (№ 44, 2010)*



«Գեղարուեստ», *1908–21, Թիֆլիս (№ 7, 1921)*




«Գեղունի», *1901–50, Վենետիկ*



Բոգդան Գեմբարսկի



Լևոն Գենչ. *«Գրքերի առաջ» (1942, «Եֆրեյտորը գահի վրա» նկարաշարից)*



Գեորգ Դպիր Պալատեցու *«Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից»-ի (1826, Կ. Պոլիս) փիլոլոգասթերթը*

կանագիտ. և արվեստագիտ. բաժիններում տպագրվել են Լեոյի, Ս. Երեմյանի, Ս. Էփրիկյանի, Թ. Թորամանյանի, Զ. Խանզադյանի, Հ. Քյուրտյանի, Մ. Պարսամյանի և ուր. ուսումնասիրությունները: Լույս է ընծայել հայ գրողների (Ե. Դուրյան, Վ. Փափազյան, Դ. Վարուժան, Ա. Ղազարյան, Ս. Պարթևյան, Շիրվանզադե, Ռ. Սևակ, Լ.–Զ. Սյուրմելյան, Վ. Սարոյան, Կ. Զարյան և ուր.) արձակ և չափածո ստեղծագործություններ, թարգմանություններ համաշխ. գրակ–ից: Անդրադարձել է Խորհրդ. Հայաստանի մշակույթի և գիտ–յան ձեռքբերումներին:

ԳԵՄԲԱՐՍԿԻ (Gembarsky) Բոգդան (1905, Ս. Պետերբուրգ–1978, Վարշավա), լեհ հաս. գործիչ, հրապարակախոս, արևելագետ, թարգմանիչ: Սովորել է Վարշավայի Արլ. կենդանի լեզուների ինստ–ում: Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–45) ժամանակ պայքարել է ֆաշիզմի դեմ, եղել Վարշավայի 1944–ի հակաֆաշիստ. ապստամբության ղեկավարներից: Թարգմանաբար հրատարակել է հնդիկ և հայ (Հ. Շիրազի, «Բիբլիական») գրողների ստեղծագործություններից:

Լույս է տեսել Գ–ի «Սահվան դատապարտվածները» (հայ. հրտ.՝ 1992, թարգմ.՝ Ա. Տեր–Ղազարյանի) վիպակը, գրել է Մեծ եղեռնին, Հայ դատին վերաբերող հոդվածներ («Նամակ իմ թուրք ծանոթին», «Նամակ Ռ. Տանին», «Նամակ իմ հայ ընթերցողին», «Նամակ հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին», «Շրջանի հայկական քառակուսին ունի լուծում», «Երկրորդ նամակը իմ անծանոթ ընթերցողին» ևն), պայքարել է Հայկ. հարցի արդարացի լուծման համար, դասախոսություններ կարդացել հայ գրակ–յան վերաբերյալ:

Վազգեն Ա–ի օրինությամբ Գ–ի գերեզմանին տեղադրվել է սպիտակ մարմարե խաչքար:

ԳԵՆՉ (Գենչօղլյան) Լևոն Գևորգի (29.8.1897, Դոնի Ռոստով–21.11.1974, Դոնի Ռոստով), գրաֆիկ, ծաղրանկարիչ: Սովորել է Մոսկվայի Ֆ. Ռերբերգի ստուդիայում (1916–17), Դոնի Ռոստովի գեղ. ստուդիայում (1918–23), աշակերտել Մարտիրոս *Սարյանին*: Գ. քաղ. ծաղրանկարներ է տպագրել Մոսկվայի «Պրոժեկտոր» (1920–ական թթ.) և «Կրոկոդիլ» (1928–58, երկուսն էլ՝ ռուս.), նաև «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» և այլ պարբ–ներում: Հայտնի են «Մերոնք եկան», «Արյունով ու քրտինքով», «Եֆրեյտորը գահի վրա» (շարք) և այլ ծաղրանկարներ: Նկարազարդել է մի շարք գրքեր (Մ. Գորկու «Կլիմ Սամգինի կյանքը», 1935, ևն):

ԳԵՈՐԳ ԴՊԻՐ ՊԱԼԱՏԵՑԻ (Տեր–Հովհաննիսյան, 1737, Կ. Պոլիս–1811, Կ. Պոլիս), բառարանագիր, պատմաբան, թարգմանիչ: Տիրապետել է մոտ 10 լեզվի: Արժեքավոր է նրա «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից» բառարանը (1826, ԿՊ, ՃանիկԱրամյանի տպ.), որտեղ տրված են բառերի հայ. ու տաճկ. բացատրությունները և նրանց արաբ. նշանակությունը, վերջում ներկայացված են հայ. և պարսկ. նման բառերի ցանկ, դրանց ծագումը, փոխառության աղբյուրը: Գրել է «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան զարմին...» երկը (անտիպ): Ընդօրինակել է Մովսես Խորենացու և Եղիշեի պատմությունները, *«Գիրք վասպուրական»*–ը, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն» երկը: Թարգմանել է պարսկ–ից [«Գիրք մեծագին եւ պատուական ականց...», հրտ.՝ 1807, ԿՊ, Պողոս Հովհաննիսյանի (Արապյան) տպ.], հուն–ից («Հայելի գրոցն Հոմերոսի...», 1783, անտիպ): Գ. Դ. Պ. առաջին հայ հոմերոսագետն է. «Իլիական» պոեմի հայ. թարգմանության նախաբանում քննել է Հոմերոսին ու նրա պոեմներին վերաբերող բանասիր. ու գրականագիտ. մի շարք հարցեր: Գ. Դ. Պ–ու որոշ ձեռագրեր պահվում են Վենետիկի Մխիթարյան, Փարիզի Նուպարյան, Երևանի մատենադարաններում:

Գրկ. **Այվազեան Ա.,** *Շար հայ կենսագրութեանց, հ. 1, ԿՊ, 1893:* **Ա.ճառեան Հ.,** *Պատմութիւն հայոց նոր գրականութեան, պր. 1, Նոր–Նախիջևան, 1910:* **Աղայան Է.,** *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958, էջ 135–139:* **Չուգասզյան Բ.,** *Հայ–իրանական գրական առնչություններ (V–XVIII դդ.), Ե., 1963:* **Նույնի,** *Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունեութեան տարեգրութիւն. 1737–1811, Ե., 1994:* **Գասպարյան Գ.,** *Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 159–167:*

ԳԵՈՐԳ ՄԽԼԱՅԻՄ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, XVIII դ–ի 1–ին կեսի աստվածաբան, մատենագիր, վարդապետ: Սովորել է Փարիզում, տիրապետել լատ–ին, հուն–ին և ֆրանս–ին: Բուռն գործունեություն է ծավալել հատկապես Հովհաննես Կոլոտի պատրիարքության (1715–41) տարիներին: Գրել է դավանաբան. երկեր և ճառեր, որտեղ շոշափել է ժամանակի եկեղեց. գաղ. պայքարի հարցեր:

Գ. Մ. Կ–ու առաջին՝ **«Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց»** երկը երկար ժամանակ ընդունվել է որպես հեղինակային ամբողջ. գործ, բայց իրականում բաղկացած է 2 գրքից՝ «Ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան եւ հերձուածողութեան» հեղինակային երկից և «Յաղագս Պահոց»՝ լատ–ից նրա թարգմանած ու ժամանակի դաս. գրաբարով շարադրած աշխատությունից: 2–րդ գրքի տիտղթ–ին՝ «Պահք առաջին քրիստոնէից. ցուցեալ ի թղթոյն սրբոյն Օգոստինոսի: Թարգմանութեամբ շարադրողի վերոյ գրեցեալ գրքոյն»: Տպագրվել է 1734–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում (256 էջ, 4º, 17 x 12սմ): Վերահրատարակվել է 1750–ին՝ նույն տպարանում՝ «Ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան» վերնագրով (272 էջ, 8º, 11,1 x 6,7 սմ):

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև Գ. Մ. Կ–ու՝

«Ճառ վասն Ծննդեան եւ Չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» հայատառ թուրք. գիրքը. առաջին անգամ՝ 1787–ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (67 էջ, 8º):

Վերահրատարակվել է՝

1796–ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Ճառ ամենամաքուր Ծննդեան, եւ կտակ՝ Չարչարանաց…» (63 էջ, 8º, 12,6 x 8 սմ): 1793–ին Կ. Պոլսում՝ Մայր դպրատան տպարանում (71 էջ, 8º, 13,2 x 8 սմ):

«Վկայութիւնք Հայրապետաց յաղագս միոյ բնութեանն Քրիստոսի» (1749–50) երկը. առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության (118 էջ, 8º, 11 x 6,5 սմ):

ԳԵՎՈՐԳ Դ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, *Մեծագործ* (Քերեստեճյան Գրիգոր Պետրոսի, 5.7.1813, Կ. Պոլիս–6.12.1882, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1866–82–ին: Սովորել է Կ. Պոլսի ժառանգավորաց վարժարանում: 1848–ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1844–58 և 1861–66–ին եղել է Բրուսայի թեմի առաջնորդ, 1858–60–ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք: Մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) մշակմանը: 1867–ին Էջմիածնում ստեղծել է Ուսումնական հանձնաժողով, 1873–ին՝ Թեմերի դպրոց. տեսչություն, 1874–ին հիմնադրել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1868–ին՝ *«Արարատ»* ամսագիրը, կարգավորել վանքի տպարանն ու մատենադարանը: 1879–ին Մեսրոպ Մաշտոցի շիրիմի վրա կառուցել է Օշականի եկեղեցին:

Լինելով հմուտ շարականագետ՝ Գ. Դ Կ. միակերպություն և կանոնավարություն է մտցրել հոգևոր երաժշտության մեջ, Կ. Պաղտատյանի և Ն. Թաշճյանի օգնությամբ կազմակերպել է հայկ. ձայնագրության նոր համակարգի ուսուցումն ու տարածումը, Պատարագի, Ժամագրքի պաշտոն. վավերացումն ու հրատ–ը:

Գրկ. **Աբեղեան Մ.,** *Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն հայոց, Վաղ–պատ, 1899:*

ԳԵՎՈՐԳ ԵՐԶՆԿԱՑԻ (XIV դ–ի կես–1416), մանկավարժ, գրիչ: Սովորել է Տաթևի համալսարանում: *Գրիգոր Տաթևացու* հետ ընդօրինակել է Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի» մեկնությունը: Երզնկայի Կապոսի վանքում բացել է գրչության և ուսումնառության կենտրոն, որտեղ սովորելու են եկել Հայաստանի տարբեր վայրերից, նաև Ղրիմից:

Գեորգ Մխլայիմ Կոստանդնուպոլսեցի



«Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց» (1734, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Ճառ ամենամաքուր Ծննդեան, եւ կտակ Չարչարանաց» (1796, Կ. Պոլիս, Պողոս Հովհաննիսյանի տպ.) գրքի գլխազարդով և սկզբնագրով (27–րդ) էջ




Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի



Գևորգ Զ Չորեքչյան



Գևորգ Զ Չորեքչյանի *«Քարոզգիրք» (1917, Էջմիածին) ժողովածուի տիտղոսաթերթը*



Աստղիկ Գևորգյանի *«Վայոց ձորի և Որոտանի մանրանկարչությունը XIII–XVII դդ.» (2003, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ [2.12.1868, Նոր Նախիջևան (այժմ՝ Դոնի Ռոստով ք-ի շրջագծում)–9.5.1954, Էջմիածին, թաղված է Մայր տաճարի բակում], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1945–54-ին: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1879–89), Լայպցիգի համալսարանի աստվածաբանության և փիլ. բաժիններում ու կոնսերվատորիայում (1889–94): 1913-ին ձեռնադրվել է վարդապետ և նշանակվել Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ, 1917-ին՝ եպիսկոպոս: 1922–27-ին նշանակվել է Վիրահայոց թեմի առաջնորդ, 1941–45-ին ընտրվել է կաթողիկոս. տեղապահ:

Գ. Զ Չ-ի օրոք հրատարակվել է *«Էջմիածին»* ամսագիրը, վերաբացվել են Էջմիածնի հոգևոր ճեմարանը, տպարանը, ճեմարանին է վերադարձվել գրադարանը: ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինի հետ հանդիպման ժամանակ (1945-ի ապրիլ) արծարծել է Արմ. Հայաստանի խնդիրը, իսկ 1945-ի հոկտ. 25-ին կոնդակով դիմել է ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ նրանց միջամտությամբ հայկ. հողերը Թուրքիայից վերադարձնելու խնդրանքով, 1947-ի ապրիլի 20-ին հրապարակել է ընդարձակ կոնդակ՝ «Հայկական հարցի լուծման մասին»: Ողջունել է 1947-ին Նյու Յորքում գումարված Հայկ. համաշխ. կոնգրեսի աշխատանքները:

1917-ին Էջմիածնում լույս է տեսել Գ. Զ Չ-ի «Քարոզգիրքը»:

Գրկ. **Ստեփանյանց Ս.**, *Հայ առաքելական եկեղեցին ապրինյան բռնապետության օրոք, Ե., 1994: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938–1955), գիրք 6, Գևորգ Չորեքչյան կաթողիկոս Ամենայն հայոց, Ե., 1999:* **Մադոյան Ա.**, *Գէորգ Զ Չորէքչեան, Էջմիածին, 2010:*

ԳԵՎՈՐԳ ՄԿԵՎՌԱՑԻ, Լամբրոնացի, Սսեցի (1246/1247, Կիլիկիայի Լամբրոն բերդաքաղաք–1301), լեզվաբան, մատենագիր, երաժիշտ-տեսաբան: Աշակերտել է մորեղբորը՝ *Գրիգոր Սկևռացուն*, ապա՝ Բջնիի Գրիգոր արքեպիսկոպոսին: Քերակ-յան մեջ հմտանալու համար մեկնել է Խոր վիրապի միաբանություն, որտեղ աշակերտել է *Վարդան Արևելցուն*: Վերադառնալով Սկևռայի վանք՝ զբաղվել է գրչությամբ: 1267-ին խմբագրել է Տոնապատճառ ժող-ը, գրել է բանաստեղծություններ («Գէորգ պատանին է գրեաց»), մեկնություններ («Համառօտ մեկնութիւնն Գործոց առաքելոց», «Ներբող Յովհաննէսի աւետարանչին», 1288, «Մեկնութիւն Եսայեայ», 1295), լեզվաբ. աշխատություններ («Խրատ վասն հանգամանաց հեգից...», «Խրատք վասն առոգանութեանցն», «Խրատք յաղագս գրչութեան արուեստի»), գանձեր, տաղեր: Գ. Ս-ուն է վերագրվում Աստվածաշնչի նախադրությունների և գլխադրությունների կազմումը, նաև Գրիգոր Խուլի Շարակնոցի («Խլկցի») շարականների ուղղումն ու խմբագրումը: Մշակել է խազանշանների երաժշտ. կիրառության կատարելագործված սկզբունքներ՝ նոր մակարդակի բարձրացնելով միջնադարյան երաժշտածիս. երգարվ-ը: Գրել է նաև ներբողյաններ, խրատներ:

Գրկ. **Զաքրիանալեան Գ.**, *Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932:* **Զահուկյան Գ.**, *Քերականական և ողղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Ե., 1954:* **Խաչերյան Լ.**, *«Գրչության արվեստի» լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Ե., 1962:* **Թահմիզյան Ն.**, *Հիմնական խազերի միակցությունը, «ԲՄ», 1969, № 9:*

ԳԵՎՈՐԳՅԱՆ Աստղիկ Արսենի (ծ. 24.10.1932, Երևան), լրագրող: Ավարտել է ԵՊՀ (1955): 1955–70-ին՝ «Սովետական Հայաստան» օրաթերթի աշխատակից, ապա՝ գրական քարտուղար: 1970-ից աշխատում է ՀԺՄ-ում, 1992-ից՝ նախագահ: Աշխատակցել է հանրային ռադիոյին, հանրապետ. մամուլին:

ՀՀ Աժ հուշամեդալ (2011), Երևանի քաղաքապետի ոսկե մեդալ (2012):

ԳԵՎՈՐԳՅԱՆ Աստղիկ Բագրատի (6.9.1919, Ալեքսանդրապոլ–15.9.2011, Երևան), բանասեր, արվեստաբան: Արվեստագիտ. թեկնածու (1972): Ավարտել է ՀՊՄԻ (1945): 1945-ից՝ Մատենադարանի գիտաշխատող:


Լույս են տեսել Գ–ի «Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում» (1978), «Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն, IX–XVII դդ.» (1998), «Ծաղկաքաղ Աւետարան» (2001), «Ծաղկաքաղ Սաղմոսներ» (2001), «Վայոց ձորի և Որոտանի մանրանկարչությունը XIII–XVII դդ.» (2003), «Գրիգոր Նարեկացին մանրանկարներում և մեծ քերթողի տաղերը» (2005), «Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX–XVII դդ.» (2005), «Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, XVIII–XIX դդ.» (2007) աշխատությունները: Կազմել է «Հայկական զարդատառեր» (1991), «Կենդանազարդեր» (1996) ալբոմները: Մանրանկարներ է ստեղծել տերևների, խեցիների, մարմարի, բազալտի վրա:

ԳԵՎՈՐԳՅԱՆ Երջանիկ (Կամարնիկ) Հունանի [ծ. 5.11.1935, գ. Այգեշատ (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1991): Ավարտել է ԵՊՀ (1959): 2 տարեկանում զրկվել է տեսողությունից: 1970–ից աշխատում է ԵՊՀ–ում:

Լույս են տեսել Գ–ի «Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարանը» (1978), «Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարանը» («Շարժութարան», 2003), «Հայերեն–էսպերանտո–ռուսերեն, էսպերանտո–հայերեն–ռուսերեն բառարանը» (համահեղ., 2004): Համահեղինակ է «Սխալ և ճիշտ» (2006), «Հեռուստառադիոեթեր. լեզվական մեղանչումներից մինչև անաղարտություն» (2010) աշխատությունների:

Վահան Թեքեյանի անվ. մրց. (2004), ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2005):

Երկ. Հայերենի դարձվածքները, Ե., 1969: Բառաքերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1983: Շարժուների լեզուն (շարժաբանության ներածություն), Ե., 1988:



Երջանիկ Գևորգյանի *«Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան»-ի (2003, Ե., ԵՊՀ հրտ.) տիտղոսաթերթը*

ԳԵՎՈՐԳՅԱՆ Զաքարիա Հակոբի (1841, Թիֆլիս–1910, Թիֆլիս), մանկավարժ, հրատարակիչ: Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանը (1867): 1868–78–ին դասավանդել է Թիֆլիսի Սարիամյան օրիորդաց դպրոցում: 1869–95–ին համալսարան. ընկերների հետ հիմնադրել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցը, որտեղ դասավանդել է, եղել է նաև տեսուչ (ընդմիջումներով): 1874–ին Երևանում բացել է գրավաճառանոց, տպարան, որտեղ տպագրվել են պաշտոն. և ոչ պաշտոն. գրություններ, հայտարարություններ ևն, ինչպես նաև հայ գրողների գործեր՝ Է. Տեր–Գրիգորյանի «Թռչնիկ» (1876) բանաստեղծությունների ժող–ը, Ա. Գուլամիրյանի «Մենեքերիմ թագաւոր հայոց Վասպուրականի» (1878) ուղեգրությունը, Խ. Տեր–Խաչատրյանի «Քնար: Ժողովրդական երգեր»–ը (1880) ևն: 1880–ից տպարանը կոչվել է «Զաքարիա Գևորգյան և ընկ.»: Հեղինակ է նաև մանկավարժ. ձեռնարկների և աշխատությունների:



Լիդա Գևորգյանի *«Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը»» (1996, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

ԳԵՎՈՐԳՅԱՆ Լիդա Սուշեղի [ծ. 22.4.1931, գ. Ագարակ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)], պատմաբան, մամուլի տեսաբան: Պատմ. գիտ. դ–ր (1996): Ավարտել է ԵՊՀ բանասիր. ֆակ–ը (1954): 1957–58–ին աշխատել է «Երեկոյան Երևան» թերթի, 1958–69–ին՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի խմբագրություններում, 1969–ից՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ–ի գիտաշխատող:

Լույս են տեսել Գ–ի ««Սուրճ» ամսագիրը» (1982), «Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը»» (1996), «Նարեկյան մտորումներ» (1984), «Լուսինե» (1999, համահեղ.՝ Խ. Պայլան), «Բան ի խորոց առ Նարեկացի: Նարեկացիապատում» (2003, համահեղ.՝ Ա. Մկրտչյան) ուսումնասիրությունները: Գ–ի աշխատասիրությամբ տպագրվել է «Գրիգոր Արծրունի» (2010) հրապարակախոս. հատընտիրը, մասնակցել է «Հայ մամուլի պատմություն» (հ. 1, 2006) գրքի հրատարակման աշխատանքներին:



Համլետ Գևորգյան

ԳԵՎՈՐԳՅԱՆ Համլետ Ամբակումի (ծ. 10.7.1927, Երևան), փիլիսոփա: Փիլ. գիտ. դ–ր (1971), պրոֆ. (1972), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Գիտ. վաստ. գործիչ (2013): Սովորել է Մոսկվայի Բաումանի անվ. բարձրագույն տեխ. ուսումնարանում (1944–45), ավարտել է ԵՊՀ միջազգ. հարաբերությունների ֆակ–ը (1950): 1956–ից աշխատում է ՀՀ ԳԱԱ փիլ–յան և իրավունքի ինստ–ում. 1962–69–ին՝ պրոբլեմային, 1969–ից՝ գիտաթեմատիկ խմբի ղեկավար, 1992–ից՝ բաժնի վարիչ, 1993–95–ին՝ ինստ–ի տնօրեն: 1963–79–ին միաժամանակ դասավանդել է ԵՊՀ–ում,



Հ. Գևորգյանի «Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ» (2005, Ե., «Գիտություն») գրքի կազմը



Մամիկոն Գևորգյան



Գրիգոր Նարեկացու «Մատյան ողերգության. Տաղեր» (1979, Ե., «Սովետական գրող», աշխարհաբարի փոխադր.՝ **Վազգեն Գևորգյանի***) գրքի փիփղոսաթերթը*

1974–2003-ին եղել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության փիլիսյան գիտաճյուղային խմբագրության նախագահ, խմբագր. խորհրդի անդամ: Հեղինակ է «ՀՍՀ»-ի և «ՀՀՀ»-ի ավելի քան 110 հոդվածի:

Լույս են տեսել Գ-ի «Աբստրակցիայի դերը իմացության մեջ» (1957), «Ի՞նչ է գիտական կանխատեսումը» (1957), «Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ» (1959), «Հավանական և հավաստի գիտելիք» (ռուս., 1965), «Ինդուկտիվ մտահանգումներ» (1967), «Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկ» (1977), «Գիտության պատմական մեթոդաբանության ակնարկ» (ռուս., 1987), «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (ռուս., 1992), «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ» (1997), «Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ» (2005), «Փիլիսոփայություն, գիտություն, մշակույթ» (ռուս., 2010) մենագրությունները: Հրատարակել է նաև բազմաթիվ գիտ. հոդվածներ, համահեղինակ է «Տրամաբանություն» (1994) բուհ. դասագրքի:

ՀՀ նախագահի մրց-ներ շնորհող հումանիտար գիտ-ների հանձնաժողովի նախագահ (2003–11):

ՀԽՍՀ ԳԱ վաստակավոր (1983), ՀՀ «Մովսես Խորենացի» (2003) մեդալ:

Գրկ. **Купцов В., Метлов А.,** *О книге Г. Геворкяна «Вероятное и достоверное знание», «Вопросы философии», 1966, № 12;* **Багдасарян Н.,** *О книге Г. Геворкяна «Философия. Наука. Культура», «Вопросы философии», 2011, № 8.*

ԳԵՎՈՐԳՅԱՆ Մամիկոն Արտեմի [Հարությունի 17(29).11.1877, գ. Քաղաքիկ (այժմ՝ Նախիջևանի Օրդուբադի շրջանում)–17.6.1962, Երևան], թատեր. գործիչ, թարգմանիչ, բառարանագիր: Նախն. կրթությունն ստացել է Ագուլիսի դպրոցում: 1897-ին ավարտել է Լազարյան ճեմարանը, 1901-ին՝ Մոսկվայի համալսարանը: Եղել է դատապաշտպան, ծավալել է գրական-լրագրող. գործունեություն: 1917-ին տեղափոխվել է Թիֆլիս և մինչև 1919-ն աշխատակցել «Կավկազսկոյե սլովո» (ռուս.) թերթին: Թղթակցել է նաև «Սլովո» և «Թիֆլիսկի լիստոկ» (1906, երկուսն էլ՝ ռուս.) պարբ-ներին: 1921-ին Ա. Մյասնիկյանի հրավերով տեղափոխվել է Երևան, նշանակվել Առաջին պետ. թատրոնի տնօրեն, միաժամանակ եղել է *«Նորք»* հանդեսի պատ. քարտուղարը: 1928–31-ին՝ Հանրային գրադարանի տնօրեն:

Հայ. է թարգմանել Ա. Օստրովսկու «Անօժիտը» և «Արդյունավետ պաշտոն» (երկուսն էլ՝ 1948) պիեսները, Ա. Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Արզրում» (1937) ուղեգրությունը, ռուս.՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1948, տողացի) վեպը, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» (1953) երկը, Ա. Բակունցի «Միրհավը» պատմվածքը: Գրել է «Փառանձեմ» և «Վարդազար» պիեսները, որոնք բեմադրվել են հայկ. թատրոններում: 1943–60-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ում, մասնակցել ռուս-հայ. քառահատոր բառարանի (1954–58) ստեղծմանը:

Գրկ. **Ղազարյան Ռ.,** *Մամիկոն Գևորգյան: Կյանքն ու գործունեությունը, Ե., 2008:*

ԳԵՎՈՐԳՅԱՆ Միքայել Անուշավանի (ծ. 6.7.1950, Թբիլիսի), հրատարակիչ: Ավարտել է Մոսկվայի պոլիգրաֆիայի ինստ-ը (1978): 1976–80-ին՝ Լենինականի № 4, 1980–91-ին՝ Երևանի ***Գունավոր տպագրության*** (1996-ից՝ «Զվարթնոց» պոլիգրաֆ. ձեռնարկություն) տպարանների, 1991–97-ին՝ Պոլիգրաֆմիավորման տնօրեն, 1997–2000-ին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր հրատարակչ. գործերի վարչության պետի տեղակալ, 2000-ից՝ «Զվարթնոց» պոլիգրաֆ. ձեռնարկության խորհրդի նախագահ: Առաջինն է հանրապետությունում հիմնադրել օֆսեթ տպագրության տպարան:

«Զվարթնոց»-ում են տպագրվել «Ոսկեփորիկ» հանրագիտարանի 1-ին և 2-րդ հատորները (1993, 1996), «Հայկական համառոտ հանրագիտարանը» (հ. 1–4, 1990–2003) և այլ գրքեր:

ԳԵՎՈՐԳՅԱՆ Վազգեն Ասքանազի [31.3.1923, Ներքին Ախտա (այժմ՝ Ք. Հրազդան)–15.5.2002, Երևան], բանասեր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. թեկնածու (1969): Ավարտել է ԵՊՀ (1945): 1948-ից դասավանդել է ԵՊՀ-ում: Գրաբարից արևելահայ-ի է փոխադրել Արիստակես Լաստիվերցու «Պատմությունը» (1971), Գրիգոր Նարեկացու տաղերը, «Մատյան ողբերգության» (1979, ՀԳՄ Ս. Զորյանի

անվ. մրց՝. 1980, հրատարակվել է բազմիցս) պոեմը: Լույս է տեսել Գ–ի «Լերմոնտով» (1956) ողբերգությունը: Թարգմանել է Մ. Լերմոնտովի ստեղծագործություններից:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, հոգևոր բարձրագույն ուս. հաստատություն: Բացվել է 1874–ի սեպտ. 28–ին Էջմիածնում՝ ***Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի*** կաթողիկոսի նախաձեռնությամբ, և կոչվել նրա անվամբ: Ճեմարանի նպատակը Հայ եկեղեցու սպասավորներ ու դպրոցի ուսուցիչներ պատրաստելն էր: Ունեցել է 2 բաժին՝ դասարանական՝ 6–ամյա ուսուցմամբ (միջնակարգ կրթություն), և լսարանական՝ 3–ամյա ուսուցմամբ (հոգևոր բարձրագույն կրթություն): Ընդունվել են հայաբնակ վայրերի հոգևորականների ու չքավոր ընտանիքների ընդունակ զավակները՝ հանձնելով ընդունելության քննություններ: Սաների թիվը շուրջ 200–300 էր: Ուսանողները մանկավարժ. պրակտիկան անցկացրել են հատուկ հենակետային դպրոցում՝ վարժոցում, կամ Վաղարշապատի ծխական դպրոցներում: Ճեմարանը պահել են հիմնականում Էջմիածնի վանքի եկամուտներով և բարերարների նվիրատվություններով: 1905–ին Գ. ճ. ստացել է սեփական պարբերական հրատարակելու իրավունք:


Գ. ճ–ում կատարվել են նաև հայագիտ. ու բանասիր. աշխատանքներ. ուսումնասիրվել են Էջմիածնի մատենադարանի ձեռագրերը, կազմվել դասագրքեր, ուս. ձեռնարկներ: Ճեմարանում են պատրաստվել, քննարկվել և տպագրվել հայոց լեզվին, պատմությանը, մանկավարժությանը վերաբերող բազմաթիվ բարձրարժեք աշխատություններ: Տարբեր տարիների այստեղ դասավանդել են Կոմիտասը, Ք. Կարա–Մուրզան, Վ. Սուրենյանցը, Ե. Թադևոսյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ս. Լիսիցյանը, Գ. Լևոնյանը, Հ. Հովհաննիսյանը, Կ. Կոստանյանը, Ս. Մանդինյանը, Գ. Էդիլյանը, Ա. Հովհաննիսյանը և ուր.: Շրջանավարտների մեծ մասը նվիրվել է մանկավարժությանը կամ զբաղվել հաս–քաղ. ու գիտ. գործունեությամբ: Գ. ճ–ում սովորել են Կոմիտասը, Մ. Աբեղյանը, Ս. Մելիքյանը, Ե. Թադևոսյանը, Կ. Տեր–Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը, Ա. Շահմուրադյանը, Գ. Լևոնյանը, Ա. Միկոյանը, Ա. Սեռավյանը, Պ. Մակինցյանը և ուր.:

1917–ի դեկտ–ին ճեմարանը փակվել է, վերաբացվել է 1945–ին: 1995–ին ճեմարանի շենքը, որպես սեփականություն, վերադարձվել է Մայր աթոռին: 1996–97–ին այն հիմնանորոգվել է ամերիկահայ բարերարներ Գևորգ և Սիրվարդ Հովնանյանների միջոցներով, և կրթօջախը վերանվանվել է Գևորգյան հոգևոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան):

Գրկ. **Գամաղեյան Մ.**, *Նվիրում կրթական գործին, Ե., 1986:* **Բադիկյան Խ.**, *Գևորգյան ճեմարանի երախտավորները, Ե., 2005: Նշանավոր ճեմարանականներ, պր. 1, 2, Էջմիածին, 2005, 2009:* **Սարգսյան Ե.**, *Մուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Գևորգյան ճեմարան, Էջմիածին, 2009:*

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Գերմանիայում հայ–ով առաջին տպագիր նմուշը 1583–ին Բեռլինում Լեոնարդ Թուրնայզերի (1531–1596) հրատարակած գրքում է՝ 10 տող Մատթեոսի Ավետարանից, իսկ առաջին ամբողջական գիրքը 1680–ին Լայպցիգում Յուստին Բրանդիի տպարանում տպագրված Անդրեաս Ակոլութոսի (ծ. թ. անհտ–1704) ***«Աբդիաս հայերէն»*** («Obadias Armenus») 88–էջանոց գրքույկն է: Այն Աստվածաշնչի Մարգարեությունների մի հատվածն է, որի բնաբանը և բառարանային առանձին հատվածներ հայ. են, մնացածը՝ լատ., իսկ վերջում դրված է հայոց այբուբենը՝ երկաթագիր և բոլորգիր:

1836–ին Լայպցիգում հրատարակվել է Կ. Նոյմանի «Հայ գրականության պատմության փորձ» (գերմ.), 1837–ին Բեռլինում՝ Հ. Պետերմանի «Հայոց լեզվի քերականությունը» (գերմ.) երկերը: Տպագրվել են նաև Մ. Եկմալյանի «Ներդաշնակեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի...» գրքույկը (18 էջ, 1896), Աբգար Էմիի «Ձայնագրու–




«Նշանավոր ճեմարանականներ» (պր. 1, 2005, Էջմիածին) գրքի կրկնաշապիկը

Գերմանիայի հայկական տպագրություն



Հայոց այբուբենի առաջին տպագիր օրինակ «Ուղևորություն Ավետյաց երկիր» (գերմ. 1486, Մայնց) գրքում



Versuch einer Geschichte
der
armenischen Literatur,
nach
den Werken der Mechitaristen
frei bearbeitet,
von
Carl Friedrich Neumann.
Leipzig, 1836.
Verlag von Johann Ambrosius Barth.

Կ. Նոյմանի «Հայ գրականության պատմության փորձ» (գերմ., 1836, Լայպցիգ) գրքի տիտղոսաթերթը


Գերմանիայի հայկական տպագրություն


GRAMMATICA
LINGUAE ARMENIACAE
AUCTORE
H. PETERMANN.

Հ. Պետերմանի «Հայոց լեզվի քերականությունը» (գերմ. 1837, Բեռլին) գրքի փիփղոսաթերթը


ԾՆՆԻԵԱՆ ԵՒ ՋԱՏԿԻ
ԵՒ
ԿԱՐԳ ՋՈՒՐ ՕՐՇՆԵԼՈՅ
ԾՆՆԴԵԱՆ.

Աբգար Էմիի «Երգաբանութիւնք ճրագալուցի ծննդեան եւ զատկի...» (1908, Լայպցիգ) գրքի հայ. փիփղոսաթերթը


ДНЕВНИКЪ
ОСАДЫ ИСПАГАНИ АФГАНАМИ.

Պետրոս դի Սարգիս Գիլանենցի *«Ժամանակագրություն...» (ռուս., 1870, ՍՊբ) գրքի կազմը*

թիւն հինգ ժամերգութեանց Աւագ շաբաթու համաձայն կանոնաց առաքելական Սուրբ եկեղեցւոյ Հայոց...» (1902), «Երգաբանութիւնք ճրագալուցի ծննդեան եւ զատկի եւ կարգի ջուր օրհնելոյ ծնննդեան. Համաձայն կանոնաց առաքելական Սուրբ եկեղեցւոյ Հայոց» (1908), «Երգաձայնութիւնք Հայաստանեայց առաքելական Սուրբ եկեղեցւոյ» (մաս Ա–Գ, 1920, բոլորը՝ Բրեյտկոպֆի և Հերտելի տպ.) գրքերը:

Ցայսօր Գերմանիայում հրատարակվել են շուրջ 15 անուն հայ. թերթեր և հանդեսներ, որոնց մեծ մասը լույս է տեսել անկանոն ու կարճատև:

1901–02-ին Սարբուրգում լույս է տեսել Գերմանիայում առաջին հայ. պարբ-ը՝ *«Հանդէս հայագիտութեան»* (2 համար) հայ. և գերմ.: Հրատարակիչներ՝ Ֆրանց Ֆինկ (պատ. խմբագիր), Եզնիկ վրդ. Գյանջեցյան, Հակոբ Սանանդյան: Տպագրել է հոդվածներ հայոց լեզվի, պատմության, ազգագրության, գրակ-յան խնդիրների մասին: Ֆինկը հրատարակել է նաև ցուցակ ձեռագրաց:

1914-ին Բեռլինում հրատարակվել է Գերմանա-հայկ. ընկերության «Մեսրոպ» (1 գիրք) հանդեսը՝ հայ., գերմ.: Խմբագիրներ՝ Ջեյմս Գրինֆիլդ և Ավետիք Իսահակյան: Տպագրվել են Յ. Լեփսիուսի, Պ. Ռորբախի, Ջ. Գրինֆիլդի գիտ. հոդվածները, Ռ. Զարդարյանի գեղ. գործերից մեկը:

1937–44-ին Բեռլինում հրատարակվել է նույն ընկերության «Հայաստան» հայագիտ. հանդեսը (18 պրակ)՝ գերմ.: Խմբագիրներ՝ Պ. Ռորբախ և Արտաշես Աբեղյան: Աշխատակցել են գերմանացի գիտնականներ Կ. Ռոթը, Կ. Մլաքերը, հայագետներ Ն. Ադոնցը, Վ. Տոտոմյանցը և ուր.:

Հայոց ազգ. խորհուրդը 1942–44-ին Բեռլինում հրատարակել է «Հայաստան» շաբաթաթերթը (խմբագիրներ՝ Վիգեն Սեղբոսյան, Ս. Հովիվ) և «Ազատ Հայաստան» ամսաթերթը (1943, խմբագիր՝ Ավետիք Գյուլխանդանյան), բաժանել են Հայկ. լեգեոնի մարտիկներին:

Ներկայում Քյոլնում լույս են տեսնում *«Արմենիշե-Դոյչե Քորրեսպոնդենց»* (գերմ., 1973-ից) և *«Գարուն»* (հայ., գերմ. և թուրք., 1995-ից) պարբ-ները:

Գրկ. **Պետրոսեան Հ.,** *Հայերը Գերմանիոյ մէջ, «Նաւասարդ» ամսագիր, № 110:* **Աբեղեան Ա.,** *Հայագիտութիւնը եւ հայ մշակոյթը Գերմանիայում վերջին երեսնամեակին, «Յուսաբեր»-ի թերթեն, 23 Մայիս–3 Յունիս, 1950:* **Օրդուխանյան Ա.,** *Գերմանիայի հայ ակադեմականների միության տարեգիրք 2001–2002, Ե., 2002:*

«ԳԵՐՄԱՆԻԿ», քառամսյա (սկզբում՝ եռամսյա, ապա՝ երկամսյա) հանդես: Մարաշի հայրենակց. միության Ամերիկայի շրջանակի հրատ.: Լույս է տեսնում 1930-ից Նյու Յորքում, ապա՝ Ուոթերթաունում, Աղլինգտոնում: Խմբագիրներ՝ Գրիգոր Գալուստյան, Յուհաննա Մկրտչյան, Անդրանիկ *Փոլատյան*, Փառեն Գազանճյան, Կարո Սոմճյան, Վահե Էլմաճյան: Սփյուռքի մարաշցիներին ներգրավել է հայրենակց. միության կրթ., մշակութ. գործունեության ոլորտներ, հայրենիք ներգաղթելու կոչ է արել, պարբերաբար տպագրել է ակնարկներ հայրենադարձ մարաշցիների, Նոր Սարաշ ավանի մասին, ազգագր. նյութեր, միության շրջաբերականներ, հայտարարություններ, ինչպես նաև գրական-գեղ. և պատմ. նյութեր: Ունի անգլ. բաժին:

ԳԻԼԱՆԵՆՑ Պետրոս դի Սարգիս (ռուս. աղբյուրներում՝ Պյոտր Գիլանսկի, Պետրոս Կալանիցկի, Պյոտր Սերգեև, ծ. թ. անհտ, Նոր Ջուղա–1724, զոհվել է Ռեշտի համար մղված մարտում), 1720-ական թթ-ի հայ ազգ-ազատագր. պայքարի կազմակերպիչներից: Սովորել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի դպրանոցում: Տիրապետել է մի քանի այլ լեզուների: 1716-ին Ամստերդամում աջակցել է Ղուկաս Վանանդեցուն՝ լույս ընծայելու հայ. գրքեր:

Գ. թողել է Նոր Ջուղայի բարբառով գրած զեկուցագրերի ժող.՝ «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի» («Կոռունկ հայոց աշխարհին», 1863, № 2–3, հրտ. և ծնթգր.՝ Գ. Ախվերդյանի). կազմված

է 133 միավորից, որի մի մասն ուղղված է ռուս. հրամանատարությանը, մյուսը՝ Մինաս վրդ. Տիգրանյանին, որտեղ ուշագրավ տվյալներ կան հակառակորդի զինված ուժերի, հաղորդակցության միջոցների մասին:

«Ժամանակագրութիւն...»-ը թարգմանվել և հրատարակվել է նաև ռուս. (1870, Ս. Պետերբուրգ, թարգմ. և առաջաբ.՝ Ք. Պատկանյանի) և անգլ. (1959, Լիսաբոն, թարգմ. և ծնթգր.՝ Կարո Օ. Մինասյանի):

Գրկ. Յովհաննիսեան Ա., Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Էջմիածին, 1916: Լեո, *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:*

ԳԻԼԱՎՅԱՆ Սարտին Գարեգինի (ծ. 10.2.1947, ք. Գորիս), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2003): Ավարտել է ՀՊՄԻ (1969): 1969–71-ին եղել է «Նոր ուղի» (Մասիս) թերթի բաժնի վարիչ, 1971-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում, 2005-ից՝ ՀՊՄՀ ***«Հայագիտական հանդեսի»*** գլխ. խմբագիր:


Լույս են տեսել Գ-ի «Ժամանակը և պոեզիան» (1990), «Պոեզիան ու ժամանակի շարժումը» (2003) մենագրությունները:



«Գինդ», *1993-ից, Երևան*

«ԳԻՆԴ», տնտ., տեղեկատվ., գովազդային շաբաթաթերթ: Հիմնադիր-հրատարակիչ՝ «Գինդ» ընկերություն: Լույս է տեսնում 1993-ից Երևանում (սկզբում՝ «Գինդ exspress», տպագրվել է նաև ռուս.):

«ԳԻՏԱ-ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», եռամսյա հանդես: Լույս է տեսել 2004–12-ին Երևանում: ՀՀ ԱՆ առողջապահ-յան ազգ. ինստ-ի հրատ.: Գլխ. խմբագիր՝ Մկրտիչ Ավագյան: Տպագրել է նյութեր տես. և գործն. բժշկության վերաբերյալ:



«Գիտա-բժշկական հանդես», *2004–12, Երևան (№ 2, 2009)*

«ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ», ԵՃՇՊՀ-ի գիտ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1996-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Հովհաննես Թոքմաջյան, պատ. խմբագիր՝ Յուրի Սաֆարյան: Ժող-ն ունի ճարտ-յան, Երկրի մասին գիտ-ների, տեխ., ֆիզմաթ., իրավաբ. և քաղ. գիտ-ների, տնտեսագիտ-յան, արվեստագիտ-յան և այլ բաժիններ: Տպագրում է հայ., ռուս. և անգլ. հոդվածներ (ամփոփում-ներով): Ժող-ի բովանդակությունը համառոտ ներկայացվում է ՌԴ-ի գիտատեխ. առաջընթացի և տեղեկատվության ԳՀԻ «Շինարարություն և ճարտարապետություն» ռեֆերատիվ գիտատեխ. պարբ-ում:

«ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ», մատենաշար: Լույս է տես-նում Երևանում (հ. 1–6..., 1994–2010...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ը: Խմբագրակազմ: Ընդգրկում է հնագիտ-յան, ազգագրության ու բանագիտ-յան անվանի մասնա-գետների՝ նախկինում տարբեր պարբ-ներում տպագրված և անտիպ աշխատություններ [Ա. Քալանթարի «Հայաստան. Քարե դարից միջնադար» (անգլ.՝ 1994, հայ.՝ 2007), «Վանստանի միջնադարյան արձանագրությունները» (1999) և «Նյութեր հայկական և ուրարտա-կան պատմությունից» (2003, երկուսն էլ՝ անգլ.), Կ. Ղաֆադարյանի «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության» (2007), Ս. Տեր-Ավետիսյանի «Հայագիտական հետազոտություններ» (2010) ևն]:



«Գիտական շարժում», *1885–87, Կ. Պոլիս (Ա. փարի, 1885)*

«ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ», հայկ. առաջին բնագիտ. ամսագիրը: Լույս է տեսել 1885–87-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագրապետ՝ Նազարեթ *Տաղավարյան*: Ծանոթացրել է բժշկության, կենդանաբանության, բուսաբանության, տնտեսագիտ-յան, ֆիզիկայի, աշխարհագրության և գիտ-յան այլ բնագավառների նվաճումներին, տպագրել է հանրահայտ գիտնականների կենսագրություններ ևն: Հրատարակել է Ն. Տաղավարյանի «Բնական պատմութիւն» երկի 1-ին հատորի նյութերը և Վ. Փափազյանի «Գեղարուեստից ժողովին առաքեալները» գիտ. վեպը:

«ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ», ամսաթերթ: Լույս է տեսել 1923-ին Հալեպում: Խմբագիր՝ Վարդևառ Կարանֆիլյան (Վարդ-Մեխակ): Տպագրել է հոդվածներ և ուսումնասիրություններ սոցիոլոգիայի, գրակ-յան, բժշկության, գյուղատնտեսության և մանկավարժության վերաբերյալ:



«Գիտական տեղեկագիր», *1967-ից, Երևան (№ 1, 2013)*



«Գիտութիւն եւ գիտելիք», *1928–31, Անտվերպեն, Ֆրումոասա (№ 3, 1928)*



«Գիտության աշխարհում», *2005-ից, Երևան (№ 3, 2005)*

«ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», բնական և ճշգրիտ գիտ-ների քառամսյա հանդես: ԵՊՀ հրատ.: Լույս է տեսնում 1967-ից Երևանում: «ՀԽՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր» (1925–30), «Աշխատություններ» (1934–36), «Գիտական աշխատություններ» (1939–61), «Գիտական տեղեկագիր» (1962–66) պարբ-ների շարունակությունն է: Խմբագիրներ՝ Հովհաննես Չալթիկյան, Վիլեն Ասլանյան, Էդվարդ Չուբարյան, Վալերի Տեր-Անտոնյան, Ռուբեն Հարությունյան (1999-ից):

2009-ից հանդեսը հրատարակվում է մասնագիտ. առանձին շարքերով ֆիզիկա և մաթեմատիկա (խմբագիրներ՝ Էդուարդ Դանիելյան, Վարուժան Աթաբեկյան՝ 2012-ից), քիմիա և կենսաբանություն (խմբագիր՝ Ռուբեն Հարությունյան), աշխարհագրություն և երկրաբանություն (խմբագիր՝ Հողմիկ Սարգսյան, 2009-ից): Ներկայացնում է ԵՊՀ-ում բնական և ճշգրիտ գիտ-ների ոլորտներում կատարվող աշխատանքները, տպագրում է ՀՀ գիտ. հաստատությունների և արտերկրի ճանաչված գիտնականների ու երիտասարդ գիտաշխատողների հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով): 2009-ից ֆիզիկա և մաթեմատիկա շարքի հոդվածները տպագրվում են միայն անգլ., բոլոր շարքերն ունեն միջազգ. համարանիշներ:

«ԳԻՏԱՆՔ», հրատարակչություն: Ստեղծվել է 1998-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Ալեքսանդր Աղաբեկյան: Լույս է ընծայում երկլեզու մասնագիտ. բառարաններ: Տպագրել է Պ. Ֆլանագանի «Գուլդի ձկնագիրքը» (2006), Մ. Օնդաչի «Դիվիզաղերո» (2009), Ժ. Կուրտմանշի «Մի կիրակի Կիգալիում լողավազանի մոտ» (2007), Պ. Կոելոյի «Տասնմեկ րոպե» (2007) և այլ գրքեր, հայ դասականների սեղմավեպեր՝ Րաֆֆու «Սամվել» (2007), Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» (2007), Շիրվանզադեի «Քառս» (2007) ևն, նաև էկոնոմիկայի և ֆինանսների 4 դասագիրք՝ բուհերի համար:

«ԳԻՏՈՒԹԻՒՆ», պատկերազարդ ամսաթերթ: Լոզանի Հայկազյան վարժարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1904–05-ին Լոզանում, 1908–09-ին՝ Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Սարտիրոս Նալբանդյան (Մնալ): Լուսաբանել է բնագիտ-յան, քիմիայի, կենսաբանության, երկրաբանության, աստղագիտ-յան, բժշկության, գյուղատնտեսության և գիտ-յան այլ բնագավառների նվաճումները: Անդրադարձել է ժող. դպրոցների գործունեությանը, կազմակերպել գիտ. հոդվածների մրցույթ, փորձել է հայացնել գիտ. տերմինները ևն:

«ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏԵԼԻՔ», գիտ. պատկերազարդ ամսաթերթ: Լույս է տեսել 1928–29-ին Անտվերպենում (Բելգիա), 1930–31-ին՝ Ֆրումոասայում (Ռումինիա): Տպագրել է տեղեկություններ, հոդվածներ և ուսումնասիրություններ քիմիայի, ֆիզիկայի, բժշկության, ճարտ-յան, տիեզ. և երկրային երևույթների, գյուղատնտեսության մասին: Անդրադարձել է նաև արևի էներգիայի օգտագործման, անտառի պաշտպանության ու մշակման, էլեկտրականությունը նոր բնագավառներում կիրառելու խնդիրներին: «Հանրագիտակ» բաժնում պատմել է կենցաղային իրերի և նյութերի պատրաստման, նրանց օգտագործման եղանակների մասին, պատասխանել ընթերցողների հարցերին:

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ», գիտահանրամատչելի կրթատեղեկատվ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ նախագահության հրատ.: Լույս է տեսնում 2005-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Էդուարդ *Ղազարյան:* Ծանոթացնում է գիտ-յան ճյուղերի արդի զարգացումներին, նորագույն նվաճումներին, զարգացման հեռանկարներին, գիտության առանձին հիմնախնդիրների, հանրահայտ գիտնականների կյանքին ու գործունեությանը: Հանդեսը մեծապես նպաստում է երիտասարդ սերնդի գիտակրթ. և բարոյահոգեբ. դաստիարակությանը, մշակութ. արժեհամակարգի ձևավորմանը:

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԼՈԲՈՒՍ», գիտ. հանդես (տարեգիրք)։ Ռուսաստանի բնական գիտ-ների և Բնության ու հասարակության մասին գիտ-ների միջազգ. ակադ-ների հայկ. մասնաճյուղերի պաշտոն. հրատ.։ Լույս է տեսնում 2001-ից Երևանում՝ ռուս.։ Հիմնադիր և գլխ. խմբագիր՝ Ռաֆայել ***Մելիք-Օհանջանյան***, խմբագիր և գլխ. խորհրդատու՝ Տ. Գոինո (Ճապոնիայի ակադ-ի պատվ. նախագահ), խմբագիր՝ Վիլեն Մնացականյան։ Տպագրում է գիտ-յան տարբեր ճյուղերին և միջազգ. հիմնախնդիրներին վերաբերող գիտ. հոդվածներ (հայ. և անգլ. ամփոփումներով), ներկայացնում է համաշխ. գիտ-յան կարևոր նորությունները, լուսաբանում է հայկ. մասնաճյուղերի աշխատանքը, անդրադառնում է նաև հոգևոր, մշակութ., մարզ. ոլորտներին, միջազգ. անցուդարձին։

Հանդեսը տարածվում է նաև ՌԴ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում և այլ երկրներում։



«Գիտության գլոբուս», *2001-ից, Երևան (№ 9, 2010)*

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», գիտակրթ., հաս-քաղ. ամսաթերթ։ ՀՀ ԳԱԱ հրատ.։ Լույս է տեսնում 1993-ից Երևանում։ Խմբագիրներ՝ Ռաֆայել Ղազանչյան, Վլադիմիր Մուրադյան, Անուշավան Տեր-Գաբրիելյան (2008-ից)։ Լուսաբանում է ՀՀ ԳԱԱ նախագահության և ԳՀԻ-ների առօրյան, ներկայացնում է ակադ-ի անվանի գիտնականների, իսկ «ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների հանրագիտարան» էջում՝ արտերկրի հայ և այլազգի գիտնականների դիմանկար-կենսագրականներ, անդրադառնում է համաշխ. գիտ-յան նվաճումներին, ՀՀ-ի հաս-քաղ., կրթ., մշակութ. կարևոր իրադարձություններին։



«Գիտություն», *1993-ից, Երևան*

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ՀՀ ԳԱԱ հրատարակչություն։ Հիմնադրվել է 1936-ին՝ որպես ԽՍՀՄ ԳԱ հայկ. մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) նախագահությանը կից հրատարակչ. բաժին, 1940-ից գործել է ինքնուրույն, 1943-ից՝ ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 2000-ից՝ «Գ.»։ Գիտ. աշխատությունների հրատ-յան բնագավառում ՀՀ առաջատար հրատարակչություններից է։

Արժեքավոր են հրատարակչության լույս ընծայած «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1950–88...), «Հնագիտական պեղումները Հայաստանում» (հ. 1–25..., 1950–2012...), «Ռուս-հայերեն բառարան» (հ. 1–4, 1954–58), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (հ. 1–17..., 1959–2013...), «Դիվան հայ վիմագրության» (պր. 1–9..., 1960–2012...), «Գրական ժառանգություն» (գիրք 1–13..., 1961–80...), «Հայ նոր գրականության պատմություն» (հ. 1–5, 1962–79), «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» (հ. 1–16..., 1967–2005...), «Հայ ժողովրդի պատմություն» (հ. 1–8, 1967–84), «Հայաստանի հնագիտական հուշարձաններ» (պր. 1–21..., 1968–2009...), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (հ. 1–4, 1969–80), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (պր. 1–26..., 1970–2009...), «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» (գիրք 1–8..., 1974–2009...), «Հայկական ճարտարապետության պատմություն» (6 հատորով, հ. 1–3..., 1996–2004...), «Հայ արվեստի հարցեր» (գիրք 1–4..., 2006–12...) և այլ մատենաշարեր ու բազմահատորյակներ։



«Գիտություն» *հրատարակչության տպագրած գրքերից*

«Գ.» կարևորում է հայ դասականների երկերի ժող-ների հրատ-ը։ Լույս են տեսել Դ. Դեմիրճյանի «ԵԼԺ»-ի (1–14, 1976–87), Մ. Նալբանդյանի «ԵԼԺ»-ի (1–6, 1979–97), Դ. Վարուժանի «ԵԼԺ»-ի (հ. 1–3, 1986–87), Ս. Շահազիզի «Չափածո երկեր»-ի (1993), Սիամանթոյի «Անտիպ երկերի ժողովածու»-ի (2003), Հ. Թումանյանի «ԵԼԺ»-ի (հ. 1–10, 1988–99) ակադեմ. հրատ-ները, ընթացքում են Ա. Իսահակյանի «ԵԼԺ»-ի (14 հատորով, 2003-ից) և Լ. Շանթի «Երկերի ժողովածու»-ի (9 հատորով, 2007-ից) հրատ-յան աշ-



«Վիկտոր Համբարձումյան» (հայ., ռուս., անգլ., 2008, «Գիտություն») գրքի կազմը



«Գիտություն և տեխնիկա», *1963–2008, Երևան (№ 3, 1984)*

Գիր



Պապկերագրի նմուշներ

խատանքները: «Գրական հուշարձաններ» մատենաշարով տպագրվել են Շ. Ռուսթավելու «Ընձենավորը» (1966), Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն» (1969) և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» (1985) պոեմները, Քսենոփոնի «Անաբասիս» (1970) և Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» (1986) երկերը, Վ. Շեքսպիրի «Քրոնիկներ» (հ. 1–2, 1972–73) պատմ. պիեսները, Յ. Էքերմանի «Զրույցներ Գյոթեի հետ նրա կյանքի վերջին տարիներին (1823–1832)» (1975) գիրքը, Ֆ. Շիլլերի «Վալլենշտայն» (1977) պիեսը և այլ գործեր: Տպագրում է նաև քաղ., հրապարակախոս., գիտահանրամատչելի գրակ., դասագրքեր ևն: Վերջին տարիների ուշագրավ հրատ-ներից են «Հին Հայաստանի ոսկին» (2007) և «Վիկտոր Համբարձումյան» (հայ., ռուս., անգլ., 2008) ժող-ները, Ի. Կանտի «Զուտ բանականության քննադատություն» (թարգմ. և աշխատասիր.՝ Վ. Տերոյանի, 2010) երկը, «Տիգրան Մեծ» (Միջազգ. գիտաժողովի նյութերի ժող., 2011), Վ. Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» (2011), Յ. Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» (ռուս., գիրք I, հ. 1, 2011) աշխատությունները, «Տիգրան Մեծ» (2011), «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն» (2012), «Հայ կազմություններ» (2013) միջազգ. գիտաժողովների նյութերի ժող-ները ևն:

Հրատարակչությունը լույս է ընծայում նաև ՀՀ ԳԱԱ-ի 13 գիտ. հանդեսներ՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» (1940-ից), «ԳԱԱ զեկույցներ» (1944-ից), «Հայաստանի կենսաբանական հանդես» (1948-ից), «Հայաստանի քիմիական հանդես» (1957-ից), «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Տեխնիկական գիտություններ» (1957-ից), «Պատմա-բանասիրական հանդես» (1958-ից), «Հայաստանի բժշկական գիտություն» (1961-ից), «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Գիտություններ Երկրի մասին» (1964-ից), «Աստղաֆիզիկա» (1965-ից), «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Ֆիզիկա» (1966-ից), «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Մեխանիկա» (1966-ից), «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Մաթեմատիկա» (1966-ից), «Նեյրոքիմիա» (1981-ից՝ ՌԴ ԳԱ-ի հետ համատեղ):

Հրատարակչությունը ցայսօր լույս է ընծայել ավելի քան 6 500 անուն գիրք և հանդես՝ շուրջ 5 մլն տպաքանակով:

«Գ.»-ի հրատարակած գրքերն արժանացել են ՀՀ Պետ. (1980, 1985), ՀՀ նախագահի (2006), ՀՀ մշակույթի նախարարության (2008–13), ԱՊՀ երկրների ԳԱ-ների միջազգ. ընկերակցության (2010–13) և բազմաթիվ այլ մրց-ների ու պատվոգրերի:

Հրատարակչության տնօրեններ են եղել Խնկանոս Դանիելյանը, Սոս Գևորգյանը, Խիկար Բարսեղյանը, Վաչե Հովակիմյանը (1991-ից):

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ», գիտահանրամատչելի ամսագիր: Գիտատեխ. տեղեկատվության և տեխնիկատնտ. հետազոտությունների հայկ. ԳՀԻ հրատ.: Լույս է տեսել 1963–2008-ին Երևանում: Խմբագիրներ՝ Սարտին *Կապան*, Սարատ Ճուղուրյան, Հ. Խաչատրյան (2005-ից): Ներկայացրել է հայրեն. և արտասահմ. գիտ-յան նորությունները ու նվաճումները, անդրադարձել հայկ. գիտ-յան հիմնախնդիրներին, պատմության առանձին դրվագների: Տպագրել է հարցազրույցներ խորհրդ. անվանի գիտնականների հետ, արտատպել նյութեր ԽՍՀՄ և արտերկրի գիտահանրամատչելի պարբ-ներից ևն: Ամսագրում պարբերաբար տպագրվել են Վ. Համբարձումյանի, Վ. Ղազարյանի, Ս. Կարապետյանի, Հ. Մաղաքյանի, Լ. Միրզոյանի, Ա. Ճաղարյանի, Ս. Սարգսյանի, Լ. Գյուլբուդաղյանի, Ջ. Հացագործյանի, Ա. Պետրոսյանի, Գ. Սահակյանի և ուր. հոդվածներից:

2008-ից լույս է տեսնում էլեկտրոնային տարբերակով:

ԳԻՐ, որևէ գաղափարի կամ խոսքի արտասանահնչյուն. միավոր արտահայտող գծագիր պատկերների, պայման. նշանների՝ տառերի համակարգ: Ստեղծվել է գաղափարը, միտքը կամ առհասարակ խոսքը գրավոր եղանակով փոխանցելու համար: Որպես մշակութ.

երևույթ՝ Գ., բանավոր խոսքի համեմատությամբ, երևան է եկել անհամեմատ ավելի ուշ: Գ. ստեղծել են հաս., մշակութ. բարձր մակարդակ ունեցող ժողովուրդները: Գ–ի տեսակներն են պատկերագրությունը, գաղափարագրությունը, վանկագրությունը և հնչյունագրությունը:

Պատկերագրության միավորները (առարկայի գծագիր պատկերները) հիմնականում արտահայտում են այս կամ այն գաղափարը, միտքը (նույնիսկ կարող են ունենալ ամբողջ. միտք պարունակող հաղորդման նշանակություն): Այն օգտագործել են Հին աշխարհի ժողովուրդները՝ եգիպտացիները, չինացիները, հայերը և ուր.:

Գաղափարագրությունը Գ–ի հաջորդ՝ համեմատաբար կատարյալ ձևն է: Այն ***գաղափարագրերի*** (հիերոգլիֆ) համակարգ է, որի միավորները (պայման. նշաններ) հիմնականում արտահայտում են բառ կամ նրա իմաստակիր որևէ մաս: Հին եգիպտացիները գաղափարագիր ստեղծել են մ. թ. ա. մոտ 3100–ին, որը գործածվել է շուրջ 3500 տարի: Գ–ի այս տեսակն օգտագործել են նաև Միջին Արևելքի այլ ժողովուրդներ: Կենտր. Ամերիկայի բնիկները՝ մայաները, նույնպես ունեցել են իրենց գաղափարագրերը: Որոշ ժողովուրդներ (օր.՝ չինացիները) գաղափարագրությունից օգտվում են ցայսօր: Գաղափարագրության սկզբունքով են ստեղծված մաթ. թվանշանները, քիմ. նշանները, նրանից է սերում հնչյունագրությունը:

Վանկագրությունը գրային ինքնատիպ հորինվածք է (օր.՝ հնդկ. դևանագարի գրատեսակը):


Հնչյունագրության ամենահին տեսակը սեպագիրն է, որն ստեղծել են շումերները մ. թ. ա. III հազարամյակում: Հնչյունագրությունն ունի սեմ. ծագում, նրա միավորներն արտահայտում են հնչյունարտասան. տարրեր: Գրեթե բոլոր տառագիր այբուբենները սեմ. բաղաձայնագրի տարբեր ձևափոխություններն են: Գ–ի հնագույն վկայությունները վերաբերում են մ. թ. ա. IV–III հազարամյակներին: Գ. փյունիկեցիներից անցել է հույներին, ապա՝ հռոմեացիներին, ըստ էության՝ նաև հայերին: Տես նաև *Հայկական գիր*:

«ԳԻՐ ՈՒ ԳԻՐՔ», գրակ–յան և մշակույթի եռամսյա հանդես: Հայ գրակ–յան բարեկամների միության հրատ.: Լույս է տեսել 1970–80–ին Նյու Յորքում (1956–69–ին՝ «Հաղորդագրութիւն»)՝ հայ. և անգլ.: Խմբագիր՝ Խաչատուր Մակարյան: Ամերիկահայ ընթերցողին ծանոթացրել է գրական շարժման ընթացքին Հայաստանում և Սփյուռքում: Լեզուն համարել է ազգապահպանման հիմն. գործոն: Պարբերաբար ներկայացրել է սփյուռքահայ արվեստագետներին, լուսաբանել է Խորհրդ. Հայաստանի մշակութ. կյանքի նորությունները, պատմ. հուշարձանների պահպանման ու վերականգնման աշխատանքները:

ԳԻՐՔ, տպագիր (կամ ձեռագիր) գրական–գեղ., հաս–քաղ., գիտ. բովանդակությամբ ստեղծագործություն, տեղեկատվության, գիտելիքների տարածման, կրթության և դաստիարակության կարևորագույն միջոց: Դաս. իմաստով՝ Գ. տպագիր կամ ձեռագիր տեքստով և պատկերազարդումով իրար միացված առանձին թերթերից կամ ***տետրերից*** (48 էջից ավելի ծավալով) բաղկացած կոշտ կազմով ոչ պարբ. հրատ. է: Ներկայում Գ. պատրաստում և պահպանում են նաև զանազան կրիչների վրա (մագնիս., էլեկտրոնային ևն). կոչվում են թվային կամ էլեկտրոնային Գ–եր:

Գ–ի առաջացումը պայմանավորված է ***գրի*** գյուտով. հնում գրել են քարե կամ կավե սալիկների վրա (մեզ է հասել աշխարհի հնագույն գեղ. երկը՝ ասուրա–բաբել. աղյուսագիր «Գիլգամեշ» դյուցազներգությունը, մ. թ. ա. III հազարամյակ): Այդ ժամանակ Եգիպտոսում ի հայտ է եկել գրանյութի նոր տեսակ՝ ***պապիրուսը*** (անտիկ աշխարհում՝ VII դ–ից), մ. թ. II դարից՝ ***մագաղաթը***, իսկ XI–XII դդ–ից Եվրոպայում սկսվել է ***թղթի*** գործածությունը (Չինաստանում՝

Գիր



Հինվրացական «աստմթավրուլի» գիրը



Բոլորաձև երկաթագիր (989, «Էջմիածնի Աւետարան», Մատենադարան, ձեռ. № 2374)



«Գիր ու գիրք», *1970–80, Նյու Յորք (№ 3, 1970)*

Գիրք



Շումերական սեպագրով կավե սալիկ

Գիրք



Գլանափաթեթ (գրքի հնագույն տեսակ)



Ուրբաթագրքի (տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ, 1512, Վնտր.) 1-ին պատկերազարդ էջը



Հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը (տպագրիչ՝ Ոսկան Երևանցի, 1666–68, Ամստերդամ)

105-ից): Դրանց առանձնահատկություններից կախված՝ ձեռագրերը գրվել և պահվել են գրքի տարբեր նախատիպերի՝ ***գլանափաթեթի*** (պապիրուս) և ***կոդեքսի*** (տախտակ, մագաղաթ, թուղթ) ձևերով:

Հայտնի ամենախոշոր գլանափաթեթը «Հարիսի պապիրուսն» է (մ. թ. ա. XII դ.), իսկ տախտակե կոդեքսի մեզ հասած հնագույն օրինակները IV–V դդ-ի Աստվածաշնչի՝ Սինայի, Ալեքսանդրիայի և Վատիկանի ցուցակներն են, մագաղաթե կոդեքսի հնագույն նմուշը՝ Աստվածաշնչի Սինայի կոդեքսը («Կոդեքս Սինիատիկուս», IV դ.):

Կոդեքսն ունեցել է նաև տիտղոսաթերթանման տարր, էջերի ու տետրերի համարակալում, նաև կազմ, որն սկզբում պատրաստվել է միմյանց սոսնձած պապիրուսի, ապա՝ մագաղաթի թերթերից, հետագայում՝ կաշե կամ գործվածքապատ տախտակներից:

Ժամանակակից Գ. կառուցվածքով նման է կոդեքսին. կազմված է մամուլների ծալքերի եզրերով միմյանց ամրացված (պահանգված) էջերի կամ տետրերի դարսակից՝ բլոկից (տես ***Գրքի բլոկ***), պահպանակներից, կազմակողերից և գրքապանակից:

Գ-ի բլոկն սկսվում է ***տիտղոսաթերթով,*** որից առաջ երբեմն զետեղվում է նաև ճակատանկար (ֆրոնտիսպիս) կամ նախատիտղոսաթերթ և պահպանակով (ֆորզաց) միանում է կազմին: Վերջինը երբեմն պատում են կրկնաշապիկով, որը պաշտպանում է այն աղտոտվելուց և ծառայում է որպես ձևավորման ու գովազդի լրացուցիչ տարր:

Տեքստի բովանդակային ձևավորման համար օգտագործվում են շարակարգման (ռուբրիկացիա, լատ.՝ ruber–կարմիր. տեքստի ենթակարգային բաժանումներն սկսվել են կարմիր տողով) տարբեր եղանակներ: Գ-ի առանձին գլուխներ (բաժին) երբեմն ունենում են ***տիտղոսատներ*** (շմուցտիտուլ), բաժինների առաջին (էջքավոր) էջերն առանձնացվում են շարվածքային կամ գեղ. զարդարանքի միջոցներով (տես ***Գրքի ձևավորում***) ևն:

Գ-ի էջերի կարևոր տարր են նաև ***էջապիտղոսներն*** ու ***էջահամարները***: Գ. կազմելիս բլոկի համալրումը հեշտացնելու համար համարակալում են նաև Գ-ի տետրերը. նրանց 1-ին կամ 3-րդ էջում՝ արմատին մոտ, նշվում են հերթական համարը (մամլաթիվ) և Գ-ի պայման. անվանումը (մամլանիշ):

Մեխ. բազմացմամբ առաջին տպագիր Գ-երն արտատպվել են փայտե տպաձևերով (տես ***Փայտափորագրություն***): Այդ եղանակով Գ-եր առաջինը տպագրել են Կորեայում (704–751), Չինաստանում (713–741) և Ճապոնիայում (764–770), իսկ շարվածքային տպաձևով (***շարժական տառերով***)՝ Չինաստանում (1041–48, Բի Շեն): Եվրոպայում փայտափորագիր տպագրությունը տարածվել է XIV դ-ից, շարվածքայինը՝ 1440-ական թթ-ից՝ Յոհան ***Գուտենբերգի*** գյուտի շնորհիվ: Առաջին տասնամյակներում տպագրված Գ-երը նման էին ձեռագրերի. տպագիր գրքի առանձին կառուցվածքային մասրամասները դեռևս վերջնականապես չէին ձևավորվել: Տիտղոսաթերթերում բացակայում են թողարկման տվյալները: Գլուխների վերնագրերն ու գլխատառերը, ինչպես նաև ներտեքստային պատկերները նախ գրվել ու նկարվել են ձեռքով, ապա տպագրվել են առանձին և ներդիրի ձևով կցվել գրքին: Այդ պատճառով էլ մինչև 1501-ը տպագրված Գ-երն առանձնացվում են ***ինկունաբուլային գրքեր*** անվանումով:

Հայ. առաջին տպագիր Գ. ***Ուրբաթագիրքն*** է. հրատարակել է ***Հակոբ Մեղապարտը*** 1512-ին Վենետիկում: 1513-ին նա տպագրել է ևս 4 գիրք:

Հայաստանում առաջին Գ. տպագրվել է Էջմիածնում 1771-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու հիմնադրած տպարանում, Երևանում՝ 1876-ին (տես ***Երևանի տպագրություն***): Հայ. հնատիպ (մինչև 1800-ը լույս տեսած) Գ-երը 1095 անուն են (XVI դ-ում՝ 17,

XVII դ–ում՝ 180): 1801–50–ին հրատարակվել է շուրջ 1700, 1851–1900–ին՝ շուրջ 8300, իսկ 1512–1988–ին ամբողջ աշխարհում (ավելի քան 22 երկրում)՝ շուրջ 80 հզ. անուն հայ. Գ–եր:

Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումից հետո հրատարակչ. գործը կազմակերպվել է պետականորեն. 1920–91–ին տպագրվել է ընդհանուր թվով շուրջ 50 հզ. անուն Գ., այդ թվում՝ գիտ. հիմնարար աշխատություններ՝ «Հայ ժողովրդի պատմություն» (հ. 1–8), «Հայկական ԽՍՀ երկրաբանություն», «Հայաստանի ֆլորա», «Հայկական ԽՍՀ ֆաունա», մատենաշարեր՝ «Հայ դասականների գրադարան», «Ռուս դասականների գրադարան» ևն: Մեծ տպաքանակներով (5–20 հզ.) հրատարակվել են հայ (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Խ. Աբովյան, Րաֆֆի, Վ. Տերյան, Ա. Բակունց, Ե. Չարենց, Հ. Շիրազ, Պ. Սևակ, Հ. Սահյան և ուր.) և համաշխ. դասականների երկերի ժող–ներ:

1974–87–ին լույս է տեսել ***«Հայկական սովետական հանրագիտարանը»*** (հ. 12 + 1)՝ 100 հզ. տպաքանակով:

ՀՀ անկախության առաջին և հատկապես Ղարաբաղյան ազատագր. պատերազմի (1991–94) տարիներին, տնտ. ծանր վիճակի պատճառով, Գ–երի տպագրությունը կտրուկ նվազել է. հրատարակվել են փոքր տպաքանակներով (500–1000 օրինակ), 1994–ին՝ 224, 1999–ին՝ 577, 2000–ին՝ 670 անուն գիրք, իսկ վերջին շրջանում զգալիորեն աճել է տպագրվող գրքերի տեսականին՝ 2009–ին՝ 2027, 2013–14–ին՝ ավելի քան 3100 անուն Գ.:





«Գիրք» *հրատարակչության տպագրած գրքերից*

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համանահանություն): Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012:* Աղախանյան Գ., *Գիրքը և պարբերական մամուլը Հայկական ՍՍՌ–ում 40 տարում (վիճակագրական տվյալներ), Ե., 1960: Հայ հնատիպ գրքի մատենագրական ցուցակ. 1512–1800, Ե., 1963:* Բաբայան Ա., *Հայ գիրքը և տպագրությունը, Ե., 1963:* Կորկոտյան Ռ., *Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567–1850), Ե., 1964:* Դավթյան Հ., *Հայ գիրքը 1801–1850 թվականներին. մատենագիտություն [հ. 2], Ե., 1967:* Իշխանյան Ռ., *Հայ հնատիպ գիրքը, Ե., 1968:* Նույնի, *Հայ գրքի պատմություն, Ե., 1977, 2012:* Ոսկանյան Ն., Կորկոտյան Ռ., Սավալյան Ա., *Հայ գիրքը 1512–1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, հ. 1, Ե., 1988:* Ոսկանյան Ն. և ուր., *Հայ գիրքը 1851–1900 թվականներին, հ. 3, Ե., 1999: Հայ գիրքը 1901–1920 թվականներին (կազմ.՝ Օ. Գյուլումյան և ուր.), հ. 4, Ե., 2007: Հայ գիրքը 1921–1930 թվականներին (կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան), հ. 5, Ե., 2012:*


«ԳԻՐՔ», Հայաստանի ազգ. գրադարանի (ՀԱԳ) հրատարակչություն: Ստեղծվել է 1990–ին Երևանում (մինչև 1990–ը՝ ՀԱԳ–ի բաժին): Հրատ–յան գլխ. խմբագիրը ի պաշտոնե ՀԱԳ–ի տնօրենն է: Լույս է ընծայել կենսամատենագիտ. ժող–ներ, մասնավորապես՝ «Հիշարժան տարեթվեր»–ի ամենամյա հրատ–ներ՝ նվիրված հայ գրողներին, նկարիչներին, գիտնականներին, կոմպոզիտորներին: 1988–ից լույս է տեսել «Հայ գրքի մատենագրությունը» (հ. 1–5, 1967–2012), որն ամփոփում է տեղեկություններ ՀՀ–ում և արտերկրում տպագրված հայ գրքի մասին: «Հայոց ցեղասպանության մատենագիտությունը» տպագրվել է հայ. և ռուս.: Ամեն տարի հրատարակվում են «Նոր գրքեր» տեղեկատուները, «Հայաստանի գրադարաններ» վիճակագր. ժող–ը ևն: Հայ գրատպության 500–ամյակի առթիվ լույս է ընծայել «Գանձեր Հայաստանի ազգային գրադարանի» (2012) ալբոմը:




«Գիրք թղթոց» *(1288, Ջմմառի մատենադարան) ձեռագիր ժողովածուի 1 էջ*

«ԳԻՐՔ ԵՒ ՃԱՌ ՀՈԳԵՇԱՀ», քրիստ. եկեղեցու աստվածաբան վարդապետների ճառերի ժող.: Ընդգրկված են Գրիգոր Աստվածաբանի, Հակոբ Մծբնացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Եփրեմ Ասորու և ուր. ճառերը: Տպագրվել է 1722–ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում (488 էջ, 4^0, 16,3 x 10,5 սմ):

«ԳԻՐՔ ԹՂԹՈՑ», կրոնադավանաբան. ժող.: Պատմ. սկզբնաղբյուր է Հայ եկեղեցում քաղկեդոն. հոգևորականության հրահրումներով հատկապես VII դ–ում ծայր առած վեճերի լուսաբանման և ուսումնասիրման համար: Ենթադրվում է, որ նրա հիմն. մասը կազմվել է VII դ–ում՝ Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի օրոք (615–628): Հետագա–



«Գիրք Ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց»-ի *(1688, Նոր Ջուղա) փիփղոսաթերթը*



«Գիրք խոստովանութեանց»-ի *(1698, Կ. Պոլիս, Աստվածատուր Դաշտեցու տպ.) փիփղոսաթերթը*



«Գիրք հրաշից»-ի *(1772, Վնտ.) փիփղոսաթերթը*

յում ժող-ին կցվել են այլ թղթեր, որոնց թիվը հասել է 98-ի: Դրանք ժամանակագր. առումով ընդգրկում են V–XIII դդ.:

«Գ. թ.» բացվում է Կ. Պոլսի արք. Պրոկլի նամակով՝ ուղղված Սահակ Ա Պարթև կաթողիկոսին (387–439): Դատապարտելով Նեստորին և նրա համախոհներին՝ հեղինակը Հայ եկեղեցու հայրերին կոչ է արել զգուշանալ Հայաստանում նեստորականության տարածումից: Հայ հեղինակներն իրենց թղթերում մերժել են Արիոսի, Նեստորի աղանդը, Քաղկեդոնի եկեղեց. 4-րդ ժողովի սահմանումները և հիմնավորել միաբնակությունը: «Գ. թ.»-ի և նմանօրինակ ժող-ներ կազմելը պայմանավորված էր Հայ եկեղեցու անկախությանն ու միասնությանը սպառնացող քաղկեդոնականության դեմ պայքարելու անհրաժեշտությամբ:

«Գ. թ.» «Մատենագրություն նախնյաց» մատենաշարով տպագրվել է 1901-ին Թիֆլիսում (Մարկիանոս Ռոտինյանի և Մ. Շարաձեի տպ.): Վերահրատարակվել է 1994-ին Երուսաղեմում՝ Ն. Պողարյանի մասնակի լրացումներով: 1956-ին տպագրվել է ֆրանս. (թարգմ.՝ Մ. Տալոնի)՝ Բեյրութում: «Գ. թ.»-ի ուսումնասիրությամբ զբաղվել են Հ. Գյուլխանդարյանը, Ն. Ադոնցը, Կ. եպս. Տեր-Մկրտչյանը, Ն. Ակինյանը, Ե. Տեր-Մինասյանը, Պ. Անանյանը, Ի. Ձավախիշվիլին, Մ. Տալոնը, Ա. Շմիդտը:

«Գ. թ.»-ի միակ ձեռագիրը (ընդօրինակվել է 1288-ին) պահվում է Զմմառի վանքի մատենադարանում:

«ԳԻՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՅ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ», կրոնադավանաբան. ժող.: Տպագրվել է 1688-ին Նոր Ջուղայում՝ Սբ Ամենափրկիչ վանքի տպարանում (764 էջ, 8º, 8,5 x 5,2 սմ):

Տպագրվել է նաև 1710, 1713, 1718, 1730–31, 1747, 1793-ին (բոլորը՝ ԿՊ, համապատասխանաբար՝ Սարգիս Դպիրի, «Ի թաղն Պեկօղլի», Դաշտեցի Պարոն Ուռուստանի, Մարտիրոս Սարգսյանի, Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու, Պողոս Հովհաննիսյանի տպ-ներ):

«ԳԻՐՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ», զղջացողների, մեղքերի և դրանց խոստովանության մասին եկեղեցու խորհուրդների գիրք: Տպագրվել է 1698-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Ագուլյաց Դաշտեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք խոստովանութեանց: Որ է մի ի յեօթեանց խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ...» (112 էջ, 8º, 11,8 x 6,5 սմ):

«ԳԻՐՔ ՀՐԱՇԻՑ», Սբ Աստվածածնի հրաշքների մասին ժող.: Իտալացի հեղինակների զանազան պատմություններից հավաքել և թարգմանել է մխիթարյան միաբան Զաքարիա վրդ. Ալեքսանյան Ակնեցին: Տպագրվել է 1772-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Գիրք հրաշից Սուրբ Աստուածածնին», Բ-ին՝ «Գիրք հրաշից ամէնօրհնեալ Սուրբ Աստուածածնին...» (656 էջ, 8º, 14,5 x 8 սմ):

«ԳԻՐՔ ՅՈՐՈՒՄ ԸՆՁԵՒԻ ՁՀԱՆԴԵՐՁԵԼՈՅ ԿԵՆՁ», հիսուսյան քարոզիչ Ղուկաս Փինելոսի երկը: Իտալ-ից թարգմ.՝ Հովհաննես վրդ. Նիկոմեդացու: Տպագրվել է 1731-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (580 էջ, 12º, 11,7 x 6,3 սմ):

«ԳԻՐՔ ՅՈՒՆԱՅ ՈՐ ԿՈՉԻ ՕՐՕԼՕԿԻՕՆ ՄԵԾ», օրուգիշերային կարգավորությունների և Աստվածածնից աղաչողական, ինչպես նաև հաղորդության և այլ հարկավոր կանոնների ժող.: Տպագրվել է 1800-ին, տպագրության վայրը և տպարանը հիշատակված չեն (479 էջ, 4º, 20 x 12,8 սմ): Հուն-ից թարգմանվել է 1749-ին՝ Հաճնեցի տիրացու Հակոբի որդու հոգաբարձությամբ:

Ըստ Գ. Զարբհանալյանի և Ա. Ղազիկյանի՝ գիրքը տպագրվել է Կ. Պոլսում՝ Մատթեոս Դպիրի տպարանում:

«ԳԻՐՔ ՈՍԿԵՂԷՆ ԵՒ ԹՈՒՂԹՔ ՔԱՂՑՐԱԼՈՒԲՔ», Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսի կյանքի ու գործունեության մասին երկ: Թարգմ.՝ Գաբրիել Համազասպյան Երևանցու: Տպագրվել է 1738-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (494 էջ, 8º, 12,7 x 7,1 սմ):

«ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ», «Երկրավաստակը», միջնադարյան ձեռագիր ժող. գյուղատնտ. աշխատանքների կատարման եղանակների մասին: Ենթադրվում է, որ XII–XIII դդ–ում թարգմանվել է արաբ–ից, որի հիմքը հուն. «Գեոպոնիկան» է: Վերջինս հավանաբար թարգմանվել է նախ արաբ., որից էլ՝ հայ. (այդ է վկայում տեքստում օգտագործված մի շարք բույսերի և համաստեղությունների արաբ. անվանումների առկայությունը):

Հայտնի է «Գ. վ.»–ի հայ. 3 թարգմանություն, որոնք, ըստ Ղ. Ալիշանի, թարգմանվել են Կիլիկիայում XIII դ–ում: Ձեռագրերից առավել ամբողջականը *Գեորգ Դպիր Պալատեցու* 1768–ի ընդօրինակությունն է (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 281), որը Ղ. Ալիշանի աշխատասիրությամբ հրատարակվել է 1877–ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.). ըստ առաջաբանի՝ հեղինակը Անատոլիոս Բերյուտացի Պոնիոսն է: Առաջաբանին կից տրված է Գեորգ Դպիր Պալատեցու կազմած բացատր. բառարանը:

Ալիշանը նշել է, որ այդ թարգմանություններից բազմաթիվ բառեր ներառվել են հայ. տպագիր բառարանների մեջ:

Գրկ. **Մկրտչյան Հ.,** *Արաբական գեղարվեստական արձակի նմուշների հայ միջնադարյան թարգմանությունները (X–XV դդ.), Ե., 1998:*

ԳԻՐՔ ՏԱՐԱԾՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ, հաս. կազմակերպություն: Հիմնադրվել է 1995–ին Երևանում: Հիմնադիր–նախագահ՝ Խաչիկ Վարդանյան: Նպատակը գրավաճառների և գիրք տարածողների շահերի պաշտպանությունն է, գրքի շուկայի կայացմանը, ընթերցանության զարգացմանը նպաստելը: Կազմակերպում է գրքի ցուցահանդես–վաճառքներ, աջակցում ՀՀ մարզային ու դպրոց. գրադարանների գրքային ֆոնդերի համալրմանը, մասնակցում է Սոսկվայում և այլուր կազմակերպվող գրքի միջազգ. ցուցահանդեսների:

«ԳԻՐՔ ՕՐԻՆԱԿԱՑ ԵՒ ՆՄԱՆՈՒԹԵԱՆՑ», հիսուսյան քարոզիչ Հովհաննես Սանճեմինեցու երկը: Պարունակում է գրույցներ բնության երևույթների, կենդանիների, բույսերի, մարդու, երազների, օրենքների, արհեստների ևնի մասին, նախատեսված է ուսումնասիրելիների համար: Տպագրվել է 1750–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում, թարգմ.՝ Ղուկաս վրդ. Խարբերդցու (1115 էջ, 4^0, 19,4 x 12,4 սմ):



«Գիրք օրինակաց եւ նմանութեանց»–ի *(1750, Վնտ.) նախատիպագրոսաթերթը*

«ԳԼԱՋՈՐ», գրական տարեգիրք (մինչև 1965–ը՝ պարբերաթերթ): Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքի հրատ.: Լույս է տեսնում 1956–ից Անթիլիասում (Լիբանան)՝ անկանոն պարբերականությամբ: Տպագրում է հաստատության սաների գրական փորձերը (պատմվածքներ, բանաստեղծություններ ևն), մատենագր–բանասիր. վերլուծություններ, անդրադառնում է Հայ եկեղեցու պատմությանն ու եկեղեց. գործիչների և դպրեվանքի ներքին կյանքին: Հրատարակում է նաև օտարազգի հեղինակների գրական–գիտ. ուսումնասիրություններ՝ ուսանողների թարգմանությամբ:



«Գլաձոր», *1956–ից, Անթիլիաս (Ռ տարի, 1986)*

ԳԼԱՋՈՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, հայկ. մանրանկարչության դպրոցներից: Գործել է Գլաձորի վանքում (XIII դ–ի վերջից մինչև XIV դ–ի կեսը): Քաղ. ու տնտ. անբարենպաստ պայմանների պատճառով համալսարանը փակվելուց հետո Հովհան Որոտնեցին մի խումբ աշակերտների հետ տեղափոխվել է Տաթևի մենաստան: Սկզբն. փուլը պայմանավորված է ավագ սերնդի մանրանկարիչներ Հովհաննեսի ու Մատթեոսի (1292–ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 6292) գործունեությամբ: Գ. մ. դ–ի կրտսեր սերնդի վարպետները՝ ***Մոմիկը*** (1292–ի Ավետարան, ձեռ. № 2848, 1302, ***«Պատէրազմի Աւետարան»***, ձեռ. № 6792, երկուսն էլ՝ Մատենադարան), ***Թորոս Տարոնացին*** (1318–ի «Եսայի Նչեցու Աստուածաշունչ», Մատենադարան, ձեռ. № 206, XIV դ–ի սկզբի Ավետարան, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի



Գլանափաթեթ. *Եգիպտական (Վիեննայի Մխի-թարյան թանգարան)*

համալսարան), ***Ավագը***, Կիլիկիայի և բուն Հայաստանի արվ-ների ավանդույթները զուգորդելով լատ. ձեռագրերի պատկերագր. որոշ սխեմաների հետ, ստեղծել են ուշագրավ համադրություն հայ մանրանկարչության մեջ:

Գ. մ. դ. հայ միջնադարյան գրքարվ-ի այն դպրոցներից էր, որ առավել սերտորեն է առնչվել մոնումենտալ արվ-ի և մշակույթի մյուս բնագավառներին (Սիմիկն ու Մատթեոսն աշխատել են թե՛ մանրանկարչության, թե՛ քանդակի և թե՛ ճարտ-յան բնագավառներում): Գլաձորի մանրանկարիչների նվաճումներն առավել նկատելի են էջի ձևավորման, հորինվածքային կառուցումների և մանավանդ գույնի հետ կապված խնդիրներում: Տպավորիչ և ինքնատիպ է տարբեր գույների (մանավանդ՝ սևի) հետ ոսկու համադրման եղանակը. Կիլիկիայի արվ-ի ավանդույթները Գ. մ. դ-ում զարգացել են՝ հարելով ժամանակակից առաջավոր «պալեոլոգյան» արվ-ին, որի հատկանշական գծերն ի հայտ են եկել դպրոցի զարգացման 2-րդ փուլում՝ կրտսեր սերնդի նկարիչների (Ավագ և ուր.) գործերում. ձեռագրերը զարդարվել են տերուն. պատկերներով, մանրանկարներում գերիշխում է շարժումը, ժեստերն աշխույժ են, ճարտ. ֆոնը հարուստ է, դեմքերը՝ խորապես արտահայտիչ:

Գլխազարդեր




Նկարիչ՝ Կարապետ Տիրատրույան

Գրկ. **Ավետիսյան Ա.,** *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե., 1971:* **Խաչերյան Լ.,** *Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII–XIV դդ.), Ե., 1973:* **Աբրահամյան Ա.,** *Գլաձորի համալսարանը. 700, Ե., 1983:* **Ահրևշատյան Ս., Մաթևոսյան Ա.,** *Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Ե., 1984:*

ԳԼԱՆԱՏԻՊ, **ռոտատոր** (լատ.՝ rotator–պտտող), ***տրաֆարետային տպագրության*** մեքենա՝ թղթե կամ թաղանթե տպաձևերով, փոքր և միջին տպաքանակներով փաստաթղթեր, գրքեր ևն արագ բազմացնելու համար: Տպաձևերը պատրաստում են գրամեքենայով, ինչպես նաև լուսամեխ., լուսաէլեկտրական կամ գալվանական եղանակներով: Հայտնագործել է ամերիկացի գյուտարար Թոմաս Էդիսոնը:

ԳԼԱՆԱՓԱԹԵԹ, գրքի հնագույն ձևերից. մի երեսին գրված, երկայնական եզրերով միմյանց միացված թերթերի գլանաձև փաթեթոց: Առաջին Գ-ները պատրաստել են մ. թ. ա. III հազարամյակում Եգիպտոսում՝ պապիրուսից, մ.թ.ա. II դ-ից՝ նաև մագաղաթից, մետաքսից, ապա՝ թղթից, ևն: Հայտնի ամենախոշոր Գ. «Հարիսի պապիրուսն» է (մ. թ. ա. XII դ., չափերը՝ 42,5 x 4050 սմ, Բրիտ. թանգարան, № 10053. կոչվել է անգլիացի հավաքորդ Է. Հարիսի անունով, որն այն ձեռք է բերել 1852-ին): Հայտնի են նաև 1947-ին Մեռյալ ծովի քարայրերում հայտնաբերված Կումրանյան ձեռագրերը:



Նկարիչ՝ Սարգիս Ալեքսանյան

ԳԼԽԱԶԱՐԴ, ձեռագիր կամ տպագիր գրքի գլխի կամ այլ հատվածի սկզբում՝ վերնագրից առաջ զետեղվող ***զարդապատկեր***, որը սովորաբար ոճավորվում է երկրաչափ., բուս., կենդ. պատկերներով: Ի տարբերություն ***լուսանցազարդի***՝ Գ. դրվում է գրադաշտի մեջ: Նյութի բաժանարար լինելուց բացի՝ այն նաև էջը գեղեցկացնող տարր է: Գ. երբեմն (հատկապես՝ տպագիր գրքում) ունենում է նյութի կամ նրա առանձին մասի բովանդակությունը գեղարվեստորեն արտացոլող տարրեր կամ լինում է բաժնի (գլխի) վերնագիր՝ ծաղկազարդ տառերով:

Հայկ. ձեռագիր մատյաններում (Աստվածաշունչ, Ավետարան, Ճաշոց, Մաշտոց ևն) որպես Գ. օգտագործվել են ***խորաններ*** ու կիսախորաններ, որոնք XII դ-ից աստիճանաբար փոխարինվել են ավելի սխեմատիկ՝ ուղղանկյուն՝ զանազան հյուսկեն, գորգանախշեր հիշեցնող զարդանկարով:

Այդ տիպի պարզ Գ-եր օգտագործել են ***Հակոբ Մեղապարտի*** տպագրած գրքերում, իսկ ***Աբգար Թոխաթեցին*** գերադասել է իտալ.

տպագրության մեջ օգտագործված թեմատիկ Գ–երը: Դրանց հաջորդած «Տօմար Գրիգորեան»–ում (1584) օգտագործված Գ–երն ուղղանկյուն, կրկնվող զարդանախշերով են. Գ–ի այդ ձևն էլ հայկ. տպագրության մեջ արմատավորվել և փոքր փոփոխություններով կիրառվել է մինչև XIX դ.: XIX դ–ում նկատվում է Գ–ի գործածության սահմանափակում. կան հրատ–ներ, որոնք ունեն ընդամենը մեկ Գ. կամ ընդհանրապես չունեն, և ավելի հաճախ օգտագործվել է ***վերջազարդ:***

Գ–ի արվեստը Հայաստանում զարգացման նոր փուլ է ապրել խորհրդ. տարիներին՝ 1930–ական թթ–ից սկսած, երբ գրատպությունը երկրում լայն թափ է ստացել: Հայ գեղանկարիչներից Գ–ի ստեղծման ոլորտում հայտնի են Հ. Կոջոյանը, Տարագրոսը, Վ. Թևանյանը, Կ. Տիրատուրյանը, Վ. Ախիկյանը, Տ. Խաչվանքյանը և ուր.:

ԳՅՈՂԱԿՅԱՆ Գեորգի (Գևորգ) Շմավոնի (ծ. 12.8.1928, Լենինական), երաժշտագետ, խմբագիր–հրատարակիչ: Արվեստագիտ. դ–ր (2007), պրոֆ. (1997): Արվ. վաստ. գործիչ (1980): Ավարտել է Երևանի կոնսերվատորիան (1952): 1957–ից աշխատում է ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ում (1965–ից՝ բաժնի վարիչ, 1978–ից՝ փոխտնօրեն): 1977–ից դասավանդում է Երևանի կոնսերվատորիայում:

Լույս են տեսել Գ–ի «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը» (1960), «Ակնարկ հայ երաժշտության պատմության» (համահեղ., 1963), «Տ. Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան» (հայ. և ռուս., 1971), «Կոմիտաս: Կյանքը և գործունեությունը» (2000), «Էջեր հայ երաժշտության պատմությունից» (2009) աշխատությունները: Մասնակցել է Կոմիտասի «Երկերի» ժող–ի 7–14–րդ հատորների (1997–2006) խմբագրմանը:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011):

Գրկ. Գևորգ Գյոդակյանի գրպագիր աշխատությունների մատենագիտությունը (կազմ.՝ Ա. Աապտրյան), Ե., 2004:

ԳՅՈՂԱԿՅԱՆ Սարո Մկրտչի, **Գյումրեցի** (ծ. 14.6.1951, Լենինական), բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է Լենինականի մանկավարժ. ինստ–ը (1974): 1978–80–ին աշխատել է Արմենպրես լրատվ. գործակալությունում, 1980–94–ին՝ «Կանչ», 1994–98–ին՝ «Առավոտ» պարբ–ներում: 1999–ից Լոս Անջելեսի ***«Համայնապատկեր»*** գրական–մշակութ. հանդեսի հիմնադիր–խմբագիրն է:

Լույս է տեսել Գ–ի «Հեռավոր հուշերի մի քաղաք» (2001) բանաստեղծությունների ժող–ը:

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ Գայանե Խաչատուրի (ծ. 24.11.1947, Երևան), գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Խաչատուր ***Գյուլամիրյանի*** դուստրը: Ավարտել է ԵԳՄԻ (1973): 1980–87–ին աշխատել է «Սովետական գրող», 1987–91–ին՝ «Արևիկ», 1991–2011–ին՝ «Լույս» հրատարակչություններում՝ որպես գեղ. խմբագիր:

Նկարազարդել և ձևավորել է «Հայոց լեզու» (2002) և «Այբբենարան» (2004)՝ Կալիֆոռնիայի նահանգի (ԱՄՆ) հայկ. դպրոցների համար, «Օտարախօսներու համար հայերէն լեզուի ձեռնարկ» (1993, Փ.), «Մայրենի 1» (1997, 2003), «Մայրենի 2» (2002), «Մաթեմատիկա 1» (2003), «Մաթեմատիկա 2» (2007), «My ABC Book English» (1993), «English 1», «English 2», «English 4» (բոլորն էլ՝ 1995) դասագրքերը, «Հայկական ժողովրդական հեքիաթներ» (1997), Հանս Քրիստիան Անդերսենի «Մատնաչափիկը» (1983), Գրիմ եղբայրների «Մոխրոտը» (1985), Կ. Չուկովսկու «Տզզան ճանճը և այլ հեքիաթներ» (1988), Ս. Մուրադյանի «Մրգաքաղ» (1990), Է. Ուսպենսկու «Կոկորդիլոս Գենան» (1996), Յ. Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» (2009), «Հեքիաթների քո աշխարհը» (ժող., 2010), Գ. Հարությունյանի «Հրաշք գրքույկ» (2011), Ա. Գալստյանի «Ուրախ տառեր» (2012) և այլ գրքեր:

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ Խաչատուր Հովհաննեսի (2.5.1922, Երևան–26.12.2001, Երևան), գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Գայանե ***Գյուլամիրյանի*** հայրը: Ավարտել է ԵԳՈՒԻ (1949), ԵԳՄԻ (1955): 1971–76–ին եղել է «Լույս» հրատարակչության գեղ. խմբագիրը: Համագործակցել է «Արևիկ», «Սովետական գրող», «Հայաստան» և այլ հրատարակչությունների հետ:



Խոսրով Անձևացու «Մեկնութիւն ժամակարգութեան» (1730, Կ. Պոլիս) գրքի **գլխազարդով** *(9–րդ) էջ*



Գայանե Գյուլամիրյան. *«Հեքիաթների քո աշխարհը» (2010, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի պատկերազարդումներից*



Խաչատուր Գյուլամիրյան. *Խնկո Ապոր «Այգի» (1992, Ե., «Անի») գրքի կազմը*



Արա Գյուլեր



Հայկ Գյուլիքևխյան



Խաժակ Գյուլնազարյան



Խ. Գյուլնազարյանի *«Ընտիր երկեր»-ի (հ. 1, 1989, Ե., «Խորհրդային գրող») կազմը*

Պատկերազարդել և ձևավորել է Ս. Տյուսաբի «Երկեր» (1959), Շ. Թաթիկյանի «Ինքնաթիռ» (1960), Պ. Սևակի «Մարդը ափի մեջ» (1963) և «Ձեր ծանոթները» (1992), Գ. Բեսի «Նկարչի նվերը» (1964), Խնկո Ապոր «Անհաղթ աքլորը» (1970) և «Այգի» (1992), Ղ. Աղայանի «Չորս եղանակ» (1972), Կ. Չուկովսկու «Չոփ-Չոփիկը» (1977), Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի «Առակները» (1986), Խ. Գյուլնազարյանի «Դեռ դպրոց չենք գնում» (1987), Մ. Դրյուոնի «Հրաշագործ մատներով Տիսուն» (1988), Ն. Միքայելյանի «Իմ պապիկի պարտեզը» (1989), Ս. Կարապետյանի «Մոռացկոտ երեխաների հեքիաթը» (1990), Հ. Թումանյանի «Մի բաց նամակ ամենքին» (1992) գրքերը, նաև Հ. Աթայանի «Այբբենարան» (1987), Ա. Տեր-Գրիգորյանի, Ա. Մանուկյանի «Մայրենի լեզու 2» (1987) դասագրքերը ևն:

ԳՅՈՒԼԵՐ (Տերտերյան) Արա Տաճատի (ծ. 16.8.1928, Ստամբուլ), լուսանկարիչ, խմբագիր-հրատարակիչ: Ստամբուլի համալսարանի պատվ. դ-ր (2004): Ավարտել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանը (1951): Աշխատել է «Նոր Ստամբուլ» (1950-ից), «Հյուրիեթ», «Հայաթ» (1961-ից) թերթերի խմբագրություններում, պատմվածքներ է տպագրել տեղի հայկ. պարբ-ներում: Եղել է ամերիկյան «Թայմ Լայֆ» ամսագրային ընկերության առաջին թղթակիցը (1958-ից) Մերձ. Արևելքում, «Հետք» ամսագրի հիմնադիրն ու հրատարակիչ-խմբագիրը (2006-ից), մի շարք միջազգ. լրատվամիջոցների լուսանկարիչ-լրագրողը (ֆրանս. «Փարիզ Մատչ», գերմ. «Շտեռն», բրիտ. «Սանդի Թայմս»): 1970-ական թթ-ին լուսանկարել է Ու. Չերչիլին, Մ. Կալլասին, Ս. Դալիին, Պ. Պիկասսոյին և ուր.: 1960-ական թթ-ից Գ-ի լուսանկարներով ձևավորել են բազմաթիվ գրքեր: Նկարահանել է «Հերոսի վերջը» (1975) վավերագր. ֆիլմը: Նրա լուսանկարները և հարցազրույցները հրատարակվել են «Գումգափուի հայ ձկնորսները» գրքում (հայ., անգլ., թուրք.): Գ-ի լուսանկարների մեծ մասը հատուկ հավաքածուով ցուցադրվել է մի շարք երկրների ցուցասրահներում, 2013-ին՝ նաև Երևանում՝ հեղինակի մասնակցությամբ:

Գ. 2000-ին Թուրքիայում ճանաչվել է «Դարի լուսանկարիչ»:

Հանդես է գալիս Ստամբուլի աչք և Ստամբուլի լուսանկարիչ կեղծանուններով:

Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշան, Թուրքիայի Մշակույթի և արվ-ի մեծ (2005), «Լյուսի» (2009, Նյու Յորք) մրց-ներ:

ԳՅՈՒԼԻՔԵՎԽՅԱՆ Հայկ Գաբրիելի (7.1.1886, Շուշի–29.9.1951, Երևան), գրաքննադատ, փիլիսոփա, հաս. գործիչ: Պրոֆ. (1929): Սովորել է Ենայի, Լայպցիգի, Յուրիխի (1907) համալսարաններում, ավարտել Հայդելբերգի համալսարանը (1914): Հայաստանում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո Երևանում խմբագրել է ***«Կոմունիստ»*** թերթը, 1923-ին՝ ***«Վերելք»*** ամսագիրը, 1936–38-ին՝ «Հայկական ՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագիրը»: Դասավանդել է Երևանի բուհերում, 1924–27-ին՝ ԵՊՀ պրոռեկտոր:

Լույս են տեսել Գ-ի «Փիլիսոփայությունը և գրականությունը» («Գրական դիրքերում», ամսագիր, 1931, № 4, 5), «Գաբրիել Սունդուկյան» (1944), «Սովետական դրամատուրգիայի մասին» (1948), «Քննադատական հոդվածներ» (1955) աշխատությունները:

Երկ. Ընտրանի, Ե., 1978:

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ Խաժակ Մեսրոպի [11.8.1918, Երևան–22.12.1995, Երևան (թաղված է Օշական գ-ում)], գրող, գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1972): Մշակույթի վաստ. գործիչ (1985): Ավարտել է ԵՊՀ (1941): 1950-ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի ավագ գիտաշխատող:

Լույս են տեսել Գ-ի «Քաղաքի առավոտը» (1956), «Կեսօր» (1957), «Շարքերում» (1959), «Ոսկի որոնողները» (1964), «Պատվո քարը» (1970), «Չուղարկված նամակներ» (1975), «Գիրք անակնկալ» (1985) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Ինչ-որ տեղ վերջանում է հորիզոնը» (1966) վեպը, «Նռանի» (1971) պատմավեպը, «Գրական հարցերը նախառևոլյուցիոն շրջանի հայ պարբերական մամուլում» (1954), «Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության» (1961), «Վախթանգ Անանյան» (1963), «Աթաբեկ Խնկոյան» (1968), «Հայ քննադատական միտքը 1920-ական թվականներին» (1971) գրականագիտ. աշխատությունները: Գրել է վիպակներ մանուկների և պատանիների համար

[«Լավ ճանապարհորդներ», 1953, «Օրերի ճանապարհը» (եռագրություն), 1962, «Մեռած աշխարհի ակամա բնակիչները», 1968, «Սինանտրոպ-պիտեկանտրոպ», 1977, «Հետքեր գետնի վրա և գետնի տակ», 1984]:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1972):

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1989–90: Իմ պան բաց պատուհանները, Ե., 1981: Մեր գյուղի հանաքները, Ե., 1991:

Գրկ. Խաժակ Գյոլնազարյան: Կենսամատենագիտություն, Ե., 1978:

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ», պատկերազարդ շաբաթաթերթ (1913–ից՝ երկշաբաթաթերթ): Թիֆլիսի հայ գյուղատնտ. և տնայնագործ. ընկերության հրատ.: Լույս է տեսել 1909–14 և 1916–17-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Աշոտ *Աթանասյան*, Ավետիք *Սահակյան*: Տպագրել է հոդվածներ այգեգործության, անասնապահության, բամբակագործության, գյուղատնտ. մեքենաների, տնկիների ու սերմերի վերաբերյալ, վիճակագր. տվյալներ՝ Այսրկովկասում գործող գյուղատնտ. ձեռնարկությունների մասին, աջակցել գյուղատնտ. դասընթացներին, հրատարակել «Գյուղատնտեսի գրադարան» մատենաշարը, հիմնադրել գյուղատնտ. ապրանքների և ձեռարվ-ի նմուշների թանգարան (1909): 1912-ից հանդեսին կից լույս է ընծայել «Նոր առողջապահիկ» երկշաբաթաթերթը:



«Գյուղատնտես», *1909–17, Թիֆլիս*

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔ», ամսագիր (սկզբում՝ երկշաբաթաթերթ): ՀԽՍՀ հողժողկոմատի, Հայջրտնտեսության, Հայգյուղկոոպի պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1922–29-ին Երևանում: Խմբագիրներ՝ Արամայիս *Երզնկյան*, Ս. Շադունց: Անդրադարձել է գյուղատնտ. արտադրության զարգացման հարցերին, ծանոթացրել գյուղի սոցիալ-քաղ. տեղաշարժերին: Հանդեսի նախաձեռնությամբ ստեղծվել է «Գյուղացու գրադարան» մատենաշարը:



«Գյուղատնտեսական կյանք», *1922–29, Երևան (№ 3, 1925)*

«ԳՅՈՒՄՐԻ-ԱՍՊԱՐԵԶ», հաս-քաղ. օրաթերթ: Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 2011-ից Գյումրիում: Խմբագիր՝ Լևոն Բարսեղյան: Անդրադառնում է տարածաշրջանի և ՀՀ հաս-քաղ., տնտ., մշակութ. կարևոր իրադարձություններին:

ԳՅՈՒՄՐԻԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Գյումրիի տպագրության պատմությունն ունի 3 փուլ՝ Ալեքսանդրապոլի՝ 1876–1924, Լենինականի՝ 1924–91, Գյումրիի՝ ՀՀ անկախացումից հետո՝ պայմանավորված քաղաքի անվանափոխությամբ:

Ալեքսանդրապոլում անդրանիկ տպարանը հիմնադրել է Գևորգ Սանոյանը 1876-ին, որտեղ առաջինը լույս է ընծայել Ադոլֆ Դիստերվեգի «Սկզբունք երկրաչափութեան» (թարգմ.՝ Մակար Տեր-Սարգսյանի) և «Հիմնական դիդակտիքական կանոններ» (1880, թարգմ.՝ Հայրապետ Ղուկասյանի) դասագրքերը: Մինչև դարավերջ տպագրել է ևս 48 անուն գիրք, հիմնականում՝ գեղ. երկեր՝ Զիվանու ստեղծագործություններից [«Աշըգ Զիվանու երգերը» (1882, 1886), «Աշըղ Ղարիբի հեքեաթը» (1887), «Քեարամի եւ Ասլիի հէքեաթը» (1888)], Ա. Խնկոյանի «Բանաստեղծական փորձեր» (1890) գրքույկը, Արշարունու «Սիրոյ ճարակը» (1891) ժող-ը, աշուղ Ֆիզահու երգերը (1892), Չ. Դիքենսի «Օլիվէր Տվիստ» (1894) վեպը, «Ծոցի ռուսերէնից-հայերէն բառարան»-ը (1895), Ա. Իսահակյանի «Երգեր ու վէրքեր» (1897) բանաստեղծությունների անդրանիկ ժող-ը, ինչպես նաև օրացույցներ, դասագրքեր, բառարան ևն: 1900-ական թթ-ին տպարանն անցել է Գ. Սանոյանի որդուն՝ Հովհաննեսին. գործել է մինչև 1918-ը:




«Գյումրի-Ասպարեզ», *2011-ից, Գյումրի*

2-րդ տպարանը՝ «Այգը», հիմնադրել է Աբրահամ Մալխասյանը 1892-ին, որտեղ տպագրվել են աշուղ Զամալու երգերը («Երգիչ Զամալու քնարական երգերը», 1892), պատմ. երկեր՝ Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւնը...» (1893), Ղազար Փարպեցու «Հայոց պատմութիւն եւ Վահան Մամիկոնեանին գրած թուղթը» (1895, աշխարհաբարի փոխադրությունը՝ Մ. Տեր-Պետրոսյանի), դասագրքեր («Քերական կամ այբբենարան», 1894), Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը. 1794–1894» աշխատությունը, Զիվանու «Աշըղ Ղարիբի հեքեաթը», «Շահ Իսմայէլի

Գյումրիի տպագրություն



«Աշըգ Ջիվանու երգերը» (1882, Գևորգ Սանոյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Արիսպակես Լասֆիվերցու «Հայոց պատմութիւն» (1893, Աբրահամ Մալխասյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Արսեն Ղլըճյանի «Միջազգային իրաւունք» (1904, Հակոբ Ղասաբյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը

հեքեաթը», «Քեարամի եւ Ասլիի հեքեաթը» սիրավեպերը՝ առանձին գրքերով, Ա. Բրուտյանի կազմած «Ռամկական մրմունջներ» երգարանը (բոլորը՝ 1895), գեղ. այլ գործեր, պարբ-ներ ևն: Գործել է մինչև 1919-ը:

XX դ-ի սկզբին բացվել են Հակոբ Ղասաբյանի, Հովհաննես Ափինյանի և «Շիրակ» տպարանները (1904–20-ին տպագրվել է ավելի քան 65 անուն գիրք): 1900–14-ին Ալեքսանդրապոլում տարեկան լույս են տեսել շուրջ 20, իսկ 1876–1920-ին՝ ընդամենը 320 անուն գրքեր:

Հիշարժան են Գ. Լևոնյանի «Հայ աշուղներ» (1892), Ա. Մխիթարյանի «Փշրանք Շիրակի ամբարներից» (1901, երկուսն էլ՝ Գ. Սանոյանի տպ.) ժող-ները, Հ. Պարոնյանի «Երգիծաբանական հատուածներ» (1904, «Շիրակ» տպ.) գիրքը, Լ. Մանվելյանի, Ատրպետի մի շարք երկեր, Կ. Ափինյանի կազմած պատի և սեղանի «Շիրակ» օրացույցները (1899–1921, Գ. Սանոյանի տպ.), հայ կանանց հեղինակած և հրատարակած «Ուստիկ» (1904, Հ. Ափինյանի տպ.) հատորը և «Ախուրեան» (հրտ.՝ 1902, Ա. Մալխասյանի տպ.) օրացույցը, Մ. Գևորգյանի «Համառօտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ մայրաքաղաքին Անւոյ» (1903) երկը, Ա. Ղլտճյանի «Միջազգային իրաւունք» (1904) ձեռնարկը, Ա. Արամյանի կազմած «Աշխարհի ամենագեղեցիկ գիրքը» (1906, Եվրոպայի և Ասիայի ամենահայտնի մատենագիրների երկերի հավաքածու), Լ. Մանվելյանի «Ռուսահայ գրականութեան պատմութիւնը» (4 պր., 1909–10), Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը» (1910, առաջին անգամ), Ա. Տերտերյանի «Միքայել Նալբանդեան, ազգութեան հրապարակախօսը» (1910), Թ. Թորամանյանի «Ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը» (1911), Բ. Ղարիբջանյանի՝ պատերազմի և հեղափոխության խնդիրներին նվիրված «Քաղաքական այբբենարան» (1918) աշխատությունները, «Ասպարեզ» (1912), «Երիտասարդ» (1912–13), «Նոր ուղի» (1913–16) գրական ժող-ները, բանաստեղծությունների 3 ժող. (ռուս., 1917). առաջին գիրքը՝ «Հեղափոխական երգեր» (կազմել և բանաստեղծությունների մի մասը թարգմանել են Գ. Հանեսօղլյանը և Կ. Տեր-Սարգսյանը) խորագրով, երկրորդում ամփոփված են Վ. Տերյանի, երրորդում՝ Ա. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և Գ. Աֆրիկյանի բանաստեղծություններից (թարգմ.՝ Ս. Փիրվերդյանի) ևն:

Ալեքսանդրապոլի առաջին պարբ-ը՝ «Ալեքսանդրոպոլսկիե օբյավլենիյա» (ռուս.) շաբաթաթերթը, լույս է տեսել 1902–07-ին, խմբագիր-հրատարակիչ՝ Կարապետ ***Ափինյան:*** Մինչև 1920-ն Ալեքսանդրապոլում հրատարակվել է մոտ 30 պարբ., այդ թվում՝ Կ. Ափինյանի ***«Ախտրյան»***՝ քաղաքի հայ. առաջին օրաթերթը, «Գաւառի ձայն» (1913–16), «Ժայռ» (1917–18), «Մարդկայնութիւն» (1918–19), «Յոյս» (1919) ևն: 1920-ական թթ-ին այստեղ գործել է Գ. Հանեսօղլյանի անվ. տպարանը. տպագրվել են հիմնականում գեղ. գործեր, նաև ***«Բանվոր»*** օրաթերթը: Խորհրդ. իշխանության հաստատումից հետո տպարանները պետականացվել են և անցել Ալեքսանդրապոլի շրջ. հեղկոմի լուսբաժնի տնօրինության տակ: Այդ շրջանում հրատարակած գրքերից են՝ «Ազգային հարցը եւ կոմունիզմը», «Բնագիտութիւնը աշխատանքի միասնական դպրոցում», «Դպրոցը եւ կոմունիզմը», «Կրօնը եւ կոմունիզմը» (բոլորը՝ 1921) ևն: 1923-ին «Կոոպերացիա» հոդվածների ժող-ը տպագրվել է Ալեքսանդրապոլի կոմունալ տնտեսության տպարանում, որը 1924-ին կոչվել է Ալգավքաղգործկոմի, 1925-ից՝ Լենինականի տեղ. տնտ. բաժնի տպարան. այնտեղ «Գյուղացու գրադարան» մատենաշարով տպագրվել է Խ. Ավդալբեկյանի կազմած «Հողային օրենսգիրքը բացատրական հարց ու պատասխանով» (մաս Ա, 1925) գիրքը ևն:

1926-ին ՀԽՍՀ տպարանները միավորվել են նորաստեղծ Հայպետհրատում, իսկ Լենինականի տպարանը կոչվել է Պետհրատի 4-րդ տպարան, որտեղ առաջինը լույս է տեսել Մկրտիչ Արմենի «Շիրկանալ» (1926) չափածո ժող-ը: 1927-ից քաղաքում գործել են նաև «Առարդի», «Պոլիգրն», «Լենտեղարդի» և այլ տպարաններ:

1921-ին լույս է տեսել Ալեքսանդրապոլի բանվոր. ակումբի «Բանուորի խօսք» շաբաթաթերթը (խմբագիր՝ Վահան Տեր-Աբրահամյան, Մալխասյանի տպ.), 1921–22-ին՝ ՀԿ(կ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի և գավխեղկոմի «Կարմիր Շիրակ» պաշտոնաթերթը, որին հաջորդել է «Շիրակի ռանչպար» (1922–23), 1923-ից՝ ***«Բանվոր»*** օրաթերթը (խմբագիր՝ Վահան Ծովյան):

Անկախացումից հետո Գյումրիում շարունակել է տպագրվել ***«Կումայրի»*** («Բանվորի» շարունակությունն է) պարբ-ը: 1991-ից անկանոն պարբերականությամբ լույս է տեսնում ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի «Եղեգան փող» պաշտոնաթերթը (խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան), 1997-ից՝ «Հինգշաբթի» ՍՊԸ-ի համանուն տեղեկատվաժամանցային թերթը (հիմնադիր-տնօրեն՝ Արմեն Մարտիրոսյան), որը 2008-ից հրատարակում է նաև «Հինգշաբթի» ժամանցային թերթը (խմբագիր՝ Տիգրան Ավետիսյան, տպագրում է նաև ռուս. հոդվածներ):

1992-ից գործում է «Դպիր» հրատարակչությունը (հիմնադիր-տնօրեն՝ Հովիկ Կարապետյան), տպագրում է գեղ., գիտ., գիտահանրամատչելի, մանկ., երաժշտ., տեղեկատվ., հոգևոր և այլ բնույթի գրքեր (ցայսօր՝ շուրջ 130 անուն), 1997-ից՝ «Էլդորադո» հրատարակչությունը (հիմնադիր-տնօրեն՝ Համազասպ Պիճիկյան), տպագրում է պատմ., կրոն., գիտ., գեղ. գրքեր, ալբոմներ ևն:

1998-ից վերսկսվել է Ախուրյանի «Շիրակ» շրջ. երկշաբաթաթերթի (հիմն.՝ 1930, խմբագիր՝ Սամվել Սարտիրոսյան) տպագրությունը (ընդհատվել էր 1991-ին):

2004-ից հրատարակվում է նաև «Շրջապատ» շաբաթաթերթը (2011-ից՝ գունավոր), 2011-ից՝ ***«Գյումրի-Ասպարեզ»*** թերթը:

Գյումրիում լույս տեսնող թերթերի մեծ մասը տպագրվում է «Հինգշաբթի» ընկերության տպարանում:

ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ Դավիթ Սևանի (ծ. 26.8.1962, Երևան), լեզվաբան, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1989): Ավարտել է ՀՊՄԻ (1984): 1982–85-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, 1993-ից՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1995-ից, միաժամանակ՝ ԵՊԼՀ-ում, 2009-ից՝ մանկ. ***«Ուրախ գնացք»***, 2011-ից, միաժամանակ՝ ***«Իմ մոլորակը»*** ամսագրերի հիմնադիր-խմբագիր, 2011–14-ին՝ ***Հայաստանի աւտովաճառնչային ընկերության*** հրատարակչ. բաժնի տնօրեն:

Հրատ-յան է պատրաստել Նոր կտակարանը (իմաստային թարգմանություն, 2001), Սաղմոսագիրքը (2004), խմբագրել «Աստվածաշնչի հանրագիտարանը» (1989), «Մանուկների Աստվածաշունչը» (2004), «Աշակերտի Աստվածաշունչը» (2011), «Գրաբար Աստվածաշնչի համարարբառը» (2012): Գրել է աշխատություններ («Կրոնաեկեղեցական լեզվական միավորների քննություն», 2002), կազմել բառարան-տեղեկատուներ («Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր», 1998, «Հայերեն տառային գործածվող հապավումների բառարան», համահեղ., 2007, «Մեծատո՞ն, թե՞ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու», 2003, «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու», 2-րդ վերամշկ. հրտ.՝ 2007), դասագրքեր՝ հանրակրթ. դպրոցների III–X դասարանների համար (2006–10), հայոց լեզվի գործն. աշխատանքների բուհ. ձեռնարկ (1998):

ԳՈԼԱՆՃՅԱՆ Էդուարդ Մելքոնի (9.11.1880, Կ. Պոլիս–12.6.1957, Բուխարեստ), բանաստեղծ, թարգմանիչ: Աշխատակցել է «Փունջ», «Արևելք», «Մասիս» պարբ-ներին, Թեոդիկի «Ամէնուն տարեցոյցը» և «Նաւասարդ» տարեգրքերին:

Լույս է տեսել Գ-ի «Արեւելքի բոցեր» (1909, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան տպ.) բանաստեղծությունների ժող-ը: Ֆրանս. է թարգմանել Ռ. Զարդարյանի «Յայգալոյսը» (Ա. Չոպանյանի, Գ. Եսայանի հետ, 1912):

Երկ. Երկեր, Ե., 2005:



Դավիթ Գյուրջինյանի *«Մեծատո՞ռ, թե՞ փոքրատառ...» (2003, Ե., «Ասողիկ») գրքի կազմը*



Էդուարդ Գոլանճյանի ***«****Երկեր»-ի (2005, Ե., «Մուսա լեռ») կազմը*



«Գոլոս Արմենիի», *1934-ից, Երևան*

«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ» («Голос Армении»-«Հայաստանի ձայն»), հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 1934-ից Երևանում՝ ռուս. (1934-90-ին՝ «Կոմունիստ»): ՀԿԿ ԿԿ-ի, ՀԽՍՀ ԳԽ-ի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, 1990-ին՝ ՀԿԿ ԿԿ-ի պաշտոնաթերթ, 1991-ից՝ անկախ օրաթերթ: Խմբագիրներ՝ Ի. Գալկին, Ա. Ղազարյան, Ա. Ռիզան, Գ. Գրիգորյան, Ս. Աբելյան, Գ. Բեյբուտով, Վենիամին Սիրցև, Բորիս ***Մկրտչյան***, Ֆլորա ***Նախշքարյան*** (1992-ից): Մինչև 1950-ական թթ. եղել է կոմկուսի և խորհրդ. իշխանության քաղաքականության, կոմ. գաղափարախոսության ջատագով, լուսաբանել է հանրապետության սոցիալ-տնտ., հաս-քաղ. և մշակութ. կյանքը:

1991-ից «Գ. Ա.» մեծ տեղ է հատկացնում հանրապետությունում պետականության կայացման գործընթացին, վերլուծ. նյութեր է տպագրում ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության, տնտեսության վիճակի, Արցախյան շարժման ու արցախյան հակամարտության կարգավորման հիմնախնդիրների վերաբերյալ, լուսաբանում է մշակութ. կյանքը, անդրադառնում Սփյուռքի հարցերին: 2006-ին լույս է տեսել «Գ. Ա.»-ի հայ. տարբերակը (շաբաթաթերթ):



Գևորգ Գոյանի *«Հայ թատրոնի 2000 տարին» (ռուս., հ. 1, 1952, Մոսկվա) գրքի կազմը*

ԳՈՅԱՆ (Տեր-Նիկողոսյան) Գևորգ Հովսեփի [10(23).11.1901, Թիֆլիս–24.2.1982, Մոսկվա], թատերագետ: Արվեստագիտ. դ-ր (1949): Արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Մոսկվայի թատերարվ-ի ինստ-ը (1935): 1936-ից դասավանդել է նույն ինստ-ում (պրոֆ.՝ 1949-ից, 1958-ից՝ ամբիոնի վարիչ): Երևանի թատեր. ինստ-ի հիմնադիրներից է (1944-49-ին՝ դասախոս): Եղել է «Պրավդա» թերթի թղթակից:

Լույս են տեսել Գ-ի «Ռուս թատրոնի պատմությունը 17, 18 և 19-րդ դարերում» (ռուս., 1939), «Գլիկերիա Ֆեդոտովա» (ռուս., 1940, 1948), «Ո՞րն է ազգային թատրոնը» (1970, ժող.) աշխատությունները: Գ-ի «Հայ թատրոնի 2000 տարին» (ռուս., հ. 1-2, 1952) երկը կարևոր ներդրում է համաշխ. թատրոնի պատմության և հայագիտ-յան մեջ:

ԳՈՇԵ (Gosche) Ռիխարդ Ադոլֆ Հերման [24.7.1824, Նեունդորֆ (Գերմանիա)–28.10.1889, Հալլե (Գերմանիա)], գերմանացի արևելագետ, հայագետ: 1863-ից՝ Հալլեի համալսարանի պրոֆ.: 1847-ին Բեռլինում հրատարակել է «Ներածություն հայերենի և հայ ցեղի արիական բնույթի մասին» աշխատությունը, որտեղ, Հայնրիխ ***Պետերմանից*** և Ֆրիդրիխ ***Վինդիշմանից*** հետո, փորձել է ապացուցել, որ հայերենն իրան. լեզու է, և ցույց տալ նրա կապը փոյուգ-ի հետ: Այդ նպատակով կատարել է լեզվի, դիցաբանության և իրավունքի հարցերին առնչվող ստուգաբանություններ, որոնց զգալի մասը սխալ է և ունի սոսկ պատմ. արժեք:



Արա Գոչունյան

ԳՈՉՈՒՆՅԱՆ Արա Սարգսի (ծ. 13.3.1973, Ստամբուլ), խմբագիր, հաս. գործիչ: Ավարտել է Ստամբուլի Գալաթասարայի լիցեյը (1995), սովորել Ստամբուլի համալսարանի ֆրանս. լեզվի և գրակ-յան բաժնում (1995-96): 1992-ից աշխատում է Ստամբուլի ***«Ժամանակ»*** օրաթերթի խմբագրությունում, 1996-ից՝ գլխ. խմբագիր: Գ. իր հեղինակային՝ «Օրակարգի նյութերը» այունակում հրապարակում է նաև հարցազրույցներ հայ ականավոր մտավորականների, արվեստագետների ու հաս. գործիչների հետ՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների և ազգ. ինքնության հարցերի շուրջ: 1996-98-ին եղել է Արմենպրեսի թղթակիցը Ստամբուլում:

Գ. Թուրքիայում հայ-թուրք. հակամարտությունների մեկնաբանն է ու գլխ. փորձագետը: Նրա տեսակետներն ու վերլուծությունները հիշյալ հարցի վերաբերյալ տպագրվում են ՀՀ-ի և Սփյուռքի, նաև Թուրքիայի ԶԼՄ-ներում: Որպես «Ժամանակի» հատուկ ներկայացուցիչ՝ մասնակցում է համահայկ. բոլոր կարևոր իրադարձություններին ՀՀ-ում և արտերկրում:

Թուրքիայի ժուռնալիստների միության (1999) և ՀԺՄ (2004) անդամ:

Համաշխ. հայկ. կոնգրեսի (2009) և ՀԺՄ-ի «Աշխարհի հետ մեր ինքնությամբ» (2009) մրց-ներ:

ԳՈՉՈՒՆՅԱՆ Մանուկ (1851, Կյուրին–մ. թ. անհտ), խմբագիր, հրապարակախոս: 1911–ին Կ. Պոլսում հիմնադրել է տպարան: Հրատարակել է կրոնաբարոյական «Աստղ Բեթլէհէմի» (1911–12, ԿՊ) պարբ–ը:

Լույս են տեսել Գ–ի «Աստղ Բեթլէհէմի, Ա. Սկզբունք ճշմարտութեան» (1889, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), «Լուսաւորն Բեթլէհէմի, Բ. Սկզբունք տնտեսութեան» (1904, ԿՊ, Հարություն Ասատուրյանի տպ.), «Աստղ Բեթլէհէմի, Գ. Սկզբունք կենսագիտութեան» (1910, ԿՊ, Գ–ի տպ.) գրքույկները:

ԳՈՉՈՒՆՅԱՆ Մարտիրոս (1900, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), խմբագիր: Սովորել է նախ Կ. Պոլսի Գում Գափու թաղամասի հայկ. դպրոցում, ապա՝ Ռոբերտ քոլեջում: Խմբագրել է *«Ժամանակ»* օրաթերթը: Մամուլում տպագրել է քաղ., հաս. բազմաթիվ հոդվածներ:

ԳՈՉՈՒՆՅԱՆ Մելիք Սարգսի (1908, Կ. Պոլիս–1943, Կ. Պոլիս), հրապարակախոս, խմբագիր: Սարգիս *Գոչունյանի* որդին: 1938–43–ին եղել է *«Ժամանակ»* օրաթերթի խմբագիրներից: Մամուլում տպագրել է հրապարակախոս. հոդվածներ:

ԳՈՉՈՒՆՅԱՆ Միսաք, **Քասիմ** (16.9.1863, Հալեպ–1913, Կ. Պոլիս), գրող, հրապարակախոս, խմբագիր–հրատարակիչ: Սարգիս *Գոչունյանի* եղբայրը: Սովորել է Կյուրինի ազգ. և Այնթապի Կիլիկյան վարժարաններում: 1886–ին հաստատվել է Կ. Պոլսում: Աշխատակցել է «Հայրենիք», «Նոր դար», «Արեւելյան մամուլ» պարբ–ներին: 1891–94–ին՝ *«Մանզոումէի Էֆքեար»* հայատառ–թուրք. թերթի խմբագիր–հրատարակիչ, 1894–ից աշխատել է «Սապահ» (թուրք.) թերթում, 1908–13–ին՝ *«Ժամանակ»* թերթի հիմնադիր–խմբագիր:

Լույս են տեսել Գ–ի «Կեանքի տեսարաններ» (1897, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ., 2009, Ստամբուլ) պատմվածքների ժող–ը, «Տունէն ներս» (1907, ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.), «Խորհրդաւոր աղջիկը» (1907, նույն տպ.), «Կարապետ» (1910, ԿՊ, Վաղինակ Բյուրատի տպ.), «Ժողովուրդին գիրքը» (1910, ԿՊ, Առևտրական նոր Հովակիմյան տպ.), «Կրակի մէջէն» (հրտ.՝ 2010) վեպերը, արևմտահայ–ի է փոխադրել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» («Աշխարհաբար Նարեկ...», 1902, ԿՊ, Գ. Գայսերյանի տպ.) պոեմը:

ԳՈՉՈՒՆՅԱՆ Սարգիս (1867, Հալեպ–1926, Կ. Պոլիս), խմբագիր, հրատարակիչ: Մելիք *Գոչունյանի* հայրը, Միսաք *Գոչունյանի* եղբայրը: Եղբոր հետ տեղափոխվել է Կ. Պոլիս, աշխատել մի շարք թերթերի խմբագրություններում: 1913–26–ին (եղբոր մահից հետո) եղել է *«Ժամանակ»* օրաթերթի արտոնատերը:


ԳՈՎՐԻԿՅԱՆ Գրիգոր [14.5.1840, Գեղա (Ռումինիա)–20.1.1931, Վիեննա], պատմաբան, մանկավարժ, խմբագիր, եկեղեց. գործիչ: Սովորել է Գեղայի հայկ. դպրոցում, ապա՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության վարժարանում: 1909–ին՝ միաբանության աբբահայր: Դասավանդել է Վիեննայի, Կ. Պոլսի, Գեղայի, Եղիսաբեթուպոլսի հայկ. վարժարաններում: 1887–1907–ին՝ *«Արմենիա»* (հունգ.) հայագիտ. հանդեսի հիմնադիր–խմբագիր (Խաչիկ *Ստնգուրյանի* հետ): «Հանդէս ամսօրեայ»–ում տպագրել է «Հայ գրատպութեան նորագիւտ երախայրիք» (1888, էջ 138–141) և «Հայ գրատպութեանց ամենահին երախայրիքը» (1889, № 10, էջ 209–212) հոդվածները:

Գրել է Եղիսաբեթուպոլիս («Հայք յԵղիսաբեթուպօլիս Դրանսիլուանոյ», հ. Ա–Գ, 1893–1904, Իզմիրյան գրական մրց.) և Գեղա («Դրանսիլուանոյ Հայոց մետրապօլիսը կամ Նկարագիր Կերլայ հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս», 1896) քաղաքների պատմությունները, կազմել է դասագրքեր («Բանալի արքայութեան: Աղօթագիրք ամէն հասակի, վիճակի ու աստիճանի անձանց համար», 1868, 1887, 1898, 1935, «Բարձրագոյն երկրագրութիւն ճանապարհորդաց, վաճառականաց...», «Երկրագունտ փոքր», «Երկրագունտ մեծ», բոլորը՝ 1871, «Ընդհանուր պատմութիւն համառօտ ազգային դպրոցաց համար», 1879) և Գեղայում պահվող հայ. ձեռագրերի ցուցակը: Հոդվածներ է տպագրել «Եւրոպա»,«Բազմավէպ» և «Հանդէս ամսօրեայ» պարբ–ներում:

Գ–ի բոլոր գրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:



Միսաք Գոչունյան



Մ. Գոչունյանի *«Կրակի մէջէն» (2010, Ե., «Տիգրան Մեծ») գրքի կազմը*



Գրիգոր Գովրիկյանի *«Հայք յեղիսաբեթուպօլիս Դրանսիլուանոյ» (հ. Ա, 1893, Վնն.) գրքի փիլոնսաթերթը*



«Գործ», *1882–84, Շուշի (№ 1, 1884)*



«Գործարար», *1999-ից, Կալուգա (№ 10–12, 2010)*



«Գործիք չարչարանաց Փրկչին» *(1701, Մարսել կամ Լիվոռնո) գրքի փիփղոսաթերթը*

«ԳՈՐԾ», գրական, քաղ. ամսագիր: Լույս է տեսել 1882–84-ին Շուշիում: Խմբագիր՝ Սիմեոն Հախումյան: Լուսաբանել է հաս-քաղ. իրադարձությունները, անդրադարձել տնտ., մշակութ., գրական խնդիրների: Մեծ տեղ է հատկացրել հողային հարցին: Տեղեկացրել է Ռուսաստանում զեմստվոների գործունեության մասին ևն: Տպագրել է Շիրվանզադեի, Մ. Սալտիկով-Շչեդրինի, Էսքիլեսի և այլ հեղինակների գործերից: Իշխանությունները պարբ-ին մեղադրել են առաջադիմ., սոց. գաղափարներ քարոզելու համար և արգելել հրատ-ը:

«ԳՈՐԾ ՀԱՄԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԻՆ», Մինաս Գասպարյանցի թվաբանության գիրքը վաճառականների համար: Տպագրվել է 1787-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր գիւտ կամ Գործ համարողական արհեստին...» (120 էջ, 6^0, 13,4 x 5,6 սմ):

«ԳՈՐԾԱՐԱՐ», ազգ., հաս., կրթ., մշակութ. ամենամսյա պատկերազարդ հանդես: Լույս է տեսնում 1999-ից Կալուգայում (ՌԴ)՝ հայ. և ռուս.: Հիմնադիր-խմբագիր՝ Վահրամ *Բեկչյան*: Լուսաբանում է ՌՀՄ գործունեությունը, տեղի հայկ. համայնքի ազգ., կրթ., մշակութ. առօրյան, տպագրում է պատմ., լեզվաբ., մշակութ. հոդվածներ, անդրադառնում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, համահայկ. միջոցառումներին, անվանի հայերին, միջազգ., պատմ. նշանավոր դեպքերի ու դեմքերի ևն: Արտատպում է նյութեր ՀՀ և սփյուռքահայ պարբ-ներից:

«ԳՈՐԾԻՔ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՓՐԿՉԻՆ», քրիստ. դավանաբան. գիրք: Հրատ-յան տարեթիվն ու վայրն ստույգ չեն (տիտղթ-ն ընկած է, 61 էջ, 8^0, 6,9 x 4,5 սմ): Գ. Զարբհանալյանը և Ա. Ղազիկյանը գրքի տպագրության տարեթիվը համարում են 1701-ը, վայրը՝ Մարսելը (Գ. Զ.), Լիվոռնոն (Ա. Ղ.):

ԳՈՐՈԴԵՑԿԻ Սերգեյ Միտրոֆանովիչ (5.1.1884, Ս. Պետերբուրգ–8.6.1967, Մոսկվա), ռուս բանաստեղծ, թարգմանիչ: Սովորել է Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիր. ֆակ-ում:

Որպես «Ռուսսկոյե սլովո» (ռուս.) թերթի թղթակից՝ 1916-ին եղել է Թիֆլիսում, ծանոթացել Հ. Թումանյանի հետ: Վերջինիս խորհրդով մեկնել է Վան, գրել է «Հայաստանի հրեշտակը» (1918) բանաստեղծությունների ժող-ը՝ նվիրված Հ. Թումանյանին, ինչպես նաև «Գետակների և հրաբուխների երկրում» ակնարկների ու հոդվածների շարքը: «Կավկազսկոյե սլովո» (ռուս.) թերթի 1919-ի մարտի 23-ի համարում տպագրվել է նրա «Ղարաբաղ» հոդվածը: Գ. եղել է Հայաստանում նաև 1919-ին («Ճանապարհորդություն դեպի Երևան») և 1935-ին («Վերածնված երկիր», ակնարկներ):

Գրել է «Հայ եղբայրներին» (1941) բանաստեղծությունը՝ նվիրված Ա. Իսահակյանին: Ստեղծագործ. կապեր է ունեցել Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Հ. Հակոբյանի, Դ. Դեմիրճյանի, Ն. Զարյանի, Մ. Սարյանի, Գ. Բաշինջաղյանի, Հ. Գյուրջյանի հետ, թարգմանել է Դ. Վարուժանի, Հ. Թումանյանի, Հ. Հակոբյանի ստեղծագործություններից, գրել ակնարկներ նրանց մասին:

Հայ. հրատարակվել են Գ-ու «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» (1980), «Վերջին ճիչը» (հայ. և ռուս., 2010) բանաստեղծությունների, ակնարկների, հոդվածների ժող-ները, որտեղ առաջին անգամ հայ. տպագրվել են «Շամիրամի այգիները» վեպը, ակնարկներն ու հոդվածները, դրվագներ օրագրից և ճեպանկարներ, որոնք նա արել է Արմ. Հայաստանում:

Գրկ. **Զաքարյան Ա.,** *Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Ե., 2010:* **Даронян Ю.,** *Сергей Городецкий и Армения, Е., 1985.*

«ԳՐԱԲԵՐ», հրատարակչություն: Ստեղծվել է 2000-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Գևորգ Հովհաննեսյան: Լույս է ընծայում ժամանակակից գեղ. և մանկ. գրակ.: Հրատարակել է Հ. Կարապենցի «Պատմվածքները» (2007), Ս. Գեղամյանի «Շարունակվող երկխոսություն» (2008) և «Ես Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ» (2008) և այլ գործեր: Ուշագրավ են հայ նկարիչների և քանդակագործների՝ «Գրիգոր Խանջյան», «Ռաֆայել Իսրայելյան», «Հակոբ Կոջոյան» ալբոմները:

ԳՐԱԴԱՐԱՆ, տեղեկատվ., մշակութալուսավոր. և գիտաօժանդակ հիմնարկ, որը կազմակերպում է տպագիր արտադրանքի և այլ փաստաթղթերի հավաքումը, պահպանումն ու հանրային օգտագործումը: Գրադարանում հավաքվում և պահպանվում են ձեռագրեր, գրքեր, լրագրեր, ամսագրեր ու տեղեկատվության ժամանակակից կրիչներ:

Գ-ները, որպես գրավոր հուշարձանների հաս. պահոցներ, առաջացել են հնագույն ժամանակներում: Մ. թ. ա. VII դ-ի կեսին Նինվեում՝ Ասորեստանի թագավոր Աշուրբանիպալի պալատին կից եղել է կավե սալիկների մեծ հավաքածու, Հին Եգիպտոսում տաճարներին կից՝ Գ-ներ, որոնք սպասարկել են քրմերին: Հին Հունաստանում առաջին խոշոր Գ-ի հիմնադրումը վերագրվում է Արիստոտելին (մ. թ. ա. IV դ.): Առավել հայտնի են Ալեքսանդրիայի (մ. թ. ա. I դ., 700 հզ. միավոր գիրք) և Պերգամոնի (մ. թ. ա. III դ., որը մ. թ. ա. I դ-ի կեսին ունեցել է մոտ 200 հզ. ձեռագիր մատյան) անտիկ Գ-ները:

Ալեքսանդրիայում սովորելու տարիներին Գ-ից օգտվել են Մեսրոպ Մաշտոցի աշակերտները՝ Մովսես Խորենացին և ուր.: Առաջին մասնագիտ. Գ-ները կազմավորվել են Հին Հունաստանում (մ. թ. ա. II–I դդ.)՝ Աթենքի համալսարանում, Հռոդոսի գիմնազիայում և այլուր:

Հին Հռոմում մ. թ. I դ-ից սովորույթ էր դարձել տաճարներին կից այսպես կոչված հանրային Գ-ներ ստեղծելը: XII դ-ից կազմակերպվել են հարուստ ֆոնդերով Գ-ներ (Քեմբրիջի, Օքսֆորդի, Փարիզի ևն): Վաղ միջնադարում Արմ. Եվրոպայում Գ-ները սովորաբար եղել են խոշոր տաճարներին և վանքերին կից: Տարածված էին նաև անձն. (մասնավոր) Գ-ները: Առավել հայտնի են Լաուրենցիանա Մեդիչիի (Ֆլորենցիայում), Ֆրանսիայի թագավորների (1480-ին Լուվրում հիմնադրվել է Թագավոր. գրադարանը, որը հետագայում դարձել է Ֆրանսիայի ազգ. Գ.) և Հռոմի պապերի (Վատիկանում) Գ-ները:

Վերածննդի դարաշրջանում (XV–XVI դդ.) մշակույթի ընդհանուր զարգացման և հատկապես տպագրության գյուտի շնորհիվ Գ-ների թիվը մեծացել է: XVII–XVIII դդ-ում բազմաթիվ երկրներում բացվել են Գ-ներ, որոնք հետագայում ձեռք են բերել համազգ., մի քանիսը՝ նաև համաշխ. նշանակություն (Բոդլեյան Գ.՝ Օքսֆորդում, 1602, Թագավոր. Գ.՝ Բեռլինում, 1661, Բրիտ. թանգարանի Գ.՝ Լոնդոնում, 1753): Խոշոր ազգ. և համալսարան. Գ-ներ ստեղծվել են նաև XIX դ-ում՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի Գ.՝ Վաշինգտոնում (1802), Բրյուսելի թագավոր Գ. (1837) ևն: Զանգվածաբար Գ-ներ կազմակերպվել են XIX դ-ի 2-րդ կեսից:

Ներկայում խոշորագույններից են Բրիտ. թանգարանի, Ս. Պետերբուրգի և Մոսկվայի հիմնարար, Ֆրանսիայի, Շվեդիայի, Ավստրիայի ազգ., ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Չեխիայի, Ճապոնիայի համալսարանների ու Վատիկանի Գ-ները:

Հայաստանում, ըստ Մովսես Խորենացու, պալատ. և մեհենական Գ-ներ գործել են մ. թ. առաջին դարերից, իսկ ավելի ուշ Գ-ներ ստեղծվել են վանքերին ու մենաստաններին կից. տեղավորվել են առանձին շինություններում կամ վանքամերձ քարայրերում և կոչվել են գրատուն, գրանոց, գանձատուն, մատենադարան, դիվան, երբեմն էլ՝ նշխարանոց, նշխարախուց: Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցն Էջմիածնի Մայր աթոռում հիմնադրել են հայ. ձեռագիր մատյանների Մայր պահոցը՝ առաջին մատենադարանը, որի վարիչը եղել է Ղազար Փարպեցին (այդ մասին նա հիշատակել է իր «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» նամակ-ուղերձում): Այդ մատենադարանի հիման վրա 1959-ին հիմնադրվել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. մատենադարանը:




Սերգեյ Գորոդեցկի



Ս. Գորոդեցկու *«Վերջին ծիչը» (2010, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*

Զմմառի վանքի գրադարանի պահոցներից





Բոստոնի հանրային գրադարանի Աստվածաբանության սրահը (1671–79)



Ա. Իսահակյանի անվան Երևանի քաղաքային գրադարանի գրապահոցներից



ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի ընթերցասրահներից

V–XVII դդ–ում հիմնադրվել են Արգինայի և Հռոմկլայի կաթող.իկոս., Անիի արքայական, Սանահինի, Հաղպատի, Տաթևի, Գլաձորի, Գետիկի, Մեծոփավանքի, Վարագավանքի, Սկևռայի, Դրազարկի ձեռագրատները: Հետագայում Գ–ներ են գործել նաև ուս. հաստատություններին կից՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Երևանի արական ու Հոիփսիմյան իգական գիմնազիաներում և այլուր: Հայկ. բազմաթիվ Գ–ներ կան նաև Սփյուռքում. նշանավոր են Երուսաղեմի ձեռագրատունը, Մխիթարյան միաբանության մատենադարանները՝ Վենետիկում և Վիեննայում, Զմմառի վանքի գրադարանը, Նուպարյան մատենադարանը՝ Փարիզում, ևն:

ՀՀ–ում Գ–ները տարբերակվում են ըստ սեփականության ձևի՝ պետ., համայնքային, ոչ պետ., ըստ տարածքային բաժանման՝ հանրապետ., մարզային, համայնքային, ըստ բնույթի՝ մասնագիտացված, դպրոցական, մանկական ևն: Առավել հայտնի են Հայաստանի ազգ., ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտ., ԵՊՀ–ի, Ա. Իսահակյանի անվ. քաղաքային կենտր., Խնկո Ապոր անվ. մանկ., ինչպես նաև Երևանի գիտատեխ., գիտաբժշկ., երաժշտագիտ. Գ–ները:

ՀՀ–ում Գ–ների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները կարգավորվում են «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքով (21.3.2012), որով սահմանվում են նաև Գ–ների տեսակները, գործառույթները, գրադարանային հավաքածուների հաշվառման, համալրման, պահպանության ու հանրային Գ–ի հավատարմագրման կարգը, Գ–ների և Գ–ներից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները և ապահովում գրադարանային գործի զարգացման իրավ. հիմքերը:

Տես նաև ***ԵՊՀ գրադարան, Երևանի ազգային մանկական գրադարան Խնկո Ապոր անվան, Երևանի քաղաքային կենտրոնական գրադարան Ավետիք Իսահակյանի անվան, Հայաստանի ազգային գրադարան, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան*** ևն:

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտաճյուղ. ուսումնասիրում է գրադարանային գործի տեսությունը, պատմությունը, մեթոդաբանությունը, եղանակն ու կազմակերպումը: Հիմն. բաժիններն են՝ ընդհանուր, գրադարանային ֆոնդերի, գրադարանային գործի կազմակերպման, ընթերցողի հետ կատարվող աշխատանքի, գրադարանային գործի պատմության ևն: Գրադարանի մասին տես. պատկերացումներ եղել են դեռևս նրա սկզբնավորման ժամանակներից. մ. թ. ա. V դ–ից սկսած կազմվել են «Ձեռքբերման արժանի գրքերի մասին» (Դեմոֆիլոս, Հին Հունաստան, մ. թ. ա. V դ.), «Ցուցակներ այն մարդկանց, որոնք փառաբանվել են գիտության տարբեր ոլորտներում, և այն մասին, որ նրանք գրել են 120 գրքերում» (Կալիմաքոս, Ալեքսանդրիա, մ. թ. ա. 200), «Գրքերի ձեռքբերման և ընտրության մասին» (Փիլոն Հելենիոս, Հին Հռոմ), «Երեք գիրք գրքաճանաչման մասին, որտեղ նշված է, թե որ գրքերն են արժանի ձեռքբերման» (Տելեֆոս Պերգամոնցի) և այլ տեսակի գրքեր, որոնք ունեցել են գրադարանային դասակարգման ու մատենագիտ. ցուցիչների դեր: Իսկ «Գ.» տերմինն առաջինն օգտագործել է գերմանացի գրադարանագետ Մարտին Շրեդինգերը 1810–ական թթ–ին:

Տարբերում են ընդհանուր և մասնավոր Գ–ներ:

Ընդհանուր Գ. ներառում է գրադարանային գործառույթի այն կողմերը, որոնք հավասարապես վերաբերում են Գ–յան բոլոր ինքնուրույն բաղադրիչներին՝ առանց խորանալու նրանց առանձնահատկությունների մեջ, սահմանում է Գ–յան առարկան, նրա տեղը գիտ–ների համակարգում, գրադարանային գործունեության օրենքներն ու եղանակները:

Մասնավոր կամ հատուկ Գ. գրադարանի բաղադրիչների՝ գրադարանային ֆոնդի, օգտատերերի քանակի, գրադարանների աշ–

խատակազմերի, նյութատեխ. հենքի և այլ տարրերի մասին տես. պատկերացումներն են:

Հայ Գ. զարգացել է մատենագիտ–յանը զուգընթաց: XVII դ–ում Գ–յան և մատենագիտ–յան ասպարեզում հայտնի էր ***Վարդան Բաղիշեցին***, որը ձեռագիր և տպագիր գրքերով համալրել է Բաղեշի Ամրդոլու վանքի գրադարանը, դասակարգել գրքերը, կազմել գրացուցակները: XVIII–XIX դդ–ում հայ Գ. առավել զարգացել է Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան միաբանություններում և հայ հաս., մշակութ. կենտրոններում (Թիֆլիս, Բաքու, Երևան, Էջմիածին, Շուշի, Կ. Պոլիս):

Խորհրդ. շրջանում Գ. անջատվել է մատենագիտ–ից և զարգացել որպես առանձին գիտաճյուղ: Գրել և թարգմանել են (հիմնականում՝ ռուս–ից) Գ–յան դասագրքեր, տես. աշխատություններ, գրադարանային աշխատանքի գործն. ու մեթոդ. ձեռնարկներ: Գ–յան մեջ մեծ վաստակ ունեն Օհան ***Զուբարյանը***, Զաքար ***Համբարձումյանը***, Ռաֆայել ***Իշխանյանը***, Գագիկ ***Սուքիասյանը***, Բ. Զաքարյանը, Վ. Կարմենյանը, Ա. Շահագիզյանը, Գ. Մկրտչյանը, Հ. Սիլվինյանը և ուր.:

ՀՀ–ում Գ. որպես ուս. առարկա դասավանդվում է (1970–ից) ՀՊՄՀ–ի գրադարանագիտ–յան և մատենագիտ–յան ամբիոնում (տես նաև ***Գրադարանամատենագիտական կրթություն***):

ԳՐԱԴԱՐԱՆԱՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, տես ***Հրապարակությունների դասակարգումներ***:

ԳՐԱԴԱՐԱՆԱՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, բարձրագույն ու միջին որակավորման գրադարանավարների և մատենագետների պատրաստման համակարգ: Սկզբնավորվել է Գյոթինգենի (Գերմանիա) համալսարանում՝ գրադարանագիտ–յան և մատենագիտ–յան ամբիոնի ստեղծմամբ (1886):

Երևանում քաղլուստեխնիկում (գրադարանային բաժնով) կազմակերպվել է 1929–ին, որը հետագայում կոչվել է ակումբագրադարանային տեխնիկում. գործել է մինչև 1961–ը (1941–46–ին չի գործել): 1961–69–ին ակումբագրադարանային բաժին է ունեցել Ա. Բակունցի անվ. մանկավարժ. ուսումնարանը: 1969–ին ակումբագրադարանային ուսումնարան է հիմնադրվել Էջմիածնում (առկա և հեռակա բաժիններով): Բարձրագույն գրադարանային բաժին է գործել ԵՊՀ–ում (1949–55–ին՝ առկա, 1960–70–ին՝ հեռակա), Երևանի հեռակա մանկավարժ. ինստ–ում (1954–64):



Ջմմառի վանքի գրադարանի վերականգնման աշխատանոցը

Խորհրդ. տարիներին ՀԽՍՀ մշակույթի նախարարությունը պարբերաբար գրադարանավարների 1–2–ամսյա վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել տեղերում:

1970–ին ՀՊՄՀ մշակույթի ֆակ–ում հիմնադրվել է գրադարանագիտ–յան և մատենագիտ–յան ամբիոն (1999–ից վարիչ՝ Գագիկ ***Սուքիասյան***), դասավանդվում է «Գրադարանագիտություն» առարկան:

2009–ից ՀՀ ԳԱԱ գիտակրթ. միջազգ. կենտրոնում իրականացվում է «Գրադարանային–տեղեկատվական աղբյուրներ» մագիստրոս. կրթ. ծրագիր, որի նպատակը գրադարանային գործում SS ոլորտի ձեռքբերումների կիրառման տեխնոլոգիան ուսանողներին սովորեցնելն է՝ հասարակության փոփոխվող կարծիքները բավարարելու համար:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹ, անցկացվում է 2002–ից՝ Հայկ. գրադարանային ասոցիացիայի նախաձեռնությամբ (սովորաբար ապրիլի 3–րդ շաբաթվա ընթացքում): Նպատակը հանրության ուշադրությունը գրադարանների և գրադարանային խնդիրների վրա հրավիրելն է, գրագետ ու տեղեկացված հասարակության ձևավորմանը նպաստելը:



Ձեռագրերի վերականգնման աշխատանոցում



«Գրական Ադրբեջան», *1957–89, Բաքու*



«Գրական ամսաթերթ», *1961–62, Փարիզ (№ 5, 1962)*



«Գրական դիրքերում», *1927–32, Երևան*



«Գրական թերթ», *1932-ից, Երևան*

Գ. շ. անցկացվում է մայրաքաղաքային, քաղաքային, գյուղ. գրեթե բոլոր գրադարաններում. կազմակերպվում են հանդիպումներ գիտ-յան, մշակույթի և գրակ-յան ճանաչված անձանց հետ, դասախոսություններ, քննարկումներ, ցուցահանդեսներ, գրքի շնորհանդեսներ ևն, անդրադառնում է հոբելյան. միջոցառումների:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գրական, գեղ. և գիտ. քննադատ. կարծիք հրատ-յան, ստեղծագործության, հոդվածի ևնի մասին: Ներկայացնում է ստեղծագործության (գեղ. գրակ., նկար, ներկայացում, քանդակ, կինոնկար, գիտ. ուսումնասիրություն ևն) հակիրճ բովանդակությունը, արժանիքներն ու թերությունները: Հայ-ում «Գ.»-յան փոխարեն օգտագործում են նաև «կարծիք» տերմինը:

«ԳՐԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ», գրական-գեղ. երկամսյա հանդես: Ադրբեջանի գրողների միության հայկ. բաժանմունքի պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1957–89-ին Բաքվում: Խմբագիրներ՝ Սամվել *Գրիգորյան*, Վլադիմիր *Աբրահամյան*: Լուսաբանել է հանրապետության գրական կյանքը, ծանոթացրել հայ գրողների ու բանաստեղծների ստեղծագործություններին: Թղթակցել են Ադրբեջանի և Հայաստանի գրողներն ու գրականագետները:

«ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ», գրակ-յան և արվ-ի հանդես: Լույս է տեսել 1961–62-ին Փարիզում: Խմբագրակազմ՝ Ավետիս *Ալիքանյան*, Պետրոս *Զարոյան*, Բյուզանդ *Թոփալյան*, Զարեհ *Որբունի*, Գեղամ *Քերեսթեճյան*: Տպագրել է սփյուռքահայ և Հայաստանի գրողների երկերից, գրախոսականներ, թարգման. նյութեր, արվ-ի ու գրակ-յան մասին հոդվածներ, որով նպաստել է հայապահպանությանը Սփյուռքում, ամրապնդել կապը Հայրենիքի և հայկ. մշակույթի հետ, ներկայացրել նմուշներ ֆրանս. գրակ-ից:

«ԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ», տես-քննադատ., գրական-գեղ. պատկերազարդ ամսագիր: Հայաստանի պրոլետ. գրողների ընկերակցության պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1927–32-ին Երևանում: Խմբագիրներ՝ Նորայր *Դաբաղյան*, Վահրամ *Ալազան*, Հայկ *Գյուլիքևիայան*: Հանդեսը հրատարակել է երիտասարդ գրողների և քննադատների գործերից, անդրադարձել ժամանակի գրական պայքարին ու գեղագիտ. ըմբռնումներին, տպագրել ընկերական շարժեր և ծաղրանկարներ, խորհրդ. շրջանի գրողների ստեղծագործություններից:

«ԳՐԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ», ամսագիր (վերջում՝ երկամսյա): Լույս է տեսել 1883–88-ին Կ. Պոլսում (1885-ից՝ «Շարժում գրական եւ իմաստասիրական»): Խմբագիր՝ Եղիա *Տեմիրճիպաշյան*: Լուսաբանել է Կ. Պոլսի հայկ. վարժարանների կյանքը, առաջարկել է ստեղծել նախն., երկրորդ. և բարձրագույն դպրոցներ, ծանոթացրել ուսուցման առաջավոր մեթոդներին: Արձագանքել է պոլսահայ մամուլի հրապարակումներին, տպագրել լուրեր արևմտահայ և պոլսահայ կյանքից: Արծարծել է կանանց ազատության հարցեր, ջատագովել կին մանկավարժներ ունենալու գաղափարը: Տպագրել է նյութեր Ա. Արփիարյանի, Գ. Զոհրապի, Հ. Պարոնյանի, Ս. Տյուսաբի և ուր. մասին, համաշխ. հայտնի հեղինակների գործերից (Վ. Հյուգո, Է. Զոլա, Հ. Լոնգֆելլո և ուր.): Լուսաբանել է քաղաքատնտեսության և փիլ-յան հարցեր:

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ», գրական-գեղ., հաս-քաղ. շաբաթաթերթ (մինչև 1946-ը՝ տասնօրյա): ՀԳՄ վարչության (1932-ին՝ Հայաստանի խորհրդ. գրողների ֆեդերացիայի, 1932–34-ին՝ գրողների, երաժիշտների և կերպարվեստագետների միությունների, 1934–62-ին՝ Հայաստանի գրողների միության) պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1932-ից (1941-ի նոյեմբ. – 1944-ի դեկտ. չի տպագրվել) Երևանում: Խմբագիրներ՝ Հարություն *Մկրտչյան*, Եղիա *Չոպար*, Նորայր *Դաբաղյան*, Վահրամ *Ալազան*, Հենրի *Գաբրիելյան*, Հովիկ *Մելիքյան*, Գուրգեն *Բորյան*, Գ. Ոսկանյան, Գարեգին Հովսեփյան, Արշալույս

Բաբայան, Վազգեն *Մնացականյան*, Գրիգոր *Տեր-Գրիգորյան* (Գիգի), Հրաչյա *Հովհաննիսյան*, Մկրտիչ *Սարգսյան*, Վահագն *Դավթյան*, Համո *Սահյան*, Միքայել *Շաթիրյան*, Սաղաթել *Հարությունյան*, Նորայր *Ադալյան*, Անժիկ *Հակոբյան*, Ֆելիքս *Մելոյան*, Սամվել *Կոտյան*, Կարինե *Խոդիկյան* (2001–04, 2012–ից):

Լուսաբանում է ՀՀ գրական-մշակութ. կյանքը, տպագրում է հայ և համաշխ. գրակ-յան դաս. ու ժամանակակից գրողների ստեղծագործություններից, կազմակերպում է գրական բանավեճեր, քննարկումներ, պատշաճ տեղ է հատկացնում գրական շարժմանը, երիտասարդ ստեղծագործողներին, սփյուռքահայ գրակ-յանը, անդրադառնում է հայոց պատմության շրջադարձային փուլերին, հատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդ սերնդի դաստիարակության, մայրենի լեզվի անաղարտության, շրջակա միջավայրի, բնության, ճարտ. հուշարձանների պահպանության հարցերին:

«ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ», ամսաթերթ: Երևանի գրողների միության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2009-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Աբգար *Ափինյան*, խմբագիր՝ Սուսաննա Ղազարյան: Տպագրում է երիտասարդ գրողների ստեղծագործություններ, համաշխ. դասականներից՝ թարգմանություններ (առաջին անգամ հրատարակված), հայ դասականների անտիպ էջեր, գրականագիտ. վերլուծություններ, անդրադառնում է ՀՀ-ի գրական, գրահրատարակչ. և կրթամշակութ. նորություններին, հաս-քաղ. կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:




«Գրական կյանք», *2009-ից, Երևան*

«ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», գրական-գեղ. տարեգիրք: ԵՊՀ հրատ.: Լույս է տեսնում 1981-ից Երևանում՝ որպես 1959–65-ին լույս տեսած «Ուսանողի քնար» (4 պրակ) տարեգրքի շարունակություն. ցայսօր՝ 13 (4 + 9) պրակ: Խմբագիրներ՝ Էդվարդ *Ջրբաշյան*, Հրանտ *Թամրազյան*, Ռաֆիկ Հարությունյան, Կիմ Աղաբեկյան, Սերգեյ Աթաբեկյան, Վլադիմիր *Մաղալյան* (1981-ից): Տպագրում է ԵՊՀ դասախոսների, աշխատողների և ուսանողների ինքնուրույն ու թարգման. գործեր, բանասիրգրաքննադատ. հոդվածներ, անվանի համալսարանականների մասին հուշեր: Տարբեր տարիների տարեգրքերում տպագրվել են Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Թովմասյանի, Ա. Մարգարյանի, Ռ. Իշխանյանի, Պ. Պողոսյանի, Վ. Գաբրիելյանի, Դ. Զեյթունցի, Ս. Մուրադյանի, Հ. Սարգսյանի, Հ. Երիցյանի, Ս. Սեֆերյանի, Հ. Էդոյանի, Ա. Հարությունյանի և ուր. ստեղծագործություններից ու թարգմանություններից:




«Գրական համալսարան», *1981-ից, Երևան*

«ԳՐԱԿԱՆ ՍԵՐՈՒՆԴ», գրական-գեղ., քննադատ. ամսագիր: ՀԳՄ և ՀԼԿԵՄ ԿԿ պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1934–36-ին Երևանում: Անդրադարձել է գրական վարպետության հարցերին, տպագրել և գրախոսել է երիտասարդ գրողների գործեր, ծանոթացրել ճանաչված հեղինակների ստեղծագործ. ուղուն: Ամսագրում հրապարակվել են նմուշներ համաշխ. դասականների երկերից: Անդրադարձել է նաև երիտասարդ գրողների խնդիրներին:



«Գրական սփյուռք», *2010-ից, Երևան*

«ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ», տարեգիրք: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ-յան ինստ-ի և ՀՀ սփյուռքի նախարարության հրատ.: Լույս է տեսնում 2010-ից Երևանում: Խմբագր. խորհրդի նախագահ՝ Ավիկ *Իսահակյան*, գլխ. խմբագիր՝ Հրաչյա Սարիբեկյան, պատ. խմբագիր՝ Արքմենիկ *Նիկողոսյան:* Տպագրում է սփյուռքահայ արձակագիրների, բանաստեղծների, դրամատուրգների, գրականագետների ստեղծագործություններ, կենսագրականներ:



«Գրականագիտական հանդես», *2004-ից, Երևան (№ 12)*

«ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ-յան ինստ-ի և ՀԳՄ հրատ. (մինչև 2010-ը՝ կիսամյա, 2010-ից՝ ամենամյա): Լույս է տեսնում 2004-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Գրիգոր Հակոբյան, գլխ. խմբագիրներ՝ Ազատ *Եղիազարյան*, Նորայր *Ադալյան*, Սուրեն Աբրահամյան (2012-ից): Տպագրում է գրակ-յան

ԳԱԹ-ի հրատարակություններից



Վ. Շուշանյանի «Խառնիխուռն» (2001) գրքի կազմը



Հ. Շեմսի «Պատմութիւն հայ գրականութեան» (2002) գրքի կազմը



Սայաթ-Նովայի «Խաղեր»-ի (2003) կազմը

պատմությանը, տեսությանը, գրաքննադատությանը, ազգագրությանը, ժամանակակից հայ և համաշխ. գրակ-յանը վերաբերող գիտ. հոդվածներ, հրապարակումներ, բանավիճային նյութեր, թարգմանություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ Եղիշե Չարենցի անվան (ԳԱԹ), գրական-մշակութ. հաստատություն Երևանում, որտեղ կենտրոնացված են XVII դ-ից մինչև մեր օրերի ստեղծագործ. կազմակերպությունների և զանազան միավորումների, գրակ-յան, թատրոնի, երաժշտության և կինոարվ-ի գործիչների արխիվները: Կազմակերպվել է 1953-ին՝ գրակ-յան, թատեր. թանգարանների և Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. կաբինետի նյութերի հիման վրա: Մինչև 1963-ը կոչվել է ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան և արվ-ի թանգարան: 1977-ից թանգարանը համալրվել է նաև կինոարվ-ին վերաբերող նյութերով: 1963-ից մշակույթի նախարարության ենթակայության տակ է, 1967-ից՝ Ե. Չարենցի անվ.:

Թանգարանը ձևավորվել է 1921-ից՝ որպես Հայաստանի կուլտուրպատմ. թանգարանի պատմագր. բաժին: 1922-ից գործել է Երվանդ *Շահազիզի* ղեկավարությամբ, որը Նոր Նախիջևանից փոխադրել և թանգարանին է հանձնել Մ. Նալբանդյանի, Գ. Պատկանյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Խալիբյանի, Ս. Շահազիզի արխիվները, Նոր Նախիջևանի հայկ. գաղութի պատմությանը վերաբերող վավերագրեր, հնատիպ գրքեր և այլ նյութեր: Մինչ այդ (1921-ի հոկտ.) Հ. Թումանյանը թանգարանին էր հանձնել Սայաթ-Նովայի երգերի ինքնագիր տետրը՝ «Դավթարը»:

1935-ին առանձնացվել է որպես Պետ. գրական թանգարան (առաջին տնօրենն՝ Խորեն *Մարգսյան*): 1942-ից թանգարանը ներառվել է ԽՍՀՄ ԳԱ հայկ. մասնաճյուղի (ԱրմՖԱՆ), ապա՝ ՀԽՍՀ ԳԱ կազմի մեջ՝ որպես Լեզվի ու գրակ-յան ինստ-ի, 1942–53-ին՝ Գրակ-յան ինստ-ի ինքնուրույն՝ ձեռագր. բաժին:

ԳԱԹ-ի նյութերի հիման վրա գրակ-յան և լեզվի ինստ-ը «Գրական ժառանգություն» մատենաշարով լույս է ընծայել (առաջին գիրքը՝ 1940-ին) Պ. Ադամյանի, Նար-Դոսի, Ա. Ծատուրյանի, Ա. Սպենդիարյանի, Գ. Ախվերդյանի, Դ. Վարուժանի անտիպ երկերն ու նամակները, գրական, թատեր., երաժշտ. բաժինների ուղեցույցներ: ԳԱԹ-ում կազմակերպվել են Ե. Չարենցի, Շիրվանզադեի, Հ. Պարոնյանի, Հ. Աբեղյանի, Վ. Տերյանի հոբելյաններին նվիրված և թեմատիկ այլ ցուցահանդեսներ: Գրական և թատեր. մշտ. ցուցահանդեսներին զուգահեռ կազմակերպվել են հայկ. թատրոնի 2000-ամյա պատմությանը, Հ. Թումանյանի, Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, հայկ. ազգ. օպերայի 100-ամյակներին նվիրված ցուցահանդեսներ, ձայնագրվել են գրակ-յան և արվ-ի գործիչների ստեղծագործություններ՝ հեղինակների կատարմամբ:

ՀՀ անկախացումից հետո ԳԱԹ-ը ձեռք է բերել հրատարակչ. իրավունք. 1995-ից թանգարանի ֆոնդերի հիման վրա կազմվել և տպագրվել են գիտ. և հանրամատչելի ավելի քան 60 անուն գրքեր, որոնցից ուշագրավ են Սայաթ-Նովայի, Պաղտասար Դպիրի, Խ. Աբովյանի, Ե. Օտյանի, Գ. Զոհրապի, Հ. Շեմսի, Վ. Շուշանյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Կոմիտասի, Ն. Գալանթերյանի, Գ. Սյունու, Է. Միրզոյանի և ուր. երկերը, թողարկվել են նաև գրական-երաժշտ. գործերի խտասալիկներ:

Գրադարանն ունի ֆոնդային գրքերի (20 000 միավոր, 367-ը՝ հնատիպ), ինչպես նաև պարբ. մամուլի հարուստ հավաքածու: Արժեքավոր են Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Թումանյանի, Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի և ուր. գրքային ֆոնդերը: Ֆոնդայինից զատ՝ գրադարանում պահվում են շուրջ 42 000 հայագիտ. գրքեր և պարբ. մամուլի հազարավոր օրինակներ, նաև 136 միավոր հնատիպ գրքեր (մի քանիսը՝ օտարալեզու):

Թանգարանի մասնաճյուղերից են՝ Դ. Դեմիրճյանի (Երևան), Հ. Թումանյանի (Դսեղ), Ա. Բակունցի (Գորիս), Պ. Պռոշյանի (Աշտարակ) տուն-թանգարանները և Գ. Ղափանցյանի թանգարանը (Աշտարակ):

ԳԱԹ-ի տնօրեններ են եղել Խորեն Սարգսյանը, Ռուզան Նանումյանը, Գառնիկ *Ստեփանյանը*, Սարգիս Մելիքսեթյանը, Ստեփան *Ալաջաջյանը*, Ավիկ *Իսահակյանը*, Աշոտ Օհանյանը, Աշոտ Ալեքսանյանը, Հենրիկ *Բախչինյանը*, Կարո Վարդանյանը (2011-ից):

Գրկ. **Մադոյան Գ.,** *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան [պատմական ակնարկ], Ե., 1972:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան: Գործունեությունն սկսել է Պատմության և մշակույթի ինստ-ի կազմում, 1938-ին ներառվել է ԱրմՖԱՆ-ի համակարգի մեջ: Որպես առանձին հաստատություն՝ ձևավորվել է 1943-ից. 1944-ից՝ Մ. Աբեղյանի անվ.:


Գ. ի-ում կատարվում են հայ դաս. գրողների երկերի գիտ. ուսումնասիրության և հրատ-յան աշխատանքներ: 1939-ին լույս է ընծայվել հայոց ազգ. դյուցազներգության համահավաք տեքստը՝ «Սասունցի Դավիթը», այնուհետև հրատարակվել է 600-ից ավելի գիրք՝ մենագրություններ՝ նվիրված հայ դաս. գրողների կյանքին ու գործունեությանը, գրակ-յան որոշակի շրջաններին, հայ հեղինակներին կամ գրապատմ. փուլերին վերաբերող տարեգրություններ ու ժամանակագրություններ, հոդվածների ժող-ներ:

Լույս են տեսել Մ. Աբեղյանի «Հայ հին գրականության պատմությունը» (հ. 1, 2, 1944, 1946), հեղինակային խմբերի ստեղծած «Սովետահայ գրականության տարեգրությունը» (հ. 1, 2, 1957, 1977), «Սովետահայ գրականության պատմությունը» (հ. 1, 2, 1961, 1965), «Հայ նոր գրականության պատմությունը» (հ. 1–5, 1962–79), «Հայոց գրականության պատմությունը» (վեց հատորով, հ. 3, 2015), Ա. Ինճիկյանի «Հովհաննես Թումանյան: Կյանքի և ստեղծագործության պատմությունը. 1869-1899» (1969), «Հայ քննադատության պատմությունը» (հ. 1, 1985), «Հայ քննադատական մտքի պատմության մատենագիտություն (1794–1920)» (1987), Ս. Աղաբաբյանի «Հայ սովետական գրականության պատմությունը» (հ. 1, 1986) և «Հայ սովետական պոեզիայի պատմությունը» (1987), Դ. Դեմիրճյանի «ԵԼԺ»-ն (հ. 1–14, 1976–87), Դ. Վարուժանի «ԵԼԺ»-ն (հ. 1–3, 1986–87), Հ. Թումանյանի «ԵԼԺ»-ն (հ. 1–10, 1988–99), Մ. Շահազիզի «Չափածո երկերը» (1993), Սիամանթոյի «Անտիպ երկերի ժողովածուն» (2003), Ա. Իսահակյանի «ԵԼԺ»-ն (14 հատորով, 2003-ից), Լ. Շանթի «ԵԼԺ»-ն (9 հատորով, 2007-ից), «Հայ վեպի պատմություն» (2005) ժող-ը ևն:

Գ. ի-ի տնօրեններ են եղել Խորեն *Սարգսյանը*, Մկրտիչ *Մկրյանը*, Հովհաննես *Սամիկոնյանը*, Էդվարդ *Թոփչյանը*, Գուրգեն *Հովհաննը*, Վաչե *Նալբանդյանը*, Էդվարդ *Ջրբաշյանը*, Ազատ *Եղիազարյանը*, Ավիկ *Իսահակյանը* (2008-ից):

«ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1908–09-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Գրիգոր *Բալասանյան:* Լուսաբանել է հայկ. կյանքը, անդրադարձել Հայաստանի ազատագրման խնդիրներին: Գրական բաժնում տպագրել է գեղ. գործեր, գրախոսականներ, մատենագր. հոդվածներ, նմուշներ վրաց. գրակ-ից, գրողների հոբելյաններին նվիրված նյութեր: Հանդես է եկել արևելահայ և արևմտահայ գրակ-ների միջև ստեղծված արհեստ. անջրպետի դեմ: Պարբերաբար հրատարակել է մամուլի տեսություն: 1910-ին լույս է տեսել «Գ. եւ կ.»-ի բացառիկ համարը՝ նվիրված Գ. Բալասանյանի հոբելյանին:


«ԳՐԱՄԱՐՏԻԿ», գրական, գիտ., հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1954–60-ին Լոս Անջելեսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Գ. Հարությունյան: Արծարծել է հայապահպանության հարցեր, ուծացման վտանգի դեմ պայքարելու համար առաջարկել է ստեղծել կրթ., մշակութ., մարզ. օջախներ: Տպագրել է պատմվածքներ, բանաստեղծություններ, երգիծ. գործեր, գիտ. ուսումնասիրություններ, նյութեր՝ այլ ժողովուրդների ազգ. սովորույթների և ավանդույթների մասին:



Ս. Շահազիզի «Չափածո երկեր»-ի (1993, Ե.) կազմը



«Հայ վեպի պատմություն» (2005, Ե.) գրքի կազմը



Ա. Իսահակյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի (հ. 5, 2014, Ե.) կազմը

Անդրադարձել է խորհրդահայ բանաստեղծների հոբելյաններին, ներկայացրել օտար լեզուներով ստեղծագործող հայ գրողներին, տեղեկություններ հաղորդել Սփյուռքի հայկ. վարժարանների մասին: Մեծ տեղ է հատկացրել կալիֆոռնիահայ համայնքի առօրյային:

ԳՐԱՄԵՔԵՆԱ, մեխ., էլեկտրամեխ. կամ էլեկտրոնամեխ. սարք՝ ստեղներով, որոնց սեղմումով համապատասխան գրանշանը տպագրվում է գրանյութի (հիմնականում՝ թուղթ) վրա: Լայնորեն օգտագործվել է XIX և XX դդ-ում:



Առաջին լայն փարածում գտած գրամեքենան (1877)

Գ-ների մեծ մասի գործողությունը մետաղ. կամ պլաստիկ լիտերներով վերջացող հատուկ լծակներով տառանշանի պատկերը թղթին փոխանցելն է: Մտեղնի սեղմումով լծակը համապատասխան լիտերային ծայրով (տառանշանի հայելային պատկերով) հարվածում է թանաքով տոգորված ժապավենին և տպահետք թողնում թղթի վրա: Հաջորդ նշանը տպելուց առաջ թուղթը և ներկաժապավենն ինքնաշխատ տեղաշարժվում են 1 տառաչափով: Տեքստի մի քանի օրինակ տպագրելու համար օգտագործել են պատճենաթուղթ:

Առաջին Գ. պատրաստվել է Անգլիայում 1714-ին, երբ գյուտարար Հ. Միլն արտոնագրել է ոչ միայն մեքենան, այլև գրանշանները թղթին հաջորդաբար տպելու եղանակը: Դրանից գրեթե 100 տարի անց՝ 1808-ին, Պելեգրինո Տուրին (նաև պատճենահան թղթի գյուտարարն է) պատրաստել է իր Գ.: 1868-ին ամերիկացի գյուտարար Քրիստոֆեր Շոուլզն արտոնագրել է անհամեմատ կատարյալ «Ռեմինգտոն» Գ.:

1870-ին ռուս գյուտարար Միխայիլ Ալիսովը հայտնագործել է շարվածքային կամ «արագագիր» Գ., որը, սակայն, տարածում չի ստացել:



Հայերեն սրտեղնաշարով «Անդերվուդ» գրամեքենա (1896)

Գ-ների 1-ին զանգվածային արտադրությունն սկսվել է 1877-ին Անգլիայում: Դրանց տպագրության որակն այնքան բարձր էր և նման տպագր. մեքենայով ստացված տպածոյին, որ Գ. հայտարարվել է վերջինիս համարժեք, և նրանով կատարված տպագրությունը նույնպես ենթարկվել է գրաքննության: Ռուսաստանում առաջին՝ «Յանալիֆ» մակնիշի Գ. արտադրվել է 1928-ին Կազանում. ավելի ուշ տարածվել են «Ուկրաինա» (գրասենյակային) և «Մոսկվա» (դյուրակիր) մակնիշների Գ-ները, իսկ արտասահմ. Գ-ներից՝ «Օպտիման» (ԳԴՀ, գրասենյակային) և «Կոնսուլը» (Չեխոսլովակիա, դյուրակիր):

Գ., որպես կանոն, ունի 42–46 ստեղն (յուրաքանչյուրին համապատասխանում է 2 գրանշան՝ մեծատառ-փոքրատառ, թիվ, կետադր. նշան), րոպեում մինչև 600 (էլեկտր. հաղորդակով՝ մինչև 1000) զարկ արագությամբ մեքենագրում է 84–92 գրանշան:

Հայ իրականության մեջ Գ-ներն օգտագործվել են դրանց զանգվածային արտադրության ժամանակներից սկսած. սկզբում ստեղնաշարը հայ-ի փոխել են ձեռքով, XX դ-ի սկզբին արտադրվել են ամերիկյան «Անդերվուդ» ընկերության հայ. ստեղնաշարով Գ-ներ, իսկ 1968–91-ին հայատառ «Օպտիմա» մակնիշի Գ-ներ՝ Գերմանիայի Էրֆուրտ քաղաքի գրասենյակային գրամեքենաների գործարանում:

1990-ական թթ-ից Գ-ների կիրառությունը սահմանափակվել է, ապա ամբողջությամբ փոխարինվել է անհատական համակարգիչներով:



IBM մակնիշի էլեկտրական գրամեքենա (1961)

2012-ին անգլ. «Բրադերզ» ֆաբրիկան թողարկել է Մեծ Բրիտանիայում արտադրված վերջին Գ. և հանձնել Լոնդոնի գիտ-յան թանգարան:

ԳՐԱՆԻՇ, տես *Մատենանիշ* գրադարանային:

«ԳՐԱՆԻՇ», գրական հանդես: «Գրանիշ» գրական ակումբի հրատ.: Լույս է տեսնում 2011-ից Երևանում՝ տարեկան 1–2 համար: Խմբագր. խորհուրդ՝ Կարեն Անտաշյան, Արքմենիկ *Նիկողոսյան*, Հասմիկ Հակոբյան, Արամ Պաչյան, Աշոտ *Գաբրիելյան*: Հրատարակվում է թեմատիկ համարներով՝ ժամանակակից և դաս. հայ գրողների ստեղծագործու-

թյուններ, թարգմանություններ՝ արտասահմ. գրակ–ից: Հրատարակվել են «Գրանիշ | Լեզվանի», «Գրանիշ | Offline», «Գրանիշ | Խուժանական» նախագծերը:

«Գ.»–ի նպատակը հայ գրական դաշտը համախմբելն է, արդի հայ գրակ–յան հանդեպ ձևավորվող հանրային մերժողականության չեզոքացումը:

«ԳՐԱՆՇԱՆ», ոչ լատ. տառատեսակների ամենամյա մրցույթ (նախաձեռնող և հիմնադիր՝ Էդիկ *Ղաբուզյան*): Անցկացվում է 2008–ից՝ հայկ. տառարվ–ի զարգացումը խթանելու համար: «Գ.»–ի միջոցառումների հիմն. կազմակերպիչն ու հովանավորողը ՀՀ մշակույթի նախարարությունն է, 2010–ից՝ նաև Միունխենի տպագրիչների և դիզայներների միությունը: Մրցույթները կազմակերպվել են Երևանում (2008, 2009՝ առցանց, 2012), Դուբլինում (2010), Ռեկյավիկում (2011), Ամստերդամում (2013):



«Գրանիշ», *2011–ից, Երևան (2013)*

Մրցանակների արժանացած տառատեսակները ցուցադրվել են Լինկոլնում, Լոնդոնում, Հեմփշիրում, Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Դոնի Ռոստովում, Չերնոկսարիում, Ալեքսանդրիայում, Հոնկոնգում, Բանգկոկում, Միունխենում, Երևանում, Օշականում:

2008–ին 1–ին կարգի մրց–ի արժանացած «Մարիամ» և «Գրապալատ» (հեղ.՝ Է. Ղաբուզյան, երկուսն էլ՝ Հայաստանի ազգ. գրապալատ) տառատեսակները ՀՀ Կառավարության 2010–ի որոշմամբ ընդունվել են որպես պետ. պաշտոն. տառատեսակներ և դրվել պարտադիր գործածության՝ պետ. փաստաթղթաշրջանառության մեջ: 2010–12–ին մրցույթի անվանակարգերում ավելացվել են հուն., արաբ., հնդկ., չին. տեքստային տառատեսակները:

2012–ին՝ Երևանում, 2013–ին Բանգկոկում հրավիրվել են ոչ լատին–նագիր տառատեսակների խնդիրներին նվիրված «Գ.»–ի միջազգ. համաժողովներ:

ԳՐԱՉԻ (Գրիգորյան) Աշոտ Բաղդասարի (9.5.1910, Բաքու–28.2.1973, Երևան), բանաստեղծ: Ավարտել է ԵՊՀ (1933): 1933–46–ին աշխատել է Բաքվում՝ որպես Ադրբեջանի գրողների միության հայկ. բաժանմունքի քարտուղար, *«Կոմունիստ»* թերթի արվ–ի և գրակ–յան բաժնի վարիչ:



Աշոտ Գրաչի

Լույս են տեսել Գ–ի «Մուտք» (1934), «Քնարական» (1939), «Ռազմի քնար» (1942), «Կռունկ» (1944), «Իմ գարունը» (1946), «Եղբայրության աստղի տակ» (1949), «Երգը թռչում է աշխարհով» (1952), «Ծիածանի յոթ երգը» (1961), «Ու՞ր ես սիրո մոլորակ» (1968), «Արևի քույրը» (1972), «Իմ սիրո լեգենդը» (1983), «Իմ Ղարաբաղի կապույտ լեռներում» (2000), «Արի գնանք Ղարաբաղ» (2012) բանաստեղծությունների ժող–ները: Գ. մշակել է ժող. խաղեր, արևելյան զրույցներ, նրա բազմաթիվ բանաստեղծությունների տեքստերով գրվել են երգեր: Գ. թարգմանել է Ա. Պուշկինի, Ն. Գյանջևիի, Ս. Վուրղունի, Ռուդաքիի և ուր. ստեղծագործություններից:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

Երկ. երկեր, հ. 1–2, Ե., 1965:

«ԳՐԱՉԽԱՐՀ», գրական–մշակութ., տեղեկատվ. պարբերաթերթ: Լույս է տեսնում 2003–ից Երևանում: Հիմնադիր–խմբագիր՝ Տիգրան Ռշտունի: Անդրադառնում է ՀՀ–ում լույս տեսնող տպագիր արտադրանքին, պարբ. մամուլին, համացանցային կայքերին, պարբերաբար տպագրում է պետ. պատվերով և պետ. աջակցությամբ լույս տեսած գրքերի մատենագիտ. ցանկերը, անոտացիաներով և գրախոսականներով անդրադառնում ուշագրավ հրատ–ներին, լուսաբանում է ՀՀ հրատարակչությունների գործունեությունը, գրքի միջազգ. ցուցահանդեսները, տոնավաճառները, մրցույթները, փառատոները, ծանոթացնում է գրաշուկայում արտոնագրված գրքերի (մասնավորապես՝ առաջին հնգյակի) վարկանիշներին: Ներկայացնում է ՀՀ ներկրված օտարալեզու, ինչպես նաև Սփյուռքում լույս տեսած հայ. հրատ–ները, ՀՀ բուհերի հրատարակած գրքերը, պարբ–ների ցանկերը ևն:



«Գրաչխարհ», *2003–ից, Երևան*



Բի Շեն (990–1051)



Յ. Գուտենբերգի բազկամամուլը



Յ. Գուտենբերգի տպագրած առաջին գրքի՝ «Մայնցի Աստվածաշունչ»-ի 1 էջ

ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ, տպագիր գրքի պատրաստման արտադր. գործընթացների համալիրը: Ժամանակակից Գ–յան համար ընդունված է ***պոլիգրաֆիա*** տերմինը:

Գ–յան գյուտը բացառիկ նշանակություն է ունեցել քաղաքակրթության համար, նպաստել գիտ. նորությունների ու տեղեկությունների արագ տարածմանը:

Ուռուցիկ տպաձևով դրոշմված արտատպվածքի հնագույն օրինակը Ֆեստի կավե սկավառակն է (տրամագիծը՝ 1,5 մ–ից ավելի, Կրետե կղզի, մ. թ. ա. XVII դ.): Տեքստի և պատկերազարդման մեխ. վերարտադրության ամենահին եղանակը ***փայտափորագրությունն*** է, որով առաջին գրքերը տպագրվել են 704–751–ին Կորեայում, 713–741–ին՝ Չինաստանում, 764–770–ին՝ Ճապոնիայում, ևն:

Շարվածքային տպագրության գյուտարարը (խեցե շարժական տառերով) չին Բի Շենն է (1041–48), իսկ բրոնզե տառերով առաջին շարվածքը կատարվել է Կորեայում XV դ–ում:

Գ–յան եվրոպ. եղանակը հայտնագործել է Յոհան ***Գուտենբերգը*** (XV դ–ի 40–ական թթ.): Այն փոխարինել է փայտափորագրությանը. այդ եղանակով հնարավոր էր շարժական տարրերից՝ լիտերներից, պատրաստել բառեր ու տողեր և տպել անհրաժեշտ քանակությամբ տպվածքներ: Գուտենբերգը պատրաստել է նաև տեքստի բազմացման ձեռքի տպագրական հաստոց (մամուլ, բազկամամուլ):

Սկզբն. շրջանում գլխատառերը և պատկերազարդումները տպագրել են տեքստից անջատ. դրանք նկարել են ձեռքով՝ պատրաստի տպածոյի վրա, կամ առանձին տպագրել և հետո փակցրել են տեքստին: Զարդանախշեր առաջինը 1457–ին տպագրել է Գուտենբերգի գործընկեր գերմանացի Պիտեր Շյոֆֆերը (մինչև 1430–մոտ 1503): Պատկերազարդ գիրք փայտափորագիր տպաձևից առաջինը 1461–ին տպագրել է գերմանացի տպագրիչ Ալբրեխտ Պֆիստերը (մոտ 1420–1466):

Գ. արագորեն տարածվել է Եվրոպայի բազմաթիվ երկրներում՝ 1465–ին՝ Իտալիայում (Հռոմ, Վատիկան), 1468–ին՝ Շվեյցարիայում (Բազել), 1470–ին՝ Ֆրանսիայում (Փարիզ), 1473–ին՝ Բելգիայում (Ալստ) և Հունգարիայում (Բուդապեշտ), 1482–ին՝ Ավստրիայում (Վիեննա) և Դանիայում, 1483–ին՝ Շվեդիայում, 1487–ին՝ Պորտուգալիայում, և այլուր:

XV դ–ի վերջերին Գ–յան խոշոր կենտրոն է դարձել Վենետիկը, որտեղ մինչև 1500–ը հիմնադրվել է շուրջ 150 տպարան: XV դ–ում փայտափորագրությանը զուգընթաց զարգացել է պղնձափորագրությունը: Գրքում պղնձափորագրանկարներ առաջինը զետեղել է (առանձին տպագրել և ներդրել է գրքի մեջ) անգլիացի տպագրիչ Վիլյամ Կեքստոնը 1475–ին: Պղնձափորագիր պատկերներն ու տեքստը նույն էջում առաջինը տպագրել է իտալացի տպագրիչ Նիկոլո դի Լորենցոն 1477–ին:

XV դ–ից արդեն մշակվել է ***խոր տպագրության*** եղանակը (օֆորտ, փափուկ լաք, աքվատինտա ևն), որն զգալիորեն բարելավել է պատկերների որակը: Ժամանակի ընթացքում վերակառուցվել է նաև տպագր. հաստոցը. ձեռքի առանձին գործողություններ մեքենայացվել են, փայտե մասերը փոխարինվել են մետաղականով (բազկամամուլը փոխարինվել է ոտքով աշխատող մամուլով):

Գ–յան միօրինականացման համար սկզբունքային նշանակություն է ունեցել ֆրանսիացի Պիեռ Ֆուռնիեի 1737–ին մշակած տպագրության չափերի համակարգը (տպաչափություն), որը հետագայում կատարելագործել է ֆրանսուա Դիդոն (1737–1804), և այն արմատավորվել է տպագր. գործում:

Գ–յան մեջ հեղաշրջող նշանակություն է ունեցել առաջին արագագործ տպագր. մեքենայի ստեղծումը (1811, գերմանացի գյուտարար Ֆրիդրիխ Քյոնիգ և մաթեմատիկոս Անդրե Բաուեր), որով ամբողջու–

թյամբ մեքենայացվել է տպագրությունը, և արտադրողականությունը հասցվել ժամում մինչև 3 հզ. տպածոյի: Այդ մեքենայով առաջինը տպագրվել է «Թայմս» թերթը (1814, Լոնդոն): 1844-ին Ռիչարդ Հոուն և Ավգուստ Էպլգեյթը մշակել են պտտվող մեխանիզմը և ստեղծել առաջին ռոտացիոն տպագր. մեքենան: Վերջինիս թուղթը մատուցվել է փաթթոցով, որով ապահովվել է 12 հզ. տպածո/ժամ արագություն: 1863-ին Վիլյամ Բալլոկը ստեղծել է լիարժեք ***ռոտացիոն մեքենա***, տպագրել է թղթի 2 երեսին՝ ապահովելով 30 հզ. տպածո/ժամ արագություն:

XIX դ-ի վերջին արտադրության մեջ ներդրվել են շարվածքային և բրոշյուրավորման-կազմարար. մեքենաներ: Շարող մեքենան ստեղծել է անգլիացի Վիլյամ Չերչը 1822-ին: 1884-ին գերմանացի գյուտարար Օտմար Մերգենթալերը ԱՄՆ-ում ստեղծել է շարվածքի ամենատարածված ***փողաշար*** (լինոտիպ), իսկ 1897-ին ամերիկացի Տորբերտ Լանստոնը՝ ***տառաշար*** (մոնոտիպ) մեքենան: Լուսանկարչ. շարվածքի գաղափարը 1894-ին հղացել է հունգար գյուտարար Ենո Պորցելտը, իսկ առաջին մեքենան 1895-ին ստեղծել է ռուս գյուտարար Վիկտոր Գասիևը:

XIX և XX դդ-ի սահմանագծին ստեղծվել են ***խոր*** և ***օֆսեթ տպագրության*** մեքենաները: XX դ-ի սկզբին պոլիգրաֆ. մեքենաների մեխ. շարժաբերները փոխարինվել են էլեկտրականով: 1930–40-ական թթ-ին ստեղծվել են տպագր. մեքենաների հսկիչ և չափիչ սարքեր, իսկ 1950–60-ական թթ-ից Գ-յան մեջ կիրառվել է էլեկտրոնիկան: 1954-ին շարվածքային տեխնիկայում առաջարկվել է էլեկտրոնային հաշվիչ մեխանիզմների (ԷՀՄ) օգտագործման եղանակը: ԷՀՄ-ների հիշող սարքերի՝ որպես լիտերակրիչների կիրառումն ստեղծել է էլեկտրոնաճառագայթային խողովակներով լուսաշարվածքային մեքենաների պատրաստման նախադրյալներ. այդպիսի առաջին մեքենան մշակել է ամերիկացի Ջ. Մաքնեյնին 1952-ին: Դրա շնորհիվ բարելավվել են պատկերազարդման տպաձևերի պատրաստման, պատկերների սրբագրության և գունաբաժանման գործողությունները. մշակվել են լուսակիսահաղորդիչ մակերևույթների վրա պատկերների ձևավորման էլեկտր. եղանակներ (էլեկտրագրություն): Լայնորեն տարածվել է սինթետիկ նյութերի կիրառությունը՝ լուսապոլիմերային տպագր. տպաձևերից մինչև պլաստմասսայե և համակցված կազմակողեր պատրաստելու համար:

Ժամանակակից տպագր. արտադրութան մեջ մեծ դեր ունեն համակարգչային ծրագրերով տեքստերի հավաքման և էջկապի, թվային տպագրության տեխնոլոգիաները: Գրահրատարակչ. գործի էլեկտրոնային սպասարկման ոլորտն իրականացնում է նաև ստերեոտիպերի ու տառամայրերի փոխարեն գրքի պոլիգրաֆ. պատրաստման ծրագրերն էլեկտրոնային հիշողության մեջ պահելու գործառույթ: Տես նաև *Հայկական տպագրություն:*


ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ, լայն իմաստով՝ տվյալների, ֆայլերի, սերվերների, տպիչների, մագնիս. և այլ կրիչների, գրքերի, ամսագրերի, փաստաթղթերի ցանկեր, որոնք կազմվում են դրանց որոնումը կարգավորող (դյուրացնող) որևէ սկզբունքով:

1. **Գրադարանային Գ.,** գրադարանային ֆոնդի կամ տեղեկատվ. կենտրոնի փաստաթղթերի կազմի և բովանդակության մասին մատենագիտ. գրառումների ամբողջություն: Լինում են քարտային կամ մեքենայաընթերցելի՝ միկրոկրիչների վրա, ինչպես նաև գրքերի տեսքով: Առավել տարածված են՝ **այբբենական**, որտեղ մատենագիտ. գրառումները դասավորվում են անձնանունների (հեղինակներ), կազմակերպությունների անվանումների կամ փաստաթղթերի վերնագրերի, և **առարկայական**՝ առարկայական խորագրերի անվանումների այբբեն. կարգով, Գ-ներ:

Գրատպություն



Ռուսերեն առաջին տպագիր գրքի՝ «Ապոստոլ»-ի (1564) 1-ին էջը



Հայերեն առաջին տպագիր գրքի՝ Ուրբաթագրքի (1512, Վնտ.) 19-րդ էջը

Ըստ ընդգրկման ծավալի՝ գրադարանային Գ–ները լինում են. **գլխավոր** (ներառում են ողջ գրադարանային ֆոնդը՝ բացառությամբ փոխանակային և պահուստային ֆոնդերի), **միասնական** (ներառում են մի քանի ինքնուրույն գրադարանների կամ տարածաշրջանի գրադարանային ցանցի ֆոնդերը) և **կենտրոնական** (գրադարանի և նրա բոլոր մասնաճյուղերի ֆոնդերը):

«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքի (2012) համաձայն՝ ստեղծվում է ՀՀ–ի գրադարանների միասն. մատենագիտ. համահավաք Գ., որը ներառելու է երկրի բոլոր պետ. և հանրային գրադարանների հավաքածուները:

Համահավաք Գ–ի պատրաստումը համակարգում և ձևավորման աշխատանքներն իրականացնում է ՀԱԳ–ը՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

2. **Հրատարակչական** Գ–ներ, որոշակի ժամանակահատվածում հրատարակչության թողարկած հրատ–ների կամ գրատանը վաճառվող, բաժանորդագրության և այլ գրակ–յան ցանկեր են: Հրապարակվում են գովազդային–տեղեկատվ., առևտրային և այլ նպատակներով:

XX դ–ի սկզբից տպագրվել են, օր.՝ «Գրացուցակ Զարդարեան գրատան հիմնուած 1863–ին, 1910–1911» (1911, ԿՊ, Հակոբ Հոլասի տպ.), «Գրացուցակ կազմուած գիրքերու Փիշթաֆճեան եղբարց «Արամազդ» գրատան» (1911, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Գրացուցակ Սրբոյ Յակովբեանց առաքէլական աթոռոյ գրատան» (3–րդ տպագր., 1911, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Գուտտենբերգ» գրախանութի (հիմնուած 1900 թ.) հայերէն գրքերի ցուցակը» (1911, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1700–1978)» (1978, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Գրացուցակ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գրատան» (1978, 2005, Անթիլիաս), «Գրացուցակների և քարտարանների համակարգը ԳՀԿ–ներում» (1982), «Գրացուցակ Հայպետհրատի լույս ընծայած նոր գրքերի» (Ե., ա. թ.) ևն:



«Գրացուցակ Մխիթարեան տպարանին» (1978, Վնտ.) գրքի շապիկը



Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության անվանացանկ (2011)



«Հայաստանի հրատարակիչների կատալոգ» (2010)

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ, իշխանությունների պաշտոն. վերահսկողությունը տեղեկատվության, հրատարակվող և տարածվող տպագիր արտադրանքի, համացանցային կայքէջերի և այլ ստեղծագործությունների նկատմամբ՝ արգելելու կամ սահմանափակելու անցանկալի կամ վտանգավոր համարվող գաղափարների ու տեղեկությունների տարածումը:

Գ. պետ. և հոգևոր իշխանության գործառույթ է եղել դեռևս անտիկ ժամանակաշրջանից: Գրքերի նախն. Գ. մտցրել է Հռոմի Սիքստոս IV պապը 1471–ին, իսկ 1557–ին՝ Պողոս IV–ի օրոք, հավատաքննիչ տրիբունալի համար հրատարակվել է *«Ցանկ արգելված գրքերի»*:

Գ–յան ցայտուն օրինակ է 1933–ին (մայիսի 10) ֆաշիստ. Գերմանիայում անցանկալի գրքերի (հիմնականում՝ հրեաների) հրապարակավ հրկիզումը, 1989–ին Իրանի հոգևոր առաջնորդ Այաթոլլա Հոմեյնիի՝ «Սատանայական բանաստեղծություններ» (1988) գրքի հեղինակ անգլ. գրող Սալման Ռուշդիին (ազգությամբ՝ հնդիկ) մահվան դատապարտելը:

Երկերի ու գրվածքների ընդունման ու մերժման փաստեր հայտնի էին նաև Հին Հայաստանում՝ պայմանավորված հիմնականում դավանաբան. խնդրով: Հայ եկեղեցին նույնպես հրատարակել է ընդունելի և մերժելի գրքերի ցուցակներ (տես ***Անկանոն գրքեր, Անվավեր գրքեր***):

XIX դ–ի 2–րդ կեսին Ռուս. կայսրությունում հայկ. դպրոցների փակման քաղաքականությանն ընդդիմանալու համար փակվել են նաև հայ. պարբ–ներ («Աշակ», «Արձագանք» ևն): Հայ մամուլի նկատմամբ խիստ Գ. է կիրառվել նաև Օսմ. Թուրքիայում՝ հատկապես աբդուլհամիդյան բռնապետության տարիներին:

Խորհրդ. իշխանության օրոք Գ–յան գործառույթը կատարել է հատուկ այդ նպատակով ստեղծված ՀՀ Կառավարությանն առըն–

թեր Գրականության և հրատարակչությունների գործերով գլխավոր վարչությունը (ռուս.՝ Գլավլիտ), որի երաշխավորությամբ միայն կարող էր ԽՍՀՄ-ում, նաև ՀԽՍՀ-ում գիրք (հրատ.), պարբ., հոդված ևն տպագրվել:

«Մամուլի ազատության մասին» ՀՀ օրենքով (30.9.2003, հոդված 6) ՀՀ-ում մամուլի և այլ ՋԼՄ-ների Գ. արգելված է:

ԳՐԳԵԱՐՅԱՆ Հակոբ Ղազարոսի [22.2.1927, ք. Զակազիկ (Եգիպտոս)–27.8.2005, Երևան], աշխարհագետ: Աշխարհագր. գիտ. թեկնածու (1966), պրոֆ. (1990): Ավարտել է ՀՊՄԻ (1952): 1967–70-ին՝ Հայկ. հանրագիտարանի գիտահսկիչ խմբագրության վարիչ, 1971-ից դասավանդել է ԵՊՀ-ում, 1975-ից՝ ԵԺՏԻ-ում:

Հեղինակ է «Հայկական ՍՍՀ» (1961) ատլասի 12 թեմատիկ և մի շարք խոշորամասշտաբ քարտեզների: Համահեղինակ է «Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարանի» (1981), «Տնտեսական աշխարհագրության տեղեկատու բառարանի» (1982), «Աշխարհագրական անունների բառարանի» (հ. 1, 2, 1987, 1989): Թարգմանել և մասնակցել է «Աշխարհը և Հայաստանը» (2003, 2007) աշխարհագր. ատլասի կազմման աշխատանքներին:



Հակոբ Գրգեարյանի *«Աշխարհագրական անունների բառարան»-ի (հ. 2, 1989, Ե., «Լույս») կազմը*

«ԳՐՔՈՒԿ ԵՌԱՄԱՄՆԵԱՅ», Պետրոս Աբեղա Կոստանդնուպոլսեցու քրիստ. հարկավոր հարցումների, քաղաքավարության վերաբերյալ և տաղարան պարունակող եռամաս գրքույկը: Տպագրվել է 1752-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (172 էջ, 8^0, 12,5 x 7,5 սմ):



«Գրգուկ եռամասնեայ»-ի *(1752, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) տիտղոսաթերթը*

«ԳՐԵԹԵՐԹ», ՀԳՄ երիտասարդ. բաժանմունքի եռամսյա թերթ: Լույս է տեսնում 2006-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Գուրգեն ***Խանջյան***, պատ. խմբագիր՝ Արքմենիկ ***Նիկողոսյան:*** Տպագրում է երիտասարդ գրողների ու գրականագետների ստեղծագործություններ և թարգմանություններ: Թերթն ունի ամենամյա մրց., որը տրվում է պոեզիա, արձակ, թարգմանություն, գրականագիտություն և հրապարակախոսություն անվանակարգերում:

ԳՐԵՊՊԻՆ (Greppin) Ջոն Այրդ Քութս [ծ. 2.4.1937, Ռոչեստր (ԱՄՆ)], ամերիկացի լեզվաբան-հայերենագետ: «Բառասկզբային ձայնավորները և շնչեղացումը դասական հայերենում» (1973), «Դասական հայերենի անվանական վերջածանցները» (1975), «Հայերենի կոկորդայինների ուսումնասիրության արդի վիճակը» («ՊԲՀ», № 1, 1975) և այլ հոդվածներում Գ. քննել է դաս. հայ-ի տարբեր փուլերը՝ անդրադառնալով գրաբարի բառապաշարի հիմն. ֆոնդի ծագումնաբանությանը, խեթ-ի և հայ-ի զուգաբանություններին, փոխառություններին ու ձայնդարձին: 1974–75-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ում:



«Գրեթերթ», *2006-ից, Երևան*

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ Ալեքսանդր Սերգեևիչ [4(15).1.1795, Մոսկվա–30.1(11.2).1829, Թեհրան, սպանել են Ֆաթհ-Ալի շահի հրոսակները, թաղված է Թիֆլիսում], ռուս գրող, դիվանագետ: Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1810): Առաջին գործը «Երիտասարդ ամուսիններ» (1815) կատակերգությունն է: 1818-ին նշանակվել է ռուս. առաքելության քարտուղար Իրանում: 1822-ին Թիֆլիսում սկսել է գրել «Խելքից պատուհաս» կատակերգությունը, որն ավարտել է 1824-ին Ս. Պետերբուրգում: Գրաքննության արգելքի պատճառով այն տարածվել է ձեռագիր: 1828-ին մասնակցել է Թուրքմենչայի պայմանագրի կնքմանը, որի 15-րդ կետով (մտցվել է Գ-ի առաջարկությամբ և ջանքերով) 50 հզ. պարսկահայի թույլատրվել է տեղափոխվել Արլ. Հայաստան:



Ալեքսանդր Գրիբոյեդով

Գ. մինչև Հայաստան գալն ուսումնասիրել է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը»: «Ճանապարհորդական նոթեր. Կովկաս-Պարսկաստան» (հայ. հրտ.՝ 1945) երկում զգալի տեղ է հատկացրել Հայաստանին:

1819-ի փետր-ին եղել է Երևանում, այցելել Էջմիածնի վանք, եղել տպարանում ու դպրոցում: Մասնակցել է Երևանի, Սարդարապատի,



Ա. Գրիբոյեդովի *«Խելքից պատուհաս» (1958, Ե., Հայպետհրատ) գրքի տիտղոսաթերթը*



Գրիգոր Ծաղկող. *«Խորհրդավոր ընթրիք», մանրանկար, «Թարգմանչաց Աւետարան» (1232, Մատենադարան, ձեռ. № 2743)*



Գրիգոր. *«Մատթէոս աւետարանիչ», մանրանկար, XIV դ-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 6305)*

Նախիջևանի ազատագրմանը, պարգևատրվել «Երևանի գրավման համար» մեդալով: 1827-ի դեկտ-ին Երևանի սարդարի պալատի դահլիճում նրա ներկայությամբ առաջին անգամ բեմադրվել է «Խելքից պատուհասը»: Այդ կատակերգությունը հայ. թարգմանվել և տպագրվել է 1913-ին Թիֆլիսում (Նվարդ Աղանյանի տպ.), 1945, 1958, 1981-ին վերահրատարակվել Երևանում:

Գ-ի դին Հայաստանով տեղափոխել են Թիֆլիս. ճանապարհին՝ Դվալի (այժմ՝ Պուշկինի) լեռնանցքում, Պուշկինը հանդիպել է դին փոխադրողներին: Հանդիպման վայրում կանգնեցվել է աղբյուր-հուշարձան, որը 2007-ին տեղափոխվել է Գյառգյառ գյուղ: 1975-ին Երևանում կանգնեցվել է նրա հուշարձանը (քանդակագործ՝ Ն. Բեջանյան): Գ-ի անունով կոչվել են փողոցներ ու դպրոցներ ՀՀ քաղաքներում:

Գրկ. **Հախումյան Տ.,** *Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդով, Ե., 1945:* **Պարսամյան Վ.,** *Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1947:* **Վարդանյան Վ.,** *Գրիբոյեդովը և հայ թատրոնը, Ե., 1955:* **Մայիլյան Թ.,** *Գրիբոյեդովը և Հայաստանը, Ե., 1976:*

ԳՐԻԳՈՐ (Գրիգոր Ծաղկող), XIII դ-ի մանրանկարիչ: Պատկերազարդել է *«Թարգմանչաց Աւետարանը»* (1232, գրիչ՝ Տիրացու, Մատենադարան, ձեռ. № 2743): 1900-ին եղել է Ուտիքի Թարգմանչաց վանքում (այստեղից էլ՝ անվանումը): Հայ և օտարազգի հետազոտողների ուշադրությանն արժանացած այս մատյանի պատկերազարդումը հայկ. մշակույթի գլուխգործոցներից է:

Ներգործող մեծ ուժ ունեն «Խորհրդավոր ընթրիք», «Դժոխքի ավերումն» և «Ավետումն» մանրանկարները, ինքնատիպ են նաև խորանները, անվանաթերթերը, լուսանցազարդերը, զարդագրերը: Գ. ստեղծել է զարդաձևերի նոր տարբերակներ:

Գրկ. **Չուգասզյան Լ.,** *Գրիգոր Ծաղկող, Ե., 1986:* **Հակոբյան Հ., Կորխմազյան Է.,** *Հայկական մանրանկարչություն, Ե., 1987:*

ԳՐԻԳՈՐ, XIV–XV դդ-ի մանրանկարիչ: Ենթադրվում է, որ ստեղծագործել է Տաթևում: Գ-ի նկարազարդած ձեռագրերից հայտնի է 1 Ավետարան (Մատենադարան, № 6305), որի մանրանկարներն աչքի են ընկնում զարդապատկերների առատությամբ: Արլ. նշաձև մեծ աչքերով և ընդգծված հոնքերով կերպարներն իրենց գույնզգույն զգեստներով ավելի նման են հասարակ մարդկանց, քան սրբերի: Առանձնապես ուշագրավ են հայկ. մանրանկարներում սակավ հանդիպող հեծյալ «սուրբ զորավարների» կերպարները (սբ Գևորգ, սբ Սարգիս, սբ Թեոդորոս, սբ Մերկուրիոս):

Գրկ. **Միրզոյան Ա.,** *Մատենադարանի № 6305 ձեռագրի «Սուրբ զորավորների» պատկերագրությունն ու անունների վերականգնումը, «ԼՀԳ», 1970, № 5:*

ԳՐԻԳՈՐ Ա. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, **սուրբ Գրիգոր Լուսավորիչ** (աշխարհիկ անունը՝ Սուրեն, 239–325/326), Հայոց առաջին եպիսկոպոսապետը՝ 302-ից, համաքրիստ. տոնելի սուրբ:

301-ին Տրդատ Մեծը և Գ. Ա Լ. Հայաստանում քրիստոնեությունը հռչակել են պետ. կրոն: 303-ի հունվ. 6-ին՝ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության օրը, Արածանու ակունքների մոտ Գ. Ա Լ. մկրտել է Հայոց արքա Տրդատին ու արքունիքին, հայ ավազանուն ու ժողովրդին: 303-ին Գ. Ա Լ., համաձայն իր տեսիլքի, կառուցել է Էջմիածնի Կաթողիկե եկեղեցին (Էջմիածնի Մայր տաճար) և այն օծել 303-ի օգոստ. 15-ին՝ Աստվածածնի վերափոխման տոնի օրը:

Արիստակես որդուն ձեռնադրելով եպիսկոպոս՝ դարձրել է իր տեղապահն ու եպիսկոպոսակիցը (Արիստակես Պարթև), ինքն անցել է ճգնակեցության՝ Դարանաղի գավառի Սեպուհ լեռան Մաների այրում, որտեղ և վախճանվել է: Վրթանես Ա Պարթևի օրոք նշխարները վերաթաղվել են նույն գավառի Թորդան գյուղում՝ Լուսավորչի տոհմ. կալվածքում:

Հայ եկեղեցին Գ. Ա Լ–ին դասել է ավագ սրբերի կարգը: Նրան անվանում են «Հայոց Մկրտիչ», «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» (Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներից հետո), իսկ քրիստոնեությունը հայոց մեջ կոչվում է նաև «Լուսավորչի լույս հավատք»: Գ. Ա Լ–ին հայտնի ներբող է ձոնել *Հովհան Ոսկերերանը* («Ներբողեանք», 1734, 1878):

Գ. Ա Լ–ի անունով պահպանվել է **«Յաճախապատումը»** (23 կրոնաբարոյախոս. ճառեր), մի քանի երկասիրություններ և կանոններ: Նրան են պատկանում նաև Նիկիայի Ա տիեզ. ժողովին (325) մասնակցած Արիստակես Պարթևի բերած Նիկիական կանոններում կատարված հավելումները:

«Յաճախապատումը» առաջին անգամ տպագրվել է 1737–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք, որ կոչի Յաճախապատում: Ասացեալ Սբ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչին» (360 էջ, 8º, 15,6 x 11,6 սմ):

Երկը տպագրվել է նաև 1824–ին Կ. Պոլսում (Աբրահամ Թերզյանի տպ.), 1838–ին՝ Վենետիկում (Սբ Ղազարի տպ.), 1894–ին՝ Վաղարշապատում («Յաճախապատում: Ճառք Լուսաւորք», առաջաբ., հմմտ. և ծնթգր.՝ Ս. Տեր–Միքելյանի, Սբ Էջմիածնի տպ.), 2003–ին՝ Թեհրանում («Յաճախապատում. ճառեր», աշխարհաբարի փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Համբարձումյանի):

1731–ին Վիեննայում տպագրվել է *«Գրիգոր Լուսաւորչի վարքը»* պատկերը: Կենտրոնում Գրիգոր Լուսավորիչի՝ Տրդատին, Խոսրովիդուխտին և ուր. մկրտելու տեսարանն է, վերևում Սբ Էջմիածնի, Սբ Հռիփսիմեի և Սբ Գայանեի տաճարներն են, ձախ անկյունում կույսերի նահատակությունն է, աջում՝ հայ ժողովրդի մկրտությունը՝ Եփրատում, Գրիգոր Լուսավորչի ճգնարանը, Սեպուհ լեռը, լույսի սյունը, Արարատը՝ Նոյի տապանով, ևն: Տեսարանի շուրջը՝ 14 շրջանակներում, պատկերված են Գրիգոր Լուսավորչի չարչարանքները՝ հայ. և լատ. մակագրություններով: Կենտր. պատկերի վերևում և ներքևում հայ. աղոթքներ են, վերջում՝ «ոէճ լա սեպտեմբեր» գրությունը: Պատկերի շրջագծից դուրս Գրիգոր Լուսավորչի վարքին նվիրված քառասյուն տեքստ է՝ 2–ը՝ լատ., 2–ը՝ գերմ., ամենաներքևում՝ ամբողջ էջի լայնությամբ՝ հայ. հիշատակարան: Բոլոր պատկերների տակ կան հայ. բացատրագրեր: Հրատարակվել է նաև 1749–ին՝ առանց տեղի ու թվականի հիշատակության (1 էջ, 67 x 50 սմ):

Հրատարակվել է նաև **«Գրիգոր Լուսաւորչի վարքը եւ չարչարանքները»** պատկերը՝ առանց տպագրության տեղի, տպարանի և թվականի հիշատակության (հավանաբար՝ Եվրոպայում XVIII դ–ի վերջերին), շքեղ պատկերազարդումով, տառերը՝ բոլորգիր, մակագրությունը՝ «Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ մկրտէ զՏրդատ արքայ եւ զաւագանին.»: Պատկերի բովանդակությունը գրեթե նույնն է, ինչ՝ նախորդինը (1 էջ, 72,5 x 49 սմ):

1786–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում տպագրվել է **«Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ առաջին հայրապետ Հայոց...»** պատկերը (1 էջ, 33 x 37 սմ)՝ Գեորգ Անթապեցի Պաղտատյանի մեկնությունով (8 էջ, 12 x 8 սմ): Պատկերի կենտրոնում Գրիգոր Լուսավորիչն է, շուրջը՝ Արիստակես, Վրթանես, Գրիգորիս, Հուսիկ, Ներսես, Սահակ կաթողիկոսները, Վարդան Մամիկոնյանը և ուր.: Մեկնության մեջ անվանված են պատկերում ներկայացված անձինք և տրված է նրանց համառոտ գործունեությունը:



Գրիգոր Ա Լուսավորչի *«Յաճախապատում» (1737, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) գրքի 2–րդ էջը (վերևում) և փիլոնսաթերթը (ներքևում)*





«Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ առաջին հայրապետ Հայոց...» (1786, Հռոմ) պատկերը


Գրկ. **Մատթէոս Եւդոկացի**, *«Վարք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», Վնտ., 1749:* **Բալայեան Ե.**, *Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքն ու գործը, Անթիլիաս, 1965:* **Տեր–Ներսեսյան Ս.**, *Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975:* **Ագաթանգեղոս**, *Հայոց պատմություն, Ե., 1983:* **Մուտսպուլոս Ն.**, **Դիմիտրոկալլիս Կ.**, *Սուրբ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Հունաստանի մեջ, «Էջմիածին», 1995, № 5:* **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց, Ե., 1997:* **Դանիելյան Է.**, *Ս. Գրիգոր Լուսավորիչ քահանայապետ Հայոց, Ե., 1999:* **Աշճյան Մ.**, *Լուսավորչի լույս աշխարները, Ս. Էջմիածին, 2000:*


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱԹԱՐԱՑ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄԻՉ
ՀԱՅԱՑԵԼ Ի ՅՈՒՆԱՑԴԻՒ ՕՐԻՆԱՆԻՑ
ԹՈՒՆԴԱՐԱՆԻ ՄԻՈՅՆ ՅԱՅՈՒՄԱՆՆ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՈՅՆ ՅԱՅՈՒՄԱՆՆԱՅ

Գրիգոր Ակներցու *«Պատմութիւն թաթարաց...» (1870, Երուսաղեմ) գրքի տիտղոսաթերթը*



Գրիգոր Ակռեցի. *Մարկոսի Ավետարանի անվանաթերթը՝ կիսախորանով, «Մեբասթիայի Աւետարան» (1066, Մատենադարան, ձեռ. № 311)*



Գրիգոր Արշարունու *«Մեկնութիւն ընթերցուածոց...» (1727–28, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) գրքի լուսանցազարդով (1-ին) էջ*

ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՑԻ, XIII դ–ի պատմագիր և գրիչ: Ենթադրվում է՝ 1265/1266–ին Արլ. Հայաստանից մեկնել է Կիլիկիա, դարձել Ակների վանքի միաբան: 1273–ին ընդօրինակել է Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնը»: Գ. Ա–ու «Պատմութիւն վասն ազգին նետողաց կամ «Պատմութիւն թաթարաց» երկը (պահպանվել է ընօրինակով) Հայաստանում մոնղ. տիրապետության շրջանի, հատկապես 1220–1273–ին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր է: Այն արժեքավոր տեղեկություններ է պարունակում ժամանակի տնտ. և քաղ. կյանքի, մոնղոլների կրոն. հավատալիքների, կենցաղի և սովորույթների մասին: Գ. Ա–ու երկը սխալմամբ վերագրվել է Վարդան Արևելցուն կամ ոմն Մաղաքիա Աբեղայի: Հետագայում հեղինակի անձը ճշտելուց հետո, երկը լույս է տեսել Գ. Ա–ու անունով:

«Պատմութիւնը» տպագրվել է 1870–ին Երուսաղեմում (Սբ Հակոբյանց տպ.) և Ս. Պետերբուրգում (Կայսեր. գիտ. ակադ–ի տպ.), 2011–ին՝ Երևանում (քնն. բնագիրը՝ Ն. Պողարյանի): Թարգմանվել և զուգահեռ հայ. բնագրերով տպագրվել է ֆրանս. (1851), ռուս. (1871), անգլ. (1954):

Երկ. Պատմութիւն թաթարաց, 2-րդ հրտ., Երուսաղեմ, 1974:
Գրկ. **Ակինեան Ն.,** *Գրիգոր քահանայ Ակներցի, «ՀԱ», 1948, № 7–8:*

ԳՐԻԳՈՐ ԱԿՈՌԵՑԻ, XI դ–ի գրիչ և մանրանկարիչ: 1021–ին հոր՝ Անանիա քահանայի հետ ծննդավայրից՝ Ակռոից տեղափոխվել է Սեբաստիա, որտեղ Տեր Փիլիպոսից և նրա որդիներ Ստեփանոսից ու Սահակից սովորել է գրչության և նկարելու արվ–ները: 1066–ին ընդօրինակել ու պատկերազարդել է ***«Մեբաստիայի Աւետարանը»*** (Մատենադարան, ձեռ. № 311), որը 100 տարի անց պատկանել է Ներսես Շնորհալուն: Նա նվիրել է եղբորորդուն՝ Գրիգոր Ապիրատին, վերջինս էլ 1194–ին՝ Լամբրոնի և Պապեռոնի տեր Բակուրա մեծ իշխանին: Ձեռագրում պահպանվել են Մարկոսի Ավետարանի անվանաթերթը և 2 անվանաթերթ–կիսախորան, որոնք նպաստել են կիլիկյան հայկ. մանրանկարչության ձևավորմանը:

Գրկ. **Ազարյան Լ.,** *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:*

ԳՐԻԳՈՐ ԱՐԾԿԵՑԻ, XV դ–ի տաղերգու, վարդապետ: Գրել է գանձեր, տաղեր, որոնց երաժշտությունը հավանաբար հորինել է ինքը: Լավագույնը «Մեղեդի ապաշխարութեան» տաղն է՝ գրված ***Ներսես Շնորհալու*** «Ողբերգութիւն անձին զղջացելոյ» տաղի ազդեցությամբ: Այն վերագրվել է նաև ***Գրիգոր Խլաթեցուն*** (կարծիք կա, որ Գ. Ա. նույն Գրիգոր Խլաթեցին է): Ուշագրավ է նաև Գրիգոր Լուսավորչին նվիրված նրա տաղը:

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ, **Գրիգորիս Արշարունյաց** (ծ. թ. անհտ–մոտ 730), մատենագիր, մեկնիչ: 684–ին Սահակ Գ Զորոփորեցի կաթողիկոսը նրան ձեռնադրել է Արշարունիքի եպիսկոպոս: Եղել է ժամանակի նշանավոր վարդապետներից և դավանաբաններից: Մասնակցել է 726–ի Մանազկերտի եկեղեց. ժողովին:

Գ. Ա–ուց մեզ է հասել **«Մեկնութիւն ընթերցուածոց»** ճառային, բարոյախոս. ժող–ը՝ բաղկացած 34 ճառից, ունի նաև առաջաբան և վերջաբան՝ ուղղված պատվիրատու իշխան Վահան Կամսարականին:

Ժող–ում տեղ են գտել վաղ շրջանի պահքի, ժամերգության, Պատարագի, Ճրագալույցի, Նավակատիքի հին ավանդությունները:

Տպագրվել է 1727–28–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տպակից է ***Կյուրեղ Երուսաղեմացու*** «Կոչումն ընծայութեան» գրքին: Տիտղ–ին՝ «Մեկնութիւն ընթերցուածոց Կիւրեղի Երուսաղէմացւոյ» (384 էջ, 17 x 9,8 սմ): Երկը տպագրվել է նաև 1964–ին Վենետիկում՝ Ք. Չրաքյանի աշխատասիրությամբ, Էջմիածնում՝ «Մեծ պահքի համառոտ բացատրություն» (1999) գրքում:

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932, էջ 473–474: Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. 1, Էջմիածին, 2001:*

ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ [ավազանի անունը՝ Վահրամ, ծ. թ. անհտ–1105, Քեսուն, ամփոփվել է Կարմիր վանքում (Լեռնային Կիլիկիա)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1066-ից: ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունու*** որդին:

Հայտնի է 1102-ին Ծոռազատկի կապակցությամբ Գ. Բ Վ.-ի գրած «Մոլոր զատկի» կամ «Ծոռազատկի մասին» թուղթը: Նրա մեկենասությամբ Կիրակոս մենկնիչը հուն.-ից հայ. է թարգմանել բազմաթիվ վարքագր. և հայրաբան. երկեր (այստեղից՝ «Վկայասեր» մականունը): Իր կազմած «Տօնամակ» ժող.-ում փորձել է Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի հաստատման հետ կապված կայուն օրեր սահմանել:

Գրել է բանաստեղծություններ, երգեր, թարգմանություններով հարստացրել Ճաոր-ընտիրը և Հայսմավուրքը: Ձեռագրերում սխալմամբ նրան են վերագրվում ***Գրիգոր Գ Պահլավունի*** կաթողիկոսի հեղինակած շարականները:

Գրկ. Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հ. 2, Վնտ., 1785, էջ 989–996: Ալիշան Ղ., *Հայապատում, Վնտ., 1901:*

ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ [մոտ 1093, Տլուք գավառի Ծովք դղյակ–1166, Հռոմկլա (Կիլիկիա)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1113-ից: Սովորել է Կիլիկիայի Սև լեռան Քեսունի Կարմիր վանքում (1105–16-ին՝ կաթողիկոսանիստ): Պատանի տարիքում ձեռնադրվել է եպիսկոպոս: Հռոմի եկեղեցին իր պաշտոն. գրություններում Գ. Գ Պ.-ուն դիտել է որպես Արևելքում գործող քույր եկեղեցու առաջնորդ, առաջինը՝ հավասարազոր աթոռների շարքում: 1149-ից կրտսեր եղբոր՝ ***Ներսես Շնորհալու*** հետ ավելի շատ զբաղվել է Հայ եկեղեցու ներքին գործերով, պայքարել աղանդավոր. և պառակտչ. նկրտումների դեմ:

Գ. Գ Պ. գրել է շարականներ, տաղեր ևն: Հետևելով ***Գրիգոր Բ Վկայասերին***՝ թարգմանել կամ ուրիշներին է հանձնարարել վկայաբանությունների թարգմանությունները և կարգադրել, որ սրբերի նախատոնակներին եկեղեցիներում կարդան նրանց վարքերը: Նրան անվանել են Գրիգոր Փոքր Վկայասեր: Գ. Գ Պ.-ու հանձնարարությամբ է ***Սամվել Անեցին*** գրել իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագրութունը, Ներսես Շնորհալին՝ մի շարք երկեր:

Գրկ. Բոզոյան Ա., Հռոմի պապ Իննոկենտիոս Բ-ի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն, «Էջմիածին», 1999, № 3:

ԳՐԻԳՈՐ ԳՈՋԻԿ, Այրիվանեցի, VII–VIII դդ-ի գիտնական, երաժիշտ: Գ. Գ. Ստեփանոս Սյունեցու հետ մեկնել է Աթենք, որտեղ ուսումնասիրել է Աստվածաշունչն ու նրա մեկնությունները, ծանոթացել փիլ. հին ու նոր ուսմունքներին: Կոստանդնուպոլսում նրանք ծանոթացել են ժամանակի հայտնի բյուզանդացի բանաստեղծ-երաժիշտների (այդ թվում՝ Գերմանոս պատրիարքի) հետ, հուն.-ից թարգմանել Դիոնիսիոս Արիոպագացու, Նեմեսիոսի, Գրիգոր Նյուսացու և ուր. աշխատություններից: Վերադարձից հետո Գ. Գ., որպես միաբան, հաստատվել է Այրիվանքում: Նրա երգերի գրական հիմքը Դավթի սաղմոսներն են: Եղանակավորել է գիշերային ժամի «Օրհնեսցուքը» (որից պահպանվել է 1 սկսվածք), «ճրագալոյցի երգեր», ամենայն հավանականությամբ՝ հայկ. առաջին «մեսեդիները» (հոգևոր երգի ժանր), «առաւօտերգեր» և նման շատ կցուրդներ: Նրա հեղինակած գործերն ամփոփվել են ավելի ուշ կազմված Մանրուսում կամ Խազգիրք ժող.-ներում:

Գրկ. Ալիշան Ղ., *Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873:* Յովսէփեան Գ., *Մխիթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931:* Թահմիզյան Ն., *Գրիգոր Գոձիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը, «ԲԵՀ», 1968, № 3:*



«Գրիգոր Բ Վկայասեր», *մանրանկար, 1763–64-ի ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 6988)*



Գրիգոր Գ Պահլավունի *(նկարիչ՝ Խորեն Հակոբյան)*



Գրիգոր Դ Տղա
(նկարիչ՝ Խորեն Հակոբյան)



«Գրիգոր Խլաթեցի»,
մանրանկար, 1419-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 3714)



Գրիգոր Խլաթեցի.
Խորան՝ գլխա- և լուսանցազարդերով, 1419-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 3714)

ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱ [մոտ 1123/1125–1193, ամփոփվել է Դրազարկի վանքի գերեզմանատանը (Կիլիկիայի հս-արլ-ում)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1173-ից, բանաստեղծ: Հաջորդել է հորեղբորը՝ Ներսես Դ Կլայեցուն (***Ներսես Շնորհալի***): Սովորել է Հռոմկլայի կաթողիկոսարանում: Երիտասարդ տարիքում ձեռնադրվել է եպիսկոպոս, եղել Ներսես Շնորհալու օգնականն ու տեղակալը:

Ներսես Շնորհալու սկզբնավորած հաս-քաղ. պոեզիայի ոգով է գրված Գ. Դ Տ-ի «Ողբ Երուսաղեմի» պոեմը: Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի օրինակով հեղինակած ողբաշարում բողոքել է Բյուզանդիայի և քրիստոնյա մյուս երկրների խարդավանքների դեմ: Գրել է դավանաբան. գործեր՝ բյուզ. եկեղեցու և մահմեդ. կրոնի դեմ, խրատ. բանաստեղծություններ՝ դրվատելով համերաշխության գաղափարը: Գ. Դ Տ-ի հովանավորությամբ են ստեղծվել Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Ներսես Լամբրոնացու և ուր. մի շարք ստեղծագործություններ:

Հրատարակվել է Գ. Դ Տ-ի «Նամականի» (1865, 2-րդ հրտ., Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Բանաստեղծություններ և պոեմներ» (աշխատասիր.՝ Ա. Մնացականյանի, 1972) ժող-ները:

Գրկ. Հակոբյան Գ., Գրիգոր Տղա, «Էջմիածին», 1964, № 12, 1965, № 1, № 5–10, 1966, № 2–4: Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. 1, Էջմիածին, 2001:*

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻ, Կամախեցի, Գրիգոր Բուք [մոտ 1576, ք. Կամախ (Դարանաղի գավառ)–22.9.1643, թաղված է Ռոդոսթոյի (այժմ՝ Թուրքիայում) Սբ Փրկիչ եկեղեցու գավթում], ժամանակագիր: Սովորել է Ծնանաոհճի (Կամախ) Սբ Աստվածածին վանքում, ապա՝ Սեպուհ լեռան Քարահատակի դպրոցում: 1600–03-ին Սաղմոսավանքում ընդօրինակել է ***Կիրակոս Գանձակեցու*** «Պատմութիւն Հայոցը» (Վիեննայի մատենադարան, ձեռ. № 124): 1608-ին նշանակվել է Ռոդոսթոյի հոգևոր հովիվ, 1609-ին հիմնադրել է Ռոդոսթոյի հայոց թեմը, ընտրվել թեմի առաջնորդ (1609–43):

Գ. Դ-ու նշանավոր աշխատությունը 1634–40-ին գրած «Ժամանակագրութիւնն» է (ինքնագիր ձեռագիրը պահվում է Երուսաղեմի մատենադարանում), որը XVI դ-ի վերջի և XVII դ-ի 1-ին կեսի Հայ եկեղեցու պատմության յուրօրինակ հանրագիտարան է: Աշխատությունը եզակի արժեք ունի Թուրքիայի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար:

Գ. Դ-ու «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ» երկը 1915-ին հրատարակել է Մեսրոպ վրդ. Նշանյանը (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.):

ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑ, Գրիգոր Քեսունցի, XII դ-ի ժամանակագիր: Գործել է Կիլիկիայի Քեսուն քաղաքում: Շարունակել է ***Մատթեոս Ուռհայեցու*** «Ժամանակագրութիւնը», որն ընդգրկում է 1137–63-ի կիլիկյան իրադարձությունները: Գեղ. արժեք ունի Քեսունի և Սմբաշի իշխան Բալդուինի զոհվելու (1148) կապակցությամբ Բարսեղ Վարդապետի դամբանական ողբը:

ԳՐԻԳՈՐ ԵՐԵՑ ԲԱՂԻՇԵՑԻ, XVII դ-ի մանրանկարիչ: 1644-ին Բաղեշում գրել և ծաղկել է «Վարք հարանցը»:

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ, Ծերենց, Բզնունեցի, Վկայասեր [1349, ք. Խլաթ (Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառ)–27.5.1425, Ցիպնավանք], մատենագիր, բանաստեղծ, մանկավարժ, երաժիշտ, մանրանկարիչ: Սովորել է Ցիպնավանքի Վարդան Ճգնավորի (1361–67), Ապրակունյաց (1378–86) դպրոցներում: Գրիգոր Տաթևացու հետ աշակերտել է ***Հովհան Որոտնեցուն***, Խառաբաստավանքի (Քաջբերունիք) դպրոցում (1386–88)՝ Սարգիս վրդ. Ապրակունեցուն: 1388-ից դասավանդել է Խառաբաստավանքում, Սալնապատում, 1408-ից՝ Մեծոփավանքում (1410-ին՝ րաբունապետ): Ցիպնավանքում հիմնադրել է իր դպրոցը,

ընդօրինակել ձեռագրեր, կազմել ու խմբագրել ժող-ներ, շարադրել երկեր, վարքեր, մեկնություններ: Գրել է նաև իր ընդօրինակած ձեռագրերի արձակ և չափածո հիշատակարաններ (1422-ի Գանձարանի չափածո հիշատակարանը): Նրա բանաստեղծություններից հայտնի է «Յիշատակարան աղէտից»-ը (1897, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.):

Գ. Խ. միջնադարում ավելի հայտնի է դարձել և գնահատվել Հայսմավուրքի խմբագրման (շուրջ կես դար) համար. հարստացրել է հայ ժողովրդի կյանքին վերաբերող նյութերով, գրել է նոր վկաների մասին (դրա համար արժանացել է Վկայասեր անվանը): 1399–1400-ին խմբագրել է Գանձարան, 1404–06-ին ընդօրինակել և խմբագրել է Ճառընտիր (Մատենադարան, ձեռ. № 1520, 1521): Ծաղկել է նաև ձեռագրեր (Մատենադարան, ձեռ. № 1520, 1521, 3714), եղել է երգիչ, գանձասաց, տաղասաց: Առավել նշանավոր են նրա երաժշտածիսագիտ. նշանակության «Խրատ ժամատեղաց» և «Գովութիւն Սաղմոսի» գրվածքները և կազմած Գանձարանները (Մատենադարան, ձեռ. № 8366, 4011, 5328):

Գրկ. **Թովմա Մեծոփեցի,** *Պատմութիին Լանկ Թամուրայ եւ յաջորդաց իւրոյ, Փ., 1860, էջ 41, 45:* **Ալիշան Ղ.,** *Հայապատում, Վնտ., 1901, մաս 1, էջ 125, մաս 2, էջ 560–563:* **Աբեղյան Մ.,** *Հայոց հին գրականության պատմություն, հ. 4, Ե., 1970: Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1, Ե., 1955:* **Մաթևոսյան Ա., Մարաբյան Ս.,** *Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Ե., 2000:*




«Մանուչե և Գրիգոր Մագիստրոս», մանրանկար, 1763–64-ի ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 6989)

ԳՐԻԳՈՐ ԽՈՒԼ, **Գրիգոր Վարժապետ,** XIII դ-ի երաժիշտ, խազագետ, տեսաբան: Եղել է Սսի նշանավոր վարժապետներից և «առաջին քարտուղարը», հայ հոգևոր երգարվ-ի անաղարտության ջատագովներից: Ըստ ավանդության՝ երաժշտության աշխարհիկ-նորաձև արտահայտություններից չգայթակղվելու համար մոմով խցանել է ականջները (այստեղից էլ՝ Խուլ): Նրա վերանայած ու խմբագրած Շարականոցը (հայտնի է «Խլկցի» կամ «Բուն Սսու» անվանումներով, ընդօրինակվել է մինչև XVIII դ.) Ներսես Շնորհալուց հետո ստեղծված առավել ամբողջ. և պաշտոնապես վավերացված ժող-ն է, որը հիմք է դարձել Գևորգ Սկևռացու խմբագրած Շարականոցի համար: «Խլկցի» նախօրինակից ընդօրինակված, գիտ-յանը հայտնի ինագույն Շարականոցը՝ 1269-ի գրչագիրը, պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում (ձեռ. № 145):

ԳՐԻԳՈՐ ԿԱՖԱՅԵՑԻ, XV–XVI դդ-ի տաղասաց, գիտնական-երաժիշտ: Կազմել ու խմբագրել է ***Գանձարան,*** որի մասին հիշատակված է 1561-ի մի գրչագիր մատյանում: Ձեռագրերում նրա անունով հանդիպում է մի տաղ՝ գրված 1488-ին նահատակված Աստվածատուր Կաֆայեցու հիշատակին:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ, **Գրիգոր Մագիստրոս Բջնեցի** (մոտ 990–1058), փիլիսոփա, մանկավարժ, բանաստեղծ, քաղ. և ռազմ. գործիչ: ***Գրիգոր Բ Վկայասերի*** հայրը: Սովորել է Անիի դպրոցում, ապա՝ Կ. Պոլսում: 1048-ին նշանակվել է Հվ. Հայաստանի և Միջագետքի կուսակալ: Գ. Մ. Պ. ծավալել է եկեղեցաշինական գործունեություն (Բջնիի Սբ Աստվածածինը, Կեչառիսի Սբ Գրիգոր Լուսավորիչը, Հավուց թառի Սբ Ամենափրկիչը ևն): Ճնշել է Թոնդրակյան շարժումը:

Գ. Մ. Պ-ու աշխարհայացքը և գիտ. հետաքրքրություններն արտահայտվել են նրա բազմաթիվ նամակներում՝ **«Թղթեր»**-ում (հրտ.՝ 1910, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ., աշխատասիր.՝ Կ. Կոստանյանի): Նամականին հասցեագրված է հաս. և մշակութ. գործիչներին, մտերիմներին («Առ տէր Պետրոս կաթողիկոս» ևն), որտեղ քննարկված հարցերը ձեռք են բերել պատմ. ինչողություն՝ հայ գրակ. ներմուծելով նոր՝ նամականու ժանրը: Գ. Մ. Պ. հայտնի է նաև որպես տաղասաց և շարականագիր. նրա հոգևոր երգերը եկեղեցին կանոնացրել է և ներմուծել Շարականոց:



Գրիգոր Մագիստրոս Պահլավունի *«Տաղասացութիւն ներհուն առն Գրիգորի Մագիստրոսի...» (1825, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

Գրիգոր Մարզվանեցու *տպագրած գրքերից*



«Խորհրդատետր սրբազան Պատարագի» (1706, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը



Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի (1720, Կ. Պոլիս) գլխազարդով և սկզբնագրով (13-րդ) էջ



Գրիգոր Մլիճեցի. *«Գրիգոր փիլիսոփա», մանրանկար, 1173-ի «Մատեան ողբերգութեան» (Մատենադարան, ձեռ. № 1568)*

Գրել է **«Մեկնութիւն քերականին»** քերականագիտ. երկը [1987-ին Լոս Անջելեսում հրատարակել է Լևոն Խաչերյանը՝ «Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985–1058 թթ.)» գրքում], չափածո ստեղծագործություններ՝ **«Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի»**. տպագրվել է 1746-ին Կ. Պոլսում՝ Շնչին Հովհաննեսի տպարանում (104 էջ, 80, 12,5 x 7,8 սմ, տպակից է Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» երկին), վերահրտ.՝ 1825-ին («Տաղասացութիւն ներհուն առն Գրիգորի Մագիստրոսի ուղղափառ իշխանի», ԿՊ, Աբրահամ Թերզյանի տպ.), 1868-ին («Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ», Վնտ., Սբ Ղազարի տպ.). ամենանշանավորը «Առ Սանուչէ» («Հազարտողեան») պոեմն է՝ Աստվածաշնչի համառոտ չափածո վերապատումը:

Թարգմանել է հույն և ասորի հեղինակների երկերից. պահպանվել է միայն Էվկլիդեսի «Սկզբունքների» մի հատվածի թարգմանությունը:

Հայ փիլ. մտքի զարգացման շուրջ 200-ամյա դադարից հետո Գ. Մ. Պ. վերակենդանացրել է աշխարհիկ փիլ. և գիտ. միտքը, բացել հայ աշխարհիկ փիլ-յան զարգացման նոր ուղի: Գ. Մ Պ-ու աշխատություններում ուշագրավ մտքեր կան կենսաբանության, բժշկագիտ-յան, տիեզերագիտ-յան, երաժշտության տեսության վերաբերյալ:

Գրկ. **Մէնէվիշեան Գ.,** *Գրիգոր Մագիստրոսի «Գամագրականի» ամբողջական լուծումը, Վնտ., 1912:* **Զալոյան Վ.,** *Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975:* **Մխիթարյան Ս.,** *Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001:*

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԱՇԵՑԻ, XII դ-ի բանաստեղծ: Հայտնի է «Ողբ» («Վայ գիրք», 1149) երկով: Պահպանվել են «Մեղաների շարք», «Աղօթք» գործերը, 3 ներբող՝ նվիրված Աստվածածնին: «Ողբը» գրել է «լայաց երգերի» նմանողությամբ, իսկ «Աղօթքը»՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի ազդեցությամբ:

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԶՎԱՆԵՑԻ, որդի Մկրտչի, XVII–XVIII դդ-ի տպագրիչ, գրաձուլող, հայ տպագիր գրքի փորագրության արվ-ի հիմնադիրը: Ենթադրվում է, որ ծնվել է Մարզվանում: Սովորել է Ամրդոլու վանքի դպրոցում: *Աբգար Թոխաթեցուց* հետո երկրորդ խոշոր տպագրիչն է Կ. Պոլսում: Գ. Մ-ու 1684-ին հիմնադրած տպարանն աշխատել է շուրջ 50 տարի՝ մինչև 1734-ը, և տպագրել 17 անուն գիրք: Լավագույն հրատ-ներից են՝ «Տաղարան» (1698), «Յայսմաւուրք», «Խորհրդատետր...» (երկուսն էլ՝ 1706), «Ագաթանգեղոս. Գիրք վիպասանութեան» (1709), Զենոբ Գլակին վերագրվող «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ» (1719), Հովհաննես Ոսկեբերանի «Ներբողեանք» (1734) ևն, որոնք ձևավորված, լրացված են խորաններով, զարդերով ու զարդագրերով: Գ. Մ. իր գործընկերոջ՝ *Ասլվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու* հետ XVIII դ-ում կատարելագործել է տպագր. արվեստը. նրա հրատ-ներն առանձնանում են բարձրորակ փորագրանկարներով: 1708-ից Գ. Մ-ու հետ աշխատել են որդիները՝ Ներսեսը և Թագվորը:

Գրկ. **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012:*

ԳՐԻԳՈՐ ՄԼԻՃԵՑԻ (ծ. թ. անհտ–1215), մանրանկարիչ, գրիչ, Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի Սկևռայի գրչատան ներկայացուցիչ: Գործել է նաև Սլիճի և Հռոմկլայի գրչատներում: 1173–1215-ին նկարազարդել է 5 ձեռագիր:

1173-ին Գ. Մ. նկարազարդել է Ներսես Լամբրոնացու պատվերով ընդօրինակված *Գրիգոր Նարեկացու* «Մատեան ողբերգութեան» պոեմը (Մատենադարան, ձեռ. № 1568), որի խորանազարդերը, գլխատառերը, հյուսվածքավոր լուսանցազարդերը և հատկապես Նարեկացու 4 դիմանկարներն ունեն պատմ. և գեղ. մեծ արժեք: Կոստանդինի և Վարդանի հետ նույն թվականին ծաղկել է նաև «Տիգրանակերտի Ավետարանը» (տեղն անհայտ է):

Գրկ. **Ազարյան Լ.,** *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:*

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻ (Գրիգոր Աստվածաբան) [մոտ 330, գ. Արիանզ (Նազիանզի մոտ՝ Կապադովկիայում)–մոտ 390, Արիանզ], հույն փիլիսոփա, հայրաբանության ներկայացուցիչ: Ընդհանրական եկեղեցու հայրապետներից, Հայ առաքել. եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ: *Բարսեղ Կեսարացու* հետ կազմել է «Սուրբ գիրքը և նրա մեկնաբանը՝ Որոգինեսը» («Փիլոկալիա») աշխատությունը: Գրել է 237 նամակ, բազմաթիվ պոեմներ, բանաստեղծություններ, ճառեր («Յաւուր պատշաճ», «Փախուստ ի Պոնտոս», «Հերոնի մասին» ևն):

Գ. Ն–ու մատենագր. երկերը, ճառերը V դ–ից թարգմանվել են հայ.:

Նշանավոր են Գ. Ն–ու Պատարագամատույցը, «Քրիստոս ծնեալ» (12 ճառ), «Յաղթեցայ» (8 ճառ), «Առ որս» (15 ճառ), «Որք եգիպտոսէն» (11 ճառ) ճառաշարերը, որոնք միջնադարյան Հայաստանում խմբագրվել և օգտագործվել են որպես ուս. ձեռնարկներ:

Գ. Ն–ու ճառերից մեկն առաջին անգամ հայ. տպագրվել է *«Գիրք եւ ճառ հոգեշահ»* (1722) ժող–ում, ճառերից առանձին հատվածներ են վկայակոչվել *«Կնիք հաւատոյ»* ժող–ում, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» (1908, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), Անանիա Սանահնեցու, Վարդան Այգեկցու և ուր. երկերում:

Գրկ. Զարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 374–378: **Մուրադյան Կ.,** *Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Ե., 1983:* **Վարդան Այգեկցի,** *Գիրք հաւատոյ թութեան եւ Արմատ հաւատոյ, Ե., 1998, էջ 37–39:* **Բյոսեյան Հ.,** *Անանիա Սանահնեցի, Էջմիածին, 2000:*

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ [մոտ 947–951, գ. Նարեկ (Ռշտունյաց կամ Անձևացյաց գավառ)–1003–ից հետո], բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ: Հայ առաքել. եկեղեցու տոնելի սուրբ: Տիեզերական եկեղեցու վարդապետ (2015): *Խոսրով Անձևացու* որդին: Կրթվել է Նարեկավանքի դպրոցում՝ մոր հորեղբոր՝ Անանիա Նարեկացու խնամակալությամբ: Նույն վանքում եղել է վարդապետ մինչև իր կյանքի վերջը: Մենաստանի տարածքում նրա հիշատակին կանգնեցվել է մատուռ-եկեղեցի (ավերվել է 1915–ից հետո), որտեղ էլ ամփոփվել է նրա աճյունը:

Գ. Ն–ուց մեզ է հասել «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողովմոնի» (977) երկը, «Ապրանից Ս. Խաչի պատմութիւնը» (983), մի քանի ներբողներ, շուրջ 36 բանաստեղծություն, դավանաբան. մի թուղթ (ընդգրկված է «Գիրք թղթոց» ժող–ում), որն ուղղված է Մոկաց աշխարհի Կճավանքի վանահորը և արժեքավոր աղբյուր է Թոնդրակյան շարժման մասին, տաղեր («Մեղեդի Ծննդեան», «Տաղ Վարդավառին», «Տաղ քաղցրիկ», «Տաղ ազնիւ»), որտեղ պատկերել է իրական կնոջ գեղեցկությունը՝ աշխարհիկ ընկալմամբ: Նրան է վերագրվում նաև Հոբի գրքի մի հատվածի մեկնությունը («Ո՞վ է դա...», անտիպ):

Գ. Ն–ու բանաստեղծ. հանճարի կատարելության արտահայտությունը *«Մատյան ողբերգության»* (1001–03) պոեմն է, որը հայտնի է նաև «Նարեկ» անվանումով: Բազմիցս տպագրվել է «Գիրք աղօթից» վերնագրով (առաջին անգամ՝ 1673–ին Սարսելում):

Գ. Ն. հայ հոգևոր երգի նոր ժող–ի՝ Գանձարանի (X դ–ի 2–րդ կես) սկզբնավորողն է: Նրա բազմաթիվ տաղերից համեմատաբար անաղարտ մեզ են հասել միայն 5–ը՝ «Աչքըն ծով», «Հաւիկ», «Սայլն այն իջանէր», «Ահեղ ձայնս», «Հաւուն–հաւուն» (1–ը՝ Ն. Թաշճյանի, 4–ը՝ Կոմիտասի բարձրարժեք ձայնագրությունների շնորհիվ):

Գ. Ն–ու գեղ. ոճն ազդել է հետագա շրջանի, հատկապես՝ XII–XIII դդ–ի (Ներսես Շնորհալի, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի), ինչպես նաև XX դ–ի 1–ին կեսի (Մ. Մեծարենց, Սիամանթո, Եղիշե Չարենց) հայ բանաստեղծության վրա:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև Գ. Ն–ու **«Ճառ Խաչին»** երկը՝ 1702–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում (152 էջ), **«Հատոր երկրորդ ներբողինաց**



«Սբ Գրիգոր Նազիանզացի», *մանրանկար, XVI–XVII դդ–ի Հայսմավուրք (ծաղկող՝ Թորոս, Մատենադարան, ձեռ. № 7478)*



«Սբ Գրիգոր Նարեկացի», *մանրանկար, 1173–ի «Մատեան ողբերգութեան» (ծաղկող՝ Գրիգոր Մլիճեցի, Մատենադարան, ձեռ. № 1568)*



Գրիգոր Նարեկացու *«Գիրք աղօթից»-ի (1726, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) տիտղոսաթերթը*



Գրիգոր Նարեկացու «*Մեկնութիւն երգոց երգոյն ...***»** *(1789, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը (վերևում) և պատկերազարդ (1-ին) էջ (ներքևում)*



«Սբ Գրիգոր Նյուսացի», *մանրանկար, 1651-ի Հայսմավուրք (ծաղկող՝ Մարկոս Պարկերահան, Մատենադարան, ձեռ. № 1502)*



ճառից» ժող-ը՝ 1774-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (247 էջ, 8^0, 17 x 12,2 սմ), **«Մեկնութիւն Երգոց երգոյն Սողովմոնի»** երկը՝ 1789-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (216 էջ, 6^0, 11,6 x 6 սմ):

Երկ. Սրբոյ հորն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Վնտ., 1840: Տաղեր և գանձեր (աշխատասիր.՝ Ա. Բոյճկերյանի), Ե., 1981:

Գրկ. **Աւետիքեան Գ.,** *Նարեկ աղօթից համառօտ և զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ..., Վնտ., 3-րդ հրտ., 1859:* **Մկրյան Մ.,** *Գրիգոր Նարեկացի, Ե., 1955:* **Աբեղյան Մ.,** *Երկեր, հ. 3, Ե., 1968:* **Զոպանյան Ա.,** *Գրիգոր Նարեկացի, Երկեր, Ե., 1968:* **Թահմիզյան Ն.,** *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Ե., 1985:* **Խաչատրյան Պ.,** *Նարեկի միջնադարյան լուծմունքը, Ե., 1990:* **Նույնի,** *Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Էջմիածին, 1995:* **Ղազինեան Ա.,** *Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս, 1995:* **Թամրազյան Հ.,** *Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Ե., 2004:* **Մահե Ա., Մահե Ժ. Պ.,** *Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը, Ե., 2004:* *Գրիգոր Նարեկացին մանրանկարներում և մեծ քերթողի գաղերը (աշխատասիր.՝ Ա. Գևորգյանի), Ե., 2005:* **Միրզոյան Հ.,** *Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, Ե., 2006:* **Նույնի,** *Նարեկացիագիտական հետազոտություններ (հոդվածների ժող.), Ե., 2010:*

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻ [334/335, ք. Կեսարիա (Կապադովկիա)–մոտ 394, Կ. Պոլիս], հույն փիլիսոփա, աստվածաբան, հայրաբանության ներկայացուցիչ: Ընդհանրական եկեղեցու նշանավոր հայրապետներից, Հայ առաքել. եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ: ***Բարսեղ Կեսարացու*** եղբայրը: 372–379-ին՝ հայաբնակ Նյուսայի (Կապադովկիա), 380-ից՝ Սեբաստիայի եպիսկոպոս: Բարսեղ Կեսարացու մահից (378) հետո ավարտին է հասցրել նրա «Վեցօրեայք» երկը: Մասնակցել է Կ. Պոլսի 2-րդ տիեզ. ժողովին (381):

Գ. Ն. թողել է մատենագր. հարուստ ժառանգություն: Հեղինակ է նաև ճառերի, քարոզների, մեկնությունների, ներբողների:

Գ. Ն-ու գործերի զգալի մասը հայ. է թարգմանվել V–VII դդ-ում: Առաջին ճառը տպագրվել է ***«Գիրք եւ ճառ հոգեշահ»*** (1722) ժող-ում: Ճառերից հատվածներ են վկայակոչվել ***«Կնիք հաւատոյ»*** ժող-ում, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» (1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) երկում, տարբեր երկերից հատվածներ են տպագրվել «Արարատ» (1902), «Բազմավէպ» (1921, 1923) պարբ-ներում:

Միջնադարում Հայաստանի վարդապետարաններում ուսուցանվել են Գ. Ն-ու «Այնոսիկ որք ասեն, եթէ մեծ Հայր քան զՈրդի», «Մեկնութիւն ժողովողի», «Խաւսք յիննն երանութիւնսն», «Ի Հայր մեր որ յերկինսն», «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւնն», «Յաղագս կուսութեան», «Յաղագս Երգոյ երգոցս», «Բան խոստովանութեան հաւատոյ» երկերը:

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 362–374:* **Հատիտյան Ա.,** *Մտրը Գրիգոր հայրապետ Նյուսացի (334–394), «Էջմիածին», 1977, № 11:* **Մուրադյան Կ.,** *Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Ե., 1993:* **Քյոսեյան Հ.,** *Անանիա Սանահնեցի, Էջմիածին, 2000:*

ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ԱԲԱՍԱ, **Գրիգոր Աբասյան** (ծ. թ. անհտ–1220/1221, ամփոփվել է Սանահինի Սբ Աստվածածին եկեղեցու գավթում), մատենագիր, արևելյան վարդապետներից: 1214-ից՝ Սանահինի վանքի առաջնորդ: Հայտնի է «Գիրք պատճառաց» («Պատճառ լայն եւ նուրբ գրեանց...») աշխատությամբ, որտեղ հետազոտել է շուրջ 165 գործ՝ Հին և Նոր կտակարանների գրքեր, եկեղեց. մատենագիրների երկեր և «արտաքին» կոչված գրքեր: Գ. Ո. Ա. իր երկի Ա և Գ բաժինների հոդվածները պատրաստելիս օգտվել է հայ հին և օտար մատենագիրների, իսկ Բ բաժնի նյութերը քաղել է Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու, Մխիթար Գոշի և ուր. աշխատություններից, որտեղ մատենախոսել է Փիլոն Երբայեցու, Գրիգոր Նյուսացու, Եվագր Պոնտացու, Դավիթ Անհաղթի աստվածաբան. և իմաստասիր. երկերը, ինչպես նաև Դիոնիսիոս Արիոպագացու «Ինքնակենսագրությունը»: «Գիրք պատճառաց»-ում հեղինակը հանրագումարի է բերել

հայոց մատենագր. ժառանգության ուսումնասիրման անցյալի փորձը, նոր մակարդակի բարձրացրել հայ մատենագրությունը:

Գրկ. Տաշեան Յ., *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա, Վնն., 1895, էջ 213–233:* Ակինեան Ն., *Ներսէս Լամբրոնացի, տես նրա «Մատենագրական հետազոտութիւններ», հ. 1, Վնն., 1922:* Անասյան Հ., *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ XIII–XVIII:*

ԳՐԻԳՈՐ ՊԻԾԱԿ, XIII–XIV դդ–ի գրիչ, մանրանկարիչ: Գործել է Սսի և Գռների գրչատներում, աշակերտել *Հովհաննես Արքաեղբորը:* Նրա ձեռագրերի [«Մասունք Նոր կտակարանի» (1284), Ավետարան (1297), Մանրուսում (1312, բոլորը՝ Մատենադարան, ձեռ. № 196, 7663, 8623)] պատկերներին հատուկ է գծային ճկունությունը. ոսկեփայլ ֆոնին սպեկտրի գույներով նկարված բուս. և կենդ. զարդամոտիվներն ստեղծում են լուսային փակ միջավայր («Աստծո լույսի» սիմվոլիկա): Գ. Պ–ի ավանդները զարգացրել է որդին՝ ***Սարգիս Պիծակը***:

Գրկ. Ղազարյան Վ., *Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ– XIV դարի սկիզբ), Ե., 1984:*

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՎՌԱՑԻ, Լամբրոնացի (մոտ 1160/1170–ական թթ., Կիլիկիայի Լամբրոն ամրոց–մոտ 1230–ական թթ.), բանաստեղծ, մատենագիր, շարականագիր, մեկնիչ: Սովորել է Կիլիկիայի վանական դպրոցներում: Եղել է *Ներսես Լամբրոնացու* աշակերտն ու մտերիմը, Լևոն Բ թագավորի թարգմանիչը, խորհրդատուն ու խոստովանահայրը: Թագավորի առաջարկությամբ հուն–ից հայ. է թարգմանել (1203) Նիկիայի արք. Հովհաննեսի Թուղթը՝ ուղղված Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոսին:


Գ. Ս. գրել է ներբողներ («Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, քաղաքավարութեան եւ վերափոխման ամենասուրբ կուսին, ասացեալ ի Գրիգորէ Մենաւորէ», «Ներբողեան ի սուրբն Լամբրոնացի»), ճառեր («Պատմութիւն վարուց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի», «Վարք Գրիգորի Նարեկացւոյ»): Արժեքավոր են «Ճառն ի Յարութիւն Քրիստոսի» և Եսայի մարգարեի «Տէր ո՞ հաւատաց...» խոսքի էությանն ու մեկնաբանությանը նվիրված ճառերը: «Արեգականն արդարութեան» սկզբնատողով, հայ–ի այբբեն. կարգով գրված շարականում անդրադարձել է Հովհաննես Մկրտչի ծննդին, կյանքին և գործունեությանը: Գ. Ս–ուն է վերագրվել Եվագրոսի «Լուսաւոր պատերազմ» երկի մեկնությունը: Ներսես Լամբրոնացին Գ. Ս–ուն է հանձնարարել Սաղմոսների իր մեկնության ընդօրինակությունը:

Գ. Ս. որպես շարականագիր պահպանել է երաժշտության կիլիկյան դպրոցի ավանդույթները:

Գ. Ս–ու «Գիրք աղօթից» ժող–ը տպագրվել է 1742–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (192 էջ, 80, 13 x 7,5 սմ): Լույս է տեսել նաև «Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի»՝ «Սոփերք հայկականք» մատենաշարով (հ. 15, 1854, Վնտ., Սբ Ղազարի տպ.):

Գրկ. Զամչեան Մ., *Պատմութիւն հայոց, հ. 3, Վնտ., 1786:* Զարբհանալեան Գ., *Պատմութիւն հայերէն դպրութեանց, հ. 1, 3–րդ հրտ., Վնտ., 1897:*

ԳՐԻԳՈՐ ՍՈՒՔԻԱՍԱՆՑ, XIV դ–ի գրիչ, մանրանկարիչ: Ստեղծագործել է Ղրիմի Սուրխաթ (այժմ՝ Ստարի Կրիմ) քաղաքում: 1332–56–ին նրա ընդօրինակած 6 ձեռագիր պահվում է Մատենադարանում (№ 591, 3046, 7048, 7605, 7664, 10337), 1–ը՝ Փարիզի Ազգ. գրադարանում (Arm., № 116–118): Ենթադրվում է, որ դրանց ծաղկողը նույնպես Գ. Ս. է: Նրա նկարազարդումներն ունեն ծավալի, մասամբ՝ նաև հեռանկարի ըմբռնում, որը հատուկ էր «Պալեոլոգյան» վերածննդի արվ–ին: Մանրանկարներով և ճոխ զարդարանքով նշանավոր է նաև 1332–ի Ավետարանը՝ առանձնապես հաջողված «Կանայի հարսանիքը» և «Աստվածամայրն ու Աբրահամը» մանրանկարներով:



Գրիգոր Սկևռացու *«Գիրք աղօթից»-ի (1742, Կ.Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) տիտղոսաթերթը*



Գրիգոր Սուքիասանց. *«Կանայի հարսանիքը», մանրանկար, 1332–ի Ավետարան (Սուրխաթ, Մատենադարան, ձեռ. № 7664)*



«Սբ Գրիգոր Սքանչելագործ», *մանրանկարի դրվագ, 1651-ի Հայսմավուրք (ծաղկող՝ Մարկոս Պատկերահան, Մատենադարան, ձեռ. № 1502)*



«Սբ Գրիգոր Տաթևացի», *մանրանկար, 1449-ի Ժողովածու (Կաֆա, Մատենադարան, ձեռ. № 1203)*



Գրիգոր Տաթևացու *«Գիրք հարցմանց»-ի (1729, Կ. Պոլիս, Ասպվածապուր Կոստանդնուպոլսեցու փպ.) տիտղոսաթերթը*

ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ [մոտ 210–213, Նեոկեսարիա (Պոնտոս)–270–273], Հույն եկեղեցու նշանավոր հայրերից, Հայ առաքել. եկեղեցու տոնելի սուրբ: Նախաքրիստ. անունը՝ Թեոդորոս (Աստվածապարգև):

Գ. Ս-ին են պատկանում կամ վերագրվում իր ուսուցիչ Որոգինեսին նվիրված ներբողը (239), «Աստծո չարչարելիության և անչարչարելիության մասին» երկը, «Կանոնական նամակը» (253–254), որը զետեղվել է Հույն եկեղեցու Կանոնական նամակների ժող-ում: «Հավատքի շարադրություն» (262–265) դավանաբան. գրվածքը համարվում է նախանիկիական շրջանի Ընդհանրական եկեղեցու ուղղափառ դավանության Հավատո հանգանակը: Գ. Ս. առաջին եկեղեց. գրողն է, որը սուրբգրային բնօրինակը թարգմանել է իր ժամանակի հուն-ի՝ հավատացյալներին հասկանալի դարձնելու համար:

Գ. Ս-ի երկերի զգալի մասը հայ. է թարգմանվել V դ-ում և մեծ ազդեցություն թողել հայ ինքնուրույն մատենագրության ձևավորման վրա: Միջազգ. հայրաբանության համար հույժ կարևոր են (միայն հայ-ով պահպանված) ֆրանսիացի հայագետ Ժան Մարտինիի հրատարակած (1883) Գ. Ս-ի ճառերը՝ «Խօսք ի ծնունդն Փրկչի» (հայ. հրտ.՝ 1991, Նյու Յորք), «Յաղագս Մարդեղութեան», «Յաւետիս Աստուածածնի», «Ներբողեան ի Սուրբ Ստեփանոս», «Գովեստ ի Սուրբ կոյսն Մարիամ»: Հայագետ Ֆրեդերիկ ***Կոնիբերը*** 1896-ին անգլ. թարգմանությամբ հրատարակել է մեկ այլ՝ նույնպես միայն հայ-ով պահպանված ճառ («Յաղագս Աստուածածնի»)՝ այն վերագրելով Գ. Ս-ին: Նրա երկերից քաղված հատվածներ են օգտագործվել հայ դավանաբան. մատենագրության մեջ՝ ***«Կնիք հաւատոյ»*** ժող-ում, ***Անանիա Սանահնեցու*** «Հակաճառութիւն», ***Վարդան Այգեկցու*** «Արմատ հաւատոյ» գործերում:

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 374–378:* **Վարդանեան Ա.,** *Երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի խաւսք ի ծնունդն Քրիստոսի, «ՀՄ», 1912, էջ 392–398, 469–476:* **Անասյան Հ.,** *«Արմատ հաւատոյ» աղբյուրներից: Գրիգոր Սքանչելագործ, «Էջմիածին», 1977, № 12:* **Պետրոսյան Ե.,** *Հայրաբանություն, Էջմիածին, 1996, էջ 172–179:* **Քյոսեյան Հ.,** *Անանիա Սանահնեցի, Էջմիածին, 2000, էջ 372–373:* **Migne J. P.,** *PG, t. 10, P., 1857–66.*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ [աշխարհիկ անունը՝ Խութլուշահ, 1346, Թմուկ ամրոց (Մեծ Հայքի Գուգարք նահանգի Զավախք գավառ)–27.12.1409, Տաթևի վանք], աստվածաբան, փիլիսոփա, րաբունապետ, մանրանկարիչ: Հայ առաքել. եկեղեցու սուրբ հայրերից և վարդապետներից, տոնելի սուրբ: Սովորել է Տաթևի համալսարանում, աշակերտել ***Հովհան Որոտնեցուն***: Ուսուցչի մահից (1386) հետո գլխավորել է Ապրակունյաց դպրոցը, ապա՝ Տաթևի համալսարանը (1390-ից մինչև մահը): Գ. Տ-ու 300-ից ավելի աշակերտներից են ***Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Մատթեոս Ջուղայեցին*** և ուր.:

Գրել է մեկնություններ, լուծմունքներ, քարոզներ, աստվածաբան., դավանաբան., իմաստասիր. աշխատություններ: Առավել նշանավոր են «Գիրք հարցմանց» (1397, բնագիրը պահպանվել է մի քանի ձեռագիր օրինակներով) և «Ոսկեփորիկ» հանրագիտ. բնույթի երկերը, որտեղ ի մի են բերված ոչ միայն ժամանակի գիտ-յան ու կյանքի ամենաբազմազան խնդիրներին վերաբերող տեղեկությունները, այլև, որ առավել կարևոր է, հայ դավանաբան. մտքի դարավոր ձեռքբերումները, նաև «Գիրք քարոզութեան...» (Ձմեռան և Ամառան հատորներով), «Համառօտ տեսութիւնս ի գիրս Պորփիւրի», «Լուծմունք համառօտ ի տեսութիւնն Դաւթի Անյաղթի» (Մատենադարան, ձեռ. № 5674), «Համառօտ լուծումն առաքինութեանցն Արիստոտէլի», «Լուծումն Պարապմանց սրբոյն Կիւրղի» երկերը, Հոբի, Եսայու, Երգ երգոցի, Սաղմոսաց, Առակաց գրքերի, Մատթեոսի, Հովհաննեսի Ավետարանների լուծմունքները և քաղվածո մեկնությունները:

Գ. Տ–ու մանկավարժ. հայացքներն առավել ամբողջ. ներկայացված են «Սահմանադրութիւն դաստիարակութեան» աշխատության մեջ, որը բացառիկ երևույթ էր միջնադարյան և հայ մանկավարժ. գրակ–յան մեջ:

Գ. Տ. հայտնի է նաև որպես մանրանկարիչ. պահպանվել է խոռաններով ու լուսանցազարդերով 1297–ի մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 7482), որը 1378–ին լրացվել է Գ. Տ–ու բարձրարժեք մանրանկարներով («Ավետում», «Ծնունդ», «Մարիամը Մանկան հետ», «Մուտք Երուսաղեմ», «Խաչելություն»):

Գ. Տ. անդրադարձել է նաև (հատկապես՝ «Գիրք հարցմանց»–ում) երաժշտածիս., տես. ու գեղագիտ. խնդիրների, և, ինչպես տեղեկացնում է պատմիչը (հավանաբար՝ Դավիթ Բաղիշեցին), իր համալսարանում «...ուսուցաներ զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւնս քաղցրալուր ձայնի եղանակաւ»:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Գ. Տ–ու՝

«Նկատումն ճշմարտութեան» աստվածաբան. երկը. 1713–ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Սարգվանեցու տպարանում [16 (՞) էջ, 17,5 x 11 սմ]:

«Լուծմունք ի պարապմունս Սրբոյն Կիւրղի» երկը. 1717–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում (271 էջ, 8^0, 15,8 x 11 սմ): Տպակից է Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց» և Աթանաս Աղեքսանդրացու «Թուղթ առ Եպիկտիմոն» երկերին: Ընդհանուր տիտղթ–ին՝ «Փոխարէն ձայն առ բաղձալին», որի սկզբնատառերը կազմում են ակրոստիքոս՝ «Ի Պաղտասարէ»:

«Գիրք հարցմանց». 1720–ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Սարգվանեցու տպարանում: Անավարտ տպագրություն է (124 էջ, 4^o, 19,4 x 13,2 սմ):

Վերահրատարակվել է 1729–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք հարցմանց երիցս երանեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն...» (808 էջ, 6^o, 22 x 14,2 սմ): Այս հրատ–յան մեջ չկա մահմեդականության հիմն. դրույթները վիճարկող «Ընդդէմ տաճկաց» գլուխը: Գրքի վերջում տրված է գլխ. հասկացությունների (բանից) այբբեն. ցանկ և ցուցակ:

«Գիրք քարոզութեան»–ի «Զմեռան» հատորը. 1740–ին Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում (748 էջ, 4^o, 26,6 x 16,2 սմ):

«Գիրք քարոզութեան»–ի «Ամառան» հատորը. 1741–ին՝ նույն տպարանում (740 էջ, 4^o, 26,6 x 16,2 սմ): Այս գրքի 2 հատորն էլ տպագրվել են Ղափանցի Սահտեսի Շահնազարի միջոցներով:

«Ոսկեփորիկ» երկը. 1746–ին նույն տպարանում (592 էջ, 8^o, 12,6 x 8,2 սմ): Լույս է տեսել նաև 1995–ին Երևանում՝ աշխարհաբար (փոխադր. և ծնթգր.՝ Հ. Քյոսեյանի):

«Գիրք գաւազան տալոյ աշակերտացն: –Կանոն ծայրագոյն իշխանութիւն տալոյ վարդապետացն» Հայ եկեղեցու ձեռնադրության ծեսի մասին աշխատությունը. 1752–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (272 էջ, 8^o, 12,7 x 7,3 սմ): Տպակից է «Ձեռնադրութեան գիրք» երկին:

«Լուծմունք Ներածութեան Պորփիւրի» երկը. 1793–ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Սրբագրիչ՝ տեր Փիլիպոս Ղայթմազեցու որդի Սամուել (413 էջ, 8^o, 11 x 18 սմ):

Տպակից է Պորփյուրի «Ներածութիւն» և Դավիթ Անհաղթի «Վերծանութիւնք Ներածութեան Պորփիւրի» երկերին:


Երկ. Գրիգոր Տաթևացի և Անանուն Սյունեցի (ալբում), Ե., 1987: Գիրք հարցմանց (առաջաբ.՝ Ս. Արևշատյանի), Երուսաղեմ, 1993: Մեկնութիւն Սաղմոսաց (հանառոտ տարբերակ, աշխատասիր.՝ Ա. Բոշկեցյանի), Ե., 1994: Սողոմոնի առակների մեկնություն (քնն. բնագիրը և աշխարհաբարի փոխադր.՝ Խ. Գրիգորյանի), Ե., 2005: «Ամառան» եւ «Ձմեռան» հատորներէն քաղուած Աւտուածամօր քարոզները (աշխարհաբարի փոխադր. և առաջաբ.՝ Թ. Տաճնապետյանի), Անթիլիաս, 2010: «Գիրք հարցմանց»: Համաբարբառ, գիրք 1–2, Ե., 2011–12:



«Նկատումն ճշմարտութեան» (1713, Կ. Պոլիս, Գրիգոր Մարգվանեցու տպ.) գրքի փիփղոսաթերթը



«Ոսկեփորիկ» (1746, Կ. Պոլիս, Աբրահամ Թրակացու տպ.) գրքի փիփղոսաթերթը



«Գիրք գաւազան տալոյ աշակերտացն...» (1752, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Ա. Ալպոյաճյանի «Գրիգոր Կեսարացի պատրիարք...» (1936, Երուսաղեմ) գրքի կազմը



Գրիգորիս Աղթամարցու *«Տաղեր» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կրկնաշապիկը*

Գրկ. Կարպիսյան Գ., *Գրիգոր Տաթևացի, «Էջմիածին», 1959, № 3–4:* Թովմասյան Ն., *Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները, Ե., 1966:* Թահմիզյան Ն., *Քնևական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, «ԼՀԳ», 1971, № 5:* Հակոբյան Հ., *Գրիգոր Տաթևացին արվեստի մասին, «ՊԲՀ», № 4, 1973:* Аревшатян С., *Философские взгляды Григора Татеваци, Е., 1957.*

ԳՐԻԳՈՐ ԲԱԲՈՒՆԱՊԵՏ ԿԵՍԱՐԱՑԻ, **Կապադովկացի** (ծ. թ. անհտ, Կեսարիա–1636, Կ. Պոլիս), մանկավարժ, մատենագիր, թարգմանիչ: 1595-ին աշակերտել է րաբունապետ Սրապիոն Ուռհայեցուն, որն Ամիդում նրան ձեռնադրել է վարդապետ: Եղել է Կ. Պոլսի պատրիարք, Կեսարիայի հայոց առաջնորդ: Հեղինակ է «Թուականք», «Պատմութիւն [լընդգրկված է Ադամից մինչև 1636-ը (չի պահպանվել)] երկերի: Արաբ-ից թարգմանել է աստղաբաշխության մի գիրք, գրել է չափածո և արձակ գործեր (գանձեր, տաղեր, ներբողներ, ողբեր): Նրան է վերագրվում Էվկլիդեսի «Սկզբունքներ» աշխատության հայ. ամբողջ. թարգմանությունը («Երկրաչափութիւն Եվգլիտին», հրտ.՝ 1962): Գ. Ր. Կ-ու անունով Երևանում կոչվել է բժշկ. հումանիտար քոլեջ:

Գրկ. Ալպոյաճեան Ա., *Գրիգոր Կեսարացի պատրիարք եւ իր ժամանակը, Երուսաղեմ, 1936:*

ԳՐԻԳՈՐ ՕՇԱԿԱՆՑԻ [1757, գ. Օշական (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–1799, Կարինի, բանաստեղծ, հնագետ, եկեղեց. գործիչ: Սովորել է Էջմիածնի վանքում: 1795–99-ին շրջագայելով Արմ. Հայաստանում՝ ուսումնասիրել է հուշարձաններ, գրի առել արձանագրություններ: Գրել է տաղեր և արձակ էջեր («Տեսիլքներ»): Ուշագրավ են Անի քաղաքին նվիրված «Ողբ» և «Արձանագրութիւնք յիշատակաց» ոտանավորները: Պահպանվել է Գ. Օ-ու վարքը, որը գրել է Հովհաննես Կարնեցին:

Գրկ. Ոսկեան Հ., *Գրիգոր արքեպ. Օշականցի, «ՀԱ», 1964, № 1–6:* Նազարյան Շ., *Գրիգոր Օշականցու կյանքն ու գործունեությունը, «ՊԲՀ», 1964, № 4:*

ԳՐԻԳՈՐԻՍ, XII դ-ի վերջի և XIII դ-ի 1-ին կեսի բժշկապետ: Ապրել, կրթություն ստացել և աշխատել է հավանաբար Կիլիկյան Հայաստանում: Տիրապետել է հուն-ին, ասոր-ին, արաբ-ին, պարսկ-ին: Հեղինակ է «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» (հրտ.՝ 1962, աշխատասիր.՝ Ա. Կծոյանի և Լ. Խաչիկյանի) ստվարածավալ բժշկարանի, որտեղ նկարագրված են հին և միջնադարյան բժշկագիտ-յանը հայտնի հիվանդությունների ախտանշանները, բուս., կենդ. և հանք. ծագման դեղանյութերի 300 դեղատոմս:

Գրկ. Կծոյան Ա., *Բժշկագիտությունը Հայաստանում XI–XIV դարերում, Ե., 1968:*

ԳՐԻԳՈՐԻՍ, **Երգեցող,** XIII դ-ի գրիչ, երգիչ: Ընդօրինակել է ***Գրիգոր Բ Վկայասէրի*** «Տօնամակը», որը Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Գ-ն նվիրել է Պերուջայի (Իտալիա) հայկ. Սբ Մատթեոս եկեղեցուն: 1237-ին Սսում ընդօրինակել է Ավետարան, որը 4 ավետարանիչների պատկերներով, 9 խորանով, 36 կիսակամարով զարդարված ձեռագիր է, կազմը՝ փայտե (կոստղապատ)՝ արծաթե ակնակուռ խաչով: 1238-ին Սանդուլ անապատում ընդօրինակել է մեկ այլ Ավետարան, իսկ 1244-ին՝ *Ներսես Շնորհալու* և *Գրիգոր Մագիստրոսի* «Թղթերը»:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ, XVI դ-ի բանաստեղծ, մատենագիր, մանրանկարիչ, գրիչ: Աղթամարի կաթողիկոս (1512–44): Աշակերտել է Արճեշի վանքի վրդ. ***Գրիգոր Րաբունապետ Կեսարացուն:*** Գրել է տաղեր, գանձեր, կաֆաներ, ընդօրինակել և ծաղկել ձեռագրեր: «Գովեմ զքեզ մարմնով հրեշտակ», «Դու ես յԱդինայ դրախտէն», «Արեգականափայլ գեղով լի լուսին» տաղերում գովերգել է կնոջ գեղեցկությունը, «Գարունն է բացվեր, վարդն ի պաղչանին», «Յամէն առաւօտ եւ լոյս»-ում արտահայտել է կյանքի հարատևման գաղափարը: Գ. Ա-ու ստեղծագործություններին հատուկ են այլաբան. պատկերները, բանաստեղծ. հնարների բազմազանությունը, ժող. երգերի հետ հարազատությունը («Ծաղկունք ասեն՝ հերիք արա», «Ահա այգիք մեր ծաղկեցան», «Յետ գնալոյ վարդին»):

Գ. Ա. խմբագրել է Ալեքսանդր Մակեդոնացու մասին Կալիսթենեսի՝ V դ–ում թարգմանված «Աղեքսանդրի վարքը» և X դ–ում արաբ–ից թարգմանված «Պղնձե քաղաքի պատմութիւն» երկը: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվել են Աղեքսանդրի պատմության գրչօրինակներ՝ իր կաֆաներով, մանրանկարներով, լուսանցազարդերով ու նկարազարդումներով: Արժեքավոր փաստ. նյութ են պարունակում Գ. Ա–ու ինքնագիր հիշատակարաններն ու վկայությունները:

Գ. Ա–ու հարյուրավոր ձեռագրեր են պահվում Երևանի, Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի մատենադարաններում, Մոսկվայի, Ս. Պետերբուրգի ձեռագրատներում: Հրատարակվել է Գ. Ա–ու «Տաղեր» (աշխատասիր.՝ Մ. Ավդալբեգյանի, 1984) ժող–ը: Տաղերը թարգմանվել են անգլ. (Ղ. Ալիշան, 1852), ֆրանս. (Ա. Չոպանյան, 1906), ռուս. (Կ. Կոստանյան, 1913) և այլ լեզուներով:

Գրկ. Գրիգորիս Աղթամարցին և իր տաղերը (հրտր.՝ Կ. Կոստանյանի), Թ., 1898: **Յովսէփեան Գ.,** *Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, № 1–12:* **Ակինեան Ն.,** *Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վնն., 1958: Գրիգորիս Աղթամարցի (քնն. բնագրերը և ծնթգր.՝ Մ. Ավդալբեգյանի), Ե., 1963:* **Սիմոնյան Հ.,** *Հայ միջնադարյան կաֆաներ, Ե., 1975: Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ (աշխատասիր.՝ Հ. Սիմոնյանի), Ե., 1989:* **Բախչինեան Հ.,** *ԺԲ դարի հայ խոշորագոյն քերթողը. Գրիգորիս Աղթամարեցի, Բ., 2004:*

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ալեքսանդր Հովակիմի [8.10.1927, Լենինական–30.10.2008, Երևան], գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Վաստ. նկարիչ (1970): Ավարտել է Լենինականի Ս. Մերկուրովի անվ. նկարչ. դպրոցը (1941), ԵԳՈՒՀ (1947), ԵԳԹԻ (1953): 1960–ական թթ–ի հայկ. կերպարվ–ի նորարար. շարժման ներկայացուցիչներից է: 1956–67–ին եղել է «Պիոներ», 1967–75–ին՝ «Գարուն» ամսագրերի գեղ. խմբագիրը:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Թումանյանի «Սուտլիկ որսկանը» (1961), «Փարվանա» (1965), «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» (1985), Ա. Իսահակյանի «Նուկիմ քաղաքի խելոքները» (1962), «Պատմվածքներ և լեգենդներ» (1962), Գ. Սարյանի «Հատուցում» (1966), Խ. Դաշտենցի «Ֆայտոն Ալեքը» (1967), Վ. Շեքսպիրի «Համլետ» (1968), «Լիր արքա» (1970), «Ռոմեո և Ջուլիետ» (1971), «Մակբեթ» (1971), «Օթելլո» (1980), Վ. Սկոտի «Այվենհո» (1975), Վ. Անանյանի «Ուր են տանում կածանները» (1980), Ս. Մկրտչյանի «Կախարդական աշխարհ» (1989), Րաֆֆու «Սամվել» (բուլղ., 2010) և այլ գրքեր:

Լույս է տեսել Գ–ի «Բանաստեղծություններ» (1998) ժող–ը:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գևորգ Ստեփանի, ***Ջիոտտո*** [12(24).11.1897, Թիֆլիս–23. 11.1976, Երևան], նկարիչ: Վաստ. նկարիչ (1967): Սովորել է Թիֆլիսի Գեղարվ–ը խրախուսող կովկասյան ընկերության նկարչության և քանդ–յան դպրոցում (1916–19, դասատու՝ Եղիշե ***Թադևոսյան***), Մոսկվայի բարձրագույն գեղ. արվեստանոցներում (1921–23): 1930–ական թթ–ին Թիֆլիսում աշխատակցել է «Պրոլետար», «Մարտակոչ», «Սովետական Վրաստան» թերթերին, «Կարմիր ծիլեր» մանկ. ամսագրին, 1960–ական թթ–ին՝ «Սովետական Հայաստան», «Պիոներ» ամսագրերին: Քաղ. երգիծանկարները պարբերաբար տպագրվել են վրաց. և հայկ. մամուլում:

Նկարազարդել է Մարգարի «Կուզիկի պատմությունը» (1934), Ծ. Թորգոմյանի «Կանաչ բարձունքներ» (1935), Հ. Աղաբաբի «Պախրախոտ» (1935), Մ. Դարբինյանի «Սուլդին ու Բուլդին» (վրաց., 1935) և այլ գրքեր: 1962–ին տեղափոխվել է Երևան:

Գրկ. Գևորգ Գրիգորյան (ալբոմ, առաջաբ.՝ Պ. Հայթայանի), Ե., 1981:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գրիգոր Արտաշեսի [ծ. 13.1.1913, գ. Քալարա (այժմ՝ գ. Ղուկասավան՝ ՀՀ Արարատի մարզում)–4. 8.1994, Երևան], բանագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1960), պրոֆ. (1973): 1939–ին ավարտել է ԵՊՀ: 1973–ից ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտ–ների բաժանմունքին կից «Սասունցի Դավիթ» էպոսի խումբը:

Լույս են տեսել Գ–ի «Հայ ժողովրդական բանահյուսություն» (1960, 2–րդ հրտ., 1980), «Հայ ժողովրդական հերոսական էպոսը» (1960), «Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը» (գիրք 4, 1965), «Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը» (գիրք 1, 2, 5, 1972, 1981, 1986), «Էպոսի ժանրային հատկանիշները» (1985),



Ալեքսանդր Գրիգորյան. *Վ. Շեքսպիրի «Համլետ» (1968, Ե., Հայպետհրատ) գրքի պատկերազարդումներից*




Գևորգ Գրիգորյան. *Հ. Աղաբաբի «Պախրախոտ» (1935, Թիֆլիս) գրքի շապիկը*



Գրիգոր Գրիգորյանի *«Հայ ժողովրդական հերոսական էպոսը» (1960, Ե., ԳԱ հրտր.) գրքի կազմը*



Կամսար Գրիգորյանի *«Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ուղին» (ռուս., 1975, Ե., «Հայաստան») գրքի փիփղոսաթերթը*



Հովհաննես Գրիգորյան



Հ. Գրիգորյանի *«Հրեշտակներ մանկության երկնքից» (1992, Ե., «Զվարթնոց») գրքի կազմը*

«Սասունցի Դավիթ էպոսի զարգացման շրջանները և պատմական շերտերը» (1989), ««Սասունցի Դավիթ» էպոսի պոետիկան» (1988), «Հին և միջնադարյան Հայաստանի պատմավիպական հերոսները» (1991) աշխատությունները:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Եփրեմ Հակոբի (16.10.1876, Աշտարակ–11.4.1911, Ալեքսանդրապոլ), մանկավարժ, խմբագիր: Ավարտել է Երևանի մանկավարժ. սեմինարիան (1900): 1900–05-ին դասավանդել է Ղուրդուղուլիի (այժմ՝ Արմավիր) և Ալեքսանդրապոլի դպրոցներում: Եղել է Ալեքսանդրապոլի «Ժայռ» (1907–11) թերթի խմբագիր, Խրիմյան աշակերտախնամ ընկերության վարչության հիմնադիր-նախագահ (1907):

ԳՐԻԳՈՐՅԱՆ Զավեն Տիգրանի [14.1.1910, գ. Զիթհանքով (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–14.2.1992, Երևան], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր, պրոֆ. (1952): Ավարտել է ԵՊՀ (1935): 1941–53-ին եղել է ՀամԿ(բ)Կ ԿԿ ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, ***«Լենինյան ուղիով»*** ամսագրի խմբագիր, ՀԽՍՀ մշակույթի նախարար, 1957–92-ին՝ ՀՊՄԻ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Գ-ի «Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին» (1957), «Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը» (հ. 1, 2, 1960, 1967), «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը» (1978) աշխատությունները:

ԳՐԻԳՈՐՅԱՆ (Տեր-Գրիգորյան) Կամսար Ներսեսի [1(14).4.1911, գ. Գանձա (այժմ՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջանում)–16.6.2004, Ս. Պետերբուրգ], գրականագետ: Վահան ***Տերյանի*** եղբորորդին: Բանասիր. գիտ. դ-ր (1955): 1980-ից՝ Ս. Պետերբուրգի ռուս գրակ-յան ինստ-ի (Պուշկինի տուն) ձեռագրերի բաժնի վարիչ:

Ռուս. լույս են տեսել Գ-ի «Ավետիք Իսահակյան» (1954), «Հայաստանը ռուսական գրականության և գեղանկարչության մեջ» (1962), «Լերմոնտովը և ռոմանտիզմը» (1964), «Միքայել Նալբանդյան» (1966), «Հովհաննես Թումանյան» (3-րդ վերամշկ. հրտ.՝ 1969), «Ռուս-հայկական գրական և մշակութային փոխհարաբերությունների պատմությունից (10–20-րդ դարի սկիզբ)» (1974), «Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ուղին» (1975), «Լերմոնտովը և իր «Մեր ժամանակի հերոսը» վեպը» (1975), «Վահան Տերյան: Ակնարկ կյանքի և ստեղծագործության» (1985), «Պուշկինյան էլեգիա» (1990), հայ.՝ «Վալերի Բրյուսովը և հայ պոեզիան» (1959, ռուս.՝ 1962), «Սալտիկով Շչեդրին» (1960), «Յան Ռայնիս» (1965), «Վահան Տերյան» (1956, 1983) աշխատությունները: Ռուս. թարգմանել է Վ. Տերյանի («Բանաստեղծություններ», 1960, 1973) ստեղծագործություններից և հայ պոեզիայից («Նայիր ինձ, Արաքս, իզոր», 1984): Ռ. Օրբելու հետ հրատ-յան է պատրաստել «Արտեմի Արարատյանի կյանքը» (1980) նյութերի ժող-ը:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Հովհաննես Երվանդի (7.8.1945, Լենինական–7.2.2013, Երևան), գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1970): 1989–95-ին՝ ***«Նորք»*** հանդեսի գլխ. խմբագրի տեղակալ, 1996–98-ին՝ ***«Գրական թերթ»***-ի, 1998–2001-ին՝ «Ար» հեռուստաընկերության, 2002–13-ին՝ ՀԳՄ «Սերունդ» էլեկտրոնային թերթի, միաժամանակ՝ «Միհր» հանդեսի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Գ-ի «Երգեր առանց երաժշտության» (1975), «Բոլորովին ուրիշ աշուն» (1979), «Անձրև մի տխուր առիթով» (1982), «Դանդաղ ժամեր» (1986), «Հրեշտակներ մանկության երկնքից» (1992), «Երկու ջրհեղեղի արանքում» (1996), «Կես ժամանակ» (2002), «Գիշերահավասար» (2005), «Երբեք չմեռնես–ահա թե ինչ կասեմ քեզ» (2010), «Նոր տողից» (2013) բանաստեղծությունների ժող-ները, «Քաջ Նազար» (2004) վեպը, «Բաց դռների օր Միերի քարայրում» (2008) հողվածների ժող-ը, «Գերեզմանիս» (2014) վիպակը: Գ. թարգմանել է Ն. Տիխոնովի, Օ. Շեստինսկու, Կ. Ֆեւնետեսի, Խ. Կորտասարի և ուր. ստեղծագործություններից: Գրել է նաև մանուկների համար («Քո առաջին բառերը», 1980, «Ամենա, ամենա Սոնան», 1987, ժող-ներ):

ՀԼԿԵՄ (1976), ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1987), «Վահագն» համահայկ. (2002) մրց-ներ: ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

ԳՐԻԳՈՐՅԱՆ Հրաչյա Գևորգի (22.10.1907, Կարս–19.4.1969, Երևան), գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու: Ավարտել է ԽՄԿԿ ԿԿ-ին կից կուս. բարձրագույն դպրոցը (1949): 1938–39 և 1946-ին՝ Հայաստանի խորհրդ. գրողների միության վար-

չության առաջին քարտուղար, 1939–44-ին՝ *«Կոմունիստ»* թերթի խմբագիր, 1944–46-ին՝ «Պրավդա» (ռուս.) թերթի ՀԽՍՀ սեփական թղթ., 1946–48-ին՝ ՀԽՍՀ կինեմատոգրաֆիայի նախարար, 1948–57-ին՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի կոմիտեի նախագահ, 1957–59-ին՝ ***«Պատմա-բանասիրական հանդես»***-ի խմբագրի տեղակալ, 1959–63-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** ամսագրի խմբագիր:

Լույս են տեսել Գ-ի «Սոցիալիստական ռեալիզմի պոեզիայի հիմնադիրը» (1950), «Գրական ակնարկներ» (1955), «Վլադիմիր Մայակովսկի: Կյանքն ու ստեղծագործությունը» (1970) աշխատությունները:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Մեսրոպ (Յամուրթաճյան Գևորգ) Գրիգորի (ծ. 25.10.1932, Հալեպ), հայագետ, մատենագետ, եպիսկոպոս (1986): Արևելագիտ. դ-ր (1964), պրոֆ. (1981): Ավարտել է Հալեպի Հայկազյան ազգ. վարժարանը (1946), Անթիլիասի դպրեվանքը (1953), Դյուրհամի (Մեծ Բրիտանիա) համալսարանը (1961): 1953–56-ին հայոց պատմություն, գրաբար և մատենագրություն է դասավանդել Անթիլիասի դպրեվանքում, եղել գրադարանի փոխտնօրեն, ձեռագրատան գլխ. պատասխանատու և տպարանի տեսուչ: 1955–56-ին պատրաստել և հրատարակել է կրոնի դասագիրք՝ 6 հատորով (6-րդ հատորի հրատյան համար ստացել է Վազգեն Ա-ի օրհնության գիրը): ***«Սփիւռք»*** շաբաթաթերթի հիմնադիր-հրատարակիչներից է:

1979-ին նշանակվել է Կենտր. Եվրոպայի և Շվեդիայի հայրապետ. պատվիրակ: 1981-ից դասավանդում է Վիեննայի համալսարանում: «Հանդէս ամսօրեայ» ամսագրում «Ազգային մատենադարան» մատենաշարով հրատարակել է «Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցւոց մասին» (1969) և «Դիտողութիւններ եւ սրբագրութիւններ Սեբիոսի պատմագրոց բնագրին վերայ» (1973) ուսումնասիրությունները:

Լույս են տեսել Գ-ի «Ստեփանոս Սիւնեցի» (1958), «Հայկական համայնքի մասնակցությունը Օսմանյան կայսրության Արևելյան Անատոլիայի և Սիրիայի կյանքին 1860–1908» (անգլ., 1964), «Կոստանդնուպոլսի գրավումը 1453 թվին, հայկական հայեցակետը» (1981), «Ֆրանց Վերֆել և Կոմիտաս» (1999), «Հայ եկեղեցին» (2003, երեքն էլ՝ գերմ.) աշխատությունները:

Հայ եկեղեցու «Սբ Ներսես Շնորհալի» (2002) և «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2003) շքանշաններ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռոզա Հայրապետի [25.1.1931, Նոր Բայազետ (այժմ՝ ք. Գավառ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–3.8.2003, Երևան], բանասեր-բանագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1996): Ավարտել է ԵՊՀ (1953): 1960–2003-ին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ի առաջատար գիտաշխատող:

Լույս է տեսել Գ-ի «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» (1970), «Հայ մանկական բանահյուսություն» (2002) աշխատությունները, մասնակցել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» (հ. 8, 1977), «Գեղարքունիք» (1983), «Սասնա ծռեր» (2000, 7 նորահայտ պատումներ) բանահյուս. նյութերի ժող-ների հրատ-յանը: 1991-ին Գ-ի մշակմամբ հրատարակվել է «Մանկապատում» բանաստեղծությունների ժող-ը:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռուբեն Մկրտչի (ծ. 13.2.1954, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1977), ԵԳԹԻ (1984): 1983–97-ին եղել է Երևանի երիտասարդ. թատրոնի գլխ., 2000–11-ին՝ Ազգ. կինոկենտրոնի նկարիչ:

Ձևավորել է Կ. Չուկովսկու «Չոփչոփիկը» (1986), Ս. Կապուտիկյանի «Ծաղկանոց» (ռուս., 1988), Ա. Միլնի «Վինի Թուխը և բոլոր, բոլորը» (1988), Պ. Հելիկոյի «Ջենի» (1989), Ս. Հարությունյանի «Ծիպիլին, Տիմրական և Ծիծաղը» (1990), Ա. Նազինյանի «Հայ ժողովրդի հեքիաթներ» (1995), Ն. Ենգիբարյանի «Մարշալ մոծակը» (2009), «Ուկրաինական ժողովրդական հեքիաթներ», Խնկո Ապոր «Նապաստակի վախը», «Ագռավն ու աղվեսը», «Խոզն ու ագռավը», Ն. Սարգսյանի «Քաչալ ոզնին» (բոլորն էլ՝ 2010), «Կափիղկա» (2011) և այլ գրքեր:



Մեսրոպ Գրիգորյան



Ռոզա Գրիգորյանի *«Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» (1970, Ե., ԳԱ հրտ.) գրքի փիփղոսաթերթը*




Ռուբեն Գրիգորյան. *Պ. Հելիկոյի «Ջենի» (1989, Ե., «Արևիկ») գրքի պատկերազարդումներից*



Սամվել Գրիգորյան



Սասուն Գրիգորյանի *«Դեպի էրգիր» (2000, Ե., «Ուխտատուն») գրքի կազմը*



Ստեփան Գրիգորյան. *Պ. Թյությունճյանի «Թանիոս Շահինի գիւղացիական ապստամբութիւնը» (1987, Բեյրութ, «Տոնիկյան») գրքի կազմը*

ԳՐԻԳՈՐՅԱՆ Սամվել Հովհաննեսի [22.4.1907, գ. Շուշիքենդ (այժմ՝ գ. Շոշ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–7.6.1987, Բաքու], խմբագիր, բանաստեղծ, թարգմանիչ: Ադրբեջանի ժող. բանաստեղծ (1984): Ավարտել է ԵՊՀ (1929): Ադրբեջանի ռադիոկոմիտեում եղել է հայ. թողարկումների խմբագիր: 1943–77-ին՝ Ադրբեջանի ԳՄ հայկ. մասնաճյուղի նախագահ, 1956–81-ին՝ *«Գրական Ադրբեջան»* հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Գ-ի «Լիրիկական հույզեր» (1934), «Սեր սիրտը» (1944), «Լիություն» (1949), «Կասպիականի առավոտը» (1954), «Քինջ հորիզոններ» (1955), «Սինգարա» (1965), «Հատընտիր» (1977, բոլորը՝ Բաքու, Ազերնեշը տպ.), «Մայրամուտի կրակներ» (1973), «Առանց քեզ» (1982), «Աշնանային մեղեդիներ» (1986), «Հատընտիր» (բոլորը՝ Բաքու, 1987) բանաստեղծությունների ժող-ները: Ադրբ-ից հայ. է թարգմանել բայաթիներ (շուրջ 2 հզ.), նաև Վագիֆի, Մ. Սաբիրի, Ի. Նասիմի, Ս. Վուրղունի և ուր. բանաստեղծություններից:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Սասուն Սերոբի [ծ. 15.1.1937, գ. Ներքին Սասնաշեն (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], բանաստեղծ, հրապարակախոս: Ավարտել է Երևանի հեռակա մանկավարժ. ինստ-ը (1966): 1993-ից՝ Մեծ եղեռնի և հայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-ինստ-ի հիմնադիր-տնօրեն, 1996–98-ին, միաժամանակ՝ «Մայր Հայաստան» ռազմ. թանգարանի պետի տեղակալ:

Լույս են տեսել Գ-ի «Սասնա պար» (1965), «Խավրծիլ» (1981), «Վայրի մեղու» (1987), «Քսանչորս ժամ Պոլսում» (1995), «Սիրտս պիտի դատարկեմ» (2002) չափածո ստեղծագործությունների, «Քոնն եմ, հայրենիք» (2003) ակնարկների ժող-ները, «Մուսաները չլռեցին» (գիրք 1–3, 1989–2010), «Բազմատաղանդ երախտավորը» (1999), «Սասնա արծիվների մի երամը» (2000) մենագրությունները, «Հավերժության լուսամատյան» (2002) ռազմապատմա-փաստագր. հուշահանրագիտարանը՝ նվիրված Մեծ եղեռնի, Հայաստանում ստալինյան բռնությունների ժամանակ, Հայրենական մեծ (1941–45), Խորհրդա-աֆղան. (1979–89) պատերազմներում և Արցախյան հերոսամարտում (1992–94) զոհված հայորդիների հիշատակին:

Երկ. Լեռան կարոտ, Ե., 1970: Ոսկե երազ, Ե., 1976: Կարմիր պանթեոն, Ե., 1996: Դեպի էրգիր, Ե., 2000: Հավերժահոս պանթեոն (1988–1995 թթ.), Ե., 2004: Մեր հերոսները և զինուժի գեներալները (1988–2012), Ե., 2012: Հայրենի փոսն է կանչում, Ե., 2012:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ստեփան Վահանի [20.9.1940, գ. Սարամեջ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–2.5.2010, Երևան], գեղանկարիչ, գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1960), ԵԳԹԻ (1967): 1967–68-ին եղել է «ՀՍՀ»-ի գեղ. խմբագիր: 1968–70-ին դասավանդել է ԵԳՈՒ-ում, 1970-ից՝ ՀՊՄԻ-ում (այժմ՝ ՀՊՄՀ, պրոֆ.՝ 2007-ից), 1970–2008-ին, միաժամանակ՝ ԵԳԹԻ-ում (2004-ից՝ ԵԳԱ):

Պատկերազարդել է Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» (1973, Բ.), Ս. Զորյանի «Մմբատ Բագրատունի» (1975, Բ.), Զ. Խալափյանի «Թույլը և ուժեղը» (1978), Պ. Թյությունճյանի «Թանիոս Շահինի գիւղացիական ապստամբութիւնը» (1987, Բ.), Ս. Թուրքմենբաշու «Ռուհնամա» (2005), Ա. Ղումաշյանի «Ապրելու իմ ժամանակը» (2008), «Նվիրյալները» (2008) գրքերը: Գ-ի գրաֆիկ. գործերից տպագրվել են «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն», «Երեկոյան Երևան» թերթերում և «Նոր-Դար» ամսագրում, հոդվածներ՝ «Գեղարվեստական միտք» ամսագրում:

Հեղինակ է «Մի քանի տեղեկություններ գծանկարի ուսուցման և հայ միջնադարյան արվեստում այդ առարկայի դրվածքի մասին» (2003), «Մեր մանկավարժ արվեստագետները» (2005), «100 դիմանկար» (2008) գրքերի:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վահագն Վահանի (ծ. 27.3.1942, Երևան), գրող, թարգմանիչ, խմբագիր: Վարդան *Գրիգորյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1964): 1966–67-ին եղել է «Հայաստան» հրատ-յան խմբագիր, 1967–74 և 1978–82-ին՝ *«Պիոներ»* ամսագրի պատ. քարտուղար, 1986–94-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Գ-ի «Կատակասեր աստվածները» (1970), «Թագավորի փոքր որդին: Կարմիր ձյունը» (1974), «Տեղատվություն» (1976), «Սպիտակ ագռավ» (1981), «Ադամամութ» (1984), «5-րդ փողոց» (1989), «Թռչունի հոգին» (2002), «Առաջնորդի կյանքն ու մահը» (2006), «Զարմանալի իրադարձություններ 5-րդ փողոցում» (2012) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Ժամանակի գետը» (2008, ՀՀ Պետ. մրց.՝ 2009) վեպը: Գրել է նաև մանուկ-

ների համար («Հեքիաթների անտառը», 1978, «Հեքիաթների քաղաքը», 1982, «Հեքիաթների հովիտը», 1983):

Գ-ի սցենարներով հայֆիլմը նկարահանել է «Եվս հինգ օր», «Արյուն», «Եվ կրկնվում է ամեն ինչ» գեղ. կինոնկարները:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. (1984) և ամենամյա (2002) գրական մրց-ներ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վարդան (Վլադիմիր) Ռուբենի (ծ. 26.1.1929, Դիլիջան), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1975): Ավարտել է ԵՊՀ (1952): 1956–58-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ում, 1959-ից՝ Մատենադարանում. 1960–68-ին՝ գիտքարտուղար, 1979–97-ին՝ ձեռագրերի գիտ. պահպանման բաժնի վարիչ, 1997-ից՝ փոխտնօրեն:

Կազմակերպել է հայ. ձեռագրերի, հնատիպ գրքերի ու փաստաթղթերի հավաքման և Մատենադարան փոխադրման գործը: Նկարագրել ու ցուցակագրել է Երուսաղեմի հայկ. թանգարանի նյութերը: Գ-ի աշխատասիրությամբ լույս են տեսել «Դիվան հայոց պատմության» շարքի «Ղուկաս Կարնեցի: Բնագրեր» (հ. 1, 2, 1984, 2003) հատորները:

Լույս են տեսել Գ-ի «Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780–1800)» (1958), «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)» (1963), «Հայությանը նվիրված կյանք: Էստոնուհի Հեղվիգ Բյուլի հայանպաստ գործունեությունը Կիլիկիայում և Սիրիայում (1911–1951 թթ.)» (1996, ռուս.՝ 2007), «Արցախի պաշտպանության դիրքերում» (1997) աշխատությունները:

Երկ. Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Е., 1992; История армянских колоний Украины и Польши (Армяне в Подолии), Е., 2005.

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վարդան Վահանի (5. 9. 1950, Երևան–26.3.1989, Երևան), արձակագիր: Վահագն *Գրիգորյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1973), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1987): 1971–87-ին եղել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության պատմության բաժնի գիտխմբագիր:

Լույս են տեսել Գ-ի «Հավերժական վերադարձ» (1981, ՀԼԿԵՄ մրց.՝ 1982), «Դար կորստյան» (1985, ՀԼԿԵՄ մրց՝. 1985), «Մանյա այրք» (1988, ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց.՝ 1989) պատմավեպերը:

Երկ. Պատմավեպեր, Ե., 2011:

Գրկ. **Ափինյան Ա.**, *Կարմիր լիալուսին. Վարդան Գրիգորյանի պատմավեպը, Ե., 1997:* **Գալստյան Լ.**, *Վարդան Գրիգորյանի պատմավիպասանությունը, Ե., 2003:*

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վիոլետ Խաչատուրի (ծ. 23.12.1962, Թեհրան), բանաստեղծուհի: 1975-ին հայրենադարձել է: Ավարտել է ՀՊՄԻ (1987): 2001–05-ին՝ «Բնագիր», 2005-ից՝ «Ինքնագիր» գրական հանդեսի խմբագիր (Վահրամ Մարտիրոսյանի հետ):

Լույս են տեսել Գ-ի «Շշմարիտ, ճշմարիտ եմ ասում» (1991), «Քաղաքը» (1998), «Այս ինչ դժվար ձմեռ է» (ֆրանս., հայ., 2000), «Սեր» (հայ. և անգլ.՝ 2006, ֆրանս.՝ 2006), «Հարեմի վարդը» (հայ. և անգլ.՝ 2009), «Կամուրջ դեպի Տանյան» (2012) բանաստեղծությունների ժող-ները:

ՀԳՄ Ա. Իսահակյանի (1991), «Ոսկե եղեգն» պետ. (2000) մրց-ներ:

ԳՐԻՉ, 1. գրող, ծրող, գրագիր, քարտուղար, որը միջնադարում ձեռագրեր է գրել և ընդօրինակել: Սմանագիտ. կրթություն է ստացել գրչության դպրոցներում, սովորել վարպետ Գ-ներից՝ դառնալով հաճախ նաև ձեռագրի կազմողն ու նկարազարդողը («զգծողն ու զծաղկողն», «զմեղապարտ զծրողն»): Վարպետ Գ-ին անվանել են «գրչապետ», «քաջ քարտուղար», «հոետոր» ևն: Գ. հաճախ իր արվ-ը փոխանցել է ժառանգաբար (Աղթամարում գրիչ և ծաղկող Դանիելի ժառանգներն այն պահպանել են շուրջ 200 տարի):

Գ-ները հիմնականում աշխատել են ***գրչության կենտրոններում:*** Եղել են նաև «թափառական» Գ-ներ, որոնք ձեռագրերը գրել են պատվիրատուի մոտ: Միջնադարի հայ Գ-ներից առավել հայտնի են Մխիթարը, Հակոբը, Մովսեսը, Հովհաննեսը, Երեմիան, Եսային և ուր.:

Հայտնի են նաև կին Գ-ներ՝ Կիլիկեցի Ջաբելը, Մարիանեն (1650-ին ընդօրինակել է «Վարք հարանց անապատականաց»-ը, Արկոչ գ.),



Վահագն Գրիգորյան



Վարդան Գրիգորյանի *«Պատմավեպեր» (2011, Ե., «Նաիրի») գրքի կազմը*




Վիոլետ Գրիգորյանի *«Կամուրջ դեպի Տանյան» (2012, Ե., «Անտարես») գրքի կազմը*



Միջնադարի ինքնահոս-գրիչ. հատված մանրանկարից (1292, Նորավանք, Մատենադարան, ձեռ. № 2848, էջ 245. բ)



«Գրոհ», *1931–33, Թիֆլիս (№ 8–9)*



Գրչագրի *օրինակ*

քույր Հռիփսիմեն (1653–56, «Մեկնութիւն ժամագրքի», «Նարեկացի» և «Խոսրով Մեծ» ձեռագրերը, Հալիձորի Սբ Կույս Աստվածածին վանք), կույս Վառվառը (1655, Ժամագիրք, 1648, Գրիգոր Տաթևացու «Ճառընտիր քարոզներ», Փոքր Սյունյաց վանք), Վարդենին (1657, «Սանդուխտի գիրքը»), քույր Էրինեն (1673, «Ատենի ժամգիրքը», Շնեհերի վանք), Շուշանը (1664, Մովսես Խորենացու և Եղիշեի Պատմությունները, Շոռոտի Սբ Կույս Աստվածածին վանք), Մարիամը [XV դ–ի նկարչուհի, Հին Ջուղայի նկարչական դպրոցի ներկայացուցիչ. 1456–ին ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» (հրտ.՝ 1741, Կ. Պոլիս) աշխատությունը, ձեռագիրը զարդարել է նաև գեղեցիկ մանրանկարներով. հայտնաբերվել է Պարսկաստանի Չարմահալ գավառի Սամասաև գ–ում 1946–ին]:

Վարպետ Գ–ներն սկսնակների համար պատրաստել են հատուկ ձեռնարկներ, օր.՝ «Արուեստ գրութեան», «Խրատք գրչութեան» ևն (Գևորգ Սկևռացի, Եսայի Նչեցի):

2. Թանաքով գրելու պիտույք: Հնում որպես Գ. օգտագործել են երկաթե ձողիկները (դրա համար էլ հին հայկ. գրերը կոչվել են ***երկաթագիր***): Միջին դարերում երկաթին փոխարինել է եղեգնյա Գ. (հուն.՝ ղալամոս, այստեղից՝ ղալամ՝ գրիչ իմաստով): Ավելի ուշ կիրառել են սագի փետուրից Գ–ներ: Պողպատե առաջին Գ–ները պատրաստվել են XVII դ–ի վերջին Մյունխենում: Մետաղե Գ–ները լայնորեն կիրառվել են XIX դ–ից մինչև XX դ–ի 2–րդ կեսը:

Հին և միջին դարերում հայկ. ձեռագրերում օգտագործել են երկաթե, եղեգնյա, սագափետուրե Գ–ներ: Հայաստանում պատրաստել են նաև ինքնահոս Գ–ներ, որոնք շատ թանաք են հավաքել և երկար գրել: 1166–ին Հռոմկլայում օգտագործել են գնդիկավոր ինքնահոս Գ–ներ: Մատենադարանի № 1380 ձեռագրի ընդօրինակող Ստեփանոսը հայտնում է, որ ինքը, Գ. մեկ անգամ թաթախելով, 700 տառ (մոտ 1 էջ) է գրել:

«ԳՐՈՀ», հաս., քաղ., գրական պատկերազարդ ամսագիր: «Պրոլետար» օրաթերթի (տես ***«Վրաստան»***) հավելված: Լույս է տեսել 1931–33–ին Թիֆլիսում (1931–ին՝ «Պրոլետար»): Խմբագիրներ՝ Վահան Գրիգորյան, Վարդան ***Ափրյան***, Սեդրակ Վարդանյան: Լուսաբանել է Անդրկովկասի քաղ., տնտ. և մշակութ. առօրյան: Մեծ տեղ է հատկացրել գրակ–յանը և արվ–ին, տպագրել Վ. Փափազյանին, Ա. Ոսկանյանին, Վ. Աճեմյանին և ուր. նվիրված հոդվածներ: Աշխատակցել են Դ. Դեմիրճյանը, Ե. Չարենցը, Գ. Մահարին, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Մ. Արմենը և ուր.:

ԳՐՉԱԳԻՐ, հայկ. գրատեսակ՝ գրչով գրված ձեռագիր: Միջնադարում կոչվել է նաև «աղյուսակ գիր» կամ «տախտակագիր», արդի բանասիրության մեջ՝ ուղղագիծ կամ ուղղանկյուն երկաթագիրը: Գ–ի ուղղաձիգ գծերն իրար միանում են հորիզոն. ուղիղ նուրբերով և կազմում ուղիղ անկյուն: Գրվում է 2 տողագծի միջև՝ հավասար բարձրությամբ՝ ուղիղ և թեք գրությամբ:

Գ. մինչև XII դ. գրչության հիմն. գիրն էր՝ մի շարք տարբերակներով: Երբ ***բոլորգիրը*** դարձել է գրչության հիմն. գիր, Գ. երկաթագրին զուգահեռ օգտագործվել է գերազանցապես որպես գլխագիր: Այժմ գործածվում է հատկապես վերնագրերում և գրքերի ձևավորումներում:

«Գ.» տերմինը կիրառվում է նաև «*ձեռագիր*» իմաստով, որն ընկալվում է որպես գրչով գրված գիրք:

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏ, գրելու արվ., ուսմունք գրչության մասին: Ստեղծվել է Հին աշխարհում, լայնորեն տարածվել միջնադարում: Գ. ա. միավորել է գիտ–յան, արվ–ի, արհեստի տարրեր, գործն. և տես. գիտելիքներ, որոնց համադրությամբ ստեղծվել են ***գլանափաթեթը***, արձանագրությունը, ձեռագիրը, դիվանական փաստաթուղթը: Գ. ա–ի բաղադրիչ տարրերը կարելի է բաժանել 2 մասի՝ գրանյութ (պապիրուս,

մագաղաթ, թուղթ, թանաք, ներկ, գրիչ ևն) և գրելու բուն գործողությունը (գիր, գրատեսակ, բնագիր, ուղղագրություն, կետադրություն, սրբագրություն, մանրանկարչություն, կազմազարդեր ևն): Առաջին գրանյութը եղել է քարը (ներկայում գործածվում է վիմարձանագրությունների համար), հետո՝ աղյուսը, ապա՝ ***պապիրոսը***, որին զուգահեռ գործածվել է ***մագաղաթը*** և ի վերջո նրան դուրս մղել: Այնուհետև մագաղաթին փոխարինել է ***թուղթը,*** որը հետագայում դարձել է միակ գրանյութը:

Հայկ. Գ. ա. հայ. գրերի և գրատեսակների հետ ստեղծել է ***Մեսրոպ Մաշտոցը:*** Գ. ա–ի առաջին նմուշը Սողոմոնի առակներն են, որոնք թարգմանել են Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտներ Հովհան Եկեղեցացին ու Հովսեփ Պաղնացին, իսկ մագաղաթի վրա գրել է հույն գրիչ Հռոփանոսը: Այս թարգմանության և գրության ժամանակ մշակվել է հայկ. Գ. ա., որի մեջ հմտացել են Մեսրոպ Մաշտոցի հետ Միջագետք մեկնած աշակերտները: Նրանք Վաղարշապատ են վերադարձել հայոց նորաստեղծ գրերով և առաջին ձեռագրով, որի հիման վրա զարգացել է հայկ. Գ. ա.: Հետագայում Գ. ա. կատարելազործվել, հարստացել է Վաղարշապատում և գրչության այլ կենտրոններում:

Միջնադարում գիրք ստեղծելու արվ–ը ներառել է գիրը, դպրությունը, արվ–ները և արհեստները: Գիրքն ավարտուն փուլի է հասել գրիչի և էջերը ***ծաղկողի*** ու մանրանկարչի համատեղ աշխատանքով: Գիրքը կարելուց և կազմելուց հետո հաճախ գրվել է նրա ***հիշատակարանը***:

Գրքի պատկերազարդումը հետագայում դարձել է ինքնուրույն արվ.: Տես նաև ***Գրչության կենտրոններ, Պատկերազարդում, Տառարվեստ***:

Գրկ. Խաչերյան Լ., Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում (ուսումնասիրություն և բնագրեր), Ե., 1962:

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, միջնադարյան մշակույթի կենտրոններ, որտեղ գրել, ընդօրինակել, նկարազարդել, կազմել, նորոգել և պահել են ձեռագիր մատյաններ: Ձեռագրեր ստեղծվել են հիմնականում վանքերին ու մենաստաններին, եպիսկոպոսարաններին ու դպրոցներին կից գրչատներում՝ ինչպես ուսուցման ու ընթերցման, այնպես էլ հետագա սերունդներին փոխանցելու համար: Գրիչներին հաճախ օգնել են աշակերտները և ընտանիքի անդամները: Գ. կ–ում մատյաններ ընդօրինակելուն զուգընթաց ստեղծել են պատմագր., գրական, գիտ., դավանաբան. ինքնուրույն գործեր:

Գ. կ. ունեցել են գրի պահպանման ու զարգացման, մանրանկարչության ու կազմարարության, մագաղաթի ու թղթի մշակման, ներկերի ու թանաքի պատրաստման և գրչության արվ–ին առնչվող այլ արհեստանոցներ, խոշոր կենտրոնները՝ նաև գրչապետներ ու սրբագրիչներ, որոնք հետևել են ձեռագրի գեղեցկությանը, գրագիտությանը, ճշգրտությանը:

Հայկ. առաջին գրչության կենտրոնն ստեղծվել է Վաղարշապատում, որտեղ V դ–ից գրվել, բազմացվել և Հայաստանի տարբեր վայրեր են առաքվել հայ. ձեռագրեր, որոնք կրկին ընդօրինակվել և բազմացվել են գրչության այլ կենտրոններում: Տարբեր ժամանակաշրջաններում գործել են ավելի քան 1500 Գ. կ., որոնցից առավել նշանավոր էին Վաղարշապատի, Սյունյաց, Անձևացյաց, Տաթևի, Վարագի, Նարեկի, Արգինայի, Հաղպատի, Սանահինի, Աղթամարի, Գետիկի, Գոշավանքի, Խորանաշատի, Խոր վիրապի, Մշո Առաքելոց և Գլակա վանքերի, Երզնկայի, Կարինի, Կարսի, Գլաձորի, Ապրակունիսի, Խառաբաստի, Մեծոփի, Սսի, Դրազարկի, Ակների, Գռների, Ադանայի, Խիզանի, Վանի, Բաղեշի, Կաֆայի, Սուրխաթի, Կ. Պոլսի, Երուսաղեմի, Նոր Ջուղայի կենտրոնները: Հայկ. Գ. կ. են գործել նաև Վրաստանում, Իրանում, Ռուսաստանում, Իտալիայում, Հնդկաստանում, Հոլանդիայում, Լեհաստանում, Եգիպտոսում և այլուր:

Գրչության արվեստ. *գլխա- և լուսանցազարդերով պատկերազարդ էջեր*



«Մողնու Աւետարան» (1060, ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի, Մատենադարան, ձեռ. № 7736)



«Աւետարան Փերուժի» (1331, գրիչ՝ Երեմիա, Իսպալիա)




Ավետարանառաջ, 1667–ի Ավետարան (Կարին, գրիչ՝ Եսայի, Մատենադարան, ձեռ. № 245)

Գ. կ–ում կառուցվել են հատուկ շենքեր՝ գրատներ (մատենադարաններ), որտեղ պահվել են ձեռագրերը: Պատերազմներից և օտարների ասպատակություններից տուժել են բազմաթիվ Գ. կ., հրկիզվել գրատներ: Պահպանվել է ընդամենը 5 գրատուն (Սանահինի, Հաղպատի, Հոռոմոսի վանքեր, Գոշավանք, Սաղմոսավանք): Լինելով վանական համալիրի ճարտ. կերպարի կարևոր բաղկացուցիչ տարր՝ գրատների շենքերը չափերով, կառուցող. տեխնիկայով, հարուստ հարդարանքով չեն զիջել եկեղեցիներին ու գավիթներին:

Տես նաև *Գրչության արվեստ:*

Գրքաբուժություն



Գրիգոր Նարեկացու «Նարեկ: Մատեան ողբերգութեան» (2003, Հալեպ) գրքի կազմը

ԳՐՔԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, հոգեբուժության բաժին, հատուկ ընտրված, հիմնականում գեղ. գրակ–յան միջոցով մարմնական և հոգեկան հիվանդների վրա առողջարարավերականգնող. ազդեցության եղանակ: Ձևավորվել է XX դ–ի սկզբին և լայնորեն տարածվել տարբեր երկրներում:

Հայ իրականության մեջ դեռևս միջնադարից սրբացվել և բուժ. նպատակներով շարունակում է օգտագործվել *Գրիգոր Նարեկացու* «Մատյան ողբերգության» պոեմը, որը հայտնի է նաև «Նարեկ» անվանումով:

Նարեկաբուժությունն օգնում է հիվանդին՝ ինքնագիտակցումի և ապաշխարանքի ճանապարհով ազատվելու ճնշող մտքերից, հույզերից ու հոգեկան խանգարումներից:

ԳՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, համալիր գիտություն (կամ գիտ–ների համալիր) գրքի և հրատարակչ. գործի մասին: Ներառում է գրքի պատրաստման, հրատարակման, տարածման (վաճառք), ուսումնասիրության (*մատենագիտություն*, վիճակագրություն ևն), օգտագործման (*գրադարանագիտություն*) և հարակից այլ ոլորտներ: «Գ.» տերմինը սահմանել (որպես բանասիր. գիտ–յան բաղկացուցիչ) և շրջանառության մեջ է դրել ավստրիացի մատենագետ Միշել Դենիսը (1729–1800): Գ–յան ձևավորմանն ու զարգացմանը նպաստել են ֆրանսիացի մատենագետներ Ժ. Ֆ. Նե դը լա Ռոշելը (1782), Գ. Պենյոն (կազմել է առաջին «Գրքագիտության բացատրական բառարանը», 1802–04, և Գ. սահմանազատել մատենագիտությունից), գերմանացի Ֆ. Էգերտը, ռուսներ Ս. Բոգդանովը, Վ. Սոպիկովը, Պ. Յուրովսկին, Ա. Լյովագինը, Ն. Լիսովսկին, Ն. Ռուբակինը, Ս. Բելովիցկայան և օտարազգի այլ մատենագետներ:



«Գրքագիտություն. հանրագիտական բառարան» (ռուս., 1982, Մոսկվա)

Դեռևս միջնադարում իտալ. Վերածննդի ներկայացուցիչ Պաոլո Վերջերիոն (1370–1444) գիրքը համարել է մարդու հիշողության պահպանության գլխ. գործիք, իսկ XVI դ–ի ֆրանսիացի փիլիսոփա Միշել Մոնտենը (1533–1592)՝ մշակույթի բարձր արժեք: Գիրքն այնպիսի ներգործություն է ունեցել հաս. ընկալման ու մտածողության և հաս. կյանքի կազմակերպման, նրանց եղանակների վրա, որ, «գրքի ֆենոմենից» բացի, ձևավորվել է նաև «գրքի մշակույթ» բազմանշանակ հասկացությունը, որը դեռևս միարժեքորեն սահմանված չէ: Դրանով է պայմանավորված նաև այն, որ Գ. նույնպես, որպես ինքնուրույն գիտություն, չի ամբողջացել ու դեռևս վերջնականապես չի սահմանվել:

Գ., որպես ուս. առարկա, առաջինը դասավանդել են Ֆրանսիայում (1799, Ֆ. Լեր). դասընթացն ընդգրկել է գրի և ձեռագրի պատմության, գրատպության պատմության, հազվագյուտ գրքերի դասակարգման ու նրանց նկարագրման, նաև գրքի մշակման մեթոդաբանության բաժիններ:

«Գ.» տերմինը Ռուսաստանում առաջինն օգտագործել է Վ. Անաստասևիչը (1820)՝ այն դիտարկելով որպես «մատենագիտության փիլիսոփայություն»:

Գ–յան առաջին համալսարան. դասընթացները կազմակերպվել են Գյոթինգենի (1886, Կ. Զյացկո) և Ս. Պետերբուրգի (1915, Ն. Լիսովսկի) համալսարաններում: Ընդ որում, Կ. Զյացկոյի աշակերտ Ֆ. Էյխլերը Գ. դիտարկել է *գրադարանագիտության* շրջանակներում՝

նրա ուսումնասիրության ոլորտ ներառելով գրքի պատմության, արտադրության, տարածման ու պահպանության, նաև հաս-քաղ. կյանքի վրա ազդեցության կառավարման եղանակները: Ըստ Ն. Լիսովսկու՝ Գ. գիտություն է, որը միավորում է գրքի ճանաչման սկզբունքները, ուսումնասիրում նրա զարգացումը՝ որակ. և քանակ. առումներով:

Գ-յան զարգացմանն էապես նպաստել է բելգիացի մատենագետ Պ. Օտլեն (1868–1944), որը հիմնադրել է Բրյուսելի միջազգ. գրքագիտ-յան ինստ-ը (1895) և ներդրել «փաստաթուղթ» հասկացությունը՝ նրա մեջ ներառելով նաև գիրքն ու մյուս տպագիր արտադրանքը (տես ***Փաստաթղթագիտություն***):

XX դ-ում, հատկապես Ռուսաստանում, մշակվել են Գ-յան նոր հայեցակարգեր, որոնք միմյանցից տարբերվում են իրենց շեշտադրումներով և ընդգրկման ոլորտներով (1964, Ա. Սիդորով, Ն. Սիկորսկի, 1970, Ա. Բարսուկ, Գ. Բարենբաում, 1970-ական թթ., Ե. Նեմիրովսկի): Իսկ այսպես կոչված **Համակարգատիպաբանական հայեցակարգը** գիրքն ու գրահրատ-ը դիտարկում է ոչ այնքան որպես ինքնուրույն գիտակարգ, որքան ընդհանուր տեղեկատվության և հաղորդակցության բաղկացուցիչ մաս:

Գ-յան արդի խնդիրները կապված են էլեկտրոնային գրքի տարածման, դաս. գրքի և ՋԼՄ-ների էլեկտրոնային միջոցների համագոյության, գրքի ապագայի, ընթերցանության որակ. ու քանակ. փոփոխությունների պատճառների ուսումնասիրության հետ: Խնդրի հանրային բնույթը հանգեցրել է նրան, որ Գ-յան հիմնախնդիրները, գրողներից ու հրատարակիչներից բացի, դարձել են նաև մանկավարժության, հոգեբանության, փիլ-յան, մշակութաբանության և բազմաթիվ այլ ոլորտների ուսումնասիրության առարկա:

Հայկ. Գ. ձևավորվել է 1880-ական թթ-ին՝ հիմնականում հայ գրքի և գրատպության պատմության մասին ուսումնասիրություններով: Ճշգրտվել է հայ. հնատիպ գրքերի լույսընծայման հաջորդականությունը, և ***Հակոբ Մեղապարտը*** ճանաչվել է առաջին հայ տպագրիչ (մինչ այդ առաջին հայ տպագրիչը համարվել է ***Աբգար Թոխաթեցին***): Ռաֆայել ***Իշխանյանը*** հայ գրքի պատմության ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները բաժանել է 4 խմբի.

1. հայկ. տպագրության պատմության ընդհանուր բնույթի ուսումնասիրություններ (Գ. Զարբհանալյան, Լեո, Թեոդիկ, Ա. Ալպոյաճյան, Գ. Լևոնյան, Ա. Բաբայան, Ք. Կորկոտյան, Ռ. Իշխանյան և ուր.):

2. Հայ գրքի և տպագրության հարցերին ու հատվածներին վերաբերող աշխատություններ (Ղ. Ալիշան, Գ. Գալեմքյարյան, Գ. Գովրիկյան, Կ. Բասմաճյան, Վ. Զարդարյան, Ս. Մալխասյան, Պ. Տեր-Սահակյան, Ն. Ակինյան և ուր.):

3. Տարբեր հարցերի նվիրված աշխատությունների և հոդվածների մեջ հայ գրքի ու տպագրության որոշ խնդիրներ շոշափող հատվածներ (Մ. Չամչյան, Ղ. Ալիշան, Մ. Օրմանյան, Ա. Հովհաննիսյան և ուր.):

4. Հայ մամուլի պատմությանը վերաբերող աշխատություններ:

Լույս են ընծայվել նաև մի շարք մատենագիտ. ժող-ներ (Մ. Միանսարյանց, Գ. Զարբհանալյան, Ա. Ղազիկյան, Հ. Անասյան, Ն. Ռսկանյան և ուր.), որոնք լուրջ ներդրում են հայ Գ-յան մեջ:

Վերջին տարիներին Գ. դասավանդվում է ՀՊՄՀ-ում՝ որպես գրադարանային-տեղեկատվ. մատենագիտ-յան ուս. առարկա (Գ. Սուքիասյան և ուր.):

Գրկ. **Զարբհանալեան Գ.**, *Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895:* **Լէօ**, *Հայկական տպագրութիւն, Թ., հ. 1, 1901, հ. 2, 1902:* **Թէոդիկ**, *Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համառահանություն):* **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012:* **Իշխանյան Ռ.**, *Հայ գրքի պատմություն, Ե., 1977, 2012:* **Աբրահամյան Ա.**, *Հայ գրի և գրչության պատմություն, Ե., 2012:* **Սուքիասյան Գ.**, *Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն, Ե., 2013:*

Գագիկ Սուքիասյան

Գրքագիտություն



«Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում» (2010, Ե., «Մանկավարժ») ժողովածուի կազմը



Գագիկ Սուքիասյանի «Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն» (2013, Ե., «Գիտություն») գրքի կազմը



«Ծուղրութի Աւետարան»-ի էջ (974, Ախալցխա, գ. Ծուղրութ)



1304-ի Ավետարանի էջ (ծաղկող՝ Սիմեոն, Մատենադարան, ձեռ. № 3722)



1323-ի Ավետարանի էջ (գրիչ և ծաղկող՝ Թորոս Տարոնացի, Մատենադարան, ձեռ. № 6289)

ԳՐՔԱՐՎԵՍՏ, գրքի գեղ. ձևավորման արվ.: Գ–ում համադրվում են զուտ գեղ. (արտահայտչ., խորհրդանշ., գեղազարդիչ) և գրքի կառուցվածքատեխ. ու նշանային տարրերը, որոնցով տպագրությունը ձեռք է բերում գեղ. նշանակություն:

Գրքի կառուցվածքի, գեղ. ձևավորման և էջկապի խնդիրները լուծվում են ***գրքի դիզայնի*** եղանակներով:

Գ. ժամանակակից իմաստով՝ որպես գրքի գեղ. ձևի ստեղծման և տպագրության արվ–ի ինքնուրույն տեսակ, ձևավորվել է ***գրապատության*** գյուտից հետո (Եվրոպայում՝ 1440–ական թթ.): Այն համադրում է տեքստը, գրաֆիկան (գծանկար, փորագրություն, վիմագրությունն ևն), ***տառարվեստն*** ու տպագրաֆիկան և ամբողջանում հրատարակիչների, խմբագիրների (գրական, գեղ., տեխ.), նկարիչների, լուսանկարիչների և պոլիգրաֆիստների համատեղ աշխատանքով:

Ժամանակակից գիրքն իր տեսքով և կառուցվածքային բաղադրիչներով նման է ***կողեքսին:*** Միջին դարերում այն ձեռագիր էր, բավական ստվարածավալ, հաստությունը հաճախ գերազանցել է լայնությանը: Տեքստերում որպես պատկերազարդում օգտագործել են զարդարուն ***սկզբնագրեր,*** հյուսկեն մոտիվներով ***գլխազարդեր, վերջազարդեր*** ու ***լուսանցազարդեր***, հյութեղ ներկերով ու ոսկով արված մանրանկարներ ևն:

XIII–XV դդ–ում ստեղծվել են պատկերազարդ մատյաններ, մշակվել է գունազարդ գլխատառերի աստիճանակարգություն (փոքրատառ և մեծատառ), որտեղ լայնորեն կիրառվել են նաև մանրանկարչ. տարրեր:

XV դ–ում Իտալիայում գրքի պատկերազարդումներում օգտագործվել են անտիկ ճարտ–յան մոտիվներ ու զարդանախշեր: Տպագրվել են հին դասականների երկեր, որոնց էջերն անհամեմատ թեթև էին, տառերի գունային ցայտունությունը՝ նվազեցված:

Առաջին տպագիր գրքերը ձեռագրերի վերատպություններ են, որոնք լրամշակվել են ձեռքով (ներկում, սկզբնատառերի ավելացում, նախշազարդում ևն): Իսկ դարավերջին տպագրության հիմն. գույնը դարձել է սև–սպիտակը: Կանոնավորվել են գրքի ներքին կառուցվածքը, տեքստում կողմնորոշման և ծավալի չափման (համարակալում, ցուցիչներ) միջոցները, ի հայտ է եկել ***տիտղոսաթերթը*** (XIV դ–ում՝ նախշազարդ), մշակվել են տպատառերի գծապատկերման սկզբունքները ևն:

XVII դ–ում ***փայտափորագրությանը*** փոխարինել է ***մետաղափորագրությունը***, որը հնարավորություն է տվել փորագրանկարում արտահայտելու պատկերի ավելի նուրբ մանրամասեր և նրան հաղորդել թեթևություն: Պղնձափորագրությամբ ստեղծվել են առանձին ներդիրներ, հաճախ՝ գրքից ավելի մեծ չափերով, և որպես ներդիր փակցվել գրքերին:

1820–30–ական թթ–ին Գ–ում տեղի են ունեցել ոճական կտրուկ փոփոխություններ. գերակշռել են ռոմանտիզմի տարրերը: Մշակվել են ավելի արտահայտիչ գծապատկերով ու համամասնություններով տիտղոսագրային տառեր: Տիտղոսագրերի և շապիկների մակագրությունների շարվածքներում հերթագայում են տառի գծապատկերների ու չափերի կտրուկ անցումները, իսկ տեքստի շարվածքում օգտագործվել են առավել ընդգծված տառեր, գլխանիստային (կատարվել է փայտանյութի ընդլայնական սղոցվածքի վրա) փորագրանկարի ներդրման շնորհիվ հնարավոր է դարձել զգալիորեն բարելավել փորագրանկարի որակը, և պատկերազարդման ***կլիշեն*** անմիջապես տեղադրել ***էջկապի*** մեջ ու նրան հաղորդել նկատելի շարժունություն:

XX դ–ում առավել տարածվել են Գ–ի գործածության համար հարմար եղանակներն ու ձևերը: Մանկ. գրքերում առավել կարևորվել են խաղային և ստեղծագործ. ունակություններ զարգացնող տարրերը. պատկերազարդումները գերակշռել են տեքստին, լայնորեն կիրառվել է գունավոր տպագրությունը ևն: Գիտ. գրակ–յան մեջ ներդրվել

են նյութի խմբավորման և տեքստի ու տեսողական շարքերի համադրման գեղ–կառուցվածքային մեթոդներ:

Գ. նկատելիորեն զարգացել է հատկապես XX դ–ի 2–րդ կեսին՝ պայմանավորված պոլիգրաֆիայի կտրուկ առաջընթացով, տպագրության եղանակների (***օֆսեթ, խոր տպագրություն*** ևն) կատարելագործմամբ, լուսաշարվածքի, դարավերջին նաև համակարգչային տեխնիկայի ներդրմամբ, գրքի լուսանկարչ. տեսանելիացմամբ, որը նպաստում է նրա հավաստիության տպավորության ստեղծմանը:

Ժամանակակից ավանգարդիզմի արտահայտչամիջոցները հնարավորություն են տալիս ընդլայնելու ***գրքի բլոկի*** և բացվածքի ձևերն ու շարժունությունը: Դրանց հիման վրա զարգանում են նաև գրքի գեղ. կառուցվածքի ստեղծման դիզայներ. եղանակներ:

Հայ. առաջին գրքերը (***ձեռագիր մատյաններ***) գրվել են ***մագաղաթի***, 971–ից՝ նաև թղթի վրա: Գրքի չափերն ընտրվել են նրանց նշանակությանը համապատասխան. գրպանի կամ ձեռքի գրքերը (Սաղմոսարան, Աղոթագիրք, Նարեկ ևն) պատրաստել են փոքր՝ 4 x 6 սմ–ից մինչև 10 x 14 սմ չափերով, հոգևոր–եկեղեց. գրքերը (ընթերցվում էին ձեռքին բռնած)՝ միջին չափերի, եկեղեցուց դուրս չրերվող գրքերը (Ճաշոց, Հայսմավուրք, Վարք սրբոց ևն)՝ մեծ՝ 40 x 60 x 20 սմ չափերով, և գրվել են հաստ (կոշտ) մագաղաթի վրա, խոշոր թավ տառերով, աշխարհիկ գրքերը՝ փոքրադիր (շարվել են 8 ***կչփ***–ի մանր և գեղեցիկ ***բոլորգրով***):

Մեզ հասած հայ. ամենահին նկարազարդ և թվագրված ամբողջ. ձեռագիր մատյանը՝ IX դ–ի ***«Լազարևան Աւետարան»***–ը, գրված է բոլորաձև ***երկաթագրով***: X–XII դդ–ում ձևավորվել է ***բոլորգիրը*** և հետագայում դարձել գերիշխող նաև տպագրության մեջ:

Սկզբում գրել են չընդհատվող, հարադիր բառերով և փոքրատառ (նաև հատուկ անունները): Գլխատառով գրել են միայն գլուխների, բաժինների, նոր պարբերությունների սկզբնատառերը: Եկեղեց. գրքերում առանձին բառերի վրա դրվել են առոգանության նշաններ՝ ընթերցանության, և երաժշտ. խազեր՝ երգելու համար:

Պատրաստի ձեռագիրը նկարազարդել է զարդանկարիչը (***ծաղկող***). նախ լրացրել է բաց թողնված սկզբնատառ–գլխագրերը (հիմնականում՝ կարմիրով, որի շնորհիվ կոչվել է կարմիր տող), ապա գրել գլխագրերը, որպես կանոն, ***զարդապատերով***, որոնցից առավել շքեղները կոչվել են փառագիր: Գործածվել են պատկերազարդման ***խորան*** (Ավետարան, Ճաշոց, Շարակնոց, Ճառընտիր ևն), լուսանցազարդ, սկզբնատառ, գլխազարդ, վերջազարդ ևն տեսակները:

Զարդանկարչից հետո մանրանկարիչը նկարել է արդեն ընագրի բովանդակությանը վերաբերող պատկերները, Ավետարաններում՝ 4 ավետարանիչների դիմանկարները՝ իրենց խորհրդանշաններով, Աստվածաշնչում՝ աշխարհի արարման, ջրհեղեղի և ընդհանուր տեսարաններ, մարգարեների պատկերներ ևն:

X դ–ի վերջին և հատկապես XI դ–ի 2–րդ կեսին ձևավորվել են գլխազարդով՝ հիմնականում խորանով կամ կիսախորանով, հաճախ՝ ավետարանիչի խորհրդանշանով կամ նրա հետ կապված զարդարուն սկզբնատառով, տեքստից ավելի մանր գրված վերնագրով տիտղոսաթերթեր: XII դ–ում ի հայտ են եկել հաճախ ամբողջ էջի բարձրության սկզբնատառերի դիմաց՝ աջակողմյան լուսանցքում գեղեցիկ խաչով պսակված լուսանցազարդերով: Զարդարուն շրջանակով գլխազարդը կամ կիսախորանը ստացել են հիմնականում ուղղանկյուն ձևեր, որոնք, խորանների նման, վերևում զարդարված են խաչի, ծաղկի կամ անոթի շուրջը պատկերված խորհրդանշ. թռչուններով: XII դ–ից Կիլիկիայում, Վասպուրականում, Գլաձորում, Տաթևում, Ղրիմում և այլուր տիտղոսաթերթը դարձել է ձեռագրի ամենագեղե–



Տաղարանի (1513, Վնտ., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ) գլխազարդով (1–ին) էջ



«Պատմագիրք»–ի էջ (1569, Բաղեշ, գրիչ՝ Հակոբ Սարկավագ, ծաղկող՝ Վարդան Բաղիշեցի)



«Տօմար Գրիգորեան» (1584, Հռոմ, տպագրիչ՝ Հովհաննես Տերզնցի) գրքի 1 էջ



Աստվածաշնչի (1666–68, Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի) տիտղոսաթերթը



Մխիթար Սեբաստացու տպագրած Սաղմոսարանի (1789, Վնտ.) պատկերազարդ էջ



Ռաֆայել Իշխանյանի «Հայ գրքի պատմություն» (2012, Ե., «Անտարես») գրքի կազմը

ցիկ էջերից: Համեմատաբար համեստ են մյուս գրքերի (Ճաշոցներ, Սաշտոցներ, Ճառընտիրներ, Շարականոցներ ևն) տիտղոսաթերթերը: Հայկ. մատյանների տիտղոսաթերթերն իրենց հարուստ զարդարվ–ով զուգադաս են խորանների ու խաչքարերի զարդարվ–ին և ունեն նույն խորհրդանշ. իմաստը:

Այլ ձևերով, բայց նույնպիսի հարուստ զարդարվ–ով են արված միայն իոլանդ. և անգլ. միջնադարյան ձեռագրերի տիտղոսաթերթերը:

Ավարտուն ձեռագիրը (մատյան, գիրք) կազմել է կազմարարը: Համեմատաբար ստվարածավալ գրքերի կազմերի վրա դրվել է նաև կաշվե կամ մետաղե փակիչ՝ ***ճարմանդ***: Փառակազմ Ավետարաններն ու Աստվածաշունչներն ունեցել են նաև մետաքսե շապիկներ՝ շուշպաներ:

Հայ ինագույն տպագրությունը երկգույն է. վերնագրերը և տեքստի որոշ հատվածներ տպագրվել են կարմիր, մնացածը՝ սև: Տպատառերը (առանց զարդագրերի) 2 տեսակի են՝ բոլորգիր և գլխագիր: Հիմն. շարվածքը կատարվել է խոշոր, ուղիղ բոլորգրով՝ մոտ 14 ***կէփ***–ով, գլխատառերը՝ 16 ***կէփ***–ով: Բոլոր գրքերում օգտագործվել են զարդագրեր: Գրքերը 8–ծալ են (մամուլում՝ 16 էջ), ***Հակոբ Մեղապարտի*** բոլոր 5 գրքերի յուրաքանչյուր էջի վերևի մասում զետեղված է փայտափորագիր ժապավենաձև զարդ–շրջանակ՝ գլխազարդ (24–ն են), որոնց մեջ գրված են տվյալ էջերի խորագրերը. դրանք ավելի հաճախ կիսվել ու տեղադրվել են բացվածքի աջ և ձախ շրջանակներում, օր.՝ Երազ Ացոյց, Ծննդեան Տղայոց կամ Ճաղիանոց Հաքիմ են (Ուրբաթագիրք):

Արգար Թոխաթեցու տպագրությունները նույնպես երկգույն են՝ զարդափակ էջերով և ուղղանկյան մեջ առնված խորագրերով:

Առաջին իսկական տպագր. տառերը 1579–ին ձուլել է տվել ***Սուլթանշահ Արգարյան Թոխաթեցին***՝ ֆրանսիացի գրաճուլող Ռոբերտ Գրանժոնին, որոնք հիմք են դարձել հետագա հայկ. տպագիր բոլորգրի համար: Դրանք 3՝ 10–12, 16 և 36 կէփ–երի տառեր էին՝ քիչ դեպի աջ թեքված: Պատրաստել է նաև ավելի խոշոր զարդագրեր (ուղիղ), որոնք օգտագործել է պարբերությունների սկզբի գլխատառերի համար (տես նաև ***Տառարվեստ***): Նրա և ***Հովհաննես Տերզնցու*** տպագրած «Տօմար Գրիգորեանը» (1584) ուշագրավ է բարձր վարպետությամբ կատարված մեծաքանակ աղյուսակներով ու բոլորակներով:

Հայ տպագր. արվ–ի նոր որակ են Ոսկանյան տպագրությունները: ***Ոսկան Երևանցու*** հրատարակած գրքերն աչքի են ընկնում բարձր արվ. շարվածքով, գրագետ խմբագրված և սրբագրված բնագրերով ու տպագրության բարձր որակով: Դրանց շնորհիվ նրա տպագրած գրքերի զգալի մասը հետագայում տարբեր տպարաններում նույնությամբ վերատպվել ու տարածվել է: Ոսկան Երևանցու՝ 1666–68–ին տպագրած Աստվածաշնչում օգտագործվել է ***փայտատառերի*** 7 տեսակ: Նրա փոքր տառերը (երկրորդ ձեռք) կոչվել են «Ոսկանյան» և լայնորեն տարածվել են հայ տպագրության մեջ ու հասել մինչև մեր օրերը (10 ***կէփ***–ի հասարակ):

Ոսկանյան տպագրություններն առանձնանում են նաև պատկերների առատությամբ (Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմում՝ շուրջ 100 պատկեր, Աստվածաշնչում՝ 159, ևն, երբ մինչ այդ եղած հրատարակություններում օգտագործվել են առավելապես 1 տասնյակ պատկերներ): Զգալիորեն ավելացվել է նաև գրքի տպաքանակը (Աստվածաշունչը՝ 5000 օրինակ), և մեսրոպատառ գիրքն առաջին անգամ տարածվել է աշխարհում:

Հայկ. Գ–ի հետագա զարգացումն ընթացել է այդ ավանդույթների և տպագր. արվ–ի եվրոպական միտումներին համահունչ՝ յուրաքանչյուր վայրում իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Տես նաև *Գազմարարություն, Մանրանկարչություն, Պատկերազարդում:*


«ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀ», տեղեկատու, գովազդային ամսաթերթ: ՀՀ հրատպետկոմի և գրքասերների հանրապետ. կամավոր ընկերության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1968–99-ին Երևանում: Խմբագիրներ՝ Անուշավան Սարգսյան, Կիմ Ղալաչյան, Ալբերտ *Իսոյան,* Սամվել Գասպարյան: Լուսաբանել է գրքի առևտրի, պոլիգրաֆիայի, ձևավորման ու պատկերազարդման խնդիրները, ծանոթացրել հայ գրակ-յան և գրահրատարակչության նորություններին: Ունեցել է նաև ռուս. էջ, որտեղ ներկայացվել են հայ հեղինակների՝ ԽՍՀՄ հանրապետություններում կամ արտերկրում հրատարակվող գրքերը (թարգմանաբար), արտատպել մամուլում դրանց մասին անդրադարձները:




«Գրքերի աշխարհ», *1968–99, Երևան*

ԳՐՔԻ ԲԼՈԿ, *գրքի՝ փեղրերով* կամ առանձին թերթերով համալրած, կռնակում ամրակված, երեք կողմից հատած և շապկելու կամ կազմակողերի մեջ դնելու պատրաստ լրակազմը: Գրքի հիմն. բաղադրիչն է: Գ. բ-ի պատրաստման գործողություններից են կախված գրքի ամրությունը, երկարակեցությունը, արտաքին տեսքի պահպանությունը ևն: Ժամանակակից *բրոշյուրավորման*-կազմարարական արտադրությունում գրքի շապիկն ու կազմակողերը պատրաստվում են Գ. բ-ից առանձին, իսկ նրանց միացումը կատարվում է պոլիգրաֆ. արտադրության վերջում: Գ. բ-ի ամրակման եղանակը կախված է բլոկում էջերի քանակից. եթե էջերի թիվը մինչև 80 է, Գ. բ. ամրակվում է պահանգներով, ավելի մեծ ծավալի (հաստության) դեպքում՝ կարի կամ սոսնձման եղանակով:


Գրքի բլոկի կազմման ընթացքը



Գ. բ-ի ամրությունը մեծացնելու և գիրքն աղտոտումից պաշտպանելու նպատակով կռնակի վերևի և ներքևի հատվածքներին սոսնձում են մետաքսե կամ բամբակե գործվածքի երիզ (կապտալ), երբեմն կպցնում նաև *էջանշան* (վերևից):



Շապիկը Գ. բ-ին ամրացնում են մետաղե պահանգներով, իսկ կազմակողերին՝ եզրակման կամ կռնականյութերով ու *պահպանակով*:



ԳՐՔԻ ԳՈՎԱԶԴԻ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 2001-ին Երևանում: Նախագահ՝ Ռիչարդ Գիդաչյան (2002-ից): Կազմակերպում է գրքի շնորհանդեսներ, գովազդներ, տոնավաճառներ և ցուցահանդեսներ, հայ գիրքը ներկայացրել է Մոսկվայի, Շանհայի, Փարիզի, Երևանի գրքի միջազգ. ցուցահանդես-տոնավաճառներում:

ԳՐՔԻ ԴԻԶԱՅՆ, ձևավորում, *գրքարվեստի* բաղկացուցիչ մաս, *գրքի* (ձեռագիր, տպագիր) պատրաստման փուլերից: Կատարում է գեղ. խմբագիրը, դիզայները կամ էջկապողը: Անցյալում առավել տարածված էր «գրքի ձևավորում» հասկացությունը:

Գրքի դիզայն

Գ. դ. սերտորեն կապված է գրքի պատրաստման տեխնիկայի հետ. տպագրության յուրաքանչյուր նոր եղանակ (ձեռքի հաստոցից մինչև թվային տպագրություն) որոշակիորեն ազդել է գրքի արտաքին տեսքի և ներքին կառուցվածքի վրա:

Գ. դ-ի առաջին տարրերը *փպատառերն* են, որոնց միօրինակացման համար XV դ-ի վերջին սահմանվել են ընդհանուր նորմեր (տես *Տառարվեստ*):



1200-ի Ավետարանի էջ (Վենետիկի մատենադարան, ձեռ. № 1366)

XIX դ-ի կեսերին տպագրվել են շարվածքի տեղեկատուներ՝ գրքերի ձևավորման նույնականությունն ապահովելու նպատակով: 1890-ական թթ-ին ծագել է առավել հարմար տպատառերի պատրաստման և էջում շարվածքի տեղադրման կանոնների մշակման խնդիր (Վ. Մորիս): Պոլիգրաֆ. արդ-յան զարգացմամբ Գ. դ-ի գեղարվեստականությունն իր դիրքերը մասամբ զիջել է արդ. դիզայնին, երբ կարևորվել են տպագրության միջոցների խնայողությամբ ու գրքի գործառ. նշանակությամբ պայմանավորված լուծումները:



1318-ի Աստվածաշնչի էջ (ծաղկող՝ Թորոս Տարոնացի, Մատենադարան, ձեռ. № 206)



Ուրբաթագրքի (1512, Վնտ., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ) գլխազարդով և ծաղկազարդ սկզբնագրով էջ



Գրիգոր Տաթևացու «Նկատումն ճշմարտութեան» (1713, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) գրքի գլխա- և լուսանցազարդերով (13-րդ) էջ

Գ. դ-ի սկզբունքները պայմանավորված են գրքի երկակի բնույթով. նախ, որ այն հոգևոր մշակութ. երևույթ է՝ իր գիտ., գաղ., գեղ. և այլ արժանիքներով, ապա՝ նյութ. մշակույթի առարկա, որ ստեղծվում է պոլիգրաֆ. միջոցներով: Գ. դ-ի հիմն. խնդիրը դրանց միասնաբար բավարարումն է՝ գեղ. և պոլիգրաֆ. հնարավորություններով, գրքի բովանդակության բացահայտմանը նպաստելը, դյուրընթեռնելիությունն ու հեշտ օգտագործումը, ամրությունը, երկարակեցությունը ապահովելը ևն:

Գրքի (տպագիր արտադրանք) ստեղծման գործընթացը բաղկացած է 3 հիմն. փուլերից՝ **հրատարակչական, գեղարվեստական** և **արտադրական**:

Գրքի դյուրընթեռնելիության համար կարևոր են տեքստի տառերի ու պատկերների չափերի համամասնությունը, տողի երկարությունը, միջտողային հեռավորությունը, գույների թնդությունը ևն: Օգտագործման հարմարավետությունը պայմանավորված է գրքի չափերով ու ձևով, ամրությունը՝ շապիկի (կազմ), կազմանյութի, թղթի տեսակով ու որակով:

Բովանդակությունից և ուղղվածությունից կախված՝ գրքերը պայմանականորեն բաժանվում են գիտ., ուս., հաս-քաղ., գրական-գեղ. և այլ խմբերի, որոնց համար ստեղծվել են ձևավորման տիպային սխեմաներ: Իսկ դիզայնի առումով տարբերում են **հանգիստ** (գրքի առանձին, նաև կից էջերի համաչափություն՝ նույնական ուղղանկյուն էջեր, նույնատեսակ շարվածքներ, փոքրաչափ աղյուսակներ, պատկերազարդումների և վերնագրերի կենտր. դասավորություն) և **շարժուն** (էջերում ընդգծված հատվածներ, վերնագրերի, պատկերազարդման տարրերի տեղաշարժեր դեպի եզրեր ևն) ձևավորումներ:

Տառատեսակի ու տառաչափի ընտրությունը պայմանավորված է գրակ-յան տեսակով և մեծապես նպաստում է տեքստի ընթեռնելիությանը. մասնավորապես 10–12 կչփ-ի շարվածքը նախընտրելի է գեղ. գրակ-յան, 7–9-ը՝ բառարանների և հանրագիտարանների համար:

Որպես Գ. դ-ի տարրեր օգտագործվում են տառերի չափերի, թեքության, ուրվագծի, ցայտունության ու մակատեսքի փոփոխման հնարավորությունները, նաև բառամիջյան ու տողամիջյան հեռավորությունները, գլխատառերի տեսակն ու ձևավորման եղանակները ևն:

Գրքի հիմն. տեքստից բացի՝ ձևավորման կարևոր տարրերից են նաև ներտեքստային վերնագրերը, լրացուցիչ տեքստերը (աղյուսակ, վկայակոչում, տողատակ, տակագիր, բանաստեղծ. տող ևն) և պատկերների մակագրությունները, էջատիտղոսները, էջաթվերը, գրքի նախաբանն ու վերջաբանը, որոնց գեղեցիկ ու համաչափ ձևավորումը էապես լրացնում է Գ. դ-ի կառուցիկությունը:

Գ. դ-ի յուրատեսակ խտացում են ***տիտղոսաթերթերի*** և ***կազմի***ն (շապիկների) ձևավորումները, որոնք ոչ միայն արտահայտում և ամբողջացնում են գրքի բովանդակությունը, այլև ապահովում նրա ապրանքային գրավչությունը:

Տես նաև *Դիրք, Գրատպություն, Գրքարվեստ, Պատկերազարդում:*

ԳՐՔԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ մշակույթի նախարարության: Ստեղծվել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի և ՀԿԿ ԿԿ-ի 1963-ի դեկտ-ի համատեղ որոշմամբ: 1963–72-ին՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մամուլի, 1972–90-ին՝ Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետ. կոմիտե (Հրատպետկոմ), 1990–92-ին՝ ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտե, 1992–95-ին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր հրատարակչ. գործի վարչություն, 1995–97-ին՝ ՀՀ տեղեկատվության նախարարություն, 1997–2002-ին՝ Տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն, 2002–12-ին՝ Տեղեկատվության և գրահրատարակչության գործակալություն: Ղեկավարել է գրահրատարակչ. պետպատվերները, Հայֆիլմի, «Երևան» ստուդիայի, Արմենպրես գործակալության,

պարբ. մամուլի, հեռուստառադիոընկերությունների ֆինանսավորման, պետ. և պետ. մասնակցությամբ գրահրատարակչությունների մի մասի աշխատանքները, 1995–2001-ը՝ նաև Հայաստանի ազգ. ռադիոն և հեռուստատեսությունը, Հայմամուլը: 2002-ից ղեկավարում է գրահրատարակչ. պետպատվերի իրականացման գործառույթը: 1968–99-ին լույս է ընծայել *«Գրքերի աշխարհ»* ամսաթերթը:

Վարչության (կոմիտեի) պետեր (նախագահներ) են եղել Հ. Մարտիրոսյանը, Հայկարամ *Ոսթամազյանը,* Սպարտակ *Բաղդասարյանը,* Գեղամ *Սուղնեցյանը,* Ստեփան *Պողոսյանը,* Կարեն *Սիմոնյանը,* Էդվարդ Սաֆարյանը, Հրաչյա *Թամրազյանը,* Գարեգին *Չուգասզյանը,* Րաֆֆի Հովհաննիսյանը, Հարություն Կարապետյանը, Տիգրան Հակոբյանը, Էդվարդ *Միլիտոնյանը* (2002-ից):

ԳՐՔԻ ԹԱՆԳԱՐԱՆ, ԳՀ և մշակութալուսավորչ. հաստատություն, որը հավաքում, ուսումնասիրում, պահպանում և ցուցադրում է ձեռագիր ու տպագիր գրքեր, փաստաթղթեր, տպագրության արվ-ի պարագաներ:

Գրքի և գրահրատարակչության հնագույն թանգարանը Լայպցիգի գրի և գրքի թանգարանն է (հիմն.՝ 1885), որը կազմավորվել է գերմանացի գրասեր և հրատարակիչ Ի. Կլեմեի հավաքածուի հիման վրա (1950-ից Գերմ. գրադարանի բաժին է): Ֆոնդերն ընդգրկում են ձեռագրեր, *յուձարտուրային գրքեր*, XVI–XX դդ-ի հազվագյուտ հրատ-ներ (ավելի քան՝ 500 հզ. նմուշ):

Խոշորագույն Գ. թ. է Մայնցի Տպագրության համաշխ. արվ-ի՝ Յ. Գուտենբերգի թանգարանը (1900), որտեղ նրա կյանքին ու գործունեությանը զուգահեռ ներկայացված է նաև տպագրության արվ-ի պատմությունը: Գուտենբերգի թանգարան գործում է նաև Բեռնում (1900, Շվեյցարիա):

Գ. թ-ներ կան Մոսկվայում (1923, Պետ. գրադարանում), Դրեզդենում (1935), Հռոմում (1938), Վարշավայում (1938), Ամստերդամում (1944), Բրյուսելում (1944), Փարիզում (Ազգ. գրադարանում), Լոնդոնում (Բրիտ. թանգարանում), Ժնևում (1951), Պրահայում (1953), Լիոնում (1964, Գրատպության), Կիևում (1972, Կիև-Պեչորյան արգելոցում՝ 1615-ին հիմնադրված տպագրատան շենքում), Թիֆլիսում, Մինսկում և այլուր:

Հայ գրքերի (ձեռագիր մատյանների) հարուստ ցուցադրություններ կան Երևանի, Վենետիկի, Վիեննայի, Նոր Ջուղայի, Երուսաղեմի, Ջմմառի, Անթիլիասի մատենադարաններում, Փարիզի Նուբարյան գրադարանում և այլուր:

«ԳՈՒԹԱՆ», գյուղատնտ., գիտ. ամսագիր: Լույս է տեսել 1901–05-ին Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Գարեգին Մեծատուրյան: Ծանոթացրել է հողի մշակման առավել օգտավետ եղանակներին, գյուղատնտ. գիտ-յան նվաճումներին: Առաջարկել է գյուղատնտ. դասընթացներ ստեղծել գյուղ. և նախակրթ. վարժարաններում, հոդվածներ է տպագրել անասնապահության, անասնաբուծության, շերամապահության, նորագույն գյուղմեքենաների մասին:

ԳՈՒԼԱԿՅԱՆ Հասմիկ Վլադիմիրի (ծ. 8.4.1957, ք. Իջևան), լրագրող, խմբագիր, հրապարակախոս: Սովորել է ԵՊՀ-ում (1976–79), ավարտել է ՄՊՀ (1982): 1983–2002-ին աշխատել է Հանրային ռադիոյում, միաժամանակ՝ մի շարք թերթերի խմբագրություններում, 2004-ին՝ «Շրջադարձ» ամսագրի խմբագիր (Գևորգ *Յազըճյանի* հետ), 2005-ին՝ «Գոլոս Արմենիի» թերթի հայ. տարբերակի պատ. քարտուղար: 2006-ից աշխատում է *«Էդիթ Պրինտ»* հրատարակչությունում (2013-ից՝ գլխ. խմբագիր), 2009-ից, միաժամանակ՝ *«Հայկական հանրագիտարան. հրատարակչության»* պատ. քարտուղար: 2002-ից «Վէմ» ռադիոկայանում վարում է «Ակունք» հեղինակային ռադիոհանդեսը:

Լույս են տեսել Գ-ի «Դարը՝ մեր մեջ, մենք՝ դարի» (հ. Ա–Դ, 2006–07), «Ազգայնականություն. ինչո՞ւ է այն անհրաժեշտ» (2008), «Հայագիտության և հայապահպանության հարցեր» (հ. Ա–Բ, 2010) հրապարակախոս. նյութերի ժող-ները, «Անկախություն… Անկախությո՞ւն… կամ ո՞ւմ է ձեռնտու

Գրքի թանգարան



Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Ավետ և Մարի Մանուկյանների անվ. թանգարանը



Պրահայի Ստրահովյան տաճարի գրադարան-թանգարանը



Հասմիկ Գուլակյանի *«Հայագիտության և հայապահպանության հարցեր» (հ. Ա, 2010, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*



Ֆելիքս Գուլանյան. *Վ. Սարոյանի «Ես» (1983, Ե., Սովետական գրող) գրքի պատկերազարդումներից*



Ստեփան Գուլիշամբարով



Հակոբ Գույումճյանի *«Արարատեան ծաղիկներ» (1960, Ֆիլադելֆիա) գրքի կազմը*

Հայաստանը՝ առանց հայերի (Տագնապ)» (2013) հրապարակախոս. խոհագրությունը, «Նարեկ Հովսեփյան. Առեղծվածային ակնթարթ» (2013) գրական դիմանկարը: Կազմել և խմբագրել է «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ» (հ. 1–3, 2008–09), Նարեկ Հովսեփյանի «Նոյյան աղավնու վերադարձը» (առաջաբ. և հրտ.՝ Գ–ի, 2014) և այլ ժող–ներ:

ԳՈՒԼԱՄԻՐՅԱՆ Սիմեոն Ստեփանոսի (1857, Երևան–12.10.1899, Երևան), խմբագիր: Սովորել է Թիֆլիսի ռեալ. դպրոցում, ապա՝ Ս. Պետերբուրգի համալսարանում: Թղթակցել է ռուս. թերթերին, 1887–1898–ին Ս. Պետերբուրգում հրատարակել ու խմբագրել է ***«Արաքս»*** գրական հանդեսը՝ շքեղ տպագրությամբ (Միջազգ. ցուցահանդեսի հատուկ մրց., Չիկագո): Նրա «Գեղանկար Հայաստան» և «Սբ Էջմիածին» ժող–ներն անտիպ են:

ԳՈՒԼԱՆՅԱՆ Ֆելիքս Անդրեասի (19.12.1937, Լենինական–5.10.1991, Երևան), գեղանկարիչ, գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒՀ (1957), ԵԳԹԻ (1963): 1964–71–ին աշխատել է Հայաստանի հեռուստառադիոպետկոմում՝ որպես նկարիչ–ձևավորող: 1977–81–ին՝ «Ծիծեռնակ» մանկ. ամսագրի, 1982–90–ին՝ «Սովետական գրող» հրատարակչության գեղ. խմբագիր:

Նկարազարդել է Գրիմ եղբայրների «Հեքիաթներ» (1981), Խ. Դաշտենցի «Ֆայտոն Ալեքը» (1982), Վ. Սարոյանի «Ես» (1983), Պ. Սևակի «Ձեր ծանոթները» (1984), Հ. Թումանյանի «Ոսկի քաղաք» (1984, 2003), Ղ. Աղայանի «Հազարան բլբուլ» (1985), Ռ. Շառոյանի «Խաղաղ կեսօր» (1986), Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը» (1987), Գ. Զոհրապի «Երեք նովել» (1988), Ս. Լիսիցյանի «Աբու–Հասանի մաշիկները» (1991) և այլ գրքեր:

Ձևավորել է Վ. Դրագունսկու «Դենիսկայի պատմվածքները» (1981), Բաֆֆու «Սամվել» (1982), Ն. Վնուկովի «Լսեցեք փետուրների երգը» (1982), Ա. Շեկոյանի «Ճոճք» (1984), Է. Միլիտոնյանի «Կյանքի ծառը» (ռուս., 1985), Գի դը Մոպասանի «Նովելներ» (ռուս., 1985), Ն. Միքայելյանի «Հիշողություն լեռներից» (1986), Վ. Սարգսյանի «Հացի փորձություն» (1986), Մետաքսեի «Լեռները լալիս են գարնանը» (1987), Ա. Պարսամյանի «Աստղականչ» (1987), Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» (1988) և այլ գրքերի կազմեր:

Համամիութ. գրքի ցուցահանդեսի արծաթե մեդալ (1985, Մոսկվա):

ԳՈՒԼԻՇԱՄԲԱՐՈՎ Ստեփան Հովսեփի [13(25).5.1849, Գորի (Վրաստան)– 21.4.1915, Գորի], տնտեսագետ: Ավարտել է Ս. Պետերբուրգի տեխնոլոգ. ինստ–ը (1874): 1875–79–ին եղել է «Բակինսկիե իզվեստիա» (ռուս.) թերթի խմբագիր: Մասնակցել է «Ռուսական գյուղատնտեսական լիակատար հանրագիտարանի» (1900–12), Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտ. բառարանի (1890–1907) ստեղծմանը:

Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի պետ. շքանշաններ:

Գրկ. Հովսեփյան Ա., Ստեփան Գուլիշամբարով: Կյանքը և գործունեությունը, Ե., 1973:

ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ Գրիգոր Պողոսի (4.7.1937, Սալոնիկ–19.12.2011, Երևան), աղբյուրագետ, գրականագետ, լրագրող: Սովորել է ծննդավայրի Գրիգոր Աղաթոն ազգ. վարժարանում: 1947–ին ընտանիքի հետ հայրենադարձել է: Ավարտել է ԵՊՀ (1960): 1968–ից աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ–յան ինստ–ում, 1969–75–ին, միաժամանակ՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության ավագ գիտխմբագիր (մամուլի մասին մի շարք հոդվածների հեղինակ): 1990–2010–ին՝ ԵՊՀ դասախոս: Աշխատակցել է ՀՀ և սփյուռքահայ պարբ–ների:

Կազմել է «Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին» (1980) հոդվածների ժող–ը, հատվածներ է թարգմանել Ղուրանից:

«Սեբաստիա» հայրենակց. միության նախագահ (ցկյանս):

ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ Հակոբ [1904, Մերսին (Կիլիկիա)–1961, Ֆիլադելֆիա (ԱՄՆ)], գրող, հաս. գործիչ, խմբագիր: 1924–ին հաստատվել է Ֆիլադելֆիայում: Ավարտել է Թեմըլի համալսարանը (1932): 1923–32–ին՝ ***«Հայ սիրտ»*** շաբաթաթերթի հիմնադիր–խմբագիր: 1932–ին տեղափոխվել է Նյու Յորք, 1932–38–ին աշխատել է «Լրաբեր» պարբ–ի խմբագրությունում, աշխատակցել «Բանւոր» թերթին:

Լույս են տեսել Գ–ի «Այսպէս է Ամերիկան» (1934), «Փոթորիկ» (1936), «Եգիպտոս» (1938), «Արիւնոտ անապատ» (1949), «Ահա քեզի Ամերիկան» (1949), «Երեւանյան երգեր» (1957) «Արարատեան ծաղիկներ» (1960) բանաստեղծությունների, պատմվածքների, ակնարկների ժող–ները, «Երկերը» (1958):

Գրկ. Երեմեան Ա., *Յակոբ Գոյումճեան եւ իր գրականութիւնը, Բոստոն, 1958:*

ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ Մեսրոպ Կարապետի (4.9.1897, Կեսարիա–22.8.1983, Կահիրե), բառարանագիր: Սովորել է Կեսարիայում, ապա՝ Կ. Պոլսի զինվոր. վարժարանում: 1923–ից ապրել է Կահիրեում:

Լույս են տեսել Գ–ի «Ընդարձակ բառարան հայերէնէ–անգլիերէն» (1950), «Ընդարձակ բառարան անգլիերէնէ–հայերէն» (1961), «Համադրական առածանի եւ ասացուածք անգղիերէն–հայերէն» (1967), «Ընդարձակ բառարան յատկաբանութեան եւ առածներու» (անգլ–հայ., 1969), «Գրպանի նոր բառարան անգլիերէն–հայերէն» (1969), «Բազմալեզու իրաւաբանական բառարան. անգլերէն–ֆրանսերէն–հայերէն–թուրքերէն» (1979, բոլորը՝ Կահիրե) բառարանները:

ԳՈՒՆԱԲԱԺԱՆՈՒՄ պոլիգրաֆիայում, գունավոր պատկերի գույների բաժանումով տպագրության 4 հիմն. գույների (CMYK. Cyan–երկնագույն, Magenta–կարմիր, Yellow–դեղին և Key–սև) թափանցապատկերների ստացումը, որոնց տպագր. վերադրումով ստացվում է գունավոր պատկերը:


Անցյալում Գ. իրականացվել է օպտիկ. զտիչների և պատկերացանցերի (ռաստր) համակարգի միջոցով, այժմ ամբողջովին մեքենայացված է: Նախ գունավոր պատկերը տեսածրիչի կամ լուսախցիկի միջոցով վերածվում է էլեկտրոնային տարբերակի (թվայնացվում է), այնուհետև պատկերների մշակման համակարգչային ծրագրերով (QuarkXPress, Adobe Page Maker և Adobe Indesign)՝ CMYK–ի: Յուրաքանչյուր գույնի համար ստացվում է թափանցապատկերաթաղանթ և պատրաստվում տպաձև:

ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ, հիմնադրվել է 1978–ին Երևանում՝ որպես ՀԽՍՀ Հրատպետկոմի տպարան: 1996–ից՝ «Զվարթնոց» պոլիգրաֆ. ձեռնարկություն: Տնօրեն՝ Միքայել *Գևորգյան:* Հանրապետությունում առաջին օֆսեթ եղանակով գունավոր տպագրության տպարանն էր՝ ժամանակի բարձրակարգ սարքավորումներով հագեցած: Տպագրել է գունավոր տպագրության արտադրանքի հիմն. մասը՝ գրքեր, ալբոմներ, պլակատներ, պիտակներ ևն: 1986–ին տարեկան արտադրանքը կազմել է 44 մլն թերթ–արտատիպ և 210 մլն ներկ–արտատիպ: Գ. տ. տ–ում են տպագրվել եռահատոր «Ոսկեփորիկ» մանկ. հանրագիտարանի 1–ին ու 2–րդ (1993, 1996) և «Հայկական համառոտ հանրագիտարանի» (հ. 1–4, 1990–2003) հատորները:


ԳՈՒՇԱԳՃՅԱՆ Մարտիրոս Անդրեասի [9.11.1927, գ. Յողունօլուք (Ադանայի նահանգի Սվեդիայի գավառ)–9.5.1999, Բեյրութ], բանաստեղծ, խմբագիր, բառարանագիր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ–ր (1981): Սովորել է Օքսֆորդի (1951–54), Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարաններում: 1949–ին խմբագրել է «Դէպի երկիր», 1955–ին՝ «Յուշարձան Մուսա լեռան», 1956–57–ին՝ «Երկիր» պարբ–ները:

Լույս են տեսել Գ–ի «Կեանքի կարօտ» (1957) բանաստեղծությունների ժող–ը, «Մուսա լերան հայկական գաղթօճախը. 1875–1939» (1988) աշխատությունը, կազմել և խմբագրել է «Յուշամատեան Մուսա լերան» (1970, Պ. Մադուռյանի հետ) գիրքը: Թարգմանել է Հ. Կեյթսի «Հոգիներու աճուրդը» («Օրորա Մարտիկանեանի վավերական պատմութիւնը», 1965): Կազմել է «Անգլերէնէ–հայերէն արդի բառարանը» (1970, Տիգրան Խնդրունու հետ), «Անգլերէնէ–հայերէն ուսանողական բառարանը» (2007, Հալեպ):

ԳՈՒՇԱԿՅԱՆ Թորգոմ Խաչերեսի (Պիլիճյան Մկրտիչ, 27.9.1874, գ–ք. Պարտիզակ–10.2.1939, Երուսաղեմ), բանասեր, մատենագետ, խմբագիր, թարգմանիչ, եկեղեց. գործիչ: Սովորել է Պարտիզակի Ներսեսյան–Շուշանյան վարժարանում, Արմաշի դպրեվանքում (1890–96): 1897–1906–ին եղել է Արմաշի դպրեվանքի փոխտեսուչ, 1894–1916–ին՝ Եգիպտոսի, 1907–13–ին՝ Սեբաստիայի հայոց առաջ–



Մեսրոպ Գույումճյանի *«Ընդարձակ բառարան անգլիերէնէ–հայերէն»–ի (1961, Կահիրե) կազմը*




«Ոսկեփորիկ» (հ. 3, ե., 1999, **Գունավոր տպագրության տպարան***) մանկ. հանրագիփարանի կրկնաշապիկը*



Մարտիրոս Գուշագյանի *«Անգլերէնէ–հայերէն ուսանողական բառարան»–ի (2007, Հալեպ) կազմը*

նորդ, 1931–39-ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք, ***«Միոն»*** ամսագրի խմբագիր: Գ. սահմանել է «Թարգմանչաց Դուրյան» գրական մրցը, հարստացրել Երուսաղեմի մատենադարանը, Սբ Հակոբյանց վանքի տպարանն ապահովել է նոր սարքավորումներով, հրատարակել հայագիտ. աշխատություններ:

Լույս են տեսել Գ-ի «Խրիմեան Հայրիկ» (1925, 1990, Անթիլիաս), «Հնդկահայք» (1927), «Եղիշէ պատրիարք Դուրեան» (1932, Երուսաղեմ), «Հազարտողեակ փորագրութիւն» (1939), «Սուրբք եւ տօնք Հայաստանեայց եկեղեցւոյ» (1939, 1981), «Բարեկարգութիւնք Հայաստանեայց եկեղեցւոյ» (1940), «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա» (1961), «Երանելի Գրիգոր Սքանչելագործի խօսքը Քրիստոսի ծնունդին մասին» (1991, Նյու Յորք) «Ուրուագիծ հայ մատենագրութեան» (2001), «Հայ եկեղեցու հայազգի սուրբերը» (2004) աշխատությունները: Գ. խմբագրել և հրատարակել է «Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան հազար հինգ հարիւրամեակի» (1938) երկը, աշխարհաբարի է փոխադրել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» («Նարեկ աղօթամատեան», 1926) պոեմը: Թարգմանել է Գ. Ֆլորերի «Հերովդիա» ողբերգությունը, Ն. Բուալոյի «Արուեստ քերթողական» աշխատությունը ևն:



Թորգոմ Գուշակյանի *«Ուրուագիծ հայ մատենագրութեան» (2001, Երուսաղեմ) գրքի փիփղոսաթերթը*

Երկ. Ամրողջական երկեր, հ. 1–6, Երուսաղեմ, 1939–41:
Գրկ. **Ալպոյաճեան Ա.,** *Թորգոմ պատրիարք Գուշակեան, Կահիրե, 1940:*

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ (Gutenberg) Յոհան (1397–1400-ի միջև–3.2.1468), գերմանացի գյուտարար: Եվրոպայում տպագրության գյուտի հայտնագործողն ու առաջին տպագրիչը: Գ. ձուլել է հայելային պատկերով «շարժական» ուռուցիկ տառեր, նրանցով տողեր շարել (տպագր. շարվածք) և իր պատրաստած մամլիչով (տես ***Սեամոլ տպագրական***) շարվածքը տպագրել թղթի վրա: Գ. հրատարակել է Եվրոպայում առաջին տպագիր գրքերը՝ Աստվածաշունչ (47-տողանոց, հայտնի է Մայնցի կամ Գուտենբերգի Աստվածաշունչ անունով), Յոհան Բալբայի (XIII դ.) լատ. բացատր. բառարանը ևն:

Գ-ի անվամբ կոչվել են թանգարաններ Մայնցում՝ Տպագրության համաշխ. արվ-ի, և Բեռնում (երկուսն էլ՝ 1900), 1840-ին Ստրասբուրգում կանգնեցվել է Գ-ի արձանը՝ ձեռքին տպագրված թուղթ՝ «Եվ եղավ լույս» մակագրությամբ:

Գրկ. **Թառայեանց Ս.,** *Գուտենբերգ, Թ., 1911:* **Պրոսկուրյակով Վ.,** *Գուտենբերգ: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1936:*



Յոհան Գուտենբերգ

ԳՈՒՐԱՊՅԱՆ Հրանտ (1895, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), գրող, հրապարակախոս: Սովորել է Կ. Պոլսի Աշխատասիրաց և Եսայան վարժարաններում: 1919-ին հրատարակել է «Հայ բժիշկ» թերթը: Աշխատակցել է «Հայ կին», «Հայ խօսնակ», «Ամսուան գիրքը», «Նոր լուր», «Ժամանակ», «Արեւելք», «Զարթօնք» և այլ պարբ-ների:

Լույս են տեսել Գ-ի «Արծիւը» (1925), «Սիմօն Փէլիվան» (1929, ԿՊ, Պեճիտյան տպ.), «Օրմանեան պատրիարք եւ կարմիր սուլթանը» (1930, Ղալաթիա, Առևտրական տպ.), «Գազազ Արթին ամիրա եւ սուլթան Մահմուդ Բ» (հ. 1–2, 1930, նույն տպ.) վեպերը, «Կոկոն» (1912, ԿՊ, Թագվոր Սանճագյանի տպ.) բանաստեղծությունների ժող-ը, «Ֆաքիր Թահիրա պեյի զարմանահրաշ գործերը» (1926) երկը:

Հանդես է եկել նաև Գրոհ, Կ. Դիտող, Պալատունի Հր., Հրանտ Գ. գրական կեղծանուններով:

ԳՈՒՐԳԵՆ Հակոբ (Պիպեռճյան, 1850, Կ. Պոլիս–1915, Մեծ եղեռնի զոհ), մանկավարժ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Թարգմանչաց վարժարանում: Խմբագրել է ***«Փող արեւելեան»*** (1870) լրագրի «Ներքին լուրեր» բաժինը, 1886–88-ին հրատարակել է ***«Ճաշակ ոսկեղէն դպրութեան»*** (գրաբար) հանդեսը: Օրթագյուղում հիմնադրել է «Հայկական կրթարան» դպրոցը (1876–90): Աշխատակցել է «Մասիս», «Արեւելեան մամուլ», «Մանզումէի Էֆքեար» (հայատառ թուրք.) և այլ պարբ-ների:

Լույս են տեսել Գ-ի «Ուղեւորութիւն յԱթենս եւ ի Զմիւռին...» (1881, ԿՊ, Հարություն Արամյանի տպ.) երկը, «Համառօտ արուեստ տաղաչափութեան» (1897, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.) ձեռնարկը: Կազմել է «Պատկեր աշ-

խարհիկ գրականութեան...» (հ. 1–2, 1892–93, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.) ընթերցարանը:

Հանդես է եկել նաև Գուրգեն, Սմբատ, Վահե, Արեւտ ծածկանուններով:

ԳՈՒՐԳԵՆՅԱՆ Աբրահամ Հովհաննեսի (1908, Թեհրան–1991, Կիպրոս), նկարիչ-ձևավորող: Սովորել է Նոր Ջուղայի Ազգ. կենտր. վարժարանում: Ընդօրինակել է մանրանկարներ հայ. և պարսկ. հին ձեռագրերից, նաև որմանկարների, խաչքարերի, շիրմաքարերի, վիմաքանդակների պատկերներ, որոնք ամփոփել է «Պատկերազարդ պատմութիւն հայոց» ալբոմում: Նկարազարդել է Սաադիի, Հաֆեզի, Օմար Խայամի, Ֆիրդուսու, Նիզամու, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի գործերից:

«Սբ Գրիգոր Լուսավորիչ» ոսկե մեդալ (1961, Հռոմ):

ԳՈՒՐԳԵՆՅԱՆ Ավքսենտիոս, **Օգսենտիոս** (1826, Կ. Պոլիս–1900, Վենետիկ), փիլիսոփա, աստվածաբան, խմբագիր: Մխիթարյան միաբանության անդամ: 1852–53-ին՝ ***«Բազմավէպ»*** հանդեսի խմբագիր: «Տարերք իմաստասիրութեան ընդարձակ» (հ. Ա–Դ, 1869) աշխատության մեջ օբյեկտիվ իդեալիզմի դիրքերից փորձել է հաշտեցնել գիտությունը և կրոնը: Իմացաբանության հարցերում հետևել է Ի. Կանտին: Հատուկ տեղ է հատկացրել գիտ. իմացության մեթոդների ուսումնասիրությանը:

Լույս են տեսել նաև Գ-ի «Համառօտ քերականութիւն անգլիական բարբառոյ» (1853) դասագիրքը, «Իմաստասիրութիւն համառօտ դասառական» (1869) աշխատությունը: Թարգմանել է Սեքյուր Քահանայի («Համառօտ եւ ընտանեկան պատասխանիք կրօնից դէմ...», 1855), Դիոնեսիոս Ֆրեսինի («Պաշտպանութիւն քրիստոսական հաւատոյ...», հ. 1–2, 1866), Տեր-Պոթենի («Իրք հանդերձեալ աշխարհին», 1868, 1880), Օրսին Քահանայի («Պատմութիւն վարուց Մարիամու կուսամօր Աստուածածնի», 1880) և ուր.՝ գերազանցապես կրոնաբարոյական խնդիրներին նվիրված երկերից:

Գ-ի բոլոր գրքերը լույս են տեսել Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

ԳՈՒՐՋԱԴՅԱՆ Գրիգոր Արամի (15.10.1922, Բաղդադ–22.2.2014, Երևան), աստղաֆիզիկոս: Ֆիզմաթ գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1957): ՀՀ ԳԱԱ ակադ. (1986, թղթ. անդամ՝ 1965-ից): Ավարտել է ԵՊԻ հիդրոտեխ. և շին. ֆակ-ները (1944): 1965–75-ին՝ Բյուրականի աստղադիտարանի տիեզ. հետազոտությունների մասնաճյուղի, 1975–78-ին՝ Գառնիի տիեզ. աստղագիտ-յան լաբորատորիայի (1992–2004-ին՝ ինստ.) տնօրեն:

Տիեզ. աստղագիտ-յան հիմնադիրներից է. մշակել է «Օրիոն» և «Օրիոն-2» տիեզ. աստղադիտ. համակարգերը, որոնց օգնությամբ առաջին անգամ ստուգվել են շատ թույլ՝ մինչև 13-րդ մեծության աստղերի կարճալիք սպեկտրագրերը:

Լույս են տեսել Գ-ի «Տիեզերքը ափի մեջ: Էսսեներ» (1987, 2005), «Կաքավաբերդի առեղծվածը» (1998), «Կոսմիկական կատաստրոֆա», «Մի կում ջուր», «Մի սիրո պատմություն» (երեքն էլ՝ 2004), «Գալակտիկաների աշխարհը» (2006), «Խոհեր... խոհեր...» (2007), «Տիեզերքը և մարդը...» (2009), «Էսսեներ, հարցազրույցներ» (2013) ժող-ները:

Գ-ի գործունեությանն է նվիրված Աշոտ ***Աղաբաբյանի*** «Մենակը» (2013) փաստագր. վեպը:

Երկ. Планетарные туманности, М., 1962; Вспыхивающие звезды, М., 1973; Звездные хромосферы или..., М., 1984; Звездные вспышки: Физика, Космогония, М., 1985; Планетарные туманности: Физика, Динамика, М., 1993; Теория межпланетных перелетов, М., 1992; Theory of Interplanetary Flights, N. Y., 1996; The Physics and Dynamics of Planetary Nebulae, Berlin, 1997; Space Dynamics, L., 2002.



Աբրահամ Գուրգենյան. *պատկերազարդում Սայաթ-Նովայի ստեղծագործության թեմաներով*




Ավքսենտիոս Գուրգենյանի *«Տարերք իմաստասիրութեան ընդարձակ» (հ. Դ, 1869, Վնտ.) գրքի կազմը*



Գրիգոր Գուրզադյանի *«Տիեզերքը և մարդը...» (2009, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

Դ



Դ, հայ. այբուբենի 4–րդ տառը, անվանումը՝ «դա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Վերից վար ձգվող երկարի ձախ կողմից իջնում է կարճը և վերևից նուրբով միանում երկարին: Աջ կողմի կենտրոնում է լայնը և վերին ծայրով միանում է երկարին՝ մեջտեղից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Դ, որպես այբուբենի 4–րդ տառ, նշանակել է չորս և չորրորդ, բյուրի նշանով (Դ՝)՝ չորս բյուր (40 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Դ –մաս 4–րդ):

ԴԱԲԱՂՅԱՆ Նորայր Հարությունի (1904, Վան–12.7.1955, Երևան), գրականագետ, խմբագիր: Պրոֆ. (1936): Ավարտել է ԵՊՀ (1925): 1930–36–ին՝ *«Գրական թերթ»*–ի, 1937–40–ին՝ *«Խորհրդային գրականություն»* հանդեսի գլխ. խմբագիր: Մամուլում հրատարակել է գրականագիտ., գրաքննադատ. հոդվածներ: 1940–55–ին դասավանդել է Երևանի բուհերում:

Լույս են տեսել Դ–ի «Ինչ է սպեցիֆիզմը, և ինչո՞ւ են պայքարում նրա դեմ» (1928), «Պլեխանովի էսթետիկական հայացքների մասին» (1934), «Եղիշե Չարենց: Կյանքն ու ստեղծագործությունը» (1954) աշխատությունները:

ԴԱՎԼԱՔՅԱՆ Ղևոնդ Մեխակի [15.11.1915, Վերին Շեն (այժմ՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի բռնագրավված տարածքում)–1988, Երևան], պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1961), պրոֆ. (1966): Ավարտել է ՄՊՀ (1939): 1939–ից դասավանդել է Ադրբ. մանկավարժ. ինստ–ում (Բաքու), 1952–ից՝ Երևանի անասնաբուծ–անասնաբուժ. ինստ–ում (1971–88–ին՝ ամբիոնի վարիչ): 1951–52–ին՝ *«Սովետական Հայաստան»* թերթի գլխ. խմբագիր:



Նորայր Դաբաղյան

Լույս են տեսել Դ–ի «Մարտական 89» (1968), «Հոկտեմբերի դրոշի ներքո» (1987) աշխատությունները:

ԴԱՂԲԱՇՅԱՆ Հարություն [1866, գ. Ղալաչա (այժմ՝ Բերդավան՝ ՀՀ Տավուշի մարզում)–1939, Լենինգրադ], բառարանագիր, պատմաբան, հանրագիտակ: Փիլ. գիտ. դ–ր (1893): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1881–87), ապա՝ Սյունխենի, Թյուբինգենի, Բեռլինի համալսարաններում: Դ–ի «Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն» (պր. 1–3, 1903–06, 125 000 բառ, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.) ու «Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն» (1911, 70 հզ. բառ և 20 հզ. ոճ ու դարձվածք, Թ., «Էպոխա» տպ.) բառարաններում, թարգման. համարժեքներից բացի, հաճախ տրվել են նաև բառերի ստուգաբանությունները և մանագիտ. բացատրությունները: Սրանք ռուս–հայ. և հայ–ռուս. առաջին բառարաններն են:

Լույս են տեսել նաև Դ–ի «Փ. Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը» (1898, Վնն., Մխիթարյան տպ.), «Արեւելահայ աշխարհաբառի քերականութիւնը...» (1913, Թ., «Էսպերանտո» տպ.), «Ստոյգ հայոց պատմութիւն: Պատկերազարդ» (1914, Թ., Ա. Կերեսելիձեի տպ.) աշխատությունները ևն: Հայկ. դպրոցների համար կազմել է ռուս–ի դասագրքեր («Ռուսերէնի դասընթացը հայոց ուսումնարանների համար», 1911, Թ., «Էպոխա» տպ.) և հանրագիտ. բառարան (անավարտ):

ԴԱՆԻԵԼ, XIV–XV դ–ի գրիչ և մանրանկարիչ, Աղթամարի գրչության կենտրոնի ներկայացուցիչ: Հայտնի են Դ–ի ընդօրինակած ու պատկերազարդած Սաշտոցը (1404, ձեռ. № 4787), Ճառընտիրը (1409, ձեռ. № 994), Ճաշոցը (1412, ձեռ. № 9093), Ավետարանները (1403, 1433, 1436, ձեռ. № 4923, 4963, 5543, բոլորը՝ Մատենադարան) և 1426–ի Ավետարանը (Վրաստանի հին ձեռագրերի ինստ., ձեռ. № 23):

ԴԱՆԻԵԼՅԱՆ Ժիրայր Կարապետի [ծ. 1941, գ–ք. Ճյունի (Լիբանան)], խմբագիր, մատենագետ, հրատարակիչ: Սովորել է Բեյրութի Հայկազյան քոլեջում (այժմ՝ համալսարան): Շուրջ 23 տարի պաշտոնավարել է նույն տեղում՝ որպես հայագիտ. գրադարանի վարիչ, ապա՝ ընդհանուր գրադարանապետ: Եղել է Բեյրութի Հովակիմյան–Մանուկյան, Դարու–հի–Հակոբյան երկրորդ. վարժարանների տնօրեն: Դասավանդում է Հայկազյան համալսարանում և ՀԲԸՄ Երվանդ Հյուսիսյան հայագիտ. հաստատությունում: Աշխատել է «Հայկազեան հայագիտական հանդէս», «Հիւսիսեան հայագիտական տարեգիրք», «Հասկ հայագիտական տարեգիրք», «Երիտասարդ հայ», ՀԲԸՄ–ի «Խօսնակ», ***«Շիրակ»*** (1990–97–ին՝ պատ. խմբագիր) ևն պարբ–ների խմբագրություններում: 2005–ից ***«Կամար»*** գրական պարբ–ի հիմնադիր–խմբագիրն է:

Լույս են տեսել Դ–ի «Ակնարկ լիբանանահայ մամուլի պատմութեան» (1973), «Հայ մամուլի հաւաքածոյ» (1974), «Սփիւռքահայ նոր պարբերական մամուլը 1967–1980 թուականներուն» (1981), «Հայ նոր պարբերական մամուլը. 1967–1981» (1984), «Լիբանանահայ տպագրութիւնը պատերազմի տարիներուն. 1975–1984» (1986), «Բանասիրական որոնումներ» (1996), «Գրական որոնումներ» (2007), «Բանասիրութեան բաւիղներուն մէջ» (2011) մատենագիտ. և բանասիր. աշխատությունները:

ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» գրական մրց., ԹՄՄ աղամանդակուռ «Արարատ» ոսկե մեդալ, ՀՀ Սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» և ԿԳՆ ոսկե հուշամեդալներ (բոլորը՝ 2011):


ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ, IV դ–ի վերջին կամ V դ–ի սկզբին Հայաստանում օգտագործված գրեր: Պահվել են Դանիել Ասորի եպիսկոպոսի մոտ: Դ. ն. սովորեցրել են առաջին հայալեզու դպրոցներում՝ սկզբնավորելով հայկ. դպրությունը: 2 տարվա ուսուցումից հետո Մեսրոպ Սաշտոցը պարզել է, որ դրանք թերի են և չեն համապատասխանում հայ–ի ինչյուն. համակարգին:

Ի. Հարությունյանի, Ա. Աբրահամյանի և ուր. կարծիքով՝ Դ. ն. եղել են նախամաշտոցյան շրջանում գործածական հայկ. գրեր, Հ. Աճառյանի, Է. Աղայանի և ուր. կարծիքով՝ դրանք որևէ օտար լեզվի նշանագրեր են, որոնք օգտագործվել են նաև հայ–ի համար:


«ԴԱՆՈՒԲ», ազգ., մշակութ., գրական երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1891–92–ին Ռուսչուկում (այժմ՝ Ռուսե՝ Բուլղարիայում): Խմբագիր՝ Մկրտիչ Թյությունճյան: Ունեցել է հնչակյան ուղղվածություն: Իր շուրջն է համախմբել Բուլղարիայի և Ռումինիայի հայերին, ստեղծել ազգ. հաստատությունները (դպրոցներ, եկեղեցիներ ևն) ղեկավարող կենտր. վարչություն: Լուսաբանել է Բալկանյան երկրներում, նաև Կ. Պոլսում, Թիֆլիսում, Թեհրանում և այլ վայրերում ապրող հայերի առօրյան, մշակութ. և ուս. կյանքը, անդրադարձել սփյուռքահայ համայնքներին, տպագրել բանաստեղծություններ ու պատմվածքներ, հոդվածներ՝ ազգ. և միջազգ. իրադարձությունների մասին: Աշխատակցել են Վ. Փափազյանը, Լ. Սրմազաշյանը, Շ. Կամսարականը, Գ. Արսլանյանը և ուր.:



Հարություն Դաղբաշյան



Հ. Դաղբաշյանի *«Փ. Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը» (1898, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



Ժիրայր Դանիելյանի *«Բանասիրութեան բաւիղներուն մէջ» (2011, Ե., «Մուղնի») գրքի կազմը*



«Դաշանց թուղթ»-ի (1695, Վնտ.) տիտղոսաթերթը



«Դաշինք», 1909–15, 1919, Զմյուռնիա



Խաչիկ Դաշտենց



Խ. Դաշտենցի «Ոսանչ-պարների կանչը» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

«ԴԱՇԱՆՑ ԹՈՒՂԹ», ըստ անվավեր մի գրության՝ Հայոց Տրդատ Գ Մեծ արքայի (287–330) և Հռոմի Կոստանդին Մեծ կայսեր (306–337) 316-ին կնքած դաշնագիրը, որով Հռոմի պապ Սեղբեստրոս I-ը (314–335) Հայոց եպիսկոպոսապետ է ճանաչել Գրիգոր Ա Լուսավորչին, նրան ընձեռել Վրաց և Աղվանից եկեղեցապետներին, Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքներին ձեռնադրելու իրավունք, իսկ կայսրը թագադրել է Տրդատ Գ-ին և նրան շնորհել նաև Քրիստոսի ծննդավայր Բեթղեհեմի իշխանությունը: Սակայն սույն «Դ. թ.»-ի կազմողն ապրել է XII–XIII դդ-ում և Կիլիկիայի հայ վերնախավի արմ. կողմնորոշումը հիմնավորելու նպատակով ձևափոխել է այն՝ ըստ ժամանակի:

«Դ. թ.» ներառվել է Ագաթանգեղոսի պատմության ձեռագիր օրինակների մեջ և տպագրվել որպես տպակից:

Առաջին անգամ տպագրվել է 1683-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբռնիի տպարանում՝ հայ. և իտալ.: Տիտղթ-ին՝ «Թուղթ սիրոյ եւ միաբանութեան Մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ Սրբոյն Սեղբեստրոսի վեհագունի փափին եւ Տրդատայ Հայոց արքայի եւ Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին» (43 էջ, 4º, 13 x 9 սմ): Վերահրատարակվել է 1690-ին Պադուայում՝ Տիմոթեոս Գառնուկի տպարանում (104 էջ, 8º), 1695-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում՝ 2 անգամ (42 էջ, 8º, 11,8 x 7,5 սմ և 39 էջ, 8º, 16 x 10,3 սմ), 1700-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության, տիտղթ-ին՝ «Համառօտ պատմութիւն տնօրինականաց» (88 էջ, 8º, 11,8 x 7,8 սմ), 1709–10-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Սարգվանեցու տպարանում, տպակից է Ագաթանգեղոսի «Գիրք վիպասանութեան» երկին:

«ԴԱՇԻՆՔ», գրական-գեղ. օրաթերթ: ՌԱԿ-ի հրատ.: Լույս է տեսել 1909–15 և 1919-ին Զմյուռնիայում՝ որպես ***«Արեւելեան մամուլ»***-ի շարունակություն: Արտոնատեր՝ Հրանտ Մամուրյան, խմբագիր՝ Սուրեն ***Պարթևյան***: Անդրադարձել է արևմտահայության հաս-քաղ., գավառի ազգ. և տնտ. խնդիրներին, Թուրքիայի ներքին ու արտաքին կացությանը, քննադատել երիտթուրքերի հակահայկ. գործունեությունը: Տպագրել է տեղեկատու նյութեր զմյուռնահայության մասին, քննադատել է Կ. Պոլսի սահմանադր. մարմինների գործունեությունը: Ներկայացրել է հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններ, լուսաբանել ազգ. մշակույթի և արվ-ի զարգացման խնդիրները: Աշխատակցել են Ա. Հարությունյանը, Մ. Պարսամյանը, Հ. Ալփիարը, Մ. Կյուրճյանը և ուր.:

ԴԱՇՏԵՆՑ (Տոնոյան) Խաչիկ Տոնոյի [25.5.1910, գ. Դաշտադեմ (Բիթլիսի նահանգի Խութ-Բռնաշեն գավառ)–9.3.1974, Երևան], գրող, թարգմանիչ, բանասեր: Բանասիր. գիտ. թեկնածու (1965): Մշակույթի վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ (1932), Մոսկվայի օտար լեզուների ինստ-ը (1940): 1965–74-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ում:

Լույս են տեսել Դ-ի «Երգերի գիրք» (1932), «Գարնանային երգեր» (1934), «Լեռան ծաղիկներ» (1963) բանաստեղծությունների ժող-ները, «Տիգրան Մեծ» (1947, 2010) չափածո ողբերգությունը, «Ֆայտոն Ալեքը» (1967, 2010) պոեմը, «Բայրոնը և հայերը» (1959), «Ղղձյալ այգաբացի երգիչը» (1967) բանասիր. աշխատությունները, արևմտահայության ողբերգությունը և սասունցիների կյանքն արտացոլող «Խողեղան» (1950, 1985, 2000) վեպը, «Ոռանչպարների կանչը» (1977, Բ., 1979, 1984, 2010) վիպասքը: Բնագրերից թարգմանել է Վ. Շեքսպիրի, Հ. Լոնգֆելլոյի, Պ. Շելլիի, Վ. Սարոյանի ստեղծագործություններից:

Հայկ. դպրոցների համար կազմել է անգլ-ի դասագիրք (համահեղ.):

Գրկ. **Խաչատրյան-Ադիլխանյան Ա.,** *Խ. Դաշտենցի արձակի լեզուն և ոճը, Ե., 1995:* **Վարդանյան Կ.,** *Սասնո աշխարհի բանաստեղծը: Խաչիկ Դաշտենցի ստեղծագործությունը, Ե., 2000:* **Վարդանյան Վ.,** *Հրաշեկ հոգու թռիչքով, Ե., 2005:* **Բաղդասարյան Ս.,** *Խաչիկ Դաշտենցի ստեղծագործությունը, Ստեփանակերտ, 2011:*

«ԴԱՇՏԻԿ ԾԱՂԿԱԼԻՒ», իտալ. եկեղեց. պատմությունների ընտրանի: Իտալ-ից թարգմանել է և կազմել Հովսան Թոխաթեցին: Տպագրվել է 1727-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (429 էջ, 12º, 11,9 x 6,1 սմ):

ԴԱՍԱԳԻՐՔ, դպրոց. կամ բուհ. ուս. ձեռնարկ որոշակի առարկայի ուսուցման համար: Հանրակրթ. դպրոցների Դ–երում տեքստը հաճախ ուղեկցվում է համապատասխան հարցերով և հանձնարարականներով, ինչպես նաև պատկերազարդումներով: Բոլոր նոր կամ քիչ ծանոթ բառերը, որպես կանոն, տողատակում բացատրվում են:

Հայ. ձեռագիր Դ–եր կազմվել են դեռևս առաջին դպրոցների բացման ժամանակ՝ Մեսրոպ Մաշտոցի օրոք: Միջնադարում եկեղեցիներին կից դպրոցների, ապա նաև համալսարանների հիմնադրումը նպաստել է նոր դասագրքերի ստեղծմանը և բարելավմանը: Առաջին տպագիր դասագիրքը 1567–ին Կ. Պոլսում լույս տեսած ***Այբբենարանն*** է, տիտղթ–ին՝ «Փոքր քերականութիւն»: Թվաբանության առաջին ձեռնարկը՝ ***«Արհեստ համարողութեան»***–ը (որը նաև առաջին տպագիր աշխարհաբար գիրքն է), տպագրվել է 1665–ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում:

Դ–երի, ուս. ձեռնարկների ստեղծման գործում անգնահատելի վաստակ ունեն Հարություն ***Ալամդարյանը***, Մեսրոպ ***Թաղիադյանը***, Խաչատուր ***Արովյանը***, Ստեփանոս ***Նազարյանը***, Ղազարոս ***Աղայանը***, Նահապետ ***Ռուսինյանը***, Սեդրակ ***Մանդինյանը***, Նիկողայոս ***Զորայանը***, Նիկողայոս ***Տեր–Ղևոնդյանը***, Ռեթեոս ***Պերպերյանը***, Տիգրան ***Ռաշմաճյանը***, Սերովբե ***Վիչենյանը***, Հովհաննես ***Թումանյանը***, Հակոբ ***Աղաբաբը***, Ստեփան ***Լիսիցյանը***, Լևոն ***Շանթը*** և ուր.: XX դ–ի 2–րդ կեսին, XXI դ–ի սկզբին Դ–եր են կազմել նաև Ա. Ղարիբյանը, Ս. Ղազարյանը, Գ. Սևակը, Հ. Բարսեղյանը, Է. Աղայանը, Մ. Մկրյանը, Ս. Աղաբաբյանը, Հ. Թամրազյանը, Ա. Տեր–Գրիգորյանը, Պ. Բեդիրյանը, Ֆ. Խլղաթյանը, Դ. Գյուրջինյանը, Վ. Սարգսյանը, Ջ. Գյուլամիրյանը, Սփյուռքում՝ Ս. Սիմոնյանը, Օ. Սարգիսյանը, Ա. Տեր–Խաչատուրյանը, Ա. Ֆատըգճյանը, Հ. Գալֆայան–Փանոսյանը, Բ. Թևյանը, Ա. Տատրյանը և ուր.:

Դ–երի կազմումը շարունակական գործընթաց է, գիտ–յան զարգացմանը զուգահեռ ուս. ծրագրերում ներառվում են նոր առարկաներ, հետևաբար ստեղծվում են նոր Դ–եր և ուս. ձեռնարկներ:


«ԴԱՍՏԻԱՐԱԿ», պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1873–74–ին Թեոդոսիայում: Խմբագիր–հրատարակիչ՝ Գրիգոր Տեվոլեթյան: Տպագրել է գուղատնտեսությանը, արհեստներին, մանկավարժությանը, առողջապահ–յանը, աշխարհագրությանը, պատմությանը, բնագիտ–յանը, բուսաբուծությանը վերաբերող հոդվածներ, պաշտոն. տեղեկություններ, լուրեր: Կարևորել է կնոջ դերն ընտանիքում և կենցաղում, շեշտել նրա գրագիտ–յան մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Անդրադարձել է նաև արվ–ին, նյութեր տպագրել Հ. Այվազովսկու մասին:

«ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ», հանուն Հռոմի սբ աթոռի՝ Կղեմես VIII պապի՝ արլ. եկեղեցիների առաջարկած դավանության համառոտ շարադրանքը:

Առաջին անգամ տպագրվել է 1596–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ հայ. և լատ.: Տիտղթ–ին՝ «Կարճառօտս ի դաւանութէնէ սուրբ հաւատոյ...» (26 էջ, 8⁰):

Տպագրվել է նաև 1678–ին նույն տպարանում՝ հայ. և լատ.: Հայ. բնագիրը համարակալված է հայատառ, լատ–ը՝ արաբատառ (47 էջ, 8⁰, 11,5 x 7 սմ):


«Դաւանութիւն հաւատոյ Գաղղիայի եւ Հելվետիայի բարեկարգեալ եկեղեցիներուն» խորագրով տպագրվել է 1846–ին Զմյուռնիայում՝ Գուլիելմոս Գրիֆիտի տպարանում. «Հաւաքումն Բրոթէսդանդ ըսուած քրիստոնէից գործածած հաւատոյ դաւանութեանց եւ քրիստոնեականաց» 4 ինքնուրույն մասերից բաղկացած ժող–ի 2–րդ մասն է: Տպագրության տարեթիվը նշված է 1845–ը:




«Դաշտիկ ծաղկալի» *(1727, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*

Դասագիրք







ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ
ԵԿԵՂԵՑԵԱՑ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

CONFESSIO ECCLESIAE
Armenicae Latine reddita, & necessariis notis illustrata ab Jos. Judicibus Scharensibus, in libros sex distributa LINGUAE ARMENICAE THESAURUS.

LONDINI:
Typis Jos. Rivington,
Anno Domini M.DCC.LXXX.

«Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց» *(1780, Լոնդոն) գրքի փիփղոսաթերթը*



«Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյ» *(1642, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը*


ՓԱՌԱՔ Ի ՄԱՀՆ ՋԵՒԱՆՇԻՐԻ
ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ

Դավթակ Քերթողի *«Ողբք ի մահին Ջեւանշիրի մեծի իշխանին» (1986, Ե., «Սովետական գրող») գրքի շապիկը*

«ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ», Յոախիմ Շրյոդերի 1711-ին հրատարակած *«Արամեան լեզուին գանձ»* գրքի մի բաժինն է՝ հայ. և լատ.: Հայ-ից լատ. թարգմ.՝ հեղինակի: Հրատարակիչ Գրիգոր *Խալպարյան*: Տպագրվել է նաև 1780-ին Լոնդոնում՝ Զոն Ռիվինգտոնի տպարանում՝ Աստրախանի ու Նոր Նախիջևանի առաջնորդ Հովսեփ Արղությանի խնդրանքով: Տպակից է *Ներսես Շնորհալու* «Հաւատով խոստովանիմ» աղոթքին: Լատ. տիտղթ-ին՝ «Confessio ecclesiae armenicae latine reddita...» (76 էջ, 2º, 13 x 9,7 սմ):

«ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ», հավատի հաստատունության սրբազան ժողովի հրատ.: Տպագրվել է 1642-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ հայ. և լատ.: Լատ. տիտղթ-ին՝ «Professio orthodoxae fidei ab orientalibvs fasienda...» (29 էջ, 4º, 14,8 x 8,2 սմ):

«ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ», տպագրվել է 1584-ին Հռոմում՝ Դոմինիկցի Բազաեի տպարանում՝ Հովհաննես Տերզնցու և Սուլթանշահի աշխատասիրությամբ: Տիտղթ-ին՝ «Դաւանութիւն ուղղափառութեան Հռոմէական սուրբ եկեղեցւոյնէ...» (6 էջ):

ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ, VII դ-ի բանաստեղծ: Նշանավոր է «Ողբք ի մահն Զեւանշիրի մեծի իշխանին» (հրտ.՝ 1986, գրաբար բնագիրը՝ արևելահայ-ի, ռուս., անգլ., ֆրանս., գերմ., իսպ. և լեհ. թարգմանությունների հետ) դամբանական ողբով, որը պահպանվել է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ: Դ. Ք-ի «Ողբք»-ը (127 տող, աքրոստիքոս է) աշխարհիկ թեմայով մեզ հասած ստեղծագործություններից ինագույնն է հայ պոեզիայում:

ԴԱՎԹՅԱՆ Գագիկ Տիգրանի [ծ. 4.4.1947, գ. Դավիթ Բեկ (ՀՀ Սյունիքի մարզ)], բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊԻ (1970): 1988–96-ին՝ «Խորհրդային Հայաստան», ապա՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթերի Զանգեզուրի գոտու սեփ. թղթակից, 1996–2000-ին՝ *«Մունիք»* թերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Դ-ի «Մենախոսություն» (1980), «Երազների երկինք» (1983), «Վերադարձ» (1987), «Արևն ու մենք» (վրաց., Թ., 1988), «Ժամանակների ժամադրություն» (ռուս., Մ., 1989), «Անվերջ սկիզբ» (2007), «Բաց նամակ» (վրաց., Թ., 2013) բանաստեղծությունների ժող-ները:

Կազմել և թարգմանել է վրաց. պոեզիայի 3 անթոլոգիա, թարգմանել Ռ. Թագորի, Է. Դիկտոնիուսի, Տ. Լիվադիտիսի, Մ. Լերմոնտովի, Լ. Միլետիչի, Մ. Գոնաշվիլու, Ռ. Կիսյովի և ուր. ստեղծագործություններից:

ԴԱՎԹՅԱՆ Հայկ Մանուկի [17.4.1919, գ. Ջրաշեն (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–19.1.1983, Երևան], բանասեր, մատենագետ: Ավարտել է ԵՊՀ (1949):

Դ. կազմել է «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ. 1512–1800» (1963, համահեղ.), «Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը» (1964), «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» (1967) աշխատությունները: Լույս են տեսել Դ-ի «Գեղարվեստական գրականություն և գրականագիտության մատենագիտություն» (1981) ուս. ձեռնարկը, «Ավետիք Իսահակյան» (1955), «Ալեքսանդր Շիրվանզադե» (1958) աշխատությունները և մեթոդ. գրքույկներ:

ԴԱՎԹՅԱՆ Մարգար Դանիելի [21.11.1910, գ. Շոռոթ (այժմ՝ Նախիջևանի Ջուլֆայի շրջանում)–4.11.1964, Բաքու], գրող, խմբագիր: Սովորել է Երևանի մանկավարժ. ինստ-ում, Բաքվի համալսարանում: Աշխատել է Բաքվի *«Կոմունիստ»* և *«Գրական Ադրբեջան»* պարբերներում (բաժնի վարիչ), 1939–64-ին՝ Ադրբեջանի գրողների միության հայկ. մասնաճյուղի նախագահ:

Լույս են տեսել Դ-ի «Երջանկություն» (1939), «Ծիրանի ծառ» (1944), «Պատմվածքներ» (1957, երեքն էլ՝ Բաքու), «Հափշտակված սերը» (1960), «Կյանքն իր հունով» (1966, Բաքու) պատմվածքների ժող-ները, «Ուռենու տակ» (1949), «Լուսավոր ուղի» (1952, Բաքու), «Երբ ծագում է արևը» (1954) վիպակները, «Մեր քաղաքում» (1950), «Վազը» (1955), «Առաջին շիվը» (1960) վեպերը, «Հավերժական կտակ» (1965, Բաքու) պատմավեպը:

ԴԱՎԹՅԱՆ Մխիթար Հովնանի (27.12.1902, Թավրիզ–27.12.1978, Երևան), մշակույթի գործիչ, խմբագիր: Արվ. վաստ. գործիչ (1963): 1934–37-ին՝ *«Սովետական Հայաստան»* օրաթերթի գլխ. խմբագրի տեղակալ, 1938–72-ին եղել է Երևանի Կ. Ստանիսլավսկու անվ. ռուս., Պատանի հանդիսատեսի, Գ. Սունդուկյանի անվ. թատրոնների, Հայֆիլմ կինոստուդիայի, *«Հայաստան»* հրատարակչության տնօրեն, 1972-ից՝ Հրատպետկոմի նախագահի տեղակալ:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (1956, 1971):

ԴԱՎԹՅԱՆ Շչորս Բագրատի (ծ. 12.3.1938, Էջմիածին), լրագրող, գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (2009): 1969–70-ին՝ Սիսիանի «Որոտան» շրջ. թերթի, 1988–91-ին՝ *«Խորհրդային Հայաստան»* օրաթերթի խմբագիր: 1970–88-ին եղել է Սիսիանի կուսշրջկոմի 2-րդ, ապա՝ 1-ին քարտուղար:

Լույս են տեսել Դ-ի «Սյունյաց ազնվաշնորհ տիկնայք» (1996), «Շուշի-ողբերգական քաղաք» (ռուս.՝ 1997, անգլ.՝ 1999), «Սիսիանի բնակավայրերի պատմությունը» (1997), «Ականավոր սյունեցիներ» (1998), «Մովսես Գ Տաթևացի Ամենայն հայոց կաթողիկոս» (2001), «Համո Սահյան: Բանաստեղծի հավատամքը» (2004), «Համո Սահյան: Կյանքը և գործը» (2007) աշխատությունները, «Աշնան արահետ» (2000) բանաստեղծությունների ժող-ը, կազմել և խմբագրել է Համո Սահյանի «Ինձ բացակա չդնեք» (2003), «Ինչ էլ լինի, կգամ» (2004) բանաստեղծությունների ժող-ները, «Երկերը» (հ. 1, 2..., 2011, 2014...), «Գորիս: Ականավոր գործիչներ, նշանավոր դեմքեր, արժանավոր զավակներ» (2003, համահեղ.) ժող-ը, «Համո Սահյան. հանրագիտարանը» (2012):

ԴԱՎԹՅԱՆ Սերիկ (Սիրուհի) Ստեփանի [5(17).9.1893, Դիլիջան–14.2.1978, Երևան], արվեստաբան, մանկավարժ: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Սովորել է Թիֆլիսի 3-րդ իգական գիմնազիայում և ԵՊՀ-ում (1922–23): 1920-ական թթ-ին խմբագրել է «Ժողովրդական լուսավորություն» (*«Մանկավարժ»*), «Հոկտեմբերիկ» (*«Աղբյուր»*), *«Դեպի համապարած գրագիտություն»* ամսագրերը: 1958–78-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի ավագ գիտաշխատող: Զբաղվել է հայկ. ժող. և դեկորատիվ-կիրառ. արվ-ի խնդիրներով:

Լույս են տեսել Դ-ի «Ասեղնագործության ձեռնարկ» (2-րդ լրց. հրտ.՝ 1963), «Հայկական ժանյակ» (1966), «Հայկական ասեղնագործություն» (1972), «Հայկական կարպետ» (1975), «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» (1981) աշխատությունները:

Անհիմն բռնադատվել է, աքսորվել Մագադան (1937–47), արդարացվել է 1954-ին:


ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան:

Գրկ. Սերիկ Սրտեփանի Դավթյան: Կենսամատենագիտություն, Ե., 1999:

ԴԱՎԹՅԱՆ Սմբատ [1858, գ-ք. Ակն (Խարբերդի նահանգ, Արմ. Հայաստան)–1926, Կ. Պոլիս], մանկավարժ, թատերագետ, հրատարակիչ, խմբագիր: Սովորել է Ակնի ազգ. վարժարանում, Կ. Պոլսի ֆրանս. լիցեյում: Դասավանդել է Կ. Պոլսում և Թուրքիայի հայաբնակ վայրերում, աշխատակցել «Մամուլ», «Մասիս», «Կավռօշ» պարբ-ներին: Կ. Պոլսում հիմնադրել է հայկ. հրատարակչ. ընկերություն, 1898–1900-ին եղել է *«Բիւրակն»* պարբ-ի տնօրեն-խմբագիրը:

Կազմել և հրատարակել է «Վարժութիւն մանկաց» (մաս 1–3, 1889, ԿՊ, «Արևելքի» տպ.), «Տարրական քերականութիւն արդի հայերէնի» (1891, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ), «Ընտելարան հայ լեզուի» (1893, ԿՊ, Գարեգին Պաղտատյանի տպ., 11-րդ հրտ.՝ 1901, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Ծաղկաքաղ աշխարհիկ լեզուէ» (1894, նույն տպ.), «Սկզբունք համաձայնութեան եւ շարադասութեան գործնական նշանագրերով», «Լրացուցիչ դասընթացք տարրական քերականութեան արդի հայերէնի» (երկուսն էլ՝ 1894, ԿՊ, Ճ. Արամյանի տպ.,), «Պատկերազարդ այբբենարան, նոր ոճով» (1895, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Փունջ: Աշխարհաբար հաւաքածոյ» (1895, ԿՊ, Գ. Պաղտատյանի տպ.), «Բանալի շարադրութեան եւ վայելչախօսութեան» (1899, ԿՊ, «Ախթեր» տպ.) ուս. ձեռնարկները:

Հանդես է եկել նաև Արծվիկ, Սեբարիս, Ծուլիկ կեղծանուններով:



Գագիկ Դավթյանի *«Անվերջ սկիզբ» (2007, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



«Համո Սահյան. հանրագիտարան»-ի (կազմ.՝ **Շչորս Դավթյան,** *2012, Ե., «Գիտություն») կազմը*



Սմբատ Դավթյանի *«Ընտելարան հայ լեզուի» (1901, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Վահագն Դավթյան



Վ. Դավթյանի *«Ընտրանի»-ի (2012, Ե., «Գրաբեր») կազմը*



«Դավիթ Անհաղթ», *մանրանկար, 1651–54-ի Ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 1764)*

ԴԱՎԹՅԱՆ Վահագն Արմենակի [15.8.1922, ք. Արաբկիր (Սեբաստիայի նահանգ, Արմ. Հայաստան)–21.2.1996, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. գբոսայգու պանթեոնում], բանաստեղծ, խմբագիր: ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): Աշակույթի վաստ. գործիչ (1971): Ավարտել է ԵՊՀ (1948): 1945–54-ին աշխատել է «Ավանգարդ» թերթի, 1954–65-ին՝ *«Գրական թերթ»*-ի (1962–65-ին՝ գլխ. խմբագիր) խմբագրություններում, 1965–67-ին՝ *«Հայրենիքի ձայն»* շաբաթաթերթի, 1981–90-ին՝ *«Վերածնված Հայաստան»* ամսագրի գլխ. խմբագիր, 1967–81-ին՝ Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի նախագահի տեղակալ, 1990–94-ին՝ ՀԳՄ վարչության նախագահ:

Լույս են տեսել Դ-ի «Առաջին սեր» (1947), «Աշխարհի առավոտը» (1950), «Ճանապարհ սրտի միջով» (1953), «Ամառային ամպրոպ» (1964), «Գինու երգը» (1966), «Ծուխ ծխանի» (1969), «Անկեզ մորենի» (1972), «Կապույտ գիրք» (1978), «Լույսն իբրև հաց» (1980), «Աք սիրո» (1982), «Լույս առավոտի» (1984), «Անքնություն» (1987), «Ծննդավայր» (1988), «Արևոտ հովիտ» (2007), «Հայերգություն» (2008) բանաստեղծությունների, պոեմների, բալլադների, ասքերի ժող-ները, «Թոնդրակեցիներ» (1961) պոեմը, «Ջուգահեռ ճանապարհ» (1976), «Բարի հսկան» (1979), «Ի սկզբանե էր բանն...» (1989) էսսեների, ակնարկների, հրապարակախոս., արվեստաբան., գրականագիտ. հոդվածների, հուշագրությունների ժող-ները, «Երկերի ժողովածուն» (հ. 1, 2, 1973, 1975), «Երկերը» (հ. 1–2, 1985), «Ընտրանին» (2012):

Թարգմանել է Ա. Պուշկինի, Զ. Բայրոնի, Շ. Պետեֆիի, Ս. Եսենինի, Ռ. Բյոռնսի, Ա. Բլոկի և ուր. ստեղծագործություններից:

ՀԽՍՀ Պետ. (1977, 1985) և ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1979) մրց-ներ:

Գրկ. **Գալստյան Հ.,** *Վահագն Դավթյանի պոեզիան, Ե., 1987:* **Գասպարյան Դ.,** *Վահագն Դավթյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2007:*

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴԻ (ծ. թ. անհտ, Գանձակ–1130), իրավագետ, եկեղեց. գործիչ, վարդապետ: Կիրակոս Գանձակեցին Դ. Ա. Ո-ունն անվանել է «սուրբ լուսավորիչ Դավիթ վարդապետ», Վարդան Արևելցին նրան համարել է Հովհաննես Սարկավագի «լծակից»: Դ. Ա. Ո-ունն հիշատակում են նաև Մխիթար Այրիվանեցին և ուր.:

Դ. Ա. Ո-ուց մեզ են հասել 98 խրատ. կանոններ՝ «Կանոնական օրինադրութիւն» («Կ. օ.») վերնագրով. հայտնի է 17 ընդօրինակություններով (15-ը՝ Մատենադարանում, 1-ական՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մատենադարաններում): Առաջին անգամ ամբողջ տեքստը տպագրվել է «Էջմիածին» ամսագրում՝ աշխատասիր.՝ Ա. Աբրահամյանի (1952, № 9–12, 1953, № 1–3): Երկը 1961-ին Բելգիայում անգլ. թարգմանությամբ, առաջաբանով և գիտ. ցանկով հրատարակել է հայագետ Չառլզ *Դաուսեթը*:

Մխիթար Գոշն իր Դատաստանագիրքը կազմելիս օգտվել է «Կ. օ.»-ից:

Գրկ. **Կոստանեան Կ.,** *Դաւիթ Ալավկայ Որդի, «ԱՀ», 1906–07, գիրք 14–15:* **Սամուելյան Խ.,** *Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Ե., 1939, էջ 74–75:* **Աբեղյան Մ.,** *Երկեր, հ. 3, Ե., 1970, էջ 83–85:* **Dowsett C. J.,** *The Penitential of David of Ganjak, edited text and translation, Louvain, 1961.*

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, **Դավիթ Ներգինացի, Դավիթ Արմենիոս** [մոտ 475, գ. Ներգին (Տարոնի գավառ)–VI դ-ի կես, Հաղպատ, ամ-ունն ամփոփվել է Մշո Սբ Առաքելոց վանքում], փիլիսոփա, տրամաբան, նորպլատոնականության ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչ: Հայ առաքել. եկեղեցու տոնելի սուրբ: Սովորել, ապա երկար տարիներ դասավանդել է Օլիմպիոդորոս Կրտսերի փիլ. դպրոցում (Ալեքսանդրիա): «Անհաղթ» պատվանունն ստացել է հրապարակային փիլ. վեճերում տարած հաղթանակների համար: Ծեր տարիքում վերադարձել է հայրենիք, գլխավորել հունաբան դպրոցը, մեծ ազդեցություն է ունեցել հայ աշխարհիկ փիլ-յան հիմնախնդրի սահմանման և տերմինաբանության մշակման ընագավառում: Իր գործունեությամբ հարուցել է պահպանող. հոգևորականների դժգոհությունը, հալածվել և հեռացել է Հաղպատ: Հետագայում եկեղեցին, գնահատելով Դ. Ա-ի ծառայությունները, նրան դասել է սրբերի շարքը:

Դ. Ա–ին վերագրվող բազմաթիվ երկերից անվերապահորեն նրան են պատկանում «Սահմանք իմաստասիրութեան», «Վերծանութիւնք «Ներածութեան» Պորփիւրի», «Մեկնաբանութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի» և «Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտէլի» երկերը (առաջին 3–ը գրել է հուն., ապա թարգմանել հայ.):

Դ. Ա. տրամաբան. գիտ–յան հիմնադիրն է Հայաստանում, սկզբնավորել է նաև հայկ. արիստոտելականությունը, զգալիորեն ազդել է Անանիա Շիրակացու, Հովհան Որոտնեցու, Վահրամ Րաբունու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Գրիգոր Տաթևացու, նաև միջնադարի իրան., արաբ. և հատկապես բյուզ. փիլ–յան մտքի վրա: 1820–ական թթ–ից հայ և այլազգի գիտնականների ջանքերով հրատարակվել են նրա երկերն ու դրանց պատմաբանասիր. ուսումնասիրությունները:

Դ. Ա. իր գլխ.՝ **«Սահմանք իմաստասիրութեան» («Գիրք սահմանաց»)** երկը, գրել է VI դ–ի 1–ին կեսին: Այն հին շրջանի հայ փիլ. մտքի կարևորագույն հուշարձան է: Նպաստել է աշխարհիկ ուղղության ձևավորմանը և անտիկ փիլ–յան ավանդների տարածմանը միջնադարյան Հայաստանում: Բաղկացած է 21 պրակից: Հեղինակը, ելնելով Արիստոտելի, Պլատոնի և Պյութագորասի ուսմունքներից, մանրամասն քննում է փիլ–յան 6 սահմանումները (այստեղից էլ՝ անվանումը), քննադատում է ագնոստիցիզմը և սկեպտիցիզմը, զգալի տեղ է հատկացնում գիտ–ների դասակարգմանը, որի կենտրոնում փիլ–ն է: Որպես նորպլատոնականության հետևորդ՝ Դ. Ա., այնուամենայնիվ, իմացաբանության ու տրամաբանության խնդիրներում արտահայտել է մատերիալիստ. գաղափարներ և հանդես եկել որպես Արիստոտելի հետևորդ: Երկն օգտագործվել է միջնադարյան բարձր տիպի դպրոցներում՝ որպես փիլ–յան դասագիրք: Այն հայտնի է եղել բյուզ. և արաբ. փիլիսոփաներին և ազդել նրանց հայացքների վրա:

Երկի հայ. բնագիրը պահպանվել է մի շարք ձեռագիր օրինակներով, որոնցից հնագույններն ու լավագույնները պահվում են Մատենադարանում (ձեռ. № 1746, 1747, 2326 ևն):

Առաջին անգամ տպագրվել է 1731–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի...» (344 էջ, 8^0, 12,5 x 7,3 սմ):

Վերահրատարակվել է 1797–ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք Սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի...» (658 էջ, 4^o, 12,8 x 9,2 սմ):


Տպագրվել է նաև 1833–ին Վենետիկում (Սբ Ղազարի տպ.), 1960–ին՝ Երևանում (քնն. բնագիրը և ռուս. զուգահեռ թարգմ.՝ Ս. Արևշատյանի), աշխարհաբար՝ 1980–ին: Երկը թարգմանվել է նաև վրաց. (XVIII դ.), հուն. (1904, Բեռլին), լեհ.՝ հատվածաբար (1971), ռուս. (1977), անգլ. (1983):

«Վերծանութիւնք «Ներածութեան» Պորփիւրի» երկը տպագրվել է 1793–ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Տպակից է Գրիգոր Տաթևացու «Լուծմունք Ներածութեան Պորփիւրի» և Պորփյուրի «Ներածութիւն» երկերին (413 էջ, 8^o, 11 x 6,7 սմ): Վերահրատարակվել է 1976–ին Երևանում (համահավաք քնն. բնագիրը և ռուս. թարգմ.՝ Ս. Արևշատյանի):

Հրատարակվել են նաև Դ. Ա–ի «Մատենագրութիւնք...» (1932, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտէլի» (1967), «Հոդվածների ժողովածու» (1980), «Երկասիրութիւնք փիլիսոփայականք» (1980), «Երկեր» (1999, աշխարհաբարի փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Ս. Արևշատյանի), «Ներբողներ (Դավիթ Անհաղթ՝ Ճառեր)» (2008) աշխատությունները:

Գրկ. **Արևշատյան Ս.**, *Դավիթ Անհաղթը Հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Ե., 1980:* **Բրուտյան Գ.**, *Դավիթ Անհաղթի ոսմունքը տրամաբանության մասին, Ե., 1980: Դավիթ Անհաղթ: Մատենագիտական ցանկ, Ե., 1980: Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան (ժող.), Ե., 1983:* **Чалоян В.**, *Философия Давида Непобедимого,*

Դավիթ Անհաղթ




«Գիրք սահմանաց»–ի (1731, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) տիտղոսաթերթը



«Վերծանութիւնք «Ներածութեան» Պորփիւրի» (1793, Մադրաս, Հարություն Շմավոնյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Սահմանք իմաստասիրութեան» (1960, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը



Դավիթ Բաղիշեցու «Ծաղկաքաղ...»-ի («Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.», հ. 2, 1956, Ե., ԳԱ հրտ.) 1-ին էջը



Դավիթ Բեկի «Արարկիրի գաւառաբարբառը» (1919, Վնն.) գրքի տիտղոսաթերթը

Е., 1946; **Аревшатян С.,** *Формирование философской науки в Древней Армении (V–VI вв.), Е., 1973; Философия Давида Непобедимого (сб.), М., 1984.*

ԴԱՎԻԹ ԲԱՂԻՇԵՑԻ [ծ. թ. անհտ, Բաղեշ–29.12.1673, Լիմ անապատ (Աղթամարի կղզի)], ժամանակագիր: 1651-ից՝ Բաղեշի Խնդրակատար, իսկ կյանքի վերջին տարիներին՝ Տարոնի Առաքելոց վանքերի վանահայր: Նրա ժամանակագրության («Դաւթի Բանասիրի Բաղիշեցոյ ծաղկաքաղ արարեալ ի բազում պատմագրաց...») 1-ին մասն ընդգրկում է Հայոց պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև 1662-ը), 2-րդը՝ ընդհանուր պատմությունը (նախահռոմ., հռոմ. և բյուզ. ժամանակաշրջանները) և ավարտվում է Կ. Պոլսի՝ թուրքերի զավթմամբ (1453): Ժամանակագրության հիմն. մասը քաղված է տարբեր աղբյուրներից (Աստվածաշունչ, Հոմերոս, Եվսեբիոս Կեսարացի, Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ ևն): Հեղինակը քիչ տեղ է հատկացրել իր ժամանակի դեպքերին:

Դ. Բ. նաև ընդօրինակել կամ ընդօրինակել է տվել ձեռագրեր:

Տպագրվել է Դ. Բ–ու «Ծաղկաքաղ...» ժամանակագրությունը [«Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.» (հ. 2, 1956) ժող., կազմ.՝ Վազգեն Հակոբյան]:

Գրկ. **Աբրահամյան Ա.,** *Դավիթ Բաղիշեցու Տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության համար, «Էջմիածին», 1946, № 8–12:*

ԴԱՎԻԹ ԲԵԿ (Սարտիրոս Սարգսյան, 1870, Արաբկիր–1938, Փարիզ), բանասեր, լեզվաբան, թարգմանիչ: Սովորել է Սորբոնի համալսարանում: Աշխատակցել է «Հանդէս ամսօրեայ», «Բանասէր» և այլ հանդեսների, հրատարակել է հայոց լեզվին և պատմությանը վերաբերող աշխատություններ՝ հայ. և ֆրանս.:

Լույս են տեսել Դ. Բ–ի «Բաղդատական քերականութեան ծագումը եւ օգուտները» (1900, Փ., Ժան Գաինշեի տպ.), «Լուսինեանք» (1900, Վնն., Մխիթարյան տպ.), «Հայերէնի Կեղտիկ բարբառներու հետ առնչութիւնը» (1911, նույն տպ.), «Արաբկիրի գաւառաբարբառը» (1919, նույն տպ.) աշխատությունները, կազմել «Գրպանի բառգիրք հայերէն–ֆրանսերէն, ֆրանսերէն–հայերէն» (1927, Փ., Հ. Թյուրապյանի տպ.) բառարանը, գրել բաղդատ. քերակ–յան և լեզվաբ. հարցերին առնչվող հոդվածներ: Իտալ–ից ֆրանս. է թարգմանել Վ. Տոտոմյանցի «Հայաստանի տնտեսությունը» (1920), հայ–ից ֆրանս.՝ Հ. Թումանյանի «Անուշը», Ա. Անտոնյանի հայոց ջարդերին վերաբերող աշխատությունները: Մասնակցել է *«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»* հայագիտ. պարբ–ի հիմնադրման աշխատանքներին:

Հանդես է եկել նաև Դավիթ–Բեկ Մելիք, Դավիթ–Բեկ Մելիք Ս. կեղծանուններով:

Փարիզի հայագիտ. ընկերության անդամ:

ԴԱՎԻԹ ՀԱՐՔԱՑԻ, VI–VII դդ–ի փիլիսոփա և աստվածաբան: Երբեմն նույնացվել է *Դավիթ Անհաղթի* հետ: Մեզ են հասել Դ. Հ–ունն վերագրվող երկերի պատառիկներ («Արարատ», 1902, № 9–10, 1906, № 3): Նրա փիլ. հայացքները կրում են Փիլոն Ալեքսանդրացու և նորպլատոնականության ազդեցությունը:

Գրկ. **Տէր-Մկրտչեան Գ.,** *Դաւիթ Հարքացի, Վաղ–պապ, 1903;* **Ակինեան Ն.,** *Դաւիթ Հարքացի Անյաղթ փիլիսոփայ: Կեանքն եւ գործերը, Վնն., 1959:*

ԴԱՎԻԹ ՔԵՐԱԿԱՆ, *Դավիթ Մեկնիչ*, V–VI դդ–ի քերական: Երբեմն նույնացվել է *Դավիթ Անհաղթի* հետ: Մեզ է հասել Դ. Ք–ի «Մեկնութիւն քերականին» աշխատությունը: Եղել է քերական. արվ–ի բանական հիմունքների ջատագով: Տարբերակել է «տառ» և «գիր» տերմինները: Մշակել է բառերի ստուգաբանության տեսություն և սահմանել ստուգաբանության 3 եղանակ՝ ըստ առարկայի ձևի, ըստ արհեստի կամ առարկայի հետ նրա հարաբերության, ըստ բնաձայնության կամ առարկան հիշեցնող հնչյունակազմի: Դ. Ք. տարբերակել է բառն ու բանը, տվել դրանց սահմանումը: Անդրադարձել է արձակ և չափածո խոսքերի տարբերություններին:

Գրկ. **Ձահուկյան Գ.,** *Քերականական և ողղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:*

ԴԱՎԻԹՅԱՆ Սիմեոն Մարտիրոսի [3.2.1926, Չետատեա Ալբա (այժմ՝ ք. Դնեստրի Բելգորոդ՝ Ուկրաինայում)–7.11.2009, Կոնստանցա (Ռումինիա)], գրող, հրապարակախոս: Գրել է ռում.: Ավարտել է Բուխարեստի համալսարանը (1956): 1958–76-ին՝ «Դոբրոջանոու» (ռում.) թերթի գլխ. խմբագրի տեղակալ, 1965-ից, միաժամանակ՝ Կոնստանցայի մշակույթի և գիտ-յան համալսարանի պրոռեկտոր:

Լույս են տեսել Դ-ի «Սեր և ճակատագիր» (1946) վեպը, «Ռումինիան նյութական և հոգևոր արժեքների համաշխարհային շրջանառության մեջ» (1972), «Ռումինիան աշխարհում» (1976), «Հայտնի հայերը» (հ. 1, 2006), «Ռումինացի հայերը» (հ. 2–3, 2007–08) աշխատությունները: «Դոբրոջայի ժամանակագրություն» (1984) և «Էջեր պատմության փառքի համար» (1986) ուսումնասիրություններում անդրադարձել է հակաֆաշիստ. պայքարին: Դ-ի «ԽՍՀՄ. ճանապարհորդական տպավորություններ» (1982) ուղեգրությունների գրքում նյութեր կան նաև Հայաստանի մասին:

ԴԱՎՈՅԱՆ Ռազմիկ Նիկողոսի [ծ. 3.7.1940, գ. Մեծ Պարնի (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], գրող, բանաստեղծ, մշակույթի գործիչ: Ավարտել է ՀՊՄԻ (1964): 1965–70-ին աշխատել է «Գրական թերթում» (բաժնի վարիչ), 1970–75-ին՝ Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի մամուլի բաժնում, 1975–90-ին՝ Հայաստանի Պետ. մրց-ների կոմիտեի պատ. քարտուղար, 1991–99-ին՝ Համազգ. հայկ. կրթ. և մշակութ. միության Հայաստանի վարչության նախագահ, 1994–96-ին, միաժամանակ՝ ՀԳՄ վարչության նախագահ, 1999–2003-ին՝ ՀՀ նախագահի խորհրդական, 2008-ից՝ ՀՀ Հանրային խորհրդի անդամ:

Լույս են տեսել Դ-ի «Իմ աշխարհը» (1963), «Ստվերների միջով» (1967), «Մեղրահաց» (1973), «Կեղևդ բաց արա» (1975), «Տաք սալեր» (1978), «Պոեմներ» (1980), «Պղնձե վարդ» (1983), «Քարե բարձ» (1989), «Բառը: Բանաստեղծություններ» (2011) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Ռեքվիեմ» (1969) պոեմը, «Տխուր փիղը» (1978) մանկ. բանաստեղծությունների, «Հանճար և հիշողություն» (1986) կինովիպակի և ուղեգրություն-ների ժող-ները, «Եթե Աստված կամենա» (հ. 1, 2008) վեպը: Դ-ի գործերից թարգմանվել են ռուս., չեխ., անգլ.: 2011-ին Մեծ Բրիտանիայում «Երևելի բանաստեղծներ» մատենաշարով լույս է տեսել Դ-ի «Ընտրանի» (հայ. և անգլ.) ժող-ը:

ՀԼԿԵՄ (1971), ՀՀ Պետ. (1985), ՀՀ նախագահի (2003) մրց-ներ, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի մեդալ» (2010), Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2010) շքանշան:

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1987: Խաչերի ջարդը: Ռեքոիեմ: Հայապատում: Բանաստեղծութիւններ, Բ., 1986: Ոգեղեն հաց, Ե., 2001: Ընտիր բանաստեղծություններ (անգլ. և հայ.), Լոնդոն, 2002:

Գրկ. **Ղազարյան Ն.**, *Բանաստեղծության բաց կեղևը, Ե., 2001:* **Բախչինյան Ֆ.**, *Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական աշխարհը, Ե., 2002:*



Ռազմիկ Դավոյան



Ռ. Դավոյանի *«Կեղևդ բաց արա» (1975, Ե., «Հայաստան») գրքի կազմը*


«ԴԱՐ», հասարակագիտ. և գրական ժող.: Լույս է տեսել 1889-ին Կ. Պոլսում: Ասիական ընկերության հրատ.: Խմբագիր՝ Եղիա ***Տեմիր-ճիպաշյան:*** Կարևորել է կրթ. գործի բարելավումը, հասարակությանը տնտ. գիտելիքներով զինելու անհրաժեշտությունը: Տպագրել է գեղ. գործեր: Աշխատակցել են Մ. Չերազը, Հ. Ասատուրը և ուր.:

«ԴԱՐ», գրական-գեղ., մշակութ. կիսամսյա, ապա՝ ամսօրյա հանդես: Լույս է տեսել 1959–63-ին Ստամբուլում (1963-ին՝ «Նոր դար»): Խմբագիր՝ Հերմինե Սինանյան: Տպագրել է հայ և օտարազգի (թարգմանաբար) հեղինակների ստեղծագործություններ, մշակութ. նյութեր, նպաստել է Հայրենիք-Սփյուռք գրական-մշակութ. կապերի ամրապնդմանը, ներկայացրել նոր անուններ, նոր հրատ-ներ:

«ԴԱՐԲԻՆ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1911-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Գևորգ Տեր-Ղևոնդյան, Աստղիկ Երիցյան: Լուսաբանել է դպրոց. և մանկավարժ. կյանքը, տպագրել գիտ., մասնավորապես՝ քաղաքատնտ. նյութեր, միջազգ. լուրեր, թարգմանաբար՝ եվրոպ. գրակ-յան նմուշներից: Ունեցել է ֆելիետոնների, երգիծ. մանրապատումների և հայտարարությունների բաժիններ:



«Դար», *1959–63, Սփտմբուլ (№ 23, 1960)*



Արտակ Դարբինյան



Մաթևոս Դարբինյանի
«Երկեր»-ի (1959, Ե., Հայպետհրատ) տիտղոսաթերթը



Ռուբեն Դարբինյան

ԴԱՐԲԻՆՅԱՆ Արտակ Հակոբի, **Նորգեղցի Սախո** (1.3.1878, Վան–17.2.1950, Փարիզ), ազգ.-ազատագր. շարժման գործիչ, լրագրող, հրապարակախոս: Արմենական կազմակերպության անդամ: Ավարտել է Վանի Սբ Թարգմանչաց վարժարանը (1893), Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Եղել է ուսուցիչ Սալմաստում (Իրան): 1905-ից՝ Վարագավանքի դպրոցի տեսուչ: 1916–18-ին՝ ***«Վան-Տոսպ»***, 1919–20-ին՝ ***«Հայաստանի ձայն»*** թերթերի խմբագիր, այնուհետև տեղափոխվել է Կ. Պոլիս: 1922-ի վերջից ապրել է Փարիզում, աշխատակցել «Ապագայ» թերթին: 1946–48-ին գլխավորել է ֆրանսահայերի ներգաղթի կենտր. հանձնաժողովը:

Լույս է տեսել Դ-ի «Հայ ազատագրական շարժման օրերէն» (1947, 2003) երկը:

ԴԱՐԲԻՆՅԱՆ Մաթևոս Կարապետի [14.7.1889, գ. Թովուզ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–19.9.1937], գրող, խմբագիր: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1908), եղել է ուսուցիչ: 1921-ին Թիֆլիսում հիմնադրել և խմբագրել է խորհրդահայ առաջին երգիծ. ***«Կարմիր աքլոր»*** շաբաթաթերթը, եղել է ***«Դարբնոց»*** ամսագրի խմբագրակազմի անդամ: Թիֆլիսում բեմադրվել է Դ-ի «Մինիստրներ» (հրտ.՝ 1924) կատակերգությունը: Նրա «Կիկոսը» (1929) վիպակի հիման վրա Հայֆիլմը նկարահանել է համանուն կինոնկարը (1931):

Լույս են տեսել Դ-ի «Զարթնող գյուղը» (1930) պատմվածքների ժող-ը, «Վերջինը» (1934) վեպը, «Երկերը» (1959), «Ծավիկն ու հատիկը» (1976) հեքիաթների, պատմվածքների, «Կիկոսը» (1983) վիպակների ժող-ները:

Գրկ. **Մելյան Բ.**, *Մաթևոս Դարբինյան: Կյանքը և գործը, Ե., 2009: Մաթևոս Դարբինյան: Կենսագրական ակնարկ (կազմ.՝ Բ. Մելյան), Ե., 1970:*

ԴԱՐԲԻՆՅԱՆ Ռուբեն (Չիլինկարյան Արտաշես Ստեփանի, 1883, Ախալքալաք–1968, Բոստոն), հաս., քաղ., կուս. գործիչ, խմբագիր: Ավարտել է Թիֆլիսի երկրորդ. ռուս. վարժարանը, Մոսկվայի համալսարանը (1906), սովորել Հայդելբերգի, Մյունխենի համալսարաններում: Աշխատակցել է «Մշակ» և «Մուրճ» պարբ-ներին, 1909-ին Կ. Պոլսում հաստատվելուց հետո՝ «Ազատամարտին»: 1913-ին գործել է Գերմանիայում (հետապնդումներից և ամբաստանություններից խուսափելու համար փոխել է անուն-ազգանունը, դարձել Ռուբեն Դարբինյան): Բեռլինում աջակցել է Գերմանա-հայկ. ընկերության (1914) ստեղծմանը: 1917–18-ին՝ ***«Գործ»*** ամսագրի խմբագիր, 1917-ին՝ Թիֆլիսի Հայոց ազգ. խորհրդի քարտուղար, 1920-ին՝ ՀՀ (1918–20) արդարադատության նախարար: Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատումից (1920) հետո բանտարկվել է, ազատվել է 1921-ի Փետրվարյան ապստամբության ժամանակ, որի պարտությունից հետո մեկնել է Թեհրան, ապա՝ Բոստոն, որտեղ 1922-ին խմբագրել է ՀՅԴ-ի ***«Հայրենիք»*** պաշտոնաթերթը և համանուն ամսագիրը [տպագրվել են նաև Դ-ի պատմագիտ. մի շարք հոդվածներ («Ինչ պայմաններու մէջ ծնունդ առավ Հայաստանի Հանրապետութիւնը», «Ինչ կարելի է սպասել Ստալինի հաջորդներից», 1953, ևն]: 1972-ին հրատարակվել է Դ-ի «Երկերը» (հ. 1, 1972, Բ.):


Գրկ. Ռոբէն Դարբինեան, «Հայրենիք», 1969, հուլիսի 14–16:

ԴԱՐԲԻՆՅԱՆ Վասակ Էնգելսի [ծ. 18.7.1959, գ. Վերին Կարմիրաղբյուր (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1982): 1982–85-ին աշխատել է «Երևանի համալսարան», 1996–99-ին՝ «Առավոտ», 2009–12-ին՝ «Ժամանակ» (2011–12-ին՝ պատ. խմբագիր) թերթերի խմբագրություններում, 1999–2001-ին, միաժամանակ՝ «Հ1» (այժմ՝ «1»), «Արմենիա», «A1+» հեռուստաընկերություններում՝ որպես խմբագիր: 1991–93 և 2006–08-ին՝ ***«Հայք»***, 1994–95-ին՝ ***«02»***, 2001–02-ին՝ «Այբ-Ֆե», 2001–10-ին՝ ***«Տարեգիր»*** թերթերի և «Տարեգիր. am» կայքի գլխ. խմբագիր: 2014-ից՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի փորձագետ:

«ԴԱԲՆՈՑ», գրական-գեղ., քննադատ. ամսագիր: Վրաստանի պրոլետ. գրողների ընկերակցության հրատ.: Լույս է տեսել 1922–23-ին Թիֆլիսում: Խմբագրակազմ՝ Հակոբ *Հակոբյան*, Մովսես *Արագի*, Մաթևոս *Դարբինյան:* Լուսաբանել է ընկերակցության հայկ. մասնաճյուղի աշխատանքները: Տպագրել է բանաստեղծություններ և արձակ գործեր, գրախոսել հայ գրողների երկերից: Անդրադարձել է գրակ-յան և արվ-ի խնդիրներին:

«ԴԱՐՋ», հանդես: «Ազգայնական ակումբ» ՀԿ-ի հրատ.: Լույս է տեսել 2000–02-ին Երևանում: Խմբագիր՝ Մուշեղ *Լալայան*: Տպագրել է նյութեր ազգ. գաղափարախոսության (Գ. Նժդեհ, Հ. Ասատրյան և ուր.), աշխարհաքաղաքականության, ազգ-ազատագր. պայքարի տեսագործն. հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև հատվածներ՝ հայ և օտարազգի անվանի ազգ. գործիչների գրական ժառանգությունից:

«Ազգայնական ակումբը» «Ազգայնական միտք» մատենաշարով հրատարակել է նաև 20 անուն գիրք (Գ. Նժդեհի, Հ. Ասատրյանի, Լ. Շանթի, Զարևանդի և ուր. երկերից): Ավագ Հարությունյան



«Դարձ», *2000-02, Երևան (№ 5, 2001)*

«ԴԱՐՄԱՆ», բժշկաառողջապահ. և գիտ. պատկերազարդ ամսագիր: Կ. Պոլսի հայ բժշկ. միության հրատ.: Լույս է տեսել 1920–22-ին (1921–22-ին՝ «Դարման-Հայ բուժակ») Կ. Պոլսում: Խմբագիր՝ Օննիկ Փափազյան: Մեծ տեղ է հատկացրել ընտանեկան ու դպրոց. առողջապահ-յան խնդիրներին, տպագրել հանրամատչելի նյութեր տարափոխիկ հիվանդությունների և դրանց կանխարգելիչ միջոցառումների մասին: Լուսաբանել է Կարմիր խաչի ընկերության Կ. Պոլսի և գավառի մասնաճյուղերի գործունեությունը: Ունեցել է ֆրանս. բաժին:

ԴԱՐՅԱՆ Արմեն Հովսեփի (Ադդարյան Ալֆոնս, 1924, Հալեպ–1.1.1990, Հալեպ), գրող, թարգմանիչ: Գառնիկ *Ադդարյանի* եղբայրը: Սովորել է Հալեպում, ավարտել Վենետիկի Մխիթարյանների դպրոցը, ապրել է Բեյրութում: Դ-ի առաջին ստեղծագործությունները տպագրվել են «Անի», «Յառաջ», «Յառաջ գրական», «Երկիր» և այլ պարբ-ներում:



Արմեն Դարյանի *«Լեռը եւ տունը» (1982, Անթիլիաս) գրքի փիփղոսաթերթը*

Բեյրութում լույս են տեսել Դ-ի «Մեր հացը» (1956, 1988, Ե.), «Խարիսխէն հեռու» (1964), «Լեռը եւ տունը» (1982), «Երկու եղանակ» (1991), Երևանում՝ «Կարոտ և կյանք» (1963), «Խարիսխին մոտ» (1973), Մոսկվայում՝ «Հայրենիքից հեռու» (ռուս., 1968) պատմվածքների, վիպակների ժող-ները, «Նախագահին կօշիկները» (1991, Բ.) վեպը, «Էջեր գրականութեան եւ արուեստի» պարբ-ում՝ «Ակնարկ հայ-արաբ մշակութային կապերուն վրայ» (1972) ուսումնասիրությունը: Դ-ի խմբագրությամբ հրատարակվել է «Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց» (Բ., 1988) երկը: Ֆրանս-ից հայ. է թարգմանել արաբ գրող Ժ. Շահատեի «Վասքոյի հեքիաթը» (1964) դրաման:

Երկ. Զաւակի մը համար: Հատընտիր, Բ., 1995: Նամակներ (գրած և սպացած), Ե., 2010: Մսրեան բանաւոր խօսքի, Բ., 2012:

ԴԱՐՅԱՆ (Մովսիսյան) Զարզանդ Մովսեսի [25.2.1912, գ. Կոփ (Տարոնի գավառ)–28.10.1984, Երևան, թաղված է ՀՀ Կոտայքի մարզի Բուժական գ-ում], գրող: Ավարտել է ԵՊՀ (1939): 1939–53-ին աշխատակցել է «Ավանգարդ», «Գրական թերթ», «Սովետական գրականություն և արվեստ» պարբ-ներին:



Զարզանդ Դարյանի *«Սայաթ-Նովա» (գիրք 2, 1963, Ե., Հայպետհրատ) վեպի փիփղոսաթերթը*


Լույս են տեսել Դ-ի «Քննություն» (1953) վիպակը, «Մայիս» (1957), «Սայաթ-Նովա» (գիրք 1, 2, 1960, 1963), «Արծիվ Վասպուրականի» (1965, 1988), «Այս հին աշխարհը» (1974), «Քառուղիներ» (գիրք 1–2, 1981–82), «Արևագալ» (1990) վեպերը, «Ասք Նգա» (1983) պատմահայրենագիտ. ակնարկը, «Մեր համր, մեր հազարալեզու հողը» (1985) վավերագր. պատումը, «Գարուն» (1949), «Արձագանք» (1959), «Վերջին թռիչք» (1967), «Հասմիկ» (1969), «Այսպիսի սեր» (1986) պատմվածքների, հեքիաթների, գրույցների, դրամաների ժող-ները, «Հանրապետության նախագահը» (1971, բեմ.՝ 1970, Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոն), «Մի օրվա կյանք» (1971) պիեսները, «Երկերը» (հ. 1, 1976):

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (1971):

Գրկ. **Մուրադյան Հ.,** *Զարզանդ Դարյան, Ե., 2001: Զարզանդ Դարյան: Կենսամատենագիտություն (կազմ.՝ Վ. Պետրոսյանց), Ե., 1988:*



Վահան Դաքեսյանի *«Միջօրեից հետո» (1970, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



«Դե ֆակտո», *2006-ից, Երևան (№ 2, 2013)*



Ժերար Դեդեյանի *«Հայ ժողովրդի պատմություն» (իտալ., 2007) գրքի կազմը*

ԴԱՐՎԻՇ [Սևրուկյան, Սևրյուգին Անդրե, 1896, Թեհրան–1997, Հայդելբերգ (Գերմանիա)], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Սովորել է Թեհրանի ֆրանս. վարժարանում, Փարիզի գեղարվ-ի դպրոցում: Թեհրանում շուրջ 9 տարի նկարազարդել է «Շահնամե» ժող-ները (416 պատկեր, որից 100-ը Բոմբեյի թանգարանում են, ցուցադրվել են Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի առթիվ, 1934): Օմար Խայամի և Բաբա Թահերի քառյակների, Հաֆեզի գազելների հիման վրա ստեղծել է նկարաշարեր:

ԴԱՈՒՍԵԹ (Dowsett) Չառլզ (2.1.1924, Լոնդոն–8.1.1998, Լոնդոն), անգլիացի հայագետ, Օքսֆորդի համալսարանի «Գալուստ Կյուլպենկյան» հայագիտ-յան ամբիոնի առաջին պրոֆ-ը (1965–91): Անգլ. է թարգմանել ***Մովսես Դասխուրանցու*** «Պատմություն Աղվանից» (1961) և ***Դավիթ Ալավկա Որդու*** «Խրատք կանոնականք» (1961) երկերը: Առանձին ուսումնասիրություն է նվիրել քյոթահիահայերի արհեստագործությանն ու արվ-ին (1972) և Սայաթ-Նովային (1996): Քննել է Եզնիկ Կողբացու տեղեկությունները քաղդեացի աստղագետների մասին, Կ. Պոլսի պատրիարք Ստեփանոս Ա-ի ընդօրինակած Սաղմոսարանի (Օքսֆորդի Բոդլեյան գրադարան) հիշատակարանը: Ստուգաբանել է հայ. **տէր, տիկին, տիեզերք, նիւթ, հիւթ** բառերը: Գրել է ուսումնասիրություններ հայկ. մանրանկարների ու զարդարվ-ի նմուշների մասին. պահվում են Բրիտ. թանգարանում (1652-ի Հայսմավուրք) և Լիսաբոնում (1687-ի ոսկե տապանակ): Գրախոսել է ՀԽՍՀ ատլասը (1961): 1962-ի աշնանը եղել է Հայաստանում, ուսումնասիրել Մատենադարանի ձեռագրերը:

«ԴԱՓՆԻ», կիսամսյա, ապա՝ ամսօրյա կրոն. հանդես: Լույս է տեսել 1921–22-ին Զմյուռնիայում: Արտոնատեր և տնօրեն՝ Համպեր Զվանշիր: Խմբագիր՝ Ղևոնդ ***Դուրյան***: Տպագրել է կրոնաբարոյական բովանդակությամբ հոդվածներ, եկեղեց. տոները, արարողությունները ու ծեսերը մեկնաբանող ճառեր ու քարոզներ, բարոյախոս. առածներ: Լուսաբանել է դպրեվանքների ուսումնակրթ. առօրյան, զմյուռնահայ համայնքի կյանքը: Աշխատակցել են Տ. Պալյանը, Ս. Պալապանյանը, Ալփասլանը (Ա. Փանոսյան) և ուր.:

ԴԱՔԵՍՅԱՆ Վահան Տիգրանի [7.5.1905, ք. Ադանա (Կիլիկիա)–10.12.1982, Երևան], գրող, խմբագիր: 1921-ին տեղափոխվել է Հունաստան: 1936–37-ին՝ «Նայիրի» ամսագրի խմբագիր, 1937–39-ին՝ ***«Վերածնունդ»*** թերթի պատ. քարտուղար, 1944-ին՝ «Երևան» երկօրյա թերթի, 1945–46-ին՝ ***«Նոր կեանք»*** (բոլորը՝ Աթենքում) օրաթերթի խմբագիր: 1946-ին հայրենադարձել է: 1946–71-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում:

Լույս են տեսել Դ-ի «Հանգրվաններ» (1946), «Հայրենի հողին վրա» (1947), «Արևոտ ուղիներում» (1963), «Միջօրեից հետո» (1970) բանաստեղծությունների, «Ակրոպոլիսի մատույցներում» (1958), «Ընդհատված գարուն» (1965), «Առաջին առավոտից հետո» (1974), «Աղմկոտ արահետներ» (1981), «Խլացող ոտնաձայներ» (1983) վիպակների, պատմվածքների ժող-ները:

Հանդես է եկել նաև Միջյուն, Վ. Սիհուն, Ս. Հրայր կեղծանուններով:

«ԴԵ ՖԱԿՏՈ», հաս-քաղ. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսնում 2006-ից Երևանում՝ հայ., ռուս., անգլ.: Հիմնադիր-խմբագիր՝ Մերուժան ***Տեր-Գրիգորյան***, խմբագիր՝ Մենուա Հարությունյան (2008-ից): Անդրադառնում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում և աշխարհում տեղի ունեցող հաս-քաղ. կարևոր իրադարձություններին, տպագրում է նաև մշակութ., առողջապահ., մարզ. նյութեր:

«Դարի միջազգային որակ» («Century International Quality Era Award») մրցանակաբաշխության «Ոսկե աստղ» մրց. (2011):

ԴԵԴԵՅԱՆ (Տետեյան) Ժերար (Ժիրայր) Շառլի [ծ. 4.2.1942, ք. Նանտ (Ֆրանսիա)], պատմաբան, բանասեր, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1991): ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (2004): Մոնպելիեի Պոլ Վալերի համալսարանի պատվ. պրոֆ.: Սովորել է Փարիզի

«Էկոլ Նորմալ Սյուպերյորի», Սորբոնի (դաս. լեզուներ և գրակ.) և Արլ. լեզուների ազգ. դպրոցի (հայ–ը՝ Ֆ. Ֆեյդիի ղեկավարությամբ) բարձրագույն ուս. հաստատություններում: 1969–ից դասավանդում է Մոնպելիեի Պոլ Վալերի համալսարանի միջին դարերի պատմության բաժանմունքում, 2005–ից՝ *«Աշխարհ»* պարբ–ի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Դ–ի «Սմբատ Սպարապետին վերագրվող ժամանակագրությունը» (1980), «Հայերը. մի քրիստոնեության պատմություն» (1980), «Միջերկրածովյան Մերձավոր Արևելքի հայկական իշխանությունները (1068–1144)» (1980), «Հայերը հույների, մահմեդականների և խաչակիրների միջև (1068–1150)» (2003), «Հայ ժողովրդի պատմություն» (համահեղ., 1982, իտալ.՝ 2007), «Հայոց եկեղեցին հույների և լատինների միջև. XI դ. վերջ–XV դ.» (2009), «Սոցիալական զարգացումները միջնադարում Արևելքում և Արևմուտքում» (2010, բոլորը՝ ֆրանս.) աշխատությունները: Ֆրանս. է թարգմանել և ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակել Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» (1980):


ԵՊՀ պատվ. դ–ր (1984), Մոնպելիեի գիտ–յան և գրակ–յան ակադ–ի անդամ (1966):


Деловой Экспресс
Тревожная тенденция

«Դելովոյ էքսպրես», *1992–ից, Երևան*

«ԴԵԼՈՎՈՅ ԷՔՍՊՐԵՍ» («Деловой Экспресс»–«Գործարար ճեպընթաց»), տնտ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1992–ից Երևանում՝ ռուս.: Խմբագիր–հրատարակիչ՝ Էդուարդ Նաղդալյան: Լուսաբանում է ՀՀ գործարար միջավայրի խնդիրները, ծանոթացնում տարածաշրջանի երկրների տնտ. կյանքին, ներկայացնում է առանձին ոլորտների արդիական խնդիրները:

ՌԴ Կառավարության պատվոգիր (2012):



«Թուրքահայաստանի մասին» դեկրետի *ձեռագիր 1 էջ*

ԴԵԿՐԵՏ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ», հռչակագիր Արմ. Հայաստանի ինքնորոշման վերաբերյալ: Հրապարակվել է «Պրավդա» (ռուս.) թերթի 1917–ի դեկտ. 31 (1918–ի հունվ. 13)–ի (№ 227), «Բանուորի կռիւը» թերթի 1918–ի հունվ. 25–ի (№ 17) համարներում: Հաստատվել է 1918–ի հունվ. 15 (28)–ին Սովետների համառուսաստանյան III համագումարում:

Դեկրետը կազմել են Հայկ. հարցը բնութագրող և նրա լուծման ուղիները մատնանշող զեկուցագրի հիման վրա՝ Վ. Լենինի հանձնարարությամբ: Հեղինակներ՝ Վ. Ավանեսով, Վ. Տերյան, Ս. Լուկաշին, Պ. Մակինցյան և ուր.: Հավանաբար, դեկրետի մշակմանը մասնակցել է նաև Ս. Շահումյանը, որը բազմիցս հանդես էր եկել Արմ. Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքի պաշտպանությամբ:

Գրկ. Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1823–1923), Ե., 1972: **Արզումանյան Մ.,** *Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973:* **Խուրշուդյան Լ.,** *Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Ե., 1977:*

ԴԵՄԻՐՃՅԱՆ (Դեմիրճօղլյան) Դերենիկ Կարապետի [17(29).01.1877, Ախալքալաք–6.12.1956, Երևան], գրող, գրականագետ–քննադատ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1953): Արվ. վաստ. գործիչ (1940): Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1892–94), ավարտել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1898), ուսումը շարունակել է Ժնևի համալսարանում (1905–09): Հովհաննես *Թումանյանի* նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծված *«Վերնապարան»* (1899) գրական ընկերության հիմնադիր–անդամներից է: 1910–ին դասավանդել է Թիֆլիսի Մարիամյան–Հովնանյան օրիորդաց դպրոցում: 1925–ից ապրել է Երևանում:



Դերենիկ Դեմիրճյան

Լույս են տեսել Դ–ի «Բանաստեղծութիւններ» (գիրք 1, 2, 1899, 1913, Թ., Մարկիանոս Ռոտինյանի և Նվարդ Աղանյանի տպ–ներ), «Դէպի տիեզերք» (1913, Թ., Ա. Կերեսելիձեի տպ.), «Գարուն» (1920, Թ., «Սամուլ» տպ.) բանաստեղծությունների և քառյակների ժող–ները:

Հոգեբանախոհ. խոր վերլուծություններով են աչքի ընկնում Դ–ի 1910–ական թթ–ին գրած պիեսները («Վասակ», 1912, «Դատաստան», 1916, «Յովնան Մենծատուն», 1919), պատմվածքները («Մեփականություն», «Տերտերը», «Ավելորդը», «Ստամոքս», «Խանութպան»): «Միայն մեկը» (1922, հրտ.՝ 1926), «Հանգստի տանը» (1924), «Կայարանի Ակոբը» (1925), «Մերկե» (1927), «Սաթոն» (1929) պատմվածքների, «Ռաշիդ» (1929), «Նիգյար» (1930) վիպակների,

ինչպես նաև բազմաթիվ ակնարկների, ֆելիետոնների թեման 1920–30-ական թթ-ին ձևավորվող հաս. նոր հարաբերություններն ու տեղաշարժերն են:

Դ-ի այս շրջանի ստեղծագործության գլուխգործոցը «Քաջ Նազար» (1923–24, բեմ.՝ 1924, համանուն կինոնկար՝ 1940) կատակերգությունն է, որի հենքը նույնանուն ժող. հեքիաթն է:

1930-ական թթ-ին հաս. կյանքի բացաս. երևույթներն են ընդհանրացված «Ֆոսֆորային շող» (1932) և «Նապոլեոն Կորկոտյան» (1934) պիեսներում: 1930-ական թթ-ի 2-րդ կեսին և 1940-ական թթ-ին անդրադարձել է պատմ. թեմատիկային («Գիրք ծաղկանց», 1935, պատմվածք, «Երկիր հայրենի», 1937–39, պիես, բեմ.՝ 1940): «Վարդանանք» պատմավեպի (գիրք 1, 2, 1943, 1946, վերամշկ. հրտ.՝ 1951, 1954, հ. 1–2, 1956, Կահիրե, հ. 1–2, 2012) հիմքում հայրենիքի պաշտպանության թեման է, Վասակ Սյունու և Վարդան Մամիկոնյանի գլխավորած հակադիր ուղղությունների պայքարը:

Կյանքի վերջին տարիներին սկսել է գրել «Մեսրոպ Մաշտոց» վեպը, որն անավարտ է: Ստեղծագործել է նաև մանուկների համար («Պույպույ մուկիկը», 1934, «Արջուկ-լրջուկը», 1944, «Ծտապար», 1947, ևն): Թարգմանել է Ա. Պուշկինի, Ն. Գոգոլի, Ա. Չեխովի և ուր. ստեղծագործություններից:

Հրատարակվել են նաև Դ-ի «Երկերը» (հ. 1, 1946), «Երկերի ժողովածուն» (հ. 1–8, 1955–63, հ. 1–14, 1976–87), «Ընտրանին» (2012):


Դ-ի անունով կոչվել են փողոցներ, դպրոցներ Երևանում, Ախալքալաքում և այլ քաղաքներում: Երևանում գործում է Դ-ի տուն-թանգարանը (1977-ից): ՀԳՄ-ն սահմանել է Դ-ի անվան ամենամյա գրական մրց. (1980-ից):

ԽՍՀՄ Լենինի (1939) և Աշխատանքային կարմիր դրոշի (1945, 1956) շքանշաններ:

Դերենիկ Դեմիրճյան



«Քաջ Նազար» (1973, Ե., «Հայաստան», ձևավորող՝ Ա. Բեքարյան) գրքի կազմը



«Վարդանանք» (հ. 1, 2012, Ե., «Բուկինիստ») գրքի կազմը

Գրկ. **Հախումյան Տ.,** *Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան, Ե., 1958:* **Մուրադյան Հ.,** *Դերենիկ Դեմիրճյան, Ե., 1961:* **Թամրազյան Հ.,** *Դերենիկ Դեմիրճյան, Ե., 1977:* **Դերենիկ Դեմիրճյան.** *Տարեգրություն, մատենագիտություն, Ե., 1977:* **Անանյան Գ.,** *Դեմիրճյանը և պատմությունը, Ե., 1977:* **Հունանյան Ա.,** *Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան, Ե., 1988:* **Ժամանակակիցները Դ. Դեմիրճյանի մասին (հուշագրություն),** *Ե., 1997:* **Խաչատրյան Մ.,** *Դերենիկ Դեմիրճյանի երգիծանքը, Ե., 2004:*

ԴԵՄԻՐՃՅԱՆ Պետրոս Հակոբի (ծ. 30.5.1950, Երևան), գրականագետ, թարգմանիչ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1981): Ավարտել է ԵՊՀ (1972): 1972–98-ին աշխատել է «Գրական թերթի» խմբագրությունում, 1998–2000-ին՝ ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության բաժնի վարիչ, 2000–09-ին՝ ՀՀ Կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխ. մասնագետ, 2010-ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի ավագ գիտաշխատող, 2013-ից՝ ՀԳՄ քարտուղար:

Լույս են տեսել Դ-ի «Ժամանակը և գրականության զարգացումը» (1986), «Վարք Ինտրայի» (2003) աշխատությունները: Ռուս-ից թարգմանել է Վ. Սանսոնեի, Ա. Գալանոպուլոսի, Հ. Դուրբախի, Ն. Պետրովիչի ստեղծագործություններից:

ՀԳՄ Ն. Աղբալյանի անվ. մրց. (2004):


ԴԵՄԻՐՃՅԱՆ Վարդան (ավազանի անունը՝ Հովսեփ, 20.4.1939, Բեյրութ–9.10.2012, Անթիլիաս), եկեղեց. գործիչ, արքեպիսկոպոս, մատենագետ, խմբագիր: Սովորել է Անթիլիասի դպրեվանքում (1952–58), հետևել է Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանի աստվածաբանության և իմաստասիրության դասընթացներին (1958–61): Եղել է Անթիլիասի Մայրավանքի տպարանի, ապա՝ գրատան վարիչ, 1961–63-ին՝ Հայաստանյայց եկեղեցու կիրակնօրյա վարժարանների վարիչ-տնօրեն և *«Դրազարկ»* տարեգրքի հիմնադիր-խմբագիր: 1963–69-ին՝ Ատրպատականի, 1969–71-ին՝ Հունաստանի հայոց թեմերի առաջնորդ: 1972-ից գործել է Անթիլիասում, 1977-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, ցկյանս վարել է մատենադարանի և թանգարանի տնօրենի պաշտոնները: Կազմել է «Ցուցակ ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան» (1959), «Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային-եկեղեցական թանգարանի» (1977, Անթիլիաս) մատենագիտությունները, «Ծաղկեփունջ քարոզներու եւ ուսումնասիրութիւններու (1957–1981)» (1981, Բ., «Տոնիկյան» տպ.), «Դիմաստուերներ» (1983, Բ., «Արազ» տպ.) ուսումնասիրությունները: Աշխատակցել է «Հասկ» և այլ պարբ-ների:

ԴԵՇԼԻՈՒ Դան Կոստանտին (31.7.1927, Բուխարեստ–4.9.1992, Բուխարեստ), հայազգի ռումինագիր բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Բուխարեստի կոնսերվատորիան (1947): Ճանաչվել է «Սրտի շեփորներ» (1949), «Լազրը Ռուսկայից» (1949, Պետ. մրց.) ժող–ներով:

Լույս են տեսել Դ–ի «Մարամուրեշի հանքափորները» (1951), «Ավերակի երգը» (1957), «Ծառի շրջանակը» (1969), «Երազ և արթնություն» (1972), «Փտած վահանը» (1981) բանաստեղծությունների ժող–ները: Վիկտոր Տուլբուրեի հետ ռում. է թարգմանել և հրատարակել «Նահապետ Քուչակի տաղերը» (1963) ժող–ը: Դ–ի մի շարք բանաստեղծություններ թարգմանվել են հայ., տպագրվել «Ռումինական քնար: Ընտիր էջեր» (1964) ժող–ում:

1978–ին այցելել է Խորհրդ. Հայաստան:

«ԴԵՊԻ ԱՊԱԳԱ», ազգ., հաս., մշակութ. եռամսյա հանդես: Ուզբեկստանի հայկ. ազգ., մշակութ. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 2008–ից Տաշքենդում՝ հայ., ռուս.: Հիմնադիր–խմբագիր՝ Գեորգի Սահակով: Լուսաբանում է Ուզբեկստանի հայկ. համայնքի առօրյան, ազգ., կրթ., մշակութ. միջոցառումները: Անդրադառնում է ՀՀ–ում, ԼՂՀ–ում և Սփյուռքում տեղի ունեցող համահայկ. կարևոր իրադարձություններին, Հայկ. հարցի և Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին, Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներին:




«Դեպի ապագա», *2008–ից, Տաշքենդ (№ 2, 2010)*

«ԴԵՊԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ամսագիր: ՀԽՍՀ լուսժողկոմատի հրատ.: Լույս է տեսել 1931–32–ին Երևանում: Խմբագիրներ՝ Ա. Ստեփանյան, Սերիկ *Դավթյան*, Ե. Թերզյան: Լուսաբանել է լիկկյանների աշխատանքը: Աշխատակցել են Սիմակը, Ա. Եղիազարյանը, Ս. Մովսիսյանը, Ռ. Գաբրիելյանը, Հ. Անդրիասյանը և ուր.:

ԴԵՎ (Ղևոնդ Արշակի Մարգար, 1901, Թեհրան–8.4.1976, Թեհրան), բանաստեղծ, նկարիչ: Կրթությունն ստացել է ծննդավայրի և Նոր Ջուղայի հայկ. դպրոցներում: Երկար տարիներ ղեկավարել է «Միտք» գրական–գեղ. միությունը, նախագահել «Նոր էջ» գրական խմբակցությունը: 1924–25–ին խմբագրել է «Նոր պատգամ» (Թեհրան) գրական–գեղ. ամսագիրը, «Իրանահայ արդի գրողներ» ժող–ը:

Լույս է տեսել Դ–ի «Իմ երգերը» (1947, Թեհրան, «Փարոս»), «Այս երկար ճամփան» (1963), «Հատընտիր» (1973), «Սրտի ձայներ» (1974) բանաստեղծությունների ժող–ները: Նրա 2 տասնյակից ավելի բանաստեղծությունները վերածվել են երգի (կոմպոզիտոր՝ Նիկոլ Գալանդերյան):



Դևի *«Իմ երգերը» (1947, Թեհրան) գրքի կազմը*

ԴԵՎԵՋՅԱՆ (Տևեճյան) Հովհաննես Հակոբի, **Արմեն Սևան** [15.1.1892, գ. Մաշկերտ (Խարբերդի գավառ)–4.5.1976, Բուենոս Այրես], հաս–քաղ. գործիչ, գրող, լրագրող, խմբագիր, մանկավարժ: Հրանտ *Դևեջյանի* եղբայրը: ՀՅԴ կուս–յան անդամ: 1903–ին ընտանիքի հետ տեղափոխվել է Հալեպ: Ավարտել է տեղի Ներսեսյան (1908), Կ. Պոլսի Պերպերյան (1911) վարժարանները, Կ. Պոլսի համալսարանը (1914) և Պահեստի սպայական վարժարանը (1915): 1918–ին Սոֆիայում խմբագրել է *«Հայաստան»* թերթը, 1933–35–ին՝ «Մասիս» տարեգիրքը: 1919–ին Երևանում մասնակցել է ՀՅԴ IX ընդհանուր ժողովին, նշանակվել Հայաստանի առաջին հանրապետության Նախարարների խորհրդի քարտուղարության հայկ. բաժնի վարիչ: Եղել է Լեռնահայաստանի Հանրապետության (1920–ի դեկտ.–1921–ի հուլիս) արդարադատության և կրթության նախարար: 1925–34–ին Սոֆիայում խմբագրել է *«Արաքս»* օրաթերթը, 1934–44–ին՝ Բուխարեստի ազգ. վարժարանների տնօրեն:

1947–ին խորհրդ. գործակալները Բուխարեստում ձերբակալել են Դ–ին և տեղափոխել Մոսկվա, ապա՝ Երևան: Դատապարտվել է 20 տարվա ազատազրկման. պատիժը կրել է Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի բանտում (Գարեգին *Նժդեհի* հետ նույն բանտախցում): Ազատվել է 1956–ի սեպտ–ին և ընտանիքով մեկնել Բուենոս Այրես, խմբագրել է *«Արմենիա»* օրաթերթը, 1963–73–ին եղել է Խրիմյան կրթ. հիմնարկության տնօրեն:



Հովհաննես Դևեջյանի *(Արմեն Սևան) «Նահապետ գրողներ» (գիրք Ա, 1931, Սոֆիա) գրքի կազմը*

Լույս են տեսել Դ-ի «Նահատակ գրողներ» (1931), «Երգեր բանտէն» (1959), «Նահատակ բանաստեղծներ» (1961), «Վերջալոյսի տաղեր» (1972), «Կեանք եւ երազ» (1973) արձակ ու չափածո ստեղծագործությունները, «Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիներ Գ. Նժդեհի հետ» (1970, 2008) հուշագրությունը:



Գևորգ Դևրիկյան

ԴԵՎԵՋՅԱՆ (Տևեճյան) Հրանտ Հակոբի (21.12.1903, Հալեպ–30.7.1949, Երևան), հաս. գործիչ, խմբագիր, մանկավարժ: Հովհաննես *Դևեջյանի* եղբայրը: Ավարտել է Պրահայի համալսարանը (1931): 1931–37-ին դասավանդել է Սիրիայի հայկ. դպրոցներում: 1938–47-ին՝ Բեյրութի *«Առաւօտ»* օրաթերթի հիմնադիր-խմբագիր: 1947-ին հայրենադարձել է:

Լույս են տեսել Դ-ի «Աշխարհագրութիւն Սուրիոյ եւ Լիբանանի» (1933), «Աշխարհագրութիւն Հայաստանի» (1934), «Հոկտեմբերեան յեղափոխութիւնը եւ Հայաստանի սովետացումը» (1944) աշխատությունները:



Գ. Դևրիկյանի *«Մանկության փունը» (1989, Ե., «Արևիկ», ձևավորող՝ Խ. Հակոբյան) գրքի կազմը*

ԴԵՎՐԻԿՅԱՆ Գևորգ Խաչատուրի (1.10.1937, Դոնի Ռոստով–5.9.1996, Երևան), արձակագիր, հրապարակախոս, խմբագիր: Վարդան *Դևրիկյանի* հայրը: Ավարտել է ՀՊՄԻ (1961): 1961–62-ին աշխատել է «Երևան», 1962–67-ին՝ «Կոմունիզմի ուղիով» պարբ-ների խմբագրություններում: 1967–74-ին՝ ՀԽՍՀ հրատարակչությունների և մամուլի պետ. կոմիտեի, 1974–82-ին՝ *«Սովետական գրող»*, 1986–96-ին՝ *«Արևիկ»* հրատարակչությունների գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Դ-ի «Վիրավոր կռունկ» (1978), «Տրդատ ճարտարապետ» (1983), «Գոյամարտ» (1986) վեպերը, «Երկրագունդը կլոր է» (1985) վիպակը, «Մաքառում: Գիրը մնաց հիշատակող» (1980), «Մանկության տունը» (1989), «Պատմվածքներ» (1997) պատմվածքների ժող-ները, «Սրբացած հուշարձան» (1975), «Ճակատագրի ճանապարհներ» (համահեղ., 1978), «Հարգանք» (1987) հրապարակախոս. հոդվածների ժող-ները, «Հայոց մեծերը: Ակնարկ-էսսե-ներ»-ը (2012):

ԴԵՎՐԻԿՅԱՆ Վարդան Գևորգի (ծ. 18.5.1964, Կիրովական), բանասեր, խմբագիր: Գևորգ *Դևրիկյանի* որդին: Բանասիր. գիտ. դ-ր (2013): Ավարտել է ԵՊՀ (1986): 1991–92-ին խմբագրել է «Գթություն» բարեգործ. միության նույնանուն պարբ-ը, 1990–94-ին մասնակցել է Արցախյան պատերազմին՝ որպես «Երկիր» և «Հայ զինվոր» թերթերի հատուկ թղթակից, 1993–99-ին՝ *«Էջմիածին»* ամսագրի խմբագրի տեղակալ, 2002–09-ին՝ գլխ. խմբագիր, 1997–2009-ին, միաժամանակ՝ Սայր աթոռի ձեռագրատան վարիչ: 2009–15-ին՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ-յան ինստ-ի փոխտնօրեն, 2015-ից՝ տնօրեն:

Լույս են տեսել Դ-ի «Երուսաղեմի հայ ուխտավորը» (1999), «Լուսավորչի կանթեղը» (2001), «Սրբալույս Մյուռոն» (2-րդ հրտ.՝ 2008), «Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում», «Նարեկյան էջեր Սուրբ Էջմիածնի ձեռագրերից» (երկուսն էլ՝ 2003), «Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը» (2006), «Վարդանանք և հայ երիտասարդությունը», «Էջեր հայոց պատմության», «Խորհրդավոր ընթրիք: Հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո» (երեքն էլ՝ 2008) աշխատությունները: Դ-ի աշխատասիրությամբ 2008-ին հրատարակվել են «Մատենագիրք հայոց» մատենաշարի «Գանձարան» գրքի ԺԳ և ԺԴ հատորները (միջնադարյան գանձերի քնն. բնագրեր):



Վարդան Դևրիկյանի *«Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» (մաս Բ, 2014, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

Երկ. Չսկսված և չավարտված պատերազմը, Ե., 2004, 2014: Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը, Ե., 2009: Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Ա–Բ, Ե., 2012, 2014: Հայ միջնադարյան գանձերը և «Գանձարան» ժողովածուն, Ե., 2013:

ԴԶՆՈՒՆԻ (Ուզունբաջաղյան) Դանիել Մարտինի [2(14).10.1895, Կարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ՝ Ղրիմում)–30.10.1967, Երևան], արվեստաբան: Արվ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1917): Հայկ. կինոյի հիմնադիրներից է: 1923–32-ին (ընդհատումներով)՝ Հայկինոյի տնօրեն:

Լույս են տեսել Դ-ի «Հայ կինոյի զարգացման ուղիները» (1927), «Հայ կինոն 10 տարում» (1933), «Ուրվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության» (1961), «Համբարձում Խաչանյան» (1967), «Նինա Մանուչարյան» (1960) աշխատությունները: Կազմել է «Հայ կերպարվեստագետներ» (1977) համառոտ բառարանը: Բռնադատվել և աքսորվել է (1937–43), արդարացվել է 1954-ին:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի 2 շքանշան:

«ԴԷՊԻ ԵՐԿԻՐ», գրակ–յան և արվ–ի պարբերագիրք: Հայ–րենաբաղձ հայերի ընդհանուր միության, հետագայում՝ Խորհրդ. Հայաստանի հետ մշակութ. կապի հալեպահայ ընկերակցության հրատ.: Լույս է տեսել 1945–47 և 1949–ին Հալեպում: Խմբագրակազմ՝ ***Արարատ*** (Անդրանիկ Նաճարյան), Մարտիրոս ***Գուշագ͗յան***, Հայկ Ալեքսանյան, Պետրոս Պարգև: Նպաստել է հարենադարձությանը: Տպագրել է խորհրդահայ, սփյուռքահայ և արաբ. գրողների գործեր: Աշխատակցել են Վահե–Վահյանը, Զ. Մելքոնյանը, Մ. Սեզան և ուր.:

«ԴԷՊԻ ԼՈՅՍ», գրական–քաղ. ամսաթերթ (սկզբում՝ շաբաթա–թերթ): Հրատարակվել է 1949–53–ին Ստամբուլում (1949–50–ին՝ «Լոյս»): Վարիչ–խմբագիրներ՝ Ռուբեն Մաշոյան, Երվանդ ***Կոտճյան:*** Տպագրել է սփյուռքահայ գրողների գործերի գրախոսություններ, անդրադարձել արվ–ի հարցերին, մշակութ. ընկերությունների աշխատանքին, տպա–գրել լուրեր Խորհրդ. Հայաստանի մշակութ. և գիտ. առաջընթացի մա–սին: Հրատարակել է նաև «Դէպի լոյս» գրական մատենաշարը (4 գիրք):

«ԴԺՈԽՔ ԲԱՑԵԱԼ», հիսուսյան քարոզիչ Հովհաննեսի գիրքը՝ դժոխային տանջանքների մասին: Իտալ–ից թարգմանել են Մխիթար Սեբաստացու աշակերտները: Տպագրվել է 1753–ին Վենետիկում՝ Ստեֆանո Օղանդոյի տպարանում: Տիտղթ–ին՝ «Դժոխք բացեալ. այս է մտածութիւն ի վերայ տանջանացն դժոխոց» (260 էջ, 12º և 6º, 9,2 x 5 սմ): 1783–ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ հայատառ թուրք.: Ա տիտղթ–ին՝ «Ճիհէննէմ աչըլմըշ: Պասմա օլունտու...», Բ–ին՝ նույնը (256 էջ, 8º, 11,4 x 6 սմ):

«ԴԻԶԱԿ», հաս–քաղ. երկշաբաթաթերթ: ԼՂՀ Հադրութի շրջվար–չակազմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1934–41, 1944–59–ին և 1966–ից Հադրութում (մինչև 1959–ը՝ «Կոլխոզնիկ», 1966–89–ին՝ «Կոլ–տնտեսական», 1991–94–ին ընդհատվել է): Խմբագիրներ՝ Միքայել Ասրյան, Ա. Մուսայելյան, Գ. Անաստասյան, Ե. Համբարձումյան, Գ. Մելքումյան, Անդրանիկ Ավագյան, Ն. Բաղդասարյան, Է. Լալայան, Գ. Մարդանյան, Արփիկ Խասապետյան, Յուրի Մադունց (1990–ից): 1988–ից տպագրել է Արցախյան ազատամարտին և հիմնախնդրին վերաբերող նյութեր: Զինադադարից (1994) հետո լուսաբանում է շրջանի հաս–քաղ., տնտ., կրթամշակութ. կյանքը:


«ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ», գրահրատարակչ. համալիր Ստեփանակեր–տում: 2001–ին ստեղծվել է տպարանը, 2004–ին՝ հրատարակչությունը: Հիմնադիր–տնօրեն՝ Դավիթ Բեգլարյան: Լույս է ընծայում պատմագիտ. գրակ՝ հատկապես Արցախի պատմության վերաբերյալ, հայ և օտա–րազգի, ինչպես նաև ժամանակակից արցախցի գրողների գործեր [Բ. Ուլուբաբյանի «Փորձության օրերի խորհուրդը» (2010), Ժ. Բեգլարյանի «Հեռացումի անեզրություն» (2010), Հ. Ալեքսանյանի «Որպես մի դարձող բանաղավր», «Չճանաչված երկրի լրատվությունը», Կ. Գաբրիելյանի «Լևոն Խեչոյանի ստեղծագործության գեղագիտական առանձնահատ–կությունները» (երեքն էլ՝ 2011) ևն]:

«Դ. պ.»–ում տպագրվում են նաև ամսագրեր («ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր», «ԼՂՀ դատական իշխանություն», «Մեսրոպ Մաշտոց համալսարան», «Արցախի ներդրումային հիմնադրամ») ու թեր–թեր («Լուսարար», «Եղիցի լույս», «Ձրաբերդ», «Ստեփանակերտ», «Ակունք», «Եղբայրակցություն»):

ԴԻԼՈՅԱՆ Վալտեր Արտաշեսի [17.6.1930, Նոր Բայազետ (այժմ՝ ք. Գավառ)–12.5.2005, Երևան], պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1976), պրոֆ. (1977): Ավարտել է ԵՊՀ (1953): Աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատ–մության ինստ–ում (1960–71), 1971–79–ին՝ ՀՊՄԻ, 1979–98–ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» (հ. 5, 1974) բազմահատորյակի և «Արևելյան Հայաստանի միացումը Ռու–սաստանին» (ռուս., հ. 1, 2, 1972, 1978) փաստաթղթերի ժող–ի հրա–




Դանիել Դզնունի



«Դժոխք բացեալ» *(1753, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Հ. Ալեքսանյանի «Որպես մի դարձող բանազավր» (2011, Ստեփանակերտ, **«Դիզակ պլյուս»***) գրքի կազմը*



Վալտեր Դիլոյանի *«Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» (1989, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Հրանտ Դինք



Հ. Դինքի *«Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան» (2009, Ե., «Գրապհունջ») գրքի կազմը*

տարակմանը: Դպրոց. դասագրքերի հեղինակ է: Անգլ-ից թարգմանել և հրատ-յան է պատրաստել Ն. Ադոնցի «Հայկական հարցի լուծման շուրջ» (1989) աշխատությունը:

Երկ. Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVII դարի երկրորդ կես), Ե., 1966: Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989:

«ԴԻՄԱԿ», կիսամսյա հանդես: Հրատարակվել է 1862-ին (7 համար) Զմյուռնիայում: Խմբագիր՝ Կարապետ Տետեյան: Անդրադարձել է եվրոպ. երկրների հետ առևտր. կապեր ունեցող զմյուռնահայ վաճառականների գործունեությանը, տպագրել է թարգմանություններ եվրոպ. գրակ-ից, ակնարկներ արևմտահայ կյանքի, կրթալուսավոր. ընկերությունների մասին, անդրադարձել է աշխարհաբարի մշակման հարցերի:

ԴԻՄԱՔՍՅԱՆ Հմայակ (Այազմալըյան Բարսեղ, 1829, Կ. Պոլիս–մ. թ. անհտ), խմբագիր: Սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: 1894-ին՝ Կ. Պոլսի պատրիարք. տեղապահ: Եղել է Երզնկայի, Ռոդոսթոյի թեմերի առաջնորդ: 1874-ից՝ *«Լույս»* կիսամսյա հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Դ-ի «Նոր տարի եւ մտաւորական սնունդ տղայոց համար» (1868), «Աստղիկ հայրենեաց կամ Աղբերակունք ազգային յառաջադիմութեան» (1869, երկուսն էլ՝ ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), «Շիթք մանունք ի Միջերկրականէ» (1878, ԿՊ, «Հայաստան» տպ.) աշխատությունները:

ԴԻՆՔ Հրանտ Սարգսի (15.9.1954, ք. Մալաթիա–19.1.2007, Ստամբուլ, սպանվել է թերթի խմբագրատան առջև), խմբագիր-հրատարակիչ: Ավարտել է Ստամբուլի պետ. համալսարանի կենսբ. (1978) և փիլ. (1987) ֆակ-ները: 1996-ին Ստամբուլում հիմնադրել է և խմբագրել *«Ակօս»* (հայ. և թուրք.) թերթը: Թուրքիայում առաջինն է գրել Հայոց ցեղասպանության իրողության, թուրքահայ համայնքի իրավունքների պաշտպանության, Թուրքիայում ժողովրդավարության արմատավորման մասին: Առաջինն է հակադրվել Հայոց ցեղասպանության մասին Թուրքիայի պաշտոն. տեսակետին: 2004-ին Դ-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ «թուրք ազգին անարգելու» մեղադրանքով. 2006-ին Ստամբուլում Շիշլիի դատարանը նրան դատապարտել է 6-ամսյա պայման. ազատազրկման, 2007-ին Թուրքիայի վճռաբեկ դատարանը գործը կարճել է Դ-ի մահվան պատճառով:

Հայաստանում Դ. հայտարարվել է Հայոց ցեղասպանության խորհրդանշական՝ 1 500 001-րդ զոհը:

Թուրքիայի Սարդու իրավունքների պաշտպանության կազմակերպության Խոսքի և խղճի ազատության համար ամենամյա (2005), Գերմանիայի «Շտեռն» ամսաթերթի հիմնադիր Հենրի Հայնի (2006), ՀՀ նախագահի (2007, հետմահու) մրց-ներ:

Երկ. Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, Ե., 2009:

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԹՐԱԿԱՑԻ (մ. թ. ա. II դ., Ալեքսանդրիա–մ. թ. ա. I դ.), հույն քերական: Աշակերտել է ալեքսանդրյան դպրոցի հայտնի քերական Արիստարքոսին: Քերականություն ու ճարտասանություն է դասավանդել Հռոդոսում և Հռոմում:

Մեզ է հասել Դ. Թ-ու «Քերականական արվեստ» աշխատությունը, որը մինչև XIII դ. բյուզ. դպրոցներում գործածվել է որպես դասագիրք: Այս երկի հայ. թարգմանությունը (V դ.) հիմք է դարձել հայոց լեզվի ուսումնասիրության և հայ քերական. ուսմունքի ստեղծման ու զարգացման համար: Շուրջ մեկ հազարամյակ «Քերականական արվեստը» մեկնության առարկա է եղել ինչպես հույն և բյուզանդացի մեկնիչների, այնպես էլ հայ քերականների՝ Դավիթ Մեկնիչի, Անանուն Մեկնիչի, Մովսես Քերթողի, Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացու և ուր. համար:

Դ. Թ-ու «Քերականութիւն...» աշխատությունը (բնագիրը՝ հուն., գրաբար, տեքստաբան. ուսումնասիր. և ծնթգր. ֆրանս.՝ Հ. Շ. Զրպետյանի) տպագրվել է 1824-ին Փարիզում («Եվրաթի» տպ.):

Գրկ. Адонц Н., *Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915.*

«ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ», միջնադարյան ճարտ. ու կոթողային հուշարձաններից քաղված արձանագրությունների ժող.: Լույս է տեսել Երևանում 1960–2012-ին՝ 9 պրակ: Առաջինը կազմել է Հովսեփ *Օրբելին* (տպագրվել է 1966-ին). ամփոփված են Անիի վիմագիր հիշատակարանները, 2–5-րդը՝ Սեդրակ *Բարխուդարյանը*. 2-րդում (1960)՝ Կապանի, Գորիսի, Սիսիանի շրջանների, 3-րդում (1967)՝ Վայոց ձորի, 4-րդում (1973)՝ Սևանի ավազանի, 5-րդում (1982)՝ Արցախի, 6-րդում (1977, կազմ.՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան)՝ Իջևանի շրջանի, 7-րդում (1996)՝ Ուկրաինայի, Մոլդովայի, 8-րդում (1999, երկուսն էլ՝ կազմ.՝ Գ. Գրիգորյան)՝ Ռուսաստանի Դաշնության, 9-րդում (2012)՝ Լոռու շրջանի հուշարձանների արձանագրությունները:

Ժամանակագր. առումով այդ բնագրերն ընդգրկում են V–VIII դդ. և կարևոր տեղեկություններ են հաղորդում պատմության, տնտեսության, իրավունքի, բանասիրության, ազգագրության և այլ հարցերի վերաբերյալ:

Առաջին վիմագր. ժող–ը («Վիմական տարեգիր: Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց») հրատարակել է Կ. Կոստանյանցը 1913-ին Ս. Պետերբուրգում (Կայսեր. գիտ-ների ակադ–ի տպ.): Հայկ. արձանագրությունների գիտ. հրատարակման հիմքը դրել են Ն. Մառը և Հ. Օրբելին:

«ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ», դիվան. փաստաթղթերի և պատմ. երկերի ժող-ների շարք: Հրատարակվել է Թիֆլիսում 1893–1917-ին՝ Գյուտ *Աղանյանի* աշխատասիրությամբ (հ. 1–13): 1–2 միացյալ հատորները (1893, Թ., Մ. Շարաձեի տպ., Սահակ-Մեսրոպյան մրց.) ամփոփում են Արլ. Հայաստանի 1780–1834-ի պատմությանը վերաբերող նյութեր: Հաջորդ հատորներում (հ. 3–5՝ նույն տպ., մյուսները՝ Նվարդ Աղանյանի տպ.) զետեղված են կաթողիկոսների կենսագրություններ, կաթողիկոս. գրագրություններ, կոնդակներ: 10-րդ հատորը (1912) ընդգրկում է XV–XIX դդ-ի մանր մատենագրքերը, 11-րդը (1913)՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հիշատակարանը, 12-րդը (1917)՝ Սանուել Կյումուշխանեցու երկերի մի մասը (բոլոր հատորներն ունեն հավելվածներ, ծանոթագրություններ և հատուկ անունների ցանկեր), 13-րդը (1915)՝ Արմ. Հայաստանում 1801–88-ին կատարված բռնություններին վերաբերող վավերագրեր:

«ԴԻՏԱԿ», կրոն., ուս. և քաղ. շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա: Կ. Պոլսի հայ ավետարանականների հրատ.: Լույս է տեսել 1870–74-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Սիմոն Ութուճյան: Տպագրել է գրակ-յանը, մանկավարժությանը և գիտ-յանը վերաբերող հոդվածներ, առողջապահ. տեղեկություններ: Մեծ տեղ է հատկացրել կրթությանն ու դաստիարակությանը, գնահատել կնոջ դերը ընտանիքում, աջակցել կանանց համար կրթ. հաստատություններ ստեղծելու ձեռնարկումներին, արտատպել նյութեր օտար մամուլից, ծանոթացրել եվրոպ. երկրների և քաղաքների պատմությանը:


«ԴԻՏԱԿ», հանրամատչելի ամսագիր (2000-ից՝ երկամսյա): Լույս է տեսնում 1996-ից Բեյրութում: Խմբագիր՝ Սեմ Րագուպյան: Տպագրում է ազգ., հաս., տնտ., մարզ., մշակութ. և այլ լուրեր ՀՀ-ից ու սփյուռքահայ համայնքներից, տարաբնույթ հոդվածներ, գեղ. ստեղծագործություններ:

«ԴԻՏԱԿ ԲԻԶԱՆԴԵԱՆ», կիսամսյա, շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: Արշարունյաց ընկերության հրատ.: Լույս է տեսել 1812–16-ին Վենետիկում: Ժամանակագր. առումով 3-րդ հայ. պարբ-ն է՝ «Ազդարարից», «Տարեգրութիւն»-«Եղանակ Բիւզանդեանից» հետո: Խմբագիրներ՝ Գրիգոր Գապարաճյան, Մադաթիա Փյուսկյուլճյան, Սանուել *Ջախջախյան:* Լուսաբանել է ժամանակի քաղ., ռազմ. իրադարձությունները (Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան ևն), հաղորդել

«Դիվան հայ վիմագրության»




«Անի քաղաք» (պր. 1, 1966, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը




«Լոռու մարզ» (պր. 9, 2012, Ե., «Գիտություն») գրքի կազմը



«Դիւան հայոց պատմութեան» *(գիրք Գ, 1894, Թիֆլիս) ժողովածուի կազմը*



Էդուարդ Դյուլորիեի
«Ժամանակակից հայերը» (ռուս., 1856, Թիֆլիս) գրքի կազմը



Գևորգ Դոդոխյանի
«Երկեր»-ի (հայ., վրաց., 1939, Թբիլիսի) կազմը



Աելիտա Դոլուխանյան

տեղեկություններ միջազգ. անցուդարձերի, տարբեր երկրների տնտ. և քաղ. վիճակի մասին: Տպագրել է բանասիր., կրոն. հոդվածներ, մշակութ. լուրեր: Աշխատակցել են Խ. Այուրմեյանը, Հ. Ավգերյանը և ուր.: 1808-ին Վենետիկում հրատարակվել է նույն անունով և բովանդակությամբ թերթ (1 համար):

ԴՅՈՒԼՈՐԻԵ (Dulaurier) Էդուարդ [Ժան-Պոլ, 1807, Թուլուզ (Ֆրանսիա)–1881, Մյոդոն (Ֆրանսիա)], ֆրանսիացի հայագետ: 1850-ին ֆրանս. է թարգմանել խաչակրաց առաջին արշավանքի մասին ***Մատթեոս Ուռհայեցու*** տեղեկությունները (երկի ամբողջ. թարգմանությունը հրատարակել է 1858-ին՝ Գրիգոր Երեցի շարունակած ժամանակագրությամբ): 1849-ին, երբ Եվրոպայում դեռ հայտնաբերված չէր Միքայել Ասորու «Ժամանակագրության» ասոր. բնագիրը, Դ. երկի հայ. բնագիրը մասնակիորեն թարգմանել և հրատարակել է ֆրանս.: Խաչակիրների մասին համաշխ. գրավոր հուշարձանների մատենաշարի կազմում տպագրել է 2 հատոր. 1-ինը հայ. զուգահեռ տեքստերով է (1869), ընդգրկում է Մատթեոս Ուռհայեցու, Միքայել Ասորու, Սամվել Անեցու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տղայի, Սմբատ Սպարապետի, Վարդան Արևելցու և ուր. տեղեկությունները խաչակիրների մասին, 2-րդում նույն ժամանակաշրջանին վերաբերող օտար աղբյուրների նյութերն են:

Դ. «Հետազոտություններ հայկական տոմարական և պատմական ժամանակագրության» (ֆրանս., 1869) երկում տոմարագիտ. հաշվումների միջոցով որոշել և ճշգրտել է հայ մատենագիրների երկերում հանդիպող ժամանակագր. տեղեկությունները: Գրքում ներառել է հայոց այբուբենը, բառեր, նախադասություններ, անձնանուններ և փոքր բնագրեր:

Լույս են տեսել նաև Դ-ի «Հայերը 1854 թվականին» (ռուս., 1854, Թ.), «Ժամանակակից հայերը» (ռուս., 1856, Թ., Կովկասի փոխարքայի գրասենյակի տպ.), «Հայ արևելյան եկեղեցու պատմությունը, դոգմաները, ավանդույթները, պատարագը» (ֆրանս., 1857, 1859) աշխատությունները:

Թարգմանել է Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ) «Տիեզերական պատմութիւն» գրքի 1-ին ու 2-րդ մասերը (հրտ.՝ 1883):

Երկ. Recherches sur la Chronologie arménienne technique et historique..., P., 1859; Recueil des historiens des Croisades, T. 1, Documents arméniens, P., 1869.

Գրկ. Շրումպֆ Գ. Ա., *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրևմտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* Դոլուխանյան Ա., *Էդուարդ Դյուլորիեն հայագետ, Ե., 2004:*

ԴՈԴՈՒԽՅԱՆ Գևորգ Աստվածատուրի [17.2.1830, Սիմֆերոպոլ (Ղրիմ)–8.7.1908, Սիմֆերոպոլ], բանաստեղծ, մանկավարժ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1848), սովորել է Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում (1848–51), Դորպատի համալսարանում: Դասավանդել է Ս. Պետերբուրգի, Հս. Կովկասի, Ղրիմի հայկ. դպրոցներում: Հայտնի են Դ-ի «Ծիծեռնակ» (1854), «Մանուշակ» (1878) ևն, նաև մի քանի թարգման. բանաստեղծություններ («Հայոց երգեր, սեր եւ գինի...», «Կրամբամբուլի»): «Ծիծեռնակ» բանաստեղծության երաժշտությունն ընտրել է ինքը: 1939-ին հրատարակվել է Դ-ի «Երկերը» (հայ., վրաց., հ. 1, առաջաբ., ծնթգր. և խմբ.՝ Իվ. Բեգլարովի, Թ.):

Թարգմանել է Հ. Հայնեի, Ի. Կոիլովի գործերից:

Գրկ. Լևոնյան Գ., *Հուշեր, Ե., 1959:*

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Աելիտա Գուրգենի (ծ. 14.2.1942, Երևան), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1989), պրոֆ. (1990), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): Մշակույթի վաստ. գործիչ (2012): Ավարտել է ՀՊՄԻ (1964): 1990-ից՝ ՀՊՄՀ գրակ-յան և դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ:


Լույս են տեսել Դ-ի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» (1987, ռուս.՝ 2008), «Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» (1999), «Շառլ Ազնավուրը բանաստեղծ» (2002), «Արշակ Չոպանեանը եւ հայ

հին գրականութիւնը» (2004), «Ներսես Մոկացի (Կյանքը, գործունեությունը)» (2009), «Համընդհանուր իմաստախոսություններ» (հայ. և անգլ., 2012) աշխատությունները: Նրա աշխատասիրությամբ հրատարակվել են Ներսես Մոկացու «Բանաստեղծություններ» (1975, 1985) և Խաչատուր Կեչառեցու «Տաղեր» (1988) ժող-ները: Դ-ի հիմնադրած «Եվրոպացի հայագետներ» մատենաշարով տպագրվել են Ֆ. Նևին, Մ. Բրոսսեին, Վ. Լանգլուային, Ֆ. Ֆեյդիին, Ֆ. Մակլերին, Է. Դյուլորեին նվիրված նրա մենագրությունները: Հեղինակ է բուհ. դասագրքերի («Հայ գրականության դասավանդման մեթոդիկա», 2006, «Հայ գրականության պատմություն. հին և միջնադարյան գրականություն», 2006), ուս. ձեռնարկների («Հայ ժողովրդական բանահյուսություն», 2008, «Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը», 2012):

Բնագրից թարգմանել է Պ. Ռոնսարի, Թ. դը Սոլենի, Մ. Քոզեմի, Ջ. Քոլինզի, Ռ. Դորմենթի ստեղծագործություններից:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2003) և ՀԳՄ Խ. Աբովյանի անվ. (2007), ՀՀ ԿԳ նախարարության ոսկե (2012) մեդալներ, ՀԳՄ Ն. Աղբալյանի անվ. մրց. (2008):


«ԴՊՐՈՑ», ամսագիր, արևելահայ. առաջին մանկավարժ. պարբ-ը: Լույս է տեսել 1874–76-ին Վաղարշապատում: Խմբագիր՝ Վահան *Բաստամյան:* Տպագրել է դպրոց. հրահանգներ ու տեղեկություններ, դասագրքերի գրախոսականներ, լուսաբանել է մանկավարժության առաջավոր մեթոդները: Լուսավորությունը համարել է կյանքի բարեփոխման կարևոր միջոցներից: Աշխատակցել են Ղ. Աղայանը, Ս. Մանդինյանը, Ս. Բաբայանը և ուր.:



«Դպրոց», *1874–76, Վաղարշապատ (№ 6, 1875)*

«ԴՊՐՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ ԵՒ ՏԱՂԱՐԱՆ», այբբենարան և զանազան բանաստեղծությունների ու տաղերի ժող.: Առաջին անգամ տպագրվել է 1701-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրգ դպրութեան: Եւ տաղարան վայելուչ եւ գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից...» (384 էջ, 8º, 11,5 x 6,5 սմ):

Վերահրատարակվել է 1709-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում (254 էջ, 8º, 12 x 7 սմ), 1710–11-ին՝ «Ի թաղն Պեկօղլի» տպարանում (224 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ), 1714-ին՝ նույն տպարանում (240 էջ, 8º, 15 x 10 սմ), 1723–24-ին՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (288 էջ, 8º, 12,3 x 8,3 սմ), 1738-ին՝ Աբրահամ Թրակացու տպարանում (336 էջ, 8º, 12, 3 x 7,8 սմ):



«Դպրութեան գիրք եւ տաղարան»-ի *(1723-24, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) տիտղոսաթերթը*


«ԴՐԱՋԱՐԿ», կրոն., գեղագիտ. և բանասիր. պարբերաթերթ (1967–1978-ին՝ տարեգիրք): Հայաստանյայց եկեղեցու կիրակնօրյա դպրոցների հրատ.: Լույս է տեսել 1961–99-ին (ընդհատումներով, 1984-ից՝ «Նոր Դրազարկ») Անթիլիասում (Լիբանան): «Մեր կեանքը» (1950–56) տեղեկատուի շարունակությունն է: Խմբագիրներ՝ Վարդան արք. *Հեմիրճյան*, Տիրայր արք. Փանոսյան: Տպագրել է ժամանակակից և դաս. գրողների գործեր, գրականագիտ. և պատմաբանասիր. ուսումնասիրություններ, լուսաբանել Սիյուռքի կրոն. և մշակութ. կյանքը, հայկ. վարժարանների առօրյան: Ունեցել է անգլ. բաժին:




«Դրազարկ», *1961–99, Անթիլիաս (Դ տարի, 1970)*

ԴՐԱՋԱՐԿԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գրչության արվ-ի և մշակույթի կենտրոն Կիլիկիայում՝ Տավրոս լեռան ստորոտին՝ Սսից արմ.: Հիմնադրման տարեթիվն անհայտ է: Գևորգ Մեղրիկ Վասպուրականցին (1045–1114) և Կիրակոս Գիտնականը (ծ. թ. անհտ–1121) միաբանության համար մշակել են կանոնադրություն, ըստ որի՝ միաբանները պետք է զբաղվեին նաև ընթերցանությամբ ու ձեռագրերի ընդօրինակմամբ: Նրանց օրոք սրբագրվել են հուն-ից թարգմանված «Գործք առաքելոցը», «Յովհաննու Աւետարանի մեկնութիւնը», լրացվել Տոնամակը կամ Շաշոցը, թարգմանվել են նոր վարքեր ու վկայաբանություններ: Հետագայում Դ. գ. կ-ում են գործել Թորոս Փիլիսոփան, Բարսեղ Գիտնավորը, Վարդան Այգեկցին, Սարգիս Պիծակը, կազմարար Առաքել Հնազանդենցը և ուր.:

Դ. գ. կ. հռչակված էր Մանրուսում և Շարակնոց ժող-ների ընտիր նմուշներով: Ձեռագրեր են ընդօրինակվել Կիլիկիայի թագավորների պատվերներով: Մեզ հասած շուրջ 40 ձեռագիր մատյաններ (մեծ մասը՝ մագաղաթ, բոլորգիր), նկարազարդել են վարպետ մանրանկարիչները՝



«Դրամատուրգիա», *2000-ից, Երևան (№ 32, 2013)*



«Դրօշակ», *1891–2012, ժնև, Փարիզ, Բեյրութ, Աթենք, Երևան (№ 1616, 2010)*

ոսկով ու բազմերանգ գույներով: Հնագույն ձեռագիրը 1113-ի Ավետարան է (պատվիրատու՝ Կիրակոս Գիտնական, գրիչ Գևորգ)՝ ընդօրինակված Սահակ Պարթևի «ընտիր և ստույգ» օրինակից (Մատենադարան, ձեռ. № 6763): Վերջին ձեռագիրը 1371-ից է: Մատենադարանում են պահվում նաև Դ. գ. կ-ում ընդօրինակված մի շարք ձեռագրեր (ձեռ. № 154, 199, 1576, 3792, 3845, 3929, 5736, 6290, 10524)՝ Ավետարաններ, Շարակնոցներ, Մանրուսումներ, Մեկնություններ. հնագույններից է Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը:

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Միսռան, Վնտ., 1885:* **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Կահիրե, 1947, էջ 200–204:* **Ոսկեան Հ.,** *Կիլիկիայի վանքերը, Վնն., 1957:*

«ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ», գրական-գեղ. հանդես: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Կարինե ***Խոդիկյան***: Ներկայացնում է հայ թատերագիրների անտիպ պիեսները (ցայսօր՝ ավելի քան 250): Ունի «Մեր օրերի թատրոնը», «Վարք մեծաց», թարգման. պիեսների, թատերախոսության բաժիններ: «Դ.»-ում տպագրված Ա. Այվազյանի, Պ. Զեյթունցյանի, Ն. Ադալյանի, Գ. Խանջյանի, Ս. Խալաթյանի, Ա. Պետրոսյանի, Կ. Խոդիկյանի, Հ. Թեքգյոզյանի, Ն. Շահնազարյանի և այլ թատերագիրների բազմաթիվ պիեսներ բեմադրվել են ՀՀ թատրոններում:

«ԴՐՕՇԱԿ», ազգ., հաս-քաղ., մշակութ. պարբ. (1891–1914 և 1986–99-ին՝ կիսամսյա, 1925–33-ին՝ ամսաթերթ, 1999-ից՝ հանդես): ՀՅԴ պաշտոն. հրատ. (1896-ին «Դ.»-ի խմբագրության շուրջ ստեղծվել է ՀՅԴ կուս-յան արմ. բյուրոն): Լույս է տեսել 1891–2011-ին (ընդհատումներով), մինչև 1914-ը՝ Ժնևում [1-ին և 2-րդ համարները՝ Թիֆլիսում, 3–4-րդ համարները՝ Կոնստանցայում (Ռումինիա)], 1925–34-ին՝ Փարիզում, 1969–85-ին՝ Բեյրութում, 1986–99-ին՝ Աթենքում, 1999–2011-ին՝ Երևանում: Հիմնադիր՝ Քրիստափոր ***Միքայելյան***, խմբագիրներ՝ Ստեփան ***Զորյան*** (Ռոստոմ), Սիմոն Շխեյան, Հովնան Դավթյան, Արշակ Վռամյան, Սիմոն Զավարյան, Գարեգին Խաժակ, Միքայել ***Վարանդյան***, Ավետիս ***Ահարոնյան***, Սարգիս Մինասյան, Սիմոն ***Վրացյան***, Արշակ ***Ջամալյան***, Աղվան ***Վարդանյան***, Նազարեթ Բերբերյան, Ռուբեն ***Հովսեփյան:***

«Դ.» հրապարակել է ՀՅԴ բյուրոյի կարևորագույն կոչերն ու հայտարարությունները, ընդհանուր ժողովների նյութերը, մեկնաբանել է կուս-յան քաղաքականությունը Հայ դատի և հայությանը հուզող զանազան հարցերի առնչությամբ, անդրադարձել II ինտերնացիոնալում ՀՅԴ գործունեությանը, Հայաստանի և հայկ. գաղթավայրերի ներքին կյանքին, քաղ., սոցիալ-տնտ. ու մշակութ. խնդիրներին, Արցախյան ազատագր. պատերազմին, տպագրել է (մի մասը՝ առանձին գրքերով) հայ ազգ-ազատագր. շարժմանն ու ՀՅԴ պատմությանը վերաբերող արխիվային արժեքավոր նյութեր և ուսումնասիրություններ: «Միջազգային կյանք» բաժնում լուսաբանել է մասնավորապես Թուրքիայի քաղաքականությունը: 2012-ից լույս է տեսնում էլեկտրոնային տարբերակով:

«Դուռն ողորմութեան Աստուծոյ» *(Ստեփանոս Ռոշքա, 1702, Վնտ.) գրքի բացված-քով (202-203-րդ) էջեր*



«ԴՈՒՌՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ», քին. ***Ստեփանոս Ռոշքայի*** հեղինակությամբ հրատարակված գիրք, որը թարգմանություն է լատ-ից: Նվիրված է Խոջա Սահրադի որդի պարոն Մուրադին: Տպագրվել է 1702-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում [294 էջ (1–22-րդ էջերը պակասում են), 6º և 8º, 9,5 x 5,3 սմ]:

ԴՈՒՐՅԱՆ Եղիշե (Զըմպայան Միհրան) Աբրահամի (1860, Կ. Պոլիս–1930, Երուսաղեմ), բանասեր, բանաստեղծ, արքեպիսկոպոս: Պետրոս և Ղևոնդ ***Դուրյանների*** եղբայրը: Կ. Պոլսի (1909–10) և Երուսաղեմի (1921–30) հայոց պատրիարք: Դ-ի ջանքերով Սբ

Հակոբյանց վանքում բացվել է (1928) Սրբոց թարգմանչաց վարժարանը (Սբ Մեսրոպի և Սբ Սահակի անունով), ծավալվել է հայագիտ., կրոն. և պատմ. մեծարժեք գրքերի տպագրություն:

Լույս են տեսել Դ-ի «Ընթացք ի գրոց բարբառ» (Ա տարի, 1880, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ., Բ տարի, 1883, Ճանիկ Արամյանի տպ.) դասագիրքը, որը երկար ժամանակ օգտագործվել է Կ. Պոլսի և Երուսաղեմի հայկ. դպրոցներում, «Ընտիր ասացուածք օտարազգի ականաւոր անձանց, կենսագրական համառօտ տեղեկութեամբք» (1882, նույն տպ.) դիմանկարների ժող-ը, «Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն» (1885, ԿՊ, Գարեգին Պաղտատյանի տպ.), «Բառագիտութիւն կամ ութ մասունք բանի հայերէն քերականութեան...» (1886, ԿՊ, Արամ Աշճյանի տպ.) աշխատությունները, «Հովուական սրինգ» (1909, Զմյուռնիա, «Մամուրյան» տպ.) բանաստեղծությունների ժող-ը, «Ամբողջ երկերը» (հ. Ա–Թ, 1933–36,Երուսաղեմ):

Գրկ. Գուշականեան Թ., Եղիշէ պատրիարք Դուրեան, Երուսաղեմ, 1932: **Փսեթաճեան Թ.,** *Մեծանուն եւ հանճարեղ հայ գրական դէմքեր, Ե., 2010:*

ԴՈՒՐՅԱՆ Լյուդվիգ (Քրիստոսուրյան Լուկաշ) Ծերունի [21.6.1933, գ. Չալթր (այժմ՝ ՌԴ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանում)–9.7.2010, Երևան], բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1971): 1971–78-ին աշխատել է «Հայաստան», 1978–88-ին՝ «Սովետական գրող» (1982–88-ին՝ բաժնի վարիչ) հրատարակչություններում:

Լույս են տեսել Դ-ի «Երբ ծառերը ծաղկում են» (1959), «Դառնամ փառաբանեմ» (1970), «Եղեգան փող» (1973), «Արեգակն արդար» (1976), «Լեռները չեն խոնարհվում» (1979), «Բերդ» (1983), «Աստ հողի» (1990), «Եռագույն առագաստ» (1990), «Սիրտն արցունքի մեջ» (1994), «Եվ մանանա, և նշխարք» (1999), «Արև խաչքար» (2000), «Քարե արցունք» (2003), «Աստղաշար» (2007) բանաստեղծությունների ժող-ները: Հեղինակ է նաև մանկ. բանաստեղծությունների: Դ-ի բանաստեղծությունների տեքստերով ստեղծվել են 100-ից ավելի երգեր:

ՀԳՄ Հ. Թումանյանի անվ. մրց. (1980):

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1987: Գրանք իմացյալ (բանաստեղծություններ և պոեմներ), Ե., 2008:

ԴՈՒՐՅԱՆ Ղևոնդ (Զըմպայան) Աբրահամի (1879, Կ. Պոլիս–24.12.1933, Նյու Յորք, դաշունահարվել է Սբ Խաչ եկեղեցում), եկեղեց. գործիչ, արքեպիսկոպոս: Պետրոս և Եղիշե *Դուրյանների* եղբայրը: Սովորել է Արմաշի (Նիկոմեդիայի գավառ) դպրեվանքում, ձեռնադրվել վարդապետ: Հոգևոր պաշտոններ է վարել Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Մանչեստրում: 1931-ին ընտրվել է ԱՄՆ-ի հայոց հոգևոր առաջնորդ:


Լույս են տեսել Դ-ի «Փոքր քարոզգիրք ի պէտս ժողովրդեան» (1905, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան տպ.), «Չորս աւետարաններու ծագումն ու վաւերականութիւնը» (1906, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ., 1926, Փ., Կ. Ներսեսի տպ.), «Մկրտութեան խորհուրդը» (1907, ԿՊ, Վ. և Հ. Տեր-Ներսեսյան տպ.), «Պարզ քարոզներ» (1907, ԿՊ, նույն տպ.), «Ժողովրդային պարզ քարոզներ» (1909, ԿՊ, Հովնան Փալագաշյանի տպ.) «Դպրեվանքեան քարոզներ» (1929, Փ., Կ. Ներսեսի տպ.), «Պատմութեան համար» (1934, Նյու Յորք) կրոն. աշխատությունները:

ԴՈՒՐՅԱՆ (Զըմպայան) Պետրոս Աբրահամի [20.5(1.6).1851, Սկյուտար, Կ. Պոլիս–21.1(2.2).1872, Կ. Պոլիս], բանաստեղծ, դրամատուրգ: Եղիշե և Ղևոնդ *Դուրյանների* եղբայրը: Ավարտել է Սկյուտարի ճեմարանը (1867): Դ. գրել է «Տարագիր ի Սիպերիայ» այլաբան. ողբերգությունը, «Վարդ եւ Շուշան կամ Հովիւք Սասեաց» (1867) մելոդրաման, «Սեւ հողեր կամ Յետին գիշեր Արարատեան» (1868), «Արտաշէս աշխարհակալ» (1869), «Անկումն Արշակունի հարստութեան» (1870), «Ասպատակութիւնք պարսկաց ի Հայս կամ Աւերումն Անի մայրաքաղաքին Բագրատունեաց» (1870) պատմ. ողբերգությունները:


Դ. «Թատրոն կամ Թշուառներ» (1871, իտալ.՝ 1916) դրամայում, Գ. Սունդուկյանից և Հ. Պարոնյանից անկախ, հանգել է արդիական թեմայի անհրաժեշտության գաղափարին: Դ. հայ գրակ-յան մեջ ստեղծել է ռոմանտիկ. դրամային բնորոշ նմուշներ: Նրա դրամա-



Եղիշե Դուրյան



Ե. Դուրյանի *«Ամբողջ երկեր»-ի (հ. Թ, «Սրբազան քնար», 1936, Երուսաղեմ) կազմը*



Լյուդվիգ Դուրյանի *«Աստղաշար» (2007, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

ները (բացառությամբ՝ «Տարագիր ի Սիպերիայ»-ի և «Թատրոն կամ Թշուառներ»-ի) բեմադրվել են «Թատրոն Օսմանիե»-ում:

Դ-ից մեզ է հասել 39 բանաստեղծություն. 26-ը գրել է 1871-ին:

Բանաստեղծի մահից հետո Սկյուտարի ընթերցասիրաց ընկերությունը 1872-ին լույս է ընծայել Դ-ի «Տաղք եւ թատրերգութիւնք» (ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.), 1893-ին՝ «Տաղք եւ թատրերգութիւնք, նամականի, դամբանական...» (ԿՊ, նույն տպ., աշխատասիր.՝ Բ. Էքսերցյանի) ժող-ները: Լույս են տեսել նաև «Բանաստեղծութիւններ» (Բաքու, 1900, «Արոր» տպ., Շուշի, 1905, Եղիսաբեթ Մ. Մահտեսի Հակոբյանի տպ.) ժող-ը, «Երկերը» (1947, կազմ. և խմբ.՝ Հ. Աճառյանի, 1981), «Երկերի ժողովածուն» (հ. 1–2, 1971–72), «Տաղեր, նամակներ...» (1959, Վնտ.), «Տրտունջք: Բանաստեղծություններ» (2011) ժող-ները:

Դ-ի բանաստեղծությունները թարգմանվել են ֆրանս., անգլ., գերմ., ռուս., իտալ., բուլղ., հունգ., հուն., պարսկ., թուրք.:

Դ-ի մասունքները (գանգի բեկորները) 2012-ին ամփոփել են Երևանի Կոմիտասի անվ. պանթեոնի հուշապատի մեջ: Դ-ի անունով Երևանում կոչվել են թաղամաս, փողոց և դպրոց:




Պետրոս Դուրյան



«Բանաստեղծութիւններ» (1905, Շուշի) գրքի փիփղոսաթերթը



«Թափրոն...» (իտալ., 1916, Միլան, թարգմ.՝ Հ. Նազարյանց) գրքի կազմը



«Տրտունջք» (2011, Ե., «Հայաստան») գրքի կազմը

Գրկ. Էքսերճեան Բ., *Ընդարձակ կենսագրութիւն բարեյիշատակ Պետրոս Դուրեանի, ԿՊ, 1893:* Ղանալանյան Հ., *Պետրոս Դուրյան, Ե., 1957:* Սարգսյան Ս., *Պետրոս Դուրյան, Ե., 1959:* Զոպանյան Ա., *Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Ե., 1967:* Շարուրյան Ա., *Պետրոս Դուրյան, Ե., 1972:* Սևակ Պ., *Մեր քնարերգության Վահագնը, Երկերի ժող., հ. 5, Ե., 1974: Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում (կազմ. և ծնթգր.՝ Ա. Շարուրյանի), Ե., 1982:*


Ե


Ե, հայ. այբուբենի 5-րդ տառը, անվանումը՝ «եչ»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ և 2 հորիզոն. տարրերից. կարճը և լայնը երկարի աջ կողմում են. կարճը հավասար է երկարի ստորին մասին, որտեղից էլ իրար են միանում նուրբ գծով, իսկ լայնը կարճի վերևում է և երկարի միջին մասին է միանում նույնպես նուրբով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ե, որպես այբուբենի 5-րդ տառ, նշանակել է հինգ և հինգերորդ, բյուրի նշանով (Ե՝)՝ 50 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ե-մաս 5-րդ):

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Եգիպտոսում առաջին հայկ. տպարանը հիմնադրել է Աբրահամ Մուրադյանը 1865-ին Կահիրեում: Տպագրել է առաջին հայ. պարբ-ը՝ «*Արմաւենի*» երկշաբաթաթերթը (1865): Հայ. առաջին գիրքը Մկրտիչ Թյությունճյանի «Դատապարտեալն Շուշան» 60-էջանոց վիպակն է, որը 1888-ին Ալեքսանդրիայում լույս է ընծայել Ղևոնդ քհն. Փափազյանը: Վերջինս 1889-ին հրատարակել է նաև «Նեղոս» շաբաթաթերթը (լույս է տեսել 18 համար), որը Եգիպտոսում հրատարակված 2-րդ պարբ-ն է:

1888–95-ին՝ հայ. գիրք, իսկ 1889–96-ին որևէ հայ. պարբ. Եգիպտոսում լույս չի տեսել: 1895–98-ին ամեն տարի 1-ական գիրք և գրքույկ է տպագրվել Սարգիս Դարբինյանի «Արարատ» տպարանում (գործել է մինչև 1908-ը): Հայտնի էին նաև Մնտիկյան եղբայրների, «Արշալոյս» թերթի, Եղիշե Թորոսյանի (Կահիրե), «Արաքս» (Ալեքսանդրիա), «Հուսաբեր», «Սֆինքս», Գրիգոր Ռափայելյանի, Զարեհ Պերպերյանի և այլ տպարաններ, որտեղ տպագրվել են «Հայն ու թուրքը եւ Արեւելեան խնդիրը» (1899, Կահիրե, Մնտիկյան եղբ. տպ.), ինչպես նաև Պերճի (Մ. Տամատյան) «Ներշնչումներ ազգային եւ յեղափոխական արդի կեանքէ» (1898, նույն տպ.), Մ. Հայկունու «Անեքդոտներ եւ ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարագոյրը» (1899, Կահիրե, Ս. Դարբինյանի տպ.), Ք. Շմիդի «Մարիամ կամ Ծաղիկի կողովը» (1899, նույն տպ.), Ե. Մուրատյանի «Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն» (1900, Ալեքսանդրիա, «Արաքս» տպ.), Ս. Ֆելեկյանի «Սասուն եւ Զէյթուն» (1900, Կահիրե, Ե. Թորոսյանի տպ.), Տ. Սավալանյանի «Կենսագրական յուշեր» (1900, Կահիրե, Ս. Դարբինյանի տպ.), Ե. Տեմիրճյանի «Գեղարուեստին





Մ. Թյությունճյանի «Դատապարտեալն Շուշան» (1888, Եգիպտոս, Ալեքսանդրիա) գրքի 1-ին էջը

Եգիպտոսի հայկական տպագրություն



«Նեղոս» (1889, Ալեքսանդրիա) շաբաթաթերթը



«Կեանք եւ գիր» (1948, Կահիրե) փարեգրքի շապիկը



Ս. Բայրամյանի «Հայ գիրքը Եգիպտոսի մէջ. 1888–2011» (2012, Կահիրե) մատենագիտության կազմը

դերը» (1900, նույն տպ.) և այլ գործեր, նաև արաբ ու եվրոպացի հեղինակների երկեր:

1905-ին Ալեքսանդրիայում հիմնադրվել է «Վ. Թեքեյան և ընկ.» տպարանը և տպագրել «Շիրակ» պարբ-ը, իսկ 1908-ին Ալեքսանդրիայում Երվանդ *Օտյանի* ջանքերով ստեղծվել է եգիպտահայ առաջին՝ Եգիպտոսի հայոց հրատարակչ. ընկերությունը: Տպագրել է *«Արև»* օրաթերթը, մի շարք գրքեր և գրքույկներ: Գործունեությունը երկար չի տևել:

Բեղուն գործունեությամբ հայտնի են նաև Կահիրեի «Արգոս», «Արև», «Նեղոս», «Նոր աստղ», «Նուպար», «Ոսկետառ», «Սահակ-Մեսրոպ», Հակոբ Փափազյանի, Ալեքսանդրիայում՝ «Գասապյան», Արամ Ստեփանյանի, Հայկ Բյուրատի և այլ տպարաններ:

1888–1920-ին Եգիպտոսում հրատարակվել են 302 անուն գիրք ու գրքույկ, 1921–60-ին՝ 1197 անուն գիրք: 1960-ական թթ-ից տպագրության քանակն զգալիորեն նվազել է: 2001–11-ին հրատարակվել է 70 անուն գիրք:

Ավելի քան 140 տարվա ընթացքում լույս են տեսել շուրջ 150 անուն հայ., հայատառ թուրք., թուրք., ֆրանս. և անգլ. պարբ-ներ, այդ թվում՝ 1899–1909-ին՝ *«Փինփիկ»* (Կահիրե, Ալեքսանդրիա) հանդեսը, 1899–1905 և 1908–14-ին՝ *«Արշալոյս»* (Կահիրե) շաբաթաթերթը, XX դ-ի 1-ին կեսին՝ *«Ազատ խօսք»* (1902–08) ամսաթերթը (առաջին 3 տետրը լույս է տեսել 1901-ին Փարիզում), *«Ազատ բեմ»* (1903–05, Ալեքսանդրիա) շաբաթաթերթը, «Լուսաբեր» (1904–08, Կահիրե) ազգ., քաղ., տնտ. և գրական երկօրյան, *«Շիրակ»* (1905–07, Ալեքսանդրիա, Կահիրե) ամսաթերթը, «Արեւ» (1908, Ալեքսանդրիա, 1908–13-ին՝ *«Լուսաբեր-Արեւ»*) պարբերաթերթը, «Աւել» (1908–10, Կահիրե) կիսամսյա երգիծաթերթը, «Եգիպտահայ տարեցոյցը» (1914–26, Կահիրե, Ալեքսանդրիա, անկանոն), *«Սաւառնակ»* (1919–71, Կահիրե) երգիծաթերթը, *«Փունջ»* (1925–46, Ալեքսանդրիա, Կահիրե) երկշաբաթաթերթը, *«Արաքս»* (1925–65, Ալեքսանդրիա) շաբաթաթերթը, *«Հայ դպրոց»* (1933–35 և 1938, Կահիրե) մանկավարժ. ամսագիրը, «Կեանք եւ գիր» (1947–48) տարեգիրքը ևն:

Ներկայում Կահիրեում հրատարակվում են *«Յուսաբեր»* (1913-ից, 1923-ից՝ ՀՅԴ պաշտոնաթերթ) օրաթերթը, ՌԱԿ-ի Եգիպտոսի շրջանակի *«Արև»* (1915-ից, մինչև 1924-ը՝ Ալեքսանդրիայում) պաշտոն. օրաթերթը (լույս է տեսնում եռօրյա պարբերականությամբ), *«Զահակիր»* (1948-ից, անկանոն) պարբերաթերթը:

Գրկ. Աբրահամյան Ա., Համառօտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, 2, Ե., 1964, 1967: Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805–1925), Ե., 1978: Հայ մամուլը Եգիպտոսի մէջ: Մատենագիտական ցուցակ (կազմ.՝ Ս. Բայրամյան), Կահիրե, 2005: Հայ գիրքը Եգիպտոսի մէջ. 1888–2011: Մատենագիտական ցուցակ (կազմ.՝ Ս. Բայրամյան), Կահիրե, 2012:

ԵՋԵԿՅԱՆ Ավետիք (1870–1932), թարգմանիչ: Սովորել է Վենետիկի Մխիթար-Ռափայելյան վարժարանում, պաշտոնավարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, աշխատակցել «Մշակ», «Տարազ», «Աղբիւր» և այլ պարբ-ների: Թարգմանել է Վ. Շեքսպիրի («Համլետ»), Ջ. Բայրոնի և այլ հեղինակների գործերից:

ԵՋՅԱՆ (Եզով) Կարապետ Հարությունի (5.9.1835, Մոսկվա–31.5.1905, Ս. Պետերբուրգ), բանասեր, պատմաբան, մատենագետ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, ապա՝ Ս. Պետերբուրգի համալսարանը: «Ներքին կեանք Հին Հայաստանի» (ռուս.՝ 1859, հայ.՝ 1864, թարգմ.՝ Պ. Պռոշյանի) աշխատության համար ստացել է արլ. լեզուների մագիստրոսի աստիճան: Պաշտոնավարել է ներքին գործերի, ապա՝ լուսավորության նախարարությունում: Հովանավորել է Կարինի Սանասարյան վարժարանը, Նոր Նախիջևանի Գոգոյան, Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցները: Նյութապես օժանդակել է Ղ. Ալիշանի «Արարատ» և «Սիսական» աշխատությունների հրատյանը: Առաջաբաններով և ծանոթագրություններով հրատարակել է

Ղևոնդի «Պատմութիւն» (1887, ՍՊբ, Ի. Սկորոխոդովի տպ.), Հովհան Դարդելի «Ժամանակագրութիւն Հայոց ի հայրապետութեան Տ. Տ. Մակարայ...» (1891, նույն տպ.) երկերը: Արժեքավոր են Ե–ի «Եւրոպական լեզուներով գրուած գրքեր եւ յոդուածներ» («Հանդէս գրականական եւ պատմական», գիրք 3, Մ., 1890) մատենագիտ. երկը, «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ազգի հետ» (ռուս., 1898), «Ս. Էջմիածնի Մայր աթոռի եւ ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը» (1904, Թ., Ա. Քութաթելաձեի տպ.), «Սկիզբն հարաբերությանց Ս. Էջմիածնի հայրապետական գահի ռուսաց կառավարության հետ. պատմական հետազոտություն» (ռուս., Թ., 1901) աշխատությունները:

Գրկ. Յարութիւնեան Ի., *Կարապետ Եզեանի յիշատակը, «ԱՀ», 1905, գիրք 12:* Ադամյան Ա., *Նորայր Բյուզանդացու նամակները Կարապետ Եզյանին, Ե., 1974:*

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ [մոտ 380, գ. Կողբ (Այրարատի նահանգի Ճակատք գավառ)–450], մատենագետ, փիլիսոփա, թարգմանիչ, եկեղեց. գործիչ: *Սահակ Ա. Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներից: Սովորել է Աշտիշատի դպրոցում, Եղեսիայում և Կ. Պոլսում: Մասնակցել է Աստվածաշնչի և այլ երկերի թարգմանությանը: Կյանքի վերջին տարիներին եղել է Բագրևանդի եպիսկոպոս, մասնակցել է 449–ի Արտաշատի ժողովին:

Պահպանվել է Ե. Կ–ու **«Եղծ աղանդոց»** («Աղանդների հերքումը») երկը, որը հայ բնափիլ. և սոցիալ–քաղ. մտքի արժեքավոր հուշարձան է, դաս. գրաբարով լավագույն ստեղծագործություններից: Գրել է 440–ական թթ–ին, արտացոլել է Հին Հայաստանի և Մերձ. Արևելքի գաղ. կյանքը, քրիստոնեության և հեթանոսության հակամարտությունը: Աշխատության սկզբնաղբյուրներից է հրեա աստվածաբան Եպիփան Կիպրացու «Գիրք հերձուածոց» երկը:

«Եղծ աղանդոցի» բնագիրը պահպանվել է եզակի ընդօրինակությամբ (1280, գրիչ՝ Լուսեր, Մատենադարան, ձեռ. № 1097): Բնօրինակը վերնագիր չունի, նշված է՝ «Երանելոյն Եզնկայ վարդապետի», հրատարակվել է տարբեր վերնագրերով («Եղծ աղանդոց», «Յաղագս Աստծոյ», «Գիրք ընդդիմութեանց» ևն):

Առաջին անգամ տպագրվել է 1762–63–ին Զմյուռնիայում՝ Մահտեսի Մարկոսի տպարանում (Հակոբ Նալյանի հրամանով և սրբագրությամբ): Տիտղթ–ին՝ «Գիրք ընդդիմութեանց արարեալ ի Սրբոյ Եզնակայ Կողբացւոյ հայոց վարդապետէ, եւ յաշակերտէ մեծի թարգմանչին մերոյ Սրբոյն Մեսրոպայ» (305 էջ, 8º, 12 x 7,3 սմ):

Վերահրատարակվել է 1826–ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ «Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց» վերնագրով (հրատարակիչ՝ Արսեն Բագրատունի), տպակից է «Խրատք» վերտառությամբ գործին, որը, ըստ Մխիթարյանների ցուցակի, Նեղոսի երկն է, թարգմանիչը՝ Եզնիկը:

Երկը լույս է տեսել նաև Վենետիկում (1850, 1863, 1971, 1914, 1926, վերջին 2–ը՝ «Ընտիր մատենագիրք» մատենաշարով, Սբ Ղազարի տպ.), Փարիզում (1860, Ճանիկ Արամյանի տպ.), Կ. Պոլսում (1867, Ճ. Արամյանի տպ., 2 անգամ, 1871, Հովսեփ Գավաֆյանի տպ.), Թիֆլիսում (1913, «Եղծ Քէշին պարսից» խորագրով, «Հերմես» տպ., 1914, Նվարդ Աղանյանի տպ., «Ղուկասյան մատենադարան» մատենաշարով), Բուենոս Այրեսում (1951, գրաբար և արևմտահայ.), Երևանում (1970, աշխարհաբարի փոխադր., ներած. և ծնթգր.՝ Ա. Աբրահամյանի, 1994), Բեյրութում (1996, «Աղանդներու հերքումը»): Լույս է տեսել նաև ֆրանս.՝ Փարիզում [1853, թարգմ.՝ Է. Պ. Ֆլորիվալի, 1959, թարգմ.՝ Լ. Մարիեսի (Շ. Մերսիեի աշխատակցությամբ)], գերմ.՝ Վիեննայում [1900, թարգմ.՝ Հ. Շմիդտի (Գ. Գալեմքյարյանի աշխատակցությամբ)], Մյունխենում (1927, թարգմ.՝ Մ. Վեբերի), ռուս.՝ Երևանում (1968, թարգմ., առաջաբ. և ծնթգր՝. Վ. Չալոյանի):



Կարապետ Եզյան



«Եզնիկ Կողբացի». *մանրանկար, XIV դ–ի Ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 3029)*




Եզնիկ Կողբացու *«Գիրք ընդդիմութեանց...»–ի (1762–63, Զմյուռնիա, Մահտեսի Մարկոսի տպ.) փիրղոսաթերթը*



«Եթեր», *1957-ից, Երևան*



Զավեն Եկավյան



«Եկեղեցի Հայաստանեայց», *1888, 1900–01, Կ. Պոլիս, Մանչեստր (№ 8, 1900)*



«Եկեղեցին հայկական», *1997-ից, Փարիզ*

Գրկ. Տեր-Մկրտչեան Գ., Աճառեան Հ., *Քննութիւն եւ համեմատութիւն Եզնկայ նորագիւտ ձեռագրին, Վնն., 1904:* Գալեմքեարեան Գ., *Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ ընդդէմ աղանդոյ մատենին, Վնն., 1919:* Գաբրիելյան Հ., *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 1, Ե., 1956:* Զալոյան Վ., *Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975:* Խրլոպյան Գ., *Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Ե., 1978:* Խաչերեան Լ., *Եզնիկ Կողբացի (380–449 թթ.), Գլենդել, 2001:*

«ԵԹԵՐ», անկախ շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1957-ից (մինչև 1994-ը՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի պետ. վարչության շաբաթաթերթ) Երևանում (1957–60-ին՝ «Ռադիո և հեռուստատեսություն», 1960–67-ին՝ «Խոսում է Երևանը», 1967–69-ին՝ «Խոսում և ցուցադրում է Երևանը», 1969–94-ին՝ «Եթերում է Երևանը»)՝ հայ. և ռուս.: 1994-ից հրատարակվում է «Ե.»-ի ռուս. տարբերակը: Խմբագրական խորհուրդ, 1994-ից խմբագիր՝ Գոռ Ղազարյան: Տպագրում է հայկ. 12 հեռուստաընկերությունների և ռուս. 4 հեռուստաալիքների ծրագրերը: Ներկայացնում է որոշ հաղորդումների բովանդակությունը, անդրադառնում ՀՀ կրթ., մշակութ., հաս-քաղ., մարզ. կյանքին, միջազգ. կինոարվ-ի, երաժշտարվ-ի, մարզ. նորություններին ևն:

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ըստ որոշ աղբյուրների՝ XX դ-ի սկզբին Ադիս Աբեբայում Գևորգ Ազնավորյանը հիմնադրել է տպարան և հրատարակել «Եթովպիայի սուրհանդակ» շաբաթաթերթը:

Եթովպիայում լույս են տեսել նաև «Նոր ծաղիկ» (1932) գրական-գեղ. և գիտ. կիսամսյա հանդեսը (տեղեկություններ է տպագրել գաղութի առօրյայի, մայր հայրենիքի մասին), *«Փինիկ»* (1958–62) տարեգիրքը:

Գրկ. Յակոբ-Գրիգ, *Եթովպիա. հայ եկեղեցին եւ հայերը. քննադատական ուսումնասիրութիւն, Վնտ., 1927:* Բաթաբան Հ., *Արդի Եթովպիան եւ հայ գաղութը, Վնտ., 1930:*

ԵԿԱՎՅԱՆ Զավեն Վարդանի (ծ. 1.9.1943, Հալեպ), լեզվաբան, արևելագետ, խմբագիր, մշակութ. գործիչ: Ավարտել է Սորբոնի համալսարանը (1964, դ-ր՝ 1977), Արլ. կենդանի լեզուների բարձրագույն դպրոցը (1964), ԵՊՀ (1969): ՀՀ ԳԱԱ (1996), ԵՊՀ (1998), ՀՊՄՀ (2012) պատվ. դ-ր: 1972–84-ին դասավանդել է Սորբոնի համալսարանում, միաժամանակ եղել Մարի-Նուբար ուսանող. ոստանի, 1984–2011-ին՝ Գալուստ Կյուլպենկյանի հիմնարկության հայկ. բաժանմունքի տնօրեն: 2006-ից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի խորհրդականն է: Ե-ի նախաձեռնությամբ և աջակցությամբ հրատարակվել են հայագիտ. ավելի քան 850 անուն ուսումնասիրություններ, շուրջ 150 անուն պարբ-ներ:

Լույս են տեսել Ե-ի «Հնդեվրոպական լեզուների բառապաշարը և հայերենի տեղը» (1975), «Ֆրանս-հայերեն բառարանագրությունը 19-րդ դարում» (1976), «Մխիթարյան միաբանությունը և բառարանագրությունը» (1977, բոլորը՝ ֆրանս.) և այլ աշխատություններ:

Ֆրանսիայի «Ասպետ արժանավորաց» (1995) և «Արժանավորաց սպա» (2012), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2009), ԹՄՄ «Ադամանդակուռ Արարատ» ոսկե (2009) շքանշաններ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2000), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2009, 2011) մեդալներ:

«ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ», կրոն. և աստվածաբան. հանդես: Հրատարակվել է 1888-ին Կ. Պոլսում (շաբաթաթերթ) և 1900–01-ին Մանչեստրում (ամսագիր, 1901-ին՝ «Հայ եկեղեցի»): Խմբագիր՝ Թորոս Զուղայեցի (Իսահակյան): Տպագրել է Աստվածաշնչի ուսումնասիրությանը, մեկնաբանությանն ու ուսուցմանը, Հայ եկեղեցու պատմությանը, օրենքներին, ծեսերին և արարողություններին վերաբերող նյութեր, կենսագր. տվյալներ միջնադարի հայ մատենագիրների (Հովհաննես Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի ևն) մասին: Ե. Հ.» անդրադարձել է նաև հայ. ձեռագրերի պատմությանը, պատասխանել ընթերցողների՝ կրոն. խնդիրներին վերաբերող հարցերին:

«ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ», հոգևոր, կրոնաբարոյական ամսաթերթ: Ֆրանսիայի հայ կաթոլիկ առաջնորդարանի պարբերաթերթ: Լույս է տեսնում 1997-ից Փարիզում: Տնօրեն՝ Պատրիկ Դեդեյան, խմբագիր՝ Գևորգ Ասատուրյան: Լուսաբանում է հայ կաթոլիկ հա-

մայնքի առօրյան, տպագրում կրոն., աստվածաբան., բարոյախոս. հոդվածներ, մշակութ. և տեղեկատվ. նյութեր:

«ԵՂԱՆԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ», պատկերազարդ տարեգիրք: Մխիթարյան միաբանության հրատ.: Լույս է տեսել 1803–20-ին Վենետիկում՝ որպես *«Տարեգրութիւն»* (1800–02) պարբ-ի շարունակություն: 3-րդ հայ. պարբ-ն է *«Ազդարարից»* ու «Տարեգրութիւնից» հետո: Խմբագիր՝ Ղուկաս *Ինճիճյան*: Տպագրել է հոդվածներ բնական գիտ-ների, տարբեր ազգերի հավատալիքների, ժամանակի գիտ. հայտնագործությունների, լեզվաբանության ու գրակ-յան մասին: Ունեցել է «Գուշակություն օդերևույթ փոփոխությանց», «Նոր տարի, նոր գիտելիք», «Զբոսարան ուսմանց» և այլ բաժիններ:

«ԵՂԲԱՅՐԱՍԷՐ», քաղ., բանասիր. տասնօրյա լրագիր: Հրատարակվել է (վիմատիպ) 1862–63-ին Կալկաթայում: Խմբագիր՝ Եղիազար Տեր-Հարությունյան: Լուսաբանել է քաղ. իրադարձությունները, հայկ. գաղութների առօրյան, Զեյթունի և Վանի շարժումները: Մեծ տեղ է հատկացրել Նոր Ջուղայի հայկ. կյանքի իրադարձություններին: Հայ ժողովրդի ազատագրության և գոյատևման հարցում կարևորել է Ռուսաստանի վճռորոշ դերը: Հնդկաստանում և այլուր հայերի ուծացման դեմ պայքարի հիմն. ուղին համարել է ազգ. մշակույթի պահպանումն ու զարգացումը: Տպագրել է Ե. Տեր-Հարությունյանի «Դպրատունք ի Ջուղայ» (1862, № 8) արժեքավոր ուսումնասիրությունը, նյութեր Կալկաթայի Հայոց մարդասիր. ճեմարանի և Նոր Ջուղայի առաջին օրիորդաց վարժարանի մասին, հայկ. պարբ-ներից արտատպել է ուշագրավ հրապարակումներ:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ազատ Կոմունարի [ծ. 10.4.1943, գ. Հացառատ (այժմ՝ ք. Գավառի շրջագծում)], գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1988), պրոֆ. (2004): Ավարտել է ԵՊՀ (1965): 1973–2008-ին աշխատել է ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ում, 1999–2008-ին՝ տնօրեն, 2004–08-ին՝ ինստ-ի *«Գրականագիտական հանդես»*-ի գլխ. խմբագիր: 2008-ից՝ Հայ-ռուս. (Սլավոն.) համալսարանի ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ե-ի «Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը» (1977), «Բանաստեղծը և թարգմանությունը» (ռուս., 1979), «Մարդը ներսից» (1985), «Գեղարվեստական պատում» (1986), «Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները» (1990), «Չարենցը և պատմությունը» (1997), ««Սասնա ծռեր» էպոսի պոետիկան» (1999, վերամշկ.՝ 2013, անգլ.՝ 2008), «XX դարի հայ գրականություն: Դեմքեր և խնդիրներ» (2002), «Իննսունականները (Քննադատություն և հրապարակախոսություն)» (2005), «Պատմության երգեհոնը. Եղիշե Չարենց» (2007), «Այս հմուտ, հանճարեղ լոռեցին...» (2009) աշխատությունները:


ԵՂԻԱՅԱՆ Բյուզանդ [1.12.1900, Ադանա (Կիլիկիա)–օգոստ., 1995, Բոստոն], գրող, խմբագիր, հրապարակագիր: Սովորել է Տարոնի և Իզմիրի ամերիկյան քոլեջներում, ժնևի համալսարանում: 1929-ից դասավանդել է Անթիլիասի դպրեվանքում, Բեյրութի Դարուհի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան ու Կիպրոսի Մելգոնյան վարժարաններում: 1939–49-ին՝ *«Ծիածան»* պարբերաթերթի խմբագիր, 1949–50-ին՝ *«Հասկ»* տարեգրքի խմբագրակազմի անդամ:

Լույս են տեսել Ե-ի «Կրօնաբարոյական դասեր: Միջին կարգ» (1929), «Աղօթքի հոգեբանութիւնը» (1954), «Մանկավարժական դասախօսութիւններ» (1965), «Ատանայի հայոց պատմութիւնը» (1970, 2012), «Հայ կաթոլիկ եւ աւետարանական յարանուանութեանց բաժանումը ԺԹ դարուն» (1971), «Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու» (1972), «Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, 1914–1972» (1975), «Սելճուկ-թաթար-օսմանեան թիւրքերու պատմութիւն: ԺԱ–ԺԵ դարեր» (1989), «Կիլիկիոյ հայոց թագաւորութեան երեք դարերը» (1994), «Կրօնքների պատմութիւն» (2005) պատմագիտ. և մակավարժ. աշխատությունները, «Հայաստանի հերոսներ» (անգլ., 1993) պատմ. դրամատիկ. վեպը, «Կարաւանը» (1979) պատմվածքների ժող-ը:

Ե-ի երկերի մեծ մասը տպագրվել է Անթիլիասում:



«Եղանակ Բիւզանդեան», *1803–20, Վենետիկ (1815)*



«Եղբայրասէր», *1862–63, Կալկաթա (№ 34, 1863)*



Ազատ Եղիազարյան



Բյուզանդ Եղիայանի *«Մանկավարժական դասախօսութիւններ» (1965, Անթիլիաս) գրքի փիփղոսաթերթը*

Եղիշե



«Գիրք պատմութեան Սրբոց Վարդանանց...»-ի (1764, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) 9-րդ էջը (վերևում) և նախատիտղոսաթերթը (ներքևում)





«Վարդանանց պատմությունը» (1958, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

«ԵՂԻՆԶ», երգիծ. հանդես (ամսագիր, 1997–ից՝ կիսամսյա): Առաջին երգիծ. հանդեսը ՀՀ անկախացումից հետո: Լույս է տեսել 1990–2001-ին Վանաձորում: Հիմնադիր-խմբագիր՝ Սամվել ***Խալաթյան:*** Ծաղրել է անցումային շրջանի պարսավելի երևույթները: Տպագրել է նաև դաս. ու ժամանակակից հայ և օտարազգի երգիծաբանների փոքրածավալ ստեղծագործություններ:

«ԵՂԻՆԶ», երգիծ. ամսաթերթ: Լույս է տեսնում 2005-ից Ստեփանակերտում: Հիմնադիր-խմբագիր՝ Հենրի Հայրապետյան: Տպագրում է երգիծ. (նաև արտերկրի մամուլից) նյութեր, ֆելիետոններ, ծաղրանկարներ:

ԵՂԻՇԵ [մոտ 410–415-ի միջև–մոտ 470–475-ի միջև (մասունքներն ամփոփված են Վանա լճի առափնյա Չարահան (Չաղար) Սբ Աստվածածին վանքում, կոչվել է նաև Սբ Եղիշե վանք)], մատենագիր, պատմիչ, փիլիսոփա, վարդապետ, ազգ-ազատագր. պայքարի գաղափարախոս: ***Սահակ Ա Պարթևի*** ու ***Մեսրոպ Մաշտոցի*** կրտսեր աշակերտներից: 434-ին ***Մովսես Խորենացու*** և ուր. հետ մեկնել է Ալեքսանդրիա՝ սովորելու: 441–442-ին վերադարձել է հայրենիք, եղել է Վարդան Մամիկոնյանի դպրապետը: Մասնակցել է 450–451-ի Վարդանանց պատերազմին, Ավարայրի ճակատամարտից (451) հետո անցել է ճգնակեցության: Այդ ընթացքում Մոկքում, ապա՝ Ռշտունիքում, հավանաբար՝ 458–464-ին, Դավիթ Մամիկոնյան քահանայի պատվերով գրել է **«Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին»** երկը, որը հայ պատմահայրենասիր. գրակ-յան գլուխգործոց է:

Առաջին անգամ տպագրվել է 1764-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Գիրք պատմութեան Սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց: Արարեալ Սրբոյ Եղիշէի վարդապետին», Բ-ին՝ «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք: Շարադրեալ գիտնական եւ խստակրոն սուրբ վարդապետին Եղիշէի...» (228 էջ, 8º, 15,7 x 11,7 սմ):

Վերահրատարակվել է 1788-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք» (413 էջ, 8º, 11,4 x 6 սմ):

Տպագրվել է նաև 1816-ին Կալկաթայում (Ջնթլում Ավետյանի տպ.), 1823-ին Կ. Պոլսում (Մայր եկեղեցու Սբ Աստվածածնի տպ.), 1828, 1842, 1852, 1864-ին («Ընտիր մատենագիրք» մատենաշարով) և 1838, 1859-ին («Մատենագրություն նախնյաց» մատենաշարով) Վենետիկում (Սբ Ղազարի տպ.), 1861-ին Թեոդոսիայում (Խալիպյան վարժարանի տպ.), 1861-ին Մոսկվայում (Հովհաննես Բաբայան-Քոթանյանցի տպ.), 1865-ին Երուսաղեմում (Սբ Հակոբյանց տպ.), 1866, 1870, 1873-ին Կ. Պոլսում (Ճանիկ Արամյանի և Հովսեփ Գավաֆյանի տպ-ներ), 1867-ին Զմյուռնիայում (Տետեյան եղբ. տպ.), 1879-ին Թիֆլիսում (Համբարձում Էնֆիաճյանի տպ.), 1892-ին Մոսկվայում (Մկրտիչ Բարխուդարյանի տպ.) և այլուր:

Երկն ունեցել է 40-ից ավելի հրատ-ներ (5-ը՝ աշխարհաբար), տպագրվել է անգլ., գերմ., իտալ., ֆրանս., ռուս. և այլ լեզուներով: Գիտահամեմատ. լավագույն հրատ-ը լույս է տեսել 1957-ին Երևանում (աշխատասիր.՝ Ե. Տեր-Մինասյանի, վերահրտ.՝ 1958, 1971, 1989): Հրատարակվել է նաև 1994-ին Անթիլիասում՝ «Մատենագիրք հայոց» (հ. 1, 2003, էջ 515–1072), և Էջմիածնում՝ «Աստվածաբանական երկեր» (2007) մատենաշարերով:

Ե-ի այդ երկից է տարածվել «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» թևավոր խոսքը: Երկի հիման վրա Դ. Դեմիրճյանը գրել է «Վարդանանք» վեպը:

Ե. գրել է նաև Աստվածաշնչի որոշ գրքերի մեկնություններ, որոնցից են «Մեկնութիւն տէրունական Հայր մեր աղօթից...»-ը (1836, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), Ծննդոց գրքին նվիրված «Արարածոց

մեկնութիւն»-ը (բնագիրն ամբողջական չէ, հրտ.՝ 1992, աշխատասիր.՝ Լ. Խաչիկյանի), «Յայլակերպութիւն Քրիստոսի կամ ի Թաբոր Լերին յայտնութիւն Տեառն...» (445), «Բան խրատու յաղագս միանձնաց» (455, հրտ.՝ 1991, «Էջմիածին», № 9–10, էջ 80–84, աշխարհաբարի փոխադր.՝ Հ. Քյոսեյանի) ճառերը, «Վասն հոգւոց մարդկան...» (460), «Հարցմունք եւ պատասխանիք ի Գիրս Ծննդոց» երկերը ևն:

Գրկ. «Սփերք հայկականք», հ. 11, Վնտ., 1854: **Տէր-Պօղոսեան Գ.**, *Նկատողութիւններ եղիշէի Պատմութեան վերաբերեալ, «ՀԱ», 1906:* **Կիւլէսէրեան Բ.**, *Եղիշէ, Վնս., 1909:* **Նալբանդյան Վ.**, *Եղիշե, Ե., 1959:* **Տեր-Մինասյան Ե.**, *Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971:* **Խրլոպյան Գ.**, *Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Ե., 1978:* **Աբրաքյան Ա.**, *Եղիշեի աստվածաբանական հայացքները, «Էջմիածին», 1983, № 2–3:* **Քյոսեյան Հ.**, *Խորհրդանշանը Եղիշեի մեկնաբանական և ճառագրական երկերում, «Էջմիածին», 1989, № 8:* **Мирумян К.**, *Становление естественно-научной мысли в армянской философии, Е., 1989.*

ԵՂԻՎԱՐԴ, տես Եղիշե *Տերտերյան*:

«ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ», գրական-գեղ. ամսաթերթ: ԼՂՀ գրողների միության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1995-ից Ստեփանակերտում: Հիմնադիր-խմբագիր՝ Վարդան *Հակոբյան* (1995–2000-ին և 2010-ից), խմբագիրներ՝ Կիմ Գաբրիելյան, Համլետ Մարտիրոսյան, Քանաքարա Քոչարյան: Լուսաբանում է Արցախի գրական, մշակութ. կյանքը, ներկայացնում է երիտասարդ ստեղծագործողներին, գրական կարևոր միջոցառումներ ևն: Անդրադառնում է նաև ՀՀ և Սփյուռքի գրական-մշակութ. առօրյային:



«Եղիցի լույս», *1995-ից, Սրեփանակերտ*

ԵՂՈՅԱՆ Ազատ Երեմի (ծ. 30.9.1953, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1973), ԵԳԹԻ (1982): 1970–80-ական թթ-ին համագործակցել է «Գարուն» ամսագրի հետ, 1980–93-ին աշխատել է «Սովետական Հայաստան» (պատկերազարդման բաժնի վարիչ), «Գրքերի աշխարհ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Մասյաց աղավնի» (Ղրիմ), «Այբ Բեն Գիմ», «Ուրբաթ», «Նպատակ» թերթերի խմբագրություններում՝ որպես նկարիչ-ձևավորող:

Նկարազարդել և ձևավորել է Մ. Քանքանյանի «Քարե ծաղիկներ» (1974), Հ. Մաթևոսյանի «Ալևորներ» (1984), Ա. Արշալույսյանի «Հայացք» (1984), Գ. Բյուրականցու «Լույս սիրո» (1984), Ա. Ոսկանյանի «Կարոտի կայմ» (1985), Ռ. Զարյանի «Պետրոս Ադամյան» (ռուս., 1985), Ի. Սիմոնյանի «Ապերախտը» (1995) և այլ գրքեր:



Ազատ Եղոյան.
Գ. Բյուրականցու «Լույս սիրո» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվ., ստեղծվել է 1921-ին՝ Երևանի նախկին ուսուցչ. սեմինարիայի գրադարանի գրքային ֆոնդի (10 հզ. միավոր) հիման վրա: Հետագայում համալրվել է Էջմիածնի Գևորգյան, Մոսկվայի Լազարյան ճեմարանների, Երևանի թեմ. դպրոցի, արական գիմնազիայի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և այլ հիմնարկների, ինչպես նաև առանձին անձանց (Վ. Տերյան, Ա. Ծատուրյան, Լ. Աթաբեկյան, Գ. Չուբարյան և ուր.) հավաքածուներով: Խորհրդ. շրջանում գրադարանի ֆոնդը տարեկան համալրվել է 55–60 հզ. միավոր գրակ-յամբ, ստացվել են ԽՍՀՄ-ում հրատարակվող գրակ-յան գրեթե բոլոր պարտադիր օրինակները:

Գրադարանը ՀՀ բուհ. գրադարանների մեթոդ. կենտրոնն է, ունի շուրջ 2 մլն միավոր գիրք, որից 1,2 մլն-ը՝ գիտ.: 1994-ին Տիգրան Իզմիրյանի բարերարությամբ ԵՊՀ կենտր. շենքին կից կառուցվել է գրադարանի նոր մասնաշենք, 1997-ին գրադարանը կոչվել է բարերարի ծնողների՝ Սարգիս և Մարի Իզմիրյանների անունով:



ԵՊՀ գրադարանի
մուտքը

Ունի 6 ընթերցասրահ, գիտ. 2 կաբինետ, գործում է էլեկտրոնային քարտարանը: Կարևոր են հատկապես Գալուստ Կյուլպենկյանի, Հելեն Թաքեսյանի, Անդրեյ Սախարովի անվ. ֆոնդերը, որոնց շնորհիվ գրադարանը ձեռք է բերել բազմաթիվ արժեքավոր գրքեր, հիմնականում՝ օտարալեզու: Գրադարանում գործում են ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի նյութերի պահոցներ, ՀՀ-ում Հունաստանի դեսպանատան կենտրոն-գրադարանը:


Հրատարակում է «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների մատենագիտությունը» (պր. 1–9... , 1964–2013...):

ԵՊՀ հրատարակչության *տպագրած գրքերից*



Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ի (1975, Ե.) կազմը





Ա. Այտընյանի «Քննական քերակա-նություն...» (1987, Ե.) գրքի կազմը

Տնօրեններ են եղել Հակոբ Մանանդյանը, Գաբրիել Ռոտինյանը, Վահե Միքայելյանը, Ասատուր Հայկազյանը, Հակոբ Հակոբյանը, Հակոբ Խաչատրյանը, Սահակ Առաքելյանը, Աննա Մակարյանը, Վարդգես Ասլանյանը, Աշոտ Ալեքսանյանը, Եզնիկ Միրզոյանը (2012–ից):

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ (1964–68-ին՝ «Միտք», մինչև 2007-ը՝ Երևանի համալսարանի հրատարակչություն), հիմնադրվել է 1920-ին, գրանցվել 1927-ի մարտի 31-ին: Տպագր. գործունեություն ծավալել է դեռևս Ալեքսանդրապոլում՝ պետ. համալսարանի սկզբնավորումից սկսած. առաջին գիրքը Վ. Զեյմսի «Հոգեբանութիւն» ուսումնամեթոդ. ձեռնարկն է՝ Ս. Տիգրանյանի թարգմանությամբ, 2-րդը՝ վերջինիս «Հոգեբանություն» առարկայի դասախոսությունը (երկուսն էլ՝ 1920):

Հրատարակչությունը լույս է ընծայել Հ. Աճառյանի ***«Հայերեն արմատական բառարանը»*** (խմորատիպ, հ. 1–7, 1926–35, 1971–79-ին վերահրատարակվել է տպագր. եղանակով՝ 4 հատորով), ***«Հայոց անձնանունների բառարանը»*** (հ. 1–5, 1942–62), «Հայոց լեզվի պատմությունը» (մաս 1, 2, 1940, 1951, վերահրտ.՝ 2013), Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» (գիրք 1, 1937) և «Ուրարտուի պատմությունը» (1940), Ա. Տերտերյանի «Հայ կլասիկներ» (1944), «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (1955), Է. Աղայանի «Լեզվաբանության ներածությունը ըստ լեզվի նոր ուսմունքի» (1949) և «Հայ լեզվաբանության պատմություն» (հ. 1, 2, 1958, 1962), Ս. Ղազարյանի «Գրաբարի դասագիրք» (1951), Թ. Հակոբյանի «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության» (1960), Բ. Թումանյանի «Հայ աստղագիտության պատմություն» (1964, 1968), Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» (1965) և այլ աշխատություններ: Արժեքավոր են «Հայ ժողովրդի պատմություն» (12 պր., 1958–64) բուհ. դասագիրքը, «Հայ ժողովրդի պատմություն» (1972, խմբագիր՝ Մ. Ներսիսյան) համառոտ ուս. ձեռնարկը (թարգմանվել և տպագրվել է նաև ռուս.՝ 1980), ***«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»*** (հեղ-ներ՝ Գ. Ավետիքյան, Խ. Այուրմելյան, Մ. Ավգերյան, հ. 1, 2, 1979, 1981, նմանահանություն) բառարանը, Ա. Մեյեի «Հայագիտական ուսումնասիրությունները» (1978), Մ. Չամչյանի «Հայոց պատմությունը» (հ. 1–3, 1984–85), Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» (1987) աշխատությունը ևն: Տպագրվել են բազմաթիվ դասագրքեր, ուս. ձեռնարկներ (այդ թվում՝ թարգման.)՝ ֆիզմաթ և բնական գիտ-ների վերաբերյալ, գեղ. գրակ. ևն:

1970-ական թթ-ից հրատարակվել են մի շարք մատենաշարեր՝ «Հայագիտական ուսումնասիրություններ», ***«Ուսանողի գրադարան»***, ***«Քրեատրոմատիա»***, «Չարենցյան ընթերցումներ», «Աճեմյան մատենաշար» ևն, տպագրել է նաև Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (1975), Ռ. Մելքումյանի և Պ. Պողոսյանի «Ռուս–հայերեն դարձվածաբանական բառարանը» (1975), Ա. Խուդաբաշյանի «Ռուս–հայերեն բառարանը» (գիրք 1–2, 1986–87), ***«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»*** (հեղ-ներ՝ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 1–5, 1986–2001, ՀՀ նախագահի մրց.՝ 2003), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը» (հ. 1, 2, 1987, 1992), Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանը» (հ. 1–2, 2000), «Թուրքերեն-հայերեն բառարանը» (2003) և «Գրաբարի հոմանիշների բառարանը» (2006), Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը» (2003, ՀՀ նախագահի մրց.՝ 2004), Ե. Գևորգյանի «Հա-

յոց շարժումային լեզվի բացատրական բառարանը» (2003), ինչպես նաև բազմաթիվ երկլեզվյան, մասնագիտ. տերմինների բառարաններ, գրուցարաններ:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի (1984–2011-ին՝ տնօրեն Զավեն *Եկավյան*) նախաձեռնությամբ ստեղծված «Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության» գրահրատարակչ. շարքի տարբեր երկրների հայկ. հրատարակչություններում լույսընծայված շուրջ 850 անուն գրքից ավելի քան 150-ը տպագրվել է ԵՊՀ հրատարակչությունում, որոնցից են Բ. Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարանը» (2004), Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների» աշխատության վերջին՝ 9-րդ հատորը (2005, խմբագիրներ՝ Ս. Գալստյան և Խ. Բատիկյան), Ն. Ադոնցի «Երկերը» (հ. 1–6, 2006–12), Հ. Հյուբշմանի «Հայագիտական ուսումնասիրությունները» (1990, 2004) և «Հայերենի քերականությունը» (2003), Յ. Կարստի «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» (2002), Թ. Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» (հ. 1–2՝ մեկ գրքով, 2013) աշխատությունը ևն, վերահրատարակվել են Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը» (հ. 1–4, 2010), Ա. Ղազիկյանի հայ գրատպության 400-ամյակին նվիրված «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» (2013) աշխատությունը ևն:

Հրատարակչությունը թարգմանել և լույս է ընծայել Հայոց ցեղասպանությանն առնչվող մի շարք երկեր, այդ թվում՝ Ֆ. Նանսենի «Խարված ժողովուրդ» (2000), Հ. Ֆիրբյուխերի «Հայաստանը 1915-ին» (2000), Յ. Քյունցլերի «Երեսուն տարի ծառայություն Արևելքում» (2008) ևն, տպագրել է նաև Ս. Պողոսյանի «Հայոց ցեղասպանության պատմություն» (գիրք 1–3, 2008–11), Հ. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» (հ. 3–5, 2009–13, Պետ. մրց.՝ 2013), Ս. Պետոյանի «Թուրքերը թուրքերի մասին» (հ. 1, 2011) աշխատությունները: Ցայսօր լույս է ընծայել ավելի քան 5 000 անուն գիրք՝ շուրջ 2 մլն ընդհանուր տպաքանակով. 1960-ական թթ-ից տարեկան հրատարակում է 100–150 անուն գիրք, որոնց մեծ մասը տպագրվել է համալսարանի տպագրատանը և օպերատիվ տպագրության արտադրամասում:

Հրատարակչությունը տպագրում է նաև համալսարանի պարբ-ները: 1920-ին Ալեքսանդրապոլում լույս է տեսել ԵՊՀ առաջին՝ «Հայաստանի համալսարան» թերթը (1 համար), 1965–82-ին հրատարակվել են նաև *«Երիտասարդ գիտաշխատող»* (1965–82), *«Հանդես Երևանի համալսարանի»* (1967–2000) պարբ-ները, *«Ուսանողի գիտական տեղեկագիրը»* (1940–75) ևն: Ներկայում լույս են տեսնում *«Երևանի համալսարան»* պաշտոնաթերթը, *«Գիտական տեղեկագիր ԵՊՀ»*, *«Բանբեր Երևանի համալսարանի»* հանդեսները, *«Գրական համալսարան»* գրական-գեղ. և այլ տարեգրքեր, բազմաթիվ միջբուհ. հանդեսներ և ժող-ներ:

Հրատարակչության տնօրեններ են եղել Վսեվոլոդ Սկորյոլկինը, Արմեն Հակոբյանը, Արամայիս Ասրյանը, Գառնիկ *Անանյանը*, Բարկեն *Հարությունյանը*, Սարգիս Փանոսյանը, Դավիթ *Գասպարյանը*, Պերճ *Ստեփանյանը*, Կարեն Գրիգորյանը (2014-ից):

Գրկ. Երևանի պետական համալսարանի հրատարակչություն: Մատենագիտություն (1920–2011 թթ.), կազմ.՝ Հ. Պետրոսյան, Լ. Հովհաննիսյան, Ե., 2011:

ԵՍԱՅԱՆ (Հովհաննիսյան) Զապել Մկրտչի (4.2.1878, Կ. Պոլիս–1943, անհատի պաշտամունքի զոհ), գրող, թարգմանիչ, հրապարակագիր: Ավարտել է Կ. Պոլսի Սկյուտարի Սբ Խաչ վարժարանը (1892), Փարիզում հետևել Սորբոնի համալսարանի և Կոլեժ դը Ֆրանսի գրակ-յան և փիլ-յան դասընթացներին (1895-ից): Աշխատակցել է «Ծաղիկ», «Մասիս», «Անահիտ», «Արեւելեան մամուլ» և այլ պարբ-ների:



«Երևանի պետական համալսարանի հրատարակչություն» (2011, Ե.) մատենագիտության կազմը




«Երևանի պետական համալսարան. 2012–2013 ուստարվա գործունեություն» (2013, Ե.) տեղեկատուի կազմը



Զապել Եսայան

1915-ին ապաստանել է Թիֆլիսում, Մեծ եղեռնի մասին հիշողություններ հրապարակել Բաքվի «Գործ» ամսագրում: 1918-ին Մերձ. և Միջին Արևելքի երկրներում կազմակերպել է հայ տարագիրների և որբերի հավաքման ու տեղավորման գործը: Այդ տարիներին գրել է «Վերջին բաժակը» (1916), «Հոգիս աքսորեալ» (1919, 1922, Վնն., Մխիթարյան տպ.), «Անձկութեան ժամեր» (1924, Սելանիկ, «Ալիքի» տպ.) վիպակները, «Նահանջող ուժեր» (1926) վեպը: 1926-ին այցելել է Խորհրդ. Հայաստան. ստացած տպավորություններն ամբողջացրել է «Պրոմեթէոս ազատագրուած» (1928, Մարսել, Թագվոր Խաչիկյանի տպ.) հուշագրության մեջ: 1933-ին հաստատվել է Հայաստանում:

Լույս են տեսել նաև Ե-ի «Շնորհիքով մարդիկ» (1903, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ.), «Սկիւտարի վերջալոյսներ» (1905, «Արեւելեան մամուլ», 2009), «Հլուները եւ ըմբոստները» (1906, «Ազատ խօսք»), «Կեղծ հանճարներ» (1910, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Կրակե շապիկը» (1934), «Բարպա Խաչիկ» (1936, հրտ.՝ 1966) վեպերն ու վիպակները, որոնք աչքի են ընկնում իրականության հավաստի պատկերմամբ, Կիլիկիայի հայության ողբերգությունը պատկերող «Աւերակներուն մէջ» (1911, ԿՊ, Հայոց հիւրատարակչ. ընկ. տպ., 1957, 1987, 2006, 2012, Ստամբուլ) վավերահուշագրությունը, «Միլիհիտարի պարտեզները» վեպ-հուշագրությունը (գիրք 1, 1935, 1950), ինչպես նաև գրակ-յան և արվ-ի մասին հոդվածներ: Հրատարակվել են նաև Ե-ի «Երկերի ժողովածուն» (1937, Ե.), «Երկերը» (1959, Ե., 1972, Բ., հ. 1–2, 1987, Անթիլիաս), «Նամակները» (1977): Թարգմանել է Մ. Մետեռլինկի, Օ. Ուայլդի երկերից:



Զ. Եսայանի *«Կեղծ հանճարներ» (1910, Կ. Պոլիս) գրքի շապիկը*

Գրկ. **Արզումանյան Ս.,** *Զապել Եսայան: Կյանքը և գործը, Ե., 1965:*

ԵՍԱՅԻ, XV դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: Սովորել է Հերմոնի (Աւերմոն) վանքում (Սյունիք): Նկարազարդել է 3 Ավետարան (1473, 1481, 1486, Մատենադարան, ձեռ. № 9431, 6699, 7776): Ե-ու մանրանկարներն աչքի են ընկնում վառ գույների համադրմամբ, հարուստ զարդամոտիվներով, կիսախորանները՝ նուրբ վարդյակազարդերով: Նրա արվ-ում նկատելի է Տաթևի և Գլաձորի մանրանկարչության դպրոցների ազդեցությունը:

Գրկ. **Բարխուդարյան Ս.,** *Հերմոնի դպրոցի փեղադրությունն ու գործունեությունը, «ԲՄ», № 5, 1960:* **Յովսէփեան Գ.,** *Խաղրակեանք կամ Պոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 277:*



«Եսայի Նչեցի», *մանրանկար, 1318-ի Ասփվածաշունչ (ծաղկող՝ Թորոս Տարոնացի, Մատենադարան, ձեռ. № 206)*

ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ [1260, գ. Նիչ (Սասունի գավառ)–մոտ 1338, Գլաձորի վանք (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում)], րաբունապետ, քերական, մատենագիր: Սովորել է Մշո Առաքելոց դպրեվանքում, ապա՝ Քաջբերունյաց գավառում, Վայոց ձորի Աղբերց (Գլաձոր) վանքում աշակերտել է Ներսես Մշեցուն: Ստացել է բարձրագույն կրթություն և վարդապետ. աստիճան: Եղել է շուրջ կես դար գոյատևած Գլաձորի համալսարանի հիմնադիրն ու րաբունապետը, դասավանդել է «յոթ ազատ արվեստներ», կրթել շուրջ 360 աշակերտի՝ Հովհաննես Արճիշեցի, Մխիթար Երզնկացի, Հովհան Որոտնեցի, Հովհաննես Երզնկացի (Ծործորեցի), Գրիգորիս Երզնկացի և ուր.: Պայքարել է պապական նկրտումների, ունիթոր. շարժման դեմ՝ հանուն Հայ եկեղեցու ինքնուրույնության և հայ-ի պահպանման:

Ե. Ն. «Վերլուծութիւն քերականութեան» (հրտ.՝ 1966, աշխատասիր.՝ Լ. Խաչերյանի) համալսարան. բանաքաղական դասագրքում քերակ-ը համարել է «դուռն ամենայն իմաստութեան եւ կրթութեան», առաջարկել համեմատության միջոցով վերացնել հայոց հին ու նոր լեզուների միջև առաջացած խզումն ու վերականգնել լեզվի հին ձևերը: Ե. Ն. անդրադարձել է հունաբան դպրոցի թարգմանություններին, խոսքի մասերին և նրանց բաժանմանը, հոլովմանը, խոնարհմանը, լեզուների ծագմանը և այլ հարցերի: Ե. Ն-ու լավագույն գործերից է նաև «Մեկնութիւն Եզեկիէլի» (1303, Մատենադարան, ձեռ. № 5566, 5717, 5906, ևն, 30-ից ավելի ձեռագիր) երկը: Գրել է նաև ճառեր ու նամակներ: Նրա «Թուղթ Եսայեայ վարդապետի առ տէր Մատթէոս» երկը տպագրվել է 1860-ին «Հռոաքաղ» (հ. 2, տետրակ 7, էջ 157–164) ամսագրում:

Գրկ. Ալիշան Ղ., *Միսական, Վնտ., 1893:* Ձահուկյան Գ., *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:* Խաչերյան Լ., *Գյաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII–XIV դդ.), Ե., 1973:* Պետրոսյան Ս., *Եսայի Նչեցու թղթերը, «Էջմիածին», 1985, № 11–12:*

ԵՎԱԳՐՈՍ ՊՈՆՏԱՑԻ (մոտ 346/347–մոտ 400/401), հույն եկեղեց. մատենագիր: Սովորել է Կեսարիայում, աշակերտել *Բարսեղ Կեսարացուն,* ապա՝ *Գրիգոր Նազիանզացուն:*

Ե. Պ. գրել է ճգնակեց. հրահանգներ պարունակող «Պրակտիկ» երկը, որի շարունակությունն է «Գնոստիկը»: Հեղինակ է «Աղոթքի մասին» երկի, «Հարիւրաւորքն վեցերորդք» (600 կարճառոտ խորհրդածություններ) ժող–ի: Մեզ են հասել վերջինիս հայ. և ասոր. թարգմանությունները:

Ե. Պ–ու հոգևոր ժառանգությունը հայ. է թարգմանվել V դ–ում՝ հուն–ից: Նրանից մեծապես օգտվել են Սահակ Ա Պարթևը, Եզնիկ Կողբացին, Հովհաննես Ա Մանդակունին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին և ուր.: Նրա երկերի հետևողությամբ Գրիգոր Բ Վկայասերը, Մատթեոս Ջուղայեցին, Կիրակոս Երզնկացին գրել են աշխատություններ, հորինել լուծմունքներ:

Ե. Պ–ու «Գիրք ութն խորհրդոց մեղաց» երկը տպագրվել է 1750–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (թարգմ. և աշխատասիր.՝ Մատթեոս Ջուղայեցու): Տպակից է *Մատթեոս Ջուղայեցու* «Վասն քարոզութեան բանի» աշխատությանը (192 էջ, 8º, 12, 7 x 7,5 սմ):

Ե. Պ–ու մասին հայ. տպագրվել է «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ Վարք եւ մատենագրութիւնք» (1907, հուն–ից թարգմ. և աշխատասիր.՝ Բարսեղ վրդ. Սարգիսյանի, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը:

Ե. Պ–ու երկերից իմաստախոս. քաղվածքներ են բերված *Ակնարկաւոր Ա. Ջուղայեցու* կազմած «Վկայութիւնք պէտս քարոզութեանց» (հրտ.՝ 1998, աշխատասիր.՝ Հ. Քյոսեյանի, էջ 75–86) աշխատության մեջ:



Եվագրոս Պոնտացու
«Գիրք ութն խորհրդոց մեղաց»-ի (1750, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) տիտղոսաթերթի դարձերեսը

Գրկ. Զարբհանալեան Գ., *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 421–432:* Geerard M., *Clavis Patrum Graecorum, t. 2, Brépols–Turnhout, 1974, p. 78–97.*

ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ (Evsebius Cecsariensis), **Եվսեբիոս Պամփիլեա** (մոտ 260, Պաղեստին–մոտ 340), պատմագիր, աստվածաբան, Կեսարիայի (Պաղեստինի) եպիսկոպոս (313/314–ից): Հեղինակ է աստվածաբան. («Ավետարանական նախապատրաստություն», «Ավետարանական ապացուցում», «Աստծու երևման մասին», «Եկեղեցական աստվածաբանության մասին» ևն), վարքագր. («Պաղեստինյան վկայաբանությունները», «Կոստանդին կայսրի վարքը»), պատմագր. երկերի:

Նշանավոր է «Քրոնիկոն»՝ «Եկեղեցական պատմություն» (գրել է 301–320–ական թթ–ին, հայ. հայտնի է նաև «Ժամանակագրական կանոններ» վերնագրով) երկը, որի հուն. բնագիրը կորել է, պահպանվել են որոշ հատվածներ. ամբողջությամբ պահպանվել է միայն հայ. թարգմանությամբ: Ըստ Մովսես Խորենացու՝ այն V դ–ում (416–420) հավանաբար ասոր–ից թարգմանել են Մեսրոպ Մաշտոցի աշակերտները: «Քրոնիկոնից» օգտվել են հայ պատմիչներ Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Թովմա Արծրունին, Ասողիկը և ուր.:

Հայ. լույս են տեսել Ե. Կ–ու «Քրոնիկոնը»՝ «Ժամանակականք» վերնագրով, 1818–ին տպագրվել է երկու անգամ, հուն. բնագրի պահպանված հատվածներով և զուգահեռ լատ–ով (մաս Ա՝ «Ժամանակագրութիւն պատմական», մաս Բ՝ «Քրոնիկոն կանոն», աշխատասիր.՝ Մկրտիչ վրդ. Ավգերյանի, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Պատմութիւն եկեղեցւոյ: Յեղեալ յասորւոյն ի հայ ի հինգերորդ դարու» (հրտ.՝ Ա. Ճարյան, 1877, նույն տպ.) երկը: Ե. Կ. կազմել է նաև 4 Ավետարանների համաձայնության տասը տախտակները (միջնադարում կոչվել են կանոնք), որոնք հետագայում ձևավորվել ու պատկերազարդվել են և կոչվել *խորան*:



Եվսեբիոս Կեսարացու
«Ժամանակականք» (մաս Ա, 1818, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը

Գրկ. Զարբհանալեան Գ., *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 54–57, 434–443:* Մանանդեան Յ., *Քաղուածքներ Եւսեբիոսի Կեսարացւոյ Քրոնիկոնից մի հին ձեռագրում, Վնն., 1905:* Տեր–Մկրտչյան Գ., *Հայագի–*

պական ուսումնասիրություններ, գիրք 1, Ե., 1979, էջ 388–400: Lexikon für Theologie und Kirche, Bd. III, Freiburg, 1959, S. 1195–1197: **Altaner B.**, *Précis de patrologie, adapt. par H. Chirat, Casterman–P.–Tournai, 1961, p. 336–344.*

«ԵՒՐՈՊԱ», քաղ., գեղ. և ուս. շաբաթաթերթ, 1858–ից՝ կիսամսյա: Մխիթարյան միաբանության հրատ.: Լույս է տեսել 1847–63–ին Վիեննայում: Խմբագրակազմ, վերջում՝ պատ. խմբագիր՝ Վարդան Ըստկարյան: Ներկայացրել է արևմտահայ մտավորականության և զարգացող վաճառականության խնդիրները, հրապարակել տեղեկություններ արմ. երկրների արդ–յան, առևտրի, տեխնիկայի ու գիտ–յան նվաճումների մասին, անդրադարձել հայոց պատմությանը, հայկ. գաղթավայրերին:



«Եւրոպա», *1847–63, Վիեննա*

«ԵՒՐՈՊԻԱ», քարտեզ: Տպագրվել է 1786–ին Վենետիկում: Փորագրիչ՝ Եղիա *Էնտազյան:* Անվանացույց՝ «Եւրոպիա ըստ նոր աշխարհագրական զննութեանց փորագրէալ ի Վէնետիկ ի վանս սրբոյն Ղազարու» (չափերը՝ 79 x 57 սմ): Անվանացույցը քարտեզի ներքևի ձախ անկյունում է՝ զարդանկարի մեջ:

«ԵՐԱԺԻՇՏ», երաժշտ., մշակութ., տեղեկատվ. ամսաթերթ: Երևանի պետ. կոնսերվատորիայի հրատ.: Լույս է տեսնում 2005–ից Երևանում: Հիմնադիրներ՝ Սերգեյ Սարաջյան, Գոհար Շագոյան, խմբագիրներ՝ Աննա Գևորգյան, Տաթև Ամիրյան, Հասմիկ Համբարյան, Շուշան Այվազյան (2011–ից): Լուսաբանում է ՀՀ–ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող երաժշտ. կարևոր իրադարձությունները, հայ և ճանաչված այլ երաժիշտների ելույթները տարբեր բեմերում, տպագրում է մշակութ. կապերին, հոգևոր երաժշտությանը և արվ–ի այլ տեսակներին վերաբերող հարցազրույցներ, տեղեկատվ. նյութեր, ակնարկներ:



«Երաժիշտ», *2005–ից, Երևան*

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է 1966–ին Երևանում: Իր տեսակով միակն է ԱՊՀ երկրներում: Ունի շուրջ 230 հզ. միավոր երաժշտ. գրակ., նոտաներ, ձայնապնակներ, սկավառակներ (CD, DVD) ևն: Գրադարանում պահվում են նաև հայ և այլազգի երաժշտագետների, կոմպոզիտորների արխիվային նյութեր, կազմակերպվում են երաժշտ. ստեղծագործությունների ունկնդրումներ, քննարկումներ, հանդիպումներ անվանի երաժիշտների, կոմպոզիտորների և մշակույթի այլ գործիչների հետ, ցուցահանդեսներ, հոբելյան. միջոցառումներ:

Գրադարանի տնօրեններ են եղել Ալեքսանդր Անանյանը, Եվգենյա Չիլինգարյանը, Ստեփան Շալդյանը, Գուլո Նահատակյանը (1996–ից):

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», երաժշտ., մշակութ., գիտ., վերլուծ. և տեղեկատվ. միջազգ. հանդես: Երևանի պետ. կոնսերվատորիայի հրատ.: Լույս է տեսնում 1998–ից Երևանում՝ հայ., ռուս., անգլ.: Հիմնադիր–նախագահ՝ Արմեն Սմբատյան, գլխ. խմբագիր՝ Գոհար Շագոյան: Լուսաբանում է ՀՀ–ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող երաժշտ. կարևոր իրադարձությունները, կոնսերվատորիայի առօրյան, հայ և օտարազգի ճանաչված երաժիշտների ելույթները, տպագրում է մշակութ. կապերին, հոգևոր երաժշտությանը, արվ–ի այլ՝ տեսակներին վերաբերող երաժշտատես., գիտաքննադատ. հոդվածներ, գրախոսություններ և այլ նյութեր:



«Երաժշտական Հայաստան», *1998–ից, Երևան (№1, 2006)*

ԵՐԱՆՅԱՆ Գաբրիել Օհանի (1827, Կ. Պոլիս–13.10.1862, Կ. Պոլիս), կոմպոզիտոր, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Պեզճյան մայր վարժարանում, աշակերտել Արիստակես *Հովհաննիսյանին:* Տիրապետել է նոր հայկ. ձայնագրությանը, ուսումնասիրել է եվրոպ. երաժշտության տեսությունը: 1857–ին եվրոպ. նոտագրությամբ հրատարակել է «Քնար արեւելեան» երաժշտ. հանդեսը (Ա. Հովհաննիսյանի, Ն. Թաշճյանի հետ), 1861–63–ին՝ *«Քնար հայկական»* (Ն. Թաշճյանի, Տ. Չուխաճյանի հետ) պարբ–ը:

Ե. գրել է ազգ–հայրենասիր. երգեր [«Կիլիկիա», խոսք՝ Ն. Ռուսինյանի, «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր»), խոսք՝ Հ. Միրզա–Վանանդեցու, «Արիք հայկազունք», խոսք՝ Հ. Սվաճյանի, ևն]:

«ԵՐԳ ԵՐԳՈՑ» (եբր.՝ «Շիր հա շիրիմ»), սիրային հնագույն երգերի ու բանաստեղծությունների ժող., Աստվածաշնչի գլուխներից: Քրիստ. ավանդությունն այն վերագրում է հին եբրայեցիների Սողոմոն արքային, որը սիրո երգեր է ձոնել կնոջը՝ Սուլամիթին: «Ե. ե.» ամբողջացել–ձևավորվել է մ. թ. ա. III դ–ում:

Հայ իրականության մեջ «Ե. ե.» հետքեր է թողել միջնադարյան տաղերգության (Գրիգոր Նարեկացի, Գրիգորիս Աղթամարցի) վրա, նոր ժամանակներում նրա ներգործությունն զգացվում է Պ. Սևակի համանուն պոեմում:

1700–01-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության, տպագրվել է ***Խաչատուր Էրզրումցի Առաքելյանի*** «Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցն Սողոմոնի», 1820-ին Կալկաթայում (Զնթլում Ավետյանի տպ.)՝ ***Հակոբ Կարնեցու*** «Մեկնութիւն Երգ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի» երկերը:

Գրկ. Երգ երգոց Սողոմոնի: Ապփվածաշունչ մատյանից (աշխարհաբարի փոխադր.՝ Վ. Դավթյանի), Ե., 1992: Երգ երգոց հանդերձ մեկնութեամբ նախնյաց (աշխատասիր.՝ Մ. Արամյանի), Ե., 1993: Երգ երգոց: Իսրայելի Սողոմոն արքայի ասած օրհնությունների օրհնությունը, Ե., 2005:

ԵՐԳԱՐԱՆ, երգերի, երգվող բանաստեղծությունների (երբեմն՝ միայն բանաստեղծությունների) ժող.:


Հայկ. ձեռագիր Ե–ների ակունքները միջնադարյան տաղարաններն են, որ պահպանվել են XV դ–ից:

Տպագիր Ե–ների հին նմուշներից են ***Ղազար Զահկեցու*** (1737, 1744), ***Մանուել Սրմաքեշ Կեսարյանի*** (1752), ***Պետրոս Ղափանցու*** (1772), Գրիգոր ***Գապաասաքալյանի*** (1803) երգարանները, Ղ. Ալիշանի կազմած «Հայոց երգք ռամկականք»–ը (հայ., անգլ., 1852, Վնտ., Սբ Ղազարի տպ.), Ռ. Պատկանյանի «Ազգային երգարան հայոց»–ը (1856, նոտային հավելվածով, ՍՊբ, Յակով Յանսոնի տպ.), Մ. Միանսարյանցի «Քնար հայկական»–ը (1868, ՍՊբ, Օ. Բակստի տպ.), Ե. Տնտեսյանի «Նոր երգարան հայոց»–ը (1880, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), Տ. Փափազյանի հրատարակած «Երգարան թատերական»–ը (1882, ԿՊ, Տիգրան Ճիվելեկյանի տպ.), Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջները» (1895, Ալեք–պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), Վ. և Պ. Զարդարյան եղբայրների «Ընդարձակ հայկական երգարանը» (հ. 1–3, 1909, ԿՊ, Ռոգոս Սագայանի և Օննիկ Արզումանի տպ–ներ), Հ. Սարգսյանի «Կիլիկիա երգարանը» (1921, ԿՊ, Հակոբ Ասատուրյան և որդ. տպ.) են:

Առանձին ճյուղ են կազմում աշուղ. ձեռագիր դավթարներն ու տպագիր ժող–ները՝ «Սայաթ–Նովա» (աշխատասիր.՝ Գ. Ախվերդյանի, 1852, Մ., Վլադիմիր Գոթիեի տպ.), «Նոր քնար Հայաստանի» ընդհանուր վերնագրով Ռ. Տեր–Հովհաննիսյանի և Զ. Մսերյանի հրատարակած՝ Ազբար Ադամի, Շիրինի, Նիրանի, Սեյադի՝ «Երկասիրութիւնք ազգային երգչաց» գրքույկները (1855, Մ., Լազարյան ճեմ. տպ., 1858, 1859, Մ., Վ. Գոթիեի տպ.):

Հայկ. ձայնանիշներով և եվրոպ. նոտագրությամբ հրատարակվել են Ե. Երզնկյանի «Ձայնագրեալ ազգային երգարանը» (1882, Վաղպատ, Սբ Էջմիածնի տպ.), Բ. Կանաչյանի «Ձայնագրուած հայկական երգարանը» (Ա մաս, 1909, ԿՊ, Ռ. Սագայանի տպ., Բ մաս, 1911, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.), Ս. Դեմուրյանի «Քնար: Ձայնագրեալ երգարանը» (1907, ՍՊբ, «Պուշկինյան» տպ.), նաև Սայաթ–Նովայի (1946), Շերամի (1948), Ջիվանու (1955), Աշոտի (1958), Հավասու (1961), Շահենի (1964) և այլ աշուղների Ե–ներ:

Կազմվել են նաև ժող. երգերի գիտ. ժող–ներ [Կոմիտաս, «Շար Ականայ ժողովրդական երգերի» (1895, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ազգագրական ժողովածու» (հ. 1, 2, 1931, 1950), Ս. Մելիքյան և Ա. Տեր–Ղևոնդյան, «Շիրակի երգեր» (1917, Թ., Քարթլիի տպ.), Ս. Մելիքյան և Գ. Գարդաշյան, «Վանա ժողովրդական երգեր» (1927–28), Վ. Սամվելյան,



Խաչատուր Էրզրումցի Առաքելյանի **«Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցն Սողոմոնի»** *(1700–01, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

Երգարան



1591-ի ձեռագիր (Ընքուշ, բոլորգիր, գրիչ՝ Գասպար)



Պետրոս Ղափանցու «Գրքոյկ կոչեցեալ երգարան»-ի (1772, Կ. Պոլիս, Հովհաննես Ասփվածատրյանի տպ.) տիտղոսաթերթը



«Գրպանի երգարան»-ի (7 հատորով, 2011, Ե., կազմ.՝ Ս. Հարոյան, հեղ. հրտ.) լրակազմը



«Երեկոյան Երևան», *1957–99, Երևան*



Երեմիա Մեղրեցու
«Բառգիրք հայոց...»-ի (1728, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) տիտղոսաթերթը

«Հայ ժողովրդական երգեր, սովետական շրջան» (1961), Մ. Թումաճան, «Հայրենի երգ ու բան» (հ. 1–3, 1973–86) ևն: Ե-ներ են կազմել ու հրատարակել Ա. Տոնիկյանը, Մ. Մազմանյանը, Շ. Տայլանը, Վ. Չաքմիշյանը, Թ. Ալթունյանը և ուր.: Սփյուռքում նույնպես տպագրվել են բազմաթիվ Ե-ներ [«Գանձարան հայկական երգերու», 1935–43, «Ժողովրդային երգարան» (Բոստոն, ա. թ.), «Երգարան...» (Բ., 1948, 1856, 1960) ևն]: Վերջին տարիներին հրատարակվել են «Մանկական երգարան» (2009), «Հոգևոր երգարան» (2009), «Գրպանի երգարան» (կազմ.՝Ս. Հարոյան, 2011), «Մանկական և քնարական երգեր» (կազմ.՝ Ռ. Ամարյան, 2012), «Սիրված երգեր» (կազմ.՝ Մ. Վարդազարյան, 2013) Ե-ները:

Հայ հնատիպ գրքի շրջանում, Ղազար Ջահկեցու, Մանուել Սրմաքեշ Կեսարյանի, Պետրոս Ղափանցու Ե-ներից բացի, տպագրվել է նաև «Երգեցմունք հոգևորականք» հոգևոր երգարանը՝ 1736-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրգուկս որ կոչի Երգեցմունք հոգևորականք եկեղեցական դպրոց» (308 էջ): Վերահրատարակվել է 1751-ին Կ. Պոլսում՝ Չնչին Հովհաննեսի տպարանում (160 էջ):

Գրկ. Հայերեն երգարանների մատենագիտություն (1513–1921), Ե., 2014:

«ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԵՎԱՆ», օրաթերթ: Մինչև 1990-ը՝ ՀԿԿ Երևանի քաղկոմի և ժող. պատգամավորների քաղխորհրդի, 1990-ից՝ պատգամավորների Երևանի քաղխորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1957–99-ին (մինչև 1964-ը՝ «Երևան») Երևանում: Խմբագիրներ՝ Աստղիկ Երիցյան, Գուրգեն ***Առաքելյան***, Բակունց Անանիկյան, Վրույր Սարգսյան, Սուրեն Ավետիսյան, Սուրեն Սարգսյան, Կառլեն Ազարյան, Կամո ***Վարդանյան***, Նորայր Ենգիբարյան: Ծանոթացրել է քաղաքային իշխանությունների, արդ. ձեռնարկությունների, ԳՀ և ուս. հաստատությունների, մշակութ., առողջապահ. և առևտր. հիմնարկների աշխատանքներին: 1988-ի փետր-ից ակտիվորեն լուսաբանել է Ղարաբաղյան շարժումը: Տպագրել է մշակութ., մարզ. լուրեր, ընթերցողների նամակներ, հայտարարություններ:

ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑԻ, Երեմիա Վարդապետ, XVII դ-ի բանասեր, բառարանագիր, հրատարակիչ: Եղել է Էջմիածնի միաբանության անդամ: 1660-ական թթ-ին կազմել է Աստվածաշնչի համաբարբառը (ընդարձակ, ամբողջ. բացատր. բառարան)՝ «Համառօտ գումարումն ի լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց յումեմնէ Երեմիայ բանասիրէ» (Մատենադարան, ձեռ. №1, 3468, 7012) խորագրով: 1698-ին Ալիկոռնիայում (Լիվոռնո, Իտալիա) նախորդ բառարանների, ինչպես նաև Աստվածաշնչի նոր նյութերի հիման վրա կազմել և հրատարակել է ***«Բառգիրք հայոց...»***-ը, որը հայ. առաջին ընդարձակ (ավելի քան 8500 բառ-հոդված) տպագիր բացատր. բառարանն է (վերահրտ.՝ 1728):

Ե. Մ. 1698-ին (հավանաբար՝ Լիվոռնոյում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում) հրատարակել է Մովսես Խորենացու «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց: Որ է «Աղուէսագիրք»» երկը: 1701-ին կազմել և Կ. Պոլսում տպագրել է «Տաղարան» (տես ***Տաղարան***):

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեանց, գիրք 2, Վնտ., 1878: Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI–XVII դդ.), Ե., 1971:

ԵՐԵՄՅԱՆ Արամ Գարեգինի [12.3.1898, ք. Մարզվան (Սեբաստիայի նահանգ)–1972, Բենդեր Փեհլևի (Իրան)], գրող, գրականագետ, արվեստաբան, խմբագիր: Ավարտել է Վիեննայի համալսարանը: 1915–25-ին դասավանդել է Թեհրանի, Նոր Ջուղայի, Ռեշտի դպրոցներում: 1925-ին տեղափոխվել է Երևան: 1926–27-ին խմբագրել է «Արվեստ» ամսագիրը, 1929–33-ին՝ Թիֆլիսի «Պրոլետար» (այժմ՝ ***«Վրաստան»***) օրաթերթի ոճաբան-խմբագիր: Վերադարձել է Իրան, զբաղվել մանկավարժությամբ: Միաժամանակ աշխատակցել է «Մշակ», «Հորիզոն», «Սիոն» և այլ պարբ-ների:

Լույս են տեսել Ե–ի (1919) «Նոր Զուղա», «Սպահանի Փէրիա գաւառը» (առաջաբ.՝ Հ. Աճառյանի, Նոր Զուղա, 1919, Սբ Ամենափրկիչ վանքի տպ.), «Իդեալիստը» (1920, նույն տպ.), «Չահարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնը» (1923, Վնն., Մխիթարյան տպ.), «Աշուղ Հարթուն օղլի» (1920), «Պարսկահայ աշուղներ» (գիրք 1–3, 1920–25), «Աշուղ Դուլ Յովհաննէս» (1929), «Աշուղ Գրիգոր Տալեան (Շերամ)» (1930, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Փշրանքներ ջուղահայ եւ հնդկահայ բանահիւսութիւնից» (1930, Վնն., Մխիթարյան տպ.), «Մի անյայտ ձեռագիր տաղարան» (1947), «Նկարիչ Ստեփան Աղաջանյան» (1927), «Ռուսահայ թատրոնի պատմութիւնը» (1933), «Նոր Զուղայի ժէ դարու որմնանկարչական յուշարձանը» (1942), «Նոր Զուղայի 17–րդ դարի որմնանկարչական յուշարձանները» (1942), «Քանդակագործուհի Այծեմնիկ Ուրարտու» (1948), «Մանրանկարիչ Սարգիս Պիծակ» (1952), «Աւետիք Իսահակեանի պոեզիայի հիմնական գծերը» (1956, Բուենոս Այրես), «Հայ ժողովրդի տաղանդաւոր բանաստեղծ Յովհաննէս Թումանեան» (1957, Ֆրեզնո), «Կարապետ Սիտալ: Կեանքն ու ստեղծագործութիւնը» (1957), «Յակոբ Գույումճեան եւ իր գրականութիւնը» (1958), «Գէորգ Զօհրաբեան: Տաղանդաւոր տաղաբան–բանաստեղծ, մանկավարժ...» (1971, Վնտ., Սբ Ղազարի տպ.) բանասիր., արվեստագիտ. աշխատությունները, «Կասանդրա» (1949, 1963), «Պատանի արտիստը» (1959, 1963) պատմվածքները: Խմբագրել և տպագրել է «Սևան» (1926) երաժշտ. ալմանախը, «Հայաստանի նկարիչների ալմանախը» (1926):

Հանդես է եկել նաև Ղարիպ Արամ ծածկանունով:

ԵՐԵՄՅԱՆ Սիմոն (30.10.1871, Տրապիզոն–1936, Միլան), գրող, բնագետ, բանասեր, խմբագիր: Սովորել է Տրապիզոնում, ապա՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության վարժարանում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1895–ից): 1899–1905–ին՝ ***«Բազմավէպ»***, 1901–06–ին՝ ***«Գեղունի»*** պարբ–ների խմբագիր:

Լույս են տեսել Ե–ի «Նոր կենդանաբանութիւն եւ մարդակազմութիւն: Պատմական եւ նկարագրական» (1896), «Տարվինականութիւն կամ Տեսակաց եւ մարդուս ծագման խնդիրը» (1898, 1913), «Հանքաբանութիւն: Նկարագրական եւ պատմական» (1898), «Կենսագրութիւն հ. Ալիշանի» (1902), «Կենսագրական ստուերագիր Տեառն–Տեառն գեր. Իգնատիոս Վարդ.–ի Կիւրեղեան...» (1904), «Հայ միտքը» (1906), «Պետրոս Դուրեան» (1911, ԿՊ, Նշան Պապիկյան տպ.), «Գրական պատմութիւն եւ գեղեցիկը» (1915) բնագիտ., բժշկագիտ., բանասիր., գրականագիտ. աշխատությունները, «Տուրկին» (1903), «Տագնապը» (1904), «Անէծք» (1903), «Սաթէնիկ» (1904), «Ուխտը» (1905) չափածո և արձակ գործերը, «Պատկերներ: Արձակ քնար 1909–1913» (1913) ժող–ը: Ուշագրավ են Ե–ի «Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութեանց» (1900) աշխատություն–հանրագիտարանը և «Ազգային դէմքեր: Գրագէտ հայեր» (հ. 1–10, 1913–33) մեծածավալ աշխատությունը, որտեղ ներկայացրել է հայ մշակույթի գործիչների (Ղ. Ալիշան, Ղ. Աղայան, Մ. Մամուրյան, Հ. Պարոնյան, Տ. Կամսարական և ուր.) գրական դիմանկարները: Ե–ի գործերի մեծ մասը տպագրվել է Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. **Փաշայան Ա.,** *Սիմոն Երեմյանի գիտական և գրական ժառանգությունը, «ՊԲՀ», 2004, № 3:*

ԵՐԵՄՅԱՆ Սուրեն Տիգրանի (10.4.1908, Թիֆլիս–18.12.1992, Երևան), պատմաբան, կովկասագետ–հայագետ: Պատմ. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1955): Գիտ. վաստ. գործիչ (1961): ՀՀ ԳԱ ակադ. (1963, թղթ. անդամ՝ 1953–ից): Հայկ. հանրագիտարանի գիտաճյուղային խորհրդի նախագահ (1974–87): Ավարտել է ԵՊՀ (1931): 1935–41–ին՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտ–յան ինստ–ի Լենինգրադի բաժանմունքի, 1941–53–ին (1943–ից՝ ՀԽՍՀ ԳԱ)՝ ԱրմՖԱՆ–ի նյութ. մշակույթի պատմության ինստ–ի գիտաշխատող, 1953–59–ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ–ի տնօրեն, 1965–68–ին՝ ԳԱ հաս. գիտ–ների բաժանմունքի ակադ. քարտուղար, 1971–92–ին՝ բաժնի վարիչ:

Աշխատությունները տպագրվել են հիմնականում «Վեստնիկ դրևնեյ իստորիի» (ռուս., Մոսկվա) պարբ–ում և «Պատմա–բանասիրական հանդեսում»: «ՀՍՀ»–ի մի շարք հոդվածների ու քարտեզների հեղինակ է: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի (հ. 1–4, 6–7, 1970–84) և այլ աշխատությունների, բազմաթիվ ատլասների ստեղծմանը:

Լույս են տեսել Ե–ի «Ատլաս «Հայ ժողովրդի պատմություն» գրքի» (1952) ժող–ը, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»–ի» (1963, 1997) աշխատությունը:




Արամ Երեմյանի
«Փշրանքներ ջուղահայ եւ հնդկահայ բանահիւսութիւնից» (1930, Վնն.) գրքի կազմը



Սիմոն Երեմյանի
«Պատկերազարդ բառգիրք...»–ի (1900, Վնտ.) տիտղոսաթերթը



Սուրեն Երեմյան



Սուրեն Երեմյանի
«Ատլաս «Հայ ժողովրդի պատմություն» գրքի» (1952, Ե., Հայպետհրատ), կազմը



«Երևան», *1944-ից, Սոֆիա*



«Երեւան», *1925–30, Փարիզ*



«Ընթերցողի արձանը» [2013, քանդ.՝ Նուռ (Արման Դավթյան)]
Երևանի ազգային մանկական գրադարանի *առջև*

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985), Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

Երկ. Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху («Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.»), 1948, № 11; О рабстве и рабовладении в древней Армении, "ВДИ", 1950, № 1; Опыт периодизации истории Армении эпохи феодализма, "Вопросы истории", 1951, № 7; Развитие городов и городской жизни в древней Армении, "ВДИ", 1953, №3.

Գրկ. Սուրեն Տիգրանի Երեմյան: Մատենագիտություն, Ե., 1984:

ԵՐԵՄՅԱՆ Վահան Ադամի (5.10.1895, Բաթում–1937, անհատի պաշտամունքի զոհ), կուս., պետ. աշխատող, լրագրող: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1918-ին հեղ. գործունեություն է ծավալել Աբխազիայում, ապա՝ Հս. Կովկասում՝ որպես երկրամասի ազգությունների, այնուհետև՝ ներքին գործերի ժողկոմ: 1925–28-ին եղել է ՌԽՖՍՀ պետաոի գլխ. ներկայացուցիչ Կ. Պոլսում, 1928-ին՝ ՀԿ(բ)Կ ԿԿ *«Խորհրդային Հայաստան»* պաշտոնաթերթի խմբագիր, 1930-ին՝ ՀԽՍՀ, 1931–36-ին՝ ԱԽՖՍՀ ֆինանսների ժողկոմ:

«ԵՐԵՒԱԿ», ուս., բանասիր. և կրոն. կիսամսյա, ապա՝ 8-օրյա հանդես: Լույս է տեսել 1857–62 և 1864–66-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիր՝ Հովհաննես *Չամուրճյան* (Տերոյենց): Պահպանող. դիրքերից պայքարել է ժողովրդավար. գաղափարների և նրա ներկայացուցիչների՝ Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Կ. Փանոսյանի, Գ. Չիլինկիրյանի, Կ. Ութուճյանի դեմ: Պարբ-ներում արծարծած լուսավորության և ազատության գաղափարները համարել է ազգավնաս, կրոնն ու եկեղեցին՝ հայ ժողովրդի «առաջընթացի և ազգային միասնության միակ միջոցը»: Նյութեր է տպագրել արվ-ի պատմության, մատենագիտ-յան, աշխարհագրության, պատմության, բժշկության վերաբերյալ:

«ԵՐԵՎԱՆ», գրական, հաս-քաղ. և մշակութ. շաբաթաթերթ (սկզբում՝ եռօրյա): Բուլղարահայ «Երևան» մշակութ. միության կենտր. վարչության պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1944-ից Սոֆիայում՝ հայ. և բուլղ.: Խմբագիրներ՝ Ս. Փալչաճյան, Բ. Թյուֆենքյան, Հակոբ Օրմանճյան, Կարո Հայրապետյան, Վարդանուշ Թոփաքբաշյան (1996-ից): Լուսաբանում է բուլղարահայերի կյանքը, նրանց մասնակցությունը երկրի հաս-քաղ., տնտ. և մշակութ. կյանքին, անդրադառնում ՀՀ-ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ԵՐԵՒԱՆ», քաղ. և գրական եռօրյա, ապա՝ երկօրյա թերթ: Լույս է տեսել 1925–30-ին Փարիզում: Խմբագիրներ՝ Եղիա *Չուրաչ*, Գրիգոր Մեհրաբյան, Դրաստամատ *Տեր-Սիմոնյան*: Նպաստել է Սփյուռքի և Խորհրդ. Հայաստանի կապերի ընդլայնմանը, ծանոթացրել հայրենիքի նվաճումներին: Գաղ. տարաձայնություններ է ունեցել դաշնակցության հետ, անդրադարձել է սփյուռքահայ հաս. կազմակերպությունների գործունեությանը: Մեծ տեղ է հատկացրել խորհրդ. շրջանի հայ գրականն ու արվ-ին: Հրատարակել է Զ. Եսայանի «Օրեր Երեւանին մէջ» («Պրոմեթէոս ազատագրուած») հուշագրությունը:

ԵՐԵՎԱՆԻ Ա.ՋԴԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Խնկո Ապոր անվան, ստեղծվել է 1933-ին՝ Հայաստանի ազգ. գրադարանի մանկ. գրակ-յան ֆոնդի հիման վրա: 1935-ին կոչվել է Խնկո Ապոր անվամբ: 1962-ից հանրապետության դպրոց. և մանկ. գրադարանների մեթոդ. կենտրոնն է: Ունի մոտ 0,5 մլն պահպանության միավորից բաղկացած հավաքածու՝ գրքեր, պարբ. մամուլ, տեսալսող. նյութեր, էլեկտրոնային տեղեկատվության միջոցներ՝ հայ. և շուրջ 50 այլ լեզուներով. համալրվում է գնումների, բաժանորդագրությունների, նվիրատվությունների միջոցով:

Գործում են գիտամատենագիտ., գիտամեթոդ., գրադարանագիտ-յան և տեղեկատու մատենագիտ., ԳՀ և հրատարակչ. աշխատանքների կազմակերպման, գրադարանային գործընթացների ավտոմատացման և էլեկտրոնային շտեմարանի և տեղեկատվության

սպասարկման, զանգվածային միջոցառումների կազմակերպման և վիճակագր. հետազոտությունների, օտարալեզու գրակ-յան, երաժշտ. նոտագիր գրակ-յան սպասարկման բաժինները և 9 ենթաբաժին: Գրադարանն ունի 100 տեղով ընդհանուր, ինչպես նաև «Իրանական», «Գերմանական» ընթերցասրահներ, խմբակներ և ստուդիաներ, հաճախակի կազմակերպում է մանկապատանեկան տարբեր միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, հանդիպումներ անվանի գրողների հետ:

Տնօրեններ են եղել Սիրուշ Սինանյանը, Ասյա Շաբոյանը, Բաբկեն Զաքարյանը, Անահիտ Հակոբյանը, Հայկուշ Դանիելյանը, Ռուզան Տոնոյանը (1996-ից):

«ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆՎՈՐ», օրաթերթ: ՀԿ(բ)Կ ԿԿ, Երևանի քաղկոմի և ՀԱՄԽ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1934-ին Երևանում՝ «Բանվորական Երևան» (1933–34) և «Հարվածային բանվոր» (1933–34) թերթերի փոխարեն: Խմբագիր՝ Տիգրան Խորունի:

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», ամսաթերթ (մինչև 2007-ը՝ շաբաթաթերթ): ԵՊՀ պաշտոնաթերթ: Ուսանող. առաջին պարբ-ն է Խորհրդ. Հայաստանում: Լույս է տեսնում 1955-ից Երևանում: Հաջորդել է «Հայաստանի համալսարան» (1920, 1 համար), «Նոր ուսանող» (1924), «Պրոլետարական ուսանող» (1928), «Նոր կադրեր» (1929–30), «Երիտասարդ հարվածային» (1931–32), «Հարվածային ուսանող» (1933–37), «Սովետական ուսանողություն» (1950–55) թերթերին: Խմբագիրներ՝ Նաիրի ***Զարյան***, Արսեն Սարգսյան, Արմո Հարենց, Ռուբեն Փորսուղյան, Գառնիկ Ոսկանյան, Մեհենդակ Մելիքյան, Ռաֆիկ Հարությունյան, Սմբատ ***Ավագյան***, Թերեզա Գալստյան, Սուրեն Սարուխանյան, Խաչիկ Վարդանյան, Վլադիմիր ***Մնացականյան***, Լիանա Հովսեփյան, Գեղամ Մելիքբեկյան (2007-ից): Լուսաբանում է բուհի ուսումնադաստիարակչ., ԳՀ, հաս-մշակութ. գործունեությունը, մեծ տեղ է հատկացնում ԵՊՀ ուսանողության առօրյային, ՈՒԳԸ-ի աշխատանքներին: Պարբերաբար լույս է ընծայում հավելվածներ՝ արդիական ուշագրավ խնդիրների վերաբերյալ:




«Երևանի համալսարան», *1955-ից, Երևան*

Երևանի տպագրություն


ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ, հիմնադրվել է 1995-ին: Նախագահ՝ Բորիս ***Նավասարդյան:*** Ե. մ. ա. առաջին մասնագիտ. կառույցն է անկախ ՀՀ-ում, միավորում է լրագրողների, հրատարակիչների, ԶԼՄ-ների ղեկավարների և փորձագետների: Ակումբի նպատակը ազատ ու անկախ ԶԼՄ-ների կայացմանը, զարգացմանը և ժողովրդավար. բարեփոխումներին աջակցելն է, հիմն. խնդիրները՝ լրագրողների ազատության իրավունքն ու տեղեկատվության մատչելիությունը պաշտպանելը: Կազմակերպում է «կլոր սեղաններ» հաս-քաղ. կարևորություն ունեցող թեմաներով, լրագրող. մասնագիտացման և այլ հարցերի շուրջ հեռուստահաղորդաշարեր ևն, տպագրում է «ԵՄԱ շաբաթական տեղեկագիր», «ԵՄԱ ամփոփագիր» պարբ-ները:

ԵՐԵՎԱՆԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Երևանում առաջին տպարանը հիմնադրել է Զաքարիա ***Գևորգյանը*** 1875-ին, հետագայում նրան համագործակցել է Էմին ***Տեր-Գրիգորյանը***, 1880-ին տպարանն անցել է վերջինիս և գործել մինչև 1917-ը: 1875-ին այստեղ լույս է ընծայվել Երևանի գրահրատարակչության առաջնեկը՝ Աբգար Գյուլամիրյանի կազմած «Օրացոյց 1876 նահանջ թուականին»-ը: Առաջին գեղ. հրատ-ը Է. Տեր-Գրիգորյանի «Թռչնիկ» (1876) բանաստեղծություններ ժող-ն է: Տպագրվել են նաև Խ. Ստեփանեի ***«Հայկական աշխարհ»*** ամսագրի վերջին համարը (1879), ***«Պաակ»***-ի 1880-ի առաջին համարները, 1883-ից՝ «Երևանի յայտարարութիւններ» երկօրյա թերթը:

1879-ին Աբգար Գյուլամիրյանը հիմնադրել է սեփական տպարան, որը գործել է մինչև 1910-ը (1896–1901-ին չի գործել). տպագրել է 28 անուն գիրք: Հաջորդ տպարանը Երևանում բացել է Թոմաս



Էմին Տեր-Գրիգորյանի «Թռչնիկ» (1876, Զաքարիա Գևորգյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Միքայել Նալբանդյանի «Կեանքի հեփաքրքիր մի էջը...» (1908, «Լույս») գրքի փիփղոսաթերթը

Երևանի տպագրություն



Ղ. Ալիշանի «Նվագներ» (1957, Պոլիգրաֆկոմբինատ) գրքի կազմը



«Վարք հավերժության» (2012, քանդ.՝ Դավիթ Երևանցի) կոթողը



Երևանի քաղաքային կենտրոնական գրադարանի *ցուցասրահներից*

Էդելսոնը 1890-ին. գործել է մինչև 1903-ը, տպագրել 18 անուն գիրք, որից 16-ը՝ ռուս.:

1881-ին Վասակ ***Պապաջանյանը*** հիմնադրել է երկրորդ տպարանը, որտեղ, բացի «Պսակ»-ից, տպագրվել են ***«Առողջապահական թերթ»*** հանդեսը և բժշկ. ու բնագիտ. հանրամատչելի գրքույկներ: Մինչև դարավերջ և հաջորդ դարասկզբին բացվել են նաև Ս. Հակոբյանի, Խ. Այվազյանի և Նազարյանի, Գլխ. շտաբի և այլ տպարաններ:

Երևանում տպագրությունն աշխուժացել է 1905-ի ռուս. հեղափոխությունից հետո, երբ տարբեր կուս-ներ, խմբավորումներ, ընկերություններ ստեղծել են իրենց տպարաններն ու հրատարակչ. կառույցները: 1907–20-ին գործող շուրջ մեկ տասնյակ տպարաններից ամենախոշորներն էին «Լույս (Արշակ Հակոբյան և ընկ...)»-ը, «Կուլտուրան», «Ուրարդիան» ևն, որոնք տպագրել են 30 անուն թերթ ու ամսագիր, հաս., գրական, գյուղատնտ., բժշկ., մանկավարժ. գրքեր ու գրքույկներ:

1920-ին խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո Երևանի տպարանները պետականացվել են, հանձնվել լուսժողկոմատին, ապա՝ ԺԿԽ պոլիգրաֆտրեստի տնօրինությանը, այնուհետև՝ Նախարարների խորհրդին կից հրատարակչությունների և պոլիգրաֆ. արդ-յան գլխ. վարչության իրավասությանը, 1964-ից՝ ՀԽՍՀ Հրատպետկոմին: 1921-ին հիմնադրվել է ***Հայպետհրատը*** (Պետհրատ): Խորհրդ. տարիներին Երևանում գործարկվել են № 1 տպարանը՝ 1929-ին, Պոլիգրաֆկոմբինատը (այժմ՝ ***«Հակոբ Մեղապարտ. տպագրատուն»***)՝ 1952-ին. 1987-ին տպագրատան առջև տեղադրվել է «Հակոբ Մեղապարտ» հուշարձանը (քանդ.՝ Խաչատուր Իսկանդարյան), 1968–80-ական թթ-ին՝ ՀԿԿ ԿԿ հրատարակչության (այժմ՝ ***«Տիգրան Մեծ տպագրատուն»***), ***Գոնավոր տպագրության*** (այժմ՝ «Զվարթնոց») և այլ տպարաններ:

Երևանը հայկ. տպագրության գլխ. կենտրոնն է աշխարհում, որտեղ այժմ գործում է շուրջ 130 հրատարակչություն: Հայկ. գրատպության 500-ամյակի առթիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երևանը 2012-ին հռչակել է գրքի համաշխ. մայրաքաղաք: Երևանում տեղադրվել են «Վարք հավերժության» կոթողը (2012, քանդ.՝ Դավիթ Երևանցի) և «Ընթերցողի արձանը» (2013, քանդ.՝ Արման Դավթյան):

Տես նաև ***«Արևիկ»***, ***«Գիտություն»***, ***ԵՊՀ հրատարակչություն***, ***«Էդիթ Պրինտ»***, ***«Լույս»***, ***«Հայաստան»***, ***«Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»***, ***«Մուղնի»***, ***«Նաիրի»***, ***«Սարգիս Խաչենց»*** ևն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ավետիք Իսահակյանի անվան, հիմնադրվել է 1935-ի օգոստ. 15-ին Երևանում՝ որպես առաջին հանրային գրադարան: 1938-ին բացվել է գրադարանի ընթերցասրահը. ունեցել է շուրջ 1100 ընթերցող: 1955-ին գրադարանը կոչվել է Ա. Իսահակյանի անվամբ (ծննդյան 80-ամյակի կապակցությամբ): 1964-ին գրադարանում ստեղծվել է Կուլտուրայի ժող. համալսարան՝ 4 ֆակ-ով: 1979-ից դարձել է Երևանի մեծահասակներին սպասարկող գրադարանների կենտրոնացված համակարգի (ԳԿՀ) կենտրոնը, որի ենթակայությամբ գործել են 47 գրադարան-մասնաճյուղեր: 1993-ին բացվել են գրադարանի արվ-ի, մամուլի, օտար լեզվի ու տեխ. գրակ-յան բաժինները և Ա. Իսահակյանի անվ. հանդիսությունների դահլիճը:

1995-ին մեծահասակներին և մանուկներին սպասարկող ԳԿՀ-ները միավորվել են, և գրադարանը դարձել է միավորված համակարգի կենտր. գրադարան, 1998-ին՝ Երևանի համայնքային գրադարանների մեթոդ-մատենագիտ. կենտրոն: 2000-ին հրատարակվել է գրադարանում գործող «Բողբոջներ» գրական ստուդիայի սաների ստեղծագործությունների «Առաջին ծիլեր» գրքույկը:

2001-ից գրադարանը Հայաստանի գրադարանների կոնսորցիումի հիմնադիր անդամներից է: 2002-ից մասնակցում է ***Գրադարանային***

շաբաթ միջոցառումների շարքին, 2004–ից՝ «Հայաստանյան գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագրին: Գրադարանում գործում են գրակ–յան համալրման և մշակման, գրացուցակների կազմման, սպասարկման, մանկ., օտարալեզու գրակ–յան, մամուլի, միջգրադարանային աբոնեմենտի, մատենագիտ., մեթոդ. աշխատանքների կազմակերպման, հաս. կապերի և միջոցառումների, Բրիտ. խորհրդի գրադարանի, նաև «Ամերիկյան անկյուն» (2005–ից) բաժինները: Ապահովված է էլեկտրոնային պարբ–ների և այլ միջոցների բաժանորդագրությամբ:

Ներկայում գրադարանն ունի 633 000 միավոր գիրք, 31 հզ. ընթերցող, ընթերցողների գրանցման բաժիններ և մի քանի ընթերցասրահներ: Ընթերցողներն անվճար օգտվում են համացանցային ծառայություններից:

Տնօրեններ են եղել Թ. Բարխուդարյանը, Գ. Մկրտչյանը, Մ. Աբգարյանը, Վ. Մարգարյանը, Կ. Եղիազարյանը, Հասմիկ Կարապետյանը (1995–ից):

«ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ», երկօրյա թերթ: Լույս է տեսել 1883–86–ին Երևանում: Խմբագիր–հրատարակիչ՝ Էմին *Տեր–Գրիգորյան*: Նպաստել է Երևանի զավառում գրագիտության տարածմանը: Տպագրել է ուս., եկեղեց. և այլ լուրեր, վիճակագր. տվյալներ, հայտարարություններ:

ԵՐԵՖՓԽՅԱՆ Գաբրիել (1819–1870), բառարանագիր: Սովորել է Մոսկվայում: 1844–ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1854–ին դպրոցի տպարանում լույս է ընծայել Կովկասում առաջին ռուս–հայ. բառարանը՝ «Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ», որը պարունակում է 45 000 բառ–հոդված (վերահրտ.՝ 1876, Թ., Կովկասի գլխ. կառավարչության տպ.):

«ԵՐԶՆԿԱՅԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ», մագաղաթե ձեռագիր մատյան, հայկ. մանրանկարչության գլուխգործոցներից: Գրվել և պատկերազարդվել է 1269–70–ին Բարձր Հայքի Ավագ վանքի (Երզնկայի մոտ) գրչատանը (գրիչներ՝ Մխիթար, Հակոբ և Սիվսես, պատվիրատուներ՝ Սարգիս արքեպս. և նրա որդի՝ Հովհաննես իշխան): Պահվում է Երուսաղեմի մատենադարանում (ձեռ. № 1925): Մեզ հայտնի առաջին ձեռագիր Աստվածաշունչն է՝ պատկերազարդված Հին կտակարանի թեմաներով: Բուս. զարդամոտիվները համադրված են երկրաչափ. տարրերին: Կիսատոների օգտագործումը պատկերներին հաղորդում է որոշակի ծավալայնություն, ուշագրավ է ձեռագրի զարդանկարային հարդարանքը, որը զուգահեռներ ունի Կիլիկիայի մանրանկարչության լավագույն նմուշների հետ:

Գրկ. Տէր–Ներսեսեան Ս., *Երզնկայի 1269 թուի Աստուածաշունչը, Երուսաղեմ, թիվ 1925, «Էջմիածին», 1966, № 11–12:*

ԵՐԶՆԿՅԱՆ Արամայիս Հարությունի [2.5.1879, գ. Հաղպատ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–1938, անհատի պաշտամունքի զոհ], պետ., կուս. գործիչ, խմբագիր: ՌՍԴԲԿ անդամ՝ 1898–ից: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1898): 1906–ին՝ բոլշևիկյան «Կայծ», 1925–ի դեկտ–ից՝ սոցիալ–դեմոկրատ. «Պայքար», 1926–ից՝ երգիծ. «Կարմիր մոծակ» թերթերի խմբագիր: 1920–30–ին՝ ՀԽՍՀ հողժողկոմ, 1931–33–ին՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:

ԵՐԶՆԿՅԱՆ Ռոստոմ (Ռոստոմ բեգ) Հարությունի [1.1.1823, գ. Հաղպատ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–12.1.1893, Թելավ (Վրաստան)], պատմաբան, լրագրող: 1843–46–ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1861–ին՝ Թելավում: Ե–ի «Աւարիա» պատմաաշխարհագր. ակնարկը, «Պանդուխտ Դաղստանի» ուղեգր. նոթերը, «Միւրիդիզմը Դաղստանում» երկն արժեքավոր աղբյուրներ են Դաղստանի պատմության ուսումնասիրման համար:

Լույս են տեսել Ե–ի «Համառօտութիւն պատմութեան հայոց» (1843, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) դասագիրքը, «Ազգաբանութիւն նախապատիւ




«Երզնկայի Աստուածաշունչ». *«Գիրք ծննդոց»–ի անվանաթերթը (1269–70, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1925)*



Արամայիս Երզնկյան



Ռոստոմ Երզնկյանի *«Համառօտութիւն պատմութեան հայոց» (1843, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*



«Երիտասարդ գիտաշխատող», *1965–82, Երևան (№ 27, 1978)*



«Երիտասարդ հայ», *1969–75, Բեյրութ (№ 18, 1970)*



«Երիտասարդ Հայաստան», *1903–98, ԱՄՆ, Երևան (№ 11, 1905)*

տոհմին Երուանդեանց ի Սանահին» (1896, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) աշխատությունը:

Գրկ. Գրիգորյան Վ., *Ռոստոմ բեգ Երզնկյանը և Դաղստանի մասին նրա գրած աշխատությունները, «ԲԵՀ», 1971, № 3:*

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐ», երկշաբաթաթերթ: ՀԽՍՀ Նախարարների խորհրդի Պրոֆտեխ. կրթության պետ. կոմիտեի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1966–70-ին Երևանում: Խմբագիրներ՝ Ռ. Սահինյան, Համլետ Հակոբյան, Լ. Քոչարյան: Ծանոթացրել է պրոֆտեխ. կրթության համակարգի, ուս. հաստատությունների աշխատանքներին:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲՈԼՇԵՎԻԿ», գրական-գեղ., քաղ-տնտ. և երիտասարդ. ամսագիր: ՀԼԿԵՄ ԿԿ և Երևանի քաղկոմի պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1926–33-ին Երևանում: Խմբագիրներ՝ Հովհաննես Տեր-Դանիելյան, Համո Հովհաննիսյան, Անուշավան Արզումանյան, Նիկոլ Մեհրաբյան, Ստեփան ***Կտրուկյան***, Հրաչյա Միրզոյան: Լուսաբանել է կոմերիտ. ակտիվի գործունեությունը, նպաստել կոմերիտ. աշխատանքների կազմակերպմանը, մշակութ. հեղափոխության իրականացմանը: Տպագրել է գիտ. ու գրական հոդվածներ, Ն. Զարյանի, Գ. Մահարու, Վ. Թոթովենցի, Ա. Բակունցի, Վ. Ալազանի, Գ. Սարյանի և այլ գրողների ստեղծագործություններ, թարգմանություններ՝ համաշխ. գրակ-ից:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲՈԼՇԵՎԻԿ», ինգօրյա թերթ: Ադրբեջանի կոմերիտմիության ԼՂԻՄ-ի մարզկոմի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1935–41-ին Ստեփանակերտում: Խմբագիրներ՝ Անդրանիկ Աղաբեկյան, Սամիկոն Մարգարյանց: Անդրադարձել է մարզի գյուղատնտեսությանն ու արդ-յանը, արտադր. նվաճումներին:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ», կիսամյա գիտ. հանդես: ԵՊՀ հրատ.: Լույս է տեսել 1965–82-ին Երևանում (բնագիտ., հասարակագիտ. ու հումանիտար շարքերով): Խմբագիրներ՝ Արշակ Թովմասյան, Մեհենդակ Մելիքյան (հումանիտար և հասարակագիտ. շարք), Ռաֆայել Հովհաննիսյան, Էդվարդ Չուբարյան (բնագիտ. շարք): Ծանոթացրել է հանրապետության երիտասարդ գիտնականների հետազոտություններին: Շարքերն ունեցել են գիտ-յան տարբեր բնագավառներին վերաբերող բաժիններ: Նյութերը տպագրվել են հայ. և ռուս. (ամփոփումներով):

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՄՈՒՆԻՍՏ», եռօրյա, սկզբում՝ շաբաթաթերթ: ՀԼԿԵՄ ԿԿ և Երևանի գավառային կոմիտեի պաշտոնաթերթ: Հայաստանի կոմերիտ. մամուլի առաջնեկն է: Լույս է տեսել 1921–23-ին Երևանում: Խմբագիրներ՝ Ներսես Խերանյան, Տիգրան Խորունի, Հրանտ Եկավյան: Արտացոլել է հանրապետության կոմերիտ. բջիջների աշխատանքը, ծանոթացրել խորհրդ. հանրապետությունների կոմերիտ. կյանքին: «Ե. կ.»-ի առաջին համարներն առանձին էջով տպագրվել են ՀԿԿ ԿԿ *«Կոմունիստ»* պաշտոնաթերթում:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ», գրական-հաս. պատկերազարդ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1969–75-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Պետրոս Թերզյան, Անդրանիկ վրդ. ***Գռանյան***, ժիրայր ***Դանիելյան***, Հովսեփ Մելքոնյան, Լութֆի Թապաքյան, Օշին Գրգյաշարյան, Լևոն Թորոսյան և ուր.: Տպագրել է գրականագիտ., արվեստաբան. նյութեր, գրական ստեղծագործություններ, հարցազրույցներ ևն: Հիմնականում աշխատակցել են լիբաննահայ և սիրիահայ երիտասարդ գրողներ (Վ. Օշական, Ա. Պերճիքյան, Հ. Պեքյարյան և ուր.): 1973-ին ունեցել է մարզ. հավելված:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ», հաս-քաղ., տնտ. ամսաթերթ (1903–73-ին՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1903–98-ին ԱՄՆ-ում (1903–05-ին՝ Բոստոնում, 1906–17-ին՝ Փրովիդենսում, 1918–22-ին՝ Չիկագոյում, 1923–73-ին՝ Նյու Յորքում, 1975-ից՝ Փարամուսում)՝ հայ. և անգլ., 1998-ին (4 համար)՝ Երևանում: ՍԴՀԿ Ամերիկայի շրջանի պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Ստեփան ***Սապահ-Գյուլյան,*** Գրիգոր

Եղիկյան, Ալեքսանդր Տեր-Վարդանյան, Բ. Վարազդատ (Հակոբ Թյուրապյան), Սոկրատ խան Գելոֆյանց, Եղիա Գրիգորյան, Էդվարդ Սաֆրաստյան, Լևոն Մարտիրոսյան, Ստեփան Տեր-Բաղդասարյան, Պետրոս Պոնտացի, Սարգիս Սիմոնյան, Արշավիր Շամյան, Սեդրակ Շահեն, Ա. Ճերեճյան (1981-ից): Տպագրել է նյութեր ՍԴՀԿ-ի և նրա մասնաճյուղերի աշխատանքների, կուս-յան գործիչների, հայրենակց. կազմակերպությունների, ՀՕԿ-ի գործունեության մասին, հանդես է եկել հանուն Հայ դատի արդարացի լուծման: Պարբերաբար տպագրել է հայ և օտարազգի հեղինակների գրական-գեղ. գործերից, ներկայացրել հայ անվանի արվեստագետների: Հրատարակել է բացառիկ համարներ (1912, 1953):


«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ», գրական-գեղ. երկշաբաթաթերթ, ապա՝ ամսագիր: Լույս է տեսել 1932–34 և 1947–68-ին Բեյրութում: Հիմնադիր-տնօրեն և խմբագիր՝ Սիրան ***Մեզա*** (Զարիֆյան): Կարևորել է Սփյուռքում հայապահպանության մեջ հայ կնոջ դերը, ներկայացրել է գիտ-յան և մշակույթի ոլորտների նշանավոր հայուհիներին, լիբանանահայ կյանքի նորություններ: Առաջին շրջանում (1932–34) աշխատակցել են միայն տղամարդիկ՝ Վահե-Վահյանը, Շ. Պերպերյանը, Մ. Տամատյանը և ուր., հետագայում՝ նաև կին գրողներ, արվեստագետներ, հաս. գործիչներ (Շ. Գույումճյան, Յ. Աճեմյան, Ս. Դավիթյան, Բ. Նաճարյան, Հուրի և ուր.):



«Երիտասարդ հայուհի», *1932–68, Բեյրութ (№ 2, 1953)*

ԵՐԻՑՅԱՆ Ալեքսանդր Դավթի (24.10.1841, Թիֆլիս–21.2.1902, Թիֆլիս), պատմաբան, հնագետ, հրատարակիչ-խմբագիր: Գարեգին ***Երիցյանի*** հայրը: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա՝ ռուս. գիմնազիայում: 1866–67-ին Գ. Տեր-Ալեքսանդրյանի հետ խմբագրել և հրատարակել է ***«Վաճառական»*** թերթը:

Լույս են տեսել Ե-ի «Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչև տասնևիններորդ դարը» (1881, «Փորձ», № 4), «Վենետիկի Մխիթարեանք» (1883, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Գրիգոր Արծրունու եւ նրա քսանը հինգ տարւայ գրական գործունէութեան առիթով (1865–1890)» (1890, Թ., «Արոր» տպ.), «Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում» [մաս Ա (1800–1832), 1894, Թ., Մ. Շարաձեի տպ., մաս Բ (1831–1842), 1895, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.], «Ներսէս եպիսկոպոսը Դանիէլ կաթողիկոսի ժամանակ», «Ներսէս V Աշտարակեցին վարդապետ ժամանակ», «Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար» (երեքն էլ՝ 1877, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Պօլօժենիէի ծագումը եւ սինոդի բացումը» (1896, Բաքու, «Արոր» տպ.), «Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի (1824–1899)» (1898, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.) աշխատությունները, կազմել է «Ընթերցարան հայ երեխաների համար» դասագիրքը (վերահրտ.՝ մի քանի անգամ): Բազմաթիվ հոդվածներ է գրել հայ նշանավոր գործիչների՝ Ներսես Աշտարակեցու, Քերովբե և Գաբրիել Պատկանյանների, Գ. Արծրունու, Մ. Նալբանդյանի և ուր. մասին:



Ալեքսանդր Երիցյան

Գրկ. Համբարյան Ա., Ալեքսանդր Երիցյան, «ՊԲՀ», 1960, №1:


ԵՐԻՑՅԱՆ Գարեգին Ալեքսանդրի [7(19). 5.1879, Թիֆլիս–15.10.1966, Լենինգրադ], նկարիչ-ձևավորող, դրամատուրգ, հրատարակիչ-խմբագիր: Ալեքսանդր և Սրբուհի ***Երիցյանների*** որդին: Արվ. վաստ. գործիչ (1964): Սովորել է Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում (1898–1901): Թիֆլիսում հրատարակել է «Կուկուրեկու» (1906, հայ., ռուս., վրաց.) երգիծ., «Փնջիկ» (1907) մանկ. շաբաթաթերթերը, «Սնծակ» (1906, հայ., ռուս., վրաց., 1907-ին՝ Բաքվում՝ հայ.), 1906–07-ին՝ «Ժգուտ», «Պետուշոկ» (երկուսն էլ՝ ռուս.) հանդեսները, 1910–11-ին՝ «Կայծեր», 1912–13-ին՝ «Կովկասի լրաբեր» օրաթերթերը: 1925-ից ապրել է Լենինգրադում:



Գարեգին Երիցյան. *Հ. Թումանյանի «Անյաղթ աքլորը» (1909, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*

Նկարազարդել է Հ. Թումանյանի «Ախթամար» (1905), «Շունն ու կատուն» (1908, 1993), «Անյաղթ աքլորը» (1909, 1994), «Ծիտիկը», «Ուլիկը», «Աղուեսը», «Գառնիկ ախպերը» (1909), «Խօսող ձուկը» (1910, 1995) ստեղծագործությունները: Հեղինակ է «Ուշ լինի, նուշ լինի», «Մոտ է գարունը», «Սայաթ-Նովա» և այլ պիեսների, նաև «Հուշեր Ստեփան Շահումյանի կյանքից» (1966) գրքի:

Երկաթագիր





Հնագույն ձեռագիր մատյանի պատառիկ (VII դ.)



«Երկաթէ շերեփ», *1985–89, Բեյրութ*

ԵՐԻՑՅԱՆ Սրբուհի Խաչատուրի (1844/1845, Զմյուռնիա–1917, Թիֆլիս), հաս., մշակույթի գործիչ, խմբագիր: Գարեգին ***Երիցյանի*** մայրը: Սովորել է Զմյուռնիայի Աղաբաբյան վարժարանում, ապա՝ Կ. Պոլսում: Թիֆլիսում բացել է արհեստագործ. դպրոցներ կանանց համար: Կովկասի հայոց բարեգործ. ընկերության հիմնադիրներից է: Աշխատակցել է հայ. պարբ. մամուլին. «Փորձ» հանդեսում տպագրել է հիշողություններ 1860-ական թթ-ի Կ. Պոլսի մասին: 1874-ին հրատարակել է «Տօմար ընտանեկան. 1874–1875թ.» (Թ., Կովկասի գլխ. կառավարչության տպ.) տարեգիրքը, որն ամփոփում է վիճակագր. տվյալներ Ռուսաստանում և Թուրքիայում ապրող հայերի մասին:

ԵՐԿԱԹԱԳԻՐ, հայկ. գրատեսակ: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ որպես ***գլխագիր:*** Նաև վիմագրության գիր է, գրվել է քարի վրա՝ երկաթե գրոցով (այստեղից էլ՝ անունը): Բանասիրության մեջ կոչվում է «բուն մեսրոպյան» կամ «մեսրոպյան երկաթագիր»: Ի տարբերություն ***գրչագրի***, որի հենքի վրա առաջացել է Ե., վերջինիս երկար ու կարճ գծերն իրար են միանում ոչ թե ուղիղ, այլ կոր նուրբով: Գրվում է 2 տողագծերի միջև՝ բացառությամբ որոշ տառերի (***ք, փ***), որոնց երկար գիծը ձգվում է ներքև, իսկ լայնը հեռանում է երկարից՝ նուրբի ուղղությամբ: Ե. գրչության հիմն. գիրն է եղել V–XIII դդ-ում, որով գրվել է հայտնի Ավետարանների զգալի մասը: Վիմագրության մեջ և որպես գլխագիր օգտագործվում է V դ-ից: Հենք է եղել նաև զարդագրերի համար:

«ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓ», ազգ-քաղ. ամսաթերթ: Հայկ. ժողովրդային շարժման Լիբանանի մասնաճյուղի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1985–89-ին Բեյրութում՝ անկանոն պարբերականությամբ: Խմբագիրներ՝ Սագո ***Օգնայան***, Գևորգ ***Յազրճյան*** (1988–89): Պաշտպանել է ՀԱՀԳԲ-ի գործունեությունը, տարածել նրա գաղափարախոսությունը: Տպագրել է խմբագրականներ, վերլուծ. հոդվածներ, նյութեր ՀԱՀԳԲ-ի պատմության և գործողությունների մասին են: 1988–89-ին թերթի ուշադրության կենտրոնում է եղել Արցախյան շարժումը:

«ԵՐԿԻՐ», քաղ., գրական-հաս. օրաթերթ: Հնչակյան կուս-յան պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1919–22-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Ժիրայր Միրզախանյան, Վահան Զեյթունցյան, Հրանտ Գալիկյան, Էդվարդ Չոփուրյան, Հայկ Գալճյան, ***Տիգրան Զավեն***, Վահան ***Թոթովենց*** և ուր.: Լուսաբանել է Մերձ. Արևելքի քաղ. իրավիճակը, հույն-թուրք. պատերազմը, դատապարտել Կիլիկիայի ու Զմյուռնիայի կոտորածները, քննադատել արմ. երկրների դիվանագիտությունը, անդրադարձել Կ. Պոլսի հայության արտագաղթին: «Ե.» օգնել է ամրապնդելու գաղութի կապը հայրենիքի հետ, հանդես է եկել դաշնակցության գաղափարախոսության և գործունեության դեմ: Աշխատակցել են Ս. Քարյանը, Մ. Օշինը (Ուզունյան), Հ. Պողոսյանը և ուր.:

«ԵՐԿԻՐ», գրակ-յան և արվ-ի պարբերագիրք: Հրատարակվել է 1956–59-ին Հալեպում: Խմբագիրներ՝ Մարտիրոս ***Գուշակյան***, Հայկ Գույումջյան: Տպագրել է Մերձ. Արևելքում ապրող հայ գրողների ստեղծագործություններից, մանկավարժ. ու գիտ. հոդվածներ, գրախոսություններ, նյութերի՝ արվ-ի ու մշակույթի գործիչների մասին: Ծանոթացրել է նաև արաբ գրողների (Ահմեդ Ֆեհմի, Աբդալ Ռահման էլ-Խամիսի, Լուեյ Տերվիշ, Զորշ Թարապիշի և ուր.) կյանքին ու գործերին: «Ե.» ***«Դեպի երկիր»*** (1945–47, 1949) պարբերագրքի շարունակությունն է:

«ԵՐԿԻՐ», քաղ. և գրական շաբաթաթերթ: ՌԱԿ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1957–68-ին (1966–67-ին ընդհատվել է) Աթենքում: Խմբագիրներ՝ Առաքել Պետրոսյան, Պետրոս Պետրոսյան: Լուսաբանել է հունահայ համայնքի, սփյուռքահայ այլ գաղթավայրերի ազգ., հաս. ու մշակութ. կյանքը, հայրենադարձության հարցեր:

«ԵՐԿԻՐ», օրաթերթ: ՀՅԴ Հայաստանի կենտր. խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1991–94 և 1998–2012-ին Երևանում: Խմբագիրներ՝ Շոթա Քերոբյան, Աբո *Պողիկյան*, Աղվան *Վարդանյան*, Էդիկ Հարությունյան, Համլետ Դավթյան, Սուշեղ Միքայելյան, Շաղիկ Մարուխյան, Գեղամ Մանուկյան, Սպարտակ Սեյրանյան, Ռուբեն Մարգարյան, Հարություն Հարությունյան, Բագրատ Եսայան, Սևակ Հակոբյան: Լուսաբանել է ՀՅԴ-ի գործունեությունը ՀՀ-ում և Սփյուռքում, Հայ դատը և Արցախի հիմնախնդիրը, միջազգ. կյանքը, ՀՀ-ում տեղի ունեցող հաս-քաղ. կարևոր իրադարձությունները:

«ԵՐԿԻՐ ԱՎԵՏՅԱՑ», «Սասուն» հայրենակց. միության երկշաբաթյա հանդես: Լույս է տեսել 1990–94-ին Երևանում: Խմբագիրներ՝ Վահագն *Դավթյան* (հիմնադիր-խմբագիր), Ստեփան *Պողոսյան* (1992-ից): Լուսաբանել է հայ ազգ-ազատագր. պայքարի և Հայ դատի հարցերը, սատարել արցախյան համազգ. պայքարին:

«ԵՐԿԻՐ ԱՒԵՏԵԱՑ», քարտեզ: Տպագրվել է 1746-ին Վենետիկում, զետեղված է Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» (1769, հ. 2) աշխատության մեջ: Անվանացույցին՝ «Երկիր Աւետեաց որ եւ ասի երկիր քանանացւոց…»: Չափերը՝ 37,9 x 48 սմ, անվանացույցը քարտեզի ձախ կողմի վերևի անկյունում է՝ զարդաշրջանակի մեջ, ներքևի աջ անկյունում մասշտաբն է («Աստիճանք մղոնաչափութեան»): Քարտեզի աջ և ձախ կողմերում կենդանիների, մարդկանց, նավերի ու հողմացույցների պատկերներ են և զանազան պայման. նշաններ, ձախից՝ անվանացույցի տակ, Եգիպտոսի և Արաբիայի փոքր քարտեզն է (12 x 16 սմ):

Ըստ Ա. Ղազիկյանի՝ քարտեզը փորագրել է Իգնատիոս Խաչատրյանը:

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ», հաս., քաղ., տնտ., լրատվ., գրական, մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1994–95-ին Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Վարդգես *Պետրոսյան*, խմբագիր՝ Վալերի Հարությունյան (1994-ի մայիսից):

«ԵՐԿՐԱԳՈՒՆԴ», քաղ., գիտ. և առևտրային ամսագիր: Լույս է տեսել 1863–64-ին Մանչեստրում (24 համար): Խմբագիր-հրատարակիչ՝ Կարապետ *Շահնազարյան:* Ներկայացրել է գաղութահայ վաճառականության ձգտումները, ջատագովել Հայաստանում գործարաններ հիմնելու և ազգ. արդյունաբերություն ստեղծելու գաղափարը: Սատարել է հայ ազատագր. շարժումներին, համակրանքով արտահայտվել Զեյթունի ապստամբության մասին: Քարոզել է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության դրույթները, ընթերցողին կողմնորոշել դեպի ռուս. հեղափոխությունը:

«ԵՐԿՐԱԳՈՒՆՏ», քաղ., գրական և գիտ. շաբաթաթերթ: Նուպար-Շահնազարյան վարժարանի սաների հրատ.: Լույս է տեսել 1870–71-ին Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրեններ՝ Ա. Միքայելյան, Հ. Իփեքճյան: Փաստացի խմբագիր՝ Մինաս *Չերազ:* Տպագրել է հրապարակախոս. նյութեր, ինագիտ. ուսումնասիրություններ, կրթ-մանկավարժ. հոդվածներ, ներկայացրել արևմտահայ երիտասարդ ստեղծագործողների արձակ և չափածո գործերից:

«ԵՐԿՐԱԳՈՒՆՏ», գրական, գիտ. և քաղ. ամսագիր: Ասիական ընկերության հրատ.: Լույս է տեսել 1883–88-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Հակոր *Պարոնյան*, Եղիա *Տեմիրճիպաշյան:* Տպագրել է քաղ. լուրեր, նյութեր՝ ազգ. կյանքից, ուսումնասիրություններ՝ հայոց լեզվի և հայ գրակ-յան պատմության վերաբերյալ: Արծարծել է կանանց իրավահավասարության, աղջիկների դաստիարակության խնդիրներ: Հրատարակել է գրախոսականներ, մամուլի տեսություններ, թարգմանաբար ներկայացրել է Ա. Լամարթինի, Վ. Հյուգոյի, Ժ. Լաֆոնտենի, Ջ. Բայրոնի, Պ. Շելլիի և ուր. գործերից: Աշխատակցել են Գ. Զոհրապը, Գ. Սրվանձտյանը, Ե. Դուրյանը, Լ. Բաշալյանը և ուր.:




«Երկիր», *1991-2012, Երևան*



«Երկիր ավետյաց», *1990–94, Երևան*



«Երկիր աւետեաց» *(1746, Վնտ.) քարտեզի անվանացույցը*



«Երկրագունտ», *1883–88, Կ.Պոլիս (հունիս, 1884)*



«Երկրամաս», *1996-ից, Կրասնոդար*



«Երկրապահ», *1998-ից, Երևան (№ 1, 2013)*



«Երկունք», *1929-37, Փարիզ (№ 6, 1930)*



«Երկունք», *1997-ից, Վանաձոր*

«ԵՐԿՐԱՄԱՍ», հաս-քաղ. ամսաթերթ: Լույս է տեսնում 1996-ից Կրասնոդարում՝ ռուս.: Ռուսաստանի հարավի հայերի միության հրատ.: Հիմնադիր և գլխ. խմբագիր՝ Տիգրան ***Թավադյան:*** Լուսաբանում է Ռուսաստանի հայերի և սփյուռքահայ այլ համայնքների ազգ. կյանքը, անդրադառնում ազգամիջյան հարաբերությունների, տեղի հայ բնակչության քաղաքաց. իրավունքների պաշտպանության խնդիրներին, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, արտատպում է ուշագրավ նյութեր այլ պարբ-ներից:

2002-ին Ռուսաստանի հարավի լրագրողների անկախ ընկերակցությունը «Ե.» ճանաչել է տարածաշրջանի ազգ. փոքրամասնության լավագույն հրատ.:

«ԵՐԿՐԱՊԱՀ», ամսաթերթ (սկզբում՝ օրաթերթ, ապա՝ շաբաթաթերթ): Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1998-ից Երևանում: Խմբագիրներ՝ Միքայել Հայրապետյան, Հակոբ Մարտունի, Վրեժ ***Իսրայելյան***, Հովիկ Չարխչյան, Հակոբ Հակոբյան (2005-ից): Տպագրում է Արցախյան ազատագր. պատերազմի տարիներին երկրապահ կամավոր. ջոկատների գործունեությանը վերաբերող նյութեր: Լուսաբանում է ԵԿՄ-ի աշխատանքը, անդրադառնում է Հայկ. բանակի առօրյային, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, Արցախյան հիմնախնդրին, ներկայացնում է զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների խնդիրները:

1998-ից հրատարակվում է նաև համանուն հանդեսը (անկանոն պարբերականությամբ):

«ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ», գրական, հաս-քաղ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1906-08-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Վ. Վարդանյան, խմբագիր-տնօրեն՝ ***Տիգրան Զավեն***: Ունեցել է ինչակյան ուղղվածություն: Անդրադարձել է Արմ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, տպագրել է եվրոպացի քաղ. գործիչների ելույթները Հայկ. հարցի վերաբերյալ, Վ. Տերյանի, Շ. Կուրդինյանի, Մ. Չերազի, Զ. Եսայանի ստեղծագործություններից, թարգմանություններ՝ եվրոպ. գրակ-ից, անդրադարձել է հայկ. և արտերկրի թերթերի ուշագրավ հրապարակումներին:

«ԵՐԿՈՒՆՔ», քաղ. եռօրյա թերթ: Հունահայ համայնքի ինչակյանների պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1922-23-ին Աթենքում: Խմբագիր՝ Հարություն Գասպարյան: Լուսաբանել է Խորհրդ. Հայաստանի տնտ. ու մշակութ. նվաճումները, անդրադարձել Հունաստանում և հարևան երկրներում ապաստանած հայ գաղթականների ու որբերի ճակատագրին, հայրենադարձության հարցերին:

«ԵՐԿՈՒՆՔ», գրական-գեղ., պատմ. և ուսումնագիտ. պատկերազարդ ամսագիր: Չափահաս որբերի միության պաշտոն. հանդես: Լույս է տեսել 1929-37-ին Փարիզում: Տնօրեն՝ Ա. Գաբիկյան, խմբագիր՝ Շավարշ ***Նարդունի***: Լուսաբանել է միության գործունեությունը, տպագրել հայ դաս. և ժամանակակից հեղինակների գործեր, հայոց պատմությանը, հայ գրակ-յանը և մշակույթին վերաբերող ուսումնասիրություններ, նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

«ԵՐԿՈՒՆՔ», գրական-գեղ. ամսաթերթ: ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի հրատ.: Լույս է տեսնում 1997-ից Վանաձորում: Հիմնադիր-խմբագիր՝ Մանվել ***Միկոյան:*** Տպագրում է գեղ. գործեր, գրախոսություններ, թարգմանություններ: Ներկայացնում է մարզի ստեղծագործողներին, անդրադառնում է ՀՀ-ի և արտերկրի գրական աշխարհի նորություններին, միջոցառումներին:

«ԵՐՋԱՆԻԿ», գրական-գեղ., բանասիր., առողջապահ., տնտ., երգիծ. տարեգիրք: Լույս է տեսել 1928-67-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Բագարատ ***Թևյան:*** Լույս է տեսել «Երջանիկին տարեցոյցը», «Երջա-

նիկ զատիկը», «Երջանիկ տարի», «Երջանիկ տարիներ» անվանում-ներով: 1941–43-ին ունեցել է Բ հատորներ՝ «Հատոր մտքի վայելքի» ենթավերնագրով: Լույս է ընծայել բացառիկ համարներ:

«ԵՐՋԱՆԻԿ ՅՈՅՍ», կրոն. ամսագիր: Հայ հոգևոր եղբայրների (ավետարան. եղբայրության եկեղեցիներ) միության հրատ.: Լույս է տեսնում 1961-ից [1961–83-ին՝ Բուենոս Այրեսում (Արգենտինա), 1983-ից՝ Փասադենայում (ԱՄՆ)]: Խմբագիրներ՝ Ենովք Պերպերյան, Անդրանիկ Բալթայան, Հրանտ Ապաճյան, 1965-ից՝ խմբագրակազմ: Լուսաբանում է միության գործունեությունը, տպագրում է կրոնաբա-րոյական հոդվածներ, նյութեր՝ Բուենոս Այրեսի «Հայ ավետարանա-կան ռադիոժամի» հաղորդումներից:

ԵՐՎԱՆԴ Հրաչ (21.7.1885, Խարբերդ–12.9.1968, Բոստոն), հաս. գոր-ծիչ, խմբագիր, հրապարակագիր: Վերակազմյալ հնչակյան (ռամկավար) կուս-յան անդամ (1921-ից): Նյու Յորքում խմբագրել և հրատարակել է *«Արագած»*, խմբագրել *«Պահակ»*, *«Արօր»* (1919–21), *«Ապագայ»*, «Ժո-ղովուրդի ձայնը–Ժամանակ» (1924), *«Պայքար»* պարբ-ները:

Լույս են տեսել Ե-ի «Ինչ տեսայ Հնդկաստանի եւ Ճաւայի մէջ» (1928, Բոստոն, «Պայքարի» տպ.), «Բանախօսութիւն» (1928, նույն տպ.), «Պարզ խօսքեր հայ ժողովուրդին» (1933, Կահիրե, «Սահակ-Մեսրոպ» տպ.) գրքերը:

ԵՐՈՒԽԱՆ (Սրմաքեշխանյան Երվանդ Պողոսի, 1870, Կ. Պո-լիս–1915, Մեծ եղեռնի զոհ), գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսի Ներսեսյան և Կեդրոն. վարժարաններում: 1890-ից աշխատել է «Արևելք» պարբ-ի խմբա-գրությունում: 1896-ի հայկ. կոտորածների օրերին տեղափոխվել է Բուլ-ղարիա, 1904-ին՝ Եգիպտոս: Տարագրության տարիներին (1898–1906) շարունակել է գրական, խմբագր. աշխատանքը, դասավանդել Վառ-նայի, Ալեքսանդրիայի, Կահիրեի ազգ. վարժարաններում: 1900-ին «Շաւիղ» հանդեսում լույս են տեսել Ե-ի «Կաղանդչէքը», «Սայլորդը», «Արեան ուժը» պատմվածքները և «Գաղթականները» անավարտ վեպը:


1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո վերադարձել է Կ. Պո-լիս, դասավանդել Կեդրոն., 1913-ից՝ Խարբերդի վարժարաններում: 1908–13-ին խմբագրել է *«Արևելք»* պարբ-ը, որտեղ հատվածաբար հրապարակել է պոլսահայ կյանքն արտացոլող իր «Ամիրային աղջիկը» (1971) վեպը: 1911-ին լույս է ընծայել «Կեանքի մէջ: Ա. Կաղանդչէքը» (ԿՊ, «Շանթ» տպ.) ժող-ը: Ֆրանս-ից թարգմանել և նույն պարբ-ում լույս է ընծայել Ա. Դոդեի («Ջեկ», 1896, ԿՊ, 1926, Վաղինակ Բյուրատի տպ.), Հ. Մալոյի («Առանց ընտանիքի», 1894–95, նույն տպ.) և այլ վեպեր:

Հրատարակվել են նաև Ե-ի «Երկերը» (1980, Ե., 1993, Անթիլիաս), «Հարազատ որդի, Ալեքսանդրիա» (1936, Անթիլիաս, 2011), «Պատմուածքներ ժողովրդական կեանքէ» (1942, Փ., 1993, Բ.), «Նովելներ» (1946, 1965, 1981), «Պատմուածքներ» (1966, Վնտ., 1967, Բ.) ժող-ները:

Հանդես է եկել նաև Գաղթական, Ե. Գաղթական, Աշուղ գրական ծածկանուններով:

Գրկ. **Հովհաննիսյան Ս.**, *Երուխան, Ե., 1970:* **Հակոբջանյան Հ.**, *Երուխան (կյանքը և գործը), Գյումրի, 2003:* **Ստեփանյան Լ.**, *Երուխան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2007:*


ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1833-ին Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքում՝ Երուսաղեմի հա-յոց պատրիարք Զաքարիա Կոփեցու ջանքերով: Առաջին հրատ-ը փոքրիկ աղոթագիրք է: Հրատ-ների զգալի մասը (պատմ., կրոն., եկեղեց. և Երուսաղեմին վերաբերող) պատմատեղագր. բնույթի է: Լույս են ընծայվել «Խորհրդատետր Սրբազան Պատարագի...» (1841), Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն» (1843), Եսայի Հա-սան-Ջալալյանի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրին» (1868), Մատթեոս Ուռհայեցու «Պատմութիւն» (1869), Վարդան Արևելցու «Պատմութիւն թաթարաց» (1870), Գրիգոր Դարանաղցու «Ժամանա-կագրութիւններ» (1915) և այլ երկեր: Թարգման. գործերից հիշարժան



Հրաչ Երվանդի *«Բա-նախօսութիւն» (1928, Բոստոն) գրքի կազմը*




Երուխան



Երուխանի *«Պատ-մուածքներ ժողովրդա-կան կեանքէ» (1993, Բեյրութ) գրքի կազմը*


Երուսաղեմի հայկական տպագրություն



«Խորհրդապետր Սրբազան Պատարագի ...» (1841) գրքի փիփղոսաթերթը



«Գիրք թղթոց»-ի (1994) կազմը



«Եփրատ», 1909-14, Խարբերդ

են «Համմուրապիի օրենսգիրքը» և Ահմեդ Արապշահի «Պատմութիւն Լենկթիմուրայ» (1873) երկը: XX դ-ում տպագրվել են Մ. Օրմանյանի, Գ. Հովսեփյանի, Ե. Դուրյանի, Թ. Գուշակյանի, Հ. Օշականի պատմաբանասիր., գրականագիտ. ուսումնասիրությունները, Ռ. Սևակի, Դ. Վարուժանի, Մ. Զարիֆյանի երկերի ժող-ները, Ե. Քյոմուրճյանի «Օրագրութիւնը», Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (աշխարհաբար, 1960) պոեմը, Ն. Պողարյանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց» մատենագիտությունը (հ. 1–11, 1966–91) ևն: Տպարանում 1866-ից հրատարակվում է *«Միտն»* հանդեսը:

Հայ իրականության մեջ առաջին գունավոր տպագրությունը կատարվել է Ե. հ. տ-ում, տպագրել է շուրջ 350 անուն գիրք, մինչև 1900-ը՝ 70 անուն գիրք և դասագիրք:

Գրկ. Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833–1996), կազմ.՝ Ա. Մուրադյան, Ե., 2011:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ Գալուստ Կյուլպենկյանի անվան, հիմնադրել է Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե Դուրյանը 1929-ին՝ ժառանգավորաց վարժարանի վերաբացման հետ միաժամանակ: Բացվել է 1932-ին՝ Թորգոմ Ա պատրիարքի օրոք, առավել հարստացել Բաբկենն արք. Կյուլեսերյանի օրոք: Այստեղ պահվում են ավելի քան 100 հզ. անուն գիրք, հարյուրավոր թերթերի ու հանդեսների հավաքածուներ: Հայ. թերթերի հավաքածուով 3-րդն է Վիեննայի Մխիթարյան միաբանության և ՀԱԳ-ից հետո:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, Երուսաղեմի ձեռագրատուն, հայ. ձեռագրերի՝ աշխարհում 2-րդ հավաքածուն (Մատենադարանից հետո): Հիմնադրվել է Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքում հավանաբար XII–XIII դդ-ում: Ձեռագրերի թիվը հասնում է շուրջ 3800-ի:

1865-ին Տ. Սավալանյանցը կազմել է դրանց 1-ին ցանկը: Հետագայում ցանկերի կազմմանն ու հրատարակմանը ձեռնամուխ են եղել Արտավազդ *Մուրադեյանը* (1-ին հատորը լույս է ընծայել 1948-ին Վենետիկում), Նորայր *Պողարյանը* (1953–60-ին հրատարակել է 2–5-րդ հատորները): 1966-ին նա ձեռնարկել է «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց» մատենագիտ. ցանկի նոր, վերափոխված ու շքեղ հրատ-ը (հ. 1–11, 1966–91), որտեղ ընդգրկված է 2000 ձեռագրի նկարագրություն:

Գրկ. **Սաւալանեանց Տ.,** *Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1–2, Երուսաղեմ, 1931:* **Աբրահամյան Ա.,** *Հայոց գիր և գրչություն, Ե., 1973:*

«ԵՓՐԱՏ», բանասիր., երգիծ. և արհեստագործ. եռօրյա թերթ: Հրատարակվել է 1869–72-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Սիմոն Ֆելեքյան, Հակոբ *Պարոնյան*, Հակոբ Հաճյան, Ս. Գալանճյան: Լուսաբանել է հայ հաս. կյանքը, Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեությունը, տպագրել գյուղատնտ. և կենցաղային խորհուրդներ, անդրադարձել կրթության խնդիրներին:

«ԵՓՐԱՏ», գրական և գիտ. կիսամսյա հանդես (1913-ից՝ ամսագիր): Եփրատ քոլեջի հրատ.: Լույս է տեսել 1909–14-ին Խարբերդում: Խմբագիր՝ Կարապետ Սողիկյան: Ներկայացրել է կրթ. հաստատության առօրյան, տպագրել սաների և շրջանավարտների գրական, պատմ. և կրոն. թեմաներով նյութեր:

«ԵՓՐԱՏ», ազգ., գրական, գիտ. և քաղ. թերթ: ՌԱԿ-ի Սիրիայի շրջանակի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1927–49-ին Հալեպում: Խմբագիրներ՝ Տիգրան Փիրանյան, Խաչիկ Քարտաշ, Արիս Շաքյան, Խաչիկ Պողոսյան, Սեդրակ Կեպենյան, Սատթեոս Երեցյան, Ե. Պենյան, Հովսեփ Հովսեփյան, Էլի Նազար, Հարություն Տեր-Ղազարյան, Մարտիրոս Տեր-Ստեփանյան, Հայկ Պարիկյան: Անդրադարձել է Հայաստանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Հայրեն.

մեծ պատերազմի (1941–45) տարիներին տպագրել է ռազմաճակատային լուրեր: Աջակցել է հայրենադարձությանը:

ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ, **սուրբ Եփրեմ Ասորի** (306, Եդեսիա–373, Եդեսիա), Ընդհանրական եկեղեցու հայրապետներից, Հայ առաքել. եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ հայրերից: Հայկ. աղբյուրներում հայտնի է նաև Խուրին, Խորին անուններով: Նախն. կրթությունն ստացել է Մծբինում, այստեղ էլ նրան մկրտել է իր ուսուցիչը՝ ***Հակոբ Մծբնացին***: Ավելի քան 10 տարի ապրել և ստեղծագործել է Եդեսիայում, որտեղ էլ գրել է իր առաջին գործերը, կրթել բազում աշակերտների: 360-ական թթ-ին տեղափոխվել է Մծբին: Հակոբ Մծբնացին նրան նշանակել է տեղի քրիստ. դպրոցի տեսուչ: 370–371-ին եղել է Կապադովկիայի Կեսարիայում, որտեղ էլ, ըստ ավանդության, ***Բարսեղ Կեսարացին*** նրան ձեռնադրել է սարկավագ:

Ե. Խ. Ա. գրել է Հին ու Նոր կտակարանների մեկնությունը, ճառեր, ներբողներ, քարոզներ, կցուրդներ: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են քրիստոնյա հին ժողովուրդների լեզուներով և գրեթե ամբողջությամբ ներկայացված են հայ. հնագույն թարգմանություններում: «Տատիանոսի համաբարբառ Աւետարանի մեկնութեան» զգալի մասը, «Պօղոսի թղթերի մեկնութիւն»-ը, 51 կցուրդ ու մի քանի ճառեր պահպանվել են միայն հայ. թարգմանությամբ և վաղուց դարձել են արևելագիտ-յան ուսումնասիրության առարկա:

Հայ հոգևոր բանաստեղծությունը, ճառագրությունը և հատկապես մեկնող. ու դավանաբան. գրակ-ը կրել են Ե. Խ. Ա-ու ազդեցությունը:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Ե. Խ. Ա-ու՝

«Յաղագս ապաշխարութեան» երկը. 1703-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Հրատարակիչ՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի առաջնորդ Տեր Ավետիք վարդապետ, հոգաբարձու՝ Աստվածատուր Ագուլեցի Դաշտեցի: Տպակից է Հակոբ Տյառնեղբոր ***«Կտակգիրք»***-ին (212 էջ, 8º, 12,5 x 7,3 սմ):

«Գիրք աղօթից»-ը. 1734-ին Կ. Պոլսում՝ Սարտիրոս Սարգսյանի տպարանում: «Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի...» տիտղթ-ով (95 էջ, 8º), 1741-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (96 էջ, 8º, 13 x 7,5 սմ), 1747-ին Կ. Պոլսում (128 էջ, 8º), 1767-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Հակոբի տպարանում (112 էջ, 8º, 13 x 7 սմ), 1779 և 1788-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (108 էջ, 8º, 12,8 x 7,5 սմ), 1793-ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում (112 էջ, 8º, 12,8 x 7,8 սմ), 1793 և 1795-ին Կ. Պոլսում՝ Սայր դպրատան տպարանում (118 էջ, 8º, 13 x 8,2 սմ):

«Գիրք աղօթից»-ը տպագրվել է նաև 1815-ին Կ. Պոլսում (Պողոս Հովհաննիսյանի տպ.), 1825-ին Թիֆլիսում (Ներսիսյան դպրոցի տպ.), 1838-ին Շուշիում (Նորին բարձր սրբազնության տպ.), 1848, 1857, 1865, 1870 և 1933-ին Երուսաղեմում (Սբ Հակոբյանց տպ.), 1889-ին Վաղարշապատում (Սբ Էջմիածնի տպ.), 1896-ին Նոր Նախիջևանում (Ա. Զամինյանի և Վ. Քիրյանի տպ.) ևն:

Լույս են տեսել նաև Ե. Խ. Ա-ու «Բժշկարան հոգեւոր» (մաս 1–2, 1822, ԿՊ, Սայր դպրատան տպ.), «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք» (հ. 1–4, 1836), «Կցուրդք Ս. Եփրեմի Խորին Ասորւոյ» (1934, երկուսն էլ՝ Վնտ., Սբ Ղազարի տպ., 1957, Վնն., Մխիթարյան տպ.), «Հորդորակ ապաշխարության: Ջորավոր աղոթք» (2005), «Խրատներ» (թարգմ.՝ Վ. Ֆերեշեթյանի, 2007), «Ճառընտիր» (առաջաբ. և ծնթգր.՝ Մ. Արաբյանի, 2010) երկերը:



«Սբ Եփրեմ Խուրի Ասորի», *մանրանկարի դրվագ, 1418-ի ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 2690)*



«Յաղագս ապաշխարութեան» (1703, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը




«Գիրք աղօթից»-ի (1741, Կ. Պոլիս) նախափիփղոսաթերթը

Գրկ. **Ալգերեան Մ.**, *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. 10, Վնտ., 1814:* **Զարբհանալեան Գ.**, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 443–446:* **Տեր-Պետրոսյան Լ.**, *Հայ հնագույն թարգմանությունների մատենաշար, տես Գիրք Ծննդոց, քնն. բնագիր, աշխատասիր.՝ Ա. Զեյթունյանի, Ե., 1985:* Geerard M., *Clavis Patrum Graecorum, v. 2, Brepols-Turnhout, 1974, p. 366–468.*

Զ





Զահրատի *«Բառ բառի քով» (2007, Ե., «Նաիրի») գրքի կազմը*

Զ, հայ. այբուբենի 6-րդ տառը, անվանումը՝ «զա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է վերից վար իջնող երկար, կարճ ու լայն գծերից. կարճը երկարին է միանում ձախ կողմի վերին և միջին մասերից՝ 2 նուրբերով, իսկ լայնը՝ աջ կողմի ստորին մասից՝ 1 նուրբով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Զ, որպես այբուբենի 6-րդ տառ, նշանակել է վեց և վեցերորդ, իսկ յուրի նշանով (Զ՝)՝ 60 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Զ – մաս 6-րդ):

«ԶԱԳՐՈՍ» (հուն. է, նշանակում է աստվածների ցասում), հասքաղ., մշակութ. ամսաթերթ: Հայաստանի քրդերի ազգ. խորհուրդ ՀԿ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2007-ից Երևանում՝ հայ., մեկ էջը՝ քրդ.: Հիմնադիր-խմբագիր՝ Ալիխանե *Մամե*: Լուսաբանում է ՀՀ-ում քրդ. համայնքի կյանքը, անդրադառնում է ՀՀ ներքին ու արտաքին քաղաքականությանը, սոցիալ-տնտ. կացությանը, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը, Մերձ. ու Միջին Արևելքում ծավալվող քաղ. իրադարձություններին, որոնք առնչվում են նաև քուրդ ժողովրդի ազգ. խնդիրներին:

ԶԱՀՐԱՏ (Յալդըզջյան Զարեհ Մովսեսի, 10.5.1924, Կ. Պոլիս–20.2.2007, Կ. Պոլիս), բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանը (1942), սովորել Վիեննայի համալսարանի բժշկ. ֆակ-ում: Խմբագրել է Մխիթարյանների Սանուց միության «Սան» պարբ-ը, եղել է Ստամբուլի *«Սիսմարա»* օրաթերթի և *«Շողակաթ»* հանդեսի խմբագրակազմի անդամ, աշխատակցել Սփյուռքի մի շարք պարբ-ների:

Լույս են տեսել Զ-ի «Մեծ քաղաքը» (1960, Ստամբուլ, 1978, Ե.), «Գունաւոր սահմաններ» (1968), «Բարի երկինք» (1971, երկուսն էլ՝ Ստամբուլ), «Կանանչ հող» (1976, Փ.), «Մէկ քարով երկու գարուն» (1989, 2002, Ե.), «Առանց խաչի, առանց քարի խաչքար» (1998), «Ծայրը ծայրին» (2001), «Ջուրը պատէն վեր» (2004, երեքն էլ՝ Ստամբուլ), «Բառերուն տակի քերթվածը» (2004, Ե.), «Բանաստեղծութիւններ» (հ. 1–2, 2006), «Բառ բառի քով» (2007, ընտրանի), «Կիսաւարտ աղօթք» (2010), «Ակնթարթի մը չափ» (2011), «Անտիպ թերթս» (2012, բոլորը՝ Ստամբուլ) բանաստեղծությունների ժող-ները:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ, Հայ առաքել. եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ», Կաթոլիկ եկեղեցու «Կարդինալ Աղաջանյան» շքանշաններ:

Գրկ. Զահրատ 75 տարեկան, Սիսմարոլ, 1998:

«ԶԱՆԳ», հաս–քաղ., տեղեկատվ. երկամսյա թերթ: ՍԴՀԿ Ավստրալիայի շրջանի վարիչ–մարմնի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1995–ից Սիդնեյում: Տպագրում է հայրենասիր. հոդվածներ, ծանոթացնում հայոց պատմությանը, լուսաբանում համայնքի կյանքը: Ունի անգլ. բաժին:

«ԶԱՆԳ», հաս–քաղ., տնտ. և գրական շաբաթաթերթ (վերջում՝ եռօրյա): Հնչակյան կուս–յան հրատ.: Լույս է տեսել 1910–22–ին Թավրիզում: Արտոնատեր՝ Ա. Պատմագրյան: Հիմնադիր–խմբագիր՝ Ալեքսանդր Տեր–Վարդանյան, խմբագիր՝ Վահան Մարսյան: Լուսաբանել է կուս–յան գործունեությունը, անդրադարձել տեղի հայկ. համայնքի առօրյային, Առաջին աշխարհամարտին (1914–18), Թուրքիայում հայերի տեղահանությանը, կոտորածներին:

«ԶԱՆԳԱԿ», հրատարակչություն: Հիմնադրել է Մկրտչյանների ընտանիքը 1997–ին (գլխ. տնօրեն՝ Սոկրատ Մկրտչյան, գործադիր տնօրեն՝ Էմին Մկրտչյան): Գործունեության առաջին շրջանում լույս է ընծայել (հայ. և այլ լեզուներով) մանկ. գեղ., գիտահանրամատչելի ավելի քան 2000 անուն գիրք: ՀՀ–ում դասագրքեր հրատարակող առաջատար հաստատություններից է:



«Զանգակ»
հրատարակչության տպագրած գրքերից

«Զ.»–ում ձևավորվել են առանձին գիտահրատարակչ. խմբեր (պատմագիտ–յան, մանկավարժության, ազգ. հոգեբանության, լեզվաբանության, մաթեմատիկայի ևն): Հրատարակչությունը համագործակցում է արտերկրի ճանաչված հրատարակիչների և հեղինակների հետ, թարգմանաբար տպագրում է գրքի միջազգ. շուկայի լավագույն նմուշներից:

«ԶԱՆԳՈՒՀ», հաս–քաղ. շաբաթաթերթ: Ֆրանսահայ կոմունիստների հրատ.: Լույս է տեսել 1935–37–ին Փարիզում: Խմբագիր՝ Միսաք *Մանուշյան*: Պաշտպանել է հայ համայնքի աշխատավորների շահերը, նպաստել է գաղթավայրի և հայրենիքի միջև կապերի ամրապնդմանը, հայրենադարձությանը: Լուսաբանել է ՀՕԿ–ի և առաջադիմ. կազմակերպությունների աշխատանքները, միջազգ. քաղ. իրադարձությունները, ահազանգել է ֆաշիզմի ու պատերազմի օրեցօր սպառնացող վտանգի մասին: Աշխատակցել են Գ. Թահմազյանը, Դ. Դավիթյանը, Տ. Զավենը, Հ. Գալճյանը, Զ. Որբունին, Ե. Թոլայանը, Ա. Կոթիկյանը, Ե. Քոչարը և ուր.:


ԶԱՎԵՆ ՏԻԳՐԱՆ (Չուգասզյան, 1874, Սեբաստիա–1938, Երևան, անհատի պաշտամունքի զոհ), հաս. գործիչ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում, Փարիզում, Ժնևում: 1903–ին Թիֆլիսում աշխատակցել է «Մուրճ» ամսագրին, 1906–08–ին խմբագրել է *«Երկրի ձայնը»*, 1908–ին Կ. Պոլսում՝ *«Մուրհանդակ»*, 1918–19–ին՝ *«Ժողովուրդ»*, 1921–22–ին՝ *«Զարթոնք»* (ֆրանս.) պարբ–ները: 1923–ին տեղափոխվել է Փարիզ, աշխատել բուլղար պետ. գործիչ Գեորգի Դիմիտրովի գլխավորած «Բալկանյան դաշնություն» (ֆրանս.) պարբ–ի խմբագրությունում: 1933–ին հայրենադարձել է, զբաղվել գրական, մշակութ. գործունեությամբ: Ֆրանս–ից թարգմանել է Հ. Ք. Անդերսենի «Հեքիաթները» (1904, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.), Լուազոն Պոլ Իասենթի «Արիւնի աւետարանը» (1906, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.) և այլ գործեր:



Գարեգին Զարբհանալյան

ԶԱՐԲՀԱՆԱԼՅԱՆ Գարեգին (4.12.1827, Կ. Պոլիս–13.2.1901, Վենետիկ), գրակ–յան պատմաբան, մատենագետ, թարգմանիչ: Սովորել է Կ. Պոլսում, Վենետիկի Մխիթարյան վարժարանում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1848–ից): 1850–56–ին եղել է ուսուցիչ, 1856–72–ին՝ տպարանապետ, 1876–84–ին՝ քարտուղար: 1858–68–ին դասավանդել է Կ. Պոլսի Բերայի Մխիթարյան վարժարանում:

Զ–ի առաջին հոդվածները [«Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու» (1850, 1851) ևն] տպագրվել են «Բազմավէպ»–ում: Ուշագրավ են նրա «Պատմութիւն հայերէն դպրութեանց...»


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ
ՅԱԶԳԱՑԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԱՑ
ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱԳՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1865

Գ. Զարբհանալյանի *«Պատմութիւն հայերէն դպրութեանց...» (հ. 1, 1865, Վնտ.) գրքի կազմը*

Զարդագիր





Սկզբնագրով, գլխա- և լուսանցազարդերով էջ, XI դ-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 7737)

(հ. 1, 1865, 1886, 1897, հ. 2, 1878, 1905, 1932) և «Պատմութիւն մատենագրութեան միջին եւ նոր դարուց յԱրեւմուտս» (հ. 1–2, 1874) երկերը: Զ-ի «Հայկական մատենագիտութիւն: Այբբենական ցուցակ տպագրական գիւտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց» (1883) աշխատության մեջ առաջինն է ամբողջացել հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը, որն իր նպատակով ու ծրագրով աննախադեպ էր հայագիտ-յան մեջ:

Լույս են տեսել Զ-ի «Յաղագս բարեխօսութեան սրբոց եւ զնշխարս նոցա եւ զպատկերս մեծարելոյ» (1852), «Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմայեցւոց եւ հարց եկեղեցւոյ» (1856), «Պատմութիւն հայկական տպագրութեան» (1895), «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ–ԺԳ)» (1889, անդրադարձել է մինչև XIII դ. կատարված հայ. թարգմանություններին) աշխատությունները: Զ. թարգմանել է Պ. Ժանետի «Մայր, առաջին դաստիարակ մանկութեան» (1874) մանկավարժ., Գ. Շրումպֆի «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար)» (1895) հայագիտ. աշխատությունները, կազմել Պլատոնի, Փիլոն Եբրայեցու հայ. հին թարգմանությունների բնագրերը: Զ-ի բոլոր գործերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Հանդես է եկել նաև Սահակյան Հ. Գ. Զ. կեղծանունով:

Գրկ. Գարեգին Զարբհանալեան, «Բազմավէպ», 1901, № 2 (հավելված): **Իշխանյան Ռ.,** *Հայ մատենագիտության պատմություն, հ. 2, Ե., 1968:*

ԶԱՐԳԱՐՅԱՆ Տիգրան Կարոյի (ծ. 25.2.1954, Երևան), գրադարանային և արխիվային փաստանյութի թվայնացման մասնագետ: Տեխ. գիտ. թեկնածու (1987): Ավարտել է ԵՊԻ (1976): 1994–2003-ին՝ հանրապետ. գիտաժշկ., միաժամանակ, 1996–2006-ին՝ ԵՊՀ գրադարանների ավտոմատացման բաժինների վարիչ, 1997–2000-ին՝ Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգ. դաշնության SS մշտ. հանձնաժողովի անդամ, 2007–09-ին՝ «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» (ԷՏԳՀ) կոնսորցիումի ազատ կոդերով ծրագրաշարերի (FOSS) միջազգ. ծրագրի համակարգող, 2010-ին՝ ԷՏԳՀ խորհրդի անդամ: 2006–11-ին՝ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ. գրադարանի, 2011-ից՝ ՀԱԳ-ի տնօրեն: 2009-ից՝ ՀՀ ԳԱԱ միջազգ. գիտակրթ. կենտրոնի գրադարանային գործի և տեղեկատվ. աղբյուրների ամբիոնի վարիչ:

Լույս է տեսել Զ-ի «Թվային գրադարաններ» (2002) մենագրությունը: Մասնակցել է «Գրադարանները փոփոխվող աշխարհում» (1996), «Ինտերնետ համակարգչային ցանց և գրադարաններ» (1997) մեթոդ. ձեռնարկների կազմման ու խմբագրման աշխատանքներին:

ԶԱՐԴԱԳԻՐ, **զարդատառ**, տարբեր եղանակներով ոճավորված տառատեսակ: Հայկ. գրքարվ-ում տառերը զարդարելու մշակույթն սկզբնավորվել է X դ-ից (989-ի «Էջմիածնի Աւետարանում» Օ և Ծ տառերում ներգծված են մարդու դեմքեր ևն): XI դ-ի վերջից Զ-երը դարձել են ձեռագիր նկարազարդ մատյանների անբաժան մասը: Զարդագրել են անվանաթերթերի, պարբերությունների, հատվածների, վերնագրերի ևն սկզբնատառերը: Հայաստանի վարպետները նախընտրել են «արևելյան դրոշմ ունեցող» երկրաչափ. և բուս. մոտիվներով Զ-երը, իսկ Կիլիկիայի ձեռագրերում նկատելի է բյուզ. ազդեցությունը: Հայկ. գրքարվ-ում, ըստ զարդարման եղանակի, տարբերում են **ծաղկագիր** (ծաղկապատկերներով), **թռչնագիր** (ճագագիր, ճնճղագիր թռչունի պատկերներով), **վիշապագիր** (օձի, վիշապի, առասպել. կենդանիների պատկերներով, գործածվում է նաև օձագիր անվանումը), **մարդագիր** (մարդու պատկերով), **գազանագիր** (կենդանագիր՝ վագրի, առյուծի, եղնիկի ևնի պատկերներով) Զ-եր: Գրքի 1-ին էջերի շքեղ զարդարուն սկզբնատառերն անվանում են **փառագիր** (Գարեգին *Լևոնյան*), որը, սակայն, միանշանակ չէ, որովհետև Արշակ *Չոպանյանը* փառագիր անվանումը կիրառել է կետերով ձևավորված Զ-երի համար: Զ-երի ավելի բարդ տեսակի՝ **հանգուցագրի** բաղադրիչները զանազան հյուսվածքներ և հանգույցներ են:

Զ-ի բարձրարվ. ավանդույթներն օգտագործվում են արդի գեղ. գրակ-յան, դասագրքերի, ուղեձների, շնորհավորագրերի, հրավիրագրերի ևնի ձևավորման համար:

Գրկ. Զուգասզյան Լ., Հայկական ձեռագրերի զարդատառերը, «Սովետական Հայաստան», 1986, № 11: Հայկական մանրանկարչություն: Զարդատառեր. ալբոմ (կազմ., տեքստը՝ Հ. Կարագյոզյանի), Ե., 1992:

ԶԱՐԴԱՊԱՏԿԵՐ գրքի ձևավորման մեջ, ռիթմիկ դասավորված տարրերից կազմված նախշ (զարդանկար, զարդ, դրվագազարդ ևն): Զ-ները նպաստում են գրքի կառուցվածքը գեղարվեստորեն ամբողջ. և ավարտուն դարձնելուն: Գրքային Զ-ների հնագույն նմուշները պահպանվել են VI դ-ից («Էջմիածնի Աւետարան», 989, «Վեհափառի Աւետարան», X դ., «Մողնու Աւետարան», XI դ., ևն):

Զ-ով ընդգծում և առանձնացնում են գրքի տարբեր հատվածների սկիզբն ու վերջը՝ յուրատեսակ դադար ստեղծելով տեքստի ընթերցանության ժամանակ:

Տարբերում են գունավոր ու անգույն, բնական կամ ոճավորված Զ-ներ: Հայ. ձեռագրերին բնորոշ է սկզբնաէջերի, վերջնաէջերի խորանների, գլուխների, վերնագրերի, սկզբնատառերի և լուսանցքների զարդանկարումը: Հայ իրականության մեջ Զ-ի ամենախոշոր վարպետը ***Թորոս Ռոսլինն*** է, որի ստեղծագործություններում նկատելի է ընդունված հնարքներից շեղվելու և աստվածաշնչյան թեմաների հետ աշխարհիկ տարրերի (որսի տեսարաններ, կենդանիների պատկերներ ևն) ներմուծման միտումը: Մանրանկարներում պահպանվել են նաև մի շարք պատմ. անձանց դիմանկարներ, երկրաչափ., բուս., կենդ., տիեզ. մարմինների և ոճավորված այլ Զ-ներ: Տարածված են վարդյակի տարատեսակները, կենաց ծառի, նռան, խաղողի ողկույզի, արծվի, վիշապի, եզան և այլ կենդանիների պատկերներ:

Ժամանակակից Զ-ները կատարվում են նորագույն գեղագիտ. ընկալումներին համապատասխան: Տես նաև ***Բաժանազարդ, Գլխազարդ, Լուսանցազարդ***:

ԶԱՐԴԱՐՅԱՆ Ռուբեն [1874, գ-ք. Սևավերակ (Սևերեկի գավառ)–1915, Մեծ եղեռնի զոհ], գրող, խմբագիր, հրապարակախոս: Սովորել է Խարբերդի ազգ. կեդրոն. վարժարանում, աշակերտել է Հովհաննես ***Թլկատինցուն***: 1892–1903-ին դասավանդել է Մեզիրեի ազգ. կեդրոն. վարժարանում: 1905-ին մեկնել է Բուլղարիա, հաստատվել Պլովդիվում. 1905–08-ին՝ «Ռազմիկ» թերթի խմբագիր: 1908-ի երիտթուրք. հեղափոխությունից հետո վերադարձել է Կ. Պոլիս, աշխատակցել «Ժամանակ», «Ազդակ» պարբ-ներին, 1909–14-ին՝ ***«Ազատամարտ»*** թերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Զ-ի «Ցայգալոյս: Արձակ էջեր» (1910, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., 1977, 1994, Անթիլիաս, ֆրանս.՝ 1912), «Առիւծին ժանիքէն: Բանտարկեալի մը յիշատակարանէն» (1906, Պլովդիվ), «Ցայգալոյս» (1945, Վնտ., 1945, 1959, 1983, Ե.) բանաստեղծությունների և արձակ գործերի ժող-ները, «Ամբողջական երկերը» (մաս 1, 1930, Փ.), «Վաղուայ գրականութիւնը» (1900), «Թլկատինցի» (1908), «Ա. Իսահակեանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը» (1910) գրականագիտ. ուսումնասիրությունները: Կազմել և հրատարակել է «Մեղրագետ. ժողովածու արդի հայ եւ օտար գրականութեան» (1911, ԿՊ, «Արաքս» տպ.) ժող-ը, «Մեղրագետ. Տարրական ընթացք» (1913, նույն տպ., 1914, ԿՊ, Թագվոր Սանճագճյանի տպ.) ընթերցարանները (6 գիրք): Հեղինակ է նաև չափածո և արձակ բանաստեղծությունների («Մենաւոր ծառը», «Լերան եղնիկին» ևն), վիպակների և նորավեպերի («Սեւ հավը կանչեց», «Տան սէրը», «Սարերու տղան», «Զոջոլումը»), հեքիաթների և լեգենդների («Քարացածները», «Ծովակին հարսը», «Բռնաւորին արցունքը»): Թարգմանել է Մ. Գորկու, Է. Վերհառնի, Օ. Ուայլդի, Ա. Ֆրանսի և ուր. երկերից:

1915-ին ձերբակալվել է և աքսորվել Այաշ, որտեղ և զոհվել է:

Գրկ. Ռ. Զարդարեանի «Ցայգալոյսը», «Գրական ասուլիներ», 4, ԿՊ, 1913: **Տէր-Խաչատուրեան Ա.,** *Մատենագիտութիւն Ռուբէն Զարդարեանի, Անթիլիաս, 1977:*

Զարդապատկեր



«Գլաձորի Աւետարան» (1307, Վնտ. մատենադարան, ձեռ. № 1917)



Ռուբեն Զարդարյան



Ռ. Զարդարյանի *«Ցայգալոյս» (1959, Վնտ.) գրքի կազմը*




Վահան Զարդարյանի *«Յիշատակարան» (հ. 1, 1910, Կ. Պոլիս) գրքի շապիկը*



«Զարթօնք», 1937-ից, Բեյրութ



1962-ի բացառիկ համարը



Կոսբան Զարյան

ԶԱՐԴԱՐՅԱՆ Վահան (1872, Կ. Պոլիս–1945, Կահիրե), գրավաճառ, հրատարակիչ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Պեզճյան մայր վարժարանում: Ավարտելուց հետո աշխատել է հոր տպարանում: 1893-ին կազմել է «Գրացուցակ նոր հրատարակութեանց»-ը (ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.): 1901-ին եղբոր՝ Պիմեն Զարդարյանի հետ բացել է «Զարդարյան» գրավաճառանոցը: Հավաքել է հազարավոր հնատիպ գրքեր, պարբ-ներ, հին փաստաթղթեր, վավերագրեր, հայ երևելիների կենսագրություններ, հայերին վերաբերող թուրք. ֆերմաններ ևն, որոնք զետեղել է հայ տպագրության 400-ամյակի առթիվ հրատարակած «Յիշատակարան» (հ. 1, 1910, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ., հ. 2–3, 1911–12, ԿՊ, Օսմ. գործակց. ընկ. տպ.) հանրագիտ. ժող-ում: 1923-ին առանձնացել է եղբորից, տեղափոխվել Կահիրե, բացել է «Զարդարյան» գրավաճառանոցը: 1930-ական թթ-ին վերահրատարակել է «Յիշատակարանը»՝ 5 հատորով՝ ավելացնելով բազմաթիվ նոր անուններ, լուսանկարներ, վավերագրեր:

«ԶԱՐԹՕՆՔ», ազգ., քաղ., հաս., գրական օրաթերթ: ՌԱԿ-ի Կենտր. վարչության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1937-ից (ընդհատումներով) Բեյրութում: Խմբագիրներ՝ Վահան ***Թեքեյան***, Լևոն Թյությունճյան, Երվանդ Քեշիշյան, Հովհաննես Պողոսյան, Հակոբ Դավթյան, Միքայել Նաթանյան, Գրիգոր Պեքերեճյան, Համբարձում Գումրույան, Գերսամ ***Ահարոնյան***, Հակոբ ***Ավետիքյան***, Պարույր Աղպաշյան, Պայծիկ Գալայջյան (2008-ից): Ներկայացնում է ՌԱԿ-ի ծրագրերը, լուսաբանում Լիբանանի, ՀՀ և միջազգ. քաղ., տնտ. ու մշակութ. անցուդարձը, սփյուռքահայ համայնքների կյանքը, անդրադառնում է ազգապահպան, եկեղեց., երիտասարդության հարցերին, ջատագովում հայրենադարձությունը, օժանդակում Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Լույս է ընծայել «Զարթօնք սփոր» (1955–57, 1959, խմբագիր՝ Վարուժան Պետիկյան) և «Ալ-Յաքզա» (արաբ., 1957–58) հավելվածները: Թողարկում է նաև բացառիկ համարներ:

«ԶԱՐԿ», գրական-գեղ., հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել Թիֆլիսում 1906–07-ին: Խմբագիր-հրատարակիչ՝ Գրիգոր Բալասանյան: Տպագրել է հրապարակախոս., գրական, բանասիր., մանկավարժ. հոդվածներ, անդրադարձել է հայոց լեզվի և հայ պատմագրության հարցերին, ներկայացրել մամուլի տեսություններ, մատենագիտ. տեղեկություններ, գրախոսականներ ևն:

ԶԱՐՅԱՆ (Եղիազարյան) Կոստան Քրիստափորի (2.2.1885, Շամախի–11.12. 1969, Երևան), գրող, խմբագիր, արվ-ի տեսաբան: 1890-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Բաքու: Սովորել է ռուս. գիմնազիայում: 1895-ին մեկնել է Փարիզ, ավարտել է Սեն Ժերմենի քոլեջը (1901), ապա՝ Բրյուսելի համալսարանը (1904): 1910–13-ին հայ-ը կատարելագործել է Վենետիկի Մխիթարյան միաբանությունում: 1914-ին՝ ***«Մեհյան»*** (Գեղամ ***Բարսեղյանի*** և Հակոբ ***Օշականի*** հետ), 1922-ին՝ ***«Բարձրավանք»*** (Վահան ***Թեքեյանի***, Շահան ***Պերպերյանի***, Հ. Օշականի հետ) հանդեսների հրատարակիչ-խմբագիր: 1916-ին Հռոմում իտալ. հրատարակել է «Երեք երգեր» (հայ. հրտ.՝ 1931) պոեմների ժող-ը: 1919-ին, որպես իտալ. թերթերի հատուկ թղթակից, գործուղվել է Մերձ. Արևելք, եղել Հայաստանում: 1922-ին տեղափոխվել է Երևան, դասավանդել է ԵՊՀ-ում: 1925-ից ապրել է Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Մերձ. Արևելքի երկրներում: 1944–46-ին դասավանդել է Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում, 1946-ին Նյու Յորքում խմբագրել և հրատարակել է «Արմինըն Քուաթըրլի» (անգլ.) հանդեսը, 1952–54-ին դասավանդել է Բեյրութի ամերիկյան համալսարանում: 1962-ին հաստատվել է Երևանում, աշխատել ԳԱԹ-ում:

Լույս են տեսել Զ-ի «Տատրագոմի հարսը» (1930, Բոստոն, «Հայրենիքի» տպ., 1982, Բ., 1986, Լոս Անջելես) պոեմը, «Անցորդը եւ իր ճամբան» (1927, 2010), «Նաւը լերան վրայ» (1943, Բոստոն, 1963, Ե., 2002, Անթիլիաս) վեպե-

րը, «Երկիրներ եւ աստուածներ» (1935–38), «Օրերի պսակը» (1971, Բ.), «Գիրք դիւցազներգութեանց» (1978, Երուսաղեմ, 2003, Ե.), «Սպանիա» (1999), «Նավատոմար» (1999), «Դեպի Արարատ» (2001), «Միացեալ Նահանգներ» (2002), «Բառերի ոսկին: Բանաստեղծություններ» (2009) պոեմների, հոդվածների և էսսեների, բանաստեղծությունների ժող–ները, «Երկերը» (1975, 1985):

Գրկ. **Ավագյան Ա.,** *Կոստան Զարյան: Կյանքը և գործը, Ե., 1998:* **Մատթէոսեան Վ.,** *Կոստան Զարեանի եւ Սիմօն Վրացեանի նամակագրութենէն, Բ., 2009:*

ԶԱՐՅԱՆ Նաիրի [Եղիազարյան Հայաստան Եղիազարի, 31.12. 1900, գ. Խառակոնիս (Վանի նահանգ)–11.7.1969, Երևան], գրող, հաս. գործիչ, խմբագիր: Ավարտել է Երևանի թեմ. դպրոցը (1921), ԵՊՀ (1927): 1927–28-ին աշխատել է «Աշխատանք», «Անաստված», «Գրական դիրքերում» պարբ–ների խմբագրություններում: 1934–36-ին՝ ***«Գրական սերունդ»*** ամսագրի խմբագիր, 1944–46-ին՝ ՀԳՄ վարչության, Խաղաղության պաշտպանության հայկ. կոմիտեի նախագահ:

Լույս են տեսել Զ–ի «Հրանուշը» (1925, Ե., Պոլիգրաֆտրեստի 2–րդ տպ.), «Նոյեմբերյան օրերին» (1926, Թ., Պոլիգրաֆտրեստի 4–րդ տպ.), «Ջրանցքի կապույտ երկրում» (1926, Ե., Պետհրատի 2–րդ տպ.), «Ռուշանի քարափը» (1930, Ե., Հայպետհրատի տպ.), «Սաքո Միկինյան» (1935), «Զայն հայրենական» (1943) պոեմները, «Հացավան» (1937, վերամշկ. հրտ.՝ 1949) վեպը, «Մարտակոչ» (1941), «Վրեժ» (1942), «Շիկացած հոգով» (1943), «Լսեք, դարեր» (1943) բանաստեղծությունների ու պոեմների ժող–ները, «Ուղեգրություններ» (1953) ճանապարհորդ. նոթերը, «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» (1958) վեպը:

Զ–ի բանաստեղծ. արվ–ի գագաթնակետը «Արա Գեղեցիկ» (1946, 1960, Փ., 1966, Բ., 1968) դիցապատմ. ողբերգությունն է: Գրել է նաև կատակերգություններ («Տնամերձ այգի», 1947, «Աղբյուրի մոտ», 1950, «Փորձադաշտ», 1953): Ուշագրավ են Զ–ի «Աասունցի Դավիթ» դյուցազներգության արձակ վերապատումը («Սասնա Դավիթ», 1966, նկարազարդումը՝ Մ. Սոսոյանի) և «Սպասում եմ քեզ» (1968, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1972) բանաստեղծությունների, պոեմների ժող–ը: Կյանքի վերջին տարիներին սկսել է գրել «Երկրորդ կյանք (Ինքնապատում)» (1982) հուշագրությունը, որը մնացել է անավարտ: Հրատարակվել են նաև Զ–ի «Երկերը» (հ. 1–5, 1945–56), «Երկերի ժողովածուն» (հ. 1–7, 1962–72, հ. 1–4, 1984–85), «Միհատորյակը» (1976), «Հատընտիրը» (2000):

Զ. թարգմանել է Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ն. Նեկրասովի, Վ. Բրյուսովի, Ս. Եսենինի, Վ. Մայակովսկու, Ի. Շավճավաձեի, Մ. Մխարգրձելու և ուր. գործերից: Զ–ի ստեղծագործություններից թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Գրկ. **Դարոնյան Ս.,** *Նաիրի Զարյան: Կյանքը և գործունեությունը, Ե., 1982:* **Սաֆարյան Վ.,** *Նաիրի Զարյան: Կյանքը և գործունեությունը, Ե., 1985:*

ԶԱՐՅԱՆ (Ղազանջյան) Ռուբեն Վարոսի [1(14).9.1909, Ալեքսանդրապոլ–2.2. 1994, Երևան], գրականագետ, թատերագետ, խմբագիր: Արվ. վաստ. գործիչ (1961): Արվեստագիտ. դ–ր (1962), պրոֆ. (1963), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1986, թղթ. անդամ՝ 1974–ից): Ավարտել է ԵՊՀ (1936): 1938–47-ին՝ Հայպետհրատի գեղ. գրակ–յան բաժնի վարիչ, 1941–43-ին, միաժամանակ՝ ***«Սովետական գրականություն»*** ամսագրի խմբագիր, 1948–58-ին՝ ԵԳԹԻ ամբիոնի վարիչ, 1958–87-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ–ի ինստ–ի հիմնադիր–տնօրեն. ստեղծել է շեքսպիրագիտ. գրադարան (1964, 1994–ից՝ Զ–ի անվան), Շեքսպիրագիտ–յան կենտրոն (1966):

Լույս են տեսել Զ–ի «Աբովյանի կյանքը» (1954), «Թատերական դիմանկարներ» (գիրք 1, 1956), «Սիրանույշ» (1957), «Ադամյան: Արվեստը» (1960), «Ադամյան: Կյանքը» (1961), «Էջեր հայկական շեքսպիրապատումից» (հ. 1, 2, 1979, 1981), «Փափազյան [հոդվածներ, հուշեր]» (1988), «Էջեր հայ թատրոնի պատմությունից. 1860–1870» (1989), «Մայրամուտից առաջ» (հ. 1–3, 1988–2012), «Յոթ դիմանկար. հայ թատրոնի պատմությունից» (1992) աշխատությունները, «Հուշապատումը» (գիրք 1–3, 1975–81): Տպագրության է պատրաստել Գ. Սունդուկյանի երկերի ակադեմ. քառահատորի 1–3 հատորները (1951–61):

Գերմ. շեքսպիրյան ընկերության (1970), Հռոմի հաս. գիտ–ների և արվ–ների «Տիբերինա» ակադ–ի թղթ. (1981) անդամ, արվ–ի և ճարտ–յան ՀՀ Պետ. մրց–ների հանձնաժողովի նախագահ (1974–81):

ՀՀ Պետ. մրց. (1981), ԽՍՀՄ «Պատվո նշան» (1953), «Ժողովուրդների բարեկամություն» (1979) շքանշան, ՀԽՍՀ ԳԽ պատվոգիր (1969, 1989):


Գրկ. Ռուբեն Զարյան (ժող.), Ե., 1981: Ռուբեն Վարոսի Զարյան: Կենսամատենագիտություն (ներած. և խմբ.՝ Լ. Հախվերդյանի), Ե., 1993:



Կ. Զարյանի *«Նաւը լեռան վրայ» (1943, Բոստոն) գրքի կազմը*



Նաիրի Զարյան



Ն. Զարյանի *«Արա Գեղեցիկ» (1946, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Ռուբեն Զարյան



Պետրոս Զարոյան

ԶԱՐՈՅԱՆ Պետրոս Կարապետի (6.2.1903, Կ. Պոլիս–29.1.1986, Մարսել, թաղված է Փարիզում), գրող, մշակույթի գործիչ, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Խորենյան վարժարանում, ապա մեկնել է Ֆրանսիա. մինչև 1934-ը և 1965-ից ապրել է Մարսելում: Աշխատակցել է «Ապագայ», «Անահիտ», «Զուարթնոց», «Պայքար», «Մենք» պարբերներին: 1924-ին՝ «Նոր հաւատք» պարբերագրքի, 1938–39-ին՝ ***«Լուսաբաց»*** (երկուսն էլ՝ Զարեհ ***Որբունու*** հետ), 1935–37-ին՝ ***«Աշակոյթ»*** (Գեղամ ***Աթմաճյանի*** հետ) ամսաթերթերի խմբագիր-հրատարակիչ, 1954–55-ին՝ «Հայ միտք» պարբ-ի խմբագիր:

Լույս են տեսել Զ-ի «Մեռնողները» (1928), «Մենք ալ հայրենիք ունինք» (1927, 1965) պիեսները, «Ակսել Բակունց եւ իր «Սեւ ցելերի սերմնացանը»» (1935) գրականագիտ. ուսումնասիրությունը, «Սեւ ու ճերմակ» (1941, 1965) պատմվածքների ժող-ը:

ԶԱՔԱՐԻԱ Ա ԶԱԳԵՑԻ (ծ. թ. անհտ–876), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 855-ից: Գործուն մասնակցություն է ունեցել հայ-բյուզ. եկեղեց. հարաբերություններում, պաշտպանել Հայ եկեղեցու դավան. սկզբունքները, 862-ի Շիրակավանի ժողովում մերժել է Կ. Պոլսի պատրիարք Փոտի՝ քաղկեդոնականություն ընդունելու առաջարկը:

Զ. Ա Չ-ու անունով պահպանվել է հոետոր. բարձրարվ. 14 ճառ, որոնք ներառվել են Ճառընտիրների և Տոնապատճառների մեջ: Զ. Ա Չ-ու ճառերը կարևոր սկզբնաղբյուր են Հայ եկեղեցու աստվածաբանության, քրիստոսաբանության, աստվածաշնչյան պարականոնների, եկեղեց. ավանդության հետազոտման, ինչպես նաև հայոց լեզվի բառագանձի ուսումնասիրման համար:

1995-ին Վենետիկում տպագրվել է Զ. Ա Չ-ու «Ճառք» (աշխատասիր.՝ Պ. Անանյանի, Սբ Ղազարի տպ.) ժող-ը:

ԶԱՔԱՐԻԱ ԱՂԹԱՄԱՐՑԻ, **Զաքարե**, XIV դ-ի 2-րդ կեսի–XV դ-ի 1-ին տասնամյակի մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ, հայկ. մանրանկարչության «ժողովրդական ուղղության» նշանավոր դեմքերից: Գործել է Աղթամարի գրչության կենտրոնում: 1354–1403-ին ընդօրինակած և պատկերազարդած բազմաթիվ ձեռագրերում (14-ը՝ Մատենադարանում, ձեռ. № 5347, 5332, 6402 ևն) հատկապես ուշագրավ են դիմանկարները:



Զաքարիա Աղթամարցի. *«Հիսուսի քարոզը ծովի վրա», մանրանկար, 1377-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 6402)*

ԶԱՔԱՐԻԱ ԱՎԱՆՑԻ, **Զաքարիա Նկարող**, XVI դ-ի վերջի–XVII դ-ի սկզբի մանրանկարիչ, գրիչ, կազմարար: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** վերջին ներկայացուցիչներից: Աշակերտել է ***Հակոբ Ջուղայեցուն***, ստեղծագործել Վասպուրականի Ավանց գյուղում: Զ. Ա-ու պատկերներին բնորոշ են տեղ. ավանդույթների և նոր մոտիվների համադրումը (6 ձեռագիր, Մատենադարան, ձեռ. №2804, 5794 ևն): Հստակ ուրվագծերը և խիստ գունահարաբերումները նպաստել են ձեռագիր գրքի պատկերազարդման համակարգի հարստացմանը:



Զաքարիա Ավանցի. *«Ծննդաբանություն», մանրանկար, 1599–1600-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 5794)*

ԶԱՔԱՐԻԱ ԳՆՈՒՆԵՑԻ, Լմեցի, Խժժեցի [մոտ 1500, գ. Խժիժ (Վանի նահանգի Վանի գավառ)–մ.թ. անհտ], բանաստեղծ, մշակույթի գործիչ, մանրանկարիչ, գրիչ: Աշակերտել է ***Հովսեփ*** և ***Գրիգորիս Աղթամարցիներին***: Պահպանվել են Զ. Գ-ու ինքնագիր հիշատակարանները: Գրել է աշխարհիկ և հոգևոր տաղեր («Տաղ վարդին եւ բլբուլին ի Զաքարիա եպիսկոպոսէ Գնունեցւոյ», «Առաջին մարդոյն նմանիս» ևն): Զ. Գ. ընդօրինակել, խմբագրել, նկարազարդել և սեփական կաֆաներով հարստացրել է V դ-ում հուն-ից հայ. թարգմանված Կեղծ Կալիսթենեսի «Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի» երկը: Նրա կաֆաներն օգտագործվել են «Պղնձե քաղաքի պատմություն» երկի թարգմանության (X դ.) մեջ, իսկ գրական ժառանգության մի մասն ամփոփված է «Usn օրինակ» կոչվող ինքնագիր ձեռագրում (Մատենադարան, ձեռ. № 5472), որի ծաղկողն ինքն է: Նկարազարդել է նաև 1575-ի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 4831):

Գրկ. **Ակինեան Ն.,** *Զաքարիա եպիսկոպոս Գնունեան եւ իւր գրաղերը, Վնն., 1910:*

ԶԱՔԱԲԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻ, Զաքարիա Սարկավագ [1626, Քանաքեռ–1699, Հովհաննավանք (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան գ–ում)], պատմագիր: Սովորել է Հովհաննավանքում, ձեռնադրվել սարկավագ և ցկյանս եղել ուսուցիչ: 1687–ին Հովհաննավանքի առաջնորդ Սարգիս վրդ. Կարբեցու պատվերով գրել է «Կոնդակ սուրբ ուխտին Յովաննուվանից» աշխատությունը: 1651–ին (իր ընօրինակությամբ) կազմել է հայ պատմիչների երկերի ժող., ապա ընդօրինակել Ավետարան, վերակազմել և նորոգել բազմաթիվ ձեռագրեր. ձեռագրագիտ., հնագիտ. առումով արժեքավոր է 1687–ին նորոգված «Մարտիրոսոգ Շաոքնտիր»–ը (Մատենադարան, ձեռ. № 1522): Գրել է «Պատմագրութիւն» (1699, հրտ.՝ 1870, հ. 1–3, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ., ֆրանս.՝ 1876, ռուս.՝ 1969) աշխատությունը, որտեղ շարադրել է Արշակունիների թագավորության, Սասանյանների հարստության հաստատումից (226) մինչև 1699–ն ընկած ժամանակաշրջանի պատմությունը: Երկի հիմն. մասը XVII դ–ի պատմությունն է, որի մի շարք իրադարձություններ Զ. Ք. նկարագրել է որպես ականատես: Աշխատությունն արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի ու հարևան երկրների՝ XVII դ–ի պատմության, հաս., տնտ. իրավիճակի և ազգագրության վերաբերյալ: Հեղինակը երկին կցել է «Հովհաննավանքի պատմությունը» (որպես 2–րդ հատոր): Երկը տպագրվել է նաև 2013–ին Երևանում:

Զ. Ք–ու անունով փողոց է կոչվել Երևանի Քանաքեռ թաղամասում:

Գրկ. **Աբեյան Մ.**, *Երկեր, հ. 4, Ե., 1970, էջ 525–530:* **Բաբայան Լ.**, *Դրվագներ Հայաստանի XIV–XVIII դարերի պատմագրության, Ե., 1984, էջ 132–161:*



Զաքարիա Գնունեցի. *Խորան, 1575–ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 4831)*

ԶԱՔԱՐՅԱՆ Ալմաստ Գրիգորի [22. 1. 1924, գ. Փառակա (այժմ՝ Նախիջևանի Օրդուբադի շրջանում)–22.7.2013, Երևան], գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1976): Ավարտել է ՀՊՄԻ (1944): 1945–ից աշխատել է ՀՀ ԳԱԱ գրակ–յան ինստ–ում (1988–ից՝ առաջատար գիտաշխատող):

Լույս են տեսել Զ–ի «Սուրեն Սպանդարյանը և գրականության հարցերը» (1956), «Սովետահայ գրականության տարեգրություն: 1917–1956» (համահեղ., 1957), «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» (գիրք 1, 2, 1973, 1977), «Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը» (գիրք 1–3, Ե., 1997–2008) ևն: Տպագրության է պատրաստել Ե. Չարենցի «Երկերի» (1–6, 1962–68, ընագրային տարբերություններով և ծնթգր–ով) գիտ. հրատ–ը, «Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ. 1820–1920» (համահեղ.՝ Գ. Հովհաննիսյան, 1982) աշխատությունը:

Երկ. Ավանդների ոժը (գրականագիտ. հոդվածներ), Ե., 1981: Գրական արձագանքներ և հուշեր, Ե., 1985: Գրականության և պատմության ընթացքները, Ե.,1989:




Զաքարիա Քանաքեռցու *«Պատմագրութիւն» (հ. 1, 1870, Վաղ–պատ) գրքի տիտղոսաթերթը*

ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան Հազարապետի [ծ. 1.1.1954, գ. Փառակա (այժմ՝ Նախիջևանի Օրդուբադի շրջանում)], գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ–ր (2005): Ավարտել է ՀՊՄԻ (1975): 1977–80–ին եղել է ՀՀ ԳԱ հրատարակչության խմբագիր, 1980–93–ին՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»*** ամսագրի, 1989–90–ին, միաժամանակ՝ «Գոյամարտ» շաբաթաթերթի, 1999–2003–ին՝ ***«Պատմաբանասիրական հանդեսի»*** պատ. խմբագիր, 2003–ից՝ գլխ. խմբագրի տեղակալ, 2000–ից, միաժամանակ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի հրատարակչ. բաժնի ղեկավար:

Լույս են տեսել Զ–ի «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920)» (1984), «Ռուս գրագետները և հայ իրականությունը (XX դ. 10–ական թթ.)» (ռուս., 1994), «Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը» (ռուս., 2003), «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գործիչների գնահատությամբ» (ռուս., 2003), «Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին» (2004), «Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914–1919 թթ.)» (2006), «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում» (2010) աշխատությունները, կազմել և հրատարակել է «Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին» (2005) փաստաթղթերի և նյութերի ժող–ը ևն:



Ալմաստ Զաքարյանի *«Եղիշե Չարենց...» (գիրք 3, 2008, Ե., «Գիտություն») գրքի կազմը*



Լևոն Զաքարյան



«Զեկույցներ ՀՀ ԳԱԱ», *1944-ից, Երևան (№ 1944)*



Պերճ Զեյթունցյան



Պ. Զեյթունցյանի *«Արշակ Երկրորդ» (1977, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

ԶԱՔԱՐՅԱՆ Լևոն Հովհաննեսի (11.1.1920, ք. Դիլիջան–7.11.2003, Երևան), լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1942): 1930-ական թթ-ին թղթակցել է «Պիոներ կանչ» թերթին: 1951-ից աշխատել է «Ավանգարդ», 1955-ից՝ «Սովետական Հայաստան», 1968-ից՝ ***«Հայրենիքի ձայն»*** (1972–94-ին՝ գլխ. խմբագիր) պարբ-ների խմբագրություններում, 1994-ից՝ Լեզվի պետ. տեսչությունում:

Լույս է տեսել Զ-ի «Հոդվածներ, հուշեր» (2006) ժող-ը:

Հանդես է եկել նաև Էմիլ Սարանյան կեղծանվամբ:

«ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ՀՀ ԳԱԱ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1944-ից Երևանում՝ հայ., ռուս. և անգլ.: Պատ. խմբագիրներ՝ Վիկտոր ***Համբարձումյան***, Մխիթար ***Քրքաշյան***, Արմենակ Նազարով, Դավիթ Սեդրակյան, Սերգեյ ***Համբարձումյան***, Վանիկ Զաքարյան (2005-ից): Տպագրում է ԳԱԱ ակադեմիկոսների՝ գիտ-յան բոլոր բնագավառներին վերաբերող հոդվածներ, ԳԱԱ ինստ-ների ԳՀ աշխատանքների արդյունքները:

ԶԵՅԹՈՒՆԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XVI–XVIII դդ-ում, հիմնականում՝ Սբ Սարգիս և Սբ Աստվածածին եկեղեցիներին կից գրչատներում: Մեզ հայտնի առաջին ձեռագիր մատյանը՝ Մաշտոցը (1534, գրիչ՝ Գաբրիել դպիր), և XVI դ-ում ընդօրինակված 3 մատյան՝ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (1596), Վահան Սարկավագի Սաղմոսարանը (1582) և մեկ Քարոզգիրք (1592), պահվում են Մատենադարանում (ձեռ. № 956, 2504, 5956, 9289): Վահան Սարկավագն ընդօրինակել է նաև Շարականոցներ (1616–25), Աստվածաշունչ (1634), Գրիգոր Վարդապետը՝ Մաշտոց (1655): XVII դ-ում Հովհաննես, Խաչատուր, Եփրեմ, Ստեփանոս գրիչների ընդօրինակած ձեռագրերի մի մասը Մատենադարանում է (ձեռ. № 695, 1230, 1252, 2133, 2163, 2475, 3554, 6039, 10374): Հայտնի են XVIII դ-ի Դավիթ և Սահակ գրիչ-ծաղկողները, որոնց ընդօրինակած մատյաններից 4-ը Մատենադարանում են (ձեռ. № 1030, 2161, 9272, 10227): Զ. գ. կ-ում պահվել են արժեքավոր մատյաններ (1256-ին Հռոմկլայի գրչատանը Թորոս Ռոսլինի ծաղկած ***«Զէյթունի Աւետարան»***-ը ևն):

Գրկ. ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան), հ. 1, 2, Ե., 1974, 1978:

ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ Պերճ Արմենակի (ծ. 18.7.1938, Ալեքսանդրիա), գրող, խմբագիր, հրապարակախոս: Մշակույթի վաստ. գործիչ (1989): Ավարտել է Պյատիգորսկի (ՌԴ) օտար լեզուների մանկավարժ. ինստ-ը (1963), Մոսկվայի երկամյա բարձրագույն սցենար. դասընթացները (1964): 1968–75-ին՝ հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիայի գլխ. խմբագիր, 1975–86-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1986–90-ին՝ ***«Պիոներ»*** ամսագրի խմբագիր, 1991–92-ին՝ ՀՀ մշակույթի նախարար:

Լույս են տեսել Զ-ի «Նրա առաջին ընկերը» (1956), «Փարիզի համար» (1965), «Կատակերգություն առանց մասնակիցների» (1975), «Ամենատխուր մարդը» (1981), «Իրիկնային հեքիաթներ» (1983) պատմվածքների, «Մեծ լռության» (1985) պիեսների ժող-ները, «Կլոդ Ռոբերտ Իզերլի» (1968), «Գողացված ձյունը» (1995) վեպերը, «Արշակ Երկրորդ» (1977, 1981), «Խոր վիրապ» (2001) պատմավեպերը, «Ապրենք տասը պատվիրաններով» (2009) հոդվածների և հրապարակախոսությունների ժող-ը: Զ-ի «Վերջին արևագալը» (1989) վեպը նվիրված է Գրիգոր Զոհրապին: Զ-ի պիեսներից շատերը բեմադրվել են: Թարգմանել է Է. Հեմինգուեյի, Գ. Գրեհեմի և ուր. ստեղծագործություններից:

Հռոմի հաս. գիտ-ների և արվ-ների «Տիբերինա» ակադ-ի թղթ. անդամ (1987), Երևանի պատվ. քաղաքացի (2005):

ՀՀ Պետ. (1981), ՀՀ «Ոսկե եղեգն» գրական պետ. (1999), ԹՄՄ «Հայկազեն Ուզունյան» (2004) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998), Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2007):

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1987: Յոդերը դեռ այնտեղ են (հրապարակախոսություն), Ե., 1990: Ծնվել է ու մահացել, Ե., 1995:

Գրկ. **Սարհատյան Ա.,** *Շարահյուսական կապակցման միջոցները և նրանց ոճական արժեքը Պ. Զեյթունցյանի արձակում, Ե., 2008: Պերճ Զեյթունցյան: Կենսամատենագիտություն, Ե., 2010:*

ՋԵՅԹՈՒՆՑՅԱՆ Վահան [1882, ք. Կյուրին (Սվազի նահանգ)–1959, Բուենոս Այրես], խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Խարբերդի «Եփրատ» քոլեջում: 1911–14-ին եղել է Կ. Պոլսի Հնչակյան ուսանող. միության «Կայծ» ամսաթերթի տնօրեններից, 1909–14 և 1919-ին՝ *«Հայ աշխարհ»* շաբաթաթերթի արտոնատեր-տնօրեն, 1919–22-ին՝ *«Երկիր»* օրաթերթի խմբագիր: 1925-ին մեկնել է Աթենք. 1926–28-ին՝ «Հաղթանակ» պարբ-ի հրատարակիչ: 1930-ին տեղափոխվել է Փարիզ, որտեղ 1947–49-ին խմբագրել և հրատարակել է *«Նոր աշխարհ»* գրական, քաղ. շաբաթաթերթը: 1958–59-ին Բուենոս Այրեսի *«Շարժում»* շաբաթաթերթի խմբագիր:

ՋԵՆՈԲ ԳԼԱԿ, Ջենոր Գլակ Ասորի, IV դ-ի պատմագիր: Կապադովկիայի Կեսարիա քաղաքից Հայաստան է եկել *Գրիգոր Ա Լուսավորչի* հետ: Ձեռնադրվել է Տարոնի եպիսկոպոս և Իննակնյան կամ Սբ Կարապետ վանքի (հետագայում նրա անունով կոչվել է նաև Գլակա) վանահայր: Գրիգոր Ա Լուսավորչի հանձնարարությամբ գրել է «Պատմութիւն Տարօնոյ» երկը՝ ասոր. կամ հուն., որը հայ. թարգմանել և իր երկին է կցել VII դ-ի պատմագիր *Հովհան Մամիկոնյանը*: Այդ պատճառով որոշ ուսումնասիրողներ Ջ. Գ-ին համարել են VII դ-ի պատմիչ:

Ջ. Գ-ի երկն առաջին անգամ տպագրվել է 1719-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տպակից է Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությանը: Տիտղթ-ին՝ «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Ջենոր» (268 էջ, 8º, 11,7 x 6,7 սմ): Տպագրվել է նաև 1832, 1889-ին Վենետիկում, 1941-ին՝ Երևանում: 1867-ին ֆրանս. թարգմանել և հրատարակել է Վ. Լանգլուան:

Գրկ. **Խալաթեան Գ.,** *Ջենոր Գլակ: Համեմատական ուսումնասիրութիւն, Վնն., 1893:* **Յովհաննիսեան Մ.,** *Ջենոր Գլակ: Հանդէպ որդիական քննադատութեան, ԿՊ, 1912:*

«ՋԵՐԿԱԼՈ» («Зеркало»–«Հայելի»), անկախ շաբաթաթերթ: Լույս է տեսել Երևանում 1990–94-ին՝ ռուս.: Խմբագիր՝ Բորիս *Նավասարդյան:* Ներկայացրել է արտերկրի մամուլի հրապարակումները՝ ՀՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների և Արցախյան հիմնախնդրի շուրջ, տպագրել է վերլուծական հոդվածներ, անդրադարձել է միջազգ. անցուդարձին:

«ՋԵՓԻՒՌ ՀԱՅՐԵՆԵԱՑ», բանասիր., գիտահանրամատչելի կիսամսյա (սկզբում՝ ութօրյա և տասնօրյա) հանդես: Լույս է տեսել 1862–67-ին Կ. Պոլսում (նաև «Ձեփիւռ» վերտառությամբ)՝ ընդհատումներով: Խմբագիրներ՝ Մինաս *Գաբամաճյան*, Սարտիրոս Թեստիճյան: Տպագրել է գիտ., բարոյախոս., առողջապահ., ուս-կրթ. հոդվածներ, գրական ստեղծագործություններ: Որպես հավելված՝ հրատարակել է Ն. Մեզպուրյանի «Երկրագործական քիմիաբանութիւն եւ երկրաբանութիւն» գրքույկը և Վ. Հյուգոյի «Դատապարտեալի մը վերջին օրը» ստեղծագործությունը:

ՋԵՔԻՅԱՆ Պողոս-Լևոն Անտոնի (ծ. 21.10.1943, Կ. Պոլիս), հայագետ, աստվածաբան, խմբագիր: Փիլ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1976): ՀՀ ԳԱԱ արտասահմ. (1994), Վենետիկի ակադ-ի (2005, թղթ. անդամ՝ 1992-ից) անդամ: Մխիթարյան միաբանության անդամ (1959–87), արքեպիսկոպոս (2014-ից): Սովորել է Կ. Պոլսի վարժարաններում, Վենետիկի Մխիթարյան միաբանության դպրեվանքում: Ավարտել է Հռոմի Գրիգորյան համալսարանի փիլ-յան (1962) և աստվածաբանության (1966) բաժինները: 1968–74-ին դասավանդել է Կ. Պոլսի Մխիթարյան և Կեդրոն., 1974–85-ին՝ Վենետիկի Մուրատ-Ռափայելյան (1982–85-ին՝ տնօրեն) վարժարաններում: 1981-ից՝ Վենետիկի համալսարանի հայոց լեզվի և գրակ-յան, 1988-ից՝ Հռոմի արլ. ուսումնասիրությունների ինստ-ի ամբիոնների վարիչ: 1974–82-ին՝ *«Հայ ընտանիք»*, 1980–85-ին՝ *«Բազմավէպ»* պարբ-ների խմբագիր:



Ջենոր Գլակի *«Պատմութիւն Տարօնոյ» (1719, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) գրքի փիփղոսաթերթը*



«Ջերկալո», *1990–94, Երևան*



Պողոս-Լևոն Ջեքիյան



«Զէյթունի Աւետարան». *Մարկոսի Ավետարանի ավետարանաւաջը (1256, գրիչ և ծաղկող՝ Թորոս Ռոսլին, Մատենադարան, ձեռ. № 10450)*

Զմմառի վանքի մատենադարան



Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի»-ի ձեռագրի (1240) 1 էջ



«Գիրք թղթոց»-ի ձեռագրի (1298) պատկերազարդ էջ



Վանքի դիվանի պահոցը (ընդհանուր քանակը՝ 165 հատոր)

1976–2011-ին՝ Վենետիկի համալսարանի հայոց լեզվի և մշակույթի խտացված դասընթացների հիմնադիր-ղեկավար: 2014-ից՝ Կ. Պոլսի հայ կաթոլիկ. թեմի առաջնորդ:

Լույս են տեսել Զ-ի «Հայ թատրոնի սկզբնաքայլերը եւ հայ վերածնունդի շարժումը» (1975), «Համամիութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարուն: Բանակցութիւններ Ս. Ներսէս Շնորհալիի եւ կայսերական նուիրակ Թէորիա-նոսի միջև...» (1978), «Իտալիայի հայ գաղութները» (իտալ., 1978), «Բաց մեզ, Տէր կամ Երթուղիի մը հանգրուաններ» (1987) «Հումանիզմ. գաղափարային բովանդակութիւնը եւ հայերը» (1990), «Եղիշէի երկը որպէս վաղ հայկական եկեղեցու եկեղեցաբանութեան վկայութիւն» (1990), «Հայերը Իտալիայի մեջ» (իտալ., 1990), «Հոգիի եւ ինքնութեան հետքերով» (2000), «Հայապատում... Ներտողային» (2001) երկերը:

Գրկ. **Գասպարեան Ս.,** *Ինքնութեան խաճանկար: Հայր Լեւոն Զէքիեան, Բ., 2001:*

«ԶԷՅԹՈՒՆԻ ԱՒԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան: Գրել ու նկարազարդել է *Թորոս Ռոսլինը* 1256-ին Հռոմկլայում՝ կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու պատվերով: «Զ. Ա.» պահվել է Զեյթունում (այստեղից էլ՝ անվանումը), այժմ Մատենադարանում է (ձեռ. № 10450, 4109 թերթ, չափերը՝ 26,5 x 19,5 սմ, կազմ.՝ Վարդան): Մատյանի հիշատակարաններում նշված են նկարչի եղբոր՝ Անտոնի, պատվիրատուի հարազատների անունները, հիշատակված են Հեթում Ա արքայի ճամփորդությունը Կարակորում, կաթողիկոսի հանդիպումները Հուլավու խանի ու Մելիք Քեմլ և Մելիք Աշրաֆ սուլթանների հետ: «Զ. Ա.» ունի 4 զույգ խորան, 4 ավետարանիչների պատկերներ, 4 անվանաթերթ, լուսանցազարդեր և զարդագրեր: Պատկերագրությամբ բացառիկ է Հովհաննես ավետարանիչի դիմապատկերը:

«Զ. Ա.»-ի մի քանի թերթ պահվում է Լոս Անջելեսի Գեթիի թանգարանում (ձեռ. № 59):

Գրկ. **Տէր-Ներսէսեան Ս.,** *Թորոս Ռոսլինը եւ Զէյթունի Աւետարանը, «Շողակաթ», 1952, էջ 139–141:* **Չուգասզյան Լ.,** *Թորոս Ռոսլինի արվեստը, «ԲԵՀ», 1987, № 3:*

ԶՄՄԱՌԻ ՎԱՆՔԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, հայ. ձեռագրերի և հնատիպ գրքերի ամենահարուստ պահոցներից է: Գործում է 1749-ին հիմնադրված Զմմառի վանքում (Բեյրութից 30 կմ հս-արլ.): Հավաքածուն ընդգրկում է ավելի քան 2000 ձեռագիր. 1300-ը՝ հայ., մեծ մասը՝ մանրանկարներով, հարուստ է Շարակնոցներով, Տաղարաններով և Բժշկարաններով: Այստեղ են պահվում Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» հնագույն ձեռագիրը (1240), «Գիրք թղթոցի» միակ օրինակը (1298), Սարգիս Պիծակի ծաղկած շքեղ Ավետարաններից մեկը, 1330-ից առաջ գրված Բժշկարան, Շարակնոց (XIV դ.), Քարոզգիրք (1344), «Գիրք ձեռնադրութեան» (455), Մաշտոց (մինչև 1337-ը), Դանիել Ասորու «Մեկնութիւն սաղմոսաց»-ը (1289), Երգարան կամ Գիրք կցուրդից (XIV–XV դդ.), Փիլոն Երրայեցու «Ճառքը» (XIII–XIV դդ.), Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց»-ը (1117), Ժողովածու (1267), Շաշոց (1446), Ամիրդովլաթ Ամասիացու «Բժշկարանը» (1478), Եփրեմ Խուրի Ասորու «Մեկնութիւն Հնգամատեանին» (1603), Ներսես Շնորհալու «Նամականին» (XVII դ.) ևն:

Զ. վ. մ-ում կան շուրջ 340 հնատիպ գրքեր, այդ թվում՝ Հակոբ Մեղապարտի տպագրած Ուրբաթագրքի հազվագյուտ օրինակը: Հրատարակվել է Զ. վ. մ-ի 782 նկարագրված ձեռագրերի ցուցակը: 2012-ից Երևանի մատենադարանի աջակցությամբ հրատ-յան են պատրաստվում հավաքածուի մնացած ձեռագրերի մատենագիտությունը:

Վանքում գործում են նաև Մերձ. Արևելքի հայկ. ամենախոշոր գրադարանը՝ 60 հզ. անուն գրակ-յամբ և պարբ. մամուլով (տարեցտարի համալրվում է), հարուստ թանգարան՝ հնագիտ. և դրամագիտ. բաժիններով, տպարան (1914-ից, տպագրում է կրոն., հայագիտ. և այլ գրակ., 1980-ից՝ *«Զուարթնոց»* կրոն. հանդեսը):

Գրկ. **Թերզեան Մ.,** *Զմմառեան կաթողիկոսական միաբանութիւնը, Զմմառ, 1983:* **Կոռնեան Ա.,** *Զմմառ դարերու ընթացքին, Բ., ա. թ.:*

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, առաջին տպարանը 1759-ին հիմնադրել է Մահտեսի Մարկոսը: Հրատարակել է «Գիրք մեկնութեան»-ը (1759), Խորհրդատետր (1761) և Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» («Գիրք ընդդիմութեանց», 1762) երկը:

XIX դ-ում Զմյուռնիան դարձել է Թուրքիայում հայ գրքի երկրորդ կենտրոնը՝ Կ. Պոլսից հետո: Դարի 1-ին կեսին այստեղ հայ. գրքեր է հրատարակել Ամերիկյան մարդասիր. ընկերությունը. գրահրատարակիչներ Հոման Հալլոկը, ապա Գուլիելմոս Գրիֆիտը 1830–50-ական թթ-ին լույս են ընծայել շուրջ 150 անուն հայ. գրքեր [«Մասն Նոր Կտակարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (1837), «Առաջնորդ ծնողաց», Ավետարան, «Բանալի ընթերցանութեան», «Զբօսարան մանկանց», «Հեգարան նոր կարգով...», «Վարք նահապետաց եւ մարգարէից...» (բոլորը՝ 1838), Ապաշխարացոյց (1839), «Սաղմոս, որ կըպարունակէ Դաւթի սաղմոսները...» (1841), «Յովսէփին պատմութիւնը...» (1842), «Գիրք Սաղմոսաց» (արևելահայ., 1843), «Հոգեշահ մտածութիւնք աշխարհականաց ու եկեղեցականաց համար» (1844), «Հոգեւոր երգեր» (1850), «Հաւաքումն վկայութեանց Սուրբ Գրոց» (1852), 1847–50-ին՝ Աստվածաշունչ (արևմտահայ.) և հայատառ թուրք. բազմաթիվ կրոն. գրքեր]:


1840-ական թթ-ին գործել է Ստեփանոս Պապոյանի տպարանը, որտեղ, գրքերից բացի, 1840-ից հրատարակվել է ***«Արշալոյս Արարատեան»*** պարբ-ը (1844-ից՝ «Արշալոյս Արարատեանի» տպ.): 1840–1900-ին գրահրատարակչ. գործունեությամբ հայտնի էին Մեսրոպյան վարժարանի [տպագրել է «Տրամաբանութիւն հասարակ» (թարգմ., 1842), «Կորիւն վարդապետի Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրովպայ» (1843), Ռ. Շատոբրիանի «Ադալա կամ Երկու վայրենիներուն սէրը» (1843), «Ռենադոս» (1844, երկուսն էլ՝ թարգմ.՝ Սավալանյանցի, ևն], Արագածունյաց (Հ. Չամուռճյանի «Յայտարար ուղղութեան...», 1845, ևն), ***Տեփեյանների***, «Արեւելեան մամուլ»-ի [տնօրեն՝ Գրիգոր Մսերյան, տպագրել է հիմնականում թարգման. գրակ., այդ թվում՝ Բոկաչչոյի «Տասնօրեակը» (հ. 1–2, 1878) ևն], Մատթեոս Մամուրյանի [Գ. Չիլինկիրյանի «Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս» (1883), Մ. Մամուրյանի «Բանալի հայերէն շարադրութեան» (1884) և «Գիտելիք ու պարտիք տղայոց» (1885), Տ. Պալյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիօն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի Մաղնիսա....» (1897), թարգման. գրակ. ևն], Բ. Քեշիշյանի [Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ: Թատերգութիւն Կէօթէի» (1909), Շահան Նաթալիի «Մարդը» (1912), Ա. Չեխովի «Դեւը» (1912) պիեսները, Մ. Սեմերճյանի «Ուղեւորական նօթեր» (1912), Տ. Պալյանի «Հայ վանօրայք ի Թուրքիա» (մաս Ա, 1914), Ս. Պարթևյանի «Արարա: Հայկական լէգէոնը» (1919) ևն] տպարան-հրատարակչությունները:

Մինչև 1922-ը Զմյուռնիայի շուրջ 20 հայկ. տպարաններում լույս են տեսել 50 հայ. պարբ-ներ՝ ***«Շրեմարան պիտանի գիտելեաց», «Արփի Արարատեան», «Ծաղիկ», «Արեւելեան մամուլ», «Միմոս»***, «Դաշինք», «Աշխատանք», «Հորիզոն» (1919–22), «Զմիւռնահայ տարեցոյց» (1920), «Մամուլ» (1920–21) ևն:


ԶՈՀՐԱԲՅԱՆ Էդուարդ Նիկոլայի [10.11.1937, գ. Բարձրավան (ՀՀ Սյունիքի մարզ)–23.7.2009, Գորիս], արձակագիր, լրագրող, թարգմանիչ, խմբագիր: Սովորել է ԵՊՄՀ-ում (1970–74), ավարտել է Մոսկվայի հաս. գիտ-ների ակադ-ը (1978): 1990–93-ին՝ ***«Սյունիք»*** թերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Զ-ի «Յոյյաններ» (1988), «Օրբելյաններ» (2000), «Խնձորեսկ» (2003), «Պատմություններ Անդրանիկի մասին» (2004), «Իմ Վանիկ Սանթրյանը» (2005) աշխատությունները, «Որոտանի որդիները» (1974), «Բողբոջները չբացվեցին» (1978), «Ամենքը մի աշխարհ ունեն» (1985), «Հավերժություն» (1990), «Ավանդապատում» (2002), «Հին ջրաղացի նովելը» (2003) ակնարկների, զրույցների, լեգենդների, հեքիաթների ժող-ները: Հավաքել,


Զմյուռնիայի հայկական տպագրություն



«Գիրք մեկնութեան»-ի (1759, Մահտեսի Մարկոսի տպ.) փիփղոսաթերթը




«Տրամաբանութիւն հասարակ»-ի (1842, Մեսրոպյան վարժ. տպ.) փիփղոսաթերթը



«Հաւաքումն վկայութեանց Սուրբ Գրոց» (1852, Գուլիելմոս Գրիֆիտի տպ.) գրքի փիփղոսաթերթը

մշակել, կազմել և առաջաբանով հրատարակել է «Գորիսի ժողովրդական բանահյուսություն» ժող–ը: Կազմել է «Գորիսի հանրագիտարանը» (համահեղ., 2005): Թարգմանել է Գ. Կարապետյանի, Ա. Տիշկովի գործերից:

Գրկ. Էդուարդ Զոհրաբյան–75 (կազմ.՝ Վ. Սանթրյան), Ե., 2012:



«Էդուարդ Զոհրաբյան–75» *(2012, Ե., «ՎՄՎ Պրինտ», կազմող՝ Վ. Սանթրյան) գրքի շապիկը*

ԶՈՀՐԱՊ Գրիգոր Խաչիկի (26.6.1861, Կ. Պոլիս–1915, Մեծ եղեռնի զոհ, սպանվել է աքսորի՝ Ուրֆա–Դիարբեքիր ճանապարհին), գրող, խմբագիր, հրապարակախոս, փաստաբան–իրավագետ: Սովորել է Կ. Պոլսի Մաքրուհյան և Թարգմանչաց վարժարաններում, ավարտել է Կ. Պոլսի ֆրանս. 2 բարձրագույն ուս. հաստատություններ՝ ստանալով երկրաչափի (1879) և փաստաբանի ու իրավաբանի (1882) մասնագիտություններ: Եղել է «Ասիական ընկերություն» մշակութ. կազմակերպության (1871–1900) ատենապետներից, մասնակցել է Հայոց կրթամշակութ. միացյալ ընկերության աշխատանքներին, աջակցել է «Երկրագունտ» (1883–88) հանդեսի հրատարակմանը: 1892–93–ին Հրանդ ***Ասատուրի*** հետ խմբագրել և հրատարակել է ***«Մասիս»*** գրական հանդեսը, 1898–ին նույնանուն թերթը՝ Հ. Ասատուրի և ***Միսիկի*** հետ: Աշխատակցել է «Հայրենիք», «Արևելք», «Ազատամարտ» պարբ–ներին: 1895–96–ի հայկ. կոտորածների օրերին, որպես փաստաբան, հանդես է եկել հայ քաղ. բանտարկյալների, դրանից առաջ՝ զեյթունցիների պաշտպանությամբ:

Երիտթուրք. հեղաշրջումից հետո՝ 1908–ին ընտրվել է օսմ. խորհրդարանի անդամ և Ազգ. ժողովի երեսփոխան, 1911–ին հուշագիր է ուղարկել Թուրքիայի վարչապետին, դատապարտել 1909–ի Ադանայի կոտորածը, 1914–ին օսմ. խորհրդարանում արծարծել է հայկ. բարենորոգումների հարցը:

Զ. հրատարակել է իրավագիտ. 2 աշխատություն՝ 1908–ին (ֆրանս., Փ.) և 1909–ին (թուրք., ԿՊ): 1913–ին Փարիզում Սարսել Լևար ծածկանունով լույս է տեսել նրա «Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ» (ֆրանս., հայ. հրտ.՝ 1983, Բ., 2013, Ե.) աշխատությունը: 1915–ի Մեծ եղեռնի օրերին դատապատել է երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը:



Գրիգոր Զոհրապ

Զ–ի ստեղծագործության մեջ առավել արժեքավոր են նորավեպերը (նովելները): Նա այդ ժանրը հասցրել է եվրոպ. չափանիշների: Լույս են տեսել Զ–ի «Անհետացած սերունդ մը» (1887, ԿՊ, «Արևելքի» և «Մասիսի» տպ., 1924, ԿՊ, Արամյանի տպ., 1957, Բ.) վեպը, «Խղճմտանքի ձայներ» (1909, ԿՊ, Ռոզոս Սազայանի տպ., 1958, Բ., Կ. Տոնիկյանի տպ.), «Կեանքը ինչպէս որ է» (1911, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., 1975, Բ., 1994, Ստամբուլ), «Լուռ ցաւեր» (1911 ԿՊ, Օ. Արզումանի տպ., 1947, Հալեպ, 1971, 1982, Բ.) նորավեպերի ժող–ները, «Երկերի ժողովածուն» (հ. 1–2, 1962, հ. Ա–Զ, 2001–04), «Երկերը» (1989), «Նորավէպեր: Ընտրանին» (2011): Զ–ի հրապարակախոս. ակնարկները («Չինական նամականի», 1884, «Ուղևորութիւն մը յիշատակներուս մէջ», 1898–1903), քննադատ. հոդվածները («Անբարոյական գրականութիւն», 1892, «Նոր լրագրութիւն», 1892, «Բարոյական կռիւ», 1893), գրական դիմանկարների շարքը («Ծանօթ դէմքեր», 1891–1909) տպագրվել են ժամանակի մամուլում:


Գրկ. **Ալպոյաճեան Ա.,** *Գրիգոր Զօհրապ: Իր կեանքը եւ իր գործը, ԿՊ, 1919:* **Ասատուր Հ.,** *Դիմապտուկներ, ԿՊ, 1921:* **Չօպանեան Ա.,** *Յուշեր, «Անահիտ», 1930, № 3:* **Հյուսյան Մ.,** *Գրիգոր Զոհրապ, Ե., 1957:* **Նույնի,** *Գրիգոր Զոհրապի արվեստը, Ե., 1964:* **Շահպազ Ս.,** *Գրիգոր Զօհրապ, Բ., 1959:* **Օշական Հ.,** *Համապատկեր արևմտահայ գրականութեան, Երուսաղեմ, 1952:* **Շարուրյան Ա.,** *Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Էջմիածին, 1996:* **Ալեքսանյան Ա.,** *Գրիգոր Զոհրապի կենսափիլիսոփայությունը, Ե., 1997:* **Ավագյան Ռ.,** *Գրիգոր Զոհրապի և Գրիգոր Զոհրապյանի իրավական միտքը, Ե., 2003:* **Գևորգյան Մ.,** *Գրիգոր Զոհրապը հրապարակագիր և գեղագետ, Ե., 2010:*



Գ. Զոհրապի *«Երկեր»–ի (հ. Ա, 2001, Ե., ԳԱԹ հրտ.) կրկնաշապիկը*

ԶՈՀՐԱՊՅԱՆ Հովհաննես (1756, Կ. Պոլիս–1829, Փարիզ), բանասեր, վարդապետ: Փարիզի Ասիական ընկերության իսկական անդամ: Ավարտել է Վենետիկի Մխիթարյանների հոգևոր ուսումնարանը (1779): Ճանապարհորդել է հայկ. գաղթավայրերում (1791–ին՝ Ուկրաինայում և Լեհաստանում, 1792–ին՝ Մերձ. Արևելքում), հավաքել արժեքավոր ձեռագրեր ու փաստաթղթեր: Պատրաստել է Աստվածաշնչի քնն. հրատ–ը («Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր

կտակարանաց», հ. 1–4, 1805, Վնտ., Սբ Ղազարի տպ.): Խմբագրել և հրատ–յան է պատրաստել Մովսես Խորենացու «Գիրք պիտոյիցը» (1796, նույն տպ.), Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութիւնը» (լատ., 1818, Ա. Մայի հետ), Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսեայ» (1827, Փ., Դոնդեի Դյուպրեի տպ.) պոեմը: Համառոտ շարադրել է «Պատմութիւն Աստուածաշունչ գրոց: Հին եւ Նոր կտակարանաց...» (1803, 1805, 1841, 1854, 1859, 1873, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) երկը: Կազմել է «Գաղափար հայկական Մեսրովպեան գրոց, որ այժմ անուանի գլխագիր» (1816, նույն տպ.) վայելչագրության ալբոմը: 1817–ին տեղափոխվել է Ֆրանսիա, աշխատակցել արևելագիտ. հրատ–ների:




Նիկողայոս Զորայան

ԶՈՐԱՅԱՆ Նիկողայոս Մկրտչի (1821, Կ. Պոլիս–30.11.1859, Կ. Պոլիս), մանկավարժ, տնտեսագետ, թարգմանիչ: 1834–ից ուսումը թողել և զբաղվել է ինքնակրթությամբ: 1843–48–ին, որպես թարգմանիչ և գրագիր աշխատել է Կ. Պոլսում, Մանչեստրում, Փարիզում: Թղթակցել է «Բազմավէպ», «Մասիս», «Հայաստան», «Մասեաց աղաւնի» պարբ–ներին:

Լույս են տեսել Զ–ի «Քաղաքական տնտեսութեան վրայ տեղեկութիւններ» (1849) աշխատությունը, «Նկարագիր ազգային դաստիարակութեան...» (1849), «Վարժութիւն ընթերցանութեան ի պէտս դպրոցաց» (1851), «Ընթերցասիրութիւն...» (1852) դասագրքերը: Ֆրանս–ից թարգմանել է «Յիսուսի վարուց համառօտ պատմութիւնը» (1849): Զ–ի բոլոր գործերը տպագրվել են Կ. Պոլսում՝ Հովհաննես Մյուհենտիսյանի տպարանում:

Գրկ. **Ոսկանյան Շ.,** *Նիկողայոս Զորայանի մանկավարժական հայացքները, Ե., 1988:*

ԶՈՐԱՆԱՄԱԿ, Հին Հայաստանի ռազմ. ուժերի քանակի և դասակարգման մասին պետ. վավերագիր հրովարտակ: Կիրարկվել է Հայաստանում մինչև հայ Արշակունի արքայատան անկումը (IV դ–ի վերջ–V դ–ի սկիզբ): Կազմվել է քառաբաժին բոլորակ աղյուսակի ձևով՝ ըստ Մեծ Հայքի 4 կուսակալ զորավարությունների (Հյուսիսային, Հարավային, Արևելյան և Արևմտյան դռներ): Յուրաքանչյուր բաժնում դասվել է 21 կամ 22 նախարարություն՝ յուրաքանչյուրի զորաքանակի նշումով:



Զորանամակ
Արշակունյաց

Ըստ մեզ հասած Զ–ի՝ Արշակունիների օրոք Հայաստանն ունեցել է 124–հզ–անոց զորք՝ 84 հզ. նախարար. կամ սեպուհ., 40 հզ. արքունի (ոստանիկ) և մարդպետ. զնդերի զինվորներ: Արտաքին վտանգի ժամանակ նախարարներն իրենց զինվոր. ուժերը գումարել են Զ–ով սահմանված զորաթևերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հայոց արքայի կամ սպարապետի հրամանով օգնել այս կամ այն զորաթևին:

Զ–ի միակ ձեռագիր օրինակը, որը կցված է եղել Անանիա Շիրակացու Ժամանակագրությանը, մեզ է հասել Տիրամայր անունով մի հայուհու ընդօրինակությամբ: Այն առաջին անգամ հրատարակել է Հովհաննես Շահխաթունյանցն իր «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատայ» գրքի Բ հատորում (Էջմիածին, 1842, էջ 58): Զ–ի անավարտ մի ձեռագիր պահվում է Մատենադարանում:

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Այրարատ, Վնտ., 1890:* **Ադոնց Ն.,** *Հայաստանը Հռոփինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:*



Բարթող–Ժիրայր Զորյան

ԶՈՐՅԱՆ Բարթող–Ժիրայր [1.1.1879, գ–ք. Թամզարա (Սեբաստիայի նահանգ)–1915, Մեծ եղեռնի զոհ], խմբագիր–հրատարակիչ: Սովորել է ծննդավայրում, ապա՝ Երզնկայում: 1887–ին մեկնել է Ֆիլիպե (այժմ՝ Պլովդիվ՝ Բուլղարիայում): 1905–08–ին՝ «Ռազմիկ» եռօրյա թերթի վարիչ–տնօրեն: 1908–ին վերադարձել է Կ. Պոլիս, աշխատել «Ազատամարտ» թերթի խմբագրությունում, հիմնադրել «Լուսաղբյուր» հրատարակչ. ընկերությունը (Օննիկ Սրապյանի հետ), լույս ընծայել Ռ. Զարդարյանի «Մեղրագետ» ընթերցարանները (6 գիրք), «Երկրագործին բարեկամը», մի շարք այլ գրքեր: Թղթակցել է պոլսահայ մամուլին:



Հակոբ Զորյան



Ստեփան Զորյան



Ս. Զորյանի *«Պապ թագաւոր» (1950, Փարիզ) գրքի կազմը*



Ս. Զորյանի *«Պատմվածքներ և վիպակներ» (2012, Ե., «Անտարես») գրքի կազմը*

ԶՈՐՅԱՆ Հակոբ Նշանի [Հազոր, 25.8.1894, ք. Օրդու (Տրապիզոնի նահանգ)–1942, անհատի պաշտամունքի զոհ], պատմաբան, տնտեսագետ: Փիլ. գիտ. դ-ր (1925), պրոֆ. (1931): ՀԽՍՀ գիտ-յան և արվ-ի ինստ-ի թղթ. անդամ (1926): Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում (1908–12), Լոզանի համալսարանում (1919–20), ավարտել Բեռլինի համալսարանը (1925), 1921-ին գործակցել է Ս. Թեհլերյանի հետ՝ Թալեաթի սպանությունը կազմակերպելու համար: 1925-ից դասավանդել է ԵՊՀ-ում (1930–37-ին՝ ամբիոնի վարիչ), 1930–31-ին՝ Կոոպերատիվ տնտեսագիտ. ինստ-ի տնօրեն (ռեկտոր), միաժամանակ, 1931–37-ին՝ պատմության ֆակ-ի դեկան: 1927–29-ին՝ Հանրային գրադարանի, 1932–35-ին՝ Կուլտուրայի պատմության ինստ-ի, 1936–37-ին՝ Հայաստանի պատմության պետ. թանգարանի տնօրեն:

Լույս են տեսել Զ-ի «Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը» («Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2, էջ 180–202, 1928, № 3–38), «Ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումները X դարում» (1928), «Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի պրոբլեմը» (1935), «Ներդասակարգային պայքարը Արշակունիների թագավորության վերջին շրջանում» (1936) մեծածավալ հոդվածները:

Երկ. Die Soziale Gliedering d. arm. Volkes in Mittelalter, Leipzig, 1927; Состояние армянской историографии, «Труды первой всесоюзной конференции историков-марксистов», т. 1, М., 1930.

Գրկ. **Հովհաննիսյան Պ.**, *Հակոբ Զորյան, «Երևանի համալսարան», 1976, № 2:*

ԶՈՐՅԱՆ (Առաքելյան) Ստեփան Եղիայի [3(15).9.1889, ք. Ղարաքիլիսա–14.10.1967, Երևան], գրող, խմբագիր: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1965): Ավարտել է Ղարաքիլիսայի ռուս. դպրոցը (1904): 1906-ին տեղափոխվել է Թիֆլիս: 1909–11-ին աշխատել է «Սուրհանդակ», 1912–19-ին՝ «Մշակ» թերթերի, 1919–20-ին՝ «Հայաստանի կոոպերացիա» ամսագրի խմբագրություններում, 1922–25-ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմատի հրատարակչության գլխ. խմբագիր, 1950–54-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Զ-ի ստեղծագործության լավագույն էջերից են «Տխուր մարդիկ» (հ. 1, 1918, Թ., «Մամուլ» տպ.), «Յանկապատ» (հ. 2, 1923, 1926, Լուսժողկոմատի տպ.), «Պատերազմ» [հ. 3, 1925, Պետհրատի տպ., ընդգրկված են «Զաքարի հարսը», «Ընթերցողները», «Զրհորի մոտ» (համանուն կինոնկար՝ 1968, Հայֆիլմ)] պատմվածքների ժող-ները, «Խնձորի այգին» (1917, հրտ.՝ 1940, համանուն կինոնկար՝ 1985) պատմվածքը, «Պապ թագավոր» (1944, 1950, Փարիզ), «Հայոց բերդը» (1959), «Վարազդատ» (1967) պատմավեպերը, «Գրադարանի աղջիկը» (1926), «Հեղկոմի նախագահը» (1926) վիպակները, «Ամիրյանի ընտանիքը» (1923, հրտ.՝ 1963) վեպը:

Լույս են տեսել նաև Զ-ի «Խուժան Արշոն» (1928), «Չալանկը» (1930), «Մի գիշեր անտառում» (1931), «Սև Սեթոն» (1935), «Ձմռան գիշեր» (1935), «Պարզ հոգիներ» (1945), «Սավառնող դրոշ» (1960) պատմվածքների, «Հեքիաթների» (1941) ժող-ները, «Մի կյանքի պատմություն» (գիրք 1, 2, 1935, 1939) վեպը, «Հուշերի գիրք» (1958), «Հին ծանոթները» (1969), «Իմ Թումանյանը» (1969) հուշագրությունները, որտեղ ներկայացրել է Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Մ. Գորկու, Շիրվանզադեի և ուր. վավեր. դիմանկարները, «Երկերի ժողովածուն» (հ. 1–6, 1940–54, հ. 1–10, 1960–64, հ. 1–12, 1977–90), «Պատմվածքներ և վիպակներ» (2012) ժող-ը:

Թարգմանել է Լ. Տոլստոյի, Ի. Տուրգենևի, Ա. Չեխովի, Վ. Գարշինի, Մ. Տվենի, Ս. Ցվայգի և ուր. ստեղծագործություններից, որոնք հայ թարգման. գրակ-յան լավագույն գործերից են:

ՀԳՄ-ն սահմանել է Զ-ի անվ. մրց-ներ՝ լավագույն թարգմանության ամենամյա (1980) և մանկապատանեկան լավագույն ստեղծագործության համար (1983): Վանաձորում գործում է Զ-ի տուն-թանգարանը:

Երկ. Եռագույնի ճանապարհ (անտիպ էջեր), Ե., 2007: Սրտի մտոք և հարգանոք (նամակներ, ընծայագրեր, նյութեր գրողի անձնական արխիվից), Ե., 2010:

Գրկ. **Աղաբաբյան Ս.**, *Ստեփան Զորյան, Ե., 1955:* **Սարգսյան Խ.**, *Ստեփան Զորյան, Ե., 1960:* **Մկրտչյան Հ.**, *Ստեփան Զորյան, Ե., 1977:*

ՋՈՐՅԱՆ (Աբրահամյան) Ստեփան, **Ռոստոմ** [18.1.1867, գ. Յղնա (Նախիջևանի Գողթն գավառ)–19.1.1919, Թիֆլիս], հաս-քաղ. գործիչ, խմբագիր: ՀՅԴ կուս-յան հիմնադիր-ղեկավարներից: Ավարտել է Թիֆլիսի ռեալ. դպրոցը (1886): Սովորել է Մոսկվայի Նովոալեքսանդրյան, 1889-ին՝ Պետրովսկ-Ռազումովյան գյուղատնտ. ակադ-ներում (երկուսից էլ վտարվել է հեղ. գործունեության համար և աքսորվել): Վերադարձել ու մասնակցել է ՀՅԴ կուս-յան հիմնադիր ժողովի (1892) կազմակերպմանը (գրել է կուս-յան ծրագրի տես. մասը) և կուս-յան *«Դրօշակ»* պաշտոնաթերթի հրատարակմանը (1892–95-ին՝ խմբագիր):

Երկ. Կենսագրական ուրուագիծ, Բ., 1979:

Գրկ. **Լազեան Գ.,** *Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ եւ հայդուկներ), Կահիրէ, 1945:* **Եղյան Մ.,** *Ռոստոմ (Ստեփան Ջորյան): Կյանքն ու գործը, Ե., 2012:*

ՋՎՅԱԳԻՆՅԵՎԱ Վերա Կլավդիևնա [31.10(12.11).1894, Մոսկվա–13.9.1972, Մոսկվա], ռուս բանաստեղծուհի, թարգմանչուհի: ՀԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1969): Ավարտել է Մոսկվայի թատեր. դպրոցը (1917): Ջ. ռուս. է թարգմանել նմուշներ հայ դաս. (Նահապետ Քուչակ, Մ. Նալբանդյան, Հ. Թումանյան, Ի. Իսահակյան) և ժամանակակից պոեզիայից. 1964-ին հրատարակվել են «Իմ Հայաստանը» խորագրով (վերահրտ.՝ 1969):

Լույս են տեսել Ջ-ի «Կամրջի վրա» (1922), «Մոսկովյան քամի» (1926), «Ռուսական ճամփաներով» (1946), «Ռուսաստան և Հայաստան» (1985) բանաստեղծությունների ժող-ները: Հայ. հրատարակվել է «Ճմեռային աստղ» (1960), «Իրիկնապահ» (1963) բանաստեղծությունների ժող-ները:

Երկ. Избр. стихи, М., 1968.

Գրկ. **Մկրտչյան Լ.,** *Հայաստանի բանաստեղծը, Ե., 1974:*

«02», ՀՀ ոստիկանության շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1990-ից Երևանում (մինչև 1994-ը՝ «Օրինապահության դիրքերում», ապա՝ «Ոստիկանական լրատու»): Խմբագիրներ՝ Սարգիս Հոռոփյան, Գառնիկ Մկրտչյան, Արամ Ավետիսյան, Վասակ ***Դարբինյան***, Տիգրան ***Քարմանյան***, Հասմիկ Պողոսյան, Ներսես ***Աթաբեկյան*** (2001-ից): Ներկայացնում է ոստիկանության աշխատանքները, քրեական իրավիճակի և դատ. քրոնիկոն, տեղ. և թարգման. նյութեր հանցավորության վերաբերյալ, անդրադառնում է օրենսդր. դաշտի փոփոխություններին, ոստիկան. կադրերի պատրաստմանը և այլ հարցերի:



Ստեփան (Ռոստոմ) Ջորյան




«02», *1990-ից, Երևան*

«ՋՈՒԱՐԹՆՈՑ», գրական-գեղ., մշակութ. պարբերաթերթ: Լույս է տեսել 1929–31, 1937–39, 1944, 1947–48 և 1955–67-ին (1937-ին՝ նաև տարեգիրք) Փարիզում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հրանտ Բալուճյան: Տպագրել է հիմնականում գրակ-յանը վերաբերող հոդվածներ. թղթակցել են Կ. Զարյանը, Վ. Թեքեյանը, Ա. Չոպանյանը, Շ. Շահնուրը, Զ. Որբունին, Հ. Օշականը, Ա. Սիման, Բ. Թոփալյանը և ուր., հրատարակել է Նահապետ Քուչակի, Դ. Վարուժանի, Կոմիտասի, Ռ. Զարդարյանի, Սիպիլի, Ե. Տեմիճիպաշյանի և ուր. գործերից: Անդրադարձել է նաև հայ խորհրդ. գրակ-յանը (Գ. Սահարի, Ե. Չարենց, Ա. Բակունց, Ա. Իսահակյան), տպագրել համաշխ. գրակ-յան նմուշներ: Արվ-ի բաժնին աշխատակցել են Շ. Պերպերյանը, Մ. Բաբայանը, Ա. Բուդաղյանը, Գ. Հովսեփյանը և ուր.:




«Ջուարթնոց», *1929-67, Փարիզ*

«ՋՈՒԱՐԹՆՈՑ», կրոն. հանդես: Հայ կաթողիկե եկեղեցու Զմմառի միաբանության հրատ.: Լույս է տեսնում 1980-ից Զմմառում (Լիբանան). առաջին համարը՝ «Զմմառեանք ի սփիւռս աշխարհի» խորագրով: Խմբագիրներ՝ Սանուել ծայրագույն վրդ. Պաթագյան, Անդրանիկ վրդ. ***Կոանյան,*** Մեսրոպ վրդ. Ճուրյան, Հովսեփ վրդ. Քելեկյան, Պողոս վրդ. Գազանճյան, Եղիա վրդ. Եղիայան, Ղևոնդ վրդ. Քենտիրճյան, Գևորգ ծայրագույն վրդ. Խազումյան, Հովհաննես վրդ. Թեյրուզյան, Անդրանիկ վրդ. Ադամյան: Լուսաբանում է միաբանության գործունեությունը: Հրատարակում է նաև հայոց պատմությանն ու մշակույթին վերաբերող հոդվածներ:



«Ջուարթնոց», *1980-ից, Զմմառ (№ 22, 2011)*

Է





Ռուբեն Մարուխյանի «Չիկարելիի նոր արկածները» (2008, Ե., «Էդիթ Պրինտ»)

Է, հայ. այբուբենի 7–րդ տառը, անվանումը՝ «է»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով՝ Ե տառի հենքի վրա: Ի տարբերություն Ե–ի, որտեղ կարճը նստում է տողի վրա՝ երկարի աջ կողմում, Է–ի կարճն իջնում է տողից ցած և մի փոքր թեքվում ձախ, ավելի հաճախ կորանում է: Գրվում է ուղղագիծ և դեպի աջ թեքված: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Է, որպես այբուբենի 7–րդ տառ, նշանակել է յոթ և յոթերորդ, բյուրի նշանով (Է՝)՝ 70 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Է –մաս 7–րդ):

«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1993–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Մկրտիչ *Կարապետյան*: 1996–ից հրատարակում է հատկապես ուս. և գիտ. գրակ., նաև մատենաշարեր՝ «Հայ ժամանակակից մանկագիրներ» (2007–ից), «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ» (2008–ից), «Ուրախ գնացքի գրադարան» (2010–ից), «Մանկապատանեկան գրականություն» (2011–ից), «Իմ գրադարանը» (2011–ից), «Համաշխարհային գրականություն» (2012–ից): 2005–ից հրատարակում է *«Գիտության աշխարհում»* գիտահանրամատչելի հանդեսը, 2006–ից՝ *«Նարցիս»* ամսագիրը, իր հիմնադրած *«Ուրախ գնացք»* (2009–ից) մանկ. և *«Իմ մոլորակը»* (2011–ից) պատանեկան ամսագրերը:

«Է. Պ.» 2011–ից ՀՀ և ԼՂՀ հանրակրթ. դպրոցների 2–8–րդ դասարանցիների համար կազմակերպում է ընթերցանության ամենամյա մրցույթ՝ «Ժամանակ մի՛ կորցրու, կարդա» խորագրով:

2012–ից հրատարակչությունում գործում է «Կայարան» գրական ակումբը, 2013–ին տպագրվել է նույնանուն գրական հանդեսի 2–րդ տարեգիրքը:

2011–ից ստեղծել է «Էդիթ Պրինտ» գրախանութների ցանց Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Ստեփանակերտում: Համագործակցում է Լոս Անջելեսի «Սարդարապատ» գրատան հետ: «Համազգային վստահություն» խորհուրդը 2013–ին «Է. Պ.» ճանաչել է «Տարվա լավագույն հրատարակչական ընկերություն»:

ԻԻՀ նախագահի [«Պարսկական ժողովրդական հեքիաթներ» (թարգմ. և մշակումը՝ Գևորգ Ասատրյանի), թարգման. գրակ–յան անվանակարգում, 2011], ԱՊՀ երկրների «Գրքարվեստի» 9–րդ մրցույթի Մեծ («Ուրբաթագիրք», 2012), ՀՀ «Գրքարվեստ–2012» մրցանակաբաշխության գլխ. և այլ մրց–ներ:


ԷԴՈՅԱՆ Հենրիկ Անտոնի (ծ. 31.8.1940, Երևան), բանաստեղծ, գրականագետ-քննադատ: Բանասիր. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1991): Ավարտել է ԵՊՀ (1967): 1986–2007-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Է-ի «Անդրադարձումներ» (1977), «Պատկեր և կեսօր» (1980), «Երկրային ժամանակ» (1983), «Այժմ և միշտ» (1987), «Հարյուր սոնետ» (1993), «Քայլեր և ստվերներ» (1996), «Երեք օր առանց ժամանակի» (2005), «Կանգ առ, ես այստեղ եմ» (2012) բանաստեղծությունների ժող-ները, «Կյանքը, իմ ուղին» (1999) հատընտիրը, «Եղիշե Չարենցի պոետիկան» (1986) գրաքննադատ. աշխատությունը:

ՀԳՄ (2002, տարվա լավագույն գրքի համար) ոսկե մեդալ, ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» (2004), ՀՀ Պետ. (2006), ՀՀ նախագահի (2012) մրց-ներ:


Երկ. Հատընտրություն, Ե., 2001: Երկու կանք, Հալեպ, 2006: Շարժում դեպի հավասարակշռություն: Հոդվածներ, էսսեներ, Ե., 2009:

Գրկ. **Բախչինյան Ֆ.**, *Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհը, Ե., 2009:*



Հենրիկ Էդոյանի *«Կանգ առ, ես այստեղ եմ» (2012, Ե., «Վան Արյան») գրքի կազմը*

«ԷԹՅՈՒԴ ԱՐՄԵՆԻԵՆ ԿՈՆՏԱՄՊՈՐԵՆ» («Études arméniennes contemporaines»–«Ժամանակակից հայագիտական ուսումնասիրություններ»), հայագիտ. կիսամյա հանդես: Նուբարյան մատենադարանի և ՀԲԸՄ-ի համատեղ հրատ.: Լույս է տեսնում 2004-ից Փարիզում՝ ֆրանս., անգլ. (2004–12-ին՝ «Ռևյու արմենիենն դե քեսթիոն կոնտամպորեն»): Տնօրեն-խմբագիր՝ Ռեյմոն-Հարություն Գևորգյան, պատ. խմբագիր՝ Բորիս Ածեմյան: Տպագրում է Հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը վերաբերող հոդվածներ, փաստաթղթեր, պատմաաշխարհագր. ուսումնասիրություններ, անդրադառնում է հայ-թուրք. և հարավկովկասյան հակամարտություններին:




«Էթյուդ արմենիեն կոնտամպորեն», *2004-ից, Փարիզ (№ 1, 2013)*

«ԵԼԼԻՆՈ ԱՐՄԵՆԻԿԱ», եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1991-ից Աթենքում՝ հուն.՝ Հայկ. ժողովրդային շարժման հովանավորությամբ: Խմբագիր՝ Հովսեփ (Սիֆի) Քասեյան: Տպագրում է նյութեր Հայ դատի, հայոց պատմության, արվ-ի, հայ գրակ-յան, նաև քաղաքականության վերաբերյալ:

ԵԼՉԻԲԵԿՅԱՆ Համբարձում Մելքոնի [7.5.1896, Արդաբիլ (Իրան)–23.4.1977, Մոսկվա], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. թեկնածու (1942): 1932-ին՝ «Կոմունիստ Տաջիկիստանա» (ռուս.) թերթի խմբագիր, 1932–34-ին՝ «Կոմունիստ» (հայ., Բաքու) թերթի խմբագրի տեղակալ: 1940–76-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ում:

Լույս են տեսել Է-ի «Գեներալ մայոր Բ. Մ. Շելկովնիկով» (1944), «Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում» (1954), «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (1957), «Հայաստանը մեծ հոկտեմբերի նախօրեին (փետրվար-հոկտեմբեր, 1917 թ.)» (1963, երեքն էլ՝ ռուս.) աշխատությունները:

ԷԼ-ՌԵԳԻՍՏԱՆ (Ուրեկյան) Գաբրիել Արկադիի (15.12.1899, Սամարղանդ–29.6.1945, Մոսկվա), գրող, լրագրող: Հարոլդ *Ռեգիստանի* հայրը: Առաջին ստեղծագործությունը լույս է տեսել 1924-ին Թիֆլիսի «Ռաբոչայա պրավդա» (ռուս.) թերթում: Սամարղանդում և Տաշքենդում եղել է «Ուզբեկիստաննսկայա պրավդա» (ռուս.) թերթի



Հայերեն **«Էլզևիր»** *տառատեսակ (Ներսես Շնորհալի, «Ճիսուս Որդի», 1661, Ամստերդամ*



«Էկոնոմիկա»,
2006-ից, Երևան (№ 2, 2012)



«Էկրան», *1968–92, Երևան*



Գևորգ Էմին

թղթակից, այնուհետև՝ «Իզվեստիա» (ռուս.) միութ. թերթի հատուկ թղթակից Միջին Ասիայում:

1930-ական թթ-ին լույս են տեսել Է-Ռ-ի «Ֆերգանայի մեծ ջրանցքը», «Մոսկվա–Կարակում–Մոսկվա» ակնարկների ժող-ները, ճամփորդ. տպավորություններն ամփոփող «Արտասովոր ճանապարհորդություն», «Հեռավոր հյուսիսի հետախույզները» գրքերը (բոլորը՝ ռուս.): Համահեղինակ է (Ս. Միխալկովի հետ) ԽՍՀՄ օրհներգի տեքստի:

ԷԼՍԱՅԱՆ Նորայր Հարությունի [ծ. 1934, ք. Արաք (Իրան)], մանկավարժ, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Թեհրանի հայոց թեմի հայերենագիտ. դասընթացները (1966), Թեհրանի համալսարանը (1976): Թեհրանի «Ռոստոմ», «Սիվիան», Հայ ուսուցիչների միությունների հիմնադիր-անդամ: Իրանահայ դպրոցների համար կազմել և հրատարակել է հայոց լեզվի, գրակ-յան, պատմության դասագրքեր: 1984–93-ին՝ ***«Ակիք»*** օրաթերթի գլխ. խմբագիր: 1993-ից ապրում է ՀՀ-ում:

ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» (2013) մեդալ:

ԷԿԻՆՅԱՆ Հայկակ (Հովհաննես) Հարությունի (1865, Տիգրանակերտ–25.3.1919, Ֆրեզնո), խմբագիր-հրատարակիչ, լրագրող-հրապարակախոս: Եղել է ՍԴՀԿ, այնուհետև՝ Վերակազմյալ հնչակյան կուս-յան, ապա՝ ՌԱԿ-ի անդամ: Սովորել է Տիգրանակերտում: 1883-ին մեկնել է ԱՄՆ: Աշխատակցել է «Արևելք», «Մասիս», «Աշակ», «Արմենիա» պարբ-ներին: 1888-ին խմբագրել և հրատարակել է ԱՄՆ-ում առաջին հայ. թերթը՝ ***«Արեգակը»***, 1889–90-ին՝ ***«Սուրհանդակ»***, 1890–92-ին՝ ***«Ազատութիւն»***, 1897–99-ին՝ ***«Տիգրիս»***, 1902–09-ին՝ «Քաղաքացի» (1909-ին՝ «Նոր սերունդ», 1909-ից՝ «Նոր սերունդ-Քաղաքացի»), 1914–19-ին՝ ***«Նոր կեանք»*** պարբ-ները:

Լույս են տեսել Է-ի «Կսկծանք» (1890, Նյու Յորք, Է-ի տպ.), «Քնար ժողովրդական» (հ. Ա, 1899, Ֆրեզնո, նույն տպ.) բանաստեղծությունների ժող-ները:

«ԷԿՈՆՈՄԻԿԱ», տնտ., հաս., կրթամշակութ. վերլուծ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 2006-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Լյուսյա Մեհրաբյան: Լուսաբանում է տնտեսության տարբեր ոլորտների կարևոր իրադարձությունները, ներկայացնում անցյալի ճանաչված հայ գործարարներին, անդրադառնում է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության գործունեությանը, ՏՏ ոլորտի առաջատարներին, տպագրում է հարցազրույցներ տնտեսության, բնապահպան., կրթամշակութ. հիմնախնդիրների մասին:

«ԷԿՐԱՆ», գովազդային, տեղեկատու ամսագիր: ՀՀ կինեմատոգրաֆիայի պետ. կոմիտեի և կինեմատոգրաֆիստների միության հրատ.: Լույս է տեսել Երևանում 1968–92-ին: Խմբագիրներ՝ Ալեքսանդր Արաքսմանյան, Աղասի ***Այվազյան***, Գուրգեն Գասպարյան, Կառլեն Սարգսյան: Լուսաբանել է հայկ., միութ. և համաշխ. կինոյի խնդիրներ, ծանոթացրել կինոաշխարհի նորություններին:

ԷՄԻՆ Գևորգ (Սուրադյան Կառլեն Գրիգորի, 30.9.1919, Աշտարակ–12.7.1998, Երևան, թաղված է Աշտարակի Կարմրավոր եկեղեցու բակում), բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1940), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1956): 1951–54-ին եղել է համամիութ. ***«Լիտերատուրնայա գազետա»*** (ռուս.) թերթի սեփական թղթակիցը, 1968–72-ին՝ ***«Լիտերատուրնայա Արմենիա»*** (ռուս.) ամսագրի գլխ. խմբագիր, 1973–98-ին՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի ավագ գիտաշխատող:

Լույս են տեսել Է-ի «Նախաշավիղ» (1940), «Խաղաղության ծխամորճը» (1942), «Նորք» (1946), «Նոր ճանապարհ» (1949, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951), «Խոսիր, Հայաստան» (1952), «Որոնումներ» (1955), «Մինչև այսօր» (1959), «Երկու ճամփա» (1962), «Յոթ երգ» (1962), «Այս տարիքում» (1968), «Քսաներորդ դար» (1970), «Դար, հող, սեր» (ռուս., 1974, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1976), «Ճամփաբաժան» (1979), «Ախ, այս Մասիսը» (1980), «Գիրք թարգմանությանց» (1984), «Ելք Եգիպտոսից» (1989), «Ես հայ եմ» (1997), «Շատ չե՞ղաւ Աստուած» (1997, Հալեպ) պոեմների, բանաստեղծությունների ժող-ները, «Սիամանթոյի մենախոսությունը» (1998)

պոեմը: Է. գրել է նաև էսսեներ [«Յոթ երգ Հայաստանի մասին: Գիրք հայրենաշունչ» (1974, 2-րդ լրց. հրտ.՝ 1981, վավերագր. կինոնկար՝ 1967, սցենարը՝ Է.-ի, Այսրկովկասյան և ուկր. ֆիլմերի երևանյան փառատոնի գլխ. մրց.՝ «Պրոմեթևս–69»)], հոդվածներ, արձակ ստեղծագործություններ [«Մաշտոցից մինչև մեր օրերը» (մտորումներ հայ գրակ-յան մասին), 1984, «Հավերժի ճամփորդը» (բանաստեղծություններ և արձակ էջեր), 1985]: Ռուս-ից թարգմանել է Օմար Խայամի, Ա. Բլոկի, Վ. Մայակովսկու, Ս. Եսենինի, Բ. Պաստեռնակի, Մ. Յվետաևայի, Ե. Եվտուշենկոյի, Լ. Արագոնի, Ն. Հիքմեթի, Ռ. Համզատովի և ուր. գործերից, Է. Մ. Ռեմարկի «Ապրելու և մեռնելու ժամանակը» վեպը:

Է.-ի ստեղծագործությունները թարգմանվել և առանձին գրքերով հրատարակվել են բազմաթիվ լեզուներով:

ՀԳՄ Ե. Չարենցի անվ. մրց. (1979):

Երկ. Երկերի ժող., հ. 1, 2, Ե., 1975, 1977: Երկերի ժող., հ. 1–3, Ե., 1985–86: Հավերժի ճամփորդը (էսսե, հայ., ռուս., անգլ., գերմ. և ֆրանս.), Ե., 1987: Ընտրանի, Ե., 2010:

Գրկ. **Հովակիմյան Վ.**, *Գևորգ Էմին, Ե., 1986: Գևորգ Էմին: Կենսամատենագիտություն, Ե., 1982:*

ԷՄԻՆ (Կարապետյան) Մկրտիչ Հովսեփի [25.11.1815, Նոր Ջուղա–13(25).12.1890, Մոսկվա], բանասեր, պատմաբան, մանկավարժ, մատենագետ, թարգմանիչ: Սովորել է Կալկաթայի Հայոց մարդասիր. ճեմարանում, ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1834), Մոսկվայի համալսարանը (1838): 1838-ից դասավանդել է Լազարյան ճեմարանում, 1840-ից՝ տեսուչ, պրոֆ. (1848–55, 1871–82), 1883–90-ին, միաժամանակ՝ հայագիտ-յան ամբիոնի վարիչ, 1866–69-ին՝ Վլադիմիրի նահանգի դպրոցների վերատեսուչ, 1870-ին՝ Մոսկվայի 5-րդ գիմնազիայի տնօրեն:

Է.-ի գիտ. գործունեությունն սկսվում է «Վէպք հնոյն Հայաստանի» (1850, Մ., Վլադիմիր Գոթիեի տպ.) ուսումնասիրությամբ:

Լույս են տեսել Է.-ի «Արա Գեղեցիկի մասին» (ռուս., 1858), «Ընդհանուր տեսություն հայոց հեթանոսական կրոնի» (ռուս.՝ 1864, ֆրանս.՝ 1864), «Վահագն Վիշապաքաղը հայ դիցաբանության մեջ...» (ռուս., 1873), «Հնախօսութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեան» (հայ., ֆրանս-ից թարգմ.՝ Հ. Տերոյենցի, 1875, Արմաշ, Չարխափան Սբ Աստվածածին վանքի տպ.), «Հետազօտութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեան» (1877, ԿՊ, Հովհաննես Տերոյենցի տպ.), «Մովսէս Խորենացին եւ հայոց հին վէպերը» (ռուս.՝ 1881, հայ. հրտ.՝ 1886, Թ., Մովսես Վարդանյանի տպ., 1887, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Հայկազանց տոհմական ցուցակ ըստ Մովսես Խորենացու Հայոց պատմության և հ. Մ. Չամչյանի ժամանակագրական աղյուսակի» (ռուս., 1884), «Երկասիրութիւններ հայոց լեզուի, գրականութեան եւ պատմութեան մասին (1840–1855)» (1898, Մ., Վարվառե Գատցուկի տպ.) աշխատությունները, «Քերականութիւն հայկական լեզուի» (1846, Մ., Լազարյան ճեմ-ի տպ.), «Ընտիր հատուածք քաղեալք ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց հայոց...» (1849, նույն տպ.) դասագրքերը: Է.-ի մի շարք հետազոտություններով («Հրեա գաղթականությունը հին հայոց մեջ», 1880, «Մեդացիները Հին Հայաստանում», «Ժյուլի Օպերտի՝ Աժդահակ բառի նոր բացատրությունը», 1880, «Արմավիր», 1882, բոլորն էլ՝ ռուս.) Հայաստանում հիմք է դրվել հայկ. գաղթավայրերին և գաղթականությանը վերաբերող պատմ. գրակ-յան ստեղծմանը:

Է. հիմնադրել է Լազարյան ճեմարանի մատենադարանը, առաջին անգամ հրատարակել է Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան...» (1853, Մ., Վ. Գոթիեի տպ.), Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» (1860, հ. 1–2, Փ., Կարապետ Շահնազարյանի տպ., 1860, հ. 1–3, Մ., Լազարյան ճեմ. տպ.), Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն Հայոց» (1860), Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» (1861, երկուսն էլ՝ նույն տպ.) երկերի քննական բնագրերը: Ռուս. է թարգմանել և առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը» (1858), Վարդան Արևելցու «Պատմությունը» (1861), Ստեփանոս Տարոնեցու «Պատմությունը» (1864), Ներսես Լամբրոնացու «Ատենաբանությունը» (1864) և Շարակնոց (1879), ֆրանս.՝ Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոցը» (1867): Է.-ի կտակած միջոցներով հրատարակվել է ***«Էմինեան ազգագրական ժողովածուն»*** (9 գիրք): Է.-ի երկերի ամբողջական հավաքածուն (հ. 1–3) հրատարակվել է 1893–97-ին Մոսկվայում՝ ռուս.:

Գրկ. **Շահազիզ Ե.**, *Մկրտիչ Յովսէփեան Էմին, Թ., 1900:* **Բատիկյան Լ.**, *Մկրտիչ Էմինը հայոց հին հեթանոսական մշակույթի մասին, «ԲԵՀ», № 1, 1974:* **Веселовский Ю.**, *Очерки армянской литературы, истории и культуры, Е., 1972.*



Գ. Էմինի *«Երկերի ժողովածու»-ի (հ. 1, 1985, Ե., «Սովետական գրող») կազմը*

Մկրտիչ Էմին



«Վէպք հնոյն Հայաստանի» (1850, Մոսկվա) գրքի տիտղոսաթերթը




«Մովսէս Խորենացին եւ հայոց հին վէպերը» (1886, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը



«Էմինեան ազգագրական ժողովածու», *1901–13 (հ. Ա, 1901)*



«Էյ Ջի Բի Յու Նյուզ», *1991-ից, Սեղլ Բրուք (նոյեմբեր, 2008)*



Եղիա Էնտազյանի *«Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ» (1785, Վնտ.) գրքի 3-րդ էջը*

«ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», ազգագր., բանահյուս. նյութերի տարեգիրք: Մոսկվայի արլ. լեզուների ինստ-ի (Լազարյան ճեմարան) հրատ.: Լույս է տեսել 1901–13-ին (9 հատոր), հաջորդաբար՝ Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում և Թիֆլիսում՝ Մկրտիչ Էմինի կտակած միջոցներով: Խմբագիրներ՝ Գրիգոր *Խալաթյանց* (հ. 1–8), Կարապետ *Կտպրանյան* (հ. 9): Տարեգրքում առաջին անգամ հրատարակվել են մի շարք նշանավոր բանահյուս-ազգագր. հավաքածուներ՝ Ա. Մխիթարյանցի «Փշրանք Շիրակի ամբարներից», Ս. Հայկունու «Ժողովրդական վէպ եւ հէքէաթ», «Հայ-քրդական վէպ», «Ժողովրդական երգ, առած, ասացուածք, հանելուկ, երդում, օրհնանք, անէծք եւ այլն» ևն: Գրառվել են և հրատարակվել «Սասնա ծռերի» 4 և ժող. վեպերի ու սիրավեպերի 32 պատումներ, 117 հեքիաթ ու առակ, 276 երգ, 7861 առած, ասացվածք, հանելուկ, թարգման. գործեր ևն: Այստեղ են առաջին անգամ տպագրվել Հ. Աճառյանի «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ», «Հայ բարբառագիտութիւն», «Հայերէն գաւառական բառարան» աշխատությունները: «Է. ա. ժ.» մեծապես նպաստել է հայ ազգագր. և բանահյուս. նյութերի հավաքմանը, ուսումնասիրմանն ու հրատարակմանը:

ԷՄԻՆՅԱՆ Սրապիոն (23.7.1823, Կ. Պոլիս–12.12.1854, Վիեննա), բառարանագիր, թարգմանիչ: Կազմել է «Բառագիրք երեք լեզուեան, այսինքն՝ գաղղիերէն–հայերէն–տաճկերէն» (1853, 1871, Վնն., Միխթարյան տպ.) բառարանը, որտեղ տվել է բառի ֆրանս. արտասանությունը՝ հայ. տառերով, հայ. թարգմանության բոլոր տարբերակները, և նույնը՝ հայատառ թուրք-ով: Լատ-ից թարգմանել է կրոն. բնույթի գործեր:

Գրկ. Սրապիոն Էմինեան, «ՀԱ», 1932, № 1–2, էջ 94–96:

«Էյ Ջի Բի Յու Նյուզ» («AGBU News»–«ՀԲԸՄ-ի լուրեր»), ամսագիր: Լույս է տեսնում 1991-ից Սեղլ Բրուքում (ԱՄՆ), ապա՝ Նյու Յորքում՝ անգլ.: Հիմնադիր՝ Լուիզ Մանուկյան-Սիմոն: Լուսաբանում է ՀԲԸՄ-ի և նրա հովանավորությամբ գործող մշակութ., մարզ., բարեգործ. միությունների ու կրթ. հաստատությունների գործունեությունը: Տպագրում է նյութեր հայկ. համայնքների մասին, տեղեկություններ ՀՀ-ից ու ԼՂՀ-ից:

«ԵՆՅՈՒԼԼ ՕՖ ԱՐՄԵՆԻԸՆ ԼԻՆԳՈՒԻՍՏԻԿՍ» («Annual of Armenian Linguistics»–«Հայկական լեզվաբանության տարեգիրք»), Քլիվլենդի (ԱՄՆ) պետ. համալսարանի հրատ.: Լույս է տեսնում 1979-ից Քլիվլենդում՝ անգլ.: Խմբագիր՝ Ջոն Դրեպպին: Տպագրում է լեզվագիտ-յան և հարակից այլ բնագավառների վերաբերյալ գիտ. ուսումնասիրություններ:

ԷՆՏԱՋՅԱՆ Եղիա, XVIII դ-ի վերջի–XIX դ-ի սկզբի քարտեզափորագրիչ: Մխիթարյան միաբանության անդամ, վարդապետ: Փորագրել է *«Ափրիկէ», «Եւրոպիա»* (երկուսն էլ՝ 1786), *«Ամերիկա», «Ասիա», «Լայնածաւալ տէրութիւն օսմանցոցն»* (երեքն էլ՝ 1787), «Գաւառք Հայաստան աշխարհի ըստ հին պատմութեանց» քարտեզները: Վերջինս, առանց տպագրության վայրի, տպարանի և թվականի հիշատակության, զետեղված է Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի Ա հատորի (1784) մեջ: Ըստ Ս. Ճեմճեմյանի՝ սա Է-ի քարտեզափորագրության առաջին փորձն է:

1785-ին Վենետիկում, առանց տպարանի և հեղինակի հիշատակության, տպագրվել է Է-ի «Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ» գրքույկը: Տիտղթ-ին՝ «Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ եւ ճանապարհորդութեան Մօնկոլֆիոյ, Քառլոյի, և Րօպէրթի» (16 էջ, 8º, 10 x 5,5 սմ):

Գրկ. Ճէմճէմեան Ս., Քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ԺԸ դարուն, Վնտ., 1981, էջ 30:

ԷՆՖԻԱՃՅԱՆ Համբարձում Մկրտչի (1824, Կարին–16.3.1896, Թիֆլիս), հրատարակիչ, գրավաճառ: 1830-ից ապրել է Թիֆլիսում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1846): Եղբոր՝ Ավետիքի հետ բացել է Թիֆլիսի առաջին գրավաճառատունը, հավաքել և հետագայում Սոսկվայի Լազարյան ճեմարանին է հանձնել շուրջ 200 հայկ. ձեռագրեր: 1859-ին Գաբրիել Մելքումյանի հետ հիմնադրել է տպարան՝ ձուլարանով (գործել է մինչև 1880-ական թթ.). տպագրել է բազմաթիվ գրքեր [Մ.Պատկանյանի «Միջի մարդ կամ Սուցիքքուլ» (1859), «Բարոյական պատմութիւնք երեխայից համար», Վ. Լանգլուայի «Մովսէս Խորենացի եւ նորա պատմութիւնը», Հ. Կարենյանի «Շուշանիկ դուստր մեծին Վարդանայ Հայոց Սպարապետին» (բոլորը՝ 1860), Խ. Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» (1864), Պ. Սիմոնյանի «Դասագիրք ընդհանուր պատմութեան» (1867) ևն]: 1860–63-ին՝ *«Կռունկ Հայոց աշխարհին»*, 1863–86-ին՝ *«Մեղու Հայաստանի»* պարբերների հիմնադիր-հրատարակիչ: Աջակցել է Ղ. Աղայանին (1859–62-ին որպես գրաշար աշխատել է Է-ի տպարանում), Պ. Պռոշյանին և այլ գրողների, տպագրել նրանց գրական առաջին գործերը:

ԷՊԼԻՂԱԹՅԱՆ Մաթիկ (Մատթեոս) Գրիգորի (ծ. 6.4.1956, Հալեպ), հրատարակիչ-խմբագիր: Ավարտել է Հալեպի Հայկազյան ազգ. վարժարանը (1968), Կարեն Եփփե ազգ. ճեմարանը (1974): 1981-ին Հալեպում հիմնադրել է «Կիլիկիա» գրատունը, 1993-ին՝ *«Կիլիկիա»* գրահրատարակչությունը. վերջինս Սիրիայի միակ հայկ. հրատարակչությունն էր, որն ունեցել է պետ. արտոնագիր. տպագրել է շուրջ 300 հայ. և օտարալեզու գրքեր: 2012-ից Է. բնակվում է Շվեյցարիայում:

Լույս է տեսել Է-ի «Կեանք մը ազգիս կեանքին մէջ: Ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ, 1903–23» (1987, Անթիլիաս) գիրքը:

Սիրիայի ժուռնալիստների միության անդամ (1992-ից):

«ԷՊՈՒԽԱ» («Эпоха»–«Դարաշրջան»), հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ (մինչև 1990-ը՝ ՀԼԿԵՄ ԿԿ պաշտոնաթերթը): Լույս է տեսել 1938–98-ին Երևանում՝ ռուս. (1938–41 և 1945–54-ին՝ «Сталинец», 1954–90-ին՝ «Коммунист»): Խմբագիրներ՝ Զ. Զաֆարով, Վ. Սիրցև, Ա. Զախարյան, Գ. Եվանգուլով, Ս. Ավթանդիլով, Ա. Սահակյան, Յ. Պետրոսյան, Է. Կանանովա, Վալերի Այդինյան, Վարդան Գրիգորյան, Մարինե Հակոբյան: Լուսաբանել է երիտասարդության առօրյան, անդրադարձել է գրական, մշակութ., մարզ. նորություններին, միջազգ. իրադարձություններին:

ԷԶ պոլիգրաֆիայում, տպագիր գրքի, թերթի կամ այլ հրատ-յան 1 երեսը: Է-ում տեղադրվող տեքստի տեսակից ու կառուցվածքից կախված՝ տարբերում են ***սկզբնաէջ, վերջնաէջ*** և ընթացիկ (շարքային) էջեր: Տես նաև *Էջակապ*:


ԷՋԱՀԱՄԱՐ, ***էջաթիվ***, հրատ-յան էջի կամ սյան հերթական համարը: Դրվում է էջի վերևի կամ ներքևի դրսի անկյունում, մեջտեղում: Չեն համարակալվում հատուկ էջերը (***տիտղոսաթերթ, տիտղոսապատ*** ևն), ներդիրները և ողջ երեսով պատկերազարդված էջերը: Համարակալվում է հիմնականում արաբ. թվերով, երբեմն (նախաբան, ներածություն, վերջաբան ևն)՝ տառերով կամ հռոմ. թվերով:

Տպագիր գիրքն առաջին անգամ համարակալվել է 1470-ին, բայց Է. վերջնականապես արմատավորվել է XVI դ-ի կեսերին. փոխարինել է *էջանշին*:


XVIII դ-ի վերջում Է. հաստատվել է էջի ներքևի լուսանցքի մեջտեղում: Մերկ թվի տպավորություն չթողնելու համար թվի աջ ու ձախ կողմերից ավելացրել են գծիկներ կամ զարդարուն «բեղիկներ»:

Հայ. առաջին տպագիր գրքերում համարակալվել են միայն տետրերն ու դրանց առաջին մի քանի էջերը՝ հայ. այբուբենի տառերով. նշանակվել են նախ մամուլի, ապա՝ էջերի համարները:

Համբարձում Էնֆիաճյանի *տպագրած գրքերից*




«Դասագիրք ընդհանուր պատմութեան» (1867, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը



Գ. Աբովյանի «Համառօտութիւն հայոց ազգի պատմութեան» (1869, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը



«Էպոխա», *1938–98, Երևան*



Էջանցի *(յե) նմուշ*



«Էջեր գրականութեան եւ արուեստի», *1965–72, Բեյրութ*



Էջակապի *նմուշ («Հայ գրատպության և գրքարվեստի հանրագիտարան», 2015)*

ԷՋԱՆՇԱՆ, մետաքսե նեղ (0,5–1 սմ լայնության) ժապավեն, մեջդիր՝ գրքի հարկավոր էջը նշելու համար: Կպցվում է ***գրքի բլոկի*** կռնակի վերին եզրիչին: Երկարությունն ընտրվում է այնպես, որ նրա ազատ ծայրը, անցնելով էջերի արանքով, դուրս գա բլոկի ներքևի եզրից:

ԷՋԱՆՑ, **հիշագիր, կուստոդ** (<լատ. custod–պահակ), գրքի էջի տեքստատակի աջ եզրին դրվող բառ կամ վանկ, որը հաջորդ էջի 1-ին բառի (վանկի) կրկնությունն է: Օգտագործվել է միջնադարում ձեռագիր և հնատիպ գրքերում թերթերի հերթականությունը պահելու համար: XV–XVI դդ–ում փոխարինվել է ***էջահամարով***:

ԷՋԱՏԻՏՂՈՍ, **էջախորագիր**, տեղեկատու տվյալներով (հեղինակի անուն–ազգանուն, ստեղծագործության վերնագիր ևն) տող՝ էջի տեքստի վերևում (երբեմն՝ կողքին կամ ներքևում): Է–ները լինում են անփոփոխ (կրկնվում են գրքի բոլոր էջերում) և փոփոխվող (փոխվում են գլուխը, հոդվածը ևն փոխվելուն համընթաց):

Է., որպես ***էջկապի*** տարր, ի հայտ է եկել դեռևս XVI դ–ում: Ժամանակակից հրատ–ներում հաճախ հրաժարվում են Է–ից՝ թղթի խնայողության և գրքի ինքնարժեքի նվազեցման նկատառումներով, կամ Է–ները դրվում են էջերեսի նվազագույն կորուստի եղանակով:

Է. հիմն. տեքստից առանձնացվում է էջագծով և, որպես կանոն, չի դրվում էջքով սկսվող, ամբողջությամբ պատկերազարդված և տեղեկատվ. այլ տվյալներ պարունակող էջերում:

Է. կարևոր է հանրագիտարանային և բառարանային հրատ–ներում, որոնք էջկապվում են հիմնականում սյուներով: Նրանց մեջ Է. (սյունատիտղոս) դրվում է բացվածքի ձախ ու աջ սյուների գլխավերևներում՝ ձախում՝ էջի առաջին, աջում՝ էջի վերջին բառ–տերմինը:

«ԷՋԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ», պարբերագիրք: Լիբանանահայ գրական շրջանակի հրատ.: Լույս է տեսել 1965–72–ին (անկանոն պարբերականությամբ) Բեյրութում: Խմբագիրներ՝ Գառնիկ ***Ադդարյան***, Արմեն ***Դարյան***, Պետրոս Մինասյան, Գեղամ ***Սևան:*** Հաջորդել է «Ժողովածու գրականութեան եւ արուեստի» (1950–54, խմբագիր՝ Պ. Մինասյան), «Մշակոյթ» (1954–55, խմբագիր՝ Գ. Ադդարյան), «Գիրք գրականութեան եւ արուեստի» (1955–56, 1959, խմբագիրներ՝ Գ. Ադդարյան, Գ. Սևան), «Յառաջ գրական» (1961–64, խմբագիրներ՝ Գասպար Տերտերյան, Ա. Դարյան, Պ. Մինասյան) պարբերագրքերին: Տպագրել է գրական–գեղ. ստեղծագործություններ, գրախոսություններ, տես. հոդվածներ արվ–ի ու գրակ–յան վերաբերյալ:

ԷՋԿԱՊ, 1. հրատ–յան հիմն. և օժանդակ (շարվում է մանրատառով) տեքստերի, վերնագրերի, բանաձևերի, աղյուսակների, պատկերազարդումների, էջահամարների, տիտղոսատարրերի և այլ բաղադրիչների միատեղումը՝ վերածումը էջերի: Ըստ հրատ–յան տեսակի՝ լինում են գրքաամսագրային, լրագրային, ակցիդենտային և համակարգչային Է–եր:

Է. **գրքաամսագրային.** լինում է տեքստային (միատեսակ), խառը (աղյուսակներով, բանաձևերով և այլ բաղադրիչներով) ու պատկերազարդումով: Տեքստն էջկապվում է 1–3 կամ ավելի սյունակներով: Պատկերազարդումով Է–երում պատկերներն այնպես են տեղադրում, որ էջերն ու բացվածքները լինեն ներդաշնակ: Ապահովում է գրքից օգտվելու առավելագույն հարմարավետություն, ընդգծում հրատ–յան ներքին ձևի, համամասնությունների գեղեցկության, ձևավորման տարրերի գրաֆիկ. միասնությունը, բոլոր բաղադրիչների նշանակությունն ու փոխկապվածությունը, հրատ–յան տնտ. խնայողությունը ևն:

Է. **համակարգչային**. սկզբնավորվել է 1985–ին, երբ մշակվել են Aldus ընկերության PageMaker ծրագիրը և անհատ. լազերային տպիչը: Ցուցասարքի էկրանի վրա էջկապի (մակետի) ստեղծումը և նրա տպագրումը տպիչով լուրջ առաջընթաց էր համակարգչ. տեխնիկայի

ոլորտում և հատկապես տպագրության համար: 1986-ին մշակվել է Ventura Publisher ծրագիրը, որով հնարավոր է եղել ավտոմատացնել Է.: Այդ նույն թվականի վերջին «InfoMagazine» ամսագիրն արդեն բարձր որակով տպագրվել է համակարգչային Է-ի եղանակով:

1990-ից առավել տարածվել են Ventura Publishers-ը, Adobe Page Maker-ը, Adobe Frame-Maker-ը, Coreldrow-ը, Microsoft Publisher QuarkXPress-ը, իսկ 2000-ական թթ-ին ներդրվել է AdobeIndesigne ծրագիրը, որի հնարավորություններն ավելի լայն են՝ Adobe-ի այլ ծրագրերի հետ փոխներգրավման կարողության շնորհիվ:

2. Էջկապված շարվածքի տպածոն, որը նախատեսվում է սրբագրման և անհրաժեշտ ուղղումներ կատարելու համար:

«ԷՋՄԻԱԾԻՆ», կրոն., պատմաբանասիր., հայագիտ. ամսագիր: Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1944-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս ***Գևորգ Զ Չորեքչյանի*** նախաձեռնությամբ: Մինչև 1961-ը տպագրվել է Երևանում, ապա՝ Էջմիածնում: Խմբագիրներ՝ Առաքել Առաքելյան, Լևոն Կիսիբեկյան, Աշոտ ***Արրահամյան***, Արթուն Հատիտյան, Պարգև Շահիրազյան, Երվանդ ***Մելքոնյան***, Ասողիկ եպս. Արիստակեսյան, Բագրատ արեղա Գալստանյան, Անդրանիկ Զեյթունյան, Վարդան ***Հարիկյան***, Արշակ ***Մադոյան*** (2009-ից): Լուսաբանում է Մայր աթոռի միաբանության, ներքին և Սիյուռքի թեմերի եկեղեց. կյանքը, ծանոթացնում Հայաստանյաց առաքել. եկեղեցու նշանակալի իրադարձություններին, անդրադառնում է միջեկեղեց. հարաբերություններին, միջազգ. կրոն. և միջեկեղեց., միջպետ. կապերին: «Է.» առաջիններից է Հայրենիքի և Սիյուռքի միջև ստեղծել համագործակցության կամուրջ, սիյուռքահայությանը հայրենադարձության կոչ արել: 1949-ից արտահայտվել է հօգուտ խաղաղության համաշխ. շարժման ստեղծման: Տպագրում է Հայոց հայրապետների կոնդակները, շրջաբերականները, քարոզները, ճառերը:

«Է.» ***«Արարատ»*** ամսագրի հայագիտ. ավանդույթների ժառանգորդն ու շարունակողն է. տպագրում է նյութեր Հայ եկեղեցու պատմության, բնագրագիտ-յան, ձեռագրագիտ-յան, վիմագրության, միջնադարյան պատմագրության և գրակ-յան, հոգևոր ու ժող. երաժշտության վերաբերյալ, ինչպես նաև լեզվաբ., բանասիր., հայագիտ. ուսումնասիրություններ, արխիվային վավերագրեր, արտատպում նյութեր «Արարատ», «Հասկ», «Շողակաթ», «Սիոն» և այլ հանդեսներից: Պարբերաբար լույս է ընծայում բացառիկ համարներ:

Ամսագրին աշխատակցել են Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանցը, Գ. Հովսեփյանը, Գ. Լևոնյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ս. Տեր-Ներսեսյանը, Հ. Սիրունին, Կ. Ղաֆադարյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ա. Ալպոյաճյանը, Ն. Պողարյանը, Ա. Սյուրմեյանը, Հ. Անասյանը և ուր., Մայր աթոռի միաբաններ ու Գերագույն խորհրդի անդամներ:


Ամսագրի 1-ին համարը ձևավորել է Հակոբ ***Կոջոյանը***, հաջորդ համարները՝ ***Տարագրոսը***, Գրիգոր ***Խանջյանը***, ճարտարապետ Բ. Արզումանյանը:

Գրկ. Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1944–1973), կազմ.՝ Ս. Կոծինյան, Էջմիածին, 1975: Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974–2008), կազմ.՝ Արարատ քին. Պողոսյան, Էջմիածին, 2012:

«ԷՋՄԻԱԾՆԻ ԱՒԵՏԱՐԱՆ», **«Փղոսկրեա Աւետարան»**, մագաղաթե ձեռագիր մատյան: Ընդօրինակել է Հովհաննես գրիչը 989-ին Բղենո Նորավանքի Սբ Ստեփանոս եկեղեցում՝ Ստեփանոս քահանայի պատվերով (չափերը՝ 35 x 28 սմ, 233 թերթ, երկաթագիր, Մատենադարան, ձեռ. № 2374): Բաղկացած է 4 Ավետարանից: Մատթեոսի Ավետարանին նախորդում է ամրողջությամբ մանրանկարներով զարդարված քառաթերթ մի պրակ: Ձեռագրի վերջում ներմուծված է 2 թերթ՝ 228 և 229 (VI–VII դդ.)՝ «Զաքարիայի ավետումը», «Մարիամի ավետումը», «Մոգերի երկրպագությունը» և «Մկրտությունը» պատկերող տեսա-



«Էջմիածին» *ամսագրի № 1-ի շապիկը (1944, նկարիչ՝ Հակոբ Կոջոյան)*



«Էջմիածնի Աւետարան»-*ի լուսանցազարդով էջ (989, Մատենադարան, ձեռ. № 2374)*


Էջմիածնի տպարանի *հրատարակություններից*



Սիմեոն Երևանցու «Գիրք որ կոչի Պարտավճար» (1779) գրքի փիփղոսաթերթը



«Երգարան աղօթից...» (1845) գրքի փիփղոսաթերթը



«Էջմիածնի գանձեր» (1984, Փարիզ, **«Էրեբունի»***) ալբոմի կրկնաշապիկը*

բաններով, որոնք կատարող. առանձնահատկություններով և երանգավորմամբ հիշեցնում են նույն ժամանակաշրջանի հայկ. որմնանկար օրինակները (Արուճ, Լմբատ): Սկզբնաթերթերի մանրանկարները IX–X դդ–ի գեղանկարչության ավանդույթների արտահայտությունն են և մոտ են Աղթամարի եկեղեցու որմնանկարներին: Տպավորիչ են խորանները. օգտագործված են հիմնականում պայտաձև զույգ կամարներ, որոնց հորինվածքը երփներանգ զարդամոտիվներով և լրացուցիչ մանրամասերով համահունչ է մատյանի ընդհանուր բնույթին: Ձեռագրի փղոսկրե կազմի կողերից (36,5 x 30,5 սմ, VI դ.) յուրաքանչյուրը բաղկացած է 5 սալիկից (առանձին տեսարաններով): Այդ կազմը վաղքրիստ. հայկ. արվ–ի լավագույն հուշարձաններից է:

Գրկ. **Ստրժիգովսկի Յ.,** *Էջմիածնի Աւետարանը, Վնն., 1892:* **Տեր–Ներսեսյան Ս.,** *Էջմիածնի Ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը, տես նրա «Հայ արվեստը միջնադարում», Ե., 1975: Էջմիածնի Ավետարանը, Ե., 2000: Էջմիածնի Աւետարան (989 թ., ձեռ. № 2374, Մատենադարան), Վնն., 2001:* **Macler F.,** *l'Evangile arménien edition phototypique du manuscrit № 229 de la bibliothique d'Etchmiadzin (989 de J. C.), P., 1920.*

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ, Արլ. Հայաստանի տարածքում առաջին տպարանն է: Հիմնադրվել է 1771–ին՝ ***Սիմեոն Ա. Երևանցի*** կաթող.իկոսի ջանքերով և Գ. Խոջաջանյանցի (Զաքիկյան) միջոցներով, կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով: Պատկանել է Ամենայն հայոց կաթող.իկոսությանը: Տպարանի առաջին հրատ–ը Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից որ կոչի Ջրօսարան հոգեւոր» (1772) գրքույկն է, ապա տպագրվել են Սիմեոն Երևանցու «Գիրք որ կոչի Պարտավճար» (1779), Հովսեփոս Երբայեցու «Յաղագս պատերազմին հրեից ընդ հռովմեայեցիս» (1787) և այլ գրքեր (14 անուն): Մինչև 1833–ը անընդմեջ պատերազմների պատճառով տպագրվել է միայն «Սաղմոս Դաւթի...» (1819) գիրքը, այնուհետև Է. տ. շարունակել է կանոնավոր գործունեությունը: Ներկայում այն ***Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչության*** կազմում է:

ԷՍՏԱՄՊ (ֆրանս.՝ estampe, <իտալ. stampa–արտատիպ), տպագր. գրաֆիկայի (փորագրություն, օֆորտ, մենատպություն, վիմատիպ ևն) եղանակով թղթի վրա բնագիր տպաձևից ստացված արտատիպ: Ի տարբերություն գեղ. տպագրության այլ տեսակների՝ Է. տպաձևը պատրաստում է հեղինակը կամ որևէ բարձրորակ վարպետ՝ հեղինակի մասնակցությամբ: Է–ի առաջին տպագրության օրինակները սովորաբար ստորագրում է նկարիչը՝ որպես հեղինակային բնագիր, իսկ տպաքանակը չի գերազանցում մի քանի հարյուր օրինակը:

«ԷՐԵԲՈՒՆԻ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1968–ին Փարիզում (գործել է մինչև 90–ական թթ–ի սկիզբը): Գլխ. խմբագիր՝ Վարդերես ***Գարակյոզյան***: Մասնաճյուղեր է ունեցել Բեյրութում և Նյու Յորքում: Տպագրել է Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Իսահակյանի, Մ. Զորյանի, Վ. Անանյանի և ուր. երկեր՝ Գ. Խանջյանի, Ա. Գրիգորյանի, Կ. Սմբատյանի, Գ. Յարալյանի, Ռ. Մանուկյանի, Ա. Ազիզյանի պատկերազարդումներով: «Մատենաշար ժամանակակից սփյուռքահայ բանաստեղծության» խորագրով լույս է ընծայել Ա. Ծառուկյանի, Եղիվարդի, Գ. Ադդարյանի, Զ. Խրախունու, Ա. Ջանյանի և ուր. ստեղծագործություններից: Հրատարակել է «Հայկական խաչքարեր» (1973), «Էջմիածնի գանձեր» (1984), Մ. Ղազարյանի «Հայկական գորգ» (1988) և այլ albomներ: 1970–ից տպագրել է Հայաստանի պատմ. հուշարձանների և տեսարժան վայրերի պատկերներով պատի գունավոր օրացույցներ, բացիկներ:

«ԷՐԵԲՈՒՆԻ», ազգ., հաս., մշակութ. երկշաբաթաթերթ (մինչև 1987–ը՝ ամսաթերթ): Լույս է տեսել 1979–94–ին Լոնդոնում՝ հայ. և անգլ.: ՌԱԿ–ի և ԹՄՄ–ի տեղ. մասնաճյուղի պաշտոնաթերթ: Հիմնադիրներ՝ Անդրանիկ Ծուլիկյան, Վարդան Ուզունյան, Նորայր Խոլոպյան: Տպագրել է ազգ., մշակութ., գաղափարախոս. հոդվածներ, լուրեր, խմբագրականներ: Սկզբն. շրջանում տպագրվել է Մինրեալում:

«ԷՐԻՎԱՆՍԿԻԵ ՕԲՅԱՎԼԵՆԻՅԱ» («Эриванскія объявленія»–«Երևանյան հայտարարություններ»), երկօրյա, շաբաթաթերթ, 1914–ից՝ եռօրյա: Լույս է տեսել 1900–17-ին Երևանում՝ ռուս.: Խմբագիր-հրատարակիչներ՝ Դ. Տիգրանյան, Էմին *Տեր-Գրիգորյան:* Լուսաբանել է քաղաքային դումայի աշխատանքը, կրթամշակութ. և կենցաղային խնդիրներ, տպագրել հոդվածներ Երևանի սան. վիճակի մասին: 1908-ից տպագրել է նաև հայ. նյութեր:

ԷՖՐԻԿՅԱՆ Միսակ Հաջիբաբի (1892, Ալեքսանդրապոլ–1938, Երևան), խմբագիր-հրատարակիչ: Թիֆլիսում հիմնադրել է *«Պատանի»* (1910–15) գրական-գեղ. եռամսյա ալմանախը: Եղել է Թիֆլիսի «Մ. Էփրիկյան և ընկ.», «Հերմես» հրատարակչությունների տեսուչ-կարգադրիչ: 1921-ից՝ *Հայպետհրատի* տնօրեն. 1925-ից՝ տեխ. տնօրեն: Լույս է ընծայել «Ժպիտներ» (1923, Ե., Լուսժողկոմատի տպ.) բանաստեղծությունների ժող-ը:

ԷՖՐԻԿՅԱՆ Սուքիաս (1873, Ախալցխա–1952, Վենետիկ), աշխարհագետ, բանասեր, հանրագիտակ: Սովորել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում:

Լույս է տեսել Է-ի «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանը» (հ. 1, 2, 1902, 1907, անավարտ է): 1-ին հատորը (տպագրվել է նաև 1903–05-ին) ընդգրկում է Ա–Ը, 2-րդը՝ Թ–Կ տառերով սկսվող տեղանունները: Ունի մատենագիտություն, տեղեկություններ է տալիս Մեծ Հայքի նահանգների, քաղաքների, գյուղերի, հայկ. գաղթավայրերի աշխարհագրության վերաբերյալ: Բառարանում զետեղված են վիճակագր. նյութեր, քարտեզներ: Հեղինակ է նաև «Վասքոյ Կամայ եւ յորելեան հանդէսք ի Լիզպոնայ» (1898), «Գրպանի ատլաս» (1901), «Սբ Էջմիածին (303-1903): Պատկերազարդ նկարագրութիւն» (1903) գրքերի:

Է-ի բոլոր աշխատությունները տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

ԷՔՍԼԻԲՐԻՍ, տես *Սպտենանիշ:*

ԷՖԻՄԵՐՏԵ (<հուն. éφημερίς–օրագիր, առօրյա դեպք), **Էփիմերդի, Էփրեմվերդի**, 1. հնում՝ պետ. և ռազմ. գործիչների օրագրերը: Եգիպտոսում և Հին Հունաստանում Է-ներում նշում էին ամենօրյա տեղեկություններ, հաշվետվություններ (օր.՝ Ալեքսանդր Մակեդոնացու Է-ները), 2. աստղագիտ. հատուկ տվյալներ պարունակող օրացույցներ և աղյուսակներ: Հետագայում Է-ում մեծ տեղ է հատկացվել գուշակություններին, երազահանությանը, գրքացությանը, ժող. բժշկությանը, փիլ. դատողություններին: Առաջին աստղագիտ. Է. (30 տարվա համար) լույս է տեսել 1436-ին Նյուրնբերգում:

Հայ. Է. տպագրվել է՝

1748-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տպակից է Մխիթար Սեբաստացու «Տօմար կարճառօտ. այսինքն համառօտութիւն հնոյ տօմարին….» և Թովմա Աքվինացու «Համառօտ գրգուկ իմն. վասն նախասահմանութեան, զոր արար ըստ խնդրոյ ոմանց բանասիրաց….» (թարգմ.՝ Ղուկաս վրդ. Խարբերդցու) երկերին: Ա գրքի տիտղթ-ին՝ «Նախ պարունակի աստ շրջանն մշտնջենաւոր՝ տարեկան զեկուցմանց: Եւ ապա՝ Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց….»: 2-րդը Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների գործն է, նախորդի հետ մտնում է Է-ի մեջ (216 էջ, 12º, 11 x 6 սմ):

1752-ին նույն տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Էֆիմերտէ եւ տարերարանութիւն», Բ-ին՝ «Գրգուկ, որ կոչի Էֆիմերտէ» (477 էջ, 12º, 12 x 6 սմ):


1772-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրգուկ, որ կոչի Էֆիմերտէ …» (456 էջ, 12º, 11,6 x 6,2 սմ):

1796-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (456 էջ, 12º, 11,8 x 6,3 սմ):


1797–99-ին Աստրախանում՝ Արղությանի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (354 էջ, 8º, 12,8 x 7 սմ):

1798-ին Կալկաթայում՝ Հովսեփ Ստեփանոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (508 էջ, 4º, 13,9 x 7,8 սմ):


Տպագրվել է նաև Մոսկվայում (1831, Լազարյան ճեմ. տպ.), Շուշիում (1854, Միւնաս Տարոնիճյանի տպ., 1867, Հայոց հոգևոր տեսչության տպ.), Կ. Պոլսում (1878, ա. տպ., հայատառ թուրք., 1884, ա. տպ.), Ռոստովում (1885, Հովնան Տեր-Աբրահամյանի տպ.,), Թիֆլիսում (1886, Մովսես Վարդանյանի տպ., 1898, Մ՚նացական Մարտիրոսյանի տպ.), Թիֆլիսում (1914, «Էպոխա» տպ.), Երևանում (1992) ևն:



«Էրիվանսկիե օբյավլենիյա», *1900–17, Երևան*




Սուքիաս Էփրիկյանի *«Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան»-ի (հ.1, 1902, Վնտ.) փիփղոսաթերթը*



«Գրգուկ, որ կոչի **Էֆիմերտէ»** *(1798, Կալկաթա) գրքի փիփղոսաթերթը*

Ը



Ը, հայ. այբուբենի 8-րդ տառը, անվանումը՝ «ըթ»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ տարրերից. կարճը երկարի աջ կողմում է՝ հավասար բարձրությամբ, իրար են միանում վերին ծայրերից, իսկ լայնը դարձյալ երկարի աջ կողմում է՝ ստորին ծայրից ցած, և երկարի ստորին ծայրին է միանում վերին ծայրով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ը, որպես այբուբենի 8-րդ տառ, նշանակել է ութ և ութերորդ, բյուրի նշանով (Ը՝)՝ 80 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ը-մաս 8-րդ):

«ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՑՈՅՑ ՍԲ ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ», պարբերագիրք: Կ. Պոլսի Սբ Փրկիչ հիվանդանոցի տեսչության հրատ.: Լույս է տեսել 1884–97, 1900–10, 1924–49-ին (հրատարակվել է նաև «Ընդարձակ օրացոյց ազգային հիւանդանոցի», «Տարեցոյց ազգային հիւանդանոցի» վերնագրերով): Խմբագիրներ՝ Բյուզանդ *Քեչյան*, Հրանդ *Ասատուր*, Նազարեթ *Տաղավարյան*, Արշակ *Ալպոյաճյան*, Թորոս *Ազատյան*, Մ. Չուխաճյան, Արտաշես *Գալփակճյան*, Հ. Քեշիշյան, Պ. Մանուելյան, Տ. Տեր-Մարգարյան: Տպագրել է բժշկ., առողջապահ. հոդվածներ, նաև գրական-բանասիր. նյութեր:

«ԸՆԿԵՐ», հաս., գրական շաբաթաթերթ: Հրատարակվել է Թիֆլիսում 1906–14-ին (ընդմիջումներով): Խմբագիր՝ Սեդրակ *Թառայան:* Քարոզել է աշխարհաքաղաքացիություն, բարոյական ինքնակատարելագործում, զորեղ անհատի՝ «գերմարդու» պաշտամունք: Հոդվածներ է տպագրել Լ. Տոլստոյի, Հ. Հելմհոլցի, Մ. Եկմալյանի և ուր., նաև Գևորգյան ճեմարանի մասին:

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՔ ԸՆԴԴԷՄ ԿՐՕՆԻ», տպագրվել է 1759-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում:

«ԸՆՏԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԷՐ», բարոյախոս., մանկավարժ. և գրական հանդես (սկզբում՝ կիսամսյա, ապա՝ ամենամսյա): Լույս է տեսել Կ. Պոլսում 1854–55-ին: Խմբագիր՝ Վ. Սոֆյալյան: Հայ կանանց դաստիարակությանը և բարոյական կրթությանը վերաբերող առաջին պատկերազարդ պարբ-ն է: Անդրադարձել է ընտանիքում և հասարակության մեջ կնոջ դերի բարձրացման, հոգևոր ու մտավոր կյանքի հարստացման, սիրո և ազատության խնդիրներին: Հետևել է Ժ.-Ժ. Ռուսոյի և ժամանակի եվրոպ. առաջադեմ մանկավարժության սկզբունքներին:



«Ընտանիք և դպրոց», *2007-ից, Երևան (№ 5, 2012)*

«ԸՆՏԱՆԻՔ», բարոյագիտ. կիսամսյա հանդես: Լույս է տեսել Կ. Պոլսում 1883–84-ին: Խմբագիրներ՝ Արամ *Աշճյան*, Սիմոն *Գարամաճյան:* Անդրադարձել է կանանց կրթության, պարտականությունների, ազգ. սովորույթների և ավանդույթների պահպանման հարցերին: Կրոնաբարոյական, խրատ. նյութերից զատ՝ տպագրել է նաև գեղ. գործեր, գրական, գիտ., բժշկ., մանկավարժ. հոդվածներ, զրույցներ: Աշխատակցել են Ռ. Պերպերյանը, Հ. Հինդլյանը, Ե. Անդրեասյանը և ուր.:

«ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ԴՊՐՈՑ», գիտամեթոդ. ամսագիր: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 2007-ից Երևանում: Խմբագիր՝ Վլադիմիր Կարապետյան: Անդրադառնում է ընտանիքում երեխայի դաստիարակության հիմնահարցերին:

Թ

Թ, հայ. այբուբենի 9-րդ տառը, անվանումը՝ «թո»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 երկար և դրանց միջև ստորին մասի լայն տարրերից. հորիզոն. նուրբով երկարներն իրար են միանում վերին ծայրերից, իսկ լայնն իր 2 ծայրերից 2 փոքրիկ նուրբերով միանում է աջ երկարին: Ունի երկաթագիր, բոլորգիր, գրչագիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Թ, որպես այբուբենի 9-րդ տառ, նշանակել է ինը և իններորդ, բյուրի նշանով (Թ҃)՝ 90 000: Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Թ–մաս 9-րդ):

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Հովսեփ [1873, գ. Վերին Ագուլիս (այժմ՝ Նախիջևանում)–14.1.1957, Ժնև], մանկավարժ, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել Մոսկվայի համալսարանը: Դասավանդել է Լազարյան ճեմարանում, Բաքվի, Ախալցխայի, Բաթումի, Թիֆլիսի հայկ. դպրոցներում: 1931-ին Թեհրանում մի խումբ մտավորականների աջակցությամբ հիմնադրել է *«Ալիք»* շաբաթաթերթը. խմբագրել է մինչև 1935-ը: 1937–38-ին տպագրել է «Նաւասարդ» երկամսյա, 1943–46-ին՝ «Լոյս» ամենամսյա գրական-գիտ. (երկուսն էլ՝ Տաճատ *Պողոսյանի* հետ) հանդեսները, 1949–53-ին՝ «Արփի» գրական-գիտ., հաս. ամսագիրը, 1950–53-ին՝ ամսագրի մանկ. հավելվածը:

Լոյս է տեսել Թ-ի «Հին Յունաստանի առասպելները եւ կրօնական հաւատալիքները» (1955, Թեհրան, «Մոդեռն» տպ.) գիրքը:

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Հրանտ Հովհաննեսի, **Թաթոս** [ծ. 20.4.1940, գ. Արևշատ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (2008): Պրոֆ. (2008-ից): Ավարտել է ՀՊՄԻ (1965): 1970–75-ին աշխատակցել է «Գիտություն և տեխնիկա», «Գարուն» (1-ին մրց.՝ շապիկի ձևավորման համար, 1972), 1995–96-ին՝ «Նոր-Դար», 2009–12-ին՝ «Աղբյուր», 2011-ին՝ «Ցոլքեր» ամսագրերին:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Շաթիրյանի «Խարան» (1997), Խ. Մանուկյանի «Բիբլիական ընդմիջումներ», Ա. Մարտիրոսյանի «Ժամերգություն» (երկուսն էլ՝ 2001), Ս. Գալստյանի «Օվսաննա-օրհնություն առ Աստված» (2003), Հ. Սահյանի «Քարե պատարագ» (2004), Հ. Միքայելյանի «Սասնա ծռեր» (2006), Ե. Պետրոսյանի «Ձոն ծաղկանց» (2009), Խ. Հարությունյանի «Մուտք», Ս. Սանոյանի «Կայացման քառուղիներում» (երկուսն էլ՝ 2010), Ս. Արունի «Մեզ» (2012) և այլ գրքեր:

ՀԱԳ-ի «Հակոբ Մեղապարտ» (2009), ՀՀ մշակույթի նախարարության (2010), ՀՀ ԿԳՆ (2011) ոսկե մեդալներ, ՀՀ վարչապետի հուշամեդալ (2011):





Հրանտ Թադևոսյան. *Ե. Պետրոսյանի «Ձոն ծաղկանց» (2009, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի փիփղոսաթերթը*



Շահեն Թաթիկյանի *«Բալենի» (1980, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



«Թալին աշխարհ», *1932-ից, Թալին*



Արմեն Թախտաջյան

ԹԱԹԻԿՅԱՆ Շահեն Ստեփանի (1.10.1924, Թիֆլիս–19.3.1992, Երևան), արձակագիր, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1985): Ավարտել է ԵՊՀ (1947): 1968–71-ին եղել է Հեռուստառադիոպետկոմի «Երևան» կինոմիավորման տնօրեն և գլխ. խմբագիր, 1974–77-ին՝ «Արարատ» շրջ. թերթի, 1977–80-ին՝ *«Սովետական Հայաստան»* ամսագրի խմբագիր:

Լույս են տեսել Թ-ի «Նրա ճանապարհը» (գիրք 1–4, 1956–91), «Բալենի» (1980), «Երիցս խաչվածը» (հ. 1–2, 1985–86) վեպերը, «Կրակի պատը» (1959), «Կապույտ երկնքի և կորած բարեկամության մասին» (1961), «Ինչ բարի են լինում ճայերը» (1969), «Մեկը բազմապատկած միլիոնով» (1977) պատմվածքների, վիպակների ժող-ները: Թ-ի սցենարներով նկարահանվել են կինո-նկարներ («Արշակը», «Ապրեցեք երկար», «Ոսկի և հող»): Թարգմանել է Է. Մ. Ռեմարկի, Լ. Բորիսովի և ուր. ստեղծագործություններից:

Ռուս. հրատարակվել է Թ-ի «Վերջին զարդաքանդակը» (1956), «Ոսկի և հող» (1983) գրքերը:

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1987:

ԹԱԹԻԿՅԱՆ Վարդգես [1888, ք. Տրապիզոն (Թուրքիա)–6.4.1973, Երևան], բանաստեղծ, դրամատուրգ, լրագրող: 1907-ին եղել է «Աշակ» թերթի գրաշար, 1910-ին՝ «Մոծակ» շաբաթաթերթի խմբագիր, 1936–52-ին՝ ՀՊԹ տնօրեն, *«Անահտուհի»* ամսագրի խմբագիր: Բանաստեղծություններ է տպագրել «Կոհակ» (Կ. Պոլիս) ամսագրում:

Լույս են տեսել Թ-ի «Մտքեր եւ պատկերներ» (1919, Իզմիր), «Պատկերներ» (1931), «Փոթորկալի ճամփաներով» (1970) պատմվածքների ժող-ները, «Դեպքեր և դեմքեր. հիշողություններ» (1961) հուշագրությունը:

Հանդես է եկել նաև Ցոլակ, Մոծակ, Մկրատ, Վազր-Թաթ ծածկանուններով:

«ԹԱԼԻՆ ԱՇԽԱՐՀ», հաս-քաղ., տնտ., մշակութ. կիսամսյա թերթ (մինչև 1990-ը՝ երկօրյա): Լույս է տեսնում 1932-ից Թալինում (մինչև 1990-ը՝ ՀԿԿ Թալինի շրջկոմի և ժողպատգամավորների շրջխորհրդի պաշտոնաթերթ, 1932–53-ին՝ «Բոլշևիկյան դրոշով», 1953–90-ին՝ «Կոմունիզմի դրոշով», 1990–2001-ին՝ «Թալին»): Խմբագիրներ՝ Խնկանոս Դանիելյան, Ռուբեն Վրթանեսյան, Հովհաննես Պողոսյան, Բարկեն Հարոյան, Ղազար Ղազարյան, Սուրեն Դավթյան, Համլետ Խաչատրյան (1992–ից): Անդրադառնում է տարածաշրջանի սոցիալ-տնտ., կրթամշակութ., մարզ. առօրյային, հիմնախնդիրներին, անվանի հայրենակիցներին, ներկայացնում է երիտասարդ ստեղծագործողներին:

ԹԱԽՏԱՋՅԱՆ Արմեն Լևոնի [5.5(10.6).1910, Շուշի–13.11.2009, Ս. Պետերբուրգ], բուսաբան: Կենսբ. գիտ. դ-ր (1944), պրոֆ. (1944), ԽՍՀՄ ԳԱ (1991-ից՝ ՌԳԱ), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1971, թղթ. անդամ՝ 1943-ից): Գիտ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է Թիֆլիսի մերձարևադարձային մշակաբույսերի համամիութ. ինստ-ը (1932):

Մասնակցել է միութ. «Բույսերի կյանքը» (ռուս., Մ., հ. 1–6, 1974–82, 5–6-րդ հատորների գլխ. խմբագիր) բազմահատորյակի լույսընծայմանը: Թ-ի խմբագրությամբ հրատարակվել են «Հայաստանի ֆլորան» (ռուս., հ. 1–8, 1954–87), «Երևանի ֆլորան» (ռուս., 1972) երկերը: Թ-ի «Ծաղկավոր բույսերի բազմազանությունը և դասակարգումը» (անգլ., 1997) աշխատությունը ճանաչվել է դարի հրատ. (Հենրի Ալան Գլիսոնի մրց.):

Կենսբ. գիտ-ների միջազգ. միության բուս. բաժանմունքի և Բույսերի տաքսոնոմիայի գծով միջազգ. ընկերակցության նախագահ (երկուսն էլ՝ 1975-ից), Լոնդոնի Լիննեյան ընկերության (1967-ից), ԱՄՆ-ի և Ֆինլանդիայի ԳԱ (1971-ից), Գերմանիայի բնագետների «Լեոպոլդինա» ակադ-ի (1972-ից) անդամ:

ԽՍՀՄ Սոց. աշխատանքի հերոս (1990):

ԽՍՀՄ ԳԱ Վ. Կոմարովի անվ. (1969) և ԽՍՀՄ Պետ. (1981), Ալերտոնի (1990) և Հենրի Շոուի (1997, երկուսն էլ՝ ԱՄՆ) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2005):

Երկ. Высшие растения, т. 1, М.–Л., 1956; Основы эволюционной морфологии покрытосеменных, М.–Л., 1964; Система и филогения цветковых растений, М.–Л., 1966; Происхождение и расселение цветковых растений, Л., 1970; Флористические области Земли, Л., 1978; Система магнолиофитов, Л., 1987; Flowering Plants: Origin and Disperse, Edinburgh, 1969; Floristic Regions of the World, California, 1986.

Գրկ. Академику А. Л. Тахтаджяну 70 лет, «Вестник АН СССР», № 10, 1980; Армен Леонович Тахтаджян, М., 1982.

ԹԱՀՄԻԶՅԱՆ Նիկողոս Կիրակոսի (9.5.1926, Աթենք–30.8.2011, Փասադենա, ԱՄՆ), երաժշտագետ, խմբագիր-հրատարակիչ: Արվեստագիտ. դ-ր (1980), պրոֆ. (1987): Արվ. վաստ. գործիչ (1984): 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է Երևանի կոնսերվատորիան (1956): 1960–90-ին՝ Մատենադարանի գիտաշխատող, համագործակցել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության հետ (հեղինակներից և խորհրդատու): 1972–90-ին դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում: 1990-ից ապրել է ԱՄՆ-ում:

Լույս են տեսել Թ-ի «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ» (1973), «Երաժշտության տեսությունը հին Հայաստանում» (ռուս., 1977), «Մակար Եկմալյան: Կյանքն ու ստեղծագործությունը» (1981), «Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում» (1982), «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը. V–XV դդ.» (1985), «Երաժշտությունը հայկական Կիլիկիայում» (1989), «Կոմիտասը և հայ ժողովրդի երաժշտական ժառանգությունը» (1994), «Հայ երգի գոհարներ: Ոսկեփորիկ» (կազմ., խմբ. և առաջաբ.՝ Թ-ի, 1982, 1994), «Սայեաթ-Նովան եւ հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտութիւնը» (1995, Փասադենա), «Արդի խազաբանութիւն» (2003, Ե.) աշխատությունները:

ԹԱՂԻԱԴՅԱՆ Մեսրոպ Դավթի [2(14).1.1803, Զորագյուղ (այժմ՝ Երևանի շրջագծում)–10(22).6.1858, Շիրազ (Իրան), թաղված է հայկ. եկեղեցու բակում], գրող, հրապարակախոս, մանկավարժ, պատմագիր: Սովորել է Էջմիածնի միաբանությունում: Ավարտել է Կալկաթայի անգլ. եպիսկոպոս. ճեմարանը (1830):

1831–34-ին դասավանդել է Էջմիածնի միաբանությունում, 1834–36-ին՝ Նոր Ջուղայի Սբ Փրկչյան դպրոցի տնօրեն: 1838–39-ին դասավանդել է Կ. Պոլսում: Պատրիարքից հալածվելով՝ 1839-ին վերադարձել է Կալկաթա, անգլ. եպիսկոպոս. ճեմարանում եղել է տպարանի հայկ. բաժնի վարիչ: 1845-ին այնտեղ հիմնադրել է Արարատյան ընկերության տպարանը: 1845-ին հիմնադրել և մինչև 1848-ը խմբագրել է *«Ազգասէր»* շաբաթաթերթը:

Կալկաթայում լույս է ընծայել Պետրոս Նախիջևանցու (Բերդումյանց) «Աստուածանմանութիւն» (1827) աշխատությունը, Հ. Գրովտիոսի «Ճշմարտութիւն քրիստոսական հաւատոյ» (1829, լատ-ից) գրքի, Ռ. Հեբերի «Պաղեստին» (1830, անգլ-ից) պոեմի թարգմանությունները և իր «Դիցաբանութիւն» (1830) գրքույկը, «Մեսրովբեան այբբենարան» (1840), «Մեսրովբեան շարադրիչ հայ եւ անգղիական լեզուաց» (1840, բոլորն էլ՝ Եպիսկոպոս. ճեմ. տպ.), «Մեսրովբեան առաջնորդ մանկանց», «Կարգ եւ կանոնք սուրբ Սանդուխտ դպրոցի օրիորդաց եւ պարոնկաց», «Ճառ դաստիարակութեան օրիորդաց», «Վկայաբանութիւն սրբոյն Սանդխտոյ...» (չորսն էլ՝ 1847, Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.) գիտամանկավարժ. ձեռնարկները, «Պատմութիւն հին Հնդկաստանի» (մաս 1, 1841, Կալկաթա, Եպիսկոպոս. ճեմ. տպ.) և «Պատմութիւն Պարսից» (հ. 1, 1846), «Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց...» (1847), «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» (1847), «Համառօտ քերականութիւն հայկազեան լեզուի» (1848, չորսն էլ՝ Արարատյան ընկ. տպ.) աշխատությունները, «Թութակ Թաղիադեանց» (1847) բանաստեղծությունների ժող-ը, «Վէպ Վարդգիսի տեառն Տուհաց» (1846) և «Վէպ Վարսենկան՝ սկայուհւոյ Աղուանից» (1847), «Սօս եւ Սոնդիպի» (1847, Արարատյան ընկ. տպ.), Թիֆլիսում՝ «Եղերերգութիւն յօրհաս Թանկայ Թաղիադեանց» (1893, Մ. Շարաձեի տպ.) երկերը: Հրատարակվել են նաև Թ-ի «Գեղարվեստական երկերը» (1965), «Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր» (1975), «Դիվան: Անտիպ օրագրություն, երկեր և քերթվածներ, վավերագրեր, նամակներ» (1993), ժող-ները:

«Ճանապարհորդութիւն... ի Հայս» (1847, նույն տպ.) աշխատության մեջ Թ. առաջին անգամ արծարծել է հայրենադարձության գաղափարը: Պարսկ-ից թարգմանել է «Զուարճախօս առակք պարսից» (1846, Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.) ժող-ը:

Թ. ռոմանտիզմի սկզբնավորողներից է հայ գրակ-յան մեջ:

Գրկ. **Մկրեան Յ.,** *Կենսագրութիւն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց Երեւանեցւոյ, Թ., 1886:* **Նանումյան Ռ.,** *Մեսրոպ Թաղիադյան, Ե., 1947:* **Սանթրոսյան Մ.,** *Մեսրոպ Թաղիադյանը մանկավարժ, Ե., 1959:* **Միրզաբեկյան Զ.,** *Մեսրոպ Թաղիադյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1971:*




Նիկողոս Թահմիզյանի *«Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Մեսրոպ Թաղիադյան




Մ. Թաղիադյանի *«Վէպ Վարսենկան...» (1847, Կալկաթա) գրքի տիտղոսաթերթը*



Հրանտ Թամրազյան



Հրանտ Թամրազյանի *«Հայ քնարերգուներ» (գիրք 1, 1996, Ե., «Նաիրի») գրքի կազմը*



Հրաչյա Թամրազյանի *«Զվարթ գիտություն» (2001, Ե., «Նաիրի») գրքի կազմը*

ԹԱՂԻԱՆՈՍՅԱՆ Երվանդ Թադևոսի (1864, Երևան–1948, Երևան), հաս. գործիչ, խմբագիր, թարգմանիչ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Սոսկվայի համալսարանում: 1895–99-ին եղել է Սոսկվայի Լազարյան ճեմարանի մատենադարանապետը: 1899-ից աշխատել է Բաքվի Հայոց մարդասիր. և Հայոց հրատարակչ. ընկերություններում: 1919–20-ին Բաքվում խմբագրել է «Նաշե վրեմյա» (ռուս.) օրաթերթը: 1921-ին, որպես ՀՕԿ-ի քարտուղար, Հ. Թումանյանի հետ մեկնել է Կ. Պոլիս: 1922–28-ին եղել է Երևանի հանրապետ. գրադարանի (այժմ՝ ՀԱԳ) տնօրեն: Թարգմանել է Ֆ. Ռաբլեի, Ժ. Վեռնի, Մ. Գորկու ստեղծագործություններից:

ԹԱՄՐԱԶՅԱՆ Հրանտ Սմբատի [6.9.1926, գ. Աչաջուր (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–9.2.2001, Երևան], գրականագետ, քննադատ: Բանասիր. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1964), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): Գիտ. վաստ. գործիչ (1970): Հրաչյա ***Թամրազյանի*** հայրը: Ավարտել է ԵՊՀ (1948): 1954-ից դասավանդել է ԵՊՀ-ում. 2001-ին՝ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Թ-ի «Շիրվանզադե: Կյանքը և գործը» (1961, 1978), «Սիամանթո» (1964, 2003), «Երիտասարդ Չարենցը» (1974, ՀԳՄ 1-ին մրց.՝ 1974), «Դերենիկ Դեմիրճյան» (1977), «Վահան Տերյան» (1985), «Հայ քննադատություն» (գիրք 1–3, 1983–92, ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. մրց.՝ 1986), «Եղիշե Չարենց» (1987), «Հակոբ Ասատուրյան» (1993), «Հայ քնարերգուներ» (գիրք 1, 2, 1996, 1999), «Քույչակի բանաստեղծական աշխարհը» (2001) աշխատությունները, «Գրական ուղիներում» (1962), «Պոեզիան պատմության քառուղիներում» (1971), «Հովհաննես Թումանյան: Բանաստեղծն ու մտածողը» (1995) մենագրությունները, «Գրական դիմանկարներ և հոդվածներ» (գիրք 1, 2, 1975, 1998) ժող-ները, «Հուշերիս հետ» (2002) հուշագրությունը:

Հեղինակ է նաև միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի «Հայ գրականություն» (1957, 1969, ՀՀ Պետ. մրց.՝ 1974) և բուհ. «Սովետահայ գրականության պատմություն» (1984) դասագրքերի:

Երկ. Ընտիր երկեր: Բանասփեղծության հազարամյա խորհուրդը, Ե., 1986: Երկեր, հ. 1–4, Ե., 2006–13: Գեղարվեստական լեզվի և բովանդակության նոր ըմբռնումները հայոց միջնադարում, Ե., 1988:

Գրկ. **Ղուկասյան Ա.,** *Հրանտ Թամրազյանի կյանքն ու գործը, Ե., 2006: Հրանտ Սմբատի Թամրազյան: Կենսագրություն, Ե., 1996:*

ԹԱՄՐԱԶՅԱՆ Հրաչյա Հրանտի (ծ. 5.12.1953, Երևան), բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, հրատարակիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1999), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2014): Հրանտ ***Թամրազյանի*** որդին: Ավարտել է ԵՊՀ (1976): 1988–91-ին՝ ***«Նաիրի»*** հրատարակչության գլխ. խմբագիր, 1991–93 և 1997–2007-ին՝ տնօրեն, 1993–95-ին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր հրատարակչ. գործի վարչության պետ, 1995–97-ին՝ ՀՀ տեղեկատվության նախարար, 2007-ից՝ Մատենադարանի տնօրեն:

Լույս են տեսել Թ-ի «Ապակե քաղաք» (1985), «Նոր տոմար» (1991), «Լռության ծես» (1996), «Զվարթ գիտություն» (2001), «Հարասություններ» (2003), «Ասացող երկիր» (2007), «Մայր հողացք» (2008), «Սրբազան խավար» (2011), «Մարդ-ակնթարթ» (2012) բանաստեղծությունների ժող-ները, «Անանիա Նարեկացի. կյանքը և մատենագրությունը» (1986), «Նարեկյան դպրոցը» (1999), «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը» (2004, ռուս.՝ 2011), «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը» (2005, ֆրանս.՝ 2007), «Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը» (2007) աշխատությունները: Թարգմանել է Վ. Մայակովսկու, Ս. Եսենինի, Բ. Պաստեռնակի ստեղծագործություններից:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1991), «Գրական վաստակի համար» (2007), ԹՄՄ Վահան Թեքեյանի անվ. (2010), ՀՀ նախագահի (2012) մրց-ներ: ՀՀ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 2-րդ աստիճանի (2011) և ՀՀ ԳԱԱ ոսկե (2013) մեդալներ:

Երկ. Բանասփեղծություններ, էսսեներ, գրական դիմանկարներ, հոդվածներ (ժող.), Ե., 2010:

Գրկ. **Բախչինյան Ֆ.,** *Հրաչյա Թամրազյանի բանաստեղծական աշխարհը, Ե., 2009:* **Ստեփանյան Ռ.,** *Հրաչյա Թամրազյանի պոեզիան, Ե., 2012:*

ԹԱՆԱՔ, գրելու համար գործածվող ներկանյութերի ջրային լուծույթներ՝ թանձրացնող և հականեխիչ հավելումներով: Ըստ նշանակության լինում են դպրոց., գրասենյակային և հատուկ, ըստ գույնի՝ սև, կապույտ, կանաչ, կարմիր, մանուշակագույն են Թ-ներ:

Թ-ի գործածությունը Եգիպտոսում հայտնի էր մ. թ-ից 3500 տարի առաջ: Հին հույները Թ. պատրաստել են թթվեցրած գինուց և փղոսկրի մրից:

Թ. հայ մատենագրության մեջ կոչվել է **մելան** (<հուն. melan–սևադեղ): Հայաստանում գործածվել են բուս. և քիմ. Թ-ներ, որոնք դարերի ընթացքում պահպանել են իրենց գույնը: Էրեբունի ամրոցի որմնանկարները վկայում են, որ մ. թ. ա. VIII դ-ում Թ. (ինչպես նաև տարբեր ներկեր) Հայաստանում արդեն կիրառվել են որմնանկարչության մեջ: Կարմիր Թ. ստացել են որդան կարմիրից, լայքայից, տորոնից, աղբրաց արյուն ծաղկից, քրքումից կամ դրանց խառնուրդներից, մանուշակագույնը՝ որդան կարմիրից, մանուշակից ևն, կանաչը՝ շուշան և հիրիկ ծաղիկներից, կապույտը՝ ինդիգոյից: Որպես սոսնձանյութ օգտագործել են տարբեր խեժեր: Կարմիր Թ. գործածվել է զարդագրերի ու խորագրերի համար: Կարմիր Թ-ով գրել են թագավորը և կաթողիկոսը (հրովարտակներ և կոնդակներ):

XVIII դ-ի գործիչ Եղիա Կարնեցու «Գիրք արհեստից» (1720) աշխատության մեջ և քիմ. բովանդակությամբ ժող-ներում կան Թ-ների պատրաստման տարբեր բաղադրատոմսեր:

Գրկ. Հարությունյան Ա., Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում, Ե., 1941: Աբրահամյան Ա., *Հայոց գիր և գրչություն, Ե., 1973:*



Նիկողայոս Թաշճյան

ԹԱՇՃՅԱՆ Նիկողայոս (1841, Կ. Պոլիս–9.9.1885, Կ. Պոլիս), երաժշտագետ, կոմպոզիտոր, մանկավարժ, խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Կ. Պոլսի Խասգյուղի Ներսեսյան վարժարանում, աշակերտել Գաբրիել *Երանյանին,* որի հետ 1861–63-ին խմբագրել և հրատարակել է *«Քնար հայկական»* հանդեսը: 1875-ին եղբոր՝ Հակոբի հետ լույս է ընծայել «Նուագք օսմանեան» կիսամսյա (վիմատիպ) թերթը: Երաժշտագիտ. հոդվածներ է տպագրել «Ժամանակ» (Կ. Պոլիս) պարբ-ում: Թ. նոր հայկական ձայնագրությամբ վերաձայնագրել է հայկ. հոգևոր երգերը, որոնք գրառել է 1873-ին Էջմիածնում՝ Մ. Եկմալյանի, Պ. Ճեպեճյանի օգնությամբ («Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի», 1874, հրտ.՝ 2012, «Ձայնագրեալ շարականն հոգեւոր երգոց... Հայաստանեայց», 1875, «Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ», 1877): Նշանակալի է նաև Թ-ի «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց»-ը (1874), «Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց...» (1882) աշխատությունը:



Ն. Թաշճյանի *«Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց» (1874, Վաղ-պատ) գրքի կազմը*

Թ-ի բոլոր գործերը տպագրվել են Վաղարշապատում՝ Սբ Էջմիածնի տպարանում:

Գրկ. Տնտեսեան Ե., *Նկարագիր երգոց..., ԿՊ, 1874:* Հիսարլեան Ա., *Պատմութիւն հայ ձայնագրութեան..., ԿՊ, 1914:* Կոմիտաս, *Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941:* Աթայան Ռ., *Հայկական խազային նոտագրությունը, Ե., 1959:* Թահմիզյան Ն., *«Արարատ»-ն ու երգ-երաժշտության հարցերը, «Էջմիածին», 1968, № 11–12, 1969, № 3–5:*



«Ընկեր» (1906–14, Թիֆլիս, խմբագիր՝ **Սեդրակ Թառայան***) շաբաթաթերթի գլխագիրը*

ԹԱՌԱՅԱՆ Սեդրակ Ավագի [1862, Շամախի (այժմ՝ Ադրբեջան)–25.11.1916, Թիֆլիս], գրող, գրականագետ, խմբագիր-հրատարակիչ, թարգմանիչ: Փիլ-յան դ-ր: Սովորել է Շամախու միսիոներ. դպրոցում, ապա՝ Լայպցիգի համալսարանում: 1906–14-ին Թիֆլիսում խմբագրել է գրական-հաս. *«Ընկեր»* շաբաթաթերթը (ընդհատումներով):

Լույս են տեսել Թ-ի «Երկու վէպիկներ եւ մի քանի ոտանաւորներ» (1887, Բաքու, Սահակ Բ. Տեր-Հովհաննիսյանի տպ.), «Ընտանիքի կեանքը» (1899, Բաքու, Հ. Գ. Գյուլբասարյանի տպ.) վիպակների, բանաստեղծությունների ժող-ները, «Թագնուած կայծեր» (1903, Բաքու, «Արոր» տպ.), «Հայ ժողովրդի արհեստագործութիւնը» (1898, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Գէօտէ. համառօտ կենսագրութիւն» (1900, նույն տպ.), «Բանաստեղծ-իդեալիստ Շիլլէր» (1903, ՍՊբ, «Պուշկինյան» տպ.), «Գուտեմբերգ» (1911, Թ., Նվարդ



«Թատրոն», *1874–77, Կ. Պոլիս*



«Թատրոն», *1893–1905, Թիֆլիս (№ 2, 1893)*



«Թատրոն բարեկամ մանկանց», *1876–78, Կ. Պոլիս*



«Թատրոն եւ երաժշտութիւն», *1910–1917, Բաքու (№ 1, 1916)*

Աղանյանի տպ.) աշխատությունները ևն: Հեղինակ է նաև «Ազրայիլ», «Սոկրատ», «Արշալոյս», «Քրիստոսի փոխանորդը» դրամաների: Թարգմանել է Ֆ. Շիլլերի, Հ. Զուդերմանի, Դ. Դեֆոյի և ուր. գործերից:

ԹԱՎԱԴՅԱՆ Տիգրան Գուրգենի [ծ. 27.1.1970, ք. Սուխում (Աբխազիա)], խմբագիր: 1993-ին ավարտել է Կուբանի պետ. բժշկ. ինստ-ը: 1993–96-ին՝ *«Մաշկոց»* թերթի, 1996-ից՝ *«Երկրամաս»* ամսաթերթի (2002-ին ճանաչվել է ՌԴ-ի լավագույն էթնիկ. պարբ.) հիմնադիր-խմբագիր:

Թ. Կրասնոդարի երկրամասի էթնոքաղաքագիտ. հետազոտությունների և «Համշեն» կենտրոնների տնօրենն է:

«ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ», կիսամսյա տեղեկատվ. պարբ.: Հայաստանի թատեր. գործիչների միության (մինչև 1987-ը՝ Հայկ. թատեր. ընկերություն) հրատ.: Լույս է տեսել 1953–2005-ին Երևանում: Խմբագիրներ՝ Լևոն Խալաթյան, Սուրեն Հարդենյան, Յաշա Չախոյան: Տպագրել է մայրաքաղաքի թատրոնների ծրագրերը, ծանոթացրել հանրապետության թատեր. կյանքին, լուսաբանել միության գործունեությունը ևն:

«ԹԱՏՐՈՆ», երգիծ. եռօրյա թերթ, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1874–77-ին Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրեն՝ Հակոբ ***Պարոնյան***: Ծաղրել է պոլսահայ սահմանադրականներին, քննադատել սուլթան. Թուրքիայի հայահալած քաղաքականությունը, Եվրոպայի դիրքորոշումը Արլ. հարցում, Սան Ստեֆանոյի դաշնագիրը, Բեռլինի վեհաժողովի (երկուսն էլ՝ 1878) որոշումները: «Թ.»-ում տպագրվել են Հ. Պարոնյանի պամֆլետներն ու ֆելիետոնները, իսկ «Կենսագրականք» և «Նկարագրություն դիմաց և բնավորությանց մայրաքաղաքային թաղերու ազգայնոց» խորագրերով պարբերաբար լույս տեսած նրա նյութերը հետագայում ամբողջացվել են «Ազգային ջոջեր» և «Պտույտ մը Պոլսոյ թաղերուն մէջ» գրքերում:

«ԹԱՏՐՈՆ», գրական, թատեր. պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1893–95, 1899–1901, 1903, 1905-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Ալեքսանդր ***Թարխանյան:*** Տպագրել է պիեսներ, հոդվածներ բեմարվ-ի տես. հարցերի շուրջ: Զգալի տեղ է հատկացրել հայ թատրոնի պատմությանը, ռուս. և արևմտաեվրոպ. թատեր. կյանքի նորություններին: Աշխատակցել են Գ. Սունդուկյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Թումանյանը, Շիրվանզադեն, Վ. Փափազյանը, Սուրացանը և ուր.:

«ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ», երկշաբաթյա մանկ. պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1876–78-ին Կ. Պոլսում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Հակոբ ***Պարոնյան***, Կ. Յազմաճյան: Մանկ. առաջին հայ. պարբ-ներից է: Տպագրել է բնագիտ-յանը, պատմությանը, աշխարհագրությանը վերաբերող հոդվածներ, Մ. Սամուրյանի և Ռ. Պերպերյանի ստեղծագործություններից: Ունեցել է հանելուկների, զվարճալիքների և խաղերի բաժին:

«ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ», թատեր., երաժշտ., գրական-գեղ. պատկերազարդ երկամյա հանդես: Լույս է տեսել 1910–17-ին Բաքվում: Խմբագիր-հրատարակիչ՝ Անտոն ***Մայիլյան:*** Տպագրել է ուսումնասիրություններ հայկ. թատրոնի ու երաժշտության վերաբերյալ, նշանավոր դերասանների ու կոմպոզիտորների կենսագրություններ, հուշեր, ռուս և եվրոպացի գրողների գործեր, Պ. Ադամյանի նամակները, Լեոյի «Հայ արուեստը» աշխատությունը: Աշխատակցել են Կոմիտասը, Գ. Չմշկյանը, Գ. Բաշինջաղյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը և ուր.:

«ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԱԽԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան: Ընդօրինակվել է 1232-ին (գրիչ՝ Տիրացու, ծաղկող՝ Գրիգոր, ըստ Սրբուհի Տեր-Ներսեսյանի՝ Հս. Հայաստանի քաղաքներից կամ վանքերից մեկում): XIV դ-ի սկզբին պատկանել է Վերին Խաչենի իշխան Գրիգոր Դոփյանին և նրա կնոջը՝ Սյունյաց Տարսայիճ իշխանի դուստր

Ասփային, որը ձեռագիրը նվիրել է Խադավանքին: 1916-ին Գարեգին *Հովսեփյանը* Ուտիքի Թարգմանչաց վանքից (այստեղից էլ՝ անվանումը) այն բերել է Սբ Էջմիածին (այժմ՝ Մատենադարանում, ձեռ. № 2743): Գ. Դոփյանի պատվիրած ոսկե կազմը չի պահպանվել (այժմ՝ կաշեկազմ): «Թ. Ա.» բաղկացած է 374 թերթից, մանրանկարներից առանձնանում են Մատթեոս և Հովհաննես ավետարանիչների դիմանկարները, 10 խորանը, 4 անվանաթերթը, 7 ամբողջ. էջերի տերուն. պատկերները, 15 լուսանցազարդ մանրանկարները, ուշագրավ են նաև առանձին լուսանցազարդեր և զարդագրեր: «Թ. Ա.» գունագեղության կատարելությամբ և կերպարների արտահայտչականությամբ հայկ. մանրանկարչության բացառիկ ձեռագրերից է:

Գրկ. **Հովսեփյան Գ.**, *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, մաս 1, Ե., 1983:* **Дурново Л.**, *Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979;* **Der Nersessian S.**, *La miniature arménienne au XIII^e siècle, «Archélogia», № 126, janvier, 1979.*



«Թարգմանչաց Աւետարան». *Ղուկասի Ավետարանի անվանաթերթը (1232, Մատենադարան, ձեռ. № 2743)*

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՇԱՐԺՈՒՄ, V դ-ում Հայաստանում հայկ. դպրոցներ բացելու, քրիստ. գլխ. գրքերը և այլ երկեր հայ. թարգմանելու, եկեղեց. ծեսերը հայացնելու, ինքնուրույն հայալեզու դպրություն սկզբնավորելու համար ծավալված շարժումը: 387-ին կաթողիկոս դարձած ***Սահակ Պարթևի*** նպատակը երկիրը հուն. և ասոր. ազդեցությունից ազատելն էր, հուն. և ասոր. պաշտոն. գրագրությունից հայ-ի անցնելը, հայալեզու դպրոց ու գրակ. ստեղծելը և հայացած եկեղեցու միջոցով ժողովրդի ինքնության պահպանմանը նեցուկ լինելը: ***Մեսրոպ Մաշտոցի***՝ 405-ին հայկ. տառերի գյուտից հետո սկսվել է Աստվածաշնչի թարգմանությունը, որը մշակումներով ու լրացումներով տևել է շուրջ 30 տարի: Գլխ. թարգմանիչն ու ղեկավարը Սահակ Պարթևն էր, մյուս թարգմանիչները՝ Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Կորյունը, Ղևոնդ Վանանդեցին, Հովհան Եկեղեցացին: Աստվածաշնչի հայ. թարգմանությունը ֆրանսիացի գիտնական Լա Կրոզը (1661–1719) անվանել է «թարգմանությունների թագուհի»:

V դ-ում հուն-ից և ասոր-ից թարգմանվել են բազմաթիվ այլ երկեր՝ եկեղեցու հայրերի՝ աստվածաբաններ Աթանաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Սեբերիանոս Գաբաղացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եվսեբիոս Կեսարացու, Եփրեմ Խուրի Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Պրոքորի, Դիոնիսիոս Թրակացու, Փիլոն Եբրայեցու, Տիմոթեոս Կուզի, Պորփյուրի, Արիստոտելի, Պլատոնի գործերից, որոնց մի մասը պահպանվել է շնորհիվ հայ. թարգմանությունների (հուն. բնագրերը կորել են):


Թ. շ-ման ընթացքում սկզբնավորվել է հայ ինքնուրույն գրակ-ը. Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցն ստեղծել են հոգևոր ու ծիս. երկեր, Կորյունը, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Եզնիկ Կողբացին, Եղիշեն և ուր.՝ իրենց աշխատությունները: Թ. շ-ման շնորհիվ Հայաստանի տարբեր վայրերում բացվել են հայալեզու դպրոցներ:

Հայ առաքել. եկեղեցին թարգմանիչների համար սահմանել է «Սրբոց թարգմանչաց» 3 տոն. Բուն բարեկենդանին նախորդող կիրակիից առաջ՝ շաբաթ օրը, նշվում է Սբ Սահակ Ա Պարթևի, հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի, հոկտ-ին՝ Մեսրոպ Մաշտոցի և աշակերտ-թարգմանիչների հիշատակը:


ՀԳՄ-ի նախաձեռնությամբ 1979-ից (հոկտ-ի 2-րդ շաբաթ օրը) նշվում է Թարգմանչաց տոնը. 2008-ից, ամեն տարի, Մատենադարանից Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի է տարվում ***«Շոխոնց Աւետարանը»***, որպեսզի ուխտավորները հաղորդակցվեն Ավետարանի հրաշագործություններին:



Հատված «Հայոց այբուբեն» գոբելենի նախապատկերից (1980–81, նկարիչ՝ Գ. Խանջյան)



«Թարգմանութիւն գրոյ միոյ պարոն Շամիր Սուլթանումեանէ...» *(1793, Մադրաս) նամակի 1-ին էջը*



«Թարգմանութիւն պրիվէլէկացն հայոց» *(1800, Աստրախան) հրամանագրի 1-ին էջը*



Ռուբեն Թարումյանի *«Ջրույցներ համակարգչի մասին» (2003, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

«ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՅ ՄԻՈՅ ՊԱՐՈՆ ՇԱՄԻՐ ՍՈՒԼԹԱՆՈՒՄԵԱՆԷ...», Շահամիր Սուլթանումյանի պատասխանն է անգլիացի բժիշկ Ջեյմս Անդերսենի հարցերին: Տպագրվել է 1793 (՞)-ին Մադրասում՝ առանց տպարանի հիշատակության՝ «Թարգմանութիւն գրոյ միոյ պարոն Շամիր Սուլթանումեանէ առ մեծ բժիշկն քաղաքիս պարոն Ջեմս Անդրսանն» (4 էջ, 4º, 20 x 15,5 սմ) խորագրով: 1–3-րդ էջերում Շահամիր Սուլթանումյանը պատասխանում է Ջեյմս Անդերսենին՝ ասելով, որ հայ ժողովուրդը և հայոց լեզուն հնագույնն են: Իր նամակին նա կցել է (4-րդ էջը) Պետր Մուրիլոյի՝ 1752-ին Մադրիդում տպագրած մի հոդված, որով նույնպես հաստատվում է, որ հայերն են Հայաստանի բնիկները, և հայոց լեզուն Ադամի լեզուն է, իսկ հայերի մայրաքաղաքը՝ Նախիջևանը:

Տպագրվել է նաև *«Ազդարար»*-ի 1794-ի 1-ին համարի 11–14-րդ էջերում:

«ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՊՐԻՎԷԼԷԿԱՑՆ ՀԱՅՈՑ», Եկատերինա II կայսրուհու հրամանագիրը: Տպագրվել է 1800-ին Աստրախանում՝ Հովսեփ Արղությանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Թարգմանութիւն պրիվէլէկացն հայոց... բնակեցելոցն ի զանազան գաւառն Մեծին Ռուսաստանու...» (46 էջ, 4º, 17 x 11,7 սմ):

ԹԱՐԳՅՈՒԼ (Թարգյուլյան) Լյուսի Սահակի (1905, Վան–7.10.1955, Երևան), գրող, խմբագիր: Սովորել է Թիֆլիսի Հովնանյան դպրոցում: Ավարտել է ԵՊՀ (1929), Մոսկվայի խմբագրահրատարակչ. ինստ-ը (1933): 1927-ին՝ *«Հայաստանի աշխատավորուհի»* ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Թ-ի «Ճակատում» (1932), «Հսկաների շարքում» (1937), «Կոմիտաս» (1956) վեպերը, «Դեպի Իսպանիա» (1939) վիպակը, «Երաժիշտը» (1942), «Լուսնի սոնատ» (1945), «Ծաղկավան» (1948), «Պատմվածքներ» (1954), «Թռչող ծաղիկներ» (1955) պատմվածքների ժող-ները:

ԹԱՐԽԱՆՅԱՆ Ալեքսանդր Նիկողայոսի [1865, ք. Ղզլար (Դաղստան)–29.7(11.8). 1903, Բաթում], թարգմանիչ, թատեր. գործիչ, խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Վլադիկավկազի ռեալ. դպրոցում, եղել է ուսուցիչ: 1891–92-ին՝ Թիֆլիսի Հայոց դրամատիկ. ակումբի խաղացանկային հանձնաժողովի անդամ, 1893–1905-ին՝ *«Թատրոն»* հանդեսի հիմնադիր-խմբագիր:

Թարգմանել է Հ. Իբսենի «Ուրվականներ», Հ. Զուդերմանի «Պատիվ», Վ. Սարդուի և Մորոյի «Սադամ Սան Ժեն», Վ. Սարդուի «Տոսկա» և այլ ստեղծագործություններ:

ԹԱՐՈՒՄՅԱՆ (Հակոբյան) Ռուբեն Խաչատուրի (ծ. 24.2.1963, Երևան), ճարտարապետ, տառաստեղծ, թարգմանիչ: Տառաստեղծների միության հիմնադիր-նախագահ (2006): Ավարտել է ԵՊԻ (1985): 1988–92-ին աշխատել է ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ում, 1992–93-ին՝ «Գինդ» հրատարակչությունում (տառատեսակների ձևավորող), 1993–94-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթում, 1994–98-ին՝ ՀՀ նախագահի աշխատակազմում (համակարգչային խմբի ղեկ.): 1991-ին ստեղծել է Xerox Ventura Publisher էջադրող համակարգի հայ. առաջին տառատեսակները: Հեղինակ է լայնորեն տարածված «ԱրԹարուման» (ԱրԹարրուման Իշխան, Մատենագիր, Գրքի Նոր, Արեգ, Գրիգ ևն), «Արիան ԱՄՅու» տառատեսակների ընտանիքների, նաև բազմաթիվ այլ (Dejavu, Verdana, Times New Roman, Arial, Courier New ևն) հայկ. տառաշարերի: Մասնակցել է մի շարք ծրագրային միջերեսների հայացմանը (Microsoft Windows գործավար համակարգ, Microsoft Offise փաթեթ, ծրագրի ղեկ.՝ Թ.): Ձևավորել է կայքեր: Նախապատրաստել է Հայաստանի ՀՍՏ-34.001–06 «Գրանշանների կոդավորում և ստեղների դասավորություն» ստանդարտը (Վ. Մխիթարյանի, Հ. Մելիքյանի և ուր. հետ):

Ուսումնասիրությունները վերաբերում են տառաստեղծման օրինաչափություններին և հայ. այբուբենի ծագումնաբանության հարցերին:

Լույս են տեսել Թ–ի «Սկզբից էր տառը» (1998), «Ջրույցներ համակարգչի մասին» (2003) գիտահանրամատչելի գրքերը: Թարգմանել է Ջ. Վինյոլայի «Ճարտարապետության հինգ սյունակարգերի կանոնը» աշխատությունը:

«Մաշտոց–1600» մրցանակաբաշխության 1–ին մրց. (2005):

ԹԱՓԱԼՅԱՆ Քրիստափոր Կնյազի [20.9.1910, գ. Կոփ (Բուլանըխ գավառ)–2.11.1967, Երևանի, գրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1939), Մոսկվայի Մ. Գորկու անվ. ինստ–ի գրակ–յան բարձրագույն դասընթացները (1950): Հայրեն. պատերազմի (1941–45) տարիներին եղել է 89–րդ հրաձգային հայկ. Թամանյան դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթի պատ. քարտուղար:

Լույս են տեսել Թ–ի «Վիկտորիա» (1937, 1981), «Կյանքի արշալույսը» (1939, 1957, 1981), «Ոսկե հովիտ» (1955), «Պատերազմ» (հ. 1–4, 1946–65), «Հայրենաշեն» (գիրք 1, 2, 1963, 1973) վեպերը, «Հայրենիք» (1942) պատմվածքների ժող–ը:

ԹԵԹՐԻՃՂԱՐՈՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՄՈՒԼ, Վրաստանի Թեթրիծղարոյի շրջկենտրոնում (նախկինում՝ Բելի Կյուչ կամ Աղբուլաղ) տպարան հիմնադրվել է 1930–ին: Նույն թվականից հրատարակվել է Վրաստանի առաջին շրջ. եռալեզու (հայ., ռուս. և վրաց.) «Կոլխոզային ուղի» (1930–61) թերթը: Հիմնադիր–խմբագիր՝ Հրաչյա Կոստանյան: Թերթի հայ. էջը որոշ ընդհատումներով տպագրվել է մինչև 1947–ը: 1934–35–ին լույս է տեսել նաև «Հանուն սոցիալիստական խոզաբուծության» (հայ. և ռուս.) թերթը:

Գրկ. **Մաղալյան Վ.,** *Հայ գեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Ե., 2012:*

ԹԵՄՈՒՐՃՅԱՆ Վարդան Սողոմոնի [27.2.1903, գ–ք. Կամարակ (Սեբաստիայի նահանգ)–27.4.1960, Երևան], ազգագրագետ, խմբագիր: 1922–ից ապրել է Ֆրանսիայում: 1944–47–ին՝ ***«Նոր կեանք»*** (Մարսել) շաբաթաթերթի խմբագիր: 1947–ին հայրենադարձել է: Աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտ–յան և ազգագրության ինստ–ում:

Լույս են տեսել Թ–ի «Գորգագործությունը Հայաստանում» (1955) և «Գամիրքի հայերը» («Հայ ազգագրություն և բանահյուսություն», պր. 1, 1970) պատմաազգագր. աշխատությունները:

ԹԵՈԴԻԿ (Լաբճինճյան Թեոդորոս Գրիգորի, 5.3.1873, Կ. Պոլիս–24.5.1928, Փարիզ), գրող, բանասեր, հրատարակիչ–խմբագիր: Արշակուհի ***Թեոդիկի*** ամուսինը: Սովորել է Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանում, Պերպերյան վարժարանում, ավարտել ամերիկյան Ռոբերտ քոլեջը:

Աշխատակցել է «Ծաղիկ», «Հանրագիտակ», «Մանզումէի Էֆքեար» (հայատառ թուրք.), «Սուրհանդակ», «Ժամանակ», «Ժողովուրդ», «Վերջին լուր» պարբ–ներին: Կնոջ հետ 1907–ին հիմնադրել և մինչև 1929–ը հրատարակել է ***«Ամէնուն տարեցոյցը»*** տարեգիրքը, որի շուրջ համախմբել է Դ. Վարուժանին, Կոմիտասին, Հ. Ածառյանին և ուր.: Թ–ի նշանավոր գործերից է «Տիպ ու տառ» (1912, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր–Ներսեսյան տպ., նմանահանություն՝ Ե., 2012, թուրք.՝ 2012, Ստամբուլ, «Բիրզամանլար» հրտ.) աշխատությունը, որը նվիրված է հայոց գրերի ստեղծման ու տպագրության պատմությանը:

1915–ին թուրք. իշխանությունները Թ–ին աքսորել են Դեյր էզ Զոր. նրան ազատել են հայ մարտիկները: Կ. Պոլիս վերադառնալուց հետո կազմել և խմբագրել է «Յուշարձան ապրիլ տասնըմէկին [24–ին]» (1919, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., Ստամբուլ, 1939, 2010) աշխատությունը, որտեղ անուն առ անուն ներկայացված են Մեծ եղեռնի զոհ հայ մտավորականները, «Զուլումը եւ մեր որբերը» (1920, ԿՊ, Կ. Քեշիշյանի տպ.), «Յուշարձան նահատակ մտավորականութեան» (1985, ա. տ., 1990, ա. տ., 2010, Թեհրան), «Գողգոթա. հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին» (1966, Անթիլիաս, 1980, Բոստոն, 1985, Նյու Յորք), «Ազգը չէ մեռած, եւ անհնար է որ մեռնի» (1985, Անթիլիաս) աշխատությունները: Թ. գրել է նաև արևմտահայ կյանքը պատկերող նովելներ, դիմաստվերներ, ուղեգր. նո-



Քրիստափոր Թափալցյանի *«Պատերազմ» (հ. 3, 1959, Ե., Հայպետհրատ) գրքի տիտղոսաթերթը*



Թեոդիկ




Թեոդիկի *«Տիպ ու տառ» (1912, Կ. Պոլիս) գրքի կազմը*



Արշակուհի Թեոդիկի
«Ամիս մը ի Կիլիկիա» (1910, Կ. Պոլիս) գրքի կազմը



«Երջանիկ» պարեգրքի (հ. Բ, 1942, խմբագիր՝ **Բագարատ Թևյան***)*
շապիկը



Ավետիս Թերզիբաշյանի
«Անդրանիկ» (1942, Փարիզ) գրքի կազմը

թեր («Ճանչուոր դէմքեր», «Կաղանդ», 1910, ԿՊ, Օ. Արզումանի տպ.): 1923-ին հաստատվել է Փարիզում, որտեղ հրատարակել է «Ամէնուն տարեցոյցի» վերջին հատորները: Թ-ի «Պոլսոյ հայէվարը» բանաստիր. աշխատությունը (ձեռագիր) 1905-ին արժանացել է Իզմիրյան գրական 1-ին մրց-ի:

Հանդես է եկել նաև Սողոթե, Մնոստիկ, Թեոդիակ, Թ. Ա. ծածկանուններով:

Գրկ. **Ադանալյան Մ.,** ***Թեոդիկի «Ամենուն տարեցոյցը» (1907–1929), Ե., 1981:***

ԹԵՈԴԻԿ (Ճեզվեճյան) Արշակուհի (1875, Կ. Պոլիս–2.1.1922, Լոզան), բանասեր, խմբագիր-հրատարակիչ: ***Թեոդիկի*** կինը: Ավարտել է Կ. Պոլսի Նունյան-Վարդուհյան վարժարանը, սովորել Անգլիայի և Ֆրանսիայի բարձրագույն կրթ. հաստատություններում: Ամուսնու հետ 1907-ին հիմնադրել է ***«Ամենուն տարեցոյցը»*** տարեգիրքը և մասնակցել նրա հրատարակմանը: Ստեղծել է Կ. Պոլսի Տիկնանց միությունը:

Լույս են տեսել Թ-ի «Ամիս մը ի Կիլիկիա» (1910, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան տպ.) հրապարակախոս-վավերագր. երկը, «Արդի բարոյագիտութիւնը» (1911, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) դասագիրքը:

Երկ. Témoignages inédits sur les atrocités turques commises en Arménie, P., 1920.

ԹԵՎՅԱՆ Բագարատ (1893, Կ. Պոլիս–1967, Կ. Պոլիս), գրող, լրագրող, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Կեդրոն. (1910–14) և Սկյուտարի Պերպերյան վարժարաններում: 1922–23-ին եղել է Կ. Պոլսի Սեմերճյան ճեմարանի, 1924-ին՝ Պերպերյան վարժարանի տնօրեն: Աշխատակցել է «Ճակատամարտ», «Շեփոր», «Ժամանակ», «Զարթօնք», «Բանբեր», «Մարմարա», «Նոր օր» պարբ-ներին: 1926–28-ին՝ ***«Անուշապուր»*** (1927-ից՝ «Անուշապուր-Պատկեր»), 1926-ին, միաժամանակ՝ «Կեսուր» երգիծաթերթերի, 1928–67-ին՝ ***«Երջանիկ»*** տարեգրքի, 1939-ին՝ «Պատկեր» գրական շաբաթաթերթի, 1946-ին՝ «Պարտէզ» մանկապատանեկան ամսաթերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Թ-ի «Թօսուն Միրիկ...» (1930, ԿՊ, Մելքոն Հովակիմյանի տպ.), «Բանտարկեալի մը օրագիրը» (1933), «Զապանակի վրայ» (1951), «Մեծ քաղաքին զառիվերը» (1965, Ստամբուլ, «Հերմոն» տպ.) վեպերը, «Հանգրուանը» (1943), «Շուշիկին կաղանդը» (1954), «Զարթիկ հօրքուրին տունը» (Ադրինե Տատրյանի հետ, 1955, «Վարոլ» տպ., բոլորն էլ՝ Ստամբուլ) թատերգություները: Թարգմանել է Վիյամ Քոյի «Փոցտամի գաղտնիքները» (հրտ.՝ 1924, ԿՊ, Մ. Հովակիմյանի տպ.) վեպը:

Հանդես է եկել նաև Բոռ, Մահակ, Մեղա Բակուր, Բիր, Զապել Տերտերյան, Պրպտող, Բ. Թայիսս, Բ. Բիլակ, Բրոֆ. Ներսես Ճիլաճյան կեղծանուններով:

ԹԵՐՋԻԲԱՇՅԱՆ Ավետիս Հարությունի (2.9.1873, Վան–31.3.1947, Փարիզ), գրող, հաս-քաղ. գործիչ: Սովորել է Վանի Հիսուսյան և Երամյան վարժարաններում: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո ընտրվել է Վանի քաղաքապետ: 1915-ի Վանի ինքնապաշտպան. կռիվներից հետո անցել է Կովկաս: 1917-ին՝ Արևմտահայ ազգ. խորհրդի, ապա՝ Հայաստանի ապահովության խորհրդի անդամ: 1921-ին Կ. Պոլսում մասնակցել է ՌԱԿ-ի ստեղծման աշխատանքներին: 1924–26-ին՝ ***«Ապագայ»*** (Փարիզ) թերթի խմբագիր:

Փարիզում լույս են տեսել Թ-ի «Արծիւը իր բոյնին մէջ» (1938), «Նուպար» (1939), «Անդրանիկ» (1942, երեքն էլ՝ Տեր-Հակոբյանի տպ.) հուշագրությունները, «Աթոսի հարիւրեւմէկ պատմուածքները» (1946, «Արաքս» տպ.) պատմվածքների ժող-ը, «Երկու տարի Ատիս Ապէպայի մէջ» վեպը [ա. թ.]:

Հանդես է եկել նաև Աթոս կեղծանվամբ:

ԹԵՐՋԻԲԱՇՅԱՆ Վահրամ Վահանի [6(18).1.1898, Վան–16.5.1964, Երևան], գրականագետ, թատերագետ, լրագրող: Բանասիր. գիտ. դ-ր (1962): Արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1916): 1927–29-ին՝ ***«Նոր ուղի»*** (Երևան) հանդեսի պատ. քարտուղար:

Լույս են տեսել Թ-ի «Շեքսպիրը հայերեն» (1956), «Պետրոս Դուրյան» (1959), «Ժասմեն» (1959), «Հայ դրամատուրգիայի պատմություն» (հ. 1, 2, 1959, 1964) աշխատությունները:

ԹԵՐՋՅԱՆ Թովմաս Հակոբի (21.10.1840, Կ. Պոլիս–8.2.1909, Կ. Պոլիս), բանաստեղծ, դրամատուրգ, մշակույթի գործիչ: Սովորել է Կ. Պոլսի Մխիթարյան, Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարաններում: Տիրապետել է անգլ-ին, ֆրանս-ին, իտալ-ին, հուն-ին, թուրք-ին: 1858-ից Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում դասավանդել է հայ. և ֆրանս.:

Լույս են տեսել Թ-ի «Սանդուխտ» (1862, ԿՊ, Թադևոս Տիվիթճյանի տպ., 1871, Վնտ., Սբ Ղազարի տպ., 1881, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) ողբերգությունը, Աստվածաշնչի հիման վրա գրված «Յովսէփ Գեղեցիկ» (1872, Վնտ., Սբ Ղազարի տպ., 1911, ԿՊ, Հ. Փալագաշյանի տպ.) դրաման, «Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ» (առաջաբ. և ծնթգր.՝ Ա. Չոպանյանի, հ. 1–2, 1929, Վնտ.) բանաստեղծությունների ժող-ը: Գրել է Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի լիբրետոն (1868, հրտ.՝ 1871, ԿՊ, Պողոս Քիրիշչյանի տպ.): Հուն-ից թարգմանել է Անակրեոնի տաղերը (1871, նույն տպ.), կազմել ֆրանս-ի [«Նոր քերականութիւն գաղղիերէն լեզուի» (1868, ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), «Գործնական քերականութիւն ֆրանսերէն լեզուի» (1873, Վնտ., Սբ Ղազարի տպ., հրատարակվել է բազմիցս)] և հայ-ի [«Քերականութիւն աշխարհաբար լեզուի» (1882, ԿՊ, Գևորգ Զարդարյանի տպ., 1884, ԿՊ, Սամվել Պարտիզպանյան և ընկ. տպ.), «Նախնական ընթերցարան պատկերազարդ» (1884, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.)] դասագրքերը:

1992-ին Երևանում հրատարակվել է Թ-ի «Երկերը»:



Թովմաս Թերզյանի *«Քերականութիւն աշխարհաբար լեզուի» (1884, Կ. Պոլիս) գրքի կազմը*

ԹԵՐՋՅԱՆ Կլարա Վահրամի (ծ. 10.8.1929, Երևան), լրագրող, գրող: Ավարտել է ԵՊՀ (1953): 1953–74 և 1979–2003-ին աշխատել է Հայաստանի հանրային ռադիոյում, 1974–79-ին «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում՝ բաժնի վարիչ:

Լույս են տեսել Թ-ի «Բույլ մեծաց» (2001), «Փրկված մասունքներ» (2006), «Ճակատագրեր, ճանապարհներ ու կարոտ» (2008), «Չվող թռչունները վերադառնում են իրենց թևերով», «Այս երկիրը մերն է ու վերջ» (երկուսն էլ՝ 2014) և հրապարակախոս. նյութերի այլ ժող-ներ, «Երկրի և երկնքի փոխաձայնակցումը» (2009) հուշագրությունը, «Տարիների շուրջպարը» (2011), «Երբ սերն ի աշխարհս եկավ» (2002), «Երկխոսություն կաղնու հետ» (ռուս., 2013), «Ռադիոժպիտներ» (2004) արձակ բանաստեղծությունների, ակնարկների, մանրապատումների, պատմվածքների այլ ժող-ներ, «Վերադարձի ճանապարհները» (2003) վավերագր. վիպակը, «Իմ ոսկեգույն ձկնիկը» (ռուս., 1966, Մ., մոլդ.՝ 1975, Քիշնև), «Ծիծաղի հատիկներ» (2007), «Լույսի, գույնի, սիրո մոլորակը» (2010) և մանկ. երկերի այլ ժող-ներ:

ՀԳՄ Մ. Սարգսյանի անվ. գրական մրց. (2008), «Գրական վաստակի համար» մեդալ (2009):



Կլարա Թերզյանի *«Բույլ մեծաց» (2001, Ե., «Գրաբեր») գրքի կազմը*

ԹԵՐՋՅԱՆ Մարգարիտ Սիմոնի [ծ. 21.2.1929, ք. Ռուսե (Բուլղարիա)], թարգմանչուհի: 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է ԵՊՀ (1951): Թ-ի թարգմանությամբ լույս են տեսել բուլղար դաս. և ժամանակակից գրողներ Դ. Դիմովի («Ծխախոտ», գիրք 1, 2, 1978, 1980), Ա. Գույյաշկու («Ավակում Զահովի կյանքն ու արկածները», 1980), Ա. Դոնչևի («Երբ ժամ էր ընտրության...», 1982), Բ. Ռայնովի («Միայն տղամարդկանց համար», 1984), Դ. Տալևի («Պրեսպանյան կոչնակներ», 1986) և ուր. շուրջ 3 տասնյակ վեպեր, Վ. Ստամատովի «Մակույկով մինչև Արարատ» (1989) էսսեն ու «Պատմվածքներ և զրույցներ ծովից» (2012) ժող-ը, Ս. Սևանի «Ռոդոսթո, Ռոդոսթո...» (գիրք 1–3, 2002) վեպը: Կազմել է «Հայ-բուլղարերեն, բուլղարերեն-հայերեն բառարանը» (2006) և «Բուլղարերեն-հայերեն բառարանը» (2013):

Բուլղարիայի կառավարության «Մադարայի հեծյալ» 1-ին աստիճանի շքանշան (2002):



Մարգարիտ Թերզյանի *«Բուլղարերեն-հայերեն բառարան»-ի (2013, Ե., «Լինգվա») կազմը*

ԹԵՐՋՅԱՆ Պերճ Տիգրանի (ծ. 17.11.1938, Կահիրե), հրապարակախոս, ազգ. և հաս. գործիչ: Ավարտել է Կահիրեի Մխիթարյան նախակրթարանը (1951), Սարոնիթ հայրերի վարժարանը (1956), Էյն Շամս համալսարանի համագործակց. և վարչ. գիտ-ների ինստ-ը (1963), հաճախել Կահիրեի ամերիկյան համալսարան (1964–65): 1969-ին հիմնադրել է «African Press» (1996-ից՝ African Press S. A. E. բաժնետիր. ընկ.) տպարանը: 2002-ից՝ ՀԲԸՄ-ի եռամսյա «Տեղեկատու» հանդեսի, 1998–2009-ին՝ «Արեւ» օրաթերթի արաբ.

ամսօրյա հավելվածի, 2010-ից՝ ՀԲԸՄ-ի «Արեգ» արաբ. ամսօրյայի խմբագր. խորհրդատու:

Լույս են տեսել Թ-ի «Եգիպտահայ հայացքներ. պատմության, քաղաքականության և մշակութային ժառանգության մասին» (արաբ., 2008), «Յետադարձ անդրադարձ» (2010) հրապարակախոս. նյութերի ժող-ները, «ՀՀ Եգիպտոսի դեսպանատան ծննդոցը» (2012) աշխատությունը:

Սատենադարանի «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալ (1999), Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2010), ՀԲԸՄ «Պատվո անդամ» տիտղոս (2011), ՀՀ «Մխիթար Գոշ» (2011), ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» (2013) մեդալներ:



Պերճ Թերզյանի *«Յետադարձ անդրադարձ» (2010, Կահիրե) գրքի կազմը*

ԹԵՐԹ, տպագիր պարբ. հրատ.: Այլ հրատ-ներից տարբերվում է ծավալով, չափերով և պարբերականությամբ (օրաթերթ, երկօրյա, շաբաթաթերթ, երկշաբաթաթերթ, ամսաթերթ ևն): Թ. ներկայացնում է այս կամ այն կուս-յան, սոցիալ. խմբի գաղափարախոսությունը, անհատ անձանց տեսակետներն ու գործունեությունը, տպագրում է քաղ. փաստաթղթեր, գեղ., գիտահանրամատչելի, գեղ-փաստագր. ստեղծագործություններ, ընթերցողների նամակներ ևն: Աշխատանք-ները ղեկավարում են գլխ. խմբագիրը և պատ. քարտուղարը:

Թ-ի հեռավոր նախատիպերն անտիկ և Հին Արևելքի քաղաքների հաս. վայրերում փակցվող լուրերի ու պաշտոն. հաղորդագրությունների ամփոփագրերն են: XVI դ-ում Վենետիկում ստեղծվել են նորությունների բյուրոներ, որոնք կազմել են պալատ. կյանքի, քաղաքի անցուդարձերի, առևտրի մասին ձեռագիր ամփոփագրեր: XVII դ-ում Թ-երն սկսել են լույս տեսնել պարբերաբար՝ թեև սահմանափակ տպաքանակով:

1794-ին Մադրասում լույս է տեսել հայ. առաջին պարբ-ը՝ ***«Ազդարար»*** ամսագիրը, 1818-ին Վենետիկում՝ ***«Դիտակ Բիւզանդեան»***, 1832-ին Կ. Պոլսում՝ ***«Լրոյ գիր»*** թերթերը:

Այնուհետև հայ. Թ-եր են լույս տեսել Հայաստանում և հայկ. գրե-թե բոլոր գաղթավայրերում: 220 տարվա ընթացքում Հայաստանում և տարբեր երկրներում՝ Հնդկաստանում (Մադրաս, Բոմբեյ, Կալկա-թա), Եվրոպայում (Վենետիկ, Վիեննա, Փարիզ, Մարսել, Լոնդոն, Սո-ֆիա, Բուխարեստ), Թուրքիայում (Կ. Պոլիս, Զմյուռնիա, Սեբաստիա, Այնթապ), Եգիպ-տոսում (Ալեքսանդրիա, Կահիրե), ԱՄՆ-ում (Բոստոն, Նյու Յորք, Լոս Անջելես, Ֆրեզ-նո, Ֆիլադելֆիա), Լիբանանում (Բեյրութ), Սիրիայում (Հալեպ), Իրանում (Թեհրան, Թավրիզ), Ռուսաստանում (Մոսկվա, Թեո-դոսիա, Աստրախան), Վրաստանում (Թիֆ-լիս), Ադրբեջանում (Բաքու), Արգենտինայում (Բուենոս Այրես), Բրազիլիայում (Սան Պաու-լո, Ռիո դե Ժանեյրո) և այլուր, հրատարակվել են շուրջ 4 հզ. անուն պարբ-ներ:



Հայ. Թ-երի քանակն ավելացել ու որակը բարելավվել է XX դ-ում, հատկապես՝ խորհրդ. տարիներին: 1985-ին ՀԽՍՀ-ում հրատարակվել է 92 անուն թերթ (ավելի քան 1, 5 մլն տպա-քանակով) ու նույնքան ամսագիր և այլ պարբ-ներ: 1998-ից հրատա-րակվում են նաև թերթերի էլեկտրոնային տարբերակներ և «մաքուր» էլեկտրոնային թերթեր («Ա¹⁺», «Դար», «7 օր», «Բլոգ», «Հետք», «Թերթ. ամ» ևն): 2014-ին ՀՀ-ում լույս են տեսել շուրջ 200, Արցախում՝ 26, Սփյուռքում՝ ավելի քան 100 թերթ ու ամսագիր:

ԹԵՔԵՅԱՆ Հարություն [1910, գ-ք. Բեհեսնի (Խարբերդի նա-հանգ)–1995, Մոնտեվիդեո (Ուրուգվայ)], բառարանագիր, խմբագիր: Ծայրագույն վարդապետ: Աստվածաբանության դ-ր: Սովորել է Զմմառի վանքի ժառանգավորաց վարժարանում (1925), ավարտել Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանը: Խմբագրել է ***«Աւետիք», «Սիա-***

սիա» շաբաթաթերթերը: 1948-ից հաստատվել է Մինտեվիդեոյում, ղեկավարել է հայ կաթոլիկ առաքելությունը, 1968–82-ին՝ Լատինական Ամերիկայի կաթոլիկ հայերի առաքելության այցելու:

Լույս են տեսել Թ-ի «Առձեռն բառարան սպաներէնէ-հայերէն»-ը (1955, Բ.) և «Բառարան հայերէնէ-սպաներէն»-ը (1984, Բուենոս Այրես):

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԹՄՄ), հիմնադրվել է 1947-ին Բեյրութում, կոչվել է Վահան Թեքեյանի անունով: Հիմնադիրներ՝ ՌԱԿ-ի գործիչներ Հրաչյա Սեդրակյան, Բարունակ Թովմասյան, Գերսամ *Ահարոնյան*, Համբարձում Պերպերյան, Հովսեփ Յոզղաթյան, Հայկաշեն Ուզունյան, Հակոբ Դավիթյան:

ԹՄՄ-ն տպագրում է *«Շիրակ»* ամսագիրը (1956-ից, Լիբանան), *«Սարդարապատ»* (1975-ից, Արգենտինա) և *«Ապագայ»* (1975-ից, Կանադա) շաբաթաթերթերը, գրական-գեղ. ու գիտ. գործեր, ունի «Թեքեյանի ձայն» ռադիո- և հեռուստաժամեր (Մինրեալ, Տորոնտո, Դետրոյտ, Մոնտեվիդեո), մասնաճյուղեր՝ Բեյրութում (Լիբանան), Հալեպում և Դամասկոսում (Սիրիա), Ամմանում (Հորդանան), Սիդնեյում (Ավստրալիա), Լոնդոնում (Անգլիա), Բուենոս Այրեսում (Արգենտինա), Մոնրեալում և Տորոնտոյում (Կանադա), ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում:

Սահմանվել են ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» (1996), «Գերսամ Ահարոնյան» (2006) գրական, «Վարդգես և Ռիտա Պալյան» (1996) մամուլի մրց-ները, «Ադամանդակուռ Արարատ» շքանշանը (1998) ևն:

1990-ի նոյեմբ. 3-ին Երևանում հիմնադրվել է Հայաստանի ԹՄՄ-ն (ՀԹՄՄ)՝ Գյումրիի, Գորիսի, Մասիսի և Շուշիի մասնաճյուղերով: 1997-ից Երևանում գործում է Թեքեյան մշակութ. կենտրոնը:

ՀԹՄՄ վարչության նախագահներ են եղել Վռամ Գրիգորյանը, Սուքիաս Թորոսյանը, Ֆրունզե Դովլաթյանը, Լևոն Մկրտչյանը, Ռուբեն Միրզախանյանը (2003-ից):

ԹԵՔԵՅԱՆ Վահան Գալուստի (21.1.1878, Կ. Պոլիս–4.4.1945, Կահիրե), բանաստեղծ, հրապարակախոս, հրատարակիչ-խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Ներսեսյան, Պերպերյան և Կեդրոն. վարժարաններում: 1905-ին Ալեքսանդրիայում Միքայել *Կյուրճյանի* հետ հիմնադրել է *«Շիրակ»* հանդեսը (1909-ին հրատարակվել է Կ. Պոլսում՝ որպես երկշաբաթաթերթ), 1906-ին Կահիրեում խմբագրել և հրատարակել է *«Նոր ժամանակներ»*, 1915–20-ին Ալեքսանդրիայում խմբագրել է *«Արեւ»*, 1918–20-ին՝ *«Ժողովուրդի ձայնը»*, Կ. Պոլսում 1920–24-ին՝ «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 1922-ին՝ *«Բարձրավանք»*, 1937-ին՝ *«Զարթօնք»* պարբ-ները: Թ. սփյուռքահայ գրակ-յան սկզբնավորողներից է, սոնետի խոշոր վարպետներից:

Լույս են տեսել Թ-ի «Հոգեր» (1901, Փ., Համալսարանի տպ.), «Հրաշալի յաբութիւն» (1914, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս» (1919, Փ., «Վերածնունդ» տպ.), «Սէր» (1933, Փ., «Արաքս» տպ.), «Հայերգութիւն եւ այլ քերթուածներ» (1943, Կահիրե, «Արևի» տպ.), «Տաղարան» (1944, Կահիրե, «Նասիբյան» տպ.), «Յիսուն քերթուած» (1995, Բ., «Սիփան» տպ.), «Ես սիրեցի» (2003, Ե.), «Գաղտնի պարտէզ: Հատընտիր քերթուածներ» (2003, Բ.–Ե.), «Սիրէ սիրով: Բանաստեղծութիւններ» (2006), «Բանաստեղծութիւններ» (2014) բանաստեղծությունների ժող-ները, «Երկերը» (1958, Ե.), «Ամբողջական երկերը» (հ. 1–9, 1949–50, Կահիրե, «Նուպար» տպ.), «Հատընտիրը» (1970, Ե., 1978, Բ.), «Նամականին» (1983, Լոս Անջելես), «Վահան Թէքէեանէն: Մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ» (1987, Բ.) ժող-ը: Գրել է «Եթէ Տէրը կամենայ» (1915–20) վեպը, «Մարի Ֆուրթունի արկածը» (1922) վիպակը, նաև պատմվածքներ, քրոնիկներ, հրապարակախոս. և գրականագիտ. հոդվածներ: Թարգմանել է Վ. Շեքսպիրի սոնետներից, Շ. Բոդլերի, Պ. Վեռլենի, Օ. Ուայլդի, Վ. Հյուգոյի և ուր. բանաստեղծություններից:

Հանդես է եկել նաև Ասուպ, Համշիրակ Բ, Սկայորդի և այլ կեղծանուններով:



Վահան Թեքեյան




«Ամբողջական երկեր»-ի (հ. 7, 1979, Կահիրե) կազմը



«Հատընտիր»-ի (1970, Ե., «Հայաստան») կազմը

Գրկ. **Ասմարյան Լ.**, *Վահան Թեքեյան, Ե., 1971: Վ. Թեքեյան-100: Տարեգրություն: Մատենագիտություն, Ե., 1978:* **Օշական Հ.**, *Վահան Թէքէեան, Բ.,1985:* **Ալպոյաճեան Ա.**, *Վահան Թէքէեան: Իբր հանրային մարդ եւ հրապարակագիր (խմբ. և ծնթգր.՝ Վ. Ղազարյանի), Բ., 1988:* **Հովհաննիսյան Թ.**, *Վահան Թեքեյանի սիրերգությունը, Ե., 1995:*



«Թէօփիլոս» *(1701, Լիվոռնո) գրքի տիտղոսաթերթը*

«ԹԷՕՓԻԼՈՍ», կրոնադավանաբան. գիրք: Տպագրվել է 1701-ին Լիվոռնոյում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Թէօփիլոս այսինքն խօսակցութիւն.…» (240 էջ, 8º, 12,7 x 7 սմ):

«ԹԻ ՎԻ ԱԼԻՔ» (TV ալիք), լրատվ., գովազդային շաբաթաթերթ: Լույս է տենում 2000-ից Երևանում: Խմբագիր՝ Սերգեյ Հարությունյան: Տպագրում է հայկ. հեռուստաընկերությունների և ռուս. 4 հեռուստաալիքի ծրագրերը, հարցազրույցներ, գրական գործեր, անդրադառնում է մշակութ. կյանքին: Ունի նաև «Ժողովրդական բժշկություն» էջ:

ԹԻԵՐԻ (Thierry) Ժան Միշել (1916–2011), ֆրանսիացի բժիշկ և արվ-ի պատմաբան: Կրթությունն ստացել է Փարիզում: Ուսումնասիրել է բյուզ., հայկ., վրաց. արվ-ները և հնագիտություն: Բազմիցս ճամփորդել է Արմ. Հայաստանում, եղել է Արլ. Հայաստանում, Իրանում: Հեղինակ է ֆրանս. «Մեծ Լարուս» հանրագիտարանի «Հայկական արվեստ» և «Վրացական արվեստ» հոդվածների, Վասպուրականի, Մուշի, Կարսի, Սիւնիի և այլ վայրերի հայկ. ճարտ. հուշարձանների մասին աշխատությունների: 1973-ին Վանա լճից հս.՝ Արծվարեր վայրում, հայտնաբերել է VII դ-ի հռիփսիմեատիպ եկեղեցի:

Լույս են տեսել Թ-ի «Միջնադարի հայկական որմնանկարչություն» (հայ., 1973), «Հայկական արվեստներ» (ֆրանս., Պ. Տոնապետյանի հետ, 1987), «Անի» (ֆրանս., Ռ. Հ. Գևորգյանի հետ, 1994, երեքն էլ՝ Փ.) և նրա կնոջ՝ Նիկոլ Թ-ի «Միջնադարի հայկական մանրանկարչությունը» (1973, Ռավեննա) աշխատությունները:

Երկ. Monastères arméniens du Vaspurakan, «Revue des études arméniennes», 1967–70, v. 4–7; La cathédrale des Saints-Apôtres de Kars (930–943), Louvain-P., 1978; La couvent arménien d'Horomos, Louvain-P., 1980; Églises et couvents du Karabagh, Antélias-Liban, 1991.




«Թի Վի ալիք», *2000-ից, Երևան*

ԹԻՐՅԱՔՅԱՆ Հարություն [25.12.1845, Թալաս (Կեսարիա)–2.3.1919, Նյու Յորք], բանասեր, արևելագետ, թարգմանիչ, բժիշկ: Միհրդատ *Թիրյաքյանի* հայրը: Ավարտել է Փարիզի համալսարանի բժշկ. ֆակ-ը: Կ. Պոլսում եղել է հիվանդանոցի գլխ. բժիշկ: 1882–84-ին՝ Կ. Պոլսի Ազգ. ժողովի ատենապետ: 1907-ին հաստատվել է ԱՄՆ-ում: Տիրապետել է զենդ-ին, պահլավ-ին, պարսկ-ին (հին և նոր):

Լույս են տեսել Թ-ի «Հայկական տաղաչափութիւն» (1906, Նյու Յորք, «Արմենիա» տպ.), «Հայերէնի զեղծումները» (1917, Նյու Յորք, Ներսոյի տպ.), «Հայ-երանական ուսումնասիրութիւնք» (1922), «Համասէր եւ կրկնակ խումբեր» (1923), «Չորս պահլաւիկ բնագիրներ» (1957) բանասիր. և լեզվաբ. աշխատությունները: Հեղինակ է նաև «Արիահայ բառարան...»-ի (1914–20, չորսն էլ՝ Վնն., Մխիթարյան տպ.), որտեղ ստուգաբանել է պարսկ. ծագման հայ. բառեր: Թարգմանել է Սաադիի «Կօլէստան կամ Բուրաստան» (1920, Նյու Յորք, «Արմենիա» տպ.) ստեղծագործությունը, Ն. Բուալոյի «Արուեստ քերթողական» (1919, Նյու Յորք, բնագրից) աշխատությունը:

ԹԻՐՅԱՔՅԱՆ Միհրդատ Հարությունի (1885, Կ. Պոլիս–18.7.1979, Նյու Յորք), գրող, թարգմանիչ: Հարություն *Թիրյաքյանի* որդին: Ավարտել է Յյուրիխի համալսարանը: Ապրել է ԱՄՆ-ում: Աշխատակցել է սփյուռքահայ մամուլին, հրատարակել «Միտքի շողեր» (հ. 1, 1965, Բ., «Շիրակ» տպ.) հուշագրությունների, տպավորությունների, հետազոտությունների ժող-ը: Թարգմանել է հատվածներ Ֆիրդուսու «Շահնամե» պոեմից (1951, Նյու Յորք): Խմբագրել և լույս է ընծայել հոր թարգմանություններից և մի շարք անտիպ գործեր:



Ժան Միշել Թիերիի *«Հայկական արվեստներ» (ֆրանս., 1987, Փարիզ) գրքի կազմը*

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Թիֆլիսի առաջին հայկ. տպարանը հիմնադրվել է 1819-ին՝ Ոսկան Երևանցու տպատառերով, որոնք Հոլանդիայում ճամփորդելիս ձեռք է բերել Գևորգ Արծրունին՝ Ներսես Աշտարակեցու խորհրդով: Սկզբում տպագրվել են եկեղեց. հայտարարություններ, կոնդակներ, ցուցակներ ևն: 1823-ին լույս է ընծայվել առաջին գիրքը՝ բժիշկ Դ. Մկրտչյան Կարբեցու «Պատմութիւն եւ խրատ բժշկութեան...» երկը: 1825-ին տպարանն անցել է Ներսիսյան դպրոցին. մինչև 1830-ը գործել է Հարություն *Ալամդարյանի* տնօրինությամբ: Շուրջ 4 տասնյակ հրատ-ներից

ուշագրավ են գեն. Սիպյագինի «Ազդարարութիւն առ Հայս» և «Առաջադրութիւն հայոց նոր սարքուող զօրքի համար» (երկուսն էլ՝ 1827), «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» (գիրք Ա, Բ, 1828), Ս. Զալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (մաս Ա–Բ, 1842, 1858) երկերը, Խ. Աբովյանի «Վէրք Հայաստանի» (1858) վեպը, Հ. Կարենյանի «Բաղդատութիւն պատմութեան Մովսիսի Խորենացւոյ տպագրելոյն ի Վենետիկ ընդ երկուց ձեռագրաց» (1858), Ս. Պալասանյանի «Պատմութիւն հայոց գրականութեան» (1865) աշխատությունները նև: Այստեղ են տպագրվել *«Կռվկաս»* (1846–47), *«Մեղու Հայաստանի»* (1858–61) թերթերը: Տպարանը փակվել է 1860-ական թթ-ի կեսերին:

Երկրորդ՝ Հակոբ և Դավիթ Արզանյանների տպարանը գործել է 1838–43-ին. հրատարակել է Խ. Աբովյանի «Նախաշաւիղ»-ը (1838, առաջին տպագրություն), ժամանակի խոսակցական աշխարհաբարով՝ «Կանոններ Ղրուզինո Իմերետինսկի դուբերնիայի» (1842), Ե. Տեր-Ղուկասյանի «Կանոնք գործածականք» (1843) գրքույկները:

Տպարանատեր Համբարձում *Էնֆիաճյանը* (Գաբրիել Մելքումյանի և ուր. ընկերակցությամբ) 1860–80-ին տպագրել է Խ. Աբովյանի, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Գ. Սունդուկյանի, Րաֆֆու և ուր. երկերի առաջին հրատ-ները, *«Կտունկ Հայոց աշխարհին», «Հայկական աշխարհ», «Փորձ»* պարբ-ները: Տպարանն այնուհետև անցել է Մարկիանոս Ռոտինյանին և 1883-ից մինչև դարավերջ տպագրել շուրջ 200 անուն գիրք, նաև *«Մուրճ»* ամսագիրը: Մինչև 1920-ը հոր գործը շարունակել է որդին՝ Տիգրան Ռոտինյանը:



Հարություն Թիրյաքյանի «Հայերէնի զեղծումները» (1917, Նյու Յորք) գրքի կազմը

Թիֆլիսի հայկական տպագրություն




Հայկ. ամենաարգասավոր և նորագույն սարքավորումներով կահավորված տպարանը Հովհաննես Մարտիրոսյանի և նրա Կոստանդին ու Մնացական որդիներինն էր: 1875–1900-ին նրանք տպագրել են ավելի քան 500 անուն գիրք, *«Արձագանք», «Մշակ», «Մանկավարժական թերթ», «Թատրոն»* պարբ-ները: 1881-ին հիմնադրված Մովսես Վարդանյանի տպարանում տպագրվել են շուրջ 200 անուն գիրք և մի քանի պարբ., Տիգրան *Նազարյանի* «Արոր» (1890–1915) տպարանում, հայ ու համաշխ. գեղ. գրակ-ից բացի, հրատարակվել են նաև գիտահանրամատչելի գրքույկներ, նկարչ. ալբոմներ, վերարտադրություններ, գեղագրության ձեռնարկներ: 1880-ական թթ-ից մինչև XX դ-ի սկիզբը Ա. Մելիք-Շահնազարյանի տպարանում հրատարակվել են *«Նոր-Դար»* լրագիրը և մի քանի տասնյակ գրքեր:


XX դ-ի սկզբին բուռն գործունեություն է ծավալել միակ կին տպարանատեր օրիորդ Նվարդ Աղանյանը (Գյուտ *Աղանյանի* դուստրը):

Հայտնի էին նաև Գաբրիել Պատկանյանի, Հակոբ Արզումանյանի, Ավետիք Թառումյանի, Շապանյանի, Մ. Հակոբյանի, Է. Պողոսյանի և ուր. տպարանները: Մինչև 1920-ը Թիֆլիսում գործել են ավելի քան 30 հայկ. և հայ. գրքեր հրատարակող 20 օտարալեզու (Մ. Շարաձեի, Ծերեթելի և ընկ., Ի. Չանցևի, Յակշատի, Ա. Միխելսոնի և ուր.) տպարաններ:

Կովկասի փոխարքայի գլխ. կառավարչության տպարանը (հիմնադրվել է 1804-ին, ունեցել է ռուս., վրաց., հայ., ֆարսի. տառատեսակներ, տպագրել է Ռուս. կայսրության օրենքներն ու տեղ. իշխանությունների ընդունած որոշումները և տարածել Կովկասի ազգաբնակչության շրջանում. այս փաստը հիմք ընդունելով՝ կարելի է ասել, որ Թիֆլիսում հայկ. տպագրությունն սկզբնավորվել է 1804-ին), հայ-ով պաշտոն. հրատ-ներից բացի, տպագրել է պարբ-ներ, հաս., քաղ., տնտեսագիտ., գեղ. գրքեր՝ Ե. Արծրունու «Խնդիր երկաթէ ճանապարհի վերայ դէպ ի Հնդկաստան» (1872) ուղեգրությունը, Պ. Զուբովի «Ղարաբաղի աստղագէտը...» (1882), Րաֆֆու «Դաւիթ Բեկ» (գիրք 1–3, 1881–82) վե-



Ս. Զալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (մաս Բ, 1858, Ներսիսյան դպրոցի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Սասմայ ծռեր»-ի (գիրք Ա, 1892, Թիֆլիս, Մ. Շարաձեի տպ.) փիփղոսաթերթը

պերը, «Խամսայի մէլիքութիւններ» (1882) ժամանակագրությունը ևն: Հետագայում հայ. գրքեր տպագրվել են «Զարյա Վոստոկա» (նախկին Ա. Մյասնիկյանի անվ.), իսկ «Խորհրդային Վրաստան» (այժմ՝ ***«Վրաստան»***) թերթը և «Կամուրջ» ալմանախը՝ Վրաստանի կոմկուսի ԿԿ հրատարակչության (այժմ՝ Վրաստանի «Սամշոբլո» լրագրաամսագրային հրատարակչություն) տպարաններում:

Գրկ. **Նալբանդյան Վ.,** *Թրխլհին հայ մատենագրության մեջ, Ե., 1958:* **Թէոդիկ,** *Տիպ ու գրատ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համանահանոթյուն):* **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012:* **Մաղալյան Վ.,** *Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Ե., 2012:*

ԹԼԿԱՏԻՆՑԻ [Հարությունյան Հովհաննես, 1860, գ. Թլկատին (Խարբերդի նահանգ)–1915, Մեծ եղեռնի զոհ], գրող, մանկավարժ: Ավարտել է Խարբերդի Սմբատյան վարժարանը: Հիմնադրել է Խարբերդի Ազգ. կեդրոն. վարժարանը (1887) և եղել ցկյանս տնօրեն: Առաջին գործերը (գավառ. թղթակցություններ) տպագրվել են Կ. Պոլսի «Մասիս», «Արեւելք» թերթերում:

Լույս են տեսել Թ-ու «Գլխուդ ջուր դիր» (1896), «Հին հաւատքս» (1895), «Այգիիս փշենին» (1898), «Վերջին տեղը» (1900), «Ճախրակին առաջքը» (1900), «Բամբակ բերան» (1907), «Գաւաթ մը միայն» (1907), «Ընճոդուկներուն դատաստանը» (1908) պատմվածքները, «Էնդի դէմէն» (1902), «Զալըմ տղան» (1904) «Ճամփորդն ու ճամփեցնողները» (1905), «Կտակը» (1911), «Ո՞ր մէկուն ետեւէն» (1912, Բոստոն, «Ազգի» տպ.) պիեսները, գրել է նաև բանաստեղծություններ («Իմ բախտս», «Մի հայիր», «Բերնովդ ըսեիր», «Հողը»):

Երկ. Երկեր, 1982: Թլկատինցին եւ իր գործը (առաջաբ.՝ Ա. Չոպանյանի), Բոստոն, 1927: Դիտղին կյանքը, Ե., 1966: Պատմուածքներ-գիւղի նամակներ, Վնտ., 1996:

Գրկ. **Կարապետյան Լ.,** *Թլկատինցի, Ե., 1966:*



Թլկատինցի

ԹՈՓՈՒԶԵՆՑ Վահան Հովհաննեսի [18.7.1894, ք. Մեզիրե (Խարբերդի նահանգ)–18.7.1938, Երևան, անհատի պաշտամունքի զոհ], գրող, խմբագիր: Սովորել է Խարբերդի Ազգ. կեդրոն. վարժարանում (1897–1907), աշակերտել է *Թլկատինցուն* և Ռուբեն *Զարդարյանին:* 1912-ին ընդունվել է Վիսկոնսինի (ԱՄՆ) համալսարանը. հետևել է գրակ-յան, պատմության և փիլ-յան դասընթացներին: 1915–16-ին եղել է զորավար *Անդրանիկի* գրագիրը և գրառել նրա հուշագրություն-օրագրությունը: 1920-ին հրատարակել է «Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները» երկը՝ Արսեն Մարմարյան կեղծանունով: 1917–18-ին Թիֆլիսում խմբագրել է Անդրանիկի հիմնադրած *«Հայաստան»* օրաթերթը, 1923-ին Երևանում՝ *«Շնչտ»* երգիծ. պարբ-ը, 1924–26-ին աշխատել է ԵՊՀ-ում, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում:



«Թլկատինցին եւ իր գործը» (1927, Բոստոն) գրքի կազմը

Լույս են տեսել Թ-ի «Աւերակ» (1908, ԿՊ, Հարություն Ասատրյանի տպ.), «Սրինգ» (1909, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) բանաստեղծություններ-ի գրքույկները, «Ողբ անմահութեան» (1917, Թ., «Ալվո» տպ.), «Արեւելք» (1918, Թ, ա. տպ.) պոեմները, «Պատմուածքներ» (1921, Բոստոն, «Ազգի» տպ.), «Պատմուածքներ» (1921, ԿՊ), «Ամերիկա» (1929, Ե., Պետհրատի տպ.), «Հայրենի պատմուածքներ» (1939, Բ.), «Կապույտ ծաղիկներ» (1972) պատմվածքների ժող-ները, «Աղավնիներ» (1934, 1957, 1966, կինոնկար՝ «Ճերմակ անուրջներ», 1984, Հայֆիլմ), «Բաց կապույտ ծաղիկներ» [1935, կինոնկար՝ «Կտոր մը երկինք», 1980, Հայֆիլմ] պատմվածքները, «Տօնօն» (1917, Թ., «Քարթլի» տպ.), «Իմ հօրաքոյրը» (1925), «Նյու Յորք» (1927, Ե., «Հերմես» տպ.), «Աստուր և Կլեոպատրա» (1929, նույն տպ.), «Կոմսոմոլ Կարոյի արկածներից» (1927), «Հրկիզված թղթեր» (1934), «Հովնաթան որդի Երեմիայի» (1934) վիպակները, «Դոկտոր Բուրբոնեան» (1923, Վաղ-պատ) երգիծ., «Բաքու» (հ. 1–3, 1930–34) վեպերը, «Գարունին սիրտը» (1921, Բոստոն, «Ազգի» տպ.), «Փոթորիկին մէջ» (1922), «Մահվան բատալիոն» (1923), «Պողպատե ճաշ» (1924), «Նոր Բյուզանդիոն» (1925, համամիութ. մրց., բե-

մադրվել է նաև Փարիզում), «Սասմա ծռեր» (1925), «Հրդեհ» (1927), «Երկու սուր» (1930), «Մոխրակույտ» (1936) դրամատիկ. գործերը, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (1933, 1956, 1966, 1979, ռուս.՝ 1963, անգլ.՝ 1971) ինքնակենսագր. վեպը, «Երկերը» (1957, հ. 1–3, 1988–91):

Թարգմանել է Վ. Շեքսպիրի «Ռիչարդ Երրորդ», «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգությունները, Հ. Ջավիդի «Սեյավուշ» պատմ. չափածո դրաման:

Գրկ. **Մանուկյան Ս.,** *Վահան Թոթովենց, Ե., 1959:* **Արզումանյան Ս.,** *Վահան Թոթովենց, Ե., 1961:* **Ադալյան Ն.,** *Վահան Թոթովենց: Կենսապատում, Ե., 1992:*

ԹՈՒԼԱՅԱՆ Երվանդ (Ֆրանսուա) Հովհաննեսի, **Կավոռշ** (29.8.1883, Կ. Պոլիս–1937, Երևան, անհատի պաշտամունքի զոհ), երգիծաբան, խմբագիր, դերասան: Սովորել է Կ. Պոլսի Սբ Գրիգոր Լուսավորիչ վարժարանում: 1908–26-ին Կ. Պոլսում հիմնադրել և խմբագրել է *«Կավոռշ»* (1913–14-ին՝ «Կատակ», 1913-ին՝ «Հոս-հոս», 1923–24-ին՝ Աշոտ Քեչյանի հետ) երգիծ. պարբ-ը, թղթակցել այլ հրատ-ների: Կ. Պոլսում հիմնադրել է տպարան: 1926-ին տեղափոխվել է Փարիզ և շարունակել հրատարակչ. գործունեությունը, վերսկսել է «Կավոռշ»-ի հրատարակումը (1927–36): 1936-ին հայրենադարձել է:

Լույս են տեսել Թ-ի «Իտէալին ետեւին» (1910, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.) երգիծավեպը, «35 տարուայ թատերա-խմբագրական յիշողութիւններ: Ինքնակենսագրականով խառնուած» (2008) հուշագիրքը: Գրել է պոլսահայ գրական-թատեր. կյանքի անցուդարձին նվիրված «Կավոռշնամե» հուշագրությունը:

ԹՈՒԼԱՅԱՆ Հովհաննես (1856, Կ. Պոլիս–1936, Կ. Պոլիս), խմբագիր, թարգմանիչ: Սովորել է Վենետիկի Մխիթարյան և Կ. Պոլսի բժշկ. վարժարաններում: Աշխատել է «Մանզումէի Էֆքեար» հայատառ թուրք. թերթի խմբագրությունում: 1884–1914-ին խմբագրել է ***«Մեծմոայր ախպար»*** հայատառ թուրք. պարբ-ը, որտեղ տպագրել է ֆրանս-ից իր թարգմանած արկածային վեպերը (Ս. դը Մոնթեպենից՝ 15 վեպ, Է. Ռիշբուրգի «Քողով կինը», Բոնսան դը Թեռայլի «Ոռքամբոլ» ևն):

ԹՈՒԼՈՒՅԱՆ Խաչիկ Մինասի (ծ. 30.8.1944, Հալեպ), գրականագետ, հրապարակախոս, խմբագիր: Բրաուն համալսարանի (ԱՄՆ) դ-ր, պրոֆ. (1975): Ավարտել է ԱՄՆ-ի Հարվարդի և Ռոդ Այլենդի համալսարանները: 1981-ից աշխատում է Ուեստ Միդլթաունի Վեսիլյան համալսարանում (ԱՄՆ): 1991-ից Տորոնտոյում լույս ընծայվող «Սփյուռք. Անդրադարձային հետազոտություններ» («Diaspora: A Journal of Trans National Studies», անգլ.) պարբ-ի հիմնադիր-խմբագիրն է, Զորյան ինստ-ի տնօրենների խորհրդի անդամ: Հեղինակ է «Սփիւռքի մէջ» (1980) գրքի, գրականագիտ., հասարակագիտ. և պատմագիտ. ուսումնասիրությունների:

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, հրատ-յան (գրքի) հակիրճ հրատարակչատեղեկատվ. բնութագիրը, դասակարգման ցուցիչները ևն, որոնք անհրաժեշտ են նրա մատենագիտ. մշակման, վիճակագր. հաշվառման, գրավաճառ ցանցում ներկայացնելու համար: Զետեղվում են գրքի առավել նկատելի տեղերում՝ տիտղոսաթերթին, կազմի կամ շապիկի վրա, վերջին էջերին ևն:

Թ. տ-ի բաղկացուցիչ մասն են **թողարկման տվյալները**, որոնք ներառում են տպագրության ստորագրման ամսաթիվը, թղթի ձևաչափն ու էջերի չափերը, հրատ-յան ծավալն ու տպաքանակը, պատկերի համարը, հրատարակչի և պոլիգրաֆ. ձեռնարկության իրական անվանումներն ու հասցեները ևն:

ԹՈՄԱ ԳԵՄԲԱՑԻ, Կեմպացի, Կեմպենացի [մոտ 1379, ք. Կեմպեն (Գերմանիա)–1471, Վինդեսհայմ մենաստան՝ Զվոլլեի մերձակայքում], գերմանացի կաթոլիկ հոգևորական, քահանա, աստվածաբան:

Հայտնի է որպես «Համահետևումն Քրիստոսի» (ոչ ուշ, քան 1427) երկի ենթադրյալ հեղինակ: Երկը հայ. առաջին անգամ տպագրվել է 1674-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ Հովհաննես Հոլով




Վահան Թոթովենց



Վ. Թոթովենցի *«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (1933, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*




«Հայաստան» (2012, Ե., «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն») հանրագիտարանի **թողարկման տեղեկությունները**


ROMÆ, Typis Sacræ Congreg. de Propaganda Fide. 1705.
Superiorum permissu.

Թոմա Գեմբացու
«Յաղագս համահեցուման Քրիստոսի» (1705, Հռոմ) գրքի տիտղոսաթերթը



Առնոլդ Թոյնբի


ԵՐԿԻՆՔԻ
ՔՆՔԵՐՑՈՒԱԾՔ
Ի ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆՍ ՆԱՀԱՊԵՏԻ
ՀԱՅՈՑ ՔԱՂՔԱԳԵՏԱՑԻ
Ի ՎԵՆԵՏԻԿ
1910

Թադեոս Թոռնյանի
«Հատընտիր ընթերցուածք...» (1910, Վնն.) գրքի կազմը

Կոստանդնուպոլսեցու թարգմանությամբ: Ա տիտղթ–ին՝ «Համահետուումն Քրիստոսի...», Բ–ին՝ «Գիրք Թովմայի Գեմբեցւոյ: Կանոնականի կրօնաւորի...» (643 էջ, 8º, 11,1 x 6,7 սմ): Վերահրատարակվել է 1696–ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում (420 էջ, 12º, 8,8 x 4,6 սմ), 1700–01–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (352 էջ, 8º, 12,8 x 7,4 սմ), 1705–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (643 էջ, 8º, 11,2 x 6,5 սմ), 1737–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (440 էջ, 12º, 11,4 x 6 սմ), 1786–ին Վենետիկում՝ Զիովաննի Պիացոյի տպարանում, թարգմ.՝ Վրթանես Ասկերյանի (356 էջ, 12º, 6º, 10,3 x 6 սմ), 2–րդ անգամ՝ 1853–ին, տիտղթ–ին՝ «Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի» (Վնտ., Սբ Ղազարի տպ.):

Լույս է տեսել նաև 1894–ին՝ «Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի» (Վնն., Մխիթարյան տպ.) վերնագրով, թարգմ.՝ Թադեոս վրդ. Թոռնյանի:

Հայատառ թուրք–ով հրատարակվել է 1805–ին (Տրիեստ, Մխիթարյան տպ.) և 1839–ին (Վնն., Մխիթարյան տպ.):

1810–13–ին Վիեննայի Մխիթարյան տպարանում 3 հատորով տպագրվել է Պիլլուարտ Կառոլոս Հռենատոսի «Բովանդակութիւն բովանդակութեան Սբ Թովմայի կամ Համառօտութիւն աստուածաբանութեան» երկը (թարգմ.՝ Աստվածատուր Բաբիկյան Զուղայեցու):

ԹՈՄՍՈՆ (Thomson) Ռոբերտ Վիլյամ [ծ. 24.3.1934, ք. Չիմ (Անգլիա)], անգլիացի բանասեր–արևելագետ, պատմաբան: Փիլ. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1969): Ավարտել է Քեմբրիջի համալսարանը (1957), հայ. սովորել է Վիեննայի Մխիթարյան միաբանության դպրոցում: 1963–ից Հարվարդի համալսարանում դասավանդել է գրաբար (1973–ից՝ ամբիոնի վարիչ):

Անգլ. է թարգմանել Ագաթանգեղոսի (1976), Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու երկերը, «Դաշանց թուղթը»: Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» համար իր գրած ծավալուն առաջաբանում Պատմահորը հանիրավի համարել է VIII դ–ի հեղինակ, իսկ նրա երկը՝ ոչ արժանահավատ սկզբնաղբյուր:

Երկ. The Teaching of Saint Gregory, Harvard University Press: «Armenian Texts and Studies», 1971, № 3; Recent Studies in Modern Armenian History, Cambridge, 1972; An Introduction to Classical Armenian (textbook with chrestomathy and vocabulary), N. Y., 1976.

Գրկ. **Մուշեղյան Ա.,** *Մովսես Խորենացու դարը, Ե., 2007:* **Հովհաննիսյան Պ.,** *Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:*

ԹՈՅՆԲԻ Առնոլդ Ջոզեֆ (14.4.1889, Լոնդոն–22.10.1975, Նյու Յորք), անգլիացի պատմաբան և սոցիոլոգ: 1919–55–ին՝ Լոնդոնի համալսարանի պրոֆ.: Թ–ին համաշխ. համբավ է բերել «Պատմության հետազոտություն» (հ. 1–12, 1934–61) երկը: Առանձին ուսումնասիրությամբ անդրադարձել է արևմտահայերի 1915–ի ողբերգությանը («Հայկական սարսափները. մի ազգի բնաջնջումը», 1915): Մասնակցել է Ջեյմս Բրայսի կազմած «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915–16» (1916) փաստաթղթերի հայտնի ժող–ի հրատարակմանը:

Երկ. Turkey: A Past and a Future, N. Y., 1917.

Գրկ. **Маркарян Э.,** *О концепции локальных цивилизаций, Е., 1962.*

ԹՈՇԻԿՅԱՆ Վահան (1880, Կ. Պոլիս–1954, Կարս), խմբագիր, հրապարակագիր: Ազգ., կրթ., եկեղեց. հոդվածներով աշխատակցել է ***«ՍանգոմՀի Էֆքեար»*** (հայատառ թուրք.), «Ժամանակ» և այլ պարբ–ների: 1907–08–ին Զմյուռնիայում խմբագրել է ***«Արշալոյս»*** և ***«Արձագանք»***, Կ. Պոլսում 1909–15–ին՝ ***«Գաղափար»***, ապա՝ ***«Վերջին լուր»***, 1924–54–ին՝ ***«Նոր լուր»*** պարբ–ները:

ԹՈՌՆՅԱՆ Թադեոս (Անտոն, 3.10.1843, Զմյուռնիա–5.1.1928, Վիեննա), բանասեր, աստվածաբան: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1859), վարդապետ: Տիրապետել է հուն–ին (հին և նոր), լատ–ին, իտալ–ին, ֆրանս–ին, գերմ–ին: Թ. հրատարակել է «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց» (հ. 1, 2,


1866, 1910) ժող–ը, որտեղ զետեղել է գրաբար մատենագրությունից ընտրված հատվածներ, դրանք համեմատել բնագրերի հետ, ուղղել աղավաղումները:

Լույս են տեսել նաև Թ–ի «Ի յիշատակ յիսնամեայ յոբելինի անարատ յղութեան Մարեմայ...» (1904), «Ի պատիւ Սրբոյն Յովսէփայ պաշտպանին Սուրբ ընտանեաց» (1918) աշխատությունները: Թարգմանել է Թոմա Գեմբացու «Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի» (1894) երկը:

Թ–ի բոլոր գործերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, IX–X դդ–ի պատմագիր, վարդապետ: 870–ական թթ–ին սկսել և X դ–ի սկզբին ավարտել է **«Պատմություն Արծրունյաց տան»** երկը: Պատմությունը բաղկացած է 4 դպրությունից (վերջին՝ Դ դպրությունը չի պահպանվել): Գ դպրության ԻԹ (29) անավարտ գլխին հետագայում կցվել է Անանուն պատմիչի «Պատմության» 1–ին գլուխը, որ մինչև 1870–ական թթ. համարվել է Թ. Ա–ու հեղինակած գործը:

«Պատմությունը» առաջին անգամ տպագրվել է 1852–ին Կ. Պոլսում՝ Պողոս Արապյանի տպարանում՝ «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ» վերնագրով, ապա թարգմանվել և հրատարակվել է ֆրանս.: Տպագրվել է նաև 1887–ին (ՍՊը, Ի. Սկորոխոդովի տպ.), 1917–ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), քնն. բնագիրը հրատարակվել է 2006–ին (առաջաբ., ծնթգր.՝ Մ. Դարբինյան–Մելիքյանի):




Թովմա Արծրունու *«Պատմութիւն տանն Արծրունեաց» (2006, Ե., «Մագաղաթ») գրքի կազմը*

Երկ. Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1978, 1985, 1999:

Գրկ. Բիւզանդացի Ն., *Թովմա Արծրունի եւ Անանուն Արծրունի երկու այլեւայլ պատմագիրներ են, «Բազմավէպ», 1905, № 5–10:* **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 3, Ե., 1968:* **Վարդանյան Վ.**, *«Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում հիշատակված մի քանի տեղանունների մասին, «ՊԲՀ», 1973, № 1:*

ԹՈՎՄԱ ԱՔՎԻՆԱՑԻ [Thomas Aquinas, 1225, Ակուինո (Նեապոլի մոտ)–7.3.1274], փիլիսոփա, աստվածաբան: Դոմինիկյան միաբանության անդամ: Սովորել է Մոնտեկասինո վանքում, Փարիզի, Քյոլնի համալսարաններում, աշակերտել է ***Ալբերտ Մեծին***: Դասավանդել է Հռոմի, Նեապոլի և Փարիզի համալսարաններում: Դասվել է կաթոլիկ եկեղեցու սրբերի շարքը, հռչակվել այդ եկեղեցու V հայր: Գրել է մեկնող., վիճաբան., տրամաբան. երկեր: Հայ իրականության մեջ Թ. Ա–ու աստվածաբան. և փիլ. հայացքները տարածվել են XIV դ–ի 1–ին կեսից: 1321–ին Հովհաննես Ծործորեցին լատ–ից թարգմանել է Թ. Ա–ու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկը, որը Պետրոս Լոմբարդացու «Վկայութիւնք» աշխատության մեկնությունն է: 1329–44–ին Հովհան և Հակոբ Քռնեցիները Պետրոս Արագոնացու և Հովհան Անգլիացու աջակցությամբ թարգմանել են «Աստվածաբանության հանրագումարի» տարբեր բաժինները («Համառօտ հաւաքումն յաղագս առաքինութեանց հոգւոյն», «Յաղագս հրեշտակաց», «Յաղագս տնօրինութեան Քրիստոսի» ևն)՝ որպես առանձին միավորներ: Թ. Ա–ու հայացքներն ազդել են Գրիգոր Տաթևացու իմացաբանության վրա, թեև նա մերժել է նրա ռեալիզմը: 1668–ին Ստեփանոս Լեհացին թարգմանել է Թ. Ա–ու «Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ բանականի» երկը: XVII–XVIII դդ–ում հայկ. միջավայրում Թ. Ա–ու ուսմունքը տարածել են ***Կղեմես Գալանոսը, Խաչատուր Էրզրումցի Առաքելյանը*** և Մխիթարյան միաբանության այլ անդամներ:

Հայ. հնատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև Թ. Ա–ու **«Խոստովանարան»** երկը. 1727–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում, տիտղթ–ին՝ «Խոստովանարան Սրբոյն Թովմայի Աքուինացւոյն» (141 էջ, 12º, և 6º, 8,7 x 5 սմ), **«Համառօտ գրգուկ իմն. Վասն նախասահմանութեան»** երկը. տպակից է **«Էֆիմէրտէ»**–ին (1748), **«Տրակ յորդորական»** նամակը՝ առանց տպարանի և թվականի հիշատակության (1 էջ, 14 x 9,3 սմ):


ԹՈՍՏՎԱՆ ԱՐՔԱՅՈՑՆ ՍՐԲՈՑՆ ԹՈՄԱՅԻ
Ա Ք Ո Ի Ն Ա Ց Ւ Ո Յ
Ի Վ Ե Ն Ն Ա Ի
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԿԻԹԱՐԵԱՆՑ


Թովմա Աքվինացու *«Խոստովանարան...» (1727, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Թովմա Մեծոփեցի և Պողոս առաքյալ», մանրանկար (1435, Մատենադարան, ձեռ. № 1380)



Թովմա Մինասենց. «Դժոխքի ավերումը», մանրանկար, 1414-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 5523)



Եղիա Թովմաճանի «Դպրութիւն նամակաց...» (1805, Վնտ.) գրքի կազմը

Երկ. Антология мировой философии, т. 1, ч. 2, М., 1969, с. 823–862; Opera omnia, v. 1–25, Parma, 1852–73.

Գրկ. Խաչատուր Էդգրումեցի, *«Լիակատար ապրուածաբանութիւն», Վնտ., 1709, 1734: Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. 1–2, Ե., 1965–70:* Oudenrijan M., *Linguae haicanac scriptores, Bonnae, 1960;* Նույնի, *Uniteurs et Do- minicains d'Arménie, «Orient Christianus», 1956–61, v. 40–45.*

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ [1378, գ. Աղի (Արճեշի գավառ)–15.5.1446, գ. Ակոռի (Մասյացոտն գավառ), թաղվել է Մեծոփավանքում], պատմագիր, եկեղեց. և մշակույթի գործիչ, մանկավարժ: Սովորել է Մեծոփավանքում, Արճեշի գավառի Խառաբաստի վանքի վարդապետարանում, Տաթևի համալսարանում աշակերտել է *Գրիգոր Տաթևացուն*: 1410-ին Թ. Մ. ստանձնել է Մեծոփավանքի վանահայրությունն ու վարդապետարանի ղաբունապետությունը և այն ղեկավարել ավելի քան 30 տարի: Թ. Մ-ու օրոք Մեծոփա դպրոցում կազմել են դասագրքեր, կատարել տարբեր երկերի մեկնություններ, մատենադարանում ընդօրինակել, ծաղկել և կազմել են բազմաթիվ մատյաններ: Թ. Մ. դասավանդել է գրչության արվ.:

Թ. Մ-ու երկերից ամենահայտնին «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց»-ն է (ընդգրկում է 1386–1440-ի իրադարձությունները): Թ. Մ-ու «Յիշատակարանը» վերաբերում է Հայոց կաթողիկոս. աթոռը Սսից Վաղարշապատ տեղափոխելու իրադարձություններին: Պատմ. արժեք ունեն նաև նրա թղթերը, խմբագրած ձեռագրերի բոլոր հիշատակարանները: Թ. Մ. կազմել է լեզվաուսուցող. առաջին դասագիրքը՝ «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ուսման» (Մատենադարան, ձեռ. № 7117), խմբագրել և մշակել է կրոնադավանաբան., ծիս-երաժշտ., գեղ., մեկնող. և այլ բնույթի բազմաթիվ երկեր:

«Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց» երկն առաջին անգամ տպագրվել է 1860-ին Փարիզում (Կարապետ Շահնազարյանի տպ.), «Յիշատակարանը»՝ 1892-ին Թիֆլիսում (առաջաբ.՝ Կարապետ Կոստանյանի, Հովհաննես Մարտիրոսյանի տպ., քնն. բնագիրը՝ 1999-ին, աշխատասիր.՝ Լ. Խաչիկյանի): Հրատարակվել են նաև Թ. Մ-ու «Պատմագրությունը» (1999, աշխատասիր.՝ Լ. Խաչիկյանի), «Պատմագրական երկերը» (2003):

Գրկ. Յովսէփեան Գ., *Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղ-պատ, 1914:* Մաթևոսյան Ա., *Մեծոփավանքի գրչության կենտրոնը, Էջմիածին, 1997:*

ԹՈՎՄԱ ՄԻՆԱՍԵՆՑ, Թումա Մինասենց (ծ. թ. անհտ–1455, Աղթամար), մատենագիր, գրիչ, ծաղկող: *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Աշակերտել է հորեղբորը՝ Մկրտիչ Կրոնավորին, և քեռուն՝ Թումա Միակյացին՝ Աղթամարում, ապա դարձել է նույն վանքի միաբան: 1420-ից գրչարվ. է ուսուցանել տեղի դպրոցում: Միաժամանակ ընդօրինակել ու ծաղկել է բազմաթիվ ձեռագրեր, որոնցից 10-ից ավելին (Ավետարաններ, Գանձարան, Ճաշոց, Մաշտոց, Նարեկ) պահվում են Մատենադարանում: 1428-ի (ձեռ. № 6324) և 1444-ի (ձեռ. № 4829) Ավետարաններն ունեն թեմատիկ մանրանկարներ: Փոքր-ինչ անմշակ գծանկարով, վառ գուներանգով, սակայն պարզ միջոցներով Թ. Մ. հասել է բովանդակության դիպուկ արտահայտման: Ձեռագրերում թողած ուշագրավ հիշատակություններում կարևոր վկայություններ կան 1419–52-ին Հայաստանի հվ-ում տեղի ունեցող անցքերի, Թիմուրյանների, կարակոյունլուների դեմ մղած կռիվների մասին ևն:

Գրկ. Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1, 2, Ե., 1955, 1958: Հակոբյան Հ., Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք 1, Ե., 1976:

ԹՈՎՄԱՃԱՆ (Թոմաճան, Թովմաճանյան) Եղիա (18.12.1777, Կ. Պոլիս–23.9.1848, Վենետիկ), հայագետ, թարգմանիչ, բանաստեղծ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1798): Սովորել է Վենետիկի Մխիթարյան միաբանների վարժարանում: Դասավանդել

է Սբ Ղազարի վանքի վարժարանում, եղել է տեքստաբան-թարգմանիչ: Հուն-ից թարգմանել, հայ. տեքստերի հետ համեմատել և առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակել է ***Հովհան Ոսկերերանի*** «Հատընտիր գիրք եւ ճառք եւ ներբողեանք» (հ. 1–2, 1818), Պլուտարքոս Քերովնացու «Զուգակշիռք» (հ. 1–6, 1832–34), Վ. Մ. Հերոնիմոսի «Քրիստոսական» աշխատությունները, Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմները (գրաբար, չափածո, 1843, 1848): Հայ կլասիցիստ. գրակ-յան մեջ նշանակալի երևույթ են Թ-ի «Տարեգրութիւն ի մեծն Մխիթարայ աբբայ» պոեմը, «Ի սուրբն Դաւիթ մարգարէ», «Ողբերգութիւն Աբդլմսեհի. երգ», «Առ Հայաստան խրախոյս» բանաստեղծությունները, որոնք հրատարակվել են «Տաղք Մխիթարեան վարդապետաց» (հ. 2, 1853, Անտիլիոս Սիրացի ծածկանունով) ժող-ում:

Լույս են տեսել նաև Թ-ի «Դպրութիւն նամակաց: Ի լեզու գրաբառ եւ աշխարհաբառ» (1805), «Իմաստութիւն մարդկային...» (1833, 2-րդ հրտ.՝ 1859), «Քառասնորդականք կամ Հատընտիր քարոզք» (1852) և այլ երկեր:

Թ-ի բոլոր գործերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. Եղիա Թոմաճան, տես Միխիթարեան յորելեան, Վնտ., 1901, էջ 120–123, 220:

ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ, **Թոմաճան**, Թադեոս (Պաղտասար) Վարդապետ (6.1.1864, Խարբերդ–19.3.1948, Վենետիկ), բանասեր, թատերագիր, մանկավարժ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1887): Սովորել է Կ. Պոլսի Մխիթարյան և Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարաններում: 1894–1918-ին որպես ուսուցիչ, տեսուչ և տնօրեն պաշտոնավարել է Վենետիկի, Կ. Պոլսի, Խարբերդի, Տրապիզոնի Մխիթարյան վարժարաններում: 1923–29-ին՝ Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսուչ, 1929–30-ին՝ Միլանի ուսանողարանի մեծավոր:



Թադեոս Թովմաճանյանի *«Նախադրունք հայ-գրաբառ քերականութեան...» (1892, Վնտ.) գրքի կազմը*

Լույս են տեսել Թ-ի «Նախադրունք հայ-գրաբառ քերականութեան...» (1892), «Առաջին քայլ ի գրոց բարբառ» (1894, 1909, 1921), «Գործնական քերականութիւն արդի հայերէնի» (1944, 1948) աշխատությունները: 1931–32-ին հրատարակվել են Թ-ի «Անիծեալը», «Անմեղութեան յաղթանակը», «Զղացաւութիւն», «Զարմայր կամ Սիռացկոտ իմաստակը», «Խելքի պակասը՝ քսակի վնաս է», «Պզտիկ գողը» և բարոյախրատ. այլ թատերգություններ:

Գրաբար է թարգմանել Ն. Բուալոյի «Արուեստ քերթողական» երկը:

Թ-ի բոլոր գործերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

ԹՈՎՄԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ, **Նուրիջանյան** [մոտ 1617, գ. Վանանդ (Նախիջևանի Գողթն գավառ)–8.9.1708, Ամստերդամ], մշակույթի գործիչ, տպագրիչ, Օքսֆորդի համալսարանի դ-ր (1707): Եղել է Գողթան գավառի Սբ Խաչ վանքի վանահայրը, եպիսկոպոս: 1670-ին իր քեռորդուն՝ ***Մատթեոս Վանանդեցուն*** (Հովհաննիսյան), տարել է Մարսել՝ աշակերտելու ***Ոսկան Երևանցուն***: 1679-ին իր եղբորորդիներին՝ Ղուկաս և Միքայել Նուրիջանյաններին, ուսման է տվել Հռոմի Ուրբանյան ճեմարանում: 1683-ին Մատթեոսին ուղարկել է Ամստերդամ՝ նոր տպարան հիմնադրելու. այն գործել է 1685-ից: 1694-ին ստանձնել է Ամստերդամի տպարանի տնօրինությունը. հրատարակել է առաջին հայ. տպագիր քարտեզը՝ ***«Համատարած աշխարհացոյցը»*** (1695), նաև «Բանալի Համատարածի աշխարհացոյցին» (1696), Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիների «Դուռն իմաստութեան» (1699), Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ, եւ դրամից բոլոր աշխարհի» (1699), «Բնաբանութիւն իմաստասիրական» (հ. 1–2, 1702) ուս. ձեռնարկները, Սիվսես Խորենացու «Պատմութիւն Հայոցը» (1695)՝ «Ազգաբանութիւն տոհմին հաբեթեան» վերնագրով, Շարակնոց (1685, 1702–03, 1712), Ժամագիրք (1688), Նոր կտակարան (1698–1700):

1707-ին արժանացել է Անգլիայի թագուհու՝ Աննայի ընդունելությանը. նրան նվիրել է իր հրատարակած գրքերից:



Շարակնոցի (1702-03, Ամստերդամ, տպագրիչ՝ **Թովմաս Վանանդեցի***) լուսանցազարդով ու սկզբնագրով (211-րդ) էջ*

ԹՈՎՄԱՍՅԱՆ Բարունակ Վարդանի [22.5.1910, գ. Գյուլդաղ (Բուրսայի նահանգ)–25.12.1991, Ուոթերթաուն (ԱՄՆ)], հաս. գործիչ, խմբագիր: ՌԱԿ-ի անդամ. եղել է կենտր. վարչության ատենապետ: 1940–43-ին՝ Հայ երիտասարդաց ընկերակցության հիմնադիր և կենտր. վարչության քարտուղար, ԹՄՄ-ի հիմնադիրներից և նախագահ: 1937-ին եղել է *«Զարթօնք»* օրաթերթի արտոնատերը և առաջին տնօրենը:

Լիբանանի Կառավարության Արժանյաց առաջին կարգի ոսկե շքանշան (1951):



Թորոս Թորանյանի *«Կանաչ տառեր» (1965, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

ԹՈՎՄԱՍՅԱՆ Խաչիկ, XIX դ-ի գրական գործիչ, մանկավարժ: Ապրել է Ինդոնեզիայում, Հնդկաստանում: Եղել է Ճավա կղզու Բատավիա քաղաքի հայկ. դպրոցի տեսուչ (1856-ից):

Լույս է տեսել Թ-ի «Հայք ի հնդիկս անգղիացւոց եւ հոլանտացւոց» (1880, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը: Տեղի հայերի ինքնավար վարչության համար հոլանդ-ից հայ. է թարգմանել «Սահմանադրութիւն եւ կարգաւորութիւն ժողովրդեանն հայոց, որ ի Ճաւա» (1881, Նոր Ջուղա, Սբ Ամենափրկիչ վանքի տպ., 1882-ին՝ «Սահմանադրութիւն եւ կարգադրութիւն...» վերնագրով, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) կանոնագիրքը:

ԹՈՐԱՆՅԱՆ Թորոս Խաչերի (ծ. 29.2.1928, Հալեպ), գրող, հրապարակախոս: Սովորել է Նիկոզիայի Մելգոնյան վարժարանում (1944–46), ավարտել Երևանի բժշկ. ինստ-ը (1970):

Լույս են տեսել Թ-ի «Աստղերու ճամբան» (1960), «Կանաչ տառեր» (1965), «Երգ արեգական» (1970), «Երկրէն հեռու, երկրին հետ» (1991), «Մեծ հօրս պատմած հեքիաթները» (1992), «Թող Հայաստանը խօսի» (1998), «Կեանքի կեռմաններով» (1999) բանաստեղծությունների, «Կարօտի ճամբաներով», «Ո՞ւր կը տանին ճամբաները» (երկուսն էլ՝ 1977) հուշագրությունները, «Գիրք որդիական» (1980), «Բոլորն ալ մարդեր են» (1981) պատմվածքների ժող-ները, «Վաւա եւ Սարգիս Խաչատրեան» (1983), «Գառնիկ Ադդարեան: Կեանքն ու գործը» (1989), «Գառզու: Իր ժամանակի վկան եւ ապագայի դեսպանը» (1990), «Անդրանիկ Ծառուկեան: Արձակագիրն ու բանաստեղծը» (2000), «Ամբողջական գրագէտը: Ռոպէր Հատտէճեան» (2002), «Զրոյցներ Կարպիս Սուրէնեանի հետ» (2003), «Սիմօն Սիմօնեան երեւոյթը» (2004) մենագրությունները, «Չորք Մարզպանցի հայ գիրի եւ մամուլի մարդեր» (1987) աշխատությունը:

Արաբ. է թարգմանել Ա. Իսահակյանի, Գ. Էմինի, Վ. Թեքեյանի և ուր. ստեղծագործություններից:

Երկ. Բարև հայրիկ: Նովելներ: Երիզ մը կապոյտ, հ. 1–3, Ե., 1995: Երգեր եօթանասունէն ետք, Ե., 2000: Ուր տարին մեզ ճամփաները, Հալեպ, 2005: Հայ գրականութեան խշշացող բարդին՝ Յակոբ Կարապենց, Հալեպ, 2006: Արձակ երկեր, Ե., 2009: Հաւատամքի կամուրջ. բանաստեղծութիւններ, Հալեպ, 2010:



Ծերուն Թորգոմյան

ԹՈՐԳՈՄՅԱՆ (Դեղտրիկյան) Ծերուն Հակոբի (15.2.1896, Վան–7.4.1986, Թբիլիսի), գրող, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ: Ավարտել է Վանի Երանյան վարժարանը (1912), սովորել մանկավարժ. ուսումնարանում (1915): 1915-ին բնակություն է հաստատել Թիֆլիսում: Նույն թվականին «Հորիզոն» թերթում տպագրվել է Թ-ի «Պանդուխտի երգեր» շարքը, 1917-ին «Գործ» (Բաքու) ամսագրում՝ «Անթառամ ծաղիկներ» վիպակը և «Լաչակս գլխին» պատմվածքը: 1918-ին՝ *«Հրազդան»* գրական ալմանախի, 1918–21-ին՝ *«Արձագանք», «Կարմիր աստղ»* թերթերի խմբագիր:

Լույս են տեսել Թ-ի «Պատմվածքներ» (1926), «Հորձանքում» (1931), «Կանաչ բարձունքներ» (1935), «Ժպտացող կյանքը» (1936), «Խնդություն» (1936), «Երկեր» (1948), «Հերոսի մահով» (1956), «Անմոռաց օրեր» (1967), «Պատմվածքներ» (1973), «Անձնվեր մարտիկը» (1978), «Ալեծուփ սրտեր» (1981), «Զինակից ընկերը: Պատմվածքներ և ակնարկներ» (1985) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Անմար կրակներ» (1955), «Ալեկոծ ծովը» (1965) վեպերը, «Հոգեթով հույզեր» (1975) հուշագրությունը ևն:

ԹՈՐՈՍ ՀՌՈՄԿԼԱՅԵՑԻ, XIV դ-ի սկզբի գրիչ: 1311-ին Զերմաղբյուր վանքում ընդօրինակել է «Մաւունք Նոր կտակարանի» (Մատենադարան, ձեռ. № 154) մատյանը, 1319-ին Տեր Հակոբ քահանայի հետ՝ ժամագիրք (Հալեպ, Սբ Քառասուն մանկունք եկեղեցու հավաքածու, ձեռ. № 6), 1331-ին՝ Սարգիս Պիծակի ծաղկած Ավետարանը (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 16): Գեղագրել է

նաև Շարակնոց (Նյու Յորքի հանրային գրադարան, ձեռ. № 1489) և Ավետարան՝ գրված Կիպրոսում (հավանաբար՝ 1317–18-ին, Մատենադարան, ձեռ. № 242):

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ, XIII դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ և գրիչ: *Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի* խոշորագույն ներկայացուցիչը: Ապրել և գործել է Հռոմկլայում: Պահպանվել են Թ. Ռ-ի ստորագրությամբ թվագրված 7 պատկերազարդ մատյաններ՝ *«Զէյթունի Աւետարանը»* (1256), *«Մալաթիայի Աւետարանը»* (1268, երկուսն էլ՝ Մատենադարան, ձեռ. № 10450, 10675), 1262-ի Ավետարանը (Բալթիմորի Ուոլտերս պատկերասրահ, ձեռ. № 539), 1260, 1262, 1265-ի Ավետարանները (ձեռ. № 251, 2660, 1956) և 1266-ի Մաշտոցը (ձեռ. № 2027, բոլորը՝ Երուսաղեմի մատենադարան): Թ. Ռ-ին են վերագրվում նաև 3 ձեռագրի՝ 1250-ական թթ-ի սկզբի Ավետարանի, Հեթում Ա-ի 1266-ի Ավետարանի մասերի (երկուսն էլ՝ Մատենադարան, ձեռ. № 8321, 5458) և 1260-ական թթ-ի *«Վասակ իշխանի Աւետարանի»* (Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 32. 18) մանրանկարները:

Թ. Ռ-ի անվան հետ է կապված հայկ. գրչարվ-ում պատկերազարդման շարքերի ընդարձակումը (մանրանկարների ներառումը նաև տեքստի այունակներում և լուսանցքներում): Նա հայ գրքարվ-ը հարստացրել է բազմաթիվ թեմաներով («Երեք մանկունք կրակե հնոցում», «Ահեղ դատաստան», Հովնան մարգարեի պատմության դրվագները ևն), վերականգնել արքայական տան անդամների պատկերներով ձեռագրերը զարդարելու ավանդույթը: Թ. Ռ-ի «Զէյթունի Աւետարանի» որոշ զարդագրերի, նաև մարդագիր «Ե»-ի կիրառման ձևը նորություն է հայ գրքարվ-ում:

Թ. Ռ-ի արվ-ը գեղ. մտածողության ազատությամբ ու պատկերագր. լեզվի կատարելությամբ միջնադարյան քրիստ. մշակույթի բարձրագույն նվաճումներից է:

Գրկ. **Ազգարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:* **Պարսամեան-Տատուեան Ս.**, *Հայ մանրանկարչութեան «Նոմինալիպ»-ները. Թորոս Ռոսլին եւ Սարգիս Պիծակ, Բ., 1981: Թորոս Ռոսլին (կազմ. և փեքստի հեղ.՝ Լ. Չուգասզյան), Ե., 1985:* **Չուգասզյան Լ.**, *Թորոս Ռոսլինի արվեստը, «ԲԵՀ», 1987, № 3:* **Ղազարյան Վ.**, *Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ–XIV դ. սկիզբ), Ե., 1984:* **Дурново Л.**, *Армянская миниатюра, Е., 1969;* **Дрампян И.**, *Торос Рослин, Е., 2000;* **Der Nersessian S.**, *L'art Arménien des origines au XVIIe siècle, P., 1979.*

ԹՈՐՈՍ ՎԱՀԿԱՅԻ XIII դ-ի գրիչ, մանրանկարիչ: Ապրել և ստեղծագործել է Կիլիկիայում: Առաջին անգամ հիշվում է եղբորորդու հիշատակարանում 1272-ին: Թ. Վ-ու ընդօրինակած հայտնի 4 ձեռագրից թվագրված է միայն 1283-ի Աստվածաշունչը: Ընդօրինակել է նաև Նոր կտակարան, Հայտնություն Հովհաննու, Գործք և Թուղթ առաքելոց մատյանները (վերջին երկուսը՝ Մատենադարան, ձեռ. № 1978, 5147):

Գրկ. ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Ա. Մաթևոսյան), Ե., 1984:

ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, Մշեցի, XIV դ-ի 1-ին կեսի մանրանկարիչ, գրիչ, տաղասաց: *Գլաձորի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Գլաձորի համալսարանում աշակերտել է *Եսայի Նչեցուն:* Ստեղծագործել է Սյունիքի գրչատներում: Պահպանվել է 1307–46-ին Թ. Տ-ու ընդօրինակած և ծաղկած 24 ձեռագիր (11-ը՝ Մատենադարանում): Նրա հայտնի առաջին ձեռագիրը «Եսայի Նչեցու Աւետարանն» է (1307, Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 1917): Թ. Տ-ու նկարազարդած մատյաններից են 2 Աստվածաշունչ (ձեռ. № 206, 353), 2 Ավետարան (ձեռ. № 6289, 8936, չորսն էլ՝ Մատենադարան), Շաշոց (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 96): Վերջինս աչքի է ընկնում նուրբ գծանկարներով, իսկ 1318-ի Աստվածաշունչը (ձեռ. № 206) ճոխ նկարազարդմամբ համարվում է Գլաձորի մանրանկարչության դպրոցի գլուխգործոցը:



Թորոս Ռոսլին
(նկարիչ՝ Հ. Ռուխկյան)



«Հոգեգալուստ», մանրանկար, 1262-ի Ավետարան (Բալթիմորի Ուոլտերս պատկերասրահ, ձեռ. № 539)



Խորան, «Մալաթիայի Աւետարան» (1268, Մատենադարան, ձեռ. № 10675)



Թորոս Տարոնացի. *Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը (1323, Մատենադարան, ձեռ. № 6289)*



Գրիգոր Թորոսյան. *Սայաթ-Նովայի «Խաղեր» (2003, Ե., «Նաիրի») գրքի շապիկը*



Սուքիաս Թորոսյան. *«Հայոց այբուբեն» (2012) շարքի «Է» փառը*

Ավետարանները զարդարված են կանոնիկ նկարներով, իսկ Հին կտակարանն ու Գործք առաքելոցը զուգորդված են փոքրիկ պատկերներով: Թ. Տ. իր արվ–ում առավելապես կարևորել է Աստվածամոր կերպարը. հատկապես առանձնանում են «Տիրամայրը մանկան հետ» պատկերի տարբերակները: Ուշագրավ են նաև ինքնանկարները, Եսայի Նչեցու դիմանկարը ևն:

Գրկ. **Ավետիսյան Ա.**, *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե., 1971:* **Der Nersessian S.**, *Manuscrits arméniens illustrés des XII^e–XIII^e et XIV^e siècles de la Bibliothéque des pères Mekhitharistes de Venise, P., 1936.*

ԹՈՐՈՍ ՓԻԼԻՍՈՓԱ, XIII դ–ի վերջի գրիչ և մանրանկարիչ: Գործել է Կիլիկիայի Դրազարկի վանքում: 1290–ին գրել և ծաղկել է 2 Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 5736, Ս. Պետերբուրգ, Էրմիտաժ, ձեռ. № 3/835): Ընդօրինակել է 1295–ի Ավետարանի Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի բնագրերը, ծաղկել խորաններն ու անվանաթերթերը (Մատենադարան, ձեռ. № 6290): Նրա ընդօրինակած և ծաղկած մեկ այլ Ավետարան XIX դ–ում պահվել է Արցախում (այժմ տեղն անհայտ է): Թ. Փ–ի արվ–ում նկատելի է Հռոմկլայի և Կիլիկիայի մանրանկարչության դպրոցների ավանդույթների ազդեցությունը:

Գրկ. **Измайлова Т.**, *Киликийская рукопись 1290 г. и её мастер Торос Философ, «Сообщения Гос. Эрмитажа», вып. XXIII, Л., 1962.*

ԹՈՐՈՍՅԱՆ Արամ [14.12.1884, Վան–6.12.1941, Բերկլի (ԱՄՆ)], ճարտարապետ, գրականագետ: 1895–ից ապրել է ԱՄՆ–ում: Ավարտել է Մասսաչուսեթսի տեխնոլոգ. ինստ–ը (1908) և Հարվարդի համալսարանը (1919): Դասավանդել է Կալիֆոռնիայի համալսարանում (Բերկլիի մասնաճյուղ), 1922–ից՝ ճարտ–յան պրոֆ.: Թ–ի ջանքերով Կալիֆոռնիայի համալսարանում ստեղծվել է «Հայկական դպրոց հիմնադրամը», որը նրա մահից հետո վերանվանվել է «Արամ Թորոսյան հիմնադրամի»: Գործավոր Վանցի ծածկանունով աշխատակցել է հայկ. մամուլին: Խմբագրել է «Արմինիըն Հերալդ» (անգլ.) պարբ–ը, օժանդակել Ալիս Բլեքուելին՝ թարգմանելու հայ գրողների երկերից:

ԹՈՐՈՍՅԱՆ Գրիգոր Կարապետի (ծ. 8.4.1948, Երևան), գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1964), ԵԳԹԻ (1970): 1969–74–ին եղել է «Էկրան» հանդեսի, 1991–94–ին՝ «Երկիր», 1997–ից՝ «Հայոց աշխարհ» թերթերի գեղ. խմբագիր, 1974–80–ին՝ «Մոսկվա» կինոթատրոնի գլխ. նկարիչ, 1980–99–ին՝ բեմադրող–նկարիչ Հայֆիլմում: 1996–ից դասավանդում է ԵԳՈՒ–ում: 1980–ական թթ–ին աշխատակցել է «Գարուն», «Հայաստանի աշխատավորուհի», «Գիտություն և տեխնիկա» ամսագրերին, «Նորք» հանդեսին:

Նկարազարդել և ձևավորել է Յ. Գրանտի «Աղմկում է երկնագույն հեռաստանը» (1970), Ն. Միքայելյանի «Քարե քնքշանք» (1971), Շ. Թորոսյանի «Հանդիպում գագաթին» (1972), Ա. Ավագյանի «Եղել է, չի եղել» (1973), Ա. Ալիքյանի «Նժար» (1974), Է. Պոյի «Ոսկե բզեզը» (1975), նաև «Հայկական նովելներ» (1971), Սայաթ–Նովայի «Խաղեր» (2003) և այլ գրքեր:

ԹՈՐՈՍՅԱՆ Ջավադ Լևոնի (29.10.1930, Երևան–4.5.1994, Երևան), պատմաբան–միջազգայնագետ, խմբագիր, լրագրող: Վաստ. լրագրող (1981): Ավարտել է ԵՊՀ (1953): 1970–ից աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում, 1979–94–ին՝ գլխ. խմբագրի տեղակալ: Անգլ–ից թարգմանել է Դ. Լանգի և Ք. Ուոքըրի «Հայերը» (1992) աշխատությունը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1988)՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» (հ. 1–12 + 1, 1974–87) համար:

ԹՈՐՈՍՅԱՆ Սուքիաս Անդրանիկի, **Toto** (ծ. 4.9.1959, Երևան), երգիծաբան, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1983): 1991–96–ին և 2012–ից՝ «Ազգ», 1996–2000–ին՝ «Առավոտ» օրաթերթերի խմբագրությունների երգիծանկարիչ, 2001–05–ին՝ «ԱԼՄ» հեռուստաընկերության գեղ. ղեկ. և գլխ. նկարիչ: Կազմակերպել է «Տառերի կերպարը» խորագրով անհատ. ցուցահանդես՝ նվիրված հայ

գրատպության 500-ամյակին («Հայոց այբուբեն» գեղանկարչ. շարք, 11 սրբապատկեր, 2012, Երևան) և հումորի առաջին միջազգ. փառատոնը՝ «Ահավիշապ» (2013, Երևան, գրաֆիկ. գործեր, 52 երկիր):

Նկարազարդել և ձևավորել է Ա. Ղազինյանի «Բանաստեղծություն» (1996), Ջ. Բուրսալյանի «Ես դեռ պատրաստ չեմ... Տոկա՛, սիրտ իմ» (2003), Ի. Իվանչևի «Հայերը» (բուլղ., 2005), Գ. վան Ռաեմդոնկի «Արդարադատություն» (ֆրանս., 2005), Ա. Շահնազարյանի «Է արար» (2011), Վ. Բյոնզենի «Փոքր թերություններով լավ օրինակներ» (2012), Գ. Հարությունյանի «Սյունեցի Գոռը» (2013) և այլ գրքեր:

ԹՈՓԱԼՅԱՆ Բյուզանդ Հովհաննեսի [1902, Այնթապ (Դաշտային Կիլիկիա)–2.5.1970, Փարիզ], բանաստեղծ, նկարիչ, խմբագիր, տպարանատեր: 1923–25-ին եղել է ***«Մեղու»*** (Հալեպ) ազգ. երգիծ. ամսաթերթի գլխ. խմբագիրը, 1925–30-ին՝ «Տաթև» (Հալեպ) կրոնաբարոյական. տարեցույցի տնօրեն-խմբագիր: Հալեպում 1922–26-ին՝ «Սուրիական մամուլ», 1922–30-ին՝ «Մարանաթա», 1924–30-ին՝ «Արաքս» տպարանների տնօրեն: 1930-ական թթ-ին հաճախել է Փարիզի Ժուլիեն և Գրան Շոմիեր ակադ-ները: Փարիզում ***Շահան Շահնազարի*** հետ մասնակցել է «Մենք» գրական խմբի համանուն պարբ-ի (1931–32) լույսընծայման աշխատանքներին: 1945–52-ին՝ ***«Արևմուտք»*** շաբաթաթերթի խմբագիր, 1952–69-ին՝ ***«Անդաստան»*** հանդեսի հիմնադիր-խմբագիր: Ավելի քան 40 տարի Փարիզում գործել է Թ-ի տպարանը, որտեղ տպագրվել են շուրջ 500 անուն հայ. գրքեր:

Լույս են տեսել Թ-ի «Այգահանդէս» (1930), «Արեւագալ» (1936, 1968), «Համայնական սէր» (1950), «Հրախաղութիւն» (1952), «Արձանագիր» (1959, ֆրանս.՝ 1962), «Լուսածնունդ» (1964), «Աշխարհի օրը» (ֆրանս., 1956, 1960) բանաստեղծությունների ժող-ները, որոնց մեծ մասը ձևավորել է ինքը:

ԹՈՓՉՅԱՆ Ալեքսանդր Էդուարդի (ծ. 7.9.1939, Երևան), գրաքննադատ, թարգմանիչ, դրամատուրգ, արձակագիր: Էդուարդ ***Թոփչյանի*** որդին, Ստեփան ***Թոփչյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1962): 1963–65-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, 1966–75-ին՝ «Գարուն» ամսագրի խմբագրությունում, 1975–88-ին՝ Հայֆիլմ կինոստուդիայում, 1982–89-ին՝ ԳԱԹ-ում, 1991–95-ին՝ ՀՀ ԱԺ լրատվության հանձնաժողովում:

Լույս են տեսել Թ-ի «Բառի սահմանները» (1978), «Ժամանակ և պատկեր» (ռուս., 1983), «Ապագայի ներկայությամբ» (1987) աշխատությունները, «Արտագերս» (1994), «Կիրկե կղզին» (1996), «Այնտեղ» (2002), «Եվ անգամ մահից հետո» (2005), «Բանկ Օտոման» (2008, ՀՀ նախագահի մրց.՝ 2009) վեպերը: Ֆրանս-ից թարգմանել է Ժ.-Բ. Մոլիերի, Ֆ. Լարոշֆուկոյի, Ֆ. Սագանի, Վ. Գոդելի, Ժ.-Պ. Սարտրի, Վ. Քաչայի և այլ հեղինակների ստեղծագործություններից:

ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1992) և «Կանթեղ» (2004) մրց-ներ:

Ֆրանսիայի Արվ-ների և գրակ-յան սպայի շքանշան (2010):

ԹՈՓՉՅԱՆ Արամ Ստեփանի (ծ. 13.9.1962, Երևան), բանասեր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. թեկնածու (2001): Ստեփան ***Թոփչյանի*** որդին: Ավարտել է ՀՊՄԻ (1983): 1988-ից աշխատում է Մատենադարանում:


Լույս են տեսել Թ-ի «Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը» (2006) և «Յուցակ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի հայերէն ձեռագրերի պատառիկների» (հայ-անգլ., 2012, համահեղ.՝ Գոհար ***Մուրադյան***) աշխատությունները:

Անգլ-ից թարգմանել է Ք. Մաղոյի «Դոկտոր Ֆաուստի ողբերգական պատմությունը» (1985), Մ. Սթոունի, Տ. Գույումճյանի և Հ. Լեմաննի «Հայկական հնագրության ալբոմը» (2002, Գ. Մուրադյանի հետ), Վ. Շեքսպիրի «Համլետ» (2013) ողբերգությունը, հին հուն-ից՝ «Հին հունական ողբերգություններ», «Անտիկ միջնադարյան վերածննդի գրականություն» (երկուսն էլ՝ 1990) ժող-ները, Էսքիլոսի «Ողբերգությունները» (1991), Պինդարոսի «Ներբողները» (1992), Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» (1995) դրաման, Լոնգոսի «Դափնիս և Քլոե» (2011, Գ. Մուրադյանի հետ) վեպը ևն:


Երկ. The Armenian Version of the Greek Ecclesiastical Canons (co-authors G. Muradyan and M. E. Shirinian), Frankfurt am Main: Loewenklau-Gesellschaft e.V., 2010; David the Invincible, Commentary on Aristotle's Prior Analytics, Leiden–Boston: Brill, 2010.



Բյուզանդ Թոփալյան



Ալեքսանդր Թոփչյանի *«Բանկ Օտոման» (2008, Ե., «Գասպրինտ») գրքի կազմը*



Վ. Շեքսպիրի «Համլետ» (թարգմ.՝ **Արամ Թոփչյանի,** *2013, Ե., «Փրինթինֆո-Սարգիս Խաչենց») գրքի կազմը*



Էդուարդ Թոփչյան



Ստեփան Թոփչյանի *«Կերպ և իսկություն» (1987, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Թռչնագիր *այբուբենի օրինակ*

ԹՈՓՉՅԱՆ Եղիշե (1872–1909), հրապարակախոս, հաս-քաղ. գործիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Եղել է ուսուցիչ Շիրակում: 1904–08-ին խմբագրել է «Լոյս» գրպանի պատկերազարդ օրացույցը, 1908-ին անցել է Կարին, 1909–14-ին՝ «Յառաջ» (Կարին) հաս., տնտ., քաղ. շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Թ-ի «Յունաստանի անցեալից: Պատմական տեսութիւն» (1898, ՍՊբ, Յ. Լիբերմանի տպ.), «Հաւատման» (1902, ՍՊբ, Հովհաննես Արամյանի տպ.), «Արհեստակցական միութիւններ» (1906, Թ., «Հերմես» տպ.), «Երիտասարդ Թուրքիան եւ հայերը» (1909, Թ., Շրոմա ընկ. տպ.) աշխատությունները:

ԹՈՓՉՅԱՆ Էդուարդ Ստեփանի [11.7.1911, գ. Էվջիլար (Սուրմալուի գավառ)–3.9.1975, Երևան], գրականագետ, խմբագիր: Ալեքսանդր և Ստեփան ***Թոփչյանների*** հայրը: Մշակույթի վաստ. գործիչ (1970): Ավարտել է ԵՊՀ (1932): 1943–44-ին՝ ***«Սովետական գրականություն»*** ամսագրի խմբագիր, 1944–46 և 1954–75-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1953–54-ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի տնօրեն:

Լույս են տեսել Թ-ի «Վահան Տերյան» (1945), «Դերենիկ Դեմիրճյան» (1954), «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ճակատագիրը» (1965) աշխատությունները:

Երկ. Երկեր, գիրք 1, 2, Ե., 1977, 1980:

ԹՈՓՉՅԱՆ Ստեփան Էդուարդի (ծ. 20.6.1937, Երևան), գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1966): Էդուարդ ***Թոփչյանի*** որդին, Ալեքսանդր ***Թոփչյանի*** եղբայրը, Արամ ***Թոփչյանի*** հայրը: Ավարտել է ՀՊՄԻ (1959): 1976–79-ին՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրի տեղակալ, 1979–94-ին՝ ***«Նաիրի»*** հրատարակչության բաժնի վարիչ: 1994-ից ապրում է Լոս Անջելեսում:

Լույս են տեսել Թ-ի «Շիրվանզադեի էսթետիկան» (1963), «Րաֆֆու էսթետիկական հայացքները» (1971), «Արևմտահայ նեոռոմանտիզմի էսթետիկայի ուրվագիծ» («Հայ էսթետիկական մտքի պատմությունից», գիրք 1, 2, 1974, 1976) աշխատությունները: Հեղինակ է նաև «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի (հ. 1–5, 1962–79) և «Հայ քննադատության պատմություն» (հ. 1, 2, 1985, 1998) ժող-ի որոշ գլուխների:

Երկ. Անհունի անդրադարձը, Ե., 1982: Կերպ և իսկություն, Ե., 1987: Ապագայի հիշողությունը, հրապարակախոսական հոդվածներ, գիրք 1–2, Ե., 2003: Կյանք դարերի համար: Ա. Ահարոնյանի կենսագրական դիմանկար, Ե., 2003:

ԹՌՉՆԱԳԻՐ, ***գարդագրի*** տեսակ, որի տառերը (հիմնականում՝ գլխագիր) ձևավորված են թռչունների պատկերներով: Միջնադարի հայկ. ձեռագրերում թռչնաձև (նաև կենդանագիր, բուս., երկրաչափ.) գրերով սկսվել են Սուրբ Գրքից ընթերցվածները: Թ., իմաստային նշանակությունից բացի, արտահայտում է գրիչի կամ ծաղկողի, դպրոցի կամ ժամանակի գեղ. ճաշակը, այն սերտորեն համադրված է էջի մյուս բաղադրիչների (տեքստ, գլխազարդ, լուսանցազարդ, մանրանկար) հետ:

Թ. զարդագրի մյուս տեսակների նման հայ գրքարվ-ում հայտնվել է X դ-ից: XI դ-ի Կարսի և Տրապիզոնի Ավետարաններում սկզբնատառերի ուղղահայաց ձողի վրա պատկերված են թռչուններ, որոնք որոշ դեպքերում «կտցում» են Ա տառի կեսը: Թորոս Ռոսլինի ծաղկած «Զէյթունի Աւետարանի» (1256) բնագրում Զ տառը ձևավորված է 2 սիրամարգերի միահյուսված պարանոցներով. Թ-ի այդ տեսակը լայնորեն տարածվել է միջնադարյան ***գառարվեստում:***

Թ-երը կիրառվել են նաև տպագիր հրատ-ներում:

«ԹՌՉՆԻԿ», ամսօրյա, այնուհետև՝ կիսամսյա հանդես: Լույս է տեսել է 1861–62-ին Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրեն՝ Գրիգոր ***Պալյան:*** Հարել է հայ հաս. մտքի պահպանող. թևին: Մասնակցել է գրաբար-աշխարհաբար բանավեճին՝ հօգուտ աշխարհաբարի: Տպագրել է բանաստեղծություններ, աշխարհագր., բնագիտ., առողջապահ. հոդվածներ, խորհուրդներ մանուկներին, զվարճալի պատմություններ:

ԹՎԱՅԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տպագրության եղանակ, երբ տպագրման նյութը համակարգչից անմիջապես փոխանցվում է տպաձևին կամ ուղղակի տպագրվում: Թ. տ–յանը բնորոշ են ավանդ. օֆսեթ տպագրության բոլոր առավելությունները՝ գունաբաժանում, ճկուն ձևաչափ ևն:

ԹՎԱՆՇԱՆՆԵՐ, թվեր գրելու պայման. նշաններ: Գրահրատարակչության մեջ օգտագործվում են և՛ հռոմ., և՛ արաբ. Թ.:



Հռոմ. Թ. են՝ I = 1, X = 10, C = 100, M = 1000 և դրանց կեսերը՝ V = 5, L = 50, D = 500: Բնական թվերը գրվում են նշանների կրկնությամբ. եթե մեծ թվանշանը դրված է փոքրից առաջ, ապա նրանք գումարվում են, իսկ եթե փոքրն է մեծից առաջ՝ հանվում են:

Հռոմ. Թ–ի համակարգն օգտագործվում է դարերը, ամիսները, դաս. թվականները, գրքի ձևավորման մեջ՝ հատորները, գլուխները, հերթական թողարկումները, երբեմն նաև տարեթվերը նշանակելու համար:

Արդի արաբ. Թ–ի նախատիպերը (բացառությամբ՝ զրոյի) ծագել են Հնդկաստանում՝ հավանաբար V դ–ում: X–XIII դդ–ում Եվրոպայում այն տարածել են արաբները, որտեղից էլ ծագել է նրանց 2–րդ՝ ոչ ճիշտ անվանումը՝ «արաբական թվեր»:



Հնատիպ գրքերում տարեթվերը նշվել են ըստ Քրիստոսի ծննդի և հայոց թվականներով, սակավ՝ հռոմեական թվերով

«Արաբական» կոչվող թվերը հայերն օգտագործել են XVII դ–ից:

Հայոց գրերի գյուտից (405) հետո որպես Թ. օգտագործվել են հայկ. տառերը (թվերը կազմել են 10–ական համակարգի կանոնով). միավորները նշանակվել են «Ա»–«Թ», տասնավորները՝ «Ժ»–«Ղ», հարյուրավորները՝ «Ճ»–«Ջ», հազարավորները՝ «Ո»–«Ք» տառերով: Տառերի թվային իմաստով գործածությունն ընդգծելու համար նրանց գլխավերևում հորիզոն. գիծ կամ 2 կողմերից կետեր են դրել, օր.՝ տող կամ .տող. = 4630: Բյուրի (10 000) նշանով (¬) տառերի թվային արժեքը մեծացել է 10 000 անգամ, օր.՝ Ա¬ = 10 000, այսինքն՝ 1 բյուր, Ժ¬ = 100 000, այսինքն՝ 10 բյուր, ևն: Զրոյի համար առանձին նշան չի եղել:


Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրված գրքերի հրատ–յան տարեթվերը նշված են նաև հայ. տառերով՝ ըստ Հայոց մեծ թվականի, օր.՝ «ի Թուում Փրկչին. 1666, իսկ Հայոց՝ ՌՃԺԵ»:

Հայոց այբուբենի տառերը (1), նրանց անվանումները (2) և թվային համարժեքները (3)


1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
Ա	այբ	1	Ժ	ժե	10	Ճ	ճե	100	Ռ	ռա	1000
Բ	բեն	2	Ի	ինի	20	Մ	մեն	200	Ս	սե	2000
Գ	գիմ	3	Լ	լյուն	30	Յ	հի	300	Վ	վեվ	3000
Դ	դա	4	Խ	խե	40	Ն	նու	400	Տ	փյուն	4000
Ե	եչ	5	Ծ	ծա	50	Շ	շա	500	Ր	րե	5000
Զ	կա	6	Կ	կեն	60	Ո	վո	600	Ց	ցո	6000
Է	է	7	Հ	հո	70	Չ	չա	700	Ւ	վյուն	7000
Ը	ըթ	8	Ձ	ձա	80	Պ	պե	800	Փ	փյուր	8000
Թ	թո	9	Ղ	ղափ	90	Ջ	ջե	900	Ք	քե	9000



1776-ին Էջմիածնում պատրաստած **թղթի** *դրոշմանշաններ*



«Թուղթ հանրական» *(Բենեդիկտոս XIV, 1755, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը*



«Թուղթք» *(Իգնատիոս Աստվածազգյաց, 1783, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*

«ԹՈՒԹԱԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ», բարոյախոս., բանասիր. և ուս. ամսաթերթ: Լույս է տեսել 1854–55-ին Զմյուռնիայում: Հրատարակել են Մեսրոպյան վարժարանի սանները՝ մանկավարժ Ա. Փափազյանի հովանավորությամբ: Տպագրել է գրական ստեղծագործություններ, բանասիր. նյութեր, թարգմանություններ, հեքիաթներ: Նյութերը հիմնականում աշխարհաբար էին, բանաստեղծությունները՝ մեծ մասամբ գրաբար: Հայ մանկ. մամուլի առաջնեկներից է:

ԹՈՒՂԹ, 1. թելքավոր նյութից պատրաստված բարակ թերթ՝ գրելու, տպագրելու, փաթեթավորելու ևնի համար: Պատրաստվում է բուս. թաղանթանյութից, փայտանյութից և երկրորդ. հումքից (լաթ, թղթաթափոն ևն):

Թ. հայտնագործել է չին Ցայ Լունը 105-ին (համարում են աշխարհի 4 խոշոր հայտնագործություններից մեկը): VII դ-ում Թ. տարածվել է Կորեայում և Ճապոնիայում, 150 տարի անց գյուտը փոխանցվել է արաբներին, XI–XII դդ-ում հայտնի է դարձել Եվրոպայում:

Թ-ի արտադրությունն աննախադեպ ընդլայնվել է գրատպության սկզբնավորումից հետո: Ժամանակի ընթացքում նրա ամրությունն ու որակը բարելավելու նպատակով թղթազանգվածի բաղադրությանը հավելել են հանքանյութեր, օսլա, սոսինձ, ներկեր ևն: Որքան բարձր է զուտ թաղանթանյութի պարունակությունը թղթազանգվածում, Թ. այնքան ավելի որակյալ է:

Թողարկում են 4–250 գ/մ² զանգվածով, 4–250 մկմ հաստության, տարբեր մեխ. հատկություններով (խզման երկարություն, կոտրելիություն, ճկմելիություն, մաշվելիություն, սեղմելիություն, ոլորելիություն ևն), տարբեր մոխրայնության, խոնավության, գույնի, սպիտակության, ներծծելիության, օդա-, գոլորշա- և ճարպաանթափանցելիության և այլ հատկություններով ավելի քան 600 տեսակի Թ-եր:

Պոլիգրաֆիայում օգտագործվում է հիմնականում տպագր. Թ.՝ տպարանային, օֆսեթ, խոր տպագրության, քարտեզագր., կավճապատ և այլ տարատեսակներով, որոնց բնորոշ են բարձր ողորկությունը, սպիտակությունը և տպաներկերը լավ ներծծելու հատկությունը: Թերթի Թ. պատրաստվում է ավելի էժան նյութից՝ հավելումների ցածր պարունակությամբ և առանց սոսնձվածքի, քարտեզների, արժեթղթերի, առանձին փաստաթղթերի ևն տպագրության համար օգտագործում են արհեստ. Թ.:

Թ. արտադրող մեքենան հայտնագործել է ֆրանսիացի Լ. Ն. Ռոբերը 1799-ին, որի կատարելագործված տեսակը պատրաստել և գործարկել են Ֆուրդրինյե եղբայրները Անգլիայում 1806-ին:

Ժամանակակից Թ. արտադրող մեքենաներն ինքնաշխատ կառավարման համակարգով հարահոս համալիրներ են, որոնք, Թ-ի ձուլումից բացի, կատարում են նաև վերջնամշակման բոլոր գործողությունները և Թ-ին տալիս պատրաստի արտադրանքի տեսք:

Թ. թողարկվում է թերթերով, թղթագալարներով և կոճերով:

Հայաստանում Թ. օգտագործվել է VII–IX դդ-ից. մեզ հասած ամենահին թղթե ձեռագիրը 981-ից է (Մատենադարան, ձեռ. № 2679), իսկ արտադրություն կազմակերպվել է 1776–80-ին՝ Էջմիածնի տպարանին կից՝ տնայնագործ. եղանակով: Ներկայում գործում են Թ-ի թափոնի երկրորդ. մշակման արտադրամասեր:

2. Գրքի յուրաքանչյուր թերթը՝ բաղկացած երկու երեսից:

3. Գրություն և նամակագր. բնույթի գրակ-յան տեսակ միջնադարյան Հայաստանում՝ հիմնականում պաշտոնական ուղերձ, հրովարտակ ևն: Օր.՝ Ներսես Շնորհալու *«Թուղթ ընդհանրականը»*, որը նրա՝ կաթողիկոս ընտրվելուց հետո համայն հայությանն ուղղված առաջին կոնդակն է: Տես նաև *«Թուղթ հանրական», «Թուղթք Առաքելոց», «Թուղթք Հինաց»:*

«ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ», Ներսես Շնորհալու՝ ժողովրդին ուղղված հորդորական գրությունը կաթողիկոս ընտրվելուց հետո: Առաջին անգամ տպագրվել է 1788-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանցի տպարանում՝ «Գիրք որ կոչի Ընդհանրական» վերնագրով:

«ԹՈՒՂԹ ՀԱՆՐԱԿԱՆ», Բենեդիկտոս XIV պապի՝ քրիստ. քարոզիչներին ուղղված աշխատությունը: Տպագրվել է 1755-ին (՞) Հռոմում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Սրբազան Տեառն մերոյ Տեառն Բենեդիկտոսի պապին չորեքտասաներորդի թուղթ հանրական...» (104 էջ, 8º, 14 x 9 սմ):

«ԹՈՒՂԹՔ», Անտիոքի եպս. Իգնատիոս Աստվածազգյացի քրիստ. վարդապետության բովանդակությամբ թղթերը (նամակներ)՝ հասցեագրված տարբեր քաղաքների: Հրատարակվել է 1783-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Թուղթք Սրբոյն Իգնատիոսի աստուած-ազգեաց մարտիրոսի Անտիոքայ եպիսկոպոսի....» (159 էջ, 8º, 13 x 8 սմ):

ԹՈՒՂԹՔ ԱՌԱՔԵԼՈՅ, վաղ քրիստ. շրջանի նամակագր. բնույթի գրակ-յան տեսակ: Գրվել է I դ-ի վերջերից մինչև II դ-ի կեսերը: Կանոնականացված և Նոր կտակարանում ընդգրկված է Թ. ա-ի 21 օրինակ, որոնցից 14-ը վերագրված են Պողոս, 3-ը՝ Հովհաննես, 2-ը՝ Պետրոս, 1-ական՝ Հակոբոս և Հուդա առաքյալներին: Թ. ա-ներն ուղղված են քրիստ. նորակազմ տարբեր համայնքների, եկեղեցիների, առանձին անձանց և դավանափոխ հրեաներին:

Թ. ա. հուն. (կամ ասոր.) բնագրից V դ-ում հայ. են թարգմանել Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները: Միջնադարում օգտագործել և մեկնաբանել են հայ մատենագիրները (Ներսես Շնորհալի և ուր.): Որպես գրաբարի և հայ նամակագրության ժանրի հնագույն աղբյուր՝ ուսումնասիրել են հայ և օտար գիտնականներ:

«ԹՈՒՂԹՔ ՋՉԻՆԱՑ», Լուդովիկոս Քոմթեանցի թղթերի ժող-ը: Տպագրվել է 1783-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Անգլ-ից թարգմ.՝ Մարգար Շահրիմանյանցի: Ա տիտղթ-ին՝ «Թուղթք պատուական հօր Լուդովիկոսի Քոմթեանց...», Բ-ին՝ «Ցիշատակք եւ դիտողութիւնք...» (382 էջ, 6º, 12 x 7 սմ):

ԹՈՒՂԼԱՃՅԱՆ Բարսեղ Միքայելի, **Թուղլաճը Փարս** (ծ. 1.4.1933, Կ. Պոլիս), բանասեր, արվեստաբան, բառարանագիր, թարգմանիչ: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը (1951), Միչիգանի համալսարանի լեզվաբանության ֆակ-ը (1955): Դասավանդել է Կ. Պոլսի Կեդրոն., նաև ֆրանս. ու թուրք. վարժարաններում: Կազմել է «Անգլերեն-թուրքերեն ոճերի և ասույթների բառարանը» (1961), «Անգլերեն-ֆրանսերեն-թուրքերեն իրավաբանական և տնտեսական բառարանը» (80հզ. բառ, 1965), «Անգլերեն-լատիներեն-թուրքերեն բժշկական բառարանը», «Ովկիանոս» (հ. 1-3, 1971-74) հանրագիտ. բացատր-ստուգաբան. բառարանը:

Թուրք. լույս են տեսել նաև Թ-ի «Օսմանյան ճարտարապետության արևմտականացման ժամանակաշրջանն ու Պալյան ընտանիքը» (1982), «Այվազովսկին Թուրքիայում», «Բուլղարիան և թուրք-բուլղարական հարաբերությունները» (երկուսն էլ՝ 1983), «Արփաչայը և շրջակայքը» (1984), «Օսմանյան նվագախմբից արդի թուրքական փողերախումբ», «Ժամանակակից Թուրքիան» (երկուսն էլ՝ 1987), «Պոլսի Իշխանաց կղզիները պատմության ընթացքում» (1989) աշխատությունները:

Հայ. է թարգմանել Գի դը Մոպասանի, Վ. Շեքսպիրի, Պ. Մերիմեի ստեղծագործություններից. տպագրել է Ստամբուլի հայկ. մամուլում:

Երկ. Իսթանպոլի հայոց եկեղեցիները, Սփամբուլ, 1991 (նաև թուրք. և անգլ.):

ԹՈՒՄԱՆՅԱՆ Հովհաննես Թադևոսի [7(19).2.1869, գ. Դսեղ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–23.3.1923, Մոսկվա, թաղված է Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում, սիրտը՝ Դսեղում], բանաստեղծ, արձակագիր, գրական-հաս. գործիչ, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Նվարդ *Թումանյանի* հայրը: Նախն. կրթությունն ստացել



«Թուղթք Ջչինաց» *(Լուդովիկոս Քոմթեանց, 1783, Տրիեստ) գրքի Ա փիփղոսաթերթը*




Բարսեղ Թուղլաճյան



Բ. Թուղլաճյանի *«Օսմանյան ճարտարապետության արևմտականացման ժամանակաշրջանն ու Պալյան ընտանիքը» (թուրք., 1982, Սփամբուլ) գրքի կազմը*



Հովհաննես Թումանյան



«Անուշ» (1952, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը



«Ընտիր երկեր»-ի (1985, Ե., «Սովետական գրող») կազմը

է հայրենի գյուղում, ապա՝ Ձալալօղլու ծխական դպրոցում: 1883-ից ապրել է Թիֆլիսում, սովորել Ներսիսյան դպրոցում (1883–87): Աշխատել է հայոց հոգևոր կոնսիստորիայում, ապա՝ Կովկասի հայոց հրատարակչ. ընկերության գրասենյակում, ***«Հորիզոն»*** օրաթերթի խմբագրությունում՝ որպես խմբագիր ու սրբագրիչ, աշխատակցել «Աղբիւր», «Մուրճ», «Հասկեր», «Ազատ Հայաստան» և այլ պարբ-ների: 1891-ից վարել է ***«Մուրճ»*** ամսագրի գրական բաժինը: 1912–21-ին եղել է Հայ գրողների տան, 1921–22-ին՝ ՀՕԿ-ի նախագահ և Հայ արվ-ի տան (Թիֆլիս) ղեկավար:

Առաջին տպագիր գործն «Արեւ եւ Լուսին» լեգենդն է, որը լույս է տեսել «Աղբիւր» հանդեսում՝ Ղ. Աղայանի երաշխավորությամբ: Թ-ի 1-ին ժող-ը՝ «Բանաստեղծութիւնները», հրատարակվել է Մոսկվայում (հ. 1, 2, 1890, 1892, Մկրտիչ Բարխուդարյանի տպ.). 1-ին հատորում ներառվել են նաև «Լոռեցի Սաքոն» և «Մեհրի», 2-րդում՝ «Անուշ», «Մերժած օրենք», «Մարո» պոեմները [1903-ին հրատարակվել է նաև Թիֆլիսում (Մնացական Մարտիրոսյանի տպ.), 1922-ին՝ Կ. Պոլսում (Կ. Քեշիշյան և որդի տպ.)]: Հաջորդ առավել լիակատար ժող-ը՝ «Ընտրանին», տպագրվել է 1934-ին՝ Ե. Չարենցի խմբագրությամբ:

Լույս են տեսել նաև Թ-ի «Դաշնակներ» (1896, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ), «Լեգենդներ» (1904, Թ., «Հերմես» տպ.) ժող-ները, «Դէպի Անհունը» (1894), «Պոետն ու Մուսան» (1902), «Անուշ» (1904, Թ., «Հերմես» տպ., 1952, համանուն օպերա՝ 1912, կինոնկար՝ 1983) և «Սասունցի Դաւիթ» (1904, Թ., «Հերմես» տպ.) պոեմները, «Հայրենիքիս հետ» (1916, Թ., «Մամուլ» տպ.) և «Քառեակներ» (1920, նույն տպ.) ժող-ները, «Շունն ու կատուն» (1886, հրտ.՝ 1892), «Անբախտ վաճառականներ» (1886, հրտ.՝ 1899), «Ախթամար» (1892), «Թմկաբերդի առումը» (1902), «Փարուանա» (1903), «Հսկան» (1908), «Մի կաթիլ մեղր» (1909), «Աղաւնու վանքը» (1913), «Թազաւորն ու չարչին» (1917) լեգենդները, բալլադները, «Սովի ժամանակից» (1893), «Գիքոր» (1895, հրտ.՝ 1907, համանուն կինոնկար՝ 1934, 1982), «Նեսոյի քարաբաղնիսը» (1910) և այլ պատմվածքներ, «Նաղաշ Յովնաթանը եւ նրա Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սէրը» (1916, Թ., «Մամուլ» տպ.) ուսումնասիրությունը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–6, 1940–59, հ. 1–4, 1969), «Ընտիր երկերը» (1985), «ԵԼՀ»-ն (հ. 1–10, 1989–99):

Թ. գրել է հաս. կյանքին, գրակ-յանը, բանահյուսությանը, հայոց լեզվի զարգացմանը վերաբերող հոդվածներ, մշակել 20-ից ավելի հայկ. («Տէրն ու ծառան», 1908, «Ոսկու կարասը», 1908, «Քաջ Նազար», 1912, ևն), փոխադրել Գրիմ եղբայրների, ռուս, հնդիկ, ճապոնացի, իտալացի և այլ ժողովուրդների հեքիաթներ: Լևոն ***Շանթի*** և Ստեփան ***Լիսիցյանի*** հետ կազմել ու 1907-ին հրատարակել է հայոց լեզվի «Լուսաբեր» դասագիրքը (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), որը մինչև 1922-ը բազմիցս վերահրատարակվել է:

Բնագրից թարգմանել է Ջ. Բայրոնի «Շիլիոնի կալանաւորը» (1837, հրտ.՝ 1896) պոեմը, Ս. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Հ. Լոնգֆելլոյի, Յ. Գյոթեի և ուր. գործերից:

1899-ին Թ-ի նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծվել է ***«Վերնապատն»*** գրական խմբակը, որտեղ, քննարկումներից բացի, կարևորվել են նաև գրքի ճաշակով ձևավորման ու բարձրորակ տպագրության խնդիրները, գրողների ստեղծագործությունների հրատարակմանն աջակցելը:

Թ-ի գործերից թարգմանվել են բազմաթիվ (ռուս., անգլ., ֆրանս., գերմ., իտալ., իսպ., հուն., արաբ., ճապոն., շվեդ., չին., պարսկ., վրաց., ուկր. ևն) լեզուներով: 1980-ին Թ-ի անունով սահմանվել է ՀԳՄ մրց., կոչվել են քաղաք, դպրոցներ, գրադարաններ, թատրոն, հրապարակ, կանգնեցվել են հուշարձաններ, կիսանդրիներ: Երևանում գործում է Թ-ի թանգարանը, Դսեղում՝ տուն-թանգարանը: Թ-ի պատկերով ՀՀ-ում թողարկվում է թղթադրամ (5-հզ-դրամանոց):

2010-ից ՀԳՄ-ի նախաձեռնությամբ Թ-ի ծննդյան օրը՝ փետր. 19-ը, ՀՀ-ում հայտարարվել է գիրք նվիրելու օր:

Երկ. Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1–4, 1964–85:

Գրկ. **Տէրտէրեան Ա.,** *Յովհաննէս Թումանեան, Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղ-պատ, 1911:* **Թումանյան Ն.,** *Թումանյանը քննադատ, Ե., 1939:* **Նույնի,** *Հովհաննես Թումանյան: Մանրնագիտություն, Ե., 1961:* **Հախվերդյան Լ.,** *Թումանյանի աշխարհը, Ե., 1966:* **Նույնի,** *Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, Ե., 2000:* **Ինճիկյան Ա.,** *Հովհաննես Թումանյան: Կյանքի և ստեղծագործության պատմությունը, Ե.,*

1969: Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969: Մկրյան Մ., *Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Ե., 1981:* Զրբաշյան Է., *Թումանյանի պոեմները, Ե., 1986:* Նույնի, *Թումանյան. ստեղծագործության պրոբլեմներ, Ե., 1988:* Կարապետյան Լ., *Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Ե., 1992:* Այվազյան Հ., *Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Ե., 2004: Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869–1908), Ե., 2010:* Շախկյան Գ., *Թումանյանի ընտանեկան աշխարհը, Ե., 2010:*

ԹՈՒՄԱՆՅԱՆ (Դոլուխանյան) Մարիամ Մարկոսի [21.7(2.8).1870, Թիֆլիս–1947, Թբիլիսի], մշակույթի գործիչ, բարերար: 1902-ին հիմնադրել է Հայոց դրամատիկ. ընկերությունը (Գ. Սունդուկյանի հետ), 1903–07-ին՝ նախագահ, 1908-ին՝ «Իշխանուհի Մարիամ Թումանյան և ընկերներ» հրատարակչությունը. տպագրել է մանկ. գունավոր, պատկերազարդ գրքեր: Թ-ի աջակցությամբ տպագրվել են Հովհաննես *Թումանյանի* գործերը: Հայաստանում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո նյութ. օգնություն է ցուցաբերել հայ գրողներին (մասնավորապես՝ Հ. Թումանյանին), գաղթականներին: Աշխատակցել է «Աղբիւր», «Մշակ», «Հասկեր», «Կարմիր ծիլեր», «Պրոլետար» թերթերին:



Մարիամ Թումանյան

Լույս է տեսել Թ-ի «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» (2003) գիրքը:

ԹՈՒՄԱՆՅԱՆ Նվարդ Հովհաննեսի (3.10.1892, Թիֆլիս–28.9.1957, Երևան), գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1950): Հովհաննես *Թումանյանի* դուստրը: Ավարտել է Թիֆլիսի Հովնանյան դպրոցը (1910), Անդրկովկասյան համալսարանի պատմագր. ֆակ-ը (1920): 1923-ից՝ Հ. Թումանյանի երկերի ակադեմ. հրատ-յան պատ. քարտուղար: 1931–32-ին՝ հանրապետ. գրադարանի գիտ. կաբինետի վարիչ, 1934–42-ին՝ ԱրմՖԱՆ-ի գրակ-յան և լեզվի ինստ-ի պատ. քարտուղար և ավագ գիտաշխատող:



Նվարդ Թումանյան


Լույս են տեսել Թ-ի «Հովհաննես Թումանյան» (1939), «Թումանյանը քննադատ» (1939), «Հովհաննես Թումանյան. մանկություն և պատանեկություն» (1955), «Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը» (1956), «Թումանյանի մանկությունը» (1983) աշխատությունները, «Հուշեր և զրույցներ» (1969) հուշագրությունը:

«ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ», սոցիալ-տնտ., գրական, մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1931-ից Ալավերդիում (1931–63-ին՝ «Պղնձի ֆրոնտում», 1963–2003-ին՝ «Լոռի», մինչև 1990-ը՝ ՀԿԿ Թումանյանի շրջկոմի, ժողպատգամավորների շրջխորհրդի և Ալավերդու քաղխորհրդի պաշտոնաթերթը): Խմբագիրներ՝ Հ. Կարախանյան, Հ. Հովսեփյան, Ռաֆայել Շիրոյան, Բաբկեն Շահումյան, Հայկ Մանուկյան, Սուրեն Հարությունյան, Համազասպ Քոսյան, Անուշավան Դոլինյան, Քնարիկ Քալաշյան, Սիրաք Վանեսյան, Սպանդար Սոխիկյան, Ջավադ Եզանյան, Գևորգ Աբգարյան, Արարատ Թամրազյան (1986-ից): Լուսաբանում է Լոռու մարզի, մասնավորապես՝ Ալավերդու շրջանի գյուղ. և քաղաքային համայնքների առօրյան, ՀՀ-ի և մարզի սոցիալ-տնտ. խնդիրները, անդրադառնում է հանքարդ-յան և էկոլոգ. հարցերին, հայտնի լոռեցիներին, կրթամշակութ., գրական, մարզ. կյանքին:



«Թումանյանական աշխարհ», *1931-ից, Ալավերդի*

Ժ




Ժ, հայ. այբուբենի 10–րդ տառը, անվանումը՝ «ժե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Ուղղահայաց երկարին ձախ կողմից միանում են հավասար հեռավորությամբ կարճ ու լայն տարրերը. կարճը երկարին է միանում 2 ծայրից՝ վերջինիս ստորին և միջին մասերից, իսկ լայնը վերին ծայրից՝ վերին մասին: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ժ, որպես այբուբենի տասնավորների սյան 1–ին (10–րդ) տառ, նշանակել է տասը և տասներորդ, բյուրի նշանով (Ժ̿)՝ տասը բյուր (100 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ժ–մաս 10–րդ):

ԺԱՄԱԳԻՐՔ, **Աղոթամատույց**, քրիստ. եկեղեցածիս. գիրք, եկեղեց. արարողակարգին և տոներին պատշաճեցված աղոթքների, հոգևոր երգերի, քարոզների ժող.: Հայոց Ժ–ի ստեղծումը վերագրվում է V դ–ի սուրբ հայրերին՝ Սահակ Ա Պարթեին, Մեսրոպ Մաշտոցին, Գյուտ Ա Արահեզացուն, Հովհան Ա Մանդակունուն, Ստեփանոս Սյունեցուն, հետագա դարերի հեղինակներից՝ Ներսես Շնորհալուն: Ժ–ի որոշ հատվածներ պատկանում կամ վերագրվում են նաև Թովմա առաքյալին, Գրիգոր Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն, Հովհաննես Սարկավագին, Գրիգոր Տաթևացուն, Թովմա Մեծոփեցուն և ուր.:

Հայոց Ժ., չնայած քրիստ. այլ եկեղեցիներում կիրառվող համանման մատյանների (հատկապես հուն–ի) հետ ունեցած ընդհանրություններին, մի շարք առումներով խիստ ինքնատիպ է՝ հայ հեղինակներին պատկանող հատվածների շնորհիվ: Հայ եկեղեցում օգտագործվում է Ժ–ի 2 տարբերակ՝ Ժ. և Մայր Ժ. (Ատենի): Ժ. ընդգրկում է հոգևոր բանարվ–ի և երաժշտարանաստեղծ. արվ–ի մի շարք ժանրեր՝ աղոթք, քարոզ, մաղթանք, ընթերցվածք (Ավետարանից), սաղմոս, փոխ, ալելուիա, կանոն, թագավոր, մեսեդի, օրհնություն, կցուրդ, Արևագալի երգեր ևն: Մայր Ժ. հավելյալ ներառում է նաև Սաղմոսարան և Տոնացույց:



1642–ի **Ժամագրքի** *(Նոր Ջուղա, տպագրիչ՝ Խաչատուր Կեսարացի) սկզբնագրով (6–րդ) էջ*

Առաջին Ժ. տպագրել է ***Արգար Թոխաթեցին*** 1568–ին Կ. Պոլսում, ներառել է նաև Պատարագամատույց: Տիտղթ–ին՝ «**Ժամագիրք համառօտեալ աղաւթամատուց**» (208 էջ, 8º, 19 x 13 սմ): 9–րդ մամուլից սկսվում է Պատարագամատույցը: 2–րդ էջում՝ խորանի առջև պատկերված է մի ծերունի՝ քահանայապետի պատմուճանով, գլխին՝ հրեական խույր: Նկարի 2 կողմում լատ. գրված է՝ «Aarone sacerdote», իսկ նկարից դուրս՝ աջ լուսանցքում՝ հայ.՝ «Ահարոն քահանան է»: Այս հրատ–ը որոշ մասնագետներ համարել են իրրև 2 առանձին գրքեր:

Ժ. տպագրվել է նաև 1642–ին Նոր Ջուղայում՝ Ամենափրկիչ վանքի տպարանում, տպագրիչ՝ Խաչատուր Կեսարացի: Տիտղթ. և մամլանիշներ չունի, սկսվում է «Հրաժարիմք ի սատանայէ» բառերով (699 էջ, 17,2 x 13 սմ):

«**Կարգաւորութիւն հասարակաց աղօթից. եկեղեցեաց Հայաստանեայց....**» տիտղթ–ով տպագրվել է՝

Ամստերդամում 1662–63–ին՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչներ՝ Ավետիս Դլիճենց և Կարապետ Ադրիանացի (624 էջ, 12º), 1667–

ին նույն տպարանում, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի. Ա տիտղթ–ին՝ «Աղօթք մատոյց եւ ժամագիրք…» (275 էջ, 12º), 1686–ին Մատթեոս Վանանդեցու տպարանում (672 էջ, 12º), 1688–ին հավանաբար նույն տպարանում (677 էջ, 12º):

Մարսելում 1673–ին՝ Սբ Էջմածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Հեղինակներ՝ Իսահակ հայրապետ, Մեսրոպ վարդապետ, Գյուտ և Հովհան Սանդակունիներ. Ա տիտղթ–ին՝ «Գիրք ժամակարգութեան որ կոչի ատենի» (424 էջ, 23,8 x 15,6 սմ), 1686–ին՝ նույն տպարանում (480 էջ, 12º), 1708–ին՝ առանց տպարանի հիշատակության (288 էջ, 12º, 9,5 x 5,5 սմ):

1698–ին, տպագրության վայրը նշված չէ (480 էջ, 16,7 x 10,5 սմ):

Կ. Պոլսում 1699–ին (608 էջ, 14,5 x 9,5 սմ), 1701–ին (608 էջ, 8º, 2,8 x 7,5 սմ), 1721–ին (608 էջ, 8º, 12,8 x 7,8 սմ), 1725–ին (608 էջ, 8º, 12 x 10 սմ), 1733–ին (608 էջ, 8º) և 1738–ին (608 էջ, 8º, 12,8 x 7,8 սմ)՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում, 1704–ին (424 էջ, 8º, 13 x 7,5 սմ) և 1712–ին (608 էջ, 8º, 12,9 x 7,4 սմ)՝ «Ի թաղն Պեկօղլի» տպարանում, 1704–ին (608 էջ, 8º) և 1721–22–ին (608 էջ, 8º)՝ Սարգիս Դպիրի տպարանում, 1709–ին (608 էջ)՝ առանց տպարանի հիշատակության, 1729–ին (616 էջ, 8º) և 1733–ին (640 էջ, 8º, 13,3 x 8,4 սմ)՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում, 1733–ին (640 էջ, 8º, 13 x 7 սմ)՝ Աբրահամ Թրակացու տպարանում, 1752–ին (608 էջ) և 1762–ին (608 էջ)՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում, 1795–ին (712 էջ)՝ Մայր դպրատան տպարանում:

Վենետիկում 1742–ին (424 էջ, 12º, 9,8 x 5,2 սմ) և 1766–ին (414 էջ, 12º, 10 x 5,2 սմ)՝ Անտոնի Բորտոլիի տպարանում, 1752–ին (400 էջ, 6º և 12º, 9,8 x 5 սմ)՝ Ստեֆանո Օղլանդոյի տպարանում, 1777–ին (420 էջ, 12º և 6º, 10 x 5,3 սմ)՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում, 1793–ին (393 էջ, 6º և 12º, 9,9 x 5 սմ)՝ Սբ Ղազարի տպարանում:

Տրիեստում 1784–ին՝ Մխիթարյան տպարանում (428 էջ, 8º, 11,5 x 6,5 սմ):

Նոր Նախիջևանում 1791–ին՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Բ տիտղթ–ին՝ «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց…» (606 էջ, 8º):

«Տետր ժամու եւ պարզատօմարի» (Ժամագիրք համառօտեալ) տիտղթ–ով՝ 1661–ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ավետիս Ղլիճենց (95 էջ, 12º):

«Կարճառօտ ժամագիրք վերաքաղեցեալ ի պէտս հայոց վաճառականաց….» տիտղթ–ով՝ 1681–ին Վենետիկում՝ Միքելանջելո Բորբոնիի տպարանում (240 էջ, 8º):

«Գովեստ բերկրանաց. եռանձնեայ դիմաց...» Ա տիտղթ–ով և «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից…» Բ տիտղթ–ով՝ 1705–ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում (632 էջ, 8º, 13 x 7 սմ):

1783–ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում (577 էջ, 6º, 12,5 x 7 սմ),

1796–ին Աստրախանում՝ Արղությանի տպարանում (535 էջ, 8º, 13 x 7 սմ):

«Գիրք ժամակարգութեան որ կոչի հասարակաց» տիտղթ–ով՝ 1701–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (608 էջ, 8º, 2,8 x 7,5 սմ):

«Ժամագիրք Սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնին…» Ա գրքի տիտղթ–ով և «Ժամամատոյց յաղագս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին…» Բ գրքի տիտղթ–ով՝ 1706–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (346 էջ, 12º, 10 x 5 սմ),

1768–ին նույն տպարանում (324 էջ, 10 x 5,3 սմ):

«Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցւոյն մեծին հռոմայ…» տիտղթ–ով՝ 1708–ին Մարսելում՝ հավանաբար Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում (288 էջ, 12º, 9,5 x 5,5 սմ):

«Ժամերգութիւն վասն ննջեցելոց…» («Ժամագիրք ննջեցելոց») տիտղթ–ով՝ 1709–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (91 էջ, 12º, 11,5 x 6,5 սմ),

1709–ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ–ն ընկած է (600 էջ, 8º, 12x7,2 սմ):

«Կարճառօտ ժամագիրք ի մի վայր ժողովեալ…» տիտղթ–ով՝ 1717–ին Ամստերդամում՝ Ղուկաս Վանանդեցու տպարանում (320 էջ, 8º, 6,4 x 3,8 սմ),


1787–ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում (320 էջ, 8º, 6,7 x 4 սմ):

«Ժամագիրք ատենի. որ պարունակէ յինքեան զայսոսիկ…» տիտղթ–ով՝ Կ. Պոլսում 1719–ին՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (576 էջ, 19,6 x 14,3 սմ), 1734–ին՝ Աբրահամ Թրակացու տպարանում (720

Ժամագիրք



1673 (Մարսել, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի), փիփղոսաթերթը



1705 (Ամստերդամ, Թովմա Վանանդեցու տպ.), Բ փիփղոսաթերթը



1734 (Կ. Պոլիս, Աբրահամ Թրակացու տպ.), գլխազարդով և սկզբնագրով (11-րդ) էջ

Ժամագիրք



1738 (Կ. Պոլիս, Ասփվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.), գլխազարդով (119-րդ) էջ



1752 (Վնտ.), փիփղոսաթերթը



«Ժամանակ», *1908-ից, Սփամբուլ*

էջ, 18,4 x 13 սմ), 1754-ին՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (480 էջ, 20 x 14,5 սմ):

«**Ժամագիրք ատենի: Յորում պարունակին երեք գիրք սրբոյ եկեղեցւոյս մերոյ ժամակարգութեանցն…**» տիտղթ-ով՝ 1785-ին Էջմիածնում՝ Գրիգոր Լուսավորչի տպարանում (426 էջ, 23 x 16,5),

1786-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (478 էջ, 20 x 15 սմ):

«**Ժամագիրք հայոց…**» տիտղթ-ով՝ Կ. Պոլսում 1761-ին (608 էջ, 8º, 13 x 8 սմ) և 1768-ին (608 էջ, 8º, 12,8 x 8 սմ)՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում, 1772-ին (608 էջ, 8º, 14 x 8 սմ), 1786-ին (608 էջ, 8º, 12,8 x 8,2 սմ) և 1799-ին (608 էջ, 8º, 12,7 x 7,2 սմ)՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում, 1779-ին (608 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ), 1781-ին (608 էջ, 15,5 x 11 սմ), 1786-ին (608 էջ, 8º, 13 x 7,8 սմ) և 1793-ին (608 էջ, 8º, 12 x 7,3 սմ)՝ Հովհաննեսի և Պողոսի (Պողոս Հովհաննիսյանի) տպարանում:

Լույս է տեսել անթվակիր Ժ.: Տիտղթ-ն ընկած է (520 էջ, 8º, 13,5 x 8 սմ). հավանաբար Կ. Պոլսի հրատ. է:

Ժ-եր տպագրվել են նաև 1866-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1874-ին (ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), 1875-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1895-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ» վերնագրով՝ 1851-ին (Շամախի, Մովսես Զոհրաբյանի, Մինաս Տարղլիճյանի, Մարգարե Ղուլիյանի տպ.), 1854-ին (Շուշի, Մինաս Տարղլիճյանի տպ.), 1856, 1861-ին (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), 1865-ին (Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), 1872-ին (ԿՊ, Հ. Գավաֆյանի տպ.), 1872-ին (ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), 1875-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1881, 1915, 1937, 1947, 1955, 1959-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1883-ին (ԿՊ, Հ. Գավաֆյանի տպ.), 1888, 1892, 1902, 1903, 1908-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1893 և 1895-ին (ԿՊ, Միհրան Փափազյանի տպ.), 1889-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1890 և 1950-ին (Նոր Զուղա, Սբ Ամենափրկիչ վանքի տպ.), 1909-ին (ԿՊ, Պ. Պալենցի տպ.), «Ժամագիրք հասարակաց աղօթից...» վերնագրով՝ 1851-ին (Զմյուռնիա, Գուլիելմոս Գրիֆֆիթի տպ.), 1878-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.): Լույս է տեսել նաև 1955-ին (Կահիրե, «Սահակ-Մեսրոպ» տպ.), 1986-ին (Նյու Յորք, Սբ Վարդան եկեղեցու հրտ.), 1996, 1997, 2004-ին (Էջմիածին), 2001-ին (Թեհրան) ևն:

Նիկողայոս *Թաշճյանը* 1877-ին Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի հովանավորությամբ Վաղարշապատում տպագրել է հայկ. ձայնանիշներով գրանցված Ժամագիրք («Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ»):

«ԺԱՄԱՆԱԿ», կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1863–69-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիր՝ Ստեփան *Փափազյան:* Լուսաբանել է Կ. Պոլսի և այլ վայրերի հայկ. կրթ. հաստատությունների գործունեությունը, տպագրել թերթերի տեսություն, բարոյագիտ. հոդվածներ, արժեքավորել թատերարվ-ը՝ որպես լուսավորության և առաջընթացի գործոն, ընթերցողին ծանոթացրել է «Պոլոժենիե»-ի դրույթներին: Անդրադարձել է ընտանիքում կնոջ դերին, հրապարակել մայրերին ուղղված խորհուրդներ (հոդվածաշար): Հանդեսում տպագրվել են Մ. Խրիմյանի, Մ. Պեշիկթաշլյանի և ուր. բանաստեղծություններից և մանրապատումներից:

«ԺԱՄԱՆԱԿ», գրական, ժողովրդ., հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 1908-ից Ստամբուլում: Հիմնադիր-խմբագիրներ՝ Միսաք և Սարգիս *Գոչունյաններ*, խմբագիրներ՝ Մարտիրոս *Գոչունյան*, Մելիք *Գոչունյան*, Արա Գոչունյան, Ենովք *Ափճեն*, Սիմոն Չեմոլեքյան, Պարույր Քեչյան, Էդվարդ Սիմքեշյան, Գրիգոր Խուդավերդյան, Արա *Գոչունյան* (1997-ից): Լուսաբանում է թուրքահայ համայնքի կրթ., գրական-մշակութ., եկեղեց. կյանքը, անդրադառնում է ՀՀ-ի և ԼՂՀ-ի ներքին ու արտաքին քաղաքականությանը, մասնավորապես՝ հայ-թուրք. հարաբերություններին, տնտ. առաջընթացին, մշակույթի նորություններին: Նպաստում է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Արտատպում է նյութեր արմ. և թուրք. մամուլից, պարբերաբար տպագրում է հայագիտ. նյութեր, նմուշներ հայ և համաշխ. գրակ-ից:

Իրականացնում է նաև հրատարակչ. գործունեություն. առանձին գրքերով տպագրել է Զ. Եսայանի, Ինտրայի, Մ. Գոչունյանի, Զահրատի և ուր. ստեղծագործություններից: Թողարկում է գունավոր համարներ՝ նվիրված Ամանորին, Սբ Ծննդին և Հարությանը:

ՀՀ սփյուռքի նախարարության Սփյուռքի լավագույն լրատվամիջոց (2010) մրց.:

Գրկ. Թորոսեան Ա., Ժամանակ. 40-ամեայ յիշատակարան, ԿՊ, 1948:

«ԺԱՄԱՆԱԿ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 2006-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Արման Բաբաջանյան: Լուսաբանում է ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. կարևոր իրադարձությունները, միջազգ. անցուդարձը, տպագրում է նյութեր սփյուռքահայ համայնքների առօրյայի մասին:

ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ, որոշակի ժամանակաշրջանի պատմ. դեպքերն ու իրադարձություններն արձանագրող-հիշատակող հեղինակ: Ի տարբերություն պատմագիրների՝ Ժ-ները բավարարվել են կարևոր համարված դեպքերի, իրադարձությունների սոսկ թվարկումով՝ ժամանակագրությամբ՝ պահպանելով հիշատակված դեպքերի ժամանակագր. հաջորդականությունը: Հայ իրականության մեջ հայտնի են Ժ-ներ ***Սևպրեոս Ուռհայեցին*** (XI–XII դդ.), ***Սամուել Անեցին*** (XII դ.), ***Միխթար Այրիվանեցին*** (XIII դ.) և ուր., որոնք գրի են առել հիմնականում իրենց տեսածն ու մերձավոր ժամանակակիցներից լսածը:

Հայտնի են նաև առանձին իրադարձությունների, ընդհանուր պատմության, պատմիչների և այլ ժամանակագրություններ, օր.՝ «Ժամանակագրութիւն գործոց Վարդանանց, ժամանակագրութիւն ըստ Եղիշէ պատմագրի եւ Ղազար Փարպեցւոյ» (1859, Վնտ., Սբ Ղազարի տպ.), Միքայել Խուրի Ասորու «Ժամանակագրութիւնք» (1870, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), Հ. Դարդելի «Հայոց ժամանակագրութիւն» (1891, ՍՊբ, Ի. Սկորոխոդովի տպ., 2013, աշխարհաբարի փոխադր. և առաջաբ.՝ Գ. Թոսունյանի), «Անանուն ժամանակագրութիւն» (1904, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Ժամանակագրութիւն՝ Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ» (1915, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Սովետական Հայաստանի պատմության համառոտ ժամանակագրություն» (1954), «Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն. 1801–1917» (1955), «Կուտինահայ ժամանակագրութիւն» (1960, Վնն., Մխիթարյան տպ.), Թեոփանես Խոստովանողի «Ժամանակագրություն» (1983), Ս. Շտիկյանի «Հայ նոր գրականության ժամանակագրություն (1851–1865)» (1983), «Ժամանակագրություն» (կազմ.՝ Սուրեն Շ. Վանեցի, Էջմիածին, 1990), «Ժամանակագրություն» (1990), «Հայոց պատմության ժամանակագրություն» (1991), Փ. Դեյվիդի «Աստվածաշնչային ժամանակագրություն» (1994), Ա. Փափազյանի «Ժամանակագրություն: Հայկական հարցը և Մեծ եղեռնը (1876–2000 թթ.)» (2000), «Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915–2000 թթ.)» (2001) ևն:

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ» (հ. 1–4), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստ-ի կազմած բառարանը: Լույս է տեսել 1969–80-ին Երևանում: Ներառում է արդի հայ. գրական լեզվի մոտ 140 հզ. բառ ու դարձվածքային միավոր:


Բառացանկը կազմվել է հիմնականում հայ. միալեզվյան և թարգման. բառարանների, մասնավորապես՝ Ս. Մալխասյանցի ***«Հայերէն բացատրական բառարան»***-ի փաստ. նյութի, Լեզվի ինստ-ի կազմած համաբարբառի և հայ գեղ. գրակ-յան ու մամուլի ընտրովի քարտարանի հիման վրա:

Ներկայացված են բացառապես հայոց գրական լեզվի՝ Խ. Աբովյանի ժամանակներից մինչև 1980-ական թթ-ի բառապաշարը, ինչպես նաև գործածական դարձվածքներն ու տիպական բառակապակցությունները, որոնց տարբեր իմաստներն ու նրբերանգները, գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար բերված են համապատասխան բնագրային օրինակներ՝ քաղված նա-



«Ժամանակ», *2006-ից, Երևան*

Ժամանակագիր



Հովհան Դարդելի «Հայոց ժամանակագրություն» (2013, Ե., «Զանգակ») գրքի կազմը




«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի (հ. 1, 1969, Ե., ԳԱ հրտ.) կազմը



Ժանսեմ. *Ֆ. Գարսիա Լորկայի «Արյունոտ հարսանիք» (ֆրանս., 1977, Փարիզ) գրքի կազմը*

Ժողովածու



«Ֆիզիկայի խնդիրների ժողովածու»-ի (2009, հեղ. հրտ.) կազմը



«Թելադրության նյութերի ժողովածու»-ի (2003, Ե., «Զանգակ») կազմը

խախորհրդ. և խորհրդ. շրջանների հայ գեղ. և մանանագիտ. գրակ-ից, դասագրքերից, մամուլից:

ԺԱՆՍԵՄ [Սեմերճյան Հովհաննես Միրիջանի, 9.3.1920, Սելեզ (Թուրքիա)–27.8.2013, Փարիզ], նկարիչ: ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (2002): 1922-ին ընտանիքով հաստատվել է Սալոնիկում, 1931-ին՝ Փարիզում: Սովորել է Մոնպառնասի «ազատ ակադեմիաներում» (1934–36), ավարտել Փարիզի Դեկորատիվ արվ-ի բարձրագույն դպրոցը (1939):

Նկարազարդել և ձևավորել է Ժ. Ռիկտյուսի «Աղքատների մենախոսությունները» (1960), Շ. Բոդլերի «Փարիզյան թախիծ» (1963), Մ. Սերվանտեսի «Ռինկոնետ և Կորտադիո» (1965), Ժ. Սեսբրոնի «Սրբերը գնում են դժոխք» (1970), Ժ. Ժիոնոյի «Կարեկցանքի մենությունը» (1974), Ժ. Լաֆորգի «Լուսնի Տիրամոր նմանակումը» (1974), Ֆ. Գարսիա Լորկայի «Արյունոտ հարսանիք» (1977), Ջ. Կազանովայի «Զարգացնել հաճույքները» (2007), նաև «Ֆրանսիայի պատմությունը» (1964) և այլ գրքեր:

«Կոմպարեզոն» (1958, Մեքսիկա), Բիենալեի (1962, Բրյուգե), «Վահագն» համահայկ. (2002) մրց-ներ, ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2002), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի (2003) շքանշաններ:

Գրկ. **Խաչատրյան Շ.**, *Ֆրանսահայ կերպարվեստ, Ե., 1991: Zahar M., Jansem, Genève, P., 1964;* **Marars P.**, *Jansem, Monte Carlo, 1974; Jansem. Dessins, P., 1982.*

ԺԻԼԲԵՐ ՊՈՌԵՏԱՑԻ (Gilbert de la Porrée), **Ջիլբերտուս** (մոտ 1076–1154), ֆրանսիացի փիլիսոփա-աստվածաբան:

Ժ. Պ-ու «Գիրք վեց սկզբունքների մասին» երկը հայտնի է եղել նաև միջնադարյան Հայաստանում և համարվել է Արիստոտելի տրամաբան. ուսմունքը պարզաբանող աշխատություն: 1334-ին ***Հակոր Քռնեցին*** և ***Պետրոս Արագոնացին*** այն թարգմանել են հայ.: Վերջինս գրել է նաև այդ երկի մեկնությունը՝ «Համառօտ հաւաքումն վերլուծութեան վեցից սկզբնաց գրոց», որը հայ. է թարգմանել Հակոր Քռնեցին: Գիրքը 1643-ին թարգմանել է նաև ***Ոսկան Երևանցին***: Այդ թարգմանությունների և Պետրոս Արագոնացու մեկնության ձեռագրերը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 1646) և հայ. ձեռագրերի այլ հավաքածուներում:

ԺՈՂՈՎԱԾՈՒ, հրատ-յան տեսակ, որտեղ ներառվում են մեկ (հեղինակային Ժ.) կամ մի քանի ((կոլեկտիվ Ժ.) հեղինակների ստեղծագործություններ (գրական, երաժշտ., գեղ.), ուս. նյութեր (թվար. խնդիրներ, թելադրության տեքստեր, թանգարանային նյութեր), ինչպես նաև որոշումներ, փաստաթղթեր, ռեֆերատներ, տեղեկատվ. նյութեր ևն:

Գրակ-յան կոլեկտիվ Ժ-ների առավել տարածված տեսակներն են անթոլոգիաները, ***ալմանախները,*** քրեստոմատիաները, ծաղկաքաղները ևն: Լինում են նաև գիտ. հոդվածների, զեկուցումների, թեզիսների ևնի Ժ-ներ:

Ժ-ները հրատարակվում են ընդհանուր վերնագրով, որը որոշում է հեղինակը, կազմողը կամ հրատարակիչը, կամ առանց դրա՝ տիտղոսաթերթի վրա թվարկվելով ներառված ստեղծագործությունների վերնագրերը կամ հեղինակների ազգանունները:

«ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳԻՐՔ», սուրբ նախահայրերի պատմության մասին գիրք: Տպագրվել է Կ. Պոլսում՝ «Սկիզբն Գրոցս որ կոչի ժողովածու…» տիտղոս-ով՝

1710-ին՝ Սարգիս Դպիրի (294 էջ, 4º, 15,4 x 10,3 սմ), 1713-ին՝ «Ի թաղն Պեկօղլի» (250 էջ, 16,3 x 11,7 սմ), 1717–18-ին՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու (508 էջ, 8º, 14,3 x 9,4 սմ), 1730–31-ին՝ Մարտիրոս Սարգսյանի (480 էջ, 16,6 x 11 սմ), 1747-ին՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու, տպակից է Անանիա Սանահնեցու «Ներբողեան»-ին (492 էջ, 8º, 16,4 x 11,1 սմ), 1793-ին՝ Պողոս Հովհաննիսյանի (450 էջ, 8º, 12 x 7,5 սմ) տպարաններում:

«ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ», լույս է տեսել 1950–54-ին Բեյրութում, 1965–72-ին՝ ***«Էջեր գրականութեան եւ արուեստի»***:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ», քաղ., հաս. օրաթերթ: Լույս է տեսել 1932-ին Բեյրութում: Խմբագիր՝ Միհրան *Աղազարյան*: Գաղ. տարաձայնություններ է ունեցել դաշնակցության հետ: Մեծ տեղ է հատկացրել միջազգ. քաղ. իրադարձություններին, տեղ. լուրերին, ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեությանը: Անդրադարձել է Հայաստանի գիտ-յան ու մշակութ. ձեռքբերումներին, նաև տպագրել լեզվաբանության, մանկավարժության, գրակ-յան ու պատմության հարցերի վերաբերյալ հոդվածներ:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ», քաղ. և գրական օրաթերթ: Ֆրանսիայի Հայ ազգ. ճակատի, այնուհետև՝ Ֆրանսահայ ազգ. ընդհանուր միության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1943–48-ին Փարիզում: Խմբագիրներ՝ Շահե *Տատուրյան*, Աբել Նազարյան: Ֆաշիստների կողմից Ֆրանսիայի բռնագրավման շրջանում «Ժ.» առաջին հայ. թերթն էր. կազմակերպել և համախմբել է Դիմադրության հայկ. ուժերի պայքարը գերմ. ֆաշիզմի դեմ: Հետագայում սատարել ու նպաստել է Սփյուռքի, մասնավորապես՝ ֆրանսահայության և հայրենիքի կապերի ամրապնդմանը, մասնակցել է հայրենադարձության կազմակերպմանը: Թղթակցել են Դ. Դավիթյանը, Լևոն Մեսրոպը, Հ. Պերպերյանը, Ռ. Շիշմանյանը, Զ. Որբունին, Հ. Զարդարյանը, Մ. Աթմաճյանը, Մ. Մավիյանը, Ա. Դարբինյանը և ուր.:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ», հաս-քաղ. անկախ օրաթերթ: Լույս է տեսնում 2011-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Թագուհի Թովմասյան: Տպագրում է ՀՀ-ի հաս-քաղ., սոցիալ-տնտ., իրավ. և այլ բնագավառների հիմնախնդիրներին, միջպետ. հարաբերություններին վերաբերող նյութեր, անդրադառնում է ԼՂՀ-ի ներքին և արտաքին քաղաքականությանը, Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆ», հաս-քաղ. շաբաթաթերթ: Ունեցել է ձախ սոց. ուղղվածություն: Լույս է տեսել 1919–20-ին Փարիզում: Հիմնադիր-խմբագիր՝ Գուրգեն Թահմազյան: Լուսաբանել է արևմտահայության ազատագր. պայքարի դրվագներ, անդրադարձել Հայ դատին, զբաղվել հայ որբերի ճակատագրով, տարագրյալ հայերի՝ հայրենիք վերադառնալու հարցերով: Տպագրել է հրապարակախոս. նյութեր, սոցիալ-քաղ. խնդիրներին նվիրված հոդվածներ:

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆ», կիրակնօրյա թերթ: Հունաստանի կոմկուսին կից հայկ. հատվածի հրատ.: Լույս է տեսել 1930–31-ին Աթենքում: Հաջորդել է «Հաղթանակ» (1926–28), «Շիրակ» (1928), «Արձագանք» (1928–29) թերթերին: Խմբագիրներ՝ Մինաս *Սարտիկյան*, Գրիգոր *Նազիկյան:* Պաշտպանել է հայ և հույն աշխատավորության շահերը, հրապարակել նյութեր Խորհրդ. Հայաստանի տնտեսության ու մշակույթի ձեռքբերումների մասին: «Ժ. ձ.»-ին հաջորդել է *«Նոր շարժում»* (1931–34) թերթը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆ», հաս-քաղ., գրական օրաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ): Լիբանանի համայնավար. կուս-յան հայկ. հատվածի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1938–39 և 1942–48-ին Բեյրութում (տարածվել է Լիբանանում և Սիրիայում): Խմբագիրներ՝ Հարություն *Մադեյան*, Հովհաննես *Աղպաշյան*: Լուսաբանել է կուս-յան գործունեությունը, տարածաշրջանի քաղ. անցուդարձը: Կարևորել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը:

1943-ին հրատարակվել է նույնանուն գրական-գեղ. ամսագիր (խմբագիր՝ Հ. Աղպաշյան, աշխատակցել են Հրանտ Տևեճյանը, Վահե-Վահյանը, Գրիգոր Քեշիշյանը): Փակվել է Լիբանանի կոմկուսի՝ օրենքից դուրս հայտարարվելուց հետո: 1948–49-ին լույս է տեսել անլեգալ՝ «Ժողովուրդի պայքար» անվանումով (խմբագիրներ՝ Հ. Մադեյան, Հ. Աղպաշյան, Կարապետ Փաշապեզյան, Գրիգոր Համամճյան):



«Ժողովածու գիրք»-ի (*1710, Կ. Պոլիս, Սարգիս Դպիրի փպ.*) *փիփղոսաթերթը*



«Ժողովուրդ», *1943–48, Փարիզ*




«Ժողովուրդ», *2011-ից, Երևան*



«Ժողովուրդի ձայն», *1938–48, Բեյրութ*

Ի



Ի, հայ. այբուբենի 11–րդ տառը, անվանումը՝ «ինի»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Տողին ուղղահայաց երկարին աջից՝ կենտրոնում, միանում է կարճը, լայնը երկարի ձախ կողմում է՝ ստորին մասում՝ տողագծից ցած, և վերին ծայրից նուրբով միանում է երկարի ստորին ծայրին: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ի, որպես այբուբենի տասնավորների սյան 2–րդ (11–րդ) տառ, նշանակել է քսան և քսաներորդ, բյուրի նշանով (Ի᷾)՝ 20 բյուր (200 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ի–մաս 20–րդ):

«Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ...», քրիստ. հավատի տարածման նպատակով տպագրված էջ: Տպագրվել է 1637–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (1 էջ, եռասյուն, 37 x 26,5 սմ, յուրաքանչյուր սյունակի–նը՝ 12 x 23 սմ): Վերահրատարակվել է 1728–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ...»:

«Ի ԿԱՐՃԱՌՕՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԷ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ», քրիստ. վարդապետության գիրք՝ հարց ու պատասխանի ձևով: Տպագրվել է Կղեմենտոս VIII պապի հրամանով՝ 1603–ին Հռոմում:

Վերահրատարակվել է 1623–ին Հռոմում՝ Ստեֆան Պաուլինիուսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Svmma doctrinae christianae...» (32 էջ, 8º):

ԻԲՐԸԻԼԵԱՆՈՒ (Ibrăileanu) Կարապետ Թեոդորի [23.5.1871, Տրրգու–Ֆրումոս (Ռումինիա)–12.3.1936, Բուխարեստ], հայազգի ռումինագիր գրող, գրականագետ: Ռումինիայի ակադ–ի անդամ (1948, հետմահու), Յասսիի համալսարանի պրոֆ.: «Շկոալա նոուր» (ռում., «Նոր դպրոց», 1889) պարբ–ի հիմնադիրը և «Վիացա ռոմընեասկը» (ռում., «Ռումինական կյանք», 1906–33, 1914–18–ին լույս չի տեսել) հանդեսի գաղ. ղեկավարը: Վերջինիս էջերում Ի. տպագրել է նաև Հայկ. հարցն արծարծող, երիտթուրքերի քաղաքականությունը դատապարտող հոդվածներ:



Կարապետ Իբրըիլեանու

Լույս են տեսել Ի–ի «Քննադատական ոգին ռումինական մշակույթում» (1909), «Գրողներ և հոսանքներ» (1909), «Վլահուցայի գրական ստեղծագործությունները» (1912, ստացել է բանասիր. գիտ. դ–րի աստիճան), «Նոթեր ու տպավորություններ» (1920), «Ռումինական և արտասահմանյան գրողներ» (1926), «Գրական ուսումնասիրություններ» (1930), «Դիտելով կյանքը» (1930), «Մշակույթն ու գրականությունը» (1933) աշխատությունները: Կյանքի վերջին տարիներին հրատարակել է «Ադելա» (1933) ինքնակենսագր. վեպը (Ռումինիայի ազգ. մեծ մրց.):

1971-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշել է Ի-ի ծննդյան 100-ամյակը: 1975-ին հրատարակվել է «Հուշեր Իբրըհիլեանուի մասին» ժող-ը:

«ԻԳՆԱՏ ԱՂԱ», երգիծ. շաբաթական հանդես: Լույս է տեսել 1919–20-ին Կ. Պոլսում: Խմբագիր-արտոնատեր՝ Երվանդ *Օտյան*: Խարազանել է Եվրոպայի և ԱՄՆ-ի քաղաքականությունը Հայկ. հարցում, պարսավել գաղթականներին նյութ. օժանդակություն ցուցաբերելուց խուսափող կեղծ բարեգործներին: Ներկայացրել է «Ազգային ջոջերի» նոր պատկերասրահը, տպագրել Ե. Օտյանի «Գրական յիշատակներ» կենսագր. հուշագրությունը և «Փառքի ետեւէ» երգիծ. վիպակը: Անդրադարձել է Կ. Պոլսի մամուլի, գրական և թատեր. կյանքի նորություններին:

ԻԳՆԱՏԻՈՍ, XIII դ-ի գրիչ և մանրանկարիչ: 1214–42-ին աշխատել է Հոռոմոս, Հավուց թառ և Խծկոնք վանքերում: Որպես ականատես՝ հիշատակություններ է թողել մոնղ-թաթար. արշավանքների մասին: Ի-ի ձեռագրերը պահվում են Երևանի (ձեռ. № 1519, 6202, 9649), Վենետիկի Մխիթարյան (ձեռ. № 134), Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի (ձեռ. № 36) մատենադարաններում, Չիկագոյի համալսարանի գրադարանում, Վ. Սիմոնյանի մասնավոր հավաքածուում (Կալիֆոռնիա):

Ձեռագրերի խորանները, լուսանցազարդերը և զարդատառերն աչքի են ընկնում հյութեղ գույներով, զարդերի բազմաձևությամբ, ճկուն գծանկարով: Անվանաթերթերի հորինվածքով ուշագրավ է *«Բագնայրի Աւետարանը»* (Մատենադարան, ձեռ. № 1519), թեմատիկ նկարներով՝ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի Ավետարանը (ձեռ. № 36):

Գրկ. Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, Ե., 1983, էջ 234–253:

«ԻՄ ՄՈԼՈՐԱԿԸ», պատանեկան պատկերազարդ ամսագիր: *«Էդիթ Պրինտ»*-ի հրատ.: Լույս է տեսել 2011–14-ին Երևանում: Խմբագիր՝ Դավիթ *Գյուրջինյան*: Ներկայացրել է հայ և օտարազգի շնորհալի պատանիների ու երիտասարդների, տպագրել հայ դաս. ու ժամանակակից գրողների ստեղծագործություններ, հարցազրույցներ նոր սերնդի ճանաչված անձանց հետ: Ամսագրին աշխատակցել են արձակագիր Հ. Վարդումյանը, աստղագետ Հ. Հարությունյանը, դերասան Ա. Ադամյանը և ուր.:

«ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ», կոմս Էմմանուել Թեսավրոսի բարոյափիլ. երկը: Թարգմ.՝ Վրթանես Ասկերյանի: Տպագրվել է 1793-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (814 էջ, 8º, 12,3 x 6,6 սմ):

ԻՆՃԻՃՅԱՆ (Միքայելյան) Ղուկաս (1758, Կ. Պոլիս–1833, Վենետիկ), աշխարհագետ, պատմաբան, բանասեր, ազգագրագետ: Կրթությունն ստացել է Վենետիկի Սբ Ղազար կղզու վանքում: Մխիթարյան միաբանության անդամ՝ 1779-ից: 1799–1802-ին հրատարակել է կրոնաքաղ. և բանասիր. *«Տարեգրութիւն»*, 1803–20-ին՝ *«Եղանակ Բիւզանդեան»* տարեգրքերը: 1812-ին հիմնադրել է «Արշարունյաց ընկերություն» գրական-հաս. կազմակերպությունը, *«Դիւրակ Բիւզանդեան»* (1812–16) շաբաթաթերթը: Մասնակցել է Ստեփանոս *Ագոնցի* «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» 11-հատորանոց երկի Ա հատորի 1-ին մասի՝ Ասիա (1806), 2-րդ մասի՝ Եվրոպա (հ. 5–6, 1804) ստեղծմանը: «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» (1822) աշխատության մեջ հայ և օտար աղբյուրների հիման վրա բնութագրել է Մեծ Հայքի նահանգների ու գավառների պատմ. աշխարհագրությունը, ստուգաբանել, ճշգրտել բազմաթիվ տեղանուններ: «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» (հ. 1–3, 1835) աշխատության մեջ Ի. ներկայացրել է Հին Հայաստանի պատմությունը, աշխարհագրությունը, ազգագրությունը, տնտ. և մշակութ. կյանքը:



Իգնատիոս. *«Ղազարոսի հարությունը», մանրանկար, 1236-ի Ավետարան (Նոր Ջուղայի մատենադարան, ձեռ. № 36)*



«Իմ մոլորակը», *2011–14, Երևան (№ 7, 2012)*




«Իմաստասիրութիւն բարոյական» *(Էմմանուել Թեսավրոս, 1793, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Ղուկաս Ինճիճյանի *«Աշխարհագրութիւն» (1791, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«9-րդ հրաշալիք», *1994-ից, Երևան*



Բախշի Իշխանյանի *«Վիճակագրական ուսումնասիրութիւն...» (մաս 1, 1919, Բաքու) գրքի փիփղոսաթերթը*

Ի-ի «Դարապատում... որ է Աշխարհամար կամ Ընդհանուր պատմութիւն քաղաքական, եկեղեցական, ուսումնական եւ արուեստական» (աշխարհաբար, հ. 1–8, 1824–28, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունն ընդգրկում է XVIII դ-ի 2-րդ կեսի պատմ. անցքերը. վերջին 2 հատորները նվիրված են գիտ-յան ու արվ-ի զարգացման պատմությանը, խոշոր մտածողների, արվեստագետների, եկեղեց. գործիչների կյանքին ու ստեղծագործությանը:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Ի-ի՝

«**Աշխարհագրութիւն**» երկը. 1791-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ աշխարհաբար: Տիտղթ-ին՝ «Տեսութիւն համառօտ հին եւ նոր աշխարհագրութեան...» (167 էջ, 12º, 6º և 2º, 12,8 x 6,3 սմ):

«**Ամարանոց Բիւզանդեան**» աշխարհագր. չափածո երկը. 1794-ին նույն տպարանում: Ներկայացված են Բոսֆորի և Դարդանելի նեղուցների աշխարհագր. բնութագիրը, ջրային հոսանքները, երկրբ. պատմությունը: Տիտղթ-ին՝ «Ամարանոց Բիւզանդեան ի նեղուցին Կօստանդնուպօլսոյ...» (262 էջ, 12º և 4º, 11 x 5,5 սմ): Ունի քարտեզ:

Լույս են տեսել նաև Ի-ի «Պատմութիւն կենդանեաց ի չորս կարգս բաժանեալ...» (1801), «Կարգ չորքոտանեաց» (1814), «Ճառ ասացեալ...» (1815, 1902), «Աղօթք հարկաւորք» (1822, 1826, 1838, 1849, 1899), «Վարք սրբոց» (1832, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) գործերը:

Ի. թարգմանություններ է արել եվրոպ. լեզուներից: Նրա երկերը թարգմանվել են իտալ., մասամբ՝ ֆրանս.:

Գրկ. **Սարգիսեան Բ.,** *Երկհարիւրամեայ գրական գործունէութիւն... Վենետկոյ Միխթարեան միաբանութեան, Վնտ., 1905:* **Կարինյան Ա.,** *Անվարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Ե., 1960:*

«9-ՐԴ ՀՐԱՇԱԼԻՔ», մշակութ., ուսումնակրթ., ժամանցային շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1994-ից Երևանում (1998–2001-ին հրատարակվել է նաև ռուս. տարբերակը, խմբագիրներ՝ Շիրակ Էլբակյան, Արտաշես Թադևոսյան): Հիմնադիր-խմբագիր՝ Վաչագան ***Սարգսյան***: Տպագրում է լեզվաբ., վերլուծ., հրապարակախոս., երգիծ. հոդվածներ, ինչպես նաև խաչբառեր, գլուխկոտրուկներ, առաջադրանքներ, խաղեր:

Խմբագրությունը հրատարակել է նաև Վ. Սարգսյանի և այլ հեղինակների գրքեր, «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու» (2006), «Իրավական ուղեցույց երիտասարդների համար» (2004), հայոց լեզվի դասագրքեր ևն:

ԻՇԽԱՆՅԱՆ Բախշի [1879, գ. Խանձք (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–26.8.1921], հաս-քաղ. գործիչ, խմբագիր: Ավարտել է Շուշիի թեմ. դպրոցը, Լայպցիգի առևտր. ինստ-ը (1905): 1906-ից Ժնևում խմբագրել է Սոցիալ-դեմոկրատ. բանվոր. հայկ. կազմակերպության «Կեանք» պաշտոնաթերթը: Աշխատակցել է «Մշակ», «Արշալոյս» թերթերին: Հակացար. գործունեության համար 1908-ին բանտարկվել է: 1911–13-ին ապրել է Գերմանիայում, թղթակցել «Սոցիալիստ» ամսագրին: Հոկտեմբերյան հեղափոխության (1917) հաղթանակից և 1918-ի Բաքվի հայկ. կոտորածներից հետո քննադատել է բոլշևիկներին («Դիմակները պատռուած», 1918, Բաքու, «Աշխատավոր» տպ.):

Ի. թարգմանել և 1904-ին Ժնևում հրատարակել է Կ. Մարքսի «Վարձու աշխատանք եւ կապիտալ» երկը, «Մուրճ» ամսագրում տպագրել է «Կարլ Մարքսը եւ մարքսիզմը» աշխատությունը:

Լույս են տեսել Ի-ի «Տնտեսական զարգացման ֆազերը» (1906, Թ., «Հերմես» տպ.), «Տաճկահայ խնդիրը եւ միջազգային դիպլոմատիան» (1906, նույն տպ.), «Ազգային պրօգրեսը եւ դասակարգային շահերը» (1908, Թ., «Էպոխա» տպ.), «Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեանի եւ Ս. Շահազիզի բանաստեղծութիւնների մէջ» (1910, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբաւորումը եւ հասարակական շերտաւորումը» (Թ., 1914, նույն տպ.), «Աղէտի եւ տառապանքի աշխարհից» (Թ., 1915, Կովկասի փոխարքայի դիվանատան տպ.), «Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա-քաղաքական փոխյարաբերութիւնը (քննական տեսութիւն)» (1915, նույն տպ.), «Վիճակագրական ուսումնասիրու-

թիւն անդրկովկասեան ժողովուրդների» (մաս 1, 1919, Բաքու, «Ուրարդիա» տպ.), «Բագուի մեծ սարսափները» (1920, Թ., «Մամուլ» տպ.), «Երկու ամիս բոլշեւիկեան բանտում» (1924, Կաիիրե, «Հուսաբերի» տպ.) աշխատությունները:

ԻՇԽԱՆՅԱՆ Ռաֆայել Ավետիսի (9.3.1922, Երևան–6.2.1995, Երևան), բանասեր, մատենագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1978): Ավարտել է ԵՊՀ (1949), Մոսկվայի գրադարանային ինստ-ը (1954): 1963–92-ին՝ ԵՊՀ դասախոս, միաժամանակ, 1989–90-ին՝ «Լուսավորիչ» թերթի խմբագիր, 1990–95-ին՝ ՀԱԳ-ի տնօրեն:

Լույս են տեսել Ի-ի «Ակսել Բակունց» (1960), «Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը» (1971), «Բակունցի կյանքն ու արվեստը» (1974), «Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն» (1978), «Ակնարկ հայերենի տերմինաշինության» (1981), «Արդի հայերենի շարահյուսություն» (1986), «Մայրենիին» (1986), «Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր» (1988), «Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ» (1989), «Պատկերազարդ պատմություն հայոց» (2013) աշխատությունները:

Ի-ի «Հայ գրքի պատմություն» աշխատության 1-ին հատորը (1977, 2012) 1512–1680-ական թթ-ի հայկ. տպագրության քնն. վերլուծությունն է. փաստ. հարուստ նյութի հիման վրա ներկայացրել է հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտի, ինչպես նաև Աբգար Թոխաթեցու, Հովհաննես Տերզնցու և ուր. դերը հայկ. գրահրատարակչ. մշակույթի զարգացման մեջ: Հեղինակ է նաև «Հայ մատենագիտության պատմություն» (պր. 1–3, 1964–68, ընդգրկում է V–XX դդ.), «Հայ գիրքը 1512–1920 թթ.» (1981) մատենագիտ. երկերի և «Հակոբ Մեղապարտ» (2012) գրքի:

Ի-ի անունով Երևանում կոչվել է դպրոց:

Գրկ. Մատենագիտություն Ռաֆայել Իշխանյանի տպագիր աշխատությունների, Ե., 1993:

«ԻՋԵՎԱՆ», հաս-քաղ., մշակութ. ամսաթերթ: Իջևանի քաղաքապետարանի հրատ.: Լույս է տեսնում 2000-ից: Խմբագիր՝ Տաթևիկ Նազինյան: Լուսաբանում է տեղի սոցիալ-տնտ., քաղաքաշինն., կրթադաստիարակչ. խնդիրները, ՏԻՄ-ի աշխատանքները:

ԻՍԱԲԵԿՅԱՆ Էդվարդ Հմայակի [8(21).11.1914, Իգդիր–19.8.2007, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ժող. նկարիչ (1963): Ավարտել է ԵԳԱՏ (1931), Թբիլիսիի գեղարվ-ի ակադ-ը (1941): 1945–2000-ին դասավանդել է ԵԳԹԻ-ում (1963-ից՝ պրոֆ.): 1967–86-ին՝ ՀԱՊ-ի տնօրեն:

Ի. նկարազարդել և ձևավորել է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» (1951, ռուս.՝ 1974), Ս. Խանզադյանի «Միխթար Սպարապետ» (1963) պատմավեպերը, Գ. Սունդուկյանի «Հատընտիրը» (ռուս., 1953), Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» (1955, 1970), «Սասունցի Դավիթ» (1994), Մետաքսեի «Շամիրամ» (1995) պոեմները: Գրել է «Իգդիր» վեպը (1994):


ՀԽՍՀ Պետ. մրց. (1985), Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2004), ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2004) շքանշաններ:

Գրկ. Էդվարդ Իսաբեկյան (ալբոմ, կազմ., առաջաբ.՝ Պ. Հայթայանի), Ե., 1985: **Միքայելյան Մ.**, *Էդվարդ Իսաբեկյան (ալբոմ), Ե., 2004:*

ԻՍԱԿՈՎ Հովհաննես (Իվան) Ստեփանի [22.8.1894, գ. Հաջիքենդ (Կարսի մարզ, այլ տվյալով՝ Ելիզավետպոլի/Գանձակի նահանգ)–11.10.1967, Մոսկվա, թաղված է Նովոդևիչիե գերեզմանատունը], ԽՍՀՄ նավատորմի ծովակալ (1955): Խորհրդ. Միության հերոս (1965), ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ (1958), ՀԽՍՀ ԳԱ պատվ. անդամ (1963): Ավարտել է Թիֆլիսի ռեալ. ուսումնարանը (1913), Պետրոգրադի գարդեմարինյան (1917), Լենինգրադի ՌԾ ակադ-ի բարձրագույն հրամկազմի (1928) դասընթացները:

1932–33-ին մասնակցել է Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) պատմության փաստաթղթերի ժող-ների կազմմանն ու խմբագրմանը, ՌԾՈՒ-ի մարտ. կանոնագրքերի մշակմանը: Ի. 1947-ին նշանակվել է «Ծովային ատլասի» (հ. 1–3, 1950–58) խմբագր. խորհրդի նախագահ (I հատորի համար՝ ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1951):

Գրել է ծովային կյանքին վերաբերող ավելի քան 250 պատմվածք, ուսումնասիրություններ ծովակալների (Լ. Սերեբրյակով և ուր.), ինչպես



Ռաֆայել Իշխանյան



Ռ. Իշխանյանի *«Հայ գրքի պատմություն» (2012, Ե., «Անտարես») գրքի կազմը*



Էդվարդ Իսաբեկյան. *Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» (1994, Ե., «Արևիկ») գրքի պատկերազարդումներից*

նաև Խորհրդ. Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյանի մասին: Եղել է «Սովետական մեծ հանրագիտարանի» (ռուս., 2-րդ հրտ., 1950–58) ՌԽ գործի խմբագիր-խորհրդական:

Ի-ի անունով կոչվել են պողոտա՝ Երևանում, որտեղ կանգնեցված է նրա հուշարձանը (2005), փողոցներ, դպրոցներ՝ ՀՀ-ում, ԼՂՀ-ում և այլուր:

ԽՍՀՄ Լենինի (6), Կարմիր դրոշի (3), Հայրեն. պատերազմի I աստիճանի, Ուշակովի I աստիճանի, Կարմիր աստղի (2), Հարավսլավիայի, Լեհաստանի և այլ երկրների շքանշաններ:

Երկ. ՍՍՌՄ ռազմա-ծովային նավատորմը Հայրենական պատերազմում, Ե., 1946: Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, Ե., 1946: Դատումածքներ նավատորմի մասին, Ե., 1963, 1984: Ակնարկներ, Ե., 1970: Каспий, 1930 год. Из дневника командира «Деятельного», М., 1973; Избранные труды, М., 1984.

Գրկ. **Վարդապետյան Ա.,** *Հ. Ս. Իսակով, Ե., 1973:* **Նույնի,** *Հ. Ս. Իսակովի ռազմագիտական գործունեությունից, Ե., 1985:* **Հարությունյան Ա.,** *Սովետական Միության նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակով, Ե., 1975:* **Арзуманян А.,** *Адмирал флота Советского Союза И. С. Исаков, Е., 1973.*



Հովհաննես Իսակով

ԻՍԱՀԱԿՅԱՆ Աբաս Գևորգի [16.7.1900, գ. Ղազարապատ (այժմ՝ գ. Իսահակյան՝ ՀՀ Շիրակի մարզում)–6.1.1977, Երևան], բանասեր: Ավարտել է Ալեքսանդրապոլի ռուս. միջնակարգ առևտր. դպրոցը, 1926-ին՝ ԵՊՀ:

Կազմել և թարգմանել է «Ավետիք Իսահակյանի մասին» (հայ. և ռուս., 1971) աշխատությունը, կազմել է Ա. Իսահակյանի «Մեր գրի անմահ փառքը» (Հ. Թումանյանի մասին, 1969) տպագիր և անտիպ հոդվածների, հուշերի ու ասույթների ժող-ը: 1959-ին տողացի ռուս. է թարգմանել Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը և մի շարք այլ երկեր, որոնք այնուհետև թարգմանվել են ԽՍՀՄ և աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով: Ռուս-ից թարգմանել է սերբ գրող Դեսանկա Մաքսիմովիչի «Մանուկները հասունանում են» (1967) վեպը, «Բոսոր հորիզոն» (1972) մոնղ. հեքիաթների և նովելների ժող-ը:



«Ծովային ատլաս» (ռուս., հ. 1, 1950, գլխ. խմբագիր՝ **Հ. Իսակով***)*

ԻՍԱՀԱԿՅԱՆ Ավետիք Սահակի [18(30).10.1875, Ալեքսանդրապոլ–17.10.1957, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. գրոսայգու պանթեոնում], բանաստեղծ, արձակագիր: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): 1889–93-ին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1893-ին՝ Լայպցիգի, 1897-ին՝ Յուրիխի համալսարանների ազատ ունկնդիր: 1908-ի դեկտ-ին «Դաշնակցության գործով» ձերբակալվել ու կես տարի Մետեխի բանտում մնալուց հետո գրավով ազատ է արձակվել: 1911-ին մեկնել է Կ. Պոլիս, այնուհետև՝ Եվրոպա: Բեռլինում գերմանացի մի շարք մտավորականների հետ մասնակցել է գերմանահայկ. ընկերության ստեղծմանը, խմբագրել ընկերության «Մեսրոբ» պարբ-ը: 1926–30-ին ապրել է Հայաստանում, 1930–36-ին՝ Փարիզում, 1936-ին վերադարձել է Հայաստան:

Ի-ի առաջին՝ «Երգեր ու վէրքեր» ժող-ը լույս է տեսել 1897-ին (Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ., կազմի վրա՝ 1898, 1908, Թ., «Հերմես» տպ.), որին հաջորդել են «Հին-նոր երգ ու վէրքերից» (1902, Բաքու, Ն. Երևանցյանի տպ.), «Բանաստեղծութիւններ» (1903, Բաքու, «Արոր» տպ.), «Հայրենի աղբիւրից» (1920, Բոստոն, «Հայրենիքի» տպ.), «Բանաստեղծություններ» (1930), «Ալագյազի մանիներ» (1945) ժող-ները, որտեղ ներառված են հանրահայտ՝ «Դարդս լացեք, սարի սմբուլ», «Սիրեցի, յարս տարան» «Էս ճամփեն ոլոր-մոլոր», «Մայրիկիս», «Դարդս սրտիս, աղքատ ու խեղճ» և այլ բանաստեղծություններ: Ի-ի հայրենասիր-ազատասիր. բանաստեղծությունները 1898–1913-ին «Հայդուկի երգեր» խորագրով և Հայ-գուսան ստորագրությամբ տպագրվել են *«Դրօշակ»* ամսաթերթում: Գրել է նաև մաքառման, ըմբոստացման բանաստեղծություններ («Անհուն վրէժի եւ ատելութեան», 1904, «Իմ սիրտն այնտեղ է», 1906), խոհափիլ. պոեմներ («Աբու-Լալա Մահարի», 1911, ԿՊ, «Արաքս» տպ., 1929, 1945, Ստամբուլ, 1968, Բ., 1984), լեգենդներ, հեքիաթներ («Արեւի մոտ», 1905, «Շիդհարը», 1907, «Աղա Նազար», 1911, «Ասպետի սէրը», «Յաւերժական սէր», 1919, «Լիլիթ», 1921), «Սասմա Միեր» (1922, Վնն., Մխիթարյան տպ., 1938) վիպերգը, արձակ էջեր («Արձակ էջեր», հ. 1, 1923, ԿՊ, «Հայկաշեն» հրտ.), «Ուստա Կարո» (1910–12, 2000, 2006) վեպը, «Համբերանքի չիբուխը» (1923, Ե., «Հերմես» տպ.) պատմվածքը, «Իմ հուշերից» (1946), «Մեր գրի անմահ փառքը» (1969), «Հիշատակարան» (1977) հրապարակախոս. հոդվածների, հուշերի ժող-ները, «Ընտիր երկերը» (հ. 1–2, 1939–40, 2007) , «Երկերի ժողովածուն» (հ. 1–4, 1950–51, հ. 1–6, 1973–79), «Երկերը» (հ. 1–4, 1958–59),



Ավետիք Իսահակյան

«Հատընտիրը» (1958, 1975), «Լիրիկան» (1968), «Արվեստի մասին» (կազմ. և ծնթգր.՝ Ա. Ինճիկյանի, 1977), «Հայդուկի երգեր» (1990), «Աֆորիզմներ» (2001), «Ավետիք Իսահակյան» (2012) ժող-ները: 2003-ից ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ը սկսել է Ի-ի ԵԼԺ-ի 1–14 հատորների հրատ-ը (տպագրվել են 1-ին, 2-րդ և 4-րդ հատորները):

Ի. թարգմանել է Կ. Համսունի, Մ. Լերմոնտովի, Ա. Ծերեթելու, Ի. Գրիշաշվիլու, Մ. Ռիլսկու և ուր. բանաստեղծություններից:

Ի-ի երկերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: Նրա բանաստեղծությունների հիման վրա գրված երգերի զգալի մասը ժողովրդականացել է: Ի-ի տուն-թանգարանները են գործում Երևանում, Գյումրիում, արձանները կանգնեցված են Երևանում (1965) և Գյումրիում (1976): Ի-ի անունով կոչվել են փողոցներ Երևանում, Գյումրիում, Մոսկվայում և այլուր, դպրոցներ, գրադարաններ՝ ՀՀ տարբեր վայրերում: Ի-ի պատկերով ՀՀ-ում թողարկվում է թղթադրամ (10-հզ-դրամանոց):

1980-ին ՀԳՄ-ն սահմանել է Ի-ի անվ. ամենամյա գրական մրց.:

ԽՍՀՄ Պետ. մրց. (1946):

Գրկ. **Աճառյան Ա.**, *Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1940:* **Առաքելյան Վ.**, *Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Ե., 1954:* **Ղանալանյան Ա.**, *Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Ե., 1955:* **Հովհաննիսյան Գ.**, *Իսահակյանի ստեղծագործական աշխարհը, Ե., 1969:* **Իսահակյան Ավիկ**, *Ավետիք Իսահակյանի արձակը, Ե., 1975:* **Նույնի**, *Գիտական կենսագրություն, գիրք 1, 1875–1900, Ե., 2000:* **Նույնի**, *Ավետիք Իսահակյանի պոեմները, Ե., 2007:* **Նույնի**, *Բարև, Վարպետ: Գիտական ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու, Ե., 2008:* **Աբեղյան Հ.**, *Իսահակյանը և ժողովրդական էպոսը, Ե., 1975:* **Մկրյան Մ.**, *Իսահակյանի հումանիզմը, Ե., 1975:* **Ինճիկյան Ա.**, *Ավետիք Իսահակյան, Ե., 1977:* **Մուշեղյան Ա.**, *Ավետիք Իսահակյան: Վաղ տարիներ, Ե., 1983:* **Հախվերդյան Լ.**, *Վարպետը լիտհագրության, Ե., 1990:* **Իսահակյան Վ.**, *Հայրս (հուշագրություն), Ե., 2011: Ավետիք Իսահակյան (1875–1975): Կենսամատենագիտական ցանկ, մաս 1–2, Ե., 1976:*

ԻՍԱՀԱԿՅԱՆ Ավետիք (Ավիկ) Վիգենի (ծ. 27.11.1944, Երևան), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1987): Ավետիք ***Իսահակյանի*** թոռը: Ավարտել է ԵՊՀ (1966): 1971–72-ին աշխատել է Ա. Իսահակյանի տուն-թանգարանում, 1974–78-ին՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի, 1978-ից՝ գրակ-յան ինստ-ներում (1989-ից՝ տեքստաբանության բաժնի վարիչ, 2008–15-ին՝ տնօրեն), 1986–88-ին, միաժամանակ՝ ԳԱԹ-ի տնօրեն:


Լույս են տեսել Ի-ի «Ավետիք Իսահակյանի արձակը» (1975), «Ավետիք Իսահակյանը և ռուս. գրականությունը» (1984), «Ավետիք Իսահակյան: Գիտական կենսագրություն» (2000) աշխատությունները: Ի. գիտ. շրջանառության մեջ է դրել Ա. Իսահակյանի գրական ժառանգության նորահայտ էջեր ու վավերագրեր:

Երկ. Ավետիք Իսահակյանի պոեմները, Ե., 2007: Բարև, Վարպետ. Գիտ. ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու, Ե., 2008: Аветик Исаакян и Россия: По дневникам, записным книжкам, письмам, М., 1988.


ԻՍԱՎԵՐՏԵՆՑ Հակոբոս [13.3.1835, Զմյուռնիա–28.8.1902, ք. Ազոլո (Իտալիա)], բանասեր, թարգմանիչ, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, քահանա (1854): 1871–72-ին՝ ***«Բազմավէպ»*** պարբ-ի խմբագիր:

Լույս են տեսել Ի-ի «Գաղղիայ եւ Բրուսիա. ճակատամարտք 1870 ամին» (մաս 1–3, 1870–71), «Լճակիս ձկնորսը: Երեկոյեան ժամուց խորհրդածութիւնք» (1873), «Քերականութիւն կամ Կրթարան անգղիական լեզուի» (տետր Ա–Բ, 1880–81), «Ուղեւորութիւն ի Պոմպէյ Հնդկաց» (1887), «Պատմություն հայոց» (ֆրանս.՝ 1888, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունները: Հեղինակ է նաև անգլ-ով և ֆրանս-ով տպագրված հայոց պատմության, Հայ եկեղեցու ծիսակարգին ու արարողությանը վերաբերող ուսումնասիրությունների: Ֆրանս. է թարգմանել (Է. Սիրունյանի հետ) Ղ. Ալիշանի «Սիսուան» աշխատությունը:


ԻՍՈՅԱՆ Ալբերտ Վահազնի [ծ. 24.8.1944, գ. Սուլդա (Վրաստանի Ախալքալաքի շրջան)], խմբագիր-հրատարակիչ: Ավարտել է ՀՊՄԻ (1969): 1970–91-ին աշխատել է ***«Գրքերի աշխարհ»*** թերթի խմբագրությունում (1982-ից՝ գլխ. խմբագիր): 2000–01-ին խմբագրել է ***«Գրական թերթ»***-ը: 1991-ին հիմնադրել է ***«Հայագիտակ»*** հրատարակչությունը, 2012-ին՝ Ընթերցողների համահայկ. միությունը: 1997-ից տպագրում է վանականե կազմերով, ոսկե զարդաքանդակներով հուշանվերային




Ավետիք Իսահակյանի *«Երկերի ժողովածու»-ի (հ. 1, 1973, Ե., «Հայաստան») տիտղոսաթերթը*



Ավիկ Իսահակյանի *«Բարև, Վարպետ» (2008, Ե., «Տիծեռնակ») գրքի կազմը*



Հակոբոս Իսավերտենցի *«Ուղեւորութիւն ի Պոմպէյ Հնդկաց» (1887, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*




Վրեժ Իսրայելյանի *«Տոնապետ» (2010, Ե., «Նաիրի») գրքի կազմը*

Իտալիայի հայկական տպագրություն



«Վարդապետութիւն քրիստոնէական» (1670, Լիվոռնո) գրքի գլխազարդով և լուսանցազարդով (1-ին) էջ



«Դաւանութիւն հաւատոյ» (1678, Հռոմ, Ուրբանյան տպ.) գրքի տիտղոսաթերթը

գրքերի մատենաշար. լույս է ընծայել Հ. Թումանյանի, Ե. Չարենցի, Վ. Տերյանի, Ա. Պուշկինի, Ս. Եսենինի, Բ. Օկուջավայի (վերջին երեքը՝ ռուս.), Շոթա Ռուսթավելու (վրաց.) և այլ գրողների ընտրանիները:

Ի. մասնակցել է «Հայերն աշխարհում» հանրագիտ. բառարանի (1995), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2001), Վ. Տերյանի «Ընտրանի» (2005), Ֆ. Դոստոևսկու «Արևելյան հարց» (ռուս., 2007), Ե. Չարենցի «Վերջին խոսքը...» (2007), «Վահան Տերյան: Տերյանագիտություն: Մատենագիտություն» (2011), «Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և հայոց ցեղասպանության մասին» (հայ.՝ 2011, ռուս.՝ 2012) ժող-ների, «Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» քարտարանի կազմման, խմբագրման և ծանոթագրման աշխատանքներին:

ԻՍՐԱՅԵԼ ԵՐԵՑ, **Իսրայել Քահանա,** XV դ–ի 2–րդ կեսի գրիչ և մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ստեղծագործել է Սոկաց գավառի Փասավանք գյուղում: Ի. Ե–ի ընդօրինակած և պատկերազարդած ձեռագրերից հայտնի են 11–ը, որոնցից 6–ը պահվում են Մատենադարանում (1 Մաշտոց, 2 Գանձարան, 3 Ավետարան), 5–ը՝ արտերկրի հավաքածուներում (3 Ավետարան, 2 Հայսմավուրք): Թեմատիկ մանրանկարներով աչքի են ընկնում 1447–ի, 1455–ի և 1476–ի Ավետարանները (Մատենադարան, ձեռ. № 4922, 5414, 5459):

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Վրեժ Սաղաթելի (2.4.1949, Երևան–14.6.2013, Երևան), արձակագիր, դրամատուրգ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1971): 1971–79–ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում, 1980–91–ին՝ «Վերածնված Հայաստան» ամսագրի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ, 1993–99–ին՝ ***«Հայ գինվոր»*** պաշտոնաթերթի գլխ. խմբագիր, 1999–2009–ին՝ ՀՀ ՊՆ Լրատվության և քարոզչության վարչության պետ, 2009–12–ին՝ ***«Նաիրի»*** հրատարակչության գործադիր–տնօրեն:

Լույս են տեսել Ի–ի «Մեկին գումարած մեկ» (1982), «Կարճ–երկար ճանապարհ» (1989), «Ձնվաճված աշխարհամաս» (1990), «Վաղ թե ուշ» (2005), «Տոնապետ» (2010) պատմվածքների և վիպակների, հոդվածների, վավերագր. կինոսցենարների ժող–ները:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (2011):

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է Վենետիկում, որտեղ 1512–ին ***Հակոբ Մեղապարտը*** լույս է ընծայել հայ. առաջին տպագիր գիրքը՝ ***Ուրբաթագիրքը***, 1513–ին՝ ևս 4 գիրք: 1565–66–ին այստեղ գործել է ***Աբգար Թոխաթեցին*** (տես ***Վենետիկի հայկական տպագրություն***):

XVI դ–ում հայկ. տպագրության 2–րդ կենտրոնը Հռոմն էր: Առաջին գրքերը՝ «Տօմար Գրիգորեան» և «Դաւանութիւն ուղղափառութեան» (Հովհաննես Տերզնցու և Սուլթանշահ Թոխաթեցու աշխատասիրությամբ), լույս են տեսել 1584–ին Դոմինիցի Բազաեի տպարանում: Տպագրվել է կրոն. բովանդակության ևս 5 գիրք՝ Բարտոլոմեի Բոնֆադինիի, Զիակոմո Ռուֆինելլոյի, Ստեֆան Պաուլինիուսի և Վատիկանի տպարաններում:

XVII դ–ի սկզբներին Վատիկանն ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերել արլ. ազգերի, այդ թվում՝ հայերի նկատմամբ՝ ջանալով կաթոլիկ. դավանանքը տարածել Արևելքի երկրներում: Այդ նպատակով 1627–ին Ուրբանոս VIII պապը Հռոմում հիմնադրել է տպարան (Ուրբանյան), որտեղ XVII–XVIII դդ–ի ընթացքում տպագրվել են շուրջ 44 անուն հայ. գրքեր, հիմնականում՝ դավանաբան., նաև բառարաններ ու հայոց լեզվի ձեռնարկներ՝ այլազգի քարոզիչների համար [Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» (հ. 1, 2, 1650, 1658), Թոմա Գեմբացու «Համահետեւումն Քրիստոսի» (1674) աշխատությունները, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Ջտութիւն հայկաբանութեան կամ Քերականութիւն հայկական» (1674), «Քերականութիւն

լաթինական» (1675), «Դաւանութիւն հաւատոյ» (1678), «Հրահանգք շուրջ զհաղորդութեամբ» (1719) երկերը, «Լատիներէն-հայերէն» բառարանը (1675), Յակոբ Վիլլոտի «Մեկնիչ Սրբոյ Աւետարանին» (1714), Հակոբ Մծբնացու «Ճառք» (1756), Գեորգ Անթապեցի Պաղտատյանի «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ առաջին հայրապետ հայոց» (1786, պատկերով), Ստեփաննոս Աբգարյան Անկյուրացու «Սկզբունք բնական գիտութեանց» (1796) գրքերը, Պատարագատետրեր, պապական ճառեր ննջ: Տպարանը գործել է մինչև 1890-ական թթ. և զգալի դեր է խաղացել կրոն. մարդորսության գործում: Հռոմում ավելի ուշ՝ 1911-ին, հիմնադրվել է Հասունյան տպարանը, որտեղ տպագրվել է «Արձագանք» շաբաթաթերթը, որը շուտով փոխադրվել է Կ. Պոլիս:

1621-ին Միլանում՝ Ամբրոսյան վարժարանի տպարանում տպագրվել է Ֆրանչիսկոս Ռիվոլայի ***«Բառգիրք հայոց»***-ը, 1624-ին՝ «Քերականութիւն հայերէնի» (հայ. և լատ.) աշխատությունը, 1690-ին ասորի եպս. Տիմոթեոս Գառնուկը Պադուայում տպագրել է «Դաշանց թուղթը» (սխալաշատ), ներառել է նաև Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, Հռոմ. եկեղեցու մի քանի աղոթքներ ու պատկերներ: Ի. ի. տ-յան պատմության ամենաբեղուն ու արգասաբեր շրջանը կապված է ***Մխիթարյան միաբանության*** գործունեության հետ, որը 1789-ից Վենետիկի Սբ Ղազար կղզում հիմնադրել է տպարան և ցայսօր տպագրում է հիմնականում հայագիտ., դավանաբան. և այլ բնույթի գրքեր: Հայկ. տպագրություն է եղել նաև Լիվոռնո, Պավիա, Տրիեստ, Ֆեռարա քաղաքներում:

Իտալիայում, մասնավորապես՝ Վենետիկում, հրատարակվել են Մխիթարյանների 10-ից ավելի պարբ-ներ՝ առաջինը՝ ***«Տարեգրութիւնք»***-ը (1799–1802), ապա՝ ***«Եղանակ Բիւզանդեան»***-ը (1803–20), «Յիշատակարան»-ը (1807–08), ***«Դիպակ Բիւզանդեան»***-ը (1812–16), ***«Բազմավէպ»***-ը (1843-ից), ***«Մխիթարեան ընտանիք»***-ը (1947–85) ևն:

Տես նաև ***Լիվոռնոյի հայկական տպագրություն, Տրիեստի հայկական տպագրություն:***


Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայ տպագրութեան, Վնտ., 1895: ՃԷՄՃԷՄեան Ս., *Հայկական տպագրութիւնը եւ Հռոմը, Վնտ., 1979:* Կոստանեան Կ., *Հայագիտութիւնը Արեւմտեան Եւրոպայում, Թ., 1910:* ԶԷքիեան Լ.-Պ., *Վենետիկ եւ հայերը, Վնտ., 1990:* Հակոբյան Հ., *Հայերը և Իտալիան, Ե., 2005:* Կարապետյան Մ., *Հռոմի հայ գաղթօջախի պատմությունից, «ՊԲՀ», 1998, № 1–2:*

«ԻՐԱՆ ԵՎ ԿՈՎԿԱՍ», հասարակագիտ. միջազգ. եռամսյա հանդես: Իրանագիտ-յան և կովկասագիտ-յան կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1997-ից Երևանում՝ «Բրիլլ» միջազգ. արևելագիտ-յան ակադ-ի հրատարակչության աջակցությամբ: Հիմնադիր-խմբագիր՝ Գառնիկ ***Ասատրյան:*** Տպագրում է արևելագիտ-յան տարբեր բնագավառներին վերաբերող հոդվածներ՝ անգլ. և գերմ., ինչպես նաև գրախոսականներ, տեղեկատվություն՝ նոր լույս տեսած արժեքավոր գրքերի մասին: Գիտախմբագր. խորհրդի կազմում են ՀՀ-ի, եվրոպ. երկրների ու ԱՄՆ-ի ճանաչված արևելագետներ, կովկասագետներ:

ԻՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1638-ին՝ ***Խաչատուր Կեսարացու*** և մի խումբ հայ գործիչների ջանքերով Նոր Ջուղայում հայկ. տպարանի հիմնադրմամբ, որն առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև Միջին Արևելքում (տես ***Նոր Ջուղայի հայկական տպագրություն***):

Իրանահայ տպագրության 2-րդ կենտրոնը Թավրիզն է: 1888-ին տեղի Արամյան դպրոցում Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ստեփանոս արք. Մխիթարյանի ջանքերով և մոսկվաբնակ Հովհաննես Հովնանյանցի բարերարությամբ հիմնադրվել է տպարան, որտեղ լույս են տեսել գրքեր, դասագրքեր, օրացույցներ, պարբ-ներ (գործել է մինչև 1901-ը): Շուրջ մեկդարյա (1888–1984) հրատարակչ. գործունեություն է իրականացրել Ատրպատականի հայոց թեմ. տպարանը.


Իտալիայի հայկական տպագրություն



Յ. Վիլլոտի «Մեկնիչ Սրբոյ Աւետարանին...» (1714, Հռոմ, Ուրբանյան տպ.) գրքի գլխազարդով (29-րդ) էջ



Տ. Տասսոյի «Երուսաղէմ ազատեալ» (1911, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Իրան և Կովկաս», *1997-ից, Երևան (№ 11, 2011)*

Իրանի հայկական տպագրություն



Ափրպեկի «Պատկերներ թուրքահայերի կեանքից» (հ. 1, 1904, Թավրիզ) գրքի փիփղոսաթերթը



Վ. Մինախորյանի «1915 թականը. արհաւիրքի օրեր» (2006, Թեհրան) գրքի կազմը



Վ. Զարգարյանի «Բառ ու բանք Սայաթ Նովայի» (2009, Թեհրան, «Նաիրի») գրքի կազմը

տպագրել է Ատրպետի «Երկերի ժողովածուն» (հ. 1–8, 1904–06), Ռ. Խանազատի «Իդեալիզմ թէ մատերիալիզմ» (1904) ուսումնասիրությունը, Ատրպետի «Պատկերներ թուրքահայերի կեանքից» (1904), Ֆ. Շիլլերի «Օտար փունջեր» (1904), «Հաֆեզի հնգեակները, քառեակներն ու տաղերից» (1905), Վ. Ժուկովսկու «Երեք գոտի» (1905, երեքն էլ թարգմ.՝ Մ. Մաքսուդյանի), Ա. Հարությունյանի «Սահմանամերձ գաւառները 1918 թին» (1919) գրքերը, Հ. Թումանյանի «Երկերը» (1944) ևն:

Թավրիզում հայ. առաջին թերթը («Գործ») տպագրվել է 1903-ին: Ցայսօր հրատարակվել են շուրջ 30 անուն պարբ-ներ, որոնց մեծ մասը կարճ կյանք է ունեցել՝ «Ազդարար առաջնորդարանի» (1904–05), «Առաւօտ» (1909–11), ***«Զանգ»*** (1910–22), «Թաւրիզի յայտարարութիւններ» (1910–12), «Դարադաղ» (1912–14), «Այգ» (1914–22), «Արշալոյս» (1918–19), «Պայքար» (1918–19), «Հակաֆաշիստ» (1944–45), «Արեւելք» (1945–46), «Վերելք» (1952–53) ևն:

XX դ-ի սկզբին հայկ. տպագրությունն աշխուժացել է Թեհրանում. հիմնադրվել են **«Փարոս»** [գործել է 1901–69-ին, տպագրել է Զ. Բայրոնի «Ծովահէնը» (1911), Վ. Սկոտի «Լճի լէդին» (1912, երկուսն էլ՝ թարգմ. Հ. Միրզոյանի), Լ. Շանթի «Շղթայաւոր» (1924), Դևի «Իմ երգերը» (Ա գիրք, 1947) ևն], **«Մողեռն»** [ներկայում՝ «Զաղիդ», գործում է 1922-ից (հայտնի է 1894-ին այնտեղ տպագրված Զ. Բայրոնի «Երազը» գիրքը), տպագրել է Ս. Ցվայգի «Ժողովածու հատընտիր երկերի» (1944), Հ. Ֆալյանի «Նոր աչքեր» (1961) պատմ. ժող-ը, Է. Բյուզանդի «Երկերի ժողովածուն» (1961) և «Կարսը եւ ախպէր Աշօն» (1962) վեպը, Վ. Շեքսպիրի «Ռոմէօ եւ Ջուլիէտ» (1962) և «Ռիչարդ Երրորդ» (1966) ողբերգությունները, Օմար Խայամի «Քառեակները» (1963), «Իրանահայ արդի գրողներ» (գիրք Ա, 1964), Հ. Հովսեփյանի «Հատընտիր բանաստեղծութիւններ եւ պոէմներ» (1969), Գ. Խանենցի «Հրաշալի զօրութիւն» (1972) և այլ գրքեր], **«Ֆարաբի»** [գործում է 1975-ից, տպագրել է Մալխասի «Զարթօնք» (հ. Ա–Դ, 1981) և «Ապրումներ» (1982), Րաֆֆու «Խենթը: Զալալէդդին» (1981), «Խաչագողի յիշատակարանը» (1982), «Դաւիթ Բէկ» (1982), «Կայծեր» (հ. Ա–Բ, 1982) վեպերը, Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» (հ. Ա–Բ, 1982), Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» (հ. Ա–Է, 1982, «Ալիքի» տպ.), Ա. Ահարոնյանի «Երկերի ժողովածուն» (հ. Դ–Ե, 1982), Մուրացանի «Գէորգ Մարզպետունի» (1983) վեպը, Հ. Շիրազի «Հատընտիրը» (1983), Կ. Զարյանի «Նաւը լերան վրայ» (1983) վեպը, Ե. Չարենցի «Ընտիր երկերը» (1985), Խ. Դաշտենցի «Խոդեդան» (1985), Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» (հ. Ա–Բ, 1985) վեպերը ևն], **«Արաքս»** (1954-ից), **«Անի»** (1954–82), **«Նուրբախշ»** («Մասիս», 1955-ից) և այլ տպարաններ:

Բեղուն գործունեությամբ հայտնի է ***«Նայիրի»*** հրատարակչությունը:

1940-ական թթ-ին իր սեփական տպարանն է հիմնադրել ***«Ակիք»*** օրաթերթը. տպագրում է հայ և համաշխ. դասականների ստեղծագործություններ, բառարաններ, դասագրքեր, անտիպ էջեր, գիտ. ուսումնասիրություններ, իմացաբան., իրավագիտ., երաժշտ. և այլ երկեր [Մ. Ռիդի «Որսորդական տօն» (մաս Ա–Բ, 1938) և «Օցէոլա» (1954), Կ. Համսունի «Վիկտորիա» (1955) վեպերը, Ս. Վրացյանի «Հայաստան եւ Սփիւռք» (1956) և «Ինչպէս եւ ինչու խորհրդայնացաւ Հայաստանը» (1982) երկերը, Ա. Ահարոնյանի «Ազատութեան ճանապարհին» (1958) պատմվածքաշարը, Բ. Այվազյանի «Աշոտ Երկաթ» վեպը, Ա. Հովհաննիսյանի «Գիւղի ճամբան» (հ. 1, 1960) ժող-ը, Ա. դը Սենտ Էկզյուպերիի «Փոքրիկ իշխանը» (1961), Ա. Գառոնեի «Արդարութեան ճանապարհով» (1962), Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» (1963), Հ. Շիրազի «Հայոց դանթէականը» (1969), Վ. Զարգարյանի «Բառ ու բանք Սայաթ Նովայի» (2009) գրքերը, Հ. Թումանյանի «Երկերի ընտրանին» (2011) ևն:

Հայ. բազմաքնույթ գրքեր ու բառարաններ են տպագրվում նաև Իրանի **«Մեսբահ»**, «Օֆսեթ» (Ա. Ահարոնյանի «Երկերի ժողովածուն», հ. Ա–Գ և Զ–Ժ, 1982–83), **«Ուրաման»**, **«Ռամին»**, **«Սենոբար»**, **«Սալես»** և այլ տպարաններում:

Իրանում հայ. առաջին պարբ-ը՝ ***«Շաւիղը»,*** 1894-ին Թեհրանում հիմնադրել և խմբագրել է Հովհաննես խան ***Սևանեյանը***:

Ցայսօր Թեհրանում հրատարակվել են ավելի քան 80 անուն հայ. պարբ-ներ՝ հաս., երգիծազավեշտ. ***«Բոբոխ»*** (1920–33) շաբաթաթերթը, հաս-քաղ., գրական «Նոր կեանք» (1922–27), ***«Գաղափար»*** (1925–27) և ***«Վերածնունդ»*** (1930–53) եռօրյա թերթերը, ***«Նոր Էջ»*** (1935–43, 1958–72) գրական ժող-ը, հաս-քաղ., գրական, տնտ. և իրավագիտ. «Արուսեակ» (1935–36, 1942) անկախ օրաթերթը, «Նոր աղբիւր» (1942–48) մանկապատանեկան ամսագիրը, ***«Յախաւել»*** (1943–58) երգիծ. երկշաբաթաթերթը, ***«Լուսարեր»*** (1949–71) գրական-գեղ., մանկավարժ., մանկապատանեկան ամսագիրը, ***«Արփի»*** (1949–56) գրական, գիտ., հաս. ամսագիրը, ***«Արմենուհի»*** (1949–55) գրական, մշակութ., պատմագիտ. հանդեսը, հայ մշակութ., պատմագիտ. «Արարատ» միության «Արարատ» (1959–60) ամսագիրը, ***«Զահակիր»*** (1963–90) հոգևոր, բարոյագիտ., առողջապահ., տեղեկատվ. ամսաթերթը, Թեհրանի հայ պատանեկան միության «Ալիք պատանեկան» (1969–78) երկշաբաթաթերթը, «Հուր» (1971–76) գրական, գիտ. ամսագիրը, ***«Փինիկ»*** (1979–83) գրական, հաս-քաղ. շաբաթաթերթը, ՀՅԴ-ի «Ռոստոմ» և «Ռուբեն» երիտասարդ. միությունների «Յեղափոխութեան ճամփով» (1979–82) և «Դէպի երկիր» (1980–85, Նոր Զուղա) պաշտոն. հանդեսները, Իրանահայ ազգ. և մշակութ. միության «Ծիածան» (1982–88) գրական, մշակութ., հաս. պաշտոն. ամսագիրը ևն:

Ներկայում Թեհրանում լույս են տեսնում ՀՅԴ ***«Ալիք»*** (1931-ից) օրաթերթը, ***«Արաքս»*** (1987-ից, հայ. և պարսկ.) ամսագիրը, ***«Ապագայ»*** (2000-ից) եռամսյա հանդեսը, ***«Լույս»*** (2000-ից, հայ., պարսկ.) երկշաբաթաթերթը, ***«Հանդէս»*** (2001-ից) գրական, գեղ. եռամսյան ևն:

Գրկ. Բալեան Տէր-Յակոբեան Բ., Բալեան Տէր-Յակոբեան Ս., *Պատմութիւն իրանահայերի, Գլենդել, 1985:* Փահլևանյան Հ., *Իրանահայ համայնքը (1941–1979), Ե., 1989:* Մինասեան Լ., *Հայ տպագիր գիրքը Իրանում. 1638–2000, Նոր Զուղա, 2001: Հայ տպագրութիւն Իրանում. 1638–2011 (կազմ.՝ Ա. Աղայան, Բ. Տէրտէրեան), Թեհրան, 2012:* Բաղդասարյան Է., *Իրանահայ տպագրություն («Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համագումարի նյութեր»), 2012:*

«ԻՐԱՆ ՆԱՄԷ», հայկ. արևելագիտ. տարեգիրք (սկզբում՝ ամսագիր): Իրանագիտ-յան կովկասյան կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1993-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Գառնիկ ***Ասատրյան***: Տպագրում է արևելագիտ-յան և հայագիտ-յան տարբեր բնագավառներին, իրան. աշխարհի, արաբ. երկրների, Կենտր. Ասիայի և Կովկասի ժողովուրդների պատմությանն ու լեզվաբանությանը, կրոնագիտ-յանն ու ազգագրությանը, մշակույթին ու գրակ-յանը վերաբերող հոդվածներ: Հրապարակումները հիմնականում հայ. են, տպագրվում են նաև ռուս. և անգլ. հոդվածներ:

«ԻՐԱՎՈՒՆՔ», հաս-քաղ. եռօրյա թերթ: Սահմանադր. իրավունք միության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1989-ից (2007–08-ին՝ «Իսկական իրավունքը») Երևանում: Խմբագիրներ՝ Անդրանիկ Բուռնազյան, Հայկ Բաբուխանյան, Հովհաննես Գալաջյան (1999-ից): Անդրադառնում է ՀՀ հաս-քաղ., սոցիալ-տնտ. ոլորտների կարևոր իրադարձություններին, քաղ. կուս-ների գործունեությանը, միջազգ. անցուդարձին, Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացներին ևն: Ունի «Ընկեր Փանջունու անկյուն» քաղ. երգիծանքի բաժին, ինչպես նաև մշակութ., մարզ. էջեր, «Իրավունք-հետաքննություն» շաբաթական, «Զարուհի» (կանանց համար) ամենամսյա հավելվածները:



«Հայ տպագրութիւնն Իրանում. 1638–2011» (2012, Թեհրան, կազմ.՝ Ա. Աղայան, Բ. Տերտերյան) գրքի կազմը



«Իրան Նամէ», *1993-ից, Երևան (№ 42, 2010)*



«Իրավունք», *1989-ից, Երևան*

«ԻՐԱԻՈՒՆՔ», քաղ. եռօրյա թերթ: Լույս է տեսել 1885-ին Վառնայում՝ հայ. և ֆրանս.: Խմբագիր՝ Հակոբ Սավի (Սավիյան): Հանդես է եկել հայ ժողովրդի իրավունքները Թուրքիայում պաշտպանելու կոչով: Մերկացրել է Արևմուտքի դիվանագիտությունը Հայկ. հարցում, բողոքել ցար. իշխանությունների՝ հայկ. դպրոցների փակման քաղաքականության դեմ: Տպագրել է ուսումնասիրություններ հայոց պատմության, գրակ-յան ու մշակույթի վերաբերյալ, արտատպել նյութեր ժամանակի հայ մամուլից:



«Իրատես դե ֆակտո», *2008-ից, Երևան*

«ԻՐԱԻՈՒՆՔ», հաս-քաղ. եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1896–1911-ին Վառնայում: Խմբագիրներ՝ Հակոբ Պոնճուկյան, Հակոբ Գուրպեթյան: Պայքարել է հանուն հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության, ներկայացրել եվրոպ. դիվանագիտ-յան և մամուլի դիրքորոշումները: Անդրադարձել է Բուլղարիայի և Ռումինիայի հայկ. համայնքների պատմությանը, արտատպել է նյութեր պոլսահայ մամուլից: Տպագրել է հայ և բուլղար հեղինակների գրական գործեր, բանասիր. հոդվածներ, նյութեր՝ «Հայը բուլղարական գրականության մեջ» խորագրով: Ունեցել է քաղ. լուրերի բաժին՝ հայատառ թուրք-ով:

«ԻՐԱՏԵՍ ԴԵ ՖԱԿՏՈ», հաս-քաղ. եռօրյա թերթ: Լույս է տեսնում 2008-ից Երևանում: Խմբագիր՝ Փիրուզա ***Մելիքսեթյան***: Տպագրում է ՀՀ-ի քաղ., սոցիալ-տնտ., ֆինանս., մշակութ. առօրյան լուսաբանող հոդվածներ, մարզ. լուրեր, վերլուծականներ, հարցազրույցներ, անդրադառնում միջազգ. անցուդարձին: 2011-ից թղթակցական կետ ունի Շանհայում (ղեկ.՝ Սուսաննա Պողոսյան), 2012-ից՝ Աբու Դաբիում (ղեկ.՝ Համասփյուռ Գրիգորյան):



«Գոյամարտ» (1948–54 և 1957–58, **Իրաք***, Բաղդադ)*

Խմբագրությանը կից գործում է համանուն լրագրող. ակումբը:

ԻՐԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, առաջին հայկ. տպարանը հիմնադրել են Թադևոսյան եղբայրները 1874-ին Բաղդադում: Սկզբում տպագրել են դասագրքեր, իսկ 1890–92-ին Մ. Սվաճյանը հրատարակել է Իրաքում հայ. առաջին պարբ-ը՝ «Փունջ» խմորատիպ հանդեսը՝ Ազգ. վարժարանի աշակերտների ուժերով: 1922–23-ին բժիշկ Գուրգեն Փափազյանի նախաձեռնությամբ Բաղդադում հրատարակվել է «Տիգրիս» եռօրյա թերթը (3 համար), 1948–54 և 1957–58-ին՝ «Գոյամարտ» շաբաթաթերթը (արտոնատեր՝ Բաբկեն Փափազյան, խմբագիրներ՝ Լևոն Գարմեն և Արամ Տյուզյան, հիմնադիրներից էին նաև Մարգար Սոսոյանը և տպարանատեր Հակոբ Տեր-Ներսեսյանը): 1966–73-ին հրատարակվել է «Մաշտոց» տարեգիրքը: Ներկայում տպագրվում է միայն Հայոց առաջնորդարանի «Հաղորդագրութիւն» պարբերաթերթը:

Գրկ. **Մուրադյան Ս.,** *Իրաքի հայ համայնքը [ա. պ.], 1997:* **Ալպոյաճեան Ա.,** *Իրաքի հայերը, Ե., 2003:*

Լ


Լ, հայ. այբուբենի 12-րդ տառը, անվանումը՝ «լիւն»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Ուղղահայաց երկարի ձախ կողմի վերևից և աջ կողմի ներքևից համապատասխանաբար միանում են կարճ և լայն տարրերը. նուրբերն անցնում են տողագծի վրայով, իսկ կարճը և լայնը ընկած են տողագծից դուրս: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:


Լ, որպես այբուբենի տասնավորների սյան 3-րդ (12-րդ) տառ, նշանակել է երեսուն և երեսուներորդ, բյուրի նշանով (Լ҃)՝ 30 բյուր (300 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Լ–մաս 30-րդ):

ԼԱ ԿՐՈԶ (La Croze) Մաթյուրեն Վեյսիե [4.12.1661, Նանտ (Ֆրանսիա)–21.5.1739, Բեռլին], ֆրանսիացի արևելագետ-հայագետ: Բեռլինի համալսարանի փիլ-յան պրոֆ., պրուս. արքունի մատենադարանապետ, դիվանապետ: Ուշագրավ են նրա «Քրիստոնեության պատմությունը Հնդկաստանում» (1724), «Քրիստոնեության պատմությունը Հաբեշստանում և Հայաստանում» (1739), «Գանձ լակրոզյան նամակների» (հ. 1–3, 1762–64, լատ.) աշխատությունները: Կազմել է «Բառարան հայ լեզուի», «Յուցակ ազգաբանութեան թագաւորաց հայոց Յովհաննէսիկ տէր Անուոյ եւ իշխան հայոց Մեծաց»-ը: Լատ. է թարգմանել Մեսրոպ Երեցի «Պատմութիւն մնացորդաց հայոց եւ վրաց» գործը (սխալմամբ վերագրվել է Ստեփանոս Օրբելյանին), Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը, Հեթում թագավորի «Որ ծառայեալս եմ բիւր ախտից» տողով սկսվող ծավալուն բանաստեղծությունը, քաղվածքներ՝ Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնից», նաև Մովսես Խորենացուն վերագրված «Աշխարհացոյց»-ի «Ասիա» բաժինը ևն: Լա Կ. դեռևս XVIII դ-ի սկզբներին Աստվածաշնչի հայ. թարգմանությունը համարել է «թարգմանությունների թագուհի»:

Գրկ. **Շրոմպֆ Գ. Ա.,** *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895, էջ 47–56:*

ԼԱԳԱՐԴ (Lagard) Պոլ դը (2.11.1827, Բեռլին–1891, Բեռլին), գերմանացի հայագետ: Եղել է Գյոթինգենի համալսարանի արլ. լեզուների դասախոս (1869–91): «Հայերենի և սանսկրիտի բաղաձայնների համեմատությունը» (1850) հոդվածում համեմատել է 283 բառ: «Պարսկականք» (1851) ուսումնասիրության մեջ քննել է զենդ-ը, աֆղան-ը, հայ-ը, պարսկ-ը ևն: «Հայերի նախապատմության մասին» (1854)





Պոլ դը Լագարդ



«Լազարեան Աւետարան»-ի 1 էջ *(IX դ., Մատենադարան, ձեռ. № 6200)*

Լազարյան ճեմարանի տպարանի *հրատարակություններից*



«Նկարագիր գաղթականութեան հայոց...» (1832) գրքի փիփղոսաթերթը



Ս. Պափկանյանի «Երգք» (1857) գրքի կազմը

աշխատության մեջ հայ-ի ևս 1000 բառի համեմատ. քննությամբ հանգել է այն եզրակացության, որ հայ-ի բառապաշարի ավելի քան 1/3-ը հնդեվրոպ. ծագում ունի: Իր հայագիտ. գործերն ամփոփել է «Հայկական ուսումնասիրություններ» (1877) հատորում:

Գրկ. Շրումպֆ Գ. Ա., *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* Աղայան Է., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. I, Ե., 1958:*

«ԼԱԶԱՐԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆ», IX դ-ի մագաղաթե ձեռագիր մատյան, պատկանել է Մոսկվայի Լազարյան ճեմարանին (այստեղից էլ՝ անվանումը): Ճեմարանին է նվիրել Թեոդոսիայի վաճառական Խաչուկյանը 1847-ին: Մեզ հասած հայ. առաջին ամենահին նկարազարդ և թվագրված ամբողջ. ձեռագիրն է (887, գրիչ և ծաղկող՝ Սահակ Վանանդեցի): 1925-ին ձեռագիրը Լազարյան հավաքածուի հետ (215 միավոր) տեղափոխվել է Էջմիածին (այժմ՝ Մատենադարան, ձեռ. № 6200): Ձեռագրի սկզբի նկարազարդ թերթերը բացակայում են, պահպանվել են միայն առաջին 2-ը, որոնց զույգ էջերում պատկերված է 4 խորան: Ունի գրիչի ամբողջ. հիշատակարան: Հրատարակվել է 1899-ին Մոսկվայում՝ լուսատիպ նմանահանությամբ:

Գրկ. Մաթևոսյան Ա., *Լազարյան ճեմարանի հնագույն ձեռագիրը, «ՊԲՀ», 1973, № 1:*

ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ, հիմնադրել են Լազարյանների ժառանգներ Հովհաննես և Խաչատուր Հովակիմյանները 1829-ին Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանին կից՝ Ս. Պետերբուրգից բերելով Հովսեփ քհն. Հովհաննիսյանի՝ դեռևս 1811-ին այնտեղ հիմնադրած տպարանը: Ունեցել է 13 լեզվի տառատեսակ: Լ. ճ. տ-ում տպագրվել են «Կարգադրութիւնք կայսերական հովանաւորութեամբ պաշտպանեալ Հայկական ճեմարանին արեւելեան լեզուաց» ժող-ը, Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը (12 լեզվով), Շուշիի բողոքականների 2 աշխարհաբար գրքույկներ, «Աւետարանի զօրութիւն, կամ Մին արաբ ծառայի պատմութիւն...», «Երեք խօսակցութիւնք մին քահանայի մին աշխարհական մարդոյ հետն...» (բոլորը՝ 1830), «Նկարագիր գաղթականութեան հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան» (1832) աշխատությունները, Ժ. Ռասինի «Գոթողիա» (1834) ողբերգությունը, Ա. Խուդաբաշյանի «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ»-ը (հ. 1–2, 1838), «Բարձրագոյն հրովարտակք եւ արձանագրութիւնք...» (հայ., ռուս., 1842) ժող-ը, Մ. Էմինի «Ընտիր հատուածք...» (1848, 1849) դասագիրքը, աշուղ Ազբարի (Ադամ Երևանցի) «Զանազան երգք»-ը (1855), Մ. Մսերյանի «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» (մաս 1–3, 1856) մատենագիտ-պատմաբանասիր. աշխատությունը, Ս. Նազարյանի «Հանդէս նոր հայախօսութեան» (մաս 1–2, 1857) երկը, Սաադիի «Գոլեստանը» (ռուս., 1858), Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը» (ռուս.,1858) ևն, նաև քերական., ճարտասան. և այլ ձեռնարկներ:

1859–63-ին Մկրտիչ *Էմինը* վարձակալել է տպարանը և հրատարակել Մովսես Կաղանկատվացու (1860, Լազարյան եղբայրներն այն ներկայացրել են Ալեքսանդր II ցարին), Միխիթար Այրիվանեցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի, Ուխտանեսի Պատմությունները, Մ. Չամչյանի «Հայոց լեզուի քերականութիւնը», «Կանոնք վասն ընդունելոյ ձրիավարժ որդեգիրք ի Լազարեան ճեմարանը արեւելեան լեզուաց» (հայ., ռուս., 1860), ինչպես նաև ռուս., ֆրանս., գերմ., հուն., վրաց., թուրք., արաբ., ղպտ. գրքեր: Այդ տարիներին այնտեղ հրատարակվել են նաև *«Հիւսիսափայլ»*, *«Ճոռաքաղ»* և *«Համբաւաբեր Ռուսիոյ»* պարբ-ները: 1863–66-ին տպարանը վարձակալել, իսկ 1866-ին գնել է Անատոլի Սամոնտովը: Նա լույս է ընծայել Ռ. Պատկանյանի «Բանաստեղծութիւնք» (1864), Ս. Շահազիզի «Լեւոնի վիշտը»

(1865) ժող-ները, Գ. Խալաթյանի «Մովսէս Խորենացին եւ հայոց հին վէպերը» (1871) երկը ևն: Այդ ժամանակից սկսած՝ կրճատվել է հայ. հրատ-ների թիվը, նախապատվությունը տրվել է վրացագիր գրակ-յան հրատ-յանը: Ճեմարանի վարչության որոշմամբ՝ հայ. առանձին հրատ-ներ լույս են տեսել մինչև 1917-ը: Լ. ճ. տ-ին կից գործել է ժա-մանակի արևելահայ խոշորագույն գրահրատարակչությունը:

Տես նաև ***Մոսկվայի հայկական տպագրություն:***

Գրկ. Յուցակ գրոց եւ գրչագրաց մատենադարանի Լազարեան ճեմարանի, Մ., 1888: Թադէոսեան Յ., *Պատմութիւն Լազարեան գոհի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Վնն., 1953:* Իշխանյան Ա., *Լազարեան ճեմարան, Ե., 1969:*

ԼԱՋՅԱՆ Գաբրիել Գուրգենի [1893, ք. Երզնկա (Էրզրումի նա-հանգ)–1959, Կահիրե], հրատարակիչ, խմբագիր, պատմաբան: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Կ. Պոլսի զինվոր. վարժարանը: 1923-ին Աթենքում հրատարակել է *«Նոր օր»* թերթը: 1938-ից աշխատել է Կա-հիրեում, հիմնադրել «Հուսաբեր» մշակութ. ընկերությունը, տպարան, հրատարակչություն, գրատուն:

Կահիրեում լույս են տեսել Լ-ի «Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնա-գրերու» (1942), «Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ, հայդուկներ)» (1945), «Հայաստան եւ Հայ դատը: Վավերագրեր» (1946), «Դէմքեր հայ ազատագրական շարժումէն» (1949), «Հայաստան եւ Հայ դատը: Հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ» (1957, 1991, Ե.) ուսումնասիրությունները:

ԼԱՋՅԱՆ Հովսեփ Կարապետի (Գերասիմի, 1888, Ախալ-ցխա–1943, անհատի պաշտամունքի զոհ), լրագրող, պետ., քաղ. գործիչ: 1913–17-ին աշխատել է Բեռլինում: Հոկտեմբերյան հեղափո-խությունից (1917) հետո տեղափոխվել է Բաքու, խմբագրել «Կավ-կազսկայա Կրասնայա արմիա» (ռուս.) թերթը:

1923–30-ին եղել է կոմկուսի Մոսկվայի կոմիտեի մամուլի բաժնի վարիչ, «Ռաբոչայա Մոսկվա» թերթի և «Ռաբոչե-կրեստյանսկի կորես-պոնդենտ» ամսագրի (երկուսն էլ՝ ռուս.) պատ. խմբագիր: 1934–37-ին՝ ՏԱՍՍ-ի թղթակից:

ԼԱԼԱՅԱՆ Երվանդ Ալեքսանդրի (13.3.1864, Ալեքսանդրա-պոլ–24.2.1931, Երևան), ազգագրագետ, բանահավաք, հնագետ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1885), որպես ուսուցիչ աշխատել Ախալցխայում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում: 1894-ին ավարտել է Ժնևի համալսարանը, ստացել գիտ. աստիճան: Որոշ ժամանակ աշխատել է Վիեննայի Մխիթարյան միաբանությա-նում: 1895–97-ին դասավանդել է Շուշիի թեմ. դպրոցում: 1896–1916-ին հրատարակել է ***«Ազգագրական հանդէս»***-ը, որտեղ շարունակա-բար տպագրվել են նաև նրա աշխատություններն ու հոդվածները («Վարանդա», «Սիսիան», «Ղափան», «Գանձակի գաւառ», «Գողթան գաւառ», «Վայոց ձոր», «Զանգէզուր», «Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք» ևն): 1900-ին Թիֆլիսում ստեղծել է Ազգագր. հրա-տարակչ., 1906-ին՝ Հայոց ազգագր. ընկերությունները: Վերջինիս թանգարանը նրա ջանքերով 1921-ին փոխադրվել է Երևան (ներկա-յում՝ ՀՊԹ): Լ. դարձել է թանգարանի առաջին վարիչը:

Լույս են տեսել Լ-ի «Զաւախքի բուրմունք» (1892, Թ., «Արոր» տպ.), «Հո-բոս», (1903, Թ., Կ. Մարտիրոսյանի տպ.), «Մոլլա-Նասրէդդին» (1904, Թ., «Հերմես» տպ.) ժող. առակների, «Պառաւաշունչ: Զավախքի հեքիաթներից» (1911, Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.) հեքիաթների ժող-ները, «Վաս-պուրական: Բանահիւսութիւն» (պր. Ա, 1912, Թ., Նվարդ Աղանյանի տպ., պր. Բ, 1914, Թ., «Էսպերանտո» տպ.), «Վասպուրական: Նշանաւոր վանքեր» (1912, Ն. Աղանյանի տպ.), «Ազգագրութիւն» (1913, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), «Տնայնագործութիւն» (պր. Ա, 1914, Թ., «Էսպերանտո» տպ.), «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» (պր. Ա, 1915, նույն տպ.), «Մարգարիտ-ներ հայ բանահիւսութեան» (հ. Ա–Գ, 1914–15, Թ.–Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Նիժի յեվ Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից» (1926, Ե., «Հերմես» տպ.) աշխատությունները:




Գաբրիել Լազյանի *«Յեղափոխական դէմքեր...» (1945, Կահիրե) գրքի կազմը*



Երվանդ Լալայան



Ե. Լալայանի *«Մարգարիտներ հայ բանահիւսութեան» (հ. Ա, 1914, Վաղ-պապ) գրքի կազմը*



Մուշեղ Լալայանի *«Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ» (2008, Ե., «Հայրենիք») գրքի կազմը*



Սամվել Լաճիկյան. *Վ. Բագրևանդցու «Ուրախ հանդես» (1986, Ե., «Լույս») գրքի կազմը*



Արթուր Լայստ

Լ. պեղումներ է արել Հայաստանի հնավայրերում, որոնց արդյունքներն ամփոփված են «Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում» (1931) գրքում: Հրատարակել է Վայոց ձորի, Վասպուրականի և Նոր Բայազետի հուշարձաններին նվիրված նկարազարդ ստվարածավալ 3 ալբոմ՝ հայ., ռուս. և ֆրանս. բացատրություններով: Հավաքել և հրատարակել է նաև արձանագրություններ: Նրա կազմած հայ. արձանագրությունների ժող-ն արժանացել է Լազարյան ճեմարանի Քանանյանի անվ. մրց-ի: Լ. հայ. է թարգմանել ֆրանսիացի (Շ. Լետուռնո, Ա. Պոզոդա, Գ. Կանեստրին) և ռուս (Ե. Զվյագինցև, Ա. Բեռնաշևսկի) ազգագրագետների աշխատություններից, Ժ. Սանդի և Ժ.-Բ. Մոլիերի ստեղծագործություններից:

Կազմել է «Ծիսական կարգերը հայոց մէջ ըստ Սպենսերի» (1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) գիրքը:

Երկ. Երկեր, հ. 1–3, Ե., 1983–2004:

Գրկ. **Մելիք-Փաշայան Կ.,** *Երվանդ Լալայան, «ՊՀՀ», 1964, № 3:* **Նազինյան Ա.,** *Երվանդ Լալայան: Բանահավաք, բանագետ, «ԼՀԳ», 1965, № 8:* **Меликсет-Беков Л.,** *Армянский этнограф-археолог Е. А. Лалаян, “Советская этнография”, 1936, № 4–5.*

ԼԱԼԱՅԱՆ Մուշեղ Արծրունու (ծ. 18.3.1967, Երևան), խմբագիր, հաս. գործիչ: Ավարտել է ԵԺՏԻ (1991): 1993–97-ին՝ ՀՀԿ խորհրդի անդամ, 2005-ից՝ ՀՀԿ փոխնախագահ, 1993–97-ին՝ ՀՀԿ «Հանրապետական» պաշտոնաթերթի և «Ազգայնական մատենաշարի», 2000–02-ին՝ *«Դարձ»* հանդեսի և «Ազգայնական միտք» մատենաշարի, 2003-ից՝ ՀՀԿ *«Հանրապետական»* ամսաթերթի խմբագիր:

Լույս են տեսել Լ-ի «Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ» (2008) ու «Ցեղակրոն և Տարոնական շարժումները» (2011) մենագրությունները: Կազմել ու խմբագրել է Հ. Ասատրյանի (2004) և Գ. Նժդեհի (2006) «Հատընտիր»-ները:

ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» մեդալ (2003), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2006):

ԼԱՃԻԿՅԱՆ Սամվել Երվանդի (ծ. 12.10.1953, Լենինական), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է Լենինականի Ս. Մերկուրովի անվ. նկարչ. դպրոցը (1968), ԵՊԻ (1976), ԵԳԹԻ (1982): 1991–95-ին եղել է ՀՆՄ Գյումրիի բաժանմունքի նախագահը: Համագործակցել է «Սովետական գրող», «Արևիկ» հրատարակչությունների հետ:

Նկարազարդել է Լ. Անդրեևի «Կծանը» (1985), Վ. Բագրևանդցու «Ուրախ հանդես» (1986), Վ. Կորժիկովի «Ինչ պատահեց սահմանի վրա» (1986), Գ. Կրժիժանովսկու «Շու-շու» (ռուս., 1987), Ռ. Ղարիբյանի «Լուսիկի կատուն» (1988), Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» (1988), Չ. Դիկենսի «Օլիվեր Թվիստի արկածները» (1988), Վրթ. Փափազյանի «Վանա կատու» (1989), Օ. Ամիրխանյանի «Ձնծաղիկն ու փուշը» (1990) և այլ գրքեր:

«ԼԱՅՆԱԾԱՒԱԼ ՏԷՐՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑՈՑՆ», քարտեզ (Ասիա, Եվրոպա, Աֆրիկա): Տպագրվել է 1787-ին Վենետիկում: Փորագրիչ՝ Եղիա *Էնփազյան*: Անվանացույցը՝ «Լայնածաւալ տէրութիւն Օսմանցոցն որ յասիայ, յեւրոպիայ եւ յափրիկայ: Փորագրեալ ի Վենետիկ ի Վանս սրբոյն Ղազարու 1787»: Չափերը՝ 22 x 20,5 սմ, անվանացույցը քարտեզի ներքևի ձախ անկյունում է, «մղոնաչափութիւնը» (մասշտաբ)՝ զարդափակ շրջանակի մեջ:

Քարտեզը զետեղված է Ղ. Ինճիճյանի աշխատասիրությամբ հրատարակված Ս. Ագոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (1804, Վնտ., մաս 2-րդ, Եւրոպա, հ. Ե) գրքում՝ որպես ներդիր (229-րդ էջում):

ԼԱՅՍ (Leist) Արթուր (1852–1927), գերմանացի գրականագետ, հայագետ, վրացագետ: 1884-ին այցելել է Թիֆլիս, գործուն մասնակցություն ունեցել հայ գրական-մշակութ. կյանքին: 1886-ին Լայպցիգում հայագետ, թարգմանիչ Ա. Հովհաննիսյանի հետ գերմ. հրատարակել է «Հայկական գրադարան» մատենաշարը, որտեղ զետեղել է Խ. Աբովյանի, Րաֆֆու, Գ. Սունդուկյանի, Պ. Պռոշյանի երկերից, նաև իր հոդվածները հայ բանաստեղծության, արձակի ու պարբ. մասուլի մասին: «Հայ բանաստեղծներ» (1898) ժող-ում Լ. ամփոփել է իր թարգմանությունները Սայաթ-Նովայի, Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի գործերից և հայկ. ժող. երգերի տեքստեր:

ԼԱՆԳ (Lang) Դեյվիդ Մարշալ (1924–1991), անգլիացի կովկասագետ, հայագետ: Լոնդոնի համալսարանի պրոֆ. (1968–ից): 1944–46-ին եղել է Անգլիայի փոխհյուպատոս Թավրիզում, կապեր է հաստատել տեղի հայկ. համայնքի հետ: 1966, 1968 և 1974-ին այցելել է Հայաստան: Գրել է «Հայաստան, քաղաքակրթության օրրան» (1970) և «Լեռների ժողովուրդները, հինավուրց Արարատը և Կովկասը» (1971, համահեղ.՝ Չ. Բըրնի) աշխատությունները՝ նվիրված հայոց պատմ. անցյալին ու ներկային:

Հայ. լույս է տեսել Լ-ի «Հայերը» (1992, համահեղ.՝ Ք. Ուոքըր, թարգմ. և առաջաբ.՝ Ք. Թորոսյանի) գիրքը:

Երկ. The Armenians: A People in Exile, L., 1981.

ԼԱՆԳԼՈՒԱ (Langlois) Վիկտոր [20.5.1829, ք. Դյեփ (Ֆրանսիա)–14.5.1869, Փարիզ], ֆրանսիացի պատմաբան, հայագետ, արևելագետ: Հայաստանի ու Կիլիկիայի հայկ. պետության պատմության, գրակ-յան, մշակույթի մասին Լ-ի հոդվածներն ու աշխատությունները հրատարակվել են Փարիզի, Ս. Պետերբուրգի, Վենետիկի արևելագիտ. հանդեսներում և առանձին գրքերով:

1857 և 1861-ին եղել է Մխիթարյան միաբանությունում. գրել է «Վենետիկի Ս. Ղազարի կղզու վանքը և Հայաստանի ու նրա գրականության համառոտ տեսությունը» (1863, տպագրվել է նաև անգլ., ռուս., լեհ., հունգ.) ուսումնասիրությունը:

Լույս են տեսել Լ-ի «Հայաստանի տեղը աշխարհի պատմության մեջ» (1856), «Վավերագրեր Փոքր Հայքի Լուսինյանների պատմության մեկնաբանման» (1859), «Պատմական և քննական ակնարկ Հայաստանի հասարակական-քաղաքական կառուցվածքի վերաբերյալ Ռուբինյան հարստության թագավորների օրոք» (1860), «Ուսումնասիրություն Մովսես Խորենացու Հայոց պատմության աղբյուրների մասին» [1858, հայ. հրտ.՝ «Մովսէս Խորենացի եւ նորա պատմութիւնը» (թարգմ.՝ Մ. Աղաբեկյանի, 1860, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ., 1863, Թ., ա. տպ., թարգմ.՝ Ս. Պալասանյանի)], «Թուրքիայի հայերը և Տավրոսի ջարդերը» (1863) պատմաբանասիր., «Ակնարկ Ռուբինյան դինաստիայի հայ թագավորների դրամների մասին» (1850), «Միջնադարյան Հայաստանի դրամագիտությունը» (1855), «Հայաստանի դրամագիտությունը անտիկ շրջանում» (1858), «Հայաստանի դրամագիտությունը» (1859) դրամագիտ. աշխատությունները: Թարգմանել (մի մասը՝ համառոտ) և 2 հատորով հրատարակել է Փավստոս Բուզանդի, Կորյունի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու և ուր. երկերը:

Երկ. Rapport sur l'exploration archéologique de la Cilicie et de la Petite-Arménie, P., 1854; Monnaies inedites de la Cilicie, P., 1854; Collections des historiens anciens et modernes de l'Arménie, t. 1, 2, P., 1867, 1869; Inscriptions Arméniennes de Tarsous, P., 1853-54, "Revue Archéologique", p. 744-746.

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.,** *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմտս (ԺԴ-ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* **Դոլուխանյան Ա.,** *Վիկտոր Լանգլուան հայագետ, Ե., 2004:*

«ԼԱՊՏԵՐ ԴԻՈԳԻՆԵԱՆ», երգիծ. հանդես: Լույս է տեսել 1883–88-ին Կ. Պոլսում՝ ընդհատումներով և անկանոն պարբերականությամբ: Արտոնատեր՝ Ի. Տերենց, խմբագիր՝ Արամ *Աշճյան:* Լուսաբանել է հայկ. վարժարանների և ուսուցիչների վիճակը, ծաղրել քահանայական դասի արատներն ու «բարեպաշտ» հավատացյալների պահվածքը: Տպագրել է նաև զվարճալի մանրապատումներ, ասուլիսներ, հանելուկներ, երկխոսություններ, խրատ. ասացվածքներ: Ունեցել է հայատառ թուրք. բաժին:

ԼԱՐԵՆՑ (Քիրիշճյան) Լևոն (1882, Կ. Պոլիս–1915, Մեծ եղեռնի զոհ), բանաստեղծ, թարգմանիչ: 1890-ական թթ-ից արձակ և չափածո ստեղծագործություններ է տպագրել պոլսահայ մամուլում: Կարճ ժամանակ աշխատել է «Բիւզանդիոն» օրաթերթում, 1905–06 (Բոստոն) և 1908–11-ին (Կ. Պոլիս) խմբագրել է *«Ձայն հայրենեաց»* թերթը:

Ֆրանս-ից թարգմանել է «Քուրան (Ղուրան) հանդերձ Մուհամմէտի կենսագրութեամբ» (հ. 1–2, 1911, ԿՊ, Հակոբ Ասատուրյան և որդ. տպ.) գիրքը, Հ. Լինչի «Հայաստան: Ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ» (հ. 1, 1913, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ., հ.2, 1914, ԿՊ, Հ. Ասատուրյան և որդ. տպ.), Թ.



Դեյվիդ Լանգի *«Հայերը» (1992, համահեղ.՝ Ք. Ուոքըր, Ե., «ՀՀՀ») գրքի կազմը*



Վիկտոր Լանգլուա



Վ. Լանգլուայի *«Տարսոնի հայերեն արձանագրությունները» (ֆրանս., 1853–54, "Revue Archéologique", p. 744-746) հոդվածի 3 էջ*



«Լ’ Արմենի», *1889–1906, Լոնդոն, Փարիզ*



«Լեզու և լեզվաբանություն», *2003-ից, Երևան (№ 1, 2008)*



Ֆ. Բիշոֆի «Ուսումնասիրութիւնք **լեհահայոց դատաստանագրոցն»** *(1890, Վնն.) գրքի տիտղոսաթերթը*

Ադոլֆի «Պատմութիւն ֆրանսական յեղափոխութեան» (թարգմ.՝ Ե. Անդրեասյանի, հ. 1–5, ա. թ., ԿՊ, «Գուտենբերգ» տպ.) աշխատությունները: Լույս է տեսել Լ–ի «Դրախտի երգեր» (1908, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) բանաստեղծությունների ժող–ը:

«Լ’ԱՐՄԵՆԻ» («L’Arménie»), քաղ. և գրական ամսաթերթ: Լույս է տեսել 1889–98–ին Լոնդոնում, 1898–1906–ին՝ Փարիզում՝ ֆրանս. (1889–ին՝ նաև անգլ.): Խմբագիր–հրատարակիչ՝ Մինաս ***Չերազ***: Տպագրել է նյութեր հայոց պատմության, հայ գրակ–յան, մշակույթի վերաբերյալ, լուսաբանել է Հայկ. հարցը, հանդես եկել Օսմ. կայսրությունում հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների դեմ: Աշխատակցել են նաև օտարազգի հեղինակներ: Արժեքավոր են Օ. Բենարի՝ հայ պոեզիային նվիրված «Առ հայ բանաստեղծները» (1899) ուսումնասիրությունը, «Ֆրանսիան և Եվրոպան առ Հայաստան» (1901) հոդվածը, Դ’ Ավելինի «Հայաստանի ժողովրդական գրականությունը» (1904) և այլ գործեր: Տպագրել է նաև Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Պ. Դուրյանի և հայ այլ գրողների ստեղծագործություններից:

ԼԱՈՒԵՐ (Lauer) Մաքսիմիլիան Թեոդոր Ալբերտ [11.1.1841, Շիլլսինգեն (Գերմանիա)–1923], գերմանացի արևելագետ, հայագետ, աստվածաբան, թարգմանիչ: Սովորել է Գյոթինգենի համալսարանում: 1869–ին Վիեննայում լույս է տեսել Լ–ի «Դասական հայերենի քերականություն» դասագիրքը, որը 1883–ին Փարիզում հրատարակվել է ֆրանս.՝ Օ. Կարիերի թարգմանությամբ: Լ. գերմ. է թարգմանել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկը (1869, Ռեգենսբուրգ), որի Բ գիրքն ամբողջությամբ զետեղել է իր կազմած «Հայկական քրեստոմատիա» (1881, Վնն., Մխիթարյան տպ.) ձեռնարկում՝ ծանոթագրություններով և հայ–ի քերակ–յան առանձնահատկությունների վերաբերյալ ծավալուն ուսումնասիրությամբ:

Գրկ. Հովհաննիսյան Պ., Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:

«ԼԵԶՈՒ», ամսօրյա ուսումնաթերթ: Հայ. առաջին լեզվաբ. պարբ–ը: Լույս է տեսել 1887–88–ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Սերովբե ***Տերվիշյան***: Տպագրել է պատմագր., լեզվաբ., մանկավարժ. հոդվածներ, նաև կրոն. թեմաներով նյութեր:

«ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ», գիտ. կիսամյա հանդես: Հիմնադիր՝ «Տաթև» գիտակրթական համալիր: Լույս է տեսնում 2003–ից Երևանում (2009–14–ին չի տպագրվել): Գլխ. խմբագիր՝ Վազգեն Համբարձումյան: Հայ., ռուս., անգլ. և այլ լեզուներով հոդվածներում վերլուծվում են տարբեր լեզուների և լեզվաբանության հիմնահարցեր:

ԼԵՀԱՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, **Լվովյան դատաստանագիրք**, Լեհաստանի և Ուկրաինայի հայկ. գաղութներում օգտագործված օրենքների ժող.: Կազմվել է ***Մխիթար Գոշի*** Դատաստանագրքի հիման վրա՝ տեղ. պայմաններին համապատասխան փոփոխություններով: Հաստատել է Լեհաստանի Սեյմը (1519): 1528–ին թարգմանվել է հայատառ ղփչաղ. ու լեհ.: Օգտագործվել է դատ. ինքնավարությունը պահպանած լեհահայ բոլոր գաղթավայրերում (Զամոստիեում՝ մինչև 1730–ը, Լվովում՝ մինչև 1784–ը, Կամենեց–Պոդոլսկում՝ մինչև 1787–ը, ևն): Բաղկացած է 10 գլխից (124 հոդված):

Լ. դ–ի լատ. բնագիրը պահվում է Լվովում (Ուկրաինայի պետ. կենտր. արխիվ): Լ. դ–ի գիտ. ուսումնասիրություններն սկսվել են XIX դ–ի կեսից՝ Ֆ. Բիշոֆ («Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոցն», թարգմ.՝ Գ. Գալեմքյարյանի, 1890, Վնն., Մխիթարյան տպ.), Լ. Մատվիյովսկի և ուր.: Լավագույնները Օ. Բալցերինի (1906, լատ. և լեհ.), Տ. Լևիցկու և Ռ. Կոնովայինի (1957, հայատառ ղփչաղ.) հրատ–ներն են:

Գրկ. Кульчицкий В., *Армянский «Судебник» Гоша и его применение во Львове, в кн. Исторические связи и дружба украинского и армянского народов, Киев, 1965.*

«ԼԵՆԻՆՅԱՆ ԴՐՈՇ», զինվոր. երկօրյա թերթ: Անդրկովկասյան զինվոր. օկրուգի «Լենինսկոյե զնամյա» (ռուս.) թերթի հայ. տարբերակը: Լույս է տեսել 1942–56-ին Թբիլիսիում (1942–45-ին՝ «Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի մարտիկ»): Խմբագիրներ՝ Արամայիս Մնացականյան, Վարդան Ղազանչյան, Սուրեն Գրիգորյան, Վարդան Վարդանյան: Լուսաբանել է պատերազմի ընթացքը Կովկասյան ռազմաճակատում, հայ ժողովրդի հերոս. անցյալի օրինակով ոգևորել է զինվորներին, ներկայացրել հայկ. ռազմարվ-ի պատմությունը: Թերթը մեծ ավանդ ունի հայ. ռազմ. տերմինների մշակման և արմատավորման գործում:

«ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ», տես-քաղ. ամսագիր: ՀԿԿ ԿԿ պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1957–90-ին (1990-ին՝ «Հայացք») Երևանում: Խմբագիրներ՝ Ադո *Ադոյան*, Արամ *Սիմոնյան*: Լուսաբանել է ԽՄԿԿ և ՀԿԿ համագումարների նյութերը, կենտկոմների որոշումները, անդրադարձել հանրապետ. կարևորության խնդիրներին, տպագրել հանրապետ. ու շրջ. պարբ. մամուլի տեսությունները ևն: Հաջորդել է «Կոմունիստ» (1922–23, 1925–28, 1935–36), «Լենինյան ուղի» (1928–33), «Կուսաշխատող» (1936–40), «Պարտաշխատող» (1940–41), «Պարտիական կյանք» (1947–56) պարբ-ներին: Ունեցել է «Մարքսիզմ-լենինիզմի հիմունքների դպրոց» հավելվածը:

ԽՍՀՄ Ժողովուրդների բարեկամության շքանշան (1983):



«Լենինյան ուղիով», *1957–90, Երևան (№ 2, 1989)*

ԼԵՈ (Բաբախանյան Առաքել Գրիգորի, 14.4.1860, Շուշի–14.11.1932, Երևան), պատմաբան, գրող, հրապարակախոս, մատենագետ: Պրոֆ. (1925), ՀԽՍՀ գիտ-ների և արվ-ի ինստ-ի (1930-ից՝ ՀԽՍՀ գիտ-ներ ինստ.) իսկական անդամ (1925): Ավարտել է Շուշիի քաղաքային վերակազմյալ դպրոցը (1878): Սկսել է գրել 1877-ից, ավելի քան կես դար աշխատակցել է «Աշակ», «Արձագանք», «Մուրճ», «Հանդէս ամսօրեայ», «Տարազ» և այլ պարբ-ների: 1881–93-ին Շուշիում և Բաքվում աշխատել է որպես նոտարի գրագիր, հեռագրիչ, «Արոր» տպարանի կառավարիչ: 1895–1906-ին՝ ***«Աշակ»*** թերթի պատ. քարտուղար, 1909-ից՝ ***«Հորիզոն»*** օրաթերթի խմբագիր-հրատարակիչ: 1906–07-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա տեղափոխվել է Թիֆլիս. զբաղվել է գիտ. աշխատանքով: 1924-ին հաստատվել է Երևանում և ցկյանս դասավանդել ԵՊՀ-ում:



Լեո

Լույս են տեսել Լ-ի «Յովսէփ կաթողիկոս Արղութեան» (1902, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Ստեփանոս Նազարեանց» (հ. 1–2, 1902, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), «Գրիգոր Արծրունի» (հ. 1–3. հ. 1–2, 1902–03, նույն տպ., հ. 3, 1905, Թ., «Հերմես» տպ.), «Ս. Մեսրոպ» (1904, Թ., նույն տպ., 1962), «Հայոց հարցը» (1906, նույն տպ.), «Վանի թագաւորութիւնը» (1915, Թ., Նվարդ Աղանյանի տպ., 1950, Ֆրեզնո, Մ. Գասպարյանի տպ.), «Հայոց հարցի վաւերագրերը» (1915, Թ., Ն. Աղանյանի տպ.), «Հայոց պատմութիւն» (հ. 1, 1917, Թ., «Սլովո» տպ., հ. 2–3, 1946–47, որտեղ հանգամանորեն շարադրված է հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XVIII դ-ի վերջը՝ բացառությամբ XII–XV դդ-ի), «Անի» (հրտ.՝ 1946, 1963) պատմագիտ. աշխատությունները, «Մնապաշտութեան քուրմ» (1884), «Պանդուխտը» (1888, առաջին անգամ ստորագրել է Լ. կեղծանունով), «Վահան Սամիկոնեան» (1888), «Կորածներ» (1889), «Արնագին» (1890), «Վերջին վէրքեր» (1891), «Լեռնցիներ» (1896), «Մի բուռը մոխիր» (1904) պատմվածքները, «Մէլիքի աղջիկը» (1898, Թ., Վրաց հրատարակչ. ընկ. տպ., 1933, 1938, Բ., «Զարթոնքի» տպ.) վեպը, «Վարդանանք» (1916, Թ., «Սլովո» տպ.) դրաման, «Ուխտաւորի յիշատակարանը» (1885, Շուշի, Միրզաջան Սահտեսի Հակոբյանի տպ.), «Իմ յիշատակարանը» (1890, Շուշի, Հայոց հոգևոր տեսչության տպ.) հուշագրությունները, «Ռուսահայոց գրականութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը» (1904, Վնտ., Սբ Ղազարի տպ., 1928, նույն տպ.), «Հայ հայրենիքը» (1916, Թ., Ն. Աղանյանի տպ.) ուսումնասիրությունները:



Լեոյի *«Երկերի ժողովածու»-ի (հ. 5, 1986, Ե., «Հայաստան») փիփղոսաթերթը*


Կազմել է «Երեւնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881–1911)» (1911, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.) ժող-ը: Լ-ի կարևոր գործերից են՝ «Հայկական տպագրութիւն» (հ. 1–2, 1901, Թ., Վրաց հրատա-



Լեռ Կամսար



Լեռ Կամսարի *«Խաղք ու խայտառակ աշխարհ» (2008, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Գարեգին Լևոնյան

րակչ. ընկ. տպ., 2-րդ լրց. հրտ.՝ 1904, Թ., «Հերմես» տպ.), «Հայ գրքի տօնը» (Հայ տպագրության 400-ամյա հոբելյան. հանձնաժողովի հրտ., Թ., 1912, Ն. Աղանյանի տպ.) ևն:

Երկ. Երկերի ժող., հ. 1–9, Ե., 1966–89: Անցյալից, Թ., 1925, Ե., 2009: Գեղարվեստական երկեր, Ե., 1959: Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Ե., 1994: Հայ կղերական դիվանագիտությունը, Ե., 2002:

Գրկ. Բաբայեան Լ., *Լէօ (Առաքել Բաբախանեան): Կենսագրական ակնարկ..., Թ., 1908:* Տէր-Պողոսեան Գ., *Լէօն իբրեւ պատմաբան, Բաքու, 1912:* Երեմեան Ս., *Ազգային դէմքեր. գրագէտ հայեր, Վնտ., 1914:* Օհանյան Ա., *Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը, Ե., 1969:* Սարուխանյան Ն., *Լեոն և հայկական հարցը, Ե., 1998:*

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ [Թովմասյան (իսկական ազգանունը՝ Թովմաղյան) Արամ Թովմասի, 1888, Վան–22.11.1965, Երևան], գրող, երգիծաբան: Սովորել է Վանի Ամերիկյան վարժարանում: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1909): Գրել է ֆելիետոններ, պատմվածքներ, մանրապատումներ, թևավոր խոսքեր: Առաջին ստեղծագործությունները տպագրվել են Վանի «Աշխատանք» թերթում:

Լույս են տեսել Լ. Կ-ի «Անվավեր մեռելներ» (1924), «Ազգային այբբենարան» (1926), «Վրիպած արցունքներ» (1934), «Գրաբար մարդիկ» (1959), «Մարդը տանու շորերով» (1965), «Տպուած եւ անտիպ էջեր» (1994), «Կարմիր օրեր» (2000), «Մահապուրծ օրագիր» (2008), «Խաղք ու խայտառակ աշխարհ» (2008), «Սոցիալիզմի Սահարա» (2009), «Բանտիս օրագիրը» (2010), «Թատերախաղեր» (2013), «Հալոցք» (2013) ժող-ները, «Միհատոր յակը» (1980), «Երկերը» (1988):

1935-ին անհիմն բռնադատվել է, աքսորվել Վորկուտա (Ռուսաստան, մինչև 1939), 1940–52-ին՝ Վարդենիս, 1955-ին արդարացվել է:

ԼԵՎՈՆՅԱՆ Գարեգին Զիվանու [24.10(5.11).1872, Ալեքսանդրապոլ–28.9.1947, Երևան], մատենագետ, խմբագիր, գրականագետ, արվեստաբան: Պրոֆ.: Արվ. վաստ. գործիչ (1932): ***Զիվանու*** որդին: Սովորել է Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ում (1898–1901), Լայպցիգում (1906): 1901–06-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1910–11-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1926–27-ին՝ Երևանի գեղարվ-ի տեխնիկումում, այնուհետև՝ ԵԳԹԻ-ում և ԵՊՀ-ում: 1909-ին Թիֆլիսում ***Կոմիտասի*** հետ հիմնադրել և խմբագրել է ***«Գեղարուեստ»*** հանդեսը: Աշխատակցել է «Մշակ», «Նոր-Դար», «Հանդէս գրական եւ պատմական», «Ազգագրական հանդէս», «Անահիտ» և այլ պարբ-ների:

Հայ պարբ. մամուլին և տպագրությանն են վերաբերում Լ-ի «Հայոց պարբերական մամուլը: Պատմական տեսութիւն սկզբից մինչեւ մեր օրերը (1794–1934)» (1895, Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ., «Սահակ Մեսրոպյան» մրց.՝ 1895, լրց., բրվիխ. հրտ.՝ 1934), «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (1946, 1958, 2012) արժեքավոր աշխատությունները:

Լույս են տեսել նաև Լ-ի «Հայ աշուղներ» (1892, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), «Պաղտասար Դպիր» (1927), «Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը» (1941), «Թատրոնը հին Հայաստանում» (1941), «Աշուղները և նրանց արվեստը» (1944), «Էջեր հայ երաժշտության պատմությունից» (1945) գիտաբանասիր., արվեստագիտ. աշխատությունները, «Գծագրութիւն եւ նկարչութիւն» (մաս 1–2, 1904, Թ., «Կուլտուրա» տպ., 1905, Թ., «Հերմես» տպ.), «Հայկական վայելչագրութիւն եւ գեղագրութիւն» (Թ., 1908, ա. տպ.) դասագրքերը: Գիտ. հրատ-յան է պատրաստել Զիվանու (1912, Թ., «Հերմես» տպ., 1936), Սայաթ-Նովայի (1931, 1935), Շերամի (1948) երգերը: Արժեքավոր են նաև Լ-ի «Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ» («Խորհրդային արվեստ», 1938, № 1, 2, 4), «Հայ կուլտուրան «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման ժամանակաշրջանում (VIII–XII դար)» («Սասունցի Դավիթ», հոբելյանական ժող., 1939) ուսումնասիրությունները: Հեղինակ է նաև «Բառարան հայ գրական ծածկանունների», «Հայ կերպարվեստագետներ. միջին դարերից մինչև մեր ժամանակը» (կենսագր.) բառարանների, «Հայ արվեստի պատմության բիբլիոգրաֆիա» մատենագիտության (բոլորը՝ անտիպ): Հրատարակվել են նաև Լ-ի «Հուշեր» (1959) ժող-ը, «Երկերը» (1963):

Լ. թարգմանել է Լ. Տոլստոյի ստեղծագործություններից:

Հանդես է եկել Գ. Լ., Գող, Գրասեր, Ճոինչ և այլ ծածկանուններով:

Գրկ. Գալստյան Թ., *Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Ե., 1979:*

ԼԵՎՈՆՅԱՆ Սողոմոն (մոտ 1620–մոտ 1680), հրատարակիչ, տպարանատեր: 1662-ին *Ոսկան Երևանցու* հետ Էջմիածնից մեկնել է Ամստերդամ, ապա՝ Լիվոռնո, Մարսել և հմտացել տպագրության գործում: Ոսկան Երևանցու մահից հետո ժառանգել է նրա տպարանը: 1669-ին ստացել է տպագրությունը շարունակելու իրավունք՝ «կաթոլիկ եկեղեցուն հակառակ գրքեր չտպագրելու պայմանով»: Լ. տպարանը տեղափոխել է Մարսել և այնտեղ շարունակել գործունեությունը: 1674–77-ին հավատարմատար Նասիր Գրիգորյանի, Մատթեոս Վանանդեցու հետ ավարտին է հասցրել Ոսկան Երևանցու «Գիրք ժամակարգութեան, որ կոչի Ատենի» ժող-ի տպագրությունը, հրատարակել է Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Համառօտութիւն ճարտասանականի արհեստի» (1674) աշխատությունը, «Գիրք այբուբենից...»-ը, աշխարհաբար առաջին տպագիր գիրքը՝ *«Արհեստ համարողութեան»* թվաբանության ձեռնարկը, «Կանոնք զգուշութեամբ պահելոյ զանձն» առողջապահ. խրատների ժող-ը, «Գիրք վայելուչ եւ հարկաւոր հանուրց» օրացույցը (չորսն էլ՝ 1675), «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց», «Պարտէզ հոգեւոր» (երկուսն էլ՝ 1683, տպագր.՝ Մատթեոս Վանանդեցու) գրքերը, Այբբենարան, Մաշտոց, Սաղմոսարան ևն:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, էջ 156–157, Ե., 2012 (նմանահանություն): Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012: Լեո, Երկերի ժող., հ. 3, գիրք 1, Ե., 1969:



Գ. Լևոնյանի *«Հայ գիրքը և տպագրության արվեստը» (2012, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

ԼԵՓՍԻՈՒՍ (Lepsius) Յոհաննես (1858–1926), գերմանացի հոգևորական, հաս. գործիչ, արևելագետ: Երկար տարիներ փաստեր է հավաքել Օսմ. կայսրության մեջ հայերի ծանր կացության վերաբերյալ, որոնք հրատարակել է «Հայաստանը և Եվրոպան» (1896) աշխատության մեջ: 1914–26-ին՝ Գերմանա-հայկ. ընկերության նախագահ: Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) սկզբին փորձել է ազդել երիտթուրք. ղեկավարների վրա՝ վերջ տալու հայերի կոտորածներին, բայց մերժվել է: 1916-ին տպագրել է «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում» (հայ. հրտ.՝ 1919, ԿՊ, Հակոր Ասատուրյան և որդ. տպ.), 1919-ին՝ «Գերմանիան և Հայաստանը. 1914–1918 թթ.» աշխատությունները, որտեղ դատապարտել է թուրք. կառավարության հայաջինջ քաղաքականությունն ու արմ. տերությունների, հատկապես՝ կայզեր. Գերմանիայի մեղսակցությունն այդ ոճրագործությանը: 1921-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ հանդես է եկել նրա պաշտպանությամբ:



Յոհաննես Լեփսիուս

Հայ. հրատարակվել են Լ.-ի «Հայ ժողովրդի ջարդերը» (2003), «Գաղտնի տեղեկագիր: Հայ ժողովրդի ջարդերը» (2003), «Գերմանիան և Հայաստանը. 1914–1918» («Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու»-ի մեջ, հայ.՝ 2006) աշխատությունները:

Գրկ. Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս: Հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Ե., 2001:

«ԼԻԲԱՆԱՆ», հաս-քաղ. և գրական շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա, եռօրյա թերթ: Լույս է տեսել 1924–35-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Միհրան Նաճարյան, Միհրան Սեֆերյան, Հարություն Պալյան, Բագրատ Սյունի, Սամվել Թումաճանյան, Միհրան Աղազարյան: Սկզբում՝ հայատառ թուրք.: Ունեցել է հնչակյան ուղղվածություն: Լուսաբանել է տեղի և սփյուռքահայ այլ համայնքների առօրյան, անդրադարձել է Խորհրդ. Հայաստանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, հայրենադարձության կոչ արել: Տպագրել է պատմությանն ու մանկավարժությանը վերաբերող հոդվածներ, գրական ստեղծագործություններ: «Լ.»-ի շարունակությունն է «Հորիզոն» շաբաթաթերթը (1935–39, խմբագիրներ՝ Վահան Տոնապետյան, Մ. Նաճարյան, տպագրել է նաև ֆրանս. նյութեր):




Յ. Լեփսիուսի *«Հայ ժողովրդի ջարդերը» (2003, Ե., «Անահիտ») գրքի կազմը*



Ս. Զորյանի «Երկերի ժողովածու»-ի (1948, «Զարթօնքի» տպ.) կազմը



«Համազգային»-ի տարեգիրք (1953), շապիկը



«Պատմութիւն Մալաթիոյ հայոց» (1961, «Սևան») գրքի կազմը

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութը Սփյուռքի հրատարակչ. կարևորագույն կենտրոններից է: Լիբանանում առաջին հայ. գիրքը՝ «Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն»-ը, տպագրվել է 1894-ին «Հայ կաթողիկե» տպարանում: Հայ. գրքերի հետագա տպագրության գործում կարևոր ավանդ ունեն ***Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության***, **«Վահե Սեթյան»**, **«Սևան»**, **«Տոնիկյան»**, **«Շիրակ»** տպարանները, ինչպես նաև **«Էտվան»** (Վ. Թեքեյան, «Հատընտիր», 1954, «Հայերգութիւն եւ հատընտիր քերթուածներ», 1958, Ինտրա, «Ներաշխարհ», 1955, Վ. Թոթովենց, «Կեանքը հին հոովմէական ճանապարհի վրայ», 1956, Վ. Շուշանյան, «Սիրոյ եւ արկածի տղաք», 1957, Խ. Դաշտենց, «Ռանչպարներ», 1977, ևն), **«Ատլաս»** (Գ. Ահարոնյան, «Մեծ երազի ճամբուն վրայ», 1964, «Խոհեր յինանմեակի աւարտին», 1966, Կ. Սասունի, «Կեանքի յորձանուտին մէջ», 1962, «Պատմութիւն արեւմտահայ արդի գրականութեան», 1963, «Սարերու Ասլանը», 1966, Գ. Ադդարյան, «Մատեան ցաւի եւ հատուցման», 1965, Ա. Դարյան, «Մեր հացը», 1965, Մ. Գույումջյան, «Ընդարձակ բառարան հայերէնէ–անգլերէն», 1970, Հ. Կարապենց, «Անծանօթ հոգիներ», 1970, «Կարթագէնի դուստրը», 1972, Լ.–Զ. Սյուրմելյան, «Լոյս զուարթ...», 1972, Ա. Անդրեասյան, «Երկար գիշերին մէջէն», 1974, ևն), **«Մշակ»** (Ա. Ալթունյան, «Աղբատին պատիւը: Իրական վէպ պոլսահայ կեանքէն», 1955, Գ. Շահինյան, «Համաստեղ: Մենագրութիւն», 1961, «Հատընտիր. Վերլուծական յօդուածներ», 1962, Ս. Վրացյան, «Հին թղթեր նոր պատմութեան համար», 1962, Ժ. Թազպազյան, «Բառարան արաբերէնէ հայերէն», 1964, Հ. Քաջազնունի, «Յետ մահու: Պատմուածքներ, յուշեր, յօդուածներ, նամակներ», 1965, Մ. Հովհաննեսյան, «Բառարան հայերէն–ֆրանսերէն», 1971, ևն), **«Հայ ճեմարան»** (Լ. Շանթ, «Երկեր», հ. Ա–Է, 1946–52, ևն), **«Հայ կաթողիկե»** (Եղիա Քասունի, «Հայ մշակոյթի պատմութիւնը», 1954, Հ. Ոսկյան, «Հայոց պատմութիւն», 1959, ևն), **«Ալթափրես»** (Հ. Օշական, «Վկայութիւն մը», 1981, «Մինչեւ ուր...», 1983, «Նամականի», 1983, «Երկնքի ճամբով», 1985, «Սիւլէյման Էֆէնտի», 1985, Գ. Աճեմյան, «Ապագայի հետքերով», 1982, «Շահնուրեան ընթերցումներ», ժող., 1983, Ժ. Դանիելյան, «Հայ նոր պարբերական մամուլը. 1967–81», 1984, Ա. Նաճարյան, «Մատեան հոգեդարձի», 1985, Ա. Ծառուկյան, «Մեծերը եւ... միւսները», 1992, ևն), **«Սիփան»** (Հ. Նագգաշյան, «Բնութեան կանչը», 1994, «Խճանկար կէս դարու հրապարակագրութեան. 1957–2009», 2009, Գ. Շենյան, «Մայթերու վրայ», 1994, Ա. Փոլատյան, «Հերկ եւ բերք», 2002, «Շահան Շահնուրի ծննդեան 100-ամեակ. 1903–2003», 2003, Վ. Թեքեյան, «Գաղտնի պարտէզ», հատընտիր, 2003, ևն), **«Ոսկեղար»** (Արմեն Գարո, «Ապրուած օրեր», 2005, ևն), **«Ազդակի»** (Աբգարիոս Իսկենդեր, «Սարսափներու գիրքը», 1933, Ծերենց, «Թորոս Լեւոնի», 1935, «Թէոդորոս Ռշտունի», 1936, Ֆ. Վերֆել, «Հայկական հերոսապատում. Մուսա լեռան քառասուն օրերը...», թարգմ.՝ Ե. Անդրեասյանի, 1949, Զ. Եսայան, «Աւերակներուն մէջ», 1952, Ս. Գաբամաճյան, «Բառարան հայերէն լեզուի», 1953, Խ. Աբովյան, «Վէրք Հայաստանի», 1954, Մ. Նուպարյան, «Բառարան ֆրանսերէնէ հայերէն», 1955, Մ. Գոչունյան, «Կարապետ», 1956, ևն), **«Անի»** (Ա. Անդրեասյան, «Վերջին կայանը», 1956, Հ. Օշական, «Խոնարհները», 1958, ևն), **«Հույս»** (Ն. Աղբալյան, «Բանասէրի յուշագիրը», Թ–ԻԲ մաս, 1938–42, Ա. Զամինյան, «Պատմութիւն հայոց հին գրականութեան», 1941, Ե. Չարենց, «Դանթէական առասպել», 1945, ևն), **«Լա Ֆոտո Փրես»** (Ն. Աղբալյան, «Գրական քննադատական երկեր», 1959, Բ. Պաստեռնակ, «Տոքթոր Ժիւակոյ», թարգմ.՝ Ե. Մանուկյանի, 1959, ևն), **«Արարատի»** (Շ. Նաթալի, «Երեք դաշնագրեր...», 1957, Խ. Դաշտենց, «Խոդեդան», 1958, Լ. Նորաշխարհյան, «Զէյթունի

վերջին ողբերգութիւնը», 1960, Ժ. Նայիրի, «Հայրենի կտուրի տակ», 1962, «Հայուն արեւմուտը», 1969, Ս. Բյուրատ, «Որդեսպան ծնողքը», 1968, ևն), «**Արազ**» (Ն. Աղբալյան, «Բանասէրի յուշագիրը», Ա–Ը մաս, 1937–38, Ժ. Դանիելյան, «Ռամկավար ազատական մամուլը», 1982, Մ. Ադամյան, «Տաք մոխիր», 1984, «Անողոք ճակատագիր», 1986, ևն), «**Զարթօնքի**» (Լեո, «Մելիքի աղջիկը», 1938, Շ. Շահնուր, «Նահանջը առանց երգի», 1948, Ա. Արփիարյան, «Հատընտիր», 1952, Ս. Բյուրատ, «Ազատութեան համար», 1956, Օ. Չիֆթե-Սարաֆ, «Սատանայի մը արկածները», 1958, Զ. Դարյան, «Սայաթ Նովա», 1960, Գ. Մահարի, «Լռութեան ձայնը», 1963, «Այրուող այգեստաններ», 1967, Յ. Լեփսիուս, «Հայաստանի ջարդերը», թարգմ.՝ Մ. Շամտանճյանի, 1965, Հ. Մորգենթաու, «Դեսպան Մր. Մորկէնթաուի յիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», թարգմ.՝ Ե. Արմենի, 1965, Ս. Ալաճաճյան, «Եղէգները չխոնարհուեցին», գիրք Ա–Բ, 1968, ևն), «**Էրեբունի**» (Ա. Ահարոնյան, «Ազատութեան ճանապարհին», 1984, Ա. Արփիարյան, «Ոսկի ապրջան», 1988, ևն), «**Հայ-Տիպ Քոմփյուգրաֆ-Թեքնոփրես**» (Թ. Թորանյան, «Թեւաւոր իմ ձի», 1986, «Սուրիահայութիւնը եւ... Հայաստանի երկրաշարժը», 1990, «Բոլորն ալ մարդեր են», 1993, Վահե-Վահյան, «Հատընտիր», 1986, «Ղօղանջ ու մրմունջ վերջալուսային», 1990, Ա. Դարյան, «Երկու եղանակ», 1991, «Զաւակի մը համար», 1995, Գ. Ադդարյան, «Բանաստեղծութիւններ, արձակ էջեր», հ. Ա–Բ, 1988–91, ևն), «**Փավո Ֆոտոգրավյուր**» (Երուխան, «Պատմուածքներ», 1993, ևն) և այլ տպարաններ ու հրատարակչատներ:

Լիբանանյան տպարաններում և հրատարակչատներում լույս են ընծայվել հայ դաս. և խորհրդահայ գրեթե բոլոր հեղինակների (մի մասը՝ առաջին անգամ) ստեղծագործություններից, թարգմանություններ՝ համաշխ. դասականներից: Տպագրում են նաև դպրոց. դասագրքեր, գրուցարաններ, օրացույցներ, երգարաններ, հայ. պարբ-ներ ևն:


1894–2012-ին Լիբանանում գործել են շուրջ 100 հայկ. տպարաններ, լույս ընծայել 6500 անուն գիրք՝ ավելի քան 3,5 մլն տպաքանակով:

Լիբանանում հայկ. առաջին թերթը հրատարակել են սիրիական ավետարան. կոլեջի (1920-ից՝ Բեյրութի ամերիկյան համալսարան) հայ ուսանողները 1913–14-ին՝ 6 համար (ձեռագիր, խմբագիրներ՝ Սուրեն Ազիրյան, Հարություն Դարբինյան և Երվանդ Խաթանասյան). պահվել է համալսարանի գրադարանի ընթերցասրահում: Ենթադրվում է, որ այս պարբ-ի համարները և հեղ. մտքեր բովանդակող հայ. այլ հրատ-ներ ոչնչացվել են Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին՝ համալսարանի տնօրինության հրամանով: 1918-ին Զահլե քաղաքում ապաստանած օսմ. բանակի նախկին սպա Հակոբ ***Մարթայանը*** (Դիլաչար) հրատարակել է խմորատիպ «Լոյս» պարբ-ի մի քանի համար: 1920-ական թթ-ի 1-ին կեսին Ջիբեյլի հայկ. որբանոցում ստեղծվել են «Հոսանք» և «Տուն» հայ. խմորատիպ պարբ-ները:

Լիբանանում հայկ. համայնքի ստվարացմանը զուգընթաց՝ հայ. պարբ-ներ են հրատարակել նաև հայ քաղ. կուս-ները, հայրենակց., մշակութ., կրոն., մարզ., երիտասարդ. և պատանեկան կազմակերպությունները, կրթ. հաստատությունները, անհատ անձինք:

Լիբանանահայ մամուլը հիմնականում տպագրվել է Բեյրութում, որտեղ ցայսօր լույս են տեսել 500-ից ավելի պարբ-ներ: Առավել աչքի ընկած և համեմատաբար տևական հրատարակված պարբ-ներից են ***«Լիբանան»*** (1924–35) եռօրյա թերթը, ***«Երիտասարդ հայուհի»*** (1932–34, 1947–68) ամսագիրը, ***«Ամէնուն նոր տարեցոյցը»*** (1937–42) տարեգիրքը, ***«Առաւօտ»*** (1938–47) օրաթերթը, Լիբանանի համայնավար. կուս-յան հայկ. հատվածի ***«Ժողովուրդի ձայն»*** (1938–49) պաշտոնաթերթը, ***«Հայ գիր»*** (1938–44) հանդեսը, ***«Ծիածան»*** (1939–49), ***«Նայիրի»*** (1941–1983,

Լիբանանի հայկական տպագրություն



Գ. Ահարոնյանի «Մեծ երազի ճամբուն վրայ» (1964, «Ապլաս») գրքի կազմը



Կ. Զարյանի «Երկեր»-ի (1975, Անթիլիաս) կազմը



Պ. Աղպաշյանի «Ապրուած հրապարակագրութիւն՝ յետգարձ հայեացքով» (հ. Ա, 2008, «Փավո Ֆոտոգրավյուր») գրքի կազմը

Լիբանանի հայկական տպագրություն



Շահանդուխտի «Լռած լեզուն խօսեցաւ» (2010, «Վահե Սեթյան») գրքի կազմը



«Վկայարան հայկական ցեղասպանութեան» (գիրք Բ, 2011, Բեյրութ) ժողովածուի կազմը



«Լիբանանահայ գիրքը. 1894–2012: Մատենագիտական ցանկ»-ի (2013, Բեյրութ) կազմը

1995–2013, մինչև 1952-ը՝ Հալեպում) պարբերաթերթերը, ՀՄՄ ***«Կայծ»*** (1943–47) պաշտոն. հանդեսը, ***«Անի»*** (1946–55) ամսագիրը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ***«Հասկ հայագիտական տարեգիրքը»*** (1948–2004), ***«Բժիշկ»*** (1955–84) ամսաթերթը, ԹՄՄ ***«Շիրակ»*** (1956–93 և 2004–06) ամսագիրը, ***«Յառաջ»*** (1957–64) շաբաթաթերթը, ***«Նոր կեանք»*** (1957–98, ընդհատումներով) պարբերաթերթը, ***«Լոյս գրականութեան եւ արուեստի»*** (1965–72) հանդեսը, ***«Երիտասարդ հայ»*** (1969–75) երկշաբաթաթերթը, ***«Ահեկան»*** (1966–70) հանդեսը, ՀՅԴ ***«Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ»*** (1969–85) պաշտոնաթերթը, ***«Կանչ»*** (1971–2006) շաբաթաթերթը, ՀԱՀԳԲ-ի ***«Հայապրան»*** (1980–87, 1991–97) պաշտոնաթերթը, ***«Կայծեր»*** (1983–2003) պարբերաթերթը, «Արին» (1996–98) ընկերային-երիտասարդ. պարբերաթերթը ևն:

Ներկայում լույս են տեսնում ***«Ազդակ»*** (1927-ից), ***«Զարթօնք»*** (1937-ից), ***«Արարատ»*** (1937-ից) օրաթերթերը, ***«Աւետիք»*** (1932-ից) հանդեսը, ***«Հասկ»*** (1932-ից) ամսագիրը, ***«Զանազան»*** (1937-ից) պարբերաթերթը, Հայ կաթողիկե պատրիարքության ***«Սիամա»*** (1947-ից) ամսաթերթը, ***«Պատանեկան արձագանգ»*** (1936-ից) ամսաթերթը, ***«Խօսնակ»*** (1957-ից) պաշտոնաթերթը, ***«Սփիւռք»*** (1958-ից) հանդեսը, ***«Բագին»*** (1962-ից) հանդեսը, ***«Հայկազեան հայագիտական հանդէս»*** (1970-ից) տարեգիրքը, ***«Ջուարթնոց»*** (1980-ից) հանդեսը, ***«Սիարգիկ»*** (1980-ից) ամսաթերթը, «Ռազմիկ» (1983-ից), ***«Արծիւ»*** (1992-ից), «Ծաղիկ» (2003-ից) գրական, «Փթիթ» (2010-ից) մանկապատանեկան պարբերաթերթերը, ***«Դիտակ»*** (1996-ից) ամսագիրը, ***«Կամար»*** (2005-ից) հանդեսը, «Ազդակի» մանկապատանեկան հավելված «Պզտիկ-մզտիկ» (2002-ից) ամսաթերթը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքի «Գլաձոր» տարեգիրքը, «Աւետաբեր» (2001-ից), «Զայն հրեշտակապետին», արաբ. «Համել էլ-բուշրա» (երեքն էլ՝ հայ կաթոլիկ), «Լրատու», «Լոյս» (1939-ից, երկուսն էլ՝ հայ ավետարան.) կրոն., նաև հայկ. դպրոցների ու տարբեր կազմակերպությունների մի շարք պարբ-ներ:

Գրկ. Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ, հ. 1–5, Բ.–Ֆերրըն, 1951–1983: Դալլաքյան Կ., Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմութենից, Ե., 1964: Բալոյան Մ., Սփյուռքահայ մամուլի պատմութենից. «Անի» (1946–1955), Ե., 1965: Թոփուզյան Հ., Միհրայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841–1946), Ե., 1986: Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, 1975: Թերզեան Մ., Զմմառեան կաթողիկոսական միաբանութիւնը, Բ., 1983: Դանիէլեան Ժ., Լիբանանահայ տպագրութիւնը պատերազմի տարիներուն. 1975–1984, Բ., 1986: Եազըճեան Գ., Լիբանանահայ պարբերական մամուլը 2002 թուականին, Ե., 2004: Լիբանանահայ գիրքը. 1894–2012: Մատենագիտական ցանկ (աշխատասիր.՝ Ա. Տագեսյանի, Ա. Յարնեկշյանի), Բ., 2013:

ԼԻՄԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, Վանա լճի Լիմ կղզու մշակութ. կյանքի մասին մեզ հասած ինագույն տեղեկությունը IX դ–ից է: Լ. գ. կ. գործել է XIII–XIX դդ–ում: Գրչության արվ–ն այստեղ աշխուժացել է XIV դ–ի սկզբներին՝ Զաքարիա Սեֆեդինյան Աղթամարցի կաթողիկոսի (1296–1336) օրոք, երբ վերակառուցվել է Սբ Գևորգ եկեղեցին, ընդարձակվել միաբանությունը:


XIII–XIV դդ–ից պահպանվել է գրիչներ Սովսեսի, Խաչատուրի, Աբրահամի և Մանվելի ընդօրինակած շուրջ 10 (4-ը՝ Մատենադարանում), իսկ XV դ–ից՝ 5 ձեռագիր:

Լ. գ. կ–ում ձեռագրերը նաև նկարազարդել և կազմել են: XV դ–ի կեսերին այստեղ են աշխատել խառաբաստցի Իգնատիոս, արճիշեցի Հովհաննես Մանկասարենց գրիչները, որոնց ընդօրինակություն–ները նկարազարդել է ծաղկող ***Մինասը***: XVI դ–ում Լիմի մշակութ. կյանքը տնօրինել է ***Զաքարիա Գնունեցին*** (Լմնցի), որից մեզ են հասել բազմաթիվ ընդօրինակություններ: XVII դ–ում Լիմում բաց–վել է բարձրագույն դպրոց՝ Ներսես Մոկացի փիլիսոփայի ղեկա–վարությամբ. ուսումնասիրել են նաև աշխարհիկ գիտ–ներ, գրել են

թվաբանությանը, աստղաբաշխությանը, բժշկությանը վերաբերող աշխատություններ: Լիմն ունեցել է հարուստ մատենադարան, որտեղ 1693-ին եղել է 3124 միավոր գիրք, XIX դ-ի վերջին՝ 550 ձեռագիր և մոտ 3 հզ. տպագիր գրքեր:

Լ. գ. կ. գործել է մինչև 1915-ը: Ձեռագրերի մի մասը փրկել և տեղափոխել են Էջմիածին: Այժմ Մատենադարանում պահվում է Լիմից բերված 306 ձեռագիր:

Գրկ. **Ոսկեան Հ.**, *Վասպուրական-Վանի վանքերը, մաս 1, Վնտ., 1940:* **Մաթևոսյան Ա.**, *Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԹ-ԺԵ դարերում, «Էջմիածին», 1966, № 6:*




Հենրի Լինչ

ԼԻՆԴԵՄԱՆ (Lindeman) Ֆրեդրիկ Օտտո (ծ. 3.3.1936, Օսլո), նորվեգացի լեզվաբան, հայագետ, ինդեվրոպաբան: Փիլ. գիտ. դ-ր (1964), Օսլոյի համեմատ. լեզվաբ. հետազոտությունների համալսարանի պրոֆ. (1970): Ավարտել է Օսլոյի համալսարանը (1961): Հայ-ին են նվիրված Լ-ի «Գրաբարի ըղձական անցյալի կազմության վերաբերյալ...» (1975–76), «Գրաբար հառնեմ, հառեայ բայի մասին դիտողություններ» (1977), «Հայերեն կեամ» (1981) և այլ աշխատություններ: Թարգմանել է Եղիշեի «Վարդանանք և հայոց պատերազմը» (1992) երկը:

ԼԻՆՈՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, լինոլեումի և պլաստիկ-պոլիմերային նյութերի վրա *փորագրության* տեսակ, պատկերի բարձր տպագրության տպաձևի՝ ձեռքով պատրաստման եղանակներից է: Առաջացել է XIX–XX դդ-ի սահմանագծին, երբ հայտնագործվել է լինոլեումը: Լ-ի տպագրության ժամանակ օգտագործվում են նույն ներկանյութերը, ինչ փայտափորագրության դեպքում:

Լ-յան տեխնիկան Հայաստանում ներդրվել է 1950–60-ական թթ-ին, որով ստեղծագործել են Մ. Աբեղյանը, Վ. Այվազյանը, Վ. Խաչիկյանը, Ռ. Ադալյանը, Լ. Խանամիրյանը և ուր.:

ԼԻՆՉ (Lynch) Հենրի Ֆինիս Բլոս (18.4.1862, Լոնդոն–24.11.1913, Լոնդոն), անգլիացի հայագետ, ճանապարհորդ-աշխարհագետ, փաստաբան, հաս-քաղ. գործիչ: Տատը սերաստացի հայուհի էր: Ավարտել է Հայդելբերգի (Գերմանիա) համալսարանի իրավաբ. ֆակ-ը: Երկու անգամ (1893–94 և 1898) ճանապարհորդել է Հայաստանում, բարձրացել Մասիս, Սիփան և Նեմրութ լեռների գագաթները: Ուղևորությունների արդյունքներն ամփոփել է «Հայաստան: Ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ» [1901, ռուս.՝ 1910, հայ. համառոտ թարգմ. (1913–14)՝ Լևոն Լարենցի, ԿՊ, հ. Ա՝ Ռոգոս Սագայանի, հ. Բ՝ Հակոբ Ասատուրյան և որդ. տպ-ների] երկհատորյակի մեջ, որտեղ դատապարտել է թուրք. և ցար. կառավարությունների հակահայկ. քաղաքականությունը, հայերի կոտորածները օսմ. Թուրքիայում:



Հ. Լինչի *«Հայաստան: Ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ» (հ. Ա, 1913, Կ. Պոլիս) գրքի կազմը*

Երկ. Armenia. Travels and Studies, v. 1–2, L.–N. Y.–Bombay, 1901; Армения: очерки и этюды, т. 1–2, Тифлис, 1910.

Գրկ. **Տօնապետեան Պ.**, *Արմենիա Լինչի, Լոնդոն, 1902:*


ԼԻՍԻՑՅԱՆ Ստեփան Դանիելի (23.9.1865, Թիֆլիս– 4.1.1947, Երևան), ազգագրագետ, աշխարհագետ, հրատարակիչ: Աշխարհագր. գիտ. դ-ր (1941), պրոֆ. (1941): Գիտ. վաստ. գործիչ (1945): Ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիան (1884), Վարշավայի համալսարանի պատմաբանասիր. ֆակ-ը (1889): 1889–91-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1894–1915-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1924–42-ին՝ ԵՊՀ-ում, 1938–43-ին՝ Երևանի մանկավարժ. ինստ-ում: 1904 և 1910–11-ին ուսումնասիրել է Վիեննայի Մխիթարյանների գրադարանի, Բեռլինի և Եվրոպայի այլ քաղաքների թանգարանների հայագիտ. նյութերը: 1892–1903-ին եղել է Թիֆլիսի հայոց հրատարակչ. ընկերության քարտուղարը, 1892–98-ին աշխատակցել է «Աղբիւր» և «Տարազ» հանդեսներին, 1905–17, 1922-ին՝ *«Հասկեր»* մանկ. ամսագրի հիմնադիր-խմբագիր: Թիֆլիսում և Կ. Պոլսում հովհաննես *Թումանյանի* ու Լևոն *Շանթի* (2-րդ հրատ-ից) հետ կազմել և հրատարակել է մայրենի լեզվի «Լուսաբեր» դասագիրքը (առաջին




Սրեփան Լիսիցյան



Ս. Լիսիցյանի *«Զանգեզուրի հայերը» (1969, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



«Վարդապետութիւն քրիստոնէական» (Ռոբերտոս Բելարմինոս, 1670, **Լիվոռնո***) գրքի տիտղոսաթերթը*



«Լիտերատուրնայա Արմենիա», *1958–ից, Երևան (№ 4, 2004)*

անգամ՝ 1907–ին, Թ., Նվարդ Աղանյանի տպ., պատկերազարդումը՝ Վրթանես Ախիկյանի, բազմիցս վերահրատարակվել է):

Լույս են տեսել Լ–ի «Պուշկին: Նրա կեանքն ու գործունէութիւնը» (1899, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Հայրենի առասպելներից եւ վէպերից: Աւանդապատումներ» (1907, 1910, 1995), «ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն» (ժողովրդագրությամբ, 1940), «Զանգեզուրի հայերը» (1969), «Ծաղկաքաղ» (1969), «Լեռնային Ղարաբաղի հայերը: Ազգագրական ակնարկ» (1992) աշխատությունները: Կազմել ու հրատարակել է «Ազգագրական հարցարանը» (1946):

Թարգմանել է Գ. Շվաբի «Արգոնաւորդներ»–ը (1910, Թ., Ն. Աղանյանի տպ.), Հ. Մենկենիչի «Յո՛ երթաս» վեպը (լեհ–ից, 1898, Թ., Մ. Ռոտինյանի տպ., 1912, Թ., Ն. Աղանյանի տպ., 1961, 1983), մասնակցել Հ. Լինչի «Հայաստան» աշխատության անգլ–ից ռուս. թարգմանությանը: Գրել է մենագրություն Հայկ. լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագր. պայմանների մասին (անտիպ):

Լ–ի անունով է կոչվել ՀՊԹ–ի ազգագրության բաժինը, Երևանում՝ հանրակրթ. դպրոց, որտեղ տեղադրված է նրա դիմաքանդակը:

Գրկ. Սրտեփան Դանիելի Լիսիցյան, Ե., 1987 (Նյութեր Հայկական ՍՍՀ գիտնականների կենսագրության, № 41): **Մարտիրոսյան Հ.,** *Սրտեփան Լիսիցյանը մանկավարժ, Ե., 1989:* **Варданян Л.,** *Степан Лисицыан и истоки армянской этнографии, Е., 2005.*

ԼԻՎՈՐՆՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի վանահայր ***Խաչատուր Կեսարացին*** տեղի նորահաստատ տպարանը կատարելագործելու նպատակով 1639–ին ***Հովհաննես Ջուղայեցի Քթռեշենցին*** ուղարկել է Իտալիա՝ տպագր. արվ–ի մեջ հմտանալու և տպագր. հարմարանքներ ձեռք բերելու համար: Հռոմում իր առաքելությունն ավարտելուց հետո նա մեկնել է Լիվոռնո (Իտալիա), հիմնադրել տպարան և 1644–ին լույս ընծայել Սաղմոսարան: Այնուհետև տպարանը տեղափոխել է Նոր Ջուղա (տես ***Նոր Ջուղայի հայկական տպագրություն***):

1669–ին Ամստերդամից Լիվոռնո փոխադրած Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում ***Ոսկան Երևանցին*** իր աշակերտներ Կարապետ ***Մնդրիանացու*** և Օհան Երևանցու հետ հրատարակել է Մարկեղոս Փալերմիթացու «Խոստովանարան կամ ամբաստանարան» (1669, թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու), Ռոբերտոս Բելարմինոսի «Վարդապետութիւն քրիստոնէական» (1670, թարգմ.՝ Բարսեղ Կոստանդնուպոլսեցու), ինչպես և «Պարտէզ հոգեւոր» (1670), «Տարեցոյց եւ տօնացոյց» (1671–72, երկուսն էլ թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու) երկերը: 1672–ին տպարանը տեղափոխվել է Մարսել (տես ***Մարսելի հայկական տպագրություն***), սակայն Լիվոռնոյում մինչև 1701–ը շարունակել է իր գործունեությունը. տպագրվել են «Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի» (1696), Խաչատուր Էրզրումեցու «Քերականութիւն» (1696), Մովսես Խորենացու «Աշխարհացոյց: Աղուէսագիրք» (1698), նաև «Թէօփիլոս» (1701) և «Պարզատումար հռօմէական» (1701) գրքերը:

1698–ին Սարգիս Եվդոկացի Սահեթճին Լիվոռնոյում տպագրել է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցը»:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, էջ 50–51, Ե., 2012 (համահանութ.): **Լեվոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, Ե., 2012:* **Իշխանյան Ռ.,** *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:* **Դևրիկյան Վ.,** *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ, Ե., 2014:*

«ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԱ ԱՐՄԵՆԻԱ» («Литературная Армения»–«Գրական Հայաստան»), գրական–գեղ. և հաս–քաղ. ամսագիր (սկզբում՝ երկամսյա): ՀԳՄ պաշտոն. հանդես: Լույս է տեսնում 1958–ից Երևանում՝ ռուս.: Խմբագիրներ՝ Գուրգեն ***Բորյան***, Գևորգ ***Էմին***, Սուրեն Հարությունյան, Միքայել ***Շաթիրյան***, Կարեն ***Սիմոնյան***, Հրաչյա Հարություն Կարապետյան, Ալբերտ ***Նալբանդյան*** (1987–ից): Տպագրում է դաս. և ժամանակակից հայ հեղինակների գործեր, հոդվածներ ու ակնարկներ հանրապետության հաս–քաղ., տնտ. և մշակութ. կյանքի վերաբերյալ: Պարբերաբար ծանոթացնում է օտարազգի (Ն. Տիխո–

նով, Վ. Զվյագինցևա, Ե. Եվտուշենկո, Ռ. Ռոժդեստվենսկի, Է. Մեժելայտիս, Ռ. Համզատով, Կ. Կուլիև, Կ. Բակշի, Մ. Սինելնիկով, Ի. Դրաչ, Ս. Գորոդեցկի և ուր.) և օտարագիր հայ գրողների (Վ. Քաչա, Ա. Թրուայա, Վ. Սարոյան և ուր.) ստեղծագործություններին:

«ԼՂՀ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ», ԼՂՀ արդարադատության նախարարության հրատ.: Լույս է տեսնում 2008-ից Ստեփանակերտում: Հրապարակում է ԼՂՀ տարբեր գերատեսչությունների, հանձնաժողովների և խորհուրդների որոշումները, ԼՂՀ նախարարների հրամանները, Ստեփանակերտի քաղաքապետի և ԼՂՀ վարչ. շրջանների ղեկավարների որոշումներն ու կարգադրությունները:

ԼՂՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Մեսրոպ Մաշտոցի անվան, ստեղծվել է 1924-ին Ստեփանակերտում: Նախապես կոչվել է Մաքսիմ Գորկու անվ. մարզային գրադարան: Առաջին տարում ունեցել է ընդամենը 2097 միավոր գիրք. հավաքվել է Մոսկվայում սովորող ղարաբաղցի ուսանողների և ընթերցողների նվիրատվության շնորհիվ: Ներկայում գրադարանի գրքային ֆոնդը 175258 միավոր է, որից շուրջ 70 հզ-ը՝ հայ., մնացածը՝ այլ լեզուներով, ընթերցողների թիվը՝ 5,2 հզ.: Հարուստ է նաև պարբ. մամուլի և ամսագրերի ֆոնդը: Մինչև Արցախյան շարժումը գրադարանն ստացել է 60 անուն թերթ, 150 անուն ամսագիր (այժմ՝ 21 անուն թերթ ու ամսագիր): Գրադարանի տեղեկատու-մատենագիտ. բաժինն ստեղծվել է 1960-ի վերջին, 1957-ից կազմվել են երկրագիտ. ֆոնդն ու քարտարանները: Մատենագիտ. բաժնում ստեղծվել է Արցախյան գոյամարտին նվիրված թեմատիկ քարտարան: Աշակման և համալրման բաժինը գործում է 1960-ից: Գրադարանն ունի այբբեն. (1951-ից) և կարգային (1957-ից) գրացուցակներ՝ հայկ. և ռուս. բաժիններով, ինչպես նաև 80-տեղանոց ընթերցասրահ: 1952–88-ին գործել է նաև միջգրադարանային աբոնեմենտի ծառայություն:

Գրադարանի տնօրեններ են եղել Ա. Չալյանը, Հ. Իսախանյանը, Ս. Կարապետյանը, Ժ. Անդրյանը, Ա. Թովմասյանը, Ռ. Ավանեսյանը, Ռ. Ջաբյանը, Կ. Հայրապետյանը (1986-ից):

ԼՂՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ *Հովհաննես Թումանյանի անվան*, բացվել է 1947-ին Ստեփանակերտում: 1965-ին գրադարանին տրվել է մարզային մանկ. գրադարանի կարգավիճակ և կոչվել է Հ. Թումանյանի անունով: Սկզբն. շրջանում գրքային ֆոնդը 50 հզ. միավոր էր, 1988-ին՝ 120 հզ.: 1992-ին գրադարանի շենքը ռմբակոծությունից փլվել է. գրքային ֆոնդի 70 %-ը ոչնչացել է: Ներկայում գրադարանը տեղավորված է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատի առաջին հարկում: Գրքային ֆոնդը 46,7 հզ. միավոր է, ընթերցողների թիվը՝ 7,6 հզ., ունի 42 շրջիկ կետեր, սպասարկման, համալրման և մշակման բաժիններ: Գրադարանը հանրապետության բոլոր դպրոց. գրադարանների համար մեթոդ. կենտրոն է:

Գրադարանի տնօրեններ են եղել Ա. Մելքումյանը, Ա. Հարությունյանը, Ի. Ստեփանյանը, Բ. Հովհաննիսյանը, Հ. Մարտիրոսյանը, Լ. Ղարայանը, Գ. Գաբրիելյանը, Ա. Սիմոնյանը, Վ. Միքայելյանը (2006-ից):

«ԼՂՀ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», ԼՂՀ արդարադատության նախարարության հրատ.: Լույս է տեսնում 2005-ից Ստեփանակերտում՝ տասնօրյա-կիսամսյա պարբերականությամբ: Տպագրում է ԼՂՀ օրենքները, նրանցում կատարված փոփոխությունները, ԼՂՀ Կառավարության որոշումները, պաշտոն., իրավ. այլ փաստաթղթեր:

ԼՂՀ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԼՂՀ տարածքում տպագր. գործն սկզբնավորվել է Շուշիում 1820-ական թթ-ի 2-րդ կեսից: Տես ***Շուշիի տպագրություն:***

Խորհրդ. տարիներին ԼՂԻՄ-ում տպագրվել են մարզային (1923-ից) և շրջ. (1932-ից) թերթեր: ԼՂԻՄ-ի առաջին պետ. լրատվամիջոցը «Ղարաբաղի գեղջուկ» (1923) թերթն է (1923–40 և 1989–92-ին՝



ԼՂՀ հանրապետական գրադարանի շենքը




«ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր», *2005-ից, Ստեփանակերտ*

ԼՂՀ տպագրություն



Ի. Պետրոսյանի «Առակներ» (2011, Ստեփանակերտ, «Սոնա») գրքի կազմը

ԼՂՀ տպագրություն



«Հուշամատյան սխրանքի» (2008, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրտ.) գրքի կազմը



Մ. Հովհաննիսյանի «Հոգնած երեկո» (2010, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ») գրքի կազմը



Բ. Ուլուբաբյանի «Փորձության օրերի խորհուրդը» (2010, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս») գրքի կազմը

«Խորհրդային Ղարաբաղ», 1998–ից՝ ***«Ազատ Արցախ»***, 1980–ից լույս է տեսնում նաև ռուս. տարբերակը՝ «Советский Карабах», այժմ՝ «Свободный Арцах»): Ստեփանակերտում 1920-ական թթ–ից գործել է պոլիգրաֆ. կոմբինատը (այժմ՝ «Պոլիգրաֆ»). տպագրել է տարաբնույթ գրքեր, ինչպես նաև ԼՂԻՄ–ի պարբ. հրատ–ները:

1994–ից հետո տպագր. գործը ԼՂՀ–ում զգալի վերելք է ապրել. հիմնադրվել են մի շարք հրատարակչություններ և տպարաններ (***«Դիզակ պլյուս»***, ***«Վաչագան Բարեպաշտ»***, «Սոնա», «Կաճառ» գիտ. կենտրոնի, ԱրՊՀ–ի ևն), որոնք տպագրում են գեղ. գրքեր, ուս. գրակ., գիտ. երկեր, բառարաններ, ալբոմներ ևն:

Ներկայում ԼՂՀ–ում լույս է տեսնում շուրջ 30 անուն պարբ.՝ ԱԺ–ի և Կառավարության «Ազատ Արցախ» պաշտոնաթերթը, ***«ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիրը»***, ***«ԼՂՀ պաշտոնական տեղեկագիրը»***, ՊԲ–ի ***«Մարտիկ»***, Ստեփանակերտի քաղաքապետարանի ***«Ստեփանակերտ»***, Մարտունիի ***«Ամարաս»***, Հադրութի ***«Դիզակ»***, Շուշիի ***«Շուշի»***, Ասկերանի ***«Բերդ»***, Մարտակերտի ***«Քրաբերդ»***, Շահումյանի ***«Մռավի ղողանջներ»***, ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության ***«Լուսարար»***, ԼՂՀ գրողների միության ***«Եղիցի լույս»***, ԱրՊՀ–ի ***«Արցախի համալսարան»*** պաշտոնաթերթերը, ***«Կաճառ»*** արցախագիտ. տարեգիրքը, մանկապատանեկան ***«Լուսայգ»***, հանրապետ. «Արհմիություններ», երգիծ. ***«Եղինջ»*** և ***«Պըլլը Պուղի»***, կուս. «Ակումբ», «Արցախի կոմունիստ», ***«Ապառաժ»***, «Հայրենիք» պարբ–ները, ինչպես նաև «Անալիտիկոն», «Նոր էջ», «Նաշ դոմ» (ռուս.), «Հայկի սերունդ», «Հայրենյաց պաշտպան» անկախ թերթերը, ***«Գեղարտ»*** գրական–գեղ., մշակութ. հանդեսը ևն: Կան նաև լրատվության էլեկտրոնային միջոցներ («Արցախ ON Line» ևն):

«ԼՈՅՍ», կրոն., բարոյական և ընտանեկան կիսամսյա հանդես, ապա՝ շաբաթաթերթ, վերջում՝ ազգ. և գավառ. եռօրյա թերթ: Լույս է տեսել 1874–85–ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Հմայակ ծ. վրդ. Դիմաքսյան, Մինաս ***Գաբամաճյան***, Հակոբ ***Պարոնյան***, Բյուզանդ Պոզաճյան: Կրոն. նյութերից բացի՝ տպագրել է հոդվածներ Հայաստանի պատմ. անցյալի, ազգ. խնդիրների, երեխաների դաստիարակության հարցերի, Կ. Պոլսի ազգ. վարչության, պատրիարքարանի, դպրոցների, ուս. խորհուրդների գործունեության մասին, բանաստեղծություններ, երգիծանք, տնտեսագիտ. զրույցներ: Աշխատակցել են Գ. Մալեզյանը, Ս. Ֆելեքյանը և ուր.: 1882–ից հրատարակվել է համանուն շաբաթաթերթ՝ «Գաւառական թերթ» ենթավերնագրով՝ գավառ. թղթակիցների համար:

«ԼՈՅՍ», գրական, գիտ. և քաղ. կիսամսյա հանդես (ապա՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1895–1908–ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Մ. Սուլթանյան, Հարութ Հազարապետյան, Վահան Փափազյան, Բաբկեն ծ. վրդ. ***Կյուլեսերյան***, Արամ ***Անտոնյան***: Ունեցել է կրոնաբարոյական ուղղվածություն: Անդրադարձել է դպրոց., կրթ. խնդիրներին, նոր սերնդի դաստիարակությանը, ընտանիքում կնոջ դերին, նաև քաղ. անցուդարձին: Թարգմանաբար, երբեմն՝ բնագրով, ներկայացրել է նմուշներ եվրոպ. ու թուրք. գրակ–ներից, հրատարակել է հայ հեղինակների չափածո և արձակ գեղ. գործեր: «Լ.»–ում նյութեր են տպագրել Զ. Սոմճյանը, Մ. Փափազյանը, Հ. Արշակյանը, Տ. Կյուլպենկյանը և ուր.:

«ԼՈՅՍ», գիտ., բարոյական, իմաստասիր. կիսամսյա, ապա՝ միամսյա հանդես: Լույս է տեսել 1901–08–ին Քեմբրիջում և Բոստոնում, 1925–27 և 1934–ին՝ Բերկլիում (Կալիֆոռնիա)՝ որպես ազգ., գրական, գիտ. ամսաթերթ, ապա՝ կիսամսյա հանդես՝ հայ. և անգլ. բաժիններով: Խմբագիր՝ Միքայել Մինասյան: Ծանոթացրել է գիտ–յան նորություններին, Յ. Վ. Գյոթեի, Գ. Հայնեի, Ա. Լամարթինի, Վ. Հյուգոյի, Ռ. Էմերսոնի, Վ. Թենիսոնի և ուր. գործերին (թարգմանաբար):

«Լ.» 2-րդ շրջանում ունեցել է հայագիտ. թեքում, սատարել է ՀՕԿ-ին: Հանդեսում նյութեր են տպագրել Մ. Գաբրիելյանը, Մ. Գասապյանը, Մ. Յարտըմյանը, Ն. Պուճիգանյանը, Ս. Երեմյանը, Գ. Սարաֆյանը և ուր.:

«ԼՈՅՍ», գրական-հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1910–14-ին Նոր Նախիջևանում: Խմբագիր-հրատարակիչ՝ Գևորգ Ռեհգ-յան: Լուսաբանել է տեղի հայկ. համայնքի հաս., կրթ. և մշակութ. իրադարձությունները: Կարևոր տեղ է հատկացրել Հայկ. հարցին: Անդրադարձել է գյուղատնտ. և արհեստագործ. դպրոցների ստեղծ-ման անհրաժեշտությանը, մանկավարժ. հարցերին: Տպագրել է Ա. Ծատուրյանի, Հ. Հովհաննիսյանի, թարգմանաբար՝ Մ. Լերմոնտովի, Ա. Չեխովի և արևմտաեվրոպ. գրողների գործերից: Տպագրել է Հ. Աճառյանի «Արևմտահայ գրական դեմքեր» հոդվածաշարը:



«Լոյս», *1895–1908, Կ. Պոլիս (№ 17, 1908)*

«ԼՈՅՍ», գրակ-յան և գիտ-յան ժող.: Լույս է տեսել 1943–45-ին Թեհրանում: Խմբագիրներ՝ Հովսեփ *Թադևոսյան*, Հ. Գրիգորյան, Տաճատ *Պողոսյան:* Տպագրել է Ա. Իսահակյանի, Ն. Զարյանի, Հ. Շիրազի, Գ. Սարյանի ստեղծագործություններից, գրախոսություն-ներ, թարգմանաբար՝ ռուս. դաս. գրակ-յան նմուշներ: Արտատպել է նյութեր խորհրդահայ մամուլից:

«ԼՈՅՍ», հաս., մշակութ., գիտահանրամատչելի պարբերաթերթ: Լույս է տենանում 1996-ից Լոս Անջելեսում: Խմբագիր՝ Ստեփան Քի-րեմիջյան: Ունի 14 բաժին («Սոլորակի հևքը», «Աշխարհի շուրջ», «Պատմության հիշողությունը», «Մշակույթ և գրողի ամբիոն» ևն):



«Լոյս», *2006–12, Մոն-րեալ (№ 2, 2012)*

«ԼՈՅՍ», կրոն., եկեղեցագիտ. եռամսյա հանդես: Հայաստանյայց առաքել. եկեղեցու Կանադայի թեմի պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 2006–12-ին Մոնրեալում: Խմբագիր՝ Բաբկեն Թոփչյան:

«ԼՈՅՍ ՓԱՐԻԶԻ», գրական-գեղ., հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1957–59-ին Փարիզում: Խմբագիր՝ Ավետիս *Ալիքսանյան:* Հիմնականում անդրադարձել է գրակ-յան և մշակույթի հարցերին: Կարևոր տեղ է հատկացրել նաև Հայաստանի գիտ-յան, արվ-ի և այլ բնագավառների ձեռքբերումներին, ներկայացրել խորհրդահայ հեղինակների ստեղծագործություններ: «Լ. Փ.» անդրադարձել է սփյուռքահայ կյանքին, զետեղել լուրեր հայ գաղթավայրերի մասին, արձագանքել քաղ. կարևոր իրադարձություններին:

ԼՈՆԳՖԵԼԼՈ (Longfellow) Հենրի Ուոդսուորթ [27.2.1807, Պորտ-լենդ (ԱՄՆ)–24.3.1882, Քեմբրիջ (Անգլիա)], ամերիկացի բանաստեղծ: Հարվարդի համալսարանի պրոֆ. (1836–54): Լ.-ին համաշխ. հռչակ են բերել «Բանաստեղծություններ ստրկության մասին» (1842) և «Հայավաթի երգը» (1855, հայ. հրտ.՝ 1943, 1958, 1989) պոեմը: 1892-ին «Եւանգելինա» վերնագրով հայ. (թարգմ.՝ Ն. Տեր-Ավետիքյանի, Թ., «Արոր» տպ.) հրատարակվել է նրա «Եվանջելին» (1847) պոեմը:

Ղ. Ալիշանի արձակ թարգմանությամբ անգլ. լույս տեսած «Հայոց երգ ռամկականք» ժող-ից Լ. չափածոյի է վերածել հայկ. մի քանի երգեր («Արա-գիլին», «Մանուկն ու ջուրը» ևն) և հրատարակել ԱՄՆ-ում: Լ.-ի բանաստեղ-ծություններից թարգմանել են Հ. Թումանյանը, Ա. Ծատուրյանը և ուր.: Հայ. հրատարակվել է Լ.-ի «Բանաստեղծություններ» (1969) ժող-ը:

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶ», հաս-քաղ., սոցիալ-տնտ. շաբաթաթերթ: ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1951-ից Վանաձորում (մինչև 1990-ը՝ *«Կայծ»*, 1990–96-ին՝ «Վերածնունդ»): Խմբագիրներ՝ Արշալույս Սիմոնյան, Սիրաք Վանեսյան, Բորիս Բաղ-դասարյան, Արծրուն Սարգսյան, Նարեկ Մեսրոպյան, Սամվել *Խա-լաթյան*, Մանվել *Միկոյան* (1998-ից): Լուսաբանում է մարզի սոցիալ-տնտ., հաս-քաղ. առօրյան, անդրադառնում կրթ., մշակութ. կյանքին, մարզ. միջոցառումներին, տպագրում է նաև վերլուծ. նյութեր ՀՀ-ի ներքին և արտաքին քաղաքականության, Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ, գրական ստեղծագործություններ:



«Լոռու մարզ», *1951-ից, Վանաձոր*



«Աղօթք հասարակաց...» (1618, **Լվով**) աղոթագրքի գլխազարդով (70-րդ) էջ



«Լրաբեր Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի», *2004–ից, Երևան (№ 3, 2011)*



«Լրաբեր հասարակական գիտությունների», *1940-ից, Երևան (№ 1, 2012)*

ԼՎՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1615-ին՝ Լվովի Սբ Աստվածածին հայկ. եկեղեցուն մերձակա մի տան մեջ՝ այժմյան Վիրմենսկի (Հայկական) փողոցում՝ ***Հովհաննես Քարմապանենցի*** նախաձեռնությամբ: Դա հայկ. 3-րդ տպարանն էր՝ ***Հակոբ Մեղապարտի*** և ***Աբգար Թոխաթեցու*** տպարաններից հետո: Այստեղ տպագրվել են Սաղմոսարան (1616), հայատառ ղփչաղ. Աղոթագիրք («Աղօթք հասարակաց...», 1618, պահպանվել են մեկական օրինակներ, 1-ինը Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում է, 2-րդը՝ Լեյդենի համալսարանի գրադարանում), ինչպես նաև հայ. բժշկարան (չի պահպանվել): 1670–80-ական թթ-ին լվովահայերը Հռոմից բերել են նորաձույլ հայ. տառեր, սակայն դրանցով տպագրված որևէ գիրք չի հայտնաբերվել:

Գրկ. **Դևրիկյան Վ.**, *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ, Ե., 2014:* **Дашкевич Я.**, *Армянское книгопечатание на Украине в XVII веке, «ПДК», 1968, №4.*

«ԼՐԱԲԵՐ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1908–09-ին Աստրախանում: Խմբագիր-հրատարակիչ՝ Կարապետ Խաչատրյան, խմբագիր՝ Վահան Մարոյան: Լուսաբանել է ժամանակի հաս-քաղ. հրատապ հարցեր, անդրադարձել քաղաքի կյանքին, երիտասարդ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Արտացոլել է գաղթավայրի հաս. կյանքը: «Արտաքին տեսություն» բաժնում տեղեկություններ է հաղորդել տարբեր երկրների քաղ. կացության մասին: Տպագրել է Ա. Ծատուրյանի և Վ. Տերյանի բանաստեղծություններից:

«ԼՐԱԲԵՐ», հաս-քաղ. շաբաթաթերթ (սկզբում՝ օրաթերթ, ապա՝ երկօրյա): Ամերիկահայ առաջադիմ. միության հրատ.: Լույս է տեսել 1938–79-ին Նյու Յորքում, 1979–90-ին՝ Լոս Անջելեսում (վերջին էջը՝ անգլ.): Խմբագիրներ՝ Պատրիկ Սելյան, Մարտիկ Մարտենց, Վահան Ղազարյան, Լյուդվիգ Թաբակյան: Տպագրել է տեղեկատվություն, արծարծել քաղ., սոցիալ-տնտ., մշակութ. հարցեր, նպաստել է հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

«ԼՐԱԲԵՐ», Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1996-ից Ստամբուլում՝ հայ., թուրք. և անգլ.: Խմբագիր՝ Լուիզ Պաքար: Լուսաբանում է պատրիարքության գործունեությունը:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ», գիտատեխ. եռամսյա հանդես: Հայաստանի և Միջազգ. ճարտարագիտ. ակադ-ների համատեղ հրատ.: Լույս է տեսնում 2004-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Սերգեյ Համբարձումյան, խմբագիր՝ Սերգեյ Մինասյան, պատ. խմբագիր՝ Ռազմիկ Բարսեղյան: Խմբագրակազմում են Բելառուսի, Գերմանիայի, Իտալիայի, ՉԺՀ-ի, ՌԴ-ի, Ուկրաինայի, Թայվանի, Ճապոնիայի ճանաչված գիտնականներ: Տպագրում է ճարտարագիտ-յան և տեխնոլոգիաների գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով):

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ», ՀՀ ԳԱԱ գիտ. ամսագիր: Լույս է տեսնում 1940-ից Երևանում (1940–65-ին՝ «Տեղեկագիր հասարակական գիտությունների»): Խմբագիրներ՝ Սահակ Կարապետյան, Հրանտ ***Բատիկյան***, Խաչիկ Սիմջյան, Մկրտիչ ***Ներսիսյան***, Հովսեփ ***Օրբելի***, Աբգար ***Հովհաննիսյան***, Ծատուր ***Աղայան***, Գառնիկ ***Ստեփանյան***, Հայկազ Ասլանյան, Գևորգ ***Աբով***, Հովհաննես ***Ինճիկյան***, Վարդգես ***Միքայելյան***, Ալբերտ ***Խառատյան*** (1988-ից): Տպագրում է պատմության, գրակ-յան, լեզվաբանության, փիլ-յան, իրավունքի, տնտեսագիտ-յան, արևելագիտ-յան, ազգագրության և այլ բնագավառների վերաբերյալ հոդվածներ և ուսումնասիրություններ՝ հայ., ռուս., անգլ., գերմ., ֆրանս. և այլ լեզուներով, անդրադառնում է ՀՀ-ում հաս. գիտ-ների շարունակական զարգացմանը: Ամսագրում նյութեր են տպագրել Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանցը, Մ. Արեշյանը, Ս. Լիսիցյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Հովհաննիսյանը,

Բ. Պիոտրովսկին, Ա. Տերտերյանը, Ս. Երեմյանը, արտերկրի և Սփյուռքի ճանաչված գիտնականներ:

«ԼՐԱԳԻՐ», անկախ օրաթերթ: Լույս է տեսել 1993–96-ին Երևանում: Խմբագիր՝ Հայկազ Դահրիյան: Արծարծել է հաս., քաղ., տնտ. խնդիրներ, ունեցել է նաև տեղեկատվության, մշակույթի և մարզ. բաժիններ:

«ԼՐԱՔԱՂ», կրոն. ամսաթերթ: Մինչեւալի Սբ Հակոբ հայկ. եկեղեցու պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1958-ից Մինչեւալում: Լուսաբանում է Կանադայի, մասնավորապես՝ Մինչեւալի հայկ. գաղութի կյանքը, անդրադառնում է Սփյուռքի այլ համայնքների առօրյային, տպագրում է կրոն. հոդվածներ, ծանոթացնում է հայ եկեղեց. կյանքի նորություններին:

«ԼՐՈՅ ԳԻՐ» («Լրոյ գիր Մեծի տէրութեանն օսմանեան»), շաբաթաթերթ, հայ. անդրանիկ պարբ-ը Թուրքիայում: Լույս է տեսել 1832–50-ին Կ. Պոլսում (1846-ին՝ «Սուրհանդակ Կոստանդեան», 1846–49-ին՝ «Յայտարար լրագիր Մեծի տէրութեանն օսմանեան», 1849–50-ին՝ «Սուրհանդակ Բիւզանդեան»)՝ ընդհատումներով: Խմբագիր-հրատարակիչներ՝ Գևորգ Գրիգորյան, Գալուստ Արապյան: Ստեղծվել է որպես թուրք. առաջինը՝ «Թագվիմի Վէգայի» («Լրոյ գիր») պաշտոնաթերթի հայ. տարբերակ: Հիմնականում արտացոլել է պալատ. անցուդարձը, ներկայացրել սուլթան. հրովարտակները ևն: Հետագայում հրատարակել է հայ իրականությանն առնչվող նյութեր, արտատպություններ՝ այլ պարբ-ներից (կրոնաբարոյախոս. ու կրթ. բնույթի հոդվածներ, հայտագրեր, նոր գրքերի համառոտ ծանոթագրություններ ևն):



«Լրոյ գիր», *1832–50, Կ. Պոլիս*

ԼՈՒԿԱՉԻ (Lukácsy, Լուքաչյան, Ղուկասյան) Խաչիկ Հովակիմի [30.3.1804, Բեդլեն (այժմ՝ Ռումինիայում)–24.10.1876, Գեռլա (Ռումինիա)], հայազգի հունգ. հայագետ, եկեղեց. և հաս. գործիչ: Ավարտել է Գեռլայի հայկ. դպրոցը և Կոլոժվարի (Կլուժ) ու Վիեննայի համալսարանների փիլ-յան և աստվածաբանության ֆակ-ները: 1828-ին Վիեննայի Մխիթարյան միաբանությունում ձեռնադրվել է հոգևորական: Տիրապետել է 9 լեզվի:



«Լումայ», *1896–1912, Թիֆլիս*

Արժեքավոր են Լ-ի «Տրանսիլվանիայի հայերի պատմություն» (լատ., 1859), «Տվյալներ Տրանսիլվանիայի հայերի պատմությունից» (հունգ., 1867) աշխատությունները, ինչպես նաև «Հունգարացիների նախնիները, նրանց վաղեմի անունները և բնակավայրերը՝ ըստ հայկական աղբյուրների» (հունգ., 1871) երկը:

Գրկ. **Գովրիկեան Գ.**, *Դրանսիլուանիոյ հայոց մեծրապօլիսը կամ Նկարագիր Կերլայ հայաքաղաքի, Վնն., 1896, էջ 143–149:*

«ԼՈՒՄԱՅ», գրական, քաղ., պատմ. և հանրային կիսամսյա (ապա՝ երկամսյա, վերջում՝ միամսյա) հանդես: Լույս է տեսել 1896–1912-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Գյուտ *Առանյան:* Տպագրել է հայ և ռուս դաս. հեղինակների գործեր, ազգագր., տեղագր., մանկավարժ. ուսումնասիրություններ, Մ. Նալբանդյանի և Ս. Նազարյանի նամակները, հուշագրություններ: «Մատենախոսություն» բաժնում հրատարակվել են Ս. Մանդինյանի, Ի. Հարությունյանի, Գ. Ենգիբարյանի հոդվածները, նմուշներ՝ քրդ. բանահյուսությունից:

Գրկ. Մատենագիտություն «Լումա» հանդեսի. Թիֆլիս, 1896–1912 (կազմ.՝ Կ. Քացախյան), Ե., 1988:



«Լույս» *հրատարակչության տպագրած գրքերից*

«ԼՈՒՅՍ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1955-ին Երևանում՝ Հայպետհրատի ուսումնամանկավարժ. բաժնի հիման վրա՝ որպես ուս. գրակ. հրատարակող մասնագիտացված հրատարակչություն: Հրատարակել է հանրակրթ. դպրոցների, բուհերի, տեխնիկումների և Սփյուռքի հայկ. դպրոցների համար դասագրքեր, գիտահանրամատչելի, ուսումնա-



«Լույս», *2000-ից, Թեհրան (№ 171, 2012)*



«Լուսաբեր», *1949–71, Թեհրան (№ 1, 1949)*



«Լուսաբեր-Արեւ», *1904–13-ին, Կահիրե*

մեթոդ. ու մանկ. գրակ., ինչպես նաև գեղ. գրքեր ու բառարաններ: Տարեկան միջին հաշվով լույս է ընծայել 200–250 անուն գիրք: 1994-ից վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության:

«Լ.»-ի տնօրեններ են եղել Արմենակ Սալխասյանը, Երվանդ Մկրտչյանը, Վաչե Օհանյանը, Միքայել Մկրտչյանը, Մնացական Հայրապետյանը, Գրիգոր *Բալասանյանը*, Սոս *Մովսիսյանը*, Պերճ *Մուրեխանյանը*, Հովհաննես Հարությունյանը (1995-ից):

«ԼՈՒՅՍ», մշակութ. և հաս. ամսագիր: Լույս է տեսնում 2000-ից Թեհրանում՝ հայ. և պարսկ.: Խմբագիր՝ Էդիկ *Բաղդասարյան:* Լուսաբանում է իրանահայ համայնքի կյանքը, անդրադառնում է ՀՀ-ում, Արցախում, Սփյուռքում, Իրանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ԼՈՒՍԱԲԱՑ», ամենամյա գրական-գեղ. ժող.: Վրաստանի «Հայարտան», 1929-ից՝ Վրաստանի խորհրդ. գրողների դաշնության հայկ. մասնաճյուղի հրատ.: Լույս է տեսել 1927–31-ին Թիֆլիսում: Տպագրել է վրացահայ գրողների արձակ ու չափածո գործեր: Հանդեսին աշխատակցել են Շիրվանզադեն, Նար-Դոսը, Մ. Արազին, Գ. Մահարին, Վեսպերը և ուր.: Կերպարվ-ի բաժնում ներկայացվել են Մ. Սարյանի, Գ. Շարբաբչյանի, Գ. Գրիգորյանի (Ջիոտտո), Գ. Գյուրջյանի, Մ. Թարյանի և ուր. աշխատանքներ: Երաժշտ. բաժնում տպագրել է Ա. Տիգրանյանի, Վ. Տալյանի, Կ. Զաքարյանի, Ա. Մանուկյանի առանձին գործերի նոտաներ: Թարգմանաբար ներկայացրել է վրաց գրողների ստեղծագործություններից:

«ԼՈՒՍԱԲԱՑ», գրական ամսաթերթ: Ֆրանսահայ երիտասարդ գրողների պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1938–39-ին Փարիզում (4 համար): Խմբագիր-հրատարակիչներ՝ Պետրոս *Զարոյան*, Զարեհ *Որբունի:* Տպագրել է չափածո և արձակ ստեղծագործություններ, գրաքննադատ. ու հրապարակախոս. հոդվածներ, գրախոսականներ, արվ-ի և մշակույթի հարցերին նվիրված ուսումնասիրություններ: Թղթակցել են Ա. Սեման, Բ. Թոփալյանը, Գ. Քերեստեճյանը և ուր.:

«ԼՈՒՍԱԲԱՑ», ազգ., հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ: ՍԴՀԿ պաշտոնաթերթ, Տորոնտոյի Նոր սերունդ մշակութ. միության հրատ.: Լույս է տեսնում 1982-ից Սինրեալում: Խմբագիր՝ Պետրոս Սուշեյան: Լուսաբանում է կուս-յան գործունեությունը, կանադահայ համայնքի կյանքը, անդրադառնում է ՀՀ-ում, Արցախում, սփյուռքահայ գաղթավայրերում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, միջազգ. անցուդարձին:

«ԼՈՒՍԱԲԵՐ», մանկապատանեկան, գրական-գեղ., մանկավարժ. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1949–71-ին Թեհրանում: Խմբագիրներ՝ Աշոտ Սուրադխանյան, Արամ Գառոնե (Տեր-Բաղդասարյան): Տպագրել է խորհրդահայ, սփյուռքահայ և համաշխ. դասականների, իրանահայ երիտասարդների գրական գործեր, երգեր: Ներկայացրել է գրակ-յան և արվ-ի անվանի գործիչների (Կոմիտաս, Պ. Ադամյան, Ա. Իսահակյան, Ս. Զորյան և ուր.) կյանքն ու գործունեությունը, ծանոթացրել Հայաստանի պատմ. հուշարձաններին, երեխաներին սովորեցրել վարքականոններ ևն:

«ԼՈՒՍԱԲԵՐ–ԱՐԵՒ», ազգ., քաղ., տնտ. և գրական երկօրյա թերթ: Լույս է տեսել 1904–13-ին Կահիրեում. մինչև 1908-ը կոչվել է «Լուսաբեր», 1909-ին միացել է «Արեւ» օրաթերթին, դարձել «Լ.-Ա.», 1913-ին բաժանվել են, «Լուսաբերը» վերանվանվել է *«Յուսաբեր»*-ի: Խմբագիրներ՝ Վահան Քյուրքճյան, Վահան *Թեքեյան*, Արփիար *Արփիարյան*, *Երուխան*, Լևոն Մկրտչյան, Սուրեն *Պարթեյան*: Լուսաբանել և պաշտպանել է հայոց ազգ. շահերը, մեծ տեղ է հատկացրել եգիպտահայ համայնքի սոցիալ. և հանրային կյանքին առնչվող խնդիրներին:

«ԼՈՒՍԱԶԲԻՒՐ», գրական, գեղ. և գիտ. ամսագիր (հետագայում՝ շաբաթաթերթ, ապա՝ հայ-ֆրանս. պարբերագիրք)։ Լույս է տեսել 1952–56, 1959, 1970–71-ին Փարիզում։ Հրատարակիչ-խմբագիրներ՝ Պարույր Էլեկյան, Լևոն Սոփուկյան, Ավետիս ***Ալիքսանյան:*** Ֆրանս. բաժնի խմբագիր՝ Շահան Էլեկյան։ Համախմբել է ֆրանսահայ մտավորականներին, նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը։ Տպագրել է հայ գրողների ստեղծագործություններից, գրական-բանասիր. ուսումնասիրություններ, հոդվածներ՝ գիտ-յան, արվ-ի և մշակույթի խնդիրների վերաբերյալ։ Արժեքավոր են Հ. Զարդարյանի և Մ. Աթմաճյանի՝ Սիամանթոյին, Դ. Վարուժանին, Մ. Մանուշյանին նվիրած հուշագրությունները։ Թարգմանաբար ներկայացրել է նաև Վ. Մայակովսկու, Յ. Ռայնիսի, Պ. Էլյուարի և համաշխ. այլ հեղինակների գործերից։ Աշխատակցել են Զ. Որբունին, Լ. Մեսրոպը, Ե. Արմենը, Գ. Քերեստեճյանը և ուր.։

«ԼՈՒՍԱՅԳ», մանկապատանեկան պատկերազարդ ամսաթերթ։ «Միքս մեդիա» ընկերության պաշտոնաթերթ։ Լույս է տեսնում 2006-ից Ստեփանակերտում։ Հիմնադիր-խմբագիր՝ Սվետլանա Խաչատրյան։ Թղթակիցները հիմնականում դպրոցականներ են. ներկայացնում են արցախյան դպրոցների առօրյան, ուշագրավ դեպքեր կրթ. կյանքից, միջոցառումներ, տպագրվում են նաև նրանց ստեղծագործություններից։

ԼՈՒՍԱՆՅԱԳԻՐ, լեգենդա (<լատ. legenda–բառացի՝ այն, ինչ պետք է կարդալ)։ 1. Քարտեզներում պայման. նշանների հավաքածուն՝ անհրաժեշտ բացատրություններով։ 2. Պատկերի տակագրի մի հատվածը, որտեղ նշվում են պատկերազարդման բնագրի տեղը, գեղ. ու տեխ. բնութագրերը, ստեղծման տարեթիվը ևն։ 3. Փաստագր. հրատ-յան մեջ՝ փաստաթղթի մասին տեղեկատվ. տվյալները՝ փնտրման ծածկագրի (շիֆր), իսկության, լեզվի, վերարտադրման եղանակի, արտաքին տեսքի առանձնահատկությունների մասին նշումները։

ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴ, լուսանցանկար, զարդ կամ՝նկար՝ ձեռագիր (նաև տպագիր) գրքի լուսանցքներում (բուս. ու կենդ. մոտիվներով և սյուժետային պատկերներ)։ Առաջացել է ***կողեքսի՝ գրքի*** ձևավորումից հետո, որովհետև ***գլխարակիաթեթները*** լուսանցք չեն ունեցել։ Լ-երն ավանդաբար շրջանակ ու ֆոն չունեն և տեղադրվել են հիմնականում այն բառերի կամ սկզբնատառերի հարևանությամբ, որոնց վերաբերել կամ նրանց հետ կազմել են հորինվածքային ամբողջություն, երբեմն էլ նրանց հետ կապվել են բարակ գծիկներով։ Լ. հայկ. ձեռագրերում տարածվել է միջնադարում, իսկ կիլիկյան մանրանկարչության մեջ (XIII–XIV դդ.) հասել է իր բարձրակետին։ Մինչև 1900-ական թթ. լայնորեն օգտագործվել է նաև հայկ. տպագրության մեջ՝ հատկապես պատկերազարդ հրատ-ներում։

ԼՈՒՍԱՆՑՔ, տպագրված էջի 4 կողմերում սպիտակ, չտպագրված հատվածները։ Էջը (երես) ունի 4 լուսանցք՝ վերևի (գլխի), ներքևի (պոչի), դրսի (դիմացի) և ներսի (արմատի)։ Դրանց չափերը կախված են էջի ընդհանուր և տեքստի մակերեսների հարաբերությունից և կարգավորվում են չափորոշիչով։ Էջի տեքստը և գրաֆ. պատկերը տեղադրվում են Լ-ի շրջանակի ներսում։

«ԼՈՒՍԱՇԱԽԻՂ», տաղերի ժող.։ Կազմել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Գալուստ Ամասիացին։ Տպագրվել է 1704-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության։ Տիտղթ-ին՝ «Գիրք որ անուանեալ կոչի Լուսաշաւիղ...» (224 էջ, 8º, 12 x 7,2 սմ)։

«ԼՈՒՍԱՐԱՐ», կրթագիտ., մշակութ. տասնօրյա (մինչև 2003-ը՝ ամսաթերթ, մինչև 2009-ը՝ կիսամսյա) թերթ։ ԼՂՀ կրթության և գիտ-յան նախարարության պաշտոնաթերթ։ Լույս է տեսնում 1999-ից Ստեփանակերտում։ Խմբագիրներ՝ Կոմիտաս Դանիելյան, Սվետլանա

Լուսանցազարդեր



«Մշո Ճառընտիր» (1200–1202, ծաղկող՝ Սյեփանոս, Մատենադարան, ձեռ. № 7729)



«Ջէյթունի Աւետարան» (1256, ծաղկող՝ Թորոս Ռոսլին, Մատենադարան, ձեռ. № 1045)



1295-ի Ասփվածաշունչ (Թուղթ կողոսացիներին, գրիչ՝ Սյեփանոս, Մատենադարան, ձեռ. № 180)



«Լուսարար», *1999-ից, Սրեփհանակերտ*



«Լուսարձակ», *1926–28, Կահիրե*



«Լուսարձակ», *1939-ից, Սպիտակ*

Խաչատրյան (2000-ից): Լուսաբանում է ԼՂՀ գիտ., կրթամշակութ. ձեռքբերումները, նորությունները, ՀՀ ԿԳՆ-ի հետ համատեղ այդ բնագավառների առաջընթացին միտված միջոցառումները, Արցախի դպրոցականների և ուսանողների առօրյան:

«ԼՈՒՍԱՐՁԱԿ», հաս-քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1920–24-ին Վառնայում: Արտոնատեր՝ Սիմոն Պենկյան, խմբագիր՝ Տիգրան Մարտիրոսյան: Ունեցել է ռամկավար ազատական ուղղվածություն: Նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանն ու հայապահպանությանը, տեղահանված հայությանը կոչ արել հանգրվանել հայրենիքում: Լուսաբանել է գաղութահայ հաս-մշակութ. կյանքը, կարևորել առաջադիմ. կազմակերպությունների համագործակցության անհրաժեշտությունը, կրթ. հաստատությունների աշխատանքը: Անդրադարձել է հայ արվեստագետների կյանքին ու ստեղծագործություններին, տպագրել գրական-գեղ., բանասիր. գործեր, թերթոններ, արտատպել նյութեր խորհրդահայ մամուլից:

«ԼՈՒՍԱՐՁԱԿ», հաս-քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1926–28-ին Կահիրեում: Արտոնատեր՝ Սարգիս Միսայելյան: Խմբագիրներ՝ Մարտիրոս Պալայան, Ազարիկ Գոլոյան, Մառի ***Պեշկերյան,*** Զարուհի Ծաղկունի: Ունեցել է ինչակյան ուղղվածություն: Լուսաբանել է Եգիպտոսի և Մերձ. Արևելքի հայ գաղթավայրերի ազգ., քաղ. կյանքը, հաս. կազմակերպությունների աշխատանքները: Մասնակցել է երկրաշարժից տուժած Լենինականին օգնություն կազմակերպելու գործին: Կարևորել է սփյուռքահայ դպրոցների հայապահպան դերը, տպագրել ծավալուն հոդվածաշար Եգիպտոսի ազգ. վարժարանների պատմության մասին: Ունեցել է նաև առողջապահ. բաժին: Տպագրել է մարզ. լուրեր, թերթոններ:

«ԼՈՒՍԱՐՁԱԿ», հաս-քաղ., տնտ., մշակութ., վերլուծ. տասնօրյա թերթ: Լույս է տեսնում 1939-ից Սպիտակում (1939–92-ին՝ «Ստախանովական կոլտնտեսական», «Սպիտակի կոլտնտեսական», «Փարոս», «Լուսարձակ», «Սպիտակ», մինչև 1990-ը՝ ՀԿԿ Սպիտակի շրջկոմի աշխատավորների պատգամավորների շրջ. և քաղաքային խորհուրդների պաշտոնաթերթ): Խմբագիրներ՝ Սուրեն Սերոբյան, Լևոն Կանցյան, Վարշամ Դանիելյան, Արիստակես Պապոյան, Զիվանշիր Մաթևոսյան, Մերժան Հովսեփյան, Աղվան Կարապետյան, Ալբերտ Կյուրեղյան, Ֆահրադ ***Ափոջանյան*** (1992-ից): Լուսաբանում է շրջանի տնտեսությունների, արդ. ձեռնարկությունների աշխատանքները, կրթամշակութ., մարզ. առօրյան, տպագրում է շրջ. լուրեր, ընթերցողների գրական փորձեր, անդրադառնում է նաև ՀՀ-ում և աշխարհում տեղի ունեցող հաս-քաղ. կարևոր իրադարձություններին:

«ԼՈՒՍԱՐՁԱԿ», Սոնրեալի Հայ ավետարան. եկեղեցու եռամսյա պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1981-ից Սոնրեալում: Տպագրում է հիմնականում կրոն. բովանդակությամբ նյութեր, ծանոթացնում կրոն. իրադարձություններին, լուսաբանում է տեղի հայկ. մշակութ. կյանքը:

«ԼՈՒՏՈՎԻԿՈՍ XVI-Ի ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՏԱԿ», տպագրվել է 1793-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում:

Խ


Խ, հայ. այբուբենի 13-րդ տառը, անվանումը՝ «խե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար և դրանցից աջ՝ կենտրոնում, միմյանցից հավասար հեռավորությամբ կարճ ու լայն տարրերից. հորիզոն. նուրբերով կարճը վերևից միանում է երկարին, իսկ լայնը ներքևից՝ կարճին: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Խ, որպես այբուբենի տասնավորների սյան 4-րդ (13-րդ) տառ, նշանակել է քառասուն և քառասուներորդ, բյուրի նշանով (Խ՝)՝ 40 բյուր (400 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Խ–մաս 40-րդ):

«ԽԱԹԱԲԱԼԱ», երգիծ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1906–16, 1922 և 1925–26-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Աստվածատուր Երիցյան, Աշոտ *Աթանասյան*, *Ափրպեկ*, Սարգիս *Խանոյան*: Տպագրել է ֆելիետոններ, առակներ, հանելուկներ, դատապարտել է օսմ. Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը, արձագանքել միջազգ. իրադարձություններին: Արժեքավոր են Գ. Բաշինջաղյանի, Գ. Երիցյանի, Գ. Գրենևսկու, Ա. Միրզոյանի, Օ. Շիլինգի, Գ. Ռոստերի պատկերազարդումները: Աշխատակցել են Մ. Բագրատունին, Կ. Մելիք-Շահնազարյանը, Գ. Լևոնյանը, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Մ. Արազին, Ս. Զորյանը և ուր.:

ԽԱԺԱԿ (Չագայան) Գարեգին (1867, Ալեքսանդրապոլ–1915, Մեծ եղեռնի զոհ), հաս-քաղ. գործիչ, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Ժնևի համալսարանը (1898): 1895-ին «Դրօշակի» խմբագրությունը Խ-ին ուղարկել է Բալկաններ՝ քարոզչության: 1903-ին Կ. Պոլսից մեկնել է Կովկաս: Թիֆլիսում աշխատակցել է «Մշակ» թերթին, մասնակցել «Յառաջ» (1905–06, Ավետիս *Ահարոնյանի* ու Եղիշե *Թումիչյանի* հետ) և «Ալիք» (1906) թերթերի հրատարակմանը: 1912-ին ստանձնել է Կ. Պոլսի Սամաթիայի ազգ. վարժարանի տնօրինությունը, աշխատակցել «Ազատամարտին»:

Լույս են տեսել Խ-ի «Հարկերը Տաճկաստանում» (1903, Բաքու, «Արոր» տպ.), «Դէպի ֆէդէրացիա» (1907, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Ինչ է ազգութիւնը» (1912, ԿՊ, Թագվոր Սանճագյանի տպ.), «Ինչ է դասակարգը» (1912, ԿՊ, «Ազատամարտի» տպ.), «Ազգերու պատմութիւնը» (հ. 1, 1913, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Հայերու պատմութիւնը» (1914, նույն տպ.) աշխատությունները, «Տառապանքի գիշերը» (1912, ԿՊ, «Ազատամարտի» տպ.) հուշագրությունը: Թարգմանել է Կ. Կաուցկու «Ազգութիւնների հարցը






«Խաթաբալա», *1906–1926, Թիֆլիս*



Գարեգին Խաժակի *«Հարկերը Տաճկաստանում» (1903, Բաքու) գրքի փիփղոսաթերթը*



Բագրատ Խալաթյանի *«Հայ ժողովրդական դիւցազնական վէպը...» (1903, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



Սամվել Խալաթյանի *«Վերջին ծաղրածուն» (2007, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

Ռուսաստանում» (1906, Թ., «Հերմես» տպ.) աշխատությունը, Պ. Վինոգրադովի «Ձեռնարկ ընդհանուր պատմութեան» (1906, Թ., նույն տպ., 1912, Թ., Ն. Աղանյանի տպ.,) դասագիրքը ևն:

ԽԱԼԱԹՅԱՆ Բագրատ Աբրահամի (մոտ 1860, Ալեքսանդրապոլ–1930/1935), բանագետ, պատմաբան: Սովորել է Մոսկվայում և Գերմանիայում: Եղել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ: 1899-ին հրատարակել է մոկացի Զատիկ Խապոյենցից գրառած հայկ. ժող. վիպերգի մի տարբերակ («Սասմայ փահլիաններ կամ Թըլլօր Դաւիթ եւ Միհր», Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.):

Լույս են տեսել Խ-ի «Տասնիններորդ դարի կտակը» (1899, Թ., Մնացականի Մարտիրոսյանի տպ.), «Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ» (1901, Փ., «Բանասերի» տպ.), «Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին» (1902, նույն տպ.), «Հայ ժողովրդական դիւցազնական վէպը...» (ռուս՝. 1900, գերմ՝. 1902, հայ.՝ 1903, Վնն., Մխիթարյան տպ.), «Աղբիւրներ հնագոյն հայոց պատմութեան» (1903, նույն տպ.) աշխատությունները: Գրաբել է «Ռոստամ Զալ»-ի 5 տարբերակ, ինչպես նաև քրդ. մի քանի վիպ. երգեր: Արաբ մատենագիրների երկերից քաղել ու թարգմանել է Հայաստանին վերաբերող նյութեր («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», 1919, նույն տպ.):

ԽԱԼԱԹՅԱՆ Սամվել Միհերի (ծ. 9.1.1950, Վանաձոր), դրամատուրգ, արձակագիր, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (2010): Ավարտել է ՎՊՄԻ (1978): 1990–2001-ին՝ *«Եղինջ»* երգիծ., 1996–2001-ին՝ «Խաթաբալա», 1998–2002-ին՝ «Արփի» պարբ-ների հիմնադիր-խմբագիր, միաժամանակ, 1990–96-ին՝ «Վերածնունդ», 1996–99-ին՝ *«Լոռու մարզ»* պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Խ-ի «Մտվերները չքանում են կեսօրին» (1993) վիպակը, «Յպահանջ» (1994) բանաստեղծությունների ժող-ը, «40 օր համբառնալուց առաջ» (2000) տրագիկոմեդիան, «Ուղղալարի հրաշքը» (2002) վավերապատումը, «Հրաղադար» (2006, Համահայկ. գրական մրց.) պիեսը, «Վերջին ծաղրածուն» (2007) պիեսների ժող-ը, «Փոքր քաղաքի մեծերը» (2010), «Թագուհի» (2011) վեպերը ևն:

ՀԳՄ Մ. Սարգսյանի անվ. (2010), ՀԹԳՄ «Արտավազդ» (2013) մրց-ներ, ՀԹԳՄ ոսկե (2010), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2010) մեդալներ:

ԽԱԼԱԹՅԱՆՑ Գրիգոր Աբրահամի (1858, Ալեքսանդրապոլ–8.2.1912, Թիֆլիս), հայագետ, պատմաբան, ազգագրագետ, խմբագիր-հրատարակիչ: Պատմ. գիտ. դ-ր (1903), պրոֆ. (1906): Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1868–77), ավարտել Մոսկվայի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1884): 1886-ից դասավանդել է Լազարյան ճեմարանում, եղել է հայագիտ-յան ամբիոնի վարիչ (1890-ից), տեսուչ (1893–1903): Խ. խմբագրել է *«Էմինեան ազգագրական ժողովածու»*-ի 1–8 գրքերը (1901–12):

Լույս են տեսել Խ-ի «Մովսէս Խորենացին եւ հայոց հին վէպերը» (1871, Մ., Լազարյան ճեմ. տպ.), «Ղազար Փարպեցի եւ գործք նորին» (1883, Մ., Օթոն Հերբեկի տպ.), «Ծրագիր հայ ազգագրութեան եւ ազգային իրաւաբանական սովորութիւնների» (1887, նույն տպ.), «Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը» (1890, ՍՊբ, Ի. Սկորոխոդովի տպ.), «Եղիշէի Վարդանանց պատմութիւնը» (1892, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Զենոբ Գլակ» (1893, Վնն., Մխիթարյան տպ.), «Նամակ առ խմբագրութիւն Եղիշէի աղբիւրների առթիւ» («ՀԱ», 1895, № 4), «Հայոց վեպը Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (ռուս., 1896), «Մ. Խորենացի եւ իւր աղբիւրները» (1898, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Մ. Խորենացւոյ նորագոյն աղբիւրների մասին...» (1898, Վնն., Մխիթարյան տպ.), «Մարաբա Մծուրնացի կամ Կեղծ-Ագաթանգեղոս» (1898, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացւոյ...» (1906, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունները:

Գրել է «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (ռուս., 1903), որի համար Ս. Պետերբուրգի կայսեր. ակադ-ը նրան շնորհել է դ-րի կոչում, «Ակնարկ Հայաստանի պատմության...» (ռուս., 1910), որտեղ շարադրել է Հայաստանի քաղ. և տնտ. պատմությունը հնագոյն ժամանակներից մինչև քրիստոնեության պաշտոն. ընդունումը, «Հայ ժողովրդական հեքիաթների ընդհանուր տեսություն» (ռուս.՝ 1885, գերմ.՝ 1886) աշխատությունները: Նրա «Ա եւ Բ Մնացորդաց գրքերի նորագիւտ հայ թարգմանութիւնը» (1896, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) և «Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն

հայ թարգմանութեան» (1899, Մ., Վարվառե Գատցուկի տպ.) ուսումնասիրութիւնները կարևորվում են Սբ Գրոց հայ. թարգմանության ու Աստվածաշնչի ստեղծման պատմության լուսաբանման և ուսումնասիրման համար:

Ռուս. է թարգմանել «Սասունցի Դավիթ» (1881) դյուցազներգությունը, որը հրատարակվել է նաև գերմ. (1886):

Գրկ. **Շահնազարեան Ա.**, *Պրոֆ. Գրիգոր Աբրահամեան Խալաթեան, «ԱՀ», 1912, գիրք 12, № 1:* **Աբրահամեան Ռ.**, *Գրիգոր Խալաթեանց, «Արարատ», 1912, № 3:*

ԽԱԼԱՓՅԱՆ Զորայր Երվանդի [1.8.1933, գ. Թալիշ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–18.7.2008, Երևան], արձակագիր, դրամատուրգ: Ավարտել է ԵՊՀ (1956): 1994–96-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Խ-ի «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» (1966, հեռուստաֆիլմ՝ 1992), «Ջերմանց մխիթարություն» (1979), «Միջնաշեն» (1991) վեպերը, «Երիցուկի թերթիկներ: Ձեր դիմանկարը» (1971), «Մեռնող հառնող» (1975), «Ծնանդա» (1985) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Վասիլ Մեծ...» (1995), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (1998), «Ասպետն ու զինակիրը» (2003) պատմավեպերը, «Հրաշք երեխա» (1973) պիեսների ժող-ը:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (1991):

Երկ. Որտե՞ղ էիր, մարդ Աստծո (ժող.), Ե., 1983: Եվ վերադարձնելով ձեր դիմանկարը (վեպ), Ե., 1987: Այսպիսի փխոր և ծիծաղելի բաներ. պատմվածքներ և վիպակներ, Ե., 1988:

ԽԱԼԴԱՐՅԱՆ Գրիգոր Խոջամալի (ծ. թ. անհտ–1787), հրատարակիչ, թարգմանիչ, բառարանագիր: 1770–80-ին ապրել է Լոնդոնում. փորձել է հիմնադրել հայկ. տպարան: 1780-ին ձուլել է տվել հայկ. տառեր և Ջոն Ռիվինգտոնի տպարանում հրատարակել է «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց» գիրքը, որտեղ զետեղված է նաև Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը: Նույն թվականին տեղափոխվել է Ս. Պետերբուրգ և 1781-ին իր հիմնադրած տպարանում լույս ընծայել Ռուսաստանում առաջին հայ. գիրքը՝ Այբբենարանը: Հետագա տարիներին հրատարակել է ևս 10 անուն գիրք՝ «Սկզբունք քաղաքական ուսմանց» (1785), «Պատմութիւն Սուրբ Գրոց» (1785), «Գիրք որ կոչի վէմ գայթակղութեան» (1786, ներառում է նաև անգլ-ից թարգմանած «Յաղագս իրաւանց» և «Յաղագս նախանձաւորութեան» բարոյախոս. գրվածքները), «Աւետարան ճաշու» (1786), «Տարեցոյց եւ օրացոյց» (1786), «Աստուածաղերս» (1786), «Եղիշէ: Պատմութիւն Վարդանանց» (1787), Ժամագիրք (1787) ևն: Խ-ի մահից հետո տպարանը կառավարել է նրա այրին՝ Եկատերինա Զախարի Խ. (վերջինիս Լեոն համարել է առաջին հայուհի տպագրիչը):


Խ-ի կազմած «**Գիրք որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան**» հայ-ռուս. բառարանը տպագրվել է 1788-ին Ս. Պետերբուրգում՝ իր հիմնադրած տպարանում: Տպակից է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքին (հայ. և ռուս., ռուս. թարգմ.՝ Խ-ի): Ա գրքի տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան...», Բ-ին՝ «Աղօթք Տեառն Ներսէսի Շնորհալոյս եւ Տիեզերահռչակ Հայրապետի» (168 էջ, 14 x 10 սմ):

Գրկ. **Թէոդիկ**, *Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նմանահանություն):* **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, Ե., 2012:* **Լեո**, *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:*


ԽԱԼԻԼԻ Նիզար (ծ. 1925, Հալեպ), արաբ թարգմանիչ, հայագետ, մանկավարժ: Թբիլիսիի Ասիայի և Աֆրիկայի ինստ-ի պատվ. պրոֆ. (1998): Սովորել է Հալեպի համալսարանի իրավաբանության և Լիբանանի համալսարանի բանասիրության ֆակ-ներում: 1943–46-ին Հալեպի Զավարյան դպրոցում դասավանդել է արաբ.: Իր աշակերտներից սովորել է հայ.: Ուսումնասիրել է հայոց պատմությունը, մշակույթը, մասնավորապես՝ գեղ. գրակ-ը: Նրա թարգմանությամբ առանձին գրքույկներով արաբ. հրատարակվել են Հ. Թումանյանի, Հ. Պարոնյանի, Գ. Զոհրապի, Ա. Իսահակյանի, Հ. Շիրազի, Վ. Պետրոսյանի, Ս. Խանզադյանի ստեղծագործություննե-



Գրիգոր Խալաթյանց



Գ. Խալաթյանցի *«Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացւոյ...» (1906, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



Գրիգոր Խալդարյանի *«Գիրք որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան» (1788, ՍՊբ) բառարանի փիփղոսաթերթը*



Գ. Այվազյանի «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» (1869, Թեոդոսիա, **Խալիպյան վարժարանի տպ.***) գրքի փիփղոսաթերթը*



Խանազատի *«Հին աշխարհի պատմութիւն» (1912, Թիֆլիս) գրքի կազմը*



Լիդա Խանամիրյան. *Ղ. Աղայանի «Անահիտ» (1973, Ե., «Հայաստան») հեքիաթի պատկերազարդումներից*

րից: Արժեքավոր են Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» (1994) պոեմի, Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» (1999) երկի նրա արաբ. թարգմանությունները, ինչպես նաև «Հայկական կոտորածների մասին արաբական վկայություններ» (1995) ժող-ի հրատարակումը: Հեղինակ է նաև հայկ. մշակույթին, հայ-արաբ. գրական առնչություններին նվիրված բազմաթիվ հոդվածների: Խ. հայ. է թարգմանել արաբ հեղինակների գործերից: Գրում է նաև հայ. բանաստեղծություններ:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ԽԱԼԻՊՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ, հիմնադրվել է Թեոդոսիայում 1858-ին՝ արդյունաբերող Հարություն Խալիպյանի (1790–1871) հատկացրած միջոցներով բացված Խալիպյան վարժարանին կից: Տպագրել է դասագրքեր, օրացույցներ, գեղ., պատմ., թարգման. և եկեղեց. գրակ. [Գ. Այվազովսկու (Այվազյան) «Նախակրթանք հայերէն լեզուի» (1860), «Դասատետր մեկնութեան խորհրդոյ եւ արարողութեանց սրբոյ պատարագին» (1862), «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» (1869), Ա. Գալֆայանի «Աշխարհագրութիւն», «Թուաբանութիւն», «Պատմութիւն հին ազգաց», «Պատմութիւն միջին դարու», «Պատմութիւն Սուրբ Գրոց», «Բենիամին Ֆրանքլին փիլիսոփային վարքը» (բոլորը՝ 1860), «Առձեռն բառգիրք ի տաճիկ լեզուէ ի հայ» (1863), Խ. Գալֆայանի «Բառգիրք յանգաց կամ յանգարան», «Լսարան կենցաղօգուտ գիտելեաց» (երկուսն էլ՝ 1860), «Ալաֆրանկա» (1862) կատակերգությունը և «Վարդենիք» (1863) բանաստեղծությունների ժող-ը, Բ. Պոպովյանի «Գանձարան հաւատոյ...» (1862) և «Վարք սրբոյ» (1864), Հ. Չերքեզյանի «Հայոց պատմութիւն» (1865), Հ. Տեր-Աբրահամյանի «Պատմութիւն Խրիմու» (1865), «Համառօտ պատմութիւն Հայոց» (1870) և «Յովսէփ Դ կաթուղիկոսի (Երկայնաբազուկ Արղութեանց) կենսագրութիւն...» (1871), «Լսարան հոգեշահ պատմութեանց...» (4 գիրք), Ն. Զեռնևսկու «Եօթն խօսք առ տղայս» (երկուսն էլ՝ 1869), Ս. Մաքսմաճյանի «Համառօտ քերականութիւն հայերէն լեզուի...», «Երեխայի կենաց առաջին տարիները» (երկուսն էլ՝ 1870), Է. Նավիլի «Յաւիտենական կեանք» (1871), Հ. Պեզճյանի «Վարքագրութիւն Յարութիւն ամիրայի...» (1872) ևն]: Գործել է մինչև 1876-ը:

Գրկ. **Այվազեան Գ.,** *Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին ազգիս հայոց (1858–1871), Թ., 1880:*

ԽԱՆԱԶԱՏ, Խան-Ազատ, Ռուբեն (Նշան Կարապետյան, 1862, Երևան–1929, Իրան), հաս-քաղ., ազգ-ազատագր. շարժման գործիչ, խմբագիր-հրատարակիչ: Հնչակյան կուս-յան (1887) հիմնադիրներից: Բարձրագույն կրթությունն ստացել է Ժնևում, որտեղ Ավետիս և Սարո *Նազարբեկների* հետ 1887-ին հիմնադրել և խմբագրել է *«Հնչակ»* թերթը:

Լույս են տեսել Խ-ի «Իդէալիզմ, թէ մատերիալիզմ» (1904, Թավրիզ, Հայոց առաջնորդարանի տպ.), «Ինչպէ՞ս պէտք է կազմել սահմանադրութիւնը» (1906, Թ., «Հերմես» տպ.) «Ինչ է սահմանադրութիւնը» (1907, նույն տպ.), «Դաշնակցութիւնը եւ իր ղեկավարները» (1907, Ալեք-պոլ, «Շիրակ» տպ.), «Յիշողութիւններ Խրիմեանի մասին» (1908, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Հայ յեղափոխականի յիշողութիւններ» («Հայրենիք», Բոստոն, 1927–29) աշխատությունները, կազմել է «Դասագիրք պատմութեան» (համահեղ., 1908, Թ., «Էպոխա» տպ.), «Հին աշխարհի պատմութիւն» (1912, Թ., Ն. Աղանյանի տպ.) դասագրքերը:

Թարգմանել է Կ. Կաուցկու «Կոլոնիական քաղաքականութիւնը անցեալում եւ ներկայում» (1904, Թավրիզ, Հայոց առաջնորդարանի տպ.) և «Ներկայեացուցչական կառավարութիւն» (1906, Թ., «Հերմես» տպ.) աշխատությունները, Ա. դը Յուսեի, Լ. Տոլստոյի, Գի դը Մոպասանի, Ա. Չեխովի ստեղծագործություններից:

Գրկ. **Ղարաջյան Գ. (Արկոմեդ Ս. Տ.),** *Ռուբէն Խանազատի հեքիաթները. Ովքե՞ր են հնչակյանները յեվ ինչ են ասում նրանք իրանց մասին, Թ., 1928:*

ԽԱՆԱՂՅԱՆ Գևորգ Նիկոլայի (14.8.1924, Երևան–13.1.2003, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1985): Ավարտել է ԵԳԹԻ (1954): Ստեղծագործել է գրքի գրաֆիկայի (Նար-Դոսի «Ինչպես բժշկեցին», 1959, Հ. Դուկասյանի «Անհանգիստ պատանեկություն», 1959 , Ս. Զորյանի «Պատմվածքներ», 1961, Գ. Բեսի «Աշիկն ու մաշիկը», 1962, Շիրվանզադեի «Նամուս», Ջ. Լոնդոնի «Պատմվածքներ» ևն) բնագավառում:

ԽԱՆԱՄԻՐՅԱՆ Լիդա (Լիդիա) Ազարիայի (17.3.1930, Երևան–18.5.2011, Երևան), նկարչուհի, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1955): 1965–1966-ին եղել է «Հայրենիքի ձայն» թերթի գեղ. խմբագիրը:

Պատկերազարդել է Ա. Սարգարյանի «Թթենու տակ» (1955), Ս. Զորյանի «Ճանապարհորդ Ջեկոն» (1957) և «Հին ծանոթներ» (1969), Ղ. Աղայանի «Հեքիաթներ» (1960, 1990) ժող-ը, «Անտառի մանուկը» (1966), «Անահիտ» (1973) հեքիաթները, Վ. Կարենցի «Հորս ճերմակ ձին» (1964), Ս. Սիւրադյանի «Մեծ եմ, թե փոքրիկ» (1966), Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (1970), Ն. Միքայելյանի «Արևի բանալին» (1972) և այլ գրքեր: 1950–80-ական թթ-ին պարբերաբար նկարազարդել է «Սովետական Հայաստան», «Հայաստանի աշխատավորուհի», «Պիոներ», «Ծիծեռնակ» ամսագրերը, «Պիոներ կանչ» թերթը, ձևավորել է նաև գրքերի և ամսագրերի շապիկներ:


Գրկ. Լիդա Խանամիրյան (կատալոգ, կազմ.՝ Տ. Մախմուրյան), Ե., 1975:



Գալուստ Խանենց

ԽԱՆԴԱՄՈՒՐՅԱՆ, Խանդամուր, Հուսիկ Միսակի (1915, Երզնկա–28.4.1986, Ծաղկաձոր), արձակագիր: 1945–50-ին եղել է «Սովետական գրականություն» ամսագրի, 1955–59-ին՝ «Գրական թերթի», 1959–68-ին՝ «Հայաստան» հրատարակչության սրբագրիչ, 1950–55-ին՝ ՀԱԳ-ի գրաղարանավար:

Լույս են տեսել Խ-ի «Լուսաբաց» (1956), «Հանդիպում» (1958), «Մանկության ընկերուհին» (1961), «Կանաչ ճամպրուկը» (1978) պատմվածքների ժող-ները, «Ո՞ւր է տանում գնացքը» (1964) վեպը, «Լուրջ կատակ» (1973) հումորային զրույցները, «Եզովպոս: Խիկար» (1963) վիպակը:



Սերո Խանզադյան

ԽԱՆԵՆՑ (Խանյան) Գալուստ (1910, Թեհրան–4.6.1998, Թեհրան), բանաստեղծ, խմբագիր: Սովորել է Թեհրանի Սեն Լուի ֆրանս. և Քուշեշ Դավթյան բարձրագույն դպրոցներում: 1935–43 և 1958–72-ին՝ *«Նոր էջ»* գրական ժող-ի հիմնադիր-խմբագիր: Կազմակերպել է «Նոր էջ» համանուն ընկերությունը, Իրանահայ ազգ. և մշակութ. միությունը (նախագահ՝ 1979–86):

Լույս են տեսել Խ-ի «Ամրողջ սրտով» (1957), «Հրաշալի զօրութիւն» (1972), «Բարեւ քեզ մարդ» (1974), «Լուսամուտ» (1993) բանաստեղծությունների ժող-ները:

ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» գրական մրց. (1974):

Երկ. Սիկոտքահայ բանաստեղծություն (ժող.), Ե., 1981: Հրաշալի զորութիւն, Ե., 1983:

ԽԱՆԶԱԴՅԱՆ Սերո Նիկոլայի (3.12.1915, Գորիս–26.6.1998, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), գրող: Սիակույթի վաստ. գործիչ (1972), Սոց. աշխատանքի հերոս (1984): 1990–94-ին՝ Հայ գրողների միության վարչության նախագահ: Ավարտել է Գորիսի մանկավարժ. տեխնիկումը (1934): 1934–41-ին եղել է ուսուցիչ Տաթև և Խնածախ գյուղերում: Խ-ին ժողովրդականություն է բերել «Մխիթար Սպարապետ» (1961, Ե., 1962, Կահիրե, ռուս.՝ 1978, կինոնկար՝ «Հուսո աստղ», 1978) պատմավեպը՝ նվիրված XVIII դ-ի հայ ազգ-ազատագր. շարժմանը:



Ս. Խանզադյանի *«Մխիթար Սպարապետ» (1962, Կահիրե) գրքի կազմը*

Լույս են տեսել նաև Խ-ի «Մեր գնդի մարդիկ» (1950), «Հողը» (գիրք 1–2, 1954–55, ռուս.՝ 1956), «Քաջարան» (1965), «Մատյան եղելությանց» (1966), «Երեք տարի 291 օր» (1972, ՀՀ Պետ. մրց.՝ 1977), «Սևանի լուսաբացը» (1974), «Արաքսը պղտորվում է» (1985), «Անդրանիկ» (1989), «Գարեգին Նժդեհ» (1993), «Ղարաբաղը կրակների մեջ» (2007) վեպերը, «Խոսեք, Հայաստանի լեռներ» (1976), «Թագուհին հայոց» (1978), «Շուշի» (1991) պատմավեպերը, «Լալ Համազը» (1955), «Որոտանի կիրճում» (1956), «Կարմիր շուշաններ» (1958, 1981, Թեհրան), «Կորած արահետներ» (1964), «Այրված տունը» (1965, կինոնկար՝ «Լքված հեքիաթների կիրճը», 1974), «Ամառ» (1979), «Հայրենապատում» (գիրք 1–3, 1981–84), «Ավանդատուն» (1986), «Պըլը Պուղի» (1988), «Ինչպես հիշում եմ» (1988) պատմվածքների, զրույցների, հուշերի, ավանդությունների

ժող-ները, «Քարանձավի բնակիչները» (1959), «Աձրևից հետո» (1969) վիպակ-ները, «Երկերի ժողովածուն» (հ. 1–5, 1967–70, հ. 1–6, 1981–83) ևն:

Խ-ի գործերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

ԽՍՀՄ Հայրենական պատերազմի II աստիճանի Կարմիր աստղի, Կարմիր դրոշի, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններ:

Գրկ. **Հայրյան Գ.**, *Սերո Խանզադյան (կյանքն ու գրական գործունեությունը), Ե., 1979:* **Պետրոսյան Թ.**, *Սերո Խանզադյանի պատմական արձակը, Ե., 1986:* **Մարգարյան Ի.**, *Սերո Խանզադյանի լեզվական արվեստը, Ե., 2010: Սերո Խանզադյան: Մատենագիտություն, Ե., 1992:*



Յոլակ Խանզադյան

ԽԱՆԶԱԴՅԱՆ Յոլակ Խորենի (23.3.1886, Ղարաքիլիսա–19.9.1935, Մոսկվա, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), գրականագետ, թարգմանիչ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1905) և Մոսկվայի համալսարանի իրավաբանության ֆակ-ը (1912): Մասնակցել է *«Գարուն»* (1910–12) գրական-գեղ. ալմանախի հրատարակմանը: 1922-ից դասավանդել է ԵՊՀ-ում, եղել է ռուս. գրակ-յան ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Խ-ի «Րաֆֆիի գեղարվեստական հայացքները», «Ակամա Հերոստրատները», «Քննադատության իրավունքը», «Ռեալիզմը թատրոնում» (չորսն էլ՝ 1913), «Ալեքսանդր Ծատուրյան» (1917), «Միքայել Նալբանդյանի «Դիվանի» առթիվ» (1933, բոլորը՝ ռուս.), «Ավետիս Ահարոնյան» (1926), «Ալեքսանդր Մյասնիկյան» (1926) աշխատությունները, «Հոդվածների ժողովածուն» (1963): Թարգմանել է Վ. Լենինի «Ինչ անել» և «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» (երկուսն էլ՝ 1939) աշխատությունները:

Հանդես է եկել նաև Գրասեր կեղծանվամբ:



Զատիկ Խանզատյան

ԽԱՆԶԱՏՅԱՆ Զատիկ Հակոբի [3.4.1886, Զմյուռնիա (այժմ՝ Իզմիր)–23.1.1980, Փարիզ], քարտեզագիր, հրատարակիչ: ՀԽՍՀ ԳԱ արտասահմ. անդամ (1967): Ֆրանսահայ մշակութ. միության պատվ. նախագահ: Ավարտել է Փարիզի նավագնացության և Ֆրանսիայի ՌԾՈՒ Գերագույն շտաբի բարձրագույն դպրոցները (1911): 1920-ին Ազգերի լիգայում եղել է աշխարհագետ-քարտեզագետ, 1930–55-ին՝ Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանի աշխարհիկ տնօրենն: 1920-ին հրատարակել է «Պատմական Հայաստանի ընդհանուր աշխարհագրական ատլասը» (25 քարտեզ), 1920–32-ին կազմել ու հրատարակել է Թուրքիայի և Պաղեստինի տնտ. աշխարհագրությունների, Այժիրի պատմ. աշխարհագրության ատլասները, 1960-ին՝ «Հայաստանի պատմ. քարտեզագրության ատլասը» ևն:

Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշան:

ԽԱՆԶԱՐՈՒՐԱՅԻՆ ԳՐՔԵՐ, **ինկունաբուլաներ** (<լատ. Incunabula–խանձարուր, սկիզբ), սկզբնատիպ, մինչև 1501-ը տպագրված գրքեր: Արտաքին տեսքով հիշեցնում են ձեռագիր մատյանները: Տառատեսակը մեծ մասամբ գոթական է, պարբերություններ չունեն, տպաքանակը՝ 100–300 օրինակ: Լույս են տեսել Խ. գ-ի շուրջ 40 հզ. տարբեր հրատ-ներ (ավելի քան 0,5 մլն օրինակ): Խոշոր հավաքածուներ կան Բեռլինի պետ., Բրիտ., Ռուսաստանի պետ., Մ. Սալտիկով-Շչեդրինի անվ. և ԳԱ-ի, ինչպես նաև Լիտվայի գրադարաններում:



Սարգիս Խանոյան

Հայ. Խ. գ. չկան: Տես նաև *Հնատիպ գիրք*:

ԽԱՆՈՅԱՆ Սարգիս (Սերգո) Մելիքսեթի [13(25).3.1877, Թիֆլիս–1937, անհատի պաշտամունքի զոհ], կուս., պետ. գործիչ, լրագրող: ՌՍԴԲԿ անդամ՝ 1902-ից: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1912–14-ին՝ Ս. Պետերբուրգի մանկավարժ. ակադ-ում: 1890-ական թթ-ին մասնակցել է Հայ բանվոր հեղափոխականների տպագիր պարբ-ների հրատարակմանն ու տարածմանը: 1902-ին Թիֆլիսում Ստեփան *Շահումյանի*, Բոգդան *Կնունյանցի*, Ա. Զուրաբյանի հետ գործուն մասնակցություն է ունեցել Հայ սոցիալ-դեմոկրատների միության ստեղծմանը և «Պրոլետարիատ» թերթի հրատարակմանը:

1915–17-ին Ասքանազ *Մռավյանի* հետ խմբագրել է բոլշևիկյան «Պայքար», «Բանուորի կռիվը», հետագայում՝ «Ալիք», «Պահակ», «Նոր

ուղի», «Կարմիր աստղ» թերթերը: 1919-ին փոխադրվել է Հայաստան, ընտրվել ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) անդամ: 1920-ի հոկտ-ին նշանակվել է Բաքվի *«Կոմունիստ»* (հայ.) թերթի խմբագիր, 1923–27-ին՝ «Սարտակոչ» (Թիֆլիս) օրաթերթի խմբագրակազմի անդամ: 1982-ին տպագրվել է Խ-ի «Ընտիր երկերը»:

Գրկ. **Սարգսյան Ս.,** *Սարգիս Խանոյան, Ե., 1985:*

ԽԱՆՋՅԱՆ Գրիգոր Սեպուհի (29.11.1926, Երևան–19.4.2000, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: ՀԽՍՀ (1967), ԽՍՀՄ (1983) ժող. նկարիչ: ԽՍՀՄ գեղ. ակադ-ի իսկական (1973–91) և ՌԴ գեղ. ակադ-ի պատվ. (1991) անդամ: ՀՀ ԳԱԱ ակադ. (1990): Ավարտել է ԵԳՈՒՀ (1945), ԵԳԻ (1951): 1950–60-ական թթ-ին աշխատակցել է «Ծիծեռնակ», «Պիոներ» ամսագրերին:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Թումանյանի «Անուշ» (հայ., ռուս., 1952), «Լոռեցի Սաքոն» (1957, ոսկե մեդալ, Երևան, բրոնզե մեդալ, Մոսկվա) պոեմները, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (հայ., ռուս., 1958, ոսկե մեդալ, Բելգիա, արծաթե մեդալ, Մոսկվա) վեպը, Ա. Իսահակյանի «Սասնա Միհեր» (1961), Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» (1966, ԽՍՀՄ Պետ. մրց՝ 1969), Գ. Էմինի «Սասունցիների պարը» (1975), Հ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» (ռուս՝ 1960, հայ՝ 1979–81), Ե. Չարենցի «Հատընտիր» (հայ., ռուս., 1987), Ս. Կապուտիկյանի «Գիրս մնա հիշատակող» (հայ., ռուս., 1988) և այլ գրքեր, որոնք կանխորոշել են ժամանակակից հայ գրքի գեղ. ձևավորման ընույթն ու գրաֆիկ. զարգացման ուղին: 1952–61-ին Մոսկվայի «Դետգիզ» («Մանկիրատ») հրատարակչության պատվերով պատկերազարդել է 10 գիրք (ռուս., Հ. Թումանյան, Վ. Անանյան, Մ. Լերմոնտով և ուր.): Խ. «Հայկական եկեղեցիներ» (1970), «Հայկական խաչքարեր» (1973), «Էջմիածնի գանձեր» (1984), «Գանձարան Ալեք և Մարի Մանուկյան» (1984), «Աղթամար» (1985) գրքերի գեղ. խմբագիրն է:

«Գրքարվեստ» համամիութ. մրցույթի 1-ին կարգի (1976, Մոսկվա) և ՀՀ Պետ. (1983) մրց-ներ:

Երկ. Գրիգոր Խանջյան (ալբոմ, առաջաբ.՝ Մ. Ղազարյանի), Ե., 1978: Գրիգոր Խանջյան (ալբոմ, կազմ.՝ Ա. Խանջյան, Ս. Խանջյան, հայ., ռուս., անգլ., Ե., 2007):

Գրկ. **Степанян Н., Зурабов Б.,** *Григор Ханджян, М., 1987.*

ԽԱՆՋՅԱՆ Գուրգեն Վազգենի (ծ. 25.1.1950, Երևան), գրող, դրամատուրգ, խմբագիր: Ավարտել է Հայկ. գյուղատնտ. ինստ-ը (1977): 1992–96-ին աշխատել է ՀՀ ազգ. հեռուստատեսությունում, 1996–2003-ին՝ *«Նոր-Դար»* հանդեսի գլխ. խմբագրի տեղակալ, 2003-ից՝ ՀԳՄ «Սատիրիկոն», 2006-ից՝ *«Գրնթերք»* պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Խ-ի «Հիվանդանոց» (1994, 2011), «Նստիր Ա գնացքը» (2002), «Լուր չկա» (2006), «Ենոքի աչքը» (2011) վեպերը, «Շարժասանդուղք» (1994), «Ստվերներ խամաճիկների փողոցում» (1998), «Սպանել փրկչին» (2001), «Մարդկանց տուն ուղարկիր» (2004), «Նամակներ ընթացքից» (2009, ռուս.՝ 2010), «Թատրոն-301» (2008) պատմվածքների, էսսեների, վիպակների և պիեսների ժող-ները: Հեղինակ է «Լռության սիմֆոնիա» (2001), «Մաեստրո» (2011) կինոսցենարների:

ՀՀ Պետ. (1999), ՀԳՄ (2005, 2010), «Նարցիս» գրական ամսագրի (2007), ԹՄՄ (2010), ՀԹԳՄ «Արտավազդ» (2011) մրց-ներ:

ԽԱՆՈՍԱՆԱՄՅԱՆ Լևոն Հարությունի, **Խանզադե** [1873, գ. Երանոս (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–1938, անհատի պաշտամունքի զոհ], գրող: Ավարտել է Երևանի ռուս. սեմինարիան (1895):

Լույս են տեսել Խ-ի «Տէր Սաթալ եւ իւր զոհերը» (հ. 1, 1903, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.) վեպը, «Զաքարիա Ձագէցու օրերը» (1904, Սպր, «Պուշկինյան» տպ.) պատմավեպը, «Մեր արիւնոտ անցեալից» (1907, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Սեւանայ ուխտաւորները» (1907, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ներսէի յիշատակին» (1907, նույն տպ.) վիպակները, գրի է առել «Սասնա ծռեր» (հ. 2, հրտ. 1951) էպոսի պատումներից մեկը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Գևորգ Ավետիսի [12.2.1936, Երևան–11.6.1996, Լոս Անջելես, թաղված է ք. Աբովյանում], հանք. գործի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1988), Ուկրաինայի ԳԱ թղթ. անդամ (1991): Ավարտել է ԵՊԻ (1958): 1976–95-ին՝ նույն ինստ-ի լեռնամետալուրգ. ֆակ-ի դեկան:

Կազմել է «Լեռնատեխնիկական տերմինների ռուս-հայերեն բացատրական բառարանը» (1985):

Գրիգոր Խանջյան



Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» (1966, Ե., «Հայաստան») գրքի պատկերազարդումներից



Ս. Կապուտիկյանի «Գիրս մնա հիշատակող» (1988, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը



Գուրգեն Խանջյանի *«Նամակներ ընթացքից» (2009, Ե., հեղ. հրտ.) գրքի կազմը*



Լալիկ Խաչատրյան.
«Գրաբարի ուսումնական բառարան» (2013, Ե., «Զանգակ») գրքի կազմը



Հայկ Խաչատրյան



Հ. Խաչատրյանի
«Հայոց թագուհիները» (2006, Ե., «Ամարաս») գրքի կազմը

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լալիկ Մնացականի (ծ. 6.1.1952, Նոր Բայազետ), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2003): Ավարտել է ՀՊՄԻ (1973): 1982-ից դասավանդում է նույն բուհում, 2001-13-ին՝ հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Խ-ի «Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ» (1985), «Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում» (1996), «Հետաքրքրաշարժ լեզվաբանություն» (2010), «Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում» (2011) աշխատությունները, «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան»-ը (1998), «Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր»-ը (2003), «Գրաբարի ուսումնական բառարանը» (2013), «Գրաբարի դասագիրք» (2004), «Լեզվաբանության ներածություն» (համահեղ., 2008) ուս. ձեռնարկները:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հայկ Հարությունի [15.12.1926, գ. Դահրավ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–13.10.2001, Երևան], գրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1950): 1932–54-ին եղել է Կապանի շրջժողկրթբաժվարը, 1960–65-ին աշխատել է ***Արմենպրես*** գործակալությունում (1964–65-ին՝ գլխ. խմբագիր), 1965–71-ին՝ ***«Հայրենիքի ձայն»*** թերթի խմբագրի տեղակալ, 1971–2001-ին՝ Հայկ. հանրագիտարանի պատ. քարտուղար-գլխ. խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Խ-ի «Էրերունի» (1968), «Տիգրան Մեծ» (1972), «Արտավազդ» (1975), «Արտաշես» (1980), «Քերթողահայրը» (1985), «Խաշխաշ» (1987), «Երվանդ Սակավակյաց», 1989) պատմավեպերը, «Վանատուր» (1978), «Հացապատում» (1984), «Սոսյաց անտառ» (1988), «Կիլիկյան Հայաստանի երևելիները» (2001), «Նոյապատում» (2002), «Արքայապատում» (2006), «Հայոց թագուհիները» (2006) հանրամատչելի պատումաշարերը: Կազմել է «Հայկական օրացույցների և տարեցույցների մատենագիտություն. 1913–1973» (1976), «Մենկնկես դար ռուս գրքի հետ (1828–1976)» (1979) մատենագիտ., ՀԳՄ «Գրական տեղեկատու. 1934–1986» (1975, 1981, 1986) աշխատությունները:

ՀՀ Պետ. մրց. (1988, «ՀՍՀ»-ի համար):

Երկ. Բառը չզորացրվող զինվոր, Ե., 1990: Տրդատ Մեծի խաչը, Ե., 1996: Վաչագան, Ե., 1998: Գրիգոր Մագիստրոսի վերջին թողթը, Ե., 1999:

Գրկ. **Սաղյան Ծ.,** *Պատմական ոճավորումը Հ. Խաչատրյանի պատմավեպերում, Ե., 2002:*

ԽԱՉԱՏՐՅԱՆ Վահան Կարոյի (ծ.17.10.1944, Երևան), խմբագիր, հրատարակիչ: Ավարտել է ԵՊՀ (1971): 1970–71-ին աշխատել է «Գյուղատնտես», 1971–76-ին՝ «Երեկոյան Երևան» թերթերի խմբագրություններում, 1978–82-ին՝ ՀԿԿ ԿԿ-ում (մամուլի բաժանմունքի հրահանգիչ): 1982–91-ին՝ ՀՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետ. կոմիտեի նախագահի տեղակալ, 1991–98-ին՝ ***«Ապոլոն»*** հրատարակչության փոխտնօրեն, 1998–2010-ին՝ ***Հրատարակիչների ազգային ասոցիացիայի*** հիմնադիր-նախագահ, 2010-ից՝ գործադիր տնօրեն: 2003-ին՝ «Հեղինակային իրավունք» ամսագրի խմբագիր, 2004-ին՝ ***«Հայաստանի գրքերը տպագրության մեջ և վաճառքում»*** ամսագրի հիմնադիր-խմբագիր: ՀՀ-ում «Գրքի հարթակ» միջազգ. նախագծի համակարգողն է:

Խ. կազմել և հրատարակել է «Գիրքը՝ մեր հոգևոր հացը» (2000), «Գիրք, օրենք, իրավունք» (2000), «Հեղինակային իրավունք» (2000), «Գրահրատարակչական գործը Հայաստանում» (2000–2002)» (2003), «Նոր կոալիցիա գրահրատարակչական ոլորտի մասին» (2004), «Հեղինակային իրավունք և մտավոր սեփականություն» (2005), «Գիրք գրքի մասին» (2006) և այլ գրքեր:

ԽԱՉԱՏՐՅԱՆՑ Հակոբ (Յակով) Սամսոնի (դեկտ., 1884, Երևան–1.11.1960, Մոսկվա), թարգմանիչ: Ավարտել է Ս. Պետերբուրգի հա-մալսարանի բանասիր. ֆակ-ը:

Խ-ի թարգմանությամբ ռուս. լույս են տեսել «Հայկական հեքիաթներ» (1939, կնոջ՝ Մարիետա Շահինյանի առաջաբանով), «Հայկական նովելներ» (հ. 1, 2, 1945, 1948) ժող-ները, Շիրվանզադեի «Քաոս» (1956) վեպը, «Արտիստը» (1979) վիպակը, «Ընտրանի» (1947) ժող-ը, «Պատվի համար» դրաման, Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգությունը, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի և ուր. ստեղծագործություններից: Ռուս-ից հայ. է թարգմանել Ն. Բոգդանովի, Մ. Շահինյանի («Հիդրոցենտրալ», 1932) ստեղծագործություններից:

ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄՑԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ (1666, Կ. Պոլիս–1740, Վենետիկ), հանրագիտակ, փիլիսոփա, եկեղեց. գործիչ: Սովորել է Հռոմի Ուրբանյան կաթոլիկ. վարժարանում (1682–ից): 1696–70–ին Կ. Պոլսում քարոզել է կաթոլիկություն, 1708–ից դարձել Վենետիկի հայկ. համայնքի հոգևոր առաջնորդը: Աշխատությունների մի մասը լատ. է, որոնք հետագայում թարգմանվել են հայ.:

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են Խ. Է. Ա–ի՝

«**Քերականութիւն**» դասագիրքը. 1696–ին Լիվոռնոյում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք քերականութեան...» (124 էջ, 8º, 12,2 x 7,8 սմ):

«**Համառօտ մեկնութիւն երգոյ երգոցն Սողոմոնի**» երկը. 1700–01–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (258 էջ, 8º, 12,2 x 7,3 սմ):

«**Համառօտութիւն բարոյականի աստուածաբանութեան**» երկը. 1709–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (799 էջ, 4º, 18,6 x 12,5 սմ):

«**Քարոզգիրքը**». հ. Ա–Բ, 1710–ին նույն տպարանում: Տիտղթ–երին՝ «Բանք եւ Քարոզք, յաղագս տէրունական տօնից, եւ աւուրց աղուհացից, եւ տօնախմբութեանց Մարիամու, եւ սրբոյ խաչի..» (հ. Ա, 1202 էջ, 4º, 19,2 x 13,2 սմ, հ. Բ, 632 էջ, 4º, 19,2 x 13,4):

«**Համառօտական իմաստասիրութիւն**» հանրագիտ. չափածո աշխատությունը. հ. 1–2, 1711–ին նույն տպարանում: 1–ին հատորի տիտղթ–ին՝ «Համառօտական իմաստասիրութիւն... Հատոր առաջին, որ պարունակէ ի յարուեստից մինչեւ ի քաղաքականութիւն ներփակաբար» (757 էջ, 8º, 19,2 x 13 սմ), 2–րդ հատորի տիտղթ–ին՝ «Համառօտութիւն իմաստասիրութիւն... Հատոր երկրորդ, որ պարունակէ ի մաթեմատիքայէն մինչեւ ի մեթաֆիսիքայն ներփակաբար» (688 էջ, 8º, 19,2 x 13 սմ):

«**Ճարտասանութիւն**» երկը. 1713–ին նույն տպարանում: Տպագրվել է Քռուղայեցի Խոջա Սարհատի որդի պարոն Գասպարի միջոցներով (316 էջ, 4º, 19 x 12,4 սմ):

«**Լիակատար աստուածաբանութիւն**» չափածո երկը. մաս 1, հ. 1–2, 1729–ին նույն տպարանում: Տիտղթ–երին՝ «Լիակատար աստուածաբանութիւն, բաժանեցեալ ի վեց մասունս, որոց յառաջնում ընձեռի զԱստուծոյ, յերկրորդում զվարուց ի հասարակի, յերրորդում զվարուց ի մասնաւորի, ի չորրորդում զներմարմնութենէ, ի հինգերորդում զխորհրդոց եկեղեցւոյ, եւ ի վեցերորդում զվերջնոց մարդոյն» (հ. 1, 632 էջ, 4º, 18,7 x 11,6 սմ, հ. 2, 759 էջ):

«**Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն**» երկը. լատից թարգմ.՝ Մարիամ Քարաքաշյանի, 1733–ին նույն տպարանում (381 էջ, 12º, 11,2 x 6,2):

«**Կարճառօտագունեղ համառօտութիւն...**» երկը. լատ–ից թարգմ.՝ Մարիամ Քարաքաշյանի, 1736–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Կարճառօտագունեղ համառօտութիւն ընդհանրականի աստուածաբանութեան խոկականի, ուսումնականի, դրականի, բարոյականի...» (389 էջ, 4º, 16,5 x 11,5 սմ):

Գրկ. **Թորոսեան Հ.**, *Վարք Միխթարայ Աբբայի Սէբաստացւոյ, Վնտ., 1901:* **Լեո**, *Երկեր, հ. 3, Ե., 1973:* **Թադևոսյան Մ.**, *Հայկական կլասիցիզմի տեսությունը, Ե., 1977:*


ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՖԱՅԵՑԻ, **Խաչգռուզ** [1592, Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա՝ Ղրիմում)–1658/1661, Կաֆա], ժամանակագիր: Եղել է քահանա: Կազմել է 1583–1658–ի ժամանակագրությունը, որը կարևոր սկզբնաղբյուր է XVII դ–ի 1–ին կեսին Ղրիմում տեղի ունեցած պատերազմ. գործողությունների, Ղրիմի խանության և հատկապես ղրիմահայ գաղութի պատմության մասին: Գրված է ղրիմահայ բարբառով և կարևոր նշանակություն ունի հայ բարբառագիտ–յան համար:

Խ. Կ. հավաքել, ընդօրինակել և կազմել է նաև միջնադարյան հայկ. տաղերի ժող., որտեղ զետեղել է շուրջ 2 տասնյակ ժող. եր–




Խաչատուր Էրզրումցի Առաքելյան

«Լիակատար աստուածաբանութիւն» (մաս 1, 1729, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Կարճառօտագունեղ համառօտութիւն...» (1736, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



Խաչատուր Կաֆայեցու *«Ժամանակագրության» («Մանր ժամանակագրություններ», հ. 1, 1951, Ե., ԳԱ հրտ.) 1–ին էջը*



Խաչատուր Կեսարացու *հուշարձանը Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի բակում (2007, քանդ.՝ Ժ. Շահբազյան)*



Ժամագրքի (1642, Նոր Ջուղա, տպագրիչ՝ **Խաչատուր Կեսարացի***)կիսախոհան գլխազարդով (39-րդ) էջ*



Խաչատուր Ջուղայեցու *«Պատմութիւն Պարսից» (1905, Վաղ-պատ) գրքի տիտղոսաթերթը*

գեր (ընդգրկված են Ա. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժող-ում, 1956): Խ. Կ-ի կազմած ժող-ի ընդօրինակությունը մեզ հասած ամենահին հավաքածուն է: Ժամանակագրության հեղինակային ընագիրը և տաղերի այդ ինքնագիրը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 7709, ընդօրինակություն՝ 1620–58-ի): Ժամանակագրությունը հրատարակվել է գրական հայ. («Մանր ժամանակագրություններ», հ. 1, 1951) և գերմ. («Acta Orientalia Academia Scientiarum Hungaricae», 1975, t. 29, f. 2, p. 133–186):

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻ (մոտ 1260–մոտ 1331), բանաստեղծ, խմբագիր, մշակույթի գործիչ: Կեչառիսի միաբանության վանահայր: Հեղինակ է քնար. բանաստեղծությունների, հոգևոր երգերի, «Վասն աւերման տանս արեւելեան» պատմաքաղ. ողբի, «Վասն գալստեան մոգուցն» պարականոն զրույցի: Խ. Կ. առաջինն է խմբագրել Կեղծ-Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» երկի հայ. թարգմանությունը՝ հարստացնելով այն նաև իր հորինած կաֆաներով ու արձակ հավելումներով, պատկերազարդումներով: Նրա «Վասն աւերման տանս արեւելեան» ողբը և այլ ստեղծագործություններ ժամանակի հրատապ հարցերի արձագանքներն են: Խ. Կ-ու «Տաղերը» հրատարակվել են 1988-ին՝ Ա. Դոլուխանյանի աշխատասիրությամբ:

Գրկ. Տաշեան Յ., *Ուսումնասիրութիւնք Սրտոյն Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վնն., 1892:* Յովսէփեան Գ., *Խաղրակեանք կամ Պոշեանք հայոց պատմութեան մէջ, մաս 1, Վաղ-պատ, 1928:* Ավդալբեգյան Մ., *Խաչատուր Կեչառեցի, XIII–XIV դդ., Ե., 1958:*

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՑԻ (1590, Կեսարիա–1646, Նոր Ջուղա, թաղված է Սբ Ամենափրկիչ վանքի բակում), կրթ-լուսավոր. գործիչ, տպագրիչ: Երիտասարդ տարիներն անցկացրել է Կիպրոսի Սբ Սահակար վանքում, հետո մեկնել Երուսաղեմ, Կ. Պոլիս, ապա՝ Էջմիածին: Աշակերտել է Գրիգոր Դարանաղացուն, Գրիգոր Կեսարացուն, Մովսես Սյունեցուն, Մելիքսեթ Երևանցուն. ստացել է աստվածաբան., փիլ. գիտելիքներ, ուսումնասիրել Արիստոտելի, Պլատոնի, Դավիթ Անհաղթի ուսմունքները: 1620–46-ին եղել է Նոր Ջուղայի թեմի առաջնորդը և Սբ Ամենափրկիչ վանքի վանահայրը: 1630-ական թթ-ին հիմնադրել է դպրոց (ժամանակակիցներն անվանել են համալսարան) և մատենադարան, որտեղ հավաքել են Հայաստանից և այլ տեղերից բերված հայ. ձեռագրեր: Նրա սաներից էին Հակոբ Ջուղայեցին, Ոսկան Երևանցին, Հովհաննես Ջուղայեցին և ուր.: 1638-ին Նոր Ջուղայում հիմնադրել է ինքնուրույն տպարան, որն առաջինն էր Իրանում ու Միջին Արևելքում և գնահատվել է որպես «տպագրության ինքնուրույն հայկական գյուտ» (Ռ. Իշխանյան) (տես ***Նոր Ջուղայի հայկական տպագրություն***): Տեղում պատրաստած տպատառերով տպագրել է Սաղմոսարան (1638), Խորհրդատետր (1641), «Հարանց վարք» (1641), Ժամագիրք (1642) և այլ գրքեր:

Գրկ. Տէր-Յովհաննեան Յ., *Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 2, Նոր Ջուղա, 1881, էջ 18–20:* Ալպոյաճեան Ա., *Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. 2, Կահիրէ, 1937, էջ 1022–1024:*

ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ [ծ. թ. անհտ, Նոր Ջուղա–մ. թ. անհտ, Բասրա (այժմ՝ Իրաքում), վախճանվել է Հնդկաստան մեկնելու ճանապարհին], XVIII դ-ի պատմագիր: Կրթությունն ստացել է ծննդավայրի Սբ Ամենափրկիչ վանքում, ձեռնադրվել աբեղա: Հայկ. պատմագր. աղբյուրների հիման վրա գրել է «Պատմութիւն Պարսից» (հրտ.՝ 1905, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) երկը [Աքեմենյան Կյուրոս II Մեծի (մ. թ. ա. 550–530) ժամանակներից մինչև Զենդ Քերիմ խանի տիրակալությունը (1760–79)]. վերջին հատվածը շարադրել է որպես դեպքերի ականատես: Զգալի տեղ է հատկացրել առանձնապես XVII դ-ի սկզբին շահ Աբբաս I-ի կազմակերպած հայերի բռնագաղթին և Նոր Ջուղայի հիմնադրմանը: Խ. Ջ-ու երկը հատկապես կարևոր

սկզբնաղբյուր է Քերիմ խանի ժամանակաշրջանի, Նոր Ջուղայի հայկ. համայնքի և Թումիկի աղանդավոր. շարժման պատմության ուսումնասիրության համար:

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Գարեգին, **Տրապիզոնցի** (ավազանի անունը՝ Խաչիկ, 1880, Տրապիզոն–1961, Կ. Պոլիս, թաղված է Շիշլիի գերեզմանատանը), եկեղեց–հաս., կրթամշակութ. գործիչ, բանասեր, խմբագիր–հրատարակիչ, արքեպիսկոպոս, 1951–ից՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք: Սովորել է Կ. Պոլսի Ազգ., ապա՝ Մխիթարյան, 1896–ին՝ Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարաններում, ավարտել է Արմաշի դպրեվանքը (1901): 1909–18–ին *«Տաճար»* շաբաթաթերթի, 1928–35–ին՝ «Շողակաթ» (Ֆրեզնո) կրոն. ամսաթերթի, 1937–ին՝ «Սահակ–Մեսրոպ» (Մարսել) մշակութ. հանդեսի խմբագիր: Որպես կաթողիկոս. նվիրակ՝ 1935–38–ին գործել է Ֆրանսիայի հարավում, 1938–50–ին՝ Հվ. Ամերիկայում: 1943–47–ին Բուենոս Այրեսում հիմնադրել և խմբագրել է *«Արարատ»* ամսօրյա հանդեսը: 1953–ին Ստամբուլում բացել է Սբ Խաչ դպրեվանքը, 1952–ին հիմնադրել ու ցկյանս խմբագրել է *«Շողակաթ»* հանդեսը:

Լույս են տեսել Խ–ի «Կրօնաբարոյական եւ ընկերային շողակաթումներ» (քարոզներ, 1925, ԿՊ, Հովհաննես Սեթյանի տպ.), «Աշխարհի լոյսն ի հայս կամ Աւետարանի լոյսը Հայաստանեայց եկեղեցւոյ պրիսմակէն» (հ. 1–2, 1936, Փ., 1939, 1988, Անթիլիաս), «Արեւագալ» (1937, Մարսել, Ե. Արմեն և ընկ. տպ.), «Տարօնաշունչ» (1945, Բուենոս Այրես, «Արմենիա»–ի տպ.) և այլ աշխատություններ, աշխարհաբարի է փոխադրել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» («Նարեկ», 1926, ԿՊ, Հ. Սեթյանի տպ., 1948, Բուենոս Այրես, Ս. Դոքմեջյանի տպ.) պոեմը:

Գրկ. **Շիկահեր Վ.,** *Գարեգին պատրիարք Խաչատուրեան: Գ. Շնորհալի, Մարամրոկ, 2012:*

ԽԱՉԵՐՅԱՆ Լևոն Գևորգի [18.3.1924, Նիկոմեդիա (այժմ՝ Իզմիթ)–19.4.2007, Լոս Անջելես], լեզվաբան, հայագետ, բնագրագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1968): 1946–ին հայրենադարձել է: Ավարտել է ԵՊՀ (1954): 1954–58–ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ–ի, 1959–80–ին՝ Մատենադարանի գիտաշխատող: 1981–ից ապրել է ԱՄՆ–ում:

Լույս են տեսել Խ–ի «Գրչության արվեստի լեզվական, քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» (1962), «Եսայի Նչեցի: Վերլուծություն քերականության» (1966), «Վարդան Արևելցի: Մեկնություն քերականի» (1972), «Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ. XIII–XIV դդ.» (1973), «Գրիգոր Պահլաւունի Սագիստրոս (985–1058 թթ.)» (1987), «Եսայի Նչեցին եւ Գլաձորի համալսարանը» (1988), «Մեկնողական քերականագիտութիւնը, գրչութեան արուեստը եւ լեզուաբանական հարցադրումները. V–XVI դդ.» (հ. 1–2, 1989), «Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը եւ քերականագիտական միտքը V–XVI դարերում» (հ. 1–2, 1992), «Հայ դպրութեան պատմութիւնը քննական տեսութեամբ» (հ. 1–3, 2000), «Հայոց ազգային դիցարանը» (2001), «Հայագիտական ուսումնասիրութիւններ եւ հրապարակումներ» (հ. 1, 2, 2002, 2004) աշխատությունները:

Երկ. Հայոց համազգային մաշտոցեան համակարգռած, միասնական եւ միակերպ ուղղագրութեան պատմութիւնը (Ե–Ի դարեր), Լոս Անջելես, 1999:

Գրկ. **Խաչերյան–Փիլոսյան Ս.,** *Բանասիրական գիտութիւնների դոկտոր–պրոֆեսոր Լ. Խաչերեանի աշխատութիւնների մատենագիտութիւն, Գլենդել, 2002:*

ԽԱՉԻԿՅԱՆ Արտավազդ Վահանի (17.8.1918, Երևան–26.6.2000, Երևան), լրագրող, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1968): Ավարտել է Մոսկվայի կուս. բարձրագույն դպրոցը (1954): Եղել է *Արմենպրեսի* տնօրեն: 1981–90–ին՝ Հեռուստառադիոպետկոմի բաժնի վարիչ: 1990–ին հիմնադրել է «Հույս» հրատարակչությունը, 1991–ին՝ *«Կին և տղամարդ»* շաբաթաթերթը:

Լույս են տեսել Խ–ի «Բարեկամական հանդիպումներ» (1960), «Երևանի հոբելյանը: Քաղաքի 2750–ամյակի հոբելյանական տարեգրություն» (1972), «Թումանյան–100: Հոբելյանական տարեգրություն» (համահեղ., 1972), «Երկաթե վարագույրի երկու կողմերում» (2000) հրապարակախոս. հոդվածների, հուշերի, ուղեգրությունների ժող–ները:

Գրկ. **Սանթրյան Վ.,** *Արտավազդ Խաչիկյան: Էսքիզներ դիմանկարի համար, Ե., 2008:*




Գարեգին Խաչատուրյանի *«Տարօնաշունչ» (1945, Բուենոս Այրես) գրքի կազմը*



Լևոն Խաչերյանի *«Գրչության արվեստի լեզվական, քերականական տեսությունը...» (1962, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Արտավազդ Խաչիկյանի *«Երևանի հոբելյանը...» (1972) գրքի կազմը*



Լևոն Խաչիկյան



Լ. Խաչիկյանի *«Աշխատություններ» (հ. Գ, 2008, Ե., «Նաիրի») գրքի կազմը*



Յակով Խաչիկյանի *«Հայ էսթետիկական մտքի պատմությունից» (գիրք 5, 2004, Ե., «Ռուսկան Երևանցի») գրքի կազմը*

ԽԱՉԻԿՅԱՆ Լևոն Ստեփանի (1.5.1918, Երևան–12.3.1982, Երևան), պատմաբան, բանասեր–աղբյուրագետ, խմբագիր: Պատմ. գիտ. դ–ր (1962), պրոֆ. (1966), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1971, թղթ. անդամ՝ 1968–ից): Գիտ. վաստ. գործիչ (1968): Ավարտել է ԵՊՀ (1940): 1940–ից աշխատել է Մատենադարանում. 1940–44–ին՝ մատենագետ, 1944–ից՝ ձեռագրատան վարիչ, 1954–82–ին՝ Մատենադարանի տնօրեն:

Լույս են տեսել Խ–ի «Յաղագս տարեմուտին ի վանական վարդապետէ ասացեալ» (1941), «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» (1946), «Դիահերձումը հին Հայաստանում» (1947), «Դիտողութիւն Մ. Խորենացու Հայոց պատմութեան 2–րդ գրքի ԾԴ գլխի մասին» (1948), «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դ.)» (1951), «Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI–XVII դարերում» (1954), «Մատթեոս Ջուղայեցու կյանքը և մատենագրությունը» (1956), «14–15–րդ դարերի հայկական գյուղական համայնքի մասին» (1958), «Նոր նյութեր Կիևի հին հայկական գաղութի մասին» (1961), «Երզնկա քաղաքի «Եղբարց միութեան» կանոնադրությունը» (1962), «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը» (1963), «Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք» (1964), «Հակոբ Ջուղայեցու կտակը» (1966), «Սարգիս Արեղայի «Ուղեգրությունը»» (1970), «Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը» (1976), «Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա» (1980) աշխատությունները:

Խ. խմբագրել է ***«Բանբեր Մատենադարանի»*** գիտ. պարբ–ի III–XII հատորները, ինչպես նաև հայ միջնադարյան գիտ–յան ու մշակույթի պատմությանը վերաբերող հետազոտություններ: Նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարը:

Աղբյուրագիտ. մեծարժեք ներդրում են Խ–ի կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1950) և «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (հ. 1–3, 1955–67) երկերը: Խ–ի աշխատասիրությամբ լույս են տեսել Հովհաննես Տեր–Դավթյան Ջուղայեցու «Հաշվետումարը» (համահեղ., 1984), Եղիշեի «Մեկնություն արարածոց» (1992, 2004), Թովմա Մեծոփեցու «Պատմագրություն» (1999) երկերը:

ՀՀ ԳԱԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. (1969), ՀԽՍՀ Պետ. (1985) մրց–ներ:

Երկ. Աշխատություններ, հ. Ա–Գ, Ե., 1995–2008: Աշխատություններ, Ե., 2012: Գրկ. Լևոն Ստեփանի Խաչիկյան: Մատենագիտություն, Ե., 1991:

ԽԱՉԻԿՅԱՆ Յակով Իվանի (Թումանյան Յակով Անուշավանի, 17.7.1921, Ջալալօղլի–19.3.2015, Երևան), փիլիսոփա: Փիլ. գիտ. դ–ր (1969), պրոֆ. (1970): Գիտ. վաստ. գործիչ (1985): Ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակ–ը (1949): 1953–76–ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ փիլ–յան և իրավունքի ինստ–ում, միաժամանակ, 1953–73–ին՝ ԳԱ փիլ–յան ամբիոնի հիմնադիր–վարիչ, 1973–76–ին՝ տնօրեն, 1976–82–ին՝ ՀԿԿ ԿԿ գիտ. և ուս. հաստատությունների բաժնի վարիչ, 1982–88–ին՝ ԵՌՕԼՄԻ ռեկտոր, 1988–93–ին՝ ԵՃՇՊՀ դասախոս:

Լույս են տեսել Խ–ի «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» (համահեղ., գիրք 1–8, 1974–2009) գիտ. հետազոտությունների ժող–ը, «Ակնարկ հայ գեղագիտական մտքի զարգացման» (ռուս., համահեղ. և պատ. խմբ., 1976), «Հայ գեղագիտական մտքի պատմության մեթոդաբանական հարցեր» (ռուս., 2001) աշխատությունները, «Հուշեր» (հ. 1–5, 2002–13) գրքաշարը: Կազմել է «Շեքսպիրը արվեստի մասին» (հոդվածներ և ասույթներ, 1985), «Էսթետիկայի հարցեր» (հ. 1–7,... 1967–2013), «Հայ գրականության և արվեստի գործիչների տեսական գործերի ժողովածուներ» (հ. 1–6... , 1980–2009...), «Հայ արվեստի գործիչները արվեստի մասին» (հ. 1–6, 2004–12) մատենաշարերը, «Ստեփանավանցիներ» (2007) հանրագիտ. տեղեկատուն:

ԵՊՀ ոսկե (2000), Ուկր. ԳԱ Վլադիմիր Վեռնադսկու անվ. (2003), ՀՀ «Սովսես Խորենացի» (2012) մեդալներ: Ստեփանավանի պատվ. քաղաքացի (2005):

Երկ. Արվեստի էսթետիկայի հարցեր, Ե., 1978: Գեղագիտության հարցերը Նիկոլ Աղբալյանի աշխատություններում, Ե., 2003: Գեղագիտության հարցերը Լևոն Շանթի աշխատություններում, Ե., 2005: О познавательном значении искусства, Е., 1959; Абстракционизм и художественное познание, Е., 1968; Между Летой и Мнемозиной, Е., 2007; Гегель о соотношении видов искусства, Е., 2009; Вопросы истории эстетики, Е., 2011.

Գրկ. Յակով Իվանի Խաչիկյան: Կենսամատենագիտություն, Ե., 2006: Յակով Իվանի Խաչիկյան–90, Ե., 2011:

ԽԱՉՎԱՆՔՅԱՆ Տաճատ Հակոբի [14(26).3.1896, Ալեքսանդրապոլ–14.3.1940, Մագադան, անհատի պաշտամունքի զոհ], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Սովորել է Մոսկվայի բարձրագույն գեղ-տեխ. ինստ-ում (1925–30): 1930-ից դասավանդել է ԵԳԱՏ-ում, ԵՊԻ-ում: 1928-ին նկարազարդել է «Գիքորի երազը» (փոխադրությունը ռուս-ից՝ Ե. Չարենցի, ըստ Ս. Մարշակի «Գրքույկ գրքույկի մասին» պոեմի): 1930–37-ին եղել է *Հայպետհրատի* նկարիչը:

Նկարազարդել և ձևավորել է Ա. Վշտունու «Խոսում է ռադիո Ալժիրը», Ս. Զորյանի «Սպիտակ քաղաք», Պ. Դուրյանի «Տաղեր», Վ. Միրաքյանի «Լալվարի վորսը» (1929), Հ. Պարոնյանի «Երկերի լիակատար ժողովածու» (1931), Մ. Մեծարենցի «Երկերի ժողովածու» (1934), Ա. Պուշկինի «Հեքիաթներ» (1937), «Ոսկե ձկնիկը» և «Տերտերն ու իր Բալդի ծառան», Սայաթ-Նովայի «Երկերի ժողովածու», Հ. Թումանյանի «Երկեր», Մ. Արազու «Արձակ պոեմներ», Ե. Օտյանի «Երկերի ժողովածու», Վ. Վաղարշյանի «Սասունցի Դավիթ» (1938) և այլ գրքեր:

Գրկ. Տաճատ Խաչվանքյան: Նկարիչ (կազմ.՝ Ա. Ավագյան), Ե., 2007:

«ԽԱՉՔԱՐ», ազգ., հաս-քաղ., մշակութ. ամսագիր: Լույս է տեսնում 2007-ից Կրասնոդարում՝ ռուս.՝ «Հայ կյանքի հանրագիտարան» ենթախորագրով: Հիմնադիր-խմբագիր՝ Քրիստափոր Միքայելյան: Տպագրում է հայոց պատմությանը, հայ գրակ-յանը, մշակույթին, անվանի մարդկանց, պատմ. դեմքերին ու դեպքերին, ազգ. ավանդույթներին, հայկ. տոներին վերաբերող հոդվածներ, անդրադառնում է ռուս-հայկ. միջպետ. հարաբերություններին, ՀՀ-ի և ԼՂՀ-ի ներքին ու արտաքին քաղաքականությանը, տնտ., կրթամշակութ., մարզ. առօրյային, մեծապես նպաստում է ՌԴ-ում հայապահպան ծրագրերին: Տարածվում է ՌԴ-ի հայկ. համայքներում:

ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ Արմենակի (ծ. 24.9.1939, Երևան), պատմաբան, մատենագետ, բանասեր, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1986): Ավարտել է ԵՊՀ (1964): 1967–73-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում, 1973–85-ին՝ ՀՀ ԳԱԱ ԳՏԿ-ում, 1985–88-ին՝ պատմության ինստ-ում. 1991-ից՝ նույն ինստ-ի հայ հաս. մտքի և մամուլի բաժնի վարիչ, 1988-ից, միաժամանակ՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»*** հանդեսի գլխ. խմբագիր:


Լույս են տեսել Խ-ի «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1858–1890)» (1984), «Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857–1908)» (1989), «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)» (1995) աշխատությունները: Կազմել է «Արևելյան մամուլ (1871–1909)» (1976) և «Մեղու (1856–65)» (2003) հանդեսների մատենագիտ-ները:

Երկ. Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1980: Թերթի գեղակառույց, Ե., 2001: Հայ պարբերական մամուլի պատմութին (համահեղ.), հ. 1, Կահիրե, 2006: Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV–XVII դդ.), Ե., 2007:


«ԽԵԼՈՔ ԴԱԽԻԹ», գրական-քաղ. երգիծ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1918–19-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիր՝ Հովհաննես Ազնավուրյան, խմբագիր՝ Զավեն Սոյրյան: Դատապարտել է պատերազմը, Գերմանիայի զավթող. քաղաքականությունը, վերջինիս մեղսակից համարել արևմտահայերի ցեղասպանությանը, ծաղրել և պարսավել է երիտթուրքերի պարագլուխներին: Տպագրել է թերթոններ, ժամանցներ, հանելուկներ, ծաղրանկարներ ևն, ծանոթացրել հայկ. թատեր. կյանքին: Թղթակցել են Ալփասլանը, Թեոդիկը և ուր.:

ԽԵՉՈՅԱՆ Լևոն Վանիկի [8.12.1956, գ. Բարալեթ (Վրաստանի Ախալքալաքի շրջան) – 8.1.2014, Երևան], գրող: Ավարտել է Լենինականի մանկավարժ. ինստ-ը (1983): 1986–88-ին աշխատել է «Հրազդան» շրջ. թերթի խմբագրությունում: 1989–94-ին «Սասուն» կամավոր. ջոկատի կազմում մասնակցել է Ղարաբաղյան ազատագրական պատերազմին:

Լույս են տեսել Խ-ի «Խնկի ծառեր» (1991, ուկր., 2012), «Սև գիրք, ծանր բզեզ» (1999, անգլ., 2008), «Տան պահապան հրեշտակը» (2002, ռուս., 2007),



Տաճատ Խաչվանքյան. *Վ. Միրաքյանի «Լալվարի վորսը» (1929, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Ալբերտ Խառատյանի *«Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV–XVII դդ.)» (2007, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի տիտղոսաթերթը*




Լևոն Խեչոյանի *«Միհրի դռան գիրքը» (2014, Ե., «Անտարես») գրքի կազմը*



Վիգեն Խեչումյանի *«Գիրք լինելության» (1966, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Մկրտիչ Խերանյանի *«Երկար, երկար մի ճանապարհ» (1983, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Խիկարի *«Խրատք եւ իմաստութիւն...» (1709, Կ. Պոլիս) գրքի գլխազարդով և սկզբնագրով (73-րդ) էջ*

«Հունիսի հինգը և վեցը» (2002), «Զայներ և տեսիլքներ» (2006), «Փուշը, հայր փուշը» (2011) պատմվածքների, հեքիաթների ժող-ները, «Հողի դողը» (2003) վիպակը, «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» (1995, 2013) պատմավեպը, «Միերի դռան գիրքը» (2014) վեպը:

ՀՀ «Ոսկե եղեգն» պետ. գրական մրց. (1999):

ԽԵՉՈՒՄՅԱՆ Վիգեն (Վիդոկ) Հայկի (15.12.1916, Երևան–17.4.1975, Երևան), գրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1940): 1943–56-ին՝ Մատենադարանի ձեռագրատան վարիչ: Եղել է ***«Սովետական գրականություն»*** ամսագրի խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Խ-ի «Զվարթնոց» (1945), «Մեզ մոտ, հարավում» (1955), «Գիրք պանդխտության» (1959), «Գիրք մաքառման» (1968), «Գիրք գրոց» (1978, 2012) վիպակների ու պատմվածքների, «Գույներ և երանգներ» (1962) ակնարկների ժող-ները, «Գիրք լինելության» (1966) պատմավեպը: Խ-ի ստեղծագործությունների հիմն. թեման միջնադարի հայ գրիչների, ծաղկողների, մանրանկարիչների, տպագրիչների, մագաղաթ ողորկողների, ճարտ-ների, շինարար վարպետների մաքառումներով լի ստեղծագործ. կյանքն է: Ռուս-ից թարգմանել է Ա. Դունաևսկու «Գայի հետքերով» (1967) վեպը, նմուշներ՝ մոլդ. գրակ-ից են:

ԽԵՐԱՆՅԱՆ Մկրտիչ Եղիշեի (10.8.1899, Վան–27.6.1970, Երևան), գրող, թարգմանիչ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

Գրաբարից աշխարհաբարի է փոխադրել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» (1960) և Հոմերոսի «Իլիական» (1987) պոեմները: Թարգմանել է Նիզամի Գյանջևիի, Ռուդաքիի, Հաֆեզի, Ջ. Բայրոնի, Ի. Գրիշաշվիլու, Ա. Տվարդովսկու, Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի և ուր. ստեղծագործություններից:

Լույս են տեսել Խ-ի «Խնդություն» (1938) բանաստեղծությունների ժող-ը, «Մհկաց Միրզա» (1939) պոեմը, «Սասնա տուն» (1958) դյուցազնավեպը, «Շարմաշուղներ» (1962), «Շխոնց Միհրան» (1963), «Երկար, երկար մի ճանապարհ» (1965, 1983), «Զայն տուր, ով ծովակ» (2000) վեպերը, «Հազարան բլբուլ» (1956, 1968) հեքիաթը, «Ծտի գուլպաները» (1939, 1961), «Արհեստ սովորող կատուն» (1938, 1980) մանկ. բանաստեղծությունների ժող-ները:

«ԽԹԱՆ ԶՂՋՄԱՆ», Հովհաննես Կարմելիտական Բոբիկի երկը: Լատ-ից թարգմ.՝ Պետրոս Մուհապյանի: Տպագրվել է 1727-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Խթան զղջման եւ առանձնախօսութիւն միջահիւսեցեալ բանիւքն Աստուածաշնչի» (288 էջ, 12º և 6º, 8,7 x 5 սմ):

ԽԻԿԱՐ, Ախիկար, Աքաիկարոս, Խիկար Իմաստուն, ապրել է մ. թ. ա. V դ-ում՝ Ասորեստանի Սենեքերիմ թագավորի օրոք, եղել է նրա ատենադպիրը: Խ-ի անվամբ մեզ է հասել «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ» գրույցը, որի հնագույն մի օրինակ (մ. թ. ա. V դ.)՝ պապիրուսի վրա՝ արամեերեն, հայտնաբերվել է Էլեֆանտին կղզում: Բնագիրն ամբողջ. կամ հատվածաբար պահպանվել է ասոր., հայ., արաբ., եթովպ., սլավոն., վրաց., թուրք. խմբագրումներով:

Հայ. բնագիրը V դ-ի թարգմանություն է ասոր-ից, որից մեզ հասել են XI–XII դդ-ում խմբագրված հատվածներ, իսկ ձեռագիր ամբողջ. օրինակը՝ XIV դ-ից: Այն հնագույնն է պահպանված բոլոր խմբագրումներից: Սլավոն. լեզուներով, վրաց. և թուրք. թարգմանվել են հայ-ից: Խ. մեծ ժողովրդականություն է վայելել միջնադարյան Հայաստանում, տեղայնացվել է իբրև ազգ. իմաստուն:

Խ-ի գրույցն առաջին անգամ հայ. տպագրվել է 1709-ին ***«Պատմութիւն Պղնձէ քաղաքին»*** ժող-ի մեջ՝ «Խրատք եւ իմաստութիւն. ասացեալ է Խիկարայ...» խորագրով, մինչև 1911-ը վերատպվել է 14 անգամ: 1968-ին հրատարակվել է Խ-ի գիտահամեմատ. բնագիրը. ընդգրկում է ավելի քան 100 ձեռագիր:

Գրկ. **Տաշեան Յ.,** *Խիկար եւ իւր իմաստութիւնն, տես «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք», մաս 2, Վնն., 1901: Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ, աշխատասիր.՝ Ա. Մարտիրոսյանի, գիրք 1 (բնագիր), Ե., 1969, գիրք 2 (ուսումնասիրություն), 1972:*

«ԽԻԿԱՐ», երգիծ. ամսագիր: Լույս է տեսել 1884–85 և 1886–88-ին Կ. Պոլսում ու Ադրիանապոլսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հակոբ *Պարոնյան:* Հանդեսը սարկազմով ծաղրել է եվրոպ. նորամուծություններն ու քաղքենիական սովորությունները, պաշտպանել արհեստավոր խավին: 1886–87-ին «Խ.»-ում լույս են տեսել Հ. Պարոնյանի «Քաղաքավարութեան վնասները», «Պաղտասար աղբար», «Խիկար եւ ծիծաղ», «Ծիծաղ եւ Բարոյական», «Առտնին տեսարաններ» և այլ գործեր: Արժեքավոր է «Այլակերպություն բառարանի» աֆորիզմների շարքը, որտեղ քննադատվել են ազգ. կառույցների գործունեությունը, հոգևոր դասը:

ԽՄԲԱԳԻՐ, գրքի, ամսագրի, թերթի և այլ տպագիր հրատ-յան աշխատակից, որն զբաղվում է հրատ-յան մասնագիտ. խմբագրմամբ: Լինում են գլխ., առաջատար, պատ., գիտ., գրական, ոճ., տեխ., գեղ. և այլ Խ-ներ:

Խոշոր հրատարակչություններում (հանրագիտարանների, բառարանների ևն), որտեղ խմբագրվում են բազմատեսակ ու բազմաբովանդակ նյութեր, աշխատում են տարբեր մասնագիտությամբ խմբագիրներ, որոնց աշխատանքը ղեկավարում և համակարգում է գլխ. խմբագիրը, որը նաև պատասխանատու է հրատ-յան գիտախմբագր. ու հրատարակչ. որակի համար:


ԽՄԲԱԳՐՈՒՄ, 1. մասնագիտ. գործունեության տեսակ (առավելապես պարբ. մամուլի և գրքի հրատ-յան գործում, կինեմատոգրաֆիայում, հեռուստատեսությունում, ռադիոյում), որը կապված է տպագիր հրատ-յան, հեռուստա- և ռադիոհաղորդումների, կինոֆիլմերի թողարկումների հետ: 2. Հրատարակչ. գործի բաղկացուցիչ մաս. ներառում է ***խմբագրի*** ստեղծագործ. աշխատանքը (սովորաբար՝ հեղինակի հետ) բնագրի վրա՝ նրա բովանդակությունն ու ձևը բարելավելու, պոլիգրաֆ. վերարտադրության և լույսընձայման պատրաստելու համար: 3. Որևէ անձի պատրաստած կամ հեղինակած փաստաթղթի բովանդակության ու ձևի համապատասխանեցումը համընդհանուր և հատուկ սահմանված պահանջներին ու նորմերին:

Խ. պատմականորեն ձևավորվել է ձեռագիր գրքերի ստեղծման ու տարածման հետ և պայմանավորված է տեքստերը կարգավորելու անհրաժեշտությամբ՝ նրանց միասն. մեկնաբանման նպատակով: Խ-ման ամենապարզ ձևը եղել է հեղինակների կամ հետագա գրիչների սխալների բացահայտումը և ուղղումը ձեռագիր գրքերում ու փաստաթղթերում:

Դեռևս Հին Հռոմում գոյություն են ունեցել հրատարակչությունների նմանակներ, որտեղ գրիչները թելադրությամբ գրել են գործն. փաստաթղթեր և գրական ստեղծագործություններ: Արտագրված գրքերն ու փաստաթղթերը հետագայում ավելի հմուտ գրիչները համեմատել են բնագրի հետ և վերացրել սխալները: Միջին դարերում կարևորվել է Սուրբ գրքերի բնագրերի Խ.՝ կանոնական եկեղեց. տեքստերին նրանց համապատասխանեցման համար:

Խ-ման ժամանակակից պատկերացումները ձևավորվել են տպագրության սկզբնավորման հետ (Եվրոպայում՝ XV դ-ի կեսերից): Սակայն առաջին փուլում հիմնականում խմբագրել է տեքստի հեղինակը, որը նաև հրատարակիչն էր, սրբագրիչը, տպագրիչը ևն: Տպագրության զարգացմանը զուգընթաց տեղի է ունեցել Խ-ման աշխատանքի տարբերակում, և այն առանձնացել է որպես մասնագիտական գործունեության ինքնուրույն տեսակ:

ԽՆԿՈ ԱՊԵՐ [Խնկոյան Աթաբեկ Հովհաննեսի, 19.10.1870, գ. Ղաբրաբոյա (այժմ՝ գ. Խնկոյան՝ ՀՀ Լոռու մարզում)–8.10.1935, Երևան], մանկագիր: Վաստ. մանկ. գրող (1932): Վաստ. ուսուցիչ (1932): Սովորել է ծննդավայրի, ապա՝ Ալեքսանդրապոլի քաղաքային դպրոցում: 1890–1910-ին եղել է ուսուցիչ: 1911-ին տեղափոխվել է Թիֆլիս, պաշտոնավարել Ս. Լիսիցյանի պանսիոնում: Աշխատակցել է «Աշխատաւոր», «Նոր աշխատաւոր», «Աղբիւր», «Հասկեր», «Մաճկալ», «Հայաստանի



«Խթան զղջման» *(Հովհաննես Կարմելիտական Բոբիկ, 1727, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Խնկո Ապեր



Խնկո Ապեր *«Հեքիաթներ, պատմվածքներ, առակներ» (2010, Ե., «Անտարես») գրքի կազմը*



Խոդիկյան Կարինե



Կ. Խոդիկյանի *«Խաղի ժամանակը» (2004, Ե., ՀԳՄ հրտր.) գրքի կազմը*



«Խոկումն քրիստոնէական» *(Դոմինիկոս Բոհուրսի, 1687, Վնտ.) գրքի փիփղոսապ՝ գլխա- և լուսանցազարդերով:*

աշխատավորուհի» պարբ-ներին: Հայկ. դպրոցների համար կազմել է մայրենի լեզվի դասագրքեր («Մեր դպրոցը», «Կարմիր արև»):

Լույս են տեսել Խ. Ա-ի «Բանաստեղծական փորձեր» (1890, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), «Գիւղացին եւ արջը» (1909, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Աղուէսն ու արջը» (1910, նույն տպ.), «Գող մաքին» (1911, Թ., «Հերմես» տպ.), «Առակներ» (1917, Թ., Ն. Աղանյանի տպ.), «Բանաստեղծություններ» (1937), «Մրգաստան» (1939), «Գայլն ու գառը» (1941), «Ծաղիկներ» (1943), «Մկների ժողովը» (1964), «Հեքիաթներ և պատմվածքներ» (1967), «Հեքիաթներ, պատմվածքներ, առակներ» (2010) ժող-ները, «Ընտիր երկերը» (1942), «Հատընտիրը» (1950), «Երկերը» (1980, 1984): Խ. Ա. հայ-ի է փոխադրել «Պապն ու շաղգամը» (1911, Թ., Ն. Աղանյանի տպ.), «Տէրտէրն ու իր Բալդի ծառան» (1911, Թ., «Հերմես» տպ.), «Քնած դշխուհին եւ եօթ քաջերը» (1912, նույն տպ.), «Քնած արքայադուստրը» (1912, Թ., Ն. Աղանյանի տպ.) հեքիաթները, թարգմանել Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն» (1932) վեպը, Պ. Ռոզեգերի պատմվածքներից ևն:

Խնկո Ապոր անունով է կոչվել Երևանի ազգ. մանկ. գրադարանը:

Գրկ. ***Գյուլնազարյան Խ.****, Աթաբեկ Խնկոյան, Ե., 1968: Աթաբեկ Խնկոյան (Խնկո Ապեր): Կենսամատենագիտություն, Ե., 1969:*

ԽՈԴԻԿՅԱՆ Կարինե Կիմիկի (ծ. 25.7.1957, Ախալքալաք), գրող, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1980): 1989–2001-ին աշխատել է «Գարուն» ամսագրում, 2000-ից՝ ***«Դրամատուրգիա»*** հանդեսի հիմնադիր-խմբագիր, 2001–04 և 2012-ից՝ ***«Գրական թերթի»*** գլխ. խմբագիր, 2004–08-ին՝ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար, 2008-ին հիմնադրել է «Այբբենգիր» հրատարակչատունը:

Լույս են տեսել Խ-ի «Պիեսներ» (1997), «Մեռյալ սիրո փողոցը» (2001), «Երկու պիես» (2003), «Խաղի ժամանակը» (2004, պարսկ.՝ 2006, Թեհրան, անգլ.՝ 2008), «Իմ դասականները» (2011) պատմվածքների ու պիեսների ժող-ները:

ՀԺՄ ոսկե գրիչ (1997), «Ոսկե եղեգն» պետ. գրական (1999), ՀԳՄ ամենամյա (2002, 2011), «Արմմոնո» թատեր. միջազգ. փառատոնի (2005, 2006) մրց-ներ:

«ԽՈԿՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ», Դոմինիկոս Բոհուրսիի կրոնադավանաբան. երկը: Առաջին անգամ տպագրվել է 1687-ին Վենետիկում՝ Գասպար Սահրադյանի տպարանում: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու (224 էջ, 8º, 8,5 x 5,5 սմ): Այս հրատ-յան մեջ հեղինակը նշված չէ:

Տպագրվել է նաև՝

1719-ին Վենետիկում՝ Զիովաննի Բաշոյի տպարանում: Հրատարակիչ՝ Մխիթար Սեբաստացի (108 էջ 6º, 7 x 4,5 սմ):

1732-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (179 էջ, 12º, 8 x 5 սմ): Հեղինակի անունը հիշատակված չէ:

1771-ին նույն տպարանում: Թարգմ.՝ Վրթանես Ասկերյանի: Տիտղթ-ին՝ «Խոկմունք քրիստոնէականք» (176 էջ, 8º, 9,8 x 6 սմ):

ԽՈՃԱՍԱՐՅԱՆ Օգսեն (1833, Կ. Պոլիս–21.4.1878, Կ. Պոլիս), հրապարակախոս, խմբագիր: Աշխատակցել է «Անզումէի Էֆքեար» (հայատառ թուրք.) թերթին: 1868-ին եղել է «Օրագիր» (հայ., հայատառ թուրք.) թերթի փոխխմբագիրը. 1869-ին օսմ. կառավարությունը թերթը փակել է, նույն թվականին Խ. այն հրատարակել է ***«Օրագիր Կ. Պոլսոյ»*** վերնագրով (տպագրել է նաև հայատառ թուրք. նյութեր): 1869-ին՝ ***«Մէր»***, 1875-ին՝ «Նորագիր», 1876–78-ին՝ ***«Նոր դար»*** պարբ-ների խմբագիր: Զբաղվել է նաև գրահրատարակչ. գործունեությամբ:

ԽՈՃԻԿ (Խոճիկյան) Էդվարդ Մամասի (3.2.1900, Թիֆլիս–29.11.1961, Երևան), երգիծաբան, լրագրող, խմբագիր: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1921), սովորել Մոսկվայի հայկ. թատեր. ստուդիայում (1923–26): 1924-ին խմբագրել է ***«Զռռնաս»***, 1926–27-ին՝ ***«Կարմիր մոծակ»*** երգիծ. հանդեսները: Աշխատել է «Հայաստանի աշխատավորուհի», 1954–61-ին՝ «Ոզնի» պարբ-ների խմբագրություններում:

Լույս են տեսել Խ-ի «Սերը ջրհորի ափին» (1928), «Մանկավարժական խորհուրդ», «Ազատություն» կատակերգությունները, «Տէր Բարսեղ: Առակների յեվ յեղելությունների ժողովածու»-ն (1930): Ռուս-ից փոխադրել է «Պապի կճուճը», «Տոմս մինչև Կիրովական» (1946), «Բուդիլնիկի արարքները» (1946) վոդևիլները:

ԽՈՋԱ ՆԱՀԱՊԵՏ ԳՈՒԼՆԱԶԱՐ (1629, Վերին Ագուլիս–31.12.1694, Ագուլիս, թաղված է Ագուլիսի Սբ Հուլիանոս կաթոլիկ. եկեղեցու բակում), վաճառական, տպարանատեր, բարերար: 1676-ին Կ. Պոլսում ընդօրինակել է տվել Հայսմավուրք: 1680-ական թթ-ին նրա միջոցներով Վենետիկում վերահրատարակվել է Միքելանջելո Բարբոնիի տպարանում լույս տեսած գրքերից մեկը: 1686–87-ին Վենետիկում հիմնադրել է տպարան և Զիակոմո Մորետիի հետ լույս ընծայել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1686) պոեմը, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Պարզաբանութիւն հոգենուագ Սաղմոսացն Դաւթի» (1687) երկը, որի 2-րդ էջում Խ. Ն. Գ-ի դիմանկարն է՝ հայ վաճառականի տարազով՝ շրջանակված «Այլ ես որպէս ձիթենի պտղալից ի տանն Աստուծոյ Յուսացայ ողորմութիւնն Աստուծոյ» մակագրությամբ: Գրքի յուրաքանչյուր էջի ձախ կողմում գրաբար բնագիրն է, աջում՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու երկի աշխարհաբար մեկնությունը: «Պարզաբանութիւն...»-ը աշխարհաբարով տպագրված 2-րդ գիրքն է 1675-ին Մարսելում լույս տեսած *«Արհեստ համարողութեան»*-ից հետո: 1695-ին Խ. Ն. Գ. ջուղայեցի վաճառական Անտոնի հետ վերահրատարակել է *«Դաշանց թուղթ»*-ը:



Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1686, Վնտ., տպագրիչ՝ **Խոջա Նահապետ Գուլնազար***) գրքի գլխա- և լուսանցազարդերով (3-րդ) էջ*

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Միսեան, Վնտ., 1893, էջ 334–336:* **Լէօ,** *Հայկական տպագրութիւն, հ. 1, Թ., 1904, էջ 395–399:* **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, Ե., 2012:*

ԽՈՋԱՄԱԼՅԱՆ Թովմաս [մոտ 1720, Նոր Ջուղա–1780, Ագրա (Հնդկաստան), թաղված է Դելիի հայկ. գերեզմանատանը], հաս-քաղ. գործիչ, պատմագիր, վաճառական: Սովորել է Նոր Ջուղայի հայկ. առևտր. դպրոցում: Տեղափոխվելով Հնդկաստան՝ ուսումնասիրել է ծովագնացություն, դարձել նավապետ:

1768-ին գրել է «Պատմութիւն Հնդկաց» աշխատությունը, որի բնագիրը մեզ չի հասել. հայտնի միակ ընդօրինակությունը (1821) պահվում է Սպահանում: Երկի 1-ին մասի առանձին գլուխներ լույս են տեսել 1822-ին Կալկաթայում՝ «Շտեմարան» ամսագրում: 2-րդ մասը տպագրվել է 1849-ին՝ Մեսրոպ *Թաղիադյանի* սրբագրությամբ (Կալկաթայի «Ազգասէր Արարատեանի» տպ., ռուս. հրտ.՝ 1968): Երկն ընդգրկում է XIV դ-ի սկզբից մինչև 1764-ն ընկած ժամանակաշրջանը և կարևոր սկզբնաղբյուր է Հնդկաստանի գաղութացման ընթացքի, հնդիկ ժողովրդի ազատագր. պայքարի, այդ պայքարին հայերի մասնակցության մասին, ինչպես նաև Մալաբարի (Հնդկաստանի հվ-արմ. ափը) քրիստոնյաների և Հնդկաստանի հայկ. գաղութի պատմության ուսումնասիրման համար:




Խոջա Նահապետ Գուլնազար *(դիմանկար 1687-ին իր տպագրած «Պարզաբանութիւն հոգենուագ Սաղմոսացն Դաւթի» գրքում)*

Գրկ. **Լէո,** *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:*

ԽՈՋԱՋԱՆՅԱՆ (Չաքիկենց, Չաքիկյան) Գրիգոր Միքայելի (ծ. թ. անհտ, Նոր Ջուղա–մ. թ. անհտ, Մադրաս), հայկ. տպագրության երախտավոր, XVIII դ-ի 2-րդ կեսի հայ ազգ-ազատագր. շարժման և մշակույթի գործիչ, Մադրասի խմբակի ղեկավարներից: Սովորել է ծննդավայրի հայկ. առևտր. դպրոցում: Ընտանիքով տեղափոխվել է Բասրա (Իրաք): Առևտր. գործերով մեկնել է Հնդկաստան, դարձել տեղի հայ մեծահարուստներից: Կապված է եղել ժամանակի երևելի գործիչներ Շ. Շահամիրյանի, Սիմեոն Ա Երևանցու, Հ. Էմինի, Մ. Բաղրամյանի և ուր. հետ: Դրամ է հատկացրել ազգ-ազատագր. պայքարի կարիքների և Հայաստանում առաջին՝ Սբ Էջմիածնի տպարանի (1771, միայն շենքի շինությանը՝ 3106 ոսկի դրամ) ու թղթի գործարանի (1776, 7 800 պարսկ. թուման) կառուցման համար: Իր ծախսերով Վաղարշապատ է ուղարկել ֆրանսիացի թղթագործ վարպետներ Բեյսոնին ու Դեսիորին՝ թղթի արտադրությունը կազմակերպելու համար: Մասնակցել է Մադրասի տպարանի հիմնադրմանը (1772), «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ», «Տետրակ որ կոչի Նշաւակ», *«Որոգայթ փառաց»*




Թովմաս Խոջամալյանի *«Պատմութիւն Հնդկաց» (մաս 2, 1849, Կալկաթա) գրքի տիտղոսաթերթը*



«Խոստովանարան...»
(Մարկեղոս Փալերմիթացի, 1669, Լիվոռնո)
գրքի տիտղոսաթերթը



Խոսրով Անձևացու
«Մեկնութիւն ժամակարգութեան»
(1730, Կ. Պոլիս, Ասլվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.)
գրքի տիտղոսաթերթը



Խոր տպագրության
սխեմատիկ պատկեր

երկերի նախն. մշակմանը: Խ–ի մասին հայտնի տեղեկությունները վերաբերում են մինչև 1789–90–ին:

Գրկ. Դիւան հայոց պատմութեան, գիրք 8, Թ., 1908: **Լեո,** *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:*

«ԽՈՍՏՈՎԱՆԱՐԱՆ», կաթոլիկ եկեղեցու խոստովանության և մեղքերի թողության մասին Մարկեղոս Փալերմիթացու երկը: Իտալ–ից թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Առաջին անգամ տպագրվել է 1669–ին Լիվոռնոյում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Խոստովանարան, կամ Ամբաստանարան, ըստ կարգի պատուիրանաց տասանց պատգամաց, եւ եօթանց մեղաց գլխաւորաց» (162 էջ, 8º, 6,5 x 5,5 սմ):

Տպագրվել է նաև 1701–ին Կ. Պոլսում՝ հավանաբար Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Խոստովանարան: Կամ Ամբաստանարան…» (96 էջ, 8º):

Հայ հնատիպ գրքի շրջանում հրատարակվել է նաև ***Թուխմա Աքվինացու*** «Խ.»:

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՎԱՑԻ (ծ. թ. անհտ–մոտ 964), եկեղեց. գործիչ, մատենագիր: ***Գրիգոր Նարեկացու*** հայրը: 940–ական թթ–ին ձեռնադրվել է Վասպուրականի Անձևացիք գավառի եպիսկոպոս:

Խ. Ա–ու «Մեկնութիւն ժամակարգութեան» երկն առաջին անգամ տպագրվել է 1730–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք որ կոչի Մեկնութիւն աղօթից» (456 էջ, 8º, 15,5 x 10,5 սմ): Վերահրատարակվել է 1840–ին (ԿՊ, Պողոս Արապյանի տպ.):

Լույս է տեսել նաև Խ. Ա–ու «Մեկնութիւն աղօթից պատարագին» (1869, Վնտ., Սբ Ղազարի տպ.) երկը՝ Գևորգ վրդ. Հյուրմյուզյանի նախաձեռնությամբ: Խ. Ա–ու երկերում ուշագրավ տվյալներ կան X դ–ի եկեղեց. ծիս. գրքերի հորինվածքների, ինչպես նաև միջնադարյան Հայաստանի հաս–տնտ. հարաբերությունների մասին:

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ (Խոսրովիկ Հռետոր), VIII դ–ի 1–ին կեսի մատենագիր: Խ. Թ–ից պահպանվել է դավանաբան. 7 երկ (գլխավորապես՝ թղթեր), որտեղ քննադատում ու մերժում է քաղկեդոնականությունը և ասոր. քրիստ. միաբնակ եկեղեցու 2 ծայրահեղ հերձվածները (սևերյան և հուլիանական): Հանդես է եկել որպես Հայ եկեղեցու դավանաբանության ու ծեսերի ջատագով: Թղթերից 5–ը, որոնք մեկ ամբողջություն են կազմում և առնչվում են վերոհիշյալ ժողովին, գրել է 726–727–ին: Լույս է տեսել Խ. Թ–ի «Երկասիրութիւնք Խոսրավկայ թարգմանչի» (տպագրության վայրը և թվականը՝ անհայտ) երկը:

Գրկ. **Տաշեան Յ.,** *Խոսրովիկ եւ Գիրք հերձուածոց, տես նրա «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք», մաս 1, Վնտ., 1895:* **Յովսէփեան Գ.,** *Խոսրովիկ Թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին, Վաղ–պատ, 1899:* **Ակինեան Ն.,** *Խոսրովիկ Թարգմանիչ եւ իւր երկասիրութիւնները, «ՀԱ», 1904, 1905:*

ԽՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տպագրության հիմնական եղանակներից, որի տպաձևի տպագր. տարրերը խորադիր են բացատատարրերի համեմատությամբ: Նրանց տարբեր խորությունների շնորհիվ (ապահովում են գրանյութին փոխանցվող ներկի տարբեր հաստություններ) հնարավոր է ստանալ գույնի երանգներ, որը մեծ առավելություն է տպագրության այլ եղանակների համեմատությամբ: Առավելապես օգտագործվում է պատկերազարդ ամսագրերի, լուսանկարչ. ալբոմների, դիմանկարների տպագրության համար: Կիրառությունը սահմանափակ է տպաձևերի բարձր ինքնարժեքի պատճառով:

ԽՈՐԱԳԻՐ, վերտառություն, գրվածքի, գրքի կամ նրա մի մասի (գլխի) ***վերնագիրը***: Հնում ձեռագրի անունը դրվել է կամարաձև կամ խորանաձև զարդանկարի շրջափակի մեջ, որտեղից էլ ծագել է «Խ.» անվանումը:

ԽՈՐԱՆ *մանրանկարչության* մեջ. ձեռագիր Ավետարանների պատկերազարդ ցանկեր կամ էջերի ձևավորումներ՝ ճարտ. Խ-ի նմանությամբ: Կամարազարդ աղյուսակներ (տախտակներ) են, որտեղ զետեղվել են 4 Ավետարանների՝ *Եվսեբիոս Կեսարացու* կազմած համաձայնության աղյուսակները (միջնադարում կոչվել են **կանոնք**): Խ-ները խորհրդանշել են Ավետարանների «սրբութիւնք սրբոցի» բնույթը, իսկ աղյուսակներում զետեղվել են նախ բոլոր չորս, ապա՝ երեք, երկու Ավետարաններում նույնաբովանդակ գլուխների համարները, վերջում՝ միայն մեկ Ավետարանում եղած այն գլուխների համարները, որոնք բացակայում են մյուսներում, ստացված 10 աղյուսակներն զգալիորեն հեշտացրել են ավետարանների համադրումը:

Այդ կանոններից առաջ զետեղվել է Եվսեբիոս Կեսարացու՝ եգիպտացի Կարպիանոսին (որի պատվերով պատրաստել է դրանք) ուղղված Թուղթը, վերջում՝ Տիրոջ գերեզմանի պատկերը (տիմպիետո):

Մանրանկար Խ-ների ձևերը և պատկերային մոտիվները փոփոխվել, կրճատվել կամ հարստացվել են՝ ըստ երկրների, տարածքների, ժամանակաշրջանների ու դպրոցների: VII–X դդ-ի՝ հատկապես բյուզ., լատ., ավելի պակաս՝ հայկ. Խ-ները ձևով ծավալային էին և մոտ ճարտ. նախատիպին:

XI դ-ում հայկ. որոշ դպրոցներում (Փոքր Հայք, Անի, Արշարունիք) Խ-ներն ավելի սխեմատիկ կամ դեկորատիվ են, կամարների փոխարեն երբեմն ուղղանկյուն գլխազարդով են՝ լցված զանազան, նաև գորգադաշտ հիշեցնող զարդանկարներով: XII դ-ում ուղղանկյունն ստացել է կամարաձև, զանազան կտրվածքներ, սյուների մեջ և գլխազարդի ներսում հայտնվել են երկրաչափ. հյուսածո և բուս. զարդանախշեր:

Կիլիկյան դպրոցն ընդունել է հայկ. բյուզանդամետ և բյուզ. Խ-նեբի ձևերը՝ ուղղանկյուն գլխազարդերով, սյուների, խարիսխների, խոյակների և գլխազարդերի ներքին ու արտաքին զարդանախշերը հարստացնելով թե՛ մոտիվներով, թե՛ անսպասելի երևակայական ու առասպել. էակների պատկերներով:

Վասպուրականում Խ-ները պարզեցվել են, ստացել ծայրաստիճան գծագր. ու պարզ դեկորատիվ տեսք, իսկ Գլաձորի դպրոցը կիլիկյան խորանապատկերները վերափոխել է առավել զարդային և դեկորատիվ գունագեղության՝ որոշ չափով այն կոպտացնելով ու պարզեցնելով: Բացի ճարտ. սխեմայից (սյուներ, կամարներ, ուղղանկյուն գլխազարդեր, որոնք հաճախ համակենտրոն կամարներ են ներառել)՝ Խ-ները կամարներին ու գլխազարդերին, սյուներին, պատվանդանների ու քիվերի զարդարուն երիզներին կից ունեցել են բազմապիսի արտաքին հարուստ պատկերներ (ծառեր, բույսեր, թռչուններ, կենդանիներ), որոնք մեծապես հարստացրել են Խ-ների գեղ. հարդարանքը:

Սկզբն. շրջանում (X դ.) պատկերները (ձկնաքաղ հավքեր, սիրամարգեր, աղավնակերպ հավքեր, աքաղաղներ, վայրի բադեր, կաքավներ, արմավներ, նռան ճյուղեր՝ պտուղով, ականթներ, ձիթենի հիշեցնող ծառեր, անտիկ անոթների պատկերներ) համեմատաբար զուսպ են, XI դ–ից անընդհատ հարստացվել ու ձևափոխվել են (միայն *«Մողնու Ավետարան»*-ի սյուների կողքերին, գլխազարդերի ներսում, վերևում ու կողմնային մասերում պատկերված են բույսերի ու կենդանիների, երևակայական արարածների տասնյակ տեսակներ, բազիլիկ շենքերի տարբեր պատկերներ են), իսկ *«Հաղպատի Ավետարան»*-ի, Կիլիկիայի, Գլաձորի դպրոցների մի շարք քառավետարանների Խ-ներում հայտնվել են մատռվակներ, երգիչներ, ձուկ բերողներ, պատվիրատուներ, որսի տեսարաններ, դիմանկարներ, ինքնանկարներ են: Նման փոփոխություն XI– XII դդ-ում նկատվել է նաև բյուզ. և վրաց. Խ-ներում: Այդ բազմապիսի մոտիվներն իրենց նախատիպերն են ունեցել անտիկ ու սասանյան արվ-ներում և ծագել են խճանկարներից ու կիրառ. արվ-ից:



X– XI դդ-ի Ավետարան (գրիչ և ծաղկող՝ Գրիգոր, Մատենադարան, ձեռ. № 2877)



1295-ի Ավետարան (ծաղկող՝ Յոհան, Մատենադարան, ձեռ. № 6290)




1323-ի Ավետարան (ծաղկող՝ Թորոս Տարոնացի, Մատենադարան, ձեռ. № 6289)



Մատթեոս Եվդոկացու **«Խորհուրդ աստուածապաշտութեան»** *(1775, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«Խրատ հոգեկան» *(1736, Կ. Պոլիս) գրքի խորագրով (1-ին) էջ*



Հովհաննես Գազայյանի **«Խրատք բարւոք քաղաքավարութեան»** *(1786, Տրիեստ) գրքի փիփղոսաթերթը*

Խ-ների ձևավորման որոշ տարրեր օգտագործվել են տպագիր գրքի տիտղոսաթերթերի գլխազարդերում. դրանք կոչվել են կիսախորաններ և հաճախ բովանդակել են գրեթե նույն մոտիվները: Քիչ չեն նաև հրատ-ներ, որոնց տիտղոսաթերթերը ներառված են ամբողջ. Խ-ներում:

Գրկ. Անասյան Հ., *Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, Էջմիածին, 1972: Խորանների մեկնություններ (աշխատասիր.՝ Վ. Ղազարյանի), Ե., 1995:* Der Nersessian S., *Manuscrits arméniennes illustrés des XII^e, XIII^e et XIV^e siecles de la Bibliothèque des pères Mekhitaristes de Venise, P., 1936 (texte et album);* Nordenfalk C., *Die spätantiken Kanontafeln. Textband und Tafelband, Göteborg, 1938;* Wessel K., *Kanontafeln, "Reallexikon zur byzantinischen Kunst", Band II, Stuttgart, 1971, S. 927–968.*

Վիգեն Ղազարյան

ԽՈՐԵՆԻ ՎԱՀԱՆ [Տեր-Գևորգյան, 1884, գ. Բռնակոթ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–1920, Գորիս], խմբագիր-հրատարակիչ: ՀՅԴ կուսյան անդամ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Լայպցիգի համալսարանի պատմափիլ. բաժինը (1913), ստացել դ-րի գիտ. աստիճան: 1917–19-ին եղել է «Հայաստանի աշխատաւոր» (Երևան) թերթի խմբագիր, որտեղ տպագրել է «Հայրենի նամակներ» հոդվածաշարը: 1919-ին ընտրվել է Հայաստանի առաջին հանրապետության (1918–20) խորհրդարանի պատգմ.: 1920–22-ին՝ *«Աշխատաւոր»* թերթի խմբագիր:

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գրական-գեղ., հաս-քաղ. ամսագիր: Լույս է տեսել 1933–40-ին Երևանում (1940–43, 1955–88-ին՝ «Սովետական գրականություն», 1943–55-ին՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1988-ից՝ *«Նորք»*):

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսել 1921–40 և 1988–91-ին Երևանում (1940–88-ին՝ «Սովետական Հայաստան», 1991-ից՝ *«Հայաստան»*):

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», երկշաբաթաթերթ, ամսագիր: ՀՍԽՀ ԿԳԿ-ի, այնուհետև՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի և Երևանի քաղխորհրդի, վերջում՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի և արդարադատության ժողկոմատի հրատ.: Լույս է տեսել 1928–29 և 1932–34-ին Երևանում: Խմբագիրներ՝ Կ. Վռամ, Ռուբեն Դաշտոյան: Լուսաբանել է խորհրդ. շին-յան խնդիրները, կարևորել տեղ. մարմինների աշխատանքները, անդրադարձել է նաև մշակութ. հեղ-յան, պատմ. հուշարձանների պահպանության հարցերին:

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ, ծիսամատյան, որ պարունակում է պատարագի բովանդակությունը և մատուցման կարգը: Տես ***Պատարագատետր:***

«ԽՈՐՀՈՒՐԴ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ», Մատթեոս Եվդոկացու դավանաբան. երկը. բաղկացած է 4 մասից: Տպագրվել է 1775-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ-ին՝ «Խորհուրդ Աստուած պաշտութեան Հին եւ Նոր կտակարանաց բանիւք յանդիման արարեալ….» (172 էջ, 4º, 22 x 15 սմ):

«ԽՐԱՏ ՀՈԳԵԿԱՆ», կրոն. խրատների գիրք: Ֆրանս-ից թարգմ.՝ Հակոբ դպիրի: Տպագրվել է 1736-ին Կ. Պոլսում՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք զոր ասի խրատ հոգեկան» (17 էջ, 4º, 15,1 x 11,2 սմ):

Վերահրատարակվել է 1736-ին նույն տպարանում՝ հայատառ թուրք-ով (20 էջ):

«ԽՐԱՏՔ ԲԱՐԻՈՔ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ», Հովհաննես Գազայյանի՝ քաղաքավարության կանոններին վերաբերող երկը: Իտալ-ից թարգմ.՝ Նիկողայոս Բուզայանի: Առաջին անգամ տպագրվել է 1783-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (96 էջ, 8º):

Վերահրատարակվել է 1786-ին նույն տպարանում (96 էջ, 8º, 10,4 x 6 սմ):

«ԽՐԱՏՔ ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԱԽՈՐԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ», Ղուկաս Փինեղյանի կրոնադավանաբան. երկը: Իտալ-ից թարգմ.՝ Վրթանես Ասկերյանի: Տպագրվել է 1779-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (440 էջ, 8º, 14,7 x 8,1 սմ):

ԽՐԼՈՊՅԱՆ Տիգրան Գևորգի [20.10.1890, Այնթապ (Դաշտային Կիլիկիա)–22.11.1968, Բեյրութ], հաս. և մշակույթ. գործիչ, մանկավարժ, խմբագիր: Սովորել է Այնթապի Կեդրոն. Թուրքիո քոլեջում և Աթենքի համալսարանում (1923–27): 1948-ին Բեյրութում հիմնադրել է հայկ. ուսուցչանոցը, 1955-ին՝ Հայկազյան քոլեջի (այժմ՝ համալսարան) հայագիտ. ամբիոնը և մատենադարանը (կոչվել է Խ-ի անունով): Եղել է ուսուցիչ, տնօրեն՝ Հալեպի, Գըրքխանի, Բեյրութի հայկ. դպրոցներում: 1927–34-ին՝ *«Նոր աւետարեր»* (Հալեպ, լույս է տեսել նաև հայատառ թուրք.), 1949–50-ին՝ «Աւետաբեր» պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Խ-ի «Բարոյավէպեր» (1931), «Ոսկե մատեան» (հ. 1–2, 1950–51) պատմվածքների ժող-ները, «Քսանհինգամեայ հունձքը: Լեւոնեան յոբելինական հատոր»-ը (1948, Հալեպ):

ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ Ալեքսանդր (1780–1863), բառարանագիր: Եղել է Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի անձն. քարտուղարը: Խ-ի «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» (հ. 1–2, 1838, Մ., Լազարյան ճեմ. տպ.) բառարանն ընդգրկում է 35 000 գլխաբառ և բազմաթիվ ոճեր: Խ-ի բառարանի համար հիմք է ծառայել Հ. Ավգերյանի «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ»-ի (1812) հայ. բառացանկը, որին ավելացրել է մի շարք տեխ. տերմիններ: Լույս է տեսել նաև Խ-ի «Գիրք նախակրթութեան Հայկազեան լեզուի» (1838, ՍՊը, ա. տպ.) դասագիրքը:



Ալեքսանդր Խուդաբաշյանի *«Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ»-ի (հ. 1, 1838, Մոսկվա) փիփղոսաթերթը*

ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ Կոստանդին Սուրենի (9.1.1929, Երևան–19.4.1999, Երևան), պատմաբան, խմբագիր-հրատարակիչ: Պատմ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1974): Ավարտել է ԵՊՀ (1951): 1956-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ում, 1974–88-ին՝ բաժնի վարիչ: 1988–99-ին՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագիր: Նախաձեռնել, ապա գլխավորել է «Հայկական հարց» հանրագիտարանի (ռուս.՝ 1991, հայ.՝ 1996) պատրաստման, «Քրիստոնյա Հայաստան» (2002) հանրագիտարանի նախապատրաստ. աշխատանքները, խմբագրել քառահատոր «Հայկական համառոտ հանրագիտարանի» 1–3-րդ հատորները (1990–1993), մանկ. «Ոսկեփորիկ» (հ. 1–3, 1993–99) հանրագիտարանը:



Կոստանդին Խուդավերդյան

Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին և պատմագիտությանն է նվիրված Խ-ի «Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո» (համահեղ., հայ., ռուս., 1995) երկը: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմ. բազմահատորյակի (հ. 8, 1970), հայոց պատմության դասագրքերի ստեղծմանը:

Երկ. Культурная революция в Советской Армении, Е., 1966; Армянская советская культура в годы Великой Отечественной войны, Е., 1985; Потомки Хайка, Е., 1998 (համահեղ.).


«ԽՈՒՀԱՉԱԿ», քաղ. և գիտ. կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1897–98-ին Վառնայում, ապա՝ Ռուսչուկում: Խմբագիր՝ Գառնիկ Սազմանյան: Տպագրել է ազգ., կրթ., բարոյական, կրոն. և այլ հարցերի վերաբերող նյութեր:

«ԽՕՍՆԱԿ», ազգ., գրական, հաս. և տեղեկատու պատկերազարդ հանդես, ՀԲՀՄ Լիբանանի շրջ. հանձնաժողովի և Հայ երիտասարդաց ընկերակցության (ՀԵԸ) կենտր. վարչության պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1957-ից Բեյրութում (ընդհատումներով): Խմբագիրներ՝ Ա. Մակարյան, Սարգիս Մինասյան, Գրիգոր Քյոսեյան, Գևորգ Քեշիշյան, Հակոբ Թորոսյան, Երվանդ Պապայան, Լևոն Վարդան, Պարույր Աղպաշյան, Ատրունի Մատուռյան, Արամ *Մեսիթթյան*, Համբիկ *Մարտիրոսյան* (2007-ից): Լուսաբանում է ՀԲՀՄ-ի և ՀԵԸ-ի, Լիբանանի, Սիրիայի ու Կիպրոսի նրանց մասնաճյուղերի մարզ., մշակութ. և կրթ. գործունեությունը, նյութեր է տպագրում Հայաստանի տնտ.., գիտ. և մշակութ. կյանքի վերաբերյալ: Լույս են տեսել «Խ.»-ի հավելվածներ՝ «Խօսնակ պատանեկան» (1969–75 և 1982–87, խմբագիրներ՝ Զարեհ Թյությունճյան, Ալպեր Գարամանուկյան), «Երիտասարդ խօսնակ» (1989, խմբագիրներ՝ Ռաֆֆի Ճիկերյան, Զավեն Նանեճյան) ուսանող-երիտասարդ. պարբերաթերթերը: Պարբերաբար լույս է ընծայում երիտասարդ. հավելվածներ՝ արաբ., ֆրանս. և անգլ.:



«Խօսնակ», *1957-ից, Բեյրութ (№ 8–9, 2012)*

Ծ



Ծ, հայ. այբուբենի 14–րդ տառը, անվանումը՝ «ծա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ տարրերից. կարճը նուրբերով երկարին միանում է ձախից՝ ներքևում, իսկ լայնը աջից՝ մեջտեղում: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ծ, որպես այբուբենի տասնավորների սյան 5–րդ (14–րդ) տառ, նշանակել է հիսուն և հիսուներորդ, բյուրի նշանով (Ծ͂)՝ 50 բյուր (500 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ծ–մաս 50–րդ):

ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՄՈՒԼ, Ծալկայում (Վրաստան) տպարան հիմնադրվել է 1935–ին, որտեղ 1936–ից տպագրվել է «Լենինսկի պուտ–Լենինյան ուղի» (ռուս. և հայ.) շրջ. թերթը. հայ. էջը լույս է տեսել մինչև 1946–ը և 1966–91–ին: 1962–ին Ծալկայի և Թելթիծղարոյի շրջանների միավորմամբ միացել են նաև շրջ. թերթերը. 1962–65–ին տպագրվել է «Լենինսկի պուտ» վերտառությամբ՝ որպես միջշրջ. թերթ (եղել է վրաց. «Լենինուրի գզա» թերթի թարգմանված տարբերակը): 1991–ին վերանվանվել է «Ժամանակի շունչ» և անկանոն պարբերականությամբ տպագրվել մինչև 2000–ը: Լուսաբանել է շրջանի տնտ., հաս–քաղ. ու մշակութ. կյանքը, անդրադարձել է դպրոց. ու մարզ. և այլ հարցերի: Հայ. էջի խմբագիրներ են եղել Հրանտ Աբրահամյանը, Հրաչիկ Մելտոնյանը, Վարդան Ղարագյոզյանը և ուր.:


Գրկ. **Մաղալյան Վ.,** *Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Ե., 2012:*


Годовщине Конституции СССР—нар
ЛЕНИНСКИЙ ПУТЬ
ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻ
Всенародный праздник
С Днем работников
ХОЗЯЙСТ

Ծալկայի *«Լենինյան ուղի» շրջանային թերթի 1-ին էջը*

«ԾԱՂԻԿ», գրական, հաս–քաղ. տասնօրյա, ապա՝ կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1861–67–ին Զմյուռնիայում, ապա՝ Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Գրիգոր *Չիլինկիրյան*, Արմենակ *Հայկունի* (Ճիզմեճյան), Զարեհ Ստեփանյան, Մատթեոս *Մամուրյան:* Ունեցել է ժողովրդավար. ուղղվածություն, ազգ–ազատագր. հայացքներ, նպաստել է աշխարհաբարի և հայ նոր գրակ–յան զարգացմանը: Ծանոթացրել է Մ. Նալբանդյանի աշխարհայացքին, կյանքին ու գործունեությանը, պարզաբանել է արևմտահայերի Ազգ. սահմանադրությունը (1860): Տպագրել է Ա. Հայկունու, Գ. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի գրական, հրապարակախոս. գործերը, թարգմանաբար՝ Վ. Հյուգոյի, Ա. դը Մյուսեի, Է. դը Ժերարդենի, Վ. Լանգլուայի, Ժ. Ռասինի ստեղծագործություններից, հոդվածներ՝ կրթության և դաստիարակության, թատրոնի ու մամուլի դերի, ազգապահպանման, կանանց իրավահավասարության հարցերի մասին են:

«ԾԱՂԻԿ», գրական-բանասիր., մանկավարժ., տնտ., գիտ. և քաղ. պարբ.: Լույս է տեսել 1886–1911-ին Կ. Պոլսում՝ փոփոխ. պարբերականությամբ (եռօրյա, շաբաթաթերթ, կիսամսյա, օրաթերթ): Հիմնադիր-տնօրեն՝ Անտոն Սագայան, խմբագիրներ՝ Հակոբ Հաճյան, Հովնան Փալագաշյան, Գրիգոր Գայսեր, Արշակ *Չոպանյան*, Երվանդ Գարթայյան, Ղազար Բոլատ, Արամ *Անարունյան*, Երվանդ *Օտյան*, Գրիգոր Համբիկյան, Երվանդ *Թոդայան* և ուր.: «Ծ.»-ին զուգահեռ կամ դադարների շրջանում այլ անվանումներով լույս են տեսել պարբ-ներ մանուկների, կանանց, պատանիների համար: Տպագրել է գեղ. գործեր, ժող. ու աշուղ. երգեր, տնտեսագիտ-երկրագործ., բժշկագիտ. հոդվածներ, գրախոսականներ, ուղեգրություններ ու հուշեր, գիտ. գրույցներ ևն: Արտացոլել է արևմտահայ գրակ-յան զարգացման ընթացքը XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին, համախմբել է պոլսահայ մտավորականության կարող ուժերը, քննարկել է ուսումնակրթ., լեզվաոճ., հայկ. մամուլի և հրապարակախոսության հարցեր: Լույս է ընծայել պատմամշակութ., հին ձեռագրերի ու գաղթավայրերի, ժող. կենցաղի ու սովորույթների, կանանց կրթության վերաբերյալ հոդվածներ, անդրադարձել է նաև արևելահայ հաս-քաղ. և գրական-մշակութ. կյանքին: Տպագրել է Հ. Պարոնյանի, Ե. Տեմիր-ճիպաշյանի, Ա. Ծատուրյանի, Ա. Իսահակյանի և այլ հեղինակների ստեղծագործություններից, նյութեր՝ անվանի գրողների մասին:



«Ծաղիկ», *1886-1911, Կ. Պոլիս (№ 5, 1895)*

ԾԱՂԿԱԳԻՐ, ձեռագիր մատյանի նկարազարդման տարր՝ ծաղկաձև, հյուսվածքաձև զարդագիր, ծաղկազարդ *գլխագիր*, զարդատառ: *Ծաղկողը* գրքի գլուխների վերնագրերը կամ սկզբնատառերը գրել է զարդագիր Ծ-ով: Ժամանակակից գրքի ձևավորման մեջ Ծ. օգտագործվում է հատուկ հրատ-ներում, որպես պատկերազարդում՝ այլ տարրերի հետ զուգակցված: Ծ. են անվանել նաև զարդագրեր ստեղծող արվեստագետին՝ *ծաղկողին:*


Ծաղկագիր *այբուբենի օրինակ*

ԾԱՂԿՈՂ, նկարող, նաղաշ (արաբ. է, նշանակում է զարդանկարիչ), հին ձեռագրեր պատկերազարդող վարպետ: Հայ միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում մանրանկարիչներն իրենց անվանել են Ծ.: Ծաղկել նշանակել է նաև զարդարել: Ծ. հոմանիշ է **մանրանկարիչ** բառին, որը նշանակում է ձեռագիր գրքեր (հիմնականում՝ Ավետարան, Աստվածաշունչ) պատկերազարդող: Ծ. նկարել է ոչ միայն սյուժետային պատկերներ, այլև *զարդագրեր, խորաններ, անվանաթերթեր, լուսանցազարդեր* ևն: Արլ. երկրներում, նաև Հայաստանում նաղաշին անվանել են նաև նախշքար. ունեցել են համքարություն: Նշանավոր արվեստագետների նաղաշ տիտղոսը ժողովուրդը դարձրել է հատուկ անուն (Նաղաշ Հակոբ, Նաղաշ Հովնաթան և ուր.):

«ԾԱՂԿՈՑԻԿ», գիրք մանուկների քրիստ. դաստիարակության համար: Տպագրվել է 1769-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Հակոբի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ծաղկոցիկ քրիստոնէականի ուսման յոյժ հարկաւոր նորակիրթ մանկանց…» (136 էջ, 8º, 13,2 x 7,2 սմ):


«Ծաղկոցիկ» *(1769, Կ. Պոլիս, Հովհաննեսի և Հակոբի տպ.) գրքի տիտղոսաթերթը*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ, լրացուցիչ տեքստ (բացատրություն, աղբյուրի վկայակոչում, խմբագրի մեկնաբանություն ևն), որը զետեղվում է էջի ներքևում՝ տողատակում, և հիմն. տեքստից անջատվում է գծով, շարվում է ավելի փոքր տառաչափով:

Եթե տեքստում լինում են մի քանի Ծ-ներ, ապա դրանք համարակալվում են, և յուրաքանչյուրը շարվում է նոր պարբերությամբ: Նման դեպքերում Ծ. բառը շարվում է մեկ անգամ՝ 1-ին հիշատակության հետ:

«ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ԱՌ ՀԱՄԱՄԻՏՍ ԵՒ ԲԱՆԱՄԵՐ ՍԲԲԱԶԱՆԻՑ ՀԱՐՑԳ՝ ԵՒ ԵՂԲԱՐՑԳ՝ ՀԱՄԱՁՆԻՑ», Առաքել Նորջուղայեցու չափածո (52 տող) ծանուցումն է այն մասին, որ Ամստերդամում ստեղծվել է հայկ. նոր տպարան: Տպագրվել է 1756-ին Ամստերդամում՝ 1 թերթի վրա: Վերնագիրը և յուրաքանչյուր քառյակի առաջին տառը տպված է կարմիրով՝ փոքրիկ զարդանկարների մեջ:



Անդրանիկ Ծառուկյան



Ա. Ծառուկյանի *«Մանկութիւն չունեցող մարդիկ» (1952, Բեյրութ) գրքի կազմը*



Ալեքսանդր Ծատուրյան

ԾԱՌՈՒԿՅԱՆ Անդրանիկ Թորոսի [1913, գ–ք. Կյուրին (Սեբաստիայի նահանգ)–23.5.1989, Փարիզ], գրող, հաս. գործիչ, խմբագիր: Ավարտել է Հալեպի Հայկազյան ազգ. վարժարանը (1928), սովորել Բեյրութի Համազգ. Նշան Փալանճյան ճեմարանում (1930–34), որտեղ դասավանդել է 1935–42-ին: 1941–49-ին՝ Հալեպում, 1951-ից Բեյրութում խմբագրել է իր հիմնադրած ***«Նայիրի»*** հանդեսը, 1946–50-ին, միաժամանակ՝ ***«Արեւելք»*** (Հալեպ) օրաթերթը, աշխատակցել է «Յառաջ» թերթին: Զբաղվել է նաև գրահրատարակչական գործունեությամբ:

Լույս են տեսել Ծ–ի «Մոխրաման» (1935), «Մանկութիւն չունեցող մարդիկ» (1952, Բ., 1963, 2011, Ե., ռուս.՝ 1964, ֆրանս.՝ 1977) վիպակները, «Բանաստեղծութիւններ» (1939) ժող–ը, «Թուղթ առ Երևան» (1945, 2001) պոեմը, «Վերջին անմեղը» (1980) վեպը, «Նոր Հայաստան, նոր հայեր» (1983), «Երազային Հալեպը» (1985) արձակ գործերի ժող–ը, «Սէրը եղեռնի մէջ եւ հայ աշխարհի ճամբաներուն վրայ» (1987) երկը, «Եղերաբախտ քերթողներ» (1931) աշխատությունը՝ նվիրված Պ. Դուրյանին, Մ. Մեծարենցին, Վ. Տերյանին, Մ. Զարիֆյանին:

Ծ. 1958-ին առաջին անգամ այցելել է Խորհրդ. Հայաստան և իր տպավորությունները գրառել «Հին երազներ, նոր ճամփաներ» (1960) գրքում:

Հանդես է եկել նաև Վ. Խաժակ կեղծանունով:

ՀԳՄ Ռ. Սևակի անվ. մրց. (1988):

Գրկ. **Թորանեան Թ.,** *Անդրանիկ Ծառուկեան: Արձակագիրն ու բանաստեղծը, Լոս Անջելես, 2000:* **Անդրանիկ Ծառուկյանի** *առաջին այցելությունը Խորհրդային Հայաստան (փաստաթղթեր, աշխատասիր.՝* **Գ. Յազըճյանի***), Ե., 2008:*

ԾԱՏՈՒՐՅԱՆ Ալեքսանդր Հովսեփի [28.4.1865, ք. Զաքաթալա (այժմ՝ Ադրբեջանում)–31.3. 1917, Թիֆլիս], բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է ծննդավայրի քաղաքային ուսումնարանը (1881): Ուսուցիչ է եղել Նիժնի Նովգորոդի և Մոսկվայի հայ մեծահարուստների ընտանիքներում, ծառայել է բանկային և առևտրային գրասենյակներում: Աշխատակցել է «Հանդէս գրականական եւ պատմական» տարեգրքին, «Մուրճ» ամսագրին: Բանաստեղծություններում արտացոլել է ժողովրդի վիշտն ու տառապանքը («Մուրացկան», «Թշվառին», «Աղքատի երգը մահից առաջ»), ազգ–ազատագր. պայքարը («Տուր ձեռքդ», «Քինվորի երգը», «Հերիք է, ազգ իմ»), դառը քրտինքով իր ապրուստը հոգացող աշխատավորի կյանքը («Մերմնացան», «Այ սև ամպեր», «Երկրի մշակները», «Գիր»):

Լույս են տեսել Ծ–ի «Գրչի հանաքներ» (1901, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.) երգիծ. ժող–ը (պատկերազարդել է Վարդգես ***Սուրենյանցը***), կազմել է «Հատիկներ» (1915, նույն տպ., Կ. Կուսիկյանի հետ) ընթերցանության ձեռնարկը: Մասնակցել է Յ. Վեսելովսկու և Մ. Բերբերյանի կազմած «Հայ արձակագիրներ» (ռուս., 1893) ժող–ի նյութերի ընտրությանն ու թարգմանությանը (թարգմանել է Գ. Սունդուկյանի «Պեպոն»): 1905-ին թարգմանել ու հրատարակել է «Ռուս բանաստեղծներ» ժող–ի 1-ին հատորը, 1906-ին՝ 2-րդը, թարգմանել է Հ. Զուդերմանի, Ի. Տուրգենևի, Ա. Սումբատովի, Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ն. Նեկրասովի ստեղծագործություններից: Հրատարակվել են Ծ–ի «Երկերը» (1948), «Ընտիր բանաստեղծություններ» (1937), «Բանաստեղծություններ» (1958) ժող–ները, «Նամակները» (1961):

Հանդես է եկել նաև Մնար, Սլաքյան, Արծիվյան, Շիրակյան և այլ կեղծանուններով:

Գրկ. **Խնճիկյան Ա.,** *Ա. Ծատրուրյանի կյանքը, Ե., 1940:* **Ֆելեքյան Հ.,** *Ալեքսանդր Ծատրուրյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1965:* **Բեժանյան Ա.,** *Ալեքսանդր Ծատրուրյան, Ե., 1960:*

ԾԵՐԵՆՑ (Շիշմանյան Հովսեփ, 16.9.1822, Կ. Պոլիս–17.2.1888, Թիֆլիս), գրող, հրապարակախոս: Սովորել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում: 1846-ին ընդունվել է Սորբոնի համալսարանի բժշկ. ֆակ–ը, ավարտել է Պիզայի համալսարանը (1852): 1849-ին Նահապետ Ռուսինյանի և ուր. հետ հիմնադրել է ուսանող. «Արարատյան ընկերությունը»: 1853-ին Կ. Պոլսում մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) մշակմանը, 1872-ից ազգ. կյանքին նվիրված հոդվածներ է տպագրել «Արեւելեան մամուլ» հանդեսում:

Լույս են տեսել Ծ–ի «Թորոս Լեւոնի» (1877, ԿՊ, Արամյան տպ., 1881, Թ., Հովհաննես Սարտիրոսյանի տպ.), «Երկունք Թ դարու» (1879, նույն տպ.,

1895, Բաքու, «Արոր» տպ.), «Թէոդորոս Ռշտունի» (1881, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.) պատմավեպերը, որտեղ պատկերել է հայրենիքի անկախության և ազատագրության համար մղվող պայքարը: Հրատարակվել են նաև Ծ-ի «Երկերը» (1968, 1983, 1985, Ե.):

Գրկ. Նանումյան Ռ., *Ծերենց: Կյանքը և գործը, Ե., 1986:*

ԾԵՐՈՒԿՆ ԾԱՂԿՈՂ, XIV դ-ի 2-րդ կեսի–XV դ-ի սկզբի գրիչ և մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** նշանավոր ներկայացուցիչ: Ապրել և ստեղծագործել է Ոստան գյուղաքաղաքում: Հայտնի են Ծ. Ծ-ի ընդօրինակած ու պատկերազարդած 6 ձեռագրերը՝ 2 «Մատեան ողբերգութեան» (1390, ձեռ. № 4938 և 1391, ձեռ. № 1874), 2 Ավետարան (1391, ձեռ. № 8772 և 1412, ձեռ. № 4157), 1 Շաւրնտիր (1401, ձեռ. № 4670, բոլորը՝ Մատենադարան), 1 Ավետարան (1395, Ս. Պետերբուրգ, Էրմիտաժ, v.p. 10.10): Նրա անվան հետ է կապվում Վասպուրականի մանրանկարչության ճյուղավորումներից մեկը՝ **Ծերունյան դպրոցը:** Ծ. Ծ-ի մանրանկարներին բնորոշ են հորինվածքների կառուցման իզոկեֆալային եղանակը (դեմքերի տեղակայումը միևնույն մակարդակի վրա), նաև ժող. արվ-ից սերող որոշակիացման ձգտումը, ավարտուն գծանկարը, մաքուր ու պայծառ գույները:



Ծերենց

Գրկ. Հակոբյան Հ., *Ծաղկող Ծերուն քահանա, «Էջմիածին», 1974, № 3:* Дурново Л., *Краткая история древнеармянской живописи, Е., 1957.*

«ԾԻԱԾԱՆ», հաս-քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1909–10-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Ավետիս Սուրենյան: Լուսաբանել է հայոց ազգ. կյանքը, տեղեկություններ է հաղորդել հատկապես Թուրքիայի հայերի քաղ. դրության ու տնտ. վիճակի մասին: «Հայերը հանդեպ Ատանայի աղետին» հոդվածաշարով անդրադարձել է 1909-ի Ադանայի հայկ. կոտորածներին: Մեծ տեղ է հատկացրել Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականությանը: «Ծ.» անդրադարձել է նաև կրթության հարցերին, ունեցել գրական բաժին:



Ծերենցի *«երկեր»-ի (1983, Ե., «Լույս») կազմը*

«ԾԻԱԾԱՆ», ազգ., գրական, կրոն. ամսաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Հայ առաքել. եկեղեցու հրատ.: Լույս է տեսել 1924–25-ին Սան Ֆրանցիսկոյում, 1926–27-ին՝ Դետրոյտում: Խմբագիր՝ Ս. Ծոցիկյան: Տպագրել է նյութեր հայկ. գաղութների կյանքից, հոդվածներ՝ գրականագիտ., լեզվաբ., բարոյագիտ., կրոն. և այլ թեմաներով: Ունեցել է «Համառոտ տեղեկություն արևմտահայ գրական դեմքերի մասին» մշտ. բաժինը:

«ԾԻԱԾԱՆ», գրակ-յան և գեղարվ-ի պարբերաթերթ: ՀԲԸՄ Հայ երիտասարդաց ընկերակցության գրասեր երիտասարդների միության հրատ.: Լույս է տեսել 1939–49-ին Բեյրութում: Խմբագիր՝ Բյուզանդ *Եղիայան:* Մեծ տեղ է հատկացրել հայ գրողների գործերին, տպագրել է նաև օտարազգի գրողների ստեղծագործություններից, նաև պատմաբանասիր. և գեղագիտ. հոդվածներ: Աշխատակցել են Գ. Հովսեփյանը, Վ. Թեքեյանը, Հ. Օշականը, Շ. Պերպերյանը և ուր.:


«ԾԻԼՆ ԱԽԱՐԱՅՐԻ», գրական-բանասիր. ամսագիր: Լույս է տեսել 1866–67-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Սարկոս *Աղաբեկյան:* Մերժել է եվրոպ. քաղաքակրթությունն ընդօրինակելու ուղին, հայ հաս. կյանքի բարեփոխումը պայմանավորել է միայն ազգ-ազատագր. պայքարով և Հայ եկեղեցու ինքնուրույնությամբ: Բացասաբար է վերաբերվել «Պոլոժենիե»-ին՝ որպես Հայ եկեղեցու իրավունքները սահմանափակող կանոնադրության:



Ծերուն Ծաղկող. *«Հաղորդություն», մանրանկար, 1391-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 8772)*

«ԾԻՆԵՌՆԱԿ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1993-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Անուշ Վարդանյան: Հրատարակում է հայ մանկագիրների և համաշխ. դասականների մանկապատանեկան ստեղծագործություններ, ինչպես նաև մանկ. երգարաններ ու խաղ-գրքեր:

Ցայսօր լույս է ընծայել շուրջ 200 անուն գիրք: Ուշագրավ են Է. Միլիտոնյանի «Վահագն Վիշապաքաղի արկածները» (2003), «Ծիծեռնակի թռիչքը» (2003), Ջ. Ռոդարիի «Իտալական երգ» (2004), Է.



«Ծիծեռնակ», *1967-ից, Երևան*

Հեմինգուեյի «Ունենալ և չունենալ» (2006), Ռ. Նահապետյանի «Գրամեքենա» (2011), Յ. Վ. Գյոթեի «Ռայնեկե աղվեսը», Վ. Ստամատովի «Պատմվածքներ, զրույցներ ծովից», Ս. Սուրադյանի «Գրքի թևով, հազար ձևով», Ա. Վարդանյանի «Իրական և հեքիաթային պատմություններ» (բոլորը՝ 2012) և այլ գրքեր: Տպագրում է նաև *«Ծիծեռնակ»* ամսագիրը:

«ԾԻԾԵՌՆԱԿ», մանկ. պատկերազարդ եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1967-ից (1967–77-ին՝ *«Պիոներ»* ամսագրի հավելված) Երևանում: Խմբագիրներ՝ Սաղաթել *Հարությունյան*, Անահիտ *Սահինյան*, Ժենյա Սադոյան, Էդվարդ *Միլիտոնյան*, Անուշ Վարդանյան (2000-ից): Մանկահասակ ընթերցողների մեջ սերմանում է հայրենասիրություն, ընկերասիրություն, սեր մայրենի լեզվի, աշխատանքի, արվ-ի ու գրակ-յան, արհեստների, սպորտի նկատմամբ, տպագրում է ճանաչող. նյութեր, տեղեկություններ՝ գիտ. հայտնագործությունների մասին, հայ մանկագիրների ստեղծագործություններ, մանուկների գեղ. գործեր:

Գրկ. «Ծիծեռնակ» ամսագրի մատենագիտություն (1967–2002), Ե., 2005:



Վ. Ստամատովի «Պատմվածքներ և զրույցներ ծովից» (2012, Ե., **«Ծիծեռնակ»***) գրքի կազմը*

«ԾԻԾԵՌՆԱԿ ԱՐՎԵՍՏԻ», արվ-ի և գրակ-յան եռամսյա հանդես: Լույս է տեսել 1957–65-ին Բոստոնում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Հրանտ Ավետիսյան, Միհրան Վանեցյան (վերջին համարինը): Սատարել է ամերիկահայ գաղութում մայրենի լեզվի, մշակույթի ու ազգ. սովորույթների պահպանմանն ուղղված ջանքերին, նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Տպագրել է գրական-գեղ. ստեղծագործություններ, կենսագր. ակնարկներ, գրախոսականներ, թարգմանություններ, անդրադարձել է Խորհրդ. Հայաստանի տնտեսությանը, գիտ-յանը, մշակույթին: Հրատարակել է բացառիկ համարներ՝ նվիրված հայ անվանի գրողներին:

ԾՈՎՅԱՆ (Խերանյան) Վահան Կարապետի [1898, Արճեշ (Վանի նահանգ)–1979, Երևան], լրագրող, խմբագիր: Ավարտել է Վանի Կեդրոն. և Երևանի թեմ. դպրոցները: Եղել է «Սպարտակ» երիտասարդ. միության հիմնադիրներից (1919), ընտրվել է միության վարչության և «Սպարտակ» թերթի խմբագր. խորհրդի անդամ: 1922–27-ին՝ Հայկ. դիվիզիայի քաղ. բաժնի պետի տեղակալ, ապա՝ պետ, 1928–34-ին՝ *«Սովետական Հայաստան»*, *«Բանվոր»*, Հս. Կովկասի երկրային կոմիտեի «Սուրճ և մանգաղ» ու «Գրոհ» պաշտոնաթերթերի խմբագիր:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան:



«Ծուղրութի Աւետարան». *«Հարություն», մանրանկար (974, գ. Ծուղրութ)*

«ԾՈՒՂՐՈՒԹԻ ԱՒԵՏԱՐԱՆ», մագաղաթե հայ. ձեռագիր մատյան: Ընդօրինակվել է 974-ին (վայրը և մանրանկարիչը հայտնի չեն, գրիչ՝ Հովհաննես, հիշատակարանի հեղինակ ու ձեռագրի ստացող՝ Եղիա քահանա): Պահվում է Վրաստանի Ախալցխայի շրջանի Ծուղրութ գյուղում (այստեղից էլ՝ անվանումը): «Ծ. Ա.»-ում Հիսուսի կյանքը պատկերող նկարաշարը ոճով հարում է «Ժողովրդական ուղղությանը», աչքի է ընկնում պատկերագրության ինամենի առանձնահատկություններով: Նկարիչը պարզ միջոցներով հասել է արտահայտչականության և անմիջական տպավորության:

Գրկ. Յովսէփեան Գ., Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, մաս 3, Վաղ-պատ, 1913, էջ 23–24: Նույնի, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Անթիլիաս, 1951, էջ 129–130: Քոթանջյան Ն., *Ծղրութի Ավետարանը. 974 թ., Ե., 2006:*


Կ

Կ, հայ. այբուբենի 15-րդ տառը, անվանումը՝ «կեն»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 երկար և 1 լայն տարրերից. երկարներն իրար են միանում ստորին ծայրերից, իսկ լայնը, որը ձախ կողմի երկարի տակ է, միանում է զուգահեռ երկարի ստորին մասին: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Կ, որպես այբուբենի տասնավորների սյան 6-րդ (15-րդ) տառ, նշանակել է վաթսուն և վաթսուներորդ, բյուրի նշանով (Կ͂)՝ 60 բյուր (600 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Կ-մաս 60-րդ):

ԿԱՋՄ, ձեռագիր մատյանի կամ տպագիր գրքի կազմակողերը, որոնց մեջ ամփոփվում, ամրացվում են մագաղաթե կամ թղթե թերթերը: Կ-ի նախն. ձևը տուփն էր, որի մեջ պահվում էին պապիրուսի փաթեթները: Սագաղաթի գործածությամբ տուփը վերածվել է Կ-ի, ունի 2 փեղկ՝ վերի և վարի, կռնակ (կամ թիկունք) և դռնակ: Կողերի միջուկը հարթեցված տախտակ էր, որը դրսից պատվել է մշակված կաշվով, ներսից՝ որևէ գործվածքով՝ կազմաստառով: Որպեսզի Կ. ձեռագիրը չմաշեր, Կ-ի և ձեռագրի արանքում դրվել է ***պահպանակ***՝ հիմնականում օգտագործված, ավելի հաստ մագաղաթի թերթ: Կ-ի կաշին զարդարվել է նկարներով (ճնշատպումով արված զարդեր), մետաղե նախշերով, հատկապես՝ խաչերով ու թանկագին քարերով: Կ-երը եղել են նաև ոսկուց, արծաթից և այլ մետաղներից՝ դրվագված տերուն. պատկերներով, ինչպես նաև փղոսկրից: Սատենադարանում պահվող և ընդհանրապես հայ. ձեռագրերի Կ-երից հնագույնը *«Էջմիածնի Աւետարանի»* փղոսկրե Կ. է (VI դ.): Արծաթե ոսկեզօծ հնագույն թվագրված Կ. 1255-ի է, կաշվե Կ.՝ 1196-ի:

Ժամանակակից գրքերի Կ-երում կաշին փոխարինվել է կազմանյութով (գործվածք, արհեստ. կաշի՝ լեդերին, թուղթ կամ մոլաթ), տախտակը՝ ստվարաթղթով: Կ-ի կռնակի վրա երբեմն գրվում են գրքի հեղինակի անունը, վերնագիրը նև: Ներկայում Կ-երի ձևերը, տեսակը, կազմության տարրերը նև սահմանվում են չափորոշիչներով: Գրքի ծավալից և տեխ. հատկանիշներից կախված՝ օգտագործվում են հիմնականում փափուկ (շապիկ) կամ կոշտ (ստվարաթղթե) Կ-եր: Կ-երը նաև արտաքին ձևավորման կարևոր տարր են:





Կազմ *արծաթե. (974, «Ծուղրութի Աւետարան»)*

ԿԱԶՄԱՐԱԲՈՒԹՅՈՒՆ, 1. ձեռագիր մատյանի ստեղծման ավարտ. փուլը: Կ. Հայաստանում X դ–ից ինքնուրույն արհեստ է, որի զարգացումը պայմանավորվել է գրչության կենտրոնների գործունեությամբ. այստեղ գրել (ընդօրինակել) և նկարազարդել են մատյաններ, ապա կազմել են գրված թերթերի պահպանման նպատակով: Այն հետագայում դարձել է նաև զարդարման եղանակ, կիրառ. արվ–ի գործ: Կազմները պատրաստել են կազմարարները:

Ձեռագրի կարված մագաղաթե թերթերը հնում պահել են կտավե փաթեթներում, ծածկել գործվածքով կամ կաշվով, դրել փայտե, մետաղե կամ փղոսկրե տուփի մեջ (հնագույնը 989–ին Բղենո Նորավանքում ընդօրինակված *«Էջմիածնի Աւետարանի»* VI դ–ի փղոսկրե կազմն է): Հետագայում տուփը փոխարինվել է կաշեպատ տախտակե կազմով, որին տրվել է տուփի տեսք՝ 2 փեղկ, կռնակ (կամ թիկունք) և դռնակ: Մետաղե որոշ կրկնակազմերի դռնակները 3 կողմից են:

Կազմարարն ընտրել, մշակել է կազմի կաշին (դաբաղած), պատրաստել միջուկ–տախտակը, աստառի ծաղկանկար կտավը (հաճախ՝ մետաքսե ոսկեթել պատկերազարդ գործվածք), պահպանակը՝ հին ձեռագրերի պատառիկներից: Կիսաթաց կաշին կամ մագաղաթը զարդարել են սրածայր, չկտրող գործիքով ճնշելու եղանակով: XII դ–ից կազմերը զարդարել են նկատների միջոցով, որոնք մետաղե (բրոնզե) գլանաձև, քառանիստ (կամ ձվածիր) կտրվածքով ձողեր են՝ մի ծայրին խորաքանդակ զարդով. մուրճի թեթև հարվածով ծայրի զարդը դաջվել է կազմին: Զարդը դաջել են նաև մետաղե զարդավոր տախտակով ճնշելու եղանակով՝ առատպելով: Կաշվե կազմերի անկյուններում երբեմն փակցրել են մետաղե թիթեղներ՝ ավետարանիչների խորհրդանիշների (մարդ, առյուծ, եզ, արծիվ) պատկերներով, իսկ ավելի ուշ ձեռագրերը նաև կոստղել են՝ կազմի վրա ամրացնելով կլոր կամ գմբեթաձև գլխիկներով մետաղե կամ արծաթե գամեր՝ որպես զարդարանք: Կաշվից բացի՝ պատրաստել են նաև կրկնակազմ արծաթից և ոսկուց կազմեր, որոնք հագցրել են ձեռագրերի (Աստվածաշունչ, Ավետարան, Պարզատումար, Սաղմոսարան ևն) բուն կազմերին ու զարդարել տերուն. և այլ պատկերներով («Ավետում», «Ծնունդ», «Աստվածամայրը մանուկ Հիսուսը գրկին», «Խաչելություն», «Հարություն», «Տրդատի թագադրումը», «Դավիթ մարգարե», «Սբ Էջմիածին» ևն)՝ ծաղկազարդերով, զարդանախշերով, արձանագրություններով: Ինքնատիպ կազմարար. և ոսկերչ. դպրոցներ են գործել Կիլիկիայում, Կեսարիայում, Վասպուրականում, Մուշում, Կարինում, Սեբաստիայում, Կ. Պոլսում, Էջմիածնում, Սյունիքում, Բուլղարիայում, Լեհաստանում, Մոլդովայում, Մոսկվայում, Ղրիմում, Նոր Ջուղայում, Կալկաթայում:

Բուն Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում վանական խոշոր հաստատությունների դպրոցներում, բացի հիմն. առարկաներից (գրչություն, մանրանկարչություն), դասավանդել են նաև Կ.: Գրիչի, ծաղկողի և ստացողի (պատվիրատուի) հետ ձեռագրում հաճախ նշվել է նաև կազմարարի անունը: IX դ–ում հիշատակվում է, օր., Գեորգ կազմողը, X դ–ում (977 և 999)՝ Գեորգ և Տիրանուն կազմարարները, XI դ–ում՝ Ովհաննեսը (1001), Սարգիսը (1088) և Խաչատուրը, XIII դ–ի 2–րդ կեսին՝ արքայական մատյանների և ընտիր ձեռագրերի կազմարար Առաքել Հսազանդենցը (Կիլիկիա), XVI դ–ում՝ Փիլիպոսը (Վասպուրական), XVII դ–ում՝ Ազարիան (Նոր Ջուղա), XVII–XVIII դդ–ում՝ Շահմիր Կարապետը, Մալխաս Հակոբը, Շահպազ Գրիգորը, Մալխաս Օհաննեսը, Մալխաս Կարապետը, Շահպազ Կարապետը, Շահմիր Հակոբը (Կեսարիա), XIX դ–ում՝ տեր Ղազարը, տեր Մխիթարը, տեր Մեսրոպը (Արցախ–Ուտիք) և ուր.:

Գրատպության գյուտից հետո տախտակե միջուկով կաշվե կազմը փոխարինվել է ստվարաթղթե կազմով, որը զարդարվում է պոլիգրաֆ. եղանակներով:

Կազմեր Ավետարանի



Փղոսկրե հապվածավոր (VI դ., «Էջմիածնի Աւետարան»)



Արծաթե կոստղապատ (1392)



Արծաթե (1731)

2. **Կազմարարական գործողություններ**, գրքի *կազմը* պատրաստելու՝ բլոկը կազմակողերին ամրացնելու, կլորացնելու և ծալելու, կռնակի նյութերը (թանզիֆ, երիզ, թուղթ) սոսնձելու, կտրվածքները ներկելու, *էջանշանն* ամրացնելու, կազմակողերը պատրաստելու և հարդարելու (մակատպություն, դաջում), գրքի մամլման ու ստվերագծման գործողությունների ամբողջություն: Կատարվում են առանձին մեքենաներով կամ հոսքագծերով:

Գրկ. Յովսէփեան Գ., *Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից, Հալեպ, 1930:* Աբրահամյան Վ., *Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ., Ե., 1956: Ավետարանական պատկերներ (կազմ.՝ Կ. Մաթևոսյան և Ա. Ավետիսյան), Ե.,1993:* Մալխասյան Ա., *Հայերեն ձեռագրերի կազմերը և նրանց պատրաստման եղանակները, «Էջմիածին», № 2–3, 1995:* Նույնի, *Կեսարահայ կազմարվեստի պատմությունից (ԺԷ–ԺԸ դդ.), «Էջմիածին», № 5–6, 1996:* Նույնի, *Վաապուրականի կազմարվեստի դպրոցը, «Էջմիածին», № 6, 2004:*

Արմեն Մալխասյան

«ԿԱԹՈՒՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ», կրոն., գրական և տեղագր. շաբաթական հանդես: Հայ կաթոլիկների Կ. Պոլսի պատրիարքարանի հրատ.: Լույս է տեսել 1911–12–ին Հռոմում, 1912–15–ին՝ Կ. Պոլսում: Տնօրեն–խմբագիր՝ Գևորգ Ծայրագույն վրդ. Թերզիպաշյան: Ներկայացրել է հայ կաթոլիկ համայնքի առօրյան, տպագրել պատրիարքարանի հրամաններն ու հայտարարությունները: Պատրիարքարանի վարչակարգի ու նրա կազմի բարեփոխման հարցերում եղել է պահպանողական: Տպագրել է կրոնաբարոյախոս. հոդվածներ ու գեղ. գործեր: Ներկայացրել է միջազգ. և Թուրքիայի քաղ. կյանքը:

«ԿԱԼԻՖՈՌՆԻԱ ԿՈՒՐԻԵՐ» (“The California Courier”–«Կալիֆոռնիայի սուրհանդակ»), շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1958–ից Ֆրեզնոյում, ապա՝ Գլենդելում՝ անգլ.: Խմբագիրներ՝ Զորջ Մեյսըն, Հարութ *Սասունյան* (1983–ից): Տպագրում է լուրեր, հոդվածներ՝ քաղ., մշակութ., սոցիալ–տնտ. թեմաներով, լուսաբանում է ամերիկահայ և Սփյուռքի այլ համայնքների կյանքը, անդրադառնում է Հայ դատին ու Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրներին, ՀՀ–ում և Արցախում տեղի ունեցող իրադարձություններին:



«Կալիֆոռնիա Կուրիեր», *1958–ից, Ֆրեզնո, Գլենդեն*


Կալկաթայի հայկական տպագրություն

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Կալկաթայում առաջին հայկ. տպարանը 1796–ին հիմնադրել է Հովսեփ Ստեփանոսյանը և նույն թվականին հրատարակել Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցից», 1797–ին՝ Հովհաննես Զուղայեցի Մրքուզի «Վիճաբանութիւն առ շահ Սլէմանն պարսից» երկերը, 1798–ին՝ «Գրգուկ որ կոչի Էֆիմերտէ»–ն: XIX դ–ի 1–ին կեսին գործել են Ավետ Ջնթլումյանի (1811–17), նրա որդիներ Ավետ և Հովհաննես Ջնթլումյանների (1820), Հայոց մարդասիր. ճեմարանի (1816–53), Պողոս Հորդանանյանի (1820–23), Օճանասփյուռ ընկերության (1822–23), Անգլ. եպիսկոպոս. ճեմարանի (1827–41), Մկրտող միսիոներների (1831–44), Մեսրոպ *Թաղիադյանի* հիմնադրած Արարատյան ընկերության (1845–48) և «Ազգասեր Արարատյան» (1848–52), Պողոս Վիչենյանի «Արծիվ» (1846–51) տպարանները: Պ. Հորդանանյանի տպարանում է տպագրվել *«Հայելի Կալկաթեան»* (1820) լրագիրը և «Խտրադիմայ դժրողութեան» (1821) հայ. անդրանիկ աշխարհաբար կատակերգությունը:




«Խտրադիմայ դժրողութեան» (1821, Պողոս Հորդանանյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը

Առավել բեղմնավոր էր Հայոց մարդասիր. ճեմարանի տպարանը, որը լույս է ընծայել ավելի քան 60 անուն դասագրքեր, օրացույցներ, թարգման. գեղ. երկեր: Այստեղ տպագրվել են «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան, որ ըստ յունաց ասի տիալիքտիկէս» (1822), Մ. Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1823) և «Խրախճան պատմութեան Հայոց» (1824) աշխատությունները, Հ. Աղանուրյանցի «Այբբենարանը» (1824) և այլ գրքեր:




Մ. Չամչյանի «Խրախճան պատմութեան Հայոց» (1824, Հայոց մարդասիրական ճեմարանի տպ.) գրքի փիփղոսաթերթը

Անգլ. եպիսկոպոս. ճեմարանի տպարանը հրատարակել է Մ. Թաղիադյանի «Աստուածասէր եւ ազգասէր հասարակութեան հայոց փրկեալ քաղաքին Երեւանայ...» (1828) հայտնի նամակը, «Դիցաբանութիւն» (1830) ուսումնասիրությունը, դասագրքեր, «Սիրակարկաջ»



Մ. Թաղիադյանի «Մեսրովբեան առաջնորդ մանկանց» (1847, Արարատյան ընկ. փպ.) գրքի փիփղոսաթերթը



«Կաճառ», *2006-ից, Սյունիքի մարզի (№ 1, 2007)*



«Կամար», *2005-ից, Բեյրութ (№10, 2010)*

(1830) երգարանը և այլ գործեր: Արարատյան ընկերության և «Ազգասեր Արարատյան»-ի տպարաններում տպագրվել են Մ. Թաղիադյանի երկերը [«Պատմութիւն հին Հնդկաստանի...» (մաս 1, 1841), «Պատմութիւն Պարսից» (հ. Ա, 1846), «Վէպ Վարդգիսի տեառն Տուհաց» (1846), «Վէպ Վարսենական՝ սկայուհւոյ Աղուանից» (1847), «Սոս եւ Սոնդիպի» (1847), «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» (1847), «Մեսրովբեան առաջնորդ մանկանց» (1847) ևն], նրա խմբագրած ***«Ազգասէր»*** (1845–48) և ***«Ազգասէր Արարատեան»*** (1848–52) պարբերները, Թ. Ավետումյանի «Արամայիս...» (1846) վիպակը:

1850–60-ական թթ-ին հնդկահայ մշակութ. կյանքն անկում է ապրել: 1852–69-ին Կալկաթայում հայկ. տպարան չի գործել: Տեղի հայկ. վերջին՝ Հովհաննես Խաչիկյանի տպարանում 1870–80-ական թթ-ին հրատարակվել են տպարանատիրոջ շուրջ 10 անուն գործերը: 1895-ին հնդկահայ Մեսրոպ Յ. Սեթը հրատարակել է «Հնդկահայոց պատմությունը» (անգլ.) աշխատությունը, որտեղ անդրադարձել է նաև հնդկահայ գաղութի տպագրությանը: 1896–97-ին անգլ. մի տպարանում լույս է տեսել «Երգաձայնութիւնք Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ» ժամագիրքը՝ հայ. բնագրով և անգլ. թարգմանությամբ ու նոտաներով: 1908–10-ին Կալկաթայում լույս է տեսել «Արմենիա» (անգլ., խմբագիր՝ Գ. Ն. Գաթրճի) կիսամյա հանդեսը: 1950–60-ական թթ-ին ոչ հայկ. մի տպարանում հրատարակվել է «Նոր ազդարար» հանդեսը: Կալկաթայում հայ. գրքերը հիմնականում տպագրվել են գրաբարով, երբեմն՝ նաև աշխարհաբարով ու Նոր Ջուղայի խոսակց. լեզվով:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու տպար, ԿՊ, 1912, Ե., 2012 (նամանահանություն): Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012: Իշխանյան Ռ., Հայ գիրքը, Ե., 1981:

ԿԱԽՈՑԱՆ Ասատուր Ստեփանի [կուս. ծածկանունը՝ Բանվոր Խեչո, 17.2.1874, գ. Հաղպատ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–1937, անհատի պաշտամունքի զոհ], հեղ. գործիչ, լրագրող: ՌՍԴԲԿ անդամ՝ 1898-ից: Գործել է Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Հայաստանում: 1900–01-ին Թիֆլիսում Կ-ի, Հայկ Փիլոսյանի, Մելիք ***Մելիքյանի*** նախաձեռնությամբ լույս է տեսել ձեռագիր-բազմացված «Բանւոր» թերթը: Աշխատակցել է «Բանւորի ձայնը», «Կայծ», «Նոր խօսք», «Օրեր» բոլշևիկյան թերթերին:

Երկ. Հիշողություններ. 1892–1917, Ե., 1930: Հոդվածներ և հուշեր, Ե., 1963:

«ԿԱՃԱՌ», համանուն գիտ. կենտրոնի տարեգիրքը: Լույս է տեսնում 2006-ից (առաջին 8 ամիսը՝ գիտ-հաս. ամսաթերթ) Ստեփանակերտում: Գլխ. խմբագիր՝ Միհր ***Հարությունյան:*** Ներկայացնում է կենտրոնի գործունեությունը, տպագրում է Արցախի պատմությանը, մշակույթին, ազգագրությանը, Արցախյան պատերազմին, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին վերաբերող նյութեր, արցախյան բանահյուսության նմուշներ, անտիպ հատվածներ՝ անվանի մարդկանց նամականուց, գրախոսություններ, բանավեճեր, հարցազրույցներ:

«ԿԱՄԱՐ», գրակ-յան և մշակույթի անկախ հանդես: Լույս է տեսնում 2005-ից Բեյրութում: Հիմնադիր-խմբագիր՝ Ժիրայր ***Դանիելյան:*** Լուսաբանում է Սփյուռքի, մասնավորապես՝ լիբանանահայ գրական և մշակութ. կյանքը, ներկայացնում նոր անուններ, նոր գրքեր, անդրադառնում է հայ դաս. գրական ժառանգությանը, ՀՀ-ի մշակութ. և գրական աշխարհի ուշագրավ իրադարձություններին:

ԿԱՄԱՐԻ (Բեջանյան) Հակոբ Մինայի [17.7.1889, գ. Լյուլասազ (այժմ՝ գ. Կամարի՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–4.12.1930], հեղ. գործիչ, լրագրող: ՌՍԴԲԿ անդամ՝ 1905-ից: 1903-ին ընդունվել է Գորիի ուսուցչ. սեմինարիան: Թիֆլիսում 1915-ին եղել «Պայքար» թերթի խմբագր. խորհրդի անդամ, 1917-ին՝ «Սօցիալ-դեմօկրատ» թերթի պատ. քարտուղար, 1918-ին՝ «Կոմմունա» թերթի խմբագիր: Զանգեզուրի կոմ. կազմակերպության ժամանակավոր ԿԿ-ի (1920-ի մայիս) նախագահ, խորհրդ. իշխանության հաստատումից հետո՝ գավառի հեղկոմի նախագահ:

«ԿԱՄԵՆԻՑ. ՏԱՐԵԳԻՐՔ ՀԱՅՈՑ», հայ միջնադարյան տարեգրություն: Ստեղծվել է Կամենեց-Պոդոլսկում (այժմ՝ Ուկրաինայում): Ընդգրկում է 1410–1652-ի իրադարձությունները: Գրված է հայ. (1410–1610 և 1648–52) և հայ-ղփչաղ. (1611–23): Հեղինակներն են դեպքերին ականատես Հովհաննես ավագերեցը (նկարագրել է 1560–1605-ի անցքերը, խմբագրել է նաև նախորդ գրվածքները), նրա որդին՝ Գրիգոր ավագերեցը (1605–10-ը), վերջինիս որդիներ Հակոբն ու Օգսենը (1611–21-ը), նաև անանուն ժամանակագիրներ (հետագա գրվածքները): «Կ. տ. հ.» արժեքավոր սկզբնաղբյուր է Կամենեց-Պոդոլսկի ու լեհահայ այլ գաղթավայրերի և Հայաստանի հետ նրանց կապերի, թուրք-թաթար. զավթիչների պայքարի մասին ևն: «Կ. տ. հ.»-ի բնագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, XVII դ-ի թերի ընդօրինակությունը՝ Փարիզի ազգ. գրադարանում:

«Կ. տ. հ.» առաջին անգամ հրատարակվել է 1896-ին՝ «Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաստչեայ յաւելուածովք» (կազմ., ուսումնասիր.՝ Ղ. Ալիշանի, Վնտ., Սբ Ղազարի տպ.) վերնագրով, առանձին մասեր թարգմանվել են ուկր., ֆրանս., անգլ. և ռում.:

Գրկ. Հակոբյան Վ., Հայկական աղբյուրները Ուկրաինայի քաղաքների մասին, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1963, № 2: Дашкевич Я., *Армянские колонии на Украине в источниках и литературе XV–XIX веков, Е., 1962.*

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Տիգրան Խաչատուրի [1866, Կ. Պոլիս–4.1.1941, Վիշի (Ֆրանսիա)], գրող, թարգմանիչ, հաս. գործիչ: Ավարտել է Կ. Պոլսի Արամյան երկսեռ վարժարանը (1884): Կ-ի թարգման. և ինքնուրույն գործերը տպագրվել են Կ. Պոլսի «Լույս», «Գիտական շարժում», «Արեւելք», «Մասիս» պարբ-ներում: Նրա «Վարժապետին աղջիկը» (1888, ԿՊ, «Արևելքի» և «Մասիսի» տպ-ներ., 1921, ԿՊ, Մ. Տեր-Սահակյանի տպ., 1941, Կահիրե, «Հուսաբերի» տպ., 1956, Ե.) արևմտահայ գրակ-յան առաջին ռեալիստ. վեպն է: 1892-ին «Մասիս»-ում տպագրել է «Հարո», «Հովկուլը» և «Ընկուզին կողովը» նովել(ներ)ը: 1895-ին Կ. տեղափոխվել է Եգիպտոս: 1919-ից ապրել է Փարիզում: 1924-ին Կ. 2000 անգլ. ոսկի է նվիրաբերել Խորհրդ. Հայաստանի կառավարությանը՝ ամենամյա գրական մրցանակաբաշխության համար:

Լույս են տեսել նաև Կ-ի «Փրկանք» (1910, համահեղ.՝ Միքայել *Կյուրճյան*) ռեալիստ. դրաման, «Դիւցազնական», «Անհրաժեշտ անցագիրը» և այլ քրոնիկներ, նովելներ (տես «Հայ գրողներ», գիրք 2, Թ., 1910, «Կուլտուրա» տպ.), արձակ բանաստեղծություններ: Հրատարակվել է նաև Կ-ի «Երկեր»-ը (1984):

Հանդես է եկել նաև Օվքիտե, Ասեղ, Նետ, Փյունիկ, Հայկակ և այլ կեղծանուններով:

Գրկ. **Մարգարյան Հ.,** *Տիգրան Կամսարական: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1964:*

«ԿԱՄՈՒՐՋ», գրական-գեղ., տես-քննադատ. տարեգիրք: Վրաստանի գրողների միության հայկ. մասնաճյուղի հրատ: Լույս է տեսնում 1961-ից Թբիլիսիում (1956–60-ին հրատարակված «Ալմանախի» շարունակությունն է): Խմբագրակազմ՝ Սահակ Մանվելյան, Բենիկ ***Մեհրանյան***, Մարտին ***Քարամյան***, վերջին հրատ-ների խմբագիր՝ Գևորգ Մնխչյան: Տպագրում է Վրաստանի հայ գրողների (Ծ. Թորգոմյան, Ս. Ավչյան, Գ. Գրիգ, Հ. Կարայան, Մ. Ասլանյան, Ս. Մանվելյան, Ս. Սիմավորյան, Բ. Մեյրանյան, Գ. Մնխչյան, Գ. Եթեր, Օ. Օքրոյան, Մ. Ախտյան, Ա. Բոստանջյան և ուր.) գործեր, գիտ., բանասիր., գրականագիտ., հրապարակախոս. հոդվածներ, ուսումնասիրություններ: Թարգմանաբար ներկայացնում է նաև վրաց (Ի. Գրիշաշվիլի, Գ. Տաբիձե, Ի. Աբաշիձե, Կ. Կալաձե և ուր.) և այլ ժողովուրդների գրակ-ների նմուշներ:


«ԿԱՅԾ», հաս., գիտ., գրական ամսաթերթ: ՍԴՀԿ Կ. Պոլսի ուսանող. միության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1911–14-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Երվանդ Ամատունի, Արսեն ***Կիպրոտ***, Հայկ Գալճյան, Վահան Զեյթունցյան: «Կ.»-ում են հրապարակվել հայ. իրականության մեջ մարքսիստ. առաջին՝ Ա. Նազարբեկյանի, Ա. Զուրաբյանի, Գ. Վա-



«Կամենից. տարեգիրք հայոց...»-ի *(1896, Վնտ.) փիփղոսաթերթը*



Տիգրան Կամսարականի *«Վարժապետին աղջիկը» (1956, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



«Կամուրջ», *1961-ից, Թբիլիսի*

նիկյանի հոդվածները: Պարբ–ն անդրադարձել է արևմտահայության վիճակին, հայկ. հեղ. շարժումներին, հայ ուսանողության ընդվզումներին: «Կ.»–ին թղթակցել են նաև կին լրագրողներ՝ հայուհու կյանքի և պայքարի, թուրք կնոջ զարթոնքի մասին նյութերով:



«Կայծ», *1943–47, Բեյրութ (№ 5, 1943)*

«ԿԱՅԾ», մարզ., գրական–գեղ., հաս. հանդես: Հայ մարմնամարզ. միության (ՀՄՄ) պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1943–47–ին Բեյրութում՝ անկանոն պարբերականությամբ: Խմբագիրներ՝ Արմեն Ղարիպ (Նազարեթ Ղարիպյան), Հովսեփ Ճիոյան, Հրանտ Գանգրունի: Անդրադարձել է ՀՄՄ մասնաճյուղերի աշխատանքներին, ձգտել է համախմբել Լիբանանի և Սիրիայի հայ երիտասարդությանը: Նպաստել է Հայրենիք–Սփյուռք կապերի, հայ և արաբ ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը: Մեծ տեղ է հատկացրել հայերի մասնակցությանը Երկրորդ համաշխ. պատերազմին (1939–45), լուսաբանել է Հայաստանի մշակութ., գիտ. ու տնտ. առաջընթացը:

«ԿԱՅԾ», երկօրյա թերթ: ՀԿԿ Կիրովականի քաղկոմի և ժողպատգամավորների քաղխորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1951–90–ին Կիրովականում: 1991–ից՝ *«Լոռու մարզ»*:


«ԿԱՅԾԱԿ», մարզ. ամսագիր: Կահիրեի «Կայծակ» հայ մարմնամարզ. միության պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1929–30–ին Կահիրեում: Արտոնատեր–խմբագիր՝ Թադևոս Գալֆայան: Կարևորել է երեխաների ֆիզ. դաստիարակության, հայ կանանց ու աղջիկների՝ ֆիզկուլտուրայով զբաղվելու անհրաժեշտությունը, այն համարել ազգի կենսունակության նախապայմաններից մեկը: Պարբերաբար ծանոթացրել է հայազգի անվանի մարզիկներին, նրանց մարզ. հաջողություններին, պատմել Եգիպտոսի հայկ. մարզ. ակումբների ու միությունների, առանձին մարզախմբերի գործունեության մասին:



«Կայծակ», *1929–30, Կահիրե*

«ԿԱՅԾԵՐ», քաղ., հաս. և գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1933–35–ին Լիոնում: Խմբագր. խորհուրդ: Ներկայացրել է Հայաստանի տնտ. և մշակութ. կյանքը, աջակցել Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդմանը: Անդրադարձել է բանվոր. շարժմանն ու գործազրկության խնդրին, ազգ. կուս–ների գործունեությանը, ֆրանսահայերի վիճակին, ՀՕԿ–ի մասնաճյուղերի և հայրենակց. միությունների աշխատանքներին, արծարծել ներգաղթի հարցը: Գրական–գեղ. բաժնում տպագրել է հայ, և այլազգի հեղինակների գործեր, նյութեր՝ երաժշտ., թատեր. կյանքից:

«ԿԱՅԾԵՐ», հաս–քաղ. պարբերաթերթ: ՀՅԴ երիտասարդ. միությունների հրատ.: Լույս է տեսել 1983–99–ին Բեյրութում (քառամսյա, եռամսյա պարբերականությամբ, 2003–ից՝ Երևանում՝ էլեկտրոնային տարբերակով): Խմբագիրներ՝ Կարո Հովհաննեսյան, Գրիգոր Աչըգյան, Շահան *Գանտահարյան*, Արփի Համբարյան, Հակոբ Հավաթյան, Սրբուհի Ճենանյան: Հրապարակել է ՀՅԴ մարմինների պաշտոն. նյութերը, լուսաբանել ՀՅԴ երիտասարդ. թևի գործունեությունը, անդրադարձել ՀՀ–ում, Մերձ. ու Միջին Արևելքում և աշխարհում տեղի ունեցող քաղ. կարևոր իրադարձություններին:



«Կայծեր», *1983–99, Բեյրութ*


ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1926–ին Ջորջթաունում հրատարակվել է հայ. առաջին՝ Կանադայի հայորդիների միության «Արարատ» ամսագիրը (1927–ից՝ «Արագած»): Կանադայում ցայսօր լույս են տեսել 21 անուն հայկ. պարբ–ներ՝ ազգապահպան նշանակության: Գրեթե յուրաքանչյուր հայկ. եկեղեցի ունեցել է իր լրատու թերթիկը: 1983–94–ին լույս է տեսել Բաբկեն Թոփչյանի *«Արմաշ»*, 2006–12–ին՝ *«Լույս»* եկեղեց., պատմ–կրոն. հանդեսները, 1984–90–ին՝ Քվեբեկի հայագիտ. ուսմանց միության «Լրատու» թերթիկը ևն:

Ներկայում հրատարակվում են *«Նոր ակրունդ»* (1955–ից) ամսաթերթը, *«Լրաքաղ»* (1958–ից) կրոն. պարբ–ը, *«Բոլսաստան»* (1964–ից) կրոնաբարոյական, մշակութ., հաս. հանդեսը, *«Գեղարդ»* (1969–ից) գրական, մշակութ. եռամսյա թերթը, *«Ապագայ»* (1975–ից, հայ., անգլ., ֆրանս.) հաս–քաղ., մշակութ. շաբաթաթերթը, *«Նոր այգ»* (1978–ից)

ամսաթերթ–տեղեկատուն, *«Հորիզոն»* (1979–ից) հաս–քաղ., մշակութ., *«Լուսարձակ»* (1981–ից) կրոն., մշակութ., տեղեկատվ. եռամսյա, *«Լուսաբաց»* (1982–ից) հաս–քաղ., մշակութ., *«Հայ դպրի»* (1984–ից, անգլ.) թերթերը, Հայկ. ժամանակակից հետազոտությունների և վավերագրման Կանադայի Զորյան ինստ–ի «Diaspora Journal» (1991, Տորոնտո) քառամսյա հանդեսը (ինստ–ը հրատարակում է նաև գիտ. ուսումնասիրություններ, արխիվային փաստաթղթեր) ևն:

Կանադայում տպագրվող հայկ. պարբ–ների խմբագրություններից շատերն գրաղվում են նաև գրահրատարակչ. գործունեությամբ:

ԿԱՆԱՅԱՆ Ստեփան Մկրտչի [1860/1861, Իգդիր–1936, Երևան], բանասեր, պատմաբան, մանկավարժ: ՀԽՍՀ գիտ–ների և արվ–ի ինստ–ի իսկական անդամ (1925): Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Դորպատի, Թյուբինգենի, Մյունխենի, Ստրասբուրգի համալսարաններում: 1891–1914–ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան և Շուշիի թեմ. դպրոցներում: 1920–22–ին՝ Երևանի հանրային գրադարանի (այժմ՝ ՀԱԳ) վարիչ:



Ստեփան Կանայանի *«Անյայտ գաւառներ Հին Հայաստանի» (1914, Վաղ–պատ) գրքի փիփղոսաթերթը*

Լույս են տեսել Կ–ի «Մամիկոնեանց պատմութիւն» («Արարատ», 1906–07), «Զոջանց տան Սասմայ ծռեր. Դաւիթ եւ Միհէր: Ազգային ժողովրդական վէպի պատմականը» (1907), «Զոջանց տուն կամ Սասմայ ծռեր վէպի երեք փոփոխակ» (1910), «Անյայտ գաւառներ Հին Հայաստանի» (1914, երեքն էլ՝ Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) աշխատությունները, Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» (Գ. Տեր–Մկրտչյանի, Ս. Մալխասյանցի հետ, 1909, Թ., Մնացական Սարտիրոսյանի տպ.), Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» (Գ. Տեր–Մկրտչյանի, Մ. Աբեղյանի, Ս. Մալխասյանցի և ուր. հետ, 1913, Թ., նույն տպ.) քննություն–բաղդատությունները:

Կ. Ֆրանց *Ֆինկի* հետ հրատարակել է արևելահայ–ի առաջին օտարալեզու ձեռնարկը՝ «Հայերէն նոր գրական լեզվի դասագիրքը» (1902): Կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրների Թիֆլիզի Ներսիսեան հոգեւոր դպրանոցի» (1893, Թ., Մ. Շարաձեի տպ.) մատենագիտությունը: Թարգմանել է Բ. Մենդելսոնի «Պատմութիւն Յունաստանի» (1906, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) աշխատությունը:

«ԿԱՆԹԵՂ», գիտ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 2001–ից Երևանում: Հիմնադիր–խմբագիր՝ Լիլիթ *Արզումանյան:* Տպագրում է գրականագիտ., լեզվաբ., պատմ., քաղաքագիտ., փիլ., սոցիոլոգ., արվեստագիտ., հոգեբ., մանկավարժ., իրավագիտ. հոդվածներ՝ հայ., ռուս. և անգլ. (ամփոփումներով):



«Կանթեղ», *2001–ից, Երևան (№ 1, 2011)*


«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ», **«Կանոն գիրք Հայոց», «Կանոնագիրք», «Կանոնագիրք**», միջնադարյան հայ եկեղեց. իրավունքի ժող.: Տարբեր ժամանակներում կազմվել են քրիստ. տիեզ. (Նիկիայի առաջին՝ 325, Կ. Պոլսի առաջին՝ 381, Եփեսոսի՝ 431) և տեղ. (Անկյուրայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Լաոդիկեի, Սարդիկեի), հայոց (Շահապիվանի, Դվինի, Կարինի ևն) եկեղեց. ժողովներում, ստեղծել են նաև ընդհանուր ու հայ հոգևոր առաջնորդները (Աթանաս Աղեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև և ուր): Կանոնախմբերի մի մասը հավաքել, միավորել, դասավորել և առաջին անգամ «Կ. Հ.» է կազմել (բաղկացած էր 24 կանոնախմբից) *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսը: X դ–ի կեսից «Կ. Հ.» խմբագրվել է, ավելացվել են նոր կանոնախմբեր, և X դ–ի վերջին ունեցել է 40 կանոնախումբ, XVII դ–ում՝ 98: Լրացումների և խմբագրումների ընթացքում փոփոխվել է կանոնախմբերի նախկին դասավորությունը, կազմողները դրանք հարստացրել են նաև այլ հեղինակների (օր.՝ Թադեոսի, Փիլիպոսի և ուր.) կանոնախմբերով:

«Կ. Հ.»–ի վկայությունները որպես սկզբնաղբյուր օգտագործվել են *Միխթար Գոշի* ու *Մխիթար Սպարապետի* Դատաստանագրքերում: «Կ. Հ.» Հայաստանում և հայկ. գաղթավայրերում գործածվել է մինչև 1920–ական թթ.:

«Կ. Հ.» հրատարակվել է (լատ. և հայ.) մի քանի անգամ, սակայն առավել ամբողջ. լույս է տեսել 1964–71–ին (հ. Ա–Բ, աշխատասիր.՝

Վ. Հակոբյանի). ընդգրկում է VIII, X և XI դդ–ի խմբագրումները՝ ԾԷ (57) կանոնախմբով և ՌՅԼԲ (1332) կանոնով: 1941–ին մասնակիորեն թարգմանվել է գերմ.:

«ԿԱՆՈՆՔ ԵՒ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆՔ», տպագրվել է 1748–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Թարգմ.՝ լատ–ից: Տիտղթ–ին՝ «Կանոնք եւ ներողութիւնք վասն նոցա. որք գրին ի յընկերութիւն, կամ ի ժողովս ջերմեռանդութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի խաչին տագնապեցելոյ եւ ցաւագին մօր նորա սուրբ Կուսին» (29 էջ, 8º):



«Կանոնագիրք հայոց»-ի *(հ. Ա, 1964, Ե., ԳԱ հրտ.) փիփղոսաթերթը*

«**ԿԱՆՈՆՔ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ՊԱՀԵԼՈՅ ՁԱՆՁՆ»**, առողջապահ. խրատների գրքույկ: Տպագրվել է 1675–ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Մարգսի տպարանում:

«ԿԱՆՉ», մանկապատանեկան եռօրյա թերթ: Լույս է տեսնում 1925–ից Երևանում (մինչև 1990–ը՝ «Պիոներ կանչ», ՀԼԿԵՄ ԿԿ–ի և Հայաստանի պիոներ. կազմակերպության հանրապետ. խորհրդի պաշտոնաթերթ, 1941–45–ին ընդհատվել է): Խմբագիրներ՝ Հրաչյա Միրզոյան, Բաբկեն Շահումյան, Արմո Հարենց, Սերոբ Սարգսյան, Գեղամ Ալեքյան, Աշոտ Թադևոսյան, Սարգիս Մնացականյան, Ժենյա Սադոյան, Հեղինե Խաչատրյան, Ռաֆիկ Արայան, Ղարիբ *Հայրապետյան*, Վարդգես *Պետրոսյան*, Վարդգես *Քալանթարյան*, Մնացական Զոհրաբյան, Անահիտ Մկրտչյան, Համլետ Պետրոսյան, Վարուժան Մնացականյան (2005–ից): Պատանի ընթերցողների մեջ սերմանում է հայրենասիրություն, ընկերասիրություն, քաջություն, ազնվություն, աշխատասիրություն, ծանոթացնում է ազգ. ավանդույթներին ու համաշխ. քաղաքակրթության նվաճումներին: 1988–ից լուսաբանել է Արցախյան շարժումը, ներկայացրել ազատամարտի հերոսներին: «Կ.» մեծ տեղ է հատկացնում նաև ազգ., պետ. ու մշակութ. արժեքների վերհանմանն ու վերագնահատմանը, անդրադառնում է ՀՀ–ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, գիտ–յան, մշակույթի և մարզ. նորություններին, սփյուռքահայ կյանքին:



«Կանչ», *1925–ից, Երևան*

1960–ական թթ–ից թերթին առընթեր գործում են «Շավիղ» մանկապատանեկան խմբագրությունը և պատանի ստեղծագործողների «Բողբոջ» գրական ստուդիան, որտեղ իրենց գրական առաջին քայլերն են արել հայ անվանի բազմաթիվ գրողներ:

«ԿԱՆՉ», հաս–քաղ. և գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1971–2006–ին Բեյրութում (1983–95–ին՝ «Ազգային մշակույթ»)՝ որպես Լիբանանի կոմկուսի «Ալ–Նիդա» արաբ. թերթի հայ. հավելված: Խմբագիրներ՝ Հարություն *Մադեյան*, Պողոս Թյությունճյան, Գառնիկ *Ադդարյան*, Պարույր Երեցյան: Արտահայտել է Լիբանանի կոմկուսի և հատկապես նրա հայազգի անդամների տեսակետները, անդրադարձել է ՀԿԿ գործունեությանը: Լուսաբանել է ՀՀ–ում, ԼՂՀ–ում, Լիբանանում և աշխարհում տեղի ունեցող քաղ. և տնտ. անցուդարձերը: Տպագրել է նաև գրական էջեր, արվ–ի հարցերին նվիրված նյութեր, մարզ. լուրեր:



«Կանչ», *1971–2006, Բեյրութ*

ԿԱՊՊԵԼԵՏԻ Զուզեպպե (1810, Վենետիկ–1876), իտալացի քահանա, հայագետ: Սովորել է Վենետիկի հոգևոր վարժարանում: Հայ–ի մեջ հմտացել է ուսումնառության շրջանում՝ Մ. Զախջախյանի «Հայ–իտալերեն բառարանի» օգնությամբ:

Կ. լատ. է թարգմանել Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական» բարոյախրատ. ուղերձը (1829) և արձակ գործերից (հ. 1–2, 1833, ձոնել է Պիոս Թ պապին), Եղիշեի «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմի» (1840), Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» (1841) երկերը: Արժեքավոր է նրա «Հայաստան» (իտալ., հ. 1–3, 1841–42) եռահատոր աշխատությունը՝ Հայաստանի և հայոց պատմության մասին: Այս գրքի առաջին էջում Կ. իրեն անվանում է Մխիթարյան հայկական ճեմարանի անդամ: 1877–ին լույս է տեսել Կ–ի ծավալուն մենագրությունը՝ նվիրված Սբ Ղազարի Մխիթարյան միաբանությանը:

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.,** *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝* **Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895: Հովհաննիսյան Պ.,** *Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:*

ԿԱՊՐՈՒՉՅԱՆ Զաքարիա Հովսեփի [18.8.1794, Գեղա (Ռումինիա)–27.4.1870, Գեղա], գրող, բառարանագիր, մանկավարժ, հաս. գործիչ: Սովորել է Կլուժի համալսարանի փիլ–յան ֆակ–ում: Կ–ի աշխատությունները անտիպ են. 32 հատորում ամփոփված պահվում են Գեղայի պատմության թանգարանում (ձեռ. № 62–93): Ուշագրավ են «Կատարեալ է, ոտանաւոր գիրք շարադրեալ ի Զաքարիա Կապրուչեան ողբալ զհայաքաղաքն որ է ի գաւառս Դրանսիլվանիայոյ» (1840) պոեմը, «Վասն շահապետութեան այնոցիկ, որք տրտմեալ են սրտիւք» (1839) երգիծ. բանաստեղծությունների ժող–ը, «Վարք Էմանուէլ Լորէնզօի» (1855–57) և «Գիր որ կոչի աստուածային նախախնամութիւն» (1852–54) վեպերը, «Գանգատ» (1834–35, Մատենադարան, ձեռ. № 10053) պարսավագիրը: «Նոր բառգիրք հայ–լատին եւ մաճառ լեզուաց»–ը (հ. 1–5, 1848–49):

Լույս է տեսել Կ–ի «Հայնակ եւ մաճրռնակ այբ ու բենի թուղթ» (1834, Վնն., Մխիթարյան տպ.) հայ. և հունգ. այբբենարանը՝ Տրանսիլվանիայի հայկ. դպրոցների համար: Գրել է հունգ. և հայ. պիեսներ:

Արքունական «Արժանյաց խաչ» ոսկե շքանշան:

ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ Սիլվա (Սիրվարդ) Բարունակի (20.1.1919, Երևան–25.9.2006, Երևան, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), բանաստեղծուհի, հաս. գործիչ, հրապարակախոս: ՀՀ ԳԱԱ ակադ. (1994): Մշակույթի վաստ. գործիչ (1970), Վրաստանի մշակույթի վաստ. աշխատող (1980): Ավարտել է ԵՊՀ (1941), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ–յան ինստ–ի գրակ–յան բարձրագույն դասընթացները (1950): 1962–63 և 1973–ին այցելել է սփյուռքահայ գաղթավայրեր. տպավորություններն ամփոփել է «Քարավանները դեռ քայլում են» (1964), «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» (1976), «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» (2002) ուղեգրություններում:

Լույս են տեսել նաև Կ–ի «Երկու զրույց» (1944), «Օրերի հետ» (1945), «Ձանգվի ափին» (1947), «Այս իմ երկիրն է» (1949), «Իմ հարազատները» (1951), «Սրտաբաց զրույց» (1955), «Բարի երթ» (1957), «Յոթ կայարաններ» (1966), «Դեպի խորքը լեռան» (1972, 2009), «Ձմեռ է գալիս» (1983), «Յոթ տասնյակ տարի բանաստեղծության բավիղներում» (2004), «Սիրերգություն» (2004), «Հայերգություն» (2004, 2010), «Քնարերգություն» (2009), «90 երգ. բանաստեղծություններ» (2009) բանաստեղծությունների ժող–ները, «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961) պոեմը, որտեղ անդրադարձել է հայ ժողովրդի պատմ. ճակատագրին, «Իմ ժամանակը: Հրապարակագրություն և ուղեգրություն» (1979), «Հոգու նույն երթուղիներով» (1993), «Էջեր փակ գզրոցներից» (1997), «Չեմ կարող լռել» (2000), «Վերջին զանգ» (2006) հրապարակախոս. հոդվածների, հուշերի ժող–ները, «Փոքրիկ Արա, ականջ արա» (1950), «Տանը, բակում, փողոցում» (1953), «Մի տարով էլ մեծացանք» (1958), «Ծաղկանոց» (1984), «Երկու քույրիկ, երկու ուլիկ» (1988), «Պարտեզ» (2002) մանկ. բանաստեղծությունների ժող–ները, «Կռունկ, ուստի կուգաս» (1961, հրտ.՝ 1962), «Եվ դու, Բրուտոս» (1976) դրամանեները: Թարգմանել է Յ. Ռայնիսի, Ի. Գրիշաշվիլու, Ի. Նոնեշվիլու, Մ. Շահինյանի, Մ. Յվետաևայի, Պ. Տիչինայի և ուր. ստեղծագործություններից:

ԽՍՀՄ (1952) և ՀՀ (1988) Պետ., ՀԳՄ Ա. Խաչակյանի անվ. (1983), Նոսիիդեի անվ. միջազգ. (1989, Հռոմ), «Վահագն» համահայկ. (2003) մրց–ներ:

Երկ. Երկեր, հ. 1–3, Ե., 1984–85: Դիրս մնա հիշատակող, Ե., 1988: Գոյներ նույն իճանկարից, Ե., 1989: Ընտրանի, Ե., 1999: Քարավանները հետանում են, Ե., 1999: Ընտրանի, Ե., 2010:

Գրկ. **Արիստակեսյան Ա.**, *Սիլվա Կապուտիկյան: Կյանքն ու ստեղծագործական ուղին, Ե., 1983:* **Հարությունյան Ս.**, *Սիլվա Կապուտիկյանի չափածոյի լեզուն և ոճը, Ե., 1992: Սիլվա Կապուտիկյանը մեր հուշերում և խոհերում (հուշեր, խոհեր, հոդվածներ), Ե., 2008: Սիլվա Կապուտիկյան: Կենսամատենագիտություն, Ե., 1987:*

«ԿԱՌԱՓՆԱՏ», քաղ–երգիծ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1909–10–ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Արամ ***Անտոնյան***, Երվանդ ***Օտյան:*** Պայքարել է հայ ազգ. կուս–ների պառակտիչ գործունեության դեմ: «Պատրիարքարանի որջերը» խորագրով հոդվածներ և ծաղրանկարներ է տպագրել հայ հոգևորականության վերնախավի դեմ: Սարկազմով քննադատել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) դրույթները և Ազգ. ժողովի ու նրա վարչու–



Սիլվա Կապուտիկյան



«Էջեր փակ գզրոցներից» (1997, Ե., «Ապոլոն») գրքի կազմը



«Վերջին զանգ» (2006, Ե., «Մուղնի», ձևավորող՝ Վ. Դալլաքյան) գրքի կազմը



Սարգիս Կասյան

թյան գործունեությունը: Տպագրել է նաև Ե. Օտյանի «Ժողովրդական պատմություն գազեզ Արթին ամիրայի» («Կ.»-ի հավելված), «Ճոռողուպրիսթ և ընկ.» (թերթոն), «Պրոպագանդիստը» և այլ գործեր, Ա. Արփիարյանի հոդվածներն ու նամակները՝ ուղղված Ե. Օտյանին:

ԿԱՍԵՅԱՆ Հովսեփ (ծ. 1948), գրող, հրապարակախոս, հրատարակիչ-խմբագիր: Հիմնադրել է «Մենք» հանդեսը և Աթենքի Հայ-հուն. հետազոտությունների կենտրոնը:

Հուն. է թարգմանել Հայաստանի պատմությանն ու բանասիրությանը վերաբերող երկեր: Անդրադարձել է նաև ՀԱՀԳԲ-ի գործունեությանը:

Լույս են տեսել Կ-ի «Հայ ազատագրական պայքարը» (1979), «Թուրքերն ընդունում են հայերի ցեղասպանությունը» (1985), «Ղարաբաղյան հարցը» (1990, երեքն էլ՝ հուն.) աշխատությունները:

ԿԱՍՅԱՆ Մարտին Վահանի [14.9.1905, Աբասթուման (Վրաստան)–25.10.1995, Երևան], ՀՀ-ում գիտ. մեքենաշինության և մեքենաշին. տեխնոլոգիայի հիմնադիրներից, խմբագիր: Տեխ. գիտ. դ-ր (1943), պրոֆ. (1944), ՀՀ ԳԱԱ ակադ. (1956, թղթ. անդամ՝ 1953-ից): Գիտ. և տեխ. վաստ. գործիչ (1960): 1963–81-ին՝ ***«Գիտություն և տեխնիկա»*** ամսագրի գլխ. խմբագիր, 1963–88-ին, միաժամանակ՝ ***«Տեղեկագիր. տեխնիկական գիտություններ»*** հանդեսի պատ. խմբագիր: Կ-ի աշխատություններն ամփոփված են «Մետաղների կտրման հիմունքները» (2-րդ հրտ., 1961, համահեղ.) ժող-ում:

ՀՀ Պետ. (1970), Ի. Տիմեի անվ. (1972, Ռուսաստան) մրց-ներ:

Երկ. Оптимизация режимов резания при решении технологических задач, Е., 1981 (համահեղ.).

Գրկ. Мартин Ваганович Касьян. Библиография, Е., 1975.



«Կավոջ», *1908–72, Կ. Պոլիս, Փարիզ, Սփամբուլ*

ԿԱՍՅԱՆ (Տեր-Գասպարյան) Սարգիս Հովհաննեսի [16(28).1.1876, Շուշի–1937, անհատի պաշտամունքի զոհ], պետ. գործիչ, հրապարակախոս, խմբագիր: ՌՍԴԲԿ անդամ՝ 1905-ից: Ավարտել է Լայպցիգի առևտր. ինստ-ը (1902) և Բեռլինի համալսարանի փիլ-յան ֆակ-ը (1904): 1906–17-ին մասնակցել է բոլշևիկյան մի շարք թերթերի խմբագրմանը, եղել ***«Լենինյան ուղի»*** ամսագրի պատ. խմբագիրը:

Գերմ-ից թարգմանել է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» (1927), Ֆ. Էնգելսի «Կոմունիզմի սկզբունքները» (1930) աշխատությունները: Լույս են տեսել Կ-ի «Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը» (1928, Թ.) ուսումնասիրությունը, «Ընտիր երկերը» (1967): Կ-ի անունով փողոց է կոչվել Երևանում:

Գրկ. Հարությունյան Վ., Սարգիս Կասյան, Ե., 1965: Սարգիս Կասյան: Կենսամատենագիտական ցանկ, Ե., 1976 (կազմ.՝ Ժ. Հովսեփյան):



«Կարաբախսկի էքսպրես», *2000-ից, Երևան (№ 1, 2012)*

«ԿԱՐԱԲԱԽՍԿԻ ԷՔՍՊՐԵՍ» («Карабахский экспресс»-«Ղարաբաղյան ճեպընթաց»), տեղեկատվ., վերլուծ. երկամսյա հանդես: Լույս է տեսնում 2000-ից Երևանում՝ ռուս.: Հիմնադիր-խմբագիր՝ Կարեն Զաքարյան: Անդրադառնում է ԼՂՀ հաս-քաղ., սոցիալ-տնտ., գիտակրթ. և մշակույթի հարցերին, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման միջազգ. գործընթացներին, վերլուծում է Ադրբեջանի հակաղարաբաղյան քաղ. ձեռնարկումները, ի պատասխան պատմության ադրբ. խեղաթյուրումների՝ Ղարաբաղի վերաբերյալ ներկայացնում է փաստավավերագր. նյութեր, տեսակետներ:

ԿԱՐԱԳՅԱՆ Արթուր Կարապետի (ծ. 4.8.1949, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է Երևանի Հ. Կոջոյանի անվ. նկարչ. դպրոցը (1956), ԵԳԹԻ (1971): 1973–92-ին աշխատել է որպես դիզայներ: 1976-ից համագործակցում է «Սովետական գրող», «Լույս», «Արևիկ» հրատարակչությունների հետ, 1975–85-ին աշխատակցել է Մայր աթոռի «Էջմիածին» ամսագրին:

Նկարազարդել ու ձևավորել է Ա. Մորավիայի «Արհամարհանք» (1977), Րաֆֆու «Խենթը» (ռուս., 1978), Ա. Պետրոսյանի «Թռչնականչ» (1981), Ա. Արաքսմանյանի «Ոստայն» (1982), Ս. Կապուտիկյանի «Ծաղկանոց» (1984), Ե. Պետրոսյանի «Հեքիաթի խնձորը» (1985), Ն. Ենգիբարյանի «Տառադարան» (1990), Շ. Պեռոյի «Հեքիաթներ» (2008), Հ. Թումանյանի «Քաջ Նազար» (2008), «Հեքիաթներ» (2009), «Մի կաթիլ մեղրը» (2010), Ս. Սարգսյանի «Զվարճալի մաթեմատիկա» (2010) և այլ գրքեր:

ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇ (Գևնջյան Հակոբ, 1872, Ստավրոպոլ–16.12.1932, Թիֆլիս), գրող, թարգմանիչ: Ավարտել է Նոր Նախիջևանի թեմ. սեմինարիան (1893): Եղել է գրագիր, ուսուցիչ: Գրել է ֆուտուրիստ. բանաստեղծություններ:

Թարգմանել է Ու. Ուիտմենի, Օ. Դիմովի, Ք. Մորոզովայի, Ֆ. Սոլոգուբի գործերից, հայ-ից ռուս.՝ Շիրվանզադեի, Լ. Շանթի, Ա. Ահարոնյանի ստեղծագործություններից: Լույս են տեսել նաև Կ-Դ-ի «Երևանդ Գօշ» (1911, Թ., Շապտոնի տպ.), «Կեանքի ջութակը» (1917, Թ., «Սլովո» տպ.), «Դէպի նոր բարձունքներ» (1918, Թ., «Շրեշ» հրատ.), «Որերից առաջ» (1928, Թ., Պոլիգրաֆտրեստի 4-րդ տպ.) պատմվածքների ժող-ներն ու վիպակները, «Ինչ է ֆութուրիզմը» (1914, Թ., «Էպոխա» տպ.) աշխատությունը:


ԿԱՐԱՊԵՏ, XIV դ-ի գրիչ, մանրանկարիչ: Ապրել և ստեղծագործել է Ղրիմում: Մեզ հայտնի առաջին ձեռագիրը՝ Ավետարանը, ընդօրինակել է ***Սահակ Պարթևին*** պատկանող օրինակից. բոլորգիր է՝ զարդարված ավետարանիչների պատկերներով, խորաններով, լուսանցազարդերով: Կ. ընդօրինակել է նաև մեկ այլ Ավետարան (1352) և 4 Ճաշոց (1356, 1360, 1361 և 1365): Կ-ից պահպանված վերջին ձեռագիրը նույնպես Ճաշոց է («Տարոյգիրք»). ընդօրինակել է 1381-ին (ձեռ. № 7447): Բոլոր ձեռագրերը պահվում են Մատենադարանում:

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1301–1400 թթ., կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950:

ԿԱՐԱՊԵՏ, XIV դ-ի գրիչ, մանրանկարիչ. Գործել է Գողթնի Երնջակ գավառի Ապրակունիսի Սբ Կարապետ վանքում: 1360-ին ծաղկել է «Ժողովածու բանից Գրիգոր Նարեկացւոյ, Գրիգոր Տղայի եւ այլոց»-ը, 1379-ին ընդօրինակել «Մասունք Աստուածաշնչոյ» մատյանը (երկուսն էլ՝ Մատենադարան, ձեռ. № 5705, 159):

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԹԱՄԱՐՑԻ, XV դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ստեղծագործել է Աղթամար կղզում: Որոշ ձեռագրեր նկարազարդել է եղբոր՝ Մուրադի հետ: Մանրանկարներում զգալի է նրանց ուսուցչի՝ ***Մինասի*** արվ-ի ազդեցությունը: Կ. Ա-ու ձեռագիր մատյանները (ձեռ. № 2632, 4201, 4775, 4875, 4955, 5702, 5738, 6355, 7585, 10128, բոլորը՝ Մատենադարանում, ձեռ. № 527-ը՝ Նոր Ջուղայի մատենադարանում) հարուստ են աշխարհիկ պատկերներով:

ԿԱՐԱՊԵՏ ԱՆԴՐԻԱՆԱՑԻ (1630-ական թթ., Ադրիանապոլիս-մ. թ. անհտ), տպագրիչ-հրատարակիչ, թարգմանիչ: Քահանա Հովհաննեսի որդին: Սովորել է Ուշիի Սբ Սարգիս վանքի դպրոցում. աշակերտել է ***Ոսկան Երևանցուն***: Վերջինս 1661-ին Կ. Ա-ուն ուղարկել է Ամստերդամ, որտեղ նա փոխարինել է Սբ Էջմիածին և Սբ Սարգիս հայկ. տպարանի տնօրեն ***Ավետիս Դլիճենցիին*** և նրա հետ 1661–63-ին տպագրել է 2 Սաղմոսարան, Ժամագիրք և Այբբենարան: 1664-ից աշխատել է Ամստերդամ տեղափոխված Ոսկան Երևանցու հետ. որպես նրա օգնական՝ մասնակցել 15 անուն գրքերի, այդ թվում՝ Շարականոցի, Աստվածաշնչի, Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմու-




Արթուր Կարագյան. *Հ. Թումանյանի «Մի կաթիլ մեղրը» (2010, Ե., «Արևիկ») գրքի կազմը*



Կարապետ. *1360-ի Ճաշոցի գլխա- և լուսանցազարդերով էջ (Մատենադարան, ձեռ. № 7741)*



Կարապետ Աղթամարցի. *«Թագավորի օծումը», մանրանկար, 1471-ի Մաշտոց (Մատենադարան, ձեռ. № 5702)*



«Վարդապետութիւն քրիստոնէական» (1667, Ամստերդամ, թարգմ. և հրտ.՝ **Կարապետ Անդրիանացու***) գրքի տիտղոսաթերթը*



Կարապետ Բերկրեցի. *«Ավարայրի ճակատամարտը», մանրանկար, 1482-ի Շարակնոց (Մատենադարան, ձեռ. № 1620)*



Լյուդվիգ Կարապետյան

թեանց»-ի (1669), Վարդան Այգեկցու «Աղուէսագրքի» տպագրմանը: Թարգմանել և Ամստերդամում հրատարակել է «Վարդապետութիւն քրիստոնէական» (1667) գիրքը:

1669-ին տպարանը տեղափոխվել է Լիվոռնո, որտեղ Կ. Ա. մասնակցել է 3 կրոն. գրքերի տպագրմանը: 1672-ին Ոսկանյան տպարանը փոխադրվել է Մարսել, իսկ Կ. Ա. մնացել է Լիվոռնոյում: Որոշ ժամանակ եղել է Լիվոռնոյի հայկ. համայնքի քահանան:

ԿԱՐԱՊԵՏ ԲԱՂԻՇԵՑԻ, XV դ-ի վերջի–XVI դ-ի սկզբի տաղասաց, գրիչ: Եղել է վարդապետ: Նրա «Ողբ ի վերայ արշաւանաց շահ Իսմայէլի» (1513) երկն ունի առավելապես պատմ. արժեք: Պահպանված ինքնագիր միակ օրինակը Մադրիդում է:

ԿԱՐԱՊԵՏ ԲԵՐԿՐԵՑԻ, XV դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Աշակերտել է Մինաս նկարչին, աշխատել Վասպուրականի տարբեր քաղաքներում: Պատկերազարդումներում (Մատենադարան, ձեռ. № 1591, 1620, 2445, 4778, 4837, 5067, 6767, 7835), որպես հուզական-հոգեբ. գործոն, նախընտրել է թանձր գույնը, կարմիրի և կապույտի հակադրությունը, երբեմն կարմիրի բացարձակ առավելությամբ հասել է անսովոր լարվածության և դրամատիզմի: Օգտագործել է նաև ոսկի:

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՄՆԵՑԻ, XII դ-ի վերջի–XIII դ-ի սկզբի մատենագիր, Սասունի եպիսկոպոս, ճարտասան: Օգտվելով Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» և Կորյունի «Վարք Մաշտոցի» երկերից՝ շարադրել է Մաշտոցի կենսագրությունը՝ «Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ» (աշխատասիր.՝ Մ. Տեր-Մովսիսյանի, 1897, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), որը հատկապես արժեքավոր է XII–XIII դդ-ի հայոց լեզվի բառապաշարի ուսումնասիրման համար:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լյուդվիգ Հովակի [ծ. 4.7.1939, գ. Հնաբերդ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], խմբագիր, բանասեր, լրագրող: Բանասիր. գիտ. դ-ր (2008): Ավարտել է ԵՊՀ (1961): 1962–83-ին աշխատել է *«Պիոներ կանչ»* (1966–70-ին՝ պատ. քարտուղար, 1974–80-ին՝ խմբագրի տեղակալ) թերթի խմբագրությունում, 1983–87-ին՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» հանդեսի, 1987–94-ին՝ «Դպրություն» (1989-ից՝ *«Կրթություն»*) թերթի գլխ. խմբագիր, 1995–96-ին՝ *«Հայաստան»* թերթի գլխ. խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Կ-ի «Քարե հուշամատյան» (1977), «Յոթ նոր երգ Հայաստանի մասին» (1996), «Քարե արծիվը» (2010) հրապարակախոս. երկերը, «Վախթանգ Անանյանի կանաչ աշխարհը» (1975), «Մանկապատանեկան գրականության դաստիարակչական արժեքը» (1985), «Ոսկեդարից» մինչև... 21-րդ» (գիրք 1–2, 2008–2009), «Սփյուռքահայ մանկապատանեկան գրականության պատմության ուրվագիծ» (2013) աշխատությունները: Կազմել է Վ. Անանյանի (1977), Խ. Գյուլնազարյանի (1978, 1980) կենսամատենագիտությունները:

ՀԽՍՀ լուսավորության նախարարության «Խաչատուր Աբովյան» (1988), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2009), ՀՀ ԿԳՆ (2009), ՀՀ մշակույթի նախարարության (2010) ոսկե մեդալներ, ՀԳՄ Վ. Անանյանի անվ. մրց. (2004):

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Հովնան Արտավազդի (ծ. 24.9.1947, Լենինական), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1967), ԵԳԹԻ (1973): 1974–78-ին դասավանդել է ԵՊԻ Լենինականի մասնաճյուղում: 1984-ից «Պիոներ» (1990-ից՝ *«Աղբյուր»*) ամսագրի գեղ. խմբագիրն է: Միաժամանակ աշխատակցել է «Գարուն», «Ծիծեռնակ» ամսագրերին, համագործակցել է «Արևիկ», «Նաիրի», «Հայաստան», «Էդիթ Պրինտ» հրատարակչությունների հետ:

Նկարազարդել և ձևավորել է Մ. Սարգսյանի «Սայրս երգում է նանիկ» (1997), Թ. Տոնոյանի «Ծննդյան հեքիաթ» (2001), Ե. Պետրոսյանի «Հեքիաթ մոծակի և փղերի մասին» (2002), Լ. Միրիջանյանի «Ուրախ հանդիպում» (2003),

Հ. Հովնաթանի «Երազ տեսնելու տունը» (2005), Գ. Գևորգյանի «Երկնքի ընծան» (2006), Ն. Համբարձումյանի «Կանաչուկը» (2008), Գ. Խաչատրյանի «Գոռոան լիճը» (2010), Գ. Նիկողոսյանի «Իմ յոթ պապերը» (2011) և այլ գրքեր:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մկրտիչ Շավարշի [ծ. 9.5.1958, ք. Հոկտեմբերյան (այժմ՝ ք. Արմավիր՝ ՀՀ Արմավիրի մարզում], ֆիզիկոս-աստղագետ, հրատարակիչ: Ավարտել է ԵՊՀ (1980), Մոսկվայի ֆիզիկատեխ. ինստ-ը (1984): 1991–92-ին եղել է «Շաղիկ» հրատարակչության տնօրենը, 1993-ին հիմնադրել է ***«Էդիթ Պրինտ»*** հրատարակչությունը, 2000-ին՝ «Էդիթ Պրինտի» գրատների ցանց (Երևան, Գյումրի, Վանաձոր, Ստեփանակերտ): 2010-ից, միաժամանակ՝ Հրատարակիչների ազգ. ասոցիացիայի նախագահ: Կ-ի ջանքերով հրատարակվել է հայ. առաջին տպագիր գրքի՝ ***Ուրբաթագրքի*** լուսապատճենային (ֆաքսիմիլե) տարբերակը (2012), հեքիաթների մատենաշար, որոշ մասը՝ ձայնասկավառակներով:

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2012):




Հովնան Կարապետյան. *Ն. Համբարձումյանի «Կանաչուկը» (2008, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Պետրոս, **Կարապետ Զեքի** (1869–1937), բառարանագիր: Դասավանդել է Կ. Պոլսի դպրոցներում (պարսկ., արաբ., թուրք.):

Լույս են տեսել Կ-ի «Մեծ բառարան հայերէնէ օսմաներէն»-ը (1907, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Ներսեսյան տպ.). ներառում է գրաբարի և աշխարհաբարի բառապաշարը, «Մեծ բառարան օսմաներէնէ-հայերէն»-ը (1912, ԿՊ, Արշակ Կարոյանի տպ.). ընդգրկված են ոճեր, հոմանիշներ, հականիշներ ևն, «Առաջնորդ ընթերցանութեան եւ թարգմանութեան» (1894, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ., 1902, ԿՊ, Միքայել Սարյան և ընկ. տպ.), «Նոր քերականութիւն լեզուի» (1891, 1894, 1900, 1903, ԿՊ, Հակոբ Ասատուրյանի տպ.) դասագրքերը:

Գրկ. Նուրհան (Քեչեան Բ.), Քսաներորդ դարու ազգ. դիրեր: Պետրոս Կարապետեան, ԿՊ, 1911:



Սամվել Կարապետյանի *«Զավախք» (2006, Ե., «Գիտություն») գրքի կազմը*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Սամվել Գևորգի (ծ. 30.7.1961, Երևան), մշակութաբան, հուշարձանագետ, խմբագիր: Ուսումնասիրում է ՀՀ-ի, պատմ. Հայաստանի և արտերկրի հայկ. պատմաճարտ. հուշարձանները: 1990-ից՝ Հայկ. ճարտ-ն ուսումնասիրող (ՀՃՈՒ) ՀԿ-ի (2009-ից՝ հիմնադրամ) անդամ, 1998-ից՝ նախագահ: 2010-ից՝ ***«Վարձք»*** մշակութաբան. հանդեսի հիմնադիր-խմբագիր:

«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն» (2010-ից՝ «ՀՃՈՒ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ») մատենաշարով լույս են տեսել Կ-ի «Գետաշեն» (1992), «Զավախքի խաչքարերը» (1995), «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը» (1997), «Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները. 1988–1998» (1998), «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (1999, ռուս.՝ 2000, անգլ.՝ 2001), «Թիֆլիսի քաղաքագլուխները» (կենսագր. ակնարկ, հայ. և ռուս.՝ 2003), «Հյուսիսային Արցախ», «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն», «Հայերը Կախեթում» (երեքն էլ՝ 2004), «Զավախք» (2006), «Ախալցխա» (2008), «Արցախի կամուրջները» (2009), «Հայաստան» (2009), «Անի-1050» (2011), «Նախիջևան. քարտեզագիրք» (2012) աշխատությունները:


ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2002), ԼՂՀ Եղիշեի անվ. գրական (2004) և ՀՀ նախագահի (2007) մրց-ներ, ՀՀ Աժ պատվո մեդալ (2008):




«Կարգ թաղման կարգաւորաց» *(1777, Վաղ-պատ) գրքի փիփղոսաթերթը*

«ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱԻՈՐԱՑ», գիրք հուղարկավորության և դրան հաջորդող ծիսակատարությունների ժամանակ եկեղեց. սպասավորների պարտականությունների մասին: Տպագրվել է 1777-ին Վաղարշապատում՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ տպարանում: Կարգավորել և սրբագրել է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը (160 էջ, 8º, 15 x 10 սմ): Վերահրատարակվել է 1892-ին նույն տպարանում:

«ԿԱՐԳ ՊԱՀԵԼՈՅ ՀԱՄԱՐԱԿԱԲԱՐ Ի ՊԱՏԱՐԱԳՍ», տպագրվել է 1721-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Սրբագրել և լույս է ընծայել քարոզիչ Պատրի Գրիգոր Ճահկեցին: Լատ. տիտղթ-ին՝ «Ordo servandorum comuniter in missis» (11 էջ, 2º):



Հակոբ Կարենյանի
«Ճառ վասն փրկագործ չարչարանաց...» (1841, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը



Օգյուստ Կարիերի
«Հեթանոս Հայաստա-նի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ հա-մեմատ» (1899, Վնն.) գրքի փիփղոսաթերթը



Արտաշես Կարինյան

ԿԱՐԵՆՑԱՆ (Կարինյան) Հակոբ (1818, Էրզրում–30.9.1872, Թիֆլիս), բանասեր, խմբագիր, մանկավարժ, դրամատուրգ: Սովորել է Էրզրումի Կարապետյան վարժարանում: 1830-ին տեղափոխվել է Ախալցխա, ապա հաստատվել Թիֆլիսում: Հայոց լեզու և կրոն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1846–47-ին (Հակոբ *Արզանյանի* հետ)՝ *«Կովկաս»* շաբաթաթերթի խմբագիր:

Լույս են տեսել Կ-ի «Ճառ վասն փրկագործ չարչարանաց...» (1841, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) կրոն., «Բաղդատութիւն պատմութեան Սիվսիսի Խորէնացւոյ...» (1858, նույն տպ.) պատմաբանասիր. աշխատությունները, «Նկարագիր Սուրբ Սարգիս եկեղեցւոյ հայոց Թիֆլիզոյ» (1867, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) գիրքը, «Շուշանիկ...» (1860, Թ., Գաբրիել Մելքումյանի և Հ. Էնֆիաճյանի տպ.) ողբերգությունը, թարգմանել է Պ. Մետաստազիոյի «Եղերերգութիւնք ի մահն Աբէլի...» (գրաբար, 1841, Մ., Լազարյան ճեմ. տպ.) պիեսների ժող-ը, Է. Գալուայի «Ինկվիզիցիայ» (Միքայել Պատկանյանի հետ, 1853, հ. 1–2, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) երկը:

Կ. Դանիել Շահնազարյանի հետ կազմել և տպագրել է «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյն աթոռոյն Էջմիածնի» (1863, նույն տպ.):

Գրկ. Պատկանեան Մ., Կրիտիք Յակոբոս Կարէնեանց հեղինակութեան վրայ, Թ., 1861:

ԿԱՐԻԵՐ (Carriére) Օգյուստ [12.8.1838, Սեն-Պիեռ լը Վիո (Ֆրանսիա)–25.1.1902, Փարիզ], ֆրանսիացի հայագետ-արևելագետ: Սովորել է Ժնևի, Ստրասբուրգի և Գյոթինգենի համալսարաններում: 1873-ից վարել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցի գրադարանապետի և քարտուղարի պաշտոնը, 1881-ից ղեկավարել հայոց լեզվի ամբիոնը: Հայ-ի ուսուցումը դյուրացնելու նպատակով ֆրանս. է թարգմանել գերմանացի հայագետ Մ. Էաուերի գրաբարի քերակ-ը (1883): 1886-ին հրատարակել է «Լատիներէն-հայերէն հին բառգրքոյկը» (Փ., «Ազգային» տպ.): Կ. ուսումնասիրել է հայոց պատմության հնագույն շրջանը, մասնավորապես՝ V դ-ի հայ մատենագիրների գործերը: Մովսես Խորենացուն համարել է VIII–IX դդ-ի հեղինակ:

Լույս են տեսել Կ-ի «Մովսէս Խորենացին եւ նահապետների ազգաբանութիւնը» (1891, «Բազմավէպ», ֆրանս. և հայ.), «Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ» (1893–94, ֆրանս. և հայ.), «Աբգարու գրոյցը Մովսէս Խորենացւոյ պատմութեան մէջ» (1895, հայ.՝ 1897, թարգմ.՝ Գ. Մեննիշյանի), «Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ» (1899, ֆրանս. և հայ., թարգմ.՝ Հ. Տաշյանի), «Լեւոն Ե-ի ընծայեալ վարդն ոսկեղէն» (1899), «Որմզդի եւ Արիմնի ծնունդը ըստ Թէոդորի Բար-Խունի, Եզնկայ եւ Եղիշէի» (1900, բոլորը՝ Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունները:

Գրկ. Ղազիկեան Ա., Հայկական նոր մատենագիտութիւն, հ. 1, Վնտ., 1912, էջ 1257–1269:

ԿԱՐԻՆԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, առաջին անգամ հիշատակվել է VII դ-ում: Ամենահին ձեռագիրը XII դ-ից է: XIII դ-ում ընդօրինակվել է 2 Ավետարան: Նույն դարի սկզբին է վերաբերում Ստեփանոս գրիչի ընդօրինակած Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 2817): XIV–XVI դդ-ից հայտնի է տարաբնույթ 13 ձեռագիր: Գրչության կենտրոնը վերելք է ապրել XVII–XVIII դդ-ում: Կ. գ. կ-ից պահպանված 100 ձեռագրից 60-ը (ժող-ներ, ծիս. մատյաններ, մեկնություններ, պատմություններ ևն) Մատենադարանում են:

Ձեռագրեր ընդօրինակել են նաև XIX դ-ում: Կարին քաղաքում պահպանված շուրջ 250 ձեռագրից 150-ն այժմ Մատենադարանում են (Շարակնոց, ձեռ. № 7022, Ժողովածու, ձեռ. № 3028, 7330, Ավետարան, ձեռ. № 7599, Տաղարան, ձեռ. № 2436, ևն):

ԿԱՐԻՆՅԱՆ (Գաբրիելյան) Արտաշես Բալասիի (24.11.1886, Բաքու–29.5.1982, Երևան), պետ. գործիչ, գրականագետ, պատմաբան, խմբագիր: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1956): Գիտ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակ-ը (1910): 1917-ին՝ Բաքվի խորհրդի «Տեղեկագիր», 1919-ին Մոսկվայում՝ «Կարմիր դրօշակ», Երևանում՝ 1920–22-ին՝ *«Խորհրդային Հայաստան»*, 1923-ին՝ «Պայքար», 1930–32-ին՝ *«Նոր ուղի»*, 1929–30-ին

Թիֆլիսում՝ «Անդրկովկասի ժողովրդական տնտեսություն» (ռուս.) պարբ-ների խմբագիր: Աշխատակցել է «Պրավդա», «Բակինսկի ռաբոչի» (երկուսն էլ՝ ռուս.) և այլ պարբ-ների:

Լույս են տեսել Կ-ի «Դեմքեր և դեպքեր» (1928), «Միքայել Նալբանդյանը և XIX դ. 60-ական թթ. ռուս առաջավոր գործիչները» (1949), «Գրական արձագանքներ» (1955), «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» (հ. 1, 2, 1956,1960), «Գրական-քննադատական հոդվածներ» (1962), «Հովհաննես Թումանյան» (1971), «Եղիշե Չարենց» (1972), «Գրական-պատմական ակնարկներ» (1982) և այլ աշխատություններ:

Հանդես է եկել նաև Բրուտ, Ա. Կ-յան, Լևոն Բրուտյան, Լինչ, Կ. Ա., Հրանտ և այլ կեղծանուններով:

Գրկ. Արտաշես Բալասիի Կարինյան: Կենսամատենագիտություն, Ե., 1977:

ԿԱՐՃԻԿՅԱՆ Համլետ Թորգոմի, **Թորգոմյան Արմեն** (ծ. 26.4.1936, Երևան), բանաստեղծ, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1959), Մոսկվայի Մ. Գորկու անվ. ինստ-ի գրական բարձրագույն դասընթացները (1977): 1960–72 և 1991–94-ին (գլխ. խմբագիր) աշխատել է ***«Լույս»***, 1972–75-ին՝ «Հայաստան», 1977–78, 1980–91-ին՝ ***«Սովետական գրող»*** (1987-ից՝ բաժնի վարիչ) հրատարակչություններում, 1997–2002-ին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր գրահրատարակչության վարչության առաջատար մասնագետ:

Լույս են տեսել Կ-ի «Գարնանամուտ» (1959), «Սիրո ամառ» (1973), «Ապրելու օր» (1976), «Արևային սոնատ» (1980), «Խարիսխ» (1983), «Հայկի դասը» (1984, մանկ.), «Կանգ առ, մոլորակ» (1996), «Սիրտ բանական» (1988), «Սիրո բույրը... Հայաստանի» (2003), «Սիրո երկիր» (2005), «Երևանյան սոնատ» (2011) բանաստեղծությունների ժող-ները, կազմել է Բոգդան Գեմբարսկու «Նամակներ աշխարհին» հոդվածների (1990, ծնթգր-ով և վերջաբանով), Պ. Սևակի «Վառվող արյուն» բանաստեղծությունների (2000, առաջաբանով և վերջաբանով) ժող-ները:

ՀԳՄ Ա. Խաչակյանի անվ. մրց. (1989):

«ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ», **«Մեծ Շենի Աւետարան»**, մագաղաթե ձեռագիր (Մատենադարան, ձեռ. № 6202): Ընդօրինակել է Թութթաել գրիչը Կ. Պոլսում 909-ին՝ Աշոտ Սպարապետի պատվերով, 1236–42-ին Շիրակում պատկերազարդել է գրիչ և մանրանկարիչ ***Իգնատիոսը***: Ձեռագրի սկզբում ավելացրել է պատկերազարդ 6 թերթ՝ 10 խորան, սկզբնաթերթ՝ Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների պատկերներով: Խորանների սյուների և երիզների փոքր հիշատակարաններում մանրամասնորեն անդրադարձել է մոնղոլների ներխուժմանն ու նրանց դաժանություններին: Նկարազարդման մեջ գերիշխում է կարմիրը (հավանաբար այստեղից է «Կ. Ա.» անվանումը): Ըստ հետագա հիշատակարանների՝ XIII դ-ի 2-րդ կեսին ձեռագիրը տարվել է Վասպուրական, ավելի ուշ՝ Արցախ: «Կ. Ա.» Արցախի Մեծ Շեն գյուղից XX դ-ի սկզբին Էջմիածնի մատենադարան է բերել Գ. Հովսեփյանը:

Գրկ. Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, Ե., 1983, էջ 234–254:


«ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ», խորհրդահայ անդրանիկ երգիծ. շաբաթաթերթը: Լույս է տեսել 1921-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Մաթևոս ***Դարբինյան:*** Աշխատակցել են Ա. Վրույրը, Հ. Աղաբաբը, Մ. Արազին, Ա. Երիցյանը, Է. Խոճիկը, Ատրպետը, Շերամը և ուր.:

Գրկ. «Կարմիր աքլոր» շաբաթաթերթի մատենագիտություն (կազմ. և առաջաբ.՝ Բ. Մելյանի), Ե., 1982:

«ԿԱՐՄԻՐ ՋԻՆՎՈՐ», շաբաթաթերթ, երկօրյա, օրաթերթ: ՀԽՍՀ Կարմիր բանակի, ապա՝ ՀԽՍՀ հավաք. բրիգադի, Հայկ. հավաք. դիվիզիայի քաղբաժինների, Վորոշիլովի անվ. 76-րդ լեռնահրաձգային կարմրադրոշ հայկ. դիվիզիայի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1920–38-ին Ղարաքիլիսայում, ապա՝ Երևանում (1920–21-ին՝ «Կարմիր բանակ»): Խմբագիրներ՝ Վահան ***Ծովյան*** (Խերանյան), Ա. Մարության, Եղիա ***Չուբար***, Ս. Ասլիբեկյան, Մ. Պարոնիկյան, Անդ-



Ա. Կարինյանի *«Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» (հ. 1, 1956, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Համլետ Կարճիկյանի *«Սիրո երկիր» (2005, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



«Կարմիր Աւետարան». *Մատթեոսի Ավետարանի սկզբնաէջը (ծաղկող՝ Իգնատիոս, Մատենադարան, ձեռ. № 6202)*



«Կարմիր զինվոր», *1920–38 , Ղարաքիլիսա, Երևան*

րանիկ Ալեքսանյան, Հ. Տեր-Դանիելյան, Ղազար Հովհաննիսյան և ուր.: Լուսաբանել է զինվորների մարտ. պատրաստականության, քաղ. դաստիարակության հարցեր, անդրադարձել հանրապետության տնտ. և մշակութ. ձեռքբերումներին: Թղթակցել են Ա. Մյասնիկյանը, Հ. Բժշկյանը (Գայ), Հ. Լազյանը, Հ. Հովսեփյանը և ուր.:

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ», երկօրյա թերթ: 89-րդ հայկ. Թամանյան հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1942–56-ին Երևանում (պատերազմի տարիներին՝ դիվիզիայի տեղակայման վայրերում): Խմբագիրներ՝ Ներսես Ղահրամանյան, Գուրգեն Հարությունյան, Սիմոն Նալբանդյան, Հարություն Առաքելյան: Տպագրել է լուրեր ռազմաճակատից, ծանոթացրել հայ ռազմիկների սխրանքներին: Հետպատերազմյան տարիներին նպաստել է զինվորների մարտ. պատրաստականության բարձրացմանը, անդարադարձել խորհրդ. պետության արտաքին քաղաքականությանը, միջազգ. քաղ. կացությանը:



«Կարմիր ծիլեր», *1923–41, Թբիլիսի (№ 2, 1930)*

«ԿԱՐՄԻՐ ԼՈՌՒ», ՀԿ(բ)Կ Լոռու գավառային և հեղ. կոմիտեների պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1921–22-ին Ձալալօղլիում: Խմբագիրներ՝ Կարո Ղազարյան, Գ. Մեհրաբյան, Սիմակ Սահակյան (Մահկալ Շմավոն): Լուսաբանել է գավառային կոմիտեի, գյուղխորհուրդների գործունեությունը, ուշադրություն դարձրել հողային հարցի լուծմանը: Ունեցել է «Լոռվա կարմիր երիտասարդ», «Լոռվա աշխատավոր կնոջ թերթիկ», «Հեծգնդի թերթիկ», «Կրասնի Լոռի» (ռուս.) էջերը:

«ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ», ամսաթերթ: Բուլղարիայի կոմկուսի (ԲԿԿ) հայկ. խմբի պարբերաթերթը: Լույս է տեսել 1920–21-ին Ֆիլիպեում (այժմ՝ Պլովդիվ): Խմբագիր՝ Ստեփան *Շահրազյան:* Հայ. առաջին կոմ. թերթն է Սփյուռքում: Լուսաբանել է բուլղարահայ աշխատավոր. շարժումներն ու ԲԿԿ-ի գործունեությունը, խորհրդ. հանրապետությունները օգնող միջոցառումները:

«ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ», մանկ. պատկերազարդ ամսագիր: Վրաստանի ԼԿԵՄ ԿԿ-ի և լուսժողկոմատի հրատ.: Լույս է տեսել 1923–41-ին Թբիլիսիում (1939-ից՝ «Հոկտեմբերյան սերունդ»): Խմբագիր՝ Ռուբեն *Աղաբար:* Նպաստել է մանկ. գրակ-յան զարգացմանը, տպագրել է Վրաստանի և Հայաստանի գրողների, արվեստագետների, մանկավարժների գործեր, նմուշներ համաշխ. դաս. գրակ-ից: Առանձին մատենաշարով լույս է ընծայել մանկ. ժող-ներ:

Գրկ. «Կարմիր ծիլեր» հանդեսի մատենագիտություն. 1923–1941 թթ. (կազմ.՝ Բ. Մելյան), Ե., 1983:



«Կարմիր մոծակ»-ի *(1927, նկարիչ՝ Միքայել Արուտչյան)* շապիկը

«ԿԱՐՄԻՐ ՄՈԾԱԿ», երգիծ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1926–27-ին Երևանում: Խմբագիրներ՝ Արամայիս *Երզնկյան*, Էդուարդ *Խոճիկ*: Ծաղրել է բյուրոկրատ. քաշքշուկը, կենցաղային արատներն ու հոռի սովորությունները: Տպագրել է Է. Խոճիկի, Լեո Կամսարի, Դ. Դեմիրճյանի և ուր. երգիծ. ստեղծագործություններից: Աշխատակցել են ծաղրանկարիչներ Մ. Արուտչյանը, Վ. Գայֆեճյանը: «Կ. մ.»-ի 4-րդ համարը նվիրված է Հ. Պարոնյանի մահվան 35-րդ տարելիցին:

«ԿԱՐՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ», **«Գագիկ թագաւորի Աւետարան»**, «Գագիկ Շահնշահի Աւետարան», 1029–64-ի մագաղաթե ձեռագիր (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2556): Ընդօրինակվել և պատկերազարդվել է Կարսի Գագիկ Աբասյան թագավորի պատվերով: «Կ. Ա.» (481 թերթ, չափերը՝ 47 x 36 սմ) տեղ-տեղ (հատկապես՝ նկարները) վնասված է եղել, 1703-ին նորոգվել է: Կաշեկազմ է՝ ոսկեզօծ շրջանակով, մեջտեղը՝ խաչ: Խոշոր երկաթագիր է, երկսյուն, սկզբնատառերը զարդարված են տերևներով, ծաղիկներով, թռչուններով, կենդանիների գլուխներով: Լուսանցքներում պատկերված են նաև թռչուններ, կենդանիներ և անոթներ: Արլ. ոճով են պատկերված

Գագիկ թագավորը, Մարեմ արքայադուստրը և Գորանդուխտ թագուհին, որոնք ծալապատիկ նստած են գորգածածկ թախտին: Տեքստում լուսանցազարդերի, թռչնատառերի և կենդանատառերի նման հարստություն և բազմազանություն ժամանակի հայկ. կամ բյուզ. որևէ այլ ձեռագրում չի հանդիպում: Այդ առումով «Կ. Ա.» ընդգրկում է մանրանկարչության այն բոլոր սաղմերը, որոնք հետագայում զարգացել են Մեծ Հայքի և կիլիկյան մանրանկարչության մեջ:

Գրկ. Հովսեփյան Գ., *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Ե., 1987, էջ 335–338:* Tchobanian A., *La Roseraie d'Arménie, t. 3, P., 1929;* Der Nersessian S., *Armenia and the Byzantine Empire, Cambridge-Massachusets, 1945, p. 119–120;* Նույնի, *L'art arménien, P., 1977, p. 109–114.*

ԿԱՐՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հայտնի առաջին ձեռագիրը XI դ–ի *«Կարսի Աւետարանն»* է: Կ. գ. կ–ում ընդօրինակված 2 ձեռագիր է պահպանվել XIII դ–ից: 1280–ին Եղբայրիկ գրիչը Կարսին մերձակա Քարահատակ կոչվող վայրում ընդօրինակել է Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 2746), որը, ըստ գրիչի հիշատակության, իր ընդօրինակած 16–րդ Ավետարանն է: 1290–ին Հակոբ քահանայի պատվերով հարուստ նկարազարդումներով Ավետարան է ընդօրինակել Հովհաննես գրիչը (Մատենադարան, ձեռ. № 2816): 1412–ին կարսեցի 2 եղբայրներ գնել ու նորոգման են տվել բերդի ստորոտի այրերից հայտնաբերված մի Ավետարան: 1553–ին Կ. գ. կ–ում Մաշտոց է ընդօրինակել Հովհաննես գրիչը:

Կենտրոնի գործունեությունն աշխուժացել է հատկապես XVII–XVIII դդ–ում: Պահպանվել են գրիչներ Թորոսի, Աթանեսի, Ոսկանի, Մանուելի, Կարապետի, Երեմիայի ընդօրինակած ձեռագրերը:

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950: ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Ա. Մաթևոսյան), Ե., 1984:

ԿԱՐՍ (Karst) Յոզեֆ [1871, Բետրինզ (Լոթարինգիա)–1942], գերմանացի լեզվաբան, հայագետ: Աշակերտել է Հայնրիխ *Հյուբշմանին:* 1899–ին պաշտպանել է դոկտոր. ատենախոսություն՝ «Կիլիկյան հայերենի արտասանությունն ու ձայնավորները» թեմայով: Առանձնապես արժեքավոր են Կ–ի «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» (1901, հայ. հրտ.՝ 2002) և «Հայոց ազգագրական դիրքը» («Յուշարձան», ժող., 1911, Վնն., Մխիթարյան տպ.) ուսումնասիրությունները: Ըստ Կ–ի՝ Կովկասից մինչև Պիրենեյներ տարածված ցեղերը դուրս են եկել Հայաստանից («Ալարոդյաններ և նախաբասկեր», 1928):

Կ–ի երկհատոր աշխատությունը նվիրված է Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրքերի թարգմանությանը, ուսումնասիրությանը և աղբյուրներին: Կազմել է «Միջին հայերենի բառարանը» (անտիպ):


Երկ. Grundriss der Geschichte des armenischen Rechtes, «Zeitschrift fur vergleichenden Rechtswissenschaft», 1906, Bd 19, 1907, Bd 20; Armenishes Rechtsbuch sempadsch Kodex aus dem 13, Strasburg, 1909, Bd 1–2.

Գրկ. Ակինեան Ն., *Ակնարկ մը հայ իրաւանց պատմութեան վրայ եւ Յ. Կարստի նոր երկասիրութիւնները, «ՀԱ», 1907, № 11, 12, 1908, № 1, 6:* Աղայան Է., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:* Աբգարյան Գ., *Յոզեֆ Կարստի անտիպ «Միջին հայերենի բառարանը», Ե., 1995:* Գագինյան Ա., *Յոզեֆ Կարստի լեզվաբանական հայացքները, Ե., 2008:* Klidschian A., *Über Karsts «Gruntriss der Geschichte des armenischen Rechtes», «Zeitschrift für vergleichenden Rechtswissenschaft», 1907, Bd 22, Heft 3.*


«ԿԱՔԱՒԻԿ», մանկ. պատկերազարդ ամսաթերթ: Լույս է տեսնում 2011–ից Լոս Անջելեսում: Խմբագիր՝ Ջուլիետա Դավթյան: Տպագրում է մանկ. փոքրիկ պատմվածքներ, ոտանավորներ, նոտագրված երգեր, ժամանցային խաղեր, որոնք զարգացնում են մանուկների երևակայությունը: Հրատարակվում է դաս. ուղղագրությամբ՝ արևելահայ. և արևմտահայ. տարբերակներով:



«Կարսի Աւետարան»–*ի 1 էջ, մանրանկարը՝ «Լեռան քարոզը» (XI դ., Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2556)*



Յոզեֆ Կարստի *«Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» (2002, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*




«Կաքաւիկ», *2011–ից, Լոս Անջելես (№ 10)*



Կաֆայի գրչության կենտրոն. *հայերեն ամենափոքր ձեռագիրը՝ Տոնացույցը (1434, Մատենադարան, ձեռ. № 7728)*



«Կեանք եւ արուեստ», *1931–40, Փարիզ (Ա. տարի, 1931)*



Կեղծանուն. *Բախտիար Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարան»-ի (2005, Ե., ԵՊՀ հրտր.) կազմը*

ԿԱՖԱՅԻ (ԹԵՈԴՈՍԻԱՅԻ) ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, XIV–XVIII դդ–ի հայ գրչության նշանավոր կենտրոն: Կ. գ. կ–ում ընդօրինակված և մեզ հասած ձեռագրերի մեծ մասը պահվում է Մատենադարանում: Դրանք ծիս., դավանաբան., պատմագիտ., տոմարագիտ. և տիեզերագիտ. շուրջ 200 մատյաններ են: Մեզ հասած առաջին ձեռագիրը 1344–ից է: XIV դ–ից հայտնի է նաև ***Կարապետ*** և Անդրեաս գրիչների ընդօրինակած 12 ձեռագիր: Գրչարվ–ն այնտեղ աշխուժացել է հատկապես XV դ–ում. առավելապես ընդօրինակել են կիլիկյան ձեռագրեր: Հռչակված էին ***Քրիստոսատրտր***, Օգսենտ (ձեռ. № 7203, 7689, 7728, 8973, 10051 ևն), Թադեոս (ձեռ. № 3508 ևն) գրիչներն ու ծաղկողները: Այստեղ է ստեղծվել մեզ հայտնի հայ. ամենափոքր ձեռագիրը՝ Տոնացույցը (1434, գրիչ՝ Օգսենտ, ձեռ. № 7728, 3,4 x 4 սմ, քաշը՝ 19 գ):

Կ. գ. կ–ում գրչարվ–ի գործեր են ստեղծվել նաև XVI–XVIII դդ–ում: 1640–60–ական թթ–ին հայտնի էր Ավետիք գրիչը (ձեռ. № 7371, 7396, 7514, 7524, 7984 ևն):

«ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ», գրական–գեղ. պատկերազարդ տարեգիրք, 1936–ից՝ ամսագիր: Լույս է տեսել 1931–40–ին Փարիզում: Խմբագիր–հրատարակիչներ՝ Մերուժան և Մկրտիչ ***Պարսամյաններ:*** Նպաստել է հայկ. մշակույթի պահպանմանն ու զարգացմանը Սփյուռքում: Գրական–բանասիր. բաժնում զետեղել է Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ռ. Սևակի և ուր. անտիպ գործերից, նամականիները, հուշեր նրանց մասին: Անդրադարձել է խորհրդահայ գրակ–յանը, տպագրել թարգմանություններ: Արժեքավոր են Կոմիտասի, Տ. Չուխաճյանի, Վ. Մախոխյանի, Հ. Փուշմանի և ուր.՝ երաժշտության, նկարչության, ճարտ–յան, արևմտահայ թատրոնի մասին հրապարակումները: Բացառիկ համարներ է նվիրել Րաֆֆուն (1936, № 9), Գ. Սրվանձտյանին (1940, № 5–6):

«ԿԵԱՆՔ ԵՒ ԳԻՐ», գրական–գեղ. ամսագիր: Լույս է տեսել 1944–50–ին Կահիրեում: Խմբագիրներ՝ Դավիթ Շահլամյան, Հայկ Ժամկոչյան, Վարդգես Գարդաշյան, Սահակ Պալըքճյան: Համախմբել է սփյուռքահայ (հատկապես՝ եգիպտահայ) գրողներին ու գրասեր երիտասարդությանը, տպագրել է Հայաստանի մշակույթի, գիտ–յան և արդ–յան վերելքին նվիրված նյութեր, խորհրդահայ գրողների ստեղծագործություններից: Անդրադարձել է արաբ. և համաշխ. գրակ–յանը: Աշխատակցել են Վ. Թեքեյանը, Ա. Տատրյանը, Ե. Պարսամյանը, Օ. Ավետիսյանը և ուր.:

ԿԵԳԵԼ, տպատառի պայման. չափը, տպագրանշանի բարձրությունը՝ վերին և ներքին ելուստային տարրերով, տես ***Տառաչափ:***

ԿԵՂԾԱՆՈՒՆ, **ծածկանուն**, ստորագրություն կամ անուն, որն ընտրում է հեղինակը կամ արտիստը՝ իր իսկական անվան փոխարեն: Կ. ընտրել են գրաքննչ. հետապնդումներից խուսափելու, հեղինակի անհատականությունը կամ վաստակն ընդգծելու, ոչ բարեհունչ ազգանունից ազատվելու և այլ նկատառումներով: Բազմաթիվ գրողներ հայտնի են իրենց Կ–ներով՝ Պերճ Պռոշյան (Հովհաննես Առաքելյան), Րաֆֆի (Հակոբ Մելիք–Հակոբյան), Շիրվանզադե (Ալեքսանդր Մովսիսյան), Մուրացան (Գրիգոր Տեր–Գրիգորյան), Գամառ–Քաթիպա (Ռափայել Պատկանյան), Լեռ Կամսար (Արամ Թովմաղյան), Սիամանթո (Ատոմ Յարճանյան), Երուխան (Երվանդ Սրմաքեշխանյան), Ինտրա (Տիրան Չրաքյան), Համաստեղ (Համբարձում Կելենյան), Հովհաննես Շիրազ (Օնիկ Կարապետյան), Պարույր Սևակ (Պարույր Ղազարյան) և ուր.: Մի շարք հեղինակներ ունեցել են բազմաթիվ Կ–ներ (օր.՝ Վոլտերը՝ 160–ից ավելի): Շատ Կ–ներ դարձել են անձնանուններ (Շիրվանզադե, Րաֆֆի, Մոլիեր, Ստենդալ, Գորկի):

Գրկ. Հովակիմյան Բ., *Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005:*

ԿԵՆՋՅԱՆ (Կեռնճյան) Անդրանիկ [28.12.1873, ք. Ադաբազար (Իզմիրի նահանգ)– 6.9.1957, Փարիզ], հաս–քաղ. գործիչ, խմբագիր, հրապարակախոս: 1910–11-ին եղել է ազգ. երեսփոխան Իզմիրի շրջանից: Նույն թվականներին Ադաբազարում, ապա Կ. Պոլսում խմբագրել է *«Երկիր»* պարբ–ը: Մեծ եղեռնի ժամանակ տարագրվել է Դամասկոս, ընտրվել Ազգ. միության ատենապետ: 1919–20-ին՝ *«Տարոն»*, 1929–31-ին՝ *«Հնչակեան մամուլ»* պարբ–ների խմբագիր: Կիլիկիայի հայաթափումից հետո հաստատվել է Բեյրութում, համագործակցել պատրիարք *Սահակ Բ Խապայանի* հետ, 1926-ին տեղափոխվել է Փարիզ:

Լույս են տեսել Կ–ի «Լէօ եւ հնչակեան կուսակցութիւնը» (1935), «Ազգային հարց եւ Տաճկահայաստան» (1936), «Սօցիալ դէմոկրատ հնչակեան կուսակցութիւնը եւ Կիլիկեան ինքնավարութեան աքթը. 1919–1921» (1958) աշխատությունները, «Ամբարիշտ կինը: Թատերախաղ ժողովրդային կեանքէ» (1910, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.), «Հալածականի յուշեր. 1914–1918» (1964) երկերը նև: Թարգմանել է Լ. Տոլստոյի «Քօրնէյ Վասիլիեւֆ» (1910, նույն տպ.) վիպակը:

ԿԵՉԱՌԻՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XI դ–ից՝ Պահլավունի, ապա՝ Վաչուտյան և Խաղբակյան բարեգործ իշխան. տների հովանավորությամբ: Մեզ հասած առաջին ձեռագիր հիշատակարանը Աստվածատուր կրոնավորի պատվերով 1184-ին ընդօրինակել է նրա որդին՝ Ադդեն: 1233-ին մի մատյանի ընդօրինակության մասնակցել է Ստեփանոս Կեչառեցին: XIII դ–ի վերջին և XIV դ–ի սկզբին Կ. գ. կ–ում գործել է *Խաչատուր Կեչառեցին*: 1491-ին Գալուստ Աբեղան այստեղ ընդօրինակել է Ավետարան, որը ծաղկել է Մկրտիչ մանրանկարիչը (Մատենադարան, ձեռ. № 3989), 1499-ին Մատթեոս գրիչը վանահայր Փիլիպոսի պատվերով ընդօրինակել է Մաշտոց (Մատենադարան, ձեռ. № 1039), 1561-ին Մատթեոս արքեպիսկոպոսի պատվերով գրիչ և մանրանկարիչ Փիլիպոսն ընդօրինակել ու նկարազարդել է Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 3603), իսկ 1578-ին Ավետարան է ընդօրինակել Փիլիպոսի աշակերտ Առաքել սարկավագը:

Կ. գ. կ–ի մատենադարանում պահվել են տեղում գրված և ընդօրինակված, նաև նվիրատվություններով և այլ ճանապարհներով ձեռք բերված մատյաններ: Հայտնի է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու 1051-ի մի գրություն, որտեղ վանքին տրված նվիրատվությունների շարքում նշված են նաև գրքեր: 1677-ին Կեչառիսին Ավետարան է նվիրել նաև ոմն Մկրտիչ (Մատենադարան, ձեռ. № 335):

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Այրարատ, Վնտ., 1890:* **Յովսէփեան Գ.**, *Խաղբակեանք կամ Պոշեանք Հայոց պատմութեան մէջ, հ. 2, Անթիլիաս, 1969:*

«ԿԵՌԱՆ ԹԱԳՈՒՀՈՒՆ ԱՒԵՏԱՐԱՆ», 1. պատվիրել է Կեռան թագուհին 1272-ին՝ ամուսնու՝ Լևոն Գ–ի թագադրության առիթով, ընդօրինակել է Ավետիս գրիչը Սսում: Ըստ հիշատակարանի՝ ընդօրինակումն ավարտելուց հետո թագուհին ձեռագիրը նկարազարդելու համար հանձնել է հմուտ վարպետի (անունն անհայտ է), ապա նվիրել Ակներ վանքին (այժմ՝ Երուսաղեմի մատենադարանում, ձեռ. № 2563): Բաղկացած է 384 մագաղաթե թերթերից, կազմը (ուշ շրջանի) ոսկեզօծ է, մի երեսին՝ «Խաչելություն», մյուսին «Աստվածածինը Քրիստոսի հետ» մանրանկարն է:

Ձեռագիրը զարդարում են 4 ավետարանիչների պատկերները, 12 խորանը, 4 անվանաթերթը, ամբողջական էջով պատկերված տերունն. 13 («Ծնունդ», «Մկրտություն», «Պայծառակերպություն», «Խորհրդավոր ընթրիք» ևն) և լուսանցքների 103 մանրանկարները, թագավոր. ընտանիքի նկարը:

«Կ. թ. Ա.»-ի մանրանկարներում ակնհայտ է *Թորոս Ռոսլինի* արվ–ի ազդեցությունը, սակայն առկա են նաև կիլիկյան արվ–ի նոր միտումներ, որոնք լիովին դրսևորվել են 1280–90-ական թթ–ին



«Կեռան թագուհու Աւետարան». *«Խաչելություն», մանրանկարը (վերևում) և ոսկեզօծ կազմը (ներքևում, 1272, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2563)*






*Յոզեֆ Մարկվարտի «Հայ բդեաշխք...» (1903, Վնն., թարգմ.՝ **Թովմաս Կետիկյանի**) գրքի փիփղոսաթերթը*



«Կերակուր քահանայից» *(Հովհաննես Պոնա, 1760, Վնտ.) գրքի փիփղոսապ*



«Կերպարվեստ», *2003-ից, Երևան (№ 1, 2010)*

(***«Հեթում Բ թագաւորի ճաշոց»***, 1280-ական թթ-ի 2-րդ կեսի մի շարք Ավետարաններ, 1290-ական թթ-ի մի քանի Աստվածաշունչ):

2. Պատվիրել է Կեռան թագուհին 1283-ին, ընդօրինակել է Ստեփանոս գրիչը (նկարչի անունն անհայտ է, Մատենադարան, ձեռ. № 6764) Սկևռայում: Ձեռագիրը զարդարում են 4 ավետարանիչների պատկերները, 2 խորանը, անվանաթերթը, լուսանցազարդերն ու զարդագրերը: Ենթադրվում է, որ ձևավորումները, բացի 2 խորանից, Սոմիկինն են:

Գրկ. **Տէր-Մովսիսեան Մ.**, *Կեռան թագուհու Աւետարանը, «Անահիտ», 1907, № 10–12:* **Նույնի**, *Հայկական մանրանկարներ, «ԱՀ», 1910, գիրք 20, № 2:* **Der Nersessian S.**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, W., 1993.*

ԿԵՍԱՐԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, մեզ հասած առաջին ձեռագիրն ընդօրինակվել է 1191-ին (Նոր Ջուղայի մատենադարան): 1244-ին Կեսարիայում թաթարներից գնված մի Ավետարան Խաչենի իշխան Հասանի որդին՝ Գրիգորը, այլ ձեռագրերի հետ նվիրել է Արցախի Խադարի վանքին (Մատենադարան, ձեռ. № 7347): Նույն ճանապարհով 1272-ին Կեսարիայից բերվել է «Բեգյունց Աւետարանը», որը երկար ժամանակ պահվել է Արցախի Թալիշ գյուղում (Մատենադարան, ձեռ. № 10099): Հովհաննես գրիչն Անտիոքում սկսել և 1275-ին Կեսարիայում ավարտել է մի Ոսկեփորիկի ընդօրինակություն (Վենետիկի Մխիթարյան մատենադարան): Կոստանդին եպս. Կեսարացու պատվերով 1299-ին գրիչ Վարդանն ընդօրինակել է Գևորգ Սկևռացու մի ձեռագիր և նվիրել Գլաձորի համալսարանի բարեբունապետ Եսայի Նչեցուն: XIV և XV դդ-ից մեզ են հասել մեկական, XVI դ-ից՝ 9, XVII–XVIII դդ-ից՝ բազմաթիվ ձեռագրեր՝ ժողովածուներ, մեկնություններ, քարոզներ, նաև աշխարհիկ գործեր, որոնցից առանձնանում է Հովհան Սամիկոնյանի՝ «Պատմութիւն Տարօնոյ» երկի ընդօրինակությունը (XIX դ.): Կ. գ. կ-ից պահպանված շուրջ 100 ձեռագրից 18-ը պահվում են Մատենադարանում:

ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, տեքստի շարվածքում գործածվող նշաններ՝ վերջակետ, կետ, ստորակետ, բազմակետ, բութ, չակերտ, փակագիծ, շեշտ, գիծ, գծիկ ևն, որոնք նախատեսված են ճիշտ շարահյուսության, խոսքերն իրարից անջատելու և խոսքի առոգանությունը պահպանելու համար:

ԿԵՏԱՉԱՓ, **տպագրական պունկտ** (կչփ), տպատառի բարձրության չափման ավանդ. միավոր: Եվրոպայում ընդունվել է 1785-ին (Ֆ. Դիդո, Փարիզ): 1 Կ = 1/72 դյույմի = 0,376 մմ-ի: Տես նաև ***Տառաչափ:***

ԿԵՏԻԿՅԱՆ Թովմաս [13.9.1876, գ. Կրըման (Խոտորջուրի գավառ)–13.5.1915, Կարինի, բանասեր, թարգմանիչ, խմբագիր: Սովորել է Վիեննայի Մխիթարյան վարժարանում (1893-ից): Միաբանության անդամ (1895-ից): Դասավանդել է Կ. Պոլսի և Կարինի վարժարաններում: 1901–06-ին եղել է ***«Հանդէս ամսօրեայ»*** պարբ-ի խմբագիրը, որտեղ տպագրել է իր «Պարսից աշխարհի ըստ Ստոյն Մ. Խորէնացւոյ Աշխարհագրութեան» (1902, № 12), «Ծաղկեփունջ» (1904) աշխատությունները: Թարգմանել է Յ. Մարկվարտի «Հայ բդեաշխք: Քննական ուսումնասիրութիւն» (1903, Վնն., Մխիթարյան տպ.), Հ. Պեդերսենի «Հայերէն եւ դրացի լեզուները» (1907, նույն տպ.) աշխատությունները:

«ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ», կարդինալ Հովհաննես Պոնայի դավանաբան. երկը: Առաջին անգամ տպագրվել է 1760-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տպակից է ***«Արհեստ փրկութեան»*** գրքին: Տիտղթ-ին՝ «Կերակուր քահանայից, կամ Նախապատրաստութիւն առ սրբազան սեղան բեմին...» (161 էջ, 8º, 8,5 x 5,5 սմ): Անվանաթերթին և առաջաբանում թարգմանչի անունը չկա. ըստ Մխիթարյանների՝ Աստվածատուր Ջուղայեցին է:

Տպագրվել է նաև 1858-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.):

«ԿԵՐՊ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ», Հռոմի պապ Կղեմես XI-ի՝ ներողության կարգի մասին հրապարակումը: Առաջին անգամ տպագրվել է 1718-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Formula indulgentiarum, quas clemens XI. Coronis, Rofariis, Crucibus, parvifque Imaginibus... Կերպ ներողութեանց, զորս սրբութիւն Տեառն մերոյ Փափին Կղեմայ...» (1 էջ, 41 x 26 սմ):

Տպագրվել է նաև անթվակիր՝ առանց տպագրության վայրի ու տպարանի նշման: Տպագրությունը Ուրբանյան տպարանի տառերով է (1 էջ, 36 x 24,5 սմ):

«ԿԵՐՊ ՄՊԱՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԹԻԻ ՊԱՏԱՐԱԳԻ», պատարագի կարգին նվիրված համառոտված ու դյուրացված գիրք՝ բարեպաշտ և ընթերցասեր մանուկների համար: Առաջին անգամ տպագրվել է 1786-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (14 էջ, 8º, 10,2 x 6,4 սմ):

Տպագրվել է նաև առանց տպագրության վայրի, տպարանի և թվականի հիշատակության (8 էջ, 11,5 x 7,6 սմ), 1854-ին՝ Վիեննայում:

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ», մշակութ., գիտատես., քննադատ. պատկերազարդ կիսամյա հանդես: ՀՆՄ հրատ.: Լույս է տեսնում 2003-ից Երևանում: Խմբագիր՝ Վրեժ Առաքելյան: Լուսաբանում է ՀՆՄ-ի և մասնաճյուղերի գործունեությունը, ներկայացնում հայ ազգ. կերպարվ-ի վարպետներին, անդրադառնում կարևոր հոբելյաններին, ՀՆՄ-ի կազմակերպած ցուցահանդեսներին ու գիտաժողովներին, կերպարվ-ի միջազգ. անցուդարձին, տպագրում տես. և վերլուծ. (նաև ռուս.) հոդվածներ:

«ԿԻԼԻԿԻԱ», ազգ., առողջապահ., բարոյախոս., ուսումնադաստիարակչ. պարբ.: Լույս է տեսել 1861–75-ին Կ. Պոլսում (փոփոխ. պարբերականությամբ՝ ամսագիր, երկշաբաթաթերթ, շաբաթաթերթ): Խմբագիրներ՝ Մանուել Յութուճյան, Համբարձում Ալաճաճյան: Տպագրել է բժշկ., առողջապահ. հոդվածներ, տնտեսագիտ-յան, պատմության, բնագիտ-յան վերաբերյալ տեղեկատվ. նյութեր, կենցաղային օգտակար խորհուրդներ, գրական ստեղծագործություններ, գրախոսականներ:

«ԿԻԼԻԿԻԱ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1992-ին Հալեպում: Հիմնադիր-տնօրեն՝ Մաթիկ (Մաթևոս) *Էպլիղաթյան*: Տպագրել է հայ դաս. և ժամանակակից հեղինակների (Հ. Պարոնյան, Հ. Թումանյան, Րաֆֆի, Ե. Օտյան, Վ. Սարոյան, Գ. Զոհրապ, Ա. Արփիարյան, Վ. Թոթովենց, Արամ Հայկազ, Մուշեղ Իշխան, Համաստեղ, Ա. Ծառուկյան և ուր.) ստեղծագործություններ, մանկ. պատկերազարդ (խավաքարտե էջերով) գրքեր, կրոն. երկեր, բառարաններ, դասագրքեր, քարտեզներ ևն, նաև այլալեզու գրքեր (շուրջ 200 անուն): «Կ.» մի շարք արժեքավոր գրքեր հրատարակել է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի հովանավորությամբ [Ա. Սյուրմելյանի «Պատմութիւն Հալէպի հայոց» (հ. Ա–Գ, 2002) աշխատությունը, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի գրաբար և աշխարհաբար հրատները (2003), Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» (հ. 1–5, 2006), Թեոդիկի «Տիպ ու տառ» (2012) աշխատությունը, «Ամենուն տարեցոյցը» (հ. Ա–Բ, 2006) ևն]: Գործել է մինչև 2012-ը:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, ձևավորվել է XII դ-ում: Նշանավոր կենտրոններից էին Դրազարկը, Սկևռան, Հռոմկլան և Գոռները: Հայ նկարիչները մի քանի տասնամյակում ստեղծել են գրքի պատկերազարդման ինքնատիպ բարձր արվ.: Որոշ ժամանակ Դրազարկում է ապրել *Կիրակոսը* (*Թորոս Ռոսլինի* ուսուցիչներից), որը 1239-ին ծաղկել է Ճաշոց (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 53): Գրքարվ-ի շքեղ նմուշներից են Ներսես Լամբրոնացու պատվերով Գրիգոր Մլիճեցու նկարազարդած Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (1173, Մատենադարան, ձեռ. № 1568) պոեմը, նաև 1197-ին ծաղկած *«Մկեռայի Աւետարանը»* և 1215-ի անավարտ Ավետարանը (Նոր Զուղայի մատենադարան, ձեռ. № 546/25):



«Կիլիկիա», *1861-75-ին, Կ. Պոլիս*



«Կիլիկիա» *հրատարակչության տպագրած «Մանկական մատենաշարի» կազմը*

Կիլիկիայի մանրանկարչության դպրոց



Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ձեռագրի սկզբնաէջը (1173, ծաղկող՝ Գրիգոր Մլիճեցի, Մատենադարան, ձեռ. № 1568)

Կիլիկիայի մանրանկարչության դպրոց



«Հովհան ավետարանիչը Պրոքորի հետ», մանրանկար, XIII դ-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 9422)



Խորան, «Մալաթիայի Աւետարան» (1268, ծաղկող՝ Թորոս Ռոսլին, Մատենադարան, ձեռ. № 10675)

Սկևռայում է ստեղծագործել ***Կոստանդինը***, որի նկարազարդած ձեռագիրը (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 1635) աչքի է ընկնում կիլիկյան գրքարվ-ում առաջին անգամ հանդիպող 2 տերուն. պատկերներով («Մկրտություն» և «Խաչելություն»):

Հռոմկլայում հայտնի ամենահին ձևավորված ձեռագրի՝ 1166-ի Ավետարանի (Մատենադարան, ձեռ. № 7347) նկարազարդումներում արտացոլվել են XI դ-ի հայ մանրանկարչության ավանդույթները և Սև լեռան (Ասորիքի ու Կիլիկիայի սահմանում) հայկ., հուն., վրաց. և լատ. վանքերի համագործակցությամբ ստեղծված պատկերագր. օրինաչափությունները: Նշանավոր վարպետների՝ Կիրակոսի (1244, Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 69/151, 1248, Կիլիկիայի կաթողիկոսարանի հավաքածու, ձեռ. № 8, 1249, Մատենադարան, ձեռ. № 7690) և Հովհաննեսի (1253, Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 44.17) ծաղկած Ավետարանների մանրանկարները պայմանավորել են Հռոմկլայի դպրոցի զարթոնքն ու նպաստել Թորոս Ռոսլինի արվ-ի ձևավորմանը:

Թորոս Ռոսլինն իր սաների հետ ծաղկած ձեռագիր մատյաններում [«Զէյթունի Աւետարան»(1256, ձեռ. № 10450), «Մալաթիայի Աւետարան» (1268, ձեռ. № 10675, երկուսն էլ՝ Մատենադարան), 1262-ի Ավետարանը (Բալթիմորի Ուոլթերս պատկերասրահ, ձեռ. № 535), նաև 1260-ի, 1262-ի և 1265-ի Ավետարանները (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 251, 2660, 1956)] վերածնել է հին թեմաները, ներմուծել գրքի ձևավորման նոր եղանակներ, զարգացրել բազմանկար, պատմող. նկարչությունը: Նրա արվ-ը մեծապես ազդել է Կ. մ. դ-ի հետագա զարգացման վրա:

Գրեթե նույն ժամանակաշրջանում գրիչ և ծաղկող Հովհաննես Արքաեղբոր ջանքերով Գռների վանքին կից ստեղծվել է գրչատուն, որտեղ ծաղկած բազմաթիվ մատյաններում (1263-ի Ավետարան, Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 56.11, 1278–89-ի Ճաշոց, Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 245, 1278-ի «Գիրք Սողոմոնի», Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 245, ևն) առաջին անգամ ի հայտ են եկել մի շարք աստվածաշնչյան կերպարներ: 1270-ից հետո ստեղծված հայ արվ-ի բազմաթիվ արժեքավոր ձեռագրերի, օր.՝ «Վասակի Աւետարանի» (1270-ական թթ., Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2568), «Ութ մանրանկարիչների Աւետարանի» (XIII դ-ի վերջին քառորդ–1320, Մատենադարան, ձեռ. № 7651), «Հեթում Բ թագաւորի Ճաշոցի» (1286, Մատենադարան, ձեռ. № 979) ևն, ծաղկողների անուններն անհայտ են:

XIII դ-ի 2-րդ կեսին մանրանկարչությունն աննախադեպ ծաղկել է նաև Դրազարկի և Սաշկևորի վանքերում, Տարսոն, Սամեստիա, Սիս քաղաքներում: Դրազարկում հայտնի էին Հովհաննես Ծաղկողը (1282-ի Ավետարան, Լոնդոնի Բրիտ. գրադարան, ձեռ. Or. № 5626) և Թորոս Փիլիսոփան (1290-ի 2 Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 5736, Ս. Պետերբուրգ, Էրմիտաժ, ձեռ. № V. 3/835):

Ավետարանիչների դիմապատկերներով հատկապես աչքի է ընկնում XIII դ-ի Ավետարաններից մեկը (Մատենադարան, ձեռ. № 9422):

XIV դ-ի վերջի խոշոր մանրանկարիչը ***Սարգիս Պիծակն*** է, որն ստեղծագործել է Դրազարկում, Սսում, Սկևռայում և այլուր: Նրա աշխատանքները զերծ են նախորդ վարպետների նկարազարդումներում առկա շարժուն, պաթետիկ լարվածությունից, ունեն գրաֆիկ. դեկորատիվ, չոր գծանկար և հարթապատկերային ոճ, կարևորված է զարդը (1336, «Արքունական Աւետարան», ձեռ. № 5786, 1353, «Բժշկութեան Աւետարան», ձեռ. № 6795, երկուսն էլ՝ Մատենադարան, ևն):

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:* **Ղազարյան Վ.**, *Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ–XIV դարի սկիզբ), Ե., 1984:*

ԿԻԼԻԿՅԱՆ Անդրանիկ Երվանդի (14.9.1939, Բեյրութ–9.8.2005, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է ԵԳՈՒ (1960), ԵԳԻ (1970), Մոսկվայի պոլիգրաֆ. ինստ-ը (1975): 1984-ից դասավանդել է ԵԳԹԻ-ում, 1994-ից՝ ԵԳԻ-ում (պրոֆ.՝ 1996-ից, ամբիոնի վարիչ՝ 2002-ից): 1982–86-ին միաժամանակ եղել է «Ծիծեռնակ» ամսագրի գեղ. խմբագիրը:

Պատկերազարդել և ձևավորել է Ց. Սահակյանի «Ճերմակ հեքիաթ» (1979), Դ. Հովհաննեսի «Պստիկ է, բայց ճստիկ է» (1981), Հ. Թումանյանի «Փիսիկի գանգատը» (1983), Է. Միլիտոնյանի «Հայաստան» (1985), Գ. Սահարու «Մանկութիւն եւ պատանեկութիւն», Մովսես Խորենացու «Հայկական աւանդավէպեր» (երկուսն էլ՝ 1996, Անթիլիաս), Մ. Մամուրյանի «Դպրոցական յիշատակներ» (1999, Անթիլիաս), Գրիմ եղբայրների «Բրեմենյան երաժիշտները» (2000), Ս. Սիմոնյանի «Հայոց պատմություն» (գիրք 2, 2000), Ռ. Դավոյանի «Ծիտիկը ցուցահանդեսում» (2002), Ա. Վարդանյանի «Պարահանդես ամառային այգում» (2002), Կ. Չուկովսկու «Ֆեդորայի վիշտը» (2002), «Սասնա ծռեր» (շարք, 1994, Բ.) էպոսը, «Ո՞վ, ինչ, ո՞րտեղ» մանկ. հանրագիտարանը (2002) և այլ գրքեր:

Կ. առաջինն է նկարազարդել խառը տեխնիկայով (գործվածք, ժանյակ, չորացած տերևներ, ծաղիկներ, հասկեր, գորգի կտորներ ևն, Ա. Խնկոյանի «Մկների ժողովը», ռուս., 1983, Տարվա լավագույն ձևավորման 1-ին մրց., մի քանի լեզուներով տպագրված «Արջի որդին» հեքիաթը, մշակումը՝ Հ. Թումանյանի, 1983, Տոկիո):

«ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ», բժշկ. երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1991–99-ին Երևանում: Հիմնադիր՝ «Հույս» հրատարակչություն: Խմբագիրներ՝ Արտավազդ ***Խաչիկյան***, Կառլեն Ակունց: Թերթի հիմն. խնդիրը առողջությանը վերաբերող հարցերի լուսաբանումն էր: Անհրաժեշտ գիտելիքներ է հաղորդել ամուսն. ինտիմ հարաբերությունների, անպտղության, առողջ ապրելակերպի, հոգեբուժության, ասեղնաբուժության և այլ հարցերի մասին:

ԿԻՊՐՈՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հայ հոգևոր և մշակույթի կենտրոն: Մեզ հայտնի առաջին մատյանն Ավետարան է, որն ընդօրինակել է կիլիկեցի Պետրոս գրիչը 1280-ին (Նոր Ջուղայի մատենադարան, ձեռ. № 3): Ընդօրինակություններ են արել նաև Խաչատուր գրիչը (1287, Ավետարան, Վասակի, Մխիթար Մենակացի, տիկին Ալիծի և ուր. հետ), 1310, 1311, 1316, 1317, 1318-ին Կիպրոսի Սբ Աստվածածին, Սբ Վարվառա, Սբ Սարգիս, Սբ Մակար եկեղեցիներում՝ Ստեփանոս Գոյներիցանց, Սմբատ, Հովհաննես, Թորոս գրիչները: Հայտնի են նաև Գասպար Համթեցու ընդօրինակած Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկէից թղթոց» (1426) աշխատությունը, Ստեփանոս երեցի Սաշտոցը (1641), Սարգիս կրոնավորի Ժողովածուն (1671), Հովհաննես եպիսկոպոսի Շարականոցները (1670, 1674) և այլ մատյաններ: Հիշատակություններ կան նաև կղզու եկեղեցիներին նվիրած կամ այնտեղ ձեռք բերված գրչագրերի մասին: 1947-ին Կիպրոսի հայոց առաջնորդարանի 60-ից ավելի ձեռագրեր տեղափոխվել են Անթիլիաս: Կ. գ. կ-ի մատյանների մի մասը պահվում է Մատենադարանում (ձեռ. № 242, 2022, 3412, 6262, 6845, 9116, 9450):

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Ա. Մաթևոսյան), Ե., 1984:

«ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇ», գրական, ազգագր. և պատմ. պարբերագիրք: Կյուրինի հայրենակց. միության հրատ.: Լույս է տեսել 1930–33-ին Նյու Յորքում: Խմբագիր՝ Խաչատուր Մակարյան: Ծանոթացրել է Կյուրինի հայկ. համայնքի ստեղծման պատմությանը, ավանդություններին, նյութեր տպագրել հայ-թուրք. հարաբերությունների, ազգ., մշակութ., կրոն. կյանքի վերաբերյալ: Լուսաբանել է Կյուրինի հայրենակց. ընդհանուր միության և նրա մասնաճյուղերի գործունեությունը: Աջակցել է ներգաղթին: Ունեցել է «Կեն ο կο» խորագրով գրական-զավեշտ. հավելված:



Անդրանիկ Կիլիկյան. *Մովսես Խորենացու «Հայկական աւանդավէպեր» (1996, Անթիլիաս) գրքի կազմը*



«Կին և տղամարդ», *1991–99, Երևան*



Արսեն Կիտուրի
«Պատմութեան փիլիսոփայութիւնը» (մաս Ա, 1911, Կ. Պոլիս) գրքի կազմը



Կիրակոս. *1249-ի Ավետարանի 1 էջ (Մատենադարան, ձեռ. № 7690)*



Կիրակոս Աղբակեցի. *«Աստվածամայրը մանկան հետ», մանրանկար, 1351-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 2745)*

ԿԻՏՈՒՐ Արսեն (1883, Բայազետ–1976, Բեյրութ), հաս. գործիչ, խմբագիր: ՍԴՀԿ անդամ՝ 1905-ից: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1908) և Կ. Պոլսի պետ. բարձրագույն ուսուցչանոցը (1914): Մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին (1918): 1937–57-ին (ընդմիջումով) խմբագրել է ՍԴՀԿ *«Արարատ»* պաշտոնաթերթը:

Լույս են տեսել Կ-ի «Պատմութեան փիլիսոփայութիւնը» (1911, մաս Ա, ԿՊ, Մանուկ Գոչունյանի տպ., 1956, Բ.), «Մեր ապագայ դաստիարակութիւնը...» (1913, ԿՊ, «Կոհակի» տպ., 1956, Բ.), «Մարքսիզմ, դարուինիզմ, հոգին ու նիւթը» (1939, Հալեպ, Անի Էքմեքճյանի տպ.), «Հայ ազատագրութեան ճանապարհին» (1949), «Սրբագրեցէք յանուն արդարութեան» (1957), «Հողեղէն կոսմոսը եւ հոգեղէն մարդը» (1956), «Պատմական մատերիալիզմ» (1956), «Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887–1962» (հ. Ա–Բ, 1962–63) աշխատությունները, «Յուշեր եւ փուշեր» (1956) հուշագրությունը (բոլորը՝ Բ.):

ԿԻՐԱԿՈՍ, **Կյուրակոս**, XIII դ–ի 1–ին կեսի գրիչ և մանրանկարիչ: *Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Գործել է Դրազարկում և Հռոմկլայում: Պահպանվել են Կ–ի՝ 1239–ին Դրազարկում նկարազարդած Շաշոցը (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 53) և Հռոմկլայում նկարազարդած 3 Ավետարան (1244, Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 69, 1248, Անթիլիաս, Կիլիկիայի կաթողիկոսարանի հավաքածու, ձեռ. № 8, 1249, Մատենադարան, ձեռ. № 7690): Կ–ի մանրանկարների զարդային առանձնահատկությունները սերում են XII դ–ի 2–րդ կեսի կիլիկյան գրքարվ–ի ավանդույթներից: Ավետարանիչների պատկերագրության մեջ նկատելի է XI դ–ի՝ Բագրատունիների թագավորության շրջանի մանրանկարչության, նաև XII դ–ի 2–րդ կեսի բյուզ. գեղանկարչության մանիերիստ. սկզբունքների ազդեցությունը:

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:*

ԿԻՐԱԿՈՍ, մանրանկարիչ, XIV դ–ի *Ղրիմի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ, ժամանակի նշանավոր վարպետներից: Պահպանվել է նրա նկարազարդած 1 ձեռագիր (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 904): Նրան են վերագրվում ևս 2 ձեռագրի (Մատենադարան, ձեռ. № 7741, 8029) մանրանկարները: Կ–ի ստեղծագործություններն առանձնանում են ինքնատիպ գեղանկարչ. ոճով: Գունային նուրբ անցումներով (գերակշռում են մուգ կապույտի երանգները) նա հասել է ձևերի ծավալային լուծման տպավորության:

Գրկ. **Корхмазян Э.**, *Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978; Armenian Miniatures of the 13th and 14th Centuries, by E. Korchmasian, J. Drampian, G. Hakopian, Leningrad, 1984.*

ԿԻՐԱԿՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ, **Կիրակոս Քահանա**, XIV դ–ի 1–ին կեսի գրիչ և մանրանկարիչ, *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ, որի ինքնատիպ ցյուղավորումներից մեկն առնչվում է Կ. Ա–ու անվանը: Գործել է Վասպուրականի Աղբակ գյուղաքաղաքում: Ընդօրինակել կամ պատկերազարդել է Ավետարաններ (1318–19, ձեռ. № 4817, 1330, ձեռ. № 2929, 1332, ձեռ. № 9423, 1351, ձեռ. № 2745, XIV դ., ձեռ. № 5469) և Ժողովածու (1352, ձեռ. № 4311, բոլորը՝ Մատենադարան): 2 Ավետարան պահվում են Նոր Ջուղայում և Հալեպում: Կ. Ա–ու արվ–ին բնորոշ են առարկաների ու կերպարների առավել պարզ պատկերումը, թափանցիկ գուներանգը, մանրանկարների ոճավորումը:

Գրկ. **Հակոբյան Հ.**, *Մանրանկարիչ Կիրակոս Քահանա, «Էջմիածին», 1973, № 3:*

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, **Գետիկցի, Արևելցի** (մոտ 1201/1203–1271, Նոր Գետիկ), պատմիչ, վարդապետ, բարձունապետ: Ծնվել է «Գանձակի երկրում» (Գանձակեցի է անվանվել XVII դ–ից): Սովորել է Նոր Գետիկի վանքում (հետագայում՝ Գոշավանք). աշակերտել է Վանական Վարդապետին: 1215–ից հետո ուսուցչի հետ տեղափոխվել է Տավուշ՝ Խորանաշատի վանք, 1225–ին՝ Լորուտ: 1236–ի գարնանը մոնղոլները նրան գերել են (նրանց բանակում եղել է թարգմանիչ ու գրագիր), աշ–

նանը փախել է և ապաստանել Նոր Գետիկում: 1250-ին մասնակցել է Դավիթ Ծարեցու բանադրմանը, 1251-ին՝ Հռոմի Ինոկենտիոս IV պապի Հավատո թղթի պատասխանը գրելուն: Ենթադրվում է, որ Վանական Վարդապետի մահից (1251) հետո գլխավորել է Նոր Գետիկի վանքի դպրոցը: 1255-ին Նիգ գավառի Վարդենիս գյուղում հանդիպել է Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ին և գրառել նրա պատմածը:

Կ. Գ-ու գլխ.՝ **Պատմություն Հայոց** («Պատմութիւն ժամանակաց») երկն ընդգրկում է շուրջ 1000 տարվա պատմություն: Բաղկացած է «Առաջաբանից», որտեղ թվարկված են մատենագիրները՝ Ագաթանգեղոսից մինչև Վանական Վարդապետ, և 65 գլխից: Հայագիտ-յան և արևելագիտ-յան համար հատկապես արժեքավոր է Պատմության 2-րդ մասը, որտեղ հեղինակը, որպես դեպքերի ականատես, կարևոր տվյալներ է հաղորդում Անդրկովկաս և Հայաստան մոնղոլների արշավանքների մասին: Ենթադրվում է, որ նրանից է օգտվել նաև իրանցի պատմիչ Ռաշիդ էդ Դինը (1247–1318): Հետագայում երկն ուսումնասիրել են հայ և օտար բազմաթիվ գիտնականներ (Ք. Պատկանյան, Հ. Մանանդյան, Մ. Բրոսսե և ուր.): Պահպանվել է Կ. Գ-ու երկի 47 ընդօրինակություն (31-ը պահվում են Մատենադարանում, մյուսները՝ Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի, Կ. Պոլսի, Ս. Պետերբուրգի մատենադարաններում ու գրադարաններում և մասնավոր հավաքածուներում):

«Պատմութիւն Հայոցը» առաջին անգամ հրատարակվել է 1858-ին Մոսկվայում (Լազարյան ճեմ. տպ., հրատարակիչ՝ Ոսկան Տեր-Գևորգյան Երևանցի): Տպագրվել է նաև 1865-ին՝ «Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ» (Վնտ., Սբ Ղազարի տպ.) վերնագրով, 1909-ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), գիտաքնն. հրատ-ը լույս է տեսել 1961-ին Երևանում (աշխատասիր.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), աշխարհաբար՝ 1982-ին (փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Առաքելյանի), ֆրանս.՝ 1870-ին Ս. Պետերբուրգում, ռուս.՝ 1976-ին Մոսկվայում: Առանձին հատվածներ ռուս., ֆրանս., անգլ. և լատ. տպագրվել են դեռևս XIX դ-ում:

Կ. Գ. գրել է նաև թղթեր (մեզ չեն հասել)՝ ուղղված Վանական Վարդապետին, Վարդան Արևելցուն և ուր., Աստվածածնի Վերափոխման շարականը, Պողոս եպիսկոպոսի վարքը (զետեղված է 1253–69-ին իր իսկ հարմարեցրած և լրացրած «Յայսմաւուրքում». պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում):

Գրկ. Ոսկեան Հ., Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, Վնն., 1922:

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ [1270-ական թթ. (Եկեղյաց գավառի Ագրակ ավան)–1356], փիլիսոփա, մատենագիր, մեկնիչ, բանաստեղծ, եկեղեց. գործիչ: Սովորել է Երզնկայում: 1315-ից՝ րաբունապետ: Երզնկայի XIII–XIV դդ-ի գրական-փիլ. դպրոցի նշանավոր ներկայացուցիչ: Գրել է ճառեր, քարոզներ, կանոնախրատ. գործեր, մեկնություններ, շարականներ, զարգացրել նախորդների, մասնավորապես՝ Հովհաննես Երզնկացի Պլուզի փիլ. հայացքները: Հատուկ ուշադրություն է դարձրել դասավանդվող առարկաների ընտրությանը, կազմել փիլ. երկերի, ճառերի, մեկնությունների, խրատների և գիտ-յան այլ բնագավառների վերաբերող նյութերի ժող-ներ՝ որպես բարձրագույն կրթության ձեռնարկներ (Մատենադարան, ձեռ. № 1379, ևն):

Կ. Ե-ու երկերն ունեն ժամանակի հաս-քաղ. կյանքն արտացոլող պատմաճանաչող. մեծ արժեք. հիմնականում անտիպ են, մեզ են հասել բազմաթիվ ընդօրինակություններով: Դրանցից են «Նախերգան Տեառնընդառաջին» (ձեռ. № 2187), «Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն» (ձեռ. № 2542, 8727, ևն), «Լուծմունք հարիւրաւոր թուոցն Եւագրեայ» (ձեռ. № 518, 1480, 1980, ևն), «Յաղագս Ը խորհրդոցն Եւագրեայ» (ձեռ. № 2542, 4040, ևն), «Թուղթ առ Կարնեցիս» (ձեռ. № 639, 750, 6608, ևն, բոլորը՝ Մատենադարան, ընդօրինակությունները՝



«Համառօտ պատմութիւն...» (1865, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Հայոց պատմություն» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը



«Կիրակոս *և Մկրտիչ Երզնկացիներն աշակերտների հետ», մանրանկար, 1334-ի Մեկնություն (ծաղկող՝ Մանուել, Մատենադարան, ձեռ. № 1379)*



Ջոն Կիրակոսյանի *«Երիտասարդները պատմության դատաստանի առաջ» (Ա գիրք, 1982, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

Կլիշեի նմուշներ



Մխիթարյան միաբանության տպարանի



«Գյուղատնտեսական հանրագիտարան»-ի (2015, Ե., «ՀՀՀ»)

Վենետիկի Մխիթարյան, Երուսաղեմի մատենադարաններում): Թեև նրա չափածո գործերից քչերն են պահպանվել, սակայն իրենց բարձր արվ–ով հեղինակին հռչակել են միջնադարի մեծ շարականագիր:

Կ. Ե–ու «Թուղթ առ Կարնեցիս» աստվածաբան. երկը տպագրվել է 1996–ին (աշխատասիր.՝ Ավետիս քհն. Դանիելյանի, «Գանձասար», № 6, էջ 557–584):

Գրկ. Քիւրտեան Հ., Երիզայ եւ Եկեղեաց գաւառ, հ. 1, Վնտ., 1953, էջ 225–236: **Սրապյան Ա.,** *Բանասիրական ճշգրտումներ, «ՊԲՀ», 1972, № 4:* **Դանիելյան Ա.,** *Կիրակոս Երզնկացի, «Գանձասար», № 6, 1996:*

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ջոն Սահակի (6.5.1929, Երևան–20.6.1985, Մոսկվա, թաղված է Երևանում), պետ. գործիչ, պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1969): Ավարտել է ԵՊՀ (1951): 1966–69–ին՝ Հեռուստառադիոպետկոմի նախագահ, 1969–75–ին՝ ՀԿԿ ԿԿ գիտ–յան և ուս. հաստատությունների բաժնի վարիչ, 1975–85–ին՝ ՀԽՍՀ ԱԳ նախարար:

Կազմել և խմբագրել է (Ռ. Սահակյանի հետ) «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923)» (1972) ժող–ը: Լույս են տեսել Կ–ի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» (1965, ռուս.՝ 1971), «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» (հ. 1, 2, 1978, 1980, ռուս.՝ 1981), «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (գիրք Ա–Բ, 1982–83, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1985) աշխատությունները:

Երկ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ. «Ընդդէմ պատմութեան թրքական կեղծարարութեան» (ռուս–ից արևմտահայ.՝ 1987, Բ., թրգմ.՝ Գ. Յազրճյանի): А. К. Дживелегов и его историко–публицистическое наследие, Е., 1986; Младотурки перед судом истории, Е., 1989.

Գրկ. Բալայան Զ., Կյանք մահից հետո (հուշեր), Ե., 1999: Ջոն Սահակի Կիրակոսյան (կազմ.՝ Ա. Կիրակոսյան), Ե., 1994: Ջոն Կիրակոսյան: Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (կազմ., խմբ., առաջաբ.՝ Ա. Կիրակոսյանի), Ե., 2009:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Սահակ Ղուկասի [1895, գ. Երիցու (Ալաշկերտի գավառ՝ Արմ. Հայաստան)–9.8.1970, Երևան], լրագրող, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1947): 1914–ին ընտանիքով բնակություն է հաստատել Թիֆլիսում, թղթակցել «Կարմիր աստղ» և «Մարտակոչ» թերթերին: Ավարտել է ԵՊՀ (1926), սովորել Մոսկվայի կարմիր պրոֆեսուրայի գրակ–յան և արվ–ի ինստ–ում (1931–33): Աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում, Կուսհրատում (խմբագիր, ապա՝ տնօրեն), Հայպետհրատում (բաժնի վարիչ):

ԿԼԻՇԵ (ֆրանս.՝ cliché), տեքստի և պատկերների պոլիգրաֆ. վերարտադրության տպաձև՝ ուռուցիկ տպագրող տարրերով: Պատրաստում են լուսամեխ. կամ փորագրության եղանակով: Բնագրի բնույթից կախված՝ լինում է գծավոր (ստանում են միատեսակ հագեցածության բնագրերից), ցանցավոր (տարբեր գույներանգներով պատկերներից) և համակցված: Ժամանակակից Կ–ները պատրաստում են մետաղից (մագնեզիում, պղինձ, արույր, պողպատ, ցինկ ևն), պոլիմերից և օգտագործում հիմնականում «մետաղական» էֆեկտ ստանալու համար, որը դեռևս չի հաջողվում տպագրական ներկերով: Կ–ներն օգտագործվում են նաև թղթին ռելիեֆ (ուռուցիկ դրոշմապատկեր) հաղորդելու կամ ճնշատպմամբ թղթի տեքստուրան հարթելու (բլինդ) համար: 1 Կ–ից կարելի է արտատպել մինչև 40–50 հզ. տպվածք:

ԿՂԵՄԵՍ ԳԱԼԱՆՈՍ [1610, Սորենտո (Իտալիա)–14.5.1666, Լվով (այժմ՝ Ուկրաինայում], իտալացի աստվածաբան, փիլիսոփա, հայագետ: Կաթոլիկություն քարոզելու նպատակով շրջագայել է հայաշատ վայրերում, սովորել հայ.: 1641–44–ին Կ. Պոլսում իր հիմնադրած դպրոցում հայ աշակերտներին դասավանդել է կրոն, լեզուներ, նաև հայ., 1648–63–ին Հռոմի Սուրբ հավատի տարածման միության հայկ. վարժարանում (Ուրբանյան դպրոց)՝ հայոց լեզու և այլ առարկաներ: Փիլ. հայացքներով եղել է Թովմա Աքվինացու հետևորդներից:

Կ. Գ–ի «**Քերական եւ տրամաբանական ներածութիւն...**» աշխատությունը տրամաբանության հայ. առաջին տպագիր դասագիրքն է և հայկ. իրականության մեջ կարևոր դեր է խաղացել տրամաբանության՝ որպես ինքնուրույն գիտ–յան ձևավորման ու զարգացման գործում: Երկի քերակ–յան մասը գրել է ***Սիմեոն Ջուղայեցու*** քերական. սկզբունքներով:

Տպագրվել է 1645–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Տիտղթին՝ «Քերական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ» (444 էջ. քերակ–յան մասը՝ 256 էջ՝ մեկ էջը՝ հայ., մյուսը՝ լատ., տրամաբանության մասը՝ 257 էջ՝ միայն հայ., 4º, 17 x 11,7 սմ):

«**Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ**» լատ. և հայ. աշխատության մեջ, օգտագործելով հայկ., հուն., լատ. աղբյուրներ և հիմք ընդունելով հայ ու հռոմ. եկեղեցիների հարաբերությունները, Կ. Գ. շարադրել է հայոց պատմությունը, հանդես եկել որպես Հայ եկեղեցին Հռոմին ենթարկելու գաղափարի մոլեռանդ քարոզիչ: Կ. Գ–ի միտումնավոր հորինվածքները, որոնք գրակ. են մտել «հայկական սխալներ» անվանմամբ, հերքվել են միայն XVIII դ–ի վերջին: Սակայն այս աշխատությունն այժմ ունի սկզբնաղբյուրի նշանակություն, քանի որ նրա օգտագործած աղբյուրների մի մասն անհետացել է:


Երկի 1–ին հատորը տպագրվել է 1650–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ հայ. և լատ. (594 էջ, 4º, 24 x 15,5 սմ), և 2 անգամ ՝ 1690–ին (603 էջ, 4º, 24,5 x 15 սմ և 933 էջ, 8º, 11,8 x 7,5 սմ): Նույն տպարանում 1658–ին հայ. և լատ. տպագրվել է երկի 2–րդ հատորի 1–ին մասը (482 էջ, 4º, 24,2 x 15,8 սմ), 1661–ին՝ 2 –րդ մասը (812 էջ, 4º, 24,5 x 15 սմ):

1757–ին Հռոմում (առանց տպարանի հիշատակության) տպագրվել է «**Չարչարանք եւ մարտիրոսութիւն Կղեմեսի**» 1–էջանոց պատկերը (44,5 x 35 սմ):

Գրկ. Զահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974: **Дашкевич Я.**, *Армянские колонии на Украине в источниках и литературе XV–XIX веков, Е., 1962.*

ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ Բաբկեն (ավազանի անունը՝ Հարություն) Ավետիքի, **Բաբկեն Ա** [23.3.1868, Այնթապ (Դաշտային Կիլիկիա)–9.7.1936, Անթիլիաս (Լիբանան)], պատմաբան, բանասեր, ձեռագրագետ, խմբագիր–հրատարակիչ, արքեպիսկոպոս (1931): Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս՝ 1928–ից: Սովորել է ծննդավայրի Վարդանյան վարժարանում (1885–89), Արմաշի դպրեվանքում (1889–96): 1899–ին՝ Տարոնի ընդհանուր վանահայր և առաջնորդ. տեղապահ: 1901–ին եղել է Կ. Պոլսի Ազգ. մատենադարանի մատենադարանապետ, գրաբար է դասավանդել Պերպերյան, Կեդրոն. վարժարաններում: 1905–06–ին՝ ***«Լոյս»*** եկեղեց. շաբաթաթերթի, 1918–19–ին (Արմենակ Նազարյանի հետ)՝ «Տաւրոս» (Բոստոն) ամսագրի խմբագիր: 1924–ից դասավանդել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում: 1927–ին ձեռնարկել է ***«Սիոն»*** հանդեսի վերահրատարակումը: 1930–ին Անթիլիասում հիմնադրել է դպրեվանք, տպարան, գրադարան, գանձատուն–թանգարան, մանկապարտեզ–նախակրթարան, քահանայից դասընթացներ, կիրակնօրյա դպրոցներ: 1932–ին՝ ***«Հասակ»*** հանդեսի խմբագիր–հրատարակիչ: Աշխատակցել է «Հանդէս ամսօրեայ», «Բիւզանդիոն», «Բիւրակն», «Արարատ», «Արեւելք», «Լումայ», «Արեւելեան մամուլ», «Դաշինք» պարբ–ներին:

Լույս են տեսել Կ–ի «Ժողովուրդին տօնացոյցը» (1901, ԿՊ, Հակոբ Մնաթեոսյանի տպ.), «Քարոզներ» (1904, նույն տպ.), «Կոլոտ Յովհաննէս պատրիարք» (1904), «Ծովք: Ծովք–Տլուք եւ Հռոմ–Կլայ» (1904), «Եղիշէ: Քննական ուսումնասիրութիւն» (1909), «Իսլամը հայ մատենագրութեան մէջ (1930, չորսն էլ՝ Վնն., Մխիթարյան տպ.), «Քաջն Վարդան» (1920, Բոստոն), «Հայ եկեղեցի. Մխիթարեան ուսումնասիրութիւններ» (1930, Երուսաղեմ), «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» (1939, 1990), «Քրիստոնէական...» (1971), «Վարդապետութեան աստիճանները հայ եկեղեցւոյ մէջ» (1980, հինգն էլ՝ Անթիլիաս) պատմ., բանասիր–ազգագր., կրոնաաստվածաբան. աշխատությունները:



Կղեմես Գալանոսի *«Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» (հ. 2, մաս 1, 1658, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը*



Բաբկեն Կյուլեսերյան



Բ. Կյուլեսերյանի *«Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» (1990, Անթիլիաս) գրքի կազմը*

Կազմել է «Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից» (1957), «Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի հայոց» (1961) ձեռագրացուցակները:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Բարկէն Ա կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, «ՀԱ», 1936, № 7:* **Եղիայեան Բ.**, *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, 1975:* **Ղազարյան Խ.**, *Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Սբ Էջմիածին, 1999:*



Կյուրեղ Աղեքսանդրացու *«Գիրք պարապմանց»-ի (1717, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) տիտղոսաթերթը*

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ Ռոպեր (Ռոպերտո) Վահանի (7.4.1923, ք. Ալժիր–1.8.2009, Լիսաբոն), արևելագետ, աղբյուրագետ, տնտեսագետ: Սովորել է Փարիզի և Լոնդոնի համալսարաններում: Հռոմի պատմագիտ. ակադ-ի արտասահմ. (1983), Պորտուգալիայի պատմության ակադ-ի իսկական (1989, թղթ. անդամ՝ 1975-ից, փոխնախագահ), ՀՀ ԳԱԱ (1992) արտասահմ. անդամ, ***Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության*** վարչ. խորհրդի տեսուչ (1964–77), փոխնախագահ (1977):

Կ-ի և Հայկ ***Պերպերյանի*** նախաձեռնությամբ 1959-ից «Հայկական մատենաշարով» լույս են ընծայվել ձեռագրացուցակներ (Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Արմաշի, Անթիլիասի, Ջմմառի, Նոր Ջուղայի մատենադարանների, «Հանդէս ամսօրեայի» ևնի) և այլ արժեքավոր հրատ-ներ: Կ-ի ջանքերով 1963-ից վերահրատարակվել է ***«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»*** հայագիտ. կիսամյա տարեգիրքը:

Լույս են տեսել Կ-ի «Հայ-պորտուգալական հարաբերություններ» (1986), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1993), «Երկերի ամբողջական հաւաքածոյ» (հ. 1–3, Լիսաբոն, 1995), «Վրաստանի թագուհի Քեթևանի փառավոր և իսկական մարտիրոսության պատմությունը» (ֆրանս., 1982) աշխատությունները:

Ֆրանսիայի ազատագրության կրկնակի (1943, 1944) հերոս: Ֆրանսիայի Պատվո լեգեոնի հրամանատար (1996), Ռազմ. խիզախության պատվո նշան:

ԿՅՈՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, **սուրբ Կյուրեղ Աղեքսանդրացի** (375, Ալեքսանդրիա–444, Ալեքսանդրիա), Ընդհանրական եկեղեցու հայրապետներից, Հայ առաքել. եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ հայրերից: Ալեքսանդրիայի պատրիարք (412-ից):

Կ. Ա-ու երկերը հայ. թարգմանվել են V–VIII դդ-ում: Մի շարք գործեր պահպանվել են միայն հայ. թարգմանություններով: 714–715-ին Դավիթ Հյուպատոսի և ***Ստեփանոս Սյունեցու*** ջանքերով թարգմանվել է «Գիրք պարապմանցը», որի 44 ճառերի վերաբերյալ ***Գրիգոր Տաթևացին*** գրել է «Լուծմունք ի պարապմունս սրբոյն Կիւրղի» ընդարձակ մեկնությունը: «Գիրք պարապմանցը» և «Գիրք գանձուցը», որպես դավան. կարևորագույն ձեռնարկներ, մեկնաբանվել ու դասավանդվել են միջնադարյան հայ վարդապետարաններում, բարձրագույն դպրոցներում: Կ. Ա-ու երկերից հատվածներ կամ ամբողջ. գործեր են տպագրվել «Գիրք թղթոց» և ***«Կնիք հաւատոյ»*** ժող-ներում:

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են Կ. Ա-ու՝

«**Գիրք պարապմանց**» չափածո երկը. 1717-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տպակից է Աթանաս Աղեքսանդրացու «Թուղթ առ Եպիկտիմոն» և Գրիգոր Տաթևացու «Լուծմունք ի պարապմունս սրբոյն Կիւրղի» երկերին: Տիտղթ-ի փոխարեն «Զայն առ բաղձալին» սկսվածքով 12-տողանի ոտանավորն է (800 էջ, 8º, 15,8 x 11 սմ):

«**Ճառ**» երկը. 1760-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տպակից է Հովհաննես Ոսկեբերանի «Աղօթք եւ ճառք» երկին: Տիտղթ-ին՝ «Տեառն Կիւրղի Սրբոյն եպիսկոպոսի Աղէքսանդրու Ճառ վասն ելման հոգւոյ եւ հանդերձեալ դատաստանին Քրիստոսի...» (104 էջ, 8º, 13,3 x 7,5 սմ):



Կյուրեղ Երուսաղեմացու *«Կոչումն ընծայութեան» (1727–28, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*

Գրկ. **Զարբհանալեան Գ.**, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 503–524:* **Գաթըրճեան Յ.**, *Մրբազան պատարագամատոյցք հայոց, Վնն.,1897:* **Վարդան Այգեկցի**, *Գիրք հաւատոյ եւ Արմատ հաւատոյ, Ե., 1998, էջ 47–49:*

ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (315–386), Ընդհանրական եկեղեցու հայրապետ, Հայ առաքել. եկեղեցու տոնելի սուրբ հայրերից: Կ. Ե–ու մատենագիտ. ժառանգության մեջ կարևորագույնը «**Կոչումն ընծայութեան**» կամ «Յաղագս երախայից» երկասիրությունն է, որը ճառերի կամ քարոզների ժող. է և հոգևոր գիտելիքների ու քրիստ. հավատի հանրագիտարան է եղել նորադարձ քրիստոնյաների համար: Հայ. թարգմանվել է V դ–ում, բազմիցս վկայակոչվել է հայ դավանաբան. գրակ–յան մեջ, հիշատակվել դեռևս Ղազար Փարպեցու, Հովհան Բ Գաբեղենացու, Անանիա Շիրակացու երկերում:

Երկը հայ. առաջին անգամ տպագրվել է 1727–28–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Թարգմանվել է հուն–ից: Կից տպագրվել է նաև Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոյն Կիւրղի Երուսաղէմացւոյ» աշխատությունը (384 էջ, 17 x 9,8 սմ):

Վերահրատարակվել է 1832–ին Վիեննայում՝ Մխիթարյան տպարանում, 2007–ին՝ Սբ Էջմիածնի տպարանում:

Գրկ. Զարբհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 524–529: **Քոլանջյան Ս.**, *Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից, «ԲՄ», № 5, 1960:* **Հատիտյան Ա.**, *Սուրբ Կյուրեղ հայրապետ Երուսաղեմացի, «Էջմիածին», 1978, № 5, 6:*

ԿՅՈՒՐՃՅԱՆ Միքայել Սահակի (1879, Կ. Պոլիս–3.7.1965, Կահիրե), գրող, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը (1895): 1896–1905–ին՝ Ալեքսանդրիայի «Ազատ բեմ» պարբ–ի խմբագիր, 1905–ին՝ *«Շիրակ»* (Վահան *Թեքեյանի* հետ), 1920–23–ին՝ *«Արեւ»* պարբ–ների հիմնադիր–խմբագիր: Աշխատակցել է «Այսօր–Ապագայ» (Փարիզ), «Նոր կեանք» (Լոնդոն) պարբ–ներին: Գրական ասպարեզ է մտել «Մարտիկ աղա» (1898–99, հրտ.՝ 1999, Ե.) երգիծավեպով:

Լույս են տեսել Կ–ի «Ֆրանքօ–թրքական պատերազմ կամ Չարշըլը Արթին աղա» (Երվանդ *Օտյանի* հետ, 1909, ԿՊ, Ռոգոս Սազայանի տպ., 1923, ԿՊ, Մ. Տեր–Սահակյանի տպ.) կատակերգությունը (բեմադրվել է 1903–ին Ալեքսանդրիայում, 1962–ին՝ Երևանում՝ «Չարշըլը Արթին աղա» վերնագրով), «Փրկանք» (1910, Տիգրան *Կամսարականի* հետ) դրաման, «Հերոսախաղ» (1928, Ֆ. Ճարյանի տպ., համահեղ.՝ Ե. Օտյան) զավեշտը, «Ի խորոց սրտի խօսք ընդ պաշտելւոյն» (1960, Բ., Տոնիկյանի տպ.) բանաստեղծությունների, «Քսան տարի ետք կամ Ֆրանկօ–թուրքական պատերազմը կը շարունակուի կամ Տիկին Եւփիմէի յաղթանակը» (1961, Բ., «Սևան» տպ.), ««Ազգայինճի»–ն կամ Մեծութիւն եւ անկում պարոն Իգնատիոս Ռուբինեանի» (1999), «Անանուն գիշերը եւ այլ պատմուածքներ պոլսահայ բարքերէ» [ա. թ., Կահիրե, «Ոսկետառ» տպ.] պատմվածքների, նորավեպերի ժող–ները:


Հանդես է եկել նաև Դիտակ, Զարմայր Սահակյան, Արսեն Միլար, Պետրոս Ագաթոն, Հրանտ և այլ ծածկանուններով:

«ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ», դավանաբան. երկերի ժող.: Կազմվել է Կոմիտաս Ա Աղցեցի (615–628) կաթողիկոսի օրոք՝ Հայ եկեղեցու դիրքերի ամրապնդման նպատակով: Ունի հակաքաղկեդոն. բովանդակություն: Ժող–ի 10 գլխից յուրաքանչյուրը նվիրված է դավանաբան. առանձին խնդրի՝ Երրորդությանը, Մարդեղությանը, Անապականությանը ևն:


«Կ. հ.»–ի բնագիրը գիտ–յանը հայտնի է XIV–XV դդ–ի մեկ ընդօրինակմամբ, որը 1911–ին Դարաշամբի Սբ Ստեփանոս Նախավկա վանքում հայտնաբերել և 1914–ին Վաղարշապատում ընդարձակ ներածականով հրատարակել է Կարապետ *Տեր–Մկրտչյանը*՝ «Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ եկեղեցւոյ» վերնագրով (վերահրտ.՝ 1998):

Գրկ. **Տեր–Մինասյան Ե.**, *Պատմա–բանասիրական հետազոտություններ, Ե., 1971: Կնիք հաւատոյ բնագրին բառացանկ, Անթիլիաս, 1999:*


«ԿՇԻՌ ԺԱՄԱՆԱԿԻ», հիսուսյան քարոզիչ Հովհան Ներինբերգյանի կրոնադավանաբան. երկը: Լատ–ից թարգմ.՝ Զաքարիա Ակնեցու: Տպագրվել է 1750–ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք անունեալ Կշիռ ժամանակի...» (552 էջ, 12º, 11,5 x 5,8 սմ):



Միքայել Կյուրճյանի *«Մարտիկ աղա» (1999, Ե., ԳԱԹ հրտ.) գրքի կազմը*



«Կնիք հաւատոյ» *(1914, Վաղ–պատ) գրքի կազմը*



«Կշիռ ժամանակի» *(Հովհան Ներինբերգյան, 1750, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Կոդեքս-գիրք *փախ-տակե թերթերով (III դ., Եգիպտոսի Էլ Հարգի հնագիտության թանգարան)*



Կոզմա. *Հովաննու Ավետարանի սկզբնա-էջը (1166, Հռոմկլա, Մատենադարան, ձեռ. № 7347)*



Արմանուշ Կոզմոյանի *«Հայոց և պարսից միջնադարյան քնա-րերգության...» (1997, Ե., «Գիտություն» հրտ.) գրքի կազմը*

ԿՈԴԵՔՍ-ԳԻՐՔ (<լատ. codex–սկզբնապես՝ փայտի տախ-տակ, հետագայում՝ գրելու համար իրար միացրած ու թերթվող տախտակների դարսակ, գիրք), գրքի ամենատարածված ձևը՝ թղթի, մագաղաթի կամ այլ գրանյութի ծալքեզրով (արմատ) պահանգված և շապկած կամ կազմած (տես ***Կազմ***) թերթերի բլոկ: Կ-գ. ստեղծվել է ծալվող գրանյութի՝ մագաղաթի, թղթի (պապիրուսը ծալելիս ջարդվել է) ի հայտ գալուց հետո, պատրաստվել է Հին Հռոմում՝ գրելու համար օգտագործված մոմապատ փայտե աղյուսակների (պոլիպտիխ) ձևով: Կ-գ. հիշատակվում է դեռևս մ. թ. ա. I դ-ից, սակայն պահպանված հնագույն կտորները մ. թ. II դ-ի են, լայնորեն տարածվել է IV դ-ից: Հայտնի հնագույն Կ-գ-երը IV–V դդ-ի Աստվածաշնչի ցուցակներ են:

Միջնադարում Կ-գ-ի էջերն արդեն համարակալվել են, գրվել գու-նավոր թանաքով կամ ներկով և, ըստ այդմ, կոչվել Ծիրանագույն, Ոսկեգույն կամ Արծաթագույն Կ-գ.: Դարեր շարունակ Կ. օգտագործվել է ***գլանափաթեթի*** հետ միաժամանակ:

Ժամանակակից գրքում պահպանվել են Կ-գ-ի կառուցվածքի հիմնական տարրերը՝ ***գրքի բլոկը***՝ կազմակողերը, գրքապանակը և դրանց միացման (միավորման) տեխնոլոգիան:

ԿՈՋԻԿՅԱՆ Գարեգին, **Եսայեմ** [1878, ք. Բալու (Դիարբեքիրի նա-հանգ)–1915, Մեծ եղեռնի զոհ], խմբագիր, հաս-քաղ. գործիչ: Սովորել է Խարբերդի Եփրատ քոլեջում: 1896-ին տեղափոխվել է Կովկաս: 1898-ին մի խումբ համախոհների հետ հիմնադրել է Հայ բանվորնե-րի սոցիալ-դեմոկրատ. կազմակերպությունը, 1900–01-ին՝ Թիֆլիսի «Բանւոր» թերթի խմբագր. կազմի անդամ: 1903-ին արտաքսվել է Ռուսաստանից, հաստատվել է Ժնևում: 1905-ին ծպտյալ վերադար-ձել է Թիֆլիս. 1906-ին աշխատակցել է «Կեանք», միաժամանակ, 1906–07-ին՝ «Գործ», 1906–08-ին՝ «Երկրի ձայն» պարբ-ներին: 1909-ին՝ «Նոր հոսանք», 1910–14-ին՝ ***«Ազատայ»*** պարբ-ների խմբագիր: Գրել է հրապարակախոս. հոդվածներ, դատապարտել երիտթուրքերի պանթուրք. քաղաքականությունը:

Լույս է տեսել Կ-ի «Թող ֆակտերը խօսեն» (1904, Ժնև, Սոցիալ-դեմոկ-րատ. բանվոր. կազմակերպության տպ.) աշխատությունը: Թարգմանել է Կ. Կաուցկու երկերից:

ԿՈՋՄԱ, XII դ-ի 2-րդ կեսի և XIII դ-ի 1-ին քառորդի գրիչ և ման-րանկարիչ: 1166-ին Հռոմկլայում Առաքել Եպիսկոպոսի համար ընդ-օրինակել և նկարազարդել է Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 7347): Կ. ձեռագրեր է ստեղծել նաև 1205-ին Խարբերդում (Վենետիկի Մխիթարյան մատենադարան), 1219-ին՝ Խարբերդի Բարջանճ անա-պատում (Մատենադարան, ձեռ. № 7734): Հայտնի է ևս 2 ձեռագիր. մեկը Կ. Պոլսում է, մյուսը՝ ԱՄՆ-ում (Հ. Քյուրտյանի հավաքածու): Կ. ձեռագրերն ընդօրինակել է երկաթագրով և բոլորգրով, նկարա-զարդել խորաններով, լուսանցազարդերով և ավետարանիչների պատկերներով:

ԿՈՋՄՈՅԱՆ Արմանուշ Կոզմոյի (ծ. 7.9.1945, Երևան), բանա-սեր, արևելագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (2010): Ավար-տել է ԵՊՀ (1967), սովորել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտ-յան ինստ-ում (1971–74): 1967–71-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի խմբա-գրությունում, 1975-ից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ի առաջատար գիտաշխատող:

Լույս են տեսել Կ-ի «Քառյակը պարսկալեզու դասական պոեզիայում X–XII դդ.» (ռուս., 1981), «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան. X–XVI դդ.» (1997), «Ղուրանը հայոց մեջ» (2003) աշխատությունները: Պարսկ-ից տողացի թարգմանել և հրատարակել է (առաջաբանով և ծնթգր-ով) «Մարգարտաշար» (1990), «Օմար Խայամ» (1993), «Ռուդաքի» (1995), «Պարսից պոեզիայի ընտրանի» (2004) ժող-ները:

Հայաստանում ԻԻՀ դեսպանատան և մշակույթի կենտրոնի ոսկե մեդալ (2012):

ԿՈԹԻԿՅԱՆ Արման Անանիայի [15(27).9.1896, Տրապիզոն–3.10.1968, Երևան], դերասան, բանաստեղծ, թարգմանիչ: Ժող. արտիստ (1967): Ավարտել է Սորբոնի համալսարանը (1925): Աշխատել է Փարիզի «Հայ դրամատիկ»-ում, հիմնադրել «Հայ ժողովրդական թատրոնը» (1932, Փարիզ): 1936-ին հայրենադարձել է: Նույն թվականից՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվ. թատրոնի դերասան:

Թարգմանել է Է. Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» (1951) պիեսը, Գի դը Մոպասանի «Սիրելի բարեկամ» (1953), Է. Զոլայի «Թերեզ Ռաքեն» (1964, 2013) վեպերը, Վ. Հյուգոյի «Բանաստեղծություններ (ծաղկաքաղ)» (2008) ժող-ը: Լույս են տեսել նաև Կ-ի «Մխացող շուշաններ» (1919, Թ., «Աշխատավոր» տպ.), «Ակոսներում» (1965) բանաստեղծությունների ժող-ները, «Խութեցի Հովնան» (1946) պոեմը, «Ֆերդուսի Թուսի եւ իր Շահնամէն» (1935, Փ., Մաթիկյանի տպ.) ուսումնասիրությունը:

Գրկ. Դանիելյան Ա., Արման Կոթիկյան, Ե., 1976:

«ԿՈԼԽՈԶՆԻԿ», երկշաբաթյա պատկերազարդ հանդես: ՀՍԽՀ հողժողկոմատի, Կոլտնտեսկենտրոնի և Հայկոոպի հրատ.: Լույս է տեսել 1930–31 և 1934-ին Երևանում: Խմբագիրներ՝ Պարույր Ֆոլյան, Վախթանգ *Անանյան:* Զգալի ավանդ ունի գյուղում անգրագիտ-յան վերացման, դպրոց. գործի կազմակերպման, սոց. կենցաղի արմատավորման բնագավառներում:

«ԿՈՀԱԿ», գրական, քաղ., տնտ. և հաս. շաբաթաթերթ, վերջում՝ եռօրյա: Լույս է տեսել 1909–14-ին (1914-ին՝ «Դայլայլիկ») Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիր՝ Հմայակ Արամյան, խմբագիր՝ Գրիգոր Եղիկյան: Ունեցել է ինչակյան ուղղվածություն: Լուսաբանել է հայ հաս. կյանքը, Հնչակյան կուս-յան գործունեությունը, անդրադարձել ժամանակի մամուլի նյութերին: «Կ.» հրապարակել է Ն. Տաղավարյանի՝ օսմ. խորհրդարանում արտասանած ճառը՝ երկրագործության և բնական հանածոների օգտագործման ուղիների մասին, վիճակագր. տվյալներ՝ Արմ. Հայաստանի վերաբերյալ: Տպագրել է Հ. Արամյանի «Անմահն Ժիրայր կամ Մեծ յեղափոխականը» դրաման, Մ. Մնակյանի «Դեբասանը» հոդվածաշարը, Գ. Օզանյանի «Դրուագներ Փոքր Հայքի յեղափոխական կեանքէն», «Հայ յեղափոխութիւնը եւ ազգային մեծ վիպասանը» և այլ ուսումնասիրություններ, Շ. Կուրղինյանի, Հ. Մառքի, Ե. Օտյանի, Ա. Թեոդիկի հոդվածներից ու գեղ. գործերից:

ԿՈՄԻԿՅԱՆ Վարդան Մինասի [9.1.1915, ք. Ադաբազար (Թուրքիա)–1998, Կ. Պոլիս], գրող, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Արամյան-Ունճյան վարժարանում, ավարտել Կեդրոն. վարժարանը (1932), Ստամբուլի համալսարանի ատամնաբուժ. բաժինը: 1949-ից դասավանդել է տեղի Կեդրոն. և Եսայան վարժարաններում, դպրեվանքում: Աշխատակցել է «Արեւելք», «Ճառագայթ», «Երջանիկ տարեցոյց» «Զարթօնք» պարբ-ներին: 1939-ին՝ «Պատկեր» շաբաթաթերթի գրական էջի, 1949-ին՝ Սանուց միության *«Հանդէս մշակոյթի»* պարբ-ի խմբագիր:

Լույս են տեսել Կ-ի «Բարի եկար, սէր» (1958, Ստամբուլ), «Համրիչի հատիկներ» (1993) պատմվածքների ժող-ները:

Հանդես է եկել նաև Հրազդան, Հաղթանակ կեղծանուններով:

Հայ եկեղեցու «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան (1994):

ԿՈՄԻՏԱՍ [Սողոմոնյան Սողոմոն Գևորգի, 26.9(8.10).1869, Քյոթահիա/Կուտինա (Թուրքիա)–22.10.1935, Փարիզ, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], հայկ. ազգ. կոմպոզիտոր. դպրոցի հիմնադիրը, հայ երաժշտ. բանագիտ-յան և միջնադարագիտ-յան սկզբնավորողը, խմբավար, երաժշտագետ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1893), նշանակվել երաժշտության ուսուցիչ և խմբավար Մայր տաճարում: 1894-ին ձեռնադրվել է կուսակրոն աբեղա (անվանակոչվել է Կոմիտաս), 1895-ին՝ վարդապետ: 1895-ին ձայնագրել և հրատարակել է «Շար Ակնայ ժողովրդական երգերի» (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) ժող-ը: 1890-ական թթ-ից հոդվածներ




*Էդմոն Ռոստանի «Սիրանո դը Բերժըրակ» (թարգմ.՝ **Արման Կոթիկյանի**, 1951, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*




Վարդան Կոմիկյան




Կոմիտաս



«Հով արեք» երգի նոտաները «Հայ քնար...» (1907, Փարիզ) երգարանում



«Բանաստեղծություններ» (1969, Ե., «Հայաստան») գրքի փիփղոսաթերթը



*Ա. Սարյանի «Թաթուլ Ալթունյանը և հայ երգն ու պարը» (2008, Ե., **«Կոմիտաս»**) գրքի կազմը*

է հրապարակել Կ. Պոլսի «Ազատամարտ», «Նաւասարդ», «Տաճար», Թիֆլիսի «Տարազ», «Մշակ», Բաքվի «Թատրոն եւ յեղաշրջութիւն», Փարիզի «Անահիտ», Էջմիածնի «Արարատ», Երուսաղեմի «Սիոն» և այլ պարբ–ներում: Կ–ի՝ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Մխիթար Այրիվանեցու, Գրիգոր Գ Պահլավունու մի շարք տաղերի, նաև շարականների ու Պատարագի երգասացությունների ձայնագրությունները հիմնականում ամփոփված են Կուտինայում (1892) և Էջմիածնում (1893) կազմված «Տաղք եւ ալելուք Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ» (հրտ.՝ 1946, Փ.) ժող–ներում:

Լույս են տեսել Կ–ի հավաքած «Հազար ու մի խաղ» (խմբագիր՝ Մ. Աբեղյան, 1903, Վաղ–պատ, Սր Էջմիածնի տպ.) երգարանը, «Հայ քնար: Հաւաքածու գեղջուկ երգերի» (գրառումը և դաշնակումը՝ Կ–ի, 1907, Փ.) ժող–ը, «Հայ գեղջուկի պարը» (1910, Բաքու, «Աշխատավոր» տպ.), «Ձեռաց տետրակ հայ սրբազան եւ գեղջուկ հաւերգի» (ներած.՝ Կ–ի, 1911, Ալեքսանդրիա, «Խնայողական» տպ.), «Հայ գեղջուկ երգերու համաոօտ ամփոփումը» (1913, ԿՊ, «Շանթ» տպ.), աշխատությունները, «Հայ գեղջուկ երգեր» (գրառումը և դաշնակումը՝ Կ–ի, ա. թ.) ժող–ը: Երևանում լույս է տեսել նաև Կ–ի երկերի ժող–ի ակադեմ. հրատ–ը [հ. 1–14, 1969–2006 (կազմ. և խմբ.՝ Ռ. Աթայանի, հրատ.՝ Գ. Գեոդակյանի):

2015–ին Երևանում բացվել է Կ–ի թանգարան–ինստ–ը:

Երկ. Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941: Բանաստեղծություններ, Ե., 1969: Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Ա, Բ, Ե., 2005, 2007 (կազմ.՝ Գ. Գասպարյան, Մ. Մուշեղյան): Հոգևոր տաղեր, երգեր, մեներգեր, Ե., 2006: Նամակներ (կազմ.՝ Յ. Բեքարյան), Ե., 2007: Նամականի (կազմ.՝ Գ. Գասպարյան), Ե., 2009:

Գրկ. Չօպանեան Ա., *Դէմքեր, «Անահիտ», 1901, № 6–7:* Յովսէփեան Գ., *Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդութիւնը Եւրոպայում, «Արարատ», 1907, № 10–11:* Ագատեան Թ., *Կոմիտաս վարդապետ, ԿՊ, 1931:* Պէրպէրեան Շ., *Կոմիտաս վարդապետ, Բոսիսարեստ, 1936:* Աթայան Ռ., *Ժողովրդական երգի ներդաշնակման սկզբունքը Կոմիտասի մոտ, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1949, № 9:* Կոմիտաս: *Սպասենագիտություն (կազմ.՝ Ն. Թեյմուրազյան), Ե., 1957:* Յոյան Ի., *Կոմիտաս, Ե., 1969:* Թահմիզյան Ն., *Կոմիտասը և հայկական խազերի վերծանության խնդիրը, «ՊՀՀ», 1969, № 4:* Նույնի, *Կոմիտասը եւ հայ ժողովրդի երաժշտական ժառանգութիւնը, Փասատենա, 1994:* Կոմիտասական *(ժող.), հ. 1, 2, Ե., 1969, 1981:* Բրուտյան Յ., *Կոմիտասի կյանքն ու գործունեությունը, Ե., 1969:* Կոմիտաս: *Սպասենագիտական ժողովածու (կազմ.՝ Ռ. Ղազարյան), Ե., 2009:* Կոմիտասը *ժամանակակիցների հուշերում ու վկայություններում (հրտ.՝ Գ. Գասպարյանի), Ե., 2009:* Կոմիտաս *վարդապետը (1869–1935), լրասնկարների ալբոմ (առաջաբ. և աշխատասիր.՝ Գ. Գասպարյանի), Ե., 2009:* Բադիկյան Խ., *Կոմիտասը՝ ինչպիսին եղել է (գիտ. կենսագրություն), Ե., 2013:* Ա. Շահնազարյան, *Կոմիտաս, Ե., 2015:* Шавердян А., *Комитас и армянская музыкальная культура, Е.,1956;* Նույնի, *Комитас, М., 1989;* Poladian S., *Armenian Folksongs, Los Angeles, 1942;* Soukahian–Kuyumjian R., *Archcohogy of Madness Komitas, New Jarsey, 2001.*

«ԿՈՄԻՏԱՍ», երաժշտ. հրատարակչություն: Հիմնադրվել է 1996–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Ռուզաննա Եսայան: Լույս է ընծայում դասագրքեր և ձեռնարկներ երաժշտ. ուս. հաստատությունների համար: Հրատարակում է հայ երաժշտության դասականների և ժամանակակիցների ստեղծագործություններ ու տարաբնույթ ժող–ներ, մեծ մասը՝ առաջին անգամ:

Տպագրել է Ա. Սարյանի «Թաթուլ Ալթունյանը և հայ երգն ու պարը» (հայ. և ռուս., 2008), «Հայկական ժողովրդական նվագարաններ» (հայ., ռուս., անգլ., 2008), «Լևոն Մամիկոնյան: Երաժշտությունը՝ կյանքի ուղեկից...» (2009), Ե. Երկանյանի «Շատախի երգեր» (2009), Կոմիտասի «Խմբերգերի ընտրանի» (2009), Ա. Սաթյանի «Երգեր և ռոմանսներ» (2009) և այլ երկեր:

«ԿՈՄՍՈՄՈԼԵՑ» («Комсомолец»), հանրապետ. երիտասարդ. երկօրյա թերթ: Լույս է տեսել 1932–90–ին Երևանում: 1991–ից՝ ***«Էպոխա»***:

ԿՈՄՈՒՆԻ Ղևոնդ [Մելքոնյան Ղևոնդ Խաչատուրի, 1909, գ. Աջամ–Մավրակ (Կարսի գավառ)–6.3.1953, Մոսկվա, թաղված է Երևանում], գրող, խմբագիր: Սովորել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստ–ում (1930–31): Ավարտել է Մոսկվայի «Պրավդայի» անվ. կոմ. ժուռնալիստիկայի ինստ–ը (1938): 1933–ին՝ Ախտայի (այժմ՝ Հրազդան) «Լենինի դրոշով» շրջ. թերթի խմբագիր, 1938–41–ին աշխատել է «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում, 1946–ից՝ Հայպետհրատում:

Լույս են տեսել Կ–ի «Խնդություն» (1932), «Սահմանի վրա» (1938), «Հայրենիք» (1939), «Այգաբաց» (1945), «Արյունոտ կոհակներ» (1947), «Բանաստեղծություններ և վիպակներ» (1953), «Բանաստեղծություններ» (1975) ժող–ները, «Ախուրյան» (1952) վեպը, «Վիպակներ» (1959), «Նա փնտրում է զավակին» (1948, 1968) վիպակների, պատմվածքների ժող–ները:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», շաբաթաթերթ: ՌԽՖՍՀ ազգությունների գործերի ժողկոմատին կից Հայկ. գործերի կոմիսարիատի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1918–ին (9 համար) Մոսկվայում: Խմբագիր՝ Վահան *Տերյան*: Հրապարակել է խորհրդ. պետության առաջին դեկրետներն ու որոշումները, լուրեր՝ Անդրկովկասից, մամուլի տեսություններ: Աշխատակցել են Ս. Շահումյանը, Ա. Միասնիկյանը, Ն. Կրուպսկայան, Վ. Ավանեսովը, Հ. Բժշկյանը (Գայ) և ուր.:



«Կոմունիստ», *1920–89, Բաքու*

«ԿՈՄՈՒՆԻՍՏ», օրաթերթ: Ադրբեջանի կոմկուսի ԿԿ–ի, Ադրբ. ԽՍՀ ԳԽ և Նախարարների խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1920–89–ին Բաքվում՝ հայ.: Խմբագիրներ՝ Սարգիս *Խանդոյան*, Սեդրակ *Վարդանյան*, Ի. Դովլաթյան, Սերո Մանուցյան, Ա. Վարդանյան, Գեղամ Անտելեյան, Արտեմ Բաբլումյան, Եղիշե Գրիգորյան, Համո Ամիրխանյան, Տիգրան Գրիգորյան, Հրանտ Բաբայան, Է. Գրիգորյան: Ծանոթացրել է հանրապետության հայ բնակչության առօրյային, տպագրել հայ գրողների գործեր: 1960–ական թթ–ից տեղի կուս. և խորհրդ. մարմինների ճնշման տակ առավել որոշակի է ուրվագծվել թերթի հանդուրժող. դիրքորոշումը Ադրբեջանին բռնակցված հայկ. տարածքների (ԼՂԻՄ, Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն) և հայաբնակ վայրերի հայ բնակչության հետապնդումների, հայկ. հուշարձանների յուրացման կամ ոչնչացման փաստերի վերաբերյալ: Փակվել է 1989–ի դեկտ–ին՝ ադրբեջանահայության բռնագաղթից հետո:



«Կոմունիստ», *1934–91, Երևան*

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» («Коммунист»), օրաթերթ: ՀԿԿ ԿԿ, ՀԽՍՀ ԳԽ և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1934–91–ին Երևանում՝ ռուս.: Խմբագիրներ՝ Ի. Գալկին, Ա. Ղազարյան, Ա. Ռիզան, Գ. Գրիգորյան, Եվգենյա Մելիքովա, Թ. Կատարյան, Գ. Բեյբուտով, Վենիամին Սիրցև, Բորիս *Մկրտչյան:* Ներկայացրել է ԽՄԿԿ ԿԿ քաղաքականությունը, լուսաբանել ՀԽՍՀ արդ–յան, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառների ձեռքբերումները, գիտ–յան հիմնախնդիրներն ու նորությունները, անդրադարձել է միջազգ. անցուդարձին և կոմ. ու բանվոր. շարժմանը, ԽՍՀՄ արտաքին քաղաքականությանը ևն:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (1967):

ԿՈՅԼԱՎ (Կոյլավյան) Գրիգոր [1850, Բոտոշան (Ռումինիա)–1920, Բոտոշան], հայազգի ռումինագիր հայագետ, խմբագիր, արվեստագետ: Սովորել է Բոտոշանի հայոց արական դպրոցում, Չեռնովցիում (1860–68), Ստրասբուրգի, Վիեննայի համալսարաններում և Մյունխենի գեղարվ–ի ակադ–ում: 1880–86–ին եղել է Բոտոշանի հայոց իգական դպրոցի տնօրեն: «Բոտոշանի կուրիեր» թերթի հիմնադիրներից է, խմբագրել է «Էպոկա» թերթը:

Լույս են տեսել Կ–ի «Հայերը իբրև քաղաքների հիմնադիրներ Արևելյան Եվրոպայում» (1909), «Ռումինական երկրների հայերի ավանդությունները, սովորույթները և հավատալիքները» (1911), «Ռումինական երկրների հայկական եկեղեցիները» (1912) և այլ աշխատություններ: Ռում. է թարգմանել հայ գրողների ստեղծագործություններից:




Կոնդակ. *Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ–ի օրհնության գիրը հայ գրատպության 500–ամյակի առթիվ*

ԿՈՆԴԱԿ (հուն.՝ kontakion–կոնդակիոն՝ գլանաձև ձող, գավազան, գալարված մագաղաթ, փաթույթ, նաև համառոտ հոգևոր երգ, հորդոր, մաղթանք), հայրապետ. (երբեմն՝ նաև առաջնորդ–եպիսկոպոսի) պաշտոն. գրություն՝ հիշատակագիր, գիր կամ թուղթ, նամակ, ուղերձ, շրջաբերական, կտակ՝ երկար գալարաթղթի վրա: Կ–ի ճակատը սովորաբար զարդարվում է մանրանկարներով և պարտադիր հայրապետ. խորհրդանշանով: Կ–ները պատմ., քաղ., մշակութ., կրթ., ինչպես նաև Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու, եկեղեցականներին բարձր



Կոնդակ. *Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության գիրը (2004) Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրման 130-ամյակի առթիվ*



Ֆրեդերիկ Կոնիբերի *«Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի ...» (1893, Վնն.) գրքի տիտղոսաթերթը*

պաշտոնների նշանակելու, նրանց գնահատելու, պատժելու ևնի մասին են: Կաթողիկոս. Կ-ները երբեմն կարևոր պատմ. սկզբնաղբյուր են:

Պատմ. կարևորության Կ-ներ տպագրվել են՝

1623-ին Հռոմում՝ Ստեֆան Պաուլինիուսի տպարանում՝ Եվգինեոս Դ-ի «Միաբանութիւն հայոց ընդ հռոմէական սուրբ եկեղեցւոն» (թարգմ.՝ Տեր Բարդուղիմեոս Արգարի) թուղթը. Թեոդիկն այն հիշատակել է «Կոնդակ Եւգինեաց» վերնագրով:

1693-ին Նոր Ջուղայում՝ Ամենափրկիչ վանքի տպարանում, որը բողոք ու հանրաստորագրություն է կաթողիկոս. ընտրությունների դեմ (1 էջ, 80 x 28 սմ):

1766-ի օգոստ. 1-ին Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու՝ օգնության խնդրանքով Կ.՝ Ռուսաստանի Եկատերինա II կայսրուհուն:

1773-ին Սիմեոն Երևանցի կաթողիկոսի Կ.՝ Մովսես Բաղրամյանին բանադրելու պահանջով՝ Շ. Շահամիրյանի տպագրած նրա «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» աշխատության համար, պահանջել է նաև, որ Շահամիրյանը գրքի ողջ տպաքանակը հավաքի ու այրի: Ավելի ուշ, դարձյալ հատուկ Կ-ով, արդարացրել է Շ. Շահամիրյանին և հանել Մ. Բաղրամյանի բանադրանքը:

1796-ին Աստրախանում՝ Արղության տպարանում՝ Հովսեփ Արղությանի Կ.: Տիտղթ-ին՝ «Կոնդակ օրհնութեան» (34 էջ, 17,5 x 11,5 սմ), տպակից է Պլատոն Զուբովի «Նամակ արքեպիսկոպոսին»:

Տպագրվել են նաև 1848, 1849, 1861-ին՝ «Կոնդակ պատրիարքական եւ կանոնագիրք հարսանեաց, որ հաստատեցաւ յօգուտ ազգիս» (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիայանի, «Արևելյան համազգային» տպներ), 1863, 1868-ին՝ Գևորգ Դ կաթողիկոսի Կ.՝ «Առ հոգևորականս, որ ի Ռուսաստան» (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1835, 1843-ին՝ «Կոնդակ հարսանեաց, սահմանեալ յօգուտ հասարակութեան թագաւորեալ մայրաքաղաքիս...» (ԿՊ, Պողոս Արապյանի տպ.), 1895-ին (տպագրության վայրը և տպարանը նշված չեն) ևն:

1945-ի նոյեմբ. 25-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Չորեքչյանի Կ.՝ ուղղված ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ հայկ. հողերը Թուրքիայից հետ ստանալու խնդրանքով, իսկ 1947-ի ապրիլի 20-ին կաթողիկոսը Կ. է հրապարակել «Հայկական հարցի լուծման մասին»:

2012-ին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի Հայրապետական Կ.՝ հայ գրատպության 500-ամյակի առթիվ:

ԿՈՆԻԲԵՐ, Կոնիբիր (Conybeare) Ֆրեդերիկ Կոռնվալիս (1857–1924), անգլիացի բանասեր, հայագետ: 1881-ից՝ Օքսֆորդի համալսարանի դասախոս, 1903-ից՝ Բրիտ. ակադ-ի անդամ, Վենետիկի Մխիթարյան միաբանության հայկ. ճեմարանի անդամ: 1888 և 1891-ին այցելել է Երուսաղեմ ու Էջմիածին, կատարելագործել հայ-ի իմացությունը, գրել «Հայաստանը և հայերը» (1889) իր առաջին հայագիտ. հոդվածը: Էջմիածնում ուսումնասիրել է մատենադարանի գանձերը, Արիստոտելի և Պորփյուրի հայ. թարգմանությունների ձեռագրերը համեմատել հուն. բնագրերի հետ, ճշտել Պլատոնի գործերի հայ. թարգմանության ժամանակը: Օքսֆորդում հրատարակել է (հայ., անգլ.) «Համեմատութիւն հին հայերէն թարգմանութեանց յունական բնագրաց Արիստոտէլի Ստորոգութեանց...» (1892), «Գիրք որ կոչի բանալի ճշմարտութեան» (1898), Վիեննայում՝ «Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի կամ Թարգմանութեանց Արիստոտէլի» (հայ., 1893) երկերը:

Կ. անդրադարձել է եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Անանիա Շիրակացու, Մովսես Կաղանկատվացու և ուր. երկերին: 1898-ին հրատարակել է Հովհաննես Երեց Խնուսեցու «Բանալի ճշմարտության» աշխատության անգլ. թարգմանությունը. ներածության մեջ (196 էջ) հանգամանորեն քննել է թոնդրակյան աղանդի կարևոր խնդիրները, թարգմանությանը կցել է Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Սագիստրոսի, Հովհաննես

Օձնեցու և Ներսես Շնորհալու՝ այս աղանդին վերաբերող էջերը: Կազմել է «Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի գրացուցակը» (անգլ., 1913), «Բոդլեյան գրադարանի հայկական ձեռագրերի գրացուցակը» (համահեղ.՝ Ս. Պարոնյան, հայ., անգլ., 1918):

Հայ. լույս են տեսել Կ-ի «Համեմատութիւն Դաւիթ Անյաղթի գրեանց յունարէն բնագրի հետ» (թարգմ.՝ Փ. Տեր-Մովսեսյանի), «Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի կամ թարգմանութեանց Արիստոտէլի» (երկուսն էլ՝ 1893, Վնն., Մխիթարյան տպ.), «Մովսէս Խորենացւոյ պատմութեան աղբերաց խնդիրը» («ՀԱ», 1902), «Մովսէս Խորենացւոյ պատմութեան ժամանակը» («ՀԱ», 1903) աշխատությունները: Հայ. ձեռագրերի հիման վրա ճշգրտումներ է արել Փիլոնի հուն. տեքստերում, 1895-ին հրատարակել նրա «Յաղագս վարուց կենաց տեսականի» երկը: 1898-ին Հ. Ռենդելի և Ա. Լևիս Շմիտի հետ Կ. ստանձնել է Խիկարի պատմության բազմալեզվյան հրատ-ը, պատրաստել է հայ. քնն. բնագիրը և թարգմանությունը:

Գրկ. **Ղազիկեան Ա.**, *Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, Վնտ., 1909–12, էջ 1330–1353:* **Սահակյան Պ.**, *Երկու դրվագ Ֆրեդերիկ Կոնիբերի հայագիտական ժառանգությունից, Ե., 2003:*

«ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆՆՈՅԵ ՊՐԱՎՈՍՈՒԴԻԵ» («Конституционное провосудие»–«Սահմանադրական արդարադատություն»), իրավաբ. եռամսյա հանդես: Լույս է տենում 1997-ից Երևանում՝ ռուս.: Խմբագր. խորհուրդ (ընդգրկված են Տաջիկստանի, Ուկրաինայի, ՌԴ-ի, Ադրբեջանի, Ղազախստանի, Մոլդովայի, Բելառուսի ՍԴ-նեբի դատավորները), գլխ. խմբագիր՝ ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյան: Անդրադառնում է սահմանադր. արդարադատության պատմությանը և արդի հիմնախնդիրներին, տպագրում է ոլորտի վերաբերյալ ուսումնասիրություններ, տարբեր երկրների ՍԴ-ների նախագահների՝ սահմանադր. արդարադատությանը վերաբերող հոդվածներ, սահմանադր. արդարադատության մարմինների որոշումներ, ոլորտի կարևոր իրադարձությունները, նոր հրատ-ներ ևն:



«Կոնստիտուցիոննոյե պրավոսուդիե», *1997-ից, Երևան (№ 4, 2014)*


ԿՈՉԵՎՍԿԻ Վիկտոր Վասիլևիչ [15.11.1923, գ. Ռիզունենկովո (Ուկրաինայի Խարկովի մարզ)–28.4.2005, Կիև], ուկրաինացի բանաստեղծ, թարգմանիչ: ՀԽՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1969):

Թարգմանել է Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Հ. Հովհաննիսյանի, Ե. Չարենցի ստեղծագործություններից: Առանձին գրքերով հրատարակել է Խնկո Ապոր, Գ. Սարյանի և ուր. երկերից, կազմել Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի ուկր. ժող-ների հոբելյան. հրատ-ները: Գրել է «Հայաստանի երգող սիրտը» (1969, Հ. Թումանյանի մասին) և «Հավերժական ճամփորդը» (1975, Ա. Իսահակյանի մասին) գրքույկները: Կազմել է հայ երիտասարդ. պոեզիայի անթոլոգիա («Սևանի լուսաբացը», 1973) և հայ ժամանակակից բանաստեղծների երկերի ժող. («Հայոց երկրի մեղեդիները», 1973), կազմել ու խմբագրել է (Գ. Թաթոսյանի հետ) «Սովետահայ պոեզիայի անթոլոգիան» (1980) և «Հայ դասական պոեզիայի անթոլոգիան» (1988):

Հայ. հրատարակվել են Կ-ի «Հասկեր և աստղեր» (1967), «Յոլքեր» (1973), «Անտառային տոնահանդես» (1980), «Մտերմություն» (1983) բանաստեղծությունների ժող-ները: Կազմել է «Ոսկե դարպասներ: Ուկրաինական քնարերգություն» (1977) ժող-ը:

Լույս են տեսել Կ-ի «Հայրենակիցներ» (1957), «Հող ներշնչման» (1961), «Հավերժական խարույկներ» (1972), մանուկների համար՝ «Սևանի ծիծեռնակը» (1960, հայ. հրտ.՝ 1962) և այլ ժող-ներ:

Պ. Տիչինայի անվ. մրց. (1976, «Բարև, իմ Հայաստան» շարքի համար):



Վիկտոր Կոչևսկու *«Մտերմություն» (1983, Ե., «Սովետական գրող») գրքի փիփղոսաթերթը*

ԿՈՊԵԼՅԱՆ Երվանդ Հարությունի (1923, Կ. Պոլիս–16.12.2010, Ստամբուլ), գրող, թարգմանիչ: Սովորել է Կ. Պոլսի Թադեոսյան և Եսայան վարժարաններում:

Թարգմանել է Բ. Պաստեռնակի «Դոկտոր Ժիվագո» վեպը (1960-ական թթ-ին հրատարակվել է որպես «Մարմարա» թերթի հավելված), Հ. Ուելսի «Առաջին մարդիկը լուսնի վրա» (1969, Ստամբուլ), Ժ. Ուիսի «Զուիցերիացի Ռոպէնսոնը» (1969, Ստամբուլ) վիպակները:

Լույս են տեսել Կ-ի «Երանի թէ...» (1948) բանաստեղծությունների, «Խճանկարներ» (1968), «Աշխարհի իններորդ հրաշալիքը» (1972), «Երազ չունեցող մարդիկ» (1984), «Մենք անունը «Հայ ծաղիկ» դրինք» (1991), «Հողով մկրտուածներ» (1992), «Կեանքի լուսանցքէն» (1998, 2003) պատմվածքների ժող-ները (բոլորը՝ Ստամբուլ):



Երվանդ Կոպելյանի *«Կեանքի լուսանցքէն» (2003, Սրտամբուլ) գրքի կազմը*

Հակոբ Կոջոյան



«Հազարան բլբուլ» (1925, Ե., Հայպետհրատ) հեքիաթի պատկերազարդումներից



Գլխապտույտ «Խ» (1932)



Սամվել Կոսյանի *«Ջուրն ու կապույտ ձին» (2009, Ե., «ՎՄՎ Պրինտ») գրքի կազմը*

ԿՈՋՈՅԱՆ Հակոբ Կարապետի [1(13).12.1883, Ախալցխա–24.4.1959, Երևան], գեղանկարիչ, գրաֆիկ, ձևավորող-նկարիչ, ժամանակակից գրաֆիկայի հիմնադիրը հայ կերպարվ-ում: Ժող. նկարիչ (1935): 1889-ին ընտանիքով տեղափոխվել է Վլադիկավկազ: Սովորել է փորագրիչ Պրուսովի արվեստանոցում (1903, Մոսկվա), Ա. Աժբեի մասնավոր ստուդիայում (1903–05, Մյունխեն) և Մյունխենի գեղարվ-ի ակադ-ում (1905–07): 1907–09-ին ապրել է Փարիզում, 1912–14-ին՝ Մոսկվայում, 1922-ից՝ Երևանում: 1945–54-ին դասավանդել է ԵԳԻ-ում (պրոֆ.՝ 1947-ից):

Պատկերազարդել է Ս. Զորյանի «Հազարան բլբուլ» (1925), Ա. Բակունցի «Սև ցելերի սերմնացանը» (1933), Զ. Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը» (1933–34), Մ. Գորկու «Բանաստեղծություններ ու լեգենդներ» (1934), Ա. Վշտունու «Երկեր» (1935), Վ. Այգեկցու «Աղվեսազիրք» (1935), «Մասնա ծռեր» (1936), «Հայ պոեզիայի անթոլոգիա» (ռուս., 1936), Ա. Իսահակյանի «Հատընտիր» (1943), Սայաթ-Նովայի «Խաղերի ժողովածու» (1945), Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» (1945), «Հայկական ժողովրդական հեքիաթներ» (1955) և այլ գրքեր: Գրքարվ-ի կատարյալ նմուշ է Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» (1933) ժող-ի պատկերազարդումը:

Գրկ. **Մարտիկյան Ե.**, *Հակոբ Կոջոյան, Ե., 1961:* **Մաթևոսյան Վ.**, *Հակոբ Կոջոյան: Արվեստը, Ե., 1971:* **Նույնի**, *Հակոբ Կոջոյան, Ե., 2003:* **Զուրաբով Բ.**, *Հակոբ Կոջոյան, Ե., 1983:* *Հակոբ Կոջոյան (ալբոմ, կազմ.՝ Մ. Միքայելյան), Ե., 2009:*

ԿՈՍՅԱՆ Սամվել Նորայրի (ծ. 24.1.1947, Երևան), գրող, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1970): Աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, «Գրքերի աշխարհ», «Հայաստանի աշխատավորուհի», «Առագաստ», «Կինո», 2004–12-ին՝ ***«Գրական թերթ»*** (2006–12-ին՝ գլխ. խմբագիր) պարբ-ների խմբագրություններում:

Լույս են տեսել Կ-ի «Գույներ» (1976), «Դեպի տունը երգի» (1981), «Ուրախ թվաբանություն» (1990), «Գալիս եմ դեպի քեզ» (2003), «Ցավի հետքը» (2004), «Կիսաբաց հուշեր» (2008) բանաստեղծությունների ժող-ները և այլ երկեր: Գրել է նաև մանկ. բանաստեղծություններ («Ջուրն ու կապույտ ձին», 2009), պիեսներ [«Կարմիր արագիլ» (մուլտիպլիկացիոն կինոնկար՝ «Կախարդական ծիածան»), «Գուցե փրկվենք», «Ուշացողները», «Սատանան կնոջ ներսում» ևն], որոնք բեմադրվել են հայկ. թատրոններում: Թարգմանություններ է արել լիտվ-ից, ուկր-ից, գերմ-ից, ֆրանս-ից, անգլ-ից և այլ լեզուներից:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1986), Լ. Շանթի անվ. (2008), ԵԱՀԿ 1-ին (2002) մրց-ներ:

Երկ. Հույսը շարունակելի: Պիեսներ, Ե., 2012:

ԿՈՍՏԱՆԴԻՆ, XII դ-ի վերջին քառորդի մանրանկարիչ: ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Աշխատել է Սկևռայի գրչատանը: Մանրանկարիչներ ***Գրիգոր Մլիճեցու*** և Վարդանի հետ 1173-ին նկարազարդել է «Տիգրանակերտի Աւետարանը» (ձեռագրի տեղը հայտնի չէ): Ներսես Լամբրոնացու և նրա եղբոր՝ Հեթումի համար 1193-ին Կ-ի ծաղկած ձեռագիրը (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 1635) զարդարված է խորաններով, լուսանցազարդերով և 2 տերուն. պատկերներով («Մկրտություն», «Խաչելություն»):

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:*

ԿՈՍՏԱՆԴԻՆ, XIII դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Հավանաբար ստեղծագործել է Հռոմկլայում: Պահպանվել է զորավար Օշինի պատվերով 1274-ին Կ-ի ծաղկած Ավետարանը (Նյու Յորք, Մորգանի հավաքածու, ձեռ. № 740), որի խորանազարդերում բուս. ու կենդ. մոտիվները միահյուսված ստեղծում են ինքնատիպ հորինվածքներ: Հատկապես ուշագրավ են խորաններից մեկի վերին քառանկյան 2 կողմերում պատկերված մերկ կանանց ֆիգուրները՝ համաչափ ձևերով ու պլաստիկ կերպավորմամբ:

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:*

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ (մոտ 1250-ական թթ., Երզնկա–1314–1328-ի միջև), տաղերգու: Սովորել է Եկեղեցաց գավառի Տիրաշենի մենաստանի դպրատանը: Նրան է վերագրվում 27 քերթված, որտեղ արտահայտել է Երզնկայի արհեստավոր. և առևտր. շերտերի աշխարհիկ, ազատամիտ տրամադրություններն ու գաղափարները, որի համար հալածվել է: Կ. Ե. առաջինն է հայ աշխարհիկ քնարերգության մեջ երգել բնությունն ու սերը. ստեղծագործության նյութ է դարձրել կնոջ ոչ միայն արտաքին գեղեցկությունը, այլև ներաշխարհը: Կնոջը համարել է գոյության հիմքը, կենաց աղբյուրը: Կ. Ե. հայ իրականության մեջ առաջինն է անդրադարձել Ֆիրդուսու «Շահնամե» պոեմին և դրա ազդեցությամբ մոթաքարեր չափով գրել է ոտանավոր:

Լույս են տեսել Կ. Ե-ու «Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իւր քերթուածները» (1905, Վնտ., Սբ Ղազարի տպ., ուսումնասիր. և հրտ.՝ Մ. Պոտուրյանի), «Տաղեր» (1962, աշխատասիր՝ Ա. Սրապյանի), «Լոյսն առաւօտուն: Տաղեր» (1982, կազմ., առաջաբ., ծնթգր.՝ Լ. Մկրտչյանի,) ժող-ները:

Գրկ. **Լինթ Թ. Մ. վան,** *Կոստանդին Երզնկացու տաղերը Պոտուրյանի 1905 թ. հրատարակությամբ և Վենետիկի № 103 ձեռագիրը, «ՊԲՀ», 1996, № 1–2, էջ 137–152:*

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Կ. Պոլսում հայկ. առաջին տպարանը հիմնադրել է ***Աբգար Թոխաթեցին*** 1567-ին և տպագրել «Փոքր քերականութիւն կամ Այբբենարան» գիրքը: Տպարանը գործել է մինչև 1569-ը: 1677-ին Երեմիա Չելեպի ***Քյոմուրճյանը*** հիմնադրել է նոր տպարան, տպագրել է 2 գրքույկ, 1 տարի անց տպարանը փակվել է: 1691-ին կաթոլիկ հայերը հիմնադրել են գաղտնի տպարան, որը գործել է մինչև 1720-ական թթ-ի կեսը: Առավել երկար է գործել ***Գրիգոր Մարզվանեցու*** տպարանը: Նրա նախաձեռնությամբ և ***Ատրվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու*** ընկերակցությամբ 1698-ին լույս է ընծայվել «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկի զանազանից բանաստեղծից» ժող-ը, ապա Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին հիմնադրել է իր տպարանը: Նրա մահից (մոտ 1748) հետո այն անցել է որդուն՝ Չնչին (կամ Տիրացու) Հովհաննեսին. գործել է մինչև 1777-ը, որից հետո տպարանը ձեռք են բերել Արապյանները: Գրիգոր Մարզվանեցու և Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարաններում սրբագրախմբագր. աշխատանք է կատարել ***Պաղդասար Դպիրը***, որի տաղերը, քերակ-յան դասագրքերը և այլ գործեր տպագրվել են այդ տպարաններում:




XVIII դ-ի սկզբից մինչև 70-ական թթ. Կ. Պոլսում գործել են 10-ից ավելի հայկ. տպարաններ՝ Սարգիս Դպիրի (1703–04), Պետրոս Լատինացու (1704–12), Մարտիրոս Սարգսյանի (1721–52), Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների (1735–77), Աբրահամ Դպիրի (1737–46), Գաբրիել Բարսեղյանի (1745–50), Ստեփանոս Պողոսյանի (1750–92) ևն: Ամենանշանավորը Ապուչեխցի Աստվածատուրի որդի Հովհաննեսի հիմնադրած տպարանն է (1750–66): Հովհաննեսը 1766–69-ին համագործակցել է Հակոբ Սոխիկ օղլի տպագրիչի հետ. տպարանը կոչվել է «Հովհաննես և Հակոբ»: Հակոբն ասպարեզից վաղ է հեռացել, և գործը շարունակել են Հովհաննեսն ու նրա որդի Պողոսը (տես ***Արապյաններ***, Պողոս ***Արապյան***):

Կ. հ. տ. նկատելի վերելք է ապրել XIX դ-ում և XX դ-ի սկզբին: Այդ շրջանում գործել են շուրջ 130 հայկ. տպարաններ՝ Մատթեոս Դպիրի (1800–25), Մայր եկեղեցու (1817–25), Աբրահամ Թերզյանի (1824–26), Հովհաննես ***Մյուհենտփյանի*** (1840–73), Հարություն Մինասյանի (1842–80), «Արևելյան համազգային» (1844–65), Կարապետ Յություճյանի (1852–84), Հարություն Փափազյան (1853–72),

Կոստանդնուպոլսի հայկական տպագրություն



Ավետարանի (1740, Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպ.) տիտղոսաթերթը



Հ. Վարդանյանի «Թէ-լէգրաֆ էլէգթրիգ ...» (1857, Հովհաննես Մյուհենտիյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը

Թադեոս Տիվիթճյանի (1850–76), Ռուբեն Քյուրքճյանի (1856–77), Հովսեփ Գավաֆյանի (1860–92), Ճանիկ *Արամյանի* (1865–79), Պողոս Քիրիշճյանի (1869–81), Հակոբ Պոյաճյանի (1869–70), Գևորգ Զարդարյանի (1870–87), Վահրամ Մարգարյանի (1879–91), Սամուել Պարտիզպանյանի (1873–1912), Եղիա *Տնտեսյանի* (1872–82), Քեշիշյանների (1875–1912), Միքայել Սարյանի (1882–1912), Արամ Աշճյանի (1878–88), Կարապետ Պիպերյանի (1878–1900), Գարեգին Պաղտատյանի (1880–1912), Վահան Տեր-Մինասյանի (1899–1908), Հայ գրաշարաց ընկերության (1880–90), Հակոբ Ասատուրյան և որդ. (1894–1912), Սերովբե Վիչենյանի (1880–1912), Պողոս Հակոբյանի (1882–91), Նշան Պերպերյան և որդի (1882–1907), «Արեւելքի» (1884–1912), Հովհաննես Թոլայանի (1884–1912), Սահակ Նիկողոսյանի (1885–96), Օննիկ Բարսեղյանի (1888–1912), Մաթևոսյանների (1889–1912), Գայսերյանների (1888–1912), Թագվոր Սանճագճյանի (1891–1912), «Հայրենիքի» (1892–1909), Ռոգոս Սագայանի (1892–1912), «Բիւզանդիոնի» (1896–1912), Օննիկ Արզումանի (1908–12), «Ժամանակի» (1908–12), «Գուտենբերգ», «Շանթ», «Արաքս» (բոլորը՝ 1909–12) ևն: Մեծ մասի գործունեությունը տարբեր պատճառներով տևական չի եղել. փակվել կամ բռնագրավվել են: Իրենց մեծությամբ և տպագիր արտադրանքի քանակով (տարեկան՝ 200–300 անուն գիրք) աչքի են ընկել Հ. Մյուհենտիսյանի (ամենակատարելագործվածն էր Մերձ. Արևելքում), Ռ. Քյուրքչյանի, Հ. Գավաֆյանի, Ճ. Արամյանի, Հ. Պոյաճյանի, Ն. Պերպերյանի, Հ. Մաթևոսյանի տպարանները:


Հայ. գրքեր ու պարբ-ներ են տպագրվել նաև շուրջ 10 եվրոպ. (Ա. Պ. Շըրչիլի, «Սուրբ Բենեդիկտոս», Ն. դե Կաստրոյի, Հենրի Կայոլի ևն) և նույնքան էլ թուրք. («Մաթպասի ամիրե», «Ճեմիյեթի իլմիեի օսմանիե», «Մեճմուայի հավատի» ևն) տպարաններում: Կ. Պոլսում են տպագրվել արևմտահայ գրողների գրեթե բոլոր ստեղծագործությունները, բազմաթիվ դասագրքեր, հաս., քաղ., գիտ., կրոն. գրքեր, նոտագր. նյութեր, քարտեզներ: Այնտեղ հրատարակված հայկ. պարբ-ներից շատերն ունեցել են սեփական տպարաններ, որտեղ տպագրվել են նաև գեղ. երկեր:

Կ. ի. տ. զգալի ավանդ է ունեցել նաև թուրք և այլ ժողովուրդների տպագր. գործի ստեղծման ու զարգացման մեջ: 1729-ին հիմնադրված թուրք. առաջին տպարանի սարքավորումների մի մասն ապահովել են հայ վարպետները: XVIII–XIX դդ-ում Պ. Արապյանը, Հ. Մյուհենտիսյանը (վերջինիս անվանել են «Թուրքական Գուտենբերգ», արժանացել է կառավար. պարգևների), Կ. Քեշիշյանը, Ա. Թոզլյանը, Մ. Նազգաշյանը կատարելագործել են թուրք. տառատեսակներն ու տպագրության արվ-ը: Կ. Պոլսում բուլղ. գրքեր հրատարակող Թ. Տիվիթճյանը և ուր. հաստատուն տեղ են գրավել Բուլղարիայի տպագրության պատմության էջերում:

Թուրքիայում առաջին հայ. պարբ-ը՝ *«Լոյոյ գիրը»*, լույս է տեսել 1832-ին Կ. Պոլսում: Ազգ. բովանդակությամբ անդրանիկ պարբ-ն *«Ազդարար Բիւզանդեան»* (1840–41) թերթն է, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոն. առաջին հրատ-ը՝ *«Հայասւրան»* (1846–52) շաբաթաթերթը: Հրատարակվել են նաև *«Մասիս»* (1852–1908), *«Մեղու»* (1856–74), *«Մյունապիի էրճիաս»* (հայատառ թուրք., 1859–63), *«Ծաղիկ»* (1861–1911) և այլ պարբ-ներ: 1832–1918-ին Կ. Պոլսում լույս է տեսել շուրջ 250 անուն պարբ.:

1918-ից ցայսօր Կ. Պոլսում (այժմ՝ Ստամբուլ) տպագրվել է շուրջ 150 անուն պարբ., կարևոր են ազգ., քաղ. *«Առաւօտ»* (1909–24, 1921-ից՝ ՌԱԿ-ի պաշտոնաթերթ) օրաթերթը, գրական, քաղ. *«Նոր լոյս»* (1924–36, 1945–54) եռօրյան (նախապես՝ օրաթերթ), բարոյագիտ., գրական, կրոն. *«Հայ խօսնակ»* (1924–39) ամսաթերթը, քաղ., տնտ.,

Կոստանդնուպոլսի հայկական տպագրություն



Ս. Դավթյանի «Ընտելարան հայ լեզուի» (1901, Նշան Պերպերյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Ե. Եղիազարյանի «Կոկոններ» (1901, Միքայել Սարյան և ընկ. տպ.) գրքի փիփղոսաթերթը

գրական *«Արեւելք»* (1931–39) օրաթերթը, թատեր., գրական-գեղ. *«Քոլխա»* (1946–99) երկշաբաթաթերթը, հաս-քաղ., գրական *«Ճառագայթ»* (1947–52) շաբաթաթերթը, գրական-գեղ., բանասիր. *«Հանդէս մշակոյթի»* (1948–64) պարբերագիրքը, Սբ Խաչ դպրեվանքի կրոնաբարոյական, գրական, պատմաբանասիր. *«Շողակաթ»* (1952–91) պաշտոն. տարեգիրքը, հաս., մշակութ. «Պայքար» (1967–71, 1974) շաբաթաթերթը ևն:

Ներկայում Ստամբուլում լույս են տեսնում գրական, հաս-քաղ. *«Ժամանակ»* (1908-ից) և հաս-քաղ. *«Սարմարա»* (1940-ից) օրաթերթերը, «Սուրբ Փրկիչ» ազգ. հիվանդանոցի *«Սուրբ Փրկիչ»* (1949-ից) բժշկ., գրական, գիտ. ամսագիրը, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի «Լրաբեր» (1996-ից՝ հայ., թուրք.) պաշտոնաթերթը, ազգ., հաս., քաղ. *«Ակօս»* (1996-ից՝ հայ., թուրք.) շաբաթաթերթը:

Գրկ. **Թէոդիկ**, *Տիպ ու պատ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նմանահանություն):* **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, Ե., 2012:* **Կորկոտյան Ք.**, *Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567–1850 թթ.), Ե., 1964:* **Ամատյան Հ.**, *Հայոց դերը օսմանյան կայսրության մեջ, Ե., 1999:* **Желтянов А.**, *Печать в общественно-политической жизни Турции (1709–1908 гг.), М., 1972.*

ԿՈՍՏԱՆՅԱՆ Կարապետ Հովսեփի (1853, Ալեքսանդրապոլ–1.1.1920, Մոսկվա), հայագետ, մանկավարժ: Սովորել է Ս. Պետերբուրգի համալսարանի արլ. լեզուների ֆակ-ում: 1878–83 և 1885–91-ին՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, 1894–99 և 1902–05-ին՝ տեսուչ, 1891–94-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, 1911–20-ին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս և տեսուչ:

Լույս են տեսել Կ-ի «Հիւսուած բանից Նախնի պատմագրաց հայոց», «Հիւսուածք Հայոց հին պատմագիրների խօսքերից», «Հիւսուածք հայոց մարզպանների պատմութեան» (երեքն էլ՝ 1877, Վնն., Վ. Հայնրիխի տպ.), «Հայոց հեթանոսական կրօնը» (1879, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Գրաբառի խոնարհումը» (1880), «Գրաբառի հոլովումը մի աղիւսակի մէջ» (1881), «Ծաղկաքաղ արձակ եւ չափածոյ բանից ի պէտս վարժարանաց» (մաս 1–3, 1881), «Ծաղկաքաղ գրաբար ուսանելու համար» (1881), «Բառացանկ առաջին ծաղկաքաղի համար» (1885), «Նախաշաւիղ» (1886, վեցն էլ՝ Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Հայոց վանքերը» (1886, Մ., Օթոն Հերբեկի տպ.), «Նոր ժողովածոյ: Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ» (պր. 1, 2, 1892, Թ., Հովհաննես Սարտիրոսյանի տպ.), «Համամ Արեւելցի» (1896, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ս. Լուսաւորչի աջը» (1896, նույն տպ.), «Շիրակի լեգենդաներից եւ ժողովրդական կեանքից» (1896, Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.), «Տէր Պետրոս Ա Գետադարձ» (1897, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Տէր Ներսէս Ե Աշտարակեցի կաթողիկոս Ամենայն հայոց» (1909, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), «Հայագիտութիւնն արեւմտեան Եւրոպայում» (1910, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) աշխատությունները: Կազմել է «Վիմական տարեգիր» (1913, ՍՊր, Կայսեր. գիտ-ների ակադ-ի տպ.) ժող-ը, հրատարակել է Ստեփանոս Օրբելյանի «Ոդր ի Ս. Կաթողիկէն» (1885, Թ., Մ. Վարդանյանի տպ.), Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանը» (1892, Թ., Հովհաննես Սարտիրոսյանի տպ.), «Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը» (1892, նույն տպ.), «Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը» (1898, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Մկրտիչ Նաղաշ եւ յուր տաղերը» (1898, նույն տպ.), Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» (1903, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» (1910, Ալեք-պոլ, Գ. Սանոյանի տպ.) երկերը:


«ԿՈՎԿԱՍ», քաղ. և բանասիր. շաբաթաթերթ: Հայ. առաջին պարբ-ը Կովկասում: Լույս է տեսել 1846–47-ին Թիֆլիսում, սկզբն. շրջանում՝ որպես տեղի «Կավկազ» (ռուս.) թերթի հայ. տարբերակ, ապա դարձել է գրեթե ինքնուրույն: Խմբագիրներ՝ Հակոբ *Արզանյան*, Հակոբ *Կարենյան*, Գաբրիել *Պատկանյան:* Ծանոթացրել է տարածաշրջանի պատմությանը, աշխարհագրությանը, կենցաղին ու սովորույթներին: Տպագրել է պաշտոն. որոշումներ, Կովկասի փոխարքայության հրամաններն ու հրահանգները, առևտր., քաղ., տնտ. և այլ նյութեր: Կարևոր տեղ է հատկացրել հայոց պատմությանը, գրակ-յանը, մշակույթին, կրթությանը: Տպագրել է հայ և այլազգի հեղինակների գործեր: Լեզուն հիմնականում գրաբար էր,



Կարապետ Կոստանյան



Կ. Կոստանյանի *«Հիւսուածք հայոց մարզպանների պատմութեան» (1877, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



«Կովկաս», *1846–47, Թիֆլիս*

տպագրվել են նաև աշխարհաբար հոդվածներ: Աշխատակցել են Մ. Էմինը, Ա. Աքիմյանը, Գ. Շերմազանյանը, Դ. Տեր-Ալեքսանդրյանը, Հ. Լոռիս-Մելիքյանը, Դ. Ռոստոմյանը, Հ. Էնֆիաճյանը, Ռ. Երզնկյանը, Մ. Պատկանյանը, Կ. Շահնազարյանցը, Ա. Գեղամյանը, Մ. Զոհրապյանը, Գ. Թամամշյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Մանդինյանը և ուր.:


«ԿՈՎԿԱՍՅԱՆ ԷՍՊԵՐԱՆՏԻՍՏ» (“Kaukaza esperantisto”), կիսամսյա գրական հանդես: Կովկասյան էսպերանտիստների խմբի հրատ.: Լույս է տեսել 1910–14-ին Թիֆլիսում՝ էսպերանտոյով, նաև հայ., վրաց., ռուս.: Խմբագիր-հրատարակիչ՝ Հայկ Տեր-Աստվածատրյան: Թարգմանաբար ներկայացրել է հայ, ռուս և վրաց գրակ-յան նմուշներ, քարոզել էսպերանտոն կովկասյան միջավայրում: Տպագրել է Ս. Շահազիզի, Վ. Փափազյանի, Ա. Ծատուրյանի, Ա. Իսահակյանի արձակ և չափածո գործերից, ինչպես նաև համաշխ. ճանաչված հեղինակների ստեղծագործություններից: Հանդեսում սեփական և թարգման. գործերով հանդես են եկել Ա. Դոստյանը (Շռինդ), Վ. Սիրունյանը, Վ. Գոգիտիձեն, Վ. Ախվլեդիանին, Վ. Պավլովան և ուր.: «Կ. է.»-ում գործել է էսպերանտոյի ուսուցման լրիվ դասընթաց, ինչպես նաև երգիծանքի բաժին:

ԿՈՐՅՈՒՆ (մոտ 380–մոտ 450), մատենագիր, վարդապետ, Թարգմանչաց շարժման առաջնեկներից: ***Մեսրոպ Մաշտոցի*** առաջին աշակերտներից: Մեսրոպ Մաշտոցի և ***Սահակ Ա. Պարթևի*** հանձնարարությամբ դասավանդել է Հայաստանի գավառներում: Ասորիքում և Կ. Պոլսում կատարելագործել է ասոր-ի և հուն-ի իմացությունը: 431-ից հետո վերադարձել է հայրենիք: Մասնակցել է Աստվածաշնչի (ենթադրաբար՝ նաև Մակաբայեցոց գրքի և այլ երկերի) հայ. թարգմանությանը:

Կ-ի հեղինակությամբ պահպանված միակ վավեր. գործը՝ Հովսեփ Ա Հողոցմեցի կաթողիկոսի պատվերով 443–450-ին գրված «Վարք Մաշտոց»-ին («Ասքանագյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարգև գրի մասին, թե երբ և որ ժամանակ բաշխվեց և ինչպիսի մարդու ձեռքով եղավ այդ աստվածային նոր գրված շնորհքը») հայ ազգ. մատենագրության առաջին երկերից է, իրադարձությունների մասնակից հեղինակի ստեղծած հավաստի, մեծարժեք սկզբնաղբյուր: Մեսրոպ Մաշտոցի սեղմ, համառոտ և ճշմարտապատում վարքաբանությունը (բաղկացած է 4 մասից՝ մուտք, առաջաբան, բուն շարադրանք, վերջաբան) անփոխարինելի տեղեկություններ է հաղորդում V դ-ի սկզբի Հայաստանի հաս-քաղ. և մշակութ. կյանքի, հայոց, վրաց և աղվանից գրերի գյուտերի, Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի կյանքի ու գործունեության մասին:

Առաջին անգամ տպագրվել է 1833-ին՝ «Կորիւն վարդապետի Պատմութիւն վարուց եւ մահուան ս. Մեսրովպայ» վերնագրով (Վնտ., Սբ Ղազարի տպ., «Մատենագրութիւնք նախնեաց» մատենաշարով), այնուհետև՝ 1843-ին (Զմյուռնիա, Մեսրոպյան վարժարանի տպ.), 1854-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ., «Սոփերք հայկականք» մատենաշարով), 1894-ին (նույն տպ.), 1913-ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), 1930-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց վանքի տպ.), 1941, 1962, 1979-ին (Ե., աշխարհաբարի փոխադր., առաջաբ. և կազմ.՝ Մ. Աբեղյանի), 1952-ին (Վնն., Մխիթարյան տպ., ներած. և ծնթգր.՝ Ն. Ակինյանի), 1994-ին (Ե., աշխատասիր.՝ Ա. Մաթևոսյանի), 1996-ին (Բ., արևելահայ-ից արևմտահայ. փոխադր.՝ Ա. Գաբամանալյանի), 1998-ին (Վնտ., աշխատասիր.՝ Պ. Անանյանի), 2005-ին (հայ., ռուս., անգլ., Ե.):

Կ-ի երկը թարգմանվել է ռուս. (1962, թարգմ.՝ Շ. Սմբատյանի, Գ. Օհանջանյանի, Ե.), գերմ., ֆրանս., անգլ.:



«Պատմութիւն Սրբոյն Մեսրովբայ» (1854, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Վարք Մաշտոցի» (1962, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

Երկ. Վարք Մաշտոցի, Ե., 1981:

Գրկ. **Բիւզանդացի Ն.**, *Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Թ., 1900:* **Բաբայան Լ.**, *Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V–VIII դդ.), Ե., 1977:* **Աճառյան Հ.**, *Հայոց գրերը, Ե., 1984:* **Պողարեան Ն.**, *Կորիւն վարդապետի երկերը, Երուսաղեմ, 1984:*

ԿՈՒԱՆՅԱՆ Անդրանիկ Արմենակի (ծ. 1929, Բեյրութ), աստվածաբան, մանկավարժ, խմբագիր: Ծայրագույն վարդապետ (2001): Սովորել է Բեյրութի Սբ Գրիգոր Լուսավորիչ ճեմարանում (1937–43), Զմմառի դպրեվանքում (1943–47), ավարտել է Հռոմի Գրիգորյան համալսարանը (1954): 1965–68-ին պաշտոնավարել է Զմմառի վանքում՝ ուսումնապետ, գրադարանապետ, կազմակերպել է մատենադարանը և թանգարանը: 1973–2001-ին դասավանդել է Բեյրութի Հայկազյան համալսարանում: 1973–2013-ին՝ ***«Մասիս»*** օրաթերթի, 1980–91-ին, միաժամանակ՝ Զմմառի ***«Զուարթնոց»*** պարբերաթերթի, 1991-ից՝ ***«Հայկազեան հայագիտական հանդես»***-ի պատ. խմբագիր:

Լույս են տեսել Կ-ի «Գրաբար (քերականութիւն եւ հրահանգ): Ոճաբանութիւն: Հատընտիրք» (1968, 1984) դասագիրքը, «Գործնական բառարան հայերէն լեզուի» (1970, 1983, 1987, 1995), «Բառգիրք հայերէն լեզուի» (1998) բառարանները, «Անապահով օրեր» (1999), «Լուսարձակդ բաց վրաս» (2000) երկերը, «Երկու դար անց» (1966), «Զմմառի ազգային թանգարան» (հայ., ֆրանս., 1966), «Զմմառ: Դարերու ընթացքին» (հայ., ֆրանս., 1979), «Հայ ծիսական պաշտամունքը» (2001), «Խօսէ ինծի Հայ եկեղեցիի մասին» (2012) ուսումնասիրությունները (բոլորը՝ Բ.), նաև խոհ. ստեղծագործություններ, պիեսներ:

«ԿՈՒՈՒՆԿ», ազգ., հաս–քաղ. շաբաթաթերթ, ապա՝ գրական–գեղ., գիտ. հանդես: «Կռունկ» ընկերության հրատ.: Լույս է տեսել 1919–70-ին Ֆիլադելֆիայում, ապա՝ Նյու Յորքում, կրկին՝ Ֆիլադելֆիայում: Խմբագիր–տնօրեն՝ Գառնիկ Գևորգյան: Լուսաբանել է ամերիկահայ գաղութի կյանքը, արձագանքել Սփյուռքում հայապահպանությանը նվիրված ջանքերին: Անդրադարձել է ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեությանը, խրախուսել հայրենադարձությունը: Թարգմանաբար տպագրել է հայ, ռուս և ամերիկացի գրողների ստեղծագործություններ, հրապարակախոս., պատմագիտ. հոդվածներ: 1950-ից ունեցել է անգլ. էջ, 1951-ից՝ «Հայ դպրոց տանը» դասընթացը:

«ԿՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ», գրական, բանասիր., բարոյախոս., վիճակագր. և տեղեկատու ամսօրյա հանդես: Կովկասահայ առաջին ամսագիրն է: Լույս է տեսել 1860–63-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Սարկոս ***Աղարեկյան***, հրատարակիչ–տնօրեն՝ Համբարձում ***Էնֆիաճյան:*** Տպագրել է Խ. Աբովյանի («Օվսաննա»), Պ. Պռոշյանի («Սոս եւ Վարդիթեր», «Աղասի»), Գ. Շերմազանյանի, Ռ. Պատկանյանի, Ե. Սահակյանի, Հ. Ամրիկյանի և ուր. գեղ. երկերից, Մ. Սմմուրյանի «Անգլիական նամականի»-ի առաջին բաժինները՝ նպաստելով աշխարհաբար գրական հայ-ի զարգացմանը: Թարգմանաբար ներկայացրել է Ա. Պուշկինի և Հաֆեզի ստեղծագործություններից, Շ. Ռուսթավելու «Վագրենավորը» պոեմի առանձին գլուխներ: Հրատարակել է Գ. Սրվանձտյանի, Մ. Աղաբեկյանի ուսումնասիրությունները, անդրադարձել է արևմտահայ քաղ. կյանքին («Ազգային սահմանադրություն» ևն), Զեյթունի ապստամբությանը:


«ԿՏԱԿԳԻՐՔ», Հակոբ Տյառնեղբոր երկը՝ Քրիստոսի Երուսաղեմ գալստյան և Պիղատոսից կրած չարչարանքների մասին:

Առաջին անգամ տպագրվել է 1703-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տպակից է Եփրեմ Խուրի Ասորու «Յաղագս ապաշխարհութեան» երկին: Տիտղթ-ին՝ «Գրգուկս այս պատմէ նախ վասն գալստեաննն Յիսուսի Երուսաղէմ...» (212 էջ, 8º, 12,5 x 7,3 սմ): Վերահրատարակվել է 1710-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության, տիտղթ-ին՝ «Գիրք գրգուկս այս պատմէ...» (168 էջ, 8º, 11,7 x 7,4 սմ), 1722-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում՝ չափածո (116 էջ, 8º, 12,8 x 7,2 սմ):

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է Վանա լճի Կտուց կղզում: Որպես գրչության կենտրոն՝ հիշատակվում է XV դ-ի սկզբից: Հովսեփ և Ծերուկ գրիչներից մեկական ձեռագիր է հասել մեզ՝ ընդօրինակված 1414-ին և 1415-ին: Գրչության կենտրոնի վերելքը




Անդրանիկ Կռանյանի *«Բառգիրք հայերէն լեզուի» (1998, Բեյրութ) գրքի կազմը*




«Կռունկ Հայոց աշխարհին», *1860–63, Թիֆլիս (№ ԺԱ, 1860)*



«Կտակգիրք»-ի *(Հակոբ Տյառնեղբայր, 1703, Կ. Պոլիս) փիփղոսաթերթը*



«Կրթութիւն ապաշխարողի» *(Պողոս Սեներյան, 1751, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Կրթութիւն կատարելութեան եւ կրօնաւորականի առաքինութեան» *(Ալփոնսոս Ռոդրիկվեց, մաս Ա, 1741, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Կրթութիւն քրիստոնէական» *(1793, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

պայմանավորված է նշանավոր գրիչներ Խաչատուրի և Հովհաննեսի գործունեությամբ: 1462–ին Խաչատուրն ընդօրինակել է Հայսմավուրք (Մատենադարան, ձեռ. № 4883, ծաղկող՝ Մինաս), որտեղ հիշատակում է իրեն օգնած բազմաթիվ միաբանների, 1463–ին՝ Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 6365): Խաչատուրի գործը շարունակել է Հովհաննեսը, որից մեզ հասած ամենահին ձեռագիրը թվագրված է 1470–ով: Հայտնի են նաև Մինաս և Բարսեղ գրիչները (1470–80–ական թթ.): XVI դ–ում գրչության այդ կենտրոնի մասին որևէ տեղեկություն չկա: Այնտեղ կրկին ձեռագրեր են ընդօրինակվել XVII դ–ում:

Գրկ. Ոսկեան Հ., Վասպուրական–Վանի վանքերը, մաս 1, Վնս., 1940:

«ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՊԱՇԽԱՐՈՂԻ», հիսուսյան քարոզիչ Պողոս Սեներյանի՝ հավատի ուսուցման ձեռնարկը: Լատ–ից թարգմ.՝ Սարգիս Սարաֆյանի: Տպագրվել է 1751–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (268 էջ, 12º, 10,7 x 6 սմ):

«ԿՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ», հիսուսյան քարոզիչ Ալփոնսոս Ռոտրիկվեցի կրոնադավանաբան. եռամաս երկը: Լատ–ից թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու: Տպագրվել է Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում. Ա մասը (321 էջ, 12º, 12 x 6,2 սմ)՝ 1741–ին, Բ (248 էջ, 12º, 12 x 6,2 սմ) և Գ (220 էջ, 12º, 1–ին մամուլը՝ 8º, 12 x 6,2 սմ) մասերը՝ 1742–ին:

«ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՅ ՆՈՐՈՅ ԳՏՄԱՆ», վաճառական–ների համար նախատեսված թվաբանության դասագիրք: Տպագրվել է 1711–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (120 էջ, 11,7 x 5,4 սմ):

«ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ», քրիստ. կրթության դասագիրք:

Առաջին անգամ տպագրվել է 1709–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Տիտղթ–ին՝ «Կրթութիւն քրիստոնէական «առնելոյ օր ըստ օրէ»: Esercizio del Cristiano, da farsi ogni giorno. Romae, typis S. Congreg. De Prop. Fide, MDCCIX.» (22 էջ):

Տպագրվել է նաև «Կրթութիւն քրիստոնէական: Հաւաքեցեալ յումեմնէ բանասիրէ համառօտաբար...» տիտղոսաթերթով 1750–ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության (28 էջ). ենթադրվում է, որ տպագրվել է Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում, 1767–ին Կ. Պոլսում (32 էջ, 8º), 1782–ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պողոսյանի (՞) տպարանում (26 էջ), 1782–ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանցի տպարանում (24 էջ, 10 x 6,5 սմ), 1793–ին Կ. Պոլսում՝ Մայր դպրատան տպարանում (32 էջ, 8º, 14 x 8 սմ):

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև ***Պաղտասար Դպիրի*** «Կ. ք.»–ները:

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ», կրթ., մանկավարժ. շաբաթաթերթ: ՀՀ ԿԳՆ պաշտոնաթերթ (մինչև 1990–ը՝ ՀԽՍՀ լուսավորության նախարարության և լուսավորության, բարձրագույն դպրոցի ու գիտ. հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետ. կոմիտեի, մինչև 1997–ը՝ ՀՀ լուսավորության նախարարության պաշտոնաթերթ): Լույս է տեսնում 1932–ից (1932–34–ին՝ «Կուլտուրական ֆրոնտ», 1935–41–ին՝ «Խորհրդային դպրոց», 1941–89–ին՝ «Սովետական դպրոց», 1990–94–ին՝ «Դպրություն», 1995–97–ին՝ «Դպրոց») Երևանում: Խմբագիրներ՝ Արտո Եղիազարյան, Արգար ***Մովսիսյան***, Ասատուր Ասատրյան, Սերոբ ***Զաքարյան***, Սիմակ ***Մահակյան***, Սուրեն Խուդոյան, Փ. Ավագյան, Արծրուն Բաղդասարյան, Աղվան Սուքիասյան, Լյուդվիգ ***Կարապետյան***, Արմինե Օհանյան, Գագիկ Մինասյան (1997–ից): Լուսաբանում է ազգ. դպրոցի, մայրենի լեզվի զարգացման և անաղարտության պահպանման, հայկ. դպրության ու մշակույթի, անցյալի ավանդույթների հենքով երեխաների ուսուցման ու հայեցի դաստիարակության, ժողկրթության գործի արմատ. վերակառուցման և այլ հարցեր: Անդրադառնում է բարձրագույն, միջին և նախն. մասնագիտ. ուս. հաստատությունների աշխա–

տանքներին, ուսանողության հիմնախնդիրներին, եվրոպ. բարձրագույն կրթ. տարածքում ՀՀ-ի փոխներգրավմանը, առաջընթացին ևն: Ներկայացնում է Արցախի կրթամշակութ. կյանքը, սփյուռքահայ կրթօջախների առօրյան, ՀՀ-ի հետ նրանց կապը, համագործակցությունը:

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ», գիտ., գիտամեթոդ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1997-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Ռադիկ Մարտիրոսյան, պատ. խմբագիր՝ Կամո Աթայան: Տպագրում է բնագիտ., մաթ., հասարակագիտ., լեզվագիտ., նաև բնագրի լեզվով՝ օտարազգի հեղինակների հոդվածներ, անդրադառնում հայրեն. և համաշխ. գիտ. հայտնագործություններին ու նորություններին: Հանդեսը տարածվում է ԼՂՀ-ում, ՀՀ-ում և արտերկրում:



«Կրթություն», *1932-ից, Երևան*

ԿՐԻՄՄԿԻ Ագաֆանգել Եֆիմովիչ (1871–1942), հայագետ, գրող, թարգմանիչ, հաս. գործիչ: Ուկրաինայի ԳԱ ակադ. (1918): Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1892) և Մոսկվայի համալսարանը (1896):

Կ. ղեկավարել է Կամենեց-Պոդոլսկի հայ-դփչաղ. փաստաթղթերի ուսումնասիրման աշխատանքները: «Կարբալա» (ռուս., 1934) և «Շաքի» (ռուս., 1938) աշխատություններում հայկ. ու արաբ. աղբյուրների տեղեկությունների համադրությամբ փորձել է ներկայացնել հին և միջնադարյան Աղվանքի ու Հայաստանի հս-արլ. նահանգների քաղ. և մշակութ. փոխհարաբերությունների իրական պատկերը:

Հայ. լույս է տեսել Կ-ու «Մահմեդական աշխարհն ու նրա ապագան» (1906, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) երկը: Հեղինակ է նաև հայագիտ. անտիպ աշխատությունների («Հայերի պատմությունը», «Անդրկովկասի պատմությունը», «Պարթևաստան և Արշակունիներ» ևն): Պահպանվում է «Նախասմանյան թուրքական պետությունը Փոքր Ասիայում» երկի տպարանային առանձնատիպը:

Երկ. История арабов и арабской литературы светской и духовной, ч. 1–3, М., 1911–13.

ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ (Գրքաշարյան) Սիմոն Միսակի (7.12.1923, Աթենք–1.5.2011, Երևան), պատմաբան, աղբյուրագետ, թարգմանիչ: Պատմ. գիտ. դ-ր (1980): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Սովորել է Աթենքի համալսարանում (1943–46): 1947-ին հայրենադարձել է: Ավարտել է ՀՊՄԻ (1954): 1959-ից՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի գիտաշխատող, 1980-ից՝ բաժնի վարիչ:

Հին հուն. բնագրերից հայ. է թարգմանել Հոմերոսի «Ոդիսական» (1957) պոեմը, Քսենոփոնի «Անաբասիս» (1970), «Կյուրոպեդիա» (2000) և «Սոկրատյան երկեր» (2001), Հովսեպոս Փլավիոսի և Դիոն Կասսիոսի (1976), Դիոդորոս Սիկիլիացու (1985) երկերի՝ Հայաստանին վերաբերող հատվածները, Հերոդոտոսի «Պատմություն ինը գլխից» (1986), Պլուտարքոսի «Կենսագրություններ» (2001, բոլորի առաջաբ. ու ծնթգր.՝ Կ-ի) աշխատությունները, ինչպես նաև հին հույն ողբերգակներ Եվրիպիդեսի «Իֆիգենիան Ավլիսում» և Սոֆոկլեսի «Անտիգոնե» ողբերգությունները, ժամանակակից հույն գրողներ Կ. Վառնալիսի, Է. Պանսելինուի գործերից, Մ. Ալեքսանդրոպուլոսի «Հայերը» (1984) երկը:

Լույս են տեսել Կ-ի «Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ» (1970), «Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI դ.–մ. թ. IV դ.)» (2005) աշխատությունները:

Հռոմի հաս. գիտ-ների և արվ-ի «Տիբերինա» ակադ-ի թղթ. անդամ (1987), ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1986) և «Կանթեղ», Մայր աթոռ Սբ Էջմիածնի (երկուսն էլ՝ 2003) մրց-ներ:



«Կրթությունը և գիտությունը Արցախում», *1997-ից, Երևան (№ 3–4, 2011)*

ԿՐՈՅԱՆ Լորիս Մուշեղի [8.2.1928, գ. Սարուխան (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–19. 4.1984, Երևան], լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵԳՖԻ (1951): 1959–69-ին՝ ***«Ավանգարդ»***, 1970–84-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** թերթերի գլխ. խմբագիր, 1978–84-ին՝ ՀԺՄ նախագահ:

Լույս են տեսել Կ-ի «Դրուժիննիկի սխրագործությունը» (1960) ակնարկը, «Զայրացած մարդը» (1964), «Ծանրոցը» (1969), «Կրակը» (1977), «Հուշարձան» (1987) պատմվածքների, «Ընկերները» (1967) պիեսների ժող-ները:




Սիմոն Կրկյաշարյան

ԿՈՒԶԱՆՅԱՆ Պավել Միքայելի (1901, Թիֆլիս–1992, Մոսկվա), տառաստեղծ, գեղագիր, ձևավորող-նկարիչ, գրաֆիկ, գեղանկարիչ: Սովորել է Վրաստանի գեղարվ-ի ակադ-ում (1923–26), ավարտել է Մոսկվայի բարձրագույն գեղարվեստատեխ. ինստ-ը (1930): Համա-




«Կումայրի», 1923–2013, Լենինական–Գյումրի

Կույրերի միավորման հրատարակչության *տպագրած գրքերից*



Րաֆֆու «Սամվել» (1957) գրքի կազմը



Բրայլի այբուբենով տպագրված գիրք

գործակցել է Մոսկվայի Պոլիգրաֆիայի ԳՀԻ-ի շարվածքային տառատեսակի բաժնի հետ:

Ստեղծել է ԽՍՀՄ-ում տարածված «Կուզանյան» ռուս. տառատեսակաշարը (1958)՝ նուրբ թույլ սեպաձև և գծափակերով: Նախատեսված է հիմնականում գրքերի և ամսագրերի հրատ-յան համար:

Պարգևատրվել է ՏՓԽ երկրների տառատեսակների մրցույթի 2 դիպլոմով՝ Յ. Գուտենբերգի մահվան 500-ամյա տարելիցին նվիրված:

ԿՈՒԺՈՒՆԻ (Ճերեճյան) Հարություն Զաքարիայի [1918, Կոնիա (Թուրքիա)–1976, Բեյրութ], հաս-քաղ. գործիչ, հրապարակախոս, խմբագիր: 1922-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Լիբանան: Խմբագրել է *«Կայծ»*, ապա՝ *«Առաւօտ»* թերթերը: Աշխատակցել է «Արարատ», «Երիտասարդ Հայաստան», «Շարժում» և այլ պարբ-ների:

«ԿՈՒՄԱՅՐԻ», հաս-քաղ., կրթամշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1923–2013-ին Գյումրիում [մինչև 1990-ը՝ «Բանվոր» (օրաթերթ)՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի և ժող. պատգամավորների քաղխորհրդի պաշտոնաթերթ]: Խմբագիրներ՝ Աշոտ Հախումյան, Երվանդ Խոջամիրյան, Վահան *Ծովյան*, Տիգրան Խորունի, Հմայակ *Միրաս*, Վաչե Օհանյան, Հակոբ Այվազյան, Գևորգ Սահակյան, Հովհաննես *Բաղդասարյան*, Վաղինակ Պետյան, Խիկար *Բարսեղյան*, Վազգեն *Ամիրբեկյան*, Գաբրիել *Արևյան*, Գուրգեն Ասրյան, Հենրիկ Գևորգյան, Աղասի Աբրահամյան, Անահիտ Նորիկյան: Հաջորդել է «Կարմիր Շիրակ» (1921–22), «Շիրակի ռանչպար» (1922–23) թերթերին:

Լուսաբանել է քաղաքի հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. առօրյան, ՀՀ-ի ներքին և արտաքին քաղաքականությունը, միջազգ. անցուդարձը, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման միջազգ. գործընթացները ևն: Տպագրել է գրական ստեղծագործություններ: 1990-ական թթ-ին հրատարակել է հավելվածներ («Հիշողություն», «Ձայն ռամկավարաց», «Պոլոզ Մուկուչ» ևն):

ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1963-ին Երևանում՝ 1956-ից ստեղծված տպարանից հրատարակչ. մասի առանձնացումով: Տպարանի և հրատարակչության հիմնադիր և գլխ. խմբագիր՝ Ալբերտ *Մուշեղյան:* 1965-ից տնօրենն՝ Թելման Բոյաջյան: Բրայլի այբուբենով հրատարակում է գեղ., քաղ., գիտահանրամատչելի գրակ., մասնագիտ. գրքեր, բուհ. և դպրոց. դասագրքեր, նոտաներ, ուռուցիկ քարտեզներ ու գծագրեր, լույս է ընծայում պարբ-ներ, Հայաստանի կույրերի միավորման կենտր. վարչության «Բյուլետեն» (1958-ից) պաշտոն. ամենամյան, 1963-ից՝ կույրերի միավորման «Արձագանք» շաբաթաթերթը և «Գրական հանդես» ամսագիրը: Ունեցել է նաև ակցիդենտային հրատ-ների բաժին: 1963-ից հրատարակչության ձայնագրման ստուդիան թողարկում է «խոսող» գրքեր՝ մագնիտոֆոնային ժապավենի վրա (տարեկան մոտ 400 մամուլ ծավալով): Կ. մ. հ-յան հրատ-ները տարածվում են նաև Սփյուռքում:

ԿՈՒՅՈՒՄՋՅԱՆ (Գույումջյան) Երան Գրիգորի (ծ. 12.1.1948, Բեյրութ), լրագրող, հրապարակախոս, խմբագիր: Սովորել է Բեյրութի հայ կաթոլիկների «Սբ Ընտանիք» (այժմ՝ Սբ Հռիփսիմյանց) և ՀԲԸՄ-ի Դարուհի Հակոբյան (1960–64-ին) վարժարաններում: Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանի մաթեմատիկայի (1966) և Լոնդոնի համալսարանի փիլ-յան (1971) ֆակ-ները: 1966-ից ապրում է Նիկոզիայում (Կիպրոս): 1997–2003-ին՝ *«Փարոս»,* 2003–11-ին՝ «Ազատ ձայն» ամսաթերթերի գլխ. խմբագիր, 2011-ից՝ «Ազատ խոսք» էլեկտրոնային պարբ-ի հիմնադիր-խմբագիր:


ԿՈՒՆԵՈ (Cuneo) Պաոլո (11.2.1936, Հռոմ–31.8.1995, Հռոմ), իտալացի ճարտարապետ, արվեստաբան: Ճարտ-յան դ-ր, Հռոմի և Աքվիլայի համալսարանների պրոֆ.: ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (1994): Ավարտել է Հռոմի համալսարանը (1962), որտեղ հիմնադրել է Հայ

ճարտ–յան ուսումնասիրության կենտրոն (1965, ճարտ. Տ. Բրեչչիա Ֆրատադոկիի հետ), եղել տնօրենը:

Կ. հավաքել և համակարգել է հայ ճարտ–յանը վերաբերող հարուստ նյութ, գրել աշխատություններ, զեկուցումներով մասնակցել հայ արվ–ին նվիրված միջազգ. գիտաժողովների (I–V): 1966–ին Լաչինի տարածքում ուսումնասիրել է Ծիծեռնավանքի բազիլիկը (1967–ին հոդվածը հրատարակել է Փարիզում), իսկ 1968–ին Ղարաբաղում՝ Գանձասարի վանքը: Ուշագրավ են «Անի քաղաքի ավերակները» (1970, ՅՈՒՆԵՍԿՕ–ի «Մոնումենտում» հանդես, № 5) մեծածավալ հոդվածը և Անիի ճարտ. դպրոցին նվիրված մենագրությունը (1977, Հռոմ): Համահեղինակ է ***«Հայ ճարտարապետության վավերագրեր»*** մատենաշարով հրատարակած «Անի» (1984) և «Ղարաբաղ» (1988, երկուսն էլ՝ Միլան) գրքերի: Կ–ի «Հայկական ճարտարապետությունը IV–XIX դարերում» (հ. 1–2, 1988) ծավալուն աշխատությունը հայկ. ճարտ. հուշարձանների մեծարժեք, հիմնարար համահավաք է:

ՀՀ ԳԱԱ Թ. Թորամանյանի անվ. մրց. (1989):

Երկ. Architettura medievale armena, Roma, 1968 (համահեղ.՝ Է. Կուպրա); Le basiliche di T'ux, Xncorgin, Pasvacke, Hogeacvank, Roma, 1973; L'architettura della scuola regionale di Ani nell' Armenia medievale, Roma, 1977.



Պաոլո Կունեոյի *«Հայկական ճարտարապետությունը IV–XIX դարերում» (իտալ., հ. 2, 1988) գրքի շապիկը*

ԿՈՒՍԻԿՅԱՆ Հովսեփ Կարապետի [14(26).6.1890, Մոսկվա–27.12.1964, Մոսկվա], լեզվաբան, բանասեր: Բանասիր. գիտ. դ–ր (1961): Գիտ. վաստ. գործիչ (1962): Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում: 1915–ին ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվագր. ֆակ–ը և մինչև 1920–ը դասավանդել Լազարյան ճեմարանում, 1935–37–ին՝ ԵՊՀ–ում և ՀՊՄԻ–ում, 1950–64–ին՝ ԽՍՀՄ ԳԱ լեզվի ինստ–ի աշխատակից:

Մասնակցել է «Սասունցի Դավիթ» էպոսի ռուս. թարգմանության խմբագրմանը, ռուս. է թարգմանել Րաֆֆու «Սամվել» վեպը (1958): Լույս են տեսել Կ–ի «Ժամանակակից գրական հայերենի քերականություն» (1950), «Ակնարկներ գրական հայերենի պատմական շարահյուսության» (1959), «Գրական հայերենի բառային կազմի փոփոխությունները խորհրդային շրջանում» (1964, բոլորը՝ ռուս.) աշխատությունները:

ԿՈՒՏԻՆԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, հայկ. մշակույթի կենտրոն Կուտինայում (Թուրքիա): Մեզ հասած հնագույն ձեռագիրը 1486–ին Աստվածատուր Կաֆայեցու ընդօրինակած Գանձարանն է (Երուսաղեմի մատենադարան): Ձեռագրերը նկարագրված են Բարկեն ***Կոսեաերյանի*** կազմած ցուցակում. մեծ մասը պահվել է Անկարայի Կարմիր վանքում, որոնց ճակատագիրն անհայտ է: XVI դ–ից մեզ է հասել 5 ձեռագիր, XVII–XVIII դդ–ից՝ Մաշտոցներ, Սաղմոսարաններ, Վարքեր, Վկայաբանություններ, Տաղարաններ, Մեկնություններ ևն, նաև «Պատմութիւն Կուտինա քաղաքի» երկը. 6 ձեռագիր Մատենադարանում է:

Գրկ. **Կիւլէսէրեան Բ.,** *Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957:*



Հովսեփ Կուսիկյան

ԿՈՒՐՏԻԿՅԱՆ Ստեփան Միհրանի [1908, Բուրսա (Թուրքիա)–19.3.1986, Երևան], գրող, հրապարակախոս, խմբագիր: Մշակույթի վաստ. գործիչ (1975): 1926–27–ին՝ ***«Աշխատանք»*** (Սալոնիկ) համայնավար. թերթի խմբագիր: 1927–ին հայրենադարձել է: Ավարտել է ՀՊՄԻ և ԵՒՕԼՄԻ: 1930–32–ին խմբագրել է ***«Ավանգարդ»*** և «Երիտասարդ բոլշևիկ», 1933–ին՝ «Բանվորական Երևան», 1934–ին՝ «Սոցիալիստական անասնապահություն», 1962–82–ին՝ ***«Սովետական գրականություն»*** պարբ–ները: Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) տարիներին եղել է զինվոր. թղթակից:





Ստեփան Կուրտիկյան

Լույս են տեսել Կ–ի «Լեռնաշխարհի դուստրը» (1947), «Հետախույզներ» (1950), «Հայրենի լեզենդներ» (1957), «Երևան» (1960), «Անդալուզյան լեռներում» (1966), «Կոմիտասյան ղողանջներ» (1969), «Պրոլոմյան հովտաշուշաններ» (1969), «Լուսաշխարհ հանիմ զիմ գութան» (1974), «Իմ կյանքի ճանապարհին» (1984), «Արտասահմանի հայ գրողների հետ» (1984) պատմվածքների, ակնարկների, լեգենդների, վիպակների, հուշերի ժող–ները, «Գնդակահարեք, ես ոչինչ չգիտեմ...» (1985) վավերագր. վիպակների ժող–ը:

ԹՄՄ 1–ին կարգի մրց.՝ «Եղեռնապատում» շարքի համար (1965, Բ.):

Հ





Արմեն Հախնազարյանի *«Արտազի երեք վանքերը» (2012, Ե. «Բյուրակն») գրքի կազմը*

Հ, հայ. այբուբենի 16–րդ տառը, անվանումը՝ «հո»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կենտրոնում երկարն է, վերին աջ կողմից իջնում է կարճը, իսկ ստորին ձախ կողմից՝ լայնը, որոնք նուրբերով միանում են երկարին, իսկ վերջինս թեքվում է դեպի աջ՝ տողաշարում զբաղեցնելով քիչ տեղ և դառնալով ավելի հավաք: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Հ, որպես այբուբենի տասնավորների սյան 7–րդ (16–րդ) տառ, նշանակել է յոթանասուն և յոթանասուներորդ, բյուրի նշանով (Հ͂)՝ 70 բյուր (700 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Հ – մաս 70–րդ):

ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ Արմեն Հովհաննեսի [5.5.1941, Թեհրան–19.2.2009, Աախեն (Գերմանիա)], ճարտարապետ: Ճարտ–յան դ–ր (1973): Ավարտել է Աախենի Հռենոս–Վեստֆալիայի բարձրագույն տեխ. դպրոցի ճարտ–յան (1968) և քաղաքաշինության (1973) բաժինները: 1972–ին Աախենում հիմնադրել է Հայ ճարտ–յան արխիվ և Հայկ. ճարտ–ն ուսումնասիրող կենտրոն, որը 1998–ից տեղափոխվել է Երևան:

Լույս են տեսել Հ–ի «Սբ Թադէոս Առաքեալի եւ Սբ Ստեփանոս Նախավկայի վանքերը» (2000), «Արտազի երեք վանքերը» (2012) աշխատությունները: Հիմնադրել է *«Հայ ճարտարապետության վավերագրեր»* մատենաշարը. կազմել է «Ս. Թադեի վանք» (Միլան, 1971) և «Նոր Ջուլֆա» (Վնտ., 1992) պրակները:

Երկ. Das Armenische Thaddäus Kloster in der Provinz Westarerbaijan in Iran, Aachen, 1973.

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Լևոն Հովհաննեսի (26.12.1924, Ղարաքիլիսա–6.2.2003, Երևան), գրականագետ, թատերագետ, թարգմանիչ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1967), պրոֆ. (1987): Արվ. վաստ. գործիչ (1972): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1990–ից): Ավարտել է ԵԹԻ (1949): 1949–53–ին աշխատել է «Գրական թերթի» խմբագրությունում, 1953–55–ին՝ Հայպետհրատի խմբագիր: 1955–59–ին՝ «Սովետական արվեստ» ամսագրի պատ. քարտուղար, 1956–ից՝ ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ի աշխատակից, 1987–ից՝ տնօրեն:

Լույս են տեսել Հ–ի «Կլասիկան և մեր օրերը» (1962), «Թումանյանի աշխարհը» (1966), «Թումանյանի կյանքը» (1969), «Դերեր և դերասաններ» (1977), «Հայ թատրոնի պատմություն. 1901–1920» (1980), «Տաղանդ և բնավորություն. Վարդան Աճեմյանը կյանքում և արվեստում» (1989), «Ջրույցներ լեզվի մասին» (1993), «Թումանյանը և իր ժամանակը» (1995, նաև ռուս., անգլ., ֆրանս., գերմ.), «Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը» (2000), «Մենք և մեր դժվար օրերը» (2000) աշխատությունները, «Թատերագիտական

բառարանը» (1986), կազմել է «Մեծերը ամենամեծի մասին» ժող-ը և գրել առաջաբանը (1999, 2011)։ Թարգմանել է Ն. Կունի, Ա. Չեխովի, Ս. Ցվայգի, Յ. Յուզովսկու և ուր. երկերից։

ՀՀ Պետ. (1983), ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1988) մրց-ներ։

Երկ. Բահաևյանի կյանքն ու գործը, Ե., 1974: Մերորոմներ, Ե., 1984: Վարպետը. [հոհագրություն], Ե., 1990: Պարույրը, Ե., 1997: Կեանքը նամակագրութեան մէջ... (կազմ. և խմբ.՝ Գ. Յազրճյանի), Ե., 2008:

Գրկ. Լևոն Հովհաննեսի Հախվերդյան: Կենսագրական տեղեկագիր, Ե., 1996:



Լևոն Հախվերդյան

ՀԱԽՈՒՄՅԱՆ Սիմեոն Գասպարի (4.2.1859, Շուշի–14.2.1905, Փարիզ), խմբագիր, գրող, թարգմանիչ։ Տիգրան ***Հախումյանի*** հայրը։ Ավարտել է Շուշիի թեմ. դպրոցը, սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1875–78), Սորբոնի (Փարիզ) համալսարանի բժշկ. ֆակ-ում (1900–01)։ 1879–84-ին դասավանդել է Կարսի, Շուշիի, Թիֆլիսի հայկ. դպրոցներում։ 1882–84-ին՝ ***«Գործ»*** (Շուշի, ապա՝ Թիֆլիս), 1901–02-ին՝ ***«Ժամանակ»*** (Փարիզ) պարբ-ների հրատարակիչ-խմբագիր։

Լույս է տեսել Հ-ի «Մանիկ» (1889, Շուշի, Հայոց հոգևոր տեսչության տպ.) վիպակը, թարգմանել է Է. Լեֆլերի, Հ. Իբսենի, Օ. Շմիդտի ստեղծագործություններից։

Հանդես է եկել նաև Ահրիման, Մար Ամաղ, Ծերուկ և այլ գրական կեղծանուններով։

Գրկ. **Մխիթարյան Մ.**, *XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Ե., 1976:*



Տիգրան Հախումյան

ՀԱԽՈՒՄՅԱՆ Տիգրան Սիմեոնի (17.1.1894, Երևան–25.3.1973, Երևան), գրականագետ, թարգմանիչ, խմբագիր։ Պրոֆ. (1961)։ Արվ. վաստ. գործիչ (1943)։ Սիմեոն ***Հախումյանի*** որդին։ Ավարտել է Բաքվի ռեալ. դպրոցը (1912), Մոսկվայի համալսարանի իրավաբ. և բանասիր. ֆակ-ները (1917)։ 1918–19-ին Թիֆլիսում խմբագրել է ***«Ժողովրդի ձայն»***, 1919-ին Ալեքսանդրապոլում՝ «Նոր կեանք», 1920–21-ին՝ «Մշակ» պարբ-ները։ 1943-ից դասավանդել է ԵՊՀ-ում, ՀՊՄԻ-ում, ԵՌՕԼՄԻ-ում։

Լույս են տեսել Հ-ի «Թշնամին» (1931), «Այգաբացին» (1932) պիեսները, «Անտոն Չեխով. նրա կյանքը և ստեղծագործությունը» (1944), «Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդով. կյանքն ու ստեղծագործությունը» (1945), «Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան» (1958) գրականագիտ. աշխատությունները, «Գրական հոդվածներ և հիշողություններ» (ռուս., գիրք 1, 2, 1966, 1971), «Հուշեր» (1987) ժող-ները։ Թարգմանել է Ա. Օստրովսկու, Մ. Գորկու, Լոպե դե Վեգայի, Ա. Լունաչարսկու, Ա. Պուշկինի, Ի. Էրենբուրգի և ուր. ստեղծագործություններից։

ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1598, Նոր Ջուղա–1.8.1680, Կ. Պոլիս, ամփոփվել է Ղալաթիայի Սբ Լուսավորիչ եկեղեցու բակում), հայկ. տպագրության երախտավոր, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1655-ից։ Նախն. կրթությունն ստացել է Սպահանում, բարձրագույն հոգևոր ուսումը՝ Սբ Էջմիածնում։

Հ. Դ Ջ. մեծապես աջակցել է հայկ. տպագրության զարգացմանը. Եվրոպա է գործուղել ***Մատթեոս Ծարեցուն, Ոսկան Երևանցուն, Մատթեոս Վանանդեցուն*** և ուր.՝ տպագրության մեջ հմտանալու և հայ. Աստվածաշունչ տպագրելու նպատակով։ Նրա օժանդակությամբ ***Առաքել Դավրիժեցին*** ավարտին է հասցրել իր «Գիրք պատմութեանց» աշխատությունը, որը տպագրվել է հեղինակի կենդանության օրոք (1669)։



Հակոբ Դ Ջուղայեցի

Գրկ. **Հովհաննիսյան Ա.**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Ե., 1959:* **Հարությունյան Վ.**, *Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Ե., 1996:* **Օրմանեան Մ.**, *Ազգապատում, Էջմիածին, 2001: Զաքարիա Սարկավագ (Քանաքեռցի), Պատմագրություն, Ե., 2013:*


ՀԱԿՈԲ ԹՈՒԽԱԹՑԻ [1563, ք. Եվդոկիա/Թոխաթ–1657–63-ի միջև], տաղասաց, թարգմանիչ, գրիչ։ 1593–95-ին ապրել է Օլախաց երկրի (Վալախիա) Ցալ քաղաքում, ապա հաստատվել է Ջամոստիե (Արմ. Ուկրաինա) հայաշատ քաղաքում։ Հեղինակ է «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» (1595–96), «Տաղ եւ ողբանք ի վերայ Եւդոկիա քաղաքին» (1604) պատմ. թեմաներով ողբերի, քնար. տաղերի, գանձերի, ներբողների, «Յակոբի Սաղմոսարան» անտիպ երկի (1627), որը

Դավթի սաղմոնների չափածո վերաշարադրանքն է: Լատ–ից հայ. է թարգմանել հնդկ. ծագում ունեցող «Եօթն իմաստասիրաց պատմութիւնը» (1614), որը խմբագր. որոշ փոփոխություններով հրատարակվել է 9 անգամ. առաջինը՝ 1696–ին Լիվոռնոյում՝ ***«Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի»*** վերնագրով: Այդ գործը հայ–ից թարգմանվել է նաև թուրք. (1803), ռուս. (1847), վրաց. (XIX դ.), ֆրանս. (1919):

Պահպանվել է Հ. Թ–ու գրչագրած 6 ձեռագիր (Երևանի և Երուսաղեմի մատենադարաններ, Վիեննայի կայսեր. գրադարան). բացառիկ է իր նշանակությամբ «Գեղայի տաղարանը» (Մատենադարան, ձեռ. № 10050), որտեղ ամփոփված են հայ միջնադարյան պոեզիայի նմուշներ:

Տպագրվել է Հ. Թ–ու «Տաղ վասն կենաց մարդկան»–ը («Բազմավէպ», 1865, № 6):

Գրկ. **Ակինեան Ն.**, *Յակոբ Երէց Թոխաթեցի, տես նրա «Հինգ պանդուխտ տաղասացներ», Վնն., 1921:* **Նույնի**, *Յակոբ Թոխաթեցւոյ «Ողբ ի վերայ երկրին Օլախաց», տես նրա «Մատենագրական հետազոտութիւններ», հ. 4, Վնն., 1938:*



Հակոբ Կարնեցու *«Տեղագիր Վերին Հայոց» (1903, Վաղ–պատ) գրքի փիփղոսաթերթը*

ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՑԻ, **Գևորգի որդի** (1618, Կարին–մ. թ. անհտ), պատմիչ, ժամանակագիր, աշխարհագետ: 1641–ին Էջմիածնում ձեռնադրվել է քահանա: Հ. Կ–ու «Ժամանակագրութիւնը» ընդգրկում է 1482–1672–ին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները: Նրա «Տեղագիր Վերին Հայոց: Յիշատակարան ԺԷ դարու» (հրտ.՝ 1903, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ., թարգմանվել է նաև ֆրանս.) երկը պատմաաշխարհագր. և ազգագր. կարևոր տեղեկություններ է պարունակում Կարնո գավառի, օսմ. բռնակալության հարկային համակարգի վերաբերյալ: Ընդօրինակել է ձեռագրեր: Նրան է վերագրվում «Երգ երգոցի» մի մեկնություն: Հ. Կ–ու երկերը շարադրված են բարբառային տարրերով հագեցած գրաբարով: Հավանաբար մահացել և թաղվել է Կարինում:

Գրկ. **Ա.ճառեան Հ.**, *Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ. 2, Վնտ., 1913: Մանր ժամանակագրություններ, հ. 1, 2, Ե., 1951, 1956 (կազմ.՝ Վ. Հակոբյան):* **Մալխասյան Մ.**, *Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ որպես պատմաաշխարհագրական հետազոտությունների աղբյուր (Էրզրումի նահանգը 17–րդ դարում), Էջմիածին, 2009:*



Հակոբ Մեղապարտ

ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ [1360–ական թթ., ք. Սուրխաթ (Ղրիմ)–1426, Ցիպնավանք (Արծկե կղզի)], փիլիսոփա, տոմարագետ, րաբունապետ: Սովորել է Երզնկայի դպրոցում: 1410–ից՝ Մեծոփավանքի նորաբաց դպրոցի րաբունապետ: Դասավանդել է իմաստասիրություն, տոմարագիտություն, գրչության արվ. և երաժշտություն: Կազմել է տոմարագիտ–յան ձեռնարկ: Գրել է «Մեկնութիւն տոմարի», «Տոմարի արուեստի մասին» և այլ երկեր, մեկնաբանել Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատությունը:

Հ. Ղ–ու և ուր. ընդօրինակություններից (նրա արտագրություններով, լրացումներով ու մեկնություններով) մեզ են հասել ձեռագրեր, որոնց մի մասը պահվում է Մատենադարանում (ձեռ. № 178, 1716, 2365, 3487) և Ս. Պետերբուրգի արևելագիտ–յան ինստ–ում (№ 88):

Երկ. Տոմարագիտական աշխատություններ, Ե., 1987:

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1–3, Ե., 1955–57:



«Հակոբ Մեղապարտ» *մեդալ (2012, սահմանվել է հայ տպագրության 500–ամյակի առթիվ)*

ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ, հայկ. տպագրության հիմնադիրը, հայ առաջին տպագրիչը: Գործել է XVI դ–ում Վենետիկում: Հ. Մ., իտալ. իշխանություններից հայ. գրքեր հրատարակելու թույլտվություն ստանալով, տեղի գրաճուլող վարպետներին իր նմուշներով պատվիրել է հայ. բոլորգիր և գլխագիր տպատառեր, ինչպես նաև զարդագրերի, պատկերների, 4 քառանկյուն զարդերի և 24 վերնախորագրային զարդաձև շրջանակների տպատախտակներ, ձեռք է բերել տպագր. մեքենա և այլ սարքեր:

Հ. Մ–ի կահավորած առաջին հայկ. տպարանը գործել է 1512–13–ին. տպագրել է հավանաբար հայ. 6 գիրք, պահպանվել են 5–ը: Առաջինն

Ուրբաթագիրքն է, այնուհետև *Պատարագատետրը, Աղթարքը, Պարզապտումարը, Տաղարանը*, որոնցից միայն Պատարագատետրն ունի հրատ–յան վայրն ու տպագրիչի անունը նշող հիշատակում. «Գրեցաւ սուրբ տառս ի ջկը (1513), ի աստուածապահ քաղաքս ի Վէնէժ որ է Վենետիկ՝ Ֆռանկստեան. ձեռամբ մէղապարտ Յակոբին, ով որ կարդայք մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»: «Մեղապարտ» մականունը, որը սովորաբար գործածվում էր գրչագիր մատյանների և հնատիպ գրքերի հիշատակարաններում, հետագայում դարձել է Հակոբի անվան բաղադրիչ:



Հակոբ Մեղապարտի *Ուրբաթագրքի (1512) հոբելյանական հրատարակություն (2012)*

Հ. Մ–ի տպագրած գրքերի էջերն ունեն գեղեցիկ զարդանախշեր, զարդեր, պատկերներ, զարդագրեր: Տպագրությունը երկգույն է՝ սև ու կարմիր, գրքերի վերջում կա տպարանանիշ՝ խաչակիր շրջանակ՝ երկգիծ քառակուսու մեջ: Շրջանակը բաժանված է 4 մասի, յուրաքանչյուրում՝ լատ. մեկ սկզբնատառ՝ D. J. Z. A.: Վերծանման բազմաթիվ փորձերից առավել հավանականը Կարապետ *Բաամաճյանինն* է՝ Dei servus (Աստծու ծառա), Jakobus (Հակոբ), Zanni [Ծաննի՝ Հովհաննես (յան)], Armenius (Հայ): Հ. Մ–ի տպագիր գրքերը եղել են ձեռագիր մատյանների նման, քանի որ այդ ժամանակ տպագիր գիրքն անսովոր երևույթ էր հայերի համար, և տպատառերի մեծ ընտրություն չկար:

Հ. Մ–ի տպագր. արվ–ի ավանդները (տպատառերի, զարդագրերի ու զարդերի ձևերը, տպագիր էջի չափը ևն) հետագայում օգտագործել են *Արգար Թոխաթեցին, Սուլթանշահ Արգարյան Թոխաթեցին* և ուր., ինչպես նաև ռուս (Իվան Ֆեոդորով) և եվրոպացի տպագրիչներ: Տես նաև *Հայկական տպագրություն:*

Սահմանվել են «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (1989, ՀԱԳ) և մեդալ (2012, ՀՀ Սփյուռքի նախարարություն և Վենետիկի Մխիթարյան միաբանություն, հայ տպագրության 500–ամյակի առթիվ): Հ. Մ–ի արձանը տեղադրված է Երևանում (1987, քանդ.՝ Խ. Իսկանդարյան):

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Լէօ, Հայկական տպագրութիւն, հ. 1, Թ., 1904: Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նամանահանութոյն): Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012:* Իշխանյան Ռ., *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 2012:* Նույնի, *Հակոբ Մեղապարտ, Ե., 2012:*

«ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ», ստեղծվել է 1948–ին Երևանում. մինչև 1962–ը՝ «Գրքերի տան տպարան», ապա՝ Երևանի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, 1998–ից՝ «Հ. Մ. տ.»: Տպագրատունը տևական ժամանակ եղել է հանրապետության պոլիգրաֆարդ–յան առաջատարը: 1953–ին կոմբինատի պատվերով Մոսկվայի Պոլիգրաֆմեքենա ԳՀԻ–ում պատրաստվել է մոնոտիպի տառամայրերի նոր տեսակաշար (տառանկարիչ՝ Հենրիկ *Մնացականյան*), իսկ 1955–ին Լենինգրադից բերվել է գրքի կազմակողի պատրաստման մեքենա: *Օֆսեթ տպագրությունը* նույնպես առաջինը ներդրվել է այս տպարանում:



Ռ. Իշխանյանի «Հակոբ Մեղապարտ» (2012, Ե., «Անտարես») գրքի կազմը

1957–ին գրքի համամիութ. ցուցահանդեսում (Մոսկվա) կոմբինատի տպագրած Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» (նկարիչ՝ Գ. Կոխան, տպագրիչ՝ Բ. Սաֆարյան, կազմարար՝ Ս. Լատոյան) վեպը դասվել է լավագույն գրքերի շարքը:

1967–ին կազմարար. արտադրամասում ներդրվել է գրքի բլոկի անկար պատրաստման և մշակման եղանակ (Ա. Նազարյան):

1968–ին Շադրինսկի (ՌԴ) պոլիգրաֆսարքեր արտադրող գործարանում պատրաստվել են «Հանրագիտարանային տառատեսակի» տառամայրեր, որոնցով հետագայում ձուլվել են «ՀՍՀ» հատորների տառերը: «ՀՍՀ»–ն տպագրվել է 100 հզ. օրինակով (Հանրագիտարա–




Հ. Թումանյանի «ԵԼԺ»–ի (հ. 4, 1991, Ե., «Հակոբ Մեղապարտ տպագրատուն») կազմը

նի գլխ. խմբագրի արտադրության գծով տեղակալ՝ Ա. Մատինյան, 1972–ից՝ Վ. Սկրբելկին, մոնոտիպի վարպետ՝ Ս. Նունյան, հատորների 1–միլիոներորդ օրինակը տպագրվել է 1984–ին):

«Հ. Մ. տ.» լույս է ընծայել նաև հայ և ռուս դասականների երկեր, արկածային և գիտահանրամատչելի գրակ., դասագրքեր, բառարաններ, գիտ. աշխատություններ (Ռ. Սահակյանի և Կ. Խուդավերդյանի «Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո», 1995, Ս. Գեջյանի «Հայկական ճարտարապետություն», 1997, ևն):

«Հ. Մ. տ.»–ի տնօրեններ են եղել Ահարոն Ալեքյանը, Արամ Նազարյանը, Կոստանդին Ղամբարյանը, Մեսրոպ Մարտիրոսյանը, Յոլակ Պողոսյանը, Ռիչարդ Գևորգյանը, Ռաֆայել Հարությունյանը, Հարություն Առաքելյանը (պաշտոնակատար), Բագրատ Քեռյանը (1988–ից):

ՀԿԿ ԿԿ, ՀԽՍՀ ԳԽ նախագահության և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի հուշադրոշ: Որակի համաշխ. կոմիտեի «Ոսկե աստղ» մրց. (2000, Մադրիդ):



Հակոբ Մծբնացու *«Ճառք...» (1756, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը*

ՀԱԿՈԲ ՄԾԲՆԱՑԻ, Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետ (ծ. թ. անհտ, ք. Մծբին–338/348, Ուշտունիք), համաքրիստ. սուրբ, Մծբինի ասորի եպիսկոպոս (320–ական թթ–ին): Ըստ հայոց Ճառընտիրների՝ ***Գրիգոր Ա Լուսավորչի*** հորաքրոջ որդին է: Եղել է ***Եփրեմ Խուրի Ասորու*** ուսուցիչը: Ենթադրվում է, որ մասնակցել է Նիկիայի Ա տիեզ. ժողովին (325):

Հայ եկեղեց. մատենագիտ–յան մեջ Հ. Մ–ու անունով հայտնի է «Զգօն» կամ «Զգօն գիրք» (22 ճառ) ժող–ը, չնայած ենթադրվում է, որ այն ուրիշ հեղինակի, իրականում՝ III–IV դդ–ի պարսիկ կամ ասորի Ափրահատի գործն է:

Հ. Մ–ու ճառերի գիրքը՝ «Ճառք...»–ը, տպագրվել է 1756–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ հայ. և լատ.: Ա տիտղթ–ին՝ «Opera sancti Jakobi episcopi nisibeni.», Բ–ին՝ «Սրբոյ հօրն մերոյ Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսի ճառք....» (548 էջ, 4^0, 20 x 16 սմ):

Վերահրատարակվել է 1769–ին Հռոմում՝ Զիովաննի Բատիստա Ալբրիցի Ձերոլիմոյի տպարանում՝ հայ. և լատ.՝ նույն վերնագրով (42,6 x 2,8 սմ):

Գրկ. **Ազնիկեան Մ.**, *Ս. Յակոբ Մծբնացի Հայրապետ, Անթիլիաս, 1980:*

ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ [Հակոբյան Հակոբ Մովսեսի, ծ. 3.9.1952, գ. Ծաղկաշեն (այժմ՝ գ. Սիզավետ՝ ՀՀ Շիրակի մարզում)], բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ՀՊՄՒ (1973): 1979–91–ին՝ ***«Գարուն»*** ամսագրի պատ. քարտուղար, ապա՝ խմբագրի տեղակալ, 1991–96–ին՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար:



Հակոբ Մովսեսի *«Բանաստեղծություններ» (2005, Ե., «Նաիրի», ձևավորող՝ Մ. Մաթեվոսյան) գրքի կազմը*

Լույս են տեսել Հ. Մ–ի «Թռիչքների երկինք» (1981), «Ցնծության պահեր» (1984), «Երգասացություն» (1988), «Գիրք ծաղկման» (1992), «Բանաստեղծություններ» (2005), «Լույս զվարթ» (2009), «Յոթներորդ որսորդություն» (2013) բանաստեղծությունների ժող–ները:

Թարգմանել է Ռ. Մ. Ռիլկեի, Յ. Բորրովսկու, Գ. Թրակլի, Ֆ. Նիցշեի, Ֆ. Հոլդերլինի, Թ. Մանի ստեղծագործություններից: Հ. Մ–ի բանաստեղծություններից թարգմանվել են ռուս., անգլ., գերմ., ֆրանս., սլովակ., ուկր., պարսկ.:

Հայ եկեղեցու և ՀԳՄ «Կանթեղ» մրց. (2005), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2000), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՀԱԿՈԲ ՆԵՏՐԱՐԵՆՑ, Հակոբ Արծկեցի [ծ. թ. անհտ, Արծկե (Արմ. Հայաստանի Բզնունիք գավառ)–1501], գրիչ, բանաստեղծ: Նախ աշակերտել է հորը՝ Ներսես քահանային, ապա սովորել է Արծկեի վարդապետ. դպրոցում: Ձեռնադրվել է քահանա, կնոջ մահից հետո՝ վարդապետ (1464), ապա՝ եպիսկոպոս (1467): Արծկեի Սքանչելագործ Սբ Նշան վանքում ընդօրինակել է Ավետարաններ, Գանձարաններ: Հիշատակելի են Մատենադարանի № 5438 Գանձարանը (1491, եղբոր՝ Ղազարի հետ) և № 8761 Ավետարանը (1499, եղբորորդու՝ Զաքարիա դպիրի հետ): Գրել է չափածո երկեր՝ ազգ–եկեղեց. և տերուն. թեմաներով գանձեր, տաղեր, ոտանավորներ, վարքեր, եղբոր՝ Ղազարի հիշատակին նվիրված ողբ:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Յակոբ Նեդրարենց եպիսկոպոս Արծկէի. հայ բանաստեղծ մը ԺԵ դարու երկրորդ կէսէն, տես նրա «Մատենագրական հետազօտութիւններ», հ. 4, Վնն., 1938:*

ՀԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑԻ, XVI դ–ի կեսի–XVII դ–ի սկզբի մանրանկարիչ, *Նոր Ջուղայի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ, որի արվ–ում Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ավանդույթները ձեռք են բերել նոր որակ: Աշակերտել է *Զաքարիա Գնունեցուն*՝ Վանա լճի Լիմ կղզու վանքում: 1605–ին Ջուղայի բնակիչների հետ բռնագաղթել է Սպահան: Մինչև կյանքի վերջն ապրել ու ստեղծագործել է Նոր Ջուղայում:

Պահպանվել է Հ. Ջ–ու պատկերազարդած 8 ձեռագիր. 6–ը (1580–ական թթ. – 1610) Ավետարաններ են՝ 1585–ի (Մատենադարան, ձեռ. № 9691), 1586–ի (մինչև 1980–ը՝ Փարիզ, մասնավոր հավաքածու), 1587–ի (Մանչեստր, Ջ. Ռայլենդսի գրադարան), 1592–ի (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 3424), 1607–ի (Նոր Ջուղայի Սբ Սարգիս եկեղեցի, ձեռ. № 18): Վաղ շրջանի մի Ավետարան նույնպես Մատենադարանում է (ձեռ. № 6758): Մասնակցել է նաև պատմագիր Կալիսթենեսին վերագրվող «Աղեքսանդրի պատմության» ձեռագրի (XVI դ., Մատենադարան, ձեռ. № 5472) պատկերազարդմանը: Հ. Ջ. նոր մակարդակի է հասցրել հայ ձեռագիր գրքի գեղանկարչությունը: Գրքարվ–ի կատարյալ նմուշներից է նրա վերջին ձեռագիրը՝ 1610–ի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 7639), որով ավարտվել է հայ մանրանկարչության 1300–ամյա զարգացման ընթացքը:

Գրկ. Дрампян И., Акоп Джугаеци, Св. Эчмиадзин, 2009.

ՀԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ, **Հակոբոս Քարափնեցի** (ծ. թ. անհտ–1085, ք. Ուռհա/Եդեսիա), ժամանակագիր, դավանաբան: Աշակերտել է Սանահինի վանահայր, ապա՝ Պետրոս Ա Գետադարձի հակաթոռ կաթողիկոս (1037–38) Դիոսկորոսին:

Հ. Ս–ու «Ժամանակագրությունից» մեզ են հասել փոքր հատվածներ (Մատենադարան, ձեռ. № 9832, «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի»), որն օգտագործել է *Մատթեոս Ուռհայեցին* իր «Ժամանակագրության» մեջ՝ 1085–ին նախորդող դեպքերի նկարագրության համար:

Գրկ. Խաչիկյան Լ., Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «ԲԵՀ», 1971, №1: Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991:

ՀԱԿՈԲ ՔՈՆԵՑԻ, **Հակոբ Թարգման**, XIV դ–ի 1–ին կեսի թարգմանիչ, ունիթոր. շարժման գործիչ: Քոնայի հայ–դոմինիկյան միաբանության անդամ: Հայ. է թարգմանել Ժիլբեր Պոռետացու, Ալբերտ Մեծի, Թովմա Աքվինացու և ուր. աշխատություններից: XIV դ–ի կեսից նրա թարգմանությունները տարածվել են հայկ. կրթ. կենտրոններում և նպաստել կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսության դեմ մղված պայքարին: Հ. Ք–ու գործունեության շնորհիվ խորացել են հայ–արևմտաեվրոպ. գրական կապերը: Նրա թարգմանությունների բազմաթիվ գրչագրեր պահվում են Մատենադարանում և արտերկրի ձեռագրատներում:

ՀԱԿՈԲ–ԳՐԻԳՈՐ (Ճրճրյան Հակոբ Գրիգորի, 13.4.1905, Կ. Պոլիս–23.8.1985, Փարիզ), թարգմանիչ, հրապարակախոս: Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան և Կեդրոն. վարժարաններում: Ավարտել է Լայպցիգի համալսարանը (1927): Բնակվել է Փարիզում:

Հայ. է թարգմանել Է. Պոյի և Ց. Վ. Գյոթեի ստեղծագործություններից, Ա. Էյնշտեյնի 2 աշխատություն, գերմ.՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարը» և «Մեծապատիվ մուրացկանները» (1971):

Լույս են տեսել Հ–Գ–ի «Եթովպիա: Հայ եկեղեցին եւ հայերը» (1927, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Համազգային ուղղագրութեան եւ հայերէնի մաքրագործման հարցերը: Պարոյր Սեւակի լեզուական կտակը» (1977, Փ., Պ. Էլեկյանի տպ.), «Ծանոթ և անծանոթ հայեր. Նոյից մինչև մեր օրերը» (ֆրանս., 1974, Ա. Հարենցի գրական մրց.՝ 1974) աշխատությունները, «Երկերու հաւաքածոյ» (1981, Փ.) ժող–ը:

Հակոբ Ջուղայեցի



«Ավետում», մանրանկար, 1585–ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 9691)



«Հրեշտակի հայտնությունը յուղաբեր կանանց», մանրանկար (1610, «Նոր Ջուղայի Աւետարան», Մատենադարան, ձեռ. №7639)



Հակոբ–Գրիգորի *«Երկերու հաւաքածոյ»–ի (1981, Փարիզ) կազմը*



Անժիկ Հակոբյան

ՀԱԿՈԲՅԱՆ Անժիկ Մուշեղի (1.2.1929, Լենինական–19.2.2009, Երևան), լրագրող, խմբագիր, թարգմանիչ, արձակագիր: Ավարտել է ԵՊՀ (1957): 1953–62-ին աշխատել է «Ավանգարդ», 1962–66-ին՝ «Պիոներ կանչ» թերթերի, 1966–86-ին՝ «Գարուն» ամսագրի խմբագրություններում, 1976–86-ին՝ ***«Գարունի»***, 1986–88-ին՝ ***«Գրական թերթի»*** գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Հ-ի «Զուլալ առվակի պես» (1971) պատմվածքների ժող-ը, «Հիրիկը քարափների մեջ» (1987) վիպակը, ռուս-ից թարգմանել է Ն. Դումբաձեի, Մ. Շահինյանի և ուր. ստեղծագործություններից:



Թադևոս Հակոբյանի *«Պատմական Հայաստանի քաղաքները» (1987, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

ՀԱԿՈԲՅԱՆ Գրիգոր Արշակի [7.7.1907, գ. Արմտլու (Կարսի նահանգ)–16.2.1981, Երևան], գրականագետ, բնագրագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1969): Ավարտել է ԵՊՀ (1932): 1957–81-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ում:

Լույս են տեսել Հ-ի «Ներսես Շնորհալի» (1964), «Ներսես Լամբրոնացի» (1971), «Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը» (1974), «Հայրենի եզերք. Բասենի պարերգերը» (1978), «Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV դդ.)» (1980), «Արևմտահայ նորավեպը (1880–1910-ական թթ. ժանրի պատմություն և տեսություն)» (1996) աշխատությունները: Կազմել և հրատ-յան է պատրաստել «Ներսես Շնորհալի» (1968) բնագրերի ժող-ը: Հեղինակ է նաև «Առաջին նվագներ» (1932) բանաստեղծությունների ժող-ի:

Հ. անհիմն բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

ՀԱԿՈԲՅԱՆ Թադևոս Խաչատուրի [15(28).6.1917, գ. Լեռնաձոր (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–15.10.1989, Երևան], պատմաբան-աշխարհագետ: Պատմ. գիտ. դ-ր (1962), պրոֆ. (1963): Գիտ. վաստ. գործիչ (1968): Ավարտել է ԵՊՀ (1940):

Լույս են տեսել Հ-ի «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության» (1960), «Երևանի պատմությունը» (հ. 1–4, 1959–71), «Երևան 2750» (1968), «Սովետական Հայաստանի քաղաքները» (1977), «Անիի պատմություն» (հ. 1, 2, 1980, 1982), «Պատմական Հայաստանի քաղաքները» (1987) աշխատությունները, «Սովետական Հայաստանի աշխարհագրություն» (1972), «Հայաստանի պատմական աշխարհագրություն» (1968, 1984, 2007) դասագրքերը, ***«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»*** (համահեղ., հ. 1–5, 1986–2001, ՀՀ նախագահի մրց., 2003): Կազմել է «Երևանի զարգացումը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո 1801–1917 թթ.)» (1978) փաստաթղթերի ժող-ը:

Երկ. Սփեփանոս Օրբելյան..., Ե., 1960 (համահեղ.): Սյունիքի թագավորությունը, Ե., 1966: Աշխարհագրության համառոտ պատմություն, Ե., 1967: Անի մայրաքաղաք, Ե., 1988: Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, Ե., 1978, 1990:

ՀԱԿՈԲՅԱՆ Խորեն Զավենի [ծ. 22.4.1945, գ. Նորաշեն (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում)], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1964), ԵԳԹԻ (1972): 1983–87-ին եղել է ***«Գարուն»*** ամսագրի գեղ. խմբագիրը, 1987–92-ին՝ ***«Արևիկ»*** մանկ. հրատարակչության գլխ. նկարիչը:



Խորեն Հակոբյան. *Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը» (2004, Ե., «Արևիկ») գրքի պատկերազարդումներից*

Պատկերազարդել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության հրատարակած «Ինչ է, ով է» մանկ. հանրագիտարանի (հ.1–4, 1984–87) հայկ. նյութերը, «Սասնա ծռեր» էպոսի և հայոց պատմությանը նվիրված գրքերի շարքը (1994–98, Բ.), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2001), Ս. Հարությանի «Հայ հին վիպաշխարհը» (2004), «Պատկերագիրք» (2007, 48 թերթ, պատկերագիր տառեր և թվեր), «Սասնա ծռեր» (հայ., ռուս., 2008), Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (2009), Վ. Սարգսյանի «Երգող այբուբեն» (2012) գրքերը, այբբենարաններ ևն: Նկարազարդել է նաև «Մեր լեզուն» (8 գիրք, 2002–06), «Մեր պատմությունը» (4 գիրք, 2007–10) դասագրքերը՝ ԱՄՆ-ի հայկ. դպրոցների համար:

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Հմայակի [13.8.1917, գ. Ոսկեվազ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–1.9.1985, Երևան, թաղված է Ոսկեվազում], բանասեր, թարգմանիչ: Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1940): 1969–85-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հրատարակչախմբագր. խորհրդի անդամ:

Գերմ-ից թարգմանել է Գ. Լեսինգի («Դրամաներ», 1970), Յ. Պ. Էքերմանի («Զրույցներ Գյոթեի հետ», 1975), Ֆ. Շիլլերի («Վալլենշտայն», 1977, «Պատմա-

կան դրամաներ», 1982), Յ. Վ. Գյոթեի («Տորքվատո Տասսո», 1981, «Իմ կյանքից: Բանաստեղծություն և ճշմարտություն», 1985) ստեղծագործություններից, «Գերմանական նորավեպեր (XIX դար)» (1984) ժող-ը: Հեղինակ է «Միջօրե» (1958) բանաստեղծությունների ժող-ի:

Վայմարյան ընկերության անդամ (1978):

ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Մնացականի (29.5.1866, Գանձակ–13.11.1937, Թբիլիսի), բանաստեղծ, խմբագիր: Հայաստանի և Վրաստանի ժող. բանաստեղծ (1923): 1914-ին խմբագրել և հրատարակել է «Կարմիր մեխակներ», «Բանուորի ալբոմ» ալմանախները: 1922-ին ղեկավարել է Վրաստանի պրոլետգրողների ընկերակցության հայկ. մասնաճյուղը, խմբագրել և հրատարակել է *«Դարբնոց»* ամսագիրը:



Հակոբ Մնացականի Հակոբյան

Լույս են տեսել Հ-ի «Բանաստեղծութիւններ» (1899, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.), «Աշխատանքի երգեր» (1906, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Նոր առաւօտ» (1910, Թ., ա. տպ.), «Կարմիր ալիք» (1921), «Բոլշևիկ է Շիր-կանալը» (1925), «Վոլխովստրոյ» (1935) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Երկերի ժողովածուն» (հ. 1–4, 1955–58):

Գրկ. Գյուլնազարյան Խ., Հակոբ Հակոբյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությունը, Ե., 1965: **Մանուկյան Ս.,** *Հակոբ Հակոբյան, Ե., 1975: Հակոբ Հակոբյան: Մատենագիտություն, Ե., 1967:*


ՀԱԿՈԲՅԱՆ Հակոբ Վահանի [12.2.1927, ք. Հոկտեմբերյան (այժմ՝ ք. Արմավիր՝ ՀՀ Արմավիրի մարզում)–9.6.2009, Երևան], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (2002): Ավարտել է ԵՊՀ (1950): 1954–2004-ին դասավանդել է ԵՊՀ-ում (1979–83-ին՝ ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստ. ֆակ-ի դեկան): 1962–64-ին՝ ԵՈՀԼՄԻ-ի պրոռեկտոր, 1969–75-ին՝ Հայկ. հանրագիտարանի պատ. քարտուղար:



Հակոբ Վահանի Հակոբյան

Լույս են տեսել Հ-ի «Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը» (2000), «Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը» (2002) և այլ աշխատություններ, «Նորագույն պատմություն (1918 թ.–մինչև մեր օրերը)» (1998) ուս. ձեռնարկը:

ՀԱԿՈԲՅԱՆ Հովհաննես Հակոբի, **Վարդ Շահենի** (1876, Վան–1937, անհատի պաշտամունքի զոհ), պատմաբան, հրապարակախոս, գրող, խմբագիր-հրատարակիչ: ՀՍԽՀ պատմության և գրակ-յան ինստ-ի իսկական անդամ (1935): 1890-ական թթ-ին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1904-ին ավարտել Վիսկոնսինի (ԱՄՆ) համալսարանը: Նույն համալսարանի պրոֆ. (1905): 1907-ին Նյու Յորքում հրատարակել է «Արաքս» ամսագիրը: 1908-ից, որպես «Նյու Յորք Իվնինգ Փոստ» (անգլ.) պարբ-ի թղթակից, աշխատել է Թուրքիայում: Թիֆլիսում աշխատակցել է «Մշակին», զբաղվել հայ գաղթականների տեղավորման և նյութ. օգնության հարցերով: 1922–27-ին՝ *«Արև»* (Կահիրե) օրաթերթի խմբագրապետ: 1927-ին հայրենադարձել է: 1928-ից դասավանդել է ԵՊՀ-ում, եղել է «Մելգոնյան հիմնադրամի» պատասխանատու քարտուղարը ՀՍԽՀ-ում, որի միջոցներով հիմնադրել է տպարան ու հրատարակչություն:


ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՏՈՐ Գ.

ԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՆ Ա.
ՄԻՋԻՆ ԴԱՐ

ԳԼՈՒԽ Ա.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հովհաննես Հակոբյանի *«Ազգերու պատմութիւն» (հ. 3, 1920, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

Լույս են տեսել Հ-ի «Ազգերու պատմութիւն» (հ. 1–3, 1911–20, ԿՊ, հ. 1–2՝ Նշան Պապիկյանի տպ., հ. 3՝ Օննիկ Արզումանի տպ.), «Գերման դաւը Կովկասի մէջ» (1917, Թ., «Էկոնոմիա» տպ.), «Թիւրքիա գերման ճանկերուն մէջ» (1918, Թ., Ա. Թառումյանի տպ.), «Խորհրդային Հայաստան» (1929, Փ., «Գեղարվեստական» տպ.) աշխատությունները, «Քաղաքացիական կրթութիւն» (1911, ԿՊ, Հակոբ Սաթևոսյանի տպ.) ձեռնարկը, «Պատկերներ մեր կեանքէն» (1899, ա. տպ.) ժող-ը: Կազմել է «Ուղեգրություններ» շարքի Ա և Զ (թարգմ. և ծնթգր.՝ Հ-ի, 1932, 1934) հատորները:

Գրկ. **Մելիքյան Մ.,** *Հովհաննես Հակոբյան, «ԲԵՀ», 1976, № 1:*

ՀԱԿՈԲՅԱՆ Հրավարդ Հրաչյայի (ծ. 13.9.1930, Վաղարշապատ), արվեստաբան, բնագրագետ: Արվեստագիտ. դ-ր (1985), պրոֆ. (1989): Ավարտել է ԵԳՈՒ (1952), ԵՊՀ պատմության ֆակ-ը (1958): 1959-ից աշխատում է Մատենադարանում, 1987-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում:

Լույս են տեսել Հ-ի «Հայկական մանրանկարչությունը XIII–XIV դդ.» (համահեղ., անգլ., ֆրանս., գերմ., 1984), «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը



Հրավարդ Հակոբյանի
«Վասպուրականի մանրանկարչությունը» (գիրք 1, 1976, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը



Պիոն Հակոբյան



Պ. Հակոբյանի
«Վերելք» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

XIII–XIV դդ.» (1989), «Վասպուրականի մանրանկարչությունը» (գիրք 1, 2, Ե., 1976, 1982), «Արցախի միջնադարյան արվեստը» (1991), «Կերպարվեստը հայոց կրթարաններում» (1996), «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում» (1997), «Հայ արվեստի աշխարհում» (1998), «Հայոց տերունական սրբապատկերները» (2003), «Հայերը և Իտալիան» (2005), «Նոր Ջուղա: Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII–XVIII դդ.)» (համահեղ., 2007, ՀՀ Պետ. մրց.՝ 2009) աշխատությունները, «Հայկական մանրանկարչություն. Վասպուրական» (1978), «Հայկական հետքեր Վենետիկում [Վենետիկը որպես հայկական գաղթօջախ և հայ տպագրության առաջին կենտրոն]» (2011) ալբոմները:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց. (1996):

ՀԱԿՈԲՅԱՆ Միքայել Նավասարդի [10.3.1925, գ. Արծվանիկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–25.12.1983, Երևան], արձակագիր, խմբագիր, մատենագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1974): 1955–57-ին՝ ***«Ավանգարդ»***, 1957–59-ին՝ ***«Առողջապահություն»***, 1962–65 և 1969–73-ին՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»***, 1965–66-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** պարբ-ների, 1966–69-ին՝ Հայկ. հանրագիտարանի պատ. քարտուղար:

Լույս են տեսել Հ-ի «Անհայտ կորած մարդիկ» (1964), «Որդու վերադարձը» (1968), «Աստղերը չեն ընկնում» (1970), «Բաբախող սրտեր» (1981), «Կոմիսարը» (1982) վավերագր. երկերը, ««Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ» (1977), «Զմյուռնահայ պարբերական մամուլը. 1839–1860 թթ.» (1984), «Զմյուռնահայ պարբերական մամուլը. 1861–1880 թթ.» (1987), «Ստեփան Ոսկանյանը և նրա միջավայրը: Կյանքը, գործը, հասարակական-քաղաքական հայացքները» (2005) աշխատությունները:

ՀԱԿՈԲՅԱՆ Պիոն Հովսեփի [24.10.1926, գ. Ծղալթբիլա (Վրաստանի Ախալցխայի շրջան)–27.9.2000, Երևան, թաղված է Աշտարակում], գրականագետ, բնագրագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1983): 1954-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ում, 1969-ից՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»*** հանդեսի գլխ. խմբագրի տեղակալ, 1970-ից միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում:

Լույս են տեսել Հ-ի «Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը» (1955), «Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809–1836)» (1967), «Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (1978), «Վերելք» (1982), «Հայ կաթոլիկությունը պատմաքննական լույսի տակ» (1993, անգլ.՝ 1994) աշխատությունները: Հայտնաբերել և գիտ. շրջանառության մեջ է դրել հայ գրակ-յան և հայագիտ-յան պատմությանը վերաբերող նորահայտ սկզբնաղբյուրներ ու վավերագրեր: Մասնակցել է Խ. Աբովյանի. Մ. Նալբանդյանի, Գ. Տեր-Մկրտչյանի, Մ. Աբեղյանի, Ա. Բակունցի, Ղ. Աղայանի երկերի գիտ. հրատարակմանը: Լրացրել և հրատ-յան է պատրաստել Ե. Շահազիզի «Աշտարակի պատմությունը» (1987) պատմագիտ. աշխատությունը:

Երկ. Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները, Էջմիածին, 1997: Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 2003:

ՀԱԿՈԲՅԱՆ Սիմեոն Հարությունի [1880, Ելիզավետպոլ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–1942, անհատի պաշտամունքի զոհ], գրականագետ: Պրոֆ. (1929): Սովորել է Շվեյցարիայում (1902–07): 1922–24-ին՝ ***«Արեգ»*** ամսագրի խմբագիր: 1924-ից դասավանդել է ԵՊՀ-ում. 1929–31-ին՝ արտասահմ. գրակ-յան ամբիոնի վարիչ, 1931–39-ին՝ դեկան:

Լույս են տեսել Հ-ի «Շիրուանզադէ» (1911, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Արփիար Արփիարեան» (1922), «Հերանուշ Արշակեան» (1922), «Արեւմտահայ բանաստեղծներ. Պետրոս Դուրեան» (1922, երեքն էլ՝ Վնն., Մխիթարյան տպ.), «Վահան Տէրեան» (1923, Բեռլին, «Նոր Սատենադարան», № 6), «Եղիշէ Չարենց» (1924, Վնն., Մխիթարյան տպ.) մենագրությունները, «Ռոմեն Ռոլան: Հանրի Բարբիւս» (1922), «Ստէֆան Ցուայգ: Անդրէաս Լացկօ» (1923), «Լեսսինգ» (1937) աշխատությունները, «Արևմտյան Եվրոպայի գրականության պատմություն» (համահեղ.՝ Հ. Սամիկոնյան, 1933–35), «Եվրոպական գրականության պատմության գլխավոր էջեր» (մաս 1–2, 1936) բուհ. դասագրքերը:

ՀԱԿՈԲՅԱՆ Վազգեն Արտաշեսի [14.2.1913, գ. Լեռնանցք (այժմ՝ գ. Լեռնագյուղ՝ ՀՀ Շիրակի մարզում)–5.5.1982, Երևան], պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1972): Ավարտել է ԵՊՀ (1941): 1971–82-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Հ-ի «Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.» (հ. 1, 2, 1951, 1956) ժող-ը, որտեղ ներկայացրել է 85 ժամանակագրություն, որոնց մեծ մասն առաջին անգամ ինքն է դրել գիտ. շրջանառության մեջ: Կազմել և հրատարակել է միջնադարյան հայ եկեղեց. իրավունքի՝ *«Կանոնագիրք Հայոց»*-ի 2 հատորը (1964, 1971, ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց.՝ 1974), «Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարանները» (համահեղ., հ. 1–3, 1974–84), մասնակցել «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամյակում» (ռուս., հ. 2, մաս 1, 2, 1964, 1967) և «Մեսրոպ Մաշտոց» (1962) ժող-ների ստեղծմանը:

ՀԱԿՈԲՅԱՆ Վարդան (Սլավիկ) Սարգսի [ծ. 21.5.1948, գ. Արփագյադուկ (այժմ՝ գ. Վաղավեր՝ ԼՂՀ Հադրութի շրջանում)], բանաստեղծ, դրամատուրգ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1998), պրոֆ. (1998): Մշակույթի վաստ. գործիչ (2005): Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1969): 1969–83-ին աշխատել է «Սովետական Ղարաբաղ» (1999-ից՝ *«Ազատ Արցախ»*) օրաթերթում, 1976–83-ին՝ գլխ. խմբագրի տեղակալ: Հիմնադրել և խմբագրել է «Արցախ» (1989) և *«Պըղը-Պուղի»* (1991) հանդեսները: 1991-ից՝ ԼՂՀ գրողների միության վարչության նախագահ, միաժամանակ՝ միության *«Եղիցի լույս»* պաշտոնաթերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Հ-ի «Շանթահար կաղնին» (1974), «Մայրանում է լույսը» (1975), «Անմարելի-անմեռնելի» (1981), «Մենարան» (1986), «Արցախա ծուխ» (1989), «Ամարասի զանգերը» (1999), «Քարի շնչառությունը...» (2004), «Երգը որպես հանդիպման վայր» (2009), «Պոեմ իմ մասին կամ՝ 24-ն անց 81 րոպե» (2009), «Փակիր աչքերդ՝ չերևաս: Բանաստեղծությունների ընտրանի» (2011) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Ձատիկը ջրավազանի հատակին» (2010) վեպը:

Հ. ԼՂՀ պետ. օրհներգի տեքստի հեղինակն է:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1989), ՀՀ նախագահի (2010) մրց-ներ, ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» (2001) մեդալ, ԼՂՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» (2008) շքանշան:

Երկ. Անդրադարձի տեսիլներ (երկեր), Ե., 2002:

«ՀԱՂԹԱՆԱԿ», հաս-քաղ., գրական ամսաթերթ: Հնչակյան կուս-յան Ֆրանսիայի շրջանի վարչ. մարմնի հրատ.: Լույս է տեսել 1971–99-ին Փարիզում՝ հայ. և ֆրանս.: Խմբագիր՝ Պատրիկ Կեռնճյան: Լուսաբանել է սփյուռքահայ տարբեր կառույցների՝ Սփյուռքում հայապահպանության, Հայ դատի արդարացի լուծմանն ուղղված ջանքերը, Հայ եկեղեցու գործունեությունը, կուս-յան աշխատանքները, Հայրենիք–Սփյուռք կապերը, անդրադարձել է միջազգ. անցուդարձին:

«ՀԱՂՊԱՏԻ ԱԻԵՏԱՐԱՆ», **«Գետաշէնի Աւետարան»**, ընդօրինակել է գրիչ Հակոբը 1211-ին Հաղպատում՝ Սահակ Անեցու պատվերով, պատկերազարդել է Մարգարեն (մասնակցել է նաև ընդօրինակմանը)՝ Անիի Բեխենց վանքում, կազմել է Հոռոմոսի վանքի առաջնորդ Աբրահամը: Ընծայվել է Անիի Արջո առիճի եկեղեցուն: 1223-ին «Հ. Ա.» գնել է արցախցի Սարգիսը և նվիրաբերել Արցախի Խաչենի եպիսկոպոսարանին: Ձեռագիրն Արցախում պահվել է շուրջ 8 դար: 1920-ական թթ-ին Գետաշեն գյուղից Գարեգին Հովսեփյանը բերել է Էջմիածնի մատենադարան, ուսումնասիրել և դրել գիտ. շրջանառության մեջ (այժմ՝ Մատենադարանում, ձեռ. № 6288):

«Հ. Ա.» (30 x 20 սմ) երկաթագիր է, ունի խորաններ, անվանաթերթեր, 1-ական տերուն. և ընծայական պատկերներ, լուսանցազարդեր: Մանրանկարներն *Անիի մանրանկարչության դպրոցի* մինչ այժմ հայտնի եզակի նմուշներից են: Ծաղկող Մարգարեն պատկերազարդման մեջ ներմուծել է Անիի աշխարհիկ արվ-ի տարրեր. պատկերել է իրական անեցիների դիմանկարներ (վանահայր Եղբայրիկ, Աբրահամ կազմարար, Շերանիկ և ուր.), որոնք իրենց քաղաքային տարազներով



Վազգեն Հակոբյանի *«Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.» (հ. 1, 1951, Ե., ԳԱ հրտ.) գրքի տիտղոսաթերթը*



Վարդան Հակոբյան




Վ. Հակոբյանի *«Արցախա ծուխ» (1989, Ե., «Լույս») գրքի կազմը*



«Հաղպատի Աւետարան» *(1211, ծաղկող՝ Մարգարե, Մատենադարան, ձեռ. № 6288)*



«Համայնապատկեր», *1999-ից, Լոս Անջելես (№ 46, 2008)*



«Համառօտ մեկնութիւն Աւետարանի» *(Պետրոս Ռիքարտ, 1714) գրքի տիտղոսաթերթը*

տարբերվում են ավետարան. կերպարներից: «Հ. Ա.»-ի մանրանկարները ձևավորել են հայ միջնադարյան մանրանկարչության ինքնատիպ ճյուղ և ունեն առանձնահատուկ արժեք:

Գրկ. Յովսէփեան Գ., Հաղպատի դպրոցի մի գլուխգործոց («Գետաշէնի Աւետարան»), տես նրա «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան», պր. 1, Երուսաղէմ, 1935: **Մաթևոսյան Վ.,** *Մարգարե, Ե., 1990:*

ՀԱՂՊԱՏԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է XI դ-ում Հաղպատի վանքի Սբ Նշան եկեղեցում: Հ. մ-ում պահվել են գրչագիր և երկաթագիր ինագույն արժեքավոր մատյաններ: Հարստացել է նվիրատվությունների և տեղում կատարված ընդօրինակությունների շնորհիվ: Հետագայում, ապահովության համար, ձեռագրերը տեղափոխվել են վանքին մերձակա քարայրերը, որոնք ոչ միայն գրապահոցի, այլև ընթերցարանի դեր են կատարել: 1931-ին Հաղպատից միայն 12 ձեռագիր է բերվել Երևան: Երկար տարիներ Հ. մ-ում է պահվել նշանավոր *«Մողնու Աւետարանը»*, որը հետո տեղափոխվել է Թիֆլիսի Մուղնու Սբ Գևորգ վանք, իսկ այնտեղից՝ Մատենադարան: Կորած ձեռագրերից հատկապես արժեքավոր էր Հաղպատի «Քոթուկը» կամ ավանդամատյանը, որտեղ արձանագրված էր վանքի անցուդարձը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, գործում է ՀՅԴ կուս-յան հովանու ներքո: Հիմնադրվել է 1928-ի մայիսի 28-ին Կահիրեում՝ Հայ կրթ. և հրատարակչ. համազգ. ընկերություն անունով: Հիմնադիրներ՝ Համո Օհանջանյան, Լևոն *Շանթ,* Նիկոլ *Աղբալյան,* Գասպար Իփեկյան, Ստեփան Եսայան, Մինաս Խաչատրյան, Սարգիս Մալխասյան, Սեդրակ և Հակոբ Պալըզճյաններ:

Ի թիվս կրթ., մշակութ. բազմաթիվ ձեռնարկումների՝ միությունը 1931-ին Բեյրութում հիմնադրել է «Հույս» տպարանը (1967-ից՝ *«Վահե Սեթյան»* տպարան-հրատարակչատուն): 1962-ից Բեյրութում հրատարակում է *«Բագին»* գրական ամսագիրը:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», գիտագրական ամսաթերթ: Լույս է տեսել 1899–1902-ին Փարիզում: Խմբագիրներ՝ Միսաք Պաղտասարյան, Հովհաննես Շավարշ (Մյուզմեճյան): Տպագրել է գիտ-յան, գրակ-յան և արվ-ի վերաբերյալ հանրամատչելի հոդվածներ, նյութեր՝ անվանի գիտնականների և նրանց հայտնագործությունների մասին (Ժ. Բ. Լամարկ, Բ. Պասկալ, Ռ. Վիրխով և ուր.), գեղ. ստեղծագործություններ, բանասիր. ուսումնասիրություններ, թարգմանություններ: Ընդարձակ հոդվածներ է նվիրել Ա. Դոդեին, Ա. Ֆրանսին, Գի դը Մոպասանին, Վ. Հյուգոյին: Անդրադարձել է նաև առողջապահ-յան ու կրթության հարցերին:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հրատ-յան մասերի տպագրումը 2 տարբեր եղանակներով: Տեքստը տպագրվում է, օր., օֆսեթ կամ խոր տպագրության, իսկ պատկերազարդումը՝ բարձր տպագրության եղանակով: Հ. տ-յան են դիմում հիմնականում այն դեպքում, երբ տպագրության մի եղանակը լիովին չի ապահովում՝ մասնավորապես գունավոր պատկերների վերարտադրության պահանջված ճշգրտությունն ու որակը: Հ. տ-յան եղանակով են տպագրվել «ՀՍՀ»-ի հատորները. տեքստը՝ «Հակոբ Մեղապարտ տպագրատանը», գունավոր ներդիրները՝ Մոսկվայում, քարտեզները՝ Մինսկում:

«ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ», գրական-մշակութ. հանդես: Լույս է տեսնում 1999-ից Լոս Անջելեսում: Հիմնադիր-խմբագիր՝ Սարո *Գյոդակյան*: Ներկայացնում է ՀՀ-ում, Արցախում և Սփյուռքում տեղի ունեցող հաս-քաղ., մշակութ. կարևոր իրադարձությունները, համայնքային անցուդարձը:

«ՀԱՄԱՌՕՏ ՀԱԻԱՔՈՒՄՆ ԻՐԱՒ ՄԱՆԱՒԱՆԴԱԳՈՒՆԻՑ», քրիստ. դաստիարակության մասին հարց ու պատասխանի ձևով շարադրված երկ: Տպագրվել է 1717-ին Կ. Պոլսում (96 էջ):

«ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ», հիսուսյան քարոզիչ Պետրոս Ռիքարտի երկը: Տպագրվել է 1714-ին, տպագրության վայրը և տպարանը նշված չեն: Տիտղթ-ին՝ «Համառօտ իմն մեկնութիւն սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի վերայ բազմաց...» (592 էջ, 8º, 12,4 x 7,5 սմ):

«ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԳՐՔՈՅՍ ՇՆՈՐՀԱԼՈՅՆ ՍԱՐԳԻՍ», Կարապետ Գրիչի երկը: Տպագրվել է 1743-ին Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում: Տպակից է Սարգիս Շնորհալու «Գիրք մեկնութեան եօթն թղթոցն կաթուղիկէից»-ին, որն էլ և գրքի ընդհանուր վերնագիրն է (884 էջ, 8º, 18,6 x 13,4 սմ):

«ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ», Սորբոնի համալսարանի աստվածաբան Լյուդովիկոս Հաբերտի երկը: Լատ-ից թարգմ.՝ Բարսեղ Լասլոֆյանի: Տպագրվել է 1791-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (546 էջ, 4º, 16,8 x 10,5 սմ):

ՀԱՄԱՍՏԵՂ [Կելենյան Համբարձում Հովհաննեսի, 15.10.1895, գ. Փերչենճ (Խարբերդի գավառ)–26.11.1966, Լոս Անջելես, թաղված է Բոստոնում], գրող: 1913-ին մեկնել է ԱՄՆ, հետևել է Կոլումբիայի և Հարվարդի համալսարանների դասընթացներին:

Լույս են տեսել Հ-ի «Գիւղը» (1924), «Անձրեւ» (1929, 1996), «Սպիտակ ձիաւորը» (հ. 1–2, 1952), «Քաջն Նազար եւ 13 պատմուածքներ» (1955), «Աղօթարան» (1957), «Այծետոմար եւ ուրիշ բանաստեղծութիւններ» (1960), «Առաջին սէրը» (1966), «Հայաստանի լեռներու սրնգահարը» (1989),«Հատընտիր պատմուածքներ» (2008) ժող-ները, «Երկերը» (1966), «Նամականին» (կազմ.՝ Մ. Խաչատրյան, 2003), «Մոռացված էջերը» (կազմ.՝ Մ. Խաչատրյան, հ. 1–4, 2005–07) և այլ գրքեր:

Գրկ. Չօպանեան Ա., Համաստեղ եւ գիւղը հայ գրականութեան մէջ, Փ., 1929: Շահինեան Գ., Համաստեղ, Բ., 1961: Խաչատրյան Մ., Համաստեղի ստեղծագործությունը, Ե., 2004: Համաստեղ: Մատենագիտական ցանկեր, Ե., 2004:

«ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ», հայ. առաջին տպագիր աշխարհի քարտեզը: Առաջին անգամ տպագրվել է 1695-ին Ամստերդամում՝ Թովմա Վանանդեցու տպարանում, փորագրիչներ՝ Ադրիանոս և Պետրոս Սքոնբեկ (Շխոնբեկ) եղբայրներ: Անվանացույցը՝ «Նորոգ քանդակ գեղեցկավէպ հանրանշան....», չափերը՝ 120 x 150 սմ, փակցված է կտավի վրա: Աշխարհը պատկերված է 6 կիսագնդով: Կիսագնդերի միջև՝ վերևում, գծված է արեգակնային համակարգությունը՝ ըստ Պտղոմեոսի, ներքևում քարտեզի անվանացույցն է, 4 անկյունների ազատ տարածություններում՝ տարվա եղանակներին համապատասխանող դիցաբան. պատկերներ: 1696-ին ***Ղուկաս Վանանդեցին*** «Հ. ա.»-ից օգտվելու համար տպագրել է «Բանալի Համատարածի աշխարհացոյցին մերոյ նորածնի» ուղեցույցը:

Տպագրվել է նաև 1696-ին Ամստերդամում՝ «Կիսագնդեր» վերնագրով:

1749-ին Վենետիկում՝ նույն վերնագրով: Անվանացույցը՝ «Համատարած աշխարհացոյց», չափերը՝ 23,5 x 39 սմ, անվանացույցը կիսագնդերի վերևում է՝ ժապավենաձև շրջանակի մեջ, յուրաքանչյուր կիսագնդի տրամագիծը՝ 20 սմ: Քարտեզի վրա կան պայման. նշաններ՝ նավ, ձուկ, սուր, քամու ուղղությունը ցույց տվող կողմնացույցներ: Քարտեզը զետեղված է ***Մխիթար Սեբաստացու*** «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. Ա, 1749, Վնտ.) բառարանի 258–259 էջերի միջև:




Կարապետ Գրիչի **«Համառօտութիւն գրքոյս Շնորհալւոյն Սարգսի»** *(1743, Կ. Պոլիս) գրքի էջ*



Համաստեղի *«Հայաստանի լեռներու սրնգահարը» (1989, Ե., «Խորհրդային գրող») գրքի կազմը*

«Համատարած աշխարհացոյց» *(1695, Ամստերդամ)*





«Համբաւաբեր Ռուսիոյ», *1861–64, Մոսկվա*



Զաքար Համբարձումյան



Համազասպ Համբարձումյան

1784–ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Անվանացույցը՝ «Համատարած աշխարհացոյց քառակուսի….», չափերը՝ 29 x 43 սմ, անվանացույցը քարտեզի ստորին ձախ անկյունում է՝ շքեղ բնապատկերների մեջ: Քարտեզի աջ անկյունում կա պայման. նշանների ցանկ, շուրջը՝ տեղեկություններ ժամերի, ամիսների, աշխարհագր. լայնությունների, երկարությունների ևնի մասին: Զետեղված է Ս. Ագոնցի «Հասարակախօսութիւն աշխարհագրութեան» (Վնտ., 1817) գրքում՝ 399–րդ էջից հետո:

«ՀԱՄԲԱՎԱԲԵՐ», ԽՍՀՄ ԿԳԿ–ի, ԺԿԽ–ի և Աշխատանքի պաշտպանության խորհրդի (ԱՊԽ) հրատ.: Լույս է տեսել 1923–24–ին Մոսկվայում (սկզբում՝ կիսամսյա, 1924–ին՝ ամենամսյա): Հրապարակել է ԽՍՀՄ ԿԳԿ–ի, ԺԿԽ–ի և ԱՊԽ–ի որոշումներն ու կարգադրությունները: «Հ.» լույս է տեսել նաև ռուս., ուկր., բելառուս., վրաց. և ադրբ.:

«ՀԱՄԲԱԽԱԲԵՐ», հաս., գրական շաբաթաթերթ: Կովկասի հայոց բարեգործ. ընկերության (ԿՀԲԸ) հրատ.: Լույս է տեսել 1915–17–ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Սամսոն Հարությունյան: Անդրադարձել է հայ իրականության սոցիալ–քաղ. իրավիճակին, արևմտահայության ծանր կացությանը, հայ ժողովրդի ապագան կապել Ռուսաստանի հետ: Ներկայացրել է միջազգ. իրադարձությունները, լուրեր՝ ռազմաճակատներից, տպագրել է Վ. Փափազյանի, Գ. Բաշինջաղյանի, Հ. Թումանյանի, Ա. Վշտունու, Ե. Չարենցի և ուր. արձակ ու չափածո ստեղծագործություններից, Մ. Մատենճյանի՝ Գ. Զոհրապի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրությունը, Մ. Աբեղյանի «Հայերէն տաղաչափութեան մասին» աշխատությունը, Լեոյի պատմաբանասիր. բազմաթիվ հոդվածներ, նաև ԿՀԲԸ պաշտոն. տեղեկությունները, որոշումներն ու շրջաբերականները, կենտր. խորհրդի և մասնաճյուղերի հաշվետվությունները:

«ՀԱՄԲԱԽԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ», կիսամսյա պատկերազարդ լրագիր: Լույս է տեսել 1861–64–ին Մոսկվայում՝ աշխարհաբար: Խմբագիրներ՝ Մսեր և Զարմայր ***Մներյաններ***: Տպագրել է պաշտոն. տեղեկություններ, կառավար. հաղորդագրություններ, լուրեր, կրոնաեկեղեց. և բանասիր. հոդվածներ, կենցաղային հարցերին նվիրված երգիծ. նյութեր, անդրադարձել է միջազգ. իրադարձություններին: Արտատպել է նյութեր ռուս. մամուլից:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Զաքար Նիկոլայի [12(25).3.1903, Բաքու–4.11.1970, Մոսկվա], գրադարանագետ: Աշակերտել է ռուս հայտնի գրադարանագետ Լ. Տրոպովսկուն: Դասավանդել է Մոսկվայի մշակույթի ինստ–ում: Կազմել և խմբագրել է գրադարանային գրացուցակներ ու մեթոդ. ձեռնարկներ, գրադարանային դասակարգման աղյուսակներ (հանրային, մանկ., դպրոց., մարզային և այլ գրադարանների համար), որոնք գործածվել են նաև ՀՀ–ում:

Երկ. Библиотечная классификация, М., 1947–48, в. 1–2; Систематический каталог, М., 1954; Библиотечные каталоги, М., 1967 (համահեղ.).

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Համազասպ Ասատուրի [25.9.1880, գ. Բասարգեչար (այժմ՝ ք. Վարդենիս՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–3.2.1965, Երևան, թաղված է Բյուրականում], թարգմանիչ, գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1954): Գիտ. վաստ. գործիչ (1962): Վիկտոր ***Համբարձումյանի*** հայրը: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում: Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակ–ը (1908): Դասավանդել է ԵՊՀ–ում:

Ռուս. է թարգմանել Նահապետ Քուչակի հայրենները («Սիրո երգեր», 1904), հայ.՝ Զ. Բայրոնի, Հ. Հայնեի, Մ. Լերմոնտովի, Ս. Նաղաոնի, Մ. Գորկու ստեղծագործություններից, հին հուն–ից՝ «Հույն ողբերգակներ» (1950) ժող–ը, Հոմերոսի «Իլիական» (1955), «Ոդիսական» (1958) պոեմները: Լույս են տեսել Հ–ի «Արիւն–էջեր» (1903, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), «Անհունի


էջերում» (1904, ՍՊբ, «Պուշկինյան» տպ.), «Հպարտ հոգու երգերից» (1905, նույն տպ.), «Բանաստեղծություններ» (հ. 1–3, 1927–29, Վնն., Մխիթարյան տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Մտորումներ Հոմերոսի մասին» (1964) ուսումնասիրությունը:

Հ-ի անունով դպրոց է կոչվել Վարդենիսում:

Երկ. Երկերի ժող., հ. 1–3, Վնն., 1927–29:
Գրկ. Համազասպ Համբարձումյան: Կենսամատենագիտություն, Ե., 1980:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ռաֆիկ (Ռաֆայել) Հայրիկի [ծ. 5.11.1948, գ. Նորս (Նախիջևան)], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. թեկնածու (1987): Ավարտել է ԵՊՀ (1976): 1987–89-ին՝ *«Անկախություն»* շաբաթաթերթի խմբագիր, 1989–2002-ին՝ «Ազատ Հայք», 2005–09-ին՝ *«Նախիջևան»* թերթերի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Հ-ի «Թուղթ ընդհանրական: Յորդորակ» (1990), «Հայկական տոմար» (1992), «Սադոկ Բարոնչը լեհահայոց պատմության ուսումնասիրող» (1998), ««Որոգայթ փառաց» ակունքները, այժմէականութիւնը եւ առանձնայատկութիւնները» (1999), «Վարք Նժդեհի» (2001), «Գարեգին Նժդեհ: Համառօտ կենսագրական ասույթներ եւ կենսատարեգրութիւն» (2003), «Գարեգին Նժդեհ: Կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ» (2005), «Գարեգին Նժդեհ: Ամբողջական կենսագրութիւն» (2007), «Հանգանակ հայ ինքնութեան» (2010, 2012), «Գարեգին Նժդեհ: Գրական երկեր» (2012) աշխատությունները:



Ռաֆիկ Համբարձումյանի *«Նժդեհ» (2007, Ե., «Նախիջևան») գրքի կազմը*

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վիկտոր Համազասպի [5(18).9.1908, Թիֆլիս–12.8.1996, Երևան, թաղված է Բյուրականում], աստղաֆիզիկոս, տես. աստղաֆիզիկայի խորհրդ. դպրոցի հիմնադիրը: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1935), պրոֆ. (1934), ՀԽՍՀ ԳԱ (1943), ԽՍՀՄ ԳԱ (1953) ակադ.: ՀԽՍՀ (1940) և ՎԽՍՀ (1968) գիտ. վաստ. գործիչ: Հայաստանի Ազգ. հերոս (1994), ԽՍՀՄ Սոց. աշխատանքի կրկնակի հերոս (1968, 1978): Համազասպ *Համբարձումյանի* որդին: Ավարտել է Լենինգրադի պետ. համալսարանը (1928): 1931–43-ին աշխատել է նույն համալսարանում՝ ամբիոնի վարիչ, աստղադիտարանի տնօրեն (1939), ուս. մասի պրոռեկտոր (1941): 1943-ից ՀԽՍՀ ԳԱ հիմնադիրներից է և առաջին փոխնախագահը, 1947–96-ին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ (1994–96-ին՝ պատվ.), 1946–88-ին՝ Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր-տնօրեն, 1988–96-ին՝ պատվ. տնօրեն: Հ. եղել է Հայկ. հանրագիտարանի ստեղծման նախաձեռնողներից և առաջին գլխ. խմբագիրը (1965–74), գիտախմբագր. խորհրդի նախագահ (1968–87), ՀԽՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահ (1947-ից), 1964–87-ին՝ *«Ապրոպֆիզիկա»* հանդեսի խմբագիր, 1947–56-ին՝ ՀԽՍՀ ԳԱ խմբագրահրատարակչ., 1974–87-ին՝ ԽՍՀՄ ԳԱ աստղագիտ-յան գծով միացյալ գիտ. խորհուրդների, 1952–64-ին՝ ԽՍՀՄ ԳԱ կոսմոգոնիայի հանձնաժողովի, 1970-ից՝ ՀԽՍՀ Պետ. մրց-ների կոմիտեի գիտ. և տեխ. գծով նախագահ, 1947–72-ին՝ ԽՍՀՄ Լենինյան և Պետ. մրց-ների կոմիտեի գիտ-յան և տեխնիկայի գծով անդամ: Միջազգ. աստղագիտ. միության անդամ (1948–96), փոխնախագահ (1948–55), նախագահ (1961–64), Գիտ. ընկերությունների միջազգ. խորհրդի նախագահ (1968–72): Բազմաթիվ երկրների ԳԱ-ների, աստղագիտ. և այլ ընկերությունների անդամ, պատվ. անդամ:

ԽՍՀՄ ԳԽ անդամ (1989–91):

Թբիլիսիի (1979) և Երևանի (1985) պատվ. քաղաքացի: ՀՀ ԳԱԱ սահմանել է Հ-ի անվ. մեդալ և միջազգ. մրց. (2009, տրվում է 2010-ից՝ 2 տարին մեկ):

Հ-ի անունով կոչվել են Բյուրականի աստղադիտարանը (1998), № 1905 փոքր մոլորակը (հայտնաբերվել է 1972-ին), փողոց՝ Երևանում: ՀՀ Կառավարության որոշմամբ՝ 2009-ից սեպտ. 18-ը (Հ-ի ծննդյան օրը) հանրապետությունում նշվում է որպես Աստղագիտ-յան օր:

ԽՍՀՄ (1946, 1950), ՀԽՍՀ (1988) Պետ. մրց-ներ:

Պարգևատրվել է բազմաթիվ երկրների ԳԱ-ների գիտ. կազմակերպությունների և ընկերությունների ոսկե և այլ մեդալներով:

Երկ. Տիեզերքի էվոլյուցիայի պրոբլեմները, Ե., 1968: Կյանքի դրվագներ, Ե., 2003: Գիրք իմաստասիրաց (աշխատասիր.՝ Ա. Ականյանի), Ե., 2009: Научные труды, т.



Վիկտոր Համբարձումյան




Վ. Համբարձումյանի *«Տիեզերքի էվոլյուցիայի պրոբլեմները» (1968, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



«Համշեն», *1991-ից, Սուխում*



«Հայ ազգագրություն և բանահյուսություն» *մատենաշարի հ. 3-ի (1972, Ե., ԳԱ հրտ.՝ վերևում) և հ. 26-ի (2009, Ե., «Գիտություն»՝ ներքևում) տիտղոսաթերթերը*



1–2, E., 1960, т. 3, E., 1988; Проблемы внегалактических исследований, в кн.: Вопросы космогонии, т. 8, М., 1962; Проблемы эволюции Вселенной. Сборник докладов и..., E., 1968; Нестационарные объекты во Вселенной и их значение для исследования происхождения в эволюции небесных тел, в кн.: Проблемы современной космогонии, 2 изд., перераб. и доп., М., 1972; Философские вопросы науки о Вселенной, E., 1973; Загадки Вселенной, М., 1987; Избранные статьи, М., 1988; On the Evolution of Galaxies, "Le structure et l'évolution de l'univers", Bruxeelles, Ed. Stoops, 1958; On the Nuclei of Galaxies and Their Activity. "The Structure and Evolution of Galaxies", L.–N. Y.–Sydney, 1965; Problems of Physics and Evolution of the Universe, Y., 1978; A Life in Astrophysics: Selected Papers of Viktor A. Ambartsumian, N. Y., 1998.

Գրկ. Վիկտոր Համբարձումյանը և փիլիսոփայությունը, Ե., 2008: Ղարիբջանյան Գ., *Վիկտոր Համբարձումյան: Կենսագրական ակնարկ, հուշեր, փաստաթղթեր և նյութեր, Ե., 2008: Վիկտոր Համբարձումյան [հոդվածների ժող.], կազմ.՝ Է. Պարսամյան, Ե., 2008: Վիկտոր Համբարձումյան (հայ., անգլ., ռուս.), Ե., 2008: Վիկտոր Համազասպի Համբարձումյան: Կենսաստեղնագիտություն, Ե., 1958: Виктор Амазаспович Амбарцумян [библиография], М., 1975;* Мирзоян Л., *Виктор Амбарцумян (жизнь и деятельность), E., 1985.*

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ (ՀՏԴ), գրադարանամատենագիտական դասակարգման համակարգ: Տես *Հրատարակությունների դասակարգումներ*:

«ՀԱՄՇԵՆ», գրական-լուսավոր. ամսաթերթ, շաբաթաթերթ, այժմ՝ երկշաբաթաթերթ: Աբխազիայի հայերի միության հրատ.: Լույս է տեսնում 1991-ից Սուխումում (առաջին համարները՝ Երևանում)՝ հայ., ռուս.: Հիմնադիր-խմբագիր՝ Արտավազդ *Սարեցյան:* Ներկայացնում է Աբխազիայի հայերի միության գործունեությունը, կրթամշակութ. և գրական կյանքը, աբխազահայության ու հայրենիքի կապը, հայապահպան և այլ կարևոր միջոցառումներ, անդրադառնում է համշենահայերի պատմությանը, Հայ դատին, Արցախյան հիմնախնդրին ևն: 1999-ից «Գրադարան» մատենաշարով լույս է ընծայում աբխազահայ գրողների ստեղծագործությունները (ցայսօր՝ ավելի քան 20 ժող.):

Գրկ. Սարեցյան Ա., *Համշեն-20, Սուխում, 2012:*

«ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ», մատենաշար: Լույս է տեսնում Երևանում (հ. 1–26..., 1970–2009...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ը: Խմբագրակազմ: Յուրաքանչյուր հատորում զետեղված է 1–3 մենագրություն, որոնք կատարվել են դաշտային ազգագր. ու բանահյուս. հավաքչ. նյութերի հիման վրա: Ուշագրավ են Ա. Օդաբաշյանի «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում», Ա. Նազարյանի «Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից» (հ. 9, 1978), Ա. Ստեփանյանի «Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը», Ս. Մկրտչյանի «Տոները հայոց արդի կենցաղում», Լ. Պետրոսյանի «Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները» (հ. 22, 2007), Ս. Հոբոսյանի «Հայոց ձիթհանության մշակույթը (XIX դ.–XX դ. առաջին կես» (հ. 23, 2007), Թ. Հայրապետյանի «Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան): Կյանքն ու գործը» (2001), Ե. Հարությունյանի «Հայ ժողովրդական սգո երգեր» (հ. 24, 2007), Է. Խեմչյանի «Իջևան (Ձորափոր)» (հ. 25, 2008), Մ. Գալստյանի «Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես–XX դարի 80-ական թթ.)», Ն. Կիլիչյանի «Հայկական ժողովրդական բեմադրական պարը (XX դարի սկիզբ–30-ական թթ.)» (հ. 26, 2009) և այլ աշխատություններ:

«ՀԱՅ ԱՇԽԱՐՀ», պատմամշակութ. ամսաթերթ: Բելգիայի հայ կաթոլիկ եկեղեցու հրատ.: Լույս է տեսել 1937–38-ին Բրյուսելում՝ հայ. և ֆրանս. (վերջում՝ միայն ֆրանս.): Տնօրեն-խմբագիր՝ Հովհաննես Նալբանդյան: Ծանոթացրել է Հայ եկեղեցու պատմությանն ու նշանավոր գործիչների կյանքին, ֆրանս-ով ներկայացրել հայոց պատմությունը, հայկ. քաղաքակրթությունը, ավանդույթները: Հայ. և ֆրանս. զուգահեռ նյութերով, ինքնուսույց վարժություններով ընթերցողներին օգնել է սովորելու այդ լեզուները:

«ՀԱՅ ԱՍՊԵՏ», մանկապատանեկան, կրթամշակութ., ժամանցային հանդես: Լույս է տեսնում 2011-ից Երևանում: Խմբագիր՝ Կարին Տոնոյան: Տպագրում է գիտաճանաչող. հոդվածներ, նյութեր՝ հայրենի բնաշխարհի, հայոց պատմության, հայկ. մշակույթի մասին, անվանի մարդկանց կենսագրություններ: Լուսաբանում է «Հայ ասպետ» ուսումնակրթ. կենտրոնի և նույնանուն հիմնադրամի աշխատանքները: Յուրաքանչյուր համարի 2-րդ էջում տեղադրվում են Հայաստանի հանրային հեռուստատեսության «Հայ ասպետ» հաղորդաշարի հերթական թեմայի հարցերից՝ պատասխաններով:

«ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ», մատենաշար: Լույս է տեսնում Երևանում (պր. 1–10..., 2008–13...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ը (Ա. Քոչարյանի անվ. ձայնադարանի հավաքածուի հիման վրա): Խմբագրակազմ՝ Կ. Խուդաբաշյան (գլխ. խմբագիր), Հ. Պիչիկյան, Զ. Թագակչյան, Ժ. Մեհրաբյան, Ա. Բաղդասարյան: Ընդգրկում է 1927-ից ցայսօր կատարված գիտարշավների նյութերը (շուրջ 15 000 միավոր): Յուրաքանչյուր հատոր բաղկացած է նախաբանից, ձայնագրված նյութերի նոտագիր և բանաստեղծ. տեքստերի վերծանություններից, ծանոթագրություններից, այբբեն. ցանկից և բարբառային բառարանից: Տեքստերը հայ., ռուս. և անգլ. են: Տպագրվել են «Հայ նվագարանային երաժշտություն: Պարեղանակներ: Նվագներ» (պր. 1, 2, 2008, 2010), «Հայ ժողովրդական երգեր և նվագներ (1927–1929 թթ-ի գիտարշավային նյութերի ընտրանի)» (2008), «Հայ երկրագործի աշխատանքային երգեր» (2009), «Վասպուրականի ավանդական երգեր ու նվագներ» (2010), «Հայ ավանդական պարերգեր (1953–1970 թթ-ի՝ Ս. Լիսիցյանի գիտարշավի նյութերի հատընտիր)» (2010), «Հայ վիպական երգեր» (2012), «Ալաշկերտի ավանդական երգեր» (2012), «Ջավախքի պարերգեր և պարեղանակներ» (2012), «Վայոց ձորի ավանդական երգեր ու նվագներ» (2013) պրակները:



«Հայ ավանդական երաժշտություն» *մատենաշարի IV պրակի (2010, Ե., «Ամրոց») կազմը*


«ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐ», մատենաշար: Լույս է տեսնում Երևանում (հ. 1–5..., 2006–13...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ը: Խմբագր. խորհուրդ՝ Ա. Աղասյան (նախագահ), Ա. Ասատրյան, Գ. Գյոդակյան, Մ. Հասրաթյան, Հ. Հովհաննիսյան, Վ. Ղազարյան, Ա. Ավագյան: Հոդվածները լուսաբանում են հայկ. ճարտ-յան, կերպարվ-ի, դեկորատիվ և կիրառ. արվ-ների, թատրոնի ու կինոյի հիմնահարցեր, պատմ. և տես. երաժշտագիտ-յան, երաժշտ. ֆոլկլորագիտ-յան հրատապ խնդիրներ, լայնորեն ներկայացված է նաև ժամանակակից արվ-ը, առանձին հոդվածներ նվիրված են սփյուռքահայ արվ-ին:



«Հայ արվեստի հարցեր» *մատենաշարի հ. 5-ի (2013, Ե., «Գիտություն») կազմը*

«ՀԱՅ ԲԺՇԿ», բժշկ., առողջապահ. և գիտ. ամսաթերթ: Լույս է տեսել 1924–25-ին Բոստոնում: Տնօրեն-խմբագիր՝ Հովհաննես Ծովիկյան: Տպագրել է հոդվածներ հիվանդությունների, դրանց տարածման ձևերի և բուժման ուղիների մասին, համառոտ տեղեկություններ հաղորդել նոր դեղամիջոցների վերաբերյալ: Կարևորել է կանխարգելիչ բժշկությունը, ծանոթացրել մանկ. հիվանդություններին և դրանց բուժման եղանակներին: Ներկայացրել է էջեր հայ բժշկագիտ-յան պատմությունից, գրախոսականներ:

«ՀԱՅ ԲՈՅԺ», բժշկ. և առողջապահ. ժողովրդ. ամսաթերթ (եռամսյա, վեցամսյա): Լույս է տեսել 1934–40 և 1945–67-ին Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Շավարշ *Նարդունի* (Այվազյան): Տեղեկություններ է տպագրել առողջապահ-յան և բժշկության բնագավառների մասին, ծանոթացրել տարբեր հիվանդությունների ախտանշաններին:



«Հայ բոյժ», *1934–67, Փարիզ (№ 4, 1966)*


«ՀԱՅ ԲՈՒԺԱԿ», բժշկ. և առողջապահ. ամսաթերթ: Լույս է տեսել 1920–25-ին (1921-ին՝ «Դարման-Հայ բուժակ»), սկզբում՝ Կ. Պոլսում, 1923-ից՝ Ալեքսանդրիայում: Խմբագիրներ՝ Մկրտիչ Գարակյոզյան, Հ. Թաշչյան: Ընթերցողներին օգնել է ձեռք բերել բժշկաառողջապահ. գիտելիքներ, հաղորդել բժշկագիտ. նորություններ, հայացրել գիտ.



«Հայ գիր», *1938–44, Բեյրութ*



«Հայ զինվոր», *1992-ից, Երևան*



«Հայ ընտանիք», *1969–85, Վենետիկ (№ 1, 1987)*



«Հայ ժողովրդական հեքիաթներ» *մանկապատանեկան շաբաթաթերթի կրկնաշապիկը (1959, ձևավորող՝ Լ. Սադոյան)*

լեզուն: Օժանդակել է հայկ. բժշկ. կազմակերպությունների գործունեությանը, հրատարակել է գիտահանրամատչելի գրակ.: Տպագրել է հոդվածներ սոցիալ. և դպրոց. առողջապահ–յան, կանխարգելիչ բժշկության, վարակիչ հիվանդությունների մասին:

«Հ. բ.»–ին նախորդել է «Հայ բժիշկ» (1919) պատկերազարդ ամսաթերթը:

«ՀԱՅ ԳԻՐ», գեղ., հաս–գիտ. ամսագիր: Լույս է տեսել 1938–44–ին Բեյրութում: Տնօրեն–խմբագիր՝ Վազգեն Այգունի (Պաղճյան): Տպագրել է հիմնականում Սիրիայի և Լիբանանի երիտասարդ գրողների ստեղծագործություններ, դրանց վերաբերյալ գրախոսականներ: Կարևոր տեղ է հատկացրել խորհրդահայ գրակ–յանը, լուսաբանել Հայաստանի մշակութ. վերելքը: Խրախուսել է հայ և արաբ ժողովուրդների բարեկամությունը, թարգմանաբար ներկայացրել ժամանակակից արաբ. գրակ–յան նմուշներ: Անդրադարձել է նաև արևմտահավրոպ. գրակ–յանը և արվ–ին, տպագրել հոդվածներ գրական շարժումների, գեղանկարչության և արվ–ի մյուս բնագավառների վերաբերյալ:

«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», գրական–գեղ., գիտ. ամսագիր: Լույս է տեսել 1911–14–ին Զմյուռնիայում: Հրատարակիչ–խմբագիր՝ Զարեհ Գազազյան: Տպագրել է Դ. Վարուժանի, Ա. Իսահակյանի, Սիամանթոյի, Վ. Թեքեյանի, Ռ. Սևակի և ուր. գործերից, նյութեր՝ գրական երկերի, գրողների ու հրապարակախոսների մասին, զգալի տեղ է հատկացրել գրականագիտ. հարցերին: Պարբերաբար ներկայացրել է գրական–կենսագր. դիմանկարներ, հրապարակախոս. հոդվածներ, հուշագր. նոթեր, թարգմանաբար՝ ֆրանսիացի գրողների գործերից:

«ՀԱՅ ԴԱՏ» (“The Armenian Cause”), պարբերաթերթ: Կանադայի Հայ դատի հանձնախմբի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1984–ից Մոնրեալում՝ անգլ.: Նպատակը Կանադայի և կանադահայ հասարակությանը Հայ դատին ծանոթացնելն է, Հայ դատին վերաբերող իրադարձությունները լուսաբանելն ու մեկնաբանելը:

«ՀԱՅ ԴՊՐՈՑ», մանկավարժ. ամսագիր: Եգիպտահայ ուսուցչ. միության հրատ.: Լույս է տեսել 1933–35–ին Ալեքսանդրիայում, 1938–ին՝ Կահիրեում: Խմբագիր՝ Բենիամին Թաշյան: Տպագրել է հաս–քաղ. հոդվածներ, քննարկել հայկ. դպրոցին և ուսուցչությանը վերաբերող ուսումնադաստիարակչ., ծրագրամեթոդ. խնդիրներ: Կարևորել է երեխաների առողջության խնդիրները և անդրադարձել հայկ. վարժարաններում հայոց լեզվի դասավանդմանը, ուղղագրությանը, օտար լեզուների ուսուցմանը: «Հ. դ.»–ում հոգեբանամանկավարժ. ուսումնասիրություններ են տպագրել Վ. Արծրունին, Բ. Մինասյանը, Գ. Պոյաճյանը, Հ. Շեմսը, Ս. Պետրոսյանը, Վ. Հապեշյանը և ուր.:

«ՀԱՅ ՁԻՆՎՈՐ», շաբաթաթերթ: ՀՀ ՊՆ պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1992–ից (առաջին 9 համարը՝ «Զինվոր») Երևանում: Խմբագիրներ՝ Գագիկ Մինասյան, Վրեժ ***Իսրայելյան***, Միհեր Հրաչյան, Սեյրան Շահսուվարյան, Էդվարդ Ոսկանյան (2010–ից): Լուսաբանում է ազգ. բանակի առօրյան: Սկզբն. շրջանում անդրադարձել է ՀՀ ազգ. բանակի ստեղծման հիմնախնդիրներին, կայացման ընթացքին, ներկայացրել զորանոցաշինության, զինծառայողների կենցաղային պայմանների բարելավման աշխատանքները ևն:

«ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ», բարոյական, գիտակրթ., դպրոց. պատկերազարդ ամսագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության հրատ.: Լույս է տեսել 1969–85–ին Վենետիկում. փոխարինել է «Մխիթարյան ընտանիք» (1947–67, 1960–62–ին՝ «Ընտանիք») ամսագրին: Խմբագիրներ՝ Վահան ***Հովհաննիսյան***, Հակոբ Չենթեյան, Մեսրոպ ***Ճանաշյան***, Տաճատ ***Յարդմյան***, Պողոս Լևոն ***Զեքիյան***, Հարություն ***Պզտրիկյան***: Լուսաբանել է սփյուռքահայ դպրոցների և Մխիթարյան վարժարանների առօրյան, տպագրել է սաների և հայ բանաստեղծների արձակ

ու չափածո գործեր, ժող. գրույցներ ու ավանդություններ, նյութեր՝ աշխարհի գիտ. նորությունների մասին:

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ», մատենաշար: Լույս է տեսնում Երևանում (հ. 1–17..., 1959–2012...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ը: Խմբագրակազմ: Առաջին 3 հատորը տպագրել է ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ը: Առանձին հատորներով ներկայացված են Արցախ-Սյունիքի, Գուգարքի, Տուրուբերանի, Մուշ-Վասպուրականի, Այրարատի, Շիրակի, Բասենի, Էրզրումի, Ուտիքի, Վասպուրականի և պատմ. Հայաստանի այլ շրջանների հայկ. ժող. հեքիաթներ:

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», բազմահատորյակ (հ. 1–8, 1967–84, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1985), կազմել և հրատարակել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ը: Խմբագրակազմ՝ Ծ. Աղայան, Բ. Առաքելյան, Գ. Գալոյան, Ս. Երեմյան, Լ. Խաչիկյան, Ա. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Մ. Ներսիսյան:

1-ին հատորը (հրտ.՝ 1971) ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև Արշակունիների իշխանության անկումը (428), 2-րդը (1984)՝ Հայաստանի ներքին ու արտաքին կացությունը ավատատիր. հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև IX դ.՝ արաբ. լծի թոթափումը և Հայաստանի անկախության վերականգնումը, 3-րդը (1976)՝ IX–XIV դդ-ի, 4-րդը (1972)՝ XIV–XVIII դդ-ի, 5-րդը (1974) և 6-րդը (1981)՝ XIX դ-ի և XX դարասկզբի (մինչև 1917-ը)՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը), 7-րդը (1967)՝ Հայաստանի 1917–41-ի և Սփյուռքի, 8-րդը (1970)՝ 1941–65-ի պատմությունը: Յուրաքանչյուր հատորում ներկայացված են նաև տվյալ ժամանակաշրջանի հայ մշակույթը, գիտությունը, գրակ-ը ևն, հայ գաղթավայրերի պատմությունը:

Տես նաև *«Հայոց պատմություն»*:

«ՀԱՅ ԽՕՄՆԱԿ», բարոյագիտ., գրական, կրոն. ամսաթերթ: Լույս է տեսել 1924–39-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Արտավազդ ***Այտընեան***, Մեսրոպ Նարոյան, Զարմայր Կեզյուրյան: Ծանոթացրել է հայ հին և նոր գրակ-յանը, տպագրել է համաշխ. գրակ-յան թարգման. նմուշներ: Ուշագրավ են հայ. հոգևոր երաժշտությանը նվիրված հոդվածները («Հայ շարականները եվրոպական ձայնագրությամբ», № 1, 1929): Կարևորել է Սփյուռքի դպրոցներում հայ-ի ուսուցումը: 1932–34-ին հրատարակել է «Հայ խօսնակ մանկանց» հավելվածը:

«ՀԱՅ ՅԵՐԱՆՈՑ», եռամսյա տեղեկատու պարբերագիրք: Հալեպի հայ ազգ. ծերանոցի խնամակալության հրատ.: Լույս է տեսել 1952–2012-ին Հալեպում: Խմբագրակազմ: Ծանոթացրել է հաստատության առօրյային, տպագրել բժշկաառողջապահ. խորհուրդներ, գրական մանրապատումներ: Աշխատակցել են ծերանոցի վարչ. մարմնի անդամները, սիրիահայ մտավորականներ: 2003-ին ծերանոցի հիմնադրման 80-ամյակի առթիվ խմբագրությունը լույս է ընծայել «Հայ ծերանոց-80» հուշագիրքը:

«ՀԱՅ ԿԵԱՆՔ», ազգ., հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1985-ից Գլենդելում՝ հայ. և անգլ.: Խմբագիրներ՝ Մ. Մատենճյան, Ապո Չափարյան: Լուսաբանում է ամերիկահայության կյանքը, ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող իրադարձությունները, տպագրում է լուրեր, հոդվածներ՝ բանասիր., կրոն., գրական, տնտ., մարզ. թեմաներով:

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆ», կրոն., գրական, մշակութ. ամսագիր: Հվ. Ամերիկայի Հայաստանյայց առաքել. եկեղեցու հոգաբարձության պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1932-ից Բուենոս Այրեսում (ընդհատումներով): Խմբագիրներ՝ Իսրայել Արսլան, Գարեգին արք. ***Խաչատրյան***, Հարություն վրդ. Մուշյան, Սիոն արք. Մանուկյան, Բաբկեն արք. Ապատյան: Տպագրել է գաղութի պատմության մասին հոդվածներ, կրոնաբարոյական և մշակութ. թեմաներով նյութեր, անդրադարձել է թեմի առօրյային:



«Հայ ժողովրդի պատմություն» *(հ. 5, 1974, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



«Հայ խօսնակ», *1924–39, Կ. Պոլիս*



«Հայ ծերանոց», *1952–2012, Հալեպ*



«Հայ կեդրոն», *1932-ից, Բուենոս Այրես (№ 11, 1968)*



«Հայ կին», *1919–32, Կ. Պոլիս (№ 1, 1924)*



«Հայ ճարտարապետության վավերագրեր» *մատենաշարի «Գոշավանք» (1974, Միլան) պրակի կազմը*

1991–92-ին լույս են տեսել «Հ. կ.»-ի 3 անթվակիր համարներ՝ նվիրված ՀՀ-ի հռչակմանը և անկախացմանը հաջորդած այլ իրադարձությունների: 1997-ից վերահրատարակվում է, հիմնականում՝ իսպ.:

«ՀԱՅ ԿԻՆ», պատկերազարդ կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1919–32-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիր՝ Հայկանուշ ***Սւաքք***: Լուսաբանել է Կ. Պոլսի Հայ կանանց ընկերակցության գործունեությունը, ծանոթացրել կանանց միջազգ. կազմակերպությունների աշխատանքներին, ներկայացրել է անվանի հայ և օտար արվեստագետներին: Տպագրել է հայ գրողների գործերից, նմուշներ՝ եվրոպ. գրակ-ից, առողջապահ. և կենցաղային խորհուրդներ:

«ՀԱՅ ՀԱՆԴԷՍ», գրական կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1902–03-ին Վենետիկում: Խմբագիր-հրատարակիչ՝ Արփիար ***Արփիարյան:*** Ունեցել է ինչակյան ուղղվածություն: Լուսաբանել է հայ հասքաղ. կյանքը, քաղ. տարաձայնություններ է ունեցել դաշնակցության հետ: Հոդվածները հիմնականում գրել է Ա. Արփիարյանը (հաճախ՝ Հրազդան և Սկեպտիկ ծածկանուններով): Գրական բաժնում տպագրվել է նրա «Կարմիր ժամուց» վիպակի առաջին մասը: Արժեքավոր է «Նիւթեր Վանի ժամանակակից պատմութեան» հրապարակումը: Անդրադարձել է Թուրքիայի դիվանագիտ-յանը Արևելյան հարցում, Եվրոպայի քաղ. կացությանը, օտար մամուլից արտատպել հայերին վերաբերող նյութեր: Հանդեսին աշխատակցել է Լ. Բաշալյանը:

«ՀԱՅ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ», հանրագիտ. տեղեկատու: Բուխարեստի «Գաղութահայ հրատարակչության» հրատ.: Լույս է տեսել 1938–40-ին Բուխարեստում. միայն 1-ին հատորը՝ 5 գրքով (Ա–Բ տառերով հոդվածները, շուրջ 15 հզ. տերմին): Խմբագիր՝ Մկրտիչ ***Պոպուրյան***, աշխատակիցներ՝ Ա. Աբեղյան, Թ. Ազատյան, Վ. Թորգոմյան, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների անդամներ և ուր.: Կազմված է այբբեն. սկզբունքով, սահմանված է յուրաքանչյուր տերմինը, ապա տրված են այն բնութագրող (ներկայացնող) հիմն. տեղեկությունները: Ունի դիմանկարներ, ներտեքստային լուսանկարներ, քարտեզներ, այլ պատկերներ և եզրափակվում է մատենագիտ. հոդվածների հավելվածով: Ներառում է հոդվածներ հայոց պատմության, Հայաստանի տնտեսության, աշխարհագրության, հայկ. մշակույթի, գրակ-յան, պարբեր. հրատ-ների վերաբերյալ, ծանոթացնում հայ գործիչների կյանքին ու գործունեությանը: Ներկայացված են նաև օտարազգի հայագետներ, երկրներ ու քաղաքներ, որտեղ եղել են հայկ. համայնքներ:

«ՀԱՅ ՁԱՅՆ», քաղ., տնտ. և գրական օրաթերթ (1919-ից՝ շաբաթը 4 անգամ): Լույս է տեսել 1918–19-ին Հալեպում, 1919–22-ին՝ Ադանայում: Հայ ռամկավար կուս-յան Կիլիկիո շրջ. վարչության հրատ. (1921-ին): Տնօրեն-խմբագիր՝ Սեդրակ Կեպենլյան: Լուսաբանել է Կիլիկիայի ազգ-եկեղեց., քաղ-հաս. կյանքը, անդրադարձել միջազգ. իրադարձություններին, մեծ տեղ հատկացրել Արմ. Հայաստանի և մասնավորապես Կիլիկիայի ապագային վերաբերող հարցերին: Հետևել է Հայկ. հարցի պատմ. ընթացքին, քննադատել եվրոպ. պետությունների և ԱՄՆ-ի հակահայկ. քաղաքականությունն ու դիվանագիտությունը:

«ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ» («Documenti di architettura armena»), հայկ. միջնադարյան ճարտ-յանը նվիրված վավերագրերի շարքը: Հրատարակման մտահղացումը՝ Արմենն Մանուկյանի, Ադրիանո ***Ալպագո Նովելլոյի*** և Արմեն Զարյանի: Լույս է տեսել 1968–98-ին Միլանում (23 գիրք)՝ Մանուկյանների նյութ. օժանդակությամբ («ARES» հրատարակչություն)՝ իտալ., անգլ., հայ.՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ի և Միլանի պոլիտեխ. ինստ-ի հումանիտար գիտ-ների մասնաճյուղի համագործակցությամբ: Պատմաճարտ. հակիրճ տեղեկություններ են՝ լուսանկարներով և չափագրություններով:

Տպագրվել են «Հ. ճ. վ.»-ի «Հաղպատ» (1968), «Խաչքար» (1969), «Սանահին» (1970), «Ս. Թադեի վանք» (1971), «Ամբերդ» (1972), «Գեղարդ» (1973), «Գոշավանք» (1974), «Աղթամար» (1974), «Երերույք» (1977), «Ս. Ստեփանոս» (1980), «Կեչառիս» (1982), «Անի» (1984), «Ամաղու Նորավանք» (1985), «Քասաղի վանքեր» (1986), «Պտղնի, Արուճ» (1986), «Գանձասար» (1987), «Սևան» (1987), «Ղարաբաղ» (1988), «Սորհուլ» (1989), «Նոր Ջուղա» (1992), «Մակարավանք» (1994), «Նորավանք» (1995), «Վաղարշապատ» (1998) պրակները:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐ, նշվում է ամեն տարի (2004-ից) հոկտ. 16-ին՝ ի նշանավորումն 1794-ի նույն օրը Մադրասում հայ մամուլի առաջնեկի՝ *«Ազդարարի»* լույսընծայման: ՀԺՄ-ն այդ օրը հայկ. լրատվամիջոցներին շնորհում է «Ազդարար» ամենամյա մրց-ը (սահմանվել է 2004-ին)՝ «Լավագույն պարբերական մամուլ», «Լավագույն մարզային մամուլ», «Լավագույն հեռուստաընկերություն», «Լավագույն ռադիոկայան» և «Լավագույն թղթակից» անվանակարգերով:

Խորհրդ. տարիներին ՀԽՍՀ-ում մամուլի օրը նշվել է մայիսի 5-ին՝ ի նշանավորումն բոլշևիկյան «Պրավդա» թերթի լույսընծայման:

«ՀԱՅ ՄԱՐՏԻԿ», կիսամսյա թերթ, Դաշնակից և հայկ. բանակնեըի նախկին կամավորների միության պաշտոնաթերթ.: Լույս է տեսել 1936–38-ին Մարսելում: «Հայ կամաւոր» (1935, Փարիզ) թերթի շարունակությունն է: Խմբագիրներ՝ Սմբատ Բորոյան (Զորավար Սմբատ) և Մանուկ Ավետյան: Հրատարակել է նյութեր Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին դաշնակիցների զորամասերում ծառայած հայ կամավորների սխրանքների մասին: Ձգտել է սփյուռքահայությանը համախմբել հայրենիքի շուրջը, աջակցել ներգաղթին: Տպագրել է վավերագր. դրվագներ անցյալի ռազմ. գործողությունների մասին, նաև գեղ. գործեր:



«Հայ նոր գրականության պատմություն» *(հ. 5, 1979, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

«ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», բազմահատորյակ (հ. 1–5, 1962–79), կազմել և հրատարակել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ-յան ինստ-ը: Խմբագրակազմ՝ Ա. Ասատրյան, Ա. Ինճիկյան, Գ. Հովնան, Է. Զրբաշյան, Խ. Սարգսյան, Ս. Սարինյան: 1-ին հատորն ընդգրկում է XVIII դ-ի վերջին քառորդի և XIX դ-ի 1-ին կեսի, 2-րդը՝ 1850–60-ական թթ-ի, 3-րդը՝ 1870–80-ական թթ-ի, 4-րդը՝ 1890-ական թթ-ի., 5-րդը՝ 1900–20-ի հայ գրակ-ը:

Ներկայացված է հայ նոր գրակ-յան առավել ընդարձակ և ամբողջ. պատմությունը՝ գրական շարժումների, սոցիալ-քաղ. կյանքի ու մշակութ. միջավայրի բազմակողմանի դրսևորումներով: Ժամանակաշրջանը բնութագրող ներածականից զատ՝ յուրաքանչյուր հատոր պարունակում է մենագր. գլուխներ, տես. ակնարկներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, առանձին բաժիններ (օր.՝ աշուղ. պոեզիա, մեմուարային գրակ. ևն): Վերջում տրված է տվյալ շրջանի գրակ-յան ժամանակագրությունը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1980):



«Հայ շարժում», *1979-ից, Ֆրեզնո*

«ՀԱՅ ՇԱՐԺՈՒՄ» («Armenian Action»), պարբերաթերթ: Հրատարակվում է 1979-ից Ֆրեզնոյում՝ անգլ.՝ Կալիֆոռնիայի նահանգային համալսարանի Հայագիտ. ծրագրի և Հայ ուսանող. միության նախաձեռնությամբ: Խմբագիրներ՝ Ս. Թաթեոսյան, Փաթիլ Մխիթարյան, Մարինե Վարդանյան: Լուսաբանում է միության գործունեությունը, անդրադառնում է ամերիկահայ ուսանողությանը հուզող խնդիրներին, տպագրում նրանց տեսակետները ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին ևն:



«Հայ սիրտ», *1925-38, Մարսել*

«ՀԱՅ ՍԻՐՏ», ազգ., հաս-քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1925–38-ին Մարսելում: Խմբագիր-արտոնատեր՝ Եղիշե ***Թորոսյան:*** Լուսաբանել է ՀՕԿ-ի գործունեությունը, անդրադարձել ներգաղթի կազմակերպման հարցերին, ֆրանսահայության առօրյային, Հայաստանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններն, միջազգ. քաղ. անցուդարձին: Տպագրել է նաև գրական-գեղ. գործեր, պատմ. թեմաներով ուսումնասիրություններ:



«Հայ տպագրության տարեգիրք», *1925-ից, Երևան (№ 8, 2011)*

«Հայագիտակ» *հրատարակչության տպագրած գրքերից*



Հ. Թումանյանի «Ընտրանի»-ի (2001, Ե.) կազմը



Վ. Տերյանի «Ընտրանի»-ի (2005, Ե.) կազմը

«ՀԱՅ ՄԻՐՏ», գրական-հաս. շաբաթաթերթ: «Հայ սիրտ» հրատարակչ. ընկերության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1926–32-ին Ֆիլադելֆիայում: Խմբագիրներ՝ Սարգիս Սուքիասյան, Վ. Արսլանյան, Հակոբ Գույումճյան: Լուսաբանել է Սփյուռքի, մասնավորապես՝ ամերիկահայության ազգ., մշակութ. կյանքը, նպաստել Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդմանը: Սատարել է հայրենադարձությանը, խրախուսել հայրենակց. միությունների շին. ձեռնարկները Խորհրդ. Հայաստանում, ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեությունը, անդրադարձել միջազգ. քաղ. իրադարձություններին: Շաբաթաթերթին աշխատակցել են Ռ. Որբերյանը, Զ. Գալեմքյարյանը, Ե. Արմենը, Կ. Սիտալը, Տ. Գապագճյանը, Կ. Բասմաջյանը, Հ. Հինդլյանը, Մ. Մինասյանը, Մ. Թերզյանը և ուր.:

«ՀԱՅ ՄԻՐՏ», գիտ., հաս., գրական և մանկ. եռամսյա պարբերաթերթ: ՀՕՄ-ի կենտր. վարչության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1939-ից (1939–46-ին՝ «Հայ Կարմիր խաչ», 1946–56-ին՝ «Հայ օգնության միություն») Բոստոնում՝ հայ., անգլ., ֆրանս.: Խմբագիրներ՝ Ա. Բարսեղյան, Ս. Տեստեկյուլ, Սիրանուշ Մխիթարյան, Ս. Համաստեղ, Գոհար Թյոլյոլյան, Ժիրայր Միսաքյան, Ա. Բալյան: Հրապարակում է ՀՕՄ-ի տեղեկագրերը, նյութեր՝ միության մասնաճյուղերի գործունեության մասին, բարոյախոս. և բժշկ. հոդվածներ, տեղեկություններ է հաղորդում ՀՀ-ի քաղ., հաս., տնտ., մշակութ. կյանքի վերաբերյալ: Անդրադառնում է երեխաների հայեցի դաստիարակության խնդրին, տպագրում է նմուշներ հայ. և համաշխ. գրակ-ներից: Ունի հայ-ի ուսուցման դասընթաց (1945-ից):

«ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ», ազգ. մատենագիտ-յան ցանկերի ժող.: Հայաստանի ազգ. գրապալատի հրատ.: Լույս է տեսնում 1925-ից (մինչև 1995-ը՝ «Տպագրության տարեգիր») Երևանում՝ պրակներով: Ներկայացնում է տվյալ ժամանակահատվածում գրապալատի ստացած՝ ՀՀ-ում և Սփյուռքում լույս տեսած պարբ. և ոչ պարբ. հրատ-ների, ինչպես նաև համաշխ. մամուլում Հայաստանի և հայ ժողովրդի մասին հրապարակված հոդվածների մատենագիտությունը: Ներառում է «Գրքի տարեգիրքը» (1925-ից), «Ամսագրային հոդվածների տարեգիրքը» (1939-ից), «Լրագրային հոդվածների տարեգիրքը» (1949-ից), «Գրախոսությունների տարեգիրքը», «Նոտագրական հրատարակությունների տարեգիրքը» (երկուսն էլ՝ 1951-ից), «Սփյուռքահայ մամուլի տարեգիրքը», «Ատենախոսությունների տարեգիրքը» (երկուսն էլ՝ 1995-ից):

«ՀԱՅԱԳԻՏԱԿ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1991-ին Երևանում: Հայագիտ. բարեգործ. ընկերության հրատ.: Նախագահ՝ Ալբերտ *Իսոյան*, տնօրեն՝ Վահագն Իսոյան (2006-ից): Հրատարակում է հայագիտ. աշխատություններ, տեղեկատուներ, պատկերագրքեր, հուշանվերային քարե կազմով գրքեր:

Լույս է ընծայել «Հայերն աշխարհում» (1995) տեղեկատու բառարանը, «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2001) պատկերագիրքը, Ն. Ադոնցի «Հայկական հարց» (1996) և «Հայաստանի ոսկեհանք» (2006) հոդվածների ժող-ները, Ֆ. Դոստոևսկու «Արևելյան հարց» (2007) օրագրությունը, ռուս. վերահրատարակել է Յ. Շիլթերգերի 1886-ին տպագրված «Ճանապարհորդություն Մյունխենից Եվրոպա, Ասիա, Աֆրիկա 1394–1427» երկը (2012), Ս. Գլինկայի և Վ. Աբազայի ուսումնասիրությունները, որոնք մատենագիտ. հազվագյուտ նմուշներ են: 2009–12-ին նմանահանությամբ լույս է ընծայել Ղ. Ալիշանի «Սիսական», «Շիրակ», «Այրարատ», «Սիսուան» աշխատությունները և Սայաթ-Նովայի խաղերի՝ Գևորգ Ախվերդյանի (1852) հրատարակած ժող-ը:

«Հ.»-ի նախաձեռնությամբ ստեղծվել է «Գիր» մատենաշարը. լույս է ընծայել «Գանձարան հայ հին բանաստեղծության» (2000) ժող-ը, Հ. Թումանյանի (2001), Ա. Իսահակյանի (2001), Վ. Տերյանի (2005), Ա. Բակունցի (2009) «Ընտրանի»-ները, Հ. Մաթևոսյանի «Սպիտակ թղթի առջև» (2004), Ե. Չարենցի «Վերջին խոսք...» (2007) ժող-ները: 1997-ից հրա-

տարակում է հուշանվերային գրքերի մատենաշար: 2011-ին Ե. Չարենցի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակել է բանաստեղծությունների (վանակատե, փայտե և այլ կազմերով, զանազան դրվագումներով), նաև «Վահան Տերյան: Տերյանագիտություն և մատենագիտություն», 2012-ին՝ «Դյուցազնագիրք, 1991–2011» ժող-ները: Ուշագրավ են «Սև գիրք: Նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին» (հայ.՝ 2011, ռուս. լրց. հրտ.՝ 2012, կազմ.՝ Ա. Իսոյան), «Երկիր դրախտավայր. օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին...» (2014, կազմ.՝ Ա. Իսոյան, ընդգրկում է 300 հեղինակ) ժող-ները:

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», եռամսյա-քառամսյա գիտ. հանդես: ՀՊՄՀ հրատ.: Լույս է տեսնում 2003-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Մարտին *Գիլավյան:* Տպագրում է լեզվաբ., գրականագիտ., պատմ., իրավագիտ., մանկավարժ., մշակութ. հոդվածներ և ուսումնասիրություններ՝ հայ., ռուս. (ամփոփումներով):

«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ», հայագիտ. քառամսյա հանդես: ԵՊՀ հայագիտ. հետազոտությունների ինստ-ի (ՀՀԻ) հրատ.: Լույս է տեսնում 2014-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Արամ Սիմոնյան, պատ. քարտուղար՝ Վարուժան Պողոսյան: Լուսաբանում է ԵՊՀ-ում և ՀՀԻ-ում կատարվող հայագիտ. հետազոտությունները, տպագրում է նաև օտարազգի հայագետների ուսումնասիրությունները հայագիտ-յան չուսումնասիրված խնդիրների վերաբերյալ: Նյութերը տպագրվում են հայ., ռուս., անգլ. (ամփոփումներով):

«ՀԱՅԱՍՏԱՆ», քաղ., բանասիր. և առևտրային շաբաթաթերթ: Կ. Պոլսի հայոց պատրիարքության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1846–52-ին Կ. Պոլսում՝ աշխարհաբար (մասամբ՝ գրաբար): Խմբագիրներ՝ Հովհաննես *Չամուռճյան*, Մկրտիչ *Աղաթոն*: Արևմտահայ անդրանիկ պաշտոնաթերթն է: «Հ.» եկեղեցու և օսմ. պետության շահերին ծառայեցնելու Հ. Չամուռճյանի ջանքերին հակառակ՝ Մ. Աղաթոնի օրոք (1848-ից) լուսաբանել է Արմ. Հայաստանում կատարվող հասքաղ. առաջադիմ. իրադարձություններն ու տեղաշարժերը: Տպագրել է հոդվածներ Եվրոպայում ազատագր. շարժումների, տնտեսագիտ-յան, առևտրի կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ: Անդրադարձել է Հայաստանյայց առաքել. և կաթոլիկ եկեղեցիների առճակատմանը:

«ՀԱՅԱՍՏԱՆ», կիսամսյա թերթ: Լույս է տեսել 1888–92-ին Լոնդոնում՝ հայ. և ֆրանս.: Խմբագրապետ՝ Միհրան *Սվազլյան*: Ներկայացրել է արևմտահայության ծանր վիճակը՝ Հայկ. հարցի վերաբերյալ Բեռլինի վեհաժողովի (1878) ընդունած որոշումների շուրջ հայանպաստ հաս. կարծիք ստեղծելու նպատակով: «Հայկական վավերագրեր» խորագրով հրատարակել է վեհաժողովի նյութերը: Ծանոթացրել է հայերի, Հայկ. հարցի և Հայաստանի վերաբերյալ օտարազգի գործիչների հոդվածներին ու նամակներին:

«ՀԱՅԱՍՏԱՆ», ազգ., գրական, քաղ. կիսաշաբաթաթերթ, հետագայում՝ շաբաթաթերթ: ՀՅԴ կուս-յան պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1915 և 1919–20-ին Սոֆիայում, 1920–25-ին՝ Պլովդիվում: Խմբագիրներ՝ Տիգրան Խաչիկյան, Օննիկ Վարդանյան, Մկրտիչ Թելալյան, Արմեն Սևան (Հովհաննես *Դևեճյան*), Գ. Փիլիպոսյան: Լուսաբանել է կուս-յան գործունեությունը, անդրադարձել է Հայաստանի առաջին հանրապետության (1918–20) կարևոր իրադարձություններին, Մեծ եղեռնից փրկված աշխարհասփյուռ հայության խնդիրներին ևն:

«ՀԱՅԱՍՏԱՆ», քաղ., հաս. և գրական օրաթերթ: Լույս է տեսել 1917–18-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Վահան *Թոթովենց*: Հրատարակվել է զորավար Անդրանիկի նախաձեռնությամբ և Հ. Թումանյանի աջակցությամբ՝ արևմտահայ գաղթականության դատը հետամտելու նպատակով: Քննարկել է արևմտահայության ճակատագրին առնչվող հարցեր, անդրադարձել է Հայկ. հարցի նկատմամբ ժամանակի միջազգ. դիվանագիտ-յան վերաբերմունքին:



«Հայագիտական հանդես», *2003-ից, Երևան (№ 3, 2012)*



«Հայագիտության հարցեր», *2014-ից, Երևան (№ 1)*



«Հայաստան», *1915–25, Սոֆիա, Պլովդիվ*



«Հայաստան», *1917–18, Թիֆլիս*



«Հայաստան»,
1920-ից, Երևան



«Հայաստան»,
1980-97, Բեյրութ
(№ 145, 1997)

«Հայաստան»
հրատարակչության
տպագրած գրքերից



«ՀԱՅԱՍՏԱՆ», հաս., քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1920-ից (1920–21-ին՝ Կոմունիստ», 1921–40 և 1989–90-ին՝ «Խորհրդային Հայաստան», 1940–89-ին՝ «Սովետական Հայաստան») Երևանում: Մինչև 1990-ը՝ ՀԿԿ ԿԿ և ՀԽՍՀ ԳԽ Նախարարների խորհրդի պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Աշոտ *Հովհաննիսյան*, Եղիա *Չուբար*, Արտաշես *Կարինյան*, Ասքանազ *Մռավյան*, Թադևոս Սանդալյան, Դրաստամատ *Տեր-Սիմոնյան*, Վահան Երեմյան, Հմայակ Հովհաննիսյան, Ընձակ Վահանյան, Զարմայր Աշրաֆյան, Ադո *Ադոյան*, Հովհաննես *Պողոսյան*, Հովհաննես *Սամիկոնյան*, Հրաչյա Մարգարյան, Ղևոնդ *Դալլաքյան*, Հովհաննես *Բաղդասարյան*, Կարապետ Վարդանյան, Խաչիկ *Հովակիմյան*, Լորիս *Կրոյան*, Բակունց Անանիկյան, Էմանվել *Արաքսման-Սանուկյան*, Շչորս *Դավթյան*, Հենրիկ Աբրահամյան, Տիգրան *Նիկողոսյան* (1999-ից): Խորհրդ. տարիներին լուսաբանել է հանրապետության հաս-քաղ. կյանքը, կոմկուսի քաղաքականությունը: Պարբերաբար հրապարակել է հանրապետության գիտ-յանը, գրակ-յանը և արվ-ին, մշակութ. կյանքին վերաբերող նյութեր:

1990-ից անդրադառնում է նորանկախ ՀՀ-ում պետականության հաստատման ու ամրապնդման գործընթացին, արտաքին և ներքին քաղաքականությանը, Հայ դատին, Արցախյան հիմնախնդրին, Հայրենիք–Սփյուռք կապերին, գիտակրթ., մշակութ., մարզ. կյանքին:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (1947), ՀՀ Աժ պատվոգիր (2005):

«ՀԱՅԱՍՏԱՆ», ՀԱՀԳԲ պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1980–87 և 1991–97-ին (անկանոն պարբերականությամբ): Անվտանգության նկատառումներով տպագրության վայրը, խմբագիրների, հոդվածագիրների անունները չեն նշվել: Համարների մեծ մասը հրատարակվել է Բեյրութում: Սկզբում հայ-ի հետ միաժամանակ լույս են տեսել նաև անգլ., արաբ., ֆրանս., իտալ., ռուս., թուրք. և իսպ. հոդվածներ: 1983–87-ին օտարալեզու թողարկումները տպագրվել են առանձին պրակներով: 1991-ից հրատարակվել է միայն հայ.: Ներկայացրել է ՀԱՀԳԲ-ի պաշտոն. հաղորդագրությունները, տեղեկություններ ու մեկնաբանություններ նրա գինված գործողությունների, զոհված ու ձերբակալված անդամների մասին: Անդրադարձել է սփյուռքահայ հաս. կյանքին, միջազգ., հատկապես՝ մերձավորարլ. ու կովկասյան կարևոր իրադարձություններին:

«ՀԱՅԱՍՏԱՆ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1921-ի հունիսի 10-ին Երևանում՝ ՀՍԻՀ ժողկոմխորհի «Հայպետհրատի մասին դեկրետով»: Մինչև 1964-ը՝ *Հայպետհրատ* (Պետհրատ):

Հրատարակում է հաս-քաղ., գեղ., պատմագիտ., գիտահանրամատչելի գրակ.: 1970–80-ական թթ-ին տարեկան միջին հաշվով տպագրել է 210–220 անուն գիրք՝ մոտ 1 350 000 ընդհանուր տպաքանակով: Այժմ հրատարակում է տարեկան 50–60 անուն գիրք՝ 500-ական տպաքանակով: 2000-ից լույս է ընծայում *«Գրական հայրենիք»* (անկանոն պարբերականությամբ) թերթը, որը լուսաբանում է ՀՀ-ի հրատարակչությունների գործունեությունը:

Հրատարակչ. ավանդույթների ձևավորմանը մեծապես նպաստել են Եղիշե *Չարենցը* (1928–35-ին՝ բաժնի վարիչ), Տ. Խաչվանքյանը, Հ. Կոջոյանը, Մ. Սարյանը, Մ. Սարգսյանը, Ռ. Զարյանը և ուր.:

«Հ.»-ի տնօրեններ են եղել Էդվարդ Չոփուրյանը, Լևոն Օհանյանը, Հայկ Գասպարյանը, Հայկ Դոնոյանը, Եվգենյա Մելիքովան, Հարություն *Մկրտչյանը*, Աշիկ *Ղազարյանը*, Տիգրան Ալեքսանյանը, Խնկանոս Դանիելյանը, Բախշի Ներսիսյանը, Գրիգոր *Բալասանյանը*, Կարո Վարդանյանը, Խիկար *Բարսեղյանը*, Մխիթար *Դավթյանը*, Վահագն Մկրտչյանը, Վիկտոր *Բալայանը*, Հրանտ *Ղազարյանը*, Դավիթ *Մարգսյանը*, Վահագն *Մարգսյանը* (1998-ից):

ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (2001):

«ՀԱՅԱՍՏԱՆ. ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱ», տնտ. և գիտահանրամատչելի ամսագիր (մինչև 1962-ը՝ երկամսյա)։ ՀՀ ԳԱԱ և ՀՀ ֆինանսների նախարարության հրատ.։ Լույս է տեսնում 1957-ից Երևանում (1957–92-ին՝ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1992–2000-ին՝ «Էկոնոմիկա»)։ Խմբագիրներ՝ Օգսեն Հովհաննիսյան, Գ. Իսահակյան, Միքայել Քոթանյան, Աշոտ Թադևոսյան, Ռաֆայել *Շախկուլյան*, Մարտիրոս Պետրոսյան, Միհեր Դավոյան (2001-ից)։ Տպագրում է ՀՀ տնտեսության զարգացման ուղիների, կառավարման մեխանիզմների կատարելագործման, շրջակա միջավայրի պահպանման և այլ հարցերի վերաբերյալ հայ. և ռուս. հոդվածներ (ամփոփումներով)։ Անդրադառնում է հայ տնտեսագիտ. մտքի պատմությանը, հետևում միջազգ. տնտեսագիտ. նորություններին։



«Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», *1957-ից, Երևան (№ 8, 2012)*

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», կրոնաբարոյական, գրական-գեղ., պատմ. ամսաթերթ, ապա՝ եռամսյա։ Ամերիկայի Հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ։ Լույս է տեսել 1939–61-ին Նյու Յորքում։ Խմբագրակազմ (Մյուռռն Կրճիկյան, Եղիշե Սիմոնյան, Գառնիկ Հալաճյան, Սուրեն Մանվելյան, Իսահակ Ղազարյան, Նուպար Քյուփելյան, Գրիգոր Ոսկանյան և ուր)։ Լուսաբանել է առաջնորդարանի գործունեությունը, ամերիկահայ համայնքի առօրյան, տպագրել է կրոն. և պատմ. թեմաներով նյութեր, գեղ. ստեղծագործություններ։



«Հայաստանեայց եկեղեցի», *1939–61, Նյու Յորք (№ 2, 1941)*

«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃԱԿԱՏ», հաս-քաղ. շաբաթաթերթ։ Բուխարեստի Հայաստանյան ճակատ կազմակերպության կենտր. կոմիտեի պաշտոնաթերթ։ Լույս է տեսել 1946–50-ին Բուխարեստում։ Տնօրեն-խմբագիր՝ Հարություն Պապոյան։ Հանդես է եկել Հայ դատի պաշտպանությամբ, քնադատել Թուրքիայի երկդիմի քաղաքականությունը Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–41) տարիներին։ Տպագրել է գիտ. և մշակութ. նյութեր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԱԳ), հայ տպագիր գրքի ամենախոշոր պահոցն աշխարհում։ Կազմավորվել է Երևանի գավառ. ուսումնարանի (1832) և արական գիմնազիայի (1881) հիմնակազմ և աշակերտ. գրադարանների 18 հզ. միավոր գրքային ֆոնդերի հիման վրա։ 1919-ի հուլիսին «Պետական հանրային մատենադարանի մասին» օրենքով ստացել է պետ. գլխ. գրադարանի կարգավիճակ (1919-ից՝ Հայաստանի հանրային, 1922-ից՝ ՀՀ պետ., 1925-ից՝ Ալեքսանդր Սյասնիկյանի անվ. հանրապետ., 1990-ից՝ ՀԱԳ)։ Գրադարանի առաջին գրացուցակը և գրքամատյանները կազմել է Խաչատուր *Աբովյանը* (1843–48-ին՝ տնօրեն)։ 1920-ից գրադարանի ֆոնդերը ձևավորվել են պետ., հաս., գիտ. ու մշակութ. նշանավոր գործիչների անձն. գրադարանների, կրթ. և ուս. հաստատությունների հավաքածուների ու տարբեր երկրներից ստացված նվիրատվությունների հիման վրա։ 1922-ին ունեցել է 40 հզ. միավոր գրակ., 1 ընթերցասրահ, 7 աշխատող։

ՀԱԳ-ը ներկայում ունի 6,8 մլն միավոր գրակ. (գիրք, հանդես, լրագիր, քարտեզ, նոտա, մանրաժապավեն, ձայնապնակ և այլ նյութեր)՝ հայ. և շուրջ 70 այլ լեզուներով, մոտ 40 հզ. ընթերցող ու բաժանորդ։ Տարեկան տացքը՝ 2 660 865, հաճախումը՝ շուրջ 452 հզ.։ Ունի գլխ. գրապահոց, համալրման, գրքափոխանակության, արտաքին կապերի և զարգացման ծրագրերի, գրակ-յան մշակման և գրացուցակների կազմման, ինատիպ, հազվագյուտ և արխիվային գրակ-յան, արվ-ի գրակ-յան և ոչ գրքային հրատ-ների, նոտային-երաժշտ. գրակ-յան, սպասարկման, բաժնույթների, մատենագիտ-յան և գիտ. հետազոտությունների, գրադարանային գործառույթների ավտոմատացման և էլեկտրոնային տեղեկատվ. սպասարկման, հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման, տպագիր արտադրանքի



Հայաստանի ազգային գրադարանի *կենտրոնական մասնաշենքը*



Հնատիպ և հազվագյուտ գրքերի ցուցադրություն ՀԱԳ-ում

Հայաստանի ազգային գրապալատի *հրատարակություններ*



«Հայ գրականության բիբլիոգրաֆիա» (1953, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը



«Գիրքը Սովետական Հայաստանում. 1920–1930» (հ. 1, 1978, Ե.) գրքի կազմը

վերականգնման և հրատարակչ. բաժիններ, 70 ենթաբաժին, շուրջ 140 անուն տարբեր բնույթի գրացուցակներ և քարտարաններ, մասնագիտացված 14 ընթերցասրահ: Գրադարանը գիտակրթ., մշակութ., տեղեկատվ. խոշոր հաստատություն է, կապեր ունի շուրջ 40 երկրների 130-ից ավելի գրադարանների, մշակութահաս. կազմակերպությունների և միավորումների հետ: ՀԱԳ-ը հանրապետության էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման և գրակ-յան թվայնացման կենտրոնն է: Նրա ֆոնդերից օգտվում են նաև ՀՀ և արտերկրի գրադարաններ, կազմակերպություններ:

ՀԱԳ-ի հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրակ-յան պահպանման բաժնում հավաքված են հայատառ գրակ-յան (1512-ից) և հայ. պարբ-ների (1794-ից) մեկական օրինակներ, XVI–XVIII դդ-ի հազվագյուտ արժեք ունեցող այլալեզու գրակ., տպագր. առումով ուշագրավ («հսկա», «թզուկ», մետաքսի վրա տպագրված) գրքեր: Այստեղ են պահվում հայ. առաջին տպագիր գրքերը՝ ***Ուրբաթագիրքը, Պարզատումարը, Պատարագամատոյցը, Աղթարքը, Տաղարանը*** (Վենետիկ, 1512–13, տպագրիչ՝ ***Հակոբ Մեղապարտ***), հայատառ առաջին տպագիր քարտեզը՝ ***«Համապարած աշխարհացոյցը»*** (Ամստերդամ, 1695):

ՀԱԳ-ը տպագրում է գրադարանային գործին, հայ գրքի պատմությանը, գրադարանագիտ-յան և սոցիոլոգիայի հարցերին նվիրված մեթոդ. նյութեր ու մատենագիտ. գրակ., 2004–15-ին լույս է ընծայել ***«Հոգևոր հայրենիք»*** ամսաթերթը: 1989-ին ՀԱԳ-ը սահմանել է «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալը:

1965-ին, հիմնադրման 150-ամյակի առթիվ, ՀԱԳ-ին շնորհվել է առաջին կարգի գիտ. գրադարանի կարգավիճակ:

ՀԱԳ-ի տնօրեններ են եղել Ստեփան ***Կանայանը***, Երվանդ ***Թաղիանոսյանը***, Սամիկոն Գրիգորյանը, Սուրեն Մարկոսյանը, Ազատ Սարտիկյանը, Թեմզա Զաքարյանը, Աղավնի Ստեփանյանը, Արմենակ Միրզոյանը, Արազի Թիրաբյանը, Հենրիկ Լիլոյանը, Ռաֆայել ***Իշխանյանը***, Գևորգ Տեր-Վարդանյանը, Դավիթ ***Սարգսյանը***, Տիգրան ***Զարգարյանը*** (2011-ից):

ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամություն» շքանշան (1982):

Գրկ. Հայաստանի ազգային գրադարանի պատմության ուրվագծեր (1832–1925), կազմ.՝ Ս. Գրիգորյան, Ե., 2007: Հայաստանի ազգային գրադարանի հրատարակությունների մատենագիտություն. 1937–2007, կազմ.՝ Գ. Գարապետյան, Ե., 2007: Դանձեր Հայաստանի ազգային գրադարանի: Պատկերագիրք, կազմ.՝ Ռ. Ղազարյան, Ե., 2012:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՊԱԼԱՏ, մինչև 1995-ը՝ ՀՀ պետ. գրապալատ, ՀՀ-ում հրատ-ների պետ. գրանցման, հաշվառման և ազգ. անձեռնմխելի ֆոնդերի պահպանության, ազգ. մատենագիտ-յան, գրքագիտ-յան, կենտրոնացված քարտագրացուցակավորման, մամուլի վիճակագրության և տեղեկատվության, ճյուղային սոցիոլոգ. հետազոտությունների ազգ. կենտրոն: Հիմնադրվել է Երևանում՝ ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1922-ի որոշմամբ: Գրապալատում գործում են գրքի՝ ISBN (1988-ից), երաժշտ. (նոտագրական)՝ ISMN (2002-ից) հրատ-ների միջազգ. ստանդարտ (չափորոշիչ) համարակալման համակարգերի ազգ. գործակալությունները, պարբ-ների միջազգ. ստանդարտ համարակալման ISSN (2004-ից) ազգ. կենտրոնը:

Գրապալատում պահվում են 1920-ից ցայսօր հանրապետությունում լույս ընծայված տպագիր ողջ արտադրանքի ազգ. (պետ.) անձեռնմխելի ամենաամբողջական՝ ավելի քան 1 200 000 հաշվվող ֆոնդերը: Գրապալատը

– հավաքում, մշակում, գրանցում, հաշվառում և պահպանում է ողջ աշխարհում լույս տեսնող հայկ. հրատ-ների օրինակները, ինչպես նաև արտերկրի ոչ հայկ. մամուլում Հայաստանի ու հայ ժողովրդի մասին հրապարակված նյութերը,

– ***«Հայ տպագրության տարեգիրք»*** խորագրով կազմում է ՀՀ-ում և Սփյուռքում լույս տեսած հրատ-ների, ինչպես նաև արտերկրի ոչ հայկ. մամուլում Հայաստանի ու հայ ժողովրդի մասին տպագրված

հոդվածների մատենագիտ. ընթացիկ ցանկերը, պարբերաբար՝ ամենամյա համարներով, լույս է ընծայում, նաև կազմում, հրատարակում և տարածում է մատենագիտ. այլ ցանկեր ու ժող-ներ,

– պատրաստում և հրապարակում է ՀՀ-ում լույս տեսած մամուլի և գրակ-յան հրատ-ների վերաբերյալ տարեկան վիճակագրությունը,

– 2007-ից իրականացնում է հայկ. տառատեսակների մշակման, թվայնացման և պահպանման ծրագիրը: Գրապալատում նախագծված ու թվայնացված «Գրապալատ» և «Մարիամ» համակարգչային տառատեսակները ՀՀ Կառավարությունը 2010-ից ընդունել է որպես պետ. փաստաթղթաշրջանառության մեջ կիրառվող պարտադիր տառատեսակներ: Այս ծրագրի շրջանակներում գրապալատը ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ 2008-ից անցկացնում է միջազգ. ամենամյա *«Գրանշան»* մրցույթը՝ սկզբում միայն հայկ., հետագայում՝ նաև ոչ լատ. բոլոր տառատեսակների:

Գրապալատը 1925-ից լույս է ընծայում հայ. առաջին մատենագիտ. պարբ-ը՝ «Տպագրության տարեգիրը» (1995-ից՝ «Հայ տպագրության տարեգիրք»), 1939-ից՝ «Ամսագրային հոդվածների տարեգիրը», 1949-ից՝ «Լրագրային հոդվածների տարեգիրը»: 1995-ից հիշյալ մատենագիտ. ցանկերը, ինչպես նաև առանձին խորագրով նույն թվականից տպագրվող «Սփյուռքահայ մամուլի տարեգիրքը», հրատարակվում են ամենամյա պարբերականությամբ լույս տեսնող ընթացիկ հրատ-ների ազգ. մատենագիտ-յան «Հայ տպագրության տարեգրքում», որը ներառում է նաև ատենախոսությունների սեղմագրերի, նոտագրական, պատկերային հրատ-ների, գրախոսությունների տարեգրքեր:

Գրապալատում են կազմվել ու հրատարակվել Հովհաննես *Պետրոսյանի* մատենագիտ. երկերը, «Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն (1953), «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» (1960) կենսամատենագիտ. հատորը, «Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա» (հ. 1, 1958), «Սովետական Հայաստանը ՍՍՀՄ մամուլում. 1946–1955» (1974), «Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն. 1920–1980» (1983), «Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն. 1981–2010» (2011), առանձին տասնամյակների ընդգրկումով՝ 1920–2010-ին հանրապետությունում լույս տեսած գրքերի (հ. 1–9, 1978–2012, հաջորդաբար՝ «Գիրքը Սովետական Հայաստանում», «Գիրքը Խորհրդային Հայաստանում», «Գիրքը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրերով) մատենագիտ. ցանկերը: 1972-ից տպագրել է նաև ՀԽՍՀ-ում հրատարակվող ադրբ. և քրդ. տպագիր արտադրանքի մատենագիտ. ցանկերը:

Հ. ա. գ-ի տնօրեններ են եղել Հովհաննես *Պետրոսյանը*, Գարսևան Հակոբյանը, Վիտալի Ասլանյանը, Մկրտիչ (Մգրո) Սարգսյանը, Հովհաննես Բեքմեզյանը (1993-ից):

Հովհաննես Բեքմեզյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ», հաս-քաղ., գրական-գեղ. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1924–98-ին (1941–58-ին ընդհատվել է) Երևանում: Մինչև 1990-ը՝ ՀԿԿ ԿԿ պաշտոն. հանդես: Խմբագիրներ՝ Ֆլորա Վարդանյան, Վարդուշ Տարախչյան, Լյուսի *Թադևոսյան*, Մարգո Չոլախյան, Վարսիկ Եղիազարյան, Աստղիկ Երիցյան, Ժենյա Մադոյան, Անժիկ Չիլինգարյան: Տպագրել է նյութեր կանանց ու երեխաների առողջապահ-յան, կենցաղի ու հանգստի կազմակերպման, գոյապահպան. և բնապահպան. հարցերի վերաբերյալ: Գրական բաժնում տպագրել է դաս. և ժամանակակից գրողների գործեր: Ունեցել է նորաձևության և խոհարար. խորհուրդների հավելվածներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1991-ին Երևանում: Նախագահը *Գարեգին Բ* Ամենայն հայոց կաթողիկոսն է: Հրատարակել է Աստվածաշունչ [արևելահայ., Սբ Էջմիածնի հետ (1994), գրաբար (1997)], «Նոր կտակարան և Սաղմոսներ»-ը (2004), «Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի»-ն (պատ. խմբագիր՝ Դավիթ *Գյուրջինյան*, 2012), «Աստվածաշնչի համառոտ ուղեցույց»-ը (2012): Աստվածաշնչագիտ. մատենաշարով լույս է ընծայել Ներսես ավագ քին. Ներսեսյանի «Աստվածաշունչը և հայ մշակույթը» (2001) և «Համատես Ավետարանները» (2007), «Ս. Գրքի




«Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն. 1981–2010» (2011, Ե.) գրքի կազմը



«Հայաստանի աշխատավորուհի», *1924–98, Երևան (№ 9–12, 1932)*



«Նոր կտակարան և Սաղմոսներ» (2004, Ե., **Հայաստանի աստվածաշնչային ընկերություն***) գրքի կազմը*



«Հայաստանի բժշկագիտություն», *1961-ից, Երևան (№ 2, 2012)*



«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի *(հ. 5, 2001, Ե., ԵՊՀ հրտր.) կազմը*



«Հայաստանի զրուցակից», *2007–13, Երևան*

հայերեն մեկնությունների մատենագիտությունը» (կազմ.՝ Եզնիկ արք. Պետրոսյան, Արմեն ***Տեր-Ստեփանյան,*** 2002), «Աստվածաշունչ: Ըստ հայ մատենագրության» (2005), «Ավետարանների գործող անձինք» (կազմ.՝ Ռուբեն աբեղա Զարգարյան, Շահե աբեղա Անանյան, 2009), «Ավետարանների գրպանի բառարան. Նոր Կտակարանի հունա-րեն-գրաբար» (կազմ.՝ Մ. Ապրեսյան, 2010) և այլ գրքեր: Տպագրել է նաև տարբեր տարիքի երեխաների համար նախատեսված գրքեր [«Մանուկների Աստվածաշունչ. 365 պատմություն...» (2004, 2010), «Իմ առաջին Աստվածաշունչը» (2007), «Իմ փոքրիկ Աստվածաշունչը», «Իմ մանչուկի Աստվածաշունչը», «Աստվածաշունչ ամենափոքրիկների համար» (երեքն էլ՝ 2010), «Աշակերտի Աստվածաշունչ» (2011) ևն]:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», ամսագիր: ՀՀ Պետպլանի, պետշինի և ՀՃՄ (մինչև 1966-ը՝ ՀԽՍՀ Ժողտնտխորհի, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի պետ. գիտատեխ. կոմիտեի, 1966–90-ին՝ Նախարարների խորհրդի Պետպլանի) պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1958–96-ին Երևանում՝ հայ. և ռուս. (1958–84-ին՝ «Հայաստանի արդյունաբերություն», 1990–92-ին՝ «Զվարթնոց», 1992–96-ին՝ «Գործարար Հայաստան»): Խմբագիրներ՝ Պետրոս Աթաբեկյան, Տոնիկ Կարապետյան, Յուրի Առաքելյան: Ծանոթացրել է հանրապետության արդ. ձեռնարկությունների, տրանսպորտային և շին. կազմակերպությունների աշխատանքներին, լուսաբանել է տնտ. և սոցիալ. հարցեր, տպագրել նյութեր գիտ-յան ու տեխնիկայի նվաճումների, արտադրության հետ դրանց կապի մասին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1961-ից Երևանում (մինչև 1995-ը՝ «Փորձարարական և կլինիկական բժշկություն»): Խմբագիրներ՝ Բարդուղիմեոս Ֆանարջյան, Իվան Գևորգյան, Ռաֆայել Ստամբոլցյան, Վիուլեն Հակոբյան, Յուրի Ալեքսանյան (1991-ից): Տպագրում է փորձարար., կանխարգելիչ և կլինիկ. բժշկագիտ. հարցեր լուսաբանող հոդվածներ ու ակնարկներ (հայ., ռուս., անգլ.):

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ», գիտահանրամատչելի եռամսյա պատկերազարդ հանդես: Բնության պահպանության հայկ. ընկերության կենտր. խորհրդի նախագահության հրատ.: Լույս է տեսել 1961–2000-ին Երևանում: Խմբագիրներ՝ Խաչատուր Միրիմանյան, Լևոն Հարությունյան, Անդրանիկ Բարսեղյան: Լուսաբանել է կենսոլորտի, ընդերքի, բուս. և կենդ. աշխարհների, ձեռակերտ ու բնական հուշարձանների պահպանության և օգտագործման հարցեր, պայքարել ՀՀ բնության պահպանության վերաբերյալ օրենքի լիարժեք գործադրման համար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՔԵՐԸ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՎԱՃԱՌՔՈՒՄ», եռամսյա հանդես: Հիմնադրվել է «Գրքերը տպագրության մեջ» նախագծի շրջանակում: Լույս է տեսնում 2004-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Վահան ***Խաչատրյան:*** Տպագրում է նոր գրքերի տեղեկատու ցանկերը, ելից տվյալներն ու տեղեկությունները, գրքի տարածման և ընթերցանության հիմնախնդիրներին նվիրված նյութեր, սոցիոլոգ. ուսումնասիրություններ:


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ» (հ. 1–5, 1986–2001, Երևան): Կազմողներ՝ Թաղևոս *Հակոբյան*, Հովհաննես *Բարսեղյան* և Ստեփան ***Մելիք-Բախշյան***: Ընդգրկում է պատմ. Հայաստանի և սահմանակից երկրների տարբեր գավառների՝ հնագույն ժամանակներից մեզ հասած բնիկ հայկ. և օտար գրակ-յան մեջ ու քարտեզներում հիշատակված տեղանունները:

Բառահոդվածներում տրված են աշխարհագր., պատմ., լեզվաբ., ազգագր. և այլ տեղեկություններ բնակավայրերի հիմնադրման ժա-

մանակի, պատմության, բնակչության թվի ու զբաղմունքի, ճարտ. հուշարձանների, աշխարհագր. պայմանների մասին: Առանձին հոդվածներ նաև պատկերազարդ են (լուսանկարներ, քարտեզներ ևն):
ՀՀ նախագահի մրց. (2003):


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐՈՒՅՑԻՑ», հաս-քաղ., կրթամշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 2007–13-ին Երևանում՝ հայ. և ռուս.: Խմբագիրներ՝ Արմեն Խանբաբյան, Աշոտ ***Աղաբաբյան***, Գենոֆիա Մարտիրոսյան: Անդրադարձել է ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթ., մշակութ., մարզ. կարևոր իրադարձություններին, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, միջազգ. անցուդարձին, պատմ. հիշարժան տարեթվերին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1948-ից Երևանում: Խմբագիրներ՝ Հրանտ ***Բատիկյան***, Էվրիկ Աֆրիկյան, Էմիլ Գևորգյան (2008-ից): Տպագրում է բուսաբանության, կենդանաբանության, մանրէաբանության, ֆիզիոլոգիայի, գենետիկայի, կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի, մոլեկուլային և բջջային կենսաբանության, կենսատեխնոլոգիայի, կենսատեղեկատվության և էկոլոգիայի բնագավառներին, ինչպես նաև բժշկագիտ-յան և ագրարային գիտ-ների որոշ հարցերի վերաբերող հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով): «Նոր գրքեր» բաժնում անդրադառնում է մասնագիտ. նոր հրատ-ներին: Պարբերաբար թողարկում է հավելվածներ, որոնք ներառում են հերթական գիտաժողովի զեկույցները:



«Հայաստանի կենսաբանական հանդես», *1948-ից, Երևան*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ», քաղ., տնտ., գրական-գեղ. և կրոնաբարոյական շաբաթաթերթ (1960-ից՝ ամսաթերթ): Լույս է տեսել 1900–68-ին Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում (1900–19-ին՝ «Կոչնակ», 1919–20-ին՝ «Կոչնակ Հայաստանի»): Խմբագիրներ՝ Վահան Քյուրքչյան, Հովհաննես Սանդիկյան, Խաչատուր Պեննեյան, Հովհաննես Ավագյան, Հայկակ Խազոյան, ***Վահե-Հայկ***, Անդրանիկ Պետիկյան: Տպագրել է հայապահպանման խնդիրներին նվիրված հոդվածներ, նպաստել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–45) տարիներին դատապարտել է ֆաշիզմը: Ունեցել է իրավաբ-օրենսդր. ծանոթությունների և խորհրդատվությունների բաժին:



«Հայաստանի կոչնակ», *1900–68, Բոստոն, Նյու Յորք*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», տեղեկատվ., վերլուծ. օրաթերթ: Լույս է տեսնում 1990-ից Երևանում: Մինչև 2000-ը՝ ՀՀ ԳԽ, ապա՝ ԱԺ պաշտոնաթերթ, 2001-ից՝ «Հանրապետություն» ՓԲԸ-ի հրատ.: Խմբագիրներ՝ Այդին ***Մորիկյան***, Մեսրոպ Հարությունյան, Լիզա Շաղարյան, Աշոտ ***Աղաբաբյան***, Տիգրան ***Ֆարմանյան*** (2001-ից): Լուսաբանում է պետ. կառավարման օրենսդիր, գործադիր, դատ. մարմինների գործունեությունը, ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունը, սոցիալ-տնտ., կրթ., մշակութ., մարզ. կյանքը, միջազգ. իրադարձությունները:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ», մատենաշար: Լույս է տեսնում Երևանում (h. 1–21..., 1968–2009...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ը: Խմբագրակազմ: Հատորներն առանձին մենագրություններ են՝ նվիրված հնագիտ. տարբեր դարաշրջանների հուշարձանների ուսումնասիրությանը: Ուշագրավ են Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի «Սյունիքի ժայռապատկերները» (1970), Հ. Քանփոլադյանի «Դվինի միջնադարյան ապակին (IX—XIII դդ.)» (ռուս., 1974), Հ. Մարտիրոսյանի «Արգիշտիխինիլի» (ռուս., 1974), Օ. Խնկիկյանի «Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում» (1977), Ս. Եսայանի, Լ. Բիագովի, Ս. Հմայակյանի և Ա. Կանեցյանի «Երևանի բիայնական դամբարանը» (ռուս., 1991), Ա. Փիլիպոսյանի «Հին Արևելքի շրջանակավոր դաստա-



«Հայաստանի Հանրապետություն», *1990-ից, Երևան*



«Հայաստանի հնագիտական հուշարձանները» *մատենաշարի Օ. Խնկիկյանի «Արեւելքները բրոնզեդարյան Հայաստանում» (1977, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



«Հայաստանի քիմիական հանդես», *1947-ից, Երևան (№ 1, 2013)*

Հայատառ թուրքերեն հրատարակություններ



«Աղօթք հասարակաց քրիստոնէից...» (1618, Լվով) գրքի գլխազարդով (6-րդ) էջ

կով դաշույններն ու սրերը» (1999), Ա. Փիլիպոսյանի և Ռ. Մկրտչյանի «Գեղհովտի վանտոսպյան (ուրարտական) քարայր-դամբարանը» (2001), Ժ. Խաչատրյանի «Սիսիանի դամբարանը (մ. թ. ա. I դարի երկրորդ կես)» (2009) և այլ աշխատություններ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԼՐԱԲԵՐ», բժշկ. գիտագործն. եռամսյա հանդես: Միքայելյանի անվ. վիրաբուժության ինստ-ի հրատ.: Լույս է տեսնում 1993-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Համլետ Թամազյան, խմբագիր՝ Ալֆրեդ Մկրտչյան (1993-ից), պատ. խմբագիր՝ Արմեն Էֆենճյան: Տպագրում է բժշկագիտ-յանը վերաբերող հայ., ռուս., անգլ. հոդվածներ և ուսումնասիրություններ (ամփոփումներով), անդրադառնում է ոլորտի նորություններին (հայրեն. և համաշխ.), հանրահայտ բժիշկների ու գիտնականների կյանքին ու գործունեությանը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1947-ից Երևանում: Խմբագիրներ՝ Արմենակ Մնջոյան, Գուրգեն Թադևոսյան, Մայա Ինճիկյան, Արաքսի Բաբայան, Արամ Նալբանդյան, Սարգիս Վարդանյան, Ադոլֆ Մանթաշյան, Աշոտ Սաղյան (2008-ից): Տպագրում է տես. նյութեր քիմ. գիտ-ների՝ ընդհանուր, անօրգ., վերլուծ., օրգ., կենսաօրգ., պոլիմերային, մետաղօրգ., կոորդինացիոն, բնական միացությունների, քիմ. ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նյութաբանության ուղղությունների վերաբերյալ, փորձարար. ուսումնասիրությունների արդյունքներ, անդրադառնում է միջազգ. գիտաժողովներին և համաժողովներին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿ», մարզ. եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: 1991-ից՝ *«Մարզական Հայաստան»:*

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», հոգևոր, մշակութ. ամսաթերթ: Հայաստանյայց առաքել. եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2007-ից Մոսկվայում (հայ., ռուս.): Խմբագիրներ՝ Ռուբեն Հայրապետյան, Հասմիկ Գրիգորյան (2008-ից): Ներկայացնում է Սբ Էջմիածնում և թեմում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, ծանոթացնում Հայ եկեղեցու տոներին, հանրահայտ հայերին, հայոց պատմության ուշագրավ էջերին, անդրադառնում է ՀՀ-ում, Արցախում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող անցուդարձին: Մեծ տեղ է հատկացնում Մոսկվայի Հայորդաց տան առօրյային, նպաստում է հայ երեխաների հոգևոր., ազգ. և մշակութ. դաստիարակությանը ՌԴ-ում: Տպագրում է գրական ստեղծագործություններ, ծանոթացնում նոր հրատ-ներին:

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, առաջին նմուշները երևան են եկել XIV դ-ում: Հայատառ թուրք-ը եղել է Օսմ. կայսրության արլ. նահանգներում՝ Արմ. Հայաստանում, բռնի իսլամացված ավելի քան կես միլիոն թրքախոս և հայ. չիմացող հայերի հաղորդակցման միջոցը: Ստեղծվել է հայատառ թուրք. գրակ.՝ բանահյուս., աշուղ., պատմ., գեղ., գիտ., ինչպես նաև տեխնիկայի, գյուղատնտեսության, արհեստների ու մշակույթի վերաբերյալ: Այս լեզվով են թարգմանվել համաշխ. դասականների ու ժամանակի հայտնի հեղինակների գործեր:

1850–70-ական թթ-ին և աբդուլհամիդյան բռնապետության դաժան տարիներին Հ. թ. գ. մեծապես նպաստել է հայ ժողովրդի թրքախոս հատվածի հոգևոր վերելքին:

Հ. թ. գ. տպագրվել է աշխարհի շուրջ 50 քաղաքների 200-ից ավելի, իսկ միայն Կ. Պոլսում (1730-ից)՝ ավելի քան 85 տպարաններում: Շուրջ 250 տարվա ընթացքում հրատարակվել են մոտ 2500 անուն հայատառ թուրք. գրքեր՝ երբեմն հայ. վերնագրերով, իսկ 500-ից ավելի թարգմանություններ և փոխադրություններ կատարվել են թատրոնի համար: Հայատառ թուրք-ով գրել ու թարգմանել են նաև թուրք

գրողները՝ սզբնավորելով թուրք. դրամատուրգիան, նոր գրակ-ն ու գրական թուրք-ը:

Հայատառ թուրք-ով ստեղծվել են օսմ-ի ուսուցման դասագրքեր, բառարաններ (հայ., հայատառ թուրք.՝ օսմ. բացատր. տեքստերով): Հայ լեզվաբանների հեղինակած հայատառ թուրք. շուրջ 100 դասագրքերով ու բառարաններով թուրքերը տասնամյակներ շարունակ սովորել են սեփական լեզուն:

Հայ հնատիպ գրքի շրջանում հայատառ թուրք-ով տպագրվել է ավելի քան 50 անուն գիրք: Հայ. վերնագրերով հրատարակվել են «Աղօթք հասարակաց քրիստոնէից...» (1618, Լվով) աղոթագիրքը, ***Միխթար Սեբաստացու*** «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին Հայոց շարադրեցեալ տաճկականաւ լեզուաւ» արևմտահայ աշխարհաբարի առաջին քերակ-ը, ***Գեորգ Միխայիմ Կուսպանդնու-պոլսեցու*** «Ճառ վասն ծննդեան եւ յարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», ***Աթանաս Մերսեանի*** «Համառօտ քերականութիւն արարեալ իտալական, հայկական եւ տաճկական լեզուաւ» երկերը, Գաբրիել ***Ավետիքյանի*** «Իտալերէն-հայերէն հայատառ թուրքերէն թօսքանեան բառարան»-ը, ***Սանուել Սրմաքեշ Կեսարյանի*** «Գիրք որ կոչի Ակն Լուսատու» ժող-ը, ինչպես նաև՝

«Գիրք զոր ասի խրատ հոգեկան» երկը. 1736-ին Կ. Պոլսում՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանում (20 էջ, 4º, 15,1 x 11,2 սմ, թարգմ. ֆրանս-ից՝ Հակոբ Դպիր Ճամճու օղլու):

«Երանելի Սբ Կղէմէս Էնկիւրին եպիսկոպոսուն պատմութիւնը» երկը. 1751-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (60 էջ, 12º, 10,6 x 6,2 սմ):

Հայատառ թուրք-ով հրատարակված գրքերից ուշագրավ են նաև՝ ***Պաղտրասար Դպիրի*** «Պու գիրք օլտուրքի քրիստոնէական հաւատքմըզա...» («Քրիստոնեական հավատքին անհրաժեշտ մի քանի գիտելիքներ...») երկը (1742):

Բելլարմինոս Ռոբերտոսի «Էյի էօլիւմէ հազըր օլմաքլըղըն մէշկուլ օլմասը իչին» («Նախապատրաստություն երանելի մահվան») ժող-ը. 1783-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (82 էջ, 12º, 9,2 x 4,7 սմ): Վերահրատարակվել է 1796-ին (86 էջ, 8º, 8,3 x 4,3 սմ) և 1807-ին՝ նույն տպարանում, 1825-ին (Վնն., Մխիթարյան տպ.). վերջին երկուսում տպակից է «Սուրբ Խաչ եօլուն զիյարէթի» հայատառ թուրք. գրքին:

«Սուրբ Խաչ եօլուն զիարէթի» («Այցելություն Սուրբ Խաչին») գիրքը. 1783-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (154 էջ, 9,2 x 4,7 սմ): Վերահրատարակվել է 1796-ին նույն տպարանում (150 էջ, 8,3 x 4,3 սմ):

Տպագրվել է նաև 1807-ին (2 անգամ, նույն տպ.), 1825-ին (2 անգամ, Վնն., Մխիթարյան տպ.), 1839-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.):

«Ճէհէննէմ իւզէրինէ իւչ քարոզլար» («Երեք քարոզ դժոխքի մասին») գիրքը. 1784-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (258 էջ, 8º, 11,3 x 6 սմ):

Անտոն վրդ. Սնրօղլու **«Էնկիւրլիւ սուրբ Թէոդիտոն նահատակըն վէ եէտի կուսանքլարըն պատմութիւնու»** («Անկյուրացի նահատակ սուրբ Թեոդիտոնի և յոթ կույսերի պատմությունը») երկը. 1791-ին՝ առանց տպագրության տեղի և տպարանի հիշատակության (159 էջ, 8º, 10,1 x 5,6 սմ):

Ստեփաննոս Ավգերյանցի **«Տօքուզ կիւն մտածական տուվա երանելի Կղեմէս հայրապետին վարքընըն իւզէրինէ»** («Իննօրյա մտածական աղոթքներ երանելի Կղեմես հայրապետի վարքի վերաբերյալ») ժող-ը. 1796-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (44 էջ, 8º, 10,5 x 6 սմ):

«Մուխթասարիճէ թարիք հէմափաք ռօզարընը» («Համառոտ պատմություն») գիրքը. 1796-ին նույն տպարանում (28 էջ, 8º, 8,3 x 5 սմ):

Հայատառ թուրքերեն հրատարակություններ



«Սուրբ Խաչ եօլուն զիարէթի» (1783, Տրիեստ) գրքի 2-րդ էջը



Պաղտրասար Դպիրի «Պու գիրք օլտուրքի...» (1820, Կ. Պոլիս) գրքի 3-րդ էջը



«Ազգային սահմանադրութիւն հայոց»-ի (1863, Կ. Պոլիս) փիփղոսաթերթը

Հայատառ թուրքերեն պարբերականներ


ZOHAL
ԱՂՈՒԹԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ
1856
Zohal Ceride-i Devriye

«Զօհալ» («Երեւակ»), 1855–56, Կ. Պոլիս


ԽԷՅԱԼ

«Խէյալ» («Անուրջ»), 1873, Կ. Պոլիս


1885
ՃԻՀԱՆ
Ermeni harfli Türkçe haftalık CİHAN dergisi.
Yıl: 1, S: 30, İst., 28 Temmuz 1885.

«Ճիհան» («Աշխարհ»), 1884–85, Կ. Պոլիս

Թամպուրի Արութինի (Քյուչուկ Արութին) «**Թահմաս Գուլու խանըն թէվարիքի**» («Պատմություն Թահմազ Ղուլի խանի») երկը. 1800-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության (96 էջ, 12º, 10,1 x 5,7 սմ):

«**Քրիստոնէական քըլաւուզու...**» («Քրիստոնեական վարդապետություն...»), մեկ գրքով տպագրված երկհատոր գիրքը. 1800-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (517 էջ, 8º, 11,5 x 6,8 սմ):

Մինչև 1960-ական թթ-ի վերջը հայատառ թուրք-ով հրատարակվել է բազմաբնույթ գրակ.՝ հայ առաքել. և կաթոլիկ. հայրերի աշխատություններ [Թոմա Գեմբացու «Քրիստոսա պէնզէր օլմազ իչին Թովմաս Գեմբացինին նասիհաթլէրի» («Քրիստոսին նմանվելու համար Թոմա Գեմբացու խրատները», թարգմ.՝ Պողոս Սարուշյանց Անկյուրացու, 1805, Տրիեստ, Մխիթարյան տպ.) ևն], վարքեր [«Սուրբ Օգոստինոս Հիպպոնա եպիսկոպոսուն էօմրիւնիւն րիվայէթի» («Հիպոննայի եպիսկոպոս սուրբ Օգոստինոսի վարքը», 1816, Վնն., Մխիթարյան տպ.) ևն], փիլ. [Էդուարդ Յունգի «Եունկ ֆէյլէսոֆուն փիղանլէրի, եախօտ Եունկուն կէճէլէրի» («Յունգ փիլիսոփայի գիշերները», 1816, Վնտ., Սբ Ղազարի տպ.) ևն], բժշկ. [Միքայել Րեստեն Տեր-Պետրոսյանի «Բժշկութիւն. բառարան...», հ. 1–2, 1882, Վնտ., Սբ Ղազարի տպ.], գեղ. [«Եպիկտետոս ֆէյլէսոֆուն էլճիւզիւ» («Առածք Եպիկտետոսի», 1837, Վնտ., Սբ Ղազարի տպ.) ևն]: Հայատառ թուրք. վերջին գիրքը՝ Տիգրան Քիրեճյանի «Տէսթան գիթապը» («Դեստանների գիրք»), լույս է տեսել 1968-ին Բուենոս Այրեսում:

Գրկ. **Ստեփանյան Հ.**, *Հայատառ թուրքերէն գրականությունը, Ե., 2001:* **Նույնի**, *Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727–1968), Սպամբուլ, 2005:*

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, 1840–1947-ին Կ. Պոլսում և հայկ. գաղթավայրերում տպագրվել են շուրջ 130 անուն հայատառ թուրք. պարբ-ներ: Դրանց հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ թուրք և Թուրքիայի ազգ. փոքրամասնությունների մտավորականները նախընտրել են դրանք օսմ-ով հրատարակվողներից, այդ պարբ-ներն ընթերցելու համար սովորել են հայ. այբուբենը:

Հայկ. թերթերի և թուրք. պաշտոնաթերթերի առաջին տպագրիչը Պողոս ***Արապյանն*** է, որ եղել է նաև Կայսեր. տպարանի ղեկավարը (1832–40): Հայտնի էին նաև տպագրիչ Հովհաննես ***Մյուհենդիսյանը***, լրագրող ու հրատարակիչ Միհրան Նագգաշյանը և ուր.: Հ. թ. պ. մ. տպագրվել է հայկ. տպարաններում:

Հայատառ թուրք. առաջին պարբ-ը՝ «Թագվիմի Վէգայի»-ն («Օրացույց դեպքերի»), «Լրոյ գիր Մեծի Տէրութեանն Օսմանեան» պաշտոնաթերթի հայատառ թուրք. տարբերակն է. լույս է տեսել 1840-ին (11 համար): Հայտնի են նաև «Ճէրիտէի Հավատիս» («Բանբեր նորությունների», 1843–47), ***«Մէճմաայը Հավատիս»*** («Ծաղկաքաղ լուրերի», 1852–77), «Զօհալ» («Երևակ», 1855–56), ***«Միւնաւրիյի Էրճիյաս»*** («Արգեռոսի մունետիկ», 1859–62), «Վարագայի Հավատիս» («Նորությունների թերթ», 1864–70), «Էնվարը Շարգիյէ» («Արևելքի ճառագայթ», 1866–77, Կարին), ***«Մանզումէի Էֆքեար»*** («Մտածումների շար», 1866–1917), «Աւետարեր» (1872–1911), «Խէյալ» («Անուրջ», 1873) «Թէրճեմանը Էֆքեար» («Թարգման մտածումների», 1877–85), «Ճիհան» («Աշխարհ», 1884–85), ***«Մէճմուայը Ախպար»*** («Հավաքածո լուրերի», 1884–1914), ***«Ճէրիփէի Շարգիյէ»*** («Օրագիր արևելյան», 1885–1913) և այլ պարբ-ներ. բոլորը լույս են տեսել Կ. Պոլսում: Վերջին՝ «Փարոս» ժողովրդ. շաբաթաթերթը հրատարակվել է Ֆիլադելֆիայում 1921-ին:

Գրկ. **Ստեփանյան Հ.**, *Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727–1968), Սպամբուլ, 2005:*

«ՀԱՅԱՑՔ», հաս-քաղ., մշակութ. օրաթերթ: Լույս է տեսնում 2010-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Աշոտ *Աղաբաբյան:* Անդրադառնում է ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող հաս-քաղ., մշակութ., գիտակրթ. իրադարձություններին, տարածաշրջ. և միջազգ. անցուդարձին, Սփյուռքի հիմնահարցերին:



«Հայացք», *2010-ից, Երևան*

«ՀԱՅԱՑՔ ԵՐԵՎԱՆԻՑ», քաղ., հաս., մշակութ., վերլուծ. եռամսյա հանդես: Ռազմավար. և ազգ. հետազոտությունների հայկ. կենտրոնի պաշտոն. պարբ.: Լույս է տեսել 1998–2003-ին Երևանում: Խմբագիրներ՝ Վալերի Այդինյան, Հրաչ Հակոբյան (պաշտոնակատար), Այդին *Մորիկյան*, Գևորգ Լալայան: Տպագրել է քաղաքագիտ. տես. հոդվածներ և հարցազրույցներ, միջազգ. հարաբերությունների վերլուծություն-գնահատականներ, մեծ տեղ է հատկացրել տարածաշրջ. անվտանգության ու համագործակցության, քաղաքաց. կրթության հարցերին, հրապարակել հետազոտություններ ՀՀ ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ: Հետևողականորեն անդրադարձել է Արցախյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացին, Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչմանը, Հայ դատին, հայ-թուրք. հակամարտությանը:



«Հայելի», *1897–1904, Վառնա, Ալեքսանդրիա*

«ՀԱՅԵԼԻ», ազգ. և երգիծ. շաբաթական հանդես: Լույս է տեսել 1897–1903-ին Վառնայում, 1903–04-ին՝ Ալեքսանդրիայում: Խմբագիր՝ Տիգրան Փափազյան: Տպագրել է լուրեր Բուլղարիայի, Ռումինիայի, Թուրքիայի և այլ երկրների հայկ. գաղթավայրերի վերաբերյալ: Լուսաբանել է Վառնայի աղքատախնամ ընկերության գործունեությունը, տպագրել է ակնարկներ ճարտ. հուշարձանների մասին, առևտրային հայտարարություններ, բժշկ. և կենցաղային խորհուրդներ, հանելուկներ, ծանոթացրել նոր հրատ-ներին: Ունեցել է հայատառ թուրք-ով բաժին:



«Հայելի», *1906–07, Թիֆլիս*

«ՀԱՅԵԼԻ», գեղ-երգիծ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1906–07-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Բ. Ճեպեյան, Վ. Պետրոսյան: Քննադատել է Ռուսաստանի Պետ. դումայի գործունեությունը, կրոնի սպասավորների վարքը, կենցաղում և հաս. հարաբերություններում տեղ գտած թերությունները: Տպագրել է ֆելիետոններ, երգիծ. պատմվածքներ ու ծաղրանկարներ: Աշխատակցել է նկարիչ Պ. Շիշմանյանը: Հրատարակվել է նաև «Հայելի խաբարդա», «Հայելի սատանա», «Հայելի հոպ-հոպ» վերնագրերով: 1906-ին լույս է ընծայել 2 հավելված՝ «Հոպ-հոպ» անվանմամբ:


«ՀԱՅԵԼԻ ԿԱԼԿԱԹԵԱՆ», քաղ., գրական և առևտրային շաբաթաթերթ: Կալկաթայի «Իմաստախնդրյան միաբանություն» հրատարակչ. ընկերության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1820-ին Կալկաթայում (4 համար): Խմբագիր՝ Հովհաննես Տեր-Հակոբյան: Տպագրել է քաղ. և տեղ. լուրեր, նաև պատմվածքներ ու բանաստեղծություններ, մանկավարժ. հոդվածներ: «Նավականք» բաժինը տեղեկացրել է ժամանող և մեկնող նավերի չվացուցակի ու նավապետների մասին: Նյութերը տպագրվել են գրաբար, մասամբ՝ աշխարհաբար:

«ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ», միջնադարյան բարոյախրատ. գրույցների ժող.: 1651-ին հայ. է թարգմանել *Ստեփանոս Լեհացին*՝ լատ. և լեհ. 2000 գրույցից 247-ը: Ժող-ի թեմաներից յուրաքանչյուրն առանձին գլուխ է (ընդամենը՝ 71), որտեղ զետեղված են աստվածաշնչյան տասը պատվիրանները բովանդակող, միմյանց հարակցող գրույցներ: Հայ ընթեցողին հասկանալի լինելու համար Ստեփանոս Լեհացին տեղայնացրել է գրույցները:



«Հայելի վարուց» *(1702) գրքի փիփղոսաթերթը*


Տպագրվել է 1702-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Տիտղ-ին՝ «Գիրք հայելի վարուց: Որ ասի հարանց վարք.…» (335 էջ, 8º, 12,4 x 7,5 սմ): Գ. Զարբհանալյանը և Ա. Ղազիկյանը ենթադրում են, որ տպագրվել է Մարսելում կամ Կ. Պոլսում, Գ. Բամ-



Հ. Աճառյանի **«Հայերեն արմատական բառարան»-ի** *(հ. 4, 1979, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը*



Գ. Ջահուկյանի **«Հայերեն ստուգաբանական բառարան»-ի** *(2010, Ե., «Ասողիկ») կազմը*



«Հայերենի բարբառագիտական ատլաս»-ի *(հ. 1, 1982, Ե., ԳԱ հրտ.) կազմը*

պուքճյանի կարծիքով՝ Կ. Պոլսում՝ Պետրոս Լատինացու տպարանում (տիտղթ-ի զարդանկարը համընկնում է 1714-ին այնտեղ տպագրված «Տաղարանի» տիտղթ-ի զարդանկարին):

Ժող-ը տպագրվել է նաև 1994-ին Երևանում (աշխատասիր.՝ Քնարիկ Տեր-Դավթյան-Արևշատյանի) և 2007-ին՝ Էջմիածնում (փոխադր.՝ գրաբարից):

«ՀԱՅԵՐ», ազգ., հաս., մշակութ. երկշաբաթյա պարբերաթերթ: Լույս է տեսել 1993-2008-ին Բուրգասում՝ բուլղ. (հայ. գլխագրով և սակավաթիվ հայ. հոդվածներով): Խմբագիր՝ Գևորգ Սարաֆյան: Լուսաբանել է բուլղարահայության և Բուրգասի հայկ. համայնքի հաս. և մշակութ. կյանքը, տպագրել լուրեր և պաշտոն. հաղորդագրություններ ՀՀ-ից (երբեմն՝ հայ.):

«ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ», Հրաչյա *Աճառյանի* կազմած ստուգաբան. բառարանը: Լույս է տեսել Երևանում՝ 7 հատորով (հ. 1-6-ը՝ ապակետիպ, 1926, հ. 7-ը՝ տպագիր, 1935) և 4 հատորով (1971-1979): «Հ. ա. բ.»-ում ընդգրկված է հայ հին մատենագրությամբ ավանդված շուրջ 11 հզ. բառարմատ, որից 2221-ը համարվում են անվավեր, մնացած 8775-ից ստուգաբանված են 5095-ը. 927-ը բնիկ (ինդեվրոպ.) են, 4015-ը՝ փոխառյալ, 155-ը՝ բնաձայնական, իսկ 3680-ը դեռևս ստուգաբանված չեն: Յուրաքանչյուր բառահոդված կազմված է 5 բաժնից, որտեղ քննված են հայ. բառարմատների հնչյուն., իմաստաբան-բացատր., բառակազմ., բառագործած., արմատների հնչյուն. տարբերակները, ստուգաբանված ու ներկայացված են տվյալ արմատի ստուգաբանության պատմությունն ու բարբառային օրինաչափությունները:

«ՀԱՅԵՐԵՆ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ», կազմել է Գևորգ *Ջահուկյանը*: Լույս է տեսել 2010-ին Երևանում: Հայ-ի ամենաընդարձակ ստուգաբան. բառարանն է. պարունակում է շուրջ 12 հզ. բառահոդված՝ ներառյալ նաև կեղծ, սխալագիր և միայն մեկ անգամ հանդիպած բառերը: Այս աշխատությունը, որի հիմն. սկզբնաղբյուրը Հ. Աճառյանի *«Հայերէն արմատական բառարանն»* է, ընդգրկում է նաև արմատ. բառարանի հրատ-ից հետո հայ իրականության մեջ կատարված ստուգաբան. հետազոտությունների արդյունքները: Յուրաքանչյուր բառահոդված պարունակում է բառի տարբերակները, իմաստները, ստուգաբանությունը և աղբյուրները: Աշխատությունն ավարտվում է հին հայ-ի վերջածանցների ստուգաբանությանը նվիրված բաժնով: «Հ. ս. բ.»-ի վերջն. խմբագրման աշխատանքները կատարել է Վահան Սարգսյանը:

«ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ» (ուսումնասիրություններ և նյութեր), մատենաշար (հ. 1-3..., 1982-2010...): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստ-ի բարբառագիտ-յան բաժինը:

1-ին հատորում (1982) քննված են տես. հարցեր, արժևորված է Հրաչյա Աճառյանի բարբառագիտ. ժառանգությունը, նկարագրված են Սոկսի, Եդեսիայի, Խարբերդի բարբառները:

2-րդում (1985) մեկնաբանված է հայ-ի բարբառագիտ. ատլասի ծրագիրը, տրված է Խոտորջուրի բարբառի լեզվաաշխարհագր. բնութագիրը, նկարագրված է Շապին-Գարահիսարի բարբառի ձևաբանությունը ևն:

3-րդում (2010) քննված են հայ-ի տարբեր բարբառների հնչյուն., բառային, քերական. մակարդակների միավորներ, կատարված են ստուգաբան. դիտարկումներ: Վիկտոր Կատվալյան

«ՀԱՅԵՐԷՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ» (հ. 1-4), կազմել է Ստեփան *Մալխասյանցը*: Լույս է տեսել Երևանում (1944-45, ԽՍՀՄ Պետ. 1-ին կարգի մրց.), Բեյրութում (1955-56, «Սևան» տպ., 1983, նույն տպ.), Թեհրանում (1994, «Նայիրի» տպ.), Երևանում (2010, ԵՊՀ հրտ.) ևն:

Ներառում է հայոց լեզվի բոլոր դրսևորումների՝ գրաբարի, միջին հայ-ի, գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների,

հայ–ի բարբառների շուրջ 120 հզ. բառ և դարձվածքային միավոր: Բառերի ու դարձվածքների ընդգրկման ծավալով, բառահոդվածի կազմության հարստությամբ, բառերի և դարձվածքային միավորների իմաստաբան., բառագիտ., ոճ. ու քերական. բազմակողմանի մշակվածությամբ «Հ. բ. բ.» ոչ միայն ազգ. գրական լեզվի առաջին ընդարձակ, այլև պատմ. բառարան է: «Հ. բ. բ.»–ում զուգահեռաբար համատեղված են ինչպես պատմ., այնպես էլ ժամանակակից գրական լեզվի բացատր. բառարանների սկզբունքները:

«ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ», առասպելաբան. հնագույն վեպ: Պահպանվել է Մովսես Խորենացու և Սեբեոսի Պատմություններում: «Հ. և Բ.» տիեզ. առասպելից ավանդավեպի փոխարկվելու հնամենի նմուշ է. ենթահիմքում լույսն ու գարունը խորհրդանշող աստվածային աղեղնավորի պայքարն է ընդդեմ խավարն ու ձմեռը մարմնավորող բռնակալի: Աղեղնավորը դարձել է հայ ցեղի նախնի՝ Հայկ, իսկ բռնակալը՝ սեմ. ժողովուրդների արեգակնային աստված կամ Ասորեստանի թագավոր՝ Բել: Ըստ վեպի՝ Հայկից սերում են հայերը, իսկ նրա բնակության երկիրը կոչվում է Հայք: Կռվի վայրը Հայկն անվանել է Հայոց ձոր:

Օրիոն համաստեղությունը հայոց մեջ կոչվել է Հայկ (Խեյք, Խեք): Ենթադրվում է, որ հայկ. ամսանունները (հայոց հին տոմարով) Հայկի ուստրերի և դուստրերի անուններն են:

Գրկ. **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 1, Ե., 1966, էջ 38–53:* **Գրիգորյան Գ.**, *Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք 1, Ե., 1972, էջ 97–144:* **Հարությունյան Ս.**, *Հայ առասպելաբանություն, Բ., 2000:* **Նույնի**, *Հայ հին վիպաշխարհը, Ե., 2004:*

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ», հայագիտ. տարեգիրք: Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտ. ամբիոնի հրատ.: Լույս է տեսնում 1970–ից (1975–76 և 1985–90–ին ընդհատվել է) Բեյրութում: Խմբագիրներ՝ Երվանդ ***Քասունի***, Անդրանիկ վրդ. ***Կռանյան*** (1991–ից), պատ. խմբագիր՝ Անդրանիկ ***Տագեսյան*** (1993–ից): Ներկայացնում է ՀՀ–ի, սփյուռքահայ, օտարազգի հայագետների գործունեությունը, նպաստում է նրանց համագործակցությանը: Տպագրում է հայոց լեզվին, պատմությանը, մշակույթին, գրակ–յանը, պատմագիտ–յանը, ճարտ. հուշարձաններին, ազգագրությանը վերաբերող գիտ. հոդվածներ, անտիպ փաստագր. նյութեր, գրախոսականներ, հուշագրություններ՝ հայ., արաբ., անգլ., ֆրանս.: Ծանոթացնում է ՀՀ–ում և Սփյուռքում հրատարակված հայագիտ. ուսումնասիրություններին, տեղեկություններ հաղորդում հայագիտ–յանը նվիրված միջազգ. համաժողովների մասին: Տարեգրքում հրատարակվել են Հ. Օշականի «Խաչատուր Աբովեան, Գաբրիէլ Սունդուկեանց» (1971), Հ. Սիրունու «Հայկական տեղաշարժերը Արեւելեան Եւրոպայի քարտէսին վրայ» (1972), Բ. Ուլուբաբյանի և Մ. Հասրաթյանի «Դադիվանք» (1980) և «Խուդավանք–Խաթրավանք» (1982–84), Ե. Քասունու «Շումերների եւ հայ–շումերական յարաբերութիւնների հարցի մասին» (1980), Վ. Թաթիկյանի «Հայկական գորգարվեստ» (1981) և այլ ուսումնասիրություններ:

Գրկ. Մատենագիտութիւն «Հայազեան հայագիտական հանդէսի Ա.–Լ. հատորներ» (1970–2010, կազմ.՝ Ս. Օգնայան), Բ., 2010:

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ», ազգ., հաս., քաղ., մշակութ. շաբաթաթերթ: Հայկազունների (սկաուտական) մարմնամարզ. ազգ. միության հրատ.: Լույս է տեսել 1990–92–ին Երևանում: Խմբագիր՝ Ռուզան Ասատրյան: Տպագրել է նյութեր հայկ. իրականության մեջ սկաուտ. շարժման սկզբնավորման ու տարածման, Հայոց ցեղասպանության տարիների տարագիրներին ցուցաբերած աջակցության վերաբերյալ, անդրադարձել ՀՀ անկախության հռչակմանը, երկրում սկաուտ. շարժման արմատավորմանը, հայոց պահանջատիրությանը, Արցախյան շարժմանը, հայոց ազգ–ազատագր. պայքարին, ազգ. ոգու վերազարթոնքին, հայոց պատմությանը, մշակույթին և այլ հարցերի:



Ս. Մալխասյանցի **«Հայերէն բացատրական բառարան»**–*ի (հ. 1, 1944, Ե., Հայպետհրատ) կազմը*



«Հայկ և Բելի կռիվը» (1972, նկարիչ՝ Լիդա Խանամիրյան)



«Հայկազեան հայագիտական հանդէս», *1970–ից, Բեյրութ (1972)*



«Հայկազունք», *1990–92, Երևան*



«Հայկական բանակ», *1995-ից, Երևան (№ 3, 2012)*

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ», գրական, մանկավարժ. և կրոն. ամսագիր: Լույս է տեսել 1864–71 և 1874–79-ին (1864–65-ին՝ «Հայկական աշխարհի կոռնկ») Թիֆլիսում, ապա՝ Շուշիում, Գանձակում, Բաքվում, Երևանում: *«Կոռնկ Հայոց աշխարհին»* ամսագրի շարունակությունն է: Խմբագիր-հրատարակիչ՝ Խորեն *Ստեփանե*: Ծանոթացրել է հայ գրական կյանքի իրադարձություններին, տպագրել նյութեր Հայաստանի պատմության, աշխարհագրության, հայոց լեզվի ու գրակ-յան վերաբերյալ: Աջակցել է հայ մանկավարժների գործունեությանը, անդրադարձել կանանց կրթությանն ու դաստիարակությանը, կարևորել Հայ եկեղեցին, նրա պատմությունը, հայ աստվածաբանության հարցերը: Հանդեսում տեղ են գտել Գ. Արծրունու հոդվածները, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Մադաթյանի (Սեյադ) բանաստեղծություններից, օտարազգի հեղինակների գործեր: Աշխատակցել են Ռ. Հասան-Ջալալյանը, Հ. Քուչուբեկյանը, Պ. Պոռշյանը, Հ. Տեր-Միրաքյանը, Հ. Առաքելյանը և ուր.:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», ՀՀ ՊՆ ռազմագիտ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 1995-ից Երևանում: Խմբագիրներ՝ Հայկ *Քոթանջյան*, Արկադի *Սարգսյան*, Դավիթ Չիլինգարյան (2005-ից): Առաջին 3 համարներում հոդվածները հրապարակվել են հայ. և ռուս., այնուհետև՝ միայն հայ. (ռուս. և անգլ. ամփոփումներով): Հանդեսը հետամուտ է ռազմագիտ. մտքի զարգացմանը ՀՀ-ում, նպաստում է ԶՈՒ-ի սպայակազմի ռազմ. գիտելիքների հարստացմանը, հայկ. և արտասահմ. ԶՈՒ-ի առաջավոր փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը, հայ. ռազմագիտ. տերմինաբանության մշակմանը:



Պողոս Նուբար, ՀԲԸՄ հիմնադիր-նախագահ

«Հ. բ.» հատուկ թողարկմամբ հրատարակել է ՀՀ ազգ. անվտանգության ռազմավարության նախագիծը: 2007-ից լույս է ընծայում «Աշխատանքային տետրեր» հավելվածը, ներկայացնում է Ազգ. ռազմավար. հետազոտությունների ինստ-ի վերլուծ. կենտրոնի փորձագետների կիրառ. մշակումները: Անդրադառնում է տարածաշրջանի և միջազգ. ռազմաքաղ. կարևոր իրադարձություններին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԲԸՄ, AGBU-Armenian General Benevolent Union), հիմնադրվել է 1906-ի ապրիլի 15-ին Կահիրեում՝ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչներ Յագուբ Արթինի, Երվանդ *Ազաթոնի*, Նազարեթ *Տաղավարյանի*, Գրիգոր *Եղիայանի*, Մկրտիչ Անդրանիկյանի և ուր. նախաձեռնությամբ՝ հայության հոգևոր, մշակութ. ու տնտ. զարգացմանը նպաստելու նպատակով:

Մինչև 1921-ը ՀԲԸՄ-ի վարչ. կենտրոնը Կահիրեում էր, 1922-ին տեղափոխվել է Փարիզ, 1940-ին՝ Նյու Յորք:

ՀԲԸՄ-ի կենտր. վարչ. ժողովը հրատարակում է *«Յուշարար-Միութիւն»* և *«Լյֆիհիֆյու Նյուզ»* պաշտոն. ամսագրերը, ինչպես նաև *«Արարատ»* (Նյու Յորք, անգլ.), «UGAB Magazine» և «La Lettre de L'UGAB» (Փարիզ), «AGBU Newsletter» (Տորոնտո), *«Խօսնակ»* և «Briefly» (Բեյրութ), «Generación 3» (Բուենոս Այրես), *«Միութիւն»* (Սիդնեյ), *«Այգ»* և *«Հայեացք»* (Նիկոզիա), *«Բարեգործականի ձայն»* (Պլովդիվ) և այլ պարբ-ներ:



Պերճ Սեդրակյան, ՀԲԸՄ նախագահ (2002-ից)

ՀԲԸՄ-ի նախագահներ են եղել Պողոս Նուբարը, Գալուստ Կյուլպենկյանը, Զարեհ Նուբարը, Արշակ Կարագյոզյանը, Ալեք Մանուկյանը (ՀՀ Ազգ. հերոս՝ 1994), Լուիզ Մանուկյան-Սիմոնը, Պերճ Սեդրակյանը (2002-ից):

Գրկ. Ողկեմափտեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան. Արծաթեայ յոբելեան. 1906–1931, Փ., 1935: Անդրէասեան Ա., *Համազգային առաքելութիւն, 1906–1981, Նյու Յորք, 1981:* Դալլաքյան Կ., *ՀԲԸ միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Ե., 1996:* Մելքոնյան Է., *Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում. 1923–1937 թթ., Ե., 1999:* Նույնի, *Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005:* Համազասպյան Վ., *Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Ե., 2001: Վերադարձ դէպի արմատներ: 100 ամեակ. 1906–2006 (կազմ.՝ Հ. Մսրփիրոսյան), Բ., 2006:* Norehad Bedros, *The Armenian General Benevolent Union, N. Y.,1966.*

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՐ, **հայոց գիր**, հայկ. ինչյունային գրանշանների համակարգ: Ստեղծել է ***Մեսրոպ Մաշտոցը*** 405-ին. կոչվում է նաև Մեսրոպյան կամ Մաշտոցյան գիր:


Առանձնացնում են Հ. գ-ի ստեղծման 4 փուլ: 1-ին փուլում Մեսրոպ Մաշտոցը ***Սահակ Պարթևի*** և բանիմաց այլ անձանց օգնությամբ տարրալուծել է անգիր լեզուն, բացահայտել նրա ինչյուն. համակարգը, ապա տարորոշված ինչյունների համար որոշել անհրաժեշտ գրանշանների քանակը:

2-րդ փուլում Մաշտոցն ստեղծել է հայոց գրերը՝ 36 տառ: 1-ին հայ. գրատեսակը ***գրչագիրն*** է (բանասիրության մեջ կոչվում է ուղղագիծ կամ ուղղանկյուն երկաթագիր): Մաշտոցյան այբուբենի բոլոր տառերն ստեղծված են վերից վար իջնող երկար, կարճ և լայն, ուղղաձիգ և հորիզոն. նուրբ գծերով: Բաղադրիչների մեջ երկարը հիմնագիծն է, որի աջ և ձախ կողմերում վերից վար համապատասխան դիրք գրավելով՝ կարճն ու լայնը նուրբերով միանում և ստեղծում են նշանագրեր: Մեսրոպ Մաշտոցը նախ ստեղծել է մեկական երկար, կարճ ու լայն և վերջին երկուսը մեկական առանձին նուրբերով երկարին միացած գրերը, որոնք Կորյունն անվանել է «առանձին», այնուհետև՝ 2 երկար և 1 լայն տարրերի մեկական նուրբերով իրար միացած գրերը: Դրանք կոչվում են «կրկնահար»՝ 2 իրար հարող երկար գծերի պատճառով: 3-րդ շարքն ստեղծվել է որոշ առանձին գծերից, որոնցից կարճը երկարին միանում է կրկին նուրբով. այդ շարքի գրերը կոչվում են «կրկնավոր»:



Հայկական գրով ինագույն խաչանկար (VI դ., Երուսաղեմ)

3-րդ փուլն այբուբենի ձևավորումն է: Կորյունը նշանագրերի ստեղծման գործողությունից որոշակիորեն սահմանազատել է այբուբենի ստեղծման գործընթացը: Նշանագրերի ստեղծումն ավարտելով՝ Մեսրոպ Մաշտոցը ճշտորոշել է նրանց ինչյուն. արժեքները, տվել համապատասխան անվանումներ (այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, է, ըթ, թո, ժէ, ինի, լիւն, խէ, ծա, կեն, հո, ձա, ղատ, ճէ, մեն, յի, նու, շա, վո, չա, պէ, ջէ, ռա, սէ, վեւ, տիւն, րէ, ցո, հիւն, փիւր, քէ) և դասավորել 4 շարքով՝ նրանցով թվանշաններ՝ միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և հազարավորներ արտահայտելու համար: Այբուբենի ինչյունային և թվային արժեքները կարգելիս Մեսրոպ Մաշտոցն առաջնորդվել է հուն. այբուբենով:



Հայկական գրի *զարգացման ընթացքը ըստ Կարո Ղաֆադարյանի «Հայկական գրի սկզբնական տեսակները» ուսումնասիրության (1939, Ե., ԱրմՖԱՆ)*

4-րդ փուլը հայ նորաստեղծ գրերի գործածության կանոնների սահմանումն է և հայկ. գրչության արվ-ի հիմունքների մշակումը: Այս նպատակով Մաշտոցը Սամոսատում գտել է Հռոփանոս անունով մի հույն գրիչի, որի հետ ձևավորել է ***գլխագիր*** և ***բոլորգիր*** գրատեսակները, ապա գրել տվել հայ. առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս յանճարոյ»՝ Սողոմոնի առակներից: XII դ-ի վերջերին մաշտոցյան այբուբենը համալրվել է օ և ֆ, XX դ-ում՝ և տառերով: Ժամանակակից հայ-ն ունի 39 տառ: Գրական արևելահայ-ում ւ-ը, որպես առանձին տառ, չի գործածվում:

Հ. գ. աշխարհի ամենակենսունակ գրերից է, նրանով ստեղծվել է հարուստ գրականություն: Այն հին, միջին և նոր քաղաքակրթությունների գիր է և արժեքավոր ներդրում է համաշխ. մշակույթի գանձարանում: Օգտագործվում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Ջավախքում և Սփյուռքում՝ ցայսօր՝ առանց էական փոփոխությունների:

Գրկ. **Կորյուն**, *Վարք Մաշտոցի, Ե., 1979:* **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց, Ե., 1981:* **Աճառյան Հ.**, *Հայոց գրերը, Ե., 1968:* **Ղաֆադարյան Կ.**, *Հայկական գրի սկզբնական տեսակները, Ե., 1939:*



*«Հայկական գրադարան» (**Հայկական գրադարանային ասոցիացիայի** հրտր.) տարեգրքի շապիկը (№ 9, 2005)*



«Հայկական ժամանակ», *1999-ից, Երևան*



«Հայկական խորհրդային հանրագիտարան»-*ի (հ. 1, պր. 1, Ե., 1935) կազմը*

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԹԱՆԳԱՐԱՆ Ամերիկայի, հիմնադրվել է 1980-ին Ուտերթաունում (ԱՄՆ): 2013-ից՝ Ամերիկայի հայկ. թանգարան: Թանգարանում պահվում են հայ. և օտար լեզուներով գրքեր, հայկ. հին գորգեր, սափորներ, հայ նկարիչների գործեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ (ՀԳԱ), հիմնադրվել է 1994-ին Երևանում՝ ՀԱԳ-ի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ., Խնկո Ապոր անվ. մանկ. հանրապետ., Ա. Իսահակյանի անվ. քաղաքային կենտր., գիտաբժշկ., գիտատեխ., գրադարանների, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ (մինչև 2004-ը՝ Հայկ. գրադարանային միություն):

ՀԳԱ-ն կազմակերպում է գրադարանային գործի զարգացմանը, արդիական տեղեկատվությանը նվիրված գիտաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ, կլոր սեղաններ, բանավեճեր ևն: Համագործակցում է տարածաշրջ. և միջազգ. նմանատիպ կազմակերպությունների հետ: 1996–2003-ին եղել է Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգ. դաշնության անդամ: 1997-ին մասնակցել է դաշնության 4 մշտ. հանձնաժողովների աշխատանքներին: Ներկայացուցչություն է ունեցել Ազատ տեղեկատվության և արտահայտման ազատության հանձնաժողովում: Մասնակցել է միջազգ. գիտաժողովների, խորհրդաժողովների:

ՀԳԱ-ին անդամակցում է շուրջ 40 գրադարանի ավելի քան 240 ներկայացուցիչ: Պաշտոն. տպագիր հրատ-ը և խոսնակը «Հայկական գրադարան» տարեգիրքն է (սկզբում՝ «Տեղեկագիրք»):

ՀԳԱ-ի նախագահներ են եղել Ներսես *Հայրապետյանը* (1994–2003), Դավիթ *Սարգսյանը* (2003–12), Ռուզան Տոնոյանը (2012-ից):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍՊԵՐԱՆՏԻՍՏ» (“Armena esperanticto”), գրական, մշակութ., ուս. պատկերազարդ ամսաթերթ՝ հայ. և էսպերանտո լեզվով: ԵՊՀ-ին առընթեր հայկ. էսպերանտ. կազմակերպության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1958-ին Երևանում: Խմբագիր՝ Գուրգեն *Սևակ*: Ամրապնդել է հայ էսպերանտիստների կապերը ԽՍՀՄ էսպերանտ. խմբերի հետ: Ծանոթացրել է հայ և համաշխ. գրականը, էսպերանտոյով տպագրել չափածո գործեր (Հ. Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»՝ Գ. Սևակի թարգմանությամբ, ևն), հանելուկներ, նոտագրված երգեր: «Լրատու» բաժինը լուսաբանել է էսպերանտ. կյանքը Հայաստանում և Վրաստանում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Հայոց մեծ թվական*, օգտագործվել է հայ մատենագրության մեջ և վիմագիր արձանագրություններում: Հաշվարկման սկիզբը մ. թ. 551-ն է, ընդունվել է 584-ին՝ Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք: Նշանակվում է հայոց այբուբենի տառերով, օր.՝ ՌՃԿԹ՝ 1169, ՌՄՀԴ՝ 1264, ևն: Հ. թ-յան տարեթիվը գրիգորյան տոմարի վերածելու համար նրան պետք է գումարել 551 (մինչև 1320-ը) կամ 550 (1320-ից հետո): Այսպես՝ ՌՆԺԸ-ն (1418) համարժեք է գրիգորյան տոմարի 1968-ին (1418+550):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 1999-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Նիկոլ *Փաշինյան*, խմբագիր՝ Աննա Հակոբյան (2012-ից): ՀՀ ընդդիմադիր առաջատար քաղ. լրատվամիջոցներից է (տպաքանակը՝ շուրջ 7 հզ.): Անդրադառնում է ՀՀ-ի ներքաղ. կյանքին, տնտ. խնդիրներին, միջազգ. հարաբերություններին, իրավ., սոցիալ., կրթ., մշակութ., մարզ. ոլորտների կարևոր իրադարձություններին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», հանրագիտ. հրատ.: Նախաձեռնել են 1932-ին: Գլխ. խմբագիր՝ Դրաստամատ *Տեր-Սիմոնյան:* Խմբագրակազմում ընդգրկվել են ժամանակի անվանի գիտնականներ բոլոր բնագավառներից: Լույս է տեսել միայն 1-ին հատորի 1-ին պրակը՝ 1935-ին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ», ստեղծվել է 1967-ին Երևանում՝ որպես ՀԽՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր առանձին գիտախմբագր. հաստատություն՝ ԳԱ նախագահ Վիկտոր *Համբարձումյանի* գլխավորությամբ: Կոչվել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրություն, հետագայում՝ Հայկ. հանրագիտարանի և տեղեկատու գիտ. գրակ-յան գլխ. խմբագրություն: Վերջինս 2002-ին վերակազմավորվել է «Հայկական հանրագիտարան. հրատարակչության»: Գործել է Հրատպետկոմի համակարգում, 2004-ից ՀՀ ԳԱԱ կազմում է: Ունի գիտ-յան տարբեր բնագավառների գիտաճյուղային բաժիններ և խմբագրություններ:

Հանրագիտարանի գլխ. խմբագրությունը 1974–87-ին հրատարակել է ազգ. առաջին համընդհանուր *«Հայկական սովետական հանրագիտարանը»* («ՀՍՀ», հոդվածները հիմնականում պատրաստել են ԳԱ ինստ-ների, հանրապետության այլ ԳՀ հիմնարկների մասնագետներ ու բուհերի դասախոսներ, սփյուռքահայ և օտարազգի գիտնականներ), ինչպես նաև «Ինչ է. Ով է» (հ. 1–4, 1984–87) մանկ. հանրագիտարանը, հայագիտ. բնույթի «Հայկական համառոտ հանրագիտարանը» (հ. 1–4, 1990–2003), «Ռսկեփորիկ» (հ. 1–3, 1993–99) մանկ., «Հայկական հարց» (ռուս.՝ 1991, հայ.՝ 1996) հանրագիտարանները, «Տնային տնտեսության հանրագիտարանը» (1997), «Հանրագիտակ» (1990, 1991, կազմ.՝ Հ. Խաչատրյան) օրացույցներ, «Հանրամատչելի բժշկական հանրագիտարանը» (2001), «Սփյուռքահայ կազմակերպություններ» (2002), «Քրիստոնյա Հայաստան» (2002), «Հայ Սփյուռք» (2003), «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994» (2004), «Հայաստանի բնաշխարհ» (2006), «Ով ով է. Հայեր» կենսագր. (հ. 1, 2, 2005, 2007) հանրագիտարանները, «Դպրոցական մեծ հանրագիտարանը»՝ 2 գրքով, յուրաքանչյուրը՝ 2 հատորով (2008–10), «Հայաստան» (2012) ստվարածավալ հանրագիտարանը, «Գյուղատնտեսական հանրագիտարանը» (2015):

«Հ. հ. հ.»-ի գլխ. խմբագիրներ են եղել Վիկտոր *Համբարձումյանը,* Աբել *Սիմոնյանը,* Սակիչ *Արզումանյանը,* Կոստանդին *Խուդավերդյանը,* Հովհաննես *Այվազյանը* (1999-ից):

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ» հանրագիտարան, «Հայկական հանրագիտարան. հրատարակչության» հրատ. (ռուս.՝ 1990, հայ.՝ 1996): Գլխ. խմբագիր՝ Կոստանդին *Խուդավերդյան:* Թեմատիկ հանրագիտարան է Հայկ. հարցի ծագման ու փուլերի, Հայկ. հարցին վերաբերող միջազգ. պայմանագրերի, դիվանագիտ. այլ փաստաթղթերի, միջազգ. բանակցությունների, խորհրդաժողովների և վեհաժողովների, Թուրքիայում Հայոց ցեղասպանության, այդ խնդիրներին առնչվող իրադարձությունների, հայ ազգ-ազատագր. շարժման ու ինքնապաշտպան. կոիվների, Հայկ. հարցի և Հայոց ցեղասպանության նկատմամբ գերտերությունների ու միջազգ. հանրության դիրքորոշումների, հայ ազգ-ազատագր. պայքարի նվիրյալների, պետ., քաղ. և հաս. այլազգի գործիչների, Հայկ. հարցի ու Հայոց ցեղասպանության պատմությամբ զբաղված հայ և օտարազգի գիտնականների մասին նն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ», հաս-քաղ., հայագիտ. քառամսյա հանդես: Խ. Աբովյանի տուն-թանգարանի հրատ.: Լույս է տեսնում 2012-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Հովհաննես Ջատիկյան: Տպագրում է հայագիտ., քաղաքագիտ., ազգ., կրոն. նյութեր, Խ. Աբովյանի գրական ժառանգության անտիպ էջեր, աբովյանագիտ. նոր ուսումնասիրություններ (հայ., ռուս. և անգլ.), անդրադառնում է հայկ. կյանքի կարևոր իրադարձություններին, «Աշխարհին այսօր» հավելվածում՝ միջազգ. անցուդարձին:


«Հայկական հանրագիտարան. հրատարակչության» *տպագրած գրքերից*



«Հայկական համառոտ հանրագիտարանի» (հ. 1–4, 1990–2003) լրակազմը



«Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994» (2004) հանրագիտարանի կազմը



«Հայկական հարց» *(1996, Ե., «ՀՀՀ») հանրագիտարանի կրկնաշապիկը*




«Հայկական ճարտարապետության պատմություն» *(հ. 3, 2004, Ե., «Գիտություն») գրքի կազմը*

«Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան» *տպագրած գրքերից*



Արտակ Մովսիսյանի «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը» (2003, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը



Թեոդիկի «Ամենուն տարեցոյցը. 1924, ԺԸ տարի» (2011, Հալեպ) տարեգրքի կազմը

«ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (հ. 1–3, 1996–2004, նախատեսված 6-ից): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ը: Խմբագր. խորհուրդ:

1-ինը (1996, խմբագիր՝ Գևորգ Տիրացյան) վերաբերում է Հայկ. լեռնաշխարհի ինագույն շին. արվ-ին, Արարատյան թագավորության և Հայաստանի հելլենիստ. շրջանի քաղաքաշինությանը, բնակելի և պաշտամունքային ճարտ-յանը, 2-րդը (2002, խմբագիր՝ Մուրադ Հասրաթյան)՝ IV–VII դդ-ի քաղաքաշինությանը, աշխարհիկ ճարտ-յանը, միանավ, եռանավ, գմբեթավոր բազիլիկներին ու դահլիճներին, Էջմիածնի մայր տաճարին, 3-րդը (2004, խմբագիր՝ Մ. Հասրաթյան)՝ IV–VII դդ-ի կենտրոնագմբեթ եկեղեցիների՝ հայկ. ճարտ. տաճարների հորինվածքներին, բազմաբսիդ եկեղեցիներին, վաղ միջնադարի շին. տեխնիկային, գեղ. արտահայտչամիջոցներին:

Մուրադ Հասրաթյան

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ», հայագիտ. մատենաշար, ստեղծվել է Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի հովանավորությամբ: Առաջին գիրքը՝ Բ. Կյուլեսերյանի «Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց»-ը, տպագրվել է 1961-ին Անթիլիասում: Մատենաշարով ցայսօր տպագրվել են ավելի քան 1000 անուն հայագիտ., հոգևոր-կրոն., գեղ. գրքեր, բառարաններ, բուհ. դասագրքեր, ալբոմներ՝ Անթիլիասում, Լիսաբոնում, Վենետիկում, Վիեննայում, Երուսաղեմում, Հալեպում, Բեյրութում, Երևանում:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», գիտ. հանդես: ՀՊՄՀ-ի հրատ.: Լույս է տեսնում 2003-ից Երևանում: Խմբագր. խորհուրդ: Ներառում է հումանիտար գիտ-ների բնագավառները: Հոդվածներում վերլուծվում են մանկավարժության տեսության ու պատմության (հայ. և եվրոպ.), հոգեբանության ու դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցեր:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՆԵՄԱ», երգիծ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1925–26-ին Կահիրեում: Արտոնատեր-հրատարակիչ՝ Ալեքսանդր *Սարուխան*, խմբագիրներ՝ Վարդան Չագարյան, Երվանդ *Օտյան:* Արտացոլել է Սփյուռքի (մասնավորապես՝ Եգիպտոսի և Թուրքիայի) հայկ. համայնքների կյանքը: Կարևոր տեղ է հատկացրել ազգամիջյան և միջկուս. հարաբերություններին: Կոչ է արել օգնություն կազմակերպել Խորհրդ. Հայաստանին, ներկայացրել է նրա տնտ. և մշակութ. ձեռքբերումները: Տպագրել է Ա. Սարուխանի ծաղրանկարները, Ե. Օտյանի ֆելիետոնները:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» («ՀՍՀ»), հանրագիտ. հրատ., հայ. առաջին համընդհանուր բնույթի հանրագիտարանը: Լույս է տեսել Երևանում 1974–87-ին, հրատարակել է Հայկ. հանրագիտարանի և տեղեկատու գիտ. գրակ-յան գլխ. խմբագրությունը (2002-ից՝ *«Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»*): Բաղկացած է 12 հիմն. և 1 լրացուցիչ («Սովետական Հայաստան») հատորներից: Լույս է տեսել տարեկան 1 հատոր՝ 100 հզ. տպաքանակով: 1-ին հատորի գլխ. խմբագիրը՝ Վիկտոր *Համբարձումյանն* էր (այնուհետև՝ խմբագր. խորհրդի նախագահ), 2–4-րդ հատորներինը՝ Աբել *Սիմոնյանը*, 5-րդ հատորից՝ Մակիչ *Արզումանյանը:*

1-ին հատորը ներառում է Ա–Արգինա, 2-րդը՝ Արգիշտի–Գեղերվան, 3-րդը՝ Գեղեցիկը–Ջուրաբյան, 4-րդը՝ Է–Խաղխաղ, 5-րդը՝ Խաղող–Կուլիսներ, 6-րդը՝ Կուլձոր–Ջուլուկ, 7-րդը՝ Ջուլում–Սինոպխոնք, 8-րդը՝ Սինոպոլիա–Չեչերեկ, 9-րդը՝ Չեչքար–Ռստակես, 10-րդը՝ Ռստամ–ՍՍՀՄ, 11-րդը՝ Սովետական–Տիեզերք, 12-ը՝ Տիեզոլո–Ֆութսին տերմիններով հոդվածները:

Հայ. հանրագիտարան ստեղծելու առաջին փորձը ձեռնարկվել է XVIII դ–ի կեսին (***Արևեն Դպիր Կոստանդնուպոլսեցի***): Հետագայում հայկ. մշակույթի առանձին գործիչներ (Հ. Թումանյան, Ա. Արասխանյան, Հ. Առաքելյան և ուր.) նույնպես արծարծել են ազգ. հանրագիտարան ստեղծելու հարցը և որոշ քայլեր արել, սակայն գիտ–յան ու մշակույթի զարգացման նկատմամբ պետ. հոգածության բացակայության, ազգ. մտավորականության ցրված լինելու պայմաններում մինչխորհրդ. շրջանում նման հանրագիտարանի ստեղծումը հնարավոր չէր:

Հայկ. խորհրդ. հանրագիտարանի խմբագրությունը (գլխ. խմբագիր՝ Դրաստամատ ***Տեր–Սիմոնյան***) ձևավորվել է միայն 1932–ին: Նրա նախապատրաստմանը որպես հեղինակներ և խմբագիրներ մասնակցել են Մ. Աբեղյանը, Հ. Սանանդյանը, Կ. Մելիք–Օհանջանյանը, Ա. Շահնազարյանը, Մ. Ներսիսյանը, հայ. մշակույթի այլ ականավոր ներկայացուցիչներ (լույս է տեսել միայն 1–ին հատորի 1–ին պրակը, 1935):

«ՀՍՀ» (10 հատորով) հրատարակելու մասին ՀԿԿ կենտկոմի (առաջին քարտուղար՝ Յակով Զարուբյան) որոշումն ընդունվել է 1964–ի հոկտ–ին, իսկ այդ նպատակով հատուկ խմբագրություն ստեղծելու մասին ՀԽՍՀ կառավարության (Նախարարների խորհրդի նախագահ՝ Անտոն Քոչինյան) որոշումն ընդունվել է 1965–ի մարտին:

«ՀՍՀ»–ն բնույթով համապարփակ հանրագիտարան է, ընդգրկում է գիտ–յան բոլոր բնագավառները, ըստ ծավալի՝ փոքր հանրագիտարան է, ըստ կառուցվածքի՝ այբբենական: «ՀՍՀ»–ի ողջ ծավալը բաժանվում է 3 հավասար մասերի, որոնք ընդգրկում են, համապատասխանաբար, Հայաստանի, ԽՍՀՄ–ի և աշխարհի մյուս երկրների վերաբերյալ հոդվածները:



«Հայկական սովետական հանրագիտարան»*–ի (հ. 1–12+1, 1974–87) լրակազմը*

«ՀՍՀ»–ում ի մի են բերվել հայոց պատմությունը, մշակույթի, գիտ–յան և տնտեսության բոլոր ճյուղերի ձեռքբերումները, մեծ տեղ է հատկացված հայ ժողովրդի հաս. կյանքին, կարևոր իրադարձություններին, դեմքերին, քաղ. մտքի պատմությանը, Հայաստանի պատմ. աշխարհագրությանը, տեղանուններին: Ընդհանուր բնույթի հոդվածները (երկրներ, քաղաքներ ևն) նույնպես պարունակում են համապատասխան հայագիտ. նյութ:


«ՀՍՀ»–ն ներառում է 38767 բառահոդված, 15 263 գունավոր և սևսպիտակ պատկերներ, 858 քարտեզ ու հատակագիծ: Նրա ստեղծմանը մասնակցել է 7 200 հեղինակ՝ հիմնականում ԳԱ ինստ–ների, հանրապետության մյուս ԳՀ հիմնարկների գիտաշխատողներ ու բուհերի դասախոսներ, ինչպես նաև ԽՍՀՄ հանրապետությունների մի շարք գիտ. կենտրոնների ներկայացուցիչներ, սփյուռքահայ և օտարազգի գիտնականներ: Տպագրվել է հատուկ «ՀՍՀ»–ի համար պատրաստված «Հանրագիտարանային» տառատեսակով (հեղինակ՝ Հենրիկ ***Մնացականյան***):



«ՀՍՀ» 10–րդ հատորի 317–րդ էջը

«ՀՍՀ»–ի հրատ–յան կազմակերպման, խմբագրման և հրատարակման համար 1988–ին ՀԽՍՀ Պետ. մրց. է շնորհվել Վիկտոր Համբարձումյանին, Մակիչ Արզումանյանին և Աբել Սիմոնյանին, գլխ. խմբագրի տեղակալ Զավադ ***Թորոսյանին***, պատ. քարտուղար Հայկ ***Խաչատրյանին:***


«ՀՍՀ» տպագրվել է Երևանի Հակոբ Մեղապարտի անվ. պոլիգրաֆկոմբինատում (այժմ՝ ***«Հակոբ Մեղապարտ տպագրատուն»***):



Գլխազարդով էջ (Պատարագատետր, 1513, Վնտ.)



Գլխազարդով և բաժանազարդով էջ (Պարզատումար, 1513, Վնտ.)



Վերջազարդով էջ (Ֆ. Ռիվոլայի «Բառագիրք հայոց», 1621, Միլան)

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայ. բնագրերի (ինքնուրույն և թարգման.), ինչպես նաև այլալեզու հրատ-ներում օտարատառ հայալեզու կամ հայատառ օտարալեզու տպագրությունների ամբողջությունը: Սկզբնավորվել է 1512-ին՝ առաջիններից Առաջավոր Ասիայի ժողովուրդների մեջ:

Հ. տ-յան զարգացման ավելի քան 500-ամյա պատմությունը պայմանականորեն բաժանվել է 3 շրջանի՝ ինատիպ գրքի (1512–1800), նոր (1801–1918) և Հայոց պետականության սկզբնավորումից (1918-ից) ցայսօր: Հայ. 1-ին տպագիր տեքստը 1475-ին Մայնցում հրատարակված Յոհան Շիլդբերգերի «Ուղեգրություններ...» գրքում (որտեղ մի քանի գլուխ նվիրված է Հայաստանին) զետեղված է լատինատառ «Հայր մեր» աղոթքը, իսկ հայատառ նմուշը 1486-ին Մայնցի (Գերմանիա) տաճարի քարոզիչ Բեռնարդ Բրայդենբախի հրատարակած «Ուղևորություն Ավետյաց երկիր» (գերմ.) գրքում զետեղված հայ. այբուբենն է (փայտափորագիր): Իսկ բուն Հ. տ. սկսվել է *շարժական տառերով*՝ Հ. տ-յան հիմնադիր և հայ առաջին տպագրիչ *Հակոբ Մեղապարտի* ջանքերով: Վենետիկում 1512–13-ին նրա լույս ընծայած գրքերից (հավանաբար՝ 6) պահպանվել են 5-ը՝ *Ուրբաթագիրքը* (հայ. առաջին տպագիր գիրքը), *Պատարագատետրը, Աղթարքը, Պարզատումարը* և *Տաղարանը*:

Հակոբ Մեղապարտի տպագր. ավանդույթները շարունակել են *Աբգար Թոխաթեցին*, որը մինչև XIX դ-ի վերջը համարվել է հայ առաջին տպագրիչը, նրա որդի *Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցին, Հովհաննես Տերզնցին*: Աբգար Թոխաթեցու մյուս խոշոր ծառայությունն այն է, որ նա Հ. տ. Իտալիայից (Վենետիկ, Հռոմ) 1565-ին տեղափոխել է Կ. Պոլիս և տեղում սկզբնավորել տպագրության գործը: Սուլթանշահը 1579-ին Հռոմում պատրաստել է տվել տպատառեր, որոնք դարձել են տպագիր առաջին իսկական հայկ. տառատեսակի՝ *բոլորգրի* նախօրինակը: Հովհաննես Տերզնցին Հռոմում 1584-ին Սուլթանշահի տառերով տպագրել է «Տօմար Գրիգորեան» օրացույցը, ապա Վենետիկում ձուլել է տվել նոր չափերի տպատառեր և 1587-ին հրատարակել Սաղմոսարան:

XVI դ-ում հայ տպագրիչների լույս ընծայած գրքերից պահպանվել են 19-ը: Այդ ժամանակաշրջանի հայ. տպագիր հատվածներ կան նաև եվրոպացիների հրատարակած շուրջ 15 գրքերում:

1616-ին *Հովհաննես Քարմապանենցը* Լվովում է հիմնադրել տպարան և մինչև 1618-ը տպագրել հայ. բժշկարան, Սաղմոսարան և հայատառ ղփչաղ. Աղոթագիրք:

Սկզբունքային նշանակություն ուներ *Խաչատուր Կեսարացու* նախաձեռնությամբ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում 1636–38-ին տպարանի հիմնադրումը. այն առաջինն էր Միջին Արևելքում և ամբողջությամբ ինքնահնար էր (տպագր. մամուլը, տպատառերն ու մյուս պարագաները պատրաստել է մեխանիկոս Հակոբջան Ջուղայեցին՝ տեղի հոգևորականներ Հովհաննեսի, Միքայելի և Հովսեփի հետ՝ առանց որևէ մասնագետի աջակցության): Հրատարակել են Սաղմոսարան (1638), «Հարանց վարք» (1641), Խորհրդատետր (1641), Ժամագիրք (1642): Խաչատուր Կեսարացու գործը շարունակել է նրա աշակերտը՝ տպագրության գործում հմտանալու համար Եվրոպա ուղարկված *Հովհաննես Ջուղայեցի Քթոհշենցը*:

1658-ին *Հակոբ Դ Ջուղայեցի* կաթողիկոսը հայ. Աստվածաշունչ տպագրելու նպատակով Հռոմ է ուղարկել Էջմիածնի վանահայր *Մատթեոս Ծարեցուն*, որին հաջողվել է Ամստերդամում հիմնադրել տպարան (հայտնի է Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի անունով): Տպարանի տնօրինությունը 1664-ից ստանձնել է *Ոսկան Երևանցին*, որտեղ տպագրվել է հայերեն 1-ին Աստվածաշունչը (1666–68): 1669-ին այն տեղափոխել է Լիվոռնո, 1672-ին՝ Մարսել. մինչև 1686-ը 3

քաղաքում լույս են ընծայվել 41 անուն բարձրորակ հայ. գրքեր՝ այդ թվում՝ Մովսես Խորենացու «Աշխարհացոյցը» և Վարդան Այգեկցու «Աղուէսագիրքը» (1668–69, 1 գրքով), Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը (1669), 1-ին աշխարհաբար գիրքը՝ «Արհեստ համարողութեան»-ը (1675), Այբբենարան (1675), Շարակնոց, Ժամագրքեր, Սաղմոսարաններ ևն:

Ոսկան Երևանցու օրոք հայ տպագրությունն աչքի է ընկել իր բարձրարվեստ հրատ-ներով. ձուլվել են նոր տպատառեր (7 տեսակի), ապահովվել տպագր. բարձր մակարդակ, որի շնորհիվ նրա տպագրած գրքերի մեծ մասը հետագայում նույնությամբ վերահրատարակվել է: Այդ ժամանակաշրջանը կոչվել է «հայ տպագրության ոսկեայն շրջան»:

1685–1717-ին Ամստերդամում գործել է Թովմաս, Մատթեոս, Ղուկաս և Միքայել ***Վանանդեցիների*** տպարանը, որը, ի թիվս այլ հրատ-ների, լույս է ընծայել (1-ին անգամ) նաև Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոցը» և հայ. տպագիր քարտեզը՝ ***«Համաւարած աշխարհացոյցը»*** (երկուսն էլ՝ 1695):

Հայ ինատիպ գրքի տպագրության գլխ. կենտրոնը եղել է Կ. Պոլիսը (մինչև 1800-ը լույս է ընծայվել շուրջ 350 անուն գիրք), ապա՝ Վենետիկը (շուրջ 260 անուն): Կ. Պոլսում Աբգար Թոխաթեցու (1568–69) և Երեմիա ***Քյոմուրճյանի*** (1677–78) տպագր. կարճատև գործունեությունից հետո XVII դ-ի վերջին անընդմեջ գործող տպարաններ են հիմնադրել ***Գրիգոր Մարզվանեցին, Ասրվածատուր Դպիր Կոստանդնուպոլեցին*** և ուր.: Այդ շրջանում Կ. Պոլսում ճանաչված են եղել նաև Սարգիս Դպիրը, Մարտիրոս Դպիրը, Շնչին Հովհաննեսը, Ստեփանոս Պետրոսյանը, Արապյանները, մասնավորապես՝ Պողոս ***Արապյանը***, և ուր. տպագրիչներ:

Վենետիկում ***Հովհաննես Անկյուրացին*** տպագրել է Սաղմոսարան (1642) և Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1643) պոեմը: Գասպար Սահրատյանի և Թադևոս Համազասպյանի տպարանում տպագրվել է Շաշոց (1686–88), Խոջա Նահապետ Գուլնազարի տպարանում՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլեցու «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի» (1687) աշխարհաբար երկը:

Հայ. գրքեր հրատարարակել են նաև իտալացի տպագրիչներ Միքելանջելո Բարբռնին, Անտոնի Բորտոլին, Ջիովաննի Բաշոն, Ստեֆանո Օռլանդոն և ուր.: 1789-ից այստեղ գործել է ***Մխիթարյան միաբանության*** տպարանը, որը շուտով դարձել է Եվրոպայում Հ. տ-յան խոշոր կենտրոն:

Բուն Հայաստանում 1-ին տպարանը հիմնադրվել է 1771-ին Էջմիածնում՝ ***Սիմեոն Ա. Երևանցի*** կաթողիկոսի ջանքերով. այնտեղ տպագրված անդրանիկ հրատ-ը կաթողիկոսի «Ձբօսարան հոգեւոր» (1772) աղոթագիրքն է: Տպարանի շենքը կառուցվել է բարերար Գրիգոր Չաքիկենցի միջոցներով, իսկ տառերն ու փորագրված պատկերները պատրաստել է Հարություն Էջմիածնեցին: Մինչև դարավերջ տպարանը լույս է ընծայել ավելի քան 10 անուն գիրք:

1772-ին Շահամիր ***Շահամիրյանի*** ջանքերով Հ. տ. սկզբնավորվել է Հնդկաստանի Մադրաս քաղաքում, որտեղ 1794–96-ին Հարություն ***Շմավոնյանը*** տպագրել է նաև հայ. առաջին պարբ-ը՝ ***«Ազդարար»***-ը:

Հ. տ. Ռուսաստանում տարածվել է 1781-ից. Գրիգոր ***Խալդարյանը*** Ս. Պետերբուրգում հիմնադրել է տպարան ու հրատարակել է «Տետրակ այբբենական»-ը (1781) և այլ գրքեր: 1889–90-ին տպարանը Հովսեփ Արղությանի ջանքերով տեղափոխվել է Նոր Նախիջևան, այնուհետև՝ Աստրախան, և մինչև դարավերջ տպագրել է շուրջ 50 անուն հայ. գրքեր:

1512–1800-ին հայ. գրքեր (շուրջ 1100 անուն) լույս են տեսել Վենետիկ, Կ. Պոլիս, Հռոմ, Փարիզ, Բավիա, Յուրիխ, Բեռլին, Քյոլն, Մայնի Ֆրանկֆուրտ, Լվով, Նոր Զուղա, Լիվոռնո, Ամստերդամ, Մարսել,



Թռչնագիր սկզբնագրով էջ («Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն...», 1658, Հռոմ)



Պատկերազարդ էջ («Համառօտ պատմութիւն փնօրհնակացաց», 1700, Վնտ.)



Գլխա- և լուսանցազարդերով էջ («Ադամգիրք», 1721, Կ. Պոլիս)

Գլխա- և լուսանցազարդերով ու սկզբնագիր գլխատառով էջեր



Ներսես Շնորհալու «Ցիսուս Որդի» (1785, Ս. Պետերբուրգ)



Ճաշոց (1799–1801, Կ. Պոլիս)



Աղեքսանդր Ջուղայեցու «Աղօթամատոյց» (1840, Մոսկվա) գրքի տիպողոսաթերթը

Լոնդոն, Լայպցիգ, Պադուա, Պարմա, Հաղեմ, Նյուրնբերգ, Զմյուռնիա, Վաղարշապատ, Մադրաս, Տրիեստ, Կալկաթա, Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան և այլ քաղաքներում, որոնք իրենց բովանդակությամբ, յուրահատուկ ձևավորմամբ, պատկերազարդմամբ հազվագյուտ հրատ-ներ են և ունեն պատմ. ու գիտագեղ. մեծ արժեք:

XIX դ-ի 1-ին կեսին բնորոշ է տպագրության ոլորտում գրաբար-աշխարհաբար հրատ-ների մրցակցությունը: Եթե XVII դ-ում տպագրվել են ընդամենը 3 անուն աշխարհաբար գրքեր, XVIII դ-ում՝ 30 անուն, ապա XIX դ-ի 1-ին կեսին՝ 320 անուն (գրաբար՝ շուրջ 1400 անուն): Իսկ XIX դ-ի 2-րդ կեսին աշխարհաբարը բացարձակորեն գերակշռել է:

1801–1920-ին Վաղարշապատում հրատարակվել են դասագրքեր, կրոնաեկեղեց. գրքեր, հայ մատենագիրների երկեր, հայագիտ. աշխատություններ, *«Արարատ»* հանդեսը: Տպարաններ հիմնադրվել են նաև Շուշիում 1827-ին, Վանում՝ 1858-ին, Սուշում՝ 1863-ին, Ալեքսանդրապոլում՝ 1876-ին, Նոր Բայազետում՝ 1890-ին, Գորիսում՝ 1909-ին, ինչպես նաև Կիլիկիայում (Ադանա, Հաճն, Տարսոն, Մարաշ, Ալեքսանդրետ ևն), Կարինում, Խարբերդում, Սեբաստիայում, Պարտիզակում, Մարզվանում, Վանում, Նիկոմեդիայում, Երզնկայում, Կարսում, Աշտարակում և այլուր:

Երևանում առաջին տպարանը հիմնադրել է Զաքարիա ***Գևորգյանը*** 1875-ին, որի հետ համագործակցել է Էմին ***Տեր-Գրիգորյանը***: Նրանց անդրանիկ հրատ-ն Աբգար Գուլամիրյանի կազմած օրացույցն է (1875): 1880–84-ին այդ տպարանում տպագրվել է Երևանի առաջին պարբ-ը՝ *«Պաակը»*: Մինչև XX դ-ի սկիզբը Երևանում գործել են նաև «Կուլտուրա», «Ուրարտիա», «Լույս» և այլ տպարաններ:

Այդ շրջանում Հ. տ. է եղել նաև Մոսկվայում, որտեղ հրատարակչ. բուռն գործունեություն է ծավալել հատկապես ***Լազարյան ճեմարանի տպարանը***, Ս. Պետերբուրգում, Թեոդոսիայում, Օդեսայում, Նոր Նախիջևանում, Անապայում, Արմավիրում, Եկատերինոդարում, Պյատիգորսկում, Սուխումում, Ախալցխայում, Ախալքալաքում և այլուր:

Կարևոր էր Թիֆլիսում ***Ներսիսյան դպրոցի տպարանի*** ստեղծումը, որը գործել է 1819-ից մինչև 1860-ական թթ.: 1858-ին այստեղ է առաջին անգամ տպագրվել Խ. Աբովյանի «Վէրք Հայաստանի» վեպը: Մինչև 1920-ը Թիֆլիսում հայ. գրքեր են տպագրվել նաև մի քանի տասնյակ այլ տպարաններում (նաև վրացական):

1870-ին Հ. տ. է սկսվել Բաքվում, որն Այսրկովկասում դարձել է հայ գրքի հրատ-յան երկրորդ կենտրոնը Թիֆլիսից հետո:

XIX դ-ում և XX դ-ի սկզբին առաջատարը Կ. Պոլիսն էր՝ իր 130-ից ավելի հայկ. տպարաններով և հայ. հրատ-ների բազմաքանակությամբ: Հ. տ-յան կարևոր կենտրոն էր նաև Զմյուռնիան, որտեղ տպագրվել են հարյուրավոր հայ. գրքեր, շուրջ 50 անուն հայ. պարբ-ներ:

1801–1920-ին Վենետիկի Մխիթարյան տպարանում լույս են ընծայվել հայ մատենագիրների երկեր, հայագիտ. աշխատություններ՝ ***«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»*** (հ. 1–2, 1836–37) բառարանը, Գ. Ավետիքյանի, Մ. Ավգերյանի, Ա. Բագրատունու, Ղ. Ալիշանի, Գ. Զարբհանալյանի և ուր. աշխատություններն ու գեղ. երկերը, անտիկ հեղինակների, արևմտաեվրոպ. դասականների գործերի թարգմանություններ, գիտ-յան տարբեր բնագավառների վերաբերյալ գրքեր, մի շարք պարբ-ներ, որոնցից *«Բազմավէպ»* (1843-ից) հայագիտ. հանդեսն ամենաերկարակյացն է հայ պարբ. մամուլի պատմության մեջ: Տպարանը 225 տարի գործում է անընդմեջ և Հ. տ-յան օջախներից ամենատարեցն է: 1773-ին Վենետիկից Տրիեստ, ապա 1811-ին Վիեննա տեղափոխված Մխիթարյանների երկրորդ միաբանությունը նույնպես շարունակել է իր տպագր. գործունեությունը. լույս է ընծայել հարյուրավոր հայ. գրքեր և մի քանի պարբ-ներ, այդ թվում՝ ***«Հանդէս***

ամսօրեայ» (1887–ից) հայագիտ. ամսագիրը: 1833–ից հայ. գրքեր են տպագրվում նաև Երուսաղեմում՝ Սբ Հակոբյանց վանքի տպարանում:

1512–1918–ին հրատարակվել են ավելի քան 18 հզ. անուն հայ. գրքեր և շուրջ 2 հզ. անուն պարբ.: 1918–ից սկսած՝ աստիճանաբար Հ. տ–յան գլխ. կենտրոն է դարձել Երևանը: 1921–ին այստեղ կազմակերպվել է պետ. հրատարակչություն՝ ***Հայպետհրատը*** (1964–ից՝ «Հայաստան»), տպարանն ու տպագրությունն անջատվել են հրատարակչությունից: Հայպետհրատից հետագայում առանձնացել և գործել են մի քանի մասնագիտացված հրատարակչություններ, տպագրել գեղ., մանկ., գիտ., քաղ. և այլ բնույթի գրքեր:

1970–ական թթ–ին Հայաստանում գործել են մի քանի տասնյակ տպարաններ, 20–ը՝ Երևանում, այդ թվում Պոլիգրաֆկոմբինատը (այժմ՝ ***«Հակոբ Մեղապարտ տպագրատուն»***), որը հագեցած էր ժամանակի պոլիգրաֆ. արդ–յան լավագույն տեխնիկայով: 1967–ին սկսել է գործել ***«Հայկական հանրագիտարան. հրատարակչությունը»*** (սկզբում՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրություն):

Այժմ Երևանում և ՀՀ մարզերում գործում են մասնագիտացված ու մասնավոր բազմաթիվ հրատարակչություններ: Հրատարակչ. գործը տնօրինում է ՀՀ մշակույթի նախարարության գրահրատարակչ. գործի գործակալությունը (պետ՝ Էդուարդ Միլիտոնյան): 1920–93–ին Հայաստանում տպագրվել են շուրջ 65 հզ. անուն գիրք և գրքույկ (5–20 հզ–ական տպաքանակով): Ներկայում ՀՀ–ում տարեկան լույս են տեսնում մի քանի հազար անուն գիրք և գրքույկ, ավելի քան 200 անուն պարբ., բայց բավական փոքր տպաքանակներով:


1920–90–ական թթ–ին արտերկրում Հ. տ–յան գլխ. կենտրոններ էին Կ. Պոլիսը, Թեհրանը, Երուսաղեմը, Անթիլիասը, Հալեպը, Բեյրութը, Կահիրեն, Փարիզը, Բոստոնը, Նյու Յորքը, Լոս Անջելեսը, Տորոնտոն, որոնց զգալի մասն այսօր էլ շարունակում է իր ակտիվ գործունեությունը: Ցայսօր տպագրվել են շուրջ 130 հզ. անուն հայ. գիրք ու գրքույկ, շուրջ 4 հզ. անուն պարբ.:

Տես նաև ***Ամերիկայի, Ամստերդամի, Բաքվի, Եգիպտոսի, Երուսաղեմի, Զմյուռնիայի, Թիֆլիսի, Իտալիայի, Իրանի, Լիբանանի, Լիվորնոյի, Գալկաթայի, Կոստանդնուպոլսի, Մադրասի, Մարզվանի, Մարսելի, Մոսկվայի, Նիկոմեդիայի, Նոր Նախիջևանի, Սեբաստիայի, Միրիայի, Վանի և Վասպուրականի, Վենետիկի, Վիեննայի, Տրիեստի, Փարիզի հայկական տպագրություններ, Ասլրախանի հայկական տպարան, Գյումրիի տպագրություն, Երևանի տպագրություն, Էջմիածնի տպարան, Սայր աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչություն, Հրատարակչական գործ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հրատարակչություն, Պոլիգրաֆիական արդյունաբերություն*** ևն:

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան (1513–1895), Վնտ., 1895: Լէօ, *Հայկական տպագրութիւն, հ. 1–2, Թ., 1901–02:* **Թէոդիկ**, *Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նմանահանություն):* Իշխանյան Ռ., *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:* Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012: Հայկական տպագրությունը դարերի միջով, հոդվածների ժող., Ե., 2014:*

«ՀԱՅԿԱԶԵՆ», գրական, քաղ. պատկերազարդ ամսաթերթ: Վերակազմյալ հնչակյան կուս–յան Կովկասյան կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսել 1917–18–ին Թիֆլիսում: Խմբագր. խորհուրդ, նախագահ՝ Պետրոս Տեփոյան: Անդրադարձել է հայ հաս–քաղ. կուս–ների ու հոսանքների գործունեությանը, տպագրել է ժամանակի քաղ. կյանքն ու հայության ընդհանուր վիճակը լուսաբանող նյութեր, հրապարակել հայկ. ջարդերին վերաբերող փաստաթղթեր, լուսանկարներ, վավերագրեր ևն: Գրական–գեղ. բաժնում զետեղել է գրաքննադատ. հոդվածներ և ուսումնասիրություններ, արձակ ու չափածո գործեր: Թղթակցել են Գ. Լևոնյանը, Վ. Թոթովենցը, Կարա–Դերվիշը, Լ. Թյութունճյանը, Մ. Մազմանյանը և ուր.:

Հայկական տպագրություն



Լեոյի «Հայ գրքի փօնը» (1912, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը



Մ. Թապագյանի «Հայոց գրերու գիւտը (412–1912)» (1913, Կ. Պոլիս, Քեշիշյան տպ.) գրքի փիփղոսաթերթը



«Հայկական տպագրությունը դարերի միջով» (2014, Ե., ԳԱԱ պատմության ինստ–ի հրտր.) ժողովածուի կազմը



Արմենակ Հայկունու «Գերեզմանք երիտասարդաց...» (1871, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը



Սարգիս Հայկունու «Բագրեւանդ. Զրաբաշխ գաւառ» (մաս Ա, 1894, Վաղ-պատ) գրքի տիտղոսաթերթը



«Հայնակ եւ նէմէց-նակ» (1788, Տրիեստ) գրքի տիտղոսաթերթը

ՀԱՅԿՈՒՆԻ Արմենակ (Ճիզմեճյան Համբարձում Հարությունի, 5.9.1835, Կ. Պոլիս– 29.10.1866, Կ. Պոլիս), գրող, հաս-մշակութ. գործիչ, խմբագիր: 1846–53-ին սովորել է Կ. Պոլսի Սբ Հովհաննես վարժարանում, Սայրըս Համլինի բողոքական-աստվածաբան. քոլեջում: 1857–58 և 1863–66-ին խմբագրել և հրատարակել է ***«Մուսայք Սիւսեաց»*** թատեր-գրական շաբաթաթերթը, որտեղ տպագրվել են Հ-ի թատերագիտ. հոդվածներ ու պատմ. ողբերգություններ («Արա Գեղեցիկ եւ Շամիրամ», «Ողիմպիադա», «Երնջակ»): 1858-ին հիմնադրել է «Հայկազյան ընկերությունը» (գործել է մինչև 1686-ը), 1861–62-ին խմբագրել է ***«Ծաղիկ»*** (Գրիգոր ***Չիլինկիրյանի*** հետ), 1863–66-ին՝ ***«Պեզմաւեան թռչնիկ»***, 1864-ին, միաժամանակ՝ ***«Մեղու»*** պարբ-ները:

Լույս են տեսել Հ-ի «Էլիզա» (1861, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.) վեպը, «Գարնան ծաղիկներ...», «Գաղտնիք բնութեան...» (երկուսն էլ՝ 1863, ԿՊ, Արևելյան համազգ. տպ.), «Գերեզմանք երիտասարդաց կամ Տոփական հիւանդութիւնք» (1871, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.) առողջապահ. գրքույկները, «Պղատոն ի Վոսրոր» (1860, ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), «Համառօտ պատմութիւն եւ աշխարհագրութիւն Հայոց» (1864, ԿՊ, ա. տպ.) աշխատությունները:

Գրկ. **Ստեփանյան Գ.**, *Արմենակ Հայկունի, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1955, № 11: Գրական դեմքեր, Ե., 1976:*

ՀԱՅԿՈՒՆԻ Գուրգեն Սարգսի [31.8.1889, ք. Ալաշկերտ (Էրզրումի նահանգ)–12.4.1966, Երևան], քաղ., պետ. գործիչ, գրող, հրապարակախոս, խմբագիր: Սարգիս ***Հայկունու*** որդին: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1898–1906), Մոսկվայի առևտրի ինստ-ում (1912–14): 1917-ին Ալեքսանդրապոլում խմբագրել է «Նոր կեանք» (Բ. Ղարիբջանյանի, Գ. Աթաբեկյանի և ուր. հետ), 1918-ին Թիֆլիսում՝ «Կարմիր դրօշակ», 1918–19-ին՝ «Կարմիր օրեր», 1923 և 1928-ին Մոսկվայում՝ ***«Քուրա»*** պարբ-ները: 1920–34-ին գրական-հրատարակչ. աշխատանք է կատարել Մոսկվայում:

Լույս են տեսել Հ-ի «Գողգոթա», «5 պօէմ» (երկուսն էլ՝ 1922) պոեմները, «Բանաստեղծութիւններ» (1923, Մ., «Մուրճ և մանգաղ» տպ.) ժող-ը, «Տիտան» (1925, Թ., Տրեստի 4-րդ տպ.) դյուցազներգությունը, «Մասունների երթը» (1959), «Երթ մաքառման» (1965) երկերի ժող-ները, թարգմանել է Մ. Գորկու, Մ. Լերմոնտովի և ուր. ստեղծագործություններից:

ՀԱՅԿՈՒՆԻ (Ղազարյան) Սարգիս [1838, գ. Զեֆանոս (Տրապիզոնի նահանգ)–1908, Վաղարշապատ], բանահավաք, ազգագրագետ: Գուրգեն ***Հայկունու*** հայրը: Եղել է ուսուցիչ Տրապիզոնում, Վանում, Արդվինում, Ալաշկերտում: 1893-ից ապրել է Վաղարշապատում: Ուսումնասիրել է Հայաստանի հայ և այլազգի բնակչության կենցաղն ու սովորույթները [«Բագրեւանդ. Զրաբաշխ գաւառ» (մաս Ա, 1894), «Յուսէփցի ազգատոհմ եւ տարօրինակ աւազակ Աբրիեամ Տրապիզոնի հայ գիւղերու մէջ: 1795–1840 թթ.» (1905, երկուսն էլ՝ Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.): Հ. հայտնաբերել և գրառել է «Սասնա ծռերի» Արաբատյան, Մոկաց, Շատախի, Խլաթի պատումները, «Մօքոս» (1896, նույն տպ.,) վիպերգը: Համակարգել և ***«Հնդհնեան ազգագրական ժողովածու»***-ի Բ–Զ հատորներում (1901–06) հրատարակել է իր գրառած (շուրջ 50 բարբառով) բանահյուս. գործերը [«Բարակ շահ եւ Անուշ շահ (Մոկաց բարբառով ժողովրդական վէպ)» (1901, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ժողովրդական վէպ եւ հէքէաթ» (1901, Մ.–Վաղ-պատ, Վարվառե Գատցուկի տպ.), «Ժողովրդական հէքէաթ» (1902, նույն տպ.), «Հայ-քրդական վէպ» (1904, Մ.–Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ժողովրդական երգ, առած, հանելուկ...» (1906, նույն տպ.), «Ժողովրդական առակներ» [գիրք 1, «Կենդանական վէպեր» (1907, նույն տպ.)]: Զբաղվել է նաև ժող. իրավագիտության հարցերով [«Ժամանակակից հայերի սովորութեան իրաւունքը» (անտիպ, Մոսկվայի Լազարյան ճեմարանի մրց.)]:

Գրկ. **Սվազլյան Վ.**, *Սարգիս Հայկունի: Կյանքն ու գործունեությունը, տես «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պր. 4, Ե., 1973:*

«ՀԱՅՆԱԿ ԵՒ ՆԷՄԷՑՆԱԿ», Տրանսիլվանիայի Եղիսաբեթուպոլիս քաղաքում կազմված այբբենարան: Տպագրվել է 1788-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ հայ. և գերմ.: Ա տիտղթ-ին՝ «Հայնակ եւ Նէմէցնակ այբուբենի թուղթ...», Բ-ին՝ "ABC armenisch und deutsch oder Namenbüchlein..." (48 էջ, 8º, 13 x 8 սմ):

Վերահրատարակվել է 1788-ին նույն տպարանում (56 էջ, 8º):

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1906-ին Թիֆլիսում՝ Երվանդ *Լալայանի* նախաձեռնությամբ: Մասնաճյուղեր է ունեցել Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում և այլուր: Ընկերության ջանքերով հրատարակվել է *«Ազգագրական հանդէս»*-ի շուրջ 20 գիրք, կազմվել են Վայոց ձորի, Նոր Բայազետի, Վասպուրականի հուշարձանների ալբոմները, Վասպուրականի հայ. ձեռագրերի ցուցակը, Թիֆլիսում ստեղծվել է հնագիտ. և ազգագր. թանգարան (1908), ազգագր-մարդաբան. և կովկասագիտ. գրադարան (1908), Արմ. Հայաստանից Այսրկովկաս գաղթած հայերից գրի է առնվել մոտ 50 հատոր բանահյուս. նյութ:



Հ. Աճառյանի **«Հայոց անձնանունների բառարան»**-*ի (հ. Ա, 1942, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը*

«ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ», Հրաչյա *Աճառյանի* կազմած 5-հատորյա բառարանը: Լույս է տեսել Երևանում (1942–62), Բեյրութում (1972, «Սևան» տպ.), Հալեպում (2006, «Կիլիկիա» տպ.): Բառարանում հավաքված և բառարանագր. մշակման են ենթարկված V–XX դդ-ի 40–50-ական թթ-ին հայերի մեջ գործածված անձնանունները: Ընդգրկում է V–XV դդ-ում հայոց պատմության մեջ արձանագրված և ընդհանրապես այս կամ այն առիթով հիշատակված ու գրավոր հուշարձանների միջոցով մեզ հասած հայոց բոլոր այն անձնանունները, որոնք հայտնի կամ մատչելի են եղել հեղինակին, իսկ XVI–XVII դդ-ից վերցված են միայն պատմ. և գրական կարևոր կամ նշանավոր դեմքերի անունները:

Տրված են անձնանվան սեռը, ծագումը կամ ստուգաբանությունը, օտար անունների դեպքում՝ համապատասխան ձևերը, գլխատառանձնանվան սկզբից հատուկ նշումով՝ նրա բնիկ հայկ. կամ օտար ծագումը: Ժամանակագր. կարգով նշված են այդ անունով հիշատակված բոլոր հայ անձնավորությունները մինչև 1500 թ-ը՝ անխտիր, դրանից հետո՝ միայն նշանավորները՝ սեղմ ու ամփոփ կենսագրություններով, և այն բոլոր աղբյուրների մատենագիտ. ցանկը, որտեղ տվյալ անձը հիշատակված է:



«Հայոց աշխարհ», *1997-ից, Երևան*


«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 1997-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Գագիկ *Մկրտչյան:* Տպագրում է ՀՀ-ի ներքին և արտաքին քաղաքականությանը, սոցիալ-տնտ., կրթամշակութ., հոգևոր կյանքին վերաբերող տեղեկատվ., վերլուծ. հոդվածներ, անդրադառնում է ԼՂՀ-ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ» (հ. Ա–Ջ, 2001–12), իր տեսակի մեջ ամենաընդարձակ և համեմատաբար ամբողջ. բառարանն է: Լույս է տեսել Երևանում: Կազմել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստ-ը (գլխ. խմբագիր՝ Արտեմ *Սարգսյան*): Պարունակում է ավելի քան 100 հզ. բարբառային բառեր, դարձվածքներ, կայուն բառակապակցություններ ու ոճ. արտահայտություններ, որոնք քաղված են մոտ 200 գրավոր աղբյուրներից և ներկայացնում են 220 բարբառներ ու խոսվածքներ՝ հայ-ի բարբառային բառապաշարի գրեթե ողջ հարստությունն ու բազմազանությունը: Վիկտոր Կատվայան



«Հայոց լեզվի բարբառային բառարան»-*ի (հ. Դ, 2007, Ե., «Գիտություն») կազմը*

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գիտամեթոդ. ամսագիր: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ-ի հրատ.: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Դավիթ *Գասպարյան:* Լուսաբանվում ու վերլուծվում են հայոց լեզվին և հայ գրակ-յանն առնչվող բազմաթիվ հիմնահարցեր:



«Հայոց պատմության հարցեր», *1997-ից, Երևան (2005)*



«Հայոց պատմություն» *(հ. 3, գիրք 1, 2010, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի *հրատարակություններ*



Վ. Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ» (2011, Ե.) գրքի կազմը

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ», գիտ. հոդվածների ժող., տարեգիրք: ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի հրատ.: Լույս է տեսնում 1997-ից Երևանում (ցայսօր՝ 13 հատոր, 1-ինը՝ «Երիտասարդ գիտաշխատողների հոդվածների ժողովածու» անվանումով): Հիմնադիր խմբագիր՝ Հ. Ավետիսյան: Պատ. խմբագիր՝ Վլադիմիր ***Ղազախեցյան***, խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան, Է. Դանիելյան, Է. Կոստանդյան և ուր.: Տպագրում է Պատմության ինստ-ի երիտասարդ աշխատակիցների, ասպիրանտների ու հայցորդների, անվանի հայագետ-պատմաբանների, ինչպես նաև ՀՀ գիտ. ու գիտակրթ. այլ հիմնարկների մասնագետների, արտերկրի պատմաբանների՝ Հայաստանի հին, միջնադարի, նոր և նորագույն պատմության հիմնախնդիրներին վերաբերող հոդվածներ:

Տարեգիրքը (5-րդ հատորից) հրատարակվում է *«Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան»* մատենաշարով:

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», բազմահատորյակ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի (քառահատոր, յուրաքանչյուրը՝ 2 գիրք) հրատ.: 1-ին գիրքը (հ. 3, գիրք 1) լույս է տեսել 2010-ին: Հայոց պատմությունը ներկայացնում է հայ պատմագիտության նվաճումների ընդհանրացման, համաշխ. պատմության նոր դարաշրջանի կարևորագույն իրադարձությունների համադրման, արխիվային նորահայտ նյութերի և փաստաթղթերի հիման վրա:

1-ին հատորն ընդգրկում է Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև IV դ-ի սկիզբը, 2-րդի 1-ին գիրքը՝ վաղ միջնադարից մինչև 885-ը, 2-րդ գիրքը (լույս է տեսել 2014-ին)՝ 885-1639-ը, 3-րդի 1-ին գիրքը (2010)՝ XVII դ-ի կեսերից XIX դ-ի վերջը, 2-րդ գիրքը՝ XX դ-ի սկիզբը, նաև հայ գաղթաշխարհի և պարբ. մամուլի պատմությունը մինչև 1910-ական թթ., 4-րդ հատորի 1-ին գիրքը (2010)՝ Հայաստանի առաջին հանրապետության սկզբնավորումից (1918) մինչև Երկրորդ համաշխ. պատերազմի ավարտը (1945), 2-րդ գիրքը՝ 1945-91 թթ-ը, ունենալու է նաև Սփյուռքին վերաբերող բաժիններ, ներկայացվելու են ԱՊՀ երկրների հայկ. համայնքները, նաև սփյուռքահայ մշակույթը:

Հատորներն ունեն գունավոր և սև-սպիտակ պատկերազարդումներ, տեղանունների ու անձնանունների ցանկեր, քարտեզներ ևն:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1996-ին (թանգարան-ինստ-ը՝ 1995-ին): Հիմնադիր-տնօրեն՝ Լավրենտի Բարսեղյան, տնօրեն՝ Հայկ Դեմոյան (2006-ից): Հրատարակում է հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստավավերագր., գեղ. գրքեր (նաև օտար հեղինակների), ականատեսների ու վերապրողների վկայություններ և հուշեր, դիվանագիտ. փաստաթղթերի ժող-ներ՝ հայ. և օտար լեզուներով Վ. Թունյանի «Ռուսաստանը և Հայկական հարցը» (ռուս., 1998) և «Երիտթուրքերը և Հայկական հարցը» (ռուս., մաս 1, 2004), Ա. Ռեֆիկի «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» (թարգմ. թուրք-ից և առաջաբ.՝ Ս. Մուրադյանի, 1997), «Աբբա Շապեռոնի օրագիրը. Կիլիկիա 1920 – Կ. Պոլիս 1921-1923 թթ.» (թարգմ. ֆրանս-ից և առաջաբ.՝ Ս. Սահակյանի և Ս. Մուրադյանի, 2002), Լ. Բարսեղյանի «Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում» (2002), Ռ. Բաղդասարյանի «Ցեղասպանությունը և Ռուսաստանի հայ մտավորականությունը» (ռուս., 2003), «Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918 թթ.)» (կազմ. և առաջաբ.՝ Ա. Օհանջանյանի, թարգմ. գերմ-ից՝ Վ. Մարտիրոսյանի, 2004, գերմ.՝ 2005), Վ. Սվազլյանի «Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը» (անգլ., 2004) և «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (2011), «Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց

ցեղասպանության մասին» (փաստաթղթերի ժող., կազմ.՝ Ա. Սարաֆյան, թարգմ. անգլ–ից՝ Հ. Հայրապետյանի, 2004), «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918): Ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի» (կազմ. և առաջաբ.՝ Վ. Մ՚իքայելյանի, 2004), «Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում» (կազմ. և առաջաբ.՝ Լ. Բարսեղյանի, 2005), «Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին» (կազմ., առաջաբ. և ծնթգր.՝ Ա. Ջաքարյանի, 2005), Ռ. Փիրումյանի «Եվ նրանք, ովքեր շարունակում են ապրել Թուրքիայում 1915 թվականից հետո» (անգլ., 2008) և «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» (անգլ., 2012), Ա. Յուհաննոնի «Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից» (հայ., ռուս., անգլ., 2008), Ա. Բալոյանի «Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, 1913–1923 թթ.» (հ. Ա., 2008), Ֆ. Դաքետի «Թրքական դաժանություն. Երիտթուրքերը և ճշմարտությունն Ադանայի ողջակիզման մասին. Փոքր Ասիա, 1909 ապրիլ» (անգլ., 2009), Յ. Կյունցլերի «Արյան և արցունքների երկրում...» (2011), Ա. Ադոսիդեսի «Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները» (անգլ. և հայ., 2012), Հ. Չիթճյանի «Մազի չափ մահին մոտ» (ռուս., 2012), «Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը» (2012), Ս. Թորոսյանի «Դարդանելից մինչև Պաղեստին» (2012, ռուս.՝ 2014), Գ. Գյուների «Հայոց ցեղասպանությունը շվեդների աչքերով» (անգլ., 2013), Մ. Անումյանի «Շանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները. 1919–1921 թթ. և 1926 թ.» (2013), Վ. Տատրյանի «Հայոց ցեղասպանություն. Հանցագործության բովանդակություն» (ռուս., 2014), Հ. Դեմոյանի «Հայոց ցեղասպանության լուսաբանումը համաշխարհային մամուլի առաջին էջերին» (2014), «Հոշոտված Հայաստան. Մեծ եղեռնը վերապրած Ավրորա Մարդիգանյանի պատմությունը» (2015, ռուս.՝ 2013, անգլ.՝ 2013, ֆրանս.՝ 2015) ևնվ, ***«Ցեղասպանագիտական հանդես»***–ը (2013–ից):

2015–ի հրատարակչ. ծրագրերն ամբողջովին նվիրված են Հայոց մեծ եղեռնի 100–ամյա տարելիցին:

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, **Պետհրատ,** Խորհրդ. Հայաստանում առաջին պետ. բազմաճյուղ հրատարակչությունը: Հիմնադրվել է 1921–ին Երևանում (տնօրեն՝ Միսակ ***Էփրիկյան***), 1964–ից՝ ***«Հայաստան»***:


1921–22–ին հրատարակել է 50 անուն գիրք (167.100 տպաքանակով): Գրքերը տպագրվել են Պոլիգրաֆ բաժնի և Էջմիածնի գիտ. ինստ–ի տպարաններում: 1922–ի մայիսին վերջինս հանձնվել է Հ–ին (Պետհրատի 1–ին տպարան), իսկ 1923–ին տպարանի մեքենաներից մեկը տեղափոխվել է Երևան, որի հիման վրա ստեղծվել է Պետհրատի 2–րդ տպարանը: 1923–24–ին տպագրվել է 50 անուն գիրք (256.200 տպաքանակով), 90 %–ը՝ 1–ին տպարանում, որոշ մասը՝ Հ–ի Մոսկվայի բաժանմունքում (Հայկական գործերի կոմիսարիատի տպարան, որը 1924–ին անցել է ՀՍԽՀ լուսժողկոմատի իրավասությանը, կոչվել է Հ–ի 3–րդ տպարան):

1924–28–ին Հ. տարեկան միջին հաշվով հրատարակել է 1200–1300 մամուլ տպագր. արտադրանք՝ 5000 տպաքանակով՝ մեծ մասը՝ դասագրքեր, ապա՝ քաղ. գրակ., ավելի քիչ՝ գեղ. գրակ.:

1923–24–ին Հ. գրախանութներ է բացել Երևանում, Լենինականում, Ղարաքիլիսայում, Վաղարշապատում, Նախիջևանում, Թիֆլիսում:

1931–ին ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ Հ–ից անջատվել և 1942–ին կրկին միավորվել է Կուսհրատը, 1947–ին Հ–ի հիմքի վրա գործել է

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի *հրատարակություններ*



Ս. Թորոսյանի «Դարդանելից մինչև Պաղեստին» (2013, Ե.) գրքի կազմը



«Հոշոտված Հայաստան...» (2015, Ե.) գրքի կազմը




Հայպետհրատի *տպագրած գրքերից*

Հայսմավուրք



Ձեռագիր Հայսմավուրք (1462, Կտուց անապատ, Մատենադարան, ձեռ. № 4883)



«Յայսմաւուրք Տէր Իսրայէլի» (հ. Ա, 2008, Էջմիածին) գրքի կազմը



Հայրապետ Հայրապետյանի *«Սարյակի տունը» (1988, Ե., «Արևիկ», ձևավորող՝ Կ. Աղամյան) գրքի կազմը*

«Սովետական գրող» հրատարակչությունը, իսկ 1959–60-ին՝ Տեխհրատը: 1955-ին Հ-ից առանձնացել է Հայպետհրատարակիրատը (այժմ՝ *«Լույս»*):

ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔ, **Յայսմաւուրք**, միջնադարյան արարող. օրացուցային ժող.: Առաջացել է գրաբարյան «յայսմ աւուր»՝ «այս օրը» կամ «այսօր» բառակապակցությունից: Նշվող տոների ցանկից բացի՝ Հ. պարունակում է ինչպես հայ, այնպես էլ այլազգի քրիստ. գործիչների՝ տոնի օրը եկեղեցում ընթերցվելիք համառոտ կենսագրական-սրբախոսությունները (վարք կամ վկայաբանություն): Հ. կազմավորվել է ***Գրիգոր Բ Վկայասեր*** կաթողիկոսի «Տօնամակ» ժող-ի հիման վրա՝ «Ճաշոց» գրքի մեջ հայկ. տոներ սահմանելու և տոնակարգը կայունացնելու նպատակով: Այնուհետև Վանական Վարդապետի և Հասան-Ջալալ Դոլա իշխանի առաջարկով Տեր Իսրայել Խաչենցի եպիսկոպոսը (XIII դ.), ճշգրտելով տվյալները, նշված հայկ. տոնաշարքը տեղադրել է դեռևս X դ-ում թարգմանված հուն. Հ-ի օրինակի մեջ և համալրել այն: 1253 և 1269-ին Կիրակոս Արևելցին (Գանձակեցի), համառոտելով Տեր Իսրայելի հայսմավուրքային ընթերցվածները, ժող-ը լրացրել է առավելապես արլ. նահատակների, ինչպես և այլ ժողովուրդների արարող. հավաքածուներից քաղված նորանոր տոների «հիշատակ»-ներով:

Հ-ի վերջին՝ ամենածավալուն խմբագրությունը ***Գրիգոր Խլաթեցունն*** է (Ծերենց), որն ընդլայնել է ոչ միայն Կիրակոս Արևելցու ընթերցվածների ծավալը, այլև, բանահյուս. նոր նյութեր օգտագործելով, ժող-ը հարստացրել է բազմաթիվ նոր գործիչների, հատկապես իր շրջանի նահատակների, ժող. հերոսների վկայաբան. պատմություններով:

Հ-ներ տպագրվել են՝

1706-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Ճառ սրբոց վկայիցն ճշմարտին Աստուծոյ.…» (951 էջ, 12º, 32,3 x 19,2 սմ):

1706–08-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Յայսմաւուր որ ըստ պատշաճի աւուր իւրում կարգի…» (1043 էջ, 12º, 27,2 x 17 սմ):

1730-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրք…» (731 էջ, 6º, 34,5 x 19,8 սմ):

Հ-ներ են տպագրվել նաև 1834-ին («Յայսմաւուրք, ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր-Իսրայէլի», ԿՊ, Պողոս Արապյանի տպ.), 2008-ին («Յայսմաւուրք Տէր Իսրայէլի», հ. Ա, աշխատասիր.՝ Եզնիկ արք. Պետրոսյանի, Էջմիածին):

Գրկ. Ավդալբեգյան Մ., «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Ե., 1982: **Մաթևոսյան Ա., Մարաբյան Ս.,** *Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Ե., 2000, էջ 95–106:*

ՀԱՅՐԱՊԵՏ, **Հայրապետ քահանա**, XII դ-ի վերջի և XIII դ-ի սկզբի գրիչ և մանրանկարիչ: Հ-ից հայտնի է 2 Ավետարան (գրել է Սեբաստիայում). մեկը նկարազարդել է 1200-ին (գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Կոստանդին քահանա, Մատենադարան, ձեռ № 2589), մյուսը՝ 1211-ին (Մատենադարան, ձեռ. № 987, գրիչ՝ Հ.): Հ-ի 2 ձեռագրում էլ կան բազմաթիվ զարդագրեր, լուսանցազարդեր և գլխազարդեր, իսկ 1-ինում պահպանված են 2 ավետարանիչների պատկերները:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Երվանդ [23.11.1894, գ. Բայդաղդար (Կարսի մարզ)–4.2.1975, Թեհրան], բանասեր, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Պրահայի համալսարանի իրավաբանության ֆակ-ը: 1930-ական թթ-ին դասավանդել է Ռումինիայի, Իրանի (Նոր Ջուղա, Աբադան, Թեհրան) հայկ. վարժարաններում (մի քանիսում՝ տնօրեն), ապա՝ Շուշիում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1930-ին՝ «Հայաստան» (Բուխարեստ) շաբաթաթերթի, 1936–37-ին՝ ***«Ալիք»*** օրաթերթի գլխ. խմբագիր:

Կազմել է «Պատմութիւն հայ մատենագրութեան» (մաս Ա, Թեհրան, 1954) գիրքը: Հ-ի «Հայ գրականության պատմություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցական պատմություն» և այլ ծավալուն երկեր անտիպ են:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1972):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հայրապետ Սարդարի [1.12.1874, գ. Տանակերտ (Նախիջևանի Օրդուի գավառ)–7.3.1962, Երևան], մանկագիր, թարգմանիչ: Վաստ. ուսուցիչ (1950): 1893-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Շուրջ 40 տարի եղել է ուսուցիչ: 1933–55-ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում:

Լույս են տեսել Հ-ի «Մեղուների կոմունան» (1931), «Իմ երգերը» (1939), «Ցողիկն ու Շողիկը» (1941), «Իմ երգերը» (1951), «Բալիկների համար» (1961), «Փիսիկի դասը» (1966), «Ծիտն ու տղան» (1971), «Սարյակի տունը» (1988) բանաստեղծությունների, հեքիաթների, պոեմների, առակների ժող-ները, «Գայլ Վահան» (1943) պատմ. պոեմը: Հ. հայկ. դպրոցների համար կազմել է մայրենի լեզվի դասագրքեր (1930–70):

Թարգմանել է Լ. Տոլստոյի, Ա. Չեխովի, Ի. Կռիլովի, Ա. Բարտոյի, Ս. Մարշակի, Ս. Միխալկովի, Դ. Դեֆոյի, Ջ. Լոնդոնի, Գրիմ եղբայրների, Ջ. Սվիֆտի, Ռ. Մտիվենսոնի, Է. Ռ. Ռասպեի ստեղծագործություններից:

Հ-ի տեքստերով գրել են մանկ. երգեր: Նրա անունով դպրոց է կոչվել Երևանում:

Երկ. Երկերի ժող., հ. 1–2, Ե., 1965:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ներսես Վարազդատի (ծ. 8.8.1956, Երևան), գրադարանագետ, մատենագետ: Ավարտել է ԵՊՄԻ (1978), ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան (1985): 1994–96-ին գրադարանագիտություն է ուսումնասիրել Իլինոյսի (ԱՄՆ) համալսարանում: 1991–2003-ին՝ ՀԱԳ-ի փոխտնօրեն, 1994–2003-ին՝ ***Հայկական գրադարանային ասոցիացիայի*** հիմնադիր-նախագահ: 2003-ից աշխատում է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատանը:

Լույս են տեսել Հ-ի «Զարենցը և գիրքը» (1987) աշխատությունը, «Արտասահմանյան մատենագիտություն» (1991) ուս. ձեռնարկը, «Ամերիկյան գրադարանագիտություն և տեղեկատուներ» (2001) ժող-ը, կազմել է «Մատենագիտություն նորանոն հայկական պարբերական մամուլի. 1987–1996» (1999) գիրքը, «Հյուսիսային Կովկասի գրադարանները և ով ով է գրադարանների ոլորտում» (ռուս., 2003) տեղեկատուն:




Ներսես Հայրապետյանի *«Զարենցը և գիրքը» (1987, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վարդան Էմինի (ծ. 18.8.1948, Երևան), բանասեր, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ-ի ռուս. բանասիրության բաժինը (1970): Աշխատել է «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունում: Ա. Ղանալանյանի «Ավանդապատումից» (ռուս., 1979) թարգմանել է 87 ավանդություն, կազմել առարկայական և անվանական ցանկերը: 2000–01-ին՝ Ռուսաստանի հումանիտար պետ. համալսարանի (Մոսկվա) գիտաշխատող: Ռուսաց լեզվի և ռուս. բանահյուսության հիման վրա ուրվագծել է ռուս. հերմենևտիկայի (մեկնության արվ.) նոր ուղղություն:

Երկ. Герменевтические подступы к русскому слову, М., 1992; Толкуя слово. Опыт герменевтики по-русски, 2-е изд., ч. 1–2, М., 2011.

Գրկ. Человек как слово: сборник в честь Вардана Айрапетяна, М., 2008.



«Հայրենասէր», 1843–46, Զմյուռնիա

«ՀԱՅՐԵՆԱՍԷՐ», քաղ., բանասիր. և առևտր. շաբաթաթերթ, 1845-ից՝ երկշաբաթաթերթ: Արագածունյաց մշակութ. ընկերության հրատ.: Լույս է տեսել 1843–46-ին Զմյուռնիայում՝ աշխարհաբար: Խմբագիր՝ Խաչատուր Մելիք-Սելումյանց: Տպագրել է լուրեր, առևտրային ծանուցումներ, բարոյախոս. զրույցներ, հատվածներ պատմաուղեգր. երկերից, գրական-գեղ., թարգման. գործեր, ծանոթացրել ժամանակի գիտ. հայտնագործություններին: «Հ.» հալածվել և արգելքների է հանդիպել լեզվի, կրթության, լուսավորության և այլ հարցերում ունեցած ուրույն դիրքորոշման համար:



«Հայրենասէր», 1850–53, Նիկոմեդիա

«ՀԱՅՐԵՆԱՍԷՐ», քաղ., բանասիր. և գրական երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1850–53-ին Նիկոմեդիայում (այժմ՝ Իզմիթ՝ Թուրքիա-յում): Խմբագիր-հրատարակիչ՝ Աբրահամ ***Մուրադյան:*** Տպագրել է լուրեր Թուրքիայի ներքին կյանքի և միջազգ. իրադարձությունների վերաբերյալ, պատրիարքարանի և ազգ. ընկերությունների հաղորդումներ: Գրական բաժնում զետեղել է վիպակներ, պատմվածքներ, բանաստեղծություններ, զվարճալի մանրապատումներ, առակներ, ծանոթացրել տեղի մշակութ. կյանքին:



«Հայրենիք», *1870-1910, Կ. Պոլիս*



«Հայրենիք», *1899-ից, Նյու Յորք, Բոստոն, Ուոթերթաուն*



«Հայրենիք», *1922-70, Բոստոն (№ 2, 1923)*

«ՀԱՅՐԵՆԻՔ», ազգ., գրական և քաղ. օրաթերթ (ապա՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1870–96 և 1909–10-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Մինաս ***Գափամաճյան***, Արփիար ***Արփիարյան***, Լևոն ***Բաշալյան***, Վահան ***Թեքեյան***, Երվանդ ***Օտյան***, Հովհաննես ***Գազանճյան***: Ունեցել է ընդգծված ժողովրդավար. ուղղվածություն, որի պատճառով հալածվել է սուլթան. կառավարության կողմից: Արտացոլել է արևմտահայության հաս. և մշակութ. կյանքը: Թղթակց. լայն ցանցի առկայությունը խմբագրությանը հնարավորություն է ընձեռել ուշադրության կենտրոնում պահելու և արտացոլելու թուրքահայության հաս. ու մշակութ. կյանքի իրադարձությունները, արդուլհամիդյան բռնապետության պայմաններում պաշտպանելու նրանց շահերը: Նկատելի դեր է կատարել հայության 2 հատվածների մերձեցման, նրանց տնտ. և հոգևոր կյանքի լուսաբանման ասպարեզում: Սերտ կապ է պահպանել ***«Մշակ»***-ի և Գրիգոր ***Արծրունու*** հետ, տպագրել է նաև արևելահայ գրողների ստեղծագործություններ, թղթակցություններ՝ Թիֆլիսից: Աշխատակցել են Գ. Զոհրապը, Տ. Կամսարականը, Մ. Կյուրճյանը, Ա. Չոպանյանը և ուր.: «Հ.» հրատարակել է Գ. Զոհրապի «Քոքինակի», «Ճեյրան» նովելները, «Նարդիկ» անավարտ վեպը, «Ծանոթ դեմքեր» դիմանկարների շարքից մի քանիսը, Լ. Շանթի «Մնաս բարովի իրիկունը» վեպը, Թլկատինցու, Ա. Հարությունյանի և ուր. առաջին գործերից, թարգմանաբար ներկայացրել Լ. Տոլստոյի, Ի. Գոնչարովի, Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի և ուր. գործերից. «Մծիրին» հայ. առաջին անգամ տպագրվել է «Հ.»-ում՝ Լ. Շանթի թարգմանությամբ (1891, № 74): Լուսաբանել է նաև գրակ-յան, լեզվի, մանկավարժության հարցեր:

«ՀԱՅՐԵՆԻՔ», ազգ., հաս-քաղ., գրական շաբաթաթերթ, երկօրյա թերթ, ապա՝ օրաթերթ: ՀՅԴ Ամերիկայի արլ. շրջանի կենտկոմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1899-ից Նյու Յորքում, 1900-ից՝ Բոստոնում, 1986-ից՝ Ուոթերթաունում: Հիմնադիր-խմբագիր՝ Թովմաս Չարշաֆճյան, խմբագիրներ՝ Միհրան Մինասյան, Արշակ Վռամյան, Հարություն Չաքմաքչյան, ***Սիամանթո***, Սիմոն ***Վրացյան***, Մանուկ Համբարձումյան, Մերուժան Օզանյան, Սահակ Չթչյան, Նշան Տեստեկյուլյան, Ռուբեն ***Դարբինյան***, Վարդգես Ահարոնյան, Խոսրով Ներսեսյան, Գուրգեն ***Միխթարյան***, Երվանդ Խաթանասյան, Մինաս ***Թոյոյոյան***, Գևորգ ***Տոնապետյան***, Վահագն ***Գարագաշյան***, Խաժակ ***Մկրտչյան***, Զավեն Թորիկյան (2008-ից): Նյութեր է տպագրում ՀՀ-ում և ԼՂՀ-ում հաս-քաղ. զարգացումների, տնտ., կրթամշակութ. առօրյայի, սփյուռքահայ գաղթավայրերի կարևոր իրադարձությունների, վերջին շրջանում՝ սիրիահայության վիճակի, նաև միջազգ. քաղ., տնտ., մշակութ. և մարզ. կյանքի վերաբերյալ: Լուսաբանում է ամերիկահայ համայնքի առօրյան, ՀՅԴ-ի և նրա հովանավորությամբ գործող մշակութ., մարզ. ու բարեգործ. միությունների գործունեությունը: Տպագրում է գրական-գեղ. ստեղծագործություններ:

«ՀԱՅՐԵՆԻՔ», գրական, հաս., քաղ. և տնտ. օրաթերթ: Լույս է տեսել 1915–18-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Ավագ Սահտեսի-Հակոբյան, Մեդրակ Թառայան: Ներկայացրել է հայ ժողովրդի ծանր կացությունն Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) ժամանակ, Արմ. Հայաստանի և հայ գաղթականների վիճակը, կարևոր տեղ հատկացրել ազգ-ազատագր. պայքարին, նրա գործիչների կյանքին ու գործունեությանը: Արծարծել է գրակ-յան ու արվ-ի հարցեր, տպագրել գեղ. գործեր, պատկերներ և այլ նյութեր: Աշտ. թղթակիցներ է ունեցել Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Եվրոպայի, ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում:

«ՀԱՅՐԵՆԻՔ», հաս-քաղ., գրական-պատմամշակութ. ամսագիր (1968-ից՝ եռամսյա)։ ՀՅԴ կուս-յան պաշտոն. հրատ.։ Լույս է տեսել 1922–70-ին Բոստոնում։ Խմբագիրներ՝ Ռուբեն *Դարբինյան*, Մինաս Թյոլյոլյան։ Տպագրել է ՀՅԴ-ի տեսակետն արտահայտող պաշտոն. նյութեր, հոդվածներ և հուշեր՝ նվիրված XIX–XX դդ-ի հայ ազգ-ազատագր. պայքարի, Հայկ. հարցի, Հայոց ցեղասպանության, ՀՅԴ պատմության հարցերին։ Քննադատել է խորհրդ. վարչակարգը, լուսաբանել Սփյուռքի հաս-քաղ. կյանքը։ «Հ.»-ի էջերում տպագրել են հայտնի գործիչներ Ա. Գյուլխանդանյանի, Ա. Խատիսյանի, Ա. Ձամալյանի, Գ. Նժդեհի, Ս. Վրացյանի, Վ. Փափազյանի և ուր. հոդվածներ։ Աշխատակցել են Ա. Ահարոնյանը, Դ. Դեմիրճյանը, Համաստեղը, Լ. Շանթը, Շիրվանզադեն, Հ. Օշականը և ուր.։ «Հ.»-ի հրապարակումների զգալի մասը հետագայում հրատարակվել է առանձին գրքերով։


«ՀԱՅՐԵՆԻՔ», մատենաշար։ Հրատարակիչ՝ «Հայրենիք» ակումբ։ Խմբագիր՝ Ավագ *Հարությունյան*։ Լույս է տեսնում Երևանում (գիրք 1–29..., 2007–12...)։ Տպագրում է հայ ազգ-պետ. գործիչների ազգ. գաղափարախոս. երկեր, ինչպես նաև դիցաբանության, մշակույթի, այլադավան հայերի, աշխարհում տեղի ունեցող գործընթացների վերլուծությանը նվիրված աշխատություններ։ Հրատարակվել են Օ. Զարմունու «Ցեղի հրամայականը» (2007) ժող-ը, Հ. Քաջազնունու «Ազգ եւ Հայրենիք» (2008) աշխատությունը, Լ. Շանթի «Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան» (2008) ուսումնասիրությունը, Զարևանդի «Կրնա՞նք հաշտուիլ թուրքին հետ. Հայաստանի Հանրապետութիւնը եւ անոր տեղը հայոց պատմութեան մէջ» (2010), Գ. Նժդեհի «Հայ ռազմիկին (Հաղթանակելու արվեստը)» (2011), «Մեր ժամանակը եւ ցեղը» (2014), Գ. Հովհաննիսյանի «Հայոց տերերը» (2012) և այլ երկեր, ինչպես նաև «Ցեղի պահպանման իմաստությունը» (2007), «Ազգային-պետական գործիչներ», «Ազգային գիտակցություն» (երկուսն էլ՝ 2008) ժող-ները նև։

«ՀԱՅՐԵՆԻՔ», ազգ., մշակութ. շաբաթաթերթ։ Իսպանիայի «Արարատ» հայկ. միության հրատ.։ Տեղի առաջին և դեռևս միակ հայատառ պարբ-ն է։ Լույս է տեսնում 2008-ից Միսլատայում՝ հայ., իսպ.։ Հիմնադիր-խմբագիր՝ Արարատ Ղուկասյան։ Լուսաբանում է միության գործունեությունը, տպագրում է հայ ժողովրդի համար պատմ., քաղ., մշակութ. կարևոր նշանակության դեպքերի ու դեմքերի վերաբերյալ նյութեր, մեծապես նպաստում է Իսպանիայի հայկ. համայնքում հայ-ի, ազգ. մշակույթի, հայկ. ինքնության պահպանությանը։ Անդրադառնում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, սփյուռքահայ համայնքներում, ինչպես նաև Իսպանիայում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին։


ՀՀ Սփյուռքի նախարարության խրախուսական մրց. (2010, 2012)։

«ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ», երիտասարդ., կրոնադաստիարակչ. ամսաթերթ։ Հայ առաքել. եկեղեցու Գուգարաց թեմի քրիստ. դաստիարակության կենտրոնի պաշտոնաթերթը։ Լույս է տեսնում 2002-ից Վանաձորում։ Խմբագիրներ՝ Խորեն Գասպարյան, Վահան քհն. Ազարյան, Լաուրա Մամաջանյան, Գոռ Սարգսյան (2010-ից)։ Հոգևոր-կրոն. թեմաներով հոդվածներից զատ՝ տպագրում է նաև մշակութ. և այլ նյութեր։

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ», ազգ., մշակութ. շաբաթաթերթ։ Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի շաբաթաթերթ։ Լույս է տեսել 1965–96-ին Երևանում։ Խմբագիրներ՝ Վահագն *Դավթյան*, Կամո *Վարդանյան*, Լևոն *Զաքարյան:* Նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնմանը, ծանոթացրել հանրապետության տնտ., գիտ. ու մշակութ. կյանքին։ Լուսաբանել է հայկ. գաղթավայրերի մշակութ., կրթ. կազմակերպությունների ու գործիչների գործունեությունը, նրանց հայապահպան ջանքերը, հայրենիք այցելող արվեստագետների հետ հանդիպումները նև։ Թերթի էջերում հանդես են եկել հանրապետության պետ., հաս. գործիչներ, գիտնականներ, գրողներ, ինչպես



«Հայրենիք» *մատենաշար. Գարեգին Նժդեհի «Մեր ժամանակը եւ ցեղը» (2014, Ե.) գրքի կազմը*



«Հայրենիք», *2008-ից, Միսլատա*



«Հայրենիք և եկեղեցի», *2002-ից, Վանաձոր*



«Հայրենիքի ձայն», *1965–96, Երևան*



Գևորգ Հայրյանի *«Գրականության գլխավոր պրոբլեմը» (1969, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



«Հայություն», *1992–97, Երևան*



«Հայք», *1989-2010, Երևան*

նաև սփյուռքահայ մտավորականներ (Վ. Սարոյան, Վահե-Վահյան, Բ. Նուրիկյան, Վահե Հայկ, Վ. Մավյան, Գ. Ադդարյան, Զահրատ և ուր.): Տարածվել է ՀՀ-ում և արտերկրում:

ՀԱՅՐԻԿՅԱՆ Պարույր Արշավիրի [ծ. 5.7.1949, գ. Նուբարաշեն (այժմ՝ Երևանի շրջագծում)], ազգ-քաղ. գործիչ, խմբագիր-հրատարակիչ: 1968-ից ղեկավարել է Ազգ. միացյալ կուս-ը (ԱՄԿ): 1987-ից ԱԻՄ-ի հիմնադիր-նախագահն է: 1969-ին հրատարակել է ընդհատակյա «Երկունք» թերթիկը, 1971-ին՝ ԱՄԿ պաշտոնաթերթ «Փարոսի» 2-րդ թերթիկը (կալանավայրից), 1973-ին՝ ԱՄԿ ներկուս. «Խոսնակ Ազգային միացյալ կուսակցության» հանդեսի 1-ին համարը, 1987-ից՝ «Անկախություն» շաբաթաթերթը, «Տեղեկագիր», «Հրապարակայնություն» (հետագայում՝ «Հայրենիք») հանդեսները:

Լույս են տեսել Հ-ի «Ազատութեան երգեր» (1996), «Եւ այսպէս ցմահ: Երգեր եւ բանաստեղծութիւններ» (1997) բանաստեղծությունների ժող-ները, «Լոյսի ճանապարհին» (2004), «Հաւատով եւ սիրով» (2004) վիպակները, «Հայաստանի Հանրապետութեան ընտրական համակարգը մարդու իրաւունքների տեսանկիւնից» (2000), «Ժողովրդավարութիւն խօսքով եւ գործով» (2002) աշխատությունները:

ՀԱՅՐՅԱՆ Գևորգ Արմենակի [18.9.1913, գ. Ծավ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)– 8.11.1999, Երևան], գրող, գրականագետ, հրատարակիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1969): Սովորել է Մոսկվայի ժուռնալիստիկայի համամիութ. կոմ. ինստ-ում (1935–38), ավարտել կուս. բարձրագույն դպրոցը (1949): 1949–54-ին՝ «Պրավդայի» սեփական թղթակիցը ՀԽՍՀ-ում, 1954–61-ին՝ ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1961–66-ին՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ կրթության նախարար, 1967–79-ին՝ ՀԽՍՀ կինեմատոգրաֆիայի պետ. կոմիտեի նախագահ, 1979–81-ին՝ ***«Սովետական գրող»*** հրատարակչության տնօրեն:

Լույս են տեսել Հ-ի «Վերելքի երգեր» (1932) բանաստեղծությունների, «Մեր տան ճանապարհին» (1978), «Ձիթենու ճյուղը» (1981), «Արծվաքար» (1987) վեպերը, «Կամուրջներ չհանդուրժող Արաքսը» (1983) պատմվածքների, «Անվճար ազնվություն» (1989), «Ամպը վերից է գալիս» (1998) վիպակների ժող-ները, «Գրականության գլխավոր պրոբլեմը» (1969), «Գրականություն և կինո» (1974), «Սերո Խանզադյան» (1979) աշխատությունները, «Փառք և տառապանք» (2006) հուշագրությունը, «Վահագնի ծնունդը: Ասք ազգային հերոս Դրոյի մասին» (2006) վեպը:

«ՀԱՅՈՒԹՅՈՒՆ», ազգ., մշակութ. կիսամսյա թերթ: Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի հրատ.: Լույս է տեսել 1992–97-ին Երևանում: Խմբագիր՝ Աղասի ***Այվազյան***: Հետամտել է նորաստեղծ հայոց պետականության շուրջ համայն հայությանը համախմբելու և սատարելու նպատակ: Տպագրել է ՀՀ մշակութ. կյանքին, գրակ-յանն ու արվ-ին վերաբերող հոդվածներ: Տարածվել է նաև Ֆրանսիայում, Ավստրիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Իրանում և այլուր:

«ՀԱՅՔ», ազգ., գրական, քաղ. կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1891–98-ին Նյու Յորքում: Տնօրեն-խմբագիր՝ Սմբատ Գաբրիելյան: Հայ ազգ-ազատագր. պայքարի հարցերում որդեգրել է ազատական դիրքորոշում: Լուսաբանել է թուրքահայության վիճակը, բողոքել հալածանքների ու բռնությունների դեմ, արտատպել է Թուրքիայի կազմակերպած հայկ. կոտորածներին վերաբերող եվրոպ. և ամերիկյան մամուլի արձագանքներից, անդրադարձել է ամերիկահայության առօրյային: Տպագրել է նաև անգլ. հոդվածներ կամ անգլ-ով առանձին համարներ:

«ՀԱՅՔ», հաս-քաղ. շաբաթաթերթ (1995–98-ին՝ օրաթերթ): Լույս է տեսել 1989–99 և 2006–10-ին Երևանում: Հայոց համազգ. շարժման պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Սամվել Գևորգյան, Վասակ ***Դարբինյան***, Անտոն Պեպանյան, Հասմիկ Պողոսյան, Վարդգես Դավթյան, Տիգրան Հակոբյան, Գեղամ Նազարյան: Լուսաբանել է ՀՀ-ի հաս-քաղ., տնտ., մշակութ. կյանքը, միջազգ. հարաբերությունները:

«ՀԱՆԳԱՄԱՆՔ ՈՒԽՏԵԼՈՅ ԶՉՈՐՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՀՌՈՎՄԱՅ», կրոնաղավանաբան. երկ, թարգմանվել է իտալ–ից: Տպագրվել է 1775–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Տիտղթ–ինՙ նույնը (36 էջ, 16º, 13 x 6 սմ):

ՀԱՆԴԵՍ, տպագիր պարբ. հրատ.: Ըստ պարբերականության՝ լինում են շաբաթական, տասնօրյա, երկշաբաթական, ամսական, երկամսյա, եռամսյա և կիսամյա, ըստ բովանդակության՝ հաս–քաղ., գրական–գեղ., արտադր–տեխ., գիտաճյուղային, գիտահանրամատչելի, գիտատեղեկատու, շարադրողական (ռեֆերատիվ), մատենագիտ., երգիծ., մարզ., բազմաբնույթ:

Ժամանակակից Հ–ներում մեծ տեղ են հատկացնում զվարճալի, ճանաչող. և կիրառ. նյութերին, պատկերազարդումներին ու գեղանկարչ. գործերին, ծաղրանկարներին, լուսանկարների էջույդներին ու մոնտաժների վերատպություններին: Հ–ներին բնորոշ են մեծ չափերը, արտաքին ցայտունությունն ու արտահայտչականությունը, հարուստ պատկերազարդումը, տարբեր տառատեսակների գործածումը:

Հ–ի նախատիպը 1665–ին Ֆրանսիայում լույս տեսած «Ժուռնալ դը Սավան» պարբ–ն է: Նույն տարիներին Հ–ներ հրատարակվել են Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Իսպանիայում, Ռուսաստանում: Հ–ների հրատ–յան գործը հատկապես զարգացել է XIX դ–ի 2–րդ կեսին:


Հայկ. առաջին Հ–ները լույս են տեսել Հայաստանից դուրս. առաջինկը Սադրասում (Հնդկաստան) հրատարակված *«Ազդարար»*–ն է (1794–96): Հայ մշակույթի պատմության, հայագիտ. մտքի զարգացման, հայոց աշխարհաբար լեզվի ու հայ նոր գրակ–յան կազմավորման, նոր սերնդի դաստիարակման համար կարևոր ավանդ ունեն *«Բազմավէպ»* (1843–ից, Վենետիկ), *«Մեղու»* (1856–74, Կ Պոլիս), *«Հիւսիսափայլ»* (1858–64, Մոսկվա), *«Միոն»* (1866–ից, Երուսաղեմ), *«Արարատ»* (1868–1919, Վաղ–պատ), *«Մասիս»* (1884–1908, Կ. Պոլիս), *«Հանդէս ամսօրեայ»* (1887–ից, Վիեննա), *«Անահիտ»* (1898–1949, ընդհատումներով, Փարիզ), *«Գեղարուեստ»* (1908–21, Թիֆլիս) և այլ Հ–ներ:



Հայաստանի և Սփյուռքի ընթերցողների շրջանում մեծ համարում են ունեցել և ունեն Երևանում հրատարակված և լույս տեսնող *«Հայաբարանի աշխարավորուհի»* (1924–98), *«Մանկավարժ»* (1926–91), *«Սովետական արվեստ»* (1932–1996), *«Նորք»* (1934–ից), *«Պատմաբանասիրական հանդես»* (1958–ից), *«Լիտերատուրնայա Արմենիա»* (ռուս., 1958–ից), *«Գիտություն և տեխնիկա»* (1963–2007), *«Գարուն»* (1967–ից), *«Դրամատուրգիա»* (2000–ից), *«Կերպարվեստ»* (1993–95, 2003–ից), *«Նարցիս»* (2005–ից), մանկ. *«Աղբյուր»* (1923–ից), *«Ծիծեռնակ»* (1965–ից), *«Ուրախ գնացք»* (2009–ից) և այլ Հ–ներ:

Սփյուռքում Հ–ները կատարել են հայապահպանման, սփյուռքահայությանը Հայաստանի շուրջը համախմբելու, նոր սերնդին հայեցի դաստիարակելու ազգանվեր գործ: Դրանցից առանձնահատուկ դեր ունեն *«Նոր գիր»* (1936–54, Ֆրեզնո), *«Նայիրի»* (1941–ից, Հալեպ, Բեյրութ), *«Անի»* (1946–56, Բեյրութ), *«Միսիթարեան ընտանիք»* (1947–ից, Վենետիկ), *«Շիրակ»* (1956–ից, Բեյրութ), *«Սիփիւռք»* (1958–ից, Բեյրութ), *«Հայկազեան հայագիտական հանդէս»* (1970–ից, Բեյրութ), *«Համայնապատկեր»* (1999–ից, Լոս Անջելես), *«Կամար»* (2005–ից, Բեյրութ), *«Խաչքար»* (ռուս., 2007–ից, Կրասնոդար) և այլ Հ–ներ:

«ՀԱՆԴԵՍ», գիտամեթոդ. ժող.: ԵԹԿՊԻ–ի հրատ.: Լույս է տեսնում 2002–ից Երևանում (տարեկան 1–2 համար): Գլխ. խմբագիրՙ Լաուրա *Մուրադյան*: Տպագրում է թատրոնի և կինոյի պատմությանն ու տեսությանը, բեմ. խոսքին, պարարվ–ին, հեռուստատեսությանը, արվ–ի այլ ճյուղերի հիմնախնդիրներին, դասավանդման մեթոդների վերլուծությանը



«Հանգամանք ուխտելոյ զչորս եկեղեցիս Հռովմայ» *(1775, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը*

Հանդես



«Հանդես», *2002–ից, Երևան (№ 13, 2012)*



«Հանդես Երևանի համալսարանի», *1967–2000, Երևան (№ 3, 1994)*



«Հանդէս ամսօրեայ», *1887-ից, Վիեննա. № 1, 1900 (վերևում) և № 1–12, 2012 (ներքևում)*



վերաբերող, ինչպես նաև գրականագիտ., փիլ., գեղագիտ., պատմ., սոցիոլոգ. հոդվածներ: «Հ.»-ին աշխատակցում են բուհի դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ, ոլորտի ճանաչված մասնագետներ:

«ՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», քառամսյա գիտատեղեկատվ. հանդես: ԵՊՀ-ի հրատ.: Լույս է տեսել 1967–2000-ին Երևանում՝ հայ., ռուս. (մինչև 1993-ը՝ «Երևանի համալսարան»): Խմբագիրներ՝ Թադևոս Թադևոսյան, Յուրի Վարդանյան, Վլադիմիր ***Մաղալյան***: Լուսաբանել է համալսարանի ուս. և գիտ. աշխատանքները, տպագրել հոդվածներ ու հաղորդումներ հանրապետության բուհերի և ԳՀ հաստատությունների աշխատանքների վերաբերյալ, ուսանողների գրական ստեղծագործություններ, ծանոթացրել համալսարանի ՈւԳԸ գործունեությանը:

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», հայագիտ. հանդես (մինչև 1914-ը՝ ամենամսյա, ապա՝ երկամսյա, եռամսյա, վեցամսյա ևն): Վիեննայի Մխիթարյան միաբանության պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1887-ից Վիեննայում: 2-րդ ամենաերկարակյաց հանդեսն է *«Բազմավէպ»*-ից հետո: Հաջորդել է «Ծանօթութիւնք վաճառագիտութեան» (1819), *«Եւրոպա»* (1847–63) պարբ-ներին: Հիմնադիր՝ Արսեն ***Այտընյան***, խմբագիրներ՝ Ղևոնդ ***Հովհաննյան***, Գրիգորիս ***Գալեմքյարյան***, Գաբրիել ***Մենևիշյան***, Հակոբոս ***Տաշյան***, Վ. Մելքիսեդեկյան, Թովմաս ***Կեփիկյան***, Հ. Համբարյան, Ներսես ***Ակինյան***, Ա. Մատիկյան, Համազասպ ***Ոսկյան***, Արիստակես Վարդանյան, Պ. Տեր-Պողոսյան, Օգոստինոս ***Սեքույան***, Մ. Թոփալյան, Պողոս Գոճանյան: Մինչև 1894-ը եղել է կրթադաստիարակչ., հանրագիտ. բնույթի, 1895-ից՝ զուտ հայագիտ.: Հանդեսում տպագրվել են բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ՝ Հայաստանի և հայկ. գաղթավայրերի պատմության, հին, միջին դարերի և նոր գրակ-յան, գրական հայ-ի ու բարբառների, հայ հին ու միջնադարյան մատենագրության, ձեռագրագիտ-յան, ազգագրության, արվ-ի, բժշկության, մշակույթի նշանավոր գործիչների մասին: Առաջին անգամ այստեղ են լույս տեսել հայ. ձեռագրերի բնագրեր, ինչպես նաև եվրոպացի հայագետների ուսումնասիրությունների հայ. թարգմանություններ: Հանդեսում պարբերաբար հրապարակվում են մատենագիտ. ցանկեր՝ տարբեր երկրներում լույս տեսած հայագիտ. ուսումնասիրությունների վերաբերյալ, զգալի տեղ է հատկացվել հայ. ձեռագիր հավաքածուների նկարագրությանը (1976-ին հրատարակվել են նաև առանձին հատորով՝ «Յուցակ ձեռագրաց որ ի «Հանդէս ամսօրեայ»»), հայ պարբ. մամուլի պատմությանը:

«Հ. ա.»-ում տպագրված նյութերի զգալի մասը (ավելի քան 240 հատոր) Մխիթարյանները հրատարակել են առանձին գրքերով՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով: Բացի միաբանության հայրերից՝ հանդեսին աշխատակցել են Հ. Աճառյանը, Ա. Ալպոյաճյանը, Գ. Խալաթյանը, Ա. Սարուխանը, Ն. Բյուզանդացին, Կ. Բասմաճյանը, Լեոն, Ն. Ադոնցը, Մ. Օրմանյանը, Ն. Աղբալյանը, Գ. Տեր-Մկրտչյանը, Հ. Մանանդյանը, Գ. Հովսեփյանը, Մ. Աբեղյանը, օտարազգի արևելագետ-հայագետներ Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, Ն. Մառը, Ա. Կարիերը, Յ. Կարստը, Ֆ. Մյուլլերը, Ֆ. Կոնիբերը, Հ. Մարկվարտը, Հ. Ֆեստերը, Յ. Ֆրիդրիխը, Ֆ. Քյոնիգը, Ֆ. Մակլերը, Գ. Գարիտը, Կ. Լեհման-Հաուպտը, Ե. Բենվենիստը, Ֆ. Ֆեյդին և ուր.: 1915-ից եվրոպացի հայագետների աշխատություններն ավելի հաճախ տպագրվել են բնագրերով (գերմ., անգլ., ֆրանս. ևն): Լույս են ընծայվել «Հ. ա.»-ի բացառիկ համարներ՝ նվիրված հայ գրերի գյուտի, հայկ. տպագրության, Աստվածաշնչի հայ. տպագրության, Մխիթարյան միաբանության հիմնադրման, «Հ. ա.»-ի հրատարակման և այլ հոբելյան. տարեթվերի:

Գրկ. «Հանդէս ամսօրեայ» յուշամատեան (1887–1987), Վնն., 1987: «Հանդէս ամսօրեայի» յոդուածներու 100 տարուան մատենագիտական ցուցակ. 1887–1986 (կազմ.՝ Օ. Սեքույան), Վնն., 1990:

«ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ», տարեգիրք: Լույս է տեսել 1888–90 և 1894–96-ին Մոսկվայում: Խմբագիր՝ Մկրտիչ *Բարխուդարյան:* Նյութերը հիմնականում վերաբերել են հայ մշակույթի և բանասիրության պատմությանը: Տպագրել է Մ. Նալբանդյանի բանաստեղծությունները, «Երկու խոսք...» հոդվածը, «Կրիտիկա «Սոս և Վարդիթերի...»» երկի առաջին տարբերակը, նաև նրա կենսագրությունը՝ Ե. Շահազիզի հեղինակությամբ, Ս. Նազարյանցի նամակները, Ռ. Պատկանյանի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Ծատուրյանի, Րաֆֆու, Պ. Պռոշյանի, Նար-Դոսի, ինչպես նաև թարգմանություններ՝ Դ. Սամին-Սիբիրյակի, Ի. Տուրգենևի, Սալտիկով-Շչեդրինի, Ջ. Բայրոնի, Հ. Հայնեի, Գի դը Մոպասանի, Շ. Պետեֆիի և ուր. ստեղծագործություններից:

«ՀԱՆԴԷՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ» (“Zeitschrift für armenische Philologie”), գիտ. հանդես: Հրատարակվել է 1901–02-ին՝ 2 գիրք (տպագրությունը՝ Մարբուրգում՝ Գերմանիա, խմբագրավայրը՝ Թիֆլիս)՝ հայ., գերմ.: Պատ. խմբագիր՝ Ֆրանց *Ֆինկ*՝ Եզնիկ վրդ. Գյանջեցյանի, Հակոբ *Մանանդյանի* և Աբգար *Հովհաննիսյանի* ընկերակցությամբ: Տպագրել է նյութեր՝ պատմության, լեզվաբանության, ազգագրության ևնի վերաբերյալ, նաև գեղ. ստեղծագործություններ: Ուշագրավ են հայագետ-խմբագրի «Հայ միջնադարյան մանրապատումներ», Հ. Աճառյանի «Վանի բարբառի հնչյունաբանութիւնը» ուսումնասիրությունները, Ս. Մալխասյանի մենագրությունը՝ Փավստոս Բուզանդի Պատմության վերաբերյալ, Ա. Մեյեի, Հ. Գելցերի և ուր. գործերը:

«ՀԱՆԴԷՍ ՄՇԱԿՈՅԹԻ», գրական-գեղ. և բանասիր. հանդես (երկամսյա, եռամսյա, ապա՝ անկանոն պարբերականությամբ): Կ. Պոլսի Կեդրոն. սանուց միության հրատ.: Լույս է տեսել 1948–67-ին Ստամբուլում: Տնօրեն-արտոնատեր՝ Վարդան Պեկյան, խմբագիրներ՝ Հայկ Գալենտերյան, Կարապետ Գզիրյան, Վարդան *Կոմիկյան:* Տպագրել է ստամբուլահայ գրողների ստեղծագործություններից, Ա. Զոպանյանի, Պ. Դուրյանի, Հ. Աճառյանի և ուր. կյանքին ու գործունեությանը նվիրված հոդվածներ: Առանձին համարներ է նվիրել Հ. Մնձուրուն, Սայաթ-Նովային: «Հայ գեղարվեստ» խորագրով ներկայացրել է երաժշտության, գեղանկարչության, ճարտ-յան և այլ բնագավառների հայ և օտար անվանի գործիչների, հոդվածներ է տպագրել գիտ. հայտնագործությունների և նշանավոր գիտնականների վերաբերյալ: Լուսաբանել է միության գործունեությունը, ծանոթացրել թուրք. նորագույն գրակ-յանը:

«ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳ-Ք ԵՒ ՄԱՂԹԱՆՔ», հոգևոր երգերի և տաղերի ժող.: Տպագրվել է 1777-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (56 էջ, 8º):

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ», հաս-քաղ., գրակ-յան, արվ-ի, գիտ. պատկերազարդ շաբաթաթերթ (1901–02-ին՝ տասնօրյա): Լույս է տեսել 1896–1908-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Արմեն Լուսինյան, Ղազարոս Բոլատ, Երվանդ *Տեր-Մինասյան*, Բյուզանդ Պոզաճյան, Վահան Փափազյան, Մ. Պապոյան: Սկզբում եղել է առավելապես մանկ., 1905-ից՝ գրական-երգիծ.: Հանրագիտ. տեղեկություններ է հաղորդել գիտ-յան, հաս-քաղ. կյանքի վերաբերյալ, ծանոթացրել է ժամանակի գիտ. հայտնագործություններին, տպագրել բանասիրության, մանկավարժության, տնտեսագիտ-յան, աշխարհագրության և այլ բնագավառների վերաբերյալ նյութեր, ինչպես նաև գրական ստեղծագործություններ: Աշխատակցել են Ալփասլանը, Թեոդիկը, Սիպիլը, Հ. Ասատուրը և ուր.: 1908-ին հրատարակել է «Հանրագիտակ-ալբոմ» երգիծ. ժող-ը:



«Հանդէս գրականական եւ պատմական», *1888–96, Մոսկվա*



«Հանդէս մշակոյթի», *1948–67, Սփամբուլ (№ 31, 1961)*



«Հանրագիտակ», *1896–1908, Կ. Պոլիս*



Արսեն Դպիր Կոստանդնուպոլսեցու «Գիրք սահմանաց...» (1749, Կ. Պոլիս), հանրագիտական բառարանի 13-րդ էջը



«Դպրոցական մեծ հանրագիտարան»-ի (գիրք 1, հ. 2, 2008, Ե., «ՀՀՀ») կազմը



«Հայաստան» (2012, Ե., «ՀՀՀ») հանրագիտարանի կազմը

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ, գիտ. կամ գիտահանրամատչելի հրատ., տարբեր ոլորտների գիտելիքի և կիրառ. նշանակության համակարգված տեղեկությունների համահավաք, որոնք դասավորված են այբբենական, թեմատիկ (համակարգված) և այբբենական-թեմատիկ սկզբունքով: Ըստ նյութի ընդգրկման առանձնահատկության՝ լինում են համապիտանի, ճյուղային (գիտ-յան այս կամ այն ճյուղի վերաբերյալ), տարածաշրջանային (պետության, քաղաքի, երկրի որևէ տարածաշրջանի մասին), անձնանունային (օր.՝ Սահյանի Հ., Լերմոնտովի Հ., Դանտեի Հ.) և այլ Հ-ներ, ըստ ծավալի՝ մեծ (մի քանի տասնյակ հատորներով), փոքր (10–12 հ.), համառոտ (4–6 հ.) և հանրագիտ. բառարաններ (1–3 հ.):

Առավել մեծ համարում ունեն համապարփակ, գրական, բժշկ., արվ-ի, երաժշտ. և այլ Հ-ներ:

Հ-ի հոդվածները, ծավալից կախված, լինում են՝ հոդված-ամփոփում, հոդված-տեղեկություն, հոդված-բացատրություն:

Հ-ում նշանակալի տեղ է հատկացվում պատկերազարդման նյութերին՝ քարտեզներ, հատակագծեր, սխեմաներ, գծագրեր, դիմանկարներ են: Բազմահատոր Հ-ները սովորաբար ունենում են նաև ցուցիչներ:

Հ-ներ ստեղծվել են համեմատաբար նոր ժամանակներում, թեև հանրագիտ. բնույթի երկեր հայտնի են ինագույն անցյալից (Հին Եգիպտոսում, Հին Հունաստանում, Հին Հռոմում, միջին դարերում՝ Եվրոպայում, արաբագիր երկրներում, Չինաստանում): Անտիկ աշխարհում «Հ.» տերմինը նշանակել է տարրական հանրակրթ. գիտելիքների ամբողջություն:

Ժամանակակից հանրագիտ. հրատ-ների առաջնեկը 1751–80-ին Ֆրանսիայում Դ. Դիդրոյի և Լ. դ'Ալամբերի խմբագրությամբ հրատարակված «Հանրագիտարան կամ գիտությունների, արվեստների և արհեստների բացատրական բառարանն» է:

Հայ. առաջին հանրագիտ. աշխատությունը ***Արսեն Դպիր Կոստանդնուպոլսեցու*** «Գիրք սահմանաց յոգնադիմի աստուածաբանական, բնական, բարոյական եւ քաղաքական իրողութեանց գիտութիւնք» բառարանն է (1749, ԿՊ, Ձնչին Հովհաննեսի տպ.): XIX–XX դդ-ի հանրագիտ. բնույթի հրատ-ներից են Մ. Ավգերյանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց...» (հ. 1–12, 1810–15, Վնտ., Սբ Ղազարի տպ.), Մ. Մաղաք-Թեոփիլյանցի «Կենսագրութիւն երեւելի արանց...» (հ. 1–2, 1839, նույն տպ.), Մ. Բժշկյանի «Համառօտ նկարագիր վարուց երեւելի արանց» (1850, նույն տպ.), Ն. Ճիվանյանի «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական եւ դիցաբանական յատուկ անունաց, հաւելեալ հայկական յատուկ անուանք» (1879, ԿՊ, Հարություն Սարգարյանի տպ.), Կ. Աքըրյանի «Նոր Կաղանդէք համառօտ կենսագրութիւն երեւելի արանց» (1891, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունները, Ս. Էփրիկյանի «Ճնաշխարհիկ բառարանը» (հ. 1, 2, 1902, 1907, նույն տպ.), Հ. Տեր-Աստվածատրյանի «Բառարան հայ կենսագրութեանց (1441–1904)»-ը (1904, Թ., Ա. Քութաթելաձեի տպ.), Հ. Առաքելյանի «Հանրագիտական բառարան...»-ը (1915, Թ., «Էպոխա» տպ.), Մ. Պոտուրյանի «Հայ հանրագիտակը» (1938) ևն: Հանրագիտ. կարևոր տեղեկություններ են պարունակում հայ. տարեգրքերը, մասնավորապես՝ Թեոդիկի ***«Ամենուն տարեցոյցը»:***

1932–36-ին ՀՍԽՀ-ում փորձել են ստեղծել հայ. համապարփակ հանրագիտարան, բայց հաջողվել է հրատարակել միայն «Հայկական խորհրդային հանրագիտարանի» 1-ին հատորի 1-ին պրակը (1935):

Մասնագիտացված հանրագիտ. բառարանի արժեք ունի Հ. Աճառյանի ***«Հայոց անձնանունների բառարանը»*** (հ. 1–5, 1946–62, Ե., 2006, Հալեպ): 1973–90-ին լույս է տեսել Գ. Ստեփանյանի եռահատոր «Կենսագրական բառարանը» (4-րդը՝ անտիպ): Հանրագիտ. տեղեկություններ են պարունակում Հ. Խաչատրյանի «Գրական տեղեկատուն»

(1986): Դաս. հանրագիտ. հրատ-ներ են *«Հայկական սովետական հանրագիտարան»*-ը և *«Հայկական հանրագիտարան. հրատարակչության»* տպագրած բոլոր Հ-ները, զանազան բացատրական բառարաններ ևն:

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ», քաղծառայության տեղեկատու շաբաթաթերթ: ՀՀ պետ. կառավարման ակադ-ի հրատ.: Լույս է տեսնում 2003-ից Երևանում (մինչև 2013-ը՝ «Քաղաքացիական ծառայություն»): Խմբագիրներ՝ Լավրենտի *Միրզոյան*, Լարիսա Հովհաննիսյան (2004-ից): Ներկայացնում է քաղծառայության համակարգի գործունեությունը, կադրային քաղաքականության խնդիրները, տարբեր երկրներում պետ. և քաղաքաց. ծառայության համակարգերի առանձնահատկությունները, լուսաբանում է ակադ-ի կրթ. առօրյան, նորությունները, միջոցառումները:



«Հանրային ծառայություն», *2003-ից, Երևան*

«ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ պետ. կառավարման ակադ-ի հրատ.: Լույս է տեսնում 2004-ից Երևանում: Խմբագիրներ՝ Արմեն Հարությունյան, Հովհաննես Հարությունյան, Արսեն Լոքյան (2011-ից): Տպագրում է հանրային կառավարման, տնտեսագիտ-յան, իրավագիտ-յան, քաղաքագիտ-յան, հոգեբանության բնագավառների վերաբերյալ հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով): Հանդեսի խմբագր. խորհրդի կազմում են միջազգ. ճանաչված փորձագետներ՝ Կանադայի, ՌԴ-ի, Ուկրաինայի, Բելառուսի մասնագիտ. բուհերից:



«Հանրային կառավարում», *2004-ից, Երևան (№ 3, 2012)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», հաս-քաղ. ամսագիր: ՀՀԿ պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 2003-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Մուշեղ *Լալայան:* Տպագրում է կուս-յան գաղ. խնդիրներին նվիրված հրապարակումներ, որտեղ համադրվում են հայ և համաշխ. ազգ-պահպանող. աշխարհընկալումները, ընդգծվում հայ ազգ-պահպանող. գաղափարախոսության (Գ. Նժդեհի, Հ. Ասատրյան և ուր.) յուրահատկությունները: Հետևում է աշխարհաքաղ. ու տարածաշրջ. իրադարձությունների զարգացումներին, տպագրում վերլուծականներ (նաև թարգմանաբար), կարևոր տեղ է հատկացնում այլախոհ ու այլադավան հայերին նվիրված տեսակետներին: Համագործակցում է ՀՀ գիտ. հաստատությունների, վերլուծ. կենտրոնների, «Նորավանք» գիտակրթ. հիմնադրամի, ինչպես նաև Սփյուռքի գիտ. շրջանակների հետ:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է 1939-ին Երևանում: ՀՀ-ում բժշկության ոլորտի մատենագիտ., գրադարանային, տեղեկատվ. ծառայությունների հիմն. կենտրոնն է: Հավաքածուն ներառում է ավելի քան 0,5 մլն միավոր՝ տպագիր և էլեկտրոնային բժշկ. գրքեր, ամսագրեր, սեղմագրեր, լազերային սկավառակներ, տեսալսող. նյութեր ևն: 1951-ից համակարգում է բժշկ. գրադարանների ցանցը, որն ընդգրկում է հանրապետության բժշկ. բարձրագույն ու միջին ուս. հաստատությունների, հիվանդանոցների և բժշկ. կազմակերպությունների գրադարանները:

Գրադարանը 2001-ից հրատարակում է «Բժշկական սեղմագրերի հայկական հանդեսը», լույս է ընծայել «Հայ անվանի բժիշկներ» ժող-ի 1-ին մասը (2001) ևն:

Տնօրեններ են եղել Եվա Միսկարյանը, Ելիզավետա Ասոյանը, Քնարիկ Ղահրամանյանը, Աննա Շիրինյանը (1994-ից):



«Հանրապետական», *2003-ից, Երևան (№ 3, 2012)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ», գիտ. հոդվածների ժող. (տարեգիրք): ԳՊՄԻ գիտ. խորհրդի հրատ.: Լույս է տեսնում 1993-ից Գյումրիում: Պատ. խմբագիր՝ Սամվել Ալեքսանյան: Ներառում է ԳՊՄԻ գիտաժողովների նյութերը՝ հայոց լեզվի, հայ. և համաշխ. գրակ-յան, լրագրության, օտար լեզուների, պատմության, փիլ-յան, քաղաքագիտ-յան, տնտեսագիտ-յան, մանկավարժության, հոգեբանության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ֆիզ. դաստիարակության և նրանց դասավանդման մեթոդների վերաբերյալ:



«Հասկ», *1932-ից, Անթիլիաս*



«Հասկ», *2000-ից, Երևան*



«Հասկ հայագիտական տարեգիրք», *1948–2003, Անթիլիաս (Թ տարի, 1997–2001)*



«Հասկեր», *1905–22, Թիֆլիս (№ 1, 1912)*

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է 1957-ին Երևանում, 2009-ից՝ «Նորամուծության և ձեռնարկության ազգային կենտրոնի» կազմում: Հավաքածուն ներառում է 22 մլն միավոր, որից 18,5 մլն-ը՝ արտոնագրային, իսկ 1,5 մլն-ը՝ գիտատեխ. ամսագրեր: Հ. գ. գ-ի նորմատիվ-տեխ. փաստաթղթերի ֆոնդը ներառում է ավելի քան 700 հզ. օրինակ փաստաթուղթ՝ 80 %-ը միկրոժապավեններով, գրքային ֆոնդը 500 միավոր է (հիմնականում մասնագիտ. տեխ. գրակ.):

Տնօրեններ են եղել Իվետա Հակոբյանը, Լյուդմիլա Մատվեևան, Ելիզավետա Օսիպյանը, Ռաֆայել Հարությունյանը, Լևոն Ղարիբյանը (2009-ից):

«ՀԱՌԱՋ», տես *«Յառաջ»:*

«ՀԱՄԿ», կրոն., գրական և բանասիր. ամսագիր: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1932-ից Անթիլիասում (Լիբանան): Հիմնադիր-խմբագիր՝ Բարկեն *Կյուլեսերյան* (մինչև 1936-ը): Ի պաշտոնե պատ. խմբագիր են համարվում բոլոր գահակալ կաթողիկոսները: Սկզբն. շրջանում ունեցել է առավելապես տեղեկագր. բնույթ (հրապարակել է կաթողիկոսարանի որոշումները, զեկույցները, կոնդակները ևն), 1940-ական թթ-ից մեծ տեղ է հատկացնում կրոնաեկեղեց. թեմաներով հոդվածներին, տպագրում է նաև հայագիտ., պատմ., բանասիր. նյութեր, գրական-գեղ. ստեղծագործություններ:

«ՀԱՄԿ», ուսանող., կրթամշակութ. ամսաթերթ: ՀԱԱՀ պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Հայկ. գյուղատնտ. ակադ-ի «Գյուղատնտես» և Երևանի անասնաբուծ-անասնաբուժ. ինստ-ի «Կադրերի համար» (երկուսն էլ՝ 1988–90) պարբ-ների շարունակությունն է: Խմբագիր՝ Անի Խուդավերդյան: Լուսաբանում է բուհի գիտակրթ. գործունեությունը, ներկայացնում ռեկտորատի, գիտխորհրդի կարևոր որոշումները, անդրադառնում է մշակութ., մարզ. միջոցառումներին, միջբուհ. հարաբերություններին, ՀՀ ներքին կյանքին և արտաքին քաղաքականությանը: Տպագրում է բուհի ուսանողների գրական ստեղծագործություններ, որոնք ամփոփվում են տարեվերջյան «Հունձք» գրական հավելվածում:

«ՀԱՄԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ», Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հրատ.: Լույս է տեսել 1948–2003-ին Անթիլիասում: Առաջին 2 հատորը հրատարակվել է 1948–50-ին՝ Գարեգին Ա կաթողիկոս *Հովսեփյանի* ղեկավարությամբ: Խմբագրակազմում եղել են Դերենիկ եպս. Փոլատյանը, Գնել ծ. վրդ. Ճերեճյանը, Սիմոն *Սիմոնյանը*, Բյուզանդ *Եղիայանը:* 3-րդ հատորը տպագրվել է 1957-ին: Տարեգրքի նոր շրջանն սկսվել է 1980-ին՝ Գարեգին Բ աթոռակից կաթողիկոս Սարգիսյանի (*Գարեգին Ա. Սարգիսյան*) նախաձեռնությամբ և խմբագրությամբ, նրան հաջորդել են Արտավազդ արք. Թրթռյանը, Ներսես եպս. Բախտիկյանը, Անուշավան վրդ. Դանիելյանը, Վազգեն Ղուկասյանը, Արտաշես *Տեր-Խաչատուրյանը*, Իշխան Չիֆթըճյանը, Շահան ծ. վրդ. Սարգիսյանը: Ցայսօր հրատարակվել է 15 հատոր (մի քանիսը՝ միացյալ): Տպագրել է հայագիտ. ուսումնասիրություններ պատմության, լեզվի, մատենագիտ-յան, Հայ եկեղեցու վերաբերյալ, ինչպես նաև գիտ. տեղեկատվություն: Տարեգրքում զետեղվել են նաև անգլ. և ֆրանս. հոդվածներ:

«ՀԱՄԿԵՐ», մանկ. պատկերազարդ ամսագիր: «Նվեր մանուկներին» ընկերության հրատ.: Լույս է տեսել 1905–17 և 1922-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Կատարինե Լիսիցյան, Ստեփան *Լիսիցյան:* Խմբագրակազմում էին Հակոբ Աղաբաբը, Դերենիկ Դեմիրճյանը, Սիմակ Սահակյանը, Ստեփան Քափանակյանը, Սեյրին (Ավետիք Գուլոյան) և ուր.: Քարոզել է դաստիարակության և մանկավարժության առաջավոր սկզբունքներ, սեր մարդու և հայրենի բնության հանդեպ: Տպագրել է հեքիաթներ, լեգենդներ, առակներ, բնության երևույթների և կենդ. աշխարհի վերաբերյալ գիտա-

հանրամատչելի ակնարկներ ու զրույցներ: 1905-ին կից ունեցել է «Մանկավարժական բաժին» հավելվածը, որտեղ տպագրվել են Հ. Տեր-Միրաքյանի, Տ. Ռաշմաճյանի, Ի. Հարությունյանի և ուր.՝ մատաղ սերնդի բարոյական, գեղագիտ., ֆիզ. զարգացման հարցերին նվիրված հոդվածներ: Որպես հավելված՝ «Մանկավարժական գրադարան» խորագրով լույս է ընծայել մասնագիտ. գրքեր:

Հանդեսի գեղ. բաժնում են առաջին անգամ լույս տեսել Հ. Թումանյանի, Ա. Խնկոյանի, Հ. Հայրապետյանի, Հ. Աղաբաբի մի շարք մանկ. ստեղծագործություններ: Աշխատակցել են Հ. Հովհաննիսյանը, Ա. Ծատուրյանը, Ա. Իսահակյանը, Վ. Փափազյանը, Շիրվանզադեն և ուր.: Նախադպրոց. տարիքի երեխաների համար տպագրվել է «Մարիամ տատի տոպրակից», «Մարիամ տատի հեքիաթները» խորագրերով պատմությունների ու զրույցների շարքերը, «Զվարճալիք», «Այլ և այլք», «Դեսից դենից» բաժիններում՝ հանելուկներ, մանկ. խաղեր, խմբական երգեր, շուտասելուկներ են: Թարգմանաբար ներկայացրել է նաև համաշխ. գրողների (Մ. Գորկի, Ա. Չեխով, Լ. Տոլստոյ, Ի. Կռիլով, Վ. Հյուգո, Հ-Ք. Անդերսեն և ուր.) մանկ. ստեղծագործություններից:

ՀԱՍՐԱԹՅԱՆ Սիրուս (Մարգար) Ստեփանի [10.9.1902, գ. Ախլաթյան (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–25.2.1979, Երևան], պատմաբան-բանասեր: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1963): Գիտ. վաստ. գործիչ (1961): Մուրադ *Հասրաթյանի* հայրը: Սովորել է ԵՊՀ-ում: 1932–35-ին եղել է Պատմության ու նյութ. կուլտուրայի ինստ-ի փոխտնօրեն, 1937-ին՝ Մատենադարանի, 1964–75-ին՝ ՀՊՊԹ տնօրեն: Դասավանդել է ԵՊՀ-ում, ՀՊՄԻ-ում, 1965–66-ին՝ Բեյրութի Հայկազյան քոլեջում:

Լույս են տեսել Հ-ի «Հայաստանի հուշարձաններ» (համահեղ., 1975), «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» (1985) աշխատությունները, «Հոդվածների ժողովածուն» (1995):

Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» դպրոց. ձեռնարկի (1956, 1958) ստեղծմանը: Հայ. է թարգմանել Սայաթ-Նովայի վրաց. և ադրբ. խաղերը: Կազմել, խմբագրել ու ծանոթագրել է Սայաթ-Նովայի «Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղեր» (1963) ժող-ը:

ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ Մարգարի (Սիրուսի, ծ. 20.6.1935, Երևան), ճարտարապետ, ճարտ-յան պատմաբան: Ճարտ-յան դ-ր (1993), պրոֆ. (2003): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Սիրուս *Հասրաթյանի* որդին: Ավարտել է ԵՊԻ (1958): 1964-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ում (1988-ից՝ ճարտ-յան բաժնի վարիչ):

Լույս են տեսել Հ-ի «Երևան» (ռուս., 1968), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (ռուս., 1972, երկուսն էլ՝ համահեղ.), «Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները» (1973), «Մեղրու շրջանի հուշարձանները» (1987), «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» (1992), «Հայաստան. քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» (2001), «Սաղմոսավանք» (2002), «Հայ արվեստի պատմություն» (2009, երեքն էլ՝ համահեղ.), «Հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետությունը» (ռուս., անգլ.՝ 2000, հայ., անգլ.՝ 2010), «Հայկական ճարտարապետություն» (2011), «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարի «Կեչառիս» (1982), «Գանձասար» (1987) աշխատությունները:

ՀԼԿԵՄ (1971), ՀՀ Պետ. (2009) մրց-ներ:


Երկ. Очерк армянской архитектуры, М., 1985.

Գրկ. Մուրադ Հասրաթյան: Կենսամատենագիտություն, Ե., 2005:

«ՀԱՎԱՏԱՄՔ», ազգ., հոգևոր, մշակութ. ամսաթերթ: Ս. Պետերբուրգի Հայ եկեղեց. համայնքի հրատ.: Առաջին հայ. թերթն է ՌԴ-ում՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Լույս է տեսնում 1993-ից՝ հայ., ռուս.: Խմբագիր՝ Արմեն Մերուժանյան: Լուսաբանում է տեղի և ՌԴ-ի մյուս հայկ. համայնքների կյանքը, անդրադառնում է հայ եկեղեց. և ժող. տոներին, մշակութ. ժառանգությանը, ականավոր հայերին, տպագրում է կրոն. ուսուցող. թեմաներով նյութեր են: Հետևում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, հայ-ռուս. հարաբերություններին: Լույս է ընծայում «Հավատամք թերթի գրություն» գրական շարքը:



Սիրուս Հասրաթյանի *«Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» (1985, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Մուրադ Հասրաթյանի *«Հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետությունը» (ռուս., անգլ.՝ 2000, Մոսկվա) գրքի կրկնաշապիկը*



«Հավատամք», 1993-ից, Ս. Պետերբուրգ



Ռոպեր Հատրտեճյան

ՀԱՏՏԵՃՅԱՆ Ռոպեր Ավետիսի (ծ. 20.1.1926, Կ. Պոլիս), գրող, խմբագիր, հրապարակախոս: Ավարտել է Ստամբուլի համալսարանի գրակ-յան և փիլ-յան ֆակ-ը (1950): 1948–72-ին՝ «Սան» (Ստամբուլ) պարբ-ի, 1967-ից՝ ***«Մարմարա»*** օրաթերթի խմբագիր:

Լույս են տեսել Հ-ի «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ» (1965) մենագրությունը, «Երեւանեան յուշատետր» (1999), «Պտոյտ հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ», «Ասիկա Այբ է» (երկուսն էլ՝ 2005), «Ինչեր տեսանք, ինչեր լսեցինք» (2007), «Կեանքը խմբագրատունէն ներս» (2010), «Հիւանդութեան օրեր», «Զրոյց հինցած գրիչի մը հետ» (երկուսն էլ՝ 2011) հոդվածների, «Կեանքի մը երեք կիրակիները» (1959), «Կիրակնօրեայ հաշուետիպ» (1959), «Մահը մայս է արդեօք» (1994) պիեսների, «Բառասխալ» (1972), «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» (1979) պատմվածքների ժող-ները, «Առաստաղը» (1983, հ. 1, «Ալեք Մանուկյան» գրական մրց.՝ 1983), «Առաստաղին միւս կողմը» (2000, 2006, Ե.) վեպերը, «Օրագրիս տանտրհինգ էջերը» (1977) հուշագրությունը, «Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» (հ. 1–5..., 2008–12...) ժող-ը: 1982-ից տպագրվում են Հ-ի «Յուշատետր» (հ. 1–41...., 1982–2002...) փիլ-խոհ. նոթերը:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (1990), ՀՀ «Մովսես Խորենացի» (2002), ՀՀ մշակույթի (2007) և սփյուռքի (2011) նախարարությունների ոսկե մեդալներ ևն:

Երկ. Յուշատետր (ընտրանի), Էջմիածին, 1998: Թատերախաղեր, Սրտամբոյ, 2002: Առաստաղ: Վեպեր, Ե., 2006:

Գրկ. Դանիէլեան Ս., Ռոպէր Հատրտէճեան: Ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Սրտամբոյ, 1996: Թորանեան Թ., Ամբողջական գրագէտը: Ռոպէր Հատրտէճեան, Հալեպ, 2002:



«Հարանց վարք»
(1641, Նոր Ջուղա) գրքի գլխազարդով (9-րդ) էջ

«ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ», զրույցների ժող.՝ սուրբ հայրերի վարքի ու խրատների մասին: Առաջին անգամ տպագրվել է 1641-ին Նոր Ջուղայում՝ Սբ Ամենափրկիչ վանքի տպարանում, տպագրիչ՝ Խաչատուր Կեսարացի: Տիտղթ. չունի (705, 4º, 17 x 12,8 սմ):

Տպագրվել է նաև՝

1720–23-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Հարանց վարք: Եղեւ տպեցեալ եւ ի լոյս ածեալ....» (568 էջ, 6º, 24 x 16 սմ):

1855-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում («Վարք սրբոյ հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց», հ. 1–2):

«ՀԱՅԱՎԱՅԻՆ ԴԱՐՊԱՍ», տարածաշրջ. տեղեկատվ., վերլուծ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 2005-ից. հայ.՝ Ախալքալաքում (խմբագիր՝ Ռիմա Ղարիբյան), վրաց. տարբերակը՝ Ախալցխայում (խմբագիր-տնօրեն՝ Լեյլա Ինասարիձե): Անդրադառնում է ջավախահայության սոցիալ-տնտ., կրթամշակութ., մարզ. առօրյային, հիմնախնդիրներին, հայ-վրաց. հարաբերություններին, Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականությանը, կարևոր իրադարձություններին:



«Հարավային դարպաս», *2005-ից, Ախալքալաք, Ախալցխա*

ՀԱՐԵՆՑ Արմո Բագրատի (Հարությունյան Արամայիս, 20.5.1910, Իջևան–15.12. 1995, Մոսկվա, թաղված է Երևանում), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1947), պրոֆ. (1949): Ավարտել է ԵՊՀ (1938): 1930–33-ին՝ ***«Պիոներ կանչ»*** և ***«Պիոներ ղեկ»*** պարբ-ների խմբագիր, 1959–63-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի տնօրեն, 1963–67-ին՝ Հեռակա մանկավարժ. ինստ-ի ռեկտոր, 1968–75-ին՝ ՀԳԻ, 1975–95-ին՝ Մոսկվայի Ս. Օրջոնիկիձեի անվ. կառավարման ինստ-ի պատմության ամբիոնների վարիչ:


Մասնակցել է ***«Հայ ժողովրդի պատմություն»*** ակադեմ. բազմահատորյակի 8-րդ հատորի (1970) աշխատանքներին:

Երկ. Կամո: Կեանքն ու ոճոլոգիոն գործունեութիւնը, Ե., 1957: Անխախտ բարեկամություն, Ե., 1969:

ՀԱՐԹ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, տպագրության եղանակ, երբ տպաձևի տպագրող և բացատային (չտպագրող) տարրերը միևնույն հարթության վրա են, բայց ունեն տարբեր ֆիզ. հատկություններ: Դրանց տարբերությունն ապահովվում է մակերևույթի մշակումով, որի շնորհիվ տպագրող տարրերն ստանում են յուղաներկով պատ-

վելու և ջուրը վանելու, իսկ բացատատարրերը՝ յուղաներկը վանելու հատկություն: Տպաձևը տպագրության ընթացքում հաջորդաբար թրջում և ներկապատում են. ներկը քսվում է միայն տպագրող տարրերին և փոխանցվում թղթին:

Հ. տ-յան եղանակներ են ***միմագրությունը, օֆսեթ տպագրությունը*** և ***լուսատպագրությունը:***



Հարթ տպագրության *սխեմատիկ պատկեր*

«168 ԺԱՄ», հաս-քաղ., վերլուծ. երկօրյա թերթ: Լույս է տեսնում 2004-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Սաթիկ Սեյրանյան: Տպագրում է տեղեկատվ., հրապարակախոս. և վերլուծ. նյութեր ՀՀ-ի հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. կյանքի վերաբերյալ, վերլուծում Արցախյան հիմնախնդրին վերաբերող միջազգ. գործընթացները: Թերթում առավել ընդգծված են սոցիալ. խնդիրները. 2007-ից գործում է «Pressing» ակումբը. կազմակերպվում են բանավեճ-քննարկումներ հրատապ թեմաների շուրջ, որոնց ամփոփ հավելվածները հրապարակվում են թերթում և նրա կայքէջում:



«168 ժամ», *2004-ից, Երևան*

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲԱՆՎՈՐ», բանվոր. եռօրյա, ապա՝ երկօրյա թերթ: ՀԱՄԽ-ի և արհմիությունների կենտր. վարչությունների պաշտոնաթերթ.: Լույս է տեսել 1933–34-ին Երևանում: Խմբագիր՝ Հմայակ Ոսկանյան (***Միրաս***): Լուսաբանել է հանրապետության արդ. ձեռնարկությունների, գյուղատնտ. արտելների, արտադր. և արհմութ. կյանքը, ֆելիետոններով և ծաղրանկարներով (Է. Խոճիկ, Լեո Կամսար, Աշփալ, Ա. Մխիթարյան) վեր է հանել արտադրության տարբեր օղակների, աշխատավորության կենցաղսպասարկման բնագավառի թերությունները: Անդրադարձել է միջազգ. իրադարձություններին և բանվոր. շարժմանը, տպագրել լուրեր բուհերի կյանքից, մարզ. նորություններ:

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿ», մարզ. ամսագիր: ՀԽՍՀ ֆիզկուլտկոմիտեի և Երևանի քաղխորհրդի հրատ.: Լույս է տեսել 1932–36-ին (1935-ի № 1-6-ը՝ «Ֆիզկուլտուրա և տուրիզմ», 1935-ի № 7-ից մինչև 1936-ը՝ «Ֆիզկուլտուրա և սպորտ») Երևանում: Խմբագիրներ՝ Անուշավան Արզումանյան, Աշոտ Հախումյան, Ա. Աբրահամյան: Լուսաբանել է հանրապետության և մայրաքաղաքի մարզ. առօրյան, կարևորել է ֆիզ. դաստիարակության դերը աշխատավորության և երիտասարդ սերնդի առողջության ամրապնդման, նոր ապրելակերպի արմատավորման հարցերում:



Աշոտ Հարությունյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աշոտ Հովսեփի [31.12.1911, գ. Արծվանիկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–21.6.1986, Երևան], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1968): Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ-ը (1939): 1963–86-ին՝ ՀԽՍՀ գլխ. արխիվային վարչության պետ, միաժամանակ՝ ***«Բանբեր Հայաստանի արխիվների»*** հանդեսի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Հ-ի «Պատերազմի և խաղաղության մի քանի պրոբլեմների մասին» (1967), «Կովկասյան ռազմաճակատ. 1914–1917 թթ.» (ռուս., 1971), «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները» (1984) պատմագիտ. աշխատությունները:

Երկ. Սովետական միության նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակով, Ե., 1975: Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից. 1914–1918, Ե., 1983:



Ավագ Հարությունյան *«Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց. գրքերի մատենագիտություն (1860–2010)» (2014, էջմիածին) գրքի կազմը*


ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ավագ Արամայիսի (ծ. 19.1.1969, ք. Վանաձոր), պատմաբան, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1992): Պատմ. գիտ. թեկնածու (2004): 1997–99-ին՝ ՀՀ հաս-քաղ. կազմակերպությունների փաստաթղթերի կենտր. պետ. արխիվի գլխ. արխիվագետ, 2001–03-ին՝ տնօրեն, 1999–2001-ին՝ ՀԱԳ-ի մատենագիտ-յան և գիտ. հետազոտությունների բաժնի վարիչ, 2003–09-ին՝ Հայաստանի ազգ. արխիվի փոխտնօրեն, 2009-ից՝ ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվոր. թանգարանի տնօրեն, ***«Հայրենիք»*** մատենաշարի խմբագիր:



Արտեմ Հարությունյանի *«Նամակ Նոյին» (1997, Ե., «Ապոլոն») գրքի կազմը*



Բաբկեն Հարությունյան



Ժորա Հարությունյանի *«Պատուհան դեպի հավերժություն» (2013, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*

Լույս են տեսել Հ–ի «Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը» (2001, 2004), «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական և դիվանագիտական գործունեությունը 1918–1920 թվականներին» (2004), «Սևրի պայմանագիրը և հայ հասարակական–քաղաքական միտքը» (2004), «Ակնարկներ քրդական խնդրի պատմության» (2008), «ՀՀ Ազգային հերոսներ: Արցախի հերոսներ» (հայ.՝ 2010, պարսկ.՝ 2013,) մենագրությունները: Խմբագրել, կազմել և հրատ–յան է պատրաստել «Ազատ Սյունիք: Արնոտ գիրք» (2007), «Ազգային գիտակցություն» (2008), «Սուրբ Էջմիածինը և Հայոց ցեղասպանությունը» (2010) և այլ ժող–ներ, «Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց. գրքերի մատենագիտություն (1860–2010)»–ը (2014):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արտեմ Միքայելի (ծ. 19.9.1945, Ստեփանակերտ), բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ–ր (1989), պրոֆ. (1991): Ավարտել է ԵՊՀ (1968): 1972–ից դասավանդում է ԵՊՀ–ում:

Անգլ–ից թարգմանել է «Ընտրանի ամերիկյան և անգլիական պոեզիայի» (2000), Փ. Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» (2002), «Լույսի տխուր օրերը: Բանաստեղծություններ» (2008) և այլ գործեր:

Լույս են տեսել Հ–ի «Նշանների երկիր» (1977), «Տեսադաշտ» (1979, ռուս.՝ 1983, ԽՍՀՄ ԳՄ Մ. Գորկու անվ. մրց.՝ 1983), «Շեմ» (1984), «Ներկայության խոսքեր» (1988, Ռընե Շարի անվ. մրց.՝ 1988, Ֆրանսիա), «Հրդեհը հինաւուրց հողի» (1993, ԹՄՄ գրական մրց.՝ 1992), «Նամակ Նոյին» (անգլ.՝ 1995, հայ.՝ 1997), «Հուդայի արձակուրդը» (2003), «Հեռուստապոեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» (2010) բանաստեղծությունների և պոեմների ժող–ները, «Ետպատերազմյան ամերիկյան պոեզիայի զարգացման հիմնական միտումները» (1986), «Գրական ուղղությունների պայքարը անգլիական վեպում 20–րդ դ. սկզբին» (1992) աշխատությունները:

ՀՀ Պետ. մրց. (2003):

Գրկ. **Խանյան Ս.,** *Արտեմ Հարությունյանի պոեզիան, Սեւեփանակերտ, 2014:*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բաբկեն Հարությունի (4.3.1941, Երևան–26.2.2013, Երևան), պատմաբան, քարտեզագետ: Պատմ. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1994): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): Ավարտել է ԵՊՀ պատմության (1962) և իրավաբ. (1977) ֆակ–ները: 1966–ից աշխատել է ԵՊՀ–ում, 1988–ից՝ Հայաստանի պատմ. աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի վարիչ, 1993–2004–ին, միաժամանակ՝ պատմության ֆակ–ի դեկան, 2004–ից՝ հայոց պատմության ամբիոնի վարիչ, 2007–08–ին՝ ՀՀ ԳԱԱ ակադ. քարտուղար:

Հրատարակել է շուրջ 100 պատմ. քարտեզներ, այդ թվում՝ «Հայոց պատմության ուսումնական ատլասը» (1–ին մաս, 2004), «Հայաստանի պատմության ատլասը» (2005, 2007), «Հայոց Մեծ եղեռնը 1915: Քարտեզը» (2005), «Հայաստանի ազգային ատլասը» (հ. 1–2, 2007–08, 2–րդ հատորի գլխ. խմբագիրն է ու քարտեզների զգալի մասի հեղինակը):

Լույս են տեսել Հ–ի ««Աշխարհացոյց»–ը և չորս Հայքերի խնդիրը» (1997), «Հայաստանի, հայ–իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի ինագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII–VI դդ.)» (1998), «Մեծ Հայքի վարչա–քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»–ի, մաս 1 (արևմտյան և հարավային աշխարհներ)» (2001) աշխատությունները:

Բնության և հասարակության մասին գիտ–ների միջազգ. ակադ–ի անդամ (1998):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ժորա (Գևորգ) Սաղաթելի (7.9.1928, Երևան–10.1.2002, Երևան), դրամատուրգ: Արվ. վաստ. գործիչ (1975): Ավարտել է ԵԲԻ (1962): 1969–95–ին՝ ՀԳՄ գրական հիմնադրամի տնօրեն:

Լույս են տեսել Հ–ի «Խաչմերուկ» (1979), «Քո վերջին հանգրվանը» (1986) պիեսների և կինոպատումների, «Իմ լությունը» (2003), «Պատուհան դեպի հավերժություն» (2013) պիեսների և բանաստեղծությունների ժող–ները:

ԽՍՀՄ «Պատվո շքանշան» (1978), ՀԳՄ Գ. Սունդուկյանի անվ. մրց. (1983):

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1988:

Գրկ. **Արզումանյան Ս.,** *Հոմորի ասպետը: Գևորգ (Ժորա) Հարությունյան, Ե., 1999:*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կլիմենտ Ամասիայի [ծ.1.5.1940, ք. Կապան (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)], պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1994): Ավարտել է ՀՊՄԻ (1966), 1971-ից՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի գիտաշխատող: Մասնակցել է Հայրեն. մեծ պատերազմում զոհված հայ ռազմիկների ցուցակներն ամփոփող «Հուշամատյանի» (հ. 1–4, 1995–2005) ստեղծման աշխատանքներին, կազմել արխիվային փաստաթղթերի ու նյութերի [«89-րդ Թամանյան հայկական, հրաձգային դիվիզիայի ռազմական ուղին» (1985), «Մարշալ Բաղրամյան» (1997, երկուսն էլ՝ ռուս.) ևն] ժող-ներ:

Լույս են տեսել Հ-ի «51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին» (1980), «Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944–45 թթ.)» (1983), «Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում (1944–45)» (1990), «Մարշալ Բաղրամյան» (1997), «Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945 թթ.)» (2001), «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.» (2002), «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.)» (2002) աշխատությունները:

Գրկ. Մատենագիտություն Կլիմենտ Հարությունյանի աշխատությունների, Ե., 2010:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հարություն Խաչատուրի [27.12.1896, գ. Թովուզ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–30.3.1974, Երևան], թարգմանիչ, լրագրող: Մշակույթի վաստ. գործիչ (1973): Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1918): 1918–22-ին դասավանդել է Աբխազիայի հայկ. դպրոցներում, 1922–23-ին՝ Ստեփանավանում, 1927–56-ին աշխատել է «Մահակալ», «Աշխատանք», «Բատրակ», «Հայաստանի աշխատավորուհի», «Խորհրդային Հայաստան» պարբ-ների խմբագրություններում:

Թարգմանել է Մ. Գորկու, Ա. Չեխովի, Լ. Տոլստոյի, Մ. Շոլոխովի, Ա. Ֆադեևի, Վ. Կատաևի ստեղծագործություններից, ինչպես նաև Վ. Հյուգոյի «Իննսուներքը» (1938) վիպակը, Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» (1948), Հ. Սենկևիչի «Խաչակիրներ» (1957), Մ. Ռիդի «Անգլուխ ձիավորը» (1958), Ռ. Հագգարդի «Մինթեսումայի դուստրը» (1969), Լ. Ֆոյխտվանգերի «Գոյա կամ Իմացության դժվարին ուղին» (1974) վեպերը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Միհեր Ալեքսանդրի (ծ. 9.7.1972, Շուշի), գինթթակից, խմբագիր, մատենագետ, պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (2001): Ավարտել է Արցախի պետ. համալսարանը (1994): 1993-ից աշխատում է ԼՂՀ ՊԲ *«Մարտիկ»* թերթի խմբագրությունում (2012-ից՝ գլխ. խմբագրի տեղակալ): 2006-ին հիմնադրել է «Կաճառ» գիտ. կենտրոն ՀԿ և *«Կաճառ»* տարեգիրքը (գլխ. խմբագիր): Հրատարակել է «Վանա լիճ» (1988), «Արևմտյան Հայաստան» (1989) ընդհատակյա թերթերը: Մասնակցել է ԼՂՀ շրջանների պաշտպան. և ազատագր. ռազմագործողություններին, դրանք լուսաբանել է մամուլում:

Լույս են տեսել Հ-ի «Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը» (2000), «Ակներև. հերոսության հասցեներ» (2005), «ԱրՊՀ մասնակցությունը Արցախյան ազգային-ազատագրական պայքարին» (համահեղ., 2012) աշխատությունները, «Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում» (գիրք 1, 2009) հոդվածների, «Ծիծաղի հարյուր ակնթարթ» (1995) զվարճապատումների ժող-ները, «Մխրանք» (2000) փաստագր. երկը, «Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874–2009 թթ.)» (2010), «Լրագրողական հանրագիտակ: Կենսամատենագիտական տեղեկատու» (2012) մատենագիտ. աշխատությունները ևն: Եղել է «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–94» (2004) հանրագիտարանի գիտախմբագր. հանձնաժողովի անդամ:


Հանդես է գալիս նաև Ահյան Միհեր գրական կեղծանունով:

ԱԺՄ (2004), ԼՂՀ Եղիշեի անվ. (2004) մրց-ներ, ՀՀ ՊՆ «Անբասիր ծառայության համար» 1-ին (2008), 2-րդ (2011), 3-րդ (2012) աստիճանների, ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան» (2012) մեդալներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Նազիկ Կարապետի (ծ. 10.10.1956, Գյումրի), մանկավարժ, խմբագիր: Մանկավարժ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2006): Ավարտել է ԵՊՀ (1979): 1979–89-ին՝ ԳՊՄԻ, 1989-ից՝ ԵՊՀ դասախոս (1996-ից՝ ամբիոնի վարիչ): 2000-ից՝ *«Մանկավարժական միտք»* հանդեսի հիմնադիր-գլխ. խմբագիր:



Կլիմենտ Հարությունյանի *«Հայկական ազգային զորամիավորումները...» (2002, Ե., «Զանգակ») գրքի կազմը*



Միհեր Հարությունյանի *«Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը» (2000, Ե., «Գիտություն») գրքի կազմը*



Նազիկ Հարությունյանի *«Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները» (2002, Ե., «Զանգակ») գրքի կազմը*



Սաղաթել Հարությունյանի *«Ծիպիլին, Տիմբական և ծիծաղը» (1990, Ե., «Արևիկ», ձևավորող՝ Ռ. Գրիգորյան) գրքի կազմը*



Սարգիս Հարությունյանի *«Հայ հին վիպաշխարհը» (1987, Ե., «Արևիկ», ձևավորող՝ Ֆ. Գուլանյան) գրքի կազմը*



Վարազդատ Հարությունյանի *«Հայկական ճարտարապետության պատմություն» (1992, Ե., «Լույս») գրքի կազմը*

Լույս են տեսել Հ–ի «Առաքել Բահաթրյան» (1992), «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները» (2002), «Հայ մանկավարժ կաթողիկոսները» (համահեղ., 2012) աշխատությունները, բուհ. և դպրոց. դասագրքեր, մեթոդ. և ուս. ձեռնարկներ, «Հայ մանկավարժական հանրագիտարանը» (համահեղ., գիրք Ա՝ «Հայ մանկավարժության նշանավոր դեմքեր», 2006, գիրք Բ՝ «Հայ մանկավարժական մամուլը», 2010):

ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալ (2009):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սաղաթել Մամիկոնի [20.3.1921, գ. Բամբակաշատ (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)–3.6.2005, Երևան], գրող, թարգմանիչ, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1968): Ավարտել է ՀՊՄԻ (1941): 1956–69-ին՝ ***«Պիոներ»***, 1969–78-ին՝ ***«Գրական թերթ»*** պարբ-ների գլխ. խմբագիր, 1976–94-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Հ–ի «Իմ ձայնով» (1947), «Ապրիլ» (1952), «Թե ինչ է հշնջում առուն» (1958), «Արև ու ծով» (1964), «Իմ պատուհանը» (1971), «Առաջին ձյուն» (1987) բանաստեղծությունների, «Չինական պատմվածքներ» (1949), «Հարյուրերորդ հիերոգլիֆը» (1955) պատմվածքների, «Թևեր» (1982) վիպակների ժողովները, «Դատավորը» (1976), «Աղջիկը, Ծիպիլին և Տիմբական» (բեմ.՝ 1979, ՀԳՄ Ս. Զորյանի անվ. մրց.՝ 1981) պիեսները, «Ծիպիլին, Տիմբական և ծիծաղը» (1985, 1990) հեքիաթ-վիպակը: Թարգմանել է Վ. Զվյագինցևայի, Վ. Մայակովսկու, Զ. Ռոդարիի, Ա. դը Սենտ Էկզյուպերիի և ուր. ստեղծագործություններից:

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1988: Երկուսը աշնան գրպտում և այլ պիեսներ, Ե., 2004: Սարյան, Սարոյան, Փարաջանով և որիշներ... (պատմվածքներ), Ե., 2004:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սամսոն [1869, գ. Գանձաքար (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)– 1941], հաս. գործիչ, խմբագիր: 1915–17-ին խմբագրել է Կովկասի հայոց բարեգործ. ընկերության ***«Համբաւաբեր»*** շաբաթաթերթը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սարգիս Բարդուղիմեոսի [ծ. 22.9.1928, գ. Ղազանչի (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], բանասեր, ազգագրագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1971), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2000): Ավարտել է ԵՊՀ (1952): 1962-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտ–յան և ազգագրության ինստ–ում, 1992-ից՝ փոխտնօրեն, 2006-ից, միաժամանակ՝ ***«Պատմա-բանասիրական հանդեսի»*** գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Հ–ի «Հայ ժողովրդական հանելուկներ» (1960), «Մանուկ Աբեղյան» (1970), «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» (1975), «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (2006) մենագրությունները, գրի է առել և հրատարակել «Սասնա ծռեր» (հ. 3, 1979, հ. 4, 1999, Ա. Սահակյանի հետ) հայկ. էպոսի նոր պատումներ, «Սասունցի Դավիթ» (1981) համահավաք բնագիրը, զբաղվել է հայկ. առասպելների համակարգված հետազոտությամբ («Հայ հին վիպաշխարհը», 1987, 2004, «Հայ առասպելաբանություն», 2000, «Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը», 2001):

Երկ. Բանագիտական ակնարկներ, Ե., 2010: Мифы и легенды древней Армении, Е., 2007. Գրկ. Հարությունյան Սարգիս Բարդուղիմեոսի: Կենսաամատենագիտություն, Ե., 2003:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վարազդատ Սարտիրոսի (29.11.1909, Վան–20.3.2008, Երևան), ճարտ–յան պատմաբան և տեսաբան: Ճարտ–յան դ–ր, պրոֆ. (1965), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Արվ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է ԵՊԻ (1937): 1937–99-ին դասավանդել է նույն ինստ–ում, 1945–90-ին՝ ճարտ–յան ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Հ–ի «Դվինի 5–7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները» (1950), «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները» (1960), «Անի քաղաքը» (1964), «Հին աշխարհի ճարտարապետությունը» (1978), «Եկայք շինեսցուք» (1988, Լոս Անջելես), «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները» (1996), «Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության ու պատմության հիմնախնդիրները» (2004) աշխատությունները, «Հայկական ճարտարապետության պատմություն» (1992) դասագիրքը:

Համահեղինակ է «Հայկական ճարտարապետության հուշարձաններ» (1951), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (1955), «Երևան» (1968), «Հայկական ճարտարապետության պատմության մի քանի հարցեր» (1969), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (1972, բոլորը՝

ռուս.,), «Հայաստանի յուշարձաններ» (1975), «Մակարավանք» (1994, *«Հայ ճարտարապետության վավերագրեր»* մատենաշար, «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը» (2003, Վ. Թեքեյանի անվ. մրց.՝ 2005)։ աշխատությունների։

Հայկ. հանրագիտարանի գիտահիմնարկչ. խորհրդի անդամ (1974–87), «Վասպուրական» հայրենակց. միության նախագահ (1986–90), պատվ. նախագահ (1990–2008)։

ՀՀ ԳԱԱ Թ. Թորամանյանի անվ. մրց. (1978), Հայ եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան (1997), ՀՀ «Անանիա Շիրակացի» (1999), Ա. Թամանյանի անվ. ոսկե (2002) մեդալներ։

Գրկ. Վասպուրական և գնահատականք: Ժողովածու (կազմ.՝ Օ. Մարկոսյան), Ե., 2009: Վարդգետ Հարությունյան: Կենսագրություն, Ե., 2005:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վլադիմիր Հարությունի [17.3.1931, գ. Սուլդա (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–13.1.2000, Երևան], գրող, լրագրող։ Ավարտել է ԵԳԹԻ (1958), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրականության ինստ-ի բարձրագույն դասընթացները (1969)։ 1970–73-ին՝ ՀԳՄ Սյունիքի միավորման նախագահ, 1973–74-ին՝ «Ծիածան» (*«Երեկոյան Երևան»*-ի հավելված) շաբաթաթերթի խմբագիր։ 1989-ին հիմնադրել է «Հայաստանի Հանրապետության բնակավայրերը» մատենաշարը և տպագրել 7 գիրք։

Լույս են տեսել Հ-ի «Ատլանտիդա» (1965), «Վայոց ձոր» (հ. 1, 2, 1970, 1974), «Արևադարձ» (1977), «Անմահության նախօրեին» (1987) վեպերը, «Բողոք լեռներում» (1962), «Նաիրյան աստվածներ» (1982) պատմվածքների ու վիպակների, «Սարդարապատ» (2006) բանաստեղծությունների ժող-ները։

Երկ. Որտե՞ղ եք, փղաներ, Ե., 1988: Каменные колокола, М., 1986.

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ Զավեն Արսենի (20.4.1911, Բիթլիս–24.6.1992, Երևան), ճարտարագետ-շինարար, բառարանագիր։ Տեխ. գիտ. դ-ր (1966), պրոֆ. (1968)։ Ավարտել է ԵՊԻ (1931)։ 1961–92-ին՝ Քարի և սիլիկատների ԳՀԻ բնական քարի լաբորատորիայի վարիչ։

Հ-ի նախաձեռնությամբ և համահեղինակությամբ լույս են տեսել «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (1957, 1988) և «Միջազգային տերմինային տարրերի ռուս-հայերեն բառարանը» (1989)։

Երկ. Հայաստանի փոսֆերը և մարմարները, Ե., 1959 (համահեղ.): Природные каменные материалы Армении, М., 1967.

ՀԱՅՈՒՆԻ Վարդան [Սոմունճյան, 10.7.1870, գ. Պարտիզակ (Սեբաստիայի նահանգ)–8.7.1944, Վենետիկ], բանասեր, ազգագրագետ, խմբագիր։ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ։ Մոտ 40 տարի որպես ուսուցիչ և տեսուչ աշխատել է Մխիթարյան վարժարաններում (Վենետիկ, Միլան, Կ. Պոլիս ևն)։ Եղել է *«Բազմավէպ»* հանդեսի խմբագրապետ։

Լույս են տեսել Հ-ու «Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ» (1912), «Դաստիարակութիւն հին հայոց քով» (1923), «Պատմութիւն հին հայ տարազին» (1923), «Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն» (1927), «Հայ դրօշները պատմութեան մէջ» (1919, 1930), «Երդմունք հին հայոց մէջ» (1910, 1932, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Հայուհին՝ պատմութեան առջեւ» (1936, 2007, 2009, Թեհրան), «Նորակերտ հայ Լուսինեաններ» (1953), «Պատմութիւն հայոց աղօթամատոյցին» (1965) և այլ աշխատություններ։

ՀԳՄ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 2002-ին Երևանում։ Տնօրենն՝ Բագրատ *Ալեքյան:* Լույս է ընծայում հայ արդի և դաս. գրողների ստեղծագործություններ (ցայսօր՝ շուրջ 500 անուն գիրք)։ Երիտասարդ գրողների ստեղծագործությունները տպագրվել են «Մուտք» մատենաշարով (ավելի քան 30 անուն)։ Կարևոր ծրագրերից է օտարազգի դաս. և ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների (թարգմանաբար) լույսընծայումը։ Ուշագրավ հրատ-ներից են Վ. Շեքսպիրի «Լուկրեցիայի պատվազրկումը» (2003) չափածո ողբերգությունը, Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն»-ը (2004), Ֆ. Դոստոևսկու «Գրառումներ մեռյալ տնից» (2005) վեպը, Գ. Գուարչի «Հայկական տոհմածառը» (2005), Գ. Վերմիշևի «Ամիր-



Վլադիմիր Հարությունյանի *«Սարդարապատ» (2006, Ե., «Լուսաբաց») գրքի կազմը*



Զավեն Հացագործյանի *«Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան»-ի (համահեղ., 1988, Ե., Հայկական հանրագիտարանի գլխ. խմբագրություն) կազմը*



Վարդան Հացունու *«Հայուհին՝ պատմութեան առջեւ» (2009, Թեհրան) գրքի կազմը*

սպասալար» (2012) պատմավեպը, Վ. Սարոյանի «Բան ունեմ ասելու» (2012) պիեսների ժող-ը ևն:

Անգլ. և այլ լեզուներով հրատարակվել են «Հայ կին դրամատուրգներ», «Արդի հայ բանաստեղծներ», «Արդի հայ արձակագիրներ», «Արդի հայ դրամատուրգներ» ժող-ները:

«ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՒՈՐԻ ՃԱՇՈՑ», մեզ հասած ամենահին նկարազարդ Ճաշոցն է (Մատենադարան, ձեռ. № 979): Գրիչն ու նկարիչը հայտնի չեն: Ընդօրինակվել է 1286-ին Կիլիկիայում (հավանաբար Սկևռայի վանքում)՝ Հեթում թագաժառանգի (հետագայում՝ Հեթում Բ թագավոր) պատվերով: Մագաղաթե ձեռագիրը բաղկացած է 475 թերթից, բոլոր էջերը զարդարված են գլխազարդերով, լուսանցազարդերով ու թեմատիկ տերուն. մանրանկարներով: Դրանք էջի երկարությամբ ձգված լուսանցազարդերի հետ ամբողջացնում են էջի դեկորատիվ հարդարանքը («Երեք մանուկները հնոցում», սրբերի պատկերներ, լուսանցազարդ): Ձեռագրին առանձին ճոխություն են հաղորդում անվանաթերթերը: Վարպետորեն միահյուսված տարբեր զարդամոտիվներով (մտացածին կենդանիներ, թռչուններ, բուս. մոտիվներ) գլխազարդերը, լուսանցազարդերն ու գլխատառերը էջի հարթության վրա տեղավորված են ռիթմի արտակարգ զգացողությամբ: Մանրանկարների գեղանկարչ. արտահայտչականությունն ուժգնանում է հարուստ ու վառ գունաշարի շնորհիվ:



Վիյամ Սարոյանի «Բան ունեմ ասելու» (2012, ՀԳՄ հրատարակչություն) գրքի կազմը

Գեղ. կատարյալ ոճով և կատարման վարպետությամբ ձեռագիրը դասվում է համաքրիստ. գեղարվ-ի նշանավոր գործերի շարքը:

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964: Հայկական մանրանկարչություն, [ալբոմ, կազմ., խմբ. և առաջաբ.՝ Լ. Դուռնովոյի], Ե., 1967:* **Դրամբյան Ի.**, *Հեթում Բ արքայի Ճաշոցը, Ե., 2004 (հայ. ռուս., անգլ.):* **Дурново Л.**, *Портретные изображения на первом заглавном листе Чашоца 1288 г., «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1946, № 4:*

ՀԵՂԻՆԱԿ, գրակ-յան, արվ-ի, հրապարակախոս. ստեղծագործության, գիտ. հետազոտության, նախագծի, գյուտի ստեղծող: Հ-ի իրավունքները սահմանվում են ***հեղինակային իրավունքով***:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ, քաղաքաց. իրավունքի բաժին, որը կարգավորում է գիտ-յան, գրակ-յան և արվ-ի երկերի ստեղծմանն ու օգտագործմանն առնչվող հարաբերությունները, ***հեղինակի*** և հարակից իրավունքների խնդիրները:



***«Հեթում Բ թագաւորի Ճաշոց»-ի** պատկերազարդ էջ (1286, Մատենադարան, ձեռ. № 979)*

Հ. ի-ի հիմն. խնդիրը գիտ-յան, գրակ-յան և արվ-ի ստեղծագործությունների ստեղծման գործընթացի վերահսկողությունն է, ստեղծագործ աշխատանքով զբաղվելու պայմանների ապահովումը, ստեղծագործության օգտագործման համար շահեկան և օրինաչափ հնարավորությունների ստեղծումը:

Հ. ի-ի առաջին առարկան մտավոր սեփականությունն է (հրատարակչ. ոլորտում՝ հրատ-ը), որի նկատմամբ հեղինակն ունի անձնական ոչ գույքային և գույքային բացառիկ իրավունքներ:

Անձնական ոչ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի անձին իր ստեղծագործության պատկանելիությունը: Այդ իրավունքները հեղինակին են պատկանում նրա գույքային իրավունքներից անկախ և պահպանվում են հօգուտ նրա՝ նույնիսկ գույքային իրավունքներն այլ անձի փոխանցելուց հետո: Հեղինակին են վերապահվում ստեղծագործության հեղինակ ճանաչվելու (հեղինակության իրավունք), ստեղծագործությունն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն օգտագործելու կամ այդպիսի օգտագործումը թույլատրելու (հեղինակի անվան իրավունք), ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավն ու արժանապատվությունը վնասող այլ ոտնձգություններից պաշտպանելու (հեղինակի համբավի և արժանապատվության իրավունք), ստեղծագործությունը որևէ ձևով առաջին անգամ հրապարակելու կամ այդ իրավունքն այլ անձի

վերապահելու (հրապարակման իրավունք), ստեղծագործությունը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից հրաժարվելու (հետկանչի իրավունք) ոչ գույքային իրավունքները:

Անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի ու անփոխանցելի են և պահպանվում են անժամկետ՝ բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում: Հեղինակության, անվան, համբավի ու արժանապատվության և հետկանչի իրավունքները ժառանգաբար չեն փոխանցվում:

Գույքային իրավունքներն ապահովում են ստեղծագործությունն օգտագործելու հեղինակի իրավունքը: Դա նշանակում է, որ հեղինակը ոչ միայն իր ստեղծագործությունը հրապարակելու հարցն է լուծում, այլև ինքնուրույն է որոշում՝ ինչպես, որ պահից և ինչ ձևով է այն ներկայացվելու մարդկանց որոշակի շրջանակի: Բացառիկ գույքային իրավունքները սահմանվում են որպես հեղինակի՝ իր ստեղծագործության օգտագործումն իրականացնելու կամ թույլատրելու իրավունք:

Ստեղծագործության օգտագործումը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունքներն են ստեղծագործության վերարտադրումը, տարածումը, վարձույթով տալը, հրապարակային ցուցադրումն ու կատարումը, հեռարձակումը, ստեղծագործությունը հանրությանը հասցնելը, հաղորդումը մալուխային կամ արբանյակային կապով, թարգմանումը, մշակումը, վերամշակումը, նկարազարդումը, հարմարեցումը և այլ ձևերով վերափոխումը (վերափոխման իրավունք) ու հնարավոր օգտագործման այլ ձևերի իրականացումը, որի մասին կնքվում է ***հեղինակային պայմանագիր***:

Հեղինակի, ինչպես նաև համահեղինակների գույքային իրավունքները գործում են նրանց կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրանց մահից հետո ևս 70 տարի:

Գույքային իրավունքների գործողության ժամկետը լրանալուց հետո ստեղծագործությունը դառնում է հանրության սեփականությունը: Դրանք կարող է օգտագործել յուրաքանչյուր անձ՝ առանց հեղինակային վարձավճարի՝ պահպանելով հեղինակի անվան, հեղինակության, համբավի և արժանապատվության իրավունքները:

Հեղինակային իրավունքների պաշտպանության խնդիրներով ՀՀ-ում զբաղվում է «Հայհեղինակ» կազմակերպությունը (տնօրեն՝ Սուսաննա Ներսիսյան):

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄԱՄՈՒԼ, տես *Մամուլ*:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՇԱՆ, հրատ-ները (գրքեր, գրքույկներ, արխիվային գործեր ևն) ըստ հեղինակի կամ վերնագրի դասակարգման պայմանական նշան՝ գրադարաններում, արխիվներում, գրավաճառ ցանցում դրանք դասավորելու (տեղաբաշխելու) համար: Առաջարկել է ամերիկացի գրադարանագետ Չառլզ Կետտերը (1837–1903, կոչվում է նաև կետտերյան նշան). կազմվում է հեղինակի կամ գրքի վերնագրի անվան 1-ին տառից և հեղինակային աղյուսակում նրա հերթական համարից:

Հրատ-ների դասակարգման 3 ցուցիչներից (ՀՏԴ-ի, ԳՄԴ-ի հետ) մեկն է, որոնցով կազմվում է գրքերի պահպանության գրանիշը (տես *Մատենանիշ գրադարանային*):

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, համաձայնագիր գիտ., գրակ-յան կամ արվ-ի ստեղծագործության օգտագործման մասին. կնքվում է հեղինակի (նրա ժառանգի կամ իրավահաջորդի) և համապատասխան օգտագործող կազմակերպության (հրատարակչություն, թատրոն, կինոստուդիա ևն) միջև: Հ. պ-ի կնքումը պարտադիր է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքն ուղղակիորեն թույլատրում է ստեղծագործության օգտագործումը՝ առանց ***հեղինակային իրավունքի*** տիրոջ թույլտվության: Պայմանագիրը պետք է լինի գրավոր,

Հեղինակային իրավունքի *մասին հրատարակություններ*







Հեղինակային իրավունքի պայմանական նշանը



«ՀԵՄ», 1940-ից, Երուսաղեմ



Հին կտակարանի *պերգամենտե օրինակ*



Հովհաննես Հինդլյան

իսկ բանավոր Հ. պ. թույլատրվում է միայն պարբ–ներում, հանրագիտարաններում, հանրագիտ. և այլ բառարաններում տպագրելիս:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿ, հրատ–յան լույսընծայումից հետո հեղինակին անվճար տրվող օրինակներ, որոնց քանակը սահմանվում է կողմերի համաձայնությամբ՝ ***հեղինակային պայմանագրով***:

«ՀԵՄ», գրական–հաս. եռամսյա հանդես: Հայ երիտասարդաց միության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1940–ից (1946–77–ին ընդհատվել է) Երուսաղեմում: Խմբագիրներ՝ Ավետիս ***Սանճյան***, Վարուժան Տիրատուրյան, Հակոբ Անդրեասյան, Վիգեն Լեփեճյան: Լուսաբանում է տեղի հայկ. համայնքի կյանքը, ազգ. կազմակերպությունների գործունեությունն ու հայանպաստ ձեռնարկումները, ինչպես նաև ՀՀ տնտ., մշակութ. ու գիտ. կյանքը, Հայրենիք–Սփյուռք հարաբերությունները: Տպագրել է հայ (Հ. Թումանյան, Մ. Մեծարենց, Վ. Թեքեյան և ուր.) և օտարազգի (Ֆ. Շիլլեր, Գի դը Մոպասան, Մ. Գորկի) դասականների գործեր, մարզ. և այլ լուրեր:

ՀԵՔԻՄՅԱՆ Սրապիոն (16.8.1832, Կ. Պոլիս–7.3.1892, Կ. Պոլիս), դրամատուրգ, թատեր–մշակութ. գործիչ, թարգմանիչ: Սովորել է ծննդավայրի Մխիթարյանների տարրական դպրոցում, Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարանում, տիրապետել եվրոպ. մի շարք լեզուների: 1856–ին հաստատվել է Կ. Պոլսում, հիմնադրել պոլսահայ առաջին պրոֆեսիոնալ թատրոնը:

Հ. թարգմանել է «Յուլիանէ: Գօմալա: Պօղոս եւ Վիրգինիա» (1864, ԿՊ, Համազգ. տպ., 3 պիեսը՝ 1 գրքով) դրամատիկ գործերը: Գրել է «Տաղք, քերթուածք եւ թատրերգութիւնք»–ը (1857, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), «Սամուէլ» պատմ. ողբերգությունը (երկար տարիներ ներկայացվել է արևմտահայ և արևելահայ բեմերում), «Արտաշէս եւ Սաթէնիկ» (1848), «Հարմակ եւ Աշխէն» (1850), «Վահրամ», «Սմբատ Ա» դրամաները, բանաստեղծություններ:

Գրկ. Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, հ. 1, Ե., 1959: Հայ նոր գրականության պատմություն, հ. 2, Ե., 1962: **Մտեփանյան Գ.,** *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Ե., 1962:*

«ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ», շաբաթաթերթ: «Հայհիդրոէներգոշին» վարչության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1957–69–ին Երևանում: Խմբագիրներ՝ Օգսեն Սեմերջյան, Վարազդատ Դոդոռյան, Յուրի Մարյան, Լյուդմիլա Գրիգորովա: Լուսաբանել է հանրապետության հիդրոկառույցների աշխատանքները, Չեխոսլովակիա–Հայաստան, ԳԴՀ–Հայաստան հիդրոշինարարների մրցության ընթացքը, ընդհանրացրել նրանց փորձը: Ունեցել է գրական, գեղ. և այլ բաժիններ: Հաջորդել է «Քանաքեռշին» (1932–39), «Հարվածային շինարարություն» (1949–57) պարբ–ներին:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, Հին ուխտ, *Աստվածաշնչի* նախաքրիստ. շրջանի՝ հուդայական սրբազան գրքերի ժող.: Եկեղեցին այդ գրքերն անվանել է Հ. կ.՝ ի զանազանություն զուտ քրիստ. սրբազան գրքերի՝ ***Նոր կտակարանի***: Բաղկացած է 3 բաժնից. 1–ին՝ օրենսդրական (կոչվում է նաև Հնգամատյան, հեղինակը համարվում է Մովսես մարգարեն, 5 գիրք), 2–րդը՝ պատմական (17 գիրք), 3–րդը՝ մարգարեական (17 գիրք):

Հ. կ–ի գրքերը բազմաբնույթ ու բազմաբովանդակ են (հնավանդ ժամանակագրություններ, պատմ. զրույցներ, ասքեր, առասպելներ, զանազան ձոներ, աղոթերգեր, կանոններ՝ ծիս. մաքրագործումների ու զոհաբերումների մասին, կրոնափիլ. քննախոսություններ, սիրավեպեր): Հուդայական ուսմունքում Հ. կ–ի վերջն. օրենսկարգումը VII–IX դդ–ում կատարել են մասորանները (հրեա հեղինակներ): Հ. կ–ի գրքերից ***Սաղմոսարանը*** հայ. առաջին անգամ տպագրվել է 1565–ին:

Գրկ. **Տնտեսեան Ե.,** *Պատմութիւն Սուրբ գրոց Հին եւ Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1867:*

ՀԻՆԴԼՅԱՆ Հովհաննես (1866, Կ. Պոլիս–16.3.1950, Կ. Պոլիս), մանկավարժ, հաս. գործիչ: Սովորել է Կ. Պոլսի Ներսեսյան–Երմոնյան և Պերպերյան վարժարաններում: Դասավանդել է Պեշիկթաշի Սաքրուհյան, Սբ Խաչ վարժարաններում, եղել Սաքրուհյան, Թարգ–

մանչաց, Բերայի, Ազգ. կեդրոն. վարժարանների տնօրեն: 1909–ին Կ. Պոլսում Գ. Մալաթյանի հետ հիմնադրել է Նոր դպրոց կրթօջախը: Զբաղվել է մանկավարժության պատմության հարցերով:

Լույս են տեսել Հ–ի «Հիմնական նոր եղանակ ֆրանսերէն տպագրութեան...» (1886, ԿՊ, Հայ գրաշարաց ընկ. տպ., ունեցել է բազմաթիվ հրատ–ներ), «Բանալի անգղիարէն ընթերցանութեան» (1886, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), «Նոր դասագիրք ֆռանսերէն լեզուի» (1901, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.), «Դիւրին եղանակ ֆրանսերէն ընթերցանութեան եւ գրուցատրութեան» (1902, նույն տպ.) դասագրքերը (բազմիցս վերահրատարակվել են), «Փունջ մանկավարժական բանախօսութեանց» (1901, նույն տպ.) հրապարակային դասախոսությունների, «Անկեղծ էջեր» (հ. 1–4, 1913–22, նույն տպ.) հրապարակախոս. հոդվածների ժող–ները, «Ուսուցանելու մեթոդը» (տետրակ Ա, 1908, ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.), «Հոգի մը կազմելու համար» (1912, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Դաստիարակին անբաժանելի ընկերը» (1925), «Քսան եւ հինգ տարուայ կեանք մը» (1934), «Ծնողքներուն» (հ. 1–3, 1957–59) մանկավարժ. աշխատությունները, ինչպես նաև մանկապատանեկան գեղ. ստեղծագործություններ (6 գիրք, 1949–62. առաջինը՝ «Տիտանիկի փոքր նավաբեկները», 1949): Թարգմանել է Վ. Հյուգոյի ստեղծագործություններից:

Գրկ. Հինդլեան Յ. Թ., Կեանքն ու մանկավարժական գործունէութիւնը, Աթենք, 1986:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ, ձեռագիր մատյաններում և հնատիպ գրքերի վերջում հավելվածի ձևով տրվող տեղեկություններ՝ անվան, գրության վայրի և թվականի, պատվիրատուի և ստացողի, գրիչի և կազմողի, գրչության կամ տպագրման հանգամանքների առանձին մանրամասների (երկրի տիրակալի և հոգևոր առաջնորդի անունները, պատմ. կարևոր դեպքեր ու անձինք ևն) մասին: Հ–ում զետեղված տեղեկությունները հաճախ օգնել են ճշգրտելու ձեռագրի գրության ժամանակը, այս կամ այն պատմ. իրադարձության մանրամասները, մասամբ հիշեցնում է այժմյան հրատ–ների լույսընծայման տվյալներն ամփոփող ֆիրմային էջը:

Լույս են տեսել «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1950), «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (հ. Ա–Գ, 1955–67, երկուսն էլ՝ կազմ.՝ Լ. Խաչիկյան), «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար» (1984), «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դդ.» (1988, երկուսն էլ՝ կազմ.՝ Ա. Մաթևոսյան), «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» (հ. 1–3, 1974–84, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան) ևն:

Գրկ. Բախչինյան Հ., Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Ե., 1980: Մաթևոսյան Ա., Հայերէն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Ե., 1998:

ՀԻՄԱՐՅԱՆ Հովհաննես, **Մամբրե** (24.6.1827, Կ. Պոլիս–9.8.1916, Կ. Պոլիս), արձակագիր, գրական, մշակույթի գործիչ: Նախն. կրթությունն ստացել է Կ. Պոլսում: 1851–52–ին Կ. Պոլսում հրատարակել է *«Բանասէր»* պարբերագիրք–ժող–ը, 1852–ին՝ «Ժուռնալ ազիատիկ դը Կոնստանտինոպլ» (ֆրանս.) պարբ–ը:

Լույս են տեսել Հ–ի «Խոսրով եւ Մաքրուհի» (1851, «Բանասէր»), «Նեռն կամ Կատարած աշխարհի» (1867, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.) ռոմանտիկ վեպերը, «Կարճառօտ պատկեր Նաբոլէոնն Պոնաբարթէին վարուցը» (1847, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), «Դիւան, որ է տաղարան» (1871, նույն տպ.) երկերը:

«ՀԻՒՍԵԱԿ ԲԱՐԵԲԱՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ», Մատթեոս Եվդոկացու գովաբան. գիրքը՝ ուղղված Մարիամ Աստվածածնին և աստվածահայր Հովսեփին: Տպագրվել է 1775–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (134 էջ, 8º, 12,8 x 7,4 սմ):


«ՀԻՒՍԻՍ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1863–64–ին Ս. Պետերբուրգում: Հրատարակիչ–խմբագիր՝ Ռափայել *Պատկանյան:* Սատարել է հայության լուսավորության և կրթության գործին, պաշտպանել ու տարածել է ազգ–ազատագր. գաղափարներ: Մեծ տեղ է հատկացրել Զեյթունի ապստամբությանը («Վիկտոր Լանգլուայի ճանապարհորդությունը», հոդվածաշար, 1863, № 9–13), «Հայերի արդի վիճակը» (1863, № 12) հոդվածով փորձել է Եվրոպայի, մասնավորապես՝ Ֆրանսիայի ուշադրությունը հրավիրել Թուրքիայում տեղի ունեցող



Հիշատակարան *1292–ի Ավետարանի (Նորավանք, գրիչ և ծաղկող՝ Մոմիկ, Մատենադարան, ձեռ. № 2848)*



Հովհաննես Հիսարյան *«Կարճառօտ պատկեր Նաբոլէոն Պոնաբարթէին վարուցը» (1847, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



«Հիւսեակ բարեբանութեանց Սրբոյ Աստուածածնին» *(Մատթեոս Եվդոկացի, 1775, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Հիւսիս», 1863–64, Ս. Պետերբուրգ



«Հիւսիսափայլ», 1858–64, Մոսկվա



«Հյուսիսափայլ», 1993-ից, Մոսկվա



Հիմնարար գիտական գրադարանի հնատիպ գրքերի պահոցը

իրադարձությունների վրա: «Հ.»-ում տպագրվել են նաև Գ. Պատկանյանի «Վարդան Մամիկոնյան», «Շավարշ Բ», «Հռիփսիմե» պոեմները, Ռ. Պատկանյանի «Մեռելի վրեժխնդրությունը» նորավեպը, այլ գրական ստեղծագործություններ, պատմ. ուսումնասիրություններ, տնտեսագիտ., աշխարհագր. նյութեր, թարգմանություններ:

«ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ», ազգ., մշակութ., լուսավոր. և կրթադաստիարակչ. ամսագիր: Լույս է տեսել 1858–62 և 1864–ին Մոսկվայում: Խմբագիր՝ Ստեփանոս *Նազարյան:* Ունեցել է առաջադիմ. ուղղվածություն, որը պայմանավորված էր խմբագրի և հանդեսի գլխ. աշխատակից Միքայել *Նալբանդյանի* գործունեությամբ: «Հ.»-ի հրատ-յամբ նշանավորվում է արևելահայ հաս. մտքի զարթոնքը 1860-ական թթ-ին: Լուսաբանել է ազգ. կյանքի վերածնության խնդիրներ, որպես ազգի ինքնագիտակցության բարձրացման ճանապարհ մատնանշել առաջադիմ. կրթ. համակարգի ստեղծումը, դպրոցը եկեղեցու հսկողությունից դուրսբերումը: «Հ.»-ում տպագրվել են Մ. Նալբանդյանի հրապարակախոս-քննադատ., գիտ. և բազմաթիվ այլ հոդվածներ, գրական-պատմ. գործեր («Հիշատակարանը», «Մեռելահարցուկ» վեպը ևն), քաղ-հաս. և տնտ. խնդիրների, գրակ-յան և թատրոնի վերաբերյալ ուսումնասիրություններ: Ամսագիրը մեծապես նպաստել է հայ ռեալիստ. գրակ-յան զարգացմանը, աշխարհաբարի կայացմանը (աշխարհաբարի զարգացման այս ենթաշրջանն ընդունված է անվանել հյուսիսափայլյան): Ամսագրին աշխատակցել են Րաֆֆին ու Ռ. Պատկանյանը: «Հ.» ժամանակի երիտասարդ հայ գրողների (Ս. Շահազիզ, Ռ. Հասան-Ջալալյան, Գ. Բարխուդարյան, Գ. Տեր-Հովհաննիսյան և ուր.) համար գրական դպրոց էր: Թարգմանաբար ներկայացրել է ռուս (Ն. Կարամզին, Մ. Լերմոնտով և ուր.) և եվրոպ. (Հ. Հայնե, Ֆ. Շիլլեր, Պ. Ժ. Բերանժե, Ա. Հոֆման և ուր.) գրողների:

«Հ.»-ի ավանդույթները շարունակելու և Մոսկվայի հայ համայնքի կյանքը լուսաբանելու նպատակով 1993-ից «Հյուսիսափայլ» հայկ. մշակութ. ընկերությունը վերսկսել է «Հ.»-ի հրատ-ը՝ ամսական պարբերականությամբ (խմբագիր՝ Դավիթ Բալայան):

ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ (ՀԳԳ), ստեղծվել է 1935-ին՝ ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղին (ԱրմՖԱՆ) կից: Նախապես կոչվել է Կենտր. գրադարան, 1943-ից ՀՀ ԳԱԱ նախագահության ենթակայության ինքնուրույն ակադեմ. հաստատություն է: ՀԳԳ-ն շուրջ 3 մլն գրադարանային միավորով (856 հզ-ը՝ օտարալեզու) ՀՀ գիտ. խոշորագույն գրադարանն է, գիտ. տեղեկատվության կենտրոնը, ղեկավարում և համակարգում է ԳԱԱ համակարգի գիտ. հիմնարկների 29 ճյուղային-մասնագիտ. գրադարանների (շուրջ 1,2 մլն գրադարանային միավոր) գործունեությունը: Գրադարանում պահպանվում են գիտ-յան և մշակույթի մի շարք հայ գործիչների անձն. գրադարանների հիման վրա ստեղծված 27 անհատ. մասնագիտ. ֆոնդեր:

Ունի մասնագիտացված 5 ընթերցասրահ (տարեկան ավելի քան 20 հզ. ընթերցող): ՀԳԳ-ն գրքափոխանակություն է կատարում արտերկրի և ԱՊՀ շուրջ 60 երկի 355 հաստատության հետ: Գրադարանում գործում է արտասահմ. գիտ. նորագույն հոդվածների որոնման, պատվիրման և ստացման ծառայությունը, հաճախակի կազմակերպվում են նորույթների և թեմատիկ ցուցահանդեսներ: ՀԳԳ-ն մեծապես աջակցում է ՊՆ-ի զորամասերում, մարզերի դպրոցներում գրադարանների ստեղծմանը:

2003-ից «Հայաստանյան գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում սկսվել է գրադարանի գրքային ֆոնդի մատենագիտ. էլեկտրոնային մուտքագրումը: Նույն թվականից ՀԳԳ-ի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների ցանցը:

Գրադարանն ունի հազվագյուտ և հնատիպ գրքերի ֆոնդ՝ ներառում է XVI–XVIII դդ-ի հայ. և այլալեզու մեծարժեք հրատ-ներ: 2010-

ին ՀԳԳ-ն Բրիտ. գրադարանի «Վտանգված արխիվներ» ծրագրով ավարտել է հայ հնատիպ գրքի թվայնացումը: Ընթացքի մեջ է 1801-ից հետո տպագրված հայատառ գրքերի թվայնացումը:

Գրադարանի տնօրեններ են եղել Վաչե Կարմենյանը, Արարատ *Ղարիբյանը*, Գուրգեն *Հովնանը*, Վաչե *Նալբանդյանը*, Հանրի Ներսեսյանը, Տիգրան *Զարգարյանը*, Կարապետ Մինասյանը (2011-ից):

«ՀՀ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ», կիսամսյա պարբ.: ՀՀ արդարադատության նախարարության հրատ.: Լույս է տեսնում 1997-ից Երևանում: Խմբագիր՝ Սուսաննա Գրիգորյան: Հրապարակում է ՀՀ ԿԲ-ի խորհրդի, ԿԸՀ-ի, Էներգետիկայի հանձնաժողովի, Վիճակագրության պետ. խորհրդի, Տնտ. մրցակցության պաշտպանության պետ. հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգ հանձնաժողովի, Քաղաքաց. ծառայության խորհրդի որոշումները, ՀՀ նախարարների հրամանները, Երևանի քաղաքապետի, ՀՀ մարզպետների որոշումներն ու կարգադրությունները ևն:



«ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր»,
1997-ից, Երևան

«ՀՀ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», շաբաթական պարբ.: ՀՀ արդարադատության նախարարության հրատ.: Լույս է տեսնում 1997-ից Երևանում: Խմբագիր՝ Սուսաննա Գրիգորյան: Հրապարակում է ՀՀ միջազգ. ընթացիկ պայմանագրերը, ՀՀ օրենքները, Սահմանադր. դատարանի որոշումները, ՀՀ նախագահի հրամանները, կարգադրությունները, ՀՀ ԱԺ-ի և ԱԺ նախագահի, ՀՀ Կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները, ՀՀ Վճռաբեկ դատարանի դատ. ակտերը, Արդարադատության խորհրդի որոշումները: Ըստ անհրաժեշտության՝ ունենում է նաև արտահերթ համարներ:



«ՀՀ պաշտոնական տեղեկագիր», *1997-ից, Երևան*

ՀՂՈՒՄ, բառային կամ թվային նշում հրատ-յան մեջ, որն ընթերցողին ուղղորդում է այլ հրատ. (մատենագիտ. Հ.) կամ տեքստի այլ հատված, հանրագիտարաններում՝ այլ հոդված, որը տվյալ նյութի մասին պարունակում է լրացուցիչ կամ բացատր. տեղեկություն: Կիրառվում է գրավոր տեքստերը միմյանց հետ կապելու և կրկնություններից խուսափելու, գրադարաններում՝ հաշվառման և այլ նպատակներով:

Տարբերում են ներքին և արտաքին Հ-ներ. 1-ինը միմյանց հետ կապում է նույն փաստաթուղթը (գրքի տեքստը, հանրագիտարանների հոդվածները ևն), 2-րդը՝ տարբեր փաստաթղթեր: Աստվածաշնչի տեքստերում, օրինակ, Հ-ները կատարվում են հետևյալ ձևով՝ Եղ. 2. 3 (Եղից գլխի 2-րդ բաժնի 3-րդ տողը): Սովորական տեքստերում Հ-ները նշում են փակագծերում՝ տեքստի մեջ, կամ տողատակերում՝ համապատասխան թվական ցուցիչներով կամ աստղանիշներով, հանրագիտարաններում՝ հղվող հոդվածը շարվում է *շեղատառով*:

Հ-ման մեծ հնարավորություն է բացվել համակարգչային տեխնիկայի և համապատասխան ծրագրերի շնորհիվ, երբ կոճակի սեղմումով անմիջապես կարելի է գտնել ցանկացած տեքստ, պատկերազարդում, քարտեզ ևն:

ՀՄԱՅԻԼ, աղոթքների ժող.: Աղոթքները տպագրվել են առանձին թղթերի վրա, ապա կցվել իրար. ունեն մի քանի մետր երկարություն: Հ-ներն անվանաթերթ և կազմ չունեն:

Հայ հնատիպ գրքի շրջանում Հ-ներ տպագրվել են՝

1698-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Երկար.՝ 1 մ 22 սմ, լայն.՝ 10 սմ:

1709-ին Կ. Պոլսում՝ Էտկեար Գնդևանցու տպարանում: Երկար.՝ 8 մ 30 (՞) սմ, լայն.՝ 9 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 8 սմ: Բաղկացած է շուրջ 36,5 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1716-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Սարգվանեցու տպարանում: Երկար.՝ 5 մ 80 (՞) սմ, լայն.՝ 9 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 8 սմ: Բաղկացած է շուրջ 43 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1717-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 8 մ 30 սմ, լայն.՝ 9 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 7 սմ: Բաղկացած է շուրջ 44 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:



Հմայիլ (*1698, Կ. Պոլիս*)



Համայիլ
(1716, Կ.Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.)



Հայնրիխ Հյուբշման



Հ. Հյուբշմանի *«Հայերենի քերականություն» (2003, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*

1718-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 8 մ 70 սմ, լայն.՝ 9 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 8,5 սմ: Բաղկացած է շուրջ 43 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1724-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 6 մ 30 սմ, լայն.՝ 9,5 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 8 սմ: Բաղկացած է շուրջ 41,5 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1725-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 7 մ 25 սմ, լայն.՝ 9,5 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 7,5 սմ: Բաղկացած է շուրջ 43 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1726-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 3 մ 60 (՞) սմ, լայն.՝ 9 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 7,5 սմ: Բաղկացած է շուրջ 44 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1727-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 7 մ 30 սմ, լայն.՝ 9,5 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 7,5 սմ: Բաղկացած է շուրջ 43 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1728-ին, հավանաբար՝ Կ. Պոլսում: Երկար.՝ 6 մ 20 սմ, լայն.՝ 9,5 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 8 սմ: Բաղկացած է շուրջ 43 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1729-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար՝. 4 մ, լայն.՝ 9,5 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 8 սմ: Բաղկացած է շուրջ 43 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

1731-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Երկար.՝ 6 մ 35 սմ, լայն.՝ 9 սմ, զարդաեզր է, տպագրադաշտի լայն.՝ 7,5 սմ: Բաղկացած է շուրջ 44 սմ երկար-յան միմյանց սոսնձված թերթերից:

Հ. է տպագրվել նաև 1992-ին Երևանում («Զվարթնոց»):

ՀՅՈՒԲՇՄԱՆ (Hübshmann) Հայնրիխ [1.7.1848, Էրֆուրտ (Գերմանիա)–21.8.1908, Ֆրայբուրգ (Գերմանիա)], գերմանացի լեզվաբան, հայագետ, իրանագետ, բանասեր: Բանասիրության դ-ր (1872): 1875-ին ներկայացրել է «Հայոց պատմության և արաբների առաջին պատերազմների մասին՝ ըստ Սեբեոսի հայերենի» աշխատությունը և Լայպցիգի համալսարանում ստանձնել դասախոսի պաշտոն:

«Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների մեջ» (1875) հոդվածում Հ. հայ-ը համարել է հնդեվրոպ. լեզուների ինքնուրույն ճյուղ: «Հայերենի ուսումնասիրություններ. 1. Հայերենի ստուգաբանության վերաբերյալ» (1883) աշխատության մեջ ներկայացրել է հայ. 299 բառի ստուգաբանություն: «Հայերենի քերականություն» (մաս 1, 2, 1895, 1897) աշխատության մեջ ներկայացրել է փոխառություններ պարսկ-ից, արաբ-ից, ասոր-ից, հուն-ից, հին ֆրանս-ից և այլ լեզուներից՝ ստուգաբանություններով, ինչպես նաև բնիկ հայ. 438 բառի ծագումնաբանությունը:

Հ. «Հայերենի հնչյունական օրենքների ժամանակագրության մասին» (1898) ուսումնասիրության մեջ քննել է ***ի, ու, է*** ձայնավորների, ***եայ, ոյ, իւ*** երկբարբառների սղման օրենքները, աշխարհաբարի փոփոխությունները համարել անխուսափելի: «Հին հայոց տեղւոյ անունները...» (1904, հայ. հրտ.՝ 1907, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատության մեջ անդրադարձել է հայկ. հին տեղանուններին:

Հայ. լույս են տեսել նաև Հ-ի «Ուսումնասիրութիւնք հայերէնի փոխառեալ բառից» (1894, Վնն.,Մխիթարյան տպ.), «Հայագիտական ուսումնասիրություններ» (կազմ.՝ Է. Մկրտչյան, 1990), «Հայերենի քերականություն» (2003), «Հայագիտական ուսումնասիրություններ» (գերմ-ից թարգմ.՝ Մ. Հարությունյանի, կազմ.՝ Ռ. Ղազարյան, 2004) աշխատությունները:

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.,** *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* **Տայեան Ղ.,** *Պրոֆ. Հենրիկ Հիւբշման, «Բազմավէպ», 1908, № 10:* **Կարստ Յ.,** *Հենրիկոս Հիւբշման, «ՀԱ», 1909, № 1:* **Աղայան Է.,** *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*

ՀՅՈՒՆՔՅԱՐՊԵՅԵՆՑՅԱՆ Հովհաննես (Պետրոս, 25.11.1818, Կ. Պոլիս–28.12.1894, Կ. Պոլիս), բառարանագիր, լեզվաբան: Սովորել է Կ. Պոլսի Մայր եկեղեցու դպրոցում: Եղել է ուսուցիչ, քահանա (1852): Տիրապետել է հուն-ին, լատ-ին, պարսկ-ին, թուրք-ին: Մասնակցել է Աստվածաշնչի խմբագրման աշխատանքներին. համեմատել

է հայ. թարգմանությունը և հուն. բնագիրը: Հ-ի լեզվաբ. միակ գործը «Ստուգաբանական բառարան հայ լեզուի» (1894, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.) աշխատությունն է, որի առաջաբանում հայ-ը համարում է թուրանական լեզու: Ստուգաբանությունները չունեն գիտ. հիմնավորում և չեն ենթարկվում լեզվաբ. օրենքներին: Հ-ի լեզվաբ. հայացքները քննադատել են Սերովբե *Տերվիշյանը* և Հրաչյա *Աճառյանը:*

ՀՅՈՒՐՄՅՈՒԶՅԱՆ (Հյուրմյուզ) Գևորգ (11.11.1797, Կ. Պոլիս–11.4.1876, Վենետիկ), թարգմանիչ, եկեղեց., կրթ., մշակույթի գործիչ: Մխիթարյան միաբանության անդամ (1819), աբբահայր (1846): Էդուարդ *Հյուրմյուզյանի* եղբայրը: Սովորել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում, աշակերտել Արսեն *Բագրատունուն*: Մինչև 1848-ը հայկաբանություն է դասավանդել Կ. Պոլսի և Վենետիկի Մխիթարյան վարժարաններում: Եղբոր հետ թարգմանել է Շ. Ռոլենի «Հնախօսութիւն...» (հ. 1–6, 1825–29, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը, որով առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացվել են Հին Եգիպտոսի, Ասորեստանի, Բաբելոնի, Մարաստանի, Պարսկաստանի, Հունաստանի և Մակեդոնիայի պատմությունները:

Ֆրանս-ից թարգմանել է Պ. Կոռնելի «Պողիկտոս վկայ Հայկազն» (1858), Ժ. Ռասինի «Գոթողիա» (1862), Պ. Մետաստազիոյի «Թեմիստոկլէս» (1886, «Բազմավէպ», №№ 4–6) չափածո ողբերգությունները, նաև «Հրիտակակատար» (1856, «Բազմավէպ», № 2), «Հնախոյզ» (1857, «Բազմավէպ», № 2) կատակերգությունները:

Գրկ. Միխթարեան յորելեան, Վնտ., 1901:

ՀՅՈՒՐՄՅՈՒԶՅԱՆ (Հյուրմյուզ) Էդուարդ (22.1.1799, Կ. Պոլիս–26.10.1876, Հռոմ), բանաստեղծ, բանասեր-լեզվաբան, աստվածաբան, թարգմանիչ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1819): Շուրջ 30 տարի եղել է ուսուցիչ, ապա՝ վերակացու՝ Հռոմի հայկ. վարժարանում: Գևորգ *Հյուրմյուզյանի* եղբայրը:


Թարգմանել է Վ. Ալֆիերիի, Ա. Մանցոնիի, Պ. Մետաստազիոյի, Պ. Վիրգիլիոսի, Վ. Մոնտի, Ժ. Ռասինի ստեղծագործություններից, եղբոր հետ՝ Շ. Ռոլենի «Հնախօսութիւն...» (հ. 1–6, 1825–29) աշխատությունը:

Լույս են տեսել Հ-ի «Դուռն քերականութեան հայկազնեան լեզուի», «Ի սուրբ վկայսն Սուքիասանս...» (երկուսն էլ՝ 1833), «Քերականութիւն գործնական...» (1836), «Յաւարտ տպագրութեան մեծի հայ բառագրոց» (1838), «Համառօտ քերականութիւն լատին բարբառոյ», «Առձեռն ճարտասանութիւն», «Առձեռն բանաստեղծութիւն...» (երեքն էլ՝ 1839) «Առձեռն դիցաբանութիւն կամ Առասպելախառն վէպք...» (1840), «Մաղթանք չափաւ» (1843), «Առակացն գիրք երկեակ» (1865), «Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբար» (1869), «Ջբօսարան տօնից, այսինքն տօներու վրայ մտածականներ» (1874) և այլ աշխատություններ, «Բուրաստանք» (1851) բանաստեղծությունների ժող-ը:

Հ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. Միխթարեան յորելեան, Վնտ., 1901:


«ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», մատենաշար: Լույս է տենսում Երևանում (հ. 1–25…, 1950–2012…): Հրատարակում է ՀՀ ԳԱԱ ինագիտ-յան և ազգագրության ինստ-ը: Խմբագրակազմ: Հատորներում ընդգրկված են առանձին նշանավոր հուշարձանների պեղումների արդյունքներին նվիրված հաշվետվություններ և ուսումնասիրություններ: Ուշագրավ են Բ. Առաքելյանի «Գառնի II: Անտիկ ժամանակաշրջան» (1957) և «Արտաշատ I, 1970–1977 թթ. պեղումների հիմնական արդյունքները» (ռուս., 1982), Է. Խանզադյանի «Գառնի IV, 1949–1966 թթ. պեղումների արդյունքները» (1969), Ա. Քալանթարյանի «Դվին I: Կենտրոնական թաղամասի պեղումները (1964–1970 թթ.)» (1976), Ժ. Խաչատրյանի «Անտիկ դամբարանադաշտ» (ռուս., 1976) և «Անտիկ դամբարանադաշտեր (1971–1977 թթ. պեղումները)» (1981), Կ. Ղաֆադարյանի և Ա. Քալանթարյանի «Դվինն քաղաքը և նրա պեղումները (1973–1980 թթ.)» (2002), Գ. Թումանյանի «Ագարակ I: Վաղբրոնզեդարյան բնակավայրը (2001–2008 թթ. պեղումների արդյունքները)» (2012) և այլ աշխատություններ:



Էդուարդ Հյուրմյուզյան



Ե. Հյուրմյուզյանի *«Առձեռն բանաստեղծութիւն...» (1839, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*




«Հնագիտական պեղումները Հայաստանում» *մատենաշարի Ժ. Խաչատրյանի «Անտիկ դամբարանադաշտեր...» (1981, Ե., ԳԱ) գրքի կազմը*



Հնատիպ գրքի
(«Այբբենարան», 1781, ՍՊը) պատկերազարդ էջ



«Հայ գիրքը 1512-1800 թվականներին» (1988, Ե., ՀԱԳ հրտ.) գրքի կազմը



«Հնչակ», *1887–1940, Ժնև, Աթենք, Լոնդոն, Փարիզ, Փրովիդենս*

ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔ, 1512–1800-ին տպագրված գրքերի պայման. անվանումը: Հ. գ-երը բազմաբովանդակ են, բայց գերակշռում են կրոնաբարոյական բնույթի երկերը: Հրատարակվել են թղթի, սակավ՝ մագաղաթի վրա: 1520-ական թթ-ից սովորական են դարձել անվանաթերթերը, որոնք մեծ մասամբ երկարաշունչ են, ծանրաբեռնված: Այնտեղ նշվել են հեղինակի անունը (միջին մասերում), գրքի հրատարակման վայրը, թվականը, տպարանը, տպագրության ժամանակի Ամենայն հայոց կաթողիկոսի, երբեմն՝ տպագրության վայրի հոգևոր առաջնորդի անունները ևն:

Չնայած XV դ-ի վերջերից մինչև XVI դ-ի 20-ական թթ. ընկած ժամանակաշրջանում տպագիր գրքի ձևավորման էական փոփոխություններին՝ պահպանվել են XV դ-ի մի շարք ավանդույթներ (հիշատակարաններ, պարտադիր զարդագրեր՝ գրքի գլուխների կամ բաժինների սկզբնամասերում, գլխազարդեր, վերջազարդեր, լուսանցազարդեր ևն): Գրքերը կազմվել են և մեծ մասամբ դրվել տախտակե կաշեպատ զարդարուն կազմերի, երբեմն՝ նաև պատյանների մեջ (տես ***Կազմարարություն***):

Հ. գ-երի նախն. (մինչև 1500-ը տպագրված) տեսակն ընդունված է անվանել ***խանձարուրային գրքեր***. այդպիսիք հայ. չեն հրատարակվել:

Ըստ հայ բանասիրության ավանդույթի՝ հնատիպ են համարվում մինչև 1800-ի դեկտ. 31-ը (ոմանց կարծիքով՝ մինչև 1825-ը) տպագրված հայատառ գրքերը: Հայ. Հ. գ-երի թիվն անցնում է 1000-ից:

Ներկա հրատ-յան մեջ ներկայացված են գրեթե բոլոր Հ. գ-երը. հեղինակայինները՝ հեղինակների մասին հոդվածում, մյուսները՝ ըստ վերնագրերի այբբեն. հերթականության, արձանագրված են տպագրության տարեթիվը, վայրը, տպարանը, հրատարակչի, թարգմանչի անունները, տիտղոսաթերթ(եր)ը, նաև էջերի քանակը, շարվածքի չափերը (փակագծում) և այլ տվյալներ: Տես նաև ***Հայկական տպագրություն***:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համառահանություն): **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե.,1958, 2012:* **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա.,** *Հայ գիրքը 1512–1800 թվականներին: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Ե., 1988:*


«ՀՆՉԱԿ», հաս-քաղ. ամսաթերթ, կիսամսյա, տասնօրյա թերթ: ՍԴՀԿ պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1887–1915 և 1935–40-ին (1887–1892-ին՝ Ժնևում, 1892–94-ին՝ Աթենքում, 1894–1904-ին՝ Լոնդոնում, 1904–15-ին՝ Փարիզում, 1935–40-ին՝ Փրովիդենսում): Խմբագիրներ՝ Ավետիս ***Նազարբեկ***, Ռուբեն ***Խանազատ***, Գաբրիել Կաֆյան, Ս. Հովյան, Ստեփան ***Սապահ-Գյուլյան*** և ուր.: Հիմն. նպատակը հայ ազգ-ազատագր. պայքարի, Արմ. Հայաստանի ազատագրման, ինչպես նաև կուս-յան գաղափարների տարածումն էր: Ծավալուն տեղ է հատկացրել արևմտահայության տնտ. և քաղ. կացության լուսաբանմանը, անդրադարձել Թուրքիայի հայաջինջ քաղաքականությանը: «Հ.»-ի շնորհիվ միջազգ. հասարակայնությունը տեղեկացել է Կարինի ու Կ. Պոլսի հակակառավարական ցույցերի (1890), Սասունի (1894), Զեյթունի (1895) ու Վանի (1896) ինքնապաշտպանության և, ընդհանրապես, ֆիդայական շարժման մասին:

Գործունեության 2-րդ շրջանում՝ 1935–40-ին (խմբագիր՝ Եղիա ***Սիրվարդ***) «Հ.» սատարել է հայ ազգ-ազատագր. շարժմանը, աջակցել հայրենադարձությանը: Տպագրել է կուս-յան պատմության, հայ ազգ-ազատագր. շարժումներին նրա մասնակցության վերաբերյալ վավերագրեր ու հուշագրություններ, բանվոր. շարժմանը, մարքսիստ. գաղափարախոսությանը նվիրված նյութեր:

«ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՄՈՒԼ», քաղ., հաս., գիտ. և գրական կիսամսյա թերթ: ՍԴՀԿ պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1929–31-ին (ընդհատումներով) Փարիզում: Խմբագիրներ՝ Վահան Կեռքճյան, Բագրատ Սյունիք, Անդրանիկ ***Կենջյան***: Անդրադարձել է Հայաստանի շին-յան, գիտ-յան, մշակույթի ձեռքբերումներին, նպաստել հայրենիքի հետ

սփյուռքահայ աշխատավորության կապերի ամրապնդմանը: Զգալի տեղ է հատկացրել հայրենակց. կազմակերպությունների, ՀԲԸՄ-ի, ՀՕԿ-ի գործունեությանը, ներկուս. կյանքին: Տպագրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, թարգմանություններ:

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ», գիտ. հանդես: Հիմնադիր՝ «Տաթև» գիտակրթ. համալիր: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Սոկրատ Մկրտչյան: Տպագրում է հոգեբանության տեսությանը և պատմությանը, տարիքային և մանկավարժ., մանկ., սոցիալ., ընտանիքի, իրավաբ., էթնիկ., կլինիկ., արվ-ի, քաղաքականության հոգեբանություններին վերաբերող հոդվածներ:



«Հոգեբանությունը և կյանքը», *2000-ից, Երևան (№ 1-2, 2013)*


«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ», մշակութ. ամսաթերթ: ՀԱԳ-ի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 2004-15-ին Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Դավիթ *Սարգսյան*, խմբագիրներ՝ Սանուկ *Մուրադյան*, Վառլեն *Ալեքսանյան*: Անդրադարձել է գրքին և գրադարանային ոլորտին առնչվող խնդիրներին, գրահրատարակչ. գործին, ՀՀ գիտակրթ. և մշակութ. նորություններին, հոբելյան. միջոցառումներին, անվանի մարդկանց: Պարբերաբար ներկայացել է ՀՀ-ում և Սփյուռքում լույս տեսած և գրադարան մուտք գործած գրքերի ցանկերը: Անվճար բաժանվել է որոշակի կազմակերպությունների ու անձանց:



«Հոգևոր հայրենիք», *2004–15, Երևան*

«ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ», վերապատվելի հայր Լավրենտիոս Սկուպոլիի կրոնադավանաբան. երկը: Թարգմանվել է իտալ-ից: Տպագրվել է 1723-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք կոչեցեալ հոգևորական պատերազմ...» (369 էջ, 6º և 12º, 8,5 x 5 սմ):

Հրատարակվել է նաև 1882-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (իտալ-ից թարգմ.՝ Հովսեփ Ֆերահյանի):



«Հոգեւորական պատերազմ» *(Լավրենտիոս Սկուպոլի, 1723, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

«ՀՈԿՏԵՄԲԵՐ», գրական-գեղ. ժող. (տարեկան՝ 2–3 համար): Վրաստանի պրոլետ. գրողների ընկերակցության հայկ. մասնաճյուղի հրատ.: Լույս է տեսել 1927 և 1930–33-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Վարդան *Ափրյան*: Տպագրել է արձակ և չափածո գործեր, բանասիր., տես-քննադատ., հաս-քաղ. հոդվածներ, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Հ. Հակոբյանի, Մ. Պետրոսյանի, Մ. Ավետիսյանի, Գ. Խալաթի, Բ. Հայակի և ուր. ստեղծագործություններից:

«ՀՈԿՏԵՄԲԵՐ», գրական, մշակութ., ժողովրդային շաբաթաթերթ: 1975-ից՝ երիտասարդ. ամսաթերթ: Լույս է տեսել 1974–80-ին Կահիրեում: Խմբագիրներ՝ Հայկ Ժամկոչյան, Գառնիկ Հակոբյան: Անվան. խմբագիր՝ Շաֆիկ Մորքոս Հաննա, խմբագրակազմ՝ Վարուժան Գազանճյան, Վազգեն և Գևորգ Բրուտյաններ, Նորա Երզնկացյան և ուր.: 1978-ից հրատարակվել է որպես պարբերագիրք: Ունեցել է արաբ. բաժին:



«Հոկտեմբեր», *1974–1980, Կահիրե*


«ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ», գրակ-յան, արվ-ի, գիտ-յան և ժողտնտեսության տարեգիրք: Պատ. խմբագիր՝ Եղիշե *Չարենց*, խմբագիրներ՝ Ակսել *Բակունց*, Եղիա *Չուբար:* Հրատարակել է Հայպետհրատը 1932-ին Երևանում՝ Հոկտեմբերյան հեղափոխության 15-ամյակի և Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարեդարձի առթիվ: Տարեգրքում զետեղված են նմուշներ հայ դաս. (Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Հ. Թումանյան, Մ. Մեծարենց և ուր.) և ժամանակակից (Ա. Իսահակյան, Շիրվանզադե, Հ. Հակոբյան, Նար-Դոս, Դ. Դեմիրճյան, Ս. Զորյան, Գ. Սահարի) գրողների ստեղծագործություններից: Հայկ. կերպարվ-ին, թատրոնին, կինոյին, ճարտ-յանը նվիրված հոդվածներով հանդես են եկել Ա. Թամանյանը, Մ. Արուտչյանը, Ս. Մելիքսեթյանը, Դ. Դզնունին և ուր.:



Բախտիար Հովակիմյանի *«Շեքսպիրը հայ թատրոնում» (2012, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Խաչիկ Հովակիմյան



Հովասափ Սեբաստացու *«Բանասրեղծություններ» (1964, Ե., ԳԱ հրտ.) գրքի փիփղոսաթերթը*

ՀՈՒՈՓՅԱՆ Սարգիս Թեոֆիլի (24.10.1930, Երևան–21.9.1996, Երևան), խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1952): 1958–60-ին աշխատել է «Ավանգարդ» պարբ-ում, հիմնադրել և խմբագրել է «Մարտական պոստում» (1960–64), «Օրինապահության դիրքերում» (1990–91, այժմ՝ *«02»*) թերթերը:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Բախտիար Մարդանի [ծ. 1.5.1926, գ. Թովուզ (այժմ՝ գ. Տավուշ՝ ՀՀ Տավուշի մարզում)], թատերագետ, բանասեր, մատենագետ: Ավարտել է Բաքվի Լ. Երամյանի անվ. հայկ. թատրոնի դրամատիկ. ստուդիան (1947), Երևանի թատեր. ինստ-ը (1952): 1953–58-ին աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (հայ.) թերթի խմբագրությունում, 1958–2008-ին՝ ԳԱԹ-ի թատեր. բաժնում (1963-ից՝ բաժնի վարիչ): «ՀՍՀ»-ի շուրջ 200 հոդվածի հեղինակ է, որոնց մի մասը վերաբերում է հայ գրքի և մամուլի պատմությանը:

Լույս են տեսել Հ-ի «Հայկական թատերական ընկերության 120-ամյակը» (ռուս., 1984), «Ցեղասպանության թեման հայ թատրոնում, 1895–1995» (1998), «Թումանյանը և թատրոնը» (1999), «Հովհաննես Աբելյան» (2005), «Արուս Ասրյան» (2005), «Պեպոյի ժամանակագրությունը» (2008), «Շեքսպիրը հայ թատրոնում» (2012), «Նոր Ջուղայի թատրոնի տարեգրություն (1887–2012)» (2013) աշխատությունները, կազմել է հանրագիտարանային բնույթի «Թատերական օրացույցներ» (1997–2011, 6 գիրք, մոտ 700 կենսագր. հոդված), «Հայոց ցեղասպանության նահատակ գործիչների ծածկանուններ» (2002) գրքերը, «Հայոց ծածկանունների բառարանը» (2005, 25 հզ. ծածկանուն՝ 17 լեզվով):

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Խաչիկ Հովսեփի [10.4.1926, գ. Թովուզ (այժմ՝ գ. Տավուշ՝ ՀՀ Տավուշի մարզում)–7.7.1995, Երևան], լրագրող, խմբագիր: Պատմ. գիտ. թեկնածու (1954): Ավարտել է ԵՊՀ (1949): 1961–70-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** օրաթերթի գլխ. խմբագիր: Եղել է ՀԺՄ վարչության նախագահ, 1966–70-ին՝ ԽՍՀՄ ժուռնալիստների միության վարչության քարտուղար, 1979–88-ին խմբագրել է «Կուսակցական խոսք» (1989-ից՝ ***«Քաղաքական զրուցակից»***) հանդեսը, 1992–95-ին՝ «Մեր խոսքը» թերթի հիմնադիր-խմբագիր:

ՀՈՎԱՍԱՓ, XIII դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: 1273-ին Սկևռայում Հ-ի ծաղկած Ավետարանի (Ստամբուլի Թոփգաբու Սարայ թանգարան, ձեռ. № 122) խորանների, 4 ավետարանիչների դիմանկարների, անվանաթերթերի, տերուն. պատկերների («Ծնունդ», «Մկրտություն») և լուսանցազարդերի մերձավորությունը ***«Մեծապատ Սպարապետի Ավետարանի»*** որոշ ձևավորումների հետ ենթադրում է, որ Հ-ինն են նաև այդ ձեռագրի Մատթեոս և Մարկոս ավետարանիչների դիմանկարները: Հավանորեն Հ. է հեղինակը նաև 1270-ին Գռներում ընդօրինակված Աստվածաշնչի (Մատենադարան, ձեռ. № 345) Մատթեոսի դիմանկարի: 1273-ի Ավետարանի համանուն պատկերների հետ են նույնանում Կոպիտառում ընդօրինակված ստույգ թվական չունեցող Ավետարանի (Նոր Ջուղայի մատենադարան, ձեռ. № 57/161) «Ծնունդ» և «Մկրտություն» մանրանկարները: Հ-ի մանրանկարների զարդաձևերը կիրառել են XIII դ-ի 2-րդ կեսի կիլիկյան մանրանկարիչները:

ՀՈՎԱՍԱՓ ՍԵԲԱՍՏԱՑԻ, XVI դ-ի տաղասաց, մանրանկարիչ, վարքագիր-վկայագիր, խմբագիր, գրիչ: Ստեղծագործել է Սեբաստիայում: Եղել է սարկավագ: Արժեքավոր են Հ. Ս-ու տոմարագիտ. երկերը, միջնադարյան հայրեն-կաֆաների ավանդույթով ստեղծած «Կաֆայ վասն աղէկ մանկանն Գրիգորի» (1548) բանաստեղծությունը և «Աշխարհիս սահմանն է հանց» 160-տողանոց կաֆաների շարքը:

Հ. Ս. հայրենների անդրանիկ բանահավաքներից է: Զբաղվել է թարգման-խմբագր. գործունեությամբ և պատմաժամանակագր. նյութերի հավաքմամբ: Կրոն. երկի բանաստեղծ. մշակման ինքնատիպ փորձ է «Երինէ կոյսի վկայութիւնը», որը հարստացրել է բազմաթիվ ինքնագիր կաֆաներով: 1535-ին ստեղծել է մի բարձրարժեք ձեռագիր

(Բեռլինի ազգ. գրադարան, ձեռ. № 805), որտեղ, ի թիվս «Աղուանից գիր» և այլ գրվածքների, ներառել է նաև իր ընդօրինակած, խմբագրած և պատկերազարդած Աղեքսանդրի (Մակեդոնացի) պատմությունը՝ թողնելով չափածո հիշատակարան, որը բանաստեղծի մասին ամենավաղ տեղեկությունն է: Նկարազարդել է իր գրական երկերն ու ընդօրինակած ձեռագրերը:

Մեզ են հասել Հ. Ս-ու ինքնագիր Հայսմավուրքը, չափածո հիշատակարանները (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 172, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1455, Մատենադարան, ձեռ. № 3425, ևն):

Լույս է տեսել Հ. Ս-ու «Բանաստեղծություններ» (աշխատասիր.՝ Վ. Գևորգյանի, 1964, Ե.) ժող-ը:

Գրկ. **Յովսէփեան Գ.**, *Յովասափ Մեթապրացի, «Արարատ», 1948, էջ 245–248:* **Սիմոնյան Հ.**, *Հայ միջնադարյան կաֆաներ (X–XV դդ.), Ե., 1975: Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ (աշխատասիր.՝ Հ. Սիմոնյանի), Ե., 1989:*

ՀՈՎԵՅԱՆ (Հովհաննիսյան) Հովիկ Վաչագանի (ծ. 23.11.1956, Երևան), բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ: Մշակույթի վաստ. գործիչ (2011): Ավարտել է ԵՊՀ (1978): 1979–2004-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում, 2001–04-ին, միաժամանակ՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 2006-ին՝ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար, 2009-ից՝ Հ. Շարամբեյանի անվ. ժող. ստեղծագործության կենտրոնի տնօրեն:

Թարգմանել է Հուսամ Նասսարի «Սիրորված՝ փնտրում եմ երկիր» (2011) բանաստեղծությունների ժող-ը, Ս. Վերմիշևայի, Ն. Գիլևիչի, Պ. Շուբինի, Դ. Տեր-Հովհաննիսյանի, Ֆ. Քահրլի, Ս. վան Դույնհովենի, Գ. Բորիսովի և ուր. գործերից: Լույս են տեսել Հ-ի «Տունը ծաղկաթերթիկի վրա» (1979), «Արահետ» (1990), «Աստղագուշակ» (1995), «Արեգակն արդար» (1997), «Թափառական ամառներ» (1999), «Ծես» (2000), «Ժայռագրեր» (2003), «Բանաստեղծություններ» (2004), «Կեսգիշերային լիբրետո» (2006), «Ուրարտական անձրևներ» (2009), «Հիշողության կավ» (2011) բանաստեղծությունների ժող-ները: Պարսկ. տպագրվել է Հ-ի «Քամիների վերադարձը» (2013) ժող-ը:

Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2005), Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի ոսկե (2006), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2005), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2006) մեդալներ:

Գրկ. **Բախչինյան Ֆ.**, *Հովիկ Հովհաննիսյանի բանաստեղծական աշխարհը, Ե., 2004:*

«ՀՈՎԻՏ», ազգ., հաս-քաղ., գրական, հոգևոր շաբաթաթերթ: Լույս է տեսել 1906–17-ին Թիֆլիսում (1906–10-ին՝ «Հովիւ»): Խմբագիր-հրատարակիչներ՝ Եզնիկ ավագ քահ. Երզնկյան, Հ. Հովսեփյան: Լուսաբանել է հաս., քաղ., գրական, պատմ., կրթ., մանկավարժ., ինչպես նաև եկեղեց. հարցեր: Անդրադարձել է Արմ. Հայաստանի և արևմտահայության վիճակին, բողոքել Թուրքիայում հայերի կոտորածների դեմ: Գրական-բանասիր. բաժնում զետեղվել են հայոց լեզվին ու գրակ-յանը, գեղանկարչությանն ու մանկավարժությանը, երաժշտությանն ու ճարտ-յանը վերաբերող հոդվածներ, Ա. Ալպոյաճյանի հոդվածաշարը հայկ. տպագրության 400-ամյա պատմության վերաբերյալ, նյութեր՝ նվիրված հայ-վրաց. հարաբերություններին, կովկասահայերին, Հավլաբարի թատրոնի ներկայացումներին, ուսումնասիրություններ՝ XIX դ-ի վերջի և XX դ-ի հայ ազգ-ազատագր. շարժումների մասին: Անդրադարձել է նաև գիտ-յան, գրակ-յան և մշակույթի երևելի դեմքերի կյանքին ու գործունեությանը, տպագրել նամակներ, մամուլի տեսություն:

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, VII դ-ի մատենագիր: Գրել է «**Պատմութիւն Տարօնոյ**» երկասիրությունը, որի առաջին մասը վերագրվում է *Զենոբ Գլակին*: Երկի հիշատակարանում Հ. Մ. հաղորդում է, որ այն շարադրել է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի հանձնարարությամբ: Երկը ժող. մատչելի ոճով գրված պատմ. ու բարոյախոս. գրույցների ժող. է՝ VI դ-ի վերջին և VII դ-ի 1-ին կեսին Տարոնում տեղի ունեցած իրադարձությունների, հատկապես Սասանյան Պարսկաստանի դեմ հայերի 571–572-ի ապստամբության և արաբ. առաջին արշավանքների մասին:



Հովիկ Հովհեյանի *«Հիշողության կավ» (2011, Ե., «Գասպրինտ») գրքի կազմը*



«Հովիտ», *1906–17, Թիֆլիս (№ 23, 1913)*



Հովհան Մամիկոնյանի *«Պատմութիւն Տարօնոյ» (1832, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Հովհան Մամիկոնյանի *«Տարոնի պատմություն» (1989, Ե., «Խորհրդային գրող») գրքի փիփղոսաթերթը*

Հովհան Ոսկեբերան



Պատկեր, «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Յոհաննու» (1717, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) գրքում



«Ներբողեանք» (1734, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը

«Պատմութիւն Տարօնոյ» երկն առաջին անգամ տպագրվել է 1719-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տպակից է Զենոբ Գլակի «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ...» (268 էջ, 8º, 11,7 x 6,7 սմ), որն էլ ընդհանուր վերնագիրն է:

Հրատարակվել է նաև 1814-ին (Կալկաթա, Ավետ Ջնթլումյանի տպ.), 1832, 1889-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), քնն. բնագիրը՝ 1941-ին (աշխատասիր.՝ Ա. Աբրահամյանի), աշխարհաբար՝ 1989-ին («Տարոնի պատմություն», փոխադր., ներած. և ծնթգր.՝ Վ. Վարդանյանի):

Գրկ. **Աբեղյան Մ.**, *երկեր, հ. 3, Ե., 1968:*

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, **Հովհաննես Ոսկեբերան** (մոտ 347/354, Անտիոք–407, աքսորի ճանապարհին՝ Կոմանայի մոտ, թաղված է Պոլսի Սբ Առաքելոց Մայր տաճարում), բյուզ. եկեղեց. գործիչ, հռետոր, քարոզիչ: Ընդհանրական եկեղեցու նշանավոր հայրապետներից, Հայ եկեղեցու համաքրիստ. տոնելի սուրբ հայրերից, Կ. Պոլսի պատրիարք (398–404): Հ. Ո-ին եկեղեց. օրենքները խախտելու մեղադրանքով զրկել են հոգևոր կոչումից և աքսորել Կիլիկիա (404–407):

Գրել է բազմաթիվ ճառեր հեթանոսների, արիոսականների, հուդայականության կողմնակիցների դեմ, քարոզներ, մեկնություններ, ներբողներ՝ նվիրված Հին կտակարանի մեծ սրբերին, Պողոս առաքյալին, Անտիոքի եկեղեցու հայրապետներին, Գրիգոր Լուսավորչին, մարտիրոսներին, թղթեր ևն: Հ. Ո-ի երկերի մեծ մասը հայ. են թարգմանվել դեռևս V դ-ում և զգալիորեն նպաստել են նաև հայ քարոզչական-հռետոր. մտքի զարգացմանը: Հ. Ո. կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև կիլիկիահայերի մասին:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Հ. Ո-ի՝

«**Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Յոհաննու**» երկը. 1717-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Թարգմ.՝ Կիրակոս վարդապետի (982 էջ, 8º, 15,5 x 10,6 սմ):

«**Ներբողեանք**» երկը. 1734-ին նույն տպարանում: Թարգմ.՝ Աբրահամ Ղռամատիկոսի: Տիտղթ-ին՝ «Ներբողեանք ասացեալ այրն աստուծոյ Ոհան Ոսկէբերան ապաշխարութեան վարդապետն ի վերայ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ» (132 էջ, 8º, 15 x 9 սմ): Վերահրատարակվել է 1878-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.):

«**Պատմութիւն վարուց Յոհաննու Ոսկեբերանի**» երկը. 1751-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Թարգմ.՝ Գրիգոր Վկայասերի: Տիտղթ-ին՝ «Պատմութիւն վարուց սքանչելեաց եւ դիպուածոց՝ Սրբոյն Յոհաննու Ոսկեբերան հայրապետին Կոստանդնուպոլսոյ» (330 էջ, 12º, 12,6 x 7 սմ):

«**Աղօթք եւ ճառք**» երկը. 1760-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տպակից է Կյուրեղ Աղեքսանդրացու «Ճառ»-ին (104 էջ, 8º, 13,3 x 7,5 սմ):

Հայ. հրատարակվել են նաև Հ. Ո-ի «Հատընտիր գիրք եւ ճառք եւ ներբողեանք» (հ. 1–2, 1818, Վնտ., Սբ Ղազարի տպ., հուն. բնագրից թարգմ.՝ Եղիա Թովմաճյան Կոստանդնուպոլսեցու), «Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի» (հ. 1–2, 1862, նույն տպ.) ճառերն ու մեկնությունները:

Գրկ. **Գուշակեան Թ.**, *Տպրք եւ փծւք, Երուսաղեմ, 1939:* **Սէքլէմեան Ա.**, *Տպրր Յովհան Ոսկեբերան, ԿՊ, 1892:* **Ակինեան Ն.**, *Յովհաննու Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնութեան նորագիւտ հայերէն թարգմանութիւնը, «ՀԱ», 1917–18:* **Հատիտյան Ա.**, *Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետ Անտիոքացի, «Էջմիածին», 1977, № 12, 1978, № 1, 4:* **Բյոսեյան Հ.**, *Նորահայտ նշխարներ Հովհան Ոսկեբերանի Սաղմոսաց մեկնությունից, «ԲՄ», 1986, № 15:*

ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ, **Հովհաննես Որոտնեցի**, մականունը՝ **Կախիկ** [1315, գ. Վաղաղնի (այժմ՝ գ. Վաղատին՝ ՀՀ Սյունիքի մարզում)–1386, Ապրակունիս, թաղված է Երնջակի Սբ Գևորգ վանքի բակում], աստվածաբան, փիլիսոփա, բարունապետ: Սովորել է Գլաձորի համալսարանում, աշակերտել *Եսայի Նչեցուն* և *Տիրատուր Կիլիկեցուն*: 1338-ին տեղափոխվել է Հերմոնի, ապա՝ Որոտանի վանք:

1373-ին հիմնադրել է Տաթևի համալսարանը: Հայ միարարների դեմ պայքարելու նպատակով 1379-ին համալսարանը տեղափոխվել է Ապրակունիս: Հ. Ո., հետագայում Ապրակունիսի դպրոցի ղեկավարությունը հանձնելով *Գրիգոր Տաթևացուն*, վերադարձել է Տաթև:

Առանձնահատուկ նշանակություն ունեն Արիստոտելի, Պորփյուրի, Փիլոն Ալեքսանդրացու երկերի Հ. Ո-ու մեկնությունները: Նրա ուսմունքի հիմքը Արիստոտելի իմացաբանությունն ու տրամաբանությունն են:

Լույս են տեսել Հ. Ո-ու «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» (հրտ.՝ Ս. Արևշատյանի և Ս. Լալաֆարյանի, «ԲՄ», 1956, № 3), «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի» (հավաք. տեքստը և առաջար.՝ Վ. Չալոյանի, 1956), «Համառօտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծից» (նույն տեղում), «Մեկնողական-իմաստասիրական ճառեր» (քնն. բնագիրը, առաջար. և ծնթգր.՝ Ա. Մինասյանի, 2009) երկերը:

Գրկ. **Արևշատյան Ս.**, *Տաթևի փիլիսոփայական դպրոցը..., «ԲՄ», 1958, № 4:* **Գրիգորյան Գ.**, *Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Ե., 1980:* **Մինասյան Ա.**, *Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ, Ե., 2004:* **Գրիգոր Տաթևացի**, *Ներբողյան Հովհան Որոտնեցուն, Ե., 2007:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ, XIII դ-ի մանրանկարիչ և գրիչ: ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ստեղծագործել է Հռոմկլայում: Կոստանդին Ա Բարձրբերդցու պատվերով Հ. ընդօրինակել և պատկերազարդել է 1235-ի (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 833) և 1253-ի (Ֆրիր պատկերասրահ, Վաշինգտոն, ձեռ. № 44.17) Ավետարանները: Առավել արժեքավոր է 2-րդը (խորաններ, անվանաթերթեր, ավետարանիչների պատկերներ), որը նկարազարդված է ոսկե ֆոնի վրա՝ պայծառ գույներով և գունագծային բարձր արվ-ով:

Գրկ. Der-Nersessian S., *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, W., 1963, p. 18–25.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, **սուրբ Հովհան Մանդակունի** [մոտ 403, գ. Ծախնոտ (Մեծ Հայքի Արշարունյաց գավառ)–490], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 478-ից: *Սահակ Ա. Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներից: 484-ին կաթողիկոս. աթոռը Վաղարշապատից փոխադրել է Դվին: Հաստատել է հայ եկեղեցու աղոթքների և ժամերգությունների կարգը, սահմանել ծեսեր, կազմել Մաշտոց ծիսամատյանը, ընդարձակել Ժամագիրքը: Հորինել է շարականներ, աղոթքներ, քարոզներ, ճառեր, մեկնություններ: Հուն-ից թարգմանել է հատվածներ «Գործք առաքելոց»-ից, «Լույս զուարթ» օրհներգությունը, պատարագներ: Պաշտպանել է միաբնակությունը:

Հ. Ա Մ-ուն են վերագրվում «Ապացոյց յերկուց բնութեանց ասել զփրկիչն եւ կամ մի բնութիւն» (հրտ.՝ «Գիրք թղթոց»-ում, 1901, Թ., Տիգրան Ռոտինյանի տպ.) երկը, «Յաղագս պահոցն քառասնեւորդացն» («Շողակաթ» տարեգիրք, 1913, Վաղ-պատ) կանոնագր. ճառը: *Ղազար Փարպեցու* «Հայոց պատմության» մեջ շարադրված է նրա հրապարակախոս. մի ելույթ:


Հ. Ա Մ-ու անունով հրատարակված 26 ճառերի («Շառք», 1836, Վնտ., Սբ Ղազարի տպ., «Մատենագրութիւնք նախնեաց» մատենաշարով, 2008, Էջմիածին, աշխարհաբարի փոխադր.՝ Մ. Արաբյանի) հեղինակ ճանաչվել է *Հովհան Մայրավանեցին*: Լույս է տեսել նաև Հ. Ա Մ-ու «Յաղագս սիրոյ եւ սրբութեան որով պտղաբերի արարածք» (1903, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) երկը:

Գրկ. **Տէր-Մկրտչեան Կ.**, *Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», տարեգիրք 1, Վաղ-պատ, 1913:* **Ակինեան Ն.**, **Տէր-Պօղոսեան Պ.**, *Մատենագիտական հետազօտութիւններ, Յովհաննէս Ա կաթողիկոս (Մանդակունի), «ՀԱ», 1971, № 4–12:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԿՅՈՒՐԱՑԻ, **Ջուաննի Մոլինո**, XVII դ-ի տպագրիչ, հաս. գործիչ: 1630-ական թթ-ի կեսին Զմյուռնիայում եղել է Վենետիկի դեսպանի թարգմանիչը, 1637–41-ին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքի ներկայացուցիչը Հռոմում: Այդ ընթացքում տպատառեր է ձուլել տվել՝ Հռոմում հայ. Աստվածաշունչ տպագրելու նպատակով, որը, սակայն, չի հաջողվել: 1642-ին Վենետիկում՝ հույն Սալիգաթաուի




«Սբ Հովհան Որոտնեցի և Սբ Գրիգոր Տաթևացի», մանրանկար, XVIII դ-ի ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 8224)



Հովհաննես. *Խորան, 1254-ի Ավետարան (Վենետիկի մատենադարան, ձեռ. № 1374)*




Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (պատգրիչ՝ **Հովհաննես Անկյուրացի,** *1643, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Հովհաննես Ավագեռեց Լեհացու *«Ժամանակագրության» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, 1956, ե., ԳԱ հրտ.) 1-ին էջը*



Հովհաննես Արծիշեցու *«Մեկնութիւն Պատարագին» (1799, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



Հովհաննես Գ Օձնեցու *«Ճառ ընդդէմ երեւութականաց» (1807, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

տպարանում, իր պատվիրած տառերով տպագրել է Սաղմոսարան, 1643-ին՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը: 1660-ին Հ. Ա-ու տառերն ու շարվածքը իտալացի տպարանատեր Ջուան-Բատիստա Բովիան օգտագործել է «Յիսուս Որդի» պոեմի 2-րդ հրատ-յան համար:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳԵՐԵՑ ԼԵՀԱՑԻ, XIII դ-ի 1-ին կեսի ժամանակագիր: Ժամանակագրությունը կազմել է 1225-ին. ընդգրկում է համառոտ նյութեր (սյունակներով)՝ մ. թ. սկզբից մինչև 1032-ը տեղի ունեցած համաշխ. անցքերի մասին: Առաջին սյունակում նշված են տարեթվերը (մ. թ. 7–556), ապա լրացված է մինչև 1032-ը՝ հայկ. թվականով, երկրորդում՝ Հռոմի և Բյուզանդիայի կայսրերի, երրորդում՝ Պարսկաստանի ու Հայաստանի թագավորների և հայոց կաթողիկոսների գահակալության տարիները ևն: Հ. Ա. Լ-ու «Ժամանակագրությունը» տպագրվել է «Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.» (կազմ.՝ Վ. Հակոբյան, հ. 2, 1956, էջ 1–27) ժող-ում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԾԿԵՑԻ, XV դ-ի 2-րդ կեսի գրիչ: Սովորել և գործել է Մեծոփավանքի գրչության դպրոցում: Ձեռագրեր է ընդօրինակել Արծկեում, Բաղեշում, Մազութում, Կաժում և այլուր, որոնք պահվում են Երևանի և Վենետիկի մատենադարաններում, ԱՄՆ-ի, Ս. Պետերբուրգի թանգարաններում: Ընդօրինակությունների վերջում զետեղել է իր հիշատակարանները (հաճախ՝ չափածո): Նրա մատյանները նկարազարդել է նաև *Մինասը*:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՃԻՇԵՑԻ, **Ոսպնակեր** [ծ. թ. անհտ–1327, Քաջբերունիք (Տուրուբերանի նահանգ)], գրիչ, ուսուցիչ, քարոզիչ, մատենագիր: Գրել է «Մեկնութիւն Պատարագին», որը Խոսրով Անձևացու և Ներսես Լամբրոնացու նույնանուն երկերի համառոտ տարբերակն է:

Առաջին անգամ տպագրվել է 1717-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Մաղթանք ձեռընտրութեան առ կոյսն Երանուհի...» (280 էջ, 8º, 13,2 x 7,5 սմ):

Տպագրվել է նաև 1799-ին Կ. Պոլսում՝ Մատթեոս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Մեկնութիւն ահաւոր....» (216 էջ, 8º, 13,2 x 7,3 սմ):

Վերահրատարակվել է 1999-ին Երևանում (աշխարհաբարի փոխադր.՝ Մ. Այվազյանի):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԱԵՂԲԱՅՐ (1220-ական թթ.–1289), կրթամշակութ. գործիչ, րաբունապետ, բանաստեղծ, խմբագիր, գրիչ, ծաղկող: Կիլիկիայի Կոստանդին արքահոր կրտսեր որդին՝ Բեատրիչե կնոջից, Հեթում Ա-ի կրտսեր եղբայրը (այստեղից էլ՝ Արքաեղբայր): Սովորել է Դրազարկի վանքում: 1259-ին նշանակվել է Լեռնային Կիլիկիայի Սիսևոն և Բարձրաբերդ գավառների հոգևոր առաջնորդ-արքեպիսկոպոս: Հիմնադրել է *Գոռների գրչության դպրոցը*, եղել նրա րաբունապետը:

Գոռներում և Ակներում ստեղծվել են մի շարք ձեռագրեր՝ մեզ հասած առաջին Աստվածաշունչ գրքերից մեկը (1270, Մատենադարան, ձեռ. № 345), Աստվածաշնչային ժող-ը (1263–66, Մատենադարան, ձեռ. № 4243), Ավետարան (1287, գրիչ՝ Հ. Ա., Մատենադարան, ձեռ. № 197) ևն: Գոռների դպրոցի մանրանկարիչների մշակած ոճին բնորոշ է մարդու մարմնի համաչափությունների ճիշտ վերարտադրությունը, կատարման յուրահատուկ գրաֆիկ. տեխնիկան: Ոճի առումով, հատկապես ճոխությամբ, տերուն. պատկերների հորինվածքային բարդությամբ 1287-ի Ավետարանն ավելի մոտ է արքուն. դպրոցի մանրանկարչ. արվ-ին: Գոռներում և Ակներում Հ. Ա-ի մասնակցությամբ կատարվել են թարգմանություններ, հնագույն ձեռագրերի վերծանություններ և սրբագրություններ: Հ. Ա. մեծ ուշադրություն է դարձրել գրքի գեղ. ձևավորմանը:

Գրկ. Ալիշան Ղ., *Միսռան, Վնտ., 1885:* Ազարյան Լ., *Կիլիկյան մանրանկարչություն XII–XIII դդ., Ե., 1964:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ ՕԶՆԵՑԻ, սուրբ Հովհաննես Օձնեցի, Հովհան Իմաստասեր [ծ. թ. անհտ, գ. Օձուն (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–728, գ. Արդվի (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում), ամփոփված է իր կառուցած Սբ Հովհաննես եկեղեցում)], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 717–ից: Սովորել է Արագածոտն գավառում, աշակերտել Թեոդորոս Քոթենավորին: Հայ եկեղեցու անկախության, քաղկեդոնականության դեմ պայքարելու համար առաջին անգամ հայ իրականության մեջ կազմել է *«Կանոնագիրք Հայոցը»* (հրտ.՝ 1964, հ. 1–2), որը նրա եկեղեց. բարեփոխումների ամփոփումն ու հաստատումն էր:

Հ. Գ Օ–ուց մեզ են հասել ճառեր, շարականներ, դավանաբան., պաշտամունքային, ծիս. և կրոն. գրվածքներ:

1807 և 1816–ին տպագրվել է Հ. Գ. Օ–ու «Ճառ ընդդէմ երեւութականաց»–ը, 1833–ին՝ «Մատենագրութիւնք» երկը (երկուսն էլ՝ գրաբար բնօրինակների հետ, փոխադր.՝ Մ. Ավգերյանի, Վնտ., Սբ Ղազարի տպ.), 2–րդը 1834–ին՝ նաև լատ. (վերահրտ.՝ 1953), 1999–ին «Երկերը» (փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Համբարձումյանի):

Գրկ. **Հովհաննես Դրասխանակերտցի**, *Հայոց պատմություն, Ե., 1996:* **Կիրակոս Գանձակեցի**, *Հայոց պատմություն, Ե., 1982:* **Քյոսեյան Հ.**, *Խորհրդանշանը Հովհան Օձնեցու մատենագրության մեջ, «Գանձասար», 2, 1992:* **Պապյան Մ.**, *Հովհան Իմաստասեր Օձնեցի: Կյանքը և գործունեությունը, Ե., 1998:* **Ներսիսյան Վ.**, *Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն, Ե., 2012:*



Հովհաննես Գ Օձնեցի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԶ, XI դ–ի գրիչ: 1069–ին Նարեկավանքում Անանիա Վարագացու համար ընդօրինակել է Մեսրոպ Մաշտոցի գրած մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 10434). Մեսրոպ Մաշտոցի Ավետարանի մեզ հասած միակ ընդօրինակությունն է: Ձեռագիրը, որից ընդօրինակել է Հ. Գ., ժամանակին պատկանել է Նարեկավանքի առաջնորդ ***Անանիա Նարեկացուն***, ապա՝ ***Գրիգոր Նարեկացուն***:



Դավիթ Հովհաննես

ՀՈՎՀԱՆՆԵՍ Դավիթ (Հովհաննիսյան Դավիթ Հրաչյայի, ծ. 17.2.1945, Երևան), բանաստեղծ, խմբագիր–հրատարակիչ, թարգմանիչ: Մշակույթի վաստ. գործիչ (2008): Հրաչյա ***Հովհաննիսյանի*** որդին: Ավարտել է ԵՊՀ (1968): 1979–81–ին աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում, 1991–99–ին՝ ***«Արևիկ»*** հրատարակչության տնօրեն, 1999–ից՝ տնօրենների խորհրդի նախագահ:

Լույս են տեսել Հ–ի «Երգերի պսակ» (1974), «Անցյալ կորուսյալ» (1979, 2012), «Պստիկ է, բայց ճստիկ է» (1981), «Նոր կյանք» (1983), «Տագնապներ» (1986), «Մայր Հայաստան» (1988), «Աղետի գոտի» (1989), «Քրոնիկոն» (1996), «Requiem Aeternam Չարենցի հիշատակին» (1997), «Նոր քրոնիկոն» (2007, ՀՀ Պետ. մրց.՝ 2007) բանաստեղծությունների ժող–ները: Թարգմանել է Յ. Մարցինկյավիչյուսի, Ի. Ֆրանկոյի, Պ. Տիչինայի, Մ. Չակլայսի, Է. Պոյի, Ու. Ուիտմենի և ուր. ստեղծագործություններից:


ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալ (2006):



Դ. Հովհաննեսի *«Նոր քրոնիկոն» (2007, Ե., «Արևիկ») գրքի կազմը*

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ե ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ [845–850–ի միջև, գ. Դրասխանակերտ (Այրարատ նահանգ)–մոտ 929], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 898–ից, պատմիչ: Հ. Ե Դ–ու **«Պատմություն Հայոց»** երկն ընդգրկում է Հայաստանի պատմությունը նախն. ժամանակներից մինչև 924–ը: Առավել արժեքավոր է երկի՝ IX դ–ի 2–րդ կեսից հետո ընկած ժամանակաշրջանն ընդգրկող մասը, որը Հ. Ե Դ. գրել է որպես դեպքերի ականատես և մասնակից:

Առաջին անգամ տպագրվել է 1843–ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ., վերահրտ.՝ 1867)՝ «Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի Ամենայն Հայոց» վերնագրով: Լույս է տեսել նաև 1853–ին (Մ., Վլադիմիր Գոթիեի տպ.), 1912–ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), 1980–ին (Նյու Յորք), աշխարհաբար՝ 1996–ին Երևանում (փոխադր. և ծնթգր.՝ Գ. Թոսունյանի): Թարգմանվել է ֆրանս. (1841), վրաց. (1965): Երկի հիման վրա Մուրացանը գրել է «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:



Հովհաննես Ե Դրասխանակերտցու *«Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի Ամենայն Հայոց» (1843, Երուսաղեմ) գրքի փիփղոսաթերթը*



Հովհաննես Երզնկացու *(Ծործորեցի) «Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ» (1792, Նոր Նախիջևան) գրքի նախապիփղոսաթերթը*



«Հովհաննես Երզնկացի և Ապլոց իշխան», մանրանկար, 1644-ի Ժողովածու (Մատենադարան, ձեռ. 7046)

Լույս է տեսել նաև Հ. Ե Դ-ու «Շարից հայրապետացն Հայոց» երկը (տես ***Սամվել Անեցու*** «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկում, Վաղ-պատ, 1893, Սբ Էջմիածնի տպ., էջ 272–277):

Գրկ. **Աբեղյան Մ.**, *երկեր, հ. 3, Ե., 1968:* **Սարգսյան Ա.**, *Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Ե., 1991:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ, Ծործորեցի (մոտ 1270-ական թթ., հավանաբար՝ Երզնկայում–1338, ենթադրվում է, որ շիրիմը Հաղպատի վանքում է), փիլիսոփա, մեկնիչ, քերական, բանասեր: Գործել է Գլաձորի համալսարանում, եղել ***Եսայի Նչեցու*** գործընկերը: Հետագայում տեղափոխվել է Արտազ՝ Ծործորի վանք: Գրել է մեկնություններ, քարոզներ, թղթեր, բանաստեղծություններ, ընդօրինակել իմաստասիր. երկեր: Նպաստել է Հայաստանում կաթոլիկության տարածմանը:

Կրել է Թովմա Աքվինացու ազդեցությունը (1321-ին թարգմանել է նրա «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկը), որը մասամբ արտահայտվել է գիտ-յան և հավատի սահմանազատման, գիտությունը հավատին ենթարկելու նրա փորձի մեջ:

Հ. Ե-ու «Համառաւտ տեսութիւն քերականի» (հրտ.՝ 1984, աշխատասիր.՝ Լ. Խաչերյանի) աշխատությունը ներառում է քերական., գրական, գրականագիտ. հասկացությունների սահմանումներ, նախորդ թարգմանությունների որոշ ճշգրտումներ (համեմատել է հայ. և լատ. բնօրինակների հետ), իմաստասիր., լեզվ. ուսումնասիրություններ: Հետևել է Ներսես Շնորհալուն (քննել և շարունակել է Մատթեոսի Ավետարանի՝ նրա մեկնաբանությունը): Հ. Ե-ու ձեռագրերը պահվում են Մատենադարանում:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել է Հ. Ե-ու «**Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ**» երկը (բաղկացած է 2 բաժնից՝ աստվածաբան. և աստղաբաշխ., Բ մասը չափածո է). առաջին անգամ 1792-ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն...», Բ-ին՝ «Տետրակ համառօտ եւ լի իմաստնախոհ բանիւք» (83 էջ, 4º, 15,4 x 10,4 սմ): Վերահրատարակվել է նույն թվականին նույն տպարանում (79 էջ, 8º. 17 x 10,5 սմ), 1853-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ., «Սոփերք հայկականք» մատենաշարով, հ. 5):

Տպագրվել է նաև Ներսես Շնորհալու և Հ. Ե-ու «Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի» (1825, ԿՊ, Աբրահամ Թերզյանի տպ., վերահրտ.՝ 2009 և 2010-ին, Էջմիածին) երկը:

Գրկ. **Քիւրդեան Յ.**, *Երիզա եւ Եկեղեաց գաւառ, հ. 1, Վնտ., 1953:* **Սրապյան Ա.**, *Հովհաննես Երզնկացի, Ե., 1958: Ցուցակ ձեռագրաց Սիսկոցի անվան Մատենադարանի, հ. 1, 2, 1965, 1970:* **Խաչիկյան Լ.**, *Արփագի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, «ԲՄ», 1973, № 11:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ, Պլուզ (1230, Մեծ Հայքի Եկեղյաց գավառ–1293, Կիլիկիա, Ակների վանք, շիրիմը Երզնկայում է), փիլիսոփա, տաղերգու, հայ փիլ-յան բնագիտ. ուղղության խոշորագույն ներկայացուցիչ: Սովորել է Երզնկայի դպրատներում (մասնավորապես՝ Սբ Մինասի անապատում), հետագայում աշակերտել է ***Վարդան Արևելցուն***: 1268-ին ստացել է վարդապետ. աստիճան: Գրել է ավելի քան 100 չափածո և արձակ գեղ. երկեր (արձակի զգալի մասն ամփոփված է առանձին ժող-ներում, Մատենադարան, ձեռ. № 2173, 2854, 2992): Որպես գեղագետ՝ չափածոյում զարգացրել է կրոն., աշխարհիկ և գիտ. ուղղությունները (տաղ, քառյակ, ողբ, շարական, մեղեդի ևն): Հ. Ե. ընդօրինակել և կազմել է տվել բազմաթիվ գրական, փիլ., աստվածաբան. և այլ գրքեր, ժող-ներ, Երզնկայի վանքերում ստեղծել է գրադարաններ: 1280-ին եղել է Երզնկայի «Եղբայրություն» կազմակերպության հոգևոր ղեկավարը:

Հ. Ե. 1291-ին ավարտել է «Հաւաքումն մեկնութեան քերականին» աշխատությունը, որն առանձնապես կարևոր է քերականագիտ-յան պատմության համար: Այն նյութեր է պարունակում Դավիթ Անհաղթի, Անանուն Մեկնիչի, Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու և ուր. անհետ կորած քերակ-ների մեկնությունների մասին: Այս աշխատու-թյունը միջնադարի հայ դպրության պատմության ամփոփումն է և երկար ժամանակ ծառայել է որպես քերականության հիմն. ձեռնարկ:

Հ. Ե-ու գործերն առաջին անգամ հրատարակվել են 1664–65-ին Ամստերդամում՝ Շարակնոց ժող-ներում:

Լույս են տեսել նաև Հ. Ե-ու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք Յովհաննէս Երզնկացին» (1958, « ԲՄ», № 4, էջ 302–313), «Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի» (1971, «ԲՄ», № 10, էջ 303–314, աշխատասիր.՝ Է. Բաղդասարյանի), «Բանք չափավ» (1986, աշխատասիր.՝ Ա. Սրապյանի) երկերը:

Գրկ. **Սրապյան Ա.**, *Հովհաննես Երզնկացի Պլուզ, Ե., 1993:* **Գրիգորյան Գ.**, *Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Ե., 1962:* **Թահմիզյան Ն.**, *Էջեր միջնադարի հայկական երաժշտական գեղագիտությունից, «Էջմիածին», 1963, № 11:* **Բաղդասարյան Է.**, *Հովհաննես Երզնկացին և նրա իրատական արձակը (բնագրեր և ուսումնասիրություն), Ե., 1977:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ, XIV դ-ի 2-րդ կեսի–XV դ-ի 1-ին կեսի քնարերգու: Ծնվել է Միջագետքի Թլկուրան ավանում: Գրել է տաղեր և ինքն էլ դրանք եղանակավորել է ու երգել: Մեզ են հասել սիրո և բնության, խրատաբարոյախոս., վիպ. տաղեր, կրոն. թեմանե-րով ոտանավորներ («Տաղ գարնան», «Վասն քահանայից եւ առաջ-նորդաց ասացեալ», «Իմ սիրտ, լսէ եւ ականջ արա»): Միջնադարյան հայ տաղերգության մեջ բացառիկ տեղ ունեն Հ. Թ-ու վիպ. տաղերը: Նա առաջինն է մշակել ժող. բանահյուսությունից քաղված թեմաներ (կիլիկյան զորավար Լիպարիտի, Գրիգոր Նարեկացու վերաբերյալ ժող. զրույցների ու ավանդությունների մշակումներ):


Հ. Թ-ու «**Արարածք**» տաղերի ժող-ը տպագրվել է 1724-ին: Տիտղթ-ին՝ «Գրկուկս այս որ կոչի Արարածք.…» (96 էջ, 8º, 13 x 10 սմ): Տպա-գրության վայրն ու տպարանը նշված չեն, բայց քանի որ տպագրիչը՝ Վանեցի Մխիթարը, գործել է Աստվածատուր Դպիր Կոստանդնու-պոլսեցու տպարանում, ենթադրվում է, որ այս գիրքը նույնպես լույս է տեսել Կ. Պոլսում՝ վերջինիս տպարանում:

Լույս են տեսել նաև Հ. Թ-ու «Տաղագիրք» (1958, Երուսաղեմ), «Տաղեր» (1960, աշխատասիր.՝ Է. Պիվազյանի) ժող-ները: Հ. Թ-ու տաղերից թարգ-մանվել են ռուս., ֆրանս.:

Գրկ. **Կոստանեան Կ.**, *Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր գաղերը, Թ., 1892:* **Եղիա-զարյան Վ.**, *Հովհաննես Թլկուրացու կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2001:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԻԶԱՆՑԻ, XIV դ-ի վերջի–XV դ-ի սկզբի գրիչ և մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Գործել է Խիզան քաղաքում, որտեղ աշակերտել է Խիզանի Գամաղիելի վանքի առաջնորդներ Հովհաննես Բարունուն և Կիրակոս վարդապետին: 1390–1400-ական թթ-ին նրա ընդօրինա-կած և պատկերազարդած ձեռագրերից 12-ը (7 Ավետարան, Նարեկ, Մաշտոց, Աստվածաշունչ, Հայսմավուրք, Ճաշոց, ձեռ. № 346, 3717, 8904, 4283, 5562, 5727, 4684, 5444, 1875, 5458, 8897, 898) պահվում են Մատենադարանում, 1368-ի Ավետարանը՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարանում: Հ. Խ. պահպանել է Վասպուրականի պատկե-րագրության ավանդ. ձևերը: Տոնական համարվող շարքից բացի՝ նա պատկերել է ավետարան. պատմություններին առնչվող ծիս. թեմաներ, նոր որակ հաղորդել խորհրդանշական բանահյուսական մանրանկարչությանը:


Գրկ. **Հակոբյան Հ.**, *Հովհաննես Խիզանցի, «Էջմիածին», 1974, № 11:* **Ավետիսյան Ա.**, *Մանրանկարիչ Հովհաննես Խիզանցի (պրոմ-ուսումնասիրություն), Ե., 2013:* **Никольская Е.**, *Иллюстрации рукописей мастера Ованеса из Гизана, Харьков, 1928.*



Հովհաննես Թլկուրանցու *«Արարածք» (1724, Կ. Պոլիս) գրքի փիլրղոսաթերթը*



Հովհաննես Խիզանցի. *1390–1400-ի Աստվածաշնչի պատկերազարդ էջ (Մատենադարան, ձեռ. № 346)*



Հովհաննես Ծարեցու *«Ժամանակագրության» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, 1956, ե., ԳԱ հրտր.) 1-ին էջը*



«Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի», *մանրանկար (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2647–92)*



Հովհաննես Հաննայի *«Պատմութիւն Երուսաղէմի» (1731, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) գրքի փիտղոսաթերթը*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԱՐԵՑԻ, **Հովհաննիսիկ Ծարեցի** (1560–մ. թ. անհտ), ժամանակագիր: Եղել է Արտազի Սբ Թադեի վանքի միաբան, աշակերտել է Ներսես Գնունեցուն: Վարդապետ. աստիճան ստանալուց հետո նրա պատվերով հավաքել, նորոգել և ընդօրինակել են ձեռագրեր: Հ. Ծ–ու «Ժամանակագրությունը» ընդգրկում է 1572–1600–ի դեպքերը: Ուշագրավ տեղեկություններ կան 1578–ին Այսրկովկաս թուրք. արշավանքի, ասպատակումների, 1579–ի մեծ սովի և համաճարակի, օսմ. Թուրքիայի դեմ վրաց ժողովրդի՝ 1580–90–ական թթ–ի ազատագր. պայքարի ևնի մասին: Հ. Ծ. իր նկարագրած դեպքերի ժամանակակիցն է, մասամբ՝ նաև ականատեսը: Հ. Ծ–ու «Ժամանակագրությունը» տպագրվել է «Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.» (կազմ.՝ Վ. Հակոբյան, հ. 2, 1956, էջ 235–255) ժող–ում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՋԵՌՆ, **Տարոնացի**, XI դ–ի 1-ին կեսի գիտնական, տոմարագետ, վարդապետ: Ճանաչվել է իբրև ժամանակի գերագույն գիտնական: ***Մատթեոս Ուռհայեցու*** հավաստմամբ՝ Հ. Կ. հեղինակել է «Գիր հաւատոց» և «Պատմութիւն Բագրատունեաց» երկերը (չեն պահպանվել): Գրել է նաև տոմարագիտ. աշխատություններ («Մեկնություն տոմարի» ևն): Կյանքի վերջին տարիներին ապրել է Երևանում, վախճանվել և թաղվել է Կոնդ թաղամասի հս–արմ. ծայրամասի՝ հետագայում իր անունով («Կոզեռն») կոչված գերեզմանատանը:

Գրկ. **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն, Ե., 1991:* **Քիւրդեան Յ.**, *Յովհաննէս Կոզեռն, «ՀԱ», 1967, № 1–3:* **Mapp Н.**, *Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, "Восточные заметки", СПб, 1895.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ԲԱՂԻՇԵՑԻ, **Հովհաննես Թ** (1678, գ. Խողճ, Բաղեշ ք–ի մոտ–13.2.1741, ամփոփված է Կ. Պոլսի Սբ Լուսավորիչ եկեղեցու բակում), Կ. Պոլսի հայոց պատրիարք՝ 1715–ից, եպիսկոպոս՝ 1726–ից: Ամրդոլու վանքի համալսարանում աշակերտել է Վարդան արք. Բաղիշեցուն և Գրիգոր վրդ. Շիրվանցուն:

Հ. Կ. Բ–ու պաշտոնավարության շրջանում զարթոնք է ապրել Կ. Պոլսի հայոց ազգ., մշակութ. ու կրթ. կյանքը, բացվել են նոր տպարաններ: Նրա աջակցությամբ հրատարակվել են 80–ից ավելի ինքնուրույն և թարգմանական գրքեր, այդ թվում՝ Ագաթանգեղոսի, Հովհան Մամիկոնյանի, Փավստոս Բուզանդի, Մեսրոպ Վայոցձորեցու, Գրիգոր Տաթևացու և ուր. ստեղծագործություններից:

Գրկ. **Կիւլեսերեան Բ.**, *Կոլոտ Յովհաննէս Պատրիարք: Պատմագրական եւ բանասիրական ուսումնասիրութիւն, Վնե., 1904:* **Լեո**, *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:* **Բամպուքճեան Գ.**, *Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678–1741) եւ իր աշակերտները, Սրամբոլ, 1984:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՆՆԱ, **Երուսաղեմացի** (ծ. թ. անհտ–1733, Երուսաղեմ), մատենագիր, պատմիչ: Եղել է պատրիարք. փոխանորդ Երուսաղեմում: Գրել է Երուսաղեմի ընդարձակ պատմությունը:

Հ. Հ–ի «**Պատմութիւն Երուսաղէմի**» երկը, որը հիմնականում շարադրված է աստվածաշնչյան մոտիվներով, առաջին անգամ տպագրվել է 1731–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք պատմութեան Սրբոյ եւ մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս...» (376 էջ, 8º, 14,5 x10 սմ):

Տպագրվել է նաև 1734–ին (374 էջ, 8º, 14,5 x 10 սմ) և 1767–68–ին (396 էջ, 8º, 14 x 10 սմ, անվանաթերթի 1727 թվականը վերաբերում է ձեռագրին)՝ նույն տպարանում, 1782–ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (355 էջ, 4º, 16,5 x 10 սմ):


ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԵՐՄՈՆԵՑԻ, **Կոլոտիկ** (ծ. թ. անհտ–1440–ական թթ–ի վերջ), եկեղեց. գործիչ: Սովորել է Վայոց ձորի Հերմոն վանքում, ապա աշակերտել է ***Գրիգոր Տաթևացուն***: Վերջինիս մահից հետո դարձել է Տաթևի դպրոցի ուսուցչապետ և մեծ վարդապետ: Նրա օրոք վանքում ստեղծագործել են ժամանակի անվանի մտավորականներ, մանրանկարիչներ. ընդօրինակել և գրել են ձեռագրեր, մեկնություններ, լուծմունքներ, Հ. Հ–ու պատվերով՝ «Քարոզգիրք»

(1421), Վարդան Արևելցու «Մեկնութիւն սաղմոսաց» (1415), Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք գանձաց» (1418), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» (1419), Սանրուսում (1424) ժող-ները ևն:

Հ. Հ. ընդօրինակել է Ճառընտիր, գրել Եսայու մարգարեության մեկնությունը:

Գրկ. **Թովմա Մեծոփեցի,** *Յիշատակարան, Թ., 1892:* **Օրմանեան Մ.,** *Ազգապատում, հ. 2, ԿՊ, 1914: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 1 (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1955:*

Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի



«Զտութիւն հայկաբանութեան կամ Քերականութիւն հայկական» (1674, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ (1635–24.11.1691, Վենետիկ), քերական, թարգմանիչ, հրատարակիչ, կաթոլիկ եկեղեց. գործիչ: 1660–67-ին սովորել է Հռոմի և Լիոնի դպրոցներում, ապա ծավալել գիտ., թարգմանչ., քարոզչ. գործունեություն: Նրա առանձին երկեր ունեցել են մի քանի հրատ.: Աշխարհաբար տպագիր 2-րդ գրքի՝ «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն...» (1687) երկի հեղինակն է, աշխարհաբարի առաջին պաշտպաններից: Եղել է ***Ոսկան Երևանցու*** գրաքննիչներից, հետագայում, սակայն, պաշտպանել է հայ տպագրիչների շահերը:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Հ. Հ. Կ-ու՝

«**Զտութիւն հայկաբանութեան կամ Քերականութիւն հայկական**» երկը. 1674-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (216 էջ, 17 x 12 սմ):

«**Համառօտութիւն ճարտասանականի արհեստի**» երկը. 1674-ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչ՝ Սողոմոն Լևոնյան (158 էջ, 8º, 7 x 4 սմ):

«**Քերականութիւն լաթինական**» հայ. և լատ. երկը. 1675-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Քերականութիւն լաթինական հայերէն շարադրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ...» (217 էջ, 4º, 17 x 12 սմ):

«**Pvritas haygica sev grammatica armenica**» լատ-ի և հայ-ի քերականությունը. 1675-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (255 էջ, 17 x 12 սմ):

«**Հայելի ճշմարտութեան**» լատ. և հայ. երկը. 1680-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբռնիի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Specvlvmveritatos...», Բ-ին՝ «Հայելի ճշմարտութեան. պարունակող մասնաւորի ուրուք...» (206 էջ, 8º, 9,5 x 5,7 սմ):

«**Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին**» աշխարհաբար երկը. 1687-ին Վենետիկում՝ Խոջա Նահապետ Գուլնազարի տպարանում (840 էջ, 17,2 x 11,5 սմ):



«Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (1687, Վնտ., Խոջա Նահապետ Գուլնազարի տպ.) գրքի փիփղոսաթերթը


«**Պատասխանատրութիւնք**» կրոնադավանաբան. երկը. 1687-ին Վենետիկում՝ Զիակոմո Մորետտիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Յոհաննիսի վարդապետի Կոստանդինուպօլսեցւոյ Պատասխանատրութիւնք թղթոյ...» (47 էջ, 11,5 x 7 սմ): 1681-ին Հ. Հ. Կ. հրատարակել է նաև ***Տաղարան***:

Հ. Հ. Կ-ու թարգմանությամբ տպագրվել են «Պարտէզ հոգեւոր» (1670), «Տարեցոյց եւ տօնացոյց» (1671–72), Թոմա Գեմբացու «Համահետեւումն Քրիստոսի» (1674), «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» (1675), «Նուագարան Երանուհւոյ կուսին Մարիամու» (1676), Դոմինիկոս Բոհուրսիի «Խոկումն քրիստոնէական» (1687) երկերը, Խորհրդատետր (1690) ևն:

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Հայ-Վենէտ, Վնտ., 1896, էջ 509:* **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ դպրոցի, հ. 1, Կահիրէ, 1947, էջ 418:* **Լեո,** *Երկերի ժող., հ. 3, գիրք 1, Ե., 1969, էջ 454:* **Զահուկյան Գ.,** *Դրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:* **Իշխանյան Ռ.,** *Հայ գրքի պատմություն, հ.1, Ե., 1977:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆԿԱՍԱՐԵՆՑ (1415, Արճեշ–1501, Վան), գրիչ: Սովորել է Արճեշում, ապա՝ Մեծոփավանքի դպրոցում: Աշխատել է իր ուսուցչի՝ ***Թովմա Մեծոփեցու*** ղեկավարությամբ, այնուհետև Արճեշում հիմնադրել է գրչության դպրոց: 72 տարի զբաղվել է գրչարվեստով. ընդօրինակել է 40 Հայսմավուրք ու Տարեգիրք, 32 Ավետարան, 50–60 այլ ձեռագրեր: Մեզ է հասել Հ. Մ-ի 30 գրչագիր (13-ը՝ Երևանի, 5-ը՝ Վենետիկի, 2-ը՝ Նոր Ջուղայի մատենադարաններում):

Հովհաննես Միքուզ



«Գիրք համառօտ վասն իսկապէս եւ ճշմարիտ հաւատոյ» (1688, Նոր Ջուղա) գրքի 1-ին էջը



«Դաւանութիւն հաւատոյ» (1713–14, Կ. Պոլիս, Ասպվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) գրքի տիտղոսաթերթը

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԾՈՓԵՑԻ [1340, գ–ք. Զարիշատ (Տուրուբերանի նահանգի Քաջբերունիք գավառ)–1410, Հավուց թառ վանք], մանկավարժ, գրիչ, եկեղեց. գործիչ: Սովորել է Մեծոփավանքում և Տաթևի համալսարանում. աշակերտել է ***Հովհան Որոտնեցուն***: Համալսարանն ավարտելուց հետո ***Գրիգոր Տաթևացուց*** ստացել է վարդապետ. աստիճան, վերադարձել հայրենի քաղաք, ձեռնամուխ եղել Մեծոփավանքի վերաշինությանը, ստանձնել վանքի դպրոցի ղեկավարությունը: Հ. Մ. ընդօրինակել է փիլ. բովանդակությամբ 1 ձեռագիր (Մատենադարան, ձեռ. № 5931):

Գրկ. **Մաթևոսյան Ա.**, *Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.), Էջմիածին, 1997:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՐՔՈՒԶ, Հովհաննես Միգուզ, Հովհաննես Ջուղայեցի, Սպահանեցի (1643, Նոր Ջուղա–1715, Նոր Ջուղա), փիլիսոփա–աստվածաբան, տրամաբան, քերական, նկարիչ: 1661-ին ձեռնադրվել է քահանա, 1669-ին՝ վարդապետ: Հայ. և պարսկ. զուգահեռաբար գրել է մեծածավալ 8 աշխատություն, պարսկ. և արաբ. թարգմանել Ավետարանն ու այլ գործեր: Հ. Մ-ի երկերը լույս են տեսել անվան 3 տարբերակներով՝ Հովհաննես Ջուղայեցի, Միքուզ, Միգուզ:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Հ. Մ-ի՝

«**Գիրք համառօտ վասն իսկապէս եւ ճշմարիտ հաւատոյ**» դավանաբան. երկը. 1688-ին Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի տպարանում (380 էջ, 8º, 8,2 x 5,2 սմ):

«**Համառօտ քերականութիւն եւ տրամաբանութիւն**» երկը, 1711-ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Համառօտ քերականութիւն եւ տրամաբանութիւն որ է քերթութիւն բառի եւ կրթութիւն բանի.…» (78 էջ, 8º, 12 x 8 սմ): Աշխատության մեջ իր քերական. սկզբունքներով հետևել է ***Սիմեոն Ջուղայեցուն***՝ առարկան բաժանելով «նյութի» (տառ, վանկ, բառ) և «տեսակավորության» (բան): Լույս է տեսել նաև 1998-ին («ԲԵՀ», № 1):

«**Կրթութիւն հաւատոյ**» երկը. 1713-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Սարգվանեցու տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Կրթութիւն հաւատոյ…», Բ-ին՝ «Գիրք համառօտ՝ վասն ճշմարտութեան հաւատոյ քրիստոնէականի…» (251 էջ, 8º, 12,3 x 8,4 սմ):

«**Դաւանութիւն հաւատոյ**» երկը. 1713–14-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Դաւանութիւն հաւատոյ, եւ ներածութիւն…», Բ-ին՝ «Գիրք համառօտ վասն ճշմարիտ եւ ուղղափառ դաւանութեան կաթողիկէ եկեղեցւոյս Հայաստանեաց…» (336 էջ, 8º, 13 x 7,4 սմ):

«**Վիճաբանութիւն առ Շահ Սլէմանն Պարսից**» դավանաբան. երկը. 1797-ին Կալկաթայում՝ Հովսեփ Ստեփանոսյանի տպարանում (260 էջ, 18 x 11,8 սմ):

Տպագրվել է նաև Հ. Մ-ի «Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն» երկը (1812, Սադրաս, Սարգիս Ծատուր Աղավալյանցի տպ.):

Հ. Մ. հայտնի է նաև որպես նկարիչ: Ղեկավարել է Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի Հովսեփ Հարեմաթացի եկեղեցու գեղանկարչ. ձևավորումը. նրան է վերագրվում «Քրիստոսի կյանքը», «Գրիգոր Լուսավորչի կյանքը», «Լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները» նկարաշարը: Իր ինքնանկարը զետեղել է նույն եկեղեցու խորանի աջ կողմի՝ «Ձննջող ակն» հորինվածքում: Պատկերներ է ստեղծել նաև Նոր Ջուղայի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար («Տաճարի ընծայումը», «Տասներկու տարեկան Հիսուսը քարոզելիս» ևն):

Գրկ. **Թաղիադեան Մ.**, *Դպագիտութիւն Նոր Ջուղա, «Ազգասէր», Կալկաթա, 1845, № 8:* **Խաչատուր Ջուղայեցի**, *Պատմութիւն Պարսից, Վաղ-պատ, 1905, էջ 153–218:* **Լևոնյան Գ.**, *Հովհաննես վարդապետ Միքուզ, «Էջմիածին», 1944, № 1:* **Ղազարյան Մ.**, *Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974:* **Զահուկյան Գ.**, *Դրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:* **Միրզոյան Հ.**, *Հովհաննես Միքուզ Ջուղայեցի, Ե., 2001:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵՓՈՐԻԿ (ծ. թ. անհտ–1432, Տփղիս), գրիչ, գրչության ուսուցիչ, Անիի եպիսկոպոս, եկեղեց. և մշակույթի գործիչ: Աշխատել է Անիում (մինչև 1410-ական թթ.), Սանահինում, Վրաստանի սահմանամերձ Թմոք (Թմոգվի) ամրոցում: Պահպանվել է Հ. Ո-ի ընդօրինակած 3 մատյան, որոնցից մեկը պահվում է Երևանի (1423, ձեռ. № 1587), մյուսը՝ Վիեննայի Մխիթարյան (ձեռ. № 55), երրորդը՝ Երուսաղեմի (1426, ձեռ. № 1534) մատենադարաններում: Այս ձեռագրերն աչքի են ընկնում ոչ միայն կանոնավոր ու հստակ գրով, այլև կարմրագիր ու ոսկեգիր տողերի և տառերի կիրառմամբ, բոլորգիր ու երկաթագիր սկզբնատողերի համադրմամբ, ձեռագիր էջի մակերեսի ներդաշնակ, կուռ կազմակերպմամբ:

Գրկ. **Մաթևոսյան Կ.**, *Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, № 8:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ ՔԹՌԵՇԵՆՑ (մոտ 1610-ական թթ., Նոր Ջուղա–1660-ական թթ., նահատակվել է մի առևանգված հայ աղջկա փրկելիս), տպագրիչ, մշակույթի և եկեղեց. գործիչ: Սովորել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի դպրոցում. աշակերտել է *Խաչատուր Կեսարացուն*: Աշխատել է վերջինիս հիմնադրած (1638) տպարանում, մասնակցել Սաղմոսարան (1638) և «Հարանց վարք» (1641) գրքերի տպագրմանը: 1641-ին Խաչատուր Կեսարացին նրան ուղարկել է Իտալիա՝ տպագր. գործում կատարելագործվելու և հայ. տպատառեր ու տպագր. սարքեր ձեռք բերելու համար: Հռոմում պատրաստել է տվել հայ. տպատառեր, պատկերների տախտակներ, ապա մեկնել է Լիվոռնո, որտեղ 1644-ին տպագրել է Սաղմոսարան: Այնուհետև տպարանը տեղափոխել է Նոր Ջուղա, որտեղ 1647-ին տպագրել է Պարզատումար: 1660-ական թթ-ի 2-րդ կեսին մեկնել է Էջմիածին. ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Նոր Ջուղայի առաջնորդ: Պահպանվել է Հ. Ջ. Ք-ի տպատառերի և տպատախտակների որոշ մասը (Նոր Ջուղայի հայկ. թանգարանում է):

Գրկ. **Մինասեան Լ.**, *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636–1972), Նոր Ջուղա, 1972:* **Իշխանյան Ռ.**, *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:* **Դևրիկյան Վ.**, *Հայ գիրքը աշխարհի հաչմերուկներում, մաս Բ, Ե., 2014:*


ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՀՆԵՑԻ, XIV դ-ի վերջի–XV դ-ի սկզբի գրիչ, մանրանկարիչ, մշակույթի և եկեղեց. գործիչ: Սանահինի վանքում աշակերտել է «քաջ րաբունապետ» Ղազար և «երաժշտապետ» Հովհաննես վարդապետներին: Առաջին ձեռագիրն ընդօրինակել է 1399-ին: 1411-ին մեկնել է Երուսաղեմ, որտեղ ընդօրինակել է մեկ Մանրուսում: Վերադառնալով Սանահին՝ ձեռնադրվել է վարդապետ: Վերջին անգամ հիշատակվում է 1462-ին՝ ծեր տարիքում իր գրած մատյանի հիշատակարանում: Հ. Ս-ու գրած կամ նկարազարդած շուրջ 10 ձեռագրից 5-ը պահվում է Մատենադարանում (ձեռ. № 1537, 1587, 2130, 4435, 8979): Հայ մանրանկարչության ավանդույթներով ստեղծած տերուն. պատկերներն աչքի են ընկնում հորինվածքների ներդաշնակ համամասնություններով, կերպարների հստակությամբ, հարուստ գունաշարով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԴՂԿԱՎԱՆԵՑԻ, XI դ-ի կեսի գրիչ և մանրանկարիչ: Ստեղծագործել է Արշարունյաց գավառի Սանդղկավանքում (Երասխաձոր՝ Կաղզվանի մոտ): Հ. Ս-ու մեզ հայտնի 3 ձեռագրերն էլ պահվում են Մատենադարանում: ***«Մողնու Աւետարանի»*** (1060, ձեռ. № 7736) ընդօրինակման թվականն ու տեղն անհայտ է, իսկ 1053-ի Ավետարանը (ձեռ. № 3793) գրել ու նկարազարդել է Սանդղկավանքում: Հ. Ս. այս 2 մագաղաթե երկաթագիր ձեռագրերը նկարազարդել է տերուն. պատկերներով, նաև գլխազարդերով, զարդագրերով, լուսանցազարդերով (հայ գրչարվ-ում առաջին անգամ), որտեղ ներդաշնակ են գիրը, նկարը և գրանյութը: 3-րդ ձեռագրի՝ «Բեգյունց Աւետարանի» (ձեռ. № 10099) միայն լուսանցազարդերն է ծաղկել Հ. Ս. 1060-ին:

Գրկ. **Մաթևոսյան Ա.**, *Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողնու Ավետարանը»), «ԲՄ», 1971, № 10: Հովհաննես Սանդղկավանեցի (ալբոմ, կազմ., առաջաբ. և ծնթգր.՝ Տ. Իզմայլովայի), Ե., 1986:*



Հովհաննես Ոսկեփորիկ. *Շարակնոցի լուսանցազարդով էջ (1423, Մատենադարան, ձեռ. № 1587)*



Սաղմոսարանի (տպագրիչ՝ **Հովհաննես Ջուղայեցի Քթռեշենց,** *1644, Լիվոռնո) տիտղոսաթերթը*



Հովհաննես Սանդղկավանեցի. *Խորան՝ լուսանցազարդերով («Մողնու Աւետարան», Մատենադարան, ձեռ. № 7736)*



Հովհաննես Սարկավագի *«Աղոթագիրք»-ի (2014, Էջմիածին) կազմը*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ, **Հովհաննես Իմաստասեր** (մոտ 1045, Արցախի Փառիսոս գավառ–1129, Հաղպատ), աստվածաբան, փիլիսոփա, բարձրաստիճան հոգևորական, տոմարագետ, մատենագիր, երաժշտագետ, բանաստեղծ: Սովորել է Հաղպատի վանքում, ապա՝ Անիում: Հիմնադրել և երկար տարիներ ղեկավարել է Անիի բարձրագույն իմաստասիր. դպրոցը: Հետևել է *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու* ուսուցման ծրագրին և կատարելագործել այն: Եղել է Անիի Մայր տաճարի ավագերեցը: Հետագայում գլխավորել է Հաղպատի դպրոցը, որը նրա շնորհիվ դարձել է գիտ–յան և մշակույթի նշանավոր կենտրոն: Մեծ համբավ է վայելել նաև վրաց արքունիքում և հոգևորականության շրջանում:

Հ. Ս. թողել է գրական հարուստ ժառանգություն: Գրել է աստվածաբան., դավան. [«Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ–իցն» (14 դավան. թղթերից կազմված ժող., հրտ.՝ 1996, «Գանձասար», հ. 6, աշխատասիր.՝ Մ. Արամյանի), «Վասն պատկերաց», «Վասն մասանց պատուոյ» (երկուսն էլ հրտ.՝ 1979, «ՊԲՀ», № 4, աշխատասիր.՝ Հ. Քյոսեյանի) ևն], տոմարական («Յաղագս ամսոց հայոց եւ տօնից եւ յաղագս ԴԺ–որդաց [=40–որդաց] լուսնոյ Զատկի», «Յաղագս ըստ հոռոմոց ամսոց եւ ԴԺ–որդին լուսնոյ Զատկաց եւ փոփոխմանց իրաց եւ յարակից», «Պատճէն տոմարի», «Նամակ առ Սարգիս»), տիեզերագիտ. («Վասն շարժման եւ սասանութեան երկրի»), մաթ. («Յաղագս անկիւնաւոր թուոց»), նաև մեկնող., փիլ., բարոյախրատ., գեղագիտ., մանկավարժ. երկեր, բազմաթիվ աղոթքներ («Աղոթագիրք», 2014), շարականներ, ներբողներ: Կորել է նրա պատմ. երկը, որից մեջբերումներ է արել *Սամվել Անեցին*:

Հ. Ս. սրբագրել, խմբագրել, արտագրել է Դավիթ Անհաղթի, Մովսես Խորենացու, Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Դիոնիսիոս Արիոպագացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Հովհան Ոսկերերանի և ուր. բնագիտ. աշխատությունները, որոնք օգտագործվել են նաև որպես դասագրքեր:

1084–ին բարեկարգել է Հայոց շարժ. տոմարը. այն դարձրել է անշարժ, հաստատել է տոների օրերը, կազմել հետագա 532 տարվա աղյուսակը՝ մինչև 1616–ը (Հայոց փոքր թվական), որը կոչվել է «Սարկավագադիր տոմար»:



Հովհաննես Սեբաստացու *«Պատմութիւն Սեբաստիոյ» (1974, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

Լույս են տեսել Հ. Ս–ի «Յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին» (1853, հ. 3), «Ներբողեանք ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ» (1853, հ. 5), «Աղօթամատոյց» (1854, հ. 17, երեքն էլ՝ Վնտ., Սբ Ղազարի տպ., «Սոփերք հայկականք» մատենաշար), «Հարցումն վասն գայթակղութեան: Հարցումն վասն մեղաց եւ հանդերձելոց: Խրատք մանկանց: Եթէ արժան իցէ թողուլ զեղբարս» («Գանձասար», հ. 6, 1996), «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» (աշխատասիր.՝ Ա. Աբրահամյանի, 1956) երկերը:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Սարկաւագ Սոփեւտրեա, տես նրա «Յուշիկք հայրենեաց Հայոց», հ. 2, Վնտ., 1870, էջ 279–307:* **Աբեղյան Մ.**, *Հովհաննես Սարկավագ վարդապետը, Երկեր, հ. 4, Ե., 1970, էջ 63–82:* **Թահմիզեան Ն.**, *Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, «Բազմավէպ», 1978, № 3–4:* **Միրումյան Կ.**, *Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Ե., 1984:* **Մնացականյան Ա.**, *Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան» պոեմը և նրա գնահատությունն ըստ օգտագործված աղբյուրների, «ԲՄ», 1984, № 14:* **Ուզունյան Տ.**, *Հովհաննես Սարկավագ վարդապետը, «Գանձասար», հ. 6, 1996:* **Անթապյան Փ.**, *Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Ե., 2001:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ, **Հովհան Սեբաստացի** (մոտ 1765, Սեբաստիա–26.11.1829, Սեբաստիա), պատմիչ, բանաստեղծ, եկեղեց. գործիչ: 1812–ին ձեռնադրվել է եպիսկոպոս: 1809–30–ին՝ Սեբաստիայի հոգևոր առաջնորդ: Հեղինակ է ոտանավորների, չափածո տապանագրերի, որոնց մի մասը «Ներբողական նուագերգութիւնք...» վերնագրով հրատարակվել է 1825–ին Թիֆլիսում (Ներսիսյան դպրոցի տպ.): «Յաղագս գիւտի հայկական տառից եւ գովեստ նմին եւ յորդոր առ համբակս առ ի ուսանիլ զայն» ներբողում հայոց գրերը համարել է ազգապահպանության գերագույն գործոն: Գրել է նաև քարոզներ (Մատենադարան, ձեռ. № 10185): Հ.Ս–ու «Պատմութիւն Սեբաստիոյ»

(հրտ.՝ 1974, աշխատասիր.՝ Բ. Չուգասզյանի) երկն ընդգրկում է 1021–ից մինչև 1830–ական թթ–ի կարևոր իրադարձությունները:

Գրկ. Պէրպէրեան Հ., Համեմատութիւն Անանուն Սերաստացիի (ԺԳ դար) եւ Յովհաննէս Սերաստացիի (ԺԸ և ԺԹ դար) քանի մը հատուածներուն միջև, «Հասկ», 1957, ապրիլ–մայիս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐՁՆՑԻ (1540–ական թթ., հավանաբար՝ Մեծ Հայքի Բաղեշ նահանգի Սալնաձոր գավառ–մ. թ. անհտ), տպագրիչ, մատենագիր, քահանա: Մինչև 1570–ական թթ–ի վերջերը բնակվել է Ամիդ քաղաքում, ապա որդու՝ Խաչատուրի հետ մեկնել է Հռոմ: Թարգմանել է Գրիգոր XIII պապի մշակած նոր տոմարի ուղեցույցն ու տպագրել որդու և ***Սուլթանշահ Արգարյան Թոխաթեցու*** օգնությամբ՝ ***«Տօմար Գրիգորեան»*** (1584) վերնագրով:

1586–ին Վենետիկում պատվիրել է հայ. նոր տպատառեր և Ջուան Ալբերտիի տպարանում հրատարակել Սաղմոսարան (1587), որը հայ հին տպագրության կարևոր նմուշներից է. պատմ. կարևոր աղբյուր են գրքի հիշատակարանները: 1587–ին Մարսելում հայ. է թարգմանել միջնադարյան Եվրոպայում տարածված «Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի» (հրտ.՝ 1966) ասպետ. սիրավեպը:

Ենթադրվում է, որ կաթոլիկ գործիչ Ղովտուզենց Հովհաննես Տերզնո եպիսկոպոսը (մահացել է 1630–ին) նույն Հ. Տ. է:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու պատ, ԿՊ., 1912, Ե., 2012 (նմանահանություն): Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901: Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977: Դևրիկյան Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ, Ե., 2014:



*Սաղմոսարանի (տպագրիչ՝ **Հովհաննես Տերզնցի,** 1587, Վնտ.) լուսանցազարդով (23-րդ) էջ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՐՄԱՏԱՆԵՆՑ, Քարմատենյանց Հովհաննես Մուրադի (1589/1590, Բիթլիս –1624, Լվով), տպագրիչ, քահանա: XVII դ. սկզբին ընտանիքով փոխադրվել է Լվով: 1615–ին Լվովի հայկ. թաղամասի Սբ Աստվածածին եկեղեցու մոտ հիմնադրել է Ուկրաինայում առաջին հայկ. տպարանը. 1616–ին տպագրել է Սաղմոսարան (միակ օրինակը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում), «Բժշկարան», որից օրինակ չի պահպանվել, 1618–ին՝ ղփչաղ. (Լվով–Ստանիսլավի շրջանի հայության խոսակց. լեզուն) ***Աղոթագիրքը*** (պահպանված միակ օրինակը Հոլանդիայի Լեյդեն քաղաքի համալսարանի գրադարանում է): Ենթադրվում է, որ հայերի կաթոլիկացման դեմ 1630–ին Լվովում տպագրված լեհ. մի գիրք նույնպես տպագրվել է Հ. Ք–ի տպարանում: Հ. Ք–ի տպագր. գործունեությունը կարևոր նշանակություն է ունեցել Հարավարևելյան Եվրոպայի հայերի մշակութ. կյանքում: Տես նաև ***Լվովի հայկական տպագրություն***:



Հովհաննես Քարմատենց

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977: Դևրիկյան Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ, Ե., 2014: Дашкевич Я., Армянская книга на Украине в XVII столетии, труды «Книга. Исследования и материалы», сб. 6, М., 1962.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՒՆԵՑԻ [մոտ 1290–92, Քռնա (Սյունիք)–6.1.1347, Քռնա), ունիթորության տեսաբան, թարգմանիչ, քերական: Ավարտել է Գլաձորի համալսարանը. աշակերտել է ***Եսայի Նչեցուն***, ապա մեկնել է Սարաղա: 1330–ին կաթոլիկ եկեղեցին Հ. Ք–ին նշանակել է Երնջակի դոմինիկյանների առաջնորդ. եղել է հայ քարոզիչների տեսաբանն ու ղեկավարը: Լատ–ից հայ. է թարգմանել ծիս. և իմաստասիր. գրքեր (Թովմա Աքվինացու «Աստուածաբանութեան հանրագումարի» առանձին բաժիններ ևն):



Հովհաննես Քռնեցու *«Յաղագս քերականին» (1977, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

Հ. Ք–ուց մեզ է հասել «Առ միաբանեալ եղբայրքս հայոց» շրջաբերական թուղթը, որտեղ ներկայացված է Երնջակում ունիթոր. կենտրոն հիմնադրելու և կաթոլիկ եկեղեցու հետ միաբանվելու պատմությունը: Հ. Ք–ու «Յաղագս քերականին» (հրտ.՝ 1977) աշխատությունը նորություն էր հայ քերականագիտ. գրակ–յան մեջ: Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արուեստ» երկի իր մեկնության մեջ Հ. Ք. տվել է հայ–ի ամբողջ. նկարագիրը՝ հիմնված առավելապես լատ. քերակ–յան ավանդների վրա: Խոսքի մեջ բառակապակցությունների կառուցվածքի

ուսմունքն առաջին անգամ քննվել է այդ երկում, որը կարելի է համարել հայ-ի շարահյուսության առաջին համակարգված դասընթացը:

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Եղիա (1886–1949), հրապարակագիր, հայագետ, խմբագիր: Իրավագիտ-յան դ-ր: Սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում, հետո հաստատվել և գործել է Հունգարիայի Գյոդեոլեո քաղաքում: Հիմնադրել և խմբագրել է «Գյոդեոլեոյի լրագիր» թերթը, աշխատակցել սփյուռքահայ և հունգ. մամուլին: Ստեղծագործել է հայ. և հունգ.:

Լույս են տեսել Հ-ի «Հայաստանի ժողովուրդը» (1934), «Երկրի հայերը հայրենիքի պաշտպանության մեջ» (1940) հայագիտ., «Ընտիր էջեր հայ գրականությունից» (1942, բոլորն էլ՝ հունգ.) գրականագիտ. աշխատությունները:



Վահան Հովհաննեսյան

ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ Վահան (Թովմաս) Պողոսի [1.9.1894, գ. Նորշեն (այժմ՝ Ծղալթբիլա՝ Վրաստանի Ախալցխայի շրջանում)–10.11.1977, Վենետիկ, Սբ Ղազար], գրող, մանկավարժ, խմբագիր, վարդապետ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1913-ից): Վենետիկի ակադ-ի իսկական անդամ (1965): Սովորել է Վենետիկի Մխիթարյանների վարժարանում (1908–13), ավարտել Հռոմի համալսարանի փիլ-յան ֆակ-ը (1922): 1924–26-ին դասավանդել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում, 1930–31-ին՝ տնօրեն, 1957–60-ին՝ տեսուչ: 1929–30-ին՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր: 1931–37-ին դասավանդել է Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանում, 1937–41-ին՝ Ադիս Աբեբայի Գևորգյան, 1948–56-ին՝ Հալեպի Մխիթարյան վարժարանների տնօրեն: Վենետիկում 1947-ին հիմնադրել և ընդհատումներով խմբագրել է *«Միխիթարեան ընտանիք»* (1969–85-ին՝ *«Հայ ընտանիք»*) պարբ-ը:

Լույս են տեսել Հ-ի «Հայրենի կրակարան» (1930), «Սրտերու երգը: Վանքի ծաղիկներ» (1939), «Մարեմական» (1954), «Հայրենի հող» (1962), «Մաշտոցական» (1963), «Հոգիներու հանգրուան» (1970) բանաստեղծությունների, «Անիէն քար մը բեր» (1957), «Արգինայի զանգակները» (1957), «Լեռներու երգը» (1971) պատմվածքների ժող-ները, «Տաւրոսի առիւծը» (1959), «Դէպի Աւարայր» (1962) պիեսները, սփյուռքահայ դպրոցների համար կազմել է «Պատմութիւն հայոց» դասագիրքը:



Աբգար Ռուբենի Հովհաննիսյան

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աբգար Հարությունի (1849, Թիֆլիս–14.4.1904, Բաթում), հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր-հրատարակիչ: Փիլ. գիտ. դ-ր: Ավարտել է Թիֆլիսի գիմնազիան, Լայպցիգի համալսարանի փիլ-յան ֆակ-ը: 1876–81-ին՝ *«Փորձ»* հանդեսի, 1882–98-ին՝ *«Արձագանք»* պարբերաթերթի հրատարակիչ-խմբագիր: 1880–89-ին եղել է իր իսկ ստեղծած Թիֆլիսի հայ. գրքերի հրատ-յան ընկերության նախագահը:

Հ. 1886-ին հայագետ Արթուր *Լայպի* հետ հիմնադրել է «Հայկական գրադարան» մատենաշարը և 2 հատորով գերմ. հրատարակել հայ գրակ-յան ընտիր նմուշներից: Ֆրանց *Ֆինկի* հետ մանրամասնորեն նկարագրել և հրատարակել է հայկ. 15 ձեռագիր: 1901–02-ին մասնակցել է *«Հանդէս հայագիտութեան»* (Մարբուրգ, խմբագիր՝ Ֆ. Ֆինկ, հայ. և գերմ.) 2 ժող-ների հրատարակմանը: Ֆրանս-ից և գերմ-ից թարգմանել է պիեսներ, ֆրանս. է թարգմանել Րաֆֆու «Խաս-փուշ» և «Բիբի Շարաբանի» (երկուսն էլ՝ 1902) վիպակները:

Հանդես է եկել նաև Սախլաս կեղծանունով:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աբգար Ռուբենի (30.5.1908, Թիֆլիս–3.12.1991, Մոսկվա, թաղված է Երևանում), պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1938), պրոֆ. (1938), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1947): Գիտ. վաստ. գործիչ (1940): Ավարտել է ԵՊՀ (1928): 1947–53-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի տնօրեն, 1949–60-ին՝ ԳԱ հաս. գիտ-ների բաժանմունքի ակադ. քարտուղար, 1960–91-ին (փոքր ընդմիջումով)՝ փոխնախագահ: 1948–49-ին՝ «ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր» (այժմ՝ *«Լրաբեր հասարակական գիտությունների»*) պարբ-ի պատ. խմբագիր:

Լույս են տեսել Հ-ի «Հովսեփ Էմին» (1945,1989), «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII հարյուրամյակի 80-ական թվականներին» (1947), «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին» (1958), «Կոմունիստական գաղափարները Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին» (1966, ԽՍՀՄ ԳԱ Վ. Վոլգինի անվ. մրց.՝ 1974) աշխատությունները (բոլորը՝ ռուս.):

ԽՍՀՄ «Պատվո նշան» (1945, 1961), Աշխատանքային կարմիր դրոշի (1955, 1968), Հոկտեմբերյան հեղափոխության (1976), «Ժողովուրդների բարեկամություն» (1988) շքանշաններ:

Երկ. Шарль Фурье, М., 1958; Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Е., 1990; Неизданные произведения (աշխատասիր.՝ Վ. Պողոսյանի), Е., 2009.

Գրկ. Ակադեմիկոս Աբգար Ռոբենի Հովհաննիսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն (կազմ.՝ Վ. Պողոսյան), Ե., 2008:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Աշոտ Գարեգինի (17.6.1887, Շուշի–30.6.1972, Երևան), պատմաբան, կուս., պետ. գործիչ: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1960): ՌՍԴԲԿ անդամ՝ 1906-ից: Ավարտել է Շուշիի ռեալ. դպրոցը: Սովորել է Ենայի, Հալլեի, Մյունխենի համալսարաններում: Տիրապետել է ռուս-ին, գերմ-ին, ֆրանս-ին, լատ-ին: 1913-ին վերադարձել է Շուշի և դասավանդել հոգևոր ճեմարանում: 1918–19-ին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆ., միաժամանակ՝ հայկ. գործերի կոմիսարիատի հրատարակչ. բաժնի վարիչ: Եղել է ՀԽՍՀ առաջին լուսժողկոմը, 1921–27-ին՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար: 1921–26-ին դասավանդել է ԵՊՀ-ում: 1954-ից՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի բաժնի վարիչ:



Աշոտ Հովհաննիսյան


Հ. եղել է ***«Հայ ժողովրդի պատմություն»*** բազմահատորյակի խմբագրակազմի անդամ և հեղինակներից (հ. 4–6, 1972–81), կազմել և հրատարակել է «ԺԷ դ-ի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (Վազգեն Հակոբյանի հետ, հ. 1–3, 1974–84): Խմբագրել է «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամյակին» փաստաթղթերի ժող-ը (ռուս., 1964):

Լույս են տեսել Հ-ի «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» (1955), «Նալբանդյանը և նրա ժամանակը» (հ. 1–2, 1955–56), «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (հ. 1, 2, 1957, 1959) աշխատությունները, «Պատմագիտական ուսումնասիրություններ» (2007, Էջմիածին) ժող-ը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985, հետմահու), ԽՍՀՄ Լենինի շքանշան:

Երկ. Հուշեր և ինութագրումներ, Ե., 1969:

Գրկ. Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան, Ե., 1973 (Սովետական Հայաստանի ակադեմիայի գիտնականները, № 14): Խուդավերդյան Կ., Աշոտ Հովհաննիսյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), «ՊԲՀ», 1987, № 3: Սարուխանյան Ն., Սիտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին, Ե., 2012:



Ա. Հովհաննիսյանի *«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (գիրք 1, 1957, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արիստակես (1812–1878), երաժշտ. գործիչ, ձայնագրագետ, խմբագիր-հրատարակիչ: Եղել է Կ. Պոլսի Գում Գափուի եկեղեցու դպիրը, երաժշտություն է դասավանդել Կ. Պոլսի Պեզճյան մայր վարժարանում: Լրացրել է Համբարձում ***Լիմոնճյանի*** մշակած նոր հայկ. ձայնագրության համակարգը: 1857-ին Գաբրիել Երանյանի հետ հրատարակել է եվրոպ. նոտագրությամբ հայ. առաջին երաժշտ. ***«Քնար արևելեան»*** հանդեսը: Գրել է հոգևոր թեմաներով երգեր, «Լևոն Առաջին իշխան Կիլիկիոյ եւ որդի նորին կոյր Ռուբէն» երգախառն թատերագրության երաժշտությունը (բեմ.՝ 1872), գրառել է շարականներ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Արմեն Արշավիրի (10.3.1936, Թավրիզ–24.8.2011, Երևան), հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1958): 1966–83-ին՝ Հեռուստառադիոպետկոմի երաժշտ. հաղորդումների գլխ. խմբագիր: 1983–90-ին՝ ***«Սովետական գրող»*** հրատարակչության գլխ. խմբագրի տեղակալ:

Ռուս-ից թարգմանել է Ա. Կուպրինի «Յամա» (1975), Յ. Օլեշայի «Նախանձ: Ամեն օր գոնե մի տող» (1977), Վ. Շուկշինի «Պատմվածքներ» (1979), Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» (1985), Ա. Ռիբակովի «Արբատի զավակները» (1988, ՀԳՄ Ե. Չարենցի անվ. մրց.՝ 1990), Ա. Սոլժենիցինի «Արխիպելագ Գուլագ» (1994), Ա. Տոլստոյի «Պյոտր Առաջին» (1987), Ֆ. Դոստոևսկու «Դևեր» (2005), «Գրառումներ մեռյալ տնից» (2005) և այլ հեղինակների ստեղծագործություններ:


Լույս են տեսել Հ-ի «Ես ձեզ սիրում եմ, մարդի՛կ» (1969), «Աղետ» (1990) ակնարկների, «Հայաստան, երկիր դրախտավայր» (1993), «Խորհրդածություններ երկրորդ էջի համար» (1993), «Մոռացված արժեքների ստվերները»



Արմեն Հովհաննիսյան



Լավրենտի Հովհաննիսյանի *«Գրաբարի բառարան»-ի (2010, Ե., «Էդիթ Պրինտ») կազմը*



Լևոն Հովհաննիսյանի *«Բժշկության պատմությունը Հայաստանում» (մաս 3, 1946, ԳԱ հրտ.) գրքի փիփղոսաթերթը*



Հենրիկ Հովհաննիսյանի *«Հնագույն դրաման Հայաստանում» (2010, Ե., «Նաիրի») գրքի կազմը*

(«Արցախյան գոյամարտը երեկ և այսօր. 1988–1998», 1998, Լոս Անջելես), «Ուրբաթախոսություն» (2001), «Զանգակատուն բերող ճանապարհին» (հ. 1–3, 2008–12) հրապարակախոս. հոդվածների ժող-ները:

ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1989), ՀԳՄ և Մայր աթոռ Սբ Էջմիածնի «Կանթեղ» (2001) մրց-ներ, ԼՂՀ «Մխիթար Գոշ» (2006) մեդալ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գարրիի Մկրտչի (22.2.1927, Երևան–17.2.1998, Երևան), գրականագետ, խմբագիր, հրատարակիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1970): Ավարտել է Երևանի գեղարվեստաթատեր. ինստ-ը (1950): 1954-ից՝ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» (այժմ՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»***) հանդեսի պատ. քարտուղար, ապա՝ խմբագրի տեղակալ, 1959-ից՝ ԳԱ խմբագրահրատարակչ. խորհրդի գլխ. խմբագիր, 1971-ից՝ նախագահի տեղակալ:

Լույս են տեսել Հ-ի «Նար-Դոս» (1959), «Ավետիք Իսահակյանի արձակը» (1963), «Իսահակյանի ստեղծագործական աշխարհը» (1969), «Ավետիք Իսահակյան: Կյանքն ու ստեղծագործական ուղին» (1975), «Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820–1920 թթ.)» (համահեղ., 1982) աշխատությունները: Համահեղինակ է «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի (հ. 4, 5, 1972, 1979):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լավրենտի Շահենի [ծ.12.2.1944, գ. Նորշեն (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2008): ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): Ավարտել է ԵՊՀ (1967): 1971-ից՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի գիտաշխատող, 1995–2005-ին՝ փոխտնօրեն, 2006–10-ին՝ տնօրեն, 2010-ից՝ բաժնի վարիչ:

Լույս են տեսել Հ-ի «Նյութեր պատմական բառարանագրության» (2001), «Հայ-իրանական նոր ստուգաբանություններ» (2005), «Գրաբարի բառապաշարը (V դար)» (2006), «Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար)» (2007), «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» (մաս 1, 2, 2008, 2012), «Գրաբարի բառարանագրության և բառագիտության հարցեր» (2009), «Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չկկայված բառեր» (2010), «Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (2013) աշխատությունները:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լևոն Անդրեասի [13(25).2.1885, Թիֆլիս–11.5.1970, Երևան], սրտաբան, բժիշկ-պատմաբան, բառարանագիր: Բժշկ. գիտ. դ-ր (1937), պրոֆ. (1937), ՀԽՍՀ ԳԱ (1943) և ԽՍՀՄ ԲԳԱ (1944) ակադ.: Գիտ. վաստ. գործիչ (1940): Ավարտել է Խարկովի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1909): Հ-ի նախաձեռնությամբ 1961-ին Երևանում հիմնադրվել է Սրտաբանության և սրտային վիրաբուժության ԳՀԻ (1971-ից՝ Լ. Հովհաննիսյանի անվ.):

Ռուս. է թարգմանել և հրատարակել Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարություն»-ը, համահեղինակ է «Լատին–ռուս–հայերեն բժշկական բառարանի» (1951): Լույս են տեսել նաև Հ-ի «Բժշկության պատմությունը Հայաստանում...» (ռուս., մաս 1–5, 1946–47) աշխատությունը, «Ներքին հիվանդությունների մասնավոր ախտաբանությունը» (1956) և «Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա» (1964) դասագրքերը:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (2):

Երկ. Минеральные источники Армении, Е., 1936; О психологическом профиле сердечного больного, Е., 1963.

Գրկ. Левон Андреевич Оганесян (библиография), Е., 1955.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ Վահանի (ծ. 3.6.1936, Լենինական), թատերագետ: Արվեստագիտ-յան դ-ր (1980), պրոֆ. (1988): Գիտ. վաստ. գործիչ (2003), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2006): 1958–74-ին (ընդհատումներով) աշխատել է Հեռուստառադիոպետկոմում (1990–91-ին՝ նախագահ), 1965-ից՝ ՀՀ ԳԱԱ արվ-ի ինստ-ում: ՀՀ ԳԱ արվ-ի ինստ-ի գիտ. աստիճան շնորհող խորհրդի նախագահ (1995-ից):

Լույս են տեսել Հ-ի «Բեմական խոսքի պոետիկա» (1973), «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» (1978), «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը» (1990), «Հայ թատրոնի պատմություն. XIX դ.» (1996), «Դերասանի արվեստի բնույթը. էսթետիկական քննություն» (2002), «Միջնադարյան բեմ» (2004), «Հնագույն դրաման Հայաստանում: Ծագման հարցի շուրջը» (2010), «Ստա-

նիսլավսկու «սիստեմը» և խաղի պարադոքսը» (2012) աշխատությունները: Թարգմանել է Ա. Պուշկինի գործերից («Բանաստեղծություններ և գծապատկերներ», 1999):

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2008):

Երկ. Անդարձություն: Բանաստեղծություններ, թարգմանություններ, Ե., 2014: Գրկ. Հենրիկ Հովհաննիսյան: Կենսագրական գիտություն, Ե., 2006:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովհաննես Մկրտչի [14(26).4.1864, Վաղարշապատ–29.9.1929, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], բանաստեղծ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել Մոսկվայի համալսարանի լեզվագր. ֆակ-ը (1888): Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Հ. արևելահայ բանաստեղծ. նոր դպրոցի հիմնադիրն է: Հ-ի բանաստեղծությունների առաջին ժող-ը լույս է տեսել 1887-ին (Մ., Օթոն Հերբեկի տպ.): Նրա հայրենասիր. պոեզիան հատկանշվում է հերոսականությամբ ու լավատեսությամբ («Տեսե՞լ ես արդեօք բլուրները», 1880, «Երկու ճանապարհ», 1883, «Տղմուտ», 1887, «Մնաք բարով, արեւ, գարուն», 1887, «Մայրս», 1896, «Սարն ի վեր», 1896, «Նոր գարուն», 1897): Հայ պոեզիայում Հ. առաջինն է ճշմարտացիությամբ նկարագրել գյուղ. կյանքը («Գիւղի ժամը», 1886, «Հատիկ», 1886), «Սիւնեաց իշխանը» (1887) պոեմում նորովի է մեկնաբանել հայոց պատմության որոշ հարցեր՝ մասնավորապես Վասակ Սյունուն վերաբերող: Հ-ի քնարերգության որոշ նմուշներ առնչվում են ժող. բանահյուսությանը («Արտաւազդ», 1887, «Արազն եկավ լափին տալով», 1887, «Ալագեազ բարձր սարին», 1901, «Վահազնի ծնունդը», 1904, «Լուսաւորչի կանթեղը», 1904):

Հրատարակվել են նաև Հ-ի «Երկերի ժողովածուն» (հ. 1, 1937, հ 1–4, 1964–68), «Հատընտիրը» (1939, 1971), «Երկերը» (1983):

Բնագրից թարգմանել է Հոմերոսի, Յ. Վ. Գյոթեի, Ֆ. Շիլլերի, Հ. Հայնեի, Վ. Հյուգոյի, Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Շ. Պետեֆիի, Լ. Ուլանդի և ուր. ստեղծագործություններից:

1948-ից ծննդավայրում գործում է Հ-ի տուն-թանգարանը, Հ-ի անունով Էջմիածնում կոչվել է դպրոց, Երևանում և ՀՀ այլ քաղաքներում՝ փողոցներ:

Գրկ. Ղանալանյան Հ., Հովհաննես Հովհաննիսյան, Ե., 1946: **Ամաթյան Լ.,** *Հովհաննես Հովհաննիսյան, Ե., 1963:* **Մուրադյան Ն.,** *Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը, Ե., 1964:*



Հովհաննես Հովհաննիսյան

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովսեփ (1881, Թավրիզ–1975, Թեհրան), խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: 1897-ից աշխատակցել է Թիֆլիսի, Բաքվի, Կ. Պոլսի պարբ-ներին՝ «Մշակ», «Արեւ», «Ուստան», «Հորիզոն», «Նոր հոսանք», «Հայրենիք», «Վէմ», «Լուսաբեր» ևն: 1909-ին Թավրիզում հրատարակել է «Առաւօտ», 1912-ին Թեհրանում՝ «Արշալոյս» թերթերը (Վահան Զաքարյանի, Զորա Սագինյանի և Արսեն Միքայելյանի հետ): 1942–48 և 1955–58-ին՝ *«Ակիք»* օրաթերթի գլխ. խմբագիր:

1995-ին Երևանում լույս է տեսել Հ-ի «Հուշերը» (հ. 1, 2):


Հանդես է եկել Ֆիլիպ, Ֆարրո, Մեն, Յել, Յ. Էլմար, Ք. Արմենյան և այլ ծածկանուններով:



Հ. Հովհաննիսյանի *«Երկերի ժողովածու»-ի (հ. 1, 1964, Ե., ԳԱ հրտ.) կազմը*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հովսեփ Հովհաննեսի (Իոաննեսով Իոսիֆ, Յաժդերխանցի, ծ. թ. անհտ, Աստրախան–1862, Ս. Պետերբուրգ), տպագրիչ, թարգմանիչ, եկեղեց. գործիչ: 1811-ին Ս. Պետերբուրգում հիմնադրել է հայկ. տպարան (2-րդը՝ Ռուսաստանում, գործել է մինչև 1827-ը): Տպագրել է 12 անուն գիրք՝ Նոր կտակարան (1814, 1817), Աստվածաշունչ (1817) ևն:

Հ. ռուս. է թարգմանել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկը (1809, ձոնել է Ալեքսանդր I կայսրին), Գևորգ (Եգոր) Մելքիսեդեկյան- Խուբովի «1778–1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» (1811, հայ. բնագիրը կորել է), Մարգար Խոճենցի (Գեղամյան) «Բարառնական դիմառնություն բարոյական» (1812) աշխատությունները, թարգմանել և հայ-ռուս. տեքստերով հրատարակել է Գրիգոր Նարեկացու «Մաղթանք գիշերային» (1810) տաղը, ռուս-ից գրաբար է թարգմանել Մոսկվայի մետրոպոլիտ Պլատոնի «Քարոզք նորին կայսերականի մեծութեան...» (1811, ՍՊբ, Հ-ի տպ.), «Բան առ Հայկազնեայ քրիստոնեայս, ընկերակցութենէ ռուսաց Աստուածաշունչ ժողովոյն, որ ի Ռուսաստան» (1816, նույն տպ.) երկերը:



Նոր կտակարանի (տպագրիչ՝ **Հովսեփ Հովհաննիսյան,** *1817, ՍՊբ) տիտղոսաթերթ*

Գրկ. **Հախվերդյան Ռ.,** *Իոսիֆ Իովաննեսովի տպարանը Պետերբուրգում, «Հայություն», 1993, № 15:* **Հովհաննիսյան Պ.,** *Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:*



Հրաչյա Հովհաննիսյան



Հ. Հովհաննիսյանի *«Ընտիր երկեր»-ի (հ. 2, 1990, Ե., «Խորհրդային գրող») կազմը*



Մաքսիմ Հովհաննիսյան



Շավարշ Հովհաննիսյան. *Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշը» գրքի (1961, Ե., Հայպետհրատ) պատկերազարդումներից*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հրաչյա Կարապետի [8.12.1919, գ. Շահաբ (այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզում)–22.11.1997, Երևան], բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, հրապարակախոս, հաս. գործիչ: Մշակույթի վաստ. գործիչ (1974): Դավիթ *Հովհաննեսի* հայրը: Սովորել է ԵՊՀ-ում (1938–41): 1955–59 և 1978–82-ին՝ *«Գրական թերթ»*, 1982–86-ին՝ *«Սովետական գրականություն»* պարբ-ների խմբագիր, 1959–75-ին, միաժամանակ՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1988–90-ին՝ ՀԳՄ վարչության նախագահ:

Լույս են տեսել Հ-ի «Իմ կյանքի երգը» (1948), «Երկրորդ հանդիպում» (1951), «Հրաշալի այգեպան» (1956), «Ծովի լռությունը» (1964), «Վայրի վարդ» (1968), «Սուրը դափնու վրա» (1970), «Հայրական երգ» (1977), «Արևոտ կղզու երգը» (1980), «Իրիկնային ղողանջ» (1982), «Դաժան դրախտավայր» (1993), «Մենության օրեր» (1996) բանաստեղծությունների, «Մոտիկն ու հեռուն» (1967), «Ժամանակի շունչը» (1976), «Աշտադալար ծառ» (1985), «Անկախության պերճանքն ու խեղճությունը» (1994) հրապարակախոս. հոդվածների, «Սիբռնեայ: Իրապատումներ» (2011) էսսեների ժող-ները, «Հուշերի երեկո» (1996) հուշագրությունը: Ուշագրավ է «Ոսկե ամպ» (1984), «Պատերազմի դեմքը» (1986) և «Կապույտ լեռան շուքը» (1995) եռագրությունը:

Թարգմանել է Ս. Միխալկովի, Ն. Նեկրասովի, Մ. Ռիլսկու և ուր. գործերից:

ՀՀ Պետ. (1979), ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1982), ԼՂՀ Եղիշեի անվ. (1994) մրց-ներ:

Երկ. Երկերի ժող., հ. 1–2, Ե., 1988–89: Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1989–90:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մաքսիմ (Ավանեսյան Միսաք) Երվանդի [ծ. 18.2.1934, գ. Հարավ (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)], գրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1958): 1958–86-ին աշխատել է ԼՂԻՄ-ի ռադիոհաղորդումների կոմիտեում, 1988–93-ին՝ *«Խորհրդային Ղարաբաղ»*, 1995–98-ին՝ «ԼՂ Հանրապետություն» (1999-ից՝ *«Ազատ Արցախ»*) թերթերի գլխ. խմբագիր, 1993–95-ին՝ ԼՂՀ Նախարարների խորհրդի լրատվության և մամուլի դեպարտամենտի ղեկավար, 1993–2003-ին՝ ԼՂՀ նախագահի գլխ. խորհրդական, 2003-ից՝ ԼՂՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ:

Լույս են տեսել Հ-ի «Իմ հին լորենի» (1970), «Գյուղացի մարդիկ» (1977), «Եվ սիրտն ասաց» (1980), «Նարնջագույն գիշերներ» (1983), «Շոգ» (1986), «Մենք» (1989), «Գնում ենք արևին դիմավորելու» (1991), «Արցախ իմ, ցավ իմ» (1998), «Հարար, հարար» (2006), «Հոգնած երեկո» (2010) պատմվածքների, վիպակների ու ակնարկների ժող-ները:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (1990):

Երկ. Երկեր, Սյուեփանակերտ, 2005:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Շավարշ Արամի, *Հովհաննես Շավարշ* (1.2.1908, Ալեքսանդրապոլ–17.6.1980, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1961): Ավարտել է ԵԳԱՏ (1928): Աշխատել է Հայկինոյում, Հայպետհրատում: Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) տարիներին եղել է ռազմաճակատային թերթի նկարիչ:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Թումանյանի «Անուշ» (1934), «Շունն ու կատուն» (1953), «Ոսկու կարասը» (1959), Ս. Զորյանի «Պապ թագավոր» (1944), Շիրվանզադեի «Արտիստը» (1946), Հ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» (1947), Վ. Անանյանի «Որսորդական պատմվածքներ և ակնարկներ» (1947), Ատրպետի «Տժվժիկ» (1948), Վ. Փափազյանի «Լուր-դա-լուր» (1948), Ա. Խնկոյանի «Գող մաքին» (1949), Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» (1950), Հ. Դուկասյանի «Արաքսի այն ափին» (1951), Ս. Լիսիցյանի «Արու Հասանի մաշիկները» (1959), Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշը» (1961), նաև իր հրատարակած «Պիռներիա» (1932), «Մեր դպրոցը» (1934), «Մահ ֆաշիզմին» (1942) և այլ գրքեր: Ստեղծել է գրաֆիկ. շարք՝ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» պոեմի մոտիվներով (1958):

Գրկ. Հովհաննես Շավարշ (ալբոմ), Ե., 1966:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պետրոս Հովհաննեսի (ծ. 22. 6. 1944, Լենինական), պատմաբան, աղբյուրագետ, մատենագետ: Պատմ. գիտ. թեկնածու (1976), պրոֆ. (2011): Վաստ. մանկավարժ (2009): Ավարտել է ԵՊՀ (1970): 1977-ից դասավանդում է ԵՊՀ-ում (2013-ից՝ ամբիոնի վարիչ), 1999-ից, միաժամանակ՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Հ–ի աշխատասիրությամբ լույս են տեսել «Հակոբ Մանանդյան» (1981), «Ծատուր Աղայան» (1983), «Հայկական հարց: Հայոց ցեղասպանություն: Մատենագիտություն. 1877–1997» (ռուս., 1998), Ն. Ադոնցի «Երկեր» (հ. Ա–Զ, 2006–12), Հ. Մանանդյանի «Երկերի» 7–րդ և 8–րդ հատորները (2010–11), «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին» (2010), «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (հ. 1, 2, 2007, 2012, Ա. Մովսիսյանի հետ), Ա. Պերպերյանի «Պատմութիւն Հայոց» (2009) և այլ աշխատություններ: Համահեղինակ է «Հայոց պատմություն» դպրոց. (2007, 2009), բուհ. (2000, 2012) դասագրքերի, «Հայոց պատմություն» ակադեմ. բազմահատորյակի 3–րդ և 4–րդ հատորների (2010) նն:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2004):

Երկ. Հայ ազատագրական շարժումները (XV դ. կես–XVIII դ. վերջ), Ե., 2010: Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռիչարդ (Տիգրան) Գասպարի [ծ. 9.11.1932, ք. Թուլերի (ԱՄՆ–ի Կալիֆոռնիայի նահանգ)], պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1966), ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (1990): Ավարտել է Կալիֆոռնիայի համալսարանը (1954), հայ–ի իմացությունը կատարելագործել Բեյրութի Նշան Փալանճյան ճեմարանում (1955–56): Կալիֆոռնիայի համալսարանի Մերձ. Արևելքի ուսումնասիրման «Ֆոն Գրունեբաում» կենտրոնի տնօրենի պաշտոնակատար և հայ ժողովրդի արդի պատմության ամբիոնի վարիչ (1987–ից):

Լույս են տեսել Հ–ի «Հայոց ցեղասպանության մատենագիտություն» (1978), «Հայերի ցեղասպանությունը հեռանկարում» (անգլ., 1986), «Հայաստանի Հանրապետություն» (հ. 1, 2..., 2005, 2015...) և այլ աշխատություններ:

Հ. «Արմինիըն Ռևյու» ամսագրի խմբագր. կոլեգիայի, մի շարք միջազգ. և ամերիկյան գիտ. ընկերությունների անդամ է: 1993–ին Հ–ի անունով դպրոց է կոչվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում:

Երկ. Armenia on the Road to Independence 1918, Berkeley–L. A., 1967; The Republic of Armenia, v. 1–4, Berkeley–L. A.–L., 1971–96.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վիկտոր Անտոնի [ծ. 22.11.1948, գ. Նորշեն (այժմ՝ Ծաղալթքիլա՝ Վրաստանի Ախալցխայի շրջանում)], գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ՀՊՄԻ (1974): 1976–ից հեռուստառադիոպետկոմում եղել է նկարիչ–ձևավորող (1993–ից՝ գլխ. նկարիչ), 1997–2000–ին՝ «Նորք» հեռուստատեսության գլխ. նկարիչ:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Մելքոնյանի «Պատերազմի ծուխը» (1988), Ա. Կոնան Դոյլի «Նոթեր Շեռլոկ Հոլմսի մասին» (1989), Բ. Վերդյանի «Ծաղիկներս մնացին հեռվում» (1990), Վ. Դարբինյանի «Նորշեն–Ծղալթքիլա» (2003), Լ. Անանիկյանի «Նովել Ա–ի ողբն ու ծիծաղը» (2006), Հ. Սարոյանի «Երգող ձկնիկը» (2009), Յ. Վ. Գյոթեի «Անտառի արքան» (2012) և այլ գրքեր:

ՀՈՎՆԱԹԱՆ (Կարապետյան) Հարություն Հովհաննեսի [ծ. 18.9.1937, գ. Սուֆլիս (Վրաստանի Ախալցխայի շրջան)], բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1962): 1984–88–ին՝ Մասիսի շրջ. «Նոր ուղի» թերթի խմբագիր:

Լույս են տեսել Հ–ի «Լուսաստղ» (1971), «Ճամփեզրի ծառը» (1977), «Արեգակն էլ փշեր ունի» (1984), «Աղոթարան» (1990), «Արևն այստեղ է» (2010) բանաստեղծությունների, «Զրույցներ. Հովհաննես Շիրազ» (1992), «Խոսում է Համո Սահյանը» (1992), «Ո՞ւր ես գնում, Տիգրան Մանսուրյան» (1996), «Ծիածանվող հոգիներ» (2012, Մ. Սարգսյանի անվ. մրց.), «Մորիս Փոցխիշվիլի. հոգին հոգու հետ» (2013) զրույցների, էսսեների ժող–ները: Թարգմանություններ է արել վրաց–ից և ռուս–ից:

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐ, XVII–XIX դդ–ի նկարիչների ընտանիք: Տոհմի հիմնադիրը Գրիգորի և Զորիկի որդի, գրիչ, ծաղկող Հովհաննես (Յոհան Շոռոթեցի, ծ. թ. անհտ–1679) քահանան էր: Մեզ են հասել Շոռոթում նրա ընդօրինակած 2 Ավետարանը (1653, ձեռ. № 2494, 1663, ձեռ. № 9242) և Հայսմավուրքը (1662–63, ձեռ. № 7363): Գրիչ և մանրանկարիչ էր Հովհաննեսի և Սողոմեի ավագ որդին՝ Մարգար դպիրը. 1679–ին Շոռոթում ընդօրինակել է ժողովածու (ձեռ. № 4418), Մարգարի որդին՝ տիրացու Հայրապետը, 1765–ին Ագուլիսում *Նաղաշ Հովնաթանի* Տաղարանը (ձեռ. № 4426). ենթադրվում է, որ



Պետրոս Հովհաննիսյանի *«Մովսես Խորենացի: Մատենագիտություն» (2013, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Ռիչարդ Հովհաննիսյան



Վիկտոր Հովհաննիսյան. *Հ. Սարոյանի «Երգող ձկնիկը» (2009, Ե., հեղ. հրտ.) գրքի կազմը*



Հովսեփեանյաններ. *1679-ի ժողովածուի էջ (ծաղկող՝ Մարգար, Մատենադարան, ձեռ. № 4418)*



Գուրգեն Հովնանի *«Ավետիք Իսահակյան» (1976, Ե., Հայաստան») գրքի կազմը*



Ղևոնդ Հովնանյանի *«Մեծն Ներսէս եւ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը» (1851, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*

Տաղարանի որոշ պատկերներ ընդօրինակվել են Նաղաշ Հովնաթանի բնօրինակից:

Նաղաշ Հովնաթանի որդիներն են ***Նաղաշ Հակոբը*** (1685/1690–1757) և Հարությունը (Հարություն Շոռոթեցի). վերջինս առավել հակված էր դեկորատիվ գեղանկարչությանը. ձևավորել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը» (1731, ձեռ. № 2162): Սր Էջմիածնում եղբոր՝ Նաղաշ Հակոբի հետ պատկերազարդել է Հայսմավուրք (1725–30, ձեռ. № 1533, բոլորը՝ Մատենադարան), որտեղ թողել են նաև իրենց ստորագրությունները:

Գրկ. Զօպանեան Ա., Նաղաշ Յովնաթան եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փ., 1910: **Ակինեան Ն.,** *Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վնն., 1911:* **Յովսէփեան Գ.,** *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պր. 4, Անթիլիաս, 1951:* **Ղազարյան Մ.,** *Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974:* **Լևոնյան Գ.,** *Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, № 1, 2, 4:* **Գևորգյան Ա.,** *Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, «ՊԲՀ», 1982, № 2:* **Նույնի,** *Մի լրացում Հովնաթանյան տոհմածառին, «ՊԲՀ», 1996, № 1–2: Казарян М., Художники Овнатанянь, М., 1968.*

ՀՈՎՆԱՆ (Հովհաննիսյան) Գուրգեն Ներսեսի (20.10.1910, Շուշի–9.2.2000, Երևան), գրականագետ, խմբագիր, գրող: Բանասիր. գիտ. դ-ր (1963), պրոֆ. (1964): Ավարտել է Մոսկվայի մանկավարժ. ինստ-ը: 1940–41-ին՝ «ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր» (այժմ՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»***) ամսագրի խմբագիր: 1941–45-ին խմբագրել է «Հայկական սնայպեր», «Մարտ հանուն հայրենիքի», «Մարտական աստղ» ռազմաճակատային պարբ-ները: 1946–64-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ում, 1954–64-ին՝ տնօրեն, 1964–76 և 1978–85-ին՝ ԳԱ արվ-ի ինստ-ում, 1976–78-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հիմնարար գրադարանի խորհրդի նախագահ:

Լույս են տեսել Հ-ի «Ստեփան Շահումյանը և Սաքսիմ Գորկին» (1934), «Սաքսիմ Գորկին և հայ կուլտուրան» (1940, 1968), «Ն. Վ. Գոգոլը և հայ գրականությունը» (1952), «Ն. Ա. Նեկրասովը և հայ պոեզիան» (1956), «Ռուս-հայ գրական կապերը XIX–XX դարերում» (գիրք 1–2, 1960–61), «Լուի Արագոնը Հայաստանի և հայ մշակույթի մասին» (1985) աշխատությունները, «Առաջին ժպիտը» (1931), «Ձիվա» (1932) արձակ բանաստեղծությունների, «Կյանքը փակ նամակներում» (1937), «Չորս նովել» (1942), «Նովելներ» (1946) պատմվածքների, նովելների ժող-ները, «Էմմա» (1934) վեպը, «Ավետիք Իսահակյան» (1976) հուշապատումը:

Հիմնադրել և խմբագրել է «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» մատենաշարը:

ՀՈՎՆԱՆՅԱՆ Ղևոնդ (28.10.1817, Կ. Պոլիս–26.01.1897, Վիեննա), բանասեր, լեզվաբան, խմբագիր, թարգմանիչ: Պողոս ***Հովնանյանի*** եղբայրը: Սովորել է Կ. Պոլսի Սբ Բենոիտ ֆրանս., 1935-ից՝ Վիեննայի Մխիթարյան վարժարաններում: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1838-ից): Տիրապետել է հուն-ին, լատ-ին, գերմ-ին, ֆրանս-ին, արաբ-ին: Երկար տարիներ եղել է միաբանության տպարանապետը: 1847–63-ին՝ ***«Եւրոպա»*** պարբ-ի խմբագրակազմի անդամ, 1887–90-ին՝ ***«Հանդէս ամսօրեայ»*** -ի առաջին խմբագրապետը:

Լույս են տեսել Հ-ի «Քերականութիւն գաղղիերէն լեզուի» (հ. 1–3, 1843–44), «Մարտինոս Լուտերին վարուց եւ նորոգութեան պատմութիւնը» (1850), «Դաստիարակ մանկանց...» (1851), «Մեծն Ներսէս եւ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը» (1851), «Միզայեան Մանուկ Պէյին վարուց պատմութիւնը» (1852), «Պատմութիւն քաղաքականութեան եւրոպական տէրութեանց ընդհանրապէս» (հ. 1–4, 1856–60), «Ծաղիկ Սուրբ գրոց: Ընթերցուածք քաղեալ յԱստուածաշունչ գրոց» (1874, 1889), «Կրթութիւն գաղղիերէն լեզուի» (1875), «Աղօթագիրք պաշտօնասիրաց Սրբոյն Յովսէփայ Աստուածահօր» (1883), «Յետազօտութիւնք նախնեաց, ռամկօրէնի վրայ» (մաս 1, 1897, 2-րդ մասը՝ «Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ռամկախառն» վերնագրով, 1911) քաղաքագիտ., պատմագիտ., բանասիր. և լեզվաբ. աշխատությունները:

Թարգմանել է Ժ. Բոսյուեի «Խօսք վասն տիեզերական պատմութեան» (Հ. Գաթրճյանի և Ա. Գարագաշյանի հետ, 1841), Կ. Նեպոտի «Վարք զօրավարաց անուանեաց» (1842) աշխատությունները:

Հ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:

Գրկ. Վեր. հ. Ղևոնդ վ. Յովհաննեան Լմահախօսականի, «ՀԱ», 1897, № 62: Աղայան Է., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*

ՀՈՎՆԱՆՅԱՆ Պողոս (12.9.1802, Կ. Պոլիս–9.1.1884, Վիեննա), լեզվաբան, պատմաբան, աշխարհագետ, մանկավարժ: Ղևոնդ *Հովհաննյանի* եղբայրը: Մխիթարյան միաբանության անդամ (1824–ից):

Լույս են տեսել Հ–ի «Վարժութիւն մանկանց ի հրահանգս ընթերցանութեան եւ բարեկրթութեան» (1826, 1908), «Համառօտ աշխարհագրութիւն ընդհանուր երկրի ըստ նորոգ կարգաց տէրութեանց» (1835), «Հրահանգք աստեղագիտական ի վերայ գիսաւոր աստեղաց» (1841), «Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ...» (1847), «Աղօթագիրք մանկանց» (1849, 1912), «Մարդկային լեզուին սկզբան, հանգամանաց միութեան ու բաժանման եւ ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը» (1857), «Առաջնորդ դաստիարակութեան առանձին ծնողաց համար» (1862), «Ուսումն ազգային դաստիարակութեան» (1862), «Պատմութիւն Իտալիայի: Ի սկզբանէ մինչեւ մեր օրերը» (1864) աշխատությունները:

Հ–ի բոլոր գրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:

Գրկ. Աղայան Է., *Լեզվաբան Պողոս Հովհաննյան, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1945, № 3:*

ՀՈՎՍԵՓ, XV դ–ի վերջի–XVI դ–ի սկզբի գրիչ և մանրանկարիչ: Ստեղծագործել է Վասպուրականում: Հ–ի ընդօրինակած և նկարազարդած ձեռագիր մատյաններից 3–ը Մատենադարանում են (1497, ձեռ. № 158 և 3534, 1499, ձեռ. № 6326): Հավանաբար գրել և ծաղկել է նաև Գանձարան (XV դ–ի վերջ, Մատենադարան, ձեռ. № 5398): 1 ձեռագիր (Շարակնոց, 1497) պահվում է Բեռլինի պետ. գրադարանում (ձեռ. № 2068): Հ–ի արվ–ում նկատելի է Վասպուրականի մանրանկարչության դպրոցի «դասական» շրջանի (XIV դ.–XV դ–ի 1–ին կես) ոճ. ու պատկերագր. սկզբունքների վերաստեղումը.



Հովսեփ. *Շարակնոցի գլխա- ու լուսանցազարդերով էջ սկզբնագրով (1497, Բեռլինի պետ. գրադարան, ձեռ. № 2068)*

ՀՈՎՍԵՓ ԱՂԹԱՄԱՐՑԻ (ծ. թ. անհտ–1544), մշակույթի գործիչ, բանաստեղծ, գրիչ, ծաղկող, վարդապետ (1533): Աղթամարի մանրանկարչության դպրոցի հիմնադիր, ուսուցիչ: Արգելանի վանքում աշակերտել է Տեր Կարապետ Բերկրեցուն: Ապրել և գործել է Աղթամարի վանքում, նաև Լիմում, որտեղ նկարազարդել ու ընդօրինակել է Ավետարաններ, Տոնացույց, Շարակնոց, Մաշտոց: Հ. Ա–ուց հայտնի են «Երկու մնաս կայ ահագին» (Մատենադարան, ձեռ. № 5837), «Խրատ գրքերը լաւ պահելուն» բանաստեղծությունները և «Գերի Ադամայ որդի» սկսվածքով կաֆան (Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 977, Մատենադարան, ձեռ. № 5622, 6485, 10275):




Հովսեփ Արցախեցու *«Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառ»-ի (1830, Շուշի) 1-ին էջը*

Գրկ. Կոստանեան Կ., *Նոր ժողովածու, հ. 4, Վաղ–պապ, 1903:*

ՀՈՎՍԵՓ ԱՐՑԱԽԵՑԻ (Տեր–Ավագյան, ծ. թ. անհտ, Շուշի–մ. թ. անհտ), XIX դ–ի 1–ին կեսի տրամաբան, բառարանագիր, եկեղեց. գործիչ: Եղել է մանկավարժ, դասավանդել է մայրենի լեզու, աստվածաբանություն, տրամաբանություն: Հայ իրականության մեջ տրամաբանության համադր. ըմբռնման նախակարապետներից է:

Լույս են տեսել Հ. Ա–ու «Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառ» (1830, Շուշի, ա. տպ.) և «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն» (1840, Շուշի, Բաղդասար մետրոպոլիտի տպ.) երկերը:

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ [1726, Համադան (Իրան)–2.8.1809, Կալկաթա (Հնդկաստան)], հայ ազգ–ազատագր. շարժման գործիչ: Հ. Է. բուրժուադեմոկրատ. լուսավոր. գաղափարախոսության առաջին ներկայացուցիչն է հայ իրականության մեջ և մեծապես ազդել է հայ ազատագր. գաղափարաբանության վրա:




Հովսեփ Էմին

1788–ին գրել է «Յովսէփ Էմին հայի կեանքն ու արկածները» (անգլ.՝ 1792, հայ.՝ 1918, Թ., «Աշակի» տպ., թարգմ.՝ Հ. Խաչմանյանի, 1958, Բ.) ինքնակենսագր. երկը, որը հայ ազգ–ազատագր. շարժումների պատմության արժեքավոր աղբյուր է:


Գրկ. Լեո, *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:* Иоаннисян А., *Иосиф Эмин, Е., 1989.*



Բաղիշ Հովսեփյանի
«Ընտիր երկեր»-ի (հ. 2, 1988, Ե., «Սովետական գրող») փիփղոսաթերթը



Գարեգին Հովսեփյան



Գ. Հովսեփյանի
«Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության» (հ. Ա, 1983, Ե., ԳԱ հրտ.) գրքի փիփղոսաթերթը

ՀՈՎՍԵՓ ՊԱՊՆԱՅԻ, V դ-ի թարգմանիչ, հայոց այբուբենի ստեղծման նպատակով *Մեսրոպ Մաշտոցի* հետ Ասորիք մեկնած աշակերտներից: *Հովհան Եկեղեցացու* հետ մասնակցել է Աստվածաշնչի թարգմանությանը: Հետագայում *Եզնիկ Կողբացու* հետ նորից է գնացել Ասորիք՝ թարգմանելու հոգևոր հայրերի երկերից: Հուն-ի մեջ հմտանալու նպատակով նրանք այնտեղից մեկնել են Կ. Պոլիս, որտեղ նրանց միացել են *Ղևոնդ Երեցը* և *Կորյունը*: Հ. Պ. և նրա ընկերները կարգվել են հուն-ի թարգմանիչներ: Թարգմանելու համար նրանք իրենց հետ հայրենիք են բերել Աստվածաշնչի լավագույն օրինակը և Նիկիայի ու Եփեսոսի ժողովների կանոնները:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Բաղիշ Արշակի [18.10.1922, գ. Ներքին Ալուչալու (այժմ՝ գ. Արծվանիստ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)–10.2.2004, Երևան], արձակագիր, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1950): 1944–45-ին՝ «Կոլխոզ ուղի» թերթի պատ. քարտուղար, 1950–58-ին աշխատել է «Գրական թերթի», 1975–80-ին՝ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրություններում:

Լույս են տեսել Հ-ի «Սերմնացանները չվերադարձան» (1962), «Դու հասկացմ՛ ինձ» (1971) վեպերը, «Սևան» (1958) պատմվածքների ժող-ը, «Երբ այս աշխարհը եկա» (1986) վավերագրությունը, «Հուշերը» (2003):

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1987–88:

ՀՈՎՍԵՓՅԱՆ (Հովսեփյանց) Գարեգին Կարապետի, **Գարեգին Ա Հովսեփյան** [17.12.1867, գ. Մաղավուզ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–21.6.1952, Անթիլիաս (Լիբանան)], ձեռագրագետ, մատենագետ, պատմաբան, մշակութաբան, խմբագիր, հրատարակիչ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (1943-ից, օծվել է 1945-ին): Փիլ-յան և աստվածաբանության դ-ր (1897, Լայպցիգ): Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1890), աստվածաբանություն և ինագիտություն սովորել Բեռլինի, Հալլեի, Լայպցիգի համալսարաններում (1892–96): 1900–01-ին՝ Վիրահայոց թեմի առաջնորդ. տեղապահ, 1901–04-ին՝ Երևանի թեմ. տեսուչ, 1905–06 և 1915–17-ին՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1907–08 և 1918–19-ին՝ Մայր աթոռ Սբ Էջմիածնի *«Արարատ»* ամսագրի խմբագիր: Երևանի համալսարանում դասավանդել է հայ արվ-ի պատմություն և ինագիտություն, մասնակցել (Ալեքսանդր *Թամանյանի* հետ) Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի ստեղծմանը (1923): 1925-ից՝ արքեպիսկոպոս, 1927–33-ին՝ Ղրիմի և Նոր Նախիջևանի, 1938–43-ին՝ ԱՄՆ-ի հայոց թեմերի առաջնորդ:

Լույս են տեսել Հ-ի «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից», «Սասմա ծռեր» էպոսի 4 պատում (երկուսն էլ՝ 1892, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Մանրանկարչութեան արուեստը հայոց մէջ» (1902, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան եւ կաթողիկոսական ընտրութիւն» (1909, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Հնութեան նշխարներ» (1909), «Խոտակերաց Ս. Նշան, մի նմուշ ԺԳ դարու հայ ոսկերչութեան» (1912, Թ., Մնացական Սարտիրոսյանի տպ.), «Գրչութեան արուեստը հին հայոց մէջ», «Զագաւանից ժողովը» (երկուսն էլ՝ 1913, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Տարսայիճ Օրբէլեանի եւ Մինա Խաթունի սերունդը» (ռուս.՝ 1913, հայ.՝ 1947), «Թովմա Մեծոփեցու կեանքը» (1914, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) «Ազիզբեկենք եւ նրանց շինարարական գործը» («Բանբեր Հայաստանի գիտ. ինստ-ի», գիրք 1–2, 1921–22), «Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ» (հ. 1–3, 1928–43, 1969, Անթիլիաս, «Թարգմանչաց-Դուրյան» մրց.), «Լուսաւորչի խաչվառը» (1946), «Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից աւետարանչացն»» (1984) աշխատությունները:

Հ-ի ուշագրավ գործերից են «Մխիթար Սասնեցի», «Խոսրովիկ թարգմանիչ» (երկուսն էլ՝ 1899, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Մխիթար Այրիվանեցի», «Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից» (երկուսն էլ՝ 1930), «Նյութեր ու ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» (պր. 1–4, 1935–51, հ. Ա, Բ,

1983, 1987), «Մոմիկ նկարիչ եւ քանդակագործ» (1947), «Հեթում Ա-ի նկարազարդ Աւետարանի մնացորդները» (1949) և այլ ուսումնասիրություններ: Հավաքել և կազմել է մինչև 1250-ը գրված հայկ. ձեռագրերի 459 հիշատակարան («Յիշատակարանք ձեռագրաց», հ. 1, 1951): Հ-ի «Քարտեզ հայ մանրանկարչության» մենագրությունն անտիպ է:

Երկ. Դէպի լոյս եւ կեանք, Անթիլիաս, 1947, 1986, 2002: Ոգուն չապաւինելու արդիւնքը (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին), Գարեգին արք. Յովսէփեանցի յուշագրութիւնը եւ փաստաթղթեր, աշխատասիր.՝ Գ. Յազըճեանի, Ե., 2002:

Գրկ. **Օշական Հ.,** *Արեւելահայ բանասիրութիւնը եւ Էջմիածին. Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Անթիլիաս [1948]:* **Ա.ճառեան Հ.,** *Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իբրև հայ հնագրության մեծ վարպետ, «Էջմիածին», 1952, № 7:* **Սիմոնյան Ս.,** *Գարեգին կաթողիկոսի բանասիրական վաստակը, «Էջմիածին», 1952, № 7:* **Քոլանջյան Ս.,** *Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը, «Էջմիածին», 1962, № 6–8:* **Հարությունյան Ս.,** *Գարեգին Հովսեփյանը որպես բանագետ, «ՊԲՀ», 1968, № 1:* **Ղազարյան Մ.,** *Հայ արվեստի երախտավոր Գարեգին արք. Հովսեփյան, «Էջմիածին», 1979, № 5:*



Ռուբեն Հովսեփյան

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ռուբեն Գեորգիի (ծ. 5.5.1939, Երևան), գրող, խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ երկրբ. ֆակ-ը (1962): 1965–66-ին աշխատել է «Վանգարդ», 1966–69-ին՝ «Գրական թերթ», 1970–74 և 1980–81-ին՝ «Սովետական գրականություն», 1976–79-ին՝ «Եթերում է Երևանը» պարբ-ների խմբագրություններում, 1982–87-ին՝ *«Սովետական գրող»* հրատարակչության, 1989 և 2006–11-ին՝ *«Նորք»* ամսագրի գլխ. խմբագիր: 1988–89-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Հ-ի «Որոնումներ» (1965), «Երկու վիպակ: Ճիչ: Հայոց թաղ» (1970), «Ամենատաք երկիրը» (1977), «Երկար, հրաշալի օր» (1980), «Ճայերը» (1980) պատմվածքների, վիպակների և ակնարկների ժող-ները, «Ծիրանի ծառերի տակ» (2006, ՀՀ նախագահի մրց.՝ 2007) վեպը, գրել է «Հսճան» (1972), «Ամենատաք երկիրը» (1983), «Ապրիլ» (1985), «Խնձորի այգին» (1985), «Կարոտ» (1989) կինոսցենարները, թարգմանել է Գ. Գարսիա Մարկեսի («Հարյուր տարվա մենություն», 1979, «Նահապետի աշունը», 2000), Է. Տոլստոյի («Մանկություն, պատանեկություն», 1984) և ուր. ստեղծագործություններից:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (2006):

ՀՀ ԱԺ (1998–2004) պատգմ.:

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1987: Ես ձեր հիշողությունն եմ (վիպակներ և պատմվածքներ), Ե., 2003:



Ռ. Հովսեփյանի *«Ծիրանի ծառերի տակ» (2006, Ե., «ԱՌՏ») գրքի կազմը*

ՀՈՎՍԵՓՅԱՆ Սուրեն Գրիգորի [11.12.1890, Գանձակ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–20.9.1918, Ախչակումա (Անդրկասպյան ավազուտներ)], լրագրող-խմբագիր: ՌՍԴԲԿ անդամ՝ 1906-ից: Սովորել է ծննդավայրի ռուս. գիմնազիայում, 1909-ին ընդունվել է Մոսկվայի համալսարանը: 1912-ից եղել է «Պրավդա» թերթի մշտ. թղթակիցը, 1913-ից թղթակցել է «Պրոսվեշչենիե» (ռուս.) բոլշևիկյան ամսագրին: 1918-ի ապրիլին նշանակվել է Բաքվի «Կավկազսկայա կրասնայա արմիա» (ռուս.), ավելի ուշ՝ «Իզվեստիա բակինսկոգո սովետա» (ռուս.) թերթերի խմբագիր: Մամուլում Հ. հանդես է եկել ազգ. հարցին, Բաքվի կոմունայի սոցիալ. միջոցառումներին, արվ-ի ու գրակ-յան հարցերին վերաբերող տես. և հրապարակախոս. հոդվածներով:

Գրկ. Բաքվի 26 կոմիսարների հիշատակին: Փաստաթղթեր և նյութեր, Բաքու, 1968:


ՀՈՎՍԻԱՆ, XIII դ-ի 2-րդ կեսի–XIV դ-ի սկզբի մանրանկարիչ և գրիչ: *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Աշակերտել է Աստվածատուր քահանային, ստեղծագործել Առբերանի (Քաջբերունիք) գավառի Բերդակ և Հազարակն գյուղերում (Վանա լճից հս-արլ.): Հ-ի ընդօրինակած և պատկերազարդած ձեռագրերից 3 Ավետարան (1303, ձեռ. № 10670, 1306, ձեռ. № 4806, 1316, ձեռ. № 4818) պահվում է Երևանի, մեկը (1298)՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարաններում:



Հովսիան. *«Աբրահամի զոհաբերությունը», մանրանկար, 1316-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 4818)*

Գրկ. Հայկական մանրանկարչություն: Վասպուրական (ալբոմ, կազմ.՝ Հ. Հակոբյան), Ե., 1978:

«ՀՈՐԻԶՈՆ», գրական հանդես (տարեգիրք): Լույս է տեսել 1894-ին (1 գիրք, 246 էջ) Թիֆլիսում: Հրատարակիչ՝ Փիլիպոս *Վարդազարյան:*



«Հորիզոն»,
1979-ից, Մոնրեալ



«Հռոմկլայ»,
1963–68, Հռոմ



Հրանտ Հրահանի
«Կյանքն ընդդեմ մահվան» (2004, Ե., «Զանգակ») գրքի կազմը

«ՀՈՐԻԶՈՆ», հաս–քաղ., տնտ. և գրական օրաթերթ: ՀՅԴ պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1909–18–ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Բ. Նուրալյան, Ս. Սահակյան, փաստացի խմբագիրներ են եղել *Լեոն* (Առաքել Բաբախանյան), Հովհաննես *Թումանյանը*, Նիկոլ *Աղբալյանը*, Արշակ *Ջամալյանը*, Սիմոն *Վրացյանը*, Միքայել *Վարանդյանը*, Վահան *Նավասարդյանը:* Տպագրել է նյութեր Կովկասի, Ռուսաստանի և այլ վայրերում բնակվող հայության սոցիալ–տնտ. վիճակի, մշակութ. կյանքի վերաբերյալ: Մեծ տեղ է հատկացրել ազգ. խնդիրներին, հատկապես՝ Հայկ. հարցին: 1912–14–ին Հայկ. հարցի վերարծարծման ժամանակ «Հ.» անդրադարձել է մեծ տերությունների դիրքորոշմանը հայկ. բարենորոգումների հարցում, հայ ազգ. շրջանների մասնակցությանը բարենորոգումների ծրագրի մշակմանը, լուսաբանել Կ. Պոլսի դեսպանաժողովի (1913–ի հուլիս) ընթացքը, արժևորել 1914–ի ռուս–թուրք. համաձայնագրի նշանակությունը նև: Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին պաշտպանել է Ռուսաստանի քաղաքականությունը, հայկ. կամավոր. շարժումը, չի ընդունել Հոկտեմբերյան հեղափոխությունը (1917), հանդես է եկել Այսրկովկասում խորհրդ. իշխանության հաստատման դեմ:

1914–15–ին լույս է տեսել «Հ.»–ի նույնանուն գրական–գեղ. պատկերազարդ հավելվածը:

«ՀՈՐԻԶՈՆ», հաս–քաղ., մշակութ. շաբաթաթերթ: ՀՅԴ Կանադայի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1979–ից Մոնրեալում՝ հայ., անգլ. և ֆրանս.: Խմբագիրներ՝ Կիրո Մանոյան, Վահագն *Գարագաշյան* (1997–ից): Անդրադառնում է համահայկ. հարցերին (Հայ դատ, Հայոց ցեղասպանություն, Արցախյան հիմնախնդիր նև), հրատապ ու բազմաբնույթ տեղեկություններ է հաղորդում հայկ. համայնքների մասին՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով ՀՀ–ում և ԼՂՀ–ում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները: Լուսաբանում է կանադահայ համայնքի կյանքը, ունի գրական բաժին, պարբերաբար հրատարակում է նաև մանկապատանեկան, կրթ., երիտասարդ. և այլ «թղթածրարներ», բացառիկ համարներ: 2001–ից լույս է ընծայում պատկերազարդ տարեգիրք: Ձբաղվում է նաև գրահրատարակչ. գործունեությամբ:

Կանադայի «Լավագույն համայնքային թերթ» մրց. (2002):

«ՀՌՈՄԿԼԱՅ», պատկերազարդ պարբերաթերթ: Հռոմի Լևոնյան ժառանգավորաց վարժարանի հրատ.: Լույս է տեսել 1963–68–ին Հռոմում: Խմբագրակազմ: Լուսաբանել է հաստատության առօրյան, տպագրել նախկին աշակերտների հուշեր, Խորհրդ. Հայաստան այցելությունների տպավորություններ: Անդրադարձել է կրոն. հարցերին, կաթոլիկ եկեղեցու ծիսակարգի մեկնությանը:

«ՀՐԱԶԴԱՆ», գրական, հաս. և տնտ. օրաթերթ: Լույս է տեսել 1908–09–ին Երևանում: Խմբագիր-հրատարակիչ՝ Պողոս Կանդուրալյան: Լուսաբանել է քաղաքի տնտ. և սան. վիճակը, գյուղերում դպրոց. գործի դրվածքը, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցները, գինեգործության, բամբակագործության և այլ հարցեր: Տպագրել է նաև լուրեր Իրանի, Թուրքիայի, Կովկասի հայաբնակ վայրերից, անդրադարձել Արմ. Հայաստանի իրավիճակին: Գրական բաժնում զետեղել է պատմվածքներ, բանաստեղծություններ, գրախոսականներ:

ՀՐԱՀԱՆ Հրանտ Ղնազարյան Հրանտ Խաչիկի, 29. 2. 1898, ք. Ադաբազար (Թուրքիայի Սաքարիայի նահանգ)–16.4.1988, Երևան], գրող, թարգմանիչ: Սովորել է Ադաբազարի Ռուբինյան վարժարանում և Ազգ. կեդրոն. լիցեյում: 1946–ին հայրենադարձել է:

Լույս են տեսել Հ–ի «Հերոսի մը նամականին», «Համբուրէ զիս» (երկուսն էլ՝ 1931), «Հրաշագործ միութիւն» (1936), «Խղճի խայթեր» (1937, բոլորը՝ Պլովդիվ), «Արցունք և ժպիտ» (1949), «Բալկանների լանջերում» (1951) պատմվածքների, վիպակների ժող–ները, «Իմ կյանքի վեպը» (հ. 1, 2, 1954, 1958, վերափոխված տարբերակը՝ «Խոսում են անմահները», 1970), «Կյանքն ընդդեմ մահվան» (2004) վեպերը: Բուլղ–ից թարգմանել է Ք. Բոտևի և Ի. Պետրովի ստեղծագործություններից:

«ՀՐԱՀԱՆԳՔ ՇՈՒՐՋ ՋՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ», հրահանգ՝ ընդդեմ հերետիկոսների և հերձվածողների: Առաջին անգամ տպագրվել է 1719-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (10 էջ):

Տպագրվել է նաև 1729-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության (10 էջ, 6º, 19,2 x 13 սմ):

«ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԵԿԱՏԵՐԻՆԱ II ԿԱՅՍՐՈՒՀՈՒ», 1779-ի նոյեմբ. 14-ի հրովարտակը, որով Նոր Նախիջևանի նորահաստատ հայկ. գաղութի բնակչությունը 10 տարով ազատվել է հարկերից, իրավունք ստացել զբաղվելու երկրագործությամբ, հիմնադրելու գործարաններ, ֆաբրիկաներ, վերապահվել է դավանանքի ազատություն, մայրենի լեզվով դատավարության իրավունք ևն, Նոր Նախիջևանն իր 5 հայկ. գյուղերով ստացել է ազգ. սովորութային նորմերի վրա խարսխվող ինքնավարություն:

Հրովարտակը (մագաղաթ, 51 x 60 սմ, արծաթ՝ ոսկեզօծ ձեռագիր) ռուս. և հայ. է, նրան ամրացված է վավերականությունը հաստատող կայսեր. կլոր կնիքը (ոսկեզօծ տուփի մեջ): Պահվում է ՀՊԹ-ում (№ 8478):



«Հրամանագիր Եկատերինա II կայսրուհու» *(1779), հրովարտակ*

ՀՐԱՉ Երվանդ (Յաղուբյան Նշան, 21.7.1885, Խարբերդ–12.9.1968, Բոստոն), հաս. գործիչ, հրապարակախոս, խմբագիր: Վերակազմյալ հնչակյան կուս-յան, 1921-ից՝ ՌԱԿ-ի անդամ: Ավարտել է Բոստոնի համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1912): 1911-ին՝ «Արագած» (Նյու Յորք), 1911–15-ին՝ «Պահակ» (Փրովիդենս), 1919–21-ին՝ «Արօր» (Ֆրեզնո) պարբ-ների խմբագիր-հրատարակիչ, եղել է ***«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ»*** (1920–24), Փարիզի ***«Ապագայ»*** (1920–40, 1946–49), Բոստոնի ***«Պայքար»*** (1942–68) պարբ-ների խմբագիրը:

ՀՐԱՉՅԱՆ (Մեսրոպյան) Խաչիկ Թադևոսի [1.7.1912, գ. Նորաշեն (այժմ՝ ՀՀ Արարատի մարզում)–28.5.1989, Երևան], գրող, թարգմանիչ, խմբագիր: Մշակույթի վաստ. գործիչ (1985): 1946–69-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, 1969–73-ին՝ Հեռուստառադիոպետկոմում:

Լույս են տեսել Հ-ի «Շեփորներ» (1931), «Մկանների լիրիկան» (1931), «Բոլոր գույները» (1985) բանաստեղծությունների ժող-ները, «Ուրցի Մարան» (1961, 2013) վեպը, «Ռոմանտիկները» (1963) վիպակը, «Չորրորդ հարկի պատուհանից» (1965) պատմվածքների, «Երեքից մինչև տասներեքը» (1973) մանկ. չափածո և արձակ գործերի ժող-ները: Թարգմանել է Վ. Մայակովսկու, Ա. Կոնան Դոյլի, Ա. Տվարդովսկու, Կ. Չապեկի, Մ. Տվենի, Բ. Բրեխտի, Կ. Պաուստովսկու, Վ. Թեքերեյի, Վ. Սարոյանի և ուր. ստեղծագործություններից:

Երկ. երկեր, Ե., 2003: Ուրցի Մարան (վեպեր, պատմվածքներ), Ե., 1983: Ներկա բացակա (վիպակներ և պատմվածքներ), Ե., 1987: Վիպակների ժողովածու, Ե., 2010:



Խաչիկ Հրաչյանի *«Ուրցի Մարան» (2013, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

«ՀՐԱՊԱՐԱԿ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 2008-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Արմինե Օհանյան: Տպագրում է քաղ., սոցիալ-տնտ., մշակութ. թեմաներով հոդվածներ, հարցազրույցներ, քաղ. վերլուծություններ, պատմվածքներ, ռեպլիկներ, ակնարկներ: «Ազատ խոսքի հրապարակ» բաժնում հանդես են գալիս ՀՀ քաղաքացիները՝ իրենց մտահոգող խնդիրներով: Ունի մշակութ. էջ:

«ՀՐԱՎԻՐԱԿ», պարբերաթերթ: ՀՕԿ-ի կենտր. վարչության պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1925–26-ին Երևանում: Լուսաբանել է ՀՕԿ-ի նպատակները և կատարած աշխատանքները, ներկայացրել է ԽՍՀՄ հայաշատ վայրերում (Վրաստան, Ադրբեջան, Մոսկվա ևն) կազմակերպության ծավալած գործունեությունը, մեծ տեղ է հատկացրել ՀԽՍՀ-ի ձեռքբերումներին:




«Հրապարակ», *2008-ից, Երևան*

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ (ՀԱԱ), հիմնադրվել է 1998-ին Երևանում: Հիմնադիր-նախագահ՝ Վահան ***Խաչատրյան***, նախագահ՝ Մկրտիչ ***Կարապետյան*** (2010-ից): Անդամակցում են ՀՀ-ում և ԼՂՀ-ում գործող շուրջ 40 հրատարակչություններ, տպագրատներ, Սփյուռքից՝ Համազգայինի հրատարակչությունը (Բեյրութ), անհատ հրատարակիչներ՝ Ֆրանսիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից,



«Հրավիրակ», 1925–26, Երևան (№ 13, 1926)

Հրատարակչական գործ



Վաղարշապատի առաջին տպագրական մեքենան (1771)



Էջմիածնի տպարանի տառատեսակների օրինակներ (1900-ական թթ-ի սկիզբ)

Թուրքիայից: ՀԱԱ-ն մասնակցում է միջազգ. գիտաժողովների, գրքի միջազգ. ցուցահանդեսների, կազմակերպում է սեմինարներ ու միջոցառումներ: Լույս է ընծայում ***«Հայերեն գրքերի տպագրություն և վաճառք»*** եռամսյա հանդեսը, որտեղ ներկայացվում են գրքարդ-յան շուկայի ուսումնասիրության արդյունքները, լավագույն գրքերի տարեկան ցանկերը ևն: ՀԱԱ-ն հրատարակել է մտավոր սեփականությանը, հեղինակային իրավունքին, գրահրատարակչության շուկային և գրքի պատմությանը վերաբերող շուրջ 1 տասնյակ գրքեր:

Հայաստանի հանրային հեռուստատեսության հետ «Բարեկիրթ հասարակություն՝ գրքին և ընթերցանությանը նպաստող օրենքներով» ծրագրի շրջանակներում կազմակերպել է «Գրատուն» ամենամսյա հաղորդաշարը, տեղեկատվություն է տարածել գրքի, ընթերցանության, հրատարակչ. ոլորտի խնդիրների մասին:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾ, մշակույթի և տնտեսության բնագավառ, իրականացնում է գրքերի, գրքույկների և ոչ պարբ. հրատ-ների պատրաստումը, տպագրումը և տպագիր արտադրանքի տարածումը:

Հ. գ. ներառում է գրքի հրատ-յան բոլոր հիմն. գործողությունները՝ հեղինակի ընտրություն, ձեռագրի օգտագործման իրավունքի ձեռքբերում, տեքստի պատրաստում հրատ-յան՝ խմբագրում, գեղ. ձևավորում ու դիզայն, պոլիգրաֆ. կատարում ու իրացում:

Տնտ. տեսակետից Հ. գ. ձեռներեցության տեսակ է, որը հիմնվում է գրքի մարկետինգի վրա և որպես «հումք» օգտագործում է հեղինակի մտավոր գործունեության արգասիքը:

Եթե առաջին տպագրիչները միաժամանակ կատարում էին և՛ հրատարակչի, և՛ տպագրիչի ու գրավաճառի գործառույթներ, ապա մեքենական գրատպության զարգացման ընթացքում (XVIII դ-ի վերջ–XIX դ-ի սկիզբ) Հ. գ-ից բաժանվել են գրքի վաճառքը և ***պոլիգրաֆիան:***

Համաշխ. Հ. գ. սկզբնավորվել է գրատպության գյուտից հարյուրամյակներ առաջ, սակայն Յոհան ***Գուտենբերգի***՝ եվրոպ. գրատպության գյուտով (XV դ.) նոր դարաշրջան է բացվել Հ. գ-ի պատմության մեջ:

Լեհ մատենագետ Բ. Իվինսկու տվյալներով՝ 1600-ին աշխարհում լույս են տեսել 6.078 անուն գիրք և գրքույկ, 1700-ին՝ 13.368, 1800-ին 18.646, 1900-ին՝ 158.888 անուն:

XX–XXI դդ-ի սահմանագծին տարեկան տպագրվել են 15–16 մլրդ գիրք և գրքույկ (1955-ին՝ 269 հզ., 1960-ին՝ 332 հզ., 1970-ին՝ 521 հզ., 1980-ին՝ 715 հզ., 1990-ին՝ 842 հզ., 2000-ին՝ 1250 հզ. անուն): Ընդ որում, հակառակ այն կանխատեսման, թե էլեկտրոնային զանգվածային հաղորդակցության միջոցների (ԶՀՄ) զարգացումը սահմանափակելու է գրահրատարակչության ծավալները, դրանք ոչ միայն ավելացել են ԶՀՄ-ի էլեկտրոնային մեծ հենք ունեցող երկրներում, այլև փոխներթափանցել են միմյանց մեջ, և առաջացել է տեղեկատվ. արտադրանքի սկզբունքային նոր՝ «խառը» տեսակ՝ այսպես կոչված էլեկտրոնային գրքեր, որտեղ զուգակցված են և գրքի, և պրոցեսորների առավելությունները:

Հ. գ-ի զարգացման ժամանակակից միտումները պայմանավորված են ոչ միայն տեխնոլոգ. գործոններով, այլև սոցիալ–տնտ. իրավիճակով, նաև գրաշուկայի աստիճան. մասնատումով՝ ավելի նեղ մասնագիտություններին վերաբերող գրակ-յան փոքր պահանջարկով: Դա իր հերթին, գրքի իրացման ավանդ. եղանակներից բացի, ձևավորում է նոր մարկետինգային մոտեցումներ:

Հայ իրականության մեջ Հ. գ. տևականորեն կատարվել է իր սկզբն. տարբերակով, երբ գործող անձը հիմնականում տպագրիչն էր (***Հակոբ Մեղապարտ, Աբգար Թոխաթեցի, Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցի, Ոսկան Երևանցի, Վանանդեցիներ*** և ուր.), որոնք լավագույն դեպքում ունեցել են օգնականներ ու վաճառական–մեկենասներ (Գասպար Սահրադյան, Խոջա Նահապետ Գուլնազար, Հակոբ Տյուզյան և ուր.):

Հրատարակչական գործ

Բուն Հայաստանում Հ. գ. սկզբնավորվել է 1771-ից՝ ***Էջմիածնի տպարանի*** հիմնադրումով, իսկ արտերկրում զարգացել է հայաշատ վայրերում՝ Վենետիկում, Կ. Պոլսում, Ռուսաստանում, Թիֆլիսում, XIX դ-ի վերջին՝ նաև Երևանում:

1850-ին Թիֆլիսում Համբարձում և Ավետիք Էնֆիաճյան եղբայրները հիմնադրել են տպարան ու բացել գրախանութ, որտեղ վաճառել են աշխարհի տարբեր քաղաքներում լույս տեսած և իրենց տպագրած հայ. գրքեր ու այլ հրատ-ներ: Տպագրած գրքերի քանակով հատկապես արդյունավետ էր 1880-ին Թիֆլիսում հիմնադրված Հայերեն գրքերի հրատ-յան ընկերության (հետագայում՝ Թիֆլիսի հայոց հրատարակչ. ընկերություն, ապա՝ Կովկասի հայոց հրատարակչ. ընկերություն) գործունեությունը:

Այդ նույն ժամանակաշրջանում արգասավոր էին Կ. Պոլսի Գրաշարաց ընկերության, Վ. Զարդարյանի, Պ. Պալենցի, Ա. Աշճյանի հրատարակչ. տները: Այստեղ մի շարք անհատ հրատարակիչներ (Գասպար Գայսերյան, Առաքել Թոզլյան, Միհրան Նագգաշյան և ուր.) հայ. և այլ լեզուներով լույս են ընծայել հարյուրավոր գրքեր ու պարբ-ներ: Տպագրահրատարակչ. նմանօրինակ հաստատություններ գործել են նաև Զմյուռնիայում, Մոսկվայում, Բաքվում և այլուր: Այդ հրատարակչությունների և տպարանատերերի ջանքերով հայկ. տպագրության սկզբնավորումից մինչև Առաջին համաշխ. պատերազմը (1914–18) տարբեր վայրերում տպագրվել են ավելի քան 18 հզ. անուն հայ. գիրք ու գրքույկ, շուրջ 2 հզ. անուն թերթ, ամսագիր, օրացույց և պարբ. այլ հրատ-ներ:

Հ. գ-ի բուն վերելքը Հայաստանում սկսվել է խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո: ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1921-ի հունիսի 10-ի որոշմամբ ստեղծվել է Հայաստանի պետ. հրատարակչությունը ***(Հայպետհրատ)***: Հետագա տարիներին բազմաճյուղ այս հրատարակչությունից անջատվել են մի շարք ճյուղային և մասնագիտացված հրատարակչություններ՝ Կուսհրատ, Գյուղհրատ, Ուսմանկհրատ ևն: 1964-ին հրատարակչությունների վերակառուցումից հետո Հայպետհրատը վերանվանվել է ***«Հայաստան»***, Ուսմանկհրատը՝ ***«Լույս»*** հրատարակչության: 1935-ին ԽՍՀՄ ԳԱ հայկ. բաժանմունքի ստեղծումով ծնունդ է առել ԳԱ հրատարակչությունը (2000-ից՝ ***«Գիտություն»***), որն ընդլայնվել է, երբ 1943-ի վերջերին հիմնադրվել է ՀԽՍՀ ԳԱ-ն: 1976-ին «Հայաստան» հրատարակչությունից անջատվել է ***«Սովետական գրողը»*** (1991-ից՝ ***«Նաիրի»***):

ՀԽՍՀ-ում կային նաև գերատեսչ. և բուհ. մի շարք հրատարակչ. կազմակերպություններ, որոնք տարեկան արտադրել են շուրջ 1100 անուն գիրք ու գրքույկ:

Խորհրդ. Հայաստանում 1920–80 թթ-ին հրատարակվել են շուրջ 44 հզ. անուն գիրք ու գրքույկ՝ 300 մլն տպաքանակով, Սփյուռքում՝ 21 հզ. անուն հայ. գրքեր: Ընդհանուր առմամբ՝ 1512–1980-ին լույս են տեսել 80 հզ. անուն հայ. գրքեր: Տես նաև ***Թիֆլիսի, Բաքվի, Կոստանդնուպոլսի, Ռուսահրատի, Վենետիկի հայկական տպագրություններ*** ևն:

Գրկ. Դրահրատարակչական գործը Սովետական Հայաստանում, Ե., 1975: Խաչատրյան Վ., *Դրահրատարակչական գործը Հայաստանում 2000–2002 թթ., Ե., 2003:*



Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի տպարանի տպագրական մեքենան (XIX դ.)



Մխիթար Սեբաստացու տպարանի կաղապար կլիշեներ



Տպագրական արտադրամաս

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ, հրատ-յան բնագրին ուղեկցող փաստաթուղթ, որտեղ շարադրվել են բնագիրը տպագրելու անհրաժեշտ ցուցումները:

Հ. հ-ման մեջ տրվել են տեխ. ցուցումներ բնագրի շարվածքի եղանակի, տառատեսակի և տառաչափի, հիմն. և լրացուցիչ տեքստերի, նկարների, վերնագրերի, աղյուսակների, բանաձևերի, ինչպես նաև շարվածքի չափի, միջտողային բացատի, պարբերության մեծության և էջկապի առանձնահատկությունների մասին, ինչպես նաև տպագրության եղանակի, թղթի տեսակի, կազմարարաբրոշյուրավորման

գործընթացների՝ քաղի, կարի, գրքի բլոկի մշակման, կազմանյութի և անհրաժեշտ այլ աշխատանքների յուրահատկությունները:

Բնագրի պատրաստման արդի՝ էլեկտրոնային եղանակի պայմաններում Հ. ի. պահպանվել է միայն կազմարարաբրոշյուրավորման մասով, մնացածը կատարվում է հրատարակչություններում:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱԿՆԻՇ, **հրատարակչանշան**, հրատարակչության կամ հրատարակչի՝ որպես ֆիրմային նշան ընտրած գրաֆիկ. պատկեր: Որպես կանոն՝ տեղադրվում է հրատ-յան կազմի ու տիտղոսաթերթի վրա:

Հրատարակչական մակնիշ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, գրքեր, գրքույկներ, լրագրեր, ամսագրեր, պլակատներ, նոտաներ և տպագիր այլ արտադրանք թողարկող ձեռնարկություն: Կատարում են տպագիր արտադրանքի պատրաստման բոլոր գործողությունները՝ հրատարակվող ձեռագրի (բնագրի) ընտրություն, խմբագրում, էջկապ, գեղ. ձևավորում ու դիզայն և տպագրություն:



«Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»

Առանձնահատուկ են հանրագիտարաններ և բառարաններ պատրաստող Հ-ները, որոնց գիտ. և գրական-գեղ. որակի համար հեղինակային կազմի հետ պատասխանատվություն է կրում նաև Հ-յան խմբագրակազմը, իսկ գրքերը տպագրվում են Հ-յան անունից, ինչպես, օր., «Հայկական հանրագիտարան. հրատարակչությունը» ևն:

Ժամանակակից տեղեկատվ. տեխնոլոգիաների կիրառումը հրատարակչ. գործում հնարավորություն է տվել ոչ միայն արագացնելու և բարելավելու տպագր. բնագրի պատրաստումը, այլև նախատպագր. բոլոր գործողությունները կենտրոնացնելու Հ-ում՝ բացառելով սրբագր. տպածոների՝ «տպարան-հրատարակչություն» փոխանակման ավանդ. անհրաժեշտությունը:



«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ժամանակակից Հ-ների մեծ մասը հիմնականում կատարում է միջնորդ ծառայություն հեղինակի և ընթերցողի, ներդրողի ու խմբագրահրատարակչ. և մարկետինգային ծառայությունների միջև:

ՀՀ-ում ներկայում գործում են 100-ից ավելի Հ-ներ՝ ***«Անտարես», «Գիտություն», ԵՊՀ-ի, «Զանգակ», «Էդիթ Պրինտ», «Լույս», «Հակոբ Մեղապարտ», «Հայաստան», «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»*** (առանց տպագր. գործառույթի), *ՀԳՄ-ի, «Մուղնի», «Նաիրի», «Ոսկան Երևանցի», «Սարգիս Խաչենց», «Տիգրան Մեծ», «Փրինթինֆո»* ևն: Տես նաև *Հրատարակչական գործ:*



«Անտարես» հրատարակչություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ, տպագիր հրատ-ների, վավերագր. փաստաթղթերի և տեղեկատվության այլ տեսակների դասակարգումը՝ ըստ նրանց բովանդակության, նշանակության, ուղղվածության, տեսակի, վայրի, տարեթվի և այլ հատկանիշների: Նախատեսված է գրադարանային ֆոնդերի, գրացուցակների, քարտարանների ևնի կազմման ու դրանց օգտագործումը դյուրացնելու համար:

Առավել հաճախ կիրառվում են համընդհանուր տասնորդական (ՀՏԴ), գրադարանամատենագիտ. (ԳՄԴ) և միջազգ. (ISBN ևն) դասակարգումները, որոնց հիմքում դրված է հրատ-ներն ըստ ոլորտների 0–9 (տասը) թվերով բաժանումը. դրանց հաջորդաբար ավելացվող (դարձյալ՝ 0–9 միջակայքում) թվերով առանձնացվում են գիտելիքի ենթաբաժինները՝ դասեր, ենթադասեր, խմբեր, ենթախմբեր ևն՝ աստիճանաբար ավելի նեղացնելով ու որոշակիացնելով հրատ-յան տեսակն ու նշանակությունը:



«Հայաստան» հրատարակչություն

ՀՏԴ-ն մշակել են բելգիացի մատենագետներ Պոլ Օտլեն և Անրի Լաֆոնտենը՝ 1895-ին հիմնադրված Բրյուսելի միջազգ. մատենագիտ. ինստ-ում: Առաջին անգամ հրատարակվել է 1897-ին: Այդ համակարգը ստեղծվել է ամերիկացի մատենագետ Մ. Դյուիի՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի համար 1876-ին կազմած «Տասնորդական համակարգի» հիման վրա:

Աղյուսակներն առաջին անգամ հրատարակվել են 1905-ին՝ ֆրանս., որոնք ներկայում հատուկ կազմավորված ՀՏԴ-ի միջազգ. կոնսորցիումի (միավորում է աղյուսակները տարբեր լեզուներով օգտագործող հրատարակիչներին) մտավոր սեփականությունն են:

ՀՏԴ համակարգերի հիման վրա մշակված աղյուսակները ԽՍՀՄ-ում (նաև ՀԽՍՀ-ում) օգտագործվել են մինչև 1937-ը, որոնք 1938-ին վերամշակել է ռուս գրադարանագետ Է. Տրոպովսկին, 1955-ին և 1960-ին՝ Զաքար *Համբարձումյանը,* և հրատարակել «Գրադարանային դասակարգման աղյուսակներ» վերնագրով: Այնուհետև դրանք լրամշակվել են և 1960–68-ին տպագրվել (30 պրակ) «Գրադարանամատենագիտական դասակարգում» մատենաշարով՝ «Աղյուսակներ գիտական գրադարանների համար» խորագրով, որոնցով ցայսօր առաջնորդվում են նաև ՀՀ գրադարաններն ու ազգ. գրապալատը:

Հրատարակությունների դասակարգման նմուշներ

ՀՏԴ 030:23/28
ԳՄԴ 92+86.37
Ա 935

ISBN 5-89700-016-6

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, (2002)

2009-ի նոյեմբ-ին ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտ. գրադարանը պայմանագիր է կնքել ՀՏԴ կոնսորցիումի հետ՝ ՀՏԴ-ի որոշ բաժիններ հայ. թարգմանելու, նրա հայալեզու համառոտ տարբերակը հրատարակելու և օգտագործելու համար:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՀԱՄԱՐՆԵՐ, հրատ-ների մեքենայաընթեռնելի նույնականացուցիչներ՝ նրանց մատենագիտ. տվյալների, գրադարանային համակարգման, հաշվառման, վիճակագրության, տպագրման և վաճառքի վերաբերյալ տեղեկություններով: Այդ համակարգի միջոցով է իրականացվում նաև ***հեղինակային իրավունքի*** վերահսկողությունը:

ՀՀ-ում կիրառվում են հրատ-ների հետևյալ միջազգ. չափորոշիչ համարները.

Գրքի միջազգային չափորոշիչ համար (ISBN). մշակել է Գորդոն Ֆաստերը 1966-ին Անգլիայում՝ 9-անիշ թվային համարի հենքի վրա, որը 1970-ին փոքր փոփոխություններով ընդունել է Չափորոշման միջազգ. կազմակերպությունը (ISO)՝ որպես ISO 2108 չափորոշիչ: 2007-ի հունվարի 1-ից՝ներմուծվել է 13-նիշանի թվային համար, սկզբից ավելացվել է եռանիշ կայուն «978» տարբերակիչ թիվը՝ նշելու համար հրատ-յան գիրք լինելը, վերջից՝ հսկիչ թիվը:

ՀՏԴ 030
ԳՄԴ 92
Հ 247

ISBN 978-5-89700-040-1

«Հայաստան» հանրագիտարան (2012)

Այս համակարգին (գործում է շուրջ 170 երկրում) Հայաստանն անդամակցում է 1980-ական թթ-ի վերջերից՝ որպես միութ. հանրապետություն, իսկ 1998-ից՝ որպես անկախ պետություն: Համակարգում ներկայում գրանցված է ավելի քան 300 հրատարակչություն: Նրա ծառայություններից օգտվում և ISBN համարներ են ստանում նաև հարյուրավոր ֆիզ. անձինք՝ իրենց սեփական ստեղծագործությունների համար՝ իբրև հրատարակիչներ, ինչպես նաև հրատարակչ. գործունեություն իրականացնող ոչ հրատարակիչ տարբեր կազմակերպություններ:

ISBN-ի կառուցվածքը

ISBN 978–5–89700–040–1
978 – թվական նախդիր
5 – երկրի լեզվական խմբի (այստեղ՝ ռուսալեզու, Հայաստանը՝ որպես նախկին ԽՍՀՄ հանրապետություն) թիվը
89700 – «Հայկական հանրագիտարան. հրատարակության» գրանցահամարը
040 – հերթական հրատարակության համարը
1 – հսկիչ թիվը

Երաժշտական (նոտային) **հրատարակության միջազգային չափորոշիչ համար** (ISMN). ընդունվել է 1990-ական թթ-ի սկզբից, հաստատվել է որպես ISO 10957 չափորոշիչ: Ներկայում այդ համակարգին անդամակցում են 60 երկիր և տարածաշրջան: ISMN-ը նախապես ներառել է «M» տառը, որն այն տարբերակում էր ISBN-ից և 9 նիշից բաղկացած հրատարակչի, հրատ-յան լեզվի և հսկիչ թվանշանային տարրերից: 2008-ից ISMN-ը նույնպես 13-նիշանի համար է, որտեղ «M»-ը փոխարինվել է «0»-ով և ավելացվել «979» տարբերակիչ նախդիրը:


ՀՀ-ն 2002-ից ISMN միջազգ. գործակալության անդամ է, իսկ համակարգում գրանցված է հանրապետության 11 հրատարակչություն: Ծառայություններից օգտվում և ISMN համարներ են ստանում նաև տասնյակ ֆիզ. անձինք, նոտաներ տպագրող ոչ հրատարակիչ կազմակերպություններ:

Պարբերականների միջազգային չափորոշիչ համար (ISSN). մշակվել է 1977-ին Փարիզում՝ որպես ISO 3297 չափորոշիչ: Ներդրվել

է 1980-ական թթ-ի վերջերից. Հայաստանում լույս տեսնող շուրջ 200 պարբ-ներ և շարունակ. հրատ-ներ ստացել են ISSN համարանիշ-ներ: ՀՀ Ա.Ժ 2002-ի փետր. 20-ի որոշմամբ՝ ՀՀ-ն միացել է Պարբ. հրատ-ների գրանցման միջազգ. կենտրոնի կանոնադրությանը: 2004-ի հունվ. 21-ին Պարբ-ների միջազգ. չափորոշիչ համարակալ-ման փարիզյան կենտրոնի և ***Հայաստանի ազգային գրապալատի*** կնքած համաձայնագրի հիման վրա գրապալատում ստեղծվել է ISSN ազգ. կենտրոն:

Այժմ ՀՀ ազգ. համակարգում գրանցված է շուրջ 586 անուն պարբ.:

«ՀՐՈՎԱՐՏԱԿ ԵԿԱՏԵՐԻՆԱ II ԿԱՅՍՐՈՒՀԻ», պարսիկների դեմ պատերազմի մասին հրամանագիրը: Տպագրվել է 1796-ին Աստրախանում՝ Հ. Արղությանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Манифесть ея императорского величества великия государыни Екатерины вторыя...» (18 էջ, 4º, 25 x 18 սմ): Տիտղթ-ը և բնագիրը՝ հայ. և ռուս.:



«Հրովարտակ Եկատերինա II կայսրուհու» *(1796, Աստրախան) հրամանագրի փիփղոսաթերթը*

ՀՈՒՆԱՆՅԱՆ Արտաշես Արմենակի [15.9.1922, գ. Ծաղկաշեն (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–19.10.1994, Գլենդել (ԱՄՆ)], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՄԻ (1956): 1960–82-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում: Ստեղծագործել է գեղանկարչության, հաստոցային և գրքի գրաֆիկայի բնագավառներում:

Ստեղծել է Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն» (1961), Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» (1962) գրաֆիկ. շարքերը, նկարազարդել է Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» (հայ., անգլ., ֆրանս., 1975) գիրքը:

Լույս է տեսել Հ-ի «Պահպանակ» (1994) բանաստեղծությունների ժող-ը:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Աթենքում 1890-ական թթ-ի վերջերից գործել է «Հայկական ազատ» տպարանը, որտեղ տպագրվել են Ա. Նազարբեկի (Լեռենց) «Փախստականը» (1891), «Աւազակը» (1892), «Մարտում» (1893) պոեմները, Ակնյանցի «Հայերն Ամերիկայում» (1893), Լ. Ֆերդինանդի «Սահմանադրութեան էութեան մասին» (1893), «Բռնութեան դէմ, Գաղատիայի դատավարութիւնը» (1894) և այլ երկեր: «Միություն» տպարանում լույս է ընծայվել «Նուագներ» (1898) չափածո ժող-ը:



Արտաշես Հունանյան. *Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» (1975, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

Հունաստանում առաջին հայ. պարբ-ը՝ «Ասպարէզը», լույս է տեսել 1890-ին Աթենքում: Ցայսօր Հ-ում հրատարակվել են շուրջ 67 անուն հայ. օրաթերթեր և ամսագրեր, որոնց զգալի մասը կարճատև կյանք է ունեցել: Կարևոր պարբ-ներից են ՀՅԴ-ի ***«Դրօշակ»*** (1891 և 1969–85-ին՝ Աթենքում) պաշտոնաթերթը, ռամկավարների ***«Նոր ալիք»*** (1924–28), ***«Արեւելք»*** (1930–36, երկուսն էլ՝ Սալոնիկ), «Արամազդ» (1934–36), ***«Երկիր»*** (1957–68), հնչակյանների ***«Հնչակ»*** (1891–94), «Երկունք» (1922–23, չորսն էլ՝ Աթենք), կոմունիստների ***«Աշխատանք»*** (1926–27, Սալոնիկ), ***«Ժողովուրդի ձայն»*** (1930–31), ***«Նոր շարժում»*** (1931–34, երկուսն էլ՝ Աթենք) թերթերը, ինչպես նաև գրական և մշակութ. «Արեւագալ» (1937–39), «Հայ գիր» (1946) պարբերաթերթերը, մարզ. ***«Նոր սերունդ»*** (1926–29), բժշկաառողջապահ. և գրական ***«Օլիմպոս»*** (1926–28, բոլորը՝ Աթենք) հանդեսները նն:

Ներկայում լույս են տեսնում ՌԱԿ-ի շրջ. վարչության պաշտոն. ***«Նոր աշխարհ»*** (1968-ից, Աթենք) շաբաթաթերթը, ՀՅԴ պատասխանատու մարմնի պաշտոն. ***«Ազատ օր»*** (1945-ից, Աթենք) օրաթերթը՝ «Արմենիկա խրոնիկա» հուն. հավելվածով, կրոն. ***«Շողակաթ»*** (1990-ից) և ուսանող. ***«Երիտասարդական կանչ»*** (1995-ից, երկուսն էլ՝ Կոմոտինի) պարբերաթերթերը, ***«Հայաստան»*** (2001-ից, Աթենք) ամսաթերթը, ***«Էլլինո Արմենիկա»*** (1991-ից, Աթենք, հուն.) եռամսյա հանդեսը նն:

Գրկ. **Ալպոյաճեան Ա.**, *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1–3, Կահիրէ, 1941–61:* **Աբրահամյան Ա.**, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, 2, Ե., 1964, 1967:* **Կոկինոս Պ.**, *Հունահայ գաղութի պատմությունից (1918–1927), Ե., 1965: Հայ մամուլը Յունաստանի մէջ [Աթենք], 2009:*

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Հունգարիայում հրատարակված հայկ. առաջին պարբ–ը Տրանսիլվանիայի Գեղա քաղաքում լույս տեսած *«Արմենիա»* (հունգ., 1887–1907, 1912–13) հայագիտ. հանդեսն է, որին հաջորդել է «Մասիս» միության «Նոր դար» (1919, Բուդապեշտ) ամսաթերթը: 1995–ից Բուդապեշտում տպագրվում է Հայ ազգ. փոքրամասնության ինքնավարության ազգ., պատմ., գրական, մշակութ. *«Արարատ»* (հայ., հունգ.) պաշտոնաթերթը:

Գրկ. **Ալթունեան Ա.,** *Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, որք ի Մօլդօ-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, Ֆոքշան, 1877:* **Գովրիկեան Գ.,** *Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանոյ: Սյս գաղթականութեան պատմութիւնը՝ սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, հ. 1–3, Վնն., 1893–1904:* **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1–3, Կահիրե, 1941–61:* **Գևորգյան–Բագի Է.,** *Հայ–հունգարական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը, Ե., 1979:* **Սիմոնեան Ա.,** *Հունգարահայ մամուլը 19–րդ դարի վերջին եւ 20–րդ դարի սկզբին, Բուդապեշտ, 1996:*

«ՀՈՒՇԱՐԱՐ», տես *«Յուշարար»:*

«ՀՈՒՇԱՐԱՐ–ՄԻՈՒԹԻՒՆ», տես *«Յուշարար–Միութիւն»:*

«ՀՈՒՇԱՐՁԱՆ», պատկերազարդ տարեգիրք: ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութ. ժառանգության ԳՀ կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1987–ից (1994–2004–ին ընդհատվել է) Երևանում: Խմբագիրներ՝ Պարույր ***Մուրադյան***, Հակոբ Սիմոնյան (2005–ից): Տպագրում է գիտ. հոդվածներ, հաղորդումներ և վավերագրեր՝ հայկ. պատմ., ճարտ., ինագիտ., վիմագր., մեմորիալ և մոնումենտալ արվ–ի՝ քարե դարից մինչև նորագույն ժամանակաշրջանի հուշարձանների վերաբերյալ մատենագիտ. աշխատություններ, գրախոսություններ, լուսաբանում է պատմամշակութ. անշարժ հուշարձանների հաշվառման, վավերագրման, պահպանության, ամրակայման, վերականգման և օգտագործման խնդիրները, ներկայացնում է բնագավառի անվանի մարդկանց (հայ և օտարազգի): Նյութերը հայ. ռուս., անգլ. են (ամփոփումներով):



«Հուշարձան», *1987–ից, Երևան (2010)*

«ՀՈՒՍԱԲԵՐ», տես *«Յուսաբեր»:*

«ՀՈՒՐ», գրական, գիտ. և հաս. ամսագիր: Լույս է տեսել 1971–76–ին Թեհրանում՝ հայ. և պարսկ.: Խմբագիր՝ Գագիկ Հովակիմյան: Տպագրել է հոդվածներ հայ և պարսիկ ժողովուրդների պատմ. կապերի ու փոխհարաբերությունների վերաբերյալ բանասիր. գործեր, նաև գիտ., մատենագիտ., մանկավարժ. ուսումնասիրություններ, ճանապարհորդ. նոթեր: Ներկայացրել է իրանահայ մշակութ. կյանքը, իրանցի ընթերցողին ծանոթացրել դաս. և ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններին:



«Հուր», *1971–76, Թեհրան (№ 1, 1971)*

«ՀՕԿ», ամսագիր: Հայաստանի օգնության արտասահմ. կոմիտեների պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1933–35–ին Փարիզում՝ ՀՕԿ–ի Ֆրանսիայի կենտր. վարչության նախաձեռնությամբ: Խմբագրակազմ՝ Գուրգեն Թահմազյան, Դավիթ Դավիթյան և ուր.: Եղել է կապող օղակ ՀՕԿ–ի արտասահմ. կազմակերպությունների և հայրենիքի միջև, համաձայնեցրել է նրանց գործունեությունը: Լուսաբանել է Խորհրդ. Հայաստանի առօրյան, նրա տնտ. և մշակութ. ձեռքբերումները: Մեծ տեղ է հատկացրել Սփյուռքում, հատկապես՝ ֆրանսահայ գաղութում տեղի ունեցող իրադարձություններին, արտահայտել է հայ աշխատավորների հայրենասիր. ձգտումները, աջակցել հայրենադարձությանը, հայրենակց. և վերաշինաց միությունների գործունեությանը: Գրական–գեղ. և արվ–ի բաժիններում տպագրել է հայ և օտար հեղինակների չափածո և արձակ գործեր, գրաքննադատ. ակնարկներ ու հոդվածներ, նյութեր թատրոնի, երաժշտության, կերպարվ–ի մասին: Աշխատակցել են Ա. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Չոպանյանը, Զ. Եսայանը, Դ. Սիմոնյանը, Գ. Սարյանը, Վ. Նովենցը, Վ. Ալազանը, Վ. Թոթովենցը, Գ. Մահարին, Ռ. Թերլեմեզյանը և ուր.:



«ՀՕԿ», *1933–35, Փարիզ*

Ձ



Ձ, հայ. այբուբենի 17–րդ տառը, անվանումը՝ «ձա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար և դրանից ձախ՝ հավասար հեռավորությամբ վերևից լայն և ներքևից կարճ տարրերից. լայնն ու երկարը միանում են վերին ծայրերից, իսկ կարճը երկարի ստորին ծայրին միանում է վերին ծայրով, թեքվում աջ և վերին ծայրում կրկնում է կոր նուրբը: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ձ, որպես այբուբենի տասնավորների սյան 8–րդ (17–րդ) տառ, նշանակել է ութսուն և ութսուներորդ, բյուրի նշանով (Ձ͂)՝ 80 բյուր (800 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ձ–մաս 80–րդ):

«ՁԱՅՆ», քաղ., հաս. և տնտ. շաբաթաթերթ: Սոցիալ–դեմոկրատ. բանվոր. հայ կազմակերպության (սպեցիֆիկներ) պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1906–07–ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Տիգրան Իսախանյան: Քարոզել է բանվոր դասակարգի տարանջատում՝ ըստ ազգ. պատկանելության, յուրովի ներկայացրել է Այսրկովկասի մշակութ. կյանքը, աշխատավորության կենցաղը, ծանոթացրել կրթ. գործին: Տպագրել է նաև գեղ. ստեղծագործություններ, թարգմանություններ:

«Ձ.»–ին նախորդել է «Կեանք» (1906, Թիֆլիս) շաբաթաթերթը:



«Ձայն համշենական», *2004–ից, Երևան*

«ՁԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ», ամսաթերթ: «Համշեն» հայրենակց–բարեգործ. ՀԿ–ի հրատ.: Լույս է տեսնում 2004–ից Երևանում: Հիմնադիր–խմբագիր՝ Սերգեյ *Վարդանյան*: Տպագրում է համշենահայության (քրիստոնյա և մահմեդ.) պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառին վերաբերող հայ և օտարազգի գիտնականների հոդվածներ, անդրադառնում Աբխազիայի, Ռուսաստանի, Թուրքիայի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի համշենահայության պատմությանն ու հիմնախնդիրներին, հրատարակում համշենահայերից (նաև մահմեդականացված) գրառած բանագիտ. նյութեր: Լույս է ընծայում հայ և օտարազգի հեղինակների չափածո ու արձակ ստեղծագործություններ:

«ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ», ազգ., գրական, քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1897–1908–ին ԱՄՆ–ում (Նյու Յորք, Ուստր, Բոստոն), 1908–11–ին՝ Կ. Պոլսում (1897–99–ին՝ «Տիգրիս»): Ամերիկայի հայ հրատարակչ. ընկերության (1899–1900), Վերակազմյալ հնչակյան կուս–յան Ամերիկայի շրջանակի (1900–02, 1903–08), Հնչակյան կուս–


յան Ամերիկայի նահանգային վարչության (1902–03), Վերակազմյալ հնչական կուս-յան Կ. Պոլսի վարչության (1908–11) պաշտոնաթերթ: Խմբագիրներ՝ Հայկակ ***Էկինյան***, Թովմաս Չարշաֆճյան, Վարդ Շահենի (Հովհաննես ***Հակոբյան***), Գարեգին Չիթճյան, Արսեն Տիրան, Սարգիս Սաղեմեզյան, Սուրեն ***Պարթևյան***, Միսաք Սուրյան, Լևոն ***Լարենց*** (Քիրիշճյան): Կարևորել է հայ քաղ. հոսանքների համագործակցությունը, դատապարտել Թուրքիայի հայահալած քաղաքականությունը, լուսաբանել է արևմտահայության կացությունը օսմ. «սահմանադրության» վերահռչակումից հետո, անդրադարձել կովկասահայության կյանքին: Տպագրել է նաև գրական ստեղծագործություններ: Աշխատակցել են Վ. Թեքեյանը, Զ. Եսայանը, Սիպիլը, Թլկատինցին, Ռ. Սևակը և ուր.:



«Ձայն հայրենեաց», 1897–1911, ԱՄՆ, Կ. Պոլիս

ՁԵՌԱԳԻՐ, լայն իմաստով՝ ցանկացած հեղինակային բնագիր, այսինքն՝ ստեղծագործության օրինակ (նաև մեքենագիր, համակարգչային կամ այլ կրիչի վրա հավաքած), որը հեղինակը հանձնում է հրատարակչություն՝ տպագրության: Ձ-եր են նաև ***ձեռագիր մասյանները:***

Տեքստաբանության մեջ՝ ձեռքով գրված տեքստը (երբեմն՝ սևագիրը), որը, ի տարբերություն պատճենների, ունի ստեղծագործության հավաստիության վավերացման (կանոնական տեքստի հաստատման) առաջնահերթ նշանակություն: Առանձնահատուկ կարևորություն ունեն հայտնի գրողների, գիտնականների, բանաստեղծների ձեռքով գրված (ինքնագիր) տեքստերը, նրանց ընծայագրերով գրքերը կամ բացիկները, որոնք պահվում են թանգարաններում, պահոցներում և այլուր:




Ոսկան Երևանցու **ձեռագիրը**

ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆ, **ձեռագիր**, գրական, գիտ. աշխատություն՝ մատյան՝ գրված ***մագաղաթի, թղթի*** ևնի վրա, որը, որպես կանոն, ամփոփվել է տարբեր նյութերից պատրաստված կազմերում կամ զետեղվել հատուկ տուփերում:

Պահպանվել են բազմաթիվ Ձ. մ-ներ, որոնք պատմության ուսումնասիրման կարևոր աղբյուր են և արտացոլում են հայ գեղ. գրակ-յան, գիտ-յան, մանրանկարչության ականառու ձեռքբերումները:

Հայ. Ձ. մ-ներ գրել և ընդօրինակել են V–XVIII դդ-ում, մեծ մասամբ՝ ***գրչության կենտրոններում***, պահել են ***ձեռագրատներում***: Ձեռագրերից շատերն ունեն ***հիշատակարան***, որտեղ նշված են Ձ. մ-ի գրության վայրը, ժամանակը, տեղեկություններ՝ գրիչի, ծաղկողի, պատվիրատուի ևնի մասին: Հնագույն շատ Ձ. մ-ներ մեզ են հասել քայքայված կամ առանց հիշատակարանի: Նման դեպքերում գրության ժամանակը որոշելու լավագույն միջոցը գրատեսակն է: Հայ. Ձ. մ-ների ամենահին գրատեսակը մեսրոպյան ***երկաթագիրն*** է՝ իր տարատեսակներով: Տարբեր ժամանակներում տարածված են եղել նաև ***գրչագիրը, բոլորգիրը, նոտրգիրը, շղագիրը:***



Հովհաննես Թումանյանի **ձեռագիրը**

Հանդիպում են նաև կրկնագիր Ձ. մ-ներ, երբ մագաղաթ չլինելու պատճառով էջերից քերել-ջնջել են նախկին բնագիրը և ընդօրինակել նորը: Կրկնագրերն այժմ հեշտությամբ վերծանում են՝ երբեմն ի հայտ բերելով նախորդ դարերի նշանավոր երկեր (այսպես է Վատիկանի գրադարանում հայտնաբերվել հռոմեացի հռետոր Ցիցերոնի «Հանրապետություն» աշխատությունը, որի ջնջված բնագրի վրա ընդօրինակվել էր Ս. Օգոստինոսի ատենախոսություններից մեկը):

Մեզ հասած հայ. ամենահին ամբողջ. Ձ. մ. VII դ-ի ***«Վեհամոր Աւետարանն»*** է, իսկ թվագրվածը՝ ***«Լազարեան Աւետարանը»*** (887): Ներկայում աշխարհում հաշվվում է ավելի քան 35 հզ. հայ. ձեռագիր (ամբողջ. և պատառիկ). Մատենադարանում պահվում են 20 280-ը (11233-ը հայ. հիմն. Ձ. մ-ներ են, 420-ը՝ հայ. նոր, 2143-ը՝ հայ. պատառիկ, 530-ը՝ հայ. հմայիլ, շուրջ 6000-ը՝ այլալեզու), Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքի մատենադարանում՝ 3800-ը, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մատենադարաններում՝ 6000-ը, Զմմառի



«Պատերազմի Աւետրանի» արծաթե քանդակազարդ կազմը (1302, ծաղկող՝ Սոմիկ, Մատենադարան, ձեռ. № 6792)


մատենադարանում՝ ավելի քան 2000-ը, Էջմիածնի ձեռագրատանը՝ 1300-ը, Նոր Ջուղայի մատենադարանում՝ 700-ից ավելի:

Հայ. Ձ. մ-ներ կան նաև Լոնդոնի Բրիտ. թանգարանում, Փարիզի Ազգ. գրադարանում, Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում, Կ. Պոլսի Ազգ. պատրիարքարանում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մատենադարանում, ՌԴ ԳԱ արևելագիտ-յան ինստ-ի Ս. Պետերբուրգի բաժանմունքում և Սալտիկով-Շչեդրինի անվ. հանրային գրադարանում, Վրաստանի ԳԱ հին ձեռագրերի ինստ-ում, Բեռլինում, Նյու Յորքում, Վաշինգտոնում, նաև անհատ. հավաքածուներում:

Հսկայական է նաև կորած կամ ոչնչացված հայ. Ձ. մ-ների քանակը: XIII դ-ի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ միայն Սյունյաց Բաղաբերդ ամրոցում 1170-ին սելջուկներն ավարառել են շուրջ 10 հզ. Ձ. մ.: Հիշատակություններ կան, որ մեծ քանակությամբ Ձ. մ-ներ Միջին Ասիա է տարել Լենկթեմուրը: Քիչ չեն նաև կորուստները թշնամու հարձակումների (միայն Գոշավանքում հրի է մատնվել ավելի քան 1000 ձեռագիր), անտերնչության, անցյալում պետ. հսկողության ու հոգածության բացակայության պատճառով: Բազմաթիվ Ձ. մ-ներ են ոչնչացել Առաջին համաշխ. պատերազմի (1914–18), հատկապես՝ Մեծ եղեռնի ժամանակ: Այսուհանդերձ, այժմ հայ. Ձ. մ-ների հավաքածուների ամբողջությունն ամենահարուստներից է աշխարհում: Տես նաև ***Գրչության արվեստ, Կազմարարություն, Մատենագրություն, Մատենադարան, Պահպանակ, Ձեռագրացուցակ:***

Գրկ. Յովսէփեան Գ., *Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, Վաղ-պապ, 1913:* Աբրահամյան Ա., *Հայոց գիր և գրչություն, Ե., 1973:*

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ, սրահ կամ սենյակ, որտեղ պահվում են հին և միջնադարյան ձեռագիր մատյաններ: Ձ-եր կան աշխարհի մի շարք խոշոր գրադարաններում, վանքերում, ուս. հաստատություններում, առանձին անհատների հավաքածուներում ևն: Երբեմն Ձ. լինում է ԳՀ հատուկ հիմնարկի գլխ. մասը, ինչպես, օր.՝ Մատենադարանում: Հին և միջնադարյան Հայաստանի գրադարանները միաժամանակ Ձ-եր էին: Կային նաև ժայռափոր Ձ-եր: XV–XVI դդ-ից գրադարաններում ձեռագիր մատյանների հետ պահվում են նաև տպագիր գրքեր: Ավելի ուշ խոշոր գրադարաններում ձեռագրերն առանձնացվել են և պահվել են Ձ-երում: Տես նաև ***Մատենադարան:***



1678-ի Ավետարանի պատկերազարդ էջ (գրիչ՝ Հերապետ, Նոր Ջուղա, Բեռլինի պետ. գրադարան)

ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿ, *ցուցակ ձեռագրաց*, մատենադարաններում, գրադարաններում, գիտաուս. հաստատություններում, վանքերում ու եկեղեցիներում պահվող, երբեմն նաև անհատներին պատկանող հնագույն ձեռագիր (գրչագիր) գրքերի մատենագիտ. ցանկ: Ձ-ներում կամ սոսկ թվարկվում են ձեռագրերի վերնագրերը, կամ մանրամասն տեղեկություններ են տրվում նրանցից յուրաքանչյուրի հեղինակի, վերնագրի, գրության ժամանակի, վայրի, ընդօրինակողի, ծաղկող-նկարազարդողի, բովանդակության, հիշատակարանի, գրանյութի (թուղթ, մագաղաթ), գրերի տեսակների, էջերի քանակի, վիճակի ևնի մասին:

Գրի և գրչության սկզբնավորումից ի վեր՝ տարբեր լեզուներով Ձ-ներ են կազմվել, սակայն դրանց կազմումը նոր իմաստ ու բովանդակություն է ձեռք բերել տպագրության գյուտից հետո, երբ ձեռագրերը դիտվել են որպես պատմ. ժառանգություն, անցյալի մտավոր կյանքի հուշարձան, և դրանք տպագիր գրքերից առանձին ներկայացնելու անհրաժեշտություն է առաջացել:

Հայկ. Ձ-ներ կազմել են V–VI դդ-ից: Սկզբում դրանք եկեղեցու համար ընդունելի և մերժելի գրքերի կամ որևէ նյութի նվիրված ոչ մեծ ցանկեր էին («Թիւք արտաքին գրոց», «Թիւք ներքին գրոց», «Յուցակ պատմագրաց հայոց» ևն): Առավել ծավալուն Ձ-ներ կազմել են հետագայում, որոնցից են XI–XII դդ-ի մատենագիր, փիլիսոփա

Հովհաննես Սարկավագի «Կարգադրութիւնք գրոց սրբոց», XIII դ–ի գործիչ Գրիգոր Որդի Աբասայի «Գիրք պատճառաց», Սաղմոսավանքի՝ XV դ–ի անհայտ հեղինակի կազմած, XVII դ–ի մատենագետ Վարդան Բաղիշեցու՝ Ամրդոլու վանքի («Յուցակ ձեռագրաց Սաշտոցի անվան մատենադարանի», ձեռ. № 737, ընդգրկում է նաև փոքր թվով տպագիր գրքեր) Ձ–ները:

XVIII դ–ի սկզբին Եվրոպայում, ապա նաև Ռուսաստանում արևելագիտ–յան զարգացման շնորհիվ հայագիտությունը դարձել է համաշխ. մշակույթի բաղկացուցիչ մաս. Ձ–ներ են կազմել նաև եվրոպացի հայագետները: 1739–ին Փարիզում Բեռնարդո դը Մոնֆոնին եվրոպ. լեզուներով հրատարակել է ընդարձակ Ձ.՝ ընդգրկելով նաև հայագետ Գուլիելմոս Վիլֆրուայի կազմած՝ Փարիզի Կայսեր. գրադարանի Ձ., որը նույն թվականին լույս է տեսել նաև առանձին գրքով:

1840–ին Ռուսաստանի ԳԱ անդամ Մ. Բրոսսեն Ս. Պետերբուրգում ռուս. և ֆրանս. հրատարակել է Հ. Շահխաթունյանցի՝ Էջմիածնի գրադարանի տպագիր ու ձեռագիր գրքերի ցանկը: Հայ նոր բանասիրության մեջ իր ժամանակի չափանիշներով առաջին լիակատար Ձ. կազմել է Էջմիածնի միաբան Դ. Շահնազարյանցը. 1863–ին Թիֆլիսում Հ. Կարենյանը հրատարակել է այն՝ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Ս. Աթոռոյն Էջմիածնի» վերնագրով: 1891–ին Վիեննայի Մխիթարյանները որոշել են աշխարհի հայագետ–բանասերների աջակցությամբ հրատարակել հայկ. բոլոր ձեռագիր հավաքածուների ցուցակները: Լույս են տեսել Մյունխենի [«Յուցակ հայերէն ձեռագրաց Արքունի մատենադարանին ի Միւնխէն» (կազմ.՝ Գ. Գալեմքյարյան, 1892, Վնն., Մխիթարյան տպ.)], Վիեննայի [«Յուցակ հայերէն ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա» (կազմ.՝ Հ. Տաշյան, 1891, նույն տպ.)], Թուրքիայի [«Յուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա» (կազմ.՝ Տ. Պալյան, ԿՊ, 1892, Գարեգին Պաղտատլյանի տպ.)], Ս. Պետերբուրգի և այլ վայրերի հայկ. Ձ–ները: Ցայսօր չգերազանցված է Հ. Տաշյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895, Վնն., Մխիթարյան տպ.) Ձ.:

Գոյություն ունեցող շուրջ 200 հայ. Ձ–ներից գիտ. արժեքով, ընդգրկած ձեռագրերի քանակով, նկարագրությունների հարստությամբ լավագույններից են՝ Ֆ. Մակլերի «Փարիզի Ազգային գրադարանի հայերեն և վրացերեն ձեռագրերի ցուցակ» (ֆրանս., 1908), Ֆ. Կոնիբերի «Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերի ցուցակ» (անգլ., 1913), Ս. Պարոնյանի և Ֆ. Կոնիբերի «Բոդլեյան գրադարանի հայկական ձեռագրերի գրացուցակ» (հայ., անգլ., 1918), Բ. Սարգիսյանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց միաբանութեան ի Վենետիկ» (հ. 1–3, 1914–66), Ն. Պողարյանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» (հ. 1–10, 1966–90), Բ. Կյուլեսերյանի «Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից» (1957, Անթիլիաս) ևն:

XX դարի 60–ական թթ–ին Մատենադարանը պատրաստել է համառոտ Ձ., որի առաջին հատորը լույս է տեսել 1965–ին, երկրորդը՝ 1970–ին, երրորդը՝ 2007–ին (կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան և Փ. Անթաբյան, խմբագիրներ՝ Լ. Խաչիկյան և Ա. Մնացականյան): Այդ եռահատորում տրվել է մոտ 18 հզ. ձեռագրի համառոտ նկարագրությունը:

1984–ից Մատենադարանը ձեռնամուխ է եղել «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սաշտոցի անուան մատենադարանի» բազմահատորյակի ստեղծմանը (տպագրվել են Ա–Ը հատորները, 1984–2014):

Լույս են տեսել նաև «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի» (կազմ.՝ Ա. Սյուրմեյան, Վնտ., 1948), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու» (կազմ.՝ Ա. Սյուրմեյան, Փ., 1950), «Յուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս» (կազմ.՝ Ն. Ակինյան, Վնն., 1961), «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի


Ձեռագրացուցակ



Ն. Պողարյանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» (հ. 9, 1979, Երուսաղեմ) գրքի կազմը



«Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի» (հ. Է, 2013, Ե., «Նաիրի») գրքի կազմը



«Ձեռբածութիւն յերկինս» *(Հովհաննես Պոնա, 1674, Հռոմ) գրքի տիտղոսաթերթը*



«Ձեռնադրութեան գիրք»*-ի (1787, Տրիեստ) տիտղոսաթերթը*

վանուց ի Սեբաստիա» (կազմ.՝ Թ. Գուշակյան, Վնն., 1961), «Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա» (կազմ.՝ Տ. Պալյան, Վնն., 1963), «Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին» (կազմ.՝ Հ. Ոսկյան, Վնն., 1964), «Յուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմեդիոյ եւ շրջակայից» (կազմ.՝ Ս. արք. Հովակիմյան, Վնտ., 1969), «Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի» (կազմ.՝ Ս. Տեր-Ավետիսյան, Վնն., 1970), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» (կազմ.՝ Ս. Շեմճեմյան, Վնտ., 1976), «Յուցակ ձեռագրաց որ ի «Հանդէս ամսօրեայ»» (կազմ.՝ Հ. Ոսկյան, Վնն., 1976), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան» (կազմ.՝ Ա. Դանիելյան, Անթիլիաս, 1984,), «Յուցակ եւ յիշատակարաններ Երուսաղէմի Գալուստ Կիւլպէնկեան մատենադարանի հայերէն ինատիպ գիրքերու 1512–1800» (կազմ.՝ Ա. Գալաճյան, Երուսաղեմ, 1985), «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (կազմ.՝ Օ. Սեքուլյան, Վնն., 1990), «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին» (Ե., 2002), «Յուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրքերէն նիւթերի եւ հայատառ թուրքերէն ձեռագրերի» (կազմ.՝ Հ. Ստեփանյան, 2008), «Յուցակ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի հայերէն ձեռագրերի պատառիկների» (կազմ.՝ Գ. Մուրադյան, Ա. Թոփչյան, 2012, հայ., անգլ.) և այլ Ձ-ներ:

Գրկ. **Անասյան Հ.,** *Հայկական մատենագիտություն, հ. 1, Ե., 1959, էջ V–XIV: Մատենագիտություն հայկական մատենագիտության, Ե., 1963, էջ 215–243:* **Իշխանյան Ռ.,** *Հայ մատենագիտության պատմություն, պր. 2, Ե., 1968, էջ 363–409:*

«ՁԵՌԱԾՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆՍ», կարդինալ Հովհաննես Պոնայի դավանաբան. երկը: Թարգմ.՝ Վարդան Հունանյանի: Առաջին անգամ տպագրվել է 1674-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (524 էջ, 11,8 x 6,7 սմ):

Տպագրվել է նաև 1705-ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Ձեռբածութիւն յերկինս պարունակող զգացմանց…» (348 էջ, 8º, 12 x 6,2 սմ):

«ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ», Հայ եկեղեցու ձեռնադրության ծեսի մասին գիրք: Տպագրվել է 1787-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք ձեռնադրութեան ըստ ծիսից Հայաստանեայց եկեղեցւոյ…» (84 էջ, 17,2 x 10,3 սմ):

«ՁԻԹԵՆԻ», մանկ., բարոյագիտ., կրոն. պատկերազարդ կիրակնօրյա հանդես: Լույս է տեսել 1903–04-ին Ռուսչուկում, ապա՝ Սոֆիայում: Տնօրեն-խմբագիր՝ Հակոբ Շահվելյան: Տպագրել է կարճ պատմվածքներ ու բանաստեղծություններ, հետաքրքրաշարժ տեղեկություններ՝ նշանավոր մարդկանց մասին, հանրամատչելի հոդվածներ՝ արվ-ի, գրակ-յան, պատմության, բժշկության, կենդանիների ու բույսերի, տարբեր երկրների ու քաղաքների մասին: Ունեցել է նաև առակների, ծաղրանկարների, թևավոր խոսքերի և այլ բաժիններ:

Ղ

Ղ, հայ. այբուբենի 18–րդ տառը, անվանումը՝ «ղատ»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ տարրերից. կարճը երկարի ձախ կողմում է՝ հավասար բարձրությամբ, և իրար են միանում վերին ծայրերից, իսկ լայնը երկարի աջ կողմում է՝ ստորին ծայրից ցած, և երկարի ստորին ծայրին միանում է վերին ծայրով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ղ, որպես այբուբենի տասնավորների սյան 9–րդ (18–րդ) տառ, նշանակել է իննսուն և իննսուներորդ, բյուրի նշանով (Ղ͒)՝ 90 բյուր (900 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ղ–մաս 90–րդ):

ՂԱԲՈՒՋԱՆ Էդիկ Արշալույսի (ծ. 24.10.1952, Գորիս), տառաստեղծ: Ավարտել է ԵՊՀ մեխմաթ. ֆակ–ը (1979): 2007–ից՝ Հայաստանի ազգ. գրապալատի հայկ. տառատեսակների պահպանման ու մշակման բաժնի վարիչ, 2010–ից ԵԳՊԱ–ում դասավանդում է տառարվեստ: 1987–ից նախագծել և մշակել է հայկ. տառատեսակներ (մոտ 300): Որոշ տառատեսակների համար մշակել է նաև լատ., սլավոն., հուն. այբուբենների համակարգերի տառանիշներ:


Հեղինակ է հայկ. տառատեսակի նախագծմանը և տառարվ–ին վերաբերող հոդվածների: Ղ–ի ստեղծած 2 տառատեսակ (GHEA Mariam և GHEA Grapalat) 2010–ին ՀՀ Կառավարությունն ընդունել է որպես ՀՀ–ում պետ. պաշտոն. գրագրության պարտադիր տառատեսակներ: Նախաձեռնել և հիմնադրել է (2008) «Գրանշան» ոչ լատ. տառատեսակների միջազգ. ամենամյա մրցույթը (կազմկոմիտեի և մրցույթի համաժողովի համանախագահ): Համահեղինակ է «Հայկական համակարգչային տառատեսակներ» (2004) ալբոմի:

«Գրանշան» մրցույթի 1–ին մրց. (2008), ՀՀ «Մովսես Խորենացի» (2012) մեդալ:

ՂԱԶԱՐ Ա ՋԱՀԿԵՑԻ, **Ճահկեցի** [ծ. թ. անհտ, Ջահուկ գավառ (Սյունիք)–1751, ամփոփված է Էջմիածնի Սբ Գայանե վանքի գավթում], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1737–ից: Պարսկ. իշխանություններից հալածվել և աքսորվել է Սևանա կղզի: 1747–ին ազատվել և վերահաստատվել է կաթողիկոս. գահին:

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են Ղ. Ա Ջ–ու՝

«**Դրախտ ցանկալի**» Հայ եկեղեցու դավանանքի պաշտպանությանը նվիրված երկը. 1735–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր



ԱԲԳԴԵԶԷԸ
աբգդեզէըթ
ԹԺԻԼԽԾԿ
ժիլխծկհձղճ

Էդիկ Ղաբուջյանի
«GHEA Mariam»
տառատեսակը

Ղազար Ա Ջահկեցի



«Դրախտ ցանկալի» (1735, Կ. Պոլիս) գրքի 1-ին գլխին նախորդող փիփղոսպտը



«Աստուածաղերս» (1792, ՍՊբ) գրքի գլխա- և լուսանցազարդերով (21-րդ) էջ

Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի...» (704 էջ, 4º, 15,8 x 10,2 սմ):

«**Աստուածաղերս**» աղոթագիրքը. 1786-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանցի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից որ կոչի Աստուածաղերս…» (279 էջ, 4º, 13,6 x 7,6 սմ):

Վերահրատարակվել է 1792-ին (238 էջ, 8º, 15 x 8 սմ) և 1793-ին (240 էջ, 8º, 15 x 8 սմ) նույն տպարանում:

«**Երգարան**» տաղերի ժող-ը. 1737-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք նորաբոյս: Որ կոչի Երգարան...» (255 էջ, 8º, 11,8 x 7 սմ):

Վերահրատարակվել է 1744-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (239 էջ, 8º, 11,7 x 7 սմ):

Գրկ. **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, *Ջամբռ, Ե., 2003:*

ՂԱԶԱՐ ԹՈՒԽԱԹԵՑԻ, **Թոխաթցի** [մոտ 1550-ական թթ., Թոխաթ/Եվդոկիա–1610, Կամենեց (այժմ՝ Կամենեց-Պոդոլսկ՝ Ուկրաինայում)], տաղասաց, գրիչ: 1602-ին հաստատվել է Յազլովեց քաղաքում (այժմ՝ գ. Յաբլունովկա), ապա՝ Կամենեցում: Գրել է ներբողներ, ողբեր («Գովասանք Կարապետ արքեպիսկոպոսի ի Թոխաթցի Ղազար եպիսկոպոսէ ասացեալ», «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքին», «Ողբ ի վերայ կոտորածին Թոխաթի», «Ողբ ի վերայ սովոյն Թոխաթի»): Նկարագարդել է 1606-ին Կամենեցում գրված մի Ավետարան:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Հինգ պանդոխտ տաղասացներ, Վնն., 1921, էջ 205–216:* **Խաչատրյան Պ.**, *Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ–ԺԷ դդ.), Ե., 1969:* **Սահակյան Հ.**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975:*

ՂԱԶԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, XVII դ-ի 2-րդ կեսի տաղասաց: Հայտնի է «Ծով աչք, ամ քանի նայիս խոլորով» («Տաղ սիրոյ եւ ուրախութեան») տաղով, որը հայ միջնադարյան քնարերգության ընտիր էջերից է: Վերջերս հայտնաբերվել է Ղ. Ս-ուն վերագրվող մեկ այլ տաղ՝ «Նորին Ղազարու վասն սիրոյ ասացեալ»:

Ղ. Ս-ու տաղերն առաջին անգամ տպագրվել են Կ. Կոստանյանցի կազմած «Նոր ժողովածու: Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ» (պր. 2, 1892, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ., էջ 23–27, պր. 3, 1896, Մ. Շարաձեի տպ., էջ 53–56) գրքում, ինչպես նաև ներառվել են «Մարգարիտներ հայ քնարերգության» (հ. 1, 1971, էջ 211–216) ժող-ում:

Գրկ. **Սահակյան Հ.**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975:*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ [440/443, գ. Փարպի (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–VI դ-ի սկիզբ], պատմիչ: Ավարայրի ճակատամարտից (451-ի մայիսի 26) հետո տեղափոխվել է Յուրտավ: Նախն. կրթությունն ստացել է Աշուշա բդեշխի պալատում: Մոտ 465–470-ին սովորել է Բյուզանդիայում, այնուհետև ուսումնակրթ. գործունեություն ծավալել Շիրակում և Սյունիքում: 486-ին սպարապետ, մարզպան Վահան Մամիկոնյանը նրան նշանակել է Վաղարշապատի վանքի առաջնորդ: Հանիրավի ամբաստանվել է և 490-ին հեռացել Ամիդ: Այստեղ էլ գրել է «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» ինքնապաշտպան. ուղերձը: Հայոց մարզպանը հետ է կանչել նրան և պատվիրել գրել Հայոց պատմությունը:


Ղ. Փ-ու «**Թուղթ առ Վահան Մամիկոնեան**»-ը («Մեղադրութիւն ստախօս արեղայից») վավերական աղբյուր է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա Պարթևի մահից հետո V դ-ի 2-րդ կեսին Հայ եկեղեցում ստեղծված իրավիճակի մասին: «Թուղթը» առաջին անգամ հրատարակել է Մկրտիչ *Էմինը* (1853, Մ., Լազարյան ճեմ. տպ.), աշխարհաբարի է փոխադրել Միքայել *Նալբանդյանը* (1868, ՍՊբ, Բակստիի տպ.):

Ղ. Փ-ու «**Պատմություն Հայոցը**» (կոչվում է նաև Երրորդ պատմություն՝ *Ագաթանգեղոսի* և *Փավստոս Բուզանդի* երկերից հետո) բաղկացած է առաջաբանից և 3 դրվագից: Ընդգրկում է մեկ հարյուրամյակ՝ Հայաստանի 387-ի բաժանումից (Պարսկաստանի և

Բյուզանդիայի միջև) մինչև 487-ին ներքին ինքնուրույնության արտոնումն ու Վահան Սամիկոնյանի մարզպան նշանակվելը: Երկն անփոխարինելի աղբյուր է Հայաստանի ու հարևան երկրների քաղ. և սոցիալ-տնտ. կյանքն ուսումնասիրելու համար:

Ղ. Փ-ու «Պատմութիւն Հայոց» երկն առաջին անգամ տպագրվել է 1793-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ղազարայ Փարպեցւոյ արարեալ պատմագրութիւն ի բաժանմանէ թագաւորութեան Արշակունեաց մինչեւ...» (320 էջ, 8º, 14 x 8 սմ): Լույս է տեսել նաև աշխարհաբար 1895-ին (Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.), ֆրանս. մասնակի՝ 1843-ին (թարգմ.՝ Կարապետ Գապամաճյանի), ամբողջությամբ՝ 1869-ին [թարգմ.՝ Սամվել Կանթարյանի (Կեսարյան), երկուսն էլ՝ Փ.], «Պատմությունը» և «Թուղթը» միասին («Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Սամիկոնեան»)՝ 1873, 1891, 1981-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1904-ին (փոխադր.՝ Ս. Մալխասյանի և Գ. Տեր-Մկրտչյանի, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), 1907-ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.):

Ղ. Փ-ու «Պատմություն»-ից հատվածներ են զետեղվել «Ընտիր հատուածք՝ քաղեալ ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց հայոց...» (1848, Մ., Լազարյան ճեմ. տպ.) քրեստոմատիայի մեջ:



Ղազար Փարպեցու *«Պատմութիւն Հայոց» (1793, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը (վերևում) և գլխազարդով (7-րդ) էջ (ներքևում)*

Երկ. Հայոց պատմություն: Թուղթ Վահան Սամիկոնյանին, Ե., 1982:

Գրկ. **Խալաթեանց Գ.**, *Ղազար Փարպեցի եւ գործք նորին, Մ., 1883:* **Պողարեան Ն.**, *Նորագիւտ հատուած Ղազար Փարպեցւոյ «Հայոց պատմութեան», «ԲՄ», հ. 8, 1967:* **Մուրադյան Պ., Յուզբաշյան Կ.**, *Ղազար Փարպեցու Պատմության նորահայտ պատառիկը, «ԲՄ», հ. 11, 1973:* **Խրլոպյան Գ.**, *Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Ե., 1978:* **Մելիք-Բախշյան Ս.**, *Հայոց պատմության աղբյուրագիտություն, Ե., 1979: Ղազար Փարպեցի: Մատենագիտություն (կազմ.՝ Տ. Դոյումյան), Ե., 1999:*

ՂԱԶԱՐՅԱՆ Աշիկ (Արշավիր) Մեսրոպի (7.11.1904, ք. Կաղզվան–20.12.1962, Երևան), լրագրող, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է Անդրկովկասյան կոմ. համալսարանը (1931): Աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում, ՀԿԿ կոմ-ում, 1935–36-ին խմբագրել է *«Կոմունիստ»* (ռուս.) օրաթերթը, եղել է Հայկ. հեռագր. գործակալության (այժմ՝ ***Արմենպրես***), ***Հայպետհրատի*** տնօրենն: Թարգմանել է Ա. Կոռնեյչուկի, Ի. Էրենբուրգի, Վ. Գրոսմանի, Վ. Լացիսի, Ի. Իլֆի և Ե. Պետրովի ստեղծագործություններից:



ՂԱԶԱՐՅԱՆ Արտաշես Արամի, **Արտաշես Արամ** [ծ. 13.1.1955, գ. Կաթնաղբյուր (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], բանաստեղծ, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ իրավաբ. ֆակ-ը (1979), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1992): Աշխատել է Հեռուստառադիոպետկոմում, «Ավանգարդ», «Հորիզոն» թերթերի խմբագրություններում, 2003–05-ին՝ *«Նոր-Դար»* ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ղ-ի «Դեղձանիկներ» (1979), «Կապույտ տեսիլներ» (1984), «Սփոփանքի ծաղիկ» (1990), «Գիշերվա ժամ» (1998, ՀԳՄ Պ. Սևակի անվ. մրց.), «Նարնջագույն արշիպելագ» (2003), «Նաիրյան քրոնիկոն» (2004) բանաստեղծությունների ժող-ները, «Սգասյուն տաճար. Սումգայիթ 1988» (1992, ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. մրց.) պոեմը, «Ջութակահար թզուկը» (1989) մանկ. բանաստեղծությունների ժող-ը:



Արտաշես *(Արամ)* **Ղազարյանի** *«Նաիրյան քրոնիկոն» (2004, Ե., «Նոր-Դար») գրքի կազմը*

ՂԱԶԱՐՅԱՆ Գառնիկ Սիմոնի [1888, գ. Քարահունջ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–1960, Երևան], Անդրկովկասի հեղ. շարժումների մասնակից: ԽՄԿԿ անդամ՝ 1913-ից: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1916–17): 1921-ին՝ «Կարմիր ռանչպար» (Գորիս), 1925–29-ին՝ *«Մանկապ»* թերթերի խմբագիր: 1922–24-ին եղել է Զանգեզուրի գավկոմի քարտուղար, 1929–35-ին՝ ՀԽՍՀ Գլավլիտի պետ, ապա՝ Ռադիոկոմիտեի նախագահ և Հայկ. հեռագր. գործակալության (այժմ՝ ***Արմենպրես***) տնօրեն:

Լույս է տեսել Ղ-ի «Ազատության շեփորը» բանաստեղծությունների ժող-ը (1963):



Էդուարդ Ղազարյան



Հրանտ Ղազարյան



Մանյա Ղազարյանի *«Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում» (1974, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Ռուբեն Ղազարյանի *«Գրաբարի հոմանիշների բառարան»-ի (2006, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը*

ՂԱԶԱՐՅԱՆ Էդուարդ Մուշեղի (ծ. 16.1.1942, Երևան), ֆիզիկոս: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1982), պրոֆ. (1983), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Ավարտել է ՄՊՀ (1965): 1975–84-ին՝ ԵՊԻ ամբիոնի վարիչ, 1987–88-ին՝ ՀՊՄԻ ռեկտոր, 1988–90-ին՝ ՀՀ ժողկրթության նախարարի առաջին տեղակալ, 1993–99-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ, 1994-ից, միաժամանակ՝ պրոռեկտոր: 1999–2001-ին՝ ՀՀ ԿԳ նախարար, 2002–06-ին՝ ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ակադ. քարտուղար, 2004–06-ին, միաժամանակ՝ ակադ. քարտուղար, փոխնախագահ: 2006-ից դասավանդում է Հայ-ռուս. (Սլավոն.) համալսարանում (ամբիոնի վարիչ և ռեկտորի տեղակալ): 1998–2008-ին՝ ***«Բնագետ»*** ամսագրի հիմնադիր-խմբագիր, 2005-ից, միաժամանակ՝ ՀՀ ԳԱԱ ***«Գիտության աշխարհում»*** հանդեսի գլխ. խմբագիր:

Աշխատությունները վերաբերում են ցածր չափականության կիսահաղորդչային համակարգերի ֆիզիկայի և պինդ մարմնի ոչ գծային օպտիկայի խնդիրներին: Համահեղինակ է հիմն. և ավագ դպրոցների ֆիզիկայի դասագրքերի:

ՂԱԶԱՐՅԱՆ Հայկանուշ Կամսարի [ծ. 8.11.1960, ք. Ագարակ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)], մատենագետ, գրադարանագետ: Ավարտել է ԵՊՀ (1984): 1988-ից աշխատում է ՀԱԳ-ում (2001-ից՝ բաժնի վարիչ, 2011-ից՝ գիտ. քարտուղար, 2015-ից՝ փոխտնօրեն):

Կազմել և տպագրության է պատրաստել «Երվանդ Ղազանչյան» (2006), «Վիլյամ Սարոյան» (2008), «Պերճ Զեյթունցյան» (2010) կենսամատենագիտները, խմբագրել «Հայոց ցեղասպանություն: Հայկական հարց» (հ. 1–2, 2005), «Հովհաննես Թումանյան» (2008, 2009), «Սասնա ծռեր: Հայ ժողովրդական էպոս» (2009) մատենագիտ. աշխատությունները: Մասնակցել է «Հայ պարբերական մամուլ», «Հայկական տպարաններ», «Հայկական տպագրության 400-ամյակ», «Հայ հնատիպ գիրք» էլեկտրոնային շտեմարանների կազմման աշխատանքներին:

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2007):

ՂԱԶԱՐՅԱՆ Հրանտ Հովհաննեսի [6.1.1930, Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–21.1.2014, Երևան], հրատարակիչ-խմբագիր, թարգմանիչ: Մշակույթի վաստ. գործիչ (1971): Ավարտել է ԵՊՀ (1953): 1954–91-ին աշխատել է ***«Հայաստան»*** հրատարակչությունում, 1966–76-ին՝ գլխ. խմբագրի տեղակալ, 1976–91-ին՝ տնօրեն:

Ռուս-ից թարգմանել է Ե. Ստեպանովայի «Ֆրիդրիխ Էնգելս» (1960), Լ. Շահումյանի «Կամո» (1962), Ա. Յակովլևի «Կյանքի նպատակը» (1972) և այլ երկեր:

ՂԱԶԱՐՅԱՆ Մանյա Միքայելի (20.1.1924, Թիֆլիս–8.3.1998, Երևան), արվեստաբան: Արվեստագիտ. դ-ր (1996): Արվ. վաստ. գործիչ (1983): Ավարտել է ԵԹԻ (1948): 1953–59-ին աշխատել է ՀԱՊ-ում, 1959-ից՝ ԳԱԱ արվ-ի ինստ-ում:

Լույս են տեսել Դ-ի «Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում» (1974), «Գրիգոր Խանջյան» (1978), «Նոր Ջուղայի գեղանկարչությունը XVII–XVIII դարերում» (պարսկ., 1985), «Հայկական գորգ» (հայ., անգլ., 1988) աշխատությունները, կազմել է Սբ Էջմիածնի վանքի թանգարանների, Վենետիկի Սբ Ղազարի վանքի, Անթիլիասի կաթողիկոսարանի, Հալեպի Զարեհյան գանձատան, Դետրոյտի «Ալեք և Մարի Մանուկյան» թանգարանի կատալոգները:

Երկ. Վարդգես Սուրենյանց, Ե., 1960: Մարտիրոս Սարյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն (համահեղ.), Ե., 1980: Բոգդան Սալթանով, Ե., 1986: Քայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, Ե., 1989: Մովսես Խորենացին և արվեստը, Ե., 1992: Արցախի արուեստի գանձերը, Անթիլիաս, 1993: Художники Овнатаняны, М., 1968; Изобразительное искусство Армянской ССР, М., 1978.

ՂԱԶԱՐՅԱՆ Ռաֆիկ Արշալույսի [ծ. 2.5.1946. գ. Սարիգյուղ (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], գրադարանագետ, մատենագետ: Ավարտել է ԵՊՀ (1972): 1971-ից աշխատում է ՀԱԳ-ում (1995-ից՝ փոխտնօրեն): 2004-ից՝ հայկ. գրադարանային ընկերակցության փոխնախագահ:

Լույս են տեսել Դ-ի «Գաբրիել Սունդուկյան» (1976), «Եղիշե Չարենց» (համահեղ., 1977), «Սայաթ-Նովա» (1987), «Իրականի և ցանկալիի հոլովույթում» (2003), «Կոմիտաս» (2009), «Վահան Տերյան: Ինչպես երգեմ հիշատակը քո...» (1985, 2005) գրադարագիտ., մատենագիտ. աշխատությունները: Կազմել և խմբագրել է «Մտքի թռչող թևերը» (2006)՝ գրքի մասին ասույթների

ժող–ը, կազմել է «Եղիշե Չարենց–80» (1977), «Վահան Թեքեյան–100» (1978) տարեգրությունները:

ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2004), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2004), ՀՀ «Մովսես Խորենացի» (2012) մեդալներ:

ՂԱԶԱՐՅԱՆ Ռուբեն Սերոբի (27.7.1940, Երևան–10.11.2011, Երևան), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1993), պրոֆ. (1996): Սերոբ ***Ղազարյանի*** որդին: Ավարտել է ԵՊՀ (1962): 1966–ից աշխատել է ԵՊՀ–ում (1995–ից՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ):

Լույս են տեսել Ղ–ի «Նոր հայկազյան բառարանը» (1972), «Կենդանիների անունների կարգաբանական բառարանը» (հայ–ռուս–լատ., պր. 1–6, 1992–2001), «Միջին հայերենի բառապաշարը» (1993), «Միջին գրական հայերենի բառապաշարը» (2001), «Բուսանունների կարգաբանական բառարանը» (հայ–լատ–ռուս–անգլ–ֆրանս., 2002), «Էջեր հայ բառարանագրության պատմությունից»–ը (2002), «Գրաբարի հոմանիշների բառարանը» (2006): Համահեղինակ է «Գրաբարի ձեռնարկի» (1986), «Հայոց լեզվի պատմության գործնական դասընթացի» (1989), «Միջին հայերենի բառարանի» (հ. 1, 2, 1987, 1992), «Գրաբարի բառարանի» (հ. 1–2, 2000), «Թուրքերեն–հայերեն բառարանի» (2003):

ՂԱԶԱՐՅԱՆ Սամվել Արմենի (ծ. 20.7.1949, Երևան), քանդակագործ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1978): 1978–90–ին դասավանդել է ԵԳԹԻ–ում:

Ձևավորել է Յ. Վ. Գյոթեի «Էգմոնտ» (1998), Ֆ. Դոստոևսկու «Դեռահասը» (2003), Է. Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» (2007), Մ. Աճեմյանի «Մեր Փոքր» (2011) գրքերի շապիկները: Ստեղծել է գրաֆիկ. թերթեր («Սասունցի Դավիթ», շարք, 1990–2011): Միջազգ. ցուցահանդեսների արծաթե (1984, Թբիլիսի), ոսկե (1994, 1998, Ռավեննա) մեդալներ:

Գրկ. **Тер–Минасян А.***, Самвел Казарян, Е., 2000.*

ՂԱԶԱՐՅԱՆ Սերոբ Ղազարի (1910, Բիթլիս–11.4.1962, Երևան), լեզվաբան, խմբագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1953), պրոֆ. (1954): Ռուբեն ***Ղազարյանի*** հայրը: Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ–ը (1939): 1937–48–ին՝ ***«Սովետական դպրոց»*** թերթի խմբագիր, 1940–62–ին դասավանդել է ԵՊՀ–ում, միաժամանակ, 1944–59–ին՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ–ի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ղ–ի «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (1954, 1981, 2006, 2007), «Միջին հայերեն» (գիրք Ա, 1960), «Հայոց գրական լեզվի պատմություն» (հ. 1, 1962) աշխատությունները: Կազմել է «Գրաբարի դասագիրք» (1951) ձեռնարկը:

ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի (ծ.16.3.1943, Երևան), արվեստաբան, թարգմանիչ: Արվեստագիտ. դ–ր (1992): Մշակույթի վաստ. գործիչ (2006), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ (2010): Ավարտել է ՀՊՄԻ (1965): 1972–ից՝ ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ի գիտաշխատող, 1988–ից՝ բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ղ–ի «Սարգիս Պիծակ» (1980), «Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ–XIV դ. սկիզբ)» (1984), նաև նույն գրքի՝ «Խորանների մեկնություններ» (1995)՝ համառոտ, և «Մեկնութիւնք խորանաց» (2004)՝ ընդարձակ տարբերակները՝ քնն. համառոտ բնագրերով (նաև աշխարհաբար և ռուս.)՝ Ղ–ի աշխատասիրությամբ, «Հայ արվեստի պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (համահեղ., 2009), «Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն» (համահեղ., 2013) աշխատությունները: Թարգմանել է Յ. Վ. Գյոթեի, անգլո–ամերիկյան բանաստեղծների գործերից, աշխարհաբարի փոխադրել Ներսես Շնորհալու «Հիսուս Որդի» պոեմը, Դիոնիսիոս Արիոպագացու գրվածքներից:

ՀՀ Պետ. մրց. (2009), ԿԳՆ (2008), վարչապետի (2011) հուշամեդալներ, մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» մեդալ (2013):

Երկ. Матенадаран, т. 1, Армянская рукописная книга VI–XV вв., М., 1991 (համահեղ.).

ՂԱԶԻԿՅԱՆ Արսեն [8.10.1870, գ. Պարտիզակ (Խարբերդի նահանգի Դերսիմի գավառ)–9.6.1932, Պադուա (Իտալիա)], մատենագետ, թարգմանիչ, բանասեր, մանկավարժ: 1888–ին հաստատվել է Վենետիկի Սբ Ղազար կղզում, սովորել Մխիթարյան միաբանության վարժարանում: Մխիթարյան միաբանության անդամ (1895–ից): Դասավանդել է Կ. Պոլսի, Վենետիկի Մխիթարյան վարժարաններում, աշխատակցել միաբանության «Գեղունի», «Բազմավէպ» պարբ–ներին:



Սամվել Ղազարյան. *Է. Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» (2007, Ե., «Նաիրի») գրքի կազմը*




Սերոբ Ղազարյանի *«Միջին հայերեն»-ի (գիրք Ա, 1960, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Վիգեն Ղազարյանի *«Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն» (համահեղ., 2013, Ե., «Զանգակ») գրքի կազմը*



Արսեն Ղազիկյան



Ա. Ղազիկյանի *«Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» (հ. 1, Վնտ., 1909-12) գրքի փիփղոսաթերթը*

Ղ. նախապես ստեղծագործել է գրաբար, ապա՝ աշխարհաբար՝ դառնալով վերջինիս հետևողական պաշտպանը:

1898-ից (14 տարի) խմբագրել և լրացրել է Գարեգին *Զարբհանալյանի* «Հայկական մատենագիտութիւն» աշխատությունը, որը հետագայում դարձել է մատենագիտ. ինքնուրույն աշխատանք. հրատարակել է 1909–12-ին՝ «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» վերնագրով (ընծայագրել է հայկ. գրատպության 400-ամյակին, վերահրտ.՝ 2013, նմանահանություն): Ընդգրկում է 1512–1905-ը [Մեծ եղեռնի օրերին Պարտիզակում կորել են ձեռագրի վերջին մասերը, և հրատ-ն ընդհատվել է Ն տառի սահմանում (Նուրիխան տերմինով)]: Ղ-ի աշխատությունը նյութերի ընդգրկման ծավալով, տեղեկատվության ճշգրտությամբ և բազմակողմանիությամբ մեծարժեք ներդրում է հայ տպագիր գրքի մատենագիտ-յան մեջ: Կազմել է «Համառօտ ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ» (Վնտ., 1969) մատենագիտ. գիրքը:

Գրել է նաև բանաստեղծություններ, լեզվաբ. և գրականագիտ. հոդվածներ, թարգմանել Հոմերոսի «Իլիական» (1911) և «Ոդիսական» (1924), Վերգիլիոսի «Ենէական» (1910), «Մշակականք» (1923) պոեմները, Սոֆոկլեսի «Իդիպոս թագաւոր» (1927) ողբերգությունը, Հորացիոսի «Արուեստ քերթողական» (1923) երկը, «Ռոլանդի երգը» (1925) և «Նիբելունգներուն երգը» (1925) դյուցազնավեպերը:

Ղ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. Ճանաչեան Մ., Յետադարձ ակնարկ Հայր Արսէն Ղազիկեանի կատարած դերին հայերէնի զարգացման մէջ, «Բազմավէպ», 1970, № 11–12: **Նույնի**, *Հ. Արսէն Ղազիկեան եւ իր թարգմանութիւնները, Վնտ., 1979:* **Իշխանյան Ռ.**, *Հայ մատենագիտության պատմություն, պր. 2, Ե., 1968:*

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ Կիմ Հարությունի [5.9.1942, գ. Ներքին Շեն (այժմ՝ Շահումյան քտա՝ ԼՂՀ-ում)–4.2.2014, Երևան], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (2000), պրոֆ. (2003): Ավարտել է ՀՊՄԻ (1964): 1965–71-ին աշխատել է Շահումյանի շրջ. «Նոր ուղի» թերթի խմբագրությունում, 1971–75-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ում, 1975-ից՝ ՀՊՄՀ-ում: 1992–2014-ին՝ *«Մեռելի ղողանջներ»* թերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ղ-ի «Օջախի գիրք» (հայ., հ. 1–3, 2002–11, ռուս., հ. 1–2, 2003–04) ուսումնասիրությունը, «Հայ էթնոսի պատմական առաքելությունը» (2012), «Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր» (2013) մենագրությունները, «Քաղաքագիտություն. բացատրական բառարանը» (2003): Ղ-ի աշխատասիրությամբ հրատարակվել են «Արցունքոտ ժպիտներ» (հ. 1–2, 2004, 2006), «Վարդուտ գավառի բառ ու բանը» (2011) բանահյուսական նյութերի ժող-ները, «Իրավակարգի 1500-ամյա ակունքներն Արցախում» (հայ., ռուս., անգլ., 2010) աշխատությունը, «Քաղաքագիտություն» (2005, լրց. և վերամշկ.՝ 2008) բուհ. դասագիրքը:

ԼՂՀ «Երախտագիտություն» մեդալ (2011):

ՂԱՄԱՋՅԱՆ Մաթևոս Աբելի [Գամազով Մատվեյ Ավելևիչ, 29.10(10.11).1811, Ս. Պետերբուրգ–7(19).5.1893, Ս. Պետերբուրգ], արևելագետ, գրող, թարգմանիչ, դիվանագետ: Սովորել է Ս. Պետերբուրգի Գլխ. ճարտարագիտ. ուսումնարանում (1825–30), ԱԳՆ-ին կից արլ. լեզուների ուս. բաժնում (1836–39):

Հեղինակ է «Համառոտ ռուս-ֆրանս-թուրք-պարսկ. ռազմատեխնիկական բառարանի» (1887): Թարգմանել է Ֆիրդուսու, Սաադիի, Հաֆեզի, Օմար Խայամի, Վ. Շեքսպիրի գործերից:

Ռուս. աշխարհագր. ընկերության (1852), Լազարյան ճեմարանի խորհրդի (1865) անդամ:

Գրկ. **Григорян Г.**, *Литературные опыты М. Гамазова ("Из истории литературных отношений XVIII–XX веков"), М.–Л., 1959, с. 360–369;* **Овакимян Б.**, *Шекспир в переводе Гамазова, "Литературная Армения", 1964, № 4;* **Նույնի**, *М. А. Гамазов друг Н. А. Некрасова ("Литературные связи", кн. 2, Е., 1977).*

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Արամ Տիգրանի (12.2.1909, Ախալցխա–9.6.1983, Երևան), բանագետ–բանասեր: Բանասիր. գիտ. դ–ր (1970), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1977, թղթ. անդամ՝ 1965–ից): Գիտ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ (1931):

Լույս են տեսել Ղ–ի «Հայ շինականի աշխատանքի երգերը» (1937), «Հայ ժողովրդական բանահյուսություն» (պր. 1, 8, 9, 11, 1945–46), «Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1955), «Ավանդապատում» (1969), «Հայ գրականությունը և բանահյուսությունը» (1986), «Մ. Աբեղյանն իբրև ֆոլկլորագետ» (1946), «Ն. Մառը և հայ բանահյուսությունը» (1968, «Մառը և հայագիտության հարցերը» ժող–ում), «Դրվագներ հայ բանագիտության պատմության» (1985) աշխատությունները: Կազմել և խմբագրել է «Հայ ժողովրդական հեքիաթները» (1950), «Առածանին» (1960): Գրառել և հրատարակել է «Մասնա ծռեր» էպոսի 2 պատում:

Գրկ. Արամ Տիգրանի Ղանալանյան (Նյութեր Հայկական ԽՍՀ գիտնականների կենսագրության, № 36), Ե., 1986:

ՂԱՆԴԻԼՅԱՆ Ցոլակ Հովհաննեսի, **Կանթեղ** (ծ. 24.6.1943, Լենինական), գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1962): 1968–88-ին աշխատել է «Գրական թերթ», «Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան», «Պիոներություն» թերթերում (նկարիչ–ձևավորող), «Գարուն» ամսագրում (գեղ. խմբագիր), Հայֆիլմին կից «Հայինֆորմկինո» գովազդային բաժնում (գլխ. նկարիչ), 2005–ից «Կանչ» թերթի նկարիչն է, 2008–ից պարբերաբար աշխատակցել է նաև «Ծիծեռնակ» ամսագրին:


Նկարազարդել է Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» (1969), Հ. Մելքոնյանի «Հարցաքննություն» (1977), Ա. Տևկանցի «Այցելություն ի Հայաստան, 1878 թ.» (1985), Ռ. Իշխանյանի «Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ» (1989), Ա. Պարսամյանի «Ծառ նռնենի» (2005), Հ. Սևանի «Հեքիաթներ» (2006), Ս. Մուրադյանի «Մայրիկն ու հայրիկը (2007), Ս. Սահակյանի «Ասք Անդրանիկ զորավարի մասին» (2008), Հրաչյա Մաթևոսյանի «Էս մի բուռն էլ թռչուններին» (2010), Ս. Հովհաննիսյանի «Պատմություններ Հովի. Թումանյանի կյանքից» (2010) և այլ գրքեր:

«ՂԱՐԱԲԱՂ», գրական–հաս. եռօրյա թերթ: Լույս է տեսել 1911–12-ին Շուշիում: Խմբագիր–հրատարակիչ՝ Ն. Յարամիշյան (փաստացի՝ Վրթանես *Փափազյան*): Անդրադարձել է աշխատավորության տնտ. կացությանը, մատաղ սերնդի դաստիարակությանը, միջազգ. իրադարձություններին: Նյութեր է արտատպել Ռուսաստանում հրատարակվող հայ. պարբ–ներից: Գրական բաժնում տպագրել է Վ. Փափազյանի «Գրական ակնարկներ» հոդվածաշարը, նյութեր՝ նվիրված Հ. Հովհաննիսյանի, Գ. Դոդոխյանի, Ա. Իսահակյանի ստեղծագործություններին:

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Արթուր Արամայիսի [ծ. 1.7.1964, գ. Կողբ (այժմ՝ Տավուշի մարզում)], խմբագիր, վերլուծաբան: Ավարտել է ԵՊՀ (1992), «Եվրասիա» հիմնադրամի տնտ. լրագրության դասընթացները (1997): 1991–94-ին աշխատել է «Գարուն» ամսագրի (բաժնի վարիչ), 1994–96-ին՝ «Առավոտ» օրաթերթի խմբագրություններում, 1998–2000-ին՝ ՀՀ Կառավարության տնտ. բարեփոխումների վերլուծատեղեկատվ. կենտրոնի վերլուծաբան, 2000–09-ին՝ «Գործնական և տեսական կառավարում» հանդեսի խմբագիր, 2010–ից՝ ***«Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ»*** հանդեսի հիմնադիր–խմբագիր:

ՂԱՐԻԲՅԱՆ Արարատ Սահակի [27.1.1899, գ. Դարղալու (այժմ՝ Այգեզարդ՝ ՀՀ Արարատի մարզում)–1.3.1977, Երևան], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1940), պրոֆ. (1940), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1960, թղթ. անդամ՝ 1947–ից): Գիտ. վաստ. գործիչ (1954): Ավարտել է ԵՊՀ (1927): 1929–48-ին դասավանդել է ԵՊՀ–ում և այլ բուհերում, 1934–77-ին՝ ՀՊՄԻ–ում (1934–60-ին՝ ամբիոնի վարիչ), 1956–62-ին, միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ–ի, 1962–70-ին՝ Հիմնարար գիտ. գրադարանի տնօրեն:

Լույս են տեսել Ղ–ի «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (1937), «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (1940), «Համառոտություն հայ բարբառագիտության» (1941), «Հայ բարբառագիտություն»



Արամ Ղանալանյանի *կազմած «Առածանի»-ի (1960, Ե., ԳԱ հրտ.) կազմը*



Ցոլակ Ղանդիլյան. *Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» (1969, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Արարատ Ղարիբյան



Ա. Ղարիբյանի *«Ռուս-հայերեն բառարան»-ի (1968, Ե., «Հայաստան») կազմը*



Կարո Ղաֆադարյան



Կորյուն Ղաֆադարյան. *«Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» (1964, Ե., ԳԱ հրտ.) գրքի կրկնաշապիկը*

(1953), «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (1954), «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) աշխատությունները, «Ռուս-հայերեն բառարանը» (ընդգրկում է 85 հզ. բառահոդված, շուրջ 100 հզ. բառ ու դարձվածք, 1968, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1972, վերահրտ.՝ 1977, 1982), «Դպրոցական ուղղագրական բառարանը» (համահեղ., 1968, վերահրտ.՝ 1981): Ղ.-ի ղեկավարությամբ լույս են ընծայվել Ագաթանգեղոսի, Կորյունի, Ղազար Փարպեցու և այլ պատմիչների երկերի համաբարբառները: Հեղինակ է հայոց լեզվի դպրոց. դասագրքերի:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան (1969):

Գրկ. Արարատ Սահակի Ղարիբյան: Մատենագիտություն, Ե., 1971 (Սովետական Հայաստանի ականավոր գիտնականները, № 13):

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կարո (Կարապետ) Գրիգորի (20.4.1907, Ախալցխա–21.12.1976, Երևան), հնագետ, պատմաբան, վիմագրագետ, բանասեր: Պատմ. գիտ. դ-ր (1954), պրոֆ. (1957): Գիտ. վաստ. գործիչ (1961): Կորյուն ***Ղաֆադարյանի*** հայրը: Ավարտել է ԵՊՀ (1931): Աշխատել է Էջմիածնի մատենադարանում: 1940–65-ին՝ ՀՊՊԹ տնօրեն:

Ղ.-ի առաջին աշխատությունը՝ «Հայկական գրի սկզբնական տեսակները» (ձեռագիր), 1935-ին արժանացել է Մելգոնյան հիմնադրամի մրց-ի (հրտ.՝ 1939): Հավաքել, ծանոթագրել, տպագրության է պատրաստել Թ. Թորամանյանի աշխատությունները («Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հ. 1, 2, 1942, 1948, վերահրտ.՝ 2013), պեղել և հետազոտել է Դվինի քաղաքատեղին («Դվինի քաղաքը և նրա պեղումները», հ. 1, 2, 1952, 1982):

Լույս են տեսել նաև Ղ.-ի «Ալքիմիան պատմական Հայաստանում» (1940), «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» (1948), «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» (1957), «Հաղբատ: Ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները» (1963), «Երևան: Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները» (1975), «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության» (2007) աշխատությունները:

ՀԽՍՀ ԳԱ նախագահության «Մեծարման գիր» (1974):

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կորյուն Կարոյի (ծ. 9.5.1936, Երևան), ճարտ-յան պատմաբան, նկարիչ-ձևավորող: Ճարտ-յան թեկնածու (1975): Կարո ***Ղաֆադարյանի*** որդին: Ավարտել է ԵՊԻ (1959): 1991–98-ին՝ ՀՀ հուշարձանների պահպանության վարչության պետ, 1995–98-ին, միաժամանակ՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի փոխնախարար, 2002-ից՝ ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութ. ժառանգության ԳՀ կենտրոնի փոխտնօրեն:

Լույս են տեսել Ղ.-ի «Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը» մենագրութունը (1984, ՀՀ ԳԱԱ «Գովեստագիր»), «Հայկական ճարտարապետության պատմությունը» (համահեղ., հ. 1, 1996): 1963–90-ին ՀՀ ԳԱԱ հրատարակչությունում ձևավորել է 450-ից ավելի գրքեր՝ Կարո Ղաֆադարյանի «Հաղբատ...» (1963), «Երևան...» (1975), Ն. Մառի «Երերույքի բազիլիկան» (ռուս., 1968), Ռ. Զարյանի «Հուշապատում» (գիրք 1–3, 1975–81) և «Էջեր հայկական շեքսպիրապատումից» (հ. 1, 2, 1979, 1981), Ս. Մնացականյանի «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX–XIV դարերում» (1976), Վ. Ղազարյանի «Սարգիս Պիծակ» (1980), Գ. Հովսեփյանի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության» (հ. 1, 2, 1983, 1987), նաև «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» (1964), «Շեքսպիրական» (հ. 1–7, 1966–85) ևն:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011), ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ (2014):

«ՂԵԿԱՒԱՐ ՄԱՆԿԱՆՑ», մանուկների քրիստ. դաստիարակության մասին գիրք: Տպագրվել է 1797-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք անուանեալ ղեկաւար մանկանց....» (291 էջ, 8º, 11 x 7 սմ):

«ՂԵԿԻ ՄՈՏ», շաբաթաթերթ: ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարության և կապի աշխատողների, ավտոմոբիլային տրանսպորտի ու խճուղային ճանապարհների բանվորների արհմիության հանրապետ. կոմիտեի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1957–63-ին Երևանում: Խմբագիրներ՝ Գարսևան Հակոբյան, Ա. Նուրիջանյան:

Լուսաբանել է ավտոտրանսպորտային և կապի ձեռնարկությունների աշխատանքները, կուս., արհմիութ. և կոմերիտ. կյանքը:

ՂԵՎՈՆԴ, Ղևոնդ Երեց, Ղևոնդ Մեծ, Ղևոնդ պատմիչ, VIII դ–ի պատմիչ: Սովորել է Դվինի հայրապետանոցում: Կ. Պոլսում նյութեր է հավաքել իր «Պատմության» համար, որի շարադրանքն ավարտել է մոտ 790–ին: Օգտագործելով նախորդ մատենագիրների գործերը՝ հիմն. իրադարձությունների մասին գրել է որպես ականատես: Շարունակել է ***Սեբեոսին***՝ ընդգրկելով 640–ական թթ–ից մինչև VIII դ–ի սկզբի դեպքերը, երբ արաբները նվաճել են Հայաստանը: Մանրամասն նկարագրել է նաև արաբ զավթիչների դեմ հայոց ապստամբությունները (703, 748–750, 774–775): Երկը Հայաստանի VII–VIII դդ–ի պատմության կարևոր սկզբնաղբյուր է:

Ղ.–ի «**Պատմությունը**» առաջին անգամ տպագրվել է ֆրանս. (1856), ապա՝ հայ. («Արշաւանք արաբաց ի Հայս» վերնագրով, 2–րդ տպագր.՝ «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց» վերնագրով, 1857, Փ., Կարապետ Շահնազարյանի տպ., 1887, ՍՊբ, Ի. Սկորոխոդովի տպ.,) և ռուս. (1862):

Երկ. Պատմություն, Ե., 1982:

Գրկ. Ակինեան Ն., *Ղեւոնդ Երէց պատմագիր, տեա՛ս նրա Մատենագրական հետազօտութիւններ, հ. 3, Վնս., 1930:*


ՂՈՐՂԱՆՅԱՆ, Կորգանով, Վասիլ (Բարսեղ) Դավթի (22.1(3.2).1865, Թիֆլիս–6.6.1934, Երևան), երաժշտագետ, խմբագիր: Արվ. վաստ. գործիչ (1934): Ավարտել է Ս. Պետերբուրգի ռազմաճարտարագիտ. ուսումնարանը: 1900–ին հիմնադրել է Անդրկովկասում առաջին ռուս. «Կավկազսկի վեստնիկ» գիտագրական ամսագիրը: 1921–ից հաստատվել է Երևանում: 1888–ին Թիֆլիսում հրատարակել է գրքույկ Բեթհովենի մասին (նրա նամականին՝ 1300 նամակ), 1909–ին՝ մեծածավալ մենագրություն («Կենսագրական էտյուդ», ռուս.): Գերմ–ից թարգմանել և իր «Կավկազսկայա մուզիկա» (ռուս., 1901, 1908) ժող–ում հրատարակել է Կոմիտասի «Հայկական եկեղեցական երաժշտություն» և «Հայ գեղջուկ պարերգեր» աշխատությունները:

Երկ. Статьи, воспоминания, путевые заметки, библиография, Е., 1968.

ՂՐԻՄԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, Ղրիմի նորակառույց վանքերում ու եկեղեցիներում XIV–XV դդ–ում գրվել ու նկարազարդվել են բազմաթիվ ձեռագրեր (շուրջ 300–ը պահվում են Մատենադարանում), որտեղ նկատելի են Հայաստանի արվ–ի, Կիլիկիայի մանրանկարչության (XIV դ–ի վերջին Ղրիմ էին գաղթել նաև Կիլիկիայից) և նոր բազմազգ միջավայրի ազդեցությունը:

Ղրիմի գրչության և մանրանկարչության առավել նշանավոր կենտրոններից էին Կաֆան (այժմ՝ Թեոդոսիա) և Սուրխաթը (այժմ՝ Ստարի Կրիմ), XIII–XV դդ–ի լավագույն վարպետներից՝ Գրիգոր Սուքիասանցը, ***Կիրակոսը, Առաքելը,*** գրիչ ***Նատերի*** որդիները՝ ***Ավետիսը*** և Ստեփանոսը, վերջինիս որդի Հովհաննեսը: XIV–XV դդ–ի Ղ. մ. դ–ի լավագույն ձեռագրերից են 1356–ին Սուրխաթում Կարապետի և Առաքելի պատկերազարդած Ճաշոցը (Մատենադարան, ձեռ. № 7408), 1401–ին Կաֆայում Հովհաննեսի պատկերազարդած Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (Մատենադարան, ձեռ. № 3863) պոեմը:

Սուրխաթի, Կաֆայի, Ղարասուբազարի (այժմ՝ Բելոգորսկ) գրչության կենտրոնների մանրանկարիչների գործերում ակներև է բյուզ. XIII–XIV դդ–ի արվ–ի ազդեցությունը: Հոգևորականության հետաքրքրությունը ճգնավոր. կյանքի, սրբերի և անապատականների նկատմամբ արտահայտվել է նրանց վարքերը պարունակող մատյանների պատկերազարդումներում («Հարանց վարք», 1430, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 285, ծաղկող՝ Թադեոս Ավրամենց):



Ղևոնդի *«Պատմություն» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*




Վասիլ Ղորղանյան

Ղրիմի մանրանկարչության դպրոց



«Համբարձում», մանրանկար, 1356-ի Ճաշոց (ծաղկողներ՝ Կարապետ, Առաքել, Մատենադարան, ձեռ. № 7408)



Ղուկաս Վանանդեցու *«Համբոյր սրբութեան» (1704, Ամստերդամ) գրքի տիտղոսաթերթը*



Սաղմոսարանի (1714–15, Ամստերդամ, տպագրիչ՝ **Ղուկաս Վանանդեցի***) գլխա- և լուսանցազարդերով ու գլխատառով (267-րդ) էջ (վերևում) և 252-րդ էջի փորագրապատկերը (ներքևում)*



XVII դ–ի Ղ. մ. դ–ի լավագույն մանրանկարիչներից են Նաղաշ Էոլպեն, ***Նիկողայոս Ծաղկաւարը*** (1684–ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 6341) և Խասպեկը (1668–ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 6606), որոնք շարունակել են դպրոցի ավանդույթները:

Ղ. մ. դ. նկատելի հետք է թողել համաշխ. արվ–ի պատմության մեջ:

Գրկ. **Свирин А.**, *Миниатюра древней Армении, М.–Л., 1939;* **Дурново Л.**, *Краткая история древнеармянской живописи, Е., 1957;* **Корхмазян Э.**, *Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978.*

ՂՈՒԿԱՍ ԼՈՌԵՑԻ, **Ղուկաս Հաղպատեցի** [ծ. թ. անհտ, Հաղպատ–1561, գ. Սոթ (այժմ՝ Սոթք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], մատենագիր, մանկավարժ, գրիչ: 1513–43–ին դասավանդել է Վաղարշապատի և Սանահինի դպրոցներում, ապա՝ Ծար գավառում: Ընդօրինակել է քերական. մի ձեռագիր, գրել սաղմոսների մեկնություններ, դավանաբան. երկ և «Քարոզգիրք» (հեղինակային ինքնագիրը՝ Մատենադարանում, ձեռ. № 4355), որը բաղկացած է 40 քարոզից: Գրել է միջին հայ–ով. այն կարևոր սկզբնաղբյուր է միջնադարում աշխարհաբարի գործածման, ժող. բառ ու բանի ուսումնասիրման համար:

Գրկ. **Հարությունյան Է.**, *Ղուկաս Լոռեցին և նրա Քարոզգիրքը, «ԲՄ», 1971, № 10:*

ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ, Նուրիջանյան [մոտ 1650–ական թթ–ի սկիզբ, գ. Վանանդ (Նախիջևանի Գողթն գավառ)–մ. թ. անհտ], փիլիսոփա, թարգմանիչ, գրահրատարակիչ և մշակույթի գործիչ: Օքսֆորդի համալսարանի արվ–ի մագիստրոս (1707): Սկզբն. կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Հռոմի Ուրբանյան վարժարանում (1679–82): 1690–ին հաստատվել է Ամստերդամում, որտեղ օգնել է իր ազգական ***Մատթեոս Վանանդեցուն*** հայկ. տպարանի աշխատանքներում: 1706–ին տպարանի տնօրեն ***Թովմաս Վանանդեցու*** հետ մեկնել է Անգլիա՝ նյութ. միջոցներ հայթայթելու համար: Վերջինիս մահից հետո 1708–17–ին եղել է Ամստերդամի տպարանի տնօրենը՝ կատարելով նաև խմբագր., սրբագր. և գրաշարի աշխատանքներ: Տպագրել է Հովհաննես Սիքոզի «Համառօտ քերականութիւն եւ տրամաբանութիւն» (1711) երկը, Շարակնոց (1712), Սաղմոսարան (1713, 1714–15), «Պարզատօմար Ազարիայի» (1714), «Կարճառօտ ժամագիրք» (1717) ևն:

Հայ հնատիպ գրքի շրջանում Ամստերդամի հայկ. տպարանում տպագրվել են Ղ. Վ–ու՝

«**Բանալի Համատարածի աշխարհացուցին**» հայկ. առաջին տպագիր քարտեզի՝ «Համատարած աշխարհացոյցի» ուս. ուղեցույցը. 1696–ին: Տիտղթ–ին՝ «Բանալի Համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի...» (30 էջ, 8º, 12 x 3,8 սմ):

«**Տօմար**» ժող–ը. 1698–ին: Տիտղթ–ին՝ «Համաձայնութիւն հնգետեասակ ամսոց...» (106 էջ, 12º, 9,4 x 4,6 սմ):

«**Գանձ չափոյ՝ կշռոյ...**» վաճառականների համար նախատեսված երկը. 1699–ին: Տիտղթ–ին՝ «Գանձ չափոյ՝ կշռոյ թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի...» (80 էջ, 8º, 11 x 6,7 սմ):

«**Համբոյր սրբութեան**» քրիստ. վարդապետության մասին գրքույկը. 1704–ին (16 էջ, 11,4 x 5,7 սմ):

«**Հայելի Աստուածաշունչ...**» երկը. 1713–ին (752 էջ, 8º, 9,7 x 6 սմ):

«**Պատկերասէր պատկերատեաց**» երկը. 1716–ին [448 էջ՝ համարակալության անճշտությամբ (էջերի իրական քանակը՝ 432), 8º, 12,3 x 6,8 սմ]:

Տպագրվել են նաև Ղ. Վ–ու «Ի ըզբօսանս Հայկազունեաց» երկը (1740, 1756, 1789, տպակից է ***Պարզատումարին***), «Դուռն իմաստութեան կամ Ոսկեայ դուռն դպրատան» (1699–1700), «Բնաբանութիւն իմաստասիրական կամ Տարերաբանութիւն» (հ. 1–2, 1702, երկուսն էլ՝ համահեղ.՝ Մատթեոս Վանանդեցի):

Ղ. Վ. թարգմանել է Արիստոտելի «Յոգնատիմի աստուածաբանական, բարոյական ու քաղաքական իրողութեանց սահմանք» ժող–ի 2–րդ մասը՝

«Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» (1704), հայ. է սովորեցրել գերմանացի արևելագետ Յոհան Շրյոդերին, որն իր հայագիտ. նշանավոր երկը՝ *«Արամեան լեզուին գանձը»* (լատ., աշխարհաբար հատվածներով, 1711), գրել և հրատարակել է նրա օգնությամբ:

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Լէօ, Հայկական տպագրութիւն, հ. 1, Թ., 1904:* **Սարուխան Ա.,** *Հոլանդան եւ հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վնս., 1926:* **Թումանյան Բ.,** *Հայկական նորահայտ ապտղագիտական գործիք, Ե., 1958:* **Նույնի,** *Հայ ապտղագիտության պատմությունից, Ե., 1985:* **Գրիգորեան Մ.,** *Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցւոց մասին, Վնս., 1969:*

«ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», պատմ. և հաս–քաղ. բովանդակությամբ մատենաշար: Հրատարակվել է Թիֆլիսում՝ Բաքվի խոշոր նավթարդյունաբերող Ավետիս Ղուկասյանի (1837–1902) կտակած գումարներով: 1904–17-ին հաջորդաբար լույս են ընծայվել Եղիշեի (1904, Մնացական Մարտիրոսյանի տպ.), Ղազար Փարպեցու (1907), Կիրակոս Գանձակեցու (1909), Ստեփանոս Օրբելյանի (1910), Հովհաննես Դրասխանակերտցու, Արիստակես Լաստիվերցու, Մովսես Կաղանկատվացու (երեքն էլ՝ 1912), Սեբեոսի, Մովսես Խորենացու, Կորյունի (երեքն էլ՝ 1913), Եզնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի (երկուսն էլ՝ 1914), Թովմա Արծրունու (1917) երկերը, ինչպես նաև Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» (1913,) և Ա. Ղլտճյանի «Կանոնագիրք հայոց» (1913, բոլորը՝ Նվարդ Աղանյանի տպ.) աշխատությունները. բոլորը, բացի վերջինից, վերահրատ–ներ են:


ՂՈՒԿԱՍՅԱՆ Հովհաննես Արամի [29.12.1919, Թավրիզ–27.7.1991, Նորդ Հոլիվուդ (ԱՄՆ)], գրող: Սովորել է Ատրպատականի հայոց կենտր. դպրոցում: 1946-ին հայրենադարձել է: Ավարտել է ՀԿԿ Երևանի քաղկոմի մարքսիզմ–լենինիզմի համալսարանը (1949):

Ղ. «Ոսկան Երևանցի» (1962, 1988, 2012) պատմավեպում ներկայացրել է տպագրիչ Ոսկան Երևանցու գրահրատարակչ. գործունեությունը և արժևորել նրա դերը հայ գրատպության պատմության մեջ:

Լույս են տեսել նաև Ղ-ի «Խավարի աշխարհում» (1950), «Փոքրիկ վրիժառուներ» (գիրք 1, 2, 1950, 1953), «Գարնանային պատմություն» (1955), «Վիպակներ» (1957), «Անհանգիստ պատանեկություն» (1959), «Երեք պատմվածք» (1962), «19 պատմվածք» (1966) պատմվածքների, վիպակների ժող–ները, «Դեռ սպասում են» (1969), «Իմ լուսաղբյուրը» (1981), «Բոգդան Սալթանով» (գիրք 1, 2, 1980, 1985), «Րաֆֆի: Կենսագրական վիպերգութիւն» (2002) պատմավեպերն ու պատմվածքները:

ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց. (1986), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1979):

Երկ. Երկերի ժող., հ. 1–3, Ե., 1972–76: Ընտիր երկեր, Ե., 1989:



Հովհաննես Ղուկասյանի *«Ոսկան Երևանցի» (1988, Ե., «Սովետական գրող») գրքի տիտղոսաթերթը*

ՂՈՒԿԱՍՅԱՆ Մարգո Գևորգի (17.4.1927, Լենինական–27.4.2013, Երևան), գրող, հրապարակախոս: Վաստ. լրագրող (1986): Ավարտել է ԵՊՀ (1950): 1950–67-ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում, 1967–98-ին՝ *«Գարուն»* ամսագրի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ղ-ի «Բաց նամակ երկու միլիոն հասցեով» (1974), «Նախնիների շառավիղը» (1977), «Ռիկի շան պատմությունը» (1981), «Մենախոսություն» (1983), «Տեսքդ պահեմ աչքերիս մեջ» (1987), «Ո՞ւր է կղզյակն Սևանա» (1999), «Երկնքում արև կա» (2000), «Մի կյանքի պատմություն» (2001), «Քառակերտ հրաշքներ» (2005), «Վկայություն քսաներորդ դարի» (2005), «Սպանել խավարը» (2007), «Անվերնագիր» (2011), «Գլխավոր աստղի տարին» (2011) հրապարակախոս. նյութերի, պատմվածքների, ակնարկների ժող–ները:

ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1974), ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1985) և Գրական ամենամյա (2001) մրց–ներ:



Մարգո Ղուկասյանի *«Վկայություն քսաներորդ դարի» (2005, Ե., «Առաքելություն Հայաստան») գրքի կազմը*

ՂՈՒԿԱՍՅԱՆՑ Հայրապետ (1845, Շամախի–1920, Բաքու), մանկավարժ, հրապարակախոս, հաս. գործիչ, թարգմանիչ: Ուսուցիչ և տեսուչ է եղել Շամախու հոգևոր, Ալեքսանդրապոլի Արղության–Սահականուշյան, Թիֆլիսի մի շարք դպրոցներում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1896-ին ձեռնադրվել է քահանա՝ Գարեգին անունով:

Գերմ–ից թարգմանել է մանկավարժ Ադոլֆ Դիստերվեգի «Հիմնական դիդակտիքական կանոններ» (1880, Ալեք–պոլ, Գևորգ Սանոյանի


ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԿՈՎԿԱՍՈՒ ՀԱՅՈՑ ՄԷՋ
1886

Հայրապետ Ղուկասյանցի *«Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ» (1886, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*



Ղուրանի *առաջին սուրայի պատկերազարդումներից (նկարիչ՝ Հաթաթ Ազիզ Էֆենդի)*

տպ.) ուսումնասիրությունը, աշխարհաբարի է փոխադրել «Եղիշէի պատմութիւնը Վարդանի եւ հայոց պատերազմի համար» (1891, Թ., «Արոր» տպ.) երկը:

Լույս են տեսել Ղ-ի «Համառօտ հայեացք մայրենի լեզուի ուսման վերայ» (1874, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Դասագիրք ընթերցանութեան...» (1875, նույն տպ., վերահրտ.՝ 5 անգամ), «Ընդհանուր պատմութիւն» (1880, Թ., Սվսես Վարդանյանի տպ.), «Քերականութիւն գրաբար լեզուի հայոց...» (1884, Թ., Հովհաննես Սարտիրոսյանի տպ.) դասագրքերը, «Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ» (1886, Թ., Սարկիանոս Ռոտինյանի տպ.) աշխատությունը:

ՂՈՒՐԱՆ (<արաբ.՝ Quran–ընթերցել), մահմեդականների սր գիրքը: Ղ. Մուհամմեդի (Մահմեդ) քարոզների հավաքածուն է, որտեղ ամփոփված են կրոնադավան., ծիս. և կենցաղային պատվիրաններ, իրավ. դրույթներ, որոնք ներկայացված են որպես խրատներ, առակներ, աղոթքներ, անեծքներ ևն: Ղ. Ալլահի (Աստծու)՝ Մուհամմեդ մարգարեին պատգամած և բանավոր տարածված պատվիրանների ամբողջությունն է, որն ի մի է բերվել, խմբագրվել Աբուբաքր խալիֆի և կանոնարկվել Օսման խալիֆի օրոք՝ 650-ական թթ-ին: Հայտնի է նաև որպես «Օսմանի Ղ.»: Բաղկացած է 114 գլխից (սուրա):

Ղ. արաբ., ինչպես և համաշխ. գրակ-յան մեծարժեք հուշարձան է, իր լեզվով ու ոճով՝ դաս. արաբ-ի անկրկնելի օրինակ: Թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, առաջին անգամ՝ Ռոբերտ Կետոնացին XII դ-ում՝ լատ.:

Համաշխ. պատմագրության մեջ Սեբեոսն առաջիններից է գրավոր տեղեկություն հաղորդել Մուհամմեդի մասին:

Հայ իրականության մեջ հայտնի է Ղ-ի՝ ***Սրեփանոս Լեհացու*** թարգմանությունը լատ-ից՝ թարգմանչի՝ «Այս է գիրք օրինաց հաւգարացուց կամ իսմայէլացուց, որ կոչի Ղուրան: Այսինքն հաւաքումն պատուիրանաց» ծանուցումով (Մատենադարան, ձեռ. № 934, 3109):

Մատենադարանում պահվում է Ղ-ի մեկ այլ՝ XVIII դ-ի թարգմանություն՝ «Գիրք, որ կոչի Ղուրան» (ձեռ. № 2826). թարգմանիչն անհայտ է: Ղ. հայ. ամբողջությամբ թարգմանել է Աբրահամ Ամիրխանյանը (1909, Վառնա, Տոպրի Թոտորով և ընկ. տպ., վերահրտ.՝ 1910, Վառնա, Գնչո Նիկոլովի տպ.): Թարգմանել են նաև ֆրանսից՝ Լևոն Լարենցը (1911, ԿՊ, Հակոբ Ասատուրյան և որդ. տպ.), Հ. Գուրպեթյանը (1912, Վառնա, «Իրաւունքի» տպ.), բնագրից՝ Նուպար Քիլիսլյանը (2004, Տորոնտո), պարսկ-ից՝ Էդվարդ Հախվերդյանը (2006):

Գրկ. **Կոզմոյան Ա.**, *Ղուրանը հայոց մէջ, Ե., 2003:* **Тер-Гевондян А.**, *Армения и арабский халифат, Е., 1977.*

Ճ

Ճ, հայ. այբուբենի 19-րդ տառը, անվանումը՝ «ճե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար և դրանից ձախ՝ կարճ և աջ՝ լայն տարրերից. կարճն ու երկարն իրար են միանում ստորին ծայրերից, ապա կարճը և երկարին թեքությամբ հարող լայնը կրկնվող նուրբով վերին ծայրերից միանում են իրար: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ճ, որպես այբուբենի 19-րդ տառ, նշանակել է հարյուր, հարյուրերորդ: Հարյուրավորների սյան առաջին տառն է, որից հետո եկող տառերը (մինչև Ջ) ավելանում են 100 միավորով: Բյուրի նշանով (Ճ՝) նշանակել է 1 մլն (1 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ճ-մաս 100-րդ):

ՃԱՆԱՉՅԱՆ Մեսրոպ (Պետրոս) Գևորգի (11.1.1908, Անկարա–13.4.1974, Վենետիկ), գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան և Մխիթարյան (1923–27) վարժարաններում, Հռոմի Սբ Անսելմոսի համալսարանի փիլ-յան (1928–31) և աստվածաբանության (1931–35) ֆակ-ներում: Մխիթարյան միաբանության անդամ (1931-ից): 1937-ին տեղափոխվել է Փարիզ, դասավանդել հայկ. վարժարաններում, 1939–42-ին՝ Վենետիկի վարժարանի տնօրեն, 1942–51, 1954–56 և 1971–74-ին՝ ***«Բազմավէպ»***, 1969–71-ին՝ ***«Հայ ընտանիք»*** պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Ճ-ի «Հոգէ տաւիղ» (1954), «Լուսաղբիւր» (1960), «Մեսրոպական» (1963), «Փշրուած քնար» (1973) բանաստեղծությունների ժող-ները, «Պատմութիւն արդի հայ գրականութեան» (հ. 1, 1953), «Հայ գրականութեան նոր շրջանի համառօտ պատմութիւն» (1973), «Լորդ Բայրոնը Սբ Ղազարում» (ֆրանս.՝ 1960), «Սայեաթ-Նովա» (1964), «Ս. Ներսէս Շնորհալիի շարականները» (1975) աշխատությունները, կազմել է «Ծաղկաքաղ արդի հայ գրականութեան» (հ. 1, 2, 1957, 1960) հատընտիրը, «Հայկական մանրանկարչութիւն» (1969, առաջաբ.՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանի) ալբոմը, իտալ. է թարգմանել հայ բանաստեղծների ստեղծագործություններից («Արդի հայ բանաստեղծություն», 1963):

Երկ. Փոլ Վալերի եւ իր բանաստեղծութիւնը, Վնտ., 1947: Հ. Արսէն Ղազիկեան եւ իր թարգմանութիւնները, Վնտ., 1974:

Գրկ. **Տէր-Ներսէսեան Ն.**, *Խմբագրապետը, «Բազմավէպ», 1974, № 1–2:*

ՃԱՆՃԱՊԱՆՅԱՆ Էմին Հովհաննեսի (1.11.1928, Աշտարակ–20.5.2004, Երևան), հրատարակիչ, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1955): 1955-ից աշխատել է Հայպետհրատում, հետագայում՝ ***«Սովետական գրող»*** հրատարակչությունում (1982–95-ին՝ փոխտնօրեն, 1995-ից՝ գլխ. փորձագետ):





Մեսրոպ Ճանաշյանի *«Պատմութիւն արդի հայ գրականութեան» (հ. 1, 1953, Վնտ.) գրքի կազմը*


Ճաշոց



1686–88 (Վնտ., Գասպար Սահրադյանի և Թադևոս Համազասպյանի տպ.), տիտղոսաթերթը



1749–50 (Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.), գլխա- և լուսանցազարդերով (3-րդ) էջ



1872 (Վաղ-պապ), տիտղոսաթերթը

Թարգմանել է Ա. և Բ. Ստրուգացկիների «Բոսորագույն ամպերի երկիրը» (1977) վեպը:

«ՃԱՇԱԿ ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ», պատմ., գիտ., բանասիր. ամսագիր, վերջում՝ եռամսյա: Լույս է տեսել 1886–89-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Մադաթիա Գարագաշյան, Հակոբ Գուրգեն: Գրաբարով տպագրել է պատմագիտ. հոդվածներ (Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը՝ ըստ Կորյունի, հայոց լեզվի ծագումն ու զարգացումը, տպագրության գյուտն ու նրա ազդեցությունը մշակույթի առաջընթացի վրա ևն), հայ մատենագրության վերաբերյալ բանասիր., լեզվաբ. ուսումնասիրություններ, հայ և օտար (Ա. Լամարթին, Վ. Հյուգո, Ժ. դե Լաֆոնտեն, Մ. Վոլտեր, Ժ. Ռասին, Ֆ. Ֆենելոն և ուր.) հեղինակների գրական ստեղծագործություններ, առակներ, աշխարհագր. տեղեկություններ: Ունեցել է գրաբար–աշխարհաբար բառարանային բաժին:

ՃԱՃՈՑ, Տոնամակ, Տոնանամակ, Տարեգիրք, Հայ եկեղեցու ծիսամատյան: Սահմանում է Տերունի տոների տարեկան տոնակարգը՝ համապատասխան ընթերցվածներով: Պարունակում է կեսօրվա («ճաշու») ժամերգության ընթերցվածները և երգասացությունները: Ճ-ի նախն. կազմավորումն ավանդաբար կապվում է Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբոր (I դ.) և Կյուրեղ Երուսաղեմացու անունների հետ: Ենթադրվում է, որ այլ ծիսամատյանների հետ Ճ. հայ. է թարգմանվել և կարգավորվել V դ–ում: Ընթերցվելիք նյութը հիմնականում քաղված է Հին և Նոր կտակարաններից, հատկապես՝ Գործք առաքելոցից, որն սկզբն. շրջանում ընդմիջարկվել է համապատասխան սաղմոններով ու մարգարեական օրհնություններով, իսկ ավելի ուշ՝ նաև շարականներով:

Հայտնի են Ճ-ի երուսաղեմյան, մինչվկայասերյան և վկայասերյան տարատեսակները: Ժամանակի ընթացքում Ճ., մասամբ դավան. նկատառումներով և մասամբ անփութության հետևանքով, ենթարկվել է զանազան փոփոխությունների, որոնք VIII դ–ում վերացրել է *Հովհաննես Գ Օձնեցի* կաթողիկոսը: XI դ–ում *Գրիգոր Բ Վկայասեր* կաթողիկոսի ջանքերով Ճ. է մուտք գործել նաև տոմար. տոնակարգը՝ տոների ամսաթվերի նշումներով: Նույն շրջանում Տերունի տոների կողքին Ճ–ում իրենց ընթերցվածներով սահմանվել են նոր հայկ. տոներ՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին, Թարգմանչաց, Վարդանանց, Ղևոնդյանց, Վահան Գողթնացուն և Հայ եկեղեցու մյուս սբ հայրերին, վկաներին և պատմ. իրադարձություններին, որոնց շնորհիվ ծիսամատյանի դիմագիծն առավել ազգայնացել է: Ճ-ի հնագույն ձեռագրերը VIII–IX դդ–ից են: Հայտնի են նաև անվանական Ճ-ներ՝ *«Հետում Բ թագաւորի Ճաշոցը»* (1286, Մատենադարան, ձեռ. № 979), «Մինաս նկարչի Ճաշոցը» (1460, Արծկե).

Ճ-ներ տպագրվել են՝

1686–88-ին Վենետիկում՝ Գասպար Սահրադյանի և Թադևոս Համազասպյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ճաշոց գիրգ գեղեցկատիպ եւ վայելուչ…» (1222 էջ, 6º, 32,5 x 19 սմ):

1712–14-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (1174 էջ, 6º, 22,5 x 15 սմ):

1722-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (976 էջ, 6º, 28,5 x 18 սմ):

1732-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ճաշոց գիրք փոքրագունեղ…» (632 էջ, 4º, 17,3 x 2,3 սմ):

1742–43-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (724 էջ, 4º, 17,8 x 12,2 սմ):

1749–50-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (812 էջ, 4º, 17 x 12 սմ):

1777-ին Հռոմում՝ առանց տպարանի հիշատակության: Ա տիտղթ-ին՝ «Ճաշոց այս է գիրք ընթերցուածոց եւ Աւետարանաց պատա-

րագի...», Բ–ինն՝ «Ճաշոց այս է գիրք յորում կարգին իւրաքանչիւր աւուր պատշաճ պատարագի...» (797 էջ, 4º, 25,8 x 15,4 սմ): Տպակից է Խորհրդատետրի, որը զետեղված է Ճ–ի մեջտեղում:

1793–94–ին Կ. Պոլսում՝ Սայր դպրատան տպարանում: Տիտղթ–ինն՝ «Ճաշոց փոքր...» (532 էջ, 4º, 19,7 x 14,2 սմ):

1799–1801–ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում: Ա տիտղթ–ինն՝ «Ճաշոց գիրք չքնաղատիպ...» (827 էջ, 4º, 32 x 19 սմ):

Տպագրվել է նաև 1839–[1840] և 1872–ին (Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1873–ին (հ. 1–2, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.):

«ՃԱՌ ԱՌ ԿԱՐԴԻՆԱԼՍ», Հռոմի Պիոս VI պապի ճառը: Տպագրվել է 1781–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (11 էջ, 6º, 20,5 x 12,4 սմ):

«ՃԱՌԱԳԱՅԹ», քաղ., հաս., գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1947–52–ին Ստամբուլում: Արտոնատեր–խմբագիր՝ Խաչիկ Ամիրյան, խմբագիրներ՝ Հակոբ Սվասլյան, Նուպար Ազարյան: Լուսաբանել է ստամբուլահայ համայնքի հաս–մշակութ. կյանքը: Կառավարության ուշադրությունը հրավիրել է ազգ. փոքրամասնությունների (մասնավորապես՝ հայերի) վերաբերյալ միջազգ. համաձայնագրերի (Լոզանի դաշնագիր, 1923) կատարման վրա, պահանջել արևմտահայերի Ազգ. սահմանադրությամբ (1860) ստեղծված վարչ. մարմինների վերականգնումը: Տպագրել է խորհրդահայ գրողների ստեղծագործություններից, լուրեր՝ Խորհրդ. Հայաստանի կյանքի տարբեր բնագավառներից, Սփյուռքի գաղթավայրերից:

ՃԱՐՄԱՆԴ (<ֆրանս. agrafe – ագրաֆ, կեռիկ), ձեռագիր և հնատիպ գրքերի մետաղե կրկնակազմերի գոտենման զարդակապ՝ կազմի փեղկերը փակելու համար:

ՃԱՐՅԱՆ Աբրահամ [1.9.1819, Կ. Պոլիս–12.11.1892, Վենետիկ (Սբ Ղազար կղզի)], մանկավարժ, թարգմանիչ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1840–ից): Եղել է Կ. Պոլսի Գատըգյուղի Մխիթարյան հայրերի դպրոցի և Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարանի տեսուչ:

Լույս են տեսել Ճ–ի «Համառօտ երկրաչափութիւն...» (1843), «Սկզբունք պատմութեան ազգաց...» (1846), «Պատմութիւն գաղղիացւոց» (հ. 1–2, 1849, բոլորը՝ Սբ Ղազարի տպ.) դասագրքերը: Թարգմանել է Գ. Սալլուստիոսի, Պ. Տակիտոսի, Թուկիդիդեսի, Պլատոնի և ուր. գործերից:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», պատկերազարդ ամսագիր: Հայաստանի շինարարների և ճարտ–ների միությունների պաշտոն. հանդես: Հրատարակիչ՝ Հայաստանի շինարարների միության «Միդիս–Շար» ընկերություն: Լույս է տեսնում 2006–ից Երևանում: Խմբագիրներ՝ Վոլոդյա Կիրակոսյան, Անահիտ Պողոսյան (2008–ից): Լուսաբանում է միությունների գործունեությունը, քաղաքաշինության խնդիրները, զարգացումները, ներկայացնում է հայկ. և արտերկրի ճարտ. մշակույթը, ոլորտի երախտավորներին և պատմությունը: Անդրադառնում է պատմ. հուշարձանների պահպանության խնդրին, հարակից արվ–ներին ևն:

ՀԺՄ՝ «Ազգարար» մրց. (2012):

ՃԵՊԵՃՅԱՆ Ռոբերտ (Ռոպեր) Ավետիսի [2(15).8.1909, Այնթապ (Կիլիկիա)–2000, Հալեպ], ակնաբույժ, հաս. գործիչ, հրատարակիչ: Բժշկ. գիտ. թեկնածու (1970): Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը (1934): Ճ–ի նախաձեռնությամբ ՀՀ են տեղափոխվել նկարիչներ Արմիսի և Ժ. Օրագյանի որոշ գործեր, բազմաթիվ ձեռագրեր, հնատիպ գրքեր, հայկ. ժանյակների հավաքածու ևն: 1968–ին ստեղծել է ՀԲԸՄ «Մատենագիտական հանձնախումբ»: Հրատարակել է ցեղասպանությանը և տարագիրներին վերաբերող նյութեր, ալբոմներ:

Լույս է տեսել Ճ–ի «Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւններ» (1999, Հալեպ) ժող–ը:




Աբրահամ Ճարյանի *«Պատմութիւն գաղղիացւոց» (հ. 1, 1849, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*




Ճարմանդ *գրքի*



«Ճարտարապետություն, շինարարություն», *2006–ից, Երևան (№ 5, 2011)*



«Ճշմարիտ իմաստութիւն» *(1718, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



«Ճշմարտութիւն յաւիտենական» *(Կառլո Ռիսոլի, 1750, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«Ճռաքաղ», *1858–62, Մոսկվա (№ Ա, 1858)*

«ՃԷՐԻՏԷԻ ՇԱՐԳԻՅԷ» («Օրագիր արևելյան»), հայատառ թուրք. քաղ., գիտ., ազգ. օրաթերթ: Լույս է տեսել 1885–1913-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Տիգրան Ճիվելեկյան, Հակոբ Վարժապետյան, Աբիկ Մյուպահաճյան, Օննիկ Պալգճյան: Հաջորդել է «Թէրճեմանը Էֆքեար» («Թարգման մտածումների», 1877–85, խմբագիրներ՝ Հովսեփ ***Վարդանյան***, Անտոն Ալիք, Բյուզանդ ***Քեչյան***, Տ. Ճիվելեկյան) թերթին: Ունեցել է պահպանող. ուղղվածություն, տպագրել է գեղ. ստեղծագործություններ, բանավեճեր, զրույցներ, հայ գրակ-յանն ու թատրոնին, դրանց երախտավորներին նվիրված հոդվածներ, լուսաբանել է արևմտահայ հաս-մշակութ. կյանքը:

«ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ», դավանաբան. զրույցների գիրք՝ թարգմանված իտալ-ից. յուրաքանչյուր զրույցը համապատասխանում է շաբաթվա օրերից մեկին: Տպագրվել է 1718-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Ճշմարիտ իմաստութիւն կամ Խոկմունք ոմանք հզօրագոյնք առ ի ածել զսիրտս մարդկան…» (144 էջ, 8º, 11,6 x 6,8 սմ):

«ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ», Կառլո Ռիսոլիի քրիստ. վարդապետության գիրքը: Տպագրվել է 1750-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Թարգմ.՝ Պետրոս վրդ. Թիֆլիսեցու (530 էջ, 8º, սկզբի և վերջի մամուլները՝ 4º, 13,5 x 8 սմ):

«ՃՌԱՔԱՂ», բանասիր., կրոն. երկշաբաթաթերթ, ամսագիր (1860-ից): Լույս է տեսել 1858–62-ին Մոսկվայում, 1858-ին և 1862-ին կոչվել է «Ժողովածու»: Խմբագիր-հրատարակիչներ՝ Սներ ***Սներյան***, Զարմայր ***Սներյան:*** Հրատարակվել է հիմնականում գրաբարով: Մեծ տեղ է հատկացրել կրոն. թեմաներով նյութերին, եկեղեց. կյանքի իրադարձություններին, ծանոթացրել է Հայ եկեղեցու ծեսերին ու ավանդույթներին: Բանավիճել է ***«Հիւսիսափայլ»-ի*** հետ, հատկապես՝ լեզվի, կրոնի ու եկեղեցու հարցերում: Տպագրել է հատվածներ հայ մատենագիրների և պատմիչների գործերից, տեղեկություններ՝ գիտ. հայտնագործությունների մասին, նյութեր՝ Ռուսաստանի պատմության վերաբերյալ: Գրական բաժնում զետեղվել են Սներյանների, աշուղ Սեյադի (Պետրոս Սադաթյանց), Մոսկվայի Լազարյան ճեմարանի սանների և ուր. ստեղծագործություններ:

ՃՈՒԼԱՐՏՅԱՆ Սիմոն (20.10.1811, Կարին–14.2.1884, Վենետիկ), բանահավաք, բանասեր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: Խմբագրել և հրատարակել է հայկ. («Առածք ազգայինք», 1880, համառոտած թարգմ. ֆրանս. և անգլ.՝ 1888, ընդգրկում է Կ. Պոլսի, Վանի, Ալաշկերտի, Կարինի, Զուղայի, Երևանի, Թիֆլիսի, Ղրիմի 400 առած-ասացվածք) և թուրք. («Տաճկական առածք», 1882) առած-ասացվածքների ժող-ները:

Մ

Մ, հայ. այբուբենի 20–րդ տառը, անվանումը՝ «մեն»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ տարրերից. 2 երկարները նուրբով իրար են միանում ստորին ծայրերից, իսկ լայնը կապվում է երկարիին աջ կողմի վերին ծայրից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Մ, որպես այբուբենի հարյուրավորների սյան 2–րդ (20–րդ) տառ, նշանակել է երկու հարյուր և երկուհարյուրերորդ, բյուրի նշանով (Մ̿)՝ 2 մլն (2 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Մ–մաս 200–րդ):

ՄԱԳԱՂԱԹ, **պերգամենտ**, կենդանիների հատուկ մշակված կաշի, օգտագործվել է որպես հիմն. գրանյութ՝ թղթի հայտնագործումից առաջ: Ստեղծվել է Փոքր Ասիայի Պերգամոն քաղաքում (այստեղից էլ՝ պերգամենտ) Եվմենես II–ի օրոք (մ. թ. ա. 197–160/159): Աշակման եղանակների բաղադրատոմսեր պահպանվել են հայ. բազմաթիվ ձեռագրերում: Մ. առաջինը լայնորեն տարածվել է Եգիպտոսում, փոխարինել է ***պապիրուսին***, որով փոխվել է գրքի ձևաչափը. ***գլանափաթեթի*** փոխարեն այն ստացել է ժամանակակից գրքի ***(կոդեքս–գիրք)*** ձևը: Գրելիս թերթերը ծալել են, եզրերից ուղղանկյունաձև կտրել և ստացել գրքի 4 էջ (1 ***փեշր***): Գրատպությունից առաջ Մ–ի վրա են գրվել միջնադարի բոլոր գրավոր հուշարձանները: Թղթի հայտնագործությունից հետո Մ. որոշ ժամանակ պահպանվել է որպես գրանյութ, օգտագործվել նաև տպագրության համար: Հետագայում գործածվել է հիմնականում որպես գրքապանակ (կազմանյութ):




Մեզ հասած առաջին հայկ. մագաղաթե մանրանկարները VI–VII դդ–ի են (տես *«Էջմիածնի Ավետարան»*), առաջին հայ. ամբողջ. մագաղաթե ձեռագիրը *«Վեհամոր Ավետարան»*–ն է (VII դ.), իսկ հայ. ամբողջ. թվագրված ձեռագիրը՝ *«Լազարևան Ավետարան»*–ը (887): Հայ. ամենամեծ մագաղաթե ձեռագիրը *«Մշո Շառնուրիկ»*–ն է (1200–02, չափերը՝ 55 x 70,5 սմ, քաշը՝ 28 կգ), որը պատրաստված է արջառի և երինջի կաշիներից, իսկ ամենափոքրը՝ Տոնացույցը (1434, չափերը՝ 3,4 x 4 սմ, քաշը՝ 19 գ):



Հայերեն ամենամեծ և ամենափոքր (աջ լուսանցքում) մագաղաթե ձեռագրերը (Մատենադարան, ձեռ. № 7729, № 7728)

ՄԱԴԱԹՅԱՆ Աշոտ (1884, Թեհրան–22.4.1965, Ստամբուլ), դերասան, ռեժիսոր, թարգմանիչ: Թուրք. է թարգմանել Գ. Սունդուկյանի «Պեպո» (բեմադրել է 1934–ին) կատակերգությունը, Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման են, հայ.՝ Ա. Դյումա–որդու «Կամելիազարդ տիկինը» վեպը:




Արշակ Մադոյան



Ա. Մադոյանի *«Ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկցին» (2011, Էջմիածին) գրքի կազմը*

Մադրասի հայկական տպագրություն



«Նումայ Պոմպիլիոս» (Ֆլորիան, 1812, Նազար-Շամրյան եղբ. տպ.) գրքի տիտղոսաթերթը

ՄԱԴԱԹՅԱՆ Եղիշե Միքայելի (1865, Շուշի–1918, Խարկով), գրականագետ, թարգմանիչ: Սովորել է Լազարյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի համալսարանում (1884–88): 1890–92-ին՝ Շուշիի հոգևոր դպրոցի տեսուչ: Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում:

Լույս է տեսել Մ-ի «Փաւստոս Բուզանդ» (1890, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունը: Հ. Տենի, Գամառ-Քաթիպայի, Ս. Շահազիզի մասին գրականագիտ. հոդվածներով հանդես է եկել «Նովոյե օբոզրենիե» (ռուս.), «Արարատ», «Մուրճ» պարբ-ներում: Թարգմանել է Ջ. Բայրոնի, Պ. Բերանժեի, Մ. Լերմոնտովի ստեղծագործություններից:

ՄԱԴԵՅԱՆ (Մատեյան) Հարություն Մարտիրոսի [10.4.1904, Ադանա (Կիլիկիա)–5.7.1990, Բեյրութ], կուս. գործիչ, լրագրող: Մասնակցել է Լիբանանի «Սպարտակ երիտասարդություն» կոմ. կազմակերպության (1924) հիմնադրմանը (եղել է նաև քարտուղարը): Ռաքքայի (Սիրիա) «Սպարտակ» (1927), Բեյրութի «Նոր փարոս» (1925), «Կարմիր արշալոյս» (1931–32), «Մարտակոչ» (1934), ***«Ժողովուրդի ձայն»*** (1938, 1942–48), ***«Յառաջ»*** (1957–64) թերթերի, 1971–90-ին՝ Լիբանանի ԿԿ «Ալ-Նիդա» պաշտոնաթերթի ***«Կանչ»*** հաս-քաղ. և գրական հավելվածի պատասխանատու խմբագիր:

ԽՍՀՄ Ժողովուրդների բարեկամության շքանշան (1974):

ՄԱԴՈՅԱՆ Արշակ Գևորգի (ծ. 1.7.1938, Ախալքալաք), բանասեր, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1985), պրոֆ. (1994): Ավարտել է ԵՊՀ (1961): 1962–66-ին աշխատել է ԵՊՀ հրատ-ում, 1966-ից՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրությունում, 1972-ից, միաժամանակ՝ ԵՊՀ հայագիտ-յան ԳՀ կենտրոնում (1986–2006-ին՝ վարիչ), 2006–09-ին՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ում: 2009-ից ***«Էջմիածին»*** ամսագրի խմբագիրն է:

Լույս են տեսել Մ-ի «Խորհուրդ մեծ եւ սքանչելի», «Երուսաղէմ, Երուսաղէմ...» (երկուսն էլ՝ 1999), «Զավակներ լույսի, առաքինության» (2001), «Հայագիտության դասականները միասնական ուղղագրության մասին» (2005), «Ամենեքեան, որ սուր առնուցուն՝ սրով անկցին», «Գեորգ Ջ Չորէքչեան, կաթողիկոս Ամենայն Հայոց» (երկուսն էլ՝ 2011), «Միջնադարյան հայկական պոեմը [ԺԱ–ԺԶ դարեր]» (համահեղ., 1985), «Առաքել Սյունեցի: Բանաստեղծը» (1987) աշխատությունները, կազմել է Առաքել Սյունեցու «Ադամգիրք»-ը (1989), «Հայ միջնադարյան քնարերգություն» (համահեղ., 1996) ժող-ի քնն. բնագրերը: Մ-ի և Հ. Միրզոյանի աշխատասիրությամբ տպագրվել է Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Լուծմունք «Սահմանաց գրոց»»-ը (2004): Մ. հրատարակել է Գրիգոր Մարաշեցու, Տերտեր Գրիչ Երևանցու, Հակոբ Նետրարենցի, Գրիգոր Գրիչ Մոկացու բանաստեղծություններից, աշխարհաբարի է փոխադրել և ծանոթագրել Ստեփանոս Շահումյանից Ղուկաս Սեբաստացու գրառած «Դավիթ Բեկ կամ Պատմություն Ղափանցոց» (1992), «ԺԵ–ԺԸ դարերի ուղեգրություններ» (գիրք 1, 2, 1997, 2004), «Հայկական վարքեր և վկայաբանություններ V–XV դդ.» (1998), Թովմա Մեծոփեցու «Պատմագրական երկեր» (2003) գրքերը:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2008):

Գրկ. Արշակ Գեւորգի Մադոեան: Մատենագիտութիւն, Ե., 2008:

ՄԱԴՐԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հայկ. առաջին տպարանի հիմնադրումը կապված է XVIII դ-ի 2-րդ կեսին հնդկահայ գաղութում ծնունդ առած հայ ազգ-ազատագր. գաղափարախոսության հետ: Տպարանը 1771-ին (այլ տվյալներով՝ 1772-ին) հիմնադրել է Շահամիր ***Շահամիրյանը*** և կոչել իր վաղամեռիկ որդու՝ Հակոբ Շահամիրյանի անունով: Տպագրվել են «Այբբենարան» (1772), Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» (1772), Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» (1773), Մեսրոպ Երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց եւ Վրաց» (1775) և այլ գրքեր:

2-րդ տպարանը հիմնադրել է Հարություն ***Շմավոնյանը*** 1789-ին: Այստեղ տպագրվել են Թ. Սոգինյանցի «Տետրակ որ կոչի Ողբ Հայաստանեաց» (1791), Հ. Արղությանցի «Օրինակ հանդիսաւոր ծանուցման եւ ողբոյ...» (1792), Պաղտասար Դպիրի «Քերականութիւն» (հ. 1–2,

1791), Ներսես Շնորհալու «Գիրք որ կոչի Յիսուս Որդի» (1792), «Գիրք Պորփիւրի, որ կոչի Ներածութիւն» (1793), «Գիրք անուանեալ ղեկաւար մանկանց» (1797), Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց» (1797), անգլ–հայ. «Փոքրիկ բառագիրը» (1803) և այլ երկեր: Հ. Շմավոնյանի ամենամեծ երախտիքը և նրա տպարանի դարակազմիկ հրատ–ը հայոց առաջին պարբ–ն է՝ ***«Ազդարար»***–ը (1794–96):

Մադրասի հայկական տպագրություն



XIX դ–ի սկզբներին Մադրասում գործել են ևս 2 հայկ. տպարաններ, որոնցից մեկը (գոյատևել է 3–4 տարի) պատկանել է Սարգիս Ծատուր Աղավալյանին. տպագրել է «Նոր տետրակ այբուբենական» (1809), Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսեայ քաղաքի» (1810), Հովհաննես Միքուզի «Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն» (1812) և այլ գրքեր: Մադրասահայ գաղութի վերջին տպարանը Հակոբ և Հովսեփ Նազար–Շամրյան եղբայրներինն էր: Հայտնի են այս տպարանի 2 կարևոր հրատ–ները՝ ֆրանսիացի հեղինակներ Ֆլորիանի «Նումայ Պոմպիլիոս» (1812) վեպը և Վոլտերի «Ողբերգութիւն ի վերայ մահուանն Յուլիոս Կեսարու» (1818, թարգմ.՝ Հակոբ Նազար–Շամրյանի) ողբերգությունը: Այնուհետև Մադրասը դադարել է հայ տպագրության և մշակույթի կենտրոն լինելուց՝ զիջելով Կալկաթային:

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895:* **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե.,1958, 2012:*

ՄԱՋՄԱՆՅԱՆ Համբարձում Գալուստի [7.8.1892, գ. Նալբանդ (այժմ՝ գ. Շիրակամուտ՝ ՀՀ Լոռու մարզում)–12.5.1967, Երևան], թարգմանիչ: Ավարտել է Երևանի հոգևոր սեմինարիան (1919): Ռուս–ից թարգմանել է Ա. Պուշկինի, Ն. Օստրովսկու, Ա. Չեխովի, Լ. Տոլստոյի, Ա. Ֆադեևի, Ն. Գոգոլի, Ֆ. Դոստոևսկու, Մ. Լերմոնտովի, Մ. Շոլոխովի, Կ. Սիմոնովի (չափածո) և այլ հեղինակների ստեղծագործություններից:

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ», գիտամեթոդ. քառամսյա հանդես: ՀՊՃՀ–ի հրատ.: Լույս է տեսնում 2005–ից Երևանում: Հիմնադիր–խմբագիր՝ Վանիկ Զաքարյան: Տպագրում է մաթեմատիկայի տարբեր բնագավառներում ժամանակակից գիտ. նորություններին, ինչպես նաև բարձրագույն դպրոցում մաթեմատիկայի դասավանդման մեթոդաբանությանը վերաբերող հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով):



«Մաթեմատիկան բարձրագույն դպրոցում», *2005–ից, Երևան (№ 8, 2012)*


«ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ», գիտամեթոդ. երկամսյա հանդես: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 1998–ից Երևանում: Խմբագիր՝ Համլետ Միքայելյան: Հանդեսում վերլուծվում են մաթ. կարևոր հիմնահարցեր, տրվում են մեթոդ. ցուցումներ, կարևորվում առաջավոր փորձի փոխանակումը, օլիմպիադաների կազմակերպումը, տպագրվում են թեստային աշխատանքներ և խնդիրներ:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Արտաշես Սիմոնի [22.3.1922, գ. Տուֆաշեն (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–3.2.2004, Երևան], ձեռագրագետ, պատմաբան: Պատմ. գիտ. թեկնածու (1970): Կարեն ***Մաթևոսյանի*** հայրը: Ավարտել է ՀՊՄԻ (1951): 1959–ից աշխատել է Մատենադարանում. 1994–ից՝ հայ գրի, գրչության արվ–ի և գրչության կենտրոնների ուսումնասիրության թեմայի ղեկավար: 1980–ից դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:




«Մաթեմատիկան դպրոցում», *1998–ից, Երևան (№ 5, 2012)*

Լույս են տեսել Մ–ի «Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (համահեղ., 1984), «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը» (1995), «Մեծովավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)» (1997), «Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր» (1998), «Գրիգոր Ծերենց Խլաթեցի» (2000) աշխատությունները, «Քաջերի երկիր Քաջարան» (2008) փաստավավերագր. ակնարկը: Մ–ի աշխատասիրությամբ տպագրվել է «Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի» (հ. 1, 2, 1995, 1999, նմանա–



Արտաշես Մաթևոսյանի *«Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)» (1997, Էջմիածին) գրքի կազմը*



Հրանտ Մաթևոսյան



Հ. Մաթևոսյանի *«Երկեր»-ի (հ. 1, 1985, Ե., «Սովետական գրող») կազմը*

հանություն) ժող–ը: Կազմել է «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դ.» (1984), «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դդ.» (1988) գրքերը:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (1996):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Կարեն Արտաշեսի (ծ. 7.3.1958, Երևան), պատմաբան, խմբագիր: Արվեստագիտ. դ–ր (2008), պրոֆ. (2015): Արտաշես *Մաթևոսյանի* որդին: Ավարտել է ՀՊՄԻ (1989): 1980–2004–ին՝ ՀԱՊ–ի գիտաշխատող (1987–95–ին՝ բաժնի վարիչ, 1995–2004–ին՝ գիտքարտուղար), 2005–ից աշխատում է Մատենադարանում, 2009–ից՝ բաժնի վարիչ, 1994–96–ին՝ «Լուսաւորիչ» թերթի, 1997–2000–ին՝ ***«Քրիստոնյա Հայաստան»*** երկշաբաթաթերթի, 2001–ին՝ «Գիտելիք» ամսագրի, 2002–08–ին՝ «Հայ արվեստ» եռամսյա մշակութ. հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Մ–ի «Արուճ» (1987), «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները» (2009), «Սիմիկ» (2010), «Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը» (2011), «Հավուցթաոի վանքը» (2012), «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» (համահեղ. և կազմ.՝ Մ., 2013) աշխատությունները, «Անի–Շիրակի պատմության էջեր» (2010) հոդվածների ժող–ը:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հրանտ Իգնատի [12.2.1935, գ. Ահնիձոր (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–18.12.2002, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], գրող: Հրաչյա *Մաթևոսյանի* եղբայրը: Ավարտել է ՀՊՄԻ (1962), Մոսկվայի բարձրագույն սցենար. դասընթացները (1967): 1955–58–ին աշխատել է Երևանի № 2 տպարանում՝ որպես տողաշար– լինոտիպիստ, 1958–62–ին՝ «Սովետական գրականություն» ամսագրի և «Գրական թերթի» խմբագրություններում, 1996–2001–ին՝ ՀԳՄ նախագահ:

Լույս են տեսել Մ–ի «Օգոստոս» (1967), «Մեր վազքը» (1978), «Ծառերը» (1978), «Քո ցեղը» (ռուս., 1984) վիպակների և պատմվածքների ժող–ները, որտեղ պատկերել է հայ գյուղը, անդրադարձել անհատի հոգևոր–բարոյական նկարագրին, արծարծել գոյաբան. և բարոյահոգեբ. խնդիրներ:

Մ. հեղինակ է նաև «Չեզոք գոտի» (1983) պիեսի և «Տերը» (1983) կինովիպակների ժող–ի: Նրա երկերի հիման վրա և նրա սցենարներով նկարահանվել են «Մենք ենք, մեր սարերը» (1969), «Աշնան արև» (1977), «Տերը» (1984) կինոնկարները:

2004–ին ՀԳՄ–ն սահմանել է Մ–ի անվ. մրց.: Մ–ի անունով Երևանում կոչվել են դպրոց, փողոց: Վանաձորում և Շամուտ գյուղի մերձակայքում կանգնեցվել են Մ–ի հուշարձանները:

ՀԽՍՀ (1983), ԽՍՀՄ (1984) Պետ. մրց–ներ:

Երկ. Երկեր, հ. 1–2, Ե., 1985: Հափրնփիփ, հ. 1–2, Ե., 2005: Սպիտակ թղթի առջև (հոդվածներ), Ե., 2004: Ես ևս եմ (հարցազրույցներ, կազմ. և խմբ.՝ Ֆ. Մելոյանի), Ե., 2005:

Գրկ. **Աղաբեկյան Կ.**, *Հրանտ Մաթևոսյան: Ծոմակոտրի վիպաապը, Ե., 1988:* **Հալլաջյան Մ.**, *Հրանտ Մաթևոսյանի բառապաշարը, Ե., 2005:* **Գրիգորյան Վ. Ռ.**, *Հրանտ Մաթևոսյան: Ստեղծագործությունը, Ե., 2013:*

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հրաչյա Իգնատի, **Հրաչօ** [ծ. 12.5.1937, գ. Ահնիձոր (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], արձակագիր, հրապարակախոս: Հրանտ ***Մաթևոսյանի*** եղբայրը: 1952–55–ին սովորել է Երևանի «Պոլիգրաֆ» պրոֆտեխուսումնարանում, ավարտել է ԵՊՀ (1966): 1956–61–ին աշխատել է Երևանի № 2 տպարանում՝ որպես տողաշար–լինոտիպիստ, 1963–64–ին՝ կոլեկտիվների միավորման հրատարակչությունում, 1965–66–ին՝ «Ոզնի» հանդեսի, 1966–74–ին՝ «Ավանգարդ», 1992–2000–ին՝ «Հայաստան» թերթերի խմբագրություններում՝ որպես բաժնի վարիչ, 1974–90–ին՝ ***«Հայրենիքի ձայն»*** (1965–96) շաբաթաթերթի պատ. քարտուղար:

Լույս են տեսել Մ–ի «Մաճկալներ» (1977), «Բարի մարդկանց հովիտը» (1982), «Աստղերի հետ թռչում էր իմ ձին» (1983), «Ալևորներ» (1984), «Գունավոր փոքրիկ Ջեքսին» (1986), «Մոլորյալ ժամ» (1999), «Տուն մոր համար» (2003) պատմվածքների և վիպակների ժող–ները, «Լքված ջրաղացը» (2007), «Ոսկեմատյան Դրմբոն» (2008), «Հարցերի երկիր Հայաստանս» (2010) և այլ երկեր:

ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (2007) և Վ. Անանյանի անվ. (2012), ԼՂՀ Եղիշեի անվ. (1992, 2003) մրց–ներ, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2007, 2012):

Երկ. Խաչքար Հայաստան: Արձակ, Ե., 2002: Միրով: Էջեր «Միրո մատյան» գրքից, Ե., 2003: Սարերիդ նման դու հպարտ ապրիր, Ե., 2004: Կայծահեղ Հրանտ, Ե., 2005: Սարաշեղջ Արագած, Ե., 2006:

ՄԱԹՈՍՅԱՆ Ռոբերտ Սամվելի (ծ. 11.11.1945, ք. Սպիտակ), խմբագիր, սցենարիստ: Ավարտել է ԵՊՀ (1968): 1969–90-ին՝ *«Ֆիլմ»* թերթի հիմնադիր-խմբագիր, 1991–93-ին՝ «Գեղարվեստ» պարբ-ի խմբագիր, 2008–12-ին՝ *«+Կինո»* հանդեսի համախմբագիր, 2012-ից՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Հարցազրույց Ձեզ համար» (1977), «Հենրիկ Մալյան» (1982), «Հարդագողի կինոճանապարհով» (2007), «Անկրկնելի կինոճանապարհ» (2011) գրքերը: Հեղինակ է նաև կինոսցենարների [«Վահրամ Փափազյան» (1984), «Զորավար Անդրանիկ» (1984), «Վանա վարպետը» (1986), «Դիմանկարի էսքիզ» (2006, Մ. Շոլոխովի անվ. հուշամեդալ, 2006) ևնվ:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2015):

«ՄԱԼԱԹԻԱՅԻ ԱՒԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան (Մատենադարան, ձեռ. № 10675): Ընդօրինակել և ծաղկել է Թորոս Ռոսլինը 1267–68-ին Հռոմկլայում՝ Հեթում Բ թագավորի որդի Լևոնի և Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի պատվերով): Ձեռագիրը (մագաղաթ, թուղթ, չափերը՝ 22 x 17,2 սմ) բաղկացած է 332 թերթից (երկսյուն), բոլորգիր է: Պատկերազարդված է տերուն. տեսարաններով, ավետարանիչների, Աստվածամոր, Հիսուսի և ուր. դիմապատկերներով, նաև խորաններով, կիսախորաններով, լուսանցազարդերով: Ունի հիշատակարաններ, արծաթե կրկնակազմ՝ ականակուռ, ոսկեզօծ բարձրաքանդակ պատկերներով (կազմարար՝ Առաքել Հնազանդենց):

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, միջնադարյան հայկ. հոգևոր և մշակույթի կենտրոն: Մ. գ. կ-ում ստեղծված մեզ հայտնի հնագույն՝ 1057-ին Թովմաս Գրիչի ընդօրինակած հարուստ նկարազարդումներով ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 3784) Փոքր Հայքի մի քանի այլ ձեռագրերի հետ ձևավորել է մանրանկարչ. ինքնատիպ ուղղություն: Հայտնի են 1092, 1125, 1137-ին Մալաթիայում հուն-ից հայ. թարգմանված մի շարք վարքեր: XIII դ-ում այստեղ գործել են դպրապետ Վասիլ Մելիտենեցին, Սիմեոն արքեպիսկոպոսը, Արիստակես րաբունապետը, Անանիա դպիրը, Գրիգոր կազմարարը: 1438-ին Դավիթ արեղան Մ. գ. կ-ում ընդօրինակել է Գանձարան, 1493-ին Սահակ կրոնավորը՝ Ավետարան: Մ. գ. կ-ից մեզ հասած վերջին ձեռագրերից են 1577-ին (գրիչ՝ Գրիգոր), 1590-ին (գրիչ՝ Մարտիրոս), 1650-ին (գրիչ՝ Հովհաննես) ընդօրինակված մատյանները (Մատենադարան, ձեռ. № 9471, 1253, 1856):


Գրկ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դդ. (աշխատասիր.՝ Ա. Մնացականյան), Ե., 1988:

ՄԱԼԵԶՅԱՆ Վահան Ֆրանկյուլի [21.9.1871, ք. Սուլինա (Ռումինիա)–1966, Նիս (Ֆրանսիա)], գրող, հաս. գործիչ, խմբագիր, թարգմանիչ: ՌՍԱԿ-ի անդամ (1908-ից): Ավարտել է Կ. Պոլսի հայկ. կրթարանը (1887), իրավաբ. վարժարանը (1895): Ապրել է Կահիրեում, Բրյուսելում, Փարիզում, Նյու Յորքում, ապա՝ Նիսում, եղել ՀԲԸՄ ընդհանուր քարտուղարը, *«Միութիւն»* (1911–62) թերթի խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Սիմունջք» (1890, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.), «Կերոններ» (1912, ԿՊ, Պալենց գրատան հրտ.), «Կարապի երգը» (1949), «Հոգիի ձայներ» (1949) բանաստեղծությունների ժող-ները, «Անիծեալը» (1892, ԿՊ, Գ. Պաղտատլյանի տպ.) պոեմը, «Տարագրի մը յուշատետրը» (1915, Կահիրե), «Ճամբուս վրայ» (1950), «Ճամբուս ծայրը» (հ. 1–2, 1954–55), «Հանգանակ հատընտիր քերթուածներու» (1961) խոհերի, հուշագրությունների, հոդվածների, նամակների ժող-ները: Թարգմանել է Ա. Բարբյուսի, Վ. Հյուգոյի, Մ. Մետեռլինկի, Ա. Սամենի և ուր. գործերից:

Հանդես է եկել նաև Զեփյուռ գրական կեղծանվամբ:

Գրկ. **Պահրի** *Ժ., Բանասւրեղծ Վահան Մալէզեանի կեանքն ու գործը: Յուշամատեան իր ութսունամեակին առթիւ (1871–1951), Փ., 1951:* **Մալէզեան Վ.**, *Մեծ հայրս պատուելի Մալէզեան: Կենսագրականներ, դրուագներ եւ գրուածքներ, Փ. [ա. թ.]:*



Հրաչյա Մաթևոսյանի *«Ավետարան» (1984, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Ա. Եղոյան) գրքի կազմը*



«Մալաթիայի Աւետարան»-ի գլխա- և լուսանցազարդերով էջ *(1267–68, ծաղկող՝ Թորոս Ռոսլին, Մատենադարան, ձեռ. № 10675)*




Վահան Մալեզյան



Հովհաննես Մալխասյան. *Է. Բլայթոնի «Բարի Ջամբոն» (1990, Ե., «Արևիկ») գրքի կազմը*



Ստեփան Մալխասյանց



Ս. Մալխասյանցի *«Բանասիրական հետազոտություններ» (1982, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*

ՄԱԼԽԱՍՅԱՆ Հովհաննես Մկրտչի [1.9.1866, գ. Սուլդա (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–10.6.1931, Երևան], գրող, խմբագիր: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1881–85): 1887–97-ին դասավանդել է Կովկասի հայաբնակ քաղաքներում: 1903-ին ցար. կառավարությունը նրան աքսորել է Ռուսաստան: 1905-ին վերադարձել է աքսորից: 1907–09-ին՝ ***«Մեր ձայնը»*** թերթի հիմնադիր-խմբագիր: 1924-ից ապրել է Երևանում:

Լույս են տեսել Մ-ի «Երդում» (1895, Թ., Ա. Մելիք-Շահնազարյանի տպ.) վեպը, «Պատանեկան յուշեր» (1896, Թ., Մ. Շարաձեի տպ.) բանաստեղծությունների ժող-ը, «Աւազի վրայ» (1914, Թ., «Էսպերանտո» տպ.) պիեսը, «Հայ գեղջուկի ալբոմը» (մաս 1, 1898, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ., մաս 2, 1901, Թ., Կոստանդին Մարտիրոսյանի տպ.) ազգագր. նյութերի, «Հօրոտ-Մօրոտ» (գիրք 1, 1898, Թ., Մ. Ռոտինյանի տպ., գիրք 2, 1903, Թ., Մովսես Վարդանյանի տպ., գիրք 3, 1907, Նոր Նախիջևան, Մերովբե Ավագյանի տպ., գիրք 4, 1927, Ե., Հայպետհրատ) պատմվածքների ժող-ները: Նար-Դոսի հետ կազմել և հրատարակել է «Գիր եւ կեանք» (1911, Թ., «Էսպերանտո» տպ.) մայրենի լեզվի դասագիրքը:

Երկ. Երկեր, Ե., 1967:

ՄԱԼԽԱՍՅԱՆ Հովհաննես Սուրենի (ծ. 20.8.1952, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1975): 1986-ին սովորել է Մոսկվայի գրքի ձևավորման գեղ. խմբագիրների դասընթացներում: 1978–85-ին՝ Երևանի օպերայի և բալետի ազգ. ակադեմ. թատրոնի նկարիչ, 1985–95-ին՝ ***«Սովետական գրող»*** հրատարակչության գեղ. խմբագիր, 1995–2012-ին դասավանդել է ԵԳԱ-ում:

Պատկերազարդել է Ռ. Շեքլիի «Մտքի բուրմունքը» (1984), Կոբո Աբեի «Երեք վեպ» (1985), Լ. Սոլովյովի «Խոջա Նասրեդդինի պատմությունը» (1985), Ֆ. Վերֆելի «Վերդի» (1986), Վ. Հյուգոյի «Թշվառներ» (1987), Ա. Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» (1987), Է. Բլայթոնի «Բարի Ջամբոն» (1990), Վ. Պոդոյանի «Հեքիաթների զարդատուփ» (1992), Ս. Վարդևանյանի «Տաթևիկի տիկնիկները» (1995) գրքերը, ձևավորել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1986), Ե. Չարենցի «Հատընտիր» (1987) գրքերի շապիկները:

ՄԱԼԽԱՍՅԱՆՑ Ստեփան Սարգսի [25.10(7.11).1857, Ախալցխա–21.7.1947, Երևան], բանասեր, լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1940), ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր կազմի ակադ. (1943): Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանը (1889): 1885-ին լույս է ընծայել Ստեփանոս Տարոնեցու «Պատմութիւն տիեզերականի» (առաջաբ.՝ Կ. Եզյանի, ՍՊբ, Ի. Սկորոխոդովի տպ.) բնագիրը՝ գիտ. ուսումնասիրությամբ և ծնթգր-ներով:

Լույս են տեսել Մ-ի «Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները» (1891), «Գրաբարի համաձայնութիւնը» (1892, երկուսն էլ՝ Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան» (1896, Վնն., Մխիթարյան տպ.) «Սեբէոսի պատմութիւնը եւ Մ. Խորենացի» (1899, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Խորենացու առեղծվածի շուրջը» (1940) աշխատությունները, աշխարհաբարի փոխադրությամբ և ծնթգր-ներով՝ «Մովսես Խորենացի. Հայոց պատմություն» (1940), «Փավստոս Բուզանդ. Պատմություն Հայոց» (1947) երկերը: Կազմել է ***«Հայերէն բացատրական բառարան»***-ը (հ. 1–4, 1944–45, 2010, նմանահանություն): Թարգմանել է Վ. Շեքսպիրի «Լիր արքա» և «Մակբեթ» ողբերգությունները:

Երկ. Մատենագիտական դիտողություններ, Ե., 1961: Բանասիրական հետազոտություններ (հոդվածներ և ուսումնասիրություններ), Ե., 1982:

Գրկ. Գյամոյան Հ., Ստեփանոս Մալխասյանց հայագետի ժառանգության քննությունը, Ե., 2009: Ստեփան Սարգսի Մալխասյանց (նյութեր հայ գիտնականների կենսագրության և բիբլիոգրաֆիայի համար), Ե., 1962:

ՄԱԼՆԱՋԱՐ, XVII դ-ի 1-ին կեսի մանրանկարիչ: Եղբոր՝ Աղափիրի հետ 1637–38-ին Նոր Ջուղայում պատկերազարդել է Աստվածաշունչ (մագաղաթ, 610 էջ, Պ. Գետտիի թանգարան, Լոս Անջելես): Ձեռագիրը եղբայրներին է հանձնել Նոր Ջուղայի Սբ Ստեփանոս վանքի վանահայր Կարապետը: Ամբողջ էջերով պատկերազարդումներն ուշագրավ են վառ գույներով, պարսկ. մանրանկարներում տարածված զարդամոտիվներով: Նկատելի են նաև ստեղծագործաբար կիրառված կիլիկյան ձեռագրերի ոճային առանձնահատկությունները, Տաթևի

դպրոցի Ավետարաններից փոխառված խորանները՝ որոշակի խմբագրումներով և կրճատումներով:

ՄԱԼՈՒՄՅԱՆ Խաչատուր, **Էդգար Ակնունի** (1863, Մեղրի–1915, Մեծ եղեռնի զոհ), հրապարակախոս, հաս–քաղ. գործիչ: ՀՅԴ կուս–յան անդամ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1883), սովորել է Ժնևում: 1899–ից աշխատել է «Դրօշակի» (Ժնև) խմբագրությունում (այստեղ տպագրվել է Մ–ի «Կովկասեան խաբրիկներ» հոդվածաշարը): 1910–ին Մ–ի ջանքերով ԱՄՆ–ում հիմնադրվել է ՀՕՄ կանանց բարեգործ. կազմակերպությունը:

Լույս են տեսել Մ–ի «Քինուորական կանոնադրութիւն Կովկասի համար» (1887, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Մտքի մշակը» (Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան 25–ամեակի առիթով, 1890, Թ., «Արոր» տպ.), «Կովկասեան վէրքեր» (1903, Ժնև, ֆրանս.՝ 1904) հոդվածների ժող–ը, «Խրիմեան: Կենսագրական տեսութիւն» (1892, Թ., Կովկասյան գլխ. կառավարչության տպ.), «Դէպի երկիր: Յիշատակ պանդուխտ հայերին» (1911, Բոստոն, «Հայրենիքի» տպ., 2002), «Բողոքի ձայն» (1911, նույն տպ., 1978) և այլ գործեր: Թարգմանել է Վ. Գարշինի, Մ. Սալտիկով–Շչեդրինի և ուր. գործերից:



Խաչատուր Մալումյանի *(Էդգար Ակնունի) «Դէպի երկիր...» (2002, Ե., հեղ. հրտ) գրքի կազմը*

ՄԱԿԻՆՑՅԱՆ Պողոս Մկրտչի [1884, Ներքին Ագուլիս (Նախիջևան)–1938, անհատի պաշտամունքի զոհ], կուս–պետ. գործիչ, գրաքննադատ, թարգմանիչ, հրապարակախոս, խմբագիր–հրատարակիչ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1906), Մոսկվայի համալսարանի պատմաբանասիր. ֆակ–ը (1913): 1921–22–ին եղել է ՀԽՍՀ ՆԳ ժողկոմ, ապա՝ լուսժողկոմ:

1910–12–ին Մոսկվայում Վահան *Տերյանի*, Յոլակ *Խանզադյանի* և ուր. հետ կազմել և խմբագրել է *«Գարուն»* ալմանախի 3 գրքերը: 1912–ին «Դիմագծեր» խորագրով տպագրել է Հ. Թումանյանին և Ա. Իսահակյանին նվիրված ուսումնասիրություններ (վերահրտ.՝ 1980): Մ. Գորկու և Վ. Տերյանի հետ մասնակցել է «Հայ գրականության ժողովածու»–ի (ռուս., 1916) կազմման աշխատանքներին, գրել առաջաբանը: Վ. Բրյուսովի հետ մասնակցել է «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1916) անթոլոգիայի կազմմանը: 1923–25–ին կազմել և խմբագրել է Վ. Տերյանի երկերի քառահատորը: Հայ. է թարգմանել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը» (1918), Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտ» (1934) վեպը, ռուս.՝ Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Գ. Մահարու, Մ. Արմենի ստեղծագործություններից:

Գրկ. **Գրիգորյան Շ.***, Պողոս Մակինցյան, Ե., 2007:*



Պողոս Մակինցյան

ՄԱԿԼԵՐ (Macler) Ֆրեդերիկ [16.5.1869, Մանդոր (Ֆրանսիա)–13.7.1938, Մոնբելյար (Ֆրանսիա)], ֆրանսիացի հայագետ, թարգմանիչ: Աշակերտել է Օգյուստ *Կարիերին*, որից սովորել է հայ., ասոր. և երբ.: 1888–ին լույս է տեսել Մ–ի առաջին հայագիտ. գործը՝ «Դանիելի անվավեր հայերեն հայտնությունները»: 1911–37–ին Փարիզի Արլ. կենդանի լեզուների դպրոցում փոխարինել է Անտուան *Մեյեին*, դասավանդել հայոց լեզու: 1919–ին Շ. Դիլի, Ա. Մեյեի և Վ. Պերարի հետ հիմնադրել է «Հայագիտական ընկերությունը»: 1920–37–ին՝ *«Ռևյու դևզ էթյուդ Արմենիևն»* հանդեսի հիմնադիր–խմբագիր (Ա. Մեյեի հետ): 1909–ին այցելել է Հայաստան և իր տպավորությունները զետեղել «Հաշվետվություն Ռուսահայաստան և Թուրքահայաստան կատարած գիտական ուղևորության մասին» (1909) գրքում:

Լույս են տեսել Մ–ի «Նոր հայերի ծագումը» (1915), «Հայաստանի շուրջը» (1917), «Երաժշտությունը Հայաստանում» (1917), «Հայերը Սիրիայում և Պաղեստինում» (1919), «Հայոց եկեղեցին» (1920), «Հայկական ճարտարապետություն» (1920), «Հայ ազգը, նրա անցյալն ու ցավերը» (1924), «Հայկական գունանկարչություն» (1928) աշխատությունները: Կազմել է «Փարիզի Ազգային գրադարանի հայերեն և վրացերեն ձեռագրերի ցուցակը» (1908): Թարգմանել և ծանոթագրել է Ստեփանոս Տարոնեցու («Պատմություն տիեզերական», 1917), Կեղծ Սեբեոսի և ուր. գործեր, թարգմանել և կազմել է հայկ. ժող. հեքիաթների ու դիցաբան. զրույցների ժող–ներ («Հայկական լեգենդներ և ավանդազրույցներ», 1911) «Ժամանակակից հայերենի քրեստոմատիա» (1932):

Գրկ. **Դոլուխանյան Ա.***, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Ե., 2011:*



Ֆրեդերիկ Մակլերի *«Հայկական լեգենդներ և ավանդազրույցներ» (ֆրանս., 1911, Փարիզ) գրքի փիփղոսաթերթը*



Գուրգեն Մահարու *«Երկերի ժողովածու»-ի (հ. 2, 1967, Ե., «Հայաստան») կազմը*



Ժան-Պիեռ Մահե



Վլադիմիր Մաղալյանի *«Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում» (2012, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*

ՄԱՀԱՐԻ (Ահեմյան) Գուրգեն Գրիգորի [1.8.1903, Վան–16.7.1969, Պալանգա (Լիտվա), թաղված է Երևանում], գրող: Աշակույթի վաստ. գործիչ (1965): 1915-ից ապաստանել է Դիլիջանի և Երևանի որբանոցներում: 1923–25-ին սովորել է ԵՊՀ-ում: 1936-ին անհիմն բռնադատվել է և աքսորվել (մինչև 1947-ը, երկրորդ անգամ՝ 1949–54-ին) Սիբիր:

Լույս են տեսել Մ-ու «Տիտանիկ» (1924), «Երկու պոեմ» (1926), «Բարդիներ» (1927), Հաձաններ» (1959) բանաստեղծությունների, բալլադների, պոեմների, «Սիրո, խանդի և Նիցցայի պարտիզպանների մասին» (1929), «Ձիզզազներում» (1931), «Լռության ձայնը» (1962) պատմվածքների ժող-ները, «Մանկություն և պատանեկություն» (1930), «Երիտասարդության սեմին» (1956) ինքնակենսագր., «Այրվող այգեստաններ» (1966) վեպերը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–5, 1966–89), Մ. գրել է նաև «Չարենց-Նամե» (1968) և «Այս հմուտ, հանճարեղ լռեցին» (1971) դիմանկար-հուշագրությունները, «Ծաղկած փշալարեր» (հրտ.՝ 1986, Բ., 1988) վավերագր. վիպակը:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1972):

Երկ. Երգիծանք և հումոր (ժող.), Ե., 2004: Արտաքսության գիշերներ (անտիպ և մոռացված էջեր. 1917–1920), Նյու Յորք–Ե., 2006: Սիբիրական (արձակ, չափածո, նամակներ), աշխատասիր.՝ Գ. Ահեմյանի, Ե., 2009: Չարենց-Նամե (հուշեր, հոդվածներ, աշխատասիր.՝ Գ. Ահեմյանի, Ե., 2012):

Գրկ. **Աղաբաբյան Ս.,** *Գուրգեն Մահարի, Ե., 1959:* **Բոդոսյան Ս.,** *Գուրգեն Մահարի, Ե., 1981:* **Աղաջանյան Ս.,** *Գուրգեն Մահարու արձակի պոետիկան, Ե., 2011:* **Աղաբեկյան Կ.,** *Գուրգեն Մահարի, Ե., 2013:*

ՄԱՀԵ (Mahé) Ժան-Պիեռ Հանրի Մարի (ծ. 21.3.1944, Փարիզ), ֆրանսիացի լեզվաբան, արևելագետ, հայագետ: Պրոֆ. (1978): ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (1990): Ավարտել է Սորբոնի համալսարանը (1967): 1968-ին դասավանդել է Սորբոնի, 1969-ից՝ Ստրասբուրգի համալսարաններում, 1970–75-ին զուգահեռաբար աշակերտել է արևելագետ-հայագետներ Ժ. Մենարին, Շառլ ***Մերսիեին***, Ֆրեդերիկ ***Ֆեդրիին***: 1975–77-ին ֆրանս. է դասավանդել ԵՊՀ-ում: 1977–89-ին՝ Սորբոնի համալսարանի Արլ. կենդանի լեզուների և քաղաքակրթությունների ինստ-ի հայագիտ-յան ամբիոնի վարիչ, 1977-ից, միաժամանակ՝ ***«Ռևյու դեզ էթյուդ Արմենիեն»*** հանդեսի գլխ. խմբագիր, 1989-ից՝ Սորբոնի բարձրագույն ուսմանց դպրոցի IV բաժանմունքի (պատմ. և բանասիր. գիտ-ներ) տնօրեն:

Լույս են տեսել Մ-ի «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանքի» (թարգմ.՝ գրաբարից ֆրանս.՝ հուն., ղպտ., լատ. աղբյուրների համեմատությամբ, 1976), «Հերմես Եռամեծի «Սահմանքի» փիլիսոփայական նշանակության մասին» (1985), «Գրիգոր Նարեկացին և իր «Մատեան ողբերգութեան» երկը» (համահեղ., 2004) երկերը: Գրել է «Լարուս» ֆրանս. հանրագիտարանի՝ հայ գրակ-յանը վերաբերող հոդվածները:

ՄԱՂԱԼՅԱՆ Վլադիմիր (Վահան) Սարգսի [ծ. 20.3.1942, գ. Դաղեթ-Խաչեն (Վրաստանի Թեթրիծղարոյի շրջան)], լրագրող, խմբագիր, բանաստեղծ: Բանասիր. գիտ. թեկնածու (1988): Ավարտել է ԵՊՀ (1968): 1969–70-ին՝ Երևանի անասնաբուծ-անասնաբուժ. ինստ-ի «Կադրերի համար», 1971–2006-ին՝ ***«Երևանի համալսարան»*** թերթերի, միաժամանակ, 1992–2001-ին՝ ***«Հանդես Երևանի համալսարանի»*** պարբ-ի գլխ. խմբագիր: 1981-ից՝ ԵՊՀ-ի ***«Գրական համալսարան»*** գրական-գեղ. տարեգրքի հիմնադիր-խմբագիր, 2006-ից՝ ԵՊՀ հայագիտ. հետազոտությունների ինստ-ի գիտաշխատող:

Լույս են տեսել Մ-ի «Դաղեթ-Խաչեն» (1999), «Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում (1919–2009 թթ.)» (2010), «Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.)» (2012) աշխատությունները, «Խարույկ» (1992), «Խրամի զմրուխտ ափերին» (2011) բանաստեղծությունների ժող-ները: Ռուս-ից թարգմանել է Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ս. Եսենինի, գերմ-ից՝ Յ. Վ. Գյոթեի, Հ. Հայնեի, նաև անտիկ հեղինակների՝ Անակրեոնի, Սաֆոյի գործերից: Կազմել, խմբագրել և հրատ-յան է պատրաստել «Երախտավոր մանկավարժը» (2007), «Քևար համալսարանի» (2008), «Երևանի պետական համալսարանը վավերագրերում (1918–2009 թթ.)» (2009), «Երևանի համալսարանի հորելյանները (1919–2009)» (2011) և այլ ժող-ներ:

ԵՊՀ ոսկե մեդալ (1999, 2009):

ՄԱՂԱՔԻԱ ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ, Մաղաքիա տիրացու Ճևահիրճի, Մաղաքիա Դպիր [ծ. թ. անհտ, Չնքուշ (Խարբերդի գավառ)–մ. թ. անհտ], XVII դ–ի վերջի–XVIII դ–ի սկզբի ժամանակագիր: Հետագայում ընտանիքով տեղափոխվել է Կ. Պոլիս: Հայտնի է «Գաւազանագիրք կաթողիկոսացն Հայոց» և «Ժամանակագրութիւն» (ներառում է 551–1707–ի տարեգրությունը) անտիպ երկերով: Վերջինս եղել է Միքայել *Չամչյանի* հիմն. աղբյուրը՝ 1691–1707–ի պատմությունը շարադրելիս:

ՄԱՂԱՔՅԱՆ (Թեոփիլյան, Մաղաք-Թեոփիլյան) Մատթեոս (16.9.1767, Կ. Պոլիս–1847, Վենետիկ), փիլիսոփա, բանասեր: Մխիթարյան միաբանության անդամ: Ֆրանս–ից քաղվածաբար թարգմանել և հրատարակել է «Կենսագրութիւն երեւելի արանց» (հ. 1–2, 1839, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը, այն հավելել հայ պետ., քաղ. և մշակույթի գործիչներին նվիրված հոդվածներով: Լրացրել է Մանվել *Զահիջահյանի* «Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական» (1837, Վնտ., Սբ Ղազարի տպ.) բառարանը («Մ» տառից սկսած), կազմել օրացույցներ՝ պատմ., աստղագիտ. տեղեկություններով:

«ՄԱՃԿԱԼ», գյուղացիական թերթ: ՀԿ(բ)Կ ԿԿ հրատ.: Լույս է տեսել 1922–31–ին Երևանում (սկզբում՝ օրաթերթ, ապա՝ երկօրյա, եռօրյա, շաբաթաթերթ): Խմբագիրներ՝ Եղիա *Չուրար*, Մարգո Չոլախյան, Հովհաննես Բաննահյան, Գառնիկ Ղազարյան, Էդվարդ Չոփուրյան, Աշոտ Հախումյան, Համո Հովհաննիսյան: Լուսաբանել է կուս. կառույցների աշխատանքը գյուղում, անդրադարձել գյուղատնտեսության և արդ–յան ձեռքբերումներին ու հեռանկարներին, աջակցել անգրագիտության վերացմանը, առողջապահ. գիտելիքների տարածմանը, դպրոց. գործի վերակառուցմանը: Տեղեկություններ է հաղորդել միջազգ. քաղ. իրադարձությունների մասին: Ունեցել է թերթիկ–հավելվածներ («Կարմիր զինվոր», «Աշխատավոր կնոջ թերթիկ», «Բատրակ», «Երիտասարդ մաճկալ» ևն):



«Մաճկալ», *1922–31, Երևան*

ՄԱՄԱՋԱՆՅԱՆ Աշոտ Պետրոսի [26.5(8.6).1908, Բաթում–15.4.1994, Երևան], գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Վաստ. նկարիչ (1965): Ավարտել է՝ ԵԳԱՏ (1932): 1955–60–ական թթ–ին աշխատել է Հայպետհրատում՝ որպես գեղ. խմբագիր:

Նկարազարդել և ձևավորել է Վ. Նորենցի «Կարմիր հերոս» (1932), Արազու «Փոքրիկ շինարարները» (1931), Խնկո Ապոր «Հատընտիր», Ի. Կոիլովի «Ագռավն ու աղվեսը» (1934), Հ. Թումանյանի «Երկեր» (1938) և «Չարի վերջը» (1948), Ղ. Աղայանի «Երկեր» (1939) և «Հատընտիր հեքիաթներ», «Սասունցի Դավիթ» (ռուս., 1939) էպոսը, Վ. Շեքսպիրի «Լիր արքա» (1975) և «Ռիչարդ III» (1977), «Ռուսական ժողովրդական հեքիաթներ», Ջ. Դարյանի «Հատընտիր», Ֆիրդուսու «Ռուստամ և Զոհրաբ» և այլ գրքեր: Հեղինակ է «Մատենանիշեր» (1980) ժող–ի, «Փորագրանկարչություն. տեսակներն ու աշխատաձևերը» (1987) աշխատության:

Գրկ. Աշոտ Սամաջյան, ալբոմ (հայ., ռուս.), Ե., 1976:



Աշոտ Մամաջանյան. *«Սասունցի Դավիթ» էպոսի (ռուս., 1939) պատկերազարդումներից*

ՄԱՄԲՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ, V դ–ի 2–րդ կեսի մեկնիչ, թարգմանիչ, ճառախոս: *Մովսես Խորենացու* եղբայրը: Ըստ ավանդ. տեղեկությունների՝ եղել է *Սահակ Ա Պարթևի* և *Մեսրոպ Մաշտոցի* աշակերտներից: Մ. Վ–ից պահպանվել են 4 ճառ և «Դատումն քերդածաց» խորագրով մի գրվածք: Թովմա Արծրունին օգտվել է նրա պատմ. մի երկից (չի պահպանվել): Մ. Վ–ի լեզուն հունաբան դպրոցի վաղ շրջանի հայ. է, մեկնաբանության եղանակը՝ այլաբանական:

1833–ին (տպակից է Կորյունի և Դավիթ Անհաղթի երկերին) և 1894–ին Վենետիկում (Սբ Ղազարի տպ.) տպագրվել է Մ. Վ–ի «Ճառք» ժող–ը:

Գրկ. **Անդրիկեան Հ.**, *Մամբրէ Վերծանող, «Բազմավէպ», 1904, № 7, 8:*




Մամբրե Վերծանողի *«Ճառք» (1833, Վնտ.) ժողովածուի տիտղոսաթերթը*

ՄԱՄԵ (Սուսոյան) Ալիխանե [ծ. 6.6.1948, գ. Կոշ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], քուրդ բանաստեղծ, լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1973): 1973–79–ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի, 1979–80–ին՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի խմբագրություններում, 1984–90–ին՝ «Սովետական գրող» հրատա–



Հովհաննես Մամիկոնյան



Նիկողայոս Մամիկոնյան



Իգնատ Մամյանի
«Հանդի հաց» (1978, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

րակչությունում, միաժամանակ՝ Հայաստանի պետ. գրապալատում՝ որպես մատենագետ: 1987–ից՝ ***«Զագրոս»*** թերթի հիմնադիր-խմբագիր: Գրում է հայ. և քրդ.:

Լույս են տեսել Մ–ի «Կենաց ծով» (1983), «Քարը» (1987), «Հող և հաց» (2004), «Արևի երկիր» (2004), «Զագրոսի լույսերը» (2008), «Նուրանի» (2010) բանաստեղծությունների, «Երկխոսություն» (2013) էսսեների, հարցազրույցների և հոդվածների ժող-ները, կազմել է «Այբբենարան», «Մայրենի լեզու և գրականություն» (II, III, IV դասարաններ), «Քրդերեն և քրդական գրականություն» (V, VI, VII դասարաններ) դասագրքերը:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Հովհաննես Լևոնի (20.2.1907, Ղարաքիլիսա–30.10.1970, Երևան), գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր, պրոֆ. (1969): Գիտ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է ԵՊՀ (1932): 1941–48-ին՝ ***«Սովետական Հայաստան»*** թերթի խմբագիր, աշխատել է «Գիտական տեղեկագիր» պարբ-ի խմբագրությունում, 1953–54-ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի տնօրեն, 1953–57 և 1957–70-ին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչ, 1957–62-ին, միաժամանակ՝ ԵՊՀ ռոմանագերմ. լեզուների ու գրակ-յան ֆակ-ի դեկան:

Լույս են տեսել Մ-ի «Արևմտյան Եվրոպայի գրականության պատմություն» (համահեղ., 1934–36), «Արևմտյան Եվրոպայի վերածնության դարաշրջանի գրականության պատմություն» (պր. 1–2, 1939–40), «Արտասահմանյան գրականության պատմություն» (1957), «Մարդը և նրա կերպարը գրականության մեջ» (1966) աշխատությունները:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ Նիկողայոս Հովհաննեսի [1860, Գանձակ–1937, Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)], արձակագիր, իրավաբան, բառարանագիր: Ավարտել է Օդեսայի համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1888): 1917-ին տեղափոխվել է Թիֆլիս:

Լույս են տեսել Մ-ի «Հազարից մեկը» (1895), «Հաստութին» (1898, երկուսն էլ՝ Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) վեպերը, «Վիշապ» (1908, Թ., «Հերմես» տպ.) վիպակը, կազմել է «Ռուս-հայերէն երկաթուղային տերմինների բառարանը» (համահեղ., 1925):

ՄԱՄՅԱՆ Իգնատ Համայակի (22.8.1947, ք. Նոյեմբերյան–26.6.2008, Երևան), գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1977): Աշխատել է շրջ. «Ծիածան» (1980–82-ին՝ խմբագիր), 1976–80-ին՝ «Սովետական Հայաստան» (սեփական թղթակից), 1982–1990-ին՝ «Գրական թերթ», 1991–92-ին՝ ՀՀ իրավաբանների միության «Իրավաբանական թերթ», 1992–94-ին՝ ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» պարբ-ների խմբագրություններում: 1990-ին՝ ՀՀ իրավաբանների միության «Ձայն օրինաց», 1994-ին՝ ***«Առավոտ»***, 2000-ին՝ «Կռունկ» թերթերի հիմնադիր-խմբագիր, 2003–07-ին՝ «Եզերք» թերթի խմբագիր: 1996–98-ին՝ գրական հիմնադրամի, 2001–02-ին՝ ՀԳՄ գործադիր տնօրեն:

Լույս են տեսել Մ-ի «Հանդի հաց» (1978), «Երկնաքարեր» (1985), «Ոգեկանչ» (1996), «Վայրի մեղր» (1999) բանաստեղծությունների ժող-ները, «Եղերական լուսաբաց» (1992), «Գեղամ կամ ընդհատված թռիչք» (1994), «Արծաթե եզերք» (2003) վիպակները, «Վիրավոր լեռան ճիչը» (2005), «Մարտնչող լեռնահովիտ» (2006), «Երկիր ծննդավայր» (2007), «Տոհմականչ» (2008) վեպերը, «Հեռավոր զանգերի կանչը» (2008) պատմվածքների ժող-ը: Թարգմանել է Վ. Կոչևսկու, Պ. Անտոկոլսկու, Լ. Կովդայի, Մ. Լոմոնոսովի ստեղծագործություններից:

ՄԱՄՅԱՆ Հենրիկ Արամի (24.4.1934, Երևան–17.7.2014, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ժող. նկարիչ (2010): Ավարտել է ԵԳՈՒ (1953), ԵԹԻ (1959): Պրոֆ. (1990): 1960–64-ին դասավանդել է ԵՊՀ-ում, 1963-ից՝ ԵԳԹԻ-ում, 1991-ից՝ նաև ԵՊՀՇԻ-ում (ամբիոնի վարիչ՝ 1991–2007): 1950–60-ական թթ-ին աշխատակցել է «Սովետական Հայաստան», «Սովետական գրականություն» ամսագրերին, «Հայրենիքի ձայն», «Ավանգարդ», «Սովետական Հայաստան» թերթերին:

Մ. նկարազարդել և ձևավորել է 500-ից ավելի գրքեր՝ Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» (1975), Դ. Վարուժանի «Հարճը» (1977, 2007), Լ. Շանթի «Հին աստվածներ» (ռուս., 1979, 2001), Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի»

(1984), Մ. Լերմոնտովի «Մծիրի» (1983), Նար-Դոսի «Սպանված աղավնին» (1986), Գ. Էմինի «Միամանթոյի մենախոսությունը» (1998), Կ. Զարյանի «Գիրք դիւցազներգութեանց» (2003), Վ. Դավթյանի «Հայերգություն» (2008), Է. Իսաբեկյանի «Իգդիր» (2009), Լ. Բլբուլյանի «Եղանակներ» (2010), Հ. Թոքմաջյանի «Կայսրը» (2011), Վ. Բդոյանի «Ձավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանաստեղծությունը» (2014) են: Հեղինակ է նաև բազմաթիվ մատենանիշների:

«Գրքարվեստի» համամիութ. ցուցահանդեսի 2-րդ մրց. (1977, Մոսկվա), «Մեծ ոսկե գավաթ» (1996, Մադրիդ), ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» (2009), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2009) մեդալներ:

Գրկ. Հենրիկ Մամյան (ալբոմ), Ե., 2009:



Հենրիկ Մամյան. *Գ. Էմինի «Միամանթոյի մենախոսությունը» (1998, Ե., «Ամարաս») գրքի փիփղոսաթերթը*

ՄԱՄՈՒԼ, չափի միավոր հրատարակչ. գործում և պոլիգրաֆիայում. հավասար է չափորոշված թղթի 1 տպագիր երեսին: Գործածվում են հեղինակային, տպագր. կամ ֆիզ., պայման. և հաշվահրատարակչ. Մ-ներ:

Հեղինակային Մ. գրական ստեղծագործության հեղինակի, թարգմանչի, խմբագրի և սրբագրիչի կատարած աշխատանքի ծավալի չափման միավորն է՝ հավասար 40 հզ. տպագր. նիշի (տառ, կետադր. նշան, թիվ, բառերի միջակա բացատ ևն ներառյալ), բանաստեղծ. նյութի 700 տողի կամ 3 հզ. սմ^2 տպված գրաֆիկ. նյութի (պատկերազարդում, քարտեզ ևն):

Տպագրական կամ ֆիզիկական Մ. հրատ-յան բնական ծավալի չափի միավոր. հավասար է չափորոշված ձևաչափերի թղթերի մեկ կողմի մակերեսին: Տպագր. աշխատանքը համադրելու և գնահատելու համար ընդունված է պայման. Մ. միավորը, որը հաշվարկվում է 60 x 90 սմ ձևաչափի թղթի համեմատությամբ: Տպագր. (ֆիզ.) **Մ. պայմանականի** վերածելու համար այն բազմապատկում են անցման գործակցով (ֆիզ. և պայման. Մ-ների համապատասխան մակերեսների հարաբերությամբ):


Հաշվահրատարակչական Մ. ընդունված է տպագրված ստեղծագործության իրական ծավալը հաշվելու համար, որը, հեղինակային Մ-ից բացի, ընդգրկում է նաև հրատ-յան մեջ ներառված բոլոր այլ կարգի տեքստային ու գրաֆիկ. նյութերի ծավալները (խմբագր. առաջաբան, էջատիտղոս, էջահամար, բովանդակություն ևն): Այն կիրառվում է հրատարակչ. աշխատանքի պլանավորման, տեխ. խմբագիրների, սրբագրիչների աշխատանքը որոշելու համար:



«Մամուլ», *1869–83, Կ. Պոլիս*

«ՄԱՄՈՒԼ», հաս-քաղ. և երգիծ. եռօրյա թերթ (1869–70-ին՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1869–83-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիր՝ Գևորգ Այվազյան: Հանդես է եկել պահպանող. հրատ-ների, ազգ. միաբանականությունը պաշտպանողների (հատկապես՝ հայ կաթոլիկ եկեղեցու) դեմ: Նյութեր է տպագրել (մի մասը՝ հայատառ թուրք-ով) Հայկ. հարցի, գավառահայության վիճակի, Վանի, Մուշի, Բաղեշի հայ բնակչության նկատմամբ գործադրված բռնությունների մասին: Ունեցել է գրական-բանասիր. բաժին, տպագրել թատեր. տեսություններ, լուրեր պոլսահայության կյանքից:

ՄԱՄՈՒԼ տպագրական, ձեռքի կամ մեքենայի ուժով աշխատող մեխ. տպագր. հաստոց, որով տպաձևից պատկերը (սկզբն. շրջանում՝ միայն տեքստը) փոխադրվել է թղթի կամ այլ նյութի վրա: Ներքին հաստատուն տախտակի վրա զետեղել են շարվածքը, վրան մուր քսել, իսկ վերևի շարժական տախտակին դրել թուղթը և սեղմել շարվածքին, որի արդյունքում շարվածքը տպագրվել (դաջվել) է թղթի վրա:



Բազկամամուլ

Մ-ները կարճ ժամանակում փոխարինվել են կատարելագործված և արագագործ տպագր. մեքենաներով: Սակայն նրա անունով են կոչվում տպագիր լրատվամիջոցները՝ լրագիր, ամսագիր, հանդես ևն, ինչպես նաև հրատարակչ. և պոլիգրաֆ. արտադրանքի միավորը՝ ***մամուլը***:

Եվրոպայում Մ. հայտնագործել և առաջինն օգտագործել է Յոհան ***Գուտենբերգը***՝ խաղողի մզման և թուղթ պատրաստող մեքենաների նմանությամբ:




Մատթեոս Սամուրյան

Մայր աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչության *տպագրած գրքերից*



Մաշտոց (1794), տիտղոսաթերթը



«Աղբիւր բացեալ» (1845) գրքի տիտղոսաթերթը

ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, թերթերին, հանդեսներին, ռադիոյին, հեռուստատեսությանը, հրատարակչություններին, կառավար. հաստատություններին, ՀԿ-ներին ու մասնավոր անձանց տեղեկատվություն տրամադրող կազմակերպություն: Մ. գ-ներն ստեղծվել են պարբ. հրատ-ների զարգացման հետ: 1835-ին Շ. Հավասը (Ֆրանսիա) ստեղծել է թերթերին տեղեկատվություն մատակարարող «Հավաս» գործակալությունը, որի Լոնդոնի աշխատակից Պ. Ռոյտերը 1851-ին հիմնադրել է մինչև այժմ գործող «Ռոյտեր» գործակալությունը, իսկ Բեռլինի աշխատակից Բ. Վոլֆը՝ «Վոլֆի հեռագրական բյուրոն»: 1866-ին ստեղծվել է Ռուսաստանի հեռագր. գործակալությունը, 1872-ին՝ Միջազգ. հեռագր. գործակալությունը, 1882-ին՝ Հյուսիսային հեռագր. գործակալությունը, 1918-ին՝ ՌՈՍՏԱ-ն (1925-ից՝ ՏԱՍՍ), 1961-ին՝ Նորություններ մամուլի գործակալությունը (չորսն էլ՝ Ռուսաստան): Աշխարհի խոշոր գործակալություններից են նաև Ֆրանսպրեսը (Ֆրանսիա), Ասոշիեյտեդ Պրեսը և Յունայտեդ Պրես Ինտերնեշընլը (ԱՄՆ), Կիոդո Յուսինը (Ճապոնիա) ևն: Մ. գ-յան ենթակառույցներ են ընդունող-հաղորդող ռադիոկայանները, բազմուղի հեռուստահեռագր. կապը, հեռատիպը, տելեքսը, լուսահեռատիպը, համացանցը ևն: Տես նաև ***Արմենպրես***:

ՄԱՄՈՒՐՅԱՆ Մատթեոս Հովհաննեսի (17.10.1830, Զմյուռնիա–2.1.1901, Զմյուռնիա), գրող, թարգմանիչ, մանկավարժ, հրատարակիչ, խմբագիր: Ավարտել է Զմյուռնիայի Մեսրոպյան (1845), Փարիզի Սամվել Մուրադյան (1850) վարժարանները: Եղել է ազատ ունկնդիր Քեմբրիջի համալսարանում (1856–57): Ղրիմի պատերազմի (1853–56) ժամանակ բանակում ծառայել է որպես թարգմանիչ: 1860–65-ին եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանապետ: 1865–99-ին աշխատել է Զմյուռնիայի Մեսրոպյան և Հոիփսիմյան վարժարաններում: 1883-ին Մ. Զմյուռնիայում հիմնադրել է տպարան. գործել է մինչև 1920-ը (Մ-ի մահվանից հետո տպարանի աշխատանքները ղեկավարել է որդին), տպագրել է շուրջ 80 անուն գիրք: 1871–1901-ին՝ ***«Արեւելեան մամուլ»*** հանդեսի հրատարակիչ-խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Հայկական նամականի» (1872) և «Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը» (1880) հոդվածների ժող-ները, «Համառօտ ընդհանուր պատմութիւն դպրոցաց համար» (հ. 1–3, 1875–78, երեքն էլ՝ Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), «Համառօտ պատմութիւն Հայոց մինչեւ մեր օրերն» (1887, Զմյուռնիա, Մ-ի տպ., 1909, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), «Մանր վէպեր ու դասեր: Քաղուած մանր տղոց համար» (1876), «Բանալի հայերէն շարադրութեան» (1878), «Գիտելիք ու պարտիք տղայոց» (1879, երեքն էլ՝ Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.) դասագրքերը, «Սեւ լեռին մարդը» (1909, Զմյուռնիա, Մ-ի տպ., 1932, Աթենք, «Նոր օր» տպ.) վեպը: Թարգմանել է Ֆ. Վոլտերի, Յ. Վ. Գյոթեի, Ժ. Վեռնի, Վ. Սկոտի, Լ. Տոլստոյի և ուր. ստեղծագործություններից, «Հազար ու մի գիշեր» արաբ. հեքիաթները (6 հատորով): Հրատարակվել են նաև Մ-ի «Երկերը» (1966, Ե., 1990, Անթիլիաս):

Գրկ. **Ասատուր Հրանդ**, *Դիմապատկերներ, ԿՊ, 1921:* **Ղազարյան Հ.**, *Մատթեոս Մամուրյան, Ե., 1961:*

ՄԱՅԻԼՅԱՆ Անտոն Սարգսի [16(28).3.1880, Թիֆլիս–20.4.1942, Բաքու], կոմպոզիտոր, խմբագիր, մանկավարժ: Ադրբ. ԽՍՀ արվ. վաստ. գործիչ (1930): Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում աշակերտել է Մ. Եկմալյանին, երգել է Ք. Կարա-Մուրզայի երգչախմբում: Ավարտել է Թիֆլիսի երաժշտ. ուսումնարանը (1904): Ղեկավարել է Բաքվի Հայարտան երաժշտ. բաժանմունքը, կազմակերպել թատեր-երաժշտ. ստուդիա, երգչախմբեր: 1910–17-ին Բաքվում խմբագրել է և հրատարակել ***«Թատրոն եւ երաժշտութիւն»*** հանդեսը:

Լույս են տեսել Մ-ի «Արմեն» (1900) վեպը, «Որբը» (1897) և «Թախծալի պահեր» (1900) պատմվածքները:

Գրկ. **Մանուկյան Մ.**, *Անտոն Սայիլյան, Ե., 1965:*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, հիմնադրվել է 1771-ին՝ ***Սիմեոն Ա. Երևանցի*** կաթողիկոսի ջանքերով և Գ. Խոջաջանյանցի (Չաքիկյան) միջոցներով (տես ***Էջմիածնի տպարան***):

XIX դ-ի առաջին տասնամյակների տևական պատերազմների պատճառով տպարանի գործունեությունը գրեթե դադարել է (1819-ին տպագրվել է 1 Սաղմոսարան), ակտիվացել է Արլ. Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո: 1833–46-ին հրատարակել է 18 անուն գիրք՝ Հ. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» (1842), Կ. Շահնազարյանցի «Արհեստ թուաբանութեան» (1842), Ի. Կայդանովի «Հրահանգ համաշխարհական պատմութեան» (1844) ևն: Նոր վերելք է ապրել ***Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի*** կաթողիկոսի օրոք (1866–82): Տպագրել է Ճաշոց (1872), Ն. Թաշճյանի «Զայնագրեալ երգեցողութիւնք սրբոց պատարագի» (1874) աշխատությունը, պատմաբանասիր., գրական երկեր՝ Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր շահին Պարսից» (1870), Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց» (1871), Ստեփանոս Շահումյանի «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին եւ պատերազմացն Հայոց Խափանու...» (1871), Սիմեոն Երևանցու «Ջամբռ» (1873), Աբել Մխիթարյանի «Վաղարշապատ, քաղաքամայր Հայաստանի...» (1874), Մխիթար Գոշի «Դատաստանագիրք հայոց» (1880), Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն...» (1884) ևն, ինչպես նաև Մայր աթոռի պաշտոն. ***«Արարատ»*** ամսագիրը:

1889-ին կառուցվել է տպարանի նոր շենքը, համալրվել տառաձուլ., տպագր. նոր մեքենաներով, հարստացվել տարբեր լեզուների տառատեսակներով: 1895-ին Ս. Պետերբուրգում մասնակցել է 1-ին համառուսաստանյան ցուցահանդեսին: XIX դ-ի վերջին և XX դ-ի սկզբին տպարանը լույս է ընծայել Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորէնացու Հայոց պատմութեան մէջ» (1899), «Աշխարհաբարի քերականութիւն» (1906) և «Աշխարհաբարի շարահիւսութիւն» (1912), Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի «Հայոց նոր վկաները» (1903), Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խաղ» (1905) և այլ աշխատություններ:

ՀԽՍՀ Կառավարության 1920-ի դեկտ. 17-ի դեկրետով տպարանը հանձնվել է Լուսժողկոմատի տնօրինությանը: 1957-ին շենքը վերադարձվել է Մայր աթոռին: ***Վազգեն Ա Պալճյան*** Ամենայն հայոց կաթողիկոսի հետևողական ջանքերի շնորհիվ սկսվել է նրա հիմնանորոգումը, որն ավարտվել է 1962-ին: 1958-ից ամերիկահայ բարեբարների նվիրաբերած գումարներով ԱՄՆ-ից ու Գերմանիայից ձեռք են բերվել նորագույն մեքենաներ և սարքավորումներ, արտերկրում վերապատրաստվել են պոլիգրաֆ. գործի հմուտ մասնագետներ:

1962-ին տպարանը կոչվել է «ԳԱ-ի Էջմիածնի տպարան» և շուրջ 30 տարվա ընթացքում հրատարակել հայ մատենագիրների երկեր, գիտ. աշխատություններ, դաս. և ժամանակակից գրակ., ամսագրեր:

1991-ին տպարանը հանձնվել է Մայր աթոռ Սբ Էջմիածնին և վերանորոգվել, Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը տպարանին է նվիրել ժամանակակից մեքենաներ ու սարքավորումներ:


Ներկայում տպարանը ՀՀ-ի լավագույն գրահրատարակչ. համալիրներից է, գործում է ***Գարեգին Բ*** Ամենայն հայոց կաթողիկոսի աջակցությամբ: Տպարանի շենքում են Մայր աթոռի հրատարակչ., պաշտոն. մամուլի բաժինները, բուն տպարանը և գրատունը:

Հրատարակչությունը վերջին տարիներին շարունակաբար տպագրում է Մայր աթոռի Գանձատանը և Մատենադարանում պահվող անտիպ գործեր, Աստվածաշնչի մեկնությունների հայկ. միջնադարյան ինքնուրույն և թարգման. բնագրեր՝ Ն. Ադոնցի «Քննություն Մովսես Կաղանկատվացու» (2005), «Համաբարբառ յայսմաւուրք» (հ. 1–12,

Մայր աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչության *տպագրած գրքերից*



«Հազար ու մի խաղ» (1904) գրքի տիտղոսաթերթը




Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականութիւն» (1906) գրքի տիտղոսաթերթը





Հակոբ Մանանդյան



«Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները» (1928, Վնն.) գրքի տիտղոսաթերթը



«Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (1934, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

2006–10), Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայության» (2007), Որոգինեսի «Աղոթքի մասին» (2007), Տրդատ եպս. Պալյանի «Հայ վանորայք» (2008), Հովհան Սանդակունու «Ճառեր» (2008), Հովհան Որոտնեցու «Մեկնողական-իմաստասիրական ճառեր» (2009), Ա. Պերպերյանի «Պատմութիւն Հայոց» (2009), Մխիթար Գոշի «Թուղթ առ վրացիս» (2011), Ն. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրաւունք» (2011) և այլ աշխատություններ, «Մայր Մաշտոցը» (2012), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2008) հանրագիտարանը, կրթ. քարոզթերթիկներ, ինչպես նաև Մայր աթոռի պաշտոն. *«Էջմիածին»* ամսագիրը և *«Քրիստոնյա Հայաստան»* շաբաթաթերթը:

Արարատ քհն. Պողոսյան

«ՄԱՅՐԵՆԻ», ՀՀ լուսավորության նախարարության ուսումնամեթոդ. երկամսյա հանդես: Լույս է տեսել 1966–95-ին (մինչև 1982-ը՝ «Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված, 1966–90-ին՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում») Երևանում: Խմբագիրներ՝ Ռոմա Դալլաքյան, Պատվական Խաչատրյան, Միքայել Մկրտչյան, Դավիթ *Գասպարյան*, Լյուդվիգ *Կարապետյան*, Լավրենտի *Միրզոյան*, Անահիտ Ադամյան: Լուսաբանել է հայոց լեզվի և գրակ-յան ուսուցման մեթոդիկայի, խոսքի զարգացման, մայրենիի անաղարտության պահպանման հարցեր: Վերջին շրջանում ավելի հաճախ անդրադարձել է հայոց պատմության, մանկավարժության և փիլ-յան հարցերին, տպագրել սփյուռքահայ հեղինակների անտիպ գործեր:

«ՄԱՆԱՆԱ» երգիծ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1913–14-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Երվանդ *Օտյան*: Գրեթե ամբողջությամբ տպագրել է խմբագրի գործերը («Վաճառականի մը նամակները» երգիծավեպը, «Մեր երեսփոխանները» դիմանկարների շարքը՝ Գ. Զոհրապի, Գ. Տեր-Կարապետյանի, Հ. Ճանկյուլյանի, Օ. Խոճասարյանի և ուր. մասին) և այլ ծավալուն գործեր, ինչպես նաև երգիծ. փոքր ստեղծագործություններ, որտեղ ծաղրել է կեղծավորությունը, շահամոլությունը, փառամոլությունը: Լրատու բաժնի նյութերը հիմնականում մշակութ. կյանքի նորություններ էին:

ՄԱՆԱՆԴՅԱՆ Հակոբ Համազասպի (22.11.1873, Ախալցխա–4.2.1952, Երևան), պատմաբան, բանասեր, աղբյուրագետ: ԽՍՀՄ ԳԱ (1939), ՀԽՍՀ ԳԱ (1943) ակադ.: Գիտ. վաստ. գործիչ (1935): Սովորել է Թիֆլիսի 1-ին դաս. գիմնազիայում (1883–93), Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի համալսարաններում (1893–97), էքստեռն կարգով ավարտել է Ս. Պետերբուրգի (1898), Յուրևի (այժմ՝ Տարտու, 1909) համալսարանները: 1900–05-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1906–07-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1911–13-ին՝ Բաքվի ժող. համալսարանում, 1915–19-ին՝ առևտր. դպրոցում: 1901–04-ին՝ «Հայկական թերթ» (գերմ.), 1906-ին՝ «Արշալոյս», 1917-ին՝ «Բաքու» (ռուս.) թերթերի խմբագիր: 1921-ին՝ ԵՊՀ ռեկտոր, 1921–23-ին՝ արևելագիտ., ապա՝ պատմագր. ֆակ-ների դեկան, միաժամանակ, 1921–25-ին՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925–31-ին՝ պրոֆ.: Հրատարակել է «Հայոց նոր վկաները (1155–1843)» (1903, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) վկայաբան. ժող-ը՝ ձեռագրերի համեմատություններով, ընդարձակ տեղեկություններով և ծանոթագրություններով (Հ. Աճառյանի հետ), շարականների 2 ժող. (Ֆրանց Ֆինկի և Ե. Գյանջեցյանի հետ), հույն Թեոն Ալեքսանդրացու և Հերմես Եռամեծի իմաստասիր. երկերի հայ. թարգմանությունների բնագրերը, «Գրիգոր Նազիանզացու ճառերի Նոնոսի մեկնությունների հին հայերեն թարգմանությունը» (գերմ., 1903), «Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ» (1904, Վնն., Մխիթարյան տպ.), «Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները» (1928, նույն տպ.) աշխատությունները: Մ. պատրաստել, խմբագրել և հրատարակել է Էլիաս

Իմաստասերի «Մեկնութիւն ստորագրութեանցն Արիստոտելի» (1911, ՍՊԸ, Կայսեր. գիտ. ակադ. տպ.) երկը:

Լույս են տեսել Մ–ի «Կշիռները յեվ չափերը հնագոյն հայ աղբյուրներում» (1930), «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին...» (ռուս., 1930, 2 լրց. հրտ.՝ 1954), «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (1934), «Խորենացու առեղծվածի լուծումը» (1934), «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» (ռուս., 1941), «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» (երկուսն էլ՝ 1946) աշխատությունները, «Տիգրան Երկրորդը և Հռոմը» (1940, վերահրտ.՝ 1972, 2012) մենագրությունը, որտեղ շարադրել է Տիգրան Մեծի ժամանակաշրջանի գիտ. ու քնն. պատմությունը, «Երկերը» (գիրք 1–8, 1977–2011):

1940–ական թթ–ին Մ. ձեռնարկել է «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատությունը, որտեղ քննաբար լուսաբանվելու էր Հայաստանի մ. թ. ա. VI–մ. թ. XVI դդ–ի ամբողջ. պատմությունը (1–ինը տպագրվել է 1944–ին, 2–րդը՝ 1957–ին. II մասը՝ 1960–ին, 3–րդը՝ 1952–ին):

Գրկ. Բաբայան Լ., Հակոբյան Վ., Հակոբ Մանանդյան: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1974: Հակոբ Մանանդյան: Կենսագրական տեղեկագիր (կազմ.՝ Պ. Հովհաննիսյան), Ե., 1981

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ Լևոն Հայրապետի (ծ. 13.6.1925, Վաղարշապատ), գեղանկարիչ, գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Վաստ. նկարիչ (1983): Ավարտել է ԵԳԹԻ (1953), 1963–ից դասավանդում է ԵՃՇՊՀ–ում (1975–91–ին՝ ամբիոնի վարիչ), պրոֆ. (2006–ից):

Նկարազարդել է 300–ից ավելի գրքեր և դասագրքեր՝ Խ. Հրաչյանի «Փնթի Սեթը» (1954), «Աշխարհի տարբեր ժողովուրդների հեքիաթներ» (1967), Ա. Սեկոյանի «Եթե Որոտանը խոսեր» (1970), Ե. Չարենցի «Դանթեական առասպել» (1970), Ա. Իսահակյանի «Լիլիթ» (1974), Պ. Սևակի «Երկեր» (1983), Հ. Պարոնյանի «Երկեր» (1987), Մ. Թարյանի «Սրնգահար քամին» (2004), Տեր–Գրիգորյանի «Այբբենարան» (1984) ևն: Ձևավորել է Է. Մ. Ռեմարկի «Ապրելու և մեռնելու ժամանակը» (1963), Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» (1963), Բ. Այվազյանի «Անիի կործանումը» (1964), Ս. Սոեմի «Ստրկություն մարդկային» (1965), Ժ. Սիմենոնի ««Մաժեստիկ» հյուրանոցի նկուղներում» (1968), Չ. Այթմատովի «Մնաս բարով, Գյուլսարի» (1968) գրքերի կազմերը:

Հանրապետ. մրցույթի 1–ին (1961), ՀԽՍՀ մշակույթի նախարարության 2–րդ (1978, «Այբբենարան» դասագրքի համար) մրց–ներ, ԵՃՇՊՀ ոսկե մեդալ (2009):

Գրկ. Լևոն Մանասերյան, ալբոմ (հայ., ռուս., անգլ.), Ե., 2009:


«ՄԱՆԱԻԱՆԴԱԿԱՆՔ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ», Միքայել Ֆեբուրուսի ուղղափառ դավանաբան. երկը՝ ընդդեմ այլ կրոնների: Տպագրվել է 1681–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Praecipvae obiectiones…», Բ–ին՝ «Մանաւանդականք առարկութիւնք...» (383 էջ, 12º, 9,8 x 5,9 սմ):

ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ Տիգրան Սարգսի (ծ. 23.2.1959, Երևան), գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒՀ (1978), ԵԳԹԻ (1984): 1987–90–ին համագործակցել է *«Արևիկ»* հրատարակչության հետ: Եղել է «Արարա» (1992), “Comix” («Պատկերապատում», 1995, Սամվել Գասպարյանի հետ) հրատարակչությունների հիմնադիրներից, 1998–2003–ին՝ «Հոպոպ» հրատարակչության հիմնադիր–տնօրեն: 1992–ին հրատարակել է «Սև, սպիտակ» պատկերապատումների թերթը, 1998–ին՝ «Հոպոպ» մանկ. ամսագիրը:


Նկարազարդել և ձևավորել է Հ. Թումանյանի «Քաջ Նազարը» (1987) և «Մի կաթիլ մեղրը» (1991), Ռ. Թոլքինենի «Պահապանները» (1988), Ռ. Մարուխյանի «Չիկարելիի արկածները» (1988), Ն. Նոսովի «Անզետիկի և նրա ընկերների արկածները» (1989), Վ. Արամյանի «Երանոս Կոմանցի» (1989), Ռ. Է. Ռասպեի «Մյունհաուզենի արկածները» (1991), նաև «Ի խավարե ի լույս» (1995, 2 գրաֆիկ. նովելներ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի պատվերով, Վ. Զաքարյանի հետ), «Լռություն» (2005, գրաֆիկ. վեպ, սցենարի հեղ.՝ Ռ. Ծատուրյան), «Մինչև հոգիների աճուրդը» (անգլ., 2008, գրաֆիկ. վեպ, սցենարի հեղ.՝ Մ.) և այլ գրքեր:



Լևոն Մանասերյան. *Է. Մ. Ռեմարկի «Ապրելու և մեռնելու ժամանակը» (1963, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



«Մանաւանդականք առարկութիւնք...» *(Միքայել Ֆեբուրուս, 1681, Հռոմ) գրքի Բ փիրղոսաթերթը*



Տիգրան Մանգասարյան. *«Հոպոպ» մանկական ամսագրի (1998) շապիկը*



Վաղինակ Մանդակունի. *Շ. Պերրոյի «Հեքիաթներ» (1980, Ե., «Սովետական գրող»)*

ՄԱՆԴԱԼՅԱՆ Թադևոս Գեղամի (5.7.1901, Ալեքսանդրապոլ–1938), կուս. և պետ. գործիչ, խմբագիր: ՌՍԴԲ(բ)Կ անդամ՝ 1917–ից: Մասնակցել է Սայիսյան ապստամբությանը (1920): 1923–24–ին՝ «Գուդոկ» (Մոսկվա), 1924–26–ին՝ Պրոֆինտերնի «Տեղեկագիր» (Մոսկվա), 1928–ին՝ *«Խորհրդային Հայաստան»* թերթերի խմբագիր:

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ Վաղինակ Քրիստափորի (12.6.1929, Երևան–21.12.1990, Երևան), գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Վաստ. նկարիչ (1971): Ավարտել է ԵԳՈՒ (1949), ԵԳԹԻ (1955): 1958–ին եղել է Հայպետհրատի գովազդի և պլակատի բաժնի վարիչ, 1961–90–ին՝ *«Հայպետհրատ», «Հայաստան», «Սովետական գրող», «Լույս»* հրատարակչությունների գլխ. նկարիչ: Մ. ստեղծել է 50–ից ավելի տառատեսակներ:

Նկարազարդել ու ձևավորել է Ստենդալի «Պարմի մենաստանը» (1961), Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» (1970), Օ. Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» (1972), Լ. Ֆեյխտվանգերի «Գոյա» (1974), Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» (1977), Գ. Դևրիկյանի «Վիրավոր կռունկ» (1978), Ռ. Ռոլանի «Համյված հոգին» (1978), Ա. Դյումայի «Ասկանիո» (1980), Շ. Պերրոյի «Հեքիաթներ» (1980), Հ. Ք. Անդերսենի «Հեքիաթներ և զրույցներ» (1980), Վարդան Այգեկցու «Աղվեսագիրք» (հայ., ռուս., 1981), «Միջնադարյան Հայաստանի առակները» (ռուս., 1982), Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (1985), Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» (1987), Ե. Օտյանի «Ընտիր երկեր» (1988) և այլ գրքեր:

ՄԱՆԴԻՆՅԱՆ Ամիրան Մանդենի [19.4(1.5).1848, Թիֆլիս–28.5(10.6).1913, Թիֆլիս], դերասան, մանկավարժ, թարգմանիչ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1860–69): 1870–1900–ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան, 1878–79–ին՝նաև Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցներում: Թարգմանել է պիեսներ (Ֆ. Շիլլերի «Սեր և խարդավանք», Ժ. Բ. Մոլիերի «Դոն Ժուան» ևն), գրել է «Իմ յիշատակարանը» թատեր. հուշերը (մասամբ տպագրվել է «Յուշարար» հանդեսում 1907–13–ին):



«Մանզումէի Էֆքեար», *1866–1917, Կ. Պոլիս*

«ՄԱՆԶՈՒՄԷԻ ԷՖՔԵԱՐ» («Կարծիքների շարք»), հայատառ թուրք. և հայ. օրաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1866–1917–ին (2 շրջանով) Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Կարապետ *Փանոսյան*, Միսաք *Գոչունյան* (Քասիմ), Սմբատ *Բյուրատ* և ուր.: Սկզբում ունեցել է չափավոր ուղղվածություն: Հետագայում, մասնավորապես՝ Ռուս–թուրք. պատերազմի (1877–78) ժամանակ, քննադատել է թուրք. կառավարության ազգ. քաղաքականությունը: Լուսաբանել է գավառների տնտ., քաղ. և մշակութ. կյանքը, անդրադարձել թուրք պաշտոնյաների կեղեքումներին ու հարստահարումներին: 1880–ական թթ–ին, գրաքննության խստացման պատճառով, կրկին դարձել է չափավոր ուղղվածության: Հրատ–յան երկրորդ շրջանում (1896–ից), պահպանելով անվանումը, հիմնականում լույս է տեսել հայ.՝ վերածվելով գրական–մշակութ. պարբ–ի:

Մանկական մամուլ




ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, հայկ. առաջին մանկ. հրատ–ներն են *«Բուրաստան Սուրբ Սահակեան»* (1851–55, Կ. Պոլիս) և *«Թռութակ Հայկազեան»* (1854–55, Զմյուռնիա) պարբ–ները: XIX դ–ի վերջին քառորդում Կ. Պոլսում լույս են տեսել *«Երկրագունդ»* (1870–71), *«Աւետարեր փղայոց համար»* (1872–78), *«Բուրաստան մանկանց»* (1882–93), *«Թատրոն բարեկամ մանկանց»* (1876–78) պարբ–ները: Նշանակալի էր *«Աղբիւր»*–ի (1883–1918, Թիֆլիս) դերը, որը, ելակետ ընդունելով Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի դաստիարակչ. սկզբունքները, նպաստել է հայ մանկ. գրակ–յան զարգացմանը: Ուշագրավ է Կատարինե և Ստեփան Լիսիցյանների հրատարակած *«Հասակ»* (1905–17, 1922, Թիֆլիս) պատկերազարդ ամսագիրը: Տարբեր ժամանակներում շուրջ 2 տասնյակ այլ պարբ–ներ են լույս տեսել Թիֆլիսում, Լոնդոնում, Ալեքսանդրիայում, Բուխարեստում, Փարիզում, Թեհրանում, Հալեպում և այլուր:

Խորհրդահայ առաջին մանկ. «Պատկոմ» (1923–24, Երևան) պարբերին փոխարինել է *«Պիոները»* (1925–ից, այժմ՝ *«Աղբյուր»*)։ 1923–41-ին Թիֆլիսում հրատարակվել է *«Կարմիր ծիլեր»* ամսագիրը, 1925-ից Երևանում տպագրվում է «Պիոներ կանչ» (այժմ՝ *«Կանչ»*) թերթը, 1967-ից՝ *«Ծիծեռնակ»* ամսագիրը։

Ներկայում հրատարակվում են նաև *«Ուրախ գնացք»* (2009), *«Հայ ասպետ»* (2011-ից), *«Իմ մողոքակը»* (2011, երեքն էլ՝ Երևան), *«Պատանեկան արձագանք»* (1936-ից, Բեյրութ), *«Ալիք պատանեկան»* (1969–78 և 2010-ից, Թեհրան), *«Կաթաւիկ»* (2011, Լոս Անջելես) և մանկ. այլ պարբ-ներ։ Մի շարք պարբ-ներ լույս են ընծայում նաև մանկապատանեկան հավելվածներ։

Գրկ. Նազարյան Ս., *Հայ մանկա-պատանեկան մամուլը (1851–1917), Ե., 1979։*

«ՄԱՆԿԱՎԱՐԺ», տես., մանկավարժ., մեթոդ. ամսագիր։ Լույս է տեսել 1926–91-ին (1926–31-ին՝ «Ժողովրդական լուսավորություն», 1931–33-ին՝ «Կոմունիստական լուսավորություն», 1933–41 և 1989–91-ին՝ «Խորհրդային մանկավարժ», 1952–89-ին՝ «Սովետական մանկավարժ», 1991-ին՝ «Մ.»)։ Երևանում։ Խմբագիրներ՝ Սերիկ *Դավթյան*, Սիմակ *Սահակյան*, Մուշեղ Սանթրոսյան, Մկրտիչ Մազմանյան, Սուրեն Խուդոյան, Հայկ Պարոնյան, Ռոմա Դալլաքյան, Ցոլակ Պողոսյան, Միքայել Մկրտչյան։ Նպաստել է ուս. ծրագրերի, պլանների ու դասագրքերի բարեփոխմանը, դիտամեթոդ. օգնություն ցուցաբերել ուսուցիչներին։ Լուսաբանել է ուսուցման ու դաստիարակության դրվածքը հանրապետության դպրոցներում, ներկայացրել կրթության նորագույն մեթոդները։ Անդրադարձել է պրոֆտեխկրթության համակարգի, դպրոցականների մասնագիտ. կողմնորոշման և դաստիարակության հարցերին, տպագրել ուսումնասիրություններ և հոդվածներ հայկ. դպրոցի պատմության վերաբերյալ, ծանոթացրել մանկավարժության բնագավառի գիտ. հետազոտություններին։ Ունեցել է «Ռուսաց լեզուն հայկական դպրոցում» (ռուս., 1957–78), «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» (1966–82, տես *«Մայրենի»*), «Մաթեմատիկան և ֆիզիկան դպրոցում» (1966–91) հավելվածները։



«Սովետական մանկավարժ», *1926–91, Երևան (№ 4, 1982)*

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ», ամսագիր։ Լույս է տեսել 1878–1879-ին Թիֆլիսում։ Խմբագիր-արտոնատեր՝ Հակոբ Տեր-Հովհաննիսյան։ Տպագրել է մանկավարժության վերաբերյալ նյութեր, լուսաբանել Անդրկովկասի կրթ. հաստատությունների գործունեությունը։ Կարևորել է ուսուցող. նյութերի օգտագործումը, մանկ. և ժող. երգերի ուսուցումը, բացառել պատիժը։ Հրատարակել է Ա. Բահաթրյանի «Մայրենի լեզուի ուսուցումը տարրական դպրոցների մէջ» (1878, № 1–4), Ս. Մանդինյանի «Թուաբանութեան մեթոդիկայի մի քանի օրինակ» (1879, № 8) հոդվածները։ Ծանոթացրել է եվրոպացի նշանավոր մանկավարժներ Ֆ. Ֆրեոբելի, Ի. Պեստալոցցիի մեթոդներին։ Տպագրել է նաև գրախոսություններ, արտերկրի մանկավարժ. կյանքի նորություններ ևն։



«Մանկավարժական համալսարան», *1965-ից, Երևան*


«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», կիսամսյա թերթ։ Սկզբում՝ շաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ։ ՀՊՄՀ-ի պաշտոնաթերթ։ Լույս է տեսնում 1965-ից Երևանում (մինչև 2000-ը՝ «Մանկավարժ», 2000–03-ին՝ «Ապագա մանկավարժ»)։ Խմբագիրներ՝ Պետրոս *Քեդիրյան*, Հայկազ Մուրադյան, Զավեն Առաքելյան, Արտավազդ Հովակիմյան, Ավագ Խաչատրյան, Լևոն *Անանյան*, Գագիկ Քալաշյան, Միքայել Հարությունյան, Սուրեն Սահակյան, Գոհար Ամիրբեկյան, Վլադիմիր Իսահակյան, Տիգրան Հովհաննիսյան, Շուշանիկ Դանոյան, Սիլվա Ասրյան (2003-ից)։ Լուսաբանում է բուհի գիտակրթ. գործունեությունը, անդրադառնում կրթ. համակարգի խնդիրներին, բուհի պատմությանը, անվանի համալսարանականներին։ Տպագրում է ուսանողների գրական ստեղծագործություններից, ուսանող. խմբակների առօրյային վերաբերող նյութեր ևն։



«Մանկավարժական միտք», *2000-ից, Երևան (№ 3–4, 2011)*



«Մանկավարժություն», *2001-ից, Երևան (№ 7, 2012)*



Մանվել Կյումուշխանեցու *«Լուծ արմատոյն մերոյ» (1841, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ», գիտ. ամսագիր: Հիմնադիր՝ «Տաթև» գիտակրթ. համալիր: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Խմբագր. խորհուրդ, 2003-ից՝ գլխ. խմբագիր Նազիկ Հարությունյան: Տպագրում է դասավանդման մեթոդիկայի, կրթության կառավարման, սոցիալ., շտկող., նախադպրոց. մանկավարժության, մանկավարժ. հոգեբանության, մանկավարժ. մտքի պատմության և այլնի վերաբերյալ գիտ. հաղորդումներ, հոդվածներ, քննարկումներ: Ունի «Պատմություն և կրթություն» (2001-ից), «Գեղարվեստական միտք» (2002-ից), «Հայ կրթական գործը Սփյուռքում» (2008-ից), «Նախադպրոցական կրթություն» (2008-ից) և այլ հավելվածներ:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ», մանկավարժ. և գրական հանդես: Լույս է տեսել 1884–87-ին (անկանոն պարբերականությամբ) Թիֆլիսում, Ախալցխայում, Ս. Պետերբուրգում: Խմբագիր՝ Խորեն *Սրվեհանե:* Հանդեսում մեծ մասամբ հրապարակվել են եվրոպ. երկրներում դպրոց. գործի դրվածքին վերաբերող հոդվածներ, ուսուցող. նյութեր, վիճակագր. տվյալներ, խորհուրդներ հայ ուսուցիչներին: Գրական բաժնում հիմնականում տպագրվել են խմբագրի բանաստեղծությունները՝ Իշխան Բագրատունի կեղծանունով:

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ», գիտ. եռամսյա հանդես: ՀՊՄՀ-ի և Միջբուհ. ընկերակցության հրատ.: Լույս է տեսնում 2001-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Նաիրա Հակոբյան: Տպագրում է գիտատես. և գիտամեթոդ. հոդվածներ՝ հայ., ռուս., անգ. (ամփոփումներով), որոնք նպաստում են ՀՀ-ում մանկավարժության և հոգեբանության բնագավառներում առկա խնդիրների լուծմանը, կրթության կառավարման հիմնախնդիրների լուսաբանմանը և ոլորտի համաշխ. փորձի ուսումնասիրմանը, միջազգ. կրթ. գործընթացների ներդրմանը ևն:

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ», գիտամեթոդ., վերլուծ. ամսագիր: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 2001-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Մանուկ Մկրտչյան: Տպագրում է մանկավարժության տեսության և մեթոդաբանության, համեմատ. մանկավարժության, կրթ. քաղաքականության, բարոյական, գեղագիտ. դաստիարակության, էկոլոգ. կրթության, կրթ. տեխնոլոգիաների և բարեփոխումների, մանկավարժ. կողմնորոշման ևն վերաբերյալ հոդվածներ:

ՄԱՆՎԵԼ (Ստեփանոս) ԿՅՈՒՄՈՒՇԽԱՆԵՑԻ, Գյումուշխանեցի, Շահինյան, Ալթունյան [1.1.1768, Գյումուշխանե (Տրապիզոնի նահանգ)–4.12.1843, Հին Ղրիմ (թաղված է հայկ. Սբ Խաչ վանքի բակում)], մատենագիր, եկեղեց., հաս. գործիչ: Սովորել է ծննդավայրում, ապա՝ Կարինում: 1796-ին ձեռնադրվել է արեղա, այնուհետև՝ վարդապետ և ծայրագույն վարդապետ: 1827-ին Ներսես արք. Աշտարակեցու հրավերով եկել է Սբ Էջմիածին, նշանակվել Սինոդի անդամ, ձեռագրատան տնօրեն: 1828–30-ին գործել է Խոր վիրապի ու Սևանի վանքերում, ապա՝ Թիֆլիսում:

Լույս են տեսել Մ. Կ-ու «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց» (1830, հրտ.՝ 1871, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) պատմ., «Դպրութիւն մանկանց...» (1821, Մ., Օգոստոս Սեմենի տպ.), «Լուծ արմատոյն մերոյ» (1832, հրտ.՝ 1841, ԿՊ, Արապյան տպ.) կրոնաբարոյախոս., «Նամակ Մխիթարեաններին» (1814), «Դեղաթափ ընդդէմ լիութերականաց աղանդին» (1836) դավանաբան. աշխատությունները, որոնք կարևոր սկզբնաղբյուր են և հարուստ նյութ են պարունակում XVIII դ-ի 2-րդ կեսի և XIX դ-ի 1-ին կեսի հայ եկեղեց., քաղ., մշակութ. կյանքի վերաբերյալ: «Անձնական պատմութիւն Սանուէլ Կիւմուշխանացի վարդապետի, Ալթունեանի կամ Շահինովի» գործը տպագրվել է «Դիւան հայոց պատմութեան» մատենաշարով (գիրք 12, Թ., 1917, Նվարդ Աղանյանի տպ.):

Գրկ. **Շահազիզ Ե.**, *Շահինյան Մանվել ծայրագույն վարդապետ Գյումուշխանեցի, «Էջմիածին», 1946, № 6–7:*

Մանրանկարչություն

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, կերպարվ–ի տեսակ, որի ստեղծագործությունները (մանրանկարները) առանձնանում են փոքր չափերով և գեղ. հնարքների նրբությամբ: Հայ միջնադարյան Մ–յան ոլորտը ձեռագիր գրքարվեստն է. մատյաններում գծի, նաև գուաշի, տեմպերայի, ջրաներկի, ոսկու, հազվադեպ՝ արծաթի միջոցով պատկերազարդել են ***անվանաթերթեր, խորաններ, լուսանցազարդեր***, պատմող. տեսարաններ՝ բնանկարի, ոսկու, ճարտ. միջավայրի կամ մագաղաթի և թղթի ֆոնի վրա:

Գրքի Մ–յան հնագույն օրինակներ պահպանվել են Հին Եգիպտոսում: Հին հույները պատկերազարդել են ամբողջ տեքստը (հատկապես՝ Հոմերոսի երկերը): Մեզ հասած հնագույն մագաղաթե մանրանկար ձեռագիրը Հոմերոսի «Իլիականն» է (մոտ 500 թ., Ամբրոզիանայի գրադարան, Միլան): Հելլենիստ. շրջանում Մ–յան գլխ. կենտրոններ են եղել Ալեքսանդրիան, Հռոմը, նշանավոր էին նաև Բյուզանդիոնը, Պերգամոնը, Անտիոքը, Եփեսոսը:

IX դ–ի 2–րդ կեսին նկատելի է Մ–յան զարգացման 2 ոճ: «Արքունական ոճի» լավագույն նմուշներից են «Գրիգոր Նազիանզացու քարոզները», որտեղ պատկերված են նաև Վասիլ Ա–ն ու նրա ընտանիքը (880–886, Փարիզի ազգ. գրադարան), «Եսայի մարգարեի մեկնությունները» (XI դ.), «Վասիլ Բ–ի մենոլոգիան» (երկուսն էլ՝ Վատիկանի գրադարան, Հռոմ) ևն: «Վանական ոճի» փայլուն օրինակ է «Խլուդովյան սաղմոսարանը» (IX դ., Մոսկվայի պատմության թանգարան): X դ–ում խորհրդանշ. պատկերներում (խորաններ, անվանաթերթեր, բուս., կենդ. և ճարտ. մոտիվներ) նկատվում են նոր՝ պարսկ. և մահմեդ. ազդեցություններ:

Հայկ. Մ. աչքի է ընկնում ոճերի և դպրոցների բազմազանությամբ: Առավել շատ պատկերազարդվել են Ավետարանները, ապա՝ Աստվածաշունչը և ծիսակրոն. այլ ժողովածու–մատյաններ: Մեզ հասած առաջին մանրանկարները VI–VII դդ–ի նմուշներ են (տես ***«Էջմիածնի Աւետարան»***): ***«Մլքէ թագուհու Աւետարան»***–ը, ***«Կարսի Աւետարան»***–ը, ***«Տրապիզոնի Աւետարան»***–ը մեզ են հասել IX–XI դդ–ից. այս ձեռագրերում առկա են հայկ. Մ–յան հետագա զարգացման հիմն. գծերը՝ սյունազարդ խորաններ, ոսկետառ անվանաթերթեր (գլխազարդերով և տիտղոսազարդերով), տերուն. նկարներ, տեքստի հետ դրվող մանրանկարներ: Նկատելի է նաև բյուզ. և արևելաքրիստ. արվ–ների համադրումը: Արևելաքրիստ. Մ–յանն առնչվող 1038–ի Ավետարանի (Մատենադարան, ձեռ. № 6201) և Փոքր Հայքում ստեղծված Ավետարանների մեծաքանակ մանրանկարներին բնորոշ նորույթները հետագայում դրվել են հայկ. պատկերագրության հիմքում (մերկ Քրիստոսի պատկերումը խաչի վրա ևն):

XI դ–ի 2–րդ կեսի մի խումբ ձեռագրերով (***«Մողնու Աւետարան»*** ևն) ձևավորվել է Անիի Մ–յան դպրոցը, որի մանրանկարներն աչքի են ընկնում մոնումենտալ–որմնանկարային ոճով:

XII դ–ից մեզ հասած ձեռագրերում ծաղկողները զարգացրել են X–XI դդ–ի Մ–յան ավանդույթները, կերպարն օժտել ողբերգական–հուզ. շերտերով, առավել հաճախ անդրադարձել բուս. և կենդ. մոտիվներին:

XIII դ–ի 1–ին կեսին Մ. նորովի է զարգացել Մեծ Հայքում (***«Հաղպատի Աւետարան», «Թարգմանչաց Աւետարան»***), նոր որակ է ձեռք բերել ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցում***. փոքրացել են մատյանների չափերը, մանրանկարիչներն առավել մոտեցել են իրականությանը, հետաքրքրվել այլ երկրների (Բյուզանդիա ու եվրոպ. երկրներ) մշակութ. ավանդույթներով: Նշանավոր մանրանկարիչներ ***Գրիգոր Մլիճեցին, Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը*** և ուր. ստեղծել են նրբաոճ արքուն. ձեռագրեր (***«Հեթում Բ թագաւորի Ճաշոց», «Կեռան թագուհու Աւետարան»*** ևն): ***Գլաձորի մանրանկար–***



«Քրիստոսին խաչից իջեցնելն ու թաղումը», մանրանկար, 1286–ի Ճաշոց (ծաղկող՝ հավանաբար Թորոս Ռոսլին, Մատենադարան, ձեռ. № 979)



«Էջմիածնի Աւետարան»–ի լուսանցազարդով էջ (989, գրիչ՝ Հովհաննես, Մատենադարան, ձեռ. № 2374)




«Մատթեոս ավետարանիչ», մանրանկար, «Ութ մանրանկարիչների Աւետարան» (XIII դ–ի վերջին քառորդ–1320, ծաղկող՝ Սարգիս Պիծակ, Մատենադարան, ձեռ. № 7651)



Մանուել. *Մատթեոսի Ավետարանի անվանաթերթը, 1293-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 5784)*



Մանուել Սրմաքեշ Կեսարյանի *«Ակն լուսափու» (1782, Կ. Պոլիս, Սրեփանոս Պետրոսյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*



Թորգոմ Մանուկյանի *«Վանքի օրեր» (2001, Երուսաղեմ) գրքի կազմը*

չության դպրոցը (*Մոմիկ, Թորոս Տարոնացի, Ավագ* և ուր.) աչքի է ընկել շեշտված անհատականություններով, իսկ *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* ծաղկողները (*Սիմեոն Արճիշեցի, Զաքարիա Աղթամարցի, Ռափաելես, Կիրակոս Աղրակեցի* և ուր.) առավելապես հետևել են միասն. գեղ. ավանդույթներին: Մ–յան նշանավոր կենտրոններից էր նաև *Տաթևի մանրանկարչության դպրոցը՝ Գրիգոր Տաթևացու* գլխավորությամբ, որից հետո հայկ. Մ. զարգացել է գաղթավայրերում՝ Ղրիմում, Նոր Ջուղայում, Կ. Պոլսում և այլուր (տես նաև *Ղրիմի մանրանկարչության դպրոց, Նոր Ջուղայի դպրոց*): XVII–XVIII դդ–ում հայկ. Մ. աստիճանաբար իր տեղը զիջել է գրքի պատկերազարդման տպագր. արվ–ին:

Գրկ. Դուռնովո Լ., *Հին հայկական մանրանկարչություն, Ե., 1952:* Ազարյան Լ., *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964: Հայկական մանրանկարչություն (առաջաբ.՝ Ս. Տեր–Ներսեսյանի, կազմ.՝ Մ. Ճանաշյան), Վնտ., 1966: Հայկական մանրանկարչություն (ալբոմ), Ե., 1967:* Տեր–Ներսեսյան Ս., *Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975:* Հակոբյան Հ., *Հայկական մանրանկարչություն: Վասպուրական (ալբոմ), Ե., 1978:* Նույնի, *Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք 1, 2, Ե., 1976, 1982:* Նույնի, *Արցախ–Ուտիքի մանրանկարչությունը XIII–XIV դդ., Ե., 1989: Հայկական մանրանկարչություն: Դիմանկար (կազմ., առաջաբ., ծնթգր.՝ Ա. Գևորգյանի), Ե., 1982: Հայկական մանրանկարչություն, զարդապատեր (ալբոմ), Ե., 1992: Մեկնութիւնք Խորանաց (աշխատասիր.՝ Վ. Ղազարյանի), Էջմիածին, 2004:* Свирин А., *Миниатюра древней Армении, М., 1939;* Корхмазян Э., *Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978;* Измайлова Т., *Армянская миниатюра XI века, 1979;* Дурново Л., *Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; Армянская миниатюра, Е., 2007;* Der Nersessian S., *L'art Arménien, P., 1977.*

Վիգեն Ղազարյան

ՄԱՆՈՒԵԼ, **Նաղաշ Մանուել**, մանրանկարիչ, XV դ–ի Տփղիսի հայ գրչության դպրոցի ներկայացուցիչ: Ստեղծագործել է Տփղիսում, Կիկեթում, Հաղպատում: Մատենադարանում պահվում են Մ–ի նկարազարդած 1452–ի (ձեռ. № 6806), 1459–ի (ձեռ. № 7986) Ավետարանները, 1458–ի Ճաշոցը (ձեռ. № 6260), նաև 1293–ին Սկևռայում ընդօրինակված Ավետարանը (ձեռ. № 5784), որի տերուն. պատկերները («Ավետում», «Ծնունդ», «Տյառնընդառաջ» ևն) նույնպես ծաղկել է Մ. (1445): 1463–ի Ավետարանը պահվում է Էջմիածնում (ձեռ. № 209), 1 ձեռագիր՝ Ստոկհոլմում: Մ–ի մանրանկարներին բնորոշ են հորինվածքների ինքնատիպ կառուցվածքը, գունային նուրբ համադրությունները և կատարող. բարձր արվ–ը:

Գրկ. Գեւորգեան Ա., *Հայ մանրանկարիչներ: Մատենագիտութիւն (IX–XIX դդ.), Կահիրէ, 1998:*

ՄԱՆՈՒԵԼ ՍՐՄԱՔԵՇ ԿԵՍԱՐՅԱՆ, **Մանուել դպիր Կոստանդնուպոլսեցի, Մանուել Փոքր**, XIII դ–ի աստվածաբան, քարոզիչ: Փոքր հասակից հրապուրվել է կաթոլիկ. քարոզչությամբ, սակայն Հակոբ Նալյանի ջանքերով դարձել է Հայ եկեղեցու հավատավոր: Մ. Ս. Կ–ի երկերը վերաբերում են Հայ առաքել. և կաթոլիկ. եկեղեցիների ծիս. հարցերին (մկրտություն, հաղորդություն, մյուռոն, Սբ Երրորդություն, ծիսակատարություններ, պատարագ ևն), որոնք տպագրվել են ոչ միայն հայ., այլև հայատառ թուրք.:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Մ. Ս. Կ–ի՝

«**Լուծիչ տարակուսանաց**» եկեղեց. ծիսակարգին նվիրված երկը. 1755–ին Կ. Պոլսում՝ Բարսեղ Սեբաստացու տպարանում: Ա տիտղթին՝ «Գիրք որ կոչի Լուծիչ տարակուսանաց...», Բ–ին՝ նույնը (160 էջ, 8º, 9,5 x 6 սմ):

«**Ակնոց աչաց սրտի**» քրիստ. վարդապետության աշխարհաբար երկը (աղանդավորության դեմ). 1780–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Տետրակ որ կոչի Ակնոց աչաց սրտի...» (48 էջ, 8º, 13 x 7,3 սմ):

«**Գաւազան կրկնազօր**» հայատառ թուրք. կրոնադավանաբան. երկը. 1780–ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Տետրակ որ կոչի Գաւազան կրկնազօր...» (136 էջ, 8º, 13 x 7 սմ):

«Ակն լուսատու» հայատառ թուրք. դավանաբան. երկը. 1782-ին նույն տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Ակն լուսատու...», Բ-ին՝ նույնը (264 էջ, 8º, 13,2 x 7 սմ):

«Հիմն ստուգութեան» քրիստ. վարդապետության երկը. 1783-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Հիմն ստուգութեան...» (352 էջ, 8º, 13 x 8 սմ):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Թորգոմ [16.2.1919, ք. Բագուբա (Իրաք)–12.10.2012, Երուսաղեմ], Երուսաղեմի հայոց պատրիարք (1990-ից), արքեպիսկոպոս (1968-ից): Նյու Յորքի Ընդհանուր աստվածաբան. ճեմարանի պատվ. դ-ր: Ավարտել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, սովորել Քեմբրիջի աստվածաբան. դպրոցում (1960–62): Եղել է Հայ եկեղեցու Ամերիկայի Արմ. թեմի (1962–66), ապա՝ Արլ. թեմի (1966–90) առաջնորդ: 1990–2012-ին՝ *«Միտն»* ամսագրի գլխ. խմբագիր: 1994–95-ին՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոս. տեղապահ:

Լույս են տեսել Մ-ի «Վերելք» (1993), «Անկարելի սէր» (2000), «Անդրադարձ» (2002) բանաստեղծությունների ժող-ները, «Խումբին հետ (Հաւատքի կայծեր)» (1952), «Հայ եկեղեցու կորուստը Եղեռնին» (1972), «Վանքի օրեր» (2001), «Կոմիտասի հանճարը իր պատարագին մէջ» (2003) ուսումնասիրությունները: Թարգմանել է Շեքսպիրի 154 սոնետներից («Սոնեթներ: Անձնական մեկնութիւններ», 1996):

Գրկ. Բաղդիշեան Գ., Երուսաղէմի պատրիարք Մանուկեանի գեղարուեստական արձակը, Երուսաղեմ, 2002: Համառօտ տարեգրութիւն (1919–2004 թթ.) Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի, Երուսաղեմ, 2005: Ժամանակակիցները Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի մասին (կազմ.՝ Գ. Բաղդիշյան), Երուսաղեմ, 2004:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Լևոն Խանաևի [14.7.1938, գ. Թորոս (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–5.3.1992, Երևան], խմբագիր, արձակագիր: Ավարտել է ԳՊՄԻ (1960): 1960–62-ին դասավանդել է Լենինականում և Ամասիայում: Աշխատել է Ամասիայի «Աշխատանք» շրջ. թերթի խմբագրությունում: 1970–85-ին՝ *«Ավանգարդ»* թերթի խմբագիր, 1985–92-ին՝ *Արմենպրեսի* փոխտնօրեն:

Լույս են տեսել Մ-ի «Մի սովորական օր» (1971), «Եռանկյունի տիեզերք» (1977), «Լեռան մյուս կողմում» (1985), «Մասսյաց գիրք» (1990) պատմվածքների, «Յուտեսություն, Լիլիկ» (1973), «Ծննդյան յոթ օր» (1982), «Հոգու խճանկար» (1983) վիպակների, հրապարակախոս. հոդվածների ժող-ները:

ՀԺՄ «Ոսկե գրիչ» մրց. (1984):

ՄԱՆՈՒԿՅԱՆ Նիկոլայ Արկադիի, **Նիկո** (ծ. 10.1.1949, Թբիլիսի), նկարիչ-ձևավորող: Սովորել է ԵՊԻ-ում (1962–65), ավարտել Թբիլիսիի գեղարվ-ի ակադ-ը (1972): 1972-ից որպես նկարիչ-ձևավորող աշխատել է Հայֆիլմում, «Պիոներ կանչ», «Հայություն», «Ոզնի», «Սովետական Հայաստան» և այլ պարբ-ներում: 2008-ից՝ *«Իրատես դե ֆակտո»* թերթի գեղ. խմբագիր:

Պատկերազարդել է Ն. Կիրակոսյանի «Սրամիտ և միամիտ ջավախքցիները» (2000), «Մահաբհարատա» (2001) հնդկ. էպոսը, Ջ. Խալափյանի «Ասպետն ու զինակիրը» (2003), Ա. Ավետիսյանի «Ջավախքյան մանրապատումներ» (2003), Բ. Ալեքյանի «Դարավերջի քամին» (2004), Մ. Ոսկանյանի «Արցախյան վկայություններ» (2005), Ա. Շեկոյանի «Ավարայրի լույսը» (2005), Ա. Պարսամյանի «Առաջին ծաղիկը» (2007), Գ. Եղիկյանի «Կիլիկո» (2007), Յ. Սահակյանի «Ամենալավ խաղալիքը» (2011) և այլ գրքեր:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռուբեն Սոսի (ծ. 2.7.1940, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1990): Ավարտել է ԵԳՈՒ (1960), ԵԳԹԻ (1965): 1962–80-ին՝ *«Ավանգարդ»* թերթի պատկերազարդման բաժնի վարիչ: 1970–80-ական թթ-ին պարբերաբար ձևավորել է «Ծիծեռնակ», «Պիոներ» ամսագրերը, «Պիոներ կանչ» թերթը: Որպես նկարիչ-ձևավորող՝ համագործակցել է Փարիզի *«Էրեբունի»* (Հ. Թումանյանի և Վ. Անանյանի մանկ. գործերի շարքերը, 1968–75) և Երևանի «Լույս» (1980–90-ական թթ.) հրատարակչությունների հետ:

Պատկերազարդել է Ա. Տոլստոյի «Ոսկե բանալին կամ Բուրատինոյի արկածները» (1978), Հ. Թումանյանի «Սուտասանը» (1984), Վ. Անանյանի «Եղնիկի ձագը» (հայ., ռուս., անգլ., արաբ., լեհ., 1983), նաև «Հայրենի աղբյուր» (1988, Ա, Բ, սփյուռքի դպրոցների համար) այբբենարանը և այլ գրքեր:



Լևոն Մանուկյանի *«Լեռան մյուս կողմում» (1985, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Նիկոլայ Մանուկյան. *Յ. Սահակյանի «Ամենալավ խաղալիքը» (2011, Սրեփհանակերտ, «Սոնա») գրքի կազմը*




Ռուբեն Մանուկյան. *Վ. Անանյանի «Եղնիկի ձագը» (1983, Ե., «Սովետական գրող») գրքի պատկերազարդումներից*

Մաշտոց



«Մեռոնի օրհնությունը», մանրանկար, 1471-ի ձեռագիր մատյան (ծաղկող՝ Կարապետ Աղթամարցի, Մատենադարան, ձեռ. № 5702)



1667 (Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի), տիտղոսաթերթը



1790 (Տրիեստ), տիտղոսաթերթը

ՄԱՆՈՒՉՅԱՆ Միսաք Գևորգի [1906, Ադիյաման (Թուրքիա)–21.2.1944, Փարիզ], բանաստեղծ, Ֆրանսիայի Դիմադրության շարժման գործիչ: Փրկվելով Մեծ եղեռնից՝ 1920-ական թթ-ի սկզբին ապաստանել է Լիբանանում, 1925-ին տեղափոխվել Ֆրանսիա: 1930–31-ին Գեղամ *Աթամյանի* հետ հրատարակել է «Զանք» գրական-գեղ. հանդեսը: 1935–1937-ին՝ *«Զանգու»* շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր: 1943-ի նոյեմբ. 16-ին ֆաշիստները ձերբակալել են Մ-ին, ամիսներ անց գնդակահարել:

1946-ին Փարիզում լույս է տեսել նրա «Բանաստեղծություններ» ժող-ը, որը Երևանում վերահրատարակվել է «Իմ երգը» (1955) խոբագրով:

Մ-ի անունով կոչվել են փողոցներ Փարիզում (Մ-ի ապրած տան պատին ամրացվել է հուշաքար), Մարսելում, Ֆրանսիայի այլ քաղաքներում, դպրոցներ՝ Երևանում, Գյումրիում, պուրակ՝ Երևանում: Ամեն տարի փետր. 26-ին Ֆրանսիայում հարգանքի տուրք է մատուցվում Մ-ի հիշատակին:

Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշան (հետմահու):

Գրկ. **Դրամփյան Տ.**, *Արյան գնով: Միսաք Մանուշյան, Ե., 1972:* **Նույնի**, *Մանուշյանի խումբը, Ե., 1990:*

ՄԱՇՏՈՑ, **ծիսարան**, հայ եկեղեցու ծիս. ժողովածու. պարունակում է քրիստ. ծիսակարգի կանոններ, նաև հատուկ աղոթքներ, օրհնություններ:

Ըստ ավանդության՝ անվանման ծագումը կապվում է Մեսրոպ Մաշտոցի, իսկ ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու (XIII դ.)՝ Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի անվան հետ (համարվում է ավելի հավանական):

Ձևավորվել է IV–V դդ-ից և պահպանել հեթանոս. Հայաստանում տարածված մի շարք ինագույն ծեսերի ազդեցություններ:

Մ-ի կազմավորմանն ու հարստացմանը մասնակցել են Ամենայն հայոց կաթողիկոսներ Գրիգոր Ա Լուսավորիչը, Սահակ Պարթևը, Հովհաննես Ա Մանդակունին, Մաշտոց Ա Եղիվարդեցին, Գրիգոր Բ Վկայասերը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և ուր.: Ծիսարանի մեջ են մտել Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Եփրեմ Խուրի Ասորու, Կյուրեղ Երուսաղեմացու ամբողջ. կանոնների, առանձին քարոզների և աղոթքների թարգմանություններ, նաև հայ հեղինակների ծիս. բովանդակության ինքնուրույն նյութեր:

Ուշ միջնադարում երևան են եկել խառը ժող-ներ՝ Մ-Գանձարաններ, Մ-Տաղարաններ, որտեղ աշխարհականացման ոգին դրսևորվում է ոչ միայն երաժշտարանաստեղծ. նյութի առավել շեշտադրումով, այլև աշխարհիկ և ժող. տաղերի ու ողբերի երևան գալով:

Մ-ներ տպագրվել են՝

1569-ին Կ. Պոլսում՝ Աբգար Դպիր Թոխաթեցու տպարանում (8º):

1667-ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Գիրգ Սրբոյն Մաշտոցայ վարդապետի…» (383 էջ, 8º, 15,2 x 9,2 սմ):

1676-ին Սարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (308 էջ, 8º, 15 x 9,5 սմ):

1687-ին Ամստերդամում՝ Մատթեոս Վանանդեցու տպարանում:

1704-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (642 էջ, 4º, 14,2 x 9,6 սմ): 1714-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (712 էջ, 8º, 15,5 x 9,8 սմ): 1726-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Սուրբ որ կոչի Մաշտոց…» (384 էջ, 8º, 11,9 x 7,3 սմ): 1711-ին, 1744-ին, 1752-ին, 1775-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: 1784-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: 1785-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց…» (404 էջ, 8º,12,5 x 8 սմ):

1790-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Մաշտոց գիրք կամ Ծիսարան…» (236 էջ, 8º, 17,2 x 10,2 սմ):

1792-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սբ գիրքս որ կոչի Մաշտոց…» (384 էջ, 8º, 12,4 x 8,3 սմ):

1794-ին Էջմիածնում՝ առանց տպարանի հիշատակության: Ա տիտղթ-ին՝ «Գիրք կոչեցեալ Մաշտոց…», Բ-ին՝ «Մաշտոց գիրք յորում պարունակին կարգք…» (88 էջ):

Հրատարակվել է նաև առանց տպագրության վայրի, տպարանի և տպագրության թվականի հիշատակության Մ.: Տիտղթ-ին՝ «Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի.…»:

«Մաշտոց Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ» վերնագրով Մ-ներ են տպագրվել նաև 1831–40-ին և 1905-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1905-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1933-ին, 1986-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1992-ին (Նյու Յորք):

Գրկ. **Արևշատյան Ա.**, *«Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Ե., 1991:*

«ՄԱՇՏՈՑ», հայկ. մագաղաթե պատկերազարդ ձեռագիր: Ընդօրինակել է Ավետիք քահանան 1266-ին Սսում, նկարազարդել է ***Թորոս Ռոսլինը*** Հռոմկլայում: Պատվիրատու՝ Վարդան եպիսկոպոս: Պահվում է Երուսաղեմի մատենադարանում (ձեռ. № 2027): Խորաններից, լուսանցազարդերից, գլխատառերից ու գլխազարդերից բացի՝ ձեռագիրն ունի նաև թեթևակի զարդարված շրջանակներում պարփակված ամբողջական էջով տերուն. պատկերներ, որոնք աչքի են ընկնում հորինվածքի պարզ կառուցվածքով: «Մ.»-ում Սաղմոսագրքի թեմաներով պատկերները մեզ հայտնի առաջին հայկ. մանրանկարներն են, իսկ «Հովհաննես ավետարանիչի թաղումը» և «Կարմիր ծովի անցումը» թեմատիկ տեսարանները հայ արվ-ում նորություն էին: Բարձրարվ. մանրանկարներով այս ձեռագիրը ***Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի*** XIII դ-ի 2-րդ կեսի լավագույն հուշարձաններից է:

Գրկ. **Յովսէփեան Գ.**, *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պր. 2, Նյու Յորք, 1943:* **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:*



«Մաշտոց». *«Կարմիր ծովի անցումը», մանրանկար (1266, ծաղկող՝ Թորոս Ռոսլին, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2027)*

«ՄԱՇՏՈՑ», պարբերաթերթ: Լույս է տեսել 1993–2003-ին Կրասնոդարում: Մեսրոպ Մաշտոցի անվ. հայկ. մշակույթի ընկերության հրատ.: Գլխ. խմբագիրներ՝ Տիգրան ***Թավադյան,*** Էդուարդ Մելքումյանց, Կարինա Բալասանյան և ուր.*:* Լուսաբանել է Կրասնոդարի հայկ. համայնքի կյանքը, ծանոթացրել հայոց պատմությանն ու մշակույթին, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին:



«Մաշտոց», *1993–2003, Կրասնոդար*

«ՄԱՇՏՈՑ», հաս., կրթամշակութ., հայագիտ. եռամսյա հանդես: Լոռու մարզի «Մաշտոց» կրթամշակութ. կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 1997-ից (անդրանիկ համարը՝ Թարգմանչաց տոնին) Վանաձորում: Հիմնադիր-խմբագիր՝ Գագիկ Աթաբեկյան: Ներկայացնում է հայագիտ-յան, գրակ-յան, մանկավարժության, կերպարվ-ի, թատերարվ-ի բնագավառների հայ երախտավորներին, ականավոր դեմքերին, ժամանակակից անվանի մարդկանց, տպագրում է քնն., վերլուծ. նյութեր, անդրադառնում է հիշյալ ոլորտների նորություններին, կարևոր միջոցառումներին: «Մ.» նպաստում է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Տարածվում է նաև ԼՂՀ-ում և Սփյուռքում:

ՄԱՌ Նիկողայոս Յակովլևիչ (25.12.1864, Քութայիս–20.12.1934, Լենինգրադ), արևելագետ, հայագետ, լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր, պրոֆ. (1901), Ռուսաստանի կայսեր. ակադ-ի ակադ. (1909-ից): Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանը (1890): 1891-ին նշանակվել է նույն համալսարանի հայագիտ-յան ամբիոնի պրիվատ-դոցենտ, 1900-ին՝ հայ-վրաց. բանասիրության ամբիոնի վարիչ, 1912–22-ին՝ «Խրիստիանսկի Վոստոկ» (ռուս.) հանդեսի հիմնադիր-խմբագիր: 1915–16-ին Հ. Օրբելու հետ մեկնել է Վան և ուսումնասիրել ուրարտ. սեպագիր արձանագրությունները: 1925–30-ին՝ Լենինգրադի հանրային գրադարանի տնօրեն, 1930-ին՝ ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ:



Նիկողայոս Մառ


1890-ին Մ. ուսումնասիրել է Էջմիածնի և Սևանի մատենադարանների հայկ. ձեռագրերը, Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Մխիթար Գոշի երկերը, հրատարակել Վարդան Այգեկցու «Ժողովածոյք առակաց Վարդանայ» (ռուս., մաս 1–3, 1894–99, ՍՊը) ժող-ը, Ագաթանգեղոսի «Պատմության», «Սբ Գրիգոր Լուսավորչի վարքի» արաբ. թարգմանությունները, Գրիգոր Խանձթեցու վարքի վրաց. բնագիրը ևն, բացահայտել է հայ մատենագրության նշանակությունն ասոր. և հուն. հուշարձանների նախն. խմբագրությունները վերականգնելու գործում: Առանձնահատուկ նշանակություն ունեն Մովսես Խորենացու, Անանունի (Սեբեոս), Հովհաննես Կոզեռնի և ուր. երկերին նվիրված հոդվածներն ու մենագրությունները: Հակադրվելով եվրոպացի մի շարք արևելագետների (Ալֆրեդ *Գուտշմիդտ*, Օգյուստ *Կարիեր* և ուր.)՝ Մ. հերքել է այն թյուր կարծիքը, թե իբր Մովսես Խորենացին նույն ինքը Մար Աբաս Կատինան է, և ապացուցել, որ Պատմահայրն իր երկը գրելիս իրոք ձեռքի տակ ունեցել է Մար Աբաս Կատինայի աշխատությունը: Մ-ի «Անի» աշխատությունը (ռուս.՝ 1934, հայ.՝ 2011) Անիի պեղումների (1893–1917) գիտ. ուսումնասիրությունների ամփոփումն է: Հիմնադրել է «Հայ-վրացական բանասիրության բնագրեր ու հետազոտություններ», «Հայկական-վրացական մատենադարան», «Անվո շար», «Հայ վիմագրության հուշարձաններ», «Լեզու և մտածողություն», «Կովկասյան բանասիրության բնագրեր և հետազոտություններ», «Հաբեթական տարրերը Հայաստանի լեզուներում» մատենաշարերը, որոնք հետագայում նպաստել են գիտ-յան համապատասխան ճյուղերի կազմավորման զարգացմանը:

Հայ. հրատարակվել են նաև Մ-ի «Ընտիր երկերի ժողովածուն» (1949), «Հայկական մշակույթը: Նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության» (1989) աշխատությունը:

Մ-ի անունով Երևանում կոչվել է փողոց:

Երկ. Избр. работы, т. 1–5, М.–Л., 1933–37; Ереруйская базилика, Е., 1968.

Գրկ. **Մովսիսյան Ա.**, *Ն. Յա. Մառի կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1946: Մառը և հայագիտության հարցերը, Ե., 1968:* **Մնացականյան Ս.**, *Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը, Ե., 1969: Ակադեմիկոս Նիկողայոս Մառ (ժող.), Ե., 2005: Նիկողայոս Յակովլևիչ Մառ (Նյութեր հայագիտության գործոնևեության և բիբլիոգրաֆիայի համար, 10), Ե., 1965:* **Орбели И.**, *Н. Я. Марр как археолог, "Избранные труды", Е., 1963; Кавказ и Византия, в. 6, Е., 1988.*



Նիկողայոս Մառի
«Անի» (2011, Ե., «Առեդիտ») գրքի կազմը



Հայկանուշ Մառք

ՄԱՌՔ Հայկանուշ Սարգարի (1883, Կ. Պոլիս–1966, Կ. Պոլիս), գրող, հաս. գործիչ, խմբագիր: Ավարտել է Կ. Պոլսի Եսայան վարժարանը (1898): 1905–07-ին Կ. Պոլսում խմբագրել և հրատարակել է *«Ծաղիկ կանանց յատուկ»*, 1907–08-ին (ամուսնու՝ Վահան *Թոշիկյանի* հետ)՝ «Արշալոյս», 1907-ին՝ «Լոյս կանանց յատուկ», 1919–32-ին՝ «Հայ կին» հանդեսները:

1921-ին լույս է տեսել Մ-ի «Ծուլութեան պահերէս» (ԿՊ, ա. տպ.) արձակ բանաստեղծությունների ժող-ը:

Գրկ. Հայկանոյշ Մառք: Կեանքն ու գործը, Սիսամրուկ, 1954:



«Մասեաց աղաւնի», 1855–65, Փարիզ, Թեոդոսիա (1855)

«ՄԱՍԵԱՅ ԱՂԱՒԻՆ», ամսագիր («Աւետաբեր Հայաստանեայց» ենթախորագրով): Լույս է տեսել 1855–58-ին Փարիզում, 1860–65-ին Թեոդոսիայում՝ հայ. (հիմնականում՝ աշխարհաբար) և ֆրանս.: Խմբագիր-հրատարակիչ՝ Գաբրիել *Այվազովսկի*: Կարևորել է կրթության և գիտ-յան դերը, քարոզել է վերդասային ազգ. համերաշխություն և կրոն. հայրենասիրությամբ տոգորված ազգ. միության գաղափարներ: Տպագրել է միջազգ. քաղ. լուրեր և տեսություններ, տեղեկություններ՝ ազգ. կյանքից, գիտահանրամատչելի զրույցներ, մանկավարժ. ու պատմ. թեմաներով հոդվածներ, նյութեր՝ բնական գիտ-ների, բնության երևույթների վերաբերյալ: Գրական բաժնում տպագրվել են Մ. Պեշիկթաշլյանի, Խ. Գալֆայանի, Ս. Պալասանյանի, Ժան դը Լաֆոնտենի, Ա. Լամարթինի, Ջ. Բայրոնի, Գ. Դերժավինի, Մ. Լոմոնոսովի, Ի. Կռիլովի և ուր. ստեղծագործություններից: Որպես պահպանող. հոսանքի գա-

ղափարակիր՝ պայքարել է *«Հիսիսափայլ»*-ի և նրա հրատարակիչների դեմ: 1860-ից լույս է տեսել «Մասեաց աղաւնի եւ ծիածան Հայաստանեաց» անվամբ, ունեցել է «Ծիածան» ռուս. հավելվածը:

1990-ից Սիմֆերոպոլում, որպես «Մ.ա.»-ի շարունակություն, լույս է տեսնում *«Սևայաց աղավնի»* հանդեսը:

ՄԱՍԵՀՅԱՆ (Խան Սասեհյան) Հովհաննես Ծերունի [11.2.1864, Թեհրան–19.11.1931, Խարբին (Չինաստան), թաղվել է Թեհրանի մերձակա՝ Վանագ գյուղի Սբ Գևորգ եկեղեցու գավթում, 1963-ին աճյունը տեղափոխվել է Թեհրանի Սբ Աստվածածին եկեղեցու բակ], պետ., հաս. գործիչ, թարգմանիչ, մանկավարժ, հրապարակախոս, խմբագիր: Միջնակարգ կրթությունն ստացել է Թեհրանում (1870–78) և Թավրիզում (1879–81): Ավարտել է Փարիզի ֆրանս. քոլեջը (1884): Վերադառնալով Թեհրան՝ նշանակվել է շահի պալատ. թարգմանիչ, միաժամանակ դասավանդել է տեղի Հայկազյան դպրոցում (1888–96-ին՝ տնօրեն): 1894-ին Թեհրանում հիմնադրել և խմբագրել է պարսկահայ առաջին պարբ-ը՝ *«Շաւիղ»* շաբաթաթերթը:

Մ. տիրապետել է պարսկ-ին, թուրք-ին, հուն-ին, ֆրանս-ին, գերմ-ին, անգլ-ին, ռուս-ին: Հայ իրականության մեջ հայտնի է որպես Վ. Շեքսպիրի երկերի ամենանշանավոր թարգմանիչը. լույս են տեսել «Համլէտ» (1894, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Ռօմէօ եւ Ջուլիէտ» (1896, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Վենետիկի վաճառականը» (1897, Թ., Հայոց հիւսս. ընկ. տպ.), «Արքայ Լիր» (1898, Թ., Մ. Ռոտինյանի տպ.), «Օթելլո» (1922), «Մակբեթ» (1923), «Կորիոլան», «Յուլիոս Կեսար» (երկուսն էլ՝ 1962) ողբերգությունները: Թարգմանել է նաև Սիլերի «Երեւակայական հիւանդ» (ԿՊ, 1891, Տիգրան Ճիվելեկյանի տպ.) կատակերգությունը, Օմար Խայամի, Սաադիի, Յ. Վ. Գյոթեի, Ջ. Բայրոնի, Ռ. Թագորի, Յ. Ֆ. Շիլլերի և ուր. ստեղծագործություններից:

Գրկ. **Դարֆի Գ.**, *Յովհաննէս Սասեհեան, 1864–1931, մահուան 30-ամեակի առիթով, Թեհրան, 1963: Շեքսպիրական, հ. 6, Ե., 1980:* **Սեֆերյան Ս.**, *Շեքսպիրը հայ իրականության մեջ (1850–1950), Ե., 2002: Hovhaness Khan Massehian (1864–1931), Tehran, 1963.*



Հովհաննես Մասեհյան

«ՄԱՍԻՍ», քաղ., տնտ., գրական և բանասիր. օրաթերթ, ապա՝ շաբաթաթերթ, կիսամյա, ամսաթերթ: Լույս է տեսել 1852–1908-ին (1891 և 1895-ին չի տպագրվել) Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Կարապետ *Ութուճյան*, Արփիար *Արփիարյան*, Գրիգոր *Զոհրապ*, Հրանդ *Ասատուր*, Միքայել *Շամլուեանճյան*, Բյուզանդ *Քէչյան*, Ռեթեոս *Պերպերյան*, Զաբրեի Յուսուֆյան, Տիգրան *Արփիարյան*, Ենովք *Արմեն*, Լևոն *Բաշալյան*: Սկզբում հաշտվող. վերաբերմունք է ունեցել թուրք. կառավարության, հայ հոգևոր և հարուստ խավի նկատմամբ: 1884–93-ին (խմբագիրներ՝ Ա. Արփիարյան, Գ. Զոհրապ) ունեցել է շեշտված ժողովրդավար. ուղղվածություն, անդրադարձել է հայությանը հուզող քաղ. և տնտ. խնդիրներին, քննադատել սուլթան. կառավարության հայահալած քաղաքականությունը: Մեծ տեղ է հատկացրել գրաքննադատ. նյութերին, համախմբել է արևմտահայ ռեալիստ. արձակի գրեթե բոլոր ներկայացուցիչներին, պարբերաբար ներկայացրել նմուշներ համաշխ. գրակ-ից: Դարավերջին Թուրքիայի ներքին քաղ. կացության պայմաններում «Մ.» դարձել է չափավոր, հիմնականում տպագրել է լուրեր, փոքրածավալ հոդվածներ, տեղեկություններ ևն: Աշխատակցել են Հ. Պարոնյանը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Մ. Աճեմյանը, Վ. Մալեզյանը, Ա. Հարությունյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Ալփասլանը (Ա. Փանոսյանը) և ուր.: Հրատարակել է «Մանրալուրք Մասիս լրագրոյ» (1862–64), «Մասիս» (1-էջանոց թերթիկ, 1864–66), «Օրաթերթ Մասիս լրագրոյ» (1866), «Մասիս» (օրաթերթ,1869–70) հավելվածները:




«Մասիս», *1852-1908, Կ. Պոլիս*



«Մասիս», *1947-ից, Բեյրութ*

«ՄԱՍԻՍ», կրոն., հաս-քաղ., գրական ամսաթերթ: Հայ կաթողիկե պատրիարքության հրատ.: Լույս է տեսնում 1947-ից Բեյրութում: Խմբագիրներ՝ Հարություն վրդ. Թեքեյան, Ռափայել վրդ. Պայան, Մեսրոպ վրդ. Թերզյան, Վարդան վրդ. Թեքեյան, Անդրանիկ վրդ. *Կռանյան*: Մեծ տեղ է հատկացնում սփյուռքահայ համայնքների, ՀՀ-ի, ինչպես նաև Մխիթարյան միաբանության կրթ., մշակութ., կրոն.

կյանքի լուսաբանմանը, ներկայացնում է միջազգ. անցուդարձը: Քարոզում է հայ քաղ. կուս-ների համերաշխություն: Հոդվածներ է հրապարակում Սայաթ-Նովայի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Ա. Իսահակյանի, Պ. Սևակի, Դ. Դեմիրճյանի, Սարմենի, Ա. Վշտունու, Գ. Էմինի և ուր. մասին, տպագրում հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններից:



«Մասյաց աղավնի», *1990-ից, Սիմֆերոպոլ (№ 3, 2010)*


«ՄԱՍԻՍ», գրական, հաս-քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1980-ից Փասադենայում (ԱՄՆ): ՍԴՀԿ Արմ. Ամերիկայի պաշտոնաթերթը: Հիմնադիր-խմբագիր՝ Հակոբ Սաղրյան: Տպագրում է տեղեկատվ. նյութեր, քաղ., սոցիալ, ազգ., մշակութ., մարզ. հոդվածներ:

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ», հաս-քաղ. և պատմամշակութ. եռամսյա հանդես: Ղրիմահայոց ընկերության պաշտոն. հրատ.: Լույս է տեսնում 1990-ից Սիմֆերոպոլում՝ որպես Գ. Այվազովսկու *«Մասեաց աղաւնի»* ամսագրի շարունակություն: Գլխ. խմբագիրներ՝ Սերժ Հովհաննիսյան, Օլեգ Գաբրիելյան, Վահան Վերմիշյան (2007-ից): Տպագրում է հոդվածներ, տեղեկություններ ղրիմահայ համայնքների վերակազմավորման գործընթացի ներկա վիճակի, ՀՀ-ի և սփյուռքահայ համայնքների հետ կապերի ամրապնդման, Ղրիմի հաս-քաղ. կացության, հայ ժողովրդի, մասնավորապես՝ ղրիմահայերի պատմ. անցյալի և այլ խնդիրների մասին: ՀՀ սփյուռքի նախարարությունը 2010-ին հանդեսը ճանաչել է Սփյուռքի լավագույն լրատվամիջոցներից:

ՄԱՏԵՆԱԳԵՏ, 1. մատենագիտ. աշխատանքի մասնագետ՝ տպագիր և ձեռագիր երկերի վերաբերյալ բանավոր ու գրավոր տեղեկանքներ տվող, մատենագիտ. ձեռնարկներ կազմող: Հնում Մ-ի հատուկ մասնագիտություն չի եղել, մատենագիտ. աշխատանք կատարել են պատմիչները, փիլիսոփաները, բժիշկները և ուր., ինչպես, օրինակ, հին ու միջնադարյան Հայաստանում՝ Մովսես Խորենացին, Հովհաննես Սարկավագը, Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Որդի Աբասան, Ամիրդովլաթ Ամասիացին և ուր.: XIX դ-ի նշանավոր հայ Մ-ներից են Մ.Քայել *Միանապրյանցը*, Գարեգին *Զարբհանալյանը*, Հակոբոս *Տաշյանը*, XX դ-ում հայտնի էին Արսեն *Ղազիկյանը*, Գարեգին *Լևոնյանը:*

Մատենագիտություն

Ներկայում Մ. հատուկ մասնագիտություն է: Աշխարհի բազմաթիվ երկրներում միջնակարգ և բարձրագույն կրթության ուս. ծրագրերում ներառված է «Մատենագիտություն» առարկան: ՀՀ-ում Մ-ներ պատրաստում են ՀՊՄՀ-ի մշակույթի ֆակ-ի գրադարանագիտ-յան և մատենագիտ-յան ամբիոնում:



Բարսեղ Սարգսյանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» (հ. 1, 1914, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը

2. Գրքի պատմության, գրադարանային և գրահրատարակչ. գործի, մասամբ նաև բնագրագիտ-յան, աղբյուրագիտ-յան մասնագետ, լայն առումով՝ գրքագետ: Գրքերի գիտակ իմաստով՝ Մ. տերմինը հայ-ում գործածվել է V դ-ից (տես նաև *Մատենագիտություն*):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, հայկ. Մ-յան պատմությունն ընդգրկում է հայ ժողովրդի ստեղծած նյութ. և հոգևոր մշակույթի վերաբերյալ հայտնի գրավոր աղբյուրները: «Մատենագետ» բառը, որը համարժեք է հուն. «բիբլիոգրաֆ»-ին, հայկ. աղբյուրներում հանդիպում է V դ-ից («Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում բացատրվում է՝ «գիտակ մատենից եւ դպրութեանց»):

Մ-յան նպատակը մատենագիտ. տարբեր բնույթի (այբբենական, կարգային ևն) ծանոթագրված և չծանոթագրված ցուցակների, ձեռագրացուցակների, քարտարանների, գրադարանային, գրավաճառական, հրատարակչ. գրացուցակների միջոցով ընթերցողներին, մասնագետներին տարբեր բնագավառների վերաբերյալ երբևէ ապարեզ հանված հայ. ձեռագրերի, տպագիր գրքերի, պարբ-ների, դրանց մեջ զետեղված նյութերի և այլ հրատ-ների հսկայածավալ զանգվածում կողմնորոշելն է: Հայկ. Մ-յան ոլորտը ներառում է նաև նրա պատմությանը վերաբերող երկերը, լայն առումով՝ նաև հայ գրքի պատմությունը:

Մ. սերտորեն կապված է ***գրադարանագիտության, գրքագիտության, փաստաթղթագիտության***, սոցիոլոգիայի, մանկավարժության, մշակութաբանության, հոգեբանության, տեղեկատվագիտ–յան, ինչպես նաև թանգարանային և արխիվային գործերի հետ:

Տեսական Մ–յան մեջ գոյություն ունի մատենագիտ. հայեցակարգային 2 բաժանում՝ գրքագիտ. և փաստաթղթագիտ.: Առաջինի դեպքում՝ Մ. դիտարկվում է որպես գրքի մասին գիտություն. Մ–յան նկարագրման առարկայական հիմքը ձեռագիր և տպագիր աղբյուրներն են: Փաստաթղթագիտ. հայեցակարգի (առաջադրվել է 1970–ական թթ–ին) տարբերակիչ գիծը մատենագիտատեղեկատվ. առարկայի սահմանափակումից (ներառյալ նաև տեղեկատվության որևէ նյութ. կրիչ՝ անկախ լեզվից, բովանդակությունից և գտնվելու վայրից) սկզբունքորեն հրաժարվելն է:

Հայկ. Մ–յան պատմությունը բաժանվում է զարգացման 4 շրջանի:

1. **Հեթանոսական և վաղքրիստոնեական Մ.** (մինչև V դ.) ներառում է մեհենական և արքունի գրադարանների պահոցների հիման վրա կազմված առաջին գրացուցակները, Աստվածաշնչի հայտնի (կանոնական) և ծածուկ կամ անկանոն (պարականոն) գրքերի ցուցակները:

2. **Հին և միջնադարյան Մ.** (V–XVII դդ.) պայմանավորված է հայոց գրերի գյուտով, գրակ–յան ու գրադարան–մատենադարանների՝ որպես կրթության և գրչության կենտրոնների, ստեղծմամբ ու զարգացմամբ: V դ–ից երևան են եկել հայկ. մատենագիտ. մի քանի ցանկեր՝ սուրբ (աստվածաշնչային կանոնական և եկեղեցու հայրերի), արտաքին (աշխարհիկ գիտ–ներին նվիրված) և նուրբ (գերազանցապես՝ իմաստասիր.) գրքերի, շարականների հեղինակների մատենագիտ. ցուցակները («Վասն շարականաց, թէ ով ոք է ասացեալ», «Վասն անունոց յօրինողաց զշարականաց» ևն. կազմել են Առաքել Սյունեցին, Գրիգոր Տաթևացին և ուր.):

V դ–ի պատմիչներ Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին, նշելով իրենց օգտագործած աղբյուրները, սկզբնավորել են հայ պատմ. գրակ–յան Մ.: Հետագայում Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Եպիսկոպոսը, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուր. կազմել են նախորդ շրջանի պատմիչների ու նրանց երկերի ցանկերը (երբեմն՝ ծանոթագրություններով): Միջնադարյան Հայաստանում կազմվել են նաև տոմարագիտ., աշխարհագր., բժշկ., ինչպես նաև ուս. և ընդհանուր Մ–ներ, ձեռագրացուցակներ. պահպանվել են Սաղմոսավանքի, Ամրդոլու վանքի (Բաղեշ) գրացուցակները:

Միջնադարի նշանավոր հայ մատենագետներից են ***Հովհաննես Սարկավագը*** (XI–XII դդ.), որը կազմել է Հայաստանի կրթ. հիմնարկներում ուս. ծրագրով հանձնարարելի գրակ–յան Մ.՝ «Կարգադրութիւն»՝ 2 մասով՝ կտակարանների գրքեր և «Նուրբքն», Գրիգոր Որդի Աբասան (XIII դ.)՝ «Գիրք պատճառաց» մատենագիտ. ժող–ը՝ նվիրված Հին և Նոր կտակարանների ուսումնասիրությանը, ***Վարդան Բաղիշեցին*** (XVII–XVIII դդ.)՝ Ամրդոլու վանքի գրացուցակը՝ «Այս են վարդապետական գրեանք»–ը, «Վասն պատմագրաց Հայոց» մատենագիտ. աշխատությունը: Վերոնշյալ մատենագիտ. գրքերի շնորհիվ հայտնի են դարձել չպահպանված շատ երկերի անվանումներ:

3. **Մ–յան նոր շրջանը** (XVIII–XIX դդ.) զարգացել է հետևյալ ուղղություններով.

ա. **ընդհանուր ազգային Մ.**, ներկայացուցիչներն են հայ գիտ. Մ–յան հիմնադիր Միքայել ***Մինասյանցը***՝ «Կովկասի եւ Անդրկովկասի մատենագիտութիւն» (հ. 1, 1874–76, ՍՊԸ, Ի. Օ. Բակստի և Հոհենֆելդեն և ընկ. տպ.), Գարեգին ***Զարբհանալյանը***՝ «Հայկական մատենագիտութիւն» (1883, առաջին անգամ ներկայացվել է 1565–


Մատենագիտություն



Հայկ Դավթյանի «Հայ գիրքը 1801–1850 թվականներին» (1967, Ե., ՀԱԳ հրտ.) գրքի կազմը



«Հայ գիրքը 1921–1930 թվականներին» (2012, Ե., «Գիրք») գրքի կազմը



Գարեգին Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը. 1794–1934» (1934, Ե., Հայպետհրատ) գրքի փիփղոսաթերթը



Մնձվել Բաբլոյանի «Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ 1794–1980» (1986, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը

1883–ին տպագրված հայ. գրքերի ընդհանուր Մ., Վնտ., Մխիթարյան տպ.) և «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեացն. դար Դ–ԺԳ» (1889, նույն տպ.), Արսեն *Ղազիկյանը*՝ հայ գրքի ամենից ավելի ամբողջ., տեղեկատվությամբ ամենաճարուստ և ստույգ «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» (1909–12, անավարտ, նույն տպ.) մատենագիտ. երկերով:

բ. **Հրատարակչական-գրավաճառային Մ.**, հրատարակվել է *գրացուցակի* ձևով՝ ներկայացնելով տպարանների, հրատարակչությունների լույս ընծայած հայ. գրակ–ը և գրատների ու գրախանութների գրքերի անվանումները: Առաջինը Վենետիկում 1710–ին հրատարակված *Խաչատուր Էրզրումցու* «Բանք եւ քարոզք...» երկհատոր գրքում տպագրված գրացուցակն է, որտեղ՝ ներկայացրել է իտալացի տպագրիչ Անտոնի Բորտոլիի հայ. հրատ–ները: Դա նաև հայ. առաջին տպագիր մատենագիտ. գիրքն է:

Իրենց հրատ–ների գրացուցակները հաջորդաբար տպագրել են Վենետիկի (1810–ից) և Վիեննայի (1859–ից) Մխիթարյան, Կ. Պոլսի, Սբ Էջմիածնի, Երուսաղեմի, Թիֆլիսի հայկ. տպարաններն ու գրախանութները:

գ. **Գրադարանային Մ.**, դրսևորվել է հայոց անհատ. և հաս. գրադարանների գրացուցակներով, որոնցից են Ա. Խուդաբաշյանի անձնական (ՍՊբ, 1839), Երևանի, Շուշիի, Թիֆլիսի, Բաքվի մի շարք հայկ. գրադարանների տպագիր գրացուցակները:

դ. **Ձեռագրացուցակներ**, ներկայացված են հայ. ձեռագիր մի շարք հավաքածուներ: Առանձին գրքով հրատարակված առաջին ձեռագրացուցակը կազմել է Դանիել Շահնազարյանը՝ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» (1863, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.): Արժեքավոր են Գրիգորիս *Գալեմքյարյանի* «Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն» (1892, Վնն., Մխիթարյան տպ.), Հակոբոս *Տաշյանի* «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895, նույն տպ.) աշխատությունները: Ձեռագրացուցակագրությամբ զբաղվել են նաև Հրաչյա *Աճառյանը*, Գարեգին *Սրվանձտյանը*, Նիկողայոս *Սևաղը*, Ֆրեդերիկ *Սակկերը*, Ֆրեդերիկ *Կոնիբերը*, Բարսեղ *Սարգսյանը* և ուր.: Կազմվել են Հայաստանի տարբեր վանքերի, ուսումնարանների, Ս. Պետերբուրգի, Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի, Մյունխենի, Կրակովի, Գեղայի և շատ այլ վայրերի գրադարանների ու անհատ. հավաքածուների հայ. ձեռագրերի ցուցակները (տես նաև *Ձեռագրացուցակ*):

ե. **Հայ պարբ. մամուլի Մ.**, սկզբնավորվել է 1850–ական թթ–ին. առաջին ծավալուն գործը Հարոյի (Նիկողայոս Տեր–Հարությունյան) «Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ» (1878, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.) աշխատությունն է: Հետագայում լույս են տեսել Գ. Գալեմքյարյանի «Պատմութիւն հայ լրագրութեան. ի սկզբանէ մինչեւ մեր օրերը» (հ. 1, 1893, Վնն., Մխիթարյան տպ., ընդգրկում է 1794–1860–ը), Գարեգին *Լևոնյանի* «Հայոց պարբերական մամուլը» (1895, Ալեք–պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.), Մկրտիչ *Պոտուրյանի* «Հայ մամուլը տասնեւհինգ տարուան մէջ. 1894–1909» (1909, Վնտ., Սբ Ղազարի տպ.) Մ–ները:

զ. **Ճյուղային Մ.**, նկատելիորեն զարգացել է հատկապես հայագիտականը: Հայ հին և միջնադարյան հեղինակների երկերը ներկայացնող մատենագիտ. աշխատություններից են Սուքիաս *Սոմալյանի* «Պատկեր հայկական դպրության» (1820) և «Ցուցակ թարգմանութեանց նախնեաց» (1825, երկուսն էլ՝ իտալ.), Ստեփանոս *Նազարյանի* «Թռուցիկ ակնարկ...» (1844) և «Ակնարկ...» (1846, երկուսն էլ՝ ռուս.), Քերովբե *Պատկանյանի* «Ցուցակ հայ գրականության. IV դ–ից մինչեւ XVII դ–ի կեսը» (ֆրանս., 1860), «Հայոց պատմական գրականության մատենագիտական ակնարկ» (ռուս., 1880, ՍՊբ),

«Նշխարք մատենագիտութեան հայոց» (1884), Կարապետ *Եզյանի* «Եւրոպական լեզուներով գրուած գրքեր եւ յօդուածներ» («Հանդէս գրականական եւ պատմական», գիրք Գ, 1890), Սուքիաս *Պարոնյանի* «Մատենախօսութիւն հայկական» («Բանասէր», 1900), Կարապետ *Կոստանյանի* «Հայագիտութիւնն Արեւմտեան Եւրոպայում» (1910, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Հայկական արձանագրութիւնների հաւաքածոյ-ուղեցոյց» (1913, ՍՊբ, Կայսեր. գիտ. ակադ. տպ.), ինչպես նաև Մ. Միանսարյանցի և Գ. Զարբհանալյանի վերը նշված երկերը ևն:

Հայ գրքի արձանագր. Մ-յան դեր են կատարել պարբ-ներում, հատկապես *«Հանդէս ամսօրեայ»*-ում հաջորդաբար տպագրվող հայ. ընթացիկ հրատ-ների ցանկերը:

4. **Մ-յան նորագույն շրջանի** (XX–XXI դդ.) խորհրդ. փուլը (1920–1991) բնորոշվում է մի քանի առանձնահատկություններով. մատե-նագիտ. աշխատանքը դարձել է պետ., հայկ. Մ-յան գլխ. կենտրոնը՝ Երևանը, Մ.՝ որպես ինքնուրույն մասնագիտություն, անջատվել է բանասիրությունից:

ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1922-ի դեկտ-ի որոշմամբ՝ ստեղծվել է ՀԽՍՀ պետ. գրապալատը (այժմ՝ *Հայաստանի ազգային գրապալատ*)՝ որպես պետ. Մ-յան կենտրոն (1995-ից՝ Ազգ. մատենագիտ-յան կենտրոն), որը գրանցում ու հաշվառում է ՀՀ-ում (1995-ից՝ նաև Սփյուռքում) լույս տեսնող տպագիր արտադրանքը:


Մ-յան նորագույն շրջանի զարգացման մեջ կարևոր ներդրում ունեն նաև Գարեգին *Լևոնյանը* («Հայոց պարբերական մամուլը. 1794–1934», 1934), Հակոբ *Անասյանը* («Հայկական մատենագիտություն», հ. 1–3, 1959–2004), Արմենակ *Սալմաստյանը* [«Հայկական մատենագիտություն (օտար լեզուներով լույս տեսած գրքերի)», 1969], Ա. Գարտաշյանը («Մատենագիտութիւն հայատառ օտար լեզուով տպագիր գիրքերու», Փ., 1987), Մանվել *Բարլոյանը* («Հայ պարբերական մամուլը: Մատենագի-տական համահավաք ցուցակ. 1794–1980», 1986) և ուր.:

Ծավալուն աշխատանքներ են կատարվում Մատենադարանում. հրատարակվել են «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենա-դարանի» (հ. Ա–Գ, 1965–2007), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» (հ. Ա–Ը, 1984–2014) ձեռագրա-ցուցակները, Հայաստանի ազգ. գրադարանում հրատարակվել են «Հայ գրքի մատենագիտությունը» (հ. 1–5, 1967–2012), Ս. Գեջյանի «Հայկական ճարտարապետություն: Մատենագիտություն» (1997), ինչպես նաև մի շարք դաս. և ժամանակակից հայ հեղինակների կենսամատենագիտու-թյուններ, հայ. պարբ-ների Մ-ներ ևն (շուրջ 100 անուն գիրք և գրքույկ), ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գիտ. գրադարանում (15 հատորով լույս են ըն-ծայվել ՀՀ ԳԱԱ-ի 1936–86-ի հրատ-ների Մ., «Նյութեր Հայաստանի գիտնականների կենսամատենագիտության» մատենաշարը. ցայսօր՝ 62 պրակ, ևն): Մատենագիտ. գրքեր են կազմվել նաև Խնկո Ապոր անվ. մանկ., ԵՊՀ-ի, հանրապետության մյուս խոշոր գրադարաններում, տուն-թանգարաններում, արխիվներում, գրավաճառային, հրատարակչ. և փաստաթղթային-տեղեկատվ. այլ կենտրոններում:

1920-ից մատենագիտ. աշխատանքներ են կատարվում նաև Սփյուռ-քում. հրատարակվել են գրավաճառային և հրատարակչ. բազմաթիվ գրացուցակներ, գրողների անհատ. կենսամատենագիտ-ներ: Արժեքա-վոր են Համազասպ *Ոսկյանի* «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (հ. Բ–Գ, 1963–1983), որը, ըստ էության, Հ. Տաշյանի գործի շարունակությունն է, Արտավազդ *Սյուրմեյանի* «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց» (հ. 2, 1936), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Հակոբեանց վանքի» (հ. 1, 1948), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու» (հ. 1, 1950), Նորայր *Պողար-*



«Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթա-րեան մատենադա-րանին ի Վիեննա» (հ. Գ, 1983, Վնն.) գրքի փիփղոսաթերթը



Սաթենիկ Գեջյանի «Հայկական ճարտա-րապետություն: Մատենագիտություն» (1997, Ե., ՀԱԳ հրտ.) գրքի կազմը



Անահիտ Մուրադյանի «Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833–1996)» (2011, Ե., հեղ. հրտ.) գրքի կազմը

յանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» (հ. 1–11, 1966–91), Օգոստինոս *Մեքուչյանի* «Յուցակ հայերէն ձեռագրաց Միխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (1990) և այլ ձեռագրացուցակներ:

Վերջին տարիների հրատ–ներից են Զ. Միլդանօղլու «Հայ պարբերական մամուլը 1794–2000 թթ.» (թուրք., 2014), Մ. Հովսեփյանի «Արևմտահայ մամուլի պատմություն (1832–1915)» (2015) մատենագիտ. գրքերը:

ՀՀ–ում Մ.՝ որպես գիտ. և ուս. առարկա, դասավանդվում է ՀՊՄՀ–ի մշակույթի ֆակ–ի գրադարանագիտ–յան և մատենագիտ–յան ամբիոնում (վարիչ՝ Գագիկ *Սուքիասյան*): Ամբիոնը կազմակերպում է գիտաժողովներ, ասուլիսներ ևն: Լույս է ընծայում մատենագիտ. աշխատություններ, դասագրքեր ու ձեռնարկներ: 2010–ին հրատարակել է «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում» հանրապետ. գիտաժողովի զեկուցումների ժող–ը, 2011–ին՝ Ա. Մուրադյանի կազմած «Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833–1996)» աշխատությունը ևն:

Գրկ. Մատենագիտություն հայկական մատենագիտության (առաջաբ.՝ Ռ. Իշխանյանի), Ե., 1963: Իշխանյան Ռ., *Հայ մատենագիտության պատմություն, պր. 1–3, Ե., 1964–68:* Նույնի, *Հայ գրքի պատմություն, Ե., 2012:* Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012:*

ՄԱՏԵՆԱԳԻՐ, մատյան (գիրք) գրող: Հաում Մ. են կոչվել և՛ գիրք գրողները, և՛ ընդօրինակողները (գրիչներ), հետագայում՝ միայն գրողները: Այժմ Մ. ասելով՝ նկատի ունենք անցյալի հայ հեղինակներին՝ Մովսես Խորենացուն, Ղազար Փարպեցուն, Ագաթանգեղոսին, Եղիշեին, Կորյունին, Դավիթ Անհաղթին, Անանիա Շիրակացուն, Կիրակոս Գանձակեցուն, Հովհաննես Դրասխանակերտցուն, Ստեփանոս Սյունեցուն, Գրիգոր Նարեկացուն, Մխիթար Գոշին, Վարդան Այգեկցուն և ուր. (տես նաև *Մատենագրություն*):



«Մատենագիրք հայոց» մատենաշարի լրակազմը

«ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ», մատենաշար: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. մատենադարանի հրատ.: Լույս է ընծայվում 2003–ից՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնությամբ: Քննահամեմատ. այս հրատ–յան նպատակը V–XVIII դդ–ի հայ մատենագր. ժառանգությունը (պատմագրություն, աստվածաբանություն, փիլ., գրակ., լեզվաբանություն ևն) 1 մատենաշարով ներկայացնելն է: Նախատեսված 100 հատորից ցայսօր հրատարակվել են 17–ը (շուրջ 20 000 էջ), որոնք ներառում են ավելի քան 100 հեղինակ, հարյուրավոր բնագրեր. վերջինների մեծ մասը (մոտ 70 %) տպագրվում է առաջին անգամ: Բնագրերին նախորդում են առաջաբաններ, մատենագիտ. համառոտ ցանկեր և բաղդատված ձեռագրանիշների ցանկեր: Յուրաքանչյուր հատոր ունի անձնանունների, տեղանունների և սուրբգրային հղումների ցանկ:



«Մատենագրութիւնք» (Հովհաննես Գ Օձնեցի, 1833, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, հիմնականում մինչև XVIII դ. ստեղծված այն ամենը, ինչը գրառվել է մատյանի մեջ՝ աստվածաբանություն, պատմագրություն, իրավունք, քերակ., ուղեգրություն, բժշկություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, տոմարագիտություն, ալքիմիա, գեղ. գրակ., խրատական, ներբող, աղոթք, տեսիլ, նամակ, վավերագիր, բանք իմաստասիրաց, ախտար. և հմայական գրակ. ևն:

Հայտնի համաքրիստ. մատենագր. ժող–ները՝ Աստվածաշունչ, Սաղմոսարան, Պատարագամատույց, Ժամագիրք, Մաշտոց, Ճաշոց, Հայսմավուրք, Տոնացույց, Ճառընտիր, «Հարանց վարք», Վկայաբանություն, Շարակնոց, Գանձարան, Քարոզգիրք, Կանոնագիրք, Աղոթագիրք ևն, հայ Մ–յան մեջ մտել են թարգմանաբար, գլխավորապես՝ հուն–ի միջոցով: Բացի Աստվածաշնչից և Սաղմոսարանից՝ մյուս ժող–ներն ընդգրկում են նաև միջնադարյան Հայաստանում

ստեղծված երկեր: Հայ Մ., հատկապես՝ պատմագրությունը, աշխարհի ամենազարգացած գրակ-ներից է: Նրա մի շարք նմուշներ (IV դ-ի Ագաթանգեղոսի, VII դ-ի քաղկեդոն. անանուն մի ժամանակագրի, XIII–XIV դդ-ի Հեթում Պատմիչի երկերը) դեռևս միջնադարում թարգմանվել են տարբեր լեզուներով և թափանցել այլ ժողովուրդների գրակ-ների մեջ: Հայկ. բազմաթիվ մատենագիտ. երկեր հավասարապես սկզբնաղբյուրներ են եղել նաև հարևան ժողովուրդների (վրացիներ, աղվաններ, աբխազներ, ալաններ ևն) պատմության ուսումնասիրման համար: Համաշխ. համբավ են վայելում թարգման. Մ-յան այն երկերը (Եվսեբիոս Կեսարացի, Տիմոթեոս Կուզ, «Անտիոքի ասիզներ» ևն), որոնց հուն., ասոր. և այլ հին լեզուներով բնագրերը չեն պահպանվել, և մեզ են հասել միայն հայ. թարգմանությունները:



Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889:* **Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ.,** *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Ե., 1979, էջ 9–20:* **Աբգարյան Գ.,** *Մատենադարան, Ե., 1962:*

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ձեռագիր ու տպագիր մատյանների (գրքեր) պահպանումն ու հաս. օգտագործումը կազմակերպող հաստատություն (գրադարան): Միջնադարյան Հայաստանում գրադարանները կոչվել են գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձատուն, ձեռագրատուն, նշխարանոց, դիվան, ջամբռ, նաև Մ.: Եղել են հիմնականում վանքերում, հաճախ՝ հատուկ շինություններում, ասպատակություններից ապահովելու նպատակով երբեմն տեղավորվել են քարանձավներում: Մ-ում պահել, գրել և ընդօրինակել են ձեռագրեր: Միջնադարում Մ-ներ են եղել Էջմիածնում, Հաղպատում, Սանահինում, Սաղմոսավանքում, Տաթևում, Գեղարդում, Կեչառիսում, Գլաձորում, Բաղեշում, Գոշավանքում, Սսում, Հռոմկլայում, Դրազարկում, Բարձրբերդում, Ականց անապատում (Ակներ) և այլուր:



Ներկայում հայ ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. մատենադարանն է:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան, հին ձեռագրերի ԳՀԻ-թանգարան (1959-ից), առաջին ԳՀ հաստատությունն է Հայաստանում. ստեղծվել է 1921-ին՝ Էջմիածնի ձեռագրատան հիմքի վրա: Նախապես կոչվել է Կուլտուր-պատմ. ինստ.: 1939-ին Էջմիածնից տեղափոխվել է Երևան և տեղավորվել Հանրային գրադարանի շենքում: 1959-ին Մ. փոխադրվել է նոր շենք (ճարտ.՝ Մ. Գրիգորյան): 1962-ին կոչվել է Մեսրոպ Մաշտոցի անվամբ:



Մ. հայ. ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցն է: Տարբեր երկրների մատենադարաններում, գրադարաններում ու թանգարաններում պահվող շուրջ 31 հզ. հայ. ձեռագրերից ավելի քան 20 հզ-ը Մ-ում են:

Մ. ունի հայ. ձեռագրերի մայր ցուցակի կազմման, հին մատենագր. հուշարձանների, միջնադարյան սկզբնաղբյուրների, արվ-ի պատմության և գրչության կենտրոնների, բժշկության, բնագիտ-յան պատմության ուսումնասիրման, գրավոր հուշարձանների գիտ. թարգմանության, արխիվային փաստաթղթերի պահպանման, գիտ. մշակման ու թվայնացման, ձեռագրագիտ-յան բաժիններ, ինչպես նաև հայագիտ. հարուստ գրադարան և պարբ. մամուլի պահոց: Մ-ի հիմն. գործառույթը հին ձեռագրերի պահպանումն է ու վերականգնումը, թվայնացումը, ձեռագիր հուշարձանների հավաքումը, հայ. ձեռագրերի մայր ցուցակի կազմումը, միջնադարյան տարաբնույթ բնագրերի, ինչպես նաև հայկ. մանրանկարչության հուշարձանների ուսումնասիրությունն ու հրապարակումը, միջնադարյան հայկ. աղբյուրներն օտար լեզուներով թարգմանումն ու հրատարակումը, գիտահանրամատչելի գրքույկների միջոցով հայ ժողովրդի ձեռագիր մշակույթի տարածումը ևն:




Մատենադարանի *կենտրոնական ու նոր մասնաշենքերը և ցուցասրահներից*

Դեռևս V դ-ից, ըստ Ղազար Փարպեցու, Էջմիածնի կաթողիկոսությանը կից գործել է գրատուն, որտեղ պահվել են հայ. և հուն.

Մատենադարանի *հրատարակած գրքերից*



«Ցուցակ ձեռագրաց...» (հ. Ա, 1965, ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը



«Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (հ. Բ, 1958, ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը

մատյաններ: Էջմիածնի գրատունն ու մերձակա վանքերի գրչակենտրոնները զարգացել են հատկապես կաթողիկոս. աթոռը Սսից Էջմիածին փոխադրելուց (1441) հետո:

Միջնադարում ձեռագիր մատյաններին մշտապես սպառնացել է օտար նվաճողների ավարառության ու ոչնչացման վտանգը: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ 1170-ին սելջուկ թուրքերը գրավել են Բաղաբերդ ամրոցը և ավարառել Տաթևից ու շրջակա այլ վայրերից այնտեղ հավաքված շուրջ 10 հզ. ձեռագիր: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ նվաճողները 1242-ին կողոպտել են Կարինն քաղաքի մատենադարանը: 1298-ին Եգիպտոսի մամլուքներն ավերել են կաթողիկոսանիստ Հռոմկլա ամրոցը և իրենց հետ տարել բազմաթիվ գրչագրեր: Էջմիածնի գրատան կողոպուտը XVII դ-ում արձանագրել է Առաքել Դավրիժեցին, 1804-ի ավերումը՝ Ներսես Ե Աշտարակեցին:

Արլ. Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միացումից (1828) հետո Մ-ի ձեռագր. հավաքածուն զգալիորեն ավելացել է. եթե 1828-ին այնտեղ հաշվվում էր 1809 ձեռագիր, ապա 1914-ին՝ արդեն 4660: XIX դ-ի վերջից Էջմիածնի ձեռագրատան նյութերի հիման վրա սկսված պատմաբանասիր. աշխատանքներն ընդհատվել են Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) պատճառով: Մեծ եղեռնի ժամանակ Արմ. Հայաստանում ոչնչացվել են հայկ. մշակույթի բոլոր կենտրոններն ու այնտեղ պահվող հազարավոր ձեռագիր մատյաններ: Բարեբախտաբար, բազմաթիվ մատյաններ էլ փրկվել են եղեռնից մազապուրծ հայերի շնորհիվ:

1920–30-ական թթ-ին Մ-ի հավաքածուն համալրվել է Վասպուրականից և Տարոնից բերված, ԽՍՀՄ տարածքի հայկ. վանքերից ու եկեղեցիներից հավաքված, Մոսկվայի Լազարյան ճեմարանից, Թիֆլիսի հայոց ազգագր. ընկերությունից ու Ներսիսյան դպրոցից, Նոր Նախիջևանից, Նոր Բայազետից, Կարինի Սանասարյան վարժարանից, Թավրիզի առաջնորդարանից, Դարաշամբից (մինչև 1946-ը՝ գյուղ՝ Իրանի Մակու գավառում), Հայաստանի պետ. թանգարանից և այլ տեղերից ստացված, ինչպես նաև զանազան անհատների նվիրած կամ վաճառած ձեռագրերով, որոնք ցուցակագրվել ու նկարագրվել են: 1965–2007-ին 3 հատորով հրատարակվել է Մ-ի հայ. ձեռագրերի համառոտ ցուցակը՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», իսկ 1984-ից՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» բազմահատորյակը. տպագրվել են Ա–Ը հատորները (1984–2012): 1959-ից ցայսօր Մատենադարանը լույս է ընծայել ավելի քան 300 անուն գիրք:

Մ-ում պահվող շուրջ 20 280 ձեռագիր մատյաններից 11 233-ը հայ. հիմն. ձեռագրեր են, 420-ը՝ հայ. նոր, 2143-ը՝ հայ. պատառիկներ, 530-ը՝ հայ. հմայիլներ, շուրջ 6 հզ-ը՝ այլալեզու (արաբ., պարսկ., թուրք., ասոր., հին վրաց., հուն., լատ., ռուս. ևն): Արխիվային ֆոնդում պահվում են ավելի քան 100 հզ. վավերագրեր: Վերջին տասնամյակներում նպատելիորեն հարստացել է Մ-ի օտարալեզու ձեռագրերի հավաքածուն:

Հայոց գրավոր հնագույն հուշարձանները V–VI դդ-ից մնացած մագաղաթի պատառիկներ են, պահպանվել են նաև ամբողջ. ձեռագրեր VII և հետագա դարերից, քարացած մատյաններ ու մագաղաթի կտորներ են հայտնաբերվել քարայրերում:

Մեզ հասած հնագույն ամբողջ. ձեռագիրը VII դ-ում ընդօրինակված մագաղաթե Ավետարան է (հայտնի է ***«Վեհամոր Աւետարան»*** կամ «Բանանցի Ծեր Աւետարան» անվանումներով), որի վրա երդվել են ՀՀ 3 նախագահները: Եզակի ձեռագրերից է ***«Լազարեան Աւետարան»***-ը, որն ունի ճշգրիտ թվական՝ 887: Հնագույն հայ. թղթե ձեռագիրը 981-ին կազմված գիտ. և պատմափիլ. երկերի ժող. է («Մատեան գիտութեան եւ հաւատոյ»). մատյանի 1000-ամյա հորելյանի առթիվ 1995-ին Երևանում լույս է ընծայվել ձեռագրի նմանահանությունը (ֆաքսիմիլե):

Հայկ. ձեռագրերն ունեն տարբեր չափեր ու ծավալներ: Ամենամեծը 1200-02-ին Երզնկայի Ավագ վանքում գրված և ծաղկված ***«Մշո***

Ճառընտիր»-ն է (55,5 x 70,5 սմ, քաշը՝ 28 կգ), ամենափոքրը՝ 1434-ին Կաֆայի գրչության կենտրոնում Օգսենտ գրիչի ընդօրինակած Տոնացույցը (3,4 x 4 սմ, քաշը՝ 19 գ):

Մ-ի ծրագրերում ուրույն տեղ է հատկացված Աստվածաշնչի քնն. բնագրի պատրաստմանը. հրատարակվել են «Ծննդոց», «Ելից», «Ղևտացոց», «Թիւք», «Երկրորդումն օրինաց», «Մակբայեցւոց», «ԺԲ մարգարէից» գրքերի բնագրերը, հաջորդաբար լույս կընծայվեն նաև մյուսները: «Պատմագիրք Հայոց» մատենաշարով լույս են տեսել Մովսես Խորենացու, Եղիշեի, Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Մեսրոպ Երեցի, Արիստակես Լաստիվերցու, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու, Թովմա Արծրունու պատմությունների գիտ. բնագրերը: Մ. սերտորեն համագործակցում է ***«Մատենագիրք Հայոց»*** ծավալուն մատենաշարի հրատ-յան աշխատանքներին:

Պատմ. կարևոր սկզբնաղբյուրներ են նաև հայկ. ձեռագրերի հիշատակարանները. լույս են ընծայվել Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (1950), «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (մաս 1, 2, 1955, 1958), Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» (հ. 1, 2, 1974, 1978) և «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ» (1984), Ա. Մաթևոսյանի «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԹ դ.» (1984) և «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դդ.» (1988) հատորները: Հատուկ ուշադրություն է դարձվում միջնադարյան հայ փիլ-յան և իրավունքի եզակի հուշարձաններին. հրատարակվել են Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և «Աստրախանի հայոց դատաստանագրքի» քնն. բնագրերը:

Միջնադարյան հայ գեղ. գրակ-յան բնագրերից տպագրվել են Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տղայի, Հովհաննես Երզնկացու, Պաղտասար Դպիրի, Հովսեփ Սեբաստացու, Նաղաշ Հովնաթանի և այլ տաղերգուների ժառանգությունները, «Հայրենների» ամբողջ. քնն. բնագիրը, միջնադարյան արձակից՝ Խիկար Իմաստունի և Պարսից Նուշիրվան արքայի խրատները: Մենագրություններ են գրվել Անանիա Շիրակացու, Ներսես Շնորհալու, Վարդան Արևելցու, Գեորգ Դպիր Պալատեցու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու, Սամվել Անեցու և այլ հեղինակների կյանքի ու գործունեության մասին:

Մ-ում ուսումնասիրվում են նաև հայկ. բնագիտ. գրավոր հուշարձանները. լույս են տեսել Անանիա Շիրակացու և Հակոբ Ղրիմեցու տոմարագիտ. աշխատությունները, բժշկապետներ Մխիթար Հերացու, Գրիգորիսի, Աբու Սահդի, Ամիրդովլաթ Ամասիացու, Բունիաթ և Ասար Սեբաստացիների երկերը, 1296-ի կիլիկյան ձիաբժշկարանը՝ «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» (հրտ.՝ 1980), ևն:

Միջնադարյան Հայաստանի տնտ. պատմության ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուրներ են XVI–XIX դդ-ում ստեղծված առևտր. ձեռնարկներն ու հաշվեմատյանները, որոնք հրատարակվում են «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարով:

Աշխատանքներ են կատարվում մանրանկարչ. հուշարձանները հետազոտելու և հրատարակելու համար: Լույս են ընծայվել «Հայկական մանրանկարչություն» (1967, 1969), «Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում» (1973), «Հայկական մանրանկարչություն. զարդատառեր» (1992), «Հայկական մանրանկարչություն. կենդանազարդեր» (1996), Վասպուրականի, Ղրիմի, Արցախի, Ուտիքի մանրանկարչությունների, Հովհաննես Սանդղկավանեցու, Գրիգոր Տաթևացու, Անանուն Սյունեցու, Սոմիկի և այլ մանրանկարիչների գործերի, «Հեթումի Ճաշոց» ալբոմները են:

Մ-ի գրապահոցներում կա նաև հայ երաժշտարվ-ի հարուստ ժառանգություն. մի շարք ուսումնասիրություններ նվիրված են խազագիր ձեռագրերի վերծանմանը:

Մատենադարանի *հրատարակած գրքերից*



Գրիգոր Տղայի «Բանաստեղծություններ և պոեմներ» (1972, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը



«Հայրեններ» (1995, Ե., «Նաիրի») գրքի կազմը



Մատենանիշ Մատենադարանի (1962, Մ. Բաղդասարյան)

Մ–ում պահվում են ավելի քան 100 հզ. միավոր միջնադարյան և նոր ժամանակաշրջանի փաստաթղթեր (կոնդակներ, նամակներ, Պարսից շահերի ու թուրք սուլթանների հրովարտակներ, շարիաթական–նոտար. գրասենյակներում կազմված արձանագրություններ), որոնք եզակի նյութ են Հայաստանի և հարևան երկրների, ինչպես նաև հայկ. գաղթավայրերի պատմության ուսումնասիրության համար: Այնտեղ են պահվում կաթողիկոս. դիվանը, մի քանի անվանի հայագետների և ակադ–ների անձն. արխիվները:

Միջնադարյան հայկ. մշակույթը Մ–ի այցելուներին ներկայացնելու նպատակով հայ. և օտար լեզուներով հրատարակվում են «Հայ մշակույթ» և «Հայկական մանրանկարչություն» հանրամատչելի գրքույկների մատենաշարերը:

Մ. ձեռնարկել է ձեռագրերի նմանահանությունների հրատ–ը. լույս են ընծայվել Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի 1280–ին ընդօրինակված ձեռագրի, Հակոբ Մեղապարտի տպագրած հայ. առաջին գրքերից Ուրբաթագրքի, Պարզատումարի, Տաղարանի, ինչպես նաև հայ. առաջին պարբ–ի՝ «Ազդարարի» և այլ նմանահանությունների: 1941–ից հրատարակվում է ***«Բանբեր Մատենադարանի»*** (1941 և 1950–ին՝ «Գիտական նյութերի ժողովածու») գիտ. պարբ–ը (ցայսօր՝ 20 հատոր):

Մ–ի տպագիր գրքերի բաժինը հարուստ է հայագիտ. և արևելագիտ. գրակ–յամբ, որից օգտվում են թե՛ հանրապետության, թե՛ արտերկրի հայագետները: Մ. սերտ կապերի մեջ է ձեռագիր մշակույթի խնդիրներով զբաղվող արտերկրի գիտ. և թանգարանային մի շարք հաստատությունների հետ:

Մ–ի հեղինակությունը մեծապես նպաստում է նաև ձեռագրերի հավաքչական աշխատանքներին. Սփյուռքի մեր հայրենակիցները Մ–ին են նվիրում իրենց մոտ պահվող հայ. ձեռագիր մշակույթի մասունքներ, երբեմն նաև օտարալեզու գրչագրեր [Հ. Նազարյանը (Նյու Յորք)՝ 997 ձեռագիր, Վ. Սալաթյանը (Դամասկոս)՝ 150, Ռ. Մարկոսյանը (Փարիզ)՝ 37, իսկ 1 կամ 2 ձեռագիր նվիրողների թիվը հարյուրների է հասնում]:

Էջմիածնի ձեռագրատան պատասխանատուներ են եղել Ներսես Սարկավագը, Գրիգոր Վարդազարյանը, Մանվել ***Գյումուշհանեցին***, Հովհաննես Շահխաթունյանցը, Մակար Հովբյանցը, Դանիել Շահնազարյանը, Գրիգոր Մուշեղյանցը, Ներսես Խուդավերդյանը, Սահակ ***Ամատունին***, Գարեգին ***Հովսեփյանը***, Մխիթար Վարդապետը, Մեսրոպ Տեր–Մովսիսյանը, Հուսիկ Սովսիսյանը, Գրիգոր Չորեքչյանը: 1920–ից հետո Մատենադարանի տնօրեններ են եղել Սենեքերիմ Տեր–Հակոբյանը, Կ. Ղազարյանը, Մհրուս ***Հասրաթյանը***, Հ. Մանվելյանը, Ե. Թորոսյանը, Գևորգ ***Աբովը***, Վաչե ***Նալբանդյանը***, Լևոն ***Խաչիկյանը***, Մեն ***Արևշատյանը***, Հրաչյա ***Թամրազյանը*** (2008–ից):

Գրկ. **Աբգարյան Գ.**, *Մատենադարան, Ե., 1962:* **Եգանյան Օ.**, *Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, տես «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի», հ. Ա, Ե., 1965, էջ 13–214: Մատենադարան (ողնուցոյց, կազմ.՝ Բ. Չոգասզյան), Ե., 1990:* **Խաչիկյան Լ.**, *Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին («Աշխատություններ», հ. Գ, էջ 995–1036), Ե., 2008:*

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ», առողջապահ. ամսագիր: Հրատարակվել է 1882–85–ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Մանվել–Բարունակ Ութուճյան: Տպագրել է նյութեր երկարակեցության, արյան հատկությունների, առողջապահ. դաստիարակության, մարդակազմության, հիգիենայի, մաշկային հիվանդությունների, պատվաստի օգտակարության ևնի վերաբերյալ:

ՄԱՏԵՆԱՆԻՇ, 1. **գրքանիշ, էքսլիբրիս**, նկարի կամ պիտակի տեսքով գրքանշան՝ գրքի տիրոջ անունով կամ խորհրդանշանով, որը փակցվում է գրքի կազմի ներսի կողմից:

Ամենահին Մ–ները նկարվել են ֆրանս. ձեռագրերի վրա: Տպագիր Մ–ները ստեղծվել են Գերմանիայում (առաջինը՝ 1460–ին՝ գերմանացի ասպետ Բեռնարդ ֆոն Ռորբախի զինանշանի պատկերով), տարած–

Մատենանիշ



Ա. Շմիդտի (1911, Վ. Սուրենյանց)



Վ. Փափազյանի (1962, Հ. Մուրադյան)



Ա. Բաբաջանյանի (1967, Ռ. Բեդրոսյան)

վել Արմ. Եվրոպայում, ապա՝ ողջ աշխարհում: Մ-ներ ստեղծել են նաև հանրահայտ նկարիչներ Ա. Դյուրերը, Լ. Կրանախը, Հ. Հոլբայն Կրտսերը և ուր.:

Առայժմ հայտնի հայկ. առաջին Մ. ստեղծել է Վարդգես ***Սուրենյանցը***՝ պատմաբան և արվեստաբան Ֆ. Բուլգակովի համար (1902): Այդ ավանդույթը շարունակել են Մարտիրոս ***Սարյանն*** ու Հակոբ ***Կոջոյանը:*** Խորհրդ. շրջանում Մ-ի արվ-ի հիմնադիրներից և տարածողներից է Ռուբեն ***Բեդրոսովը***, մեծ ավանդ ունեն նաև Աշոտ ***Մամաջանյանը***, Պ. Կուզանյանը, Յ. Ագոպսովիչը (Հովհաննես Հակոբյան, Լեհաստան), Մ. Բաղդասարյանը, Ա. Զաքարյանը, Ռ. Մնացականյանը, Մ. Ավետիսյանը, Հենրիկ ***Սամյանը***, Ռոմեո ***Զուլհակյանը,*** Հ. Մուրադյանը և ուր.: Հայկ. Մ-ներ ստեղծվել են նաև Ռուսաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր:



Մատենաշար *«Բազմավէպ». Պ. Անանյանի «Սեբէոսի Պատմութեան գրքի մասին քանի մի լուսաբանութիւններ» (1973, Վնտ.) գրքի կազմը*

2. Մ. գրադարանային, գրանիշ, գրքապիտակ, շիֆր (< ֆրանս. chiffre), գրադարանային ֆոնդում փաստաթղթի տեղի պայման. նշանը՝ տառաթվային տեսքով: Կազմվում է դասակարգման ցուցիչներից (ՀՏԴ, ԳՄԴ) և ***հեղինակային նշանից***, գույքային կամ պահպանության միավորի հերթական համարից: Նշվում է գրքի կազմի և կռնակի վրա, տիտղոսաթերթին կամ նրա շրջերեսին, գրքի տեղեկամատյանում, գրացուցակային քարտում, համակարգչային տվյալների բազայում:

Գրկ. **Բեդրոսյան Ռ.**, *Մատենանիշեր, Ե., 1978:* **Մամաջանյան Ա.**, *Մատենանիշեր, Ե., 1980: Հայկական մատենանիշ (կազմ.՝ Ս. Ղազարյան), Ե., 1984:* **Բաղդասարյան Մ.**, *Մատենանիշեր, Ե., 1987:*

ՄԱՏԵՆԱՇԱՐ, որևէ հատկանիշով (թեմատիկ, ժանրային ևն) ու նպատակով խմբավորվող և ձևավորմամբ ընդհանրացվող գրքերի շարք:

Հայտնի Մ-երից են՝ «Համաշխարհային գրականության գրադարան», «Փիլիսոփայական ժառանգություն», «Անտիկ գրականության գրադարան», «Շար հայ պատմագրաց», «Ազգային մատենադարան», «Մատենադարան մանկանց», «Նշանավոր մարդկանց կյանքը», «Ընտիր մատենագիրք», «Մատենագիրք նախնյաց», «Սոփերք հայկականք», «Հայագիտական ուսումնասիրություններ», «Դուկասյան մատենադարան», «Էժանագին գրադարան», «Դպրոցական գրադարան», «Արկածային գրադարան», «Գրական հուշարձաններ», «Դիվան հայոց պատմության», «Ժամանակակից մատենաշար», «Սփյուռքահայ գրողներ», «Մատենաշար ժամանակակից սփյուռքահայ բանաստեղծության», «Հայ մատենագիրներ», «Հայ քնարերգություն», «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», «Հայ դասականների գրադարան», «Ռուս դասականների գրադարան», «Բազմավէպ», «Հովակիմյան», «Արամյան», «Արմաշ», «Զավարյան», «Ամբերդ», «Կենցաղ եկեղեցականայց», «Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության», «Մատենագիրք հայոց», «Ապրող հերոսներ», «Արգելված գրքեր», «Պարտադիր ընթերցանություն», «Ինչու և ինչպես», «Ապրելու բանաձև» ևն:



Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի

ՄԱՏԹԵՈՍ Ա ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ, Չուհաճյան, Չուխաճյան (1802, Կ. Պոլիս–22.8.1865, Վաղարշապատ, ամփոփված է Էջմիածնի Սբ Գայանե վանքի գավթում), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1858–ից: Մ. Ա Կ-ու ջանքերով են ձևավորվել արևմտահայ ազգ. իշխանությունների զույգ մարմինները՝ Հոգևոր ժողովը (14 անդամով) և Գերագույն ժողովը (20 անդամով), որոնք կարևոր դեր են ունեցել «Ազգային սահմանադրության» (1860) մշակման ժամանակ: Հրաժարական է տվել Կ. Պոլսի ամիրաների ճնշմամբ:



Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու *«Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ» (1854, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

Մ. Ա Կ-ու հայրապետության օրոք կարգավորվել է Մայր աթոռի մատենադարանը, կազմվել է առաջին լիակատար ձեռագրացուցակը (Դ. Շահնազարյան, «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի», 1863, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.): Մեծ ջանքեր է գործադրել մեղմելու «Պոլոժենիե»-ի (1836) որոշ հոդվածներ, ընդլայնելու Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասությունները:

Լույս են տեսել Մ. Ա Կ-ու «Խորհրդածութիւն շնորհաց եւ նշանաց եւ խորհրդոց քրիստոնէական Սուրբ եկեղեցւոյ...» (1842, Զմյուռնիա, Մեսրոպյան վարժարանի տպ., 1841 և 1848, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.),

«Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ» (1848, 1854, ԿՊ, Պողոս Արապյանի տպ., 1856, 1860, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), «Բարի մարդ եւ բարի քրիստոնեայ» (1856, ԿՊ, Հ. Մյուհենտիյանի տպ., 1860, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), «Ուղեցոյց քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան» (1861, Մ., Համալսարանի տպ.) աշխատությունները:



Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (տպագրիչ՝ **Մատթեոս Ծարեցի,** *1661, Ամստերդամ*) գրքի փիլոլոսաթերթը

ՄԱՏԹԵՈՍ ԴՊԻՐ ՊԱԼԱՏԵՑԻ, XVIII դ–ի մատենագիր, տոմարագետ: Քրոջ՝ *Բրաբիոն Նուրար Պալատեցու* հետ ուսուցչություն է արել Կ. Պոլսում՝ իրենց տանը բացած դպրոցում:

Ապեհասլ Իսաք Հրեայի աջակցությամբ 1776–78–ին կազմել է կրոն. տոնացույց՝ «**Տետրակ տօնացոյցի**»: Տպագրվել է 1776–ին Կ. Պոլսում՝ Բարսեղ Սեբաստացու տպարանում: Տիտղթ–ին՝ «Տետրակ տօնացոյցի, որ ցուցանէ զկարգեցեալ տօնս սրբոյն Աստուծոյ. զպահս եւ զկիւրակէս ըստ կարգադրութեան մօր մերոյ Սրբոյ եկեղեցւոյ»:

1778–ին տպագրված տոնացույցի տիտղթ–ը նույնն է, 1777–ինը՝ «Տետրակ տօնացոյցի, որ ցուցանէ զկարգեցեալ տօնս, զպահս եւ զկիւրակէս 1777 ամի տեառն...»:

ՄԱՏԹԵՈՍ ԾԱՐԵՑԻ որդի Մուրադի (1590–ական թթ., Արցախի Ծար գավառ–1661, Ամստերդամ), տպագրիչ, Ամստերդամի հայկ. տպագրության հիմնադիրը: 1655–ին Մ. Ծ. *Հակոբ Դ Զուղայեցու* հանձնարարությամբ Զմյուռնիայից գնացել է Իտալիա՝ տպարան հիմնադրելու: Վենետիկի ղեկավարներից տպագրության թույլտվություն ստանալով՝ մեկնել է Հոլանդիա և 1658–ին գերմանացի վարպետ Քրիստոֆեր վան Դեյքին պատվիրել հայ. տպատառեր՝ ըստ *Մովսես Տաթևացի* կաթողիկոսից ստացած տառանմուշների: Ստանալով նորաձույլ տպատառերի մի մասը՝ 1660–ին իր կահավորած տպարանում Մ. Ծ. սկսել է տպագրել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը, սակայն նյութ. դժվարությունների պատճառով տպարանը հայտնվել է փակվելու վտանգի առջև: Նորջուղայեցի վաճառական *Ավետիս Ղլիճենցը* մարել է տպարանի պարտքերը, հորդորել Մ. Ծ–ուն տպարանը կտակել Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի (Մուղնի) վանքերին և կոչել նրանց անունով: «Յիսուս Որդու» տպագրությունը չավարտած՝ Մ. Ծ. մահացել է: Գրքի տպագրությունն ավարտել է Ավետիս Ղլիճենցը 1661–ի մայիսին՝ վերջում զետեղելով Մ. Ծ–ու և իր հիշատակարանները:



«Մատթեոս Զուղայեցի», *մանրանկար, 1715–ի Քարոզգիրք (ծաղկող՝ Թեոդորոս, Մատենադարան, ձեռ. № 6607)*

Գրկ. **Սարուխան Ա.**, *Հոլլանդան եւ հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վնս., 1926:* **Իշխանյան Ռ.**, *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977, էջ 408–419:* **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Ե., 1958, 2012:*

ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, XIV դ–ի վերջի և XV դ–ի սկզբի մեկնիչ, մատենագիր, գրիչ, վարդապետ: Սովորել է Տաթևի համալսարանում. աշակերտել է *Հովհան Որոտնեցուն* և *Գրիգոր Տաթևացուն*: 1391–ից գործել է Ապրակունիսի Սբ Կարապետ վանքում (Երնջակ), ապա՝ Տանձափարախ անապատում (Տաթևի մոտ), 1395–ից դասավանդել է Տաթևի համալսարանում: Պայքարել է ունիթոր. շարժման դեմ՝ հանուն Հայ եկեղեցու ազգ–դավան. անկախության: Գրել է «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի» (Մատենադարան, ձեռ. № 2519), «Մեկնութիւն Հովհաննեսի Աւետարանի» (Մատենադարան, ձեռ. № 1350), «Քննութիւն Գործոց առաքելոց» (1411, Մատենադարան, ձեռ. № 1402), «Վասն հարցման անօրինաց. զանազան պատասխանիք» (1392, Մատենադարան, ձեռ. № 969), «Հաւաքում բանից» (1395), «Վասն ժամանակաց գիտելոյ զորքանն» (1402) և այլ աշխատություններ:

Մ. Զ–ու «**Վասն քարոզութեան բանի**» աշխատությունը (1393) տպագրվել է 1750–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում՝ Եվագրի *«Գիրք ութն խորհրդոց մեղաց»* երկի (թարգմ.՝ Մ. Զ–ու) հետ՝ 1 գրքով. առաջին գլուխն է (էջ 3–147):

Հեղինակ է նաև բազմաթիվ տաղերի ու գանձերի («Կանոն երեւման Խաչին», «Կանոն մեծահիրաշ Կիրակէի» ևն), որոնց մի մասը

ձայնագրված է երաժշտ. խազերով. ենթադրվում է, որ Մ. Ձ. եղել է նաև երաժիշտ:

Պահպանվել են Մ. Ձ-ու ընդօրինակած մի քանի արժեքավոր գրչագրեր, այդ թվում՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (1397) պոեմը:

Գրկ. **Խաչիկյան Լ.,** *Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, «ԲՄ», 1956, № 3:* **Ջաքարյան Ս.,** *Հայ իմաստասերներ (Մատթեոս Ջուղայեցի, Առաքել Սյունեցի), Ե., 1997:*

ՄԱՏԹԵՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ, **Հովհաննիսյան** [մոտ 1630–40-ական թթ., գ. Վանանդ (Մեծ Հայքի Գողթն գավառ)–մ. թ. անհտ], տպագրիչ, վարդապետ: Ամստերդամի հայկ. տպագրության 2-րդ շրջանի սկզբնավորողը: ***Թովմաս Վանանդեցու*** հետ մեկնել է Եվրոպա, 1670-ին գրաշարություն է սովորել ***Ոսկան Երևանցու*** մոտ: Շուրջ 14 տարի գրաշար է աշխատել Լիվոռնոյի, ապա՝ Մարսելի տպարաններում՝ մասնակցելով մոտ 20 անուն հայ. գրքերի հրատ-յանը: 1683-ին, երբ Մարսելում հայկ. տպարանը փակվելու վտանգի տակ էր, Թովմաս Վանանդեցու հանձնարարությամբ մեկնել է Ամստերդամ, հայկ. տպատառեր պատվիրել հունգար հայտնի գրաձուլող վարպետ Նիկոլաս Քիշին, տպարան հիմնադրել և 1685-ին հրատարակել Շարակնոց, 1686-ին՝ Ժամագիրք: Շուտով նրան են միացել իր ազգականներ ***Ղուկաս Վանանդեցին*** (1690-ին) և Միքայել Վանանդեցին (1696-ին): 1694-ին տպարանի տնօրինությունը ստանձնել է Թովմաս Վանանդեցին: Այնտեղ Մ. Վ. աշխատել է մինչև 1704-ը, տպագրել մոտ 15 անուն գիրք (կամ մասնակցել է դրանց տպագրությանը)՝ ***Մովսես Խորենացու*** «Պատմութիւն Հայոց»-ը (1-ին հրտ., 1695), հայ. առաջին քարտեզը՝ ***«Համապարած աշխարհացոյց»***-ը (1695), Ղուկաս Վանանդեցու աշխատությունները՝ «Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի» (1696), «Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց...» (1698), «Գանձ չափոյ, կշռոյ...» (1699, աշխարհաբար) ևն, վերջինիս հետ կազմել է բնագիտ., աստղագիտ., պատմագիտ. ու լեզվաբ. երկեր (Մատենադարան, ձեռ. № 2180, 5024, 6620, 6679, 8120):

Հայ հնատիպ գրքի շրջանում Ամստերդամում 1699–1700-ին Թովմաս Վանանդեցու տպարանում տպագրվել է Մ. Վ-ու **«Ոսկեայ դուռն դպրատան»** դասագիրքը՝ մանուկների համար (Ա տիտղթ-ին՝ «Դուռն իմաստութեան», Բ-ին՝ «Ոսկեայ դուռն դպրատան», 72 էջ, 8º, 12,7 x 6 սմ), 1702-ին՝ **«Բնաբանութիւն իմաստասիրական...»** երկհատոր փիլ. երկը (տիտղթ-ին՝ «Բնաբանութիւն իմաստասիրական կամ Տարերաբանութիւն...», 120 էջ, 8º, 11,5 x 5,6 սմ, երկուսն էլ՝ համահեղ.՝ Ղուկաս Վանանդեցի):

Գրկ. **Սարուխան Ա.,** *Հոլլանդան եւ հայերը ԺԶ-ԺԹ դարերում, Վնն., 1926:* **Գրիգորեան Մ.,** *Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցւոյ մասին, Վնն., 1969:* **Թումանյան Բ.,** *Հայ ապտղագիտության պատմություն, հ. 1, Ե., 1964:* **Իշխանյան Ռ.,** *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:* **Լևոնյան Գ.,** *Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Ե., 1958, 2012:*

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ (XI դ-ի 2-րդ կես, ք. Ուռհա/Եդեսիա–մոտ 1144), ժամանակագիր: Մ. Ու-ուց հայտնի է **«Ժամանակագրութիւն»** երկը: ենթադրվում է, որ գրել է 1113–38-ին: Բաղկացած է 3 մասից. 1-ինն ընդգրկում է 952–1051-ի, 2-րդը՝ 1052–1101-ի, 3-րդը՝ 1102–37-ի իրադարձությունները: Երկը Բագրատունիների թագավորության, նրա կործանման, թուրք-սելջուկների արշավանքների ու նվաճումների, հայերի արտագաղթի և օտարերկրյա նվաճողների դեմ նրանց պայքարի մասին է: 3-րդ մասում հեղինակը նկարագրել է իր ապրած ժամանակաշրջանը: Մ. Ու-ու «Ժամանակագրութիւնը» շարունակել է ***Գրիգոր Երեցը*** և ավարտել 1162-ի դեպքերով:


Մ. Ու-ու երկն առաջին անգամ «Պատմութիւն» վերնագրով տպագրվել է 1869-ին Երուսաղեմում (Սբ Հակոբյանց տպ.), լիակատարը՝



Մատթեոս Վանանդեցու *և Ղուկաս Վանանդեցու «Ոսկեայ դուռն դպրատան» (1699-1700, Ամստերդամ) գրքի Բ տիտղոսաթերթը*



Շարակնոցի (տպագրիչ՝ **Մատթեոս Վանանդեցի**, *1685, Ամստերդամ) պատկերազարդ (85-րդ) էջ*



Մատթեոս Ուռհայեցու *«Ժամանակագրություն» (1973, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

1898-ին՝ «Ժամանակագրութիւն» վերնագրով՝ Վաղարշապատում (Սբ Էջմիածնի տպ.), Երևանում՝ 1973 և 1991-ին (աշխարհաբարի փոխադր., ներած. և ծնթգր.՝ Հ. Բարթիկյանի): Հրատարակվել է նաև ֆրանս.՝ 1858-ին Փարիզում (թարգմ.՝ Էդուարդ Դյուլորիեի), թուրք. (1962), անգլ. (1972):

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Հայապատում, Վնտր., 1901:* **Աճառեան Հ.**, *Մատթէոս Ուռհայեցի, «ՀԱ», 1953, էջ 350–354:* **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 4, Ե., 1970:* **Խաչիկյան Լ.**, *Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «ԲԵՀ», 1971, № 1:*

«Մատյան ողբերգության» *պոեմի հրատարակություններ*



«Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ արարեալ...»-ի (1701–02, Կ. Պոլիս, Ասլվաճատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) պատկերազարդ (10-րդ) էջ



«Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ...»-ի (1726, Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.) պատկերազարդ (4-րդ) էջ

ՄԱՏՅԱՆ, 1. մագաղաթե կամ թղթե ձեռագիր կամ հնատիպ գիրք, նաև ի մի հավաքված վավերագրերի հատոր, այն ամենը, ինչ գրի է առնվել և խմբովին (կամ առանձին թղթով, մագաղաթով) զետեղվել միևնույն կազմի մեջ: Մ. է կոչվել նաև նույն գրքի առանձին մասը: Երբեմն Մ. նշանակել է միայն պատմ. երկ, ժամանակագրություն. Մովսես Խորենացին իր «Պատմություն Հայոց»-ի բաժիններն անվանել է «մատյան», Սերեոսի «Պատմության» ենթավերնագրերից մեկը «Մատյան ժամանակյան» («Ժամանակագրական մատյան») է, Գրիգոր Նարեկացու պոեմը հայտնի է «Մատյան ողբերգության» վերնագրով: Հազվագյուտ դեպքերում Մ. են ավանդվել նաև մուրհակը, կոնդակը, թուղթը, մագաղաթը, գրքի գլուխը ևն:

2. Դիվանատներում, դատարաններում, եկեղեցիներում և այլ հաստատություններում, կազմակերպություններում գործածվել են «ժապավինյալ մատյան» կոչված փաստաթղթերի ժող-ներ, որոնց թերթերը ժապավենով միմյանց կցել, կապել, կնքել են, որպեսզի հետագայում նրանց մեջ նոր փաստաթղթեր չավելացվեն, եղած թղթերը չպոկվեն, նրանց ժամանակագր. հերթականությունը չխախտվի: Մ. են անվանում նաև ուսուցչ., հաշվապահ., գործավար. և գրասենյակային ու անձն. օգտագործման համար նախատեսած այլ տետրեր, ցուցակներ, վավերագրերի ժող-ներ:

«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ», **«Մատեան ողբերգութեան»**, **«Նարեկ»**, ***Գրիգոր Նարեկացու*** երկը, որը գրել է 1001–03-ին՝ «...Առիթ արտասուաց, պատճառ աղաւթից՝ ի խնդրոյ հարց միանձանց եւ բազմաց անապատականաց ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգոր Նարեկայ վանից վանականի»: Գիրքը «Նարեկ» անվանել է ժողովուրդը: ***Գրիգոր Անավարզեցու*** հեղինակած Գրիգոր Նարեկացու վարքում ասված է, որ «Մատյան ողբերգության» պոեմը «Նարեկ» է կոչվել Նարեկավանքի անունով («յանուն տեղւոյն Նարեկ կոչի»): Ամբողջ. բնագիրը պահպանվել է շուրջ 150 գրչագիր ընդօրինակություններով (ամենահինը 1173-ին արտագրվել է Կիլիկիայի Սկևռա վանքում՝ Ներսես Լամբրոնացու պատվերով):

«Մ. ո.» բաղկացած է 95 գլխից և հեղինակի հիշատակարանից: Ի տարբերություն քնար. պոեմների այլ հեղինակների՝ Գրիգոր Նարեկացին չի օգտագործել պատմող. սյուժեի տարրեր, պոեմն ունի սկիզբ և ավարտ, ներքին զարգացման կուռ միասնություն ու ամբողջականություն: Գործողությունը զարգանում է կյանքի ու մահվան, անկման ու փրկության, հուսալքության ու ինքնահուսադրման իրարամերժ գաղափարների, ողբերգ. ապրումների, տարակույսների բախումով, որի կենտրոնում բանաստեղծն է, որը, մեղքերը քավելով, ձգտում է հասնել ու միանալ Աստծուն:

Միջնադարում հայերը պոեմը համարել են «դեղ կենաց», որի օգնությամբ ձգտել են մաքրվել հոգով, ազատվել մեղքերից և հասնել կատարելության: «Նարեկին» վերագրել են բուժիչ զորություն, իսկ հեղինակի անունը սրբացրել ու միջնորդ-բարեխոս համարել Աստծու մոտ՝ «մեղավոր հոգիների» փրկության համար: Պոեմի առանձին գլուխներ ու հատվածներ զետեղվել են ոչ միայն եկեղեցաարարող. գրքերի (Ժամագիրք, Պատարագամատույց, Սաշտոց ևն), այլև հատկապես ախտար. ժող-ների մեջ (Ուրբաթագիրք, Հմայիլ,

Կիպրիանոս ևն): Ժողովուրդը հավատացել է, որ, դրանք ընթերցելով, կարելի է փրկվել չար ոգիներից, փարատվել «ջերմատագնապ» ախտերից: Ախտար. ժող-ներում, ըստ այդմ, ներառվել են ցանկեր՝ «Զանազանութիւն Նարեկայ գրքոյն... թէ ամէն մէկ գլուխ ինչ գործոյ ասել օգտակար է» բովանդակությամբ:

«Մ. ո.» հայ գրքի պատմության մեջ ամենաշատ ընդօրինակված և տպագրված երկն է: Հայ հնատիպ գրքի շրջանում «Մ. ո.» «Գիրք աղօթից» վերնագրով տպագրվել է՝

1673-ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում (առաջին անգամ): Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ...» (անավարտ տպագրություն, ընդհատված է 48-րդ էջով, 8º): Հայտնի է նաև որպես «Փոքր Նարեկ»:

1701–02-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ արարեալ...» (697 էջ, 4º, 15,9 x 10,5 սմ):

1726-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում (431 էջ, 4º, 16 x 11 սմ):

1736-ին Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում (567 էջ, 4º, 16,3 x 12,2 սմ):

1755-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Նարեկ գիրք. Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ հրեշտակական վարդապետի...» (576 էջ, 8º, 16,8 x 11,2 սմ): Տպագրվել է 2 տարբերակով՝ մասնակի տարբերություններով:

1763-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օղլանդոյի տպարանում: Տիտղթ-ին՝ «Բանք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկայ վանից վանականի եւ հոգեկիր հոետորի....» (311 էջ, 8º, 12 x 6,7 սմ):

1763-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Նարեկ գիրք. Գիրք աղօթից...», Բ-ին՝ «Գիրք աղօթից» (640 էջ, 8º, 16,7 x 11,9 սմ):

1774-ին նույն տպարանում: Տիտղթ-երին՝ նույնը (416 էջ, 6º և 8º, 16 x 10,7 սմ):

1782-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-երին՝ նույնը (640 էջ, 8º, 16 x 11,5 սմ):

1789-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ Գիրք աղօթից...» (429 էջ, 12º, 10,9 x 5,6 սմ):

1789–90-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից...» (371 էջ, 4º, 16 x 11,5 սմ):

1790-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հոետորի...» (350 էջ, 8º, 13,7 x 8,6 սմ):

1795-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ Գիրք աղօթից որ կոչի Նարեկ...» (429 էջ, 12º, 10,9 x 9,6 սմ):


1801-ից հետո «Գիրք աղօթիցը» տպագրվել է՝

Կ. Պոլսում՝ Արապյան տպարանում՝ 1802, 1807, 1812, 1822, 1826, 1829, 1832, 1835, 1836, 1839, 1844, 1847, 1850, 1852-ին, «Մայր դպրատան» տպարանում՝ 1806-ին, «Մայր Սբ Աստվածածին» տպարանում՝ 1821-ին, Հովհաննես Մյուհենտիյանի տպարանում՝ 1845, 1850, 1858-ին, Թադևոս Տիվիճյանի տպարանում՝ 1864-ին, Ռուբեն Քյուրքչյանի տպարանում՝ 1866, 1870-ին, Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ 1804, 1827, 1833, 1841 (այս հրատ-յան տիտղթ-ին առաջին անգամ երկն անվանվել է «Մատեան ողբերգութեան», որն օգտագործվել է հետագա հրատ-ներում), 1844, 1851 (2 հրտ.), 1893-ին, Ս.Պետերբուրգում՝ «Ծովային» տպարանում՝ 1810-ին (աշխատասիր.՝ Հովսեփ Հովհաննիսյանի, Բ տիտղթ-ը՝ ռուս.), Զմյուռնիայում՝ Մեսրոպյան վարժարանի տպարանում՝ 1843-ին, Տետեյան եղբ. տպարանում՝ 1867, 1870-ին, Փարիզում՝ Ճանիկ Արամյանի տպարանում՝ 1860-ին, Երուսաղեմում՝ Սբ Հակոբյանց տպարանում՝ 1866, 1868, 1875, 1886, 1897-ին, նաև 1883-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության, Թիֆլիսում՝ Է. Խելաձեի տպարանում՝ 1905-ին, ևն:

Տպագրվել է նաև աշխարհաբար՝ 1902-ին (ԿՊ, Գասպար Գայսերյանի տպ., փոխադր.՝ Միսաք Գոչունյանի), 1948-ին (Բուենոս Այրես, փոխադր.՝ Գարեգին Եպս. Խաչատուրյանի): Գիրքը բազմիցս հրատարակվել է խորհրդ. տարիներին՝ բացառապես «Մ. ո.» վերնագրով (1960, փոխադր.՝ Մկրտիչ Խերանյանի, 1970, 2007, փոխադր.՝ Վազգեն Գևորգյանի, գիտահամեմատ. բնագիրը՝ 1985, աշխատասիր.՝ Պ. Խաչատրյանի, Ա. Ղազինյանի, ևն), ամբողջ.



«Նարեկ գիրք. Գիրք աղօթից...»-ի (1774, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) գլխա- և լուսանցազարդերով (5-րդ) էջ



«Մատեան ողբերգութեան» *(1868, Երուսաղեմ) գրքի փիփղոսաթերթը*



«Մատեան ողբերգութեան» *(1985, Ե., ԳԱ հրտ., ձևավորող՝ Կ. Ղաֆադարյան) գրքի կրկնաշապիկը*

կամ հատվածաբար թարգմանվել է ռուս., ֆրանս., անգլ., պարսկ., իտալ., գերմ., իսպ., արաբ., ռում., ուկր. լիտվ. և այլ լեզուներով:

Գրկ. Տես Գրիգոր Նարեկացի հողվածի գրականությունը:

ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱ, **Մարաբա Մծուրնացի** (ծ. և մ. թթ. անհտ), ասորի պատմագիր: Ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց թագավոր Վաղարշակի (մ. թ. ա. II դ.) ժամանակակիցը, որի պատվերով էլ գրել է հայ ժողովրդի հնագույն ժամանակաշրջանի պատմությունը: Մ. Ա. Կ-ի մատյանը՝ «Նախնյաց պատմությունը», քաղվածաբար օգտագործել են Անանուն պատմիչը (IV դ.) և Մովսես Խորենացին: Որոշ ուսումնասիրողներ (Ն. Մառ, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Գ. Սարգսյան և ուր.) Մ. Ա. Կ-ին համարում են IV դ-ի հեղինակ:



Մարգարե. *Խորան, «Հաղպատի Աւետարան» (1211, Հոռոմոս, Մատենադարան, ձեռ. № 6288)*

«ՄԱՐԱՇ», երկամսյա տեղեկատու պարբերաթերթ: Մարաշի հայրենակց. միության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1955–66-ին Բուենոս Այրեսում՝ հայ. և իսպ.: Խմբագիր՝ Սուսաննա Չալյան: Լուսաբանել է միության գործունեությունը, Հվ. Ամերիկայի երկրների մարաշահայության մշակութ., կրթ. առօրյան, երիտասարդության կյանքը: «Հայրենի աշխարհ» խորագրով ներկայացրել է Խորհրդ. Հայաստանը, տպագրել հայրենիքում հաստատված մարաշցիների նամակներ, հուշագրություններ:

ՄԱՐԳԱՐԵ, XIII դ-ի մանրանկարիչ: 1211-ին ծաղկել է *«Հաղպատի Աւետարանը»* (Մատենադարան, ձեռ № 6288):

Գրկ. Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 1, Ե., 1983: **Մաթևոսյան Վ.,** *Մարգարե, Ե., 1990:*

ՄԱՐԳԱՐԵ, XIV դ-ի մանրանկարիչ: Հավանաբար ապրել ու ստեղծագործել է Սյունիքի գրչության կենտրոններից մեկում: Հայտնի է Մ-ի նկարազարդած 1 Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 2930), որն ընդօրինակվել է 1315-ին: Նրա մանրանկարների ոճին և պատկերագրությանը բնորոշ է արխաիզմը, որը մասամբ առնչվում է տեղական և ասորա-ղպտիական գեղանկարչության ավանդույթների հետ:

Գրկ. Հակոբյան Հ., Հայկական մանրանկարչություն. Վաղպետական (ալբոմ), Ե., 1978:

ՄԱՐԳԱՐԵ ԱՐՃԻՇԵՑԻ, XVI դ-ի 1-ին կեսի գրիչ: Ապրել է Արճեշում, Մեծոփում, Վանում, Վարագում, Աղթամարի և Խառաբաստա վանքերում: Աշակերտել է *Գրիգորիս Աղթամարցուն*: 1522-ից ստեղծել է մի շարք ձեռագրեր և պատմամշակութ. արժեքավոր հիշատակարաններ: 1534-ին Գրիգորիս Աղթամարցու պատվերով ընդօրինակել է Սաղմոսարան, ընդօրինակել ու կազմել Ճառընտիր (Վանում), Ալեքսանդր Մակեդոնացու պատմության 2 արժեքավոր մատյաններ՝ Գրիգորիս Աղթամարցու խմբագրությամբ, կաֆաներով և նկարազարդումներով. 1-ինը՝ 1526-ին Խառաբաստա վանքում (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, Հ. Քյուրտյանի ֆոնդ, № 280), 2-րդը՝ 1536-ին Վարագում (Երուսաղեմի մատենադարան, № 473): Մ. Ա-ու՝ Գրիգորիս Աղթամարցուն ուղղած նամակ-հիշատակագրություններում (պահպանվել են ձեռագրերում) կան հավաստի փաստեր վերջինիս գործունեության մասին:



Ալեքսանդր Մարգարյանի *«Հայերենի հարադիր բայերը» (1966, Ե., «Միտք») գրքի կազմը*

Գրկ. **Ակինեան Ն.,** *Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վնն., 1958:* **Սիմոնյան Հ.,** *Հայ միջնադարյան կաֆաներ, Ե., 1975:*

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ալեքսանդր Սիմոնի [15.3.1924, գ. Քարաշեն (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–17.12.2001, Երևան], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1969): Ավարտել է ԵՊՀ (1949): 1959-ից՝ ԵՊՀ դասախոս:

Լույս են տեսել Մ-ի «Արդի հայերենի կապերը» (1955), «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը» (1958), «Հայերենի հարադիր բայերը» (1966), «Գորիսի բարբառը» (1975), «Հայոց լեզվի հապավումները» (1984), «Հայերենի բաղհյուսական բարդությունները» (1986), «Հայերեն դժվար հասկանալի բառերի բացատրական բառարան» (1998), «Օտար բառերի բացատրական բառարան» (համահեղ., 2004), «Հայոց լեզվի քերականություն: Ձևաբանու-

թյուն» (2004) և այլ աշխատություններ: Կազմել է Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» համաբարբառը (3 գիրք):

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մարո Եղիշեի [22.12.1915, Շուլավեր (այժմ՝ Շահումյան ավան՝ Վրաստանի Մառնեուլի շրջանում)–29.1.1999, Երևան, թաղված է Բյուրականում], բանաստեղծուհի: Աշոտ ***Բայանդուրի*** մայրը: Ավարտել է ԵՊՀ (1938):

Լույս են տեսել Մ–ի «Բանաստեղծություններ» (1945), «Մոր ձայնը» (1951), «Փշատենի» (1954), «Լիրիկական լուսաբաց» (1957), «Լիրիկա» (1962), «Ձնհալից հետո» (1965), «Լցված լռություն» (1972), «Օրերի խորքից» (1975), «Նվիրումներ» (1982, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1983), «Սիրո երգեր» (1984) բանաստեղծությունների ժող–ները:

Երկ. Բանաստեղծություններ, Ե., 1978: Բանաստեղծություններ, Ե., 1984: Հարընտիր, Ե., 1985: Բանաստեղծություններ, Ե., 2011:

Գրկ. Համբարձումյան Ն., Մարո Մարգարյանի քնարերգությունը, Ե., 2003:




Մարո Մարգարյանի *«Փշատենի» (1954, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

«ՄԱՐԴ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ», գիտամեթոդ. ամսագիր: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 2008–ից Երևանում: Խմբագիր՝ Սարիբեկ Հակոբյան: Ամսագրի «Հասարակագիտություն և հանրակրթություն», «Կրթական բարեփոխումներ», «Երեխան և աշխարհը», «Քաղաքակրթությունների ճանապարհին» բաժինների հոդվածներում մեկնաբանվում և վերլուծվում են հասարակագիտ. և կրթ. հրատապ ու կարևոր հարցեր:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, **Մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգորի Լուսավորչին Հայաստանի, Բաքվի Հայոց մարդասիրական ընկերություն**, բարեգործ. կազմակերպություն: Հիմնադրվել է 1864–ի մայիսի 21–ին Բաքվում՝ Դավիթ ***Ռոստոմյանի***, Մ. Զոհրապյանցի և տեղի ազդեցիկ հայերի նախաձեռնությամբ՝ լուսավոր., մշակութ. և բարեգործ. գործունեություն ծավալելու նպատակով: Մինչև 1875–ը գործել է հիմնականում Բաքվում, իսկ 1875–99–ին՝ նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերում, մասամբ՝ Արմ. Հայաստանում:

Մ. ը. նյութ. օգնություն է ցուցաբերել կարիքավոր հայ մտավորականներին, ուսանողներին, գաղթականներին, նշել մշակույթի, հաս. գործիչների և կազմակերպությունների հոբելյաններ, կազմակերպել դասախոսություններ, համաճարակների դեմ պայքարող խմբեր, բացել հիվանդանոցներ, ճաշարաններ, կարուձևի դասընթացներ: 1870–ին հիմնադրել է տպարան (գործել է շուրջ 13 տարի, տպագրել ավելի քան 20 անուն գիրք), թանգարան, որտեղ հավաքել են ձեռագրեր, հնատիպ գրքեր, հայ գործիչների արխիվներ: 1870–ին բացել է գրադարան, 1880–ին՝ կից ընթերցարան, որտեղ տարբեր տարիների աշխատել են Շիրվանզադեն և Լեոն: Գրադարանից և ընթերցասրահից օգտվել է մոտ 32 700 մարդ: 1914–ին ունեցել է 21 800 գիրք, ստացել 68 անուն պարբ.: 1920–ից գրադարանը վերանվանվել է Ադրբեջանի հանրապետ. հանրային գադարանի, որի հայկ. բաժինը գործել է մինչև 1960–ական թթ.:

1894–ին Մ. ը–ում ստեղծվել է գրական ֆոնդ: 1920–ի մայիսին Ադրբեջանում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո դադարել է գործելուց:



«Մարդ և հասարակություն», *2008–ից, Երևան (№ 5, 2012)*

«ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», շաբաթաթերթ (մինչև 1966–ը՝ եռօրյա): ՀՀ սպորտվարչության ազգ. օլիմպ. կոմիտեի մարզ. ֆեդերացիայի և պաշտպանամարզատեխ. ընկերության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1956–2003–ին Երևանում (մինչև 1990–ը՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, սպորտկոմիտեի, ՀԱՄԽ–ի պաշտոնաթերթ, 1956–90–ին՝ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ»): Խմբագիրներ՝ Մարտուն Թութխալյան, Վիլեն Մարտիկյան, Սերգեյ Նազարյան, Թորգոմ Կճոզյան, Սամվել Մուրադյան: Լուսաբանել է ՀՀ մարզ. կյանքը, անդրադարձել համաշխ.




«Մարզական Հայաստան», *1956–2003, Երևան*



«Մարզաշխարհ», *1993-ից, Երևան*



«Մարզիկ», *1980-ից, Բեյրութ (№ 12, 2011)*



Արտավազդ Գալենցերյանի «Միութենական հարց եւ Շնորհալի» (1910, **Մարզվան**, *«Ներսո և Սրապյան» տպ.) գրքի տիտղոսաթերթը*

սպորտի կարևոր իրադարձություններին, մարզ. վարպետության բարձրացմանը, աջակցել հանրապետությունում մարզ. տարբեր միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը: Տպագրել է մարզ. թեմաներով պատմվածքներ, ակնարկներ, ժամանցներ:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, ֆիզկուլտուրան ու սպորտը քարոզող թերթեր, հանդեսներ, տեղեկատուներ և պարբ. այլ հրատ-ներ: ՀԽՍՀ-ում լույս են տեսել «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» (1956–90, 1990–2003-ին՝ ***«Մարզական Հայաստան»***) թերթը և ***«Շախմատային Հայաստան»*** (1972-ից) հանդեսը: Ներկայում ՀՀ-ում հրատարակվում են նաև ***«Մարզաշխարհ», «Ֆուտբոլ+», «Ֆուտբոլ 365»*** և այլ պարբ-ներ: Շատ թերթեր ունեն մարզ. բաժին, որտեղ անդրադառնում են հայրեն. և համաշխ. սպորտի կարևոր իադարձություններին:

Սփյուռքում նույնպես լույս են տեսել (տեսնում) մի շարք մարզ. պարբ-ներ՝ Կ. Պոլսում՝ ***«Մարմնամարզ»*** (1911–14), «Հայ սկաուտ» (1919–22), «Սկաուտ» (1921–22), «Մարզաշխարհ» (1922), Սոֆիայում՝ «Մարզիկ» (1925–26), Փարիզում՝ «Հայ սկաուտ» (1927–35), «Հայ արի» (1929–35), «Մարզաշխարհ» (1968), Աթենքում՝ «Մարզաշխարհ» (1944), «Մարմնամարզ» (1946), Կահիրեում՝ «Մարզիկ» (1951–54), Հալեպում՝ «Սկաուտին ձայնը» (1965), Բեյրութում՝ «Հայ սկաուտ» (1975–80), «Կայծ» (1943–47), ***«Մարզիկ»*** (1980-ից), Երուսաղեմում՝ ***«ՀԵՄ եռամսեայ»*** (1940-ից) ևն:

«ՄԱՐԶԱՇԽԱՐՀ», մարզ., տեղեկատվ., մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1993-ից Երևանում (մինչև 1995-ը՝ ՀՄԸՄ պաշտոնաթերթը): Հիմնադիր-խմբագիր՝ Ռոլանդ ***Շառոյան:*** Ներկայացնում է ՀՀ մարզ. առօրյան, հայ մարզիկների և թիմերի հաջողությունները, հաղթանակները հանրապետ. և միջազգ. մրցահարթակներում, Հայրենիք-Սփյուռք մարզ. համատեղ միջոցառումները (Համահայկ. օլիմպիադաներ ևն), անդրադառնում է հայկ. սպորտի խնդիրներին, քարոզում է առողջ ապրելակերպ: Տպագրում է հարցազրույցներ, անվանի մարզիկների դիմանկար-կենսագրականներ, մեծ տեղ է հատկացնում համաշխ. սպորտի կարևոր իրադարձություններին: Ունեցել է «Նավասարդ XI» խորագրով հավելված: Ներկայում, որպես հավելված, ամիսը 1 անգամ թողարկում է ՖԿՀՊԻ-ի «Հայ արի» (լույս է տեսնում 2004-ից) պաշտոնաթերթը:

«ՄԱՐԶԻԿ», մարզ. ամսաթերթ: ՀՄԸՄ կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսնում 1980-ից Բեյրութում: Խմբագիրներ՝ Հարություն Գեղարդ (Գազանճյան), Վարդգես Տեր-Կարապետյան, Վարուժան Մուրատյան, Գրիգոր Սուքիասյան, Երվանդ Տեմիրճյան, Կարո Թոյությունճյան, Հովհաննես Տեր-Հարությունյան, Միսաք Արզումանյան, Պատրիկ Կյուլպենկյան, Կարո Աբրահամյան, Զավեն Գասապյան, Բյուզանդ և Զավեն Թորիկյաններ, Վիգեն Ավագյան (1995-ից): Տպագրում է նյութեր ՀՄԸՄ պատմության, նրա մասնաճյուղերի մարզ. և սկաուտ. գործունեության վերաբերյալ, անդրադառնում է համահայկ. և միջազգ. մարզ. անցուդարձին:

ՄԱՐԶՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, առաջինը 1909-ին Հակոր Սրապյանի և Ղազարոս Ներսիսյանի հիմնադրած «Ներսո և Սրապյան» տպարանն է (վերջում՝ «Անատոլիա»): Գործել է մինչև 1915-ը, տպագրել է շուրջ 80 անուն գիրք՝ Ա. Գալենտերյանի «Միութենական հարց եւ Շնորհալի» (1909) երկը, Ա. Գազանճյանի «Խունկ եւ արցունք» (1910), Կ. Գոճանյանի «Հայկական հառաչներ» (1911) բանաստեղծությունների ժող-ները, Գ. Օզանյանի «Հայապատում, հայուն պատմական դերը» (1912), «Յուշիկք Ջէյթունի» (1912) և «Պատմութիւն հայ լեզուի եւ բանահիւսութեան» (1913) երկերը, Կ. Թումանյանի «Տպագրիչ Մարզուանցի Գրիգոր Դպիր» (1912) ուսումնասիրությունը, «Ծրագիր-կանոնագիր Շաւարշեան ուսանողական

միութեան Անատոլիա գօլէճի Մարզուան» (1915) գրքոյկը, թարգման. գրակ., դասագրքեր ևն:

Երկրորդը «Գուտենբերգ» տպարանն է, որը 1909-ին հիմնադրել է Սամուել Միածինյանը, 1910-ից նրան ընկերակցել է Ալեքսանդր Յոզղատլյանը: Գործել է մինչև 1913-ը, տպագրել է շուրջ 10 անուն գիրք՝ Մ. Իսպիրյանի «Հայաստանի ոգին» (1911), Վահան-Ասլանի «Հոգիս...» (1913), Ա. Գըլտրյանի «Քաղաքացիական կրթութիւն» (1913) ևն:

Մարզվանում լույս են տեսել նաև «Զեփիւռ» (1889), «Արուսեակ» (1889), «Սոխակ» (1900) խմորատիպ թերթերը, «Նոր այգ» (1910–14) գրական, գիտ., քաղ., «Հայկունի» (1910–12) գրական-ուսանող. հանդեսները, «Բողբոջ» (1911–14) մանկապատանեկան երկշաբաթաթերթը ևն:

Միհրան Մինասյան



Հակոբ Մարթայան


ՄԱՐԹԱՅԱՆ Հակոբ Վահանի, **Դիլաչար** (թուրք. – լեզվի բանալի) (22.5.1895, Կ. Պոլիս–12.9.1979, Կ. Պոլիս), լեզվաբան, թուրքագետ, խմբագիր, թարգմանիչ: Պրոֆ. (1922): Տիրապետել է մի քանի լեզուների: Սովորել է Կ. Պոլսի ամերիկյան միջնակարգ դպրոցում, ավարտել Ռոբերտ քոլեջը, եղել է այդ քոլեջի տնօրեն: Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին ծառայել է թուրք. բանակում: 1922-ին մեկնել է Սոֆիա, լեզուներ դասավանդել Սոֆիայի համալսարանում: 1932-ին վերադարձել է Կ. Պոլիս, Թուրքիայի վարչապետ Քեմալ Աթաթուրքի առաջարկությամբ ընտրվել է Թուրք. լեզվագիտ. ընկերության 1-ին քարտուղար և գլխ. մասնագետ, միաժամանակ, 1936–50-ին դասավանդել է Անկարայի համալսարանում, 1942–70-ին եղել թուրք. հանրագիտարանի տեխ. խորհրդատու, ապա՝ գլխ. խմբագիր:

Հիմնադրել է նաև մի շարք պարբ-ներ. 1918-ին Զահլեում՝ «Լոյս», 1922-ին Կ. Պոլսում՝ «Լսարան», 1926-ին Սոֆիայում՝ «Ռահվիրա», 1928-ին Բեյրութում՝ «Մշակոյթ»: Տպագրել է հոդվածներ հայկ. մամուլում:

Հայ լույս են տեսել Մ-ի «Առաջին փորձութիւն» (1922) պիեսը, «Գրի ծագումը եւ տարածումը» (1928), «Հաբեթաբանութիւն» (1929), «1500-ամեակի խոհեր (451–1951)» (1951), «Աստուածաշունչը եւ աշխարհաբարը» (1956), «Համայնապատկեր հայ մշակոյթի» (1966, 2004) հայագիտ., թուրք.՝ «Ադրբեջանական թուրքերենը» (1950), «Արևմտյան թուրքերենը» (1953), «Թուրքերենի և բարբառների դասակարգման խնդիրը» (1954), «Թուրքերենը որպես պետական լեզու» (1962), «Ընդհանուր ակնարկ թուրքերենի մասին» (1964) թուրքագիտ. աշխատությունները: Անգլ. է թարգմանել Լ. Շանթի «Հին աստվածները» (1922), անգլ-ից հայ՝ անգլիացի բանաստեղծների ստեղծագործություններից («Ալպիօնի պարտէզէն», 1929):

Մ. թուրք. այբուբենի հեղինակն է:

Երկ. Յօդուածներ, Սփամբուլ, 2000:




Հ. Մարթայանի
«1500-ամեակի խոհեր (451–1951)» (1951, Սփամբուլ) գրքի կազմը

ՄԱՐԻԵՍ (Mariès) Լուի [19.8.1876, Փարիզ–19.11.1958, քտա Շանտիյի (Ֆրանսիա)], ֆրանսիացի հայագետ, բանասեր: Հիսուսյան ուխտի անդամ: Տիրապետել է լատ-ին, հին և նոր հուն-ին, եբր-ին, ռուս-ին, հայ-ին: Աշակերտել է Անտուան ***Մեյեին***, Ֆրեդերիկ ***Սակլերին***: Վենետիկի Մխիթարյան միաբանության ճեմարանի անդամ (1934-ից): 1926-ին Փարիզի Կաթոլիկ. ինստ-ում բացել է դաս. հայ-ի ամբիոն, որը ղեկավարել է մինչև 1952-ը, 1928-ից միաժամանակ դասավանդել է Արլ. կենդանի լեզուների ազգ. դպրոցում:

«Ուսումնասիրություն Եզնիկի մոտ գոյություն ցույց տվող մի քանի անունների և բայերի մասին» (1928) աշխատության մեջ Մ. լուսաբանել է լեզվաբ. ու բանասիր. մի քանի խնդիրներ: «Հայերենի ցոյական անցյալ կատարյալի և ստորադասականի կազմության մասին» (1931) ուսումնասիրության մեջ անդրադարձել է հայ-ի խոնարհման մի քանի հարցերի: Թարգմանել և ծանոթագրել է Եզնիկ Կողբացու «Յաղագս Աստծոյ» («Եղծ աղանդոց») երկը, որը 1960-ին հրատարակել է Շառլ ***Մերսիեն***: Հայագիտ. հոդվածներ է հրապարակել «Հանդէս ամսօրեայ», «Հանդէս հայագիտութեան» և ֆրանս. մի շարք պարբ-ներում:




Լուի Մարիես



Գրիգոր Մարիկյան.
Հ. Շիրազի «Անի» (2011, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը



Մկրտիչ Մարկոսյան



Մ. Մարկոսյանի
«Կեսավուր թաղ» (2011, Սպամբուլ) գրքի կազմը

ՄԱՐԻԿՅԱՆ Գրիգոր Վասիլի [ծ. 22.2.1950, գ. Լապտև-Լոգ (ՌԴ Ալթայի երկրամաս)], բեմանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒՀ (1974), ԵԳԹԻ (1982): 1974–76-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում՝ որպես նկարիչ-ձևավորող, 1982–90-ին՝ բեմադրող նկարիչ: 1990–92-ին՝ «Երկիր ավետյաց», 1994–2002-ին՝ «Հայ գինվոր» թերթերի նկարիչ ու գեղ. խմբագիր: 1993-ից *«Նախիր»* հրատարակչության գլխ. նկարիչն է:

Նկարազարդել և ձևավորել է Վ. Իսրայելյանի «Ջնվաճված աշխարհամաս» (1990), Օ. դը Բալզակի «Շագրենի կաշին» (1992), Ե. Չարենցի «Ընտիր երկեր» (1997), Լեո Կամսարի «Կարմիր օրեր» (2000), Կորյունի «Վարք Մաշտոցի» (2005), Ջ. Ավետիսյանի «Նարեկացու մատյանը» (2005), Մ. Սերվանտեսի «Դոն Կիխոտ» (2006), Ի. Մամյանի «Մարտնչող լեռնահովիտ» (2006), Հ. Թամրազյանի «Երկեր» (հ. 1–4, 2006–12), Ն. Ադոնցի «Երկեր» (հ. 1–6, 2006–12), Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» (2010), Հ. Շիրազի «Անի» (2011), Վ. Գրիգորյանի «Պատմավեպեր» (2011), Ռ. Շառոյանի «Հովն ընկավ» (2012) և այլ գրքեր:

ՄԱՐԿՈՍ, XIV դ-ի վերջի գրիչ, մանրանկարիչ: Ապրել ու ստեղծագործել է Ղրիմում: 1374–1401-ին գրել և ընդօրինակել է մի քանի մատյան, որոնց հիշատակարաններում արժեքավոր տեղեկություններ կան ղրիմահայ գաղթավայրի գրչության արվ-ի մասին: Մ-ի՝ մեզ հայտնի բոլոր ձեռագրերը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 1925, 7402, 7438, 7446):

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1301–1400 թթ. (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950:

ՄԱՐԿՈՍ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ, XVII դ-ի 2-րդ կեսի մանրանկարիչ: Կ. Պոլսի հայկ. մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ: Աշխատել է Կ. Պոլսում և Էջմիածնում: Մ. Պ-ի ձեռագրերից Մատենադարանում պահվում են 1651-ի Հայսմավուրքը (ձեռ. № 1502), 1654–60-ի Աստվածաշունչը (ձեռ. № 348) և Մաղաքիա Կոստանդնուպոլսեցու հետ 1686-ին Էջմիածնում պատկերազարդած Աստվածաշունչը (ձեռ. № 349), Վիեննայի Մխիթարյան մատենադարանում՝ 1694-ին որդու՝ Գաբրիել Պատկերահանի հետ նկարազարդած «Սուտ Կալլիսթենեսի պատմութիւնը» (ձեռ. № 319): Մ. Պ-ի ձեռագրերից պահվում են նաև Երուսաղեմի (ձեռ. № 1552, 1970, 2275, 2276, 2289, 2561), Էջմիածնի (ձեռ. № 224) մատենադարաններում: Մ. Պ-ի նկարազարդումները հարուստ են կենցաղի մոտիվներով, նաև դիմապատկերներով:

Գրկ. Բուշհաուզէն Հայդէ եւ Հելմուտ, Նկարազարդ հայկական ձեռագիրներ Մխիթարեան միաբանութեան ի Վիէննա (աշխատասիր.՝ Ե. Յիմերմանի), Վնս., 1978, էջ 44–45: Պողարեան Ն., Հայ նկարողներ (ԺԱ–ԺԷ դդ.), Երևան, 1989, էջ 209, 227:

ՄԱՐԿՈՍՅԱՆ Մկրտիչ (ծ. 23.12.1938, Դիարբեքիր), գրող, հրատարակիչ, խմբագիր: Սովորել է Ստամբուլի Կեդրոն. վարժարանում, ավարտել է Ստամբուլի համալսարանը: 1966–72-ին եղել է Սկյուտարի Սբ Խաչ դպրեվանքի տնօրեն, միաժամանակ դասավանդել է: 1993-ին Ստամբուլում հիմնադրել է *«Արաս»* հրատարակչությունը, որը տպագրում է հայ. և թուրք. գրքեր:

Լույս են տեսել Մ-ի «Մեր այդ կողմերը» (1984, 1995, 2001, 2005), «Կեսավուր թաղ» (հայ., 1992, հայ., թուրք., քրդ., 2011) պատմվածքների ժող-ները, «Աա՛, Մարկո՛ս, որտեղացի՞ ես» (1995), «Մեր տոմսը հատեց Ստամբուլը» (1998, երկուսն էլ՝ թուրք.), «Տիգրիսի ափերէն» (1999) գրքերը, «Համրիչի հատիկներ» (2006) հուշապատումը:

ՄԱՐԿՎԱՐՏ (Markwart) Յոզեֆ (9.12.1864, ք. Ռայխենբախ–3.2.1930, Բեռլին), գերմանացի արևելագետ, հայագետ, բանասեր, լեզվաբան, աշխարհագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1893): Սովորել է Թյուբինգենի համալսարանում: 1920-ին այստեղ հիմնադրել է իրան. և հայկ. բանասիրության ամբիոն: Զբաղվել է կովկասագիտ-յամբ, իրանագիտ-յամբ, հայագիտ-յամբ: Մ. քննել է հայերի, արաբների, հույների, պարսիկների, թուրքերի, աղվանների, վրացիների և այլ ժողովուրդների պատմության զանազան խնդիրներ: «Երանշահրն ըստ կեղծ Մովսես Խորենացու «Աշխարհագրության»» (գերմ., 1901) երկում Մ. կատարել է բնագրային կարևոր ճշգրտումներ:

Լույս են տեսել Մ–ի «Հայկական այբուբենի ծագման մասին՝ կապված Մեսրոպ Մաշտոցի կենսագրության հետ» (1917), «Հայ ազգի ծագումը և վերականգնումը» (1919), «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ակունքները՝ ըստ հունական և արաբական աշխարհագիրների» (1930), «Հայ եպիսկոպոսությունների ծագումը» (1932) հայագիտ. երկերը: Մ–ի անտիպ երկերի (պահվում են Հռոմի Պապական աստվածաշնչային ինստ–ում) զգալի մասը վերաբերում է հայերի ծագմանը, հայկ. հին գաղթավայրերին, հայկ. առանձին թագավորությունների, Արշակունիների թագավորության հիմնադրմանը և հայագիտ. այլ հարցերի: Մ. հաճախ է հանդես եկել Հայ դատի պաշտպանությամբ, հայոց պատմության չարամիտ աղավաղումների դեմ, դատապարտել աբդուլհամիդյան հայաջինջ («Կոմանների ցեղի մասին», 1914) և Գերմանիայի քաղաքականությունը Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին:

Մ. հայ. է թարգմանել իր անուն–ազգանունը և երբեմն ստորագրել Հովսեփ Բդեշխյան: Հայ. լույս են տեսել Մ–ի «Հայ բդեաշխք» (1903), «Վրական Բագրատունեաց ծագումը», «Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշթոցի», «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը» (երեքն էլ՝ 1913, բոլորը՝ Վնն., Մխիթարյան տպ.), «Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը» (1962, «Մեսրոպ Մաշտոց» ժող–ում) ուսումնասիրությունները:

Երկ. Պարսկահայք նահանգը, «ՊԲՀ», 1961, № 1–2: Osteuropäische und ostasiatische Streifrüge, Lpz., 1903; Armenische Streifen. I Historische Data Chronologue der Vokalgesetze im Armenischen. II Zur Liste der Provinzenvon Xorasan, Wien, 1916.

Գրկ. **Աբգարյան Գ.**, *Յոզեֆ Մարկվարտ, «ՊԲՀ», 1965, № 2:* **Աբեղյան Ա.**, *Ուսուցչապետ Մարկուարտ եւ իր հայագիտական գործեր, «ՀԱ», 1930, №1–2:*

«ՄԱՐՄԱՐԱ», հաս–քաղ., գրական օրաթերթ: Լույս է տեսնում 1940–ից Ստամբուլում: Խմբագիրներ՝ Պետրոս Զոպյան, Սուրեն Շամլյան, Էդվարդ Սիմքեշյան, Կարպիս Մուրադյան, Ռոպեր ***Հատրտճեան*** (1968–ից): Մեծ տեղ է հատկացնում Թուրքիայի ներքաղ. կյանքին՝ որպես աղբյուր օգտագործելով թուրք. մամուլի նյութերը, անդրադառնում է ՀՀ–ում, Արցախում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Պոլսահայ համայնքի կյանքը ներկայացնում է եկեղեց., կրթ., մշակութ. անցուդարձի վերաբերյալ տեղեկություններով: Տպագրում է հայագիտ. հոդվածներ, գրական ստեղծագործություններ ևն:


1943–ին միացել է «Նոր լուր»–ին (1924–54) և կոչվել «Նոր լուր–Մարմարա» (լույս է տեսել 13 համար): 1945–ին ունեցել է «Տասնհինգօրեա գրական զոյգ էջեր» հավելված (22 համար):

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ», պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1911–14–ին Կ. Պոլսում: Խմբագիր–հրատարակիչ՝ Շավարշ Քրիայան: Տպագրել է հոդվածներ ֆիզկուլտուրայի և սպորտի վերաբերյալ, սովորեցրել մարմնամարզ. վարժություններ: Հայ երիտասարդությանը համախմբել է մարզ. ակումբների շուրջ: «Մ.»–ի նախաձեռնությամբ են կազմակերպվել հայկ. առաջին օլիմպ. խաղերը Կ. Պոլսում (1911): Անդրադարձել է նաև երեխաների բարոյական դաստիարակության հարցերին:


ՄԱՐՅԱՆ (Կարապետյան) Յուրի Մարտինի (9.7.1924, Երևան–15.4.1976, Երևան), արձակագիր, լրագրող: Աշխատել է «Կոմունիստ», «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթերի, «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի (երեքն էլ՝ ռուս.) խմբագրություններում: Եղել է միութ. «Կոմսոմոլսկայա պրավդա», «Լիտերատուրնայա գազետա», «Սովետսկայա կուլտուրա» թերթերի սեփական թղթակիցը:

Լույս են տեսել Մ–ի «Հանդիպումներ եթերում» (1959), «Ես, պատանի պիոներս» (1952) վիպակները, «Մեր Նազանին» (1960), «Հրազդանը երեկ, այսօր, վաղը» (1962) գրքերը:

ՄԱՐՍԵԼ (Marsel) Լյուք Անդրե (26.2.1919, Լիոն–1992, Լիոն), ֆրանսիացի մշակույթի գործիչ, թարգմանիչ: Լիոնում ստացել է բանասիր. և երաժշտ. կրթություն: 1940–ին հաստատվել է Փարիզում: Ուսումնասիրել է հայկ. երաժշտությունն ու բանաստեղծությունը: 1952–ին Վենետիկի Մխիթարյան միաբանությունում ուսումնասիրել է հայկ. ձեռագրերը: Գրիգոր Նարեկացու ծննդյան 1000–ամյա–




Յոզեֆ Մարկվարտ



Յ. Մարկվարտի *«Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշթոցի» (1913, Վնն.) գրքի տիտղոսաթերթը*




«Մարմարա», *1940–ից, Սպամբուլ*



«Մարմնամարզ», *1911–14, Կ. Պոլիս (№ 9, 1911)*

Մարսելի հայկական տպագրություն



«Գիրգ վայելուչ եւ հարկաւոր հանուրց» (1675, Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպ.) գրքի փիփղոսաթերթը

կի առթիվ ընդարձակ ուսումնասիրություն է տպագրել «Կայե դյու Սյուդ» (ֆրանս.) պարբ–ում՝ ներկայացնելով 25 էջ թարգմանություն «Մատյան ողբերգության» պոեմից: Թարգմանել է Դ. Վարուժանի ստեղծագործություններից՝ «Վարուժան. բանաստեղծություններ» (աշխատակցությամբ՝ Կ. Փոլադյանի, 1969), որտեղ ներկայացրել է նաև Դ. Վարուժանի գրական գործունեությունն ու կենսագրությունը: «Հայ բանաստեղծություն (V դ–ից մինչև մեր օրերը)» անթոլոգիայում (1975, կազմ.՝ Ռուբեն ***Մելիք***) զետեղված են Մ–ի մի շարք թարգմանություններ (հայկ. ժող. երգեր, Գրիգոր Նարեկացու, Դավիթ Սալաձորցու, Պ. Դուրյանի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Ե. Չարենցի և ուր. գործերից):

ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1673–ին ***Ոսկան Երևանցին***, ֆրանս. արքունիքից թույլտվություն ստանալով, Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանը Լիվոռնոյից փոխադրել է Մարսել, որտեղ նրա հետ աշխատել են Սողոմոն ***Լևոնյանը*** (Ոսկանի քեռորդին), ***Մատթեոս Վանանդեցին***, Մկրտիչ Զուղայեցին, Թադեոս Երևանցի Համազասպյանը, Նասիբ Գրիգորյանը: Նույն՝ 1673–ին սկսել են տպագրել Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից»–ը («Մատեան ողբերգութեան»), Ժամագիրք (երկուսն էլ՝ առաջին հրատ.) և «Գիրք Սաղմոսաց Դաւթի»–ն: Կաթոլիկ. գրաքննության պատճառով Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից»–ի տպագրությունը մնացել է անավարտ, իսկ Ժամագրքինն ավարտվել է 1679–ին: Տպարանը հրատարակել է նաև «Գրկուկ կարեւոր հանապազորդեան» (Պարզատօմար, Լուսնացոյց ևն, 1673, 1676), «Գիրք այբուբենից» (1675), «Գիրգ վայելուչ եւ հարկաւոր հանուրց» (1675), «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք» (Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»–ը և Վարդան Այգեկցու առակները, 2–րդ հրտ.՝ 1683) և այլ գրքեր: Տպարանը 1674–ին հրատարակել է Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Համառօտութիւն ճարտասանականի արհեստի» երկը, 1675–ին՝ «Արհեստ համարողութեան» թվաբ–հաշվապահ. աշխարհաբար առաջին ձեռնարկը՝ հայ վաճառականների համար: Փակվել է 1686–ին. 13 տարվա ընթացքում հրատարակել է 16 անուն հայ. գրքեր:



Մարսելում հայկ. տպագրությունը վերսկսել է Ճանիկ ***Արամյանը***, որը 1862–ին իր տպարանը Փարիզից Կ. Պոլիս փոխադրելիս 2 տարի հանգրվանել է այդ քաղաքում, տպագրել Երեմիա Քահանայի «Օրացոյց գուշակութիւնք օդոց 1864 նահանջ թուականի...» (1863), Հ. Պեադուսի «Դստերք առաքինիք» (թարգմ.՝ Տ. Անեսյանի, 1863), Ս. Միքայելյանի «Ընդարձակ թուաբանութիւն» (հ. Բ, 1864) գրքերը: 1885–94–ին Մարսելում հրատարակչ., տպագր. գործունեություն է ծավալել Մկրտիչ ***Փորթուգալյանը***, որը նախ՝ ֆրանս., ապա սեփական տպարանում լույս է ընծայել գրքեր՝ գլխավորապես ազգ–ազատագր. պայքարի թեմաներով [Ս. Ոսկանի «Հայ դիւցազնուհի մը» (1885), «Կանոնադրութիւն Հայաստանի զաւակների միութեան» (1887), Մ. Թյությունճյանի «Ազատութիւն Պուլղարիոյ եւ կենսագրութիւնք պուլղար ապստամբապետաց» (1888), «Իմ հայրասպան ընկերը» (1889) և «Հայաստանի թշուառները» (1889), Մ. Փորթուգալյանի «Վարդապետարան Հայաստանի ազատութեան» (1889) և ««Արմէնիա»–ի յուշարար» (1890), Վ. Փափազյանի «Թոմաս Բոցարիս» (1891), Լ. Լուիի «Մի պուլկար հայրենասէր» (թարգմ.՝ Մ.



Սրեփան Ոսկանի «Հայ դիւցազնուհի մը» (1885, Մկրտիչ Փորթուգալյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը

Փորթուգալյանի, 1894) ևնվ, և *«Արմենիա»* գրական-բանասիր., քաղ. թերթը: Փորթուգալյանի տպարանում աշխատել են նրա դուստրերը՝ հայուհի առաջին գրաշարներ Շուշանը և Հայկանուշը: Մինչև 1967-ը Մարսելում գործել են շուրջ 10 հայկ. տպարաններ, որտեղ, ինչպես նաև ֆրանս. տպարաններում, հայ. գրքերից բացի, տպագրվել են շուրջ 30 անուն հայ. պարբ-ներ՝ «Խթան», *«Բանբեր»*, «Գեղարդ», «Ազատ խոսք», «Վերելք» ևն:

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Թէոդիկ, Տիպ ու պատ, ԿՊ, 1912, ե., 2012 (համառահանութուն): Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, ե., 1977: Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, ե., 1958, 2012:*

«ՄԱՐՏ», քաղ. ամսաթերթ: Վերակազմյալ հնչակյան կուս-յան պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1897–1901-ին Լոնդոնում: Խմբագիր՝ Արփիար *Արփիարյան:* Նպատակն արևմտահայ ազգ-ազատագր. շարժման ուժերը միավորելն էր: Տպագրել է նյութեր 1894–96-ի հայկ. ջարդերի և ինքնապաշտպան. կռիվների մասին, քննադատել եվրոպ. տերությունների դիրքորոշումը Հայկ. հարցում, անդրադարձել հայ-ռուս. քաղ. հարաբերություններին: Լուսաբանել է Կ. Պոլսի հայ ազգ. և կրոն. մարմինների գործունեությունը, երիտթուրքերի քաղաքականությունն արևմտահայության ինքնորոշման հարցում:



«Մարտակոչ», *1923–27, Թիֆլիս*

«ՄԱՐՏ», գրական, քաղ. և հաս. պատկերազարդ թերթ: Լույս է տեսել 1911–16-ին Մոսկվայում (երկշաբաթաթերթ, կիսամսյա, ամսաթերթ): Խմբագիր-հրատարակիչ՝ Արշակ Թումանյան (Կայծունի): Տպագրել է Հայաստանի, Կովկասի, Ռուսաստանի ներքին կյանքին առնչվող տեղեկություններ, նյութեր՝ գրակ-յան տեսության վերաբերյալ, գեղ. ստեղծագործություններ, թարգման. գործեր: Քննադատել է հայ մեծահարուստներին, եկեղեցու գործիչներին՝ ազգ. կարիքների հանդեպ անտարբեր վերաբերմունքի համար:




«Մարտ», *1897–1901, Լոնդոն*

«ՄԱՐՏԱԿՈՉ», օրաթերթ: Ռուսաստանի ԿԿ Անդրկովկասի երկրամասային կոմիտեի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1923–27-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Ալեքսանդր *Մյասնիկյան*, Հարություն *Սուրխաթյան*, Աշոտ Խումարյան, Սուրեն Երզնկյան, Սարգիս Խանոյան: Պայքարել է խորհրդ. կարգերի ամրապնդման համար: Ներկայացրել է երկրամասի տնտ., մշակութ. կյանքի, գրակ-յան և արվ-ի նորությունները: Տպագրել է Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Հ. Հակոբյանի, Ե. Չարենցի և ուր. ստեղծագործություններից: Լույս է տեսել նաև նույնանուն շաբաթական պատկերազարդ գրական-գեղ. հավելված (խմբագիր՝ Հ. Սուրխաթյան), որտեղ պարբերաբար տպագրվել են խորհրդահայ հեղինակների նոր գործերից, թարգմանություններ՝ ԽՍՀՄ ժողովուրդների գրակ-ից:




«Մարտիկ», *1993-ից, Ստեփանակերտ*

«ՄԱՐՏԻԿ», շաբաթաթերթ: ԼՂՀ ՊԲ պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1993-ից Ստեփանակերտում (№ 1–4-ը՝ «Մարտական թերթիկ»): Խմբագիրներ՝ Վալերի *Աթաջանյան*, Վահրամ *Աթանեսյան*, Հրանտ Ալեքսանյան, Մարսել *Պետրոսյան*, Սուրեն Սարումյան (2004-ից): Լուսաբանում է ԼՂՀ ՊԲ-ի կարևոր իրադարձությունները, բանակային կյանքը, վերլուծում Ղարաբաղյան պատերազմի դասերը, ներկայացնում ռազմ. գործողությունների ժամանակագրությունը, բանակի կազմավորման գործընթացը, տպագրում նյութեր զոհված ազատամարտիկների և պատերազմի մյուս մասնակիցների սխրագործությունների մասին, հոդվածներ՝ ռազմահայրենասիր. դաստիարակության, բանակ-հասարակություն կապերի վերաբերյալ: «Պատերազմական օրագիր» խորագրով ներկայացրել է ռազմաճակատային շաբաթվա իրադարձությունների ամփոփագրերը: Մինչև 2006-ը տպագրել է նաև ռուս. նյութեր:



Գոհար Մարտիկյանի *«Սա Հայաստան է և՝ վերջ: Լեոնիդ Ազգալդյան» (2012, Ե., «Նոյյան տապան») գրքի կազմը*



Մարտիրոս դի Առաքելի *«Ժամանակագրության» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, 1956, Ե., ԳԱ հրտ.) 1-ին էջը*

ՄԱՐՏԻԿՅԱՆ Աշոտ Կարապետի [1912, ք. Բալըքեսիր (Թուրքիա)–3.8.1977, Երևան], խմբագիր: Մինաս ***Մարտիկյանի*** եղբայրը: Գոհար ***Մարտիկյանի*** հայրը: 1931-ին հայրենադարձել է: Ավարտել է ԵՊՀ (1944): 1950–75-ին աշխատել է Հայպետհրատում. 1965–70-ին՝ գլխ. խմբագիր (ընդհատումներով), 1957–61-ին, միաժամանակ՝ ***«Պոլիգրաֆիպր»*** հանդեսի գլխ. խմբագիր: Կազմել է տնարարության դպրոց. դասագիրք, 1960–77 թթ-ի պատի և սեղանի՝ ՀԽՍՀ առաջին հանրագիտարանային օրացույցները, «Կենցաղային օգտակար խորհուրդներ» (1957, 1959, 1961) ժող-ները, թարգմանել Պ. դը Լաթիլի, Յ. Կիրշենբլատի, Յ. Բալթուշիսի ստեղծագործություններից: Համահեղինակ է «Կաղզվանը բոցերի մեջ» (1969) վավերագր. վեպի:

ՄԱՐՏԻԿՅԱՆ Գոհար Աշոտի (ծ. 11.2.1945, Երևան), լրագրող, գրող: Աշոտ ***Մարտիկյանի*** դուստրը: Ավարտել է ԵՊՀ (1967): 1967–69-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում, 1969-ից՝ Հեռուստառադիոպետկոմում:

Լույս են տեսել Մ-ի «Իմ առաջին գիրքը» (1983) մանկ. պատմվածքների ժող-ը, «Ճղակոտոր իմ տոհմածառ» (2007) վավերագր., «Սա Հայաստան է և՝ վերջ: Լեոնիդ Ազգալդյան» (2012) պատմավավերագր. վիպերգերը, «Ապրելու բանաձև» (հ. 1–7, 2008–13) մատենաշարը (Արցախյան ազատամարտում զոհված հայ քաջորդիների մասին):

ՄԱՐՏԻԿՅԱՆ Մինաս Կարապետի [5.3.1907, ք. Բալըքեսիր (Թուրքիա)–21.5.1978, Երևան], խմբագիր, թարգմանիչ: Աշոտ ***Մարտիկյանի*** եղբայրը: Փիլ. գիտ. թեկնածու (1948): Ավարտել է Երևանի պետ. երկամյա ուսուցչ. ինստ-ը (1939), ԵՊՀ (1941): 1930–31-ին Աթենքում հիմնադրել և խմբագրել է ***«Ժողովուրդի ձայն»*** հունահայ առաջին կոմ. թերթը (Գրիգոր ***Նազիկյանի*** հետ): 1931-ին հայրենադարձել է: 1931–37 և 1940–42-ին աշխատել է «Սովետական Հայաստան» օրաթերթի, 1946–1950-ին՝ «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրություններում, 1937–39-ին՝ Հայպետհրատում, 1942–46-ին եղել է ռազմաճակատային հայկ. թերթերի թղթակից, 1948–78-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում:

Լույս են տեսել Մ-ի «Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյան» (1946) գիրքը, «Ինչպես է մարդը ճանաչում աշխարհը» (համահեղ., 1958), «Առաջավոր նորի անհաղթահարելիությունը» (1959) աշխատությունները: Թարգմանել է Կ. Ուշինսկու «Մանկավարժական ընտիր երկեր» (1949) ժող-ը:

ԽՍՀՄ «Կարմիր աստղ» շքանշան (1965):

ՄԱՐՏԻՐՈՍ ԴԻ ԱՌԱՔԵԼ, XVIII դ-ի 1-ին կեսի վաճառական, ժամանակագիր, ճանապարհորդ: Եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում, Իտալիայում: Կազմել է համառոտ ժամանակագրություն, որի առաջին՝ «Կարգ եւ թիւ թագաւորաց Պարսից» գլխում անդրադարձել է Պարսկաստանում և Այսրկովկասում տեղի ունեցած պատմ. իրադարձություններին, աղվանների ապստամբություններին, Պետրոս Մեծի Կասպիական արշավանքին (1722), Հնդկաստանում մողոլ. հարստության գահակալության համար պայքարին (1719–20): Մ. դի Ա-ի «Ժամանակագրությունը» լույս է տեսել «Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ.» (հ. 2, 1956, կազմ.՝ Վ. Հակոբյան) ժող-ում:

Գրկ. **Աբրահամյան Ա.**, *Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, «ԲՄ», № 1, 1941:*

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ, XV դ-ի ճանապարհորդ: 1489–96-ին ուղևորություն է կատարել Արմ. Եվրոպայում: Եղել է հարյուրավոր քաղաքներում ու գյուղերում, որոնց մասին համառոտակի շարադրել է իր ուղեգրության մեջ (Մատենադարան, ձեռ. № 3488): Մ. Ե-ու «Ուղեգրություններ» երկը լույս է տեսել 2001-ին՝ «Հայ ուխտագնացները Արևմտյան Եվրոպայում» (կազմ.՝ Ա. Մադոյան) ժող-ում:

Գրկ. **Հակոբյան Վ.**, *Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1957, № 6:* **Saint-Martin M.**, *Relation d'un voyage..., «Journal Asiatigue», P., 1826 (decembre).*

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԱՍԱՐՑԻ, XVI դ–ի տաղերգու: Բանաստեղծությունների հնագույն օրինակները պահվում են Մատենադարանում (ձեռ. № 33): Գրել է սիրային, կենցաղային ծիս. տաղեր («Տաղ ուրախութեան», «Տաղ հարսանեաց եւ ուրախութեան. ընտիր եւ գեղեցիկ», «Տաղ կնքտուքի եւ տղարուքի. կնքահօր եւ սանի»): «Տաղ ի վերայ Կաֆայ քաղաքին. ասացեալ վասն ուրախութեան» բանաստեղծության մեջ Կաֆան ներկայացված է որպես հայոց հոգևոր կենտրոններից մեկը: Մ. Խ. առաջինն է երգել խնջույքը, ուրախությունն ու վայելքը՝ դառնալով այս մոտիվի սկզբնավորողը հայ գրակ–յան մեջ:

Մ. Խ–ու տաղերից տպագրվել են Կ. Կոստանյանցի հրատարակած «Նոր ժողովածու: Միջնադարեան հայոց տաղեր եւ ոտանաւորներ» (պր. 2, 1892, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ., էջ 47–52, պր. 4, 1903, Վաղ–պատ, էջ 17–26) ժող–ում:

Գրկ. **Սահակյան Հ.**, *Մարտիրոս Խարասարցու տաղերը, «ԲՄ», № 10, 1971:* **Նույնի**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975:*

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՐԲԵՐԴՑԻ, XVI դ–ի տաղասաց: Մ. Խ–ուց մեզ հասած միակ տաղը՝ «Երգ ի Խարբերդցի Մարտիրոս Երիցուէ ասացեալ ի վերայ չախուի, վասն ուրախութեան մարդկան» (սկզբնատողը՝ «Սիրտս ի փորս դողայր ահուս...»), պահպանվել է Մատենադարանի № 33, 2676, 8968 ձեռագրերում (ԺՋ դ.) և հաջորդ դարերի ընդօրինակություններում: Տաղը հայ երգիծ. քնարերգության առաջին արտահայտություններից է: Տպագրվել է Ղ. Ալիշանի «Հայոց երգք ռամկականք» (1852, Վնտ., Սբ Ղազարի տպ., էջ 75–88), Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածու...» (պր. 2, 1892, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) ժող–ներում: Բազմիցս վերահրատարակվել է, Ղ. Ալիշանը հրատարակել է նաև անգլ.:

Գրկ. **Սահակյան Հ.**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975:*

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԻԶԱՆՑԻ, XVI դ–ի վերջի և XVII դ–ի սկզբի մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ձեռագրեր է պատկերազարդել որդու՝ Գրիգորիսի հետ (1598, ձեռ. № 5576, 1604, ձեռ. № 6093, XVII դ., ձեռ. № 8934, երեքն էլ՝ Ավետարան, Հովհան Ոսկեբերանի «Մեկնությունը», 1600, ձեռ. № 1378, Հայսմավուրք, 1604, ձեռ. № 10676, բոլորը՝ Մատենադարան): Մ. Խ–ու արվ–ում Վասպուրականի մանրանկարչության դաս. շրջանին (XIII–XV դդ.) բնորոշ պայմանական–խորհրդանշ. բնույթը փոխարկվել է թեմատիկ–պատմողականի:




Մարտիրոս Խիզանցի. *«Վերջին դատաստան», մանրանկար, 1604–ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 6093)*

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ, Մարտիրոս Կաֆացի [մոտ 1620, ք. Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա՝ Ղրիմում)–25.8.1683, Եգիպտոս], մատենագիր, տաղասաց, Կ. Պոլսի (1659–60) և Երուսաղեմի (1677–80, 1681–83) հայոց պատրիարք: Սովորել է Կաֆայի Սբ Նշան և Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքերում: 1661–64–ին եղել է Ղրիմի հայոց թեմակալ:

Մ. Ղ. գրել է «Կարգ եւ թիւ թագաւորաց Հայոց» (1672) չափածո ժամանակագրությունը, «Պատմութիւն Ղրիմայ յերկրին» (1672), «Ողբ Երեմիայ մարգարէին...» (XVII դ–ի 70–ական թթ.) երկերը: 1672–ին չափածոյի է վերածել Հայսմավուրքը, գրել պատմ. չափածո երկեր, գանձեր, ներբողներ, տաղեր ևն: Մ. Ղ. զարթոնքի շրջանի առաջին տաղերգուներից է, որը սոցիալ. շեշտադրում է հաղորդել զավեշտին:

Գրկ. **Պոտուրեան Մ.**, *Մարտիրոս Ղրիմեցի եւ իր քերթուածները, Բոխարեստ, 1924:* **Մարտիրոսյան Ա.**, *Մարտիրոս Ղրիմեցի, Ե., 1958:*



Արտաշես Մարտիրոսյանի **«Մարտիրոս Ղրիմեցի»** *(1958, Ե., ԳԱ հրտ.) գրքի տիտղոսաթերթը*

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Արմեն Աքիլեսի (ծ. 4.9.1971, ք. Դիլիջան), հրատարակիչ: Ավարտել է ԵՊՀ կիրառ. մաթ–ի ֆակ–ը (1993): 1988–92–ին «Առագաստ ԲԵՆ»–ում կազմել է էլեկտրոնային գրքեր: 1996–ից՝ ***«Մշտարեա մեդիա հոլդինգ»*** հրատարակչ. համալիրի հիմնադիր–տնօրեն: 2005–ից՝ Կիևի “Red Apple” միջազգ., Մոսկվայի գովազդի միջազգ. փառատոների ներկայացուցիչն է ՀՀ–ում:



Արտաշես Մարտիրոսյանի *«Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ» (գիրք 1, 1969, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Համբիկ Մարտիրոսյան



«Գիլգամեշ» (թարգմ.՝ Նշան Մարտիրոսյանի, 1963, Ե., ԳԱ հրտ.) գրքի տիտղոսաթերթը

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Արտաշես Ազատի (9.7.1930, Լենինական–28.12.1998, Երևան), բանասեր, պատմաբան, մատենագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1970): Ավարտել է Լենինականի մանկավարժ. ինստ-ը (1952): 1959-ից աշխատել է Մատենադարանում: 1995-ին հիմնադրել և խմբագրել է «Աշտանակ» հայագիտ. պարբերագիրքը (լույս է տեսել 3 համար):

Լույս են տեսել Մ-ի «Մարտիրոս Ղրիմեցի» (1958), «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ» (գիրք 1, 2, 1969, 1972), «Մաշտոց» (1982) աշխատությունները, «Գարնան տերևաթափ» (1998) բանաստեղծությունների ժող-ը, «Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը» (1977), «Սասանյանները և Հայաստանի քաղաքական շրջադարձը III դարում» (1979) հոդվածները:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Համբիկ Օննիկի (ծ. 4.12.1945, Սեբաստիա), խմբագիր, մանկավարժ, գրող: Ավարտել է Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանը (1966): 1966–86-ին՝ Դամասկոսի ՀԲԸՄ Կյուլապի Կյուլպենկյան վարժարանի ուսուցիչ-տնօրեն, 1980–85-ին, միաժամանակ՝ «Փարոս» երկրորդ. վարժարանի ուսուցիչ: 1972–97-ին՝ Դամասկոսի հայոց առաջնորդարանի, 2002–10-ին՝ ՀԲԸՄ Լիբանանի մասնաճյուղի դիվանապետ, 2002-ից՝ ՀԲԸՄ ***«Խօսնակ»*** պաշտոնաթերթի խմբագրակազմի անդամ. 2007-ից՝ գլխ. խմբագիր: Աշխատակցել է «Կամար» պարբերաթերթին:

Լույս են տեսել Մ-ի «Ես եւ դուն» (1981), «Սպիտակ երգ» (2003), «Կարօտ ու մորմոք» (2010), «Երկու ափ» (2012) բանաստեղծությունների, «Արցունք եւ ժպիտ» (2008) արձակ գործերի ժող-ները, «Մա՛րդ, մարդացի՛ր, կ՛աղաչեմ» (2004) պոեմը, «Հրեշտակներու մայրաքաղաքը...» (2004) թատերգությունը ևն: Հեղինակ է դպրոց. դասագրքի:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Նաղաշ Նարինբեկի [ծ. 9.12.1966, գ. Դաշտ (ՀՀ Արմավիրի մարզ)], լրագրող, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (2002): Ավարտել է ԵՊՀ (1991): 1990–91-ին աշխատել է «Երևանի համալսարան» և «Վաղարշապատ» թերթերի, «Լրաբեր» լրատվավերլուծ. ծրագրի խմբագրություններում, 1997-ին՝ ՀՀ ՆԳ և ԱՄՆ հասարակայնության հետ կապերի ու լրատվության վարչությունում: 1997–2003-ին Հ1 հեռուստաընկերությունում վարել է հեղինակային՝ «Դատական անդրադարձ», 2007–08-ին՝ «Երևան» հեռուստաընկերությունում իր հիմնադրած «Դիտակ» հաս-քաղ. հաղորդաշարերը: 2008-ից ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակ-ի դեկանն է:

Լույս է տեսել Մ-ի «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը (1920–1930-ական թթ.)» (2001) աշխատությունը: Թարգմանել է «Հեռուստատեսային ժուռնալիստիկա» (2003, Լիանա Սայադյանի հետ) դասագիրքը:

Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2008), ԵՊՀ ոսկե մեդալ (2009, 2014):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Նշան [1894, գ. Խուռնավիլ (Խարբերդի գավառ)–1966, Պրահա], արևելագետ, թարգմանիչ: Սովորել է Պրահայի համալսարանի փիլ-յան ֆակ-ում (1920–26), մասնագիտացել է շումեր-ի, աքքադ-ի, ասոր-ի, խեթ-ի, ինչպես նաև Փոքր Ասիայի պատմության մեջ: 1927-ից՝ Պրահայի համալսարանի դասախոս:

Լույս են տեսել Մ-ի «Հայերէնի յարաբերութիւնը հեթիդերէնի հետ» («ՀԱ», 1924, № 9–10, 1926, № 7–8), «Հայ տեղանունների շուրջը» (ա. տ., ա. թ.), «Կեանք եւ գիր» (1948), «Հայոց հնագոյն օրրանը» (Վահե Հայկի «Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը» գրքում, 1959, էջ 87–166) աշխատությունները: Գերմ. և չեխ. է թարգմանել հայ գրակ-յան նմուշներ, հայ.՝ «Գիլգամեշ» (1963) դյուցազնավեպը:

«ՄԱՐՏԿՈՑ», քաղ., հաս., գրական շաբաթաթերթ, ապա՝ օրաթերթ: Լույս է տեսել Փարիզում 1932–34-ին (1934-ին՝ «Ամրոց»): Արևմտահայ ազատագր. ուխտի պաշտոնաթերթ: Խմբագրակազմում էին Մկրտիչ Երիցանցը, Մեսրոպ ***Գույումճյանը***, Լևոն Մոզյանը, Վազգեն ***Շուշանյանը***, Աբո Աբոյանը, որոնք հեռացել էին ՀՅԴ-ից: Խմբագրության շուրջ հավաքված «բողոքական» դաշնակցականները քննադատել են ՀՅԴ բյուրոյի քաղաքականությունը՝ մեղադրելով

նրան արևմտահայերի պատմ. իրավունքներից ու հողային պահանջներից հրաժարվելու, հակառուս. և հակախորհրդ. պահվածքի համար: Լուսաբանել է Ֆրանսիայի և այլ երկրների հայ գաղթավայրերի կյանքը, անդրադարձել Խորհրդ. Հայաստանի տնտ., մշակութ. ձեռքբերումներին:

ՄԱՐՈՒԽՅԱՆ Լեմվել Մարտիրոսի (19.1.1904, Վան–10.2.1968, Երևան), թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ պատմագր. ֆակ-ը (1925):

Ֆրանս-ից թարգմանել է Օ. դը Բալզակի «Խորտակված պատրանքներ» (1948), «Տասներեքի պատմությունը», «Լքված կինը», «Երեսնամյա կինը» (երեքն էլ՝ 1956), «Կուրտիզանուհիների պերճանքն ու թշվառությունը» (1959) և այլ գործեր (տպագրվել են Օ. դը Բալզակի «Երկերի ժողովածուի» 10-հատորյակում), Ռ. Ռոլանի «Ժան Քրիստոֆ» (Հ. Լևոնյանի հետ, 1966–71, հ. 1–5) վեպը:

ՄԱՔՍՈՒԴՅԱՆ Մեսրոպ (1876–1918), բանասեր, թարգմանիչ, լեզվաբան: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Սորբոնի համալսարանում, աշակերտել Անտուան *Մեյեին:* 1902-ին ձեռնադրվել է վարդապետ: Դասավանդել է Գևորգյան ճեմարանում:

Լույս են տեսել Մ-ի «Ակնա բարբառը» (ֆրանս., 1912), «Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց (Աղթամարայ)» (1916, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) աշխատությունները, «Յոյզեր» (1915, Բաքու, Ն. Երևանցյանի տպ.) իր երկերի ու թարգմանությունների ժող-ը, գերմ-ից թարգմանել է «Օտար փունջեր. Ա հիւսք» (1904, Թավրիզ, Հայոց առաջնորդ. տպ.), «Մայրական սէր» (1905, նույն տպ.), պարսկ-ից՝ «Օտար փունջեր. Բ հիւսք» (թարգմ.՝ Հաֆեզից, 1905, նույն տպ.), ֆրանս-ից՝ Կալիդասայի «Շակունտալա» (1914, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) պոեմը ևն:


«ՄԵԴԻՑԻՆՍԿԻ ՎԵՍՏՆԻԿ ԷՐԵԲՈՒՆԻ» (“Медицинский вестник Эребуни”-«Էրեբունի բժշկական լրատու»), գիտարժշկ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 2000-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Հարություն Քուշկյան: Տպագրում է բժշկագիտ-յան տարբեր ճյուղերի վերաբերող հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով):



«Մեդիցինսկի վեստնիկ Էրեբունի», *2000-ից, Երևան (№ 1, 2005)*

ՄԵԺԵԼԱՅՏԻՍ Էդուարդաս Բենիամինի [1919, գ. Կարեյվիշկյայ (Լիտվա)–1997, Վիլնյուս], լիտվացի բանաստեղծ: Լիտվայի ժող. բանաստեղծ (1974): 1959–70-ին՝ Լիտվայի ԳՄ վարչության նախագահ: ՀՀ մշակույթի վաստ. գործիչ (1976):

Մ. լիտվ. է թարգմանել Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի ստեղծագործություններից, հանդես եկել հայ ժողովրդին, հայոց մշակույթին ու գրակ-յանը՝ Գրիգոր Նարեկացուն, Հ. Թումանյանին, Ա. Իսահակյանին, Պ. Սևակին, Մ. Սարյանին նվիրված հոդվածներով: Եղել է Հայաստանում, գրել է «Հայաստան» բանաստեղծությունների շարքը: Լույս են տեսել Մ-ի « Քարե գինի» (1980), «Իմ կրկնակի Արարատը» (1984, 2013), «Ճակատագրի թաս» (1998), «Մարդը» (2013) բանաստեղծությունների, պոեմների, հոդվածների, ակնարկների ժող-ները:




Էդուարդաս Մեժելայտիսի *«Իմ կրկնակի Արարատը» (2013, Ե., «Գասպրինտ») գրքի կազմը*

ՄԵԼԻՔ Ռուբեն (Մելիք-Մինասյանց Ռուբեն Լևոնի, 14.11.1921, Փարիզ–21.5.2007, Փարիզ), բանաստեղծ: Ստեղծագործել է ֆրանս.: Սովորել է Սորբոնի համալսարանում (1939–42): Եղել է *«Նոտրը վուա»* պարբ-ի խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Աշխարհի համերաշխություն» (1946), «Հորիզոն անցնողները» (1948, Ապոլիների մրց.), «Մադամ Լորելեյ» (1949), «Մեր երջանկության օպերան» (1950), «Քրիստափոր Կոլումբոս» (1952), «Լինչ» (1954), «Ուր արյուն է հոսել» (1955), «Ապրելու ժամանակը» (1957), «Միացյալ երգը» (հ. 1, 2, 1960, 1967, Ֆրանսիայի ակադ-ի Մեծ մրց.), «Քարե հսկողը» (1961, Ֆրանսիայի ակադ-ի մրց.), «Ստորգետնյա եղանակներ» (1961), «Կամայական պոեմ» (1966), «Մարմին, ինձնով կենդանի» (1976, Ֆրանսիայի գրողների միության մրց., հայ. հրտ.՝ 1978, 2007, թարգմ.՝ Ա. Ալիքյանի), «Թափոր» (1984) բանաստեղծությունների ժող-ները: Նրա «Հայկական լեգենդ» բանաստեղծությունը, «Հնչյակներ գիշերային երկրի» սոնետների շարքը և այլ գործեր նվիրված են հայերին ու Հայաստանին: Մ. կազմել է և 1975-ին Փարիզում ֆրանս. հրատարակել «Հայ բանաստեղծություն (V դ-ից մինչև մեր օրերը)» անթոլոգիան:

ՀԳՄ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց. (1986):



Ռուբեն Մելիքի *«Մարմին, ինձնով կենդանի» (1976, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Ներսես Մելիք-Թանգյանի *«Հայոց եկեղեցական իրաւունքը» (2011, Էջմիածին) գրքի կազմը*

ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ Ստեփան Տիգրանի (15.4.1924, Նախիջևան–26.3.1998, Երևան), պատմաբան, բառարանագիր: Պատմ. գիտ. դ-ր (1965), պրոֆ. (1969): Ավարտել է ԵՊՀ (1945): 1949-ից դասավանդել է ԵՊՀ-ում:

Լույս են տեսել Մ-Բ-ի «Պավլիկյան շարժումը Հայաստանում» (1953), «Հայաստանը VII–IX դարերում» (1968) աշխատությունները, կազմել է «Հայոց պատմության աղբյուրագիտություն» (1979) բուհ. ձեռնարկը, համահեղինակ է «Հայ ժողովրդի պատմություն» բուհ. դասագրքերի (1963, 1975), ***«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի»*** (հ. 1–5, 1986–2001):

ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ Ներսես (Նիկողայոս) [16(28).3.1866, գ. Բռնակոթ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–26.9.1948, Թավրիզ], եկեղեց. գործիչ, բանասեր, արքեպիսկոպոս: 1886-ին ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1900-ին՝ Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբ. ֆակ-ը: 1907-ին հակացար. գործունեության համար աքսորվել է Ղրիմ: 1912–48-ին՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ:

Լույս են տեսել Մ-Թ-ի «Աշխարհաբարի քերականութիւնը» (1893, Շուշի, Եղիսաբեթ Մահտեսի-Հակոբյանի տպ.), ««Աշակ» եւ «Նոր դար» կուսակցութիւնները եւ մի քանի խնդիրներ» (1894, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.), «Հայոց եկեղեցական իրաւունքը» (գիրք 1, 1903, Շուշի, Ե. Մահտեսի-Հակոբյանի տպ., գիրք 2, 1905, Շուշի, Բ. Տեր-Սահակյանի տպ., վերահրտ.՝ 2005, 2007, 2011), «Շուշուց դէպի Հին-Նախիջեւան» (2008) աշխատությունները:

Գրկ. **Մելիք-Թանգյան Ս., Առաքելյան Հ.,** ***Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի փոթորկալից կյանքը, Ե., 2006:***



Արշավիր Մելիքյան

ՄԵԼԻՔՅԱՆ Արշավիր Միքայելի [28.1.1879, գ. Փաշալու (այժմ՝ գ. Զառիթափ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում)–1937, Թբիլիսի, անհատի պաշտամունքի զոհ], հեղափոխական, հրապարակախոս, խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Խարկովի համալսարանում (1901), ավարտել Յուրիևի համալսարանի փիլ-յան և Նյուշատելի (Շվեյցարիա) ակադ-ի գրակ-յան ֆակ-ները: 1913-ին Երևանում հիմնադրել է «Խօսք» շաբաթաթերթը. 17-րդ համարի հրատ-ից հետո բանտարկվել է՝ մեղադրվելով թերթի հակակառավար. ուղղվածության համար: 1918–19-ին Մ-ին հաջողվել է վերահրատարակել թերթը՝ արդեն որպես ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության պաշտոնաթերթ: 1919-ին ընտրվել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի անդամ: 1924–32-ին դասավանդել է Թիֆլիսի կոմ. համալսարանում (1932-ից՝ պրոֆ.):

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1982:
Գրկ. **Աղայան Ծ.,** ***Արշավիր Մելիքյան, Ե., 1969:***



Հովիկ Մելիքյան

ՄԵԼԻՔՅԱՆ Դերենիկ Կարոյի [ծ. 4.6.1959, ք. Բանդար Մահշահր (Իրան)], լրագրող, խմբագիր: Ավարտել է Սպահանի պետ. համալսարանը (1990), ԵՊՀ (2006): 1985–91-ին դասավանդել է Նոր Ջուղայի «Կատարինյան» հայկ. դպրոցում: 1992-ից աշխատում է Թեհրանի ***«Ալիք»*** օրաթերթի խմբագրությունում. 2004-ից՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Զայն մը ինչեց... Պոլսէն... Դինքի հետ եւ առանց Դինքի» (2007), «20-րդ դարասկզբի իրանահայ մամուլը» (2010) գրքերը:

ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալ (2011):

ՄԵԼԻՔՅԱՆ Հովիկ Սամիկոնի [30.6.1902, գ. Խաչակապ (այժմ՝ գ. Ղուշչի՝ Ադրբեջանի Խանլարի շրջանում)–8.2.1953, Երևան], գրող, գրականագետ, խմբագիր: Պրոֆ. (1937): 1937–39-ին՝ ***«Գրական թերթի»***, 1944–46-ին՝ ***«Սովետական գրականություն»*** ամսագրի խմբագիր: 1938–41-ին՝ ԱրմՖԱՆ-ի գրակ-յան և լեզվի ինստ-ի տնօրեն:

Լույս են տեսել Մ-ի «Ձղջում» (1928), «Պատմվածքներ» (1930), «Ճակատում» (1931), «Աղջիկը մորու փունջը ձեռքին» (1936) պատմվածքների ժող-ները նև:

ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ Լևոն (Լեոն) Մելիքսեթի (26.9.1890, Թիֆլիս–3.9.1963, Թբիլիսի), պատմաբան, մատենագետ, բանասեր: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1945): Ավարտել է Թիֆլիսի ռեալ. ուսումնարանը (1908), Օդեսայի համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1913): 1913-ից աշխատակցել է Ն. Մառի խմբագրած «Քրիստոնյա Արևելք» (ռուս.) հանդեսին: 1922-ից՝ Թիֆլիսի համալսարանի հայկ. բանասիրության ամբիոնի դոցենտ, ապա՝ ցկյանս վարիչ:

Լույս են տեսել Մ–Բ–ի «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը» (վրաց., 1928), որտեղ քննել է XI–XIII դդ–ի հայ–վրաց. պատմամշակութ. ու մատենագր. հարաբերությունները, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» (հ. Ա–Գ, 1934–55, հ. Ա, 2013), «Մեզգալիթյան մշակույթը Վրաստանում» (վրաց., 1938), «Հայ գրողները և Վրաստանը: Նյութեր և ակնարկներ» (1961) աշխատությունները, «Հայոց հին գրականության պատմություն» (վրաց., 1941) ձեռնարկը: Ուշագրավ են Գրիգոր Լուսավորչի «Վարքի», Վախթանգ VI–ի օրենքների «Հայկական իրավունք» (Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը») մասի, Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի ընդարձակ հատվածի վրաց. թարգմանությունների հետազոտությունն ու հրատարակումը: Թարգմանություններ է արել հայ–ից վրաց. և հակառակը:

Երկ. Պատմա–բանասիրական պրպտումներ, Էջմիածին, 2010:

Գրկ. **Մուրադյան Պ.**, *Լևոն Մելիքսեթ–Բեկ, «ՊԲՀ», 1990, № 3: Полная библиография печатных работ по арменоведению, грузиноведению, кавказоведению Л. Меликсет–Бека за 1909–1960 гг., Тб., 1960.*

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Փիրուզա Պետրոսի (ծ. 26.2.1955, Երևան), լրագրող, խմբագիր: Սովորել է ԵՊՀ–ում (1974–77), ավարտել Լենինգրադի Ա. Ժդանովի անվ. պետ. համալսարանը (1980): 1981–99–ին աշխատել է «Երեկոյան Երևան» օրաթերթում. 1996–97–ին հրատարակել է թերթի «Աստղիկ» (կանանց համար), «Սուրբ Ավետիս» (հոգևոր քարոզչ.) ներդիրները, 1998–ին՝ «Մեղու» երգիծ. հանդեսը, 2000–08–ին աշխատել է *«Իրավունք»* թերթի խմբագրությունում. 2007–08–ին՝ խմբագիր (թերթի 2001–ի համարներում շարունակաբար տպագրվել է Մ–ի «Ինչո՞ւ է լռում կայարանամերձ հրապարակի հուշաքարը» հոդվածաշարը): 2001–07–ին լույս է ընծայել «Իրավունք»–ի «Զարուհի» հավելվածը (կանանց համար): 2008–ից՝ *«Իրատես դև ֆակտո»* թերթի հիմնադիր–խմբագիր: 2012–ից տնօրինում է www.irates.am լրատվ. կայքը:

ՄԵԼԻՔ–ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կարապետ Աղաբեկի [4.3.1893, գ. Կալեր (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–22.2.1970, Երևան], բանասեր, հայագետ–արևելագետ, թարգմանիչ: Պրոֆ. (1935), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1965): Գիտ. վաստ. գործիչ (1962): Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1913–14), Բեռլինի համալսարանում (1915–17): 1922–25 և 1935–37–ին՝ ԵՊՀ դասախոս, 1930–37–ին, միաժամանակ՝ Հայաստանի գիտ–ների, ապա՝ Նյութ. մշակույթի պատմության և Պատմության ու գրակ–յան ինստ–ների գիտ. քարտուղար, հայ հին գրակ–յան ու բանահյուսության բաժինների վարիչ:

Լույս են տեսել Մ–Օ–ի «Միթրա–Միհիրը «Սասնա ծռերի» մեջ» (1946), «Տիրան–Տրդատի վեպը, ըստ Փավստոս Բուզանդի» (1947), «Ագաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական՝ բանավոր սկզբնաղբյուրները» (1968) աշխատությունները, «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (1957), «Կիրակոս Գանձակեցի. «Պատմություն Հայոց»» (1961), «Կորյունը և նրա «Վարք Մաշտոցին»» (ռուս., 1962), «Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի» (1966) մենագրությունները: Սանուկ *Արեղյանի* հետ ձեռնարկել և իրականացրել է «Սասնա ծռերի» (հ. 1–2, 1936) գիտ. հրատ–ը: Գրի է առել «Սասնա ծռերի» 8 նոր պատումներ և թարգմանել ռուս. (հրտ.՝ 2008, խմբագր., կազմ. և առաջաբ.՝ Մ–Օ–ի):

Արևելագիտ–հայագիտ. արժեք ունի նրա «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» և հայ մատենագրության մեջ» («Ֆիրդուսի», ժող., 1934) ուսումնասիրությունը:

1937–ին անհիմն բռնադատվել է, 1942–ին արդարացվել:

Գրկ. **Ղանալանյան Ա.**, *Կարապետ Աղաբեկի Մելիք–Օհանջանյան, Ե., 1978 (Նյութեր Հայկական ՍՍՀ գիտնականների կենսագրության, № 23):*

ՄԵԼԻՔ–ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Ռաֆայել Գեղամի (ծ. 1.8.1939, Երևան), քիմիկոս, խմբագիր: Քիմ. գիտ. դ–ր (1991): Ավարտել է ԵՊՀ (1966): Բնության և հասարակության մասին գիտ–ների միջազգ. և Ռուսաստանի բնական գիտ–ների ակադ–ների հայաստանյան մասնաճյուղերի հիմնադիր–նախագահ: 2001–ից՝ *«Գիտության գլորուս»* ամսագրի հիմնադիր–խմբագիր: Աշխատակցում է ՌԴ–ում հրատարակվող «Այլընտրանքային բժշկություն» ամսագրին:




Լևոն Մելիքսեթ–Բեկ



Լ. Մելիքսեթ–Բեկի
«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» (հ. Գ, 1955, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը



Կարապետ Մելիք–Օհանջանյան



Ֆելիքս Մելոյան

«Տարվա մարդ» (1997, Քեմբրիջի կենսագր. կենտրոն, 2011, Ամերիկայի կենսագր. ինստ.)։ Իսպանիայի թագավոր. ակադ-ի անդամ, բազմաթիվ գիտ. կենտրոնների պատվ. պրոֆ.։

ՄԵԼՅԱՆ Բալաբեկ Գրիգորի [ծ. 12.12.1926, գ. Կարմիրաղբյուր (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], գրադարանագետ, մատենագետ, բանասեր։ Բանասիր. գիտ. թեկնածու (1985), պրոֆ. (1986)։ Ավարտել է Երևանի հեռակա մանկավարժ. ինստ-ի գրադարանագիտ-յան (1964) և բանասիրության (1966) բաժինները։ 1961–62-ին աշխատել է Երևանի Ա. Իսահակյանի անվ. քաղաքային, 1962–72-ին՝ Խնկո Ապոր անվ. ազգ. մանկ. գրադարաններում, 1972-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում. 1986–98-ին՝ գրադարանագիտ-յան և մատենագիտ-յան ամբիոնի վարիչ։

Լույս են տեսել Մ-ի «Մանկական գրականության մատենագիտություն» (1982), ««Կարմիր աքլոր» շաբաթաթերթի մատենագիտությունը» (1982), ««Կարմիր ծիլեր» հանդեսի մատենագիտությունը (1923–1941 թթ.)» (1983), «Գիտա-ճանաչողական մանկական գրականության մատենագիտությունը» (հ. 1, 2, 1985, 1988), «Լևոն բեկ» (1999), «Տավուշյան ավանդապատումներ» (2009), «Գիրքը Վախթանգ Անանյանի կյանքում» (2003), «Գրքագիտություն» (2012) աշխատությունները, «Հովհաննես Շիրազին։ Ձոներգեր, նմանակումներ, երգեր» (2003) բանաստեղծությունների ժող-ը, «Իմ Շիրազը» (2009) հուշագրությունը, «Մելոյոց Շամիրը» (2011), «Մեր ժամանակը» (2013) վավերագր. վիպակները, կազմել է Հ. Շիրազի, Խնկո Ապոր, Մ. Դարբինյանի, Վ. Անանյանի և ուր. կենսամատենագիտ-ները, կազմել և հրատարակել է «Շիրազյան խնկաբույր մասունքներ» (2007) բանաստեղծությունների ժող-ը։



Մելքիսեդեկ.
«Ծնունդ», մանրանկար, 1338-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 4813)

ՄԵԼՈՅԱՆ Ֆելիքս Հակոբի (ծ. 23.2.1940, Երևան), գրականագետ, խմբագիր։ Ավարտել է ՀՊՄԻ (1962)։ 1979–88-ին՝ *«Գրական թերթի»*, 2001-ից՝ *«Նորք»* գրական հանդեսի գլխ. խմբագիր, 1996–2001-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար։

Լույս է տեսել Մ-ի «Ընթացք» (2003) հոդվածների ժող-ը։ Հրատ-յան է պատրաստել Հրանտ Մաթևոսյանի գրական ժառանգության անտիպ գործերը։ Թարգմանություններ է արել ռուս-ից։

ՀԳՄ Ն. Աղբալյանի անվ. մրց. (2003)։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ, XIV դ-ի 1-ին կեսի գրիչ և մանրանկարիչ։ ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ։ Հայտնի է 1338-ին ընդօրինակած Ավետարանով (Մատենադարան, ձեռ. № 4813)։ Ձեռագրի մանրանկարները («Ծնունդ», «Տյառնընդառաջ», «Հարություն», «Չորս ավետարանիչ») հստակ են, կառուցվածքները՝ ինքնատիպ, արտահայտիչ գծանկարով և մաքուր գույների (հիմնականում՝ կապույտ, կանաչ, կարմիր) արտահայտիչ հարաբերումներով. այսպիսի գունամտածողությունը եզակի է հայ միջնադարյան արվ-ում։

Գրկ. Հակոբյան Հ., Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (ալբոմ), Ե., 1978։



Աշոտ Մելքոնյանի
«Ձավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին» (2003, Ե., «Զանգակ») գրքի կազմը

ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ Աղասու (ծ. 16.2.1961, ք. Ախալքալաք), պատմաբան։ Պատմ. գիտ. դ-ր (2002), պրոֆ. (2004), ՀՀ ԳԱԱ ակադ. (2014, թղթ. անդամ՝ 2006-ից)։ Ավարտել է ԵՊՀ (1982)։ 1986–91-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի գիտաշխատող, 1991–95-ին՝ գիտքարտուղար, 1995–2002-ին՝ փոխտնօրեն, 2002-ից՝ տնօրեն։ 2004-ից դասավանդում է ԵՊՀ-ում։ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Կանթեղ», «Բանբեր Հայաստանի արխիվների» և այլ գիտ. հանդեսների խմբագրակազմերի, Հայկական հանրագիտարանի գիտախմբագր. խորհրդի անդամ է։

Լույս են տեսել Մ-ի «Էրզրում։ Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին» (1994), «Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (ռուս., համահեղ., 1999), «Ձավախք։ Պատմության ուրվագծեր» (1999), «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար–20-րդ դարի սկիզբ)» (2005), «Արարատ։ Հայոց անմահության խորհուրդը» (2008), «Հայոց պատմություն։ Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (համահեղ., 2008) աշխատությունները։ Մ-ի աշխատասիրությամբ հրատարակվել է Ե. Գեղամյանցի «Կարապետ արքեպիսկոպոս։ Կենսագրություն» (1999) երկը, համահեղինակ է բուհ. և դպրոց. դասագրքերի («Հայոց պատմություն», 1998, 2012)։

«Հայաստան» հիմնադրամի (1994), ԹՄՄ Հայկաշեն Ուզունյան (2004) մրցներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2003), ԵՊՀ (2011), ԵՊԲՀ (2004) և ՀՊՄՀ (2011) ոսկե մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2007): Ախալքալաքի պատվ. քաղաքացի (2009):

Երկ. Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, անգլ.՝ 2007: Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժող.), Ե., 2011: Հայոց պատմության դասերն ու պարգևները (հոդվածների ժող.), Ե., 2013:

Գրկ. Աշոտ Մելքոնյան: Կենսաամատենագիտություն, Ե., 2011:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Երվանդ Կարապետի [16.4.1944, ք. Կամիշլի (Սիրիա)–24.12.1997, Նյու Յորք, թաղված է Երևանում], բանասեր, դիվանագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1994): Ավարտել է ԵՊՀ (1970): 1970–93-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, միաժամանակ, 1985–93-ին՝ *«Էջմիածին»* ամսագրի խմբագիր: 1994–97-ին՝ Լիբանանի Հանրապետությունում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, ապա՝ արտակարգ և լիազոր դեսպան:

Մ-ի աշխատասիրությամբ հրատարակվել է Դավիթ Զեյթունցու «Մեկնութիւն քերականի» (1981) երկը:

Գրկ. Մելքոնյան Երվանդ: Բանասերն ու դիվանագետը (1944–1997), կազմ.՝ Ս. Բեհբության, Ե., 2003:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Զարեհ [1923, Հալեպ–30.3.2012, ք. Ֆրիմոնտո (ԱՄՆ)], գրող, խմբագիր: Սովորել է Հալեպի Հայկազյան վարժարանում, ամերիկյան, ֆրանս. ուսումնարաններում: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը և Բեյրութի ամերիկյան համալսարանը: Դասավանդել է ՀԲԸՄ-ի Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան և Դարուհի Հակոբյան (1964–68-ին՝ տնօրեն) վարժարաններում: 1968–83-ին՝ ՀԲԸՄ-ի Միջին Արևմտյան շրջանակի տնօրեն, 1956–64-ին՝ ԹՄՄ ատենապետ, միաժամանակ, 1956–1964-ին՝ *«Շիրակ»* ամսագրի, *«Նվիրում»* պաշտոնաթերթի հիմնադիր-խմբագիր: 1968-ից ապրել է ԱՄՆ-ում:

Լույս են տեսել Մ-ի «Ես եւ մարդիկ» (1943), «Ձրիեղեղէն յետոյ» (1947), «Երջանկութիւն» (1950), «Քերթուածներ» (1962), «Ափերը մինչեւ անկարելիին» (1967), «Լեռներ վիհերուն մէջ» (1978), «Ծնծղաները ոչինչին» (1982), «Կեանքով եւ մասամբ նորին» (1995, 2012), «Բաւիղէ բաւիղ» (1998), «Սիրմոքը՝ տարբաղադրուող երգներուն» (2011) բանաստեղծությունների ժող-ները, «Սիրոյ ցանցին մէջ» (1962), «Անգոյ հետքեր» (1963), «Արտաւազդին հայրը» (1981) պիեսները: Կազմել է դասագրքեր («Գրական գիտելիքներ», 1960, 1981, «Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի», 1970):

Երկ. Լեռներ վիհերուն մէջ (ծաղկաքաղ), Ե., 1984:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Կարապետ [1849, գ. Թալաս (Կեսարիայի նահանգ)–1934], մեծահարուստ, ազգ. բարերար: Եղբոր՝ Գրիգորի հետ Եգիպտոսում հիմնադրել է ծխախոտի գործարան, կուտակել մոտ 6 մլն անգլ. ոսկի, որը 1925-ին ՀԲԸՄ-ի միջոցով կտակել է հայ ժողովրդին: Այդ նվիրատվությամբ Նիկոզիայում գործել է Մելգոնյան կրթ. հաստատությունը (պաշտոն. բացումը 1926-ին. գործել է մինչև 2007-ը): Գումարի մի մասն էլ տրամադրվել է հայագիտ. հրատ-ների համար: 1920-ական թթ-ի կեսերին Երևանում հիմնադրվել է «Մելքոնյան ֆոնդ» հրատարակչությունը (գործել է մինչև 1930-ական թթ-ի կեսերը). տպագրվել են Հ. Աճառյանի, Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի և ուր. գործեր:

ՄԵԼՔՈՆՅԱՆ Հովհաննես Ռուբենի [27.2.1937, գ. Անիպեմզա (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–1.3.2010, Երևան], գրող: Ավարտել է ԵՊՀ (1960): 1988–90-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1990–2010-ին՝ Հայ գրողների միության նախագահ:

Լույս են տեսել Մ-ի «Քարավան» (1971), «Հեռավոր հողի ձայնը» (1973), «Հարցաքննություն» (1977), «Մոր ձայնը» (1980), «Հիշողության դաշտ» (1987), «Պատերազմի ծուխը» (1988), «Քարոզարան» (1990) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Մերժված օրենսդիրը» (2006) վեպ-էսսեն, «Սատանայի աստպատակությունները» (2004) պարականոն գիրքը: Գրել է նաև պիեսներ՝ «Հայր Տոնապետի մենախոսությունը» (համահեղ.՝ Գ. Չալիկյան), «Հրաժարական»: Մ-ի սցենարով նկարահանվել է «Խոնարհվիր վաղվա օրվան» կինոնկարը:

Երկ. Ոճիրի բուրգեր (փաստագեղ. երկ), հ. 1, Ե., 2001:

Գրկ. Բառակերտ հուշարձան Հովհաննես Մելքոնյանին, Ե., 2012:



Զարեհ Մելքոնյանի *«Ափերը մինչեւ անկարելիին» (1967, Բեյրութ) գրքի կազմը*




Հովհաննես Մելքոնյան




Հ. Մելքոնյանի *«Ոճիրի բուրգեր» (հ. 1, 2001, Ե. , ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*

Մեծ Բրիտանիայի հայկական տպագրություն


MOSIS CHORENENSIS
HISTORIÆ ARMENIACÆ
LIBRI III.
EPITOME GEOGRAPHIÆ.
PRÆFATIO
APPENDIX
LONDINI.

Մովսես Խորենացու «Պատմութիւն եւ աշխարհագրութիւն» (հայ. և լատ., 1736, Լոնդոն, Կարոլի Ակքերսի տպ.) տիտղոսաթերթը


ՍԱՂՄՈՍԱՑ
ԴԱՒԹ
ԼՈՆԴՐԻ
1873.

«Գիրք Սաղմոսաց Դաւթի» (1873, Լոնդոն, Կ. Մ. Ուադսի տպ.) ժողովածուի տիտղոսաթերթը


ՄԻՍԱՔ
ՄԵԾԱՐԵՆՑ
Ընտրանի

Միսաք Մեծարենցի *«Ընտրանի»-ի (2012, Ե., «Գրաբեր») կազմը*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Մեծ Բրիտանիայում հայ. գրքեր տպագրվել են դեռևս XVIII դ–ի 1–ին կեսից Լոնդոնում, Մանչեստրում, Օքսֆորդում:

Լոնդոնում առաջին գիրքը՝ ***Մովսես Խորենացու*** «Պատմութիւն եւ աշխարհագրութիւն»–ը (հայ. և լատ.), տպագրվել է 1736–ին Կարոլի Ակքերսի տպարանում (տպագր.՝ Վիստոն եղբայրների): 1780–ին Գրիգոր Խալդարյանը Ջոն Ռիվինգտոնի տպարանում լույս է ընծայել ***«Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց»*** և Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը (մեկ գրքով): 1858–ին Կ. Մ. Ուադսի տպարանում տպագրվել է «Նոր կտակարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (վերահրտ.՝ 1859), 1868–ին՝ «Գիրք Սաղմոսաց Դաւթի»–ն (վերահրտ.՝ 5 անգամ՝ 1871–92): Կյուլբերտի և Ռիվինգտոնի տպարանում տպագրվել է միայն «Նոր կտակարան» (6 անգամ, 1871–95), «Հայկական Ազատ» տպարանում՝ 4 անուն (1891–95), «Հնչակի» տպարանում՝ 2 անուն (1895, 1896) գիրք:

Մանչեստրում 1864–ին Կարապետ Շահնազարյանը տպագրել է Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնը», լույս է ընծայել նաև Մեծ Բրիտանիայում առաջին պարբ–ը՝ ***«Երկրագունդը»***: 1889–ին Թորոս Զուղայեցին տպագրել է «Թուղթ հովուական»–ը, 1900–01–ին լույս է ընծայել «Եկեղեցի Հայաստանեայց» աստվածաբան. հանդեսը:

Օքսֆորդում՝ «Կալդերոն Պրես» տպարանում, 1892 և 1898–ին տպագրվել են Ֆ. Կոնիբերի գրքերից 2–ը:

Մեծ Բրիտանիայի անդրանիկ պարբ–ներից են ***«Հայապարան»*** (հայ., ֆրանս., 1888–92) հանդեսը, ***«Լ'Արմենի»*** (1889–98, 1898–1906–ին՝ Փարիզում), ՍԴՀԿ–ի ***«Հնչակ»*** (1894–1904, 1887–ից՝ Ժնև, Աթենք, Փարիզ) պաշտոնաթերթը, երգիծ–քաղ. «Ապտակ» (1895–97, 1894–ին՝ Աթենք), Վերակազմյալ հնչակյան կուս–յան «Մարտ» (1897–1901, խմբագիր՝ Արփիար ***Արփիարյան***) ամսաթերթը, «Պատանի» (1902–07) պատկերազարդ հանդեսը (բոլորը՝ Լոնդոն), ***«Վաղուան ձայնը»*** (1898, Մանչեստր) ևն: Լոնդոնում լույս են տեսել նաև հաս., գրական «Արեգակ» (1964–68) ամսաթերթը, Լոնդոնի հայ երիտասարդ. միության «Սարտարապատ» (1971–73, հայ., անգլ.) ամսագիրը, «Արեգակի» շարունակությունը համարվող «Լոնդոն» (1974–76) ամսաթերթը, ազգ., հաս., մշակութ. «Էրեբունի» (1979–94) երկշաբաթաթերթը ևն, Մանչեստրում՝ «Սևան» պարբերաթերթը (1959–60): Ցայսօր հրատարակվել է շուրջ 20 անուն պարբ.:

Ներկայում լույս է տեսնում հաս., քաղ. ***«Նոր ազդունդի ձայն»*** (1998–ից, Լոնդոն) ամսաթերթը:

ՄԵԾԱՐԵՆՑ (Մեծատուրյան) Միսաք Կարապետի [հունվ., 1886, գ. Բինկյան (Սեբաստիայի նահանգի Տևրիկի գավառի Ակնի շրջան)–22.6(5.7).1908, Կ. Պոլիս], բանաստեղծ: Սովորել է Սվազի Արամյան դպրոցում (1894–96), Մարզվանի «Անատոլիա» գիշերօթիկ քոլեջում (1896–1901), Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում (1902–05): 1903–ից աշխատակցել է «Մասիս», «Հանրագիտակ», «Արեւելեան մամուլ» և այլ պարբ–ների:

1907–ին Կ. Պոլսում լույս են տեսել Մ–ի «Ծիածան» («Ծիածան» տպ.) և «Նոր տաղեր» (Վահրամ և Հրաչյա Տեր–Ներսեսյաններ տպ.) բանաստեղծությունների ժող–ները: Մ. գրել է 130 քնար. և շուրջ մեկ տասնյակ արձակ բանաստեղծություններ, պատմվածք, գրական–քննադատ. հոդվածներ («Ինքնադատութեան փորձ մը «Ծիածանին» առիթով», 1906, «Նարեկացիին հետ», 1908), որտեղ ներկայացրել է իր ստեղծագործ. սկզբունքները:

Մ. արևմտահայ պոեզիայում կատարելության է հասցրել բանաստեղծության կառուցման ձևերը:

Հրատարակվել են նաև Մ–ի «Ոսկի արիշին տակ (արձակ երկերու հաւաքածոյ)» (1934, ԿՊ) ժող–ը, «ԵԼԺ»–ն (1934, 1981), «Երկերը» (1986), «Ընտրանին» (2012):

Թարգմանել է արևմտաեվրոպացի և ռուս հեղինակների չափածո ու արձակ գործերից:

Գրկ. Ազատեան Թ., *Միսաք Մեծարենց: Կեանքը, ԿՊ, 1922:* Ղանալանյան Հ., *Միսաք Մեծարենց, Ե., 1958:* Քրբաշյան Է., *Միսաք Մեծարենց (2-րդ վերամշկ. հրտ.), Ե., 1977:* Շարուրյան Ա., *Միսաք Մեծարենց, Ե., 1983:* Ռշտունի Հ., *Միսաք Մեծարենց, Ե., 1986:* Առաքելյան Կ., *Միսաք Մեծարենցի քնարերգության լեզուն և ոճը, Ե., 2008:*

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ Գալուստ Կյուլպենկյանի անվան, հիմնադրվել է 1932-ին Անթիլիասում՝ Կիլիկիո կաթողիկոս ***Սահակ Բ Խապայանի*** և աթոռակից կաթողիկոս Բաբկեն ***Կյուլեսերյանի*** նախաձեռնությամբ: Առաջին շրջանում տպարանի աշխատանքները կատարել են դպրեվանքի սանները: 1967-ին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի հովանավորությամբ տպարանը կահավորվել է գերմ. ժամանակակից սարքավորումներով, 1986-ին արդիականացվել է «Հայ տիպ քոմֆյուգրաֆ» համակարգչային նորաբարությամբ, որն էապես բարելավել է տպարանի աշխատանքները և տպագիր արտադրանքի որակը:

Հրատարակչությունը ցայսօր լույս է ընծայել շուրջ 1200 անուն գիրք և գրքույկ՝ Մ. Օրմանյանի, Բ. Կյուլեսերյանի, Գ. Հովսեփյանի, Դ. Փոլատյանի, Գ. Սարաֆյանի, Շ. Աճեմյանի, Բ. Եղիայանի, Գ. Սարգսյանի, Վ. Դեմիրճյանի, Թ. Գուշակյանի, Ա. Քեշիշյանի և ուր. կրոնաեկեղեց., աստվածաբան. աշխատությունները, Ն. Ակինյանի «Մովսէս Դասխուրանցի եւ իր Պատմութիւն Աղուանից» (1970) երկը, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (1970, 1982) պոեմը, Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» (1982) աղոթքը, Հովհան Մանդակունու «Ճառերը» (2002), Վարդան Այգեկցու «Խրատները» (2002), Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն իմաստութիւն Սողոմոնի»-ն (2009) ևն: «Մեր հայրերը կը խօսին» մատենաշարով տպագրվել են Սարգիս Շնորհալու «Յորդորակներ»-ը (1976), Բարսեղ Մաշկևորցու «Յորդորակներ»-ը (1980), Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը (1977), Հովհաննես Երզնկացու «Խրատ բոլոր քրիստոնեաներուն»-ը (1984, բոլորի աշխարհաբարի փոխադր.՝ Ա. Դանիելյանի) ևն:

«Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան», «Գեորգ Մելիտինեցի գրական մրցանակ», «Դանիել Վարուժան գրական հիմնադրամ», «Ռիչարդ և Թինա Գարոլան հրատարակչական հիմնադրամ», «Խաչիկ Պապիկյան հրատարակչական հիմնադրամ», «Սմբատ արք. Լափաճյան հրատարակչական հիմնադրամ» մատենաշարերով տպագրում է հայագիտ. աշխատություններ, բառարաններ, հայ դաս. և ժամանակակից (արևելահայ և արևմտահայ) հեղինակների գործեր, բուհ. դասագրքեր ևն:

Ուշագրավ են ***«Մատենագիրք հայոց»*** (Երևանի Մատենադարանի հետ համատեղ) մատենաշարը (հրատարակվել են Ա–ԺԷ հատորները), Բ. Կյուլեսերյանի «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» (1939), Մ. Օրմանյանի «Ազգապատում» (հ. 1–3, 2001), Ս. Ղազարյանի «Հայոց լեզուի պատմութիւն» (2002), Հ. Օշականի «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» (հ. Ա–Ժ), Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականութեան պատմութիւն» (գիրք 1–2, 2004), Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան» (2004), Բ. Եղիայանի «Կրօնքներու պատմութիւն» (2005), «Գրաբարի հոմանիշների բառարան» (2006) և այլ ստվարածավալ աշխատություններ:


Հրատարակչությունը լույս է ընծայում նաև մատենագիտ., երաժշտագիտ., թարգման. գրակ., օրացույցներ, հուշատետրեր, ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոն. ***«Հասկ»*** (1932-ից) կրոն., բանասիր. ամսագիրը, ***«Հասկ հայագիտական տարեգիրքը»*** (1948–50 և 1980–2003-ին), 1961–99-ին՝ ***«Դրազարկ»*** կրոն., գրականագիտ. և բանասիր. տարեգիրքը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին 2012-ից վերահրատարակում է Արմ. Հայաստանի և Կիլիկիայի քաղաքներին, գյուղերին և շրջաններին նվիրված հուշամատյաններ [«Ատանայի

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հրատարակչության *տպագրած գրքերից*



Զարուհի Գալեմքյարյանի «Կեանքիս ճամբէն» (1952, Անթիլիաս) գրքի կազմը




«Սաղմոսներ»-ի (2002, Անթիլիաս) կազմը



«Եղեռն եւ վերապրում» (2005, Անթիլիաս) գրքի կազմը



«Մեկնութիւն ժամակարգութեան» *(1759, Զմյուռնիա, Մհիտեսի Մարկոսի տպ.) գրքի տիտղոսաթերթը*



«Մեկնութիւն Յայտնութեան» *(1700–1701, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



«Մեկնութիւն ներողութեանց» *(1702) գրքի տիտղոսաթերթը*

հայոց պատմութիւն», «Պատմութիւն Տարօն աշխարհի» և «Պատմութիւն Անթէպի հայոց» (հ. 1–2)] ևն:

Գրկ. **Սանուէլեան Պ.**, *Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հայ գիրքին բերած նպաստը (1932–2012), Անթիլիաս, 2012: Լիբանանահայ գիրքը. 1894–2012: Մատենագիտական ցանկ (աշխատասիր.՝ Ա. Տագեսյանի, Ա. Յուրևեչյանի), Բ., 2013:*

Պետրոս արեղա Սանուեյան

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ», եկեղեցու ժամակարգության վերաբերյալ երկ: Տպագրվել է՝

1759–ին Զմյուռնիայում՝ Սահտեսի Մարկոսի տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Գիրք մեկնութեան.…», Բ–ին՝ «Ժամակարգութեան մատենիկս մեկնեալ համառօտաբար.…» (79, 8º, 12 x 6,5 սմ):

1795–ին Կ. Պոլսում՝ Սայր դպրատան տպարանում: Տիտղթ–ին՝ «Մեկնութիւն ժամակարգութեան...» (102 էջ, 8º, 9,5 x 6,4 սմ):

Տպագրվել է նաև 1840–ին (ԿՊ, Պողոս Արապյանի տպ.):

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ», Հովհան ավետարանչի Հայտնության մեկնությունը: Թարգմ.՝ Պետրոս վրդ. Թիֆլիսեցու: Տպագրվել է 1700–01–ին Կ. Պոլսում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք մեկնութեան Յայտնութեանն սրբոյ Յոհաննու աւետարանչի...» (208 էջ, 8º, 12,2 x 7,3 սմ):

Տպագրվել է նաև 1846–ին (Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.), 1855–ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.):

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ»: Տպագրվել է 1702–ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Մեկնութիւն ներողութեանց...» (16 էջ, 8º, 12 x 7 սմ):

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ», Իգնատիոս Սևլեռնցու՝ Ղուկասի Ավետարանի մեկնությունը: Տպագրվել է 1735–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (452 էջ, 8º, 15,7 x 11,5 սմ):

«ՄԵՀԵԱՆ», գրակ–յան և արվ–ի միամսյա հանդես: Լույս է տեսել 1914–ին Կ. Պոլսում (7 համար): Արևմտահայ իրականության մեջ 1910–ական թթ–ին ծագած հեթանոս. գրական շարժման (մեհենական հոսանք) ներկայացուցիչների հրատ.: Տնօրեն–խմբագրապետ՝ Կոստան *Զարյան*, խմբագիրներ՝ Գեղամ Բարսեղյան, Հակոբ Քյուֆեճյան (Հակոբ *Օշական*): Կարևորել է գրակ–յան դերը ժողովրդի բարոյական նկարագրի ձևավորման մեջ, նպաստել հայ ժողովրդի տարանջատված հատվածների հոգևոր միասնությանը: Անդրադարձել է Ռ. Զարդարյանի, Վ. Փափազյանի, Հ. Մնձուրու, Տ. Չրաքյանի (Ինտրա), Լ. Շանթի և ուր. ստեղծագործություններին, բարձրացրել գրական արժեքները վերագնահատելու հարցը: Աշխատակցել են Դ. Վարուժանը, Վ. Թեքեյանը, Հ. Սիրունին, Լ. Էսաճանյանը և ուր.:

ՄԵՀԵՆԱԳԻՐ, գրանշանների ենթադրվող համակարգ, որը, որոշ հայագետների կարծիքով (Ա. Գ. Աբրահամյան և ուր.), գործածվել է հեթանոս. Հայաստանում՝ որպես հայ մեհենի. գրակ–յան գիր: Հայագետների մի զգալի մասը (Հ. Աճառյան, Է. Աղայան և ուր.) չի ընդունում հայկ. ինքնուրույն գրատեսակի գոյությունը մինչմաշտոցյան շրջանում: Սակայն մեհենի. գրակ–յան գոյության փաստը, ինչպես և միջնադարյան մատենագրության մեջ հանդիպող գաղափարագրերը հավանական են դարձնում Մ–ի գործածությունը նախաքրիստ. Հայաստանում:

Գրկ. **Աբրահամյան Ա.**, *Հայոց գիր և գրչություն, Ե., 1973:* **Աղայան Է.**, *Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե., 1977:* **Աճառյան Հ.**, *Հայոց գրերը, Ե., 1984:*

ՄԵՀԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ, գործել են հեթանոս. Հայաստանի տաճարներում՝ մեհյաններում, կամ կից շինություններում: Քրիստոնեությունից առաջ Հայաստանում եղել են 2 տիպի գրադարաններ՝ թագավոր. (պահվել են արքունի դիվանի փաստաթղթերը) և տաճարային կամ մեհենի. (կրոն., պատմ. և այլ կարգի գրակ.): Հայ մատենագիրների, հատկապես Մովսես Խորենացու վկայությամբ՝ Հայաստանի

Մ. գ. մեծաքանակ գրակ. են ունեցել: Լեզվի մասին տեղեկություններ չկան: Չի բացառվում, որ հուն., պահլավ., արամեերեն գրքերի հետ եղել են նաև հայ. *մեհենագիր* նյութեր: Տես նաև *Գրաբարան*:

Գրկ. **Մովսես Խորենացի,** *Պատմություն Հայոց, Ե., 1997:*

«ՄԵՂՈՒ», բանասիր., գրականագիտ., տնտեսագիտ. և երգիծ. կիսամսյա հանդես (1859–ից՝ տասնօրյա, 1863–ից՝ շաբաթական, 1870–ից՝ եռօրյա): Լույս է տեսել 1856–65 և 1870–74-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Հարություն *Սվաճյան* (1856–62, 1870–72), Հովհաննես Հովվյան, Աբրահամ *Մուրադյան*, Արմենակ *Հայկունի* (1863–65), Հակոբ *Պարոնյան* (1872–74): Ունեցել է առաջադիմ., ժողովրդավար. ուղղվածություն: Պայքարել է հայ պահպանող. գաղափարախոսության դեմ, քննադատել է հայ մեծահարուստների անտարբերությունն ազգ. խնդիրների հանդեպ, սուլթան. կառավարության հակահայ քաղաքականությունը: Հ. Սվաճյանի օրոք «Մ.» մեծ տեղ է հատկացրել Միքայել *Նալբանդյանի* սոցիալ-տնտ. հայեցակետին, տպագրել նրա բանաստեղծությունները, ճառերը, հատվածներ՝ «Կոմս Էմմանուելի հիշատակարանից»: Ներկայացրել է Հ. Սվաճյանի, Գ. Օտյանի երգիծ. գործերն ու թատերախոսականները, արտատպել Ռ. Պատկանյանի գործերից: Բազմաթիվ հոդվածներ են նվիրվել հայոց լեզվի և գրականության հարցերին:

Հ. Պարոնյանի օրոք «Մ.» իրավամբ համարվել է երգիծաբանի գրական ժառանգության անքակտելի մասը: Այստեղ են լույս տեսել նրա աֆորիզմները («Թե որ», «Ապտակք», «Ասկե անկե» և այլ խորագրերով), քաղ. քրոնիկների շարքը, պատմվածքներն ու ակնարկները, որտեղ քննադատել է եվրոպ. դիվանագիտ-յան երկդիմի խաղերը, սուլթան. կառավարության հակաժող. քաղաքականությունը, ծաղրել հայոց կենցաղին խորթ եվրոպ. նորամուծությունները, ինչպես նաև երգիծաբանի բազմաթիվ հայատառ թուրք. գործեր («Ալաֆրանկա», «Պարահանդէս», «Պարի դաս» ևն):


«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ», քաղ., բանասիր. և առևտր. շաբաթաթերթ, եռօրյա, 1873–ից՝ օրաթերթ: Լույս է տեսել 1858–86-ին Թիֆլիսում՝ աշխարհաբար: Խմբագիրներ՝ Ստեփանոս Մանդինյան, Պետրոս *Սիմեոնյան* (1863–ից): Առաջին շրջանում ունեցել է պահպանող. ուղղվածություն, պայքարել է *«Հիսիսափայլի»* և Միքայել *Նալբանդյանի* դեմ: Երկրորդ խմբագրի օրոք թերթը դարձել է հայ ազգ-պահպանող. հոսանքի գաղափարախոսը, բանավիճել է *«Մշակի»* և նրա խմբագիր Գրիգոր *Արծրունու* հետ, քննադատել ցարիզմի քաղաքականությունն ազգ. փոքրամասնությունների նկատմամբ: Այս շրջանում տպագրել է հայ և օտարազգի ժամանակակից ու դաս. գրողների գործեր (Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Ղ. Աղայան, Գ. Սունդուկյան, Մուրացան, Վ. Հյուգո, Շ. Պետեֆի ևն): Պարբ-ին աշխատակցել են Ծերենցը, Ս. Արծրունին, Հ. Առաքելյանը, Զ. Սսերյանը, Ա. Արարատյանը, Գ. Տեր-Աղեքսանդրյանը, Ա. Երիցյանը և ուր.:



«Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու» *(1735, Կ. Պոլիս, Աստվածածփուր Կոստանդնուպոլսեցու տպ.) գրքի տիտղոսաթերթը*



«Մեհեան», *1914, Կ. Պոլիս*



«Մեղու», *1856–74, Կ. Պոլիս*



«Մեղու Հայաստանի», *1858–86, Թիֆլիս*


ՄԵՅԵ (Meillet) Անտուան [11.11.1866, Մուլեն (Ֆրանսիա)–21.9.1936, Շատոմեյան (Ֆրանսիա), թաղված է Մուլենում], ֆրանսիացի լեզվաբան, հայագետ, սլավոնագետ, հաս. գործիչ: Ֆրանսիայի (1924) և աշխարհի բազմաթիվ ակադ-ների ու գիտ. ընկերությունների անդամ, Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1906): 1885–89-ին սովորել է Սորբոնի համալսարանում: Աշակերտել է Մ. Բրեալին, Ֆ. դը Սոսյուրին, Օգյուստ *Կարիերին*, որից էլ սովորել է ժամանակակից հայ-ը: 1890–91-ին Վիեննայի Մխիթարյան միաբանությունում աշակերտել է Հակոբոս *Տաշյանին*. սովորել է գրաբար: 1891-ին այցելել է Հայաստան (երկրորդ անգամ՝ 1903-ին), Էջմիածնի մատենադարանում զբաղվել է բանասիր. աշխատանքով, ուսումնասիրել գրաբարի ինչյունաբանությունը: 1919-ին Փարիզում Ֆրեդերիկ *Մակլերի* և ուր.



Անտուան Մեյե



Ա. Մեյեի *«Հայագիտական ուսումնասիրություններ» (1978, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Գաբրիել Մենևիշյանի *«Գրիգոր Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծումը» (1912, Վնն.) գրքի կազմը*

հետ հիմնադրել է Հայագիտ. ընկերությունը, 1920-ին՝ ***«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»*** հայագիտ. տարեգիրքը:

«Հայերենի բարբառային դիրքը» (1896) առաջին հայերենագիտ. ուսումնասիրության մեջ Մ., հիմք ընդունելով հայ-ի և այլ լեզուների հնչյուն. փոփոխությունները, որոշել է հայ-ի դիրքը հնդեվրոպ. լեզուների շարքում. հայ-ը համարել է առանձին լեզվաճյուղ: «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» (1903) աշխատության մեջ քննել է հայ-ի քերակ-ն ամբողջությամբ, «Հետազոտություններ հայերենի համեմատական շարահյուսության վերաբերյալ» (2-րդ հրտ., 1968, տես «Mémoire de la Société de linguistique de Paris» ամսագրում) ուսումնասիրության մեջ քննարկել է ձևույթների շարահյուս. կիրառությունները: Մ. անդրադարձել է հայոց այբուբենին, ուղղագրությանը, տառադարձությանը, բառաբարդմանը, ստուգաբանությանը: Գրել է «Հին հայերենի տարրական դասընթաց» (գերմ., 1913) դասագիրքը:

Հայ. հրատարակվել են Մ-ի «Հայագիտական ուսումնասիրությունները» (1978), «Նամակներ Թիֆլիսից եւ Հայաստանից. 1891 թ. ապրիլի 29-ից օգոստոսի 3» (2002, ԺՆև) նամականին:

Երկ. Les dialectes indo-européens, 2 éd, P., 1922; La méthode comparative en linguistique historique, Oslo, 1925; Linguistique historique et linguistique générale, 2 éd., t. 1, 2, P., 1926, 1936; Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938; Общеславянский язык, М., 1951.

Գրկ. Աղայան Է., *Հայ լեզվաբանության պատմություն, Ե., 1958:*

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտ. աշխատություն, որն ամբողջությամբ նվիրված է որոշակի թեմայի: Մ-յան մեջ ընդհանրացվում և վերլուծվում է տվյալ հարցին վերաբերող գրակ-ը, առաջ են քաշվում գիտ-յան զարգացմանը նպաստող նոր վարկածներ ու լուծումներ: Սովորաբար հրատարակվում է առանձին գրքով: Մ. ունենում է մատենագիտ. ընդարձակ ցուցակ, ծանոթագրություններ ևն:

ՄԵՆԱՏՊՈՒԹՅՈՒՆ, **մենատիպ, մոնոտիպիա** (հուն.՝ mono-միա և tipos-դրոշմ), տպագիր գրաֆիկայի տեսակ: Տպվող պատկերը բացարձակ ողորկ տպաձևի մակերեսին նկարվում է ձեռքով ու տպագրվում միայն 1 օրինակ: Մ-ին բնորոշ են նուրբ գունային անցումները, մեղմ ու սահուն ուրվագծերը և նմանությունը ջրանկարներին: Մ. հայտնի է XVII դ-ից, կապված է իտալացի գեղանկարիչ, փորագրող Զովանի Կաստիլիոնեի (1607–1665) անվան հետ: Լայնորեն տարածվել է XIX դ-ի վերջից:

ՄԵՆԵՎԻՇՅԱՆ Գաբրիել (Բյուզանդ) Գևորգի [3.4.1864, Կ. Պոլիս–14.11.1936, Նովի Սադ (Սերբիա)], լեզվաբան, հայագետ, խմբագիր: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1882-ից): 1886–89-ին դասավանդել է Վիեննայի, 1890–92-ին՝ Զմյուռնիայի, 1892–1913-ին՝ Կ. Պոլսի Մխիթարյան միաբանության դպրոցներում, միաժամանակ, 1895–96-ին ՝ ***«Հանդէս ամսօրեայ»***-ի խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց» (1890), «Գիրք գրելու արուեստը» (1898), «Արդի լեզուագիտութիւնը» (հ. 1, 1903), «Գրիգոր Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծումը» (1912) աշխատությունները, «Պատկերազարդ բնական պատմութիւն» (հ. 1–3, 1897) դասագիրքը (բոլորը՝ Վնն., Մխիթարյան տպ., «Ազգային մատենադարան» մատենաշար):

«ՄԵՆՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ», մշակութ. եռամսյա հանդես: Լույս է տեսնում 2005-ից Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Պավել Սարգսյան: Ներկայացնում է հայկ. մշակույթն իր բազմաթիվ ճյուղերով, անդրադառնում է պատմության կարևոր անցքերին, անհայտ, գաղտնի էջերին, նշանավոր անձանց, ժամանակակից շնորհալի երիտասարդներին, հատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ պետ. և ազգ. խորհրդանիշներին, ՀՀ-ում, ԼՂՀ-ում և Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Տպագրում է նաև ռուս. և անգլ. նյութեր: 2013-ին լույս են տեսել 2 հատուկ համարներ:

ՄԵՇՏՈՒՃՅԱՆ, **Մեշտուտճյան**, Վարդան (Վիկտոր) Գևորգի (1869–1942), հրապարակախոս, գրող, պատմաբան, թարգմանիչ, խմբագիր: Սովորել, ապա դասավանդել է հոր հիմնադրած Կ. Պոլսի Մեշտուճյան վարժարանում: 1890-ական թթ-ի կեսին, խուսափելով թուրք. ոստիկանության հետապնդումից, մեկնել է Բուլղարիա: 1896–97-ին աշխատակցել է Վառնայի «Իրաւունք» թերթին, ***Երուխանի*** հետ հիմնադրել է «Շարժում» (1898–1907) թերթը: 1899-ին տեղափոխվել է Բուխարեստ. 1905-ին՝ ***«Արաքս»***, 1922–24-ին՝ ***«Նոր արշալոյս»***, 1924-ին՝ ***«Փարոս»*** պարբ-ների խմբագիր: 1906-ին հրատարակել է ***«Ստորրա»*** (ռում.) պատկերազարդ ամսագիրը, 1924–42-ին՝ ***«Արարատ»*** (ռում.) հայագիտ. հանդեսը:

Մ. ռում. հրատարակել է «Նախագծեր և ֆիլմեր» (1913) պատմվածքների ժող-ը, «Զետտա» (1916) վեպը, «Բուխարեստ–Սահարա» (1913), «Երուսաղեմ» (1914) ուղեգրությունները, «Հայոց պատմություն» (h. 1, 2, 1923, 1926) պատմաքնն. երկը: Հայ-ից ռում. է թարգմանել Հ. Ջոհրաբյանի «Հայ եկեղեցու պատմությունը քրիստոնեության մուտքից մինչև մեր օրերը» (1934), «Հայկական պատարագը» (1937) աշխատությունները, թարգմանել և կազմել է «Հայ բանաստեղծների փոքր ժողովածու» գիրքը (1934): Ֆրանս-ից ռում. է թարգմանել Վ. Հյուգոյի «Թշվառները» (1913) վեպը, Գի դը Մոպասանի նովելներից:

«ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃԵԱՆ», մատենաշար: Հրատարակում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ը՝ Նյու Յորքի Հայ կրթ., մշակութ. միության և Մեսրոպ ***Աշճյանի*** քրոջ՝ Հռիփսիմե Աշճյան-Սերոբյանի հովանավորությամբ 2004-ին հիմնադրված տպարանում: Տպագրվել են ժամանակակից հայ պատմագրության կոթողային աշխատություններ, խորհրդ. տարիներին արգելված մի շարք անտիպ երկեր, փաստաթղթերի և նյութերի ժող-ներ, գիտաժողովների նյութեր, Հայաստանի պատմ. ժողովրդագրության, Հայկ. հարցի, Հայոց ցեղասպանության, Արցախյան հիմնախնդրի, հայկ. գաղթավայրերի ու Սփյուռքի պատմությանը վերաբերող հետազոտություններ ևն (ընդհանուր առմամբ՝ ավելի քան 100 անուն գիրք), ինչպես նաև «Մեր դժուար ժամանակների մեծ հայը. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան» (2007) և «Մ. Աշճյանի կենսամատենագիտությունը» (2011) աշխատությունները: 2005-ից «Մ. ա. Ա.» մատենաշարով լույս է ընծայվում ***«Հայոց պատմության հարցեր»*** տարեգիրքը:

Հրատարակված գրքերն անվճար բաժանվում են գրադարաններին, որոշակի հիմնարկների, հեղինակներին և համապատասխան մասնագետների:

ՄԵՍՐՈՊ ԵՐԵՑ, **Վայոցձորեցի**, X դ-ի մատենագիր: Ծնվել է Վայոց ձորի գավառի Հողոցիմ գյուղում: 967-ին գրել է «Ներսէս Ա Մեծի վարքը եւ Սամիկոնեանների տոհմի պատմութիւնը» երկը, որտեղ արտացոլել է հայոց ազատագրության տեսլականի նախն. տարբերակը, հայկ. պետականության անկումից հետո Հայաստանի ազատագրումն ու վերականգնումը կապել է քրիստոնյա հոոմեացիների օգնության հետ: Մ. Ե. Ներսես Պարթևին պատկերել է որպես ինքնուրույն պետականության վերականգնման նախանձախնդիր և հայրենասեր անձի: Հետագայում, արտաքին քաղ. իրադրության փոփոխման հետ կապված, Մ. Ե-ի երկը լրացվել է ընդմիջարկություններով, որոնք արտահայտում են հայ ազատագր. տեսլականի ժամանակին համահունչ փոփոխությունները:

Մ. Ե-ի երկն առաջին անգամ տպագրվել է 1737-ին Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում: Տիտղթ-ին՝ «Պատմութիւն երջանիկ վարուց եւ մահուան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծին Ներսէսի: Եւ որ ինչ մարգարէական հոգեւոր ասաց նախքան զլինելն...» (248 էջ, 8º, 12,2 x 7,4 սմ):


Վերահրատարակվել է 1775-ին Սադրասում՝ Հակոբ Շահամիրյանի անվ. տպարանում: Տիտղթ-ին՝ «Պատմութիւն մնացորդաց հայոց եւ վրաց արարեալ յումեմնէ ի Մեսրոպայ քահանայէ ի Հողոց գեղջէ ի Վայոց ձորոյ յԱշխարհէն Սիւնեաց» (148 էջ, 4º, 15,7 x 10,8 սմ):



«Մենք մեր մասին», *2005-ից, Երևան (№ 1, 2013)*



«Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան» *մատենաշար. «Մեր դժուար ժամանակների մեծ հայը...» (2007, Ե.) գրքի կազմը*



Մեսրոպ Երեցի *«Պատմութիւն երջանիկ վարուց...» (1737, Կ. Պոլիս, Աբրահամ Թրակացու տպ.) գրքի տիտղոսաթերթը*

Տպագրվել է նաև 1853-ին՝ «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի» վերնագրով [Վնտ., Սբ Ղազարի տպ., «Սոփերք հայկականք» մատենաշար, հ. Զ (Ներսես Պարթև Ա) և հ. Է (Ներսես Պարթև Բ)]: Թարգմանվել է ֆրանս. (1869):

Մ. Ե-ից հայտնի են նաև «Բան վասն ողջունի», «Մեկնութիւնք հինգից ասածիցն» երկերը:

Գրկ. **Մադոյան Ա.**, *Ներսես Մեծի փեսիլը հայ միջնադարյան պոեզիայում, «ՊԲՀ», 1969, № 4, էջ 237–247:*

ՄԵՍՐՈՊ ԽԻԶԱՆՑԻ, XVII դ-ի մանրանկարիչ: Աշակերտել է Սարգիս Մազմանցուն և նրա որդուն՝ Գրիգորիսին: Ստեղծագործել է Նոր Ջուղայում, ծաղկել 30-ից ավելի ձեռագրեր: Առաջին Ավետարանը պատկերազարդել է 1604-ին (1975-ին աճուրդի է հանվել Լոնդոնում), 1608-ին՝ երկուսը. մեկը պատկանել է Խոջա Վելիջանին, մյուսը՝ Խոջա Նազարին: 1609-ին ծաղկած Ավետարանը պահվում է Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում, 1642-ի Ավետարանը (գրիչ՝ Վահրամ, պատվիրատու՝ Խոջա Հակոբջան, 272 թերթ)՝ Մատենադարանում (ձեռ. № 294): 1651-ին նկարազարդել է վերջին Ավետարանը:



Մեսրոպ Խիզանցի. *մանրանկար, 1609-ի Ավետարան (Օքսֆորդ, Բոդլեյան գրադարան, № Arm d. 13, f. 22)*

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, **Մաշթոց** [մոտ 362, գ. Հացեկաց (Տարոնի գավառ)–17.2.440, Վաղարշապատ, թաղված է Օշականում (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], հայոց գրերի ստեղծողը, հայ գրչության, հայագիր (հայկ.) դպրոցի հիմնադիրը և հայ-ի առաջին ուսուցիչը, լուսավորիչ, մշակույթի և հաս. գործիչ, քրիստոնեության քարոզիչ, Հայ եկեղեցու վարդապետ: ***Սահակ Ա. Պարթևի*** հետ սկզբնավորել է հայ թարգման. գրակ-ը: Ստացել է հուն. կրթություն: Տիրապետել է հուն-ին, պարսկ-ին, ասոր-ին, վրաց-ին: Մոտ 389-ին հաստատվել է Վաղարշապատում, եղել արքունի ատենադպիր, ապա անցել զինվոր. ծառայության: 394-ին դարձել է վանական: Աշակերտների ուղեկցությամբ կատարել է քարոզչ. շրջագայություններ: Գողթն գավառում, որտեղ պահպանվում էր հեթանոս. կրոնը, հիմնադրել է քրիստ. համայնքներ, Աստվածաշունչը բանավոր թարգմանությամբ ներկայացրել ժողովրդին:



Մեսրոպ Մաշտոց *(նկարիչ՝ Ս. Ներսիսյան, 1885)*

Վռամշապուհ թագավորն Ասորիքից բերել է տվել դանիելյան նշանագրերը, որոնցով Մ. Մ. մանուկներին սկսել է ուսուցանել նորաբաց դպրոցներում: Կարճ ժամանակ անց պարզվել է, որ այդ նշանագրերը ժամանակի հայ-ը լիարժեք արտահայտելու համար բավարար ու հարմար չեն:

Մ. Մ. իր աշակերտների հետ ուղևորվել է Ասորիք, եղել Ամիդում, Եդեսիայում, հայոց գրի մասին խորհրդակցել ասորի հոգևորականների հետ. ի վերջո, Եդեսիայում 405-ին ստեղծել է հայ-ի հնչյուն. համակարգը ճշգրտորեն արտահայտող, սովորեցնելու, թարգմանելու և դպրության համար լիովին հարմար նշանագրեր, դրանք դասավորել ըստ հուն. այբուբենի հերթականության, տառերին տվել անուններ (այբ, բեն, գիմ ևն), սահմանել նրանց թվային արժեքները (Ա = 1, Ժ=10, Ճ = 100, Ռ = 1000): Ապա անցել է Սամոսատ, հմուտ հունագետ Հռոփանոսի օգնությամբ կատարելագործել տառերի գծագրությունը, իր աշակերտներ ***Հովհան Եկեղեցացու*** և ***Հովսեփ Պաղնացու*** հետ Աստվածաշնչից հայ. է թարգմանել Սողոմոնի Առակների գիրքը, որն սկսվում է մեսրոպատառ գրված առաջին՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» նախադասությամբ:



Մեսրոպ Մաշտոցի *հուշարձանը Երևանի Մատենադարանի շենքի առջև (1967, քանդ.՝ Ղ. Հուբարյան)*

Նորաստեղծ գրերով վերադառնալով հայրենիք՝ Մ. Մ. իր աշակերտների հետ երկրում ծավալել է Թարգմանչաց շարժումը: Կարճ ժամանակում թարգմանվել են Աստվածաշնչի հիմն. մասը, փիլ., ժամանակագր., բնագիտ. և այլ գրքեր: Մ. Մ. շրջագայել է Հայաստանում, հավաքել աշակերտներ, ստեղծել դպրոցներ (Մեսրոպյան), տվել հայ-ի դասավանդման առաջին օրինակը, հիմնադրել է վանքեր, որոնք դարձել են ուսման, գրչության և գիտ-յան կենտրոններ: Մշակել է հայկ. դպրոցի

դասավանդման սկզբունքներ. դասավանդումն սկսել է մեսրոպյան տառերի և հայ–ի ուսուցմամբ, բոլոր հանրակրթ. առարկաները դասավանդել հայ., օտար լեզուներն ուսուցանել հայ–ի հիման վրա: Ըստ ***Կորյունի***՝ իր առաջին շրջագայությունների ժամանակ Մ. Մ. նշանագրեր է ստեղծել նաև վրաց–ի համար, բուն Աղվանքում՝ գարգարացի ցեղի լեզվի համար:

Մ. Մ. մասնակցել է հուն–ից Աստվածաշնչի ամբողջ. թարգմանությանը և խմբագրմանը (հայտնի է Սահակ–Մեսրոպյան անունով), կազմել է հուն. երկերի մի ժող., որը հետագայում թարգմանվել է հայ., գրել քարոզներ, ճառեր, ուղերձներ, շարականներ, որոնք հետո մտել են Շարակնոցի մեջ: Մ. Մ–ին են վերագրվում «Ապաշխարութեան», «Հայոց, Տէր երկնից», «Ողորմեա» շարքերը՝ շուրջ 130 բանաստեղծություն: Ստեղծել է հայ. գրավոր բանաստեղծության առաջին չափերն ու հանգերի տարրերը: Առաջին ինքնուրույն հոգևոր երգերի՝ կցուրդների ստեղծումն ավանդաբար վերագրվում է Մ. Մ–ին, Սահակ Ա Պարթևին, Մովսես Խորենացուն և Հովհաննես Ա Մանդակունուն: Ըստ շարականագետների միջնադարյան ցուցակների՝ նա է հորինել վշտագին քնար. շարականները: Մ. Մ. հայ մասնագիտ. երգարվ–ի առաջին նմուշների հեղինակներից է: Նրա շարականները տպագրվել են «Ապաշխարութեան շարականներ: Շարական հոգեւոր երգոց» (1861, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ., վերահրտ.՝ 1873 և 1875–ին՝ «Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց» վերնագրով, նույն տպ.) ժող–ի մեջ:

Հրատարակվել են նաև Մ. Մ–ի «Օրհներգերը» (գրաբար և աշխարհաբար, աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, 2010, ժող–ում ներառված են նաև Սահակ Պարթևի փառաբան. երգերից):

Մ. Մ–ի մահից հետո նրա դին իշխան Վահան Ամատունու ջանքերով տեղափոխվել ու ամփոփվել է Օշականում, 3 տարի անց գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի: 1875–79–ին այդ եկեղեցու տեղում կառուցվել է Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որի բեմի տակ՝ խորանում, Մ. Մ–ի գերեզմանն է: Հայ եկեղեցին նրան դասել է տոնելի սրբերի շարքը:

Մ. Մ–ի անունով Երևանում կոչվել են համայնք, պողոտա, համալսարան, ՀՀ և Սփյուռքի պետ. ու հաս. հիմնարկներ, դպրոցներ, փողոցներ ևն: 1962–ից նրա անունն է կրում Երևանի մատենադարանը: Օշականի ճանապարհին կանգնեցվել է մաշտոցյան այբուբենին նվիրված հուշակոթող, Արագածի փեշին՝ Բյուրականի հարևանությամբ՝ այբուբենի տուֆակերտ, Օշականի եկեղեցու բակում՝ խաչքար–տառարձանները: 1993–ին սահմանվել են ՀՀ «Սբ Մեսրոպ Մաշտոց» և Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշանները: 2005–ին ՀՀ–ում մեծ շուքով նշվել է հայ գրերի գյուտի 1600–ամյակը:

Գրկ. **Կարապետ Սասնեցի**, *Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ, Վաղ–պատ, 1897:* **Կորյուն**, *Վարք Մաշտոցի (բնագիրը ձեռագր. ընթերցվածներով, աշխարհաբարի փոխադր., ներած., ուսումնասիր., առաջաբ. և ծնթգր.՝ Մ. Աբեղյանի), Ե., 1981:* **Մովսես Խորենացի**, *Հայոց պատմություն, Ե., 1981:* **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց (աշխատասիր.՝ Տեր–Մկրտչյանի և Ս. Մալխասյանցի), Ե., 1982:* **Ակինեան Ն.**, *Ս. Մաշտոց Վարդապետ, Վնն., 1949:* **Լեո**, *Մեսրոպ Մաշտոց (առաջաբ. և խմբ.՝ Մ. Մկրյանի), Ե., 1962: Մեսրոպ Մաշտոց. հոդվածների ժող., Ե., 1962, 1963:* **Անանեան Պ.**, *Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, Վնտ., 1964:* **Մարտիրոսյան Ա.**, *Մաշտոց (պատմաքնն. տեսություն), Ե., 1982:* **Ամատյան Հ.**, *Հայոց գրերը, Ե., 1984:* **Աղայան Է.**, *Մեսրոպ Մաշտոց: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1986:* **Պոլուխանյան Ա.**, *Եվրոպայի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին, Էջմիածին, 2005:*

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԱՌԱՏԵՍԱԿ, վաղ անցյալում այսպես է կոչվել ***երկաթագիրը***՝ ենթադրելով, որ այն գրվել է ***Մեսրոպ Մաշտոցի*** ձեռքով: Օգտագործվել է գրության 2 տեսակ՝ **բոլորաձև** և **անկյունավոր**. առաջինի դեպքում ուղղաձիգ տառերի գլուխներն ու հիմքերը միմյանց միանում են կամարաձև գծերով (կոչվել է **բուն մեսրոպյան**), երկրորդի դեպքում՝ ուղիղ գծերով:

Ըստ Մեսրոպյան գրի մասին Կորյունի տեղեկությունների վերջին մեկնաբանությունների՝ հայոց գրերի բոլոր տեսակներն ստեղծվել են



«Սբ Մեսրոպ Մաշտոց», *մանրանկար, 1713–ի Հայսմավուրք (Մատենադարան, ձեռ. № 7391)*



«Մեսրոպ Մաշտոց», *պատկեր, Մ. Չամչյանի «Բերականութիւն հայկազեան լեզուի» (1779, Վնտ.) գրքում*

Մետաղափորագրություն



Է. Շահին. «Անգործը» (1903, ՀԱՊ)



Տիգրան Պոլատ. «Մենավոր տնակ»



«Մեծն Արարատի ստորոտին» (XIX դ-ի 1-ին կես, Փարիզ, «L' Univers Pittoresque» հրտր.)

միաժամանակ. տարբեր են միայն նրանց ակտիվ գործածության ժամանակները: Բոլորաձև երկաթագիրը, օրինակ, օգտագործվել է V–XII դդ–ում, նրանով են գրվել բոլոր վիմագիր արձանագրությունները և ձեռագրերի հիմն. տեքստերը, անկյունավորն օգտագործվել է միայն հիշատակարաններում: XII դ–ից հետո երկաթագրով գրել են միայն վերնագրերն ու տեքստերի սկզբնատառերը:

ՄԵՏԱՂԱՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **մետաղագրություն**, խոր և բարձր տպագրության տպաձևի պատրաստման եղանակ: Կատարվում է ձեռքով, էլեկտրամեխ. և լազերային եղանակներով: Հատուկ տեխնոլոգիայով նկարակաղապարից մետաղի (պղինձ, ցինկ, պողպատ) հարթ մակերևույթին է փոխանցվում տպագրության ենթակա պատկերը և օգտագործվում որպես տպաձև: Մ–ի տեսակներ են աքվատինտան, մեղերիտը, մեցցո–տինտոն, փափուկ լաքը, օֆորտը, չոր ասեղը, հատիչային փորագրությունը ևն:

Մ., որպես ***փորագրության*** տեսակ, սկզբնավորվել է XII–XIII դդ–ում: Սասնավորապես չոր ասեղի հայտնի վարպետներ են Ա. Դյուրերն ու Ռեմբրանդը, Ե. Չեմիսովը, նաև Էդգար ***Շահինը*** («Ադա», «Աճպարար», «Անգործը») և Տիգրան ***Պոլատը*** («Փարիզի Էդգար Քինեի շուկան», «Պոլ Վեռլեն», «Շարպոնի դատը», «Մենավոր տնակ» ևն):

ՄԵՏԱՔՍԵ [Պողոսյան Մետաքսե Սերոբի, 23.12.1928, գ. Եգանալար (այժմ՝ գ. Արևշատ՝ ՀՀ Շիրակի մարզում–10.8.2014, Երևան)], բանաստեղծուհի: Ավարտել է ՀՊՄԻ (1952), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ–յան ինստ–ը (1958):

Լույս են տեսել Մ–ի «Ջահելություն» (1957), «Կնոջ սիրտ» (1960), «Նվիրում» (1968), «Զգույշ, սիրտ է» (1974), «Սերը հավատ է» (1977), «Հազար ու մի սեր» (1981), «Արցունքները չեն ծերանում» (1989), «Երբ ես գալու, Տեր» (2003), «Զրույց աշխարհի հետ» (2007), «Սերս ծոցիս մեջ մնաց» (2009), «Մենք ենք ու մենք» (2011) բանաստեղծությունների ժող–ները, «Շամիրամ» (1995), «Ամենափրկիչ» (1999) պոեմները, «Պարույր Սևակը իմ կյանքում» (2004), «Հովհաննես Շիրազը իմ հուշերում» (2002) հուշագրությունները, «Ճակատագրական կին» (2006) հոդվածների, գրախոսությունների ժող–ը: Մ. գրել է նաև մանուկների համար [«Աչիկի ու Վաչիկի զրույցը» (2006), «Ճստիկը» (2010), «Ծառ չկտրեք» (2013)], թարգմանել է Բ. Ախմադուլինայի, Մ. Դեսանկայի, Մ. Վալեկի, Ս. Սաննաայի և ուր. ստեղծագործություններից:

Մ–ի անունով է կոչվել Արևշատի միջնակարգ դպրոցը:

ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2007), ՀՀ «Մովսես Խորենացի» (2008) մեդալներ, Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2011):

«ՄԵՐ ՁԱՅՆԸ», քաղ., հաս. և գրական շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: Լույս է տեսել 1907–09–ին Նոր Նախիջևանում: Խմբագիր–հրատարակիչ՝ Հովհաննես ***Սպիտասյան:*** Հանդես է եկել հայ ազգայնական կուս–ների, մասնավորապես դաշնակցության դեմ: Լուսաբանել է Հս. Կովկասի, Ղրիմի, Նոր Նախիջևանի և Միջին Ասիայի հայերի կյանքը: Կարևոր տեղ է հատկացրել հայկ. դպրոցներին, գրակ–յան ու թատրոնի հարցերին:

«ՄԵՐ ՈՒՂԻՆ», քաղ., հաս., գրական երկօրյա թերթ: Լույս է տեսել 1931–32–ին Փարիզում: ***«Երևան»*** (1925–30–ին) թերթի շարունակությունն է: Խմբագրակազմ (Գուրգեն Թահմազյան, Զապել ***Եսայան*** և ուր.): Ֆրանսահայ աշխատավորության շրջանում քարոզել է սոց. հեղափոխության, բանվոր դասակարգի պայքարի գաղափարները, անդրադարձել Խորհրդ. Հայաստանի տնտ., մշակութ. ձեռքբերումներին, միջազգ. քաղ. իրադարձություններին:

ՄԵՐԶԱ (Merza) Դյուլա (Մերզայան Հուլիոս, 1861, Կլուժ–1943, Կլուժ), հայազգի հունգարագիր հայագետ, հաս. գործիչ, խմբագիր: Սովորել է Կլուժի և Վիեննայի համալսարաններում, ստացել բժշկ., ապա՝ տնտեսագիտ. կրթություն: Աշխատակցել է Գեռլայի «Արմենիա» (հունգ.), Բուխարեստի «Արարատ» (ռում.) հայագիտ. ամսագրերին, խմբագրել «Էրդեյ» (հունգ.) թերթը: Եղել է Կլուժի ազգագր. թանգա–

րանի հիմնադիրներից ու ղեկավարներից: Հրատարակել է հայագիտ. ուսումնասիրություններ ու հոդվածներ:

Լույս են տեսել Մ–ի «Հայ եպիսկոպոսությունը» (1896), «Տրանսիլվանիայի հայերի ապագան» (1896), «Հայկական խաչը» (1903), «Հայերի Տրանսիլվանիա գաղթելու պատմությունը» (1913) և այլ աշխատություններ: Գրել է բանաստեղծություններ, կատարել թարգմանություններ:

ՄԵՐՄԻԵ (Mercier) Շառլ (1904, Լիոն–23. 4. 1978, Փարիզ), ֆրանսիացի արևելագետ-հայագետ: Աշակերտել է Լուի ***Մարիեսին:*** 1940–41-ին դասավանդել է Հալեպի հայկ. քոլեջում: 1941-ին վերադառնալով Փարիզ՝ շարունակել է հայ-ի ու վրաց-ի ուսումնասիրությունը: 1946–77-ին ընդմիջումներով ղեկավարել է Փարիզի Արևելյան հին լեզուների դպրոցի հայկ. և վրաց. ամբիոնները: 1948-ին (իր ուսուցիչների հետ) ֆրանս. է թարգմանել և հրատարակել Ներսես Լամբրոնացու «Եկեղեցական ժողովո ճառք»-ը, 1953-ին՝ «Իսահակի, Հակոբի և Մովսեսի օրհնությունների մեկնությունը» (հուն., հայ. և վրաց. տեքստերը), 1960-ին՝ Եզնիկ Կողբացու «Հաղագս Աստծո» («Եղծ աղանդոց») երկը (քնն. թարգմ.՝ Լ. Մարիեսի): Լատ. է թարգմանել նաև Եփրեմ Խուրի Ասորու հիմները («Հայերենում պահպանված Ս. Եփրեմի հիմները», 1962), որոնց հուն. բնագրերը չեն պահպանվել: Մ. 1972-ին այցելել է Հայաստան:



Մետաքսեի *«Մենք ենք ու մենք» (2010, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

ՄԵՔԵՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, որևէ լեզվի տեքստի թարգմանությունը մեկ այլ լեզվի՝ նորագույն տեխնոլոգիաների և համապատասխան ծրագրերի միջոցով: Մ. թ-յան համար մշակվում է թարգմանության ալգորիթմ՝ տեքստի հետ հստակ սահմանված գործողությունների հաջորդականությունը: Գործող համակարգերի մեծ մասը նախատեսված է որոշակի 2 լեզվի համար: Համակարգը ներառում է մուտքային և ելքային լեզուների քերակ-ների նկարագրությունը:

Մ. թ-յան գաղափարը 1933-ին, իրարից անկախ, առաջարկել են ֆրանսահայ գյուտարար Գեորգի Արծրունին (առաջին թարգման. մեքենայի ստեղծողը) և ռուս գյուտարար Պ. Սմիռնով-Տրոյանսկին:

Մ. թ. Հայաստանում զարգացել է 1960-ական թթ-ից: ԵՊՀ-ում բացված Մ. թ-յան (կամ մաթ. լեզվաբանության) բաժինը մի քանի տարի պատրաստել է մասնագետներ այդ բնագավառի համար: Գիտ. աշխատանքներ են կատարվել ՀԽՍՀ ԳԱ ինֆորմատիկայի, ծրագրավորման և ավտոմատացման (ղեկ.՝ պրոֆ. Վ. Գրիգորյան), նաև այլ տեխ. և մաթ. ինստ-ներում: 1967-ին ԳԱ հաշվող. կենտրոնում ստեղծել են «Գառնի» թարգման. մեքենան՝ ռուս. մաթ. տեքստերի հայ. թարգմանության համար: 1976-ին հրատարակվել է նաև բնույթով բացառիկ «Հայոց լեզվի հանգաբառարանը»:

1970–80-ական թթ-ից ստեղծվել են Մ. թ-յան մի շարք համակարգեր (systran, promt ևն): 2000-ական թթ-ին մշակված Google Translate համակարգն ապահովում է ակնթարթային թարգմանություն տասնյակ լեզուներից: Համակարգում ընդգրկված է նաև հայ-ը: 1996-ին ՄԱԿ-ին կից համալսարանի Տոկիոյի առաջատար տեխնոլոգիաների ինստ-ում Մ. թ-յան համար մշակվում է UNL միջնորդ լեզու: Միջազգ. լեզվի ստեղծման աշխատանքներով զբաղվում են ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի ու ավտոմատացման և լեզվի ինստ-ները:

Գրկ. Ուռուտյան Ռ., *Կիբեռնետիկան և լեզվաբանությունը, Ե., 1978:* Մանուկյան Ա., Սարգսյան Ա., Ուռուտյան Ռ., *Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը լեզվաբանության մեջ, Ե., 2004:*

Վալիդա Մելքումյան



Մեքենական թարգմանություն *այժմ կարելի է կատարել համակարգչի մեկ կոճակի սեղմումով:*

«ՄԵՃՄԱԱՅԸ ՀԱՎԱՏԻՍ» («Ծաղկաքաղ լուրերի»), հայատառ թուրք. ամսաթերթ, շաբաթաթերթ, ապա՝ օրաթերթ: Լույս է տեսել 1852–77-ին Կ. Պոլսում: Արտոնատեր-խմբագիրներ՝ Հովսեփ ***Վարդանյան***, Հովակիմ Թյուլպենտճյան, Հովհաննես Սարգարյան, Պողոս Քիրիշճյան, Հովհաննես ***Թոլայան:*** Տպագրել է Թուրքիայի քաղ., վարչ., գիտ., գյուղատնտ. և այլ բնագավառների, երկրում տեղի ունե-




«Մեր ձայնը», *1907–09, Նոր Նախիջևան*



«Մէճմուայը Ախպար», *1884–1914, Կ. Պոլիս*



Միքայել Միանսարյանցի *«Կովկասի եւ Անդրկովկասի մատենագիտութիւն» (հ. 1, 1874–76, ՍՊբ) գրքի տիտղոսաթերթը*



«Քնար հայկական» (կազմ. և վերջաբ.՝ **Մ. Միանսարյանցի,** *1868, ՍՊբ) գրքի տիտղոսաթերթը*

ցող կարևոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն, անդրադարձել թուրքահայության տնտ., կրթամշակութ. կյանքին, քննադատել թուրք. կառավարության՝ հայերի նկատմամբ վարած ազգ. քաղաքականությունը: Ունեցել է «Իլավէյի (հավելված) Մէճմաայը Հավատիս» (1853), «Րուզնամէի (օրացույց) Մէճմաայը Հավատիս» («Լրատու Մէճմաայը Հավատիս», 1861–66) հավելվածներ:

«ՄԷՃՄՈՒԱՅԸ ԱԽՊԱՐ» («Հավաքածու լուրերի»), հայատառ թուրք. օրաթերթ, ապա՝ կիսաշաբաթաթերթ: Կ. Պոլսի Կաթողիկե հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1884–1914-ին: Արտոնատեր և պատ. խմբագիր՝ Հովհաննես ***Թոլայան:*** Սկզբում տպագրել է նաև հայ. հոդվածներ, 1907-ից լույս է տեսել միայն հայ.: Լուսաբանել է պատրիարքարանի գործունեությունը, անդրադարձել պոլսահայության և գավառահայության կյանքին, թուրք. կառավարության ազգ. քաղաքականությանը:

«ՄԷՏԷՕՐԱ», գիտ., հաս. և գրական կիսամյա հանդես: Լույս է տեսել 1880–81-ին Զմյուռնիայում: Խմբագիր՝ Գրիգոր ***Սևերյան:*** Նպաստել է արևմտահայ լուսավոր-ժողովրդավար. շարժմանը, անդրադարձել արևմտահայության ճակատագրին, որպես ազատագրության ուղի մատնանշել համախմբված գործունեությունը: Մեծ տեղ է հատկացրել կաթոլիկ եկեղեցու և նրա միսիոներների դեմ մղվող պայքարին: Ներկայացրել է գիտ-յան նվաճումները: Տպագրել է Պ. Փիշարի, Է. Լիթրեի, Է. Զոլայի գործերից՝ խմբագրի առաջաբաններով:

«ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՀՌՕՄԵԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՅՆ», Հռոմի Եվգինեոս Դ պապի աստվածաբան. երկը, որտեղ ներկայացված են հայկ. և հռոմ. եկեղեցիների դավան. տարաձայնությունները:

Տպագրվել է 1623-ին Հռոմում՝ Ստեֆան Պավլինիուսի տպարանում: Հրատարակիչ՝ Հավատի տարածման ընկերություն: Տիտղթ-ին՝ «Concordia Armenorvm cvm s. r. eccl. Et declaratio articulorum septem….» (32 էջ, 4º, 12 x 8 սմ):

ՄԻԱՆՍԱՐՅԱՆՑ Միքայել Մեսրոպի (1830, Թիֆլիս–5.2.1880, Ս. Պետերբուրգ), լրագրող, հաս. գործիչ, հայկ. մատենագիտ-յան հիմնադիրը: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել է Ս. Պետերբուրգի կայսեր. հեծելազորային բարձրագույն ուսումնարանը (1857): Կազմել է «Քնար հայկական» (1868, ՍՊբ, Օ. Բակստի տպ.) երգարանը, որի վերջաբանում, ինչպես նաև «Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան պատմութիւնը եւ տեսութիւնը» (1872, ՍՊբ, Գոլովինի տպ.) աշխատության մեջ ամփոփել է իր մանկավարժ. հայացքները: Հայկ. դպրոցների համար 1873-ին Լայպցիգում հրատարակել է իր կազմած «Հայերէն կանոնաւոր եւ վայելուչ գրութեան վարժութիւնների»՝ 5, տողանցների՝ 4 պրակները:

Լույս է տեսել Մ-ի «Կովկասի եւ Անդրկովկասի մատենագիտութիւն» (հ. 1, 1874–76, ՍՊբ, Օ. Բակստի և Հոհենֆելդեն ընկ. տպ.) աշխատությունը, որտեղ հայ., ռուս., ֆրանս., գերմ., վրաց. և այլ լեզուներով ներկայացրել է մոտ 6000 գիրք, հոդված, քարտեզ, տպագիր և ձեռագիր նյութեր: Գերակշիռ մասը հայ. ու տարբեր լեզուներով հայագիտ. գրակ. է:

Գրկ. **Իշխանյան Ռ.,** ***Հայ մատենագիտության պատմություն, պր. 2, Ե., 1968:*** **Վարդանյան Ս.,** ***Միքայել Միանսարյանց, Ե., 2002:***

«ՄԻԱՍԻՆ», ազգ., հաս-քաղ. ամսաթերթ: Բելառուսի հայկ. համայնքի «Միասին» ակումբի հրատ.: Լույս է տեսնում 2007-ից Մինսկում՝ ռուս.: Խմբագիր՝ Միշա Գրիգորյան: Լուսաբանում է համայնքի առօրյան, անդրադառնում է հայոց պատմության կարևոր անցքերին, հայկ. մշակույթին, հայ-բելառուս. բարեկամությանը, հորելյան. տարեթվերին, միջոցառումներին, հայկ. ժող. և եկեղեց. տոներին, տպագրում է նյութեր ականավոր հայերի մասին, մարզաշխարհիի նորություններ ևն:

ՄԻԼԻՏՈՆՅԱՆ Էդվարդ Գևորգի (ծ. 12.5.1952, Երևան), բանաստեղծ, արձակագիր, խմբագիր: Մշակույթի վաստ. գործիչ (2012): Ավարտել է ԵՊՀ (1974): 1986–2000-ին՝ *«Ծիծեռնակ»* ամսագրի խմբագիր, 1992–95-ին եղել է Հեռուստառադիոպետվարչության պետի առաջին տեղակալ, 1995–96-ին՝ ՀՀ տեղեկատվության նախարարի առաջին տեղակալ, 1996–97-ին՝ Ազգ. ռադիոյի տնօրեն, 1997–99-ին՝ ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչության պետ, 1999–2000-ին՝ ՀՀ վարչապետի խորհրդական, միաժամանակ՝ ՀՀ Կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապի, 2000–02-ին՝ Կառավարությանն առընթեր Տեղեկատվության և գրահրատարակչության վարչության, 2002-ից՝ *Գրքի և հրատարակչության գործի կենտրոնի* պետ, 2014-ից, միաժամանակ՝ ՀԳՄ վարչության նախագահ:

Լույս են տեսել Մ-ի «Հիշատակի զանգեր» (1979), «Ծաղիկ ծովային» (1984), «Վիշապի տարի» (1991), «Նոր թվարկություն» (1996), «Մատնահետք» (2000), «Այս պահին» (2003), «Է» (2013, ՀՀ Պետ. մրց.՝ 2013) բանաստեղծությունների ժող-ները, «Հայոց արևակենտրոն կնիքը» (2008), «Երազանք ասպետի արշավանքը» (2009) վեպերը, «Ամպե որսորդը» (1979), «Գնելը դրսում, Գնելը ներսում» (1982), «Զարմանքների տոնավաճառ» (1988), «Ընտանեկան համերգ» (1996), «Տեղեկատու կատուն» (2001), «Վահագն վիշապաքաղի արկածները» (2003) մանկ. բանաստեղծությունների (հեղինակի ձևավորմամբ), «Արքայադուստր Թարսինեն» (2010) հեքիաթների ժող-ները, «Կատուն և ուրվականը» (2012) վիպակը, ձևավորել է գրքեր, կազմել է շախմատային խնդիրներ և էտյուդներ («Պատմության շախմատ, շախմատի պատմություն», 2012):

ՀԼԿԵՄ (1982), Մ. Գորկու անվ. (1987, Մոսկվա), ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1987), Տարվա լավագույն մանկ. գրքի (2002), ՀՀ նախագահի (2005) մրց-ներ, Բելառուսի «Ֆրանցիսկ Սկորինա» շքանշան (2015):

Երկ. Արևի ժամացույց, Ե., 1988: Արգիշտի արքայի աչքերը: Պատմվածքներ, էսսեներ, Ե., 1994: Յաւաման հաց, Ե., 2006: Սպասնի կամարջը, Ե., 2012:



Էդվարդ Միլիտոնյան



Է. Միլիտոնյանի *«Է» (2013, Ե., «Ծիծեռնակ») գրքի կազմը*

ՄԻԿՈՅԱՆ Անաստաս Իվանի [Հովհաննեսի, 13(25).11.1895, գ. Սանահին (այժմ՝ ՀՀ Ալավերդի ք-ի շրջագծում)–21.10.1978, Մոսկվա], պետ. և կուս. գործիչ, խմբագիր: Սոց. աշխատանքի հերոս (1943): ՌՍԴԲԿ անդամ՝ 1915-ից: Սերգո *Միկոյանի* հայրը: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Խմբագրել է «Սոցիալ-դեմոկրատ» (1917, Բաքու), ավելի ուշ՝ «Բաքվի խորհրդի տեղեկագիր» (ռուս.) թերթերը, աշխատակցել բոլշևիկյան մի շարք թերթերի՝ «Բանւորի խօսք» (1918), «Տեղեկատու» (1918, երկուսն էլ՝ Բաքու) ևն:

1946–55-ին՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի փոխնախագահ, 1955–64-ին՝ առաջին փոխնախագահ, 1964–65-ին՝ ԽՍՀՄ ԳԽ Նախագահության նախագահ, 1964–74-ին՝ Նախագահության անդամ: 1935–66-ին՝ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի (նախագահության) անդամ:

Լույս են տեսել Մ-ի «Պայքարի ուղիով» (գիրք 1, 1972), «Քսանական թվականների սկզբին (1919–1924 թթ. սկիզբը)» (1978), «Այդպես է եղել: Խորհրդածություններ անցյալի մասին» (1999) աշխատությունները:

ԽՍՀՄ Լենինի 6, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի շքանշաններ և մեդալներ:

Գրկ. **Միկոյան Ս.**, *Հայրս՝ Անաստաս Միկոյանը (հուշեր), Ե., 2007:* **Նույնի**, *Анатомия Карибского кризиса, М., 2006;* **Павлов М.**, *Анастас Микоян: Политический портрет на фоне советской эпохи, М., 2010.*



Մանվել Միկոյանի *«Անդունդի եզրով քայլողը» (2014, Ե., «Տիր») գրքի կազմը*

ՄԻԿՈՅԱՆ Մանվել Ադամի [ծ. 5. 11. 1961, գ. Խոժոռնի (Վրաստանի Մառնեուլի շրջան)], բանաստեղծ, խմբագիր, լրագրող: Ավարտել է ՀԳԻ մեքենայացման ֆակ-ը (1983): 2009-ից՝ ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, 1997-ից՝ *«Երկունք»*, 1998-ից, միաժամանակ՝ *«Լոռու մարզ»* պարբ-ների գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Շարունակվող մղձավանջ» (1991), «Անդրադարձներ» (2001), «Որտե՞ղ են երաժիշտները» (2011), «Անդունդի եզրով քայլողը» (2014) բանաստեղծությունների ժող-ները:

ՀԳՄ Ս. Սիմոնյանի անվ. (1988), Ա. Իսահակյանի անվ. (2014), ՀԺՄ «Ազդարար» (2009) մրց-ներ:



Սերգո Միկոյան



Ս. Միկոյանի *«Կարիբյան ճգնաժամի անատոմիան» (ռուս., 2006, Մոսկվա) գրքի կազմը*



Մինաս. *1450-ի «Ճաշոց»-ի լուսանցազարդով էջ (Մատենադարան, ձեռ. № 982)*

ՄԻԿՈՅԱՆ Սերգո (Սերգեյ) Անաստասի (5.6.1929, Մոսկվա–6.3.2010, Մոսկվա), պատմաբան-միջազգայնագետ, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1976): Անաստաս ***Միկոյանի*** որդին: Ավարտել է Մոսկվայի միջազգ. հարաբերությունների ինստ-ը (1952): 1960–69-ին և 1991-ից՝ ՌԴ ԳԱ համաշխ. էկոնոմիկայի և միջազգ. հարաբերությունների ինստ-ի առաջատար գիտաշխատող: 1970–90-ին՝ «Լատինական Ամերիկա» (ռուս.) գիտ. ամսագրի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «ԱՄՆ. պետություն, քաղաքականություն, ընտրություններ» (1969), «Կուբան սոցիալիզմ է կառուցում» (1976), «Կարիբյան ճգնաժամի անատոմիան» (2006, երեքն էլ՝ ռուս.) աշխատությունները: Մասնակցել է «Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (հ. 1–3, 1963–65), «Տնտեսական զարգացման դիվանագիտություն» (1969, երկուսն էլ՝ ռուս., հեղ-ների խումբ) աշխատությունների հրատ-յանը:

«ՄԻՄՈՍ», եռօրյա երգիծ. հանդես: Լույս է տեսել 1875–77-ին Կ. Պոլսում՝ հայ. և հայատառ թուրք.: Արտոնատեր-խմբագիրներ՝ Անտոն Սագայան, Հակոբ Այվազյան, Գառնիկ Պերպերյան, խմբագիր՝ Հակոբ Հաճյան: Տպագրել է երգիծ. հոդվածներ ու բանաստեղծություններ, ծաղրել քաղքենիությունը, օտարամոլությունը, հայկ. ընտանիքներ ներթափանցած անընդունելի բարքերը: Ծանոթացրել է ազգ. հաստատությունների գործունեությանը, տպագրել լուրեր պոլսահայ կյանքից, տեղեկություններ՝ միջազգ. իրադարձությունների մասին:

ՄԻՆԱՍ, XV դ-ի մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ենթադրվում է, որ Մ. Վասպուրականի առաջին մանրանկարիչն է, որն զբաղվել է միայն ձեռագրերի պատկերազարդմամբ: Մեզ հայտնի առաջին աշխատանքը թվագրված է 1433, վերջինը՝ 1483:

Մ-ի ծաղկած մատյաններից 19-ը պահվում են Մատենադարանում: Նրա ստեղծագործություններով նոր փուլ է սկսվել Վասպուրականի մանրանկարչության դպրոցում: Նախկին գծամաներային, փոքր-ինչ պարզունակ, ազատ փոխակերպումներն իրենց տեղը զիջել են կանոնիկ, մշակված ձևերին: Մ., օգտագործելով բարդ հորինվածքներ, գունազարդային հարուստ արտահայտչամիջոցներ (նաև ոսկի), հասել է խոր քնարականության:

Գրկ. Հակոբյան Հ., Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (ալբում), Ե., 1978:

ՄԻՆԱՍ ԱՄԴԵՑԻ, Մինաս Համդեցի, Մինաս վարդապետ Ամդեցի (1630, Ամիդ–5.12.1704, Երուսաղեմ), մատենագիր, գրիչ, եկեղեց. գործիչ: 1686–88-ին՝ Եվդոկիայի եպիսկոպոս. թեմի առաջնորդ, 1690–96, 1698–1702 և 1704-ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք: Գրչագրել է ***Սամուել Անեցու*** «Ժամանակագրութիւնը», ***Մխիթար Գոշի*** «Դատաստանագիրքը»: Մ. Ա-ու ջանքերով առաջին անգամ հրատարակվել են ***Գրիգոր Նարեկացու*** «Մատեան ողբերգութեան» երկի ամբողջ. բնագիրը և նրա ներբողները (1701–02, ԿՊ, Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպ.):

Մ. Ա-ու «**Ազգաբանութիւն թագաւորացն Հայոց...**» (1698) երկի սկզբի մասը հայոց պատմության (Հայկից մինչև Լևոն Զ), իսկ շարունակությունը Հռոմի ու Բյուզանդիայի կայսրերի համառոտ ժամանակագրությունն է: Առաջին անգամ տպագրվել է 1735-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (178 էջ, 8°, 12 x 6,7 սմ): Գրքի արտաքին ձևավորումը շատ նման է Բարսեղ և Հակոբ Սեբաստացի եղբայրների հրատարակած գրքերի ձևավորմանը: Վերահրատարակվել է 1870-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.):

Մ. Ա. գրել է նաև «Օրագրութիւն» (1680–1704) ինքնակենսագր. երկը (անտիպ), որը նաև XVII դ-ի վերջին քառորդի ու XVIII դ-ի սկզբի հայ հաս-քաղ. կյանքի մասին վավեր. սկզբնաղբյուր է՝ տեղագր. հարուստ տվյալներով:

Գրկ. Զամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786: **Ամատունի Կ.,** *Մինաս վրդ. Ամդեցի պատրիարք Երուսաղէմի (1630–1704), Վնս., 1984:*

ՄԻՆԱՍ ԹՈՒԽԱԹՑԻ, **Լովանդացի, Լեհացի** (1510, Թոխաթ/Եվդոկիա–1621/1622), տաղասաց, գրիչ: 1540-ին գաղթել է Կամենից, ապա տեղափոխվել Սուչավա: 1563-ին անցել է Լեմբերգ (այժմ՝ Լվով), եղել է Գրիգոր Վանեցի արքեպիսկոպոսի քարտուղարը: Ընդօրինակել է ձեռագրեր: «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» հայրենասիր. ծավալուն բանաստեղծության մեջ խոսում է Մոլդովայի Շտեֆան Ռարեշ թագավորի (1551–52)՝ հայերին հալածելու մասին: Ողբը (գրել է որպես դեպքերի ականատես) սկզբնաղբյուր է Մոլդովայի հայերի պատմության ուսումնասիրման համար: Ստեղծագործել է գրաբար՝ աշխարհաբարի տարրերով, երբեմն՝ ժամանակի խոսակց. լեզվով:

Գրկ. **Ալիշան Ղ.,** *Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վնտ., 1896, էջ 19–27:* **Ակինեան Ն.,** *Հինգ պանդոխտ գաղաւացներ, Վնն., 1921, էջ 57–114:* **Խաչատրյան Պ.,** *Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ–ԺԷ դդ.), Ե., 1969:* **Սահակյան Հ.,** *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16–17-րդ դդ), Ե., 1975:*

ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, **Գասպարյանց, Արթվինցի**, XVIII դ-ի լուսավորիչ, մաթեմատիկայի ուսուցիչ, Մխիթարյան միաբանության անդամ: Հայտնի է վաճառականների համար գրած **«Գործ համարողական արհեստին»** մաթեմատիկայի ձեռնարկով:

Տպագրվել է 1787-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր գիւտ կամ գործ համարողական արհեստին...» (120 էջ, 6º, 13, 4 x 5,6 սմ):

ՄԻՆԱՍՅԱՆ Լևոն Գալուստի [8.6.1920, գ. Վերին Խոյգան (Իրանի Փերիա գավառ)–31.12. 2012, Նոր Ջուղա], բանասեր, թարգմանիչ, մատենագետ, հրատարակիչ: Սովորել է Նոր Ջուղայի Հայոց ազգ. երկսեռ դպրոցում (1933–38), ապա՝ Սպահանի անգլ. քոլեջում: Դասավանդել է ծննդավայրի և Նոր Ջուղայի ազգ. դպրոցներում: 1957-ից, միաժամանակ՝ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի թանգարանի տնօրեն, 1972-ից՝ տպարանի տեսուչ, 1980-ից աշխատել է վանքի գրադարան-մատենադարանում:


Լույս են տեսել Մ-ի «Պատմութիւն Փերիայի հայերի» (1971), «Իրանի հայկական եկեղեցիները» (1983), «Գրչութեան արուեստը Նոր Ջուղայում» (1991), «Նոր Ջուղայի եկեղեցիները» (1992), «Իրանահայ պարբերական մամուլը. 1894–1994» (1994), «Հայ տպագիր գիրքը Իրանում. 1638–2000» (2001), «Իրանի հայկական վանքերը» (2003), «Մատենագիտական ցանկ Սպահանի հայոց թեմին վերաբերող հայերէն, պարսկերէն եւ անգլերէն գրքերի ու յօդուածների» (2007) աշխատությունները, «Մտորումներ» (1977), «Յոյզեր-ապրումներ» (2002) բանաստեղծությունների ժող-ները: Թարգմանություններ է արել պարսկ-ից:

ՄԻՆԱՍՅԱՆ Մարտիրոս Պողոսի [ծ. 25.7.1926, գ. Աքչայ (Ալեքսանդրետ ք-ի մերձակայքում, Թուրքիա)], լեզվաբան, բանասեր, բնագրագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1961): Սովորել է Զմմառի վանքի վարժարանում: 1947-ին հայրենադարձել է: Ավարտել է ԵՒՕԼՄԻ (1953), Հայկ. հեռակա մանկավարժ. ինստ-ը (1955): 1960–62-ին՝ ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստ-ի գիտաշխատող, համաբարբառների բաժնի վարիչ: 1962–66-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, 1966–70-ին՝ ԵՊՀ-ում: 1970-ին տեղափոխվել է Ֆրանսիա: 1971–74-ին գրաբար է դասավանդել Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքի հոգևոր ճեմարանում, 1972–73-ին, միաժամանակ՝ Երուսաղեմի եբրայական համալսարանում: 1974-ից՝ Ժնևի համալսարանի գիտաշխատող, իր ստեղծած հայագիտ. գրադարանի վարիչ, դասավանդել է արևմտահայ., արևելահայ. և գրաբար:

Լույս են տեսել Մ-ի «Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում» (1974), «Գրաբարի գործնական դասընթաց» (1976), «Արեւելահայերէնի քերականութիւն» (1980), «Արեւմտահայերէնի գործնական ձեռնարկ» (1981), «Գրաբարի բայացանկեր» (Ֆրանս., 1985), «Նոր կտակարանի բնագիրը եւ դասական հայերէնը» (1990), «Գրաբար աւետարանների շարահիւսական տեղեկատու» (2006) աշխատությունները, կազմել է Մատթեոսի (1986), Մարկոսի (1984), Հովհաննեսի (1985), Ղուկասի (1989–91) Ավետարանների լիակատար համաբարբառները, «Հինգերորդ դարի գրաբարի ուսանողական դասագիրքը» (2003): Կազմել և թարգմանել է Ա. Մեյեի «Հայագիտական ուսումնասիրություններ» (1978) ժող-ը:



Մինաս Ամդեցու *«Ազգաբանութիւն թագաւորացն Հայոց...» (1735, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Լևոն Մինասյանի *«Նոր Ջուղայի եկեղեցիները» (1992, Նոր Ջուղա) գրքի կազմը*



Մարտիրոս Մինասյանի *«Հինգերորդ դարի գրաբարի ուսանողական դասագիրքը» (2003, Անթիլիաս) գրքի կազմը*



Սարգիս Մինասյան



Յուզեֆ Դ. Մինասովիչ



«Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ»
2010-ից, Երևան (№ 8, 2013)

ՄԻՆԱՍՅԱՆ Միհրան Անդրանիկի (ծ. 2.2.1959, Հալեպ), բանասեր, թարգմանիչ, մատենագետ: Ավարտել է ծննդավայրի Քարեն Եփփե ազգ. ճեմարանը (1979): 1993–2003-ին աշխատել է Հալեպի Փոխենների արխիվային, 1999–2012-ին, միաժամանակ՝ Համազգայինի հայագիտ. կենտրոններում: 2012-ին տեղափոխվել է Հայաստան. աշխատում է Մատենադարանում և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ-ում:

Հայ-ից արաբ. է թարգմանել Պ. Սևակի («Եղիցի լոյս եւ... այլ բանաստեղծութիւններ», 1995), Նահապետ Քուչակի («Նռան հատիկը: Հայկական 100 սիրային բանաստեղծութիւն», 1999), Հ. Սահյանի, Զահրատի, Զարեհ Խրախունու և ուր. ստեղծագործություններից («Դիմակներ եւ հայելիներ», 2010, Սիրիայի մշակույթի նախարարության Սամի Ալտրուպի անվ. թարգմանչ. 1-ին մրց.՝ 2010), արաբ-ից հայ.՝ Իբրահիմ ալ Խալիլի «Անապատին կակաչները» (2002)՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված ուսումնասիրությունը: Մ. հրատ-յան է պատրաստել Աբրահամ արք. Քյուփելյանի «Օրագրութիւնը» (Պետրոս արք. Մխիթարեանի հետ, 2008):

Լույս են տեսել Մ-ի «Հայերէն նորայայտ հնատիպ գիրքեր եւ մատենագիտական լրացումներ» («Հասկ հայագիտական տարեգիրք», 1995–96), «Հայ պարբերական մամուլի 33 նորայայտ անուններ» («Հայկազեան հայագիտական հանդէս», 2001) և այլ հոդվածներ:

ՄԻՆԱՍՅԱՆ Սարգիս, **Արամ Աշոտ** [1873, գ. Չենիլեր (Բութանիա՝ Թուրքիայում)–1915, Մեծ եղեռնի զոհ], խմբագիր, կրթ. գործիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Սովորել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում և Ժնևի համալսարանում: Նյութեր է հրապարակել «Դրօշակ» թերթում՝ «Թուրքիոյ շուրջը» խորագրով, այնուհետև որոշ ժամանակ խմբագրել է *«Հայրենիք»* օրաթերթը:

ՄԻՆԱՍՈՎԻՉ (Minasowicz) Յուզեֆ Դիոնիս (3.10.1792, Վարշավա–8.26.1849, Վարշավա), հայազգի լեհագիր բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Լայպցիգի համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1814): 1817-ին՝ Լեհ. թագավորության դատախազության գլխ. թարգմանիչ, 1819-ին՝ դատախազի տեղակալ, 1820–21-ին խմբագրել է Վարշավայի «Երաժշտական շաբաթաթերթը»: Եղել է Վարշավայի համալսարանի պրոֆ., 1828-ից՝ Լեհաստանի ֆինանսների նախարար: Ճանաչվել է «Մարդը» (1816) քերթվածով: Գրել է նաև հոգևոր երգերի տեքստեր, որոնք առանձին գրքով լույս են տեսել 1825-ին: 1844-ին հրատարակվել է Մ-ի սեփական և թարգման. «Երկերի» 4-րդ հատորը: Ֆ. Շիլլերի և Յ. Վ. Գյոթեի առաջին թարգմանիչներից է լեհ. իրականության մեջ:

ՄԻՆԱՍՈՎԻՉ Յուզեֆ Էպիֆան (7.4.1718, Վարշավա–15.11.1796, Վարշավա), հայազգի լեհագիր բանաստեղծ, հրապարակագիր, թարգմանիչ: Իրավագիտ. դ-ր: Սովորել է Վարշավայի Հիսուսյանների դպրոցում, ապա՝ Կրակովի համալսարանում: 1769–73 և 1778–81-ին խմբագրել է «Մնեմիթոր» (լեհ.) հանդեսը: Հրատարակել է ավելի քան 40 հատոր (լեհ., լատ.) պատմագիտ., իմաստասիր., աստվածաբան. և այլ թեմաներով աշխատություններ, բանաստեղծությունների ժողովներ, թարգմանություններ: «Լվովի լեհահայոց արքեպիսկոպոսների վարքագրությունը քառյակներով շարադրյալ...» (1762) աշխատության մեջ կարևոր տեղեկություններ կան 1624-ին Հայաստանից Լեհաստան տեղափոխված Մելքիսեդեկ կաթողիկոսի կյանքի վերաբերյալ: «Լեհական փոքրիկ քերթվածների ժողովածուի» (1782) մեջ Մ. զետեղել է իր և հայազգի լեհագիր բանաստեղծների գործեր: Լեհ. է թարգմանել լատ-ից, ֆրանս-ից, հուն-ից:

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ», քաղ. և տնտ., գիտավերլուծ., տեղեկատվ. հանդես: Լույս է տեսնում 2010-ից Երևանում: Խմբագիր՝ Արթուր *Ղաւրագյոզյան:* Լուսաբանում է ՀՀ արտաքին քաղաքականությունը, միջազգ. հարաբերությունները, դիվանագիտ. կապերն ու գործընթացները ևն: Անդրադառնում է Հայոց ցեղասպանությանը, հայ-թուրք. հիմնա-

խնդիրներին, ՀՀ-ի և այլ երկրների դիվանագիտ. փոխհարաբերություններին, առանձնահատուկ տեղ է հատկացնում Սփյուռքի հիմնահարցերին, Հայրենիք–Սփյուռք կապերին, սփյուռքահայ գործիչներին, հայապահպանությանը: Կարևորում է Հայ առաքել. եկեղեցու և նրա թեմերի գործունեությունը: Տպագրում է հիշյալ խնդիրների վերաբերյալ ճանաչված հայ և օտարազգի քաղաքագետների ու միջազգայնագետների հոդվածներ, վերլուծություններ, նաև գիտ. հրատ-ների գրախոսություններ (անգլ. և ռուս. ամփոփումներով):

ՄԻՍԱՔՅԱՆ Արփիկ Շավարշի (1.2.1926, Փարիզ–19.6.2015, Փարիզ), խմբագիր, հրատարակիչ: Շավարշ ***Միսաքյանի*** դուստրը: 1940-ական թթ-ի վերջերից աշխատել է ***«Յառաջ»*** օրաթերթի խմբագրությունում (1957–2009-ին՝ գլխ. խմբագիր): Մ-ի նախաձեռնությամբ 1957-ից գործել է թերթի տպարանը, որտեղ տպագրվել են նաև «Յառաջ» մատենաշարի շուրջ 30 հատորները (Շ. Միսաքյանի, Շ. Շահնուրի, Շ. Նարդունու, Զ. Գազանճյանի, Ե. Լաչինյանի, Գ. Պըլտյանի և ուր. ստեղծագործություններից):



Արփիկ Միսաքյան

ՄԻՍԱՔՅԱՆ Շավարշ [17.8.1884, գ. Զիմարա (Սեբաստիայի նահանգի Տևրիկի գավառ)–26.1.1957, Փարիզ, թաղված է Պեր Լաշեզ գերեզմանատանը], հաս-քաղ. գործիչ, հրապարակագիր, խմբագիր: Արփիկ ***Միսաքյանի*** հայրը: ՀՅԴ կուս-յան անդամ: 1890-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Կ. Պոլիս: Սովորել է Պեզճյան Մայր, ապա՝ Կեդրոն. վարժարանում, ավարտել Կարկուրի ամերիկյան վարժարանը: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո Կ. Պոլսում հիմնադրել է «Արծիվ» գրատունը, 1908–09 և 1912–13-ին հրատարակել ***«Ազդակ»*** շաբաթաթերթը, միաժամանակ, 1911–12-ին Կարինում խմբագրել է ***«Յառաջ»***, 1914-ին Կ. Պոլսում՝ ***«Ալիք»***, 1914–15 և 1918-ին՝ «Ճակատամարտ» (տես ***«Ազատամարտ»***) թերթերը: 1915-ի ապրիլի 24-ին հայ մտավորականների ձերբակալությունից հետո Մ. անցել է ընդհատակ և գաղտնի աշխատակցել Բուլղարիայի «Հայաստան» թերթին: 1916-ի մարտին մատնությամբ ձերբակալվել է և աքսորվել: 1922-ի նոյեմբ-ին տեղափոխվել է Սոֆիա, շարունակել համագործակցել «Ճակատամարտ»-ի հետ: 1925–57-ին՝ ***«Յառաջ»*** (Փարիզ) թերթի հիմնադիր-խմբագիր: Ֆրանսիայի՝ գերմ. բռնազավթման տարիներին (1940–44) թերթը լույս չի տեսել, սակայն Մ. կազմել և գաղտնի հրատարակել է «Հայկաշէն» և «Արածանի» գրական ժող-ները:




Շավարշ Միսաքյան

Լույս է տեսել Մ-ի «Օրեր եւ ժամեր» (1958, Փ.) ժող-ը: Թարգմանել է Ա. Ֆրանսի, Պ. Միլի երկերից:

Հանդես է եկել նաև Փղշտացի, Շարմաղ, Վահե, Վարազ, Ըմբոստ, Բարբարոս ծածկանուններով:

«ՄԻՏՔ», ազգ., հաս., գրական և քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1912–14-ին Թավրիզում: Խմբագիր-հրատարակիչ՝ Ալեքսանդր Տեր-Վարդանյան: Ծանոթացրել է իրանահայության առօրյային, անդրադարձել հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրին ու պատմությանը: Հաս-քաղ. հոդվածների մի մասը տպագրել է ռուս.: Գրական բաժնում զետեղել է իրանահայ հեղինակների ստեղծագործություններ, գրախոսականներ, լուրեր մշակութ. կյանքից: Ունեցել է հավելված:



«Հայկաշէն» (գիրք II, 1943, կազմ.՝ **Շ. Միսաքյան***) գրական ժողովածուի կազմը*

ՄԻՐԱԽՈՐՅԱՆ Սմբատ (1856, Վան–1934, Բուխարեստ), ազգագրագետ, մանկավարժ: Սովորել է Վանի Սբ Թարգմանչաց, Վարագավանքի ժառանգավորաց, Կ. Պոլսի Նուպար-Շահնազարյան վարժարաններում: Եղել է ***Մկրտիչ Ա. Վանեցու*** անձն. քարտուղարը՝ նրա պատրիարքության տարիներին (1869–73): Դասավանդել է Կ. Պոլսի և Վանի դպրոցներում: Աշխատակցել է Կ. Պոլսի «Մասիս», «Արեւելք», «Երկրագունդ», Մարսելի «Արմենիա», «Հայ սիրտ» և այլ պարբ-ների: 1882-ին Ղրիմում ուսումնասիրել է տեղի հայերի սովորույթներն ու ավանդույթները, հաս. կյանքը (աշխատության



Զորայր Միրզայան



Լավրենտի Միրզոյանի *«Կյանքի ուղեցույց» (2012, Ե., «ՎՄՎ Պրինտ») գրքի կազմը*



Լյուդվիկ Միրզոյան

ձեռագրերը թուրք. կառավարությունը բռնագրավել է): 1883-ին Արմ. Հայաստանում հավաքել է վիճակագր., ազգագր. նյութեր, որոնց ուսումնասիրությունը շարադրել է «Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս...» (մաս 1, 1884, ԿՊ, Հմայակ Դիմաքսյանի տպ., մաս 2–3, 1885, ԿՊ, Սամվել Պարտիզպանյանի տպ.) աշխատության մեջ: Մ-ի մի շարք գործեր անտիպ են: XIX դ-ի վերջին հաստատվել է Ռումինիայում, ծավալել մանկավարժ. գործունեություն:

ՄԻՐԶԱՅԱՆ Զորայր Հովսեփի (1916, Թեհրան–13.7.1964, Թեհրան), գրող, թարգմանիչ: Հովսեփ ***Միրզայանի*** որդին: Սովորել է Թեհրանի հայոց ազգ. դպրոցում, ավարտել ամերիկյան քոլեջը:

Հայ. է թարգմանել Օմար Խայամի, Ֆիրդուսու, Հաֆեզի, Ռ. Թագորի, Ֆ. Դոստոևսկու, Մ. Տվենի ստեղծագործություններից:

Լույս են տեսել Մ-ի «Թաց մայթը» (1957), «Բանաստեղծութիւններ եւ պատմուածքներ: Հատընտիր» (1965) ժող-ները, «Աբու Ալի Մինա» (1954), «Իրանի ժամանակակից բանաստեղծութիւնը» (1968) աշխատությունները:

ՄԻՐԶԱՅԱՆ Հովսեփ [1868, ք. Համադան (Պարսկաստան)–1935, Թեհրան], մշակույթի գործիչ, թարգմանիչ: Զորայր ***Միրզայանի*** հայրը: Սովորել է Նոր Ջուղայի հայկ. դպրոցում: 1900-ից պաշտոնավարել է Իրանի ֆինանսների նախարարությունում:

Հայ. է թարգմանել Ջ. Բայրոնի «Ծովահենը» և «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը», Վ. Սկոտի «Լճի լեդին» պոեմները, Հ. Լոնգֆելլոյի «Կյանքի սաղմոսը» բանաստեղծությունը, Վ. Հյուգոյի ստեղծագործություններից, Օմար Խայամի «Բաբա Թահէր եւ զանազան» (1923) ժող-ը, որտեղ զետեղել է նաև այլ թարգմանություններ պարսկ-ից:

ՄԻՐԶՈՅԱՆ Լավրենտի Աշոտի [ծ. 22.5.1950, գ. Չորաթան (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], լեզվաբան, խմբագիր: Մանկավարժ. գիտ. թեկնածու (2006), պրոֆ. (2006): Ավարտել է ԵՊՀ (1973): 1973–75-ին՝ «Երևանի համալսարան» թերթի պատ. քարտուղար, 1975–80-ին՝ «Պիոներ կանչ» թերթի բաժնի վարիչ, 1983–87-ին՝ «Ավանգարդ» թերթի պատ. քարտուղար: 1987–90-ին՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրի գլխ. խմբագիր, 1992-ին՝ «Երկունք», 1998–2000-ին՝ «Էրեբունի», միաժամանակ, 1999–2000-ին՝ «Համայնք», 2003–04-ին՝ ***«Քաղաքացիական ծառայություն»*** շաբաթաթերթերի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Առձեռն մայրենին» (1992–95), «Ուղղագրական, հոմանիշների, դարձվածաբանական դպրոցական բառգիրքը» (1997), «Գրպանի ուղղագրական բառարանը» (2002, 2004), «Երևելի Մխիթարյանները՝ Մանուել Քաջունի» (2005) մենագրությունը, «Հավերժության ղողանջներ» (2009) ակնարկների, «Տավուշ» (2010) հանրագիտ. ժող-ները, «Կյանքի ուղեցույց» (2012) ուս. ձեռնարկը, «Կայացման ակնթարթներ» (2014) տարեգիրքը են:

Հանդես է գալիս նաև Միրիք Զոյանց, Լ. Չորաթանյան, Լ. Տավուշեցի, Ա. Արզումանյան և այլ ծածկանուններով:

ՀԺՄ «Տարվա լավագույն ակնարկ» մրց. (1986), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2007), ՀՀ ԿԳՆ ոսկե (2007), ԼՂՀ «Երախտագիտություն» (2013) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2007):

ՄԻՐԶՈՅԱՆ Լյուդվիկ Վասիլի (1.5.1923, Երևան–20.7.1999, Երևան), աստղագետ, խմբագիր: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1970), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Գիտ. վաստ. գործիչ (1974): Ավարտել է ԵՊՀ (1947): 1959–86-ին՝ Բյուրականի աստղադիտարանի փոխտնօրեն: 1965–87-ին՝ ***«Աստղաֆիզիկա»*** հանդեսի գլխ. խմբագրի տեղակալ, 1987–98-ին՝ գլխ. խմբագիր:

Երկ. Բռնկվող աստղեր, Ե., 1973: Անկայուն երևույթներ աստղերի աշխարհում, Ե., 1987: Нестационарность и эволюция звезд, Е., 1981; Ранные стадии эволюции звезд, Е., 1991.

Գրկ. Լյուդվիկ Վասիլի Միրզոյան: Կենսաամատենագիտություն, Ե., 1998:

ՄԻՐԶՈՅԱՆ Հրաչիկ Ղազարի [ծ. 13.3.1940, գ. Բարեկամավան (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)], փիլիսոփա, խմբագիր, գրականագետ: Փիլ. գիտ. դ-ր (1984), պրոֆ. (1987): Ավարտել է ԵՊՀ պատմության ֆակ-ը (1963): 1967-ից դասավանդում է ԵՊՀ-ում, 1989–2000-ին՝ փիլ-յան պատմության ամբիոնի վարիչ, 1992-ից, միաժամանակ՝ ***«Բանբեր***

Երևանի համալսարանի» հանդեսի գլխ. խմբագիր, 1998–2004-ին՝ փիլ-յան, սոցիոլոգիայի և հոգեբանության, 2004–09-ին՝ փիլ-յան և հոգեբանության ֆակ-ի դեկան: 1994–97-ին դասավանդել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում, 1997–2003-ին՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Լույս են տեսել Մ-ի «Սիմեոն Ջուղայեցի» (1971), «XVII դ. հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» (1983), «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» (2001), «Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը» (2006) մենագրությունները, «Նարեկացիագիտական հետազոտություններ» (2010) հոդվածների ժող-ը, «Ինչո՞ւ է Թուրքիան պահանջում Հայոց եղեռնի դատը վստահել պատմաբաններին» (ռուս., համահեղ., 2012) աշխատությունը: Կազմել է (Ս. Զոլյանի հետ) «Լեռնային Ղարաբաղ և նրա շուրջ. անկախ դիտորդների աչքերով» (ռուս., 1992) ժող-ը:

Մ-ի և Արշակ *Սադոյանի* աշխատասիրությամբ հրատարակվել է Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Լուծմունք «Սահմանաց գրոց»» (2004) երկը: Կազմել է «Էֆիմերտէ» (համահեղ., 1992) ժող-ը:

ԵՊՀ ոսկե մեդալ (1999, 2008), ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրց. (2008):

Գրկ. Հրաչիկ Միրզոյան: Կենսամատենագիտություն, Ե., 2010:



Հրաչիկ Միրզոյան

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Լևոն Վարդանի (22.1.1933, Երևան–16.11.2004, Երևան), բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1955): 1950–53-ին աշխատել է «Պիոներ կանչ», 1953–57-ին՝ «Գրական թերթ», 1957–59-ին՝ «Երևան» պարբ-ների խմբագրություններում, 1962–67-ին եղել է ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի գիտաքարտուղար, ավագ գիտաշխատող, 1967–75-ին՝ *«Հայաստան»* հրատարակչության խմբագրության վարիչ, 1995–97-ին՝ «Բնօրրան» և «Արևագալ» պարբ-ների գլխ. խմբագիր: 1975-ից աշխատել է «Հայ դպրություն» (մինչև 1989-ը՝ Հայաստանի գրքասերների ընկերություն) ՀԿ-ում (1989–2004-ին՝ նախագահ):

Լույս են տեսել Մ-ի «Այգեստաններ» (1958), «Ծովի կարոտ» (1965), «Դեպի ծով» (1971), «Ճանապարհ» (1975), «Ծաղկազարդ» (1981), «Առագաստ» (1983), «Բազումք» (1989), «Հոգի և մարմին» (2003), «Ուրախ հանդիպում» (2005), «Ակնաղթյուր» (2007) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Կրկնվող օրեր» (2004) վիպակը, «Մենք գնացինք Երկիր» (1992), «Հայ բանաստեղծության ակունքները» (1977), «Վերընթերցելով Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»» (1979), «Հայկական հնագույն մատյանը» (1981), «Պատմության և առասպելի սահմանները» (1986), «Հայկյաններ» (1988), «Աստվածաշունչը և մենք» (1994, 2009), «Իմ Շեւչենկոն» (2002) աշխատությունները, «Մեր մեծասքանչը», «Երգի հովիվը» (երկուսն էլ՝ 2004), «Սրբազան ավանդներ» (2006) հոդվածների, գրախոսությունների, նամակների ժող-ները: Հայ. է թարգմանել Գ. Սկովորոդայի «Հատընտիրը» (1972, Ուկրաինայի Գ. Սկովորոդայի անվ. մրց.՝ 1993):

Ուկրաինայի «Վաստակների համար» շքանշան (2002):


Գրկ. Լևոն Միրիջանյան: Գրողի ճանապարհը: Կենսամատենագիտություն, Ե., 2005:




Լևոն Միրիջանյան

ՄԻՑԿԵՎԻՉ (Mickiewicz) Ադամ [24.12.1798, ագարակ Զասոյե՝ Նովոգրուդեկի մերձակայքում (այժմ՝ Բելառուսում)–26.11.1855, Կ. Պոլիս, թաղվել է Փարիզում, 1890-ին վերաթաղվել է Կրակովում], լեհ բանաստեղծ, ազգ-ազատագր. շարժման գործիչ: Սովորել է Վիլնոյի (այժմ՝ Վիլնյուս) համալսարանի պատմաբանասիր. ֆակ-ում (1815–19): Վաղ շրջանի գործերում (առաջին բանաստեղծությունը հրտ.՝ 1818) նկատելի է լուսավորականության ազատախոհ ավանդույթների ազդեցությունը:

Մ-ի ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: Հայ իրականության մեջ նրան նվիրված առաջին հոդվածները հրապարակել են Ս. Ոսկանը («Արեւելք», 1856), Գ. Այվազովսկին («Մասեաց աղաւնի», 1860): Մ-ի երկերից առաջինը հայ. թարգմանել է (1880-ից) Հովհաննես *Հովհաննիսյանը*: Բանաստեղծի կյանքին ու ստեղծագործությանն անդրադարձել է Արշակ *Չոպանյանը*. գրել է հոդվածներ, թարգմանել ստեղծագործություններից, որոնք լույս



Լ. Միրիջանյանի *«Իմ Շեւչենկոն» (2002, Կիև) գրքի կազմը*



Ադամ Միցկևիչի *«Ընտիր երկեր»-ի (1955, Ե., Հայպետհրատ) փիփ-ղոսաթերթը*



«Միութիւն», *1912–62-ին, Կահիրե, Փարիզ, Նյու Յորք (№ 1, 1912)*



«Միութիւն», *1945–47, Հայֆայ*

են տեսել «Անահիտ» հանդեսում: Մ-ի Կոնրադի մենախոսությունը «Նախահայրեր»-ից, «Ֆարիս» պոեմը և «Սվիտեզուհի» բալլադը հրատարակվել են «Բազմավէպ»-ում, «Ծաղիկ»-ում: 1893-ին Բաքվում հրատարակվել է «Կոնրադ Վալենրոդ» պոեմը (թարգմ.՝ Ղ. Սարգարյանի, «Արոր» տպ.): Սոնետներից թարգմանել են Հ. Թումանյանը, Օ. Անոփյանը, Դ. Վարուժանը, բալլադներից՝ Ք. Քուշներյանը, Ռ. Զարդարյանը. Ա. Չոպանյանը, խորհրդ. շրջանում՝ Վ. Նորենցը, Գ. Էմինը, Պ. Սևակը, Վ. Դավթյանը և ուր.:

Հայ. հրատարակվել են նաև Մ-ի «Ընտիր երկերը» (1955), «Հատընտիրը» (1999), «Պանի Տվարդովսկա» (1975) բալլադը:

«ՄԻՈՒԹԻՒՆ», հաս., քաղ. և ուս. կիսամսյա հանդես: Զմյուռնիայի Հաշտենից ընկերության հրատ.: Լույս է տեսել 1860–62-ին (1861–62-ին՝ «Միութիւն սահմանադրական») Զմյուռնիայում: Խմբագիր՝ Սարգիս Միրզա *Վանանդեցի:* Պաշտպանել է արևմտահայերի Ազգ. սահմանադրությունը (1860), նպաստել ազգ. լուսավորությանն ու առաջադիմությանը, դրականորեն վերաբերվել Ս. Ոսկանի *«Արեւմուտք»*-ի դիրքորոշմանը: Լուսաբանել է Զմյուռնիայի վարժարանների, «Վասպուրական թատրոնի» գործունեությունը, ներկայացրել եվրոպ. գրակ-ը: Աշխատակցել են Տ. Սավալանյանը, Գ. Կոստանդյանը, Հ. Տետեյանը, Մ. Մամուրյանը, Ա. Պալապանյանը, Ղ. Մամուրյանը, Ս. Չելեքյանը, Ա. Ղոնճայանը, Ա. Փափազյանը և ուր.:

«ՄԻՈՒԹԻՒՆ», երկամսյա, ապա՝ ամսօրյա տեղեկատու թերթ: ՀԲԸՄ պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1912–62-ին (1912–27-ին՝ Կահիրեում, 1928–40-ին՝ Փարիզում, 1942–62-ին՝ Նյու Յորքում): Խմբագիր՝ Վահան *Մակեայան:* 1963-ին «Մ.»-ի և *«Յուշարար»*-ի միավորումով ստեղծվել է *«Յուշարար-Միութիւն»* ամսաթերթը:


«ՄԻՈՒԹԻՒՆ», գրական-գեղ., հաս. շաբաթաթերթ: Ընդհանուր հայ աշակերտ. միության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1917–19-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Գ. Աբովյան (Գևորգ *Աբով*), Ս. Էլբակյան: Լուսաբանել է դպրոց. կյանքն Այսրկովկասում, արծարծել կրթության և դաստիարակության հարցեր: Մեծ ուշադրություն է նվիրել մայրենի լեզվով ծրագրերի ստեղծմանն ու կատարելագործմանը, պարբերաբար անդրադարձել հայոց լեզվի ու գրակ-յան, պատմության, աշխարհագրության և ուս. այլ առարկաների դասավանդման խնդիրներին, մեթոդ. օգնություն ցուցաբերել ուսուցիչներին: «Մ.» տպագրել է լուրեր տարածաշրջանի մշակութ., գրական, հաս. կյանքից, գեղ. ստեղծագործություններ, բանավիճային հոդվածներ: Աշխատակցել են Գ. Քացաղյանը, Ա. Քանանյանը, Ս. Ամիրխանյանը, Հ. Շեկոյանը և ուր.:

«ՄԻՈՒԹԻՒՆ», հաս., քաղ. և գրական շաբաթաթերթ: Պաղեստինահայ առաջադիմ. ընկերակցության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1945–47-ին Հայֆայում (Պաղեստին): Խմբագիրներ՝ Արթուն Հատիտյան, Հակոբ Մարտիրոսյան (1947-ին՝ խմբագրակազմ): Լուսաբանել է Մերձ. Արևելքի (մասնավորապես՝ Պաղեստինի) հայկ. գաղթավայրերի կյանքը: Ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի տնտեսության, գիտ-յան ու մշակույթի նվաճումները, անդրադարձել միջազգ. դրությանը, Պաղեստինի քաղ. կացությանը: Մեծ տեղ է հատկացրել ներգաղթին: Տպագրել է նաև առողջապահ. հոդվածներ, մարզ. լուրեր:

«ՄԻՈՒԹԻՒՆ», ազգ., քաղ., մշակութ. ամսաթերթ: ՀԲԸՄ Ավստրալիայի շրջ. վարչության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1987-ից Սիդնեյում՝ հայ. և անգլ.: Խմբագիր՝ Ավետիս *Յափուճյան:* Ներկայացնում է ՀԲԸՄ կենտր. վարչության և մասնաճյուղերի սոցիալ., կրթ., մշակութ., մարզ. գործունեությունը, անդրադառնում է ՀՀ տնտ., գիտ. և մշակութ. կյանքին:

ՄԻՔԱՅԵԼ ԱՍՈՐԻ [1126, Մելիտենե (Մալաթիայի գավառ)–1199] ասորի պատմագիր, եկեղեց. գործիչ: 1166-ից՝ Հակոբիկյան եկեղեցու (Ասորվոց կամ Անտիոքի) պատրիարք: Մ. Ա-ու երկերից հայ. թարգմանվել են «Ձիսօստովանութիւնն հաւատոյ»-ն, «Գաւազանագիրքը», «Ժամանակագրութիւնը» ևն: Վերջինիս մեջ շարադրել է ընդհանուր պատմությունը հին ժամանակներից մինչև իր օրերը՝ անդրադառնալով նաև բուն Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի պատմությանը, հատկապես՝ XII դ-ի իրադարձություններին: 1248-ին այդ գործը հայ. համառոտ թարգմանել են Իսահակ քահանան և նրա աշակերտ Վարդան Արևելցին (հրտ.՝ 1871, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.): Մ. Ա-ու «Ժամանակագրության» բնագիրն առաջին անգամ հրատարակվել է ֆրանս. թարգմանությամբ (հ. 1–3, 1899–1905), ռուս.՝ 1979-ին:

Գրկ. **Զամչեան Մ.**, *Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786:* **Օրմանյան Մ.**, *Ազգապատում, մաս 1, Էջմիածին, 2001:*


ՅԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ՏԵԱՌՆ ՄԻՔԱԷԼԻ
ԱՍՈՐՈՅՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՀԱՅԵՑԱԾ Ի ՀԱՅԵՐԵՆՍ ԴԱՐՁՈՒԱԾ
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ Ս. ԷՋՄԻԱՆԻՆ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ
ՎԱՀԱՆԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄՐԱՑՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ՆՈՒՒԱՐԱՑ
ՄՐԱՑՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՆԻ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ե. ՏՕՄԱՅԻ
Տ. ՄԿՐՏՉԻ
ՄՐԱՑՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՏՊԱՐԱՆԻՑ ՄՐԱՑՈՑՆ ՅԱԿՈԲԱՅԵՑԻՑ
1871

Միքայել Ասորու *«Ժամանակագրութիւն» (1871, Երուսաղեմ) գրքի տիտղոսաթերթը*


ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Կարեն (Գերասիմ) Սարգսի [27. 4. 1883, Վերին Ագուլիս (Նախիջևան)–1941, ք. Վոլոգդա, անհատի պաշտամունքի զոհ], գրող, թարգմանիչ: Սովորել է Մոսկվայի համալսարանում, այնուհետև՝ Ենայի (Գերմանիա) համալսարանի փիլ-յան ֆակ-ում: Մասնակցել է Վալերի *Բրյուսովի* նախաձեռնած «Հայ պոեզիան...» անթոլոգիայի թարգմանության աշխատանքներին:

Լույս են տեսել Մ-ի «Ձրկանքի յոյզեր» (1907, Թ., «Հերմես» տպ.), «Ձմրան երեկոյ» (1912, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.), ««Majestic»: Ամերիկյան կարճ պատմվածքներ» (1928, Հայպետհրատի 3-րդ տպ.), «Գույների կռիվը» (1929, Մ.), «Կեցցեն հաղթվածները» (1961) պատմվածքների և արձակ այլ գործե-րի ժող-ները: Թարգմանել է Օ. Ուայլդի, Ջ. Սվիֆթի ստեղծագործություններից:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Պարույր Ավագի [7.3.1924, գ. Ոսկեհասկ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–մ. թ. անհտ], բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Երևանի մանկավարժ. ուսումնարանը (1941), սովորել Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացներում (1957–59): 1969–71-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությու-նում, 1971–75-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, 1975–77-ին՝ Հայ-հրատպետկոմի հրատարակչությունների վարչության պետ: 1977-ին մեկնել է արտասահման:

Ռուս-ից թարգմանել է Ա. Պուշկինի «Ռուսլան և Լյուդմիլա» (1953), «Բո-րիս Գոդունով» (1957), «Փոքրիկ ողբերգություններ» (1970), «Եվգենի Օնեգին» (1972), Մ. Լերմոնտովի «Կովկասի գերին» (1970), «Մահվան հրեշտակ» (1970), գերմ-ից՝ Ֆ. Շիլլերի «Բալլադներ» (1957), Վ. Բրյուսովի «Ճանապարհորդ ոզնին» (1960), Հ. Հայնեի «Աթա թրոլ» (1963), «Առակներ» (1969), Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ» (1963), Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» (1964), Բ. Բրեխտի «Լուկուլլոսի դատը» (1973, 2011) և այլ ստեղծագործություններ:


Լույս են տեսել նաև Մ-ի «Արջուկ» (1956), «Բալլադներ» (1962), «Զար-մանալի ծիլը» (1962), «Հետքեր սրտի վրա» (1963), «Սիրո լեգենդը» (1975) բանաստեղծությունների և բալլադների ժող-ները:



Վարդգես Միքայելյան

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (Թերլեմեզյան) Վահե Միքայելի (1.1.1900, Վան–10.2.1967, Երևան), թարգմանիչ: Ավարտել է Թիֆլիսի օտար լեզու-ների ինստ-ը (1927):

Ֆրանս-ից հայ. է թարգմանել Պ. Մերիմեի «Կարմեն: Կոլոմբա: Լոքիս» (1936) նովելները, Գ. Ֆլոբերի «Տիկին Բովարի» (1937), Վ. Հյուգոյի «Թշվառներ» (հ. 1–5, 1940–51), «Փարիզի Աստվածամոր տաճարը» (1953, 2012), Ա. Մ. Ստենդալի «Պարմի մենաստանը» (1961) վեպերը, Օ. դը Բալզակի, Գի դը Մոպասանի և ուր. գործերից, ռուս-ից՝ Ա. Գրիբոյեդովի «Ճանապարհորդական նոթեր» (1945) ուղեգրությունը, Ա. Չեխովի (1948) պատմվածքներից, Մ. Գորկու «Երկերի ժողովածուն» (հ. 6–7, 1951), Մ. Բուբենովի «Սպիտակ կեչի» (1949) վեպը ևն:



Վ. Միքայելյանի *«Ղրիմի հայկական գաղութի պատմություն. 1801–1917» (1970, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Վարդգես Ալեքսանի (5.12.1924, գ. Ղազանչի (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–31.3.2005, Երևան], պատմաբան, խմբագիր: ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Ավարտել է ԵՊՀ (1952): 1959-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ում (1988-ից՝ բաժնի վարիչ), միաժամանակ, 1972–88-ին՝ *«Լրաբեր հասարակական գիտությունների»* ամսագրի, 1999–2004-ին՝ *«Պատմաբանասիրական հանդեսի»* գլխ. խմբագիր:

Մ. կազմել և խմբագրել է «Հայ-իտալական առնչություններ (Զենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին)» (1974), «Լեռնային Ղարաբաղը 1918–1923 թթ.» (ռուս., 1992), «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում (1913–1919): Կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղարխիվի նյութերը» (առաջաբ., ծնթգր.՝ Մ-ի, ռուս., 1995), «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918 թթ.)» (2004) փաստաթղթերի ժող-ները, «Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.)» եռահատոր աշխատության առաջին 2 հատորները (2003):

Լույս են տեսել նաև Մ-ի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801–1917)» (1970), «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան)» (1979), «Ղրիմահայոց պատմություն» (1989), «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13–18-րդ դարեր)» (2000) աշխատությունները:



Քրիստափոր Միքայելյան

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Քրիստափոր Մկրտչի [18.10.1859, գ. Վերին Ագուլիս (Նախիջևան)–4.3.1905, գ. Կնյաժևո (Բուլղարիայի Խասկովոյի մարզ)], հաս., քաղ. գործիչ, խմբագիր-հրատարակիչ: ՀՅԴ կուս-յան հիմնադիր, տեսաբան ու առաջնորդ: 1880-ին ավարտել է Թիֆլիսի Ալեքսանդրյան ինստ-ը: 1880–85-ին դասավանդել է Վերին Ագուլիսի ու Թիֆլիսի դպրոցներում: 1885-ին ցար. կառավարության հրամանով հայկ. դպրոցները փակելու կապակցությամբ գրել է «Հայ եղբայրներ և հայ քույրեր» բողոք-թռուցիկը: Հեղ. գործունեության համար բանտարկվել է, աքսորվել Քիշնև: 1891-ին Սիմոն *Զավարյանի* հետ հիմնադրել և խմբագրել է ՀՅԴ *«Դրօշակ»* պաշտոնաթերթը (մի քանի համար): Եվրոպայում հայանպաստ շարժումն ուժեղացնելու նպատակով Փարիզում 1900–14-ին հրատարակել է *«Պրո Արմենիա»* (ֆրանս.) երկշաբաթաթերթը:

Լույս են տեսել Մ-ի «Յեղափոխականի մտքերը» (1906, Ժնև, Հ.Յ.Դ-ի տպ., վերահրտ.՝ 1981, Թեհրան, 1990, Ե.) ժող-ը, «Ամբոխային տրամաբանութիւն» (1990, Ե.) երկը:

Երկ. Քրիստափոր Միքայէլեանի նամակները (խմբ. և առաջաբ.՝ Հ. Տաճատպետյանի), Բ., 1993:

Գրկ. **Ֆրանգեան Ե.,** *Քրիստափոր Միքայէլեան, Բաքու, 1917, Բ., 1989:* **Ահարոնեան Ա.,** *Քրիստափոր Միքայէլեան, Բուենոս Այրես, 1945:*



«Մլքէ թագուհու Աւետարան». *Խորան (վերևում), «Համբարձում», մանրանկար (ներքևում, Վենետիկի մատենադարան, ձեռ. № 1144/86)*

«ՄԼՔԷ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ», IX դ-ի ձեռագիր մատյան, հայտնի ամենահին պատկերազարդ հայ. Ավետարանը: Բաղկացած է 464 թերթից, գրված է բոլորանկյուն երկաթագրով: 1832-ից ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում (ձեռ. № 1144/86): Ընդօրինակվել է 862-ին Վասպուրականում՝ Արծրունյաց տոհմի պատվերով: Ավետարանը կոչվում է Գագիկ Արծրունու երկրորդ կնոջ՝ Մլքե թագուհու անունով: 922-ին թագուհին ձեռագիրը նվիրաբերել է Վարագավանքի Սբ Աստվածածին եկեղեցուն. 1208-ից այն բազմիցս առևանգվել է, փրկագնվել և վերադարձվել եկեղեցուն:

«Մ. թ. Ա.»-ից պահպանվել են 6 մանրանկար խորանները (3-ը՝ Եվսեբիոսի թուղթը Կարպիանոսին, 3-ը՝ կանոնների աղյուսակներ), Համբարձման տերուն. պատկերը և 4 ավետարանիչների դիմանկարները: Խորաններից մեկի 2 կողմում դեմ հանդիման առյուծների պատկերներ են՝ յուրաքանչյուրի գլխավերևում՝ արևի սկավառակ. այս զինանշանային հորինվածքը բացառիկ է հայկ. մանրանկարչության մեջ: Դիմանկարների պատկերագր. և ոճ. առանձնահատկությունները բնորոշ են միջնադարյան արվ-ի գեղ. սկզբունքների կազմավորման շրջանին: «Համբարձման» պատկերում առկա են հորինվածքային մի շարք անսովոր մանրամասներ (դեռևս չհաստատված պատկերագր. տիպ):



Գեղ. և պատկերագր. առումով «Մ. թ. Ա.» հայկ. գրքարվ-ի կազմավորման ամենավաղ շրջանի սակավաթիվ և շքեղ նմուշներից է:


Գրկ. Զարդանկարք Աւետարանի Մլքէ թագուհւոյ..., կազմ.՝ Մ. Պոտուրյան, Վնտ.,1902: **Ճանաշեան Մ.,** *Հայկական մանրանկարչութիւն, հ. 1, Վնտ., 1966:* **Дурново Л.,** *Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1970;* **Der Nersessian S.,** *L'art arménien des origines au XVII^e siècle, P., 1977.*

ՄԽԻԹԱՐ, XIII դ–ի բանաստեղծ: Ըստ մատենագր. որոշ տեղեկությունների՝ թերևս «Պղնձե քաղաքի պատմության» թարգմանիչ Առաքել արեղա Անեցու կամ Շիրակվանեցու գործընկեր Մխիթար Չեչկանց Շիրակվանեցին է: Անիին մերձակա Բագնայրի վանքի 1223–ի արձանագրություններից մեկում Մ. հիշատակվում է իբրև որդի «Չեչկանց Աւետեացն» և հայր Վահրամի: Նրա անունով ավանդված կաֆանեը «Պղնձե քաղաքի պատմության» հայ. թարգմանության հայտնի հեղինակ ունեցող կաֆաներից հնագույնն են. հանդիպում են Մատենադարանի՝ «Պղնձե քաղաքի պատմության» № 6185 ձեռագրում (XVII դ.): Դրանք հինգն են՝ հայրենի չափով, 8–տող: Իբրև իրական կյանքի պատկերներ՝ առանձնանում են բնագրի մյուս կաֆաներից և ընդհանրություններ ունեն Ալեքսանդրի պատմության համապատասխան դրվագների հետ:

Գրկ. **Սիմոնյան Հ.,** *Հայ միջնադարյան կաֆաներ, Ե., 1975, էջ 152–153:*

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ (1230/1235, Երևան–1297/1300, Այրիվանք, թաղված է իր ճգնարան–քարայրի շեմին), պատմիչ, մանկավարժ, վարքագիր, բանաստեղծ, եկեղեց. գործիչ, երգահան: 1265–75–ին Խոր վիրապի վարդապետարանում ծավալել է գիտամանկավարժ. գործունեություն: 1279–ից գլխավորել է Այրիվանքի (Գեղարդավանք) ուսումնագիտ. կենտրոնը, միաժամանակ մինչև 1289–ը, որպես արքեպիսկոպոս, վարել է Պռոշյաններին ենթակա հոգևոր կենտրոնների եկեղեց. գործերը:

Մ. Ա–ու գործերից մեծարժեք է «**Նոր պատմութիւն**» (1289, հրտ.՝ «Պատմութիւն Հայոց», 1860, Մ., Լազարյան ճեմ. տպ., հրատարակիչ՝ Մկրտիչ Էմին, 2–րդ հրտ.՝ 1867՝ «Պատմութիւն ժամանակագրական» վերնագրով) ժամանակագր. երկը (նաև ռուս. և ֆրանս.՝ 1869), որն ընդգրկում է հայ և հարևան ժողովուրդների պատմությունները՝ Արարչագործությունից մինչև 1289–ը: Օգտագործված են հետագայում կորած սկզբնաղբյուրներ, որոնց շնորհիվ մեզ են հասել պատմ. եզակի տեղեկություններ: Նրա վաղ շրջանի գործերից են Ալեքսիանոս Կրոնավորի և *Ստեփանոս Սյունեցու* վարքերը:




Մխիթար Այրիվանեցու *«Պատմութիւն ժամանակագրական» (1867, Մոսկվա) գրքի տիտղոսաթերթը*

Գանձագրության մեջ առաջին անգամ օգտագործել է կանոնավոր տաղաչափություն, հանգավորում: Մ. Ա–ու 15 գանձերի ակրոստիքոսներում տեղեկություն կա նաև նրա կազմած բանաստեղծությունների ժող–ի՝ «Գանձարանի» մասին: Արժեքավոր է Մ. Ա–ու կազմած «Ճառընտիր» (Մատենադարան, ձեռ. № 1500) գիտ. ժող–ը, որտեղ զետեղված է հայ և թարգման. գրակ–ից հայտնի 13 խոշոր հեղինակների 43 աշխատություն՝ ամբողջ. ընդօրինակված բնագրերով: Մ. Ա–ու «Տօմարի տեսութիւն» աշխատությունից պահպանվել են առանձին հատվածներ՝ միահյուսված նրա «Նոր պատմութիւն» աշխատության բնագրին: Մ. Ա. գրել է նաև ճառեր, քարոզներ, Ստեփանոս Սյունեցուն նվիրված շարական: Հորինել է իր գրած գանձերի, տաղերի, օրհնության երգերի և շարականի երաժշտությունը:

Լույս է տեսել Մ. Ա–ու «Գանձեր և տաղեր» (աշխատասիր.՝ Է. Հարությունյանի, 2005) ժող–ը:

Գրկ. **Յովսէփեան Գ.,** *Մխիթար Այրիվանեցի: Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 1931:* **Հարությունյան Է.,** *Մխիթար Այրիվանեցի: Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1985:*



Մխիթար Անեցու *«Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց» (Ե., 1983, ԳԱ հրտ.) գրքի կազմը*

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, Երեց, XII դ–ի 2–րդ կեսի պատմիչ: Եղել է Անիի Կաթողիկե եկեղեցու ավագերեցը: Հառիճի վանահայր Գրիգոր վարդապետի խնդրանքով գրել է «**Պատմութիւն Հայոց**»–ը՝ Պարույրի գահակալությունից (մ. թ. ա. VII դ.) մինչև խաչակրաց արշավանքները (XI–XII դդ.): Երկի 3 մասից մեզ է հասել միայն առաջինի մի հատված (հայտնաբերել և հրատարակել է Քերովբե *Պատրկանյանը*): Մ. Ա–ու «Պատմութիւն Հայոց»–ը հրատարակվել է 1879–ին (ՍՊբ, Կայսեր. գիտ. ակադ. տպ.): Տպագրվել է նաև 1983–ին՝ «Մատեան աշխարհա–



Մխիթար Անեցի. *1321-ի ժողովածուի գլխա- և լուսանցազարդերով էջ (Մատենադարան, ձեռ. № 2961)*

վէպ հանդիսարանաց» վերնագրով: Մ. Ա-ուց պահպանվել է նաև Մուհամմեդ (Մահմեդ) մարգարեի մասին մի զրույց, որը նույն բովանդակությամբ կրկնվում է ***Վանական Վարդապետի*** և ***Վարդան Արևելցու*** երկերում:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, XIII դ-ի վերջի–XIV դ-ի կեսի գրիչ և մանրանկարիչ: Գրչության արվ-ը սովորել է Հոռոմոսի վանքում, ապա՝ Սուլթանիայում (Իրան), որտեղ աշխատել է մանրանկարիչ ***Ավագի*** հետ: 1338-ի Աստվածաշնչի (Մատենադարան, ձեռ. № 4429) և 1356-ի Ավետարանի (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1941) զարդանկարները Մ. Ա-ունն են, տերուն. պատկերները՝ Ավագինը: Մ. Ա-ու պատկերազարդած ձեռագրերում (Հոռոմոսի վանքում ընդօրինակված Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», XIII դ., ձեռ. № 3613, Սուլթանիայում 1321-ին ընդօրինակված Ժողովածու, ձեռ. № 2961, 1356–57-ի Ավետարան, ձեռ. № 7740, բոլորը՝ Մատենադարան) մասամբ զգացվում է Ավագի և նոր միջավայրի ազդեցությունը:

Գրկ. Յովսեփէան Գ., Մխիթար Անեցի: Գրիչ եւ նկարիչ, «Հասկ հայագիտական տարեգիրք», Անթիլիաս, 1948, էջ 192–221:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ [1120-ական թթ., Գանձակ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–1213, Նոր Գետիկի վանք (այժմ՝ Գոշավանք՝ ՀՀ Տավուշի մարզի Գոշ գ-ում)], գիտնական, օրենսդիր, առակագիր, մանկավարժ, հաս. գործիչ: Չափահաս տարիքում ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Աշակերտել է Հովհաննես Տավուշեցուն, ստացել վարդապետի աստիճան: Այնուհետև Մ. Գ. մեկնել է Կիլիկիա. թաքցնելով իր վարդապետ. աստիճանը՝ աշակերտել է Սև լեռան երևելի գիտնականներին և վերստին ստացել վարդապետի աստիճան: Վերադառնալով հայրենիք՝ սկզբում ապրել է Գանձակում, ապա տեղափոխվել Խաչեն, այնտեղից էլ՝ Գետիկի վանք: Երբ երկրաշարժից ավերվել են վանքն ու շրջակա գյուղերը, ամիրսպասալար Զաքարե Բ Մեծ և Իվանե Ա իշխանների հովանավորությամբ ու օժանդակությամբ նախկին Գետիկից ոչ հեռու՝ Տանձուտա ձորում, կառուցել է Նոր Գետիկի վանքը և հանգրվանել այնտեղ:



«Մխիթար Գոշ», *մանրանկար, 1713-ի Հայսմավուրք (Մատենադարան, ձեռ. № 7391)*

Մ. Գ. հեղինակ է մատենագրության տարբեր ճյուղերի վերաբերյալ մոտ մեկ տասնյակ աշխատությունների՝ «Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի», «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի եւ եղբօր իւրոյ» (հրտ.՝ «Արարատ», 1900–01), «Թուղթ խրատականք», «Շարք հայրապետացն Աղուանից», «Վկայութիւն սրբոյն Խոսրովայ», «Առակք», «Դատաստանագիրք հայոց» ևն:

Մեծ արժեք ունեն Մխիթար Գոշի առակների ժող-ը և Դատաստանագիրքը («Գիրք Դատաստանի»):

Մ. Գ-ի «**Առակք: Ոտանաւորք**» ժող-ը տպագրվել է 1790-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում, ներառում է նաև այլ հեղինակների առակներ ու ոտանավորներ: Տիտղթ-ին՝ «Առակք եւ ոտանաւորք խրատականք» (216 էջ, 12º, 11 x 6,2 սմ):

Առակները տպագրվել են նաև 1842 և 1854-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1951-ին (Ե., տեքստը ձեռագրերի հետ հմմտ. և ներած.՝ Է. Պիվազյանի), թարգմանվել են ֆրանս. և ռուս.:

Մ. Գ. «**Գիրք Դատաստանի**»-ն կազմել է 1184-ին: Պահպանվել են բազմաթիվ ձեռագրեր (շուրջ 40-ը՝ Մատենադարանում): Աղբյուրներն են մովսիսական օրենքները, հայոց կանոնական և հայ սովորութային իրավունքները: Հայտնի են Դատաստանագրքի Ա, Բ, Գ խմբագրությունները:

«Գիրք Դատաստանի»-ն բացառիկ նշանակություն ունի հայ ժողովրդի ներքին կյանքի մասին տեղեկատվության առումով: Այն հայկ.

իրավաքաղ. մտքի և ընդհանրապես միջնադարի իրավ. հուշարձանների շարքում խոշորագույններից է. ամփոփում է ժամանակի համար շատ առաջավոր դրույթներ: «Գիրք Դատաստանի»-ն կիրառվել է Էջմիածնի սինոդի գործավարության մեջ և հայկ. այն գաղթավայրերում, որտեղ հայկ. համայնքը ձեռք էր բերել ներքին ինքնավարության իրավունք (Սուդանում մինչև 2000-ը հայկ. համայնքի անդամների քաղաքաց. գործեր լսելիս պետ. դատարանը կիրառել է «Գիրք Դատաստանի»-ն):

«Գիրք Դատաստանի»-ն առաջին անգամ հրատարակել է Վահան ***Բաստրամյանցը*** 1880-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.): Տպագրվել է նաև 1975-ին (աշխատասիր.՝ Խ. Թորոսյանի), 2001 և 2008-ին (աշխարհաբարի փոխադր.՝ Մ. Ոսկանյանի): Ունի մի քանի այլալեզու խմբագրություններ: Առաջին անգամ թարգմանվել է լատ. (կրճատված, փոփոխված՝ տեղին և պայմաններին համապատասխան), որը լեհահայոց գաղութը 1519-ին ներկայացրել է Սիգիզմունդ I-ի հաստատմանը՝ ազգ. օրենքներով ղեկավարվելու համար (տես ***Լեհահայոց դատաստանագիրք***): Լատ. խմբագրությունը 1862-ին հրատարակել է Ֆ. Բիշոֆը, 1519–23-ին լատ-ը թարգմանվել է լեհ. (հրատարակել են Կ. Վույցիցկին 1843-ին, Ս. Բարոնչը՝ 1869-ին, 1906-ին տպագրվել է նաև Կրակովի «Լեհական օրինաց հավաքի» 3-րդ հատորում): Բուն «Գիրք Դատաստանի»-ն թարգմանվել է (ոչ լրիվ) հայատառ ղփչաղ., վրաց., վերջինիս հիման վրա կազմվել է Վախթանգի օրենքների «Հայկական իրավունք» բաժինը, որի վրաց. խմբագրությունը հրատարակել են Լ. Մելիքսեթ-Բեկը (1928), Ի. Դոլիձեն (1963): Ռուս. առաջին անգամ հրատարակվել է 1828-ին:

Երկ. Միջնադարյան Հայաստանի առակները (Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի), Ե., 2010:


Գրկ. **Սուքիասյան Ա.,** *Մխիթար Գոշը և «Հայոց Դատաստանագիրքը», Ե., 1965:* **Պիվազյան Է.,** *Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանահիւսական ընտրյուն, Ե., 1987: Армянский судебник Мхитара Гоша (пер. Паповяна А. с древнеармянского, ред., вступительная статья и премечания Арутюняна Б.), Е., 1954;* **Karst J.,** *Grundriss der Geschichte des armenischen Rechtes, «Zeitschrift für Vergleichende Rechtswissenschaft», 1906, Bd.19.*

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ [մոտ 1120, ք. Հեր (Խոյ՝ Իրանի հս-արմ-ում)–1200], բժիշկ, բնագետ, փիլիսոփա: Հայ դաս. բժշկության և կիլիկյան բժշկ. դպրոցի հիմնադիրը: Կրթությունն ստացել է Կիլիկյան Հայաստանում: Գործել է Սսում և Հռոմկլայում՝ Ամենայն հայոց կաթողիկոսներ ***Ներսես Շնորհալու*** և ***Գրիգոր Դ Տղայի*** հովանավորությամբ:

Մ. Հ. 1180-ական թթ-ին Գրիգոր Դ Տղայի պատվերով գրած իր գլխ.՝ «**Ձերմանց մխիթարութիւն**» աշխատության մեջ անդրադարձել է Դաշտային Կիլիկիայի ճահճոտ վայրերում տարածված տենդային հիվանդությունների դասակարգման, պատճառագիտության, ախտածնության, մահճաբուժության, կանխարգելման և բուժման հարցերին: Երկը շարադրել է ժամանակի խոսակց. լեզվով, որպեսզի հասկանալի լինի բոլոր ընթերցողներին: Մ. Հ., ըստ ախտաբան. առանձնահատկությունների, տարբերակել է «միօրյա», «բորբոսային» և «հալևմաշ» (հեկտիկ) ջերմեր: Մ. Հ. առաջադրել է պատճառագիտ. ուսմունքը, հիվանդությունների առաջացումը բացատրել է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջավայրի վնասակար գործոնների ազդեցությամբ:

«Ձերմանց մխիթարութիւն»-ն առաջին անգամ տպագրվել է 1832-ին Վենետիկում (Սբ Ղազարի տպ.), այնուհետև՝ Երևանում (1992, 2007, աշխարհաբարի փոխադր.՝ Ա. Ավետիսյանի), ռուս. (1955, 1968):

Մ. Հ. մեծ ավանդ ունի հայ բժշկ. տերմինների ստեղծման գործում: Մ. Հ-ու բժշկագիտ. ավանդները շարունակել են Ստեփանոսը, ***Գրիգորիսը, Ամիրդովլաթ Ամասիացին***: Համաշխ. բժշկության և բնագիտ-յան պատմության մեջ բժշկապետի դերը բարձր է գնահատել նրա երկի գերմ. թարգմանիչը՝ Է. Զեյդելը:



«Առակք եւ ոտանաւորք...» (1790, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը



«Գիրք Դատաստանի»-ի (1975, Ե., ԳԱ հրտր.) կազմը



Մխիթար Հերացի



«Մխիթար Հերացի և Ներսես Շնորհալի», մանրանկար, 1644-ի Ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 7046)



ՄԽԻԹԱՐԻՆ

ՐԱԲԱՆԱՊԵՏԻ ՀԱՅԵՐԻՒՆ

ՀԱՅՐԱՏՆԻ

ՄԽԻԹԱՐԵՒԵՒՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Մխիթար Հերացու *«Ջերմանց մխիթարութիւն» (1832, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Մխիթար Սեբաստացի

Մ. Հ–ու անունով են կոչվել ԵՊՀՀ–ն, փողոց՝ Երևանում, սահմանվել է ՀՀ «Մխիթար Հերացի» մեդալը:

Գրկ. **Կծոյան Ա.**, *Մխիթար Հերացի. բժիշկ XII դարու, Ե., 1968:* **Վարդանյան Ս.**, *Բժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1982:* **Оганесян Л.**, *История медицины в Армении, ч. 2, Е., 1946, с. 74–142.*

ՄԽԻԹԱՐ ՍԱՄՆԵՑԻ [Կերմանեցի, 1260–ական թթ., գ. Կերմանց (Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառ)–1337, Մեծոփավանք (Տուրուբերան նահանգի Քաջբերունիք գավառ)], մատենագիր, մանկավարժ: Սովորել է Մեծոփավանքում և ձեռնադրվել քահանա: 1282–85–ին Գլաձորի համալսարանում աշակերտել է ***Ներսես Աշնցուն*** և ***Եսայի Նչեցուն***: Որպես առաջին շրջանավարտի՝ նրան շնորհվել է վարդապետի աստիճան: Մինչև 1337–ը ղեկավարել է Մեծոփավանքի դպրոցը, ծավալել գրչական, քարոզչ. աշխատանք, պայքարել ունիթորության դեմ: Մ. Ս–ուց մեզ է հասել 10 ձեռագիր, այդ թվում՝ «Մեկնութիւն թղթոց եւ հանգստեան Յովհաննու» մեկնությունը, «Խօսք ընդդէմ տօմարին Լեւոնի» աշխատությունը, բազմաթիվ ճառեր (4–ը՝ Երևանի, ձեռ. № 193, 952, 1180, 3606, 2–ը՝ Երուսաղեմի մատենադարաններում):

Դանիել Մեծոփեցին Մ. Ս–ու կենսագրությունը մտցրել է Հայսմավուրքի մեջ, իսկ Մկրտիչ Մեծոփեցու գրած Մ. Ս–ու վարքը լույս է ընծայել Գ. Հովսեփյանը 1899–ին Վաղարշապատում:

Մ. Ս–ու ճառերի ժող–ը հրատարակվել է 1993–ին՝ ամերիկացի հայագետ Փիթեր Քաուիի աշխատասիրությամբ:

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ [ավազանի անունը՝ Մանուկ, 7.2.1676, ք. Սեբաստիա–27.4.1749, Վենետիկ, թաղված է Սբ Ղազար կղզում], գիտամշակութ. և եկեղեց. գործիչ, Մխիթարյան միաբանության հիմնադիրը: 1685–91–ին սովորել է Սեբաստիայի Սբ Նշան, 1691–92–ին՝ Սբ Էջմիածնի, Սևանի, Կարինի վանքերում: 1693–ին մեկնել է Բերիա (Հալեպ), ծանոթացել կաթոլիկ միսիոներների հետ: 1696–ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա, 1699–ին՝ վարդապետ: 1701–ին Կ. Պոլսում հիմնադրել է միաբանություն և հաստատել կանոնադրությունը: Միաբանությունը 1715–ին տեղափոխվել է Վենետիկ. Ծերակույտի 1717–ի սեպտ. 8–ի հրովարտակով միաբանությանը շնորհվել է քաղաքամերձ Սբ Ղազար կղզին:

Սբ Ղազարում Մ. Ս. կառուցել է եկեղեցի, բացել դպրոց, հիմնադրել է մատենադարան, Վենետիկի տարբեր տպարաններում լույս է ընծայել շուրջ 50 (14–ը՝ հեղինակային) անուն գիրք, այդ թվում՝ ***«Պարտէզ հոգեւոր»*** (1719), ***Ասպվածաշունչ*** (1733)՝ բաղդատած 7 այլալեզու թարգմանությունների հետ, ***«Բառգիրք հայկազեան լեզուի»*** (հ. 1–2, 1749–69) արժեքավոր բառարանը, զբաղվել գիտամատենագիտ. աշխատանքով:

Թարգմանել է և հրատարակել ***Ալբերտ Մեծի*** «Համառօտութիւն աստուածաբանութեան» երկը, որտեղ զետեղել է «Լուծմունք դժուարիմաց եւ տարակուսանաց բանից Ալպերտին», «Դրախտ հոգւոյ» (1724) և այլ գործեր:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Մ. Ս–ու՝

«**Կրթութիւն աղօթիցը**». առաջին անգամ 1718–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (268 էջ, 12º և 6º, 10,7 x 6,2 սմ): Վերահրատարակվել է 1772–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (366 էջ, 8º, 12,3 x 7,4 սմ):

«**Քրիստոնէական վարդապետութիւն**» երկը. առաջին անգամ 1725–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Ա տիտղթին՝ «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան ընդ որում դնի եւ այբբենարան...», Բ–ին՝ «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան ի յուսումն մանկանց...» (312 էջ, 12º, 14,5 x 8 սմ): Վերահրատարակվել

է 1727-ին (տպակից է «Տաղարան»-ին, 132 էջ, 12º, 11,5 x 6 սմ), 1732-ին (աշխարհաբար, տպակից է «Տաղարան»-ին, 323 էջ, 12º, 12 x 6 սմ) և 1737-ին (100 էջ, 8º) նույն տպարանում:

1750-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում (282 էջ, 12º, 11,6 x 5 սմ):

1771-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում՝ աշխարհաբար: Տպակից է «Տաղարան»-ին (323 էջ, 12º, 11,6 x 6 սմ)

1775-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (100 էջ, 8º, 11,4 x 7,2 սմ):

«**Դուռն քերականութեան: Բառգիրք**» արևմտահայ աշխարհաբարի առաջին քերակ-ը (հայ. և հայատառ թուրք.). 1727-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Դուռն քերականութեան: Աշխարհաբառ լեզուին հայոց…» (149 էջ, 12º, 11,5 x 5,5 սմ):

«**Քերականութիւն գրաբառի լեզուի**» երկը. առաջին անգամ 1730-ին Վենետիկում՝ Բատիստա Ալբրիցի Ձերոլիմոյի տպարանում: Տիտղթ-ին՝ «Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազան սեռի» (584 էջ, 8º, 17,3 x 11,2 սմ): Վերահրատարակվել է 1770-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (584 էջ, 4º, 17 x 11 սմ):

«**Հարցումն քերթողական**» երկը, որը Մ. Ս-ու «Քերականութեան...» մի հատվածն է. 1730-ին Վենետիկում (111 էջ): Տպարանը նշված չէ, սակայն հավանաբար նույնն է:

«**Տօմար**»-ը. 1733-ին Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Տօմար կարճառօտ» (40 էջ, 8º, 12 x 7 սմ): Վերահրատարակվել է 1748-ին (տպակից է Էֆիմէրտէի, 216 էջ, 12º, 11 x 6 սմ) և 1771-ին (40 էջ, 8º, 9,8 x 6,7 սմ) նույն տպարանում, 1786-ին Վենետիկում՝ Ձիովաննի Պիացոյի տպարանում (32 էջ, 8º, 14 x 8,8 սմ), 1789-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (տպակից է Սաղմոսարանի, 40 էջ, 8º, 12,3 x 7 սմ):

«**Մեկնութիին գրոց ժողովրդին**» երկը. 1736-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (453 էջ 8º, 14,2 x 8,2 սմ):

«**Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի որ ըստ Մատթէոսի**» երկը. 1737-ին նույն տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Մեկնութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի», Բ-ին՝ նույնը (1022 էջ, 4º, 19 x 12,2 սմ):

«**Խոկումն վարուց**» երկը. 1753-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում (43 էջ, 12º և 6º, 9,2 x 5 սմ):

«**Ձայն Քրիստոսի եւ հաւատացեալ հոգւոյն**» երկը. 1753-ին նույն տպարանում (139 էջ, 12º և 6º, 9,2 x 5 սմ):

«**Հարցումն եւ պատասխանի**» երկը. 1759-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Հարցումն եւ պատասխանի զքերականութենէ եւ զմասանց նորին» (111 էջ, 8º, 8,5 x 5,5 սմ):


Գրկ. **Ագոնց Ս.**, *Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ րաբունապետի եւ Աբբայի, Վնտ., 1810:* **Թորոսեան Հ.**, *Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Վնտ., 1932:* **Ֆերհաթեան Բ.**, *Մխիթար: Սարդը, հայրը, սուրբը, Վնս., 1976:* **Ճէմճէմեան Ս.**, *Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը, Վնտ., 1980:* **Թալաթինեան Ա.**, *Մխիթար Սեբաստացի, Վնտ., 1991:* **Պզտիկեան Յ.**, *Մխիթար վրդ. Սեբաստացիի եւ Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին, Ե., 2003:* **Պետրոսյան Վ.**, *Մխիթար Սեբաստացու լեզվաբանական հայացքները, Ե., 2008:*

«ՄԽԻԹԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ», ամսագիր: Լույս է տեսել 1947–68-ին Վենետիկում: 1969–85-ին՝ *«Հայ ընտանիք»*:


ՄԽԻԹԱՐՅԱՆ Աբել (1804–1873, Վաղարշապատ), հայագետ-պատմաբան, արքեպիսկոպոս, Տրապիզոնի հայոց հոգևոր առաջնորդ: Սովորել է Սբ Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, դարձել Մայր աթոռի միաբանության անդամ: Հիմնադրել է «Թանգարան Հայկազյան» ընկերությունը, եղել Մայր աթոռ Սբ Էջմիածնի *«Արարատ»* պաշտոն. ամսագրի առաջին խմբագիրը:

Լույս են տեսել Մ-ի «Ճանապարհորդութիւն յԱնի» (1855, ԿՊ, «Մասյաց» տպ.), «Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ» (1856, Թ., Հակոբ Ար-

Մխիթար Սեբաստացի



«Գիրք քրիստոնէականի վարդապետութեան...» (1727, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Խոկումն վարուց» (1753, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Կրթութիւն աղօթից» (1772, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
1856

Աբել Մխիթարյանի *«Պատմութիւն մենասպանին Հառիճոյ ի Շիրակ» (1856, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*



Գուրգեն Մխիթարյան



Մխիթարյան միաբանության *վանական համալիրը Վենետիկի Սուրբ Ղազար կղզում*

զումանյանի տպ.), «Վէպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու» (1857, ԿՊ, «Մասիսի» տպ.), «Անուշաւան ի գերեվարս...» (1860, Մ., Լազարյան ճեմ. տպ.), «Հայոց ազգի քաղաքական վիճակը միջին դարերէն մինչեւ մեր ժամանակը» (1862, նույն տպ.), «Պատմութիւն Հոռոմոսին Վանաց ի Շիրակ...» (1870), «Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ...» (1874), «Վաղարշապատ քաղաքամայր Հայաստանի...» (1874), «Կաթուղիկէ Մայր եկեղեցի Վաղարշապատայ...» (1875, վերջին 4-ը՝ Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) և այլ երկեր: Հրատարակվել է նաև Մ-ի «Երկերի ժողովածուն» (2009, Էջմիածին):

ՄԽԻԹԱՐՅԱՆ Աղեքսանդր Մխիթարի (13.7.1846, Ալեքսանդրապոլ–17.8.1916, Ալեքսանդրապոլ), բանասեր, բանահավաք: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1867-ից զբաղվել է մանկավարժությամբ: Գրառել է Շիրակ ու Վանանդ գավառների հեքիաթներ, առակներ, առածներ, երգեր ու պարերգեր («Տաղեր ու խաղեր», 1900, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ., «Փշրանք Շիրակի ամբարներից», «Էմինեան ազգագրական ժողովածու», 1901): Մ-ի թարգմանությամբ հրատարակվել են արլ. մի քանի հեքիաթներ («Շիրին և Ֆահրատ», «Լեյլի և Մեջնուն», «Շահ Իսմայիլ» ևն): Կազմել և խմբագրել է աշուղ. երգարաններ:

Գրկ. Դուրգարյան Կ., Աղեքսանդր Մխիթարյան, «ՊՀՀ», 1971, № 3:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Արբակ Տիգրանի [24.1.1911, Թանթա (Եգիպտոս)–27.4.2004, Բրյուսել], եգիպտաբան, Հին աշխարհի արվ-ների և կրոնների տեսաբան, պատմաբան, ինագետ: 1929-ից՝ Բրյուսելի Էլիզաբեթ թագուհու անվ. եգիպտաբանության ինստ-ի աշխատակից, 1947-ից՝ ընդհանուր քարտուղար և վարչ. խորհրդի անդամ: 1942–1945-ին աշխատակցել է Կահիրեի Արևելքի ինագիտ-յան (ֆրանս.) ինստ-ին, 1964–76-ին՝ Բրյուսելի արվ-ի և պատմության թագավոր. թանգարանի բաժնի վարիչ, 1963-ին՝ Բրյուսելի ազատ համալսարանի դասախոս, ապա՝ խորհրդատու: 1968–69-ին ուսումնասիրել է Երուսաղեմի հայկ. գանձերն ու գանձարանները: Աշխատությունները լույս են տեսել հայ., ֆրանս., գերմ., անգլ. և հոլանդ.:

Երկ. Introduction a l'Egypte, Bruxelles et Neuchatel, 1956; Religions du Konde. I'Egypte, P., 1964; Tesors du Patriarcat Arménien de Jérusalem, Jérusalem, 1969; Les Arts de I'Islam, Bruxelles, 1976; La Peinture egyptienne, Geneve, 1954 (2me ed., P., 1979); Miniatures arméniennes d'Ispahan (Avec S. Der Nersessian), Bruxelles, 1986.

ՄԽԻԹԱՐՅԱՆ Գուրգեն [1890, Շապին-Գարահիսար–5.11.1963, Ուստր (ԱՄՆ)], խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Սովորել է ծննդավայրում, 1908–12-ին հետևել է Կ. Պոլսի ազգ. կեդրոն. վարչության դասընթացներին, ապա դասավանդել է տեղի Հայրիկյան վարժարանում: 1918–22-ին՝ «Ճակատամարտ» (տես *«Ազատամարտ»*) օրաթերթի խմբագիր: 1922-ին տեղափոխվել է Եգիպտոս, 1923–24-ին Կահիրեում հրատարակել է «Նոր շարժում» գրական ամսագիրը, 1924–47-ին՝ *«Յուսարեր»* օրաթերթի խմբագիր, 1944–48-ին, միաժամանակ նույնանուն *«Յուսարեր»* ամսագրի հիմնադիր-խմբագիր: 1948-ին տեղափոխվել է ԱՄՆ, եղել է ՀՅԴ ԿԿ քարտուղար, 1952–62-ին՝ *«Հայրենիք»* շաբաթաթերթի գլխ. խմբագիր:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, **Մխիթարյաններ**, հայ կաթոլիկ. վանական և մշակութ. հաստատություն: Հիմնադրել է ***Մխիթար Սեբաստացին*** 1701-ի սեպտ. 8-ին Կ. Պոլսում՝ հոգևոր, ուսումնակրթ., գիտ. և մշակութ. գործունեություն ծավալելու նպատակով: 1706-ին միաբանությունը տեղափոխվել է Մեթոն բերդավան (վենետիկապատկան Մորեա թերակղզի՝ Հունաստանի հվ-արմ-ում), 1715-ից հաստատվել է Վենետիկի մերձակա Սբ Ղազար կղզում, որը 1717-ին Վենետիկի Ծերակույտի հրովարտակով շնորհվել է Մ. մ-յանը: 1712-ին Վատիկանը Մխիթար Սեբաստացուն ճանաչել է միաբանության առաջնորդ, նրան շնորհել աբբահոր կոչում:

XIX դ-ի սկզբին, երբ Ֆրանսիան վերացրել էր իր տիրապետության ներքո գործող բոլոր կրոն. միաբանությունները, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I Բոնապարտը 1810-ի օգոստ. 17-ի հրովարտակով

Սբ Ղազարի հայկ. միաբանությունը ճանաչել է գիտ. հաստատություն՝ «Հայկական ակադեմիա» պատվավոր տիտղոսով, և պահպանել այն:

1789-ին հիմնադրվել է Վենետիկի Մխիթարյան տպարանը: Առաջին տպարանապետը եղել է Հովհաննես Զոհրապը: Գործելով Վատիկանի սահմանած կարգի շրջանակներում և նրանց աջակցությունն ապահովելու նպատակով՝ Մխիթարյաններն սկզբն. շրջանում թարգմանել և հրատարակել են կաթոլիկ. գրակ., հետագայում ծավալել են հայագիտ-բանասիր., գրական-գեղ. և մշակութ. բուռն գործունեություն: XVIII դ-ի 1-ին կեսին Մ. մ-յան հայագիտ. խոշոր նվաճումը Մխիթար Սեբաստացու *«Բառգիրք հայկազեան լեզուի»* (հ. 1, 2, 1749, 1769) բացատր. բառարանի հրատարակումն էր, որից հետո մինչև դարավերջ և XIX դ-ի կեսերը տպագրվել են հայ պատմիչների երկերի քնն. բնագրեր, գրաբարի քերակ-յանը նվիրված ուսումնասիրություններ, դասագրքեր, Մ. մ-յան հայրերի՝ Ստեփանոս ***Ագոնցի***, Միքայել ***Չամչյանի***, Գաբրիել ***Ավետիքյանի***, Մկրտիչ ***Ավգերյանի***, Հարություն ***Ավգերյանի***, Ղուկաս ***Ինճիճյանի***, Մանվել ***Զահնջախյանի***, Թադևոս ***Թովմաճանյանի***, Արսեն ***Բագրատունու***, Էդուարդ ***Հյուրմյուզյանի***, Ղևոնդ ***Ալիշանի***, Գարեգին ***Զարբհանալյանի*** և ուր. հայագիտ., պատմաբանասիր., աշխարհագր., աստվածաբան. աշխատությունները, գրական-գեղ. ստեղծագործությունները, բառարաններ, համաշխ. և հայ դասականների գործեր: Տես նաև ***Վենետիկի հայկական տպագրություն***:


Մխիթար Սեբաստացու ջանքերով՝ նրա անձն. գրադարանի հիմքի վրա Սբ Ղազար կղզում հիմնադրվել է ***Վենետիկի մատենադարանը***. ներկայում տպագիր ֆոնդը շուրջ 100 հզ. միավոր է, ձեռագիր ֆոնդը՝ ավելի քան 3400 միավոր:

1772-ին, Ստեփանոս Մելգոնյանի (1717–1799) աբբահայրության օրոք, կանոնադրության փոփոխության հետ կապված անհամաձայնության պատճառով միաբանների մի խումբ՝ Աստվածատուր ***Բարիկյանի*** (1738–1825) գլխավորությամբ, թողել է Վենետիկը, 1773-ին հաստատվել Տրիեստում (տես ***Տրիեստի հայկական տպագրություն***), 1810-ից՝ Վիեննայում: 1811-ի հունիսի 8-ին ավստր. կառավարությունը պաշտոնապես ճանաչել է նրանց միաբանությունը: 1874-ին միաբանության տարածքում կառուցվել է եկեղեցի: Ժամանակի ընթացքում ստեղծվել է ***Վիեննայի մատենադարանը***, որտեղ պահվում են շուրջ 2600 հայ. ձեռագրեր, ավելի քան 120 հզ. գիրք՝ հայ. և օտար լեզուներով, հայ պարբ. մամուլի հարուստ հավաքածու: Միաբանությունն ունի նաև թանգարան, որի բազմաթիվ ցուցանմուշներից հատկապես հայտնի են հայկ. դրամների, եկեղեց. զգեստների և սպասքի հավաքածուները:

1811–12-ին Վիեննայի Մ. մ. հիմնադրել է տպարան (գրքեր է տպագրել 50 լեզվով) և ծավալել գրահրատարակչ. լայն գործունեություն: Վիեննայի Մ. մ. իր ծաղկուն շրջանն է ապրել XIX դ-ի 2-րդ կեսից՝ նշանավոր գիտնական հայագետներ Վրթանես ***Զալըխյանի***, Անտոն ***Գարագաշյանի***, Հովսեփ *Գաթրճյանի*, Ղևոնդ ***Հովնանյանի***, Կղեմես ***Միպիլյանի***, Արսեն ***Այդընյանի*** և այլոց գործունեության շնորհիվ, որոնք զարգացրել են հայ քնն. լեզվաբանությունը, պատմագրությունը, դրամագիտությունը, ձեռագրագիտությունը ևն: Տես նաև ***Վիեննայի հայկական տպագրություն***:

XIX դ-ի վերջից–XX դ-ի սկզբից Մ. մ-յան 2 ճյուղավորումները սերտորեն համագործակցել են միմյանց հետ և մեծապես նպաստել հայ գիտ-յանն ու մշակույթին: XIX դ-ի վերջից իրենց գիտ., գրական, մշակութ. գործունեությամբ հայտնի են Գրիգորիս ***Գալեմքյարյանը***, Բարսեղ ***Սարգիսյանը***, Հակոբոս ***Տաշյանը***, Արսեն ***Ղազիկյանը***, Սուքիաս ***Էփրիկյանը***, Վարդան ***Հացունին***, Բ. Չրաքյանը (1877–1970), Հ. Աստուրյանը (1880–1950), Մկրտիչ ***Պոտուրյանը***, Ներսես ***Ակինյա***-

Մխիթարյան միաբանության *հրատարակություններ*



«Մրուածական աղօթք քիթապը» (1783, հայատառ թուրք.) գրքի փիփղոսաթերթը




«Գործադրութիւն թուաբանական ի գբօսանս համբակաց» (1817) գրքի փիփղոսաթերթը




«Կոչումն ընծայութեան» (1832) գրքի փիփղոսաթերթը

Մխիթարյան միաբանության *հրատարակություններ*



Կղեմես Սիպիլյանի «Դասաւորութիւն Ռուբինեան դրամոց» (1892) գրքի տիտղոսաթերթը



Մկրտիչ Մկրյանի *«Հայ հին գրականության պատմություն» (1976, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*

նը, Վահան ***Հովհաննիսյանը***, Համազասպ ***Ոսկյանը***, Վ. Ինգլիզյանը (1897–1968), Մեսրոպ ***Ճանաշյանը***, Պողոս ***Անանյանը***, Ս. Ճեմճեմյանը (1939–96), Օգոստինոս ***Սեբուլյանը***, Պողոս-Լևոն ***Զեքիյանը*** և ուր.:

Մ. մ. հայ գիտամշակութ. կյանքում կարևոր ներդրում է ունեցել նաև իր պարբ. մամուլով: 1843-ից Վենետիկի Մխիթարյանները հրատարակում են ***«Բազմավէպ»*** հայագիտ. հանդեսը, որը ներկայում անընդմեջ հրատարակվող հայ ամենահին պարբ-ն է: Վիեննայի Մխիթարյանները 1847–63-ին հրատարակել են ***«Եւրոպա»*** շաբաթաթերթը, 1887-ից լույս է տեսնում ***«Հանդէս ամսօրեայ»*** ամսագիրը, հայտնի են նաև ***«Եղանակ Բիւզանդեան»*** (1803–20), ***«Դիւրակ Բիւզանդեան»*** (1812–16), ***«Մխիթարեան ընտանիք»*** (1947–68), ***«Հայ ընտանիք»*** (1969-ից) հանդեսները ևն:

Մխիթարյանները գործուն մասնակցություն են ունենում հայագիտ. միջազգ. գիտաժողովներին: 1993-ից ՀՀ-ում գործում է «Հայաստանի Մխիթարյան կենտրոնը», որի նպատակը Հայաստանի և Սփյուռքի ազգ-մշակութ. և կրթ. կյանքին օժանդակելն է, հայ և օտարազգի գիտնականների համագործակցությունը Սբ Ղազարի ակադ-ի հետ ավելի սերտացնելը: Կենտրոնը կազմակերպում է դասախոսություններ, հրատարակում գրքեր:

2000-ի հուլիսի 10–21-ին Սբ Ղազարի Սայրավանքում կազմակերպվել է Մ. մ-յան միացյալ ընդհանուր արտակարգ ժողով. մասնակից 2 հաստատությունների բոլոր միաբանների որոշումով ստեղծվել է Մխիթարյան միացյալ միաբանություն՝ մեկ կենտր. վարչությունով: 2000-ից Մխիթարյան միացյալ միաբանության ընդհանուր աբբահայրը Եղիա ծ. վրդ. Քիլաղյանն է:

2012-ին հայ տպագրության 500-ամյակի շրջանակներում Սբ Ղազարում կազմակերպվել է հայ ինատիպ գրքի ցուցադրություն, սահմանվել է «Հակոբ Մեղապարտ» մեդալ:

Գրկ. **Երիցեան Ա.**, *Վենետիկի Մխիթարեանք, Թ., 1883:* ***Մխիթարեան յոբելեան 1701–1901, Վնտ., 1901:*** **Սարգիսեան Բ.**, *Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, Վնտ., 1905:* **Ակինեան Ն.**, *Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան միաբանութեան գրական գործունէութեան վրայ, Վնն., 1912:* **Եարտըմեան Տ.**, *Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին եւ հայագիտութեան, Լոս Անջելես, 1987: Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի, Վնն., 1972: Գրացուցակ Մխիթարեան տպարանին. 1700–1978, Վնտ., 1978:* **Աւոյան Թ.**, *Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը (XVIII դ.–XIX դ-ի 40-ականներ), Ե., 2001:* **Պզտիկեան Յ.**, *Մխիթար վրդ. Սեբաստացիի եւ Մխիթարեան-ներու նպաստը հայ մշակոյթին, Ե., 2003:* **Apat M.**, *Die Wiener Mechitaristen. Armenische Monche in der Diaspora, Wien-Köln, 1990.*

ՄԿՐՅԱՆ Հովհաննես Կարապետի (1831, Պարտիզակ–14.9.1909, Կ. Պոլիս), բանասեր, պատմաբան, հաս. գործիչ: 1866-ին ձեռնադրվել է քահանա, վարել է Կ. Պոլսի պատրիարքարանի փոխանորդի պաշտոնը: 1878-ին, որպես պատրիարքարանի պատվիրակ, Հայկ. հարցի կապակցությամբ մեկնել է Լոնդոն՝ իր հետ տանելով Արմ. Հայաստանի վիճակի վերաբերյալ տեղեկագիր:

Լույս են տեսել Մ-ի «Կենսագրութիւն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց Երեւանեցւոյ» (1886, Թ., Հովհաննես Սարտիրոսյանի տպ.) աշխատությունը, որտեղ Մ. առաջին անգամ ներկայացրել է Մ. Թաղիադյանի գրական ու հաս. գործունեությունը, «Մահարձանք եւ յիշատակարան...» (1877, ԿՊ, Արամյանի տպ.) հնագիտ. նյութերի, «Աղօթագիրք ըստ ժամակարգութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ» (1883, նույն տպ., 1886, 1891, 1895, երեքն էլ՝ ԿՊ, Գարեգին Պաղտատյանի տպ.) Հայ եկեղեցու ողջ ժամերգությունների ժող-ները: Մ-ի արխիվը պահվում է Անթիլիասի կաթողիկոս. դիվանում:

ՄԿՐՅԱՆ Մկրտիչ Սամբրեի (9.11.1907, Վան–26.10.1983, Երևան), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1945), պրոֆ. (1946), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956): Գիտ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է ԵՊՀ (1930): 1939-ից դասավանդել ԵՊՀ-ում, 1941–47 և 1957–77-ին՝ դեկան, 1947–53-ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի տնօրեն:

Լույս են տեսել Մ-ի «Գրիգոր Նարեկացի» (1955), «Էջեր հայ վիպասանության պատմությունից» (1957), «Մովսես Խորենացի» (1970), «Խաճակյանի հումանիզմը» (1975), «Հայ հին գրականության պատմություն (V–X դարեր)» (1976), «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը» (1981) աշխատությունները: Կազմել է հայ գրակ-յան քրեստոմատիաներ, դասագրքեր՝ Հայաս-

տանի և Սփյուռքի դպրոցների համար. VIII դասարանի «Հայ գրականություն» դասագիրքը հրատարակվել է 12 անգամ:

Երկ. Երկեր, հ. 1–2, Ե., 1987–88: Գրականության պատմության հարցեր, Ե., 1982:

ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՑԻ (Խրիմյան Մկրտիչ), **Խրիմյան Հայրիկ** (4.4.1820, Վան–29.10.1907, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս 1892–ից: Ժողովուրդը նրան մեծարել է Հայրիկ պատվանունով: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կտուց անապատների հոգևոր դպրոցներում: 1854–ին ձեռնադրվել է վարդապետ, 1868–ին՝ եպիսկոպոս: 1840–60–ական թթ–ին եղել է ուսուցիչ, հիմնադրել Վարագավանքի ժառանգավորաց գիշերօթիկ (1857), Մշո Սբ Կարապետ վանքին կից ժառանգավորաց (1862) վարժարանները: Հրատարակել է ***«Արծուի Վասպուրական»*** (1855), ***«Արծուիկ Տարօնոյ»*** (1863) պարբ–ները:


Լույս են տեսել Մ. Ա. Վ–ու «Հրաւիրակ Արարատեան» (1850), «Հրաւիրակ Երկրին աւետեաց» (1851, երկուսն էլ՝ ԿՊ, Հովհաննես Մյուհենտիայանի տպ.) չափածո երկերի ժող–ները, «Մարգարիտ արքայութեան երկնից» (1866, ԿՊ, Արամյանի տպ.), «Դրախտի ընտանիք» (1876, ԿՊ, Գևորգ Զարդարյանի տպ., 2009, 2011) երկասիրությունները, «Հայգոյժ» (1877, ԿՊ, Եղիա Տնտեսյանի տպ.), «Վանգոյժ» (1877, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Սիրաք եւ Սամուէլ: Բարի հօր կրթական դասեր» (1878, ԿՊ, Սամվել Պարտիզպանյանի տպ., 1887, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ., 2009), «Ժամանակ եւ խորհուրդ իւր» (1876, ԿՊ, Ե. Տնտեսյանի տպ., 1895, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Պապիկ եւ թոռնիկ» (1894, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ., 2011) բարոյախոս. գրքերը: 1929–ին Նյու Յորքում հայ կրթ. հիմնարկությունը հրատարակել է Մ. Ա. Վ–ու «Ամբողջական երկեր» («Կոչնակի» տպ.) ժող–ը: 1992–ին Երևանում տպագրվել է Մ. Ա. Վ–ու «Երկերը»:

Հայ ժողովուրդը երգեր է ձոնել Մ. Ա. Վ–ուն:

Գրկ. **Գաբրիէլեան Մ.**, *Խրիմեան Հայրիկ, Նյու Յորք, 1892:* **Մալումեան Խ.**, *Խրիմեան: Կենսագրական տեսութիւն, Թ., 1892: Խրիմեան Հայրիկ, Փ., 1925:* **Ահեմեան Հ.**, *Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929:* **Գիւզալեան Գ.**, *Խրիմեան Հայրիկ, Բ., 1954:* **Գուշակեան Թ.**, *Խրիմեան Հայրիկ, Անթիլիաս, 1990:* **Կոստանդյան Է.**, *Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000: Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903–07 թթ.), կազմ. և առաջաբ.՝ Ս. Բեհբուդյանի, «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Է, Ե., 2000:*



Մկրտիչ Ա. Վանեցի



Մկրտիչ Ա. Վանեցու *«Հրաւիրակ Արարատեան» (1850, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ [մոտ 1394, գ. Պոռ (Բիթլիսի/Բաղեշի նահանգ)–մոտ 1470], տաղերգու, նկարիչ, հաս–եկեղեց. գործիչ: Կրթությունն ստացել է Բաղեշի Սբ Անանիա և Սբ Գևորգ վանքերում: 1420–ական թթ–ին հաստատվել է Ամիդ/Դիարբեքիր քաղաքում: 1430–ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1437–ին նշանակվել Ամիդի եպիսկոպոս և Միջագետքի հայոց հոգևոր առաջնորդ: Մ. Ն. գրել է տաղեր, հիշատակարաններ, «Պատասխան ի լատինացոց թխտոյն» (1436) պատմ. փաստաթուղթը, «Արարիչն Արաբացոց» (1469) ողբը՝ Միջագետքի ժանտախտի համաճարակի առիթով:

Մ. Ն. իր տաղերով («Տաղ հարսանեաց եւ ուրախութեան մարդկան», «Տաղ վասն բլբուլին եւ վարդին») խորացրել է միջնադարյան հայկ. քնարերգության աշխարհիկ բնույթը, առաջինն է ստեղծագործության նյութ դարձրել պանդխտության թեման («Տաղ վասն ղարիպի ասացեալ»):

Նկարիչ լինելու համար ստացել է Նաղաշ մականունը: Հմուտ է եղել նաև գրչության արվ–ում:

1898–ին Կ. Կոստանյանը հրատարակել է «Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը» (Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) երկը: 1965–ին Երևանում հրատարակվել է Մ. Ն–ի «Տաղերը» (աշխատասիր.՝ Է. Խոնդկարյանի):

Գրկ. **Զամինեան Ա.**, *Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջևան, 1914, էջ 219–221:* **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 4, Ե., 1970:*




Մկրտիչ Նաղաշի *«Տաղեր»-ի (1965, Ե., ԳԱ հրտ.) տիտղոսաթերթը*

ՄԿՐՏԻՉ ՕՐԲԵԼԵՆՑ, XV դ–ի գրիչ: Աշակերտել է ***Գրիգոր Տաթևացուն***, եղել ***Թովմա Մեծոփեցու*** դասընկերը: Հիշվում է 1407–ին Թովմա Մեծոփեցու՝ Տաթևում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում: Մինչև 1410–ը Մ. Օ. Կարապետ կրոնավորի և Թումա գրիչի օգնությամբ ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»–ը: Ուսումնառությունից հետո ձեռնադրվել է վարդապետ և հաստատվել



Բորիս Մկրտչյան



Լևոն Մկրտչյանի *«...Իմանալ գբանս հանճարոյ» (1985, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Հարություն Մկրտչյանի *«Անհայտ զինվորի հիշատակարանը» (գիրք 1, 1969, Ե., «Հայաստան») գրքի փիփղոսաթերթը*

Մեծոփավանքում, ապա տեղափոխվել է Բերկրիի Տեր Հուսկանորդու վանքը, որտեղ 1420-ին ընդօրինակել է մի Ավետարան: Մ. Օ-ի մասին վերջին անգամ հիշատակվում է 1432-ին Արճեշում:

Գրկ. Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1, Ե., 1955:

ՄԿՐՏՉՅԱՆ Բորիս Միքայելի (29.7.1929, Ստեփանակերտ–20.7.1999, Երևան), լրագրող, խմբագիր: Վաստ. ժուռնալիստ (1969): Ավարտել է ԵՊՀ միջազգ. հարաբերությունների ֆակ-ը (1952): 1953-ից աշխատել է *«Կոմունիստ»* (ռուս.) թերթի խմբագրությունում, 1975–91-ին՝ գլխ. խմբագիր: 1961–75-ին՝ միութ. «Իզվեստիա», 1993–99-ին՝ «Պրավդա» թերթերի սեփական թղթակից ՀՀ-ում, միաժամանակ՝ «Գոլոս Արմենիի» (ռուս.) թերթի թղթակից և խորհրդատու:

ՄԿՐՏՉՅԱՆ Գագիկ Ալեքսանդրի (ծ. 16.1.1956, Երևան), լրագրող, խմբագիր: Վաստ. լրագրող (2006): Մանկավարժ. գիտ. դ-ր (1991): Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1980): 1980–85-ին աշխատել է «Ռուսկի յազիկ վ արմյանսկոյ շկոլե» (ռուս.) ամսագրի խմբագրությունում, 1985–89-ին՝ Մանկավարժ. գիտ-ների ԳՀԻ-ում, 1989–92-ին՝ Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ինստ-ի օտար լեզուների ամբիոնի վարիչ, 1992–97-ին, միաժամանակ՝ «Երկիր», ապա՝ «Գոլոս Արմենիի» (ռուս.) թերթերի խմբագրություններում՝ որպես քաղ. մեկնաբան: 1997-ից՝ *«Հայոց աշխարհ»* օրաթերթի գլխ. խմբագիր:

ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն Մկրտչի (2.3.1933, Ախալցխա–22.8.2001, Եղվարդ, թաղված է Երևանում), գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1971), պրոֆ. (1973): ՀՀ ԳԱԱ ակադ. (1996): Գիտ. վաստ. գործիչ (1981): 1975–79-ին՝ ՀԳՄ քարտուղար, 1980–98-ին՝ ԵՊՀ ռուսաց լեզվի ու գրակ-յան ֆակ-ի դեկան և ամբիոնի վարիչ, 1998–2001-ին՝ Հայ-ռուս. (Սլավոն.) պետ. համալսարանի հիմնադիր-ռեկտոր:

Ռուս. լույս են տեսել Մ-ի «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» (1963), «Հայ պոեզիան և XIX–XX դարերի ռուս բանաստեղծները» (1968), «Բան ժամանակաց» (1977), «Հարազատն ու մտերիմը» (1978), «Բաց պատուհաններով տունը» (1989) աշխատությունները, հայ.՝ «Վիլյամ Սարոյանը մոտիկից» (1978) գրական դիմանկարը, «Պոեզիայի հասակը» (1979) ուսումնասիրությունը, «Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին» (1976) հոդվածների, «Քաղցր է լույսը» (1980) պատմվածքների, հուշերի, «...Իմանալ գբանս հանճարոյ» (1985) գրականագիտ. էսսեների ժող-ները: Նրա խմբագրությամբ, ծանոթագրություններով ու մեկնաբանություններով ռուս., գերմ., անգլ. լույս են տեսել հայ միջնադարյան բանաստեղծների և հայ նոր գրակ-յան դասականների մի շարք գործեր:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1983):

Երկ. Прежде всего не убивать, Е., 1991; Слепой, но не настолько, Е., 1998.

Գրկ. Пусть не гаснет свет в окне Левона (сост. К. Саакяниц), Е., 2004; Левон Мкртчян: Библиография, Е., 2008.

ՄԿՐՏՉՅԱՆ Խաժակ [ծ. 1960, Կամիշլի (Սիրիա)], խմբագիր: Ավարտել է Հալեպի համալսարանը (1986): 1989–90-ին՝ «Դրօշակի» (Աթենք) աշխատակից, 1991–93-ին՝ ՀՅԴ Հայաստանի կենտկոմի կազմակերպչ. և ուղեկից միությունների կապի պատասխանատու, 1993–97-ին՝ *«Գանձասար»* (Հալեպ) շաբաթաթերթի խմբագիր, միաժամանակ պատրաստել է «Դրօշակի»՝ «Թուրքիոյ շուրջ» բաժնի նյութերը: 1997–99-ին՝ *«Յուսաբեր»* օրաթերթի, 1999–2008-ին՝ ՀՅԴ *«Հայրենիք»* շաբաթաթերթի խմբագիր:

ՄԿՐՏՉՅԱՆ Հարություն Գաբրիելի [15.4.1903, գ. Փայխներ (Վանի նահանգի Արճեշ գավառ)–15.11.1992, Երևան], գրող, գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1975), պրոֆ. (1968): Գիտ. վաստ. գործիչ (1963): Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ-ը (1940): 1934–37-ին՝ ՀԳՄ առաջին քարտուղար, 1930–32-ին՝ *«Ոյա թագա»*, 1932 և 1935–36-ին՝ *«Գրական թերթ»*, 1934–37 և 1947–50-ին՝ *«Սովետական գրականություն»*, 1942–43-ին՝ «Մարտական դրոշ» պարբ-ների գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ–ի «Նովելներ և պատկերներ» (1945), «Անմահության այգի» (1957), «Հայրենի երկրում» (1963), «Վերջին բարեկամը» (2004) պատմվածքների, նովելների ժող–ները, «Անհայտ զինվորի հիշատակարանը» (գիրք 1–3, 1969–75, 1980), «Ձղջում» (1988) վեպերը, «Գրական դեմքեր» (1953), «Միքայել Նալբանդյան» (1955), «Ակսել Բակունց» (1958), «Ստեփան Զորյան» (1977) աշխատությունները:

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1990:

ՄԿՐՏՉՅԱՆ Սարտիրոս, **Շիրազեցի** (Դավթյանց Սարտիրոս), XIX դ–ի 1–ին կեսի գրող, խմբագիր, գրաքննադատ: 1821–23–ին՝ ***«Շտեմարան»*** հանդեսի խմբագիր, որտեղ հրատարակել է իր բանաստեղծությունները (մեծ մասամբ՝ գրաբար), առակները («Ագռաւի մասին», «Բժիշկ ամօթխած», «Դարուիշ եւ խափշիկ» ևն):

Լույս են տեսել Մ–ի «Խտրադիմայ դժրողութեան...» («Հասարակախօսութիւն» հավելված–ուսումնասիրությամբ), «Անաչառ բանտ» (երկուսն էլ՝ 1821, Կալկաթա, Պողոս Հորդանանյանի տպ.) կատակերգությունները, «Վիկտորիայ» (1841, Կալկաթա, Եպիսկոպոս. ճեմ. տպ.) այբբենարանը, որը երկար տարիներ ուս. ձեռնարկ է եղել Կալկաթայի հայկ. դպրոցի համար:

Մ. հանդես է եկել նաև Վ.Օ.Տ., Ներսես Ապողան, Անխաբ Եպիփան և այլ գրական կեղծանուններով:

Գրկ. **Կարինյան Ա.**, *Անվանի հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Ե., 1956:* **Թերզիբաշյան Վ.**, *Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 1, Ե., 1959:*

ՄԿՐՏՉՅԱՆ Նարինե Հովհաննեսի (ծ. 11.9.1963, Երևան), լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1987): Դասավանդում է ՀՊՄՀ–ում, ԵՊՀ–ում: 1988–91–ին աշխատել է ՀՀ ԳԱԱ հրատարակչությունում, 1991–95–ին՝ «Հայք», 1995–98–ին՝ «Ազգ» թերթերի խմբագրություններում: 1997–ից Մամուլի ազգ. ակումբի նախագահն է: 2002–03–ին, միաժամանակ՝ «Այժմ» թերթի խմբագիր, 2003–07–ին՝ «Ամբիոն» թերթի հիմնադիր–խմբագիր:

ՄԿՐՏՉՅԱՆ Ներսես Ալեքսանի (ծ. 22.9.1928, Երևան), լեզվաբան–արևելագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1995): Ավարտել է ՀՊՄԻ (1953): 1971–ից աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտ–յան ինստ–ում:

Լույս են տեսել Մ–ի «Բուրդուրի բարբառը» (1971), «Բառերի կենսագրություն» (1996, 2004), «Սեմական լեզուները և հայերենը» (ռուս., 2005), «Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը» (2006), «Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում» (2007) աշխատությունները, մասնակցել է «Պատմագիրք Եոզկատի և շրջավայրից (Գամիրք) հայոց» (1988) պատմագրքի ստեղծման աշխատանքներին, կազմել «Երաժշտական բառարան» (2000):

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ (Մյասնիկով) Ալեքսանդր Ֆեոդորի (Աստվածատուրի) [28.1(9.2).1886, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք–ի շրջագծում)–22.3.1925, Թիֆլիս], կուս., պետ. և ռազմ. գործիչ, գրականագետ, խմբագիր: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1904–06), ավարտել Մոսկվայի համալսարանի իրավաբանության ֆակ–ը (1911): 1921–ին նշանակվել է ՀԽՍՀ ԺԿԽ նախագահ և ռազմ. գործերի ժողկոմ: ԱԽՖՍՀ–ի կազմավորումից (1922) հետո ֆեդերացիայի գործկոմի նախագահներից էր, ապա՝ ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի 1–ին քարտուղարը: Մ. ՌԿ(բ)Կ ԿԿ կովկասյան բյուրոյի 1921–ի հուլիսի 5–ի նիստում դեմ է քվեարկել Լեռնային Ղարաբաղը Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ մտնելու մասին որոշմանը: 1922–ին՝ ***«Նոր աշխարհ»***–ի խմբագիր, 1923–ին՝ ***«Մարտակոչ»*** պարբ–ի հիմնադիր–խմբագիր:

Զգտնելով նոր իշխանության շուրջը համախմբել հայ մտավորականներին՝ շատերին հրավիրել է Խորհրդ. Հայաստան: Մ. ՀԽՍՀ գործիչներից առաջինն է անդրադարձել Հայրենիք–Սփյուռք հարաբերություններին, լույս է ընծայել «Կուսակցությունները գաղութահայության մեջ» (1924) աշխատությունը: Հրապարակել է հոդվածներ, գրել հեղ. շարժումների պատմության և հայ գրակ–յան խնդիրներին վերաբերող աշխատություններ, 1913–14–ին «Մշակ» թերթում անդրադարձել է Հայկ. հարցին:


Մ. մեծապես նպաստել է ***Հայաստանի ազգային գրադարանի*** կայացմանը, 1925–90–ին գրադարանը կոչվել է նրա անունով:



Ներսես Մկրտչյանի *«Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը» (2006, Ե., հեղ. հրտ.) գրքի կազմը*



Ալեքսանդր Մյասնիկյան



Ա. Մյասնիկյանի *«Երկեր»–ի (հ. 1, 1984, Ե., «Հայաստան») փիփղոսաթերթը*

Հանդես է եկել նաև Ալ. Մարտունի, Ալյոշա, Բոլշևիկ, Կոմունիստ կեղծանուններով:

Մ–ի անունով ՀՀ–ում և ԼՂՀ–ում կոչվել են քաղաքներ, փողոցներ, դպրոցներ, Երևանում կանգնեցվել է նրա արձանը:

Երկ. Ընտիր երկեր, Ե., 1957: Երկեր, հ. 1–4, Ե., 1984–86:

Գրկ. **Մնացականյան Ա.**, *Ակեքսանդր Մյասնիկյան, Ե., 1955:* **Ամիրյան Ս.**, *Ակեքսանդր Մյասնիկյան, Ե., 1986:*




Հովհաննես Մյուհենտիսյան

ՄՅՈՒԼԼԵՐ (Müller) Ֆրիդրիխ [5.3.1834, Եմնիկ (Բոհեմիա)–25.5.1898, Վիեննա], ավստրիացի լեզվաբան, հայագետ: 1853–57–ին սովորել է Վիեննայի և Գյոթինգենի համալսարաններում: Տիրապետել է հայ–ին, հուն–ին, սանսկրիտին: 1858–ին եղել է Վիեննայի համալսարանի, ապա՝ արքունական մատենադարանի տնօրեն, 1866–ից՝ Վիեննայի համալսարանի դասախոս, Կայսեր. գիտ–ների ակադ–ի անդամ: Պատմաբանասիր. աշխատություններում անդրադարձել է Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը, հայոց գրերի գյուտին, Կորյունի, Ղազար Փարպեցու, Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ), Առաքել Դավրիժեցու, Վարդան Բարձրբերդցու (Արևելցի), Մխիթար Գոշի երկերին, իսկ լեզ–վաբ. հոդվածներում, որոնք գերազանցապես ամփոփված են «Արմենիակա» (գերմ.) հանդեսում, հետազոտել է նաև հայ–ի խոնարհման ու հոլովման համակարգերի օրինաչափությունները, բառակազմությունը, ինչյունաբանությունը: Մ. հայ–ը համարել է իրան. լեզու:


Լույս են տեսել Մ–ի «Ընդհանուր ազգագրություն» (1879) և «Լեզվաբանության հիմունքներ» (հ. 1–4, 1876– 1887) աշխատությունները:

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.**, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*



«Շարական հոգեւոր երգոց...» (տպագրիչ՝ Հ. Մյուհենտիսյան, 1853) գրքի փիփողսաթերթը

ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ Հովհաննես Գևորգի [21.2(4.3).1810, Կ. Պոլիս–17(29).11.1891, Կ. Պոլիս], տպարանատեր–հրատարակիչ, հայկ. նոր տպատառեր ստեղծողներից: Ավարտել է Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանը: Աշակերտել է Համբարձում *Լիմոնճյանին,* տիրապետել նոր հայկ. ձայնագրությանը: Մ. ստեղծել է Լիմոնճյանի նոտային նշանների տպագր. ձևերը, ձուլել կաղապարներ: 1839–ին դարձել է Սկյուտարի ճեմարանի տպարանատերը, 1844–45–ին հիմնադրել է սեփական տպարան, ապա՝ գրաձուլարան: 1856–ին կառուցել է ժամանակակից հաստոցներով սարքավորված առաջնակարգ տպարան: Թուրք. կառավարությունը Մ–ին է վստահել թուրք. թղթադրամի տպագրությունը: Նրա ստեղծած նուրբ տպատառերն օգտագործվել են ոչ միայն Կ. Պոլսի, այլև Երուսաղեմի, Թիֆլիսի ու հայաշատ այլ վայրերի տպարաններում: Կ. Պոլսում Մ. հրատարակել է ավելի քան 200 անուն գիրք, այդ թվում՝ իր «Յայտարարութիւն վասն նորակերտ տառիցս» (1847) գրքույկը, «Հայաստան», «Բուրաստան», «Մասիս», «Նոյեան աղաւնի», «Աստղիկ արեւելեան», «Կիլիկիա», «Զեփիւռ հայրենեաց», «Ժամանակ» և այլ պարբ–ներ: Ստեղծել է նաև թուրք. արաբատառ տառատեսակներ, որոնք կոչվել են «Մյուհենտիսյան տառեր»:



Ասատուր Մնացականյան

Թուրք. տպագրության զարգացման մեջ իր մեծ վաստակի համար ստացել է «Թուրքերի Գուտենբերգ» պատվանունը և արժանացել կառավար. պարգևների:

Գրկ. **Թէոդիկ**, *Տիպ ու տառ, ԿՊ, 1912, էջ 73–80, Ե., 2012 (համանահանություն):*

«ՄԻԽՆԱՏԻՅԻ ԷՐՃԻՅԱՍ» («Արգեոսի մունետիկ»), հայատառ թուրք. գիտ., արվեստագիտ., գրական շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա: Լույս է տեսել 1859–62–ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Կարապետ *Փանոսյան:* Ունեցել է ընդգծված ժողովրդավար. ուղղվածություն, հանդես եկել Միքայել *Նալբանդյանի* հայացքների պաշտպանությամբ: Պայքարել է հայ պահպանող. հոսանքների և թուրք. իշխանություններ հակահայկ. քաղաքականության դեմ: Բազմիցս հետապնդվել է, փակվել է Զեյթունի դեպքերի լուսաբանման պատճառով:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ասատուր Շմավոնի, **Ասատուր Շեմս** [11.7.1912, գ. Ոսկեվազ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–27.6.1983, Երևան, թաղված է ծննդավայրում], պատմաբան, բանասեր, արվեստաբան: Պատմ. գիտ. դ-ր (1964), պրոֆ. (1973): Ավարտել է Թբիլիսիի գյուղատնտ. ինստ-ը (1939): 1940-ից աշխատել է Մատենադարանում:

Լույս են տեսել Մ-ի «Հայկական զարդարվեստ» (1955), «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ» (1966) աշխատությունները, «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» (1956), «Հայ միջնադարյան հանելուկներ IV–XVIII դդ.» (1980), «Հայրեններ» (1995) ժող-ները՝ քնն. բնագրերով: Գրել է ուսումնասիրություններ Նաղաշ Հովնաթանի, Պաղտասար Դպիրի (համահեղ.՝ Շ. Նազարյան), Գրիգոր Դ Տղայի մասին, կազմել նրանց գործերի գիտ. բնագրերը: Լևոն *Խաչիկյանի* հետ ղեկավարել է Մատենադարանի ձեռագրացուցակի (հ. 1–2, 1965–84) կազմման ու խմբագրման աշխատանքները:

Երկ. Գիրք գրված փշալարի ճանկերում: Արձակ և չափածո էջեր (1942–1943), Ե., 1997:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Հենրիկ Կարապետի [12.4.1923, գ. Ներքին Զեյվա (այժմ՝ գ. Առատաշեն՝ ՀՀ Արմավիրի մարզում)–12.5.2001, Երևան], տառաստեղծ, նկարիչ-ձևավորող: Մշակույթի վաստ. գործիչ (1968): 1948–53-ին աշակերտել է Հակոբ *Կոջոյանին*: Ավարտել է Մոսկվայի Պոլիգրաֆմաշ ինստ-ը (1960): 1962–82-ին ղեկավարել է իր ստեղծած «Նոր տառեր» լաբորատորիան, 1982–94-ին՝ *«Հայատառ»* հրատարակչության գլխ. նկարիչ: Մ. ստեղծել է «Սովորական նոր» (1954), «Մնացականյան» (1963), «Աստղ» (1963), «Զվարթնոց» (1964), «Այբբենարան» (1968), «Հանրագիտարանային» [1969, «ՀՍՀ»-ի (1974–86) համար], «Լրագրային» (1970), «Արարատ» (1980), «Ռոսլին» (1985) և այլ տառատեսակներ: Մ. հեղինակ է «Հայկական տպագրական և գեղարվեստական տառատեսակներ» (1964), «Հայկական տառատեսակներ» (1972, 1979) ալբոմների, նաև պարբ-ների գլխագրերի («Լենինյան ուղիով», «Առողջապահություն», «Պոլիգրաֆիստ», «Սովետական Հայաստան» ևն):


Ձևավորել է Ա. Աբրահամյանի «Հայ գրի և գրչության պատմություն» (1959), Ա. Ջիվելեգովի «Միքելանջելո» (1977), Վ. Հարությունյանի «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրություն» (1985), Գ. Շախկյանի «Լոռի: Պատմության քարակերտ էջերը» (1986), Ծ. Աղայանի «Հայ ժողովրդի պատմության նկարազարդ ակնարկներ» (1989), Մ. Մոնտենի «Փորձեր» (1991) և այլ գրքեր, ինչպես նաև Լ. Դուռնովոյի «Հայ ձեռագրային զարդանկարչություն» (1978), «Հայկական տարազ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1983), «Հայկական ոսկերչություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1983), Շ. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (1985) և այլ ալբոմներ:

Մ-ի կենսագրությունը և նրա մշակած տառատեսակները ներառված են «Լեզվի մշակույթի տեսակ» (անգլ., 2002, Նյու Յորք) գրքում:


ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Վազգեն Միքայելի [15.10.1915, գ. Գետաշեն (այժմ՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի բռնագրավված տարածքում)–10.10.1998, Երևան], գրականագետ-քննադատ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1962): Ավարտել է Լենինգրադի օտար լեզուների ինստ-ը (1939): 1948–53-ին՝ *«Գրական թերթ»*-ի, 1958–61-ին՝ *«Սովետական գրականություն»* ամսագրի գլխ. խմբագիր, 1971–85-ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի փոխտնօրեն:

Լույս են տեսել Մ-ի «Գրական հարցեր» (1958), «Գեղամ Սարյանի պոեզիան» (1963), «Գեղամ Սարյան» (ռուս., 1964), «Ժամանակի հետ» (1968), «Տարիներ և ճակատագրեր» (1978), «Քննադատի աշխարհը» (1981) աշխատությունները, «Խոստովանանք կամ հարյուր նամակ Ստելլային (1941–45)» (1985) հուշագր. նամականին, «Իմ ժամանակակիցները» (1989) գրականագիտ. հոդվածների ժող-ը:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ (Տեմիրճյան) Հակոբ Իգնատիոսի [16.10.1886, գ. Փոքր Արմտան (Էրզրումի նահանգի Երզնկա գավառ)–29.1.1978, Կ. Պոլիս], գրող: Սովորել է Կ. Պոլսի Ռոբերտ քոլեջում: 1907-ից դասավանդել է ծննդավայրում: 1914-ին մեկնել է Կ. Պոլիս: Պարբ. մամուլում (հիմնականում՝ Կ. Պոլսում) տպագրվել են Մ-ի պատմվածքները, ակնարկները, ժամանակագրությունները, հեքիաթներն ու թատերգությունները (առաջին պատմվածքը՝ «Հարս ու կեսուր», տպագրվել է 1906-ին «Մասիս» թերթում):



Հենրիկ Մնացականյան



Հ. Մնացականյանի *«Հայկական տառատեսակներ» (1972, Ե., «Հայաստան») ալբոմի 1 էջ*



Վազգեն Մնացականյան



Հակոբ Մնձուրի



Հ. Մնձուրու *«Երկեր»-ի (1986, Ե., «Սովետական գրող») կազմը*



«Մշակ», *1872–1921-ին, Թիֆլիս*



«Մշակ», *1925–57-ին, Ֆրեզնո*

Լույս են տեսել Մ-ի «Կապոյտ լոյս» (1958, 1968, Ե.), «Արմտան» (1966), «Կռունկ, ուստի՞ կուգաս» (1974) պատմվածքների ժող-ները, «Երկերը» (1986, Ե.): Մ-ի ստեղծագործությունը հագեցած է հայրենաբաղձությամբ, հայրենի եզերքի պատկերներով, նկարագրություններով:

«ՄՇԱԿ», հաս–քաղ., գրական օրաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1872–1921-ին (1885-ին ընդհատվել է) Թիֆլիսում: Հիմ-նադիր-խմբագիր՝ Գրիգոր ***Արծրունի*** (1872–92-ին), խմբագիրներ՝ Ալեքսանդր ***Քալանթար***, Համբարձում ***Առաքելյան***, ***Լևո***, Տիգրան ***Հախումյան:*** Արծրունյան շրջանի «Մ.», որպես ազատամիտ մտավո-րականության գաղ. պաշտոնաթերթ, առաջադրել է ժողովրդավար. վերափոխումների ծրագրեր, սոցիալ-տնտ. զարգացման ճշմարիտ ուղին համարել է խաղաղ բարեփոխումները, տնտեսության ազա-տականացումը: Հանդես է եկել հանուն հայկ. դպրոցի աշխարհիա-կանացման, եկեղեցուց նրա անջատման: Ունեցել է ընդգծված ռուս. կողմնորոշում, թուրք. լծի տակ տառապող քրիստոնյա ազգերի փրկության հույսը կապել է Ռուսաստանի հետ:

Համախմբելով ժամանակի առաջադեմ հաս. գործիչներին ու գրող-ներին (Պ. Պռոշյան, Ղ. Աղայան, Գ. Սունդուկյան, Շիրվանզադե, Վ. Փափազյան, Մ. Փորթուգալյան, Ա. Արփիարյան, Լևո և ուր.)՝ կարևոր դեր է կատարել հայ մշակութ. և լուսավոր. կյանքում, հայ նոր գրակ-յան զարգացման գործում: Շարունակաբար տպագրել է Րաֆֆու հրապա-րակախոս. հոդվածները, ինչպես նաև ազգ–ազատագր. պայքարի կոչող նրա երկերը, որոնք մեծապես նպաստել են պարբ-ի հեղինակության բարձրացմանն ու ազդեցության ոլորտի ընդլայնմանը:

Ռուս. առաջին հեղափոխության տարիներին (1905–07) ազգ. հար-ցը եղել է «Մ.»-ի ուշադրության կենտրոնում, 1917-ին պաշտպանել է Ռուսաստանի ժամանակավոր կառավարությանը, մերժել Հոկտեմ-բերյան հեղափոխությունը, սատարել Այսրկովկասի ազգայնական կուս-ների քաղաքականությանը: Փակվել է Վրաստանում խորհրդ. իշխանության հաստատումից հետո:

Գրկ. Լէօ, *Գրիգոր Արծրունի, հ. 1–3, Թ., 1902–05:* Դանիէլեան Լ., *«Մշակի» քա-ռասնամեակը (1872–1912), Թ., 1912: «Մշակ» լրագիր: Բովանդակության ցանկ, Ե., 1975:* Գևորգյան Լ., *Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը», Ե., 1996:*


«ՄՇԱԿ», քաղ., գրական շաբաթաթերթ (սկզբում՝ եռօրյա): Լույս է տեսել 1925–57-ին Ֆրեզնոյում՝ հայ., անգլ.: Հիմնադիր-խմբագիր՝ Լևոն Լյուլեճյան: Լուսաբանել է Սփյուռքի ազգ., կրթ., մշակութ. կյան-քը, «Հայաստան» խորագրով ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի տնտեսության ու գիտ-յան ձեռքբերումներին, աջակցել է ՀԲԸՄ-ի, ՀՕԿ-ի, ամերիկահայ հայրենակց. միությունների ձեռնարկներին:

«ՄՇԱԿՈՅԹ», երիտասարդ. գրական հրատ.: Լույս է տեսել 1935–1937-ին (10 համար) Փարիզում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Ա. Սեմա (Գեղամ ***Աթմաճյան***), Պետրոս Զարոյան: Ունեցել է հակաֆաշիստ. ուղղվածություն, անդրադարձել է գրակ-յան ժողովրդայնության հար-ցերին, գաղութահայության ճակատագրին ու հայրենադարձությանը (Սեմայի «Սեւ ու ճերմակ» հրապարակախոս. ակնարկաշարը): Զգալի տեղ է հատկացրել մշակույթի խնդիրներին, տպագրել թարգմանու-թյուններ (Շ. Բոդլեր, Ժ. Կիպլինգ, Ա. Ձեգերս, Բ. Բրեխտ և ուր.): Պարբ-ին աշխատակցել են Վ. Շուշանյանը, Բ. Թոփալյանը, Զ. Որբունին, Մ. Աթմաճյանը, Հ. Բալույանը, Ա. Տատրյանը, Դ. Քերեսթեճյանը և ուր.:

«ՄՇԱԿՈՅԹ», ազգագր. տարեգիրք: Լույս է տեսել 1948-ին Ստամբուլում: Խմբագիր-հրատարակիչ՝ Թորոս ***Ազատյան:*** Տպագրել է հայագիտ. հոդվածներ, դրվագներ՝ Դ. Վարուժանի, Ե. Օտյանի, Հ. Պարոնյանի կյանքից, նրանց անտիպ նամակները, ինչպես նաև Կոմիտասի, Սիամանթոյի, Ռ. Սևակի ձեռագրերը: Անդրադարձել է Գ. Զոհրապի, Հ. Ասատուրի և այլ գրողների նամակներին ու գրա-գրություններին:

«ՄՇԱԿՈՅԹ», գրական հանդես: Լույս է տեսել 1954–55-ին Բեյրութում: Տես *«Էջեր գրականութեան եւ արուեստի»*:

«ՄՇԱԿՈՅԹ», արվ-ի և գրակ-յան պարբերագիրք: Լույս է տեսել 1967, 1970 և 1972-ին (3 գիրք՝ 1–8 միացյալ համարներով) Հալեպում: Խմբագիր-հրատարակիչ՝ Անդրանիկ *Արարատ* (Նաճարյան): Սփյուռքահայության առաջնահերթ խնդիրը համարել է ազգապահպանումն ու կապերի ամրապնդումը Հայրենիքի հետ: Ներկայացրել է Սփյուռքի ստեղծագործողներին, խորհրդահայ գրողներին ու արվեստագետներին: Տպագրել է արաբ. գրակ-յան նմուշներ: «Մ.» անդրադարձել է Խորհրդ. Հայաստանի 50-ամյակի տոնակատարություններին, նրա կեսդարյա հաջողություններին:



«Մշակոյթ», *1935–37-ին, Փարիզ (№ 10, 1937)*

«ՄՇՈ ՃԱՌԸՆՏԻՐ», **Տոնական**, հայ. ամենամեծ մագաղաթե ձեռագիրը (55,5 x 70,5 սմ, քաշը՝ 28 կգ, Մատենադարան, ձեռ. № 7729). Ճառերի, վարքերի, վկայաբանությունների, պատմ. քաղվածքների և ներբողների ժող., որոնք դասավորված են ըստ տարվա տոների (այստեղից էլ՝ «Տոնական» անվանումը): Ստեղծվել է 1200–02-ին Երզնկայի Ավագ վանքում (պատվիրատու՝ Բաբերդի տանուտեր Աստվածատուր, գրիչ՝ Վարդան Կարնեցի, ծաղկող՝ Ստեփանոս): Ձեռագիրն այժմ ունի 601 մագաղաթե թերթ, բաժանված է 2 մասի, կազմ չունի: Սկզբում ունեցել է 660 թերթ. 17-ը պահվում են Վենետիկի, 1-ը՝ Վիեննայի մատենադարաններում, 1977-ին Մատենադարանը Մոսկվայի ազգ. գրադարանից ստացել է «Մ. Ճ.»-ի 2 թերթ, որոնք անջատվել էին 1918-ին: Հարուստ է լուսանցազարդերով, գլխազարդերով և զարդագրերով: Ունի 4 տերուն. պատկերներ՝ «Ծնունդ», «Մուտք», «Մկրտություն», «Քրիստոսը բազմած գահին»: Վառ և ինքնատիպ են գլխազարդերը, որոնք հիշեցնում են շքեղ գորգեր:



«Մշո ճառընտիր»-ի էջ, մանրանկարը՝ «Մուտք Երուսաղեմ» (1202, ծաղկող՝ Սյրեփանոս, Մատենադարան, ձեռ № 7729)

«Մ. Ճ.» 1202-ին հափշտակել է Բաբերդի թուրք դատավորը, Խլաթում 2 տարի թաքցնելուց հետո 1204-ին վաճառել է Մշո Առաքելոց վանքին՝ 4000 արծաթ դրամով (գումարը հանգանակել են շրջակայքի բնակիչներն ու վանքի միաբանները): Մինչև 1915-ը ձեռագիրը պահվել է այնտեղ: Մեծ եղեռնի օրերին ձեռագրի մի մասը մեծ դժվարությամբ Երևան են բերել հայ գաղթական կանայք, մյուս մասը ռուս. բանակի սպա Նիկոլայ դե Ռոբերտին հասցրել է Թիֆլիս և հանձնել Հայկ. գթության ընկերության թանգարանին: 2012-ին հայ տպագրության 500-ամյակի շրջանակներում Երևանում տեղադրվել է «Մ. Ճ.»-ին նվիրված հուշակոթող՝ «Վարք հավերժության» (քանդ.՝ Դավիթ Երևանցի):

Գրկ. **Յովսէփեան Գ.**, *Յիշատակարանք ձեռագրաց, հ. 1, Մնթիլիաս, 1951:* **Մաթևոսյան Ա.**, *Երբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական Ճառընտիրը, «ԲՄ» № 9, 1969:*

ՄՈԼԻԵՐ [(Molière), Ժան-Բատիստ Պոքլեն (Poquelin), 15.1.1622, Փարիզ–17.2.1673, Փարիզ], ֆրանսիացի դրամատուրգ, դերասան, թատեր. գործիչ:



Մոլիերի *«Կեղծ ազնուուհիք»* (1898, Բաքու) գրքի տիտղոսաթերթը

Մ-ի հայ առաջին թարգմանիչներից են Տիգրան *Տեփեյանը* և Գևորգ *Չմշկյանը*: Լույս են տեսել Մ-ի «Ագահն» (1854), «Ակամայ բժիշկ» (1854), «Սէրը բժիշկ է» (1855, երեքն էլ՝ Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ., թարգմ.՝ Տիգրան Տետեյանի), «Փուրսոնեագ» (1861, ԿՊ, Արևելյան համազգ. տպ.), «Տղամարդկանց խրատ» (1880, Թ., Ա. Միխելսոնի տպ., թարգմ.՝ Դալգեոզենց Ակուփի), «Տարտիւֆ» (1898, Բաքու, «Արոր» տպ., թարգմ.՝ Խորեն Ստեփանեի), «Կեղծ ազնուուհիք» (1898, Բաքու, նույն տպ.), «Թոչող բժիշկն» (1900, Բաքու, նույն տպ., երկուսն էլ՝ թարգմ.՝ Մելիք Պեյլիքճյանի), «Կատակերգք» (հ. 1, 2, 1903, 1905, Իզմիր, Մատթեոս Սամուրյանի տպ., թարգմ.՝ Մեսրոպ Նուպարյանի), «Ժորժ Դանդէն կամ Շփոթուած ամուսինը» (1907, Թ., Մ. Մարտիրոսյանի տպ., թարգմ.՝ Գաբրիել Սունդուկյանի), «Բարբուլիէ» (1915, Թ., Նվարդ Աղանյանի տպ., թարգմ.՝ Միհրդատ Ամրիկյանի), «Երկու խուլեր» (1921, ԿՊ), «Բռնի ամուսնութիւն» (1930, ԿՊ) և այլ երկեր:

Մ-ի պիեսների հայ. թարգմանությունները բազմիցս վերահրատարակվել են:

Գրկ. **Սողոմոնյան Ս.**, *Դանթե, Պետրարկա, Շեքսպիր, Մոլիեր, Ե., 1973:*



«Մողնու Աւետարան». *Խորան (վերևում), «Խաչելություն», մանրանկար (ներքևում, 1060, ծաղկող՝ Հովհաննես Սանդղկավանեցի, Մատենադարան, ձեռ. № 7736)*





Մոմիկ. *«Համբարձում», մանրանկար, «Պատերազմի Աւետարան» (1302, Մատենադարան, ձեռ. № 6792)*

«ՄՈՂՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ», 1060-ի հայկ. ձեռագիր մատյան: Գրիչն ու ծաղկողը *Հովհաննես Սանդղկավանեցին* է. հավանաբար նկարազարդել է Սանդղկավանքում: Ուշ միջնադարում ձեռագիրը պահվել է Հաղպատի վանքում, ապա 100 տարի (1822–1922)՝ Թիֆլիսի Մողնու Սբ Գևորգ եկեղեցում (այստեղից էլ՝ անվանումը): Այժմ Մատենադարանում է (ձեռ. № 7736, չափերը՝ 42 x 32,5 սմ, 383 մագաղաթե թերթեր, կազմը՝ թավշապատ, արծաթազարդ): Ձեռագիրը պատկերազարդված է 10 խորանով, 12 տերուն. տեսարաններով («Ավետում», «Մարիամի այցը Եղիսաբեթին», «Պայծառակերպություն», «Համբարձում» ևն), 4 ավետարանիչների պատկերներով, 4 անվանաթերթերով և լուսանցազարդերով, որոնց ընորոշ են հանդիսավորությունն ու վեհակերտությունը: Խորաններն աչքի են ընկնում երկրաչափ. զարդանկարներով և բուսազարդերով: Թանկարժեք նյութերի (նուրբ թափանցիկ մագաղաթ, բազմերանգ գույներ, ոսկի), մանրանկարների գեղանկարչ. և կատարող. արվ-ի կատարելության, նրանց հանդիսավոր ոճի շնորհիվ «Մ. Ա.» դասվում է մեծաշուք տոնական ձեռագրերի շարքը:

Գրկ. **Մաթևոսյան Ա.**, *Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողնու Ավետարանը»), «ԲՄ», 1971, № 10: Հովհաննես Սանդղկավանեցի: Albom (կազմ., առաջար. և ծնթգր.՝ S. Իզմայլովայի), Ե., 1986:* **Дрампян Р.**, *Армянская миниатюра и книжное искусство, сб. “Очерки по истории искусства Армении”, М.–Л., 1939.*

ՄՈՄԱԹՈՒՂԹ, մեղրամոմով, պարաֆինով կամ վազելինի յուղով ներծծված բարակ, թափանցիկ թուղթ: Գործածվում է ***տրաֆարետային տպագրության*** տպաձև պատրաստելու համար:

ՄՈՄԻԿ, **Սմոլիկ Վարդպետ** (ծ. թ. անհտ–1333, այլ ենթադրությամբ՝ 1339/1340, Նորավանք), գրիչ, մանրանկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, ***Գլաձորի մանրանկարչության դպրոցի*** նշանավոր ներկայացուցիչ: Սովորել է Գլաձորի համալսարանում, աշակերտել Հովասափ կուսակրոն քահանային, XIII դ-ի վերջին–XIV դ-ի սկզբին ստեղծագործել է հիմնականում Վայոց ձորի Աղբերց վանքում և Նորավանքում: Ենթադրաբար՝ եղել է Օրբելյան իշխան. տան քարտուղարը, գլխ. նկարիչը, քանդակագործը և ճարտարապետը: Մ-ի պատվիրատուներն են եղել Սյունյաց 3 մետրոպոլիտները (***Ստեփանոս Օրբելյան***, Հովհաննես Օրբել, Ստեփանոս Տարսայիճ), Օրբելյան մեծ իշխանն ու իշխանուհին (Բուրթել, Թամթա Խաթուն): Մ-ի անունն առաջին անգամ հիշատակվել է 1283-ին: 1292-ին Նորավանքում ընդօրինակել ու ծաղկել է Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 2848): Նրա լավագույն գործը 1302-ին ծաղկած ***«Պատերազմի Աւետարանն»*** է (Մատենադարան, ձեռ. № 6792), որի վնասված մասերը վերականգնվել են Պատերազմի Սբ Նշան վանքում (այստեղից էլ՝ անվանումը) 1406-ին: Փոքրաչափ (12 x 8,5 սմ, էջում՝ 17 կերպար) այս Ավետարանում Մ. զետեղել է 12 տերուն. պատկերաշարի հիմն. տեսարանները, նաև անվանաթերթեր, լուսանցազարդեր, զարդագրեր:

Մ-ի 1307-ի Ավետարանն անավարտ է (ԱՄՆ-ի Հարտֆորդ քաղաքի Քեյս Մեմորեալ գրադարան, մանրաժապավենը՝ Մատենադարան). գրել է միայն համաբարբառը: Ենթադրվում է, որ ծաղկել է նաև ***«Կեռան թագուհու Աւետարան»***-ը (1283, Մատենադարան, ձեռ. № 6764) և 1287-ին Թեղենյաց վանքում գրված հիշատակարանում Դավիթ գրիչի նշած «Սոմիկի շքեղազարդ» մատյանը, որը գերեվարվել է:

Մ-ի մանրանկարները, քանդակագործ. և ճարտ. գործերն առանձնանում են բացառիկ բարձր արվ-ով:

Մ-ի արձանը կանգնեցվել է Իջևանում (1987, քանդ.՝ Յ. Սամվելյան), Եղեգնաձորում նրա անունով կոչվել է զբոսայգի, 1991-ից ՀՀ-ում գործում է «Սոմիկ» հայ քրիստ. մշակույթի միությունը: Նորավանքի համալիրում բացվել է Սոմիկի թանգարանը (2010):

Գրկ. **Մնացականյան Ս.**, *Վարպետաց վարպետներ–Սմանուել: Տրդատ: Սոմիկ, Ե., 1982:* **Մաթևոսյան Կ.**, *Սոմիկ, Ե., 2010:*

ՄՈՄԼԱԹ, գործվածք, որի 1 կամ 2 կողմը պատում են անջրանցիկ ծածկույթով՝ մոմով (մոմլաթ), արագ չորացող բուս. ներկով (յուղաներկ Մ.), խտացրած բարձրստիրոլային լատեքսներով (լատեքսային Մ.) կամ պլաստիֆիկացրած պոլիվինիլքլորիդով (պոլիվինիլքլորիդային Մ.): Մ–ի համար կիրառում են հարթ կամ խավոտ գործվածք, երբեմն փափկության համար այն փոխարինում են պորոլոնով: Պոլիգրաֆիայում Մ. օգտագործվում է որպես կազմանյութ:

ՄՈՄՋՅԱՆ Խաչիկ Նշանի [25.2(10.3).1909, Տրապիզոն–21.1.1996, Մոսկվա], փիլիսոփա, խմբագիր: Փիլ. գիտ. դ–ր (1951), պրոֆ. (1956): ՌԴ գիտ. վաստ. գործիչ (1969): Ավարտել է Մոսկվայի փիլ–յան, գրակ–յան և պատմության ինստ–ը (1934): 1943–47–ին՝ ՀԽՍՀ ԳԱ գիտքարտուղար, 1947–49–ին՝ փիլ–յան բաժանմունքի վարիչ, 1951–53–ին՝ *«Լրաբեր հասարակական գիտությունների»* հանդեսի գլխ. խմբագիր, 1955–58–ին՝ ՄՊՀ ամբիոնի վարիչ, 1967–89–ին՝ ԽՄԿԿ ԿԿ–ին առընթեր հաս. ԳԱ փիլ–յան ամբիոնի վարիչ: 1958–62–ին աշխատել է ԽՄԿԿ ԿԿ–ի «Կոմունիստ» (ռուս.) պաշտոն. պարբ–ի խմբագրությունում: Կազմել, խմբագրել և գիտ. առաջաբանով ռուս. հրատարակել է Դ. Դիդրոյի, Պ. Մարեշալի, Կ. Ֆ. Վոլնեյի, Պ. Հոլբախի, Կ. Հելվեցիուսի գործերից:

Լույս է տեսել Մ–ի «Ֆրանսիական լուսավորականությունը XVII դարում» (1983) աշխատությունը, համահեղինակ է «Սոցիալիստական հասարակությունը և ժողովրդական զանգվածների ստեղծագործական ակտիվությունը» (1954), «Սոցիալական զարգացման մարքսիստական–լենինյան տեսությունը» (1978), «Մարքսիզմը և ռենեգատ Գարոդին» (1973, բոլորը՝ ռուս.) աշխատությունների:


ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության և «Պատվո նշան» շքանշաններ:

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Մոսկվայում 1819–ին ֆրանսիացի Օգյուստ Սեմենի տպարանում հրատարակվել է հայ. առաջին գիրքը՝ Սերովբե վարդապետի «Ծաղիկ գիտութեանց» հանրագիտ. բառարանը, որին հաջորդել են Հ. Ալամդարյանի «Համառօտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ»–ը (1821), Լազարյան ճեմարանի սաների ստեղծագործությունների «Մուզայք Արարատեան» (1829) ժող–ը և մի շարք դասագրքեր: Հետագայում Օ. Սեմենի հայ. տառերն անցել են Վլադիմիր Գոթիեին, որի հայ. հրատ–ներից են «Ծաղկաքաղ յառակաց Քռիլովի, Տմիթրիեւի եւ Խեմնիցերի» (հայ., ռուս., 1849), Մ. Էմինի «Վէպք ինոյն Հայաստանի» (1850), Ս. Նազարյանի «Յաղագս փորձնական հոգեբանութեան...» (1851) և «Առաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխաների համար» (1853), Գ. Ախվերդյանի հայտնաբերած Սայաթ–Նովայի տաղերը՝ «Սայաթ–Նովայ: Լուս գցած աշխատասիրութէնով Գէորգեայ Ախվերդեան» (1852) և այլ գրքեր:




Մոսկվայում առաջին հայկ. տպարանը հիմնադրել են Լազարյանների ժառանգներ Հովհաննես և Խաչատուր Հովակիմյանները 1829–ին Լազարյան ճեմարանում (գործել է մինչև 1866–ը): Ունեցել է 13 լեզվով տառատեսակներ: Այստեղ տպագրվել են «Աւետարանի զօրութիւն, կամ՝ Մին արար ծառայի պատմութիւն...» (թարգմ.), «Կարգադրութիւնք կայսերական հովանաւորութեամբ պաշտպանեալ Հայկական ճեմարանին...», Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը՝ 12 լեզվով, «Նորահիւս Էֆիմերտէ» (բոլորը՝ 1830), «Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոց եւ մահմետական կրօնի», Մ. Սալլանեցյանցի «Կրօնագիտութիւն քրիստոնէական...», «Սուրբ Աւետարան ըստ Մատթէոսի» (բոլորը՝ 1831), Ս. Գլինկայի «Նկարագիր գաղթականութեան հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան» (1832) և «Հայ ժողովրդի պատմութեան տեսութիւն» (հ. 1–2,

Մոսկվայի հայկական տպագրություն



«Ընտիր հատուածք, քաղեալք ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց հայոց» (1849, Լազարյան ճեմ. տպ.) գրքի փիփղոսաթերթը




«Երկասիրութիւնք ազգային երգչաց» (1859, Վլադիմիր Գոթիեի տպ.) գրքի փիփղոսաթերթը

Մոսկվայի հայկական տպագրություն



Եվրեինովի «Արեւելեան աւանդութիւն» (1891, Մոսկվա, Մկրտիչ Բարխուդարյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Գ. Հայկունու «Ազգութիւնների ինքնորոշումը եւ կոմունիստները» (1919, Հայկ. գործերի կոմիսարիատի տպ.) գրքի փիփղոսաթերթը

1832–33) աշխատությունները, Օրբելի Հովսեփ Տեր-Հովակիմյանի «Համառօտութիւն սրբազան պատմութեան...» (1832), Հ. Չերքեզյանցի «Սկզբունք քրիստոնէական վարդապետութեան» (1833), Հ. Ռասինի «Գոթողիա» (1834, թարգմ.՝ Ս. Տիգրանյան Նախիջևանցու), Ա. Խուդաբաշյանի «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» հայ-ռուս. երկհատոր բառարանը (հ. 1–2, 1838), քերական., ճարտասան. ձեռնարկներ և այլ գրքեր: Ռուս. տպագրվել են «Հայ ժողովրդի պատմության տեսության վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուն» (հ. 1–3), Սաադիի «Գուլիստան»-ը, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Մովսես Կաղանկատվացու, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի Պատմությունները: Հրատարակվել են նաև Ազբարի (Ադամ Երևանցի) «Զանազան երգք» (1855), Հ. Գրիգորյանի «Առաջին մասն քերականութեան...» (1853), Պ. Պռոշյանի «Վերին Ագուլեաց երկու սեռից ուսումնարանների բացուիլը եւ կանոնադրութիւնքը» (1868) և այլ գրքեր: Այստեղ են լույս տեսել ***«Հիւսիսափայլ», «Ճռաքաղ», «Համբաւարեր Ռուսիոյ»*** պարբ-ները: 1860-ական թթ-ից հայ. գրքեր են տպագրվել Մոսկվայի համալսարանի և այլ տպարաններում:

XIX դ-ի վերջին և XX դ-ի 1-ին տասնամյակում Մոսկվայի հայկ. ամենախոշոր տպարանը Մկրտիչ ***Բարխուդարյանինն*** էր. գործել է 1890–1915-ին, հրատարակել է Հ. Թումանյանի (1890, 1892), Ա. Ծատուրյանի (1891) բանաստեղծությունների ժող-ները, «Սոխակ» (1890) լիակատար երգարանը, Րաֆֆու «Խենթը: Ձալալէդդին» (1890), Ս. Ատրպետյանի «Ալմաստ» (1891) վեպերը, «Աշըղ-Հազիրի երգերը» (1892) ժող-ը, Ն. Մառի «Յուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սեւանայ» (բոլորը՝ 1892), Ա. Ծատուրյանի «Գրչի հանաքներ» (1901), Պ. Բորորիկինի «Դաժան օրեր» (1907), Զ. Լալայանի «Սէր եւ աշխատանք» (1909), Կ. Միքայելյանի «Ձմրան երեկոյ» (1912), Կ. Կոստանյանի «Ծաղկաքաղ...» (1915) ևն (ավելի քան 130 անուն գիրք ու գրքույկ): 1900-ից տպարանը տնօրինել է կինը՝ Քրիստինե Բարխուդարյանը:

Մոսկվայում հայտնի էին նաև Զարմայր Մսերյանի (գործել է 1874–79-ին, տպագրել 5 անուն գիրք), Ե. Ավետիքյանի (1906–17, 22 անուն), Կ. և Ռ. Մուրադյան եղբայրների (1917–19, 16 անուն), ինչպես նաև Վլադիմիր Գոթիեի (1851–75, 19 անուն), Էռնեստ Բառֆքնեխտի (1858–59, 7 անուն), Կայսեր. համալսարանի (1861–70, 11 անուն), Ե. Գուդվիլովիչի (1879–81, 4 անուն), Ա. Կուդրյավցևայի (1880–82, 7 անուն), Օթոն Հերբեկի (1883–1900, 33 անուն),Վարվառե Գատցուկի (1898–1903, շուրջ 10 անուն) և այլ տպարաններ:

Ուշագրավ են Յ. Վեսելովսկու ջանքերով 1894-ին լույս տեսած «Հայ արձակագիրներ» ժող-ի 1-ին հատորը (ռուս., 2-րդը ոչնչացվել է գրաքննության հետևանքով): 1906-ին լույս է ընծայվել «Հայկական քնար» (ռուս.) անթոլոգիան՝ Յ. Վեսելովսկու, Ի. Բունինի, Կ. Բալմոնտի և ուր. թարգմանությամբ: 1916-ին տպագրվել են «Հայ գրականության ժողովածուն»՝ Մ. Գորկու խմբագրությամբ, և Վ. Բրյուսովի կազմած «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիան:

1917–21-ին գործել է Հայկ. գործերի կոմիսարիատի տպարանը, որտեղ տպագրվել են «Կարմիր դրօշակ» թերթը, Վ. Լենինի «Պետութիւն եւ յեղափոխութիւն» աշխատությունը՝ Վ. Տերյանի թարգմանությամբ (1920), և այլ գրքեր (շուրջ 55 անուն):

1939-ին Մոսկվայում հրատարակվել է «Դավթի կռիվը Սնրա Մելիքի դեմ» գիրքը՝ Վ. Դերժավինի թարգմանությամբ և առաջաբանով: Հայ գրողների ստեղծագործություններից ռուս. են թարգմանել նաև Վ. Զվյագինցևան, Մ. Պետրովիխը, Գ. Նաումը, Ե. Նիկոլաևսկայան:

1969-ին լույս է տեսել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը՝ Ն. Գրեբնևի ընդարձակ թարգմանությամբ:

Գրկ. Թէոդիկ, *Տիպ ու պատ, ԿՊ, 1912, էջ 180–181, ե., 2012 (համառահանություն):* Արշարունի Ա., *Մովսէսի հայ մատոլը, ե., 1971:*

ՄՈՎՍԵՍ ԱՐԾԿԵՑԻ, XV դ-ի 2-րդ կեսի գրիչ և մատենագիր: Առաջին անգամ հիշվում է 1460-ին հոր՝ Դանիել քահանայի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում՝ որպես դպիր: Գործել է Արծկե (Բզնունյաց գավառ), Ամիդ/Դիարբեքիր քաղաքներում, գրչագրել տարաբնույթ ժող-ներ: Մ. Ա-ուց պահպանված ամենահին ձեռագիրը թվագրված է 1472-ով, վերջինը՝ 1493-ով: Մ. Ա-ու հիշատակարաններում հարուստ տեղեկություններ կան Հայաստանի և հարևան երկրների տարածքներում կարա-կոյունլու, ակ-կոյունլու ցեղախմբերի և Սեֆյան տիրակալների մղած պատերազմների մասին: Հատկապես արժեքավոր են նրա չափածո տարեգրությունը և եվրոպ. երկրների հետ Ուզուն-Հասանի վարած դիվանագիտ. հարաբերություններում նշանավոր դեր խաղացած հայ մեծահարուստ Միրաք Թավրիզեցու նահատակության (1486) պատմությունը:

Գրկ. Հայոց նոր վկաները (աշխ.-պատրաստ.՝ Հ. Մանանդյանի և Հ. Ամատունու), Վաղարշապատ, 1903, էջ 322–328: Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 2–3, ե., 1958–67: Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ. (կազմ.՝ Վ. Հակոբյան), հ. 2, ե., 1956:


ՄՈՎՍԵՍ ԴԱՍԽՈՒՐԱՆՑԻ, X դ-ի մատենագիր: Խմբագրել, շարունակել ու հարստացրել է ***Մովսես Կաղանկատվացու*** «Աղվանից աշխարհի պատմություն» երկը՝ օգտվելով տարբեր աղբյուրներից: Մ. Դ-ու երկասիրությունն ընդգրկում է արաբ. տիրապետության ժամանակաշրջանից մինչև X դ-ի կեսերը տեղի ունեցած իրադարձությունները: Հեղինակը հիմնականում անդրադարձել է եկեղեցու պատմությանն առնչվող խնդիրներին, Հայ և Աղվանից եկեղեցիների հարաբերություններին՝ դրանք կապակցելով պատմ. անցքերի հետ: Շարադրել է ժամանակագր. կարգով և խիստ հակիրճ: Մ. Դ-ու երկն «Աղվանից աշխարհի պատմության» 3-րդ գիրքն է, որն ամբողջացնում է Հայոց Ուտիք և Արցախ նահանգների պատմությունը:

Գրկ. Զարբհանալեան Գ., *Հայկական հին դպրոցեան պատմութիւն, Վնտ., 1886:* Մնացականյան Ա., *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, ե., 1966:* Աբեղյան Մ., *Երկեր, հ. 3, ե., 1968:* Ակինեան Ն., *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւնն Աղուանից, Վնն., 1970:* Սվազյան Հ., *Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, «ՊԲՀ», 1972, № 3:*


ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ [1250-ական թթ., Անի-Կամախ (Երզնկայի գավառ)–1323, Երզնկա], մատենագետ, մանկավարժ: Սկզբն. կրթությունն ստացել է Երզնկայի Ավագ վանքում, ապա ձեռնադրվել քահանա: Վարդապետ. բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1290-ական թթ-ին մեկնել է Կիլիկիա, որտեղ Սկևռայի դպրոցում աշակերտել է նշանավոր մանկավարժ ***Գևորգ Սկևռացուն***:

Կիլիկիայում ընդօրինակել է Աստվածաշունչ (Մատենադարան, ձեռ. № 177), որն արժեքավոր է բնագրային ուսումնասիրման և հայ ձեռագրագիտ-յան համար: Վերադառնալով Երզնկա՝ մինչև կյանքի վերջը Սբ Գրիգոր Լուսավորիչ վանքում զբաղվել է ուսուցչությամբ և գրչությամբ:


Գրել է մեկնող., դավանաբան., խրատական-կանոն. և այլ բնույթի երկեր, չափածո գործեր: Մ. Ե-ու մեկնող. գործերից են «Մեկնութիւն ժամակարգութեան» (Խոսրով Անձևացու մեկնության խմբագրությունն է՝ Հովհաննես Գ Օձնեցու, Մովսես Քերթողի և Ստեփանոս Սյունեցու գործերից որոշ հավելումներով) և «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին...» (1293, գրել է իր ուսուցչի՝ Հովհաննես Երզնկացի Պլուզի խնդրանքով, հրտ.՝ 1973, «Էջմիածին», № 9, 11, աշխատասիր.՝ Ե. Պետրոսյանի): Կազմել է «Ոսկեփորիկ»



Ն. Ակինյանի «**Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից**» *(1970, Վնն.) գրքի փիփղոսթերթը*



Մովսես Երզնկացու *«Ողբ»-ի 1-ին էջը (Ղ. Ալիշյանի «Հայապատում» գրքում, 1901, Վնտ., էջ 505)*



Մովսես Խորենացի

ժող–ը, որը ներառում է 200–ից ավելի խրատներ, վարքեր, դավա–նաբան. նյութեր:

Մ. Ե–ու «Ողբը» (1301, գրել է ուսուցչի՝ Գևորգ Սկևռացու մահվան կապակցությամբ) զետեղվել է Ղևոնդ Ալիշանի «Հայապատումի» (1901, Վնտ., Սբ Ղազարի տպ., էջ 504–507) մեջ: «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉԾԸ» դավանաբան. թուղթը տպագրվել է 1974–ին («Էջմիածին», № 9–10, աշխատասիր.՝ Ե. Պետրոսյանի):

Գրկ. Քիւրդեան Հ., Երիզա եւ Եկեղեաց գաւառ, հ. 1, Վնտ., 1953: Պողարեան Ն., Հայ գրողներ, Երեւան, 1971: Օղլուգեան Ա., Մատենագրական հետազօտութիւններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ, Էջմիածին, 2001:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմահայր, Քերթողահայր [մոտ 410, գ. Խորոնք (Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառ)–V դ–ի վերջ], պատմիչ, քերական, թարգմանիչ, աստվածաբան: ***Սամբրե Վերծանողի*** եղբայրը: Աշակերտել է ***Մեսրոպ Մաշտոցին*** ու ***Սահակ Ա. Պարթևին***, ուսումնառությունը շարունակել է Ալեքսանդրիայի դպրոցում (մոտ 430–440), հմտացել պատմագիտ–յան, ճարտասա–նության, քերակ–յան, քերթող. արվ–ի մեջ, կատարելագործել հուն–ի իմացությունը: Հայրենիք է վերադարձել մոտ 440–ին: Եղել է Բագ–րևանդի թեմակալ առաջնորդ:



«Աշխարհացոյց»–ի (1668, Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի) Բ փիփղոսաթերթը

Մ. Խ. գրել է երկեր, զբաղվել թարգմանչությամբ, մանկավարժու–թյամբ: Պատմահոր երկասիրությունների գլուխգործոցը ***«Պատմութիւն Հայոց»***–ն է, որը գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով (մոտ 480–ին):

Հայտնի են նաև Մ. Խ–ու դավանաբան. աշխատությունները, որոնք զգալիորեն նպաստել են հայ աստվածաբան. մտքի զարգացմանը: Նշանավոր են «Պատմութիւն Սրբուհւոյն Աստուածածնի եւ պատ–կերի նորա» երկասիրությունը՝ «Պատասխանի թղթոյն Սահակայ» վերտառությամբ, «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» վարքագր. կարճառոտ երկը, «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ներբողը, որը բանասիրության մեջ ավանդաբար անվանվել է «Ճառ», «Հարցմունք Հորնաղի եւ պատասխանիք Մովսէսի Հայոց Քերթողի եւ Դավիթ Անյաղթ փիլիսոփայի», «Վիճումնական հարցաբանութիւն Մելիտոսի յունաց փիլիսոփային ընդ աթէնականն Մովսէս փիլիսոփային հայոց տրամաբանական ոճիւ», «Սրբոյն ԹԷովդորոսի ծննդեանն եւ սննդեանն եւ վարուց նորա», «Թուղթք» և այլ փիլ–դավանաբան. երկասիրություն–ներ: Թարգմանել է Գրիգոր Նազիանզացու «Ճառերի» զգալի մասը: Մ. Խ–ունն են վերագրվում Դիոնիսիոս Թրակացու քերակ–յան մեկնու–թյունը՝ «Մովսիսի Քերթողահօր մեկնութիւն քերականի» վերնագրով, քերական. մի քանի փոքր գրվածքներ ևն, շուրջ 100 հոգևոր երգեր. առավելապես հայտնի են «Խորհուրդ մեծ եւ սքանչելի», «Ծագումն հրաշալի», «Ուրախացի՛ր, սրբուհի» երգերը: Մ. Խ–ու անունով մեզ հա–սած երգասացություններում կան կցուրդներ, ավետիսներ, մեծարժեք են Աստվածամորն ուղղված «Մեծացուսցէ» ձոներգերը (57): Գանձա–րաններում Մ. Խ–ու անունով վավերացվել են Գրիգոր Լուսավորչին և Տրդատ Գ Մեծին նվիրված մեկական խազագրված մեղեդիներ:



«Գիրք պիտոյից»–ի (1796, Վնտ.) փիփղոսաթերթը

Հայ հնատիպ գրքի շրջանում, «Պատմութիւն Հայոց»–ից բացի, տպագրվել են նաև Մ. Խ–ու՝

«Աշխարհացոյց» աշխարհագրության ձեռնարկը. 1668, 1683, 1698–ին՝ Ամստերդամում ու Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, վերջինը՝ առանց տպարանի հիշատակության: Տպա–կից է ***«Աղուսագրքին»:*** Տիտղթ–ին՝ «Գիրք աշխարհաց եւ առաս–պելաբանութեանց. Որ է Աղուէսագիրք»: 1683–ի հրատ–ում տպակից է նաև «Համառօտ վիպասանութիւն» (լատ–ից թարգմ.՝ Ջաքարիա Սյունեցու) երկին:

«Գիրք պիտոյից» երկը. 1796-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ Հովհաննես վրդ. Զոհրաբյանի աշխատասիրությամբ: Տիտղթ-ին՝ «Սրբոյ քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացւոյ նախակրթութիւն հռետորական ասացեալ Գիրք պիտոյից» (506 էջ, 8º, 15 x 9 սմ): Վերահրատարակվել է 1993-ին, ռուս.՝ 2000-ին:

Լույս են տեսել նաև Մ. Խ-ու «Ճառ ներբողական՝ ի հանդէս երջանիկ կուսանացն սրբոց Հռիփսիմեանց հրաշազարդ յօրինուածովք» (1817, ԿՊ, Մայր դպրատան տպ.), «Սրբոյն հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք» (1843, 1845, 1865, Վնտ., Սբ Ղազարի տպ.՝ «Մատենագրութիւնք նախնեաց» մատենաշարով), «Աշխարհագրութիւն» (1844, նույն տպ.), «Ասույթներ, խոհեր, բնութագրումներ» (1992), «Աստվածաբանական երկեր» (2007), «Օրհներգեր» (2011):

Մովսես Խորենացու մասին հրատարակվել է տարբեր լեզուներով շուրջ 3 հզ. ուսումնասիրություն: 1993-ին սահմանվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ:

Մ. Խ-ու անունով Երևանում և ՀՀ այլ քաղաքներում կոչվել են փողոցներ, դպրոց, բուհ, կանգնեցվել են նրա հուշարձանները:

Գրկ. Լանգլուա Վ., *Մովսէս Խորենացի եւ նորա պատմութիւնը, Թ., 1860:* Էմին Մ., *Մովսէս Խորենացին եւ հայոց հին վէպերը, Թ., 1886:* Կարիեր Ա., *Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ, Վնտ., 1893:* Մանանդյան Հ., *Խորենացու առեղծվածի լուծումը, Ե., 1934:* Մալխասյան Ս., *Խորենացու առեղծվածի շուրջը, Ե., 1940:* Հրանդ Ք. Արմէն, *Պատմութիւն Խորենացիի քննադատութեան, Երուսաղէմ, 1954:* Աբրահամյան Ա., *Մովսես Խորենացի, Ե., 1959:* Սարգսյան Գ., *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Ե., 1966:* Աբեղյան Մ., *Հայոց հին գրականության պատմություն, երկեր, հ. 3, Ե., 1968:* Մկրյան Մ., *Մովսես Խորենացի, Ե., 1970:* Թահմիզյան Ն., *Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը, «Էջմիածին», 1979, № 5–6:* Արեւշատեան Ա., *Մովսէս Խորենացու հիմներգական ժառանգութիւնը, «Բազմավէպ», 1992, № 1–4:* Թոփչյան Ա., *Մովսես Խորենացու հռոմական աղբյուրների խնդիրը, Ե., 2001:* Մուշեղյան Ա., *Մովսես Խորենացու դարը, Ե., 2007:* Հովհաննիսյան Պ., *Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:*

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ [ծ. թ. անհտ, գ. Կաղանկատույք (Մեծ Հայքի Ուտիք նահանգ)–մ. թ. անհտ], VII դ-ի պատմիչ, մատենագիր: Նրա անունով մեզ է հասել «Պատմութիւն Աղուանից աշխարհի» խորագրով 3 մասից (գիրք) բաղկացած աշխատությունը, որի միայն առաջին 2 մասերն է գրել Մ. Կ.: Ներառում է «աշխարհի ստեղծումից» մինչև VII դ-ի 1-ին կեսի դեպքերը: 3-րդ գրքի հեղինակը *Մովսես Դասխուրանցին* է:

Մ. Կ-ու աշխատությունն առաջին անգամ հրատարակել է Մ. Էմինը 1860-ին Մոսկվայում (հ. 1–3, Լազարյան ճեմ. տպ.), նույն թվականին տպագրվել է նաև Փարիզում (հ. 1–2, Կարապետ Շահնազարյանի տպ., «Շար հայ պատմագրաց» մատենաշարով), 1861-ին ռուս.՝ Ք. Պատկանյանի թարգմանությամբ: Թարգմանվել է նաև ֆրանս., անգլ., վրաց., թուրք., մի շարք հատվածներ՝ գերմ., հունգ.: Երկն ունեցել է հայ. մի քանի հրատ-ներ. տպագրվել է Թիֆլիսում 1912-ին (Նվարդ Աղանյանի տպ., «Ղուկասյան մատենադարան» մատենաշարով), Երևանում՝ աշխարհաբար՝ 1969-ին (փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Առաքելյանի) և 1983-ին:

Գրկ. Զարբհանալեան Գ., *Հայկական հին դպրոթեան պատմութիւն, Վնտ., 1886:* Մնացականյան Ա., *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966:* Աբեղյան Մ., *Երկեր, հ. 3, Ե., 1968:* Սվազյան Հ., *Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, «ՊՀՀ», 1972, № 3:* Ադոնց Ն., *Քննություն Մովսես Կաղանկատվացու, Էջմիածին, 2005:*

ՄՈՎՍԻՍՅԱՆ Աբգար Խաչատուրի [1.4.1905, գ. Խալիլ Չավուշ (Էրզրումի նահանգի Խնուս գավառ)–21.9.1967, Երևան], մանկավարժ, խմբագիր: Մանկավարժ. գիտ. դ-ր (1961), պրոֆ. (1963): Գիտ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ-ի պատմա-տնտեսագիտ. ֆակ-ը (1931): 1932–34-ին՝ ՀԽՍՀ լուսավորության նախարարության բաժնի, ապա՝ վարչության պետ: *«Մովսիսական դպրոց»* պարբ-ի գլխ. խմբագիր: 1944–46-ին՝ Դպրոցների ԳՀԻ տնօրեն, 1946–48-ին՝ լուսավորության փոխնախարար:




Մովսես Խորենացու *«Պատմութիւն Հայոց» (1881, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*

Մովսես Կաղանկատվացի



«Պատմութիւն Աղուանից» (հ. 1, 1860, Փարիզ) գրքի կազմը



«Պատմություն Աղվանից աշխարհի» (1969, Ե., «Հայաստան») գրքի կազմը



Սոս Մովսիսյան

Լույս են տեսել Մ–ի «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X–XV դարեր)» (1958), «Հայ դպրոցի և մանկավարժության պատմությունից. սկզբից մինչև 18–րդ դար» (ռուս., 1968) աշխատությունները:

ՄՈՎՍԻՍՅԱՆ Սոս Միքայելի [ծ. 10.11.1923, գ. Չոչըռ (այժմ՝ գ. Վարսեր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], խմբագիր–հրատարակիչ, լրագրող, թարգմանիչ: Վաստ. լրագրող (1990): Ավարտել է ՀՊՄԻ (1949): 1953–60–ին՝ *«Սովետական Հայաստան»* թերթի, 1960–67–ին՝ ՀԿԿ ԿԿ մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության բաժնի վարիչ, 1967–ին՝ ՀԿԿ ԿԿ, 1981–91–ին՝ *«Լույս»* հրատարակչությունների տնօրեն, 1968–81–ին՝ ՀԽՍՀ կառավարությանն առընթեր Հայհրատպետկոմի նախագահի տեղակալ: 1999–ից Հայաստանի գրահրատարակիչների ազգ. միության հիմնադիր–նախագահն է: Մ–ի ջանքերով ՀՀ–ում ստեղծվել են արդիականացված մի շարք պոլիգրաֆ. հաստատություններ:


Ռուս–ից թարգմանել է Վ. Պիկուլի «Բայազետ» (1983, 1989) վեպը, «Ընդհանուր պատմություն» (1989) դպրոց. դասագիրքը ևն: Լույս է տեսել Մ–ի «Ո՞ւր են տանում կածանները: Հուշագրական ակնարկներ, նոթեր և խոհեր» (2008) ժող–ը:

ԽՍՀՄ Կարմիր աստղի և Հայրեն. մեծ պատերազմի 1–ին աստիճանի շքանշաններ (երկուսն էլ՝ 1945), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2008):



Լյուդմիլա Մոտալովա

ՄՈՏԱԼՈՎԱ Լյուդմիլա [22.4.1935, Օլոմոուց (Չեխիա)–27.8.1975, Պրահա, թաղված է Կրոմերժիժում], չեխ հայագետ, թարգմանչուհի: Սովորել է Պրահայի Կառլովի համալսարանի փիլ–յան ֆակ–ում (1954–59), հայերենն ուսումնասիրել է արևելագիտ–յան ֆակ–ում: 1959–ից աշխատել է ՉՍՍՀ ԳԱ արևելագիտ–յան ինստ–ում: 1958–ին չեխ. լույս է ընծայել Ա. Իսահակյանի արձակ գործերի հատընտիրը՝ «Որտե՞ղ է սփոփանքը» խորագրով: Այնուհետև Մ–ի թարգմանությամբ հրատարակվել են հայկ. ժող. հեքիաթների 2 գիրք, Ե. Չարենցի, Պ. Սևակի, Ա. Բակունցի, Մ. Արմենի, Հ. Մաթևոսյանի, Վ. Պետրոսյանի, Հ. Շիրազի, Գ. Էմինի և հայ այլ գրողների ստեղծագործություններից, «Սովետական Հայաստան» (1966) գրքույկը: Մ. հայ գրակ–ը ներկայացրել է «Ասիայի և Աֆրիկայի գրականությունների պատմության» 3–րդ հատորում (1963) և «ԽՍՀՄ ժողովուրդների գրականությունների պատմության համառոտ ուրվագծի» 8–րդ հատորում (1972): Մ–ի անունով կոչվել է գրադարան Երևանում:



«Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը» (2012, Ե., Հայոց ցեղասպանության թանգարան–ինստ–ի հրտր.) գրքի կազմը

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ (Morgenthau) Հենրի (1856–1946), ամերիկացի դիվանագետ, իրավաբան: 1913–16–ին՝ ԱՄՆ–ի դեսպանը Թուրքիայում, Առաջին համաշխ. պատերազմը սկսվելուց հետո Թուրքիայում ներկայացրել է նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Բելգիայի ու այլ երկրների շահերը: Մերձ. Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի (Ամերկոմ) փոխնախագահ: Մեծ եղեռնի օրերին Թալեաթ և Էնվեր փաշաների հետ հանդիպումների ժամանակ ապարդյուն փորձել է կանխել արևմտահայության տեղահանությունն ու կոտորածը: Մ–ի «Հայկական ջարդերի առթիվ», «Ինչու պետք է կործանել Օսմանյան կայսրությունը», «Հայաստանը կանչում է» (երեքն էլ՝ 1918), «ԿոչնչանաՀ արդյոք Հայաստանը» (1920), «Հայերի կոտորածները 1915–ին» (1922) հոդվածները և «Հայաստանի ողբերգությունը», «Բոսֆորի գաղտնիքներ. 1913–1916» (երկուսն էլ՝ 1918) երկերը կարևոր ու արժանահավատ վկայություններ են պարունակում Մեծ եղեռնի մասին: Մ. դատապարտել է եվրոպ. տերությունների անտարբերությունը Հայկ. հարցում:

Հայ. լույս են տեսել Մ–ի «Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները» (թարգմ.՝ Ենովք Արմենի, 1919, ԿՊ, Օննիկ Ազգումանի տպ., 1990, Ե.), «Դեսպան Մորկէնթաուի պատմածները» (թարգմ.՝ Միքայել Շամտանճյանի, 1919, ԿՊ, Հարություն Ասատուրյան և որդ. տպ., Ե., 2012) գրքերը:

ՄՈՐԻԿՅԱՆ Այդին Էդվարդի (18.4.1958, Երևան–19.5.2009, Երևան), լրագրող, խմբագիր: Սովորել է ԵՊՀ-ում (1975–78), ավարտել է ՄՊՀ (1981): 1981–82-ին աշխատել է «Երևանի համալսարան», 1982–83 և 1987-ին՝ «Ավանգարդ» պարբ-ների խմբագրություննե-րում: 1990–97-ին՝ ***«Հայաստանի Հանրապետություն»*** օրաթերթի հիմնադիր-խմբագիր, 1995–96-ին, միաժամանակ՝ ՀՀ տեղեկատվու-թյան փոխնախարար, 2001–03-ին՝ ***«Հայացք Երևանից»*** ամսագրի, 2002–03-ին՝ «Օրրան», 2007–08-ին՝ ***«Ժամանակ»*** օրաթերթերի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու» (2006) հրա-պարակախոս, «Ասացի և ազատեցի հոգին իմ» (2010), «Միայնակ ծերունին, որ գրուցակից էր փնտրում» (2010), «Մնացյալ կյանքի առաջին օրը» (2013) հոդվածների, ակնարկների ժող-ները, կազմել և խմբագրել է Զահրատի, Վ. Սիրադեղյանի, Վ. Սարգսյանի և ուր. երկերի ժող-ներ, թարգմանություններ արել ճապոն. պոեզիայից:



Այդին Մորիկյան

«ՄՌԱՎԻ ՂՈՂԱՆՋՆԵՐ», ԼՂՀ Շահումյանի շրջ. հաս. ամսա-թերթ: Լույս է տեսել 1993–2013-ին Երևանում (1994-ից՝ անկանոն պարբերականությամբ): Խմբագիր՝ Կիմ ***Ղահրամանյան:*** Շահումյանի շրջանի բռնազավթումից և բնակչության տեղահանումից հետո թերթի նպատակը եղել է պարտիզան. պայքարին աջակցելը, 1994-ի հունի-սից՝ շահումյանցիների վերաբնակեցմանը նպաստելը. պաշտպանել է նրանց շահերը, կազմակերպել բռնագաղթի ժամանակ կորած հա-րազատների որոնման աշխատանքները:



«Մռավի ղողանջներ», *1993–2013, Երևան*


ՄՍԵՐՅԱՆ Գրիգոր (1846, Զմյուռնիա–15.8.1893, Զմյուռնիա), խմբագիր-հրատարակիչ, թարգմանիչ, հաս. գործիչ: Մսեր ***Մսերյանի*** եղբորորդին: Սովորել է Զմյուռնիայի Աղաբեկյան-Սամուրյան, ապա՝ Մեսրոպյան և Մխիթարյան վարժարաններում: 1860–70-ական թթ-ին աշխատակցել է «Ծաղիկ» և «Արեւելեան մամուլ» հանդեսներին: Վերջինիս 1871-ի 1–3 և 6–10 համարներում տպագրել է իր «Ճշմար-տութեան վրայ գրավ մը» երկը, 1872-ին՝ «Լեզուի վրայ» հետաքրքրա-շարժ հոդվածաշարը:

1870-ական թթ-ին եղել է Տետեյան տպարանի (1851–93) շուրջ հա-մախմբված թարգմանչ. խմբակի (Մ. Մամուրյան, Գ. Չիլինկիրյան, Գ. Կոստանդյան, Մ. Նազարյան և ուր.) անդամներից:

1877-ին Զմյուռնիայում հիմնադրել է տպարան, հրատարակել իր կազմած «Ընթերցարան», «Համառօտ դիցաբանութիւն» (երկուսն էլ՝ 1878) և «Նոր այբբենարան ֆրանսերէնի» (1880) դասագրքերը (ընդհանուր թվով՝ 15 անուն գիրք) ևն: 1880–81-ին՝ ***«Մէրէօրա»*** կի-սամյա հանդեսի հիմնադիր-խմբագիր: 1872–76-ին թարգմանել և հրատարակել է Ա. Դյումայի, Ա. Աշարի, Ժ. Սանդի, Ր. Ֆեպրի երկե-րից: Մ-ի թարգմանությամբ առաջին անգամ հայ. լույս է տեսել Ջ. Բո-կաչչոյի «Տասնօրեակը» («Դեկամերոն», հ. 1–2, 1878) նովելների ժող-ը:


Հանդես է եկել Գ., Մսեր Գ., Գ. Մ., Ասողիկ ծածկանուններով:

Գրկ. **Հակոբյան Մ.**, *«Մեղեդոյա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրա-տական շարժման մեջ, Ե., 1977:*



Մսեր Մսերյանի «Մանր ուսմունք ազգային եկեղեցական պատ-մութեան...» (տպագրիչ՝ **Զարմայր Մսերյան***, 1874, Մոսկվա) գրքի փիփղոսաթերթը*


ՄՍԵՐՅԱՆ Զարմայր Մսերի [1836, ք. Հնչեշտ (Մոլդովա)–12.5.1889, Մոսկվա], հրապարակագիր, խմբագիր-հրատարակիչ: Լևոն ***Մսերյա-նի*** հայրը, Մսեր ***Մսերյանի*** որդին: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1855). եղել է ճեմարանի վերակացու և թուրք-ի ուսուցիչ: 1858–62-ին հոր հետ խմբագրել է ***«Ճռաքաղ»*** բանասիր. ամսագիրը, 1861–64-ին՝ ***«Համբաւաբեր Ռուսիոյ»*** հանդեսը: 1872–76-ին՝ ***«Փա-րոս»*** բանասիր. տարեգրքի, 1879–81-ին՝ ***«Փարոս Հայաստանի»*** (մոր՝ Սոփիա Մսերյանի հետ) հանդեսի խմբագիր-հրատարակիչ: 1874-ին Մոսկվայում հիմնադրել է տպարան (5 անուն գիրք): Խմբագրել է «Նոր այբբենարան: Հայերէն եւ ռուսերէն» (1856, Մ., Կայսեր. ճեմ. տպ.) դասագիրքը, թարգմանություններ է արել ռուս-ից, ֆրանս-ից,



Մսեր Մսերյանի
«Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» (1856, Մոսկվա) գրքի տիտղոսաթերթը



Մատթեոս Եվդոկացու
«Մտածութիւնք ի վերայ չարչարանաց Քրիստոսի» *(1759, Վնտ.) գրքի գլխազարդով և սկզբնագրով (15-րդ) էջ*



«Մրկանոց հոգեւոր» *(1713) գրքի տիտղոսաթերթը*

գերմ–ից («Արքայադուստր–Վարդենի», 1879, Մ., Լազարյան ճեմ. տպ.), անգլ–ից («Հսկայեական ձեռքեր», 1879, Մ., Մ–ի տպ.):

ՄՍԵՐՅԱՆ Լևոն Զարմայրի [21.4(3.5).1867, Մոսկվա–3.1.1933, Մոսկվա], լեզվաբան, հնագետ, պատմաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1901), պրոֆ. (1905): Զարմայր ***Մսերյանի*** որդին: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, ապա՝ Մոսկվայի համալսարանի պատմաբանասիր. ֆակ–ը (1890): Մինչև 1893–ը համեմատ. լեզվաբանություն և իրան. լեզուներ է դասավանդել Լազարյան ճեմարանում, 1893–1905–ին և 1915–ից հետո՝ հին պարսկ., սանսկրիտ. և հին հուն.՝ Մոսկվայի համալսարանում: 1905–15–ին՝ Վարշավայի համալսարանի համեմատ. քերակ–յան ամբիոնի վարիչ, դասախոս: Եղել է Մոսկվայի կերպարվ–ի թանգարանի հիմնադիրներից (գիտ. քարտուղար): Զբաղվել է հայերենագիտ. զանազան հարցերով:

Լույս են տեսել Մ–ի «Հայ բարբառագիտության ուսումնասիրություններ» (ռուս., հ. 1, 2, 1897, 1901), «Հայերէն բարբառախօսութիւն» (թարգմ. ռուս–ից՝ Գ. Մեննիջյանի, 1899, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատությունները:

Եղել է Մոսկվայի հնագիտ. ընկերության անդամ:

ՄՍԵՐՅԱՆ Մսեր Գրիգորի (20.12.1808, Զմյուռնիա–2.7.1873, Մոսկվա), մատենագիր, մշակույթի գործիչ: Զարմայր ***Մսերյանի*** հայրը: Ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում աշակերտել է Հովհաննես ***Վանանդեցուն:*** 1825–ին տեղափոխվել է Էջմիածին: Եղել է կաթողիկոսի ատենադպիրը: 1848–ին դասավանդել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում: 1858–62–ին որդու հետ հրատարակել է ***«Ճռաքաղ»***, 1861–64–ին՝ ***«Համբաւարեր Ռուսիոյ»*** պարբ–ները:

Լույս են տեսել Մ–ի «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» (մաս 1–3, 1856, Մ., Լազարյան ճեմ. տպ.) աշխատությունը, որը Լազարյանների տոհմի գործունեության պատմ. քննության առաջին փորձն է, «Հաւատապատում: Այն է մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ...» (1850, Մ., Վլադիմիր Գոթիեի տպ., 1874, 1879, Մ., Զարմայր Մսերյանի տպ.) մենագրությունը, «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ» (1850, Վ. Գոթիեի տպ.) և «Մանր ուսմունք ազգային եկեղեցական պատմութեան...» (1874, նույն տպ.) դասագրքերը, «Պատմութիւն կաթուղիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչեւ ցՅովհաննէսէսը...» (1876, երկուսն էլ՝ Մ., Զ. Մսերյանի տպ.) մատենագր. երկը: Մ–ի «Միրզայեան պէյ, պատմութիւն վարուց նորա» ուսումնասիրությունը և նամակները հետմահու տպագրվել են կնոջ՝ Սոփիա Մսերյանի և որդու հրատարակած ***«Փարոս Հայաստանի»*** (1879–81) հանդեսում:

ՄՄՐԼՅԱՆ Երվանդ Համբիկի (6.8.1886, Կ. Պոլիս–8.1.1971, Կահիրե), հրատարակիչ, խմբագիր: Սովորել է Տրիպոլիի Հայ ավետարանականների դպրոցում: 1902–ից՝ Կ. Պոլսում, 1904–ից Կահիրեում աշխատել է տարբեր տպարաններում՝ որպես գրաշար: 1908–ին Կ. Պոլսում հիմնադրել է «Գուտենբերգ» տպարանը, հրատարակել հայ. օրաթերթեր և գեղ. գրակ.: 1914–ին հաստատվել է Կահիրեում, աշխատել «Խարաշօ» երգիծաթերթի խմբագրությունում: 1917–ին հիմնադրել է «Ոսկետառ» տպարանը, որտեղ տպագրվել են «Արգոս» հայ հրատարակչ. ընկերության նախաձեռնությամբ թարգմանված (ֆրանս–ից) տասնյակ վեպեր, «Գանձարան հայկական երգերու» ժող–ների 6 հատորները ևն (շուրջ 70 անուն գիրք): 1919–71–ին՝ ***«Սաւառնակ»*** երգիծ. շաբաթաթերթի հիմնադիր–խմբագիր:

«ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՔՐԻՍՏՈՍԻ», Մատթեոս Եվդոկիացու կրոնադավանաբան. աշխատությունը: Տպագրվել է 1759–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում [420 էջ, էջերի փաստացի քանակը՝ 320 (305–ից հետո սխալմամբ համարակալված է 405 և շարունակված), 8º, 9 x 5,3 սմ]:

«ՄՐԿԱՆՈՑ ՀՈԳԵՒՈՐ», քրիստ. վարդապետության կարճառոտ մեկնություն: Գրքում զետեղված են աղոթքների, խոստովանության, հաղորդության մասին տեղեկություններ: Տպագրվել է 1713–ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության (120 էջ, 12º):

ՄՐՄՐՅԱՆ (Մըրմըրյան) Հարություն Գևորգի (1860, Կ. Պոլիս–21.7.1926, Կ. Պոլիս), գրող, պատմաբան, թարգմանիչ: Նախն. կրթությունն ստացել է ծննդավայրում, հետագայում ինքնակրթությամբ խորացել է աստվածաբանության, փիլ-յան և լեզուների ուսումնասիրման մեջ:

Լույս են տեսել Մ-ի «Ալելուիա: Տաննեակ իմաստասիրական» (2-րդ հրտ., 1908, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան տպ.) կրոն. երկը, «Հին օրեր ու այդ օրերուն հայ մեծատունները: 1550–1870» (1901, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Ստուերք հին դէմքերու. 1635–1900» (1907, ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.), «Թուրքահայոց հին վաճառականութիւնն եւ վաճառականք: 1740–1890» (1908, ԿՊ, Ռոգոս Սազայանի տպ.), «Տաննեւիններորդ դար եւ Յովհ. Պրուսացի Տէրոյենց» (1908, նույն տպ.), «Մասնական պատմութիւն հայ մեծատուններու: 1400 էն–1900» (1909, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Պատմութիւն հայ գրականութեան» (1910, մաս Ա, նույն տպ.) աշխատությունները: Թարգմանել է Հերոդոտոսի, Շ. Մոնտեսքյոյի, Ժ.-Ժ. Ռուսոյի, Հ. Տենի, Հ. Սպենսերի և ուր. գործերից:

Հանդես է եկել նաև Հարություն, Ակումիտ, Ուխտավոր, Ի. Գ. Մ., Խաչքնար գրական կեղծանուններով:

ՄՈՒՂՆԵՅԱՆ Գեղամ Մինոյի [21.12.1921, գ. Մեծ Պարնի (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–27.7.2003, Երևան], կուս-պետ. աշխատող, հրատարակիչ: Ավարտել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվ. հայկ. մանկավարժ. ինստ-ը (1953): 1981–91-ին՝ ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետ. կոմիտեի նախագահ:

«ՄՈՒՂՆԻ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1994-ին Երևանում՝ «Գևորգ Ա. Մոմջյան» բարեգործ. հիմնադրամի նախագահ Ռոման Կոզմոյանի ջանքերով: Տնօրեն՝ Ռուզաննա Պետրոսյան: Տպագրում է հիմնականում հայ մշակույթին և պատմությանը նվիրված գրքեր: 2001-ից համագործակցել է Մեսրոպ արք. Աշճյանի հետ (առաջինը տպագրվել է Սիմեոն Ա Երևանցու «Ջամբռ» աշխատությունը) և վերջինիս առաջարկով անվանվել «Մ.»: «Մ.»-ի հրատարակած գրքերի որոշ մասը լույս է ընծայվել Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի հովանավորությամբ:


Ուշագրավ են Ա. Հասրաթյանի և Զ. Սարգսյանի «Հայաստան: Քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» (2001), Մ. Աշճյանի «Արագահաս Սուրբ Սարգիս» (2002), ***«Վավերագրեր հայ եկեղեցու պատմության»*** մատենաշարի Ժ–ԺԶ հատորները (2002–08), Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» (2003), «Սբ Էջմիածին: Ուղեգրություններ» (կազմ.՝ Մեսրոպ արք. Աշճյան, 2003), «Ես մեղադրում եմ: Գործ №... 1.500000» փաստաթղթերի ժող. (կազմ.՝ Ս. Միրզոյան, 2005), Ե. Քոչարի «Ես ու դուք» (2007), «Սիլվա Կապուտիկյանը մեր հուշերում և խոհերում» (2008), Է. Հարությունյանի «Հայ ճարտարապետության մնայուն ձեռագիրը» (2009), Ա. Ցիցիկյանի «Հայկական աղեղնային արվեստը» (2011), «Հայրենիք–Սփյուռք կամրջող անուն: Վ. Համազասպյան» (կազմ. և ծնթգր.՝ Ս. Միրզոյանի, Մ. Մարտիրոսյանի, 2011), «Արևելք–Արևմուտք» մատենաշարով՝ «Թումանյանի զավակները: Աշխեն, հուշեր և ընտանեկան պատմություններ» (2011), «Թումանյանի զավակները: Արտավազդ Թումանյան: Նամականի» (գիրք Ա, 2013) և այլ գրքեր:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ [Ճենտերեճյան Մուշեղ Սրապիոնի, 1914, գ. Սիվրիհիսար (Անկարայի նահանգ)–12.6.1990, Բեյրութ], գրող, խմբագիր, մշակույթի, կրթ. գործիչ: 1915-ին եղել է Դեյր էզ Զոր տարագրվածների մեջ: Ավարտել է Դամասկոսի Հայոց ազգ. վարժարանը (1928), Բեյրութի Հայ ճեմարանը (1935), հետևել Բրյուսելի համալսարանի մանկավարժության և գրակ-յան դասընթացներին (1938–40): 1941–45-ին՝ ***«Ազդակ»*** թերթի խմբագիր: Դասավանդել է Բեյրութի Հայ ճեմարանում:



Հարություն Միմրյանի *«Մասնական պատմութիւն հայ մեծատուններու...» (1909, Կ. Պոլիս) գրքի փիրղոսաթերթը*

«Մուղնի» *հրատարակչության տպագրած գրքերից*



Ա. Ցիցիկյանի «Հայկական աղեղնային արվեստը» (2011, Ե.) գրքի կազմը



«Թումանյանի զավակները: Արտավազդ Թումանյան: Նամականի» (գիրք Ա, 2013, Ե.) գրքի կազմը



Մուշեղ Իշխան



Մուշեղ Իշխանի
«Երկեր»-ի (1990, Ե., «Նաիրի») կազմը



Ալբերտ Մուշեղյանի
«Մովսես Խորենացու դարը» (2007, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը

Լույս են տեսել Մ. Ի–ի «Տուներու երգը» (1936), «Հայաստան» (1946), «Կեանք ու երազ» (1949), «Ոսկի աշուն» (1963), «Տառապանք» (1968) քնարախոհ. բանաստեղծությունների ժող–ները, «Մեռնիլը որքան դժուար է» (1971), «Սառնարանէն ելած մարդը» (1979), «Թատերախաղեր» (1980) թատերգությունները, «Հացի եւ լոյսի համար» (1951), «Հացի եւ սիրոյ համար» (1956), «Մնաս բարով, մանկութիւն» (1974), «Սպասում» (1976) վիպակները, «Երկերը» (1990, Ե.), «Արդի հայ գրականութիւն» (հ. 1–3, 1973–75) աշխատությունը:

Երկ. Արեւամար, Բ., 1986: Իրիկնալոյս ռամքերու փակ, Անթիլիաս, 1991: Ուխտագնացություն: Բանաստեղծություններ, Ե., 1994:

Գրկ. **Վարդան Լեւոն,** *Մուշեղ Իշխան արձակագիրը, Անթիլիաս, 1986: Մուշեղ Իշխան, Լոս Անջելես, 1988 (ծննդյան 75–ամյակի առթիվ):*

ՄՈՒՇԵՂՅԱՆ Ալբերտ Վարազդատի (ծ. 27.9.1931, Երևան), գրականագետ, բանասեր, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ–ր (1996): Ավարտել է ԵՊՀ (1954): 1965–73–ին՝ Հայաստանի կույրերի միավորման կենտր. վարչության նախագահ: Վեց տարեկանից կորցրել է տեսողությունը: Ուսումնասիրությունները կատարել է կնոջ՝ բանասեր, թարգմանչուհի Ռիմա Հարությունյանի (1932–1997) օգնությամբ: 1956–ին կազմակերպել է բրայլյան տպարան. տպագրության է պատրաստել և լույս ընծայել հայ. առաջին բրայլյան գրքերը (Րաֆֆու «Սամվել» վեպը, Ե. Չարենցի «Բանաստեղծություններ» ժող–ը, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ևն): 1958–73–ին՝ Հայաստանի կույրերի միավորման բրայլյան ամսագրի հիմնադիր–խմբագիր, 1963–75–ին, միաժամանակ՝ *Կույրերի միավորման հրատարակչության* տնօրեն, 1978–ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ–յան ինստ–ի ավագ գիտաշխատող:

Լույս են տեսել Մ–ի «Ավետիք Իսահակյան. վաղ տարիներ. 1875–1898» (1983), «Հայ եկեղեցու և հայոց պետության փոխհարաբերությունները V դարի հայ մատենագրության մեջ» («Հայոց եկեղեցի և պետություն», ժող., 2000), «Սուրբ գիրքը հայերեն թարգմանելու հանգամանքները և Մեսրոպ Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը» («Հայ գրականությունը և քրիստոնեությունը», ժող., 2002), «Մովսես Խորենացու դարը» (2007) աշխատությունները: Գերմ–ից թարգմանել է Ա. Թ. Վեգների «Ճանապարհ առանց տունդարձի: Նահատակություն նամակներում» (առաջաբ. և ծնթգր.՝ Ռ. Մուշեղյանի ու Մ–ի, 2000) գիրքը, Հ. Հայնեի, Յ. Վ. Գյոթեի ստեղծագործություններից:

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2014):

«ՄՇԱԿՈՒՅԹ ՄԱՍԵԱՅ», թատեր. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1857–58 և 1863–66–ին (վերջին շրջանը՝ «Ձայն ընկերասիրական» ենթավերնագրով) Կ. Պոլսում: Խմբագիր՝ Համբարձում Ճիզմեճյան (Արմենակ *Հայկունի*): Տպագրել է թատերագիտ., բեմարվ–ին նվիրված հոդվածներ, դրամատիկ. երկեր, այդ թվում՝ Հայկունու «Արա Գեղեցիկ», «Օղիմպիադա», «Երնջակ» պատմ. ողբերգությունները, արձակ և չափածո գործեր, թարգման. դրամաներ:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Աբրահամ Սուրադի [21.10.1833, Արմաշ (Փոքր Հայքի Նիկոմեդիայի գավառ)–սեպտ., 1903, Սան Ստեֆանո], տպագրիչ–հրատարակիչ, խմբագիր: 11 տարեկանում Երուսաղեմում հրապուրվել է տպագրությամբ և նվեր ստացած տառերով տպագրել է «Հայր մեր» աղոթքը: 1845–ին ընտանիքի հետ տեղափոխվել է Նիկոմեդիա: 1850–ին Հովհաննես վրդ. Ռշտունու բարեխոսությամբ և Հովհաննես Տատյան ամիրայի աջակցությամբ ձեռք է բերել փայտե փոքր մամուլ և կապարե տառեր, որոնցով խմբագրել և հրատարակել է *«Հայրենասէր»* լրագիրը: 1859–ին տեղափոխվել է Փարիզ, որտեղ Ճանիկ *Արամյանի* խորհրդով 1860–63–ին հրատարակել է *«Փարիզ»* պարբ–ը, 1863–ին՝ *«Մեղու»* (Կ. Պոլիս) հանդեսի խմբագիր–տնօրեն, 1865–ին՝ *«Արմաւենի»* (Կահիրե) թերթի խմբագիր:

Թարգմանել է ֆրանսիացի գրող Հ. Միշլեի «Սէր» (1871, ԿՊ, Պետրոս Ճեզվեճյանի տպ.) վեպը:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Գարեգին Գրիգորի, **Մելքիսեդեկ արքեպիսկոպոս** [1836, գ. Տավուշ (այժմ՝ գ. Թովուզ՝ ՀՀ Տավուշի մարզում)–1903, Զմյուռնիա], եկեղեց. գործիչ, մանկավարժ, խմբագիր: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1865–66-ին դասավանդել է Կ. Պոլսում, 1867-ին նշանակվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի տեսուչ, խմբագրել է *«Միոն»* ամսագիրը: 1877-ին ընտրվել է Զմյուռնիայի հոգևոր վիճակի առաջնորդ:

Լույս են տեսել Մ-ի «Պատմութիւն Նոր կտակարանի...» (1871), «Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ» (1872, վերահրտ.՝ 2011, Էջմիածին), «Կրթարան աւետարանական բանից» (1871–72, երեքն էլ՝ Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Երկու խօսք Ռուսաստանի հայոց կրօնական եւ կրթական վիճակին վրայ» (1888, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Պետրոս Շանշեանց: Կենսագրութիւն» (1898, Թ., Մ. Շարաձեի տպ.), «...Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ» (1898, Գալաց, «Անի» տպ.) աշխատությունները, կատարել է թարգմանություններ:

Գրկ. ***Փալագաշեան Յ.****, Այնարկ մը Մելքիսեդեկ Մուրատեանց արքեպիսկոպոսի գործունէութեան շուրջ, ԿՊ, 1929:* ***Խուդավերդյան Ա.****, Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանցը խմբագիր և հրապարակախոս, Սյունիքի մարզային պատմաերկրագիտական թանգարան, Սյունիքի մարզային գրադարան, Սյունիքի մարզային պատմական արխիվ, Սյունիքի մարզային պատկերասրահ, Սյունիքի մարզային տեղեկատվական կենտրոն, Սյունիքի մարզային տպարան, Սյունիքի մարզային տուրիզմի կենտրոն, Սյունիքի մարզային տուրիզմի կենտրոն, Սյունիքի մարզային տուրիզմի կենտրոն



Մանուկ Մուրադյանի *«Վասպուրականի հեքիաթներ» (2006, Ե., «Գրական հայրենիք») գրքի կազմը*



Պարույր Մուրադյանի *«Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները» (2009, Էջմիածին) գրքի կազմը*



Սամվել Մուրադյանի *«Երվանդ Օտյան» (1996, Ե., «Հայագիտակ») գրքի կազմը*

աղբյուրներն ու աղերսները բյուզ. մատենագրության հետ, սրբագրել գրաբար և հուն. բնագրեր, թվագրել ինքնուրույն ու թարգման. մի շարք գործեր:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Մանուկ Նորիկի (2.6.1955, Երևան–30.1.2013, Երևան), հեռուստալրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1978): 1979–99-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում, 2011–13-ին՝ ՀԱԳ-ի *«Հոգևոր հայրենիք»* ամսաթերթի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Տանիքի վրա» (1987), «Հոգին հոգով՝ հիշատակ» (2014) բանաստեղծությունների ժող-ները, «Կառլոս Աբովյան» (2002) հուշագրությունը, «Վասպուրականի հեքիաթներ» (2006, 2012) ժող-ը, «Ուսուբ բեկ» (2012) պատմավավերագր. աշխատությունը:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Պարույր Սամբրեի [25.3.1933, գ. Ղադոլար (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–20.7.2011, Երևան], հայագետ-կովկասագետ, աղբյուրագետ-միջնադարագետ: Պատմ. գիտ. դ-ր (1986), պրոֆ. (1989): Կիմ *Մուրադյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1958): 1963–70-ին՝ ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի գիտաշխատող, 1971–76-ին՝ ԵՊՀ դասախոս, 1976–95-ին՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ի կովկասագիտ-յան և բյուզանդագիտ-յան բաժնի հիմնադիր-վարիչ, 1996-ից՝ ինստ-ի գլխ. մասնագետ: 1991–92-ին դասավանդել է Տրիրի (Գերմանիա) համալսարանում: 1987–94-ին՝ *«Հուշարձան»* տարեգրքի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Մ-ի «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» (1963), «Հայ-վրացական գրական առնչությունները XVIII դարում» (1966), «Հայաստանի վրացերեն արձանագրությունները: Աղբյուրագիտական քննություն» (1977), «Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը: Բնագրեր և հետազոտություն» (1996), «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)» (2007), «Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները» (2009), «ԺԱ–ԺԳ դարերի հայ վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը: Աղբյուրագիտական քննություն և բնագրեր» (2011) աշխատությունները: Հին վրաց-ից թարգմանել է «Վրաց ժամանակագրություն. 1207–1318» (առաջաբ. և ծնթգր՝ Մ-ի, 1971) երկը: Վերծանել, թարգմանել, ծանոթագրել և հրատարակել է վիմագիր ու պատմ. աղբյուրներ [«Armeno-Georgica» (h. 1–5, 1977–96), «Վրաստանի հայերեն արձանագրությունները» (ռուս., h. 1, 2, 1985, 1988), «Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները» (1982)], կազմել և խմբագրել է «Կովկաս և Բյուզանդիա», «Հայագիտական հետազոտություններ», «Հայագիտական մատենադարան» մատենաշարերը: Խմբագրել և հրատ-յան է պատրաստել Ն. Մառի, Հ. Օրբելու, Լ. Խաչիկյանի, Լ. Մելիքսեթյանի, Ե. Տեր-Մինասյանի, Մ. Ներսիսյանի գիտ. ժառանգություններն ամփոփող ժող-ները:

ՀԽՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվ. մրց. (1989):

Գրկ. Պարույր Մուրադյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն, Ե., 2003:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Սամվել Պարգևի [ծ. 20.1.1945, գ. Չորափ (այժմ՝ գ. Աղցք՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1995), պրոֆ. (2003): Ավարտել է ԵՊՀ (1969): 1969–72-ին՝ ԵՊՀ հայագիտ. կենտրոնի գիտաշխատող, 1972–84-ին՝ *«Բանբեր Երևանի համալսարանի»* հանդեսի պատ. քարտուղար, 1985-ից՝ ԵՊՀ դասախոս, 1992–94-ին դասավանդել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում, 2001-ից՝ ԵՊՀ հայ գրակ-յան ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Մ-ի «Հարություն Սուրխաթյան» (1988), «Երվանդ Օտյան: Կյանքը և գործը» (1996, 2012), «Գրական հանգրվաններ» (2003), «Հովհաննես Շիրազ: Բանաստեղծը, մարդը» (2012) աշխատությունները:

ՄՈՒՐԱԴՅԱՆ Սարգիս Սամբրեի (23.6.1927, Երևան–12.7.2007, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ժող. նկարիչ (1978): Պրոֆ. (1981): ՌԴ գեղարվ-ի ակադ-ի թղթ. անդամ (1983): Գոհար *Մուրադյանի* հայրը: Ավարտել է ԵԳՈՒ (1945), ԵԳԻ (1951): 1961–2004-ից դասավանդել է ԵԹԿՊԻ-ում: 1950-ական թթ-ին աշխատակցել է «Պիոներ» ամսագրին:

Նկարազարդել և ձևավորել է Խ. Գյուլնազարյանի «Դաշտի տերերը և հյուրերը» (1951), Նազիմ Հիքմեթ Ռանի «Ջոյա» (1951), Հ. Շիրազի «Իմ ընկեր

Լորիկը» (ռուս., 1952), Ա. Իսահակյանի «Արձակ էջեր» (1955), Մուրացանի «Պատմվածքներ» (1960) և այլ գրքեր:

ԽՍՀՄ Պետ. (1976) և ՌԴ նկարիչների միության 2-րդ (1995) մրց-ներ:

Գրկ. Սարգիս Մուրադյան: Ալբոմ (հայ., անգլ., 2008, կազմ.՝ Գոհար և Զարուհի Մուրադյաններ):

ՄՈՒՐԱԴՅԱՆ Սուրեն Ստեփանի [ծ. 26.11.1930, գ. Ակներ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], բանաստեղծ, մանկագիր, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1952) և Մոսկվայի ժուռնալիստիկայի մեկամյա դասընթացը (1957): 1952–91-ին աշխատել է մի շարք պարբ-ների խմբագրություններում, «Արևիկ» հրատարակչությունում: 1991–2001-ին՝ ***«Ոզնի»*** երգիծաթերթի գլխ. խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Մ-ի «Առաջին երգ» (1953), «Մկնիկ հարսնացուն» (1960), «Վարդեր և փշեր» (1972), «Երկնքից երեք խնձոր ընկավ» (1973), «Կապույտ թռչուն» (1976), «Միգաքաղ» (1990), «Չափածո հեքիաթներ» (2003), «Երգիծատուն» (2004), «Աշնանամուտի զանգեր» (2005), «Նապաստակի մուշտակը» (ռուս., 2006), «Մանկական երգարան», «Մանկական պիեսներ» (երկուսն էլ՝ 2009), «Զյունոտ ծաղիկներ», «Հայոց մայրաքաղաքները», «Արևներ և աստղիկներ» (երեքն էլ՝ 2010), «Ես սիրում եմ քեզ, հայրենիք», «Սիրո տաղարան» (երկուսն էլ՝ 2011), «Գրքի թևով, հազար ձևով» (2012), «Իմ վերջին կանգառը» (2014) բանաստեղծությունների, հեքիաթների ժող-ները, «Մեծերն իմ կյանքում», «Գրական նամականի» (երկուսն էլ՝ 2007), «Մի երկար, լուսարար ճանապարհ» (2012) հուշերի, գրական դիմանկարների ժող-ները: 250-ից ավելի մանկ. երգերի տեքստերի հեղինակ է:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. (1993), Ե. Չարենցի անվ. (2000), Տարվա լավագույն գրքի (2001), «Գրական վաստակի համար» (2005), ՀՄՄ Վ. Թեքեյանի անվ. (2011) մրց-ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» (2007) մեդալ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2010):

Գրկ. Սուրեն Մուրադյան: Կենսաամսագրագիտություն, Ե., 2005:

ՄՈՒՐԱՑՅԱՆ (Տեր-Հովհաննիսյան Գրիգոր, 1. 2. 1854, Շուշի–30. 8. 1908, Թիֆլիս), գրող: Ավարտել է Շուշիի թեմ. դպրոցը (1873): 1875–76-ին հայոց լեզու է դասավանդել Շուշիում՝ Խորեն Ստեփանեի դպրոցում: 1877-ին շրջագայել է Արցախի ու Սյունիքի պատմ. վայրերում, գրել «Հասան-Ջալալեան ազգի համառօտ տոհմագրութիւնը» (1880, «Փորձ», № 5) երկը: 1878-ին հաստատվել է Թիֆլիսում:

Մ. գրական ճանաչման է արժանացել «Ռուզան կամ Հայրենասէր օրիորդ» (1882) պատմ. դրամայով: Գրել է «Հայ բողոքականի ընտանիքը» (1882, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Լուսաւորութեան կենտրոնը» (1892), «Նոյի ագռաւը» (1899), «Առաքեալը» (1902), «Գթութեան քոյրեր» (1902) վիպակները, «Իմ կաթոլիկ հարսնացուն» (1885), «Չիաս է» (1886), «Խորհրդավոր միանձնուհին» (1889) վեպերը, «Հասարակաց որդեգիրը» (1884), «Հարուստները զուարճանում են» (1884), «Ի՞նչ լայեղ է» (1885), «Անպատճառ իշխանուհի» (1886) պատմվածքները:

Մ-ի «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը տպագրվել է 1896-ին Թիֆլիսի «Արձագանք» ամսագրում, առանձին՝ 1912-ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ., 1977, 1982, 1988, 1989, 2007, 2012): «Անդրեաս երէց» (1897–98) պատմավեպում Մ. պատկերել է Ագուլիսի դպրոցի վերակացու Անդրեաս երեցի նահատակությունը՝ հանուն հայրենիքի և Հայ առաքել. եկեղեցու:

Լույս են տեսել «Մուրացանի երկասիրութիւններ» երկհատորյակը (հ. 1, 1904, Թ., Մնացական Սարտիրոսյանի տպ., հ. 2, 1908, Թ., Ն. Աղանյանի տպ.):

Մ-ի անունով Երևանում և ՀՀ ու ԼՂՀ այլ քաղաքներում կոչվել են փողոցներ, դպրոցներ, գրադարան՝ Ստեփանակերտում:

Երկ. Երկերի ժող., հ. 1, 2, Ե., 1961, 1965, հ. 1–2, Ե., 1975: Հոդվածներ, ուսումնասիրություններ..., Ե., 2004:

Գրկ. **Պարտիզունի Վ.**, *Մուրացան, Ե., 1956:* **Տերտերյան Ա.**, *Մուրացան, Ե., 1971:* **Սաքինյան Ս.**, *Մուրացան (փիլիսոփայությունը, էթիկան, պատմության փիլիսոփայությունը), Ե., 2004:* **Սաֆարյան Վ.**, *Գրողի և կերպարի անհատականությունը, Ե., 2001:*



Սարգիս Մուրադյան. *Ա. Իսահակյանի «Արձակ էջեր» (1955, Ե., Հայպետհրատ) գրքի պատկերազարդումներից*



Սուրեն Մուրադյանի *«Միգաքաղ» (1990, Ե., «Արևիկ») գրքի կազմը*



Մուրացան



Մուրացանի *«Գևորգ Մարզպետունի» (1989, Ե., «Լույս») գրքի կազմը*



«Մուրճ», *1889–1907, Թիֆլիս (№ 8, 1906)*

«ՄՈՒՐՃ», հաս-քաղ. և գրական ամսագիր: Լույս է տեսել 1889–1907-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Ավետիք ***Արաքսիանյան,*** 1901-ից (նոր շրջան) խմբագիրներ՝ Կոստանդին Կրասիլնիկյան, Հ. Սպենդիարյան, Լևոն Սարգսյան: Ա. Արաքսիանյանի օրոք «Մ.» ունեցել է պահպանող-բարեփոխ. ուղղվածություն, անդրադարձել է հայկ. կյանքի կարևոր խնդիրներին, քաղ. տեսություններով լուսաբանել է ժամանակի անցուդարձը: Հայ տնտեսագիտ. գրակ-ը մեծապես հարստացել է խմբագրի՝ ամսագրի էջերում հրապարակած աշխատություններով:

«Մ.» համախմբել է հայ գրողներին՝ Պ. Պռոշյան, Ա. Ծատուրյան, Լ. Մանվելյան, Վ. Փափազյան, Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Լ. Շանթ, Հ. Հակոբյան և ուր., նպաստել գրակ-յան, մասնավորապես գյուղագրության զարգացմանը, որպես հավելվածներ տպագրել հիշյալ գրողների մի շարք ծավալուն ստեղծագործություններ: Անդրադարձել է կրթության ու դաստիարակության, առողջապահության հարցերին, ծանոթացրել գիտ-յան նվաճումներին: Աջակցել է դարասկզբի գրական-մշակութ. առաջընթացին, տպագրել համաշխ. դասականների (Վ. Շեքսպիր, Ջ. Բայրոն, Յ. Վ. Գյոթե, Հ. Հայնե, Ֆ. Շիլլեր, Հ. Սենկևիչ, Ա. Չեխով, Մ. Գորկի, Չ. Դիքենս, Ա. Դոդե, Մ. Ֆ. Վոլտեր, Ա. Ֆրանս, Հ. Իբսեն, Մ. Մետերլինկ և ուր.) գործերից:

Գրկ. **Անանյան Գ.**, *Հայ գրականությունը «Մուրճ» ամսագրում, Ե., 1972: Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի (1889–1907), կազմ.՝ Կ. Քացախյան, Ե., 1977:* **Գևորգյան Լ.**, *«Մուրճ» ամսագիրը, Ե., 1982:*

«ՄՈՒՐՃ ԵՎ ՄԱՆԳԱՂ», օրաթերթ (1927-ից՝ եռօրյա): ՀամԿ(բ)Կ Հս. Կովկասի երկրամասային և Դոնի կոմիտեների Հայկ. բյուրոների, հետագայում նաև Մյասնիկյանի շրջխորհրդի գործկոմի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1925–31-ին Դոնի Ռոստովում: Խմբագիրներ՝ Ն. Զարգարյան, Մ. Գրիգորյան, Ա. Թումանյան, Ազատ ***Վշտունի***, Վահան ***Ծովյան:***

Յ

Յ, հայ. այբուբենի 21-րդ տառը, անվանումը՝ «յի» («հի»): Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար, կարճ և լայն տարրերից, կարճը և լայնը նուրբերով երկարին են միանում ձախից. կարճը՝ վերևից, լայնը՝ ներքևից: Ունի երկաթագիր, բոլորգիր, գրչագիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:


Յ, որպես այբուբենի հարյուրավորների սյան 3-րդ (21-րդ) տառ, նշանակել է երեք հարյուր և երեքհարյուրերորդ, բյուրի նշանով (Յ՝)՝ 3 մլն (3 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Յ–մաս 300-րդ):

ՅԱՋԸՃՅԱՆ Գևորգ Գրիգորի (ծ. 6.7.1961, Բեյրութ), հրապարակախոս, խմբագիր, մատենագետ: Պատմ. գիտ. թեկնածու (2001, հրաժարվել է 2012-ին): Ավարտել է ԵՊԻ (1986), սովորել ԵՊՀ-ում (1986–88): 1994-ից ապրում է ՀՀ-ում: 1988–89-ին՝ *«Երկաթե շերեփ»*, 1990–92-ին՝ «Սադա Արարատ» (արաբ.), 1990–94-ին՝ *«Սփիւռք»* (երեքն էլ՝ Բեյրութ), 2004-ին՝ «Շրջադարձ» (Հասմիկ *Գուլակյանի* հետ, Երևան) պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Յ-ի «Հայաստանի պարբերական մամուլը 1997 թ. առաջին քառամսյակին: Մատենագիտական ամփոփագիր» (1997), «Հայաստանի, ԼՂՀ-ի և ԱՊՀ երկրների հայկական պարբերական մամուլի նորեկները 1997 թ-ին» (1998), «Հայաստանի 1985–1991 թուականներու պարբերական մամուլը» (2004), «Լիբանանահայ պարբերական մամուլը 2002 թուականին (Համայնապատկերի փորձ)» (2004) մատենագիտ., «Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները» (2007, 2009) պատմագիտ. աշխատությունները, «Հրաւէր դէպի Արցախ» (2003) ուղեգրությունը: Թարգմանություններ է արել ռուս-ից արևմտահայ., արաբ-ից՝ արևելահայ.:

«ՅԱՂԱԳԱՍ ԿԱՐԳԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ», Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ա Զուղայեցու օրոք արևելահայ հոգևոր ու աշխարհիկ երևելիների ստորագրությամբ և Սիվսես Բջնեցու ձեռքով գրված կաթողիկոսի ձեռնադրության կարգի մասին փաստաթուղթ: Տպագրվել է 1693-ին Նոր Զուղայում՝ առանց տպարանի հիշատակության (1 էջ, 44 x 35 սմ):

«ՅԱՂԱԳԱՍ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻ», քարոզիչ Պողոս (Պաուլո) Փիրոմալիի դավանաբան. երկը: Տպագրվել է 1674-ին Հռոմում (210 էջ, 8º, 11 x 7 սմ):





«Յաղագս ճշմարտութեան հաւատոյն քրիստոնէականի» *(Պողոս Փիրոմալի, 1674, Հռոմ) գրքի փիրղոսաթերթը*



Բոգդան Յանուշ

ՅԱՂՈՒԲՅԱՆ Կարապետ (1857, Ախալցխա–1911), բառարանագիր: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1891-ին հրատարակել է «Հայերէն–ռուսերէն բառարանը» (մոտ 30 000 բառահոդված, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.): Զբաղվել է նաև իրավագիտ-յամբ («Դատարանական վերանորոգութիւնները», «Մուրճ», 1889, № 1, 3), թղթակցել է «Փորձ», «Մշակ» և այլ պարբ-ների:

ՅԱՆՈՒՇ Բոգդան (1889–1930), ուկրաինացի հնագետ, պատմաբան, հայագետ: Գրել է Ուկրաինայի և Լեհաստանի հայերի պատմությանը նվիրված աշխատություններ: Լվովում ստեղծել է հայագիտ. գրակ-յան հավաքածու, 1925-ին բացել է Լվովի հայկ. եկեղեցու որմանկարները, 1927-ին մասնակցել է Լվովի հայկ. գաղթավայրի *«Պոսլանիեց Շվիլեւսրիեզո Գժեգոժա»* լեհ. ամսագրի հիմնադրմանը:

Յ. հրատարակել է Լվովի հայկ. բանկին նվիրված «Լվովի հայերի «Mons pius»-ը» («Գթության լեռ», 1928) լեհ. գիրքը: Նրա «Հայկական մայր տաճարը Լվովում», «Լեհաստանի հայագիտության պատմությունից», «Գալիցիայի և Պոդոլիեի հայերի մատենագիտությունը» հայագիտ. աշխատություններն անտիպ են:

Գրկ. Դաշկևիչ Յ., Ուկրաինական պատմագրության ներդրումը հայ-ուկրաինական փոխհարաբերությունների ուսումնասիրության գործում, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1964, № 6:



«Ցառաջ»,
1925–2009, Փարիզ

«ՅԱՌԱՋ», հաս., տնտ., քաղ. և գրական եռօրյա թերթ: ՀՅԴ կուս-յան երիտասարդաց միության հրատ.: Լույս է տեսել 1909–14-ին Կարինում [1914-ին՝ «Երկիր» (8 համար), ապա՝ «Ալիք» (17 համար)]: Խմբագիրներ՝ Եղիշե *Թոփչյան*, Սիմոն *Վրացյան*, Շավարշ *Միսաքյան:* Լուսաբանել է միության գործունեությունը, անդրադարձել ժամանակի ազգ-քաղ., միջազգ. կարևոր իրադարձություններին:

«ՅԱՌԱՋ», հաս-քաղ. և գրական օրաթերթ (մինչև 1927-ը՝ երկօրյա): Լույս է տեսել 1925–2009-ին Փարիզում (1940–44-ին ընդհատվել է): Եղել է ՀՅԴ բյուրոյի, ապա՝ ՀՅԴ Ֆրանսիայի կազմակերպության պաշտոնաթերթը: 1970-ական թթ-ի սկզբից՝ անկախ: Հիմնադիր-տնօրեն ու խմբագիր՝ Շավարշ *Միսաքյան*, 1957-ից՝ տնօրեն-խմբագիր Արփիկ *Միսաքյան:* Լուսաբանել է սփյուռքահայ, մասնավորապես՝ ֆրանսահայ համայնքների առօրյան, ներկայացրել է հայ քաղ. կուսների, հաս. և մշակութ. կազմակերպությունների գործունեությունը, անդրադարձել ՀՀ քաղ., տնտ. ու մշակութ. կյանքին, միջազգ. քաղ. անցուդարձին: Տպագրել է հայ և համաշխ. դաս. գրակ-յան նմուշներ, անտիպ էջեր, պատմությանը, արվ-ին, իրավունքին նվիրված հոդվածներ: 1976-ից հրատարակվել է թերթի «Միտք եւ արուեստ» միամսյա հավելվածը, 1976 և 1980-ին լույս են ընծայվել հոբելյան. համարներ՝ «Յ.»-ի ուշագրավ հրապարակումներով: Թերթի խմբագրությանը կից գործել է տպարան, որտեղ տպագրվել են նաև գեղ. գրքեր:



«Ցառաջ», *1957–64, Բեյրութ*

«ՅԱՌԱՋ» («**Մեր նշանաբանն է յառաջ**»), քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1957–64-ին Բեյրութում: Արտոնատեր՝ Նեսիբ Նիմր: Պատ. տնօրեններ՝ Աբդալլա Հոշեյմի, Գասպար Տերտերյան, պատ. խմբագիրներ՝ Գառնիկ *Ադդարյան*, Հովհաննես Աղպաշյան, Հարություն *Սադեյան:* Արտահայտել է Լիբանանի կոմկուսի և նրա հայ անդամների տեսակետները: Լուսաբանել է արաբների ազգ-ազատագր. պայքարը տարածաշրջանում, Լիբանանի և Մերձ. Արևելքի մյուս երկրների կոմկուսների գործունեությունը: Մեծ տեղ է հատկացրել Լիբանանի ներքին կացությանն ու արտաքին հարաբերություններին: Ներկայացրել է խորհրդահայ գրակ-յան նմուշներ, տպագրել սփյուռքահայ գրողների գործեր, բանախոսություններ նրանց մասին: Ծանոթացրել է ռուս դաս. ու ժամանակակից գրողներին, գեղանկարչության, երաժշտության բնագավառների նշանավոր հայ գործիչներին: 1961–64-ին ունեցել է «Ցառաջ-Գրական» շաբաթական հավելվածը (խմբագիրներ՝ Գ. Տերտերյան, Արմեն *Դարյան,* Պետրոս *Մինասյան*):

1965–70-ին, որպես «Յ.»-ի շարունակություն, լույս է տեսել գրական-հաս. «Յառաջ» շաբաթաթերթը: Արտոնատեր՝ Նախլե Մութրան, պատ. տնօրեն՝ Գասպար Տերտերյան, խմբագիրներ՝ Հ. Աղպաշյան, Գ. Տերտերյան, Պ. Մինասյան:

«ՅԱԻԵԼՈՒԱԾ ԲԱՆԻՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ ԱՆՏՈՆԻ ԱԲԲԱՅԻ», ժող.: Կազմ. և աշխատասիր.՝ Բարսեղ Լասլովյանի: Տպագրվել է 1800-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (96 էջ):

«ՅԱԻԵՐԺԱՀԱՐՍ», գրակ-յան, արվ-ի, գիտ-յան կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1862-ին Զմյուռնիայում (12 համար): Տնօրեն-խմբագիր՝ Սարգիս Փափազյան: Տպագրել է հոդվածներ գիտ-յան և արվ-ի տարբեր բնագավառների վերաբերյալ, զվարճալի նյութեր, նամակներ, հայտարարություններ ևն: Հատուկ տեղ է հատկացրել կանանց կրթության, կենցաղավարության, նորաձևության հարցերին: Նպաստել է տեղի հայկ. մշակութ. կյանքի զարգացմանը: № 7-ն ունեցել է հավելված՝ «Աշխատասիրեալ վասն «Յաւերժահարսին»»: «Յ.»-ում տպագրվել են Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» կատակերգությունը (թարգմ.՝ Կ. Տետեյանի), Ղ. Մարկոսյանի «Ալֆրետ ու Եվգինե» երկը, չափածո գործեր, մանրավեպեր: Աշխատակցել են Տ. Տետեյանը, Մ. Նուպարյանը և ուր.:

ՅԱՐԱԼՅԱՆ Գեորգի Յակովի [ծ. 13.11.1927, Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–15.4.2011, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1953):

Նկարազարդել և ձևավորել է բազմաթիվ մանկ. և երգիծ. գրքեր՝ Հ. Սևանի «Չարաճճի աղջիկը» (1965), Ջ. Ռոդարիի «Հեքիաթներ հեռախոսով» (1973), Վ. Վասիլակեի «Հեքիաթ ճերմակ ցլիկի մասին» (1977), Ա. Հակոբյանի «Տրամաբանական զվարճալիքներ» (1996), Ս. Մուրադյանի «Ուրախ երգիծանք» (1999), Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» (2012), նաև «Ժողովրդական սրախոսություններ» (1992), «Գյումրվա աննկդոտներ» (1993), «Եզոպոսի առակները» (1994) ևն: Հեղինակ է «Մանկական հանելուկներ» (1986), «Գտիր ինքդ» (1987), «Ծածկաժպիտներ, հանելուկներ» (2009) գրքերի: Յ-ի երգիծանկարները տպագրվել են «Ոզնի», «Ազգ» (Երևան), «Կրոկոդիլ» (ռուս., Մոսկվա), «Քաջ Նազար» (Լոս Անջելես) և այլ պարբ-ներում:


«Երգիծանք-69» ցուցահանդեսի մեդալ (Մոսկվա, 1969):

Գրկ. Գեորգի Յարալյան (կազմ.՝ Ա. Տիրանյան), Ե., 1978:

«ՅԱՐԱՑՈՑՑ ՃՇՄԱՐՏԻ ԱՊԱՇԽԱՐՈՂԻ», հիսուսյան քարոզիչ Աղեքսանդրի երկը: Թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու: Տպագրվել է 1731-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Յարացոյց ճշմարտի ապաշխարողի...», Բ-ին՝ «Յարացոյց ապաշխարողաց...» (515 էջ, 12º, 11,7 x 6,2 սմ):

ՅԱՐԴԸՄՅԱՆ Տաճատ (ծ. 9.9.1945, Բեյրութ), եկեղեց. գործիչ, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1970-ից), ծ. վրդ. (1991-ից): Ավարտել է Վենետիկի միաբանության վարժարանը (1964), Հռոմի Հիսուսյան միաբանության Գրիգորյան միջազգ. համալսարանը (1972): 1973–75-ին՝ *«Հայ ընտանիք»* ամսաթերթի, 1993–2000-ին՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր, 1981–86-ին՝ Լոս Անջելեսի Մխիթարյան վարժարանի փոխտնօրեն, 1988–2004-ին՝ Մխիթարյան կրթ. համալիրի հիմնադիր-վարիչ, 1991–2000-ին՝ Հայագիտ. դասընթացների տնօրեն: 2004-ից՝ Սբ Էջմիածնի միաբան, ԱՄՆ-ի Արմ. թեմի առաջնորդ. ընդհանուր փոխանորդ:


Լույս են տեսել Յ-ի «Կրթական հոգեր» (1984), «Աստուած եւ ժամանակակից գրականութիւն» (1986), «Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին եւ հայագիտութեան» (1987), «Կարմիր հնձուց կամ Կարմիր վանք» (1988), «Սբ Ղազար կղզին՝ Մայրավանք Մխիթարեաններու» (1989), «Որդան կարմիր կամ հայկական կարմիր ներկ» (1991), «Հայ եկեղեցւոյ Սբ առաքեալը. Գրիգոր Լուսաւորիչ», «Աստուածաշունչը եւ հայերը», «Մխիթարեան վանականութիւնը երրորդ հազարամեակի սեմին» (երեքն էլ՝ 1998), «Վենետիկի Մխիթարեաններու հայկական կաճառը», «Ընդգրկեալ անընդգրկելին: Վերադարձ դէպի



Գեորգի Յարալյան. *Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» (2012, Ե., «Ամարաս») գրքի կազմը*



«Յարացոյց ճշմարտի ապաշխարողի» *(Աղեքսանդր, 1731, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Տաճատ Յարդըմյանի *«Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն...» (2001, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*


ԱՒԵՏԻՍ ՅԱՓՈՒՃԵԱՆ

ՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ
ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԻՆՉ ԵՂԱՒ
ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔԸ

ԳԱՀԻՐԷ
1969

Ավետիս Յափուճյանի *«Ով կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը...» (1969, Կահիրե) գրքի կազմը*


ՅԵՆԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

«Յենարան», *1959–62, Նիկոզիա*


ՅՈԳՆԱԴԻՄԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆՔ

ՄՐՄԱՍՏԷՐԴԱՄ

«Յոգնադիմի աստուածաբանական բարոյական եւ ...» *(1704, Ամստերդամ, Թովմաս Վանանդեցու տպ.) գրքի փիղոսաթերթը*

Աստուած», «Հայկական սրբազան Պատարագ» (երեքն էլ՝ 2000), «Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894–1896 և 1915–1925 տարիներուն» (2001), ««Վարդապետը» հայ եկեղեցական մտածողութեան մէջ» (2001), ««Եպիսկոպոսը» հայ եկեղեցական մտածողութեան մէջ» (2003), «Ինչո՞ւ հայերս մեր եկեղեցիները կօծենք» (2010) աշխատությունները, «Դռնակ թիւ մէկ» (1983), «Ճամբան» (1986), «Հողը» (1994), «Մայթը» (1997), «Հաղորդութիւն» (2008) բանաստեղծությունների ժող–ները:

ՅԱՓՈՒՃՅԱՆ Ավետիս Հովհաննեսի (ծ. 10.1.1931, Կահիրե), պատմաբան, մշակույթի գործիչ, խմբագիր: Ավարտել է Կահիրեի Գալուստյան վարժարանը (1949), Լոնդոնի մանկավարժ. ինստ–ի լրագրության ֆակ–ը (1953): 1967–90–ին՝ ***«Արև»*** օրաթերթի, 1993–ից՝ ՀԲԸՄ ***«Միություն»*** (Սիդնեյ) ամսաթերթի հայ. բաժնի խմբագիր:

Լույս են տեսել Յ–ի «Հայ ժողովուրդին մեծ գոյամարտը...» (1968), «Ով կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը, եւ ինչ եղաւ անոր հետեւանքը» (1969, Կահիրե), «Եւ վերածնաւ հայ ժողովուրդը հուրէն ու սուրէն» (1971), «Արևմտահայաստանի կորուստը եւ անոր պատասխանատուները» (1970), «Պաքուի հերոսամարտը եւ անոր պարտութեան պատասխանատուները» (1973), «1918 թուականի թուրքական արշաւանքը Հայաստան եւ Բաթումի պայմանագիրը» (1974), «Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919–1921» (մաս 1–2, 1977), «Հայկական հարցին ծագումը» (1979), «Մեծ եղեռնը օտար մտաւորականութեան գնահատումով» (1980), «Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն», «Ո՞ւր է ելքը...» (երկուսն էլ՝ 1981), «Նանսէն եւ հայ գաղթականութեան հայրենադարձութեան հարցը» (1983, 2011), «Տպաւորութիւններ հայաստանեան գրականութենէն» (1986), «Տպաւորութիւններ սփյուռքահայ գրականութենէն», «Պատմութեան քառուղիներուն վրայ» (երկուսն էլ՝ 1987) աշխատությունները, «Կեանքիս ճանապարհը» (1982), «Կեանքէս ճակատագրական երեք հանգրուաններ» (2012) հուշագրությունները: Կազմել է «Պատմութիւն հայ ազգային հիմնադրամի (1942–1982)» (1984), «Հայ գեղարուեստասիրաց միութեան պատմութիւն. 1920–2000» (2004) ժող–ները: Հայ. է թարգմանել Է. Մ. Ռեմարկի, Լ. Ֆլեմանի, Ա. Վեռնոյի, Վ. Քաչոյի ստեղծագործություններից:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2005):

Գրկ. Յորելեան դոկտ. Աւետիս Եափուճեանի, Կահիրե, 1982:

«ՅԵՆԱՐԱՆ», քաղ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1959–62–ին Նիկոզիայում (Կիպրոս): Արտոնատեր–խմբագիր՝ Սեդրակ Կեպեյան: Որոշիչ դեր է կատարել կիպրահայության հայրենասիր. տրամադրությունների ձևավորման և քաղ. կողմնորոշման խնդրում: Լուսաբանել է գաղթավայրի առօրյան, Կիպրոսի Հանրապետության ստեղծման շուրջ տեղի ունեցած միջազգ. իրադարձությունները, ԽՍՀՄ արտաքին քաղաքականության առանձին հարցեր: Աջակցել է հայրենադարձությանը, պաշտպանել Հայ եկեղեցու միասնությունը:

«ՅՈՎԵԼԵԱՆ ՍՈՒՐԲ ՏԱՐԻ ԹՈՂՈՒԹԵԱՆ», Հռոմի պապ Բենեդիկտոս 13–րդի հռչակագիրը: Լատ–ից թարգմ.՝ Հովսան Թոխաթեցու: Տպագրվել է 1725–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (20 էջ, 12º):

«ՅՈԳՆԱԴԻՄԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆՔ», բարոյական կանոնների և քաղ. օրենքների ժող.: Տպագրվել է 1704–ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում: Տպակից է Արիստոտելի «Ճաղագս առաքինութեանց եւ չարութեանց» գրքին (64 էջ, 8º, 11,5 x 6 սմ):

«ՅՈՅՍ», ազգ., կրոն., բարոյախոս., իմաստասիր. և բանասիր. ամսագիր: Արմաշի Սբ Աստվածածին վանքի միաբանության հրատ.: Լույս է տեսել 1864–77–ին Արմաշում: Խմբագիր՝ Խորեն ***Աշրգյան:*** Տպագրել է Հայ եկեղեցու պատմությանը, ծեսերին ու տոներին, ավանդություններին, կրոնների պատմությանը, հայերի հեթանոս. հավատալիքներին, օտար ազգերի կենցաղին ու ավանդություններին նվիրված հոդվածներ, հաղորդագրություններ, բնախոս., բնագիտ., մանկավարժ., առողջապահ. նյութեր, բանաստեղծություններ, կենցաղային խորհուրդներ:

ՅՈՐԳԱ (Iorga) Նիկոլայե (18.6.1871, Բոտոշան–27.11.1940), ռումին քաղ. գործիչ, պատմաբան, գրող, հայագետ, թարգմանիչ: Բուխարեստի համալսարանի պրոֆ. (1894), ռեկտոր (1929): Ռումինիայի ակադ-ի ակադ. (1910): Սովորել է Յասսիի, Փարիզի, Բեռլինի և Լայպցիգի համալսարաններում: Աշխատակցել է *«Անի»* (ռում.) հայագիտ. հանդեսին, սատարել *«Նաւասարդ»* (1923–26) գրական, արվեստագիտ. ամսագրի հրատարակմանը:

Լույս են տեսել Յ-ի «Հայերը և ռումինները...» (ռում. և ֆրանս., 1913), «Չորս դասախոսություններ Հայաստանի մասին» (ռում., 1929), «Հայերը Ռումինիայում» (1929), «Փոքր Հայաստանի համառոտ պատմություն» (1930), «Հայ արվեստի իրերը Ռումինիայում» (1935, երեքն էլ՝ ֆրանս.,) հայագիտ., պատմագիտ., արվեստագիտ. աշխատությունները:

Ռում. է թարգմանել Կոստանդին Երզնկացու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Խաչատուր Կեչառեցու, Հ. Թումանյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Վ. Տերյանի և հայ այլ գրողների գործերից:

Երկ. Points de vue sur l'histoire du commerce de l'Orient au Moyen Âge [s. l.], 1924; Essai de synthèse de l'histoire de l'humanité, v. 1–4, P., 1926–28.

Գրկ. **Սիրունի Հ.,** *Հայ եկեղեցին Ռումեն հողի վրա: Նիկոլա Յորգա, Էջմիածին, 1966:* **Նույնի,** *Նիկոլա Յորգային հետ, Բ., 1972:* **Քոլանջյան Ս.,** *Մատենագիտություն Նիկոլա Յորգայի հայագիտական երկերի, «ԼՀԳ», 1973, № 2:*

ՅՈՒԼԻՈՒՍ (Julius) Ասֆալգ (16.11.1919, Մյունխեն–12.1.2001, Մյունխեն), գերմանացի արևելագետ, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1952): 1961-ից՝ Մյունխենի համալսարանի պրիվատ-դոցենտ: Դասավանդել է քրիստոնյա Արևելքի լեզուներ (նաև հայ.), գրակ. և պատմություն: Զբաղվել է հայկ. ինագույն ձեռագրերի քննությամբ («Հայկական ձեռագրեր», 1962, համահեղ.՝ Յ. Մոլիտոր), հայոց լեզվի քերակ-յամբ, բառապաշարով («Քրիստոնյա Արևելքի փոքրիկ բառարան», 1975, համահեղ.՝ Պ. Քրյուգեր), հայկ. արձանագրություններով, հայոց գրերով: Հայագիտ. հոդվածներ է հրապարակել հայ և օտար պարբերներում: 1961-ից հրատարակել է «Օրիենս Քրիստիանուս» («Oriens Christianus») պատմաբանասիր. հանդեսը:

ՅՈՒՆԳՄԱՆ (Yungmann) Պաուլ (1929–1975), գերմանացի հայագետ, լեզվաբան, թարգմանիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1963): 1954–55-ին սովորել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում, 1955–59-ին՝ Փարիզի Արևելյան կենդանի լեզուների ազգ. և կաթոլիկ. դպրոցներում: Հայոց լեզու է դասավանդել Բոննի (1963-ից) և Բոխումի (1967-ից) համալսարաններում: 1964-ին լույս է տեսել Յ-ի «Որոշյալ հոդի գործածությունը գոյականի հետ դասական հայերենում» աշխատությունը: Զբաղվել է նաև հայ-ի ծագումնաբանության և բառակազմության հարցերով: Նրա հայ-ի ընդարձակ հանգաբառարանի կազմման (4 հատորով) աշխատանքը մնացել է անավարտ:

Գրկ. «Orbis», Bulletin international de Documentation linguistique, t. XXIV, № 2, 1975.

«ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ, 1915–1965», ստվարածավալ (1140 էջ) բացառիկ հատոր: Հրատարակվել է 1965-ին Բեյրութում՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ: *«Զարթօնք»* օրաթերթի հրատ.: Բաղկացած է 7 գլխից՝ Պատմական (Մեծ եղեռնի ամփոփ պատմությունը, Արմ. Հայաստանի յուրաքանչյուր նահանգի կամ շրջանի հայության ողիսականը՝ առանձին-առանձին), Հուշագրական (ականատեսների վկայություններ), Գրական (Մեծ եղեռնն արտացոլող չափածո և արձակ էջեր), Գոյամարտ (ինքնապաշտպան. կռիվների պատմությունը Արմ. Հայաստանում և Կիլիկիայում 1915–18-ին), Քեմալական եղեռնը (Կիլիկիայում ապաստանած հայության ողբերգությունը 1918–21-ին), Մեծ նավաբեկությունից հետո (վերապրողների վիճակը գաղթակայաններում ու որբանոցներում), Հայոց հողային դատը (պայքարը Հայ դատի համար՝ ընդհուպ մինչև 1923-ի Լոզանի կոնֆերանսը), Վկայություններ և ուրացումներ (Հայոց ցեղասպանության վերաբերյալ օտարների վկայություններ, նաև նենգա-



«Յոյս», *1864–77, Արմաշ (№ 5, 1864)*



Նիկոլայե Յորգա



«Յուշամատեան Մեծ եղեռնի, 1915–1965» *(1965, Բեյրութ) գրքի կազմը*



«Յուշարար», *1907-09 և 1912-13, Թիֆլիս (Գ շրջան, 1912)*



«Յուշարար», *1914-62, Բոստոն, Նյու Յորք (№ 18, 1956)*



«Յուշարար-Միութիւն», *1963-ից, Նյու Յորք (№ 1, 2005)*



«Յուսաբեր», *1913-ից, Կահիրե*

փոխումներ և ուրացումներ)։ Ներառում է հարյուրավոր պատկերներ, լուսանկարներ, քարտեզներ՝ հայկ. և օտար աղբյուրներից։

«ՅՈՒՇԱՐԱՐ», թատեր., գրական-գեղ. պատկերազարդ կիսամսյա հանդես, ապա՝ ամսանախ (1912-ից՝ 4 գիրք)։ Լույս է տեսել 1907–09 և 1912–13-ին Թիֆլիսում։ Հրատարակիչ-խմբագիրներ՝ Արամ ***Վրույր***, Գասպար ***Իփեկյան:*** Լուսաբանել է թատեր. կյանքի նորությունները, արծարծել թատրոնի վերակառուցմանն ու ժողովրդականացմանը, բեմ. խոսքին ու թարգմանություններին վերաբերող խնդիրներ։ Արժեքավոր են Գ. Չմշկյանի, Ա. Մանդինյանի, Է. Տեր-Գրիգորյանի և ուր. հրապարակումները, հայ թատրոնի պատմության, հայ և այլազգի նշանավոր դերասանների ու թատեր. գործիչների մասին հուշագրությունները։ Անդրադարձել է նաև ճարտարապետության, գեղանկարչության, երաժշտության խնդիրներին։ Գրական-գեղ. բաժնում, որպես հավելված, տպագրել է պիեսներ։ Աշխատակցել են Լեոն, Սիրանույշը, Գ. Բաշինջաղյանը, Հ. Սիրունին և ուր.։

«ՅՈՒՇԱՐԱՐ», տեղեկատու պարբերաթերթ (քառամսյա, շաբաթաթերթ, կիսամսյա, 1920-ից՝ ամսաթերթ)։ ՀԲԸՄ Ամերիկյան կենտր. հանձնաժողովի պաշտոնաթերթ։ Լույս է տեսել 1914–62-ին. մինչև 1925-ը՝ Բոստոնում, 1925–62-ին՝ Նյու Յորքում։ Խմբագիրներ՝ Վահան Քյուրքճյան, ***Վահե Հայկ***, Գ. Գալուստյան (Կիլիկեցի), Երվանդ Մեսիայան, Գ. Խանամիրյան, Ա. Գույումճյան, Անդրանիկ ***Փոլատյան:*** 1963-ին «Յ.»-ի և ***«Միութիւն»*** թերթերի միավորումով ստեղծվել է ***«Յուշարար-Միութիւն»*** ամսաթերթը։

«ՅՈՒՇԱՐԱՐ-ՄԻՈՒԹԻՒՆ», տեղեկատու ամսաթերթ։ ՀԲԸՄ կենտր. վարչության պաշտոնաթերթ։ Լույս է տեսնում 1963-ից Նյու Յորքում։ Ստեղծվել է ՀԲԸՄ-ի ***«Միութիւն»*** և ***«Յուշարար»*** պարբ-ների միավորումով։ Խմբագիր՝ Անդրանիկ ***Փոլատյան***, 1990-ից՝ խմբագր. խորհուրդ։ Լուսաբանում է սփյուռքահայ մշակութ. և կրթ. կյանքի իրադարձությունները, հրապարակում է ՀԲԸՄ ընդհանուր ժողովների արձանագրություններ, հանգանակությունների ցուցակներ ևն։ Տպագրել է Ա. Չոպանյանի, Պողոս Նուբարի, Ֆ. Նանսենի, Ա. Կարագյոզյանի, Ա. Մանուկյանի և ուր. նամակներից, թղթակցություններ՝ հայրենիքից։ Աջակցել է հայրենադարձությանը։

«ՅՈՒՍԱԲԵՐ», ազգ., քաղ., տնտ. և գրական օրաթերթ (մինչև 1926-ը՝ երկօրյա)։ Լույս է տեսնում Կահիրեում 1913-ից։ 1923-ից՝ ՀՅԴ պաշտոնաթերթ։ Խմբագիրներ՝ Սուրեն ***Պարթևյան***, Արտավազդ Հանըմյան, Ստեփան Եսայան, Վահան Նավասարդյան, Գաբրիել Լազյան, Բենիամին Թաշյան, Կայծ Կոկանյան, Հայկ Հաջիպողոսյան, Սուրեն ***Բայրամյան***, Զավեն Լիլոզյան (1987-ից)։ Լուսաբանում է Եգիպտոսի հայկ. համայնքի առօրյան, անդրադառնում սփյուռքահայ մյուս գաղթավայրերի կյանքին, Հայկ. հարցին, Հայ դատի հանձնախմբերի գործունեությանը տարբեր երկրներում։ 1980-ական թթ-ի վերջերից վերլուծ. նյութեր է տպագրում Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացների, ՀՀ արտաքին ու ներքին քաղաքականության, Սփյուռքի հիմնահարցերի մասին։ «Յ.» ներկայացնում է հայ գրողների երկերից։ Տպագրվում է սեփական համանուն տպարանում։

1944–54-ին լույս է տեսել նույնանուն ամսագիր՝ որպես «Յ.»-ի գրական-գեղ. և գիտ. հավելված (խմբագիրներ՝ Գուրգեն ***Մխիթարյան***, Բ. Թաշյան)։

Ն


Ն, հայ. այբուբենի 22–րդ տառը, անվանումը՝ «նու»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է ուղղաձիգ 2 երկար և 1 լայն տարրերից. երկարներն իրար են միանում ստորին ծայրերից, իսկ լայնը՝ ձախ կողմի երկարին՝ վերին ծայրից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ն, որպես այբուբենի հարյուրավորների սյան 4–րդ (22–րդ) տառ, նշանակել է չորս հարյուր և չորսհարյուրերորդ, բյուրի նշանով (Ն̿)՝ 4 մլն (4 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ն–մաս 400–րդ):

ՆԱԶԱՐ ԲՈՒՅՈՒՄ [Նազար Արսենի Ճանճիկյան, ծ. 9.4.1944, ք. Կեսարիա (Թուրքիա)], հրատարակիչ, բանաստեղծ: Սովորել է Կ. Պոլսի դպրեվանքում, ավարտել Օքսֆորդի (Լոնդոն) համալսարանը (1967): 1980–ական թթ–ի սկզբից Ստամբուլի խոշորագույն «Ադամ» հրատարակչության տնօրենն է, գրում է թուրք. և անգլ.: Հրատարակել է Վ. Սարոյանի երկերի մի քանի ժող–ներ, «Մեծ Բրիտանիկա» հանրագիտարանը (թուրք.): Վերջինիս մեջ ներառված Մեծ եղեռնին վերաբերող իր հոդվածների համար ենթարկվել է դատ. պատասխանատվության: Ազատվել է կալանքից՝ հանրագիտարանի հրատարակչ. խորհրդի պահանջով: Հեղինակ է բանաստեղծ. մի քանի ժող–ների: Առավել հայտնի է Ն. Բ–ի «Յուկո–Տանին» (1996, հայ. հրտ.՝ 1997) ժող–ը:

ՆԱԶԱՐԲԵԿ (Նազարբեկյան) Ավետիս Վարդանի, **Լեոնց** (1866, Թիֆլիս–1939, Մոսկվա), հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս, գրող: ՍԴՀԿ հիմնադիրներից է: Ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիան, սովորել Ս. Պետերբուրգի, 1883–ից՝ Սորբոնի (Փարիզ) համալսարաններում: 1887–ին Մոնպելիեում (Ֆրանսիա) մի խումբ կովկասահայ ուսանողների հետ հիմնադրել է *«Հնչակ»* թերթը: Ստեղծել է «Սոցիալիստական գրադարան» մատենաշարը, հայ. թարգմանել և հրատարակել մարքսիզմի դասականների երկերից: Աշխատակցել է հայ պարբ. մամուլին, խմբագրել «Գաղափար» (1894, Աթենք, Լոնդոն), ***«Ապրակ»*** (Աթենք, Լոնդոն), «Վերածնութիւն» (Ռուսչուկ) պարբ–ները:

Լույս են տեսել Ն–ի «Ազատ ժամեր» (1883, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Բանաստեղծութիւններ» (1890, ՍՊր, Ի. Սկորոխոդովի տպ.), «Փախստականը» (1891, Աթենք, ա. տպ.), «Աւազակը» (1892), «Մարտում» (1893, երկուսն էլ՝ Աթենք, «Հայկական Ազատ» տպ.), «Նուագ եւ մեղեդի» (1895, Լոնդոն, «Հայկական Ազատ» տպ.), «Փոթորիկի միջով: Պատկերներ Հայոց աշխարհի կյանքից» (անգլ., 1899, Լոնդոն), «Դարբնեւոր» (1904, Ռուսչուկ, «Վերածնու–





Նազար Բույում

թյուն» տպ.) չափածո և արձակ գործերը: 1923-ին Փարիզից մեկնել է ԱՄՆ, մասնակցել «Շինարար» և «Երիտասարդ Հայաստան» թերթերի հրատարակմանը, ՀՕԿ-ի աշխատանքներին: 1934-ին տեղափոխվել է ԽՍՀՄ:


Գրկ. Բերբերեան Ռ., Հայոց նորագոյն բանաստեղծները: Բանաստեղծ-մտրածող (Լեռնից), Ռոստով, 1898: Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Ե., 1972:



Ավետիս Նազարբեկ

ՆԱԶԱՐՅԱՆ Արման Հրանտի [16.6.1928, Պլովդիվ (Բուլղարիա)–30.10.2007, Երևան], լեզվաբան-ռոմանագետ, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1980), պրոֆ. (1984): Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1950): 1966–83-ին դասավանդել է Մոսկվայի Պ. Լումումբայի անվ. համալսարանում, 1983–98-ին՝ ԵՊՀ-ում (1987–93-ին՝ռոման. բանասիրության ամբիոնի վարիչ), 1998-ից՝ ԵՊԼՀ-ում:

Լույս են տեսել Ն-ի «Ֆրանսերեն դարձվածաբանության զարգացման պատմություն» (ռուս., 1981), «Արդի ֆրանսերենի դարձվածաբանություն» (ռուս., 1987), «Ֆրանսիական առածներ և ասացվածքներ» (1994), «Ֆրանսերենի համեմատությունների դարձվածքները» (1997) աշխատությունները, «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանը» (1993), «Անգլիական առածների և ասացվածքների պատկերազարդ բառարանը» (1999), «Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարանը» (2000), «Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկը» (համահեղ., 2000) ևն:



Արման Նազարյանի *«Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան»-ի (1993, Ե., «Ապոլոն») տիտղոսաթերթը*

ՆԱԶԱՐՅԱՆ (Նազարյանց) Ստեփանոս Եսայու [15(27).5.1812, Թիֆլիս–27.4(9.5).1879, Մոսկվա], լուսավորիչ, հրապարակախոս, մանկավարժ, փիլիսոփա, խմբագիր: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1824–29), Դորպատի (այժմ՝ Տարտու) գիմնազիայում (1833–34) և համալսարանի բժշկագիտ. (1835–36) ու փիլ. (1836–40) ֆակ-ներում: 1842–49-ին եղել է Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, 1850–79-ին՝ Մոսկվայի Լազարան ճեմարանի պարսկ. լեզվի ու գրակ-յան պրոֆ., 1869–71-ին՝ Ներսիսյան դպրոցի տեսուչ: 1858-ին Մոսկվայում Միքայել ***Նալբանդյանի*** աջակցությամբ հիմնադրել և խմբագրել է ***«Հիսիսապիայ»*** ամսագիրը: Պայքարել է աշխարհիկ կրթության զարգացման և ժող. դպրոցների հիմնադրման համար:

Լույս են տեսել Ն-ի «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» (1851), «Առաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխաների համար» (1853, երկուսն էլ՝ Մ., Վլադիմիր Գոթիեի տպ.), «Վարդապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ» (1853), «Հանդէս նոր հայախօսութեան» (մաս 1–2, 1857, երկուսն էլ՝ Մ., Լազարյան ճեմ. տպ.), «Պատմութիւն պիդագօգիկայի եւ երկու հատ ճառ» (1870, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), «Տեսական եւ գործնական առաջնորդ ռուս լեզուի ի պէտս հայկազեան մանուկների» (1871, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Պայվայ մանուկը կամ Կապիկացած երեխայ» (1896, Թ, Մովսես Վարդանյանի տպ.) կրոն., մանկավարժ., լեզվաբ., գրականագիտ. աշխատությունները, «Երկերը» (հ. 1, 1913, Թ., Նվարդ Աղանյանի տպ.): Հրատարակվել են նաև Ն-ի «Նամականին» (1969) և «Երկերի ժողովածուն» (1996):



Ստեփանոս Նազարյան

Երկ. Бегльй взгляд на историю гайканской литературы до конца 13 столетия, Казань, 1844; Обозрение истории гайканской письменности в новейшие времена, Казань, 1846; Абул-Касем Фердауси Тусский, творец Книги Царей, известной под названием «Шах-Намэ», кн. 1, 2, М., 1849, 1851.

Գրկ. ԼԷօ, *Ստեփանոս Նազարեանց, հ. 1–2, Թ., 1902:* **Անանուն** Պ., *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870), հ. 1, Բաքու, 1916:* **Մխիթարյան** Մ., *«Հուսիսապիայ» ամսագիրը, Ե., 1958:* **Կարապետյան** Ռ., *Ստեփանոս Նազարյանց: Փիլիսոփայական հայացքներ, Ե., 1976:* **Նանումյան** Ռ., *Ստեփանոս Նազարյան, Ե., 1978: Հոդվածներ և հոդվածներ Ստեփանոս Նազարյանի մասին (կազմ.՝ Ռ. Նանումյան), Ե., 1996:*

ՆԱԶԱՐՅԱՆ Տիգրան Հակոբջանի (29.9.1858, Շուշի–14.9.1926, Թիֆլիս), խմբագիր, հրատարակիչ, հաս. գործիչ: Սովորել է Շուշիի Գալուստ Փափազյանի մասնավոր դպրոցում: 1879-ին Շուշիում հիմնադրել է հրատարակչ. գրասենյակ և տպագրել գրքեր (Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խօսնակ» ժող-ը, 1881, ևն): 1881-ին տեղափոխվել է Թիֆլիս, թղթակցել «Մշակ» թերթին, հրատարակել ***«Աղբիւր»*** (Գ. Միրզոյանի հետ) մանկապատանեկան ամսագիրը, ***«Տարազ»*** շաբաթաթերթը՝ հավելված-ներով («Գեղափնջիկ», 1907–12, «Փարիզի մոդաներ», 1910–18, «Առող-ջապահիկ», 1911–12, «Լրաբեր», 1918), «Կովկասի առաւօտ» (1907–08), «Անոնս» (ռուս., 1892) և այլ թերթեր: Թիֆլիսում 1883-ին հիմնադրել է «Արոր» տպարանը. գործել է մինչև 1893-ը, հրատարակել գեղ. գրքեր, օրացույցներ, տարեցույցներ, տարբեր ժող-ներ (շուրջ 100 անուն):

Լույս են տեսել Ն-ի «Ճրպատըդ քօլատ կտրի» (1889, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Տօն ու ձօն» (1908, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Արոզա» (1913), «Խօսք եւ գործ» (1914, երկուսն էլ՝ Թ., «Հերմես» տպ.) գրքերը: Լիսաբոնում կազմակերպված ցուցահանդեսում ներկայացրել է V դ-ի հայ պատմիչների հրատարակված գործերը: 1919-ին մեկնել է Եվրոպա, թղթակցել «Ապագայ» (Փարիզ) և այլ թերթերի, հրատարակել է «Թիֆքա» (1922, Լայպցիգ) գրական ալմանախը («Տարազի» հավելված): Թարգմանություններ է արել ռուս-ից և ֆրանս-ից:

Հանդես է եկել նաև Ռադամես գրական կեղծանունով:

*Գրկ. Քաան եւ հինգ ամեակ «Աղբիւր» մանկական ամսագրի (1883–1908), Թ., 1908: **Նազարյան Ս.**, Տիգրան Նազարյանի կյանքը և գործունեությունը, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1965, № 3: Տիգրան Նազարյանի նամակները Կոստանդին Մելիք-Շահնազարյանին, «ԼՀԳ», 1991, № 4:*



Ս. Նազարյանի *«Հանդէս նոր հայախօսութեան» (մաս 1, 1857, Մոսկվա) գրքի փիփղոսաթերթը*

ՆԱՋԻԿՅԱՆ Գրիգոր Ադամի [10.6.1909, գ. Օվաճըք (Թուրքիայի Իզմիրի նահանգ)–4.8.1982, Երևան], մանկավարժ, խմբագիր: Մանկավարժ. գիտ. դ-ր (1974), պրոֆ. (1976): Սովորել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում (1920–22): Աթենքում խմբագրել է ***«Ժողովուրդի ձայն»*** (Աշոտ ***Մարտիկյանի*** հետ) և ***«Նոր շարժում»*** թերթերը: 1932-ին հայրենադարձել է: 1944–50-ին եղել է Հայաստանի ժողկրթության թանգարանի տնօրեն, 1962–69-ին՝ Երևանի հեռակա մանկավարժ. ինստ-ի ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ն-ի «Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի 50–60-ական թվականները)» (1969), «Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության» (համահեղ., 1955) աշխատությունները:

ՆԱԶԻՆՅԱՆ Արտաշես Մկրտչի [23.2.1924, գ. Աչաջուր (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–2.8.1999, Երևան], բանագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1953): 1960–99-ին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ի բաժնի վարիչ: Ն-ի խմբագրությամբ և մասնակցությամբ սկսել է հրատարակվել ***«Հայ ժողովրդական հեքիաթներ»*** (հ. 1–17..., 1959–2012...) մատենաշարը, նաև «Ծաղկեփունջ» (հայկ. ժող. առակներ, գրույցներ, առածներ, խաղիկներ, հանելուկներ, 1960), «Հայ ժողովրդական առակներ» (2008) ժող-ները:

Լույս են տեսել Ն-ի «Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» (1954), «Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը» (1957) աշխատությունները:

Գրկ. Արտաշես Մկրտչի Նազինյան: Կենսամատենագիտություն, Ե., 2004:



Արտաշես Նազինյանի *«Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը» (1957, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

«ՆԱԻՐԻ», հրատարակչություն: Ստեղծվել է 1976-ին Երևանում (1976–88-ին՝ «Սովետական գրող», 1988–91-ին՝ «Խորհրդային գրող»): Առանձնացել է ***«Հայաստան»*** հրատարակչությունից: ՀԽՍՀ առաջատար հրատարակչություններից էր: Ունեցել է 7՝ ժամանակակից հայ, դաս., մանկապատանեկան, թարգման. գրակ-ների, հայ գրակ-ը ռուս., արվ-ի, երաժշտության խմբագրություններ: Հրատարակել է «Հայ դասականների գրադարան», «Ռուս դասականների գրադարան», «Հայ մատենագիրներ», «Հայ քնարերգություն», «Արկածային գրադարան» և այլ մատենաշարեր:

«Նաիրի» *հրատարակչության տպագրած գրքերից*



Հրաչյա Թամրազյանի «Մարդ-ակնթարթ» (2012) գրքի շապիկը



«Նաիրի վ Կալինին-գրադե», *2003-ից, Կալինինգրադ*



Ալբերտ Նալբանդյան

Լույս է ընծայել խորհրդահայ և սփյուռքահայ անվանի գրողների երկեր, ինչպես նաև հայաստանաբնակ աղրբեջանցի և քուրդ գրողների գործեր՝ մայրենի լեզուներով: Տպագրել է նաև հայ գրակ. օտար լեզուներով: 1983-ին «Ն.» լույս է ընծայել 280 անուն գիրք՝ ավելի քան 4 մլն տպաքանակով:



Հետխորհրդ. շրջանում «Ն.»-ի հրատարակչ. գործունեությունը նկատելիորեն նվազել է. տպագրում է հայ և համաշխ. դաս. ու ժամանակակից գրողների երկեր, ինչպես նաև մանկ., թարգման., գիտ., ուս. և մշակույթի վերաբերյալ գրակ.:

Վերջին տարիների ուշագրավ հրատ-ներից են Կ. Քալանթարի «Ակնարկներ հայ կինոյի պատմության» (ռուս., հ. 1–2, 2007), Հ. Հովհաննիսյանի «Հայ թատրոնի պատմություն» (2010) աշխատությունները, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (2009) պոեմը, Հ. Թամրազյանի «Սրբազան խավար» (2011) և «Մարդ-ակնթարթ» (2012) բանաստեղծությունների ժող-ները, «Մատենադարանի արծաթապատ կազմերով ձեռագրերը» (2011) ալբոմը ևն:

«Գրքարվեստ» IV միջազգ. փառատոնի առաջին կարգի դիպլոմ՝ «Հայկական մանրանկարչություն» (ռուս., 2007) գիրք-ալբոմի համար:

«Ն.»-ի տնօրեններ են եղել Վիկտոր ***Բալայանը***, Գևորգ ***Հայրյանը***, Հրություն ***Ֆելեքյանը***, Հրաչյա ***Թամրազյանը***, Սասունիկ Թորոսյանը, Վրեժ ***Իսրայելյանը***, Քնարիկ Մարգարյանը (2012-ից):

«ՆԱԻՐԻ Վ ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴԵ» («Наири в Калининграде»-«Նաիրին Կալինինգրադում»), ազգ., մշակութ., տեղեկատվ. ամսաթերթ: «Հայկական գիտատեղեկատվական, մշակութային կենտրոն» տարածաշրջ. ՀԿ-ի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2003-ից Կալինինգրադում (ՌԴ)՝ հայ. և ռուս.: Հիմնադիր-խմբագիր՝ Ֆելիքս Գևորգյան: Լուսաբանում է Կալինինգրադի մարզի հայկ. համայնքի առօրյան, խնդիրները, ներկայացնում է Ազգամշակութ. տարածաշրջ. ինքնավարություն կազմակերպության և մշակույթի կենտրոնի գործունեությունը, տեղի Սբ Ստեփանոս հայ առաքել. եկեղեցու միջոցառումները ևն: Ընթերցողներին ծանոթացնում է հայկ. ժող., եկեղեց. տոներին, ծեսերին, ՀՀ-ում, ԼՂՀ-ում և Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, տպագրում է հայ իրականությանն ուղղակիորեն առնչվող հաս-քաղ. վերլուծ. հոդվածներ, ակնարկներ, մեկնաբանություններ, հաճախակի անդրադառնում է հայոց պատմության ուշագրավ էջերին, Հայ դատին, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին, հայկ. մշակույթին և գիտ-յանը, գրակ-յանը: Պարբերաբար ներկայացնում է հայ բարերարների և ժամանակակից հաջողակ գործարարների, տպագրում է նաև բանահյուս. նյութեր, անդրադառնում ազգ. խոհանոցին ու կենցաղին:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ալբերտ Սամիկոնի [ծ. 20.8.1940, ք. Օրջոնիկիձե (այժմ՝ Վլադիկավկազ՝ ՌԴ-ում)], խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է Վլադիկավկազի մանկավարժ. ինստ-ը (1963), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի բարձրագույն դասընթացները (1979): 1983–87-ին աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում, 1987-ից՝ ՀԳՄ ***«Լիտերատուրնայա Արմենիա»*** (ռուս.) հանդեսի գլխ. խմբագիր:

Ն-ի թարգմանությամբ ռուս. լույս են տեսել Վ. Տերյանի, Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի և ուր. գործերի առանձին ժող-ներ: Թարգմանում է նաև ուզբ-ից և լատիշ-ից: Հեղինակ է «Կիսաձայն» (ռուս., 1963) բանաստեղծությունների ժող-ի:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Գևորգ Մկրտչի [5.1.1926, ք. Չիտա (Ռուսաստան)–5.11.1998, Երևան], արևելագետ, թարգմանիչ, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1973): Ավարտել է ԵՊՀ (1951): 1952-ից դասավանդել է ԵՊՀ-ում. 1962–73-ին՝ արլ. բանասիրության ամբիոնի վարիչ, միաժամանակ, 1968-ին՝ արևելագիտ-յան ֆակ-ի դեկան, 1973–97-ին՝ իրանագիտ-յան ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ն-ի «Իրանական լեզուներն ու բարբառները» (1960), «Միջին պարսկերեն (պահլավերեն)» (1962), «Հին պարսկերեն» (1963), «Պարսկերեն լեզվի քերականություն» (1980,1988) աշխատությունները, «Պարսկերեն-հայերեն բառարանը» (1987, վերահրտ.՝ 1993, 1995, Թեհրան), «Պահլավերեն-հայերեն բառարանը» (1994, 2000): Ն-ի աշխատասիրությամբ պարսկ. հրատարակվել են Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» (1984) և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (1989) երկերը՝ առաջաբաններով և ծանոթագրություններով: Հեղինակ է նաև «Պարսից լեզվի քերականություն» (1997) ուս. ձեռնարկի:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Հովսեփ Ներսեսի (ծ. 4.9.1958, Հալեպ), գրականագետ, մատենագետ, թարգմանիչ, հրատարակիչ: Ավարտել է ԵՊՀ (1989): 1992–93-ին՝ Հալեպի Մեսրոպյան վարժարանի տնօրենն: 1994-ին տեղափոխվել է ԱՄՆ: 2005-ին Լոս Անջելեսում հիմնադրել է «Հովսեփ և Կարոլին Նալբանդյան» հրատարակչ. ընկերությունը և նույնանուն մատենաշարը: Ն-ի մեկենասությամբ մատենաշարով հրատարակվել են Վ. Շուշանյանի, Հ. Շիրազի, Ռ. Սահակյանի, Վ. Առաքելյանի և ուր. ստեղծագործություններից (20 անուն):

Լույս են տեսել Ն-ի «Լոյս» (հ. 1–6, 2000–09) ընդհանուր գիտելիքների հանրագիտարանը, «Ամերիկահայ գիրքի պատմութիւն: Հայկական բառարաններու համառօտ պատմութիւն» (2011), «Հայ գիրքը Ամերիկայի մէջ» (2015) մատենագիտ. ժող-ները, «Ուղղագրութեան նիւթերու ժողովածուն» (2012): Կազմել և խմբագրել է «Հայոց լեզու» (2012), «Մեսրոպ Մաշտոց մեծասքանչը: Ձօն երախտագիտութեան» (2013) ժող-ները:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Միքայել Ղազարի [2(14).11.1829, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք-ի շրջագծում)–31.3(12).1866, ք. Կամիշին (այժմ՝ ՌԴ Վոլգոգրադի մարզում), թաղված է Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանքի բակում], գրող, հրապարակախոս, փիլիսոփա, գրաքննադատ: Սովորել է Նոր Նախիջևանի Գ. Պատկանյանի երկլեզվյան դպրոցում (1837–45): 1853-ին Ս. Պետերբուրգի համալսարանում հանձնել է քննություն, ստացել է հայոց լեզվի ուսուցչի որակավորում: Նույն թվականին աշխատել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում: 1854–58-ին՝ Մոսկվայի համալսարանի բժշկ. ֆակ-ի ազատ ունկնդիր: 1858-ին մասնակցել է ***«Հիսիսափայլ»*** ամսագրի ստեղծմանը: 1860-ին, որպես Նոր Նախիջևանի հայ հասարակայնության պատվիրակ, մեկնել է Կալկաթա՝ քաղաքի կրթ. կենտրոնների համար հնդկահայ վաճառական Մասեհ Բաբաջանի կտակած ժառանգությունն ստանալու: Հաջողությամբ կատարելով առաքելությունը՝ 1862-ի մայիսին վերադարձել է Ռուսաստան, հուլիսի 14-ին ձերբակալվել է՝ Լոնդոնի ռուս հեղափոխականների հետ համագործակցելու մեղադրանքով: 1865-ի նոյեմբ-ին թոքախտով հիվանդ Ն. աքսորվել է Կամիշին, որտեղ և մահացել է:

«Երկու տող» (1861, Փ., Ճանիկ Արամյանի տպ.), «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» (աշխատասիր.՝ Ս. Մանիկյանի, 1862, Փ., Է. Թունոյի տպ.), «Հեգէլը եւ նորա ժամանակը» (1863, հրտ.՝ 1902) հրապարակախոս. երկերում Ն. ընդլայնել է հայ հրապարակախոսության ոլորտներն ու բովանդակությունը՝ վերլուծելով ժամանակի ազգ. և հաս. կյանքի երևույթները, անդրադառնալով տնտ., քաղ., մշակութ. և փիլ. հարցերի:

Կրթության և ուսուցման գործում բացառիկ տեղ է հատկացրել մայրենի լեզվին, Ստեփանոս ***Նազարյանի*** հետ պայքարել է աշխարհաբարի կայացման համար, բանավիճել Մխիթարյանների հետ («Յաղագս հայկական մատենագիտութեան ճառ», 1854–55, հրտ.՝ 1895, «Մխիթար Սեբաստացի եւ Մխիթարեանք», 1858):



«Մեսրոպ Մաշտոց մեծասքանչը» (կազմ.՝ **Հովսեփ Նալբանդյան,** *2013, Լոս Անջելես) գրքի կազմը*



Միքայել Նալբանդյան



Մ. Նալբանդյանի *«Երկեր»-ի (1985, Ե. «Սովետական գրող») կրկնաշապիկը*



Կարեն Սիմոնյանի **«Միքայել Նալբանդյան»** *(ռուս., 1984, Մոսկվա) գրքի կազմը*



Վաչե Նալբանդյանի *«Գրիգոր Նարեկացի» (1990, Ե., «Խորհրդային գրող») գրքի կազմը*



Հակոբ Նալյանի *«Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» (1745, Կ. Պոլիս, Գաբրիել Սեբաստացի Հարսեղյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*

Հայ իրականության մեջ Ն. առաջինն է արծարծել գրակ-յան զարգացման համար քննադատության դերը և նշանակությունը («Կրիտիկա «Սօս եւ Վարդիթերի»», 1863–64, հրտ.՝ 1935): Նա հայ ռեալիստ. գրակ-յան հիմնադիրներից է [«Մինին խօսք, միւսին հարսն» (1857, վիպակ), «Մեռելահարցուկ» (1859, վեպ)], առաջինն է հայ գրակ-յան մեջ գրել ֆելիետոնի և պամֆլետի ժանրերով: Հեղինակ է նաև քնար. բանաստեղծությունների:

Լույս են տեսել նաև Ն-ի «Դօն Էմմանուէլի բանաստեղծութիւններից մի քանի ոտանաւորներ» (1880, Մ., Ե. Գուդվիլովիչի տպ.), «Հայրենասէրի տաղերը: Ընտիր ոտանաւորներ Միքայէլ Նալբանդեանի» (1903, Ժնև, Եվրոպայի հայ ուսանող. միության հրատ.) բանաստեղծությունների ժող-ները, «Միքայէլ Նալբանդեանցի երկերը» (հ. 1, 2, 1903, 1906, Դոնի Ռոստով, «Դոնսկայա Ռեչ» ընկ. տպ.): Թարգմանել և ընդարձակ առաջաբանով հրատարակել է Է. Մյուի «Թափառական հրէայ» (1857, հ. 1, Մ., Լազարյան ճեմ. տպ.), Ռ. Կլեմանսի «Դքսուհի դը Շեւրեօզ» (1858, Մ., Էռնեստ Բառֆքնեխտի տպ.) վեպերը, աշխարհաբարի է փոխադրել և ծանոթագրություններով տպագրել Ղազար Փարպեցու «Թուղթը» (1868, ՍՊր, Բակստի տպ.): Հրատարակվել են նաև Ն-ի «ԵԼԺ»-ն (հ. 1–4, 1940–49, հ. 1–6, 1979–97), «Հրապարակախոսական երկերը» (1979), «Երկերը» (1985), «Ընտիր էջերը» (2004): Ն-ի մասին վեպ է գրել Կ. Սիմոնյանը («Միքայել Նալբանդյան», ռուս., 1984, Մ.):

Ն-ի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն էր, որը, որոշ փոփոխություններով, կրկին ընդունվել է որպես ՀՀ օրհներգ:

Ն-ի անունով ՀՀ-ում կոչվել են դպրոցներ, փողոցներ, Գյումրիի մանկավարժ. ինստ-ը, գյուղ՝ Արմավիրի մարզում, Երևանի Օղակաձև զրոսայգում կանգնեցվել է նրա արձանը: ՀԳՄ-ն սահմանել է Ն-ի անվ. գրական մրց.:

Գրկ. **Շահազիզ Ե.,** *Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց, Մ., 1897:* **Հովհաննիսյան Ա.,** *Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1–2, Ե., 1955–56:* **Սարգսյան Խ.,** *Նալբանդյանի գրական ստեղծագործությունը, Ե., 1959:* **Դարոնյան Ս.,** *Միքայել Նալբանդյան, Ե., 1979:* **Ինճիկյան Ա.,** *Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, 2-րդ հրտ., Ե., 1980:* **Զրաւշյան Է.,** *Միքայել Նալբանդյանը և արդիականությունը, Ե., 1984:* **Թելունց Մ.,** *Միքայել Նալբանդյան (հասարակական-իրավաքաղաքական հայացքները. Նալբանդյանը և նրա ժամանակը), Ե., 2006:*

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վաչե (Վաչիկ) Սմբատի [25.2.1919, Նոր Բայազետ (այժմ՝ ք. Գավառ)–28.2.1998, Երևան], գրականագետ: Բ-նասիր. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1969), ՀՀ ԳԱԱ ակադ. (1994, թղթ. անդամ՝ 1971-ից): Ավարտել է ԵՊՀ (1941): 1947-ից՝ ԵՊՀ դասախոս, միաժամանակ, 1952–53-ին՝ Մատենադարանի տնօրեն, 1953–56-ին՝ ՀԿԿ ԿԿ բաժնի վարիչ, 1956–65-ին՝ ԵՊՀ պրոռեկտոր, 1965–77-ին՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի, 1978–98-ին՝ Հիմնարար գիտ. գրադարանի տնօրեն:

Լույս են տեսել Ն-ի «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»» (1955), «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» (1958), «Եղիշե» (1959), «Գրողը և պատմությունը» (համահեղ., 1970), «Հայ միջնադարյան գրականություն» (1986), «Սայաթ-Նովա» (1987), «Գրիգոր Նարեկացի» (1990) աշխատությունները:

Գրկ. **Վաչե Սմբատի Նալբանդյան: Կենսամատենագիտություն, Ե., 1995:**

ՆԱԼՅԱՆ Հակոբ, **Զմմարացի** [1702, Զիմմարա (Սեբաստիայի նահանգ)–1764, Կ. Պոլիս], մատենագիր, մանկավարժ, մեկնիչ, եկեղեց. գործիչ: Աշակերտել է Հովհաննես Կոլոտ Բաղիշեցուն: 1741–49 և 1752–64-ին՝ Կ. Պոլսի, 1749–52-ին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք: Հիմնադրել է Կ. Պոլսի Գում Գափու թաղամասի Սայր դպրատունը և դասավանդել այնտեղ:

Ն. հեղինակ է աստվածաբան. և դավանաբան. շուրջ 25 աշխատության: Արժեքավոր է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմին ու ներբողներին նվիրված լուծմունքը, որտեղ բանասիր-աղբյուրագիտ. և աստվածաբան. տեսակետից քննել է նրա գրական ժառանգությունը: Ն-ի առաջաբանով առաջին անգամ հրատարակվել է ***Եզնիկ Կողբացու*** «Եղծ աղանդոց» («Գիրք ընդդիմութեանց», 1762) երկը:

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են Ն-ի՝

«**Վէմ հաւատոյ**» երկը. 1733-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (աշխարհաբար): Տիտղթ-ին՝ «Գիրք կոչեցեալ Վէմ հաւատոյ...» (660 էջ, 8º, 16,3 x 10,8 սմ):

«**Քրիստոնէական ուսանելի**» քրիստ. վարդապետության մասին երկը (աշխարհաբար). առաջին անգամ 1737-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք կոչեցեալ քրիստոնէական ուսանելի...» (429 էջ, 8º, 12,4 x 7,4 սմ):

Վերահրատարակվել է 1747-ին Կ. Պոլսում՝ Սարգիս և Միքայել Սեբաստացիների տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք քրիստոնէական ուսանելի....» (429 էջ, 8º, 12,4 x 7,6 սմ):

Տպագրվել է նաև 1806-ին (ԿՊ, Մայր դպրատան տպ.):

«**Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ**» երկը. 1745-ին Կ. Պոլսում՝ Գաբրիել Սեբաստացի Բարսեղյանի տպարանում, Ա և Բ հատորները՝ 1 գրքում: Ա տիտղթ-ին՝ «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական Վարդապետին...», Բ-ին՝ «Մեկնութիւն աղօթից եւ ներբողինաց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական վարդապետի...» (1136 էջ, 2º, 24 x 14,8 սմ):

Տպագրվել է նաև 2008-ին Երևանում:

«**Հոգեշահ**» չափածո երկը՝ ըստ Հովհան Ոսկեբերանի խրատների ու ճառերի. առաջին անգամ՝ 1746-ին Կ. Պոլսում՝ Ջնչին Հովհաննեսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրքուկս կոչեցեալ Հոգեշահ...» (76 էջ, 4º, 14,4 x 9,5 սմ): Վերահրատարակվել է 1794-ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրքոյկս կոչեցեալ Հոգեշահ...» (72 էջ, 15,7 x 9 սմ):

«**Ճրագ ճշմարտութեան**» քրիստ. վարդապետության մասին երկը. 1756-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրքուկս կոչեցեալ Ճրագ ճշմարտութեան...» (368 էջ, 8º, 13,2 x 7,4 սմ):

«**Զէն հոգեւոր**» քրիստ. վարդապետության, աշխարհիկ նյութերի, բարոյախոս., եկեղեց. պատմությունների, մանրադեպերի ժող-ը (Ա մասը՝ աշխարհաբար). առաջին անգամ՝ 1757-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք կոչեցեալ Զէն հոգեւոր...» (616 էջ, 4º, 16,7 x 11,7 սմ):

Վերահրատարակվել է 1787-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (616 էջ, 4º, 16,7 x 11,7 սմ):

Տպագրվել է նաև 1820 և 1844-ին (Արապյան տպ.), 1859-ին (երկուսն էլ՝ ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.):


«**Գանձարան ծանուցմանց**» հանրագիտ. բնույթի ժող-ը (լեզուն՝ կիսագրաբար, թուրքախառն). 1758-ին Կ. Պոլսում (?)՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Գիրք կոչեցեալ Գանձարան ծանուցմանց...» (848 էջ, 8º, 17 x 11,7 սմ):

Ն. սրբագրել է «Մեկնութիւն ժամակարգութեան» (1759, Զմյուռնիա, Մահտեսի Մարկոսի տպ.) և այլ գրքեր:

2013-ին Էջմիածնում տպագրվել է Ն-ի «Հոգևոր զրույցներ» ժող-ը:

Գրկ. **Բամպուքճեան Գ.**, *Յակոբ Պատրիարք Նալեան (1706–1764): Կեանքը, գործերը եւ աշակերտները, Սիւամբոլ, 1981:* **Օրմանյան Մ.**, *Ազգապատում, մաս 2, Էջմիածին, 2001:*

«ՆԱԽԱՇԱՎԻՂ», գիտամեթոդ. հանդես: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 2001-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Մանուկ Մկրտչյան: Անդրադառնում է նախադպրոց. տարիքի երեխաների կրթադաստիարակչ. հարցերին, տարրական դպրոցի կառավարման, գիտելիքների ստուգման և գնահատման, գրաճանաչության, չափորոշիչների, ուսուցիչների վերապատրաստման, մեթոդ. հիմնախնդիրներին:


ԳԻՐՔՈՅԿՍ,
ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳԵՇԱՀ

«Գրքոյկս կոչեցեալ Հոգեշահ...» (1794, Նոր Նախիջևան) գրքի փիփղոսաթերթը


ԶԷՆ ՀՈԳԵՒՈՐ

«Զէն հոգեւոր...» (1844, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը



«Նախաշավիղ», *2001-ից, Երևան (№ 1–2, 2009)*



Տիգրան Չյոկյուրյանի «Վանքը» (1913, Կ. Պոլիս) գրքի **նախատիտղոսաթերթը**



«Նախիջեւան», *1999–2006, Երևան (№ 24, 2001)*



Ֆլորա Նախշքարյան



«Նահապետ Քուչակի *դիւանը» (1902, Փարիզ) գրքի տիտղոսաթերթը*

ՆԱԽԱՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ, **ավանտիտուլ** (ֆրանս.՝ avant–առաջ և լատ.՝ titulus–մակագրություն, վերնագիր), ***տիտղոսաթերթին*** նախորդող էջը: Որպես կանոն՝ գրքի առաջին էջն է: Ն–ով «բեռնաթափում» են հիմն. տիտղոսաթերթը՝ նրա վրա զետեղելով նախավերնագրային և այլ տվյալներ (մատենաշարի անվանում, հրատարակչի անուն, տպարանադրոշմ ևն). երբեմն կրկնվում են նաև հեղինակի ազգանունն ու գրքի վերնագիրը: Գրքի ձևավորման այս եղանակը լայնորեն տարածված է եղել XIX դ–ի հրատ–ներում:

«ՆԱԽԻՋԵՒԱՆ», ազգ., հաս–քաղ., գրական, մշակութ. պարբերաթերթ, վերջում՝ հանդես: «Նախիջևան» հայրենակց. միության, ապա՝ Նախիջևանահայոց ազգ. խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1999–2006–ին Երևանում (դաս. ուղղագրությամբ): Հիմնադիր–խմբագիր՝ Ռաֆայել ***Համբարձումյան:*** Լուսաբանել է միության, ապա՝ ազգ. խորհրդի գործունեությունը, անդրադարձել Հայկ. հարցին, Հայաստանի առաջին հանրապետությանը, Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգ. գործընթացին, Արցախյան հիմնախնդրին և գոյամարտին: Հայոց ցեղասպանության հարցում մեղադրել է Ռուսաստանի և Թուրքիայի վարած պետ. քաղաքականությունը, համաշխ. հանրությանն իրազեկել է Նախիջևանի պատմ. հուշարձանների հետևողական ոչնչացման Ադրբեջանի պետ. քաղաքականության մասին, տպագրել է նաև գրական–գեղ., մշակութ. թեմաներով նյութեր, ներկայացրել հայ անվանի դեմքերի, մասնակցել հայ–ի ուղղագրության շուրջ ծավալված բանավեճին՝ հօգուտ դասականի:

ՆԱԽՇՔԱՐՅԱՆ Ֆլորա Վլադիմիրի (ծ. 19.9.1949, Թբիլիսի), խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1971): 1971–76–ին՝ ՀԽՍՀ ԳԱ «Հասարակական գիտությունների բանբեր» թերթի խմբագիր, 1976–92–ին աշխատել է «Կոմունիստ» (ռուս.) թերթի խմբագրությունում (թղթակից, բաժնի վարիչ, պատ. քարտուղար, խմբագրի տեղակալ), 1992–ից՝ *«Գոլոս Արմենիի»* (ռուս.) թերթի գլխ. խմբագիր:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001):

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ, Նահապետ վարպետ աշըղ Քուչակ, Չիչակ, Վանեցի կամ **Վանլի Քոչակ** [XV դ–ի վերջ կամ XVI դ–ի սկիզբ, հավանաբար՝ գ. Խառակոնիս (Վանի նահանգ)–1592, թաղված է Խառակոնիսի Սբ Թեոդորոս եկեղեցու բակում], աշուղ–երգիչ:

Ն. Ք–ի անունով գրավոր ու բանավոր պահպանվել են կրոն., բարոյախրատ. և սիրային 10 երգ, որոնցից 7–ը՝ հայատառ թուրք–ով: 1882–ին Ա. Տևկանցի «Հայ երգ» գրքի հրատարակումից հետո Ն. Ք–ին են վերագրել նաև միջնադարյան հայրենները: Ն. Ք. դարձել է պայմանական և հավաքական անուն, որով ներկայանում է հայ միջնադարյան քնարերգության մեծ ու հարուստ մի ժառանգություն: Նրա անունով են հրատարակվել և բազմաթիվ լեզուներով թարգմանվել այդ երգերը:

Լույս են տեսել «Նահապետ Քուչակի դիւանը» (առաջաբ.՝ Ա. Չոպանյանի, 1902, Փ., «Անահիտի» տպ.), «Սիրու երգիչ: Նահապետ Քուչակի երգերը» (մշակումը՝ Գ. Ասատուրի, 1905, Թ., «Հերմես» տպ.), «Հայրենի կարգավ» (առաջաբ. և ծնթգր.՝ Ա. Ղուկասյանի, Ե., 1957), «Հարյուր ու մեկ հայրեն» (կազմ. և առաջաբ.՝ Լ. Մկրտչյանի, Ե., 1987), ռուս.՝ «Սիրո երգեր» (թարգմ.՝ Ա. Համբարձումյանի, 1904, ՍՊբ), «Բանաստեղծություններ» (թարգմ.՝ Ա. Ստեփանեի, առաջաբ.՝ Մ. Մկրյանի, 1941), «Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը» (կազմ. և խմբ.՝ Հրանտ Թամրազյանի, 2001) ժող–ները:

Գրկ. **Թադէոսեան Հ.,** *Քուչակ Նահապետի երգերը, Թ., 1903:* **Աբեղյան Մ.,** *Երկեր, հ. 2, Ե., 1967:* **Մնացականյան Ա.,** *Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, «ՊՀՀ», 1958,* № *2:* **Եգանյան Օ.,** *Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, «ԲՄ», 1960,* № *5:*

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Գաբրիել (Ստեփան) Սողոմոնի [27.1.1857, գ. Փանիկ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–29.5.1939, Վենետիկ], բանասեր, հայագետ, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1874–ից), քահանա (1877): Սովորել է Հռոմի համալսարանի փիլ–յան ֆակ–ում (1877–83): 1883–85 և 1921–23–ին՝ ուսուցիչ և տեսուչ Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարանում, 1919–20–ին՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր, 1928–30 և 1935–36–ին՝ Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանի տեսուչ:

Լույս են տեսել Ն–ի «Ուղղագրութիւնք ազգային մատենագրաց» (1907), «Սուրբ Մեսրովբ եւ Հայաստանի ոսկէդարն» (1914), «Վենետկոյ Մխիթարեանց յանձնաժողովին կարծիքը հայերէն ուղղագրութեան մասին» (համահեղ., 1927), «Քրիստոնէական ճարտարապետութիւն» (1930, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) լեզվաբանությանը և ճարտ–յանը վերաբերող աշխատությունները:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Մնացական Հովհաննեսի [1.12.1910, գ. Գանձակ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–18.7.1983, Երևան], գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1948): Մշակույթի վաստ. գործիչ (1973): Ավարտել է Երևանի մանկավարժ. ինստ–ը (1940): 1937–ին՝ *«Ավանգարդ»* թերթի խմբագիր, 1971–74–ին՝ *«Լույս»* հրատարակչության տնօրեն:

Լույս են տեսել Ն–ի «Հովհաննես Թումանյանը ժողովուրդ՝ների բարեկամության և խաղաղության երգիչ» (1954), «Ավետիք Իսահակյան» (1955) աշխատությունները:

Հանդես է եկել նաև Արճեշենց Քաջբերունի կեղծանվամբ:

ՆԱՂԱՇ ՀԱԿՈԲ Հովնաթանյան (1685/1690–1757), բանաստեղծ, նկարիչ, ծաղկող: Ստեղծագործել է հայ., վրաց., թուրք.: 1722–ին հոր՝ *Նաղաշ Հովնաթանի* մահվան կապակցությամբ գրել է «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովնաթանի Նաղաշ...» ողբը՝ հավանաբար 25–30 տարեկանում: Ն. Հ–ի 35 բանաստեղծությունները (պահվում են Մատենադարանում) հիմնականում սիրո մոտիվներով են և բովանդակությամբ նման են հոր երգերին: 21–ը տպագրվել են Նաղաշ Հովնաթանի «Բանաստեղծություններ» (հրտ.՝ 1951) ժող–ում:

Նկարազարդել է «Քաղուածք Յաւէտարանացը» (1720, Մատենադարան, ձեռ. № 8645), ստեղծել հաստոցային նկարներ (Ն. Հ–ին են վերագրվում «Սանդուխտ կույսը», 1727, «Թադեոս առաքյալը», 1727, «Ղազարոսի հարությունը», 1729, բոլորը՝ ՀԱՊ):

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ [1661, գ. Շոռոթ (Նախիջևանի գավառ)–28.10.1722, գ. Շոռոթ], գրիչ, նկարիչ, բանաստեղծ, աշուղ: Աշակերտել է հորը՝ Հովհաննես (Յոհան) քահանային, ապա սովորել Ագուլիսի Սբ Թովմա վանքի դպրոցում: Առաջին նկարչ. գործերն ստեղծել է Ագուլիսում. ընդօրինակել ու ծաղկել է ձեռագրեր (Մատենադարան, ձեռ. № 3628): Հաստոցային և մոնումենտալ գեղանկարչության բնագավառներում ճանաչվել է հմուտ նկարիչ և արժանացել նաղաշ (արաբ., նշանակում է զարդանկարիչ) պատվ. տիտղոսին:

Ն. Հ–ի մասին միակ գրավոր աղբյուրը որդու՝ *Նաղաշ Հակոբի* «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովնաթանի Նաղաշ...» ողբն է: Ն. Հ. Երևանի 1679–ի մեծ երկրաշարժից հետո հրավիրվել է Երևան, նկարազարդել Սբ Պողոս–Պետրոս (պահպանված հատվածները՝ ՀՊԹ–ում), Զորավոր (Անանիա առաքյալի անապատ) և Կաթողիկե եկեղեցիները: XVII դ–ի վերջին և XVIII դ–ի սկզբին Թիֆլիսում ստեղծել է դիմանկարներ, սրբապատկերներ, եղել Քարթլիի Վախթանգ VI թագավորի պալատ. երգիչն ու նկարիչը. ձևավորել է նրա նորակառույց պալատը: Ն. Հ. 1710–ական թթ–ին Էջմիածնում նկարազարդել է Մայր տաճարը (ավարտել է 1720–ին): Պահպանվել է «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին» որմնանկարից հատված (ՀԱՊ):

Ն. Հ. միջնադարի նշանավոր բանաստեղծներից է, XVII դ–ի հայ աշուղ. պոեզիայի հիմնադիրը: Նրա գրական ժառանգության (ավելի քան 90 բանաստեղծություն) առավել հարուստ և ամբողջ. ձեռագրերը պահվում են Երևանի (ձեռ. № 3263, 4426) և Վիեննայի (ձեռ.



Նահապետ Քուչակ *«Հայրենի կարգավ» (1957, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

Նաղաշ Հովնաթան



«Բանաստեղծություններ» (1951, Ե., ԳԱ հրտ.) գրքի փիփղոսաթերթը



«Տաղեր»–ի (1983, Ե., «Սովետական գրող») կրկնաշապիկը



«Նայիրի», *1941–2013, Հալեպ, Բեյրութ (2011)*

«Նայիրի» *հրատարակչության տպագրած գրքերից*



«Արաքի Քեազազ գաւառի Քալաւա գիւղը...» (2009, Թեհրան) գրքի կազմը



«Նայիրի» տարեգրքի (հ. Գ., 2010, Թեհրան, խմբագիր՝ Սեպուհ Ամիրխանյան) կազմը

№ 587, 647) մատենադարաններում: Ն. Հ. գրել է «Գովասանութիւն Երեւանայ քաղաքին», «Գովեմ սրտիվ ուրախական» տաղերը, սիրո, ուրախության ու խնջույքի, երգիծ. ու խոհախրատ. մոտիվներով բանաստեղծություններ («Աստուած սիրէի, ում սրտում որ նախանձ կայ՝ հանի», «Կատուն մեռաւ, ափսոս ու վախ», «Ով ողորմելի խեղճ կանայք», «Գրէ եկին էշի քարւան»): Աշուղ. պոեզիայում օգտվել է ժող. բանահյուսությունից, գրել ժամանակի ժող. լեզվով: Իր բանաստեղծությունների համար ընտրել կամ հորինել է եղանակներ, ինքն էլ երգել ու նվագել է դրանք:

Երևանում լույս են տեսել Ն-ի «Բանաստեղծություններ» (1951), «Տաղեր» (1983) ժող-ները:

Գրկ. **Զօպանեան Ա.,** *Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փ., 1910:* **Ակինեան Ն.,** *Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վնն., 1911:* **Մկրտչյան Մ.,** *Նաղաշ Հովնաթան, Ե., 1957:* **Казарян М.,** *Художники Овнатаняны, М., 1968.*

«ՆԱՄԱԿ ՇՆՈՐՀԱՅ», Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա I-ի նամակի թարգմանությունը՝ ուղղված Նոր Նախիջևանի հայ բնակչությանը: Տպագրվել է 1781-ին Մադրասում՝ Հակոբ Շահամիրյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Թարգմանութիւն նամակի շնորհաց եւ պահպանութեան ի Տեառնէ Եկատերինա դշխոյն Ռուստաց առ ի Հայոց քրիստոնէից բնակողաց ի դաշտն Ազոֆ ի նորաշէն քաղաքի յանուանեալն Նախիջեւանի...»:

«ՆԱՅԻՐԻ», ազգ-գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1941–2013-ին. մինչև 1949-ը՝ Հալեպում՝ որպես գրակ-յան և արվ-ի ամսագիր, 1951–83 և 1995-ից՝ Բեյրութում՝ որպես ազգ-գրական շաբաթաթերթ: Խմբագիրներ՝ Անդրանիկ ***Ծառուկյան***, Ժիրայր Նայիրի (Թոսունյան, 1995-ից): Գործուն դեր է կատարել Սփյուռքի ազգ., հաս. կյանքում, անդրադարձել հայոց պատմության կարևոր անցքերին, նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը, մեծ տեղ է հատկացրել Հայաստանի սոցիալ-տնտ. և կրթամշակութ. կյանքին: Մեծապես նպաստել է սփյուռքահայ գրակ-յան զարգացմանը, գրական-քննադատ. մտքի հասունացմանը, արվ-ի արժեքների տարածմանը: Տպագրել է նաև հայ գրողների (Ե. Չարենց, Գ. Մահարի, Հ. Շիրազ, Հ. Քոչար, Գ. Սարյան, Ս. Կապուտիկյան, Սարմեն և ուր.) գործեր, անտիպ նամակներ, փաստաթղթեր, հուշեր, թարգմանություններ, լուսաբանել արվ-ի նորություններ, ցուցահանդեսներ: Թղթակցել են Համաստեղը, Վահե-Վահյանը, Մուշեղ Իշխանը, Արսեն Երկաթը, Կ. Զարյանը, Շ. Շահնուրը և ուր.: 1971-ին հրատարակվել է «Ն.»-ի 30-ամյակին նվիրված մեծածավալ բացառիկ համար:

1995-ից լույս է տեսել երկշաբաթյա պարբերականությամբ՝ իբրև անհատական ձեռնարկ:

«ՆԱՅԻՐԻ», գրահրատարակչ. համալիր: Հիմնադրվել է 1948-ին Թեհրանում՝ ազգ., հաս. գործիչ Սամվել Սարուխանյանի նախաձեռնությամբ: 1969-ից Սարուխանյանի հետ համագործակցել է մանկավարժ, հրատարակիչ, ազգ. գործիչ Սեպուհ Ամիրխանյանը (տնօրեն՝ 1986–2011-ին): Տպարանը վերասարքավորվել է ժամանակի լավագույն օֆսեթ և «Հայդելբերգ» տպագր. մեքենաներով: «Ն.» պետ. արտոնագիր ունեցող միակ հայալեզու հրատարակչությունն է Իրանում: Հրատարակում է գիտ., գեղ., արվեստագիտ., երաժշտագիտ., երաժշտ., հոգևոր գրակ., բառարաններ, գրուցարաններ, օրացույցներ, ալբոմներ՝ հայ., պարսկ., անգլ., ռուս. և այլ լեզուներով: «Ն.»-ի կարևոր հրատ-ներից են Ա. Իսահակյանի «Ուստա Կարօ եւ օրթէ Յարութ» (1959) վեպը, Ա. Սարյանի «Պատմութիւն Չարմահալ գաւառի» (1980), Պ. Սևակի «Անլռելի զանգակատունը» և «Հատընտիրը» (երկուսն էլ՝ 1982), Արտակ արք. Սանուկյանի «Հայ եկեղեցու տոները» (1984), Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»


(1991) պոեմը, Հ. Հախնազարյանի «Գողթան գաւառը» (1991) երկը, Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը» (1994), Վ. Հարությունյանի «Հայերէն–պարսկերէն բառարանը», Հ. Սանասարյանի «Պարսկերէն–հայերէն բառարանը», Մ. Խաչատրյանի «Հայերէն–անգլերէն–պարսկերէն բառարանը» (երեքն էլ՝ 2006), Կորյունի «Վարք Մաշտոցի» (2002), Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց», Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» երկերի պարսկ. (առաջին անգամ) թարգմանությունները, նաև «Հայաստանը Սելեւկեանների ժամանակաշրջանում», «Հայաստանի եւ Իրանի պատմական, մշակութային առնչութիւնները» ուսումնասիրությունները, իրանահայ բանաստեղծների գործերից, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ա. Խնկոյանի և այլ մանկագիրների հեքիաթներ ու բանաստեղծություններ, խորհրդահայ գրողների գործեր, թարգման. գրակ., հրապարակախոս. երկեր (Ա. Հարությունյանի «Սպիտակ ջարդը եւ հայերը», 2004, «Չքաւոր ժողովուրդն է, որ երկիր է պահում», 2007, Նշան Թոփուզյանի «Պահանջատիրութեան ոգիով», 2005, Վ. Իսախանյանի «Արաքի Քեազազ գաւառի Քալաւա գիւղը...», 2009, ևն): 2004, 2008 և 2010-ին լույս է ընծայել «Նայիրի» տարեգրքի Ա, Բ, Գ հատորները (խմբագիր՝ Ս. Ամիրխանյան): Աշտապես համագործակցում է ՀՀ-ի և Սփյուռքի հայտնի հրատարակչությունների և տպարանների հետ, փոխանակում գրքեր: 2011-ից «Ն.»-ի տնօրենը Նարեկ Ամիրխանյանն է:



Կորյունի «Վարք Մաշտոցի» (2002, Թեհրան, «Նայիրի») գրքի կազմը

ՆԱՆՍԵՆ (Nansen) Ֆրիտյոֆ [10.10.1861, դաստակերտ Ստուրե-Ֆրյոնեն՝ Քրիստիանիայի (այժմ՝ Օսլո) մերձակայքում–13.5.1930, դաստակերտ Լյուսակեր՝ Օսլոյի մերձակայքում], նորվեգացի գիտնական, բևեռախույզ, օվկիանոսագետ, հումանիստ, հաս. գործիչ: Բնագիտ-յան դ-ր (1888), պրոֆ. (1897): Ավարտել է Քրիստիանիայի համալսարանի բնագիտ. ֆակ-ը (1882): 1882-ից մասնակցել և կազմակերպել է արշավախմբեր Հս. բևեռ:

Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) ավարտից հետո, որպես Ազգերի լիգայի գերագույն կոմիսար, Ն. զբաղվել է ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու և գաղթականների խնդիրներով:



Ֆրիտյոֆ Նանսեն

Ն-ի հաս. գործունեության կարևոր մասն է հայերին օգնելու աշխատանքը: Բազմահազար հայ գաղթականներ ստացել են «Նանսենյան անձնագրեր», որը մասամբ թեթևացրել է նրանց դրությունը: Վերջինների ներգաղթը Խորհրդ. Հայաստան կազմակերպելու նպատակով ստեղծել է հանձնաժողով (1925–29) և նրանց հետ 1925-ի հունիսին ժամանել է Երևան: Եղել է հանրապետության շրջաններում, պարզել գաղթականներին ընդունելու հնարավորությունները և կազմակերպել 7000 գաղթականների հայրենադարձությունը:

Հայոց պատմության և Հայաստանի մասին Ն. գրել է բազմաթիվ հոդվածներ, զեկուցագրեր, ելույթներ: 1927-ին նորվեգ. հրատարակվել է նրա «Հայաստանում» ծավալուն ուղեգրությունը, որը թարգմանվել է անգլ. ու ֆրանս. (ոչ ամբողջ.)՝ «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» վերնագրով (1928), նաև արևմտահայ. (1958, թարգմ.՝ Հ. Քաջարենցի), արևելահայ. (1958, 1993, 2008, թարգմ.՝ Ս. Ալեմյանի), գերմ. (ամբողջ.)՝ «Խաբված ժողովուրդ» վերնագրով, որտեղ հեղինակը մեղադրել է հայասպանության հանցավորներին՝ ինչպես թուրք ջարդարարներին, այնպես էլ մեծ տերություններին: «Խաբված ժողովուրդը» ամբողջությամբ հայ. հրատարակվել է 2000-ին (թարգմ.՝ Է. Մակարյանի):



Ֆ. Նանսենի
«Խաբված ժողովուրդ» (2000, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը

Երևանում գործում է Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամը (նախագահ՝ Ֆելիքս ***Բախչինյան,*** սահմանվել է ոսկե հուշամեդալ), Ն-ի անունով ՀՀ-ում կոչվել են փողոցներ և դպրոցներ: Կանգնեցվել են Ն-ի կիսանդրիները Երևանում և Սպիտակում («Նորվեգական գյուղ» թաղամասում), «Նանսենյան անձնագիր» հուշակոթողը՝ Երևանում:

Ս. Պետերբուրգի ԳԱ պատվ. անդամ (1898), հումանիտար գործունեության համար՝ Նորելյան մրց. (1922):

Մեծ եղեռնի հուշահամալիրի Հուշապատի մեջ ամփոփված է Ն–ի գերեզմանից բերված հողով սափոր:

Երկ. Դիշերվա խավարի յեվ սառույցների մեջ, գիրք 1–2, Ե., 1927: «Ֆրամ»–ը Բևեռային ծովում, հ. 1–2, Ե., 2000: Դեպի ապագայի երկիր, Ե., 2009: Բնության գրկում, Ե., 2009: Շպիցբերգեն, Ե., 2009: Դեպի բևեռ, Ե., 2009: Ծովափոկերի և սպիտակ արջերի մեջ, Ե., 2009:


Գրկ. Արզումանյան Մ., Նանսենը և Հայաստանը, Ե., 1986: Բախչինյան Ֆ., Ֆրիտյոֆ Նանսեն՝ աշխարհի խիղճը, Ե., 2010: Նույնի, Ֆրիտյոֆ Նանսենը և Հայաստանը, Ե., 2011: Նանսեն–Հեյեր Լ., Գիրք հորս մասին, Ե., 2011: Յեափուճեան Ա., Նանսէն եւ հայ գաղթականութեան հայրենադարձութեան հարցը: Ըստ անտիպ փաստաթղթերու, Ե., 2011: Հայ դպրի նվիրյալը. Ֆրիտյոֆ Նանսեն: Փաստաթղթերի ժող. (1920–1930), կազմ.՝ Է. Հովսեփյան, Մ. Սարգիրոսյան, Ե., 2005:



Ռաֆայել Նանուշյան. *Բ. Պրուսի «Փարավոն» գրքի (1962, Ե., Հայպետհրատ) կազմը*

ՆԱՆՈՒՇՅԱՆ Ռաֆայել Պողոսի [1.17.1924, գ. Ալաստան (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–29.2.1976, Երևան], գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1953): Ձևավորել է Րաֆֆու «Պատմվածքներ», Ռ. Պատկանյանի «Կռունկներ» (1955), Բ. Պրուսի «Փարավոն» (1962) գրքերը: Ուշագրավ են «Թող փոթորիկն ուժգին պայթի», «Խաղաղություն ժողովուրդներին», «Կորչի՛ պատերազմը» (Բեռլինի միջազգ. ցուցահանդեսի դիպլոմ, 1959) և այլ պլակատներ:


Գրկ. Ռաֆայել Նանուշյան (ցուցահանդեսի կատալոգ), Ե., 1977:



Բագրատ Նավասարդյան

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Բագրատ Աբրահամի (1852, Վաղարշապատ–29.10.1934, Թիֆլիս), բժիշկ, հաս. գործիչ, հրատարակիչ: Սովորել է Վաղարշապատում, ապա՝ Թիֆլիսում: Ավարտել է Ս. Պետերբուրգի բժշկավիրաբուժ. ակադ–ը (1878): 1881–ին հիմնադրել է ***Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը*** (եղել է անփոփոխ պատվ. նախագահը): 1901–ին Թիֆլիսում հիմնադրել է Մոսկվայի հնագիտ. ընկերության կովկասյան բաժանմունքը: Ն–ի աջակցությամբ և մասնակցությամբ հրատարակվել են բժշկ. հանդեսներ («Առողջապահիկ թերթ», «Առողջապահ», «Նոր առողջապահ»): Հաս. և առողջապահ. թեմաներով բազմաթիվ հոդվածներ է տպագրել «Մշակ», «Տարազ» և այլ պարբ–ներում:

Ն–ի կերպարը Րաֆֆին մարմնավորել է «Խենթ» վեպում:



Տիգրան Նավասարդյանի *«Բառգիրք Արարատեան բարբառի» (1903, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Բորիս Սերգեյի [ծ. 1.1.1957, Դոնի Ռոստով (Ռուսաստան)], լրագրող, խմբագիր: Ավարտել է Ռոստովի պետ. համալսարանը (1979): 1997–99–ին՝ Հայաստանի «Մեդիա» ընկերակցության համանախագահ, 2002–06–ին՝ Բաց հասարակության ինստ–ի հայաստանյան մասնաճյուղի տնօրենների խորհրդի նախագահ: 1990–91–ին աշխատել է «Ռեսպուբլիկա Արմենիա» (ռուս.) օրաթերթի խմբագրությունում, միաժամանակ՝ Արմենֆաքս լրատվ. գործակալության գլխ. խմբագիր: 1990–95–ին՝ ***«Զերկալո»*** (ռուս.) շաբաթաթերթի հիմնադիր–խմբագիր, 1995–ից՝ ***Երևանի մամուլի ակումբի*** նախագահ, 2001–ից, միաժամանակ՝ Լրագրողների «Հարավային Կովկաս» միջազգ. ընկերակցության համանախագահ:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Տիգրան Ավետիսի (7.2.1861, Վաղարշապատ–12.4.1927, Թիֆլիս), բանահավաք–հրատարակիչ, բառարանագիր: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1872–79): 1879–ին դատապարտվել է 6–ամյա բանտարկության Մետեխի բանտում՝ Միքայել ***Նալբանդյանի*** նկարը տպելու և «Ազատություն» բանաստեղծության հետ տարածելու համար: 1884–88–ին սովորել է Ժնևում: Աշխատակցել է Մայր աթոռի «Արարատ» պարբ–ին: 1876–ից Ն. Վաղարշապատում հավաքել և գրի է առել բանահյուս. նյութեր, որոնք ամփոփել է «Հայ ժողովրդական հէքիաթներ» (գիրք 1–10, 1882–1903, տպագրվել են Վաղարշապատում, Երևանում, Թիֆլիսում, համապատասխանաբար, Էմին Տեր–Գրիգորյանի, Մարկիանոս Ռոտինյանի, Մովսես Վարդանյանի տպ–ներում) և «Հայ ժողովրդական աւանդութիւններ» (1883, Ե., Է.

Տեր-Գրիգորյանի տպ.) ժող-ներում: Կազմել է նաև «Անեծքներ» (1883) ժող-ը և «Բառգիրք Արարատեան բարբառի» (1903, երկուսն էլ՝ Թ., Մ. Վարդանյանի տպ.) բառարանը, որտեղ ընդգրկել է մոտ 5000 բառ ու ոճ:

Թարգմանել է Բ. Շմիդտի «Ֆրիդոլին կամ Սէր եւ ատելութիւն» (1877, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) վեպը:

Գրկ. **Վարդանյան Ս.**, *Տիգրան Նավասարդյանը բանագետ-բանահավաք, «ԼՀԳ», 1974, № 5:*

«ՆԱՒԱՍԱՐԴ», գրական, գեղ. պատկերազարդ տարեգիրք: Լույս է տեսել 1914-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Դանիել *Վարուժան*, Հակոբ *Սիրունի:* Ունեցել է գրակ-յան, արվ-ի, բանասիրության բաժիններ: Աշխատակցել են ժամանակի ականավոր հայ գրողներ, արվեստաբաններ, բանասերներ: Տպագրել է արևմտահայ գրողների և օտարազգի դաս. հեղինակների գործեր, գրաքննադատ. հոդվածներ, գրախոսություններ: Ուշագրավ են Կոմիտասի «Լոռու գութաներգը Վարդաբլուր գիւղի ոճով» և Օ. Սևումյանի «Հայ թատրոնին վերածնունդին համար» հոդվածները: «Ն.»-ի էջերում տեղ են գտել գեղանկարչ. գործերի վերատպություններ: Մեծ եղեռնի ժամանակ տարեգրքի 2-րդ համարի շարվածքը ոչնչացվել է:

«ՆԱՒԱՍԱՐԴ», գրակ-յան և արվ-ի պարբ: Լույս է տեսել 1923–26-ին Բուխարեստում: Խմբագիր՝ Հակոբ *Սիրունի:* Տպագրել է Ե. Օտյանի «Ընկեր Բ Փանջունի տարագրութեան մէջ» երգիծավեպը, Դ. Վարուժանի «Հորդորներ սկսնակներուն» գործը, Մ. Պոտուրյանի «Մարտիրոս Ղրիմեցու տաղերը» ուսումնասիրությունը, խմբագրի հուշերը՝ Դ. Վարուժանի մասին: Աշխատակցել են Հ. Օշականը, Մ. Զարիֆյանը, Վ. Շուշանյանը, Լ.-Զ. Սյուրմելյանը, Լ. Էսաճանյանը և ուր.:

«ՆԱՒԱՍԱՐԴ», գրական-մշակութ. ամսաթերթ: Լույս է տեսնում 1982-ից Գլենդելում՝ հայ., անգլ.: Խմբագիր՝ Արմեն Տոնոյան: Տպագրում է հայ գրակ-յանը և արվ-ին վերաբերող հոդվածներ:

ՆԱՏԵՐ, XIV դ-ի գրիչ: Եղել է իր որդիների՝ գրիչ-մանրանկարիչներ *Ավետիսի*, Ստեփանոսի, նաև վերջինիս որդու՝ Հովհաննեսի ուսուցիչը: Ստեղծագործել է Տայքում, Բաբերդի գավառում, 1341-ից մինչև խոր ծերություն՝ Սուրխաթում (Ղրիմ): Ընդօրինակել է բազմաթիվ ձեռագրեր. պահպանվածների մեծ մասը Մատենադարանում է (ձեռ. №1529, 2040, 6938, 7432, 7435, 7636, 7637, 7742, 7837, 8510): Ն-ի ընդօրինակած մատյաններն աչքի են ընկնում գեղագիր գրչությամբ, հիշատակարանները տեղեկաշատ են, երբեմն՝ չափածո:

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950:

ՆԱՐ-ԴՈՍ (Հովհաննիսյան Միքայել Զաքարի, 1.3.1867, Թիֆլիս–13.7.1933, Թիֆլիս, թաղված է Խոջիվանքի գերեզմանատանը), գրող: Սովորել է Թիֆլիսի Նիկոլայան երկդասյան դպրոցում, Քութայիսի նահանգի ուսուցչ. սեմինարիայում: 1890–1906-ին՝ *«Նոր-Դար»* թերթի պատ. քարտուղար, 1913–18-ին՝ «Սուրհանդակ» թերթի աշխատակից: Մխո-Օհան ստորագրությամբ «Նոր-Դար» թերթում Ն-Դ. հրատարակել է «Ճշմարիտ բարեկամը» (1886), «Բարերար եւ որդեգիր» (1888) վիպակները, «Քնքուշ լարեր» (1887), «Զազունեան» (1890) վեպերը, «Մեր թաղը» պատմվածաշարը («Սաքուլն ուխտ գնաց», 1889, «Ինչպէս բժշկեցին», 1889, «Թէ ինչ եղաւ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց», 1890, «Յոպոպ», 1890, «Հոգուն վրայ հասաւ», 1889, ևն):

Լույս են տեսել Ն-Դ-ի «Աննա Սարոյեան» (1888, հրտ.՝ 1906, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Ես եւ նա» (1889), «Սպանուած աղաւնին» (1898, հրտ.՝ 1901, Բաքու, «Արոր» տպ.), «Տանտիրոջս աղջիկը» (1902, Թ., Մ. Վարդանյանի տպ.) վիպակները, «Նեղ օրերից մէկը» (1904, Թ., «Հերմես» տպ.), «Նորածին մանուկը» (1904, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Մի օր աշնանը» (1907), «Խմբագիրը» (1913), «Անհետ կորածը» (1920) պատմվածքները, «Պայքար» (1911, Թ., «Կուլտուրա» տպ.) վեպը:




«Նաւասարդ», *1914-ին, Կ. Պոլիս (№ 1, 1914)*



«Նաւասարդ», *1923–26, Բուխարեստ (№ 1, 1923)*



«Նաւասարդ», *1982-ից, Գլենդել (№ 55, 1987)*




Նար-Դոս



Նար-Դոսի *«Երկեր»-ի (2012, Ե., «Անտարես») կազմը*



Շավարշ Նարդունու *«Անձրեւին ձորը» (2011, Ե., «Գրաբեր») գրքի կազմը*



«Նարցիս», *2006-ից, Երևան (№ 3, 2012)*

Հայ ռեալիստ. գրակ-յան նվաճումներից է Ն-Դ-ի «Մահը» (1912, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) վեպը: Կյանքի վերջին շրջանում Ն-Դ. գրել է «Նոր մարդը» (1928) վեպի առանձին հատվածներ, «Վերջին մոհիկանները» (1930) պատմվածքը: Կազմել է «Քսան եւ հինգ ամեակ «Աղբիւր» մանկական ամսագրի (1883–1908)» (1908, Թ., Ա. Թառումյանի տպ.) ալբոմը, «Գիր եւ կեանք» (Հ. Մալխասյանի հետ, 1911, Թ., «Էսպերանտո» տպ.) դասագիրքը:

Հրատարակվել են նաև Ն-Դ-ի «ԵԼԺ»-ն (հ. 1–7, 1938–50), «Երկերը» (1977, 2012):

Ն-Դ-ի անունով Երևանում կոչվել է փողոց, դպրոց:

Գրկ. **Տէրտէրեան Ա.**, *Նար-Դոսի ստեղծագործութիւնը, Թ., 1913:* **Հովհաննիսյան Գ.**, *Նար-Դոս, Ե., 1959:* **Հովսեփյան Գ.**, *Նար-Դոս, Ե., 1961:* **Սարգսյան Ս.**, *Նար-Դոս: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1973:*

ՆԱՐԴՈՒՆԻ Շավարշ [Այվազյան, 1898, գ. Արմաշ (Նիկոմեդիայի գավառ)–1969, Փարիզ], գրող, հրատարակիչ-խմբագիր: Ավարտել է Փարիզի բժշկ. համալսարանը (1927): 1928–37-ին՝ ***«Երկունք»*** ամսագրի, 1934–40 (միաժամանակ) և 1945–67-ին՝ ***«Հայ բոյժ»*** պարբերաթերթի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Ն-ու «Հէքիաթներու ալբոմ» (1927, Աթենք), «Մեղեդիներ, մեղեդիներ» (1933), «Երուսաղէմ, Երուսաղէմ» (1938), «Բաներ, բաներ, ինչ բաներ» (1941), «Նարդեան շիթեր» (1945, երեքն էլ՝ Փ.), «Սպիտակ առաւօտ» (1963), «Ահա ես ճանկերս լայն բացած» (1966), «Գրական ցոլքեր» (1979), «Աքսորի օրագիր» (2000), «Խորհրդերգութիւն», «Անձրեւին ձորը» (երկուսն էլ՝ 2011), «Առաջնորդ մայրերու...», «Նիզակամարտ Շաւարշանայ դաշտին վրայ» (երկուսն էլ՝ Փ., ա. թ.) բանաստեղծությունների, պատմվածքների, հեքիաթների ժող-ները:

Ն. հանդես է եկել նաև Վահրամ Սևունի գրական կեղծանունով:

«ՆԱՐԵԿ», Գրիգոր Նարեկացու ***«Մատյան ողբերգության»*** պոեմի տարածված անվանումը: Դեռևս միջնադարում պոեմը հայտնի էր որպես «Ն.» և համարվել է «դեղ կենաց», որի օգնությամբ ձգտել են մաքրվել հոգով և ազատվել մեղքերից: «Ն.»-ին վերագրել են բուժիչ զորություն, կարդացել հիվանդների ապաքինման համար, իսկ հեղինակի անունը սրբացրել ու «մեղավոր հոգիների» փրկության միջնորդ բարեխոս են համարել Աստծու մոտ: Ժողովուրդը հավատացել է, որ դրանք ընթերցելով կարելի է փրկվել չար ոգիներից, փարատվել «ջերմատագնապ» ախտերից: Ախտար. ժող-ներում, ըստ այդմ, տեղ են գտել ցանկեր՝ «Զանազանութիւն Նարեկայ գրքոյն... թէ ամէն մէկ գլուխ ինչ գործոյ ասել օգտակար է» բովանդակությամբ:

Պոեմը «**Նարեկ. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ...**» տիտղոսաթերթով տպագրվել է Կ. Պոլսում 1755-ին (Հովհաննես Աստվածատրյանի տպ., 576 էջ, 8º, 16,8 x 11,2 սմ), 1763-ին (նույն տպ., 640 էջ, 8º, 16,7 x 11,9 սմ), 1802 և 1812-ին (Պողոս Հովհաննիսյանի տպ.), 1821-ին (Մայր Աստվածածնի տպ.), 1826, 1829, 1832, 1835 և 1839-ին (Արապյան տպ.), «Նարեկ աշխարհաբար» վերնագրով՝ 1902-ին (փոխադր.՝ Միսաք Գոչունյանի, ԿՊ, Գ. Գայսերյանի տպ.), Վենետիկում (Սբ Ղազարի տպ.)՝ 1801, 1827 և 1859-ին, ևն:

«ՆԱՐՑԻՍ», գրական-գեղ., մշակութ. հանդես: Լույս է տեսնում 2006-ից Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ ***Սոնա Վան***, գլխ. խմբագիրներ՝ Վահան Վարդանյան, Սոնա Վան (2013-ից): Տպագրում է ժամանակակից հայ պոեզիայի և արձակի նմուշներ, էջեր դաս. գրակ-ից, գրականագիտ. հոդվածներ, անդրադառնում է թարգման. գրակ-յան նորություններին, գրական հոբելյաններին, մշակութ. ուշագրավ իրադարձությունների և անվանի դեմքերի:

«ՆԵ», ամսագիր կանանց համար և կանանց մասին: Լույս է տեսել 1995–2014-ին Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Անահիտ Ամիրյան: Առանցքային թեման կինն էր: Որպես հավելված՝ տպագրել է ամենամյա ծավալուն օրացույց: Զբաղվել է նաև գրահրատարակչ. գործունեությամբ. տպագրել է հայ. և համաշխ. դաս. և ժամանակակից գրողների ստեղծագործություններ, թարգմանել ու հրատարակել է անտիպ գործեր, ուսուցող. և հոգեբ. գրքեր:

«ՆԵՂՈՒՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ», քարտեզ: Տպագրվել է 1791-ին Վենետիկում: Անվանացույց՝ «Նեղուց Կոստանդնուպօլսոյ այն է պօղազ իչի ի նախնումն Վոսփորն Թրակիոյ», չափերը՝ 23 x 41 սմ: Անվանացույցը քարտեզի վերևի աջ մասում է՝ զարդանկարի մեջ, նույն աջ մասում՝ քարտեզի ամբողջ երկարությամբ՝ «նշանագիրք», ներքևում՝ մղոնաչափ (մասշտաբ): Զետեղված է Ղ. Ինճիճյանի «Ամարանոց Բիւզանդեան» (Վնտ., 1794) չափածո աշխատության մեջ և «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (Վնտ., 1804) երկում: Հ. Ստեփանյանը քարտեզն անվանել է «Քարտեզ Ոսփորի»: Ըստ Ս. Ճեմճեմյանի՝ փորագրիչը Ալլեսանդրին է:

«ՆԵՅՐՈՔԻՄԻԱ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ և ՌԳԱ համատեղ հրատ.: Լույս է տեսնում 1982-ից. 1982–92-ին՝ Երևանում, 1995-ից՝ Մոսկվայում՝ ռուս., անգլ.: Հիմնադիր-խմբագիր՝ Արմեն Գալոյան, 2013-ից՝ համախմբագիրներ՝ Նատալյա Գուլյաևա, Միխայիլ Աղաջանով: Տպագրում է ուսումնասիրություններ նեյրոքիմիայի և հարակից գիտ-ների՝ կենսաքիմիայի, կենսաօրգան. քիմիայի, մոլեկուլային կենսաբանության, մանրէաբանության և բժշկ. կենսաքիմիայի մասին, հոդվածներ՝ փորձարար. հետազոտությունների նոր արդյունքների վերաբերյալ, մեթոդ. աշխատանքներ, տես. և բանավիճային նյութեր, գրախոսություններ ևն:

ՆԵՎ (Nève) Ֆելիքս Ժան-Բատիստ Ժոզեֆ [13.6.1816, Աթ (Բելգիա)–23.5.1893, Լուվեն (Բելգիա)], բելգիացի արևելագետ, հայագետ: Փիլ. գիտ. դ-ր (1838): Հայկ. և հնդկ. մատենագրության ու սանսկրիտի մասնագետ: Ն-ի առաջին հայագիտ. ուսումնասիրությունը «Պատմական ակնարկ հայոց լեզվի և գրականության» (1841) հոդվածն է: Ուսումնասիրություններում անդրադարձել է հայ-ի, հայոց այբուբենի, հայկ. դպրության սկզբնավորման հարցերին: Գրել է Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Եղիշեի, Թովմա Մեծոփեցու և ուր. կենսագրությունները, ֆրանս. թարգմանել նրանց ստեղծագործություններից, Արծրունիների տան պատմությունը ևն: Փարիզի արքուն. մատենադարանի 2 ձեռագրի հիման վրա Ն. 1855-ին հրատարակել է «Ուսումնասիրություն Թովմա Մեծոփեցու անձի և նրա XV դարի Հայաստանի պատմության շուրջ» երկը, որը 1858-ին տպագրվել է Ն-ի ֆրանս. թարգմանությամբ:

Ն-ի հայագիտ. ուսումնասիրություններն ամփոփված են «Քրիստոնյա Հայաստանը և յուր գրականությունը» (1886) գրքում:


Երկ. Introduction à l'histoire générale des littératures orientales, Louain, 1844.

Գրկ. Դոլուխանյան Ա., Ֆելիքս Նևը և հայ քրիստոնեական մատենագրությունը, Ե., 2001:

«ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ», հույն փիլիսոփա Պորփյուրի (232–304) տրամաբանության ձեռնարկներից: Տպագրվել է 1793-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Տպակից է Դավիթ Անհաղթի «Վերծանութիւնք Ներածութեան Պորփիւրի» և Գրիգոր Տաթևացու «Լուծմունք Ներածութեան Պորփիւրի» երկերին: Տիտղթ-ին՝ «Գիրք Պորփիւրի որ կոչի Ներածութիւն: Յորում պարունակին վերծանութիւնք ամէնիմաստ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի. և Լուծմունք, սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ» (413 էջ, 8º, 11 x 6,7 սմ):

Երկը վաղ միջնադարում (480–490) թարգմանվել է լատ., ասոր. և հայ.: Առաջին մեկնությունը Դավիթ Անհաղթինն է՝ «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի» (քնն. բնագիրը տպագրվել է 1976-ին), որի հետ «Ն.» հրատարակվել է 1833-ին Վենետիկում (Սբ Ղազարի տպ.)՝ «Մատենագրությունք նախնյաց» մատենաշարով:

«ՆԵՐԱԾՈՒՄՆ ԱՌ ՋԵՐՄԵՌԱՆՊ ԿԵԱՆՆ», Սբ Ֆրանչիսկոս Սալեզացու երկը: Իտալ-ից թարգմ.՝ Ղուկաս Խարբերդցու: Տպագրվել է 1748-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (447 էջ, 8º, 14 x 8 սմ):




Ֆելիքս Նև



«Ներածութիւն» *(Պորփյուր, 1793, Մադրաս, Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպ.) գրքի փիլղոսաթերթը*



«Ներածումն առ ջերմեռանդ կեանն» *(Ֆրանչիսկոս Սալեզացի, 1748, Վնտ.) գրքի փիլղոսաթերթը*



«Ներկայ», *1949-50, Փարիզ (№ 9, 1950)*



Ներսես Ե Աշտարակեցի



Ներսես Ե Աշտարակեցու *«Համառօտութիւն անցից քրիստոսակերտ Մայր աթոռոյ Հայոց Սրբոյ Էջմիածնի» (1853, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*

ՆԵՐԴԻՐ, հրատ–յան կառուցվածքային տարր. առանձին տպված պատկերազարդում (պատկեր, քարտեզ, աղյուսակ, սխեմա ևն)՝ 2–4 կամ ավելի էջերով, որը սոսնձվում է գրքի կամ ամսագրի ***տետրերի*** միջև կամ մեջտեղում՝ արմատի կողմից: Ն–ի թուղթը և տպագրությունը (հիմնականում՝ գունավոր, բարձրորակ) տարբերվում են տեքստի թղթից ու տպագրության եղանակից. տպագրվում է առանձին: Ն–ի էջերը սովորաբար չեն համարակալվում կամ համարակալվում են այլ կարգով (հռոմ. թվերով, տառերով ևն):

«ՆԵՐԿԱՅ», գրական ամսագիր: Լույս է տեսել 1949–50–ին Փարիզում: Խմբագիր՝ Լևոն Չորմիսյան: Տպագրել է սփյուռքահայ գրողների (Վ. Շուշանյան, Մ. Աթմաճյան, Զ. Որբունի և ուր.) գործերը, լուսաբանել ֆրանսահայ գրական կյանքը, ծանոթացրել Խորհրդ. Հայաստանի տնտ., գիտ. և մշակութ. ձեռքբերումներին:

«ՆԵՐԿԱՅ», գրական, հաս. ամսագիր: Լույս է տեսել 1961–72–ին Բուենոս Այրեսում: Խմբագիր՝ Վահե Պահատրյան: Տպագրել է ազգ., հաս–քաղ., մշակութ. հոդվածներ, լուրեր Խորհրդ. Հայաստանից, անդրադարձել Հայ դատին, սփյուռքահայ համայնքների կյանքին և միջազգ. անցուդարձին:

ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ (13.2.1770, Աշտարակ–13.2.1857, Սբ Էջմիածին), Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1843–ից, ազգ–ազատագր. շարժման գործիչ: Սովորել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում: Երևանյան առաջին արշավանքի (1804) ժամանակ աջակցել է ռուս. զորքերին: 1814–28–ին եղել է Վիրահայոց թեմի առաջնորդ, ծավալել է տնտ. և կրթ. գործունեություն, 1824–ին Թիֆլիսում հիմնադրել է Ներսիսյան դպրոցը և նրան կից տպարանը (տես ***Ներսիսյան դպրոցի տպարան***), որտեղ Ն. Ե Ա–ու հովանավորությամբ տպագրվել են Տարեցույցներ, Աստվածաշունչ, Սաղմոսարաններ, պատմ., աստվածաբան, լեզվագիտ., գեղ. գրքեր: 1826–28–ի ռուս–պարսկ. պատերազմի ժամանակ կազմակերպել է հայկ. կամավոր գումարտակներ, անձամբ մասնակցել Երևանի, Էջմիածնի, Սարդարապատի ազատագրմանը: Ընտրվելով կաթողիկոս՝ կարգավորել է Մայր աթոռի և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հարաբերությունները, առաջնահերթ նպատակ է դարձրել Ռուս. կայսրությունում Հայ եկեղեցու իրավունքները վերականգնելը, որոնք սահմանափակվել էին «Պոլոժենիե»–ի կանոնադրության որոշումներով: Իր գահակալության ողջ ընթացքում գրեթե անտեսել է այն և ձգտել է ի չիք դարձնել ցար. կառավարության հետապնդած նպատակները:

Լույս է տեսել Ն. Ե Ա–ու «Համառօտութիւն անցից քրիստոսակերտ Մայր աթոռոյ Հայոց Սրբոյ Էջմիածնի» (1824, 1853, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) աշխատությունը:

Գրկ. **Պատկանեան Գ.,** *Ծաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ սրբազան հայրապետի Ներսէս Ե..., հ. 1–2, Թ., 1876:* **Երիցեան Ա.,** *Նիւթեր Ներսէս Ե–ի կենսագրութեան համար, Թ., 1877:* **Նույնի,** *Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX դարում, հ. 1–2, Թ., 1894:* **Կոստանեան Կ.,** *S. Ներսէս Ե Աշտարակեցի. Կաթողիկոս Ամենայն հայոց, Ալեք–պոլ, 1909:* **Օրմանեան Մ.,** *Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927:* **Անանթրոսյան Մ.,** *Ներսիսյան դպրոցի պատմություն, Ե., 1981:* **Тукян В.,** *Католикос Всех армян Нерсес Е Аштаракеци, Эчмиадзин, 2012.*

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ [ավազանի անունը՝ Սմբատ, 1153, Լամբրոն–14.7.1198, Սկևռայի վանքի Սբ Աստվածածին եկեղեցի (Կիլիկիա)], աստվածաբան, մեկնիչ, մատենագիր, պետ. գործիչ, հրապարակախոս, բանաստեղծ, շարականագիր: Լամբրոնի բերդատեր Հեթումյան իշխան Օշին Բ–ի որդին: Սովորել է Սկևռայի վանքում, ապա՝ Հռոմկլայի կաթողիկոսարանի բարձրագույն դպրոցում՝ ***Գրիգոր Գ Պահլավունու*** և ***Ներսես Շնորհալու*** հովանավորությամբ: Վերջինս 16 տարեկանում նրան ձեռնադրել է քահանա՝ տալով իր անունը: 1175–ին ***Գրիգոր Դ Տղան*** նրան կարգել է Տարսոն քաղաքի արքեպիսկոպոս: Կյանքի վերջին տարիներին պաշտոնա–

վարել է Լևոն Բ Մեծագործի արքունիքում՝ որպես ատենադպիր, խորհրդատու և թարգմանիչ: Հորից ժառանգած նյութ. միջոցներով օժանդակել է դպրոցներին, գրադարաններին, գրչատներին, 30 հզ. ոսկի դահեկան նվիրաբերել ձեռագրերի գնման, ընդօրինակման, վանքերի և եկեղեցիների կառուցման համար: Պահպանվել են Ն. Լ–ու կամ նրա պատվերով ընդօրինակած բազմաթիվ ձեռագրեր, այդ թվում՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» (1173) պոեմը՝ մեզ հասածներից ամենահին և լավագույն ձեռագիրը:

Ն. Լ–ու **«Պատարագի մեկնութիւն»**–ը («Խորհրդածութիւն ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», հրտ.՝ 1847, Վնտ., Սբ Ղազարի տպ.) արժանացել է համաշխ. ճանաչման, բազմիցս թարգմանվել ու վերահրատարակվել է լատ., գերմ., ֆրանս., անգլ., հուն. և այլ լեզուներով: Միջնադարյան հոգևոր ճարտասան. լավագույն գործերից են Ն. Լ–ու «Գիրք սիրոյ եւ խաղաղութեան», «Ատենաբանութիւն եւ ճառք», «Թուղթ առ Լեւոն արքայն Հայոց» երկերը: Ն. Լ. հորինել է ավելի քան 2 տասնյակ շարականներ և անձամբ երգել («Այսօր յարեաւ», «Նորոգեալ կղզիք», «Որ զլոյս աստուածային» ևն): Ն. Լ. հեղինակ է նաև «Գովեստ ներբողական պատմագրական բանիւ...» 938–տողանոց փաստագր. քերթվածի՝ նվիրված Ներսես Շնորհալուն և Պահլավունյաց տոհմին:

Ուշագրավ են Ն. Լ–ու Հովհաննեսի Հայտնության գրքի մեկնության հայ. թարգմանության վերանայումն ու սրբագրումը (1855, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.): Ենթադրվում է, որ Հայտնության գիրքը հայ. թարգմանել և Աստվածաշնչի հայկ. կանոն է ներմուծել Ն. Լ.:

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են Ն. Լ–ու՝

«**Տեսութիւն աղօթից**» երկը. 1736–ին Կ. Պոլսում՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանում (160 էջ, 8º, 12,2 x 7 սմ):

«**Գիրք սիրոյ եւ խաղաղութեան**» դավանաբան. երկը. 1749–50–ին Կ. Պոլսում (՞)՝ առանց տպարանի հիշատակության (160 էջ, 8º, 11,2 x 7 սմ):


«**Վիճաբանութիւն ընդ յոյնս**» կրոնադավանաբան. երկը. 1757–ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Տեառն Ներսէսի Լամբրօնացւոյ՝ արքեպիսկոպոսի Տարսօնի Կիլիկեցւոց....» (16 էջ, 8º, 13 x 7,8 սմ):

«**Աղօթք Սրբոյն Ներսէսի Լամբրօնացւոյ առ խաչեալն Յիսուս**» 1–էջանոց աղոթքը. 1776–ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում:


«**Ատենաբանութիւն եւ ճառք**» կրոնադավանաբան., ատենաբան. երկը. 1787–ին Վենետիկում՝ Ջիովաննի Պիացոյի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սրբոյ հօրն մերոյ Ներսէսի Լամբրոնացւոյ… Ատենաբանութիւն եւ ճառք ընտիրք ի համբարձումն Քրիստոսի ի գալուստ Հոգւոյն Սրբոյ» (100 էջ, 8º, 14 x 8,8 սմ): Վերահրատարակվել է 1812, 1838–ին (վերջին հրատ–ը ներառում է նաև «Թուղթ առ Լեւոն արքայն Հայոց» երկը, Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1851–ին (Կալկաթա, Ազգասեր Արարատյան ընկ. տպ.), թարգմանվել է լատ. (1810), գերմ. (1834), ռուս. (1865):

«**Դրուատ պատմագրաբար**» երկը. 1788–ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Տպակից է ***Ներսես Շնորհալու*** «Ընդհանրական» երկին: Ա գրքի տիտղթ–ին՝ «Գիրք որ կոչի Ընդհանրական...», Բ գրքի տիտղթ–ին՝ «Դրուատ պատմագրաբար...» (352 էջ, 4º, 16 x 10,3 սմ):

Հրատարակվել են նաև Ն. Լ–ու «Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից» (1825, ԿՊ, Աբրահամ Թերզյանի տպ.), «Խորհրդածութիւն սրբազան Պատարագի» (1842, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Տեսություն առակաց Սողոմոնի» (գերմ., 1921, 1926), «Մեկնութիւն իմաստութեանն Սողոմոնի» (2004, Ե., համեմատ. բնագրի կազմ. և թարգմ.՝ Գ. Մնացականյանի, վերահրտ.՝ 2009, Ե.), «Մեկնութիւն հավատքի եւ Հայր մերի» (2007, Էջմիածին) երկերը ևն: Ն. Լ–ու գործերը տպագրվել են նաև 1865–ին՝ «Ընտիր մատենագիրք» մատենաշարով (Վնտ., Սբ. Ղազարի տպ.):



«Գիրք սիրոյ եւ խաղաղութեան» (1749–1750, Կ. Պոլիս) երկի փիփղոսաթերթը



«Դրուատ պատմագրաբար» (1788, ՍՊԲ, Գրիգոր Խալդարյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը (վերևում) և պատկերազարդ (6–րդ) էջ (ներքևում)




Գրկ. **Գրիգոր Սկեւռացի**, *Ներբողեան ասացեալ ի վարս մեծի քահանայապետի ի Ս. Ներսէսի Լամբրոնացւոյ, «Մոփերք հայկականք», հ. 15, Վնտ., 1854:* **Ակինեան Ն.**, *Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի, Վնտ., 1956:* **Հակոբյան Գ.**, *Ներսես Լամբրոնացի: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1971:* **Սաաստէթեան Ս.**, *Ներսէս Լամբրոնացի. աշխատասիրութիւն պատմական, մատենագրական եւ վարդապետական, Անթիլիաս, 1981:* **Անանեան Գ.**, *Ներսէս Լամբրոնացին՝ հրապարակախոս, Անթիլիաս, 1995:*



Ներսես Մոկացու «Բանաստեղծություններ» (1985, Ե., «Սովետական գրող») գրքի կրկնաշապիկը



Ներսես Շնորհալի



«Հաւատով խոստովանիմ» (1810, Վնտ.) աղոթագրքի 8-րդ էջի պատկերը (վերևում) և 9-րդ էջը (ներքևում)

ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ, **Վանեցի, Բեղլու** [մոտ 1575, գ. Հասկնջավ (Վանի նահանգի Մոկսի գավառ)–1625, Վանա լճի Լիմ կղզի], բանաստեղծ, կրթ–լուսավոր. գործիչ, փիլիսոփա: Աշակերտել է հորեղբորը՝ Հայրապետ վարդապետին, այնուհետև՝ Բարսեղ Աղբակեցուն: Ն. Մ–ու գործունեությունը կապված է Բաղեշի Ամրդոլու վանքի Հարանց անապատի և Լիմ անապատի ու իր հիմնադրած դպրոցի (1622) հետ. «Օրհնեալ Տէր Յիսուս փրկիչ» տողով սկսվող ներբողը նվիրված է Հարանց անապատի հիմնադրմանը: «Ի հոլովել ժամանակին» տողով սկսվող ողբում նկարագրել է Երուսաղեմի գրավումը 1187–ին:

Ն. Մ–ու փիլ. հայացքները դրսևորվել են «Վիճաբանութիւն երկնի եւ երկրի» այլաբան. բանաստեղծության մեջ:

Լույս է տեսել Ն. Մ–ու «Բանաստեղծություններ» (աշխատասիր.՝ Ա. Դոլուխանյանի, 1975, 1985) ժող–ը:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Բաղէշի դպրոցը, Վնն., 1952:* **Մնացականյան Ա.**, *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956:* **Խաչատրյան Պ.**, *Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ–ԺԷ դդ.), Ե., 1969:* **Դոլուխանյան Ա.**, *Ներսես Մոկացի: Կյանքը, գործունեությունը, Էջմիածին, 2009:*

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, **Ներսես Դ Կլայեցի, Սուրբ Ներսես Շնորհալի, Երգեցող** [մոտ 1100, Ծովք բերդ (Ծոփքի նահանգի Անձիտ գավառ)–13.8.1173, Հռոմկլա], Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1166–ից, բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ–երգահան, քաղ. գործիչ: Հաջորդել է ավագ եղբորը՝ *Գրիգոր Գ Պահլավունուն*: Կրթություն ստացել է Քեսուն մերձակա Կարմիր վանքի դպրոցում: 1116–ից ապրել և ստեղծագործել է Կոմմագենեի Տլուք գավառի Ծովք դղյակում, 1150–ից՝ Հռոմկլայում:

Ն. Շ. թողել է գրական հարուստ ժառանգություն, որը մեզ է հասել գրեթե անկորուստ: Արձակից հայտնի է նրա «**Թուղթ ընդհանրական**» (1116) բարոյախրատ. ուղերձը՝ ուղղված հայ ժողովրդի տարբեր խավերին:

Առաջին անգամ տպագրվել է 1788–ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Տպակից է Ներսես *Լամբրոնացու* «Դրուատ պատմագրաբար» երկին: Ա տիտղթ–ին՝ «Գիրք որ կոչի Ընդհանրական...» (352 էջ, 4º, 16 x 10,3 սմ):

Տպագրվել է նաև 1825–ին (ԿՊ, Աբրահամ Թերզյանի տպ.), 1830–ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1865–ին (Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1973–ին (արևմտահայ. փոխադր.՝ Շնորհք արք. Գալուստյանի), 1977–ին (Անթիլիաս), Երևանում՝ 1991, 1995–ին (աշխարհաբար) և 2009–ին (ներառում է նաև Ն. Շ–ու «Հոգևոր երգերը», «Հանելուկները», «Եղեսիայի ողբը», «Հիսուս Որդին»), թարգմանվել է ռուս. (1995):

Բազմաբովանդակ ու հարուստ է Ն. Շ–ու չափածոն: Բարձր արվ–ով են ստեղծված «Նորահրաշ պսակաւոր», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Զարթիր, փառք իմ» երգերն ու արևագալի շարականները: Ն. Շ–ուց պահպանվել են մանկավարժ–ուսուցող. բանաստեղծություններ, ուղերձներ, խրատ. ոտանավորներ ու պոեմներ («Առ եղբօրորդին իւր Ապիրատն», «Յաղագս երկնի ու զարդուց նորա»): Ն. Շ–ու հետ է կապվում հանելուկի՝ իբրև գրական առանձին ժանրի ստեղծումը: Նրանից մեզ են հասել ավելի քան 300 չափածո հանելուկներ: Ն. Շ–ու ստեղծագործության մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայ վիպերգության և վիպաքնար. պոեմների նախօրինակներ համարվող «Վիպասանութիւն...» (1121) և «Բան հաւատոյ» (1151) քերթվածքները, «Ողբ Եդեսիոյ» (1145) և «Յիսուս Որդի» (1152) պոեմները, «Հաւատով խոստովանիմ» (1151) աղոթքը:

Ն. Շ–ու ստեղծագործությունները (200–ից ավելի շարականներ, Պատարագի ու ժամագրքի երգեր) արտացոլում են հայոց հոգևոր երգարվ–ի (մասնավորապես՝ երգեցողության), ուշ միջնադարյան պատկերը, միաժամանակ բացահայտում այդ արվ–ի հին ու հնագույն բազմաթիվ շերտեր:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև Ն. Շ–ու՝

«**Հաւատով խոստովանիմ**» աղոթքը. առաջին անգամ 1616–ին Լվովում՝ Հովհաննես Քարմատանենցի տպարանում: Տպակից է Սաղմոսարանի:

1690–ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում:

1780–ին Լոնդոնում՝ Ջոն Ռիվինգտոնի տպարանում, հրատարակիչ՝ Գրիգոր Խալդարյան: Բաղկացած է 2 մասից. 1–ինում հայ. և լատ. «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց»–ն է, 2–րդում՝ «Հաւատով խոստովանիմ»–ը՝ հայ., լատ., գալլ. և անգլ. (76 էջ, 2º, 13 x 9,7 սմ): Աղոթքը քառալեզու հրատարակվել է նաև առանձին, որտեղ չկան տպագր. տվյալներ, փոխված է նաև էջերի համարակալումը (1–28):

1786–ին Ս. Պետերբուրգում՝ Գ. Խալդարյանի տպարանում՝ հայ. և ռուս.: Տիտղթ–ին՝ «Աղօթք տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի...» (29 էջ, 4º, 11 x 5,5 սմ):

1801–ից հետո «Հավատով խոստովանիմ»–ը բազմիցս տպագրվել է Բեյրութում, Անթիլիասում, Երևանում, Էջմիածնում և այլուր: 2012–ին Երևանում լույս է ընծայվել «Հավատով խոստովանիմ»–ը՝ թարգմանված 36 լեզվով:

«**Յիսուս Որդի**» պոեմը. առաջին անգամ 1643–ին Վենետիկում՝ Սալիգաթաուի տպարանում, տպագրիչ՝ Հովհաննես Անկյուրացի: Ներառում է նաև Ն. Շ–ու «Վիպասանութիւն...» քերթվածքը (վերջին գլուխն է): Տիտղթ–ին՝ «Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի. Նուէր մաղթանաց. ներչափական տաղիւ. Ողբումն հեծութեան. ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ» (527 էջ, 8º, 11,6 x 6,8 սմ): Տպագրվել է Հովհաննես Անկյուրացու պատրաստած տառերով: Հրատարակչի անունը, հրատ–յան վայրը, թվականը և այլ տվյալներ տիտղթ–ին նշված չեն, դրանք վերցված են ընթերցողին ուղղված ծանուցումից:

1660–ին Վենետիկում՝ Ջուան–Բատիստա Բովիսի տպարանում (526 էջ, 8º, 11,6 x 6,8 սմ):

1660–61–ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչներ՝ Մատթեոս Ծարեցի և Ավետիս Ղլիճենց: Տիտղթ–ին՝ «Յիսուս Որդի անուն տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ...» (614 էջ, համարակալումն սկսվում է 145–րդ էջից, 8º, 11 x 6,9 սմ):

1686–ին Վենետիկում՝ Նահապետ Գուլնազարի և Զիակոմո Մորետտիի տպարանում (416 էջ, 8º, 12 x 7 սմ):

1702–ին՝ առանց տպագրության վայրի ու տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Յիսուս Որդի անուն Տեառն Ներսէսի Հայոց...» (342 էջ, 8º, 12,4 x 7,4 սմ): Ըստ Ա. Ղազիկյանի և Գ. Զարբհանալյանի՝ այս գիրքը ենթադրաբար տպագրվել է Մարսելում, իսկ ըստ Թեոդիկի՝ Մարսելում:

1724–25–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ բան մխիթարութեան...» (404 էջ, 8º, 11,8 x 7,4 սմ):

1746–47–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Յիսուս Որդի գիրք որ կոչի Յիսուս Որդի...» (432 էջ, 8º, 13 x 7,8 սմ):

1746–ին Կ. Պոլսում՝ Ճնչին Հովհաննեսի տպարանում: Տպակից է Գրիգոր Մագիստրոսի «Տաղասացութիւն» երկին: Ա. գրքի տիտղթ–ին՝ «Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ բան մխիթարութեան, տանս...», Բ գրքի տիտղթ–ին՝ «Տաղասացութիւն Գրիգորի Մագիստրոսի...» (484 էջ, 8º, 12,5 x 7,8 սմ):

1785–ին Ս. Պետերբուրգում՝ Գ. Խալդարյանի տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Յիսուս Որդի տուօղ շնորհաց....», Բ–ին՝ «Գիրք որ կոչի Յիսուս Որդի...» (438 էջ, 6º, 12,6 x 7,3 սմ):

1792–ին Սադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Յիսուս Որդի տուօղ շնորհաց....», Բ–ին՝ «Գիրք որ կոչի Յիսուս Որդի...» (444 էջ, 8º, 12,5 x 7,6 սմ):

Լույս է տեսել նաև 1824–ին (ԿՊ, Աբրահամ Թերզյանի տպ.), 1991–ին՝ Երևանում (աշխարհաբարի փոխադր.՝ Վ. Ղազարյանի), թարգմանվել է անգլ. (1943), ֆրանս. (1973):

«**Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդւոյ գրոցն**» երկը. 1677–ին Կ. Պոլսում՝ Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի տպարանում (96 էջ, 8º):


«**Հանելուկ**». 1724–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Գրքուկս այս՝ որ ասի Հանելուկ...» (128 էջ, 8º):

«**Ներբող սրբոց հրեշտակապետաց**» Գաբրիել ու Միքայել հրեշտակապետներին և երկնային բոլոր զորություններին հղված ներբողը. 1780–ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում (79 էջ, 8º, 10,9 x 7,4 սմ):


Տպագրվել է նաև 1808–ին (ԿՊ, Արապյան տպ.):

Հրատարակվել են նաև Ն. Շ–ու «Ողբ Եդեսիոյ» պոեմը (1810, Մադրաս, Սարգիս Ծատուր Աղավալյանի տպ., 1827, 1828, Փ., Դոնդե Դյուպրեի

Ներսես Շնորհալի



«Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդւոյ գրոցն» (1677, Կ. Պոլիս, Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Ներբող սրբոց հրեշտակապետաց» (1780, Կ. Պոլիս, Պողոս Հովհաննիսյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Երգեր» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը



Ներսես Շնորհալու
«Թուղթ ընդհանրական»-ի (1995, Ե., «Գիտություն») կազմը



Աշոտ Ներսիսյանի
«Մովսէս Տէր Գալուստեան» (2011, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը



Մկրտիչ Ներսիսյան

տպ., 1829, Թ., Ներսիսյան դպրոցի տպ., 1832, Կալկաթա, Մարդասիր. ճեմ. տպ., 1973, Ե.), «Բանք չափաւ» (1830, Վնտ., Սբ Ղազարի տպ., 2011, Էջմիածին), «Նամականի» (1838, Վնտ., Սբ Ղազարի տպ., աշխարհաբար՝ 2009, Էջմիածին), «Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ պատմութիւն վարուց» (1854, Վնտ., Սբ Ղազարի տպ., «Սոփերք հայկականք» մատենաշար), «Յաղագս երկնի եւ զարդուց նորա...» (1968), «Վիպասանութիւն» (1981, Ե.), «Երգեր» (1982, Ե.), «Տաղեր և գանձեր» (1987, Ե.), «Արեւագալ» (1991, Էջմիածին-Վնտ.), «Տաղեր և շարականներ» (2003, Ե.), «Առաւօտ լուսոյ: Աշխարհի ամենայն (Շարականներ)» (2007, Ե.), «Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանի» (աշխարհաբարի փոխադր.՝ Ս. Ստամբոլցյանի, 2008, Էջմիածին), «Ժամերգեր» (գրաբար և աշխարհաբար, աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, 2012, Ե.) և այլ գրքեր:

Մայր աթոռ Սբ Էջմիածինը 1978-ին սահմանել է «Սբ Ներսես Շնորհալի» շքանշան:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873:* **Հակոբյան Գ.**, *Ներսես Շնորհալի, Ե., 1964:* **Թահմիզյան Ն.**, *Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Ե., 1973: Ներսես Շնորհալի (հոդվածների ժող.), Ե., 1977:* **Գևորգյան Գ.**, *Հայերեն Աստվածաշնչի պատկերային համակարգը և Ներսես Շնորհալին, Ե., 2006:* **Ոսկանյան Հ.**, *Ներսես Շնորհալու պոեմները, Ե., 2006:*

ՆԵՐՍԵՍ ՊԱԼԻՒԱՆԵՆՑ, Պալիենց, Պալենց, Պալոն, Պաղոն (XIII դ-ի վերջ, Սիս–1363, հավանաբար՝ Մանազկերտ), մատենագիր: 1330-ական թթ-ին եղել է Ուրմիայի եպիսկոպոս: Հարելով հայ միաբարներին (ունիթոր)՝ հրաժարվել է Հայ առաքել. եկեղեցու եպիսկոպոս. կոչումից: 1336-ին մեկնել է Կիլիկիա և քարոզել կաթոլիկություն: 1338-ին Հռոմի Բենեդիկտոս XII պապը նրան կարգել է Մանազկերտի արքեպիսկոպոս: 1341-ին Ավինյոնում Ն. Պ. պապին է ներկայացրել Հայ առաքել. եկեղեցու «մոլորությունների» վերաբերյալ 117 «մեղադրանք»:

1348–51-ին թարգմանել է Մարտինոս Լեհացու (Օպավիացի, XIII դ.) «Ժամանակագրութիւնը», որի որոշ հատվածների հավելել է հայոց պատմությանն առնչվող ժամանակագր. տեղեկություններ: Լատ. է թարգմանել «Մաշտոց» ծիսարանը՝ ավելացնելով պատմ. հիշատակագրություններ: Թարգմանությունների բնագրերը պահվում են Երևանի և Վենետիկի Մխիթարյան մատենադարաններում:

Երկ. Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ. (կազմ.՝ Վ. Հակոբյան), հ. 2, Ե., 1956:
Գրկ. **Չամչեան Մ.**, *Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786:* **Ալիշան Ղ.**, *Հայապատում, Վնտ., 1901:* **Օրմանեան Մ.**, *Ազգապատում, հ. 2, Էջմիածին, 2001:*

ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ Արտաշեսի [ծ. 15.8.1962, գ. Կաթնաղբյուր (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (2008), պրոֆ. (2011): Ավարտել է ԵՊՀ (1985): 1990-ից դասավանդում է ԵՊՀ-ում, 2002-ից՝ նաև Երևանի Հյուսիսային համալսարանում: 2011-ից՝ *«Ակունք»* գիտ. հանդեսի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ն-ի «Գևորգ Չավուշի սպանության առեղծվածը» (1992), «Ազգային ազատագրական պայքարը Տարոնում. 1894–1908 թթ.» (1999), «Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ)» (2003), «Ջորավար Սեպուհ» (2005), «Ռուբէն» (2007), «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, 1898–1908 թուականներ» (2008), «Կարո Սասունի» (2009), «Մովսէս Տէր Գալուստեան» (2011), «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, 1908–1918 թուականներ» (2013) և այլ աշխատություններ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Գրիգոր Միրզայի (1887, ք. Շուշի–1937, անհատի պաշտամունքի զոհ), խմբագիր, բանաստեղծ, հրապարակախոս: 1929-ին եղել է «Կայծ» (Ստեփանակերտ) գրական, գեղ., քննադատ., գյուղատնտ. ամսագրի խմբագիրը: Ռուս-ից թարգմանել է Է. Պոտիեի «Ինտերնացիոնալ» բանաստեղծությունը: 1926-ից հանդես է եկել նաև Շերբինին կեղծանվամբ:

ՆԵՐՍԻՍՅԱՆ Մկրտիչ Գեղամի [25.11.1910, գ. Փարպի (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–28.1.1999, Երևան], պատմաբան, խմբագիր: ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1950): Գիտ. վաստ. գործիչ (1961): Ավարտել է ԵՊՀ (1931): 1944–46-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի փոխտնօրեն, 1950–62-ին՝ ԳԱ փոխնախագահ, 1962–66-ին՝ հաս. գիտ-ների բաժանմունքի ակադ. քարտուղար, 1966–77-ին՝ ԵՊՀ ռեկտոր: Ն-ի նախաձեռնությամբ 1958-ին հիմնադրվել է ՀԽՍՀ ԳԱ հայագիտ.

«Պատմա-բանասիրական հանդեսը», որի ցկյանս խմբագիրն էր: Մասնակցել է ՀԿ(բ)Կ ԿԿ-ին կից պատմության ինստ-ի նյութերի և փաստաթղթերի ժող-ների կազմման աշխատանքներին:

Լույս են տեսել Ն-ի «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» (1940), «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.» (1955), «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» (ռուս., գիրք 1, 2, 1956,1961), «Դեկաբրիստները Հայաստանում» (1958), «1812 թ. հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները» (ռուս., 1965), «Ա. Վ. Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770–1780-ական թվականներին» (ռուս., 1981), «Հայ ժողովրդի նոր պատմության էջերից» (1982), «Պատմության կեղծարարները» (1998), «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1890 թթ.» (2002), «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր» (2005) աշխատությունները: Ն. հայ պատմագրության մեջ տևական ընդմիջումից հետո առաջինն է վերսկսել հայ ազգ-ազատագր. պայքարի պատմության հետազոտումը: Ռ. Սահակյանի հետ կազմել և խմբագրել է «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժող-ը (առաջաբ.՝ Ն-ի, ռուս.՝ 1966, հայ.՝ 1991), հրատարակել «Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանությունը: Մատենագիտություն» (1995) գիրքը:

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի, ժողովուրդների բարեկամության շքանշաններ:

Գրկ. Մկրտիչ Դեղամի Ներսիայան: Կենսամատենագիտություն, Ե., 1983: Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիայան: Տպագիր աշխատությունների մատենագիտություն (կազմ.՝ Ն. Դերոյան), Ե., 2004:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՊԱՐԱՆ, հիմնադրել է Վիրահայոց թեմի առաջնորդ արք. (1843-ից՝ կաթողիկոս) Ներսես Աշտարակեցին 1823-ին Թիֆլիսում: 1824–30-ին տպարանի աշխատանքները ղեկավարել է դպրոցի տեսուչ Հարություն ***Ալամդարյանը***:


Ն. դ. տ-ում տպագրվել է ավելի քան 40 անուն գիրք (միայն 1825–28-ին՝ 30 անուն)՝ Մկրտչյան Դավիթ Կարբեցու «Պատմութիւն եւ խրատ բժշկութեան...» (1823), Ներսես Աշտարակեցու «Համառօտութիւն անցից քրիստոսակերտ Մայր Աթոռոյ Հայոց Ս. Էջմիածնի» (1824, 1853), Եփրեմ Խուրի Ասորու «Գիրք աղօթից» (1825), Հովհաննես Սեբաստացու «Ներբողական նուագերգութիւնք» (1825), Մ. Չամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» (1826), «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» (Ա–Բ գրքեր, 1828), Գեորգ Արծրունու «Դարաստան խրատուց» (1829), Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» (1829), Հ. Կարենյանի «Ճառ վասն փրկագործ չարչարանաց...» (1841), Ավետարան (1842), Ռ. Երզնկյանի «Համառօտութիւն պատմութեան հայոց» (1843), «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց...» (1847), Գ. Երիցփոխյանի «Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» (1854), «Նոր այբբենարան կամ Սկիզբն ընթերցանութեան հայոց» (1854), «Տաղարան Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյս» (1856), Մատթեոս Կոստանդնուպոլսեցու «Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ» (1856), Խ. Աբովյանի «Վէրք Հայաստանի» (1858), Ս. Հասան-Ջալալյանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (1858), Ս. Մանդինյանի «Չորս եղանակք տարւոյ....» (1858), Ս. Նազարյանի «Պատմութիւն Պիդագօգիկայի եւ երկու հատ ճառ» (1870), Հ. Օրբելու «Նախաշաւիղ կրօնագիտութեան ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ» (1870) ևն: Տպարանը գործել է մինչև 1870-ական թթ-ի սկիզբը:

ՆԺԴԵՀ Գարեգին [Տեր-Հարությունյան Գարեգին Եղիշեի, 1.1.1886, գ. Կզնուտ (Նախիջևանի գավառ)–21.12.1955, ք. Վլադիմիր (Ռուսաստան), 1983-ին աճյունը տեղափոխվել է Հայաստան], ռազմ., քաղ. և պետ. գործիչ, հրապարակախոս: Սովորել է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբ. ֆակ-ում, ավարտել Սոֆիայի սպայական դպրոցը (1907): 1919-ի օգոստ-ից՝ Զանգեզուրում գինված ուժերի հրամանատար: 1920-ի դեկտ. 25-ին Ն. հռչակել է Լեռնահայաստանի Հանրապետությունը (Ինքնավար Սյունիք) և ընտրվել սպարապետ՝

Ներսիսյան դպրոցի տպարանի *հրատարակություններ*




«Երախայրիք Ներսիսեան դպրոցի» (գիրք 1, 1828, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը



«Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց...» (1847, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը




Գարեգին Նժդեհ



Գ. Նժդեհի *«Հատընտիր»-ի (2001, Ե., «Հայաստան») կազմը*



Նիկողայոս Ծաղկաբար. *«Ղուկաս ավետարանիչ», մանրանկար, 1684-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 6341)*



Արքմենիկ Նիկողոսյանի *«Առաքել Դավրիժեցու Պատմությունն իբրև գրական երկ» (2012, Ե., «Անտարես») գրքի կազմը*

դիկտատորի լիազորություններով: 1921-ի հուլիսին Զանգեզուրից անցել է Պարսկաստան, այնտեղից մեկնել Սոֆիա: 1932–34-ին բնակվել է ԱՄՆ-ում, ստեղծել է Ցեղակրոն շարժումը: 1937-ին Սոֆիայում Հայկ *Ասատրյանի* հետ հիմնադրել է *«Ռազմիկ»* պարբ-ը: 1937–38-ին Հ. Ասատրյանի, Ն. Աստվածատրյանի և ուր. հետ ստեղծել է Տարոնական շարժումը: Ն-ի աջակցությամբ 1938–39-ին տպագրվել է շարժման «Տարօնի արծիւ» պաշտոնաթերթը: 1942–43-ին՝ Հայ ազգ. խորհրդի «Ազատ Հայաստան» (Բեռլին) պաշտոնաթերթի փոխխմբագիր: 1944-ին ձերբակալվել է Բուլղարիայում, հանձնվել խորհրդ. իշխանություններին և դատապարտվել 25 տարվա բանտարկության:

Լույս են տեսել Ն-ի «Էջեր իմ օրագրէն» (1924, Կահիրե, «Հուսաբերի» տպ.), «Բաց նամակ հայ մտաւորականութեան» (1929, Բ., «Հրազդան» տպ.), «Ամերիկահայութիւնը: Ցեղը եւ իր տականքը» (1935, Սոֆիա, «Մասիս» տպ.), «Իմ պատասխանը» (1937, Սոֆիա, Պ. Պալըգճյանի տպ.), «Հայ ռազմիկին», «Նորահայտ նամակներ», «Ազգային պետական հավատամք» (երեքն էլ՝ 2011), «Ցիշիր պատերազմը» (2013), «Ցեղային արթնություն», «Մեր ժամանակը եւ ցեղը» (երկուսն էլ՝ 2014) աշխատությունները, «Հատընտիրը» (2001), «Երկերը» (1–2, 2002), «Գրական երկերը» (2003), «Մեծ գաղափար» (2002) նորահայտ նյութերի ժող-ը:

Ն-ի անունով Երևանում կոչվել են հրապարակ, փողոց, մետրոպոլիտենի կայարան: Տաթևի վանքի բակում 2003-ին կանգնեցվել է նրա հուշարձանը:

Գրկ. **Աւօ**, *Նժդեհ: Կեանքն ու գործունէութիւնը, Բ., 1968:* **Առաքելյան Վ.**, *Նժդեհ: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1989:* **Գևորգյան Վ.**, *Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), Ե., 1991:* **Լալայան Մ.**, *Գարեգին Նժդեհ: Կենսագրական ակնարկ, Ե., 1995:* **Ղազախեցյան Վ.**, *Նժդեհը Զանգեզուրում. 1920 թ. վերջ–1921 թ. հուլիս, Ե., 2001:* **Համբարձումյան Ռ.**, *Գարեգին Նժդեհ. կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, Ե., 2005:*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԾԱՂԿԱԲԱՐ, **Նիկողայոս Մելանավոր** (ծ. թ. անհտ–1693, թաղված է Թեոդոսիայի Սբ Սարգիս եկեղեցում), գրիչ և մանրանկարիչ: XVII դ-ի *Ղրիմի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Կաֆայում (Թեոդոսիա) աշակերտել է գրիչ և ծաղկող Զաքարիա քահանային, աշխատել է տեղի Սբ Սարգիս եկեղեցում, նաև Սուրխաթում, Բախչիսարայում: 1647–93-ին Ն. Ծ-ի ընդօրինակած հայտնի 34 ձեռագրից 30-ը Մատենադարանում են, 4-ը՝ Ս. Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվ. (Շարակնոց, 1644, ձեռ. № 1), Հարթֆորդի (ԱՄՆ) համալսարանի (Ավետարան, 1658, ձեռ. № 4), Ադրբեջանի ԳԱ (Ավետարան, 1672, ձեռ. № 8315) գրադարաններում, Փրինստոնի (ԱՄՆ) համալսարանի գրատանը (Ավետարան, 1670, ձեռ. № 5):

Ն. Ծ. բազմացրել է լավագույն վարպետների ձեռագիր օրինակներ (*«Ութ մանրանկարիչների Աւետարանը»* ընդօրինակել է 3 անգամ): Օգտվելով Կիլիկիայից, Գլաձորից, Բոլոնիայից (Իտալիա) Ղրիմ բերված XIII–XIV դդ-ի ձեռագրերից՝ Ն. Ծ. իր համար մշակել է հատուկ պատկերագր. շարք, հորինվածքներում կատարել որոշ փոփոխություններ: Հարուստ հարդարանքով աչքի են ընկնում հատկապես Աստվածաշունչներն ու Ավետարանները (1684-ի Ավետարան, Մատենադարան, ձեռ. № 6341): Ն. Ծ. եղել է նաև հմուտ կազմարար:

Գրկ. **Геворкян А.**, *Армянский миниатюрист XVII века. Никогос Цахкарар, «ЛГФ», 1970, № 3;* **Корхмазян Э.**, *Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978.*

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Արքմենիկ Հրայրի [ծ. 14.11.1979, գ. Ծովակ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (2008): Ավարտել է ԵՊՀ (2003): 2004–05-ին աշխատել է «Գրական թերթի» խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ, 2008-ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի ավագ գիտաշխատող, 2011-ից՝ *«Անտարես»* հրատ-յան գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ն-ի «Գրառումներ ընթացքից (գրաքննադատական հոդվածներ)» (2007) ժող-ը, «Առաքել Դավրիժեցու Պատմությունն իբրև գրական երկ» (2012) մենագրությունը:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Տիգրան Վոլոդյայի [ծ. 30.1.1955, գ. Սարուխան (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], խմբագիր, հրապարակախոս, արձակագիր: Վաստ. լրագրող (2010): Ավարտել է ՀՊՄԻ (1987): 1984–87-ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում: 1987–94-ին՝ «Դպրություն» (այժմ՝ ***«Կրթություն»***) թերթի գլխ. խմբագրի տեղակալ, 1994-ից աշխատում է ***«Հայաստան»*** թերթի խմբագրությունում. 1999-ից՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ն-ի «Հայրեր և որդիներ» (1996), «Կանաչ առու» (1997), «Ինձ տուր քո ցավը» (1998), «Նորագավիթ» (1999), «Քեզ հետ և առանց քեզ» (2000), «Ճակատագրի ճամփաներով» (2006), «Պատմություն հին ու նոր օրե-րի» (2006), «Մեր կյանքի ժամանակը» (2007), «Յոթ զրույց ամենակարևորի մասին» (2010), ««Հայաստանը» Հայաստանի տարեգիր» (2010), «Մարիամ իշխանուհի» (2012) էսսեների, պատմվածքների, ակնարկների ժող-ները:

ՀԺՄ (1985), ՀԳՄ Ս. Սիմոնյանի անվ. (1998) մրց-ներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2004):

ՆԻԿՈՄԵԴԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Նիկոմեդիա-յի (այժմ՝ Իզմիթ՝ Թուրքիայում) գավառում հայկ. տպարաններ գործել են Նիկոմեդիա, Պարտիզակ, Ադաբազար քաղաքներում և Արմաշ գյուղի Չարխափան Սբ Աստվածածին վանքում:

Նիկոմեդիա քաղաքում առաջին տպարանը հիմնադրվել է 1850-ին, որտեղ մինչև 1853-ը տպագրվել է ***«Հայրենասէր»*** երկշաբաթաթերթը: 1912–15-ին գործել է Օննիկ Ազարյանի տպարանը. տպագրել է միայն պարբ-ներ: Նիկոմեդիայում լույս են տեսել նաև «Աղանի» (1909), «Խթան» (1909) խմորատիպ թերթերը, «Բիւթանիա» (1910–11) շաբաթաթերթը:

Արմաշի Չարխափան Սբ Աստվածածին վանքի տպարանը գործել է 1863-ից. առաջին հրատ-ը «Գիրք Սաղմոսաց Դաւթի» ժող-ն է: Տպագրել է հիմնականում թարգման. գրակ., մասնավորապես Կ. Գանթուի «Դաս-տիարակութիւն բարոյական» (1864) և «Առաքինի, գիտուն եւ արուես-տագէտ պատանի» (1869), Վ. Կեթեի «Վերձուածող պապութիւն կամ Հռովմ ի յարաբերութեան ընդ յարեւելեան եկեղեցիս» (1873) ևն, Խորեն ***Աշըգյանի*** երկերը, Մ. Էմինի «Հնախօսութիւնք ի վերայ հայկական հե-թանոսութեանց» (1875), Ն. Վարժապետյանի «Ուսումն համաբարբառ Աւետարանի...» (1875), Ֆ. Բարունակ Պեյի «Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան» (1876) և այլ գրքեր (շուրջ 20 անուն), նաև ***«Յոյս»*** (1864–78) ամսագիրը, «Մասիս» (1896) կրոն. շաբաթաթերթը:


Պարտիզակում գործել են «Գրասեր» և «Ճարյան» տպարան-ները, որտեղ տպագրվել են հիմնականում պարբ-ներ՝ «Թօհաֆի» («Զվարճալի», 1867) հայատառ թուրք. երգիծ. շաբաթաթերթը, «Կշիռ» (1908), «Գիշեր» (1908–10) խմորատիպ թերթերը, ***«Պարտիզակ»*** (1909–14) կիսամյա հանդեսը, «Փարոս» (1910–12) ազգ., գրական, «Հանդէս գրական» (1910–14) ամսաթերթերը ևն:

Ադաբազարում գործել են Հարություն Աթանասյանի «Ատրու-շան» (1911-ից) և Ս. Ալթունյանի (1914-ից, որևէ գիրք հայտնի չէ) տպարանները: Առաջինում տպագրվել են Հ. Ազարյանի «Ամէնուն բարեկամը» (1911), Կ. Հովհաննիսյանի «Հայկական պարերգներ» (1912), Մ. Հովսեփյանի «Համազգային տօնը եւ պարտիզակցին» ու «Վերածնունդ» (երկուսն էլ՝ 1913), Ս. Փափազյանի «Աշնան ցօղեր» (1914), Գ. Մխճյանի «Հայ ժողովուրդին նոր երգարանը» (1914) և այլ գրքեր: Ադաբազարում լույս են տեսել նաև ՀՅԴ-ի ազգ., քաղ. «Պայ-քար» (1909), ազգ., գրական, քաղ. «Բիւթանիա» (1910–12) թերթերը, «Երկիր» (1910) հաս-քաղ. շաբաթաթերթը ևն:

Միհրան Մինասյան

«ՆԻՍԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ», ազգ., հաս., մշակութ. հան-դես: Նիսի հայ տիկնանց միության հրատ.: Լույս է տեսել 2001–12-ին Նիսում (Ֆրանսիա): Խմբագիր՝ Շաքե Հակոբյան-Գլաուսեն: Լուսաբանել է միության գործունեությունը, Նիսի հայկ. մեկօրյա վարժարանի առօր-յան, տպագրել է լուրեր ՀՀ-ից, ԼՂՀ-ից, սփյուռքահայ համայնքներից:

Նիկոմեդիայի հայկա-կան տպագրություն



«Ճանապարհոր-դութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան» (Ֆ. Բարունակ Պեյ, 1876, Արմաշ) գրքի փիփղոսաթերթը




«Բիւթանիա» (Ադա-բազար, № 4, 1911) շա-բաթաթերթը



«Նիսի հայ տիկնանց միութիւն», *2001–12, Նիս (2012)*



«Նոթրը վուա»,
1951–98, Փարիզ
(№ 226, 1983)



«Նոյև կովչեգ»,
1997-ից, Քիշնև,
Մոսկվա



«Նովոյե վրեմյա»,
1992-ից, Երևան

«ՆՈԹՐԸ ՎՈՒԱ» (“Notre Voix”– «Մեր ձայնը»), ազգ., մշակութ. կիսամսյա հանդես: Ֆրանսիայի հայ երիտասարդաց միության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1951–98-ին Փարիզում՝ ֆրանս.: Խմբագիրներ՝ Գ. Հեքիմյան, Հ. Համբարյան, Ռուբեն ***Մելիք:*** Լուսաբանել է միության գործունեությունը, Ֆրանսիայի և Սփյուռքի այլ համայնքների (մասնավորապես՝ երիտասարդ. կազմակերպությունների) առօրյան, անդրադարձել է Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Տպագրել է «Վահագն» (հայ.) ամսական պատկերազարդ հավելվածը:

«ՆՈՅԵԱՆ ԱՂԱՒՆԻ», քաղ., ազգ., բանասիր., առևտր. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1852–53-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Գրիգորիս Մարկոսյան, Սահակ Ապրոյանց, Նիկողայոս ***Զորայան:*** Ունեցել է պահպանող., լուսավոր. չափավոր ուղղվածություն: Տպագրել է գրախոսականներ և գրական-մշակութ. կյանքին վերաբերող նյութեր, հոդվածներ՝ լուսավորության դերի, դպրոց. գործի բարելավման մասին, նպաստել է աշխարհաբարի տարածմանը:

«ՆՈՅԵՄԲԵՐ», գրական, հաս-քաղ. ամսագիր: ՀԳՄ հրատ.: Լույս է տեսել 1932-ին Երևանում: Խմբագիր՝ Եղիա ***Չուբար,*** խմբագր. խորհուրդ՝ Վահրամ Ալազան, Ակսել Բակունց, Շիրվանզադե, Եղիշե Չարենց, Խորեն Սարգսյան, Արտաշես Ոսկերչյան: Խորհրդ. գրողների կարևորագույն խնդիրը համարել է սոցիալիզմի կառուցման հերոսականությունը բարձրարժեք գործերով ներկայացնելը: Տպագրվել են Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Մ. Արազու, Գ. Սարյանի, Վ. Նորենցի և ուր. ստեղծագործություններից, գրակ-յան ու արվ-ի վերաբերյալ կուս-յան ու կառավարության որոշումները, տես., գրական-քննադատ. հոդվածներ ևն:

«ՆՈՅԵՎ ԿՈՎՉԵԳ» («Ноев ковчег»–«Նոյյան տապան»), ազգ., հաս-քաղ., մշակութ. երկշաբաթաթերթ: Լույս է տեսնում 1997-ից. սկզբում՝ Քիշնևում, 2000-ից՝ Մոսկվայում՝ ռուս.: Հիմնադիր-խմբագիր՝ Գրիգոր ***Մնիսոնյան:*** Լուսաբանում է ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձությունները, քաղ., տնտ., մշակութ., սոցիալ. և մարզ. նորությունները: Տպագրում է նյութեր ռուսահայության կյանքից, տեղեկություններ ՌՀՄ-ի գործունեության մասին, ինչպես նաև հաս-քաղ., վերլուծ. հոդվածներ: Առանձին խորագրով ու մեկնաբանություններով ներկայացնում է Վրաստանի և Ադրբեջանի ներքաղ. կյանքը:

Լույս է տեսնում 100 հզ. տպաքանակով (եվրոպահայ մամուլի ամենամեծ տպաքանակ ունեցող պարբ-ն է), տարածվում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում, ԱՊՀ-ում և արտերկրի հայաշատ վայրերում:

«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ», լրատվավերլուծ. կենտրոն, լրատվ., հրատարակչ., գովազդային գործակալություն: Ստեղծվել է Երևանում 1991-ին: Տնօրեն՝ Տիգրան Հարությունյան:

Օրական թողարկում է մինչև 90 լուր՝ հայ., ռուս., անգլ.: Գործակալության բաժանորդներն են ՀՀ առաջատար թերթերը, ռադիո- և հեռուստատեսային ու ՀՀ-ում գործող արտասահմ. ընկերություններ, դիվանագիտ. ներկայացուցչություններ:

«Ն. տ.» լրատվություն է փոխանակում այլ երկրների գործակալությունների հետ: Լրատվ. և հրատարակչ. էջեր ունի համացանցում:

Հրատարակչ. գործակալությունը լույս է ընծայում (իր տպարանում) «The Noyan Tapan Highlights» («Նոյյան տապան. կարևոր լուրեր») անգլ. շաբաթաթերթը, ինչպես նաև տարբեր ժանրերի գրակ.:

«ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ» («Новое время»–«Նոր ժամանակ»), հաս-քաղ. երկօրյա թերթ: Լույս է տեսնում 1992-ից Երևանում՝ ռուս.: ՀՀ-ում առաջին անկախ պարբ-ներից է: Հիմնադիր-խմբագիր և տնօրեն՝ Ռուբեն ***Սաթյան:*** Անդրադառնում է ՀՀ-ի հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. հիմնախնդիրներին, մարզ. կյանքին, ԼՂՀ-ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին:

Համագործակցում է ՀՀ և միջազգ. մի շարք լրատվ. գործակալությունների հետ: Ունի «Էլիտար թերթ» (ռուս.), «Կինը և քաղաքականությունը» (հայ., ռուս.) ամենամսյա հավելվածները:


ՆՈՏԱՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, մելոտիպիա (< հուն. melo – մեղեդի և tipia – տպագրություն), նոտային (երաժշտական) տեքստերի պոլիգրաֆ. բազմացումը: Սկզբնավորվել է գրատպության գյուտից անմիջապես հետո՝ XV դ–ի կեսերին: Նոտաներով առաջին տպագիր գրքերը եկեղեց. ծիսամատյաններ էին՝ ծիս. կրկներգերի նոտաներով, որոնց հնագծերը տպագրվել, իսկ նշանները ձեռքով ավելացվել են: Առաջին ձուլածո նոտային նշաններով տպագրությունն իրականացրել է իտալացի Օտտավիանո Պետրուչին (1480):

Մետաղի վրա փորագրության տեխնիկայի զարգացմամբ զգալիորեն հեշտացել է նոտաների նշանների պատրաստումն ու բարդ նոտային տեքստերի տպագրությունը: Իսկ XVIII դ–ի վերջին վիմագրության հայտնագործմամբ Ն–յան փորագիր տպաձևերը փոխարինվել են վիմագր. քարի կամ հարթ մետաղ. մակերեսին բնագրի փոխանցման և տպածոյի պատրաստման տեխնիկայով:

XX դ–ի սկզբին Ն–յան տպաձևը պատրաստվել է լուսամեխ. եղանակով: Ներկայում բնագիրը պատրաստում են համակարգչային հատուկ ծրագրերով ու նոտային գրանշաններով և տպագրում:


Հայ իրականության մեջ եկեղեցում ընթերցման տպագիր տեքստերում նախ ավելացրել են առոգանության նշաններ (ձայնը բարձրացնել–իջեցնելու համար), ապա՝ նաև բուն նոտաներ (խազեր՝ շարականներ և այլ հոգևոր երգեր երգելու համար):

Հին հայ. ձայնանիշներով առաջին Շարակնոցը տպագրել է Ոսկան Երևանցին 1663–ին Ամստերդամում, ապա՝ Թովմաս Վանանդեցին՝ 1698–ին, 1699–ին՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին Կ. Պոլսում՝ «Ձայնքաղ Շարական», որը մինչև 1743–ը մի քանի անգամ վերահրատարակվել է: Ներկայում Ն–յան բնագրերի պատրաստումը կատարում է հիմնականում *«Կոմիտաս»* հրատարակչությունը:




Նոտրգիր՝ *Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի (1699, Ամստերդամ, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի) փիփղոսա-թերթին*

ՆՈՏՐԳԻՐ, հայկ. գրատեսակ: Արագագիր գրիչների, նոտարների գիրը: Հանդիպում է XIII դ–ից: Ն. *բոլորգրի* և *շղագրի* որոշ տարրերի համադրման արդյունք է. բոլորգրի ուղղագիծ երկար և կարճ տարրերի լայն գծերը փոխարինվել են բարակով, ինչպես շղագիրը, և, հակառակը, ի տարբերություն նրանց հորիզոն. նուրբերի՝ ունի լայն կամ հաստ գիծ: Գրվում է ուղղագիծ և թեք գրությամբ: Առաջին Ն. տպատառերը պատրաստել է տվել *Ոսկան Երևանցին* և օգտագործել Աստվածաշնչի (1666–68) տպագրության մեջ՝ վերնագրերի համար: Լայնորեն տարածվել է XVI–XVIII դդ–ում: Օգտագործվել է նաև Մխիթարյան միաբանության (Վենետիկ, Վիեննա) և Երուսաղեմի հայկ. տպարաններում: Ներկայում առավել հաճախ գործածվում է նկարչ. ձևավորումներում, գիտ. գրակ–յան մեջ՝ ընդգծումների և այլ նպատակներով:



Նոտրգրի *ձեռագիր (վերևում) և տպագիր (ներքևում) նմուշներ*

«ՆՈՐ ԱՋԴԱՐԱՐ», գրական–հրապարակախոս. եռամսյա պարբերաթերթ: Լույս է տեսել 1950–80–ին Կալկաթայում: Խմբագիր՝ Զերեդիա Հանանյան: Նպաստել է հնդկահայ համայնքի ազգապահպանությանը, Հայաստան–Սփյուռք կապերի ամրապնդմանը, սեր արթնացրել հայրենիքի, մայրենի լեզվի ու մշակույթի նկատմամբ: Մեծ տեղ է հատկացրել պարսկահայ և հնդկահայ գաղութների պատմությանը:



«ՆՈՐ ԱԼԻՔ», հաս–քաղ. օրաթերթ: Լույս է տեսել 1924–28–ին Սալոնիկում: Խմբագիրներ՝ Հ. Տեր–Նիկողոսյան, Գառնիկ Նավասարդյան: Հիմնադրել են ՀՅԴ–ի «Ալիք» օրաթերթից (1923–27, Սալոնիկ) հեռացած և ռամկավարությանը հարած գործիչները: Քննադատել է դաշնակցության գործելակերպը, անդրադարձել ՀՕԿ–ի և այլ հաս. կազմակերպությունների գործունեությանը: Տպագրել է նյութեր հայ



«Նոր ակոս», *1924–25, Երևան*



«Նոր ակունք», *2001-ից, Երևան, Բորժոմ (Վրաստան)*



«Նոր Այնթապ», *1960-ից, Բեյրութ (№ 1, 1983)*

մշակույթի, գրակ-յան ու պատմության վերաբերյալ, աջակցել ներգաղթին: Ներկայացրել է միջազգ. քաղ. կացությունը, հրապարակել նմուշներ հայ և համաշխ. գեղ. գրակ-ից և երգիծ. պատմություններ:

«ՆՈՐ ԱԿՈՍ», գրական-գեղ., հաս. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1924–25-ին Երևանում: Խմբագիր՝ Եղիա ***Չուբար:*** Լուսաբանել է հանրապետության տնտ., գիտ. և մշակութ. ձեռքբերումները, ինչպես նաև հայ աշխատավորի առօրյան խորհրդ. իշխանության առաջին տարիներին: Հրատարակել է Ե. Չարենցի, Ն. Զարյանի, Ս. Զորյանի և ուր. գործերից, պրոլետ. գրակ-յան հարցերին նվիրված հոդվածներ, ռուս և արևմտաեվրոպ. դաս. գրակ-յան նմուշներ, ծանոթացրել անվանի նկարիչների, քանդակագործների, երաժիշտների արվ-ին: 1925-ի 5–7-րդ միացյալ համարները նվիրված են Ա. Մյասնիկյանին: Աշխատակցել են Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը, Գ. Մահարին, Ա. Վշտունին, Վ. Ալազանը, Մ. Սարյանը, Հ. Կոջոյանը, Կ. Հալաբյանը և ուր.:

«ՆՈՐ ԱԿՈՒՆՔ», ազգ., հաս., մշակութ. անկախ պարբերաթերթ (մինչև 2010-ը՝ ամսաթերթ): Լույս է տեսնում 2001-ից. 2001–10-ին Երևանում՝ «Ակունք» անվանումով, 2011-ից՝ Բորժոմում (Վրաստան)՝ անկանոն պարբերականությամբ: Հիմնադիր-խմբագիր՝ Մելս Թորոսյան: Արծարծում է Ջավախքի հանրային, տնտ., մշակութ. կյանքի խնդիրներ, ներկայացնում ջավախքահայության վերաբերմունքն անկախ Վրաստանի նոր քաղաքականությանը, անդրադառնում Հայ դատին, Հայոց ցեղասպանությանը, Արցախյան հիմնախնդրին, տպագրում ազգ-հայրենասիր. նյութեր, ջավախքահայ գրողների ստեղծագործություններից:

«ՆՈՐ ԱՂԲԻՒՐ», մանկապատանեկան գրական-գեղ. եռամսյա հանդես: Լույս է տեսել 1943–46-ին Թեհրանում: Խմբագիր՝ Անդրե ***Տեր-Օհանյան*** (Ամուրյան): Կարևորել է իրանահայ մատաղ սերնդի ազգ. կրթությունը, նպաստել նրա բարոյական նկարագրի ձևավորմանը, մեծ տեղ հատկացրել գեղագիտ. դաստիարակությանը: Տպագրել է իրանահայ գրողների գործեր, բնագիտ-յանը, արվ-ին ու պատմությանը նվիրված հոդվածներ: Թարգմանաբար ներկայացրել է համաշխ. (մասնավորապես՝ ռուս) գրակ-յան նմուշներ, ուսուցանել մանկ. երգեր:

«ՆՈՐ ԱՅԳ», քաղ-հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1952–53-ին Թեհրանում: Արտոնատեր՝ Ս. Սարգսյան: Խմբագրակազմ: Հանդես է եկել հօգուտ ժողովուրդների բարեկամության և համագործակցության, ներկայացրել Խորհրդ. Հայաստանի տնտեսության, գիտ-յան ու մշակույթի ձեռքբերումները: Կարևոր տեղ է հատկացրել Իրանի հայ աշխատավորության տնտ. պայքարին, մատաղ սերնդի ու երիտասարդության կրթության և դաստիարակության հարցերին, լուսաբանել է գործադուլային շարժումը:

«ՆՈՐ ԱՅԳ», ՀԲՀՄ պաշտոն. ամսաթերթ-տեղեկատու: Լույս է տեսնում 1978-ից Մոնրեալում (սկզբում՝ «Տեղեկատու»): Խմբագիր՝ Հարություն Էսեկյուլյան: Լուսաբանում է ՀԲՀՄ-ի, մասնավորապես՝ Կանադայի մասնաճյուղի գործունեությունը, տպագրում է հայ գրակ-յան, մշակույթի մասին հոդվածներ, անդրադառնում է միջազգ. նորություններին:

«ՆՈՐ ԱՅՆԹԱՊ», պատկերազարդ հանդես: Ամերիկաբնակ (1982-ից՝ լիբանանաբնակ) այնթապցիների հայրենակց. միության հրատ.: Լույս է տեսնում 1960-ից (ընդհատումներով) Բոստոնում (առաջին 6 համարը), 1962-ից՝ Բեյրութում (մինչև 1971-ը՝ «Հայ Անթեպ»): Խմբագիրներ՝ Գրիգոր Պողարյան, Երվանդ Պապայան, Վարդան եպս. ***Դեմիրճյան***, ***Վարդան-Լևոն,*** Արմեն Հարությունյան, Թորոս ***Թորանյան:*** Լուսաբանում է Այնթապ ավանի առօրյան, անդրադառնում է սփյուռքահայ համայնքների կյանքին, ՀՀ-ում, ԼՂՀ-ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, արտատպում է նյութեր հանրապետ. մամուլից: Ունի գրական-բանասիր. բաժին:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», գրական-քաղ. և հաս. պարբ.: Լույս է տեսել 1907–08-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Գրիգոր Ճեպեյան: Նյութերի գերակշիռ մասի հեղինակը կամ թարգմանիչը խմբագիրն էր: Մերժել է «պետություն» և «կառավարություն» հասկացությունները, նոր՝ «ազատ» հասարակարգի հիմք համարել բարեկեցությունը: Տպագրել է նաև գեղ. գործեր, ժող. բանահյուսության նմուշներ, ծանոթացրել հայկ. գավառների կյանքին:

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», երկշաբաթաթերթ: Բուլղարիայի կոմկուսի հրատ.: Լույս է տեսել 1922–23-ին Ֆիլիպեում (Պլովդիվ): Խմբագիր՝ Ստեփան *Շահբազյան:* Կարևորել է հոկտեմբերյան հեղափոխությունը, մեծ տեղ հատկացրել ԽՍՀՄ կազմավորման քաղ-պատմ. նշանակությանը, Խորհրդ. Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանը, քննադատել արմ. դիվանագիտ-յան գործողությունները ԽՍՀՄ-ի դեմ: Լուսաբանել է Բուլղարիայի քաղ. կացությունը, հայ աշխատավորությանը ծանոթացրել երկրում տեղի ունեցող դասակարգային պայքարին, անդրադարձել է Հայաստանի ձեռքբերումներին:



«Նոր աշխարհ», *1926–30, Նյու Յորք*

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», քաղ-հաս. և գրական շաբաթաթերթ: Ամերիկայի բանվոր. (կոմ.) կուս-յան հայկ. հատվածի (1926-ից), Ամերիկայի բանվոր. (կոմ.) կուս-յան (1928-ից), ապա՝ Ամերիկայի կոմ. կուս-յան (1929-ից) պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1926–30-ին Նյու Յորքում: Խմբագիրներ՝ Պատրիկ Սելյան, Խաչիկ Քյոսեյան, Մարտիկ Մարտենց: *«Պրոլետար»* շաբաթաթերթի շարունակությունն է: Հանդես է եկել միջազգ. բանվոր-հեղ. շարժման օգտին, ամերիկահայ աշխատավորությանը համախմբել բանվոր. կուս-յան շուրջ: Հրապարակել է Կոմինտերնի կոչերը, Ա. Մյասնիկյանի հոդվածները, միջազգ. բանվոր. շարժման այլ գործիչների ելույթներ և ուղերձներ: Սփյուռքահայությանը, ՀՕԿ-երին և հայրենակց. միություններին կոչ է արել սատարել հայրենիքի վերաշինությանը: Գրական բաժնում տեղ են գտել սփյուռքահայ (մասնավորապես՝ ամերիկահայ), խորհրդահայ հեղինակների գեղ. գործեր, հրապարակախոս., բանասիր. նյութեր:



«Նոր աշխարհ», *1954–73, Բոստոն, Նյու Յորք*

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», ազգ., գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1954–73-ին Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում՝ հայ. և անգլ.: Խմբագիր՝ Սամուել Թումանյան: Հանդես է եկել հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ, լուսաբանել է ամերիկահայ մշակութ., եկեղեց., կրթ., գրական կյանքը, ՀԲԸՄ-ի և հայրենակց. միությունների աշխատանքները, դատապարտել է հայ ազգ-եկեղեց. միասնությունը խաթարող փորձերը: Խմբագրականներում և առանձին հոդվածներով քննադատել է իմպերիալիստ. տերությունների քաղաքականությունը Հայկ. հարցում: Նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը, տպագրել է հայ իրականությանն առնչվող տնտ., մշակութ., գրական ու գիտ. նյութեր:




«Նոր աշխարհ», *1968-ից, Աթենք*

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ», ազգ., մշակութ., հաս. շաբաթաթերթ: ՌԱԿ-ի Հունաստանի շրջ. վարչության պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1968-ից Աթենքում: Խմբագիրներ՝ Հակոբ Վարժապետյան, Զավեն Գրիգորյան, Տիգրան Աբասյան: Հիմնականում արտատպում է նյութեր ՌԱԿ-ի մամուլից, անդրադառնում է նաև հայ մշակութ. կյանքին, ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին: 1980-ից հրատարակվում է հուն. հավելվածով:



«Նոր առողջապահիկ», *1912–15, Թիֆլիս*

«ՆՈՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ», բժշկ. հանրամատչելի երկշաբաթյա հանդես (1914-ից՝ գրական-հաս., բժշկ. ամսագիր): Լույս է տեսել 1912–15-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Երվանդ *Մինասյան:* Տպագրել է հոդվածներ և խորհրդատվություններ բժշկ. թեմաներով, առանձնահատուկ ուշադրություն դարձրել մանկապատանեկան տարիքի երեխաների առողջության պահպանման հարցերին, քննադատել ծխական դպրոցների հոգաբարձություններին ու քաղաքային վարչություններին՝ դպրոցներին բավարար բուժ. օգնություն չցուցաբերելու



«Նոր աւետաբեր», *1928–34, Հալեպ (№ 23, 1932)*



«Նոր Արաբկիր», *1925–74, ԱՄՆ*



«Նոր արշալոյս», *1922–34, Բուխարեստ*



«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ի (*հ. 1, 1836, Վնտ.*) *տիտղոսաթերթը*

համար: Ծանոթացրել է մարդակազմությանը, միջնադարյան Հայաստանի բժշկագիտ-յանը, հրատարակվող բժշկ. գրակ-յանը:

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ», կրոնաբարոյական, կրթ., գիտ. երկշաբաթաթերթ, ապա՝ պարբերագիրք: Սիրիայի և Լիբանանի հայ ավետարան. միության պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1928–34-ին Հալեպում: Արտոնատեր՝ Կարապետ Հարությունյան, տնօրեն-խմբագիր՝ Տիգրան *Խրլոպյան:* Տպագրել է հոգևոր, պատմագիտ. և այլ բովանդակության նյութեր, ճանաչված մարդկանց կենսագրություններ, լուսաբանել է միության գործունեությունը, անդրադարձել է սիրիահայ ու լիբանահայ համայնքների առօրյային ևն:

«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ», տեղեկատու պարբերաթերթ: Ամերիկաբնակ արաբկիրցիների միության կենտր. վարչության, ապա՝ «Արաբկիր» միության կիսամսյա պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1925–74-ին միության նստավայրերում՝ հաջորդաբար՝ Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Ուոթերթաունում, Բոստոնում: Խմբագիր՝ Գ. Գալստյան: Հրատարակել է միության տեղեկագրեր, պատգամավոր. ժողովների արձանագրություններ, որոշումներ, բանաձևեր, Խորհրդ. Հայաստան այցելած սփյուռքահայ գործիչների տպավորություններ: Ծանոթացրել է Արաբկիրի պատմ. անցյալին, արաբկիրցիների կենցաղին ու ավանդույթներին: Գրական բաժնում տպագրել է սփյուռքահայ գրողների ու պատմաբանների գործեր:

«ՆՈՐ ԱՐԱՔՍ», կիսամսյա թերթ: Լույս է տեսել 1945–49-ին Լառնակայում (Կիպրոս): Խմբագիր՝ Հայկ Մոստիչյան: Ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի առօրյային, նրա գոյությունն ու բարգավաճումը համարել Սփյուռքի հայապահպանության երաշխիքը: Աջակցել է ներգաղթին, պատմել հայրենիք վերադարձած կիպրոսահայերի մասին, տպագրել նրանց նամակները: «Ն. Ա.» մեծ տեղ է հատկացրել երաժշտությանը, կերպարվ-ին, կինոյին, խորհրդահայ հեղինակների գեղ. գործերին նվիրված հրապարակումներին: Առանձին նյութեր լույս են տեսել անգլ.:

«ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ», քաղ., գրական և մշակութ. եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1922–34-ին Բուխարեստում: Խմբագիրներ՝ Պարույր Լևոնյան, Հակոբ *Միրոնի,* Լևոն Շաթրյան, Հարութ Ասլանյան (Հորիոն), Վարդան *Մնջուճյան,* Հարություն Պապոյան: Նպաստել է հայապահպանությանը, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Լուսաբանել է Ռումինիայի հայկ. դպրոցների, թատերախմբերի, մշակութ. մյուս հաստատությունների գործունեությունը, հրապարակել Հայաստանի առօրյային վերաբերող տեղեկություններ: Աշխատակցել են Ե. Օտյանը, Մ. Պոտուրյանը, Ա. Չոպանյանը, Հ. Երվանդը և ուր.:

«ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ» («Նոր հայկազեան բառարան»), Մխիթարյան միաբաններ Գաբրիել *Ավետիքյանի*, Խաչատուր *Սյուրմելյանի* և Մկրտիչ *Ավգերյանի* կազմած երկհատոր բառարանը: Կազմման աշխատանքները տևել են շուրջ 50 տարի: Լույս է տեսել 1836–37-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում, վերահրատարակվել է 1979–81-ին Երևանում (նմանահանություն):

Բառարանը կազմված է գրաբարի համաբարբառ-քարտարանի հիման վրա, որն ընդգրկում է V–XVII դդ-ի գրաբար ձեռագիր ու տպագիր մատենագր. բոլոր հուշարձանները: Բառապաշարի և բառիմաստների ընդգրկման ծավալով ու լիակատարությամբ գրաբարի հազվագյուտ բառարան-գանձարան է:

Գլխաբառից հետո տրված են տվյալ բառի հնչյուն. տարբերակները, քերական. նշումները, ապա՝ հուն. և լատ. համանշանակները: Փոխառյալ բառերի դեպքում ներկայացված են օտար աղբյուրը, բառի ստուգաբանությունը, ապա տրված են բառիմաստի կամ իմաստների բացատրությունները, վերջում ժամանակագր. կարգով հայ մատենագրությունից բերված են համապատասխան վկայություններ՝ բառի յու-

րաքանչյուր իմաստը կամ իմաստային նրբերանգը, ոճ. կիրառությունները, գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար:

«ՆՈՐ ԳԻՐ», գրակ-յան և արվ-ի ամսագիր (1939-ից՝ եռամսյա հանդես): Լույս է տեսել 1936–54-ին Նյու Յորքում: Խմբագիրներ՝ Անդրանիկ ***Անդրեասյան***, Բենիամին ***Նուրիկյան:*** Տպագրել է խորհրդահայ և սփյուռքահայ գրողների ստեղծագործություններ: Ունեցել է տես. ուսումնասիրությունների բաժին: Առանձին համարներ է նվիրել Կոմիտասին, Հ. Օշականին, նկարիչ Ս. Խաչատրյանին: Թարգմանաբար ներկայացրել է նաև էջեր համաշխ. գրակ-ից:



«Նոր գիր», *1936–54, Նյու Յորք*

«ՆՈՐ ԴԱՐ», քաղ., ազգ. և առևտր. օրագիր: Լույս է տեսել 1874–79-ին Կ. Պոլսում: Խմբագիր-տնօրեն՝ Օգսեն ***Խոճասարյան:*** Դավանել է սահմանադր-միապետ. սկզբունքներ, սպասվելիք ազատ. բարեփոխումների շրջանում մեծ տեղ է հատկացրել Օսմ. կայսրությունում քրիստոնյա ժողովուրդների վիճակի բարելավման, ներքին ինքնորոշման և կառավարման մեթոդների կարգավորման հարցերին: «Ն. դ.» հայ ժողովրդի ապահովությունը պայմանավորել է միապետների մարդասիր. քաղաքականությամբ և այդ պատճառով դրվատանքի խոսքեր է ուղղել Ռուսաստանի կայսրին՝ ճորտատիրության վերացման կապակցությամբ: Տպագրել է նաև բանասիր. նյութեր ու հաղորդագրություններ, անդրադարձել ազգ. և եվրոպ. գրակ-յան նորություններին:



«Նոր–Դար», *1883-1916, Թիֆլիս*

«ՆՈՐ-ԴԱՐ», ազգ., քաղ., գրական օրաթերթ (սկզբում՝ երկօրյա): Լույս է տեսել 1883–1916-ին Թիֆլիսում (1904–05-ին ընդհատվել է, 1907–16-ին տպագրվել է տարեկան 1 համար): Խմբագիր՝ Սպանդար ***Սպանդարյան:*** Եղել է հայ ազգ. պահպանող. հոսանքի գաղափարակիրը, տարաձայնություններ է ունեցել *«Մշակ»*-ի հետ: Հայության գոյապահպանության երաշխիքներից է համարել եկեղեցին՝ միաժամանակ ընդունելով գիտ-յան և քաղաքակրթության դերն ազգի զարգացման գործում: Ներկայացրել է արևմտահայության վիճակը, տպագրել նյութեր 1894–96-ի արդուլհամիդյան կոտորածների, հայկ. նահանգների նյութ. ու բարոյական ծանր կացության, Հայկ. հարցում արմ. դիվանագիտ-յան դերի մասին: Անդրադարձել է Այսրկովկասի տնտ. զարգացման, գյուղ. համայնքների քայքայման ու նավթաշխարհի բանվորների վիճակին, քննադատել հարկահանության ու վաշխառության դաժան մեթոդները: Լուսաբանել է հայ բարեգործ. միությունների, դպրոցի, թատրոնի, մշակութ. այլ կազմակերպությունների աշխատանքներ: Գրական բաժնին աշխատակցել են Ռ. Պատկանյանը, Պ. Պռոշյանը, Մուրացանը, Նար-Դոսը, Վ. Փափազյանը և ուր.: Թարգմանաբար տպագրել է Մ. Սալտիկով-Շչեդրինի, Լ. Տոլստոյի, Ի. Տուրգենևի, Հ. Սենկևիչի, Ա. Դոդեի, Մ. Տվենի և ուր. գործերից: Ունեցել է պաշտոն. լուրերի, քաղ. տեսության, առօրյա իրադարձությունների տեղեկատվության, թղթակցությունների բաժիններ, սեփական թղթակիցներ՝ Ս. Պետերբուրգում, Կ. Պոլսում, Բեռլինում, Փարիզում, ԱՄՆ-ում և այլուր:



«Նոր–Դար», *1995-ից, Երևան (№ 3, 2012)*

«ՆՈՐ-ԴԱՐ», ՀԳՄ գրական-գեղ. եռամսյա հանդես (սկզբում՝ շաբաթաթերթ): Լույս է տեսնում 1995-ից Երևանում: Խմբագիրներ՝ Աբգար ***Ափինյան***, Արտաշես ***Ղազարյան***, Ալեքսանդր Ղումաշյան (2005-ից): Տպագրում է ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններ, թարգմանություններ՝ համաշխ. գրակ-ից:

«ՆՈՐ ԴՊՐՈՑ», մանկավարժ. ամսագիր (1911–12-ին՝ շաբաթաթերթ): Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միության կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսել 1908–14-ին Թիֆլիսում: Խմբագիրներ՝ Իսահակ ***Հարությունյան***, Հովհաննես ***Տեր-Միրաքյան***, Արտաշես ***Աբեղյան:*** Նպաստել է աշխարհիկ դպրոցների ստեղծմանն ու ամրապնդմանը, առաջարկել կրթահամակարգի վերափոխումներ, արծարծել է մանկավարժ. առաջադեմ գաղափարներ:



«Նոր դպրոց», *1908–14, Թիֆլիս (№ 3, 1908)*



«Նոր էջ», *1935–75, Թեհրան*



«Նոր լուր», *1924–54, Սփամբուլ*



«Նոր Խարբերդ», *1936, 1954, 1956, Սոմերվիլ (ԱՄՆ)*

«ՆՈՐ ԵՐԿԻՐ», հաս–քաղ. և գրական օրաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ): Հնչակյան կուս–յան Ֆրանսիայի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1926–37 և 1954–55–ին Փարիզում: Խմբագիրներ՝ Հակոբ Թյուրապյան (Բ. Վարազդատ), Մելիք Դավիթ–Բեկ: Ներկայացրել է Ֆրանսիայի և եվրոպ. այլ երկրների հայկ. համայնքների ազգ. կյանքը, Խորհրդ. Հայաստանի տնտ., մշակութ. ձեռքբերումները, ծանոթացրել միջազգ. քաղ. կացությանը: Գրական բաժնում տպագրել է հայ դաս. և ժամանակակից հեղինակների գործեր, գրաքննադատ., պատմագիտ. հոդվածներ:

«ՆՈՐ ԷՋ», գրական տարեգիրք: Համանուն գրական խմբի հրատ.: Լույս է տեսել 1935–37, 1943 և 1958–75–ին Թեհրանում: Խմբագիրներ՝ Զորայր *Միրզայան,* Արշավիր Մկրտչյան, Գալուստ *Խանենց:* Տպագրել է իրանահայ երիտասարդ և ավագ սերնդի գրողների ստեղծագործություններից, թարգմանություններ՝ համաշխ. գրակ–ից: «Հայրենի գրականություն» խորագրով ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի գրական և մշակութ. նորությունները: Տևական ընդմիջումից հետո 1999–ին Երևանում լույս է տեսել ժող–ի 24–րդ գիրքը:

«ՆՈՐ ԹՈՄԱՐՁԱ», եռամսյա հանդես (սկզբում՝ միամսյա): Թոմարզայի միացյալ (հայրենակց.) ընկերության կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսել 1931–35 և 1939–40–ին ԱՄՆ–ի Սաութ Միլուքի, ապա՝ Ռեյսին քաղաքներում: Խմբագիր՝ Վարդան Զալըմենց: Լուսաբանել է միացյալ ընկերության և մասնաճյուղերի գործունեությունը, կապ է ստեղծել աշխարհասփյուռ թոմարզացիների միջև: Տպագրել է նյութեր Երևանի Նոր Սերաստիա թաղամասին կից Նոր Թոմարզայի կառուցման մասին, թոմարզացիների պատմությանը վերաբերող հոդվածներ, գրական գործեր:

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ», քաղ. և գրական շաբաթական հանդես: Լույս է տեսել 1906–ին Կահիրեում: Խմբագիր–հրատարակիչ՝ Վահան *Թեքեյան:* «Ն. ժ.»–ի խնդիրը գաղթավայրերի մտավորականությանը միավորելն էր, հայապահպանությանը նպաստելը, ուծացման դեմ պայքարելը, թուրքաբնակ հայությանն օգնելը: Անդրադարձել է Ռուսաստանում տեղի ունեցող քաղ. իրադարձություններին, դրական վերաբերմունք ցուցաբերել հայ–ռուս. գրական կապերի հաստատմանը: Ունեցել է նաև առողջապահ–յան և երգիծանքի բաժին:

«ՆՈՐ ԼՈՒՐ», քաղ., առևտր. և գրական օրաթերթ (ապա՝ եռօրյա, վերջում՝ կրկին օրաթերթ): Լույս է տեսել 1924–36 և 1945–54–ին Ստամբուլում: Խմբագիր՝ Վահան *Թոշիկյան:* Լուսաբանել է տեղի հայ համայնքի առօրյան, ծանոթացրել Խորհրդ. Հայաստանի տնտ., մշակութ. կյանքին, սփյուռքահայ համայնքների կարևոր իրադարձություններին, միջազգ. քաղ. կացությանը: Տպագրել է գրական ստեղծագործություններ, թատեր. մեկնաբանություններ, գրախոսություններ, պատմագիտ., մանկավարժ., առողջապահ. և այլ հոդվածներ, կենցաղային և առողջապահ. խորհրդատվություններ, մարզ. լուրեր:

«ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ», տարեկան հանդես: Համախարբերդցիական միության կենտր. գործադիր մարմնի հրատ.: Լույս է տեսել 1936, 1954, 1956–ին Սոմերվիլ քաղաքում (Մասսաչուսեթսի նահանգ, ԱՄՆ): Համախմբել է սփյուռքաբնակ խարբերդցիներին, կազմակերպել նրանց աջակցությունը Խորհրդ. Հայաստանում Նոր Խարբերդ ավանի կառուցմանը: Լուսաբանել է ՀԽՍՀ տնտեսության ու մշակույթի վերելքը, Նոր Խարբերդ ավանի առօրյան, տպագրել հայրենիք ներգաղթած խարբերդցիների նամակներն ու տպավորությունները: Ծանոթացրել է միության մասնաճյուղերի գործունեությանը, տպագրել վիճակագր. տվյալներ, ծանուցումներ, հայտարարություններ:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», գրական, քաղ. կիսամսյա հանդես: Վերակազմյալ հնչակյան կուս-յան հրատ.: Լույս է տեսել 1898–1902-ին Լոնդոնում: Խմբագիրներ՝ Արփիար *Արփիարյան*, Լևոն *Բաշալյան:* Ներկայացրել է կուս-յան ինդիրներն ու նպատակները, ծանոթացրել հայերի կացությանը Ռուսաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում և այլուր: Հանդեսը թարգմանաբար տպագրել է այլալեզու մամուլի՝ Հայկ. հարցին նվիրված հոդվածներ, անդրադարձել է Թուրքիայից Արլ. Հայաստան հասած գաղթականների ու որբերի ճակատագրերին, որբերին օգնելու կոչ ուղղել Ամերիկայի և Եվրոպայի երկրների հայությանը: Տպագրել է նաև գեղ., պատմահայագիտ. նյութեր: 1902-ին միավորվել է *«Հնչակ»*-ին:



«Նոր կեանք», *1906-07, Նոր Նախիջևան (№ 34, 1907)*

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», գրական, հաս. և քաղ. շաբաթական հանդես: Լույս է տեսել 1906–07-ին Նոր Նախիջևանում: Խմբագիրներ՝ Հ. Խարագյոզյան, Գ. Անոփյան, Սիմոն *Վրացյան:* Քննադատել է ցարիզմի ներքին քաղաքականությունը, լուսաբանել է Ռուսաստանի հայկ. գաղթավայրերի կյանքը, կարևորել կրթադպրոց. հարցերը: Տպագրել է նյութեր գրակ-յան, թատրոնի և կերպարվ-ի վերաբերյալ, բանաստեղծություններ, պատմվածքներ, ֆելիետոններ: Աշխատակցել են Ա. Սյասնիկյանը, Մ. Սարյանը, Շ. Կուրղինյանը, Վ. Տերյանը, Մ. Բերբերյանը, Գ. Բեդիկյանը և ուր.:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», հաս., գրական և քաղ. շաբաթաթերթ: Հայ ազգ. ճակատի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1944–47-ին Մարսելում: Խմբագիրներ՝ Եղիշե Թորոսյան, Վարդան *Թեմուրճյան:* Աջակցել է Մարսելի հայ համայնքի հաս-մշակութ. կյանքի աշխուժացմանը, ամրապնդել նրա կապը Հայաստանի հետ: Լուսաբանել է ՀԽՍՀ տնտեսության ու մշակույթի ձեռքբերումները, մեծ տեղ հատկացրել ներգաղթին: «Ն. կ.» անդրադարձել է անցյալի հայ ազգայնական գործիչների գործելակերպին: Գրական բաժնում տպագրվել են Սփյուռքի և խորհրդահայ գրողների գործերից:



«Նոր կեանք», *1957-98, Բեյրութ*


«ՆՈՐ ԿԵԱՆՔ», օրաթերթ: Հունաստանի Հայ ազգ. ճակատի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1945–47-ին Աթենքում: Խմբագիրներ՝ Վահան *Դաքեյան*, Մովսես Պազարյան, Աբրահամ Յազըճյան: Արտացոլել է հայ և հույն ժողովուրդների բարեկամությունը, Խորհրդ. Հայաստանը համարել համայն հայության հայրենիքը, աջակցել ներգաղթին, տպագրել նյութեր ՀԽՍՀ-ի տնտ. և մշակութ. ձեռքբերումների վերաբերյալ, հոդվածներ՝ Հայրեն. մեծ պատերազմում (1941–45) աչքի ընկած նշանավոր հայ զորավարների և ռազմիկների մասին, հայ և ռուս գրողների գործեր, մարզ. և մշակութ. լուրեր:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», պարբերաթերթ: Լույս է տեսել 1957–73, 1976–78 և 1991–98-ին Բեյրութում (մինչև 1973-ը՝ կինոնարվ-ի և հեռուստատեսության, ապա՝ ազգ., ընկերային, տնտ. շաբաթաթերթ, 1977–78-ին՝ գովազդային թերթ, վերջին շրջանում՝ անկախ ամսաթերթ): Խմբագիրներ՝ Հրաչ Հաճերյան, Կարո Գազանճյան, Վահան Ճանսըզյան, Սեմ Բագուպյան, Մանվել Գազանճյան: Տպագրել է էջեր հայ և համաշխ. գրակ-ից, կինոարվ-ին, թատրոնին, երաժշտությանն ու կերպարվեստին նվիրված հոդվածներ: Անդրադարձել է հայկ. և համաշխ. կինոնորություններին, նշանավոր վարպետներին, մեծ տեղ է հատկացրել Երևանի թատեր. կյանքին նև: Վերջին շրջանում հրատարակել է հաս., տնտ., մշակութ., մարզ. լուրեր ՀՀ-ից ու սփյուռքահայ այլ համայնքներից, վերլուծ. հոդվածներ:



«Նոր կեանք», *1978-ից, Գլենդել*

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1978-ից Գլենդելում՝ հայ., անգլ. և ֆրանս.: Խմբագիրներ՝ Վահան Ճանսըզյան, Աբրահամ Չափարյան, Հրանտ Սիմոնյան, Լևոն Ֆերմանյան, Սարգիս Մաճարյան, Գրիգոր *Շենյան* (1981-ից): Լուսաբանում է Գլենդելի հայկ. համայնքի առօրյան, ամերիկահայ կյանքում, ՀՀ-ում, Արցախում



«Նոր կեանք», 1950-ից, Բուխարեստ (№ 5, 2010)

Նոր կտակարան



1668 (Ամստերդամ, տպագրիչներ՝ Ոսկան Երևանցի, Կարապետ Անդրիանացի), փիփղոսաթերթը



1698–1700 (Ամստերդամ, Թովմաս Վանանդեցու տպ.), փիփղոսաթերթը

տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, տպագրում բանասիր., կրոն., գրական, տնտ. և մարզ. հոդվածներ:

«ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ», ամսագիր: Լույս է տեսել 1934–37-ին Նյու Յորքում: Կեսարիայի վերաշինաց միության, ապա՝ Նոր Կեսարիայի համագործակցության պաշտոն. հրատ.: Խմբագիր՝ Ա. Քաղցրունի: Լուսաբանել է միության և նրա մասնաճյուղերի գործունեությունը: Նյութեր է զետեղել պատմ. Կեսարիայի և մերձակա հայաբնակ վայրերի ազգագրության, տեղագրության, կենցաղի ու սովորույթների վերաբերյալ: Ունեցել է գրական, բանասիր. և այլ բաժիններ:

«ՆՈՐ ԿՅԱՆՔ», հաս-քաղ., տնտ. և մշակութ. ամսաթերթ (մինչև 1982-ը՝ շաբաթաթերթ): Լույս է տեսնում 1950-ից Բուխարեստում (հայ.), 1990-ից՝ հայ. և ռում.: Խմբագիրներ՝ Հարություն Պապոյան, Հարութ Ասլանյան (Հորիոն), Տիգրան Տեր-Գրիգորյան, Թագվոր Շիշմանյան, Սարգիս Սելյան (1978-ից): Լուսաբանում է Ռումինիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը, ռումինահայ համայնքի կյանքը, տեղեկություններ է հաղորդում ՀՀ-ից, սփյուռքահայ համայնքներից, տպագրում է ռումինահայ գրողների գործեր, նմուշներ ռում. գրակ-ից, ճանաչված հայագետների հոդվածներ: Տարածվում է շուրջ 30 երկրում:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, հուն-ով գրված 27 գրքերի ժող., որը քրիստոնյաների Սուրբ Գրքերից է և Աստվածաշունչ մատյանի մաս: Ն. կ-ի գրքերը ներկայացնում են քրիստ. եկեղեցին՝ իր հիմնադրի՝ Քրիստոսի ծննդից մինչև եկեղեցու տարածումը, ինչպես նաև հավատացյալների կյանքը տարբեր երկրներում: Ն. կ. ներառում է՝ 1. *Ավետարանները* (Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի), որոնք պատմում են Հիսուսի կյանքի ու նրա քարոզչության մասին, 2. Գործք առաքելոցը, որտեղ ներկայացվում են I դ-ի եկեղեցու կյանքն ու առաքյալների գործունեությունը, 3. Թղթեր, որոնք բաժանվում են 2 խմբի՝ ա. Պողոս առաքյալի 14 նամակները, բ. Ընդհանրական նամակներ. Հակոբոսի, Պետրոս առաքյալի (Ա և Բ), Հովհաննես առաքյալի (Ա, Բ և Գ) և Հուդայի 7 նամակները, 4. Հայտնություն (Հովհաննեսի), որը հայտնութենական տեսիլքով նկարագրում է բարու վերջնական հաղթանակը չարի դեմ և Քրիստոսի երկրորդ գալուստը:

Հայ ինաւտիպ գրքի շրջանում Ն. կ-ներ տպագրվել են՝

1668-ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչներ՝ Ոսկան Երևանցի և Կարապետ Անդրիանացի: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի…» (934 էջ, 12º, 12,4 x 6,5 սմ):

1698–1700-ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Աստուածաշունչ Նոր կտակարան տպագրեցեալ վայելչագիր՝ և գեղեցկագիր յօրինուածովք» (970 էջ, 12º, 11,2 x 6,1 սմ):

1710-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Նոր կտակարան սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի…», Բ-ին՝ «Նոր կտակարան պարունակող զգործս առաքելոց…» (905 էջ, 6º և 12º, 10,2 x 5 սմ): 1720-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (832 էջ, 8º, 11 x 5,5 սմ): 1740-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի…» (760 էջ, 8º, 13 x 6,2 սմ): 1751-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան պարունակող զգործս առաքելոց…» (526 էջ, 12º, 11,5 x 7 սմ):

1752-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օղլանդոյի տպարանում: Տիտղթ-ին՝ «Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի…» (919 էջ, 8º, 13,5 x 8,5 սմ):

1766-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (896 էջ, 8º, 12,7 x 6,4 սմ):

1776-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (877 էջ, 8º, 13,5 x 8,5 սմ):

1789-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (728 էջ, 8º, 13,5 x 7,5 սմ):

Աստվածաշնչից և Նոր կտակարանից առանձին տպագրվել է նաև **Գործք առաքելոցը**՝

1704-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: 1771-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում (660 էջ, 8⁰, 13 x 8 սմ): Տիտղթ-ին՝ «Գործք առաքելոց: Թուղթք երանելոյ Պօղոսի առաքելոյ»: 1788-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (476 էջ, 8⁰, 12,5 x 6,5 սմ): Տիտղթ-ին՝ «Գործք առաքելոց: Ընդ որս եւ չորեքտասան թուղթք...»: 1789-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (387 էջ, 13,5 x 7,5 սմ): Տիտղթ-ին՝ «Գործք առաքելոց: Թուղթք Պօղոսի առաքելոյ...»:

1801-ից հետո տպագրվել է 1814, 1817-ին (ՍՊբ, Հովսեփ Հովհաննիսյանի տպ.), 1816, 1822–23, 1825, 1846, 1863, 1866, 1868-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1823-ին (ԿՊ, Պողոս Արապյան Ապուչեխցու տպ.), 1825, 1828-ին (Փ., Դոնդե Դյուպրեի տպ.), 1834-ին (Մ., Լազարյան ճեմ. տպ.), 1838, 1887-ին (Զմյուռնիա, Հոման Հալլոքի տպարան), 1839, 1844-ին (Կալկաթա, Մկրտող միսիոներաների տպ.), 1847-ին (Զմյուռնիա, Խաչատուր Մելիքսելումյանի տպ.), 1849-ին (Զմյուռնիա, Գուլիելմոս Գրիֆիտի տպ.), 1850-ին (ԿՊ, Ն. դը Կաստրոյի տպ.), 1854, 1856, 1858 և 1859-ին (ԿՊ, Ա. Չըրչիլի տպ.), 1857-ին (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), 1857, 1864, 1899-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1858 և 1859-ին (Լոնդոն, Կ. Ուադսի տպ.), 1859, 1860, 1864, 1866, 1870-ին (Նյու Յորք, Աստվածաշնչի ընկ. տպ.), 1861-ին (Զմյուռնիա, Տիգրան Հարություն Տետեյանի տպ.), 1863-ին (Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), 1886, 1898-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1871-ին (ԿՊ, Հարություն Մինասյանի տպ.), 1871, 1873, 1875, 1882, 1892, 1895-ին (Լոնդոն, Կյուլբերտի և Ռիվինգտոնի տպ.), 1875–77, 1879–84, 1886, 1888–91, 1895–97, 1899, 1909–10, 1912-ին (ԿՊ, Հակոբ Պոյաճյանի տպ.), 1895-ին (ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.), 1899-ին (Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), 1911-ին (ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), 1914, 1920–21, 1923–24, 1933-ին (ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.), 1927-ին (Բ., Ամերիկյան տպ.), 1928-ին (ԿՊ, Ամերիկյան աստվածաշնչի ընկ.), 1937-ին (Վնն., Ամերիկյան աստվածաշնչի ընկ.), 1950-ին (Կահիրե, «Նոր աստղ» տպ.), 1962, 1963, 1988-ին (Բ., ա. տպ.), 1969, 1975–76, 1978, 1981, 1990, 1992-ին (Էջմիածին), 1979, 1993-ին (Անթիլիաս), 1994-ին (Լիսաբոն, ա. տպ.), 2011-ին (Ե.), 1986, 2000, 2001, 2003, 2008-ին (Թեհրան) ևն:


Գործք առաքելոցը տպագրվել է 1801, 1824-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1802, 1817, 1823, 1839-ին (ԿՊ, Պողոս Հովհաննիսյանի տպ.), 1810-ին (ԿՊ, Սբ Աստվածածնի տպ.), 1849, 1857, 1870-ին (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), 1852, 1868-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1864-ին (Վնտ., ա. տպ.), 1865-ին (ԿՊ, Ռուբեն Քյուրքջյանի տպ.), 1871-ին (ԿՊ, Թադեոս Տիվիթճյանի տպ.), 1873-ին (ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.) ևն:

Գրկ. Տստեսեան Ե., *Պատմութիւն Սուրբ գրոց Հին եւ Նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1867:* Սարաֆեան Գ., *Ներածութիւն Նոր կտակարանի, Անթիլիաս, 1950:* Եղիայեան Բ., *Քննական պատմութիւն Սուրբ գրական ժամանակներու, գիրք 4, Ներածութիւն Նոր կտակարանի, Անթիլիաս, 1974:* Անասյան Հ., *Հայկական մատենագիտություն, հ. 2, Ե., 1976:* Պետրոսյան Ե., *Ներածություն Նոր կտակարանի, Էջմիածին, 1996:* Կայայան Ա., *Նոր կտակարանի ընդհանուր ներածություն, Ե., 1996:*

Նոր կտակարան



1867 (Նյու Յորք), փիփղոսաթերթը



1975 (Էջմիածին), կազմը



1994 (Լիսաբոն), կազմը



«Նոր Հայաստան»,
1991-ից, Լոս Անջելես

«ՆՈՐ ՀԱՃԸՆ», եռամսյա թերթ (սկզբում՝ ամսաթերթ)։ Հաճնի հայրենակց. ընդհանուր (ապա՝ վերաշինաց) միության կենտր. վարչության պաշտոնաթերթ։ Լույս է տեսնում 1928-ից. մինչև 1933-ը՝ Մարսելում, մինչև 1940-ը՝ Լոս Անջելեսում, 1940-ից՝ Բուենոս Այրեսում (1928–33-ին՝ «Հաճընն»)։ Խմբագիրներ՝ Սարգիս Ալթունյան, Գևորգ Դուշյան, Ազարիա Պապահեգյան, Աբրահամ Էոլմեսեկյան, Աբրահամ Քրաջյան, Հարություն Մուշյան, Նազարեթ Կուժնունի (Ճերեճյան)։ Լուսաբանում է միության և նրա մասնաճյուղերի գործունեությունը, անդրադառնում ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, սփյուռքահայ այլ համայնքների կյանքին, տպագրում նյութեր Հաճնի պատմության, կենցաղի, ավանդույթ-սովորույթների, բարբառի մասին, նաև գեղ. գործեր։ Ունի իսպ. բաժին։

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», ազգ., հաս-քաղ. օրաթերթ։ Լույս է տեսնում 1991-ից Լոս Անջելեսում։ Հիմնադիր-խմբագիր՝ Վահան Վահանյան (Ճանազյան)։ Տպագրում է հոդվածներ ու լուրեր հայ քաղ. կյանքի, ՀՀ-ում, ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների, Հայոց ցեղասպանության միաջազգ. ճանաչման և Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացների, միջազգ. անցուդարձի վերաբերյալ։

«ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», բժշկագիտ. եռամսյա միջազգ. պարբ.։ ԵՊԲՀ-ի հրատ.։ Լույս է տեսել 2007–14-ին Երևանում՝ ռուս., անգլ.։ Հիմնադիր-խմբագիր՝ Արտո Զիլֆյան։ Տպագրել է փորձարար., ընդհանրացնող և կլինիկ. ԳՀ ուսումնասիրությունների արդյունքներին, դեղագիտ-յանը վերաբերող հոդվածներ (ամփոփումներով), ինչպես նաև բժշկագիտ-յան ոլորտում հանդիպող առանձնահատուկ դեպքերի նկարագրություններ։ Անդրադարձել է տես. ու գործն. բժշկության հիմնախնդիրներին և ուղղություններին։

Պարբ-ի հոդվածների ամփոփագրերը զետեղվել են Scopus և Ռուսաստանի ԳԱ-ի Համառուսաստանյան գիտ. և տեխ. տեղեկատվության ինստ-ի էլեկտրոնային տվյալների շտեմարաններում։



«Նոր հայկական բժշկական հանդես»,
2007–14, Երևան

«ՆՈՐ ՀԱՄԿԵՐ», մանկապատանեկան երկշաբաթյա պատկերազարդ հանդես։ Լույս է տեսել 1935–36-ին Թեհրանում։ Արտոնատեր-խմբագիր՝ Մարգարիտ Սարվարյան, խմբագիր՝ Մուշեղ Սարվարյան։ Աջակցել է իրանահայ մատաղ սերնդի բազմակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը։ Տպագրել է իրանահայ գրողների մանկ. ստեղծագործություններ, Հ. Թումանյանի, Ա. Խնկոյանի, Ս. Լիսիցյանի գործերից, հանելուկներ, շուտասելուկներ ևն, նյութեր՝ գիտ-յան ու արվ-ի վերաբերյալ, «Հարց ու պատասխան» բաժնում անդրադարձել է պատանի ընթերցողներին հետաքրքրող բազմապիսի հարցերի, ստեղծել է աշակերտների օգնության հիմնադրամ։

«ՆՈՐ ՀՈՍԱՆՔ», հաս-քաղ., գրական-գիտ. ամսագիր։ Լույս է տեսել 1913–15-ին Թիֆլիսում։ Խմբագիր-հրատարակիչներ՝ Արշակ Ղազարյան, Նիկոլ ***Աղբալյան:*** Ունեցել է ռամկավար. ուղղվածություն։ Լուսաբանել է Այսրկովկասի, Թուրքիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի հայկ. համայնքների առօրյան, անդրադարձել միջազգ. քաղ. իրադարձություններին, ազգ. հարցի լուծման ու հայ ժողովրդի ազատագրության ուղիներին։ Գրական բաժնում տպագրվել են Հ. Թումանյանի, Լ. Շանթի, Դ. Դեմիրճյանի, Մ. Մանվելյանի և ուր. գործերից, Հ. Սուրխաթյանի, Ա. Տերտերյանի գրական-բանասիր. ուսումնասիրությունները։ «Ն. հ.» ներկայացրել է համաշխ. գրակ-յան դասականների (Զ. Բայրոն, Հ. Իբսեն, Զ. Լոնդոն և ուր.) գործերից, ինչպես նաև ժող. կրթության, բժշկության ու բնագիտ-յան, արվ-ի տեսության վերաբերյալ նյութեր։


«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ», Շվեդիայի հայկ. միությունները համադրող կենտրոնի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1994-ից Ուփսալայում՝ հայ. և շվեդ.: Հիմնադիր-խմբագիր՝ Կարո Հակոբյան, խմբագիր՝ Կարեն Օհանջանյան: Լուսաբանում է ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, տպագրում Շվեդիայի և սփյուռքահայ այլ համայնքների առօրյային, հայոց պատմության կարևոր անցքերին, Հայ առաքել. եկեղեցու պատմությանը վերաբերող նյութեր:



«Նոր հորիզոն»,
1994-ից, Ուփսալա

«ՆՈՐ ԶԱՅՆ», գրական, հաս. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1911–12-ին Երևանում: Խմբագիր-հրատարակիչ՝ Վահան Տեր-Աբրահամյան: Քննարկել է սոցիալ-քաղ., գրական-կրթ. և այլ հարցեր, անդրադարձել է աշխատավորության կարիքներին ու հոգսերին, նրանց տնտ. վիճակի բարեփոխման պայման է համարել միապետության տապալումն ու ժող. կարգերի հիմնադրումը: Քարոզել է կրթ. համակարգի առաջադեմ սկզբունքներ, հանդես եկել գյուղ. վայրերում դպրոցների լայն ցանց ստեղծելու կոչով: Աշխատակցել են Մ. Բագրատունին, Հ. Հակոբյանը և ուր.:

«ՆՈՐ ՄԱԼԱԹԻԱ», տեղեկատու պարբերաթերթ: Մալաթիայի կրթասիրաց ընկերության հրատ.: Լույս է տեսնում 1939-ից՝ հաջորդաբար՝ Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Փութաքեթում, 1975-ից՝ Ուստրում: Խմբագիրներ՝ Վարդանուշ Փապուճյան, Հակոբ Ուրլյան, Տոնապետ Տոնապետյան, Պետրոս Զոպյան, Ոսկան Հովհաննեսյան: Լուսաբանում է ընկերության և նրա մասնաճյուղերի աշխատանքները, տպագրում է մալաթիացիների կենցաղին ու սովորույթներին վերաբերող նյութեր: Ունի անգլ. բաժին (1978-ից):



«Նոր Մալաթիա»,
1939-ից, ԱՄՆ

«ՆՈՐ ՄԱՄՈՒԼ», հաս., տնտ. և գրական թերթ (եռօրյա, շաբաթաթերթ, ապա՝ ամենօրյա): Լույս է տեսել 1911–15-ին Երևանում (1911–13-ին՝ «Կռան»): Խմբագիր՝ Սուշեղ *Բագրատունի:* Ներկայացրել է հայ աշխատավորի սոցիալ-տնտ. վիճակը, լուսաբանել քաղ. գործիչների և ազգ. կուս-ների գործունեությունը: Անդրադարձել է արևմտահայության ծանր կացությանը, Հայ դատին, արծարծել է նաև գրակ-յան, արվ-ի, մշակույթի, հայոց լեզվի զարգացման հարցեր:

«ՆՈՐ ՄԱՐԱԶ», պատկերազարդ տարեգիրք (սկզբում՝ կիսամյա): Մարաշի հայրենակց. միության հրատ.: Լույս է տեսել 1946–61-ին Հալեպում: Խմբագիրներ՝ Հակոբ Տեկիրմենճյան, Հարություն Պարտիզպանյան, Մանվել Հելվաճյան, Նուբար Փարթամյան, Սուշեղ Տեմիրճյան, Լևոն Պիլեզիկճյան: Լուսաբանել է միության գործունեությունը, ներկայացրել մարաշցիների կենցաղը, սովորույթները, ծանոթացրել հայրենիք ներգաղթած մարաշցիների կյանքին:

«ՆՈՐ ՅԱՌԱՋ», ազգ., հաս-քաղ., մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 2009-ի հոկտ-ից Փարիզում՝ հայ.: *«Յառաջ»* (1925–2009) հաս-քաղ., գրական օրաթերթի շարունակությունն է: Հիմնադիր-խմբագիր՝ Ժիրայր Չոլաքյան: Լուսաբանում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, անդրադառնում է սփյուռքահայ, մասնավորապես՝ ֆրանսահայ համայնքի առօրյային, հայապահպանման խնդիրներին, ծրագրերին, Հայ դատին, հայկ. պահանջատիրությանը, Արցախյան հիմնախնդրին, Հայրենիք-Սփյուռք կապերին, Հայաստանյայց առաքել. եկեղեցու և թեմերի գործունեությանը: Տպագրում է գրական գործեր, լեզվաբ. և այլ նյութեր:




«Նոր յառաջ»,
2009-ից, Փարիզ

«ՆՈՐ ՅՈՅՍ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1935–36-ին Ստամբուլում: Հաջորդել է «Նոր լոյս» (1933–34) պարբ-ին: Տնօրեն՝ Գրիգոր Մակար, խմբագիր՝ Օննիկ Չաթալյան: Տպագրել է տեղեկություններ միջազգ. քաղ. իրադարձությունների, համաշխ. և հայ կինոարվ-ի ու թատրոնի մասին, մարզ. լուրեր: «Ուղեւորութիւն մը դեպի խորհրդային երկիր» ծավալուն ճանապարհորդ. նոթերում ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի առօրյան: Անդրադարձել է նաև կենցաղավարության, առողջապահ-յան, կրթության, նորաձևության և այլ հարցերի:

Նոր Նախիջևանի հայկական տպագրություն



Ստեփանոս Սյունեցու «Ողբք եւ հառաչանք» (1790, Սբ Խաչ վանքի տպ.) գրքի նախատիտղոսաթերթը



Պողոս Տյուրիկեցի Թորոսյանի «Տետրակ համառօտ բառարանի» (1794, Սբ Խաչ վանքի տպ.) գրքի տիտղոսաթերթը



Ափրպեփի «Շխնոց» (1898, Հ. և Ս. Ավագյան եղբ. տպ.) գրքի տիտղոսաթերթը

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1789-ին՝ Հովսեփ *Արղությանի* ջանքերով, որը Ս. Պետերբուրգում գնել է Գրիգոր Խալղարյանի տպարանը և տեղափոխել Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանք: Այն Հվ Ռուսաստանի առաջին տպարանն էր: Գործել է մինչև 1795-ը. հրատարակել է 15 անուն գիրք՝ Աղեքսանդր Ջուղայեցու «Գրքոյկ որ կոչի Աղօթամատոյց» (1790), Սաղմոսարան (1790, 1791), Ստեփանոս Սյունեցու «Ողբք եւ հառաչանք» (1790), Սիմեոն Երևանցու «Ջբօսարան հոգեւոր» (1790) և «Գիրք աղօթից» (1794), Ժամագիրք (1791), Հովհաննես Երզնկացու (Ծործորեցի) «Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ» (1792), Ղազար Ա Ջահկեցու «Աստուածաղերս» (1792, 1793), Հ. Արղությանի «Դուռն ողորմութեան» (1792), «Տարեցոյց եւ օրացոյց» (1792, 1793), Պ. Քալանթարյանի «Բժշկարան համառօտ-բառարան» (1793), Ֆ. Ֆենելոնի «Պատմութիւն Թէլամաքի որդւոյ Յուլիսի» (1793, վերահրտ.՝ հ. Ա, 1794, հ. Բ, 1795, թարգմ.՝ Մ. Երևանցու), Խորհրդատետր (1794), Հ. Նալյանի «Հոգեշահ» (1794), Պ. Տյուրիկեցի Թորոսյանի «Տետրակ համառօտ բառարանի» (հայ., թուրք., 1794): 1796-ին տպարանը տեղափոխել են Աստրախան:

XIX դ-ի վերջին–XX դ-ի սկզբին ստեղծվել են տեխնիկապես հագեցած նոր տպարաններ, որոնցից հայտնի էին Սերովբե Հարությունյանի (գործել է 1882–92-ին. տպագրել 15 անուն գիրք), Աբրահամ Ջամինյանի և Վ. Քիրյանի (1894–97, 14 անուն), Հ. և Ս. Ավագյան եղբայրների (1897–1901, 11 անուն) տպարանները, որտեղ լույս են տեսել Ա. Բահաթրյանի «Այբբենարան եւ առաջին ընթերցարան» (1886), Գ. Այվազովսկու «Դասատետր մեկնութեան խորհրդոյ եւ արարողութեանց սրբոյ պատարագին» (1894), Մ. Տեր-Մինասյանի «Պատմական գրոյցներ եւ անուանական ցուցակ» (1896), Ատրպետի «Շխնոց» (1898) և այլ գրքեր: 1851-ին 1 գիրք տպագրվել է Գ. Պատկանյանի, 1893-ին 2 գիրք՝ Թեմական դպրանոցի տպարանում: XX դ-ի սկզբին աչքի է ընկել Սերովբե Ավագյանի տպարանը. գործել է 1901–20-ին, տպագրել ավելի քան 110 անուն գիրք:

Նոր Նախիջևանի տպարաններում հրատարակվել են Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի երկերի ժող-ները, գրական-գեղ. երկեր, դասագրքեր, բազմաթիվ գրքեր՝ գաղութի ու բարեգործ. հաստատությունների պատմության մասին:

«ՆՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆ», հաս-քաղ., գրական երկշաբաթաթերթ: ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 2003-ից Ստեփանակերտում: Խմբագիրներ՝ Ալեքսանդր Քանանյան, Ալբերտ Ավետյան, Վահան Դանիելյան, Գայանե Բաղրամյան (2008-ից): Լուսաբանում է շրջանի հաս-քաղ., սոցիալ-տնտ., մշակութ. կյանքը, անդրադառնում է երիտասարդության հիմնահարցերին, մեծ տեղ է հատկացնում Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներին, տպագրում է գրական գործեր, շրջվարչակազմի հայտարարություններ: Թղթակցում են նաև ընթերցողները:

«ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ», գրական-գեղ., գիտ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1923–24-ին Կահիրեում: Խմբագիր՝ Գուրգեն *Միսիթարյան:* Առաջադրել է հայ-ի բարբառների ուսումնասիրության և պահպանման գաղափարը: Արձագանքել է Խորհրդ. Հայաստանի գրական-թատեր. կյանքին, նպաստել Սփյուռքի գրական ուժերի համախմբմանը: Տպագրել է հայ գրողների գործեր, Ռ. Թագորի, Օ. դը Բալզակի, Հ. Ք. Անդերսենի և ուր. ստեղծագործություններից, ազգագր. նյութեր՝ «Մասունքներ գավառեն» խորագրով: Անդրադարձել է Եգիպտոսի հին շրջանի պատմությանն ու արվ-ին:

«ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ», քաղ., աշխատավոր. շաբաթաթերթ: Հունաստանի կոմկուսի հայկ. բյուրոյի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1931–34-ին Աթենքում: Խմբագիրներ՝ Գրիգոր ***Նազիկյան***, Վ. Սաքալյան, Մ. Դարբինյան: ***«Ժողովուրդի ձայն»*** պարբ-ի շարունակությունն է: Կազմակերպել է հունահայ գաղութի մասնակցությունը հույն աշխատավորության դասակարգային պայքարին: Լուսաբանել է ՀՕԿ-ի հունահայ մասնաճյուղերի և հայրենասիր. այլ կազմակերպությունների աշխատանքները, հրատարակել լուրեր Խորհրդ. Հայաստանի մշակութ. ձեռքբերումների մասին: Զատագովել է հայրենադարձությունը և ակտիվորեն մասնակցել այդ գործին: «Ն. շ.»-ի գրական-հրապարակախոս. բաժնին հիմնականում թղթակցել են հունահայ գործիչները: Տպագրել է նաև խորհրդահայ հեղինակների արձակ և չափածո գործեր:

«ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ», ՀԲԸՄ Եվրոպայի շրջ. կենտր. հանձնաժողովի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1967–92-ին Փարիզում (1971–78-ին ընդհատվել է): «Շինարար»-ի (1956–66, Փարիզ, խմբագիրներ՝ Վահե Անդրանիկյան, Հովհաննես Պողոսյան, Գրիգոր Պահրի, Հայկ Թոփաքյան) շարունակությունն է: Խմբագիրներ՝ Սեդրակ Քորյան, Երվանդ Փափազյան, Կարիկ ***Պաամաճյան***, Ա. Համբարձումյան: Լուսաբանել է միության գործունեությունը, անդրադարձել Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության միջոցառումներին, Մելքոնյան կրթ. հաստատության, Նուպարյան մատենադարանի, ազգ. այլ հաստատությունների աշխատանքներին, օժանդակել Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդմանը: Տպագրել է Եվրոպայի հայկ. համայնքների, հայրենիքի առօրյային նվիրված նյութեր, գրակ-յանը, արվ-ին, հաս. գիտ-ներին վերաբերող հոդվածներ:

«ՆՈՐ ՊԱՏԳԱՄ», գրական-գեղ. ամսագիր: Լույս է տեսել 1924–25-ին Թեհրանում: Խմբագիր՝ Մարգար Ղարաբեգյան (Դև): Ծանոթացրել է ժամանակի գրական անցուդարձին, ներկայացրել իրանահայ երիտասարդ ստեղծագործողներին, տեղեկություններ հաղորդել ՀԽՍՀ տնտեսության և հաս. կյանքի վերաբերյալ, արտատպել նյութեր սփյուռքահայ թերթերից:

«ՆՈՐ ՁՈՒՂԱՅԻ ԱԽԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան (Մատենադարան, ձեռ. № 7639): Գրել և պատկերազարդել է ***Հակոբ Ջուղայեցին*** 1610-ին Նոր Ջուղայում՝ խոջա Ավետիքի պատվերով (նվիրվել է Նորաշենի Տիրամայր Սբ Աստվածածին եկեղեցուն): Ավետարանը (302 թերթ, 24,5 x 18,5 սմ, բոլորգիր) ունի տերուն. և վախճանաբան. թեմաներով 59 մանրանկար (զետեղված են ձեռագրի սկզբում), 10 խորան, ավետարանիչների 4 դիմանկար և զարդանկարված 4 անվանաթերթ, Քրիստոսի տոհմագրությունից 3 թերթ, տեքստում՝ 1 մանրանկար և լուսանցազարդեր: Բուն տեքստը շքեղազարդ գմբեթավոր շրջանակների մեջ է, ընդ որում՝ 4 Ավետարաններից յուրաքանչյուրն ունի տեքստի երիզապատման ուրույն ձև: Պատկերագր. տարրերի բազմազանությամբ և հարստությամբ հանդերձ՝ ծաղկողը պահպանել է կոմպոզիցիայի հստակությունը, ստեղծել բարձրարվեստ գործ: Ավետարանի կերպարները հասարակ մարդիկ են՝ նկարչի ժամանակակիցները, և քիչ են հիշեցնում սրբերի: Իր գեղ. առանձնահատկություններով ձեռագիրը հայկ. մանրանկարչության բացառիկ նմուշներից է:

Գրկ. Դրամբյան Ի., Հակոբ Ջուղայեցու մանրանկարների պատկերագրությունը, «ԲՄ», 1971, № *10:* **Նույնի,** *Новые материалы по биографии Акопа Джугаецы, «ԼՀԳ», 1969,* № *10:*

«ՆՈՐ-ՁՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐ», ամսաթերթ: Նոր Ջուղայի ազգ. հոգաբարձության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1904–08-ին Նոր Ջուղայում: Խմբագիր՝ Բագրատ եպս. Վարդազարյան: Տպագրել է հոգաբարձության և առաջնորդարանի կարգադրությունները, տեղեկագրերն ու հաշվետվությունները, լուսաբանել ազգ., կրթ. և



«Նոր Շահումյան», *2003-ից, Սրեփանակերտ*



«Նոր շինարար», *1967–92, Փարիզ (№ 9, 1970)*




«Նոր Ջուղայի Աւետարան». *«Մատթեոս ավետարանիչ», մանրանկար (1610, գրիչ և ծաղկող՝ Հակոբ Ջուղայեցի, Մատենադարան, ձեռ. № 7639)*


1907
ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ
ԼՐԱԲԵՐ

«Նոր–Ջուղայի լրաբեր», *1904–08, Նոր Ջուղա*

Նոր Ջուղայի հայկական տպագրություն


ԽՐԱՀԱՏԱՐԱԿ ՕԳՏԱԿ

Հովհաննես Ջուղայեցու «Գիրք համառօտ վասն իսկապէս եւ ճշմարիտ հաւատոյ» (1688) գրքի 1-ին էջը


ԳԻՐ ԵՒ ԿԵԱՆՔ
Ա. ՄԵՍ
1925

«Գիր եւ կեանք» (1925) դասագրքի փիփղոսաթերթը

բարեգործ. հաստատությունների գործունեությունը: Ծանոթացրել է Պարսկաստանի և Հնդկաստանի հայկ. գաղթավայրերի իրադարձություններին, տպագրել պարսկահայ գրողների ստեղծագործություններ, նմուշներ՝ համաշխ. գրակ–ից:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1638–ին *Խաչատուր Կեսարացու* ջանքերով Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում հիմնադրվել է տպարան, որն առաջինն էր Իրանում և առհասարակ ողջ Միջին Արևելքում: Ուշագրավ է, որ և՛ տպատառերը, և՛ տպագր. մամուլը պատրաստել է տեղում՝ հայտնի մեխանիկոս Հակոբջան Ջուղայեցին: Մինչև 1647–ը տպագրվել են Սաղմոսարան (1638), Խորհրդատետր (1641), «Հարանց վարք» (1641), Ժամագիրք (1642), Պարզատումար (1647), Աստվածաշունչ (1650, անավարտ), 3 դավանաբան. գրքեր՝ Աղեքսանդր Ջուղայեցու «Գիրք ատենական որ ասի վիճաբանական» (1687), «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց» (1688), Հովհաննես Ջուղայեցու «Գիրք համառօտ վասն իսկապէս եւ ճշմարիտ հաւատոյ» (1688), 1693–ին՝ «Կոնդակ», Մովսես Բջնեցու «Յաղագս կարգի կաթողիկոս ձեռնադրութեան» ևն:

Շուրջ երկդարյա դադարից հետո 1872–ին տպարանը վերագործարկվել և գործում է ցայսօր. հրատարակել է ավելի քան 400 անուն գիրք [Հ. Տեր–Հովհաննյանի «Պատմութիւն Նոր Ջուղայու...» (հ. 1–2, 1880–81, վերահրտ.՝ հ. 1–2, 1980–81), Ա. Աթայանի «Սալմաստ» (1906), Ա. Երեմյանի «Սպահանի Փերիա գաւառը» (1919), «Աշուղ Հարթուն Օղլի» (1920) և «Պարսկահայ աշուղներ» (գիրք 2–3, 1920–21), Հ. Մալխասյանի և Նար–Դոսի կազմած «Գիր եւ կեանք» (1925) դասագիրքը, Է. Մանճիկյանի «Յովհաննէս կաթողիկոս Օձնեցի» (1967), Լ. Մինասյանի «Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանը» (1968), Գ. Սարգսյանի «Հայոց «Փոքր ածուն» իրանեան հողին վրայ» (1971), «Նամակագրութեան կանոններ: Ա, Բ, Գ» (1979–85), «Իրանի հայկական եկեղեցիները» (1983), «Պատմութիւն Նոր Ջուղայի հայոց ազգային երկսեռ դպրոցների, 1880–1985» (1985), «Մէկ շաբաթ Հնդկաստանում» (1990), «Գրչութեան արուեստը Նոր Ջուղայում» (1991), «Առակաց գիրք» (1994), «Նոր Ջուղայի թատրոնը» (1995), «Հաղորդութեան խորհուրդը» (1998), Գիրգոր Նարեկացու «Խրատ ուղիղ հաւատի եւ առաքինի ու մաքուր վարքի մասին» (2003) ևն]: Նույն տպարանում է տպագրվել նաև *«Նոր–Ջուղայի լրաբեր»* ամսաթերթը:

Գրկ. **Մինասեան Լ.,** *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը, Նոր Ջուղա, 1972:* **Իշխանյան Ռ.,** *Հայ գրքի պատմություն, հ. 1, ե. , 2012 : Հայ տպագրութիւնն Իրանում. 1638–2011 (կազմ.՝ Ա. Աղայան, Բ. Տերտերյան), Թեհրան, 2012:* **Գևրիկյան Վ.,** *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ, ե., 2014:*

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, գործում է տեղի Սբ Ամենափրկիչ վանքի տնօրինության ներքո: Հավաքածուն կազմվել է դեռևս XVII դ–ի 1–ին կեսին՝ վանքին և եկեղեցիներին պատկանած ձեռագրերից, հետագայում հարստացել է նվիրատվությունների և գնումների միջոցով: Սկզբնապես եղել է մատենադարան–թանգարան, որի համար առանձին շենք է կառուցվել 1906–ին: 1971–ին փոխադրվել է նորակառույց շենք և դարձել առանձին միավոր: Ընդգրկում է հիմնականում կրոն., պատմ., բժշկագիտ. ավելի քան 700 ձեռագիր, որոնցից շուրջ 40–ը՝ մագաղաթե: Ամենահինը X դ–ի Ավետարանն է (ձեռ. № 422): Զգալի մասն ունի ընտիր մանրանկարչ. պատկերազարդումներ: Հատկապես նշանակալի է Իգնատիոս մանրանկարչի (XIII դ.) թեմատիկ պատկերներով ձևավորած Ավետարանը (ձեռ. № 36): Մատենադարանի նախկին շենքում գործում է գրադարան (16 000 անուն գիրք):

Գրկ. **Մինասեան Լ.,** *Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանը, Նոր Ջուղա, 1968:*

«ՆՈՐ ՍԵԲԱՍՏԻԱ», տեղեկատու պարբերաթերթ: Համասեբաստահայ վերաշինաց միության պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1936–ից Նյու Յորքում՝ հայ. և անգլ.: Խմբագիրներ՝ Հովակիմ Տաղավարյան, Մեսրոպ Պուճագյան, Գրիգոր Ոսկանյան, ապա՝ խմբագրակազմ: Լուսաբանում է միության և նրա մասնաճյուղերի գործունեությունը, անդրադառնում համահայկ. հիմնախնդիրներին, տպագրում է Հայաստանի տնտ., մշակութ. կյանքը լուսաբանող նյութեր, հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններ:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ», մարզ. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1926–29–ին Պիրեյում (Հունաստան), ապա՝ Աթենքում: Խմբագիրներ՝ Ս. Տամլամյան, Ա. Տեր–Հակոբյան: Շարունակել է հունահայ մարզ. պարբ–ների ավանդույթները, լուսաբանել Հունաստանի և այլ երկրների մարզ. կյանքը, ներկայացրել հայ անվանի մարզիկներին: Հանդեսն անդրադարձել է անտիկ աշխարհի մարզ. պատմությանը, նշել սպորտի ազդեցությունը հին հուն. արվ–ի վրա: Կարևորել է սպորտի դաստիարակչ. և առողջապահ. դերը. տպագրել է անվանի բժիշկների ու մանկավարժների հոդվածներ:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ», հոգևոր, ազգ., մշակութ. ամսաթերթ: Տորոնտոյի Սբ Երրորդություն եկեղեցու վարչության հրատ.: Լույս է տեսնում 1955–ից Տորոնտոյում՝ հայ., անգլ., ֆրանս.: Տպագրում է կրոն. հոդվածներ, հայ հոգևոր կյանքի նորություններ, անդրադառնում է կանադահայ համայնքի առօրյային, ՀՀ–ում, ԼՂՀ–ում, Սփյուռքի գաղթավայրերում տեղի ունեցող իրադարձություններին:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ», ազգ., գրական ամսաթերթ: Լույս է տեսել 1975–85–ին Լոս Անջելեսում: Խմբագիր՝ Սոնիր Նայիրի: Լուսաբանել է ՀԱՀԳԲ–ի նպատակներն ու գործունեությունը: Տպագրել է հայ և օտարազգի գրողների գործերից:

«ՆՈՐ ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉԻ ՅՈՐԴՈՐԱԿ», Մովսես *Բաղրամյանի* աշխատությունը: Տպագրվել է 1772–73–ին Սադրասում:


«ՆՈՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ», տեղեկատու հանդես: Տիգրանակերտի հայրենակց. և վերաշինաց միության կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսել 1918–40–ին Բրուքլինում, ապա՝ Նյու Յորքում: Խմբագիրներ՝ Եղիշե Տեպաշյան, Հ. Ստամպոլյան: Լուսաբանել է միության և մասնաճյուղերի աշխատանքները, համագործակցել ՀՕԿ–ի ընդհանուր վարչության հետ, հրապարակել միության պատգամավոր. ժողովների նյութերը, հանձնարարականներ, հանգանակությունների ցուցակներ ևն: Նպաստել է հայաստանաբնակ և սփյուռքաբնակ տիգրանակերտցիների միջև կապերի հաստատմանը, աջակցել ներգաղթին:

«ՆՈՐ ՈՒՂԻ», երիտասարդ ստեղծագործողների գրական ալմանախ: Լույս է տեսել 1913–16–ին Ալեքսանդրապոլում (8 գիրք): Խմբագիր՝ Աշոտ Սիմոնյան: Տպագրել է Անդրկովկասի, մասնավորապես՝ Հայաստանի սկսնակ հայ գրողների ստեղծագործություններ, որոնց հիմն. թեման սերն էր ու հայրենիքը, դասակարգային հակասությունն ու Հայ դատը: Թարգմանաբար հրատարակել է նաև Հ. Հայնեի, Մ. Շահինյանի և ուր. գործերից:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գրական–գեղ., հաս–քաղ. ամսագիր: Լույս է տեսել 1929–32–ին Երևանում: Խմբագիրներ՝ Պողոս *Սևակինցյան*, Արտաշես *Կարինյան*, Եղիա *Չուրար*, Դրաստամատ *Տեր–Սիմոնյան*: Նպաստել է խորհրդահայ գրակ–յան զարգացմանը, գրական–գեղ. նոր ըմբռնումների ձևավորմանն ու ամրապնդմանը: Տպագրել է Մ. Նալբանդյանի, Հ. Պարոնյանի, Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ս. Զորյանի, Մ. Արազու, Վ. Թոթովենցի, Ն. Զարյանի, Ա. Վշտունու, Գ. Սարյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի և դաս. ու ժամանակակից այլ գրողների ստեղծագործություններ, Ա. Տերտերյանի, Հ. Սուրխաթյանի և ուր. գրականագիտ. և քննադատ. հոդվածներ: Երաժշտության ու արվ–ի հարցերին ան-



«Նոր Սեբաստիա»,
1936–ից, Նյու Յորք
(№ 156, 1982)



«Նոր սերունդ»,
1955–ից, Տորոնտո



«Նոր սերունդ»,
1975–85, Լոս Անջելես




«Նոր ուղի»,
1929–32, Երևան
(№ 9–10, 1929)



«Նոր ուղի», *1945–47, Բեյրութ*



«Նոր օր», *1921-ից, Լոս Անջելես*



«Նորագոյն ծաղիկ զօրութեանց» *(1685, Հռոմ) գրքի փիփղոսաթերթը*

դրադարձել են Ռ. Թերլեմեզյանը, Գ. Լևոնյանը, Ա. Սարգսյանը, Վ. Ղորղանյանը, Ս. Քոչարյանը: Գիտ–յան բաժնում տպագրվել են Գ. Ղափանցյանի, Ռ. Գաբրիելյանի, Է. Հասրաթյանի, Մ. Հասրաթյանի և ուր. ուսումնասիրություններ ու հոդվածներ: Անդրադարձել է նաև սոցիալ–տնտ. տարբեր խնդիրների, հեղ. շարժումների պատմությանը:

«ՆՈՐ ՈՒՂԻ», քաղ., հաս. և գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1935–39–ին Լոս Անջելեսում: Խմբագիր՝ Սարտիկ Սարտենց: Նպաստել է Կալիֆոռնիայի հայության՝ հայրենիքի հետ կապի ամրապնդմանը, մշտապես ահազանգել է ֆաշիզմի վերահաս վտանգի մասին՝ կոչ անելով ընդհանուր ճակատ կազմել նրա դեմ: Զետեղել է նյութեր Խորհրդ. Հայաստանի տնտ., գիտ. ու մշակութ. ձեռքբերումների, զարգացման հեռանկարների մասին: Խրախուսել է հայրենադարձությունը: Գրական բաժնում տեղ են գտել հայ դաս. և խորհրդ. հեղինակների գործեր: Որոշ նյութեր հրապարակվել են անգլ.:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գրական, հաս. եռօրյա թերթ: Ռումինիայի հայ հայրենասերների, ապա՝ «Հայաստանյան ճակատ» կազմակերպության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1944–45–ին Բուխարեստում: Ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի կյանքին, պատմել Հայրենական մեծ պատերազմում հայ մարտիկների սխրանքների մասին, տպագրել գրական–գեղ. գործեր, երգիծ. պատմվածքներ: Աշխատակցել են Վ. Պալճյանը (Վազգեն Ա կաթողիկոս), Մ. Պոտուրյանը, Ե. Գոլանճյանը, Ա. Մնացականյանը և ուր.:

«ՆՈՐ ՈՒՂԻ», գրական, հաս., մշակութ. եռամսյա, ապա՝ երկամսյա պարբերագիրք: Լույս է տեսել 1945–47–ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Գրիգոր ***Քեշիշյան,*** Գրիգոր Սիսվան (Բեքմեզյան), Հարություն Գայայան, Հրաչ ***Բուջիկանյան***, Վարսիկ Պոյաճյան (Շաքե Վարսյան), Փանոս Չագրյան: Լուսաբանել է Հայաստանի տնտ., մշակութ. ձեռքբերումները, Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությունը, մասնավորապես՝ հայկ. Թամանյան դիվիզիայի մարտ. ուղին, Ֆրանսիայի Դիմադրության շարժման հայ մասնակիցների (Մ. Մանուշյան և ուր.) հերոս. պայքարը, նպաստել է Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդմանը, խրախուսել 1946–ի հայրենադարձությունը: Անդրադարձել է հայ գրողների հոբելյաններին, տպագրել խորհրդահայ հեղինակների գործեր, ինչպես նաև նմուշներ ռուս դաս. գրակ–ից:

«ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂ», հաս–քաղ., գրական–գեղ. պատկերազարդ հանդես: Ուսանող. անդրանիկ պարբ–ը ՀԽՍՀ–ում: ԵՊՀ ուսանող. խորհրդի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1924–ին Երևանում: Խմբագիր՝ Նաիրի ***Զարյան:*** Լուսաբանել է բուհի առօրյան, բարձրագույն կրթության զարգացման հեռանկարները հանրապետությունում: Թղթակցել են Հ. Ազատյանը, Ա. Սհակյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Լուկաշինը, Վ. Արծրունին և ուր.: Տպագրել է Գ. Մահարու, Արաքսի, Գ. Վանանդեցու ստեղծագործություններից:

«ՆՈՐ ՕՐ», ազգ., բանասիր. ու քաղ. եռօրյա լրագիր: Կահիրեի հայկ. գաղութի լսարան–ընթերցարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1899–1901–ին Կահիրեում: Խմբագիր՝ Սմբատ ***Բյուրատ:*** Տպագրել է նյութեր գաղութահայության կյանքի վերաբերյալ, արտատպել հաղորդագրություններ Եգիպտոսի քաղ. իրադրության մասին: Անդրադարձել է Ռուսաստանի ուսանող. հուզումներին, Անգլիայի գաղութատիր. ձգտումներին՝ Աֆրիկայի հարավում, Թուրքիայի ներքին կացությանը: Տպագրել է գրական–գեղ., հրապարակախոս. նյութեր, Անատոլ Ֆրանսի՝ հայ որբերին նվիրված հոդվածը:

«ՆՈՐ ՕՐ», ազգ., քաղ. և գրական շաբաթաթերթ: ՌԱԿ–ի ԱՄՆ–ի արմ. շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1921–ից (մինչև 1964–ը՝ Ֆրեզնոյում, 1964–ից՝ Լոս Անջելեսում, 1921–22–ին՝ «Նոր կեանք–Արօր»): Խմբագիրներ՝ Գ. Սարաֆյան, Արամ Ամիրխանյան, Անդրանիկ ***Փոլատյան***, ***Վահե Հայկ***, Նորայր Անդրեասյան, Անդրանիկ ***Անդրեասյան***, Նուբար Պերպերյան, Օշին Քեշիշյան, Ասատուր Տեովլեթյան, Նուբար ***Ալիշ–***

յան, Վ. Սեմերճյան, Հ. Պողոսյան, Ս. Մինասյան, Հակոբ Մարտիրոսյան: Լուսաբանում է ամերիկահայ համայնքի ազգ. կյանքը, քաղ., մշակութ., կրթ. և այլ ոլորտների առնչվող խնդիրներ, վերլուծում է Սփյուռքում հայապահպանության, սփյուռքահայ կազմակերպությունների, հայոց անկախ պետականության ամրապնդման հարցեր, անդրադառնում ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ՆՈՐԱԳՈՅՆ ԾԱՂԻԿ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ», բարոյախրատ. երկերի ժող.: Իտալ-ից թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու:


Առաջին անգամ տպագրվել է 1675-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Նորագոյն ծաղիկ զօրութեանց, Flos virtvtvm...», Բ-ին՝ «Նորագոյն ծաղիկ զօրութեանց: Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ...» (248 էջ, 8º, 11 x 6,7 սմ):

Տպագրվել է նաև՝

1685-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբռնիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» (237 էջ, 8º, 10,5 x 6,5 սմ):

1724-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (256 էջ, 8º, 12,2 x 7,5 սմ):

«ՆՈՐԱԳՈՅՆ ՈՒՂՂԵԿՑՈՒԹԻՒՆ», դավանաբան. երկ: Լատ-ից թարգմանել և կազմել է Հովհան Թոխաթեցին: Տպագրվել է 1725-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Լատ. տիտղթ-ին՝ «Nuova Guida Angelica Perpetua Romana...», հայ-ին՝ «Նորագոյն ուղղեկցութիւն հրեշտակային հռօմէական եւ մշտատեւ, սակս այց առնելոյ զեկեղեցիս ի ներքս եւ ի արտաքս Հռօմայ, ուր հոչակին ուխտք, եւ տօնախմբութիւնք» (254 էջ, 8º):



«Նորագոյն ուղղեկցութիւն» *(1725, Հռոմ) գրքի գլխազարդով (1-ին) էջ*

ՆՈՐԵՆՑ (Երիցյան) Վաղարշակ Տոնապետի [13.9.1906, գ. Շենիկ (Սասունի գավառ)–20.1.1973, Երևան], բանաստեղծ: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Փրկվելով Մեծ եղեռնից՝ 1916-ին ապաստանել է Այսրկովկասի տարբեր որբանոցներում: Սովորել է Թիֆլիսի հայկ. գիմնազիայում և Ներսիսյան դպրոցում: Մասնակցել է Եղիշե *Չարենցի* ղեկավարած «Նոյեմբեր» գրական միության ստեղծմանը:


Կազմել և խմբագրել է արևմտահայ գրողների երկերի ժող-ներ՝ «Արևմտահայ բանաստեղծները» (1930), Մ. Մեծարենցի «ԵԼԺ»-ն (1934, երկուսն էլ՝ Վ. Ալազանի հետ), Ա. Չոպանյանի «Երկերը» (1966, Ս. Տարոնցու հետ), Պ. Դուրյանի «Տաղերը» (1967) ևն, կազմել է Խորհրդ. Հայաստանի հաս-քաղ., մշակութ. կյանքի տարեգրությունը՝ «Տասներկու տարի» (1933, Վ. Ալազանի հետ):

Լույս են տեսել Ն-ի «Օրերի ճամփին» (1925), «Իրիկուն» (1926), «Երկրորդ գիրք» (1930), «Լիրիկական ֆրոնտ» (1932), «Բանաստեղծություններ» (1936), «Գիրք քնարական» (1954), «Իմ աշխարհը» (1958), «Դարերի ավանդ» (1968) բանաստեղծությունների ժող-ները, հայ նորագույն գրակ-յան անցած ուղուն է նվիրված «Հուշեր և արձագանքներ» (1968) հուշագրությունը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–2, 1963, հ. 1, 2, 1971, 1973):

1937-ին բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

ՆՈՐՈՒՆԻ (Նորաշխարհյան) Հակոբ Լևոնի [12.8.1923, գ. Յողունօլուք (Հալեպի նահանգի Անտիոքի գավառ)–4.7.1985, Երևան], գրող, հրապարակագիր: Ավարտել է Բեյրութի ֆրանս. համալսարանը: 1951-ին Բեյրութում խմբագրել է *«Նոր աշխարհ»*, 1953-ին՝ *«Արև»*, 1956–66-ին՝ *«Արարատ-գրական»* պարբ-ները: Եղել է ՍԴՀԿ և Ձեյթունի հայրենակց. միության ղեկավարներից, «Նոր սերունդ մշակութային շարժում» միության նախագահը: 1975-ին հայրենադարձել է, 1982–85-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում:

Լույս են տեսել Ն-ի «Դողդոջ կայծեր» (1943, Հալեպ), «Սահմանագլուխ» (1959, Բ.), «Վերապրում» (1973), «Տարիներիս ապագան» (1983) բանաստեղծությունների ժող-ները, «Իշխանը» (1944, Հալեպ, Սեթ Սահակյանի տպ.), «Երջանկութեան ճամբան...», «Ինչ շուտ փոխուեցար» (երկուսն էլ՝ 1966, Բ., Տոնիկյան տպ.) թատերգությունները, «Վարձու պուպրիկներ» (1970, Բ., նույն տպ.), «Մեղքի արահետեն» (1978) պատմվածքների ժող-ները, «Նամակ ամերիկահայ բարեկամիս: Ապրումներ, տպավորութիւններ» (1966, Բ.), «Հրաչեայ Քոչարի «Սպիտակ գիրքը»» (1967, Բ.) տպավորությունների, խորհրդածությունների և քննադատ-վերլուծ. գործերը:




Վաղարշակ Նորենցի *«Գիրք քնարական» (1954, Ե., Հայպետհրատ) ժողովածուի կազմը*



Հակոբ Նորունու *«Մեղքի արահետեն» (1978, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



«Նորք», *1922-26, 1928, Երևան*



«Նորք», *1933-ից, Երևան (№ 4, 1996)*



«Նուագարան երանուելոյ կուսին Մարիամու» *(1676, Մարսել) գրքի գլխազարդով (20-րդ) էջ*

«ՆՈՐՔ», հայկ. տառատեսակ: Մշակել է Խաչիկ Սամվելյանը 1965-ին: Ունի 3 գծագրություն՝ ուղիղ սպիտակ, շեղատառ սպիտակ և ուղիղ կիսասև, շարող տողաձույլ մեքենայի համար՝ կեգել 6, 8, 10, 12, իսկ մեծակեգել ՀՍ մեքենայի համար՝ կեգել 16, 20, 24, 28, 36, 42, 48:

«ՆՈՐՔ», գրական, գիտ. և քաղ. հանդես: Լույս է տեսել 1922–26 և 1928-ին Երևանում (8 գիրք): Խմբագիրներ՝ Աշոտ *Հովհաննիսյան*, Ասքանազ *Մռավյան*, վերջում՝ խմբագրակազմ: Գրական և մշակութ. ժառանգության գնահատման հարցերում մերժել է պրոլետկուլտականությունը: Տպագրել է Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Շիրվանզադեի, Լեոյի, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Մ. Արազու, Մ. Մանվելյանի, Ս. Զորյանի, Ն. Զարյանի, Ա. Բակունցի, Մ. Արմենի և ուր. ստեղծագործություններ, մեծ տեղ է հատկացրել գրական-քննադատ. հոդվածներին (Ա. Հովհաննիսյան, Ա. Կարինյան և ուր.), թարգման. բաժնում ներկայացվել են համաշխ. գրակ-յան լավագույն նմուշներ: Գիտ. և քաղ. բաժիններում հրատարակված Ս. Կասյանի, Թ. Ավդալբեգյանի, Ե. Շահազիզի, Աշխարհիբեգի և ուր. հոդվածները հիմնականում առնչվում են հայոց պատմության տարբեր շրջանների հիմնախնդիրներին: «Մոտիկ անցյալից» խորագրով տպագրել է հուշագրություններ, վավերագրեր, մեկնաբանություններ ևն, որոնք վերաբերում են XX դ-ի հաս-քաղ. կացությանն Այսրկովկասում (մասնավորապես՝ Արլ. Հայաստանում): Անդրադարձել է նաև խորհրդահայ պարբ-ների գործունեությանը, տպագրել մամուլի տեսություն:

«ՆՈՐՔ», գրական-գեղ., հաս-քաղ. եռամսյա հանդես: ՀԳՄ հրատ.: Լույս է տեսնում 1933-ից Երևանում (1933–40-ին՝ «Խորհրդային գրականություն», 1940–43 և 1955–88-ին՝ «Սովետական գրականություն», 1943–55-ին՝ «Սովետական գրականություն և արվեստ»): *«Վերելք»* և *«Նոր ուղի»* գրական հանդեսների շարունակությունն է: Խմբագիրներ՝ Հարություն *Մկրտչյան*, Նորայր *Դաբաղյան*, Համայակ *Միրաս*, Ռուբեն *Զարյան*, Էդվարդ *Թոփչյան*, Հովիկ *Մելիքյան*, Սողոմոն *Սողոմոնյան*, Հրաչյա *Քոչար*, Վազգեն *Մնացականյան*, Էդվարդ *Զրաչյան*, Ստեփան *Կուրտիկյան*, Հրաչյա *Հովհաննիսյան*, Ռուբեն *Հովսեփյան*, Ֆելիքս *Մելոյան* (1998-ից): Անդրադարձել է հայ գրակ-յան տարբեր շրջանների արժևորման, գրական լեզվի մաքրության, հայոց պատմության և բազմաթիվ այլ խնդիրների: 1943–55-ին լուսաբանել է կերպարվ-ի, երաժշտության, թատրոնի, ճարտ-յան հարցեր, մշակութ. հաստատությունների աշխատանքը: «Ն.»-ի խմբագր. աշխատանքներին աջակցել են Շիրվանզադեն, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Մ. Արմենը, Ա. Իսահակյանը, Ս. Զորյանը, Պ. Սևակը, Վ. Խեչումյանը, Հ. Շիրազը, Վ. Անանյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Ս. Խանզադյանը, Վ. Դավթյանը, Հ. Սահյանը, Հ. Մաթևոսյանը, Հ. Թամրազյանը և ուր:

«ՆՈՒԱԳԱՐԱՆ ԵՐԱՆՈՒՀՈՅ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ», կաթոլիկ եկեղեցու տոների, աղոթքների, Մարիամ Աստվածածնին նվիրված ներբողների ու նրան ձոնված երգերի ժող., թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տպագրվել է 1676-ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում (472 էջ, 8º, 8,5 x 4,3 սմ):

«ՆՈՒԱԳ-Ք ՀԱՅԿԱԿԱՆՔ», տետր երաժշտական, «...որ պիտի պարունակէ ազգային եւ երբեմն եւրոպական կամ ասիական նուագներ եւրոպական ձայնագրութեամբ եւ ամէն տեսակ քնարով նուագելու յարմար դրութեամբ» ենթախորագրով: Լույս է տեսել 1879-ին Կ. Պոլսում: Խմբագիր և հրատարակիչ՝ *Եղիա Տնտեսյան*:

ՆՈՒՀԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, գրադարան, հայկ. մշակույթի խոշորագույն կենտրոն Փարիզում. գործում է ՀԲԸՄ-ի հովանավորությամբ: Հիմնադրվել է 1928-ին՝ Պողոս Նուբարի բարերարությամբ և կոչվել նրա անունով: Ն. մ-ում պահվում են հայ և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի վերաբերյալ մոտ 42 հզ. արժեքավոր հրատ-ներ (որոնցից 22 հզ-ը՝ հայ.), պարբ-ների հարուստ հավաքածուներ, ձեռագիր երկասիրություններ, 280 ձեռագիր մատյաններ (Ավետարան, Սաղմոս, Ճաշոց ևն),

լուսանկարներ (10 հզ.), քարտեզներ, ինչպես նաև XIX դ–ի վերջի և XX դ–ի 1–ին քառորդի բազմաթիվ (շուրջ 800 հզ.) արխիվային փաստաթղթեր, այդ թվում՝ Հայոց ազգային պատվիրակության, Հայ առաքել. եկեղեցու Կ. Պոլսի պատրիարքության ննի, որոնք հավաքել է հիմնադիր–տնօրեն Արամ ***Անտոնյանը*** (1928–52): Մասնավոր ապակեդարանում պահվում են զորավար Անդրանիկի պատվանշանները: Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–45) տարիներին գրադարանի գրքերը տարվել են Գերմանիա, որոնց մի մասը հաջողվել է վերադարձնել 1947–ին:

Մատենադարանը յուրատեսակ գիտ. կենտրոն է ինչպես Սորբոնի համալսարանի հայ ուսանողության, այնպես էլ հայագիտ–յամբ զբաղվող այլազգիների համար: Համագործակցում է Ֆրանսիայի Ազգ. գրադարանի և Երևանի մատենադարանի հետ, ֆոնդերը հարստացվում են ՀՀ–ից և սփյուռքահայ համայնքներից ստացվող գրքերով և այլ հրատ–ներով: Լույս է ընծայում ***«Էթյոդ արմենիեն կոնտեմպորեն»*** (մինչև 2013–ը՝ «Ռևյու արմենիեն դե քեսթիոն կոնտամպորեն») տարեգիրքը:

Տնօրեններ են եղել նաև Արմենակ ***Սարաձյանը,*** Արտաշես Գարտաշյանը, Ռայմոնդ–Հարություն Գևորգյանը (1997–ից):

«ՆՈՒՅՆ ՀԱՅՈՒՄ», ազգ., կրթ., մշակութ. պարբերաթերթ, 1968–ից՝ տարեգիրք: ՀԲԸՄ Հովակիմյան–Մանուկյան վարժարանի հրատ.: Լույս է տեսել 1953–75–ին Բեյրութում: Պատ. խմբագիրներ՝ Օննիկ ***Սարգիսյան***, Գ. Կարպիսյան, Զարեհ Մելքոնյան և ուր.: Անդրադարձել է կրթօջախի առօրյային, լիբանանահայ համայնքի ուշագրավ իրադարձություններին, ՀԲԸՄ–ի գործունեությանը, տպագրել է սփյուռքահայ հեղինակների և վարժարանի սաների ստեղծագործություններից: Ունեցել է ֆրանս., անգլ., արաբ. էջեր:

ՆՈՒՊԱՐՅԱՆ Մեսրոպ Հովհաննեսի (3.12.1842, Զմյուռնիա–4.12.1929, Մարսել), թարգմանիչ, բառարանագիր, հրապարակախոս: Ն. 1877–ին հայ. է թարգմանել «Մարսելյեզը», նաև Ֆ. Շատոբրիանի, Ժ. Ռասինի, Վ. Հյուգոյի, Ժ. Մոլիերի, Յ. Վ. Գյոթեի, Վ. Շեքսպիրի և ուր. ստեղծագործություններից, «Հատընտիրք ֆրանսիացի առակախօսներէ» (1928, Ժնև, «Հայ դպրոց» տպ.) ժող–ը:

Լույս են տեսել Ն–ի «Բառարան ֆրանսերէնէ հայ–աշխարհիկ»–ը (1892, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ., վերատպություն՝ 1955, Փ.), «Առձեռն բառարան ֆրանսերէնէ հայ աշխարհիկ»–ը (1911, ԿՊ, Գ. Պաղտատլյանի տպ.), «Գրպանի բառարան ֆրանսերէնէ հայերէն եւ հայերէնէ ֆրանսերէն»–ը (1928, Փ., «Մասիս» տպ.), «Սգապսակ Հայաստանի» (1928, Փ., Հ. Թյուրապյանի տպ.) բանաստեղծությունների ժող–ը:

Ընտրվել է Ֆրանսիայի ակադ–ի պաշտոնակալ (1913):

Գրկ. Հակոբյան Մ., Զմյուռնահայ մտավորականներ Գրիգոր Մսերյանը և Մեսրոպ Նուպարյանը, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1961, № 6:

«ՆՈՒՎԵԼ Դ'ԱՐՄԵՆԻ» («Nouvlles d'Arménie magazine»–«Լուրեր Հայաստանից»), հաս–քաղ. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսնում 1992–ից Փարիզում՝ ֆրանս.: Հիմնադիր–խմբագիր՝ Արա Թորանյան: Տպագրում է վերլուծություններ միջազգ. քաղաքականության վերաբերյալ, ՀՀ–ում և Արցախում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին հաղորդագրություններ, ծանոթացնում է հայկ. մշակույթին, մարզ. հաջողություններին: Ունի գրասենյակ Երևանում, թղթակիցներ՝ Մոսկվայում, ԱՄՆ–ում, Լիբանանում:

ՆՈՒՐԻԿՅԱՆ Բենիամին Ղազարի [7.8.1894, գ. Հյուսենիկ (Խարբերդի նահանգ)–6.2.1988, Նյու Ջերսի (ԱՄՆ)], գրող, խմբագիր: Սովորել է Խարբերդի Ազգ. կեդրոն. վարժարանում (1910–13): 1913–ին մեկնել է ԱՄՆ: Ավարտել է Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանը (1920): Եղել է 1936–37–ին ստեղծված «Նոր գիր» գրական խմբակի ղեկավարներից: 1939–54–ին՝ ***«Նոր գիր»*** ամսագրի խմբագիր:

Լույս են տեսել Ն–ի «Այգեկութք» (1937, Նյու Յորք, «Պայքարի» տպ.), «Պանդուխտ հոգիներ» (1958), «Կարոտ հայրենի» (1978) պատմվածքների, ուղեգրությունների ժող–ները: Խմբագրել և հրատարակել է «Թլկատինցին եւ իր գործը» (1927, Բոստոն) աշխատությունը:



Մեսրոպ Նուպարյանի *«Բառարան ֆրանսերէնէ հայ–աշխարհիկ»–ի (1955, Բ.) կազմը*




«Նուվել դ'Արմենի», *1992–ից, Փարիզ (№ 174, 2011)*



Բենիամին Նուրիկյան

Շ





Միքայել Շաթիրյանի
«Արծաթե դար» (գիրք 1, 1983, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

Շ, հայ. այբուբենի 23–րդ տառը, անվանումը՝ «շա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղագիծ տարրերից. կարճը և լայնը՝ նուրբերով երկարին են միանում աջից, կարճը՝ վերևից, լայնը՝ ներքևից, կարճը՝ նուրբով երկարի վերին ծայրին միանում է իր ստորին ծայրից: Ունի երկաթագիր, գրչագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Շ, որպես այբուբենի հարյուրավորների սյան 5–րդ (23–րդ) տառ, նշանակել է հինգ հարյուր և հինգհարյուրերորդ, բյուրի նշանով (Շ՝)՝ 5 մլն (5 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Շ–մաս 500–րդ):

ՇԱԹԻՐՅԱՆ Միքայել Ալեքսանդրի (27.2.1916, Թիֆլիս–6.12.1985, Երևան), գրող, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1985): Ավարտել է Մոսկվայի գրադարանային ինստ–ը (1939): Հայրեն. պատերազմի (1941–45) ժամանակ եղել է զինվոր. թղթակից: 1953–55–ին՝ ՀԽՍՀ կինեմատոգրաֆիայի գլխ. վարչության պետ, 1966–69–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, միաժամանակ՝ «Գրական թերթի», 1973–75–ին՝ *«Լիտերատուրնայա Արմենիա»* (ռուս.) ամսագրի խմբագիր:

Լույս են տեսել Շ–ի «Պատմվածքներ» (1950), «Զինվորներ» (1955), «Ասք արմավենու մասին» (1967, գերմ.՝ 1975) պատմվածքների ժող–ները, «Հեղափոխության գեներալը» (1978) վեպը, «Արծաթե դար» (գիրք 1, 2, 1983, 1986) պատմավեպը, «Գարունը նորից եկավ» (1960) վիպակը, «Ընտիր երկերը» (հ. 1–2, 1988): Գրել է նաև պիեսներ («Փորձություն», 1948, ևն), «Նվագախմբի տղաները» (1960) կինոսցենարը:

ՇԱԽԿՅԱՆ Գառնիկ Սմբատի [ծ. 22.4.1937, գ. Շնող (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], ճարտարապետ, ճարտ–յան պատմաբան: Ճարտ–յան դ–ր (1993), պրոֆ. (1994): ՀՃԱ թղթ. անդամ (2003): Ավարտել է ԵՊԻ (1961): 1962–67–ին՝ Ալավերդու գլխ. ճարտարապետ, 1967–78–ին՝ Հայկոմունննախագիծ ինստ–ի գլխ. մասնագետ, բաժնի վարիչ, 1978–ից՝ ԵՊԻ (1990–ից՝ ԵՊՃՇԻ) դասախոս:

Լույս են տեսել Շ–ի «Օձունի եկեղեցին» (1983), «Լոռի. Պատմության քարակերտ էջերը» (1986) աշխատությունները: Հանրագիտարանային արժեք ունեն նրա «Կայծոն–Շնող հայրենագիտարան» (1999), «Պատկերազարդ կենսագրական հայրենագիտարան» (2004), «Հովհաննես Թումանյան: Հայրենագիտական համանվագներ» (2005), «Ոգի, գույն, կերպար» (2009), «Թումանյանի ընտանեկան աշխարհը» (2011) երկերը:

Երկ. Օձունի եկեղեցին, Ե., 1983: Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքներ, Ե., 2001: Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII–IX դարերում, Ե., 2004: Հաղպատավանք (հայ., ռուս., անգլ.), Ե., 2009:

Գրկ. Ճարտարապետ Գառնիկ Սմբատի Շախկյան: Կենսամատենագիտություն, Ե., 2007:

ՇԱԽԿՈՒԼՅԱՆ Ռաֆայել Հովհաննեսի [29.7.1928, ք. Սալսկ (ՌԴ Ռոստովի մարզ)–13.3.1998, Երևան], տնտեսագետ: ԵԺՏԻ պատվ. դ-ր (1996), պրոֆ. (1997): Ավարտել է ԵՊՀ միջազգ. հարաբերությունների ֆակ-ը (1952): 1967–75-ին՝ Հայկ. հանրագիտարանի տնտեսագիտության խմբագրության վարիչ, 1981–98-ին՝ *«Հայաստան. Ֆիններ և էկոնոմիկա»* ամսագրի գլխ. խմբագիր:

ՌԴ հումանիտար ԳԱ անդամ (1997):

Երկ. Потребности и управление их развитием, Е., 1979.

«ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», հանդես: Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հրատ.: Լույս է տեսնում 1972-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Գագիկ Հովհաննիսյան: Ծանոթացնում է ՀՀ-ի և աշխարհի շախմատային կյանքին, հրապարակում տես. և ուս. նյութեր, խնդիրներ, էտյուդներ: ՀՀ-ում անցկացվող խոշոր մրցաշարերի ընթացքում թողարկվում են հայ., անգլ. և ռուս. բացառիկ համարներ: «Շ. Հ.»-ին թղթակցում են հայ և օտարազգի ճանաչված շախմատիստներ:




Գառնիկ Շախկյանի *«Ոգի, գույն, կերպար» (2009, Ե., «Նոյյան տապան») գրքի կազմը*

ՇԱՀԱԶԻԶ (Շահազիզյանց) Երվանդ Հովակիմի [1(13).1.1856, Ալեքսանդրապոլ–12.8.1951, Երևան], գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ: Բանասիր. գիտ. դ-ր (1944): Գիտ. վաստ. գործիչ (1946): Սմբատ *Շահազիզի* եղբորորդին: Ավարտել է Երևանի գավառ. դպրոցը (1870), Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1879), սովորել ճեմարանին կից լիցեյում (1879–82): 1882–1917-ին՝ ուսուցիչ և տեսուչ Նոր Նախիջևանի թեմ. դպրոցում, 1918–19-ին՝ Նոր Նախիջևանի և Դոնի Ռոստովի հայերի «Հայ համայնք» շաբաթաթերթի խմբագիր (Ռուբեն Բերբերյանի հետ): 1922-ին հրավիրվել է Երևան. Նոր Նախիջևանից բերած արխիվային նյութերի հիման վրա հավաքել է Հայաստանի կենտր. կուլտուր-պատմ. թանգարանը (այժմ՝ ՀՊԹ): 1938-ից՝ Գրակ-յան ինստ-ի գիտաշխատող:



«Շախմատային Հայաստան», *1972-ից, Երևան (№ 1000, 2012)*

Լույս են տեսել Շ-ի «Նոր Նախիջեւանի ուսումնարանական գործի անցեալը» (1894, Նոր Նախիջևան, Աբրահամ Ջամինյանի և Վ. Քիրլյանի տպ.), «Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց» (1897, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.), «Մկրտիչ Յովսէփեան Էմին» (1900, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Նոր Նախիջեւանի Սբ Խաչ վանքը» (1901, Թ., նույն տպ.), «Նոր-Նախիջեւանը եւ նոր-նախիջեւանցիք» (1903, Թ., Կարապետ Մարտիրոսյանի տպ.), «Խորէն արքեպ. Գալֆայեանը եւ Նալբանդեանի աղցմիքը» (1903, Թ., Ա. Քութաթելաձեի տպ.), «Պատմական պատկերներ» (1903, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Տէր-Գաբրիէլ Պատկանեանց» (1910, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Գաբրիել Սունդուկյան» (1927), «Հին Երևանը» (1931, լրամշկ. հրտ.՝ 2003), «Սմբատ Շահազիզի կենսագրությունը» (1944), «Խաչատուր Աբովյանի կենսագրությունը» (1945), «Աշտարակի պատմությունը: Հնագիտական-պատմական տեսություն» (հրտ.՝ 1987) աշխատությունները: Կազմել է «Դիվան Միքայել Նալբանդյանի» (1932), «Դիվան Խաչատուր Աբովյանի» (հ. 1, 2, 1940, 1948) գրքերը: Գրել է նաև հիշողություններ («Հիշողություններ և դիմաստվերներ», հրտ.՝ 1980), «Ձերքեզիա կամ Ձերքեզիստան եւ չերքեզահայք» (անտիպ) բանասիր. ուսումնասիրությունը:



Երվանդ Շահազիզի *«Աշտարակի պատմությունը» (1987, Ե., «Հայաստան») գրքի կրկնաշապիկը*

ՇԱՀԱԶԻԶ (Շահազիզյանց, Շահազիզյան) Սմբատ Տեր-Սիմոնի (5.9.1840, Աշտարակ–24.12.1907, Մոսկվա, թաղված է հայոց գերեզմանատանը), բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս: Երվանդ *Շահազիզի* հորեղբայրը: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1860) և կից լիցեյը (1862), 1873–97-ին՝ նույն ճեմարանի ուսուցիչ: 1861-ից աշխատակցել է «Հիւսիսափայլ» ամսագրին:

Լույս են տեսել Շ-ի «Ազատութեան ժամեր» (1860, Մ., Լազարյան ճեմ. տպ.) գրաբար և աշխարհաբար բանաստեղծությունների, «Լեւոնի վիշտը» (1865, նույն տպ.) պոեմների և բանաստեղծությունների, «Ծիծաղի տոպրակ: Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից» (1892, Թ., Մովսես Վարդանյանի



Սմբատ Շահազիզ



Շահամիր Շահամիրյան



Մեսրոպ Երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց եւ Վրաց» (1775, Մադրաս, տպագրիչ՝ **Շ. Շահամիրյան***) գրքի փիլոնսաթերթը*

տպ.) ժող–ների: Շ–ի առավել հայտնի «Երազ» բանաստեղծությունը վերածվել է երգի: Շ–ի գրական–մանկավարժ. գործունեության 30–ամյակի (1892) առթիվ արտասանած ճառերը, հոդվածներն ու նրա 7 բանաստեղծությունը հրատարակվել են «Յորելեանի տարեդարձ» (1893, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.) ժող–ում, որից ստացած գումարով Շ. ստեղծել է «Աբովյան–Նազարյան» հիմնադրամը՝ կարիքավոր հայ գրողների համար: 1898–99–ին Մոսկվայում կազմակերպել և գլխավորել է արդուլհամիդյան կոտորածներից որբացած հայ երեխաների խնամքի ու կրթության գործը: Հրապարակախոսության մեջ կարևորել է աշխարհաբարը («Հրապարակախօս ձայն», 1881, Մ., Ա. Կուդրյավցևի տպ.), քննադատել ուսուցման և դաստիարակության հին համակարգը («Ամառնային նամակներ», 1897), դատապարտել Ռուսաստանի հայահալած քաղաքականությունը («Յիշողութիւններ Վարդանանց տօնի առիթով», 1901), եվրոպ. և թուրք. քաղաքականությունը («Մի քանի խօսք իմ ընթերցողին», 1903, երեքն էլ՝ Մ., Ք. Բարխուդարյանի տպ.): Հրատարակվել են նաև Շ–ի «Երկերը» (1947, 1961): «Չափածո երկերը» (լիակտ. ժող., 1993), «Բանաստեղծություններ» (1980) ժող–ը:

Գրկ. **Շահազիզ Ե.,** *Սմբատ Շահազիզի կենսագրությունը, Ե., 1944:* **Մանուկյան Ա.,** *Սմբատ Շահազիզ: Կյանքը և ստեղծագործական ուղին, Ե., 1959:* **Հովասափյան Հ.,** *Սմբատ Շահազիզ: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1960:*

ՇԱՀԱՄԻՐՅԱՆ Շահամիր (1723–1797), ազգ–ազատագր. շարժման գործիչ, հայ բուրժուալուսավոր. գաղափարախոսության հիմնադիրը: Հնդկաստան է գաղթել Նոր Ջուղայից (Պարսկաստան), հաստատվել Մադրասում, զբաղվել դերձակությամբ, առևտրով, դարձել մեծահարուստ: Եռանդուն գործունեություն է ծավալել Մադրասի հայկ. համայնքին առնչվող խնդիրների լուծման, ինչպես նաև Հայաստանի ազատագրության համար: Շ. Մադրասում 1771–ին հիմնադրել է հայկ. տպարան և կոչել իր վաղամեռիկ որդու՝ Հակոբ Շահամիրյանի անունով (տես ***Մադրասի հայկական տպագրություն***), որտեղ հրատարակել է բազմաթիվ գրքեր՝ Այբբենարան (1772), Սիվսես ***Բաղրամյանի*** «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» (1772–73), Մեսրոպ Երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց եւ Վրաց» (1775) ևն, իր հեղինակած սահմանադրության առաջին նախագիծը՝ ***«Որոգայթ փառաց»***–ը (հրտ.՝ 1788–89) և **«Տետրակ որ կոչի Նշաւակը»**. վերջինս Մադրասի հայերի ինքնավարության կանոնադրությունն էր, որով սահմանվում էր համայնքի աշխարհիկ և հոգևոր կյանքի կառավարման կարգը:

«Տետրակը...» տպագրել է 1783–84–ին Մադրասում՝ Հակոբ Շահամիրյանի անվ. տպարանում: Տիտղթ–ին՝ «Տետրակ որ կոչի նշաւակ վասն կառավարելոյ ինչս որբոց եւ առանց կտակ ննջեցելոց» (80 էջ, 4º, 16,3 x 10,5 սմ): Կանոնադրության համաձայն՝ Մադրասի հայ համայնքը պետք է ղեկավարեին ընդհանուր ժողովում ընտրված երեք կառավարիչներ, նախատեսվում էր հիմնադրել բարեգործ. դրամարկղ, հավաքված միջոցներով օգնել որբերին, աղքատներին, ազգ. դպրոցին, եկեղեցին պետք է բաժանվեր աշխարհիկ մարմիններից, Հայաստանի ազատագրությունն ակնկալվում էր Ռուսաստանից, որի հետ կնքվելիք պայմանագրով մադրասցի հայերին պետք է թույլատրվեր ունենալ իրենց դատարանը, եկեղեցին, Ռուսաստանում ազատ առևտրի և այլ իրավունքներ:

Գրկ. **Գրիգորյան Գ.,** *Հայ առաջավոր հասարակական–քաղաքական մտքի պատմությունից, Ե., 1957:* **Ավդալբեգյան Թ.,** *Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը XVIII դարում, տես «Հայագիտական հետազոտություններ» գրքում, Ե., 1969:*

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ [Տեր–Հակոբյան Հակոբ, 14.7.1884, գ. Հյուսենիկ (Խարբերդի նահանգ)–18.4.1983, Բոստոն], հաս–քաղ. գործիչ, գրող, խմբագիր: ՀՅԴ կուս–յան անդամ (1904–31): Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում (1897–1900), Բոստոնի համալսարանում (1909–12): 1910–ին՝ ***«Շանթ»***, 1918–20–ին՝ ***«Փիւնիկ»*** (Բոստոն) գրական հանդեսների հիմնադիր–խմբագիր: Հայոց ցեղասպանության գլխ. հանցագործներին՝ երիտթուրք պարագլուխներին, ահաբեկման նպատակով ստեղծված «Նեմեսիս» գործողության կազմակերպիչնե–

րից է: Կ. Պոլսում 1928–29-ին խմբագրել է *«Ազատամարտ»* անկախ շաբաթաթերթը, ապա վերադարձել է Բոստոն:

Լույս են տեսել Շ. Ն-ի «Թիւրքիզմը Անգօրայէն Բագու եւ թրքական օրիէնտասիօն» (1928, Աթենք, «Նոր օրի» տպ., 1992, անգլ.՝ 2002), «Թուրքերը եւ մենք» (1928, նույն տպ., 1992, 2011, Ե., ռուս.՝ 2007), «Ալեքսանդրապօլի դաշնագրէն. 1930-ի կովկասեան ապստամբութիւնները» (հ. 1–2, 1934–35, Մարսել), «Երեւանի համաձայնագիրը» (1941, Բոստոն), «Գիրք մատուցման եւ հատուցման» (1949, Բ.), «Վերստին յաւելուած: Ալեքսանդրապօլի դաշնագրի «ինչպէ՞ս»-ն ու «ինչո՞ւ»-ն պաշտօնական վաւերագրերու լոյսին տակ» (1955, Բոստոն, «Պայքարի» տպ.), «Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապօլի, Մոսկուայի, Կարսի), բաղդատական զուգակշիռ» (1957, Բ.) աշխատությունները, «Օրէնքի եւ ընկերութեան զոհերէն» (1909) պատմվածքների, «Շանթեր» (1907), «Ամպեր» (1909), «Քաւութեան երգեր» (1911), «Սէրի եւ ատելութեան երգեր» (1915), «Քեզի» (1920, բոլորը՝ Բոստոն, «Հայրենիքի» տպ), «Վրէժի աւետարան» (1918, Նյու Յորք, «Արմենիա» տպ.), «Պարտիզակը խատուտիկ» (1960, Փ.) բանաստեղծությունների ժող-ները:

2007-ին Երևանում տպագրվել է Շ. Ն-ի «Սրբազան խելագարություն» (կազմ., խմբ.՝ Ա. Հարությունյանի) հոդվածների ընտրանին:

Հանդես է եկել Նեմեսիս և Շահան գրական կեղծանուններով:

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ (Քերեսթեճյան Շահնուր Զաքարի, 3.8.1903, Կ. Պոլիս–20.8.1974, Փարիզ), գրող: Սովորել է Կ. Պոլսի Սկյուտարի դպրոցում, ապա՝ Պերպերյան վարժարանում: 1922-ին հաստատվել է Փարիզում:


1929-ին Փարիզում լույս է ընծայել «Նահանջը առանց երգի» («Մասիս» տպ.) իր առաջին վեպը, որը հետագայում վերահրատարակվել է մի քանի անգամ (1959, 1981, 1994, 2013): 1933-ին գրել է «Յարալէզներուն դաւաճանութիւնը» (հրտ.՝ 1971) պատմվածքների ժող-ը: Ծանր հիվանդության պատճառով 1930-ական թթ-ից մինչև կյանքի վերջն անցկացրել է հիվանդանոցում: Այդ ժամանակից էլ սկսել է գրել նաև ֆրանս.՝ Արմեն Լյուբեն կեղծանունով: 1939-ին «Լա նուվել ռևյու ֆրանսեզ» (ֆրանս.) պարբ-ում տպագրել է «Գիշերային փոխադրություն» (հետագայում՝ ֆրանս. արձակ գործերի ժող-ի խորագիրը, 1955, Ռիվարոյի մրց.՝ 1956) հիվանդանոցային հուշերը:

Ֆրանս. լույս են տեսել «Անտեղի պրպտումներ» (1942), «Գաղտագողի անցորդ» (1946), «Սուրբ համբերություն» (1951), «Բարձրավանդակ» (1957), «Հուր ընդ հրո» (1968), հայ.՝ «Թերթիս կիրակնօրեայ թիւը» (1958, Բ.) պատմվածքների, «Զոյգ մը կարմիր տետրակներ» (1967, Բ.) և «Կրակը կողքիս» (1973) հրապարակախոս. երկերի ժող-ները, «Համառօտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի» (գիրք 1–2, 1970) աշխատությունը, «Երկերը» (1962, գիրք 1, 2, 1982, 1985), «Բաց տոմարը» (1971), «Սիրտ սրտի» (1995), «Շուրջը՝ ոչինչ: Ամբողջական քերթուածներ» (2007) ժող-ները: Շ. Շ-ի գրական ժառանգության անբաժանելի մասն են նրա նամակները, որոնց մեծ մասը պահվում է ԳԱԹ-ում («Նամականի», 2001):

Գրկ. **Թորանեան Թ.,** *Վերստին կարդալով Շահան Շահնուրը, Հալեպ, 1971:* **Գաբրիելյան Վ.,** *Դիմանկարներ, Ե., 1976:* **Շահինյան Գ.,** *Կենսագրութիւն եւ մատենագրութիւն Շահան Շահնուրի, Ամթիլիաս, 1981:* **Փոլատեան Ա.,** *Շահան Շահնուր, Նյու Ջերսի, 2003:* **Ակիշեան Ն.,** *Շահան Շահնուր: Կեանքը եւ գործը, Լոս Անջելես, 1982:* **Մուղնեցյան Շ.,** *Նահանջի ահազանգը, Ե., 1984:* **Ավագյան Ա.,** *Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Ե., 2004:*

ՇԱՀԲԱԶՅԱՆ Ստեփան Կարապետի [1(13).5.1883, Պլովդիվ (Բուլղարիա)–27.1.1923, Պլովդիվ], հեղ-կուս. գործիչ, խմբագիր: Սովորել է Պլովդիվի հայկ. դպրոցում և բուլղ. գիմնազիայում: 1920-ին Պլովդիվում ընտրվել է հայ աշխատավորության շրջանում գաղ. աշխատանք կատարելու համար ստեղծված «Մամուլի կոմիտեի» նախագահ: Խմբագրել է *«Կարմիր լուրեր»* (1920) և *«Նոր աշխարհ»* (1922) սփյուռքահայ առաջին կոմ. թերթերը: Շ. Բուլղարիայի կոմկուսի ղեկավար գործիչների հետ գլխավորել է 1923-ի հունիսյան և սեպտեմբերյան ապստամբությունները, որոնց պարտությունից հետո գնդակահարվել է: Գնդակահարման վայրում կանգնեցվել է Շ-ի հուշարձանը: Պլովդիվի հրապարակներից մեկը կոչվել է նրա անունով:

Գրկ. **Իվանով Վ.,** *Ստեփան Շահբազյան (կենսագրական ակնարկ), Ե., 1965:* **Խաչատրյան Ռ.,** *Ստեփան Շահբազյան (ծննդյան ոսթսունամյակի առթիվ), «ՊՀՀ», 1963, № 2:*



Շահան Նաթալիի
«Թուրքերը և մենք» (1992, Ե., «Պարբերական») գրքի կազմը



Շահան Շահնուր



Շ. Շահնուրի
«Երկեր»-ի (գիրք 1, 1982, Ե., «Սովետական գրող») կազմը




Ստեփան Շահբազյան



Սեդրակ Շահենի *«Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին» (1975, Լոս Անջելես) գրքի կազմը*



Էդգար Շահին. Գ. *Ֆլոբերի «Նոյեմբեր» (ֆրանս., 1927) գրքի պատկերազարդումներից*



Հովհաննես Շահխաթունյանի *«Սկորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի...» (հ.2, 1842, Վաղ-պատ) գրքի տիտղոսաթերթը*

ՇԱՀԵՆ Սեդրակ [Շահինյան Սեդրակ Գրիգորի, 1887, գ. Օրոր (Կարինի նահանգի Քղիի գավառ)–24.10.1975, Լոս Անջելես], գրող, հաս. գործիչ, խմբագիր: Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–45) տարիներին խմբագրել է *«Երիտասարդ Հայաստան»* (Նյու Յորք) թերթը:

Լույս են տեսել Շ-ի «Տանջուածները» (1917, Նյու Յորք, «Հայկական» տպ.), «Կարկառուն կամարներ» (1917, Չիկագո, «Երիտասարդ Հայաստանի» տպ.), «Քսան կախաղաններ» (1918, նույն տպ.), «Զէյթուն» (1920, Նյու Յորք, «Արմենիա» տպ., վերահրտ.՝ 1970, Բ.), «Թալաաթի անկումը» (1928, վերահրտ.՝ 1970, Բ.) դրամաները, «Սասունք» (մաս 1, 1919, Չիկագո, «Երիտասարդ Հայաստանի» տպ.), «Կիլիկիոյ ձախողանքը. պատասխանատու դերակատարները եւ մեղսակիցները» (1921, նույն տպ.) պատմագիտ., ազգագր. երկերը, «Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին» (1975, 2000, Լոս Անջելես) հուշագրությունը: Շ. գրի է առել «Սասնա ծռերի» «Քար Թորոսը» (1967, Բ.), «Սասունին» (1968, Բ.) պատումները:

ՇԱՀԻԿՅԱՆ Ալեքսանդրու Մելքոնի (20.11.1901, Բուխարեստ–31.3.1965, Բուխարեստ), գրող, խմբագիր: Գրել է ռում.: Սովորել է Բուխարեստի վարժարանում: 1936-ին հրատարակել է «Ատլաս» շաբաթաթերթը, որտեղ հոդվածներ է տպագրել Հայաստանի մասին: 12 տարի խմբագրել է «Ռևյու Ռումեն» (ֆրանս.) հանդեսը:

Լույս են տեսել Շ-ի «Հանքագործների գործադուլը» (1929), «Գրիվիցա» (1933) և այլ պոեմներ, «Կապույտ թռչուն» (1961) բանաստեղծությունների, «Դանուբյան պատմվածքներ» (1959) ժող-ները, «Ռիչ-Ռիչ» (1948), «Մինչև տասը եկ հաշվենք» (1953, հայ. հրտ.՝ 1959), «Խտացած չարություն» (1965) և մանկ. այլ գործեր: Նրա «Գեորգե», «Ձայլամի փետուրներով գլխարկը» պիեսները բեմադրվել են Բուխարեստի թատրոններում: Գործերից թարգմանվել են հայ., ռուս., ուկր., հունգ., գերմ. և այլ լեզուներով:

ՇԱՀԻՆ Էդգար Պետրոսի (31.10.1874, Վիեննա–18.3.1947, Փարիզ), նկարիչ, XX դ-ի փորագրության արվ-ի խոշոր վարպետներից: Սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում (1890–92), 1893-ից հաճախել է Փարիզի Ժյուլիեն ակադ-ը:

Նկարազարդել և ձևավորել է Ա. Ֆրանսի «Կատակերգական պատմություն» (1904), Գ. Մուրեյի «Փարիզի տոնավաճառի մարդիկ» (1904, 140 օֆորտ), Օ. Միրբոյի «Նախասրահում» (1904), «Իտալական տպավորություններ» (1906), Մ. Բարեսի «Վենետիկի մահը» (1926), Գ. Ֆլոբերի «Նոյեմբեր» (1927), Ա. Բիյի «Հրաժեշտ ամրություններին» (1930), Ժ. Հյուիսմանսի «Հոսանքով» (1932), Շ. Սիլվեստրի «Գեղջկական ճանապարհորդություն» (1933), Տ. Պոլատի և 15 այլ նկարիչների հետ՝ Վերգիլիոսի «Մշակականքը» (1928) և այլ գրքեր, որտեղ նկարիչը բովանդակության վերարտադրմանը զուգակցել է ժամանակի միջավայրն ու բարքերն արտահայտող նկարաշարեր:

Միջազգ. ցուցահանդեսի Ոսկե մեդալ (1900, Փարիզ), Ոսկե մեծ մրց. (1903, Վենետիկ), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի ասպետի աստիճան և շքանշան:

Երկ. Նամակներ: Ժամանակակիցները Էդգար Շահինի մասին, Ե., 2008:

Գրկ. Էդգար Շահինի ոճորդների ցուցահանդեսը, Ե., 1936: **Շիշմանյան Ռ.,** *Էդգար Շահին (1874–1947), Ե., 1956: Էդգար Շահինի աշխատանքների կատալոգ, Ե., 1975:* **Fabanelli M.,** *Edgar Chahine, Milano, 1977.*

ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆ Հովհաննես Գևորգի [20.5.1799, գ. Շահրիար (այժմ՝ գ. Նալբանդյան՝ ՀՀ Արմավիրի մարզում)–1.3.1849, գ. Շահրիար], պատմաբան, հնագետ, մատենագետ, եպիսկոպոս (1841-ից): Տիրապետել է հուն-ին, թուրք-ին: 1826-ին հաստատվել է Սբ Էջմիածնում, ձեռնադրվել կուսակրոն քահանա: 1832-ից՝ Էջմիածնի սինոդի անդամ: Եղել է Մայր աթոռի տպարանի և մատենադարանի վարիչ, 1834–35-ին՝ Երևանի վիճակի (թեմ) առաջնորդ, Էջմիածնի ժառանգավորաց դպրոցի վերատեսուչ: Ստեփանոս *Նազարյանի* ներկայացմամբ 1844-ին ընտրվել է Կազանի համալսարանի թղթ. անդամ:

Կազմել է Էջմիածնի մատենադարանի ձեռագրացուցակը (312 անուն), որը ակադ. Մարի *Բրոսսեն* թարգմանել ու հրատարակել է ֆրանս. և ռուս. (1840):

Լույս է տեսել Շ-ի «Մտորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» (հ. 1–2, 1842, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) պատմաաշխարհագր. աշխատությունը, «Պատմութիւն գետնաշարժին ի 1840 ամի» երկն անտիպ է:

Գրկ. **Սեդրակեան Ա.,** *Յովհաննէս եպիսկոպոս Շահաթունեանցի կենսագրութիւնը, ՍՊր, 1898:*

ՇԱՀՆԱԶԱՐ (Շահնազարյան) Գիվի Հակոբի (ծ. 23.8.1933, Թբիլիսի), թարգմանիչ: Ավարտել է Թբիլիսիի համալսարանի արևելագիտ-յան ֆակ-ը (1956): 1983–89-ին եղել է Թբիլիսիի հայկ. դրամատիկ. թատրոնի տնօրեն:

Շ. հայ-ից վրաց. է թարգմանել Ա. Շահինյանի «Տրամվայը պարկ է գնում», Պ. Զեյթունցյանի «Ամենատխուր մարդը», Ա. Պապայանի «Գնա մեռի՝ արի սիրեմ» պիեսները, որոնք բեմադրվել են Վրաստանի թատրոններում: Նրա թարգմանությամբ և առաջաբանով վրաց. տպագրվել են Նահապետ Քուչակի «Հարյուր ու մեկ հայրեն» (1973, 2011), Սայաթ-Նովայի «Խաղեր» (1986, 2011), Պ. Սևակի «Եղիցի լույս» (1979) բանաստեղծությունների ժող-ները, Մ. Նալբանդյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի և ուր. բանաստեղծություններից:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ (Շահնազարյանց) Կարապետ [1814, ք. Համադան (Պարսկաստան)–1865, Կ. Պոլիս], մշակույթի, եկեղեց. գործիչ, հրատարակիչ-խմբագիր, վարդապետ: Սովորել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում: 1855-ին հաստատվել է Փարիզում, հիմնադրել տպարան. «Շար հայ պատմագրաց» մատենաշարով հրատարակել է Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ), Մովսես Կաղանկատվացու, Ստեփանոս Օրբելյանի, Սմբատ Սպարապետի, Թովմա Մեծոփեցու և այլ պատմիչների երկեր: Ֆրանս. է թարգմանել Ղևոնդի «Պատմութիւնը» (1856): 1862-ի Զեյթունի ապստամբության օրերին Շ. հուշագիր է ներկայացրել Նապոլեոն III-ին՝ նրա ուշադրությունը հրավիրելով Կիլիկիայի հայերի վիճակի վրա: Նույն թվականին հայ համայնքի հրավերով մեկնել է Անգլիա և ստանձնել Մանչեստրի հայության հոգևոր առաջնորդի պաշտոնը: 1863–64-ին՝ *«Երկրագունդ»* (Մանչեստր) լրագրի հրատարակիչ-խմբագիր:

Լույս են տեսել Շ-ի «Արհեստ թուաբանութեան» (1842, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը» (1862, Փ., Շ-ի տպ.), «Ծրագիր պատմութիւն Հայաստան աշխարհին եւ տեսութիւն Հին Հայաստանի եւ նրա այժմեան վիճակին վրայ» (1863, Թ., Գաբրիել Մելքումյանի և Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Ուսումն քրիստոսական հաւատոց...» (1869, ԿՊ, Առաքել Շահնազարյանի տպ.) և հայ. ու ֆրանս. այլ աշխատություններ:

Գրկ. Կոստանեան Կ., Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Թ., 1910:

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ Վարդան Գասպարի (11.11.1872, Ախալքալաք–8.1.1941, Երևան), հաս-քաղ. գործիչ, խմբագիր, գրող: ՍԴՀԿ անդամ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1890): 1909-ից եղել է Ախալքալաքի Սբ Խաչ եկեղեցու ծխական դպրոցի հոգաբարձու, 1914-ին կառուցել է դպրոցի նոր շենք, 1913–16-ին՝ գավառի անդրանիկ պարբ-ի՝ *«Ջավախքի»* հիմնադիր-խմբագիր: 1917-ին եղել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Ախալքալաքի մասնաճյուղի նախագահ, 1921-ին՝ գավկոմի տնտեսագիտ., 1921–23-ին՝ լուսավորության բաժինների վարիչ:


Լույս են տեսել Շ-ի «Անտօն Սիմոնիչ» (1905, Թ., «Հերմես» տպ.), «Արմէն ու Ֆաթման» (1909, Ալեք-պոլ, «Շիրակ» տպ.), «Աշխէն» (1909, նույն տպ.), «Արցունքի ծով» (1912, նույն տպ.), «Գող՝ սիրտը դող» (1912, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) դրամաները:

Հանդես է եկել նաև Շահ-Պարոն գրական կեղծանունով:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Լևոն Ստեփանի (25.4.1904, Թիֆլիս–24.5.1971, Մոսկվա), պատմաբան, լրագրող, խմբագիր: Ստեփան *Շահումյանի* որդին: Պատմ. գիտ. թեկնածու: Սովորել է Մոսկվայի կոմ. համալսարանում (1922–24), ավարտել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին առընթեր կուս. բարձրագույն դպրոցը (1948): 1932–40-ին ղեկավարել է մի շարք թերթերի խմբագրություններ, 1941–46-ին աշխատել է «Ուրալսկի ռաբոչի» (ռուս.) թերթի խմբագրությունում, 1949–71-ին՝ Խորհրդ. մեծ հանրագիտարանի խմբագրությունում (խմբագրության վարիչ, գլխ. խմբագրի տեղակալ): Մեծապես աջակցել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրության կազմավորմանը:



Գիվի Շահնազար



Կարապետ Շահնազարյանի *«Ուսումն քրիստոսական հաւատոց...» (1869, Կ. Պոլիս) գրքի կազմը*



Վարդան Շահպարոնյան



Լևոն Շահումյան



Ստեփանոս Շահումյանի *«Դավիթ Բեկ կամ Պատմություն ղափանցոց» (1992, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



«Դեսպան Մորկէնթաուի պատմածները» (թարգմ.՝ **Միքայել Շամտանճյանի**, *1919, Կ. Պոլիս) գրքի փիփ-ղոսաթերթը*

Լույս են տեսել Շ–ի «Բաքվի 26 կոմիսարների գնդակահարումը անգլիական ինտերվենտների կողմից» (1949), «Բաքվի քսանվեց կոմիսարներ» (1968), «Կամո: Պրոֆեսիոնալ հեղափոխական Ս. Ա. Տեր–Պետրոսյանի կյանքն ու գործունեությունը» (1962, բոլորը՝ ռուս.) աշխատությունները:

ՇԱՀՈՒՄՅԱՆ Ստեփանոս Վրթանեսի [մոտ 1702, գ. Եկտաստան (Մեղրու գավառ, այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–1782, Վենետիկ], ազգագրատագր. շարժման գործիչ: 1730–ին մեկնել է Իտալիա, հաստատվել Լիվոռնոյում, ապա՝ Վենետիկում. զբաղվել է վաճառականությամբ: Մտերմացել է ***Մխիթար Սեբաստացու*** և Մխիթարյան միաբանների հետ, պատմել Կապանի իրադարձությունների մասին, որոնք 1736–37–ին գրի է առել հայր Ղուկաս Սեբաստացի Ստեփանոսյանը. երկի ընդարձակ տարբերակը Միքայել ***Չամչյանը*** ներառել է իր «Պատմութիւն Հայոցի» 3–րդ հատորում, նույնն առաջին անգամ տպագրել է Ա. Գուլամիրյանը Վաղարշապատում («Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին...», 1871, Սբ Էջմիածնի տպ.), 2–րդ անգամ լույս է տեսել Վենետիկում՝ «Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն ղափանցւոց» (1978, Սբ Ղազարի տպ.) խորագրով (համառոտ և ընդարձակ տարբերակները, աշխատասիր., առաջաբ. և ծնթգր.՝ Ս. Արամյանի): Հրատարակվել է նաև աշխարհաբար՝ 1988–ին (փոխադր. և ծնթգր.՝ Լ. Խաչերյանի), 1992–ին (փոխադր. և ծնթգր.՝ Ա. Մադոյանի), 1999–ին (փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Առաքելյանի), ֆրանս.՝ Մարի ***Բրոսսեի*** թարգմանությամբ (1876):

Այս երկի հիման վրա Րաֆֆին գրել է «Դավիթ Բեկ» պատմավեպը, Ս. Խանզադյանը՝ «Մխիթար Սպարապետը»:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Միսական, Վնտ., 1893:* **Փեչիկեան Ե.**, *«Դաւիթ Բէկի» պատմական աղբիւրները եւ Մխիթարեանք, «Բազմավէպ», 1938, № 6–9:* **Լեո**, *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:*

ՇԱՄԱԽԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Շամախին դեռևս միջնադարում եղել է գրչության կենտրոն, որտեղ գրել և ընդօրինակել են ձեռագրեր: Ամենահին ձեռագրերից են Մարտիրոս գրիչի 1742–ին ընդօրինակած Ժողովածուն և Անտոն Երեցի 1765–ին գրչագրած Աղոթագիրքը:

Շամախիում առաջին տպարանը 1848–ին հիմնադրել են Մովսես Զոհրապյանը, Մարգարե Ղուլոյանն ու Մինաս Տարղիճյանը և տպագրել «Համառօտ պատմութիւն սուրբ գրոց», 1849–ին՝ «Գիրք Սաղմոսաց Դաւթի», 1850–ին՝ «Կրթութիւն աւետարանական ի պէտս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», 1851–ին՝ «Գիտութիւն շնորհաց» և «Ժամագիրք հասարակաց աղօթից Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» գրքերը:

Երկրորդ տպարանը 1856–ին հիմնադրել է Աթա Գրիգորյանը և լույս ընծայել Մ. Զոհրաբյանի «Պարապոյ ժամք» ժող–ի 1–ին մասը, 2–րդ մասը տպագրվել է 1857–ին Իսկիպենսկու տպարանում, որում ներառված է նաև Ջ. Բայրոնի «Շիլիոնեան կալանաւոր» (թարգմ.՝ Մ. Զոհրաբյանի) պոեմը:

1859–ի աղետալի երկրաշարժից հետո հայ կրթամշակութ. կյանքը Շամախիում անկում է ապրել:

Գևորգ Ստեփանյան

ՇԱՄՏԱՆՃՅԱՆ Միքայել (1874, Կ. Պոլիս–1926, Բեյրութ), հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Մեծ եղեռնի ականատեսներից: Սովորել է ծննդավայրի Կեդրոն. վարժարանում, Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում: 1898–ից Կ. Պոլսի հայկ. դպրոցներում դասավանդել է գերմ.: 1898–99–ին՝ ***«Մասիս»*** հանդեսի, 1903–04–ին՝ ***«Ծաղիկ»*** շաբաթաթերթի գլխ. խմբագիր: 1911–ին Տիգրան Չոլաքյանի հետ հիմնադրել է ***«Ալբան»*** հանդեսը: 1919–ին Կ. Պոլսում վերահրատարակել է «Ռստանը», հիմնադրել «Ազգային քաղաքական մատենաշարը», թարգմանել և այդ մատենաշարով լույս է ընծայել Հ. Բարբյուսի «Սարսափի երկրին մէջ: Նահատակ Հայաստան», Յ. Լեփսիուսի «Հայաստանի ջարդերը: Գաղտնի տեղեկագիր» գրքերը, Հ. Մորգենթաուի հիշողությունները՝ «Դեսպան Մորկէնթաուի պատմածները» (երեքն էլ՝

1919, Հարություն Ասատրյան և որդ. տպ.) ևն, իր հեղինակային՝ «Հայ մտքին հարկը՝ եղեռնին: Աքսորականի մտածումներ եւ զգացողութիւններ» (1919, Օննիկ Արզումանի տպ.) գիրքը ևն: Հեղինակ է «Լիակատար ընթացք գերմաներէն լեզուի» (1915, նույն տպ.) դասագրքի:

1923-ին Շ. մեկնել է Բուլղարիա, այնտեղից՝ Բեյրութ, որտեղ հրատարակել է ազգ., քաղ., գրական *«Հայ կեանք»* (1925–26) եռօրյա պարբ-ը:

ՇԱՆԹ Լևոն (Նահաշպետյան, ապա հոր՝ Սեղբեոսի անունով՝ Սեղբոսյան, 1869, Կ. Պոլիս–29.11.1951, Բեյրութ), գրող, մանկավարժ, հաս. գործիչ, ՀՅԴ կուս-յան անդամ: Սովորել է Կ. Պոլսի Սկյուտարի, Էջմիածնի Գևորգյան (1884–91) ճեմարաններում, Լայպցիգի, Ենայի, Մյունխենի համալսարաններում (1892–99): 1899-ից դասավանդել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց և Երևանի թեմ. դպրոցներում: *«Վերնատուն»* գրական խմբակի հիմնադիր-անդամ: Հովհաննես *Թումանյանի* և Ստեփան *Լիսիցյանի* հետ կազմել և հրատարակել է «Լուսաբեր» հայոց լեզվի դասագիրքը: 1915-ից ապրել է Եվրոպայում, 1919-ին վերադարձել է Այսրկովկաս: Ընտրվել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի պատգամավոր: 1920-ի ամռանը գլխավորել է Խորհրդ. Ռուսաստանի հետ բանակցելու համար Մոսկվա մեկնած պաշտոն. պատվիրակությունը: 1921-ից ապրել է արտերկրում (Իրան, Ֆրանսիա, Եգիպտոս). աշխատել է որպես ուսուցիչ: 1929-ին հաստատվել է Բեյրութում:

Լույս են տեսել Շ-ի «Լեռան աղջիկը» (1893, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.) պոեմը, «Երազ օրեր» (1896), «Դուրսեցիները» (1896), «Վերժին» (1897), «Դարձ» (1898), «Դերասանուհին» (1899, հինգն էլ՝ Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Կինը» (1913, Ա. Կերեսելիձեի տպ.) վիպակները, «Եսի մարդը» (1904, ՄՊբ, «Պուշկինյան» տպ.), «Ուրիշի համար» (1905–06, հրտ.՝ 1914, ա. տ.), «Ճամբուն վրայ» (1914, ԿՊ, «Արաքս» տպ.) պիեսները, որտեղ արծարծել է անհատի և հասարակության փոխհարաբերության, ազգ-ազատագր. պայքարի հարցեր, «Հին աստուածներ» (1909, հրտ.՝ 1912, 1917, 2001), «Կայսր» (1916, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Ընդթայուածը» (1921, ԿՊ, Թագվոր Սանճագճյանի տպ.), «Ինկած բերդի իշխանուհին» (1923), «Օշին պայ» (1932) պատմ. միջավայրի ճշմարտացի պատկերն արտացոլող դրամաները (հատկապես՝ «Հին աստուածները» և «Կայսրը» հայ գրակ-յան և թատրոնի պատմության մեջ խորհրդապաշտության ամենացայտուն դրսևորումներից են), «Հոգիները ծարաւի» (1945, Բ.) հոգեբ. վեպը, «Երկերը» (1946–52, հ. Ա–Թ, Բ., 1989, Ե.), «Ընտիր երկերը» (1968): Կազմել է հայոց լեզվի դասագրքեր, գրել գրականագիտ., բանահյուս., մանկավարժ., գիտահոգեբ., պատմագիտ. աշխատություններ («Մեր անկախութիւնը», 1925, 2011, «Անկախությունը պահանջ ազգային գոյության» (1991), «Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան...», 2008): Թարգմանել է Մ. Լերմոնտովի «Մծիրի» (1891) պոեմը, Է. Վոյնիչի «Բոռո» (1906) վեպը, Հ. Իբսենի «Ժողովրդի թշնամին» (1968) դրաման: 2007-ից տպագրվում է Շ-ի «Երկերի ժողովածուն»՝ 9 հատորով:

Գրկ. Գրական ասուլիաներ. Լևոն Շանթի «Հին աստուածները», ԿՊ, 1913: **Տէրտէրեան Ա.**, *Լևոն Շանթ: Մէռի եւ դասալքութեան երգիչը, Վաղ-պապ, 1913:* **Սարգսյան Խ.**, *Լևոն Շանթ, Ե., 1930:* **Սարինյան Ս.**, *Լևոն Շանթ: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1992:* **Գրիգորյան Վ.**, *Շանթի դրամատուրգիան, Ե., 2002:* **Թոփուզյան Ա.**, *Լևոն Շանթի մանկավարժական հայացքները, Ե., 2003:* **Խաչիկյան Յ.**, *Գեղագիտության հարցերը Լևոն Շանթի աշխատություններում, Ե., 2005:* **Փիլոյան Վ.**, *XX դարասկզբի գեղարվեստական մտածողությունը և Լևոն Շանթի ստեղծագործությունը, Ե., 2007:* **Տէր-Խաչատուրեան Ա.**, *Մատենագիտութիւն Լեւոն Շանթի, Բ., 1969:*



Լևոն Շանթ



«Հին աստուածներ» (1917, Բոստոն) գրքի կազմը



«Երկերի ժողովածու»-ի (2011, Ե., «Գիտություն») կազմը


«ՇԱՆԹ», գրական, հաս. ամսաթերթ: Լույս է տեսել 1910-ին Բոստոնում (5 համար): Հիմնադիր-խմբագիր՝ *Շահան Նաթալի*: Նպատակը մարդու իրավունքները պաշտպանելն էր, անաբդարության դեմ պայքարելը: Անդրադարձել է միջազգ. բանվոր. շարժումներին, «Սոցիալիստական լուրեր» բաժնում տպագրել է տեղեկություններ գործադուլների և Եվրոպայի սոց. կուս-ների վերաբերյալ: Գրական բաժնում տեղ են գտել երիտասարդ հայ գրողների, ինչպես նաև օտարազգի հեղինակների ստեղծագործություններից:



«Շանթ», *1911–15, 1918–19, Կ. Պոլիս*



Վիլյամ Սարոյանի «Բան ունեմ ասելու» (2012, Ե., ՀԳՄ հրտր.) գրքի շապիկը



Ռոլանդ Շառոյանի *«Հովն ընկավ» (2012, Ե., «Նաիրի», ձևավորող՝ Գ. Մարիկյան) գրքի կազմը*



«Շաւիղ», *1894–97-ին, Թեհրան*

«ՇԱՆԹ», ազգ., գրական-գեղ., քաղ., գիտ. պատկերազարդ շաբաթաթերթ (սկզբում՝ կիսամսյա հանդես, ապա՝ օրաթերթ): Լույս է տեսել 1911–15 և 1918–19-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Մերուժան *Պարսամյան:* Տպագրել է Դ. Վարուժանի, Վ. Թեքեյանի, Ռ. Սևակի, Ե. Օտյանի, Երուխանի և ուր. գործերից, անդրադարձել է արևմտահայ ազգ. կյանքին, տպագրել լեզվաբանության, ճարտ-յան, գեղանկարչության, երաժշտության վերաբերյալ հոդվածներ և տեղեկատու նյութեր:

ՇԱՊԻԿ, գրքի, բրոշյուրի, ամսագրի և այլ հրատ-ների փափուկ կազմը: Գրքի ձևավորման տարրերից է: Շ-ի վրա գրվում են հրատ-յան վերնագրային տվյալները (հեղինակի անուն, վերնագիր, տպագրության վայրը ևն), պատկերազարդվում թեմատիկ կամ գեղազարդիչ պատկերներով: Առանձին գրքեր ունեն նաև կրկնաշապիկներ, որոնք հագցվում են կազմի կամ հիմնական Շ-ի վրա: Առաջին կրկնաշապիկներն ի հայտ են եկել XIX դ-ի կեսերին և աստիճանաբար դարձել գրքի գեղ. ձևավորման տարր, նրան հաղորդել գրավչություն և գեղեցկություն:

ՇԱՌՈՅԱՆ Ռոլանդ Դանիելի [ծ. 11.8.1952, գ. Աշնակ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], արձակագիր, լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1974): 1975–76-ին աշխատել է հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիայում, 1976–77-ին՝ Հեռուստառադիոպետկոմում, 1977–86-ին՝ «Ծիծեռնակ», 1986–94-ին՝ «Գարուն» ամսագրերի խմբագրություններում: 1993–95-ին՝ *«Նավասարդ»*, 1993-ից, միաժամանակ՝ *«Սարգսաշխարհ»* թերթերի հիմնադիր-խմբագիր: 1998–2003-ին՝ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար: 1998-ից մարզ. լրագրություն է դասավանդում ՖԿՀՊԻ-ում (պրոֆ.՝ 1999-ից):

Լույս են տեսել Շ-ի «Հարյուր կոռնկ» (1979), «Մառախուղ» (1985), «Շոգիլք» (2001), «Ամպշող արև» (2001), «Անսանձ գրաքանդակներ» (2011), «Հովն ընկավ» (2012) ակնարկների, պատմվածքների, վիպակների, «Իշուկ-գորշուկը, որ գնում էր աշխարհ տեսնելու» (1983), «Խաղաղ կեսօր» (1986) մանկ. պատմվածքների և հեքիաթների, «Իմ անունը Գևորգ է, ձիուս անունը՝ Կայծակ» (2001) հեքիաթների ժող-ները, «Աղավնիներից մինչև տեսադարաշրջան» (2009) մենագրությունը, «Ֆուտբոլի հանրագիտարանը» (համահեղ., 1999), «Շախմատի հանրագիտարանը» (համահեղ., 2006): Շ-ի սցենարով նկարահանվել է «Կորսված դրախտ» գեղ. կինոնկարը (1989), Գ. Սունդուկյանի անվ. թատրոնում բեմադրվել է «Մեր բաժին ուրախությունը» (2003) դրաման:

ՀԳՄ գրական (1986), ՀԼԿԵՄ (1987) մրց-ներ, ՀՀ նախագահի պատվոգիր (2007), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2012):

«ՇԱԽԻՂ», ազգ., գրական և քաղ. շաբաթաթերթ: Իրանահայ առաջին պարբ-ը: Լույս է տեսել 1894–97-ին Թեհրանում: Արտոնատեր և հրատարակիչ (նաև անվանական խմբագիր)՝ Անդրեաս Բեկ-Նազարյան: Խմբագիրներ՝ Հովհաննես խան *Մասեհյան,* Վրթանես *Փափազյան*: Մեծ տեղ է հատկացրել իրանահայ աշխատավորության, հատկապես՝ գյուղացիության սոցիալ-տնտ., իրավ. և կենցաղային վիճակը լուսաբանող նյութերին, արծարծել լուսավորության հարցեր, առաջադրել դպրոցը եկեղեցուց անջատելու խնդիրը: Գրական բաժնում ներկայացրել է հայ և համաշխ. գրակ-յան նմուշներ:

«ՇԱԽԻՂ», ազգ., գրական, գիտ. կիսամսյա հանդես: Հրատարակվել է 1900–01-ին Վառնայում: Խմբագիր՝ *Երուխան*: Լույս է տեսել 20 համար, տպագրվել են գրական գործեր, գիտ. հոդվածներ՝ նվիրված հայոց պատմությանը, գրակ-յանն ու ազգ. խնդիրներին:

ՇԱՐԱԿՆՈՑ, միջնադարյան երաժշտածիս. մատյան, շարականների ժող.: Ենթադրվում է, որ ձևավորվել է VII–VIII դդ-ում: Ըստ հայկ. մատենագր. աղբյուրների՝ Շ. նախապես կոչվել է Կցորդարան: Հոգևոր ինքնուրույն երգերի կարգավորման առաջին փորձը կատարել է Շիրակի դպրեվանքի առաջնորդ *Բարսեղ Շոնը* (VII դ.)՝ կազմելով «Շոնընտիր» ժող-ը, որը դարձել է ապագա Շ-ի հիմքը: Շ-ի ձևավորման մեջ մեծ դեր է ունեցել *Սրեփհաննս Սյունեցին* (VIII դ.), հետագա

բարեկարգմանը նպաստել է *Ներսես Շնորհալին* (XII դ., մեզ հասած Շ-ի երգերի առնվազն մեկ երրորդի հեղինակն է): Շ-ում երգերը դասավորված են ըստ եկեղեց. տոնակարգի կամ ըստ ձայնեղանակների («Ձայնքաղ Շարական»): Խազագրված Շ-ներից հնագույնները Ջմմառի վանքի № 64 (1187) և Մատենադարանի № 9838 (1193) ձեռագրերն են, իսկ ամբողջականը՝ Գրիգոր Խուլ երաժշտապետի կազմածը՝ թվագրված XIII դ-ի 1-ին քառորդով:

Առաջին Շ. տպագրվել է 1664–65-ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչներ՝ Կարապետ Անդրիանացի և Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Շարակնոց երաժշտական երգեցմունք հոգեւորականք...» (779 էջ, 12º, 8º, 12 x 7,2 սմ):

Շ-ներ տպագրվել են նաև՝

1669–80-ական թթ-ին նույն տպարանում: Տպագրիչներ՝ Ոսկան Երևանցի և Պետրոս Ջուղայեցի: Տիտղթ-ին՝ «Շնորհօք Ամենազօրին...»: 1669-ին Ոսկան Երևանցու սկսած այս Շ-ի տպագրությունն ավարտվել է Եղիազար կաթողիկոսի օրոք (1682–91) (464 էջ, 4º, 17,4 x 12 սմ):

1685-ին Ամստերդամում՝ Սբ Խաչի և Մարիամ Աստվածածնի տպարանում: Տպագրիչ՝ Սատթեոս Վանանդեցի: Տիտղթ-ին՝ «Շարական երաժշտական երգեցմունք հոգեւորականք...» (780 էջ, 12⁰, 12,7 x 7,2 սմ):

1692-ին Ամստերդամում՝ Սբ Աստվածածնի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (720 էջ, 6⁰, 12,3 x 7,5 սմ):

1698-ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Գիրք շնորհօք Ամենազօրին Աստուծոյ...» (492 էջ, 4º, 19,3 x 12,8 սմ): Ըստ Թեոդիկի՝ տպագրվել է Թովմաս Վանանդեցու տպարանում:

1699–1700-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Շնորհօք Ամենազօրին Աստուծոյ եւ ողորմութեամբ Տեառն մերոյ...» (528 էջ, 4º, 20 x 14,2 սմ):

1702–03-ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Շարակնոց երաժշտական երգեցմունք հոգեւորականք...» (780 էջ, 12º, 12,7 x 7,2 սմ):

1703-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: 1710–11-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (728 էջ, 4º, 13 x 8 սմ):

1712 և 1718-ին Ամստերդամում՝ Սբ Աստվածածնի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (720 էջ, 8º, 12,7 x 7,2 սմ):

1724-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Ցառաջաբանութիւն: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...» (528 էջ, 4º, 20 x 14,7 սմ): 1727-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Շարակնոց... վայելչացուցանողաց...» (768 էջ, 8º, 13,8 x 7,8 սմ):

1730-ին, տպագրության վայրն ու տպարանը՝ անհայտ: Տիտղթ-ին՝ «Շարակնոց: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...» (782 էջ, 8º, 13,5 x 8,5 սմ): Տիտղթ-ը և պատկերները շատ նման են Սարտիրոս Սարգսյանի հրատարակած գրքերի պատկերներին:

1736-ին Կ. Պոլսում՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանում: Տիտղթ-ին՝ «Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...» (783 էջ, 8º, 13,2 x 8 սմ): 1742-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Շարակնոց: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...», Բ-ին՝ «Տպեցեալ ի վեհափառ...» (832 էջ, 8º, 13,8 x 8 սմ): 1743-ին Կ. Պոլսում՝ նույն տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...», Բ-ին՝ «Ձայնքաղ շարական...» (560 էջ, 4º, 20,9 x 14 սմ): 1768-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Հակոբի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Շարակնոց: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...», Բ-ին՝ «Տպեցեալ ի վեհափառ...» (702 էջ, 8º, 14 x 7,8 սմ):

1784-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Ա և Բ տիտղթ-երին՝ նույնը (833 էջ, 8º, 13 x 8,5 սմ):

1789-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Շարակնոց: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...», Բ-ին՝ «Տպագրեցեալ ի Սուրբ Էջմիածին...» (895 էջ, 8º, 12,5 x 8 սմ):

1790-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Շարակնոց: Երաժշտական երգեցմունք հոգեւորականք...», Բ-ին՝ «Տպեցեալ ի վեհափառ եւ հայրապետութեան գերագահ...» (832 էջ, 8º, 13,3 x 8,2 սմ):

Շարակնոց



1658-ի ձեռագիր մատյան, մանրանկար (գրիչ՝ Վարդան, Մատենադարան, ձեռ. № 4620)



1664-65 (Ամստերդամ, տպագրիչներ՝ Կարապետ Անդրիանացի, Ոսկան Երևանցի), պատկերազարդ (12-րդ) էջ



1736 (Կ. Պոլիս, Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպ.), գլխա- և լուսանցազարդերով ու զարդագիր սկզբնագրով (5-րդ) էջ

1793-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Տիտղթ-ին՝ «Քաղուած հանգստեան շարականաց համօրէն ննջեցելոց ի Քրիստոս, ըստ ութ ձայնից» (48 էջ): Տպակից է «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից» ժող-ին:

1794-ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Երաժշտական երգեցմունք հոգեւորականք…», Բ-ին՝ «Ձայնքաղ շարական…» (558 էջ, 4º, 19,7 x 13,8 սմ):

1801-ից հետո Շ-ներ տպագրվել են՝ 1802, 1815, 1826, 1852-ին (ԿՊ, Պողոս Հովհաննիսյանի տպ.), 1866-ին (ԿՊ, Թադեոս Տիվիթճյանի տպ.), 1884 (2 անգամ), 1895, 1936-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1888-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1929-ին (Մարսել, Ա. Երեցյանի տպ.), 1940-ին (Հալեպ, ա. տպ.), 1954-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1981–1997-ին (Անթիլիաս), 1991-ին (Ե., «Այրարատ» տպ.) , 1997-ին (Ե., «Գանձասար» տպ.), 2001-ին (Ե., ԵՊՀ հրտ.), 2006, 2011-ին (Գլենդել, «Երևան» տպ.) ևն:

Նոր հայկ. նոտագրությամբ Շ. առաջին անգամ տպագրվել է 1875-ին Վաղարշապատում (կազմ.՝ Ն. Թաշճյան), եվրոպ. նոտագրությամբ՝ 1954–76-ին Վենետիկում (խազագրող՝ Ղ. Տայան):

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՊԱՏԱՌՆԵՐ, այբուբենի տառերի, նշանների և զարդատարրերի հայելային ուռուցիկ պատկերներով տառամարմիններ՝ ձեռքի և մեքենայական եղանակներով տեքստը շարելու համար:

Առաջին Շ. տ. կավից (թրծած) պատրաստել է Չին Բի Շենը (1040–48), մետաղից պատրաստվել է Կորեայում 1234-ին, 1-ին գիրքը՝ «Չիկի»-ն, տպագրվել է 1377-ին: Եվրոպայում Շ. տ-ի գյուտը վերահայտնագործել է Յոհան *Գուտենբերգը*, առաջարկել տառահայրերի ու տառամայրերի պատրաստման եղանակ, տառերի ձուլման կապար-անագ անտիմոնային (**հարտ**) համաձուլվածք, որով սկսվել ու զարգացել է եվրոպ. տպագրությունը: Հայկ. գրատպությունն ի սկզբանե կատարվել է Շ. տ-ով:

XX դ-ի կեսերից լուսա- և թվային *շարվածքի* ներդրման շնորհիվ Շ. տ. աստիճանաբար դուրս են մղվել տպագրությունից:



1743 (Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու փպ.), Բ փիփղոսաթերթը՝ «Ձայնքաղ շարական»

«ՇԱՐԺՈՒՄ», ազգ., քաղ., գրական եռօրյա թերթ: ՀՅԴ հրատ.: Լույս է տեսել 1898–1907-ին Վառնայում: Խմբագիր-տնօրեններ՝ Վարդան *Մեշտունյան* (Գամիր Արշավիր), *Երուխան*, Վարդ Պատրիկյան, խմբագիրներ՝ Մկրտիչ Վարդան, Սուրադ Երանոսյան, Ստեփան Կանարյան, Տիգրան Աճեմյան: Լուսաբանել է ՀՅԴ գործունեությունը, քննադատել Թուրքիայի հայահալած քաղաքականությունը, ներկայացրել արևմտահայության ծանր վիճակը ևն:



«Շարժում», *1937–91, Բուենոս Այրես*

«ՇԱՐԺՈՒՄ», ազգ., հաս. և գրական շաբաթաթերթ: ՍԴՀԿ պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1937–91-ին Բուենոս Այրեսում՝ հայ. և իսպ.: Խմբագիրներ՝ Տաճատ Գնթունի, Երվանդ Մխիթարյան (Կարմրակ), Միհրան Ուզունյան (Օշին), Աբրահամ Էոլմեսեկյան, Վահան Զեյթունցյան, Աբրահամ Քրաջյան, Հակոբ Մարկոսյան, Ալբերտ Քեոսեյան, Աբրահամ Գարատանյան, Կիրակոս Աջապահյան, Նազարեթ Կուժունի (Ճերեճյան), Վարուժան Աճեմյան, Սամվել Սարգիսյան: Նպաստել է հայապահպանությանը, լուսաբանել հայկ. և միջազգ. հաս-քաղ. կյանքը, սփյուռքահայ համայնքների առօրյան, հայրենակց. միությունների գործունեությունը: Տպագրել է գրական գործեր, մշակութ. հոդվածներ: 1937–80-ին ունեցել է սեփական տպարան:



Շարժական տպատառերով *փառարկղեր*

ՇԱՐՈՂ ՄԵՔԵՆԱ, տպաճների տեքստային մասերի պատրաստման մեքենա. կատարում է անհրաժեշտ տառերի և գրանշանների դիրքաբերում, նրանց տեղադրում տված ձևաչափի տողերում ու պատկերի վերարտադրություն:

Առաջին Շ. մ-ներն ստեղծվել են Եվրոպայում XIX դ-ի սկզբին: 1822-ին անգլիացի Ու. Չերչը պատրաստել է ստեղնաշարով 1-ին Շ. մ., 1866-ին ռուս Պ. Կնյագինսկին՝ ծակոտաքարտով կառավարվող առաջին մեքենան: *Լուսաշարվածքի* մեքենան ստեղծվել է XX դ-ի կեսերին, որով կտրուկ ավելացել է շարվածքային արտադրության արտադրողականությունը:

Շ. մ-ներ արտադրել են ԱՄՆ-ն, Գերմանիան, Ճապոնիան, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը (1930-ական թթ-ից) և այլ երկրներ:

Տարբերում են Շ. մ-ի 3 հիմն. տեսակներ՝ ձուլող-շարող (տես ***տառաձուլաշար*** և ***տողաձուլաշար մեքենաներ***), շարող-տպագրող (տպաձևը պատրաստվում է հատուկ նյութերի՝ մետաղ. նրբաթիթեղի, մոմաթղթի, թղթի, թաղանթի կամ լուսաձևի վրա՝ տեքստի վերարտադրության համար, տարբեր չափերի տառերով ու գրանշաններով), և լուսաշարվածքի, որի դեպքում տառերն ու գրանշանները վերարտադրվում են լուսանկարչ. եղանակով լուսազգայուն թաղանթի կամ թղթի վրա: Վերջին՝ 4-րդ սերնդի մեքենաներում օգտագործվում է լազերային արտաբերում, որով հնարավոր է անմիջապես պատրաստել տեքստային և պատկերային լուսա- կամ տպաձևեր:

Շ. մ-ների հիմն. բնութագրիչներն են ***կեգելների*** (բարձրություն) ու ***շարվածքի*** (տողի երկարություն) չափերը և բանաձևեր ու աղյուսակներ շարելու հնարավորությունը:

Կան կիսաավտոմատ (շարողը տեքստը հավաքում է մեքենայի ստեղնաշարով) և ավտոմատ (շարողը մեքենա է ներմուծում շարելու ծրագիրը. շարվածքը կատարում է մեքենան) Շ. մ-ներ:

Շարվածքի ժամանակակից մեքենաներում կիրառում են համակարգչային տեխնոլոգիաներ, օգտագործում ընթերցող ավտոմատներ, վայրկյանում շարում 1000-ից ավելի գրանշան: Շ. մ-ները զարգանում են տեքստերի թվային մշակման, հոլոգրաֆիայի և լազեր. տեխնիկայի հնարավորությունների առավել լայն ներգրավման ուղղությամբ:

ՇԱՐՎԱԾՔ տպագրական, անցյալում մետաղաձույլ, այժմ՝ համակարգչային տառերով տեքստի տողերի ու էջերի շարումը (կազմումը): Տպագր. գործի ձևավորման սկզբներին Շ. կատարել են ձեռքով: Մեքենայական ձուլման եղանակի և շարող մեքենաների հայտնագործման շնորհիվ ***տողաձուլաշար մեքենայով*** (լինոտիպ) տպագր. համաձուլվածքից ձուլել են ամբողջ. տողեր, ***տառաձուլաշար մեքենայով*** (մոնոտիպ)՝ առանձին տառեր ու բացատատարրեր, և համակցելով կազմել տողեր ու էջեր: Դա զգալիորեն մեծացրել է շարվածքի արտադրողականությունը:

Ներկայում Շ. կատարում են հիմնականում լուսաշարվածքային ու համակարգչային (թվային) եղանակներով: Տեքստը մուտքագրվում է համակարգիչ, տպագրվում թաղանթի կամ թղթի վրա, որից էլ լուսազգայուն նյութի վրա պատճենմամբ պատրաստվում է տպաձև:

ՇԱՔԼՅԱՆ Արիս Մկրտչի [1900, ք. Չորք-Մարզպան (Կիլիկիա) –13.11.1959, Երևան], գրող, խմբագիր: 1929-ի ամռանը, 1931–32, 1936–37 և 1943–45-ին՝ ***«Եփրատ»*** թերթի խմբագիր: 1945-ին հայրենադարձել է:

Լույս են տեսել Շ-ի «Դեղին երգեր» (1927, Հալեպ, «Արարա» տպ.) բանաստեղծությունների, «Միջինք» (1943, Հալեպ, Տեր-Սահակյանի տպ.), «Կար ու չկար…» (1946, Հալեպ), «Մեր Հայաստանն է» (1949) պատմվածքների, «Բախտն ու աշխատանքը» (1956) գրույցների, «Հեքիաթների» (1950, 1960) ժող-ները, «Ֆելյաներ» (1958) վեպը:

Հանդես է եկել նաև Վարուժնակ Արիս, Ա. Շ. գրական կեղծանուններով:

ՇԵԿՈՅԱՆ Արմեն Հակոբի (ծ. 28.3.1953, Երևան), բանաստեղծ, արձակագիր, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1974), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի գրական բարձրագույն դասընթացները (1985): 1976–90-ին աշխատել է «Ծիծեռնակ», «Գարուն», «Գրական թերթ», «Բանբեր», «Առավոտ» պարբ-ներում, 1990–92-ին՝ ***«Նաիրի»*** հրատարակչության գլխ. խմբագիր, 1992–97-ին՝ Հ. Թումանյանի թանգարանի տնօրեն:

Լույս են տեսել Շ-ի «Ձեզ հետ միասին» (1979), «Ճոճք» (1984), «Բախտ» (1987), «Թուղթ ու գիր» (1990), «Աղանդեր» (1996), «Անտիպոեզիա» (2000), «Երևան հյուրանոց» (2003) բանաստեղծությունների, «Երկու քույրիկ» (1992) մանկ. բանաստեղծությունների, «Մետաքսի ճանապարհը» (2004) պատմվածքների ժող-ները, «Հայկական ժամանակ» (հ. 1–5, 2005–11) վեպը:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1990), ԹՄՄ (2004) մրց-ներ:

Շարող մեքենա



Տողաձուլաշար մեքենա



Տառաձուլաշար մեքենա



Արմեն Շեկոյանի *«Երևան հյուրանոց» (2003, Ե., «Վան Արյան») գրքի կազմը*



Գրիգոր Շենյանի *«Տիկինս ըսավ թէ...» (1991, Ե., «Անահիտ», ձևավորող՝ Ս. Փարթամյան) գրքի կազմը*

ՇԵՀՐԻՄԱՆՅԱՆ (Շահրիմանյան, Շերիման) Զաքարիա Աստվածատուրի [1708, Վենետիկ–1784, Վենետիկ (թաղված է Սբ Կանցիանոսի եկեղեցում)],գրող, փիլիսոփա, թարգմանիչ: Գրել է իտալ.:

Շ–ի նշանավոր գործերից են «Արիստիպպոս» (1744) քնար. ստեղծագործությունը, «Կայոս Մարտիոս Կորիոլանոս» (1747) երգախառն պատմ. դրաման և «Ալմանախ ի պետս իմաստակների» փիլ. երկը: Հեղինակ է նաև բժշկագիտ. գործերի («Բժիշկների և բժշկության մասին», «Հիվանդություններ, որոնց բուժման համար ավելի շուտ պետք է դիմել բնությանը, քան թե բժշկին»):

Շ. առավել հայտնի է դարձել «Էնրիկո Վանտոնի ճանապարհորդությունը կապիկների և շնագլուխների աշխարհում» (հ. 1–4, 1764) արկածային վեպով, որը լույս է տեսել անանուն: Շ. վեպը ներկայացրել է որպես անգլ. մի ձեռագրից կատարված թարգմանություն: Վերահրատարակվել է 1848-ին՝ հեղինակի անունով: Անգլիացի գիտնական Մաքսվել Ուայթը Մանչեստրում հրատարակել է «Զաքարի Սերիմանը և Էնրիկո Վանտոնի ճանապարհորդությունները» (անգլ., 1961) մենագրությունը, որտեղ որպես հավելված զետեղվել են Շ–ի փոքրածավալ գործերն ու նամակները:

Գրկ. **Տէր-Յովհաննեան Յ.,** *Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880:* **Ալիշան Ղ.,** *Հայ-Վենետ, 1896:* **Նազարեան Շ.,** *Վենետահայոց եւ գրող Զաքարիա Շեհրիմանեանի մասին, «Բազմավէպ», 1976, № 1–2:*

ՇԵՂԱՏԱՌ, տպագր. տառատեսակ, որի հիմն. գծերի թեքվածությունը դեպի աջ է (սովորաբար 15°): Ծառայում է շարվածքում տեքստի որևէ հատվածն ընդգծելու, հանրագիտ. գրակ-յան մեջ՝ հղումները նշանակելու համար: Տես նաև ***Տպատառ:***

ՇԵՆՅԱՆ Գրիգոր (ծ. 30.3.1935, Բեյրութ), խմբագիր, գրող, հաս. գործիչ: Ավարտել է ծննդավայրի Առևտրի տեխ. դպրոցը (1955): Բեյրութում 1955–56-ին աշխատել է «Նայիրի», 1960–76-ին՝ «Սփիւռք», 1962–64-ին՝ «Այգ», 1970–76-ին՝ «Ազդակ», 1976–81-ին՝ «Ասպարէզ» պարբ-ների խմբագրություններում: 1981–85-ին՝ ***«Նոր կեանք»*** (հայ-անգլ.) շաբաթաթերթի խմբագիր, եղել է նաև բաժնեկից-հրատարակիչը, 1985-ից՝ խմբագիր-հրատարակիչը: 1991-ից Լոս Անջելեսի հայրենակց. միությունների միացյալ մարմնի ատենապետն է, 1993-ից՝ Լոս Անջելեսի Հայ գրողների միության հիմնադիր-փոխատենապետը:

Լույս են տեսել Շ-ի «Ապահովագրութիւնը եւ իր պայմանները» (1963), «Տիկինս ըսավ թէ...» (1991), «Ամուսինս ըսաւ թէ...» (1993) պատմվածքների, հուշերի ժող-ները, «Մայթերու վրայ» (1994), «Մեր օրերուն հետ» (2005) վիպակները:



***«Շեփոր»**, 1912–13, Բուխարեստ (№ 1, 1912)*

«ՇԵՓՈՐ», գրական-պատմագիտ. պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1912–13-ին Բուխարեստում: Հայ. առաջին պարբ-ը Ռումինիայում: Խմբագիր-հրատարակիչ՝ Լևոն Շահազիզյան: Նպաստել է հայապահպանությանը, կրթ. գործի կազմակերպմանը: Ունեցել է գրակ-յան, պատմության, ազգ., թարգմանության և տեղեկատու բաժիններ: Տպագրել է Շ. Նաթալիի, Հ. Խանլարյանի, Ա. Տիրոյանի, Վ. Փափազյանի, Ե. Տեմիրճիպաշյանի և ուր. գրական գործերից, Կ. Բասմաջյանի, Մ. Պոտուրյանի, Վ. Թորգոմյանի հայագիտ. ուսումնասիրությունները, թարգմանաբար՝ ռումին գրողների գործեր, ինչպես նաև նմուշներ՝ Զ. Բայրոնի, Ա. Պուշկինի և ուր. ստեղծագործություններից:

ՇԵՔՍՊԻՐ (Shakespeare) Վիլյամ (23.4.1564, Էյվոնի Ստրատֆորդ –23.4.1616, Էյվոնի Ստրատֆորդ), անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ: 1599-ին ստացել է ազնվականի տիտղոս:

Շ. գրել է քնարավիպերգ. պոեմներ, սոնետներ, 37 պիես (քրոնիկներ, կատակերգություններ, ողբերգություններ): Աշխարհահռչակ գլուխգործոցներ են նրա «Համլետ» (1601), «Օթելլո» (1604), «Լիր արքա» (1605), «Մակբեթ» (1606), «Անտոնիուս և Կլեոպատրա» (1607), «Կորիոլանուս» (1607), «Տիմոն Աթենացի» (1608) և այլ ողբերգություններ:

Հայ իրականության մեջ Շ–ի ստեղծագործությանն առաջինն անդրադարձել է Հովսեփ Էմինն իր «Հովսեփ Էմինի՝ մի հայի կյանքն ու արկածները» (անգլ., 1792) երկում, որի մի գլուխը վերնագրված է «Էմինը Օթելլոյի դերում»: 1822–ին Կալկաթայի «Շտեմարան» հանդեսում անդրադարձել են Շ–ի ստեղծագործություններին, թարգմանել առանձին տողեր: 1839–ին Շ–ի մասին հիշատակվել է Մ. Մաղաք–Թեոփիլյանցի «Կենսագրութիւն երեւելի արանց» (հ. 2) գրքում: Շ–ից հայ. (աշխարհաբար) առաջին թարգմանությունը տպագրվել է 1853–ին «Արփի Արարատեան» հանդեսում («Կատակերգութիւն սխալանաց», թարգմ.՝ Կ. Տետեյանի): Շ–ի երկերի առաջին ամբողջ. թարգմանությունները նույնպես կատարել է Կ. Տետեյանը («Վենետիկի վաճառականը», 1862, «Հռոմէոս եւ Ճիւլիէդդա», 1866): Հետագայում Շ–ի գործերից թարգմանել են Ս. Ամիրյանը («Համլէտ Դանիացի իշխան», 1886, Բաքու, Վոլչկինի տպ.), Ս. Սուլխանյանը («Օտէլլօ: Վենետկի մավրը», Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), Ս. Արծրունին («Համլէտ», 1889, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), Հ. Լալայանը («Ջուր տեղը մեծ աղմուկ», 1888, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), Ս. Մալխասյանը («Լիր թագաւոր», 1888, ՍՊԸ, Ի. Ն. Սկորոխոդովի տպ., «Մակբեթ», 1892, Թ., «Արոր» տպ.), Ա. Մանդինյանը, Գ. Բաբազյանը, Գ. Ֆնտըքլյանը, Վ. Սուրենյանցը և ուր.: Շ–ի ամենանշանավոր թարգմանիչը Հովհաննես ***Սաւաեանն*** է: Արժեքավոր են նրա թարգմանությունների ընդարձակ առաջաբաններն ու ծանոթագրությունները: Հայտնի թարգմանիչներից են Վ. Թերզիբաշյանը, Խաչիկ ***Դաշտենցը***, Հենրիկ ***Սևանը:*** Սոնետների հայ. առաջին ամբողջ. թարգմանությունը (Դ. Դավթյան, Հ. Քելեշյան) տպագրվել է 1961–ին:

ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ը Ռուբեն ***Զարյանի*** ղեկավարությամբ 1966–ին հիմնադրել է Շեքսպիրագիտ–յան կենտրոն, որն ունի թարգման. և ԳՀ խմբեր. առաջինն զբաղվում է Շեքսպիրի երկերի հայ. թարգմանությամբ, երկրորդը՝ թարգմանությունների, հայ թատրոնում Շեքսպիրի պիեսների բեմադրությունների և դրանց պատմության հարցերով: Կենտրոնը հրատարակել է Շեքսպիրի «Քրոնիկներ»–ը (հ. 1–2, 1972–73), «Շեքսպիրական» (հ. 1–7, 1966–85) հայկ. շեքսպիրյան տարեգիրքը, նաև Հովհաննես Հովհաննիսյանի «Վիլյամ Շեքսպիր» (1965), Հովհաննես Թումանյանի «Շեքսպիրի մասին» (1969), Ռ. Զարյանի «Էջեր հայկական Շեքսպիրապատումից» (հ. 1–2, 1979–81) աշխատությունները:

Կենտրոնը կազմակերպել է նստաշրջաններ, սերտ կապեր է ունեցել ԳԴՀ–ի և ԱՄՆ–ի շեքսպիրագիտ. ընկերությունների հետ, մասնակցել Վայմարում շեքսպիրյան ամենամյա ավանդ. հավաքներին: 1964–ին ՀՀ ԳԱԱ արվ–ի ինստ–ում ստեղծվել է շեքսպիրագիտ. գրադարան, որտեղ պահվում են նրա երկերի գրեթե բոլոր հայ. հրատ–ները, հայ թարգմանիչների ձեռագրերը, շեքսպիրյան երկերի ձայնապնակներ՝ նշանավոր դերասանների ընթերցմամբ, լուսանկարներ ևն: 1994–ից կենտրոնը գործում է որպես ԳՀ խումբ (ղեկավար՝ Ռ. Մարգունի):

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–3, 1951–55: Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1964:

Գրկ. **Աղամեան Պ.**, *Շէքսպիր եւ իւր Համլետ ողբերգութեան աղբիւրն ու քննադատները, Թ., 1887:* **Սամվելյան Լ.**, *Շեքսպիրը հայ բեմում, Ե., 1959:* **Նույնի**, *Շեքսպիրը և հայ գրական ու թատերական մշակույթը, Ե., 1974:* **Հովհաննիսյան Հ.**, *Վիլյամ Շեքսպիր, Ե., 1965:* **Զարյան Ռ.**, *Շեքսպիրը և հայերը, Ե., 1967:* **Նույնի**, *Շեքսպիրի հետք, Ե., 1976:* **Հովակիմյան Բ.**, *Շեքսպիրը հայ թատրոնում, Ե., 2012:*



Վիլյամ Շեքսպիր



«Քրոնիկներ» (հ. 1, 1972, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը



«Արքայ Լիր» (2006, Ե., ԳԱԹ հրտ.) գրքի կազմը

ՇԻՄԱՅԻ (Simay) Գերգեյ [Շիմայան կամ Սիմայան Գրիգոր Յանոշի, 2.7.1823, Գեռլա (Ռումինիա)–1907, Կլուժ (Ռումինիա)], հայազգի հունգարագիր գրող, թարգմանիչ, պետ. գործիչ: Ավարտել է Կլուժի համալսարանի իրավաբ. ֆակ–ը: 1848–49–ի հունգ. հեղափոխության մասնակից. եղել է Տրանսիլվանիայի ազգությունների հարցերով կոմիսար: Թարգմանել և ***«Արմենիա»*** (հունգ.) հանդեսում հրապարակել է Սայաթ–Նովայի, Ղ. Ալիշանի, Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի,

Մ. Պեշիկթաշլյանի, Մ. Չերազի և ուր. ստեղծագործություններից: Գրել է «Նոր Հայաստան», «Աբովյանի հիշատակին» (1895) և այլ բանաստեղծություններ, հոդվածներ՝ Զեյթունի ապստամբության, Ռ. Պատկանյանի ստեղծագործության մասին ևն:

«ՇԻՆԱՐԱՐ», հաս., քաղ. պարբերաթերթ: ՀՕԿ-ի Ամերիկայի շրջանի կենտր. վարչության հրատ.: Լույս է տեսել 1927–31-ին Նյու Յորքում: Ծանոթացրել է ՀՕԿ-երի ստեղծման շարժառիթներին, լուսաբանել դրանց գործունեությունը, անդրադարձել հայրենակց. միությունների ձեռնարկումներին: Տպագրել է խորհրդահայ և ամերիկահայ գրողների գեղ. գործեր, հրապարակախոս. հոդվածներ:



Ռաֆայել Շիշմանյան. *Կոմիտասի «Երգեցողութիւնք Սրբոյ պատարագի» (1933 , Փարիզ) գրքի փիփղոսաթերթը*

ՇԻՇՄԱՆՅԱՆ Ռաֆայել Մարտիրոսի [15.6.1885, գ. Լիճք (Ակնա գավառ)–8.4.1959, Երևան], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող, արվեստաբան: Արվ. վաստ. գործիչ (1956): Ավարտել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանը (1907): 1908-ից բնակվել է Փարիզում, սովորել Գեղարվ-ի և Զարդարվ-ի ազգ. վարժարաններում, միաժամանակ հետևել Ժյուլիեն ակադ-ի դասընթացներին (1908–13): 1947-ին հայրենադարձել է: Եղել է հայ արվեստագետների «Անի» (Փարիզ) խմբակցության նախաձեռնողներից: Կ. Պոլսում աշխատակցել է «Մեհեան» ամսագրին, Ֆրանսիայում՝ «Երեւան», «Արագած», «Ակօս», «Ժողովուրդ» պարբ-ներին, Խորհրդ. Հայաստանում՝ «Սովետական արվեստ», «Սովետական Հայաստան» ամսագրերին ևն: Ձևավորել է 15 երաժշտ. ժող-ներ՝ Կոմիտասի «Երգեցողութիւն Սրբոյ պատարագի» (1926, Փ., 1933), Ռ. Մելիքյանի «Զառ-վառ» (1949), «Հայկական ժողովրդական երգեր ու պարեր» (1950) ևն:



Հովհաննես Շիրազ

Շ-ի ձևավորման բացառիկ նմուշներից է «Արաբական հեքիաթներ» (1923, Փ., ժող.) գրքի նկարազարդումը, որն աչքի է ընկնում զարդանախշերի թեթևությամբ, մշակման վարպետությամբ, ազգ. ոճի զգացողությամբ և գունային լուծումներով: Հեղինակ է «Էդգար Շահին» (1956), «Բնանկարն ու հայ նկարիչները» (1958) գրքերի:

Գրկ. Ռաֆայել Շիշմանյան (կազմ.՝ Մ. Այվազյան), Ե., 1985:

ՇԻՐԱԶ Հովհաննես (Կարապետյան Օնիկ Թադևոսի, 26.4.1914, Ալեքսանդրապոլ–14.3.1984, Երևան, թաղված է Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), բանաստեղծ: Ավարտել է ԵՊՀ (1941), սովորել Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի գրական բարձրագույն դասընթացներում (1952–56):



Հ. Շիրազի *«Հայրենդիր»-ի (1949, Ե., Հայպետհրատ) կազմը*

Լույս են տեսել Շ-ի «Գարնանամուտ» (1935), «Երգ Հայաստանի» (1940), «Բանաստեղծի ձայնը» (1942), «Երգերի գիրքը» (1942), «Լիրիկա» (1946), «Հատընտիր» (1949), «Բանաստեղծություններ» (1971), «Հատընտիր» (1971, Բ., «Սևան» տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Արևի երկիր» (1938), «Ռուսթավցի Շոթան և Թամարը» (1952), «Սիրանամե» (1959) պոեմները, «Մի փետուր իմ արծիվ կյանքից» (1984) խոհերի, հարցազրույցների, ինքնակենսագր. գրառումների ժող-ները: Շ-ին հատկապես մեծ ժողովրդականություն են բերել «Քնար Հայաստանի» (հ. 1–3, 1958–74) և «Համամարդկային» (1974, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1975) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Հայոց դանթեականը» (1965, Բ., 1969, Թեհրան, 1990, Ե.) և «Խաղաղություն ամենեցուն» (1982, ՀԳՄ Հ. Թումանյանի անվ. մրց.՝ 1982) պոեմները:

Շ-ի լավագույն գործերից են «Բիբլիական» (1942, հրտ.՝ 1971) պոեմը, որի հերոսը մարդն է՝ ժամանակային մեծ ընդգրկումների խտացումով, «Հուշարձան մայրիկիս» (1968, 1980) բանաստեղծությունների ժող-ը, որտեղ Շ. վերաիմաստավորել է մոր թեման՝ «մայր» հասկացությունը դնելով աշխարհի հավերժ. արժեքների շարքում («Մայրս», «Ձյուն է իջնում, կուտակվում», «Մայրս մի բուռ մայր Հայաստան»), և «Սիամանթո և Խջեզարե» վիպերգը (1935): Շ-ի սիրերգությունն ինքնամոռաց ապրումն է, անմնացորդ ինքնայրումը՝ կնոջ տեսքով հայտնված գեղեցկության հանդեպ («Միայն սերը», «Մերն աշխարհակալ», «Ամենայն էակ», «Հնչեց մեղեդին զանգերի լռած», «Գինետան բաժակի նման ձեռքից ձեռք անցած մի աղջիկ»): Հայրենասիր. քնարերգության բացառիկ գործեր են Շ-ի «Հայոց հրաշքը, Մեսրոպ Սաշտոց», «Խոսք մեծախորհուրդ պատգամի», «Ո՞րն է, բարո, մեր հայրենիք», «Հայ ժողովրդի երգը», «Կտակ», «Արարատին», «Անի» և բազմաթիվ այլ բանաստեղծությու-

ներ ու պոեմներ: Շ–ի ստեղծագործության անբաժանելի մասն են առակները («Օձն ու մեղուն», 1953, «Առակս զինչ ցուցանե...», 1978), բազմաթիվ քառյակները («Քառեակներ» 1973, Վնտ., Սբ Ղազարի տպ., «Յոթնապատում», 1977): Հրատարակվել են նաև Շ–ի «Երկերը» (հ. 1–4, 1981–86), «Նորահայտ ստեղծագործությունները» (2002), «Հատընտիրը» (2012):

Շ. թարգմանել է Ջ. Թյորների, Մ. Լերմոնտովի, Վ. Հյուգոյի, Ն. Բարաթաշվիլու և ուր. ստեղծագործություններից:

Շ–ի անունով կոչվել են դպրոցներ, փողոցներ Երևանում և ՀՀ այլ քաղաքներում: Երևանում և Գյումրիում կանգնեցվել են Շ–ի արձանները: Գյումրիում բացվել է Շ–ի թանգարան–հուշատունը (2002):

Գրկ. Հովհաննես Շիրազի մասին, Ե., 1974: **Բատիկյան Լ.**, *Հովհաննես Շիրազի մայրականը, Ե., 1976:* **Աթաբեկյան Մ.**, *Հովհաննես Շիրազի քնարերգությունը, Ե., 1979: Հովհաննես Շիրազ: Մատենագիտություն, Ե., 1989:* **Առաքելյան Վ.**, *Դործող հրաբուխ. Հովհաննես Շիրազ, Ե., 2009:* **Մուրադյան Ս.**, *Հովհաննես Շիրազ: Բանաստեղծը: Մարդը, Ե., 2012:*

«ՇԻՐԱԿ», գրական և հաս. հանդես (կիսամսյա, ամենամսյա, շաբաթական): Լույս է տեսել 1905–09–ին. Ալեքսանդրիայում՝ 1905–06–ին, Կահիրեում՝ 1906–07–ին, Կ. Պոլսում՝ 1909–ին: Խմբագիրներ՝ Միքայել ***Կյուրճյան***, Վահան ***Թեքեյան***, Արփիար ***Արփիարյան:*** Անդրադարձել է արդուլհամիդյան կոտորածների հետևանքներին, հայության վիճակին, Թուրքիայի ներքին կացությանը, հայ–ռուս. հարաբերություններին, գրական–մշակութ. խնդիրներին, տպագրել հայ և այլազգի գրողների գործեր, գրաքննադատ. վերլուծություններ: Աշխատակցել են Գ. Զոհրապը, Ե. Օտյանը, Դ. Վարուժանը, Լ. Բաշալյանը, Մ. Տամատյանը, Ա. Ալպոյաճյանը, Ա. Ղազիկյանը, Պ. Հինդլյանը և ուր.:

«ՇԻՐԱԿ», քաղ., հաս. և գրական կիսամսյա, ապա՝ շաբաթաթերթ: «Շիրակ» բարեգործ. միության վարչության հրատ.: Լույս է տեսել 1933–36–ին Բուենոս Այրեսում: Խմբագիր՝ Աբրահամ Գրաճյան: Ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի ձեռքբերումներին, անդրադարձել է ՀՕԿ–ի Սփյուռքի մասնաճյուղերի, բարեգործ., վերաշինաց, հայրենակց. միությունների գործունեությանը, հայկ. գաղթավայրերի առօրյային: Աջակցել է ներգաղթին: Լուսաբանել Է միջազգ. քաղ. կացությունը, զգուշացրել ֆաշիզմի վերահաս վտանգից, գրական բաժնում տպագրել է սփյուռքահայ և խորհրդահայ հեղինակների ստեղծագործություններ:

«ՇԻՐԱԿ», տպարան–հրատարակչատուն, գրատուն: Հիմնադրվել է 1946–ին Բեյրութում: Հիմնադիր–տնօրեն՝ Կարապետ Հաննեսյան, 1994–ից՝ Վիգեն Հաննեսյան: Հրատարակում է հիմնականում երգարաններ (հայտնի է «Շիրակ» երգարանների շարքը. ցայսօր՝ 31 հատոր՝ շուրջ 31 հզ. տպաքանակով), բառարաններ, մանկապատանեկան գրքեր [Շ. Ազնավուրի «Սէր սրտի չափով» (թարգմ.՝ Ա. Ալիքյանի, 1980), Հ. Ալփիարի «Արձակ համարձակ» (1986), Զ. Եսայանի «Երկեր» (1972), Երուխանի «Ամիրային աղջիկը» (1971), Ա. Ծառուկյանի «Երազային Հալէպը» (1996), Լեռ Կամսարի «Տպուած եւ անտիպ էջեր» (1994), Ա. Կոանյանի «Գրաբար» (1994) և «Գործնական բառարան հայերէն լեզուի» (1998), Պ. Սիմոնյանի «Կանաչներու առասպելը» (1977), «Հայակերտում եւ մանկավարժութիւն» (1996), «Խորհրդածութիւներ Հայաստանի գրողներու հինգերորդ համագումարի սեմին» (1996) և «Ակնթարթներ մարդու եւ կեանքի առօրեայէն» (2012), Վ. Օշականի «Հատընտիր» (1995), ևն]:

«ՇԻՐԱԿ», գրակ–յան և արվ–ի պատկերազարդ ամսագիր: ԹՄՄ հրատ.: Լույս է տեսել 1956–93 և 2004–06–ին (ընդհատումներով) Բեյրութում: Խմբագիրներ՝ Զարեհ ***Մելքոնյան***, Օննիկ ***Սարգիսյան***, Վաչե Ղազարյան, Հայկ Նազգաշյան, Ժիրայր ***Դանիելյան:*** Տպագրել է Սփյուռքի և Հայաստանի ճանաչված գրողների գործեր, նմուշներ՝ համաշխ. դասականներից, մեծ տեղ է հատկացրել հայոց պատմությանը: Պարբերաբար ծանուցել է Սփյուռքում և Հայաստանում լույս



Հ. Շիրազի *«Հայոց դանթեականը» (1990, Ե., «Սովետական գրող») գրքի կրկնաշապիկը*



«Շիրակ», *1905-09, Ալեքսանդրիա, Կահիրե, Կ. Պոլիս*



«Շիրակ», *1933–36, Բուենոս Այրես*



«Շիրակ: Ընդարձակ երգարան» (1990, Բեյրութ, **«Շիրակ»***) գրքի կազմը*



«Շիրակ», 1956–93 և 2004–06, Բեյրութ (№ 11, 1985)



Շիրվանզադե



«Երկերի լիակատար ժողովածու»-ի (հ. 1, 1950, Ե., Հայպետհրատ) կազմը



«Կյանքի բովից» (1982, Ե., «Հայաստան») գրքի կազմը

տեսնող գրքերի մասին, հոդվածներ տպագրել թատրոնի, կինոյի, երաժշտության ու կերպարվ-ի վերաբերյալ:

ՇԻՐԻՆՅԱՆ Մանե-Էոնա Սերգեյի (ծ. 7.2.1952, ք. Ախալքալաք), պատմաբան, բյուզանդագետ, բնագրագետ, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (2002): Ավարտել է Լենինգրադի պետ. համալսարանի դաս. (1975) և ԵՊՀ ռուս. բանասիրության (1975) ֆակ-ները: 1976–77, 1981–83-ին հուն. և լատ. է դասավանդել ԵՊՀ-ում և ԵՒՕԼՄԻ-ում, 1981–90-ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտ-յան ինստ-ում, 1990-ից՝ Մատենադարանում. 1999-ից Հին բնագրերի ուսումնասիրման և հրատարակման գիտ. խմբի ղեկավարն է: 1998-ից՝ "Armeniaca" («Հայկականք»), 2000-ից, միաժամանակ՝ «Աշտանակ» հայագիտ. պարբերագրքերի խմբագիր, 2006-ից՝ «Հայագիտական ուսումնասիրություններ» պարբերագրքի գիտ. խորհրդի անդամ, 2003-ից՝ Հայաստանի ազգ. բյուզանդագիտ. կոմիտեի փոխնախագահ, «Ուղղափառ հանրագիտարան»-ի (ռուս., Մ.) Հայ եկեղեցու մասին հոդվածների համակարգող:

Լույս են տեսել Շ-ի «Հին և միջնադարյան հայկական ու հունական աղբյուրների պատմագրական ընդհանրությունները և առանձնահատկությունները» (2002), «Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ» (2005) աշխատությունները:

Երկ. Socrates Kirchengeschichte, Berlin, 1995 (համահեղ.); The Anonymous Writing of [Zeno], Leiden Bril, 1999 (համահեղ.); Parallel Aligned Text and Bilingual Concordance of the Armenian and Greek Versions of Vita Silvestri, Dutch Studies in Armenian Language and Literature, Amsterdam–Atlanta, 2004 (համահեղ.); The Armenian Version of the Greek Ecclesiastical Canons, Frankfurt am Main, 2003 (համահեղ.); Armeniaca, English Summaries of Armenological Publications in Armenia, Y., 2006.

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ (Սովսիսյան Ալեքսանդր Մինասի, 7.4.1858, Շամախի–7.8.1935, Կիսլովոդսկ, թաղված է Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում), գրող, դրամատուրգ: Հայաստանի և Ադրբեջանի ժող. գրող (1930): Անդրկովկասի մշակույթի վաստ. գործիչ: Սովորել է Շամախու հայոց թեմ. և ռուս. գավառ. երկդասյան դպրոցներում: Աշխատել է Բաքվում: 1883-ին տեղափոխվել է Թիֆլիս: Աշխատակցել է «Մշակ», «Արձագանք» պարբ-ներին, որտեղ տպագրվել են Շ-ի «Հրդեհ նաւթագործարանում» (1883) պատմվածքը, «Գործակատարի յիշատակարանից» (1893), «Խնամատար» (1884), «Ճաթման եւ Ասադը» (1888) վիպակները: 1905-ին մեկնել է Փարիզ, 1926-ին վերադարձել հայրենիք:

Լույս են տեսել Շ-ի «Նամուս» (1885, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Արամբին» (1888, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Տասնուհինգ տարի անց» (1890, Թ., «Արոր» տպ.), «Զուր յոյսեր» (1890, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Արսէն Դիմաքսեան» (1893, Մ. Ռոտինյանի տպ.), «Յաւագարը» («Չար ոգի», 1894, Թ., Սովսես Վարդանյանի տպ.), «Մելանիա» (1899, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Արտիստը» (1901, Թ., Մ. Վարդանյանի տպ.) վիպակներն ու վեպերը, «Վէպիկներ» (1894, Թ., Մ. Ռոտինյանի տպ.) ժող-ը, «Կործանուածը» (1909, 1914, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Արհաւիրքի օրերին» (1917) դրամաները, «Քաոս» (1898, Բաքու, «Արոր» տպ.) վեպը, որը հայ քննադատ. ռեալիզմի ամենախոշոր երևույթներից է, «Կյանքի բովից» (1926–32, հրտ.՝ 1982) հուշագրությունը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–4, 1903–12, Թ.): Հրատարակվել են նաև Շ-ի «ԵԼԺ»-ն (հ. 1–8, 1929–34, հ.1–9, 1950–55), «Երկերի ժողովածուն» (հ. 1–10, 1958–62):

Բացառիկ է Շ-ի դերը հայ դրամատուրգիայի և թատրոնի պատմության մեջ: Հեղինակ է նաև կենցաղային, սոցիալ-հոգեբ. դրամաների և կատակերգությունների [«Իշխանուհի» (1891), «Եւգինէ» (1903, Թ., Վերիչև և Կամենմախեր տպ.), «Պատուի համար» (1905, Թ., «Հերմես» տպ.), «Շառլատանը» (1912, Թ., «Էպոխա» տպ.), «Մորգանի խնամին» (1930)]:

Շ-ի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են «Նամուս» (1925), «Չար ոգի» (1927), «Պատվի համար» (1956), «Քաոս» (1972) կինոնկարները: Երևանում Շ-ի անունով կոչվել են դպրոց, փողոց, Կապանում՝ թատրոն:

Գրկ. **Յակոբեան Ս.**, *Շիրուանզադէ, Թ., 1911:* **Տէրտէրեան Ա.**, *Շիրուանզադէ, Թ., 1911:* **Նույնի**, *Շիրվանզադեի գրական փիլերի հանրագիտարանը, Ե., 1953:* **Թամրազ-**

յան Հ., Հիրվանզադեի դրամատուրգիան, Ե., 1954: Նույնի, Հիրվանզադե: Կյանքը և գործը, Ե., 1978: Թոփչյան Ս., Հիրվանզադեի էսթետիկան, Ե., 1963: Գյուլբուդաղյան Ս., Ակ. Հիրվանզադեի լեզվական մշակույթը, Ե., 1966: Զաքարյան Ա., Հիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունը (1914–1915), Ե., 2006: Ալեքսանդր Հիրվանզադե (1858–1935): Բիբլիոգրաֆիա, Ե., 1959:

ՇՂԱԳԻՐ, շեղ գիր, պնակիտի վրա եղեգնյա գրչով (գրչի մի ծայրը՝ տափակ՝ մոմը հարթելու, մյուսը՝ շյուղի նման սուր՝ գրելու համար) գրելու եղանակ (շյուղագիր), որը հետագայում դարձել է ինքնուրույն գրատեսակ: Շ. ունեցել են հայ. գրի (***գրչագիր, երկաթագիր, նոտրգիր, բոլորգիր***) բոլոր տեսակները: Որպես առօրյա օգտագործման գրատեսակ՝ ավելի հաճախ շղագրվել է ***բոլորգիրը***, որն աստիճանաբար կանոնավորվել և դարձել է գրչության պաշտոն. գիր (XI–XII դդ.): Այդուհանդերձ, Շ. դարձյալ մնացել է որպես առտնին օգտագործման գիր: Այդ պատճառով Շ–ով հազվագյուտ մատյաններ են մեզ հասել:

Մեր օրերում ձեռագրի հիմն. գրատեսակը Շ. է, որը գնդիկավոր գրիչների գործածության հետևանքով ավելի է մոտեցել իր նախն. ձևին, այսինքն՝ հավասար հաստություն ունեն գրի և՛ ուղղաձիգ, և՛ հորիզոն. տարրերը:


ՇՄԱՎՈՆ, XV դ–ի եկեղեց. գործիչ, գրիչ: Առաջին անգամ հիշատակվում է 1427–ին Տաթևում՝ իր աշակերտի՝ Ղազար Ծաղկողի նկարազարդած Ավետարանի (Մատենադարան, ձեռ. № 4019) հիշատակարանում: Շ. 1437–ին Տաթևից տեղափոխվել է Սանահին, որտեղ ընդօրինակել է Շարակնոց (ծաղկող՝ Հովհաննես Սանահնեցի վանահայր, Մատենադարան, ձեռ. № 8979), որի 218–րդ բ էջում Շ–ի պատկերն է (հիշատակարանում խնդրում է հիշել «զերանաշնորհ րաբունին զՇմաւոն՝ առաջնորդ... աթոռոյն Սիւնեաց...»): 1459–ին Շ. վերադարձել է Տաթև. տարբեր վայրերից (Սարկավագանց վանք, Շամբախի, Շամրան) իր հետ բերել է արժեքավոր 3 ձեռագիր (Մատենադարան, ձեռ. № 2517, 3917, 4072): Պահպանվել է նաև Անգեղակոթի եկեղեցուն Շ–ի նվիրած Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 3756):

Գրկ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1, 2, Ե., 1955, 1958:


ՇՄԱՎՈՆՅԱՆ Հարություն Շմավոնի, **Շիրազեցի** [1750, Շիրազ (Իրան)–28.1(9.2).1824, Մադրաս], տպագրիչ, հաս. գործիչ, հայ. առաջին պարբ–ի՝ ***«Ազդարարի»*** (1794–96, Մադրաս) հիմնադիրը: Քահանա է ձեռնադրվել ծննդավայրի Սբ Ամենափրկիչ վանքում: Պաշտոնավարել է մինչև 1777–ը: 1784–ին, որպես ավագ քահանա, ուղարկվել է Մադրաս: 1789–ին հիմնադրել է Մադրասի երկրորդ հայկ. տպարանը, պատրաստել տառեր, որոնք անվանել է «որդի վշտաց» (ի հիշատակ իր 2 վաղամեռիկ որդիների): Առաջին գիրքը՝ «Պատմութիւն սրբոյ կուսին Մարիանէ», տպագրել է 1789–ին, այնուհետև հրատարակել է «Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի» (1790), «Տաղարան Սիմէոն կաթողիկոսի» (1791), Թ. Սոգինյանի «Տետրակ որ կոչի Ողբ Հայաստանեաց» (1791), Պաղտասար Դպիրի «Քերականութիւն» (1791), Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1792), «Ղեկաւար մանկանց» (1797) և այլ երկեր: 1809–ից ամբողջապես նվիրվել է Մադրասի հայ գաղութի հաս–լուսավոր. կյանքին: Սերտ կապերի մեջ է եղել Ռուսաստանի և Հայաստանի առաջադեմ շրջանակների հետ, հանգանակություններ է կազմակերպել ի նպաստ կրթ. և մշակութ. գործի:

Մադրասում (2005) և Երևանում (2006, Մամուլի տան դիմաց) կանգնեցվել են Շ–ի կիսանդրիները (երկուսն էլ՝ քանդ.՝ Լ. Թոքմաջյան):

ՇՄԻԴՏ (Schmidt) Միխայել Յոհան [31.1.1843, Նոյոտինգ (Գերմանիա)–20.1.1904, Ֆրոհշտետեն (Գերմանիա)], գերմանացի հայագետ–թարգմանիչ, աստվածաբան: Ավարտել է Նոյոտինգի թագավոր. գիմնազիան (1861): Արլ. լեզուների մեջ կատարելագործվելու նպատակով 1865–ին տեղափոխվել է Վյուրցբուրգի համալսարան, որտեղ սովորել է հայ. և որոշել թարգմանել հայ. աստվածաբան. երկեր:



Շղագիր *(ձեռագիր) նմուշ*



Հարություն Շմավոնյան



Թադեոս Սոգինյանի «Տետրակ որ կոչի Ողբ Հայաստանեաց» (1791, Մադրաս, տպագրիչ՝ **Հ. Շմավոնյան***) գրքի տիտղոսաթերթը*



Էդմոնդ Շյուցի *«Հայ-թուրքական ուսումնասիրությունների ընտրանի» (անգլ. 1998) գրքի կազմը*

Շ. 1871-ին առանձին գրքով գերմ. լույս է ընծայել Հովհաննես Ա Մանդակունու ճառերը, 1872-ին՝ Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատումը»՝ իր առաջաբանով, 1900-ին՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»՝ իր ներածությամբ ու ծանոթագրություններով: Շ. թարգմանել է նաև «Հանգիստ Յոհաննու առաքելոյ» ճառը (1893) և «Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին» վկայաբանությունը (1903):

ՇՄԻՏ (Schmitt) Ռյուդիգեր (ծ. 1.6.1939, Վյուրցբուրգ), գերմանացի լեզվաբան, հնդեվրոպաբան, հայագետ: 1979-ից՝ Սաարբրյուգենի (Գերմանիա) համալսարանի պրոֆ.:

Լույս է տեսել Շ-ի «Դասական հայերենի քերականություն» (գերմ., 1981) աշխատությունը: Կազմել և շարունակաբար լրացնում է բոլոր ժամանակներում և աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած հայագիտ. ուսումնասիրությունների մատենագիտությունը, մասնակցել է Հայնրիխ *Հյուբշմանի* (1976-ին), Հոլգեր *Պեդերսենի* (1982-ին) հայագիտ. հոդվածների ժող-ների հրատարակմանը:

ՇՅՈՒՑ (Schütz) Էդմոնդ Օդոն [29.3.1916, Բուդապեշտ–1.11.1999, Ինդիանայի նահանգ (ԱՄՆ)], հունգար լեզվաբան, հայագետ: Փիլ. գիտ. դ-ր (1948): Ավարտել է Բուդապեշտի համալսարանը: ՀՀ ԳԱԱ արտասահմ. անդամ (1990): 1950-ից՝ Հունգարիայի ԳԱ պատմության ինստ-ի աշխատակից, 1969-ից՝ արևելագիտ-յան բաժնի վարիչ: 1957-ից հայագիտ. և արևելագիտ. առարկաներ է դասավանդել Հունգարիայի բուհերում, 1969-ից՝ Ինդիանայի (Բլումինգտոն, ԱՄՆ) համալսարանում:



Շոթա Ռուսթավելի

Լույս են տեսել Շ-ի «Նիկոլաս Մ. Կիշը և Ամստերդամի հայ տպագրությունը» (1960), «Հայ-ղփչաղերենի տառադարձության մասին» (1961), «Միջնադարյան հայ գրականության համաբարբառը» (1975, երեքն էլ՝ անգլ.), «Հայերի հայ-ղփչաղերեն լեզուն և Ղրիմը» (1976), «Հայերի մասին» (1977), «Հայկական գաղութը Ղրիմում» (անգլ., 1980), «Ղրիմում հայերի գաղթի վերջին փուլը» (անգլ., 1986), «Հայ գրականության անթոլոգիա. Խորենացուց մինչև Սայաթ-Նովա» (1986), «Հայ-թուրքական ուսումնասիրությունների ընտրանի» (անգլ., 1998) և այլ աշխատություններ: Զբաղվել է աղբյուրագիտ-յամբ, քննել «Աշխարհացույց»-ի խմբագրության ժամանակը, Սեբեոսի «Պատմության» որոշ հարցեր, Խաչատուր Կաֆայեցու «Ժամանակագրությունը»:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության շքանշան:

Երկ. An Armeno-Kipchak Chronicle on the Polish-Turkish Wars in 1620-1621, Budapest, 1968.

Գրկ. Էդմոնդ Շյուցի հայագիտական աշխատությունները: Մատենագիտություն, Ե., 1987:

«ՇՆՈՐՀԱԼԻ», պատկերազարդ ազգ., կրոն. պարբերաթերթ: Լույս է տեսնում 1996-ից Ժնևում՝ հայ. և ֆրանս.: Տեղի Սբ Հակոբ եկեղեցու պաշտոնաթերթը: Խմբագիր՝ Աբել քհն. Օղլուգյան: Արծարծում է կրոն., բարոյագիտ. խնդիրներ, տպագրում մանկապատանեկան դաստիարակիչ նյութեր, հոդվածներ՝ Սբ Գրքից, լուսաբանում է հայ համայնքի ազգ. կյանքը, Մայր աթոռ Սբ Էջմիածնի և Հայ առաքել. եկեղեցու հայրապետ. թեմերի և պատրիարքությունների գործունեությունը:



Շոթա Ռուսթավելու *«Ընձենավորը» (1983, Թբիլիսի, ձևավորող՝ Լ. Ցուցկիրիձե) գրքի կազմը*

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ, XII դ-ի վրացի բանաստեղծ: Հեղինակ է «Ընձենավորը» («Վագրենավորը») պոեմի, որը թարգմանվել է մի շարք լեզուներով:

Պոեմի առանձին հատվածներ հայ. (Թիֆլիսի բարբառով) առաջին անգամ թարգմանել է գրական-հաս. գործիչ, բժիշկ Ս. Բաստամյանը և 1860-62-ին (որոշ ընդմիջումներով) տպագրել «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում: 1896-ին Հ. Միրիմանյանը երկի բովանդակությունն արձակ վերաշարադրել և զետեղել է «Մուրճ» թերթում: 1910-ական թթ-ի կեսերին Վ. Տերյանը նախերգանքից թարգմանել է 12 քառատող, որը համարվում է բնագրին համարժեք: 1937-ին հայ իրականության մեջ առաջին անգամ «Վագրենավորը» ամբողջությամբ թարգմանել և հրատարակել է Գ. Ասատուրը (Աստվածատրյան): Ավելի ուշ երկը թարգմանել և հրատարակել է նաև Հ. Կարայանը (1985, Վրաստանի գրողների միության Ի. Մաչարելու անվ. պետ. մրց.):

Հայ գրիչները դարերի ընթացքում ավելի քան 10 անգամ արտագրել են «Ընձենավորը»: Նշանավոր և կատարյալ է Աղմուրանց Բաղդասարի որդի Գասպարի ընդօրինակումը (1671), որը ներառում է 2126 տուն և համարվում է հիմք-ձեռագիր: Պոեմի մասին հոդվածներ և ուսումնասիրություններ են գրել Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Հ. Օրբելին, Լ. Մելիքսեթ-Բեկը, Պ. Մուրադյանը և ուր.:

Երևանում Ռ-ի անունով կան դպրոց և փողոց, նրա անունն է կրում ԵՊՀ-ի հայ-վրաց. բանասիրության ԳՀ կաբինետը:

«ՇՈՂ», ուսանող. ամսաթերթ, ապա՝ կիսամսյա: Մխիթարյան վարժարանի հրատ.: Լույս է տեսել 1910–13-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Բարսեղ Բարսեղյան, Վահան Սիրունյան: Լուսաբանել է հայ ազգ-հաս. կյանքը, Թուրքիայի հայկ. գավառներում տիրող վիճակը, ներկայացրել մեծ տերությունների վերաբերմունքը Հայկ. հարցի նկատմամբ: Տպագրել է գրական ստեղծագործություններ, նյութեր՝ հայոց պատմության, լեզվի, դպրոց. հարցերի վերաբերյալ:



«Շողակաթ», 1952–77, 1991, Սփյուռք (№ 2, 1962)

«ՇՈՂԱԿԱԹ», կրոնաբարոյական, գրական, պատմաբանասիր. տարեգիրք (մինչև 1970-ը՝ հանդես): Կ. Պոլսի հայոց պատրիարքության պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1952–77 և 1991-ին Ստամբուլում: Հիմնադիր-խմբագիր՝ Գարեգին *Խաչատրյան* Տրապիզոնցի: Հետագա խմբագիրներն ի պաշտոնե եղել են Կ. Պոլսի հայոց պատրիարքները: Հրապարակել է Ամենայն հայոց կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության հաղորդագրությունները, կոնդակներ, քարոզներ, ծանոթացրել պոլսահայ համայնքի ու պատրիարքության առօրյային, անդրադարձել է համահայկ. նշանավոր հոբելյաններին և համայնքային տարելիցներին, տպագրել հայ պատմագիրների, մատենագիրների, տաղերգուների, դաս. ու ժամանակակից գրողների, համաշխ. դասականների գործերից, հոդվածներ՝ մանկավարժության, բժշկության, ճարտ-յան և արվ-ի վերաբերյալ:

«ՇՈՂԱԿԱԹ», Արլ. Սակեդոնիայի և Թրակիայի հայ հոգևոր հովվության պարբերաթերթ: Լույս է տեսնում 1990-ից Կոմոտինիում՝ Նավասարդ վրդ. Մարտոյանի խմբագրությամբ: Ունի կրոնադաստիարակչ. բնույթ:

«ՇՈՂԱԿՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ», հոգևոր-մշակութ., լրատվ. երկշաբաթաթերթ: Հայ առաքել. եկեղեցու Արարատյան հայրապետ. թեմի պաշտոնաթերթ (մինչև 2000-ը՝ Արագածոտնի թեմի հրատ.): Լույս է տեսնում 1996-ից Օշականում, ապա՝ Երևանում: Խմբագիրներ՝ Արսեն Պողոսյան, Հայկանուշ Մեսրոպյան, Մհեր Գասպարյան, Հասմիկ Եղիազարյան (2013-ից): Տպագրում է Արարատյան հայրապետ. թեմի գործունեությանն առնչվող պաշտոն. տեղեկատվություն, տոնախոսականներ, պատմաբանասիր. և քրիստ. դավանաբան. հոդվածներ, եկեղեցու պատմությանը, հայկ. մշակույթին վերաբերող նյութեր, գրախոսություններ, հարցազրույցներ, թարգմանություններ:



«Շողակն Արարատյան», 1996-ից, Օշական, Երևան

ՇՈՒՈԹԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (այժմ՝ Նախիջևանի Ջուլֆայի շրջանում), գործել է գլխավորապես XVII–XVIII դդ-ում: «Կուսանաց անապատի» գրչության գործունեությունն աշխուժացել է XVII դ-ում: Կուսանոցի գեղագիր գրչուհի Մարգարիտի՝ 1648–73-ին ստեղծած 5 ձեռագիր պահվում է Մատենադարանում: Ձեռագրեր են ընդօրինակել նաև Շուշան, Գոհար, Մարիամ կույսերը: Շոռոթի Սբ Լուսավորիչ վանքում և այլ հոգևոր կենտրոններում բազմաթիվ մատյաններ են ընդօրինակել Հովհաննես, Բագրատ, Թադևոս, Մինաս, Մարգար, Մանկասար, Անդրեաս, Գաբրիել, Առաքել, Գրիգոր, Սարգիս գրիչները: XVII դ-ում Շ. գ. կ-ում ստեղծված մատյաններից շուրջ 35-ը պահվում են Մատենադարանում: Շոռոթում մի քանի ձեռագրեր գրվել են XVIII դ-ի սկզբներին:

Գրկ. **Այվազյան Ա.**, *Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978:*

Շվեյցարիայի հայկական տպագրություն



Է. Ականունու «Կովկասեան վէրքեր» (հ. 1, 1903, Ժնև, ՀՅԴ հրտ.) գրքի փիփղոսաթերթը



«Շտեմարան պիտանի գիտելեաց», *1839–46, 1854, Զմյուռնիա, Կ. Պոլիս*



Յոախիմ Շրյոդերի *«Արամեան լեզուին գանձ» (1711, Ամստերդամ) գրքի էջ*

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Ժնևի հայկական տպագրություն: XIX դ–ի վերջին–XX դ–ի սկզբին Ժնևում գործել է ՀՅԴ–ի տպարանը, տպագրել է շուրջ 20 անուն գիրք՝ Վ. Զոմբարտի «Սօցիալիզմը եւ սօցիալական շարժումը 19–րդ դարում» (թարգմ.՝ գերմ–ից, 1898), Ա. Ահարոնյանի «Պատկերներ հայ յեղափոխական կեանքից» (1901), «Ազատութեան ճանապարհին» (1902), Է. Ականունու «Կովկասեան վէրքեր» (1903) երկերը, «Մեծ մարդասպանի դէմ» (1906) գիրքը, Սիամանթոյի «Հայորդիները…» (1906), Վտառանդիի «Վիտօշի բազէն» (1906) բանաստեղծությունների ժող–ները ևն: XX դ–ի առաջին տասնամյակում Սոցիալ–դեմոկրատ. բանվոր. հայ կազմակերպության տպարանում տպագրվել է Եսալեմի «Թող ֆակտերը խօսեն» (1904), Պ. Լաֆարգի «Սօցիալիստական պարզ ճշմարտութիւններ» (թարգմ.՝ ֆրանս–ից, 1904), «Դրոշակի» տպարանում՝ Է. Ականունու «Դէպի կռիւ» (1904), Սոցիալ–դեմոկրատ. բանվոր. կուսակցության տպարանում՝ Կ. Մարքսի «Վարձու աշխատանք եւ կապիտալ» (թարգմ.՝ գերմ–ից, 1904), Գ. Բրանդեսի «Հայաստանը եւ Եւրոպան» (1907) և այլ երկեր, շուրջ 35 գիրք Ժնևում տպագրվել է առանց տպարանի հիշատակության: Լոզանում՝ Մարտիրոս Նալբանդյանի տպարանում տպագրվել է «Համառօտ տեղեկագիր եւ ընդարձակման ծրագիր Լօզանի հայ կրթարանին» (1907) գիրքը:

XIX դ–ի վերջից ցայսօր Շ–ում հրատարակվել են շուրջ 10 անուն հայ. պարբ–ներ: Բացի ՍԴՀԿ «Հնչակ» և ՀՅԴ «Դրօշակ» թերթերից՝ Շ–ում XX դ–ի սկզբին հրատարակվել են հայ սոցիալ–դեմոկրատների «Հանդէս» (Ժնև, 1900) և «Բանւոր» (Ժնև, 1904) պաշտոն. պարբ–ները, որոնք, սակայն, Շվեյցարիայի հայերի կյանքին գրեթե չեն անդրադարձել: 1904–05–ին Լոզանում տպագրվել է ***«Գիտություն»*** գիտահանրամատչելի ամսաթերթը, 1979–84–ին Ժնևում՝ «Յուլք» պարբերաթերթը: Ներկայում լույս են տեսնում ***«Շնորհալի»***, «Մենք» և ***«Արձագանք»*** պարբ–ները:

«ՇՏԵՄԱՐԱՆ», ամսագիր: Օճանասփյուռ (օճան՝ օգնություն, նպաստ) ընկերության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1821–23–ին Կալկաթայում: Խմբագիր՝ Մարտիրոս ***Մկրտչյան*** (Շիրազեցի): Լուսաբանել է գաղթավայրի առօրյան, առաջնորդվել ազատագր. գաղափարներով: Ունեցել է ռուս. կողմնորոշում, հետևել ժամանակի քաղ. անցուդարձին, դատապարտել օսմ. կառավարության հայահալած քաղաքականությունը: Տպագրել է պատմ., գրական հոդվածներ, զրույցներ, անդրադարձել հայ թատրոնի, հայոց լեզվի և այլ հարցերի:

«ՇՏԵՄԱՐԱՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ», պատկերազարդ ամսագիր: ԱՄՆ–ի բողոք. միսիոներների հրատ.: Լույս է տեսել 1839–42 և 1844–46–ին Զմյուռնիայում, 1854–ին՝ Կ. Պոլսում: Զգտել է բողոքականություն տարածել հայկ. շրջաններում: Տպագրել է ազգագրության, երկրագիտ–յան, աստղաբաշխության, ժամանակի գիտ. նվաճումների վերաբերյալ հոդվածներ, բարոյախոս. զրույցներ ու լեգենդներ, հեքիաթներ, խրատներ, ասույթներ: Տպագրվել է նաև հայատառ թուրք.:

ՇՐՅՈԴԵՐ (Schröder), **Սքրոդեր**, Յոհան Յոախիմ (6.6.1680, Նայկիրխեն–19.6.1756, Մարբուրգ), գերմանացի արևելագետ–հայագետ: Տիրապետել է հայ–ին, երբ–ին, եթովպ–ին (հաբեշ.): Սովորել է Մարբուրգի և Ֆրանկֆուրտի համալսարաններում: 1707–ին Ուտրեխտում եպս. Թովմա Գողթանցու և տպագրիչ Ղուկաս Վանանդեցու օգնությամբ կատարելագործել է հայ–ի իր գիտելիքները:

Շ. հրատարակել է ***«Արամեան լեզուին գանձ»*** (1711, Ամստերդամ) աշխատությունը, որտեղ տեղեկություններ է հաղորդել հայերի և հայ–ի մասին, գրել է գրաբարի և աշխարհաբարի («քաղաքացիական հայերենի») քերակ–ը, ինչյունաբանությունը, ուղղագրությունը, կատարել ստուգաբանություններ, անդրադարձել հայ–ի բարբառներին:

Հետևելով Մովսես Խորենացուն՝ Շ. Հայկ Նահապետին համարել է հայերի նախահայրը և անվանադիր նախնին: Հայկ., երբ. և հունա-լատ. սկզբնաղբյուրների քնն. վերլուծությամբ ընդհանուր գծերով ներկայացրել է հայոց պատմության հիմն. իրադարձությունները: Նրա անտիպ հայ-լատ. բառարանը պահվում է Քասսելի մատենադարանում:

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.,** *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝* **Գ. Զարբհանալյանի,** *Վնտ., 1895:* **Աղայան Է.,** *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:* **Ջահուկյան Գ.,** *Դրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ.), Ե., 1974:*

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԵՐ, ՀԽՍՀ շրջաններում լույս ընծայված պարբ-ներ, որոնք հրատարակել են պետ. և շրջ. վարչ. մարմինները՝ որպես շրջկոմների և ժողպատգամավորների շրջ. խորհրդի պաշտոնաթերթեր: Ծանոթացրել են տեղ. իշխանությունների, կուս. մարմինների գործունեությանը, շրջանի նորություններին, կրթամշակութ. կյանքին, տպագրել տեղի հեղինակների ստեղծագործություններ (տես աղյուսակը):

1990–91-ից (ՀՀ անկախացումից հետո) Շ. թ-ի մեծ մասն այլևս լույս չի տեսել, մի քանիսն էլ վերահրատարակվում են որպես մարզային կամ անկախ պարբ-ներ: Տես նաև *«Արտաշատ»* (Արտաշատ), *«Գեղամա աշխարհ»* (Գավառ), *«Լուսարձակ»* (Սպիտակ), *«Թալին աշխարհ»* (Թալին), *«Թումանյանական աշխարհ»* (Ալավերդի), *«Սևան»* (Սևան), *«Մոնոյաց աշխարհ»* (Գորիս), *«Որոտան»* (Սիսիան) ևն:

Անվանումը (նախկին անվանումները)	Հիմնադրման տարին, հաճախականությունը, լեզուն, վայրը	Խմբագիրները
«ԱՅԳԱԲԱՑ» («Շամշադինի կոլտնտեսական», «Լենինյան ուղիով»)	1935, երկօրյա, հայ., Բերդ	Թ. Դարբինյան, Ա. Պետրոսյան, Ս. Սերոբյան, Ա. Սիմոնյան, Հ. Հովսեփյան, Ռ. Առուշանյան, Վ. Գրիգորյան, Գ. Դաբրիելյան, Յ. Չիլինգարյան, Ա. Փալանդուզյան և ուր.
«ԱՆԻ» («Սահմանապահ կոլխոզնիկ», «Աղինի կոլտնտեսական», «Լուսավոր ուղի», «Շիրակ»)	1939, սկզբում՝ եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Մարալիկ	Գ. Դանիելյան, Ռ. Սիմոնյան, Բ. Պողոսյան, Ա. Հովհաննիսյան, Մ. Իսպիրյան և ուր.
«ԱՃԽԱՏԱՆՔ» («Անասնապահական ֆրոնտում», «Ստախանովյան տեմպով», «Ղուկասյանի կոլտնտեսական», «Կոլխոզչու տրիբունասի», «Շիրակ»)	1933, եռօրյա, հայ. և ադրբ., Ամասիա	Ս. Հովհաննիսյան, Գ. Խաչատրյան, Ի. Բայրամով, Մ. Մկրտչյան, Ք. Ասկյարով և ուր.
«ԱՇՏԱՐԱԿ» («Այգեգործ կոլտնտեսական», «Արագած»)	1931, երկօրյա, հայ., Աշտարակ	Լ. Վարդանյան, Խ. Բերոյան, Ն. Շահվերդյան, Ս. Հովհաննիսյան, Ա. Կիրակոսյան, Թ. Մանուկյան, Ա. Սարգսյան, Գ. Ղուկասյան, Հ. Թովմասյան, Գ. Ավետիսյան, Մ. Վարդանյան, Կ. Կարապետյան, Վ. Վարդանյան, Ա. Խաչատրյան, Կ. Նիկողոսյան և ուր.
«ԱՐԱԳԱԾ»	1973, շաբաթաթերթ, հայ., գ. Ծաղկահովիտ	Կ. Սարգսյան, Լ. Աբրահամյան, Կ. Բասմաջյան և ուր.
«ԱՐԱՐԱՏ» («Կոմունիզմի ուղիով»)	1949, եռօրյա, հայ., Արարատ	Հ. Մելիքյան, Ս. Համբարձումյան, Ա. Եղյան, Ղ. Մելոյան, Տ. Ներսիսյան և ուր.
«ԱՐԱՔՍ» («Կոլխոզային գյուղ», «Կոլտնտեսային գյուղ», «Արարատ»)	1937, երկօրյա, հայ., Մեղրի	Գ. Բախշյան, Ա. Դադբաշյան, Վ. Ղազարյան, Ա. Սարգսյան, Ռ. Տոբելյան և ուր.
«ԱՐՇԱԼՈՒՅՍ» («Սոցիալիստական տեմպով», «Լենինյան դրոշով»)	1933, եռօրյա թերթ, հայ., ռուս., Արովյան	Հ. Միրաքյան, Խ. Նազարյան, Ս. Ղազարյան, Ա. Միկինյան, Գ. Շահիրազյան, Թ. Սարգսյան, Գ. Մարգարյան, Ն. Մելիքսեթյան, Յ. Շիրինյան, Հ. Հովսեփյան, Մ. Ապրեսյան, Լ. Ավետիսյան և ուր.
«ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» («Լենինյան ուղիով»)	1937, շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա, հայ., ադրբ., Կրասնոսելսկ	Գ. Արշակյան, Ա. Խաչատրյան, Ա. Հակոբյան, Մ. Մարկոսյան, Ս. Ծատուրյան, Մ. Մկրտչյան, Գ. Աթաբեկյան և ուր.
«ԳԱՐՈՒՆ» («Ստախանովյան տեմպով», «Ղուկասյանի կոլտնտեսական»)	1938, շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա, հայ., Ղուկասյան, 1952–56-ին՝ ադրբ. տարբերակ	Ս. Գրիգորյան, Ա. Խաչատրյան, Վ. Խաչատրյան, Պ. Բարեյան, Ա. Սահակյան, Հ. Մարտիրոսյան, Տ. Ներսիսյան, Լ. Հովհաննիսյան, Ն. Նիկողոսյան, Գ. Գևորգյան և ուր.
«ԳՈՒԳԱՐՔ» («Սոցիալիստական արշավ», «Կիրովականի կոլտնտեսական»)	1931, ինգօրյա, ապա՝ եռօրյա թերթ, հայ., տպագրել է նաև ռուս., ադրբ. նյութեր, Կիրովական	Օ. Սեմերջյան, Պ. Կորյուն, Ա. Առաքելյան, Ս. Հարությունյան, Վ. Պողոսյան, Հ. Վանունի, Հ. Բաղրամյան, Ա. Խաչատրյան, Վ. Դանիելյան, Ռ. Փաշինյան, Վ. Զալինյան, Հ. Սովսիսյան, Հ. Ղարաքեշիշյան, Վ. Թորոսյան և ուր.
«ԶԱՆԳԵԶՈՒՐ» («Կարմիր Զանգեզուր», «Ստալինյան դրոշով», «Որոտան»)	1934, երկօրյա, հայ., Գորիս	Ա. Մնացականյան, Թ. Փարսյան, Գ. Հովհաննիսյան, Մ.Հակոբյան, Ռ. Հարությունյան, Գ. Բախշյան, Ք. Պետրոսյան, Հ. Մանվելյան, Բ. Գասպարյան, Ս. Ղազարյան և ուր.

«ԹՌԻՉՔ» («Կոլխոզուղի», «Կոլխոզային ուղի», «Կոլտնտեսային ուղի», «Սևան»)	1933, երկօրյա, հայ., մինչև 1963-ը՝ հայ., ադրբ., Սմբտունի	Մ. Գրիգորյան, Բ. Կարապետյան, Մ. Գևորգյան, Վ. Սահակյան, Ա. Աբրահամյան, Վ. Ավագյան, Մ. Ղազարյան, Ի. Ավալյան, Ջ. Գալստյան, Ռ. Դարբինյան, Ս. Անտոնյան, Պ. Ավետիսյան, Ա. Ալեքսանյան և ուր.
«ԼԵՆԻՆՅԱՆ ԴՐՈՇՈՎ» («Բայազետի կոլտնտեսական», «Կոմունիզմի համար»)	1935, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Կամո	Մ. Մկրտչյան, Ն. Շահվերդյան, Հ. Փարիկյան, Հ. Մարգարյան, Խ. Նազարյան, Ս. Մնևյան, Վ. Գևորգյան, Պ. Սահակյան, Ս. Անտոնյան, Մ. Գրիգորյան, Հ. Սարգսյան, Խ. Մատևյան և ուր.
«ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ» («Հարվածային կոլխոզնիկ», «Իջևանի կոլտնտեսական»)	1934, շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա, հայ., տպագրել է ադրբ. նյութեր, Իջևան	Մ. Մարկոսյան, Ս. Մարգարյան, Բ. Մարկոսյան, Հ. Օհանյան, Ա. Միրզոյան, Շ. Օթարյան, Գ. Ներսիսյան, Ի. Էլլարյան, Ս. Մարության, Մ. Մկրտումյան, Գ. Դավթյան, Ա. Փալանդուզյան, Ս. Նազինյան և ուր.
«ԼԵՌՆԱԳՈՐԾ»	1931, ինգօրյա, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Արթիկ	Հ. Մանուկյան, Կ. Ազրոյան, Հ. Պողոսյան, Ե. Մարգարյան, Խ. Դանիելյան, Լ. Բեգլարյան, Ա. Սարյան, Ա. Մակարյան, Վ. Վարդանյան, Ե. Հովհաննիսյան, Վ. Կարապետյան, Ա. Սարգսյան, Վ. Բիշարյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Գարեգինյան և ուր.
«ԾԱՂԿՈՒՆՔ» («Անասնապահ կոլտնտեսական»)	1933, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., 1937–40-ին՝ 1 էջ քրդ., Ապարան	Ս. Հարությունյան, Մ. Հակոբյան, Գ. Հակոբյան, Ա. Աֆանդյան, Բ. Մաթևոսյան, Կ. Արշակյան, Վ. Հակոբյան և ուր.
«ԾԻԱԾԱՆ» («Կարմիր նոյեմբեր», «Նոյեմբերյանի կոլտնտեսական»)	1939, եռօրյա, ապա՝ երկօրյա թերթ, հայ., Նոյեմբերյան	Ա. Խեչումյան, Ա. Եսայան, Ս. Աֆրիկյան, Կ. Այվազյան, Լ. Գրիգորյան, Մ. Մինասյան, Լ. Բարսեղյան, Գ. Ազատյան, Ջ. Եգանյան, Ի. Սամյան և ուր.
«ԿԱՄՈՒՆԻԶՄԻ ԴՐՈՇՈՎ» («Բոլշևիկյան դրոշով»)	1932, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Թալին	Խ. Դանիելյան, Վ. Մարգարյան, Հ. Թովմասյան, Ս. Նորյան, Հ. Պողոսյան, Ռ. Վրթանեսյան, Ղ. Ղազարյան, Ս. Համբարձումյան, Բ. Հարոյան, Ս. Դավթյան և ուր.
«ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ» («Բոլշևիկյան տեմպով», «Դեպի կոմունիզմ»)	1931, ինգօրյա, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Հոկտեմբերյան	Ս. Պետրոսյան, Ե. Սարուխանյան, Ա. Մոկացյան, Հ. Այվազյան, Ս. Ղազարյան, Մ. Ավետիսյան, Տ. Խաչատրյան, Կ. Պողոսյան, Գ. Սարգսյան, Ա. Համբարձումյան և ուր.
«ՀՐԱԶԴԱՆ» («Լենինի դրոշով»)	1932, ինգօրյա, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Հրազդան	Ս. Մովսիսյան, Ա. Հակոբյան, Ա. Սարգսյան, Ս. Մարգարյան, Վ. Օհանյան, Ա. Դանիելյան, Ա. Ամրազյան, Ա. Սուքիասյան, Վ. Մնացականյան, Հ. Մարտիրոսյան, Ֆ. Մալխասյան, Պ. Թովմասյան և ուր.
«ՂԱՓԱՆ» («Պայքար պղնձի համար», «Պղնձի համար»)	1930, շաբաթաթերթ, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., տպագրել է նաև ռուս. նյութեր, 1941–52-ին ունեցել է ադրբ. էջ, Ղափան	Շ. Ազնավուրյան, Բ. Սիմոնյան, Վ. Պողոսյան, Հ. Սարգսյան, Ռ. Պողոսյան, Ս. Օրբելյան, Շ. Ավետիսյան, Գ. Արևյան, Գ. Գրիգորյան և ուր.
«ՆԱԻՐԻ»	1973, երկօրյա, հայ., Նաիրի	Կ. Խոջոյան, Ս. Վանեսյան, Ա. Գասոյան և ուր.
«ՆՈՐ ՈՒՂԻ»	1969, երկօրյա, հայ. և ադրբ., Մասիս	Մ. Հովսեփյան և ուր.
«ՇԻՐԱԿ» («Կոլտնտեսական»)	1939, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., 1962–65-ին՝ հայ., ադրբ., Ախուրյան	Վ. Նորյան, Ա. Հովհաննիսյան, Վ. Բեյրության և ուր.
«ՋԵՐՄՈՒԿ» («Կոլխոզնիկ», «Ստալինյան կոլխոզ», «Ստալինյան ուղիով», «Վերելքի ուղիով»)	1935, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., ունեցել է ադրբ. էջ, Վայք (Ազիզբեկով)	Ն. Հարությունյան, Թ. Դարբինյան, Բ. Բաբայան, Հ. Աստաբացյան, Թ. Սարգսյան, Ռ. Հարությունյան, Խ. Հարությունյան, Վ. Գևորգյան, Վ. Ասլանյան և ուր.
«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ» («Կոլխոզ ֆրոնտ», «Էջմիածնի կոլտնտեսական», «Կոմունիզմի ուղիով»)	1933, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Էջմիածին	Պ. Պետրոսյան, Ս. Նալբանդյան, Վ. Հակոբյան, Հ. Աստաբացյան, Ս. Գյուլնազարյան, Խ. Բալագյոզյան, Տ. Վարժապետյան, Ա. Այվազյան, Վ. Զաքարյան և ուր.
«ՎԱՐԴԵՆԻՍ» («Կարմիր Բասարգեչար», «Ստալինյան ուղի», «Բարձր բերքի համար», «Առատության համար»)	1931, ինգօրյա, ապա՝ երկօրյա, հայ., ադրբ., Վարդենիս (Բասարգեչար)	Բ. Մամեդով, Ա. Ալիև, Շ. Կուրբանով, Ի. Ալիև, Մ. Ահմեդով, Յ. Արդուլև և ուր.
«ՎԵՐԵԼՔ» («Ստալինյան կոլխոզ», «Այգեգործ»)	1931, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., Եղեգնաձոր	Ռ. Հարությունյան, Վ. Գևորգյան, Խ. Հարությունյան, Հ. Կարապետյան, Վ. Աբրահամյան և ուր.
«ՓԱՐՈՍ» («Սոցիալիստական անասնապահություն»)	1931, ինգօրյա, եռօրյա, ապա՝ երկօրյա, հայ., տպագրել է ռուս. նյութեր, ապա լույս են տեսել ռուս. և ադրբ. տարբերակները, Ստեփանավան	Մ. Մանուկյան, Գ. Սինանյան, Ա. Ստեփանյան, Ս. Կուրտիկյան, Ա. Մնացականյան, Ա. Օհանյան, Վ. Դանիելյան, Ս. Համբարձումյան, Մ. Խաչատրյան, Ա. Սաքանյան, Տ. Վարժապետյան, Ս. Սարգսյան և ուր.

ՇՐՈՒՄՊՖ (Schrumpf) Գուստավ Ադոլֆ [8.2.1844, Օբերհաուսբերգեն (Ստրասբուրգի մոտ)–16.12.1892, Լոնդոն], գերմանացի բանասեր, հայագետ: Զբաղվել է անգլ. բանասիրությամբ, նաև հայ-ի քերակ-յամբ, բարբառագիտ-յամբ, բանահյուսությամբ ևն: 1890-ին հրատարակել է «Հայագիտությունը Եվրոպայում» հոդվածաշարը՝ ներկայացնելով XIV–XIX դդ-ի եվրոպացի հայագետների համառոտ կենսագրություններն ու հայագիտ. գործերի քննությունները: Այս աշխատությունն իր տեսակի մեջ առաջինն է հայագիտ-յան բնագավառում:


Հայ. լույս է տեսել Շ-ի «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԹ–ԺԹ դար)» (թարգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, 1895, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը:

«ՇՈՒԽՈՆՑ ԱՒԵՏԱՐԱՆ», թղթե ձեռագիր մատյան: Գրվել է 1669-ին Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում (գրիչ՝ Բարսեղ): 1750–60-ին Ավետարանը եղել է Շուխյան գերդաստանի (Աշտարակում) սեփականությունը (այստեղից էլ՝ անվանումը): Այն նվիրաբերվել է տեղի Սբ Ամենափրկիչ եկեղեցուն, ապա տարվել Կարմրավոր Սբ Աստվածածին եկեղեցի, 1931-ից Մատենադարանում է (ձեռ. № 6436, 280 թերթ, 23 x 17,5 սմ, երկսյուն, բոլորաձև երկաթագիր): Պահպանակները (4) մագաղաթից են, կազմը թավշապատ տախտակ է՝ արծաթե բարձրաքանդակ կրկնակազմով: «Շ. Ա.» նկարազարդված է 3 ավետարանիչների դիմապատկերներով, 10 խորանով, կիսախորանով, լուսանցազարդերով: 2008-ից ամեն տարի Թարգմանչաց տոնին «Շ. Ա.» Մատենադարանից տարվում է Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, որպեսզի ուխտավորները հաղորդակցվեն Ավետարանի հրաշագործ զորությանը:



«Շուխոնց Աւետարան»-ի կրկնակազմը (1669, Նոր Ջուղա, գրիչ՝ Բարսեղ, Մատենադարան, ձեռ. № 6436)

«ՇՈՒՇԱՆ», պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1913-ին Կ. Պոլսում: Խմբագիր՝ Զարեհ Նեմցե: Նյութերը հիմնականում նվիրված են արևմտահայ թատրոնին ու թատերգությանը, ընտանիքի ու սոցիալ. հարաբերությունների հարցերին: Տպագրել է Ե. Օտյանի, Ա. Արփիարյանի, Սիպիլի, Ս. Պարթևյանի, ինչպես նաև սկսնակ գրողների գործեր, անցյալի գրակ-յան նմուշներ: Թարգմանաբար ներկայացրել է էջեր եվրոպ. գրակ-ից: Հանդեսի 8-րդ համարը նվիրվել է Րաֆֆուն՝ մահվան 25-րդ տարելիցի կապակցությամբ:



Վազգեն Շուշանյան

ՇՈՒՇԱՆՅԱՆ Վազգեն (Օնիկ) Գրիգորի (9.2.1903, Ռոդոսթո–2.6.1941, Փարիզ), գրող: 1915-ին ընտանիքի հետ տարագրվել է Մերձ. Արևելքի անապատները: Զրկվելով հարազատներից՝ ապաստանել է տարբեր որբանոցներում: 1923-ին հաստատվել է Փարիզում:

Լույս են տեսել Շ-ի «Գարնանային» (1927, 1956), «Օրերը գեղեցիկ չեն» (1929), «Մթին պատանութիւն» (1956), «Ճերմակ Վարսենիկ» (1960) վեպերը, «Մահուան առագաստը» (1959), «Երկիր հիշատակաց» (1966), «Երկու վիպակ» (1983), «Ներքին դաշտանկար» (1995), «Քրոնիկոն քնարական» (2000), «Խառնիխուռն» (2001) պատմվածքների ու վիպակների ժող-ը, որոնց հիմն. թեման Սփյուռքն է, սփյուռքահայի դժվար ու հակասական կյանքը, պայքարն ուծացման վտանգի դեմ: Հրատարակվել են նաև Շ-ի «Օրագիր» (1999) հուշագրությունը, «Ընտրանին» (2010):

1960-ական թթ-ին Շ-ի արխիվը բերվել է Հայաստան:

Գրկ. **Ադդարյան Գ.,** *Վազգէն Շուշանեան, Բ., 1966:* **Սևան Գ.,** *Վազգեն Շուշանյան, Ե., 1968:*




Վ. Շուշանյանի «Գարնանային» (1956, Բեյրութ) գրքի կազմը


«ՇՈՒՇԻ», հաս-քաղ. երկշաբաթաթերթ: ԼՂՀ Շուշիի շրջվարչակազմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1994-ից Շուշիում: Խմբագիրներ՝ Մուշեղ Բաղդասարյան, Յաշա Բարալյան, Հովիկ Մուսայելյան, Վարուժան Փամբուխչյան, Գեորգի Քարամյան, Արարատ Բարսեղյան (2000-ից): Արտացոլում է շրջանի վերականգնման-վերակառուցման ընթացքը, ադրբադառնում Արցախյան ազատամարտի տարեգրությանը, լուսաբանում շրջանի կրթամշակութ., սոցիալ-տնտ. կյանքը, այդ ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերը: Տպագրում է գրական և գիտ. նյութեր (նաև թարգման.):



«Շուշի», *1994-ից, Շուշի*



«Ճանապարհացոյց առ բարեպաշտ կեանս...» (1833, Բողոքական քարոզիչների տպ.) գրքի տիտղոսաթերթը



Ե. Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն կամ Յիշատակ...» (1839, Հայոց հոգևոր տեսչության տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Շուրիշկանի Աւետարան»-ի կրկնակազմը (1498, գրիչ՝ Բարսեղ քահանա, Մատենադարան, ձեռ. № 10599)

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1818–1820-ական թթ-ի 2-րդ կեսից, երբ Բազելի (Շվեյցարիա) Ավետարան. ընկերության մի խումբ միսիոներներ, իրենց հետ բերելով տպագր. սարքեր, նորաձույլ տառեր և տպագրիչ, 1827-ին Շուշիում հիմնադրել են դպրոց և տպարան: Տպագրել են հիմնականում կրոնաքարոզչ. գրքեր, առաջինը՝ «Պատմութիւն Սուրբ Գրոց» (1828) գրքույկը, ինչպես նաև Պողոս Ղարադաղցի Ներսիսյանի «Համառօտութիւն հայկական քերականութեան» (1829), Հովսեփ Արցախեցու «Համառօտ բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառ» (1830), Մ. Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1833) աշխատությունները, ուս. ձեռնարկներ ևն (22 անուն գիրք): Թարգման. հրատ-ները («Ժամանակի վերջն», 1832, «Շատ հարկաւոր հարցմունքներ ամէն մարդոյ համար», 1832, ևն) արևելահայ. էին՝ նոր գրական լեզվի առաջին տպագիր նմուշները, և նպաստել են աշխարհաբարի հաստատմանը: Այդ տպարանում հրատարակվել են նաև պարսկ., թուրք. և երր. գրքեր:

1836-ին ցար. կառավարությունն արգելել է միսիոներների գործունեությունը, իսկ տպարանը դարձել է Արցախի հոգևոր թեմի սեփականությունը՝ «Հայոց հոգևոր տեսչության տպարան» անունով: Այստեղ հրատարակվել են գրաբարի քերակ-յան ձեռնարկներ, Եփրեմ Խուրի Ասորու «Գիրք աղօթից» (1838), Ե. Հասան-Ջալալյանի «Պատմութիւն կամ Յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից» (1839), «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի Տրամաբանութիւն» (1840), Մաշտոց (1840), Կ. Եզյանի «Ներքին կեանք հին Հայաստանի» (1864) և այլ երկեր (36 անուն), նաև ***«Հայկական աշխարհ»*** հանդեսի 1874-ի ապրիլ–օգոստ. ամիսների համարները: Որոշ ժամանակ անց տպարանը փակվել է և վերաբացվել 1880-ական թթ-ի կեսից. գործել է մինչև 1900-ը:

1854-ին գործել է Մինաս Տարղլիջյանի (2 անուն գիրք), 1858–63-ին՝ Սբ Էջմիածնի (3 անուն գիրք) տպարանը:

1881-ին Շուշիում բացվել է Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպարանը: Նույն թվականին այստեղ առաջին անգամ հրատարակվել է Րաֆֆու «Խենթը» վեպը: Լույս են տեսել նաև Լեոյի, Մ. Աբեղյանի և այլ գրողների ու գիտնականների գործեր, թարգմանություններ Ֆիրդուսու, Ն. Գոգոլի ստեղծագործություններից, տպագրվել են պարբ-ներ: 1901-ից տնօրինությունը ստանձնել է դուստրը՝ Եղիսաբեթը: Տպարանը այրվել է 1905-ի Շուշիի հրդեհի ժամանակ:

XX դ-ի առաջին 2 տասնամյակներում հայտնի էին Մելքում Բաբաջանյանի (13 անուն գիրք) և Բագրատ Տեր-Սահակյանի (20 անուն գիրք) տպարանները. տպագրել են նաև պարբ-ներ [«Ղարաբաղ» (1911–12), «Փայլակ» (1915–17), «Ծիածան» (1916), «Նեցուկ» (1917), «Ապառաժ» (1917–19), «Արցախ» (1919), «Նոր կեանք» (1919) և ռուս. մի քանի թերթեր]:

«ՇՈՒՐԻՇԿԱՆԻ ԱՒԵՏԱՐԱՆ», մագաղաթե մատյան: Գրվել է 1498-ին Վանի Քաջբերունիք գավառի Ասպինակ գյուղում (322 թերթ, 18 x 13 սմ), գրիչ՝ Բարսեղ քահանա, պատվիրատու՝ իշխան Թուրվանդա:

Ավետարանը պատկերազարդված է 3 դիմապատկերով (Մատթեոս, Մարկոս և Հովհաննես ու Պրոքորոն), լուսանցազարդերով, կիսախոր-ան-անվանաթերթերով: Կազմը կաշեպատ ստվարաթղթից՝ արծաթե բարձրաքանդակ ակնակուռ կրկնակազմով, աստառը՝ թղթից և մետաքսից: 1603–04-ին Շահ Աբբասի բռնի տեղահանվածներից Տեր Գրիգորի ընտանիքը Ավետարանը տեղափոխել է Պարսկաստանի Փերիա գավառի Շուրիշկան գյուղ (այստեղից էլ՝ անվանումը)՝ Սբ Բարսեղ Կեսարացու վանք, որտեղ այն մնացել է 370 տարի: 1971-ին Ավետարանի ժառանգորդներ Ներսես և Մաթևոս Ծառուկյանները հայրենադարձել են և «Շ. Ա.» նվիրել Մատենադարանին (ձեռ. № 10599):

2002-ից ամեն տարի Սբ Զատկին հաջորդող կիրակի օրը «Շ. Ա.» Մատենադարանից տարվում է Մուղնու Սբ Գևորգ եկեղեցի, որպեսզի ուխտավորները հաղորդակցվեն Ավետարանի հրաշագործ զորությանը:

Ո

Ո, հայ. այբուբենի 24–րդ տառը, անվանումը՝ «վո»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 երկար և 1 լայն տարրերից, որոնք նուրբերով իրար են միանում վերին ծայրից: Ունի գրչագիր, բոլորգիր, երկաթագիր, նոտրգիր, շղագիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:


Ո, որպես այբուբենի հարյուրավորների սյան 6–րդ (24–րդ) տառ, նշանակել է վեց հարյուր և վեցհարյուրերորդ, բյուրի նշանով (Ո͂)՝ 6 մլն (6 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ո–մաս 600–րդ):

«ՈՉՆԻ», երգիծ. պատկերազարդ ամսաթերթ (սկզբում՝ երկշաբաթյա, ապա՝ տասնօրյա): Լույս է տեսնում 1954–ից Երևանում: Խմբագիրներ՝ Հրաչյա *Քոչար*, Գրիգոր *Տեր-Գրիգորյան*, Արամայիս *Սահակյան*, Աստղիկ Սահակյան (2013–ից):

«Ո.» երգիծանքի օգնությամբ վեր է հանում հաս-քաղ., սոցիալ. հիմնախնդիրներ, ծաղրում հասարակության արատավոր երևույթները, ներկայացնում հայ անվանի երգիծաբաններին, ծաղրանկարիչներին, անդրադառնում ճանաչված մարդկանց հորելյաններին, կատակներին, տպագրում մտերմական շարժեր ևն:

«Ո.» Գյումրիում կազմակերպել է «Ծիծաղի օրեր», Երևանում՝ «Սուր փշերի օրեր», ծաղրանկարի ցուցահանդես, հիմնադրել է «Ոզնիներ» երգիծանքի թատրոնը (1982), «Ծիծաղի տուն» (1997) հեռուստահաղորդաշարը, հրատարակել է «Զվարճալի հարցազրույցներ» (1985), «Բարի ժպիտներ» (1988), «Նաև ծիծաղով պիտի հաղթենք» (1991) ժող-ները:

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, *Ղլիճենց*, **Ոսկան Վարդապետ** [հունվ., 1614, Նոր Ջուղա–4(14).2.1674, Մարսել], տպագրիչ, գրահրատարակիչ, լեզվաբան, արքեպիսկոպոս: ***Ավետիս Ղլիճենցի*** եղբայրը: «Երևանցի» է անվանվել ծնողների ծննդավայրի անունով: Սովորել է Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում (*Խաչատուր Կեսարացու* դպրոցում): 1629–ին եկել է Էջմիածին, ապա՝ Երևան. աշակերտել է Մելքիսեթ Վժանեցուն, հետո վերադարձել է Նոր Ջուղա: 1634–ին ***Փիլիպոս Ա. Աղբակեցու*** հրավերով կրկին գնացել է Էջմիածին, եղել Ուշիի Սբ Սարգիս վանքի վանահայրը: 1662–ին Հակոբ *Ջուղայեցու* հանձնարարականով մեկնել է Եվրոպա՝ Աստվածաշունչը հայ. հրատարակելու համար: 1664–ի աշնանն ստանձնել է Ամստերդամի Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանի տնօրինությունը: 1666–ի մարտի 11–ին իր աշակերտներ *Գարապետ Անդրիանացու* և Օհան Երևանցու հետ սկսել ու 1668–ին ավարտել է Աստվածաշնչի





«Ոզնի», *1954–ից, Երևան*



«Ոսկան Երևանցի»
հուշամեդալ



Ոսկան Երևանցու *«Քերականութեան գիրք»-ի (1666, Ամստերդամ) տիտղոսաթերթը*



Մեխակ Տեր-Սարգսյանի «Ես էլ եկա... որ անցնեմ» (2014, **«Ոսկան Երևանցի»***) գրքի կազմը*



Արփակ Ոսկանյան

տպագրությունը: Այստեղ Ո. Ե. հրատարակել է ևս 14 անուն գիրք՝ Շարականոց (1664–65, 1669), «Այբբենարան եւ քրիստոնէական» (1666), Սաղմոսարան (1666), Ժամագիրք (1667), «Գիրք աղօթից» (1667), Նոր կտակարան (1668), Մովսես Խորենացուն վերագրվող միջնադարյան հայկ. առակների ժող.՝ «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք» (1668), Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» (1669), Տօնացոյց (1669) ևն: 1669-ին տպարանը փոխադրել է Լիվոռնո, 1672-ին՝ Մարսել, հրատարակել ևս 8 անուն գիրք, այդ թվում՝ «Պարտէզ հոգեւոր (1670), Սաղմոսարան (1672), Պարզատումար (1673), առաջին անգամ՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը՝ «Գիրք աղօթից» (1673) վերնագրով (մնացել է անավարտ), թվաբանության հայ. առաջին տպագիր դասագիրքը՝ «Արհեստ համարողութեան»-ը (1675). այն նաև աշխարհաբար առաջին գիրքն է: Տպարանը, որը Ո. Ե-ու պատվին կոչվել է Ոսկանյան, գործել է մինչև 1686-ը, հրատարակել է 40 անուն հայ. գրքեր: Ո. Ե. պատրաստել է հայ տպագրիչ-հրատարակիչներ: Ոսկանյան հրատ-ների բարձր որակի շնորհիվ հետագա տպագրիչները դրանք բազմիցս նույնությամբ արտատպել են:

Ո. Ե. 1666-ին Ամստերդամում՝ Սբ Սարգսի և Սբ Էջմիածնի տպարանում, հրատարակել է իր կազմած «Քերականութեան գիրքը», որը գրաբարի քերականության ձեռնարկ է (112 էջ, 8o, 10,2 x 7,8 սմ):

Ո. Ե. հայ հին տպագրության ամենախոշոր դեմքն է հակոբ ***Մեղապարտից*** հետո:

Ո. Ե-ու մասին է Հ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» (1988, 2012) պատմավեպը: 2014-ին Երևանում հանդիսավորությամբ նշվել է նրա ծննդյան 400-ամյակը:

Տես նաև ***Ամստերդամի հայկական տպագրություն, Լիվոռնոյի հայկական տպագրություն, Մարսելի հայկական տպագրություն:***

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895:* **Թէոդիկ,** *Տիպ ու տպառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նմանահանություն):* **Սարուխան Ա.,** *Հոլլանդան եւ հայերը ԺԶ-ԺԹ դարերում, Վնն., 1926:*

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ», տպագրատուն: Ստեղծվել է 1994-ին Երևանում: Հինադիր-տնօրեն՝ Մեխակ ***Տեր-Սարգսյան***, տնօրեն՝ Միեր Սարգսյան (2014-ից): Տպագրում է դասագրքեր, գեղ., պատմ., մասնագիտ., գրակ., գունավոր ալբոմներ, բուկլետներ, բրոշյուրներ:

Տպագրատան առավել ուշագրավ հրատ-ներից են Վարդան Արևելցու «Ճառք ներբողեանք» (2000), Է. Տիգրանյանի «Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում (XIX դարի վերջ–XX դարի սկիզբ)» (2003), Ա. Աղայանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» (2009) աշխատությունները, Հ. Թումանյանի «Ընտրանին» (2010), Հ. Սահյանի «Երկեր չորս հատորով» (հ. 1, 2..., 2011, 2014...) և «Ընտրանի» (2012) ժող-ները, Հ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» պատմավեպը (2012) ևն:

«Ոսկե աստղ» միջազգ. մրց. (2000):

ՈՍԿԱՆՅԱՆ Արտակ Սուրենի [ծ. 30.4.1938, գ. Ղզլքիլիսա (այժմ՝ Կարմրավանք՝ Վրաստանի Ծալկայի շրջանում)], բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1962): 1964–67-ին աշխատել է «Գիտություն և տեխնիկա» ամսագրի, 1967–70-ին՝ «Մաթեմատիկան և ֆիզիկան դպրոցում» հանդեսի, 1970–79-ին՝ Հայկ. հանրագիտարանի (1975–79-ին՝ գլխ. խմբագրի տեղակալ) խմբագրություններում: 1990-ից՝ ***«Անահիտ»***, 2006-ից՝ «Օքրո Օքրոյան» հրատարակչությունների տնօրեն, 2003-ից՝ գրական հիմնադրամի նախագահ:

Լույս են տեսել Ո-ի «Կաթն-ծիր» (1967), «Կարճ միացում» (1980), «Կարոտի կայմ» (1985), «Հետպատերազմյան փողոցի հեքիաթը» (2011) բանաստեղծությունների, «Թզուկը» (2003) և «Գույների հեղեղը» (2003) մանկ. բանաստեղծությունների ժող-ները, «Ռիչարդն ընդդեմ Ռիչարդի» (2006) թատերագիտ. էսսեն: Թարգմանություններ է արել վրաց-ից և ռուս-ից: Կազմել է «Երկնային

Թումանյանը» (2006), «Վիկտոր Համբարձումյան: Գիրք Իմաստասիրաց. հոդվածներ և գրույցներ» (2009) ժող-ները:

ՈՍԿԱՆՅԱՆ Նինել Աշոտի (1923, Երևան–2005, Երևան), մատենագետ: Ավարտել է ԵՊՀ (1946): 1951–69-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, 1956–2005-ին աշխատել է ՀԱԳ-ում: Ո-ի ղեկավարությամբ և համահեղինակությամբ կազմվել ու հրատարակվել են «Հայ գիրքը 1512–1800 թվականներին» (1988) և «Հայ գիրքը 1851–1900 թվականներին» (1999) մատենագիտ. ստվարածավալ աշխատությունները:

ՈՍԿԱՆՅԱՆ Ստեփան, **Ստեփան Ոսկան** (1825, Զմյուռնիա–1901, Զմյուռնիա), հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանը: 1846-ին մեկնել է Փարիզ, սովորել Սորբոնի համալսարանում: Կ. Պոլսում և Զմյուռնիայում տպագրել է (ծածկանունով) «Ներքին համոզումն» (1853) և «Հռոմէական պարգեւ» (1854) պամֆլետները: 1855–56-ին մի խումբ համախոհների հետ Փարիզում խմբագրել է և հրատարակել ***«Արեւելք»*** պարբ-ը, 1859 և 1864–65-ին՝ ***«Արեւմուտք»*** հանդեսի խմբագիր: Փարիզում մտերմացել է Միքայել ***Նալբանդյանի*** հետ, ***«Հիւսիսափայլ»***-ից արտատպել է նյութեր: 1860-ին մեկնել է Իտալիա. Տուրինում խմբագրել «Լ'Իտալի» (ֆրանս.) թերթը: 1865-ին հաստատվել է Զմյուռնիայում. աշխատել է որպես տեսուչ և ֆրանս-ի ուսուցիչ Մեսրոպյան ու Հռիփսիմյան վարժարաններում, հիմնադրել Ուսումնասեր ընկերությունը: 1869–1901-ին՝ Զմյուռնիայի «Բարեփոխում» (ֆրանս.) թերթի հրատարակիչ: 1850–60-ական թթ-ին գրել է արձակ գործեր («Ազգային պակասութիւն», «Հայ դիւցազնուհի մը», «Խաչատուր Աբովեան», «Քսանչորս ստութիւնք», «Լեռնականք», «Հայրենիք եւ հայրենասիրութիւն» ևն): Եղել է աշխարհաբարի ջատագովներից, գրել է հղկված և պատկերավոր լեզվով, կարևորել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը: Հեղինակ է նաև պատմվածքների, բանաստեղծությունների, երգիծ. գործերի, թարգմանել Է. Սյուի, Ժ. Լաֆոնթենի, Ա. Դյումա-որդու, Ֆ. Շատոբրիանի, Ա. Պրևոյի և ուր. ստեղծագործություններից:

Հանդես է եկել նաև Հարմա, Հրանտ, Վահե, Օ. Օ., Օրպել և այլ գրական կեղծանուններով:

Գրկ. Լէօ, *Ստեփան Ոսկան, «Մուրճ», 1901, № 11–12:* **Աւետուր Հ.**, *Դիմաստրուելներ, ԿՊ, 1921:* **Օշական Յ.**, *Համայնապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 1, Երուսաղեմ, 1945:* **Հակոբյան Մ.**, *Ստեփան Ոսկանյանը և նրա միջավայրը: Կյանքը, գործը, հասարակական-քաղաքական հայացքները, Ե., 2005:*

ՈՍԿԱՆՅԱՆ Վարուժան Պերճի [ծ. 25.7.1958, Կրայովա (Ռումինիա)], պետ-քաղ. գործիչ, գրող, խմբագիր: Ստեղծագործում է ռումն.: Տնտեսագիտ-յան դ-ր (1998): Ավարտել է Բուխարեստի տնտեսագիտ. համալսարանը (1982), Բուխարեստի համալսարանի մաթեմատիկայի ֆակ-ը (1991): 1990–96-ին՝ Ռումինիայի խորհրդարանի պատգամավոր, ազգ. փոքրամասնությունների խմբակցության նախագահ, խորհրդի անդամ (1993), 1996–2003-ին՝ «Աջ ուժերի միություն» կուս-յան հիմնադիր-նախագահ: 1996–2000-ին և 2004-ից՝ սենատոր, Սենատի հանձնաժողովի նախագահ, 2006–07-ին՝ էկոնոմիկայի և առևտրի, 2007–08-ին՝ էկոնոմիկայի և ֆինանսների, 2012–14-ին՝ էկոնոմիկայի նախարար: 1989-ից Ռումինիայի հայոց միության հիմնադիր-նախագահն է, Ռումինիայի գրողների միության փոխնախագահը:

1990-ից վերահրատարակում և խմբագրում է ***«Արարատ»*** (ռումն., 1924–42, Բուխարեստ) հայագիտ. հանդեսը:

Լույս են տեսել Ո-ի «Կապույտ շամանը» (1994), «Թագուհու սպիտակ աչքը» (2001), «Հազարաթև Հիսուսը» (2005) բանաստեղծությունների, «Կոմանդորի արձանը» (1994, Բուխարեստի գրողների ընկերակցության մրց.), «Հարյուր տերև և այլ պատմվածքներ» (2013) ժող-ները: Ո-ի «Շշուկների մատյան» (2009, Ռումինիայի ակադ-ի գրական գլխ. մրց.) վեպը օտար երկրներում եղեռնապուրծ հայ գաղթականների մաքառումների մասին է. թարգմանվել է 4 լեզվով., 2012-ին՝ նաև հայ. (թարգմ.՝ Սարգիս Սեյյանի, Բուխարեստ-Ե.):

Վաղեն Ալեքսանյան




Նինել Ոսկանյան




Ստեփան Ոսկանյան



Վարուժան Ոսկանյան



Վ. Ոսկանյանի *«Շշուկների մատյան» (2012, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*




Համազասպ Ոսկյան



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ-ՎԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ

Հ. Ոսկյանի «Վասպուրական – Վանի վանքերը» (մաս Ա, 1940, Վնն.) գրքի փիփողոսաթերթը



ՈՍՏԱՆ

ԵՒՈՒՄԱՍԱՅ ՄԵԾ ՊԱՐԵԲՈՒՂԻՔ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՌՈՒՄԿԼԱՆ

«Ոստան», 1911–12, 1919–28, Կ. Պոլիս (№ 1, 1911)



Ռուբեն Որբերյան

ՈՍԿՅԱՆ Համազասպ [ավազանի անունը՝ Անտոն, 1.7.1895, գ. Խանդաձոր (Էրզրումի նահանգի Խոտորջուրի գավառակ)–25.2.1968, Վիեննա], պատմաբան, բանասեր, ձեռագրագետ, մանկավարժ, խմբագիր: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1914–ից): Վիեննայի համալսարանի աստվածաբանության դ-ր (1922): 1928–31-ին՝ Պլովդիվի (Բուլղարիա) Մխիթարյան վարժարանի ուսուցիչ, 1931–37-ին՝ տնօրեն, 1947–60-ին՝ Բեյրութի Մխիթարյան վարժարանի տնօրեն: 1932-ին Պլովդիվում հիմնադրել է ***«Ուսումնարան»*** դպրոց. ամսագիրը: 1938–46 և 1963–68-ին՝ ***«Հանդէս ամսօրեայ»*** հայագիտ. պարբ-ի խմբագրապետ:

Լույս են տեսել Ո-ի «Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը» (1922), «Մատենագրական քննութիւններ» (1926), «Վասպուրական-Վանի վանքերը» (մաս Ա–Գ, 1940–47), «Սեբաստիայի վանքերը» (1946), «Բարձր Հայքի վանքերը» (1951), «Գնունեաց եւ Ռշտունեաց նախարարութիւնները» (1952), «Տարօն-Տուրուբերանի վանքերը» (1953), «Արցախի վանքերը» (1953), «Ուսումնասիրութիւններ հայ նախարարութիւններու մասին» (1955), «Կիլիկիայի վանքերը» (1957), «Գուգարքի վանքերը» (1960), «Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը» (1962) աշխատությունները: «Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը» (1966) երկում ներկայացրել է միջնադարյան բանաստեղծներ Հովհաննես Կարնեցուն, Գրիգոր արք. Օշականցուն, Մովսես Կարնեցուն, Մարտիրոս Ղրիմեցուն: Աշխատասիրել և հրատարակել է «Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը» (1924), «Սարդիկէի ժողովի հայերէն կանոնները» (1945), Ստեփանոս Ռոշքայի «Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք» (1964), Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանի» (1965) ուսումնասիրությունները, թարգմանել է Ջ. Օբերտինսկու «Լեհահայերը եւ անոնց Անդրէաս արքեպիսկոպոսը Եազլովիցի մէջ» (1963) աշխատությունը: Հետազոտել և կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (հ. 2, 1963) ձեռագրացուցակը, որը Հակոբոս ***Տաշյանի*** համանուն գործի շարունակությունն է: Սփյուռքահայ դպրոցների համար կազմել է դպրոց. ձեռնարկներ («Դասագիրք հայոց պատմութեան», հ. 1–5, 1959–60, ևն): Հեղինակ է նաև 11 անտիպ գործերի («Արարատյան նահանգի վանքերը», «Սյունյաց աշխարհի վանքերը», «Հայ վանքեր ի սփյուռս» ևն):

Ո-ի գրքերի մեծ մասը տպագրվել է Վիեննայի Մխիթարյան տպարանում:

Երկ. Հայրենի յուշերէս, Բ., 1952: Սրեփանոս Ռօշքա եւ Մատթէոս Վ. Զուղայեցի, Վնն., 1968:

«ՈՍՏԱՆ», գրական, գիտ. և մշակութ. եռամսյա, ապա՝ կիսամսյա (1919–22) հանդես: Լույս է տեսել 1911–12 և 1919–28-ին՝ Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Միքայել ***Շամկրանճյան***, Տիգրան ***Չոկմկրյան:*** Տպագրել է հայ գրողների ստեղծագործություններ, թարգմանություններ՝ համաշխ. գրակ-ից, գրախոսականներ, ներկայացրել հայ ժող. երգը, գաղթավայրերի մշակութ. կյանքը, արվ-ի հայ երախտավորների:

ՈՐԲԵՐՅԱՆ (Ալիքյան) Ռուբեն (16.2.1874, Մալաթիա–3.1.1931, Փարիզ), բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ: Ավարտել է Խարբերդի «Եփրատ» քոլեջը (1892): 1893–1901-ին եղել է ուսուցիչ Պանտրմայի, Կ. Պոլսի, Զմյուռնիայի դպրոցներում: 1903–20-ին ապրել է Ջիբութիում, եղել «Դեյլի Մեյլ» անգլ. թերթի թղթակից: 1920-ին հաստատվել է Փարիզում:

Լույս են տեսել Ո-ի բանաստեղծությունների առաջին ժող-ը՝ «Յիշատակաց ծաղիկներ» (1893, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.) խորագրով, «Ծփանքներ» (1906) պոեմից երեք հատված, «Ովասիս» (1920, Փ., Կ. Ներսեսի տպ.) հատընտիրը, «Երկերը» (1963): Թարգմանել է Ջ. Բայրոնի «Կայեն», «Երկինք և երկիր» պոեմները, հատվածներ՝ «Չայլդ Հարոլդ» պոեմից: 1932-ին «Բազմավէպում» տպագրվել է Ո-ի «Լորտ Պայրըն» ուսումնասիրությունը:

Գրկ. Գաբրիելյան Վ., Ռուբեն Որբերյան, Ե., 1964:

ՈՐԲՈՒՆԻ Զարեհ [Էոքսուզյան Զարեհ Մարտիրոսի, 24.5.1902, Օրդու (Տրապիզոնի նահանգ)–1.12.1981, Փարիզ], գրող, խմբագիր: Սովորել է Օրդուի Մովսիսյան վարժարանում: Մեծ եղեռնի տարիներին կորցրել է հորը, ընտանիքի հետ տեղափոխվել է Ռուսաստան: 1919-ին վերադարձել է Կ. Պոլիս, սովորել Պերպերյան վարժարա-

նում (1919–22), ապա հաստատվել Ֆրանսիայում: 1924-ին Մարսելում խմբագրել է «Նոր հաւատք» հանդեսը, 1938–39-ին Փարիզում՝ *«Լուսաբաց»* (երկուսն էլ՝ Պետրոս *Զարոյանի* հետ) պարբ-ը, որի հրատ-ն ընդհատվել է պատերազմի պատճառով: Ռ. զորակոչվել է ֆրանս. բանակ, գերի է ընկել, ազատվել 1945-ին: 1947–49-ին՝ *«Հայ կին»* ամսաթերթի խմբագիր, 1958-ին աշխատել է «Ամսօրեակ», 1961–62-ին՝ «Գրական ամսաթերթ» պարբ-ներում:

Ռ-ի գրական առաջին գործը «Փորձ» (1929,1958) վեպն է, որը «Հալածուածները» վիպաշարի առաջին երկն է: Հետագայում ամբողջացրել է վիպաշարը՝ «Թեկնածուն» (1967), «Ասֆալթը» (1972), «Տարօրինակ օր մը» (1973) վեպերով: Լույս են տեսել նաև Ռ-ի «Վարձու սենեակ» (1939), «Անձրեւոտ օրեր» (1958), «Գոհարիկ եւ ուրիշներ» (1966) պատմվածքների ժող-ները, «Եւ եղեւ մարդ» (1964, 1967) վեպը, «Դէպի երկիր (Շամբորդութեան յուշեր)» (1947, Փ.) ուղեգրությունը:

«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ», սահմանադրության առաջին (աշխարհում առաջիններից մեկը) նախագիծը հայ իրականության մեջ: Շարադրել է Շահամիր *Շահամիրյանը*: Տպագրվել է 1788–89-ին (տիտղ-ին նշված է 1773) Մադրասում՝ Հակոբ Շահամիրյանի անվ. տպարանում: Տիտղ-ին՝ «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան...» (339 էջ, 6º, 13,8 x 8,4 սմ):

Սահմանադրության նախագիծը (521 հոդված) գրքի 2-րդ մասն է, որտեղ ներկայացված են ապագա անկախ Հայաստանի հաս., պետ. կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը, նրանց իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, տնտեսության, լուսավորության, զինված ուժերի կազմակերպման, պատգամավորների ընտրության և այլ հարցեր:

«Ռ. փ.» շարադրելիս Շ. Շահամիրյանը առաջնորդվել է եվրոպ. սահմանադրությունների փորձով, սակայն չի «պատճենել» այն: «Ռ. փ.» վերահրատարակվել է 1913-ին Թիֆլիսում (Նվարդ Աղանյանի տպ., «Ղուկասյան մատենադարան» մատենաշար), աշխարհաբար՝ 2002-ին Երևանում (փոխադր. և ծնթգր.՝ Պ. Խաչատրյանի):

Գրկ. **Գրիգորյան Գ.**, *Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Ե., 1957:* **Թելունց Մ.**, *Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Ե., 1995:* **Համբարձումեան Ռ.**, *«Որոգայթ փառաց». ակունքները, այժմէականութիւնը եւ առանձնայատկութիւնները., Ե., 1999:* **Иоанисян А.**, *К истории возникновения «Западни честолюбия», «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1948, № 3:*

«ՈՐՈՏԱՆ», հաս-քաղ., գրական, մշակութ. անկախ ամսաթերթ: Մինչև 1995-ը՝ ՀԿԿ Սիսիանի շրջկոմի և ժողպատգամավորների, ապա՝ Սիսիանի քաղխորհրդի գործկոմի եռօրյա պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1933-ից Սիսիանում (1933–39-ին՝ «Սիսիանի հարվածային», 1940–64-ին՝ «Կոմունիզմի ուղեգիր», 1965-ից՝ «Ռ.», 1995–97-ին չի տպագրվել): Խմբագիրներ՝ Վարազդատ Բզնունի, Գուրգեն Դադումյան, Մանուկ Մարգարյան, Գառնիկ Պապիկյան, Մկրտիչ Համբարձումյան, Բենիկ Մաթևոսյան, Խաչիկ Գյուրջյան, Բաբկեն Խուդավերդյան, Բենիկ Գասպարյան, Շչորս *Դավթյան*, Արմեն Հովակիմյան, Միշա Ղազարյան, Արևհատ Ամիրյան (1997-ից): Լուսաբանում է մարզի հաս-տնտ., սոցյալ., կրթ. կյանքը, անդրադառնում ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, գրական-մշակութ. հորելյաններին:

1938–39-ին «Ռ.»-ի խմբագրությունում աշխատել է Համո *Սահյանը:*



Զարեհ Որբունի



«Որոգայթ փառաց» *(1773, Մադրաս, Հակոբ Շահամիրյանի անվ. տպ.) գրքի տիտղոսաթերթը*



«Որոտան», *1933-ից, Սիսիան*

Չ




Չ, հայ. այբուբենի 25-րդ տառը, անվանումը՝ «չա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ տարրերից. կարճը և լայնը նուրբերով միանում են ձախից, կարճը՝ վերևից և վերին ծայրից, լայնը՝ ներքևից՝ նույնպես վերին ծայրից՝ ստորին ծայրով թեքված դեպի աջ: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Չ, որպես այբուբենի հարյուրավորների սյան 7-րդ (25-րդ) տառ, նշանակել է յոթ հարյուր և յոթհարյուրերորդ, բյուրի նշանով (Չ̿)՝ 7 մլն (7 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Չ–մաս 700-րդ):

ՉԱԹԵՐՉԻ Սունիթի Կումար (1890–1977), հնդիկ բանասեր-արևելագետ: Հնդկ. լեզվաբանության հիմնադիրը: Սովորել է Լոնդոնի և Փարիզի համալսարաններում, Կոլեժ դը Ֆրանսում և Արլ. կենդանի լեզուների դպրոցում (1919–22): 1922-ից՝ Կալկաթայի համալսարանի պրոֆ.: 1969-ից՝ Դելիի գրակ-յան ակադ-ի նախագահ: Չ. ուսումնասիրել է հայ-ը, մասնավորապես՝ գրաբարը, տպագրել հոդվածներ հայոց լեզվի, պատմության և մշակույթի վերաբերյալ: 1966-ին այցելել է Հայաստան:

Լույս է տեսել Չ-ի «Հայկական հերոսական լեգենդները և Սասունցի Դավիթ էպոսը» (1961) գիրքը:

ՉԱԼԸԼԽՅԱՆ Վրթանես (18.10.1803, Կ. Պոլիս–1834, Վիեննա), լեզվաբան: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ: 1827-ին լույս է տեսել Չ-ի «Քերականութիւն հայկազեան լեզուի» դասագիրքը, 1829-ին՝ «Կրթութիւն գործնական հայկական գրոց բարբառոյ, ըստ իւրաքանչիւր կանոնաց նորոգ քերականութեան» աշխատությունը: Չ-ի դասագրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում և ունեցել են մի քանի հրատ.: Արսեն *Այտընյանը* համալրել և ընդլայնել է Չ-ի «Քերականութիւնը...», որը հետագայում դարձել է դաս. գրաբարի ուսումնասիրության լավագույն աղբյուր:



Վրթանես Չալըխյանի *«Քերականութիւն հայկազեան լեզուի» (1827, Վնն.) գրքի տիտղոսաթերթը*

Գրկ. Համբարձումյան Վ., Վրթանես Չալըխյան: Կյանքն ու գործը, «Մշակույթ», 1989, № 2–3:

ՉԱԿԼԱՅՅՈՒ Մարիս Ալբերտի [ծ. 16.4.1940, Սալդուս (Լատվիա)], լատիշ բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Լատվիայի համալսարանի պատմաբանասիր. ֆակ-ը (1964):

Չ. գրել է Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարք («Հայաստանը անցորդին», «Խաչքարի ձայնը», «Սագաղաթի թեր-

թիկների ձայնը», «Քամիներից է փրկվել քարը»), «Վերադարձ դեպի Հայաստան» պոեմը, որոնց հայ. թարգմանությունները 1968–74-ին հրատարակվել են հայկ. մամուլում: Սասնակցել է «Սուրբ է հողը քո» (1974) հայ պոեզիայի անթոլոգիայի հրատ-յանը: Թարգմանել է Գրիգոր Նարեկացու, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի, Գ. Էմինի, Զահրատի և ուր. ստեղծագործություններից, հանդես եկել հայ իրականության ու մշակույթի վերաբերյալ հոդվածներով և ակնարկներով: Երևանում տպագրվել է Չ-ի «Նվագիր ծղրիդ» (1976) բանաստեղծությունների ժող-ը:

Լույս են տեսել Չ-ի «Երկուշաբթի» (1965), «Հետիոտնը և հավիտենությունը» (1967), «Խոտի օրը» (1971), «Անտառային աղավնու կանչը» (1979), «Գողացված խեցի» (1980) բանաստեղծությունների ժող-ները:

ՉԱՄՉՅԱՆ Միքայել (Կարապետ) Աբրահամի (4.12.1738, Կ. Պոլիս–30.11.1823, Կ. Պոլիս), պատմաբան, լեզվաբան, աստվածաբան: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1762-ից), վարդապետ (1769-ից), Կ. Պոլսի Մխիթարյանների մեծավոր (1795–1823): Սովորել է Սբ Ղազարի Մխիթարյան վարժարանում (1757–62), տիրապետել հին և նոր բազմաթիվ լեզուների: Եղել է Սբ Ղազարի Մխիթարյան դպրոցի վերատեսուչ (1776–89): Նրան աշակերտել են Մկրտիչ և Հարություն ***Ավգերյանները***, Սանվել ***Զահրջահյանը***, Ղուկաս ***Ինճիճյանը*** և ուր:

Չ-ի «**Քերականութիւն հայկազեան լեզուի**» աշխատությունը տպագրվել է 1779-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (610 էջ, 8º, 15,5 x 9,2 սմ): 1801–59-ին վերահրատարակվել է 15 անգամ և շուրջ 100 տարի օգտագործվել որպես գրաբարի քերակ-յան լավագույն դասագիրք:

Չ-ի գլուխգործոցը՝ «**Պատմութիւն Հայոց**» աշխատությունը, հայոց քնն. պատմություն ստեղծելու առաջին փորձն է հայ պատմագրության մեջ: Այն նաև Մովսես Խորենացու ***«Պատմություն Հայոց»***-ից հետո ամբողջ. համահավաք պատմություն ստեղծելու առաջին փորձն է: Չ. մշակել է ժամանակագրություն, փորձել է պարբերացնել հայոց պատմությունը, առաջադրել է պատմության ըմբռնման նոր սկզբունքներ:

«Պատմութիւն Հայոց»-ի Ա հատորը տպագրվել է 1784-ին Վենետիկում՝ Պիետրո Վալվազիանիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ տեառն 1784...» (803 էջ, 4º, 18,7 x 11 սմ), Բ հատորը՝ 1785-ին նույն տպարանում (1060 էջ, 4º, 18,7 x 11 սմ), Գ հատորը՝ 1786-ին Վենետիկում՝ Զիովաննի Պիացոյի տպարանում (1092 էջ, 4º, 18,7 x 11 սմ): Տպագրվել է նաև համառոտ տարբերակը՝ «Խրախճան պատմութեան Հայոց» վերնագրով (1811), հայատառ. թուրք. (1812, 1850), անգլ. (1827):

Կ. Պոլսի առաքել. և կաթոլիկ համայնքների միջև սուր պայքարը հարթելու նպատակով Չ. գրել է «Վահան հաւատոյ, յորում հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ...» ծավալուն դավանաբան. երկը, որը Հռոմի հավատաքննության գերագույն ատյանի 1819-ի մայիսի 5-ի որոշմամբ ճանաչվել է հերետիկոս. և ոչնչացվել. համառոտ տարբերակը՝ «Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ», հրատարակվել է 1873-ին Կալկաթայում (Հովհաննես Խաչկյանի տպ.): Հայ մեկնող. գրակ-յան գլուխգործոցը Չ-ի «**Մեկնութիւն սաղմոսաց**» (հ. 1–10, 1815–23) երկասիրությունն է:

Չ. մշակել է հայկ. դպրոցների ուս. և բարոյակրթ. կանոններ ու ծրագրեր. դասավանդվող առարկաներից գերապատվությունը տվել է հայագիտ-յանը:

Լույս են տեսել նաև Չ-ի «Նուագարան օրհնութեանց...» (1801), «Հրահանգ եօթնեկի...» (1802, 1817), «Պատկեր տօնից սուրբ Աստուածածնին» (1805), «Սեղան խնկոց» (1816) երկերը: Չ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:




Մարիս Չակլայսի
«Նվագիր ծղրիդ» (1976, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Ա. Ավագյան) գրքի կազմը



Միքայել Չամչյան



Մ. Չամչյանի
«Պատմութիւն Հայոց» (հ. Ա, 1784, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



Հովհաննես Չամուռճյանի *«Հաղորդութեան վրայ նամակներ...» (1845, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



Եղիշե Չարենց



Ե. Չարենցի *«Գիրք ճանապարհի» (1934, Ե., Հայպետհրատ, ձևավորող՝ Հ. Կոջոյան) ժողովածուի կազմը*

Գրկ. Ճէլմճէմեան Ս., *Հ. Միքայէլ Չամչեան եւ իր Հայոց պատմութիւնը, Վնտ., 1983:*

ՉԱՄՈՒՐՃՅԱՆ Հովհաննես Սերովբեի, **Տերոյենց, Պրուսացի, Տեր-Կարապետյան** [7.8.1801, Բուրսա (Բիթլիսի նահանգ)–24.6.1888, Կ. Պոլիս], հրապարակախոս, եկեղեց. գործիչ, բանասեր, թարգմանիչ, խմբագիր: Սովորել է Արմաշի դպրեվանքում (1817–19): Տիրապետել է 12 լեզվի: 1819-ից դասավանդել է Բուրսայում, կատարել թարգմանություններ: 1830-ին տեղափոխվել է Կ. Պոլիս: 1838–49-ին դասավանդել է Սկյուտարի ճեմարանում, եղել տնօրեն: 1846-ին հիմնադրել և մինչև 1849-ը, ապա 1850–52-ին խմբագրել է *«Հայասփան»* թերթը, 1855–56-ին՝ «Ջօհալ» հայատառ թուրք. հանդեսը, որը թարգմանաբար վերանվանվել է *«Երևակ»* և 1857–62 ու 1864–66-ին տպագրվել է հայ.: Չ. հանդես է եկել *«Մեղու»* պարբ-ի շուրջ համախմբված հայ գործիչների և Միքայել *Նալբանդյանի* դեմ, պայքարել է նաև բողոքականության դեմ, մասնակցել հայ-հռոմ. եկեղեցիների դավան. տարբերությունների քննարկումներին: 1855-ին Չ. Կ. Պոլսում հիմնադրել է տպարան. գործել է մինչև 1886-ը, տպագրել է շուրջ 45 անուն գիրք:

Լույս են տեսել Չ-ի «Հաղորդութեան վրայ նամակներ...» (1845, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիայանի տպ.), «Քրիստոնէական վարդապետութիւն» (1858), «Բանադատ» (1860), «Իրաւախոհ» (հ. 1–3, 1868–70) դավանաբան. աշխատությունները, «Համառօտ նոր քերականութիւն» (1872, չորսն էլ՝ ԿՊ, Չ-ի տպ.), «Քրիստոնէական համառօտ ի պէտս նախակրթական դպրոցաց» (ա. թ.) դասագրքերը: 1878-ից հետացել է հրապարակախոս. գործունեությունից, գրել եկեղեցու ընդհանուր պատմություն (30 հ., անտիպ ձեռագիրը պահվում է Երուսաղեմի մատենադարանում): Թարգմանել է Մ. Զակուռիի («Տեսչութիւն հովուական», Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ., 1856), Ժերար Աբբայի («Խորհուրդ գաղտնի ընկերութեանց», 1863), Մ. Էմինի («Հնախօսութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեանց», 1877, երկուսն էլ՝ ԿՊ, Չ-ի տպ.) և ուր. ստեղծագործություններից:

Գրկ. **Մըրմըրեան Յ.,** *Տաղանիւններորդ դար եւ Յովհ. Պրուսացի Տէրոյենց, ԿՊ, 1908:*

ՉԱՐԵՆՑ (Սողոմոնյան) Եղիշե Աբգարի (13.3.1897, Կարս–27.11.1937, Երևան, անհատի պաշտամունքի զոհ), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, խմբագիր: Սովորել է Կարսի հայկ., ապա՝ ռուս. ռեալ. դպրոցներում (1908–12), Մոսկվայի Շանյավսկու անվ. ժող. համալսարանում (1916–17), 1922-ին ընդունվել է Մոսկվայի Վ. Բրյուսովի հիմնադրած գրական-գեղ. բարձրագույն ինստ-ը՝ իբրև ունկնդիր, սակայն ուսումը կիսատ է թողել: 1912–17-ին հետևել է սիմվոլիզմի գրական ուղղությանը («Ծաղիկները հեզ թեքվում են...», 1912, Թ., «Պատանի» ալմանախ, «Երեք երգ տխրադալուկ աղջկան», 1914, Կարս, «Հրո երկիր», 1913–16, «Տեսիլաժամեր», 1915, «Ծիածան», 1917, Մ., Ե. Ավետիքյանի տպ., բանաստեղծությունների ժող-ներ): Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին նրան մտահոգել է դժոխքի վերածված հայրենիքի ճակատագիրը («Կապուտաչեայ հայրենիք», 1915, Թ., Նվարդ Աղանյանի տպ., «Լիրիքական բալլադներ», 1915–17, «Դանթէական առասպել», 1916, Թ.-Մ., «Վահագն», 1916, «Ազգային երազ», 1917): Հեղափոխությամբ ոգևորված՝ 1918–19-ին Ռուսաստանում մասնակցել է քաղաքաց. կռիվներին, 1920-ին՝ Հայաստանում Մայիսյան խռովությանը: 1922-ին Գ. Աբովի և Ա. Վշտունու հետ հռչակել է «Երեքի դեկլարացիան»: 1918–24-ին գրած բանաստեղծությունների շարքերը, պոեմներն ու բալլադներն առանձնանում են հեղ. ռոմանտիզմով ու «ձախ» տրամադրություններով [«Սօմա» (1918, Թ., «Պրոգրես» տպ.), «Ամբոխները խելագարուած» (1919, նույն տպ.), «Ոդջակիզուող կրակ» (1918–20), «Նայիրի երկրից» (1920), «Ռոմանս անսէր» (1920, Մ.), «Բոլորին, բոլորին, բոլորին» (Ե., 1920, ա. տպ.), «Չարենց-Նամէ» (1922), «Կապկազ» թամաշա» (1923, Թ., շապիկի ձևավորումը՝ Կ. Հալաբյանի), «Կոմալմանախ» (1924, Մ.), «Ստամբոլ» (1924, ԿՊ), «Մաճկալ Սաքոյի պատմությունը» (1924, Ե.), «Լենինն ու Ալին» (1925, Ե.)]:

Չ-ի ստեղծագործության մեջ առանձնանում է հայրենասիր. թեմայով գրած «Մահուան տեսիլ» (1920) բանաստեղծությունը, «Տա-

ղարան» (1920–21) ժող–ը, որի վերջին՝ «Ես իմ անուշ Հայաստանի...» տաղը Հայաստանին ուղղված հայրենահիացումի սքանչելի ձոն է:

1924–ի նոյեմբ. 20–ից մինչև 1925–ի հուլիսը եղել է արտասահմանում, վերադառնալով Հայաստան՝ հիմնադրել է «Նոյեմբեր» գրական միավորումը: 1920–ին եղել է Լուսժողկոմի արվ–ի բաժնի վարիչ, 1926–28–ին աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի, «Նորք» ամսագրի խմբագրություններում, 1928–35–ին՝ Հայպետհրատում (բաժնի վարիչ): Չ–ի խմբագրությամբ լույս են տեսել Խ. Դաշտենցի, Գ. Սունդուկյանի, Հ. Թումանյանի, Մ. Դարբինյանի գործերից: 1925–32–ի Չ–ի պոեզիան խորհրդանշվում է «ձախ» տրամադրությունների հաղթահարմամբ ու հոգեբ. ռեալիզմի սկզբունքների հաստատմամբ [«Պոեմ հերոսական» (1925), «Պոեմների ժողովածու» (1927, Թ., «Զարյա Վոստոկա»–ի տպ.), «Խմբապետ Շավարշը» (1929, 1961), «Լիրիքական անտրակտ» (1927–30), «Էպիքական լուսաբաց» (1930, Ե.)]: «Գիրք ճանապարհի» (1934, 1997) ժող–ում, որտեղ զետեղված են «Պատմության քառուղիներով», «Դեպի լյառը Մասիս», «Նորք» (երեքն էլ՝ 1933) պոեմները, անդրադարձել է հայ ժողովրդի պատմ. ճակատագրին: «Երկիր Նաիրի» (1926, Պետհրատ, 1977, 2012) պատմաքաղ. վեպում Կարս քաղաքի պատմության համայնապատկերի վրա Չ. ներկայացրել է Առաջին աշխարհամարտի (1914–18) տարիներին Հայաստանի պատմաքաղ. վիճակը: 1935–37–ին Չ. գրել է «Կոմիտասի հիշատակին», «Նավզիկե», «Իմ լերան աղոթքը», «Մի ամայի վայրում, չգիտեմ որտեղ» պոեմները, «Հերոսի հարսանիքը» չափածո թատերգությունը, «Դոֆին նայիրյան» սոնետների շարքը, բազմաթիվ բանաստեղծություններ ու էպիգրամներ:

Լույս են տեսել նաև Չ–ի «Հիշողություններ Երևանի ուղղիչ տնից» (1927) հուշ–ակնարկը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–2, 1922, Մ., հ. 1–6, 1962–68, հ. 1–4, 1986–87), «Ամբողջական գործը...» (1955, Բ.), «Հատընտիրը» (1987), «Նորահայտ էջեր» (1996, կազմ.՝ Դ. Գասպարյան) պոեմների, բանաստեղծությունների ժող–ը, «Ընտիր երկերը» (1997, հ. 1–3, առաջաբ. և տարեգրությունը՝ Դ. Գասպարյանի, 2012), «Գիրք մնացորդացը» (2012): Չ. կազմել է «Գրականության դասընթացներ» (1930) դասագիրքը, թարգմանել է Յ. Վ. Գյոթեի, Հ. Հայնեի, Վ. Հյոգոյի, Ու. Ուիտմենի, Է. Վերհառնի, Ռ. Մ. Ռիլկեի, Ա. Պուշկինի, Ն. Նեկրասովի, Մ. Լերմոնտովի, Պ. Տիչինայի, Մ. Գորկու, Վ. Մայակովսկու, Ս. Եսենինի և ուր. ստեղծագործություններից:

Չ–ի անունով են կոչվել Չարենցավան քաղաքը, Երևանում՝ Գրակ–յան և արվ–ի թանգարանը, դպրոց (բակում տեղադրվել է կիսանդրին), փողոց, գործում է Չ–ի տուն–թանգարանը, Օղակաձև զբոսայգում կանգնեցվել է հուշարձանը: Չ–ի պատկերով ՀՀ–ում թողարկվում է թղթադրամ (1000–դրամանոց): ՀԳՄ–ն սահմանել է Չ–ի անվ. մրց. (տրվում է թարգմանությունների համար):

Գրկ. **Յակոբեան Ս.**, *Եղիշէ Չարենց, Վնն., 1924:* **Աղաբաբյան Ս.**, *Եղիշե Չարենց, հ. 1, 2, Ե., 1973, 1977:* **Չարենց Ա.**, *Չարենցի ձեռագրերի աշխարհում, Ե., 1978:* **Թամրազյան Հ.**, *Եղիշե Չարենց, Ե., 1981:* **Գասպարյան Դ.**, *Եղիշե Չարենցը և 1920–ական թվականների սովետահայ պոեզիան, Ե., 1983:* **Նույնի**, *Ողբերգական Չարենցը, Ե., 1990: Չարենցի հետ: Հուշեր (կազմ. և խմբ.՝ Դ. Գասպարյանի), հ. 1, 2, Ե., 1997, 2008: Չարենցագիտում բար անփոխ վավերագրերի (կազմ. և ծնթգր.՝ Հ. Բախչինյանի), Ե., 1997:* **Զաքարյան Ա.**, *Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1–3, Ե., 1997–2008:* **Դավթյան Ռ.**, *Չարենցը և արվեստը, Ե., 2005:* **Մահարի Գ.**, *Չարենց–Նաաե (հուշեր, հոդվածներ), Ե., 2012:* **Քալանթարյան Ժ.**, *Եղիշե Չարենց: Ուսումնասիրություններ, Ե., 2012: Եղիշե Չարենց: Բիբլիոգրաֆիա, Ե., 1957:*

ՉԱՐԸԳ Արամ, **Վտարանդի** (1874, Կարին–1947, Մոսկվա), բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1912–15–ին՝ Կ. Պոլսի Օրթագյուղի ազգ. վարժարանի տնօրեն: Մեծ եղեռնից հետո հաստատվել է Փարիզում:

Պարսկ–ից թարգմանել է «Օմար Խայեամի քառեակները» (1934): Լույս են տեսել Չ–ի «Բանաստեղծութիւններ» (1900, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Վայրի վարդեր Բաքուի փետրուարեան զերեզմաններին» (1905, Վառնա, Օննիկ Բարսեղյանի տպ.) բանաստեղծությունների ժող–ները, «Ս. Մեսրոպի տեսիլքը» (1913, ԿՊ, «Արաքս» տպ.) պոեմը, Հայաստանին նվիրված բանաստեղծություններ ու հոդվածներ («Խորհրդային մեծ Հայաստան», 1945):



Ե. Չարենցի *«Ամբողջական գործը...» (1955, Բեյրութ) գրքի կազմը*



Ե. Չարենցի *«Երկիր Նաիրի» (1977, Ե., «Սովետական գրող») գրքի փիփղոսաթերթը*



Արամ Չարըգի *«Բանաստեղծութիւններ» (1900, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Անտոն Չեխովի
«Պատմվածքներ» (1985, Ե., «Լույս») գրքի կազմը



Մինաս Չերազ



Տիգրան Չիթունու
«Յուշիկք Հայաստանի» (1919, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը

ՉԵԽՈՎ Անտոն Պավլովիչ [29.1.1860, Տագանրոգ (Ռուսաստան)–15.7.1904, Բադենվայլեր (Գերմանիա), թաղված է Մոսկվայում], ռուս գրող, դրամատուրգ: Ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1884): Չ. ծանոթ է եղել հայ մտավորականների (Ս. Սպենդիարյան, Հ. Այվազովսկի, Վ. Սուրենյանց և ուր.) հետ:

«Գեղեցկուհիներ» (1888) պատմվածքում Չ. ներկայացրել է մի հայ ընտանիքի պատմությունը:

Չ-ի գեղ. ստեղծագործությունները գրեթե ամբողջությամբ թարգմանվել են հայ.: Հրատարակվել են Չ-ի «Անիւտան» (1902, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) պատմվածքը, «Տաղտկալի պատմութիւն» (1903, Բաքու, Ս. Անտոնյանի տպ.), «Մի քանի պատմուածքներ» (1903, Թ., Մ. Վարդանյանի տպ.), «Պատմուածքներ» (1904, Ալեք-պոլ, Հակոբ Ղասապյանի տպ.), «Ընտիր պատմվածքներ» (1973), «Պատմվածքներ» (1985) ժող-ները, «Երկերը» (հ. 1–5, Ե., 1960–62), «Ընտիր երկերը» (1987):

Չ-ի դրամատիկ. երկերը հայ թատրոններում բեմադրվել են 1890-ական թթ-ից: Երևանում Չ-ի անունով կոչվել են փողոց և դպրոց (բակում տեղադրված է կիսանդրին):

Գրկ. **Կարինյան Ա.**, *Անտոն Չեխով, Ե., 1954:* **Պայազատ Ս.**, *Ա. Պ. Չեխով, Ե., 1960:* **Վարդանյան Վ.**, *Չեխովը և հայ թատրոնը, Ե., 1960:*

ՉԵՐԱԶ Մինաս Գրիգորի [13(25).7.1852, Կ. Պոլիս–1929, Փարիզ], բանաստեղծ, հաս. և մշակութ. գործիչ, մանկավարժ, խմբագիր: Սովորել է Խասգյուղի Ներսեսյան վարժարանում: Տիրապետել է մի քանի լեզուների: Դասավանդել է Կ. Պոլսի վարժարաններում: 1870–71-ին՝ ***«Երկրագունտ»*** (Կ. Պոլիս) հանդեսի խմբագիր: 1880-ից Արփիար ***Արփիարյանի*** հետ ղեկավարել է Կ. Պոլսի «Միացյալ ընկերություն հայոց» բարեգործ. կազմակերպությունը: 1886–89-ին եղել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանի տնօրենը: 1889-ին հաստատվել է Լոնդոնում, հիմնադրել և խմբագրել ***«Լ՝Արմենի»*** (ֆրանս.) գրական-քաղ. թերթը: 1898-ին տեղափոխվել է Փարիզ, որտեղ մինչև 1906-ը շարունակել է թերթի տպագրությունը: 1890-ին Լոնդոնի Քինգս քոլեջում հիմնադրել է հայ-ի ամբիոն: 1908-ին ընտրվել է Կ. Պոլսի Հայոց Ազգ. ժողովի նախագահ: 1912-ին ընդգրկվել է Պողոս Նուբարի գլխավորած Հայոց ազգ. պատվիրակության կազմում: 1914-ին հաստատվել է Փարիզում:

Լույս են տեսել Չ-ի «Գրական փորձեր» (1874, ԿՊ, Արամյան տպ.) բանաստեղծությունների, «Արեւելեան վիպակներ» (1927, Փ., «Մասիս» տպ.) վիպակների ժող-ները, «Ազգային դաստիարակութիւն» (1876, ԿՊ, Արամյան տպ.), «Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն» (1878, ԿՊ, Եղիա Տնտեսյանի տպ., ֆրանս. թարգմանությամբ հրատարակել է Մեծ Բրիտանիայի կառավարությունը՝ իր «Կապույտ գրքում», 1916), «Հայաստան եւ Իտալիա» (1879, ԿՊ, Արամյան տպ.), «Գրիչ եւ սուր» (հ. 1, 1881, նույն տպ.), «Հայկական խնդիր» (1917, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Ազգային խնդիրներ» (1927, Փ., «Մասիս» տպ.), «Կենսագրական միւսիոններ» (1929, Փ., Կ. Հ. Ներսեսի տպ.) աշխատությունները: Ֆրանս. է թարգմանել Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Խ. Գալֆայանի և ուր. ստեղծագործություններից ու հրատարակել «Հայ բանաստեղծներ» խորագրով, հավաքել ու ֆրանս. տպագրել է Կ. Պոլսի շրջակայքում բնակվող տարբեր ժողովուրդների առածների, ավանդույթների, սովորույթների և պատումների ժող.:

Գրկ. **Ալպոյաճեան Ա.**, *Մինաս Չերազ: Իր կեանքը եւ գործը, Կահիրե, 1927:* **Էսաճանեան Լ.**, *Մինաս Չերազ, Աթենք, 1928:*

ՉԻԹՈՒՆԻ (Չիթչյան, Չթչյան) Տիգրան Հարությունի (22.4.1881, Վան–19.10.1960, Փարիզ), բանահավաք-բանասեր, գրող, հրատարակիչ, խմբագիր: Ավարտել է Վանի Երամյան վարժարանը (1898): 1910-ին Կ. Պոլսում հիմնադրել է «Հայագիտում» հրատարակչությունը. այստեղ է տպագրվել Չ-ու «Հայաստանի ոսկե հանքեր» (ա. թ.) աշխատությունը: 1940-ական թթ-ին տեղափոխվել է Փարիզ:

Լույս են տեսել Չ-ու «Սասմանց տուն» (1910, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.), «Արեւելեան խաղաշխարհ» (հ. 1–2, 1919), «Յուշիկք Հայաստանի» (1919, երկուսն էլ՝ ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Բիւր ակ... հազար ակ...» (1913, Փ., «Արաքս» տպ.) ազգագր-բանահյուս. աշխատությունները, «Մայրենի աշխարհ» (գիրք 1, 1913, ԿՊ, Ն. Պապիկյանի տպ.) երկը, «Համբարձման «վիճակ»» (1919,

ԿՊ, Օ. Արզումանի տպ.) ժող–ը: Փոխադրել և հրատարակել է «Լէյլի եւ Մէջ–նուն» (1911, Մարզվան, Ներսո և Սրապյան տպ.) սիրերգը: Գրի է առել «Մասնա ծոերի» 4 տարբերակ, համադրել մինչ այդ հրատարակված տարբերակների հետ և հրատարակել «Մասունական» (հ. 1, 1942, 1960) վերնագրով: Չ–ուց Վանի ժող. երգեր է գրի առել Կոմիտասը:

Սմմուլում հանդես է եկել նաև Վրույր, Ես, Հեռագետ, Այգեցի, Շեմիր և այլ գրական կեղծանուններով:

Հ. Իզմիրյան մրց. (1907):

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ Գրիգոր Հովակիմի (1839, Զմյուռնիա–2.2.1923, Զմյուռնիա), հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Սովորել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում, ինքնակրթությամբ տի–րապետել է թուրք–ին, հուն–ին, ֆրանս–ին, իտալ–ին: Մեսրոպյան վարժարանում դասավանդել է թուրք.: 1861–67–ին՝ ***«Ծաղիկ»*** հան–դեսի հրատարակիչ–խմբագիր (1861–62–ին խմբագրել է Արմենակ ***Հայկունու***, 1866–ին՝ Մատթեոս ***Սամուրյանի*** հետ):



Գրիգոր Չիլինկիրյան

Չ–ի հրապարակախոսության լավագույն էջերից են «Ծաղիկ»–ի առաջնորդողներն ու հոդվածները («Զմիւռնական նամականի») և «Ուղեւորութիւն ի Կոստանդնուպօլիս» (1883, Զմյուռնիա, Մատթեոս Սամուրյանի տպ.) գեղ–հրապարակախոս. երկը, որտեղ քննել է արև–մտահայ սահմանադր. շարժման, հայ մանկավարժության, դպրոցի, գրակ–յան, մամուլի, հրապարակախոսության խնդիրները:


Լույս է տեսել Չ–ի «Վիպակներ եւ ցան ու ցիր գրուածներ» (1920, Զմյուռ–նիա, «Սամուրյան» տպ.) ժող–ը: 1867–78–ին թարգմանել և հրատարակել է Վ. Հյուգոյի «Թշվառներ», Ա. Լամարթինի «Ռաֆայել», Ա. Պրևոյի «Մանոն Լեսկո», Է. դը Միրգուրիի «Մարիոն Տլորմի խոստովանանքը», Է. Սյուի «Մա–թիլդ», Ժ. Սանդի «Օրիորդ Լա Գենթինի», Օ. Ֆեռեի «Պարոն դը Գամոր», Ա. Մյուսեի «Դարուս մեծ զավակին խոստովանանքը» և այլ երկեր:

Իր ստեղծագործություններով ու գործունեությամբ Չ. նպաստել է ազգ. թատրոնի զարգացմանը, հայ գրակ–յան ռեալիստ. ուղղության ամրապնդմանը:

Հանդես է եկել նաև Պերճ, Վարաժ և այլ գրական կեղծանուններով:

Գրկ. Ղազարյան Հ., Գրիգոր Չիլինկիրյան, Ե., 1959:

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ Հրաչ Կարապետի (ծ. 16.12.1962, Բեյրութ), քաղաքագետ, աստվածաբան, հաս. գործիչ: Սոցիոլոգիայի դ–ր (2003): Սովորել է Երուսաղեմի ճեմարանում, ավարտել է Նյու Յորքի Կոն–կորդիա քոլեջը (1984), Նյու Յորքի Սբ Վլադիմիր աստվածաբան. ճե–մարանը (1987), Կալիֆոռնիայի Նորթրիջի պետ. համալսարանը (1991): 1990–95–ին՝ «Վինդոուս Քուորթել» (անգլ. և հայ.) պարբ–ի հիմնադիր–խմբագիր: 1995–98–ին աշխատել է ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի գիտ. հաստատություններում՝ որպես Կովկասի ու կասպիական տարածա–շրջանի վերլուծաբան և խորհրդատու: 1998–2000–ին՝ «Հայկական մի–ջազգային պարբերականի» խմբագիր: 2003–ից ղեկավարում է Քեմբրի–ջի համալսարանի եվրասիական գիտ. հետազոտությունների ծրագիրը: Ներկայում՝ Օքսֆորդի համալսարանի Արևելքի ինստ–ի դասախոս, «Եկեղեցու հարցեր» (անգլ.) ամսագրի համահրատարակիչ–խմբագիր:



Օննիկ Չիֆթե–Սարաֆի *«Երկեր»–ի (1981, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Վ. Մանդակունի) կազմը*


ՉԻԿԻ Գերգեյ Յանոշի (8.12.1842–1891), հայազգի հունգարագիր գրող: Աստվածաբանության դ–ր: Հունգարիայի ԳԱ թղթ. անդամ: 1870–73–ին՝ «Չանատ» թեմ. պաշտոնաթերթի խմբագիր–հրատարա–կիչ: Չ. ճանաչվել է «Կանխազգացում» (1875, Հունգարիայի ԳԱ մրց.) չափածո դրամայով:

Չ–ի անունով են կոչվել փողոց Բուդապեշտում և Կապոշվար քա–ղաքի թատրոնը:


ՉԻՖԹԵ–ՍԱՐԱՖ Օննիկ (Աբիսողոմյան Հովհաննես Ասպետ, 26.10.1874, Կ. Պոլիս–11.7.1932, Ժնև), գրող, հրատարակիչ: Սովորել է Կ. Պոլսի Գատըգյուղի Արամյան դպրոցում, Ղալաթիայի Կեդրոն. վար–ժարանում: Ընտրվել է Ազգ. ժողովի երեսփոխան Տրապիզոնից: 1919–ին հիմնադրել է «Հայ միտք» շաբաթաթերթը, դասավանդել Կորֆուի հայկ. որբանոցում, եղել Մարսելի ազգ. վարժարանի տնօրեն: 1928–ին



Տիգրան Չյոկյուրյանի
«Վանքը» (1962, Ե., Հայպետհրատ, ձևավորող՝ Վ. Կաժոյան) գրքի կազմը



Պավել Չոբանյանի
«Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները...» (2006, Էջմիածին) գրքի տիտղոսաթերթը



Հակոբ Չոլաքյանի
«Քեսապի բարբառը» (2009, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը

հաստատվել է Ժնևում: 1900-ից տարբեր պարբ-ներում հրատարակել է նորավեպեր, քրոնիկներ, ուղեգրություններ, հոդվածներ, խորհրդածություն-աֆորիզմներ («Մտքի կաթիլներ», «Ճակատագրային տոամներ», «Պզտիկ պատկերներ», «Գիւղական եւ պօլսական տեսարաններ», «Բարի եւ չարի խօսքեր», «Արեւելքի պատկերներ», «Սիրուած դէմքեր» ևն):

Լույս են տեսել Չ-Ս-ի «Միամիտի մը արկածները» (1908, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Ներսեսյան տպ.) վեպը, «Թուրք թէրօրի օրերէն: Իմ բանտարկութիւնս» (1909, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) հուշագրությունը, «Երկերը» (1981): Չ-Ս. թարգմանել է Պ. Բուրժեի «Փիլիսոփային աշակերտը» (1901, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.) վեպը:

Հանդես է եկել նաև Հովհաննես Ասպետ գրական կեղծանունով:

Գրկ. Պետրոսյան Ե., Գրական դեմքեր, Ե., 1977:

ՉՅՈԿՅՈՒՐՅԱՆ (Չեոկյուրյան) Տիգրան [1884, ք. Գյումուշխանե (Տրապիզոնի նահանգ)–1915, Մեծ եղեռնի զոհ], գրող, հաս. գործիչ: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը (1907): Աշխատել է որպես ուսուցիչ: 1911-ին Միքայել *Շամրանճյանի* հետ հրատարակել է *«Ոսպան»* եռամսյա հանդեսը, որտեղ տպագրել է «Ճամբուս վրայ» ճամփորդ. նոթերը, ուսումնասիրություն Շիրվանզադեի մասին, թարգմանություններ՝ Գի դը Մոպասանի, Հ. Իբսենի, Բ. Շոուի, Լ. Անդրեևի գործերից:

Լույս են տեսել Չ-ի «Հայրենի ձայներ» (1910, ԿՊ, Վաղինակ Բյուրատի տպ.) պատմվածքների ժող-ը, «Հերոսը» (1911) վիպակը, «Վանքը» (1914, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., 1962, Ե.) վեպը: Չ. հրապարակել է նաև գրախոսություններ ու հոդվածներ՝ Մեհեկան գրական կեղծանունով:

Գրկ. Հյուսյան Մ., Էջեր արևմտահայ գրականության պատմությունից, Ե., 1977:

ՉՈԲԱՆՅԱՆ Պավել Աշոտի [ծ. 15.3.1948, ք. Խանլար (Ադրբեջան)], պատմաբան, արևելագետ, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (2004): Ավարտել է ԵՊՀ (1973): 1977-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ում. 1995–99-ին և 2014-ից՝ բաժնի վարիչ, 2003–13-ին՝ փոխտնօրեն: 1985–95-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի ավագ գիտաշխատող, միաժամանակ, 1999–2003-ին՝ *«Պատմաբանասիրական հանդես»*-ի խմբագրի տեղակալ, 2013-ից՝ *«Բանբեր հայագիտության»* հանդեսի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Չ-ի «Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. XVIII դ.–XIX դ. 1-ին քառորդ» (1981), «Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին» (2006) աշխատությունները:

Համահեղինակ է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» բազմահատորյակի (հ. 7, 8, 10–12, 1998–2004), հայոց պատմության դպրոց. դասագրքերի:


ՉՈԼԱՔՅԱՆ Հակոբ Մարտայի [ծ. 16.10.1947, գ. Գարադուրան (Սիրիայի Քեսաբի շրջան], ազգագրագետ, պատմաբան, մատենագետ: Պատմ. գիտ թեկնածու (2002): Ավարտել է ԵՊՀ (1973): 1973-ից դասավանդել է Այնճարի և Բեյրութի վարժարաններում, 1976–2012-ին՝ Հալեպի Քարեն Եփփե ազգ. ճեմարանում, 1982–88-ին՝ Միխթարյան հայագիտ. բարձրագույն դասընթացներում, 1996–2012-ին՝ Համազգայինի հայագիտ. հաստատությունում: 2014-ին՝ քեսաբահայության տեղահանումից հետո, ընտանիքով տեղափոխվել է Երևան: Աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ում:

Լույս են տեսել (հիմնականում՝ Հալեպում) Չ-ի «Հալէպի պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն» (1978), «Քեսապի ժողովրդական երգարվեստը» (1980), «Քեսապի բարբառը» (1986, լրամշկ. հրտ.՝ 2009), «Քեսապ» (հ. 1–3, 1995–2004), «Քարէն Եփփե հայ գողգոթային եւ վերածնունդին հետ» (2001), «Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» (2002, 2006, Անթիլիաս), «Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը» (1990) և այլ աշխատություններ, «Այսպէս սկսաւ գարունը» (1970, Բ.) բանաստեղծությունների ժող-ը, «Քեսապի երեք օրերը. 21–23 մարտ 2014» (2014) օրագրություն-վավերագրությունը: Կազմել

է սփյուռքահայ դպրոցի պատմությանը նվիրված հուշամատյաններ և հայ-ի դասագրքեր:

ՀՀ «Մովսես Խորենացի» (2011) մեդալ:

ՉՈՊԱՆՅԱՆ Արշակ Հովհաննեսի (15.7.1872, Կ. Պոլիս–8.6.1954, Փարիզ), գրող, քննադատ, լրագրող, հրատարակիչ-խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Մաքրուհյան դպրոցում, ապա՝ Կեդրոն. վարժարանում: 1887–91-ին աշխատակցել է «Արեւելք», «Մասիս», «Հայրենիք» պարբերներին, 1895-ին՝ *«Ծաղիկ»* կիսամսյա թերթի խմբագիր: 1895-ի վերջին հաստատվել է Փարիզում, 1898–1911-ին՝ *«Անահիտ»* (նոր շրջան՝ 1929–49, նաև հրատարակիչ) գրական-գեղ. հանդեսի, 1917–19-ին՝ *«Վերածնունդ»*, 1921–24-ին՝ *«Ապագայ»* թերթերի խմբագիր:



Արշակ Չոպանյան

Հայ իրականության մեջ Չ. հայտնի է իր քննադատ. և բանասիր. գործունեությամբ: Հրատարակել է «Նահապետ Քուչակի դիւանը» (1902, Փ., «Անահիտի» տպ.), «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» (1910, Փ., Է. Ներսեսյանի տպ.), «Հայ էջեր» (1912, նույն տպ.), «Հայրէններու բուրաստանը» (1940) և այլ գրքեր:

Չ. առաջինն է վերլուծել Գրիգոր Նարեկացու ժառանգությունը՝ որպես գեղ. ստեղծագործություն: Հեղինակ է Խ. Աբովյանի, Րաֆֆու, Ղ. Ալիշանի, Հ. Պարոնյանի, Պ. Պռոշյանի, Շիրվանզադեի, Համաստեղի և ուր. էսսե-դիմանկարների (մեծ մասն ամփոփված է «Դէմքեր» ժող-ում, հ. 1, 2, 1924, 1929), անդրադարձել հայ նոր գրակ-յան գործիչներին (Վ. Թեքեյան, Սիամանթո, Դ. Վարուժան, Ե. Չարենց, Մ. Զարիֆյան և ուր.): Թարգմանել ու ֆրանս. հրատարակել է հին և նոր շրջանների հայ բանաստեղծների գործերից, ինչպես նաև իր՝ «Հայաստանը, նրա պատմությունը, գրականությունը և նրա դերը Արևելքում» աշխատությունը, «Հայկական ջարդեր» փաստաթղթերի ժող-ը, Աղասու (Թուր-Սարգսյան) «Զեյթունի» ուսումնասիրությունը ևն, որոնք ամփոփվել են «Վարդենիք Հայաստանի» (հ. 1–3, 1918–29) ժող-ում:



Ա. Չոպանյանի *«Քերթուածներ. 1889-1907» (1908, Փարիզ) գրքի փիփղոսաթերթը*

Լույս են տեսել Չ-ի «Արշալոյսի ձայներ» (1891, ԿՊ, Թագվոր Սանճագճյանի տպ.), «Թրթռումներ» (1892, ԿՊ, Շանիկ Արամյանի տպ.), «Քերթուածներ. 1889–1907» (1908, Փ., Տիգրան Տողրամաճյանի տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Թուղթի փառք» (1892, ԿՊ, Թ. Սանճագճյանի տպ.) վիպակը, «Տղու հոգիներ» (1923, Փ., Կ. Հ. Ներսեսի տպ.) պատմվածքների և պատկերների ժող-ը, «Մութ խաւեր կամ Բամբասանք» (1893), «Հրաշքը» (1923) դրամանեքը, «Պետրոս Դուրեան: Կենսագրական եւ քննադատական ուսումնասիրութիւն» (1894, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ., 2-րդ վերամշկ. հրտ.՝ 1967, Ե.), «Մկրտիչ Պեշիկթաշլեանի կեանքն ու գործը» (1907, Փ., Տ. Տողրամաճյանի տպ.) աշխատությունները: Հրատարակվել են նաև Չ-ի «Երկերը» (1966, 1988, Ե.), «Կեանք եւ երազ» (1945, Փ.), «Բանաստեղծութիւններ» (1949, Փ.) ժող-ները, «Նամականին» (1980, Ե.):


Գրկ. Հապէշեան Հ., Արշակ Չօպանեան: Կենսագրական գիծեր, Փ., 1924: Ֆեներճեան Գ., Արշակ Չօպանեան: Կենսագրական եւ մատենագրական նօթեր, Փ., 1938: Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Ե., 1987: Ս. Լօրէլլիի նամակներն Արշակ Չօպանեանին, Բ., 1998: Դոլուխանեան Ա., Արշակ Չօպանեանը եւ հայ հին գրականութիւնը, Ե., 2004:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ», հաս-քաղ. օրաթերթ: Լույս է տեսնում 1999-ից Երևանում (մինչև 2009-ը՝ «Չորրորդ իշխանություն»): Հիմնադիր-խմբագիր՝ Շողեր Սաթևոսյան: Անդրադառնում է ՀՀ-ի հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ. կյանքի խոցելի երևույթներին, քաղ. կուս-ների գործունեությանը, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներին, միջազգ. կարևոր իրադարձություններին ևն:



«Չորրորդ ինքնիշխանություն», *1999-ից, Երևան*

«ՉՈՐՔ ԽՈԿՄՈՒՆՔ ՅԱՂԱԳԱՄ ՅԱԽՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ», հիսուսյան քարոզիչ հայր Զիո Բատիստա Մանիի երկը: Թարգմ.՝ Յակոբ Վիլլոտի: Տպագրվել է 1714-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Լատ. տիտղթ-ին՝ Quattro massime della christiana filosofia del p. Gio. Battista Manni...» (80 էջ, 8º, 12,1 x 7 սմ):



Տիրան Չրաքյանի
(Ինտրա) «Ներաշխարհ» (1955, Բեյրութ) գրքի կազմը



Եղիա Չուբար



Բարկեն Չուգասզյանի
«Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն. 1737-1811» (1994, Ե., «Գինդ») գրքի կազմը

ՉՐԱՔՅԱՆ Տիրան Գասպարի, **Ինտրա** [11.9.1875, Կ. Պոլիս–6.6.1921, գ. Սլիվան (Աղձնիքի նահանգ)], բանաստեղծ, քննադատ, փիլիսոփա: Սովորել է Կ. Պոլսի Սբ Խաչ նախակրթարանում (1881–85), Պերպերյան (1886–91) և Գեղարվեստից վարժարաններում: 1897-ին մեկնել է Փարիզ՝ նկարչության մեջ կատարելագործվելու: 1895–1915-ին (կարճ ընդմիջումով) գրակ., ֆրանս. և քերակ. է դասավանդել գավառ. և Կ. Պոլսի հայկ. վարժարաններում: 1915-ին ձերբակալվել է, աքսորվել, բայց կաշառքով փրկվել է վերահաս մահից: 1921-ին նորից է ձերբակալվել խռովություն սերմանելու մեղադրանքով և արտաքսվել Դիարբեքիր. ճանապարհին նահատակվել է:

Լույս են տեսել Չ-ի «Ներաշխարհ» (1906, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ., 1955, Բ., 2006, Ե.) արձակ պոեմը, որի մասին հայտնված իրարամերժ կարծիքներին նա անդրադարձել է «Ներաշխարհին իր հեղինակէն դիտուած» (1906), «Կարծիքներ եւ կարծողներ» (1908) հոդվածներում, «Նոճաստան» (1908, ԿՊ, Հ. Մաթևոսյանի տպ., 1958) սոնետների ժող-ը, «Երկերը» (1981), «Ընտիր երկերը» (1974): Չ. գրել է նաև էսսեներ, ճամփորդ. ակնարկներ, հոդվածներ, պատկերներ: Ադանայի ջարդերից (1909) հետո խանգարվել է նրա հոգեկան ներաշխարհը, այրել է իր գրքերն ու անտիպ ձեռագրերը, որոնց չնչին մասն է փրկվել:

Գրկ. Թոփչյան Ս., Հշմարիտը և գեղեցիկը Տիրան Չրաքյանի էսթետիկայում (հայ էսթետիկական մտքի պատմությունից), գիրք 2, Ե., 1976: Դեմիրճյան Պ., Վարք Ինտրայի, Ե., 2003: Ներթափանցյան Տ., Ինտրայի ներանձնահոհական իմաստնությունը, Ե., 2014:

ՉՈՒԲԱՐ Եղիա Գասպարի [18.7.1897, գ. Թոփթի (այժմ՝ գ. Ղրիմ՝ ՌԴ Ռոստովի մարզի Միասնիկյանի շրջանում)–1938, անհատի պաշտամունքի զոհ], խմբագիր, հրապարակախոս: Սովորել է Նոր Նախիջևանի հոգևոր սեմինարիայում (1906–12), Դոնի Ռոստովի արական գիմնազիայում: 1920-ին՝ «Բանուորի կռիւ» (Նոր Նախիջևան) թերթի, 1921–36-ին՝ ***«Երեւան», «Յոյս», «Վերելք»*** (երեքն էլ՝ Փարիզ), «Խարիւրկիթ» (Դոնի Ռոստով), «Կարմիր գութան», ***«Կոմունիստ», «Մանկակ», «Հոկտեմբեր-նոյեմբեր»*** (տարեգիրք), ***«Նոր ակոս», «Նոր ուղի», «Վերելք», «Խորհրդային Հայաստան»***, «Աղքատ գյուղացի», «Լենինյան ուղի» (բոլորն էլ՝ Երևան) և այլ պարբ-ների խմբագիր:

Լույս է տեսել Չ-ի «Սկզբում» (1926, Լենինական, 1957) հուշերի ժող-ը: Հեղինակ է նաև «Մեքսիկական դիպլոմատներ» (1931) և «Երկու գիշեր» (1937) կինոսցենարների:

ՉՈՒԲԱՐՅԱՆ Օհան Ստեփանի [8.10.1908, Թոփթի (այժմ՝ գ. Ղրիմ՝ ՌԴ Ռոստովի մարզի Միասնիկյանի շրջանում)–7.1.1976, Մոսկվա], գրադարանագետ-մատենագետ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1973): ՌԽՖՍՀ մշակույթի վաստ. գործիչ (1968): Ավարտել է Մոսկվայի բարձրագույն մատենագիտ. դասընթացները (1930): Ղեկավար պաշտոններ է վարել ՌԽՖՍՀ կենտր. գրապալատում, Լենինգրադի հանրային, Մոսկվայի Վ. Լենինի անվ. պետ. (այժմ՝ Ռուսաստանի պետ.) և այլ գրադարաններում: 1964–75-ին՝ «ԽՍՀՄ գիտական և տեխնիկական գրադարանները» (ռուս.), 1973-ին՝ «Խորհրդային գրադարանավարություն» (ռուս.) պարբ-ների խմբագիր: Անդրադարձել է գրադարանագիտ-յան և մատենագիտ-յան գրեթե բոլոր կարևոր խնդիրներին:

Չ-ի անունով է կոչվել Արտաշատի կենտր. գրադարանը:

Երկ. Общее библиотековедение, 3 изд., перераб. и доп., М., 1976; Человек и книга, М., 1978; Библиотековедение: Проблемы теории, Л., 1984.

Գրկ. Оган Степанович Чубарьян. Библиографический указатель, М., 1978.

ՉՈՒԳԱԱԶՅԱՆ Բարկեն Լևոնի (18.3.1923, Թավրիզ–5.11.1997, Երևան), բանասեր- արևելագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1962): Սշակույթի վաստ. աշխատող (1984): Ավարտել է ԵՊՀ (1951): 1955–58-ին աշխատել է ԵՊՀ հրատարակչությունում, 1965–97-ին՝ Մատենադարանում (1965–94-ին՝ փոխտնօրեն):

Լույս են տեսել Չ-ի «Հայ-իրանական գրական առնչություններ (V–XVIII դդ.)» (1963), «Խրատք Նուշիրուանի» (1966), «Գէորգ Դպիր Պալատեցու կեան-

քի եւ գործունէութեան տարեգրութիւն. 1737–1811» (1994) աշխատությունները, «Ձեռագրերի աշխարհում» (1985) ակնարկների ժող–ը, «Հայրենադարձ իրա–նահայ դեմքեր» (1997) կենսագր. բառարանը: Հայտնաբերել և հրատ–յան է պատրաստել Հովհաննես Սերաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» (1974), XIII դ–ի «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ. ԺԳ դար» (1980) գրքերը:


ՉՈՒԽԱՃՅԱՆ (Չուխաջյան, Չուհաճյան) Տիգրան Գևորգի (1837, Կ. Պոլիս–23.3.1898, Զմյուռնիա), կոմպոզիտոր, խմբագիր, հայկ. օպե–րային արվ–ի հիմնադիրը: Աշակերտել է Գաբրիել *Երանյանին* և պոլ–սաբնակ իտալացի մանկավարժ Չ. Մանձոնիին: Մասնակցել է «Քևար հայկական» ընկերության աշխատանքներին: 1861–63–ին խմբագրել է *«Քևար հայկական»* (Գ. Երանյանի և Ն. Թաշճյանի հետ), 1863–ին հիմնադրել և խմբագրել է «Օսմանեան երաժշտութիւն» պարբ–ները: Չ. գրել է «Արշակ Բ» (1868, լիբրետոն՝ Թովմաս Թերզյանի, հայ. և իտալ.) հայկ. առաջին օպերան, «Արիֆի խարդախությունը» (1872), «Քեոսե Քեհյա» (1874), «Լեբլեբիջի Հոր–հոր աղա» (1876), «Զեմիրե» օպերետները, նաև սիմֆոնիկ, կամերագործիքային, վոկալ երկեր, թատեր. երաժշտություն:

Գրկ. **Փափազեան Հ.,** *Տիգրան Չուխաճեան: Կեանքը եւ գործը, Սպաամբոլ, 1975:* **Թահմիզեան Ն.,** *Տիգրան Չուխաճեան: Կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փասադենա, 1999:* **Թեյմուրազյան Ն., Սեմյոնովա Զ.,** *Տիգրան Չուխաջյան: Մատենագիտություն, Ե., 1964:*



Տիգրան Չուխաճյանի
«Արշակ Բ» (1868) օպերայի պարտիտուրի տիտղոսաթերթը

Պ





Ստեփան Պալասանյան

Պ, հայ. այբուբենի քսանվեցերորդ տառը, անվանումը՝ «պե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար, կարճ և լայն տարրերից. կարճը նուրբով միանում է երկարին վերին ձախ կողմում՝ վերևից, իսկ լայնը կարճին՝ ձախից՝ վերին մասից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Պ, որպես այբուբենի հարյուրավորների սյան 8-րդ (26-րդ) տառ, նշանակել է ութ հարյուր և ութհարյուրերորդ, բյուրի նշանով (Պ՝)՝ 8 մլն (8 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Պ–մաս 800-րդ):

ՊԱԼԱՍԱՆՅԱՆ Ստեփան Հովհաննեսի [1837, Բոտոշան (Ռումինիա)–19.2.1889, Էջմիածին], լեզվաբան, պատմաբան, բանասեր, մանկավարժ: Սովորել է Փարիզի Սամվել Մուրադյան (1852–55), ապա՝ Հայկազյան վարժարաններում: 1858-ին պաշտոնավարել է Թեոդոսիայի Խալիպյան վարժարանում: 1863–81-ին եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, 1869-ին մի խումբ հայ մտավորականների հետ հիմնադրել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցը, 1881–89-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Պ. 1868–69-ին հրատարակել է «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» (հ. 1–2, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) դասագիրքը, 1870-ին Արսեն *Այդընյանի* «Քերականութեան...» սկզբունքներով՝ «Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց» (Թ., նույն տպ.) գրական արևելահայ-ի քերակ-ը, որտեղ առաջին անգամ գիտականորեն ուսումնասիրել է արևելահայ գրական աշխարհաբարը: «Քերականութիւն մայրենի լեզուի» (1874, նույն տպ., 1888, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.,1894, Թ., Մ. Շաբաձեի տպ.,1906, նույն տպ.) արևելահայ-ի առաջին դասագրքում աշխարհաբարի չկանոնակարգված իրակություններից առանձնացրել է այնպիսիները, որոնք ընդհանուր դառնալու միտում են ունեցել: Լույս են տեսել նաև Պ-ի «Ֆրանսերէն այբբենարան» (1865, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ.), «Պատմութիւն հայոց գրականութեան» (հ. 1, 1865, նույն տպ.), «Պատմութիւն Հայոց: Սկզբից մինչեւ մեր օրերը» (1890, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) դասագրքերը: Վերջինս ունեցել է մի քանի հրատ. (1890, 1895, 1902,1911, 1913, 1920, 1922) և երկար ժամանակ ծառայել որպես հայոց պատմության դասագիրք:

Թարգմանել է Վ. Հյուգոյի «Էռնանի» դրաման, Վ. Լանգլուայի «Ուսումնասիրություն Մովսես Խորենացու Հայոց պատմության աղբյուրների մասին» (հայ. հրտ.՝ «Մովսէս Խորենացի եւ նրա պատմութիւնը», 1863, Թ., ա. տպ.) աշխատությունը: 1991-ին Երևանում հրատարակվել է Պ-ի «Ազգային կրթութիւն» (կազմ.՝ Ռ. Միրումյան) աշխատությունը:

Գրկ. Յարութիւնեան Ի., Ստեփաննոս Պալասանեան, Թ.,1895: Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958: Թովմասյան Ս., Ստ. Պալասանյանի գեղագիտական

հայացքները, Ե., 1959: Աբրահամյան Ա., *Պալասանյանը և աշխարհաբարի քերականության իր դասագիրքը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1974, № 2:* Միրումյան Ռ., *Սրբեհանոս Պալասանյան (պատմահիմնադիտական հայացքները), Ե., 2009:*

ՊԱԼԴԱԶԱՐՅԱՆ (Պալթազարյան) Ղուկաս Գասպարի (1810, Զմյուռնիա–1878, Զմյուռնիա), խմբագիր-հրատարակիչ: Սովորել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում: 1840–78-ին՝ *«Արշալոյս Արարատեան»* շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր: Պարբ-ում հիմնականում լուսաբանել է հայ գաղթավայրերի հաս., մշակութ. կյանքը, մշակել լրագր. նոր (աշխարհաբար) լեզու և ոճ: Թերթը տպագրվել է 1840-ին Ստեփանոս Պապոյանի հետ Պ-ի հիմնադրած տպարանում (1844-ից դարձել է Պ-ի սեփականությունը և կոչվել «Արշալույս Արարատյան» տպ.): Պ. ունեցել է նաև վաճառատուն: Եղել է Մեսրոպյան և Սարգսյան (հետագայում՝ Հռիփսիմյան) վարժարանների տեսուչ: Թարգմանել է Կառլո Գոլդոնիի «Առաքինութիւն Բամէլայի» (1866, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.) պիեսը:

ՊԱԼՅԱՆ Տրդատ Սարգսի, **Կապետ** [1850, Թալաս (Կեսարիայի մոտ)–2.7.1923, Աթենք], բանասեր-մատենագետ, բանահավաք, եպիսկոպոս: Ավարտել է Զմյուռնիայի Ներսեսյան նախավարժարանը: Երուսաղեմում օծվել է վարդապետ: 1884–87-ին եղել է Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքի ավագ թարգմանիչ, 1887–1910-ին՝ Կեսարիայի թեմի առաջնորդ: 1888-ին Կեսարիայի Սբ Կարապետ վանքում բացել է ժառանգավորաց վարժարանը (գործել է մինչև 1915-ը): Վարժարանին կից հիմնադրել է գրադարան-թանգարան, որտեղ հավաքել է հին ձեռագրեր, հնատիպ գրքեր: Պ. շրջել է Փոքր Ասիայի, Կիլիկիայի, Պաղեստինի հայաբնակ վայրերում, գրի է առել ժող. բանահյուսության նմուշներ:


Պ-ի անտիպ գործերը և հին ձեռագրերն ու գրքերը Զմյուռնիայում 1922-ի սեպտեմբերյան ջարդերի ժամանակ բռնագրավվել են, իսկ ինքը գաղթականության հետ տեղափոխվել է Աթենք: 1900-ական թթ-ի սկզբներից թղթակցել է «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Բիւզանդիոն», «Լոյս», «Բանասէր», «Արեւելեան մամուլ» և այլ պարբ-ների, որտեղ հրատարակել է բանասիր. հոդվածներ, ձեռագրացուցակներ, մատենագիտ. ցանկեր, նյութեր՝ հայկ. եկեղեցիների մասին, իր հայտնաբերած մի շարք հնատիպ գրքերի ցուցակները ևն: Պ. կարևոր դեր է կատարել Հակոբ Մեղապարտի հրատ-ների ժամանակը որոշելու հարցում («ՀԱ», 1894, № 12, էջ 357–361):

Լույս են տեսել Պ-ի «Սուրբ երկիր» (հ. 1, 1892, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Նշանագիրք հայոց» (1898, Վնն., Մխիթարյան տպ.), «Հայ աշուղներ: Ժողովրդական հայ երգիչներ եւ տաղասացք» (հ. 1–2, 1911–12, Զմյուռնիա, Մատթեոս Սամուրյանի տպ.), «Ժողովրդական առածներ եւ զանազան ասացուածք» (պր.1–2, 1912, նույն տպ.), «Հայ վանօրայք ի Թուրքիա» (1914, Զմյուռնիա, Քեշիշյանի տպ., 2008, Էջմիածին) աշխատությունները, կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա» (հ. 1, տետր 1–2, 1892–93, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.), «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիօն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի Մաղնիսա» (1897, Զմյուռնիա, Մ. Սամուրյանի տպ.), «Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա» (1963, Վնն.) ձեռագրացուցակները:

Երկ. Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիա, Զմիւռնիա եւ ի շրջակայս նոցին (նկարագր.՝ Տ. Պալեան, կազմ.՝ Գ. Տէր-Վարդանեան: Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեան, կազմ.՝ Կ. Ավետյան), Ե., 2002:

Գրկ. Ակինեան Ն., *Տրդատ եպիսկոպոս Պալեան, «ՀԱ», 1923, № 11–12:* Իշխանյան Ռ., *Հայ մատենագիտության պատմություն, պր. 2, Ե., 1968:*

«ՊԱԼՔԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ», հաս-քաղ., գրական շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: ՍԴՀԿ Բուլղարիայի շրջանի գործադիր հանձնաժողովի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1915–18 և 1920–22-ին Ռուսչուկում, 1918–20 և 1931–43-ին՝ Սոֆիայում: Խմբագիրներ՝ Ստեփան *Սապահ-Գյուլյան*, Էդուարդ Չոփուրյան, Գևորգ Գույումջյան, Հարություն Պողոսյան, Սիմոն Էքմեքչյան: Անդրադարձել է հայոց պատմության ողբերգ. դեպքերին, Հայկ. հարցի լուծման ուղիներին: Գաղ. տարաձայնություններ



Ս. Պալասանյանի *«Քերականութիւն մայրենի լեզուի» (1906, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*



Տրդատ Պալյանի *«Հայ վանորայք» (2008, Էջմիածին) գրքի կազմը*



«Պալքանեան մամուլ», *1915–43, Ռուսչուկ, Սոֆիա*



«Պահակ», 1935–46, Բուխարեստ

Պահպանակ



1817, ՍՊԸ, Հովսեփ Հովհաննիսյանի տպ.



1912, Կ. Պոլիս, Հակոբ Մաթևոսյանի տպ.

է ունեցել ՀՅԴ-ի հետ, ողջունել է Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումը: Ծանոթացրել է քաղ. կացությանը Եվրոպայում և ԽՍՀՄ-ում, տեղեկություններ հաղորդել բուլղարահայ համայնքի առօրյայի և կազմակերպությունների գործունեության մասին:

«ՊԱՀԱԿ», գրական, քաղ. եռօրյա թերթ (1911–15-ին՝ շաբաթաթերթ): Վերակազմյալ ինչակյան կուս-յան Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1911–15-ին Փրովիդենսում, 1915–21-ին՝ Բոստոնում: Խմբագիրներ՝ Հրաչ ***Երվանդ***, Արշակ Տեր-Մարկոսյան, Վահան Քյուրքճյան, Երվանդ Մեսիայան: Անդրադարձել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությանը, բացահայտել պանիսլամիզմի նպատակները, դատապարտել երիտթուրքերի հայահալած քաղաքականությունը: Ողջունել է Հայաստանում խորհրդ. կարգերի հաստատումը: 1921-ին միացել է ***«Ազգ»***-ին և կոչվել «Ազգ–Պահակ», 1922-ից՝ ***«Պայքար»***: 1921-ին լույս է ընծայել բացառիկ համար՝ գրական-բանասիր., պատմագիտ. տարեգիրք:

«ՊԱՀԱԿ», գրական, հաս., քաղ. շաբաթաթերթ: ՀՕԿ-ի կենտր. վարչության, 1945-ից՝ ռումինահայ «Հայաստանյան ճակատ» կազմակերպության կենտկոմի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1935–41 և 1944–46-ին Բուխարեստում: Խմբագիր՝ Հարություն Պապոյան: Լուսաբանել է սփյուռքահայ կյանքը, Ռումինիայի և միջազգ. քաղ. կացությունը, հանդես եկել ֆաշիզմի դեմ: Հրատարակել է Խորհրդ. Հայաստան այցելած անձանց տպավորություններ, խրախուսել ներգաղթը: Գրական բաժնում տպագրել է խորհրդահայ և սփյուռքահայ հեղինակների գործեր, նմուշներ՝ ռում. գրակ-ից: 1946–50-ին, որպես «Պ.»-ի շարունակություն, լույս է տեսել «Հայաստանյան ճակատ» շաբաթաթերթը:

ՊԱՀՊԱՆԱԿ, **առաջաթերթ**, երկնթալ թերթ, որի կեսը փակցվում է գրքի կազմակողի ներսի երեսին, մյուսն ազատ է և ծածկում է ***գրքի բլոկը***: Ծառայում է կազմակողերը բլոկին ամրացնելու համար: Ավելի ամուր ու հաստ է (120–160 գ/մ²), քան տեքստի թուղթը: Պ. նաև գրքի ձևավորման տարր է. լինում է հարթ՝ սպիտակ կամ գունավոր թղթից, և տպագրված՝ բովանդակային կամ ոչ առարկայական (մարմարանկար) պատկերով: Ժամանակակից հրատ-ներում կիրառում են Պ-ի 4 տեսակ. «յուրային», սոսնձված, սոսնձված-եզրակված և բաղադրյալ՝ անցքահատումով ու ծալուքով (թղթե կամ գործվածքե), որոնք օգտագործվում են բլոկի՝ համապատասխանաբար՝ 20, 30, 40 և 40-ից ավելի մմ հաստությունների համար:

Հայ. ձեռագիր մատյաններ կազմելիս երբեմն որպես Պ. օգտագործվել են ավելի վաղ շրջանի ձեռագրերի էջեր, որոնք ունեն ինագրական, ձեռագրագիտ., ընագրագիտ. կարևոր արժեք:

«ՊԱՂԱՏԱՆՔ ԱՌ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ», 1-էջանոց աղոթք: Տպագրել է Գրիգոր Խալդարյանը 1781-ին Լոնդոնում (18 x 11,5 սմ): Հավանաբար այս աղոթքը նա տպագրել է Ս. Պետերբուրգի տպարանի համար պատրաստած տառերը փորձելու նպատակով:

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Բաղդասար Դպիր, Գրիգորյան, Կեսարյան, Կոստանդնուպոլսեցի (1683–1768, Կ. Պոլիս), հրատարակիչ, խմբագիր, սրբագրիչ, բանաստեղծ, երաժիշտ, կրթ-լուսավոր. գործիչ: Սովորել է Կ. Պոլսի մասնավոր վարժարանում: 1741-ից եղել է Կ. Պոլսի Գում Գափուի Մայր դպրատան տեսուչ և ուսուցիչ. դասավանդել է հայոց լեզու և երաժշտություն: 1736–90-ին կազմել և հրատարակել է հայոց լեզվի քերակ-յան դասագրքեր՝ գրաբար և աշխարհաբար, որոնք շուրջ 100 տարի օգտագործվել են հայկ. դպրոցներում: 1720–60-ին մասնակցել է Կ. Պոլսի գրական-հրատարակչ. աշխատանքներին: Եղել է սրբագրիչ Գրիգոր Մարզվանեցու, Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու, Արապյանների և ուր. տպարաններում:

Պ. Դ. կազմել է հայագիտ. գրքերի գիտահամեմատ. ընագրեր, խմբագրել պատմ., փիլ., աստվածաբան. գրքեր: Նրա գիտ. ժառանգու-

թյան կարևոր մասն են «Քերականութիւն», «Օրինակք բարեւագրաց», «Գիրք քերականութեան» (աշխարհաբար), «Համառօտութիւն պատմութեան Մովսէս Խորենացւոյ» (անտիպ, ձեռագիրը պահվում է Երուսաղեմի մատենադարանում), «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան» (հրտ.՝ 1822, Կալկաթա, Մարդասիր. ճեմ. տպ.), «Ժամանակագրութիւն» (հրտ.՝ 1951) և այլ աշխատություններ:

Պ. Դ. նպաստել է հայ նոր բանաստեղծության զարգացմանը. նրա «Տաղարանը» փոփոխումներով ու հավելումներով տպագրվել է 7 անգամ: Պ. Դ-ի «Ի ննջամանէդ արքայեական» (1707) տաղը բանաստեղծ. արվ-ի կատարյալ նմուշ է: Գրել է նաև թուրք. տաղեր:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Պ. Դ-ի՝

«Շահաւէտ» դավանաբան. երկը. 1720-ին (՞) Կ. Պոլսում: Տիտղթ-ին՝ «Գրգուկս շահաւէտ...» [96 (՞) էջ, 8º, 11 x 6,5 սմ]: Վերահրատարակվել է 1750-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (96 էջ, 8º, 12,8 x 7,5 սմ):

«Տաղարան» ժող-ը. առաջին անգամ 1723-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Տաղարան փոքրիկ Պաղտասար Դպրի...» (112 էջ):

1734-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Տաղարան փոքրիկ Պաղտասար Դպրի ասացեալ զանազան գունով» (128 էջ, 8º, 8,5 x 6 սմ):

1768-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Հակոբի տպարանում՝ 2 գրքով: Ա գրքի տիտղթ-ին՝ «Տաղարան փոքրիկ: Պաղտասար Դպրի ասացեալ զանազան գունով», Բ-ին՝ «Տաղարանիկ սիրոյ եւ կարօտանաց եւ այլ: Ի Պաղտասար Դպրէ ի վերայ զանազան գունոց» (376 էջ, 8º, 8,2 x 5,5 սմ):

Հայտնի է նաև տիտղոսաթերթն ընկած օրինակ՝ «Տաղարան (՞) եւ տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց» (258 էջ, 8º, 8,2 x 5,6 սմ):

«Այբբենարան» դասագիրքը. 1723-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք Այբբենական: Որ է դուռն ընթերցական ուսման, շարադրեցեալ սակս նորավարժ հետեւողաց» (64 էջ, 13 x 8 սմ):

«Քերականութիւն» (հ. Ա–Բ) երկը. առաջին անգամ 1736–38-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Հատոր Ա-ի տիտղթ-ին՝ «Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ եւ դիւրիմաց...», Բ-ին՝ «Հատոր երկրորդ: Քերականութեան կիրառութիւն մասանցն բանին...» (608 էջ, 8º, 12, 3 x 7 սմ): Տպագրվել է նաև 1771-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (608 էջ, 8º, 13 x 7,3 սմ), 1791-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում (619 էջ, 8º, 10,5 x 6,3 սմ):

«Կրթութիւն քրիստոնէական» հայատառ թուրք. գիրքը. 1742-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության (192 էջ, 8º, 13 x 7,3 սմ): Վերահրատարակվել է 1777-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (192 էջ, 8º, 12,8 x 6,8 սմ):

«Օրինակք բարեւագրաց» նամակներ գրելու արվեստի մասին աշխատությունը. 1752-ին Կ. Պոլսում՝ «Օրինակ բարեւագրաց նորապէս շարադրացեալ» խորագրով (160 էջ, 8º, 13 x 8 սմ):

1786-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (168 էջ, 8º, 13 x 8 սմ):

«Ցանկ գիրք Նոր կտակարանին» երկը. 1753-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Անուամբ Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Գրգոյկ որ կոչի Ցանկ գիրք Նոր կտակարանին: Որ պարունակէ յինքեան զբանս ոմանս երեւելիս, եղեալ ըստ այբբենական կարգին...» (176 էջ, 4º, 17 x 12,5 սմ):

«Քերականութիւն» (աշխարհաբար) երկը. 1760-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության՝ «Գիրք քերականութեան» խորագրով (176 էջ, 8º, 13 x 7,7 սմ):



«Շահաւեւտ» (1750, Կ. պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) գրքի պատկերազարդ (6-րդ) էջ



«Ցանկ գիրք Նոր կտակարանին» (1753, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Կրթութիւն քրիստոնէական» (1777, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը



Պաղտասար Դպիրի
«Տաղիկներ» (1985, Ե., «Սովետական գրող») գրքի կրկնաշապիկը

«Պու պատմութիւն գիրքի օլտուր քի, Գրիգորիոս սուրբ Լուսաւորիչին էւէլինտէն ախըրընատաք պատմութիւնունոյ...» («Գրիգոր Լուսավորչի պատմությունը և հայ ժողովրդի քրիստոնեության ընդունումը...») հայատառ թուրք. գիրքը. առանց տպագրության վայրի, տպարանի ու թվականի հիշատակության (160 էջ, 8º, 13 x 6,8 սմ): Հայտնի է նաև հնատիպ այլ օրինակ՝ դարձյալ առանց տպագրության վայրի, տպարանի և թվականի հիշատակության (159 էջ, 8º, 13,3 x 8 սմ): Երկուսն էլ հավանաբար Կ. Պոլսի տպագրություն են: Տպագրվել է նաև 1820, 1831, 1841, 1850, 1858-ին (բոլորը՝ Կ. Պոլիս):

Հրատարակվել են նաև Պ. Դ-ի «Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց» (Ե., 1958), «Տաղիկներ» (աշխատասիր. և առաջաբ.՝ Շ. Նազարյանի, 1985), «Տաղեր» (աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, 2007) ժող-ները:


Գրկ. Չոպանեան Ա., Հայ էջեր, Փ., 1912: Բախչինյան Հ., Պաղտասար Դպիր (ուսում-նասիրություն և ընտրանի), Ե., 1999:

«ՊԱՅՔԱՐ», գրական, հաս., քաղ. և տնտ. շաբաթաթերթ (հետագայում՝ օրաթերթ): Լույս է տեսել 1915–19-ին Թիֆլիսում: Մինչև 100 համարն ունեցել է հեղ-ժողովրդավար. ուղղվածություն. փաստացի ղեկավարել են բոլշևիկները: Աշխատակցել են Ս. Շահումյանը, Ա. Ամիրյանը, Ա. Միկոյանը, Մ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Ա. Կարինյանը, Հ. Կամարին, Գ. Հայկունին, Ա. Վարդանյանը, Սիմակը և ուր.: Քննադատել է պատերազմը, ազգայնական կուս-ներին, մասնավորապես՝ դաշնակցությանը, «սպեցիֆիկներին»: Մեծ տեղ է հատկացրել գրակ-յան ու արվ-ի հարցերին. տպագրել է Մ. Գորկու, Հ. Հակոբյանի, Ա. Վշտունու, Մ. Արազու և ուր. երկերից: 1917-ի հունիսի 16-ից բոլշևիկները հեռացել են թերթից և ստեղծել իրենց «Բանուորի կռիւը» (Թիֆլիս) պաշտոնաթերթը:



«Պայքար», *1915–19, Թիֆլիս*

«ՊԱՅՔԱՐ», հաս-քաղ., տես. և մշակութ. հանդես (մինչև 1993-ը՝ օրաթերթ): ՌԱԿ-ի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1922–98-ին (մինչև 1995-ը՝ Բոստոնում, 1995–98-ին՝ Երևանում): Խմբագիրներ՝ Արմենակ Նազար(եթյան), Երվանդ Մեսիայան, Հրաչ ***Երվանդ,*** Անդրանիկ ***Փոլատյան***, Անդրանիկ ***Անդրեասյան***, Նուպար Պերպերյան, Գ. Քեոսեյան, Հարություն Կարապետյան: ***«Ազգ»*** և ***«Պահակ»*** պարբ-ների միավորմամբ ստեղծված «Ազգ-Պահակ» (1921–22) օրաթերթի շարունակությունն է: Լուսաբանել է ամերիկահայության և սփյուռքահայ այլ համայնքների ազգ., կրթ., մշակութ. կյանքը, նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը, ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի տնտ., շին., կրթ. ձեռքբերումները, անդրադարձել միջազգ. քաղ. իրադարձություններին, քաջալերել ՀՕԿ-ի, Հայ Կարմիր խաչի, ՀԲԸՄ-ի, հայրենակց. միությունների մասնակցությունը հայրենիքի վերակառուցմանը: Տպագրել է հայ և օտարազգի հեղինակների գրական ստեղծագործություններ, բանասիր. հոդվածներ: Վերջին շրջանում հրապարակել է հիմնականում քաղ. և տես. հոդվածներ:



«Պայքար», *1922–98, Բոստոն, Երևան (№ 1, 1995)*

«ՊԱՅՔԱՐ», *«Խորհրդային Հայաստան»* պաշտոնաթերթի գրական հավելված: Լույս է տեսել 1923-ին Երևանում (անկանոն պարբերականությամբ, № 6-ից ինքնուրույն հրատ.՝ գրական-գեղ. կիսամսյա հանդես): Խմբագիր՝ Արտաշես ***Կարինյան:*** Անդրադարձել է համաշխ. գեղագիտ. ուղղություններին, տպագրել թատրոնին ու կերպարվ-ին նվիրված հոդվածներ, գրական, մշակութ. նորություններ, սփյուռքահայ մամուլի տեսություններ: Աշխատակցել են Ա. Մյասնիկյանը, Ե. Չարենցը, Վ. Թոթովենցը, Ս. Զորյանը և ուր.:

«ՊԱՅՔԱՐ», քաղ., ընկերային և մշակութ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1967–71 և 1974-ին (նոր շրջան) Ստամբուլում: Խմբագրապետ-արտոնատեր՝ Հակոբ Սվասլյան, խմբագիրներ՝ Երվանդ ***Գոպելյան***, Կարապիս Մուրադյան: Լուսաբանել է Հայաստանի տնտ., գիտ. և մշակութ. ձեռքբերումները, անդրադարձել Թուրքիայի ներքին և ար-

տաքին քաղ. կացությանը, միջազգ. իրադարձություններին: Ունեցել է գրակ-յան և արվ-ի բաժին, որտեղ տպագրել է հայ դաս. և ժամանակակից գրողների ստեղծագործություններ, քնն. հոդվածներ, նյութեր՝ հայ և օտարազգի ճանաչված արվեստագետների մասին: Ծանոթացրել է Հայաստանի պատմ. հուշարձաններին:

«ՊԱՇՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ», դավանաբան. երկ: Լատ-ից թարգմանել է և կազմել Ղուկաս Վանանդեցին: Տպագրվել է 1704-ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Պաշտօն աստուածային, անպատում, փրկական եւ ահաւոր խորհրդոյ Սուրբ Պատարագին...» (232 էջ, 8º, 11 x 6,1 սմ):


«ՊԱՇՏՕՆԱՄԷՐ...», 1-էջանոց երկսյուն ուղերձ: Տպագրվել է 1775-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ նույն թվականի մայիսի 16-ին Հռոմի Հովսեփ Բ կայսեր Տրիեստի Մխիթարյան նորակառույց վանք այցելության առիթով: Խորագիր՝ «Պաշտօնասէր եւ պատրաստական ծառայք եւ հպատակք Մխիթարեանք, ի կարգէ սրբոյն Անտոնի Աբբայի, բնակեալք ի Թրիեստէ, 1775 մայ. 16»: Էջի կենտրոնում՝ վերևից, կայսեր. զինանշանն է: Առաջին սյունակը հայ. է, երկրորդը՝ իտալ.: Հայ. բնագիրը 46-տողանոց ոտանավոր-ուղերձ է:



«Պաշտօն աստուածային» *(1704, Ամստերդամ, Թովմա Վանանդեցու տպ.) գրքի պատկերազարդ (12-րդ) էջ*

ՊԱՊԱՅԱՆ Արամ Հայկի [1918, Փոթի (Վրաստան)–28.8.1945, Երևանի, դրամատուրգ, լրագրող: Ավարտել է Երևանի ռուս. մանկավարժ. ինստ-ը (1937): Հայրեն. մեծ պատերազմի տարիներին (1941–43) եղել է «Զաշչիտնիկ օտեչեստվա» (ռուս.) զինվոր. թերթի խմբագրի տեղակալ: 1945-ին աշխատել է Երևանի «Կոմունիստ» թերթի խմբագրությունում: Հորեղբոր՝ Արամաշոտ Պապայանի հետ գրել է «Մեծ հարսանիք» (բեմ.՝ 1944, Հ. Պարոնյանի անվ. երաժշտ. կոմեդիայի թատրոն), «Սեր առանց խարդավանքի», «Բախտավորյալներ» պիեսները:

ՊԱՊԱՋԱՆՅԱՆ Վասակ [1847, Երևան–1893, գ. Դարաչիչակ (այժմ՝ ք. Ծաղկաձոր՝ ՀՀ Կոտայքի մարզում)], հրատարակիչ-խմբագիր, մանկավարժ, հաս. գործիչ: Ավարտել է Թիֆլիսի դաս. գիմնազիան, սովորել Հայդելբերգի, Բոննի, Լայպցիգի համալսարաններում, ստացել դ-րի աստիճան: 1876-ին վերադարձել և 1877–78-ին ստանձնել է Շուշիի թեմ. դպրոցի տեսչի պաշտոնը: Եվրոպ. մանկավարժության սկզբունքներով կազմել է դպրոց. նոր ծրագիր: 1880–84-ին՝ Երևանի անդրանիկ պարբ-ի *«Պաակ»*-ի հրատարակիչ-խմբագիր: Աշխատակցել է «Հայկական աշխարհ» հանդեսին: 1882–83-ին Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդել է փիլ. և մանկավարժություն:



Պապիրուսի *վրա գրված տեքստի նմուշ*

ՊԱՊԻՐՈՒՍ, հնագույն գրելանյութ. պատրաստվել է եղեգի (պապիրուս) ցողունից և տերևներից: Գործածվել է մ. թ. ա. IV հազարամյակից (մինչև մագաղաթի ի հայտ գալը) Եգիպտոսում, որտեղից փոխանցվել է այլ երկրներ: Գրել են հյուսվածքի հորիզոնական մանրաթելերով երեսին: Փշրվող լինելու պատճառով Պ. հնարավոր չէր ծալել, ուստի նրա թերթերը ամբողջացնելու համար եզրերից կպցրել են իրար, որից ստացված երկար ժապավենները գրելուց հետո փաթաթվել և պահվել են գլանաձև փաթեթոցներով: Դա գրքի առաջին նախատիպն է՝ ***գլանափաթեթը:***

ՊԱՍՄԱՃՅԱՆ Կարիկ (Կարապետ) Գրիգորի (20.12.1947, Երուսաղեմ–անհետացել է 1989-ին Մոսկվայում), բանաստեղծ, խմբագիր, թարգմանիչ, արվ-ի գործերի հավաքորդ («Կ. Պասմաճյան» պատկերասրահ, Փարիզ): Մինչև 1968-ը գրել է անգլ., 1969-ից՝ հայ.: Սովորել է Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանում, ավարտել է ԵՊՀ (1972): Ապրել է Փարիզում, աշխատակցել Հայաստանի և Սփյուռքի պարբ-ներին, խմբագրել *«Նոր շինարար»* պարբ-ը:

Պ. կազմել և հայ. է թարգմանել «Ամերիկահայ անգլիագիր բանաստեղծներ: Երկլեզու ծաղկաքաղ», 1976) ժող-ը: Կազմել և խմբագրել է Ինտրայի «Ընտիր երկերը» (1974, Բ.), կազմել «Իրանահայ բանաստեղծներ» (1976, Փ.) ժող-ը: Անգլ. է թարգմանել Ե. Չարենցի և Պ. Սևակի ստեղծագործություններից: Լույս են




Կարիկ Պասմաճյանի *«Աւարտախաղ» (2005, Ե., «Փրինթինֆո») գրքի կազմը*



«Պատանեկան արձագանք», *1936-ից, Բեյրութ*



«Պատանի», *1910–15, Թիֆլիս*



Պատարագատետր, *1513 (Վնտ., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ), 4-րդ էջը*

տեսել Պ-ի «Լուսատըտիկ արեւի մէջ» (1971), «Շթաքարեր» (1973), «Բեղմնափոշի» (1976), «Վերադառնում եմ իմ սկիզբը» (1978), «Անաւարտ խաղ» (1980, 2003), «Աւարտախաղ» (2005) բանաստեղծությունների ժող-ները:

«ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ», մանկապատանեկան երկշաբաթաթերթ, 1973-ից՝ ամսաթերթ: Լույս է տեսնում 1936-ից Բեյրութում: Հայ ավետարան. քրիստ. Ձանից միության հրատ.: Խմբագիրներ՝ Մանասե Շնորհոքյան, Լևոն Սիմոնյան, Պարգև Տարագչյան, Ժանեթ Քասունի, Փոլ Ներսեսյան, Արամ Սարգիսյան, Տիգրան Յումուշաքյան, Երվանդ ***Քասունի*** (1993-ից): Տպագրում է հոգևոր, պատմ., գիտ., մարզ., մշակութ. թեմաներով հոդվածներ, լուրեր: Մեծ տեղ է հատկացնում պատանիների կամ նրանց համար գրված հայագիր և թարգման. արձակ ու չափածո գրական ստեղծագործություններին: Ունեցել է «Կիրակնօրյա դպրոցի դասեր» հավելվածը (1940–42-ին):

«ՊԱՏԱՆԻ», պատկերազարդ ամսագիր: Լոնդոնի հայ երիտասարդ. միության հրատ: Լույս է տեսել 1902–07-ին Լոնդոնում: Խմբագիր՝ Կարապետ Թումայան: Երիտասարդ սերնդին ծանոթացրել է հայոց պատմությանը, ձգտել նրանց մեջ սերմանել հայրենասիրություն և նախապատրաստել հայրենիքի ազատագրման պայքարին: Տպագրել է հայ գրողների ստեղծագործություններ, անցյալի նշանավոր դեմքերի կյանքին ու գործունեությանը նվիրված նյութեր, հոդվածներ՝ մանկավարժության, հայ դպրոցի պատմության վերաբերյալ:

«ՊԱՏԱՆԻ», գրական-գեղ. եռամսյա ալմանախ: Լույս է տեսել 1910–15-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչներ՝ Միսաք ***Էփրիկյան***, Նշան Մկրտչյան: Խրախուսել է ստեղծագործ. ունակություններով օժտված պատանիներին, ներկայացրել նրանց գրական փորձերը: Խմբագրությանը կից գործող «Պատանի» գրական ընկերությունը գավառներում ունեցել է մասնաճյուղեր: Աշխատակցել են Ա. Խոնդկարյանը, Վ. Երեմյանը, Ա. Կոծինյանը, Վ. Աղայանը, Պահարեն (Հ. Պետրոսյան), Ա. Վարդանյանը և ուր.:

ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ, **Պատարագամատույց, Խորհրդատետր**, պատարագի արարողության ծիսամատյան: Բովանդակում է աղոթքներ, հոգևոր երգեր, մաղթանքներ, քարոզներ ու հատվածներ Աստվածաշնչից: Սկզբն. Պ. վերագրվել է առաքյալներին, մասնավորապես՝ Հակոբ Տյառնեղբայր առաքյալին: Առաջին անգամ խմբագրել է ***Բարսեղ Կեսարացին***, որի համառոտ թարգմանությունը (V դ.) Հայ եկեղեցում գործածվել է V–VI դդ-ում: Ընդարձակ Պ. թարգմանվել է XI դ-ում: XII դ-ի վերջին ***Ներսես Լամբրոնացին*** հայ. է թարգմանել կաթոլիկ եկեղեցու Պ-ի մի տարբերակ: Հայ. Պ-ի ստեղծմանը տարբեր ժամանակներում մասնակցել են Գրիգոր Լուսավորիչը, Սահակ Պարթևը, Հովհաննես Մանդակունին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Խաչատուր Տարոնացին: Հայ եկեղեցու գրչագիր Պ-երը բնագրային տարբերություններ ունեն, նույնական չեն նաև տարբեր ժամանակներում տպագրվածների բնագրերը: Հայոց Պ. գլխավորապես կազմված է կապադովկյան հայրերի՝ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու հեղինակած Պատարագամատույցից:

Պ-ին վերաբերող մեկնաբանություններ են գրել ***Խոսրով Անձևացին***, Ներսես Լամբրոնացին, ***Մովսես Երզնկացին, Հովհաննես Արճիշեցի Ոսկանակերը*** (X–XIV դդ.):

Հայ. Պ. առաջին անգամ տպագրել է ***Հակոբ Մեղապարտը*** 1513-ին Վենետիկում: Տիտղթ-ին՝ «Պատարագատետր է սա Յիսուսի Քրիստոսի աստուծոյ...»: Բաղկացած է 6 մամուլից, վերջին մամուլը՝ 4 թերթ, համարակալված են միայն մամուլները և յուրաքանչյուր մամուլի առաջին 3 թերթերը, ընդամենը՝ 44 թերթ (88 էջ, 11 x 6,5 սմ): Էջերի խորագրերը պարփակված են շրջանակներում: Ունի փորագիր պատկեր՝ անվանա-

թերթի դարձերեսին (քահանան՝ պատարագի սկիհը ձեռքին, շրջապատված է սարկավագներով, իսկ պատկերի վերին մասում խաչելության նկար է), և զարդագրեր: Տպագրությունը երկգույն է՝ *Ուրբաթագրքի* տառերով: Այս Պ. տարբերվում է հետագա հրատ-ներից:

Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերից միայն Պ. ունի հիշատակարան, որը տպված է գրքի վերջում. «Գրեցաւ սուրբ տառս ի ՋԿԲ, ի աստուածապահ քաղաքս ի Վէնէժ, որ է Վենետիկ Ֆռանկստեան, ձեռամբ մէղապարտ Յակոբին: Ով որ կարդայք, մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ» («Այս սուրբ տառերը գրվեցին 962 (+ 551 = 1513)-ին Վենեժ աստվածապահ քաղաքում, որ է Վենետիկ՝ Ֆրանկստան, մեղապարտ Հակոբի ձեռքով: Ով կարդա, թող մեղքերիս թողություն խնդրի Աստծուց»):

Պ-եր տպագրվել են նաև՝

1641-ին Նոր Ջուղայում՝ Սբ Ամենափրկիչ վանքի տպարանում: Տպագրիչ՝ Խաչատուր Կեսարացի: Տիտղթ. չունի, սկսվում է «Որ զգեցեալ ես զլոյս…» նախադասությամբ (47 էջ, 4º, 17 x 13 սմ):

1642-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ հայ. և լատ.: Տիտղթ-ին՝ «Կարգեալ սուրբ խորհուրդ Պատարագի հայոց. Ordo divinae missae armenorvm. Romea…» (138 էջ, 4º), 1670-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը, 1677-ին նույն տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Խորհրդատետր Պատարագին հայոց…», Բ-ին՝ «Սպասաւորութիւն Պատարագի…» (52 էջ, 4º, 25,3 x 16,3 սմ), 1677-ին նույն տպարանում: Տիտղթ-երին՝ նույնը (50 էջ, 24 x 16 սմ):

1686-ին Վենետիկում՝ Գասպար Սահրադյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Խորհրդատետր սրբազան Պատարագի…» (40 էջ, 4º, 21,5 x 14,7 սմ):

1690-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում՝ հայ. և իտալ.: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տիտղթ-ին՝ «Թարգմանութիւն իտալական սրբազանի խորհրդատետրերն հայոց շարագրեցեալ…» (51 էջ, 4º, 16,3 x 10,6 սմ):

1706-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Խորհրդատետր սրբազան Պատարագի…» (43 էջ, 4º, 20 x 14 սմ):

1728-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Թարգմ.՝ Թովմաս Խոշկաշինեցու: Տիտղթ-ին՝ «Missale sacriordinis praedicatorum…» (658 էջ, 4º, 29,5 x 17,5 սմ):

1741-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Խորհրդատետր սրբոյ Պատարագին…» (28 էջ, 4º, 26 x 17 սմ):

1748-ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Խորհրդատետր սրբազան Պատարագի…» (40 էջ, 4º, 20,7 x 14,5 սմ):

1752-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Հեղինակ՝ Մարտինոս Գաբուչինի, գերմ-ից թարգմ.՝ Թեոդորոս Մետիաշցու: Տիտղթ-ին՝ «Պատարագամատոյց աշխարհականաց, որ պարունակէ…» (240 էջ, 12º):

1761-62-ին Զմյուռնիայում՝ Մահտեսի Մարկոսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Խորհրդատետր սրբազան Պատարագի ըստ արարողութեան եկեղեցեացս Հայաստանեայց» (40 էջ, 2º, 23,5 x 15,5 սմ):

1777-ին Հռոմում: Տիտղթ-ին՝ նույնը (35 էջ, 2º):

1785-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը, 1787-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (40 էջ, 2º, 25,3 x 18,3 սմ):

1788-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (35 էջ, 4º, 23 x 16 սմ):

1794-ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (30 էջ, 4º, 23,8 x 16,2 սմ):

1801-ից հետո Պ-եր են տպագրվել՝ 1832-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ իտալ. (թարգմ.՝ Գաբրիել Ավետիքյանի), 1887-ին

Պատարագատետր


ORDO
DIVINAE MISSAE
ARMENORVM.
ROMAE,
Typis, & expensis Sacræ Congregationis Propag. Fidei. 1642.

1642 (Հռոմ), փիփղոսաթերթը




1686 (Վնտ., Գասպար Սահրադյանի տպ.), փիփղոսաթերթը




1706 (Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպ.), փիփղոսաթերթը



«Պատերազմի Աւետարան».
«Քրիստոսի թաղումը», մանրանկար (1302, ծաղկող՝ Մոմիկ, Մատենադարան, ձեռ. № 6792)



Գաբրիել Պատկանյան



Գ. Պատկանյանի
«Միջնավէպ հայոց ազգի պատմութենէն...» (1864, ՍՊբ) գրքի տիտղոսաթերթը

Լոնդոնում՝ հայ. և անգլ. (ա. տպ.), 1897-ին Վիեննայում (քնն. համապարփակ բնագիրը, աշխատասիր.՝ Հ. Գաթըրճյանի, «Սրբազան պատարագամատոյցք հայոց» վերնագրով), 1926-ին (Փ., Ներսեսի տպ.), 1933-ին (Նյու Յորք, ա. տպ.), 1936-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1956-ին (Բոստոն, «Պայքարի» տպ.), 1958-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1960-ին (Բոստոն, Սբ Ստեփանոս եկեղեցու տպ.), 1970-ին (Ֆրեզնո, ա. տպ.), 1977-ին (Նոր Ջուղա, Սբ Ամենափրկիչ վանքի տպ.), 1984-ին (Լոնդոն, ա. տպ), 2008-ին (Ե., «Գթություն»), 2010-ին (Էջմիածին) ևն:

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԻԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան: Գրվել և պատկերազարդվել է 1302-ին Ամաղուի Նորավանքում, պատվիրատու՝ Սյունիքի մետրոպոլիտ ***Ստեփանոս Օրբելյան***, գրիչ՝ Հովհաննես Օրբելյան, ծաղկող՝ ***Մոմիկ***: 1406–11-ին «Պ. Ա.» պահվել է Վասպուրականի Բզնունյաց գավառի Սքանչելագործ Սբ Նշան վանքում (Պատերազմի Սբ Նշան վանք, այստեղից՝ անվանումը), որտեղ 1406-ին Գրիգոր Խլաթեցի վարդապետը վերականգնել է վնասված ձեռագիրը: Նրա 1411-ի հիշատակարանում առաջին անգամ ձեռագիրն անվանվել է «... զպատերազմի սբ. Աւետարան»: 1676-ին «Պ. Ա.» պահվել է Մեծոփա-վանքում, XVII դ-ի վերջին հափշտակվել է, ապա Սարգիս աբեղայի շնորհիվ փրկագնվել և վերադարձվել է Մեծոփավանք: Հետագայում պահվել է Երնջակի Սբ Կարապետ վանքում, 1925-ին բերվել է Մայր աթոռ Սբ Էջմիածին (այժմ՝ Մատենադարան, ձեռ. № 6792):

Ձեռագրի թերթերի հիմն. մասը մագաղաթ է, վերականգնվածը՝ թուղթ, գիրը՝ բոլորգիր, երկսյուն: Կաշեպատ կազմին հետագայում ավելացվել է արծաթե քանդակազարդ կազմ: Բովանդակում է 4 Ավետարանները (սկսվում է Հովհաննեսի Ավետարանից), Հակոբ, Պետրոս, Հուդա առաքյալների թղթերը, հատված՝ Ղուկաս ավետարանչի «Գործք առաքելոց»-ից: Ձեռագիրը պարունակում է 12 տերուն. տեսարաններ, «Հովհաննես ավետարանիչը Պրոքորոնի հետ», Հակոբ և Պետրոս առաքյալների պատկերները, նաև անվանաթերթեր, լուսանցազարդեր և զարդագրեր:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Գաբրիել Սերովբեի (1802, Թիֆլիս–14.4.1889, Ս. Պետերբուրգ), գրող, մանկավարժ, հաս. գործիչ, խմբագիր: Սերովբե ***Պատկանյանի*** որդին, Ռափայել ***Պատկանյանի*** հայրը, Միքայել ***Պատկանյանի*** եղբայրը: 1805-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Աստրախան: Սովորել է հոր հիմնադրած Աղաբաբյան դպրոցում, ապա՝ ռուս. հոգևոր սեմինարիայում: Տիրապետել է ռուս-ին, անգլ-ին, գերմ-ին:

1827-ին եղել է Աստրախանի հոգևոր կոնսիստորիայի ատենադպիրը և հոգևոր դպրոցի ուսուցիչը, ձեռնադրվել է քահանա: 1836-ին Նոր Նախիջևանում բացել է մասնավոր վարժարան, որտեղ նրան աշակերտել են Միքայել ***Նալբանդյանը***, Ռափայել Պատկանյանը և ուր.: 1846–47-ին աշխատել է Թիֆլիսի «Կովկաս» թերթի խմբագրությունում: 1850-ին՝ Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնակատար, 1850–51-ին, միաժամանակ՝ ***«Արարատ»*** շաբաթաթերթի խմբագիր:

Լույս են տեսել Պ-ի «Համառօտ վարդապետութիւն ուղղափառութեան» (1821, Աստրախան, Սբ Էջմիածնի տպ.), «Հայոց ազգի պատմութիւնը» (1863, ՍՊբ, Ռաֆայել Պատկանյանի տպ.), «Միջնավէպք հայոց պատմութիւնից» (1863, նույն տպ.), «Միջնավէպ հայոց ազգի պատմութենէն...» (1864, նույն տպ.), «Հայոց ազգի ուսումնասիրութիւնը, ուսումնարանները եւ ուսուցիչները» (1865, նույն տպ.), «Նոր Նախիջեւանի պատմութիւնը» (1917, Նոր Նախիջևան, Սերովբե Ավագյանի տպ.) աշխատությունները, «Շաւարշ Երկրորդ կամ Նորոգեալ Հայաստան» (1864, նույն տպ.), «Սիմունջք Յիսուսի» (1864, Դոնի Ռոստով, Հովհաննես Տեր-Աբրահամյանի տպ., 1875, նույն տպ.), «Սանդուխտ դշխոյի եւ կուսի պատարագ» (1876, ԿՊ, Եղիա Տատեյանի տպ.), «Անուշաւան» (1875, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), «Հոիփսիմէ կամ Փրկութիւն Հայաստանի» (1875, Դոնի Ռոստով, Հ. Տեր-Աբրահամյանի տպ.), «Երգագիր պատմութիւն հայոց կամ Դաստիարակութիւն մանկանց» (1876, նույն տպ.), «Պարոյր կամ Առումն Նինուէի...» (1876, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), «Զաւան եւ Փառնակ Ա» (1877, նույն տպ.) և այլ գեղ. երկեր:

Պ. հեղինակ է նաև դասագրքերի, բառարանների, օրացույցների, տոմարագիտ., կրոն. երկերի:

Թարգմանել է Դիոդորոս Սիկիլիացու «Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» երկը (1818, հրտ.՝ 1827, Աստրախան, Սբ Էջմիածնի տպ.):

Գրկ. Շահազիզ Ե., Տէր-Գաբրիէլ Պատկանեանց, Թ., 1910: Նազարյան Շ., Գաբրիել Պատկանյանի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը (1830–60-ական թթ.), Ե., 1956: Սաղյան Մ., Պատկանյաններ, Ե., 1982:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Միքայել Սերովբեի (1814, Աստրախան–1895, Թիֆլիս), դրամատուրգ, խմբագիր, թարգմանիչ: Սերովբե ***Պատկանյանի*** որդին, Գաբրիել ***Պատկանյանի*** եղբայրը: Նախն. կրթությունն ստացել է Աստրախանում՝ հոր հիմնադրած Աղաբաբյան դպրոցում: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1834), 3 տարի սովորել Մոսկվայի բժշկավիրաբուժ. ակադ-ում: 1840-ին տեղափոխվել է Կովկաս, պաշտոնավարել Ստավրոպոլում, Էջմիածնում, ապա հաստատվել է Թիֆլիսում, դասավանդել Ներսիսյան դպրոցում: 1846–47-ին մասնակցել է ***«Կովկաս»*** շաբաթաթերթի խմբագր. աշխատանքներին:

Լույս են տեսել Պ-ի «Պարգեւ մանկանց» (1851, Թ., Ներսիսյան դպրոցի տպ., 2 հրտ.՝ 1856, նույն տպ.) դասագիրքը, «Միջի մարդ կամ Մոցիքուլ» (բեմ.՝ 1853, հրտ.՝ 1859, Թ., Գաբրիել Մելքումյանի և Համբարձում Էնֆիաճյանի տպ.) կատակերգությունը, «Կրիտիք Յակոբայ Կարենեանց հեղինակութեան վրայ» (1861, Թ., Ներսիսյան դպրոցի տպ.) քննադատ. աշխատությունը: Ֆրանս-ից թարգմանել է վոդևիլներ և Լ. Գալլուայի «Ինկվիզիցիայ» (Հ. Կարենյանի հետ, 1853, նույն տպ.) երկը:


Գրկ. Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, հ. 2, Ե., 1964:

ՊԱՏԿԱՆՅԱՆ Ռափայել Գաբրիելի, **Գամառ Քաթիպա** [8(20).11.1830, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք-ի շրջագծում)–26.8(7.9).1892, Նոր Նախիջևան], բանաստեղծ, արձակագիր, հաս. գործիչ, հրատարակիչ-խմբագիր: Գաբրիել ***Պատկանյանի*** որդին: Սովորել է Նոր Նախիջևանում՝ հոր հիմնադրած դպրոցում, և Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1843–49): 1863–64-ին՝ ***«Հիւսիս»*** (Ս. Պետերբուրգ) շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ: 1850–51-ին «Արարատ» (Թիֆլիս) շաբաթաթերթում տպագրել է «Պանդուխտ հայ ի Փարէզ», «Զարմայր նահապետի մահը» պոեմները, «Առաւօտեան երգ շինականաց», «Երեկոյեան երգ շինականաց» բանաստեղծությունները: 1851-ին ընդունվել է Մոսկվայի համալսարանի բժշկ., 1854-ին՝ Ս. Պետերբուրգի համալսարանի արլ. ֆակ-ները: 1852-ին ընկերների՝ Գևորգ Քանանյանի և Մնացական Թիմուրյանի հետ հիմնադրել է «Գամառ-Քաթիպա» գրական ընկերությունը: Հետագայում Պ. այդ անունը դարձրել է իր գրական կեղծանունը:

1855-ին տպագրել է «Գամառ Քաթիպայի» առաջին պրակը: 1859-ին Ս. Պետերբուրգում Պ. հիմնադրել է տպարան, որտեղ տպագրվել են շուրջ 35 անուն գիտ. աշխատություններ, օրացույցներ, դասագրքեր , այդ թվում՝ Գ. Պատկանյանի «Հայոց ազգի պատմութիւնը» (1863), Գրիմ եղբայրների «Գերմանական ազգային առակներ» (1864), «Դասագիրք համաշխարհական պատմութեան. Նախնի դար» (1864), «Հայկազեան օրացոյց եւ լուսնացոյց» (1865) ևն:

Պ. հայ քաղաքաց. պոեզիայի հիմնադիրներից է («Արաքսի արտասուքը», «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը», երկուսն էլ՝ 1856):


Լույս են տեսել Պ-ի «Արձակ եւ չափաբերական աշխատութիւնները» (պր. 1, 1856, ՍՊբ, Ա. Ֆրիդրիխսոնի տպ., պր. 2–3, ՍՊբ, Հակոբ Յանսոնի տպ., պր. 4, 1857, նույն տպ.) ժող-ը, «Պատմութիւն Մեծին Պետրոսի...» (1863, ՍՊբ, Պ-ի տպ.), «Բանաստեղծութիւնք» (1864, Մ., Լազարյան ճեմ. տպ., 1881, Մ., Ա. Գատցուկի տպ.), «Ազատ երգեր» (1878, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Նոր Նախիջեւանի քնար» (1879, Դոնի Ռոստով, Հովհաննես Տեր-Աբրահամյանի տպ.), «Մանկական երգեր» (1880, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Ընտիր երկասիրութիւններ» (հ. 1–2, ՍՊբ, 1893, Յ. Լիբերմանի տպ., հ. 3, 1904, Դոնի Ռոստով, «Դոնսկայա ռեչ» տպ.) ժող-ը, «Նապոլէոն Բոնապարտ» (1857–62), «Ժողովածոյք օտա-




Ռափայել Պատկանյան



«Մանկական երգեր» (1880, Թիֆլիս) գրքի կազմը




«Ընտիր երկասիրութիւններ» (հ. 1, 1893, ՍՊբ) գրքի տիտղոսաթերթը



Սերովբե Պատկանյան *«Երգք» (1857, Մոսկվա) գրքի տիտղոսաթերթը*



Քերովբե Պատկանյան



Ք. Պատկանյանի *«Վանի արձանագրութիւնները...» (1883, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*

րազգի բառերիս Նոր Նախիջեւանցոց...» (1870, ՍՊը) աշխատությունները: Պ–ի աշխատասիրությամբ և խմբագրությամբ հրատարակվել են «Ազգային երգարան հայոց» (1856, ՍՊը, Հ. Յանսոնի տպ.), «Հատընտիր եւ պատկերազարդ առակք Եզոպոսի...» (1857, Թ., Ալադաթյանի գրատուն) գրքերը:

Բեռլինի վեհաժողովից (1878) հետո ստեղծված ծանր հիասթափության տարիներին գրել է «Փառասէր», «Ես նշանած էի», «Տիկին եւ նաժիշտ» (1884, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) վիպակները, 1880–ական թթ–ին՝ «Ջոհեր», «Տաճկահայերի օրհասը», «Երդում», «Փեսաներ» բանաստեղծությունները: 1880–ին Պ–ի ջանքերով Նոր Նախիջևանում հիմնադրվել է արհեստագործ. դպրոց, որի տեսուչն է եղել ցկյանս: Կազմել է դասագրքեր [«Ընթերցարան մանկանց: Մայրենի բարբառ» (1884, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Այբբենարան հնչական ոճով» (1884, Վնն., Մխիթարյան տպ.), «Տարրական գիտութիւնք» (1885, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.)], թարգմանել Դ. Դեֆոյի («Ռօբինզօն Կռիւզօի պատմութիւնը» (1857) վեպը, Ա. Պուշկինի և ուր. գործերից:

Հրատարակվել են նաև Պ–ի «Երկերի ժողովածուն» (հ. 1–8, 1963–74), «Երկերը» (1980), «Բանաստեղծությունների ընտրանին» (2005):

Գրկ. **Մուրադյան Հ.,** *Ռափայել Պատկանյան, Ե., 1956:* **Սիմոնյան Ռ.,** *Ռափայել Պատկանյան: Գեղարվեստական արձակը, Ե., 1976:* **Սաղյան Մ.,** *Ռափայել Պատկանյան: Կյանքը և գործը, Ե., 1980:* **Նույնի,** *Պատկանյաններ, Ե., 1982:* **Օհանյան Ա.,** *Ռափայել Պատկանյանի հրապարակախոսությունը, Ե., 1981:*

ՊԱՏԿԱՆՅԱՆ Սերովբե Պետրոսի (1769, Կ. Պոլիս–1836, Աստրախան), մանկավարժ, բանաստեղծ: Միքայել ***Ռեպտենի*** եղբայրը, Գաբրիել ***Պատկանյանի*** և Միքայել ***Պատկանյանի*** հայրը: Սովորել է Կ. Պոլսի Սասխալաճի Հարությունի երաժշտ., 1783–ից՝ Վենետիկի Մխիթարյան, 1788–ից՝ Տրիեստի Ս. Մարտինոսի դպրոցներում: 1792–ին վերադարձել է Կ. Պոլիս. Բերայում բացել է երաժշտ. թեքումով դպրոց: Ամբաստանվել է, 1793–ին փախել է Թիֆլիս, Վրաց Հերակլ II թագավորի աջակցությամբ հիմնադրել հայկ. առաջին դպրոցը (գործել է մինչև 1805–ը): Նույն թվականին դպրոց է բացել նաև Նոր Նախիջևանում: 1796–ին գրել է «Համառօտ պատմութիւն աւերեցման Փայտակարան մայրաքաղաքի ի խանէն աղայ Սահմուդի ի 1795 եւ ի 11 սեպտեմբերի» (հրտ.՝ 1910) պատմ. ուսումնասիրությունը: Գրել է նաև կրոն. բովանդակությամբ բանաստեղծություններ: 1857–ին լույս է տեսել Պ–ի «Երգք» (աշխատասիր.՝ Ա. Խազեզյանի, Մ., Լազարյան ճեմ. տպ.) ժող–ը:

ՊԱՏԿԱՆՅԱՆ (Պատկանով) Քերովբե Պետրոսի [4(16).5.1833, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք–ի շրջագծում)–2(14).4.1889, Ս. Պետերբուրգ], աղբյուրագետ, մատենագետ, բանասեր, պատմաբան: Բանասիր. գիտ. դ–ր (1864), Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆ. (1871), ՌԳԱ թղթ. անդամ (1885): Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1849), Ս. Պետերբուրգի գլխ. մանկավարժ. ինստ–ը (1858): 1861–ից գլխավորել է Ս. Պետերբուրգի համալսարանի արլ. լեզուների ամբիոնը, ձևավորել հայագիտ–յան պետերբուրգյան դպրոցը: 1872–ից վարել է նաև Ս. Պետերբուրգի գրաքննչ. ատյանի հայ. հրատ–ների գրաքննիչի պաշտոնը: Գրել է ռուս.:

Մանկավարժ. գործունեությանը զուգընթաց՝ Պ. ուսումնասիրել, ռուս. թարգմանել և հրատարակել է Մովսես Կաղանկատվացու (1861), Սեբեոսի (1862), Ղևոնդ Երեցի (1862), Մխիթար Այրիվանեցու (1867), Պետրոս Գիլանենցի (1870), Մաղաքիա Աբեղայի (1870), Կիրակոս Գանձակեցու (1874), Թովմա Արծրունու (1887), Մխիթար Անեցու (1879) երկերը, Անանիա Շիրակացու «Մնացորդք բանից...» (1877), Մովսես Խորենացու «Աշխարհացոյց» (1877, հայ. բնագրով, բոլորը՝ ՍՊը, Կայսեր. գիտ–ների ակադ–ի տպ.,) աշխատությունները: Հավաքել, ռուս. թարգմանել և հրատարակել է «Մոնղոլների պատմությունն ըստ հայկական աղբյուրների» (հ. 1–2, 1873–74) երկը:

Լույս են տեսել նաև Պ–ի «Սասանյան արքայատան պատմության փորձ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների» (1863), «Դեպի Հնդկաս–

տանի ափերը Թգլատպալասարի կարծեցյալ արշավանքի մասին» (1879), «Մի քանի խոսք հին հայկական ամսանունների մասին» (1871), «Վանի արձանագրությունները և դրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար» [1881, հայ. հրտ.՝ 1883 (ծաղկաքաղ), Թ., Սիվսես Վարդանյանի տպ.], «Ռուսաստանի սահմաններում հայտնաբերված Վանի համակարգի սեպաձև արձանագրությունների մասին» (1882–83), «Հետազոտություն հայոց լեզվի բարբառների մասին» (1869, ՍՊբ, Կայսեր. գիտ-ների ակադ-ի տպ.), «Հայոց լեզվի զբաղեցրած տեղը ինդեվրոպական լեզուների շրջանում» (1879) աշխատությունները, կազմել է «Ցուցակ հայ գրականության. IV դ. մինչև XVII դ. կեսը» (ֆրանս., 1860), «Հայոց պատմական գրականության մատենագիտական ակնարկ» (1880), «Նշխարք մատենագրության հայոց» (1884) մատենագիտ. ուսումնասիրությունները:

Գրկ. **Веселовский Н.**, *К. П. Патканов (биографический очерк), СПб, 1890;* **Марр Н.**, *К. П. Патканов, в кн.: Биографический словарь профессоров и преподавателей С. Петербургского университета, т. 2, СПб, 1898, с. 89–97; Русский биографический словарь, т. 13, СПб, 1902;* **Акопян Э.**, *Керопэ Патканян, Е., 1975.*

«ՊԱՏԿԵՐ», կրոն., գիտ., գրական-բանասիր. կիսամսյա հանդես: Կ. Պոլսի հայ կաթոլիկների պատրիարքարանի հրատ.: Լույս է տեսել 1890–99-ին Կ. Պոլսում: Արտոնատեր՝ Հովսեփ Շեհրյան, խմբագիր՝ Ե. Նազարեթյան:

«ՊԱՏԿԵՐ», կինոարվ-ին նվիրված հայ. առաջին պարբ-ը: Լույս է տեսել 1927-ին Կ. Պոլսում: Արտոնատեր՝ Երմոգ Գույումճյան, պատ. տնօրեն՝ Նուպար Խաչատուրյան: 9-րդ համարից միացել է «Անուշապուր» (Կ. Պոլիս, 1926–27) շաբաթաթերթին և, պահպանելով համարակալումը, տպագրվել «Անուշապուր-Պատկեր» անունով (1927–28): Խմբագրապետ՝ Բագարատ *Թևյան*, արտոնատեր և պատ. տնօրեն՝ Երվանդ Պարոնյան:

«ՊԱՏԿԵՐ», գրական, երգիծ., գեղ. շաբաթաթերթ, վերջում՝ կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1931–45-ին Ստամբուլում՝ ընդհատումներով: Խմբագիր՝ Ժիրայր Վարժապետյան, 1932-ից արտոնատեր՝ Երմոգ Գույումճյան, վարիչ-խմբագիր՝ Ավետիս Ալիքսանյան: 1944–45-ին հրատարակվել է որպես ստամբուլահայ նոր գրողների պարբ.: Լուսաբանել է ստամբուլահայ համայնքի կյանքը, անդրադարձել համաշխ. մշակույթին և գիտ-յանը, սոցիալ-հաս. վերափոխումներին: Առաջին տարիների նյութերը հիմնականում նվիրված են կինոյի նորություններին, ժամանակի նշանավոր դերասաններին: Գրական բաժնում տեղ են գտել հայ գրողների և համաշխ. դասականների (Օ. Ուայլդ, Մ. Էրմոնտով, Ս. Ցվայգ և ուր.) ստեղծագործություններ: Ունեցել է նաև գիտ-յան, երգիծանքի բաժիններ:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄ, գրքի, լրագրի, հանդեսի և այլ հրատ-ների տեքստերում տեղադրվող և նրանց լրացնող պատկերներ (գծանկար, փորագրանկար, լուսանկար, քարտեզ, սխեմա ևն), ինչպես նաև գլխազարդեր, վերջազարդեր, սկզբնագրեր, կազմեր, շապիկներ ևն, որոնք նախատեսված են տեքստի պատկերային մեկնաբանման և հրատ-յան ընդհանուր ձևավորման համար:

Ձեռագիր մատյանները պատկերազարդվել են մանրանկարներով (տես ***Մանրանկարչություն***): ***Գրատպության*** և ***փայտափորագրության*** գյուտերից հետո Պ. հիմնականում դարձել է գրաֆիկայի տեսակ: Չինաստանում այն երևան է եկել VI–VII դդ-ում, իսկ XVI դ-ում ստեղծվել է գունավոր փայտափորագրությունը: Ճապոնիայում գրքի գրաֆիկան սկզբնավորվել է XVII դ-ի սկզբին, ծաղկել XVIII դ-ի վերջին–XIX դ-ի սկզբին (Սորոնոբուի, Ուտամարոյի, Հոկուսայի և ուր. Պ-ներում տեքստը խաղում է լրացուցիչ դեր): XV դ-ում սկզբնավորված եվրոպ. փայտափորագիր Պ., ընդօրինակելով մանրանկարչ. արվ-ի եղանակները, դարձել է կարևոր միջոց կրոն., հետագայում՝ հումանիստ. և ռեֆորմացիայի գաղափարների տարածման համար: Սկզբում պատկերները տեքստի հետ փորագրվել են մի տախտակի

Պատկերազարդում



«Ութ մանրանկարիչների Աւետարան»-ի լուսանցազարդով էջ (XIII դ-ի վերջ–1320, գրիչ՝ Ավետիս, ծաղկողներ՝ անհայտ նկարիչներ և Սարգիս Պիծակ, Մատենադարան, ձեռ. № 7651)



«Պատերազմի Աւետարան»-ի գլխա- և լուսանցազարդերով ու սկզբնագրով էջ (1302, ծաղկող՝ Մոմիկ, Մատենադարան, ձեռ. № 6792)

Պատկերազարդում



Տաղարանի (դպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ, 1513, Վնտ.) գլխազարդով և սկզբնագրով (50-րդ) էջ



«Գիրք առաքինութեանց»-ի (Պետրոս Արագոնացի, 1721, Վնտ.) պատկերազարդ (6-րդ) էջ



Շարակնոցի (1736, Կ. Պոլիս) գլխա- և լուսանցազարդերով (12-րդ) էջ

վրա, այնուհետև՝ առանձին-առանձին, և զետեղվել շարվածքում: Վերածննդի նշանավոր պատկերազարդողներից են Ա. Դյուրերը, Հ. Բալդունգ Գրինը, Հ. Հոլբայն Կրտսերը, Լ. Կրանախ Ավագը և ուր.՝ Գերմանիայում, Լ. Լեյդենցին՝ Նիդեռլանդներում, Բ. Ալոմոնը, Ժ. Դյուվենը՝ Ֆրանսիայում, Տիցիանը և ուր.՝ Իտալիայում: XVI դ-ի վերջից Պ-ման մեջ գերիշխել է պղնձափորագրության տեխնիկան: Պ. կատարվել է առանձին թերթի վրա, ներդրվել տեքստում, ճակատանկարը (ֆրոնտիսպիս) նմանեցվել բարոկկո ոճի հաղթակամարի: XVII դ-ում բուռն ծաղկում է ապրել գիտ. գրքի Պ.:

XIX դ-ի վերջում, պատկերների անսահմանափակ վերատպության անհրաժեշտությամբ պայմանավորված, ստեղծվել են Պ-ման տեխնիկայի բազմազան եղանակներ (լուսամեխ. վերատպություն), առաջացել է գիրք ձևավորող նկարչի՝ պատկերազարդողի մասնագիտություն, գրքի գրաֆիկան մերձեցել է պոլիգրաֆիային: Անգլիայում Պ-ման, տպատառի և զարդապատկերի գեղ. միասնության են ձգտել Ու. Մորիսը, Ու. Կրեյնը և ուր.: Գեղազարդիչ նուրբ ոճավորումով աչքի են ընկել «մողեռնի» ազգ. ռոմանտիկ. հոսանքների ոգով ստեղծագործող նկարիչները:

Ռուսաստանում 1920-ական թթ-ին Պ-ման խոշոր վարպետներից են Վ. Ֆավորսկին, Ա.Կրավչենկոն (փայտափորագրություն), Ն. Կուպրեյանովը, Վ. Լեբեդևը (գծանկար), Ա. Ռոդչենկոն (լուսամոնտաժ): Զարգացել է մանկ. գրքի բազմագույն ձևավորումը: 1930-50-ական թթ-ի սկզբի Պ-մանը բնորոշ է պատումի հոգեբ. կողմի ընդգծման, կերպարներին ռեալիստ. հավաստիություն հաղորդելու ձգտումը (Դ. Շմարինով, Ս.Գերասիմով, Կուկրինիկսներ, Ե. Կիբրիկ և ուր.): Պ. մոտեցել է հաստոցային գրաֆիկային:

Հայ գրքի Պ. մինչև XIX դ. հիմնականում հետևել է ձեռագիր մատյանների պատկերների, տիտղոսաթերթերի, գլխազարդերի, սկզբնագրերի մանրանկարչ. համակարգին: Հետագայում Աստվածաշնչի և կրոն. այլ գրքերի Պ-ների համար հաճախ օգտագործվել են հոլանդացի, գերմանացի, իտալացի, ֆրանսիացի վարպետների փորագրություններ: Պ-ման մեծ վարպետ Վ. Սուրենյանցն առաջին անգամ ռոմանտիկ. ոգով պատկերազարդել է հայ ժող. հեքիաթներ («Օձամանուկ և Արևահատ», «Իմաստուն օձը», «Գառնիկ ախպերը» ևն), ինչպես նաև Ա. Պուշկինի պոեմները (նշանակալի է «Բախչիսարայի շատրվանը»), որոնք աչքի են ընկնում գործող անձանց հուզիչ պատկերումով և միջավայրի հավաստիությամբ: Վ. Ախիկյանը պատկերազարդել է «Հասկեր» ամսագիրը, բազմաթիվ գրքեր:

Ռուսաստանում, Թուրքիայում, Եվրոպայի և Ասիայի տարբեր քաղաքներում հայկ. հանդեսների, թերթերի հրատարակումը նպաստել է պարբ. մամուլի Պ-ման արվ-ի զարգացմանը, որին մասնակցել են մի շարք նշանավոր նկարիչներ: Խորհրդ. շրջանում գրքի Պ-ման արվ-ը հասել է իր բարձրակետին Մ. Սարյանի և Հ. Կոջոյանի ստեղծագործություններում: Մ. Սարյանը, պահպանելով բովանդակությունը, իր Պ-ներում (Հ. Թումանյանի «Գիքոր», «Գելը» պատմվածքները, Ֆիրդուսու «Ռուստամ և Սոհրաբ» պոեմը) ի հայտ է բերել հայկ. և այլ մշակույթների գրքարվ-ի խորքը թափանցելու զգացողություն (պարսկ. մանրանկարչության սարյանական տարրերը «Ռուստամ և Սոհրաբ»-ում): Էպիկ-պատմող. հանդիսավորությամբ են ներթափանցված Հ. Կոջոյանի Պ-ները («Հազարան բլբուլ» հեքիաթը, «Սասունցի Դավիթ» էպոսը, Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժող-ը): «Հազարան բլբուլի», «Սասունցի Դավթի» Պ-ները աչքի են ընկնում պատմության հանգուցային դրվագների հեքիաթաէպիկ. վերարտադրությամբ, «Գիրք ճանապարհի» ժող-ինը՝ առանձին բանաստեղծ. շարքերի ներքին տրամադրությունները էպիկ. շնչով ընդհանրացնելու

ուժով, որին նպաստել են նաև երկաթագիր վերնագրերը: Հ. Կոջոյանը զարգացրել է նաև միջնադարյան կենդանագրի ավանդույթը (Վարդան Այգեկցու առակների, հայկ. ժող. հեքիաթների ևնի Պ-ները): 1920–30-ական թթ-ի սկզբին Ե. Չարենցի նախաձեռնությամբ լույս են տեսել հայ գրքարվ-ի փայլուն օրինակներ: Գրքի ձևավորման բնագավառում ստեղծագործել են նաև Տ. Խաչվանքյանը, Մ. Արուտչյանը և ուր.:

1930-ական թթ-ի 2-րդ կեսից մինչև 1950-ական թթ-ի 1-ին կեսը գերիշխել է տեքստի իրապաշտ. պատկերումը հաստոցային գեղանկարչության և գրաֆիկայի տարրերով (Է. Իսաբեկյանի՝ Դ. Դեմիրճյանի «Վարդանանքի», Գ. Խանջյանի՝ Հ. Թումանյանի «Գիքորի» և «Անուշի» Պ-ները): 1950-ական թթ-ի վերջից նկատելի է տեքստի անհատ. մեկնաբանումների միտումը (Գ. Խանջյանի՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի և Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի Պ-ները):

Հայկ. գրքի գրաֆիկան շատ ավելի բազմազան է դարձել 1940–60-ական թթ-ին. Ռ. Բեդրոսովի, Հ. Կոջոյանի, Շ. Հովհաննիսյանի հետ այդ ոլորտում ստեղծագործել են նոր սերնդի նկարիչներ (Հ. Մամյան, Վ. Աբրոյան, Ս. Մուրադյան, Լ. Մանասերյան և ուր.): 1960–70-ական թթ-ին ի հայտ է եկել գրքի համալիր ձևավորման, շարվածքային գրաֆիկայի հետ գեղարվ-ի և «գունագեղության» համադրման միտումը, որն արտացոլվել է Գ. Խանջյանի, Մ. Սոսոյանի, Սփյուռքում՝ Ս. Սարուխանի, Գառզուի, Է. Շահինի, Տ. Պոլադի, Է. Քիրազի և ուր. ձևավորումներում:

1990-ական թթ-ից նկարիչները (Ա. Կիլիկյան, Լ. Աբրահամյան, Գ. Բալայան, Ռ. Մանուկյան, Վ. Վարդանյան և ուր.) մշակել են Պ-ման և ձևավորման նոր արտահայտչամիջոցներ ու մեթոդներ՝ներառելով նաև համակարգչ. գրաֆիկայի հնարավորությունները:

Տես նաև *Գրքի դիզայն*, *Գրքի ձևավորում:*

Գրկ. **Սարգսյան Մ.**, *Սովետական Հայաստանի գրաֆիկան, Ե., 1961:* **Тынянов Ю.**, *Иллюстрации, в его кн.: «Архаисты и новаторы», Л., 1929; Искусство книги, в. 1–6, М., 1960–70;* **Bland D.**, *A History of Book Illustration, Cleveland–N. Y., 1958;* **Lewis V.**, *The Twentieth Century Book, L., 1967.*

Վիգեն Ղազարյան

Պատկերազարդում




Սաղմոսարանի (1800, Կ. Պոլիս) գլխա- և լուսանցազարդերով (3-րդ) էջ


«ՊԱՏԿԵՐՈՒՀՈՅՑ ԳԻՐՔ», մանրանկարչ. արվ-ի ուս. ձեռնարկ միջնադարում: Ղ. Ալիշանը պայմանականորեն «Պ. գ.» է անվանել Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 14.34 ձեռագիրը և 1896-ին հրատարակել *«Բազմավէպ»*-ում: «Պ. գ.»-ի (11 x 14 սմ) 59 թերթից 25-ը մագաղաթ են, 34-ը՝ թուղթ, որոշ թերթեր կորել են, չունի սկիզբ և վերջ: Ձեռագրում XIII–XV դդ-ի հայկ. տարբեր դպրոցների մանրանկարների նմուշներ են: Նկարները դասավորված են ըստ ուսուցման կարգի՝ պարզից բարդ: Սկզբում զետեղված են միայն զարդանկարներ, ապա՝ զարդագրեր, սրբապատկերներ, տերուն. տեսարաններ: Կան նաև գրավոր տեղեկություններ նկարչության, նկարների ձևերի, գունազարդման տեխնիկայի, գույների բաղադրության, լույսի ու ստվերի, ոսկու օգտագործման մասին: Ձեռնարկից օգտվել են մի շարք ծաղկողներ, այդ թվում՝ *Գրիգորիս Աղթամարցին*՝ «Ալեքսանդրի վարքը» պատկերազարդելիս:

Միջնադարյան Հայաստանում «Պ. գ.»-ի նման ուսուցող. բազմաթիվ ձեռնարկներ են եղել [Մատենադարանի 1682–85-ի Ավետարանի (ձեռ. № 3833) ուս. օրինակները ևնի]: Տարբեր ձեռագրերում ցուցումներ կան գրչության արվ-ի, մագաղաթի կամ թղթի մշակման, ներկերի պատրաստման, կազմարարության ևնի մասին:


Գրկ. **Ալիշան Ղ.**, *Պատկերուսոյց գիրք, «Բազմավէպ», 1896, № 7–10:* **Հակոբյան Հ.**, *Կերպարվեստը հայոց կրթարաններում, Ե., 1996:* **Macler F.**, *Documents d'art arméniens, P., 1924;* **Der Nersesian S.**, *Le cornet demodeles d'un miniaturiste arménien, «Armeniaca», 1969, p. 175–183.*



Շարականոցի (1853, Կ. Պոլիս) գլխազարդով (1-ին) էջ



«Պատմաբանասիրական հանդես»,
1958-ից, Երևան (№ 2, 2012)



«Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց»
(1724, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը



«Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նադըր շահ թագաւորին Պարսից»
(1780-83, Մադրաս, Հակոբ Շահամիրյանի անվ. տպ.) գրքի տիտղոսաթերթը

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», հայագիտ. քառամսյա (մինչև 1999-ը՝ եռամսյա) հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1958-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Մկրտիչ ***Ներսիսյան***, խմբագիրներ՝ Վարդգես ***Միքայելյան***, Սարգիս ***Հարությունյան*** (2006-ից), պատ. խմբագիր՝ Անուշավան ***Զաքարյան:*** Տպագրում է գիտ. ուսումնասիրություններ և նյութեր հայոց պատմության, հնագիտ-յան, աղբյուրագիտ-յան, գրակ-յան, լեզվի, փիլ-յան և մշակույթի վերաբերյալ, հոդվածներ և հաղորդագրություններ՝ հայ., ռուս. և անգլ. (ամփոփումներով)՝ նվիրված կովկասագիտ-յանը, Մերձ. Արևելքի պատմությանը, բյուզանդագիտ-յանը ևն:

«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ», մատենաշար: Տպագրվել է Թիֆլիսում և Վաղարշապատում՝ Սուքիաս ***Պարզյանի*** նյութ. օժանդակությամբ: Ի սկզբանե նախատեսված էր հրատարակել հայ հին և նոր պատմագիրների լիակատար ժող.՝ 5 հատորով (յուրաքանչյուրը՝ մի քանի գրքով, շուրջ 50 հեղինակի աշխատություն), սակայն լույս է ընծայվել միայն 3 գիրք՝ Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (1904, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» (1909, նույն տպ.) և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» (1913, հ. 1, նույն տպ., հ. 2, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.):

«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀՈԳՒՈՑ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՆՆՋԵՑԵԼՈՑ», իտալ. եկեղեց. պատմությունների ժող.: Լատ-ից թարգմանել և կազմել է Հովնան Թոխաթեցին: Տպագրվել է 1724-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց եւ հրաշալեացն արբազանութեան: Արտահանեցեալ ի հոգեւոր գրեացն եւ յեկեղեցական պատմութեանց ի տալիականաց, եւ ժողովապէտս ի հայկական բարբառն շարադրեցեալ» (576 էջ, 12º և 6º, 5 x 8,3 սմ):

«ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑՆ ԵՒ ԳՈՐԾՈՑ ՆԱԴՐ ՇԱՀ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ», անգլիացի Հանվեի՝ Նադիր շահի կյանքի մասին պատմող երկը: Անգլ-ից թարգմ.՝ Միրզայան Պողոս Ամիթեցու: Տպագրվել է 1780–83-ին Մադրասում՝ Հակոբ Շահամիրյանի անվ. տպարանում (184 էջ, 4º, 22 x 15,5 սմ):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՑ», ձևավորվել է մ. թ. ա. II–I դդ-ում և համեմատաբար ավարտուն տեսքի բերվել մ. թ. III դ-ում: Վերագրվել է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից Կալիսթենես Ողյունթացուն, նաև Արիստոտելին, Եզոպոսին, Պտղոմեոսին և ուր.: Հետագայում ներկայացվել է Կեղծ-Կալիսթենես պայման. հեղինակի անունով:

«Պ. Ա. Մ.» տարաբնույթ դրվագների բարձրարվ. հյուսվածք է, հռոմուստ հրաշապատում՝ արկածային, պատմ., գրական, վարքագր., հեքիաթային տարրերով: Բաղկացած է Ալեքսանդր Մակեդոնացու ծնունդը, գործը, մահը ներկայացնող 3 գրքից: Երկն իր նախն. տեսքով չի պահպանվել: «Պ. Ա. Մ.» կարճ ժամանակում թափանցել է Արևմուտքի և Արևելքի շատ գրակ-ների մեջ: Ուշագրավ են հայ., ասոր., ղպտ., եթովպ. հնագույն թարգմանությունները, Հուլիոս Վալերիոսի լատ. խմբագրությունը (IV դ.): Համանման վեպեր ի հայտ են եկել նաև Անգլիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Իտալիայում, ասպետ. վեպի նմանությամբ տարածվել են սերբ., ռուս., չեխ. «Ալեքսանդրիաները»:

«Պ. Ա. Մ.» հայ. աշխարհիկ առաջին թարգմանությունն է, որի հավանական հեղինակը Մովսես Խորենացին է: Հայ. թարգմանության մեջ «Պ. Ա. Մ.»-ի շատ կարևոր հատվածներ ավելի լավ են պահպանվել, քան լատ-ում, ուստի հայ-ը, լատ-ի ու ասոր-ի հետ բաղդատվելով, հնարավորություն է ընձեռում համեմատելով վերահսկել բնագիրը և հնարավորինս վերականգնել հուն. բնագրերում պակասող կամ աղ-

ճատված մասերը (ըստ Հ. Հյուբշմանի, Կ. Պետերմանի, Կ. Մյուլլերի, Յ. Զախերի, Թ. Ռումելդի, Ա. Բաումհարդների, Տ. Կուզնեցովայի և ուր.): Այժմ հայտնի է շուրջ 80 ձեռագիր, որոնք պահվում են Մատենադարանում (ինագույնը՝ № 10151, XIII դ.) և այլուր: V դ–ի նախն. խմբագրման շրջանից (բնագիրն ընդհանուր գծերով հավատարիմ է հուն. նախաբնագրին և դեռևս չի տեղայնացվել) հետո՝ ընդարձակ խմբագրության շրջանում (XIV–XVI դդ.), «Պ. Ա. Մ.»–ի հայ. թարգմանությունն ստեղծագործաբար վերաիմաստավորվել է ժամանակի ազգ–հաս. խնդիրներին համապատասխան, լրացվել արձակ հավելադրություններով. նրա դրվագներին ներհյուսվել են շուրջ 400 ընդմիջող երգեր՝ կաֆաներ: «Պ. Ա. Մ.»–ի հայկականացմանը և ժողովրդականացմանը մեծապես նպաստել են Գրիկը և Խաչատուր Կեչառեցին (XIII–XIV դդ.), Գրիգորիս Աղթամարցին, Հովասափ Սեբաստացին ու Զաքարիա Գնունեցին (XVI դ.) և ուր.: Առանձնապես արժեքավոր են Գրիգորիս Աղթամարցու և Զաքարիա Գնունեցու «Պ. Ա. Մ.»–ի ինքնագիր օրինակները՝ հեղինակային կաֆաներով ու նկարազարդումներով: «Պ. Ա. Մ.» տարածվել է ժողովրդի մեջ՝ անկախ զրույցների ու ավանդությունների ձևով: Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին, Ստեփանոս Ասողիկը ժամանակին օգտագործել են այն, իսկ միջնադարի մանրանկարիչները նկարազարդել, որով սկզբնավորվել է հայ աշխարհիկ մանրանկարչությունը:

«Պ. Ա. Մ.»–ի հայ. թարգմանությունը (10 ձեռագրերի հիման վրա)՝ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» խորագրով առաջին անգամ տպագրվել է 1842–ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Լույս է տեսել նաև 1987–ին Երևանում (թարգմ.՝ Ա. Սարգսյանի և Ռ. Մավիսակալյանի):

Գրկ. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, թրգմ.՝ Գ. Պատկանյանի, Ատրպատական, 1827: Տաշեան Յ., *Ուսումնասիրութիւնք Սրբոյն Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի, Վնն., 1892: Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, աշխատասիր.՝ Հ. Սիմոնյանի, Ե., 1989:*

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԷԼԱՄԱՔԻ ՈՐԴՒՈՅ ՅՈՒԼԻՍԻ», արք. Ֆրանչեսկո Ֆենելոնի երկհատոր գիրքը՝ Ֆրանսիայի արքայազն Տելեմաքի մասին: Իտալ–ից և ֆրանս–ից թարգմ.՝ Սարգար Երևանցու: Առաջին անգամ տպագրվել է 1793–ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում (Ա և Բ հատորները՝ 1 գրքով, 371 էջ, 4º, 21 x 13,5 սմ):

Վերահրատարակվել է նույն տպարանում՝ առանձին–առանձին. 1794–ին՝ Ա հատորը (264 էջ, 4º, 16,3 x 11 սմ), 1795–ին՝ Բ հատորը (259 էջ, 4º, 16,3 x 11 սմ):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ», Թովմա Ագուլեցու չափածո երկը՝ նվիրված Թովմա առաքյալին: Տպագրվել է 1734–ին (՞) Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում (80 էջ, 8º, 13,7 x 7,8 սմ):


«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՅՍԵՐՆ ՓՈՆՑԻԱՆՈՍԻ», Փոնցիանոս կայսեր պատմությունը՝ շարադրված առակներով: Առաջին անգամ տպագրվել է 1696–ին Լիվոռնոյում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի, եւ կնոջն, եւ որդւոյն Դիոկղետիանոսի...» (184 էջ, 8º, 12,3 x 7,3 սմ):

Տպագրվել է նաև՝

Կ. Պոլսում 1721–ին՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (288 էջ, 8º, 11,2 x 7,7 սմ), 1740–ին՝ առանց տպարանի հիշատակության (328 էջ, 8º, 11 x 7 սմ), 1792–ին՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (328 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ), 1796–ին՝ առանց տպարանի հիշատակության (328 էջ):

Սադրասում 1790–ին՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում (382 էջ, 8º, 12,7 x 8 սմ):

Լույս է տեսել նաև 1803–ին (ԿՊ, ա. տպ.), 1804–ին (ԿՊ, Արապյան տպ.), 1857–ին (Թ., Ներսիսյան դպրոցի տպ.):




«Պատմութիւն Թէլամաքի որդւոյ Յուլիսի» *(Ֆրանչեսկո Ֆենելոն, 1795, Նոր Նախիջևան) գրքի փիփղոսաթերթը*




«Պատմութիւն Թովմայի առաքելոյն» *(Թովմա Ագուլեցի, 1734, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը*



«Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի» *(1721, Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.) գրքի փիփղոսաթերթը*



«Պատմութիւն կենաց, մարտիրոսութեան եւ սքանչելեաց Սրբոյն Գրիգորի» *(Անտոն Մարիա Բռնուկկի, 1737, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«Պատմութիւն ճէնկիզ խանի» *(Բեթիսե Տելլա Քռոչե, 1788, Տրիեստ) գրքի փիփղոսաթերթը*



«Պատմութիւն Մարիանէ կուսին» *(1789, Մադրաս, Հարություն Շմավոնյան Շիրազեցու պպ.) գրքի պատկերազարդ (2-րդ) էջ*

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ, ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԵԱՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ», հիսուսյան քարոզիչ Անտոն Մարիա Բռնուկկիի երկը՝ նվիրված Գրիգոր Լուսավորչի կյանքին ու գործունեությանը: Տպագրվել է 1737-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (239 էջ, 8º, 12,5 x 6,5 սմ):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՃԷՆԿԻԶ ԽԱՆԻ», ֆրանս. արքայատան թարգմանիչ Բեթիսե Տելլա Քռոչեի 4 մասից բաղկացած պատմագր. երկը՝ Չինգիզ խանի մասին: Տպագրվել է 1788-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Թարգմ.՝ Մարգար Շահրիմանյանի: Տիտղթ-ին՝ «Պատմութիւն մեծին ՃէՆկիզ խանի առաջին կայսեր նախնի մղուլաց եւ թաթարաց...» (547 էջ, 8º, 13 x 6,7 սմ):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԱՆԷ ԿՈՒՍԻՆ», Մարիամ Աստվածածնի մասին վկայաբանական երկ: Առաջին անգամ տպագրվել է 1766-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Հակոբի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրգուկ վկայաբանութիւն սրբոյն Մարիանէ կուսի...» (128 էջ, 8º, 7,2 x 5,5 սմ): Վերահրատարակվել է 1789-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում (53 էջ, 8º, 10,5 x 7 սմ):

Տպագրվել է նաև առանց տպագրության վայրի, թվականի և տպարանի հիշատակության (48 էջ, 8º, 11,5 x 7 սմ): Ըստ տպագր. առանձնահատկությունների՝ Կ. Պոլսի հրատ. է:

Լույս է տեսել նաև 1827-ին (ԿՊ, Արապյան տպ.):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵՂՈՒԱՑ», ֆրանսիացի բնագետներ Պյուֆոնի և Պոմարի երկը: Ֆրանս-ից թարգմ.՝ Խոճամալ Սաֆարի: Տպագրվել է 1796-ին (՞) Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Համառօտ պատմութիւն մեղուաց. արտահանեալ ի բնազննական պատմութենէ Մօնսիւ Պիւֆոնի եւ Մօնսիւ Պօմարի քաջ բնազննաց գաղղիացւոց»:

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊՂՆՁԷ ՔԱՂԱՔԻՆ», արաբ. հեքիաթ, որի բնագիրը պահպանվել է «Հազար ու մի գիշեր» միջնադարյան գրական երկում:

«Պ. Պ. ք.»-ի պահպանված ձեռագրերից 32-ը (XVI–XIX դդ.) Մատենադարանում են, 5-ը՝ Փարիզի ազգ. գրադարանում, 2-ը (XVII–XVIII դդ.)՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարանում, 1-ը՝ Հռոմի Սբ Վլասի հայոց հյուրանոցի գրադարանում:

«Պ. Պ. ք.»-ի հայ. առաջին համառոտ թարգմանությունը կատարվել է X դ-ի վերջին Տայոց գավառում՝ Դավիթ Կյուրապաղատի պատվերով («Ի խնդրոյ կամ ի հաճոյս»), նրա պատվերով թարգմանվել են նաև Մանկան և աղջկա, Ֆարման մանուկի պատմությունները (հայտնաբերել և 1958-ին միասին հրատարակել է Ներսես *Ակինյանը*՝ «Զրուց եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն զոր թարգմանեցին Դաւիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ» վերնագրով): «Պատմութիւն...»-ը ավելի ուշ թարգմանել է նաև Առաքել Անեցին (Շիրակավանեցի) 1222-ին, Գրիգորիս Աղթամարցին՝ XVI դ-ում. վերջինս այն հարստացրել է կաֆաներով ու բանաստեղծ. հնարքներով:

Առաջին անգամ տպագրվել է 1708-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք պատմութեան վասն Պղնձէ քաղաքին. եւ հարցմունք աղջկանն եւ մանկանն. եւ պատմութիւն Խիկարայ եւ Փառիլոյ թագաւորին, եւ այլն. որ է օրինակ աշխարհիս....» (168 էջ, 8օ, 11,7 x 7 սմ):

Տպագրվել է նաև՝

1709-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (148 էջ, 8º, 12 x 7 սմ): 1721-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (176 էջ, 8º): 1731-ին նույն տպարանում (272 էջ, 8º, 12 x 7 սմ): 1749-ին Կ. Պոլսում՝ Ջնջին Հովհաննեսի տպարանում (224 էջ, 8º, 12,2 x 7,6 սմ): 1757-ին Կ. Պոլսում՝ Սարտիրոս Սարգսյանի տպարանում (224 էջ, 8º, 12,3 x 7,5 սմ): 1792-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (224 էջ, 8º, 13 x 8 սմ):

Լույս է տեսել նաև 1834 և 1850-ին (ԿՊ, Արապյան տպ.), 1857-ին (Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), 1911-ին (Թ., «Էսպերանտո» տպ.):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ», հարց ու պատասխանի ձևով պատրաստված դասագիրք՝ մանուկների համար: Ռուս-ից թարգմ.՝ Հարություն Դավթյանի: Տպագրվել է 1785-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում՝ Հովսեփ արք. *Արղությանի* պատվերով: Տիտղթ-ին՝ «Պատմութիւն Սուրբ Գրոց: Արարեալ համառօտ հարցմամբք եւ պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց» (68 էջ, 4º, 11,7 x 7,2 սմ):

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ԸՆԴ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ», Հովսեպոս Փլաբիոս Երրայեցու երկը: Լատ-ից թարգմ.՝ Ստեփանոս Լեհացու: Տպագրվել է 1787-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում: Ա. տիտղթ-ին՝ «Գիրք պատմութեանց Յովսեպոսի Երրայեցւոյ արարեալ յաղագս պատերազմի հրէից ընդ հռովմայեցիս եւ աւերման Երուսաղէմի...», Բ-ին՝ «Պատմագիրք արարեալ Յովսեպոսի Երրաեցւոյ...» (496 էջ, 4º, 18,9 x 13,4 սմ):

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ», հայագիտ. կիսամսյա հանդես: ԵՊՀ հրատարակություն: Լույս է տեսնում 2010-ից (առաջին պր.՝ 2005-ին՝ «Տարեգիրք») Երևանում: Գլխ. խմբագիր՝ Էդիկ Մինասյան, պատ. խմբագիր՝ Հակոբ *Պետրոսյան:* Լուսաբանում է ՀՀ բուհերի հայագիտ-յան բնագավառում կատարված աշխատանքները, տպագրում է հոդվածներ, հաղորդումներ, պատմ. ակնարկներ, հուշագրություններ, գրախոսություններ, Հայաստանի և հարակից երկրների պատմությանը, համաշխ. պատմության չլուսաբանված հարցերին վերաբերող սկզբնաղբյուրներ, գրքաշուկայի նորությունները են: Նյութերը տպագրվում են հայ., ռուս., անգլ. (ամփոփումներով):

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ», «Պատմութիւն Հայոց», *Մովսես Խորենացու* գլխ. երկը: Սկսել է գրել 470-ական թթ-ի վերջին՝ իշխան Սահակ Բագրատունու պատվերով. ավարտել է 482-ից առաջ՝ մինչև իշխանի մահը: Բաղկացած է 3 գրքից: Առաջինում հայ ժողովրդի ծննդաբանությունն է. քննության է առել հայոց անվանադիր նախնի Հայկ Նահապետի ու նրա սերունդների (Արամ, Արամանյակ, Արա և ուր.) գործունեությունը: Երկրորդը նվիրված է Արշակունյաց արքայատոհմի պատմությանը և ավարտվում է Հայաստանում քրիստոնեությունը պետ. կրոն հռչակելու իրադարձությունների նկարագրությամբ: Երրորդում շարադրված է Տրդատ Գ Մեծի հաջորդների, Պարսկաստանի ու Հռոմի միջև Հայաստանի առաջին բաժանման (387), Արշակունյաց թագավորության անկման (428) պատմությունը: Խորենացին իր մատյանն ավարտել է «Ողբով»՝ ներկայացնելով թագավոր. տան կործանումը, երկրի թշվառությունն ու իր հոգեկան տառապանքը:

«Պ. Հ.» Հին Հայաստանի պատմության եզակի և ստուգապատում սկզբնաղբյուր է. մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայկ. հեթանոս. կրոնի, մշակույթի ու դիցարանի, Հայաստանի քաղ., տնտ., մշակութ. և հաս. կյանքի, ինչպես նաև հարևան ու հեռավոր երկրների պատմությունների վերաբերյալ:

Մատենագր. օտար սկզբնաղբյուրներից հիշատակվում են Աստվածաշունչը, Հոմերոսի, Հերոդոտոսի, Մանեթոնի, Հովսեպոս Փլավիոսի, Եվսեբիոս Կեսարացու և ուր. երկեր: Նախամաշտոցյան սկզբնաղբյուրներից են *Մար Աբաս Կատինայի* (մ. թ. ա. II դ.) մատյանը, «Մեհենական պատմությունները» [հեղինակները, ըստ Խորենացու, Արամազդի տաճարի քուրմ Ողյումպը (I–II դդ.) և ասորի գրող (հավանաբար՝ ծագումով հայ) Բարդածան Եդեսացին (III դ.) են], ինչպես նաև «Հյուսումն պիտոյից» երկը (Խորենացին հեղինակին չի հիշատակում): Հայ. մատենագր. աղբյուրները *Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի* երկերն են, վավերագրականները՝ *Գահնամակը* և Հայաստանում հայտնաբերված այլալեզու վիմագրությունները: Բանավոր



«Պատմութիւն Պղնձէ քաղաքին» *(1911, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*




«Պատմութիւնք յաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս» *(Հովսեպոս Փլաբիոս, 1787, Էջմիածին) գրքի գլխա- և լուսանցազարդերով (13-րդ) էջ*



«Պատմություն և մշակույթ», *2010-ից, Երևան (պր. Ա, 2010)*

«Պատմություն Հայոց»



1695 (Ամստերդամ), գլխազարդով և սկզբնագրով (13-րդ) էջ



1961 (Ե., Հայպետհրատ), փիփղոսաթերթը



Առաքել Պատրիկի *«Հայկական փարագ» (1967, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

աղբյուրները ժող. երգիչներից՝ գուսաններից գրառած հայ բանահյուսության նմուշներ են՝ վիպասանների ու թվելյաց երգեր, գրույցներ (օր.՝ ***«Վահագնի ծնունդը», «Արտաշես և Սաթենիկ», «Արտավազդ», «Տիգրան և Աժդահակ»***), պատմաավանդ. ստեղծագործություններ, նախարար. տոհմերի ծագման շուրջ հյուսված ասքեր ևն: Նյութ. սկզբնաղբյուրները Մովսես Խորենացու նկարագրած քաղաքներն ու բնակավայրերն են, լեզվ. աղբյուրները՝ անձնանունները, տեղանունները, տոհմանունները, որոնք հեղինակն ստուգաբանել ու մեկնաբանել է պատմ. իրադարձությունների տեսանկյունից:

Երկի հնագույն ընդօրինակություններից մեզ են հասել 50 ամբողջ. ձեռագրեր, որոնցից 30-ը պահվում են Մատենադարանում:

«Պ. Հ.» առաջին անգամ տպագրվել է 1695-ին Ամստերդամում՝ Թովմաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան...» (499 էջ, 8^0, 12 x 6 սմ):

Թարգմանվել է լատ. և հայ-ի հետ զուգադիր հրատարակվել է 1736-ին Լոնդոնում՝ Կարոլի Ակքերսի տպարանում, տպագրությունը՝ Վիստոն եղբայրների: Տիտղթ-ին՝ «Մովսիսի Խորենացւոի Պատմութիւն եւ Աշխարհագրութիւն: Mosis Chorenensis historiae Armeniacae Libri III Accedit ejusdem Scriptoris Epitome Geocraphiae...» (438 էջ, 4^o, 18,6 x 13,6 սմ): Տիտղթ-ից առաջ քարտեզ՝ Armenia Major:

Տպագրվել է նաև 1752-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում՝ Սարգիս վրդ. Կոստանդնուպոլսեցու երկասիրությամբ: Տպակից է Մովսես Խորենացու «Համառօտ պատմութիւն աշխարհագրութեան» գրքին: Տիտղթ-ին՝ «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան» (528 էջ, 12^o, 11,2 x 6 սմ):

1801-ից հետո «Պ. Հ.» հրատարկվել է Վենետիկում՝ 1827, 1849, 1881-ին (Սբ Ղազարի տպ.՝ «Ընտիր մատենագիրք» մատենաշարով), Թիֆլիսում՝ 1881 (Հովհաննես Սարտիրոսյանի տպ.) և 1913-ին (բաղդադ. բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի, Մ. Աբեղյանի, Ս. Հարությունյանի և ուր., «Պատմագիրք Հայոց» մատենաշար, Մնացական Սարտիրոսյանի տպ.): Առաջին անգամ աշխարհաբարի է փոխադրել և հրատարակել Խորեն ***Ստեփանեն*** (1889, ՍՊբ, Ի. Սկորոխոդովի տպ.): Աշխարհաբար նոր և գիտ. փոխադրությամբ հրատարակել է Ստեփան ***Մալխասյանցը*** [Ե., 1940, վերահրտ.՝ 1961, 1968, 1981, 1990 (երկի ստեղծման 1500-ամյակի առթիվ), 1997, 2014]: Թարգմանվել է նաև ռուս. (1809, 1858), իտալ. (1841, 1850), ֆրանս. (1841–69, թարգմ.՝ Պ. Ե. Լը Վայյան ***Ֆլորիվալի***), գերմ. (մասնակի, 1869), անգլ. (1979) և այլ լեզուներով: Վերահրատարակվել է բազմիցս:

1991-ին նշվել է «Պ. Հ.»-ի 1500-ամյակը, միջազգ. գիտաժողովներ են տեղի ունեցել Երևանում, Փարիզում, Նյու Յորքում:

Գրկ. Տես Մովսես Խորենացի հոդվածի գրականությունը:

ՊԱՏՐԻԿ (Պատրիարքյան) Առաքել Նշանի (28.11.1894, Սեբաստիա–17.11.1984, Երևան), ազգագրագետ, նկարիչ: Սեբաստիայի դպրոցում աշակերտել է Դանիել ***Վարուժանին:*** Եվդոկիայում շրջակա 5 գյուղերի համար հիմնադրել է կենտր. դպրոց (1912–13): 1920-ին Միլանում հետևել է Լեոնարդո դա Վինչիի անվ. գեղ., 1924-ին Փարիզում՝ Գրանդ-Շոմիեր ակադ-ների դասընթացներին: 1947-ին հայրենադարձել է: Աշխատել է ՀՊՊԹ-ում՝ որպես նկարիչ:

Լույս են տեսել Պ-ի «Հայկական տարազ» (1967, 2-րդ հրտ.՝ 1983), «Պատմագիրք-յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան» (հ. 1, 2, 1974, 1983), «Ուրհայի ասեղնագործությունը» (կազմ. և տեքստը՝ Պ-ի, 1985) աշխատությունները, «Դանիել Վարուժանն իմ հուշերում» (1965, 1968) հուշագրությունը, «Սայաթ-Նովա» պիեսը (1942, գրական մրց., Կաիրե), «Արծուիկը» (1968, ԹՄՄ մրց., Բեյրութ) հուշավեպը,, «Կոմիտասյան դրաման» (1986) փաստագր. վիպակը: Կազմել է XIX–XX դդ-ի հայկ. տարազի գունավոր քարտեզը (1964, ՀՊՊԹ): Հեղինակ է նաև «Հայկական խաչքարերի արվեստը» ուսումնասիրության (անտիպ):

ՊԱՐԱԳՐԱՖ (< հուն. paragrapho – վերագրում, միացում), գրքի գլխի կամ առանձին հոդվածի տեքստի ներքին բաժանում, ինքնուրույն նշանակություն ունեցող հատված: Նշանակվում է հատուկ նշանով՝ §, և համարակալվում:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, լրագրեր, ամսագրեր և այլ հրատ-ներ, որոնք թողարկվում են պարբերաբար՝ սահմանված որոշակի ժամանակահատվածում (ամենօրյա, շաբաթական, երկշաբաթյա, ամսական, եռամսյա, կիսամսյա ևն, վերջին շրջանում՝ նաև էլեկտրո-նային)՝ նույն վերնագրով՝ հաջորդական աճող համարներով: Պ. մ-ի տեսակներ են թերթերը, հանդեսները, պարբ. հրատ-ներ՝ տարեգրքե-րը, օրացույցները ևն:

Պ. մ-ի առաջին օրինակները լույս են տեսել Եվրոպայում XVI դ-ի վերջերին–XVII դ-ի սկզբներին:

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ, **աբզաց** (գերմ.՝ Absatz – կարմիր տող, բա-ռացի՝ նահանջ), տեքստի՝ մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած կապակցված հատված, որն առանձնանում է բովանդա-կության հարաբերական ավարտվածությամբ: Տեքստի շարակարգ-ման ամենափոքր միավորն է:

Պ. գրաֆիկորեն առանձնացվում է նոր տողով (1–2 բոլորակ ներ-սաշարով) և, որպես կանոն, վերջանում ոչ լրիվ վերջնատողով: «Աբ-զաց» բառն օգտագործվում է նաև 1-ին տողի նահանջի իմաստով:

Կան նաև հրատ-ներ, որտեղ Պ. սկսվում է առանց նահանջի և վերջանում ոչ լրիվ վերջնատողով (կոչվում է անպարբերություն շարվածք), կամ բոլոր հաջորդ տողերն են ունենում ձախակողմյան նահանջ (հակադարձ Պ-ով շարվածք):


ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ, **տոմար, տոնացույց, տարեցույց, օրացույց,** եկեղեց. տոնացույցի պարզ ու համառոտ ձեռնարկ: Հայկ. ձեռագրե-րում հանդիպում են 2 ձևի Պ-ներ՝ աղյուսակային և պարզ, արձակ շարադրանքով: Այն գործն. նշանակություն ունեցող, երբեմն էլ անտիապաշտությանն առնչվող աշխարհիկ բնույթի նյութերի ժող. է, որի խորագիրը պայմանավորված է գրքի սկզբում զետեղված տո-նացույցի անվանումով:

Առաջին Պ. տպագրել է ***Հակոբ Մեղապարտը*** 1513-ին Վենետի-կում: Տիտղթ-ին՝ «այս է պարզ այտումար հայոց»: Տոնացույցից բացի՝ Պ-ում կան նաև եղանակի փոփոխությունների, բերքատվության, երկրաշարժերի և հիվանդությունների գուշակություններ, երազա-հան, մարմնախաղաց: Բաղկացած է 8 մամուլից, վերջին մամուլը՝ 3 թերթից, համարակալված են միայն մամուլները և յուրաքանչյուր մամուլի առաջին 3 թերթերը, ընդամենը՝ 59 թերթ (118 էջ, 8º, 11 x 6,5 սմ): Պ. ունի 2 զարդ՝ Է մամուլի 8-րդ էջում՝ կարմիր, և 10-րդում՝ սև, նաև զարդագրեր: Բնագրի վերջում տպարանանիշն է, հիշագրեր չունի, տպագրությունը՝ երկգույն՝ Ուրբաթագրքի տառերով:


Պահպանվել է Հակոբ Մեղապարտի տպագրած Պ-ի 9 օրինակ. 2-ը՝ Վիեննայի Մխիթարյան, 1-ը՝ Երուսաղեմի մատենադարաններում են, 1-ը՝ ՀԱԳ-ում, 1-ը՝ ՀՊՊԹ-ում, 1-ը՝ Մյունխենի պետ., 1-ը՝ Օքսֆոր-դի համալսարանի Բոդլեյան գրադարաններում:

Երկրորդ անգամ տպագրել է ***Աբգար Դպիր Թոխաթեցին*** 1565-ին Վենետիկում: Ճակատին՝ «Խառնայ. փնթուր տումարի. գեղեցիկ եւ պիտանի»: Տպագրված է մեկ թերթի վրա (56 x 46 սմ): Էջը զարդար-ված է 2 պատկերով. մեկում Հռոմի Պիոս 4-րդ պապը 3 կարդինալ-ների՝ Բոռոմեոսի, Մերանոսի ու Ամալիոսի և եպս. Աղեքսանդրի ներ-կայությամբ (անունները տպագրված են լատ.) ընդունում է Աբգարին և նրա որդուն՝ Սուլթանշահին, որոնք տպագրության թույլտվություն են խնդրում: Նշված է նաև նկարի փորագրության թվականը՝ 1565: Մյուս պատկերում Վենետիկի դոժը՝ «Երելեմոն թուճը», ընդունում

Պարզատումար




1513 (Վնտ., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ), 3-րդ էջը




1673 (Մարսել, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի), փրփղոսա-թերթը

Պարզատումար



1695 (Վնտ.), գլխազարդով և սկզբնագրով (6-րդ) էջ



1714 (Ամստերդամ, Ղուկաս Վանանդեցու տպ.), տիտղոսաթերթը

է Աբգարին՝ խորհրդականների ներկայությամբ: Պ. ունի զարդեր և զարդագրեր, գեղեցիկ են Խ, Հ, Թ զարդագրերը: Էջը շրջափակված է գծազարդով: Տպագրությունն Աբգարի Սաղմոսարանի տառերով է: Վերնագրի տակ տոմար. բացատրություն է՝ տարվա օրերի և Լուսնի մասին: Ունի նաև աղյուսակ, որի տակ նույնպես կան տոմար. բացատրություններ, և հիշատակարան՝ էջի ներքևի ձախակողմյան լուսանցքում: Այս օրացույցից հայտնի է միայն 1 օրինակ, որը 1910-ին հայտնաբերել է Միլանի Ամբրոսյան մատենադարանի վարիչ Դ. Ա. Ռատտին:

Պ. տպագրվել է նաև՝

1568-ին Կ. Պոլսում՝ Աբգար Դպիր Թոխաթեցու տպարանում (208 էջ, 8º, 14 x 10 սմ):

1584-ին Հռոմում՝ Դոմինիցի Բազաեի տպարանում՝ Հովհաննես Տերզնցու և Սուլթանշահի աշխատասիրությամբ: Տիտղթ-ին՝ «Տօմար Գրիգորիեանն յաւիտենական որ եղ եւ իշխանութեամբ...» (111 էջ, 17 x 11 սմ):

1647-ին Նոր Ջուղայում՝ Սբ Ամենափրկիչ վանքի տպարանում: Տպագրիչ՝ Հովհաննես Ջուղայեցի: Տիտղթ-ին՝ «Գիրք տումարաց որ եւ Պարզատումար կոչի...» (84 էջ, 9 x 6,2 սմ):

1668-ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Տօմարաց գիրք: Հայոց Հռոմայեցւոց և Պարզատօմար...» (296 էջ, 8º, 9,5 x 5,8 սմ):

1668-ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ նույնը (238 էջ, 8º): Այս հրատ-ը նույն թվականի Ամստերդամի նախորդ տպագրությունից տարբերվում է էջերի քանակով, շարվածքով և զարդերով:

1669-ին Ամստերդամում (2 անգամ): Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Տօնացոյց տէրունական տօնից...» (273 էջ, 12º, 9,8 x 6 սմ):

1671–72-ին Լիվոռնոյում՝ առանց տպարանի հիշատակության: Թարգմ.՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու: Տիտղթ-ին՝ «Տարեցոյց Գրիգորեան...» (263 էջ, 8º):

1673-ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Գրկուկ կարեւոր հանապազորդէան...» (80 էջ, 8º): 1676-ին նույն տպարանում (96 էջ, 8º, 7,4 x 5 սմ): 1677 (՞)-ին նույն տպարանում: Տպագրիչ՝ Սողոմոն Լևոնյան (96 էջ, 8º, 7,9 x 5,5 սմ):

1678-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում: 1685-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք տօմարաց: Հայոց, Ազարիայի, եւ հռոմայեցւոց. ընդ որս եւ Պարզատօմար, լուսնացոյ...» (237 էջ, 8º, 8 x 5,5 սմ):

1688-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Տօմարաց գիրք: Հայոց, հռոմայեցւոց եւ Պարզատօմար...»:

1695-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տպակից է Սաղմոսարանի (78 էջ, 12,5 x 7,5 սմ): 1696-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Տօմարաց գիրք: Հայոց հռոմայեցւոց եւ Պարզատօմար...» (336 էջ, 8º, 8,7 x 6 սմ):

1699-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ նույնը (288 էջ, 8º):

1701–02-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Տօնացոյց եւ Աւետարանացոյց...» (392 էջ, 8º, 11,3 x 6,8 սմ):

1701 (՞)-ին Լիվոռնոյում (՞)՝ «Պարզատումար հռոմէական»: Հավանաբար Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում:

1702-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Տօմարաց գիրք: Հայոց, հռոմայեցւոց եւ Պարզատօմար...» (276 էջ, 8º):

1703 (՞)-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում՝ առանց տպագրության թվականի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Տօնացոյց տէրունական տօնից...» (288 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ):

1707–08-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Տօմարաց գիրք: Հայոց, հռոմայեցւոց, եւ Լուսնացոյց եւ Պարզատօմար...» (352 էջ, 11 x 8 սմ): 1709-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրգուկ կարեւոր հանապազորդեան...» (148 էջ, 8º):

1714-ին Ամստերդամում՝ Ղուկաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Պարզատօմար ի վերայ Ազարիայի ամսոցն կարգեալ...» (79 էջ, 8º, 9,5 x 6 սմ):

1718-ին Կ. Պոլսում՝ «Ի թաղն Պեկօղլի» տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք տօմարաց: Հայոց, հռոմայեցւոց եւ Պարզատօմար...» (272 էջ, 8º):

1720-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ «Աստուած բարերար. քո անբաւ կարողութեամբդ...» (408 էջ, 8º, 12,4 x 7 սմ):

1721–ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք Տօմարաց: Հայոց, հռօմայեցւոց եւ Պարզատօմար…» (264 էջ, 8º):

1722–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց եւ Աւետարանացոյց...» (360 էջ, 8º, 12,8 x 7,8 սմ): 1725–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց եւ Աւետարանացոյց…» (384 էջ, 8º, 12,3 x 7,5 սմ):

1725–26–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք տօմարաց: Հայոց, հռօմայեցւոց եւ Պարզատօմար...» (304 էջ, 8º, 12,3 x 7,4 սմ):

1735–ին Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակիացու տպարանում: Տիտղթ–ն ընկած է (308 էջ, 8º, 12 x 7 սմ): 1738–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք տօմարաց: Հայոց եւ հռօմայեցւոց…» (446 էջ, 8º, 8,7 x 5,8 սմ):

1740–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տպակից է Ղուկաս Վանանդեցու «Ի զգրօսանս Հայկազունեաց» երկին: Տիտղթ–ին՝ «Բուն տօմար Հայոց եւ հռօմայեցւոց: Նաև Պարզատօմար...» (414 էջ, 8º, 12,2 x 7,4 սմ): 1740–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց եւ Աւետարանացոյց...» (465 էջ, 8º, 12,8 x 7,5 սմ):

1748–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Բաղկացած է 3 գրքից. Ա–ի տիտղթ–ին՝ «Նախ. պարունակի աստ շրջանն մշտնջենաւոր՝ տարեկան զեկուցմանց...», Բ–ին՝ «Տօմար կարճառօտ այսինքն: Համառօտութիւն հնոյ Տօմարին...», Գ–ին՝ «Համառօտ գրգռուկ իմն: Վասն նախասահմանութեան, զոր արար ըստ խնդրոյ ոմանց բանասիրաց...» (216 էջ, 12º, 11 x 6 սմ):

1756–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Տպակից է Ղուկաս Վանանդեցու «Ի զբօսանս Հայկազունեաց» երկին (417 էջ, 16º, 12,4 x 7,4 սմ):

1758–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Կազմող՝ Հակոբոս Չամչյան: Տիտղթ–ին՝ «Օրացոյց վասն առաջիկայ ամի տեառն 1758 ին. եւ Հայոց թուականին ՌՄԷ ին...» (36 էջ): Հ. Չամչյանի կազմած Պ. վերահրատարակվել է Վենետիկում՝ նույն տպարանում 1759–ին (44 էջ), 1760–ին, 1761–ին (երկուսն էլ՝ 48 էջ), 1762–ին, 1763–ին (երկուսն էլ՝ 47 էջ), 1767–73–ին (յոթն էլ՝ 46 էջ), ինչպես նաև 1764–ին՝ Ֆրանչիսկոս Ստեփանյանի տպարանում (48 էջ), Ստեֆանո Օռլանդոյի տպարանում 1765–ին և 1766–ին, Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում՝ 1774–ին (երեքն էլ՝ 46 էջ), 1775–ին և 1776–ին (երկուսն էլ՝ 47 էջ), 1777–ին՝ առանց տպարանի հիշատակության:

1760–ին Կ. Պոլսումառանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Վասն առաջակայ տարւոյս. յորում է թուական Փրկչին մերոյ 1761…»:

1760–ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Բուն տօմար Հայոց...» (124 էջ, 8º, 12, 2 x 7,5 սմ):

1774–75–ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում՝ 2 հատորով: Կազմ. և լրց.՝ Սիմեոն Երևանցու: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց: Նախապէս կարգեալ եւ սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի…» (564 էջ, 8º, 12,3 x 7 սմ, 327–ից՝ հ. 2):

1776–ին Կ. Պոլսում՝ Բարսեղ Սեբաստացու տպարանում: Կազմող՝ Սատթեոս Դպիր Պալատեցի: Տիտղթ–ին՝«Տետրակ Տօնացուցի, որ ցուցանէ զՏօնս, զՊահս եւ զԿիւրակէս...»: Վերահրատարակվել է 1777–ին նույն տպարանում, 1778–ին՝ առանց տպարանի հիշատակության:

1778–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Կազմող՝ Սուքիաս Աղամալյան (60 էջ): Վերահրատարակվել է 1779–ին նույն տպարանում (51 էջ):

1778–ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Տետրակ Տօնացուցի, որ ցուցանէ զկարգեցեալ տօնս...»:

1778–ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց տարեկան ըստ նոր տոմարին…» (74 էջ, 15,7 x 9,3 սմ):

1780–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Կազմող՝ Աղեքսանդր Ինճիճյան (52 էջ): Ա. Ինճիճյանի կազմած Պ. վերահրատարակվել է նույն տպարանում 1781–84–ին (չորսն էլ՝ 48 էջ), Վենետիկում՝ Պիետրո Վալվազիանիի տպարանում՝ 1785–ին (48 էջ, 12º, 10,2 x 6 սմ) և 1786–ին (47 էջ, 12º, 9,8 x 5,8 սմ), 1788–ին՝ առանց տպարանի հիշատակության (48 էջ, 12º, 11,7 x 6 սմ), Սբ Ղազարի տպարանում՝ 1789–ին (47 էջ, 12º, 10,6 x 5,8 սմ), 1790–ին (48 էջ, 12º, 10,8 x 6 սմ), 1791–ին (48 էջ, 8º, 10,8 x 6 սմ), 1792–ին (48 էջ, 12º, 10,6 x 6 սմ), 1793–ին (44 էջ, 12º, 10 x 6 սմ):


1781–ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում (60 էջ):

1782–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց եւ աւետարանացոյց…» (320 էջ, 8º, 9,4 x 5,8 սմ):

Պարզատումար



1725 (Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպ.), գլխազարդով և սկզբնագրով (115–րդ) էջ



1774–75 (հ. 1–2, Էջմիածին, Սբ Գրիգոր Լուսավորչի տպ.), փիփղոսաթերթը




1782 (Վնտ.), փիփղոսաթերթը

Պարզատումար



1786 (ՍՊբ, Գրիգոր Խալդարյանի փպ.), փիփղոսաթերթը



1799–1802 (Կ. Պոլիս), գլխազարդով և սկզբնագրով (75-րդ) էջ



1868 (հ. 2, Երուսաղեմ), փիփղոսաթերթը

1785–ին Վենետիկում՝ Պիետրո Վալվազիանիի տպարանում: Տպակից է «Սպասաւորութիւն սրբոյ պատարագի» գրքի (167 էջ):

1785–ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք որ կոչի Տօնացոյց...» (437 էջ, 8º, 12,5 x 7,4 սմ):

1786–ին Վենետիկում՝ Ջիովաննի Պիացոյի տպարանում: Հեղինակ՝ Մխիթար Սեբաստացի: Տիտղթ–ին՝ «Տօմար կարճառօտ այսինքն: Համառօտութիւն հնոյ տօմարին հռօմայեցւոց...» (32 էջ, 8º, 14 x 8,8 սմ):

1786–ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Տպակից է «Աւետարան ճաշու»–ին: Ա տիտղթ–ին՝ «Աւետարան ճաշու...», Բ–ին՝ «Տօնացոյց երկրորդ հատոր, որ է քանօն եւ կառավարիչ առաջնոյ հատորին...» (341 էջ, 4º, 20,2 x 13,2 սմ): 1786–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Տարեցոյց եւ օրացոյց ամի Տեառն մերոյ 1786...»:

1787–ին Վենետիկում՝ Ջիովաննի Պիացոյի տպարանում: Տիտղթ–ին՝ «Օրացոյց վասն նահանջ ամի տեառն 1788...» (48 էջ, 12º, 12 x 6 սմ):

1789–ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Բուն տօմար Հայոց եւ հռօմայեցւոյ: Նա եւ Պարզատօմար...»: Տպակից է Ղուկաս Վանանդեցու «Ի ըզբօսանս Հայկազունեաց» երկին (454 էջ, 8º, 12 x 7 սմ):

1792–ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Հեղինակ՝ Հակոբ Չերեզյան: Տիտղթ–ին՝ «Օրացոյց տարւոյս որ ըստ ամի Տեառն մերոյ եւ Փրկչի՝ է թիւն, 1792 եւ ըստ մերոյս հնոյ տօմարի՝ է թիւն, ռմխա» (47 էջ, 12º, 10,5 x 6 սմ):

1792–ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Տարեցոյց եւ օրացոյց....», Բ–ին՝ նույնը (56 էջ, 8º, 12 x 6,5 սմ): Վերահրատարակվել է 1793–ին նույն տպարանում (57 էջ, 16º, 10 x 6 սմ):

1794–ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Կազմող՝ Խաչատուր Սյուրմելյան: Տիտղթ–ին՝ «Օրացոյց ամի տեառն 1795. եւ հայոց թուականիս, ռմխդ...» (48 էջ, 6º, 10,2 x 6 սմ): Վերահրատարակվել է նույն տպարանում՝ 1798–ին (48 էջ, 12º, 10,1 x 6 սմ) և 1799–ին (48 էջ, 12º, 10,2 x 6 սմ):

1795–ին նույն տպարանում: Կազմող՝ Մատթեոս Մաղաքյան: Տիտղթ–ին՝ «Օրացոյց նահանջ ամի տեառն 1796. եւ հայոց թուականիս, ռմխե...» (47 էջ, 12º, 10,3 x 6 սմ): Վերահրատարակվել է նույն տպարանում 1796–ին (47 էջ, 12º, 10 x 6 սմ) և 1797–ին (48 էջ, 12º, 10 x 6 սմ), նաև 1800–ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության (48 էջ):

1795–ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Բուն տօմար Հայոց եւ հռօմայեցւոց: Պարզատօմար...» (445 էջ, 8º, 12,5 x 7,3 սմ):

1797–ին Աստրախանում՝ Հովսեփ Արղությանի տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Տարեցոյց եւ օրացոյց...», Բ–ին՝ նույնը (48 էջ, 12º, 10 x 6 սմ):

1799–1802–ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Տօնացոյց: Նախապէս կարգեալ եւ սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթեւի...» (551 էջ, 8º, 12,3 x 7,2 սմ):

Կա նաև անթվակիր հնատիպ Պ.: Տիտղթ–ին՝ «Պարզատօմար ըստ հռովմայեցւոց», հիշատակարանը՝ «Արդ որ հանդիպիք ի սմա վայելելով, եւ կամ օրինակելով, յիշեցէք զմատակարար սրբակրօղս եւ զսահմանեալ զհարկեւոր եւ պիդական ի պէտս վաջառականաց, զանապատցի Մկրտիչս Միրզաղուլենց, որ եմ որդի Աղամիրի»:

1801–ից հետո Պ–ներ տպագրվել են՝ 1803, 1818, 1827, 1828, 1831, 1834, 1850, 1870, 1873–ին (ԿՊ, Սրապյան տպ.), 1807–ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1835, 1868, 1870, 1890, 1891, 1900, 1906–ին (Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), 1849, 1854–ին (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.), 1868 (հ. 1–2), 1892–99–ին (Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), 1868, 1915–ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1893, 1894, 1896–1900–ին (ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), 1895–ին (ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.), 1901–20–ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1914 և 1916–ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), 1925–ին (Թ., ա. տպ.) ևն:

Գրկ. **Բադալյան Հ.**, *Հայոց տումարի պատմություն, Ե., 1976:* **Աղայան Է.**, *Անվանի հայոց տումարների պատմության, Ե. , 1986:* **Չուգասզյան Բ.**, *Պարզատումարի տպագրության թվականը, «ԲՄ», № 14, 1984:*

ՊԱՐԶՅԱՆ (Պարգյանց) Սուքիաս [10(22).12.1837, Աստապատ (Նախճավանի գավառ)–12(25).9.1914, Վաղարշապատ], մանկավարժ, եկեղեց., գործիչ, խմբագիր, բարերար: Ավարտել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը (1856): 1869–ից՝ վարդապետ, 1893–ից՝ արքեպիսկոպոս: 1860–63–ին դասավանդել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, 1874–75–ին՝ Գևորգյան ճեմարանում (1895–99–ին՝ տեսուչ): 1897–99–ին՝ «Արարատ» ամսագրի խմբագիր: Հակակառավար. ելույթ–

ների համար աքսորվել է Ռուսաստանի Օրյոլ (1891–93) և Օրենբուրգ (1903–05) քաղաքներ:

Պ–ի նյութ. օժանդակությամբ տպագրվել են *«Պատմագիրք Հայոց»* մատենաշարը, Ս. Ամատունու «Հին եւ նոր պարականոն ու անվաւեր շարականներ» (1911, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) ուսումնասիրությունը, Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի) «Ժամանակագրութիւնը» (1915, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), Մ. Օրմանյանի մի շարք երկասիրություններ, հայ հին մատենագիրների երկերի (շուրջ 40) քննահամեմատ. բնագրերը (ծրագիրն իրագործվել է մասամբ), կառուցվել է Էջմիածնի տպարանը:

Լույս են տեսել Պ–ի «Հանապարհորդական տպաւորութիւնք եւ համառօտ նկարագիր դէպքերի վերջին կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ» (1907, Ե., Այվազյանի և Նազարյանի տպ), «Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցի նամակը գրուած Սուրբ Էջմիածնի Սինօդի...» (1907, նույն տպ.), «Պատուիրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Ս.–Պետերբուրգ հոգեւոր դպրոցների մասին» (1907, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) աշխատությունները:

ՊԱՐԹԵՎՅԱՆ Սուրեն (Պարտիզպանյան Սիսակ, 1876, Կ. Պոլիս–1921, Ալեքսանդրիա), գրող, հրապարակախոս, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան և Կեդրոն. վարժարաններում: 1895–ին մեկնել է Եվրոպա, 1903–ին՝ ԱՄՆ, 1908–ին վերադարձել է Թուրքիա, ապա անցել Եգիպտոս: Խմբագրել է *«Վաղուան ձայնը»* (Սանչեստր), *«Նոր կեանք»* (Լոնդոն), *«Ձայն հայրենեաց»* և *«Ազգ»* (Բոստոն), *«Դաշինք»* (Զմյուռնիա), 1916–17–ին՝ *«Անապատին Յուշարձանը»* (Կահիրե) և այլ պարբ–ներ:

Լույս են տեսել Պ–ի «Կիլիկեան արհաւիրքը» (1909, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.), «Յիշատակարան Ատանայի աղէտի» (առաջաբ.՝ Արամ Ա կաթողիկոսի, 2009, Անթիլիաս) հուշագրությունները, «Հայուհին» (1911, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), «Արիւնին մատեանը», «Ձայնը հնչեց» (երկուսն էլ՝ 1915, Կահիրե, Մ. Շիրինյանի տպ.), «Արարա: Հայկական լէգէոնը» (1919, Ալեքսանդրիա, Արամ Ստեփանյանի տպ.) վեպերը: Կազմել է «Եգիպտահայ տարեցոյցը» (Ա–Ե տարի, 1914–18, Կահիրե, Ալեքսանդրիա, Ջարեհ Պերպերյանի, ապա՝ Ա. Գասապյանի տպ–ներ), «Զմիւռնահայ տարեցոյցը» (1919, Զմյուռնիա, Մատթեոս Մամուրյան տպ.):

ՊԱՐԻԿՅԱՆ (Բարիկյան) Հայկ [1914, Յոզղաթ (Սեբաստիայի նահանգ)–10.8.2006, Հալեպ], բանասեր, բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է Հալեպի Հայկազյան վարժարանը (1929), սովորել Ֆրեր Մարիստների ֆրանս. կաթոլիկ. վարժարանում (1930–34): 1941–43–ին դասավանդել է Հալեպի Հայկազյան, 1949–53–ին՝ Կիլիկյան, 1954–78–ին՝ Նաճարյան–Կյուլպենկյան վարժարաններում: 1948–49–ին՝ «Եփրատ», 1950–53 և 1955–58–ին՝ «Բուրաստան», 1958–71–ին՝ «Բարձունք» (երկուսն էլ՝ Հալեպ) պարբ–ների, 1975–85–ին՝ *«Գեղարդ»* տարեգրքի խմբագիր:

Լույս են տեսել Պ–ի «Այգեկութք» (1962), «Երգեր հողի եւ մարդոց մասին» (1985) բանաստեղծությունների ժող–ները, «Լեւոն Բաշալեան» (1970), «Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու» (համահեղ., 1973) աշխատությունները:

Հանդես է եկել նաև Հայ–Պար, Պահակ, Շահան Նուոյան, Բակուր Տաթեւյան գրական կեղծանուններով:

Միհրան Մինասյան

ՊԱՐԻՍ (Գևորգյան) Գևորգ Հակոբի (1.2.1901, Վան–17.10.1958, Երևան), բառարանագիր: Ավարտել է ԵՊՀ (1926): Կազմել է բառարաններ [«Պոլիգրաֆիական և հրատարակչական տերմինների ռուս–հայերեն համառոտ բացատրական բառարան» (1953), «Գրականագիտական տերմինների համառոտ բառարան» (համահեղ., 1957), «Դպրոցական ուղղագրական բառարան» (համահեղ., 1956, 2–րդ վերամշկ. հրտ.՝ 1959)], դպրոց. դասագրքեր:

ՊԱՐՈՆՅԱՆ Հակոբ Հովհաննեսի (19.11.1843, Ադրիանապոլիս–27.5.1891, Կ. Պոլիս), գրող–երգիծաբան, հրապարակախոս, խմբագիր: Սովորել է Ադրիանապոլսի Արշակունյան վարժարանում: Եղել է դեղատան աշխատող, հաշվապահ: 1863–ին տեղափոխվել է Կ. Պոլիս, զբաղվել գրական–լրագրող. աշխատանքով: 1880–ին եղել է Հայոց միացյալ ընկերության քարտուղարը: 1871–72–ին՝ թվաբա–



Սուքիաս Պարզյան



*«Եգիպտահայ տարեցոյցը» (1917, Դ տարի, Ալեքսանդրիա, կազմ.՝ **Սուրեն Պարթեյան**) տարեգրքի կազմը*



*«Գեղարդ» (գիրք Գ, 1985, խմբագիր՝ **Հայկ Պարիկյան**) տարեգրքի կազմը*



Հակոբ Պարոնյան



Հ.Պարոնյանի *«Երկերի ժողովածու»-ի (հ. 7, 1969, Ե., «Հայաստան») կազմը*



Անահիտ Պարսամյանի *«Աշոտ երկաթի խաչը» (2013, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*

նության ուսուցիչ Մեզպուրյան վարժարանում, 1888-ին՝ Սկյուտարի ճեմարանում, Կեդրոն. վարժարանում: 1876-ին հրատարակել է ***«Թատրոն բարեկամ մանկանց»*** պատկերազարդ հանդեսը, նաև ***«Լոյս», «Արձագանք», «Փարոս Հայաստանի»*** պարբ-ները: 1870–71-ին՝ ***«Փող արեւելեան»***, 1871-ին՝ ***«Եփրատ»***, 1872–74-ին՝ ***«Մեղու»***, 1874–77-ին՝ «Թատրոն», 1883–88-ին՝ ***«Երկրագունտ»***, 1884–88-ին՝ ***«Խիկար»*** պարբ-ների խմբագիր:

Գրական ասպարեզ է եկել «Երկու տէրով ծառայ մը» (1865, հրտ.՝ 1911) և «Ատամնաբոյժն արեւելեան» (1868, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.) կատակերգություններով: «Մեղու», «Թատրոն», «Փորձ», «Մասիս» պարբ-ներում հրատարակվել են Պ-ի երգիծ-հրապարակախոս. հոդվածները, զրույցները («Ասկէ, անկէ», «Ալաֆրանկա», «Թղթակցութիւնք թատրոնի», «Գուշակութիւնք թատրոնի», «Ազգային օրագրութիւնք», «Կսմիթներ»), 1886–87-ին «Խիկար» երգիծ. ամսագրում՝ «Պաղտասար աղբար» կատակերգությունը, որը հայ դաս. թատերգության նվաճումներից է, «Քաղաքավարութեան վնասները» և «Խօսակցութիւնք մեռելոց» երկերը, որոնք 1910-ին հրատարակվել են «Ամբողջ երկեր» (հ. 1–3, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.) ժող-ում:

Լույս են տեսել նաև Պ-ի «Ազգային ջոջեր» (1879, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), «Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ» (1880, ԿՊ, Սամվել Պարտիզպանյանի տպ.), «Ծիծաղ» (1883, նույն տպ.), «Մեծապատիւ մուրացկաններ» (1887, նույն տպ., 1900, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Հոսհոսի ձեռատետրը» (1892, Թ., Մ. Շարաձեի տպ., 1900, Մ. Ռոտինյանի տպ.), «Երկասիրութիւններ» (Ա, Բ, Գ, 1899–1900, Մ. Շարաձեի տպ.), «Երգիծաբանական հատուածներ» (1904, Ալեք-պոլ, «Շիրակ» տպ.) երգիծ. գործերը: Պ. գրել է արվ-ի (թատրոն, երաժշտություն) և գրակ-յան հարցերին նվիրված քննադատ. հոդվածներ:

Հրատարակվել է նաև Պ-ի «Երկերի ժողովածուն» (հ. 1–10, 1962–79):

Գրկ. **Ստեփանյան Գ.,** *Հակոբ Պարոնյան: Կյանքը և հրապարակախոսությունը, Ե., 1964:* **Մանուկյան Ա.,** *Հակոբ Պարոնյան, Ե., 1964:* **Հունանյան Ա.,** *Հակոբ Պարոնյանը դրամատուրգ, Ե., 2003: Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում (աշխատասիր.՝ Ա. Մակարյանի), Ե., 2004:*

ՊԱՐՍԱՄՅԱՆ Անահիտ (Աննա) Հարությունի (ծ. 8.8.1947, Երևան), բանաստեղծուհի, հրապարակախոս: Ավարտել է ԵՊՀ բանասիր. ֆակ-ը (1969), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի գրական բարձրագույն դասընթացները (1981): 1970–79-ին աշխատել է «Հայրենիքի ձայն», 1982–96-ին՝ «Գրական թերթ» շաբաթաթերթերի խմբագրություններում: 1996-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում:

Լույս են տեսել Պ-ի «Փյունիկ» (1973), «Խոստովանանք» (1977), «Օրվա հեքիաթներ» (1982), «Աստղականչ» (1987), «Բանաստեղծություններ» (2004), «Հոգեմատյան» (2008) բանաստեղծությունների ժող-ները, «Շուշան-Վարդենի» (2007), «Օշինդրի բույրը կամ Սուրբ Վահան Գողթնացի» (2010), «Աշոտ Երկաթի խաչը» (2013) վիպակները: Գրում է նաև մանուկների համար («Արքայադուստրը», 1975, «Երկնագույն ափսեն», 1980, «Ինչ են խոսում կեռասները», 1985, «Թագուհի վարդը», 1989, հեքիաթների, բանաստեղծությունների ժող-ներ):

Թարգմանել է Մ. Ցվետաևայի «Քեզ, հարյուր տարի հետո» (1983) ժող-ի մեծ մասը:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Մերուժան Ասատուրի [1883, գ. Ապուչեխ (Ակն ք-ի մերձակայքում)–16.10.1944, Փարիզ], բանաստեղծ, խմբագիր: Մկրտիչ ***Պարսամյանի*** եղբայրը: Սովորել է Արմաշի դպրեվանքում (1897–1901): 1919-ին հաստատվել է Փարիզում: 1910–14-ին՝ «Մեր տարեցոյցը», 1911–15 և 1918–19-ին՝ ***«Շանթ»***, 1931–40-ին՝ ***«Կեանք եւ արուեստ»*** (տարեգիրք, ապա՝ ամսագիր, եղբոր հետ) պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Պ-ի «Անրջանք» (1904, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.), «Պատրանքի ծաղիկներ» (1907, ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.) «Քրիզանթէմ» (1908, ԿՊ, Հարություն Ասատրյանի տպ.), «Եփրատին զոհերը» (1908, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ.), «Բանաստեղծին սիրտը» (1910, ԿՊ, Օննիկ Բարսեղյան և որդ. տպ.), «Մարմներգութիւն» (1919, Փ., ա. տպ.), «Մարդկային» (1938, ա. տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Ապտիլ Համիտ Բ» (1909, ԿՊ, «Շանթ» տպ.)՝նոթերը, «Պետրոս Է.Ֆ. Հալաճեան» (համահեղ., 1910,

ԿՊ, Օ. Բարսեղյան և որդ. տպ.) ուսումնասիրությունը, «Հսկումը» դրաման՝ ըստ Ֆրանսուա Քոփեի (Կոպե) համանուն պոեմի (1910, ԿՊ, «Շանթ» տպ.): 1920-ից գրել է նաև ֆրանս. («Տղամարդը և կինը», 1925, «Բանաստեղծները Նոյյան տապանի մեջ», 1933, բանաստեղծությունների ժող-ներ):

Հայ մամուլում հանդես է եկել նաև Շանթարգել, Մելքոն Հակոբյան և գրական այլ կեղծանուններով: Ֆրանս. գրական շրջանակներին ծանոթ է նաև ժան Մերու գրական անունով:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Մկրտիչ Ասատուրի [7.3.1886, գ. Ապուչեխ (Ակն ք-ի մերձակայքում)–1966, Փարիզ], արձակագիր, խմբագիր, մանկավարժ: Մերուժան ***Պարսամյանի*** եղբայրը: Սովորել է Ապուչեխի, ապա՝ Մեզիրեի Կեդրոն. (1897–99), Կարինի Սանասարյան վարժարաններում: Որպես ուսուցիչ և տնօրեն աշխատել է Մեզիրեի, Կարինի, Տրապիզոնի, Կոնիայի ու Սամաթիայի հայկ. վարժարաններում: 1922-ին մեկնել է Փարիզ: Եղբոր հետ խմբագրել է ***«Կեանք եւ արուեստ»*** (1931–40, տարեգիրք, ապա՝ ամսագիր) պարբ-ը:

Լույս են տեսել Պ-ի «Արիւնի տօնը» (1913, ԿՊ, «Շանթ» տպ.), «Մեռնող գիւղին պատմութիւնը» [ա. թ., Փ.] պատմվածքների ժող-ները, «Աւետիս Ահարոնեան: Իր կեանքը եւ գրականութիւնը» (1930, Փ., «Մասիս» տպ.), «Արեւմտահայ բանաստեղծներ» (1937, Փ.) և այլ մենագրություններ: Սփյուռքահայ դպրոցների համար կազմել է դասագրքեր, հրատարակել «Արարատ նոր երգարանը», որտեղ զետեղել է նաև հայ նշանավոր երգահանների կենսագրականները: Կազմել է «Արարատ ընթերցարանը» (1951, Փ., «Արաքս» տպ.), կազմել և խմբագրել է «Ակն եւ ակնցիք» (1952, հեղ.՝ Ա. Քեչյան) գիրքը: Գերմ-ից թարգմանել է Կ. Ավգուստի «Յուսահատութեան ժայթքում» (1912, ԿՊ, «Շանթ» տպ.) վեպը: Եղել է Փարիզի «Նահատակ գրագետներու բարեկամներ» (1929, 1939-ից՝ «Հայ գրագետներու բարեկամներ») հրատարակչատան հիմնադիրներից:

ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿ, հրատարակված տարատեսակ փաստաթղթերի (գրքեր, հրատ-ներ ևն) օրինակներ, որոնք պատրաստողները (կազմողները) պարտավոր են հանձնել մատենագիտ. հաստատություններին, խոշոր գրադարաններին և տեղեկատվ. կենտրոններին՝ հաշվառման, երկրի խոշոր գրադարանների ֆոնդերի համալրման, պետ. արխիվի ստեղծման, մշտ. պահպանության, վիճակագր. մշակման, մատենագիտ-յան կազմման և, որպես ազգ. ժառանգություն, հանրային օգտագործման համար: Պ. օ-ներն սկզբում ունեցել են հրատ-ների վրա պետ. վերահսկողություն իրականացնելու նպատակ: Առաջինը ներդրել է Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ 1-ինը 1537-ին: Հայաստանում կիրառվել է 1959–91-ին (ԽՍՀՄ-ում գործող օրենսդրությամբ) և 2005-ից՝ «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:


«ՊԱՐՏԷԶ», գրական-մանկավարժ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1903–04-ին Ալեքսանդրիայում: Խմբագիր-տնօրեն՝ Միհրան Աբանազ(յան): Ծանոթացրել է մանկավարժության առաջադիմ. մեթոդներին, «Մանկապարտեզ և ծաղկոց» խորագրով տպագրել նյութեր՝ նվիրված հայ. բանավոր ու գրավոր խոսքի ուսուցման բարելավմանը, սովորեցրել խաղեր ու վարժություններ: Գրական բաժնում զետեղվել են հայ և օտարազգի հեղինակների ստեղծագործություններ:

«ՊԱՐՏԷԶ», մանկ. ամսագիր: Լույս է տեսել 1932–38-ին Պլովդիվում (Բուլղարիա): Խմբագիր-տնօրեն՝ Հակոբ Մարաշլյան: Ծանոթացրել է Խորհրդ. Հայաստանի աշխարհագրությանը, բնակլիմ. պայմաններին ու պատմությանը, տնտ. և մշակութ. ձեռքբերումներին: Տպագրել է հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններ, անդրադարձել նշանավոր հայ գործիչների կյանքին ու գործունեությանը:

«ՊԱՐՏԷԶ», մանկապատանեկան պատկերազարդ շաբաթաթերթ, ապա՝ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1946–69-ին Ստամբուլում: Խմբագիրներ՝ Ադրինե Տատրյան, Արմենուհի Էոզեր, Բագարատ ***Թևյան***, Արսեն Ճանօղլու: Տպագրել է հայ գրողների, ինչպես նաև ռուս, թուրք, արևմտաեվրոպ. հեղինակների մանկ. ստեղծագոր-



Մերուժան Պարսամյանի *«Եփրատին զոհերը» (1908, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*



Մկրտիչ Պարսամյանի *«Արեւմտահայ բանաստեղծներ» (1937, Փարիզ) գրքի տիտղոսաթերթը*




«Պարտէզ», *1932–38, Պլովդիվ*



«Պարտիզակ», *1909–14, Կ. Պոլիս*



Վահե Պարտիզունու *«Տերյան» (1968, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Ֆրիդրիխ Պարրոտի *«Ճանապարհորդություն դեպի Արարատ» (հայ., 2006, Ե., «Նաիրի») գրքի կազմը*

ծություններից: Պատմել է անվանի երգահանների, նկարիչների, գիտնականների ու մանկավարժների մասին, ծանոթացրել արվ–ի ու մշակույթի նորություններին:

«ՊԱՐՏԻԶԱԿ», կրթամանկավարժ. կիսամյա հանդես: Պարտիզակի գիշերօթիկ բարձրագույն վարժարանի ընթերցավարտից ընկերակցության հրատ.: Լույս է տեսել 1909–14–ին Կ. Պոլսում (խմբագրվել է Պարտիզակում): Խմբագիր՝ Հովսեփ Տեր-Ստեփանյան: Անդրադարձել է արդուլհամիդյան տիրապետության շրջանում արևմտահայության ճակատագրին, ներկայացրել ազգ–ազատագր. պայքարի դրվագներ, քննադատել հայության արտագաղթը ԱՄՆ: Տպագրել է գրական–բանասիր. հոդվածներ: Պաշտպանել է ազգ. ինքնուրույն գրակ–յան զարգացման անհրաժեշտությունը: Լուսաբանել է նաև վարժարանի առօրյան: Աշխատակցել են հիմնականում վարժարանի սաներն ու ուսուցիչները:

ՊԱՐՏԻԶՈՒՆԻ (Թադևոսյան) Վաչե Զոհրաբի [15.5.1915, գ. Ղարահամզալու (այժմ՝ գ. Բուրաստան՝ ՀՀ Արարատի մարզում)–1.2.1997, Երևան], գրականագետ: Բանասիր. գիտ. դ–ր (1957), պրոֆ. (1957): Գիտ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է ԵՊՀ (1940): 1940–97–ին դասավանդել է ՀՊՄԻ–ում (1951–84–ին՝ ամբիոնի վարիչ):

Լույս են տեսել Պ–ու «Խաչատուր Աբովյան» (1952), «Մուրացան» (1956), «Վահան Տերյան» (1968), «Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը» (1975), «Տերյանի կենսապատումը» (1984), «Վահան Տերյանի հետ» (1989) մենագրությունները, «Գրականության ուժն ու հմայքը» (1963), «Տաղանդի ուժը» (1977), «Պայծառ համաստեղություն (գրական դիմանկար)» (1987) աշխատությունները: Կազմել է Վ. Տերյանի «Երկերի ժողովածուն» (հ. 1–4, 1972–79)՝ առաջաբանով և ընդարձակ ծանոթագրություններով:

ՊԱՐՐՈՏ Ֆրիդրիխ Յոհան Յակոբ Վիլհելմ [14.10.1791, Կարլսրուե (Գերմանիա)–15.1.1841, Դորպատ (այժմ՝ Տարտու՝ Էստոնիայում)], ֆրանսիացի բնախույզ, բժիշկ, ֆիզիկոս: Բժշկության և վիրաբուժության դ–ր (1814), Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1816):

1829–ի սեպտ. 27–ին Պ. բարձրացել է Մասիսի գագաթը: Որպես թարգմանիչ նրան ուղեկցել է Խաչատուր *Աբովյանը*: Վերադարձին Պ. ուսումնասիրել է Դվինի ավերակները: Այս ճանապարհորդությունների արդյունքը Պ–ի «Ուղևորություն դեպի Արարատ» (մաս 1–2, գերմ., 1834, հայ. հրտ.՝ «Ճանապարհորդություն դեպի Արարատ», 2006, թարգմ.՝ գերմ–ից և առաջաբ.՝ Ա. Առաքելյանի) աշխատությունն է (հրտ.՝ նաև անգլ., 1845, Լոնդոն, 1846, 1970, Նյու Յորք), որտեղ անդրադարձել է Հայաստանի պատմության կարևոր դրվագներին, նկարագրել ճարտ. հուշարձանները, երկրի և ժողովրդի վիճակն ու սովորույթները: 1835–ին այդ գրքի 1–ին մասը կրճատումներով թարգմանվել է հայ. (հրտ.՝ 1956, Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 7): Պ–ի օժանդակությամբ Դորպատի համալսարանում սովորել են Խ. Աբովյանն ու Ստեփանոս *Նազարյանը:*

ՊԱՈՒՍՏՈՎՍԿԻ Կոնստանտին Գեորգիևիչ [31.5.1892, Մոսկվա–14.7.1968, Մոսկվա, թաղված է Տարուսայում (Կալուգայի մարզ)], ռուս գրող: Հրատարակվել են նրա պատմվածքների և ակնարկների մի քանի ժող–ներ, վեպ, վիպակներ, ինչպես նաև «Պատմություն կյանքի մասին» [գիրք 1–6, 1945–63, հայ. հրատարակվել է 1–ին գիրքը՝ «Հեռավոր տարիներ» (1962)] ինքնակենսագր. երկը:

1923–ին, որպես Թիֆլիսի «Գուդոկ Զակավկազյա» թերթի թղթակից, Պ. գործուղվել է Հայաստան, գրել «Հազարամյակների փոշի» ակնարկը, որը հետագայում ընդարձակել և «Հազարամյակների մշուշը» վերնագրով զետեղել է «Թռիչք դեպի հարավ» գրքում: Ակնարկը յուրատեսակ հիմն է՝ նվիրված Հայաստանի բնությանը, Արարատին, Անիին:

Հայ. լույս են տեսել Պ–ու «Կարա Բողազ» (1936), «Շաղ Լոնսևիլի վիճակը» (1936), «Հյուսիսային պատմվածք» (1978) վիպակները, «Ոսկե վարդը» (1963) վեպը, «Պատմվածքներ» (1958), «Ամռան օրեր» (1986) պատմվածքների, «Սպիտակ ծիածանը» (1965) նովելների ժող–ները:

«ՊԵԳԱՍԵԱՆ ԹՌՉՆԻԿ», կիսամսյա, ապա՝ տասնօրյա ազգ., հաս. հանդես: Լույս է տեսել 1863–66-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Գրիգորիս *Ալեաթճյան*, Արմենակ *Հայկունի* (Ճիզմեճյան): Լուսաբանել է արևմտահայության առօրյան, սոցիալ-տնտ. վիճակը, մշակութ. և ներազգ. կյանքը, հայկ. մամուլի, դպրոցի և դաստիարակության խնդիրները: Ազգ. վերածնության կարևոր պայման է համարել գիտ-յան զարգացումը, «Բնագիտական հարցմանց պատասխաններ», «Գիտության և մտքի մշակության օգտակարությունը» հոդվածներում շեշտել է երկրագործության զարգացման կարևորությունը: Թարգմանաբար տպագրել է արևմտաեվրոպացի գրողների ստեղծագործություններ: Նյութերի որոշ մասը հայատառ թուրք. է:

ՊԵԴԵՐՍԵՆ (Pedersen) Հոլգեր (1867–1953), դանիացի լեզվաբան, հայագետ: Ավարտել է Կոպենհագենի համալսարանը (1890): Նույն համալսարանի դ-ր (1897), պրոֆ. (1903-ից): Աշխատությունները վերաբերում են պատմահամեմատ. լեզվաբանությանը: Մշակել է լեզուների նոստրատիկ ազգակցության տեսությունը:

1893-ին եղել է Վենետիկի, 1903-ին՝ Վիեննայի Մխիթարյան միաբանությունում, հայ-ի մասնավոր դասեր առել Ս. Պետերբուրգում (1898): «Հայոց լեզվի պատմություն» (1902, հայ. հրտ.՝ «Նպաստ մը հայ լեզուի պատմութեան», 1904, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատության մեջ քննել է հայ-ի ինչյուն. օրենքները՝ հնդեվրոպ. բաղաձայն. ընդհանրությունների համակարգում:

Լույս են տեսել նաև Պ-ի «Հայերէն եւ դրացի լեզուները» (1904, հայ. հրտ.՝ 1905, «ՀԱ», № 1, 2, 5, 9, 11, 1906, № 1, 3–5, 7–9, 1907, Վնտ.) աշխատությունը, «Հայերէնի դիրքը» (1924, հայ. հրտ.՝ 1929, «ՀԱ», № 2–3) հոդվածը, «Հին հայերէնի ցուցական դերանունները» (1905, հայ. հրտ.՝ 1907, Վնն., Մխիթարյան տպ.) ուսումնասիրությունը:

Գրկ. **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958: Mélanges inguistiques offerts à Holger Pedersen..., Copenhague, 1937;* **Sommerfelt A.**, *Holger Pedersen, «Orbis», 1954, vol. 3, № 1.*

ՊԵԶՃՅԱՆ Հարություն Պողոսի, **Ղազեզ** (Գազազ) **Հարություն ամիրա** (10.4.1771, Կ. Պոլիս–3.1.1834, Կ. Պոլիս, թաղված է Գում Գափուի հայոց Մայր եկեղեցու գավթում), պետ., հաս. գործիչ, բարերար: Ավարտել է Գում Գափուի հայոց վարժարանը (1783): Զբաղվել է ջուլհակությամբ (այստեղից էլ՝ Ղազեզ մականունը): 1807-ից աշխատել է Թուրքիայի արքունի դրամահատարանում: Պ. ջանացել է միավորել Կ. Պոլսի առաքել. և կաթոլիկ. համայնքները: Պ-ի գործունեության շրջանն անվանվել է «Պեզճյան դար»: Սուլթանի միջամտությամբ վերահաստատել է Հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմում: Պ. իր նյութ. միջոցներով կառուցել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի նոր շենքը (1823), Մայր եկեղեցին (1829), Սբ Փրկիչ ազգ. հիվանդանոցը (1833), 7 վարժարան (Բերայի օրիորդաց, 1826, Սբ Առաքելոց տղայոց, 1832, ևն), հրատարակել է *Գեորգ Դպիր Պալատեցու* «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից» (1826, ԿՊ, Պողոս Արապյան տպ.) աշխատությունը, մասամբ հոգացել է Հայկազյան բառարանի հրատ-յան ծախսերը:


1830-ին Պ-ի վերակառուցած Մայր դպրատունը Կ. Պոլսում (հիմն.՝ 1719) կոչվել է նրա անունով՝ Պեզճյան մայր վարժարան:

Գրկ. **Փափազեան Ս.**, *Կենսագրութիւն Յարութիւն Պեզճեան ազգային անգուգական բարերարի, ԿՊ, 1864:* **Թիւթիւնճեան Լ.**, *Յարութիւն ամիրայ Պեզճեան եւ իր ժամանակները, Կահիրէ, 1971:*

ՊԵՅԼԵՐՅԱՆ (Նազգաշյան) Մառի (1880, Կ. Պոլիս–1915, Մեծ եղեռնի զոհ), խմբագիր, մանկավարժ, հաս. գործիչ: Սովորել և ապա դասավանդել է Կ. Պոլսի Եսայան վարժարանում: Պաշտոնավարելով Ալեքսանդրիայի հայկ. վարժարանում՝ 1902–03-ին հիմնադրել ու խմբագրել է *«Արտևիս»* ընտանեկան և գրական հանդեսը: 1908-ին Օսմ. սահմանադրության վերահաստատումից հետո Պ. վերադարձել



Կոնստանտին Պաուստովսկու *«Սպիտակ ծիածանը» (1965, Ե., «Հայաստան») գրքի փիփղոսաթերթը*



Հոլգեր Պեդերսենի *«Նպաստ մը հայ լեզուի պատմութեան» (1904, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



Հարություն Պեզճյան



Մկրտիչ Պեշիկթաշլյան



Մ. Պեշիկթաշլյանի *«Երկերի լիակատար ժողովածու»-ի (1987, Ե., ԳԱ հրտ.) կազմը*

Պևտինգերյան քարտեզի *(361-363) մի հատված*



է Թուրքիա, դասավանդել Զմյուռնիայի Կեդրոն., ապա՝ Եվդոկիայի հայկ. վարժարաններում: Հեղինակ է հրապարակախոս., մանկավարժ., գրական ստեղծագործությունների:

Լույս է տեսել Պ-ի «Դէպի վեր» (1914, Զմյուռնիա, Մատթեոս Մամուրյանի տպ.) գիրքը:

ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ Մկրտիչ Ռափայելի (1828, Կ. Պոլիս–29.11.1868, Կ. Պոլիս), բանաստեղծ, մանկավարժ, թատեր., հաս. գործիչ: Արևմտահայ կանոնավոր մշտ. թատրոնի հիմնադիրն է: Սովորել է Բերայի Մխիթարյան (1834–39), Պադուայի Սամվել Մուրադյան (1839–45) վարժարաններում: 1845-ի վերջին վերադառնալով Պոլիս՝ ծավալել է մանկավարժ-հաս. գործունեություն: Հայոց լեզու, հայ գրակ. և ֆրանս. է դասավանդել Թարգմանչաց, Լուսավորչյան և Հռիփսիմյանց վարժարաններում: 1846-ին Պ-ի նախաձեռնությամբ հիմնադրվել է Համազգյաց ընկերությունը: Գրել է (աշխարհաբար) պատմ. ողբերգություններ («Կոռնակ», «Արշակ», «Վահան», «Վահէ»), օգնել է Տ. Չուխաճյանին և Գ. Երանյանին՝ ***«Քնար հայկական»*** հանդեսի խմբագր. աշխատանքներում: 1840–60-ական թթ-ի կեսին գրած բանաստեղծություններում հիմնականում գերիշխում է հայրենասիրության թեման («Եղբայր եմք մեք»-ը և «Գարուն»-ը վերածվել են երգի): Հայ նոր քնարերգության վառ նմուշներից են Պ-ի «Գնացէք իմ տաղք», «Աշուն», «Քնար կուսին» (1863–68) բանաստեղծությունները:

Լույս են տեսել Պ-ի «Մատենագրութիւնք»-ը (1870, 1871, ԿՊ, Պողոս Քիրիշչյանի տպ.), «Երեք քաջեր» (1885, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) կատակերգությունը, «Տաղեր» (1903, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.), «Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածներն ու ճառերը» (1900, Փ., ա. տպ.), «Մկրտիչ Պէշիկթաշլեանի թատերգութիւնները» (1909, ԿՊ, Հ. Ասատրյան և որդ. տպ.), «Տաղք եւ թատերգութիւնք» (1917, Նյու Յորք, «Կոչնակի» տպ.) բանաստեղծությունների, տաղերի, թատերգությունների ժող-ները: Թարգմանել է Վ. Ալֆոնսի, Ֆ. Վոլտերի ստեղծագործություններից:

Հրատարակվել են նաև Պ-ի «ԵԼԺ»-ն (1987), «Տաղերը» (1947, 1961), «Երկերը» (1995, Անթիլիաս):

Հանդես է եկել նաև հրանտ գրական կեղծանունով:

Գրկ. **Չոպանեան Ա.**, *Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքը եւ գործը, Փ., 1907:* **Պիպէոճեան Ա.**, *Յուշարձան Մկրտիչ Պէշիկթաշլեանի, ԿՊ, 1914:* **Սաֆարյան Վ.**, *Մկրտիչ Պեշիկթաշլյան, Ե., 1972:*

ՊԵՎՏԻՆԳԵՐՅԱՆ ՔԱՐՏԵԶ (Tabula Peutingeriana–Պևտինգերյան տախտակներ), XVI դ-ի հռոմ. ճանապարհացույց-քարտեզը հայտնաբերել է Կոնրադ Կելտեսը (Ավստրիա) և հանձնել գիտնական Պևտինգերին (Գերմանիա), որի անունով էլ կոչվում է «Պևտինգերյան»: Պ. ք. Հին աշխարհի ճանապարհների մանրամասն նկարագրություն է և ուղեցույց, որտեղ նշված են Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի հաղորդակցության հին ճանապարհները՝ քաղաքներով ու կայաններով: Պ. ք. վերահրատարակել, մանրամասն ուսումնասիրել և մեկնաբանել է գերմանացի գիտնական Կոնրադ Միլլերը, ըստ որի՝ քարտեզը կազմել է հռոմեացի աշխարհագիր Կաստորիուսը 361–363-ին: Մոտ 670-ին այդ քարտեզից օգտվել է Անանուն Ռավեննացին, որն իր աշխատության մեջ հիշատակված 2 հզ. տեղանուն վերցրել է Պ. ք-ից, և, որպես այդ քաղվածքների հեղինակ, 36 անգամ վկայակոչված է Կաստորիուսը:

Պ. ք. ուսումնասիրել և մեկնաբանել են Ն. Ադոնցը, Յ. Մարկվարտը և ուր.: Հ. Մանանդյանն իր «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի» (1936) աշխատության մեջ Պ. ք. համարում է Հայաստանի ռազմ. ու առևտր. հին ճանապարհների ուսումնասիրության և Հայկ. լեռնաշխարհի ու հարևան երկրների պատմաաշխարհագրության անփոխարինե-

լի աղբյուր: Քարտեզի վրա հռոմ. մղոններով նշված են Մեծ Հայքի թագավորության հիմն. մայրուղիները: Պ. ք–ի օգնությամբ (Անանուն Ռավեննացու ուղղումներով) ճշտվել են Արշակունյաց Հայաստանի հին ճանապարհները և կայանների մեծ մասը: Կ. Միլլերի կարծիքով՝ հին աշխարհագրության համար Կաստորիուսի այս քարտեզն ավելի կարևոր է, քան Պտղոմեոսի «Աշխարհագրությունը»:

Պ. ք–ի միակ օրինակը պահվում է Վիեննայի պետ. գրադարանում:

Գրկ. **Еремян С.**, *Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana, «Вестник древней истории», 1939, № 1.*

ՊԵՏԵՐՄԱՆ (Petermann) Հայնրիխ Հուլիոս [12.8.1801, Գլաուխաո (Գերմանիա)–1876, Բատ Նաուհայմ (Գերմանիա)], գերմանացի լեզվաբան, հայագետ, սեմագետ: Հայ–ի պատմահամեմատ. ուսումնասիրության հիմնադիրը: Բեռլինի համալսարանի պրոֆ. (1837–ից): 1832–37–ին Վենետիկում Էդուարդ *Հյուրմյուզյանի* աջակցությամբ հմտացել է հայ–ի և թուրք–ի մեջ:



Հայնրիխ Պետերման

1837–ին Բեռլինում լույս է տեսել Պ–ի «Հայոց լեզվի քերականությունը» (վերահրտ.՝ 1842 և 1872): Պ–ի քերակ–յան շնորհիվ հայ–ը ճանաչվել է որպես հնդեվրոպ. լեզու. մասամբ պարզվել են հայ–ի ծագման ակունքներն ու նրա ցեղակցության հարցերը, առաջ է քաշել հայերենի իրանական բարբառ (լեզու) լինելու մասին սխալ տեսակետը: Պ–ի «Ճանապարհորդություն դեպի Արևելք» (հ. 1–2, 1860–1861) աշխատության մեջ ուշագրավ տեղեկություններ կան նաև հայերի մասին: 1866–ին Պ. հրատարակել է Ագուլիսի և Թիֆլիսի բարբառների մասին աշխատություններ, 1867–ին գրախոսել է Արսեն *Այտընյանի* «Քնական քերականութիւնը»:

Գրկ. **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, Ե., 1958:* **Ջահուկյան Գ.**, *Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:*

ՊԵՏԵՐՍ (Peeters) Պոլ [20.9.1870, Տուռնե (Բելգիա)–18.8.1950, Բրյուսել], բելգիացի լեզվաբան, արևելագետ, հայագետ: Լուվենի համալսարանի բանասիրության և աստվածաբանության դ–ր (1947): Հայ. (գրաբար և աշխարհաբար) սովորել է Լուվենի համալսարանում, 1902–ին այն կատարելագործել Բեյրութի Հիսուսյանների համալսարանում: 1904–ին վերադարձել է Բրյուսել: Պ. թղթակցել է «Անալեկտա Բոլանդիանա» հանդեսին, որտեղ լույս է տեսել նրա գործերի մեծ մասը:




Պետրոս Արագոնացու *«Գիրք առաքինութեանց»-ի (1721, Վնտ.) փիփղոսաթերթը*

Պ–ի «Շապուհի հալածանքի սկզբնավորումը ըստ Փավստոս Բուզանդի» (1920), «Հայոց այբուբենի պատմության համար» (1929), «Հայկական վարկածը Սոկրատի պատմության մասին» (1934) աշխատությունները վերաբերում են հայ բանասիրությանը, պատմափիլ–յան հարցերին, հայոց այբուբենին, տեղանուններին: «Պասագնաթես-պարսկածին» (1933) հետազոտության մեջ Պ. քննել է արաբ. տիրապետության շրջանում Հայաստանի պատրիկ Պասագնաթեսի «դավաճանության մասին» զրույցը՝ հայկ., հուն., արաբ. աղբյուրների հիման վրա:

Բելգիայի (1935), Հռոմի հնագիտ–յան (1942), Ֆրանսիայի գեղեցիկ դպրությանց (1945) ակադ–ների անդամ:

ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ [ծ. թ. անհտ–1347, Քոնա (Երնջակ գավառ)], փիլիսոփա և աստվածաբան, դոմինիկյան քարոզիչ: 1318–ին Բարդուղիմեոս Բոլոնիացու և Հովհան Անգլիացու հետ հայերին կաթոլիկացնելու առաքելությամբ հաստատվել է Սարաղայի նորաստեղծ դոմինիկյան վանքում, ապա 1330–ին *Հովհաննես Քոնացու* հրավերով տեղափոխվել է Քոնայի վանք: Տիրապետել է հայ–ին և մինչև կյանքի վերջն զբաղվել է գիտ. և քարոզչ. գործունեությամբ:


Պ. Ա–ու փիլ–մեկնող. աշխատությունները՝ «Համառօտ վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի», «Վերլուծութիւն ի վերայ



Պետրոս Արագոնացու *«Գիրք մոլութեանց»-ի (1773, Վնտ.) տիտղոսաթերթը*



Պետրոս Ղափանցու *«Երգարան»-ի (1772, Կ. Պոլիս, Հովհաննես Աստվածատրյանի տպ.) տիտղոսաթերթը*



Պետրոս Նախիջևանցու *«Աստուածանմանութիւն» (1827, Կալկաթա) գրքի տիտղոսաթերթը*

գրոցն, որ կոչի Պերիարմենիաս», «Համառօտ հաւաքումն վերլուծութեան Վեցից սկզբանց գրոց Զիլբերտոսի Պոռետացւոյ» ևն, պահպանվել են միայն հայ.՝ իր և Հովհաննես Քռնեցու համատեղ թարգմանությամբ: Վերջինիս հետ հայ. է թարգմանել նաև Թովմա Աքվինացու և ուր. մի շարք երկեր:

Պ. Ա–ու երկերը բազմիցս ընդօրինակել են Տաթևի փիլ. դպրոցի գործիչները: Պ. Ա–ու փիլ. հայացքներն ազդել են ***Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու*** փիլ. աշխարհընկալումների ձևավորման վրա: Իր գիտ. գործունեությամբ նպաստել է Հայաստանի և միջնադարյան Եվրոպայի գիտամշակութ. կապերի խորացմանը, հայ փիլ. մտքի աշխուժացմանը, մինչդեռ նրա քարոզչ. աշխատանքը սրել է դավանաբան. վեճերը, խարխլել ազգ–եկեղեց. միասնությունը:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Պ. Ա–ու՝

«Խրատականք եւ հոգեշահք քարոզք» քարոզչ. երկը (համահեղ.՝ Բարդուղիմեոս Բոլոնիացի). 1704–ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության (272 էջ, 8º, 7,6 x 13,5 սմ):

«Գիրք առաքինութեանց» կրոնաբարոյական աշխատությունը (1339, թարգմ.՝ Հակոբ Քռնեցու՝ հեղինակի մասնակցությամբ). առաջին անգամ 1721–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում՝ Մխիթար Սեբաստացու աշխատասիրությամբ (704 էջ, 4º, 16 x 10 սմ): Վերահրատարակվել է 1772–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (734 էջ, 4º, 17,5 x 12 սմ):

«Գիրք մոլութեանց» կրոնաբարոյական երկը՝ 7 գլխ. մեղքերի դեմ. առաջին անգամ 1720–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Հրատարակիչ՝ Մխիթար Սեբաստացի (495 էջ, 4º, 16 x 10,2 սմ): Վերահրատարակվել է 1773–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (531 էջ, 4º, 17,6 x 12,3 սմ):

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ [1700–ական թթ., Սյունիք–20.3.1784, Նիկոմեդիա (այժմ՝ Իզմիթ՝ Թուրքիայում)], բանաստեղծ, երգահան: 1753–56–ին եղել է Էջմիածնի միաբան: 1780–ին նշանակվել է Նիկոմեդիայի հայոց թեմի առաջնորդ:

Պ. Ղ–ու **«Երգարանը»** տպագրվել է 1772–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գրքոյկ կոչեցեալ Երգարան» (172 էջ, 4º, 16 x 11 սմ): Ամփոփում է 110 երգ–բանաստեղծություն: 36 եղանակավոր երգերի մեծ մասը («Ծիլ–ծիլ ոսկի են վարդի թերթերն», «Լուսաբեր զըրօնքն ի վարդի» ևն) ներառվել են ժող. երգարաններում:

Հրատարակվել է նաև Պ. Ղ–ու «Բանաստեղծություններ» (1960) ժող–ը:

Գրկ. ***Նազարյան Շ., Պետրոս Ղափանցի, Ե., 1969:***

ՊԵՏՐՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ, Բերդումյանց (Աղամալյանց, XVIII դ–ի սկիզբ, Նախիջևան–1784, Էջմիածին), բանաստեղծ, աստվածաբան–փիլիսոփա: Պ. Ն. XVIII դ–ի հայ կրոնաազգ. բանաստեղծության նշանավոր դեմքերից է: Որպես աստվածաբան–փիլիսոփա՝ ձգտել է լուծելու հակադրությունը երկնայինի և երկրայինի, իրականի և վերացականի միջև: Գրել է քնար., պատմաքնար. պոեմներ, բանաստեղծություններ, քառյակներ, որոնք բազմիցս ընդօրինակվել են և տարածվել, նաև շուրջ 2 տասնյակ հատոր զանազան երկեր (մեծ մասը՝ անտիպ, պահվում են Մատենադարանում):

Լույս են տեսել Պ. Ն–ու «Աստուածանմանութիւն» (1827, Կալկաթա, Եպիսկոպոս. ճեմ. տպ.), «Աղբիւր բացեալ» (1845, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ., 1857, նույն տպ.), «Մեկնութիւն Յայտնութեան Ս. Յովհաննու առաքելոյ» (1846, Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.), «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս» (1850, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) երկերը:

Գրկ. ***Լեո, Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973: Նազարյան Շ., Պետրոս Նախիջևանցին և XVIII դարի վերանորոգվող հայ հոգևոր երգը, «ՊՀՀ», № 3, 1981:***

ՊԵՏՐՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, **Պետրոս Քերթող** (ծ. թ. անհտ–մոտ 558), մատենագիր, թարգմանիչ, եկեղեց. գործիչ: 547–556-ին՝ Սյունյաց եպիսկոպոս: Մասնակցել է Դվինի 554-ի ժողովին: Պ. Ս-ու Պատմությունից որոշ հատվածներ պահպանվել են Մովսես ***Կաղանկատվացու*** «Պատմութիւն Աղուանից աշխարհի» և ***Ստեփանոս Օրբելյանի*** «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատություններում: Ամբողջական մեզ են հասել «Գովեստ ի սուրբ Աստուածածին...», «Յաղագս հաւատոյ», «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զանազանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ իմաստասիրի» երկերը («Արարատ», 1902): Պ. Ս-ու գործերը կարևորվում են հայ փիլ. մտքի պատմության և ժամանակի ազգ-ազատագր. գաղափարախոսության ուսումնասիրման առումով:

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վնտ., 1932: Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ալվարդ Բարդուղի (ծ. 4.10.1946, Երևան), գրող, հրապարակախոս: Ավարտել է ԵՊՀ (1968): 1968–75-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմի երիտասարդ. հաղորդումների, 1975–78-ին՝ «Հայաստանի աշխատավորուհի», 1983–91-ին՝ «Սովետական գրականություն» ամսագրերի խմբագրություններում, 1980–81-ին՝ Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեում: 1991–94-ին՝ «Առագաստ» շաբաթաթերթի գլխ. խմբագիր, 1994–98-ին՝ ՀՕՄ-ի Հայաստանի շրջ. կազմակերպության վարչության ատենապետուհի:


Լույս են տեսել Պ-ի «Երկրի պապերը» (1977), «Թռչնականչ» (1981), «Ես մի ծառ եմ ծիրանի» (1984), «Ապրելու օրենքը» (1989), «Մարդու տունը» (ռուս., 1987), «Խմբերգերի ժամանակը» (2008), «Ապրելու զրո ժամ» (2012) պատմվածքների և վիպակների ժող-ները:



Ալվարդ Պետրոսյանի *«Ապրելու զրո ժամ» (2012, Ե., «Լուսապսակ») գրքի կազմը*

ՊԵՏՐՈՍՅԱՆ Աննա (Անելկա) Գրիգորի (ծ. 10.3.1935, Լենինական), արձակագիր, դրամատուրգ, ռեժիսոր, դերասան: Ավարտել է ԵԳԹԻ (1957): 1966–85-ին՝ Երևանի դրամատիկ. թատրոնի դերասանուհի:

Լույս են տեսել Պ-ի «Որպես հացն հանապազօրյա» (1971), «Կումարի Մեծ Տիկնոջ պատմությունները» (1990), «Սերն աշխարհեն խռովել՝ կերթա» (2004), «Մոզ քաղաքի կործանումը» (2004), «Եղերապատում» (2005), «Բոլոր ժամանակների Հայաստանը» (հ. Ա–Ջ, 2008–13) վեպերը, «Ինչպես ապրեցինք 20-րդ դարի վերջին տասնամյակներին...» (2011) վիպակների, «Եկա, որ մնամ» (1986) պիեսների ժող-ները:




Աննա Պետրոսյանի *«Բոլոր ժամանակների Հայաստանը» (հ. Ջ, 2013, Ե., «Դար») գրքի կազմը*

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արմեն Եղիշեի (ծ. 30.4.1948, Երևան), բանասեր: Բանասիր. գիտ. դ-ր (2000): Եղիշե ***Պետրոսյանի*** որդին: Ավարտել է ԵՊՀ կենսբ. ֆակ-ը (1977): 1979–87-ին՝ Հայկ. հանրագիտարանի խմբագրության գիտխմբագիր, 1988-ից՝ ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ի առաջատար գիտաշխատող, 2006-ից՝ «Արամազդ. Մերձավորարևելյան ուսումնասիրությունների հայկական հանդեսի» (անգլ., ֆրանս., գերմ.) խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Պ-ի «Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը» (1997), «Հայկական էպոսի հնագույն ակունքները» (1997), «Հայոց ազգածագման հարցեր» և «Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր» (երկուսն էլ՝ 2006) աշխատությունները:

Երկ. Армянский эпос и мифология, Е., 2002; The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Washington, 2002.




Արմեն Պետրոսյանի *«Արամազդ» (2006, Ե., «Վան Արյան») գրքի կազմը*

ՊԵՏՐՈՍՅԱՆ Արֆո (Արփենիկ) Ավետիսի (15.2.1909, Շուշի– 23.9.1985, Մոսկվա), գրականագետ: Ավարտել է Մոսկվայի ժուռնալիստիկայի կոմ. ինստ-ը (1936): Գրել է ռուս.: 1938–45-ին պաշտոնավարել է ԽՄԿԿ ԿԿ-ում, 1946–51-ին՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդում, 1951–70-ին՝ Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ում (1955-ից՝ տնօրենի առաջին տեղակալ): Ղեկավարել է ԽՍՀՄ ազգ. գրակ-ների մատենաշարի և «Խորհրդային բազմազգ գրականության պատմության» (հ. 1–6) ստեղծման աշխատանքները, 1970-ից՝ «ՍՍՀՄ ժողովուրդների էպոսները» ակադեմ. մատենաշարի գլխ. խմբագիր:



Դավիթ Պետրոսյանի *«Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում» (2007, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Եղիշե Պետրոսյանի *«Րաֆֆի» (1959, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Երվանդ Պետրոսյանի *«Գրքերի երամ» (2009, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

Նրա անմիջական մասնակցությամբ (գրել է նաև ներածությունը) հրատարակվել է «Սովետահայ գրականության պատմություն» (ռուս., 1966) գիրքը:

Լույս են տեսել Պ-ի «Գրականության կուսակցականությունը» (1952), «Ժողովրդի պատմությունը և նրա էպոսը» (նվիրված «Սասնա ծռերին», 1982) և այլ գրքեր:

Հոկտեմբերյան հեղափոխության շքանշան (ԽՍՀՄ):

Երկ. Об армянском романе, в кн.: Путь современного советского романа, М., 1961.

ՊԵՏՐՈՍՅԱՆ Դավիթ Վլադիմիրի (ծ. 10.12.1957, ք. Իջևան), բանաստեղծ, գրականագետ, մամուլի պատմաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2007), պրոֆ. (2011): Ավարտել է ԵՊՀ (1980): 1981–82-ին՝ «Երևանի համալսարան» թերթի պատ. քարտուղար, 1982–93 և 1995–2000-ին աշխատել է ԵՊՀ հրատարակչությունում, 2000-ից՝ ԵՊՀ դասախոս, 2007-ից՝ ժուռնալիստիկայի ֆակ-ի մամուլի տեսության և պատմության ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Պ-ի «Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում» (2007) աշխատությունը, «Մեր բախտը՝ մեր նժարին» (1989), «Հավատի պտուղ» (1992), «Ուրիշ անունս» (2001) բանաստեղծությունների ժող-ները:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Եղիշե Սանուկի [12.9.1912, Սանազկերտ (Բիթլիսի նահանգ)–20.8.1982, Երևան], գրականագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1969): Արմեն ***Պետրոսյանի*** հայրը: Ավարտել է ԵՊՀ (1939): 1945–82-ին դասավանդել է ՀՊՄԻ-ում, 1945–50 և 1968–72-ին՝ բանասիր. ֆակ-ի դեկան:

Լույս են տեսել Պ-ի «Րաֆֆի» (1959), «Հայ գրականություն: Ակնարկներ» (1960), «Գրական դեմքեր» (1977), «Դանիել Վարուժան» (1987) աշխատությունները, «Հայ գրականություն» (1964, վերահրտ.՝ բազմիցս) դասագիրքը:

Կազմել, ծանոթագրել և հրատարակել է Ռ. Սևակի (1955), Ռ. Որբերյանի (1963), Օ. Չիֆթե-Սարաֆի (1981) երկերի ժող-ները:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Երվանդ Մարկոսի [ծ. 23.2.1940, գ. Հնաբերդ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], բանաստեղծ, լրագրող: Ավարտել է ՀՊՄԻ (1963): 1966–85-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում, 1985–2001-ին՝ «Նաիրի» հրատարակչությունում՝ որպես խմբագիր:

Լույս են տեսել Պ-ի «Պատուհան» (1968), «Անվախճան օր» (1977), «Արագածից Արարատ» (1986), «Գաղտնիքի ծառ» (1991), «Ձօն ծաղկանց» (2009), «Շարժասանդուղքի վրա» (2011) բանաստեղծությունների, «Հեքիաթ մոծակի և փղերի մասին» (1980), «Արևի տոնը» (1983), «Մկնագիրք» (1996), «Կապույտ հեքիաթ» (1998, ՀՀ Պետ. մրց.՝ 1999), «Պապ ու թոռ» (2003), «Եղանակների կարուսել» (2005), «Գրքերի երամ» (2009) մանկ. բանաստեղծությունների ժող-ները:

ՀԳՄ Մ. Զորյանի անվ. (1989), Վ. Անանյանի անվ. (2006) մրց-ներ, ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» մեդալ (2015):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հակոբ Բաղդասարի (ծ. 18.2.1928, Բաթում), գրականագետ, հրատարակիչ-խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1986): Ավարտել է ԵՊՀ (1953): 1960–2009-ին աշխատել է ԵՊՀ հրատարակչությունում, 1972–95-ին (ընդհատումներով)՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Պ-ի «Գեղամ Տեր-Կարապետյան (Մշո Գեղամ, 1983)», «Սէյլան (Արշակ Սադոյեան): Կեանքը եւ ստեղծագործութիւնը» (2011) մենագրությունները, կազմել է «Խրիմյան Հայրիկ: Երկեր» (համահեղ., 1992), «Գեղամ Տէր-Կարապետեան (Տատրակ): Տարօնի աշխարհ» (1995), «Գ. Տէր-Կարապետեան: Տարօնի վանքերը: Ուղեւորի յիշատակներ» (2003) ժող-ները, «Երևանի պետական համալսարանի հրատարակչություն: Մատենագիտություն. 1920–2011»-ը (համահեղ., 2011):

ԵՊՀ ոսկե մեդալ (1999):

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հեղնար Արարատի (ծ. 15.2.1980, ք. Արարատ), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳԱ (2003): 2003–12-ին համագործակցել է «Անտարես», «Էդիթ Պրինտ» հրատարակչությունների հետ, աշխատակցել «Մուլտիշոկ» մանկ. և «Երևան» ամսագրերին:

Նկարազարդել է «Մանկական երգեր» (2003, տեքստերի հեղինակ՝ Յ. Սահակյան), «Մեր խեղճ իշուկը» (ֆրանս. ժող. բանաստեղծություն, փոխադր.՝ Յ. Սահակյանի, 2004), «Խնդրագիրք ամենափոքրիկների համար» (2004),

Հ. Ասլանյանի «Առակն իմաստուն ասում է մարդուն» (2005), Ե. Պետրոսյանի «Եղանակների կարուսել» (2005), Յ. Սահակյանի «Ասելուկներ Որսկան պապից» (2009), «Ձկնորս արջն ու մկնորս կատուն» (2012) և «Ռուս մանկագիրներ» (թարգմ. և փոխադր.՝ Յ. Սահակյանի, 2011) ժող-ները և այլ գրքեր:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հովհաննես Մնացականի (16.2.1892, Երևան–10.4.1961, Երևան), պետ. գործիչ, մատենագետ, մամուլի տեսաբան: Ավարտել է Երևանի հոգևոր սեմինարիան, դասավանդել է հայկ. դպրոցներում: 1934–35-ին՝ Կոմ. համալսարանի ռեկտոր, 1937–41 և 1945–61-ին՝ ՀԽՍՀ գրապալատի տնօրեն:

Կազմել է «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա» (համահեղ., 1941), «Հայկական սովետական գրականություն» (համահեղ., 1941), «Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիա» (1949), «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» (1953), «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» (հ. 1–3, 1954–57), «Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա» (1958) մատենագիտ. աշխատությունները, «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» (1960) կենսամատենագիտ. ժող-ը, մեթոդ. ձեռնարկներ:

Գրկ. ***Սարիբեկյան Հ., Հովհաննես Պետրոսյան: Մատենագետի կյանքն ու գործունեությունը, Ե., 2009:***

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սարսել Հայկազի (ծ. 1.4.1948, Ստեփանակերտ), գրող, լրագրող, խմբագիր: ԼՂՀ վաստ. լրագրող (2008): Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժ. ինստ-ը (1974): 1967-ից աշխատել է ԼՂԻՄ հեռուստառադիոպետկոմում. 1988–90-ին՝ գլխ. խմբագիր: 1993–95-ին՝ ԼՂՀ ՊՊԿ լրատվության և մամուլի դեպարտամենտի տնօրեն, 1995–96-ին՝ ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի փոխնախարար, 1996–98-ին՝ ԼՂՀ վարչապետի օգնական, 1998–2004-ին՝ ***«Մարտիկ»*** շաբաթաթերթի, 2004–08-ին՝ ***«Ազատ Արցախ»*** օրաթերթի, 2008–10-ին՝ Արցախի հանրային ռադիոյի գլխ. խմբագիր, 2010-ից՝ ԼՂՀ ԱԳՆ լրատվության բաժնի պետ:

Լույս են տեսել Պ-ի «Կախարդական ակնոցները» (1992), «Արցախյան առածանի-ասածանի» (1999), «Միջօրե» (2002), «Դերենիկը և կրկեսի փիղը» (2005) վիպակների, պատմվածքների, պիեսների, հեքիաթների ժող-ները:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց., «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (2002), «Անբասիր ծառայության համար» (2004), «Մխիթար Գոշ» (2011) մեդալներ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սարտին Վիրաբի [ծ. 10.3.1936, գ. Ծաղկաշեն (այժմ՝ գ. Ծաղկաբեր՝ ՀՀ Լոռու մարզում)], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1958): 1960-ական թթ-ին աշխատակցել է «Ծիծեռնակ» մանկ. ամսագրին:

Ձևավորել է «Պապն ու շաղգամը» (1963, փոխադր.՝ Խնկո-Ապոր), Հ. Թումանյանի «Գառնիկ ախպեր» (1963), Գրիմ եղբայրների «Զարմանալի աշուղը» (1969, թարգմ.՝ Հ. Թումանյանի), Վարդան Այգեկցու «Առակները» (1971), Ռ. Թոփչյանի «Արջուկի երազանքը» (1993), «Սագիկ Ղա-ղան» (1994) և այլ գործեր:

Գրկ. Մարտին Պետրոսյան [Կատալոգ], Ե., 2013:

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վարդգես Համազասպի (9.8.1932, Աշտարակ–15.4.1994, Երևան, թաղված է Աշտարակում), գրող, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1954): 1954–61-ին աշխատել է «Սովետական Հայաստան», «Ավանգարդ» և այլ թերթերի խմբագրություններում, 1961–66-ին՝ ***«Պիոներ կանչ»*** թերթի խմբագիր, 1967–75-ին՝ ***«Գարուն»*** ամսագրի հիմնադիր-խմբագիր: 1975–81-ին՝ ՀԳՄ վարչության առաջին քարտուղար, 1981–88-ին՝ նախագահ, 1988–94-ին՝ Հայաստանի մշակույթի հիմնադրամի նախագահ, 1994-ին՝ «Երկիր Նաիրի» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր:


Լույս են տեսել Պ-ի «Բալլադ մարդու մասին» (1958) բանաստեղծությունների, «Անավարտ դիմանկարներ» (1963), «Քաղաքի կիսաբաց լուսամուտները» (1964), «Հայկական էսքիզներ» (1969, 1984, 2013) էսսեների, «Ապրած և չապրած տարիներ» (1970), «Դեղատուն Անի» (1973), «Վերջին ուսուցիչը» (1980) վիպակների ժող-ները: Պ-ի ստեղծագործության մեջ ուշագրավ են հային և նրա ճակատագրին, արդիական խնդիրներին նվիրված «Մենավոր



Հեղնար Պետրոսյան. *«Խնդրագիրք ամենափոքրիկների համար» (2004, Ե., «Անտարես») գրքի կազմը*



Հովհաննես Պետրոսյանի *«Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» (հ. 2, 1957, Ե., Պետգրապալատ) գրքի կազմը*



Մարտին Պետրոսյան. *«Ծիծեռնակ» (1968, № 3) ամսագրի շապիկը*



Վարդգես Պետրոսյան



Վ. Պետրոսյանի *«Մենավոր ընկուզենին» (1981, Ե., «Սովետական գրող») գրքի կրկնաշապիկը*



«Պետություն և իրավունք», *1998-ից, Երևան (№ 3, 2012)*



Շահան Պերպերյան

ընկուզենին» (1981, կինոնկար՝ 1986), «Կրակե շապիկ» (1986) վեպերը: Պ-ի հրապարակախոս., ուղեգր., գրաքննադատ. նյութերն ամփոփված են «Հավասարում բազմաթիվ անհայտներով» (1977) ժող-ում:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1979):

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1983: Չորս վիպակ, Ե., 1990:

ՊԵՏՐՈՎԻԽ Մարիա Սերգեևնա [26.3.1908, քտա Նորսկի (Ռուսաստանի Յարոսլավլի նահանգ)–1.6.1979, Մոսկվա, ռուս բանաստեղծուհի, թարգմանչուհի: Ավարտել է ՄՊՀ գրակ-յան ֆակ-ը (1930, էքստեռն): Ավելի քան 40 տարի նվիրվել է հայ պոեզիայի թարգմանությանը (Հ. Հովհաննիսյան, Ա. Իսահակյան, Վ. Տերյան, Ն. Զարյան, Գ. Սարյան, Հ. Սահյան, Մ. Մարգարյան, Գ. Էմին, Ս. Կապուտիկյան, Հ. Կ. Հովհաննիսյան), խմբագրել է Ա. Իսահակյանի, Գ. Սարյանի և այլ բանաստեղծների ռուս. ժող-ները: Մասնակցել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի, Հ. Թումանյանի մեկհատորյակի, «Հայկական դասական քնարերգություն» և այլ ժող-ների կազմմանն ու հրատարակմանը: Պ. բանաստեղծություններ է նվիրել Հայաստանին («Աշխարհում միայն մեկ Հայաստան», «Եվ գաղտնիքները Սևանա կղզու»): Պ-ի բանաստեղծություններից թարգմանվել և հրատարակվել են հայ.:

ՀԳՄ Ե. Չարենցի անվ. մրց. (1979):

Երկ. Дальнее дерево, Е., 1968; Черта горизонта, Е., 1986.

Գրկ. **Մկրտչյան Լ.,** *Ճակատագրով այդպես է կանխորոշված: Նոթեր և հուշեր բանաստեղծ, թարգմանիչ Մ. Պետրովիխի մասին, Ե., 2003:*

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ», գիտագործն. եռամսյա հանդես: ՀՀ իրավաբանների միության հրատ.: Լույս է տեսնում 1998-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Լևոն Օհանյան: Լուսաբանում է միության գործունեությունը, տպագրում է պետության և իրավունքի տեսության, սահմանադր., քաղաքաց., քրեական, միջազգ. իրավունքներին վերաբերող գիտ. հոդվածներ (հայ., ռուս., անգլ.), ներկայացնում երիտասարդ գիտնականներին, անդրադառնում բնագավառի հոբելյանական միջոցառումներին:

ՊԵՐՊԵՐՅԱՆ Հայկ Նշանի (17.4.1887, Կ. Պոլիս–3.10.1978, Փարիզ), հայագետ, բանասեր, հաս-քաղ. գործիչ, խմբագիր: Ավարտել է Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանը: Եղել է Պողոս Նուբարի գլխավորած Ազգ. պատվիրակության քարտուղարը (1919–20): 1920-ից զբաղվել է գիտամանկավարժ. գործունեությամբ: 1963–77-ին՝ *«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»* հայագիտ. հանդեսի պատ. քարտուղար: Պ-ի ուսումնասիրությունները, հոդվածները հիմնականում տպագրվել են «Հանդէս ամսօրեայ» և «Ապագայ» պարբ-ներում:

Լույս են տեսել Պ-ի «Արշակ Բ եւ Քեօրօղլի» («Ապագայ», 1939), «Հայկականք» (հոդվածաշար, «ՀԱ», 1958, 1960, 1962, 1968), «Օսմանեան քանի մը վաւերագիր Իսթանպուլի հայոց եկեղեցիներէն ոմանց մասին» («ՀԱ», 1961), «Հայ-թուրքական գրականութիւն» (1963), «Նիւթեր Կ. Պոլսու հայոց պատմութեան համար» (1965, Վնն.), «Նիկեփոր Փոկասի ապստամբութիւնը եւ Դաւիթ Արծրունի» («ՀԱ»,1967), «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը XI դարուն երկրորդ կէսին» («ՀԱ», 1967) աշխատությունները: Պ. խմբագրել է Վարդան Արևելցու «Աշխարհացոյցի» գիտ. հրատ-ը (1960, Փ., 21 ձեռագիր և տպագիր աղբյուրների համեմատությամբ):

Հայագետ Մ. Կանարի հետ ֆրանս. է թարգմանել Արիստակես Լաստիվերցու երկը (1973, Բրյուսել):


Գրկ. **Մուրադյան Պ.,** *Հայկ Պերպերյան, «ՊՔՀ», 1979, № 1: Bibliography of Haig Berberian, «Armenian Studies» (edit. Dicran Kouymjian), Lisbon, 1986, p. XXI–XLI.*

ՊԵՐՊԵՐՅԱՆ Շահան Ռեթեոսի [1.1(13.1).1891, Կ. Պոլիս–9.10.1956, Փարիզ], մանկավարժ, երաժշտագետ, հոգեբան, փիլիսոփա: Ռեթեոս ***Պերպերյանի*** որդին: Ավարտել է Կ. Պոլսի՝ հոր հիմնադրած Պերպերյան վարժարանը, որտեղ էլ 1906–07-ին դասավանդել է: 1908-ից Փարիզում հետևել է Սորբոնի համալսարանի փիլ-յան և արվ-ների մասնաճյուղերի դասընթացներին: 1911–22-ին՝ Պերպեր-

յան վարժարանի տնօրեն: 1918-ին ընտրվել է Հայ ուսուցչ. միության կեդրոն. վարչության ատենապետ, 1919-ին՝ ուս. խորհրդի անդամ, գործունեորեն մասնակցել Կ. Պոլսի Հայ արվ-ի տան հիմնադրմանը (ստանձնել է նախագահությունը) և *«Բարձրալանք»* գրական-գեղ. հանդեսի հրատարակմանը: Դրեզդենում ուսումնասիրել է պարարվ-ը (1922–24): Եղբոր՝ Օ. Պերպերյանի հետ վերաբացել է Պերպերյան վարժարանը, 1924-ին տեղափոխել է Կահիրե: 1934-ին հրավիրվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան, հիմնադրել է (Հակոբ *Օշականի* հետ) Հայ մշակութ. միությունը (1940–47): 1944-ից Անթիլիասի դպրեվանքում դասավանդել է փիլ.:

Լույս են տեսել Պ-ի «Կոմիտաս վարդապետ. անձը եւ գործը» (1936), «Երկու ժամանակներ» (1943), «Գեղագիտութիւն եւ գեղարուեստ» (1975), «Բնազանցութիւն» (1978), «Իմաստասիրական ժողովածու» (1992), «Հոգեբանութիւն» (1992), «Թելադրանք հոգեւորականներու (1938–1944)» (2002) և այլ աշխատություններ:

Գրկ. Յովսէփեան Գ., Շահան Պէրպէրեան (1891–1956), «Հասկ», 1956, էջ 455–458: **Տէր-Խաչատուրեան Ա.,** *Շահան Ռ. Պէրպէրեան (1891–1956), Բ., 1969:*



Շ. Պերպերյանի *«Թելադրանք հոգեւորականներու (1938-1944)» (2002, Երուսաղեմ) գրքի կազմը*

ՊԵՐՊԵՐՅԱՆ Ռեթեոս Հակոբի (10.10.1848, Կ. Պոլիս–7.4.1907, Կ. Պոլիս), բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս, տնտեսագետ: Շահան *Պերպերյանի* հայրը: Ավարտել է Կ. Պոլսի Ներսեսյան վարժարանը (1866), եղել ուսուցիչ: 1876-ին Կ. Պոլսում հիմնադրել է Պերպերյան վարժարանը:

Լույս են տեսել Պ-ի «Առաջին տերեւք» (1877, ԿՊ, Եղիա Տնտեսյանի տպ.), «Խոհք եւ յուշք» (1904, Վնն., Մխիթարյան տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Երկու բանախօսութիւնք» (1880, ԿՊ, Ճանիկ Արամյանի տպ.), «Համառօտ քաղաքական տնտեսութիւն...» (1883, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Դրամ» (1886, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ.), «Մարդիկ եւ իրք. կրթական ճառեր...» (1885, նույն տպ.), «Առաջին գիրք գաղղիերէնէ ի հայ թարգմանութեան...» (1885, 1903, նույն տպ.), «Դաստիարակի մը խօսքերը...» (1901, Վնն., Մխիթարյան տպ.), «Դպրոց եւ դպրութիւն» (1907, նույն տպ.) աշխատությունները:

Հանդես է եկել նաև Հրաչյա գրական կեղծանունով:

Գրկ. **Կարապետեան Պ.,** *19-րդ դարու հայ մեծ դէմքեր, հ.1, Մեծ դաստիարակ եւ ուսուցչապետ Ռեթեոս Յ. Պէրպէրեան, ԿՊ, 1933:* **Թևոսյան Ա.,** *Ռեթեոս Պերպերյան: Փիլիսոփայական և հասարակական-քաղաքական հայացքները, Ե., 1989:*



Ռեթեոս Պերպերյան

ՊԶՏԻԿՅԱՆ Հարություն Սովսեսի (ծ. 27.7.1937, Բեյրութ), կրթ. և մշակույթի գործիչ, խմբագիր, նկարիչ: Փիլ-յան (1939), աստվածաբանության (1962), սոցիոլոգիայի (1966) դ-ր: Ֆրանսիայի գեղարվ-ի ակադ-ի պատվ. անդամ (1966): Ավարտել է Սբ Ղազարի դպրեվանքը (1956), Հռոմի Գրիգորյան համալսարանը (1962): Մխիթարյան միաբանության անդամ (1950-ից), վարդապետ (1962-ից): 1970-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1963–74-ին՝ Փարիզի Սամվել Մուրադյան, 1974–86-ին՝ Վենետիկի Մուրատ-Ռափայելյան, 1986–96-ին՝ Հալեպի Մխիթարյան վարժարանների տնօրեն, 1996–99-ին՝ Մխիթարյան միաբանության ընդհանուր տեղապահ: 1981–86-ին՝ *«Հայ ընտանիք»* թերթի խմբագիր, 1996-ից՝ «Բազմավէպ» խմբագրակազմի անդամ:

Լույս են տեսել Պ-ի «Ճամբորդական-հնախօսական նոթեր Կիլիկիային» (1973), «Ճամբորդական-հնախօսական նոթեր պատմական Հայաստանին» (1975), «Բոնի իսլամացած հայեր, Զ–ԺԹ դդ.» (2000), «Մխիթար վրդ. Սեբաստացիի եւ Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին» (2001), «Պատմական հողերու վրա» (2004), «Կիլիկիա եւ Սիւսա լեռ (պատմական ակնարկ)» (2013) աշխատությունները, «Հայաստանեան պատկերներ» (2004, 2006), «Խոհեր կեանքի մասին», «Երևանյան քրոնիկոն» (երկուսն էլ՝ 2004) հոդվածների, էսսեների, ակնարկների ժող-ները, «Տայք, Բարձր Հայք. վրացական, թէ հայկական» (2005) պատմաճարտ. երկը ևն:

Գրկ. Պզտիկեան արուեստագէտի մասին: Ազգային եւ միջազգային կարծիքներ, Ե., 2007:



Հարություն Պզտիկյանի *«Տայք, Բարձր Հայք...» (2005, Ե., «Զանգակ») գրքի կազմը*



«Պրլը Պուղի», *1991-ից, Սրեփհանակերտ*



Բորիս Պիոտրովսկու *«Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» (ռուս., 2011, ՍՊԸ) գրքի կազմը*



Անջեյ Պիսովիչի *«Փոքր բառարան հայ-լեհերեն, լեհ-հայերեն»-ի (համահեղ., 2006, Կրակով) կազմը*

«ՊՐԼԸ ՊՈՒՂԻ», երգիծ. ամսաթերթ: Արցախի գրողների միության հրատ.: Կոչվել է արցախցի զվարճախոս Պրլը Պուղու (1731–1810) անունով: Լույս է տեսնում 1991-ից Ստեփանակերտում: Խմբագիրներ՝ Վարդան *Հակոբյան*, Հրաչյա *Բեգլարյան*, Դավիթ *Միքայելյան* (2007-ից): Տպագրում է երգիծ-քննադատ. նյութեր, ծաղրանկարներ:

«ՊԻՈՆԵՐ», մանկապատանեկան պատկերազարդ ամսագիր (լույս է տեսել 1923–90-ին Երևանում), 1991-ից՝ *«Աղբյուր»*:

«ՊԻՈՆԵՐ ԿԱՆՉ», լույս է տեսել 1925–90-ին Երևանում, 1991-ից՝ *«Կանչ»*:

«ՊԻՈՆԵՐ ՂԵԿ», մանկապատանեկան կիսամսյա հանդես, ապա՝ ամսագիր: ՀԼԿԵՄ ԿԿ-ին կից պատանի պիոներների կենտր. բյուրոյի հրատ.: Լույս է տեսել 1925–34-ին Երևանում: Խմբագիրներ՝ Արտ. Բզնունի, Արմո Հարենց, Սերոբ Սարգսյան: Լուսաբանել է պիոներների առօրյան, աջակցել նրանց դաստիարակությանը:

Որպես «Պ. ղ.»-ի շարունակություն՝ լույս են տեսել «Կոլվար» (1935–36, խմբագիր՝ Ս. Սարգսյան), «Ձոկատավար» (1936–41, խմբագիրներ՝ Գեղամ Ալեքյան, Երվանդ Հարությունյան) ամսագրերը:

ՊԻՈՏՐՈՎՍԿԻ Բորիս Բորիսովիչ [1(14).2.1908, Ս. Պետերբուրգ–15.10.1990, Լենինգրադ], ռուս հնագետ, արևելագետ, պատմաբան: ՀԽՍՀ ԳԱ (1968) և ԽՍՀՄ ԳԱ (1970) ակադ., ՌԽՖՍՀ արվ. վաստ. գործիչ (1964), 1964-ից՝ Էրմիտաժի տնօրեն:

1939–71-ին Կարմիր բլուրում պեղել է Թեյշեբաինի բերդաքաղաքը, արժեքավոր տեղեկություններ ստացել Ուրարտուի մշակույթի ու արվեստի վերաբերյալ: Պ. ուսումնասիրել է նաև Կովկասի և Միջին Ասիայի վաղ ժամանակաշրջանի մշակույթները:

Լույս են տեսել Պ-ի «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» (1944, ԽՍՀՄ Պետ. մրց.՝ 1946, 2011), «Վանի թագավորությունը» (1959), «Ուրարտուի արվեստը» (1962) և այլ աշխատություններ:

Էրմիտաժի այն դահլիճը, որտեղ ցուցադրվում է Ուրարտուի մշակույթը կոչվել է Պ-ի անունով, 1997-ին հայր և որդի (Միխայիլ Պիոտրովսկի, 1992-ից՝ Էրմիտաժի տնօրեն, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ) Պ-երի անունով կոչվել է աստղակերպ:

Լենինի (3), Աշխատանքային կարմիր դրոշի (3) շքանշաններ:

Երկ. Археология Закавказья с древнейших времен до 1 тысячелетия до н. э., Л., 1949; Кармир-блур, т. 1–3, Е., 1950–55; Страницы моей жизни, СПб, 1995.

Գրկ. **Համայակյան Ս.***, Բորիս Պիոտրովսկի, «ՊԲՀ», 1998, № 3:*

ՊԻՍՈՎԻՉ (Pisowicz) Անջեյ [ծ. 2.11.1940, գ. Սիեդլիսկա (Կրակովի մոտ, Լեհաստան)], լեհ հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1974): 1963-ին ավարտել է Կրակովի Յագելոնյան համալսարանի արևելագիտ-յան ֆակ-ը, 1961–63-ին ԵՊՀ-ում հետևել է հայոց լեզվի դասընթացներին: 1967 և 1971-ին Սորբոնի համալսարանում աշակերտել է Ֆրեդերիկ *Ֆեյդիին* և Շառլ *Մերսիեին,* հմտացել է գրաբարի և արևմտահայ-ի մեջ: 1976-ից՝ Յագելոնյան համալսարանի պարսկագիտ-յան բաժնի վարիչ, դասավանդում է հայոց լեզու:

Լույս են տեսել Պ-ի «Հայերենի բաղաձայնական համակարգի զարգացումը» (ֆրանս., 1976) աշխատությունը, «Փարպիի բարբառը», «Երեք լեզվի քերականություն. գրաբար, արևելահայերեն և արևմտահայերեն» (երկուսն էլ՝ լեհ., 2001) ուսումնասիրությունները: Թարգմանել է Ռ. Իշխանյանի «Հայ գիրքը. 1512–1920» աշխատությունը (1994, Վրոցլավ), Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Պ. Սևակի ստեղծագործություններից: Համահեղինակ է «Փոքր բառարան հայ-լեհերեն, լեհ-հայերեն» (2006,Կրակով) բառարանի: Պ-ի նախաձեռնությամբ ֆրանս-ից լեհ. է թարգմանվել Հայոց ցեղասպանության մասին Իվ Տերնոնի «Մի ցեղասպանության պատմություն» երկը:

ՊԻՐԱՄՈՎԻՉ Գժեգոժ Յակոբ (Գրիգոր Հակոբի, հոգևոր անունը՝ Վինցենտի, 1735, Լվով–1801, Լվով), հայազգի մանկավարժ, լուսավորիչ, թարգմանիչ, կաթոլիկ եկեղեցու գործիչ: Աստվածաբանության դ-ր (1766): Սովորել է Լվովի ճիզվիտ. ճեմարանի փիլ. բաժանմունքում, ավարտել Լվովի աստվածաբան. ակադ-ը (1764), որտեղ

1770–73-ին դասավանդել է տրամաբանություն: Կրակովի բարձրագույն թագավոր. դպրոցի փիլ-յան պրոֆ. (1779), Հռոմի «Արկադիա» ակադ-ի անդամ:

«Ծխական դպրոցի ուսուցչի պարտականությունները» (1787), «Պերճախոսություն և արվեստ քերթության՝ ազգային դպրոցների համար» (1792), «Ծիսակարգերի գիտություն ժողովրդի համար» (1802) և այլ աշխատություններում առաջադրել է ուսուցման սխոլաստիկ ձևերն ու մեթոդները վերանայելու, կանանց կրթության գործը կազմակերպելու, երեխաներին հայրենասիրության ոգով դաստիարակելու, ֆիզ. վարժանքներ արմատավորելու և այլ հարցեր:

ՊԼԱԿԱՏ (գերմ.՝ Plakat, < ֆրանս. placard–հայտարարություն, ազդագիր), 1. պոլիգրաֆ. եղանակով ընդօրինակված արվ-ի ստեղծագործություն՝ հակիրճ տեքստով, աչքի զարնող պատկեր՝ սովորաբար՝ գունավոր, թղթե մեծ թերթի վրա, որն օգտագործում են քարոզչ., գովազդային, տեղեկատվ. կամ ուսուցող. նպատակներով: 2. Գրաֆիկայի տեսակ: Պ-ի ծագումը (նախ՝ գովազդային, ապա՝ քաղ.) պայմանավորված է տնտեսության մեջ առևտր. և արդ. մրցակցությամբ, հաս-քաղ. և մշակութ. կյանքի առավել լարվածությամբ (արդ. և գեղ. ցուցահանդեսներ, զանգվածային ցույցեր ևն): Գովազդային Պ. երևան է եկել XIX դ-ի 2-րդ կեսին Արմ. Եվրոպայում, XIX դ-ի վերջին առավել զարգացել է Ֆրանսիայում (Ժ. Շերե, Ա. Թուլուզ-Լոտրեկ, Թ. Ստեյնլեն և ուր.):

Հայկ. Պ-ի առաջին նմուշներն ազդագրային էին, որտեղ գերիշխել է տեքստը: Ուշագրավ է 1849-ին Թիֆլիսում Կ. Պոլսի «Արամյան թատրոնի» հյուրախաղերի ազդագիր-Պ.: Հայկ. Պ-ի առաջին նմուշը Ճ. Արամյանի «Մայր Հայաստան» («Ոգի Հայաստանի», «Անիի ավերակներ») նկարն է. տպագրվել է 1861-ին Փարիզում:

Խորհրդ. Հայաստանում Պ. լայնորեն կիրառվել է 1920–30-ական թթ-ին, առավել զարգացել 1950-ական թթ-ից: Ժամանակակից թատեր. և երաժշտ. ազդագրերին զուգահեռ ի հայտ են եկել գովազդային վահանակները: Ուշագրավ Պ-ներ են ստեղծել Սերգեյ ***Արտուչյանը***, Ա. Վարդանյանը, Է. Արծրունյանը, Է. Սեդրակյանը, Ա. Քոլոզյանը, Ալբերտ ***Ապյանը,*** Լ. Կարսյանը, Հ. Մանուկյանը, Ա. Մանուկյանը, Ա. Ակնունին և ուր.:



Գժեգոժ Պիրամովիչ



Ճանիկ Արամյանի «Մայր Հայաստան» (1861) **պլակատը**

ՊԼԱՏՈՆ, **Պղատոն Աթենացի** (Արիստոկլես, մ. թ. ա. 428/427–348/347), հույն փիլիսոփա, անտիկ իդեալիզմի խոշորագույն ներկայացուցիչը: Աշակերտել է Կրատիլոսին և Սոկրատեսին: 397-ին հիմնադրել է սեփական դպրոցը՝ Պլատոնյան ակադ-ը: Պ-ի գրական հարուստ ժառանգությունից պահպանվել են փիլ. 34 երկխոսություն («Ֆեդոն», «Թեետետոս», «Խրախճանք», «Ֆեդրա», «Մենոն», «Պարմենիդես», «Սոփեստ», «Տիմեոս», «Ֆիլեբոս», «Պետություն», «Օրենքներ» ևն), «Սոկրատեսի ջատագովությունը» ճառը, էպիգրամներ ու նամակներ:

Պ-ի գաղափարները ելակետ են եղել պլատոնականության (մ. թ. ա. IV դ.–մ. թ. III դ.) և նորպլատոնականության (III–IV դդ.) համար:


Հայ իրականության մեջ Պ-ի ուսմունքը և պլատոնականությունը տարածվել են V դ-ում և զգալիորեն նպաստել են փիլ. գիտ-յան ձևավորմանը: Հայ. թարգմանվել և Վենետիկի Սբ Ղազարի տպարանում տպագրվել են Պ-ի «Փեդոն կամ Վասն անմահութեան հոգւոյ» (1870), «Տրամախօսութիւնք՝ Եւթիփռոն, Պաշտպանութիւն Սոկրատայ եւ Տիմէոս» (1877), «Տրամախօսութիւնք՝ յաղագս օրինաց եւ Մինովս» (1890) աշխատությունները:




Պլատոնի *«Երկեր»-ի (հ. 1, 2006, Ե., «Սարգիս Խաչենց») կազմը*

Երկ. Երկեր, հ. 1–4 (հին հուն-ից թարգմ., ծնթգր.՝ Ս. Մտեփանյանի), Ե., 2006:


Գրկ. **Արևշատյան Ս.**, *Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը, «ԲՄ», 1971, № 10:*



«+ Կինո», *2008-ից, Երևան (№ 5, 2012)*



Պլուտարքոսի *«Զուգակշիռք» (հ. 5, 1834, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Հակոբոս Պոզաճյանի *«Համառօտ բառարան տաճկերէն-հայերէն»-ի (1858, Վնն.) տիտղոսաթերթը*

«+ ԿԻՆՈ», կինոարվ-ի եռամսյա հանդես: ՀՀ կինեմատոգրաֆիստների միության և մշակույթի նախարարության հրատ.: Լույս է տեսնում 2008-ից Երևանում: Գլխ. խմբագիրներ՝ Արտյոմ Երկանյան, Ռոբերտ *Սևթոյան* (2012-ից): Ներկայացնում է կինոաշխարհի ուշագրավ իրադարձությունները, անդրադառնում է նաև թատերարվին, գեղանկարչությանը, ճարտ-յանը, կիրառ. արվ-ին, քաղաքաշինությանը, գեղ. լուսանկարչությանը ևն:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ Քերովնացի (մոտ 46–մոտ 127), հույն պատմագիր, բարոյախոս, փիլիսոփա: Պ-ի բարոյափիլ. և պատմագիտ. հայացքներն արտահայտված են նրա «Զուգահեռ կենսագրություններ» (հայ. հրտ.՝ «Զուգակշիռք», հ. 1–6, 1832–35, Վնտ., Սբ Ղազարի տպ., «Կենսագրություններ», 2001, Ե.), «Բարոյականք» (հայ. հրտ.՝ 1860, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.) աշխատություններում:

Երկ. Երկեր (Տրակտատներ), Ե., 1987:

ՊՈՋԱՃՅԱՆ Հակոբոս (6.8.1808, Անկարա–1.10.1883, Վիեննա), բառարանագիր: Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր (1855-ից): Դասավանդել է միաբանության դպրոցում: Միաբանությանը կից հիմնադրել է (Ա. Ազատյանի և ուր. հետ) Արամյան ընկերությունը (1843–1920), հրատարակել գեղ., հայագիտ-բանասիր. և թարգման. գրակ.:

Լույս են տեսել Պ-ի «Քերականութիւն իտալական լեզուի» (1836) աշխատությունը, «Համառօտ բառարան ի հայէ ի տաճիկ ի պէտս դպրոցաց» (հ. 1, 1838, 25 000 բառ), «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ, ի պէտս դպրոցաց» (հ. 2, 1841, 45 000 բառ), «Համառօտ բառարան տաճկերէն-հայերէն» (1858) բառարանները (բոլորը՝ Վնն., Մխիթարյան տպ.), որտեղ թուրք-ը հայատառ է: Կազմել է նաև թուրք-հայ-իտալ-լատ-ֆրանս-գերմ. բազմալեզվյան բառարան (անտիպ է):

ՊՈԼԱՏ (Փոլադ, Փոլատյան) Տիգրան Պետրոսի [1874, Ալեքսանդրիա–7.2.1950, ք. Շարպոն (Ֆրանսիա)], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: 1888-ին հաստատվել է Փարիզում. հաճախել է Էդգար *Շահինի* արվեստանոցը, սովորել Ժյուլիեն ակադ-ում:

Պ. եղել է գրքի գրաֆիկայի նրբաճաշակ ու հմուտ վարպետ. պատկերազարդել է Ա. Ֆրանսի «Սուրբ Կարապի ջրհորը» (1904), Պ. Շենի «Առնետի հուշատետրը» և «Ֆերդինանդի մեկնաբանությունները» (1920), Ժերոմ և Ժան Տարոների «Ավազ շաբաթը Սևիլիայում» (1925), Ռ. Բուալեի «Հավերժահարսների և սատիրների պարը» (1929), Զ. Բոկաչչոյի «Պատմվածքներ», Ժ. Լաֆոնտենի «Առակներ» (1929, կենդանիների փոխարեն մարդկանց կերպարներով), արք. Շարտրի «Խաչի ճանապարհը» (1948, Հին և Նոր կտակարանների թեմաներով) և այլ գրքեր: Լույս է տեսել «Տիգրան Փոլադ. 1874–1950» կատալոգը (2007, հայ., ֆրանս., կազմ.՝ Ն. Թադևոսյան):

Մասնակցել է Ֆրանսիայի արվեստագետների «Նասիոնալ» և այլ ընկերությունների ցուցահանդեսների (երկու 1-ին մրց.):

Գրկ. **Շիշմանյան Ռ.**, *Բանկարն ու հայ նկարիչները, Ե., 1958:* **Խաչատրյան Շ.**, *Ֆրանսահայ կերպարվեստ, Ե., 1991:* **Avédisian O.**, *Peintres et sculpteurs arméniens, Le Caire, 1959.*

ՊՈԼԻԳՐԱՖԻԱ (բառացի՝ **բազմագրություն**), տեխնիկայի բնագավառ, տեքստային նյութերի և գրաֆիկ. պատկերների բազմաքանակ վերարտադրման տեխ. միջոցների ամբողջություն: Պ. նաև արդ-յան բնագավառ է՝ պոլիգրաֆ. արդ.: Պ-ի հիմն. արտադր. շարժընթացներն են ***տպագների պատրաստումը***, տպագրությունը, տպագրված արտադրանքի վերջնամշակումը (տես *Բրոշյուրավորում):*

Պոլիգրաֆիական արդյունաբերության տպագիր արտադրանքի (լրագիր, գիրք, ամսագիր, պլակատ, քարտեզ ևն) ձեռնարկությունները, ըստ արտադրության բնույթի, անվանվում են տպարան, տպավիմագրատուն, գունավոր և օֆսեթ տպագրության ֆաբրիկա, պոլիգրաֆկոմբինատ (ունի տպագրության մի քանի եղանակ, ամփոփում է մի շարք տեխնոլոգ. շարժընթացներ) ևն: Ըստ թողարկվող արտադրանքի՝ ձեռնարկությունները լինում են համապիտանի կամ մասնագիտացված՝ գրքի, լրագրի, լրագրի-ամսագրի ևն:

Հայաստանում պոլիգրաֆ. արդ–ը ձևավորվել է XIX դ–ի վերջին քառորդին, XX դ–ի 20–ական թթ–ին այն ընդգրկել է Երևանի, Ալեք–սանդրապոլի, Վաղարշապատի, Ղարաքիլիսայի և Նոր Բայազետի 12 մանր տնայնագործ. ձեռնարկություններ, որոնց հրատարակած գրքերի տպաքանակը փոքր էր: Քիչ թե շատ տեխնիկա և սարքավորում ունեցել է միայն Երևանի նահանգ. պետ. տպարանը (տես ***Ալեքսանդրապոլի տպագրություն, Երևանի տպագրություն, Էջմիածնի տպարան***):

Խորհրդ. Հայաստանի պոլիգրաֆ. արդ–յան առաջնեկը 1929–ին գործարկված Երևանի միացյալ (№ 1) տպարանն էր, որը համալրվել է ***փողաձուլաշար*** (լինոտիպ), տպագր. ինքնադարսիչ, գլանատիպ ռոտա–ցիոն առաջին մեքենաներով, կազմարար. և ցինկոգրաֆ. սարքավո–րումներով: Հետագայում ստեղծվել է Քաղհիրատի տպարանը, 1952–ին գործարկվել է Պոլիգրաֆկոմբինատը (այժմ՝ ***«Հակոբ Մեղապարտ տպագրատուն»***), 1976–80–ին հիմնադրվել են ***Գունավոր տպագրության*** (այժմ՝ «Զվարթնոց», հիմնականում՝ օֆսեթ եղանակով) և ՀԿԿ ԿԿ–ի հրա–տարակչության (այժմ՝ ***«Տիգրան Մեծ»*** հրատարակչություն) տպարանները:

1983–ին ՀԽՍՀ պոլիգրաֆ. արդ–ն ընդգրկել է քաղաքային 10 (որից 6–ը՝ խոշոր), շրջ.՝ 36, գործարանային և բուհ.՝ 17 մանր տպարաններ, ինչպես նաև մեծ քանակությամբ ռոտոպրինտային արտադրամասեր, ներդրվել են տողաձուլաշար, ***ռոտացիոն մեքենաներ***, թելակար և ավտոմատ այլ սարքեր: Յուրացվել են լուսաշարվածքի և ***կլիշեների*** էլեկտրոնային փորագրման տեխնոլոգիաները: Պոլիգրաֆ. արդ–յան նյութատեխ. հենքի ընդլայնման շնորհիվ կտրուկ աճել է ձեռնարկու–թյունների թողունակությունը. եթե 1922–ին լույս են տեսել ընդամենը 57 անուն գիրք և 4 անուն հանդես, ապա 1982–ին թողարկվել են (4 լեզվով) ավելի քան 1000 անուն գիրք և բրոշյուր՝ 10,4 մլն, 90 հանդես՝ 22 մլն, 87 լրագիր՝ 244 մլն տպաքանակով:

ՀՀ անկախացումից հետո պոլիգրաֆ. արդ–յան ոլորտը սեփա–կանաշնորհվել է, վերասարքավորվել է նոր մեքենաներով, նախկին տպարանների մեծ մասը համալրվել է, բացվել են բազմաթիվ նոր, ժամանակակից տպարաններ:

ՀՀ պոլիգրաֆ. արդ–ը ներկայում թողարկում է գրահրատ–յան ժամանակակից պահանջները բավարարող բազմաթիվ ու բազմա–տեսակ արտադրանք:

Տես նաև ***Հայկական տպագրություն:***

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Լէօ, *Հայկական տպագրութիւն, հ. 1–2, Թ., 1901–02:* Իշխանյան Ռ., *Հայ գրքի պատ–մություն, հ. 1, Ե., 1977:* Խաչատրյան Վ., *Գրահրատարակչական գործը Հայաստանում (2000–2002), Ե., 2003:*

«ՊՈԼԻԳՐԱՖԻՍՏ», եռամսյա հանդես: ՀԽՍՀ պոլիգրաֆարդ–յան և հրատարակչությունների գիտատեխ. ընկերության հանրապետ. վարչության հրատ.: Լույս է տեսել 1957–89–ին Երևանում: Խմբագիր–ներ՝ Աշոտ ***Մնարփիկյան***, Սուրեն Խաչատրյան: Տպագրել է հանրապե–տության տպարանների աշխատանքները լուսաբանող հոդվածներ, ծանոթացրել հայրեն. և արտասահմ. պոլիգրաֆ. տեխնիկայի և տեխնոլոգիայի նորություններին, ներկայացրել անվանի պոլիգրա–ֆիստներին, հայ գիրքը՝ միութ. և միջազգ. ցուցահանդեսներում:

ՊՈՂԱՐՅԱՆ Նորայր Գարեգինի [17.1.1904, Այնթապ (Դաշտա–յին Կիլիկիա)–19.12.1996, Երուսաղեմ], բանասեր, ձեռագրագետ, հայագետ, խմբագիր, մատենագետ: Երուսաղեմի Սբ Հակոբյանց միաբանության անդամ (1928–ից), արքեպիսկոպոս (1973–ից): Սո–վորել է Այնթապի Վարդանյան վարժարանում, ապա՝ Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքի դպրոցում (1922–28): Մանչեստրի համալսա–րանում հետևել է աստվածաբանության դասընթացների (1928–30): 1930–35–ին և 1941–ից եղել է ուսուցիչ Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, 1935–40–ին՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարա–



Ժամանակակից տպագրական մեքենա




Հինգ գույնով տպագրող օֆսեթ մեքենա



«Պոլիգրաֆիստ», *1957–89, Երևան (№ 2–3, 1977)*



Նորայր Պողարյանի *«Հայ գրողներ» (1971, Երուսաղեմ) գրքի կազմը*



Պողոս Տարոնացու *«Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ» (1752, Կ. Պոլիս, Ձնչին Հովհաննեսի տպ.) գրքի տիտղոսաթերթը*



Արտաշես Պողոսյանի *«Պոեմներ» (1958, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

նի դպրեվանքի տեսուչ, 1949–92-ին՝ Երուսաղեմի մատենադարանի տնօրեն, 1936–39-ին՝ *«Հասկ»* պարբ-ի խմբագիր:

Լույս են տեսել Պ-ի «Հայ գրողներ (Ե–ԺԷ դար)» (1971), «Հայ նկարողներ (ԺԱ–ԺԷ դար)» (1989), «Ծիսագիտութիւն» (1990), «Տաթեւեանց սերունդ» (1991), «Հայկական խաչեր» (1991), «Հայ գրիչներ (Թ–ԺԷ դար)» (1992), «Հայ եկեղեցւոյ Հաւատոյ հանգանակները» (1993), «Գրիգոր Նարեկացի-ներբողներ» (1995), «Ժամակարգութիւն (ԺԶ դար)» (1996) բանասիր., պատմագիտ., աստվածաբան. աշխատությունները: Կազմել է Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքի հայկ. ձեռագրերի ցուցակը՝ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց» (հ. 1–11, 1966–91. նկարագրել է 3890 ձեռագիր. առաջին անգամ ներկայացրել է բնագրագիտ. մի շարք նորահայտ մեծարժեք ձեռագրեր), Հովհաննես Թլկուրանցու «Տաղագիրք» (1958) ժող-ը, Գրիգոր Ակներցու «Թաթարաց պատմութիւն» (1974) երկը, խմբագրել, վերակազմել և հրատարակել է «Գիրք թղթոց»-ի (1994) գիտ. բնագիրը:

Հանդես է եկել նաև Ծովական և Վանատուր գրական կեղծանուններով:

Գրկ. **Տեմիրճեան Վ.,** *Նորայր արք. Պողարեան, «Հասկ», 1995–96, 1997, էջ 673–679, «Միտն», 1997, էջ 263–377:*

ՊՈՂԻԿՅԱՆ Աբո Շահենի [ծ. 11.11.1956, գ. Այնճար (Լիբանան)], խմբագիր: Ավարտել է Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանը (1978): 1979–82-ին՝ նույն համալսարանի հայագիտ. ամբիոնի օգնական-դասախոս, 1990–91-ին՝ ՀՅԴ երևանյան գրասենյակի մամլո տեղեկատուի պատասխանատու, *«Երկիր»* օրաթերթի հիմնադիր-խմբագիր, 1985–90 և 2008-ից՝ ՀՅԴ *«Ասպարէզ»* օրաթերթի գլխ. խմբագիր:

ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑԻ, **Պողոս Վարդապետ** (ծ. թ. անհտ–1123), աստվածաբան, եկեղեց. գործիչ, Սշո Առաքելոց վանքի առաջնորդ: Ի պատասխան հույն փիլիսոփա և թարգմանիչ Թեոփիստեի հունադավան (երկաբնակ) բովանդակությամբ ուղերձի՝ 1101-ին գրել է **«Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ»** երկը (1122-ին ընդարձակել և դարձրել է գիրք), որով վայելել է հայ միաբնակ եկեղեցու ջատագովի համբավ:

«Թուղթ...»-ը տպագրվել է 1752-ին Կ. Պոլսում՝ Ձնչին Հովհաննեսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Թուղթ Երանելոյն Պօղոսի Տարօնացւոյ յաղթօղ ախոյեան վարդապետի...» (358 էջ, 4º, 15 x 9,5 սմ):

Պ. Տ. գրել է նաև «Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ...», «Յաղագս քառասնորդաց պահոց», «Յաղագս առաջաւորաց պահոց» (անտիպ) գործերը:

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Պատմութիւն հայ հին դպրոթեան, Վնտ., 1932:* **Ալիշան Ղ.,** *Հայապատում, Վնտ., 1901:* **Մանուչարյան Հ.,** *Պողոս Տարոնացի, Ե.,1982:*

ՊՈՂՈՍՅԱՆ Արտաշես Ալեքսանդրի [27.5.1922, գ. Խծաբերդ (այժմ՝ ԼՂՀ Հադրութի շրջանում)–2.12.1997, Երևան], բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ (1953), սովորել է Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի գրական բարձրագույն դասընթացներում (1958–60): 1953–58-ին աշխատել է «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրությունում, 1967–71-ին՝ Սամուլի պետ. կոմիտեում, 1971–75-ին՝ «Հայաստան» հրատարակչությունում:

Լույս են տեսել Պ-ի «Փոթորկից հետո» (1955), «Պոեմներ» (1958), «Բախտը դժվար է տրվում» (1967), «Արյունոտ լուսաբաց» (1969), «Կապույտ հանգրվան» (1972), «Հիմն հողի և արևի» (1975), «Բանաստեղծություններ և պոեմներ» (1983), «Աստղափունջ» (2012) բանաստեղծությունների, պոեմների, արձակ գործերի ժող-ները, «Հրաժեշտ անցյալին» (1978) վեպը: Թարգմանել է Պ. Ներուդայի, Ա. Տվարդովսկու, Ա. Բլոկի և այլ հեղինակների գործերից:

ՊՈՂՈՍՅԱՆ Հովհաննես Գևորգի (12.3.1895, Թիֆլիս–3.12.1948, Երևան), կրթության, մշակույթի գործիչ, խմբագիր: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1916), Երևանի մանկավարժ. ինստ-ը (1934): 1917-ին Դիլիջանում հրատարակել է «Զանգակ» խմորատիպ թերթը: Վրաստանում խորհրդ. կարգերի հաստատումից հետո եղել է Թիֆլիսի հայ գրողների միության նախագահը, 1923-ից աշխատել է «Կարմիր ծիլեր» մանկ. ամսագրի խմբագրությունում, ղեկավարել Թիֆլիսի հայկ. դրամատիկ. թատրոնը: Միաժամանակ եղել է

Համկ(բ)Կ Անդրերկրկոմի մամուլի բաժանմունքի վարիչը: 1927–38-ին Թիֆլիսում՝ «Պրոլետար» (հետագայում՝ *«Սովետական Վրաստան»*), 1934-ին Երևանում՝ *«Խորհրդային Հայաստան»* թերթերի խմբագիր: 1936–37-ին՝ ՀԽՍՀ լուսժողկոմ, 1938-ից՝ արվ-ի գործերի վարչության պետ, Ռադիոկոմիտեի նախագահ, 1946–48-ին՝ ԵՊՀ ռեկտոր:

ՊՈՂՈՍՅԱՆ Հռիփսիմե Միսակի (6.5.1899, Թիֆլիս–26.11.1972, Երևան), բանաստեղծուհի, թարգմանչուհի: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Սովորել է Անդրկովկասյան համալսարանի (Թիֆլիս) պատմալեզվագր. ֆակ-ում:

Թարգմանել է Ա. Պուշկինի, Վ. Մայակովսկու, Պ. Տիչինայի, Յ. Կուպալայի, Մ. Լերմոնտովի, Պ. Տիչինայի, Կ. Չուկովսկու և ուր. ստեղծագործություններից: Լույս են տեսել Պ-ի «Բանաստեղծություններ» (1930), «Մայրական» (1936), «Խնդություն» (1948), «Հավատարմություն» (1954), «Անձրևից հետո» (1958), «Աստղային ճամփորդը» (1963), «Երեկո» (1966) բանաստեղծությունների ժող-ները, «Արձագանք» (1973) հուշագրությունը:

Գրկ. Հռիփսիմե Պողոսյան: Մատենագիտություն, Ե., 1976:

ՊՈՂՈՍՅԱՆ Ստեփան Կարապետի [10.2.1932, գ. Ահագչի (այժմ՝ գ. Ջովասար՝ ՀՀ Արագածոտնի մարզում)–18.5.2012, Երևան], պատմաբան, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1955): 1970–88-ին՝ Հեռուստառադիոպետկոմի նախագահ, 1988–90-ին՝ *Արմենպրեսի* տնօրեն, 1990-ին՝ Հայաստանի մամուլի և հրատարակչությունների պետկոմի նախագահ, 1990–91-ին՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, 1991–92-ին՝ «Երկիր ավետյաց» թերթի խմբագիր:

Լույս են տեսել Պ-ի «Պատմության կեղծարարները» (1986, անգլ. և հայ., Լոնդոն), «Գոյատևման պայքարի քառուղիներում» (1989), «Ինքնապաշտպանական կռիվները» (1990), «Ա. Անտոնյանի «Մեծ ոճիրը» մեղադրում է» (1990), «Քրդերը և Հայկական հարցը» (1991), «Սև ծովից Վանա ծով: Հինգ ամիս, հինգ օր» (1992), «Արևմտահայությունը ցեղասպանության շեմին» (1997), «Սասունցիներ» (2000, 2011), «Թուրքերը թուրքերի մասին» (համահեղ., 2000), «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» (համահեղ., հ. 1–3, 2000–03), «Հայացք անցյալին. հանուն այսօրվա ու վաղվա» (2002), «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. նահատակներ հավերժության» (2005), «Հայոց ցեղասպանության պատմություն» (2008), «Հարևաններ մոտ ու հեռու: Պատմագիտական ուսումնասիրություններ» (գիրք 1–3, 2011) աշխատությունները, «Ինձ բահ տվեք...» (համահեղ., 1990) վավերագր. վեպը:

ՊՈՂՈՍՅԱՆ Վալերի Վաղարշակի (ծ. 25.3.1944, Երևան), ֆիզիկոս, փիլիսոփա: ՀՀ ՆԳ գեն-մայոր (1992): Փիլ. գիտ. թեկնածու (1974): Ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակ-ը (1966): 1967–90-ին (ընդհատումներով) աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում, 1991–92-ին՝ ՀՀ ՆԳՆ նախարար, 1992–93-ին՝ ԱԱՊՎ պետ, 1993–96-ին՝ ՀՀ ԳԽ նախագահի խորհրդական, 1996–2014-ին՝ ՀՀ Սահմանադր. դատարանի անդամ:

Լույս են տեսել Պ-ի «Գաղափարախոսությունը և սահմանադրությունը» (համահեղ., 1992), «Մարդու իրավունքներ. նախագիտելիք» (2012), «Սահմանադրագիտություն. նկատառումներ, հիմնախնդիրներ» (2014) աշխատությունները, «Մարդու իրավունքներ. հասկացություններ, սկզբունքներ, մոտեցումներ» (2002) ուս. ձեռնարկը: Կազմել է «Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարանը» (2001), «Ժողովրդավարություն և իրավունք. հանրագիտական բառարանը» (2003), «Քաղաքագիտություն. հանրագիտական բառարանը» (համահեղ., 2004):

ՊՈՂՈՍՅԱՆ Տաճատ [1905, գ. Հավթվան (Ատրպատականի Սալմաստի գավառ, Իրան)–1981, Թեհրան], մանկավարժ, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1918-ին՝ ճեմարանի փակվելուց հետո, Թավրիզի թեմ. կենտր. դպրոցում: 1923-ից դասավանդել է իրանահայ դպրոցներում: 1935-ից աշխատել է *«Ակիք»* օրաթերթի խմբագրությունում, 1949–55 և 1973–74-ին՝ գլխ. խմբագիր, 1937–39-ին՝ «Նաւասարդ», 1943–46-ին՝ «Լոյս» գրական և գիտ. հանդեսների (Հովսեփ *Թաղևոսյանի* հետ) հրատարակիչ-խմբագիր:



Ստեփան Պողոսյան



Ս. Պողոսյանի *«Հարևաններ մոտ ու հեռու» (գիրք 2, 2011, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Վալերի Պողոսյանի *«Սահմանադրագիտություն. նկատառումներ, հիմնախնդիրներ» (2014, Ե., ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն) գրքի կազմը*

1942–ից՝ Թեհրանի «Մոդեռն» տպարանի կառավարիչ, 1968–ից՝ տպարանի սեփականատեր. տպագրել է հիմնականում դասագրքեր իրանահայ դպրոցների համար, նաև գեղ., պատմ. և այլ գրքեր [Հովհաննես ավագ քին. Հաճյանի «Հայոց տաժանքի ճամբաներով» (հ. 1–2, 1965) երկը, Ն. Գորոյանցի «Պարսկաստանի հայերը» (1968) ուսումնասիրությունը ևն]: 1969–70–ին լույս է ընծայել «Րաֆֆի» տարեգիրքը, 1969–ից՝ նույնանուն օրացույց:



Զապել Պոյաճյան


ՊՈՅԱՃՅԱՆ Զապել (Բոյաջյան Զաբել) Թովմասի (1872, Դիարբեքիր–26.1.1957, Լոնդոն), գրող, թարգմանչուհի, նկարիչ-ձևավորող: Սովորել է Լոնդոնում՝ Ֆ. Սլեյդի արվ-ի դպրոցում, բելգիացի նկարիչ Ա. Քերթսոնի արվեստանոցում (1914):

Կազմել, պատկերազարդել և հրատարակել է «Հայկական լեգենդներ և պոեմներ» (1916) ժող-ը (առաջաբ.՝ Արամ Րաֆֆու), մշակել «Գիլգամեշ» (1924) ասուրա-բաբել. էպոսը, գրել է «Եսթեր» (1901) վեպը, «Գրչով և ներկապնակով Հունաստանում» (1938) ճամփորդ. նոթերը, «Էջմիածին» (1943) դրաման (բոլորը՝ անգլ.): Անգլ. է թարգմանել հայ գրողների երկերից (Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի», 1948, ևն):

Պ. հանդես է եկել նաև Վարդենի գրական կեղծանունով:

Գրկ. **Խորշիդյան Տ.**, *Զաբել Բոյաջյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1990:*

ՊՈՆՅԻՈՒՍ, Ֆրա Բոնիֆացիուս, Ապոնց, XIV դ–ի 1–ին կեսի աստվածաբան և թարգմանիչ, Ֆրանցիսկյան միաբանության անդամ: Գործել է Ծործորի վանքում: Տիրապետել է հայ–ին: Լատ–ից թարգմանել է փիլ. գրակ–յան մի շարք գործեր, ինչպես նաև կաթոլիկ. եկեղեցու Պատարագամատույցը: Ձեռագրերը պահվում են Մատենադարանում:



Մկրտիչ Պոտուրյան

«ՊՈՍԼԱՆԻԵՑ ՇՎԻԵՆՏԻԵԳՈ ԳԺԵԳՈՒԺՍ» («Սբ Գրիգորի սուրհանդակ»), պատմաբանասիր., գրական, մշակութ. և եկեղեց. հանդես: Հայ կաթոլիկ եկեղեցու, այնուհետև՝ Լվովի Հայոց թեմ. միության պաշտոն. հրատ.: Լույս է տեսել 1927–39–ին Լվովում՝ լեհ. (անկանոն պարբերականությամբ): Խմբագիր՝ Դյանուզու Կայետանովիչ: Տպագրել է լուրեր և հոդվածներ լեհահայերի առօրյայի, նշանավոր գործիչների, կրթ. հաստատությունների գործունեության մասին: Թարգմանաբար հրատարակվել են Ներսես Շնորհալու, Գրիգորիս Աղթամարցու, ինչպես նաև լեհագիր հայազգի հեղինակների՝ Ա. Աբգարովիչի, Ի. Նիկորովիչի, Ս. Բարոնչի ստեղծագործություններից: Ծանոթացրել է հայոց պատմությանը, դպրությանը, գաղթականության կյանքին:



Մ. Պոտուրյանի *«Կարմիր լուսին» (1933, Ֆրումոասա) գրքի կազմը*

ՊՈՏՈՒՐՅԱՆ Մկրտիչ Եփրեմի [7.4.1881, Պարտիզակ (Սեբաստիայի նահանգ)–8.12.1959, Էջմիածին], հայագետ, հրապարակագիր, գրող, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1902–ից): Սովորել է Պարտիզակի Ներսեսյան և Մխիթարյան վարժարաններում: 1897–ին մեկնել է Վենետիկ, 1903–ին դասավանդել Մուրատ-Ռափայելյան վարժարանում: Վենետիկում 1908–ին՝ «Քնարիկ» ամսաթերթի, 1909–ին՝ *«Բազմավէպ»*, 1911–ին՝ «Աստղիկ» հանդեսների, Բուխարեստում 1923–24–ին՝ «Դիցաւան» տարեգրքի, 1923–ին՝ «Մասիս» տարեցույցի, 1937–38–ին՝ «Հերկ» ամսաթերթի խմբագիր: 1909–11–ին՝ Վենետիկի մատենադարանապետ: Բուխարեստում հրատարակել է «Մասիս» (1920–22), «Գաղութի ձայն» (1923), *«Նաւաւարդ»* (1923–24, Հակոբ *Միրունու* և Հարություն Աթանասյանի հետ), «Փարոս» (1924, Վարդան *Մեշփուճյանի* հետ), «Երկիր» (1925–29), «Հայ մամուլ» (1934–42, Հ. Աթանասյանի հետ) պարբ-ները, «Ռումինահայ տարեցույցը» (1935, Հ. Աթանասյանի հետ), «Գաղութահայ տարեգիրքը» (1939–41): 1929–59–ին՝ Տրանսիլվանիայի Ֆրումոասա ավանի հունգարացած հայերի հոգևոր առաջնորդ. այնտեղ հիմնադրել է տպարան, եղել ուսուցիչ: 1938–40–ին՝ *«Հայ հանրագիտակ»* պատկերազարդ տեղեկատուի հիմնադիր-խմբագիր: 1959–ին հաստատվել է Խորհրդ. Հայաստանում:

Լույս են տեսել Պ–ի «Կոստանդին Երզնկացի ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իւր քերթուածները» (1905), «Ադամգիրք Առաքէլ Սիւնեցւոյ» (1907), «Առաքէլ Սիւնեցի եւ իր քերթուածները» (1914), «Մարտիրոս Ղրիմեցի եւ իր քերթուածները» (1924, Բուքրեշ, «Մասիս» տպ.) երկերը, «Սրբազան Հայկազունք» (1902), «Հայ մամուլը տասնեւհինգ տարուն մէջ. 1894–1909» (1910), «Մխիթար եւ Մխիթարեանք» (1922) աշխատությունները, «Սեւ էջը» (1910), «Արմենակին յոյսերը» (1923, Բուքրեշ, «Մասիս» տպ.), «Կարմիր լուսին» (1933) նորավեպերը, «Վէպիկները» (1930): Հունգ–ից թարգմանել է «Հեքեաթներ» (1930) ժող–ը: Պ–ի ուսումնասիրությամբ հրատարակվել է «Զարդանկարք Աւետարանի Սլքէ թագուհւոյ» (1902) երկը:

Պ–ի գործերի մեծ մասը տպագրվել է Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

ՊՈՒՇՅԱՆ Պերճ (Տեր–Առաքելյան Հովհաննես Ստեփանի, 1837, Աշտարակ–23.11.1907, Բաքու, թաղված է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը), գրող: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1856): Մեկ տարի սովորել է Թիֆլիսի արքունի. գիմնազիայում, 1857–ին վերադարձել է Աշտարակ և նշանակվել ծխական դպրոցի տեսուչ: 1879–81–ին աշխարհաբարի է փոխադրել Ավետարան, որի համար Գևորգ Դ կաթողիկոսը նրան շնորհել է աստվածաբանության մագիստրոսի կոչում:

Պ. ճանաչվել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ազդեցությամբ 1860–ին հրատարակած «Սօս եւ Վարդիթեր» (Թ., Գաբրիել Մելքումյանի և Համբարձում Էնֆիաճյանի տպ.) վեպով:

Առանձին գրքերով և պարբ. մամուլում լույս են տեսել Պ–ի «Հացի խնդիր» (1879, «Փորձ», № 3–9, 1880, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ., 1984), «Յեցեր» (1889, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Բղդէ» (1890, նույն տպ.), «Հունոն» (1901), «Կռուածաղիկ» (1878, Թ., Հ. Էնֆիաճյանի տպ.), «Շահէն» (1883, Թ., Մ. Ռոտինյանի տպ., 1905, Բաքու, Հրատարակչ. ընկ. տպ.), «Սկիզբն երկանց» (1892, Թ., «Արորի» տպ.) վեպերը, «Գիւղական խանութպան» (1889), «Բուլի–բուլի» (1893), «Եզիդի Մկրտչենց տունը», «Մեր Խէչօն» (երկուսն էլ՝ 1899, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Տատ Բարբարէի վերջին առակը» (1899), «Հինգերորդ գինագիժը» (1901), «Վարդի յիւղը մահաղեղ» (1901), «Օրը կիրակի է, երազը սուտ» (1903) և այլ պատմվածքներ, «Յուշիկներ» (1894, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) հուշագրությունը:

Հրատարակվել են նաև Պ–ի «Երկերի ժողովածուն» (հ. 1–7, 1962–64, հ. 1–3, 1974–79), «Երկերը» (1984):

Պ. թարգմանել է Չ. Դիքենսի, Լ. Տոլստոյի և ուր. երկերից:


Երևանում, Աշտարակում և ՀՀ այլ քաղաքներում Պ–ի անունով կոչվել են փողոցներ, դպրոցներ, Աշտարակում գործում է տուն–թանգարանը:

Գրկ. Պերճ Պռոշեանցի համառօտ կենսագրութիւնը, Թ., 1899: **Նալբանդյան Մ.**, *Կրիտիկա «Սոս և Վարդիթերի», տես նրա ԵԼԺ, հ. 4, Ե., 1982:* **Ղանալանյան Ա.**, *Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը, Ե., 1938:* **Տերտերյան Ա.**, *Պերճ Պռոշյան, Ե., 1955:* **Մանուկյան Ս.**, *Պերճ Պռոշյան, Ե., 1964:* **Գևորգյան Գ.**, *Պերճ Պռոշյան: Կյանքի և գործունեության տարեգրություն. Մատենագիտություն, Ե.,1981:*

«ՊՍԱԿ», գրական, քաղ., պատմ. և մանկավարժ. շաբաթաթերթ: Երևանի անդրանիկ պարբ–ը: Լույս է տեսել 1880–84–ին: Խմբագիր–հրատարակիչ՝ Վասակ *Պապաջանյան:* Քարոզել է ազատագր. պայքարի գաղափարներ, կարևորել Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ճակատագրում, գյուղացիությանը կոչ է արել ոտքի կանգնել՝ հող և ազատություն ձեռք բերելու համար, իր տեսակետները հիմնավորել է Միքայել *Նալբանդյանի* դրույթներով: Թերթը որոշակիորեն ազդել է ժամանակի հաս. կյանքի և հարաբերությունների ձևավորման վրա, արծարծել է առաջադեմ գաղափարներ:

«ՊՍԱԿ ԿՈՒՄԻՆ», Սբ Աստվածածնի յոթ ցավերի հիշատակին և յոթ խնդությանը նվիրված Հակոբ Ստեփանյանի գիրքը: Տպագրվել է Վենետիկում 1794–ին՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Պսակ կուսին: Նուիրմունք զանազան աղօթից՝ հանդերձ խորհրդածութեամբք...» (72 էջ, 12°, 9,8 x 5 սմ):

«ՊՏՈՒՂ ԶՐԱՋԱՆՈՒԹԵԱՆ», ձեռնարկ: Տպագրվել է 1733–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Տետրակս որ կոչի Պտուղ զրաջանութեան: Շարագրեցեալ ի նըւաստէ ումեմնէ աշխատասիրէ՝ ի խնդրոյ ոմանց...» (32 էջ):




Պերճ Պռոշյան



Պ. Պռոշյանի *«Հացի խնդիր» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



«Պսակ», *1880–84, Երևան*




«Պտուղ զրաջանութեան» *(1733, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը*


Pro Armenia

«Պրո Արմենիա», *1900–14, Փարիզ*


ՊՐՈԼԵՏԱՐ

«Պրոլետար», *1924–26, Նյու Յորք*



Սահակ Պրոնյանի *«Եռանկիւնաչափութիւն» (1810, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

«ՊՐՈ ԱՐՄԵՆԻԱ» («Pro Armenia»–«Հանուն Հայաստանի»), երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1900–14-ին Փարիզում՝ ֆրանս. [1912–13-ին՝ «Արևելքի ժողովուրդների համար» («Pour les peuples d'Orient»)]: Պարբ-ի հիմն. նախաձեռնել է Քրիստափոր *Միքայելյանը:* Խմբագրակազմ՝ Պիեռ *Քիյար* (գլխ. խմբագիր), Ժան Լոնգե, Ժորժ Կլեմանսո, Անատոլ *Ֆրանս*, Ժան Ժորես, Ֆրենսիս դը Պրեսանսե, Վիկտոր Բերար: Նպատակը Ֆրանսիայի և միջազգ. հասարակայնության հայկ. հարցին ծանոթացնելն էր, հայ ժողովրդին օգնություն և օժանդակություն ցուցաբերելը, Եվրոպայում հայանպաստ շարժմանը նպաստելը: Հրապարակել է սուլթան. կառավարության հայաջինջ քաղաքականությունը մերկացնող փաստաթղթեր, տեղեկություններ հաղորդել Օսմ. կայսրությունում հայերի կոտորածների, ֆիդայիների հերոս. պայքարի, եվրոպ. երկրներում ի նպաստ հայկ. հարցի կազմակերպված միջոցառումների մասին, բացահայտել ցարիզմի ռուսականացման քաղաքականությունը: Թերթի էջերում Հայ դատի պաշտպանությամբ հանդես են եկել ժամանակի ականավոր գործիչներ, հրապարակախոսներ, պատմաբաններ:

«ՊՐՈԼԵՏԱՐ», քաղ., հաս. և գրական շաբաթաթերթ: Ամերիկայի բանվոր. (կոմ.) կուս-յան հայկ. հատվածի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1924–26-ին Նյու Յորքում: Խմբագիրներ՝ Ս. Մնարյան, Խաչիկ Քյոսեյան, Պատրիկ *Մելյան*, Ս. Տեր-Բադդասարյան, Ա. Զարդարյան, Մարտիկ Մարտենց: *«Բանւոր»* և «Գործաւոր» պարբ-ների շարունակությունն է: Լուսաբանել է կուս-յան գործունեությունը, գործադուլային շարժումը ԱՄՆ-ում, հիմնարկել կոմ. ինտերնացիոնալի գործկոմի կոչերն ու այլ փաստաթղթեր: Տպագրել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ կուս., պետ. գործիչների հոդվածներն ու ճառերը կոմ. շին-յան հարցերի վերաբերյալ: Շաբաթաթերթը կարևորել է ներգաղթի կազմակերպումը, արտասահմանի առաջադիմ. հայկ. կազմակերպությունների գործունեությունը, տեղեկություններ հաղորդել Հայաստանի քաղ., տնտ. և մշակութ. ձեռքբերումների մասին: Ունեցել է «Սատիրիկոն» գրական-երգիծ. էջ:

ՊՐՈՆՅԱՆ (Պարոնյան) Սահակ Բերիացի (1749, Հալեպ–13.4.1806, Տրիեստ), կրթ. և եկեղեց. գործիչ, մանկավարժ, Մխիթարյան միաբանության անդամ:

Պ-ի «**Երկրաչափութիւն**» ուս. ձեռնարկը տպագրվել է 1794-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Տիտղթ-ին՝ «Երկրաչափութիւն Յերիս գիրս բաժանեալ...» (429 էջ, 8°, 16,7 x 9,5 սմ): Գրքի վերջում ներկայացված է օգտագործված մաթ. եզրերի ցուցակ-բառարան:

Տպագրվել է նաև Պ-ի «**Եռանկիւնաչափութիւն**» (մաս 1–2, 1810, նույն տպ.) դասագիրքը, որտեղ շարադրված են հարթ և գնդային եռանկյունաչափության տես. և գործն. հարցեր: Առաջարկել է բազմաթիվ հայ. մաթ. եզրեր:

Պ-ի 2 դասագրքերն էլ հայ. տպագիր առաջին ուս. ձեռնարկներից են:

ՊՈՒԻԿԼԻՈՒ (Պույըգլյան, Պույըգլիու) Գրիգոր-Միհրդատ Հակոբի [15.12.1840, Յասսի (Ռումինիա)–13.12.1912, Բուխարեստ], իրավաբան, բանասեր, արևելագետ: Սովորել է Յասսիի Հայկազյան վարժարանում: Ավարտել է Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանը (1847), ապա՝ Յասսիի համալսարանի իրավաբանության ֆակ-ը: Պ. մասնակցել է «Ժունիմեա» գրական-մշակութ. և քաղ. ընկերության ստեղծմանը, ուսումնասիրել հայ-ռում. կապերը: Հայտնաբերել և նյութապես աջակցել է հայկ. որոշ ձեռագրերի [«Մինաս Թոխաթեցու ողբը Վլախաց երկրի հայերին» (ռում., 1895, առաջաբ.՝ Պ-ի), «Կամենից տարեգիրք», Հ. Տաշյանի կազմած ձեռագրացուցակը ևնվ տպագրությանը: Պ. նամակագր. կապեր է ունեցել Ղ. Ալիշանի, Ք. Պատկանյանի, Ա. Չոպանյանի և այլ մտավորականների հետ: Ռումինիայի ակադ-ը հրատարակել է «Գրիգոր Մ. Պուիկլիու, 1840–1912» գիրքը (1914):

Գրկ. **Սիրունի Հ.**, *Գրիգոր Պույըգլիու, «Արազ» տարեգիրք, Բուխարեստ, 1938:*

ՊՈՒՇԿԻՆ Ալեքսանդր Սերգեևիչ [26.5(6.6).1799, Մոսկվա–29.1(10.2).1837, Ս. Պետերբուրգ, թաղված է Պսկովի մարզի Պուշկինսկիե Գորի ավանում], ռուս բանաստեղծ, գրող, դրամատուրգ:

1829-ին Պ. եղել է Հայաստանում. այդ մասին պատմում է «Ճանապարհորդութիւն դէպի Արզրում» (1835, հայ. հրտ.՝ 1937) ուղեգրության մեջ: 1830-ական թթ-ին Մ. Էմինը թարգմանել է Պ-ի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին» պոեմները (անտիպ են): Հ. Համազասպյանի թարգմանությամբ հրատարակված «Թարգմանութիւնք արձակ եւ ոտանաւոր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ» (1843, ռուս. և հայ., Մ., Լազարյան ճեմ. տպ.) գրքում տեղ է գտել նաև Պ-ի 10 բանաստեղծություն: 1850-ական թթ-ին նրա երկերից թարգմանել են Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Ս. Շահազիզը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Գ. Բարխուդարյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Ծատուրյանը, Ա. Խնկոյանը, Ե. Չարենցը, Ա. Իսահակյանը, Ն. Զարյանը և ուր.: Պ-ի մի քանի գործերի Հ. Թումանյանի թարգմանությունները («Օլեգի երգը», «Ձրահեղձը», «Ձմեռվա իրիկունը») թարգման. արվեստի կատարյալ նմուշներ են:

Պ-ի գրեթե բոլոր գործերը թարգմանվել են հայ.: Լույս են տեսել «Ոսկի ձկնիկ» (թարգմ.՝ Ղ. Աղայանի, 1884, Թ., Մովսես Վարդանյանի տպ., թարգմ.՝ Ռ. Պատկանյանի, 1884, նույն տպ., թարգմ.՝ Կ. Տեր-Դավթյանի, 1903, Վրաց. հրատարակչ. ընկ. տպ., 2006, 2015, Ե.), «Կապիտանի աղջիկը» (թարգմ.՝ Հ. Կարապետյանի, 1895, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), «Բանաստեղծութիւններ» (թարգմ.՝ Ա. Ծատուրյանի, 1898, Բաքու, ա. տպ.), «Բանաստեղծութիւններ» (1899, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.), «Քնար Ա. Ս. Պուշկինի» (թարգմ.՝ Ա. Ծատուրյանի, 1899, Բաքու, «Արոր» տպ.), «Յաւերժահարսը» (թարգմ.՝ Կ. Կրասիլնիկյանի, 1902, Թ., Վրաց. հրատարկչ. ընկ. տպ.), «Տէր-տէրն ու իր Բալդի ծառան» (թարգմ.՝ Ա. Խնկոյանի, 1911, Թ., «Հերմես» տպ.), «Քնած դշխուհին եւ եօթ քաջերը» (թարգմ.՝ Ա. Խնկոյանի, 1911, Թ., Նվարդ Աղանյանի տպ.) և այլ գրքեր:

Հրատարակվել են նաև Պ-ի «Բանաստեղծություններ» (1936), «Հեքիաթներ, բանաստեղծություններ, արձակ» (1937), «Բանաստեղծություններ, պոեմներ» (1949) ժող-ները, «Երկերը» (հ. 1–5, 1954–60), «Ընտիր երկերը» (1985), «Արձակ երկերը» (1999):

Երևանում և ՀՀ-ի այլ բնակավայրերում Պ-ի անունով կոչվել են դպրոցներ, փողոցներ, պուրակներ, գյուղ (Պուշկինո՝ Լոռու մարզում), լեռնանցք (Բազումի լ-շղթա), որտեղ Պ. հանդիպել է Ա. Գրիբոյեդովի դին տանող սայլին:


Գրկ. **Լիսիցեան Ս.**, *Պուշկին: Նրա կեանքն ու գործունէութիւնը, Թ., 1899:* **Ա. Պուշկինին**՝ *նրա ողբերգական մահվան հարյուրամյակի առթիվ. հոդվածներ և նյութեր, Ե., 1937:* **Հովհաննիսեան Ռ.**, *Ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին, Ե., 1949: Պուշկինին հայ բանաստեղծներից, Ե., 1974:* **Զրբաշյան Է.**, *Պուշկինը և հայ բանաստեղծները, Ե., 1999:*




Ալեքսանդր Պուշկին



Ա. Պուշկինի *«Ընտիր երկեր»-ի (1985, Ե., «Սովետական գրող») կրկնաշապիկը*





Մանվել Ջախջախյանի *«Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական»-ի (1837, Վնտ.) տիտղոսաթերթը*

Ջ

Ջ, հայ. այբուբենի 27-րդ տառը, անվանումը՝ «ջե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար, կարճ և լայն տարրերից. կարճը երկարին է միանում նուրբերով վերևում՝ աջ կողմից՝ իր վերին և ստորին ծայրերից, իսկ լայնը՝ ներքևի ծայրին՝ իր վերին ծայրով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր և նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ջ, որպես այբուբենի հարյուրավորների սյան 9-րդ (27-րդ) տառ, նշանակել է ինը հարյուր և իննհարյուրերորդ, բյուրի նշանով (Ջ͂)՝ 9 մլն (9 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ջ–մաս 900-րդ):

ՋԱԽՋԱԽՅԱՆ Մանվել [25.3.1770, Գյումուշխանե (Տրապիզոնի նահանգ)–5.1.1835, Վենետիկ], բառարանագիր, բանաստեղծ, թարգմանիչ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1791-ից): 1815–16-ին՝ *«Դիտակ Բիւզանդեան»* պարբ-ի խմբագիր:

Լույս են տեսել Ջ-ի «Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ»-ը (1804, համառոտը՝ 1829, «Համառօտ բառարան յիտալականէ ի հայ եւ ի տաճիկ» վերնագրով), «Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական»-ը (1837), որը հայ երկլեզվյան բառարանագրության լավագույն նմուշներից է: Գրել է նաև բանաստեղծություններ, որոնց մի մասը Վահրամ Ռուբինյան ստորագրությամբ տպագրվել է «Մխիթարյան տաղարան» ժող-ում: Ջ. թարգմանել է Գ. Գոռացցայի «Արհեստ բարուք սիրելոյ կամ Արհեստ աստուածսիրութեան» (1819), Ս. Կեսների «Քերթուած ի մահն Աբելի» (1825), Ֆ. Ֆենելոնի «Արկածք Տելեմաքայ որդւոյն Ոդիսեայ» (1826) բանաստեղծությունների, պոեմների ժող-ները:

Ջ-ի բոլոր գործերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

«ՋԱՀԱԿԻՐ», քաղ., գրական, ընկերային պարբերաթերթ (1954-ից՝ ամսաթերթ): Լույս է տեսնում 1948-ից Կահիրեում: 1963-ից (մի քանի տարվա ընդմիջումից հետո)՝ որպես հնչակյան կուս-յան հրատ. (շաբաթաթերթ, ապա՝ երկշաբաթաթերթ): Արտոնատեր-խմբագիր՝ Հայկ Ժամկոչյան, գրական խմբագիրներ՝ Արշամ *Տատրյան,* Հրանտ Տատրյան, Այտա Սերովբյան, Սարգիս Պալայան, Ավետիս Մովսեսյան: Լուսաբանում է եգիպտահայ համայնքի ազգ. կյանքը, տպագրում է լուրեր ՀՀ-ից և Արցախից, անդրադառնում է Սփյուռքի այլ համայնքների առօրյային, սփյուռքահայ կազմակերպություններին: Լույս է ընծայել ամսօրյա հավելվածներ (մարզական-երիտասարդ. «Ջահակիր», կանանց համար նախատեսված «Անահիտ» ևն): 1956-ին թողարկվել է բացառիկ համար:

«ՋԱՀԱԿԻՐ», ազգ., կրոն., տեղեկատու ամսաթերթ: Լույս է տեսել 1963–90-ին Թեհրանում: Խմբագիր՝ Հայկ Սալաքյան, ապա՝ խմբագրակազմ: Լուսաբանել է իրանահայ համայնքների, մասնավորապես՝ թեհրանաբնակ հայերի առօրյան, կապը հայրենիքի հետ, տպագրել է հոգևոր, բարոյագիտ., առողջապահ. թեմաներով նյութեր:



«Ջահակիր», 1948-ից, կահիրե



«Ջահակիր», 1963-90, Թեհրան

ՋԱՀՈՒԿՅԱՆ Գևորգ Բեգլարի [1.4.1920, գ. Շահնազար (այժմ՝ գ. Մեծավան՝ ՀՀ Լոռու մարզում)–6.7.2005, Երևան], լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1955), պրոֆ. (1958), ՀՀ ԳԱԱ ակադ. (1974, թղթ. անդամ՝ 1968-ից): Գիտ. վաստ. գործիչ (1965): Ավարտել է ԵՊՀ (1941): 1945-ից դասավանդել է նույն բուհում (1948–57 և 1957–70-ին՝ ամբիոնների վարիչ): 1962–2005-ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի տնօրենն:

Ջ-ի «Լեզվաբանության պատմությունը» (հ. 1, 2, 1960, 1962) համաշխ. լեզվաբանության ամբողջ. պատմություն ստեղծելու առաջին փորձերից է՝ շրջանաբաժանման ինքնուրույն սկզբունքներով: «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (ռուս., 1978) աշխատության մեջ քննել է ընդհանուր լեզվաբ. խնդիրներ, կառուցել լեզվաբ. իր համընդհանուր կաղապարը: «Հայերենի համեմատական քերականություն» (ռուս., 1982) մենագրությունը նշանավորում է հայոց լեզվի համեմատ. ուսումնասիրության նոր փուլ: «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974) մենագրության մեջ Ջ. իր մշակած տես. սկզբունքների հիման վրա համակողմանիորեն ուսումնասիրել է ժամանակակից հայ-ի կառուցվածքը:

Լույս են տեսել նաև Ջ-ի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954), «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» (1970), «Հայ բարբառագիտության ներածություն» (1972), «Գրաբարի քերականության պատմություն» (1974), «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (1987, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1988), «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» (1989), «Զրույցներ հայոց լեզվի մասին» (1992), «Շարահյուսական ուսումնասիրություններ» (2003) աշխատությունները, ***«Հայերեն ստուգաբանական բառարան»***-ը (2010), «Բանաստեղծական գիրք» (2001) ժող-ը:



Գևորգ Ջահուկյան

Ջ. հեղինակ է նաև բուհ. դասագրքերի («Ժամանակակից հայոց լեզու: Ներածություն», 1987, «Հայոց լեզու», 1976), ուս. ձեռնարկի («Հայոց լեզվի ոճաբանություն», 2007): Ջ-ի մշակմամբ հրատարակվել է «Հայոց լեզվի հանգաբառարանը» (1976): Կազմել և խմբագրել է Ա. Մեյեի «Հայագիտական ուսումնասիրություններ» (1978) աշխատությունը:

Եվրոպայի (1974) և ԱՄՆ-ի (1980) լեզվաբ. ընկերությունների անդամ:

Երկ. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Е., 1964; Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и закавказских языков, Е., 1967; Универсальная теория языка. Пролегомены к субстанциональной лингвистике, М., 2000.

Գրկ. Գևորգ Բեգլարի Ջահուկյան: Մատենագիտություն, Ե., 2004:

ՋԱՄԱԼՅԱՆ (Իսահակյան) Արշակ Ջամալի [22.9.1882, Գանձակ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)–22.12.1940, Փարիզ], հաս., քաղ., պետ. գործիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1901): 1906-ին Գերմանիայում ուսումնասիրել է հաս. գիտ-ներ, հիմնադրել ՀՅԴ Եվրոպայի հայ ուսանող. միությունը, հրատարակել «Ուսանող» պարբ-ը և հայ ազգ-ազատագր. պայքարը լուսաբանող գրքույկներ (հայ., ֆրանս. և գերմ.): 1909-ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Նիկոլ ***Աղբալյանի*** հետ հրատարակել ***«Հորիզոն»*** (1909–18) օրաթերթը: Ժնևում խմբագրել է ՀՅԴ ***«Դրօշակ»*** ամսաթերթը: Եղել է Անդրկովկասի Սեյմի անդամ: 1918-ին՝ Վրաստանում ՀՀ դեսպան, 1919-ին՝ ՀՀ խորհրդարանի անդամ, 1920-ին՝ ՀՀ հեռահաղորդակցության նախարար: Հայաստանում խորհրդ. իշխանության հաստատումից հետո տարագրվել է ԱՄՆ:

Լույս են տեսել Ջ-ի «Հայաստանի անկախութեան խնդիրը եւ Ռուսաստանը» (1938, «Յուսաբեր», հունիս), «Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ ընկերվարութիւնը»



Գ. Ջահուկյանի *«Գրաբարի քերականության պատմություն» (1974, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Արշակ Ջամալյան



«Ջանասէր», *1937-ից, Բեյրութ*



Գրիգոր Ջանիկյանի
«Դարի դեմքը» (2010, Ե., «Ոսկի խափուրիկ») գրքի կազմը



Բոգդան Ջանյանի
«Հեռացած հեռուներ» (2007, Սրեփանա-կերտ, «Դիզակ պլյուս») գրքի կազմը

(1979, Բ.), «Հայ-վրացական կնճիռը» (առաջաբ. և ծնթգր.՝ Խ. Ստեփանյանի, 2011) աշխատությունները: Հեղինակ է նաև «Դաշնակցության տեսությունը» (1908) ուսումնասիրության, «Տարերքի ընդվզումը», «Գծից դուրս», «Նահապետ Նահապետյան» և այլ թատերգությունների:

Հանդես է եկել նաև Արիայան կեղծանունով:

Գրկ. **Զեչեան Ս.**, *Յուշեր Արշակ Ջամալեանի մասին, «Հայրենիք», 1941, № 5–6:* **Լազեան Գ.**, *Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Կահիրէ, 1949, էջ 286–303:*

«ՋԱՆԱՍԵՐ», կրոն., գրական, հաս. պարբերաթերթ: Մերձ. Արևելքի Հայ ավետարան. քրիստ. Ջանից ընկերակցության հրատ.: Լույս է տեսնում 1937-ից Բեյրութում (նախ՝ եռամսյա հավելված ***«Պատարագի արձագանգ»***-ի, ապա՝ երկամսյա, ամսաթերթ, 1951–74-ին՝ երկշաբաթաթերթ, 1975-ից՝ կրկին ամսաթերթ): Խմբագիրներ՝ Բյուզանդ Գալֆայան, Տիգրան Քասունի, Բյուզանդ Ռուպյան, Մանասե Շնորհոքյան, Պարգև Տարագճյան, Եսայի Սարմազյան, Արամ Սարգիսյան, Տիգրան Յումուշաքյան, Երվանդ ***Քասունի*** (1991-ից): Լուսաբանում է Հայ ավետարան. եկեղեցու գործունեությունը, հրատարակում է հաս., պատմամշակութ. լուրեր և հոդվածներ:

ՋԱՆԻԿՅԱՆ Գրիգոր Նազարի [ծ. 2.12.1944, ք. Խասկովո (Բուլղարիա)], գրող, հրապարակախոս, թարգմանիչ: Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1965): 1966–73-ին աշխատել է «Գարուն» ամսագրի, 1973–83-ին՝ «Գրական թերթի», 1983–90-ին՝ «Վերածնված Հայաստան» հանդեսի, 1992–96-ին՝ «Հայություն» պարբերաթերթի, 1996-ից՝ «Հայ գինվոր» շաբաթաթերթի խմբագրություններում:

Լույս են տեսել Ջ-ի «Իսկապես, ինչպիսին է աշխարհը» (1964), «Մահին հաղթողները» (1968), «Հորիզոնի կանչող գույները» (1975), «Հավատարիմ երազանքին» (1979), «Հավերժական ճանապարհ» (1983) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Այսպես են ծնվում լեգենդները» (ռուս., 1979), «Ալեհեր լեռն ու իր թոռները» (1987), «Եռաբլուր» (2008), «Դարի դեմքը» (2010) վեպերը: Կազմել և խմբագրել է «Սահապարտները» (2002, ՀԳՄ «Տարվա լավագույն գիրք» մրց.՝ 2002) ժող-ը: Թարգմանել է Ս. Բեքեթի, Ա. Քամյուի, Ջ. Կազանովայի, Մ. Անգլադայի, Ֆ. Սագանի և ուր. ստեղծագործություններից: ՀԳՄ Ե. Չարենցի անվ. մրց. (1993):

ՋԱՆՅԱՆ (Օհանջանյան) Բոգդան Շամիրի [3.7.1917, գ. Տումի (այժմ՝ ԼՂՀ Հադրութի շրջանում)–25.3.2010, Երևան], բանաստեղծ: Ավարտել է Շուշիի մանկավարժ. բանֆակ-ը (1935), Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1938): Տումիում եղել է ուսուցիչ, 1941 և 1945–48-ին՝ ԼՂԻՄ գրողների մարզային բաժանմունքի պատ. քարտուղար, 1939–41-ին աշխատել է Ստեփանակերտի «Երիտասարդ բոլշևիկ», 1954–68-ին՝ «Սովետական Ղարաբաղ» թերթերի խմբագրություններում, 1968–86-ին՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմում:

Լույս են տեսել Ջ-ի «Իմ լուսաբացը» (1948), «Ճամփաներ» (1957, Բաքու), «Ես մենակ չեմ» (1964), «Լեռներն արձագանքում են» (1967, Բաքու), «Իմ մոտիվ հեռուն» (1969), «Կանչող հեռուներ» (1974), «Արմատների հավատով» (1979), «Անտառը լռում է» (1983), «Իշխանաձորի կանաչը» (1986), «Մի գետ էլ ունենք Տրտու անունով» (1995), «Շողարձակում վերջին ոլորաններում» (2001), «Արցախ իմ, Արցախ» (2004), «Հեռացած հեռուներ» (2007), «Ակունքի մոտ է աղբյուրն աղբյուր» (2010) բանաստեղծությունների ժող-ները, «Կյանքը հրացանի փողի տակ» (2001) բանտային կյանքի հուշապատումը, «Անցած ճանապարհի հուշապատկերը» (2009) հրապարակախոս. ակնարկների, էսսեների ժող-ը:

ԼՂՀ Եղիշեի անվ. մրց. (1996), «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (2001):

ՋԱՆՇՅԱՆ (Ջանշիև) Գրիգոր Ավետի (17(29).5.1851, Նոր Նախիջևան–17(30).7.1900, Մոսկվա), հրապարակախոս, գրական և հաս. գործիչ, խմբագիր: Գրել է ռուս.: 1864-ից ապրել է Մոսկվայում: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի գիմնազիան, Մոսկվայի համալսարանի իրավաբ. ֆակ-ը (1874): Ջ-ի առաջին մասնագիտ. հոդվածները տպագրվել են «Սուդերնի վեստնիկ» (ռուս.) ամսագրում: Եղել է «Ռուսկիե վեդոմոստի» (ռուս.) թերթի հրատարակիչ-խմբագիրներից. հայոց պատմությունն ու մշակույթը ներկայացրել է ռուս հասարակայ-

նությանը: «Դիվ» գրական կեղծանունով հրատարակել է «Հայկական հարցը Թուրքիայում» (1893) գրքույկը: 1894–96-ի հայերի՝ արդուլհամիդյան կոտորածներից հետո կազմել և հրատարակել է «Եղբայրական օգնություն Թուրքիայի տառապյալ հայերին» (1897, 2-րդ լրց. հրտ.՝ 1898, 1998, Մ., 2013, Ե., նմանահանություն) ժող-ը (գրական-գեղ., գիտ., փաստագր., հայոց պատմությանը, մշակույթին վերաբերող նյութեր), որի հասույթով Արմ. Հայաստանում բացվել է 12 մանկատուն:

Լույս են տեսել նաև Զ-ի «Մեծ բարեփոխումների դարաշրջանից» (հ. 1–2, 1892, մինչև 2008-ը վերահրտ.՝ 9 անգամ) պատմահրապարակախոս. աշխատությունը, «Կովկասի գոհարը» (1887, 1900), «Եվրոպայում» (1888), «Բնության ընտրյալների և խորթ զավակների մեջ» (1889) ուղեգր. երկերը, «Ռուս մամուլի էջերում» (ՍՊր, 1902, «Պուշկինյան» տպ., հավաքել, թարգմանել և հրատ-յան է պատրաստել Գ. Մկրտումյանը) հոդվածների ժող-ը:

Գրկ. **Дживелегов А.**, *А. Джаншиев и Армянский вопрос, М., 1907.*

ՋԱՍՊՄԵ Ջալիլ Օսեի [25.10.1908, գ. Ղըզըլ-Ղուլա (Կարսի մարզ)–24.10.1998, Երևան], քուրդ գրող: Ավարտել է ՀՊՄԻ լեզվագր. ֆակ-ը (1941): 1972–80-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչության խմբագրությունում:

Լույս են տեսել Զ-ի քրդ.՝ «Իմ օրերը» (1960), «Սարերի երգերը» (1970), «Քրդի օդան» (1975), «Սիրահար քուրդը» (1980), հայ.՝ «Ալագյազ» (1954), «Քրդական սիրավեպեր» (1955), «Մայրենի աղբյուր» (1957), «Իմ օջախը» (1966) ժող-ները: Կազմել է քրդ. դասագրքեր: Քրդ. է թարգմանել Հ. Թումանյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի և ուր. գործերից:

ՋԱՎԱԽԵՑԻ [Տեր-Գրիգորյան Ղազարոս Սուքիասի, 1874, գ. Գանձա (այժմ՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջան)–1937, Երևան], գրող, գյուղագիր, թարգմանիչ: Վահան ***Տերյանի*** եղբայրը: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, եղել է ուսուցիչ: Թղթակցել է «Մշակ», «Մուրճ» և այլ պարբ-ների:


Լույս են տեսել Զ-ու «Զաւախքի աղէտը» (1900, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ.), «Կրակը» (1903, Թ., Սիմսես Վարդանյանի տպ.), «Պատկերներ» (գրքույկ 1, 1905, Թ., «Հերմես» տպ., 1930, 1936) պատմվածքների ժող-ները: Թարգմանել է Դ. Սամին-Սիբիրյակի, Չ. Դիքենսի, Մ. Տվենի ստեղծագործություններից: Ուշագրավ է Զ-ի «Հուշեր Վահան Տերյանի մասին» հոդվածը [«Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում» (1964) գրքում]:

Գրկ. **Սարգսյան Վ.**, *Զավախեցի. կյանքն ու ստեղծագործական ուղին, Ե., 2014:*

ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ Իվանե Ալեքսանդրի [11(23).4.1876, Թիֆլիս–18.11.1940, Թբիլիսի], վրացի պատմաբան, հայագետ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1939): Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի արևելագիտ. ֆակ-ի բանասիր. բաժինը: Աշակերտել է Նիկողայոս Մառին (հայագիտություն): 1911-ին այցելել է Հայաստան, եղել Անիում:

Զ-ի «Հին Վրաստանի և հին Հայաստանի պետական կառուցվածքը» (ռուս., 1905) մենագրության 2-րդ մասն ամբողջովին վերաբերում է Հայաստանին: «VII դ-ի սկզբին Վրաց և Հայոց եկեղեցիների բաժանման պատմությունը» (ռուս., 1908) աշխատության առաջին 2 գլխում ներկայացրել է հետազոտվող թեմայի սկզբնաղբյուրների (այդ թվում՝ «Գիրք թղթոց», Ուխտանեսի «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» երկերի) տեսությունը: «Մի էջ գյուղացիական շարժումների պատմությունից հին Հայաստանում» (1922, հայ. հրտ.՝ «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար. X դ. և XIII դ. սկզբներին», 1936) աշխատության մեջ անդրադարձել է X դ-ում Սյունիքում տեղի ունեցած իրադարձություններին: «Հին հայոց պատմական գրականությունը» (1935) ուսումնասիրությունը, առանձին վերապահելի դրույթներով հանդերձ, V–VI դդ-ի հայ վարքագր. հուշարձանների պատմաբանասիր. քննության ուշագրավ փորձ է: Աշխատության 2-րդ բաժինն ամբողջովին վերաբերում է Ագաթանգեղոսի և Կորյունի երկերին:

Գրկ. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, *Ակադեմիկոս Իվ. Զավախիշվիլին և հայագիտությունը, «ՊՀ», 1960, № 1:* **Еремян С., Мурадян П.**, *Вопросы арменистики в трудах академика И. А. Джавахишвили, «ԼՀԳ», 1976, № 4.*



Գրիգոր Զանշյանի
«Եղբայրական օգնություն հայերին» (ռուս., 2013, Ե., «Հայագիտակ») գրքի կազմը




Զավախեցի




Զավախեցու
«Պատկերներ» (1936, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը



«Ջաւախք», *1913–1916, Ախալքալաք*



«Ջրոնըլ օֆ Արմինիըն Սթադիս», *1975–2004, Բելմոնտ (№ 2, 1995)*



«Ջրոնըլ օֆ դը Սըսայթի ֆօր Արմինիըն Սթադիս», *1984–ից, Ֆրեզնո (№ 11, 2000)*



Զիվանի

«ՋԱԻԱԽՔ», գրական-հաս. շաբաթաթերթ, ապա՝ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1913–16-ին Ախալքալաքում: Գավառի հայ. անդրանիկ պարբ-ն է: Խմբագիր՝ Վարդան ***Շահպարոնյան:*** Նպաստել է լուսավորության տարածմանը, գավառի բանահյուս. նմուշների հավաքմանն ու մշակմանը, արծարծել է սոցիալ-տնտ. խնդիրներ, մեծ տեղ է հատկացրել հայ գրակ-յանը, մշակույթին և կրթությանը: «Թատրոն» մշտ. խորագրով ծանոթացրել է հայ թատրոնի և դրամատուրգիայի նորություններին: «Ջավախքի գրադարան» մատենաշարով առանձին գրքույկներով տպագրել է գրական-գեղ. հավելվածներ [Հ. Մալխասյանի «Ջաւախքի երազը», Վ. Այ-Վազի «Երազը կատարւեց» (երկուսն էլ՝ 1913) պատմվածքները, «Լեւոնի դատը» դրաման և «Կեանքի ճամբին (մենութեան խոհեր)» (երկուսն էլ՝ 1914) ևն]:

«ՋԸՌՆԸԼ ՕՖ ԱՐՄԻՆԻԸՆ ՍԹԱԴԻՍ» («Journal of Armenian Studies»–«Հայագիտական ուսումնասիրությունների հանդես»), հայագիտ. եռամսյա հանդես: Հայագիտ. ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգ. ընկերակցության հրատ.: Լույս է տեսել 1975-ից, կանոնավոր՝ 1985–2004-ին Բելմոնտում (Մասաչուսեթս, ԱՄՆ)՝ անգլ.: Խմբագիր՝ Բարբարա Մերկերյան: Լուսաբանել է ընկերակցության գործունեությունը, տպագրել է հայոց պատմությանը, մշակույթին, լեզվին, գրակ-յանն առնչվող հայ և օտարազգի գիտնականների հոդվածներ, վերատպել անգլ. հրատարակված աշխատություններ, թարգմանություններ: Առաքվել է ԱՄՆ-ի, ՀՀ-ի և արտերկրի հայագիտ. կենտրոններ, գրադարաններ, առանձին անհատների:

«ՋԸՌՆԸԼ ՕՖ ԴԸ ՍԸՍԱՅԹԻ ՖՕՐ ԱՐՄԻՆԻԸՆ ՍԹԱԴԻՍ» («Journal of the Society for Armenian Studies»–«Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության հանդես»), հայագիտ. տարեգիրք: Լույս է տեսնում 1984-ից Ֆրեզնոյում՝ անգլ., 23-րդ հատորը՝ 2013-ին: Խմբագիրներ՝ Ավետիս ***Սանճյան***, Դենիս Փափազյան, Ջոն Գրեպպին: Տպագրում է հայ և օտարազգի գիտնականների հայագիտ. հոդվածները:

Հայագիտ. ուսումնասիրությունների ընկերակցությունը լույս է ընծայում նաև կիսամյա տեղեկատու («SAS News letter»), խմբագիր՝ Բառլո Տեր-Մկրտչյան: Լուսաբանում է ընկերակցության գործունեությունը:

ՋԻՎԱՆԻ [Լևոնյան Սերոբ Ստեփանի, 1846, գ. Կարծախ (այժմ՝ Վրաստանի Ախալքալաքի շրջանում)–5.3.1909, Թիֆլիս], աշուղ, ժող. երգիչ, աշուղ. արվ-ի ազգ. դպրոցի հիմնադիրը: Գարեգին ***Լևոնյանի*** հայրը: 1868–95-ին ապրել է Ալեքսանդրապոլում, այնուհետև՝ Թիֆլիսում: Մինչև 1880-ական թթ. նրա երգերը տպագրվել են տարբեր պարբ-ներում և «Սոխակ Հայաստանի» երգարանի հատորներում: Մեզ է հասել Ջ-ու շուրջ 800 երգ: Ջ-ու երգերը հեղինակից գրի են առել Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Կոմիտասը, Ա. Բրուտյանը, հետագայում (այլ աշուղների երգածից)՝ Ս. Դեմուրյանը, Ռ. Մելիք-յանը և ուր.:

Լույս են տեսել Ջ-ու «Աշըգ Ջիւանու երգերը» (1882, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), «Ջիւանու քնարը» (հ. 1–2, 1900, Թ., Մնացական Մարտիրոսյանի տպ., 1904, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Յերգերի ժողովածուն» (1936), «Երգեր» (նոտագրված, կազմ.՝ Մ. Աղայան, Շ. Տալյան, 1955), «Ջիվանու քնարը» (առաջաբ.՝ Ա. Սահակյանի, 1959), «Երգեր» (առաջաբ., ծնթգր.՝ Ա. Սահակյանի, 1988), «Անհայտ երգեր» (1996), «Ծիրանի ծառ: Հատընտիր» (1996), «Աշուղ Ջիվանի: Անհայտ երգեր» (աշխատասիր.՝ Թ. Պողոսյանի, 2009) ժող-ները:

Ամեն տարի հունիսի վերջին կիրակի օրը Կարծախում կազմակերպվում է Ջիվանու երգի տոն: Ջ-ու հուշարձաններ են տեղադրվել Կարծախում (1996), Ախալքալաքում (2006), Ջ-ու անունով Երևանում կոչվել է աշուղ. արվեստի դպրոցը, նաև փողոցներ՝ Երևանում, Գյումրիում և այլուր:

Գրկ. **Սահակյան Ա.**, *Հայրենաշունչ քնար (աշուղ Ջիվանու կյանքը և ստեղծագործությունը), Ե., 1965: Ջիվանի–150 (աշուղի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժող.), Ե., 1996:* **Գրիգորյան Շ.**, *Իմ Ջիվանին, Ե., 1997:* **Պողոսյան Թ.**, *Աշուղ Ջիվանու բանաստեղծական աշխարհը, Ե., 2013:*

ՋԻՎԵԼԵԳՈՎ (Ջիվելեգյան) Ալեքսեյ Կարապետի [14(26).3.1875, Նոր Նախիջևան–14.12.1952, Մոսկվա], պատմաբան, արվեստաբան, գրականագետ, թարգմանիչ: ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1945): Գրել է ռուս.: Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1897): 1898–1939-ին եղել է «Գրանատ հանրագիտական բառարանի» պատ. քարտուղարը, այնուհետև՝ հրատարակչության վարչության նախագահ, 1939-ից՝ Համաշխ. գրակ-յան ինստ-ի Արևմուտքի գրակ-յան, 1945-ից՝ Արվ-ի պատմության ինստ-ի թատեր. բաժնի վարիչ: Աշխատել է նաև «Ակադեմիա» հրատարակչությունում, Մոսկվայի համալսարանում, փիլ-յան և գրակ-յան, թատերարվ-ի, արվ-ի պատմության, Երևանի թատեր. ինստ-ներում:

Լույս են տեսել Ջ-ի «Զեյթունյան հերոսապատում» (1899), «Միջին դարերի քաղաքային համայնքը» (1901), «Հայերը Ռուսաստանում» (1906), «Գ. Ա. Զանշիևը և Հայկական հարցը» (1907), «Թուրքական Հայաստանի ապագան» (1911), «Ալեքսանդր I և Նապոլեոն» (1915), «Գյուղացիական շարժումները Արևմուտքում» (1920), «Ժան Պոլ Մարատ» (1923), «Իտալական վերածննդի ակնարկներ» (1929), «Հայաստանը և Թուրքիան» (1946), «Իտալական ժողովրդական կատակերգությունը» (1954), «Ֆրանսիական թատրոնի ժողովրդական հիմքերը» (1955) պատմագիտ., թատերագիտ., բանասիր. աշխատությունները: Հեղինակ է նաև դասագրքերի և բազմաթիվ թարգմանությունների:

Հետպատերազմյան տարիներին մոսկովյան մամուլում ուշագրավ հոդվածներ է տպագրել Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի մասին, արժեքավոր առաջաբաններ՝ Գ. Գոյանի «Հայ թատրոնի 2000 տարին» (ռուս., 1952) աշխատության, Ա. Դանտեի «Աստվածային կատակերգության» հայ. թարգմանության և այլ գրքերի համար:

Երկ. Միքելանջելո, Ե., 1977: Լեոնարդո դա Վինչի: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1986: Избранные статьи по литературе и искусству, Е., 2008.

Գրկ. **Տայան Ա.**, *Ալեքսեյ Ջիվելեգով (ծննդյան 100-ամյակի առթիվ), «ՊԲՀ», 1975, № 1:* **Սարուխանյան Ն.**, *Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը, Ե., 2008: Бояджиев Г.*, **Мокульский С.**, *Список основных научно-литературных трудов А. К. Дживелегова, "Сообщения ин-та истории искусств АН СССР", 1957, № 10–11.*



«Ջիվանու քնարը» (1959, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

«ԶՐԱԲԵՐԴ», հաս-քաղ. երկշաբաթաթերթ: ԼՂՀ Մարտակերտի շրջ. վարչակազմի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1932-ից Մարտակերտում (մինչև 1966-ը՝ «Սոցիալիզմի ուղիով», 1966–86-ին՝ «Բարեկամություն», 1992–93-ին՝ ընդհատումներով): Խմբագիրներ՝ Հ. Սարգսյան, Ա. Կարապետյան, Ս. Հովհաննիսյան, Զ. Թադևոսյան, Ա. Դանիելյան, Ա. Բալայան, Ա. Աբրահամյան, Շ. Օհանջանյան, Ս. Մամունց, Վ. Աթանեսյան, Ա. Հակոբյան, Դ. Շիրինյան, Ա. Ալավերդյան, Հ. Հովհաննիսյան, Հ. Մանուկյան, Լ. Սաթևոսյան, Ա. Գրիգորյան (2009-ից): Լուսաբանում է շրջանի սոցիալ-տնտ., կրթ., մշակութ. կյանքը: Արցախյան պատերազմի (1991–94) տարիներին և հետագայում տպագրել է նյութեր ինքնապաշտպան. և ազատագր. մարտերի, բռնագաղթի, զոհված ազատամարտիկների, հերոսների, հրամանատարների, շրջանի բնակավայրերի վերաբնակեցման մասին, անդրադառնում է շրջանի առօրյային:



Ալեքսեյ Ջիվելեգով

ԶՐԲԱՇՅԱՆ Էդվարդ Մկրտչի (24.9.1923, Երևան–10.8.1999, Երևան), գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1965), պրոֆ. (1967), ՀՀ ԳԱԱ ակադ. (1982, թղթ. անդամ՝ 1974-ից): Գիտ. վաստ. գործիչ (1970): Մխիթար *Հերացու* եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1950): 1950-ից դասավանդել է ԵՊՀ-ում, միաժամանակ, 1953–54-ին աշխատել է «Գրական թերթի» խմբագրությունում, 1961–62-ին՝ *«Սովետական գրականություն»* ամսագրի, 1967–77-ին՝ *«Բանբեր Երևանի համալսարանի»* հանդեսի գլխ. խմբագիր: 1966–70-ին եղել է ՀԽՍՀ ԳԱ գրակ-յան ինստ-ի բաժնի վարիչ, 1977–99-ին՝ տնօրեն, 1972–78-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ:



«Զրաբերդ», *1932-ից, Մարտակերտ*


Լույս են տեսել Զ-ի «Թումանյանի պոեմները» (1964, 1986), «Ռուբեն Սևակ» (1965), «Աշխարհայացք և վարպետություն» (1967), «Թումանյանի բալլադները» (1969, 2004), «Պոետիկայի հարցեր» (1976), «Միսաք Մեծարենց»



Էդվարդ Զրբաշյան



Է. Զրբաշյանի *«Թումանյանի բալլադները» (2004, Ե., «Նոր-Դար») գրքի կազմը*



Ռուբեն Զրբաշյանի *«Հրաբխագիտության հիմունքները և Հայաստանի նորագույն հրաբխականությունը» (2013, Ե., «Գիտություն») գրքի կազմը*

(2-րդ վերամշկ. հրտ.՝ 1977), «Գրականության տեսություն» (5-րդ վերամշկ. և լրց. հրտ.՝ 1980, 6-րդ վերամշկ. և լրց. հրտ.՝ «Գրականագիտության ներածություն: Բանարվեստի հիմունքներ» վերնագրով, 1996, 2011), «Գեղագիտություն և գրականություն» (1983), «Միքայել Նալբանդյանը և արդիականությունը» (1984), «Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ» (1988), «Գրողը և ժողովուրդը» (1989), «Գրականագիտություն: Տեսական դասընթաց» (1993), «Թումանյանը և հայ գրականության ավանդույթները» (1994), «Վահան Տերյանի տաղաչափական համակարգը» (1995), «Պուշկինը և հայ բանաստեղծները» (1999), «Թումանյանի գրական ժառանգությունը» (2000), «Փաստերի հետքերով. Գրականագետի նոթեր» (2001) աշխատությունները:

Գրկ. Էդվարդ Մկրտչի Զրբաշյան. Կենսամատենագիտություն, Ե.,1995:

ԶՐԲԱՇՅԱՆ Մխիթար Մկրտչի (11.9.1918, Երևան–6.5.1994, Երևան), մաթեմատիկոս, խմբագիր: Ֆիզմաթ. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1950), ՀՀ ԳԱԱ ակադ. (1956, թղթ. անդամ՝ 1953-ից): Էդվարդ ***Զրբաշյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1941): 1971–88-ին՝ ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստ-ի տնօրեն, 1966–94-ին, միաժամանակ՝ ***«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Մաթեմատիկա»*** հանդեսի հիմնադիր-գլխ. խմբագիր:

Լույս է տեսել Զ-ի «Դասախոսություններ ֆունկցիաների տեսության ընտրովի հարցերի շուրջը» (1964) աշխատությունը:

Երկ. Интегральные преобразования и представления функции в комплексной области, М., 1966; Классы и граничные свойства функций мероморфных в круге, М., 1993 (համահեղ.); Harmonic Analysis and Boundary Value Problems in the Complex Domain» («Birkhäuser Verlag»,1993).

ԶՐԲԱՇՅԱՆ Ռուբեն Տիգրանի (ծ. 13.12.1934, Երևան), երկրաբան, խմբագիր: Երկրաբանահանքաբան. գիտ. դ-ր (1990), պրոֆ. (1994), ՀՀ ԳԱԱ (1996), ՌԴ բնական գիտ-ների ակադ-ի (1999) ակադ.: Ավարտել է ԵՊՀ (1957): 1957-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ երկրբ. գիտ-ների ինստում, 1993–2006-ին՝ տնօրեն, միաժամանակ, 1994-ից դասավանդում է ԵՊՀ-ում: 1984–91-ին՝ Կովկասի հնահրաբխագիտ. հանձնաժողովի, 1993-ից՝ Հայկ. երկրբ. ընկերության նախագահ: 2001-ից՝ ***«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Գիտություններ Երկրի մասին»*** հանդեսի գլխ. խմբագիր: Մասնակցել է «ՀՍՍՌ երկրաբանությունը» բազմահատորյակի 3-րդ և 4-րդ հատորների ստեղծման աշխատանքներին: Զ. համահեղինակ է ԽՍՀՄ առաջին հնահրաբխագիտ. քարտեզի (մասշտաբ՝ 1 : 500 000):

Լույս են տեսել Զ-ի «Հայաստանի կենտրոնական հատվածի մեզոկայնոզոյան նստվածքակուտակումային ավազանների երկրաբանությունը և նավթագազաբերության հեռանկարները» (1991), «Հայաստանի ցեոլիտոլիտների գլխավոր հանքավայրերը» (համահեղ.,1999, երկուսն էլ՝ ռուս.) և այլ աշխատություններ, «Հրաբխագիտության հիմունքները և Հայաստանի նորագույն հրաբխականությունը» (2013) դասագիրքը նև:


ԱՄՆ-ի հայ գիտնականների, ճարտարագետների ընկերության Վ. Համբարձումյանի անվ. մրց. (1995), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի Պ. Կապիցայի (1998) և Ա. Էյնշտեյնի (2002), ՀՀ «Անանիա Շիրակացի» (2003) մեդալներ:

ԶՐՊԵՏՅԱՆ Հակոբ Շահան Սարգսի, **Զրպետ** (16.12.1772, Եդեսիա–5.12.1837, Թիֆլիս), քերական: Կրթությունն ստացել է Եդեսիայում: 1798-ին Նապոլեոն Բոնապարտի հրավերով մեկնել է Ֆրանսիա և աշխատել Փարիզի արքուն. մատենադարանում: Նույն թվականին Փարիզի Արլ. կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում հիմնադրել է հայոց լեզվի ամբիոն, որտեղ 1799– 1801-ին դասավանդել է, իսկ 1811–26-ին նույն դպրոցում նախաձեռնել է հայ-ի և հայագիտ. առարկաների դասավանդումը: 1826-ին հրավիրվել է Թիֆլիս, եղել է ուսուցիչ նախ՝ Ներսիսյան, ապա՝ իր հիմնադրած մասնավոր դպրոցում:

Զ. 1812-ին Փարիզում ֆրանս. ու հայ. տեքստերով, ծանոթագրություններով և առաջաբանով լույս է ընծայել Մատթեոս Ուռհայեցու «Պատմութիւն»-ից 2 հատված, 1824-ին՝ հուն., գրաբար և ֆրանս. տեքստերով «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացւոյ...» աշխա-

տությունը: Արլ. կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզու ուսուցանելու համար գրել է «Քերականութիւն արամեան լեզուի» (1823, ֆրանս. վերնագիրը՝ «Հայոց լեզվի քերականություն», Փ., «Եվրաթի» տպ.) դասագիրքը: Թարգմանել (հայ., պարսկ. և ֆրանս.) ու հրատարակել է «Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կացութեան թագաւորութեանն Պարսից» (Դ. Մելիք-Շահնազարյանի և Լ. Լանգլեսի հետ, 1817) աշխատությունը:

Գրկ. **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:* **Զահուկյան Գ.**, *Գրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ.), Ե., 1974:*



Հակոբ Շահան Զրպետյանի *«Քերականութիւն արամեան լեզուի» (1823, Փարիզ) գրքի տիտղոսաթերթը*

ՋՈՒԼՀԱԿՅԱՆ Ռոմեո Սուրենի [31.12.1937, ք. Հոկտեմբերյան (այժմ՝ ք. Արմավիր՝ ՀՀ Արմավիրի մարզում)–20.4.2005, Երևան], ճարտարապետ, նկարիչ-ձևավորող: Վաստ. ճարտ. (1987): ՀՃԱ թղթ. անդամ (1994): Ճարտ-յան միջազգ. ակադ-ի Մոսկվայի մասնաճյուղի պրոֆ. (1999): Ավարտել է ԵՊԻ (1960, դասավանդել է 1960-ից, պրոֆ.՝ 1999-ից): Համագործակցել է «Սովետական գրող», «Արևիկ», «Հայաստան», «Լույս» և այլ հրատարակչությունների հետ:

Ձևավորել է Վ. Դավթյանի «Ջուգաեռո ճանապարհ» (1976), Ռ. Հովսեփյանի «Ամենատաք երկիրը» (1977), Հ. Սաթևոսյանի «Ծառերը» (1978), Ս. Վահունու «Բալլադներ» (1978), Գ. Գ. Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» (1979), Հ. Սահյանի «Ժայռից մասուր է կաթում» (1979), Տ. Չրաքյանի «Երկեր» (1981), Գ. Բանդուրյանի «Զոկոնդա» (1982), Պ. Սևակի «Երկեր» (հ. 1–3, 1982), Ն. Օստրովսկու «Պատմվածքներ և նովելներ» (1985), Ռ. Դավոյանի «Քարե բարձ» (1989), Ս. Զուլոյանի «Ինձնից մինչև ես» (1996) և այլ գրքեր:

Գրկ. Մեղալ (կազմ.՝ Հ. Սևման, Լ. Էլոյան), Ե., 2006:


ՋՈՒՂԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է XII–XVII դդ-ում: Ամենահին ձեռագիրը 1286-ի «Մեկնութիւն սահմանաց ժամուց եւ խորհրդոց աղօթից»-ն է, գրիչ՝ Սարգիս: 1325-ին Խաչատուր գրիչն ընդօրինակել է Ճաշոց (Մատենադարան, ձեռ. № 6235): 1388-ին մեծադիր Ավետարան է պատկերազարդվել Սբ Ամենափրկիչ վանքում: XV դ-ում կենտրոնում է գործել գրիչ ու մանրանկարիչ Մարիամը. 1456-ին գրչագրել է «Քարոզգիրքս Գրիգորի Տաթեւացւոյ» (կենտրոնի ընտիր նմուշներից է): XVI դ-ի վերջին և հատկապես XVII դ-ի սկզբին մատյաններ են ընդօրինակել ***Հակոբ Ջուղայեցին*** (1587-ի և 1603-ի ձեռագրերը, նաև ծաղկողը), Բարսեղ վարդապետը («Մեկնութիւն Ղուկասու», 1603, Մատենադարան, ձեռ. № 8243), Երեմիա երեցը (1600, Ժողովածու, Մատենադարան, ձեռ. № 2019), Մկրտիչը (Ավետարան, 1603), Խաչատուր Խիզանեցին, Հովհան Դարգամարգեցին, Հովհաննես գրիչը, Հակոբ քահանան և ուր.: Կենտրոնում ընդօրինակված հայտնի վերջին ձեռագիրը Ռստակես արեղայի Հայսմավուրքն է (1605): 1604–05-ի բռնագաղթից հետո էլ կենտրոնը շարունակել է գործել: Ձեռագրերից պահվում են նաև Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատանը և այլուր:

Գրկ. **Սմբատեանց Ա.**, *Նկարագիր Մատր Կարապետի վանից Երնջակայ ու շրջակայից նորա, Թ., 1904: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950:* **Այվազյան Ա.**, *Ջուղա, Ե., 1984:*



Ռոմեո Զուլհակյան. *Հ. Սաթևոսյանի «Ծառերը» (1978, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

Ռ



Ռ, հայ. այբուբենի 28–րդ տառը, անվանումը՝ «ռա»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 երկար և 1 լայն տարրերից. երկարներն իրար են միանում նուրբով՝ վերևից, իսկ լայնը աջ երկարին՝ նուրբով աջից՝ մեջտեղից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ռ, որպես այբուբենի հազարավորների սյան 1–ին (28–րդ) տառ, նշանակում է մեկ հազար և մեկհազարերորդ, բյուրի նշանով (Ռ՝)՝ 10 մլն (10 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ռ –մաս 1000–րդ):

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ԹԵՐԹԵՐ, Հայրեն. մեծ պատերազմի (1941–45) տարիներին հրատարակված պարբ–ներ, որոնք հիմնականում նույնատիպ ռուս. թերթերի հայ. տարբերակներն էին: Հայ. թերթի խմբագիրը ռուս. տարբերակի խմբագրի տեղակալն էր: Լույս են տեսել 16 անուն թերթեր (7–ը՝ ռազմաճակատների, մնացածները՝ դիվիզիաների պաշտոնաթերթեր) և 1 հանդես: Ռ. թ–ի նպատակը զինվորներին հայրենասիր. ոգով տոգորելն էր, նրանց մարտ. պատրաստության բարձրացմանը նպաստելը: Ճակատային առաջին հայ. թերթը՝ *«Մարտական գրոհը»*, հրատարակվել է 1942–ի հունվ–մայիսին Ղրիմում: Այնուհետև լույս են տեսել «Հայրենիքի փառքի համար» (1942, Հվ., ապա՝ Հս. Կովկասի ռազմաճակատ), «Առաջ դեպի հաղթանակ» (1942–43, Հս. Կովկասի, ապա՝ Անդրկովկասի ռազմաճակատի Սևծովյան խումբ) և այլ թերթեր: 1942–45–ին հրատարակվել է Անդրկովկասի ռազմաճակատի «Բանվորագյուղացիական կարմիր բանակի մարտիկ» (1945–56–ին՝ Անդրկովկասի զինվոր. օկրուգի) պաշտոնաթերթը: Հայ. թերթեր են լույս տեսել նաև Ուկր. 2–րդ, Մերձբալթյան 2–րդ, Հս. և այլ ռազմաճակատներում: Հայկ. դիվիզիաների պարբ–ներից են «Հայկական սնայպերը» (1942, 390–րդ դիվիզիա), «Կարմիր զինվորը», «Մարտական դրոշը» (1942–43, 409–րդ դիվիզիա) ևն: ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմատը 1942–45–ին հրատարակել է «Կարմիր բանակի ագիտատորի բլոկնոտ» հանդեսը:

«ՌԱԶՄԻԿ», ազգ., քաղ. պարբերաթերթ: Ցեղակրոն–տարոնական շարժման պաշտոնաթերթ: Հիմնադիրներ՝ Գարեգին *Նժդեհի*, Հայկ *Ասատրյան*, Ներսես Աստվածատրյան: Լույս է տեսել 1937–44–ին. մինչև 1938–ը՝ Պլովդիվում, ապա՝ Սոֆիայում: Խմբագիրներ՝ Հայկ Ասատրյան, Կարո Գևորգյան: «Ռ.»–ում առաջին անգամ սկսել են հրապարակվել

Ռազմաճակատային թերթեր





նյութեր տարոնականության վերաբերյալ: Անդրադարձել է նաև ժամանակի ազգ. կյանքին, քաղ. իրադարձություններին:

«ՌԱԶՄԻԿ», հաս-քաղ., երիտասարդ. պարբերաթերթ: ՀՅԴ Լիբանանի երիտասարդ. միության պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1983-ից Բեյրութում (սկզբում՝ ամսաթերթ, 1985-ից՝ անկանոն պարբերականությամբ): Տպագրում է երիտասարդներին հետաքրքրող քաղ., հաս. թեմաներով նյութեր, հայոց պատմությանը, ՀՅԴ-ի գործունեությանն ու անցած ուղուն վերաբերող հոդվածներ, 1980-ական թթ-ի կեսին մեծ տեղ է հատկացրել ՀՅԴ-ին մոտ կանգնած զինյալ խմբակների՝ «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկների» և «Հայ հեղափոխական բանակի» հակաթուրք. գործունեության լուսաբանմանը:



«Ռազմիկ», 1983-ից, Բեյրութ (№ 4, 2012)

«ՌԱՀՎԻՐԱ», մանկավարժ. ամսաթերթ: Բուլղարահայ ուսուցչ. միության պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1906–08-ին Շումենում, ապա՝ Պլովդիվում: Խմբագրապետներ՝ Վարազդատ Տաքեյան, Սատթեոս Երիցյան: Տպագրել է մանկավարժ. հոդվածներ, ներկայացրել բուլղարահայ դպրոցների ու ուսուցիչների աշխատանքը:

«ՌԱՆՉՊԱՐ», շաբաթաթերթ: ՀԿ(բ)Կ Նոր Բայազետի (այժմ՝ Ք. Գավառ) գավկոմի և գավգործկոմի պաշտոնաթերթը: Լույս է տեսել 1921–23-ին Նոր Բայազետում: Խմբագիր՝ Վահան *Ծովյան* (Երևան): Աջակցել է գավառի աշխատավորության քաղ. դաստիարակությանը, արձարձել գյուղատնտ., կրթ., առողջապահ. հարցեր:

«ՌԱՆՁԲԱՐ ԻՐԱՆԻ», աշխատավոր. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1921–24-ին Թեհրանում: Խմբագիր-հրատարակիչ՝ Վահան Մեսրոպյան: Տեղեկություններ է հաղորդել իրանահայ գաղութի առօրյայից, աշխատավորությանը հավատ ներշնչել ապագայի հանդեպ: Քննադատել է 1921-ի Փետրվարյան ապստամբությունը: Անդրադարձել է նաև կրթության ու մշակույթի հարցերին:

ՌԱՄԵԼ Ջեյմս (ծ. 27.10.1953, Նյու Յորք), ամերիկացի հայագետ, իրանագետ, արևելագետ: Ավարտել է Օքսֆորդի համալսարանը (1977), Լոնդոնի համալսարանի Արլ. և աֆրիկյան հետազոտությունների դպրոցը (1982): 1993-ից Հարվարդի համալսարանի հայագիտյան ամբիոնի վարիչն է:

Լույս են տեսել Ռ-ի «Զրադաշտությունը Հայաստանում» (1987), «Հովհաննես Թլկուրանցին և հայ միջնադարյան քնարական ավանդույթը» (1987), ««Քաշտի քաջերը». հայկական էպոս» (2000) աշխատությունները: Թարգմանություններ է արել հայ-ից:

«ՌԱՖԹ. ՋԸՐՆԸԼ ՕՖ ԱՐՄԻՆԻԸՆ ՓՈԵԹՐԻ ԸՆԴ ՔՐԻԹԻՍԻԶՄ» («Raft. A Journal of Armenian Poetry and Criticizm»–«Լաստ. Հայկական չափածոյի և քննադատության հանդես»), գրական, գրականագիտ. տարեգիրք: Լույս է տեսել 1987–99-ին Քլիվլենդում (ԱՄՆ)՝ հայ., անգլ.: Խմբագիր՝ Վահե *Օշական,* տնօրեն՝ Ջոն Գրեպպին: Տպագրել է հայ բանաստեղծների գործեր (նաև անգլ. թարգմանությամբ), գրաքննադատ. և վերլուծ. հոդվածներ: Լույս է ընծայվել 13 գիրք, փակվել է Վ. Օշականի մահից հետո:




«Ռաֆթ. Ջըռնըլ օֆ Արմինիըն Փոեթրի ընդ Քրիթիսիզմ», *1987-99, Քլիվլենդ (№ 1, 1987)*

ՌԵԳԻՍՏԱՆ (Էլ-Ռեգիստան) Հարոլդ Գաբրիելի (28.4.1924, Տաշքենդ–4.11.1999, Մոսկվա), հայազգի ռուսագիր բանաստեղծ, թարգմանիչ: Գաբրիել *Էլ-Ռեգիստանի* որդին: Ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ը (1951): 1955–77-ին աշխատել է «Սովետսկի պիսատել» հրատարակչությունում:

Ռուս. լույս են տեսել Ռ-ի «Պարտքի ձայնը» (1972), «Գետը» (1975), «Տիեզերական յամբեր» (1979), «Երկրային ճանապարհ» (1980), «Ակնթարթ և հավերժություն» (1981), հայ.՝ «Առաջին տերևաթափ» (1971) և «Աստղերը ձյան մեջ» (1982) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ները: Ռ. ավելի քան 300 երգերի տեքստերի հեղինակ է: Ռուս. է թարգմանել հայ հեղինակների ստեղծագործություններից:


ՌԽՖՍՀ գրողների միության 1-ին մրց. (1980), ՀԳՄ Ե. Չարենցի անվ. մրց. (1982, Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի թարգմանության համար):




Հարոլդ Ռեգիստանի *«Աստղերը ձյան մեջ» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*




«Ռեսպուբլիկա Արմենիա», *1990-ից, Երևան*



«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն», *1920-ից, Փարիզ (№ 31, 2008)*



«Ռևյու դ'իսթուար արմենիեն կոնտամպորեն», *1995-ից, Փարիզ (№ 1, 1995)*



«Ռևյու դյու մոնդ արմենիեն մոդեռն է կոնտամպորեն», *1994–2001, Փարիզ (№ 4, 1998)*

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ» (“Республика Армения”–«Հայաստանի Հանրապետություն»), հաս-քաղ. եռօրյա թերթ (մինչև 2000-ը՝ ՀՀ ԱԺ պաշտոնաթերթը): Լույս է տեսնում 1990-ից Երևանում՝ ռուս.: Խմբագիրներ՝ Բորիս *Նավասարդյան*, Տիգրան Հակոբյան, Աշոտ Մելիքյան, Արմեն Խանբաբյան, Շամիրամ Աղաբեկյան, Վարդան Ալոյան, Ելենա Կուրդիյան (2004-ից): Անդրադառնում է ՀՀ-ի հաս-քաղ., սոցիալ-տնտ., կրթամշակութ., մարզ. առօրյային, ԼՂՀ-ում, Սփյուռքում և աշխարհում տեղի ունեցող ուշագրավ իրադարձություններին, ներկայացնում է մշակույթի և մարզաշխարհի ճանաչված գործիչների ևն:

ՌԵՍՏԵՆ Միքայել, տես *Լևտրեն* Միքայել:

«ՌԵՎՅՈՒ ԴԵԶ ԷԹՅՈՒԴ ԱՐՄԵՆԻԵՆ» («Revue des études arméniennes»- «Հայագիտական ուսումնասիրությունների հանդես»), հայագիտ. (1964-ից՝ կիսամյա հանդես) կիսամյա տարեգիրք: Լույս է տեսնում 1920-ից Փարիզում՝ ֆրանս.՝ Ֆրանսիայի պետ. ԳՀ կենտրոնի և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ: Հիմնադրել են Ֆրեդերիկ *Մակլերն* ու Անտուան *Մեյեն* և սահմանել հանդեսի նպատակները: Առաջին շրջանում (1920–33) տպագրել է Ա. Մեյեի՝ հայ-ի համեմատ. քերակ-յանը վերաբերող հոդվածներ, ինչպես նաև հայ միջնադարյան բանահյուսությանը, հայոց պատմությանը նվիրված նյութեր, գրախոսականներ: Անդրադարձել է նաև Խորհրդ. Հայաստանում կատարվող հնագիտ. պեղումներին, Սփյուռքի կացությանը, հայ և ֆրանսիացի ժողովուրդների ավանդ. հարաբերություններին: Տպագրությունը վերսկսվել է 1964-ից (նոր շրջան): Տնօրեններ՝ Էմիլ *Բենվենիստ* (1964–75), Ժորժ Դյումեզիլ (1975–80), Սիրարփի *Տեր-Ներսեսյան* (1981–87), Նինա *Գարսոյան* (1987-ից), քարտուղարներ՝ Հայկ *Պերպերյան*, Ժան-Պիեռ *Մահե*, Կառլես դե Լամբերտերի: Տպագրում է նաև անգլ. և գերմ. հոդվածներ:

«ՌԵՎՅՈՒ Դ'ԻՍԹՈՒԱՐ ԱՐՄԵՆԻԵՆ ԿՈՆՏԱՄՊՈՐԵՆ» (“Revue d'histoire arménienne contemporaine”–«Արդի հայոց պատմության հանդես»), տարեգիրք: Լույս է տեսնում 1995-ից Փարիզում՝ ֆրանս.՝ Նուբարյան մատենադարանի և ՀԲԸՄ-ի նյութ. օժանդակությամբ: Խմբագր. խորհուրդ՝ Ռեյմոն-Հարություն Գևորգյան (տնօրեն), Ս. Աստուրյան, Վահագն Տատրյան, Արմեն-Կլոդ Սութաֆյան, Մ. Կարապետյան, Ա. Նասիբյան, Ա. Սարաֆյան: Տպագրում է Հայկ. հարցին վերաբերող հոդվածներ, փաստաթղթեր, ուսումնասիրություններ:

«ՌԵՎՅՈՒ ԴՅՈՒ ՄՈՆԴ ԱՐՄԵՆԻԵՆ ՄՈԴԵՌՆ Է ԿՈՆՏԱՄՊՈՐԵՆ» («Revue du monde arménien moderne et contemporain»–«Ժամանակակից հայկական աշխարհի հանդես»), հայագիտ. տարեգիրք: Հայկ. ուսմանց ընկերության հրատ.: Լույս է տեսել 1994–2001-ին Փարիզում՝ ֆրանս.՝ Ֆրանսիայի մշակույթի նախարարության հովանավորությամբ: Խմբագրակազմ՝ Մ. Ագասյան, Ա. Տոնապետյան, Մ. Հովհաննիսյան, Գ. Լևոնյան, Կ. Սուրադյան, Ս. Տեր-Մինասյան: Անդրադարձել է հիմնականում XVIII դ-ից հետո կատարված հայագիտ. ուսումնասիրություններին՝ *«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»*-ի աշխատանքներն ամբողջացնելու նպատակով: Տպագրել է լեզվաբ., պատմաբանասիր., ազգագր. նյութեր, անտիպ հայագիտ. հետազոտություններ, ծանոթագրել Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման գործընթացին, սփյուռքահայ կյանքին:

ՌԵՏՈՒՇ (ֆրանս.՝ retouche–շտկել, ուղղել), պատկերների (նկարներ, լուսանկարներ ևն) տեխ. մշակում՝ նրանց առավել բարձրորակ վերարտադրությունն ապահովելու համար: Մատիտով կամ ներկով մշակման միջոցով վերացնում են պատկերի առանձին մասերի արատները և գույները դարձնում ավելի ցայտուն: Ռ. պոլիգրաֆիայում կիրառվում է պատկերային բնագրերը տպագրության պատրաստելու համար:

Ներկայում կատարվում է էլեկտրոնային Ռ.՝ համակարգչային տեխնիկայով, որի որակը վերահսկում են ցուցասարքի էկրանի վրա երևացող պատկերով:

ՌԻԼՍԿԻ Սաքսիմ Ֆադեևիչ (19.3.1895, Կիև–24.7.1964, Կիև), ուկրաինացի բանաստեղծ, գիտնական, հաս. գործիչ: ՈՒԽՍՀ ԳԱ (1943) և ԽՍՀՄ ԳԱ (1958) ակադ.: Թարգմանել է Խ. Աբովյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ս. Տարոնցու, Հ. Շիրազի և հայ այլ գրողների գործերից: Նրա խմբագրությամբ և առաջաբանով ուկր. հրատարակվել են Ա. Իսահակյանի (1951, 1956) և Ե. Չարենցի (1957) բանաստեղծությունների ժող-ները: 1954-ին Հայաստան այցելությունից հետո գրել է «Հայաստանին», «Սև աստղերը», «Մասիս» բանաստեղծությունները:

Հայ. լույս են տեսել Ռ-ու «Սև աստղերը» (1965), «Կամուրջներ» (1973) բանաստեղծությունների ժող-ները, «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» (1973, ընդգրկված են նաև Պ. Տիչինայի գործերից) գիրքը:

ՀԽՍՀ ԳԽ Նախագահության պատվոգիր (1956):



Մաքսիմ Ռիլսկու *«Սև աստղերը» (1965, Ե., «Հայաստան», ձևավորող՝ Վ. Կաժոյան) գրքի կազմը*

ՌԻՎՈԼԱ Ֆրանչիսկոս, XVI դ-ի վերջի–XVII դ-ի 1-ին կեսի իտալացի կանոնիկոս, լեզվաբան-հայագետ: Եղել է Միլանի Ամբրոսյան վարժարանի դասախոս-հայագետ:

Ռ. հայ. առաջին տպագիր բառարանի՝ *«Բառագիրք հայոց»*-ի հեղինակն է (1621, Միլան, Ամբրոսյան վարժարանի տպ.):

1624-ին նույն տպարանում տպագրվել է Ռ-ի **«Քերականութիւն հայերէնի»** (հայ., լատ.) երկը: Տիտղթ-ին՝ «Grammaticae armenae...» (319 էջ, 4º, 14,8 x 9,5 սմ): Քննել է հայկ. տառերը՝ ըստ ձևի, արժեքի և անվան, հայ-ի ուղղագրությունը, ուղղախոսությունը, անվան և դերանվան քերական. կարգերը, բայի հատկանիշները, շարահյուսությունը ևն:

Կարդինալ Ա. Ռիշելյեի հրամանով և ծախսով Ֆրանսիայում առաջին անգամ ձուլվել են հայկ. տառեր, և Ռ-ի վերոհիշյալ գործերը 1633-ին տպագրվել են Փարիզում: Ռ-ի բառարանն ու քերակ-ը կարևոր նյութեր են պարունակում հայ-ի պատմության ուսումնասիրման համար:

Գրկ. Գասպարյան Գ., *Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:* Զահուկյան Գ., *Դրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ.), Ե., 1974:*



Ֆրանչիսկոս Ռիվոլայի *«Քերականութիւն հայերէնի» (1624, Միլան, Ամբրոսյան վարժարանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*

«ՌՅԱ ԹԱՋԱ» («Նոր ուղի»), կիսամսյա թերթ: Հայաստանի եզդի համայնքի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1930-ից (1938–55-ին ընդհատվել է) Երևանում՝ քրդ.: Խմբագիրներ՝ Հարություն *Մկրտչյան*, Գևորգ *Պարիս*, Հրաչյա *Քոչար*, Զարդոե Գենջո, Միրոե Ասադ, Տիտալե Ածո, Ամարիկե Սարդար, Գրիշաե Սամե, Տիտալե Քյարամ (2010-ից): Լուսաբանում է ՀՀ տնտ. և մշակութ. կյանքը, հայաստանաբնակ եզդիների առօրյան: Անդրադառնում է հայ և եզդի ժողովուրդների բարեկամությանը, նպաստում քրդ-ի և քրդ. գրակ-յան զարգացման, քրդ. բանահյուսության նմուշների հավաքմանն ու հրատարակմանը:

ՌՈՏԱՊՐԻՆՏ (<լատ. rota–անիվ, <rotare–պտտել և անգլ. print–տպել), փոքրաչափ օֆսեթ տպագր. մեքենա (տես *Օֆսեթ տպագրություն*)՝ փաստաթղթերը փոքր՝ մինչև մի քանի հզ. տպաքանակով արագ բազմացնելու համար: Ռ-ի տպաձևերը պատրաստում են էլեկտրագրության կամ լուսամեխ. եղանակներով: Արագությունը 6–9 հզ. տպածո/ժամ է:

ՌՈՏԱՑԻՈՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ, գլանային տպաձևով աշխատող տպագր. մեքենա: Անընդհատ պտտվող գլաններ են, որոնց միջով անցնում է տպագրության թուղթը: Նախատեսված են գերարագ և մեծ ծավալի տպագր. արտադրանք թողարկելու համար:

Տպագրության եղանակից կախված՝ լինում են բարձր, խոր, օֆսեթ և այլ տպագրության Ռ. տ. մ-ներ: Արտադրվում են թղթի թերթային (ֆլատ) և փաթթոցով մատուցմամբ: Ժամանակակից Ռ. տ. մ-ներն ունեն մինչև 100 հզ. և ավելի տպածո/ժամ արագություն:


Առաջին Ռ. տ. մ-ներն արտադրվել են Ֆրանսիայում (1866-ից): Հայաստանում առաջին Ռ. տ. մ-ները տեղադրվել են 1980-ին Պո-



«Ռյա թազա», *1930-ից, Երևան*



Ռստակես. *Խորան, 1397-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 7629)*



Հրաչյա Ռոսիկյանի *«Քսան տարի Վարպետի հետ» (1975, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

Ռումինիայի հայկական տպագրություն



«Հայ գիտնականի ստեղծագործությունը Ռումինիայում: Հակոբ Ճոլոլյան Սիրունի» (ռում., 2008, Բուխարեստ) գրքի կազմը

լիգրաֆկոմբինատում (այժմ՝ *«Հակոբ Մեղապարտ տպագրատուն»*)՝ թերթեր տպագրելու համար (տպագրիչ՝ Սիմոն Գրիգորյան):

ՌՍՏԱԿԵՍ, XIV դ–ի 2–րդ կեսի մանրանկարիչ և գրիչ: Ապրել և ստեղծագործել է Վասպուրականում: 1397–ին Խիզանում ընդօրինակել և նկարազարդել է Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 7629), որն ունի 20 տերուն., 4 ավետարանիչների պատկերներ, 10 խորան: Ռ–ի պատկերագրությունը բացառիկ ինքնատիպ է՝ որոշակիորեն շեղված պատկերման կանոն. ձևերից: Ռ–ի զարդանկարչ. մտածողությունն արտահայտվել է բուս. բարդ հորինվածքներով թեմատիկ պատկերներում, լուսանցազարդերում, որոնցից շատերն առնչվում են Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու ռելիեֆներին:

Գրկ. Հայկական մանրանկարչություն. Վասպուրական [ալբոմ, կազմող՝ Հ. Հակոբյան], Ե., 1978: Հակոբյան Հ., Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Ե., 1997:

ՌՈՒԽԿՅԱՆ Հրաչյա Լիպարիտի [20.4(3.5). 1915, Ալեքսանդրապոլ–28.11.1992, Երևան], գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ժող. նկարիչ (1985): Ավարտել է ԵԳԱՏ (1935), Թբիլիսիի գեղարվ–ի ակադ–ը (1941): 1952–57–ին դասավանդել է ԵԳԹԻ–ում:

Նկարազարդել և ձևավորել է Մ. Նարյանի «Ձկնորսի տղան» (1945), Հ. Թումանյանի «Պողոս–Պետրոս» (1945), Վ. Կորոլենկոյի «Կույր երաժիշտը» (1947, կազմը), Պ. Զոթյանի «Գերված աղջիկը» (1947), Մ. Ասլանյանի «Քողարկված հետքերով» (1950), Հ. Պողոսյանի «Բանաստեղծություններ» (1951), Բ. Սեյրանյանի «Աղբյուրներ» (1953), Ն. Թումանյանի «Հովհաննես Թումանյան. մանկություն և պատանեկություն» (1955), Հ. Մուրադյանի «Սայաթ–Նովա» (1963), Ս. Աղաբաբյանի «Արամաշոտ Պապայան» (1979) և այլ գրքեր, նաև դասագրքեր: Ռ–ի հոդվածները, գործերը պարբերաբար տպագրվել են «Սովետական արվեստ», «Սովետական Հայաստան» ամսագրերում, «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն», «Երեկոյան Երևան» թերթերում, միութ. «Օգոնյոկ» (ռուս.), Գլենդելի «Համայնապատկեր» և այլ հանդեսներում : Ռ–ի գործերով (Կոմիտաս, Սայաթ–Նովա, Հ. Թումանյան) ստեղծվել են նամականիշեր, տպագրվել օրացույցներ (2009, 2011, 2012): Գրել և նկարազարդել է «Քսան տարի Վարպետի հետ» (1975) հուշապատումը՝ նվիրված Ա. Իսահակյանին, ստեղծել ճեպանկարների շարք՝ բանաստեղծի ձեռագիր քառատողերով (1975):

Ճանաչվել է Սայաթ–Նովայի դիմանկարով («Սայաթ–Նովա», 1945, կավճաներկ, ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1–ին մրց.՝ 1945):

Գրկ. Հրաչյա Ռոսիկյան [ալբոմ], Ե., 2006 (հայ., ռուս., անգլ.): Գրիգորյան Ա., Հրաչյա Ռոսիկյանի «Բույլ հանճարացը», Ե., 1986:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XIX դ–ի վերջերից Ռումինիայի Ֆոքշան, Յասսի, Գալաց, Բրըիլա, Տուլչա, Բուխարեստ քաղաքներում գործել են հայկ. տպարաններ, որտեղ լույս են տեսել շուրջ 50 անուն պարբ–ներ, ինչպես նաև գեղ., պատմ., կրոն. գրքեր: Հայկ. առաջինն՝ Հայաստանայայց ընկ. տպարանը բացվել է Ֆոքշանում, որտեղ 1877–ին տպագրվել է Ա. Ալթունյանի «Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, որք ի Մոլտո–Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան» գիրքը, որտեղ 154 էջից սկսվում է «Տեղեկութիւնք ի վերայ Սուչաւայի հայոց» բաժինը: Հաջորդ՝ «Անի» տպարանը Գալացում հիմնադրել է Ղևոնդ քհն. Փափազյանը 1891–ին. գործել է մինչև 1902–ը: 1895–99–ին այնտեղ տպագրվել են «Հայկական տարեցոյցներ», նաև Պ. Սամիկոնյանի «Ռումանահայոց ներկայն եւ ապագայն» (1895), Գ. Մուրատյանի «Մելքսեդեկի եպիսկոպոսի Քմիւռնիոյ նամականի առ Տ. Կարապետ երեց Սեթեան» (1896) և «Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ» (1898), Ղ. Փափազյանի «Հրահանգիչ վէպեր» (Ա տետր, 1902) երկերը:

Բուխարեստում 1912–ին հիմնադրված *«Շեփոր»* պարբ–ի տպարանում տպագրվել է նաև Լ. Լանիսի «Արդարութեան կրակը» (1913) նորավեպը, 1916–ին՝ Ս. Բյուրատի «Տէմիր Մուշլու» (ա. տպ.) վիպակը:

Ռումինիայում լույս են տեսել նաև ազգ. քաղ. «Արօր» (1892–94, Գալաց) շաբաթաթերթը, գրական, պատմագիտ. *«Մեհյան»* (1950–58,

հայ., ռուս.), հայագիտ. *«Արարատ»* (1924–42, 1990–ից) և *«Անի»* (1935–43) հանդեսները, Մ. Պոտուրյանի կազմած *«Հայ հանրագիտակ»* (1938–40) հանրագիտ. տեղեկատուն, քաղ., գրական, մշակութ. *«Նոր արշալոյս»* (1922–34), հաս., քաղ., գրական *«Արագ»* (1932–44), գրական, հաս-քաղ. «Պահակ» (1935–41, 1944–46, հայ., ռուս.) թերթերը (բոլորը՝ Բուխարեստ) և այլ պարբ-ներ:

1950-ից Բուխարեստում լույս է տեսնում հաս., քաղ., տնտ., մշակութ. *«Նոր կեանք»* շաբաթաթերթը (1982-ից՝ ամսաթերթ, հայ., ռուս.):


ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է Ս. Պետերբուրգում 1781-ին՝ Գրիգոր Խալդարյանի տպարանի հիմնադրումով (տես ***Սանկտ Պետերբուրգի հայկական տպագրություն***): 1790-ին Աստրախանի թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղությանի ջանքերով այդ տպարանը տեղափոխվել է Նոր Նախիջևան, այնուհետև՝ Աստրախան (տես ***Նոր Նախիջևանի հայկական տպագրություն, Աստրախանի հայկական տպարան***):

1819-ին Մոսկվայում՝ ֆրանսիացի Օգյուստ Սեմենի տպարանում, հրատարակվել է Սերովբե վարդապետի «Ծաղիկ գիտութեանց» հանրագիտ. բառարանը, 1821-ին՝ Հ. Ալամդարյանի «Համառօտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» բառարանը, որին հաջորդել են Մանուել վարդապետի «Դպրութիւն մանկանց ի Մանուէլ ծայրագոյն վարդապետէ եւ յաջորդէ նահանգին Ղրիմու» (1821) և այլ դասագրքեր:


1828-ին Լազարյան ճեմարանը Ս. Պետերբուրգում բացել է իր տպարանը, որտեղ լույս են ընծայվել պաշտոն. վավերագրեր (հայ. և ռուս.): Այնուհետև տպարանը տեղափոխվել է Մոսկվա և գործել մինչև 1866-ը. առաջին գիրքը՝ «Աւետարանի զօրութիւն»-ը, տպագրվել է 1830-ին (տես ***Մոսկվայի հայկական տպագրություն***):

Ռ. հ. տ-յան մեջ կարևոր դեր ունեն նաև պարբ-ները: Ռուսաստանում հայ. առաջին՝ *«Արեւելեան ծանուցմունք»* թերթը, հրատարակվել է 1816-ին Աստրախանում: Շուրջ 200 տարվա ընթացքում այստեղ տպագրվել են ավելի քան 90 անուն պարբ-ներ, որոնցից մի քանիսը նկատելի տեղ են գրավել հայ մամուլի պատմության մեջ: Մոսկվայում լույս են տեսել ազգ., կրթ., դաստիարակչ. *«Հիւսիսափայլ»* (1858–62 և 1864) ամսագիրը, գրական, կրոն. *«Ճռաքաղ»* (1858–62), տեղեկատվ. *«Համբաւարեր Ռուսիոյ»* (1861–64), պատմաբանասիր. *«Փարոս Հայաստանի»* (1879–81), մշակութ. *«Հանդէս գրականական եւ պատմական»* (1888–90 և 1894–96) հանդեսները, գրական-գեղ., քննադատ. *«Գարուն»* (1910–12) տարեգիրքը, գրական, հաս-քաղ., մշակութ. «Մարտ» (1911–16) ամսաթերթը, հաս-քաղ., գրական *«Արմյանակի վեպտնիկ»* (1916–18, 1990–2002, ռուս.) հանդեսը, հաս-քաղ. *«Պրո Արմենիա»* (1991–92, շարունակել է Փարիզում 1900–14-ին լույս տեսած նույնանուն պարբ-ի ավանդույթները) ամսագիրը ևն, Նոր Նախիջևանում՝ հաս-քաղ., ազգ., գրական «Նոր կեանք» (1906–07), «Մեր ձայնը» (1907–09), «Լոյս» (1910–14), «Գրիչ» (1912–14), «Գաղութ» (1914–16), «Հայ համայնք» (1918–20) շաբաթաթերթերը ևն, Ս. Պետերբուրգում՝ ազգ., գրական, պատմ. *«Հիւսիս»* (1863–64) շաբաթաթերթը, գրական-գեղ. *«Արաքս»* (1887–98) և *«Բանբեր գրականութեան եւ արուեստի»* (1903–04) կիսամյա հանդեսները ևն, Աստրախանում՝ հաս-քաղ., տնտ. «Լրաբեր» (1908–09) շաբաթաթերթը, հաս-քաղ., գրական «Մեր կեանքը» (1910–12) կիրակնօրյա թերթը, Եկատերինոդարում՝ գրական, հաս. «Արձագանք» (1918–20) եռօրյա ազգ., մշակութ., պատմ. *«Սիաշտոց»* (1993–2003, Կրասնոդար) թերթերը ևն:


Ներկայում լույս են տեսնում մշակութ., կրթ., պատմ., կրոն. *«Հյուսիսափայլ»* (1994-ից, Մոսկվա), քաղ., տնտ., գիտ., մշակութ. *«Արմենիա ի միր»* (1995-ից, Մոսկվա, ռուս.), *«Գործարար»* (1999-ից, Կալուգա) հանդեսները, հաս-քաղ. *«Արմենիան թայմս»* (1994-ից,



Նոր կրակարանի (1814, ՍՊբ, Հովսեփ Հովհաննիսյանի տպ.) տիտղոսաթերթը



«Տարեցոյց եւ օրացոյց ամի տեառն մերոյ» (1824, Աստրախան, Սբ Էջմիածնի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Աւետարանի զօրութիւն» (1830, Մոսկվա, Լազարյան ճեմ. տպ.) գրքի տիտղոսաթերթը



Նահապետ Ռուսինյան

Մոսկվա), *«Երկրաման»* (1996–ից, Կրասնոդար, ռուս.), *«Նոյն Կովչեգ»* (1997–ից, Քիշնև, 2000–ից՝ Մոսկվա, ռուս.), «Նաիրի վ Կալինինգրադե» (2003–ից, Կալինինգրադ), ազգ., հաս., կրոն. *«Հավատամք»* (1993–ից, Ս. Պետերբուրգ), «Հայաստանյայց եկեղեցի» (2007–ից, Մոսկվա) ամսաթերթերը, Ռուսաստանի հայերի միության *«Վեպտնիկ»* (2002–ից, Մոսկվա, ռուս.) ամենամյա տեղեկագիրը, *«Խաչքար»* (2007–ից, Կրասնոդար, ռուս.) ամսագիրը ևն:

Գրկ. Նանումյան Ռ., Հայ–ռուս գրական կապերի շուրջը, Ե., 1945: Հովնան Գ., Ռուս–հայ գրական կապերը XIX–XX դարերում, հ. 1–2, Ե., 1960–61: Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Ե., 1964: Արշարունի Ա., Մոսկվայի հայ մամուլը, Ե., 1971:

ՌՈՒՍԻՆՅԱՆ Նահապետ Պայազատի [28.9.1819, գ. Էվքերե (Կեսարիայի գավառ)–29.11.1876, Կ. Պոլիս], փիլիսոփա, հաս. գործիչ: Բժշկագիտ. դ–ր (1851): Սովորել է Կեսարիայի նախակրթարանում, 1829–ից՝ Սկյուտարի Սբ Կարապետ եկեղեցու վարժարանում: 1844–ին ընդունվել է Սորբոնի համալսարանի բժշկագիտ–յան ֆակ–ը:

Լույս են տեսել Ռ–ի «Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին» (1853, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.) աշխատությունը, որտեղ պաշտպանել է աշխարհաբարը և փորձել (թեև ոչ բավարար լեզվագիտ. մակարդակով) մշակել նրա քերակ–ը, «Դասագիրք փիլիսոփայութեան» (ֆրանս.՝ 1876, հայ.՝ 1879, թարգմ.՝ Էթմեքճյանի, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.) դասագրքերը, որտեղ էմպիրիզմի ու ռացիոնալիզմի միակողմանիությունը փորձել է հաղթահարել Ի. Կանտի ու Գ. Հեգելի ուսմունքների առանձին գաղափարների համադրմամբ: Ռ. կազմել է «Տարեցոյց» (1854), որտեղ առաջարկել է ընդունել ֆրանս. բուրժ. հեղափոխության տոմարը, «Բնական տարեցոյց 1872 նահանջ թուին...» (1871–72) երկհատորյակը: Մեծապես նպաստել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) նախագծի մշակմանը: Թարգմանել է Վ. Հյուգոյի ստեղծագործություններից: Ռ–ին է վերագրվում «Կիլիկիա» հանրահայտ երգի տեքստը:

Գրկ. Թևոսյան Ա., Նահապետ Ռուսինյանի աշխարհայացքը, Ե., 1970:



«Ռուսկի յազիկ վ Արմենիի», *1999–ից, Երևան (№ 4, 2007)*

«ՌՈՒՍԿԻ ՅԱԶԻԿ Վ ԱՐՄԵՆԻԻ» (“Русский язык в Армении”–«Ռուսաց լեզուն Հայաստանում»), գիտամեթոդ. եռամսյա հանդես: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 1999–ից Երևանում՝ ռուս.: Խմբագիր՝ Բելա Եսաջանյան: Հանդեսը լուսաբանում է ռուս–ի հիմնախնդիրները, դասավանդման մեթոդիկան ՀՀ դպրոցներում և բուհերում, քննարկում լեզվաբ. հարցեր, անդրադառնում ռուս. գրակ–յանը, գրական կապերին, թարգման. արվ–ին ևն:

«ՌՈՒՍԿԻ ՅԱԶԻԿ Վ ԱՐՄՅԱՆՍԿՈՅ ՇԿՈԼԵ» («Русский язык в армянской школе»–«Ռուսաց լեզուն հայկական դպրոցում»), ՀԽՍՀ ժողկրթության նախարարության ուսումնամեթոդ. երկամսյա հանդես: Լույս է տեսել 1957–91–ին Երևանում՝ ռուս. [մինչև 1978–ը՝ «Խորհրդային մանկավարժ» (1991–ից՝ *«Մանկավարժ»*) հանդեսի հավելված]: Խմբագիրներ՝ Պ. Սիմոնյան, Ե. Ղազարյան:

Ս

Ս, հայ. այբուբենի 29–րդ տառը, անվանումը՝ «սե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 երկար և 1 լայն տարրերից, երկարները նուրբով միանում են ներքևից, իսկ լայնը աջ երկարին՝ աջից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:


Ս, որպես այբուբենի հազարավորների սյան 2–րդ (29–րդ) տառ, նշանակել է երկու հազար և երկուհազարերորդ, բյուրի նշանով (Ս֯)՝ 20 մլն (20 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ս–մաս 2000–րդ):

ՍԱԱԴԻ [Մոսլեհեդդին Աբու Մոհամմադ Աբդոլլահ իբն Մշրեֆեդդին, 1203–1210–ի միջև, Շիրազ (Իրան)–9.12.1292, Շիրազ], պարսիկ գրող և մտածող: Ավարտել է Բաղդադի «Նիզամիյե» հոգևոր բարձրագույն դպրոցը (1226), հետո, որպես դերվիշ, շրջագայել է Արևելքի երկրներում, Աֆրիկայի հս–ում, այցելել Մեքքա: Եղել է նաև Հայաստանում: Գրել է քասիդներ, գազելներ, ռուբայիներ և կիթաներ (պարսկ. ու արաբ.): 1257–ին Դամասկոսում շարադրել է իր հայտնի բարոյախրատ. երկը՝ «Բուսթան»–ը և, վերադառնալով Շիրազ, այն նվիրել է Աբու Բեքր իբն Սաադիին (1226–1260)՝ տեղի կառավարչին ու իր հովանավորին, որի պատվին հետագայում ընտրել է Ս. գրական կեղծանունը: Նրան է նվիրել նաև «Գոլեստան» (1258) ժող–ը, որը երկար ժամանակ համարվել է պարսկ–ի ուսուցման լավագույն ձեռնարկ: Այն «Կոլեստան կամ Բուրաստան» վերնագրով հայ. լույս է տեսել 1920–ին Նյու Յորքում (թարգմ.՝ Հ. Թիրյաքյանի, «Արմենիա» տպ.), 1958 և 2009–ին՝ Երևանում («Գոլեստան», թարգմ.՝ Ա. Մելիք–Վարդանյանի):

Ս–ի ստեղծագործության հայկ. արձագանքները XV դ–ից են: XIX դ–ում նրա գործերից թարգմանել են Գեորգ Դպիր Պալատեցին, Հ. Մասեհյանը, Մ. Մաքսուդյանը, Հ. Միրզայանը, Հ. Աճառյանը և ուր.:

Գրկ. **Զուգասպյան Բ.**, *Հայ–պարսկականք. Սաադին հայ միջնադարյան գրականության մեջ (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ժող., գիրք IV), Ե., 1969:* **Մինասյան Ա.**, *Սաադիի «Գոլեսթանը» և նրա հայերեն թարգմանությունները, Ե., 1972:*

«ՍԱԴԱՅԵԼ», երգիծ. պարբերաթերթ: Ամերիկահայ երգիծասեր երիտասարդության հրատ.: Լույս է տեսել 1923–24–ին Նյու Յորքում, 1926–29–ին՝ Յունիոն Սիթիում: Հրատարակիչ–խմբագիր՝ Տիրան Վարժապետյան: Ծաղրել է ամերիկահայ ազգ–հաս. կյանքի հոռի կողմերը:





Սաադիի *«Գոլեստան» (1958, Ե., Հայպետհրատ) գրքի տիտղոսաթերթը*



Լիպարիտ Սադոյան. *Յ. Էքերմանի «Զրույցներ Գյոթեի հետ» (1975, Ե., ԳԱ հրտ.) գրքի կրկնաշապիկը*



Հակոբ Սալախյան



Արմենակ Սալ-մասյանի *«Հայկական մատենագիտություն» (1969, Ե., ԳԱ հրտ.) գրքի փիփողոսաթերթը*

ՍԱԴՈՅԱՆ Լիպարիտ Արտեմի (6.11.1917, Երևան–22.7.1992, Երևան), ճարտարապետ, ճարտարագետ-շինարար: Ավարտել է ԵՊԻ (1942): 1958–92-ին աշխատել է Երևաննախագիծ ինստ-ում, 1958–70-ին՝ ճարտ. արվեստանոցի ղեկավար:

1942-ից ձևավորել և նկարազարդել է ավելի քան 200 հայագիտ., արվեստագիտ., բնագիտ. գրքեր, ամսագրեր, ժող-ներ. Ա. Երեմյանի «Հռիփսիմեի տաճարը» (ռուս., 1955), Բ. Շելկովնիկովի «Անիում հայտնաբերված ջնարակած խեցեղենը» (1957), Վ. Շեքսպիրի «Քրոնիկներ» (1972), Յ. Էքերմանի «Զրույցներ Գյոթեի հետ» (1975), Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» (1981), Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն» (1983), Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց» (1983), Է. Աղայանի «Մեսրոպ Մաշտոց» (հայ., ռուս., անգլ., երեքն էլ՝ 1986), Հոմերոսի «Իլիական» (1987), «Հին հունական ողբերգություններ» (1990), նաև *«Հայ ժողովրդական հեքիաթներ»* մատենաշարի և այլ գրքերի կազմեր, կրկնաշապիկներ, անվանաթերթեր: Գրել է «Հայոց մեսրոպաստեղծ այբուբենը» («ՊԲՀ», 2005, № 2) աշխատությունը:

ՍԱԼԱԽՅԱՆ Հակոբ Նշանի (1.9.1922, Խարկով–1.9.1969, Մոսկվա), գրականագետ-քննադատ, մշակույթի գործիչ: Բանասիր. գիտ. թեկնածու (1947): Ավարտել է ԵՊՀ (1944): 1944–58-ին դասավանդել է ԵՊՀ-ում և կոնսերվատորիայում: 1954–58-ին՝ ՀԳՄ վարչության 2-րդ քարտուղար, 1959-ին՝ «Դրուժբա նարոդով» (ռուս., Մոսկվա) ամսագրի խմբագրի տեղակալ:

Լույս են տեսել Ս-ի «Ն. Վ. Գոգոլ (քննադատական-կենսագրական ակնարկ)» (1952), «Եղիշե Չարենց» (1957), «Զինված մարգարեն» (1964), «Ժամանակիդ շունչը դարձիր» (1967), «Դասականներ և ժամանակակիցներ» (1971), «Հինավուրց և երիտասարդ» (ռուս., 1971) աշխատությունները: Ս. գրել է Հ. Պարոնյանի, Գ. Զոհրապի, Հ. Հակոբյանի ռուս. հրատ-ների առաջաբանները:

ՍԱԼՄԱՍԼՅԱՆ Արմենակ Հակոբի [10.12.1888, ք. Միխալըճ (Թուրքիայի Բուրսայի նահանգ)–7.1.1971, Փարիզ], մատենագետ: Իրավաբ. գիտ. դ-ր (1922): Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում (1900–06), ամերիկյան Ռոբերտ քոլեջում (1906–11), Փարիզի իրավաբանության համալսարանում (1911–14): 1940–47-ին ղեկավարել է Փարիզի ազգ. մատենադարանի արլ. լեզուների բաժինը, 1951-ից՝ ***Նուբարյան մատենադարանի*** տնօրեն:

Լույս է տեսել Ս-ի «Հայկական մատենագիտութիւն» (1946, լրց., վերահրտ.՝ 1969) աշխատությունը, որն ընդգրկում է հայագիտ-յան բոլոր բնագավառներում օտար լեզուներով մինչև 1965-ը լույս տեսած գրքերի մատենագիտությունը:

Հանդես է եկել Մասալ, Լիլյուլի և այլ գրական կեղծանուններով:

Մատենադարանի «Սբ Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալ (1968):

ՍԱՀԱԿ Ա ՊԱՐԹԵՎ, Մեծն Սահակ, Իսահակ Պարթև, Սուրբ Սահակ [29.9.348, Կեսարիա–7.9.439, գ. Բլուր (Բագրևանդի գավառ), թաղված է Աշտիշատում], եկեղեց., քաղ. և մշակույթի գործիչ, Հայոց կաթողիկոս՝ 387-ից (ընդմիջումներով): Ներսես Ա Մեծ Պարթև կաթողիկոսի և Տարոնի իշխան Վարդան Մամիկոնյանի դուստր Սահանդուխտի որդին: Մանուկ հասակում Տարոնում նրան խնամել ու կրթել է պապը՝ Վարդան Մամիկոնյանը: Սովորել է Կեսարիայի, Ալեքսանդրիայի և Կոստանդնուպոլսի համբավավոր ուսումնարաններում: Եղել է քաջահմուտ հայկաբան և հունաբան, տիրապետել է նաև ասոր-ին և պարսկ-ին:


Հայոց գրերի ստեղծումից (405) հետո Ս. Ա. Պ-ի հրամանով արգելվել է երկրում օտար լեզուներով դասավանդումը: Նրա՝ 60, և Մեսրոպ Մաշտոցի 40 աշակերտներն սկսել են սովորեցնել մաշտոցյան գրերը, ասոր-ից և հուն-ից թարգմանել աստվածաբան., իմաստասիր., պատմ. և այլ երկեր:

Ս. Ա. Պ. Մեսրոպ Մաշտոցի հետ կազմել է Մաշտոց, կարգավորել հայկ. Տոնացույցը, գրել և եղանակավորել շարականներ, Պատարագամատույց, ծիս. աղոթքներ, վճռական դեր է ունեցել հուն-ից Աստվածաշնչի թարգմանության և կանոնացման գործում:

Ս. Ա Պ–ից պահպանվել են դավանաբան. թղթեր, նամակներ, ինչպես նաև «Պարագրի անպարագրելի բանն» սկզբնատողով տաղը:

Հայ առաքել. եկեղեցին Ս. Ա Պ–ին դասել է սրբերի կարգը, նրա հիշատակի օրը մտցրել հայկ. Տոնացույցի մեջ, սահմանել է «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան: Հրատարակվել է Ս. Ա Պ–ի «Օրհներգերը» (2010) ժող–ը (աշխատասիր՝ Հ. Բախչինյանի, ներառված են նաև Մեսրոպ Մաշտոցի փառաբան. երգերից):

Գրկ. **Կորյուն**, *Վարք Մաշտոցի, Ե., 1994:* **Մովսես Խորենացի**, *Հայոց պատմություն, Ե., 1997:* **Ղազար Փարպեցի**, *Պատմություն Հայոց: Թուղթ Վահան Սամիկոնյանին, Ե., 1982: Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994:* **Ալիշան Ղ.**, *Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. 1, Վնտ., 1869: Պատմութիւն վասն Սրբոյ Սահակայ հայրապետին եւ Մեսրովբայ վարդապետին, «Մոփերք հայկականք», հ. 2, Վնտ., 1853:* **Թահմիզյան Ն.**, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դարերում, Ե., 1985, էջ 133–144:* **Ադրևշատյան Ա.**, *Քարոզի ժանրը հայ հոգևոր երաժշտության մեջ, «ՊՀՀ», 1992, № 2–3:* **Օրմանեան Մ.**, *Ազգապատում, Էջմիածին, 2001:*



Սահակ Ա Պարթև
(նկարիչ՝ Սրտեփանոս Ներսիսյան, 1882)


ՍԱՀԱԿ Բ ԽԱՊԱՅԱՆ, **Խապայան Գաբրիել Կարապետի** [25.3.1849, գ. Եղեգի (Խարբերդի նահանգ)–1939, Անթիլիաս (Լիբանան)], Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ 1902–ից, խմբագիր, հաս. գործիչ: 1885–ից՝ եպիսկոպոս: Սովորել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, ապա՝ Կ. Պոլսում: 1874–81–ին՝ ***«Միտն»***–ի գլխ. խմբագիր: 1881–86–ին նվիրակի պաշտոնով գործել է Կովկասում: 1916–ին աքսորվել է Երուսաղեմ, 1917–ին՝ Դամասկոս: Զինադադարից հետո 1919–ին վերադարձել է Ադանա, 1921–ին Կիլիկիայի հայության հետ բռնագաղթել է Սիրիա: Որպես հոգևոր առաջնորդ՝ սատարել է Սիրիայում և Լիբանանում ապաստանած հայերին: 1930–ին հաստատվել է Անթիլիասում, որտեղ 1932–ին Բաբկեն Կյուլեսերյանի աջակցությամբ հիմնադրել է դպրեվանք, տպարան, մատենադարան: Ս. Բ Խ–ի անունով է կոչվել Բեյրութի Սահակյան վարժարանը:



Սահակ Բ Խապայան

Լույս է տեսել Ս. Բ Խ–ի «Կոնդակներ եւ հայրական խօսքեր» (1934, Անթիլիաս) ժող–ը:

ՍԱՀԱԿՅԱՆ Ավետիք, **Հայր Աբրահամ** [1865, Զալալօղլի (այժմ՝ Ստեփանավան)–1933, Բեյրութ], պետ., հաս–քաղ. գործիչ: ՀՅԴ կուսյան անդամ: Ավարտել է Շուշիի ռեալ. դպրոցը, սովորել Մոսկվայի Պետրովյան գյուղատնտ. ակադ–ում (1885–ից): Ուսանող. ելույթներին մասնակցելու համար 1890–ին ձերբակալվել է և աքսորվել Թիֆլիս, որտեղ հիմնադրել է Հայ գյուղատնտ. ընկերությունը: 1905–06–ին՝ «Յառաջ» (Թիֆլիս), 1916–17–ին՝ «***Գիւղատնտես***» շաբաթաթերթերի խմբագիր: 1914–ին ընտրվել է Հայոց ազգ. բյուրոյի անդամ, ավելի ուշ՝ Ռուսաստանի Սահմանադիր ժողովի, ապա՝ Անդրկովկասի սեյմի անդամ, եղել է խնամատարության և պարենավորման նախարար (1918), այնուհետև՝ ՀՀ խորհրդարանի նախագահ: 1920–ի դեկտ–ին ձերբակալվել է, ազատվել Փետրվարյան ապստամբության (1921) ժամանակ: Տարագրվել է Պարսկաստան, ապա՝ Լիբանան:



Ավետիք Սահակյան

Գրկ. **Ներսիսյան Ա.**, *Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Ե., 2003:*

ՍԱՀԱԿՅԱՆ Արամայիս Ադամի [24.5.1936, գ. Արծվաշեն (ՀՀ Գեղարքունիքի մարզ, 1992–ից՝ Ադրբեջանի բռնազավթած տարածքում)–14.3.2013, Երևան], բանաստեղծ, երգիծաբան, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1960), Մոսկվայի գրակ–յան ինստ–ի գրական բարձրագույն դասընթացները (1967): 1960–65–ին աշխատել է «Ավանգարդ» թերթի, 1967–70–ին՝ «Գարուն» ամսագրի խմբագրություններում, 1971–76–ին՝ Հեռուստառադիոպետկոմում: 1982–2013–ին՝ ***«Ոզնի»*** երգիծ. հանդեսի գլխ. խմբագիր:




Արամայիս Սահակյան


Լույս են տեսել Ս–ի «Աստղիկներ» (1958), «Սիրո հասակ» (1959), «Մենք միասին ենք» (1964), «Ապրել և սիրել» (1968), «Բարև բարեկամ» (ռուս., 1971), «Երջանիկ եղեք» (1972, ռուս.՝ 1975), «Ես սիրում եմ ձեզ» (1975), «Ինչ կդառնաս, երբ մեծանաս» (1979), «Երրորդ հանդիպում» (ռուս., 1979), «Բարի խոսք» (1980), «Ո՞ւր եք տղաներ» (1984), «Եղբայրը՝ եղբորը» (ռուս., 1985), «Չքնաղ երազ» (1991) բանաստեղծությունների, «Բարի ժպիտներ» (1988), «Խորհրդա-



Ա. Սահակյանի *«Ես քո զավակն եմ Հայաստան» (1986, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Յուրի Սահակյանի *«Բառ ու բանի շտեմարան» (2009, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*



Ռոմանոս Սահակյանի *«Անկրկնելի Պարույրը» (2014, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*

վոր խորհրդարան» (1992) երգիծ. և հրապարակախոս. ժող-ները: Հեղինակ է 300-ից ավելի երգերի տեքստերի, «Ծիծաղի տուն» հեռուստահաղորդաշարի: Թարգմանել է Բ. Օլեյնիկի, Օ. Շեստինսկու, Մ. Իսակովսկու, Ի. Դրաչի և ուր. ստեղծագործություններից:

ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. (1984), ՀԺՄ «Ոսկե գրիչ» (1986), ԹՄՄ ամենամյա (2009) մրց-ներ: Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» (2011) շքանշան, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2012): Երևանի պատվ. քաղաքացի (2006):

Երկ. Ձմարձակի հարցազրույցներ, Ե., 1985: Ես քո զավակն եմ, Հայաստան, Ե., 1986: Խաչ և սուր, Ե., 1995: Ընտրանի, Ե., 2004:

ՍԱՀԱԿՅԱՆ Յուրի Հակոբի [ծ. 22.7.1937, գ. Չայլու (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)], բանաստեղծ, մանկագիր, թարգմանիչ: Մշակույթի վաստ. գործիչ (2012): Ավարտել է ԵՊՀ (1966), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ի գրական բարձրագույն դասընթացները: 1974–75-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրությունում, 1976–86-ին՝ «Սովետական գրող», 1986–93-ին՝ «Արևիկ» հրատարակչությունում:

Լույս են տեսել Ս-ի «Արևը քո դեմքին» (1966), «Երբ դու գալիս ես» (1980), «Սարը սարին» (1986), «Չարն իրեն տեր չկարծի» (1993), «Չքնեք տղաներ» (2010), «Ծաղկած ծառեր ու գեղեցիկ կանայք» (2013) բանաստեղծությունների ժող-ները: Գրում է նաև մանուկների համար [«Աճպարար կատուն» (1977), «Ձկնորս արջն ու մկնորս կատուն» (1987, 2012, Համամիութ. 3-րդ մրց.՝ 1988), «Բարի թզուկն ու պարկապզուկը» (1990, ՀԳՄ Ս. Զորյանի անվ. մրց.՝ 1991), «Այբբենարանի ուղեկից» (1998, ՀՀ «Ոսկե եղեգն» գրական պետ. մրց.՝ 1999), «Տուժած ճանճն ու բուժակ բուն» (2000), «Խաղիկներ-խաղալիքներ» (2002), «Շուտասելուկներ և բառախաղեր» (2004), «Գյուղական բակ կամ մենք ապրում ենք բառերում» (2006), «Կատուներ» (2007), «101 բանաստեղծություն մանուկներին» (2008), «Ասելուկներ Որսկան պապից» (2009)]: Հեղինակ է նաև երգերի տեքստերի («Մանկական երգեր», 2003): Մշակել և փոխադրել է հայոթեր ժող. բանահյուսությունից [«Խաղիկներ, հանելուկներ, ասացվածքներ» (2001), «Հանելուկ-մանելուկ» (2003), «850 + 1 հանելուկ» (2011)]:

Ռուս-ից թարգմանել է Ա. Պուշկինի, Վ. Մայակովսկու, Ս. Մարշակի, Կ. Չուկովսկու, Ս. Միխալկովի, Ա. Բարտոյի, Բ. Զախոդերի, Վ. Բերեստովի, Ի. Տոկմակովայի և ուր. ստեղծագործություններից:

ՍԱՀԱԿՅԱՆ Նելլի Վարդանի [ծ. 12.6.1937, ք. Արմավիր (Ռուսաստանի Կրասնոդարի երկրամաս)], գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Գրում է ռուս.: Ավարտել է ԵՊՀ (1960): Թղթակցել է «Կոմսոմոլեց» (ռուս.), «Ռեսպուբլիկա Արմենիա» (ռուս.) թերթերին: 1994–2013-ին՝ «Էլիտարնայա գազետա» (ռուս.) թերթի խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Խաղաղ բանաստեղծություններ» (1982), «Երկնային աստղ» (1986), «Հայկական լեռնաշխարհ» (1990, 2006), «Հայեր» (1990), «Իմ պատկերասրահը» (1997, 2010) բանաստեղծությունների, էսսեների, գրական դիմանկարների ժող-ները: Ռուս. է թարգմանել Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Ս. Սահյանի, Ս. Կապուտիկյանի և ուր. ստեղծագործություններից:

Երկ. Ойкумена. Е., 2005; Антропоэтюды: Эссе, Е., 2007; Сужденье краткое: Мысли и афоризмы, Е., 2008; Разгорание духа, Е., 2013.

ՍԱՀԱԿՅԱՆ Ռոմանոս Մարտիրոսի [5.5.1939, գ. Թալիշ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում) – 6.3.2015, Երևան], բանաստեղծ, գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1977): Ավարտել է ԵՊՀ (1966): 1992–94-ին՝ «Արամազդ» հրատարակչության գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Գարնանային առասպել» (1974), «Արվեստ քերթության» (1992, 2009), «Տիեզերական համանվագ» (1997), «Երկրային ճամփորդ հավերժի ճամփին» (2001), «Արարչական սեր» (2010), «Սատիրիկոն» (2012) բանաստեղծությունների ու պոեմների ժող-ները, «Գեղագիտական հիմնական կատեգորիաները» (2002), «Գեղագիտություն» (2008) աշխատությունները, «Անկրկնելի Պարույրը» (2014) գիրքը:


ՀԳՄ Ղ. Աղայանի անվ. մրց. (1992), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2006), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2009), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2014) մեդալներ:

Գրկ. Ռոմանոս Սահակյան: Կենսամատենագիտություն, Ե., 2009:

ՍԱՀԱԿՅԱՆ Սիմակ (Սենեքերիմ) Մկրտչի [25.8(7.9).1879, գ. Ագարակ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–29.4.1961, Երևան], պետ-կուս. գործիչ, մանկավարժ, խմբագիր: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1901–21-ին դասավանդել է Ներսիսյան դպրոցում: 1921-ին գործուղվել է Հայաստան. 1927–30-ին՝ Լոռի-Փամբակ գավառի ժողկրթբաժնի վարիչ, 1930–51-ին՝ բանֆակի դեկան, ապա՝ դասախոս: Խմբագրել է «Կարմիր Լոռի», «Սովետական մանկավարժ» (տես ***«Մանկավարժ»***) պարբ-ները:

Լույս են տեսել Ս-ի «Հասկեր» (1955) պատմվածքների ժող-ը, «Աղբյուր» (1958) պատմվածքը, «Հոդվածներ, ելույթներ, հուշեր» (1983) ժող-ը: Կազմել է «Հայ գրականության քրեստոմատիա» (1944), «Հայոց լեզու» (1941) դասագրքերը, թարգմանել է Ն. Օստրովսկու, Ա. Մակարենկոյի և ուր. գործերից:

ՀԽՍՀ ԳԽ նախագահ (1944–61):



Սիմակ Սահակյան

ՍԱՀԻՆՅԱՆ Անահիտ Արամի [20.6.1917, գ. Վարդաբլուր (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–7.1.2010, Երևան], արձակագիր, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1941): 1942–47 և 1953–58-ին աշխատել է Հայպետհրատում: 1968–69-ին՝ «Արարատ» շրջ. թերթի խմբագիր, 1969–79-ին՝ ***«Պիոներ»,*** 1969–77-ին, միաժամանակ՝ ***«Ծիծեռնակ»*** մանկ. ամսագրերի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Վայելք» (1942), «Խաչուղիներ» (1946, 1979), «Ծաբավ» (1955, 1980), «Կարոտ» (1974, 1981), «Կեռմաններ» (1976), «Նունուֆար» (1994) վիպակներն ու վեպերը, «Բարեկամները» (1944), «Վերադարձի արահետներով» (1960), «Ուշացած ժամադրություն» (1965), «Կեռմաններ» (1976), «Սեփական ոտնահետքերով» (1984, 2000), «Դիմանկարներ: Իրապատում» (2003) պատմվածքների, վիպակների, ակնարկների, «Ձայն բարբառո հանապատի» (գիրք 1–2, 2005) հրապարակախոս. նյութերի, «Հեքիաթներ խոռվկանների համար» (2006) հեքիաթների, թարգմանությունների ժող-ները, «Հեյ, ճամփաներ, ճամփաներ» (1986) ուղեգրությունը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1981):


Երկ. Ընտիր երկեր, հ. 1–3, Ե., 1987–88: Ինքնադիմանկարի փորձ (ինքնակենսագրություն), Ե., 2006:



Անահիտ Սահինյան

«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ», Հռոմի պապ Բենեդիկտոս XIV-ի երկը: Տպագրվել է 1794-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում՝ Հավատի տարածման Սբ ժողովի որոշմամբ: Լատ-ից թարգմ.՝ Գրիգոր Բաղինյանի: Տիտղթ-ին՝ «Benedicii Papae XIV. Constitutio Liberorum Muratorum Darnnatoria. Սրբազան Տեառն մերոյ Բենէդիքտոսի պապի. ԺԴ. Սահմանադրութիւն...» (23 էջ, 12º, 14,5 x 9 սմ):

ՍԱՀՅԱՆ Համո [Գրիգորյան Հմայակ Սահակի, 14.4.1914, գ. Լոր (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–17.7.1993, Երևանի, բանաստեղծ, խմբագիր: Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ը (1939): 1937–38-ին աշխատել է շրջ. «Սիսիանի հարվածային» (այժմ՝ ***«Որոտան»***), 1939– 41-ին՝ «Խորհրդային գրող» (Բաքու), 1951–54-ին՝ «Ավանգարդ», 1954–55-ին՝ «Ոզնի» պարբ-ներում, 1965–67-ին՝ ***«Գրական թերթի»*** խմբագիր:



Հ. Սահյանի *«Երկեր»-ի (հ. 1, 2011, Ե., «Ոսկան Երևանցի») կազմը*

Լույս են տեսել Ս-ի «Որոտանի եզերքին» (1946), «Առագաստ» (1947, Բաքու, Ազերնեշր), «Սլացքի մեջ» (1950, նույն տպ.), «Ծիածանը տափաստանում» (1953), «Բարձունքի վրա» (1955), «Նաիրյան դալար բարդի» (1958), «Հայաստանը երգերի մեջ» (1962), «Մայրամուտից առաջ» (1964), «Բանաստեղծություններ» (հ. 1, 2, 1967, 1969), «Քարափների երգը» (1968), «Տարիներս» (1970), «Սեզամ բացվիր» (1972), «Կանչե, կռունկ» (1973), «Իրիկնահաց» (1977), «Ժայռից մասուր է կաթում» (1979), «Կանաչ-կարմիր աշուն» (1980), «Տոհմի կանչը» (1981), «Դաղձի ծաղիկ» (1986), «Ինձ բացակա չդնեք» (1998, 2003, 2004, 2014), «Քարե պատարագ» (1999, 2009), «Արցունքով լվացված սերեր» (2007), «Ձեռագիր մասունքներ» (2012) սիրային, հայրենասիր. բանաստեղծությունների, «Քառյակներ» (2005, 2007) ժող-ները:

Ս-ի պոեզիան առանձնանում է բնության գովերգումով, մարդկային դրամատիկ ապրումների բացահայտումով: Թարգմանել է Ա. Պուշկինի, Ս. Եսենինի, Ֆ. Գարսիա Լորկայի, Ի. Նոնեշվիլու, Վ. Կոչևսկու և ուր. ստեղծագործություններից:

2004-ին Շչորս ***Դավթյանի*** նախաձեռնությամբ ստեղծվել է «Համո Սահյան գիտամշակութային կենտրոն» հաս. կազմակերպությունը, հրատարակվել



Համո Սահյան

«Համո Սահյան» հանրագիտարանը (2012): Երևանում Ս–ի անունով կոչվել է դպրոց: 2004–ին Սիսիանում տեղադրվել է Ս–ի հուշարձանը (քանդ.՝ Գետիկ Բաղդասարյան):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1975):

Երկ. Բանաստեղծություններ, հ. 1, 2, Ե., 1967, 1969: Երկերի ժող., հ. 1, 2, Ե., 1975, 1976: Երկերի ժող., հ. 1–2, Ե., 1984: Հատընտիր, Ե., 2001: 60 և մեկ հայրեն, Ե., 2003: Ինչ էլ լինի, կգամ (հայ–ռուս.), Ե., 2004: Երկեր, հ. 1–4, Ե., 2011–14: Ձեռագիր մատնանշեր, Ե., 2012:

Գրկ. Հայրապետյան Ա., Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը, Ե., 1977: Մկրտչյան Լ., Ջրույցներ բանաստեղծի հետ, Ե., 1984: Գասպարյան Դ., Համո Սահյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2003: Համո Սահյան. Բանաստեղծը, մտածողը, մարդը (խմբ. և կազմ.՝ Շ. Դավթյան), Ե., 2001: Դավթյան Շ., Համո Սահյան: Կյանքը և գործը, Ե., 2007: Նույնի, Համո Սահյան. Հանրագիտարան, Ե., 2012: Հովակիմյան Ա., Համո Սահյան. պոետիկայի հարցեր, Ե., 2008: Երզնկյան Ռ., Փոխաբերացման համակարգը Համո Սահյանի պոեզիայում, Ե., 2012:

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, Սաղմոսաց գիրք, Հին կտակարանի ամենատարածված գրքերից: Սաղմոսները Իսրայելում ի սկզբանե սահմանված էին երաժշտության ուղեկցությամբ Աստծու առջև երգվելու համար: Ս. սաղմոսների ժող. է, ընդգրկում է 151 սաղմոս, որոնցից 150–ը կանոնական են, վերջինը՝ երկրորդականոն:

Սաղմոսարան

Սուրբգրային ավանդության մեջ Ս. կոչվում է «Գիրք սաղմոսաց Դաւթի»: Դավթի անունը հիշատակված է 73 սաղմոսի խորագրերում և հատկապես ժող–ի 1–ին գրքում (այստեղից էլ՝ «Դավթյան մեծ ժողովածու» անվանումը): Ժող–ի գլխ. հեղինակը և կազմողը Դավիթն է: Խորագրերում հիշատակվում են նաև մյուս հեղինակների անունները՝ Մովսես, Սողոմոն, Ասաֆ, Եման, Եթան, Իդիթուն, Կորխի որդիներ: Սաղմոսների զգալի մասն անանուն է:



1587 (Վնտր., տպագրիչ՝ Հովհաննես Տերզնցի), գլխա– և լուսանցազարդերով ու սկզբնագրով (30–րդ) էջ

Հայոց ծիսարանը և մասնավորապես ժամագիրքը հիմնականում կազմված են սաղմոսներից: Հայ հոգևոր երգերը, շարականները, գանձերը, տաղերը, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և ուր. աղոթքները նրանցից են ներշնչված ու հարասված: Ս. հայերի ամենասիրելի ու գործածական գիրքն է եղել դարերի ընթացքում՝ Նոր կտակարանից հետո:

Սաղմոսները մեկնել են Ընդհանրական եկեղեցու գրեթե բոլոր նշանավոր հայրերը՝ ***Աթանաս Աղեքսանդրացին, Եփրեմ Խուրի Ասորին, Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկեբերանը*** և ուր.: Հայ իրականության մեջ առաջինը ***Ներսես Լամբրոնացին*** է հանգամանալի քննության առել սաղմոսները: Մեկնություններ են գրել ***Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին*** և ուր.: ***Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին*** Խոջա Նահապետ Գուլնազարի (Ագուլեցի) խնդրանքով 1687–ին, ի մի հավաքելով սաղմոսների հայ. մեկնությունները, հրատարակել է բնագրի հետ՝ «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի» (աշխարհաբար, Վնտ., Նահապետ Գուլնազարի տպ.): Սաղմոսների ամենածավալուն մեկնության հեղինակը Միքայել ***Չամչյանն*** է («Մեկնութիւն սաղմոսաց», հ. 1–10, 1815–23, Վնտ., Սբ Ղազարի տպ.): Մատենադարանում պահվում են 150 ձեռագիր Ս–ներ, որոնցից հնագույնը 1298–ին Գրիգոր գրիչի ընդօրինակած Ս. է (ձեռ. № 6473):



1661 (Ամստերդամ, տպագրիչներ՝ Ավետիս Ղլիճենց, Կարապետ Անդրիանացի), փիփղոսաթերթը

Ս. առաջին անգամ տպագրել է ***Աբգար Թոխաթեցին*** 1565–66–ին Վենետիկում (512 էջ, 32º, 12 x 8 սմ): Նախքան ***Հակոբ Մեղապարտի*** տպագրած գրքերի լույսընծայման ժամանակը որոշելը՝ այս Ս. համարվել է հայ. առաջին տպագիր գիրքը, իսկ Աբգար Թոխաթեցին՝ առաջին տպագրիչը:

Ս–ներ տպագրվել են նաև՝

1587–ին Վենետիկում՝ Հովհաննես Տերզնցու տպարանում [355 (՞) էջ, 8º, 7,8 x 5,4 սմ]:

1616–ին Լվովում՝ Հովհաննես Քարմատանենցի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոսի Դաւիթ տպագրեցաւ…» (480 էջ):

1638–ին Նոր Ջուղայում՝ առանց տպարանի հիշատակության, տպագրիչ՝ Խաչատուր Կեսարացի (604 էջ):

1642–ին Վենետիկում՝ Սալիգաթաուի տպարանում, հրատարակիչ՝ Հովհաննես Անկյուրացի: Տիտղթ–ին՝ «Սաղմոս ի Դաւիթ…» (373 էջ, 8º):

1644–ին Լիվոռնոյում՝ Հովհաննես Ջուղայեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք եւ սաղմոսք Դաւթի…» (392 էջ, 8º, 7,5 x 4,7 սմ):

1660–ին Վենետիկում՝ Ջուան–Բատիստա Բովիսի տպարանում (376 էջ, 8º, 12,5 x 8 սմ):

1661–62–ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչներ՝ Ավետիս Ղլիճենց և Կարապետ Անդրիանացի: Տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի մարգարէի որ եւ Սաղմոսարան յորջորջի» (762 էջ): 1664–ին նույն տպարանում, տպագրիչ՝ Կարապետ Անդրիանացի (356 էջ):

1666–ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի:

1672–ին Մարսելում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ–ին՝ «Գիրք սաղմոսաց Դաւթի…» (448 էջ, 8º):

1673–74–ին նույն տպարանում, տպագրիչներ՝ Ոսկան Երևանցի և Սողոմոն Լևոնյան: Տիտղթ–ին՝ նույնը (416 էջ, 8º, 9,9 x 6 սմ): 1674–75–ին նույն տպարանում, տպագրիչ՝ Սողոմոն Լևոնյան (538 էջ): 1677–ին նույն տպարանում (466 էջ, 8º, 7 x 4 սմ):

1682–ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրգ սաղմոսաց Դաւթի…» (512 էջ): 1684–ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Գիրք սաղմոսաց Դաւթի…» (528 էջ):

1685–ին Վենետիկում՝ Ջիոկոմո Մորետտիի տպարանում:

1695–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոսի Դաւիթ…» (368 էջ, 12,5 x 7,5 սմ):

1710–ին Մարսելում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ–ին՝ «Գիրք սաղմոսաց Դաւթի…» (344 էջ):

1712–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Փոքրիկ սաղմոսարան…» (451 էջ, 6º և 12º, 8,3 x 4,5 սմ):

1713–ին Ամստերդամում՝ Ղուկաս Վանանդեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք սաղմոսաց ի լոյս ածեալ հարցմամբ խնդրոյ եւ ծախիւք Ջուղայեցի լուսահոգի խոճայ Քանանի որդւոյ Թարխանին…» (446 էջ, 8º, 8 x 4,5 սմ): 1714–15–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք սաղմոսաց: Տպագրեցիալ ի հայրապետութեան տեառն Աղեքսանդրի…» (838 էջ, 8º, 12,5 x 7,4 սմ):

1715–ին (՞) Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության, պատկերազարդ է:

1733–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (384 էջ, 8º, 11,5 x 6,5 սմ):

1738–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս երանելի մարգարէին Դաւթի…» (384 էջ):

1742–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի որ կոչի Սաղմոսարան…» (448 էջ, 8º, 8 x 4,5 սմ):

1745–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի…» (384 էջ):

1748–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում, հրատարակիչ՝ Ս. Սարաֆյան: Տպակից է Մխիթար Սեբաստացու «Տօմար կարճառօտ»–ին: Ա գրքի տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի…», Բ–ին՝ «Տօմար կարճառօտ, այսինքն համառօտութիւն.... ի գերյարգելի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ...» (420 էջ. Ա գիրքը՝ 372 էջ, Բ գիրքը՝ 48 էջ, 12º, 10,8 x 6 սմ):

1751–ին (՞) Կ. Պոլսում՝ հավանաբար Հովհաննես Աստվածատրյանի տպարանում (382 էջ, 8º):

1755–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տպակից է Մխիթար Սեբաստացու «Տօմար»–ին: Ա գրքի տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…», Բ–ին՝ «Տօմար կարճառօտ, այսինքն. համառօտութիւն հնոյ Տօմարին...» (424 էջ. Ա գիրքը՝ 384 էջ, Բ գիրքը՝ 40 էջ, 8º, 11,5 x 6 սմ): 1755–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (456 էջ, 8 x 5 սմ):

1756–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում, Ա և Բ տիտղթ–երին՝ «Սաղմոս Դաւթի...» (430 էջ. 8º, 12,3 x 7,2 սմ): 1758–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի…» (384 էջ, 8º, 13,9 x 7,1 սմ):

1759–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (456 էջ, 8º, 7,9 x 4,6 սմ):

1765–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի…»:

Սաղմոսարան



1714 (Ամստերդամ, տպագրիչ՝ Ղուկաս Վանանդեցի), 1-ին փիփղոսապը



1755 (Վնտ., տպագրիչ՝ Անտոնի Բորտոլի), գլխա- և լուսանցազարդերով ու սկզբնագրով (3-րդ) էջ



1770 (Կ. Պոլիս, տպագրիչ՝ Ստեփանոս Պետրոսյան), փիփղոսաթերթը

Սաղմոսարան



1787 (Վաղ-պապ), գլխա- և լուսանցազարդերով ու սկզբնագրով (237-րդ) էջ



1791 (Նոր Նախիջևան), փիփղոսաթերթը



1800 (Կ. Պոլիս, տպագրիչ՝ Մատթեոս Դպիր), գլխա- և լուսանցազարդերով ու սկզբնագրով (3-րդ) էջ

1770-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (456 էջ, 8º, 8 x 4,7 սմ):

1770-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի…» (384 էջ, 8º, 13 x 7,8 սմ):

1771-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (384 էջ, 8º, 9,8 x 6,8 սմ):

1771-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում:

1776-ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի…» (384 էջ, 8º, 13,2 x 7,6 սմ):

1778-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (384 էջ, 8º, 12,2 x 7,3 սմ):

1779-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում (384 էջ):

1780-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (444 էջ, 11 x 6,5 սմ):

1780-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (400 էջ):

1782-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում:

1782-ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք սաղմոսաց…» (456 էջ, 6º, 12,5 x 6,8 սմ):

1786-ին Վենետիկում՝ Զիովաննի Պիացոյի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոսարան Դաւթի մարգարէին…» (367 էջ, 8º, 14,4 x 8,6 սմ):

1787-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (352 էջ, 13 x 8 սմ):

1787-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (418 էջ, 8º, 13 x 7,5 սմ):

1787-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (391 էջ, 8º, 15 x 5,8 սմ):

1789-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում: Տպակից է Մխիթար Սեբաստացու «Տօմար կարճառօտ»-ին: Ա գրքի տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի…», Բ-ին՝ «Համառօտութիւն հնոյ տօմարին… ի Մխիթարայ վարդապետէ…» (368 էջ. Ա գիրքը՝ 328 էջ, Բ գիրքը՝ 40 էջ, 8º, 12,3 x 7 սմ):

1790-ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում (96 էջ, 8º): 1791-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան…» (381 էջ, 8º, 11,7 x 7 սմ):

1792-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում (352 էջ, 12 x 8 սմ):

1793-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (365 էջ, 8º, 8,7 x 5 սմ):

1795-ին (՞) Կ. Պոլսում՝ Մայր դպրատան տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք սաղմոսաց…» [412 (՞) էջ, 8º, 14 x 9 սմ]:

1796-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի…» (372 էջ, 12º, 10,2 x 6,2 սմ): 1798-ին (՞) նույն տպարանում (356 էջ, 8º, 13 x 8,2 սմ): 1798-ին Կ. Պոլսում՝ Մայր դպրատան տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք սաղմոսաց…» (400 էջ, 16º, 7,8 x 4,7 սմ):

1800-ին Կ. Պոլսում՝ Մատթեոս Դպիրի տպարանում՝ հայ. և հայատառ թուրք.: Ա տիտղթ-ին՝ «Սաղմոս Դաւթի մարգարէի…», Բ-ին՝ «Զէպուր Տաւուտ Փէյղամպէրին…» (386 էջ, 4º, 16,5 x 12,5 սմ):

Տպագրվել են նաև անթվակիր հնատիպ Ս-ներ՝

Առանց տպագրության վայրի, տարեթվի կամ տպարանի հիշատակության [366 (՞) էջ, 8º, 12,5 x 7,5 սմ]՝ հավանաբար՝ Կ. Պոլսում 1738-ին կամ 1745-ին՝ Աստվածատուր Դպիրի տպարանում:

Նույն տպարանում՝ «Սաղմոս Դաւթի որ կոչի Սաղմոսարան…», «Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի…» (48 էջ) վերնագրերով:

Կ. Պոլսում՝ Մայր դպրատան տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք սաղմոսաց…» [412 (՞) էջ, 8º, 13 x 8 սմ]:

1801-ից հետո Ս-ներ տպագրվել են՝ 1801, 1804 (2 անգամ), 1806-ին (ԿՊ, Պողոս Հովհաննիսյանի տպ.), 1802-ին (Տրիեստ, Մխիթարյան տպ.), 1805, 1807, 1820, 1821, 1841, 1842, 1850, 1853, 1856, 1867, 1869-ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1815-ին (Կալկաթա, Ավետ Քնթլումյանի տպ.), 1815, 1818, 1822, 1830, 1846, 1849, 1850-ին (ԿՊ, Արապյան տպ.), 1816, 1827, 1838-ին (հայատառ թուրք., նույն տպ.), 1819, 1846, 1871-ին (Էջմիածին, Սբ Գրիգոր Լուսավորչի տպ.), 1841, 1843, 1844, 1852-ին (Զմյուռնիա, Գուլիելմոս Գրիֆֆիթի տպ.), 1841, 1844, 1859, 1867–70, 1875, 1881-ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1844-ին (Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), 1847-ին (Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.), 1849-ին (Շամախի, Սիմեոն Զոհրապյանի, Մարգարե Ղուլյանի, Մինաս Տար-

ղլիջյանի տպ.), 1850, 1857, 1859, 1860, 1862, 1868, 1870-ին (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիայանի տպ.), 1852 (2 անգամ), 1865-ին (Վնն., Մխիթարյան տպ.), 1858, 1864-ին (Փ., Ճանիկ Արամյանի տպ.), 1859-ին (Մ., Լազարյան ճեմ. տպ.), 1863-ին (Արմաշ, Չարխափան Սբ Աստվածածին վանքի տպ.), 1863-ին (Թեոդոսիա, Խալիայան վարժարանի տպ.), 1864-ին (ԿՊ, Հարություն Մինասյանի տպ.), 1864, 1865 (2 անգամ), 1867-ին (Նյու Յորք, Աստվածաշնչային ընկ. տպ.), 1867-ին (Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), 1868, 1873, 1880, 1882, 1883, 1892-ին (Լոնդոն, Կ. Մ. Ուադսի տպ.), 1869-ին (ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.), 1870-ին (Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), 1871-ին (ԿՊ, Թադեոս Տիվիթճյանի տպ.), 1871 և 1872-ին (երկուսն էլ՝ 2 անգամ, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), 1874 (2 անգամ), 1879, 1882, 1889, 1892, 1897, 1898-ին (ԿՊ, Հակոբ Պոյաճյանի տպ.), 1892, 1895-ին (ԿՊ, Հարություն Ասատրյանի տպ.), 1987-ին (Վնն.), 1990-ին (Բ.), 2010, 2013-ին (Ե.) ևն:

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑԻ, **Սամուել Անեցի, Սամուել Երեց** (մոտ 1000/1005–1085/1090), պատմիչ-ժամանակագիր: Աշակերտել է ***Հովհաննես Սարկավագին***: Եղել է քահանա: Պահպանված միակ՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» ժամանակագր. երկը գրել է ***Գրիգոր Դ Տղա*** կաթողիկոսի պատվերով: Շարադրանքն սկսել է Արարչագործությունից և հասցրել մինչև 1180-ը: Այլ հեղինակներ Ս. Ա-ու ժամանակագրությունը շարունակել և հասցրել են մինչև 1665-ը:

XII դ-ի իրադարձությունները, որոնք Ս. Ա. շարադրել է որպես ականատես, կարևոր սկզբնաղբյուր են այդ ժամանակաշրջանի Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար: Ս. Ա-ու երկի համեմատ. բնագիրը՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...»-ը, հրատարակել է աստվածաբան Արշակ Տեր-Միքելյանը 1893-ին (Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., «Մատենադարան Սբ Էջմիածնի» մատենաշարով, 2011, կազմ.՝ Ա. Հայրապետյան, 2014՝ «Ժամանակագրութիւն» վերնագրով, ուսումնասիր.՝ Կ. Մաթևոսյանի): Երկը թարգմանվել է լատ. և 1818-ին հրատարակվել Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հետ: Մի շարք հատվածներ Մ. Բրոսսեի և Է. Դյուլորիեի թարգմանությամբ հրատարակվել են նաև ֆրանս. (1871):

Հեղինակ է նաև երկմասանոց՝ տոմարական և տիեզերագիտ. «Մեկնութիւն տումարի...» («Էջմիածին», 1952, № 1–2, աշխատասիր.՝ Ա. Աբրահամյանի) երկի:


Գրկ. **Մաթևոսյան Կ.**, *Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Ե., 2009:*

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ Խաչիկ Ստեփանի [1873, Կերչ (Ղրիմ)–16.10.1940, Երևան], իրավագետ, պատմաբան, ազգագրագետ, բանասեր, թարգմանիչ: Ավարտել է Թեոդոսիայի գիմնազիան, սովորել է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբ. ֆակ-ում (1895–1900), Ենայի (Գերմանիա) համալսարանում (1901–03): 1907–20-ին, որպես լրագրող և մանկավարժ, աշխատել է Վաղարշապատում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, Շուշիում, Բաքվում, Ալեքսանդրապոլում, 1903–16-ին աշխատակցել է «Ազգագրական հանդէսին»: 1924-ից՝ ՀԽՍՀ պետ. կենտր. արխիվի տնօրեն:

Լույս են տեսել Ս-ի «Արեան վրէժ եւ փրկանք» (1903), «Հայոց հին իրաւունքը եւ նրա հետազօտութեան մեթօդը» (1904), «Հայոց ժառանգական իրաւունքը» (1907), «Իրաւունք եւ կրօն», «Հայ նահապետական գերդաստան» (երկուսն էլ՝ 1908), «Մայրական իրաւունք» (1910), «Հայ սովորութական իրաւունքը: Հին հայոց իրաւունքը եւ նրա հետազօտութեան մեթօդը: Առեւանգմամբ ու գնմամբ ամուսնութիւն» (1911, Թ., «Էսպերանտո» տպ.), «Մխիթար Գօշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրաւունքը» (1911, Վնն., Մխիթարյան տպ.), «Ստրկությունը հին Հայաստանում» (Տեղեկագիր ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի», 1937, № 2), «Հին հայ իրավունքի պատմություն» (հ. 1, 1939), «Հին Հայաստանի կուլտուրան» (հ. 1–3, 1931–41), «Նախնադարյան հասարակության պատմություն», «Խալդեական հասարակություն», «Հին Արևելքի պատմություն» (երեքն էլ՝ 1938) և այլ աշխատություններ:



«Սաղմոս որ է հեգերէն» (1881, Երուսաղեմ), փիփղոսաթերթը



Սամվել Անեցու *«Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» (1893, Վաղ-պատ) գրքի փիփղոսաթերթը*




Խաչիկ Սամուելյան



Հարություն Սամուելյան. *«Սերգեյ Փարաջանով: Սրեղծագործությունների ընտրանի» (2011, Ե., «Նուշիկյան») albomի շապիկը*



Սայաթ-Նովա (նկարիչ՝ Հրաչյա Ռուխկյան)



Սայաթ-Նովայի *«Նազանի նազլուն հրաման փվեց» թուրք. խաղի հայ. և «Իմաս-փանաց հայտնի խոսքին» թուրք. խաղի վրաց. (Դավթար 3, էջ 62) ինքնագիր բնագրերը*

Թարգմանել է Ա. Գումպլովիչի «Հասարակական թէօրիաներ» (1902, Թ., Կ. Մարտիրոսյանի տպ.) աշխատությունը:

Ս-ի անունով Երևանում կոչվել է դպրոց (№ 47):

Գրկ. **Մելիք-Փաշայան Կ.,** *Խաչիկ Սամուելյան, «ՊԲՀ», 1974, № 1:*

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ Հարություն Արամի (ծ. 3.11.1947, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ֆիզմաթ գիտ. թեկնածու (1982): Ավարտել է ԵՊՀ (1970): 1984–90-ին՝ «Աշակույթ» հանդեսի գեղ. խմբագիր, 1992–2004-ին՝ «Նամականիշ» ՓԲԸ-ի գլխ. նկարիչ, 2007–08-ին՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ-ի հրատարակչ. ծրագրերի գեղ. ղեկավար: Համագործակցել է «Սովետական գրող», «Ապոլոն», «Արևիկ», «Կանթեղ», «Սուղնի» և այլ հրատարակչությունների հետ:

Նախագծել, նկարազարդել և ձևավորել է Դ. Հովհաննեսի «Աղետի գոտի» (1989), Ա. Միցկևիչի «Հատընտիր» (1999), Ն. Միկոյանի «Սիրով և թախիծով» (ռուս., 2000), Մ. Հասրաթյանի և Զ. Սարգսյանի «Հայաստան: Քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» (2001), Մեսրոպ արք. Աշճյանի «Finis Terrae. Ցեզո Աշխարհի» (2001), Ս. Շահմուրադյանի «Մեր քաղցր հողը» (2004), «Հայոց պատերազմները և ռազմարվեստը» մատենաշարը [հ. 1–2, 2009 (հեղ.՝ Հ. Դեմոյան), հ. 3 (հեղ.՝ Հ. Հակոբյան), հ. 5 (հեղ.՝ Բ. Հարությունյան), երկուսն էլ՝ 2013] և այլ գրքեր, «Փարաջանովի գեղադիտակը. գծանկար, կոլաժ, ասամբլյաժ» (ռուս., անգլ., երկուսն էլ՝ 2008) և «Սերգեյ Փարաջանով: Ստեղծագործությունների ընտրանի» (հայ., անգլ., 2011), «Հարություն Կալենց» (հայ., անգլ., 2010), «Արա Բեքարյան» (հայ., ռուս., անգլ., 2012) և այլ albomներ: Հեղինակ է ՀՀ և ԼՂՀ առաջին (նամականիշների մրցույթի գլխ. մրց., 1992), իսկ հետագայում՝ 130-ից ավելի նամականիշների:

Միջազգ. մրցույթի 2-րդ (2010՝ 100-հզ-անոց թղթադրամի համար), «Գիր և ժուռնալիստիկա» (2012, Պենելա՝ Պորտուգալիա) մրց-ներ:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ (Արութին, Հարություն, 1712, 1717 կամ 1722, Թիֆլիս–12.9.1795, Թիֆլիս), բանաստեղծ-աշուղ, ուշ միջնադարի հայ տաղերգության խոշոր ներկայացուցիչ: Կրթությունը սահմանափակվել է գրաճանաչությամբ: Ս-Ն. հոգևոր հովիվ է եղել Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի քաղաքում, որտեղ 1761-ին ընդօրինակել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը, 1766-ին Ջաքաթալայում՝ մեկ այլ ձեռագիր (երկուսն էլ՝ Մատենադարան):

Գրել է թուրք. և վրաց., 1752-ից՝ հայ.: Ս-Ն-ից պահպանվել են մոտ 70 հայ., ավելի քան 120 թուրք. և շուրջ 30 վրաց. երգեր (խաղեր):

Երգերի մեծ մասի թեման սերն է, հեղինակ է նաև խոհախրատ. և երգիծ. խաղերի: Շարունակելով ***Նաղաշ Հովհաթանից*** սկզբնավորված ավանդույթը՝ Ս-Ն. իր խաղերի մի մասն ինքն է եղանակավորել: Օգտագործել է նաև աշուղ. ավանդ. եղանակները՝ ոտանավորին կցելով եղանակը հուշող ծանոթագրություն: Հայ. խաղերի 27 եղանակ հավաքել և գրի են առել Մ. Աղայանը և Շ. Տալյանը (հրտ.՝ 1946 և 1963):

Ս-Ն-ի ստեղծագործությունը մեծապես ազդել է հետագա հայ աշուղների և բանաստեղծների վրա: XIX դ-ի կեսից, շնորհիվ Գ. Ախվերդյանի, սկզբնավորվել է սայաթնովագիտությունը, որտեղ մեծ ավանդ ունեն Հ. Թումանյանը, Գ. Ասատուրը, Գ. Լևոնյանը, Վ. Բրյուսովը, Ի. Գրիշաշվիլին, Ն. Աղբալյանը, Մ. Հասրաթյանը, Պարույր Սևակը, Հենրիկ Բախչինյանը: Ս-Ն-ի երգերն առաջին անգամ տպագրվել են 1852-ին Մոսկվայում («Սայաթ-Նովայ», աշխատասիր.՝ Գ. Ախվերդյանի, Վլադիմիր Գոթիեի տպ.): Հ. Թումանյանի և Գ. Բաշինջաղյանի ջանքերով 1913-ին տոնվել է Ս-Ն-ի ծննդյան 200-ամյակը, 1914-ին հրատարակվել է հայ. խաղերի լրիվ ժող-ը («Սայեաթ-Նովայ», Բաքու, Ա. Թառայանի և Հ. Ստեփանյանի տպ., Թ., Նվարդ Աղանյանի տպ.), 1914-ի մայիսի 15-ին Թիֆլիսի Սբ Գևորգ եկեղեցու բակում բացվել է Ս-Ն-ի մահարձանը: Ամեն տարվա մայիսի վերջին կիրակի օրը Թիֆլիսում տոնվում է սայաթնովյան Վարդատոնը:

Լույս են տեսել նաև Ս–Ն–ի «Հայերեն խաղերի լիակատար ժողովածու» (ներած., ծնթգր. և խմբ.՝ Գ. Լևոնյանի, առաջաբ.՝ Պ. Մակինցյանի, 1931), «Տաղեր» (1931, Բ.), «Երգեր» (մշակումը՝ Ս. Բարխուդարյանի, 1935), «Սայեաթ–Նովայի տաղերը» (կազմ.՝ Ռ. Աբրահամյան, 1943, Թեհրան), «Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու» (կազմ., խմբ. և ծնթգր.՝ Մ. Հասրաթյանի, 1963), «Խաղեր» (Դավթարի նմանահանությունը, 1963), «Հայերեն խաղեր» (աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, 1984), «Խաղեր» (կազմ., առաջաբ. և ծնթգր.՝ Հ. Բախչինյանի, 1987), «Խաղեր» (աշխատասիր.՝ Հ. Բախչինյանի, 2003), «Հայերեն և թուրքերեն խաղեր» (աշխատասիր.՝ Ի. Ստեփանյանի, 2006), «Հայերեն խաղեր» (աշխատասիր.՝ Վ. Զարգարյանի, 2013) ժող–ները:

ՀՀ–ում Ս–Ն–ի անունով կոչվել են դպրոցներ, փողոցներ, աշուղ. երաժշտ. խմբեր: 1963–ին Խաղաղության համաշխ. խորհրդի որոշմամբ նշվել է Ս–Ն–ի ծննդյան 250–ամյակը, 2013–ին ՅՈՒՆԵՍԿՕ–ի հովանավորությամբ՝ 300–ամյակը: 1976–ին Ս–Ն–ի անունով է կոչվել Մերկուրիի խառնարաններից մեկը:

Գրկ. **Աստուր Գ.**, *Սայեաթ–Նովայի ձեռագիր մատեանը, «Բանբեր Հայաստանի գիտական հնատիպոտպի», Վաղ–պատ, 1921–22:* **Թումանյան Հ.**, *Սայաթ–Նովա (հոդվածներ և ճառեր), Ե., 1963:* **Հասրաթյան Մ.**, *Սայաթ–Նովայի Դավթարը, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ», 1963, № 10–11:* **Մուրադյան Պ.**, *Սայաթ–Նովան ըստ վրացական աղբյուրների, Ե., 1963:* **Քոչոյան Ա.**, *Սայաթ–Նովայի հայերեն խաղերի բառարան, Ե., 1963:* **Աղբալեան Ն.**, *Սայեաթ–Նովայի հետք, «Ամրողջական երկեր», հ. 2, Բ., 1966:* **Սևակ Պ.**, *Սայաթ–Նովա, Ե., 2013:* **Զուգասզյան Բ.**, *Սայաթ–Նովայի ընդօրինակած նորահայտ ձեռագիր մատյանը, «ԼՀԳ», 1981, № 7: Սայաթ–Նովա (մեթոդամատենագիտական նյութերի ժող., կազմ.՝ Ռ. Ղազարյան), Ե., 1987:* **Բախչինյան Հ.**, *Սայաթ–Նովա: Կյանքը և գործը, Ե., 1988:* **Թահմիզյան Ն.**, *Սայաթ–Նովան եւ հայ գուսանա–աշուղական երգերաժշտութիւնը, Փասադենա, 1995:*

ՍԱՆԱՀԻՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ստեղծվել է Սանահինի համալսարանին կից՝ X դ–ում: Հարստացել է Սանահինի համալսարանի սաների ընդօրինակությունների, նվիրատվությունների և գնումների շնորհիվ: Ս. մ–ի հին ու ընտիր ձեռագրերը օգտագործվել են ուսուցման նպատակով, նաև բազմիցս ընդօրինակվել են: Ճեմարանի, ապա դպրոցի ուսուցիչները (Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Արասաորդի և ուր.) ձեռագրեր են ստեղծել դասավանդման համար, որոնք պահվել են մատենադարանում: Ինչպես հայկ. բազմաթիվ մատենադարաններ, այնպես էլ Սանահինի մատենադարանը կողոպտվել է: 1904–ին Սանահինի վանահայր Գարեգին Սաթունյանը պահպանված բոլոր ձեռագրերը նվիրել է Էջմիածնի մատենադարանին: Մեզ հասած բազմաթիվ ձեռագրերից 35–ը պահվում են Մատենադարանում:

ՍԱՆԱՀՅԱՆ Օլգա Հարությունի (3.10.1920, Երևան–7.12.2013, Երևան), արձակագիր, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ (1945): 1944–50–ին աշխատել է Երկրագործության ինստ–ի գիտ. գրադարանում, 1957–75–ին՝ «Հայաստան» հրատարակչությունում:

Լույս են տեսել Ս–ի «Անուշիկի արկածները» (1956), «Իմ ծանոթ տղաները» (1962), «Միամիտ արջուկը» (1968), «Հեքիաթներ և պատմվածքներ» (1979), «Փիսիկները հաղթեցին» (1990), «Մանչուկը և Կառլսոնը Երևանում» (1995) մանկ. պատմվածքների և վիպակների, «Հոգու տարածք» (2006) պատմվածքների, հրապարակախոս. հոդվածների ժող–ները: Թարգմանել է Պ. Բաժովի, Մ. Զոշչենկոյի, Շոլոմ–Ալեյխեմի, Ա. Լինդգրենի երկերից:

«ՍԱՆԴՂԿԱՎԱՆՔԻ ԱՒԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան. բացառիկներից է իր գրեթե անխաթարությամբ ու գեղագրությամբ: 1053–ին Արշարունիք գավառի Սանդղկա Սբ Աստվածածին վանքում (Անիի մերձակայքում) ընդօրինակել և պատկերազարդել է Հովհաննես Սանդղկավանեցին: Պահվում է Մատենադարանում (ձեռ. № 3793, չափերը՝ 39 x 30 սմ, 310 մագաղաթե թերթ, խոշոր երկաթագիր): Ձեռագրի նկարազարդումից պահպանվել են 4 ավետարանիչների, անվանաթերթերի և 2 խորանների պատկերները: Ավետարանը թվագրված առաջին հայ. ձեռագիրն է, որտեղ գունավոր զարդագրի հետ հանդիպում են նաև լուսանցազարդ և գլխազարդ: Հիշատակարանում գրիչը, բացի իր ծնողներից՝ Դավթից և Մարիամից, հիշատակում է ձեռագրի գրչությանն ու մանրանկարչությանն օժանդակող անձանց՝



Սայաթ–Նովայի *«Տաղեր»–ի (1931, Բեյրութ) փիփղոսաթերթը*



Օլգա Սանահյանի *«Հեքիաթներ և պատմվածքներ» (1979, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Ա. Բայանդուր) գրքի կազմը*




«Սանդղկավանքի Աւետարան»–*ի գլխա– և լուսանցազարդերով էջ (1053, ծաղկող և գրիչ՝ Հովհաննես Սանդղկավանեցի, Մատենադարան, ձեռ. № 3793)*



Վանիկ Սանթրյանի *«Ձեր ընծայագրերի հետքերով...» (հ. 2, 2012, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*

Սանկտ Պետերբուրգի հայկական տպագրություն



Հ. Արզանյանի «Հայկական առածներ եւ աւանդութիւններ...» (1857, Կայսերական գիտ. ակադ-ի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Գ. Բաշինջաղյանի «Նկարչի կեանքից յիշողութիւններ» (1903, «Պուշկինյան» տպ.) գրքի փիփղոսաթերթը

մագաղաթ հետող Մովսեսի, կազմը զարդարող Հովհաննես Սողիկի և ձեռագիրը զուգող Թորոս Խաղբակի անունները:

Գրկ. Մսթեւոսյան Ա., Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողնու Ավետարանը»), «ԲՄ», № 10, 1971: Հովհաննես Սանդղկավանեցի (ալբոմ, կազմ., առաջաբ. և ծնթգր.՝ Տ. Իզմայլովայի), Ե., 1986:

ՍԱՆԹՐՅԱՆ Վանիկ (Վանյա) Ալեքսանի [ծ. 16.1.1935, գ. Թաղավարդ (ԼՂՀ Մարտունու շրջան)], արձակագիր, լրագրող: Վաստ. լրագրող (2006): Ավարտել է ԵՊՀ (1957): 1957–62-ին աշխատել է «Երևան» թերթի խմբագրությունում, 1962–2010-ին՝ Արմենպրես լրատվ. գործակալությունում՝ բաժինների վարիչ: 2010-ից՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մշակութ. մեկնաբան:

Լույս են տեսել Ս-ի «Լեգենդը կոչվում է Կամո» (1982) վիպակը, «Մաշտոցի որդիները» (1985, 1993, Անթիլիաս, 1995, Սբ Էջմիածին), «Աք Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի» (1999) էսսեների, «Դեպի Արցախ. պատերազմի և խաղաղության ճամփաներին» (2000), «Վարք երեք սրբերի» (2002), «Կարոտի կանչեր Հալեպ քաղաքից» (2006), «Լեգենդ չինարների մասին» (2007), «Ձեր ընծայագրերի հետքերով. ինքնալրագիտարան» (հ. 1–2, 2011–12), «1988-ի երկրաշարժ. Գթասրտության խորանի լույսը» (2013), «Երեք էտյուդ» (2013) պատմվածքների, էսսեների, ակնարկների ժող-ները, «Էդվարդ Միրզոյան. խղճի և ճաշակի ասպետը» (2013) հուշապատումը:

Գրկ. Զոհրաբյան Է., Իմ Վանիկ Սանթրյանը, Ե., 2005:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է 1781-ին, երբ Լոնդոնից Գրիգոր *Խալդարյանի* բերած հայկ. տպատառերով լույս է ընծայվել Ռուսաստանում առաջին հայ. գիրքը՝ «Տետրակ այբբենական» այբբենարանը: Մինչև 1789-ը տպարանը հրատարակել է շուրջ 15 անուն գիրք՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1785) պոեմը, Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց» («Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք», 1787) երկը, Գ. Խալդարյանի հայ-ռուս. բառարանը («Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան», 1788), Կ. Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» (1788) ձեռնարկը ևն: Այնուհետև տպարանն անցել է Սբ Էջմիածնի տնօրինությանը, և Հովսեփ *Արղությանն* այն տեղափոխել է Նոր Նախիջևան, հետո՝ Աստրախան:

1810-ին Ս. Պետերբուրգի «Մորսկայա» տպարանում մշակույթի գործիչ և տպագրիչ Հովսեփ Հովհաննիսյանը լույս է ընծայել Գրիգոր Նարեկացու աղոթքը՝ «Մաղթանք գիշերայինք» վերնագրով: Նույն թվականին նա հիմնադրել է նաև իր սեփական տպարանը և մինչև 1827-ը տպագրել 10-ից ավելի հայ. գրքեր՝ Խոճենց Մարգարի «Բարառնական դիմառնութիւն բարոյական...» (1812), «Խրատ յաղագս պատուաստման նախապահպանողական ծաղկան» (1815), Աստվածաշունչ (1817), Նոր կտակարան (հայատառ թուրք., 1814, 1817, 1819), «Յաղագս ուսումնարանին հայոց, որ ի Մոսկով կայսերական հրամանաւ հաստատեալ» (1827) ևն: 1828-ին Լազարյան ճեմարանը Ս. Պետերբուրգում բացել է իր տպարանը, տպագրել է 2 գիրք՝ «Արձանագրութիւնք որք վերաբերին....» (1828) և «Գումար բարձրագոյն հրովարտակաց եւ....» (1839):

1838-ից գործել է Ալեքսանդր *Խուդաբաշյանի* տպարանը, որը նույն թվականին հրատարակել է տպարանատիրոջ «Գիրք նախակրթութեան հայկազեան լեզուի» դասագիրքը, 1839-ին՝ նրա գրադարանի գրացուցակը («Յանկ տպագրեալ եւ ձեռագիր գրոց...»): 1860-ական թթ-ին գործել է Ռափայել *Պատկանյանի* տպարանը, որը տպագրել է «Հատընտիր եւ պատկերազարդ առակք Եզոպոսի եւ առածք պէսպէս ազգաց» (1859), Գ. Պատկանյանի «Հայոց ազգի պատմութիւնը», «Միջնավէպք հայոց ազգի պատմութիւնից» (երկուսն էլ՝ 1863) և այլ աշխատություններ, Գրիմ եղբայրների «Գերմանական ազգային առակներ» (ֆրանս-ից թարգմ.՝ Ե. Տեր-Գրիգորյանի, 1864), Ռ. Պատկանյանի ստեղծագործություններից ևն (16 անուն գիրք), նաև *«Հիւսիս»* հանդեսը:

XIX դ–ի 2–րդ կեսին և հետո Ս. Պետերբուրգում հայ. գրքերը հրատարակվել են Կայսեր. գիտ–ների ակադ–ի (44 անուն), Օ. Բակստի (6 անուն), Հ. Յանսոնի (6 անուն), Ի. Գոլովինի (1 անուն), Ի. Սկորոխոդովի (49 անուն), Յ. Լիբերմանի (28 անուն, վերջին երկուսի տպարաննեբում տպագրվել է նաև *«Արաքս»* հանդեսը), Ա. Կրաևսկու (4 անուն), «Տրուդ» (3 անուն), «Բեսել և ընկ.» երաժշտ. (2 անուն), Բորպանովսկու և այլ տպարաններում: 1867–72–ին Միքայել ***Միանասարյանցի*** հայկ. հրատարակչությունը լույս է ընծայել մանկավարժությանը վերաբերող թարգման. երկեր և Մ. Միանսարյանցի կազմած «Քնար հայկական» (1868) երգարանը, «Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան պատմութիւնը եւ տեսութիւնը» (1872) աշխատությունը: Բեղմնավոր է եղել «Պուշկինյան» հայկ. տպարանը, որը 1890–1900–ական թթ–ին լույս է ընծայել բժիշկ Ա. Բուդուղյանի բժշկ. գիտահանրամատչելի մի շարք աշխատություններ, Գ. Բաշինջաղյանի «Նկարչի կեանքից յիշողութիւններ» (1903) և այլ գրքեր, ***«Բանբեր գրականութեան եւ արուեստի»*** և ***«Սափրիչ»*** հանդեսները, «Արցունքներ» ժող–ի համարները (1907):



Սանկտ Պետերբուրգի հայկական տպագրություն

1972–ին Լենինգրադում տպագրվել է «Հայ միջնադարյան քնարերգություն» անթոլոգիան, 1981–ին՝ Կոստանդին Երզնկացու «Լոյսն առաւօտուն» ժող–ը: ԵՊՀ–ի, Մ. Աբեղյանի անվ. գրակ–յան ինստ–ի և Ռուս գրակ–յան ինստ–ի (Պուշկինյան տուն) համագործակցությամբ լույս է ընծայվել «Հայ և ռուս միջնադարյան գրականություն» (հ. 1, 2, 1982, 1986) ժող–ը: 1993–ից Ս. Պետերբուրգում լույս է տեսնում *«Հավատամք»* ազգ., հոգևոր ամսաթերթը:

Գրկ. Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (անանահանություն): Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012:* Իշխանյան Ռ., *Հայ գիրքը, Ե., 1981:*



Ավետիս Սանճյան

ՍԱՆՃՅԱՆ Ավետիս Գրիգորի [24.2.1921, Մարաշ (Կիլիկիա)–22.7.1995, Լոս Անջելես], բանասեր, հայագետ, խմբագիր: Պատմ. գիտ. դ–ր (1956), պրոֆ. (1965): ԱՄՆ–ում հայագիտ–յան հիմնադիրներից: Ավարտել է Բեյրութի ամերիկյան (1949) և Միչիգանի (1956) համալսարանները: 1957–ից դասավանդել է Հարվարդի, 1965–ից՝ Կալիֆոռնիա–յի (1969–95–ին՝ հայագիտ–յան ամբիոնի վարիչ) համալսարաններում: Վերջինիս գրադարանին կից ստեղծել է հայ գրակ–յան ֆոնդ, որտեղ հավաքել է արխիվային նյութեր, հայ. ձեռագրեր: 1982–95–ին՝ ***«Ջըռնըլ օֆ դը Սըսայթի ֆոր Արմինիըն Սթադիս»*** (անգլ.) պարբ–ի խմբագիր:

Լույս են տեսել Ս–ի «Ալեքսանդրէթի սանջակի խնդիրը եւ ֆրանս–թուրք–սիրիական յարաբերութիւնները» (1956), «Պատմական Սիրիայի հայկական գաղութները օսմանեան տիրապետութեան տակ» (1965), «Գրաբար քերականութեան ձեռնարկ» (1968), «Յուցակ Ամերիկայի Միացեալ Նահանգներում միջնադարեան հայերէն ձեռագրերի» (1976, 180 ձեռագրերի և պատառիկների նկարագրությամբ), «Երեմիա Չելէպի Քեոմիւրճեանի Տիմոյի եւ Սիգատայի մասին տաղաչափեալ սիրավէպ» (համահեղ., 1981), «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1301–1480» (1969, քննել է հայ. հիշատակարանային գրակ–յան առանձնահատկությունները, ներկայացրել հատվածներ անգլ. թարգմանությամբ և պատմաբանասիր. ծանոթագրությամբ) աշխատությունները: Կազմել և լույս է ընծայել Վ. Թէքեյանի «Նամականին» (1983):

Հայագիտ. ուսմանց ընկերության նախագահ (1974–ից):

Գրկ. Աւետիս Գ. Սանճեան (1921–1995). Համառօտ տեղեկութիւններ կեանքի և ստեղծագործութեան մասին [ա. թ.]:




Ա. Սանճյանի *«Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1301–1480» (1969, Հարվարդ) գրքի կազմը*

ՍԱՆՃՅԱՆ Արա Կարապետի (ծ. 4.2.1968, Բեյրութ), պատմաբան: Պատմ. գիտ. դ–ր (1996): Ավարտել է ԵՊՀ (1991) և Լոնդոնի համալսարանի Արևելքի և Աֆրիկայի հետազոտությունների դպրոցը (1996): 1996–2005–ին՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի ամբիոնի վարիչ, 2006–ից՝ Միչիգանի համալսարանի Դիրբորն քաղաքի մասնաճյուղի Հայագիտ. հետազոտությունների կենտրոնի վարիչ, 2003–ին՝ հրավիրված դասախոս Կալիֆոռնիայի պետ. համալսարանի Ֆրեզնո քաղաքի մասնաճյուղի հայագիտ. դասընթացներում:

Աշխատությունները վերաբերում են Հայաստանի, Մերձ. Արևելքի հայկ. գաղթավայրերի, Թուրքիայի և Արմ. Ասիայի արաբ. երկրների պատմությանը՝ Առաջին համաշխ. պատերազմից հետո:

Պատրաստել է անգլ. հանրամատչելի բրոշյուր՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին:

Երկ. A Study in the Origins and Failure of the Baghdad Pact, Slough, UK: Archive Editions, 2001; The Negotiation of the Contract of the Century and the Political Background to the Revival of Azerbaijan's Oil Industry: The Armenian Center for National and International Studies, September, Y., 1997; Celebrating the Legacy of Five Centuries of Armenian language Book Printing, 1512–2012 ,Dearborn. MI: University of Michigan–Dearborn, 2012.


Ս. ՍԱՊԱՀ-ԳՅՈՒԼՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Ստեփանոս Սապահ-Գյուլյանի *«Պատասխանատուները» (1974, Բեյրութ) գրքի փիփղոսաթերթը*

ՍԱՊԱՀ-ԳՅՈՒԼՅԱՆ (Սապահգյուլյան, Տեր-Դանիելյան) Ստեփանոս [14. 2. 1861, գ. Ճահուկ (Նախիջևանի գավառ)–28. 4. 1928, Նյու Յորք], հաս-քաղ. գործիչ, հրապարակախոս, խմբագիր: ՍԴՀԿ անդամ՝ 1894-ից: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Սովորել է Փարիզի քաղ. գիտ-ների ինստ-ում (1890–95): Դասավանդել է Ճահուկի, ապա՝ Երևանի թեմ. դպրոցներում: 1903–15-ին՝ ***«Երիտասարդ Հայաստան»*** պարբ-ի հիմնադիր-խմբագիր, 1912-ին՝ ***«Նոր աշխարհ»*** թերթի խմբագրապետ, 1915–18-ին՝ ***«Պալքանեան մամուլ»*** պաշտո-նաթերթի պատ., 1919–20-ին՝ «Կոան» շաբաթաթերթի գլխ. խմբագիր:

Ս-Գ. առաջ է քաշել ինքնավար Հայաստանի ստեղծման գաղափա-րը («Ինքնավար Հայաստան», 1915, Թ., «Հույս» տպ.), դատապարտել երիտթուրքերի ազգայնական քաղաքականությունը, Մեծ եղեռնի հանցավորներին («Պատասխանատուները», 1916, Փրովիդենս, «Երի-տասարդ Հայաստանի» տպ., 1974, Բ.):

Լույս են տեսել նաև Ս-Գ-ի «Երիտասարդ Թիւրքիա» (1908, Փ., Հնչակ. կուս-յան տպ.), «Սոցիալիզմ եւ Հայրենիք» (1916, Փրովիդենս, «Երիտասարդ Հայաստանի» տպ.), «Արմենակ եւ Աբրահամ» (1917, Չիկագո, «Երիտասարդ Հայաստանի» տպ.), «Փոքր Հայքի յիշատակներ» (1917, նույն տպ.) աշխա-տությունները:

Թարգմանել է Կ. Կաուցկու աշխատություններից:

«ՍԱՄՆԱ ԾՌԵՐ», **«Սասունցի Դավիթ»**, հայ ազգ. էպոսը: Վիպա-սացները և բանահավաքներն անվանել են նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Զոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» ևն:


Սասունցի Դավիթ

«Սասունցի Դավիթ» *(1939, Ե., Հայպետ-հրատ, ձևավորող՝ Ս. Ալթունյան) էպոսի կազմը*

«Ս. ծ.»-ի հերոսներից Սանասարի և նրա եղբոր մասին ինագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Դ Թագ. 19), հետագայում՝ Մովսես Խորենացու (գիրք Ա, ԻԳ) և Թովմա Արծրունու (Թովմա Արծրունի և Անանուն, «Պատմություն Արծրունյաց տան», 1978, էջ 32) երկերում: Իսկ Դավթի և Խանդութի մասին զրույցների, Սասունում պահպանված իրեղեն որոշ ապացույցների հիշատա-կություններ կան XVI դ-ի պորտուգալացի ճանապարհորդների (Ա. Տենրեյրո, Մ. Աֆոնսո) ուղեգր. նոթերում:

«Ս. ծ.» հայտնաբերել և ամբողջությամբ գրի է առել Գարեգին ***Սրվանձտյանը*** 1873-ին Մշո Առնիստ գյուղում՝ երեսփոխան Կրպոյից, և հրատարակել Կ. Պոլսում՝ «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ» (1874, ԿՊ, Եղիա Տնտեսյանի տպ.) վերնագրով: 2-րդ տարբերակը 1886-ին Էջմիածնում Նախո քեռի Մոկացուց գրառել է Մանուկ ***Աբեղյանը*** և հրատարակել Շուշիում («Դաւիթ եւ Մհեր», 1889, Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպ.): Նորանոր տարբերակներ են գրառել և լույս ընծայել Գ. Հովսեփյանը («Սասմայ ծռեր», 1892, Թ., Մ. Շարաձեի տպ.), Խ. Դադյանը (1895), Ս. Հայկունին (1898), Բ. Խա-լաթյանը («Սասմայ փահլիւաններ կամ Թղլօր Դաւիթ եւ Մհեր», 1899, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), Ա. Աբեղյանը (1900), Ե. Լալայանը (1905), Հ. Ավչյանը (1909), Տ. Չիթունին (1909), 1910–20-ական թթ-ին՝ Շ. Կուժիկյանը, Ա. Բարսեղյանը, Ս. Տեր-Հակոբյանը, 1930-ական թթ-ին՝ Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը, 1940-ական թթ-ին՝ Վ. Բդոյանը, 1960–70-ական թթ-ին՝ Գ. Գրիգորյանը, Ս. Հարությունյանը,

Ա. Սահակյանը, Ռ. Գրիգորյանը: 1873–1946-ին գրառված և տպագրված պատումների մեծ մասը Մ. Աբեղյանն ու Կ. Մելիք-Օհանջանյանն ամփոփել և հրատարակել են 2 գրքով («Սասնա ծռեր», հ. Ա, 1936, հ. Բ, 1944–51): 1960–90-ական թթ-ին գրառված պատումների որոշ մասը հրատարակվել է 2 գրքով (Վ. և Գ. Գրիգորյաններ, «Սասունցի Դավիթ», 1977, Ս. Հարությունյան և Ա. Սահակյան, «Սասնա ծռեր», հ. 3, 4, 1979, 1999): Լույս են տեսել նաև Ռ. Գրիգորյանի, Ե. Մելիք-Մուրադյանի «Սասնա ծռերը» (2000), «Սասնա ծռեր. հայ ժողովրդական վեպ. Ընտիր պատումներ»-ը (2008): Ցայսօր հայտնաբերվել և գրառվել է շուրջ 160 պատում, որից մոտ 70-ը հրատարակվել են:

1938–39-ին «Ս. ծ.»-ի 1000-ամյա հոբելյանի առթիվ Մ. Աբեղյանը, Գ. Աբովը և Ա. Ղանալանյանը կազմել են միասն. համահավաք բնագիր («Սասունցի Դավիթ», 1939), թարգմանվել է ռուս., վրաց., բելառուս. և այլ լեզուներով: Վեպի մի այլ համահավաք բնագիր կազմել է Տ. Չիթունին Փարիզում («Սասունական», 1942):

«Ս. ծ.»-ի գրական մշակումներն սկսվել են 1890-ական թթ-ին: Հ. Շաղարբեգյանը մշակել է Դավթի ճյուղը՝ արձակ («Սասունցի Դաւիթ դիւցազն», 1895), Գ. Բալասանյանը՝ բոլոր ճյուղերը՝ չափածո («Առիւծաձեւ Մհեր», «Ասլի Մելիք եւ Սանասար», «Սասունցի Դաւիթ», «Պատիկ Մհեր», «Երկու պահլաւան», 1899–1904), Հ. Թումանյանը՝ Դավթի ճյուղը՝ չափածո («Սասունցի Դաւիթ», 1903): Հետագայում «Ս. ծ.» մշակել են (հատվածաբար կամ ամբողջ.) ռուս բանաստեղծ Ա. Կուլեբյակինը («Մհերի դուռ», Թ., 1916), Ա. Իսահակյանը («Սասմա Մհեր», 1922), Ե. Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933), Ս. Տարոնցին, Վ. Արամունին, Մ. Խերանյանը, Կ. Սիտալը, Ն. Զարյանը, Հ. Սիրասը, Վ. Խեչումյանը և ուր.:

1881-ին Գրիգոր *Խալաթյանցը* «Ս. ծ.» թարգմանել է (Գ. Սրվանձտյանի պատումը) ռուս. («Սասունցի Դավիթ»), ապա էպոսը թարգմանվել է գերմ. («Հեքիաթներ և ավանդազրույցներ», հրտ.՝ Ա. Հովհաննիսյանի, «Հայկական գրադարան» մատենաշար, գիրք 4): Վալերի *Բրյուսովը* որոշ կրճատումներով ռուս. է թարգմանել Մ. Աբեղյանի գրառած պատումը և հրատարակել «Հայ պոեզիան...» (1916) անթոլոգիայում:

1950–60-ական թթ-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի շնորհիվ մեծացել է հետաքրքրությունը հայոց էպոսի նկատմամբ: Համահավաք բնագիրը թարգմանվել է չին. (1956), ֆրանս. (1964, թարգմ.՝ Ֆ. Ֆեյդիի), անգլ. («Սասնա ծռեր», 1964, թարգմ.՝ Լ.-Զ. *Սյուրմելյանի*, «Սասունցի Դավիթ», 1964, թարգմ.՝ Ա. Շալյանի), լեհ. (1967, թարգմ.՝ Ի. Սիկիրիցկու), պարսկ. (1969):


Գրկ. **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 1, Ե., 1966, էջ 125–554:* **Ղանալանյան Ա.**, *Սասունցի Դավիթ, Ե., 1989:* **Մելիք-Օհանջանյան Կ.**, *Միթրա Միհրը «Սասնա ծռերի» մեջ, «Գրական-բանասիրական հետախուզումներ», Ե., 1946, էջ 269–387:* **Օրբելի Հ.**, *Հայկական հերոսական էպոսը, Ե., 1956:* **Գրիգորյան Գ.**, *Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Ե., 1960: Սասնա ծռեր (աշխատասիր.՝ Ս. Հարությունյանի), Ե., 1977:* **Հարությունյան Ս.**, *Վիշապամարտը «Սասնա ծռերում», «ԼՀԳ», 1981, № 11:* **Եղիազարյան Ա.**, *«Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Ե., 2013: Սասնա ծռեր: Հայ ժողովրդական էպոս: Մատենագիտություն, Ե., 2009:*

ՍԱՍՈՒՆԻ Կարո [Կարապետ, 1889, գ. Ահարոնք (Արմ. Հայաստանի Սասունի գավառ)–1977, Բեյրութ], հաս-քաղ. գործիչ, պատմաբան, խմբագիր-հրատարակիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Մուշի Մխիթարյան վարժարանը (1906), Կ. Պոլսի իրավաբ. համալսարանը (1912): Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին մասնակցել է հայկ. կամավոր. շարժմանը: Եղել է ՀՀ (1918–20) խորհրդարանի անդամ: 1920-ի մայիսին նշանակվել է Ալեքսանդրապոլի նահանգապետ: Հայրենիքի փրկության կոմիտեում (1921-ի փետր.) Ս. եղել է ներքին գործերի նախարար: ՀՀ-ում խորհրդ. կարգեր հաստատվելուց հետո մեկնել է արտասահման: Զբաղվել է ստեղծա-

«Սասնա ծռեր»




Տիպղոսաթերթը (1951, հ. Բ, մաս 2-րդ, Ե., Հայպետհրատ, ձևավորող՝ Հ. Կոջոյան)



Բացվածքով պատկերազարդ էջ (հ. Ա., 1936, Ե., Հայպետհրատ, ձևավորող՝ Հ. Կոջոյան)



Կարո Սասունի



Կ. Սասունու *«Սարերու Ասլանը» (1966, Բեյրութ) գրքի կազմը*



Հարություն Սասունյան



«Սաւառնակ», *1919–1971, Կահիրե*



«Պատմութիւն վարուց Յոհաննու Ոսկեբերանի» (1751, Վնտ., տպագրիչ՝ **Սարգիս Սարաֆյան***) գրքի գլխազարդով և սկզբնագրով (11-րդ) էջ*

գործ., հրատարակչ. աշխատանքով: 1962–77-ին՝ *«Բագին»* հանդեսի վարիչ-խմբագիր:

Լույս են տեսել Ս-ու «Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914–1918)» (1927, Բոստոն,) «Գեւորգ Չաուշ» (1939, Փարիզ), «Պատմութիւն արեւմտահայ արդի գրականութեան» (1951), «Պատմութիւն Տարօնի աշխարհի» (1956, 2013), «Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918)» (1966), «Սարերու Ասլանը» (1966), «Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները» (1968), «Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները (ԺԵ դարէն մինչեւ մեր օրերը)» (1969, բոլորը՝ Բ.) աշխատությունները, «Կեանքի հորձանուտին մէջ» (1962) պատմվածքների, «Յուշեր եւ վկայութիւններ» (1972) հուշագրությունների ժող-ները:

Գրկ. **Մարության Մ.**, *Կարո Սասունի, «Բագին», 1983, № 5–8:* **Ներսիսյան Ա.**, *Կարո Սասունի, Ե., 2009:*

ՍԱՍՈՒՆՅԱՆ Հարություն Մանուկի (ծ. 1950, Հալեպ), հաս. գործիչ, հրապարակախոս, հրատարակիչ: 1969-ից ապրում է ԱՄՆ-ում: Ավարտել է Նյու Յորքի Կոլումբիայի (1975) և Լոս Անջելեսի Փեփերդինի (1977) համալսարանները: 1989-ից՝ Միացյալ հայկ. հիմնադրամի նախագահ, 2000–09-ին՝ «Լինսի» հիմնադրամի փոխնախագահ: 1983-ից Լոս Անջելեսում հրատարակում է *«Կալիֆոռնիա կուրիեր»* (անգլ.) շաբաթաթերթը, որտեղ հետևողականորեն արծարծում է Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման հարցը: 2005-ին լույս է ընծայել «Հայոց ցեղասպանություն. փաստաթղթեր և հայտարարություններ. 1915–1995» ժող-ը:

ՀԺՄ «Ազդարար» մրց., ԱՄՆ «Էլիս Այլենդ» պատվո շքանշան:

«ԱԽԱՒՈՒՆԱԿ», ազգ., քաղ. երգիծաթերթ: Լույս է տեսել 1919–71-ին Կահիրեում՝ փոփոխ. պարբերականությամբ (նաև «Զեբելին», «Սաւառնակ-Զեբելին» անվանումներով): Հիմնադիր և ցկյանս խմբագիր՝ Երվանդ *Մնրյան:* Հանդես է եկել ազգ. հոգսերին անտարբեր հայ հաս. գործիչների և կազմակերպությունների դեմ, ծաղրել եգիպտահայ գաղութի կենցաղային արատները, անդրադարձել է Խորհրդ. Հայաստանի տնտ., կրթամշակութ. առօրյային: Տպագրել է Ե. Օտյանի, Ա. Իսահակյանի, Գ. Մահարու, Ե. Չարենցի, Հ. Շիրազի և ուր. ստեղծագործություններից: «Ս.»-ում շարունակաբար տպագրվել են Գառնիկ *Սվազլյանի* քաղ. երգիծանկարները:

ՍԱՐԱՖՅԱՆ Սարգիս (Սարգիս արք. Կոստանդնուպոլսեցի, Ալեքսանդրյան, Բյուզանդյան, Կեսարյան, 1699, Ադրիանապոլիս–2.10.1773, Լիվոռնո)], եկեղեց. գործիչ, տպագրիչ: Սովորել է Կ. Պոլսում, 1719-ին աշակերտել է Հովհաննես Կոլոտ պատրիարքին:

Ս. 1747-ին Վենետիկում համագործակցել է Անտոնի Բորտոլիի հետ, որի տպարանում մինչև 1752-ը հրատարակել է 15 անուն գիրք՝ Նոր կտակարան (1751), «Պատմութիւն վարուց Յոհաննու Ոսկեբերանի» (1751) ևն: 1752-ին Հովհաննես Չելեպի Սեղբոսյանի նվիրատվությամբ տպագրել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը և «Աշխարհագրութիւնը»-ը (1 գրքով):

Գրկ. **Գալէմքեարեան Գ.**, *Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վնտ., 1908:* **Բամպուքճեան Գ.**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678–1741) եւ իր աշակերտները, Սրտամբոյ, 1984:* **Հովհաննիսյան Պ.**, *Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե., 2013:*

ՍԱՐԳԻՍ ԱՊՈՒՀԵԽՑԻ, **Սարգիս Ակնեցի**, XVII դ-ի վերջ–XVIII դ-ի սկզբի տաղասաց: Ս. Ա-ու կյանքի և ստեղծագործության մասին միակ տեղեկությունը պահպանված է Սատենադարանի № 4426 ձեռագրում (Տաղարան), որը 1765-ին ընդօրինակել է Հայրապետ Ագուլեցին. այլ տաղերգուների գործերից բացի՝ այստեղ ընդգրկված են Ս. Ա-ու 18 տաղերը՝ «Տաղ Ակընցի գուղէն Ապուչեղցի տիրացու Սարքիսէ զարդարեալ վասն սիրոյս» խորագրով, և մի ակրոստիքոս: Գրել է նաև հոգևոր երգեր:

Գրկ. **Մկրտչյան Մ.**, *Սարգիս Ապուչեհցի, Ե., 1971:*

ՍԱՐԳԻՍ Բ ՎԱՀՐԱՄՅԱՆ, **Սարգիս Թմոգվեցի**, XIII դ–ի իշխան, քաղ. գործիչ, դիվանագետ: Գործունեության մասին տեղեկությունները վերաբերում են 1230–60–ական թթ–ին: Վրաց պատմիչները Ս. Բ Վ–ին անվանել են «այր գիտուն և փիլիսոփա և ճարտասան»: Որոշ վրացագետներ Ս. Բ Վ–ին են համարել «Դիլարգեթիանի» պոեմի հեղինակ ու «Վիս և Ռամին» ստեղծագործության թարգմանիչ:

Գրկ. **Մելիքսեթ–Բէկ Լ.**, *Հայերը վրաց հին գրականութեան մէջ, «Գեղարուեստ», 1921, № 7:*

«ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1993–ին Երևանում: Հիմնադիր–տնօրեն՝ Սերգեյ Խաչիկօղլյան: 2004–ից համագործակցում է *«Փրինթինֆո»* հրատարակչության հետ: Հրատարակում է «Իմացություն» գրադարան, «Արվեստ», «Երաժշտություն» և այլ մատենաշարեր: «Գրական կոթողներ», «Ժառանգություն» մատենաշարով տպագրվել են Վ. Հյուգոյի, Ա. դը Մյուսսեի, Պ. Մերիմեի ստեղծագործություններից, «Ռոլանդի երգը», «Հին եգիպտական պոեզիա» և այլ գրքեր: «Ժամանակ և խոսք», «Ars Poetica» մատենաշարերով լույս է ընծայում ժամանակակից հայ և օտարազգի գրողների, արվեստագետների երկեր:

ՍԱՐԳԻՍ ՄՈԿԱՑԻ, մականունը՝ Մազման (մոտ 1520–30–ական թթ.–1602), գրիչ և մանրանկարիչ: Ապրել և ստեղծագործել է Մոկաց գավառի Բոլենց գյուղում: Մատենադարանում պահվում են Ս. Մ–ու 1579–ին, 1592–ին, 1594–ին, 1595–ին և XVI դ–ում նկարազարդած 5 Ավետարան (ձեռ. № 5520, 5516, 5831, 300, 278) և 1593–ի Գանձարանը (ձեռ. № 5346): Ձեռագրերն աչքի են ընկնում հարուստ նկարազարդումներով: Նրա աշակերտներից հայտնի են Ստեփանոսն ու Մեսրոպը:

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, **Սարգիս Մեկնիչ**, XII դ–ի մատենագիր: Սովորել է Քեսունի Կարմիր վանքում (Նախճավան), աշակերտել անվանի վրդ. Ստեփանոս Մանուկին, հետագայում հաստատվել է Սև լեռան Քարաշիթի վանքում (Կիլիկիա): Հեղինակ է ճառերի, խրատների, աստվածաբան. երկերի մեկնությունների:


Առավելապես հայտնի է Ս. Շ–ու **«Մեկնութիւն կաթողիկեացը»** (Մատենադարան, ձեռ. № 5321, 6195, ևն), որն ավարտել է 1156–ին: Տպագրվել է 1743–ին Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում: Տպակից է Կարապետ Գրիչի «Համառօտութիւն գրքոյս Շնորհալւոյն Սարգսի» գրքույկին: Տիտղթ–ին՝ «Գիրք մեկնութեան եօթն թղթոցն կաթուղիկէից» (884 էջ, 8º, 18,6 x 13,4 սմ): Վերահրատարակվել է 1744–ին նույն տպարանում, 1826–ին (ԿՊ, Աբրահամ Թերզյանի տպ.), 1998–ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.):

Լույս են տեսել նաև Ս. Շ–ու «Հատուածք կաթուղիկեայց թուղթերուն...» (1861, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.) երկը, «Յորդորակներ» (աշխարհաբարի փոխադր.՝ Ա. Դանիելյանի, 1978, Անթիլիաս), «Խրատանի» (աշխարհաբարի փոխադր.՝ Ս. Կնյազյանի, Սբ Էջմածին, 2002) ժող–ները:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Շնորհալի եւ պարագայ իւր, Վնտ., 1873:* **Զարբհանալեան Գ.**, *Հայկական հին դպրոթեան պատմութիւն, Վնտ., 1897:* **Դուրեան Ե.**, *Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933:*

ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ, XIV դ–ի 1–ին կեսի մանրանկարիչ և գրիչ, կիլիկյան գրքարվ–ի խոշոր ներկայացուցիչ: ***Գրիգոր Պիծակի*** որդին: Ս. Պ–ի «Արքունական Աւետարան»–ը (1336, Մատենադարան, ձեռ. № 5786) Աղթամարի Սբ Խաչ եկեղեցում դարձել է պաշտամունքի առարկա, իսկ «Բժշկութեան Աւետարան»–ին (1353, Մատենադարան, ձեռ. № 6795) վերագրվել է հրաշագործ ուժ: Ս. Պ. աշխատել է Կիլիկիայի նշանավոր կենտրոններում (Սիս, Սկևռա, Դրազարկ, Կոպիտառ, Փոս անապատ): Շարունակելով XIII դ–ի կիլիկյան դիմանկարչության ավանդույթները՝ ձեռագրերում պատկերել է ժամանակակիցներին (Լևոն Դ, Հակոբ կաթողիկոս, Մարիուն թագուհի, Սբ Ներսես Շնորհալի, 3 ինքնանկար), պատմ. անձանց: Մեծ մասամբ

«Սարգիս Խաչենց» *հրատարակչության տպագրած գրքերից*



Հ. Միրունու «Ինքնակենսագրական նօթեր» (2006) գրքի կազմը



Ս. Ստեփանյանի «Ժամանակի երկու ընթերցում» (2009) գրքի կազմը



Սարգիս Շնորհալու *«Գիրք մեկնութեան եօթն թղթոցն կաթուղիկէից» (1743, Կ. Պոլիս, Աբրահամ Թրակացու տպ.) գրքի տիտղոսաթերթը*



«Երկու կույրերը» (վերևում), «Ուրնլվա» (ներքևում), մանրանկարներ («Արքունական Աւետարան», 1336, Մատենադարան, ձեռ. № 5786)





«Քրիստոսը բուժում է գերգեսացի դիվահարին», մանրանկար («Բժշկութեան Աւետարան», 1353, Մատենադարան, ձեռ. № 6795)

ծաղկել է Ավետարաններ՝ հետևելով պատկերազարդման կիլիկյան համակարգին: Շքեղ պատկերազարդված քառավետարանների 10 խորաններն ընդգրկում են Եվսեբիոսի թուղթը Կարպիանոսին (2 էջ) և համաձայնության 10 կանոնները (8 էջ): Յուրաքանչյուր Ավետարանից առաջ ամբողջ էջով տերուն. նկարներ են՝ ավետարանչի պատկերով և հանդիպակաց տիտղոսաթերթով: Մնացած էջերն ունեն լուսանցազարդեր և լուսանցապատկերներ: Վերջիններս համառոտ ներկայացնում են այն անձին կամ առարկան, որոնց մասին խոսվում է տեքստում: Կան նաև գրաֆիկորեն կամ համեստ ձևավորված Ավետարաններ: Մյուս ձեռագրերը (Աստվածաշունչ, «Անտիոքի ասիզներ», Մանրուսում ևն) ձևավորված են ուղղանկյուն գլխազարդերով, լուսանցազարդերով, ***«Ութ մանրանկարիչների Աւետարան»***-ը (1320, Մատենադարան, ձեռ. № 7651) և «Բժշկութեան Աւետարան»-ը հարուստ են ներտեքստային և լուսանցքային մանրանկարներով:

Վերջին գործը՝ Շարակնոցը (Նյու Յորքի հանրային գրադարան, Սպենսերի հավաքածու, ձեռ. № 2), գրել է Կոստանդին Ե թագավորի (1365–73) պատվերով ծաղկած 40 մատյաններից: Ս. Պ-ի 11-ական ձեռագրեր պահվում են Երևանի, Երուսաղեմի մատենադարաններում, մյուսները՝ Փարիզում, Վենետիկում, Նյու Յորքում, Հալեպում, Բեյրութում և այլուր: Նկարչի արվ-ում երկրաչափականացված ոճը փոխարինվել է նրբագեղ արքուն. մանրանկարչությամբ, որն սկզբնավորվել է XIII դ-ում և գերիշխել է Կիլիկիայում XIV դ-ի սկզբին: Ս. Պ., միաժամանակ դիմելով ժող. ուղղության գրքարվ-ին, ստեղծել է ինքնուրույն ոճ: Ձևավորման տարրերը տիպականացվել և հետագայում դարձել են հայ. առաջին տպագիր գրքերի կլիշեների հիմքը:

Ս. Պ-ի արվ-ն առանձնահատուկ էջ է հայկ. գրքարվ-ում:

Գրկ. **Ղազարյան Վ.**, *Սարգիս Պիծակ, Ե., 1980:* **Der Nersessian S.**, *Manuscrits arméniens illustrés des XII^e, XIII^e et XIV^e siècles de la Bibliothèque des Pères Mékhitaristes de Venise, 2 vol., P., 1937.*

ՍԱՐԳԻՍ ՋԱԼԱԼՅԱՆՑ, Սարգիս արքեպիսկոպոս Հասան Ջալալյանց [1810, գ. Եղինդ (Վասպուրականի նահանգի Արտազ գավառ)–16.10.1879, Թիֆլիս], եկեղեց. գործիչ, արքեպիսկոպոս (1857-ից): 1857–63-ին եղել է Վրաստանի և Իմերեթիայի, 1865–75-ին՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ: Շրջագայել է Արլ. Հայաստանում, նկարագրել բնակավայրերն ու հնությունները, ընդօրինակել վանական համալիրների կարևոր արձանագրությունները, բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններ, փաստաթղթեր: Նյութերը հրատարակել է «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (մաս Ա, 1842, Թ., Ներսիսյան դպրոցի տպ., մաս Բ, 1858, նույն տպ.) գրքում: Ս. Ջ-ի մի շարք ձեռագիր աշխատություններում շարադրված են հին Ուտիք և Արցախ նահանգների աշխարհագրությունը, իշխան-նախարար. տների տոհմաբանությունն ու պատմությունը: Արժեքավոր են նաև Արլ. Հայաստանի մելիքություններին, թուրք ու պարսիկ բռնակալների դեմ նրանց պայքարին վերաբերող ձեռագրերը: Ս. Ջ. հայ հոգևոր, մշակութ. և կրթ. օջախներին կտակել է 25 հզ. ռուբլի գումար, որը պետք է օգտագործվեր 125 տարի անց՝ 2005-ին, երբ դրամագլուխը կհասներ 12 մլն-ի:

Գրկ. **Օրմանեան Մ.**, *Ազգապատում, հ. 3, Էջմիածին, 2001:*

ՍԱՐԳԻՍ ԲԱԲՈՒՆԱՊԵՏ, Սարգիս վարդապետ Ապրակունեցի [ծ. թ. անհտ–1401, Խառաբաստավանք (Քաջբերունիք գավառ)], եկեղեց. և մշակույթի գործիչ: Սովորել է Գլաձորից Հերմոնի վանք տեղափոխված համալսարանում: Ձեռնադրվելով վարդապետ՝ 1369-ին համալսարանի սաների մի մասի հետ հաստատվել է Երնջակ գավառի Ապրակունյաց վանքում. պայքարել է Քոնայում գործող միարարական դպրոցի դեմ: Համագործակցել է ***Հովհան Որոտնեցու*** հետ: Աստապատում իր շուրջն է հավաքել մոտ 60 աշակերտի

(*Թովմա Մեծոփեցի, Գրիգոր Խլաթեցի*, Կիրակոս Ա Վիրապեցի և ուր.) և ծավալել ուսումնագիտ. բուռն գործունեություն: Հայտնի են Ս. Ր–ի խմբագրած «Մեկնութիւն գործոց առաքելոց» (ընդօրինակել ու ավարտել է նրա սան Սատթեոս վարդապետը 1411–ին), «Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին» (ավարտել է Գրիգոր Խլաթեցին) երկերը:

Գրկ. **Մաթևոսյան Ա.**, *Հայոց միջնադարյան համալսարանը, «ԼՀԳ», 1984, № 1:*

ՍԱՐԳԻՍՅԱՆ Բարսեղ [1.6.1852, գ. Թափադոլակ (այժմ՝ գ. Արևիկ՝ ՀՀ Շիրակի մարզում)–1.8.1921, Վենետիկ], բանասեր, հայագետ, ձեռագրագետ, մատենագետ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ:

Ս. «Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն» (1890) աշխատության մեջ Ագաթանգեղոսի «Պատմութիւն»–ը համարել է տարբեր հեղինակների գրած և V դ–ում ի մի բերված երկերի ժող., «Անանուն ժամանակագրութիւն...»–ում (1904) Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրութիւնը»՝ մի քանի ժամանակագր. երկերի ժող.: «Տեսութիւն Սեղբեստրոսի պատմութեան եւ Մ. Խորենացւոյ աղբերաց»–ում (1893) քննադատել է Օգյուստ Կարիերի այն կարծիքը, թե Մովսես Խորենացին VIII–IX դդ–ի հեղինակ է, «Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան» (1905, 1936) աշխատության մեջ անդրադարձել է միաբանության գործունեությանը: Կազմել է միաբանության մատենադարանի ձեռագրացուցակը՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» (հ. 1–3, 1914–66, հ. 3–ը՝ համահեղ.): Ս–ի աշխատասիրությամբ հրատարակվել են «Աբրահամ Սամիկոնէից եպիսկոպոսն եւ իւր առ Վաչագան գրած թուղթն», «Անանիա Թարգմանիչն եւ իւր գրական գործոց նմոյշներ» (երկուսն էլ՝ 1899) երկերը:

Լույս են տեսել նաև Ս–ի «Յափշտակութիւն հանդէպ ծովալճին Մծտա-Պուռնուի» (1892), «Ուսումնասիրութիւն Մանիքէա-Պաւղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացւոյ թուղթը» (1893), «Քննադատութիւն Յովհան Սանդկունւոյ եւ իւր երկասիրութեանց վրայ» (1895), «Քննադատութիւնք Հին կտակարանի անվաեր գրոց վրայ» (1897), «Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ: Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի» (1919, 1987), «Վկայաբանութիւն Սրբոյն Յովսիմիոսի...» (1919) աշխատությունները:

Ս–ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

ՍԱՐԳԻՍՅԱՆ Ներսես [աշխարհիկ անունը՝ Սարգիս, 3.10.1800, Տրապիզոն–21.6.1866, Ֆիեսսո (Իտալիա)], բանասեր, աղբյուրագետ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: 1823–ին հաստատվել է Վենետիկի Սբ Ղազար կղզում: Մինչև 1843–ը ղեկավարել է միաբանության տպարանը, մասնակցել «Մատենագիրք նախնյաց» մատենաշարի հրատարակմանը: Շրջագայել է Հայաստանում և հարակից երկրներում: Հավաքել ու Վենետիկ է ուղարկել հարյուրավոր հայ. մեծարժեք ձեռագրեր, ինագիտ. իրեր, դրամներ, հայ., հուն., վրաց., արաբ. և այլ լեզուներով բազմաթիվ վիմագիր հիշատակարաններ:

Լույս են տեսել Ս–ի «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» (1864), «Հայկական արձանագրությունները Կարսում, Անիում և վերջինիս շրջակայքում» (ռուս., 1881, Մ., թարգմ.՝ Մ. Էմինի) աշխարհագր. աշխատությունները: Երկար տարիներ զբաղվել է Հովհան Ոսկեբերանի երկերի հայ. ինագույն թարգմանությունների հավաքմամբ և ուսումնասիրմամբ. դրանց մի մասը հրատարակել է «Ճառք» (1861) և «Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի» (հ. 1–2, 1862) վերնագրերով: Հրատարակվել է նաև Ս–ի «Վարք սրբոց հարանց...» (հ. 1–2, 1855) մատենագր. երկը:


Ս–ի Ա. Բագրատունուն և Ղ. Ալիշանին գրած նամակների մի մասը տպագրվել է «Բազմավէպ»–ում (1971–71):

Ս–ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. **ՃԷՄՃԷՄեան Ս.**, *Ներսէս Սարգիսեանի ողեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ Հայք (1843–53), Վնտ., 1974:*



«Ուսումնասիրութիւն Մանիքէա–Պաւղկիեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացւոյ թուղթը» (1893, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



«Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ...» (1987, Բեյրութ) գրքի կազմը



Ներսես Սարգիսյանի
«Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» (1864, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը



Օննիկ Սարգիսյան



Արտեմ Սարգսյանի
«Արևմտահայերենի բառարան»-ի (1991, Ե., «Արևիկ») տիտղոսաթերթը



Գագիկ Սարգսյանի
«Պատմագիտական հետազոտություններ» (2006, Ե., «Գիտություն») գրքի կազմը

ՍԱՐԳԻՍՅԱՆ Օննիկ Սարգսի [14.5.1914, գ. Մաղենք (Արմ. Հայաստանի Սասունի գավառ)–30.4.1992, Բեյրութ], մանկավարժ, խմբագիր, գրականագետ: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը (1932), Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանը (1954): 1933–87-ին եղել է հայոց լեզվի և գրակ-յան ուսուցիչ Սիրիայի, Կիպրոսի և Լիբանանի հայկ. վարժարաններում, Քեսաբի Սեն Ժոզեֆ, Հալեպի Կիլիկյան, Բեյրութի Դեմիրճյան վարժարանների տնօրեն: 1953–56-ին՝ *«Նուիրում»* պարբերաթերթի, 1956–91-ին՝ *«Շիրակ»* ամսագրի հիմնադիր-խմբագիր: Սփյուռքի վարժարանների համար կազմել է «Արագած» (համահեղ.) և «Աշխարհագրութիւն» դասագրքերը: Գրել է պատմվածքներ ու գրականագիտ. հոդվածներ:

ՀԽՍՀ լուսավորության նախարարության «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1986):

Երկ. Երկեր (կազմ., առաջաբ. և խմբագր.՝ Ս. Գրիգորյանի), Ե., 2002: Երկեր, հ. 1–2, Բ., 2007:

ՍԱՐԳՍՅԱՆ Արկադի Երեմի (ծ. 12.2.1940, Երևան), ռազմ. տեխնիկայի բնագավառի գիտնական: Տեխ. գիտ. դ-ր (1993), գնդապետ (2001): ՀՃԱ ակադ. (1998): Ավարտել է ԵՊՀ (1964): 1964–93-ին աշխատել է ԵՄՄ ԳՀԻ-ում: 1993–94-ին՝ ՀՀ Կառավարության 10-րդ վարչության պետ: 1998–2005-ին՝ *«Հայկական բանակ»* ռազմագիտ. հանդեսի գլխ. խմբագիր:

Հայ. լույս է տեսել Ս-ի «Հետախուզություն և հակահետախուզություն. հայկական հետք» (2005) գիրքը:

ՌԴ ռազմ. ակադ-ի անդամ (1996):

Երկ. Армяне – военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века, т. 1–3, Е., 1998–2005; Державы дерзновенные сыны, М., 2005.

ՍԱՐԳՍՅԱՆ Արտեմ Եղիշեի [ծ. 28.8.1942, ք. Կիրովաբադ (այժմ՝ Գյանջա՝ Ադրբեջանում)], լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1987), պրոֆ. (1990): ՀՀ ԳԱԱ թղթ-անդամ (2006): Ավարտել է ԵՊՀ (1965): 1984–92 և 1999–2012-ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի բաժնի, ապա՝ խմբի վարիչ: 1996–98-ին՝ ՀՀ լեզվի պետ. տեսչության լեզվաշին. վարչության պետ: 1999–2012-ին՝ «Արմենիա» հեռուստաընկերության գլխ. խմբագիր: Ստեղծել և վարել է «Մեր լեզուն, մեր խոսքը» (1978–95), «Մենք ու մենք» (1996–2003), «Դարը» (1992–2012) հեռուստահաղորդաշարերը:

Լույս են տեսել Ս-ի «Գրաբարի տիպաբանական բնութագիրը» (1975), «Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ» (1985) աշխատությունները, «Արևմտահայերենի բառարանը» (1991), «Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն» (համահեղ., 2012) բառարանը, «Հարալեզվաբանության դասընթաց» (համահեղ., պր. 1–2, 2002,), «Լեզվաբանական աշխարհագրություն» (պր.1, 2003) ուս. ձեռնարկները, «Հայոց բարբառների ատլասը» (2008): Ս. խմբագրել է *«Հայոց լեզվի բարբառային բառարան»*-ը (հ. Ա–Ջ, 2001–12): Հեղինակ է նաև հուշապատումի (հ. 1–3, 2006–10), «Փրկության բանալին. 12/21/2012» (2012, անգլ.՝ 2012. ռուս.՝ 2012) վեպի: Թարգմանել է «Ալեքսանդր Մակեդոնացի» (Ռ. Մավիսակալյանի հետ, 1987), «Ամենը՝ քեզ» (հ. 1–3, 2000–06) ժող-ները:

ՀՀ Պետ. մրց. (1985), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2002), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2005):

ՍԱՐԳՍՅԱՆ Գագիկ Խորենի (6.4.1926, Երևան–25.8.1998, Մոսկվա, թաղված է Երևանում), պատմաբան, արևելագետ: Պատմ. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1981), ՀՀ ԳԱԱ ակադ. (1986): Ավարտել է Լենինգրադի համալսարանը (1950): 1971–94-ին՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ի տնօրեն, միաժամանակ, 1988–98-ին՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, 1995–98-ին՝ հաս. գիտ-ների բաժանմունքի ակադ. քարտուղար, 1984–91-ին՝ ԽՍՀՄ արևելագետների միության ՀԽՍՀ մասնաճյուղի նախագահ:

Լույս են տեսել Ս-ի «Հակոբ Համազասպի Մանանդյան», «Տիգրանակերտ: Հին հայկական քաղաքային համայնքների պատմությունից» (երկուսն էլ՝ ռուս., 1960), «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների

մասին» (1962), «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» (1965), «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (1966), «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»» (ռուս.՝ 1986, հայ.՝ 1991), «Ուրարտու–Հայաստան» (1988), «Ուրարտական տերությունը և հայերը» (1988), «Հայկի սերունդները» (երկուսն էլ՝ համահեղ., ռուս., 1998), «Պատմագիտական հետազոտություններ» (2006) աշխատությունները: Ս. խմբագրել և հրատ–յան է պատրաստել մի շարք հայագիտ. աշխատություններ, մասնակցել է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմ. բազմահատորյակի հրատ–յանը (հ. 1, 1971), «Հայ ժողովրդի պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (1972, 1985, ռուս.՝ 1980) ժող–ի, նաև դասագրքերի ստեղծմանը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1985):

Գրկ. Գագիկ Խորենի Սարգսյան (Նյութեր Հայաստանի գիտնականների կենսամատենագիտության, № 47), Ե., 1998:

ՍԱՐԳՍՅԱՆ Դավիթ Մկրտչի (ծ. 6.10.1957, Երևան), արձակագիր, հրապարակախոս, հրատարակիչ: Մկրտիչ ***Սարգսյանի*** որդին, Վահագն ***Սարգսյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1979): 1980–90–ին աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում, 1990–98–ին՝ «Հայաստան» հրատարակչության, 1998–2011–ին՝ ՀԱԳ–ի տնօրեն: 2001–04–ին՝ Հայկ. գրադարանային կոնսորցիումի, 2004–11–ին՝ Հայաստանի գրադարանային միության վարչության նախագահ, 2014–ից՝ Մուսա լեռան ազգագրության և հերոսամարտի պատմության թանգարանի տնօրեն:

Լույս են տեսել Ս–ի «Մկրտիչը, Լուսինեն և ուրիշներ» (1986), «Հայրեր և որդիներ» (1992), «Բժիշկ Հարութը» (2001), «Կայծ ցեղի ոգուց» (2002), «Մասիսն այն կողմից» (համահեղ., 2004) պատմվածքների, էսսեների, հոդվածների ժող–ները, «Երկվություն» (2012), «Ես և մերոնք» (2013) վիպակները:

ՀԺՄ մրց. (1985), Ֆիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե (2006), ՀԱԳ–ի «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալներ, ՀԳՄ «Գրական վաստակի համար» և ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալներ (երեքն էլ՝ 2007):

ՍԱՐԳՍՅԱՆ Լիպարիտ Տիգրանի [ծ. 5.2.1938, գ. Վահագնի (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է ՀՊՄԻ (1962): 1966–73–ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի, 1973–77–ին՝ «Պիոներ» ամսագրի խմբագրություններում, 1977–91–ին՝ ***«Սովետական գրող»*** հրատարակչությունում (բաժնի վարիչ):

Լույս են տեսել Ս–ի «Մի բուռ ցորեն» (1974), «Մարդ և հող» (1978), «Ակոս» (1983), «Մենախոսություն» (1990), «Սիրտս ձեզ եմ բացում» (1998), «Խաչված ճակատագիր» (2000), «Յորնաշեղջ» (2003), «Հող և հաց» (2003), «Կարոտի եզերք» (2010), «Արարման խորհուրդ» (2013) բանաստեղծությունների, «Զորավոր կաղնին» (1981), «Արմատահան ծառեր» (1991), «Մանկության արահետ» (2004) վիպակների ու պատմվածքների, «Սարի աղբյուր» (1970), «Ձնծաղիկներ» (1985), «Ծույլ հավը» (1988), «Քո տունը» (1996), «Ճոճահավ» (2012) մանկ. բանաստեղծությունների ժող–ները, «Վահագնի» (1986) ինքնակենսագր. վիպակը:

ՀԳՄ Ս. Զորյանի (1991), Վ. Անանյանի (2006) և «Հայաստան» հրատարակչության Մ. Սարգսյանի (2010) անվ. մրց–ներ, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2008), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2008), «Գրիգոր Նարեկացի» (2013) մեդալներ, ՀՀ վարչապետի (2008), Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե (2008) հուշամեդալներ:

Գրկ. Լիպարիտ Սարգսյան: Ես էլ՝ իմ ճամփով: Կենսամատենագիտություն, Ե., 2007:

ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն Դավթի [23.10.1862, գ. Յղնա (Գողթն գավառ)–1.5.1927, Մոսկվա], գրական, հաս. գործիչ, խմբագիր: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1873–84), ավարտել է Մոսկվայի համալսարանի բնագիտ–յան ֆակ–ը (1888): 1889–92–ին դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում: 1905–07–ին՝ ***«Մուրճ»*** (Թիֆլիս), 1918–19–ին՝ «Սարդկայնութիւն» (Ալեքսանդրապոլ) պարբ–ների խմբագիր:


Լույս են տեսել Ս–ի «Այց թիւրքաց Հայաստանին» (1890, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում» (1905, Թ., Ա. Քութաթելաձեի տպ.) ճամփորդ. նոթերը, «Ժողովրդի կրթութեան գործը մե–



Դավիթ Սարգսյանի *«Երկվություն» (2012, Ե., հեղ. հրտ.) գրքի շապիկը*



Լիպարիտ Սարգսյանի *«Արարման խորհուրդ» (2013, Ե., «Էդիթ Պրինտ») գրքի կազմը*



Լևոն Սարգսյանի *«Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում» (1905, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*



Մկրտիչ Սարգսյան

զանում» (1892, Մ., Մկրտիչ Բարխուդարյանի տպ.) մանկավարժ. աշխատությունը, «Հին ցաւ» (1900, Մ., Վարվառե Գատցուկի տպ.) հրապարակախոս. հոդվածների ժող–ը:

Կազմել է «Մայրենի խօսք» (համահեղ., 1900, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.) ընթերցանության ձեռնարկը:

ՍԱՐԳՍՅԱՆ Հողմիկ Հմայակի [ծ. 17.7.1927, գ. Արեգ (այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզում)], երկրաբան, քարտեզագետ, բառարանագիր: Երկրաբանահանքաբան. գիտ. դ–ր (1976), պրոֆ. (1977): Վաստ. երկրաբան (1970): Ավարտել է ԵՊՀ (1950): 1978–80–ին՝ նույն համալսարանի երկրբ. ֆակ–ի դեկան, 1983–88–ին՝ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ս–ի Կովկասի (1974), ԽՍՀՄ Հվ–ի (1975), ՀԽՍՀ (1988, բոլորն էլ՝ ռուս., համահեղ.) տեկտոն. քարտեզները, «Երկրաբանական տերմինների ռուս–հայերեն բառարանը» (1984), «Երկրաբանական տերմինների ռուսերեն–հայերեն–անգլերեն հանրագիտական բառարանը» (համահեղ., 2007), «Հնաշխարհագրական ուսումնասիրությունների մեթոդները» (2010) ուս. ձեռնարկը:

Երկ. Հայաստանի ռեգիոնալ երկրատեկտոնիկան, Ե., 1989: Сейсмотектоника Арм. ССР, Е., 1981 (соавтор).



Մ. Սարգսյանի
«Գարուն էր, ձյուն էր արել» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

ՍԱՐԳՍՅԱՆ Մկրտիչ Դիվինի (2.5.1924, ք. Ախալքալաք–23.6.2002, Երևան), գրող, խմբագիր, հրատարակիչ: Մշակույթի վաստ. գործիչ (1975): Դավիթ և Վահագն ***Սարգսյանների*** հայրը: Ավարտել է ՀՊՄԻ (1951): 1959–62–ին՝ ***«Գրական թերթ»***–ի, 1962–70–ին՝ ***«Հայաստան»*** հրատարակչության գլխ. խմբագիր, 1976–86–ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Ս–ի «Երգեր» (1957), «Գետակ» (1959), «Կարոտի երգ» (1966), «Աստղաբույլ» (1983) բանաստեղծությունների, «Բարև, բարի արև» (1973), «Խաղաղություն պատերազմից առաջ» (1981), «Կյանքը կրակի տակ» (1963), «Տիրամոր պատկերի առջև» (1965), «Ճակատագրով դատապարտվածները» (1967), «Սերժանտ Կարոն» (1970), «Գարուն էր, ձյուն էր արել» (1984) պատմվածքների, վիպակների ժող–ները, «Քաջ Նազար» (1980), «Չմակարդվող արյուն» (1985), «Շահմարի առեղծվածը» (1986), «Գրիգոր Նարեկացի» (1989), «Դարավերջի հայր» (1999) վեպերը: Թարգմանել է Յ. Ռայնիսի, Մ. Ջալիլի, Ջ. Չարկվիանի և ուր. գործերից:

ՀԽՍՀ Պետ. (1989), ԼՂՀ Եղիշեի անվ. (2000) մրց–ներ:

2008–ին «Հայաստան» հրատարակչությունը և ՀԳՄ–ն համատեղ սահմանել են Ս–ի անվ. գրական մրց.՝ «Տարվա լավագույն գեղարվեստական գրքի համար»:

Երկ. Ընտիր երկեր, հ. 1–2, Ե., 1988: Անտիպ երկերի ժող., հ. 1–4, Ե., 2004–10: Լույս լեռան պես, Ե., 1990: Խաչված քաղաքը, Ե., 1996, Դեպի լեառն Աբոյ, Ե., 2013:

Գրկ. Աղաբեկյան Կ., Երեք դիմանկար, Ե., 1983: Բաղդասարյան Ս., Մկրտիչ Սարգսյանի վիպագրությունը, Ե., 2003: Դու անկործան վանք կմնաս: Մ. Սարգսյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 2011: Մկրտիչ Սարգսյան: Գրողի ճանապարհը: Կենսամատենագիտություն, Ե., 2000:



Վահագն Սարգսյանի
«Քաջ Նազարի գրական հետագիծը» (1991, Ե., «Հայաստան») գրքի կազմը

ՍԱՐԳՍՅԱՆ Վահագն Մկրտչի (ծ. 30.4.1962, Երևան), հրատարակիչ, գրականագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1990): Մկրտիչ ***Սարգսյանի*** որդին, Դավիթ ***Սարգսյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1984): 1984–91–ին աշխատել է ***«Հայաստան»*** հրատարակչությունում, 1988–90–ին և 1998–ից՝ տնօրեն, 1991–98–ին՝ ՀՀ Կառավարության տեղեկատվության վարչության գլխ. խմբագիր: 1992–ին հիմնադրել է «Գիր գրոց» հրատարակչությունը (գործել է մինչև 1998–ը), 2000–ին՝ «Գրական հայրենիք» թերթը: 2000–ին ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակում հիմնադրել և վարում է «Հրատարակչական գործ» դասընթացը:

Լույս է տեսել Ս–ի «Քաջ Նազարի գրական հետագիծը» (1991) աշխատությունը:

ՍԱՐԳՍՅԱՆ Վաչագան Ադիբեկի [ծ. 25.5.1951, գ. Նորաշեն (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], գրող, թարգմանիչ, հրատարակիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ կիրառ. մաթեմատիկայի (1974) և ժուռնալիստիկայի (1978), Երևանի պետ. կոնսերվատորիայի հասարակագիտ. մասնագիտ–ների ֆակ–ները (1980): 1979–95–ին աշխատել է «Լույս» հրատարակչությունում, 1991–94–ին, միաժամանակ՝ Հանրապետ. ուսումնամեթոդ. կենտրոնի «Ուսում» հրատա–

րակչության տնօրեն, 1994–ից՝ Լեզվի պետ. տեսչության «Լեզվագետ» ընկերության տնօրեն, 1994–ից՝ *«9-րդ հրաշալիք»* շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր: Վարել է հեղինակային «9-րդ հրաշալիք» հեռուստահաղորդաշարը (2001–05):

Լույս են տեսել Ս-ի «Անցողիկ հավերժություն» (2001), «Այս տխրությունը ես չեմ հորինել» (2003), «Օրը՝ ինչպես որ տեսա», «Մենախոսություն երկուսով» (երկուսն էլ՝ 2008), «Ժամանակը աչքերի վրա» (2011), «Երգող այրուբեն» (2012), «Բանաստեղծություններ» (2013) ժող-ները, «Հայոց լեզվի դարձվածներ նկարներով» (1989), «Խաղագիրք–1» (1996), «Խաղագիրք–2» (1999), «Նկարելուկները հայերենում» (2001), «Հայերենը ափի մեջ» (2005) գիտահանրամատչելի, «Ի լուր և ի տես» (2014) գիտագեղ. գրքերը, «Այբբենարան» (1998–2015), «Մայրենի», «Մաթեմատիկա» (երկուսն էլ՝ I–IV, 2006–15) դասագրքերը, «Այբբենարան: Ուսուցչի ձեռնարկ» (2006), «Խաղ և ուսուցում: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում: Լեզվատրամաբանական առաջադրանքներ» (2012) ուսումնաօժանդակ ձեռնարկները: Թարգմանել է Ռ. Ալենի «Ինչպես փրկել երկիրը», Վ. Բորուլյայի «Միջուկային գրոհ», Մ. Ֆարադեյի «Մոմի պատմությունը» և այլ գիտ-գեղ. գրքեր:

Հանդես է գալիս նաև ՎԱՍ գրական կեղծանվամբ:

Գրկ. Վաչագան Ա. Սարգսյան: Կենսամատենագիտություն 60, Ե., 2011:

ՍԱՐԵՅԱՆ Արտավազդ Հայկի [ծ. 22.4.1954, գ. Լեչկոպ (Աբխազիայի Սուխումի շրջան)], խմբագիր, բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Աբխազիայի պետ. համալսարանը (1983): 1991-ից՝ *«Համշեն»* պարբ-ի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Արևաքամի» (1989), «...Որ մաքուր մնամ» (2001), «Ափացխա» (2002), «Էլեգիաներ երևույթների մեջ» (2012) բանաստեղծությունների ժող-ները, «Համշեն–20» (2012) մատենագիտ. գրքույկը, կազմել է «Սուխումի հայկական դպրոց» (2006) գիրքը, «Գրական Համշեն» (2012) ալմանախը, թարգմանել և հրատարակել է աբխազ հեղինակների գործերից, «Աբխազական առածանի» (2003) ժող-ը:

ՍԱՐԻՆՅԱՆ Սերգեյ Ներսեսի [ծ.17.11.1924, գ. Խաչեն (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)], գրականագետ-քննադատ: Բանասիր. գիտ. դ-ր (1967), պրոֆ. (1970), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, 1980-ից՝ թղթ. անդամ): Գիտ. վաստ. գործիչ (1985): Ավարտել է ԵՊՀ (1949): 1960-ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի հայ նոր գրակ-յան բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ս-ի «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» (1955), «Հայկական ռոմանտիզմ» (1966), «Պարույր Սևակ» (2006), «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը» (1973), «Գեղարվեստական գրականության պատմականությունը» (1979) աշխատությունները, «Րաֆֆի» (1957, 1985, 2010), «Մուրացան» (1976, 2004), «Լևոն Շանթ» (1991), «Հայ գաղափարաբանություն» (1998), «Շարունակվող լեգենդ» (2008) մենագրությունները: Մասնակցել է *«Հայ նոր գրականության պատմություն»* (ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1980) բազմահատորյակի հրատարակմանը: Ս-ի ընդհանուր խմբագրմամբ լույս են տեսել «Հայ քննադատության պատմություն» (հ. 1, 2, 1985, 1998), «Հայ վեպի պատմությունը (19-րդ դար)» (2005) ուսումնասիրությունները:

Երկ. Գրական դիպողություններ, Ե., 1964: Սերունդներ և ավանդներ, Ե., 1984: Հայոց գրականության երկու դարը, գիրք 1–5, 1988–2009: Հայոց ազգային գաղափարաբանություն, Ե., 2005:

ՍԱՐՄԵՆ [Սարգսյան Արմենակ Սարգսի, 1.3.1901, գ. Պախվանց (Ռշտունիք գավառ)–18.2.1984, Երևան], բանաստեղծ: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ պատմալեզվագր. ֆակ-ը (1932):

Լույս են տեսել Ս-ի «Դաշտերը ժպտում են» (1925), «Երգաստան» (1940), «Սրտի ձայնը» (1947), «Հայրենի տուն» (1955), «Կարոտի կրակներ» (1957), «Խոսող ծաղիկներ» (1958), «Հայոց սիրտ» (1960), «Բանաստեղծի աղբյուրը» (1961), «Կենաց բաժակ» (1963), «Ծաղկավոր ձմեռ» (1964), «Երազանք» (1969), «Իմ հայրենի աղջիկները» (1971), «Հայի աչքեր» (1980), «Սիրտ» (1981) բանաստեղծությունների, պոեմների, «Յոթ երջանիկներ» (1950), «Ծաղկաձոր» (1952), «Խոսող ծաղիկներ» (1958) մանկ. բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Երկերը» (հ. 1–2, 1976–77), «Կարոտի կանչ» (2001) հատընտիրը:

Ս. ՀԽՍՀ պետ. հիմնի տեքստի հեղինակն է:

Գրկ. Հյուսյան Մ., Սարմեն: Կյանքը և գրական գործունեությունը, Ե., 1969:




Վաչագան Սարգսյանի *«Օրը՝ ինչպես որ տեսա» (2008, Ե., «9-րդ հրաշալիք») գրքի կազմը*




Սերգեյ Սարինյանի *«Հայոց ազգային գաղափարաբանություն» (2005, Ե., «Զանգակ») գրքի կազմը*




Սարմենի *«Հայի աչքեր» (1980, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Վ. Մանդակունի) գրքի կազմը*



Գեղամ Սարյանի «Բանաստեղծություններ և պոեմներ» (1982, Ե., «Սովետական գրող») գրքի փիփղոսաթերթը



Մարտիրոս Սարյան. *Ա. Իսահակյանի «Բանաստեղծություններ» (1930, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Արշալույս Սարոյանի *«Քեզ հետ, իմ սիրտ» (1970, Ե., «Հայաստան») գրքի կազմը*

ՍԱՐՅԱՆ (Բաղդասարյան) Գեղամ Բաղդասարի (25.12.1902, Թավրիզ–14.11.1976, Երևան), բանաստեղծ, թարգմանիչ։ ՀԽՍՀ (1967) և ՈՒԽՍՀ (1972) մշակույթի վաստ. գործիչ։ Ավարտել է Թավրիզի Կենտր. թեմ. դպրոցը (1920)։ 1922-ին հաստատվել է Խորհրդ. Հայաստանում. եղել է ուսուցիչ Լենինականում։ 1927–28-ին աշխատել է «Ավանգարդ», «Մաճկալ», 1928–31-ին՝ «Բանվոր» թերթերի, 1934–35-ին՝ «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբագրություններում։

Լույս են տեսել Ս-ի «Շիրակի հարսանիքը» (1925), «Երկիր խորհրդային» (1930), «Երկաթե ոտնաձայներ» (1933), «Միջօրե» (1935), «Երեք երգ» (1936), «Բանաստեղծություններ» (1940), «Բալլադներ» (1944), «Հատընտիր» (1951), «Ընտրված էջեր» (1965), «Գրիգոր Դերենն» (1967), «Քրիզանթեմ» (1968, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1970), «Մտերիմ էջեր» (1972), «Կարոտ» (2003) երգերի, բալլադների, պոեմների ժող-ները, «Պատմվածքներ» (1928) ժող-ը, «Օտար մարդը» (1929) վիպակը, «Հրաշալի սերունդ» (1950) չափածո վեպը, «Երկերը» (հ. 1–5, 1969–72), «Ընտիր երկերը» (1974)։ Հեղինակ է Արևելքի ժողովուրդների զարթոնքի թեմաներով բալլադների ու խոհափիլ. ավանդազրույցների («Գյուլնարա», «Գյուլխանդա», «Իրանի», բոլորը՝ 1935)։ Գրել է նաև մանուկների համար։ Թարգմանել է Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Հ. Հայնեի, Մ. Տվենի, Ռ. Կիպլինգի, Ի. Ճավճավաձեի և ուր. ստեղծագործություններից։

Երկ. Բանաստեղծություններ և պոեմներ, Ե., 1982: Գրառումներ իմ կյանքից, Ե., 1982:
Գրկ. **Մանուկյան Ս.**, *Գեղամ Սարյան, Ե., 1954:* **Ռշտունի Հ.**, *Գեղամ Սարյան, Ե., 1958:* **Մնացականյան Վ.**, *Գեղամ Սարյանի պոեզիան, Ե., 1963:*

ՍԱՐՅԱՆ Մարտիրոս Սարգսի [16(28).2.1880, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք-ի շրջագծում)–5.5.1972, Երևան], նկարիչ, նորագույն շրջանի հայ գեղանկարչության հիմնադիրը։ ԽՍՀՄ գեղարվ-ի ակադ-ի (1947), ՀԽՍՀ ԳԱ (1956) ակադ.։ ՀԽՍՀ (1926), ԽՍՀՄ (1960) ժող. նկարիչ։ Սոց. աշխատանքի հերոս (1966)։ 1945–51-ին՝ ՀՆՄ նախագահ։ Ավարտել է Նոր Նախիջևանի հայ-ռուս. հանրակրթ. (1895), Մոսկվայի գեղանկարչության, քանդ-յան և ճարտ-յան (1903) ուսումնարանները, կատարելագործվել Վ. Սերովի և Կ. Կորովինի դիմանկարի արվեստանոցում։ 1921-ից ապրել է Հայաստանում, 1921–25-ին՝ Հայաստանի պետ. թանգարանի հիմնադիր-վարիչ։

Ս. մեծ ներդրում ունի XX դ-ի հայկ. գրքարվ-ի զարգացման մեջ։ 1912-ին ձևավորել է Վ. Տերյանի «Բանաստեղծութիւնների» 1-ին հատորի շապիկը, այնուհետև 1916-ին Վարդգես *Սուրենյանցի* հետ՝ Վ. Բրյուսովի կազմած «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիան, ավելի ուշ՝ Ա. Իսահակյանի «Բանաստեղծություններ» (1930), Հ. Թումանյանի «Հեքիաթներ» (1930), Գ. Մահարու «Մանկություն յեվ պատանեկություն» (1930) գրքերի շապիկները։

Ուշագրավ են նաև Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» (1933), Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (1934) գրքերի, «Հայկական ժողովրդական հեքիաթներ» ժող-ի (ռուս., 1930, 1933, 1939), Ֆիրդուսու «Ռուստամ և Զոհրաբ» (1934) պոեմի նկարազարդումները։ Ս. գրաֆիկ. մեկ էջում հաճախ խտացրել է գրական երկի բովանդակությունը, ներկայացրել գեղ. տեքստի պատկերային համարժեքը։

Հեղինակ է «Գրառումներ իմ կյանքից» (ռուս., 1980), «Իմ կյանքից» (ռուս., 1990) հուշագրությունների և «Արվեստի մասին» (կազմ. և առաջաբ.՝ Վ. Մաթևոսյանի, 1986) գրքի։

ԽՍՀՄ (1941), ՀԽՍՀ (1965) Պետ. մրց-ներ։

Գրկ. **Դրամբյան Ռ.**, *Մարտիրոս Սարյան, Ե., 1960:* **Խալաթյան Լ.**, *Սարյանը և թատրոնը, Ե., 1960:* **Մաթևոսյան Վ.**, *Մարտիրոս Սարյան: Գրքային նկարազարդումները, Ե., 1980: Մարտիրոս Սարյան: Ընտրանի (հեղ. և կազմ.՝ Շ. Խաչատրյան), Ե., 2009: Մարտիրոս Սարյան 1880–1972 [Պատկերագիրք], հեղ. և կազմ.՝ Շ. Խաչատրյան, Ե., 2011: Մարտիրոս Սարյանի գրքարվեստը (Մ. Սարյանի գրքային ձևավորումների ալբոմ, կազմ.՝ Ռ. Սարյան, ռուսուսասիր.՝ Վ. Մաթևոսյանի), Ե., 2013: Мартирос Сарьян: избранные произведения (альбом), М., 1983; Цветы (альбом), М., 1987.*

ՍԱՐՈՅԱՆ Արշալույս Նազարեթի [4.2.1923, գ. Սառնաղբյուր (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–25.11.1974, Երևան], բանաստեղծ, լրագրող: Աշակույթի վաստ. գործիչ (1968): Ավարտել է Երևանի հեռակա մանկավարժ. ինստ-ի լեզվագր. ֆակ-ը: 1947–69-ին՝ Հեռուստառադիոպետկոմի խմբագիր, ապա՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Ռազմի խոհեր» (1947), «Ճանապարհներ» (1948), «Խաղաղության երթը» (1952), «Սարն ի վեր» (1957), «Աշխարհի ճամփանեբով» (1963), «Քեզ հետ, իմ սիրտ» (1970), «Ճամփեզրի ծառը» (1974), «Համազարկեր հազարաձայն» (1975) բանաստեղծությունների ժող-ները: Ռուս-ից թարգմանել է «Տափաստանում» (1959) ակնարկաշարը:

ՍԱՐՈՅԱՆ Վիլյամ Արմենակի [31.8.1908, Ֆրեզնո (ԱՄՆ)–16.5.1981, Ֆրեզնո, ացյունի մի մասը թաղված է Երևանի Կոմիտասի անվ. գբոսայգու պանթեոնում], գրող: Ստեղծագործել է անգլ.: Ծնվել է Բիթլիսից գաղթած հայ ընտանիքում: Ս. գրողի ձևավորմանը մեծապես նպաստել է ինքնակրթությունը: 1942-ին զորակոչվել է բանակ, եղել զինվոր. թղթակից: 1950–60-ական թթ-ին Ս. ապրել է Եվրոպայում, ապա նորից հաստատվել ԱՄՆ-ում: Առաջին անգամ տպագրվել է 1933-ին Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Սիրակ Գորյան ստորագրությամբ: Ս-ին ճանաչում է բերել «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա և այլ պատմվածքներ» (1934) առաջին գիրքը:


Լույս են տեսել Ս-ի «Փոքրիկ երեխաներ» (1937), «Ողջույն քեզ սեր» (1938), «Անունս Արամ է» (1940), «Սիրելիս» (1944), «Ասորին» (1949) պատմվածքների ժող-ները, «Իմ սիրտը լեռներում է» (բեմ.՝ 1939, հայ. հրտ.՝ 1963, հայ. բեմ.՝ 1961, կինոնկար՝ 1976), «Կյանքիդ ժամանակը» (բեմ.՝ 1939, Նյու Յորքի քննադատների մրց., Պուլիցերի մրց., հայ. բեմ.՝ 1981), «Քարանձավի մարդիկ» (բեմ.՝ 1957), «Հեյ, ով կա այդտեղ» (բեմ.՝ 1942, հայկ. հեռուստատես. կինոնկար՝ 1981), «Կոտորածն մանկանց» (1952, հայ. բեմ.՝ 1986), «Խաղողի այգին» (հայ. բեմ.՝ 1971) պիեսները, «Վեսլի Ջեկսոնի արկածները» (1946, հայ.՝ 1965) վեպը, «Մարդկային կատակերգություն» (1942, հայ.՝ 1959), «Ինչ-որ ծիծաղելի բան» (1953), «Հայրիկ, դու խենթ ես» (1956), «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» (1957), «Տղաներ և աղջիկներ» (1963), «Մեկ օր հետկեսօրյա աշխարհում» (1964) և այլ վիպակների: Ս-ի հերոսների զգալի մասը հայեր են և ներկայացնում են հայկ. միջավայրը՝ ազգ. սովորույթներով ու բարքերով, պատմ. հայրենիքի հիշողությամբ: 1960-ական թթ-ից Ս. գլխավորապես գրել է հուշագրություններ: Հատկապես ուշագրավ են Բ. Շոուին, Չ. Չապլինին, Թ. Էլիոտին, Ե. Չարենցին նվիրված էջերը, հեղինակի մտորումները գրակ-յան կոչման վերաբերյալ:

Հայ. հրատարակվել են նաև Ս-ի «Ընտիր երկերը» (հ. 1–4, 1986–91), «Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր» (2010), «Վերջին բառ սեր էր: Պատմվածքներ» (2012), «Բան ունեմ ասելու» (2012), «Փող սարքելը և տանինը այլ շատ կարճ պիեսներ» (2013), «Անունս Սարոյան է» (2014) ժող-ները:

Երևանում Ս-ի անունով կոչվել են դպրոց, համալսարան, կանգնեցվել է նրա հուշարձանը (2008, քանդ.՝ Դավիթ Երևանցի):

Գրկ. **Գրիգորյան Վ.,** *Վիլյամ Սարոյանը հայ թատրոնում, Ե., 2010:* **Гончар Н.,** *Вильям Сароян и его рассказы, Е., 1976;* **Зверев А.,** *Грустный солнечный мир Сарояна, Е., 1982.*

«ՍԱՐՏԱՐԱՊԱՏ», շաբաթաթերթ: Հվ. Ամերիկայում ՌԱԿ-ի և ԹՄՄ-ի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1975-ից Բուենոս Այրեսում՝ հայ., իսպ. և պորտուգալ.: Խմբագիրներ՝ Գևորգ Մարաշլյան, Վարուժան Աճեմյան, Հովիկ Էորդեքյան, Նորայր Գարատանյան, Դիանա Տեր-Կարապետյան, Սերխիո Նահապետյան, Դիանա Տեր-Կարապետյան: Լուսաբանում է սփյուռքահայ, մասնավորապես՝ հարավամերիկյան հայկ. համայնքների կյանքը, ՀՀ-ում, ԼՂՀ-ում տեղի ունեցող հաս., քաղ., մշակութ. անցուդարձը, անդրադառնում է Հայկ. հարցին, Հայոց ցեղասպանությանը, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներին, սիրիահայության վիճակին: «Ս.» թղթակցական կետեր ունի Կորդոբայում (Արգենտինա), Սան Պաուլոյում (Բրազիլիա), Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ):



Վիլյամ Սարոյան



Վ. Սարոյանի *«Իմ սիրտը լեռներում է» (1963, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



«Սարտարապատ», *1975-ից, Բուենոս Այրես*



Ալեքսանդր Սարուխան



Հրաչյա Սարուխանի
«Վկայություններ» (1989, Ե., «Խորհրդային գրող») գրքի կազմը



«Սափրիչ», *1906–08, Ս. Պետերբուրգ*



Դորա Սաքայանի
«Տեքստի կապակցվածության ձևերը...» (գերմ., 1986, Թյուբինգեն) գրքի կազմը

ՍԱՐՈՒԽԱՆ Ալեքսանդր Հակոբի [1898, ք. Արտանուջ (Մեծ Հայքի Գուգարք նահանգի Կղարջք գավառ)–1.1.1977, Կահիրե], նկարիչ, հրապարակախոս, հաս. գործիչ, երգիծանկարչության հիմնադիրը Եգիպտոսում: Սովորել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում, Վիեննայի գեղարվ–ի ակադ–ում (1922–24): 1920–23–ին աշխատակցել է Կ. Պոլսի «Կավռօշ» ամսագրին: 1924–ից ապրել է Կահիրեում, դասավանդել Գալուստյան ազգ. վարժարանում, հրատարակել *«Հայկական սինեմա»* (1925–26), «Լա Կարավան» (ֆրանս.,1939–42) ամսագրերը, 1941–ին հիմնադրել է Հայ մշակույթի բարեկամների ընկերությունը: Գրքի գրաֆիկայի լավագույն նմուշներից են Ե. Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» (1938, 1989) և Հակոբ Պարոնյանի «Մեծապատիւ մուրացկաններ» (1962) երկերի պատկերազարդումները: Նրա 40 հզ–ից ավելի գործեր («Մարդկային կատակերգություն» նկարաշարը, նաև ընկերական շարժեր են) տպագրվել են տարբեր երկրների մամուլում:

Լույս են տեսել Ս–ի «Այս պատերազմը» (1945), «Մենք մեր ակնոցով» (1962) և այլ երգիծանկարների ժող–ներ: Հեղինակ է «Մենք հայերէն չենք գիտէր» (1963, բեմ.՝ հայկ. հեռուստաթատրոն), «Ջոյգ թատերախաղեր» (1971), «Ես քեզ գովեմ, դուն զիս» (1974) պիեսների:

Գրկ. Հարությունյան Վ., Արգասավոր Սարուխանը, «Սովետական արվեստ», 1963, № 3:

ՍԱՐՈՒԽԱՆ Հրաչյա [Սարուխանյան Հրաչիկ Լյուդվիգի, ծ. 1.9.1947, գ. Մարգահովիտ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)], բանաստեղծ: Ավարտել է ՎՊՄԻ (1974), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ–յան ինստ–ի գրական բարձրագույն դասընթացները (1983): 2001–ից՝ ՀԳՄ Վանաձորի բաժանմունքի քարտուղար:

Լույս են տեսել Ս–ի «Եզրագծեր» (1977), «Հրաշք օրեր» (1981), «Վկայություններ» (1989, ՀԳՄ Ա. Իսահակյանի անվ. մրց.՝ 1990), «Այլ ժամանակներ» (1997, ՀԳՄ ամենամյա մրց.՝ 1997), «Աստծո առավոտ» (1999), «Ի տրիտուր» (2005), «Սիրո հուշապսակ» (2005) բանաստեղծությունների ժող–ները:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (1998):

«ՍԱՓՐԻՉ», գրական–երգիծ. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1906–08–ին Ս. Պետերբուրգում: Խմբագիր–հրատարակիչ՝ Դավիթ *Օրրոյան:* Քննադատել է ռուսականացման քաղաքականությունը Կովկասում, հանդես եկել արևմտահայերի նկատմամբ թուրք. կամայականությունների դեմ: Ծաղրել է հայ ազգայնական կուս–նե–րի շահադիտական գործելակերպը, ձաղկել հայոց կենցաղում տեղ գտած քաղքենի բարքերը:

ՍԱՔԱՅԱՆ Դորա Գևորգի [ծ. 24.1.1931, Սալոնիկ (Հունաստան)], մանկավարժ, գերմանագետ, հայագետ, թարգմանչուհի: Բանասիր. գիտ. թեկնածու (1965): ՄակԳիլ (Մոնրեալ) համալսարանի պրոֆ. (1975): ԵՊՀ պատվ. դոկտոր (2012): 1946–ին հայրենադարձել է: Ավարտել է ԵՌՕԼՄԻ (1952) և նույն ինստ–ում դասավանդել գերմ., 1965–74–ին՝ ԵՊՀ օտար լեզուների ամբիոնի վարիչ: 1975–ից ապրում է Կանադայում, 1981–ին ՄակԳիլ համալսարանում բացել է հայ–ի դասընթացներ:

Լույս են տեսել Ս–ի «Տեքստի կապակցվածության ձևերը: Անվանակա–նացումը որպես ասույթային հարակրկնություն արևելահայերենում» (գերմ., 1986), «Հայ–անգլերեն առածանի» (անգլ., 1994, 1995, 2009), «Հայ–գերմաներեն առածանի» (գերմ., 2001, Վիսբադեն), «Հայ–ֆրանսերեն առածանի» (ֆրանս., 2014) մենագրությունները, «Արևմտահայերենը անգլիախոս աշխարհի համար. զուգադրական մոտեցմամբ» (անգլ., 2000, 2012), «Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար. զուգադրական մոտեցմամբ» (անգլ., 2007, 2008) լեզվագիտ. ուսումնասիրությունները են:

Ս. խմբագրել է Թեոդիկի «Հուշարձան Ապրիլի 11–ի» գրքի հայ. և թուրք. հրատ–ները (2010, Ստամբուլ): Անգլ. է թարգմանել Գ. Զահուկյանի «Լեզվի համընդհանուր տեսություն» (աշխատասիր.՝ Ս–ի, 2003), գերմ–ից հայ.՝ Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական հավատալիքները» (1975) աշխատությունները, Յ. Քյունցլերի «Երեսուն տարի ծառայություն Արևելքում» (2008) և «Արյան և արցունքի երկրում» (2011) հուշագրությունները, Վ. Բաումի «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները» ուսումնասիրությունը (վերջին

երեքը՝ Է. Մակարյանի հետ, 2010) ևն: Խմբագրել և հրատարակել է «Զմյուռնիա 1922: Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը» (1995, 2005, 2011), որը թարգմանել և տպագրել է անգլ. (1997) և գերմ. (2006). Ս. այս գիրքը հրատարակել է 9 լեզվով:

Գերմանիայի Դաշնության «Արժանյաց կարգի խաչ» (2001), Հայ առաքել. եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2005), ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալ (2011) ևն:

ՍԱՖԱՐՅԱՆ Սուրեն Սարգսի (21.8.1923, Բաքու–22.4.1988, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1972): Ժող. նկարիչ (1977): Ավարտել է ԵԳՈՒ (1942), ԵԳԻ (1952): 1962-ից դասավանդել է ԵԳԹԻ-ում (պրոֆ.՝ 1978-ից), 1969–82-ին՝ ՀՆՄ նախագահ:

Նկարազարդել և ձևավորել է Վ. Կորոլենկոյի «Պատմվածքներ» (1953), «Անլեզու մարդը» (1954), Բ. Սեյրանյանի «Տանը և դպրոցում» (1955), Վ. Արամյանի «Տայգայի օրենքը» (1955) և «Պատմվածքներ» (1956), Գ. Բորյանի «Այո և ոչ» (1955), «Ես, դու, նա» (ռուս., 1956) և «Ճոճանակ» (1958), Ս. Կապուտիկյանի «Մեր Լալիկը, սիրունիկը» (1955, 1957), Վ. Վարդունու «Անմեղ ժպիտ» (1966) և այլ գրքեր:

Գրկ. Մուրեն Սաֆարյան, կատալոգ (հայ., ռուս., կազմ.՝ Գ. Խոպտիկյան), Ե., 1977: **Казарян М.,** *Сурен Сафарян, М., 1978.*

ՍԱՖՅԱՆ Շողիկ Սերգեյի [23.8.1916, գ. Խնձորեսկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–4.8.1995, Երևան], բանաստեղծուհի, արձակագիր, թարգմանչուհի: Ավարտել է Բաքվի մանկավարժ. ինստ-ի պատմության ֆակ-ը (1939): 1941–45-ին աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (հայ.) թերթի խմբագրությունում:


Լույս են տեսել Ս-ի «Կարոտի երգեր» (1947), «Ամենալավ նվերը» (1949) պատմվածքների, «Մեր երգը» (1953) բանաստեղծությունների, «Մի հին հեքիաթ է սա» (1963, 1977), «Հին Խնձորեսկ, իմ Խնձորեսկ» (1998) արձակ բանաստեղծությունների ժող-ները: Թարգմանել է Ռուդաքիի բեյթերից, Վ. Լերեդևի, Ա. Տամսաարեի, Մ. Ռահիմի ստեղծագործություններից:

ՍԱՖՅԱՆ Սպարտակ Գևորգի [15.2.1929, գ. Բռնակոթ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–24.6.2001, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1975): Ավարտել է ԵԳԹԻ (1957): 1993–2001-ին դասավանդել է ԵԳԱ-ում (պրոֆ.՝ 2000-ից): 1961–78-ին եղել է «Պիոներ կանչ» թերթի նկարիչը, 1978–80 և 1982–87-ին՝ *«Սովետական գրող»*, 1987–91-ին՝ *«Արևիկ»* հրատարակչությունների գեղ. խմբագիր, 1980–82-ին՝ *«Հայաստան»* հրատարակչության գեղ. ձևավորման բաժնի վարիչ:

Նկարազարդել և ձևավորել է Խնկո-Ապոր «Առակներ» (1985) և «Հպարտ աքլորը» (1995), Դ. Դեմիրճյանի «Պույ-պույ մուկիկը» (անգլ., 1986, 1992), Հ. Թումանյանի «Չարի վերջը» (1987), Ս. Մարշակի «Տնակը» (հայ., ռուս., 1987), Ռ. Պատկանյանի «Բադիկ» (1987), Մ. Հարությունյանի «Քայլիր, տեսնեմ, խոսիր, լսեմ» (1988), Վ. Հովսեփյանի «Չալ գոմեշի հեքիաթը» (1989), Ղ. Աղայանի «Ամիսներ և չորս եղանակ» (1995), նաև «Պատկերազարդ այբուբեն» (1990) գրքերը:

«ՄԵԲԱՍՏԻԱՅԻ ԱԽԵՏԱՐԱՆ», միջնադարյան ձեռագիր մատյան: Ընդօրինակվել և պատկերազարդվել է 1066-ին Սեբաստիայում: Գրիչ, հավանաբար նաև ծաղկող՝ Գրիգոր Ակոռեցի (Մատենադարան, ձեռ. № 311): 1166-ին «Ս. Ա.» եղել է Ներսես Շնորհալու սեփականությունը, որը նա նվիրել է Գրիգոր Ջ Ապիրատ կաթողիկոսին, վերջինս էլ՝ իշխան Բակուրանին: Բաղկացած է 282 թերթից, չափերը՝ 23 x 15,5 սմ, երկսյուն է, բոլորաձև երկաթագիր: Ունի ավետարանչի 1 պատկեր, կիսախորաններ, լուսանցազարդեր, նաև հիշատակարան:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, միջնադարյան հոգևոր և մշակույթի կենտրոն: Մեզ հայտնի առաջին ձեռագիրը *«Սեբաստիայի Ավետարանն»* է (Մատենադարան, ձեռ. № 311): 1193-ին այստեղ Ավետարան է ընդօրինակել Վարդե քահանայի որդի Պապերը, 1200 և 1211-ին *Հայրապետ* գրիչն ու Հովհաննես ծաղկողն ընդօրինակել ու պատկերազարդել են 2 Ավետարան (Մատենադարան, ձեռ. 2589, № 987): 1222-ին Նորոգես գրիչը Սիմեոն գրկապի օժանդակությամբ



Շողիկ Սաֆյանի *«Մի հին հեքիաթ է սա» (1963, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



Սպարտակ Սաֆյան. *Ս. Մարշակի «Տնակը» (1987, Ե., «Արևիկ») գրքի կազմը*

Սեբաստիայի գրչության կենտրոն



Մարկոսի Ավետարանի անվանաթերթը, 1211-ի Ավետարան (գրիչ և ծաղկող՝ Հայրապետ, Մատենադարան, ձեռ. № 987)



«Հող-Դար» (1910–14, Սեբաստիա) շաբաթաթերթը



«Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն» (1939, Ե., Արմֆան) գրքի կազմը



Արիստակես Սեդրակյան

ընդօրինակել է Ավետարան, 1239-ին Աստվածատուր գրիչը կազմել է ժողովածու՝ «ի հոյակապ քաղաքիս Սեբաստիա»: XIII դ-ի սկզբին մոնղ. նվաճումների պատճառով մշակութ. կյանքն անկում է ապրել: Մեզ հայտնի մյուս մատյանն ընդօրինակվել է 1313-ին: Բազմաթիվ ձեռագրեր են ընդօրինակվել նաև հետագա դարերում, հատկապես՝ XVII դ-ում: Դրանց զգալի մասը պահվում է Մատենադարանում:

Գրկ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դդ. (աշխատասիր.՝ Ա. Մնացականյան), Ե., 1988:

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Սեբաստիայում (այժմ՝ Սվազ՝ Թուրքիայում) առաջին տպարանը հիմնադրել է Անդրանիկ Վարդանյանը, որտեղ տպագրել է «Աղօթագիրք յորում պարունակին հոգեշարժ աղօթք...» (1875) գիրքը: 1908-ին տպարան է հիմնադրել Ա. Վարդանյանի որդին՝ Հայկ Վարդանյանը (որևէ հրատ. հայտնի չէ):

1910–12-ին գործել է Կարապետ Պարսամյանի «Հողդար» տպարանը. տպագրել է Դ. Վարուժանի «Տրտունջք. Եղիա Տէմիրճիպաշեանին» (1911), Հ. Բալուցյանի «Համառօտ տաղաչափութիւն» (1911), Ա. Տրդատյանի «Դողդոջ քնար» (1912) և այլ գրքեր: 1912-ին տպարանը տնօրինել է ՀՅԴ կուս-յան տեղ. մարմինը: 1913-ին Կ. Պարսամյանը հիմնադրել է «Կաբիրա» տպարանը, հրատարակել Հ. Սրապյանի «Ի՞նչ է էսփէրանթօ» (1913–14), Տ. Բոլատյանի «Եօթնաղի քնար», Մ. Իսպիրյանի «Գրելու արուեստը», Ե. Վառեկյանի «Բառգրքոյկ հանքանուանց...» և «Բառգրքոյկ ստուգաբանական մայր բառերու...» (չորսն էլ՝ 1914), Ս. Պալեոզյանի «Հայ լեզուն անսխալ գրելու միջոցը» [1914 (՞)] և այլ գրքեր:

Սեբաստիայում լույս են տեսել նաև «Ձայն Սեբաստացւոց» (1869), «Սեւ հողեր» (1870) խմորատիպ թերթերը, պետ. «Սիվաս» (1876–78, հայ. և օսմ.), գավառ., պատմ., գրական «Անդրանիկ» (1909–11), հասքաղ. «Հող-Դար» (1910–14) շաբաթաթերթերը, Արամյան ազգ. վարժարանի «Նշտրակ» (1910–13) խմորատիպ ամսաթերթը, «Կէտ» (1905–07) խմորատիպ երգիծաթերթը են:

Միհրան Մինասյան

ՍԵԲԵՈՍ, Սեբիոս, Եվսեբիոս, VII դ-ի պատմիչ: Սերել է Բագրատունիների տոհմից: Շարադրել է հիմնականում VI–VII դդ-ի հայոց պատմությունը՝ հասցնելով մինչև 661-ը: «Ս.» անունը տարածվել է XIX դ-ից, երբ ուսումնասիրողները պատմիչին նույնացրել են Դվինի 654-ի եկեղեց. ժողովի մասնակից Սեբեոս եպիսկոպոսի հետ: Ս. գրել է «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի...» մեծարժեք պատմ. երկը (ինագույն ձեռագրերում հեղինակի անունը և գրքի վերնագիրը պահպանված չեն, Մատենադարան, ձեռ. № 2639): Բաղկացած է 2 բաժնից. առաջինում (Ա–Զ գլուխներ) Հայաստանի ինագույն պատմությունն է (սկսած Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի ավանդազրույցներից) և մինչև VII դ. ընդգրկող համառոտ ժամանակագրությունը: Երկրորդ բաժինն սկսվում է առաջաբանով, որտեղ թվարկված իրադարձություններն ընդգրկում են VI–VII դդ-ի պատմ. անցքերը: Երկն արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հարևան երկրների, Հայ առաքել. և քրիստ. այլ եկեղեցիների պատմության ուսումնասիրման համար:

Ս-ի երկից օգտվել են Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ), Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Սիմեոն Ապարանցին և ուր.:

Ս-ի երկն առաջին անգամ հրատարակել է Թ. Միհրդատյանը 1851-ին՝ «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն» (ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ., «Ընտիր մատենագիր նախնեաց» մատենաշար) վերնագրով: Լույս է տեսել նաև 1939-ին (առաջաբ. և ծնթգր.՝ Ս. Մալխասյանի), քնն. բնագիրը՝ 1979, 2005-ին (աշխատասիր.՝ Գ. Աբգարյանի), ռուս. (1862, թարգմ.՝ Ք. Պատկանյանի, 1939,

թարգմ.՝ Ս. Մալխասյանի), ֆրանս. (1904, թարգմ.՝ Ֆ. Մակլերի) և հատվածաբար՝ գերմ. (1875, թարգմ.՝ Հ. Հյուբշմանի):

Գրկ. **Մալխասեան Ս.,** *Սերէոսի Պատմութիւնը եւ Մ. Խորենացի, Թ., 1899:* **Ակինեան Ն.,** *Սերէոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր «Պատմութիւնն ի Հերակղ», Վնն., 1924:* **Աբգարյան Գ.,** *«Սերեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Ե., 1965:* **Գրիգորեան Մ.,** *Դիտողութիւններ եւ սրբագրութիւններ Սերիոսի պատմագրոց բնագրին վերայ, Վնն., 1970:* **Անանեան Պ.,** *Սերէոսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանութիւններ, Վնտ., 1972:*

ՍԵԴՐԱԿՅԱՆ (Մելիք-Առաքելյան) Արիստակես Սեդրակի [23.8.1845, գ. Խալֆալու (Երևանի նահանգ)–10.11.1906, Վաղարշապատ], բանասեր, պատմաբան, եկեղեց. գործիչ: Էջմիածնի միաբանության անդամ, եպիսկոպոս (1882-ից): 1867–1906-ին՝ Տաթևի, Արցախի, Վրաստանի, Իմերեթիայի և Աստրախանի հայոց թեմերի առաջնորդ:

Լույս են տեսել Ս-ի «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու» (1872, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) ուսումնասիրությունը, «Քնար մշեցւոց եւ վանեցւոց» (1874, նույն տպ.) բանահյուս. նյութերի ժող-ը, «Ամուսնական խնդիրներ» (1891, Մ., Մկրտիչ Բարխուդարյանի տպ.), «Յարութիւն Արարատեանի կեղծիքը» (1894, Բաքու, «Արոր» տպ.), «Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը» (1898, ՍՊբ, Յ. Ի. Լիբերմանի տպ.), «Քահանայական խնդիր» (1900, Մ., Օթոն Հերբեկի տպ.), «Հայաստանեայց եկեղեցու պատկերյարգութիւնը: Պատմական տեսութիւն» (մաս 1, 1904, ՍՊբ, «Պուշկինյան» տպ.) պատմաբանասիր. աշխատությունները: Հայ. է թարգմանել Օ. Հաքստհաուզենի «Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս եւ ի Վիրս» (1872, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) ուղեգրության Հայաստանին վերաբերող մասերը՝ ուշագրավ ծանոթագրություններով, Ջ. Դրեպերի «Պատմութիւն մտաւոր զարգացման Եւրոպիոյ» (1879, Շուշի, Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպ.) աշխատությունը, Ն. Էռնստի, Դ. Ջ. Վիլյամի գործերից:

Գրկ. **Տէր-Մինասեան Ե.,** *Արիւտակէս արքեպիսկոպոս Սեդրակեան, «Արարատ», 1907, № 1:* **Բաֆֆի,** *Գրականության մասին, Ե., 1958, էջ 43–49:*

ՍԵԶԱ ՍԻՐԱՆ (Զարիֆյան-Բյուփեյան Սիրան Տաճատի, 1903, Կ. Պոլիս–8.9.1973, Բեյրութ), գրող, հրապարակախոս, խմբագիր: Մատթեոս *Զարիֆյանի* քույրը: Ավարտել է Կ. Պոլսի ամերիկյան քոլեջը և Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանը: 1932–34 և 1947–68-ին՝ *«Երիտասարդ հայուհի»* հանդեսի հիմնադիր-խմբագիր, 1969–75-ին՝ *«Երիտասարդ հայ»* երկշաբաթաթերթի խմբագիր:

Լույս են տեսել Ս. Ս-ի «Պատնէշը» (1959), «Մեղավորուհին» (1960, Բ., 1967, Ե., «Սփյուռքահայ գրողներ», մատենաշար) պատմվածքների ժող-ները: Երեխաների համար մշակել է հայկ. հեքիաթների շարք՝ «Հեքիաթներու աշխարհէն» (1973): *Վահե-Վահյանի* հետ կազմել և խմբագրել է եղբոր՝ «Ամբողջական գործեր» (1956) ստվարածավալ հատորը:


Լիբանանի Կառավարության Արժանյաց կարգ շքանշան (1967):

ՍԵԹՅԱՆ Եփրեմ (21.9.1791, Կ. Պոլիս–3.5.1838, Ախալցխա), բանասեր-պատմաբան, իրավագետ, աստվածաբան: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1814-ից): Հայ գրակ. և պատմություն է դասավանդել 1831-ին Ախալցխայում իր հիմնադրած հայկ. դպրոցում:

Լույս են տեսել Ս-ի «Նկարագիր վարուց Ստեփաննոսի Ագռնց Գիւղէր արքեպիսկոպոսի...» (1825), «Արիեստ ճարտասանութեան» (1832), «Պատմութիւն Հին եւ Նոր կտակարանի» (1832, 1844, 1848, 1857, 1863, 1872), «Պատմութիւն Հայոց» (1839), «Համառօտ պատմութիւն Հայոց» (1843), «Պատմութիւն չորից ինքնակալութեանց» (1848), «Բնական օրէնք: Գրաւական, տոհմային եւ ազգային իրաւունք» (1851) աշխատությունները: Թարգմանել է Ավգուստինոս Հիպպոնացու «Առանձնախօսութիւնք եւ առձեռնական» (1858) երկը:

Ս-ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

ՍԵՅԼԱՆ (Մադոյան Արշակ Գևորգի, 24.1.1861, Ախալքալաք–29.3.1934, Ախալքալաք), մանկավարժ, գրող, պատմաբան: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, սովորել Վենետիկում: 1886-ից եղել է Սասունում, որտեղ հիմնադրել է նոր տիպի ուսումնարաններ, դասավանդել է Զմյուռնիայում, Կարինում, Տրապիզոնում, 1920–24-ին՝ Զավախքում, Ծալկայում, Մանգլիսում: 1910-ին եվրոպացի գիտնականների հետ բարձրացել է Մասիսի գագաթը:




Ա. Սեդրակյանի *«Հայաստանեայց եկեղեցու պատկերյարգութիւնը» (մաս 1, 1904, ՍՊբ) գրքի փիփղոսաթերթը*



Սեզա Սիրանի *«Մեղավորուհին» (1967, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Եփրեմ Սեթյանի *«Բնական օրէնք: Գրաւական տոհմային...» (1851, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Սեյլանի *«Հայթա–Ֆիրապ» (1904, Ալեք–պող) գրքի կազմը*



Բենիկ Սեյրանյանի *«Ես քեզ կգտնեմ» (1988, Թբիլիսի) գրքի կազմը*



Էրեբունի-Երևանի հիմնադրման **սեպագիր** *արձանագրությունը (մ. թ. ա. 782)*



Գուրգեն Սևակ

Լույս են տեսել Ս–ի «Բաղդի մէկ խաղը» (1890, ԿՊ, Տիգրան Ճիվելեկյանի տպ.), «Խան–Միրան» (1892, Թ., «Արոր» տպ.), «Հայթա–Ֆիրատ» (1904, Թ., «Հերմես» տպ.), «Լէօն–կայսր» (1904, Ալեք–պող, Հովհաննես Ափինյանի տպ.), «Կրոնը յեվ աշխատավորության առողջապահությունը» (1933), «Սասուն. պատմաազգագրական ակնարկ» (1990), «Նշմարներ» (1999) գրքերը:

Գրի է առել ավանդություններ և տպագրել տարբեր պարբ–ներում՝ Ալևույթ, Սիլվան գրական կեղծանուններով:

ՍԵՅՐԱՆՅԱՆ Բենիկ Մկրտչի [12.12.1913, գ. Կոթի (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–24.5.2003, Թբիլիսի, թաղված է Խոջիվանքի պանթեոնում], գրող: Վրաստանի մշակույթի վաստ. գործիչ (1971): Ավարտել է ՀՊՄԻ (1958): 1933–96–ին (ընդմիջումներով) ղեկավարել է Վրաստանի ԳՄ հայկ. մասնաճյուղը:

Լույս են տեսել Ս–ի «Ծիրանաքար» (1946), «Լեռնային բյուրեղ» (1949), «Աղբյուրներ» (1953), «Լեռներում» (1958) պատմվածքների ժող–ները, «Աստղերի հովիտ» (գիրք 1, 1959, գիրք 2, «Ճամփաներ և ճակատագրեր», 1968) վեպը, «Աստղաձոր» (1963) վիպակը, «Սիրո լույս» (1974), «Կարոտի կրակներ» (1976), «Ծովահավքի կանչը» (1977), «Արշալույսից վերջալույս» (1979), «Կապույտ երգ» (ռուս., 1984), «Ես քեզ կգտնեմ» (1988), «Մասրուտի եղնիկը» (1988), «Հայկական նովելինաներ» (1999), «Սրտի ծուխ» (2002) վիպակների, պատմվածքների, նորավեպերի ժող–ները:

ՍԵՆ–ՄԱՐՏԵՆ Անտուան Ժան (17.1.1791, Փարիզ–4.7.1832, Փարիզ), ֆրանսիացի հայագետ: Սովորել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում՝ մասնագիտանալով արաբ–ի, հայ–ի, ասոր–ի, թուրք–ի և իրան. լեզուների մեջ:

Ս–Մ. «Պատմական և աշխարհագրական հիշատակություններ Հայաստանի մասին» (հ. 1–2, 1818–19) աշխատության մեջ նկարագրել է հայոց լեզուն, ներկայացրել Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, Դվինը և այլ քաղաքներ, Մեծ և Փոքր Հայքերի վիճելի տեղանունները, ծանոթացրել Ստեփանոս Օրբելյանի կյանքին ու գործին, կազմել հայ իշխանների ժամանակագրությունը, վերլուծել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Անդրադարձել է հայկ. առակներին և դրանց հեղինակներին, հայ. ձեռագրերին, Արշակ Բ–ի ապստամբությանը, Պարսկաստանում և Հայաստանում Արշակունիների հարստության սկզբնավորմանը:

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.,** *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:*

ՍԵՊԱԳԻՐ, սեպաձև գծիկների զուգակցությամբ դաջվածքի միջոցով գրության եղանակ: Գրել են կավե տախտակների, քարակոթողների և ժայռերի վրա: Օգտագործել են Առաջավոր Ասիայում: Հայտնի է մ. թ. ա. III հազարամյակի սկզբներից. շումերները (Հարավային Միջագետք) իրենց ***գաղափարագրերի*** գծերն ուղղել են, հատման կետերը փոխարինել սեպիկներով՝ դարձնելով Ս–եր:

Հայաստանում հայտնաբերված Ս. արձանագրությունները (հանդիպում են ողջ Հայաստանի և հարակից շրջանների տարածքում) վերաբերում են Վանի թագավորների նվաճումներին (մ. թ. ա. IX–VII դդ.): Այնտեղ բազմիցս հիշատակված են Հայաստանի հնագույն քաղաքներն ու գավառները:

Արինբերդ բլուրից պեղված Արգիշտի Ա–ի մի արձանագրության մեջ (մ. թ. ա. 782) նշվում է Երևանի անունը՝ Էրեբունի ձևով և տեղեկացվում բերդաքաղաքի հիմնադրման մասին: Գառնիում հայտնաբերված արձանագրությունում հիշված է Գառնին՝ Գիարնիանի ձևով, իսկ Սիսիանի արձանագրություններից մեկում՝ Ծուլուկուն, որն այդ շրջանի հին հայկ. Ծղուկ անունն է: Հայագիտ–յան մեջ ուրարտ. և հին պարսկ. արձանագրություններն ընդունված է անվանել Ս., իսկ մյուսները՝ բևեռագիր:

Գրկ. **Այվազյան Ս.,** *Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, գիրք 1, 2, Ե., 2003, 2006:*

ՍԵՎԱԿ (Գրիգորյան) Գուրգեն Գրիգորի [15.(28).4.1904, Թիֆլիս–14.9.1981, Երևան], լեզվաբան, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1948), պրոֆ. (1948): ՀԽՍՀ ԳԱ ակադ (1971, թղթ. անդամ՝ 1856-ից): ՀԽՍՀ (1961) և ՎԽՍՀ (1967) գիտ. վաստ. գործիչ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1924), ԵՊՀ պատմագր. ֆակ-ը (1928): 1931–79-ին դասավանդել է տարբեր բուհերում: 1969-ից՝ ՀԽՍՀ ԳԱ գիտատեխ. տերմինաբանության խորհրդի նախագահ:

Լույս են տեսել Ս-ի «Խոսքի մասերի ուսմունքը» (1939), «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (գիրք 1, 2, 1939, 1947, վերամշկ. հրտ.՝ «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», 1955, 2009), «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (1948), «Մեսրոպ Մաշտոց. հայկական գրերի և մատենագրության սկզբնավորումը» (1962), «Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները և աղբյուրները» («Մեսրոպ Մաշտոց», 1963, ժող.) աշխատությունները: Ս-ի «Հայոց լեզվի շարահյուսություն» (1936) դպրոց. դասագիրքն ունեցել է ավելի քան 30 հրատ.:

1958-ին հիմնադրել և խմբագրել է *«Հայկական Էսպերանտիստ»* պարբ-ը: Էսպերանտո լեզվով թարգմանել է Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» (1926, Լայպցիգ) պոեմը (որից թարգմանել են ճապոն. ու եբր.), Հ. Թումանյանի, Լ. Շանթի, Ե. Չարենցի և ուր. ստեղծագործություններից:

Գրկ. Գուրգեն Սևակ, Ե., 1974 (Սովետական Հայաստանի ականավոր գիտնականներ, № 18):

ՍԵՎԱԿ (Ղազարյան) Պարույր Ռաֆայելի [26.1.1924, գ. Չանախչի (այժմ՝ գ. Զանգակատուն՝ ՀՀ Արարատի մարզում)–17.6.1971, զոհվել է ավտովթարից, թաղված է ծննդավայրում], բանաստեղծ, մշակույթի գործիչ: Բանասիր. գիտ. դ-ր (1970): Ավարտել է ԵՊՀ (1945), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ-յան ինստ-ը (1955), որտեղ և դասավանդել է 1955–59-ին: 1966–71-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Ս-ի «Անմահները հրամայում են» (1948), «Սիրո ճանապարհ» (1954), «Նորից քեզ հետ» (1957) բանաստեղծությունների ժող-ները, «Մարդը ափի մեջ» (1957) բանաստեղծությունների և պոեմների ժող-ը, որին ընորոշ են «ազատ բանաստեղծության» ձևն ու բանաստեղծ. հնարքների ճկունությունը, «Անհաշտ մտերմություն» (1953) պոեմը, «Սայաթ-Նովա» (1969) մենագրությունը: Ս-ի ստեղծագործության մեջ ուշագրավ են «Ուշացած իմ սեր», «Նահանջ երգով», «Երգ երգոց» բանաստեղծ. շարքերը, «Անլռելի զանգակատուն» (1959, 1963, վերամշկ. հրտ.՝ 1966, ՀԽՍՀ Պետ. մրց.՝ 1967) քնարափիլ. պոեմը, որտեղ պատկերել է Կոմիտասի կյանքը, «Եվ այր մի Մաշտոց անուն» (1962) ու «Եռաձայն պատարագ» (1965) պոեմները, որոնք հատկանշվում են հայրենասիր. շնչով ու փիլ. հարցադրումներով, «Եղիցի լույս» (1971, տպագրվել է 1969-ին, սակայն տպաքանակը կալանվել է) ժող-ը:

Հրատարակվել են նաև Ս-ի «Երկերի ժողովածուն» (հ. 1–6, 1972–76), «Երկերը» (հ. 1–3, 1982–83), «Մուտք» (1985) , «Վառվող արյուն: Հատընտիր» (2001) , «Ծանոթացեք նորից» (2001, Բ.), «Անկեղծ ասած» (2002), «Ընտիր էջեր» (2012) ժող-ները:

Ս-ի բանաստեղծությունները թարգմանվել և առանձին գրքերով լույս են տեսել ռուս., ուկր., լիտվ., վրաց., չեխ., հունգ. և այլ լեզուներով:

1971-ից ծննդավայրում գործում է Սևակի տուն-թանգարանը: Ս-ի անունով ՀՀ տարբեր քաղաքներում կոչվել են փողոցներ, դպրոցներ, թաղամաս՝ Երևանում, գյուղ՝ Արարատի մարզում:

Գրկ. **Պապոյան Ա.**, *Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970:* **Նույնի**, *Ակնարկներ Պարույր Սևակի բառապաշարի և դաղաչափության, Ե., 1991:* **Արիստակեսյան Ա.**, *Պարույր Սևակ, Ե., 1984:* **Հախվերդյան Լ.**, *Պարույրը, Ե., 1997:* **Գրիգորյան Ս.**, *Պարույր Սևակ: Արձագանքող անտառը, Ե., 1998:* **Գասպարյան Դ.**, *Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2001:* **Արզումանյան Լ.**, *Պարույր Սևակի պոեմները, Ե., 2001:* **Սարինյան Ս.**, *Պարույր Սևակ, Ե., 2006: Պարույր Սևակ: Կենսամատենագիտություն (կազմ.՝ Ա. Արիստակեսյան), Ե., 1983:*

ՍԵՎԱԿ Ռուբեն [Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի, 15.2.1885, գ. Սիլիվրի (Կ. Պոլսի մոտ)–26.8.1915, Մեծ եղեռնի զոհ], բանաստեղծ, արձակագիր, բժիշկ: Ավարտել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանը (1905), Լոզանի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1911): 1911–14-ին աշխատել է Լոզանի հիվանդանոցներից մեկում: 1915-ին վերադարձել է Կ. Պոլիս, ձերբակալվել է, աքսորի ճանապարհին նահատակվել է *Դանիել Վարուժանի, Միամանթյոի* և ուր. հետ:



Գ. Սևակի *«Մեսրոպ Մաշտոց...» (1962, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*




Պարույր Սևակ




Պ. Սևակի *«Երկեր»-ի (հ. 1, 1982, Ե., «Սովետական գրող») կազմը*



Ռուբեն Սևակ



Ռ. Սևակի *«Բժիշկին գիրքէն փրցուած էջեր...» (1964, Փարիզ) գրքի կազմը*



Գեղամ Սևանի *«Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր» (1997, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Հենրիկ Սևանի *«Մորաքույր բարկությունը» (1985, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Գ. Յարալյան) գրքի կազմը*

1910-ին լույս է տեսել Ս-ի «Կարմիր գիրքը» (ԿՊ, Օննիկ Բարսեղյան և որդի տպ.), որն ամփոփում է «Զարդի խենթը», «Քրդուհին», «Մարդերգութիւն» պոեմները: Ս. իր ազգ-հայրենասիր. բանաստեղծություններն ու պոեմները գրել է 1909-ի Կիլիկիայի հայության ջարդերի անմիջական տպավորության տակ: Նրա ստեղծագործություններում առանձնանում է սիրային երգերի շարքը («Երգ երգոց», «Գինով սէր», «Եկուր», «Ինչո՞ւ», «Սիրոյ եւ մահուան երգը» ևն): Ս-ի արձակը բազմաժանր է՝ պատմվածքներ, հոդվածներ, հանրամատչելի զրույցներ, քնար. խորհրդածություններ: «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» (1913) ժող-ում ամփոփված բժշկ. զրույցները («Ապրիլը հաղթել է», «Կռունկը», «Ահաւոր տարակոյսը», «Հարսերուն գաղտնիքը» ևն) տպագրվել են ժամանակի մամուլում:

Հրատարակվել են նաև Ս-ի «Երկերը» (1955, 1985, 1995, երեքն էլ՝ Ե., 1986, Անթիլիաս, 1997, Էջմիածին), «Կարմիր գիրքը: Սիրոյ գիրքը: Ցրիւ քերթուածներ» (1944, Երուսաղեմ), «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր եւ քերթուածներ» (1946, 1964, Փ.), «Անտիպ էջեր» (1995), «Հատընտիր» (2010) ժող-ները:

Երևանում Ս-ի անունով կոչվել են փողոց, դպրոց: 2013-ին Մայր աթոռ Սբ Էջմիածնում բացվել է Ս-ի թանգարանը:

Գրկ. **Զրբաշյան Է.,** *Ռուբէն Սևակ, Ե., 1966:* **Կիրակոսյան Վ.,** *Ռուբէն Սևակ, Ե., 1972:* **Նույնի,** *Մենագրության նահապատիկ բանապետնդի հետ, Ե., 2005:* **Թորանեան Թ.,** *Իմ Ռուբէն Սեւակը, Հալեպ, 2004:* **Պետրոսյան Վ.,** *Ռուբեն Սևակի աչքերով, Ե., 2009:* **Չիլինկիրեան Յ.,** *Սուրբերէ եւս սխալներէ ազատուած Ռուբէն Սեւակի հերոսական կեանքի ու գաղափարականի պատմութիւնը, Ե., 2012:*

ՍԵՎԱՆ Գեղամ Լևոնի (8.1.1926, Կ. Պոլիս–8.5.1991, Երևան), գրող, գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1983): Ավարտել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանը (1944), Երևանի հեռակա մանկավարժ. ինստ-ը (1966): 1950–59-ին՝ ***«Ժողովածու գրականութեան եւ արուեստի»*** պարբերագրքի խմբագիր (Գառնիկ ***Ադդարյանի*** և ուր. հետ): 1962-ին հայրենադարձել է: 1962-ից՝ ՀՀ ԳԱԱ գրակ-յան ինստ-ի գիտաշխատող, 1986–91-ին՝ բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ս-ի «Ագռավները թառեցան» (1949), «Սև ծովը նույնն է միշտ» (1954), «Նահրեն-Բաս-Բեյրութ» (1955), «Կանաչ անապատ» (1957), «Ծիծեռնակները ցածեն անցան» (1964), «Հայոց թաղը» (1967), «Երեք սերունդ» (1974), «Ամեն մարդ իր ճանապարհով» (1979) պատմվածքների ժող-ները, «Բյուրեղյա դղյակ» (1959), «Ինչո՞ւ, ինչի՞ համար» (1982, ՀԳՄ Դ. Դեմիրճյանի անվ. մրց.՝ 1983), «Հող և սեր» (1986) վեպերը, «Վազգեն Շուշանյան» (1968), «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր. 1920–1945» (1980), «Հակոբ Մնձուրի» (1981), «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր. 1946–1985» (1997), «Գառնիկ Ադդարյան» (1998) ուսումնասիրությունները:

ՍԵՎԱՆ (Խաչատրյան) Հենրիկ Կարապետի (1.3.1925, Լենինական–10.10.2008, Երևան), բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵԳԹԻ (1950): 1952–66-ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում, 1968–82-ին՝ ***«Սովետական գրականություն»*** ամսագրի պատ. քարտուղար, 1969–82-ին, միաժամանակ՝ Արվ-ի ինստ-ի Շեքսպիրագիտ-յան կենտրոնի թարգմանիչ:

Լույս են տեսել Ս-ի «Ուրախ երգեր» (1956), «Զվարճալի զրոսանք» (1963), «Գնաս բարով, իմ քիթ» (1968), «Կախարդը թանաքամանում» (1970), «Ծիծաղ վաճառողը» (1973), «Գլուխն ուղարկեց նորոգելու» (1975), «Մի բարկացրեք մրջյունին» (1978), «Մորաքույր բարկությունը» (1985), «Կոշիկ ուտող ծերունին» (2000), «Գրագետ քամին» (2006) մանկ. բանաստեղծությունների ժող-ները: Բնագրից թարգմանել է Վ. Շեքսպիրի («Քրոնիկներ»-ի մի մասը, «Ամեն ինչ լավ է, թե լավ վերջանա» կատակերգությունը), Ջ. Բայրոնի («Պոեմներ»), Հ. Լոնգֆելլոյի («Բանաստեղծություններ»), Մ. Լերմոնտովի, Ս. Մարշակի գործերից, ռուս-ից՝ «Չինական կլասիկ պոեզիա» (1958) ժող-ը:

ՀԳՄ Ս. Զորյանի անվ. մրց. (1985):

Գրկ. Հենրիկ Սևան: Կենսագրական տեղեկագիր, Ե., 2010:

ՍԵՎԱՆ Սևդա (Բախչեճյան Ֆրանսուհի) Գևորգի [6.11.1945, ք. Նովա Զագորա (Բուլղարիա)–17.5.2009, Սոֆիա], գրող, հրապարակախոս: Գրել է բուլղ.: Ավարտել է Սոֆիայի համալսարանը (1978): 1994–99-ին՝ Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, 1999–2005-ին՝ արտակարգ և լիազոր դեսպան:

Լույս են տեսել Ս–ի «Քար–քարի վրա» բանաստեղծությունների (1974) ժող–ը, «Ռոդոսթո, Ռոդոսթո» (1983, հայ. հրտ.՝ 1984, Ե., 1988, Բ., գիրք 1–2, 1989, գիրք 1–3, 2003), «Որևէ տեղ Բալկաններում» (1987), «Տեր–Ձոր» (1996) վեպերը (եռերգություն), «Հայրենիք–Սփյուռք գրական կապեր 1920–1985» (1989) աշխատությունը:

Գրել է «Ցեղասպանություն» վավերագր. կինոնկարի սցենարը (նկարահանվել է 1988–ին Բուլղարիայում), թարգմանել Գ. Էմինի բանաստեղծություններից («Արդար երգ», 1979, ժող.):

«ՍԵՎԱՆ», կիսամսյա թերթ: Լույս է տեսնում 1939–ից Սևան քաղաքում (մինչև 1989–ը՝ ՀԿԿ Սևանի շրջկոմի, ժողպատգամավորների շրջ. և քաղաքային խորհուրդների պաշտոնաթերթ, 1939–56–ին՝ «Ստալինյան խոսք», 1962–64–ին՝ «Լենինյան դրոշ», 1956–62–ին և 1965–ից՝ «Ս.»): Խմբագիրներ՝ Վաչե Ենգիբարյան, Մուշեղ Համբարձումյան, Աշոտ Օհանջանյան, Պարգև Հայրապետյան, Լյուդվիգ Նիկողոսյան, Դերենիկ Սարության, Հրանտ Հովսեփյան, Սուրեն Մուրադխանյան, Յուրա Խաչատրյան, Արծվիկ Գրիգորյան, Պապ *Հայրապետյան* (1997–ից): Լուսաբանում է Սևան քաղաքի և շրջանի հաս–քաղ., տնտ., մշակութ. կյանքը:

«ՍԵՎԱՆ», գրահրատարակչատուն և տպարան Բեյրութում: Ստեղծվել է 1955–ին: Հիմնադիր, գլխ. խմբագիր, հրատարակիչ և տպարանատեր՝ Սիմոն *Սիմոնյան:* Շուրջ երեսնամյա գործունեության ընթացքում լույս է ընծայել 500–ից ավելի գրական–գեղ., պատմա–լուսավորչ., բանասիր., թարգման. և բազմաբնույթ այլ հրատ–ներ: Արժեքավորներից են Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը» (հ. Ա–Դ, 1955–56, 1983), Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատումը» (հ. Ա–Գ, 1959–60), Մ. Աբեղյանի «Հայ հին գրականութեան պատմութիւնը» (հ. Ա, Գ, 1968, հ. Բ, 1959), Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» (հ. Ա–Ե, 1972), Ե. Չարենցի (1955), Ա. Բակունցի (1955), Հ. Շիրազի (1971), Պ. Սևակի (1972) «Հատընտիր»–ները, Ե. Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» (1962, 1969) վեպը, Շ. Շահնուրի «Թերթիս կիրակնօրեայ թիւը» (1958), «Նահանջը առանց երգի» (1981) և հայ այլ գրողների գործեր (մի մասն առաջին անգամ այստեղ է լույս տեսել): «Ս.»–ում սփյուռքահայ դպրոցների համար կազմվել և հրատարակվել են հայոց պատմության, հայոց լեզվի, գրակ–յան, աշխարհագրության, թվաբանության, կրոնի, գեղագիտ–յան, իրավագիտ–յան և այլ առարկաների 55–ից ավելի անուն դասագրքեր, որոնցից շատերն օգտագործվում են ցայսօր:

«ՍԵՒԱՆ», պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1950–58–ին Բուխարեստում՝ հայ., ռում.: Խմբագիրներ՝ Վ. Խաթանեսյան, Տիգրան Տեր–Գրիգորյան: Ներկայացրել է ռումինահայ համայնքի կյանքը, մշակութ. և հաս. միջոցառումները, մասնավորապես՝ Բուխարեստի Հայ մշակույթի տան և նրա ստեղծագործ. խմբերի գործունեությունը, ծանոթացրել Խորհրդ. Հայաստանի ձեռքբերումներին, տպագրել հայ բանաստեղծների ստեղծագործություններ, գեղանկարիչների գործերի վերատպություններ: Անդրադարձել է միջազգ. քաղ. իրադարձություններին, սփյուռքահայ կյանքին:

«ՍԵՒԱՆ», գրական–հաս. շաբաթաթերթ: Արգենտինահայ մշակութ. միության հրատ.: Լույս է տեսել 1960–90–ին (1960–61–ին՝ «Հայ կեանք») Բուենոս Այրեսում՝ հայ. և իսպ.: Խմբագիրներ՝ Գրիգոր Կեոնճյան, Սիմոն Սրապիոնյան, Սիմեոն Յուղուրթճյան, Ատրիան Լոմլոմճյան, Կառլոս Չոլաքյան: Արտացոլել է հարավամերիկյան հաս–քաղ., մշակութ. կյանքը, տեղի հայ համայնքների առօրյան, անդրադարձել հայկ. կազմակերպությունների և կրթ. հաստատությունների՝ հայապահպանությանն ուղղված ջանքերին, միջազգ. քաղ. անցուդարձին: «Հայրենիքեն լուրեր» խորագրով տպագրել է Խորհրդ. Հայաստանի մասին հոդվածներ, լուրեր: 1961–87–ին ունեցել է սեփական տպարան:



Սևդա Սևանի *«Ռոդոսթո, Ռոդոսթո» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Շ. Շահնուրի «Թերթիս կիրակնօրեայ թիւը» (1958, Բեյրութ, **«Սևան»***) գրքի կազմը*



«Սևան», *1960–90, Բուենոս Այրես*



Գարեգին Սևունցի *«Թեհրան» (1973, Ե., «Հայաստան», ձևավորող՝ Ա. Գասպարյան) գրքի կազմը*



Արամ Սեփեթճյանի *«Անլոյս գիշերներ» (1964, Բեյրութ) գրքի կազմը*



Օգոստինոս Սեքույանի *«Դրամագիտական պրպտումներ» (1982, Վնտ.) գրքի կազմը*

ՍԵՎՈՒՆՑ (Գրիգորյան) Գարեգին Սևիի [3.2.1911, գ. Խնձորեսկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–3.1.1969, Երևան], գրող, խմբագիր: Աշակույթի վաստ. գործիչ (1967): Սովորել է ՄՊՀ-ում, Բաքվի հեռակա մանկավարժ. ինստ-ում (1932–35): 1935-ին աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (հայ.) թերթի խմբագրությունում, 1938–41-ին՝ Բաքվի «Խորհրդային գրող» ամսագրի խմբագիր: 1945-ից ապրել է Երևանում: 1946–52-ին՝ *«Պիոներ»* ամսագրի խմբագիր, 1952–54-ին՝ Արտասահմ. երկրների հետ բարեկամության և մշակութ. կապերի հայկ. ընկերության նախագահ, 1954–59-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Ս-ի «Դեպի երկիր» (1935), «Վիշապասարի աղջիկը» (1945), «Չիկա» (1968) պատմվածքների ժող-ները, «Ծովախորշում» (1938, երեքն էլ՝ Բաքու, Ազերնեշր) վիպակը, «Ազատության պողոտա» (1947), «Գերիներ» (1958), «Պետական գաղտնիք» (1967), «Թեհրան» (գիրք 1–2, 1952), «Կյանքը թևերի վրա» (1984) վեպերը, «Իրանական նոթեր» (1949), «Դանուբից Գանգես» (1957), «Վիետնամի գարունը» (1960) նոթագր-ուղեգր. երկերը:

Երկ. Երկեր, հ. 1–5, Ե., 1963–65:

ՍԵՓԵԹՃՅԱՆ Արամ Արմենակի [ծ. 22.2.1934, ք. Ալեքսանդրետ (այժմ՝ Թուրքիայում)], գրող, խմբագիր: Ավարտել է Բեյրութի ՀԲԸՄ բարձրագույն վարժարանը (1950) և Առևտր. ու տնտես. գիտ-ների ուս. հաստատությունը (1957), Լոնդոնի ճարտ-յան և հողաչափության ինստ-ը (1970): 1956-ից աշխատակցել է *«Շիրակ»* ամսագրին, եղել պատ. խմբագիր, 1994–2007-ին՝ *«Խօսնակ»* պարբ-ի խմբագիր: 1992-ին Բեյրութում հիմնադրել է «Սիփան» հրատարակչությունը, որի տնօրենն է ցայսօր. տպագրում է գեղ., հայագիտ. գրակ.:

Լույս են տեսել Ս-ի «Անլոյս գիշերներ» (1964), «Կեանքի կարօտով» (1969) պատմվածքների ժող-ները, «Ողջակէզ» (1978), «Ես սեւ եմ... բայց գեղեցիկ» (1985), «Հող եւ մորմոք» (2001) վիպակները, «Ժամանակայոյզ խոհեր» (2005), «Բանաստեղծութիւնը տագնապի ընդմէջէն: Խոհեր եւ անդրադարձումներ» (2009) հոդվածների ժող-ները: Կազմել, խմբագրել և հրատարակել է Վահե-Վահյանի նամակների ժող-ը («Բանաստեղծին սիրտը», 2012):

Հանդես է եկել նաև Արմեն Հրաչ գրական կեղծանունով:

Հայ եկեղեցու «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» շքանշան (2010):

ՍԵՔՈՒՅԱՆ Օգոստինոս [Լադիսլավ Զաքարիայի, 19.9.1921, ք. Զուրջով (Ռումինիա)–20.7.2014, Լոս Անջելեսի], բնագրագետ, տոմարագետ, դրամագետ, խմբագիր: Նախն. կրթությունն ստացել է ծննդավայրում: 1931-ին մեկնել է Վիեննա, ավարտել տեղի գիմնազիան (1939), ապա՝ Վիեննայի ազգ. համալսարանի փիլ-յան և աստվածաբանության ֆակ-ը (1947): Մխիթարյան միաբանության անդամ (1938-ից), վարդապետ (1944-ից): 1957-ին տեղափոխվել է Բեյրութ, 1959–68-ին՝ տեղի Մխիթարյան վարժարանի փոխտնօրեն, 1972–78-ին՝ տնօրեն, 1980–83 և 1988–92-ին՝ *«Հանդէս ամսօրեայ»* պարբ-ի խմբագիր: 1992–2009-ին՝ Լոս Անջելեսի Մխիթարյան վարժարանի տնօրեն:

Լույս են տեսել Ս-ի «Նոր կտակարանի գիրքերու կարգը հայոց քով» (1949), «Վիեննայի Մխիթարեան թանգարանի Կոստանդին Գ-Լեւոն Ե. դրամները» (1971), «Դրամագիտական պրպտումներ. Հեթում Բ, Լեւոն Գ եւ Աւշին» (1982) դրամագիտ., աղբյուրագիտ., ձեռագրագիտ., մատենագիտ. աշխատությունները: Կազմել է «Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա» (1983) և ««Հանդէս ամսօրեայի» յոդուածնեբուն 100 տարուան մատենագիտական ցուցակ. 1887–1986» (1990) ձեռագրացուցակները, աշխարհաբարի է փոխադրել Սաղմոսարանը («Աշխարհաբար սաղմոսարան», 1987), հրատ-յան է պատրաստել Հին և Նոր կտակարանների աշխարհաբար թարգմանությունը:

ՍԵՖԵՐՅԱՆ Սոնա Սարգսի (ծ. 1.7.1940, Հալեպ), լեզվաբան, թարգմանչուհի, հրատարակիչ: Բանասիր. գիտ. դ-ր (2003), պրոֆ. (2006): Ավարտել է ԵՊՀ (1960): 1965-ից դասավանդում է ԵՊՀ-ում: Ս-ի նախաձեռնությամբ հիմնադրվել է ԵՊՀ թարգմանչաց դպրոցը, 1988-ից հրատարակում է *«Ատրճիկ»* տարեգիրքը: 1990-ից «Սահակ Պարթև» հրատարակչության հիմնադիր-տնօրենն է:

Լույս են տեսել Ս-ի «Շեքսպիրը հայ իրականության մեջ (1850–1950)» (2002), «Համառոտ ակնարկ թարգմանության» (համահեղ., 2012) աշխատությունները: Կազմել է «Իմաստախոս Շեքսպիրը» (1986, 2010) շեքսպիրյան իմաստախոսությունների անգլ–հայ. ժող–ը, «Իմաստախոս ժողովուրդը» (2005) ասացվածքների անգլ–հայ., հայ–անգլ. և «Անգլերեն–հայերեն–հայերեն–անգլերեն» (2013) բառարանները: Թարգմանել է Լ. Քերոլի, Ռ. Քիփլինգի, Ք. Մենսֆիլդի, Ս. Ֆիցջերալդի ստեղծագործություններից:

«ՄԷՐ», մանկավարժ., քաղ. հանդես (ութօրյա, եռօրյա, վերջում՝ տասնօրյա): Լույս է տեսել 1860–64-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Անտոն Ճևահիրճյան, Պողոս Պառնասյան: Ազգ–հաս. կյանքի առաջընթացի գրավականն է համարել ուսման, առևտրի, երկրագործության զարգացումը: Համակրանքով է արտահայտվել եվրոպ. երկրներում ազգ–ազատագր. շարժումների մասին:

ՍԻԱՄԱՆԹՕ [Յարճանյան Ատոմ Հովհաննեսի, 15.8.1878, գ–ք. Ակն (Խարբերդի նահանգ)–1915, Մեծ եղեռնի զոհ], բանաստեղծ: Սովորել է Կ. Պոլսի Գում Գափուի Միրիճանյան դպրոցում, Սկյուտարի Պերպերյան վարժարանում: 1894–96-ի հայկ. ջարդերի պատճառով մեկնել է Կահիրե, 1897-ին՝ Ժնև, ապա՝ Փարիզ. եղել է Սորբոնի համալսարանի ազատ ունկնդիր:

Ս-ի առաջին բանաստեղծությունը՝ «Աքսորուած խաղաղութիւնը» (հայտնի է նաև «Մահուան տեսիլք», «Կոտորած» վերնագրերով), տպագրվել է 1898-ին «Վաղուան ձայնը» (Մանչեստր) թերթում: Այնուհետև նրա բանաստեղծությունները հրապարակվել են «Անահիտ» (Փարիզ), «Ազատամարտ», «Բանբեր» (երկուսն էլ՝ Կ. Պոլիս) և այլ պարբ–ներում:


Լույս են տեսել Ս-ի «Դիւցազնօրէն» (1902, Փ., «Համալսարան» տպ.) բանաստեղծությունների ժող–ը, որի քերթվածները հայ երիտասարդությանն ուղղված պայքարի պատգամներ էին, «Հայորդիներ» (1905, Ժնև, «Կենտրոնական» տպ., 1906, Ժնև, ՀՅԴ-ի տպ., 1908, Փ., «Համազգայինի» տպ., 1950) բանաստեղծությունների 3 շարքերը, որտեղ Ս-ի հերոսը՝ նորօրյա Հայորդին, անձնավորում է Գաղափարի ու Կամքի մի հզոր ես, որի անունը Պայքար է, իսկ ավարտը՝ Հաղթանակ, «Հոգեվարքի եւ յոյսի ջահեր» (1907, Փ., «Համազգայինի» տպ., 1951, 1955) բանաստեղծությունների, պոեմների ժող–ը («Չարչարանքի երազ», «Հոգեվարքի իրիկուն», «Մահուան տեսիլ», «Անդրշիրիմեան աղաղակ»), որտեղ արտացոլված են Ս-ի անձն. տառապանքի և հայրենի եզերքի վերհուշերը, հայ ժողովրդի ողբերգ. ճակատագիրը պատկերող «Կարմիր լուրեր բարեկամէս» (1909, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ., 1969) բանաստեղծությունների շարքը, «Հայրենի հրաւեր» (1909, 2003) բանաստեղծ. նամակաշարը, «Ամբողջական գործը (հ. 1, 1910, Բոստոն, «Հայրենիքի» տպ.) պոեմների ժող–ը: Ս. հարել է «հեթանոսական» գրական շարժմանը («Նաւասարդեան աղօթք առ դիցուհին Անահիտ» և այլ բանաստեղծություններ). «Կամքի իրիկուններ» ծրագրված շարքում («Խօսքեր անծանօթ անցորդին», «Թող զօրութիւնը ձեզ խօսի» ևն) փառաբանել է հայոց անցյալը, իմաստավորել կամքի, արարման ու մաքառման խորհուրդը, «Սուրբ Մեսրոպ» (1913, ԿՊ, Օ. Արզումանի տպ., 1942, Հալեպ) պոեմը հերոս. օրհներգ է հայոց այբուբենն ստեղծողին:

Հրատարակվել են նաև Ս-ի «Ընտիր երկերը» (1957), «Ամբողջական գործերը» (1960) , «Երկերը» (1979), «Անտիպ երկերի ժողովածուն» (2002), «Ընտրանին» (2003):

Ս-ի անունով Երևանում կոչվել են դպրոց և փողոց:

Գրկ. Ատոմ Յարճանեան (Սիամանթօ): Գրական ասպյիւններ, գիրք 6, ԿՊ, 1913: Թամրազյան Հ., Սիամանթօ, Ե., 2003: Ռշտունի Հ., Սիամանթօ, Ե., 1970:


ՍԻՄԵՈՆ, XIII դ-ի վերջի–XIV դ-ի սկզբի մանրանկարիչ: Ապրել է Նախիջևանում: Հայտնի է 1304-ին պատկերազարդած և կազմած Ավետարանով (գրիչ՝ Հակոր, Մատենադարան, ձեռ. № 3722): Ձեռագրում ամբողջ. թերթերով տերուն. տեսարաններ չկան, պատկերված են լուսանցքներում՝ գրեթե խորհրդանշորեն («Մկրտություն», «Խորհրդավոր ընթրիք», «Մուտք Երուսաղեմ» ևն): Պատկերների հետաքրքիր ձևերը, տպավորիչ լուսավոր գունաշարը մատյանին հաղորդում են տոնական կենսահաստատ տրամադրություն:



Սոնա Սեֆերյանի *«Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան»-ի (2005, Ե., «Անկյունաքար») կազմը*



Սիամանթո




Սիամանթոյի *«Ամբողջական գործը» (հ. Ա, 1910, Բոստոն) գրքի կազմը*



Սիմեոն. *Ղուկասի Ավետարանի անվանաթերթը, 1304-ի Ավետարան (գրիչ՝ Հակոբ, Մատենադարան, ձեռ. № 3722)*

Սիմեոն Ա Երևանցի



«Գիրք աղօթից. որ կոչի Զբօսարան հոգեւոր» (1772, Էջմիածին) գրքի փիփղոսաթերթը



«Տաղարան փոքրիկ» (1777, Էջմիածին) գրքի պատկերազարդ (4-րդ) էջ

Գրկ. Հայկական մանրանկարչություն (ալբոմ), Ե., 1967: Дурново Л., *Краткая история древнеармянской живописи, Е., 1957, с. 43–44.*

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ (1710, Երևան–26.7.1780, Վաղարշապատ, ամփոփվել է Սբ Գայանե եկեղեցու գավթում), քաղ. գործիչ, պատմագիր, մանկավարժ, հայկ. տպագրության երախտավոր, Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1763-ից: Սովորել է Սբ Էջմիածնի Մայր աթոռի դպրոցում, ապա դասավանդել այնտեղ: Եղել է Սբ Էջմիածնի նվիրակ Կ. Պոլսում և Մադրասում (Հնդկաստան): Ամենայն հայոց կաթողիկոսության իրավունքը ռուսահայոց թեմի նկատմամբ վերականգնելու համար 1766-ի օգոստ. 1-ին կոնդակով դիմել է Եկատերինա II-ին, որը 1768-ի հրովարտակով հաստատել է Սբ Էջմիածնի Մայր աթոռի իրավասությունը ռուսահայոց թեմի նկատմամբ:

Ս. Ա. Ե. Գրիգոր *Խոջաջանյանի* հատկացրած միջոցներով 1771-ին Վաղարշապատում հիմնադրել է Արլ. Հայաստանում առաջին տպարանը, 1776-ին՝ թղթի գործարանը:

Հայ պատմագրության աչքի ընկնող երկերից է Ս. Ա. Ե-ու «Ձամբռ: Գիրք որ կոչի Յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն» (1873, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., վերահրտ.՝ 2003, աշխատասիր.՝ Վ. Համբարձումյանի, ռուս.՝ 1958, անգլ.՝ 2009) 25 գլխից բաղկացած աշխատությունը:

Լրացրել, կարգավորել և հրատարակել է Հայ եկեղեցու Տոնացույցը (հ. 1–2, 1774–75, Էջմիածին, Սբ Գրիգոր Լուսավորչի տպ., տես *Պարզաբերումն*)՝ ծեսերի և արարողությունների մեջ միօրինակություն մտցնելու նպատակով: Այն կիրառվել է 1777-ի սկզբից:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև Ս. Ա. Ե-ու՝

«**Զբօսարան հոգեւոր**» երկը. 1772-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք աղօթից. որ կոչի Զբօսարան հոգեւոր» (184 էջ, 8º, 7,5 x 5,2 սմ): Առաջին տպագիր գիրքն է Արլ. Հայաստանում: Տպագրվել է նաև 1790-ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Տպակից է Աղեքսանդր Ջուղայեցու «Աղօթամատոյցին» (176 էջ, 8º, 11, 7 x 7 սմ): Վերահրատարակվել է 2003-ին:

«**Կարգ թաղման կարգաւորաց**» երկը. 1777-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում (160 էջ, 8º, 15 x 10 սմ): Վերցրել է բուն Մաշտոցից, սրբագրել է և կարգավորել:

«**Տաղարան փոքրիկ**». 1777-ին նույն տպարանում (40 էջ, 8º, 8 x 5 սմ): Տպագրվել է նաև 1772/1773 (որևէ օրինակ չի պահպանվել) և 1793-ին (45 էջ, 8º, 10,8 x 7 սմ) նույն տպարանում, 1791-ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում (48 էջ, 13 x 8,5 սմ):

«**Պարտավճար**» կրոնաբարոյական երկը. 1779–83-ին Էջմիածնում՝ Սբ Գրիգոր Լուսավորչի տպարանում (383 էջ, 8º, 13,4 x 7,3 սմ): Վերահրատարակվել է 2004-ին:

«**Գիրք աղօթից**»-ը. 1794-ին Նոր Նախջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում (13 էջ, 4º, 24 x 16 սմ):

«**Սահմանադրութիւն վասն հնգից կիւրակէից**» երկը. առանց տպագրության վայրի, տպարանի և թվականի հիշատակության, ենթադրվում է, որ գրել է 1766-ին, տպագրվել է Կ. Պոլսում 1773-ից ոչ ուշ:

Հեղինակ է նաև փիլ. («Համառօտ լուծմունք Պորփիւրի», «Մեկնութիւն Արիստոտելի ստորոգութեանց», Մատենադարան, ձեռ. № 1818, 4ա–36ա, «Մեկնութիւն Պրոկղի», ձեռ. № 2573, 1ա–164ա, «Լուծմունք արտաքին գրեացն», ձեռ. № 1817, 43բ–49ա, 51բ–113բ, 114ա–150բ), քարոզախոս. (Մատենադարան, ձեռ. № 2212, 2314), դավանաբան. անտիպ երկերի:

Գրկ. Լէո, *Երկերի ժող., հ. 3, գիրք 2, Ե., 1973:* Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. 2, Էջմիածին, 2001:*

ՍԻՄԵՈՆ ԱՊԱՐԱՆԵՑԻ, **Ապարանցի** [1540–ական թթ., գ. Ապարանք (Մոկք նահանգի Մամրտանք գավառ)–1614, Վան], պատմագիր, բանաստեղծ, մանկավարժ: Բաղեշի Խնդրակատար վանքում, ապա Ոստանի դպրոցներում սովորելուց հետո Մեծոփում, Կարինում, Վանում դասավանդել է փիլ., աստվածաբանություն, քերակ., բանաստեղծ. արվ., պատմություն, գրչություն ևն: Գործերից նշանավոր է 1590–ին գրած «Վիպասանութիւն սակս Պահլաւունեանցն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի» (առաջին անգամ հրտ.՝ 1870, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) պոեմը, որտեղ Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդի և այլ պատմիչների երկերից (մոտ 20 աղբյուր) քաղած նյութերի հիման վրա Ս. Ա. շարադրել է հայոց նախնիների և հատկապես Պահլավունի ու Մամիկոնյան տոհմերի պատմությունները: Գեղ. տեսանկյունից առավել ուշագրավ են Ս. Ա–ու ողբերը («Ողբանք ի վերայ թախտին Տրդատայ...», «Ողբ ցաւագին ի վերայ Մեծոփոյ...», «Ի վերայ առման Թաւրիզոյ...», «Պատմութիւն Ապարանից Սուրբ Նշանին»), որոնք գրված են հայ դաս. ողբերի նմանությամբ, հատկապես առկա է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի ազդեցությունը:

1976–ին հրատարակվել է նաև Ս. Ա–ու «Բանաստեղծություններ» (աշխատասիր.՝ Կ. Սուքիասյանի) ժող–ը:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Հայապատում, Վնտ., 1901:* **Ակինեան Ն.**, *Բաղէշի դպրոցը, Վնն., 1952:* **Խաչատրյան Պ.**, *Հայ միջնադարյան պատմական ողբեր, Ե., 1969:*


ՍԻՄԵՈՆ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

1870

Սիմեոն Ապարանեցու *«Վիպասանութիւն սակս Պահլաւունեանցն զարմի...» (1870, Վաղպատ) գրքի փիփղոսաթերթը*

ՍԻՄԵՈՆ ԱՐՃԻՇԵՑԻ (ծ. թ. անհտ–1311), գրիչ և մանրանկարիչ: *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* նոր փուլի սկզբնավորողներից: Ապրել և ստեղծագործել է XIII դ–ի վերջին–XIV դ–ի սկզբին Արճեշում: Հայտնի է նրա գրչագրած և պատկերազարդած ձեռագիր 6 Ավետարան, որոնցից 4–ը պահվում են Երևանի (1288, № 4851, 1297, № 4867, 1305, № 2744, մեկը՝ անթվակիր, № 4819), 1–ը՝ Երուսաղեմի (1309, № 1786), 1–ը՝ Վենետիկի Մխիթարյան (XIV դ., Հ. Քյուրտյանի հավաքածու) մատենադարաններում: Վասպուրականի դպրոցի սկզբունքները դրսևորվել են № 2744 ձեռագրում, որտեղ պահպանվել է տերուն. պատկերների լրիվ շարքը: «Աբրահամի զոհաբերությունը», «Աստվածամայրը Մանկան հետ», «Խաչելությունը» և այլ պատկերներ ներկայացված են հնամենի պատկերագրությամբ:

Գրկ. **Հակոբյան Հ.**, *Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք 1, Ե., 1976:*




Սիմեոն Արճիշեցի. *Խորան, 1288–ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 4851)*

ՍԻՄԵՈՆ ԵՂՎԱՐԴԵՑԻ (ծ. թ. անհտ–1428), ուսուցչապետ, հոգևոր գործիչ, գրիչ: Տաթևի համալսարանում աշակերտել է Գրիգոր *Տաթևացուն:* Համալսարանն ավարտելուց հետո (1410–ական թթ.) հիմնադրել և շուրջ 10 տարի ղեկավարել է Եղվարդի դպրոցը: Հայտնի են Տաթևում ուսումնառության շրջանում Գալուստ վարդապետի հետ Ս. Ե–ու ընդօրինակած Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (1403, Մատենադարան, ձեռ. № 3955) և «Քաղուածոյ լուծմունք սաղմոսացը» (1406, Մատենադարան, ձեռ. № 4411): Մեզ են հասել նաև Ս. Ե–ու պատվիրած մի շարք ձեռագրեր (Մատենադարան, ձեռ. № 1319, 3276, Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 402):

Գրկ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), հ. 1, Ե., 1955:

ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑԻ, **Սիմեոն Զամոսցացի, Սիմոն Միկոլայովիչ** [1584, Զամոսց (այժմ՝ Զամոշչ)–1637, Լվով], ճանապարհորդ–ուղեգրող, գրիչ, բանաստեղծ, հաս., եկեղեց. գործիչ: Զամոսցի հայկ. վարժարանում աշակերտել է բանաստեղծ և գրիչ Հակոբ Թոխաթցուն: 1608–19–ին ճանապարհորդել է Եվրոպայի, Մերձ. Արևելքի, Հս. Աֆրիկայի երկրներում, Հայաստանում: Այնուհետև հաստատվել է Լվովում, 1624–27–ին դասավանդել է տեղի հայկ. դպրոցում, զբաղվել գրական աշխատանքով և գրչությամբ:

Սիմեոն Լեհացի



«Ուղեգրութիւն» (1619–35) երկի ձեռագիր 1 էջ (Վարշավա)



«Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք» (1936, Վնն.) գրքի տիտղոսաթերթը



Սիմեոն Ջուղայեցու *«Գիրք որ կոչի Քերականութիւն»-ի (1725, Կ. Պոլիս) գլխա- և լուսանցազարդերով (15-րդ) էջ*

Ս. Լ–ու երկասիրություններից հայտնի է հատկապես «Ուղեգրութիւնը», որը, ըստ ճամփորդական գրառումների, շարադրել է 1619–25-ին: Երկը ձևով և բովանդակությամբ եզակի երևույթ է հայ միջնադարյան գրակ–յան մեջ: «Ուղեգրութեան» շարունակությունն ու լրացումն է «Տարեգրութիւնը», որտեղ շարադրված են 1623–35-ի կարևոր իրադարձությունները: Պատմ. մեծ արժեք ունեն նաև Ս. Լ–ու հիշատակարանները: «Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք» վերնագրով 1 գրքով հրատարակվել են նրա երեք երկերը (1936, Վնն., Մխիթարյան տպ., հրտ.՝ Ն. Ակինյանի, 1997, աշխարհաբար, գիրք 1, թարգմ., առաջաբ. և ծնթգր.՝ Ա. Մադոյանի): Թարգմանվել է թուրք. (1964, 1999), ռուս. (1965), անգլ. (2007): Ս. Լ–ու երկի ձեռագիրը պահվում է Լեհաստանի ազգ. գրադարանում (Վարշավա):

1634-ին Ս. Լ. գրել է «Վիպասանութիւն Նիկոլական» (հրտ.՝ 1896, «Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ» գրքում) երգիծ–քաղ. պոեմը՝ կաթոլիկ. գաղափարախոսության և Լեհաստանի հայ համայնքի հոգևոր առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի շահատակությունների դեմ: Հեղինակ է նաև պանդխտության երգերի («Յաշխարհս ես շուրջ եկի» ևն): Ս. Լ–ու լեզուն գրաբարախառն աշխարհաբար է:

Ս. Լ. ընդօրինակել է նաև մի քանի տասնյակ ձեռագրեր, որոնցից պահպանվել են 12–ը (պահվում են Մատենադարանում և արտերկրի հավաքածուներում):

Գրկ. **Ակինեան Ն.**, *Սիմեոն դպիր Լեհացի, «ՀԱ», 1932, էջ 447–464:* **Дарбинян М.**, *Путевые заметки Симеона Леаци, "Исторические связи и дружба украинского и армянского народов", Е., 1961, с. 229–236; Украинско-армянские связи в XVII веке (Сб. док.), Киев, 1969.*

ՍԻՄԵՈՆ ԿԱՖԱՅԻ, **Կաֆայեցի** (XVII դ–ի 20-ական թթ., Կաֆա–մ. թ. անհտ), տաղերգու: Ապրել է Կաֆայում: Տաղերից հետևում է, որ ստացել է կանոնավոր հոգևոր կրթություն. եղել է աշխարհական: Գրել է Սարիամ Աստվածածնին ձոնված տաղ և ապաշխարության տաղեր: Ուշագրավ են նրա «Էանց ցուրտ ձմեռն եւ վիշտն աշխարհի» և «Եկ պիւլպիւլ իմ գարնանային» սկսվածքներով տաղերը, որտեղ զուգորդվում են սիրո ու բնության մոտիվները:

Ս. Կ–ու տաղերը տպագրվել են Կ. Կոստանյանի կազմած «Նոր ժողովածու: Միջնադարյան հայոց տաղեր եւ ոտանաւորներ» (պր. 1, 1892, էջ 60–61, պր. 3, 1896, էջ 54–56, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) ժող–ում, «Բազմավէպ»–ում (1844, էջ 34), «Հանդէս ամսօրեայ»–ում (1935, № 5–7, էջ 343–344):

Գրկ. **Սահակյան Հ.**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII), Ե., 1975:*

ՍԻՄԵՈՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ [XVI դ–ի վերջ, Ջուղա–27.2.1657, Եվդոկիա (Փոքր Հայք)], փիլիսոփա, տրամաբան, քերական, հաս. գործիչ: Սկզբն. կրթությունն ստացել է Նոր Ջուղայում: 1620-ից աշակերտել է ***Խաչատուր Կեսարացուն***: 1631-ի սկզբին Երևանում ***Ոսկան Երևանցու*** հետ փիլ. դասեր է առել Մելքիսեթ Վժանեցուց, 1641-ին օծվել է վարդապետ, տեղափոխվել Հովհաննավանք, ապա՝ Էջմիածին:

Կրոնադավանաբան. հայացքներով լինելով XVII դ–ում վերսկսված միարար. (ունիթոր.) շարժման հակառակորդ՝ Ս. Ջ. պաշտպանել է Հայ եկեղեցու ինքնուրույնության իրավունքը: Շարունակել և զարգացրել է Արիստոտելի, Նեմեսիոս Եմեսացու, Պրոկլ Դիադոխոսի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու և ուր. փիլ. տեսակետները:

Հայ ինատիպ գրքի շրջանում տպագրվել են Ս. Ջ–ու՝


«**Գիրք որ կոչի Քերականութիւն**» (1637) աշխատությունը. 1725-ին Կ. Պոլսում՝ Սարտիրոս Սարգսյանի տպարանում (231 էջ, 8°, 11,5 x 7 սմ): Օգտվելով Դիոնիսիոս Թրակացու քերակ–ից՝ Ս. Ջ. աշխատել է խուսափել լատինաբանությունից, քերակ–յան նյութ է համարել գիրը կամ տառը, վանկը, բառը և «բանը», հայ–ի տառերը (ինչյունները)

բաժանել է ձայնավորների (սուղեր, առաջագիրներ), բաղաձայնների (թավեր, լծորդներ, անձայններ, կրկնակներ) և երկբարբառների:

«**Գիրք տրամաբանութեան**» աշխատությունը. 1728-ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տպակից է Պորփյուրի «Ներածութիւն» և Դավիթ Անհաղթի «Առածք հինգ», «Վասն բաժանման» աշխատություններին (352 էջ, 8º, 13 x 8 սմ): Հայ իրականության մեջ առաջինը նա է փորձել տրամաբանությունը զատել քերակ-ից, շոշափել է նաև գիտ-ների դասակարգման, նրանց կապի, փոխհարաբերության, տեղի, դերի, իմացական նշանակության և այլ հարցեր:

Վերահրատարակվել է 1794-ին Կ. Պոլսում՝ Հովհաննեսի և Պողոսի տպարանում: Տպակից է Պորփյուրի «Ներածութիւն», Դավիթ Անհաղթի «Գիրք Էակաց», «Առածք հինգ», «Վասն բաժանման», «Մեկնութիւն Պորփիւրի», Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» (համառոտ) աշխատություններին: Տիտղթ-ին՝ «Տրամաբանութիւն: Արտադրութիւն վասն անձին մարդոյ» (414 էջ, 8º, 12,5 x 7,8 սմ):

«Բազմավէպ»-ում տպագրվել է նաև Ս. Զ-ու «Նամակ Ոսկան Երևանցուն» (№ 6–8, 1967) երկը:




Սիմեոն Ջուղայեցու *«Գիրք տրամաբանութեան»-ի (1728, Կ. Պոլիս) տիտղոսաթերթը*

Գրկ. **Միրզոյան Հ.**, *Սիմեոն Ջուղայեցի, Ե., 1971:* **Զահուկյան Գ.**, *Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:* **Առաքել Դավրիժեցի**, *Պատմություն, Ե., 1988:*

ՍԻՄԵՈՆ ՌԾՏՈՒՆԵՑԻ (1317–մ. թ. անհտ), ուսուցչապետ, հոգևոր գործիչ, գրիչ: Սովորել է Գլաձորից Հերմոնի վանք տեղափոխված համալսարանում, աշակերտել Գրիգոր Ըաբունապետին և ***Սարգիս Ըաբունապետին***: Հաստատվել է Մոկաց սարի Սբ Գևորգ վանքում, եղել տեղի դպրոցի ուսուցչապետը: Մեզ են հասել Ս. Ռ-ու «Լուծմունք սուրբ գրոց Վարդանայ Արևելցւոյ» (1365, Մատենադարան, ձեռ. № 341), «Դաւթի լուծմունք ճառից Աստուածաբանի» (1363–70, Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 317), «Մեկնութիւն թղթոց Պօղոսի» (1377, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 345) ձեռագրերը. ընդօրինակվել են հիմնականում ուսումնագիտ. նպատակով օգտագործելու համար:

Գրկ. **Մաթևոսյան Ա.**, *Մոկաց սարի Սբ Գևորգ վանքի գրչության կենտրոնը XIV–XV դարերում, «ԲՄ», № 6, 1962:*

ՍԻՄԵՈՆՅԱՆ, Սիմեոնյանց (Սիմոնյան) Պետրոս [1830, գ. Թոփթի (այժմ՝ ՌԴ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանում)–1911, Թիֆլիս], հաս. գործիչ, խմբագիր, մանկավարժ: Սկզբն. կրթությունն ստացել է Նոր Նախիջևանի Սբ Խաչ վանքում, 1849-ին ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, 1851–53-ին սովորել Դորպատի համալսարանում: Այնուհետև հաստատվել է Թիֆլիսում. աշխատել է Ներսիսյան դպրոցում՝ որպես ուսուցիչ և տեսուչ: 1863–86-ին՝ ***«Մեղու Հայաստանի»*** թերթի, 1887–91-ին՝ Էջմիածնի ***«Արարատ»*** հանդեսի խմբագիր: 1890-ական թթ-ի 1-ին կեսին վարել է ***Մկրտիչ Ա. Վանեցու*** (Խրիմյան) քարտուղարի պարտականությունները:



Պետրոս Սիմեոնյանի *«Դասագիրք ընդհանուր պատմութեան» (հ. 1, 1867, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*

Լույս են տեսել Ս-ի «Դասագիրք ընդհանուր պատմութեան» (հ. 1), «Դասագիրք միջին դարերի պատմութեան» (երկուսն էլ՝ 1867, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) դասագրքերը, «Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան» (1936) գիրքը:

ՍԻՄՈՆՅԱՆ Աբել Պողոսի [15. 8. 1922, գ. Խնձորեսկ (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)–3. 6.1994, Երևան], պատմաբան, խմբագիր-հրատարակիչ: Պատմ. գիտ. դ-ր (1969), պրոֆ. (1972): Ավարտել է ԵՊՀ միջազգ. հարաբերությունների ֆակ-ը (1950): 1961–64-ին՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ, 1965–74-ին՝ Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրի տեղակալ, 1974–79-ին՝ գլխ. խմբագիր, 1983–94-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ի բաժնի վարիչ: Ս-ի ղեկավարությամբ կազմվել են «ՀՍՀ»-ի բառացանկերը, մշակվել մեթոդ. ցուցումները, հրատարակվել են 1–4-րդ հատորները (1974–78):



Աբել Սիմոնյան

Լույս են տեսել Ս-ի «Երևան. 1920–1967» (1968), «Երևան 2750» (համահեղ., 1968), «Ռազմի ճամփաներով» (1981), «Քաղաքամայր Երևանը» (1983) աշխատությունները:



Կարեն Սիմոնյանի
«Երկիր են վերադառնալու երեքը» (1987, Ե., «Արևիկ») գրքի կազմը



Հրաչիկ Սիմոնյանի
«Ազատագրական պայքարի ուղիներում» (գիրք V, 2013, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը



Պեպո Սիմոնյանի
«Նախերգանք» (1968, Բեյրութ) գրքի կազմը

ՍԻՄՈՆՅԱՆ Արամ Սիմոնի (4.11.1927, Թիֆլիս–13.1.2007, Լոս Անջելես), խմբագիր, գեղագետ: Փիլ. գիտ. թեկնածու (1954): Ավարտել է ԵՊՀ (1950): 1971–76-ին՝ ՀԿԿ Երևանի քաղկոմի գիտ-յան և ուս. հաստատությունների բաժնի վարիչ, 1976–86-ին՝ *«Լենինյան ուղիով»* (1990-ին՝ «Հայացք») ամսագրի գլխ. խմբագրի տեղակալ, 1986–90-ին՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Արվեստի սոցիալական և ազգային բնույթը» (1982), «Պահանջմունքների էսթետիկան» (1983), «Սովետական երիտասարդի բարոյական կերպարը» (1985) աշխատությունները:

ՍԻՄՈՆՅԱՆ Կարեն Արամի (ծ. 17.3.1936, Երևան), արձակագիր, խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է ԵՊԻ մեքենագիտ. ֆակ-ը (1958): 1960–68-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, 1975–82-ին խմբագրել է *«Լիտերատուրնայա Արմենիա»* (ռուս.) ամսագիրը, 1982–89-ին՝ «Սովետական Հայաստան» (1989-ից՝ *«Վերածնված Հայաստան»*) ամսագրի գլխ. խմբագրի տեղակալ, ապա՝ գլխ. խմբագիր, 1989–91-ին՝ ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի նախագահ: 1992-ից ապրում է Փարիզում:

Լույս են տեսել Ս-ի «Մարսեցիները» (1957), «Մեղուզայի շոշափուկները» գիտաֆանտաստիկ պատմվածքների ժող-ները, «Կապարե մարդկանց գաղտնիքը» (1959), «Թափառող մոլորակը» (1961), «Երկրորդ արևը», «Փոքր Առյուծի Ադամը», «Վալտեր Բուշ» (երեքն էլ՝ 1962), «Մենք խաղալ էինք ուզում» (1963), «Ժպիտը» (1964), «Սիցիլիական պաշտպանությունը» (1965), «Մարզագետին» (1967), «Ներսես Մաժան դեղագործը» (1974), «Ցտեսություն Նաթանայել» (1975, կինոնկար՝ «Մենք դեռ կհանդիպենք», 1984), «Միքայել Նալբանդյան» (ռուս., 1984), «Մոգական պատմություն» (1980), «Երկիր են վերադառնալու երեքը» (1987), «Քարանձավային պատմություններ կամ 1993» (1996), «Վարք Աբովյան Խաչատուրի» (2002) վեպերն ու վիպակները, «Ժպիտը» (1964), «Մարզագետին» (1967) և մանկապատանեկան այլ պատմվածքներ:

Թարգմանել է Ջ. Լոնդոնի, Ջ. Ստայնբեկի, Դ. Բիսեթի, Ջ. Սելինջերի և ուր. երկերից:

ՍԻՄՈՆՅԱՆ Հրաչիկ Ռուբենի [ծ. 8.12.1928, գ. Շինուհայր (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում)], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1970), ՀՀ ԳԱԱ ակադ. (1996, թղթ. անդամ՝ 1986-ից): Ավարտել է ԵՊՀ (1952), ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր հաս. գիտ-ների ակադ-ը (1962): 1952-ին աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում, 1952–53-ին՝ «Ստալինյան դրոշով» (Գոբիս) շրջ. թերթի պատ. քարտուղար, 1963–2000-ին դասավանդել է հանրապետության բուհերում: 1977–90-ին՝ ՄԼԻ հայկ. մասնաճյուղի տնօրեն, 1990–91-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտ-յան բաժանմունքի ակադ. քարտուղար, 1991–93-ին՝ Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կոմիտեի նախագահ, միաժամանակ, 1991–96-ին՝ ՀՀ ԳԱԱ հաս. գիտ-ների բաժանմունքի ղեկավար, 1999–2003-ին՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ս-ի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» (1968), «Ինդուստրիալ հասարակության տեսությունները: Քննական վերլուծություն» (1973), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (գիրք 1, 2, 1977, 1980), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982), «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1986), «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (1991), «Անդրանիկի ժամանակը» (գիրք 1–2, 1996), «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» (2009, անգլ.՝ 2012, Լոնդոն), «Ազատագրական պայքարի ուղիներում» (գիրք I–V, 2003–13, ՀՀ Պետ. մրց.՝ 2013), «1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը» (2014) աշխատությունները:

ՍԻՄՈՆՅԱՆ Պեպո Տիգրանի, **Գալայճյան Պետրոս** [ծ. 16.9.1937, Ալեքսանդրետ (Սիրիա, այժմ՝ Թուրքիայում)], գրող, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է Բեյրութի Սեն Ժոզեֆ համալսարանը (1960): 1957-ից դասավանդել է Բեյրութի Ռուբինյան ազգ. վարժարանում, եղել Սահակյան-Լևոն Մկրտիչյան քոլեջի տնօրենը: 1965–75-

ին ղեկավարել է «Նոր սերունդ» մշակութ. միությունը. 1956–65-ին՝ միության «Արարատ» գրական ամսագրի, 1966–72-ին՝ Ռուբինյան վարժարանի «Ալպոմ-Տարեգիրք» ժող-ի խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Նախերգանք» (1968), «Կանաչներու առասպելը» (1977), «Մարդեղութիւն» (1981), «Ծառին ճիչը» (1991) բանաստեղծություններ-ի ժող-ները, «Հեքիաթ Հայաստանի մասին» (1979), «Ծուէն, ծուէն երիզներ» (1980), «Մայրիներու արմատները» (1986) արձակ գործերը, «Ակնարկ մը սփիւռքահայ բանաստեղծութեան վրայ» (1970), «Արուեստագէտը՝ Թլկատինցի» (1982), «Էջեր եւ նիւթեր իրականութեան» (2007, 2008) գրականագիտ. ուսումնասիրությունները:

Երկ. Սարդկային իրաւանց հարցեր, Բ., 1994: Հայակերտում եւ մանկավարժութիւն, Բ., 1996: Միջերկրականի լոյսերուն դիմաց, Անթիլիաս, 2004: Ակնթարթներ մարդու եւ կեանքի առօրեային, Բ., 2012:

ՍԻՄՈՆՅԱՆ Սիմոն Օվեի [24.3.1914, Այնթապ (Կիլիկիա)–24.3.1986, Բեյրութ], գրող, խմբագիր, հրատարակիչ, բանասեր, մանկավարժ: Ավարտել է Հալեպի կրթասիրաց վարժարանը (1930), Անթիլիասի դպրեվանքը (1935): 1935–46-ին դասավանդել է Հալեպի Հայկազյան և Կյուլպենկյան վարժարաններում, 1946–55-ին՝ Անթիլիասի դպրեվանքում, 1946–60-ին, միաժամանակ՝ Բեյրութի Դարուհի Հակոբյան և Հովակիմյան-Սանուկյան վարժարաններում, 1947–55-ին՝ ***«Հասկ»*** թերթի խմբագրապետ, 1958–75-ին՝ ***«Սփիւռք»*** շաբաթաթերթի խմբագիր: 1955-ին Բեյրութում հիմնադրել է ***«Սևան»*** տպարանը և նույնանուն հրատարակչությունը, որտեղ տպագրվել են դասագրքեր, գրական-գեղ., գիտաբանասիր., թարգման. և բազմաբնույթ այլ գրքեր:

Լույս են տեսել Ս-ի «Կը խնդրուի ... խաչաձեւել: Հայոց երգիծական պատմութիւն» (1965), «Խմբապետ Ասլանին աղջիկը» (1967), «Սիփանայ քաջեր» (հ. 1, 2, 1967, 1970), «Լեռնականներու վերջալոյսը» (1968), «Լեռ եւ ճակատագիր» (1972) պատմվածքների ժող-ները, վիպակները, «Անժամանդրոս» (1978, 1998) վեպը, «Արեւելահայ գրականութիւն» (1965), «Արեւելահայ գրողներ» (1965), «Հայ հին մատենագրութիւնը որպէս ենթահող արդի հայ գրականութեան» (1975), «Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի» (1981) բանասիր. ուսումնասիրությունները: Ս. կազմել է հայոց պատմության և մայրենի լեզվի («Արագած», համահեղ.՝ Օննիկ ***Սարգիսյան***) դասագրքեր:

Գրկ. **Գրիգորյան Ս.,** *Բազմապաղանդ երախտավորը, Ե., 1999:* **Թորանեան Թ.,** *Սիմոն Սիմոնեան երեւոյթը, Հալեպ, 2004:*


ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է XIX դ-ի կեսին Սինգապուրում «Արփի» և «Մասիս» տպարանների հիմնադրումով: 1853-ին տպագրվել է (առանց տպարանի հիշատակության) «Միմոս կամ Բանք զուարճարարք» (թարգմ.՝ Հ. Միքայելյանի) գիրքը, 1847-ին լույս է տեսել «Սինգապուր» (կարճատև, վիմատիպ), 1849–53-ին՝ ***«Ուսումնասէր»*** քաղ., գիտ. և առևտր. կիսամյա պարբ-ները:

«ՍԻՆՈՊՍԻՍ» («Synopsis»), գիտ. պարբ.: Հումանիտար և սոցիալ. հետազոտությունների «Էյդոս» կենտրոնի հրատ.: Լույս է տեսել 1992–97-ին (պր. 1–7) Երևանում: Խմբագիրներ՝ Օլեգ Գաբրիելյան, Վլադիմիր Օսիպով: ՀՀ-ում առաջին անկախ վերլուծ. պարբ-ներից է: Հրատարակել է անգլ., ֆրանս. և ռուս. ուսումնասիրություններ՝ արդի հայ և համաշխ. գիտ-յան ու հասարակության հիմնախնդիրների, սոցիոլոգիայի, փիլ-յան, կրթության, մշակութաբանության հարցերի վերաբերյալ: Տպագրել է նաև անվանի գիտնականներ Չ. Գլենի և Դ. Ուելշի (ԱՄՆ), Յ. Պիետարինեի և Յ. Ռայկկայի (Ֆինլանդիա), Ս. Բրուկքի (Մեծ Բրիտանիա) և ուր. հոդվածները:


«ՍԻՈՆ», կրոն., պատմաբանասիր., գրական ամսագիր: Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1866-ից Երուսաղեմում (1878–1927-ին ընդհատվել է): Խմբագիրներ՝ Տիգրան ***Սամալանյան*** (հիմնադիր), Մելքիսեդեկ վրդ. Մուրադյան, Կյուրեղ վրդ. Սրապյան, Սահակ վրդ. ***Խապայան***, 1927-ից՝ Բարկեն արք. ***Կյուլեսերյան***, Տիրան վրդ. Ներսոյան, Թորգոմ արք. ***Գուշակյան***, Շնորք



Սիմոն Սիմոնյանի *«Անժամանդրոս» (1998, Ե., «Նոր-Դար») գրքի կազմը*



«Սինոպսիս», *1992–97, Երևան (պր. 7, 1997)*



«Սիոն», *1866-ից, Երուսաղեմ (№ 1, 2008)*



Սիպիլ



Սիպիլի *«Երկեր»-ի (1965, Ե., «Հայաստան») կազմը*



«Սիսուան», *1905, Ալեքսանդրիա*

արք. ***Գալուստյան***, Արա Գալաճյան, Եղիշե արք. ***Տերտերյան*** (Եղիվարդ), Թորգոմ արք. ***Մանուկյան***, Նուրհան արք. Մանուկյան (2012-ից): Տպագրում է Հայ եկեղեցուն, հայոց պատմությանը, բանասիրությանը, լեզվագիտությանը, մատենագիտությանը, մշակույթին, գրչությանը վերաբերող հոդվածներ և ուսումնասիրություններ, գեղ. ստեղծագործություններ: Անդրադառնում է սփյուռքահայ կյանքին, հայապահպանության խնդիրներին, Հայրենիք-Սփյուռք կապերին: «Ս.»-ին աշխատակցել են Ե. Դուրյանը, Գ. Հովսեփյանը, Ն. Ակինյանը, Ս. Տեր-Ներսեսյանը և ուր:

ՍԻՊԻԼ (Զաբել Հովհաննեսի Խանջյան), **Զապել Ասատուր, Տոնեկյան** (1.10.1863, Կ. Պոլիս–19.7.1934, Կ. Պոլիս), գրող, խմբագիր, մանկավարժ, հաս. գործիչ: Ավարտել է Սկյուտարի ճեմարանը (1879): 1898-ին Գրիգոր ***Զոհրապի*** և ամուսնու՝ Հրանդ ***Ասատուրի*** հետ վերահրատարակել է «Մասիս» հանդեսը, որտեղ տպագրել է արևմտահայ նշանավոր գործիչներին նվիրված «Կիսադէմեր քօղին ետեւէն» դիմանկարների շարքը: Այն հետագայում զետեղվել է Հ. Ասատուրի և Ս-ի կազմած «Դիմաստուերներ» ժող-ում (1921):

Լույս են տեսել Ս-ի «Ցոլքեր» (1902, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.) բանաստեղծությունների, «Կնոջ հոգիներ» (1925, ԿՊ, Հովհաննես Սեթյանի տպ.) պատմվածքների ժող-ները, «Աղջկան մը սիրտը» (1891, ԿՊ, Տիգրան Ճիվելեկյանի տպ., 1938, «Արևելք» տպ., 1949, Բ., Հայ ճեմարանի տպ.) վեպը, «Սազնիս» (Ալփասլանի հետ, 1909, Հ. Մաթևոսյանի տպ.) թատերախաղը, ինչպես նաև Ս-ի և Հ. Ասատուրի «Սիրային նամակներ» (աշխատասիր.՝ Գ. Հակոբյանի, 2001) նամականին: Կազմել է «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի» (1899, 1900, 1902, ԿՊ, Հ. Մաթևոսյանի տպ.) դասագիրքը, որը Հ. Ասատուրի աշխատակցությամբ բարեփոխվել և «Թանգարան հատընտիր հատուածներու» (1908–11, 1914, նույն տպ.) ընթերցարանների հետ բազմիցս վերահրատարակվել է, «Գործնական դասընթացք ֆրանսերէնէ հայ թարգմանութեան» (1902, ԿՊ, Ռոզոս Սագայանի տպ.) ձեռնարկը:

Հրատարակվել են նաև Ս-ի «Քերթվածներ» (1935) ժող-ը, «Երկերը» (1965):

Հեղինակ է նաև մանկ. բանաստեղծությունների, մանկավարժ-մեթոդ. հոդվածների:

Գրկ. **Մինասյան Ա.**, *Սիպիլ: Զապել Ասատուր: Կյանքը և գրական գործունեությունը, Ե., 1980: Սիպիլի ստեղծագործությունների մատենագիտություն (կազմ. և առաջաբ.՝ Ա. Մինասյանի), Ե., 1985:*

ՍԻՍՎԱՆ (Բեքմեզյան) Գրիգոր Հովհաննեսի [4.4.1918, ք. Սիս (Կիլիկիա)–13.10.1972, Երևան], արձակագիր, խմբագիր: Ավարտել է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի հոգևոր ընծայարանը (1936): 1945–47-ին՝ ***«Նոր ուղի»*** (Բեյրութ) պարբ-ի խմբագիր: 1947-ին հայրենադարձել է: 1969–72-ին աշխատել է «Լույս» հրատարակչությունում:

Լույս են տեսել Ս-ի «Իրականացած երազ» (1949), «Հայրենի տուն» (1957) գրքերը:

«ՍԻՍՈՒԱՆ», ազգ., գրական-բանասիր. ամսաթերթ: Լույս է տեսել 1905-ին Ալեքսանդրիայում (2 համար): Խմբագիրներ՝ Սմբատ ***Բյուրատ***, Երվանդ Սրմաքեշխանլյան (***Երուխան***): Տպագրել է գրական ստեղծագործություններ, պատմ., գրականագիտ., հրապարակախոս. հոդվածներ, անդրադարձել գրական անցուդարձին:

«ՍԻՍՈՒԱՆ», գրական, հաս. շաբաթաթերթ: «Սիսուան» հրատարակչ. ընկերության հրատ.: Լույս է տեսել 1918–20-ին Ֆրեզնոյում: Խմբագիր՝ Միքայել Մինասյան: Անդրադարձել է Առաջին համաշխ. պատերազմին (1914–18), միջազգ. իրավիճակին, գաղութահայ կյանքին, ազգ. միությունների գործունեությանը: 1920-ին միացել է ***«Նոր կեանք»*** (1914–19, Ֆրեզնո) շաբաթաթերթին և կոչվել «Նոր կեանք–Սիսուան» (1920–21):

ՍԻՏԱԼ (Շահինյան) Կարապետ Շահենի [1891, գ. Կաճետ Կաշտ (Շատախի գավառ)–26.5.1972, Ֆիլադելֆիա], բանաստեղծ, խմբագիր, հրապարակախոս: 1895–96-ի աբդուլհամիդյան կոտորածների ժամանակ ընտանիքի հետ տեղափոխվել է Վան: Ծնողներից զրկվելով՝ ապաստանել է ամերիկյան որբանոցում: Ավարտել է Վանի ամերիկյան բարձրագույն վարժարանը (1907), Թավրիզի ամերիկյան քոլեջը (1910):

1914-ին մեկնել է ԱՄՆ: Ֆիլադելֆիայում հետևել է Փենսիլվանիայի համալսարանի գրակ-յան և գեղարվ-ի դասընթացներին: Հիմնադրել է տպարան (գործել է շուրջ 40 տարի), 1923–24-ին՝ ***«Հորիզոն»*** (Ֆիլադելֆիա) շաբաթաթերթի (Փիլիպոս Մինասյանի և Հայկ Հովսեփյանի հետ), 1936-ին՝ «Վերելք» (Նյու Յորք) տարեգրքի խմբագիր:

Լույս են տեսել Ս-ի «Գուսաններգեր» (1919, Նյու Յորք, «Կոչնակի» տպ.), «Կարաւանի ետեւէն» (1922, Վնն., Մխիթարյան տպ.), «Գիշերէն մինչեւ լուսաբաց» (1931), «Լուսաբաց» (1936), «Պայքարի երգեր» (1953), «Դյուցազնական» (1957), «Ոսկե հունձ» (1962) բանաստեղծությունների, պոեմների ժող-ները, «Գիւղն իմ հեռաւոր» (1936) պոեմը, «Սասնայ ծռեր» (1939) դյուցազներգություն, «Կաշտի քաջեր» (1942) վիպերգը, «Հազարան բլբուլ» (1946) հեքիաթը, «Տեսա մեր երկրի արեւածագը» (1948), «Արեւածագ եւ առաւօտ» (1957), «Նոր հորիզոններ» (1959) հրապարակախոս. երկերը:

Գրկ. **Մելյան Պ.**, *Կարապետ Սիրալ, Ե., 1961:*



Կարապետ Սիրալի
«Տեսա մեր երկրի արեւածագը» (1948, Նյու Յորք) գրքի կազմը

ՍԻՐԱՍ Հմայակ Սահակի [Ոսկանյան, 15.2.1902, գ. Կարաքիլիսե (Ալաշկերտի գավառ)–14.8.1983, Երևան], գրող, խմբագիր: Մշակույթի վաստ. գործիչ (1968): Սովորել է ԵՊՀ պատմալեզվագր. ֆակ-ում (1922–25), ավարտել է Մոսկվայի ժուռնալիստիկայի ինստ-ը (1932): 1927–28, 1933-ին՝ ***«Բանվոր»*** (Լենինական) թերթի, 1938–39 և 1954–57-ին՝ ***«Խորհրդային գրականություն»*** ամսագրի խմբագիր, 1939–41 և 1946–48-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Ս-ի «Կյանքի կարոտ» (1934) պատմվածքների և ավանդազրույցների ժող-ը, «Սամեն ու Աշեն» (1934), «Թալիսման» (1936), «Ասմար» (1936) պատմվածքները, «Հարցրեք նրանց» (1931, վերամշկ. հրտ.՝ «Նախօրյակին», 1954), «Չգրված օրենք» (1936, վերամշկ. հրտ.՝ «Անահիտ», 1940), «Արարատ» (1950) վեպերը, «Սասունցի Դավիթ» (1939) դյուցազնավեպը, «Հայր և որդի» (1946, 1947), «Եղբայրություն» (1951), «Անանուն աղջիկ» (1969) պատմվածքների, ակնարկների, լեգենդների ժող-ները, «Հայրենի աշխարհ» (1974) պատմավեպը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–5, 1976–80), «Ժամանակի հանգույցներում» (1982) ինքնակենսագր. ասք-վիպասանությունը, «Քսանմեկ տարի Ավետիք Իսահակյանի հետ» (1984) հուշագրությունը: Հայ. է թարգմանել ֆինն. «Կալևալա» (1972) էպոսը:

Ֆինլանդիայի «Կալևալա» ընկերության պատվ. անդամ (1974):

Գրկ. Հմայակ Սիրաս: Մատենագիտություն, Ե., 1980:



Հմայակ Սիրաս

ՍԻՐԱՎՅԱՆ Հենրիկ Նիկոլայի (18.12.1928, Երևան–15.3.2001, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1977): Ավարտել է ԵԳՈՒ (1948), ԵԳԹԻ (1954): 1960–70-ական թթ-ին աշխատակցել է «Ծիծեռնակ», «Պիոներ» (լավագույն ձևավորման համար մրց.՝ 1969) մանկ. ամսագրերին: Նկարազարդել և ձևավորել է Դ. Դեմիրճյանի «Պույ-պույ մուկիկը» (1964) և «Արջուկ-լրջուկ» (1966), Ա. Թուրաջյանի «Արջը կրակեց» (1963), Պ. Միքայելյանի «Զարմանալի ծիլը» (1962) և այլ գրքեր:

ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամություն» շքանշան (1986):

Գրկ. Հենրիկ Սիրավյան (կազմ.՝ Դ. Սիրավյան, Գ. Սիրավյան), Ե., 2008:



Հենրիկ Սիրավյան.
Պ. Միքայելյանի «Զարմանալի ծիլը» (1962, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Սիրիայում լույս տեսած հայ. առաջին տպագիր հրատ-ը «Ֆռաթ» («Եփրատ», Հալեպ, 1868–77) եռօրյա թերթն է, որը օսմ-ի, արաբ-ի, արաբատառ թուրք-ի հետ ունեցել է նաև հայատառ թուրք. բաժին: Սիրիահայ համայնքն ստվարացել է հատկապես Մեծ եղեռնից հետո, երբ բազմահազար արևմտահայեր ապաստանել են Հալեպում, Դամասկոսում և այլուր:

Հալեպը Սփյուռքի հրատարակչ. կարևորագույն կենտրոններից է, որտեղ գործել են շուրջ 3 տասնյակ հայկ. տպարաններ: Տեղի հայկ. առաջին տպարանը՝ «**Հայ ձայնը**» (տնօրեն՝ Սեդրակ Կեպենլյան), 1918–19-ին տպագրել է նույնանուն պարբ-ը: 1918–65-ին Հալեպում գործել է «**Սեպաթ**» տպարանը (տնօրեն՝ Հովսեփ Աճեմյան, տպագրել է Մ. Նաճարյանի «Էջ մը Տիգրանակերտի տարեգրութենէն» (1919) և այլ գրքեր], 1922–26-ին՝ «**Սուրիական մամուլ**»-ի (տնօրեն՝ Բյուզանդ ***Թոփալյան***, համանուն թերթը, Հայ որբանոցի «Տեղե-


Սիրիայի հայկական տպագրություն



Մ. Նաճարյանի «Էջ մը Տիգրանակերտի տարեգրութենէն» (1919, «Սեպաթ») գրքի տիտղոսաթերթը



«Սեւան» (1946, Հալեպ) պարբերագրքի շապիկը



«Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու» (1973, «Արփի») գրքի կազմը

կագիրը», «Գիտական շարժում» ամսագիրը), 1922–45-ին՝ «**Քոլեջ**» [տնօրեն՝ Սարգիս Լալայան, տպագրել է հիմնականում հայատառ թուրք. գրակ., նաև Տ. Անդրեասյանի «Զէյթունի տարագրութիւնը եւ Սուէտիոյ ապստամբութիւնը» (1935) երկը, Ժ. Խրլոպյանի «Բառարան գաղղիերէնէ հայերէն»-ը (1936), Ա. Արմանի «Խաչբուռ» (1944) բանաստեղծությունների ժող-ը ևն, նաև Ամերիկյան քոլեջի ուսանող. «Գրասէր» պաշտոնաթերթը], 1922–63-ին՝ ավետարան. հոգևոր եղբայրության «**Մարանաթա**» [տնօրեն՝ Բ. Թոփալյան, տպագրել է հայ. և հայատառ թուրք. հոգևոր թերթիկներ, օրացույցներ, քարոզ-տետրեր, գրքույկներ, համանուն ամսաթերթը], 1924–30-ին՝ «**Արաքս**» [տնօրեն՝ Բ. Թոփալյան, տպագրել է «Օրագրութիւն ուղեւորութեան յԵւրոպա Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիոյ» (1928), «Ցրոնքցի Սուրբատ Պետրոսեան» (կազմ.՝ Ա. Արշակունի, 1929), Գ. Հովսեփյանի «Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից» (1930) գրքերը, Բ. Թոփալյանի «Այգահանդէս» (1930) բանաստեղծությունների ժող-ը ևն], 1924–42-ին՝ «**Արարա**» [տնօրեն՝ Եղիազար Պենյան, տպագրել է Վարուժանակի «Դեղին երգեր» (1927) բանաստեղծությունների ժող-ը, Ս. Բյուրատի «Վերջին բերդը» (1929) վեպը և «Արիւնի ձորը» (1932) վիպակը, Հ. Մուրադյանի «Կեանքի մէջ» (1934) բանաստեղծությունների ժող-ը ևն, նաև «Եփրատ» (1927–49) պարբ-ը, թարգման. և հայատառ թուրք. գրակ.], 1929-ից՝ «**Անի**» [հիմնադիր-տնօրեն՝ Ավետիս Էքմեքճյան, տպագրել է Ա. Երեցյանի «Միրիկներ» (1937) բանաստեղծությունների ժող-ը, Ա. Կիտուրի «Հոգին եւ նիւթը» (1938), Ա. Սյուրմեյանի «Պատմութիւն Հալէպի հայոց» (հ. Ա, 1938) երկերը, «Հայերէն երգէ» (պր. 8–13, 1943–47) պատկերազարդ երգարանը, Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» (1946) ժող-ը, «Ակնայ բարքերն ու գաւառաբարբառը» (կազմ.՝ Մ. Գալենտեր, 1948), Պ. Ճիզմեճյանի «Հայերէն արշխարհաբար լեզուի լիակատար բառարանը» (հ. Ա–Բ, 1954), Ս. Կապուտիկյանի «Քերթուածներ» (1954) բանաստեղծությունների ժող-ը, Թլկատինցու «Ընտիր երկերը» (1958), Մ. Սեպուհի «Հաճընի ողբերգութիւնը» (1960) ևն, նաև դասագրքեր, «Սուրիա», «Նոր սերունդ» պարբ-ները], 1930–49-ին՝ «**Տեր-Սահակյան**» [«Արաքսի» հիմքի վրա, տնօրեն՝ Ավետիս Տեր-Սահակյան, տպագրել է Վ. Թեքեյանի «Երեք փունջեր» (1934) բանաստեղծությունների ժող-ը, Ա. Սյուրմեյանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց» (հ. Բ, 1936), «Կոմիտաս: Ժողովրդային երգարան» (կազմ.՝ Ա. Տեր-Սահակյան, 1937), Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» (1942) պոեմը, Ա. Ծառուկյանի «Առագաստներ» (1939), Զ. Մելքոնյանի «Ես եւ մարդիկ» (1942–43) բանաստեղծությունների ժող-ները, դասագրքեր, բառարաններ, պարբ-ներ], 1934-ից՝ «**Ոդթոս**» [առաջին օֆսեթ տպարանը Հալեպում, տնօրեն՝ Թորոս Թերճանյան, տպագրել է Ա. Արարատի «Կրակէ արդարութիւն» (1946) պատմվածքների ժող-ը, «Սուրբ Անտոն...» (թարգմ.՝ Հ. Չամիչյանի, 1964) ևն], 1936–41-ին՝ «**Պոզոքլյան**» (տնօրեն՝ Մինաս Պոզոքլյան, տպագրել է հոգևոր գրքեր, թերթիկներ, օրացույցներ), 1937-ից՝ «**Տիգրիս**» [տնօրեն՝ Վարդգես Գրիգորյան, տպագրել է Հ. Թումանյանի «Սասունցի Դաւիթ» (1939) պոեմը, Ս. Ալաջաջյանի «Վշտի ծաղիկներ» (1942), Պ. Պարգևի «Մշուշոտ կատարներ» (1944), Ա. Տոնճոյենցի «Սրտի կայլակներ» (1948) բանաստեղծությունների ժող-ները ևն], 1938–39-ին՝ «**Արձագանք**» [տնօրեններ՝ Հրանտ Տևեճյան, Վարդան Երեմյան, տպագրել է Հ. Տևեճյանի «Հայ ազգի ծագումը», Հ. Սողոմոնյանի «Հայ դպրութիւնը հեթանոսական շրջանին», Խ. Գաբիկյանի «Հայկական հարցը», Վ. Երեմյանի «Հայկական ոսկեդար» (բոլորը՝ 1938) ևն], 1941-ից՝ «**Ճիզմեճյան**» [տնօրեն՝ Դանիել Ճիզմեճյան, տպագրել է հիմնականում հոգևոր գրքեր, թերթիկներ, օրացույցներ, նաև

Ժյուլ Վեռնի «Աշխարհի շրջանը ութսուն օրուայ մէջ» (թարգմ.՝ Մ. Ճիզմեճեանի, 1965) ևն], 1942–49-ին՝ **«Եփրատ»** (*«Եփրատ»* թերթը), 1944–46-ին՝ **«Սևան»** [նախաձեռնող՝ Հալեպահայ ուսուցչ. միություն, տնօրեն՝ Ձորջ Մակարյան, տպագրել է «Աշակերտին բարեկամը» և «Անմահ քերթողներ» մատենաշարերի մի շարք գրքեր, Լ. Բաշալյանի «Պատմուածքներ», Հ. Քեշիշյանի «Արշալոյսէն առաջ» պատմվածքների ժող-ները, Վ. Տերյանի «Ընտիր քերթուածներ», Մ. Թոլոլյանի «Մթնոլորտ» (բոլորը՝ 1945) բանաստեղծությունների ժող-ները, նաև «Սեւան» (2 համար) գրակ-յան և արվ-ի պարբերագիրքը], 1945–55-ին՝ **«Նայիրի»** [տնօրեն՝ Անդրանիկ ***Ծառուկյան***, 1951-ից՝ Սամուել Քյուրեճյան, տպագրել է ***«Նայիրի»*** գրական ամսագիրը, «Նայիրի» մատենաշարով մի շարք գրքեր, նաև Կ. Մկրտչյանի «Կապոյտ ձայն» (1946), Մուշեղ Իշխանի «Հայաստան» (1946) բանաստեղծությունների, Է. Պոյաճյանի «Հողը» (1948) պատմվածքների ժող-ները, «Յեղափոխական երգեր» (1950), «Հայ գրողներ» (1951) ժող-ները, բառարաններ, դասագրքեր ևն], 1946-ից՝ **«Արևելք»** [տնօրեն՝ Օննիկ Մելիքսեթյան, 2007-ից՝ Ասատուր Արամյան, տպագրել է ***«Արեւելք»*** օրաթերթը, Ա. Երեցյանի «Գէորգ Չաուշ» (1952) դրաման, Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» (1954) ժող-ը, Ռ. Լ. Սթիվենսոնի «Գանձերու կղզին» (թարգմ.՝ Հ. Պարսումյանի, 1954), Գ. Թագվորյանի «Պահակը պատնէշին վրայ» (1956) վեպերը, Հ. Չոլաքյանի «Քեսապ» (հ. Ա–Գ, 1995–2004) աշխատությունը ևն], 1949-ից՝ **«Ոսկետառ»** [տնօրեն՝ Գառնիկ Մանուշակյան, 1958-ից՝ Գրիգոր Պուրճյան, տպագրել է Ա. Իսահակյանի «Հատընտիրը» (1955), Ռ. Ճեպեճյանի «Մտերիմ զրոյց ուղղագրութեան հարցին շուրջ» (1970), Հ. Պարոնյանի «Մեծապատիւ մուրացկաններ» (ա. թ.), Թ. Թորանյանի «Հաւատամքի կամուրջ» (2010) ևն, նաև «Նոր Մարաշ» և այլ պարբ-ներ], 1951-ից՝ **«Շիրազ»** [տնօրեն՝ Անդրանիկ ***Արարատ*** (Նաճարյան), տպագրել է Մ. Գուշագճյանի «Կեանքի կարօտ» (1957) բանաստեղծությունների, Ա. Արարատի «Ծիլ մը անապատի մէջ» (1965) պատմվածքների ժող-ները, Թ. Թորանյանի «Վերստին կարդալով Շահան Շահնուրը» (1971) ևն, «Գրասէր», «Հայ պատանի», «Փունջ», «Երկիր» պարբ-ները, ***«Աշակոյթ»*** պարբերագիրքը], 1951–54-ին՝ **«Արփի»** [տնօրեններ՝ Արա Տեմիրճյան և Ներսես Նալբանդյան, 1954-ից՝ «Հալեպ», տպագրել է Հ. Պարիկյանի «Այգեկութք» (1962) բանաստեղծությունների, Լ. Սյուլահյանի «Թափառող հոգիներ» (1970) պատմվածքների ժող-ները, «Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու» (կազմ.՝ Հ. Պարիկյան, Հ. Վարժապետյան, 1973) ևն], 1955-ից՝ **«Մասիս»** [տնօրեն՝ Գեղամ Ատուրյան, տպագրել է Ռ. Սևակի «Ծաղկեփունջ» (1956) նորավեպերի ու պատմվածքների, Մ. Սևանի «Երդում» (1959), Ս. Քեշիշյանի «Իմ երգը» (1963) բանաստեղծությունների ժող-ները, բառարաններ ևն], 1956-ից՝ **«Հրապո»** (1-ին օֆսեթ տպ., տնօրեններ՝ Հրանտ Գազանճյան, Հակոբ Ղազարոսյան, Պողոս Գաբիկյան, տպագրել է գեղ. գրակ., գունավոր ալբոմներ, դասագրքեր), 1959–63-ին՝ **«Գարուն»** (հայտնի է նաև արաբ. «Րապի» անունով, տնօրեն՝ Անդրանիկ Այվազյան, տպագրել է գեղ. գրքեր, ալբոմներ, բառարաններ ևն), 1992–2012-ին՝ ***«Կիլիկիա»*** (տնօրեն՝ Մաթիկ ***Էպլիղաթյան***) և այլ տպարաններ:

Հալեպում հայ. գրքեր տպագրվել են նաև արաբ. «Մարոնիթ», «Էլ Մաարէֆ», «Ահրամ», «Ֆեճըր», «Ֆընուն», «Շեպեպ», «Էլ Շարըք», «Վագըթ», «Հուրիէ», «Սաատ» և այլ տպարաններում:

Դամասկոսում գործել է «Եվրիքյան» (1933-ից), Ալեքսանդրետում (այժմ՝ Թուրքիայում)՝ «Ալեքսանդրետ» (1924–25) հայկ. տպարանները:

Սիրիայում 1918-ից ցայսօր տպագրվել են շուրջ 150 անուն հայ. պարբ-ներ, մեծ մասը՝ Հալեպում: Կարևոր հրատ-ներից են ՌՍԿ-ի Կիլիկիայի շրջ. վարչության ***«Հայ ձայն»*** (1918–22) քաղ., տնտ. և


Սիրիայի հայկական տպագրություն




Հ. Չոլաքյանի «Քեսապ» (հ. Ա, 1995, «Արևելք») գրքի կազմը



«Գոյապատում» (2002, «Կիլիկիա») գրքի կազմը



Թ. Թորանյանի «Հաւատամքի կամուրջ» (2010, «Ոսկետառ») գրքի կազմը



Սիրվարդի *«Մեծն Մուրատ» (1955, Փրովիդենս) գրքի կազմը*



Հակոբ Սիրունի



Հ. Սիրունու *«Պոլիս եւ իր դերը» (հ. Գ, 1987, Անթիլիաս) գրքի կազմը*

գրական օրաթերթը, ՍԴՀԿ Հալեպի մասնաճյուղի «Եփրատ» (1919) շաբաթաթերթը, ՍԴՀԿ Սիրիայի շրջանի *«Սուրիական մամուլ»* (1922–1927), ՌԱԿ-ի *«Եփրատ»* (1927–49), ՀՅԴ Սիրիայի շրջանի *«Արեւելք»* (1946–63) պաշտոնաթերթերը, «Յեղափոխական ալպոմ» (1949–61, 1962–75-ին՝ Բեյրութում) պարբերաթերթը, «Արեւելք–Մարզաշխարհ» (1957–63) շաբաթաթերթը, *«Նոր աւետարեր»* (1927–34) կրոն. երկշաբաթաթերթը, «Տաթև» (1925–30) կրոն. տարեցույցը, ազգ., գրական *«Նայիրի»* (1941-ից, 1952-ից՝ Բեյրութում) պարբ-ը, *«Նոր Մարաշ»* (1946–61), «Բարձունք» (1958–71) տարեգրքերը, *«Սուրիա»* (1946–60) անկախ օրաթերթը, «Բուրաստան» (1950–58) մանկապատանեկան պարբերաթերթը, *«Հայ ծերանոց»* (1952–2012) եռամսյա տեղեկատու հանդեսը, «Լրատու» (1964–80) կրոն. շաբաթաթերթը, «Աշակոյթ» (1967, 1970, 1972) պարբերագիրքը, *«Գեղարդ»* (1975–2000) տարեգիրքը, «Ցոլքեր» (1991–92, 1995–97) աշակերտ. պարբերաթերթը ևն: Ներկայում լույս են տեսնում Հայ կաթողիկե առաջնորդարանի «Պարբերաթերթ» (1960-ից) կրոն., ազգ., գեղ., Բերիո թեմի ազգ. առաջնորդարանի *«Գանձասար»* (1978-ից) պաշտոնաթերթերը, Քարեն Եփփե ազգ. ճեմարանի «Ծիլեր» (1961–64, 1972-ից) պարբերաթերթը:

Գրկ. Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու (կազմ.՝ Հ. Պարիկյան, Հ. Վարժապետյան), Հալեպ, 1973: Չոլաքեան Հ., *Հալէպի պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, Հալեպ, 1978:*

ՍԻՐՎԱՐԴ (Գրիգորյան) Եղիա [1890, գ. Մորենիկ (Խարբերդի նահանգ)–24.12.1985, Գրեստոն (ԱՄՆ)], հրապարակագիր, մշակույթի գործիչ, խմբագիր: ՍԴՀԿ անդամ: Սովորել է Մեզիրեհի Կեդրոն. վարժարանում: 1907-ին մեկնել է ԱՄՆ. 1910-ական թթ-ի սկզբից մասնակցել է *«Երիտասարդ Հայաստան»* շաբաթաթերթի, 1918–20-ին՝ «Վերածնութիւն» (Բոստոն) ամսաթերթի խմբագրմանը: 1935–40-ին՝ *«Հնչակ»* ամսաթերթի խմբագիր: Կազմել և հրատարակել է «Հնչակեան տարեգրքի» Ա և Բ հատորները (1931–32), «1903–1953. Յիսնամեակ «Երիտասարդ Հայաստանի»» (1953) հատորը:

Լույս են տեսել Ս-ի «Ուխտաւորի մը նամակները» (1934), «Խորհրդաւոր յեղափոխականը» (1953, Փ.), «Մեծն Մուրատ» (1955, Փրովիդենս, 1991), «Արամ Ազըգպաշեան» (1957, Փրովիդենս) գրքերը:

ՍԻՐՈՒՆԻ (Ճոլոյան) Հակոբ Առաքելի [18.4.1890, Ադաբազար (Թուրքիա)–7.4.1973, Բուխարեստ)], հայագետ, գրող, գրականագետ, հրապարակախոս, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Եսայան վարժարանում (1901–04), համալսարանի իրավաբանության ֆակ-ում (1909–13): Խմբագրել և հրատարակել է *«Նաւասարդ»* (Դանիել *Վարուժանի* հետ) տարեգիրքը, 1918–19-ին՝ *«Արիամարտ»* պարբ-ը: 1922-ին բնակություն է հաստատել Ռումինիայում: Բուխարեստում 1922–23 և 1931-ին խմբագրել է *«Նոր արշալոյս»*, 1923–26-ին՝ *«Նաւասարդ»*, 1932–44-ին՝ *«Արագ»*, 1935–38 և 1941, 1942–43-ին՝ *«Մնի»* (ռում.) և այլ պարբ-ներ: Ս-ի պատմվածքները, հուշագրությունները, դրամատիկ. գործերը տպագրվել են ժամանակի պարբ-ներում [«Կեանքի մրուրէն» («Արեւելք», «Բիւզանդիոն», 1907), «Բանտի յուշատետրէս» («Ազատամարտ», «Եգիպտահայ տարեցոյց», 1914–15) ևն]:

Լույս են տեսել Ս-ի «Մթնշաղ» (1908, ԿՊ, Զարեհ Պերպերյանի տպ.), «Գիշերէն վերջ...» (1908, նույն տպ.), «Դէպի տաճարն հրաշքին» (1914, ԿՊ, Նշան Պապիկյանի տպ.) բանաստեղծությունների ժող-ները, «Հայ մշակույթի պատմության ժամանակագրություն» (ռում., 1935–41), «Հայերի ժամանակագրական պատմություն (հնագույն շրջանից մինչև 859)» (ռում., 1942–43), «Հայաստանը ըստ թուրք աշխարհագիրներու» (1965), «Թանզիմաթ եւ հայերը» (1966) պատմագիտ., «Ռուբէն Զարդարեան» (1925), «Երուանդ Օտեան» (1927), «Մկրտիչ Պեշիկթաշլեան» (1930), «Խրիմեան Հայրիկ» (1934), «Ինչպես որ էին: Դանիել Վարուժան» (ռում., 1940), «Կոմիտասին հետ» (1965–69), «Մի-սաք Մեծարենց» (1968–69), «Յովհաննէս Թումանեան» (1969) գրականագիտ., «Ռումինական բառեր Տրանսիլվանիայի հայերի բարբառում» (1927), «Ռումի-

նիայի վերաբերյալ նոթեր հայ մի հեղինակի մոտ: Հ. Ղուկաս Ինճիճյան» (ռում., 1928), «Ռումինահայ քրոնիկոն» (մաս 1–2, 1933–34), «Քաղուածքներ Կամենեցի հայերի ժամանակագրութիւնից (1430–1611)» (մաս 1, 1936), «Միխայիլ Էմինէսքու» (1939), «Նօթեր Արճէշ քաղաքէն» (1942), «Հայ եկեղեցին Ռումէն հողի վրա» (1966, Էջմիածին), «Նիքոլա Եորկային հետ: Կեանքն ու գործը» (1972, Աթէլիաս), «Գարեգին պատրիարք Խաչատուրեան» (2003, Ստամբուլ) ձեռագրագիտ., աղբյուրագիտ., մատենագիտ., լեզվաբ. աշխատությունները, «Պոլիս եւ իր դերը» (հ. Ա–Դ, հրտ.՝ 1965–98, 2010) ուսումնասիրությունը:

Ս. հայտնաբերել և հրատարակել է Ռումինիայի պատմությունը լուսաբանող հայ. և թուրք. աղբյուրներ [«Թուրքական հրոսակախմբերի անծանոթ մի արշավանք Ռումինիայում 1769 թ.» (1940), «Ռումին իշխանները Բ Դռան մոտ» (1941), «Թուրքական դրամների շրջանառությունը ռումինական երկրներում» (1944), բոլորը՝ ռում.]:


Երկ. Ինքնակենսագրական նօթեր, Ե., 2006:

Գրկ. Մատենագիտություն պրոֆ. Հ. Ճ. Միրոնու հայագիտական աշխատասիրությունների, «Էջմիածին», 1971, № 1: Հ. Ճ. Միրոնու գրական երկերի մատենագիտությունը, «ԲՀԱ», № 3, 1977:

ՍԻՐՈՒՆՅԱՆ Էդուարդ (1.5.1865, Կ. Պոլիս–25.6.1937, Վենետիկ), փիլիսոփա: Մխիթարյան միաբանության անդամ: Ավարտել է Հռոմի Դոմինիկյան համալսարանը (1890): Դասավանդել է Վենետիկի Սուրբատ–Ռափայելյան վարժարանում, 1895–97-ին՝ վարժարանի վարիչ-ուսուցչապետ, 1906–09-ին՝ Վենետիկի Սբ Ղազարի տպարանապետ:

Ուս. նպատակներով, եվրոպ. դասագրքերի ընդօրինակությամբ, գրել է «Միջին ընթացք իմաստասիրութեան» (1899, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը: Հայ-ից ֆրանս. է թարգմանել Ղ. Ալիշանի «Սիսուան», ֆրանս-ից հայ.՝ Լամոթի «Աստուածաբանական խնդիրներ» (1930) աշխատությունները:

Գրկ. Թևոսյան Ա., Հայ տրամաբանական միտքը XIX դարում, Ե., 1976, էջ 259–272:



«Սիփան», *1925-ից, Բեյրութ (1994)*

«ՍԻՓԱՆ», Հայ ավետարան. քոլեջի պատկերազարդ տարեգիրք (մինչև 1964-ը՝ պարբերաթերթ, հրատարակվել է ընդմիջումներով): Լույս է տեսնում 1925-ից Բեյրութում: Խմբագիրներ՝ Արտաշես ***Տեր-Խաչատուրյան***, Երվանդ ***Քասունի***, Կարո Պետրոսյան, Բաբկեն Զանոյան, Զավեն Սնըրլյան (1965-ից): Տպագրում է պատմաբանասիր., մշակութ., կրոն. և այլ թեմաներով նյութեր:

ՍԼՈՒՇԿԵՎԻՉ Էուգենիուշ (1901–1981), լեհ լեզվաբան, հայագետ: Տորունի (Լեհաստան) համալսարանի պրոֆ. (1945):

Ս. գրել է Լեհաստանի հայկ. գաղթավայրերի պատմության, հայոց լեզվի, գրակ-յան ու մշակույթի մասին [«Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենում» («Ռոչնիկ Օրիենտալիստըչնի», հ. 14, 15, 1939, 1949), «XVII դարի հայկական երեք փաստաթուղթ» (նույն տեղում, հ. 27–28, 1964–65), «Լվովի հայոց համայնքի ավագների երդումը ըստ Սիգիզմունդ I-ի 1519-ին հաստատած հին հայկական իրավական օրենսգրքի» (նույն տեղում, հ. 30, 1966), «Հայկական առածներ» («Պրոբլեմի», № 5, 1960)]: Կազմել է Լեհաստանի հայկ. ձեռագրերի ցուցակը (1958): Ս. հոդվածներ է գրել Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու, Սայաթ-Նովայի, Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի և ուր. մասին:



«Սկեւռայի Աւետարան». *Մարկոսի Ավետարանի անվանաթերթը՝ գլխա- և լուսանցազարդերով ու սկզբնագրով (1197, ծաղկող՝ Գրիգոր Սկևռացի)*

«ՍԿԵՒՌԱՅԻ ԱՒԵՏԱՐԱՆ», **«Լվովի Աւետարան», «Լեմբերգի Աւետարան»**, 1197-ի մագաղաթե ձեռագիր մատյան: Գրիչ և մանրանկարիչ՝ ***Գրիգոր Սկևռացի***, պատվիրատու՝ Ներսես Լամբրոնացի: «Ս. Ա.» գրված է բոլորաձև երկաթագրով (426 էջ, 28,9 x 21,5 սմ):

1592-ին լեհահայ մեծահարուստ Թորոս Բեռնարտովիչի (Պեռնաթենց) պատվերով Ավետարանը նորոգվել է, մինչև 1830-ը այն պահվել է Լվովի հայկ. համայնքում, Երկրորդ համաշխ. պատերազմի (1939–45) ժամանակ ձեռագիրը Լվովի հայկ. արքեպիսկոպոսարանից անհետացել է: 1993-ին գերմանացի բյուզանդագետ Գ. Պրինցիգն այն հայտնաբերել է Լեհաստանի Գնիեզնո քաղաքի արքեպիսկոպո-




Հայկական ձեռագրերում հանդիպող զարդապտառ **սկզբնագրերի** *նմուշներ*

Սկզբնագրով էջեր



Աղոթագիրք (1798, Կ. Պոլիս, Մատթեոս Դպիրի փպ.)



«Դրախտ հոգւոյ» (1724, Վնտ.)

սարանում. այնտեղից ձեռագիրն ուղարկվել է Գերմանիայի Մայնց քաղաքի Գուտենբերգի թանգարան՝ վերանորոգման: 1997-ին «Ս. Ա.» ցուցադրվել է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում՝ «Բյուզանդիայի փառքը» ցուցահանդեսում:

«Ս. Ա.»-ի պատկերազարդումն ընդգրկում է Եվսեբիոս Կեսարացու թուղթը (Եվսեբիոսի և Կարպիանոսի կիսանդրիների պատկերներով), 7 խորան (պակասում է Բ կանոնի խորանը): Յուրաքանչյուր Ավետարանի սկզբում նստած ավետարանչի պատկերն է (միայն Հովհաննեսն է կանգնած) և շքեղ անվանաթերթը՝ ավետարանիչների խորհրդանիշները ներառող գլխատառով, բուս. զարդատառերով, ո-աձև կրկնակի կամ լյունետով (կամարային) հատված մեծ ուղղանկյուն գլխազարդով, նաև ծաղկած խաչով ավարտվող լուսանցազարդով: Ձեռագրի լուսանցքներում պատկերված են զարդեր և ավետարան. անձինք: Բացակայում են ամբողջ էջով տերուն. տոների պատկերները: Հիմն. գույները (կարմիր, կապույտ, կանաչ, օգտագործել են նաև ոսկի), զարդերը, թռչունների ու կենդանիների իրական և երևակայական պատկերները, լուսանցազարդերը դարձել են XIII դ-ի կիլիկյան մանրանկարչության հիմքը:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Սկեւռայի Աւետարանը 1197 թուականէն Լվովի հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մէջ, Վնտ., 1930: Das Lemberger Evangeliar. Eine wiederentdeckte armenische Bilderhandschrift des 12 Jahrhunderts. Herausgegeben von A. von Euw, Chr. Hannick, M. K. Krikorian, A. Lang-Edwards, G. Prinzig, A. Schmidt, Christian Weise, Wiesbaden, 1997.*

ՍԿԵՎՌԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, բարձր տիպի դպրոց Սկևռայի վանքում, որտեղ XII–XIII դդ-ում վերելք են ապրել գրչությունը, մանրանկարչությունը, փորագրությունը: Դպրոցի առաջին (մինչև XIII դ-ի սկիզբ) շրջանը պայմանավորված էր Ներսես Լամբրոնացու գործունեությամբ, ստեղծագործել են նաև ***Գրիգոր Մլիճեցին, Կոստանդին, Արիստակես***, Սամվել, Հովսեփ, Հուսիկ, Ներսես և այլ գրիչներ ու մանրանկարիչներ: Երկրորդը համընկել է ***Գրիգոր Սկևռացու*** գործունեության հետ: Այս շրջանի նշանավոր գործիչներից են ***Գրիգոր Պիծակը, Սարգիս Պիծակը,*** Սիոն ծաղկողը, րաբունապետներ Սիմեոնը, Խաչատուրը, ***Մովսես Երզնկացին***, հայտնի գրիչներ Ավետիսը, Ստեփանոս Իրիցու որդին և ուր.: Ընդօրինակված և մեզ հասած ձեռագրերն ու մատյանները պահվում են Մատենադարանում:

Գրկ. **Բադալյան Հ.**, *Սկևռայի գրչության կենտրոնը: Ակրոմ-ռառանսատիրություն, Ե., 2013:*

ՍԿԶԲՆԱԳԻՐ, սկզբնատառ, ինիցիալ (<լատ. initialis–սկզբնական), խոշորաչափ գլխատառ՝ տեքստի՝ գլխի, նրա մասի կամ պարբերության սկզբում: Գրքի (մատյանի) ձևավորման ինագույն տարր է: Ձեռագիր մատյաններում Ս. ճոխ պատկերազարդվել է բույսերի, կենդանիների և մարդու ֆիգուրներով: Տպագիր գրքերում Ս. գրվել է տեքստի տառատեսակաշարի խոշորաչափ ձուլածո կամ փորագիր տառերով: Ձևավորումը կատարվել է հրատ-յան ընդհանուր ոճավորմանը համապատասխան:

Հայկ. ձեռագրերում Ս. գրվել է բնագրի տառաչափից 1,5–2 և ավելի անգամ խոշոր՝ գրադաշտից դուրս՝ լուսանցքում, հետագայում ամբողջովին ներառվել է գրադաշտի մեջ, իսկ վերև ու ներքև ձգվող երկար գծերն ավելի են երկարել: Ս-երը գրել են հիմնականում մեսրոպյան ***երկաթագրով:*** X դ-ից, երբ գործածվել է ***բոլորգիրը,*** որպես Ս. օգտագործվել է նաև ***գրչագիրը:*** Բոլորգիրն իր հերթին օգտագործվել է որպես Ս՝ ***նոտրգրի*** համար (չնայած վերջինս ունեցել է նաև սեփական Ս.):

ՍԿԶԲՆԱԷՋ, սկզբնաթերթ, էջ, որով սկսվում է հրատ-ը, նրանում ներառված առանձին ստեղծագործությունը, բաժինը (մաս, գլուխ ևն), ենթաբաժինը: Լինում է էջէջքով, որի չափն ամբողջ հրատ-յան մեջ պահվում է հաստատուն, և առանց դրա, համաձայնեցվում է նախորդող ***վերջնաէջի*** հետ:

Մինչև 1900-ական թթ. տպագրված հայ. գրքերում առաջին Ս-երը, որպես կանոն, սկսվել են ***գլխազարդերով*** և վերնագրերով (գլխատառ), հաջորդները՝ նաև առանց գլխազարդի:

Ձեռագիր մատյաններում Ս. հաջորդում է տիտղոսաթերթին, Ավետարաններում՝ ավետարանառաջներին (ավետարանիչների և տերուն. պատկերներ), և աչքի է ընկնում խոշոր, երբեմն՝ ամբողջ էջով ձգվող ***սկզբնագրերով և լուսանցազարդերով:***

«ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ», Ստեփաննոս Աբգարյան Անկյուրացու երկը բնական երևույթների մասին: Տպագրվել է 1796-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Տիտղթ-ին՝ «Գրքուկ որ կոչի Սկզբունք բնական գիտութեանց...» (80 էջ, 8º, 14 x 9 սմ):

«ՍԿԶԲՈՒՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ», դասագիրք մանուկների համար: Ռուս-ից թարգմ.՝ Աննա Դիլանչյանի: Տպագրվել է 1785-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում (43 էջ, 4º, 11,3 x 6,5 սմ):

«ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒ ՈՒՍՈՒՑՄՈՒՆՔ ԿԵՆԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻ», կարդինալ Հովհաննես Պոնայի դավանաբան. երկը: Թարգմ.՝ Թեոդորոս Կրոնավորի: Տպագրվել է 1744-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (358 էջ, 12º և 6º, 9 x 4,7 սմ): Ըստ Ներսես Տեր-Ներսեսյանի՝ հրատարակիչը հավանաբար Մխիթար Սեբաստացին է:

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, **Սմբատ Գունդստաբլ** (1208–1276), զորավար, պետ. գործիչ, դիվանագետ, իրավագետ, պատմագիր Կիլիկյան Հայաստանում: ***Հեթումյանների*** տոհմից: Հայոց սպարապետության գործակալությունը վարել է 1226-ից. կազմակերպել է երկրի պաշտպանությունը:

Ս. Ս. եղել է Հայոց գերագույն ատյանի՝ Վերին կամ Մեծ դարպասի անդամ, մասնակցել պետ. գործերին և երկրի կառավարմանը: 1265-ին հին ֆրանս-ից հայ. է թարգմանել ***«Անտիոքի ասիզները»***: Նույն թվականին կազմել է իր նշանավոր **Դատաստանագիրքը**՝ Կիլիկիայի հայկ. պետության հաս. հարաբերությունները կարգավորելու համար, որը Կիլիկյան Հայաստանում կիրարկվել է մինչև պետության անկումը (1375): Աղբյուրագիտ. առումով՝ այն Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է՝ Կիլիկիայի պայմաններին համապատասխանեցված, կրճատված և կիլիկյան աշխարհաբարի վերածված: Հայտնի է ձեռագրի 2 օրինակ, որոնք պահվում են Մատենադարանում (ձեռ. № 487) և Վենետիկի Մխիթարյան գրադարանում:


Ս. Ս-ի Դատաստանագիրքն առաջին անգամ հրատարակվել է 1918-ին (աշխատասիր.՝ Ա. Ղլտճյանի, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., 2008): Թարգմանվել է գերմ. (1905, աշխատասիր.՝ Յ. Կարստի) և ռուս. (1958, աշխատասիր.՝ Ա. Գալստյանի):

Ս. Ս-ի «**Տարեգիրք**» պատմ. երկը 951–1272-ին Մեծ Հայքում, Կիլիկյան Հայաստանում և այլուր տեղի ունեցող քաղ. դեպքերի համառոտ ժամանակագրությունն է: Առաջին անգամ հրատարակվել է 1856-ին Մոսկվայում՝ «Սմբատայ սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց պատմութիւն յունաց ի Կ. Պոլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց» (Վլադիմիր Գոթիեի տպ.) վերնագրով: Լույս է տեսել նաև 1956-ին Վենետիկում (Սբ Ղազարի տպ.), թարգմանվել է ֆրանս. (թարգմ.՝ Վ. Լանգլուայի, 1862, ՍՊբ, 1869, Փ.), ռուս. (մասնակի, թարգմ.՝ Ք. Պատկանյանի, 1873): Ս. Ս-ի անունով պահպանվել են նաև արձանագրություններ, նամակներ, չափածո գործեր: Նշանավոր է 1269-ին Ս. Ս-ի գրած «Ի ճաշոց գրիս» պոեմը՝ նվիրված 1266-ին Մառիում հայեգիպտ. ճակատամարտին: Ս. Ս-ի պատվերով գրված Ավետարանում պահպանվել են իր իսկ ձեռքով արած քերական. շտկումները:


Գրկ. **Ալիշան Ղ.**, *Սիսուան, Վնտ., 1885:* **Նույնի**, *Հայապատում, Վնտ., 1901:* **Գալստյան Ա.**, *Սմբատ Սպարապետ, Ե., 1961:*



«Սկզբունք բնական գիտութեանց» *(Ստեփաննոս Աբգարյան Անկյուրացի, 1796, Հռոմ) գրքի կազմը*



«Սկզբունք քաղաքական ուսմանց» *(1785, ՍՊբ, Գրիգոր Խալդարյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը*



«Սկզբունք եւ ուսուցմունք կենի քրիստոնէականի» *(Հովհաննես Պոնա, 1744, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Սմբատ Սպարապետի Աւետարան». *Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը (վերևում), «Խաչելություն», մանրանկար (ներքևում, 1260-ական թթ., ծաղկող՝ Ավետիք, Մատենադարան, ձեռ. № 7644)*





Կարեն Սմբատյան. *Ղ. Աղայանի «Անտառի մանուկը» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի պատկերազարդումներից*

«ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԱՒԵՏԱՐԱՆ», *Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի* ձեռագիր մատյան (1260–70-ական թթ., Մատենադարան, ձեռ. № 7644): Պահպանվել են միայն պատվիրատուի՝ *Սմբատ Սպարապետի* (Գունդստաբլ) կարճ հիշատակագրությունները: Ձեռագիրը զարդարված է բարձրորակ ներկերով և ոսկու առատ օգտագործմամբ ստեղծված խորաններով, անվանաթերթերով, ավետարանիչների պատկերներով, լուսանցազարդերով:

Կիլիկիայի հայկ. թագավորության անկումից (1375) հետո ձեռագիրը տարվել է Ղրիմ, որտեղ բազմիցս ընդօրինակվել է: Այնտեղ նորոգվել և լրացվել է տերուն. մանրանկարներով («Ծնունդ», «Մուտք Երուսաղեմ», «Ղազարոսի հարությունը», «Պայծառակերպություն», «Խաչելություն», «Դժոխքի ավերում», «Համբարձում», «Հոգեգալուստ»): Պահպանվել է երկրորդ նկարչի՝ Ավետիքի անունը («Խաչելություն» մանրանկարի փոքր արձանագրության մեջ):

Ըստ որոշ տվյալների՝ երկրորդ անգամ նկարազարդվել է 1420-ից հետո, ոճ. աղերսներ ունի XV դ-ի Ղրիմի հայկ. մանրանկարչության հետ: Նույն թվականին Ավետարանը Կաֆայում ընդօրինակվել է առանց տերուն. նկարների:

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:* **Դուռնովո Լ.**, *Հայկական մանրանկարչություն (ալբոմ), Ե., 1967:* **Նույնի**, *Краткая история древнеармянской живописи, Е., 1957;* **Корхмазян Э.**, *Армянская миниатюра Крыма (XIV–XVII вв.), Е., 1978;* **Der Nersessian S.**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, W., 1993.*

ՍՄԲԱՏՅԱՆ Կարեն Վահանի (21.4.1932, Լենինական–28.12.2008, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է ԵԳՈՒ (1957): 1966–81-ին եղել է «Ծիծեռնակ» և «Պիոներ» ամսագրերի գեղ. խմբագիրը:

Նկարազարդել և ձևավորել է Ա. Տոլստոյի «Գայլը և ուլիկները» (1961), Զ. Ռոդարիի «Ձելսոմինոն խաբեբաների աշխարհում» (1969) և «Չիպոլինոյի արկածները» (1983), Վ. Հաուֆի «Փոքրիկ Մուքը», Ժ. Պրևերի «Հեքիաթներ չարաճճի երեխաների համար» (երկուսն էլ՝ 1972), «Սասունցի Դավիթ» էպոսը (Էստ., 1979), Ղ. Աղայանի «Անտառի մանուկը» (1984), Ա. Պարսամյանի «Երկնագույն ափսեն» (1989), Է. Իսաբեկյանի «Իգդիր» (1994), Հ. Խաչատրյանի «Արքայապատում» (1996) և այլ գրքեր: Պատկերազարդել է Փարիզի «Էրերունի» հրատարակչության լույս ընծայած Հ. Թումանյանի «Անբախտ վաճառականներ» (1969), «Չախ-չախ թագավորը» (1977) և «Քաջ Նազար» (1982) գրքերը:

ՀԼԿԵՄ մրց. (1968), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2007):

Երկ. Պատառիկներ օրագրից, Ե., 2012:

Գրկ. **Կարեն Սմբատյան: Պատկերագիրք (առաջար.՝ Պ. Հայթայանի), Ե., 2012:**

ՍՄԲԱՏՅԱՆՑ Մեսրոպ Աբրահամի [Տեր-Կարապետյան-Սմբատյանց Գրիգոր, 10.3.1833, գ. Փորադաշտ (Նախիջևանի գավառ)–9.2.1911, Երուսաղեմ], բանասեր-պատմաբան, եկեղեց. գործիչ: Արքեպիսկոպոս (1888-ից): Սովորել է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում (1847–50): Տաթևի վանքի վանահայր դառնալուց հետո (1866) կազմել է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի անվանացանկը, վանքի գրչագրերի ձեռագրացուցակը և վանահայրերի համառոտ գավազանագիրքը: 1867-ին լինելով Նախիջևանի թեմի փոխանորդ՝ կազմել է այդ գավառի 88 հայաբնակ գյուղերի ցուցակը:

Ս. Հայաստանի տարբեր վայրերից հավաքել է ուրարտ. մի քանի տասնյակ արձանագրություններ, նմանահանել և հրապարակել «Ճռաքաղ», «Համբաւաբեր Ռուսիոյ», «Բազմավէպ», «Արարատ» և այլ պարբ-ներում: Դրանք հետագայում ամփոփել է «Բեւեռաձեւ արձանագրութիւնք Արարատեան նահանգի, 1862–1910» ժող-ում (Մատենադարան, ձեռ. № 4578): Կազմել է 1800-ից մինչև իր օրերն ընդգրկող «Ժամանակագրութիւն»-ը (անտիպ):

Լույս են տեսել Ս-ի «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ» (1895, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Նկարագիր սուրբ Ստեփաննոսի Վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից ուխտատեղաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից...» (1896, Թ., Մովսես Վարդանյանի տպ.), «Նկա-

րագիր Շամախւոյ թեմի» (1897, ա. տ., ա. տպ.), «Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» (1904, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) աշխատությունները:

ՍՅՈՒՆԱՑ շարվածքի, բազմասյունակավոր էջկապի երեսի մի հատվածը՝ էջի ընդհանուր ձևաչափի որոշակի մասնաչափով, որը կից Ս–ից սահմանազատվում է ուղղահայաց միջնաբացատով: Հրատ–յան էջերը (երեսները), շարվածքի չափով և բնույթով պայմանավորված, կապվում (ձևավորվում) են 1, 2 կամ ավելի, լրագրերի էջերը՝ 4–8, գրքերի (բառարան, հանրագիտարան) էջերը՝ 2–4 Ս–ներով, ևն:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», հաս–քաղ. մարզային տասնօրյա թերթ: Լույս է տեսնում 2003–ից Կապանում: Հիմնադիր–խմբագիր՝ Սամվել Ալեքսանյան: Հաջորդել է «Սյունիք» (1996–2000, հիմնադիր–խմբագիր՝ Էդուարդ *Զոհրաբյան*, խմբագիր՝ Գագիկ *Դավթյան*), «Սյունյաց աշխարհ» (2000–03, խմբագիրներ՝ Ս. Ալեքսանյան, Նարա Հովհաննիսյան, Վահրամ Օրբելյան) պարբ–ներին: Լուսաբանում է Սյունիքի մարզի հաս–քաղ. կյանքը, տնտ. վիճակը, հոգևոր և կրթամշակութ. առօրյան, տպագրում վերլուծ–քննադատ. նյութեր, անդրադառնում պատմ. անցյալին, ճանաչված դեմքերի:



«Սյունյաց երկիր», *2003–ից, Կապան*

ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ Լևոն–Զավեն (Սյուրմելյան Զավեն Լևոնի, 1907, Տրապիզոն–3.10.1995, Լոս Անջելես), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գրականագետ: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆ.: Սովորել է Արմաշի երկրագործ. դպրոցում, Կ. Պոլսի Կեդրոն. վարժարանում, Կանզաս Սիթիի (ԱՄՆ) երկրագործ. քոլեջում: 1924–ին Փարիզում տպագրվել է Ս–ի «Լոյս զուարթ» (վերահրտ.՝ 1950, Նյու Յորք, 1972, Բ.) բանաստեղծությունների՝ միակ հայ. գիրքը: Այնուհետև գրել է անգլ.:

Ս–ին մեծ ժողովրդականություն է բերել «Չեզ եմ դիմում տիկիններ և պարոններ» (1945, հայ.՝ 1980, 1984) ինքնակենսագր. վեպը, որտեղ նկարագրված են Մեծ եղեռնի սարսափները. թարգմանվել է իտալ., շվեդ., գերմ., չեխ., հունգ. և այլ լեզուներով: Լույս է տեսել նաև Ս–ի «98.6º» (1950, հայ.՝ 2005) վեպը:

Ս. հայ–ից անգլ. է թարգմանել «Սասնա ծռեր» (1965) էպոսը և հայկ. հեքիաթներ («Անմահության խնձորներ», 1968, ժող.): Նրա գրականագիտ. «Վիպագրության տեխնիկա: Չափ և խենթություն» (1968) աշխատությունն ամերիկյան դպրոցներում օգտագործվում է որպես ուս. ձեռնարկ:

2008–ից գործում է ՀԳՄ «Լևոն–Զավեն Սյուրմելյան» հրատարակչատունը: ՀԳՄ Խ. Աբովյանի անվ. մրց. (1983):



Լևոն–Զավեն Սյուրմելյանի *«Չեզ եմ դիմում տիկիններ և պարոններ» (1984, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ Խաչատուր (1751, Կ. Պոլիս–8.5.1827, Վենետիկ), բառարանագիր, տոմարագետ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, քահանա (1773): Եղել է Վենետիկի Սբ Ղազարի տպարանապետը:

Ս–ի «Համառօտ թուաբանութիւն աշխարհաբառ» դասագիրքը տպագրվել է 1788–ին Վենետիկում՝ Զիովաննի Պիացոյի տպարանում (160 էջ, 8º, 14,1 x 8,2 սմ):

Հեղինակ է նաև «Տոմարագիտութիւն ընդհանուր քաղաքական եւ եկեղեցական» (1818, Վնտ., Սբ Ղազարի տպ., օրացույցի տեսակների, տարբեր տոմարների, այս կամ այն օրը գտնելու միջոցների համեմատաբար ամբողջական ուսումնասիրություն է) աշխատության, համահեղինակ՝ *«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»* (հ. 1–2, 1836–1937, նույն տպ.) բառարանի (Բ–Ջ տառերով բառահոդվածներ):



Խաչատուր Սյուրմելյանի *«Համառօտ թուաբանութիւն աշխարհաբառ» (1788, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

ՍՅՈՒՐՄԵՅԱՆ Արտավազդ [աշխարհիկ անունը՝ Տիգրան, 16.5.1889, Ակն (Խարբերդի նահանգ)–27.9.1951, Փարիզ), ձեռագրագետ, պատմաբան, բանասեր, խմբագիր: Արքեպիսկոպոս (1932–ից): Սովորել է Կ. Պոլսի Արամյան, Կեդրոն. ու Պերպերյան վարժարաններում: Եղել է ուսուցիչ, ապա տեսուչ՝ Բիլեջիկի, Էսկիշեհիրի վարժարաններում: 1908–ին՝ «Հայրենիքի քնար», 1909–ին՝ «Սասուն» (երկուսն էլ՝ Կ. Պոլիս) պարբ–ների հիմնադիր–խմբագիր, 1924–25–ին՝ *«Հայ իսկնակ»* հանդեսի, 1925–30–ին՝ «Տաթև» տարեցույցի խմբագիր:



Արտավազդ Սյուրմեյանի *«Պատմութիւն Հալէպի հայոց» (հ. Բ, 1946, Բեյրութ) գրքի փիփղոսաթերթը*



Պողոս Մնապյանի *«Կրկէսին մէջ» (հ. 3, 2005, Ե.) գրքի կազմը*



Թադեոս Սոգինյանի *«Տետրակ որ կոչի Ողը Հայաստանեայց» (1791, Մադրաս, Հրտր. Շմավոնյան Շիրազեցու տպ.) գրքի փիփղոսաթերթը*

Լույս են տեսել Ս–ի «Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագիրքին...» (1933), «Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ եւ մասնաւորաց» (1935), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց» (հ. 2, 1936), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Հակոբեանց վանքի» (հ. 1, 1948), «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու» (հ. 1, 1950) ձեռագրագիտ., «Պատմութիւն Հալէպի հայոց» (հ. Ա–Գ, 1940–50, 2002), «Պատմութիւն Հալէպի ազգային գերեզմանատանց եւ արձանագիր հայերէն տապանաքարերու» (1935), «Հայկական կյանքն ու մշակույթը Հալեպում XVIII դարում» (ֆրանս., 1934), «Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի եւ Բարգէն աթոռակից Կիլիկեցի» (1938) պատմագիտ., «Պաղրասի բերդը» (1937), «Դամասկոս» (1938), «Աքաաբի ժամանակակից Սամարիան» (1941) աշխատությունները, «Էրթօղրուլ» (1914, ԿՊ, Մանուկ Գոչունյանի տպ.), «Թշուառի զգայնութիւններ» (1947) նորավեպերի ժող–ները, «Դէպի Հայաստան» (1946), «Արամեանի եւ Կեդրոնականի ուսուցիչներս» (1949) հուշագրությունները:

Հանդես է եկել նաև Սոսի կեղծանունով:

ՄՆԱՑՅԱՆ Պողոս Մարկոսի [ծ. 11.8.1927, գ. Բիթիաս (Սուսա լեռան ստորոտում)– 14.6.2014, Բեյրութ], գրող, գրաքննադատ, խմբագիր: Ավարտել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը (1949), սովորել Փարիզի Ալիանս Ֆրանսեզ հաստատությունում և Սորբոնի համալսարանում (1962–64): 1958–ից՝ ***«Բագին»*** (Բեյրութ) հանդեսի խմբագրակազմի հիմնադիր–անդամ (Կարո ***Սասունու*** և Էդվարդ Բոյաջյանի հետ), 1966–2006–ին՝ գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ս–ի «Տաղ պատմութեան» (1948), «Ժամանակ չկայ» (1953), «Միջնարար–5» (1992), «Երախտագիտութեան թակարդը» (2009) վիպակները, «Յեղափոխութեան համար» (1956), «Ես այդ շունն եմ» (1966, Փ., 2006, Ե.), «Կորստեան թոյներ» (1970), «Աղքատներուն աւանդութիւնը» (2002) պատմվածքների ժող–ները, «Մարկոս Մնապեանի յիշատակին» (2002), «Երկու սպանդ» (2009), «Կրկէսին մէջ» (հ. 1, «Վերջին արար» վերնագրով՝ 1958, հ. 2, 2006, հ. 3, 2005) հուշագրությունները, «Մեր փարախէն ներս» (2007) հոդվածների ժող–ը, «Վերծանումներ» (2011) և այլ գրքեր, գրականագիտ. մենագրություններ, դիմանկարներ, տարեգրքեր, բազմաթիվ հոդվածներ: Ս–ի աշխատասիրությամբ լույս են տեսել հայ դաս. և ժամանակակից հեղինակների երկեր:

ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. մրց. (1991), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2003):

ՍՈԳԻՆՅԱՆ Թադեոս Անդրեասի (Սոգինյանց տեր Թադեոս Տեր–Անդրեասյան), XVIII դ–ի վերջին քառորդի–XIX դ–ի 1–ին տասնամյակի լուսավոր. գործիչ, բանաստեղծ: Մադրասում եղել է քահանա: Ս–ի **«Ողը Հայաստանեայց»** պոեմը նվիրված է հայ ժողովրդի և Հայաստանի վիճակի ու ապագայի քննությանը: Պոեմին նա կցել է Վոլտերի գրած Պետրոս Մեծի կենսագրության մի հատվածի թարգմանությունը, ինչպես նաև իր «Գովեստ կայսերն Պետրոսի» ներբողը: Տպագրվել է 1791–ին Մադրասում՝ Հարություն Շմավոնյան Շիրազեցու տպարանում: Տիտղթ–ին՝ «Տետրակ որ կոչի Ողը Հայաստանեայց» (31 էջ, 12,9 x 6 սմ):

ՍՈՂՈՄՈՆ ՄԱՔԵՆԱՅԻ, VIII դ–ի մատենագիր, մանկավարժ, Մաքենյաց վանքի առաջնորդ: Ս. Մ–ու վանահայրության տարիներին Մաքենյաց մենաստանը դարձել է Գեղարքունի գավառի ամենանշանավոր կրոնամշակութ. կենտրոնը:

747–ին կազմել է «Տերունական տոների լուսաբանիչը և նահատակների հիշատակարանը» տոնական ծիս. ժող–ը (առաջին անգամ Ս. Մ–ու ջանքերով մեկտեղվել են ճառական բնույթի զանազան նյութեր), որի համար ստացել է «Հարանց հայր» պատվանունը: Ս. Մ. խմբագրել է Մեսրոպ Մաշտոցին նվիրված «Փոքր Կորյունը» պատմագիրքը, Վահան Գողթնացու վարքի 2–րդ տարբերակը: VIII դ–ի 40–ական թթ–ին Ս. Մ. իր համակիրների հետ հաստատվել է Զավախքի Ջրեսկ վանքում, որտեղ հիմնադրել է նոր միաբանություն:

Գրկ. Կիրակոս Գանձակեցի, *Հայոց պատմություն, Ե., 1982:* Հովհաննես Դրասխանակերտցի, *Պատմություն Հայոց, Ե., 1996:* Մաթևոսյան Ա., *Երբ և որտեղ է գրվել Սշո Տօնական–Ճառընտիրը, «ԲՄ», № 9, 1969:*

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Սողոմոն Ալեքսանդրի [3.9.1907, գ. Գետաշեն (այժմ՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի բռնազավթված տարածքում) –28.8.1978, Երևան], գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967): Գիտ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ (1931) և Լենինգրադի գեղարվ–ի ինստ–ի արևմտաեվրոպ. գրակ–յան բաժին (1936): 1946–47 և 1952–54–ին՝ «Սովետական գրականություն և արվեստ» (1988–ից՝ *«Նորք»*) ամսագրի գլխ. խմբագիր, 1952–54–ին, միաժամանակ՝ ՀԳՄ վարչության քարտուղար:

Լույս են տեսել Ս–ի «Ռոմանտիկական դրամայի տեսությունը» (1947), «Եվրոպական գրականության ուրվագծեր (Բոկաչչո, Շիլլեր, Հյուգո)» (1954), «Արդի հայ պոեզիայի մի քանի հարցեր» (1960), «Ժամանակակից հայ բանաստեղծներ» (գիրք 1, 2, 1965, 1967), «Դանթե, Պետրարկա, Շեքսպիր, Մոլիեր: Եվրոպական ռեալիզմի պատմությունից» (1973), «Լեսինգ, Գյոթե, Հայնե: Եվրոպական ռեալիզմի պատմությունից» (1978), «Արտասահմանյան գրականության պատմություն» (1981) և այլ աշխատություններ:

ՍՈՄԱԼՅԱՆ Սուքիաս (24.1.1776, Կ. Պոլիս–11.2.1846, Վենետիկ), բանասեր, բառարանագիր, թարգմանիչ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, արքեպիսկոպոս (1826–ից): Հիմնադրել է Սամվել Մուրադյան վարժարանը (1833, Պադուա, 1846–ին տեղափոխել են Փարիզ):

Լույս են տեսել Ս–ի «Յուցակ թարգմանությանց նախնյաց» (իտալ., 1825), «Պատկեր հայկական դպրության» (իտալ., 1829), «Մեսրոպեան տառք, ձեւակերպելք ի հոծ տպագրութիւն» (1845) աշխատությունները: Կազմել է «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք» (1838, «Մատենագրությունք նախնյաց» մատենաշարով) մատենագիտ. ժող–ը (համահեղ.՝ Ն. Սարգիսյան), գործն. նշանակության 5 բառարան (1835, 1843)՝ հայ., անգլ. և տաճկերեն բառանյութի ընդգրկումով: Թարգմանել է Ֆ. Սոավեի գործերից:

Ս–ի բոլոր գործերը տպագրվել են Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում:

ՍՈՆԱ ՎԱՆ (Տեր–Հովհաննիսյան Սոնա Անուշավանի, ծ. 8.2.1952, Երևան), բանաստեղծուհի, հրատարակիչ–խմբագիր: Ավարտել է Երևանի պետ. բժշկ. ինստ–ը (1975): 1996–97–ին՝ «Եղիցի լոյս» (Լոս Անջելես) հանդեսի հրատարակիչ–խմբագիր, 2005–ին՝ *«Նարցիս»* (Երևան) գրական, մշակութ. ամսագրի հիմնադիր:

Լույս են տեսել Ս. Վ–ի «Փշրանքներ» (1996), «Ես անուն չունեմ» (2003), «Ես ձայն եմ լսում» (2006), «Երրորդ չափում. Չառա անունով թռչունը» (2006) բանաստեղծությունների ժող–ները:

ՍՈՆԳՈՏՅԱՆ (Աստվածատրյան) Խաչիկ Հովհաննեսի, **Սոնգոտ Քրիշտոֆ** [21.3.1843, Մարոշ–Բոգատ (Ռումինիա)–24.1.1907, ք. Գեռլա (Ռումինիա)], ազգագրագետ, հրապարակագիր, խմբագիր, թարգմանիչ: Գրել է հունգ.: 1863–ից դասավանդել է Գեռլայի հայկ. դպրոցում, եղել վերատեսուչ (մինչև 1903–ը): Գործուն մասնակցություն է ունեցել Բուդապեշտի Հայկ. թանգարանային ընկերության ստեղծմանը, եղել նրա նախագահը (1905–07): 1887–1907–ին՝ *«Արմենիա»* ամսագրի հիմնադիր–խմբագիր, աշխատակցել է «Արեւելք», «Մշակ» և այլ պարբ–ների:

Լույս են տեսել Ս–ի «Սամոշույվար (Գեռլա)՝ հունգարահայերի մետրոպոլիսը գրով և պատկերներով» (1893), «Հունգարահայ գերդաստանների տոհմանունները» (1898), «Սամոշույվար (Գեռլա) հայաքաղաքի պատմությունը» (հ. 1, 2, 1901, 1903), «Հունգարահայ ազգագրություն» (1903), «Հունգարների ծագումը և նրանց նախահայրենիքը» (1906) աշխատությունները:

Հունգ. է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (1892), հայ.՝ Շ. Պետեֆիի և հունգար այլ գրողների ստեղծագործություններից: Ս–ի ջանքերով ստեղծվել է Գեռլայի հայկ. թանգարանը:

Գրկ. Փհաս Ա., *Խաչիկ Սոնկոդեան, «ՀԱ», 1907, № 3, էջ 65–75:*



«Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք» (1838, Վնտ., կազմ.՝ **Սուքիաս Սոմալյան***) գրքի փիփղոսաթերթը*



Սոնա Վանի *«Ես անուն չունեմ» (2003, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը*



Խաչիկ Սոնգոտյան

ՍՈՍՈՅԱՆ Միհրան Ռուբենի (15.4.1928, Երևան–13.2.1992, Երևան), գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1967): Պրոֆ. (1988): Ավարտել է ԵԳԹԻ (1954): 1964-ից եղել է *«Հայաստան»* հրատարակչության, 1968-ից՝ Հրատպետկոմի գլխ. նկարիչը, նաև «Պիոներ կանչ» թերթի գեղ. խմբագիրը: 1975–92-ին դասավանդել է ԵԳԹԻ-ում:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Թումանյանի «Գիքորը» (1955), Հ. Շիրազի «Սիրանամե» (1959), Մ. Սարգսյանի «Տիրամոր պատկերի առջև» (1965), Ն. Զարյանի «Սասունցի Դավիթ» (1966), Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» (1967) և «Լենինն ու Ալին» (1969), Հ. Խաչատրյանի «Էրեբունի» (1968), Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» (1975), Գ. Զոհրապի «Նովելներ» (1978), Նահապետ Քուչակի «Հարյուր ու մեկ հայրեն» (1979), «Հայ դասական քնարերգություն» (1986), Ս. Զորյանի «Պապ թագավոր» (1989) և այլ գրքեր:

Համամիութ. մրցույթներում արժանացել է մրց-ների և մեդալների:

Գրկ. Միհրան Ռուբենի Սոսոյան [Աշխատանքների կատալոգ՝ գրքերի նկարազարդումներ...] (կազմ.՝ Տ. Սոսոյան), Ե., 2003:



Միհրան Սոսոյան. *Հ. Թումանյանի «Գիքորը» (1955, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ», գիտատես., քննադատ. և գեղ. պատկերազարդ ամսագիր: ՀՀ մշակույթի նախ-յան հրատ.: Լույս է տեսել 1932–96-ին (1932–38 և 1940–41-ին՝ «Խորհրդային արվեստ», 1943–55-ին՝ «Սովետական գրականություն և արվեստ» խորագրով՝ *«Սովետական գրականություն»* ամսագրի հետ, 1955–89-ին՝ «Ս. ա.», 1989–96-ին՝ *«Արվեստ»*) Երևանում:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գրական-գեղ., տես-քննադատ. ամսագիր: Լույս է տեսել 1940–43 և 1955–88-ին Երևանում, 1988-ից՝ *«Նորք»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ», հրատարակչություն: Ստեղծվել է 1976-ին (առանձնացել է *«Հայաստան»* հրատարակչությունից) Երևանում, 1991-ից՝ *«Նաիրի»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ», շաբաթաթերթ: Լույս է տեսել 1932–97-ին Երևանում, 1997-ից՝ *«Կրթություն»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», օրաթերթ: Լույս է տեսել 1920–91-ին Երևանում, 1991-ից՝ *«Հայաստան»*:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», հանդես: Լույս է տեսել 1945–88-ին Երևանում, 1989–90-ին՝ *«Վերածնված Հայաստան»*:

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ», օրաթերթ (մինչև 1932-ը՝ երկօրյա): ՀԽՍՀ հողժողկոմատի, կոլտնտկենտրոնի և հայջրտնտեսության պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1931–35-ին Երևանում: Հաջորդել է *«Սևակյալ»*-ին: Խմբագիր՝ Վախթանգ *Անանյան:* Աջակցել է գյուղատնտ. գիտելիքների տարածմանը, նպաստել գյուղում մշակութ. կյանքի զարգացմանը:

«ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ» (գրաբար՝ սոփերք-փոքր մատյան), մատենաշար: Կազմել և հրատարակել է Ղևոնդ *Ալիշանը*: Լույս է տեսել 22 հատոր (1853–61, Վնտ., Սբ Ղազարի տպ.): Ընդգրկված են մատենագր. ոչ մեծ ծավալի և մինչ այդ անտիպ մի շարք երկեր (հիմնականում՝ սրբախոս. գրակ-յան տարբեր ժանրերով՝ վարք, վկայաբանություն, ողբ, տեսիլ, ներբողյան ևն) թարգման. և հեղինակային (Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Եղիշե, Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Վարդան Արևելցի, Հովհաննես Երզնկացի, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի և ուր.) բնագրեր, որոնք թեմատիկ ներքին տրամաբանությամբ միմյանց հաջորդող ստեղծագործություններ են:



«Սոփերք հայկականք» *մատենաշար. «Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց» (1854, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*

1933–34-ին Վենետիկի Մխիթարյանները «Ս. հ.» մատենաշարով հրատարակել են Մխիթար Գոշի «Խրատք ոգեշահք» և Եփրեմ Խուրի Ասորու «Կցուրդք» գործերը, որոնցով էլ եզրափակվել է մատենաշարը:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ Սպանդար Ամիրջանի [1849, Շուշի–1922, Վիսբադեն (Գերմանիա)], հաս. գործիչ, հրապարակախոս, խմբագիր-հրատարակիչ: Սուրեն ***Սպանդարյանի*** հայրը: Սովորել է Թեոդոսիայի Խալիպյան վարժարանում, ավարտել Լայպցիգի համալսարանի իրավագիտ-յան ֆակ-ը (1872), ստացել իրավագիտ-յան դ-րի գիտ. աստիճան: 1872–77-ին աշխատակցել է «Աշակ», 1877-ի վերջից՝ «Մեղու Հայաստանի» թերթերին: 1883-ին հրատարակել է «Նոր-Դար» լրագրի առաջին համարը: 1903-ին հայ եկեղեցապատկան կալվածքների և դպրոց. գույքի բռնագրավման մասին օրենքի հրապարակումից հետո Թիֆլիսում հանդես է եկել ցար. կառավարության դեմ, ձերբակալվել է և վտարվել Կովկասից: 1910-ին մեկնել է Փարիզ:

Մեծապես նպաստել է հայ նոր և թարգման. գրակ-յան, հրատարակչ. գործի զարգացմանը, մամուլի հեղինակության բարձրացմանը:

Ս. հանդես է եկել նաև Դոկտոր Սպանդարյան և Յունիուս գրական կեղծանուններով:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ Սուրեն Սպանդարի, **Տիմոֆեյ** [3(15).12.1882, Թիֆլիս–11(24).9.1916, Կրասնոյարսկ], հաս-քաղ. գործիչ, լրագրող, հրապարակախոս, գրաքննադատ, խմբագիր: Սպանդար ***Սպանդարյանի*** որդին: ՌՍԴԲԿ անդամ՝ 1901-ից: Ավարտել է Թիֆլիսի արական գիմնազիան (1902): Սովորել է Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրության (1902–03), ապա՝ իրավաբանության (1905–06) ֆակ-ներում, հաճախել Հայդելբերգի (Գերմանիա) համալսարանի պարապմունքներին:

1907-ից մասնակցել է «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ» (երկուսն էլ՝ ռուս.) և այլ թերթերի հրատ-յանը, ղեկավարել «Կուրյեր կոպեյկա», «Լիստոկ կոպեյկա» (երկուսն էլ՝ ռուս.) և այլ լեգալ թերթերի հրատ-ը: Աշխատակցել է բոլշևիկյան «Զվեզդա» (ռուս.) լրագրին: Ստեփան ***Շահումյանի*** և Սարգիս ***Կասյանի*** հետ խմբագրել է «Կայծ», «Նոր խօսք», «Օրեր» հայ. բոլշևիկյան թերթերը:

1912-ին Թիֆլիսում կազմակերպել է ընդհատակյա տպարան, հրատարակել թռուցիկներ: 1912-ի մայիսին ձերբակալվել և բանտարկվել է Մետեխի բանտում: 1913-ի մայիսին աքսորվել է Սիբիր՝ ցմահ:

Լույս են տեսել Ս-ի «Երկերը» (հ. 1–2, 1959), «Ընտիր երկերը» (1982), «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր» (1939) ժող-ը:

Գրկ. **Արզումանյան Մ.**, *Սուրեն Սպանդարյան, Ե., 1982: Նամակներ, հուշեր և փաստաթղթեր Սուրեն Սպանդարյանի մասին, Ե., 1982: Սուրեն Սպանդարյան. 1882–1916: Բիբլիոգրաֆիա, Ե., 1958:* **Азатян Г.**, *Сурен Спандарян, Е., 1982.*



Սպանդար Սպանդարյան



Սուրեն Սպանդարյան

«ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ», ժող.: Տպագրվել է 1785-ին Վենետիկում. ըստ Թեոդիկի՝ Պիետրո Վալվազիանիի, ըստ Գ. Զարբհանալյանի՝ Սբ Ղազարի տպարանում (167 էջ): Տպակից է Պարզատումարի:

Նույն թվականին 2 անգամ հրատարակվել է նաև Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (167 էջ, 8º, 11,5 x 6,5 սմ և 33 էջ, 2º, 22 x 13,3 սմ), 2-րդը՝ առանց Պարզատումարի:

ՍՊԵՆԴԻԱՐՈՎԱ (Սպենդիարյան) Տատյանա Ալեքսանդրի (21.12.1901, Յալթա– 31.7.1990, Մոսկվա), թարգմանչուհի, բանաստեղծուհի: Ռուս. թարգման. դաս. դպրոցի լավագույն ներկայացուցիչներից է: Թարգմանել է անգլ-ից, գերմ-ից, նաև Արևելքի և այլ ժողովուրդների պոեզիայից: Ս-ի գրական գործունեության մեջ արժեքավոր են Սայաթ-Նովայի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Տերյանի, Դ. Վարուժանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի, Գ. Սարյանի, Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի, Վ. Դավթյանի և ուր. բանաստեղծությունների թարգմանությունները: Լույս է տեսել Ս-ի «Նվեր» (1922) բանաստեղծությունների ժող-ը: Գրել է նաև պատմվածքներ:

Երկ. Пора золотая (переводы, стихи, рассказы), Е., 1983.



«Սպասաւորութիւն սրբոյ Պատարագի» *(1785, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Քերովբե Սպենյանի «Քերականութիւն գերմաներէն լեզուի» (1844, Վնն.) գրքի փիփղոսաթերթը

ՍՊԵՆՅԱՆ Քերովբե (13.3.1817, Կ. Պոլիս–2.12.1886, Վիեննա), բանասեր, լեզվաբան: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, քահանա (1838): V դ–ի և հետագա շրջանի գրական հայ–ի տարբերակման վերաբերյալ Ս–ի «Ուսումն դասական հայերէն լեզուի» աշխատությունը վերամշակել, լրացրել և լույս է ընծայել Հակոբոս *Տաշյանը*՝ որպես համանուն մեկ այլ երկի մաս՝ «Ուսումն դասական հայերէն լեզուի (Հայկաբանութիւն)» (1920, Վնն., Մխիթարյան տպ.) վերնագրով: Ս. գրել է նաև աստվածաբան. աշխատություն (աշխարհաբար) և «Քերականութիւն գերմաներէն լեզուի» (1844, Վնն., Մխիթարյան տպ.) դասագիրքը:

Գրկ. **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*

ՍՍԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ (Կիլիկիայի թագավոր. գրադարան), մատենադարանում հավաքվել ու պահվել են Կիլիկիայի հայկ. դպրոցներում ու գրչության կենտրոններում ստեղծված մշակութ. արժեքները, համալրվել է նվիրատվություններով: Առաջին ձեռագիրը 1222–ի Ավետարան է: Ս. մ–ի մի շարք ձեռագիր մատյաններ, այդ թվում՝ *«Ութ մանրանակարիչների Աւետարանը»*, պահվում են Մատենադարանում: Ս. մ–ի ձեռագրեր կան նաև Երուսաղեմի, Վենետիկի և Վիեննայի մատենադարաններում:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Սիսուան, Վնտ., 1885:*

ՍՎԱՋԼՅԱՆ Գառնիկ Մարկոսի (4.1.1904, Կեսարիա–23.3.1948, Երևան), գրող, հրապարակախոս, հաս. գործիչ, երգիծանկարիչ: Վերժինե *Սվազլյանի* հայրը: Սովորել է Զմյուռնիայի ազգ. վարժարանում (1911–18) և Մխիթարյան կրթարանում (1919–22): Եղել է ՀՕԿ–ի եգիպտահայ մասնաճյուղի հիմնադիրներից և փոխնախագահը: 1924–25–ին՝ «Կայծ» (Ալեքսանդրիա) հանդեսի հիմնադիր–խմբագիր: Երգիծանկարներով աշխատակցել է *«Մասեաց աղին»* և ժամանակի այլ պարբ–ների:



Գառնիկ Սվազլյան

1943–ին Ալեքսանդրիայում հիմնել և գլխավորել է «Սևան» գրական–գեղ. միությունը: 1945–ին ընտրվել է եգիպտահայ Ազգ. խորհրդի կազմում: 1947–ին հայրենադարձել է:

Գրել է «Ներգաղթը» (1936, Ալեքսանդրիա) պիեսը, որտեղ սփյուռքահայության միակ փրկությունը համարում է հայրենադարձությունը: Հանդես է եկել նաև գրական, հրապարակախոս. հոդվածներով («Հայրենիքիս համար», 1965):



Միհրան Սվազլյան

ՍՎԱՋԼՅԱՆ (Սվազլը) Միհրան (1863, Զմյուռնիա–1935, Բոստոն), հրապարակախոս, հրատարակիչ–խմբագիր: Սովորել է Զմյուռնիայի անգլ. քոլեջում, ապա՝ Էքս քաղաքի (Ֆրանսիա) համալսարանում: 1888–92–ին՝ *«Հայաստան»* (Լոնդոն), 1917–19–ին՝ «Արմինիըն Հերալդ» (անգլ., Բոստոն) պարբ–ների հիմնադիր–խմբագիր: Ամերիկայի հայ ազգ. միության (1917, Բոստոն) հիմնադիր–նախագահ: Ս. եղել է ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի խորհրդականը հայկ. տարածքների նկատմամբ ամերիկյան մանդատի ստանձնման գործում: Անդրադարձել է Հայ դատին, հայ հաս–քաղ. կյանքին («Ի յիշատակ Միհրան Սվազլեանի», 1944):

Գրկ. **Մեսիայեան Ե.**, *Դրօշին տակ, Նյու Յորք, 1918, էջ 154–184:* **Ավագյան Ք.**, *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924), Ե., 2000, էջ 116–120, 154:* **Նույնի**, *Հայ առաջին լրբրիսպական կազմակերպությունը ԱՄՆ–ում, տես «Հայոց պատմության հարցեր» ժող–ում, № 4, Ե., 2003:*



Վերժինե Սվազլյան

ՍՎԱՋԼՅԱՆ Վերժինե Գառնիկի (ծ. 1. 3. 1934, Ալեքսանդրիա), բանագետ, բանահավաք: Բանասիր. գիտ. դ–ր (1995): Գառնիկ *Սվազլյանի* դուստրը: Ավարտել է ՀՊՄԻ (1956): 1958–60–ին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ գրակ–յան, 1961–ից՝ հնագիտ–յան և ազգագրության ինստ–ում, 1996–ից, միաժամանակ՝ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստ–ում:

Լույս է տեսել Ս–ի «Սարգիս Հայկունի» (1973) աշխատությունը, կազմել է «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտ. հրատ–յան «Արցախ–Ուտիք» (1973), «Տարոն–Տուրուբերան» (1984), «Վան–Վասպուրական» (1998) հատորները, կազմել և խմբագրել է Գ. Սվազլյանի «Հայրենիքիս համար» (1965) ժող–ը,

Գ. Գյոզալյանի «Մուսա լեռան ազգագրությունը» (2001) ուսումնասիրությունը, գրառել (ձայնագրել ու տեսագրել) և հրատ–յան է պատրաստել «Մուսա լեռ» (1984), «Կիլիկիա: Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (1994), «Պոլսահայոց բանահիւսութիւնը» (2000) բանահյուս. նյութերի ժող–ները, «Մեծ եղեռն: Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995), «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» (հայ. և ռուս.՝ 1997, անգլ.՝ 1999, թուրք.՝ 2005, Ստամբուլ), «Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ» (2000, հայ. և անգլ.՝ 2011, թուրք.՝ 2013, Ստամբուլ), «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» (հայ., անգլ., ֆրանս., գերմ., ռուս.՝ 2005, թուրք.՝ 2005, Ստամբուլ) երկերը:

«Աշխարհի ֆոլկլորի և կենցաղի Գրինվուդ հանրագիտարանում» (անգլ., 2006, ԱՄՆ) տպագրվել է Ս–ի «Հայաստան» հոդվածը:

Գրկ. Վերժինե Գառնիկի Սվազյան (Հայ նշանավոր կին գիտնականներ, նյութեր կենսամատենագիտության, № 3), Ե., 2001:

ՍՎԱՃՅԱՆ Հարություն Գրիգորի, **Մեչուխեչա** [22.10(3.11).1831, Կ. Պոլիս–21. 4(3.5).1874, Կ. Պոլիս], հաս–քաղ. գործիչ, հրապարակախոս, խմբագիր: Նախն. կրթությունն ստացել է ծննդավայրում, 1848–ին մեկնել է Փարիզ և սովորել Սեն Բարբիի բարձրագույն քոլեջում: 1854–ին դասավանդել է Կ. Պոլսի Պեշիկթաշի դպրոցում, 1856–ին հիմնադրել և մինչև 1862–ը, ապա 1870–72–ին խմբագրել է ***«Մեղու»*** հանդեսը: Մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) մշակմանը, 1866–ից եղել է մասոն. «Սեր» գաղտնի ընկերության (նպատակն Արմ. Հայաստանի ազատագրումն էր) անդամ: Ս. Միքայել ***Նալբանդյանի*** գաղափարների ջատագովն էր:

Գրել է «Հայաստան Մայր» արձակ պոեմը, «Արիք Հայկազունք» բանաստեղծությունը, որը վերածվել է երգի և դարձել Ազգ. սահմանադրության հիմնը, «Քաթինքա» վիպակը, «Առանձար Ամատունի» պատմ. ողբերգությունը:

Լույս են տեսել Ս–ի «Մատնութիւն» (1861, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիսյանի տպ.) քաղ. պամֆլետը, «Կենսագրութիւն Պօղոս աղայի Օտեան» (1862, նույն տպ.) ուսումնասիրությունը, «Դրախտահարսն Մարի Տայեան» (1875, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.) բանաստեղծությունների ժող–ը: Ֆրանս–ից թարգմանել է «Սէնթ Ամանտցի Լիւսիլ կամ Սենեկալի առանձնակեացը» (1859, ԿՊ, Ռուբեն Քյուրքչյանի տպ.) վեպը:


Հրատարակվել են նաև Ս–ի «Հրապարակախոսություն» (1960) հոդվածների ժող–ը, «Երկերը» (2005):

Գրկ. **Գասպարյան Գ.**, *Հարություն Սվաճյան, Ե., 1958:* **Աատրյան Ա.**, *Հարություն Սրվաճյան, Ե., 1967:* **Սարգսյան Գ.**, *Սրվաճյանը հրապարակախոս–երգիծաբան, Ե., 1981:* **Ղազարյան Հ.**, *Հարություն Սվաճյան, Ե., 1986:*

ՍՏԵՐԵՈՏԻՊԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, լայն իմաստով՝ գրքի վերահրատ–ը՝ առանց փոփոխությունների՝ նմանահանություն, նեղ իմաստով՝ նախորդ հրատ–յան պահպանված շարվածքի պատճենից (ստերեոտիպ) տպագրվածը:

«ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ», հաս., քաղ., մշակութ. շաբաթաթերթ: Ստեփանակերտի քաղաքապետարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1997–ից: Խմբագիրներ՝ Լևոն Մկրտչյան, Սիլվա Խաչատրյան, Անահիտ Քոչարյան, Սոֆյա Սարգսյան: Լուսաբանում է քաղաքապետարանի գործունեությունը, անդրադառնում ԼՂՀ–ում և ՀՀ–ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, հետահայաց՝ Արցախյան ազատագր. պատերազմին, տպագրում է կրթադաստիարակչ., առողջապահ., երգիծ., մարզ. նյութեր, գրական–գեղ. ստեղծագործություններ:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Մուրացանի անվան, բացվել է 1965–ին Ստեփանակերտում՝ որպես Մ. Գորկու անվ. մարզային գրադարանի մասնաճյուղ: Հետագայում գրքային ֆոնդը համալրվել է, իսկ գրադարանը կոչվել է Մուրացանի անունով: 1981–ին բացվել է գրադարանի 6 մասնաճյուղ: Մինչև Արցախյան ազատամարտը (1991–94) գրադարանի գրքային ֆոնդը 110 հզ. միա–



Վ. Սվազյանի *«Կիլիկիա: Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (1994, Ե., «Գիտություն») գրքի կազմը*



Հարություն Սվաճյանի *«Երկեր»-ի (2005 , Ե., ԵՊՀ հրտ.) կազմը*



«Ստեփանակերտ», *1997-ից, Ստեփանակերտ*




Խորեն Ստեփանե

վոր էր, պատերազմի ժամանակ մեծ մասը ոչնչացել է: Ներկայում ունի 56,5 հզ. միավոր գիրք, ընթերցողների թիվը՝ 3,2 հզ.:

Գրադարանի տնօրեններ են եղել Թ. Վանեցյանը, Ա. Առուստամյանը, Ա. Ավագյանը, Լ. Հայրիյանը, Մ. Խաչատրյանը (1995–ից):

ՍՏԵՓԱՆԵ (Ստեփանյան) Խորեն (Ստեփան) Հարությունի (1840, Թիֆլիս–14.11.1900, Թիֆլիս), մանկավարժ, հրատարակիչ-խմբագիր, բանաստեղծ: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1858), Մոսկվայի համալսարանը (1862): 1862-ին վերադարձել է Թիֆլիս, զբաղվել մանկավարժությամբ, 1864-ին հիմնադրել և մինչև 1879-ը խմբագրել է ***«Հայկական աշխարհ»*** հանդեսը: 1871-ին ձեռնադրվել է վարդապետ, դասավանդել Վաղարշապատի ժառանգավորաց և ծխական, 1872–77-ին՝ Երևանի, Շուշիի, Թիֆլիսի և Բաքվի դպրոցներում, 1878–80-ին՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1879–80-ին՝ ***«Արարատ»*** հանդեսի խմբագիր: 1880-ին նշանակվել է Ախալցխայի և Ախալքալաքի առաջնորդ. փոխանորդ և հայկ. դպրոցների տեսուչ, 1884–87-ին՝ ***«Մանկավարժանոց»*** պարբ-ի հիմնադիր-խմբագիր: 1887–95-ին աշխատել է Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Վաղարշապատում, Աստրախանում:

Ս. գրել է բանաստեղծություններ («Հիւսիսափայլ»-ում տպագրվել են Իշխան Բագրատունի կեղծանունով): Աշխարհաբարի է փոխադրել Սովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը, որն ընդարձակ ծանոթագրություններով տպագրվել է 1889-ին Ս. Պետերբուրգում (Ի. Ն. Սկորոխոդովի տպ.):




Գառնիկ Ստեփանյան

ՍՏԵՓԱՆՅԱՆ (Տեր-Ստեփանյան) Գառնիկ Խաչատուրի [14.2.1909, գ. Մամախաթուն (Կարինի նահանգի Դերջանի գավառ)–1.7.1989, Երևան], գրականագետ, թատերագետ, գրող, խմբագիր: Պերճ ***Ստեփանյանի*** և Արմեն ***Տեր-Ստեփանյանի*** հայրը: Արվեստագիտ. դ-ր (1971): Արվ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է ԵՊՀ (1938): 1938–42-ին աշխատել է «Սովետական Հայաստան» թերթի, 1945–47-ին՝ «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունների, միաժամանակ խմբագրել է «Տեղեկագիր հասարակական գիտությունների» (այժմ՝ ***«Լրաբեր հասարակական գիտությունների»***) հանդեսը: 1954–63-ին եղել է ԳԱԹ-ի տնօրեն, 1963– 89-ին՝ ՀԽՍՀ ԳԱ արվ-ի ինստ-ի գիտաշխատող:

Լույս են տեսել Ս-ի «Արփիար Արփիարյան» (1955), «Հակոբ Պարոնյան» (1956, 1964) գրականագիտ., «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» (հ. 1–3, 1962–75), «Ֆրանսահայ թատրոն (Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության)» (հ. 1, 2, 1982, 2008) թատերագիտ. աշխատությունները, «Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը» (2013) մենագրությունը, «Աճառյանի հետ» (1976), «Վահրամ Փափազյանի հետ» (1979), «Հոդվածներ և հուշեր» (1985) հուշագրությունները, «Սիձավանջային օրեր» (1945, 1990, 2009) վեպը, «Երզնկա: Հազույն դարերից մինչև մեր օրերը» (2005) աշխատությունը: Թուրք-ից թարգմանել է Հ. Վարդանյանի «Ագապի» վեպը, հրապարակել Պ. Ադամյանի «Նամակները» (1959), կազմել «Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ)» (հ. Ա–Գ, 1973–90, 4-րդը՝ անտիպ):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1980):



Գ. Ստեփանյանի *«Կենսագրական բառարան»-ի (հ. Բ, 1981, Ե., «Սովետական գրող») կազմը*

ՍՏԵՓԱՆՅԱՆ Հասմիկ Ավետիսի (ծ. 8.8.1950, Երևան), պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (2005): Ավարտել է ԵՊՀ (1972): 1972–97-ին և 2005-ից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտ-յան ինստ-ի առաջատար գիտաշխատող:

Լույս են տեսել Ս-ի «Հայատառ թուրքերեն գրականությունը» (2001, ֆրանս.՝ 2012), «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» (2011, ԱՊՀ երկրների «Գրամշակույթ» մրցույթի Մեծ մրց.՝ 2013, ռուս.՝ 2012, թուրք.՝ 2014) ուսումնասիրությունները: Կազմել և հրատարակել է «Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն. 1727–1968» (1985), «Հայատառ թուրքերեն մամուլ» (1987), «Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727–1968)» (2005, քառալեզու), «Ցուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրքերէն նիւթերի եւ հայատառ թուրքերէն

ձեռագրերի» (2008) մատենագիտ. աշխատությունները, խմբագրել և հրատ–յան է պատրաստել Հ. Աճառյանի «Պոլսահայ անգիր բանահյուսությունը» (2009) աշխատությունը:

ՀՀ նախագահի մրց. (2011):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Պերճ Գառնիկի (26.12.1937, Երևան–29.12.2013, Երևան), գրահրատարակիչ, բանասեր: Գառնիկ ***Ստեփանյանի*** որդին, Արմեն ***Տեր–Ստեփանյանի*** եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1960): 1960–68–ին աշխատել է ԳԱԹ–ում, 1968–90–ին՝ Հեռուստառադիոպետկոմում, 1991–95–ին՝ ***«Լույս»*** հրատարակչության, 1995–98–ին՝ ՀՀ պետ. հեռուստաընկերության գլխ., 1999–2013–ին՝ ***ԵՊՀ հրատարակչության*** տնօրեն: Ս–ի օրոք Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկ. բաժանմունքի հովանավորությամբ ***«Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան»*** մատենաշարով ԵՊՀ հրատարակչությունը տպագրել է ավելի քան 150 անուն հայագիտ. աշխատություններ. V–XVIII դդ–ի հայ մատենագրության քննական տեքստեր, Հ. Աճառյանի, Ն. Ադոնցի, Հ. Սանանդյանի, Գ. Ղափանցյանի, Հ. Հյուբշմանի, Յ. Կարստի և ուր. երկերից, ինչպես նաև Թ. Հակոբյանի, Ս. Մելիք–Բախշյանի և Հ. Բարսեղյանի ***«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»***, ***«Մատենագիրք հայոցը»*** (հ. 1–17) ևն:

ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2012):

ՍՏԵՓԱՆՅԱՆ Սուրեն Շավարշի [23.5(5.6).1915, Ալեքսանդրապոլ–18.1.1977, Երևան], գրաֆիկ, նկարիչ–ձևավորող: Վաստ. նկարիչ (1961): Ավարտել է ԵԳՈՒՀ (1937), Լենինգրադի գեղարվեստամանկավարժ. ուսումնարանը (1938): 1940–43–ին դասավանդել է Լենինականի Ս. Մերկուրովի անվ. նկարչ. դպրոցում: 1943–45–ին՝ Լենինականի, 1945–46–ին՝ Երևանի տիկնիկային թատրոնների ձևավորող նկարիչ:

Նկարազարդել և ձևավորել է շուրջ 300 գիրք՝ Դ. Դեմիրճյանի «Ծտապար» (1947), «Պույ–պույ մուկիկը» (1974) և «Ավելորդը», Հ. Հայրապետյանի «Կովն ու ճագարը» (1947), Ա. Իսահակյանի «Սգավոր արագիլը» (1948), Շիրվանզադեի «Արտիստը» (1951), Խնկո Ապոր «Մկների ժողովը» (1957), Հ. Թումանյանի «Քաջ Նազար» (1957) և «Շունն ու կատուն» (1958), Ա. Շայբոնի «Երկիր մոլորակի գաղտնիքները» (1960), Մ. Արմենի «Հեղնար աղբյուր» (1960), Պ. Սևակի «Եղիցի լույս» (1969) ևն: 1940–ական թթ–ի վերջերին պատկերազարդել է «Պիոներ» մանկ. ամսագիրը: Հեղինակ է նաև բազմաթիվ գլխազարդերի և վերջնազարդերի:

Գրկ. Մուրեն Ստեփանյան: ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, Ե., 1980:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՐԵՑ, Ստեփանոս քահանա Տերտերյան [1746, գ. Հազարջրիբ (Իրանի Փերիա գավառ)–1813, գ. Հազարջրիբ], պատմագիր: Սովորել է Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի դպրոցում, ապա ձեռնադրվել է քահանա, կարգվել Փերիայի հայկ. համայնքի հոգևոր գործակալ: Հայտնի է իր «Հանգիտագիրք» ձեռագիր մատյանով (գրել է 1787–89–ին), որտեղ շարադրել է 1665–1789–ի Իրանի (մասնավորապես՝ Փերիայի, Նոր Ջուղայի, Բուրվառի) հայկ. գաղթավայրերի պատմությունը: Գրել է նաև հանելուկներ, խրատ. և այլ բանաստեղծություններ, արձակ գործեր: Ս. Ե–ի ձեռագրերը պահվում են Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքում:

ՍՏԵՓԱՆՈՍ, XIII դ–ի վերջի–XIV դ–ի սկզբի գրիչ և մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ապրել և ստեղծագործել է Բզնունյաց գավառի Արճեշ քաղաքում, աշակերտել ծաղկող և դպիր Խաչատուր քահանային (վերջինիս 1298–ի պատկերազարդած Ավետարանը պահվում է Ս. Պետերբուրգի Արևելագիտ–յան ինստ–ում, ձեռ. № B–44): Ս–ի 2 ձեռագիր Ավետարաններ պահվում են Մատենադարանում (1292, ձեռ. № 6387, 1303, ձեռ. № 4052): Առավել ամբողջական է 1303–ի ձեռագիրը: Նկարների թեմատիկ շարքն ու պատկերագրությունը, մանավանդ «Տեմպիետոյի» («Տաղավարիկ») մոտիվի և համաբարբառի աղյուսակների դասավո–



Հասմիկ Ստեփանյան *«Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում» (2011, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կրկնաշապիկը*



Պերճ Ստեփանյան




Սուրեն Ստեփանյան. *Ա. Շայբոնի «Երկիր մոլորակի գաղտնիքները» (1960, Ե., Հայպետհրատ) գրքի պատկերազարդում–ներից*



Ստեփանոս. *«Կոտորածն մանկանց» և «Տյառնընդառաջ», մանրանկար, 1303-ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 4052)*



Ս. Սիմոնյանի «Նոր բայայտ փաղասաց մը **Ստեփանոս Դաշտեցի***» (1981, Բեյրութ) գրքի կազմը*



Ստեփանոս Եպիսկոպոսի *«Տարեգրության» («Մանր ժամանակագրություններ», հ. 1, 1951, Ե., ԳԱ հրտ.) 1-ին էջը*

րությունը 7 էջում առնչվում են X–XI դդ–ի մանրանկարչ. ավանդույթներին: Ս–ի ճկուն և արտահայտիչ գծանկարների ստեղծած կենդանի շարժումը որոշակի աշխուժություն է հաղորդում կերպարներին:

Գրկ. Հայկական մանրանկարչություն. Վաւպուրական խլրում, կազմ.՝ Հ. Հակոբյան], Ե., 1978:

ՍՏԵՓԱՆՈՍ ԳՈՅՆԵՐԵՑԻ (Գոյներ երեցի որդի), XIII դ–ի 2–րդ կես–XIV դ–ի սկզբի գրիչ: Ապրել և ստեղծագործել է Կիլիկիայում, Կիպրոսում: 18 տարի աշակերտել է Գևորգ *Սկևռացուն*, ընդօրինակել նրա «Խրատ յաղագս գրչութեան արուեստի» երկը, նաև Տոնացույց և Ժողովածու, որոնք մեզ են հասել ընդօրինակություններով, որտեղ պահպանվել են գրիչի՝ Ս. Գ–ի հիշատակարանները: Թվակիր առաջին հիշատակարանը, որտեղ նշված է Ս. Գ–ի անունը, պահպանվել է 1285–88–ին Սկևռայում ընդօրինակված Աստվածաշնչում, որի ստեղծմանը, Ս. Գ–ից բացի, մասնակցել են գրիչներ Ստեփանոս Սկևռացին և Խաչատուր դպիրը: Ս. Գ. 1290–ին ընդօրինակել է Ավետարան, 1292–ին՝ Ժողովածու (Մատենադարան, ձեռ. № 179): 1292–ին Հեթում քահանայի պատվերով ընդօրինակել է Ավետարան, 1297–ին՝ Աստվածաշունչ, 1300–ին՝ Ճառընտիր: 1307–ին սրբագրել է Վարդան գրիչի ընդօրինակած Ավետարանը, 1310–ին տիկին Ալիծի պատվերով՝ Գործք առաքելոցը:

Ս. Գ–ի ընդօրինակած ձեռագրերը համարվել են գրչության արվ–ի կատարյալ նմուշներ և հետագայում ծառայել որպես ընտիր նախօրինակներ:

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԴ դարի (կազմ.՝ Ա. Մաթևոսյան), Ե., 1984:

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻ (1653, Նոր Ջուղա–մ. թ. անհտ), բանաստեղծ, հանելուկագիր, ժամանակագիր, հրապարակախոս: Մինչև 1604–ի բռնագաղթը նախնիները բնակվել են Գողթն գավառի Դաշտ գյուղում: Սովորել է Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի դպրոցում, ենթադրվում է՝ նաև Հռոմի Ուրբանյան վարժարանում:

Գրել է աշխարհիկ բովանդակությամբ 22 հանելուկ: Ս. Դ–ուց մեզ են հասել «Կարգ թագաւորաց հնդկաց» (մոտ 1719, Մատենադարան, ձեռ. № 1786) ժամանակագրությունը, որտեղ արժեքավոր տեղեկություններ կան XVIII դ–ի սկզբի Հնդկաստանի քաղ. անցուդարձի մասին, «Մախաղ փշրանաց» (1700, Մատենադարան, ձեռ. № 9689), «Խնդիր ուղղութեան» (1706, Մատենադարան, ձեռ. № 673), «Կոչնակ ճշմարտութեան» (1714–15, պահպանվել է իրարից էապես տարբեր 2 օրինակով, Մատենադարան, ձեռ. № 8111, 9049) դավանաբան–հրապարակախոս. երկերը:

Գրկ. **Տաշեան Յ.,** *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա, Վնն., 1895:* **Մելիք–Բախշյան Ս.,** *Ստեփանոս Դաշտեցու մի ժամանակագրության մասին, «Գիտ. աշխատ. ԵՊՀ», 1955, հ. 47, պր. 2:* **Մնացականյան Ա.,** *Հայ միջնադարյան հանելուկներ, Ե., 1980:* **Սիմոնեան Ս.,** *Նորայայտ փաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի, Բ., 1981:* **Միրզոյան Հ.,** *Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Ե., 2001:*

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, XIII դ–ի ժամանակագիր: Հավանաբար եղել է Սյունիքի Նորավանքի եպիսկոպոսը: Ս. Ե–ի «Տարեգրությունը» *Սամվել Անեցու* «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագր. երկի շարունակությունն է, որն ընդգրկում է մոտ 100 տարվա (1193–1290) պատմ. իրադարձություններ: Երկը նախկինում սխալմամբ վերագրվել է Ստեփանոս Օրբելյանին և հրատարակվել նրա անունով («Ժամանակագրութիւն», 1942):

Ս. Ե–ի «Տարեգրությունը» լույս է տեսել «Մանր ժամանակագրություններ» (կազմ.՝ Վ. Հակոբյան, հ. 1, 1951) ժող–ում:

ՍՏԵՓԱՆՈՍ ԹՈՒԽԱԹՑԻ (15.8.1558, Թոխաթ/Եվդոկիա–մոտ 1630, Թոխաթ), բանաստեղծ–տաղասաց, գրիչ:

Ս. Թ. «Ողբ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին» բանաստեղծության մեջ նկարագրում է Եվդոկիայի երբեմնի բարգավաճ կյանքն ու ավերումը: Ուշագրավ են նրա «Գովասանութիւն Կաֆայու քահանայից վերայ», «Ոտանաւորս եւ գանկատս լաննուն ու ճանճերուն ի Ստեփանոս Թոխաթցի երիցուէ ասացեալ» երգիծ. բանաստեղծություն–

ները, «Ողբ վանն տղահասակ ննջեցելոց», «Տաղ ի Կաֆայ», «Ողբ ի վերայ վաղամեռիկ եղբօր իւրոյ Յակոբ քահանայի Եւդոկեացւոյ» գործերը: Ս. Թ. ընդօրինակել է Շարակնոց, Սաղմոսարան, Քարոզգիրք, Գանձարան, Հայսմավուրք (Մատենադարան, ձեռ. № 532, 2672, 7377, 7744 ևն, նաև Վենետիկում, Երուսաղեմում և այլուր):

Գրկ. **Ակինեան Ն.,** *Հինգ պանդոխտ գաղաւացներ, Վնն., 1921:* **Խաչատրյան Պ.,** *Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ–ԺԷ դդ.), Ե., 1969:*

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ, Լվովցի, Իլովացի (ծ. թ. անհտ, Լվով–1689, Էջմիածին), թարգմանիչ, փիլիսոփա, աստվածաբան: Կրթությունն ստացել է Լվովում, տիրապետել է լատ–ին և լեհ–ին, կատարելագործել է հայ–ի իր իմացությունը, մասնակցել մտավոր–գրական շարժմանը՝ ձեռք բերելով մեծ համբավ:

Ս. Լ–ու առաջին հայտնի թարգմանությունը *«Հայելի վարուց»* (XV դ.) բարոյախրատ. գրույցների ժող–ն է (լեհ–ից, 1651, հրտ.՝ 1702): Կարևոր է Հովսեպոս Փլավիոսի *«Պատմութիւնք յաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս»* երկի թարգմանությունը (լատ–ից, 1660, հրտ.՝ 1787): Թարգմանել է նաև Կեղծ Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս երկնայնւոյն քահանայապետութեան», «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան», «Յաղագս աստուածայնւոյն անուանց», «Յաղագս խորհրդական աստուածաբանութեան» աշխատությունները, 11 Թղթեր, «Պատմության» և հիշյալ աշխատությունների՝ Մաքսիմոս Խոստովանողի մեկնությունները (թարգմ. լատ–ից, մինչև 1662–ը, Մատենադարան, ձեռ. № 110): Նշված գործերը Ս. Լ. բաժանել է գլուխների, յուրաքանչյուր գլխից առաջ համառոտակի շարադրել բովանդակությունը, Մաքսիմոս Խոստովանողի մեկնությունները լրացրել այլ աղբյուրներից քաղած մտքերով և խմբագրել: Առանձնապես արժեքավոր է Արիստոտելի «Մետաֆիզիկա» աշխատության թարգմանությունը (լատ–ից, մինչև 1675–ը), որը նաև 2 անգամ մեկնել է: Մեկնությունը մեզ է հասել 2 տարբերակով. ձեռագրերի մի խմբում սփռված է Արիստոտելի երկի լուսանցքներում (Մատենադարան, ձեռ. № 10032), մյուս խմբում զետեղված է երկից հետո՝ որպես ինքնուրույն աշխատություն («Լուծմունք գրոցն Մեթաֆիզիքոց Արիստոտէլի Ստագրացւոց...» (Մատենադարան, ձեռ. № 2050):

Ս. Լ. լատ–ից թարգմանել է նաև «Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ» (մինչև 1666–ը, ձեռ. № 705), Ղուրան (մինչև 1680, ձեռ. № 3109), «Բուրաստան աղօթից» (ձեռ. № 553, կցել է նաև հայ հեղինակների աղոթքներ, տպագրվել է 1685, 1707 և 1741–ին, տես ***Աղոթագիրք***) և կրոն. մի շարք այլ գործեր, «Սաղթանք իբր յիշատակարան ըստ անուան թարգմանողին» (ձեռ. № 553, բոլորը՝ Մատենադարան) չափածո ստեղծագործությունը: Գրել է նաև «Երգ ոտանաւոր առ Յիսուս Քրիստոս արարեալ սրբոյն Բեռնարտոսի» չափածո ծավալուն ստեղծագործությունը:

Ս. Լ–ու փիլ. ամենաարժեքավոր աշխատությունը, որ նաև XVII դ–ի հայ փիլ. մտքի անուրանալի նվաճումն է, «Բանք իմաստասիրականք եւ աստուածաբանականք...» ծավալուն բառարանն է (մինչև 1662–ը, Մատենադարան, ձեռ. № 110), որտեղ ներկայացված են ժամանակի փիլ., աստվածաբան., հաս–քաղ., գեղագիտ., բարոյագիտ. առավել կարևոր կատեգորիաներն ու հասկացությունները՝ տարբեր աղբյուրներից քաղած բացատրություններով:



«Հայելի վարուց» (1702, թարգմ.՝ **Ստեփանոս Լեհացու***) գրքի գլխազարդով և սկզբնագրով (7–րդ) էջ*



«Պատմութիւնք յաղագս պատերազմին հրէից ...» (1787, հեղ.՝ Հովսեպոս Փլավիոս, թարգմ.՝ **Ստեփանոս Լեհացու***) գրքի գլխա- և լուսանցազարդերով (215–րդ) էջ*

Գրկ. **Առաքել Դավրիժեցի,** *Գիրք պատմության, Ե., 1990:* **Ակինեան Ն.,** *Ստեփանոս վարդապետ Լեհացի, «ՀԱ», 1912, № 1–2:* **Յովսէփեան Գ.,** *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պր. 5, Անթիլիաս, 1951:* **Զալոյան Վ.,** *Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975:* **Գրիգորյան Գ.,** *Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական բառարանը, «ՊԲՀ», 1975, № 2:* **Թարվերդյան Յ.,** *Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները, Ե., 1979:* **Միրզոյան Հ.,** *Մի էջ Ստեփանոս Լեհացու թարգմանական գործունեությունից, «Էջմիածին», 2000, № 4:*



Ստեփանոս Ռոշքա

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ Ստեփանոսի [Ռոշքյան, Ստեփանյան, Կամենիցացի, Կամենացի, Լեհացի (12.8.1670, Կամենից–31.10.1739, Ստանիսլավ)], բառարանագիր, եկեղեց. և մշակույթի գործիչ: Եպիսկոպոս (1713–ից): Սկզբն. կրթությունն ստացել է Կամենիցում և Լեոպոլսում (այժմ՝ Լվով): 1691–ին ընդունվել է Հռոմի Ուրբանյան դպրատունը. ավարտելով՝ ստացել է փիլ–յան և աստվածաբանության վարդապետի աստիճան, ձեռնադրվել է քահանա, այնուհետև վերադարձել Կամենից: 1715–ից՝ լեհահայ թեմի փոխառաջնորդ:

Ս. Ռ. գրել է «Փիլիսոփայութեան գիրք» (2–րդ մասը՝ «Տրամաբանութիւն»), «Բարոյական աստվածաբանութիւն» (հ. 1–2, 1725), «Մաշտոց հայոց», «Քերականութիւն հայոց լեզուին» (1718), «Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք» (1739, հայ. հրտ.՝ 1964, Վնն.), «Կենսագրութիւն հայոց եպիսկոպոսաց ի Լեհս» և այլ աշխատություններ: Լատ–ից թարգմանել է *«Դուռն ողորմութեան Ապրածոյ»* (1702, Վնտ.) երկը:

Ս. Ռ–ի մատենագիտ. ժառանգության մեջ առավել կարևոր է **«Գանձ հայոց լեզուի կամ Բառարան Ստեփանեան»** աշխատությունը (անտիպ), որը հայ–ի բառապաշարի առաջին ծավալուն, մատենագիտական վրա հիմնված հավաքածու է: Ունի 2 մաս՝ հայ–լատ. և լատ–հայ.:

Գրկ. Ալիշան Ղ., *Տեսութիւն ի Գանձ լեզուին հայոց կամ ի Ստեփանեան բառարան, «Բազմավէպ», 1852, էջ 86–95:* Տաշեան Յ., *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա, Վնն., 1855, № 6:* Աղայան Է., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:* Ոսկեան Հ., *Ստեփանոս վ. Ռոշքա, Մատթեոս վ. Ջուղայեցի, Վնն., 1968:* Գասպարյան Գ., *Հայ բարբառագիտության պատմություն, Ե., 1968:*



Ստեփանոս Ռոշքայի
«Գանձ հայոց լեզուի...» անտիպ բառարանի 1 էջ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԿԵՎՌԱՑԻ, XIII դ–ի գրիչ: 1272–ին Սկևռայում ընդօրինակած Խազգրքի հիշատակարանում նշվում է. «Գրեցաւ երաժշտական տառս ձեռամբ Ստեփանոս քահանայի...» (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1654): Հայտնի են Սկևռայում Ս. Ս–ու ընդօրինակած 10–ից ավելի ձեռագրեր, որոնցից 4–ը պահվում են Մատենադարանում (Մանրուսում, 1278, ձեռ. № 2629, Ավետարան, 1283, ձեռ. № 6764, Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Յովհաննու», 1289, ձեռ. № 3816, Ավետարան, 1293, ձեռ. № 5784): Ս. Ս–ու պատվիրատուն Կիլիկիայի Կեռան թագուհին էր, ենթադրվում է՝ նաև Հեթում արքայորդին և ուր.: Ս. Ս. մեծ մասամբ աշխատել է բոլորգիր գրատեսակով:

Գրկ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի (կազմ.՝ Ա. Մնաթսոյան), Ե., 1984:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ, **Ստեփանոս Քերթող** (660/670–21.7.735, թաղված է Թանահատի վանքում), մատենագիր, աստվածաբան, քերական, թարգմանիչ, բանաստեղծ, երաժիշտ: Անվանվել է նաև Ստեփանոս Սյունեցի Երկրորդ՝ V դ–ի երաժիշտ–շարականագիր Ստեփանոս Սյունեցուց տարբերելու համար: Սովորել է Հայոց կաթողիկոսարանում, ապա՝ Մաքենյաց վանքի դպրոցում և Սյունիքի վարդապետարանում: Կ. Պոլսում սովորել է հուն. և լատ., ուսումնասիրել աստվածաբանություն, փիլ., երաժշտություն: Ուսումը կատարելագործել է Աթենքի ու Հռոմի գրադարաններում: Վերադառնալով Դվին՝ որոշ ժամանակ զբաղվել է գրական–թարգմանչ. գործունեությամբ, այնուհետև ձեռնադրվել է Սյունիքի եպիսկոպոս:

Ս. Ս. գրել է դավանաբան. աշխատություններ, մեկնություններ, ճառեր, թարգման. երկեր, հոգևոր երգեր, տաղեր: Մեզ են հասել «Մեկնութիւն չորից Աւետարանչացն» (731, հրտ.՝ 1994, աշխատասիր.՝ Գ. Հովսեփյանի, 1998, 2013, աշխարհաբարի փոխադր.՝ Վ. Ղազարյանի), «Պատճառք եւ թելադրութիւնք առաջին տեսլեաննն Եզեկիէլի», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն Յոբայ», «Մեկնութիւն ժամակարգութեան» (հրտ.՝ 1915–16) ևն:

Ս. Ս. հայկ. հայրաբանության խոշոր ներկայացուցիչներից է: Նրա «Պիտանի լուծմունք Սահմանացն եւ Պորփիւրին» մեկնությունը (Մա–

տենադարան, ձեռ. N 1919) նվիրված է *Դավիթ Մնհաղթի* «Սահմանք իմաստասիրութեան» և Պորփյուրի «Ներածութիւն» գործերին:

Արժեքավոր է Ս. Ս-ու «Մեկնութիւն քերականին» երկը, որը Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության հայ. թարգմանության մեկնությունն է, որտեղ անդրադարձել է նաև առոգանության հարցերին, կարևորել հարևան ժողովուրդների լեզուների և հայ-ի բարբառների իմացությունը, կատարել վերջինների դասակարգման առաջին փորձը (ռուս. հրտ.՝ 1915):

Ս. Ս. Դավիթ Հյուպատոսի հետ թարգմանել է Դիոնիսիոս Արիոպագացու «Յաղագս երկնայնոցն քահանայեապետութեանց», «Յաղագս եկեղեցական քահանայեապետութեանց», «Յաղագս աստուածային անունաց» (712, հրտ.՝ 1987), Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց» (715, հրտ.՝ 1717), Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» (719, հրտ.՝ 1889) երկերը: Նրան են վերագրվում նաև Աթանաս Աղեքսանդրացու ճառերի (հրտ.՝ 1899, Վնտ., Սբ Ղազարի տպ.), Գեորգ Պիսիդեսի «Յաղագս վեցօրեայ արարչութեան» (հրտ.՝ 1806) երկի թարգմանությունները:

Ս. Ս-ունն վերագրվել են շարականների ամբողջ. շարքեր, Հաբության ավագ օրհնությունները, Սբ Խաչին նվիրված տաղեր, նաև Հինանց և Պահոց ստողոգիական սաղմոնները, որոնք հետագայում զետեղվել են *Մանրուսում* ձեռագիր ժող-ներում:

Մինչև X դ. գրվել է Ս. Ս-ու ընդարձակ վարքը, որի բնագիրը մեզ չի հասել, սակայն 4 խմբագրությունները պահպանվել են Մովսես Կաղանկատվացու («Պատմութիւն Աղուանից աշխարհի», գիրք 3, X դ., հավելում), Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Այրիվանեցու և Ստեփանոս Օրբելյանի երկերում: Նախն. բնագրին առավել հարազատ է Մխիթար Այրիվանեցու մշակումը:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել է Ս. Ս-ու «Ողբ եւ հառաչանք» երկը. 1790-ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Բան բարառնական ոգեալ դիմառնաբար...», Բ-ին՝ «Ողբք եւ հառաչանք ի դիմաց Մօր մերոյ...» (80 էջ, 8^0, 12,5 x 7,5):

Գրկ. **Ջահուկյան Գ.**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Ե., 1954:* **Գրիգորեան Մ.**, *Ստեփանոս Սիւնեցի, Բ., 1958:* **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 3, Ե., 1968:* **Թահմիզյան Ն.**, *Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, № 2:* **Արևշատյան Ա.**, *Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության շուրջ), «Հայ արվեստի հարցեր», ժող. 2, էջ 23–34, Ե., 2009:* **Arevshatyan A.**, *L'identité de Stepanos Siwnec'i, «Revue des études arméniennes», t. 30, P., 2005–07, p. 401–410.*


ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՀԿԱՅԻ, XIII դ-ի գրիչ և մանրանկարիչ: Ապրել ու ստեղծագործել է Կիլիկյան Հայաստանում, սովորել *Հովհաննես Արքաեղբոր* դպրոցում: Առաջին անգամ Ս. Վ-ու անունը հանդիպում է 1263–66-ին Բարձրբերդում իր իսկ ընդօրինակած «Մաւունք Աստուածաշնչի» հիշատակարանում (Մատենադարան, ձեռ. № 4243): 1274-ին Ս. Վ. Կիլիկիայի Լևոն Գ թագավորի պատվերով ընդօրինակել է ժամագիրք և նկարազարդել Օշին մարաջախտին պատկանած 1 Ավետարան, 1275-ին լրացրել է Դավիթ քահանայի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 7534), 1280-ին Սոսթենես րաբունու պատվերով Սսում ընդօրինակել Ավետարան, 1285-ին՝ Վարդան Արևելցու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատությունը՝ դարձյալ Լևոն Գ-ի պատվերով: Գրեթե բոլոր ձեռագրերում Ս. Վ. թողել է ընդարձակ և տեղեկաշատ հիշատակարաններ: Իր մասին վերջին տեղեկությունը 1289-ին Հովհաննես Արքաեղբոր և 2 այլ գրիչների ընդօրինակած ժող-ի հիշատակարանում է (Մատենադարան, ձեռ. N 3710): Ս. Վ. ստեղծագործել է *Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի* ավանդույթներով:

Գրկ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար (կազմ.՝ Ա. Մաթևոսյան), Ե., 1984:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ




«Ողբք եւ հառաչանք...» (1790, Նոր Նախիջևան) գրքի նախատիպողոսաթերթը



«Մեկնութիւն չորից Աւետարանչացն» (1994, Ե., «Արեգ») գրքի տիպողոսաթերթը



Ստեփանոս Վահկացի. *«Մաւունք Աստուածաշնչի» մատյանի պատկերազարդ էջ (1263–66, Մատենադարան, ձեռ. № 4243)*


ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՏԱՐՕՆԵՑՒՈՅ

Ստեփանոս Տարոնեցու *«Տիեզերական պատմութիւն ...» (1859, Փարիզ) գրքի տիտղոսաթերթը*

Ստեփանոս Օրբելյան



«Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» (1756, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը


ՍՏԵՓԱՆՈՍ
ՕՐԲԵԼՅԱՆ

«Սյունիքի պատմություն» (1986, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ, **Ստեփանոս Ասողիկ**, X դ–ի 2–րդ և XI դ–ի 1–ին կեսի պատմագիր: Ասողիկ պատվանվանն արժանացել է հավանաբար հմուտ երգասաց լինելու համար: Սովորել է Անիում, հռչակվել որպես գիտուն վարդապետ: Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու (992–1019) հանձնարարությամբ գրած «**Պատմութիւն տիեզերական**» վերնագրով երկում շարադրել է հայ և բազմաթիվ այլ ժողովուրդների հակիրճ պատմությունները, նրանց թագավորների ու հոգևոր առաջնորդների ժամանակագրությունները: Օգտվել է իրեն նախորդած գրեթե բոլոր հայ պատմագիրների երկերից, իր գրքի սկզբում վկայակոչել հեղինակներին:

«Պատմութիւն տիեզերականն» արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Բյուզ. կայսրության, Արաբ. խալիֆայության, Աբխազիայի, Վրաստանի և այլ երկրների պատմությունների ուսումնասիրության համար: Ս. Տ. կարևոր տեղեկություններ է հաղորդում հայ գրչության ու մշակույթի մի շարք կենտրոնների, գիտնականների ու արվեստագետների մասին, հանգամանորեն ներկայացնում Տրդատ ճարտարապետի շին. գործունեությունը:

Երկն առաջին անգամ հրատարակել է Կ. Շահնազարյանը 1859–ին Փարիզի իր տպարանում՝ «Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ» խորագրով, այնուհետև լույս է տեսել Ս. Պետերբուրգում 1885–ին (Ի. Սկորոխոդովի տպ.)՝ Ս. Մալխասյանցի առաջաբանով և արժեքավոր ծանոթագրություններով: Տպագրվել է նաև Երևանում 2000–ին (առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Վարդանյանի): Հրատարակվել է ռուս. (թարգմ.՝ Մ. Էմինի, 1864), գերմ. (թարգմ.՝ Հ. Գելցերի, 1907), ֆրանս. (թարգմ.՝ Է. Դյուլորիեի, 1883):

Գրկ. **Աբգարյան Գ.**, *Կարծեցյալ Ստեփանոս Տարոնացին նույն ինքը Ստեփանոս Տարոնացի Ասողիկն է, «ՊԲՀ», 1962, № 1:* **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 3, Ե., 1968:* **Մելիք–Բախշյան Ս.**, *Հայոց պատմության աղբյուրագիտություն, Ե., 1979:*

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԵՐ–ՀՈՒՍԿԱՆՈՐԴԻ (ծ. թ. անհտ, Արտամետ–1251), գրիչ, հոգևոր և մշակույթի գործիչ, վարդապետ: Եղել է Արգելանի Սբ Աստվածածին վանքի վանահայր: Նրա վարքը մահից հետո նեռառվել է *Հայսմավուրքի* մեջ: Սովորել է Արգելանի վանքում, եղել է վարդապետ, ունեցել բազմաթիվ աշակերտներ ու հետևորդներ: Աշխատություններից հայտնի են «Պատմութիւն երկրորդ գալստեանն Քրիստոսի»–ն և «Խրատ հաւատացելոց»–ը (Մատենադարան, ձեռ. № 1520, 2190, 3070): Պահպանվել են Ս. Տ–Հ–ու վարքի մի քանի խմբագրություններ, որտեղ ներկայացվում է նրա ընտանիքի դժվար ճակատագիրը: Ս. Տ–Հ–ու գերեզմանը բուժիչ սրբավայրի համբավ է ունեցել և դարձել ուխտատեղի, որի վրա հետագայում կառուցվել է Բերկրիի Սբ Ստեփանոս կամ Տեր–Հուսկանորդի վանքը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ (ծ. թ. անհտ–1305, թաղված է Նորավանքի Օրբելյանների տոհմ. գերեզմանատանը), պատմիչ, Սյունիքի մետրոպոլիտ՝ 1286–ից: Օրբելյանների իշխան. տոհմից: Ստացել է հիմնավոր կրթություն: Հմտացել է հայ դպրության և երաժշտության մեջ, դարձել սաղմոսերգու, 1280–ին օծվել կուսակրոն քահանա: 1285–ին, երբ հայրը՝ Տարսայիճ Օրբելյանը, դարձել է Սյունիքի իշխան, նրան ուղարկել է Կիլիկյան Հայաստան, որտեղ 1287–ից Սյունիքի մետրոպոլիտ:

Ս. Օ. նյութ. մեծ օգնություն է ցուցաբերել գրչության կենտրոններին, 1297–ին ավարտել է Տաթևի վանքի վերանորոգումը, նպաստել է Գլաձորի համալսարանի ստեղծմանն ու բարգավաճմանը: Գումարել է եկեղեց. ժողով, որը մերժել է հռոմ. դավանանք ընդունելու Գրիգոր Է Անավարզեցու պահանջը:

Արժեքավոր է Ս. Օ–ի «**Պատմութիւն նահանգին Սիսական**» կամ «Պատմութիւն տանն Սիսական» (1299) երկը. ընդգրկում է Հայոց Տրդատ Ա–ի թագավորության շրջանից (մ. թ. I դար) մինչև XIII դ–ի վերջի իրադարձությունները: Այն հարուստ նյութ է պարունակում նաև Կիլիկ–

յան և մայր Հայաստանի, մոնող. արշավանքների ու մոնղոլների, Այսրկովկասի (հատկապես՝ Վրաստանի) պատմությունների վերաբերյալ: Ս. Օ. կազմել և ներկայացրել է Սյունիքի նախարարների, իշխանների ու եպիսկոպոսների, նաև Հայոց կաթող. իկոսների ժամանակագրություններ, եզակի ու մանրամասն տեղեկություններ հաղորդել նահանգի հողատիրության, բնական հարստությունների, մշակույթի, դասակարգային և դավան. պայքարի մասին: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ից հետո Ս. Օ-ի երկը երկրորդն է, որտեղ հեղինակը փորձել է պատմ. նյութը ներկայացնել գիտ. շարադրանքով: Այն ամբողջությամբ առաջին անգամ հրատարակել է Կ. Շահնազարյանը 1859-ին Փարիզում՝ իր տպարանում, այնուհետև Մ. Էմինը՝ 1861-ին Մոսկվայում (Լազարյան ճեմ. տպ.): Տպագրվել է նաև 1910-ին Թիֆլիսում (Նվարդ Աղանյանի տպ.), 1986-ին Երևանում՝ «Սյունիքի պատմություն» վերնագրով (աշխարհաբարի փոխադր.՝ Ա. Աբրահամյանի), ֆրանս. (թարգմ.՝ Մ. Բրոսսեի, հ. 1, 2, 1864, 1866), հատվածաբար՝ նաև ռուս. և վրաց.:

Ս. Օ-ին է վերագրվել նաև ժամանակագր. 1 երկ, որը ***Սամվել Անեցու*** «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» գործի շարունակությունն է: Ներկայում այդ գործի հեղինակ է ճանաչվում ***Սրբեհանոս Եպիսկոպոսը:***

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել է Ս. Օ-ի **«Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»** (գրել է 1302-ին) դավանաբան. երկը. 1756-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության (183 էջ, 8º, 7,3 x 12,7):

Լույս են տեսել նաև Ս. Օ-ի «Ողբք եւ հառաչանք...» (1846, Կալկաթա, Արարատյան ընկ. տպ.), «Ողբ ի Ս. Կաթուղիկէն» (1885, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) բանաստեղծությունները:

Գրկ. Զարբհանալեան Գ., *Պատմութիւն հայերէն դպրութեան, Վնտ., 1878:* Ալիշան Ղ., *Սիսական, Վնտ., 1893:* Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., *Սրբեհանոս Օրբելյան, Ե., 1960:*

ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ պոլիգրաֆիական, համեմատաբար հաստ (0,2 մմ-ից ավելի) և զանգվածեղ (150 գ /մ²-ից ավելի) ***թուղթ:***

Պոլիգրաֆիայում Ս. օգտագործվում է տպագրության և կազմարարության մեջ: Ս-ի վրա տպագրում են գունավոր, բարձրորակ արտադրանք՝ թղթապանակներ, գրքի շապիկներ, թանկարժեք իրերի տարաներ ևն պատրաստելու համար: Այդ տիպի Ս-երը, որպես կանոն, մեկ կամ երկու կողմից կավճապատ են:


Կազմարարության մեջ Ս. օգտագործվում է գրքերի կազմակողեր պատրաստելու համար, այդ նպատակով թողարկվում է 1-3 մմ հաստության և 600-2500 գ /մ² տեսակարար զանգվածով թերթավոր Ս-ներ:

ՍՐԱՊՅԱՆ (Երզնկացի) Արմենուհի Նիկողոսի [18.2(3.3).1918, Կարին–28.7.2000, Երևան], բանասեր, բնագրագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1974): Ավարտել է ԵՊՀ (1940): 1943-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ գրակյան ինստ-ում: Կազմել է «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (համահեղ., 1957) ժող-ը:

Լույս են տեսել Ս-ի «Հովհաննես Երզնկացի» (1958), «Բանք չափաւ» (1986), «Կոստանդին Երզնկացին և իր տաղերը» (Կոստանդին Երզնկացու «Տաղեր» գրքում, 1962), «Հայ միջնադարյան զրույցներ» (1969), «Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն. Պատմութիւն յաղագս Փաիլուլ թագաւորին» (1983), «Հովհաննես Երզնկացի Պլուզ: Կյանքը և գործը» (1993) ուսումնասիրությունները և բնագրերը: Ս. «Ռուս և հայ միջնադարյան գրականությունը» (ռուս., 1982) հոդվածների ժող-ի հեղինակներից է: Կազմել է Ե. Տեր-Մինասյանի կենսամատենագիտությունը (1986):

ՍՐԱՊՅԱՆ (Տեր-Սրապյան) Լևոն Ղազարի, **Հերքլդ Լևոն** [1892, գ. Բթառիճ (Էրզրումի նահանգի Երզնկայի գավառ)–1974, Նյու Յորք], բանաստեղծ, խմբագիր: Գրել է անգլ.: Սովորել է Կարինի Սանասարյան վարժարանում: 1912-ին մեկնել է ԱՄՆ: Խմբագրել է «Հայ երիտասարդ» (անգլ.) թերթը:

Լույս են տեսել Ս-ի «Ժամն այս զարթնումի» (1925) բանաստեղծությունների ժող-ը, «Քղի (Տեղեկագր. եւ ազգագր.)» (1960) աշխատությունը, «Ինչու գրեցի անգլերէն» («Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», 1925, Բոստոն, էջ 254–255) հոդվածը:



Ստվարաթուղթ



Արմենուհի Սրապյանի *«Հայ միջնադարյան զրույցներ» (1969, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

ՍՐԲԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, գրաֆիկ. պայման. նշաններ, որոնք նախատեսված են շարվածքի քերական. և տեխ. սխալները նշանակելու համար: Ս. ն. բաժանվում են խմբերի՝ փոխարինման, դուրսբերման և միջադրման, նյութերի տեղափոխման, պարբերության՝ նոր տողի, տրված ցուցումի վերացման ևն:

Ս. ն. սահմանված են պետ. չափորոշիչներով:



Գարեգին Սրվանձտյան

ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, բազմացման ենթակա (տպագր. կամ այլ եղանակով) տեքստը շարելու ընթացքում թույլ տրված սխալների և տեխ. թերությունների վերացումը: Ս–յան հիմն. նպատակը տեքստաշարի կատարած սխալների (տառերի, բառերի, կետադրական նշանների բացթողումներ ևն), ինչպես նաև բնագրում չնկատված սխալների ուղղումն է, շարվածքի և էջկապի թերությունների վերացումը: Լինում են տպարանային Ս. (կատարում է տպարանի սրբագրիչը) և հրատարակչ. Ս. (կատարում են սրբագրիչը, խմբագիրը, տեխ. խմբագիրը, ինչպես նաև հեղինակը): Հայտնաբերված սխալները նշանակվում են ***սրբագրական նշաններով***. տպածոյի լուսանցքում կամ կողքին գրվում են ճիշտ տարբերակները: Հրատարակչ. գործում համակարգչային տեխնոլոգիային անցումով տպարանային Ս. վերացել է, շարվածքը և Ս. կատարվում են հրատարակչություններում:



Գ. Սրվանձտյանի *«Թորոս Աղբար...» (մաս 1, 1879, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*

ՍՐՎԱՆՁՏՅԱՆ (Սրվանձտյանց) Գարեգին Ավետիսի (17.11.1840, Վան–17.11.1892, Կ. Պոլիս), բանասեր–բանահավաք, ազգագրագետ, հաս. գործիչ, խմբագիր: Ավարտել է Վարագավանքի ժառանգավորաց դպրոցը: Եղել է ***«Արծուի Վասպուրականի»*** թերթի խմբագրի տեղակալ, 1862–ին՝ Մշո Սբ Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանի տնօրեն–ուսուցիչ, 1863–65–ին՝ ***«Արծուիկ Տարօնոյ»*** երկշաբաթաթերթի խմբագիր: Թղթակցել է «Մասիս», «Արեւելեան մամուլ», «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի» պարբ–ներին: 1869–ին եղել է Մշո Սբ Կարապետ վանքի վանահոր փոխանորդ:

Լույս են տեսել Ս–ի «Գրոց ու բրոց» (1874, ԿՊ, Եղիա Տնտեսյանի տպ.) ավանդությունների ու զրույցների ժող–ը. հավելվածում ներառվել է նաև «Սասնա ծռեր» էպոսի Ս–ի հայտնաբերած ու գրի առած «Մասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ» վերնագրով առաջին պատումը, «Հնոց եւ նորոց...» (1874, նույն տպ.), «Մանանայ» (1876, ԿՊ, Ե. Տնտեսյանի տպ.), «Թորոս Աղբար. Հայաստանի ճամբորդ» (մաս 1, 1879, նույն տպ., մաս 2, 1884, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ., ռուս.՝ 1887), «Համով–հոտով» (1884, նույն տպ.) ավանդությունների ու զրույցների, հանելուկների, առակների ժող–ները, «Շուշան Շաւարշանայ» (1875, ԿՊ, Ե. Տնտեսյանի տպ.) դրամատիկ երկը, «Ընթերցարան նոր քերական եւ հեգերէն» (1866, ԿՊ, ա. տպ.), «Նոր ընթերցարան: Տետրակ Ա» (1875, ԿՊ, Ե. Տնտեսյանի տպ.), «Նոր ընթերցարան հայերէնի դպրութեան հայ մանկանց: Տետրակ Բ» (1875, նույն տպ.), «Քրիստոնէական ուսումն Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ» (1877, ԿՊ, Սամվել Պարտիզպանյանի տպ., 1884, ԿՊ, Մարգարյանի տպ.) դասագրքերը: Հրատարակվել են նաև Ս–ի «Երկերը» (հ. 1, 2, 1978, 1982, Ե.):

Հանդես է եկել նաև Վարդ գրական կեղծանունով:

Ս. Պետերբուրգի Կայսեր. հնագիտ. ակադ–ի պատվ. անդամ:

Գրկ. **Կոստանդյան Է.**, *Գարեգին Սրվանձտյանց, Ե., 1979:*



Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցի

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ ԱԲԳԱՐՅԱՆ ԹՈՒԽԱԹԵՑԻ, **Սուլթան** [մոտ 1550, Եվդոկիա/Թոխաթ–մ. թ. անհտ], տպագրիչ, հաս., կրոն. գործիչ: 1562–ին հոր՝ ***Աբգար Թոխաթեցու*** հետ Սեբաստիայից մեկնել է Հռոմ: Նրան Պիոս IV պապը որդեգրել և կնքել է Մարկանտոնիո անունով: Հռոմում ստացել է լատ. հիմնավոր կրթություն, օծվել սարկավագ: Եղել է Հռոմի Հայոց տան (հյուրանոց–հավաքատեղի) կառավարիչ, համարվել է Էջմիածնի և Կիլիկիայի հայոց կաթողիկոսների նվիրակը Վատիկանում: Տպագր. գործունեությունն սկսել է 1565–ին Հռոմում: Նրա հորդորով Գրիգոր XIII պապը 1579–ին կարգադրել է հայ. նոր տառեր ձուլել՝ Հռոմում հայալեզու տպագրություն սկսելու համար: Ս. Ա. Թ. ֆրանսիացի հայտնի գրաճուղող Ռոբերտ Գրանժոնին պատվիրել է 3 տեսակի տպատառեր (Հռոմում շուրջ 200 տարի այդ տառերով հայ. գրքեր են տպագրվել): 1580–ին Ս. Ա.

Թ. համագործակցել է *Հովհաննես Տերզնցու* հետ. տպագրել են *«Տոմար Գրիգորեան»*, *«Դաւանութիւն ուղղափառութեան»* (երկուսն էլ՝ 1584) գրքերը: 1586-ին հայոց Ծիսարանից (Մաշտոց) տպագրել է 2 հատված՝ «Կանօն օրհնութեան աղի եւ ջրի» և «Օրհնութիւն աղի եւ ջրի յաւուրս կիրակէից»՝ իր գրած հիշատակարանով (զետեղված են Մարկանտոնիո Կոլոնացու «Հիդրոգեոլոգիա...» լատ. գրքում, Հռոմ, 1586, էջ 492–504): 1906-ին «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրվել է Ս. Ա. Թ-ու «Թուղթ առ Թադէոս Բ կաթողիկոս» (էջ 322–325) գործը:

Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, 2012: Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:

ՍՈՒԽՈՒՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Սուխումում հայկ. 1-ին տպարանը («Պրոմեթեյ») և գրախանութը 1910-ական թթ-ին բացել է Խաչատուր Ավդալբեգյանը (1888–1976): 1912–13-ին տպագրվել է «Լոյս» գրական շաբաթաթերթը (աբխազահայ 1-ին պարբ-ը), այնուհետև՝ «Նոր կեանք» (1913), «Փարոս» (1919), «Կարմիր աստղ» (1920–21) հաս-քաղ. թերթերը:

1932–35-ին լույս է տեսել «Սովետսկի պիսատել Աբխազիի» հնգալեզու (աբխազ., ռուս., վրաց., հայ. և հուն.) թերթը (շուրջ 50 համար), որտեղ տպագրվել են հոդվածներ հայ բանահյուսության և գրակ-յան մասին, հայ գրողների գործեր: 1930–60-ական թթ-ին Աբխազիայի պետ. հրատարակչությունում տպագրվել են Ա. Քիդարյանի «Պապը» (1936), «Արևի հովանու տակ» (1941) և «Ծովի շունչը» (1959), Հ. Գուրունյանի «Հայրենի ծուխ» (1960), Ի. Ռահանյանի «Խաղաղություն» (1960), Ա. Բահարյանի «Ծիր կաթին» (1960) և այլ ժող-ներ, «Շավիղ» (1962), «Ձայն համշենական» (1972) և «Սևծովյան այգաբաց» (1991) ալմանախները:

1990-ից հետո Սուխումում տպագրվել են Ժ. Էրուքյանի «Աշուն» (2000), «Թռչնի երգը» (2002), «Հոգու երկիր» (2007), Հ. Թորոսյանի «Կանչ», Հ. Եթումյանի «Մնիներ» և «Կոլխոզին պեչատը» (2004), Ս. Բաղդասարյանի «Իսկ ես արդեն սկսել եմ հավատալ» (2004), Ա. Բահարյանի «Աշխարհի ամենաքաղցր խոսքը» (2005), Ե. Դանդիլյանի «Բարության լույսեր» (2006), Հ. Հովակի «Բանաստեղծություններ» (2006), «Ես հավատում եմ խղճի հրաշքին» (2009), Հ. Ռահանյանի «Առակներ և գրույցներ», Արտավազդ *Սարեցյանի* հեղինակային և թարգման. գրքերը, պատանի ստեղծագործողների «Ծիծեռնակներ» (2004) հայ., ռուս. և աբխազ. ժող-ները, «Գրական Համշեն» (2012) ալմանախը:

«Կռունկ» հայկ. մշակութաբարեգործ. ընկերությունը 1991–94-ին Սուխումում լույս է ընծայել նույնանուն ամսագիր (30 համար, խմբագիրներ՝ Ա. Սարեցյան, Ռոբերտ Դավթյան): 1991-ից հրատարակում է *«Համշեն»*, 2004-ից Երևանում՝ *«Ձայն համշենական»* թերթերը:


Գրկ. Մաղալյան Վ., Հայ գեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Ե., 2012: Վլադիմիր Մաղալյան

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ Գաբրիել Մկրտումի [29.6(11.7).1825, Թիֆլիս–16(29).3.1912, Թիֆլիս, թաղված է Խոջիվանքի գերեզմանատանը], դրամատուրգ, հաս. գործիչ: Հայ գրակ-յան մեջ ռեալիզմի սկզբնավորողներից: Գրել է Թիֆլիսի բարբառով: Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանը (1846–52): Կարճ ժամանակ աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1853–58-ին՝ Դերբենդում, 1858-ի սեպտ. վերջից՝ Թիֆլիսի Կովկասի երկաթուղային վարչությունում:

Ս-ի գրական գործունեությունն սկսվել է «Գիշիրվան սաբրը խէր է» (1866, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) կատակերգությամբ: Ս-ի ստեղծագործության բարձրակետը «Պէպօ» (1876, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) կատակերգությունն է, որտեղ պատկերել է բուրժուազիայի ու ժող. զանգվածների հակադրությունը:

Լույս են տեսել նաև Ս-ի «Խաթաբալա» (1881), «Քանդած օջախ» (1882), «Էլի մէկ զոհ» (1884, առաջին տարբերակը՝ «Մալխաս», բոլորը՝ Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.) կատակերգությունները, «Համմալի մասլահաթնիրը» (1871–76, «Մշակ»),


ՍՈՒԽՈՒՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



«Գրական Համշեն» (2012) ալմանախը




Հ. Գուրունյանի «Հայրենի ծուխ» (1960) գրքի կազմը



Գաբրիել Սունդուկյան




Գ. Սունդուկյանի *«Գիշիրվան սաբրը խէր է» (1866, Թիֆլիս) գրքի փիփղոսաթերթը*



Գ. Սունդուկյանի
«Երկերի լիակատար ժողովածու»-ի (հ. 4, 1961, Ե., ԳԱ հրտ.) տիտղոսաթերթը



«Սուրբ փրկիչ»,
1949-ից, Սփամբուլ



Կարապիս Սուրենյանի
«Մաքուր ձեռքեր» (1959, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը

«Հաղիդի մասլահաթնիրը» (1882–86, «Արձագանք») ֆելիետոնները, «Վարինկի վեչեր» (1877, «Մշակ») միակ պատմվածքը, «Ամուսիններ» (1888, գրական լեզվով միակ երկը, հրտ.՝ 1893, 1896, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Բաղնըսի բոխչա» (1889), «Օսկան Պետրովիչն էն կինքումը» (1899, Թ., Մ. Մարտիրոսյանի տպ.), «Եւ այլն կամ Նոր Դիոգինէս» (1907) կատակերգությունները, «Սէր եւ ազատութիւն» (1909), «Կտակ» (1912) պիեսները: Հրատարակվել են նաև Ս–ի «ԵԼԺ»-ն (1934, հ. 1–4, 1951–61), «Երկերի ժողովածուն» (հ. 1–3, 1973–75), «Ընտրանին» (2001): Թարգմանել է Ժ. Բ. Մոլիերի «Ժորժ Դանդեն» կատակերգությունը:

Ս–ի ստեղծագործությունները թարգմանվել են վրաց. (թարգմանել է ինքը), ռուս. և այլ լեզուներով: Նրա երկերի հիման վրա նկարահանվել են կինոնկարներ («Պեպո», 1935, «Խաթաբալա», 1971): Ս–ի ստեղծագործությունը մեծապես նպաստել է ոչ միայն հայ դրամատուրգիայի, այլև հայ գրակ–յան հետագա զարգացմանը: Հանդես է եկել նաև Համմալ կեղծանունով:

Ս–ի անունով են կոչվել Երևանի պետ. ակադեմ. թատրոնը, փողոցներ, դպրոցներ՝ ՀՀ–ում: Ս–ի անվ. թատրոնի այգում տեղադրված են Ս–ի դիմաքանդակը և Պեպոյի արձանը:

Գրկ. Հարությունյան Ս., Գաբրիել Սունդուկյան, Ե., 1960: Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 2, Ե., 1964: Ամարյան Լ., Գաբրիել Սունդուկյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1980: Գաբրիել Սունդուկյան, 1825–1912: Կենսագրական ցանկ, Ե., 1976:

«ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ», Հայ առաքել. եկեղեցու Հորդանանի ազգ. առաջնորդարանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1997–ից Ամմանում: Խմբագիրներ՝ Վահան արք. Թոփալյան, Զաքարիա քհն. Սարիբեկյան, Հ. Չըգրգճյան: Ներկայացնում է հայ եկեղեցու պատմությունը, ծեսերն ու ավանդույթները, լուսաբանում համայնքի ազգ. կյանքը:

«ՍՈՒՐԲ ԽԱՉ», պատմամշակութ. եռամսյա հանդես: Ղրիմահայոց ընկերության հրատ.: Լույս է տեսնում 1996–ից Սիմֆերոպոլում՝ ռուս.: Տպագրում է հայոց պատմության և մշակույթի հարցերին նվիրված ուշագրավ նյութեր: Պարբ–ի գլխ. խնդիրը Ղրիմում բնակվող տարբեր ազգությունների միջև երկխոսություն հաստատելն է:

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ», բժշկ., գրական, գիտ. պատկերազարդ ամսաթերթ: Ստամբուլի «Սուրբ փրկիչ» հայոց հիվանդանոցի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1949–ից: Խմբագիրներ՝ Արփիար Տեր–Մարգարյան, Մկրտիչ Հաճյան, Հերմինե Սինանյան, Կարպիս Մուրադյան, Մաքրուհի Հակոբյան (1980–ից): Տպագրում է նյութեր համաշխ. բժշկագիտ–յան, հիվանդանոց–ծերանոցի առօրյայի, բարեգործությունների, բարերարների մասին ևն:

ՍՈՒՐԵՆՅԱՆ (Սարկավագյան) Կարպիս Հովհաննեսի (21.8.1925, Աթենք–5.11.2011, Երևան), արձակագիր, թարգմանիչ: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը (1945), Մոսկվայի Մ. Գորկու անվ. գրակ–յան ինստ–ը (1967): Հայրենադարձել է 1946–ին: 1958–59–ին աշխատել է «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրությունում:

Լույս են տեսել Ս–ի «Մաքուր ձեռքեր» (1959), «Քնիկ ոռտեղացի եք» (1969), «Արևորդիներ» (1979), «Ոգու ամրոցներ» (1982), «Երանության կղզին» (1986), «Ճիշտը կյանքն է» (2001), «Աբսուրդը» (2010), «Հայ լինելու առեղծվածը. Էսսեներ» (2012) վիպակների, պատմվածքների, էսսեների ժող–ները, «Հին պատմություն» (1999) ինքնակենսագր. վեպը, «Օրագիր, 1943–2001» (հ. 1, 2, 2005, 2007) հուշագրությունը, «Դոստոևսկու գաղտնիքը» (2007) ուսումնասիրությունը: Թարգմանել է Ֆ. Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» (1970) վեպը, Ջ. Գոլսուորդիի «Ֆորսայթների պատմությունը» (1977) վիպաշարը, Վ. Սարոյանի պատմվածքներից, ինդկ., չին., ռուս., արևմտաեվրոպ. գրակ–ից («Պսակ թարգմանական», 2001):

ՀԳՄ Ե. Չարենցի անվ. (1982), Մ. Նալբանդյանի անվ. (2006) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2001): Հայ եկեղեցու «Սբ Սահակ–Սբ Մեսրոպ» շքանշան (2004):

ՍՈՒՐԵՆՅԱՆՑ Վարդգես Հակոբի [27.2(10.3).1860, Ախալցխա–6.4.1921, Յալթա (Ղրիմ), թաղված է հայկ. եկեղեցու բակում], նկարիչ, գրաֆիկ, բեմանկարիչ, արվ–ի տեսաբան, թարգմանիչ, պատմ. ժանրի հիմնադիրը հայ գեղանկարչության մեջ: Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆ. (1885–87): 1868–ին ընտանիքի հետ տեղափոխվել է Սիմֆերոպոլ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1870–75) և գեղանկար–

չության, քանդ–յան ու ճարտ–յան ուսումնարանում (1875–78), Մյունխենի գեղարվ–ի ակադ–ում (1880–85): 1881–ին Սբ Ղազարում ուսումնասիրել է հայ գրչարվ–ը և մանրանկարչությունը: 1890–91–ին Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդել է գեղանկարչություն և արվ–ի պատմություն:

1899–ին Մոսկվայում Ս–ի ձևավորումով լույս է տեսել Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմը: Ս–ի բարձրարվ. ձևավորումներից են նաև Ա. Ծատուրյանի «Գրչի հանաքները», Օ. Ուայլդի «Երիտասարդ թագավորը», «Արքայադստեր ծննդյան տոնը» (1909), «Օձամանուկ և Արևհատ», «Մոխրոտը», «Գառնիկ ախպեր», «Իմաստուն օձը», հայկ. ժող. հեքիաթները (1906–14), «Հայ բանաստեղծ Սմբատ Շահազիզ» (ռուս., 1905, Մ.) գրքի, Մ. Մետեռլինկի «Կույրերը», «Այնտեղ ներսում», «Անկոչը» (երեքն էլ՝ 1904) պիեսների, Լ. Տոլստոյի «Հաջի Մուրադ» (1912), Ժ. Ռոդենբախի, Ս. Լագերլյոֆի և ուր. ստեղծագործությունների նկարազարդումները: 1916–ին Մոսկվայում պատկերազարդել է (Մարտիրոս *Սարյանի* հետ) Վալերի *Բրյուսովի* կազմած «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիան: Հայկ. նյութը ձևավորելիս լայնորեն օգտվել է հայկ. մանրանկարչությունից:

Ս. տիրապետել է ռուս–ին, պարսկ–ին, իսպ–ին, անգ–ին, գերմ–ին, իտալ–ին, ֆրանս–ին, թուրք–ին, բնագրից թարգմանել է Վ. Շեքսպիրի սոնետներից, «Ռիչարդ III», «Ամառային գիշերվա երազը» պիեսները, նաև Յ. Վ. Գյոթեի, Հ. Հայնեի, Օ. Ուայլդի և ուր. գործերից, Հ. Շիլտբերգերի «Ճանապարհորդություն» գրքի՝ Հայաստանին վերաբերող հատվածը:

Գրկ. Վարդգես Սուրենյանց. ստեղծագործությունների կատալոգ, Ե., 1931: **Ղազարյան Մ.**, *Վարդգես Սուրենյանց, Ե., 1960:* **Հարությունյան Վ.**, *Վարդգես Սուրենյանց, Ե., 1960:* **Բադալյան Վ.**, *Վարդգես Սուրենյանց 1860–1921: Գրաֆիկա, Ե., 2010: Վարդգես Սուրենյանց [ալբոմ] (կազմ.՝ Ք. Ավետիսյան, Գ. Եղիազարյան), Ե., 2010: Վարդգես Սուրենյանցի գրքային նկարազարդումները: Վերապրություններ (աշխ.՝ Շ. Զոհրաբյանի), Ե., 2013:*

«ՍՈՒՐԻԱ», քաղ. և գրական օրաթերթ: Լույս է տեսել 1946–60–ին Հալեպում: Արտոնատեր՝ Հովհաննես Ցազըճյան: Խմբագիրներ՝ Մատթեոս Երեցյան, Ֆիրուզ Խանզատյան, Հարություն Տեր–Ղազարյան: Լուսաբանել է սիրիահայ համայնքի առօրյան, տպագրել է տեղեկություններ Խորհրդ. Հայաստանի տնտ. և մշակութ. կյանքի մասին, անդրադարձել հայրենադարձությանը, ծանոթացրել միջազգ. իրադարձություններին, մասնավորապես՝ Մերձ. Արևելքի քաղ. կացությանը:

«ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ», երկօրյա թերթ (սկզբում՝ օրաթերթ): Հնչակյան կուս–յան Սիրիայի շրջանակի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1922–27–ին Հալեպում: Արտոնատեր–խմբագիր՝ Հայկ Թորոսյան, պատ. տնօրեն՝ Տիգրան Երեցյան, խմբագիրներ՝ Վարդ Մեխակ (Վարդավառ Գարանֆիլյան), Էդվարդ Ոսկերչյան, Սարգիս Տխրունի (Քեդերյան): Տպագրել է հոդվածներ Հայկ. հարցի, Լոզանի կոնֆերանսի հետևանքների, հայ որբերի և գաղթականների վիճակի մասին: Լուսաբանել է ՀՕԿ–ի և հաս. այլ կազմակերպությունների աշխատանքները, 1925–26–ին հրատարակել է նույնանուն ուսանող. ամսաթերթ–հավելված (16 համար), որտեղ տպագրվել են գրական գործեր, նյութեր՝ արվ–ի վերաբերյալ:

«ՍՈՒՐԻԱՀԱՅ ՏԱՐԵԳՈՅՑ», պատկերազարդ տարեգիրք: Լույս է տեսել 1924–ին Կահիրեում, 1925–ին՝ Հալեպում (2 գիրք): Կազմողներ՝ Միհրան Աճեմյան, Միսաք Սիսեռյան, Էդվարդ Ոսկերչյան: Տպագրել է ազգ., գրական–գեղ., գիտ., բժշկ., պատմ., կրոն., վիճակագր., մարզ. թեմաներով նյութեր:

ՍՈՒՐԽԱԹԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, գործել է հիմնականում XIV դ–ում՝ Ղրիմի հայկ. գաղթավայրի ծաղկման շրջանում: Տեղի Սբ Խաչ վանքում և մի շարք այլ եկեղեցիներում գրել ու նկարազարդել են բազմաթիվ ձեռագրեր (գրիչներ՝ ***Նատրեր,*** Գրիգոր Թորոսանց, Տիրացու Երևանցի, Ասլան Արզրումցի, Վարդան, Ստեփանոս, Մարկոս, Սիմեոն և ուր.): Սուրխաթում են ստեղծագործել նաև Ղրիմի հայկ. մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչներ ***Գրիգոր Սուքիասանցը***, Նատերի որդիները՝ ***Ավետիսն*** ու Ստեփանոսը և ուր.:

Ս. գ. կ–ում XVII դ–ի վերջին և XVIII դ–ի սկզբին ձեռագրեր է ստեղծել նաև Դավիթ գրիչը: Ս. գ. կ–ից մեզ է հասել ձեռագրերի պատկառե-



Վարդգես Սուրենյանց. *Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» (1899, Մոսկվա) գրքի փիփղոսաթերթը*



«Սուրիա», *1946–60, Հալեպ*




«Սուրիական մամուլ», *1922–27, Հալեպ*

Սուրխաթի գրչության կենտրոն



«Կանայի հարսանիքը», մանրանկար, 1332–ի Ավետարան (գրիչ և մանրանկարիչ՝ Գրիգոր Սուքիասանց, Մատենադարան, ձեռ. № 7664)



Աշոտ Սուքիասյան



Ա. Սուքիասյանի *«Հոմանիշները ժամանակակից հայերենում» (1971, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*



Գագիկ Սուքիասյանի *«Գրադարանային-տեղեկատվական...» (2011, Ե., հեղ. հրտ.) գրքի կազմը*



«Սփիւռք», *1958-ից, Բեյրութ (№ 12, 1990)*

լի ժառանգություն. ավելի քան 30-ը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 352, 1634, 1736, 2825, 7438, 7597 ևն):

Գրկ. **Корхмазян Э.**, *Армянская миниатюра Крыма, Е., 1978.*

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ», ազգ-քաղ., տնտ., գրական օրաթերթ: Լույս է տեսել 1899–1908-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Զայրմայր (Կեզյուրյան), Տիգրան Արփիար, Տիգրան Զավեն, Ենովք *Արմեն*: Հանդես է եկել Օսմ. կայսրության վարած հայահալած քաղաքականության դեմ, անդրադարձել արևմտահայությանը հուզող ազգ., տնտ. խնդիրներին, միջազգ. քաղ. իրավիճակին ևն:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ», գրական, քաղ-հաս. օրաթերթ (սկզբում՝ երկօրյա): Լույս է տեսել 1909–12-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Ասատուր Երիցյան: Հաս. առաջընթացի և հոգևոր զարգացման խթան է համարել առևտր. և տնտ. հարաբերությունների արդիական ձևերը, կարևորել է տնտեսագետների պատրաստումը:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Աշոտ Մուրադի (18.8.1922, Թիֆլիս–15.1.2007, Երևան), լեզվաբան, բառարանագիր: Բանասիր. գիտ. դ-ր (1972), պրոֆ. (1974): Գիտ. վաստ. գործիչ (1981): Ավարտել է ԵՊՀ (1948): 1954–66-ին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստ-ի ավագ գիտաշխատող, 1966-ից՝ ԵՊՀ դասախոս, 1976-ից՝ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ս-ի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (1967), «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (1971) աշխատությունը, «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (համահեղ.՝ Ս. Գալստյան, 1975), «Հայոց լեզվի հոմանիշների դպրոցական-ուսումնական բառարանը» (2000, 2005), «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանը» (համահեղ., 2002), «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը» (2003, ՀՀ նախագահի մրց.՝ 2004, վերահրտ.՝ 2009), «Ժամանակակից հայոց լեզու» (1982, 1987, 1999, 2004, 2008) բուհ. դասագիրքը: Մասնակցել է ակադեմ. քառահատոր ***«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»***-ի (հ. 1, 3, 1969, 1974) կազմմանը:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Գագիկ Արամի [ծ. 9.5.1952, գ. Ձորագյուղ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում)], մատենագետ, գրադարանագետ: Մանկավարժ. գիտ. դ-ր (1997), պրոֆ. (2009): Ավարտել է ՀՊՄԻ (1981): 1991–93-ին և 1998-ից դասավանդում է ՀՊՄՀ-ում, 1999-ից՝ ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Ս-ի «Մատենագիտությունը Հայաստանում և հայկական սփյուռքում պատմության համատեքստի մեջ. V–XX դդ.» (ռուս., 1997), «Ուսումնական ծրագրեր և հանձնարարելի մատենագիտություն» (2005), «Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն» (2013) աշխատությունները, «Փաստաթղթագիտության և փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրներ» (համահեղ., 2009), «Գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությունը Հայաստանում» (2011) ուս. ձեռնարկները:

ՀՊՄՀ-ի «Խաչատուր Աբովյան» հուշամեդալ (2002):

«ՍՓԻՒՌ», գրական-գեղ., հաս. պարբերաթերթ: Հայկ. ժողովրդային շարժման հրատ.: Լույս է տեսնում 1958-ից Բեյրութում (1990-ից՝ անկանոն պարբերականությամբ): Խմբագիրներ՝ Սիմոն *Սիմոնյան* (հիմնադիր), Գևորգ *Ահարոնյան*, Գևորգ *Յազըճյան*, Հովսեփ Արթինյան, 2009-ից՝ խմբագրակազմ: Անդրադառնում է ՀՀ-ի, ԼՂՀ-ի և Սփյուռքի հաս. կյանքին, Հայրենիք–Սփյուռք փոխհարաբերություններին, Հայկ. հարցին, Արցախյան հիմնախնդրին, մերձավորարևելյան քաղ. անցուդարձին: Տպագրում է նաև գեղ. ստեղծագործություններ, մշակութ. թեմաներով նյութեր:

Գրկ. **Օգնյանեան Ս.**, *Մատենագիտութիւն «Սիփիւռք» շաբաթաթերթի. 1958–1978, Բ., 1984:*

«ՍՓՅՈՒՌ-ՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», տարեգիրք: ՀՀ սփյուռքի նախարարության և ԵՊՀ հայագիտ. հետազոտությունների ինստ-ի հրատ.: Լույս է տեսնում 2012-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Յուրի *Ավետիսյան*: Տպագրում է ՀՀ-ում և Սփյուռքի տարբեր կենտրոններում տեղի ունեցած գիտաժողովների նյութեր, գիտ. որոշակի շրջանակներում Սփյուռքի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքներ, գրախոսություններ՝ ՀՀ-ում և արտերկրում լույս ընծայված հայագիտ. հրատ-ների շուրջ:

Վ


Վ, հայ. այբուբենի 30–րդ տառը, անվանումը՝ «վեվ» («վեւ»): Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 երկար և 1 լայն տարրերից. երկարներն իրար են միանում նուրբով՝ ստորին ծայրերից, իսկ լայնը՝ աջ երկարին աջից՝ ստորին ծայրից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Վ, որպես այբուբենի հազարավորների սյան 3–րդ (30–րդ) տառ, նշանակել է երեք հազար և երեքհազարերորդ, բյուրի նշանով (Վ͂)՝ 30 մլն (30 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Վ–մաս 3000–րդ):

ՎԱԳՆԵՐ (Wagner) Մորից (3.10.1813–30.5.1887), գերմանացի ճանապարհորդ, աշխարհագետ, երկրաբան, բնագետ: Դասավանդել է Մյունխենի համալսարանում: 1843–44–ին շրջագայել է Հայաստանում, եղել Երևանում, Սևանի ավազանում, բարձրացել Արարատ լեռը, կատարել չափագրություններ. նրա ուղեկից–թարգմանիչը եղել է Խաչատուր *Աբովյանը*: Վ. իր «Ճանապարհորդություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ» (1848, հայ. հրտ.՝ «Ճանապարհորդութիւն ի Հայաստան», 1851, Վնն., Մխիթարյան տպ.) աշխատության մեջ ներկայացրել է Հայաստանի ֆիզ. աշխարհագրությունը, ռելիեֆը, կլիման, բուս. և կենդ. աշխարհները, Հայաստանի քաղ. և տնտ. վիճակը, ժողովրդի կենցաղը, զբաղմունքը, անդրադարձել ժող. զրույցներին ու ավանդություններին, Էջմիածնի մատենադարանի ձեռագիր մատյաններին: «Ճանապարհորդություն դեպի Կողքիս» (1850) ուսումնասիրության մեջ նկարագրել է թիֆլիսահայության և Հայ եկեղեցու կյանքը, հայկ. մշակույթը:

ՎԱՋԳԵՆ Ա. ՊԱԼՃՅԱՆ [ավազանի անունը՝ Լևոն–Կարապետ, 20.9(3.10).1908, Բուխարեստ–18.8.1994, Սբ Էջմիածին], հաս–քաղ., հոգևոր, կրթամշակութ. գործիչ, մատենագիր, խմբագիր–հրատարակիչ: Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1955–ից: ՀՀ ԳԱԱ պատվ. անդամ (1991): Առաջինն է արժանացել Հայաստանի Ազգ. հերոսի կոչմանն ու «Հայրենիք» շքանշանին (29.7.1994): Ավարտել է Բուխարեստի պետ. համալսարանի գրակ–յան և փիլ–յան ֆակ–ը (1936), գործն. մանկավարժության բաժինը (1937):

Գրել է հոդվածներ ռումինահայ գաղութի մասին, որոնք տպագրել է «Մարտկոց» (1933, Փարիզ) թերթում, ապա՝ Բուխարեստում իր հիմնադրած և հրատարակած գիտահաս. «Հերկ» (1937–38) ամ-





Մորից Վագների
«Ճանապարհորդութիւն ի Հայաստան» (1851, Վնն.) գրքի փիփղոսաթերթը



Վազգեն Ա. Պալճյան

սագրում: 1929–43-ին դասավանդել է Բուխարեստի հայկ. դպրոցնե-րում: 1943–47-ին՝ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ. տեղապահ, 1947–55-ին՝ թեմակալ առաջնորդ: Ընտրվելով կաթողիկոս՝ ծավալել է եկեղեցաշին-վերականգնող. գործունեություն: Մեծապես նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը, հոգևոր-մշակութ. արժեքների պահպանմանը: Վ. Ա Պ-ի ջանքերով Մատենադարանին է հանձնվել ***«Վեհափառի Աւետարանը», «Վեհամոր Աւետարանը»***, Թորոս Ռոսլինի ծաղկած ***«Զէյթունի Աւետարանը», «Մալաթիայի Աւետարանը»***, ***Թովմա Արծրունու*** «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության պահպանված միակ ձեռագիր օրինակը և բազմաթիվ այլ ձեռագրեր ու մեծարժեք վավերագրեր:

Լույս են տեսել Վ. Ա Պ-ի «Սիւսա լերան հայերը ֆրանց Վերֆելի վէպին մէջ» (1940), «Խրիմեան Հայրիկ որպէս դաստիարակ» (1943), «Խօսք Հայրենի-քի մասին» (1945), «Հայրենի արեւին տակ» (1954), «Հոգեբանության դասեր» (1961), «Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ» (գիրք 1–4, 1958–83), «Գալիքի տեսիլքով» (գիրք 1, 2, 1988, 1993), «Մեր Պատարա-գը» (1988, 1990, 2008) հոգևոր, իմաստասիր., հրապարակախոս., հայագիտ. աշխատությունները:

Վ. Ա Պ-ի անունով են կոչվել դպրոց Վանաձորում, Սևանի հոգևոր դպրանո-ցը: Հուշարձաններ են կանգնեցվել դպրանոցի բակում (2008), Էջմիածնում (2010):

Երկ. ԵԼԺ, Էջմիածին, 2008: Հայրապետական ողևորութիւնները, գիրք 1, 2, Էջ-միածին, 1957, 1978:

Գրկ. **Շտիկյան Ս.**, *Վազգեն Առաջին: Կաթողիկոս Ամենայն հայոց. Համառոտ տա-րեգրություն (1908–1955), Էջմիածին, 1986:* **Հարությունյան Վ.**, *Եկայք շինեսցուք, Էջ-միածին, 1989:* **Քոլանջեան Ս.**, *Երջանկայիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ի կեանքն ու գործը, հանգիպտը եւ յոտարկաւորութիւնը, Լոս Անջելես, 1996: Վազգէն Ա. Պալճեան, Ե., 2008 («Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», հ. ԺԶ, կազմ.՝ Գ. Յազրճյան): Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսի մատենագիտությունը, (կազմ.՝ Ս. Շտիկյան), Էջմիածին, 1995:*



Լեմվել Վալեյանի *«Աշխարհը և Հայաս-տանը: Աշխարհա-գրական ատլաս»-ի (համահեղ., 2003, Ե., «Մակմիլան Արմե-նիա») կազմը*


ՎԱԼԵՍՅԱՆ Լեմվել Հակոբի [30.4.1929, գ. Ազատան (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–15.10.2009, Երևան], աշխարհագետ, քարտեզագետ: Աշխարհագր. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1972), Ռուսաստանի կրթու-թյան (1999) և Միջազգ. էկոլոգ. (1995) ակադ-ների ակադ.: Ավարտել է ԵՊՀ (1952): Աշխատել է ՀՀ ԳԱԱ երկրբ. գիտ-ների և տնտեսագիտ -յան ինստ-ներում: 1979–87-ին՝ ՀՊՄԻ ռեկտոր, 1987–2006-ին՝ ԵՊՀ տնտ. և սոցիալ. աշխարհագրության ամբիոնի վարիչ, 1997–2000-ին, միաժամանակ՝ աշխարհագրության ֆակ-ի դեկան: Մասնակցել է ՀՀ աշխարհագրության համալիր և ճյուղային ատլասների կազմման աշխատանքներին: Համահեղինակ է Հայկ. ԽՍՀ գյուղատնտ. ատ-լասի (ռուս., 1984), «Աշխարհը և Հայաստանը: Աշխարհագրական ատլաս»-ի (2003), «Հայաստանի ազգային ատլաս»-ի (հ. 1–2, 2007–08, հ. 1-ի՝ պատ. խմբագիր):

Լույս են տեսել Վ-ի «Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշ-խարհագրություն» (1988), «Քաղաքական աշխարհագրության հիմունքներ» (համահեղ., 1996), «Հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրու-թյան ներածություն» (1999), «Աշխարհագրական գիտությունների մեթոդաբա-նական և տեսական հիմունքներ» (2004), «Քաղաքական աշխարհագրություն» (երկուսն էլ՝ համահեղ., 2005) դասագրքերը:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1985), ՀՊՄՀ «Խաչատուր Աբովյան» հուշամեդալ (1982):

ՎԱԼՄԱՐ (Մարգարյան Վոլոդյա Սամիկոնի, ծ. 21.4.1948, Լե-նինական), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Ժող. նկարիչ (2015): Ավարտել է Լենինականի նկարչ. դպրոցը (1966), ԵԳԹԻ (1972), աշա-կերտել է Ե. ***Քոչարին:***

Նկարազարդել և ձևավորել է Վ. Պողոսյանի «Երկնային պատիժ» (1983), Ս. Աթանեսյանի «Մենք ապրել էլ գիտենք» (1997), Հ. Իխտիարյանի «Պիեսներ» (2007), Գ. Մարգարյանի և Ս. Մարգարյանի «Կյանք, որ չունի մահ» (2009), Գ. Աթաբեկյանի «Մերօրյա երփնագիր» (2009), Լ. Հովհաննիսյանի «Արջ եղբայրների և այլոց արկածները Լեռնային Ղարաբաղում» («Ղարաբաղի հեքիաթ», 2010) և այլ գրքեր:



Վալմար. *Հ. Իխտիար-յանի «Պիեսներ» (2007, Ե., «Զանգակ») գրքի կազմը*

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2008) և «Գրիգոր Նարեկացի» (2013) մեդալներ, ՀՀ վարչապետի (2011) հուշամեդալ:

Գրկ. Վալմար. գեղանկարիչ, ոմ արվեստում թագավորում է երաժշտությունը, Ե., 2003:

«ՎԱՀԱԳՆԻ ԵՐԳԸ», «Վահագնի ծնունդը», հայկ. դիցարանում պատերազմի, քաջության և հաղթանակի աստված Վահագնին նվիրված ձոներգ, հայ հնագույն առասպելաբան. երգ. գրի է առել և ավանդել *Մովսես Խորենացին* («Պատմություն Հայոց», Ա, ԼԱ) V դ–ում: Բաղկացած է եռատող 3 տնից. առաջինն աշխարհի ուղղահայաց եռամաս կառուցվածքի (երկինք, երկիր, ծով) մասին է: Երկրորդում ներկայացված է այդ կառույցում երիտասարդ աստծու ծնունդը՝ խարտյաշ պատանի, որը ծնվում է երկնքի (հայր) և երկրի (մայր) երկունքից՝ ծիրանագույն ծովում՝ ծխով ու բոցով բռնկած եղեգնի փողից: Երրորդում նկարագրվում է նորածին աստծու արտաքինը՝ հրեղեն մազերը, բոց մորուքը, արեգակնատիպ աչքերը.

Գրկ. Աբեղյան Մ., Երկեր, հ. 1, Ե., 1966, էջ 72–93:

«ՎԱՀԱՆ», հաս–քաղ., գրական շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1991–ից Պլովդիվում՝ հայ. և բուլղ.: Խմբագիրներ՝ Գրիգոր Սարաֆյան, Հարի Նիկողոսյան: Լուսաբանում է բուլղարահայության և սփյուռքահայ այլ համայնքների կյանքը, ՀՀ–ում և Արցախում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, ներկայացնում Սփյուռքի նշանավոր գործիչներին, Հայ եկեղեցու պատմությունը:

ՎԱՀԵ ՀԱՅԿ [Տինճյան Վահե Մկրտչի, 1896, Խարբերդ (Ծոփքի նահանգ)–18.6.1983, Ֆրեզնո], գրող, խմբագիր: Ավարտել է Խարբերդի Եփրատ քոլեջը: *«Հայաստանի կոչնակ», «Նոր կեանք»* (1915–20), «Նոր կեանք»–«Արօր» (1921–22, 1922–ի վերջից՝ «Նոր օր») պարբ–ների խմբագիր: Աշխատակցել է «Ամէնուն տարեցոյցը», «Հունահայ տարեցոյց» տարեգրքերին, «Պայքար» (Բոստոն) հանդեսին և սփյուռքահայ այլ պարբ–ների:

Լույս են տեսել Վ. Հ–ի «Հայրենի ծխան» (հ. 1–5, 1930–70) երկերի, «Հայաստանի մանկական աշխարհը եւ անոր մանկական գրականութիւնը» (1974) և «Լուսաւոր դէմքեր մեր օրերուն վրայ» (1972) ուսումնասիրությունների ժող–ները: Խմբագրել է «Հազար հինգ հարիւր ամեակ Վարդանանց պատերազմին. 451–1951» (1952) հայ. և անգլ. նյութերի ժող–ը, կազմել «Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը. յուշամատեան պատմական, մշակոյթային եւ ազգագրական» (1959) գիրքը:

«ՎԱՀԵ ՍԵԹՅԱՆ», տպարան–հրատարակչություն, ստեղծվել է 1931–ին Բեյրութում՝ Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարանին կից: Մինչև 1947–ը կոչվել է «Հույս», 1947–67–ին՝ «Համազգային տպարան»: 1965–ին Համազգ. կենտր. վարչության ատենապետ և ցմահ պատվո նախագահ Վահե Սեթյանի նյութ. հովանավորությամբ տպարանը վերակահավորվել է ժամանակակից սաքավորումներով (1967–ից՝ նրա անվան): Տպագրում է հայ գրողների գործեր, մանկապատանեկան և թարգման. գրակ., դասագրքեր, գիտ., գաղ., հուշագր. և այլ գրքեր: Հրատարակվել են Լևոն Շանթի երկերի ամբողջ. ժող–ը (հ. Ա–Թ, 1946–52, 2008), «Թէհլիրեան: Արդարահատոյցը» (1981, 2014), Ծերենցի «Թէոդորոս Ռշտունի» (1982), Հ. Պերպերյանի «Ոսպնեակ» (1984), Վ. Սամվելյանի «Վ. Սարոյեանի «Լաթաքիոյ գիշերը»» (1985), Հոմերոսի «Իլիականը» (մաս Ա–Գ, 1955) և «Ոդիսականը» (մաս Ա–Դ, 1955, վերահրտ.՝ երկուսն էլ՝ 2004, մանկապատանեկան տարբերակ), Գ. Նժդեհի «Որդիների պայքարը հայրերի դէմ» (2005), Մուշեղ Իշխանի «Հացի եւ լոյսի համար» (2007), Պ. Մնացյանի «Ստորագրութիւններով պատիժներ» (2008) և այլ գրքեր: 1944–50–ին տպարանում լույս է տեսել «Ակօս» պարբերագիրքը, 1962–ից՝ *«Բագին»* հանդեսը:

2003–ին՝ Ֆրանսիայի «Էմմփրիմերի» տպարանի սարքավորումները ձեռք բերելուց հետո, հրատարակչության տպագր. հնարավորությունները զգալիորեն ընդլայնվել են: Համագործակցում է արտերկրի



Վահե Հայկ


«Վահե Սեթյան» *տպարան–հրատարակչության տպագրած գրքերից*



«Լեւոն Շանթի երկերը» (հ. Գ, 2008, Բեյրութ) գրքի կազմը



«Ծաղկաքաղ սփիւռքահայ գրականութեան» (2009, Բեյրութ) գրքի կազմը



Վահե-Վահյան



Վահե-Վահյանի
«Բերքահաւաք»
(հ. 1, 1978, երեսաղեմ)
գրքի կազմը



Վահրամ Րաբունու
«Լուծմունք «Սփորո-
գութեանցն» Արիս-
տոտէլի» (1967, Ե., ԳԱ
հրտ.) գրքի կազմը

կրթ. և մշակութ. հաստատությունների և գրահրատարակչ. մի շարք ընկերությունների հետ: Ունի գրախանութ, կայքէջ, որտեղ սպառիչ տեղեկություններ են տրվում հրատարակված գրքերի մասին:

Հիմնադիր-տնօրեն՝ Նիկոլ ***Աղբալյան,*** տնօրեններ՝ Գասպար Իփեկյան, Երվանդ Մինոֆորյան, Հակոբ Հավաթյան (1998-ից):

ՎԱՀԵ-ՎԱՀՅԱՆ [Ապդալյան Սարգիս Հակոբի, 22.10.1908, Կյուրին (Սերաստիայի նահանգ)–19.8.1998, Բեյրութ], բանաստեղծ, խմբագիր, հաս. գործիչ, մանկավարժ: Սովորել է Այնթապի Վարդանյան և Հալեպի հայկ. բողոք. վարժարաններում: Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը (1930): Դասավանդել է սփյուռքահայ վարժարաններում, պաշտոնավարել Բեյրութի «Երվանդ Հյուսիսյան» հայագիտ. կենտրոնում: 1946–55-ին՝ ***«Անի»*** ամսագրի հիմնադիր-խմբագիր, համանուն հրատարակչության տնօրեն:

Լույս են տեսել Վ.-Վ.-ի «Արեւ-անձրեւ» (1933), «Ոսկի կամուրջ» (1946, 1958), «Մատեան սիրոյ եւ մորմոքի» (1968, 1971), «Յուշարձան Վահրամիս» (1977), «Ղողանջ ու մրմունջ վերջալուսային» (1990), «Հրաժեշտի քերթուածներ» (2009), «Բանաստեղծին սիրտը» (2012) բանաստեղծությունների, «Բերքահաւաք» (հ. 1, 2, 1978, 1987) գրաքննադատ. հոդվածների ժող-ները, «Յարալէզներու հաշտութիւնը» (1953) ուղեգրությունը, «Հատընտիրը» (1986):

Հանդես է եկել նաև Սարգիս Մեհյան, Ս. Հ. Հարզվարթյան, Վ.-Վ. (1933-ից) գրական կեղծանուններով:

ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ, **Վահրամ Վարդապետ Սևլեռնցի**, XIII դ-ի իմաստասեր, վարդապետ, պետ. գործիչ: Եղել է Կիլիկիայի Լևոն Գ թագավորի ատենադպիրը: Պաշտպանել է Հայ առաքել. և կաթոլիկ եկեղեցիների միավորման գաղափարը:

Գրել է Արիստոտելի «Կատեգորիաներ» (հրտ.՝ «Լուծմունք «Ստորոգութեանցն» Արիստոտէլի», 1967, քնն. բնագիր, գրաբարից թարգմ. ռուս-ի, առաջաբ. և ծնթգր.՝ Գ. Գրիգորյանի) և «Յաղագս մեկնութեան» («Պերի արմէնիաս»), Պորփյուրի «Ներածութիւն», Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի», Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութեաննն», Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկերի մեկնությունները (Մատենադարան, ձեռ. № 59, 631, 1683 ևն): Լևոն Գ թագավորի հանձնարարությամբ գրել է նաև «Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց» (հրտ.՝ 1859, Փ., Է. Թունոյի տպ.) պատմ. երկը: Ուշագրավ է Լևոն Գ-ի թագադրման կապակցությամբ արտասանած ընդարձակ ճառը («Արարատ», 1868, № 7, 12, 1869, № 1–5): Հեղինակ է նաև քարոզների և խրատների: Վ. Ր-ուն են վերագրվում «Լուծմունք Սահմանաց գրոց Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի» և «Հարցմունք եւ պատասխանիք ի Գիրս Ծննդոց» աշխատությունները:

*Գրկ. **Գրիգորյան Գ.**, Վահրամ Րաբունու փիլիսոփայությունը, Ե., 1969: **Զաքարյան Ս.**, Վահրամ Րաբունի, Հովհաննես Պլուզ Երզնկացի, Ե., 1997:*

ՎԱՀՈՒՆԻ (Խաչիկյան) Սուրեն Վահանի [12.12.1910, գ. Փաշալու (այժմ՝ գ. Ջառիթափ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում)–25.3.1983, Երևան], բանաստեղծ, թարգմանիչ: Սկզակույթի վաստ. գործիչ (1967): 1963–83-ին՝ Ա. Իսահակյանի տուն-թանգարանի տնօրեն:

Թարգմանել է Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» (1937), Լոպե դե Վեգայի «Պարտիզպանի շունը» (1956), Ջ. Բոկաչչոյի «Դեկամերոն» (1960), Ա. Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» (1966), Յ. Հաշեկի «Քաջարի զինվոր Շվեյկի արկածները համաշխարհային պատերազմի ժամանակ» (1973, 1978) և այլ երկեր: Լույս են տեսել Վ.-ու «Երկու երգ» (1930), «Ռազմի երգեր» (1938), «Դեպի արևմուտք» (1943), «Երգերի գիրք» (1949) բանաստեղծությունների ու բալլադների ժող-ները ևն:

ՀԺՄ «Մեսրոպյան գրիչ» մրց. (1969), ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության շքանշան (1980):

*Երկ. **Գիրք անցած ճանապարհի (չափածո և արձակ երկեր), Ե., 1985:***

«ՎԱՃԱՌԱԿԱՆ», առևտր. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1866–67-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Գևորգ ***Տեր-Աղեքսանդրյան***: Ուսուցանել է առևտր. և տնտ. գիտելիքներ, ծանոթացրել գործարար աշխարհի, Այսրկովկասի տնտ. կյանքի նորություններին:

ՎԱՅՏԵՆԲԵՐԳ (Weitenberg) Յոզեֆ [ծ. 5.8.1943, ք. Գրոնինգեն (Նիդեռլանդներ)], հոլանդացի հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1984): 1970-ին ավարտել է Նեյմեգենի համալսարանը: 1978-ից դասավանդում է Լեյդենի համալսարանում: Ուսումնասիրել է հնդեվրոպ. համեմատ. լեզվաբանության, հիթիթաբանության և հայերենագիտ-յան, հայոց լեզվի պատմության և այլ խնդիրներ:

Լույս են տեսել Վ-ի «Հայերենի «ընդոծինը»» (1980), «Ակնարկներ դասական հայերենի դերանվանական տրականի շուրջ» (1983), «Եղիա Չելեպին սերաստահայ խոսվածքի մասին» (1984), «Հիթիթերենի U-արմատը» (1984) աշխատությունները:

«ՎԱՆ ԱՐՅԱՆ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1996-ին Երևանում: Հիմնադիր-տնօրենն՝ Վիլյամ Պողոսյան: Տպագրում է թարգման. գրակ. (Վ. Ֆոլկների «Աբիսողոմ, Աբիսողոմ», 2003, Պ. Կոելյոյի «Ալքիմիկոսը», 2004, Ն. Հիլլի «Խորհի՛ր և կհարստանաս», 2007, ևն), պատկերազարդ մենագրություններ հայ և օտարազգի թատեր. գործիչների մասին (Վ. Գրիգորյանի, Հ. Տեր-Կարապետ-յանի «Հայկական հեռուստատեսային թատրոնի պատմություն», 2007, Լ. Մութաֆյանի «Վլադիմիր Մսրյան», 2007, Գ. Օրդոյանի «Հայ կրկեսային արվեստի անցած ուղին», 2012, ևն), բառարաններ, բուհ. դասագրքեր ևն (ցայսօր՝ ավելի քան 600 անուն գիրք):

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Վանական Վարդապետ Տավուշեցի (1181, Ուտիք նահանգի Տավուշ գավառ–1251, թաղված է Խորանաշատի մերձակայքում՝ չքավորների գերեզմանոցում՝ իր կտակի համաձայն), աստվածաբան, պատմագիր, մատենագիր: Սկզբն. կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Նոր Գետիկի բարձրագույն դպրոցում: 1201-ին ձեռնադրվել է քահանա, դարձել ***Մխիթար Գոշի*** աշակերտն ու գործի շարունակողը: 1206/1210-ին ստացել է վարդապետի աստիճան: Ժողովրդի եռանդուն աջակցությամբ հիմնադրել է Խորանաշատի վանքն ու ուսումնագիտ. դպրոցը, որը շուտով մեծ հռչակ է ձեռք բերել:

Վ. Վ-ի կոթողային՝ «Պատմություն» աշխատությունը չի պահպանվել: Ըստ ***Վարդան Արևելցու*** և ***Կիրակոս Գանձակեցու***՝ այն ընդգրկել է Հայաստանի ամբողջական պատմությունը՝ սկզբից մինչև հեղինակի ապրած օրերը: Գրել է նաև ճառեր, մեկնություններ: Վ. Վ-ի ամենածավալուն՝ «Մեկնութիւն Յորայ» երկը Հիսիքիոսի, Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու և ուր. երկերից քաղագրություն է: Ուշագրավ են նրա «Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի» (1858, «Ճոռաքաղ»), «Խրատ դաւանութեան» (ներառված է Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ), «Պատճառք վասն առաջաւորաց պահոց» երկերը, «Յաղագս տարեմտին» (հրտ.՝ 1941, «Գիտ. նյութերի ժող.», հ. 1) ճառը:

Վ. Վ-ից պահպանված գործերից արժեքավոր է «Հարցմունք եւ պատասխանիք»-ը (Մատենադարան, ձեռ. № 5611), որը հայտնի է մի քանի տասնյակ ընդօրինակություններով: Այն դպրոցի ուս. ծրագրի համառոտ ամփոփում է և իր ժամանակի հանրագիտ. բառարան: Երկը շարադրված է գրեթե խոսակց. միջին հայ-ով և այդ շրջանի հայոց լեզվի ուսումնասիրման կարևոր աղբյուր է:

Երկ. Վանական Վարդապետին ասացեալ՝ բուն հաւատոյի ազգիս մերում (աշխատասիր.՝ Մ. Մութաֆյանի), ԿՊ, «Շողակաթ», 1995, էջ 162–163:

Գրկ. **Վարդան Վարդապետ (Արեւելցի)**, *Հաւաքումն պատմութեան..., Վնտ., 1862:* **Գրիգոր Ակներցի**, *Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974:* **Կիրակոս Գանձակեցի**, *Հայոց պատմություն, Ե., 1982:*

ՎԱՆԱՆԴԵՑԻ Հովհաննես, **Հովհան** (Միրզայան Ամիրզադե Միրզայի, 1772, Վան–3.2.1841, Զմյուռնիա), բանաստեղծ, մշակույթի գործիչ: Սարգիս ***Վանանդեցու*** պապը: Ավարտել է Կ. Պոլսի Մայր դպրատունը (1798): 1799-ից աստվածաբանություն և հայկաբանություն է դասավանդել Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում:

Լույս են տեսել Վ-ու «Հերքումն կարծեաց գնալոյ Սրբոյն Պետրոսի ի Հռոմ» (1853, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), «Ճառ ներբողական ի Սուրբ Խաչն Քրիս-

«Վան Արյան» *հրատարակչության տպագրած գրքերից*




Ս. Կարապետյանի «Մայրուղու ծիածանը» (2011, Ե.) գրքի կազմը



Գ. Օրդոյանի «Հայ կրկեսային արվեստի անցած ուղին» (2012, Ե.) գրքի կազմը



Հովհաննես Վանանդեցի



Հ. Վանանդեցու
«Արփիական Հայաստանի» (1836, Կ. Պոլիս) գրքի տիտղոսաթերթը

Վանանդեցիների
հրատարակություններից



Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների «Դուռն իմաստութեան» (1699–1700, Ամստերդամ) գրքի նախատիտղոսաթերթը



Նոր կտակարանի (տպագրիչ՝ Թովմաս Վանանդեցի, Ամստերդամ, 1698–1700) գլխազարդով (9-րդ) էջ

տոսի եւ պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ» (1816, հրտ.՝ 1853, Մ., Լազարյան ճեմ. տպ., նկարագրել է Վարագավանքի կառուցման պատմությունը) երկերը, «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի» (1856, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.), «Արփիական Հայաստանի» (1836, ԿՊ, Պողոս Արապյանի տպ.), «Ոսկի դար Հայաստանի» (1841, Զմյուռնիա, Սբ Մեսրոպի ուսումնարանի տպ.) դյուցազներգությունները, «Աղօթք» (1861, Վնտ., Սբ Ղազարի տպ.) բանաստեղծությունների ժող–ը: Վ–ու բանաստեղծություններից հայտնի է «Առ Հայաստան»–ը (առավելապես առաջին՝ «Հայաստան, երկիր դրախտավայր» տողով), որը երգի է վերածել Գաբրիել Երանյանը: Վ. լատ–ից թարգմանել է «Կերակուր քահանայից» (1858, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.) երկը:

Գրկ. **Ա.ճառեան Հ.,** *Պատմութիւն հայոց նոր գրականութեան, պր. 1, Վաղ–պատ, 1906, էջ 127–144:* **Աբեղյան Մ.,** *Երկեր, հ. 4, Ե., 1970:*

ՎԱՆԱՆԴԵՑԻ (Միրզայան) Սարգիս Գրիգորի (1830–ական թթ., Զմյուռնիա–27.4. 1871, Զմյուռնիա), դրամատուրգ, դերասան, խմբագիր: Հովհաննես ***Վանանդեցու*** թոռը: Եղել է Զմյուռնիայի Հաշտենից և Վասպուրական ընկերությունների անդամ, Աղքատասիրաց ընկերության ատենադպիր, 1860–ին՝ Հաշտենից ընկերության ***«Միութիւն»*** հանդեսի, 1868–69–ին՝ ***«Իրաւունք»*** շաբաթաթերթի խմբագիր: 1861–ին Զմյուռնիայում հիմնադրել է (Պ. Շահանյանի հետ) «Վասպուրական թատրոնը», եղել առաջատար դերասաններից:

Լույս են տեսել Վ–ու «Սուրբն Ներսէս կամ Հայաստանի բարերարը» (1858, Փ., Ճանիկ Արամյանի տպ., 1863, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Միհրդատ» (1858, ԿՊ, Հենրի Գայոլի տպ.), «Վիրգինիա» (1858, նույն տպ.) ողբերգությունները, «Վիկտորիա Անգղիոյ թագուհւոյն Արշակունի հայ թագաւորներէ սերիլը» (հայ., անգլ., 1866, Զմյուռնիա, Տետեյան եղբ. տպ.) երկը: Թարգմանել է Մ. դը Բոշենի «Լուի ԺԷ: Իր կեանքը, հոգեվարքը եւ մահը...» (հ. 1, 1869, նույն տպ.) ստեղծագործությունը:

ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐ, գրահրատարակիչ–տպագրիչներ Գողթն գավառի Վանանդ գ–ից: Գործել են Ամստերդամում XVII դ–ի վերջին և XVIII դ–ի սկզբին: Գողթնի Սբ Խաչ վանքի վանահայր, եպիսկոպոս ***Թովմաս Վանանդեցին*** 1670–ին իր քեռորդուն՝ Մատթեոս Հովհաննիսյանին (տես ***Մատթեոս Վանանդեցի***), տարել է Մարսել՝ ***Ոսկան Երևանցուց*** տպագրության արվեստը սովորելու: 1679–ին իր եղբորորդիներին՝ Ղուկաս (տես ***Ղուկաս Վանանդեցի***) և Միքայել Նուրիջանյաններին, ուսման է տվել Հռոմի Ուրբանյան ճեմարանում: 1683–ին, կրկին այցելելով Մարսել, Մատթեոսին ուղարկել է Ամստերդամ՝ նոր տպարան հիմնադրելու (գործել է 1685–ից): Շուտով Թովմասի ղեկավարությամբ Մատթեոս, Ղուկաս և Միքայել Վ. հավաքվել են Ամստերդամում՝ տպարանը կատարելագործելու և Հայաստան տեղափոխելու նպատակով, սակայն դա նրանց չի հաջողվել:

Վ–ի տպարանում հրատարակվել է ավելի քան 20 անուն գիրք՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»–ը (1–ին հրտ.՝ 1695)՝ «Ազգաբանութիւն տոհմին Հաբեթեան» վերնագրով, հայ. առաջին տպագիր քարտեզը՝ ***«Համապարած աշխարհացոյց»***–ը (1695), Ղուկաս և Մատթեոս Վ–ի ուս. ձեռնարկները՝ «Բանալի Համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի» (1696), «Դուռն իմաստութեան» («Ոսկեայ դուռն դպրատան», 1699–1700), «Գանձ չափոյ, կշռոյ...» (1699) աշխարհաբար գիրքը, «Բնաբանութիւն իմաստասիրական» (հ. 1–2, 1702), նաև Շարականոցներ (1685, 1702, 1712), Թոմա Գեմբացու «Յաղագս համահետեւմանն Քրիստոսի» (1696) երկը, Նոր կտակարան (1698–1700), Հովհաննես Պոնսայի «Ձեռրածութիւն յերկինս» (1705) ևն: Տպարանից Միքայելի ու Մատթեոսի հեռանալուց հետո Ղուկան իր օգնական Հովհաննես Վանանդեցու (Միքայելի որդու) հետ աշխատել է մինչև պարտքերի դիմաց տպարանի բռնագրավումը (1717): 1729–ին Վ–ի տպարանի տառերը Ամստերդամում գնել և Վենետիկ է տարել ***Միխթար Սեբաստացու*** ներկայացուցիչը:

Գրկ. **Զարբհանալեան Գ.,** *Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895:* **Լէօ,** *Հայկական տպագրութիւն, հ. 1, Թ., 1904:* **Սարուխան Ա.,** *Հոլանդան եւ հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վնն., 1926:* **Գրիգորեան Մ.,** *Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցւոց մասին, Վնն., 1969:* **Իշխանյան Ռ.,** *Հայ գիրքը, Ե., 1981:*

ՎԱՆԱՏՈՒՐ Վարդան [Ավագյան Վարդ Գրիգորի, ծ. 14.1.1937, գ. Կուլիկամ (Վրաստանի Ախալքալաքի շրջան)], բանաստեղծ: Ավարտել է ԵՊՀ (1967): 1975–99-ին՝ «Նաիրի» հրատարակչության տեխ. խմբագիր:


Լույս են տեսել Վ.-ի «Լույսի կոհակներ» (1969), «Լեռնաստանս» (1976), «Լույսը ձեզ» (1980), «Լույսի արցունքներ» (1983), «Լույսի նժար» (1985), «Լույս իմացյալ» (1991), «Լույսի պատարագ» (1994), «Խորան լուսո» (1997), «Լույս տառապանքի» (2000), «Մենախոսություն վերջալույսի» (2005), «Անենթակա լռություն» (2007), «Խոսքերի աքսորավայր» (2011) բանաստեղծությունների և «Կորիս. օրերն այստեղ չեն ծերանում» (համահեղ., 2003) ակնարկների ժող-ները:

«ՎԱՆԵՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ», ձեռագիր մատյան, Արցախ-Ուտիքի XIII դ-ի մանրանկարչության լավագույն նմուշներից (Մատենադարան, ձեռ. № 4823): Ընդօրինակվել է 1224-ին Արցախի Փառիսոս գավառի Խորանաշատ վանքում: Գրիչը և ծաղկողը հայտնի չեն: Պատվիրել է Վանենին՝ զորավար Զաքարե Խաղբակյանի դուստրը: «Վ. Ա.» բաղկացած է 319 թերթից, չափսերը՝ 36 x 26 սմ, երկսյուն է, բոլորագիծ երկաթագիր: Ձեռագիրն ունի 10 նկարազարդ խորաններ, 4 ավետարանիչների պատկերներ, համապատասխան անվանաթերթեր, լուսանցազարդեր: Խորաններն ու անվանաթերթերն առանձնանում են կոթողային ամուր կառուցվածքով, հստակ հարդարանքով, ներդաշնակորեն ընտրված վառ գույների խաղով: «Վ. Ա.» առաջիններից է, որտեղ օգտագործվել է հայկ. կետադրության նշանների մեծ մասը:

Գրկ. Հայկական մանրանկարչություն (ալբոմ), Ե., 1967:

ՎԱՆԻ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, առաջինը 1857-ին Վարագա վանքում Խրիմյան Հայրիկի հիմնադրած «Արծիվ Վասպուրականի» տպարանն է (1855–56-ին գործել է Կ. Պոլսում)՝ ժառանգավորաց վարժարանին կից: Տպագրել է Տ. Գալփակճյանի «Աբգար Արշակունի՝ նախահաւատ դիւցազն հայոց» (1858) գիրքը, Մ. Արտամետյանի «Գաղթականութիւն ի Վասպուրականէ Սենեքէրիմայ արքային Արծրունւոյ» (1858) ողբերգությունը, «Նկարագիր վարուց սրբոյն Յովհաննու Մկրտչին Քրիստոսի» (1862) գրքույկը, Խրիմյան Հայրիկի «Ձայն բարբառոյ յանապատի» (1862) բարոյախրատ. երկը, Տ. Ամիճանյանի «Ողբերգութիւն Մեծին Վարդանայ եւ Տրդատայ» (1862), «Սիմունջք» (1873) և «Ուսեալ պանդուխտ» (1873) թատերգությունները, Ս. Բարսեղյանի «Քերականութիւն դիւրուսանելոյ ի պէտս վարժարանաց» (1865), Խ. Խրիմյանի «Վան քաղաք եւ իւր շրջակայք...», «Վասպուրական նահանգ....» և «Հայաստան աշխարհ...» (երեքն էլ՝ 1883), «Առաջին գիրք տղայոց կամ Հրահանգ ընթերցանութեան...» (1862, թարգմ.՝ ֆրանս-ից), «Հայրենեաց երգեր...» (1865), «Ընթերցարան կամ Դպրոց մանկանց» (1876), «Նոր այբբենարան ցարդ եղածներէն տարբեր եւ դիւրուսոյց ոճով շինուած» (1876), «Բարոյական պատմութիւն մանուկներու համար» (1881, 1883, թարգմ.՝ գերմ-ից) դասագրքերը ևն: 1892-ին կառավարությունը բռնագրավել է տպարանը, տարել Վան, 1908-ին՝ օսմանյան սահմանադրության ընդունումից հետո, վերադարձվել է: 1858–64-ին այնտեղ է տպագրվել «Արծուի Վասպուրական» ամսաթերթը, 1908–09-ին՝ ժառանգավորաց վարժարանի ուսուցիչների «Արծուիկ» խմորատիպ երկշաբաթաթերթը, 1913-ին՝ Վարագա որբանոցի «Վարագ» պարբ-ը:

Վան քաղաքում գործել են հայկ. 6՝ «Աշխատանք» [1911-ից, տպագրել է ՀՅԴ «Աշխատանք» շաբաթաթերթը (1910–15, խմբագիրներ՝ Արմենակ Մաքսապետյան, Իշխան, Հմայակ Մանուկյան, Բարունակ Կապուտիկյան, Օննիկ Մխիթարյան և ուր.)], Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության (տպագրել է *«Վան-Տոսպ»* ամսաթերթը), «Տ. Մելքիսեդյան բարեսիրական-բարեսիրաց» [1912-ից, տպագրել է «Լույս» ամսաթերթը, Խ. Խրիմյանի «Վան քաղաք եւ շրջականեր» (1913) դասագիրքը], «Ժամկոչյան» (1908-ից), «Բարսեղյան» (1910-ից), ««Վան-Տոսպի» և Հովնանյանի» (1911-ից) տպարանները:




Վարդան Վանատուրի *«Խոսքերի աքսորավայր» (2011, Ե., ՀԳՄ հրտր.) գրքի կազմը*



«Վանենու Աւետարան». *Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը (1224, Մատենադարան, ձեռ. № 4823)*

Վանի և Վասպուրականի հայկական տպագրություն



Տ. Ամիրճանյանի «Ողբերգութիւն Մեծին Վարդանայ եւ Տրդատայ» (1862, Վան) գրքի փիփղոսաթերթը




«Վան-Տոսպ», *1911–19, Վան, Թիֆլիս, Երևան*

«Վաչագան Բարեպաշտ» *հրատարակչության տպագրած գրքերից*



Հ. Բեգլարյանի «Մեր հին ու նոր Շուշին...» (2012, Սթեփանակերտ) գրքի կազմը



Ա. Սարգսյանի «Արցախյան զվարճախոսություններ» (2014, Սթեփանակերտ) գրքի կազմը

Վանում լույս են տեսել նաև «Ամոքիչ» (1895), «Երկունք» (1906–07), «Նոր սերունդ» (1906–09), «Կոչնակ» (1907–09), «Հայեացք» (1907), «Զարթիր» (1908) խմորատիպ, Վանի ամերիկյան վարժարանի «Ե. Ք. Ընկերակցութիւն» (1909–10, պատ. խմբագիր՝ Սպիրիդոն Ժամկոչյան) պարբ–ները, «Ովասիս» (1909–10) ամսաթերթը ևն:

Շատախում տպագրվել են ՀՅԴ «Անկախ Տիգրիս» (1907–09, վերջում՝ «Կոհակ»), «Տիգրիս» (1907–09, վերջում՝ «Ժայռ») խմորատիպ ամսաթերթերը, Աղթամար կղզում՝ ՀՅԴ «Արեան ձայն» (1905), աշակերտ. «Աղթամար» (1908), երգիծ. «Կոտոշ» (1908–09), ՀՅԴ աշակերտ. «Կռիւ» (1908) և «Ծովակ» (1909) խմորատիպ պարբ–ները, Գավաշում՝ «Ծովակ» (1908–09, համանուն մշակութ. միության և ՀՅԴ հրատ., խմբագիրներ՝ Բարունակ Կապուտիկյան, Դավիթ Փափազյան, Արամ Սաֆրաստյան) խմորատիպ կիսամսյա պարբ–ը, Ռշտունիքում՝ «Հօտաղական միութիւն» (1913–14, համանուն միության հրատ., խմբագիր՝ Օհան Կարո) ձեռագիր թերթը:

Միհրան Մինասյան

«ՎԱՆ–ՏՈՍՊ», գրական, գիտ., հաս–քաղ. թերթ (կիսամսյա, շաբաթական, եռօրյա): Սահմանադիր ռամկավար ազատական կուս–յան Վասպուրականի շրջանակի, 1919–ին՝ նույն կուս–յան Հայաստանի կենտր. խորհրդի հրատ.: Լույս է տեսել 1911–19–ին. Վանում՝ 1911–15–ին, Թիֆլիսում՝ 1915–18–ին, Երևանում՝ 1919–ին: Խմբագիրներ՝ Հովհաննես Ավագյան, Նշան Հակոբյան, Տիգրան Նազարյան, Վարդան Պապիկյան, Արտակ Դարբինյան, Հովհաննես Հակոբյան: Առաջին շրջանում՝ 1911–13–ին, թերթն ունեցել է ընդգծված գրական–բանասիր., պատմաազգագր. բնույթ, 1913–15–ին ավելի հաճախ անդրադարձել է երիտթուրքերի հայահալած քաղաքականությանը և արևմտահայության գոյապայքարին: Երկրորդ շրջանում՝ 1915–19–ին, ներկայացրել է Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) ընթացքը, Արմ. Հայաստանի իրավիճակը, փրկված արևմտահայերի հետագա ճակատագիրն ու այս ուղղությամբ հայկ. և օտար կազմակերպությունների գործունեությունը:

ՎԱՆՑՅԱՆ Գրիգոր Խաչատուրի [1870, գ. Բեժանո (Վրաստանի Ախալքալաքի շրջան)–1908, Թիֆլիս], լեզվաբան, բառարանագիր: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1885–90), Բեռլինի համալսարանում (1895): Հայոց լեզու է դասավանդել Ախալքալաքում և Թիֆլիսում: Գրել է գրաքննադատ. հոդվածներ, կազմել այբբենարան: Առավել ուշագրավ են Վ–ի գրպանի ուղղագր. բառարանը և հայոց լեզվի տարրական դասընթացը, «Հայ հեղինակներ» (1905, Թ., «Հերմես» տպ.) քրեստոմատիան, որոնք ունեցել են մի քանի հրատ.: «Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի» (1906, Թ., Սմվսես Վարդանյանի տպ.) աշխատության մեջ անդրադարձել է ժամանակի լեզվաբ. և հայերենագիտ. հարցերի:

Վ–ի անունով է կոչվել Բեժանոյի միջնակարգ դպրոցը:

«ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ», ԼՂՀ գրողների միության հրատարակչատպագր. համալիր: Հիմնադրվել է 2004–ին Ստեփանակերտում: Տնօրեն՝ Ռոբերտ Եսայան: Տպագրել է ավելի քան 100 անուն գիրք: Մեծ տեղ է հատկացնում հայրենասիր., Արցախյան ազատագր. պայքարին նվիրված գրակ–յանը: Հրատարակել է Վ. Հակոբյանի «Քարի շնչառությունը» (2004), Մ. Խանյանի «Հայ պոեզիայի զարգացման միտումներն Արցախում» (2005), Հ. Բեգլարյանի «Արցախ-Նամե» (2006), Ա. Արսենիի «Ափ» (2007), Դ. Միքայելյանի «Ծաղկել է ձորի խնձորենին» (2008), Ի. Հասրաթյանի «Զվարթ գիտություն» (2008), Ռ. Եսայանի «Ասուպների եզերք» (2008), Մ. Բալայանի «Հայ Աղվանից եկեղեցին» (2009), Գ. Գաբրիելյանի «Ես ձեզ հետ եմ» (2012), Ա. Սարգսյանի «Արցախյան զվարճախոսություններ» (2014) և այլ գրքեր:

«ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆԻ ԱՒԵՏԱՐԱՆ», «Վասակ արքաեղբօր Աւետարան», 1270-ական թթ-ի պատկերազարդ ձեռագիր մատյան (մագաղաթ, բոլորգիր): Պահվում է Երուսաղեմի մատենադարանում (ձեռ. № 2568), գրիչն Ավետիսն է, նկարիչը հայտնի չէ: Ընդօրինակվել և պատկերազարդվել է Կիլիկիայի Հեթում Ա արքայի եղբոր՝ Վասակ իշխանի պատվերով: Աստվածամոր ու Քրիստոսի առջև նրա և որդիների ծնրադիր պատկերի տակ Վասակի եղբոր՝ ***Հովհաննես Արքաեղբոր*** մակագրությունը հավաստում է, որ ձեռագրի ստացողը Վասակն է:

Ավետարանում պահպանվել են Ա և Ժ կանոնների խորանները, ավետարանիչների պատկերները, տիտղոսաթերթերը և ամբողջ. էջով 9 տերուն. մանրանկարներ: Կա նաև 10 լուսանցանկար: Այս մատյանում Վասակ իշխանի, նրա 2 որդիների, նաև 1272-ի ձեռագրում՝ Կեռան թագուհու, Լևոն Գ արքայի ու նրանց զավակների նկարները պատկերագր. առումով նորություն են Թորոս Ռոսլինի պատկերած Լևոն արքայորդու (ապագա Լևոն Գ արքա) և Կեռանի պատկերի (1262, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2660) համեմատությամբ: Վասակի և նրա որդիներ Կոստանդինի ու Հեթումի հետ պատկերված է նաև Աստվածամայրը՝ ձեռքը պարզած դեպի Քրիստոսը. սա Աստվածամոր պատկերի ամենավաղ օրինակներից է և եզակի՝ իբրև գթության ու բարեխոսության համադրում: Բազմապիսի տերևազարդերով կազմված շրջանակներում համառոտած տերուն. լուսանցանկարները և Մատթեոսի Ավետարանի տիտղոսաթերթում պատկերված Հեսեի ծառը եզակի են կիլիկյան մանրանկարչության մեջ:



«Վասակ իշխանի Աւետարան». *«Վասակ իշխանը և իր զավակները Աստվածամոր և Քրիստոսի առջև ծնրադիր», մանրանկար (XIII դ., Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 2568)*

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964:* **Der Nersessian** *S., L'art arménien, P., 1977;* **Նույնի**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, v. 1, 2, W., 1993.*

«ՎԱՍԱԿԻ ԱՒԵՏԱՐԱՆ» (մոտ 1268), XIII դ-ի ձեռագիր մատյան՝ Քառավետարան (մագաղաթ, բոլորգիր): Պահվում է Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահում (ձեռ. 32.18): Գրիչն Ավետիսն է, ստեղծման տեղի մասին փաստացի տեղեկություններ չկան, իսկ պատկերազարդումը վերագրվում է ***Թորոս Ռոսլինին***: Կա միայն ստացողի՝ Հեթում Ա արքայի եղբոր՝ Վասակի անունը՝ գրված լուսանցազարդ մեդալիոններից մեկի վրա: Ավետարանը գեղ. առումով ամենանշանավոր ու առավել մանրամասն պատկերազարդված հայկ. ձեռագրերից է. պարունակում է 103 ներտեքստային մանրանկարներ (18-ը՝ լուսանցքներում), 4 անվանաթերթ (մեկն ավելի վաղ շրջանի ձեռագրից է): Մանրանկարների կոմպոզիցիաներն առանձնանում են ամբողջականությամբ ու հստակությամբ: Անձանց պատկերները շարժուն են և բազմազան դիրքերով, դեմքերը, մարմնածավալները և զգեստների ծալքերի հարդարանքը՝ նրբորեն մշակված:



«Վասակի Աւետարան». *«Մոգերի երկրպագում», մանրանկար (մոտ 1268, ծաղկող՝ հավանաբար՝ Թորոս Ռոսլին, Վաշինգտոն, Ֆրիր պատկերասրահ, ձեռ. № 32.18)*

Գրկ. **Дрампян И.**, *Торос Росли, Е., 2000;* **Der Nersessian S.**, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, W., 1963;* **Նույնի**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, v. 1, 2, W., 1993.*

ՎԱՍԻԼ ՄԱՐԱՋԱԽՑ, XIV դ-ի 2-րդ կեսի–XV դ-ի սկզբի քաղ. գործիչ, գրիչ, Կիլիկիայի Թորոս Կապանցի իշխանի որդին: Առաջին անգամ հիշատակվում է 1361-ին: Ընդօրինակել է տարբեր ժամանակագրություններ պարունակող մի ձեռագիր, որտեղ զետեղել է նաև իր հեղինակած՝ 1382–1404-ի քաղ. անցքերի համառոտ ժամանակագրությունը: Մատյանը պահվում է Բրիտ. թանգարանում (Or. 5458):

Գրկ. **Մաթևոսյան Ա.**, *Հեթում Ախտոց փիրոջ և Վասիլ Սարաջախտի ժամանակագրությունները, «ՊԲՀ», 1963, № 4:*

Վասպուրականի մանրանկարչության դպրոց



1401-ի Ճառընտիրի էջ (գրիչ և ծաղկող՝ Ծերուն Ծաղկող, Մատենադարան, ձեռ. № 4670)



«Ծնունդ և մոգերի երկրպագությունը», մանրանկար, 1450-ի Ճաշոց (ծաղկող՝ Մինաս, Մատենադարան, ձեռ. № 982)

«ՎԱՄՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ», ազգ., հաս., քաղ., մշակութ. շաբաթաթերթ: Հայկ. ժողովրդային շարժման հրատ.: Լույս է տեսել 2001–04-ին Երևանում: Խմբագիր՝ Տիգրան Փաշաբեզյան: Տպագրել է նյութեր Հայկ. հարցի և Հայ դատի մասին, հայրենատիրության, ՀԱՀԳԲ-ի գործողությունների, հայոց ազգ. վերազարթոնքի նորագույն փուլի, Արցախյան հակամարտության, Զավախքին առնչվող հիմնախնդիրների, հայոց ազատամարտի պատմության փուլերի, հայոց պատմության և մշակույթի առանցքային հարցերի, Հայրենիք-Սփյուռք կապերի, ՀՀ ներքին ու արտաքին քաղաքականության, տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների ևնի վերաբերյալ:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, հայտնի է IX դ–ից, այստեղ թարգմանվել և ընդօրինակվել են 2000–ից ավելի տարաբնույթ ձեռագրեր, մի մասը՝ նկարազարդ: Թեմատիկ նկարներ ունեցող մեզ հասած առաջին ամբողջ. մատյանը Վասպուրական բերված *«Մլքէ թագուհու Աւետարանն»* է (862): Մյուս մատյանները X–XI դդ–ի են (Ավետարաններ, Մատենադարան, ձեռ. № 10434, 10517 ևն), որոնց պատկերներն արտահայտում են Արծրունյաց թագավորության քաղ. կյանքի ու մշակույթի վերելքը: XI դ–ի 30–40-ական թթ–ից սելջուկյան արշավանքների պատճառով մշակույթի առաջընթացն ընդհատվել է և միայն XIII դ–ի 70-ական թթ–ին է վերսկսել գործունեությունը՝ Արճեշ, Արծկե, Բերկրի կենտրոններում: Ժամանակի երևելի վարպետներ ***Սիմեոն Արճիշեցու***, Խաչերի, ***Հովսիանի, Մելքիսեդեկի***, ***Վարդան Արծկեցու, Մտեփանոսի*** ստեղծագործություններում դրսևորվել են Վ. մ. դ–ի բնորոշ հատկանիշները. նախապատվությունը տրվել է արվ–ի տեղ. հնամենի ավանդույթներին, մանրանկարները, ինչպես X–XI դդ–ում, տեղադրվել են սկզբում՝ առանձին թերթերի վրա. տերուն. պատկերներից բացի՝ ներառվել են Հին կտակարանի, ինչպես և արխաիկ սյուժեներ, Հիսուսի հրաշագործություններին վերաբերող թեմաներ, երբեմն՝ նույնիսկ բանահյուս. նյութեր:

Վ. մ. դ–ի վերելքի շրջանում (XIII–XV դդ.) ակտիվ գործունեություն է ծավալվել Աղբակ, Աղթամար, Մեծոփ, Լիմ, Ոստան, Վարագ, Խլաթ, Վան, Խիզան, Բաղեշ, Նարեկ և այլ կենտրոններում: Վ. մ. դ–ի գծամաներային ուրույն ոճի առաջին ուշագրավ նմուշները ***Կիրակոս Աղբակեցու*** աշխատանքներում են: Նրան հաջորդել են ***Զաքարիա Աղթամարցին, Ծերուն Ծաղկողը, Թովմա Մինասենցը, Գրիգոր Խլաթեցին, Ասրվածատուր Արևեղան***, Պսակը և ուր.: Խիզանում ստեղծագործել են ***Ռափաելը, Հովհաննես Խիզանցին***, Մկրտիչը (1440–70-ական թթ.), Հովհաննեսը (XV դ.), Խաչատուրը (XV դ.) և ուր.: Ավելի ուշ շրջանում (XVI–XVII դդ.) գործել են Բաղեշի ու նրան հարակից կենտրոնները: XIV դ–ի 2–րդ կեսի և XV դ–ի վարպետների լավագույն աշխատանքներում Վասպուրականի մանրանկարչության ոճը ձեռք է բերել նաև ցայտուն արտահայտված զարդադեկորատիվ բնույթ: Ձեռագրերում գերիշխում են աշխարհիկ–կենցաղային մոտիվները, նաև պատվիրատուների, գրիչների ու նկարիչների դիմապատկերները:


Նկարիչների մի մասը (***Մինաս, Իսրայել Երեց, Կարապետ Բերկրեցի, Կարապետ Աղթամարցի***, Ավետիս՝ XV դ., ***Զաքարիա Գնունեցի***, ***Վարդան Բաղիշեցի***, Խաչատուր Խիզանցի՝ XVI դ., ***Զաքարիա Ամանցի***, Սարգիս Խիզանցի՝ XVI–XVII դդ.) դեռևս պահպանել է հայ մանրանկարչության ազգ. ոգին ու մտածողությունը, սակայն XVII դ–ի վերջից աստիճանաբար այդ արվեստ են ներթափանցել նոր ժամանակների գաղ. միտումներն ու նախասիրությունները: Վ. մ. դ–ի լավագույն գործերից են Մատենադարանում պահվող 1294–ի (ձեռ. № 4814), 1305–ի (ձեռ. № 2744), 1306–ի (ձեռ. № 4806), 1338–ի (ձեռ. № 4813), նաև Կիրակոս Աղբակեցու (1330, ձեռ. № 2929), Զաքարիա Աղթամարցու

(1357, ձեռ. № 5332), Ծերուն Ծաղկողի (1391, ձեռ. № 8772), Հովհաննես Խիզանցու (1401, ձեռ. № 4223) և այլ մատյաններ: XVIII դ-ի սկզբին ստեղծվել են հայ արվ-ի նոր երկեր, որոնցով ավարտվել է ոչ միայն Վ. մ. դ-ի, այլև հայ միջնադարյան արվ-ի պատմությունը:

Գրկ. Յովսէփեան Գ., Մի էջ Խիզանի գեղարուեստական պատմութիւնից, «Հայաստանեայց եկեղեցի», 1944, № 10: Հակոբյան Հ., Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք 1, 2, Ե., 1976, 1982: Նույնի, Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում, Ե., 1997: Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (ալբոմ), կազմ.՝ Հ. Հակոբյան, Ե., 1978:

«ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ», մատենաշար: Հայաստանի ազգ. արխիվի հրատ.: Հիմնադրվել է 1994-ին: Նախաձեռնող և կազմող՝ Սանդրո Բեհբուդյան (գիրք 1–15): Մատենաշարի նպատակը Հայաստանի տարբեր դիվանատներում պահպանվող վավերագրերը հավաքելն ու դրանց քննն. բնագրերը հրատարակելն է: Յուրաքանչյուր հատոր ամբողջացնում է Հայ եկեղեցու պատմության XIX դ-ի 2-րդ կեսի և XX դ-ի որոշակի շրջան:

Լույս են տեսել «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921–1938 թթ.)» (հ. Ա, 1994), «Խորեն Ա Մուրադբեկյան. կաթողիկոս Ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901–1938 թթ.)» (հ. Բ, 1996), «Մայր աթոռ Ս. Էջմիածինը Առաջին հանրապետության տարիներին (1918–1920 թթ.)» (հ. Ե, 1999), «Գէորգ Զ Չորէքչեան. կաթողիկոս Ամենայն հայոց (1930–1955 թթ.)» (հ. Զ, 1999), «Խրիմյան Հայրիկը և ցարական բռնապետությունը (1903–1907 թթ.» (հ. Է, 2000), «Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933)» (հ. Թ, 2001), «Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեջեան. կաթողիկոս Ամենայն հայոց (1866–1882 թթ.)» (հ. ԺԱ, 2004), «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. Կոստանդնուպոլսի պատրիարք (1896–1908)» (հ. ԺԵ, 2007) ևն (ցայսօր՝ 17 գիրք): ԺԶ հատորը հրատարակվել է կրկնակի՝ «Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866–1915 թթ.)» (2006, կազմ.՝ Գ. Ավագյան) և «Վազգէն Ա Պալճեան. Ամենայն հայոց կաթողիկոս (1955–1994 թթ.)» (2008, կազմ.՝ Գ. Յազըճյան):



«Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» *մատենաշարի ԺԶ գրքի (2008, Ե.) կազմը*

«ՎԱՐԱԳ», պատմ., ազգագր., գրական կիսամյա (1953–73-ին՝ եռամսյա) տեղեկատու հանդես: Համավասպուրականյան հայրենակց. միության հրատ.: Լույս է տեսնում 1953-ից՝ Բոստոնում, ապա՝ Բեյրութում, Ֆրեզնոյում, 1980-ից՝ Գլենդելում (հայ. և անգլ.): Խմբագիրներ՝ Զորջ Ֆրոյան, Ա. Թերլեմեզյան, Վահան Փափազյան, Խոսրով Թյուրնճյան, Վ. Ավետիսյան, Գարեգին Գրիգորյան, Շնորհունի, վերջում՝ Հ. Մարգարյան (հայկ. բաժին), Լիլի Չուլջյան (անգլ. բաժին), 2000-ից՝ խմբագր. մարմին՝ Հերոս Գաբրիելյան, Վարդան Թովմասյան, Մկրտիչ Սոսիկյան: Լուսաբանում է հայրենակց. միության և նրա մասնաճյուղերի գործունեությունը, անդրադառնում Սփյուռքի վասպուրականցիների խնդիրներին, ՀՀ-ի տնտ., քաղ., գիտ. և մշակութ. կյանքին, միջազգ. քաղ. կացությանը, տպագրում բանահյուս., գրականագիտ. հոդվածներ, գրական գործեր:



«Վարագ», *1953-ից, Բոստոն, Բեյրութ, Ֆրեզնո, Գլենդել (№ 58, 2011)*


ՎԱՐԱՆԴՅԱՆ (Հովհաննիսյան) Միքայել, **Էգո** [1870, գ. Քյաթուկ (Շուշիի գավառ)–1934, Բոմոն (Ֆրանսիա)], ազգ-ազատագր. շարժման գործիչ, հրապարակախոս, փիլիսոփա, պատմաբան: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Շուշիի ռեալ. դպրոցը, Ժնևի համալսարանը (1897): 1898-ից աշխատակցել է «Դրօշակ» պարբ-ին, Թիֆլիսում աշխատել «Յառաջ» և «Հորիզոն» թերթերի խմբագրություններում: Աջակցել է *«Պրո Արմենիա»*-ի հրատարակմանը: Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին լույս է ընծայել «Հայաստանը և Հայկական հարցը» (ֆրանս.), «Հայ-վրացական հակամարտությունը և Կովկասյան պատերազմը» (ֆրանս.) աշխատությունները, որոնց միջոցով եվրոպ. հասարակայնությանը ծանոթացրել է Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Եղել է ՀՀ (1918–20) խորհրդարանի անդամ, նշանակվել ՀՀ դիվանագիտ. ներկայացուցիչ Հռոմում: 1992–96-ին ՀՀ-ում գործել է «Միքայել Վարանդյան» հրատարակչատունը:



Միքայել Վարանդյան

Լույս են տեսել նաև Վ.-ի «Հայրենիքի գաղափարը» (1904, Ժնև, ՀՅԴ հրատ.), «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները» (1906, Թ., «Հերմես» տպ.), «Համաժողովրդական բանակ» (1909), «Հոսանքներ» (1910), «Վերածնուող հայրենիքը եւ մեր դերը» (1910), «Բողոքը նորագոյն պատմութեան մէջ» (1911), «Հայկական շարժման նախապատմութիւն» (հ. 1–2, 1912–13, հինգն էլ՝ Ժնև, ՀՅԴ հրատ.), «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» (հ. Ա, Բ, 1932, 1950, վերահրտ.՝ 1981, 1992), «Րաֆֆի (Յակոբ Մելիք-Յակոբեան)» (1938) աշխատությունները:

Գրկ. **Թիւթիւնճեան Խ.**, *Միքայէլ Վարանդեան (ՀՅԴ-եան տեսաբան-գաղափարախօսը), «Հայրենիք», 1936, № 4–5:*



Մ. Վարանդյանի *«Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» (հ. Ա, 1981, Թեհրան) գրքի տիտղոսաթերթը*

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Արտակ Սևանի [27.3.1951, գ. Ծաղկավան (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–1.7.2005, Երևան], արձակագիր, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1973): 1978–88-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, 1988–90-ին՝ Հեռուստառադիոպետկոմի գրական մեկնաբան, 1990–91-ին՝ ***Արմենպրեսի*** տնօրեն, 1992–95-ին՝ ՀՀ տեղեկատվության և գրահրատարակչության վարչության պետի տեղակալ, 1996–99-ին՝ ՆԳՆ լրատվության վարչության պետի տեղակալ, 1999–2003-ին՝ վարչության պետ:

Լույս են տեսել Վ.-ի «Թաց մամուռ» (1984), «Պատ» (1987), «Արյան ընթացքը» (2003) պատմվածքների ժող-ները: Թարգմանություններ է արել ռուս-ից:

ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ Փիլիպոս Հակոբի [1858, գ. Ներքին Ագուլիս (Նախիջևանի Գողթն գավառ)–1935, Թիֆլիս], հրատարակիչ, մշակույթի գործիչ: Ավարտել է Մոսկվայի առևտր. գիտ-ների ակադ-ը: 1880-ական թթ-ին տեղափոխվել է Թիֆլիս: 1889–93-ին՝ ***«Մուրճ»*** ամսագրի, 1894-ին՝ «Հորիզոն» գրական հանդեսի հրատարակիչ, ֆինանսապես աջակցել է Հ. Թումանյանի մի շարք երկերի տպագրությանը: Թղթակցել է «Մուրճ»-ին ֆելիետոններով (Եսեմյան ստորագրությամբ):


Լույս է տեսել Վ.-ի «Վշտի և թախծի երգիչ Յովի. Թումանեան (քննադատական փորձ)» (1905, Թ., «Հերմես» տպ.) գրքույկը: Թարգմանություններ է արել ֆրանս-ից և ռուս-ից: Պահպանվել է Հ. Թումանյանի՝ Վ.-ին ուղղած շուրջ 80 նամակ:



Վարդան. *1251-ի Ավետարանի լուսանցազարդով և սկզբնագրով էջեր (Մատենադարան, ձեռ. № 3033)*

ՎԱՐԴԱՆ, XIII դ-ի մանրանկարիչ: 1251-ին Հռոմկլայում պատկերազարդել է Սարգիս գրիչի ընդօրինակած Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 3033, 411 թերթ, 21 x 15 սմ, մագաղաթ, բոլորաձև երկաթագիր): Ձեռագրում Վ. պատկերել է 11 խորան, 4 ավետարանիչներին՝ համապատասխան անվանաթերթերով, նաև բազմաթիվ լուսանցազարդեր: Ավետարանի սկզբում Եվսեբիոս Կեսարացու թղթի զույգ խորաններն են, գլխազարդերի կամարների տակ՝ Եվսեբիոս Կեսարացու և Կարպիանոսի դիմապատկերները: Վերջին 2 խորանների խորքում ոսկու վրա կապույտ ներկով Վ. գրել է ուղերձ-հիշատակարան «...զՎարդան արա յիշման արժանի» վերջաբանով: Ավետարանի պատկերազարդումներում նկատելի են նրբագեղությունն ու շքեղությունը, հարազատությունը Կիլիկիայի մանրանկարչության ավանդույթներին: Վ.-ի արվ-ին բնորոշ են զարդաձևերի կուռ մշակումը, հորինվածքի միասնականությունը, գունաշարի բազմերանգությունը:

Գրկ. **Ազարյան Լ.**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII–XIII դդ., Ե., 1964, էջ 96:*



Վարդան Այգեկցու *«Ադուէսագիրք»-ի (1827, Կ. Պոլիս) տիտղոսաթերթը*

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, XII–XIII դդ-ի առակաբան-քարոզիչ, հաս. գործիչ: Ծնվել է Դլուք (Տլուք) գավառի Մարաթա գյուղում (ինքն իրեն անվանել է Մարաթացի): Սովորել է ծննդավայրում, այնուհետև՝ Սև լեռների Արքակաղին վանքում, ստացել վարդապետի աստիճան, եղել է քարոզիչ Ամիթում (այստեղից՝ նաև Ամթեցի), ապա՝ Դլուքում: 1208-ին հարկադրված հեռացել է հայրենի վայրերից: Երկու տարի դեգերելուց հետո հաստատվել է Դոսխ (Տոսխ) ձորում հիմնադրված Այգեկ վանքում (այստեղից էլ՝ Այգեկցի):

Վ. Ա–ու՝ մեզ հասած ամենավաղ գործը հայ և օտար եկեղեց. մատենագրություններից քաղված վկայությունների (վկայակոչված հեղինակների և աղբյուրների թիվը շուրջ 100 է) «Արմատ հաւատոյ» (հրտ.՝ 1998, «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» խորագրով, քնն. բնագիրը՝ Շահե քհն. Հայրապետյանի, ներած.՝ Հ. Քյոսեյանի) ժող–ն է: Վ. Ա–ու դավան. գործերից են «Վասն անիրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց» և «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» երկերը, որոնք Մատենադարանի № 8356 ձեռագրում (ընդօրինակվել է 1322–ին Կիլիկիայի Կարմիր անապատում) հայտնաբերել, ուսումնասիրել և հրատարակել է Հ. Անասյանը (1968, «Բազմավէպ», № 7–12, 1969, Վնտ., Սբ Ղազարի տպ.):

Վ. Ա. իր ճառերն ու քարոզները համեմել է առակներով ու զրույց–ներով. դրանով հայ գրակ–յան մեջ ներմուծել է գրական նոր տեսակ՝ առակավոր ճառը: Ենթադրվում է, որ Վ. Ա., հավաքելով իր ճառերում գործածած առակները, կազմել է 1 կամ 2 ժող.: Առակներում հաճախ գործող անձն աղվեսն է, այդ պատճառով մեծ առակախմբերից մեկն անվանվել է ***«Աղուէսագիրք»***:

Վ. Ա–ու **«Աղուէսագիրքը»** առաջին անգամ տպագրվել է 1668–ին Ամստերդամում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում, տպագրիչ՝ ***Ոսկան Երևանցի:*** Տպակից է Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»–ին: Տիտղթ–ին՝ «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք» (312 էջ, 8º, 9,8 x 5,9 սմ): Տպագրվել է նաև 1683, 1698, 1827–ին:

Լույս են տեսել նաև Վ. Ա–ու «Հատընտիր առակք Վարդանայ վարդապետի» (հայ. և ֆրանս., 1825, Փ.), «Խրատք» (1956, Վնտ., Սբ Ղազարի տպ., 1999, 2008, աշխարհաբարի փոխադր.՝ Շ. քհն. Հայրապետյանի) ժող–ներր:

Գրկ. **Յովնանեան Գ.,** *Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վնն., 1897:* **Տաշեան Յ.,** *Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վնն., 1900:* **Անասեան Հ.,** *Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի ցան, Վնտ., 1969:* **Նույնի,** *Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս, «Էջմիածին», 1969, № 7–8:* **Աբեղյան Մ.,** *Երկեր, հ. 4, Ե., 1970:* **Марр Н.,** *Сборник притч Вардана («Ժողովածոյ առակաց Վարդանայ»), ч. 2, Текст, СПб, 1894, ч. 3, Приложение, СПб, 1894, ч. 1, Исследование, СПб, 1899;* **Орбели И.,** *Избр. труды, т. 1, М., 1968.*


ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, **Վարդան Գանձակեցի, Վարդան Մեծ, Վարդան Պատմիչ, Վարդան Աշխարհագիր, Վարդան Բարձրբերդցի, Վարդան Վարդապետ** (մոտ 1198, Գանձակ–1271, Խոր վիրապ), պատմագիր, թարգմանիչ, մանկավարժ, հաս. և եկեղեց. գործիչ: Նախն. կրթությունն ստացել է Գանձակում և Նոր Գետիկի վանքում, որտեղ աշակերտել է ***Միխթար Գոշին***: Այնուհետև սովորել է Տավուշի Խորանաշատ վանքում, հմտացել մատենագիտ–յան, քերականագիտ –յան և աստվածաբանության մեջ, տիրապետել է բազմաթիվ լեզու–ների: Վարդապետի, իսկ 1235–ից րաբունապետի աստիճան ստանալուց հետո ծավալել է ուսումնագիտ. գործունեություն: Հիմնադրել է Կայենաբերդի Սբ Անդրեի վանքի դպրոցը և այնտեղ դասավանդել (1235–39, 1252–55): ***Կոստանդին Ա. Բարձրբերդցու*** հետ գրել է Արլ. Հայաստանի բնակչությանն ուղղված «Թուղթ խրատական»–ը և Հռոմի պապի դավանաբան. գրության պատասխանը, մասնակցել Սսի 1251–ի ժողովի ընդունած կանոնների մշակմանը:

Վ. Ա. թողել է մատենագիտ. հարուստ ժառանգություն (ավելի քան 120 ստեղծագործություն): Հայ մեկնող. գրակ–յան լավագույն նմուշներից են «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն երկոտասան մարգարէիցն», «Մեկնութիւն երգոց երգոյն Գրիգորի Նարեկացւոյ», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն Հնգամատենին» գործերը: Միջնադարյան մատենագրության մեջ ուրույն տեղ ունի Վ. Ա–ու «Լուծմունք ի Ս. Գրոց...» ժող–ը (հայտնի է «Ժղլանք» անունով), որը բազմաթիվ և բազմաբնույթ նյութերից կազմված, դյուրըմբռնելի միջին հայ–ով շարադրված հանրագիտ. ծավալուն երկ է: «Ժղլանքի» որոշ նյութեր ֆրանս. են թարգմանել է. Պրյուդոմը և Վ. Լանգլուան:




Վարդան Այգեկցու *«Առակներ» (2012, Ե., «Արեգ») գրքի կազմը*

Վարդան Արևելցի



«Աշխարհացոյց»–ի (1728, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) սկզբնագրով (497–րդ) էջ



«Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» (1797, Ասպրախան) գրքի տիտղոսաթերթը

Վարդան Արևելցի



«Տեսութիւն անթառամ ծաղիկ մեծացուսցէին» (1834, Երուսաղեմ) գրքի տիտղոսաթերթը



«Տիեզերական պատմություն» (2001, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը



Վարդան Արծկեցի. *Խորան, XIV դ–ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 7456)*

Գիտ. մեծ արժեք ունի Վ. Ա–ու «**Աշխարհացոյց**»–ը. բաղկացած է 4 մասից՝ «Արարչագործութիւն եւ երկինք», «Երկիր», «Հայք, Վիրք եւ Աղուանք», «Այլ աշխարհք»: Հատկապես արժեքավոր է Հայաստանին վերաբերող հատվածը: Առաջին անգամ տպագրվել է 1728–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տպակից է Երեմիա Մեղրեցու *«Բառգիրք հայոց»*–ին (576 էջ, 8º, 13,3 x 8 սմ), զետեղված է 497–535 էջերում: Վերահրատարակվել է 1960–ին Փարիզում: Տպագրվել է նաև ֆրանս. (1819, թարգմ.՝ Սեն–Մարտենի):

Վ. Ա–ու մատենագր. ժառանգության մեջ ամենաարժեքավորը «**Հաւաքումն պատմութեան**» երկասիրությունն է, որը համընդհանուր պատմություն շարադրելու նոր փորձ էր հայ պատմագրության մեջ: Բաղկացած է «Նախերգանքից» և 100 գլխից: Բուն պատմությունն սկսվում է Բաբելոնի աշտարակաշինությունից, Հայկի ու Բելի կռվից և ավարտվում Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու վախճանով (1267): Այն առաջին անգամ «Պատմութիւն տիեզերական» վերնագրով հրատարակել է Մ. Էմինը 1861–ին Մոսկվայում (նույն թվականին՝ նաև ռուս.), ապա տպագրվել է 1862–ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.): Հատվածաբար հրատարակվել է ֆրանս. (1860, թարգմ.՝ Է. Դյուլորեի, 1927, թարգմ.՝ Ի. Մյուլդերմանի), թուրք. (1937, թարգմ.՝ Հ. Անդրեասյանի): Աշխարհաբար լույս է տեսել 2001–ին Երևանում՝ «Տիեզերական պատմություն» վերնագրով (փոխադր. և ծնթգր.՝ Գ. Թոսունյանի):

Վ. Ա. հեղինակ է նաև «Մեկնութիւն քերականին» (հրտ.՝ 1972, Ե.) և «Վասն բանին մասանց» քերականագիտ. աշխատությունների:

Վ. Ա. հուն–ից, լատ–ից և ասոր–ից թարգմանել է բազմաթիվ գրույցներ, կրոնափիլ. երկեր ևն: Միքայել Ասորու «Ժամանակագրության» թարգմանությանը կցված Վ. Ա–ու հիշատակարանը պարունակում է Կիլիկիայի հայկ. պետությանը վերաբերող եզակի տեղեկություններ:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել է նաև Վ. Ա–ու «**Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի**» երկը. 1797–ին Աստրախանում՝ Արղությանի տպարանում (520 էջ, 4º, 16 x 9,4 սմ):

Լույս են տեսել նաև Վ. Ա–ու «Տեսութիւն անթառամ ծաղիկ մեծացուսցէին» (1834, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Ներբողեանք ի Մ. Գրիգոր Լուսաւորիչ» («Սոփերք հայկականք», հ. 5, 1853, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց թարգմանչացն» (աշխատասիր.՝ Փ. Անթապյանի, «ԲՄ», № 7, 1964), «Ճառք ներբողեանք» (2000, Ե.), «Մեկնութիւնք մարգարէութեան Դանիէլի» (2007, Էջմիածին), «Հաւատքի դաւանութիւն» (2012, Երուսաղեմ) երկերը:

Գրկ. ***Կիրակոս Գանձակեցի****, Հայոց պատմություն, Ե., 1982:* ***Ալիշան Ղ.****, Հայապատում, Վնտ., 1901:* ***Աբեղյան Մ.****, Երկեր, հ. 4, Ե., 1970:* ***Ոսկեան Հ.****, Վարդան Արևելցի, «ՀԱ», 1921, № 7–12:* ***Խաչիկյան Լ.****, Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» աշխատության, «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1943, № 2:* ***Անթապյան Փ.****, Վարդան Արևելցու «Ժղլանքը», «ԲՄ», 1967, № 8:* ***Նույնի****, Վարդան Արևելցի: Կյանքն ու գործունեությունը, գիրք 1, 2, Ե., 1987, 1989:*

ՎԱՐԴԱՆ ԱՐԾԿԵՑԻ, XIV դ–ի 1–ին կեսի գրիչ և մանրանկարիչ: *Վասպուրականի մանրանկարչության դպրոցի* ներկայացուցիչ: Ապրել և ստեղծագործել է Արծկե քաղաքում: Վ. Ա–ուց մեզ է հասել 2 Ավետարան (գրիչ՝ Վ. Ա., Մատենադարան, 1319, ձեռ. № 4125, XIV դ., ձեռ. № 7456): Ժամանակի հայտնի ձևերից բացի՝ Վ. Ա. կիրառել է նաև հին հավատալիքների ու պատկերացումների մոտիվներ, որոնք մեղմում են կրոն. խստակեցությունը, կենդանի հույզ ու շունչ հաղորդում նրա գործերին: Նրա նկարազարդած հնավանդ կամարաձևերով խորաններն աչքի են ընկնում դեկորատիվ զարդարանքով, հարուստ և ուշագրավ լուսանցազարդերով: Գծային կուռ ամբողջականությունը գույների նուրբ, երբեմն թափանցիկ ջրաներկային տոների հետ գեղանկարչ. հմայք է հաղորդում նրա մանրանկարներին:

Գրկ. Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (ալբոմ), կազմ.՝ Հ. Հակոբյան, Ե., 1978:

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ, XVI դ–ի 2–րդ կեսի մանրանկարիչ: ***Վասպուրականի մանրանկարչության դպրոցի*** ներկայացուցիչ: Ստեղծագործել է նաև Բաղեշում (Բիթլիս): Ձեռագրեր է պատկերազարդել նաև այլ նկարիչների հետ (Սարգիս Խիզանցի և ուր.): Մատենադարանում պահվում է Վ. Բ–ու նկարազարդած 6 ձեռագիր (1569–ի ժողովածուն, ձեռ. № 1920, 1571–ի և 1578–ի Ավետարանները, № 4845, № 9294, 1576–ի Գանձարանը, № 5434, 1577–ի Մաշտոցը, № 961, XVI դ–ի Հայսմավուրքը, № 9092): Նրա ձեռագրերում, բացի տերունական պատկերներից, աչքի են ընկնում նաև քրիստ. ավանդույթներին ու պատմ. դեպքերին վերաբերող տեսարանները: Հեռանալով Վասպուրականի մանրանկարչության XIV–XV դդ–ի պայծառ գունահարաբերումներից՝ Վ. Բ. նախընտրել է հանգիստ տոները (հատկապես կապույտ և նարնջագույն երանգները):

Գրկ. Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (ալբոմ), կազմ.՝ Հ. Հակոբյան, Ե., 1978:

ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ Եղիայի [ծ. թ. անհտ, Խողց գ–ք (Աղձնիք նահանգի Մուշ գավառ)–31.3.1704/1705, թաղված է Բաղեշի Ամրդոլու վանքի եկեղեցում], ժամանակագիր, մատենագետ, Ամրդոլու վանքի դպրոցի ամենանշանավոր ներկայացուցիչը, եկեղեց. գործիչ: Սովորել է Ամրդոլու վանքում, դարձել վարդապետ, 1663–ից՝ նույն վանքի առաջնորդ: Վ. Բ–ուց մեզ է հասել Ամրդոլու մատենադարանի ձեռագիր ու տպագիր գրքերի ցուցակը, մեկ ժամանակագրություն, որտեղ շարադրված են 1170–1657–ի Հայաստանի պատմ. անցքերը, ինչպես նաև հայ պատմիչների գործերի և օտարազգի պատմիչների աշխատությունների հայ. թարգմանությունների (V դ.–XVIII դ–ի սկիզբ) ցանկերը (նշված են նաև այնպիսի պատմիչների անուններ, որոնք թեև հայտնի են, բայց նրանց պատմությունները մեզ չեն հասել):

Վ. Բ–ու օրոք Ամրդոլու վանքի դպրոցը դարձել է համալսարան. դասավանդել են նաև հայ մատենագրություն, մանրանկարչություն, որմնանկարչություն: Վ. Բ–ուն աշակերտել են Հովհաննես Կոլոտը, Աբրահամ Քեղեցին, Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շիրվանցի Շղթայակիրը. վերջինս ուսուցչին ներբողել է իր «Վիպասանութեան» մեջ: Նրան ձոնվել է նաև աշուղ. երկ՝ «Գովասանք Վարդան վարդապետին Բաղիշեցւոյ, ասացեալ յաշըղներաց» վերնագրով:

1841–ին տպագրվել է Վ. Բ–ու «Գիրք աղօթից»–ը (ԿՊ, Պողոս Արապյանի տպ.), 1956–ին՝ «Ժամանակագրությունը» («Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.», կազմ.՝ Վ. Հակոբյան, հ. 2, 1956) ժող–ում:

Գրկ. **Ալիշան Ղ.**, *Հայապատում, Վնտ., 1901:* **Ակինեան Ն.**, *Բաղէշի դպրոցը, Վնն., 1952, էջ 231–311:* **Լեո**, *Երկերի ժող., հ. 3, Ե., 1969:* **Օրմանեան Մ.**, *Ազգապատում, հ. 2, Էջմիածին, 2001:*

ՎԱՐԴԱՆ ԼԵՎՈՆ (Բեդիրյան Լևոն Սովսեսի, 14.10.1925, Հալեպ – 9.12.1997, Բեյրութ), պատմաբան, գրող, խմբագիր: Ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը (1962): 1952–ից դասավանդել է Լիբանանի դպրոցներում և բուհերում: ***«Մխիւռք», «Շիրակ», «Հասկ հայագիտական տարեգիրք», «Հայկազեան հայագիտական հանդէս»*** պարբ–ների խմբագրակազմերի անդամ, 1985–97–ին՝ «Նոր Այնթապ» հանդեսի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Վ. Լ–ի «Հայկական Տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը» (1970), «Ժամանակագրութիւն հայկական Տասնհինգի. 1915–23» (1975), «Թող թուրքը խօսի» (1975), «Հայկական Տասնհինգը թուրք մատենագիտութեան եւ մամուլին մէջ» (1998), «Մուսա լերան երկրորդ արտագաղթը» (1998), «Արեւմտահայութիւնը տնտեսական յարաբերութիւններու ճամբուն վրայ» (1998, բոլորը՝ Բ.), «Հարկերը օսմանեան եւ պարսկական կայսրութիւններուն մէջ ԺԶ–Ի դար: Ա–Ի» (2004, Ե.) աշխատությունները, «Ակնարկ ֆրանսահայ


Վարդան Բաղիշեցի



«Սբ Տրդատ Գ արքա, սբ Գրիգոր Լուսավորիչ և Ագաթանգեղոս» (1569–ի ժող., Մատենադարան, ձեռ. № 1920)



Խորան, 1571–ի Ավետարան (Մատենադարան, ձեռ. № 4845)



«Ժամանակագրության» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, 1956, Ե., ԳԱ հրտ.) 1–ին էջը



Վարդան Լևոնի *«Հարկերը օսմանեան եւ պարսկական կայսրութիւններուն մէջ. ԺԵ-Ի դար: Ա–Ի» (2004, Ե., ԳԱԹ հրտ.) գրքի կրկնաշապիկը*



Աղասի Վարդանյան



Աղվան Վարդանյանի *«Ելք երկրից» (2014, Ե., «Անտարես») գրքի կազմը*

եւ ամերիկահայ արձակին վրայ» (1969, Բ), «Մուշեղ Իշխան արձակագիրը» (1986, Անթիլիաս) գրականագիտ. ուսումնասիրությունները, «Ինքներգութիւն» (1968), «Ի խորոց սրտի» (1982), «Կրկին հեծութիւն» (1996), «Հին, հին բաներ» (1997), «Գիրք Մենուասի» (1997), «Մարդեր՝ ճամբու մայթերէն» (1999), «Վարուժնագիր» (2001, բոլորը՝ Բ.) գեղ. ժող-ները ևն:

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԲԵՑԻ, XVII դ-ի վերջի–XVIII դ-ի սկզբի տոմարագետ: Մատենադարանում պահվում է Վ. Կ-ու 1707-ին կազմած տոմարաբան. աշխատությունը (ձեռ. N 805): Հեղինակը բնագրում նշում է, որ հոռմ. անշարժ տոմարը բավական բարդություններ ունի, և առաջարկում է անշարժ տոմար՝ հայկ. օրացույցի կառուցվածքի հիմքով: Այս տոմարում տարին ունի 12 ամիս՝ 30-ական օրով, և 1 ամիս՝ 5 օրով, 4 տարին մեկ (նահանջ տարում) լրացուցիչ օրը դրվում է 12-րդ ամսվա վերջում, տարվա սկզբի ամսի՝ Նավասարդի 1-ը համապատասխանում է մարտի 21-ին (գարնանային գիշերահավասարի օրը), վերջինի՝ Ավելյաց ամսի 1-ը՝ մարտի 16-ին: Վ. Կ-ու տոմարը չի կիրառվել, ձեռագրերում գրեթե չի հանդիպում:

ՎԱՐԴԱՆ ԿԱՖԱՑԻ, Կաֆայեցի [1615, Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա՝ Ղրիմում)–1712, Կաֆա], տաղերգու, տոմարագետ, գրիչ, հաս-եկեղեց. գործիչ: 1648–80-ին եղել է տեղի Սբ Աննա վանքի վանահայր: Ձեռնադրվել է եպիսկոպոս (1680) և նշանակվել Ղրիմի հոգևոր առաջնորդ՝ ցկյանս:

Առավել նշանավոր է Վ. Կ-ու «Վարդն է բացուեր առաւօտուն գոյնզգոյն» սկսվածքով տաղը, որտեղ զուգորդվել են բնության գովքն ու վայելքի գաղափարը: Վ. Կ. օգտագործել է բանահյուս. ստեղծագործություններին հատուկ պատկերներ ու գեղ. այլ հնարանքներ: Ներառվել է Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածու»-ի (պր. 3, Թ., 1896, էջ 11–12) մեջ: Գրել է նաև չափածո տոմար (1676), ընդօրինակել բազմաթիվ ձեռագրեր:

Գրկ. **Աբրահամյան Ա.**, *Վարդան Կաֆայեցու չափածո տոմարը, «Էջմիածին», 1954, N 9–10:* **Սահակյան Հ.**, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Ե., 1975:*

ՎԱՐԴԱՆ ՀԱՂԲԱՏԵՑԻ (ծ. թ. անհտ–1191/1195, թաղված է Հաղպատի վանքում), մատենագիր, մանկավարժ: 1160–70-ական թթ-ին եղել է Կիլիկյան Հայաստանում, աշակերտել *Ներսես Շնորհալուն*: Ենթադրվում է, որ նա է Հաղպատ բերել ասորի մատենագիր Եղիայի (XII դ.) երկերի հայ. թարգմանությունների ձեռագրերը: Գրել է Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու «Ճառերի» մեկնությունները: Վ. Հ-ու գործերը ներառվել են XIII դ-ի սկզբին կազմված «Գիրք պատճառաց» ժող-ում: Աշակերտներից նշանավոր է Դավիթ Քոբայրեցին:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Վարդան վարդապետ Հաղբատեցի, տես նրա «Մատենագրական հետազօտութիւններ», հ. 1, Վնն., 1922:*

ՎԱՐԴԱՆՅԱՆ Աղասի Հարությունի [13(25).9.1891, Ալեքսանդրապոլ–25.11.1968, Երևան), հեղ. գործիչ, խմբագիր: ԽՄԿԿ անդամ՝ 1917-ից: Սովորել է Ս. Պետերբուրգի պոլիտեխ. ինստ-ում (1912–17): 1921-ից եղել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի բաժնի վարիչ, «Ձակկնիգա» հրատարակչության նախագահ, Թիֆլիսի *«Մարտակոչ»* և «Պրոլետար» հայ. թերթերի պատ. խմբագիր, միաժամանակ՝ Անդրկովկասի հեռագր. գործակալության տնօրեն, 1927–28-ին՝ Թիֆլիսի Հայարտան նախագահ: 1928-ին՝ *«Կոմունիստ»* (Բաքու) թերթի խմբագիր: Նրա ջանքերով Թիֆլիսում հրատարակվել են «Պրոլետար» թերթի «Գրական շարաթ» հավելվածը և Վրաստանի ԳՄ հայկ. մասնաճյուղի «Լուսաբաց» ալմանախը:

Լույս են տեսել Վ.-ի «Լուսաբացի ծաղիկներ» (1911, Ալեք-պոլ, Գևորգ Սանոյանի տպ.), «Ջոհեր» (1926, Թ., «Զարյա Վոստոկա»-ի տպ.) պատմվածքների, «Ալագյազ բարձր սար է» (1966) բանաստեղծությունների և պոեմների ժող-ները, «Անցած ուղիներով» (1968) հուշագրությունը:

ԽՍՀՄ Լենինի շքանշան:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Աղվան Արշավիրի [ծ. 7.10.1958, գ. Գեմուր (Նախիջևանի Հանրապետություն)], բանաստեղծ, քաղ. գործիչ, խմբագիր: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է ԵՊՀ (1982): 1990–93-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար: Աշխատել է «Երևանի համալսարան» (1982–87) թերթի, «Գարուն» և «Աղբյուր» (1987–90) հանդեսների խմբագրություններում, «Ազատություն» ռադիոկայանում (1993–94): 1991–93-ին՝ *«Երկիր»* օրաթերթի, 1996–99-ին՝ «Երևան» տեղեկատվ. կենտրոնի գլխ., 1994–96-ին՝ *«Դրօշակ»* հանդեսի խմբագիր: 2003–08-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալ. հարցերի նախարար:

Լույս են տեսել Վ.-ի «Քարե սեղան» (1986), «Ելք երկրից» (2014) բանաստեղծությունների ժող-ները:

ՀԼԿԵՄ ԿԿ գրական մրց. (1989), ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ (2006):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արիստակես (23.3.1887, Կուտինա/Քյոթահիա–25.12.1941, Փարիզ), լեզվաբան, բանասեր, խմբագիր: Սովորել է Վիեննայի Մխիթարյան միաբանության դպրոցում: 1910-ին ձեռնադրվել է քահանա: 1924–30-ին՝ *«Հանդէս ամսօրեայ»*-ի խմբագիր (համազասպ *Ոսկյանի* հետ):

«Ազգային մատենադարան» մատենաշարով լույս են տեսել Վ.-ի «Բառաքննական դիտողութիւններ» (պր. 1–4, 1913–23), «Դասական մանր բնագիրներ եւ ձեռագրական համեմատութիւններ» (հ. 1, 2, 1913, 1923), «Նիւթեր հայերէն բառագրութեան» (1920), «Հայ գրչագիրները: Ինչ պայմաններու տակ կընդօրինակէին հայ ձեռագիրները» (1924), «Քննական հրատարակութիւն մատենագրութեան եւ թարգմանութեան նախնեաց հայոց» (1930) աշխատությունները, «Շողակաթ: Հայերէն ընթերցարան պատկերազարդ» (1930) դասագիրքը: Կազմել և հրատարակել է «Մատենագրութիւնք Եւթաղի. բնագիր յաւելուած...» (1930) երկը: Թարգմանել է Յ. Մարկվարտի «Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի» (1913), «Յովհաննէս Ժ. Բար-Շուշանի Հայոց Կաթուղիկոսին գրած թուղթը» (1923) աշխատությունը:

Վ.-ի բոլոր գործերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:



Արիստակես Վարդանյանի *«Դասական մանր բնագիրներ եւ ձեռագրական համեմատութիւններ» (հ. 1, 1913, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*

ՎԱՐԴԱՆՅԱՆ Արմեն Վաղարշակի (20.4.1923, Երևան–24.9.1985, Երևան), գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (1967): Ավարտել է ԵԳԹԻ (1975): 1955–60-ին՝ Մոսկվայի «Սանպրոսվետ» կենտր. ԳՀԻ-ի և նրա հրատարակչության գլխ. նկարիչ ու գեղ. խմբագիր, 1965–68-ին ՀԱՊ-ում՝ նկարիչ-վերականգնող, 1969–74-ին՝ Երևան քաղաքի գլխ. նկարիչ: 1973-ից դասավանդել է ԵԳԹԻ-ում:

Նկարազարդել է Վ. Մայակովսկու, Նազիմ Հիքմեթի ստեղծագործություններից:



Կամո Վարդանյան


ՎԱՐԴԱՆՅԱՆ Գրիգոր Մինասի (18.2.1868, Տրապիզոն–1938, անհատի պաշտամունքի զոհ), քաղ. և պետ. գործիչ, խմբագիր: ՍԴՀԿ անդամ՝ մինչև 1905-ը: 1897-ից բնակվել է Բաքվում: Մասնակցել է բոլշևիկյան «Կայծ» և «Նոր խօսք» թերթերի հրատարակմանը: 1906-ից Թիֆլիսում եղել է ուսուցիչ: 1917-ից աշխատակցել է Թիֆլիսի «Բանւոր» և «Պայքար», 1920–21-ին՝ Բաքվի «Կոմունիստ» թերթերին: 1921-ին Թիֆլիսում, ապա՝ Երևանում՝ «Կարմիր օրեր», 1922–23-ին՝ «Նոր արևելք», 1925–26-ին՝ «Հրավիրակ» պարբ-ների հրատարակիչ-խմբագիր:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Կամո (Կառլեն) Սիրակի (15.12.1928, Երևան–25.11.2000, Երևան), խմբագիր, հաս. գործիչ: Ավարտել է ԵՊՀ (1953): 1955–61-ին աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում, 1963–67-ին՝ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում, 1967–72-ին՝ *«Հայրենիքի ձայն»* շաբաթաթերթի, 1973–79-ին՝ *«Ագիտպրոպ և պրոպագանդիստ»* հանդեսի, 1979–90-ին՝ *«Երեկոյան Երևան»* օրաթերթի գլխ. խմբագիր:



Հովսեփ Վարդանյանի *«Ագապի» (1979, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Ա. Բեքարյան) գրքի կազմը*


ՎԱՐԴԱՆՅԱՆ Հովսեփ (28.3.1815, Կ. Պոլիս–1879, Կ. Պոլիս), գրող, պատմաբան, խմբագիր: Լուսավոր. շարժման ներկայացուցիչ: Սովորել է Վիեննայի Մխիթարյան վարժարանում (1826-ից): 1836-ից դասավանդել է Կ. Պոլսի Ներսեսյան դպրոցում: Տիրապետել է ֆրանս., անգլ., արաբ., թուրք. և այլ լեզուների: 1837-ից (շուրջ 25 տարի) որպես թարգմանիչ աշխատել է Օսմ. կայսրության նավա-



Սերգեյ Վարդանյանի *«Հայաստանի մայրաքաղաքները» (1995, Ե., «Ապոլոն») գրքի կազմը*



Վարուժան Վարդանյան. *Հ. Մաթևոսյանի «Մեր վազքը» (1978, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Վրեժ Վարդանյանի *«Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը...» (1969, Ե., ԵՊՀ հրտ.) գրքի կազմը*

տորմի նախարարությունում: 1852–83-ին՝ ***«Մեհմասյը Հաւատիս»***, 1877–85-ին՝ «Թերճըմանը Էֆքեար» («Թարգման մտածումների») հայատառ թուրք. պարբ-ների խմբագիր:

Լույս են տեսել Վ-ի «Ագապի» (հայատառ թուրք.,1851, ԿՊ, Հովհաննես Մյուհենտիյանի տպ., վերահրտ.՝ 1953, 1979, թարգմ.՝ Գ. Ստեփանյանի). հիմքում Հայ առաքել. և Կաթոլիկ. եկեղեցիների դավան. պայքարն է, «Շատախօսը» (1852) վեպերը, «Նապոլեոն Բոնապարտի պատմութիւնը» (հայատառ թուրք., մաս 1–6, 1855–56), «Սահմանադրական ճշմարտութիւններ եւ անոնց պարտաւորութիւնները» (1863, ԿՊ, Հ. Մյուհենտիյանի տպ.) և «Արեւելեան պատերազմի պատմութիւնը» (1871) աշխատությունները: Ֆրանս-ից հայ. է թարգմանել Լը Սաժի «Կաղ սատանան» վեպը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Սերգեյ Գագիկի (ծ. 9.11.1952, Երևան), բանասեր, արձակագիր, բանահավաք, բանագետ, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1974): 1978–81-ին աշխատել է «Պիոներ կանչ» թերթի, 1981–82-ին՝ «Սովետական արվեստ», 1982–84-ին՝ «Պիոներ», 1985–90-ին՝ «Աշակույթ» ամսագրերի խմբագրություններում, 1990–91 և 2009-ից՝ ՀՀ ԳԱԱ հնագիտ-յան և ազգագրության ինստ-ում: 1991–2002-ին եղել է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետ. խորհրդի փոխնախագահ: 1992-ից Հայաստանի «Համշեն» հայրենակց-բարեգործ. ՀԿ-ի փոխնախագահն է, 2004-ից՝ կազմակերպության ***«Ձայն համշենական»*** պաշտոնաթերթի հիմնադիր-խմբագիր:

1978-ին Վ-ի նախաձեռնությամբ ՀՀ-ի և արտերկրի հայ երեխաները գրառել են բանահյուս. նմուշներ, որոնց ընտրանին նա մշակել, վերապատմել, խմբագրել և հրատարակել է «Հրեղեն ձին» (1981), «Թագավորի երազները» (2003) և «Փրկված հեքիաթներ» (անգլ.՝ 2007, գերմ.՝ 2009) բանահյուս. ժող-ներում:

Լույս են տեսել Վ-ի «Հայոց մայրաքաղաքները» (1985), «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) մենագրությունները, «Արևածաղիկը» (1989, 1994, Ստամբուլ) մանկ. պատմվածքների ժող-ը, «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009), «Արյունոտ սերմեր» (ռուս., 2015) աշխատությունները: Մասնակցել է «Ձայն համշենական» [հ. 3, 5, 1989, 2006] ժող-ի կազմմանը և խմբագրմանը:

ՀԺՄ (1980), ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» (1997), ՌՀՄ, ՀՀ սփյուռքի նախարարության և ՀԺՄ բարձրագույն (2009) մրց-ներ, ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետի (2012) ոսկե, ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» (2012), ՀԳՄ «Գրական վաստակի համար» (2015) մեդալներ, Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե հուշամեդալ (2012):

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վարուժան Վռամի [22.6.1948, գ. Ղաչաղան (այժմ՝ գ. Արևածագ՝ ՀՀ Լոռու մարզում)–16.6.2010, Երևան], գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող: Վաստ. նկարիչ (2003): Ավարտել է ԵԳԹԻ (1971):

Նկարազարդել և ձևավորել է Հ. Մաթևոսյանի «Մեր վազքը» (1978) և «Տերը» (1983), Մ. Տեր-Գուլանյանի «Սաղամո լիճը» (1978) և «Մնացող հողն ու գնացող մարդիկ» (1983), Ռ. Շառոյանի «Հարյուր կոռնակ» (1979), Ա. Բակունցի «Միրհավ» (1979), Ժ. Բեդիեի «Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը» (1981), Վ. Հովսեփյանի «Տեղատարափ» (1984), Վ. Հաճյանի «Արցունքի աստղեր» (1991), նաև իր հեղինակած «Մինասի վերադարձը» (1992, Մ. Ավետիսյանի նկարներով) խոհագրությունը, «Կեղտոտ սենյակ» (1994) բանաստեղծությունների ժող-ը և այլ գրքեր:

ՀՆՄ (1975), ՀԼԿԵՄ (1978), ԹՄՄ «Վարդգես և Ռիտա Պալյաններ» (1997) մրց-ներ:

Գրկ. Վարուժան Վարդանյան (ալբոմ), կազմ.՝ Վարդան Վարդանյան, հայ., ռուս., անգլ., Ե., 2011:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վրեժ Մկրտչի [ծ. 10.10.1931, գ. Այգեշատ (այժմ՝ ՀՀ Արմավիրի մարզում)], պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1994): Ավարտել է ՀՊՄԻ (1958): 1966–81-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում (բաժնի վարիչ), 1991-ից՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստ-ում: Գրաբար բնագրով ու առաջաբանով (1985), աշխարհաբարի փոխադրությամբ և ծանոթագրություններով (1999) հրատարակել է ***Թոմմա Արծրունու*** «Պատմություն Արծրունյաց տան» երկը:

Լույս են տեսել Վ-ի «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. 908–1021 թթ.» (1969), «Արծրունիները Հայոց պատմության մեջ» (2002),

«Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում» (2005), «Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ» (2008), «Գրիգոր Նարեկացին և հայրենի Վասպուրական աշխարհը» (2010) աշխատությունները:

«ՎԱՐԺԱՐԱՆ», մանկավարժ. ամսագիր: Լույս է տեսել 1882–84-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Նիկողայոս Խոսրովյան: Անդրադարձել է արևելահայ դպրոցի ուսումնակրթ., սովորողների մտավոր, բարոյական, գեղագիտ. և ֆիզ. դաստիարակության հարցերին: Աշխատակցել են Ս. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Ս. Պալասանյանը, Կ. Կոստանյանը և ուր.:

«ՎԱՐԺՈՒԻՄ՞Ն ԿՏԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ», կտակագրության հմտություններ ուսուցանող գիրք: Թարգմ.՝ Գաբրիել Երևանցու: Տպագրվել է 1749-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Վարժումն կտակագրութեան» (244 էջ, 8º, 11,7 x 7,1 սմ):

«ՎԱՐՉՔ», մշակութաբան. պատկերազարդ կիսամյա հանդես: Հայկ. ճարտ-ն ուսումնասիրող (ՀՃՈՒՀ) հիմնադրամի հրատ.: Լույս է տենսում 2010-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Սամվել ***Կարապետյան***: Հանդեսի յուրաքանչյուր համար վերաբերում է որոշակի տարածաշրջանի (Արմ. Հայաստան, Ադրբեջան, Ջավախք ևն) հայկ. նյութ. մշակույթի հուշարձանների ուսումնասիրությանը, վիճակին, պահպանման խնդիրներին: Անդրանիկ համարը նվիրվել է ՀՃՈՒՀ հիմնադիր-տնօրեն Արմեն ***Հախնազարյանի*** կյանքին ու գործունեությանը, առանձին թողարկում է նվիրվել հայ գրատպության 500-ամյակին:


ՎԱՐՈՒԺԱՆ Դանիել Հ[ապուգքյարյան Դանիել Գրիգորի, 20.4.1884, գ. Բրգնիք (Սեբաստիայի նահանգ)–26.8.1915, Մեծ եղեռնի զոհ], բանաստեղծ, գրական-հաս. գործիչ, խմբագիր: Սկզբն. կրթությունն ստացել է Կ. Պոլսում (1896–1902), ապա սովորել է Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում (1902–05), ավարտել Գենտի (Բելգիա) համալսարանը (1909): 1909–11-ին դասավանդել է Սեբաստիայի Արամյան վարժարանում, 1911–12-ին՝ Թոքատի/Եվդոկիայի ազգ. ճեմարանում, 1912–15-ին՝ Կ. Պոլսի Լուսավորչյան վարժարանի տնօրենն: 1910–13-ին՝ «Նշտրակ» հանդեսի խմբագիր, 1914-ին՝ ***«Նաւաստարդ»*** (Հակոբ ***Միրոնու*** հետ) տարեգրքի հրատարակիչ-խմբագիր:

Լույս են տեսել Վ.-ի «Սարսուռներ» (1906, 1927, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Ցեղին սիրտը: Բագինին վրայ: Կրկէսին մէջ» (1909, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) բանաստեղծությունների ժող-ները, որտեղ վրեժի և պայքարի է կոչել ոչ միայն հայ ժողովրդին, այլև ողջ մարդկությանը («Զոն», «Նեմեսիս», «Հայրենիքի ոգին», «Թիապարտները», «Քարդը», «Կռուի երգը», «Վահագն»), «Հեթանոս երգեր» (1912, ԿՊ, «Շանթ» տպ., 2006, Ստամբուլ) բանաստեղծությունների և պոեմների ժող-ը, որը նվիրված է 1910-ական թթ-ին ծավալված «հեթանոսական» շարժմանը. գրքի 2 բաժիններում («Հեթանոս երգեր», «Գողգոթայի ծաղիկներ») ազատ, ուժեղ, կատարյալ մարդու և ներդաշնակ աշխարհի փառաբանումն է («Գեղեցկութեան արձանին», «Վանատուր», «Հեթանոսական», «Օ՜ Տալիթա»), «Քարդը (1895–96)» (1908, Փ., Տիգրան Տոդրամաճյանի տպ.), «Տրտունջք: Եղիա Տէմիրճիպաշեանին» (1911, Սեբաստիա, «Հողդարի» տպ.), «Հարճը» (1946, 1952, 1977, 2007) պոեմները, «Արեան յաղթանակ» (1919, Նյու Յորք, «Հայկական» տպ.) բանաստեղծությունը, «Հացին երգը» (1921, 1950, 1964, 1984, 2009, 2011) բանաստեղծությունների և պոեմների ժող-ը:

Հրատարկվել են նաև Վ.-ի «ԵԼԺ»-ն (1986) , «Երկերը» (1946, 1969, 1984), «Բանաստեղծությունները» (1955), «Նամականին» (1965), «Ընտրանին» (2011):

1958-ին Գենտի համալսարանի մատենադարանի մեծ սրահում ամրացվել է հուշատախտակ՝ Վ.-ի դիմաքանդակով: Երևանում Վ.-ի անունով կոչվել են փողոց և դպրոց, որի առջև տեղադրված է նրա հուշարձանը:


Գրկ. Գրական ասուլիաններ, Դ. Վարուժանի «Հեթանոս երգերը», ԿՊ, 1913: **Էսաճանեան Լ.,** *Դանիէլ Վարուժան, ԿՊ, 1919:* **Սարգսյան Գ.,** *Վարուժանի ստեղծագործական կյանքը, Ե., 1947:* **Ճիզմեճեան Գ.,** *Դանիէլ Վարուժան, Կահիրէ, 1955:* **Յուշամատեան** *Դանիէլ Վարուժանի, Փ., 1958:* **Ռշտունի Հ.,** *Դանիել Վարուժան, Ե., 1961:* **Պատրիկ Ա.,** *Դանիէլ Վարուժանն իմ յուշերում, Բ., 1968:* **Գաբրիելյան Վ.,** *Դանիել Վարուժան: Կյանքը և գործը, Ե., 1978, 2009:* **Շարուրյան Ա.,** *Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Ե., 1984:* **Վարդանյան Խ.,** *Դանիել Վարուժանը և «գրական հեթանոսությունը», Ե., 2006:*



«Վարչք», *2010-ից, Երևան (№ 2, 2010)*




Դանիել Վարուժան



«Զոն» բանաստեղծության ձեռագիրը



«Երկեր»-ի (1984, Ե., «Սովետական գրող», ձևավորող՝ Ֆ. Աֆրիկյան) կազմը



«Վարք երանելւոյն սրբոյ Յօհաննիսին» *(1724, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«Վարք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» *(1749, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Սիմոն Վեբերի *«Արարատը Սուրբ Գրոց մէջ» (1901, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*

«ՎԱՐՔ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՍՐԲՈՅ ՅՕՀԱՆՆԻՍԻՆ», աղոթքների, թաղման կարգերի, սաղմոսների ժող.: Թարգմ. իտալ–ից և առաջաբ.՝ Հովսան Թոխաթեցու: Տպագրվել է 1724–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (322 էջ, 12º և 6º, 8,5 x 5 սմ): Վերահրատարակվել է 1770–ին նույն տպարանում:

«ՎԱՐՔ ԼՈՒՍԻԱՅ ԿՈՒՍԻՆ», վարքաբան. երկ: Թարգմ.՝ իտալ–ից: Տպագրվել է 1799–ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ–ին՝ «Վարք սրբոյ վկային Քրիստոսի Լուսիայ կուսին» (30 էջ, 8º, 10,5 x 6 սմ):

«ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ ԱԼԷՔՍԻԱՆՈՍԻ», վարքաբան. երկ: Տպագրվել է առանց տպագրության վայրի, տարեթվի և տպարանի հիշատակության, ենթադրվում է՝ 1800–ին (35 էջ, 12º, 12 x 6 սմ):

«ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ», վարքաբան. երկ: Հեղինակը Սատթեոս Եվդոկացին է. օգտվել է Ագաթանգեղոսի և մյուս պատմիչների երկերից, ի մի բերել դրանք և ներկայացրել համառոտ: Տպագրվել է 1749–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Վարք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին...», Բ–ին՝ «Պատմութիւն վարուց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց հայրապետին...» (340 էջ, 8º, 14,5 x 7,8 սմ):

ՎԵԲԵՐ (Weber) Սիմոն [1.1.1866, Բոլինգեն (Գերմանիա)–12.3.1929, Ֆրայբուրգ (Գերմանիա)], գերմանացի արևելագետ, հայագետ: 1896–ին ավարտել է Ֆրայբուրգի համալսարանը, որտեղ և դասավանդել է նույն թվականից:

Վ–ի հայագիտ. առաջին աշխատությունը լույս է տեսել 1896–ին («Ս. Գրոց յարգն ու արժէքը հին հայոց քով», հայ. հրտ.՝ «ՀԱ», 1897): Արժեքավոր են նրա՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկին, Աստվածաշնչում հիշատակվող Արարատ տեղանվանը («Արարատը Սուրբ Գրոց մէջ», հայ. հրտ.՝ 1901, Վնն., Մխիթարյան տպ.), շարականներին, հայ մատենագրության պատմությանը, Կորյունի, Եղիշեի, Սամբրե Վերծանողի և ուր. երկերին վերաբերող ուսումնասիրությունները, «Կաթոլիկ եկեղեցին Հայաստանում» (1903) մենագրությունը: Վ. հայ–ից գերմ. և լատ. է թարգմանել II դ–ի հույն մատենագիր Իրենեոս Լուգդունացու «Ցոյցք առաքելական քարոզութեանն» երկը, որը գիտ. աշխարհին հայտնի է միայն հին հայ. թարգմանությամբ: Գերմ. է թարգմանել նաև հատվածներ «Հաճախապատում»–ից, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» ևն:

Գրկ. Վարդանեան Ա., Պրոֆ. դկ. Սիմոն Վէբէր, «ՀԱ», 1929, № 5:


ՎԵԳՆԵՐ (Wegner) Արմին Թեոֆիլ [16.10.1886, Էլդերֆելդ–Վուպերտալ (Գերմանիա)–17.5.1978, Հռոմ, ամբունասապփորն ամփոփված է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված համալիրի հուշապատի մեջ), գերմանացի գրող, հրապարակախոս: Իրավագիտ–յան դ–ր (1914): Սովորել է Բրեսլաուի, Յուրիխի և Բեռլինի համալսարաններում (1908–13):

1919–ին գրել է «Բաց նամակ ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնին», որտեղ կոչ է արել պատասխանատվության ենթարկել հայերի ցեղասպանության մեղավորներին, արծարծել է փրկվածներին բարոյական և նյութ. օգնություն ցուցաբերելու, բռնությամբ մահմեդականացված հազարավոր հայերին քրիստ. դարձի բերելու, հայրենի տները վերադառնալու և կորցրած ունեցվածքի փոխհատուցումը ստանալու իրավունքի վերաբերյալ հարցերը: Հանդես է եկել Ս. Թեհլերյանի պաշտպանությամբ, գրել նրա դատավարության սղագր. հաշվետվության նախաբանը, որը լույս է տեսել «Թալեաթ փաշայի դատավարությունը» վերտառությամբ (1921, Բեռլին): Հեղինակ է «Ճիչ Արարատից» (1922) հոդվածի (Զմյուռնիայում հայերի կոտորածի մասին), արևմտահայերի ողբերգ. ճակատագրի

մասին պատմ. ակնարկների և պատմվածքների («Արմենիադա», «Հայ մորը» ևն):

Հայ. լույս են տեսել Վ.-ի «Ճանապարհ առանց տունդարձի» (2000, թարգմ.՝ Ռ. և Ա. Մուշեղյանների), «Խղճիս ձայնը երբեք չի լռելու» (2006, թարգմ.՝ Խ. Խաչերի) աշխատությունները:

Վ. 1927, 1968 և 1976-ին այցելել է Խորհրդ. Հայաստան:



Արմին Վեգներ

«ՎԵՀԱՄՈՐ ԱՒԵՏԱՐԱՆ», մագաղաթե ձեռագիր մատյան (հավանաբար՝ VII դ.): Մեզ հասած հնագույն ամբողջ. ձեռագիրն է: Գրիչը հայտնի չէ: Ձեռագիրն անշուք է, զարդարված է մի քանի թանկարժեք քարերով և կլոր գամերով: Ավետարանն առանձնանում է նրանով, որ միավորում է երդման 2 սրբազան վկաներ՝ Ավետարանն ու Խաչը: Երկաթագիր է, տառաձևերը նման են VII դ-ի վիմ. արձանագրությունների տառաձևերին (257 թերթ, 33 x 25,7 սմ): 1890-ական թթ-ին «Վ. Ա.» պահվել է Արցախի Բանանց գյուղի եկեղեցում, արձանագրվել Մակար եպս. Բարխուդարյանի «Արցախ» գրքում՝ «Ծեր», «Պահապան» անվանումներով, ապա տարել են Գանձակի Սբ Գրիգոր եկեղեցի: 1975-ին Ադրբեջանի թեմի առաջնորդ Տեր Վահան եպս. Տերյանը նվիրել է ***Վազգեն Ա. Պալճյանին***, վերջինս էլ՝ Մատենադարանին (ձեռ. № 10680): Անվանվել է ի հիշատակ կաթողիկոսի մոր՝ Սիրանույշ Պալճյանի:



«Վեհամոր Աւետարան»-*ի (VII դ., Մատենադարան, ձեռ. № 10680) կոստղապատ կազմը*

ՀՀ-ում երկրի նախագահը երդմնակալության արարողության ժամանակ երդվում է՝ ձեռքը «Վ. Ա.»-ի և Սահմանադրության վրա դրած:

«ՎԵՀԱՓԱՌԻ ԱՒԵՏԱՐԱՆ», «Վազգեն Վեհափառի Աւետարան», X դ-ի վերջի-XI դ-ի 1-ին կեսի պատկերազարդ ձեռագիր մատյան: Գրվել է Տարոնում կամ Տուրուբերանում: Գրիչը և ծաղկողը հայտնի չեն: Ըստ պահպանված հիշատակարանների՝ XV դ-ի կեսից ձեռագիրը պահվել է Գեղարքունիքի գավառում, ապա տերերի հետ տեղափոխվել է Արցախ-Խաչեն (XVIII դ.՝ Խադավանք): 1978-ին ***Վազգեն Ա. Պալճյանն*** այն ստացել է Մ. և Թ. Անթիկյաններից ու նվիրել Մատենադարանին (այստեղից էլ՝ անվանումը, ձեռ. № 10780): «Վ. Ա.» ուղղագիծ երկաթագիր երկսյուն մատյան է (264 թերթ, 32 x 25 սմ): Ձեռագրի մանրանկարներն աղերսներ ունեն Փոքր Հայքի կամ Կապադովկիայի մերձավոր շրջանների մանրանկարչության հետ: Մեզ հասած առաջին ձեռագրերից է (ինչպես ***«Կարսի Աւետարանը»***, XI դ.), որն ունի տեքստային մանրանկարներ, սակայն ոճով ավելի հնավանդ է: Այն օրինակ է դարձել ***«Ծուղրութի Աւետարան»***-ի (974), 1038-ի Ավետարանի և նման այլ ձեռագրերի պատկերազարդումների համար: Սխեմատիկ հարթապատկերային ոճով «Վ. Ա.» պահպանել է պապիրուսե կամ մագաղաթե գալարաթերթի պատկերազարդման հնագույն ձևերը, փաստել, որ գալարաթերթերում և մատյաններում պատկերազարդվել է տեքստի գրեթե յուրաքանչյուր դրվագը:



«Վեհափառի Աւետարան». *«Հուդայի մատնությունը», մանրանկար (X–XI դդ., Մատենադարան, ձեռ. № 10780)*

«Վ. Ա.»-ով Հայաստանում սկսվել է պատկերազարդման նոր՝ տեքստային մանրանկարների համակարգը (67 մանրանկար, որոնցից 5-ը՝ ամբողջ. էջով):

Գրկ. **Մաթևոսյան Ա.,** *Վեհափառի Ավետարանը, «Էջմիածին», 1978, № 5:* **Մաթևոսյան Ա., Իզմայլովա Տ.,** *Վազգեն Վեհափառի Ավետարանը. Ժ դար, Ե., 2000 (նմանահանություն): Матенадаран, т. I, Армянская рукописная книга VI–XIV веков, составление и авторы текста В. Казарян, С. Манукян, М., 1991.*



Ղ. Ալիշանի «Շիրակ» (1881, Սբ Ղազարի տպ.) գրքի կազմը


«ՎԵՆԵՏԻԿԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ», XV դ–ի վերջին–XVI դ–ի սկզբին Լվովում հայատառ ղփչաղերենով գրված պատմ. ժամանակագրություն: Բաղկացած է մոտ 200 գրառությունից, որոնք ընդգրկում են մ. թ. ա. I դ–ի կեսից մինչև 1536–ը: 1495–ից գրառումներ արել է ականատեսը: Անհայտ հեղինակը տեղեկություններ է հաղորդում Ուկրաինայի և Լեհաստանի հայկ. գաղթավայրերի, ինչպես նաև այդ ու հարևան երկրներում (Լիտվա, Մոլդովա, Թուրքիա) տեղի ունեցած ռազմ. ընդհարումների, տարերային աղետների և այլ իրադարձությունների վերաբերյալ: «Վ. տ.» պատմ. և լեզվագիտ. կարևոր աղբյուր է: Պահպանվել է 2 խմբագրությամբ: Առաջին անգամ հրատարակել է Ղևոնդ *Ալիշանը* 1896–ին՝ «Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ» (Վնտ., Սբ Ղազարի տպ.) գրքում: Թարգմանվել է հայ. և ֆրանս.:

Գրկ. Գրիգորյան Ա., Վենետիկյան տարեգրությունը, «ԼՀԳ», 1980, № 5:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորել է *Հակոր Մեղապարտը* 1512–ին *Ուրբաթագրքի* տպագրությամբ: 1565–66–ին *Աբգար Թոխաթեցին* հրատարակել է մի օրացույց և Սաղմոսարան: 1587–ին *Հովհաննես Տերզնցին* **Ջուան Ալբերտիի** տպարանում իր ձուլած տառերով լույս է ընծայել Սաղմոսարան: XVII դ–ում Վենետիկում հայ. գրքերը հիմնականում տպագրվել են իտալացիների կամ տեղի հույների տպարաններում, թեև պատվիրատուները, ընագրեր կազմողները, սրբագրիչները, հաճախ նաև գրաշարները եղել են հայեր: 1642–ին *Հովհաննես Անկյուրացին* հույն **Սալիգաթաուի** տպարանում լույս է ընծայել Սաղմոսարան, 1643–ին՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը: 1660–ին **Ջուան–Բատիստա Բովիսը** 3 հայերի, մասնավորապես Սահակ Թոխաթեցու օգնությամբ տպագրել է Սաղմոսարան (ըստ Նոր Ջուղայի 1638–ի հրատ–յան) և Ներսես Շնորհալու «Յիսուս Որդին» (Հովհաննես Անկյուրացու հրատ–յան շարվածքից): Հայ վաճառականներ Գասպար Սահրատյանը և *Խոջա Նահապետ Գուլնազարը* **Ջիակոմո Մորետիի** համագործակցությամբ սարքավորել են սեփական տպարաններ. առաջինը 1686–ին լույս է ընծայել «Յիսուս Որդին», երկրորդը՝ 1687–ին՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի» (աշխարհաբար 2–րդ գիրքը) և «Պատասխանատրութիւնք» երկերը: **Միքելանջելո Բարբոնին** 1680–90–ին Վենետիկում հրատարակել է 12 անուն հայ. գրքեր, այդ թվում՝ Ավետարան և Տաղարան:



Մինչև Մխիթարյան տպարանի հիմնադրումը հայ. գրքերը հիմնականում հրատարակվել են **Անտոնի Բորտոլիի** տպարանում. առաջինը՝ «Թուղթ սիրոյ եւ միաբանութեան»–ը՝ 1695–ին: Հայ. գրքեր լույս են ընծայվել նաև **Ստեֆանո Օռլանդոյի, Դեմետրիո Թեոդոսիուի, Զիովաննի Բաշոյի, Բատիստա Ալբրիցի Զերոլիմոյի, Պիետրո Վալվազիանիի, Զովաննի Պիացոյի** տպարաններում: Վենետիկում *Մխիթար Սեբաստացին* հրատարակել է մոտ 5 տասնյակ գիրք, այդ թվում՝ իր «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» (1727), «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» (աշխարհաբար, 1727), «Քերականութիւն գրաբառի լեզուի» (1730), *«Բառգիրք հայկազեան լեզուի»* (հ. 1, 2, 1749, 1769) աշխատությունները: 1757–ից Մխիթարյաններն սկսել են հրատարակել ամենամյա օրացույցներ, որոնք տպագրվում են ցայսօր: Վենետիկի տարբեր տպարաններում լույս են տեսել միաբանության անդամներ Մ. Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1779) և «Պատմութիւն Հայոց» (հ. 1–3, 1784–86)



Բ. Սարգիսյանի «Տեսութիւն Սեղբեսբրոսի պատմութեան եւ Մ. Խորենացւոյ աղբերաց» (1893, Սբ Ղազարի տպ.) գրքի կազմը

աշխատությունները, Խ. Այուրմելյանի «Համառօտ թուաբանութիւն» (1788) աշխարհաբար դասագիրքը ևն:


1789-ին Սբ Ղազար կղզում Մխիթարյանները հիմնադրել են սեփական տպարան: Տպարանապետը եղել է Հովհաննես Զոհրապը, ապա՝ Խաչատուր *Այուրմելյանը*, Հովհաննես Սորդուճյանը, Անտոն Քաջունին և ուր.: Առաջին տարում տպագրվել են Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից» («Մատեան ողբերգութեան») և «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողովմոնի» երկը, ապա՝ Մխիթար Գոշի «Առակք եւ ոտանաւորք խրատականք» (1790), Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» (1793), Մովսես Խորենացուն վերագրվող «Գիրք պիտոյից» (1796) և այլ գրքեր: Մինչև դարավերջ հրատարակվել են նաև միաբանության անդամներ Ղ. Ինճիճյանի «Տեսութիւն համառօտ հին եւ նոր աշխարհագրութեան» (1791), Ս. Պրոնյանի «Երկրաչափութիւն» (1794) աշխատությունները ևն: 1799–1802-ին այստեղ տպագրվել է Մխիթարյանների առաջին պարբ-ը՝ *«Տարեգրութիւնը»*: Մինչև XIX դ-ի 1-ին կեսը Սբ Ղազարում արդեն տպագրվել էին 600 անուն հայ. գրքեր (ավելի շատ, քան որևէ այլ վայրում):

XIX դ-ի 2-րդ կեսին Վենետիկի Մխիթարյանների հրատարակչ. գործունեությունը հասել է իր գագաթնակետին: Աբբահայր Ստեփանոս *Ագոնցի* օրոք (1799–1824) նկատելի տեղ է հատկացվել աստվածարան. գրքերի հրատ-յանը: Սուքիաս *Սոմալյանի* օրոք (1824–46) ուշադրության կենտրոնում են եղել միջնադարյան հայ հեղինակները և բանասիրությունը. լույս է տեսել *«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»* բառարանը (հ. 1–2, 1836–37), որը դարձել է հետագա հայ բառարանագրության հիմքը: Աբբահայր Գևորգ *Հյուրմյուզյանի* օրոք (1846–76) ավելի մեծ տեղ է տրվել գեղ. գրակ-յանը: Հրատարակվել են Ղ. Ալիշանի «Նուագք» (հ. 1–5, 1857–58) բանաստեղծությունների ժող-ները, «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Սիսական» (1893), «Այրարատ» (1890), «Հայապատում» (1901) մեծածավալ երկերը, 1860–1912-ին՝ Գ. Զարբհանալյանի, Մ. Քաջունու, Բ. Սարգիսյանի, Ս. Էփրիկյանի, Ա. Ղազիկյանի արժեքավոր հայագիտ. աշխատությունները: Մինչև 1920-ը լույս են ընծայվել հայ հին ու միջնադարյան հեղինակների երկերը՝ «Մատենագրությունք նախնյաց», «Ընտիր մատենագիրք», *«Սուրբերք հայկականք»* մատենաշարերով, մանկ. գրքեր՝ «Մատենադարան մանկանց» մատենաշարով, նաև թարգման. գրակ., դասագրքեր Մխիթարյան դպրոցների համար, Մխիթարյանների մեկ տասնյակից ավելի պարբ-ներ՝ *«Եղանակ Բիւզանդեան»*-ը (1803–20), *«Դիւրակ Բիւզանդեան»*-ը (1812–16), *«Բազմավէպ»*-ը (1843-ից) ևն: Տես նաև *Մխիթարյան միաբանություն*:


Գրկ. Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, Վնտ., 1895: Մխիթարեան յոբելեան. 1701–1901, Վնտ., 1901: Ալէօ, *Հայկական տպագրութիւն, հ. 1–2, Թ., 1901–02:* Թէոդիկ, *Տիպ ու տպա, ԿՊ, 1912, Ե., 2012 (համանահանություն): Դպացուցակ Մխիթարեան տպարանին. 1700–1978, Վնտ., 1978:* Ճէմճէմեան Ս., *Մխիթար աբբահօր հրատարակչական առաքելութիւնը, Վնտ., 1980:* Իշխանյան Ռ., *Հայ գիրքը, Ե., 1981:* Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012:* Գևրիկյան Վ., *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Ա–Բ, Ե., 2012–14:*

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, հիմնադրվել է Սբ Ղազար կղզում՝ *Միխթար Սեբաստացու* ջանքերով՝ նրա անձն. գրադարանի հիմքի վրա: Սկզբն. շրջանում համալրվել է նվիրատվություններով, հետագայում՝ նաև գնումներով: XIX դ-ի կեսին կառուցվել է գրադարանի նոր շենք՝ 2 մասնագիտացված գրապահոցներով, որտեղ հավաքվել են ձեռագիր մատյաններ, պարբ-ներ ու տպագիր հրատ-ներ՝ հայ. և այլ լեզուներով:

XX դ-ի կեսին տպագիր ֆոնդը 35 հզ. միավոր էր (հազվագյուտ հրատ-ներ՝ հայ., ֆրանս., հուն., իտալ., չին., հնդկ. ևն լեզուներով), ձեռագիր ֆոնդը՝ 2 հզ.



Ջ. Բայրոնի «Իտալիա» (1901) գրքի տիտղոսաթերթը



Ս. Էփրիկյանի «Ս. Էջմիածին (303-1903)» (1903) գրքի տիտղոսաթերթը



Վենետիկի մատենադարանի *ցուցասրահը*



Յուրի Վեսելովսկի



Յ. Վեսելովսկու *«Ակնարկներ հայ գրականության և կյանքի» (ռուս., 2012) գրքի կազմը*



Վեսպերի *«Հատընտիր»-ի (1973, Ե., «Հայաստան») փիփղոսաթերթը*

միավոր: Սփյուռքի հայաշատ կենտրոններից միաբանության գործակալները Վենետիկ են առաքել (գնումների, փոխանակումների, նվիրատվությունների միջոցով) բազմաթիվ հայկ. ձեռագրեր: Ներկայում Վ. մ-ի ձեռագիր ֆոնդն ավելի քան 3400 միավոր է:

ՎԵՍԵԼՈՎՍԿԻ Յուրի Ալեքսեևիչ [6(18).7.1872, Մոսկվա–11.4.1919], ռուս գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, հայագետ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1886–90), տիրապետել է հայոց լեզվին: Ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրության ֆակ-ը (1894): Ուսումնասիրել է Հայաստանի պատմությունը, գրակ-ը և արվ-ը: 1889-ին եղել է Վենետիկում, այցելել Մխիթարյան միաբանություն: Վ. աշխատակցել է «Արմյանսկի վեստնիկ» (ռուս., 1916–18) ամսագրին:

Դեռևս ճեմարանում սովորելու տարիներին Վ. «Գործ» խմորատիպ ամսագրում տպագրել է Հայաստանին ու հայ ժողովրդին նվիրված բանաստեղծություններ («Հայերին», «Հայ ժողովրդին», «Գիշերը Ավարայրի դաշտում, 451 թվականի ճակատամարտի առթիվ», «Լևոն VI-ը գերության մեջ» ևն): 1893–94-ին Վ. հրատարակել է «Հայ գրողներ» (Մ. Բերբերյանի հետ) ժող-ը՝ 2 հատորով, 1907-ին (Գրիգոր *Խալաթյանցի* խմբագրությամբ)՝ հայ նոր պոեզիայի առաջին անթոլոգիան՝ «Հայկական մուսան», Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) տարիներին՝ «Թուրքահայաստանի ողբերգությունը» (1915) գրքույկը, «Տառապող երեխաներ», «Հայերի ճակատագիրը և ռուս ազոող սերունդը» և հրապարակախոս. այլ հոդվածներ: «Բանաստեղծական թարգմանություններ» (1898) ժող-ի մեջ ներառել է նաև հայ պոեզիայից իր թարգմանությունները:

«XIX դ. հայ պոեզիան և նրա ծագումը» (1901) հոդվածում Վ. քննել է հայ պոեզիայի զարգացումը հնագույն ժամանակներից մինչև XX դ-ի սկիզբը: Հեղինակ է նաև Ս. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Պ. Պռոշյանի, Րաֆֆու, Պ. Դուրյանի, Հ. Պարոնյանի, Ա. Ծատուրյանի և ուր. մասին հոդվածների:

Լույս են տեսել նաև Վ-ու «Հայ բանաստեղծ Սմբատ Շահազիզը» (1902) մենագրությունը, «Գրական ակնարկներ» (հ. 1, 1900, ներառում է նաև «Բայրոնը Սբ Ղազար կղզում» ու «Գրիբոյեդովը և հայերը» ակնարկները) ժող-ը, «Հերոսական դարաշրջանի գրական գործիչ Եղիշե Վարդապետը» (1901), «Ակնարկներ հայ գրականության և կյանքի» (1906, 2012), «Ռուսական ազդեցությունը ժամանակակից հայ գրականության վրա» (1909) աշխատությունները:

Երկ. Очерки армянской литературы, истории и культуры, Е., 1972.

Գրկ. **Շահնազարեանց Ս.,** *Սարդասիրութեան եւ աշխատանքի ազնիւ գինւորը՝ Իւրիյ Ալէքսէևիչ Վեսելովսկիյ, Մ., 1901:* **Арешян С.,** *Юрий Веселовский и армянская литература, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1944, № 3–4;* **Давтян А.,** *Юрий Веселовский и армянская литература, Е., 1970.*

ՎԵՍՊԵՐ (Դաբաղյան Մարտիրոս Տիգրանի, 28.4.1893, Վան–20.9.1977, Երևան), բանաստեղծ, թարգմանիչ: Մշակույթի վաստ. գործիչ (1967): Սովորել է Վանի Երամյան դպրոցում ու պետ. ուսուցչանոցում: 1915-ի տեղահանությունից հետո ապաստանել է Արլ. Հայաստանում, աշխատել որպես մանկավարժ, ապա՝ «Գրական սերունդ», «Խորհրդային Հայաստան» ամսագրերի խմբագրություններում:

Լույս են տեսել Վ-ի «Կայարաններ» (1925), «Կենդանի և կրակե մարդկանց հետ» (1931), «Պայծառություն» (1936), «Մանուկների հետ» (1937), «Եղևնի» (1939), «Մայիսյան վարդեր» (1941), «Այգն է բացվում» (1944), «Հիշատակ» (1948), «Առաջին աշուն» (1956), «Անձրև և արև» (1957), «Հրազդան» (1959), «Հորեղբոր սրինգ» (1960), «Մայրենի երգեր» (1965), «Շուշանի շափրակներ» (1968) բանաստեղծությունների ժող-ները, «Արձակ էջերը» (1963), «Հատընտիրը» (1973): Գրել է նաև մանուկների համար («Թելիկն ու Մելիկը», 1938, «Մեր քաջ Դժիկոն», 1972, հեքիաթներ): Թարգմանել է Ա. Սաբիրի, Ա. Պուշկինի, Մ. Ջալիլի և ուր. գործերից:

«ՎԵՍՏՆԻԿ» («Вестник Союза армян России»–«ՌՀՄ-ի լրատու»), ՌՀՄ ամենամյա տեղեկագիր: Լույս է տեսնում 2002-ից Մոսկվայում: Լուսաբանում է միության և նրա մասնաճյուղերի գործունեությունը, Ռուսաստանի հայկ. համայնքների ազգ-մշակութ. կյանքը, անդրադառնում է ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող իրադարձություններին:

«ՎԵՍՏՆԻԿ ՌԱՈՒ» («Вестник РАУ»–«ՀՌՀ-ի լրատու»), գիտ. քառամսյա/կիսամյա հանդես: Հայ-ռուս. (Սլավոն.) համալսարանի հրատ.: Լույս է տեսնում Երևանում (ռուս.)՝ մասնագիտ. 2 պրակով՝ հումանիտար և հաս. գիտ-ներ՝ 2003-ից (խմբագիրներ՝ Կառլեն Միրումյան, Արմեն Դարբինյան՝ 2013-ից), ֆիզմաթ և բնական գիտ-ներ՝ 2005-ից (խմբագիր՝ Սերգեյ Համբարձումյան): Ներկայացնում է համալսարանում կատարվող հիմնարար և կիրառ. հետազոտությունների արդյունքները, տպագրում է բուհի դասախոսների, հայ և օտարազգի գիտնականների հոդվածներ, գրախոսություններ՝ հատուկ թեմաներով հետազոտությունների շուրջ են:

«ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ», գրական-գեղ., հաս. պատկե-րազարդ ամսագիր: Սփյուռքահայության հետ մշակութ. կապի կո-միտեի հրատ.: Լույս է տեսել 1945–91-ին Երևանում (1945–88-ին՝ «Սովետական Հայաստան», 1989–90-ին՝ «Վ. Հ.», 1991-ին՝ «Հայրենի եզերք»): Խմբագիրներ՝ Զաքար ***Բաշինջաղյան***, Սուրեն Հարությունյան, Պատրիկ ***Սեյյան***, Հրաչյա Գրիգորյան, Աշոտ Թադևոսյան, Շահեն ***Թաթիկյան***, Վահագն ***Դավթյան***, Կարեն ***Սիմոնյան***: Լուսաբանել է Հայրենիք-Սփյուռք կապերը, սփյուռքահայ համայնքների կյանքը: Տպագրել է նյութեր հայ ժողովրդի անցյալի բախտորոշ դրվագների, ժող. ավանդույթների մասին, անվանի գիտնականների հոդվածներ՝ հայ բանահյուսության և ազգագրության վերաբերյալ, ծանոթացրել հայկ. պատմ. ճարտ. հուշարձաններին, բազմիցս անդրադարձել է հայ դասականների, ինչպես նաև Վ. Սարոյանի, Լ.-Զ. Սյուրմելյանի ստեղծագործություններին: 1981–91-ին ունեցել է «Կռունկ» հավելվածը (անգլ., ֆրանս., իսպ.): Առաքվել է 52 երկիր:

«ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ», հաս., տես-վերլուծ., գրական ամսաթերթ: Հնչակյան կուս-յան Ամերիկայի շրջանի, 1920-ին՝ կուս-յան ձախ թևի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1918–20-ին Բոստոնում: Խմբագիրներ՝ Եղիա ***Միրմարդ***, Հ. Բարեջանյան: Հայ դատի լուծման հարցում մեծ հույսեր է կապել Անտանտի հետ, հետագայում հայ ժողովրդի ազատությունը կապել է Հոկտեմբերյան հեղափոխության հետ: Անդրադարձել է միջազգ. սոց. շարժմանը, լուսաբանել ամերիկահայ համայնքի կյանքը:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», գրական, հաս-քաղ. ամսաթերթ, ապա՝ շա-բաթաթերթ (սկզբում՝ կիսամյա հանդես): Լույս է տեսել 1917–21-ին Փարիզում: Տնօրեն-խմբագիր՝ Լևոն Համբարձումյան, խմբագրապետ՝ Արշակ ***Չոպանյան:*** Լուսաբանել է ֆրանսահայ համայնքի առօրյան, հայրենիքի հետ կապը, տպագրել գրական, բանասիր. հոդվածներ, գեղ. ստեղծագործություններ:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», հաս., քաղ., գրական օրաթերթ (սկզբում՝ շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա): Լույս է տեսել 1930–53-ին Թեհրանում: Խմբագիր՝ Հայկ ***Գարագաշ***: Լուսաբանել է իրանահայ համայնքի առօրյան, կարևորել ներհամայնքային համերաշխությունը: Անդրադարձել է Երկրորդ համաշխ. պատերազմում (1939–45) հայ ռազմիկների սխրանքներին, հետպատերազմյան շրջանում աջակցել ներգաղթին: 1930-ական թթ-ին հրատարակել է *«Բոթոխ»* հավելվածը:

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», հաս., քաղ., գրական երկօրյա թերթ, վերջում՝ օրաթերթ: Լույս է տեսել 1937–40-ին Աթենքում: Խմբագիրներ՝ Արամ Կեռքճյան, Մանուկ Դարբինյան: Լուսաբանել է հունահայերի ազգ., կրթ., մշակութ., եկեղեց. կյանքը, ՀՕԿ-երի, հայրենակց. միությունների գործունեությունը, անդրադարձել Խորհրդ. Հայաստանի տնտ. և մշակութ. կյանքին, միջազգ. քաղ. կացությանը:



«Վեստնիկ ՌԱՈՒ», *2003-ից, Երևան (№ 1, 2013)*



«Վերածնված Հայաստան», *1945–91, Երևան (№ 4, 1990)*



«Վերածնունդ», *1917-21, Փարիզ*



«Վերածնունդ», *1930-53, Թեհրան*



Բոգդան Վերդյանի
«Արտակարգ դեսպաններ» (1985, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը



«Վերելք», *1933–34, Երևան (№ 2, 1934)*



Գրիգորի Վերմիշևի
«Ամիրսպասալար» (2012, Ե., ՀԳՄ հրտ.) գրքի կազմը

ՎԵՐԴՅԱՆ Բոգդան Հակոբի [20.9.1919, գ. Բեգում Սարով (Հյուսիսային Արցախ)–1.12.1992, Երևան], արձակագիր, լեզվաբան: Բանասիր. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1973): Ավարտել է ՀՊՄԻ (1941): 1948-ից դասավանդել է նույն բուհում. 1964 և 1978-ին՝ բանասիրության ֆակ-ի դեկան, 1965–69-ին՝ պրոռեկտոր:

Լույս են տեսել Վ.-ի «Քեզ համար, Լենինգրադ» (1951), «Ինչպես է գալիս երջանկությունը» (1958), «Լեռների որդին» (1962, ռուս.՝ 1965), «Ծաղիկներս մնացին հեռվում» (1969, 1990) վեպերը, «Այրվող ալիքներ» (1977), «Երկխոսություն» (1980), «Արտակարգ դեսպաններ» (1985) եռերգությունը, «Երրորդ կուրսը» (1975) վիպակը, «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» (1970) աշխատությունը:

«ՎԵՐԵԼՔ», գրական-գեղ., գիտ., հաս. պատկերազարդ հանրամատչելի ամսագիր: ՀԿ(բ)Կ ԿԿ հրատ.: Լույս է տեսել 1924–26-ին Երևանում: Պատ. խմբագիր՝ Եղիա *Չուրար*: Ունեցել է «Գեղարվեստական», «Կյանք և գեղարվեստ», «Տնտեսական կյանք», «Գրախոսության» և այլ բաժիններ: Տպագրել է Ս. Զորյանի, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի և ուր. ստեղծագործություններից: Անդրադարձել է նաև հանրապետության տնտ-յանը, զետեղել հակակրոն. բնույթի նյութեր ու զրույցներ, գիտ-յան, տեխնիկայի նորություններին նվիրված համառոտ տեղեկատվություններ:

«ՎԵՐԵԼՔ», գրական հանդես: ՀԳՄ պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1933–34-ին Երևանում (ընդամենը՝ 7 համար): Պատ. խմբագիր՝ Եղիա *Չուրար*, խմբագրակազմ՝ Վահրամ Ալազան, Նորայր Դաբաղյան, Դերենիկ Դեմիրճյան, Գուրգեն Մահարի, Եղիշե Չարենց, Շիրվանզադե, Գուրգեն Վանանդեցի: Տպագրել է Հ. Թումանյանի, Մ. Շահինյանի, Մ. Արազու, Մ. Մանվելյանի, Վ. Թոթովենցի, Գ. Սարյանի, Մ. Արմենի ստեղծագործություններից, նմուշներ՝ ուկր. և վրաց. գրակ-ից: Գրականագիտ-գրաքննադատ. նյութերով հանդես են եկել Ա. Կարինյանը, Հ. Մկրտչյանը, Ռ. Զարյանը, Ս. Սողոմոնյանը և ուր.:

ՎԵՐՀԱՌՆ (Verhaeren) Էմիլ [21.5.1855, Սենտ Աման (Ֆրանսիա)–27.11.1916, Ռուան (Ֆրանսիա)], բելգիացի բանաստեղծ, դրամատուրգ, քննադատ: Գրել է ֆրանս.: Առաջին համաշխ. պատերազմը (1914–18) դատապարտող «Պատերազմի այլ թևերը» (1916) ժող-ում զետեղել է արևմտահայության ողբերգությունն արտացոլող «Ազգաջինջ Գերմանիա» պոեմը և «Աղաղակ» բանաստեղծությունը (հայ. հրտ.՝ 1917):

Վ. մշտապես հետաքրքրվել է Հայաստանով և հայ ժողովրդի ճակատագրով: Անձամբ ծանոթ է եղել և նամակագրություն ունեցել Ա. Հարությունյանի, Է. Շահինի, Կ. Զարյանի, Ա. Չոպանյանի հետ: Վերջինիս արխիվում պահպանվում են Վ.-ի նամակները (N 9011, 9012, ևն), որոնք արտահայտում են նրա սերն ու հիացմունքը հայության նկատմամբ: Վ. գրել է Ա. Չոպանյանի «Կյանք և երազ» (1913) ֆրանս. ժող-ի առաջաբանը, որտեղ նրա ստեղծագործ. արժանիքները պայմանավորել է հայկ. ավանդույթների կենսունակությամբ:

Վ. 1910-ին բարոյապես և նյութապես սատարել է Գերմանիայում ձերբակալված Կ. Զարյանին՝ փրկելով նրան ռուս. կառավարությանը հանձնելու վտանգից:

Երկ. Ծաղկաքաղ ֆրանսիական դասական քնարերգության, Ե., 1976, էջ 175–179:

ՎԵՐՄԻՇԵՎ Գրիգորի Քրիստափորի (1894, Թիֆլիս–1973, Վլադիկավկազ), հաս. գործիչ, գրող: Ավարտել է Ֆրայբերգի (Գերմանիա) լեռնային ակադ-ը (1916), սովորել Պետրոգրադի ռազմաճարտարագիտ. ուսումնարանում (1916–17): 1923–56-ին պաշտոնավարել է Մոսկվայում, աջակցել Հայաստանի մի շարք տնտ. խնդիրների լուծմանը: Գրել է ռուս.:

Լույս է տեսել Վ.-ի «Ամիրսպասալար» (1968, հայ. հրտ.՝ 2012) վեպը. արգելվել է Վրաստանում, հանվել գրադարաններից ու վաճառքից՝ «վրաց

ժողովրդի պատմությունը և ազգային զգացմունքները վիրավորելու» պատճառաբանությամբ: «Թագավորության մայրամուտը», «Թամթա» և «Հրաձիգ ժողովուրդը» (երեքն էլ՝ անտիպ) վեպերում Վ. ներկայացրել է Զաքարյան իշխանների (որոնց ժառանգն էր մոր կողմից) ճակատագիրը, պատկերել հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարը հանուն ազատության ու անկախության:

ՎԵՐՆԱԳԻՐ, գրքի (ստեղծագործության) առաջին էջին նշված անվանումը՝ հեղինակի կամ հրատարակչի որոշած ձևով: Վ. են կոչվում նաև գրքի առանձին բաժնի, գլխի և այլ անվանումներ, գործնական փաստաթղթերում՝ առաջին էջի սկզբում նշված անվանումը՝ հարակից տեղեկություններով:

Վ.-երը ծառայում են գրքի մատենագիտ. նույնականացման և գրադարաններում, շտեմարաններում փնտրման համար: Հրատ-յան բնույթից կախված՝ Վ.-երը լինում են հիմնական, այլընտրանքային, ընդհանուր, զուգադիր, թեմատիկ, տիպային, մասնավոր ևն:

Վ.-երը, որպես կանոն, զետեղվում են տիտղոսաթերթերի, հրատ-յան կազմերի վրա և ֆիրմային էջերում:

«ՎԵՐՆԱՏՈՒՆ», գրական խմբակ: Հիմնադրվել է 1899-ին Թիֆլիսի Բեհբության փողոցի № 50 տան վերնահարկում՝ Հովհաննես *Թումանյանի* բնակարանում, և ընդմիջումներով գործել մինչև 1908-ի վերջը: Հ. Թումանյանի գլխավորությամբ խմբակի հիմն. անդամները (Ղազարոս *Աղայան*, Ավետիք *Իսահակյան*, Լևոն *Շանթ*, Դերենիկ *Դեմիրճյան*) կազմակերպել են գրական ընթերցումներ, զրույցներ, ասուլիսներ, տպագրված և անտիպ երկերի, գրակ-յանն առնչվող բազմապիսի հարցերի քննարկումներ: Խմբակի միջոցառումներին մասնակցել են նաև Ն. Աղբալյանը, Պ. Պռոշյանը, Շիրվանզադեն, Նար-Դոսը, Վ. Փափազյանը, Վ. Տերյանը, Լեոն, Ս. Լիսիցյանը, Մ. Թումանյանը, Փ. Վարդազարյանը, Ա. Զարգարյանը, Գ. Բաշինջաղյանը, Կ. Գալֆայանը և ուր.: «Վ.» դարձել է Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնաքարը:

1997-ին Թիֆլիսում ստեղծվել է Վրաստանի հայ գրողների համանուն՝ «Վ.» միությունը (նախագահ՝ Գ. Մսխչյան), որն աջակցում և նյութապես օժանդակում է վիրահայ գրողներին, հրատարակում է «Վերնատուն» տարեգիրքը:

ՎԵՐՋԱԲԱՆ, գրքի, գրվածքի (վեպ, վիպակ ևն), ճառի, ձեռագրի և այլ գրության վերջում զետեղվող ոչ մեծ հոդված՝ տպագրության հանգամանքների, հրատ-յան արժևորման ևնի մասին (օր.՝ վեպի Վ.-ում համառոտ ամփոփվում են նրանում հիշատակված հիմն. դեպքերը կամ նրանցից արված եզրակացությունները, ճառի Վ.-ում՝ նրանից բխող բարոյախոս. հորդորները) ևն: Տես նաև *Հիշատակարան*:


ՎԵՐՋԱԶԱՐԴ, *զարդապատկեր* վերջնաէջի վերջում: Ոչ մեծ չափի զարդանախշ կամ գեղ. (երբեմն՝ բովանդակային) հորինվածք, որն ամբողջացնում ու զարդարում է ձեռագիր կամ տպագիր գրքի որևէ բաժնի ավարտը:

Վ.-ի դեր երբեմն կատարում են տեքստի՝ երկրաչափ. ֆիգուրների՝ գավաթի կամ այլ ձևերով ձևավորված վերջին տողերը: Ձեռագրերում Վ. քիչ է հանդիպում, որովհետև *գլխազարդը* և *լուսանցազարդը* որոշ ժող-ներում (*Հայսմավուրք, Ճառընտիր, Ճաշոց* ևն), լինելով նոր միավորի սկզբնազարդ, այն անջատում են նախորդ միավորից և լրացնում *բաժանազարդի* կամ ամփոփող զարդի պակասը: Տպագիր (հատկապես արվ-ի և գրակ-յան) գրքերում տարբեր բաժիններ հաճախ ունեն պոլիգրաֆ. կամ նկարիչ-ձևավորողի կատարած Վ.-եր, որոնք գրքի գեղ. ձևավորման տարրեր են:

«Վերնատուն» *գրական խմբակի հիմնադիր անդամները. ձախից աջ՝ Ա. Իսահակյան, Լ. Շանթ, Ղ. Աղայան, Դ. Դեմիրճյան, Հ. Թումանյան*



Վերջազարդերով վերջնաէջեր



Նոր կտակարանի (1740, Վնտ.)



Ավետարանի (1796, Կ. Պոլիս, Մատթեոս Դպիրի տպ.)


Վ–երը հիմնականում ունեն գեղազարդիչ, հազվադեպ՝ նաև բովանդակային նշանակություն, և, որպես կանոն, չպետք է վերածվեն պատկերազարդման, չնայած բովանդակային Վ–երը կարող են լինել այդպիսին: Հնատիպ գրքերում որպես Վ–եր ծառայել են նաև ***տպարանադրոշմները***:



Ֆրանց Վերֆել

«ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ», քաղ. անկախ օրաթերթ (երեկոյան): Լույս է տեսել 1914–30-ին Կ. Պոլսում: Խմբագիրներ՝ Հակոբ Տեր–Հակոբյան, Արտաշես ***Գալփակճյան***, Վահան ***Թոշիկյան***: Լուսաբանել է պոլսահայ կյանքը, հայոց պատմության հարցեր, դատապարտել է ազգ. կուս–ների և գործիչների երկպառակությունները: Տպագրել է նաև բանասիր. և գրաքննադատ. հոդվածներ, Մեծ եղեռնը վերապրած հայ մտավորականների հուշեր: Աշխատակցել են Ե. Օտյանը, Լ. Բաշալյանը, Ալփասլանը և ուր.:

ՎԵՐՁՆԱԷՋ, **վերջերես**, գրքի, նրա գլխի, բաժնի կամ առանձին հատվածի ավարտվող տեքստով երեսը: Ձևավորման առումով տարբերվում է սովորական էջերից. տեքստը չպետք է պակաս լինի լրիվ էջի բարձրության մեկ քառորդից՝ վերջի տեսող. ընկալում առաջացնելու համար, և որոշակիորեն համաձայնեցվում է հաջորդող ***սկզբնաէջի*** հետ, անցյալում գրեթե միշտ պատկերազարդվել է ***վերջազարդով:***



Ֆ. Վերֆելի *«Մուսա լեռան քառասուն օրը» (1987, Ե., «Լույս») գրքի կազմը*

ՎԵՐՖԵԼ (Werfel) Ֆրանց [10.9.1890, Պրահա–26.8.1945, Բևեռլի Հիլզ (Կալիֆոռնիա, ԱՄՆ)], ավստրիացի գրող: 1938-ին Ավստրիայի բռնազավթումից հետո մեկնել է Ֆրանսիա, 1940-ին Փարիզի անկումից հետո տեղափոխվել է ԱՄՆ:

1929-ին Վ. ճանապարհորդել է Սիրիայում, որտեղ էլ հղացել է «Մուսա լեռան քառասուն օրը» (1932–33, հրտ.՝ 1934, Բեռլին, Տարվա լավագույն վեպի միջազգ. մրց.) վեպը (թարգմանվել է 34 լեզուներով, 1984-ին՝ ռուս., առաջաբ.՝ Մ. Դուդինի, Ե., 2014-ին՝ լիտվ.): Այն գրելու համար Վ. մոտ 3 տարի Մխիթարյան միաբանությունում ուսումնասիրել է հայոց պատմությունն ու մշակույթը, ծանոթացել Մեծ եղեռնին վերաբերող փաստաթղթերի, զրուցել կոտորածներից փրկված մարդկանց հետ: Վեպը հայ. լույս է տեսել 1935-ին Սոֆիայում՝ «Հայկական հերոսապատում: Մուսա լերան քառասուն օրերը» վերնագրով (հ. 1–2, թարգմ.՝ Ե. Տեր Անդրեասյանի), բազմիցս վերահրատարակվել [1949, 1984, 2010, Բ., 1964 (թարգմ.՝ Պ. Միքայելյանի, առաջաբ.՝ Է. Թոփչյանի), 1987, 1990, Ե., կինոնկար՝ 1982 (ռեժ.՝ Զ. Քյուրքչյան)]:

Լույս են տեսել նաև Վ–ի «Աշխարհի բարեկամը» (1912), «Մենք կանք» (1913), «Բարեկամը բարեկամի համար» (1915), «Դատաստանի օրը» (1919) բանաստեղծությունների ժող–ները, «Տրոյացի կանայք» (1914), «Մարդը հայելու միջից» (1920), «Ոչ թե սպանողը, այլ սպանվածն է մեղավոր» (1920), «Վերդի» (1923, հայ.՝ 1986, 1990), «Յակոբովսկին և գնդապետը» (1944) պիեսներն ու վեպերը:

Վ–ի անվամբ Երևանում կոչվել է փողոց:

Գրկ. **Փաշայան Ա.**, *Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Ե., 2014:*



«ՎԷՄ», *1933–39 և 2009-ից, Փարիզ, Երևան (№ 1, 2009)*

«ՎԷՄ», պատմամշակութ. եռամսյա հանդես: Լույս է տեսել 1933–1939-ին Փարիզում և 2009-ից՝ Երևանում (որպես շարունակություն): Հիմնադիր–խմբագիր՝ Սիմոն ***Վրացյան***, խմբագիր՝ Գևորգ Խուդինյան (2009-ից): Առաջին շրջանում տպագրել է ՀՅԴ գործունեությանը վերաբերող նյութեր, դաշնակց. գործիչների հուշեր, նամակներ, անդրադարձել է հայկ. հարցին, ազգ–ազատագր. պայքարին, Մեծ եղեռնին, Առաջին համաշխ. պատերազմին (1914–18), Հայաստանյայց առաքել. եկեղեցուն, հայագիտ–յան առանձին ճյուղերի, ՀԽՍՀ–ի և սփյուռքահայ գաղթավայրերի կյանքին, կրթամշակութ. անցուդարձին:

Ներկայում տպագրում է հայագիտ–յանը, հայ գրակ–յանը, տնտեսագիտ–յանը, մշակույթին վերաբերող, ինչպես նաև գիտագործն. հոդվածներ, գրախոսություններ, հուշեր, վավերագր. նյութեր, ուշադ–

րության կենտրոնում են Հայկ. հարցը, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացները, անդրադառնում է ՀՀ-ում և Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Առաջին համարում, որպես հավելված, զետեղվել է 1933–39-ին լույս տեսած թողարկումների մատենագիտությունը:

«ՎԷՄ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ», Իլյա Մինեադիսի կրոնադավանաբան. երկը: Թարգմ.՝ հուն-ից: Տպագրվել է 1786-ին Ս. Պետերբուրգում՝ Գրիգոր Խալդարյանի տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք որ կոչի Վէմ գայթագղութեան» (171 էջ, 8º, 11,5 x 6,1 սմ):

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորել են մի խումբ Մխիթարյաններ, որոնք, 1773-ին թողնելով Վենետիկը, հաստատվել են նախ Տրիեստում (տես ***Տրիեստի հայկական տպագրություն***), ապա 1811-ին տեղափոխվել են Վիեննա, հիմնադրել նոր տպարան (գործել է մինչև 1998-ը): 1812-ին լույս են ընծայել առաջին «Վարք ամենասուրբ կուսին Մարիամու Աստուածածնի» գիրքը: 1837-ին տպարանում բացվել է տառաձուլարան, կատարվել են տառաձուլման պատվերներ, 1893-ին ունեցել է 50 լեզվով տառատեսակ: Մինչև XIX դ-ի վերջն այստեղ տպագրվել է շուրջ 500 անուն գիրք: Տպարանն իր տպագր. բարձր արվ-ի համար քանիցս արժանացել է մրց-ների:



Մ. Ծաղիկյանի «Պետրոս Մեծ եւ իր նորոգութիւնները» (1856) գրքի կազմը

Վիեննայի հայագիտ. արժեքավոր հրատ-ներից են Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1866), Հ. Տաշյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895), «Ուսումն դասական հայերէն լեզուի» (1920), «Հին Հայաստանի արեւմտեան սահմանը» (1948), Ն. Ակինյանի «Մատենագրական հետազոտութիւններ» (հ. 1–6, 1922–66), «Դասական հայերէնը եւ Վիեննական Մխիթարյան դպրոցը» (1932), «Քրիստոնեութեան մուտքը Հայաստան եւ Վրաստան», «Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի» (1956), «Դավիթ Հարքացի Անյաղթ փիլիսոփա...» (1959) և այլ երկեր: Լույս են տեսել նաև միաբանության մյուս անդամների՝ Ա. Գարագաշյանի, Գ. Մենևիշյանի, Գ. Գովրիկյանի, Գ. Գալեմքյարյանի, Ա. Մատիկյանի, Թ. Կետիկյանի, Հ. Ոսկյանի և ուր. գործերից: Տպագրվել են մի շարք բառարաններ [հայ-թուրք. (Հ. Պոզաճյան, 1838, 1858, Ե. Չագըճյան, 1850), գերմ-հայ. (Ա. Կոյլավ, 1889), ֆրանս-հայ-թուրք. (Ս. Էմինյան, 1853, 1871), հուն-իտալ-հայ-թուրք. (Ա. և Ս. Ազարյաններ, 1848) ևն]: Հրատարակվել են նշանավոր հայագետներ Յ. Կարստի, Հ. Գելցերի, Ա. Կարիերի, Ֆ. Կոնիբերի, Հ. Հյուբշմանի, Յ. Մարկվարտի, Հ. Պեդերսենի և ուր. երկեր, Հ. Աճառյանի, Ն. Ադոնցի, Ս. Մալխասյանցի, Հ. Մանանդյանի, Ն. Մառի աշխատություններից, Պ. Դուրյանի, Րաֆֆու, Ա. Իսահակյանի, անտիկ ու եվրոպ. հեղինակների՝ Քսենոփոնի, Յիցերոնի, Վ. Շեքսպիրի, Ջ. Բայրոնի և ուր. ստեղծագործություններից: Լույս են ընծայվել նաև դասագրքեր [«Այբբենարան հայերէն» (1815), «Համառօտ քերականութիւն գաղղիական լեզուի» (1816), Պ. Հովնանյանի «Վարժութիւն մանկանց ի հրահանգս ընթերցանութեան եւ բարեկրթութեան» (1826), «Կարճառօտ քրիստոնէական վարդապետութիւն» (1834), Մ. Սամուելյանի «Ուսումն փիլիսոփայութեան» (1845)], մանկ. գրքեր, հայատառ թուրք. գրակ., թղթադրամներ, թռուցիկներ ևն: Վիեննայում տպագրվել են նաև «Ծանօթութիւնք վաճառագիտութեան» (1819), ***«Եւրոպա», «Հանդէս ամսօրեայ»*** և այլ պարբ-ներ:






Վ. Թորգոմյանի «Բժիշկ փօքթ. Սերվիչէն Էֆէնտի» (1893) գրքի կազմը

Գրկ. **Ակինեան Ն.**, *Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան միաբանութեան գրական գործունէութեան վրայ, Վնն., 1912:* **Իշխանյան Ռ.**, *Հայ գիրքը, Ե., 1981:* **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012: Ընդհանուր գրացուցակ Մխիթարեան գրավաճառանոցի. 1776–1972, Վնն., 1972:*



Վիեննայի մատենադարանը

Յակոբ Վիլլոտ



«Մեկնութիւն դաւանութեան ուղղափառի հաւատոյ» (1711, Հռոմ) գրքի տիտղոսաթերթը



«Պատմագրութիւն կաթուղիկոսաց եւ թագաւորաց հայոց» (1713, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան: Հիմնադրվել է 1811-ին: Հավաքածուները հարստացել են մասնավորապես XIX դ-ի 2-րդ կեսին, երբ միաբանությունը դարձել է ուս. և հայագիտ. կենտրոն: Մատենադարանում պահվում է 2561 ձեռագիր (2014), այդ թվում՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի և ուր. նկարազարդած մատյաններ: 1895-ին տպագրվել է Վ. մ-ի՝ Հակոբոս ***Տաշյանի*** կազմած ձեռագրացուցակի 1-ին հատորը, 1964-ին՝ 2-րդը (կազմ.՝ Համազասպ ***Ոսկյան***), 1983-ին՝ 3-րդը (կազմ.՝ Օգոստինոս ***Սևքույան***):

Վ. մ-ում պահվող հայ. գրքերի և պարբ-ների թիվը շուրջ 160 հզ. է, հայագիտ-յանն ու արևելագիտ-յանը վերաբերող օտարալեզու գրքերինը՝ ավելի քան 10 հզ.: Գրքերի հավաքածուն մշտապես համալրվում է ՀՀ-ից ու Սփյուռքից ստացվող հրատ-ներով:

ՎԻԼԼՈՏ (Villotte) Յակոբ, **Վիլլոդ Հակոբ** [1656, Պար լը Տյուք (Ֆրանսիա)–14.1.1743, Նանսի], ֆրանսիացի հայագետ: Հիսուսյան միաբանության անդամ: Միաբանության հանձնարարությամբ մեկնել է Պարսկաստան, 12 տարի ապրել Թեհրանում: Այցելել է Կ. Պոլիս, Եվդոկիա, Տրապիզոն, Կարին, Կարս, 4 անգամ՝ Երևան, և հայաբնակ այլ վայրեր, ուսումնասիրել հայերի, պարսիկների և թուրքերի բարքերն ու սովորությունները, սովորել նրանց լեզուները: «Հիսուսյան ընկերության մի միսիոների ճանապարհորդությունը Թուրքիայով, Պարսկաստանով, Հայաստանով, Արաբիայով և Բերբերիայով» (1730) երկում կարևոր տեղեկություններ է հաղորդել Հայաստանի աշխարհագրության, երկրագործության, առևտր. և քաղ. հարաբերությունների, ինչպես նաև հայերի կենցաղի մասին:

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են Վ.-ի՝

«**Քրիստոնէական վարդապետութիւն**» երկը. 1710-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (72 էջ, 8º, 12 x 7,5 սմ):

«**Մեկնութիւն դաւանութեան ուղղափառի հաւատոյ**» երկը. 1711-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Explanatio Professionis Fidei Orthodoxae Jvssv...», Բ-ին՝ «Մեկնութիւն դաւանութեան ուղղափառի հաւատոյ...» (189 էջ, 8º, 11,5 x 7 սմ):

«**Պատմագրութիւն կաթուղիկոսաց եւ թագաւորաց հայոց**» երկը. 1713-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (54 էջ, 8º, 11,2 x 8 սմ):

«**Բառարան լատին-հայ**» երկլեզվյան բառարանը. 1714-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Ա տիտղթ-ին՝ «Dictionarium novum Latino-Armenium», Բ-ին՝ «Dictionarium novum Latino-Armenium ex praeccipuis Armeniae Linevae scriptoribus concinnatum... Բառգիրք հայկական լեզուի...» (800 էջ, 4º, առաջին մամուլը՝ 6º, 28,3 x 18 սմ): Պարունակում է մոտ 26 000 բառահոդված:

Բառարանին կցված է «Հայոց լեզվի ուրվագիծ» ուսումնասիրությունը, որը պարունակում է տեղեկություններ հայ. այբուբենի տառերի ձևերի, դրանց հնչման, անունների հոլովման, հնչյունափոխության և այլ հարցերի մասին: Առանձին գլխով ներկայացրել է հայ կաթողիկոսների և թագավորների ժամանակագրությունը («Ցանգ հայ կաթուղիկոսաց», «Ցանգ հայ թագաւորաց»):

«**Մեկնիչ սրբոյ Աւետարանին**» երկը. 1714-ին նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Commentarius in Evangelia... Մեկնիչ սրբոյ Աւետարանին» (646 էջ, 4º, 16,5 x 11,2 սմ):

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.**, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* **Գասպարյան Գ.**, *Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:* **Զահուկյան Գ.**, *Գրաբարի քերականության պատմություն, Ե., 1974:*

ՎԻԼՖՐՈՒԱ (Villefroy) Գուլիելմուս (1690–1777), ֆրանսիացի արևելագետ, հայագետ, ձեռագրագետ: Աստվածաբանության դ-ր: Սովորել է Տիրոնի աբբայարանի ուսումնարանում և Բեզանսոնի եկեղեց. դպրա-

նոցում: Եղել է Օռլեանի դքսի քարտուղարը: Տիրապետել է եբր–ին, ասոր–ին, հուն–ին, լատ–ին: 1729–ից ինքնուրույն սովորել է հայ.: 1739–ին Վ. հրատարակել է Փարիզի Արքունի մատենադարանի հայ. ձեռագրերի 2 ցուցակ, որոնք ամփոփում են համապատասխանաբար 128 և 138 ձեռագրերի նկարագրություններ, այդ թվում՝ Հայսմավուրք, Շառընտիր, Շարակնոց և այլ ժող–ների՝ նշելով դրանց եվրոպ. համարժեքները, առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Հովհաննես Երզնկացու քերական. գործերին, Գրիգոր Նարեկացու ճառերին, Մովսես Խորենացուն ևն: Լատ. և ֆրանս. է թարգմանել Ներսես Շնորհալու ստեղծագործություններից: Գրել է նաև հայոց լեզվի քերակ–յանը և Հայաստանին նվիրված այլ գործեր (բոլորն էլ՝ անտիպ):

Լույս է տեսել Վ–ի «Հայկական եկեղեցին: Պատարագներ և ծեսեր» (1740) աշխատությունը:

Գրկ. Շրումպֆ Գ. Ա., *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:*

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **լիտոգրաֆիա** (պահլավ.՝ vem – քար, գրություն), 1. ***հարթ տպագրության*** եղանակ, որտեղ որպես տպաձև օգտագործվում է քարի (հատիկավոր կրաքար) մակերևույթը: 1798–ին հայտնագործել է Ա. Զենեֆելդերը (Գերմանիա) և բացել առաջին վիմագր. տպագրատունը (1806, Մյունխեն): Պատկերը քարին փոխանցվում է յուղային տուշով կամ մատիտով: Մեծ տպաքանակ ապահովող այս եղանակը լայնորեն տարածվել է XIX դ–ում հաստոցային և գրքի ու թերթ–ամսագրային գրաֆիկայում: 1930–ական թթ–ից Վ. դուրս է մղվել ***օֆսեթ տպագրության*** տարածմամբ, կիրառվում է միայն փորագիր գեղանկարների (***էտպամպ***) տպագրության համար:

2. Վիմագր. տպագրությամբ ստացված առանձնատիպը (տպածո): Հայ իրականության մեջ Վ. կիրառվել է XIX դ–ի սկզբից՝ գրքի պատկերազարդման բնագավառում. ճանաչված վարպետ էր Աղաթոն Հովնաթանյանը: Վիմագիր ծաղրանկարներ են ստեղծել «Մեղու», «Խաթաբալա» և այլ պարբ–ների աշխատակցող նկարիչները: 1920–ական թթ–ից հայկ. Վ. նոր արտահայտչամիջոցներով հարստացրել են Հակոբ Կոջոյանը, Արարատ Ղարիբյանը, Տաճատ Խաչվանքյանը, Վլադիմիր Այվազյանը, Լևոն Մանասերյանը և ուր.:

Գրկ. **Սարգսյան Մ.**, *Սովետական Հայաստանի գրաֆիկան, Ե., 1961:*

ՎԻՆԴԻՇՄԱՆ (Windischmann) Ֆրիդրիխ (13.11.1811, Աշաֆֆենբուրգ (Գերմանիա)–23.8.1861, Մյունխեն), գերմանացի հայագետ, արևելագետ: Իրանա–հնդկ. հնագիտ–յան մասնագետ, հայ–ի համեմատ. ուսումնասիրության հիմնադիր (Հայնրիխ ***Պետերմանի*** հետ): Վ–ի «Հայերենի տեղը արիական լեզվաբնի մեջ» (1846) հայտնի աշխատությունը նվիրված է հայոց լեզվի ծագման ու ցեղակցության հարցերին. հետազոտության մեջ բազմաթիվ փաստարկումներով հեղինակը հաստատել է, որ հայոց լեզուն հնդեվրոպական է և մտնում է արիական (հնդիրան.) ճյուղի մեջ:

Վ–ի հետաքրքրությունների շրջանակում հայ–ի և ցեղակից այլ լեզուների հնչյուն., քերական., ինչ–որ չափով նաև բառային համապատասխանությունների խնդիրներն են: Ըստ նրա՝ պարսկ–ին ու զենդ–ին զուգահեռ եղել է հինիրան. մի «բարբառ», որից սերել է հայոց լեզուն: Վ. հստակորեն չի տարորոշել բնիկ և փոխառյալ ընդհանրությունները:

Լույս է տեսել Վ–ի «Զրադաշտական ուսումնասիրություններ» (1863) ժող–ը:

Երկ. Sancara, seu de theologumenis Vedanticorum, B., 1833; Aufsatz über die armenische Literatur, München, 1835; Über den Somakultus der Arier, München, 1846; Ursagen der arischen Völker, München, 1853.

Գրկ. Շրումպֆ Գ. Ա., *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:* Աղայան Է., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*

Վիմագրություն



Վիմատպություն



Աղաթոն Հովնաթանյան. «Իշխան Մ.Ս. Վորոնցովի ֆիգուրը»



Տաճատ Խաչվանքյան. «Ձախի մեյդան»



Արարատ Ղարիբյան. «Նորք» (1945)



Սերովբե Վիչենյան



«Վիպասանութիւն Ամերիկոյ» *(Գուլիելմոս Ռոբերտսոն, հ. 1, 1784, Տրիեստ) գրքի տիտղոսաթերթը*



Ամատունի Վիրաբյան *«Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով...» (2001, Ե., «Գիտություն») գրքի տիտղոսաթերթը*

ՎԻՆՏԵՐ (Winter) Վեռներ [25.10.1923, Հասելաու (Գերմանիա)–9.9.1972, Քիլ (Գերմանիա)], գերմանացի լեզվաբան, հնդեվրոպաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1949), պրոֆ. (1961): Ավարտել է Համբուրգի և Բեռնի համալսարանները: 1953-ից աշխատել է ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում: 1964-ից՝ Քիլի համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ:

Լույս են տեսել Վ.-ի «Հայկական հնչույթաբանության խնդիրներ» (հ. 1–3, 1954–62), «Ակնարկներ հայերենի ստուգաբանության» (1957), «Վաղ բարբառային տարբերակվածության հետքերը հին հայերենում» (1975), «Հայկական ձեռագրեր», «Հայկական վիմագրություն» (երկուսն էլ՝ 1955) աշխատությունները:

ՎԻՉԵՆՅԱՆ Սերովբե, **Սերվիչեն** (22.11.1815, Կ. Պոլիս–2.10.1897, Կ. Պոլիս), բժիշկ, հաս. գործիչ, հրատարակիչ, խմբագիր: Սովորել է Փարիզի (1834–39), Պիզայի (1839–40) համալսարանների բժշկ. ֆակ-ներում: 1849 և 1852-ին՝ բժշկ. «Գազեթ մեդիկալ դ'Օրիան» («Արևելքի բժշկական լրագիր», Կ. Պոլիս) ֆրանս. թերթի հիմնադիր-խմբագիր: Մասնակցել է արևմտահայերի Ազգ. սահմանադրության (1860) նախագծի մշակմանը, եղել է Ազգ. գերագույն ժողովի անդամ, ուս. խորհրդի ատենապետ:

Լույս են տեսել Վ.-ի «Սանկատածութիւն որ է բնական, բարոյական եւ իմացական հրահանգ խնամատարութեան մանկանց» (1844, ԿՊ, Հովհաննես Սյուհենտիայանի տպ.), «Բարոյական սկզբունք» (1846, 1851, նույն տպ.):

Գրկ. Թորգոմեան Վ., Բժիշկ փաթր. Սերվիչէն էֆէնտի, Վնն., 1893: Оганесян Л., *История медицины в Армении. С древнейших времен до наших дней, ч. 4, Е., 1947, с. 146–148.*

«ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ», Ամերիկա մայրցամաքի պատմությանը նվիրված Գուլիելմոս Ռոբերտսոնի երկհատոր աշխատությունը: Թարգմ. իտալ-ից՝ Մինաս Գասպարյանցի: Տպագրվել է Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում. առաջին հատորը՝ 1784-ին (574 էջ, 8º), երկրորդը՝ 1786-ին (699 էջ, 8º):

ՎԻՍՏՈՆ (Whiston) **ԵՂԲԱՅՐՆԵՐ, Ուիստոն, Գեորգ** և **Գուլիելմուս**, XVIII դ-ի անգլիացի հայագետներ: Հայ. սովորել են իրենց հորից, որը դաստիարակ է եղել մի հայի ընտանիքում: Գրաբարից լատ. են թարգմանել ու 1736-ին հրատարակել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց» երկերը. զուգահեռաբար, որպես հայ. բնագրեր, ներկայացրել են Թովմաս Վանանդեցու՝ 1695-ին Ամստերդամում հրատարակած «Պատմութիւնը» և 1698-ի «Աշխարհացոյցը»: Առաջաբանում Վ. ե. նշել են Մովսես Խորենացու «Պատմության» արժանիքներն ու թերությունները, քննադատել Պատմահորը կեղծիքի համար մեղադրողներին և նրան նոր ժամանակներ տեղափոխողներին:

Վ. ե-ի հիշյալ հրատ-յամբ սկզբնավորվել է հայագիտությունն Անգլիայում, խթանվել հայագիտ-յան զարգացումը Եվրոպայում:

Գրկ. Շրոմպֆ Գ. Ա., *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:*

ՎԻՐԱԲՅԱՆ Ամատունի Սասունիկի [ծ. 17.8.1956, գ. Գեղանիստ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)], պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (2001): Ավարտել է ՎՊՄԻ (1977): 1991–2000-ին՝ ՀՀ հաս-քաղ. փաստաթղթերի արխիվի փոխտնօրեն, 2001–03-ին՝ ՀՀ արխիվային գործի վարչության պետ, 2003-ից՝ Հայաստանի ազգ. արխիվի տնօրեն, 2001-ից, միաժամանակ՝ *«Բանբեր Հայաստանի արխիվների»* հանդեսի գլխ. խմբագիր:

Լույս է տեսել Վ.-ի «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը (1945–1957 թթ.)» (2001) գիրքը: Կազմել և խմբագրել է «Ռուբեն Տեր-Մինասյան» (2011) ժող-ը: Մասնակցել է «Լեռնային Ղարաբաղը 1918–1923 թթ.» (ռուս., 1992), «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» (2000), «Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.)» (2004), «Վշտապատում. Հայոց մեծ եղեռնը ականատեսների աչքերով» (2005), «Նախիջևան-Շարուր 1918–1920

թթ.» («ԲՀԱ», 1993, № 1–2), «Արամ Մանուկյան» (2009), «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ» (Գոհար Ավագյանի հետ, 1–3..., 2012..., 1-ական գրքով՝ անգլ.՝ 2013, թուրք. և ռուս.՝ 2014), փաստաթղթերի և նյութերի ժող-ների կազմմանն ու հրատարակմանը:

ՀՀ նախագահի մրց. (2014):

ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄ, *մեջբերում*, քաղվածք որևէ տեքստից: Հեղինակի խոսքը մեջբերվում է նույնությամբ՝ պահպանելով նաև տեքստի կետադրությունը: Նախադասության մի մասը մեջբերելիս բացակայող մասի փոխարեն դրվում է բազմակետ: Վ-ները վերցվում են անմիջականորեն բնագրից և վերջում (փակագծերում կամ տողատակում) պարտադիր նշվում է նրա աղբյուրը: Տես նաև *Հղում*:

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՀԱՐՑ ՀԱՅՈՑ», տպագրվել է 1800-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում՝ հայ. և լատ.: Ա. տիտղթ-ին՝ «Selecta exempla testimoniorum ecclesiae Armeniae de Sancta Sede Romana», Բ-ին՝ «Վկայութիւնք հարց հայոց «վասն գլխաւորութեան սրբոյն Պետրոսի եւ աթոռոյն Հռովմայ. հայ եւ լատին»» (25 էջ, 8º):

«ՎՄՎ ՊՐԻՆՏ», գրահրատարակչ. համալիր: Հիմնադրվել է 2001-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Վահրամ Մնացականյան: Տպագրում է մանկապատանեկան գեղ. գրքեր, տեղեկատվ., հանրագիտարանային գրակ., ուսումնամեթոդ. ձեռնարկներ ևն (ցայսօր՝ ավելի քան 100 անուն):

Լույս են տեսել Գ. Արծրունու «Դիցարան հայոց» (2003) հանրագիտական բառարանը և «Առաջինը» (2004) հանրագիտարանային տեղեկատուն, Ա. Փարսադանյանի «Հայը. կենսագրություն մեկ տողով» (2004), Ս. Ավագյանի «Նշանավոր հայուհիներ» (2006), Վահան և Վիլեն Սահակյանների «Հայ և համաշխարհային նշանավոր դեմքեր» (2006), «Հայոց բնաշխարհ» (պատկերազարդ ուղեցույց ալբոմ՝ հայ., ռուս., անգլ., 2007), Է. Զոհրաբյանի և Հ. Միրզոյանի «Գորիսի հանրագիտարանը» (2008), Մ. Ադամյանի «Հայրենի բնաշխարհի ցոլանքը» (հայ., ռուս., անգլ., 2009), Վ. Սանթրյանի «Էդվարդ Միրզոյան...» (2013) և «Դուդուկի կանչը...» (2014) գրքերը ևն:



Սերգեյ Ավագյանի «Նշանավոր հայուհիներ» (2006, Ե., «ՎՄՎ Պրինտ») գրքի կազմը

ՎՇՏՈՒՆԻ Ազատ (Մամիկոնյան Կարապետ Սեթի, 14.7.1894, Վան–26.3.1958, Երևան), բանաստեղծ, գրական-հաս. գործիչ, խմբագիր: Սովորել է Վանի Երամյան, Կ. Պոլսի Կեդրոն. վարժարաններում, Սորբոնի համալսարանում: 1914-ին հաստատվել է Թիֆլիսում: 1918–19-ին աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան որբանոցում, որտեղ հիմնադրել է «Փարոս» հանդեսը: 1922-ին Եղիշե *Չարենցի* և Գևորգ *Աբովի* հետ հրապարակել է «Երեքի դեկլարացիան»: Եղել է Հայաստանի պրոլետ. գրողների ընկերակցության նախագահ (1922–23): 1921-ին՝ «Կոմունայի զանգ» (Սիմֆերոպոլ), 1922-ին՝ «Մուրճ» (Երևան), 1924-ին՝ «Դիրքերում» (Թիֆլիս), 1926–27-ին՝ «Մուրճ-մանգաղ» (Դոնի Ռոստով), 1932–34-ին՝ *«Խորհրդային արվեստ»* պարբ-ների խմբագիր:



Ազատ Վշտունի

Լույս են տեսել Վ-ու «Սրտիս լարերէն» (1915, Բաքու, Ն. Երևանցյանի տպ.), «Կամաւորի յուշատետրից» (1915, Բաքու, «Տրուդ» տպ.), «Բանաստեղծութիւններ» (1918, Թ., Վրաստանի Հանրապետության քաղաքների միության տպ.), «Հուզանք և զանգ» (1923, Ալեք-պող, ա. տպ.), «Neo orientalia (զարթնող Արևելքի երգեր)» (1923, Ե., Հայպետհրատ), «Արևելքը հուր է հիմա» (1927, նույն տպ.), «Ռամ Ռոյ» (1936), «Նոր սերունդը» (1941), «Երբ կայծակը փայլատակում է» (1942) ժող-ները, «Ընտիր երկերը» (1944, 1971), «Երկերի ժողովածուն» (1947), «Երկերը» (1956, հ. 1–2, 1960–61):

Հանդես է եկել նաև Կարապ, Ազատ, Կարապետ Թաշճյան, Սեիդ Էլ Նուր գրական կեղծանուններով:

Գրկ. Ղազարյան Հ., Ազատ Վշտունի [Կյանքը և ստեղծագործությունը], Ե., 1959:



Ա. Վշտունու *«Նոր սերունդը» (1941, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*

«ՎԱՂ», գրական-բանասիր. ժող.: Լույս է տեսել 1901-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Վրթանես *Փափազյան*: Առաջին մասում տեղ են գտել Հ. Հովհաննիսյանի, Ա. Իսահակյանի, Հ. Թումանյանի, Պ. Պռոշյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Տեր-Միքաելյանի ստեղծագործություններից, երկրորդում՝ Հ. Աճառյանի, Վ. Սուրենյանցի, Ե. Շահազիզի, Լ. Նազարյանի, Գ. Վանցյանի՝ հայ ժողովրդի պատմության հնագույն



«Վտակ», *1901, Թիֆլիս*



«Վրաստան», *1922-ից, Թբիլիսի*



Սիմոն Վրացյան

շրջանին, հայոց լեզվին, հայ-ի բարբառներին, հայկ. ճարտ-յանը նվիրված հոդվածներ: Տպագրել է նաև Յ. Վեսելովսկու «Արևմտյան Եվրոպայի ազդեցությունը ռուսահայ գրականության վրա» հոդվածը:

«Վ.» նվիրվել է Գրիգոր *Զանշյանի* հիշատակին:

«ՎՐԱՍՏԱՆ», եռօրյա թերթ (մինչև 1959-ը՝ օրաթերթ): Սկզբում՝ Վրաստանի կոմկուսի ԿԿ, ՎԽՍՀ ԳԽ և Նախարարների խորհրդի, 1992-ից՝ Վրաստանի խորհրդարանի պաշտոնաթերթ: Լույս է տես-նում 1920-ի դեկտ. 15-ից Թբիլիսիում (1920–23-ին՝ «Կարմիր աստղ», 1923–27-ին՝ «Մարտակոչ», 1927–38-ին՝ «Պրոլետար», 1938–40 և 1989–90-ին՝ «Խորհրդային Վրաստան», 1940–89-ին՝ «Սովետական Վրաստան», 1990-ից՝ «Վ.»): Խմբագիրներ՝ Սմբատ Դովլաթյան, Սու-րեն Երզնկյան, Սարգիս *Կասյան*, Ալեքսանդր *Մյասնիկյան*, Սարգիս *Խանդոյան*, Աշոտ *Խումարյան*, Արշավիր *Մելիքյան*, Աղասի *Վարդան-յան*, Վարդան *Ադրյան*, Հովհաննես Պողոսյան, Աշոտ Մարգարյան, Արշավիր Գասպարյան, Զավեն Պետրոսյան, Հակոբ *Բլրցյան*, Վան *Բայբուրթյան* (1987-ից): Ունեցել է «Մարտակոչ» (1923–27), «Արվեստ, գրականություն, գիտություն» (1928–29), «Պրոլետար» (1928–31), «Գրական շաբաթ» (1929–30), «Վերելք» (1930), «Կարիճ» (1930–31), «Գրական արշավ» (1930–31), «Գրոհ» (1932–33), «Բարձունքներ» (1934) գրական-գեղ. և հաս-քաղ. հանդես-հավելվածները, «Սովե-տական Վրաստան» (1940–41) ագիտթերթիկը:

1980-ական թթ-ի վերջից «Վ.» անդրադառնում է Վրաստանի քաղ. և տնտ. բարեփոխումներին, վրացահայերի առօրյային, Հայաստա-նի քաղ. անցուդարձին, գիտ-յանը, մշակույթին: Գրական բաժնում ներկայացնում է արվ-ի և մշակույթի գործիչներին:

ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1970):

ՎՐԱՅՅԱՆ Սիմոն Ղազարի [Գռուզյան, Գրուզինյան, 1882, գ. Մեծ Սալա (այժմ՝ ՌԴ Ռոստովի մարզում)–1969, Բեյրութ], քաղ., պետ. գործիչ, խմբագիր, հրատարակիչ: ՀՅԴ կուս-յան անդամ: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1906), 1908–10-ին սովորել Ս. Պետերբուրգի համալսարանի իրավագիտ-յան և մանկավարժության ֆակ-ներում: 1910–11-ին՝ *«Յառաջ»* (Կարին), 1911–14-ին՝ *«Հայրենիք»*, 1917-ի Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ *«Հորիզոն»* (Թիֆլիս) թերթերի խմբագիր, 1919-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի պատգամավոր, 1920-ի նոյեմբ-ից՝ վարչապետ: Եղել է Արմենպրեսի առաջին տնօրենը: 1921-ից՝ վտարանդի: 1933–38-ին՝ *«Վէմ»* (Փարիզ) հանդեսի հրատարակիչ-խմբագիր, 1943–48-ին՝ «Հայրենիք» (Բոստոն) տարեգրքի խմբագիր:

Լույս են տեսել Վ.-ի «Անկախ եւ Միացեալ Հայաստան» (1920, Բոստոն, «Հայրենիքի» տպ.), «Խարխափումներ...» (1924, նույն տպ.), «Հայաստանի Հանրապետութիւն» (1928, նույն տպ., վերահրտ.՝ 1958, Բ., 1993, Ե.), «Կեան-քի ուղիներով» (հ. 1–6, 1955–67, Բ., Համազգայինի տպ., 2007), «Հայաս-տանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ» (2-րդ հրտ., Բ., 1958) աշխատությունները, «Հին թղթեր նոր պատմութեան համար» (1962, Բ., «Մշակ» տպ.) նամակների ժող-ը, «Անձինք նուիրեալք» (1969), «Մրրկածին Դրօն» (1996, Բ., Համազգայինի տպ.) հուշագրությունները:

Գրկ. Սիմոն Վրացեան, «Բագին», 1969, № 7: Բայան Ա., Սիմոն Վրացյանի հասա-րակական-քաղաքական և պետական գործունեությունը, Ե., 2003:

ՎՐԹԱՆԵՍ ՔԵՐԹՈՂ, Քչկանորդի, VI դ-ի կեսի–VII դ-ի սկզբի մատենագիր, հրապարակախոս, եկեղեց. գործիչ: Կաթողիկոս. տեղա-պահ (604–607): Բարձր ու ընտիր ոճով գրելու համար ժամանակա-կիցները նրան անվանել են Քերթող: Վ. Ք-ի անվամբ մեզ են հասել բազմաթիվ թղթեր, շրջաբերականներ, դավանաբան. գրություններ, նաև Հայ և Վրաց եկեղեցիների նշանավոր գործիչներին ուղղված նա-մակներ, որոնք պահպանվել են *«Գիրք թղթոց»* կրոնաղավանաբան. ժող-ի և *Ուխտանեսի* «Պատմութիւն Հայոց»-ի մեջ: Եղել է Հռիփսիմեի

տաճարի կառուցման ականատեսը և գրել այդ շինության համառոտ պատմությունը:

Վ. Ք. իր գլխ.՝ «Յաղագս պատկերամարտից» գործում հանգամանորեն անդրադարձել է VI–VII դդ–ում Հայաստանում տարածված պատկերամարտությանը, պայքարել նրա դեմ: Ըստ ուսումնասիրողների (Ն. Ակինյան, Մ. Աբեղյան, Ս. Տեր–Ներսեսյան)՝ այն իր տեսակով առաջինն է մեզ հասած ընդհանուր եկեղեց. գրակ–յան մեջ: Այստեղ Վ. Ք. արժեքավոր տեղեկություններ է հայտնում հայ արվ–ի պատմության, նաև տեղեկություններ դեղերի (ներկերի) բաղադրության վերաբերյալ, հիշատակում եկեղեցիներում Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմեի, Գայանեի և այլ նահատակների որմնապատկերների գոյության մասին:

Վ. Ք–ի երկը տպագրվել էր Գ. Զարբհանալյանի «Յաղագս բարեխօսութեան Սրբոց...» (1897, Վնտ.) ժող–ի հավելվածում:

Գրկ. **Զարբհանալեան Գ.**, *Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ–ԺԳ դար), Վնտ., 1897:* **Ակինեան Ն.**, *Վրթանէս վրդ. Քերթող եւ իւր երկասիրութիւնք, «ՀԱ», 1910:* **Մելքոնյան Ե.**, *Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը, «Էջմիածին», 1970, № 6–7:* **Տեր–Ներսեսյան Ս.**, *7–րդ դարի մի երկ նվիրված պատկերների պաշտպանությանը, տես հեղինակի «Հայ արվեստը միջնադարում», Ե., 1975:* **Ղուկասեան Վ.**, *Վրթանէս Քերթող եւ իր ընդդէմ պատկերամարտից ճառին պատմական արժէքը, Անթիլիաս, 1980:*

ՎՐԻՊԱԿ, սխալներ, որ հրատ–յան տեքստում հայտնաբերվում են տպագրության ավարտից հետո: Ամփոփվում են ցուցակի ձևով և զետեղվում գրքի վերջին էջերից մեկում կամ առանձին տպագրված թերթիկի վրա և դրվում գրքի մեջ:

ՎՐՈՒՅՐ (Մաքաշչյան) Արամ Մինասի [13(25).3.1863, Կ. Պոլիս–5.3.1924, Թիֆլիս], դերասան, ռեժիսոր, խմբագիր: 1891–1900–ին աշխատակցել է *«Մուրճ»* ամսագրին: 1910–11–ին աշխատել է «Կայծեր» թերթի, 1921–ին՝ «Կարմիր աքլոր» երգիծ. շաբաթաթերթի խմբագրություններում: 1907–13–ին՝ *«Յուշարար»* (Թիֆլիս) հանդեսի խմբագիր–հրատարակիչ: 1882–ից խաղացել է Թիֆլիսի, Բաքվի թատերախմբերում, Ռուսաստանի, Այսրկովկասի հայաշատ վայրերում, բեմադրել պիեսներ: Հեղինակ է մի շարք բեմավորումների, թարգմանությունների, թատեր. ուսումնասիրությունների, պիեսների («Մտերմական ծեծ», «Վարժապետը» ևն):

Որպես լուսանկարիչ մասնակցել է Ն. Մառի գիտարշավներին (1904–17):

Գրկ. **Փաշայան Ռ.**, *Արամ Վրույր: Կյանքն ու գործունեությունը, Ե., 1976:*



Ս. Վրացյանի *«Անձինք նուիրեալք» (1969, Բեյրութ) գրքի կազմը*



Արամ Վրույր

Տ





Անդրանիկ Տագեսյանի *«Պատմութիւն ՌՍԿ Լիբանանի շրջանակի. 1922–1937» (1993, Բեյրութ) գրքի կազմը*

Տ, հայ. այբուբենի 31–րդ տառը, անվանումը՝ «տյուն» (տիւն): Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ 2 կարճ ու 1 երկար, և 2 նուրբ տարրերից. 2 ուղղաձիգ կարճերը և 2 նուրբերը երկարի աջ ու ձախ կողմերում են՝ աջ կողմի կարճը և երկարը նուրբով միանում են վերին ծայրերից, ձախ կողմի կարճը և երկարը՝ ստորին ծայրերից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Տ, որպես այբուբենի հազարավորների սյան 4–րդ (31–րդ) տառ, նշանակել է չորս հազար և չորսհազարերորդ, բյուրի նշանով (Տ՝)՝ 40 մլն (40 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Տ–մաս 4000–րդ):

ՏԱԳԵՍՅԱՆ (Դաքեսյան) Անդրանիկ Մանուկի (ծ. 6.2.1960, Բեյրութ), բանասեր, խմբագիր, մատենագետ: Քաղաքագիտ–յան դ–ր (2011, Ուելսի համալսարան): Ավարտել է ԵՊՀ (1983), Բեյրութի ամերիկյան համալսարանը (1988): 1983–89–ին՝ *«Զարթօնք»* (Բեյրութ) օրաթերթի, 1991–96–ին՝ *«Շիրակ»* ամսագրի խմբագրակազմի անդամ: 1993–ից դասավանդում է Բեյրութի Հայկազյան համալսարանում, նույն թվականից՝ *«Հայկազեան հայագիտական հանդեսի»*–ի պատ. քարտուղար, 2011–ից՝ Հայկազյան համալսարանի Հայկ. սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն:

Լույս են տեսել Տ–ի «Պատմութիւն ՌՍԿ Լիբանանի շրջանակի. 1922–1937» (1993), «Վահան Պէտէլեան: Երաժիշտ–մանկավարժը» (2004) աշխատությունները, կազմել է «Լիբանանահայ գիրքը. 1894–2012: Մատենագիտական ցանկ» (2013, համահեղ.՝ Արմեն Յուրնեշլյան, բոլորը՝ Բ.) մատենագիտ. ժող–ը:

ՏԱԹԵՎԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, գործել է Տաթևի համալսարանում: Շարունակել է *Գլաձորի մանրանկարչության դպրոցի* ավանդույթները, հարստացրել մոնումենտալ ոճով: Մեզ են հասել Տ. մ. դ–ի XIV–XV դդ–ի բարձրարվ. պատկերազարդումներով ձեռագրեր: Դպրոցի ներկայացուցիչ *Գրիգոր Տաթևացին* 1378–ին լրացրել է Եղեգիսից բերված 1297–ի Ավետարանի (գրիչ՝ Հովհաննես, Մատենադարան, ձեռ. № 7482) պատկերազարդումը: XV դ–ի սկզբի ծաղկողներից Հայրապետի նկարազարդած 1407–ի Ավետարանից պահպանվել է միայն հիշատակարանը (Մատենադարան, պատառիկ № 923), որտեղ նա իրեն անվանում է Նաղաշ Հայրապետ: Լավագույն նկարազարդ ձեռագրերից է Հայրապետի ընդօրինակած Հայսմավուրքը (Մատե-

նադարան, ձեռ. № 7361), որի զարդանկարներն առանձնանում են նրբությամբ, երանգների գունագեղությամբ, դիմապատկերները՝ գեղանկարչ. վարպետությամբ: Գլաձորի և Տաթևի մանրանկարչության դպրոցների ավանդույթներից օգտվել է Բոլորաբերդի (Վայոց ձորի գավառ) վանքի ճանաչված ծաղկող ***Աբրահամը***, որը 1496–1502-ին Տաթևում պատկերազարդել է 1495-ին ընդօրինակված Ավետարանը (գրիչ՝ Գրիգոր, Մատենադարան, ձեռ. № 5303): Տ. մ. դ-ում նկարազարդվել են նաև բազմաթիվ այլ մատյաններ, որտեղ չկան թեմատիկ նկարներ, հարդարված են կիսախորաններով, գլխազարդերով ու լուսանցազարդերով, մեծ մասամբ՝ գրաֆիկ. ոճավորումով: Տ. մ. դ. գործել է շուրջ 50 տարի:

Գրկ. Երեմյան Ա., Էջեր ժե դարի հայ մանրանկարչության և գրչության արվեստների պատմությունից, «Էջմիածին», 1963, № 6:

ՏԱԹԵՎԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ստեղծվել է X դ-ում՝ Տաթևի վանքին կից: XII դ-ում Տ. մ-ում եղել է շուրջ 10 հզ. ձեռագիր (ըստ Ստեփանոս Օրբելյանի): Մատենադարանն առավել հարստացել է Տաթևի վարդապետարանի գոյության տարիներին և Տաթևի համալսարանի գործունեության շրջանում: 1434-ին՝ Շահռուխի արշավանքի ժամանակ, մատենադարանը կողոպտվել է: Տ. մ-ի 140 ձեռագիր մատյաններ, որոնք 1912-ին փոխադրվել են Էջմիածին, այժմ պահվում են Մատենադարանում:

Գրկ. **Ստեփանոս Օրբելյան**, *Սյունիքի պատմություն, Ե., 1986:*

ՏԱԼՅԱՆ Վազգեն Գրիգորի (10.12.1907, Ալեքսանդրապոլ–22.1.1995, Երևան), բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1931): 1931–39-ին դասավանդել է Թիֆլիսի և Երևանի դպրոցներում, աշխատել «Խորհրդային դպրոց», «Հոկտեմբերիկ» պարբ-ների խմբագրություններում, 1956–70-ին՝ «Հայաստան» հրատարակչությունում, 1953-ից՝ Խնկո Ապոր անվ. գրադարանում: Կազմել, խմբագրել և ծանոթագրել է Շերամի «Երգեր» (1969) ժող-ը:

Լույս են տեսել Տ-ի «Սոնիկի թռիչքը» (1939), «Ուրախ օր» (1955), «Մտերիմներ» (1959), «Վերադարձ» (1960), «Հրաշալի պարտեզ» (1964), «Անհանգիստ հոգիներ» (1969), «Աստղիկներ» (1974), «Մարտ առանց կրակոցի» (1978), «Առավոտից իրիկուն» (1980), «Փիղ, փիղ, փիղ» (1982), «Աշնան խարույկ» (1984), «Մինչև լուսաբաց» (1987), «Հսկաների հանդեսը» (1990) բանաստեղծությունների, առակների, պոեմների, պատմվածքների ժող-ները, «Շերամ» (1986) վեպ-վավերապատումը: Թարգմանել է Ա. Կոնան Դոյլի, Ի. Սթոունի, Ջ. Լոնդոնի և ուր. ստեղծագործություններից:

ՏԱՂԱՎԱՐՅԱՆ (Չատրճյան) Նազարեթ Նահապետի (25.12.1862, Սեբաստիա–1915, Մեծ եղեռնի զոհ), հաս. գործիչ, գյուղատնտես, բնագետ, բժիշկ, խմբագիր: Բժշկագիտ-յան դ-ր (1893): Նախն. կրթությունն ստացել է Կ. Պոլսում, 1878–83-ին սովորել է Ֆրանսիայի երկրագործ. վարժարաններում, ավարտել է Սորբոնի համալսարանի բնագիտ. (1892) և բժշկ. (1893) ֆակ-ները: 1885–87-ին՝ ***«Գիտական շարժում»*** հայ. առաջին բնագիտ. հանդեսի հիմնադիր-խմբագիր, 1893–97-ին կազմել և խմբագրել է ***«Ընդարձակ տարեցոյց Սր Փրկչեան ազգային հիւանդանոցի»*** տարեգիրքը: Աբդուլհամիդյան բռնատիրության տարիներին բանտարկվել է (1896, 1900), 1905-ին տեղափոխվել է Կահիրե, աշխատել որպես բժիշկ: 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո վերադարձել է Կ. Պոլիս, ընտրվել խորհրդարանի երեսփոխան (Սեբաստիայից), զբաղվել հողային հարցի նախագծի մշակմամբ:

Լույս են տեսել Տ-ի «Բնական պատմութիւն» (հ. 1, 1886, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Ծագումն հայ տառից» (1895, Վնն., Մխիթարյան տպ., Իզմիրյան գրական մրց.), «Մանրէաբանութիւն» (1898), «Առողջապահութիւն առտնին եւ ի պէտս ազգային երկրորդական վարժարանաց» (1898), «Մարդկային սաղմնախօսութիւն» (1900), «Տարուինականութիւն» (1901), «Տիեզերք եւ իր կազմութիւնը (1902, հինգն էլ՝ ԿՊ, Ն. Պերպերյանի տպ.), «Ուրուագիծ

Տաթևի մանրանկարչության դպրոց



«Ավետում», մանրանկար, XIV դ-ի Ավետարան (ծաղկող՝ Գրիգոր Տաթևացի, Մատենադարան, ձեռ. № 6305)



Վազգեն Տալյանի *«Շերամ» (1986, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Նազարեթ Տաղավարյան




Ն. Տաղավարյանի
«Ծագումն հայ տառից» (1895, Վնն.) գրքի կազմը

Տաղարան



1513 (Վնտր., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ), տիտղոսաթերթը



1701 (Կ. Պոլիս), տիտղոսաթերթը

պատմութեան հայոց ի սկզբանէ մինչ ց՝Արշակունի հարստութիւն» (2-րդ հրտ.՝ 1908, Վնտ., Սբ Ղազարի տպ.), «Հայոց հին կրօնները» (2-րդ հրտ.՝ 1909), «Ուրուագիծ պատմութեան հայոց ի սկզբանե մինչ ց՝Աղեքսանդր Մակեդոնացի» (3-րդ հրտ.՝ 1913), «Քրիստոնէական բողոքականութեան եւ գրզըլպաշներու աղանդին ծնունդը» (1914), «Կազմախօսութիւն, բնախօսութիւն եւ առողջապահութիւն» (2-րդ բրփխ. հրտ.՝ 1914, ԿՊ),«Ծննդական գործարանք» (2-րդ հրտ., բրփխ. և լրց.՝ 1914, ԿՊ, վեցն էլ՝ Հակոբ Մաթևոսյանի տպ.), «Հիւլէն» (1915, ԿՊ, Մ. Հովակիմյանի տպ.) բնագիտ., մարդաբան., առողջապահ., տիեզերագիտ., պատմ., լեզվաբ., կրոն. աշխատությունները:

Աշակել է հայ. բժշկ. տերմիններ, կազմել ֆրանս-հայ. բժշկ. բառարան:

Երկ. Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, 4-րդ հրտ., Երուսաղեմ, 1949:

Գրկ. **Տաղավարեան Հ.,** *Ազգաբանութիւն Մեքսափոյ Չափրճեան գերդաստանի, Նյու Յորք, 1957:* **Գաբրիելյան Ռ.,** *Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ. XIX–XX դդ., Ե., 1963:*

ՏԱՂԱՐԱՆ, հոգևոր և աշխարհիկ բովանդակությամբ չափածո ստեղծագործությունների՝ տաղերի ժող.: Հայ ձեռագիր Տ-ներ չեն պահպանվել: Տ-ների տպագրվելուն զուգընթաց կազմվել են նաև ձեռագիր Տ-ներ: Աշխարհիկ բովանդակությամբ և ժող. երգեր ընդգրկող մեզ հասած հնագույն ձեռագիր Տ. կազմել է Խաչատուր Կաֆայեցին 1608-ին Կաֆայում (Մատենադարան, ձեռ. № 7709):

Առաջին Տ. տպագրել է *Հակոբ Մեղապարտը* 1513-ին կամ 1514-ին Վենետիկում: Տիտղթ-ին՝ «Տաղարան է սայ. հոգոյ. եւ մարմնոյ.» (10 մամուլ, վերջինը՝ 3 թերթ, 8º, համարակալված են միայն մամուլները և յուրաքանչյուր մամուլի առաջին 3 թերթերը, ընդամենը՝ 75 թերթ՝ 150 էջ, 11 x 6,5 սմ): Էջերի խորագրերը պարփակված են շրջանակներում. օգտագործված են *Պարզատումարի* 16 շրջանակները, որոնք այլ շրջանակների հետ տպված են նաև *Աղթարքի* և *Պատարագատետրի* մեջ: Երկգույն է՝ *Ուրբաթագրքի* տառերով: Ունի զարդեր: Տ-ում հրատ-յան տարեթիվ նշված չէ, հավանաբար տպագրվել է Պարզատումարից հետո՝ 1513-ին: Ընդգրկված են Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Նարեկացու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի ստեղծագործություններից, ինչպես նաև Ներսես Շնորհալու հանելուկները: Տ. հայ. 5 հնագույն հրատ-ներից միակն է, որտեղ ներառվել են հայ հեղինակների երկեր:

Տ-ներ տպագրվել են նաև՝

1681-ին Վենետիկում՝ Միքելանջելո Բարբոնիի տպարանում: Հրատարակիչ՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի: Տիտղթ-ին՝ «Տաղարան եւ գեղեցիկ ի զանազան բանաստեղծից շարագրեցեալ…» (133 էջ, 8º):

1684-ին հավանաբար նույն տպարանում: Տիտղթ-ին՝ «Գիրք դպրութեան, վայելուչ եւ գեղեցկայարմար…» (222 էջ, 8º, 10,3 x 6,1 սմ):

1690-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ նույնը (224 էջ, 8º, 9,3 x 6,3 սմ): Թեոդիկը և Գ. Լևոնյանն այս գիրքը համարել են Միքելանջելո Բարբոնիի տպագրություն:

1698-ին Կ. Պոլսում՝ Գրիգոր Մարզվանեցու և Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տիտղթ-ին՝ «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից շարագրեցեալ…» (200 էջ):

1701-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Կազմել է Երեմիա վարդապետ Մեղրեցին: Տիտղթ-ին՝ նույնը (264 էջ, 12º, 9,7 x 5,2 սմ):

1703-ին Կ. Պոլսում՝ Սարգիս Դպիրի տպարանում: Տիտղթ-ին՝ նույնը (258 էջ, 14,5 x 10 սմ):

1727-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տպակից է Մխիթար Սեբաստացու «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» երկին (132 էջ, 12º, 11,5 x 6 սմ):

1734–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Գիրք փոքրիկ որ կոչի Տաղարան…» (152 էջ, 8º, 9 x 6 սմ): 1739–ին նույն տպարանում: Տիտղթ–ին՝ «Փոքրիկ գանձարան» (244 էջ, 8º, 9,5 x 6,5 սմ):

1740–ին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցու տպարանում: Տպակից է Գանձարանի: Տիտղթ–ին՝ «Գրքուկս որ կոչի Տաղարան: Ասացեալ ի զանազանից բանաստեղծիցն մերոց առաջնոց ի խրախճանս մանկանց եկեղեցւոյ» (528 էջ, 8º, 11,4 x 7 սմ): Թեոդիկն այն անվանել է «Տ. փոքրիկ»:

1751–ին Կ. Պոլսում՝ Ձնչին Հովհաննեսի տպարանում: Տիտղթ–ին՝ «Տաղարան փոքրիկ եւ համառօտ յորում պարունակին երգք հոգեւորք»:

1752–ին Կ. Պոլսում՝ Հովհաննես Աստվածատրյանի տպարանում: Կազմող՝ Պետրոս Աբեղա: Գրքի 3 բաժնից 3–րդը Տ. է: Տիտղթ–ին՝ «Գրգուկ (եռամասնեայ) որոյ առաջինն կոչի Հարկաւոր հարցմունք քրիստոնէական: Երկրորդն կոչի Քաղաքավարութիւն: Իսկ երրորդն վերակոչի Տաղարան…» (172 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ):

1752–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից շարադրեցեալ…» (448 էջ, 8º, 9,5 x 6,5 սմ): 1758–ին նույն տպարանում:

1783–ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տպակից է Աղեքսանդր Քուղայեցու «Ատենական վիճաբանութիւն» երկին (151 էջ, 4º և 8º, 13,4 x 8,1 սմ):

1788–ին Կ. Պոլսում՝ Ստեփանոս Պետրոսյանի տպարանում: Բաղկացած է 2 մասից. Ա գրքի տիտղթ–ին՝ «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ…», Բ–ին՝ «Փոքրիկ գանձարան…» (484 էջ, 8º, 12 x 7,2 սմ):

1801–ից հետո Տ–ներ տպագրվել են՝ 1803, 1816–ին (ԿՊ, Պողոս Հովհաննիսյանի տպ.), 1825, 1840, 1850–ին (ԿՊ, Արապյան տպ.), 1856–ին (Թ., Ներսիսյան դպրոցի տպ.), 1882, 1907, 1949–ին (Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), 1910–ին (Վնն., Մխիթարյան տպ.) են:

Գրկ. Հովսեփյան Մ., «Տաղարան» ժողովածուների հիշատակարանները, Ե., 2013:

«ՏԱՃԱՐ», կրոնաեկեղեց. պարբ.: Լույս է տեսել 1909–18–ին Կ. Պոլսում. 1910–ից՝ ժողովրդային, կրոն., ազգ., գրական կիսամսյա հանդես, 1916–ից՝ կրոն., գրական, քաղ. շաբաթաթերթ: Խմբագիր՝ Գարեգին ***Խաչատրույան***, վարիչ՝ Ղևոնդ ***Դուրյան***, արտոնատեր՝ Հմայակ Էքսերճյան, ապա՝ տնօրեն–խմբագիր՝ Զարմայր Կեզյուրյան, պատ. տնօրեն՝ Հրանտ Հովասափյան: Ունեցել է թուրք. հավելված:


1924–39–ին, որպես «Տ.»–ի շարունակություն, լույս է տեսել ***«Հայ խօսնակ»*** կրոնաբարոյական և գրական ամսաթերթը (կարճ ժամանակ՝ կիսամսյա): 1941–ին Ստամբուլում տպագրվել է «Հայ խօսնակ» տարեգիրքը: Կազմողներ՝ Զ. Կեզյուրյան, Թորոս Ազատյան:

ՏԱՄԱՏՅԱՆ Չիկ (Խաչիկ) Արամի [6.8.1919, Կոնստանցա (Ռումինիա)–30.7.1985, Բուխարեստ], նկարիչ: Սովորել է Վենետիկի Մուրատ–Ռափայելյան վարժարանում (1931–37), Հռոմի գեղարվ–ի ակադ–ում (1937–41):

Ապրել և ստեղծագործել է Բուխարեստում: Ստեղծել է ծաղրանկարներ, շարժեր, դիմանկարներ, բնանկարներ, նկարազարդել գրքեր (Հ. Պարոնյանի «Հատընտիրը», ռուս.՝ 1965, Արա ***Բեքարյանի*** հետ): 1947–ից աշխատակցել է Ռումինիայի (նաև հայկ. «Նոր կեանք», «Սևան») և շուրջ 20 երկրի պարբ–ների: 1975–ից ստեղծել է Ռումինիայի մի շարք քաղաքների պատմաճարտ. հուշարձաններին նվիրված գծանկարների շարքեր և հրատարակել առանձին գրքով («Բուկերեշչի», 1978): Հեղինակ է «Հակաիմպերիալիստական ծաղրանկարներ» (1960), «Բազմալեզու կատակերգություն» (1976, նաև գերմ.) ծաղրանկարների ալբոմների:

Ռումինիայի Պետ. (1950, 1952) և միջազգ. մրց–ներ:


Տաղարան



1788 (Կ. Պոլիս, Ստեփանոս Պետրոսյանի տպ.), տիտղոսաթերթը



«Տաճար», *1909–18, Կ. Պոլիս*



Չիկ Տամատյան



Ղևոնդ Տայյանի *«Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» (հ. 1, 1952, Վնտ.) գրքի կազմը*



Հակոբոս Տաշյան



Հ. Տաշյանի *«Բառախօսական դիտողութիւններ հայերէն գիտական լեզուի մասին» (1926, Վնն.) գրքի կազմը*

ՏԱՅԱՆ Արբուն Նիկողոսի, **Արբուն Տայեցի** (6.1.1912, Պարտիզակ–3.4.1983, Երևան), թարգմանիչ, բանասեր: Նախն. կրթությունն ստացել է Կ. Պոլսի Սաքրիգյուղի նախակրթարանում և Գատըգյուղի Մխիթարյան որբանոցում, սովորել Վենետիկի Սուրբատ-Ռափայելյան վարժարանում (1923–27): 1929-ին հայրենադարձել է: Սովորել է ԵՊՀ-ում (1932–33): Տ. հայտնի է որպես Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն» (մաս 1–3, 1947–59, վերամշկ. հրտ.՝ 1969, 3-րդ բրփխ. հրտ.՝ 1983) պոեմի թարգմանիչ (իտալ.-ից): Թարգմանել է նաև Բ. Չելլինիի «Ֆլորենտացի մաեստրո Ջովաննի Չելլինիի որդի Բենվենուտոյի կյանքը գրված իր կողմից Ֆլորենցիայում» (1974) գիրքը, Օ. դը Բալզակի, Գի դը Մոպասանի, Ա. Ֆրանսի, Պ. Մերիմեի ստեղծագործություններից:

Լույս է տեսել Տ-ի «Դանտեի «Աստվածային կատակերգության» բանաստեղծական արվեստը և թարգմանության պրոբլեմները» (1982) աշխատությունը:

ՏԱՅՅԱՆ Ղևոնդ [30/31.7.1884, Պարտիզակ–12.9.1968, Սբ Ղազար կղզի (Վենետիկ)], երաժշտագետ, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: Սովորել է Վենետիկի Մխիթարյան վարժարանում (1890-ից): Հռոմում ուսումնասիրել է գրիգորյան երգեցողություն ու երաժշտ. հնագրություն (1911–14), հոդվածներ գրել իտալ. և գերմ. հանրագիտարանների համար: 1921–27-ին՝ ***«Բազմավէպ»*** հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Տ-ի «Եղիշէի չորս յեղանակներ հնագոյն գրչագրի մը մէջ» (1911), «Սայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի Ս. Ղազար...» (1930), «Կոմիտաս վարդապետ» (1936), «Մխիթար աբբահայր երաժիշտ» (1954) աշխատությունները (բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.): 1916–41-ին եվրոպ. նոտագրությամբ գրի է առել և 1952-ից հրատարակել շարականների (Սբ Ղազարում բանավոր հաղորդմամբ պահպանված) եղանակները՝ «Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» (հ. 1–8, 1952–76): Հեղինակ է նաև աշխարհիկ և հոգևոր երգերի:

ՏԱՇՅԱՆ Հակոբոս [Թաշճյան Փրանկիսկոս Մելքոնի, 25.10.1866, գ. Արծաթի (Էրզրումի նահանգ)–3.2.1933, Վիեննա], ձեռագրագետ, բանասեր, լեզվաբան, հայագետ, մատենագետ: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1885), քահանա (1889): Ավարտել է Վիեննայի Մխիթարյան վարժարանը (1889): 1893–1912-ին եղել է Վենետիկում, Բեռլինում (ուսումնասիրել է Արքունի մատենադարանի հայ. ձեռագրերը), Զմյուռնիայում, Կարինում, Տայոց աշխարհում (գրել է «Տայոց աշխարհ, Փոքր Հայք ու Խաղտիք» աշխատությունը, 1917–18, անտիպ): Տ. իր «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895) աշխատության մեջ նկարագրել է 573 ձեռագիր:

Լույս են տեսել նաև Տ-ի «Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին...» (1891), «Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա» (1891), «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք» (մաս 1, 2, 1895, 1901, մաս 3, «ՀԱ», 1900–01), «Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը» (1896), «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» (1898), «Ժողովածոյք առակաց Վարդանայ» (1900), «Արշակունի դրամներ» (մաս 1, 2, 1917, 1961), «Հին Հայաստանի արեւմտեան սահմանը. Փոքր Հայք եւ Կողոփենէ (Սեբաստիա)» (1917–18, հրտ.՝ 1948), «Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին» (1921), «Ուսումն դասական հայերէն լեզուի» (1920), «Հաթեր եւ ուրարտեանք» (1934), «Հետազօտական պատմութիւն մատենագրութեան հայոց» (1970), «Տայք, դրացիք եւ Խոտորջուր» (1973) բանասիր., պատմ., լեզվաբ., տեղագր. աշխատությունները: «Բառախօսական դիտողութիւններ հայերէն գիտական լեզուի մասին» (1926) երկի մեջ ներկայացրել է եվրոպ. լեզուներում գործածվող գիտ. եզրերի հայ. համարժեքները: Գերմ.-ից, ֆրանս.-ից, անգլ.-ից, լատ.-ից թարգմանել է գեղ. և գիտ. գործեր: Խմբագրել, ծանոթագրել և լրացումներով լույս է ընծայել Հ. Գաթըրճյանի «Սրբազան Պատարագամատոյցք հայոց» (1897) աշխատությունը:

Տ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վիեննայի Մխիթարյան տպարանում:

Գրկ. **Ակինեան Ն.,** *Յակոբոս վրդ. Տաշեան, «ՀԱ», 1933, № 1–2:*

ՏԱՌ, 1. գրանշան, *տպատառ*, 2. գրույթ կամ այբուբենի միավոր, որն ինքնուրույն կամ այլ նշանների զուգակցությամբ օգտագործվում է գրավոր խոսքի ինչյունը, ինչույթը և նրանց տիպային միացությունները (տառախմբեր) նշանակելու համար:

Բառը կազմող Տ-երն ու համապատասխան ինչյունները լավագույն դեպքում պետք է համապատասխանեն միմյանց: Իրականում, սակայն, լիակատար համընկնում գրեթե չի պատահում: Երբեմն մեկ ինչույթն արտահայտվում է մի քանի տառով (գերմ., ֆրանս.՝ խ, շ, չ), կամ մի քանի ինչույթներ արտահայտվում են մեկ տառով (հայ.՝ ո, ե, և): Որոշակի տառակապակցության կամ երկգրի մեջ Տ. կարող է չունենալ ինչյուն. համարժեքություն, իսկ առանձին Տ-եր՝ ինչյուն. արժեք:

Լեզվի յուրաքանչյուր ինչյունին համապատասխանող Տ. ունեցող գիրը կոչվում է տառային՝ ի հակադրություն հինեգիպտ. և ժամանակակից չին. ու այլ լեզուների գաղափարագրերի (հիերոգլիֆներ), որոնց յուրաքանչյուր գրանշանն արտահայտում է վանկ կամ ամբողջական բառ:

Այբուբենների մեծ մասն ունի փոքրա- և մեծատառեր (որոնք առանձին դեպքերում գծապատկերով միմյանցից տարբերվում են, ինչպես, օր., Ա. ա, Ծ. ծ, Ձ. ձ, Մ. մ ևն), ձայնավորներ (հայ.՝ ա, ե , է, ը, ի, ո, օ, ու) և բաղաձայններ (բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ):

Գրության եղանակից կախված՝ տարբերում են ձեռագիր, նկարված (մատիտով, վրձնով ևն) , փորագիր (քարի, փայտի, մետաղի ևնի վրա), ձուլածո, վերջին շրջանում՝ նաև թվային (համակարգչային հիշասարքերում) Տ-եր: Տ-ի ձևավորման և գեղ. ոճավորման հարցերով զբաղվում է ***տառարվեստը***:

Հայ միջնադարյան վիմագիր արձանագրություններում, ձեռագրերում և վաղ շրջանի տպագիր գրքերում լայնորեն օգտագործվել են հատուկ համառոտագրություններ. բառերում կրճատվել են առանձին Տ-եր (հիմնականում՝ ձայնավորները) կամ տառախմբեր (թողնվել են միայն առաջին և վերջին Տ-երը), որոնց բացակայությունը լրացվել է՝

1. **Պայմանական նշաններով.** մի նշանն ամբողջ մի բառ է ցույց տվել:

2. **Պատվոգրությամբ**՝ ա. երբ բառի վերջից կամ միջից Տ-եր են պակասեցվում (օր.՝ Յով՚՚ – Յովհան, ՀԱ՚՚՚ – Հայոց, ևն): Առաջին անգամ հանդիպում է Էջմիածնի Ավետարանում (989), ապա՝ Սաստարայի 1003-ի արձանագրության մեջ, տարածվել է XVII–XIX դդ.-ում, բ. պատիվ կոչվող նշանով (–), որը դրվում է կրճատված բառի գլխին, օր.՝ ՔՍ = Քրիստոս, ԱԾ – Աստված, ՏՆ – Տեառն, ԱԾԾին = Աստվածածին, կ = կամ, ք = քան, աս = այսպես, ևն [Հռիփսիմեի վանքի (618) արձանագրության մեջ]:

3. *Փակագրերով:*

ՏԱՌԱՁՈՒԱԾԱՐ ՄԵՔԵՆԱ, **մոնոտիպ** (< հուն. մոնո–միա և typos–դրոշմ), շարվածքի առանձին տառեր ու բացատանյութ ձուլող և ինքնաշխատ ռեժիմով տողեր շարող մեքենա: Հայտնագործել է ամերիկացի Տոլբերտ Լենստոնը 1887-ին:

ՀՀ-ում Տ. մ. տեղադրվել է 1952-ին Պոլիգրաֆկոմբինատում (առաջին վարպետ՝ Սարգիս Թորոսյան):


XX դ-ի վերջերին Տ. մ-ի կիրառությունը սահմանափակվել է. նախ փոխարինվել է լուսաշարվածքով, ապա՝ համակարգչային շարվածքով:

ՏԱՌԱՉԱՓ, **կեգել, կեգլ** (գերմ.՝ Kegel), տպատառի բարձրությունը՝ տպատառի կամ նշանի վերին ու ներքին նիստերի միջև եղած հեռավորությունը՝ միջտողային լուսանցքներով: Չափվում է կետաչափերով ***(կչփ)***. 1 ***կչփ*** (պունկտ) = 0,376 մմ: Նույն Տ-ի փոքրատառը, որպես կանոն, մեծատառից 2 անգամ փոքր է:

Ըստ կետաչափի մեծության տպատառերին տրվել են պայման. անվանումներ՝ 3-ին՝ բրիլիանտ, 4-ին՝ դիամանտ, 5-ին՝ պերլ, 6-ին՝ նոնպարել, 7-ին՝ մինյոն, 8-ին՝ պետիտ, 9-ին՝ բորգես, 10-ին՝ կորպուս, 12-ին՝ ցիցերո, 14-ին՝ միտտել, 16-ին՝ տերցիա, 20-ին՝ տեքստ, ևն:

Տպագրության Տ-ի ընտրությունը կատարվում է՝ հրատ-յան բնույթին, ուղղվածությանը, գործառնական և այլ նշանակությանը


Տառերի *կառուցման սխեմա*



Արա Բաղդասարյան. «Ինչպես է սրեղծվում գիրքը» (2010, Ե., «Զանգակ»)




Հայկ Գործակալյան. «Հայկական տառատեսակներ» (1973, Ե., ԳԱ հրտ.)



համապատասխան. սույն գրքի տեքստը շարվել է 9.5 *կէփ*-ի՝ Է. Ղաբուզյանի «Նարեկ-սերիֆ» տառատեսակով:

ՏԱՌԱՏԵՍԱԿԱՇԱՐ, **գառնիտուր** (< գերմ. Garnitur – լրակազմ, հավաքածու), ոճական ու ձևավորման ընդհանուր առանձնահատկություններով, բայց տարբեր չափերի ու տեսքի տառանշանների ընտանիք (խումբ): Սովորաբար պարունակում են այբբուբենի տառերի, թվերի, կետադր. և հատուկ նշանների ամբողջ. լրակազմեր: Կան նաև S-եր, որոնք կազմված են միայն մաթ. կամ քարտեզագր. նշաններից:



Տառատեսակաշար

S-ի ընդհանուր բնութագրիչներն են տառանշանների **հակադրականությունը** [օժանդակ (միացնող) և հիմն. գծերի հաստությունների հարաբերությունը], **հագեցածությունը** (կոչվում է նաև կշիռ, հիմնագծերի հաստության և ուղիղ գրանշանի բարձրության հարաբերությունը), **համամասնականությունը** (տառի լայնության և բարձրության հարաբերությունը), **թեքությունը** [տողագծի համեմատությամբ տառի հիմնագծերի (տառաչքերի առանցքների) թեքությունը], **գծափակերը** (ծայրափակերը, տառանշանի հիմն. գծերի ծայրերը եզրափակող տարրերը), **ուրվագծերի գեղազարդությունը** (տառանշանների ուրվագծերի ձևը):

Հայտնի (հատկապես՝ եվրոպ. լեզուներով) հազարավոր տառատեսակներից լայն կիրառություն ունեն շուրջ հարյուրը, որոնցով տպագրվել է համաշխ. ողջ գրակ-ը: Դրանք խմբավորված են 5 հիմն. ու 1 լրացուցիչ (մյուսներում չընդգրկված) S-երում:


Ընդունված է տվյալ հրատ-ի համար գործածել նույն S-ի տառատեսակներ. տեքստերը շարվում են 8–12 *կէփ*-ի, տիտղոսաթերթերը, վերնագրերը, կազմերի մակագրությունները՝ 12–48 *կէփ*-ի, ընդգծումները՝ *շրագիր* կամ թավ (կիսաթավ) տառատեսակներով:



Տառարվեստ

Ակցիդենտային և հատուկ գրակ-յան (տեղեկատուներ, բառարաններ, հանրագիտարաններ ևն) տառատեսակներն ընտրում են ըստ նրանց նշանակության, բովանդակային առանձնահատկությունների, տեսազգայական ընկալման և այլ հատկանիշների:

ՏԱՌԱՐՎԵՍՏ, տառերի (գրանշաններ) ստեղծման արվ-ը: Գրաֆիկայի բաժին (տառային գրաֆիկա), որի հիմն. միջոցները տառերի գծերի (հիմն. և լրացուցիչ) հաստություններն ու ձևերն են, նրանց համամասնությունները, նպատակը՝ դյուրընթեռնելի, դյուրընկալելի ու գեղեցիկ տառատեսակների ստեղծումը:



Տառերի նախագծման մոդուլային ցանցեր

Առաջին տպագրությունները կատարվել են ձեռագրին շատ մոտ տառատեսակով, իսկ առաջին լատ. տպատառերը՝ «Անտիկվա», ստեղծվել են Գուտենբերգի օգտագործած գոթիկա ձեռագիր տառերի սուր անկյունների վերացման և ուղիղ միացումները կորերով փոխարինելով: 1470-ին մշակվել է Իենսոնի «Անտիկվան», որոնք XV–XVII դդ-ում ամենաշքեղ տառերն էին: 1500-ին տպագրիչ Ալդ Սանուցին ստեղծել է առաջին *շրատառերը*: Տառաստեղծման հարցերով զբաղվել են նաև Լեոնարդո դա Վինչին (առաջարկել է տառերի նախագծման սխեմա՝ մարդու մարմնամասերի համամասնությամբ՝ որպես միավոր ընդունելով դեմքի երկարությունը), Ալբրեխտ Դյուրերը և ուր. նկարիչներ: Դա Վինչիի սկզբունքով տառեր են նախագծել իտալացի Լուկա Պաչիոլին (1509) և ֆրանսիացի Ժոֆրուա Տորին (1529):

XVI–XVII դդ-ում հայտնի էին Էթիենների, Պատենի և Էլզևիրների հրատարակչատների տառատեսակները: Մեծ համարում ուներ վերջիններիս տառափորագրիչ Կլոդ Գարամոնի (1480–1561) տառատեսակը, որը հետագայում մշակել և կատարելության են հասցրել Քրիստոֆեր վան Դեյքը (1605–1669) և Ֆիլիպ Գրանժոնը (1666–1714): Տառերի նախագծման առաջին սկզբունքները Ֆրանսիայի ԳԱ-ի համար 1692-ին մշակել են Ժոժոնը, Ֆիյոն և Տրյուշոն, որոնք, սակայն, տարածում չեն գտել: Տառերի կառուցվածքային տարրերն

ու համաչափություններն ապահովելու համար առաջարկվել է այսպես կոչված մոդուլային ցանց՝ մանր քառակուսիների բաժանված (մինչև 64 x 36 = 2304) քառակուսի, որին ներգծվել են շրջանագիծ և տառապատկերը:

XVIII դ–ում ստեղծվել է «Նոր անտիկվա» կամ Դիդոյի տառատեսակը [ֆրանսիացի հայտնի տառափորագրիչ Ֆրանսուա Ամբրուազ Դիդոյի (1730–1804) անունով], որի հիմքի վրա մշակվել և մինչև օրս չնչին փոփոխություններով օգտագործվում են «Քեզլոն», «Բասկերվիլ», «Թայմս» (Անգլիա), «Գրանամոն», «Բոտոնի» (Իտալիա) և այլ տառատեսակներ:

Հայ. առաջին տպատառերը նույնպես պատրաստվել են ձեռագրի (բոլորգրի) նմանությամբ և օգտագործվել ***Հակոբ Մեղապարտի*** հրատներում: Իսկ առաջին իսկական տպատառերը («Անտիկվայի» սկզբունքներով՝ բոլորգրի հիման վրա) 1579–ին պատրաստել է ֆրանսիացի տառափորագրիչ Ռոբերտ Գրանժոնը (1513–1589/90)՝ Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցու պատվերով. որոնցով տպագրված առաջին գիրքը «Տօմար Գրիգորեանն» է (1584): Այնուհետև հայ. Աստվածաշունչ տպագրելու համար Մատթեոս Ծարեցին 1658–ին տառեր է պատվիրել Քրիստոֆեր վան Դեյքին, որի տառաշարը համալրվել է ***Ոսկան Երևանցու*** նախաձեռնությամբ. դրանցով է տպագրվել հայ. առաջին Աստվածաշունչը (1666–68): Այդ տառերը հայտնի են որպես «Ոսկանյան կամ Աստվածաշնչի տառեր» և օգտագործվել են շուրջ 200 տարի:

Հայ. տպատառեր պատրաստել է նաև հունգար հայտնի տառափորագրիչ Միկլոշ Կիշը (1650–1702)՝ Մատթեոս Վանանդեցու պատվերով, որոնցով տպագրված առաջին գիրքը Շարակնոց է (1684): Դրանք Մխիթար Սեբաստացու հավատարմատարը 1729–ին գնել և տարել է Վենետիկ, որոնց հենքի վրա այնտեղ հետագայում մշակվել են (Ս. Հոֆեր, Ա. Այտընյան և ուր.) նույնքան գրավիչ ու դյուրընթեռնելի «Վենետ» և «Վիեն» տառատեսակները:

Հայկ. Տ. հետագայում կատարելագործվել է Փարիզում (Ճանիկ Արամյան, տես ***«Արամյան»*** տառատեսակ), Կ. Պոլսում (Հովհաննես Մյուհենտիայան և ուր.) և այլուր, բազմաթիվ տպարաններին կից գործել են հատուկ տառաձուլարաններ, որտեղ պատրաստվել ու ձուլվել են ոչ միայն հայ., այլև օտար (մասնավորապես՝ թուրք.) տառատեսակներ:

Խորհրդ. շրջանում հայկ. տառատեսականին հարստացել է 1920–30–ական թթ–ին ԽՍՀՄ–ում լայնորեն տարածված «Գրոտեսկ»–ով (առանց գծափակերի և նույն հաստության հիմնա– և նրբագծերով տառատեսակ), որը իննայողական ու հարմար էր նաև պլակատների տպագրության համար: 1950–60–ական թթ. մշակվել են «Մնացականյան», «Աստղ», «Զվարթնոց», «Հանրագիտարանային» (հատուկ՝ «ՀՍՀ»–ի համար) «Նոր հայկական», «Նորք», «Եղեգնածիր լարային», «Դպրոցական», «Արմենուհի» և այլ տառատեսակաշարեր, ձևավորվել է տառաստեղծների նոր սերունդ:


Տ–ի զարգացման նոր շրջան է սկսվել վերջին 20–25 տարիներին՝ համակարգչային գրաֆիկայի ներդրման շնորհիվ: Հայ. համակարգչային տառատեսակի առաջին նմուշները «Անտիկվա» ոճի «Արիալ Արմենիա» և գծափակերով «Թայմս Անտիկվա» տառատեսակներն են:

Գրկ. Զօհրապեան Յ., Գաղափար հայկական Մեսրովպեան տառից..., Վնտ., 1816: Մինասեան Պ., Արուեստագրութիւն, Վնտ., 1834: Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նմանահանություն): Շահվերդյան Ա., Սամվելյան Խ., Հայերեն տպագրական տառերի բարեփոխման ալբոմ, Ե., 1953: Մնացականյան Հ., Հայկական գեղարվեստական և տպագրական տառատեսակներ, Ե., 1955: Գործակալյան Հ., Հայկական տառատեսակներ, Ե., 1973: Մկրտչյան Ա., Ղաբուզյան Է., Ղաբուզյան Հ., Հայկական համակարգչային տառատեսակներ, ալբոմ, Ե., 2004: Տիրատուրյան Կ., Հայոց գիրը: Գեղարվեստական տառաձևեր, Ե., 2005: Բաղդասարյան Ա., Ինչպես է ստեղծվում գիրքը, Ե., 2010: Քյուրքչյան Ա. և ուր., Հայկական զարդատառ, ալբոմ, Ե., 2012:

Տառարվեստ




Ներսես Շնորհալու «Գիրք որ կոչի Ընդհանրական»–ի (1788, ՍՊբ) փիլոլոսաթերթը



«Արաքս» հանդեսի (1897, Սանկտ Պետերբուրգ) 1 էջ



«Տաւրոս», *1898, Վառնա*



Շահե-Զատիկ Տատուրյանի *«Հայ ժողովուրդի ներքին թշնամիներուն դէմ» (1945, Փարիզ) գրքի կազմը*



Տարագրոս. *«Միջնադարյան արձակ» (1940, Ե., Հայպետհրատ) գրքի փիփողոսաթերթը*

«ՏԱՒՐՈՍ», քաղ., գրական, քննադատ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1898-ին Վառնայում (19 համար): 1897-ին հրատարակված «Կտակ» եռօրյա թերթի շարունակությունն է: Խմբագիրներ՝ Հարություն Չաքրյան, Տիգրան Ճգնավորյան: Քարոզել է հայ քաղ. կուս-ների միավորումով Հայ դատի լուծմանը նպաստող միություն ստեղծելու գաղափարը, որպես Հայաստանի ազատագրման ճանապարհ մատնանշել է բալկանյան երկրների օրինակը: Տպագրել է նաև հայատառ թուրք. նյութեր:

«ՏԱՒՐՈՍ», քաղ., տնտ., հաս. օրաթերթ: Հնչակյան կուս-յան Կիլիկիայի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1919–20-ին Ադանայում: Արտոնատեր՝ Ֆերուզ Խանզադյան: Խմբագիրներ՝ Անդրանիկ Կեռնճյան, Վահան Ժամկոչյան, Սեդրակ Շահեն, Արիս Գալֆյան, Մարգար Զագիկյան, Սարգիս Տխրունի: Անդրադարձել է ժամանակի քաղ. անցուդարձին, հայերի ինքնապաշտպան. մարտերին, հանդես եկել քեմալականների հայահալած քաղաքականության դեմ:

«Տ.»-ին հաջորդել է «Ազատ Տաւրոս» (1920, Ադանա) օրաթերթը:

ՏԱՏՐՅԱՆ Արշամ Գալուստի [2.2.1909, ք. Չորում (Սեբաստիայի նահագ)–19.6.1956, Կահիրե], գրող, խմբագիր: Ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգ. վարժարանը (1925) և Գրինյոնի (Փարիզի մերձակայքում) երկրագործ. բարձրագույն դպրոցը (1932): 1938-ին՝ «Բանաստեղծին ձայնը» (Կահիրե) պարբերագրքի (հ. 1) հրատարակիչ, 1948–55-ին՝ *«Զահակիր»* պարբ-ի, 1950–51-ին՝ «Նոյեան աղաւնի» պարբերագրքի խմբագիր:

Լույս է տեսել Տ-ի «Բանաստեղծին ձայնը» (1938) քննադատ. երկերի ժող-ը:

ՏԱՏՈՒՐՅԱՆ Շահե-Զատիկ Սամվելի [20.12.1911, գ. Կյուրին (Սեբաստիայի նահանգ)–15.5.1990, Երևան], հաս. գործիչ, հրապարակախոս: Ֆրանսիայի Դիմադրության շարժման հայկ. կազմակերպության ղեկավարներից, Հայ ազգ. ճակատի հիմնադիրներից: 1942–44-ին՝ «Հայ ճակատ», «Ժողովուրդ» հակաֆաշիստ. թերթերի խմբագիր: Աշխատակցել է «Լիբանան» (Բեյրութ), «Երեւան» (Փարիզ), «Զանգու» (Փարիզ), «Բանւոր» (Նյու Յորք) թերթերին: 1947-ին հայրենադարձել է: 1948–82-ին աշխատել է Հեռուստառադիոպետկոմում (1972-ից՝ նախագահի տեղակալ):

Լույս է տեսել Տ-ի «Հայ ժողովուրդի ներքին թշնամիներուն դէմ» (1945, Փ.) գիրքը:

ՏԱՐԱԳՐՈՍ [Տեր-Վարդանյան Տարագրոս Ստեփանի, 28.2(11.3).1878, Երևան–30.3.1953, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Ավարտել է Մոսկվայի Ստրոգանովի անվ. գեղարվ-ի ուսումնարանը (1908), Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ի օֆորտի բաժինը (1915): 1921–35-ին դասավանդել է Երևանի շին. և այլ ուսումնարաններում: 1907-ից Մոսկվայի Կայսեր. հնագիտ. ընկերության (1916-ից՝ պրոֆ.) հանձնարարությամբ ուսումնասիրել (նաև չափագրել) է Կովկասի հայկ. ճարտ. հուշարձանները («Նիւթեր Կովկասի հնագիտութեան», պր. 13, 1916), մագաղաթե ձեռագրերը, զարդաքանդակները, կիրառ. արվ-ը (ավելի քան 2000 նմուշ), որոնցից *Էպրաւմպ* եղանակով կրկնօրինակել է 400 գործ: Ձևավորել է գրքերի անվանաթերթեր, ստեղծել գլխազարդեր [«Միջնադարյան արձակ» (1940) ժող-ը ևն]:

Հեղինակ է «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն շրջանից մինչև մեր օրերը» (1941) աշխատության: Պատկերազարդել է *«Էջմիածին»* հանդեսի առաջին մի քանի համարները:

«ՏԱՐԱԶ», գրական-գեղ., հաս. ամսագիր (սկզբում՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1890–1919-ին Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան *Նազարյան*: Մինչև 1900-ը՝ *«Ազդիւր»*-ի պատկերազարդ հավելված: Մեծ տեղ է հատկացրել Հայկ. հարցին, քննադատել է աբդուլհամիդյան վարչակարգի հայաջինջ քաղաքականությունը, արևմտահայերի 1860-ի Ազգ. սահմանադրությունը: Ուշագրավ է

Ատրպետի «Հայաստանը ջարդերից առաջ և հետո» հոդվածաշարը: Հանդեսը տպագրել է Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Շիրվանզադեի, Ա. Խնկոյանի, Վ. Փափազյանի, Ա. Ծատուրյանի, Հ. Պարոնյանի և ուր. ստեղծագործություններից, թարգմանաբար ներկայացրել էջեր ռուս., վրաց. և արևմտաեվրոպ. գրակ–ից, լուսաբանել է մանկավարժությանը, դպրոցին և երեխայի դաստիարակությանը նվիրված՝ Հ. Տեր–Միրաքյանի, Ս. Բեկնազարյանի, Ս. Լիսիցյանի, Ղ. Աղայանի և ուր. հոդվածներ, գրախոսականներ, մամուլի տեսություններ, գրակ–յան, երաժշտության, թատրոնի, կերպարվ–ի հարցեր, ծանոթացրել հայ խմբագիրների և հրապարակախոսների գործունեությանը: Ունեցել է *«Գեղափնջիկ»*, «Իլյուստրասիոն», «Փարիզի մոդաներ», «Առողջապահություն» և այլ հավելվածներ:

ՏԱՐԱԽՉՅԱՆ Վարդուշ Սարգսի (1894, Ալեքսանդրապոլ–1980, Երևան), խմբագիր: 1927–29 և 1934–37–ին՝ ***«Հայաստանի աշխատավորուհի»*** ամսագրի խմբագիր: 1940–ից աշխատել է Հայպետհրատում, ապա՝ «Լույս» հրատարակչությունում:

ԽՍՀՄ Լենինի շքանշան:

«ՏԱՐԵԳԻՐ», հաս–քաղ., մշակութ. շաբաթաթերթ, 2007–ից՝ օրաթերթ: Լույս է տեսել 2001–10–ին Երևանում: Մինչև 2004–ը և 2009–10–ին՝ էլեկտրոնային օրաթերթ (ՀՀ–ում առաջին էլեկտրոնային կայքերից է): Հիմնադիր–խմբագիր՝ Վասակ ***Դարբինյան***: Անդրադարձել է ՀՀ–ի հաս–քաղ., սոցիալ–տնտ. կյանքին, մշակութ. առօրյային ևն, ԼՂՀ–ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, կարևորել է լրագրող. լեզվի մաքրությունը:

«ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ», տարեթերթ: Մխիթարյան միաբանության հրատ.: Լույս է տեսել 1799–1802–ին (4 գիրք) Վենետիկում՝ աշխարհաբար՝ «...որ է Յիշատակարան քաղաքական, պատերազմական, եկեղեցական եւ բանասիրական անցից եւ դիպուածոց աշխարհի» ենթավերնագրով: Խմբագիր՝ Ղուկաս ***Ինճիճյան***: Ժամանակագր. առումով 2–րդ հայ. պարբ–ն է՝ ***«Ազդարար»***–ից հետո:

ՏԱՐԵՑՈՒՅՑ, տարեկան մեկ անգամ լույս տեսնող օրացույց, պարբերագիրք, պարունակում է նաև աստղաբաշխ., օդերևութաբան., վիճակագր. տեղեկություններ, նախընթաց տարվա նշանավոր իրադարձությունները, գեղ. և այլ բնույթի հոդվածներ:

Առավել տարածված Տ–ներից էր Թեոդիկի ***«Ամէնուն տարեցոյց»***–ը:

Տես նաև ***Պարզապումար***:

ՏԱՐՈՆՑԻ (Սովսիսյան) Սողոմոն Սահակի [27.12.1904, գ. Կոփ (Բիթլիսի նահանգ)–17.7.1971, Երևան], բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ: ***Բենսևի*** որդին: Մշակույթի վաստ. գործիչ (1965): Ավարտել է ԵՊՀ պատմագրության ֆակ–ը (1930):

Լույս են տեսել Տ–ու «Անապաստաններ» (1926), «Առավոտ» (1930), «Սերունդների երգը» (1933), «Դարերի լեզենդը» (1934), «Բանաստեղծություններ» (1940), «Ռազմի շեփոր» (1941), «Պատերազմ» (1942), «Կրակե քառուղիներով» (1944), «Ամպրոպից հետո» (1948), «Մեծ առօրյա» (1953), «Կապույտ հեռուներ» (1956), «Ավելի լույս» (1958), «Ոսկեդար» (1960) պոեմների և բանաստեղծությունների, «Աղավիա» (1936), «Զրույց արևի տակ» (1959), «Նովելներ» (1962), «Մեղրագետ» (1980) պատմվածքների և նովելների ժող–ները, «Երկերը» (հ. 1–2, 1964–65): Ուշագրավ են «Հայրեններ», «Դավթի երգը» (1946), «Միամանթո և Խջեզարե» ժող. ստեղծագործությունների Տ–ու մշակումները: Ռուս–ից թարգմանել է անտիկ շրջանի, Արևելքի և ռուս բանաստեղծների գործերից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ, հրատարակչ. ոլորտի մասնագետ, որը կատարում է տեքստերի տեխ. խմբագրում, համակարգում է էջկապողի ու ռետուշողի աշխատանքները, պատրաստում հրատների տեխ. և գեղ. մակետները: Պատասխանատվություն է կրում տպագրության հանձնվող տեքստերի բովանդակության (ամբողջականություն, ճշգրտություն ևն) և ձևի (կառուցվածք, դիտող. դիզայն, ընկալման հարմարավետություն ևն) ճշտության համար:



«Տարազ», *1890–1919, Թիֆլիս*




«Տարեգրութիւն», *1799–1802, Վենետիկ (1800)*



Սողոմոն Տարոնցու *«Մեղրագետ» (1980, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



«Տեղեկագիր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի», *2003-ից, Երևան*



«Տեղեկագիր Հայաստանի շինարարների միության», *1996-ից, Երևան*



«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Գիտություններ երկրի մասին», *1948-ից, Երևան*



«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Մաթեմատիկա», *1966-ից, Երևան*

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՃՇՊՀ-ի», գիտ. երկամսյա հանդես: ԵՃՇՊՀ-ի հրատ.: Լույս է տեսնում 2006-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Հովհաննես Թոքմաջյան: Խմբագր. խորհուրդ (ներառված են նաև արտերկրի մի շարք հայտնի գիտնականներ): Տպագրում է տեխ., ֆիզմաթ, քիմ., կենսբ. գիտ-ների, տնտեսագիտ-յան, արվեստագիտ-յան, Երկրի մասին գիտ-ների, ճարտ-յան, աշխարհագրության վերաբերյալ հայ., ռուս. և անգլ. հոդվածներ (ամփոփումներով): Տեղեկագրի բովանդակությունը համառոտ ներկայացվում է ՌԴ-ի «Շինարարություն և ճարտարապետություն» (ռուս.) ռեֆերատիվ տեղեկագր. գիտատեխ. պարբ-ում:

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», եռամսյա գիտ. հանդես: Լույս է տեսնում 2003-ից Երևանում: Խմբագիր՝ Դանիել Պետրոսյան: Ներկայացնում է ՀԱԱՀ-ում կատարվող ագրոգիտահետազոտ. աշխատանքները, տպագրում է ոլորտի ճանաչված գիտնականների և երիտասարդ գիտաշխատողների ՀՀ-ի գյուղատնտեսությանը վերաբերող ռուս. և անգլ. հոդվածներ (ամփոփումներով): Հանդեսին թղթակցում են նաև արտերկրի գիտնականներ:

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ», ամենամսյա, ապա՝ երկամսյա հանդես, գիտ. աշխատանքների ժող.: Հայաստանի շինարարների միության «Միդիս-Շար» ընկերության հրատ.: Լույս է տեսնում 1996-ից Երևանում: Խմբագիրներ՝ Անահիտ Սարգսյան, Անահիտ Պողոսյան, Յուրի Սաֆարյան (2011-ից): Տպագրում է գիտ. հոդվածներ, քաղաքաշին. ոլորտին առնչվող օրենսդր. և ենթաօրենսդր. փաստաթղթեր, տեղեկատվ. և այլ նյութեր (հայ., ռուս., անգլ.):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ», գիտ. քառամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1948-ից Երևանում. 1948–57-ին՝ որպես «ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր. Ֆիզիկա-մաթեմատիկական, բնագիտական և տեխնիկական գիտություններ» հանդեսի բաժին, 1957–64-ին՝ «ՀԽՍՀ ԳԱ. Երկրաբանական, աշխարհագրական գիտությունների սերիա» վերնագրով: Խմբագիրներ՝ Հովհաննես Մաղաքյան, Արշալույս Գաբրիելյան, Ն. Դոլուխանովա, Էդուարդ Խաչատրյան, Աշոտ Ալանյան, Բորիս Կարապետյան, Ռուբեն ***Զրեաշյան*** (2001-ից): Տպագրում է տարածաշրջանի երկրաբանության, շերտագրության, հնէաբանության, տեկտոնիկայի, երկրադինամիկայի, երկրաֆիզիկայի, սեյսմաբանության, օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանության, հրաբխականության, մագմայականության և ապարագիտ-յան (պետրոլոգիա), ապարաբանության (լիթոլոգիա), երկրաքիմիայի, հիդրոերկրաբանության, ճարտարագիտ. երկրաբանության, ֆիզ. աշխարհագրության, երկրաձևաբանության, կլիմայաբանության, երկրաբնապահպանության, վտանգավոր երկրբ. երևույթների, երկրատեղեկատվության վերաբերյալ հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով), ինչպես նաև կարծիքներ, համառոտ տեղեկություններ միջազգ. գիտաժողովների ևնի վերաբերյալ:

Գրկ. Մատենագիտական ուղեցույց «Գիտություններ Երկրի մասին տեղեկագրի». 1948–2007, Ե., 2008:

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ», գիտ. երկամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1966-ից Երևանում՝ ռուս.: Խմբագիրներ՝ Մխիթար ***Զրեաշյան***, Ռուբեն Համբարձումյան, Արթուր Սահակյան (2010-ից): Տպագրում է հոդվածներ և ուսումնասիրություններ հիմնարար մաթեմատիկայի տարբեր ուղղությունների վերաբերյալ: Թարգմանվում է անգլ. ԱՄՆ-ի “Alerton Press” հրատարակչությունում և լույս է տեսնում “Journal of Contemporary Mathematical Analysis” (մինչև 1991-ը՝ “Soviet Journal of Contemporary Mathematical Analysis”) վերնագրով:

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՄԵԽԱՆԻԿԱ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1966-ից Երևանում: Խմբագիրներ՝ Նագուշ Հարությունյան, Սերգեյ Համբարձումյան, Վարդգես Գնունի, Արա Ավետիսյան (2005-ից): Տպագրում է առաձգականության մաթ. տեսության, թաղանթների և սալերի, պլաստիկության, սողքի, առաձգամածուցիկության, էլեկտրամագնիսաառաձգականության տեսությունների, աերոհիդրոմեխանիկայի, շարժման կայունության, շին. մեխանիկայի և փորձարար. տեխնիկայի հարցերի վերաբերյալ հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ», գիտ. եռամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ հրատ.: Լույս է տեսնում 1948-ից Երևանում: Խմբագիրներ՝ Սարտին *Կասյան*, Ռադիկ Մարտիրոսյան (1988-ից): Ներկայացնում է ՀՊՃՀ-ի և ԳԱԱ ինստ-ների՝ տեխ. և փորձարար. հետազոտությունների արդյունքները, տպագրում ռադիոէլեկտրոնիկային, լազերային տեխնիկային, մեքենաշինությանը, շին. կառուցվածքներին, հիդրավլիկային, հիդրոտեխ. շինություններին, էներգետիկային, էլեկտրատեխնիկային, գիտ. սարքաշինությանը, չափիչ տեխնիկային, հաշվող. տեխնիկային և տեղեկատվ. ոլորտին, ավտոմատացման ու կառավարման համակարգերին վերաբերող հայ., ռուս. և անգլ. հոդվածներ (ամփոփումներով):

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՀ ԳԱԱ. ՖԻԶԻԿԱ», գիտ. երկամսյա հանդես: ՀՀ ԳԱԱ հրատ.: Լույս է տեսնում 1966-ից Երևանում: Խմբագիրներ՝ Գրիգոր Ղարիբյան, Վլադիմիր Հարությունյան (1993-ից): Տպագրում է ժամանակակից ֆիզիկայի բոլոր բաժինների՝ տես. և կիրառ. գիտների գերբարձր էներգիայով տարր. մասնիկների ֆիզիկայի, նյութի հետ լիցքավորված մասնիկների փոխազդեցության, կիսահաղորդիչների և նրանց տեսակների ֆիզիկայի, կոնդենսված մարմնի ֆիզիկայի, ռադիոճառագայթման և ռադիոէլեկտրոնիկայի, օպտիկայի և քվանտային էլեկտրոնիկայի, քվանտային չափի էֆեկտների, նանոֆիզիկայի, սենսորների և գերհաղորդականության վերաբերյալ հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով): ԱՄՆ-ի «Springer» հրատարակչությունը հանդեսը տպագրում է անգլ.:

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ», գիտ. երկամսյա հանդես: Լույս է տեսնում 1998-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Խանիկ Քերոբյան: Տպագրում է ՏՏ բնագավառի, ճարտարագիտ., տնտեսագիտ., մաթ. մեթոդներին և դրանց կիրառություններին վերաբերող հայ., ռուս., անգլ. հոդվածներ (ամփոփումներով):

ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ Եղիա Կարապետի (8.5.1851, Կ. Պոլիս–19.7.1908, Կ. Պոլիս), գրող, փիլիսոփա, բառարանագիր, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Ներսեյան և Շահնազարյան վարժարաններում: 1882-ին եղել է տեսուչ Կ. Պոլսի վարժարաններում, փիլ. է դասավանդել Հայկ. կրթարանում: 1883–88-ին՝ *«Դրական եւ իմաստասիրական շարժում»*, միաժամանակ՝ *«Երկրագունտ»*, 1886–88-ին՝ *«Տնտես»* ամսագրերի հրատարակիչ-խմբագիր, 1889-ին՝ «Դար» (Կ. Պոլիս) հաս-գրական ժող-ի խմբագիր: Ականատես լինելով հայ ժողովրդի տառապանքներին՝ կորցրել է հոգեկան հավասարակշռությունը և ինքնասպան եղել:

Հրատարակել է «Դամբարան» (1878, ԿՊ, Միքայել Աշճյանի տպ.), «Փիլիսոփայական բառարան ժողովրդական (նախափորձ)» (1879, ԿՊ, Արամյանի տպ.) գրքույկները, կազմել է «Բառարան ֆրանսերէն-հայերէն» (ունեցել է մի քանի հրատ.՝ 1896, ԿՊ, Գարեգին Պաղտատլյանի տպ., 1930, ԿՊ, Հովհաննես Սեթյանի տպ., 1994, Բ.) բառգիրքը, «Գրպանի բառարան. հայերէնէ-գաղղիերէն» (1894, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ., 1925, ԿՊ, Հ. Սեթյանի տպ.):



«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Մեխանիկա», *1966-ից, Երևան*



«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Տեխնիկական գիտություններ», *1948-ից, Երևան*



«Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ. Ֆիզիկա», *1966-ից, Երևան*



«Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», *1998-ից, Երևան*



Եղիա Տեմիրճիպաշյան



Ե. Տեմիրճիպաշյանի *«Ֆրանսերէնէ հայերէն բառարան»-ի (1994, Բեյրութ) գրքի կազմը*



Խ. Մխիթարյանի «Համառօտութիւն իմացական փիլիսոփայութեան» (1883, Զմյուռնիա, **Տետեյանների** *պապ.) գրքի տիտղոսաթերթը*

Լույս են տեսել նաև Տ-ի «Նոր կեանք» (1879, ԿՊ, Արամ Աշճյանի տպ.), «Կրթական խնդրոյն վրայ թուղթ առ պատրիարքն հայոց տէր Ներսէս Վարժապետեան» (1880, ԿՊ, Արամյանի տպ.), «Աղջկանց դաստիարակութեան վրայ ճառ» (1890, ԿՊ, Գ. Պաղտատլյանի տպ.), «Ազգագրութիւն Տէմիրճի-պաշեանց» (1900, Վնն.) փիլ., գեղագիտ., մանկավարժ. աշխատությունները, «Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ» (1955, Փ.), «Հրայրք մութին» (2008, Ստամբուլ) բանաստեղծությունների, պատմվածքների, էսսեների, օրագրերի ժող-ները, «Երկերը» (1986):

Հանդես է եկել նաև Պիծակ, Գրասեր, Ատոմ, Ա. Ազատախոհյան, Մինազն և այլ գրական կեղծանուններով:

Գրկ. **Էսաճանեան Լ.**, *Եղիա Տէմիրճիպաշեան, ԿՊ, 1909:* **Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հ.**, *Եղիա Տէմիրճիպաշեան, իր կեանքը եւ իր գործը, ԿՊ, 1921: XIX դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունից, գիրք 2, Ե., 1980:* **Ասատուր Հ.**, *Դիմապրտներներ, Բ., 1984: Եղիա Տեմիրճիպաշյանի գրական հրապարակախոսական գործունեությունը «Երկրագունդ» հանդեսի էջերում, կազմ.՝ Լ. Բալագյան, Ե., 1984:* **Թոփչյան Ս.**, *Կերպ և իսկություն, Ե., 1987:*

«ՏԵՍԱՆԿՅՈՒՆ», հաս-քաղ., տեղեկատվ., մշակութ. ամսաթերթ: Լույս է տեսնում 2006-ից Նոյեմբերյանում: Հիմնադիր-խմբագիր՝ Ռսկան Սարգսյան: Լուսաբանում է Տավուշի մարզի գյուղատնտ., սոցիալ., կրթամշակութ. առօրյան, անդրադառնում է բնապահպան. խնդիրներին, տպագրում է վերլուծ. հոդվածներ, մարզ. նյութեր, ծանոթացնում է ՀՀ-ում, ԼՂՀ-ում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, հաս-քաղ. կյանքին:

ՏԵՏԵՅԱՆՆԵՐ, **Տետեյան եղբայրներ**, զմյուռնահայ տպարա-նատեր-հրատարակիչներ, խմբագիրներ, թարգմանիչներ: Սովորել են Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում: Տ-ի հայրը՝ Հովհաննես Կարապետի Տետեյանը (1795–1878), զբաղվել է Եվրոպա գյուղատնտ. ապրանքների արտահանությամբ:

Տիգրան Հարություն Տետեյան (10.3.1832–27.12.1868), աշակերտել է ժամանակի նշանավոր մանկավարժ Ա. Փափազյանին: Սովորել է նաև Տրիեստի Մխիթարյան վարժարանում: Աշակերտ. տարիներին զբաղվել է քարտեզագրությամբ: Գրել է բանաստեղծություններ, թարգմանել Ա. Դյումայի, Ժ.-Բ. Մոլիերի և ուր. ստեղծագործություններից: 1852-ին հիմնադրել է տպարան՝ «Տպ. Տետեյան եղբարց» դրոշմատիպով, որը գործել է շուրջ 40 տարի: Տպարանի համար նախապես օգտագործել է Մեսրոպյան վարժարանի տպագր. սարքերը, այնուհետև Եվրոպայից բերել է տվել տառաձուլման և տպագրության սարքավորումներ, մեքենաներ, զարդագրեր ևն: Մայր տառերը գնել է Փարիզից և Վիեննայից: Այստեղ են տպագրվել *«Արփի Արարատեան»* և *«Ծաղիկ»* հանդեսները, ավելի քան 200 անուն գրքեր, դասագրքեր, ձեռնարկներ («Քրիստոնէական վարդապետութիւն ի պէտս նորահաս մանկաց», 1853, «Լուսաւորչակրօն հայու մը ուղիղ դատողութիւնները...», 1854, «Հոռվմէական պարզեւ», 1854, Ժ.-Բ. Մոլիերի «Ագահն», 1854, Հ. Շահինյանի «Տէր իմ Յիսուս», 1855, Ս. Պալապանյանի «Տրամաբանութեան սկզբունք», 1856, «Քերականութիւն հայերէն լեզուի», 1868, Աբբա Պրևոյի «Մանօն-Լեսքօ», 1872, Ա. Դյումայի «Երեք հրացանակիրք», 1872, ևն), Գ. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի, Գ. Մսերյանի, Մ. Նուպարյանի, Խ. Մխիթարյանի («Համառօտութիւն իմացական փիլիսոփայութեան», 1883), Ս. Փափազյանի և ուր. գրքեր, ինչպես նաև Տ. Հ. Տետեյանի բազմաթիվ թարգմանություններ անգլ-ից և ֆրանս-ից. գրքերի զգալի մասը հայ. առաջին թարգմանություններն են: Նրա աշխատասիրությամբ հրատարակվել է «Օսմանեան պատմութիւն» երկը, կազմել է «Այբբենարան» (1864) և «Ընթերցարան» (1864) աշխարհաբար ձեռնարկները, «Քերականութիւն հայերէն լեզուի» (1870) աշխարհաբար աշխատությունը:

Արամ Կարապետ Տետեյան (1822–25.2.1901), 1853-ից զբաղվել է գրական-հրատարակչ. աշխատանքով: Գրել է «Բարեկենդանի անցած ժամեր» (1853) աշխատությունը, երգիծ. բանաստեղծություններ («Թիւ

մէկ ապրիլ», «Անուանակոչութիւն»), թարգմանել է Վ. Շեքսպիրի «Սխալների կատակերգութիւն» (1853), «Վենետիկի վաճառականը» (1862), «Հռոմէոս եւ Ճիւլիեէդդա» (1866), Ժ.-Բ. Մոլիերի «Թարթիւֆ» (1874) պիեսները ևն: Սեփական գործերը («Ումպք գրասիրութեան», 1863, ևն) ունեն ուսուցող. բնույթ (հանելուկներ, գլուխկոտրուկներ, խորհուրդներ ևն): 1862-ին հրատարակել է «Դիմակ» պարբ-ը:

1859-ին Տ. Հ. և Ա. Կ. Տետեյանների, Տ. Սավալանյանի, Գ. Կոստանյանի, Ս. Վանանդեցու և ուր. նախաձեռնությամբ հիմնադրվել է կրթ-մշակութ. «Հաշտենից ընկերությունը», 1860-ին՝ ընկերության պաշտոնաթերթ *«Միութիւն»* («Հանդէս Հաշտենից») հանդեսը:

Հայկ Հակոբ Տետեյան (ծ. թ. անհտ–1909), թղթակցել է «Բուրաստան ս. Սահակեան» և «Ծաղիկ» հանդեսներին: Նրա թարգմանությամբ լույս են տեսել «Երեսուն եւ երեք ծաղրաբանութիւնք Նասրետտին խօճայի» (1854, 1858) գիրքը, «Հասկաքաղ աղջիկը» (1855) թատերախաղը, Վ. Հյուգոյի «Անճելօ» (1863) դրաման, Է. Սյուի «Գաղտնիք Փարիզու» (1863) վեպը: Հորինել և նոտագրել է զինվոր. «Օսմանական քայլերգը» («Մարշ Օսմանիե»): Թարգմանել և մամուլում հրապարակել է «Հազար ու մի գիշեր» ժող-ի հեքիաթներից:

Ստեփան Տետեյան (1823–2.10.1906), հաս. գործիչ: Նպաստել է Տետեյան տպարանի գործունեությանը, զմյուռնահայ գրողների ստեղծագործությունների տպագրությանը: Հայ. է թարգմանել Ժ.-Ժ. Ռուսոյի գործերից:


Սարգիս Տետեյան (ծ. և մ. թթ. անհտ), աջակցել է եղբայրներին՝ խմբագրելու և հրատարակելու «Արփի Արարատեան» պարբ-ը:

Գրկ. Նուպարեան Մ., *Տիգրան Յարութիւն Տետէեան, «Արեւելեան մամուլ», 1901, № 1, 3–5:* Ճինգոզյան Կ., *Էջեր XIX դարի 50–60-ական թվականների զմյուռնահայ գրական շարժման պատմությունից, «ՊՀՀ», 1982, № 2:* Հակոբյան Մ., *Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839–1860 թթ.), Ե., 1984:*

ՏԵՏՐ պոլիգրաֆիայում (< միջին հուն. tetradion – թերթի քառորդ մասը), թղթի՝ մեկ կամ մի քանի անգամ ծալած, տպագրված (կամ առանց տպագրության) թերթ: Ծալքերի թիվը կախված է հրատ-յան ծավալից և տպագրության եղանակից (2 ծալքի դեպքում՝ 8, 3-ի՝ 16, 4-ի՝ 32 էջ): Տ-երի (որոնք նաև մամուլներ են) 1-ին էջերին նշվում են նրանց մամլանիշերը (հերթական համարը ***գրքի բլոկում***) և մամլագրերը (հրատ-յան անվան, վերնագրի ևնի համառոտագրությունը) մեքենական քաղն իրականացնելու համար: Մամուլի նվազ ծավալով Տ-երը կոչվում են կոտորակային, մակաասնձված կամ կցված թերթի ներդիրներով, միջադիրներով, հավելվածներովը՝ բարդ:

«ՏԵՏՐԱԿ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՌՕԶԱՐԻՆ...», Սբ Աստվածածնին նվիրված գիրք: Առաջին անգամ տպագրվել է 1735-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Տետրակ ամենասուրբ Ռօզարի. այսինքն Վարդարանի: Որ ասացեալ լինի ի պատիվ ամենասրբուհւոյ Աստուածածնին» (48 էջ, 8º, 12,5 x 7 սմ):


Վերահրատարակվել է 1753-ին Վենետիկում՝ Ստեֆանո Օռլանդոյի տպարանում, 1781-ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում (72 էջ), 1787-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում (72 էջ, 12º, 9 x 4,7 սմ), 1794-ին Վենետիկում՝ Սբ Ղազարի տպարանում (72 էջ, 12º և 6º, 9,5 x 5,2 սմ):


ՏԵՏՐԱԿ
ԱՄԵՆ ՆԱՄԱՒՈՐ
ՌՕԶԱՐԻՆ
Տպագրեալ Վենետիկ
Դ ԹՐԵՍՏ

«Տետրակ ամենասուրբ Ռօզարին...» *(1787, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*

«ՏԵՏՐԱԿ Ի ՊԷՏՍ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ», վաճառականների համար նախատեսված գիրք: Անգլ-ից թարգմ.՝ Աստվածատուրի: Տպագրվել է 1797-ին Կալկաթայում՝ Հովհաննես Ստեփանոսյանի տպարանում (102 էջ, 4º, 17,8 x 11,6 և 19,4 x 12,2 սմ):


«ՏԵՏՐԱԿ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ», Սահակ Սոֆյալյանի հայ. և հայատառ թուրք. գիրքը: Տպագրվել է 1791-ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Տետրակ ներողութեանց. տաճկէվար» (45 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ):


ՏԵՏՐԱԿ
ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ
Դ ՎԵՆԵՏԻԿ

Սահակ Սոֆյալյանի **«Տետրակ ներողութեանց»** *(1791, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



Շահամիր Շահամիրյանի **«Տետրակ որ կոչի Նշաւակ»** *(1783, Մադրաս) գրքի տիտղոսաթերթը*



Ռ. Էմերսոնի «Տիպար մարդիկ...» (հ. Ա, 1913, Կ. Պոլիս, թարգմ.՝ **Երվանդ Տեր-Անդրեասյանի***) գրքի տիտղոսաթերթը*



Վահան Տեր-Առաքելյան

«ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉԻ ՆՇԱՒԱԿ», Շահամիր *Շահամիրյանի* կազմած Հնդկաստանի Մադրաս քաղաքի հայ գաղութի ինքնավարության կանոնադրությունը, որով սահմանվում էր համայնքի աշխարհիկ և հոգևոր կյանքի կառավարման կարգը: Տպագրվել է 1783–84-ին Մադրասում՝ Հակոբ Շահամիրյանի անվ. տպարանում (80 էջ, 4º, 16,3 x 10,5 սմ):

ՏԵՐ-ԱՂԵՔՍԱՆԴՐՅԱՆ Գևորգ Դավթի (1840, Թիֆլիս–3.2.1890, Թիֆլիս), բանահավաք-ազգագրագետ, գրող, խմբագիր: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1860), ապա՝ դաս. գիմնազիայում: 1866–67-ին՝ *«Վաճառական»* (Թիֆլիս) պարբ-ի խմբագիր-հրատարակիչ: «Մեղու Հայաստանի», «Կռունկ Հայոց աշխարհին», «Արձագանք», «Նոր-Դար» պարբ-ներում տպագրվել են Տ-Ա-ի չափածո և արձակ գործերը, հոդվածները, գրախոսություններն ու թարգմանությունները:

Լույս է տեսել Տ-Ա-ի «Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը» (1885, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) բանահյուս. նյութերի ժող-ը. պարունակում է շուրջ 6700 առած-ասացվածք, երգ, հեքիաթ, հանելուկ, աղոթք, անեծք ևն:

Հանդես է եկել նաև Դաբաղ Ղաղո, Շաքար Սանուշակյանց, Գևո Ավետիսով, Աղվինինց Դավիթ գրական կեղծանուններով:

ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Երվանդ Գրիգորի [9(21).11.1865, Պարտիզակ–26.4.1945, Լիոն], բանասեր, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր: Կրթությունն ստացել է Պարտիզակում: 1882-ից եղել է ուսուցիչ: 1895-ից, ուսուցչությանը զուգընթաց՝ «Թերթիկ» (1906), ***«Արեւելք», «Հիւզանդիոն», «Առաւօտ», «Մանզումէի էֆքեար»*** օրաթերթերի խմբագրապետ: 1918–19-ին՝ «Նոր կեանք» (Կ. Պոլիս) օրաթերթի հրատարակիչ:

Կազմել է հայ գրակ-յան «Ծաղկաքաղ» (1889) ձեռնարկը և «Քերականական գրոյցներ» գիրքը, աշխարհաբարի է փոխադրել շարականներ («Շարականք հայ Ս. եկեղեցւոյ», հ. 1, 2, 1902, 1904, ԿՊ, Սարյան և ընկ. տպ.), թարգմանել Ռ. Էմերսոնի «Տիպար մարդիկ...» (հ. Ա-Գ, 1913, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.), Է. Հոֆմայսթրի «Հայաստանի մէջէն: Քսենոփոնի արշաւանքը մինչեւ Սեւ ծով» (1913, ԿՊ, ա. տպ.) աշխատությունները, Ք. Մոնթեբենի «Ալիսի սիրահարը» (1926, ԿՊ, Մ. Տեր-Սահակյանի տպ.), Ֆ. Վերֆելի «Մուսայ լերան քառասուն օրերը» (հ. 1–2, 1935) և շվեյցարացի գրող Կ. Բրեֆինի «Քրիստոս Ինքնակալ» [«Առիւծարքայն Հայոց Տրդատէս» (1967) ենթավերնագրով] վեպերը:

Հանդես է եկել նաև Ետան, Տարազ, Ահուրամազդա գրական կեղծանուններով:

Գրկ. Արծաթագիրք Երուանդ Տէր-Անդրէասեանի, վկայութիւններ հայ գրողներու եւ մտաւորականներու կողմէ, Փ., [1944]:

ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Հրանտ Միհրանի (22.10.1892, Պարտիզակ–11.9.1978, Ստամբուլ), գրականագետ, պատմաբան, թարգմանիչ: Ավարտել է Կ. Պոլսի համալսարանը: 1913–24-ին՝ ուսուցիչ-տնօրեն Ռոդոսթոյի և Կ. Պոլսի ազգ. վարժարաններում, 1925–63-ին դասավանդել է Պեզազյան և Միխիթարյան դպրոցներում, 1963–72-ին՝ Կեդրոն. վարժարանի տնօրեն, միաժամանակ՝ դասախոս Ստամբուլի համալսարանում, որտեղ զբաղվել է նաև թուրք. պատմագրությանն առնչվող հայկ. աղբյուրներով:

Տ-Ա. թուրք. է թարգմանել Ե. Քյոմուրճյանի «Պատմություն Ստամպոլո» (ծնթգր.՝ Տ-Ա-ի, հ. 1–3, 1952), Ղ. Ինճիճյանի «Ստամպոլ» (1956, 1976), Գ. Ակներցու «Պատմություն ազգին նետողաց» (1954), Սիմեոն Լեհացու «Ուղեգրություն, տարեգրություն և հիշատակարանք» (1964), Գ. Օղուլլուխյանի «Ժամանակագրություն» (1972), Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրություն Նադիր Շահի» (1974) և այլ երկեր: Թարգմանություններ է արել նաև ֆրանս-ից, անգլ-ից, ռուս-ից:

Լույս են տեսել Տ-Ա-ի «Պատմության վերաբերյալ հայկական աղբյուրներ» (1950), «Ջալալիների ապստամբություններն ըստ հայկական մի աղբյուրի» (1963), «ԺԴ և ԺԵ դդ. թուրք. պատմության վերաբերյալ հայերեն մանր ժամանակագրություններ և հիշատակարաններ» (1973, բոլորը՝ թուրք.) աշխատությունները:

ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ Վահան Խաչատուրի [24.8 (5.9). 1883, գ. Մալիշկա (այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում)–2.5.1941, Ուխտա (այժմ՝ ՌԴ Կոմի ԻՀ-ում), անհատի պաշտամունքի զոհ], երգիչ (տենոր), թարգմանիչ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1901–05): 1908-ին

դասավանդել է ճեմարանում: 1909-ին տեղափոխվել է Ս. Պետերբուրգ, սովորել կոնսերվատորիայում և համալսարանում, երգել Մարիինյան թատրոնի և տեղի հայկ. եկեղեցու երգչախմբերում: 1918-ի մայիսից ծառայել է Հայաստանում, մասնակցել Սարդարապատի ճակատամարտին: 1921-ից բնակվել է Թիֆլիսում:

Տ-Ա. թարգմանել է Դ. Ֆուրմանովի «Խռովություն» (1934), Յ. Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները» (1936), Լ. Տոլստոյի «Աննա Կարենինա» (1957) վեպերը ևն: Լույս է տեսել Տ-Ա-ի «Կոմիտաս» (1931) հուշերի ժող-ը:

Հանդես է եկել նաև Անտունի գրական կեղծանունով:

Երկ. Վահան Տեր-Առաքելյան (նյութերի ժող.), Ե., 1998:

ՏԵՐ-ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Տեր-Ասատուրով) Պողոս Հովհաննեսի (Պոլ Ասատուր, 1866–1916), նկարիչ: Հեղինակ է նշանավոր հայ գործիչների դիմանկարների, գծանկարների (մատիտանկար, գրչանկար), գրքի պատկերազարդումների (Րաֆֆու «Մինն այսպես, մյուսն այնպես» վեպի 6 նկարազարդում): Հրատարակել է «Գեղարուեստական ալբոմ հայազգի գործիչների» (1891, Թ., Կ. Մեսխիևի գրատուն, 20 դիմանկար, վիմագրություն) ալբոմը:

ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆ Սմբատ Վարդանի [8.10.1875, գ. Բարանա (այժմ՝ ք. Նոյեմբերյան՝ ՀՀ Տավուշի մարզում)–27.2.1943, Երևան], պատմաբան, հնագետ, մատենագետ: Պատմ. գիտ. դ-ր (1936): Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1894–98), Ս. Պետերբուրգի համալսարանում (1901–04): 1925–31-ին՝ Կովկասի հնագիտ. ինստ-ի (Թիֆլիս) փոխտնօրեն, 1931–34-ին՝ ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան բաժանմունքի գիտքարտուղար, 1937-ից՝ ԱրմՖԱՆ-ի հնագիտ-յան բաժանմունքի վարիչ, միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում (հնագիտ-յան ամբիոնի վարիչ):

1902-ին Տ-Ա. գործուղվել է Պարսկաստան՝ ուսումնասիրելու Նոր Ջուղայի հայկ. ձեռագրերը. նկարագրել է մոտ 600-ը և կազմել Նոր Ջուղայի հայկ. ձեռագրերի («Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հ. 1, հրտ.՝ 1970), հետագայում՝ նաև Ստեփանոս Նախավկա վանքի 300 ձեռագրի ցուցակները: Հավաքել է Հայաստանի և հայ գաղթավայրերի հայկ. վիմագիր արձանագրությունները և կազմել ժող.: 1915–17-ին Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում հավաքել է 1000-ից ավելի ձեռագրեր, պատմ. վավերագրեր և ազգագր. նյութեր:

Լույս են տեսել Տ-Ա-ի «Նադիր Շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու)» (1940) աշխատությունը, «Հայագիտական հետազոտություններ» (2010) ժող-ը:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Գրիգոր (Գիգի) Արամի (15.1.1916, Երևան–5.11.1981, Երևան), դրամատուրգ, խմբագիր: Արվ. վաստ. գործիչ (1962): Ավարտել է ԵՊԻ շին. (1939) և ՀՊՄԻ պատմ. (1947) ֆակ-ները: 1951–55-ին՝ ՀԳՄ վարչության քարտուղար, միաժամանակ՝ ***«Գրական թերթ»***-ի, 1955–81-ին՝ ***«Ոզնի»*** երգիծ. հանդեսի խմբագիր:

Գրել է դրամաներ, կատակերգություններ («Այս աստղերը մերն են», 1949, համահեղ., «Սոֆիկի սխալը», 1956, «Գարնան անձրև», 1959, «Իմ սիրելի Ժորժ», 1963, «Ա՛խ ներվեր, ներվեր», 1969, «Հաջի Փայլակ», 1973, «Զգուշացեք, նա դեռ կա», 1979, «Միջնաբերդ», 1980, ևն), որոնց մեծ մասը բեմադրվել է: Լույս են տեսել Տ-Գ-ի «Գարնան անձրև» (1962), «Տասը տարի» (1969), «Իմ խեղճ Պորտոս» (1977), «Ամեն ինչ կամ ոչինչ» (1987) պիեսների ժող-ները:

Գրկ. Մեր Գիգին. Գրիգոր Տեր-Գրիգորյանը (կազմ.՝ Խ. Ավագյան), Ե., 1983:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Էմին Հովակիմի (1855, Երևան–1939, Երևան), դրամատուրգ, մշակույթի գործիչ, հրատարակիչ: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում: Եղել է Հայաստանի Առաջին պետթատրոնի (այժմ՝ Գ. Սունդուկյանի անվ.) հիմնադիրներից: Համագործակցել է Երևանում առաջին տպարանի (1876) հիմնադիր Զաքարիա ***Գևորգյանի*** հետ, իսկ 1880-ական թթ-ի կեսից դարձել է տպարանի սեփականատերը. տպարանը գործել է մինչև 1910-ական թթ-ի սկիզբը, տպագրել է շուրջ 30 անուն գիրք, գլխավորապես՝ Տ-Գ-ի հեղինակային և թարգման. գործերը, նաև ***«Հայկական աշխարհ»*** ամսագրի



Սմբատ Տեր-Ավետիսյանի *«Հայագիտական հետազոտություններ» (2010, Ե., «Գիտություն») գրքի կրկնաշապիկը*



Գրիգոր Տեր-Գրիգորյան



Էմին Տեր-Գրիգորյան



Մերուժան Տեր-Գուլանյան



*«Անդին» (գլխ. խմբագիր՝ **Մ. Տեր-Գուլանյան**, № 1, 2015) հանդեսի շապիկը*



*«Հայելի վարուց» (աշխատասիր.՝ **Քնարիկ Տեր-Դավթյան-Արևշատյանի**, 1994, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*

վերջին համարը (1879), ***«Պնակ»*** շաբաթաթերթի առաջին համարները, ***«Երևանի յայտարարութիւններ»*** (խմբագիր՝ Տ–Գ.) թերթը:

Լույս են տեսել Տ–Գ–ի «Թռչնիկ» (1876, Ե., Զ. Գևորգյանի տպ.) բանաստեղծությունների ժող–ը, «Մօղա» (1880), «Կռուապատճառը ես էի» (1881), «Խէչոյի թուզը» (1882) վոդևիլները, «Սէր կամ մահ» (1882), «Վայրենի» (1894) կատակերգությունները, «Զրկանքի զոհ» (1886) և «Բարեգործութեան դիմակի տակ» (1895, բոլորը՝ Տ–Գ–ի տպ.) դրամաները նն:

Գրկ. Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 2, Ե., 1964:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Զալալ Հովհաննեսի [21.4.1866, գ. Մաղավուզ (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանում)–31.8.1940, գ. Մաղավուզ], մանկավարժ, թարգմանիչ: ՀԽՍՀ աշխատանքի հերոս (1931): Սովորել է Շուշիի ռեալ. ուսումնարանում, Թիֆլիսի ուսուցչ. ինստ–ում: Ուսուցիչ և տեսուչ է եղել Ախալքալաքում, Ստավրոպոլում, 1922–ից՝ Զալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան), Դիլիջանում: Աշխատակցել է «Մշակ», «Նոր-Դար», «Տարազ», «Մուրճ» և այլ պարբ–ների՝ Սալլյումյան և այլ գրական կեղծանուններով:

Լույս է տեսել Տ–Գ–ի «Հենրիխ Պեստալոցցի» (1912, Թ., «Հերմես» տպ.) կենսագր. ակնարկը: Հեղինակ է վիպակների, ակնարկների, հոդվածների, թարգմանել է Վ. Շեքսպիրի, Է. Սետոն-Թոմպսոնի «Կաղլիկ քոթոթը» (1912, Թ., «Հերմես» տպ.), Ա. Ֆրանսի «Երեք դար ու կէս յետոյ...» (1912, Ալեք–պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.), Ա. Արբատովի, Ս. Պշիբշևսկու, Ն. Գոգոլի, Մ. Գորկու և ուր. ստեղծագործություններից:

ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ Մերուժան Սարգսի [ծ. 29.11.1948, գ. Գոման (Վրաստանի Ախալքալաքի շրջան)], գրող, հրապարակախոս, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1973): 1973–ից աշխատել է ***«Գարուն»*** ամսագրի խմբագրությունում, 1986–90–ին՝ գլխ. խմբագիր, 1990–96–ին՝ ***«Ասպնջական»*** թերթի հիմնադիր–խմբագիր, 2006–09–ին՝ ***«Դե ֆակտո»*** ամսագրի խմբագիր, 2012–ից՝ «Անդին» գրական-գեղ., հաս., քաղ. ամսագրի հիմնադիր–խմբագիր: 1997–2004–ին՝ «Ար» հեռուստաընկերության հիմնադիր–նախագահ, 2009–11–ին՝ «Արարատ» հեռուստաընկերության տնօրեն, 2011–ից՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ:

Լույս են տեսել Տ–Գ–ի «Սաղամո լիճը» (1978), «Տղամարդկանց երկիր» (ռուս., 1982), «Մնացող հողն ու գնացող մարդիկ» (1983), «Զրո ժամ» (1995) պատմվածքների, էսսեների, փաստագր. վիպակների, «Գիշերային վարդ» (2002), «Յավի որսորդը» (2005) բանաստեղծությունների ժող–ները:

Լուիզիանայի համալսարանի (ԱՄՆ) փիլ–յան պատվ. դ–ր (1990):

ՀԼԿԵՄ կենտկոմի (1978), ՀԳՄ Մ. Նալբանդյանի անվ. (1980) մրց–ներ, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ (2011), Զավախքի և Երևան ք–ի պատվ. քաղաքացի (երկուսն էլ՝ 2014):

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ-ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Քնարիկ Սուրենի (ծ. 6.9.1926, Թավրիզ), բանասեր–պատմաբան, թարգմանչուհի: Բանասիր. գիտ. դ–ր (1996): Ավարտել է ԵՊՀ (1950): 1972–ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ–յան ինստ–ում:

Լույս են տեսել Տ–Դ–Ա–ի «XI–XV դարերի հայ վարքագրությունը» (1980), «Վկայաբանություն և վարք» [«Հայ միջնադարյան գրականության ժանրեր» (1984) ժող.] աշխատությունները, կազմել և իր աշխատասիրությամբ հրատարակել է «Աղբյուրներ միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների պատմության (XII–XV դդ.)» (ռուս., 1983), «Հայելի վարուց» (1994), «Բանք իմաստասիրաց» (2001) ուսումնասիրությունները: Ռուս. թարգմանել է վարքեր, վկայաբանությունների բնագրեր, գրել առաջաբանները և ծանոթագրել [Անանիա Շիրակացի, «Տիեզերագիտություն», 1962, «Հայ վարքագրական հուշարձաններ», 1973, «Հայկական վարքեր և վկայաբանություններ. V-XVII դդ.», 1994, «Վկայաբանութիւն սրբոյ Հռիփսիմեանց», 1996, «Հայկական վարքեր (V–XV դդ.)», 1996, «Հայոց նոր վկաները (1155–1843 թթ.)», 1998]:

ՏԵՐ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Ստեփան Պետրոսի [1848, գ. Բանանց (Գանձակի գավառ, այժմ՝ Ադրբեջանի Դաշքեսանի շրջանում)–1922, Թիֆլիս], գրահրատարակիչ, գրավաճառ: Սովորել է Յաղուլովի դպրոցում (Թիֆլիս): 1866–ին հիմնադրել է Թիֆլիսի կենտր. գրավաճառանոցը,

որը խոշորագույնն էր Կովկասում: Հրատարակել է հայ. և ռուս. գրքեր, հայկ. դպրոցների համար դասագրքեր, բառարաններ, հայ-ի ինքնուսույց (ռուս.), հայ և այլազգի հեղինակների երկեր (Եղիշեի «Վասն Վարդանայ...», Ջիվանու «Երգերի» 1-ին հրատ-ը, Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» ևն): Լույս է ընծայել նաև վաճառվող գրքերի և իր հրատ-ների 10-ից ավելի ուղեցույց-գրացուցակներ: 1921-ին, Վրաստանի խորհրդայնացումից հետո, գրավաճառանոցի հիմքի վրա ստեղծվել է «Սախելգամի» հրատարակչությունը:

ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Արտաշես Համազասպի (16.6.1931, Բեյրութ–5.12.1993, Բեյրութ), մանկավարժ, մատենագետ, խմբագիր: Սովորել է Անթիլիասի դպրեվանքում (1945–49), ավարտել Բեյրութի ամերիկյան համալսարանը (1965): 1856–58-ին դասավանդել է Հալեպի Ալեպո քոլեջում, 1957–60-ին՝ Կարնեն Եփփե ճեմարանում, 1960–83-ին՝ Բեյրութի Հայ ավետարանական քոլեջում, 1983-ից՝ Համազգ. հայագիտ. բարձրագույն ուս. հաստատությունում, 1980–84-ին, միաժամանակ՝ *«Հասկ»* տարեգրքի խմբագիր:

Լույս են տեսել Տ-Խ-ի «Հայ մամուլի ցուցահանդէս (1794–1964)» (1964), «Հայ տպագրութեան նախակարապետը՝ Մեղապարտ Յակոբ» (1966), «Շահան Պէրպէրեան (1891–1956): Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն» (1969), «Մատենագիտութիւն Լեւոն Շանթի» (1969), «Լիբանանահայ մամուլի յիսուն տարին (1921–1971)» (1971), «Սուրիահայ մամուլի պատմութիւն» (1972), «Մատենագիտութիւն Ռուբէն Զարդարեանի» (1977), «Հայ մամուլի մատենագիտական գործեր» (2014), «Հայ գիրքի մատենագիտական գործեր» (2014) մատենագիտ. աշխատությունները, «Ուղղագրական ուղեցոյց»-ը (1962), «Հայոց լեզվի նոր բառարանը» (համահեղ., 1968):

Գրկ. Արտաշէս Տէր Խաչատուրեան. 1931–1993: Մարդը եւ գործը, Բ., 2008:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Արամ Նահապետի (24.7.1928, Կահիրե–10.2.1988, Երևան), պատմաբան, աղբյուրագետ: Պատմ. գիտ. դ-ր (1973), պրոֆ. (1983): Ավարտել է ԵՊՀ (1954): 1958–81-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի ավագ գիտաշխատող, 1981–88-ին՝ ԳԱ արևելագիտ-յան ինստ-ի բաժնի վարիչ:

Լույս են տեսել Տ-Ղ-ի «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» (1965, անգլ.՝ 1976), «Հայաստանը և արաբական խալիֆայությունը» (ռուս., 1977), «Հայաստանը VI–VIII դարերում (Արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում)» (1996) աշխատությունները: Թարգմանել և «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով հրատարակել է «Իբն ալ-Ասիր» (1981), «Արաբական աղբյուրներ Գ. Արաբ մատենագիրներ: Թ–Ժ դարեր» (2005) երկերը: Աշխարհաբարի է փոխադրել, ներածությամբ և ծանոթագրություններով հրատարակել Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» (1983), Ղևոնդի «Պատմությունը» (1982):

Սիրիայի գիտ-յան պատմության ինստ-ի պատվ. անդամ (1982), Հռոմի «Տիբերինա» ակադ-ի թղթ. անդամ (1986):

Երկ. Հոդվածների ժողովածու, Ե., 2003:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Երվանդ Գալուստի [7(19).11.1879, գ. Հառիճ (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզում)–12.7.1974, Երևան], բանասեր, պատմաբան, բառարանագիր, խմբագիր: Փիլ-յան (1904) և բանասիր. գիտ. (1943) դ-ր, պրոֆ. (1945): Գիտ. վաստ. գործիչ (1959): Էջմիածնի միաբանության վարդապետ (1905-ից): Լիլիա *Տեր-Մինասյանի* հայրը: Սովորել է ծննդավայրում (1892), Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում (1900–04): Դասավանդել է Գևորգյան ճեմարանում, եղել Էջմիածնի տպարանի տնօրենն: 1910-ին հրաժարվել է հոգևոր կոչումից, զբաղվել գիտամանկավարժ. գործունեությամբ: 1918–19-ին՝ «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս) օրաթերթի խմբագրակազմի անդամ: 1921-ին նշանակվել է Էջմիածնի կուլտուրպատմ. ինստ-ի (հետագայում՝ Հայաստանի պատմության ինստ.) գիտքարտուղար: 1921–22-ին՝ ինստ-ի «Բանբեր» տարեգրքի խմբագիր, 1943–49-ին՝ ԵՊՀ օտար լեզուների ամբիոնի վարիչ:



Արտաշես Տեր-Խաչատուրյանի *«Հայ մամուլի մատենագիտական գործեր» (2014, Բեյրութ) գրքի կազմը*



Արամ Տեր-Ղևոնդյանի *«Հայաստանը VI-VIII դարերում...» (1996, Ե., «Գիտություն») գրքի կազմը*



Երվանդ Տեր-Մինասյան



Ե. Տեր-Մինասյան *«Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ» (1908, Վաղ-պատ) գրքի փիփղոսաթերթը*



Գալուստ Տեր-Մկրտչյան



Գ. Տեր-Մկրտչյանի *«Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն» (1896, Վաղպատ) գրքի կազմը*

Տ-Մ. տպագրել է 1904-ին Երևանի Սբ Աստվածածին մայր եկեղեցում իր հայտնաբերած Իրենիոս Լուգդոնացու (II դ.) «Ցոյցք առաքելական քարոզութեանն» (Կարապետ *Տեր-Մկրտչյանի* հետ, 1907, Լայպցիգ, գերմ. և հայ. զուգադիր տեքստերով, պրոֆ. Ա. Հառնակի վերջաբանով և ծնթգր-ով), Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» (Կ. Տեր-Մկրտչյանի հետ, 1908, Լայպցիգ) աղբյուրագիտ-բնագրագիտ. երկերը. 2 երկերի հուն. բնագրերը կորել են: 1957-ին հրատ-յան է պատրաստել Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի քնն. բնագիրը՝ զուգահեռ աշխարհաբարի փոխադրությամբ:

Լույս են տեսել Տ-Մ-ի «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ» (1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., 2009), «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» (հ. 1, «Հին եկեղեցին», 1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., 2013), «Կրօնների պատմութիւն» (1909, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ոսկեդարի հայ գրականությունը» (1946), «Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին» («ԲՄ», 1964, № 7), «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» (1968), «Պատմա-բանասիրական հետազոտութիւններ» (1971), «Հայոց եկեղեցին» (2014) աշխատությունները, «Հուշեր իմ կյանքից» (2005) հուշագրությունը, «Հոդվածներ» (2011) ժող-ը: Կազմել է «Ռուս-հայերեն նոր բառարանը» (հ. 1, 2, 1933, 1935), «Հայ-ռուսերեն բառարանը» (1947, երկուսն էլ՝ համահեղ.), «Օտարազգի դարձվածքների գրպանի բառգրքույկը» (1935):

Գրկ. Երվանդ Տեր-Մինասյան: Կենսամատենագիտություն (կազմ. և առաջաբ.՝ Ա. Սրապյանի), Ե., 1986:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Լիլիա (Լիլի) Երվանդի (18.5.1921, Վաղարշապատ–27.5.1998, Երևան), թարգմանչուհի, գրականագետ: Վաստ. ուսուցիչ (1967): Երվանդ *Տեր-Մինասյանի* դուստրը: Ավարտել է ԵՊՀ (1943) և ԵՌՕԼՄԻ (1971): 1943–80-ին դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում, 1967–75-ին, միաժամանակ՝ ԵՊՀ-ում:

Տ-Մ. ռուս. է թարգմանել Ա. Սահինյանի («Ծարավ», 1956), Ժ. Ավետիսյանի («Չար ու բարի օրը»), Վ. Արամյանի («Հետաքրքրասիրություն», «Արահետներ»), ռուս-ից հայ.՝ Ֆ. Դոստոևսկու («Դեռահասը», 2003), Կ. Պաուստովսկու («Պատմվածքներ», 1958), Յ. Նագիբինի, Բ. Վասիլևի, գերմ-ից հայ.՝ Յ. Վ. Գյոթեի («Ռայնեկե աղվեսը», 1979, «Երիտասարդ Վերթերի տառապանքները», 1981), Ֆ. Վերֆելի («Վերդի», 1986), Է. Հիլզենռաթի («Վերջին մտքի հեքիաթը», 2007) և դաս. ու ժամանակակից այլ գրողների ստեղծագործություններից:

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ (Տեր-Սարգսյան) Գալուստ Մկրտչի [9(21).4.1860, գ. Ծուղրութ (այժմ՝ Վրաստանի Ախալցխայի շրջանում)–3.7.1918, Էջմիածին], հայագետ, պատմաբան, բնագրագետ-աղբյուրագետ, խմբագիր: Սովորել է Ախալցխայի Կարապետյան դպրոցում, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1874–78), ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1881), Փարիզի Քաղ. գիտ-ների ազատ դպրոցի հասարակագիտության բաժանմունքը (1884), եղել Սյունիքենի համալսարանի ունկնդիր: 1878–81-ին դասավանդել է Շամախու և Ախալցխայի դպրոցներում: Աշխատակցել է «Մեղու Հայաստանի» պարբ-ին: 1887-ից՝ Սբ Էջմիածնի միաբանության անդամ: 1892–94 և 1902-ին՝ Մայր աթոռի *«Արարատ»* ամսագրի խմբագիր, որտեղ և տպագրել է իր մի շարք հայագիտ. ուսումնասիրություններ: Եղել է «Շողակաթ» գիտ. ժող-ի (Էջմիածին,1913) խմբագր. խորհրդի անդամ:

Լույս են տեսել Տ-Մ-ի «Ուրարտեան բեւեռագրերի լեզուն» (1893, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Ղազար Փարպեցու ձեռագրերը» (1902, նույն տպ.), «Փավստոսի ձեռագրերը» (գերմ., 1904), «Տիմոթէոս Կուզի «Հակաճառութեան» հայ թարգմանութեան ժամանակը...» (1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Հայ մատենագրութեան հնագոյն թուականները» (1913, «Շողակաթ» գիտ. ժող.) աշխատությունները, «Հայկականք» (Ա–ԺԲ, 1894, ԺԳ–ԺԹ, 1899, նույն տպ.) հոդվածաշարը: Ստեփան *Մալխասյանցի* աշխատակցությամբ կազմել և հրատարակել է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (1904), Հրաչյա *Աճառյանի* հետ՝ «Քննութիւն եւ համեմատութիւն Եզնկայ նորագիւտ ձեռագրին» (1904, Վնն.), Ստեփան *Գանձյանի* հետ՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» (1909, երկուսն էլ՝ Թ., Մնացականի Մարտիրոսյանի տպ.) երկերի քննահամեմատ. բնագրերը: Հայտնաբերել

և հրատարակել է հայ մատենագրությանն անծանոթ կամ կորած համարվող բնագրեր, զբաղվել է հայ մատենագրության պատմության ուսումնասիրությամբ («Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն», 1896, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.): Հրատարակվել է նաև Տ-Մ-ի «Հայագիտական ուսումնասիրություններ» (առաջաբ. և ծնթգր.՝ Պ. Հակոբյանի, հ. 1, 2, 1979, 1998) ժող-ը:

Պահպանված պատառիկների համադրման միջոցով Տ-Մ. վերականգնել է V դ-ում Աբրահամ Խոստովանողի թարգմանած «Վկայք Արևելից» ժող-ը («Աբրահամ Խոստովանողի Վկայք Արևելից», 1921, Էջմիածին, Գիտ. ինստ-ի տպ.), կազմել է «Գալուստ Տեր-Մկրտչյանի նամակները Նիկողայոս Մառին» նամականին [«Մառը և հայագիտության հարցերը» (1968) ժող-ում], «Մնացորդք թղթոց Միաբանի», «ԲԵՀ», 1970, №3) ժող-ը: Թարգմանել է Է. Ռեկլյուի բազմահատոր աշխարհագրության՝ հայերին ու Հայաստանին վերաբերող հատվածները: Տ-Մ-ի արխիվը պահվում է Մատենադարանում:

Հանդես է եկել նաև Միաբան և Տ. Ս. կեղծանուններով:


Գրկ. **Մեսրոպ եպիսկոպոս (Տէր-Մովսիսեան Մ.),** *Գալուստ Տէր-Մկրտչեան (Միաբան), «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք 1–2, Վաղ-պատ, 1921–22:*

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Կարապետ [1866, գ. Յղնա (այժմ՝ Նախիջևանում)–19.11(2.12).1915, Բաքու], պատմաբան, բանասեր, աստվածաբան, խմբագիր-հրատարակիչ, եպիսկոպոս (1909-ից): Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1883), 1889-ից սովորել է Լայպցիգի, Բեռլինի և Տյուբինգենի բարձրագույն ուս. հաստատություններում: 1899-ից՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1902–06-ին՝ Մայր աթոռի *«Արարատ»* ամսագրի խմբագիր: 1907-ից՝ Ատրպատականի, 1914-ից՝ Շամախու հայոց թեմերի առաջնորդ: Թավրիզում 1909–12-ին նախաձեռնել է «Առաւօտ» շաբաթաթերթի հրատարակությունը, 1910–12-ին՝ «Թաւրիզի յայտարարութիւններ» թերթի խմբագիր: Հայտնաբերել և Էջմիածնի մատենադարան է ուղարկել հայկ. հին ձեռագրեր: Հայտնաբերել, գերմ. թարգմանել և «Բնագրեր և հետազոտություններ» վերնագրով հրատարակել է Իրենիոս Լուգդունացու (II դ.) «Ցոյցք առաքելական քարոզութեանն» (Երվանդ *Տեր-Մինասյանի* հետ, 1907, Լայպցիգ, գերմ. և հայ. զուգադիր տեքստերով, պրոֆ. Ա. Հառնակի վերջաբանով և ծնթգր-ով) երկը, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» (Ե. Տեր-Մինասյանի հետ, 1908, Լայպցիգ) երկի հայ. բնագիրը՝ գերմ. և հայ. առաջաբաններով: 1910-ին Լայպցիգում հրատարակվել են Իրենիոսի՝ Տ-Մ-ի հայտնաբերած «Ընդդէմ հերձուածոց» ճառի IV և V գլուխները (հայ.)՝ գերմ. առաջաբանով: 3 երկերի հուն. բնագրերը կորել են:

Լույս են տեսել Տ-Մ-ի «Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ» (գերմ., 1893, Լայպցիգ, հայ.՝ 1938, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.), «Թոնդրակեցիք մեր օրերում» (գերմ., 1896), «Հայոց եկեղեցւոյ պատմութիւն» (մաս 1, 1908, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., 2011), «Յովհան Սանդակունի եւ Յովհան Սայրագոմեցի» («Շողակաթ», 1913), «Նիւթեր հայ մելիքութեան մասին» (պր. 2, 1914, նույն տպ.), «Քրիստոնեութեան իսկութիւնը» (1993, Անթիլիաս) աշխատությունները, «Երկերի ժողովածուն» (2008):

Գրկ. **Տէր-Մինասեան Ե.,** *Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան, Մ., 1911:* **Stephan S.,** *Karapet Episkopos Ter-Mkrtschian (1866–1915), Halle, 1983.*


ՏԵՐՅԱՆ Նվարդ Վահանի [28.4.1920, Մոսկվա–12.10.1978, Մոսկվա, ամփոփված է Գանձա գյուղում (Վրաստանի Նինոծմինդայի շրջան)], թարգմանչուհի: Վահան *Տերյանի* դուստրը: Ավարտել է Մոսկվայի իրավաբանության ինստ-ը (1942): Կազմել, ծանոթագրել և ռուս. հրատարակել է Վ. Տերյանի 67 նամակները՝ ուղղված Միսկարյան քույրերին («Չհրատարակված նամակներ», 1970), «Քննադատություն և հրապարակախոսություն: Հոդվածներ» (1985) ժող-ը: Կազմել և հրատարակել է «Վահան Տերյանի նամակները Անթառամ Միսկարյանին» (1972) ժող-ը: Տողացի ռուս. է թարգմանել Վ. Տերյանի չթարգմանված բանաստեղծությունները, որոնք ընդգրկվել են 1980-ին Լենինգրադում հրատարակված «Բանաստեղծություններ» ժող-ում:




Գ. Տեր-Մկրտչյանի *«Քննութիւն եւ համեմատութիւն եզնկայ նորագիւտ ձեռագրին» (համահեղ., 1904, Վնն.) գրքի փիղղոսաթերթը*



Կարապետ Տեր-Մկրտչյան



Կ. Տեր-Մկրտչյանի *«Պաւղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ...» (1938, Երուսաղեմ) գրքի կազմը*



Վահան Տերյան



«Բանաստեղծութիւններ» (հ. 1, 1912, Մոսկվա, ձևավորող՝ Մարտիրոս Սարյան) գրքի տիտղոսաթերթը



«Երկերի ժողովածու»-ի (հ. 1, 1972, Ե., «Հայաստան») տիտղոսաթերթը

ՏԵՐՅԱՆ (Տեր-Գրիգորյան) Վահան Սուքիասի [9.2.1885, գ. Գանձա (այժմ՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջանում)–7.1.1920, Օրենբուրգ (Ռուսաստան), 1970-ին նրա գերեզմանատեղից հող է բերվել և ամփոփվել Երևանի Կոմիտասի անվ. զբոսայգու պանթեոնում], բանաստեղծ, գրական, հաս. գործիչ, խմբագիր: Սովորել է Գանձայի ծխական, Ախալքալաքի քաղաքային դպրոցներում, Թիֆլիսի գիմնազիայում (1897–99), Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1899–1906), Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրության (1906–13), Ս. Պետերբուրգի համալսարանի արևելագիտ-յան (1913–17) ֆակ-ներում:

Ճեմարանում սովորելու տարիներին բանաստեղծություններ է հրապարակել իր խմբագրած «Հույս» աշակերտ. ձեռագիր ամսագրում: 1910–12-ին Տ. կազմակերպել է Մոսկվայի գրական խմբակը (Պողոս ***Մակինցյան***, Կարեն ***Միքայելյան***, Յոլակ ***Խանզադյան***, Ալեքսանդր ***Մյասնիկյան***) և խմբագրել ու լույս ընծայել ***«Գարուն»*** գրական-գեղ. ալմանախի 3 հատորը (Պ. Մակինցյանի, Յ. Խանզադյանի հետ): 1911-ին ընկերների հետ հիմնադրել է «Պանթեոն» հրատարակչ. ընկերությունը՝ հայ. և համաշխ. դաս. գրողների երկերը հայ ընթերցողին ներկայացնելու նպատակով: «Պանթեոնը» իր շուրջն է համախմբել ժամանակի լավագույն թարգմանիչներին: 1915–16-ին մասնակցել է Վալերի ***Բրյուսովի*** կազմած «Հայ պոեզիան...» անթոլոգիայի և Մաքսիմ ***Գորկու*** խմբագրած «Հայ գրականության ժողովածու»-ի պատրաստման աշխատանքներին: 1918-ին Մոսկվայում խմբագրել է «Կոմունիստ» շաբաթաթերթը: 1919-ին Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատի կարևոր հանձնարարությամբ մեկնել է Միջին Ասիա. ճանապարհին մահացել է:

1908-ին լույս է տեսել Տ-ի առաջին՝ «Մթնշաղի անուրջներ» (Թ., «Էպոխա» տպ.) բանաստեղծությունների ժող-ը, որը նոր դարագլուխ էր հայ քնարերգության պատմության մեջ, 1912-ին՝ «Բանաստեղծութիւններ» (հ. 1, Մ., Քրիստինե Բարխուդարյանի տպ.) ժող-ը, որտեղ զետեղված են վերամշակված «Մթնշաղի անուրջները», «Գիշեր եւ յուշեր», «Ոսկի հեքիաթ», «Վերադարձ» նոր շարքերը: Գրել է նաև «Փշե պսակ», «Երկիր Նաիրի», «Կատվի դրախտ», «Իմ բալիկին», «Ոսկե շղթա», «Վերջին դաշնակ», «Հոկտեմբերյան երգեր» բանաստեղծ. շարքերը, գրական-քննադատ. հոդվածներ, ռուս. է թարգմանել Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը, Բաֆֆու «Կայծեր» (հ. 1) վեպը և Շիրվանզադեի «Չար ոգի» վիպակը, հայ.՝ Շ. Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմի նախերգանքը, Վ. Բրյուսովի, Հ. Հայնեի, Պ. Վեռլենի, Է. Վերհառնի, Ֆ. Սոլոգուբի, Ա. Ծերեթելու բանաստեղծություններից, Շ. Բոդլերի արձակ պոեմներից ևն:

Հրատարակվել են նաև Տ-ի «Երկերի ժողովածուն» (հ. 1–4, 1923–25, հ. 1–4, 1972–79), «Բանաստեղծություններ» (1940, 1985) ժող-ը, «ԵԼԺ»-ն (2005), «Ընտրանին» (2011):

Տ. հետևողականորեն կիրառել և կատարելության է հասցրել բանաստեղծ. շարքերի սկզբունքը: Նա արմատապես հեղաշրջել է հայկ. տաղաչափությունը. վանկային համակարգով գրված բանաստեղծություններին զուգահեռ ստեղծել է նաև վանկաշեշտային կառուցվածքով բանաստեղծություններ: Տ-ի լեզուն իր հղկվածությամբ, մաքրությամբ և հարստությամբ հայ գրական լեզվի ամենաարժեր ու կատարյալ դրսևորումներից է:

Երևանում և ՀՀ այլ քաղաքներում Տ-ի անունով կոչվել են դպրոց, փողոցներ, Գանձայում՝ դպրոց: 1957-ից ծննդավայրում գործում է Տ-ի տուն-թանգարանը: Տ-ի կիսանդրիները տեղադրված են Երևանում, Օրենբուրգում, Գանձայում՝ տուն-թանգարանի առջև, հուշարձանները՝ Երևանի Օղակաձև զբոսայգում, Հարավարևմտյան թաղամասում: 1967-ից ամեն տարի հուլիսի նախավերջին կիրակին Տ-ի ծննդավայրում նշվում է որպես Տերյանական պոեզիայի օր:

Գրկ. **Տէրտէրեան Ա.**, *Վահան Տէրեան: Յուորքի ծարաւի եւ հաշտութեան երգիչը, Թ., 1910:* **Հակոբյան Ս.**, *Վահան Տերյան, Բեռլին, 1923:* **Սարգսյան Խ.**, *Վահան Տերյան, Ե., 1926:* **Պարտիզունի Վ.**, *Վահան Տերյան: Ստեղծագործությունը, Ե., 1968:* **Նույնի**, *Տերյանի կենսապատումը, Ե., 1984:* **Մակինցյան Պ.**, *Դիմագծեր, Ե., 1980:* **Զրբաշյան Է.**, *Վահան Տերյանի գաղաչափական համակարգը, Ե., 1995:* **Գրիգորյան Կ.**, *Վահան Տերյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1983:*

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ Ներսես (Արտաշես) Բաբկենի (16.11.1920, Բեռլին–24.12.2006, Գյումրի), հայագետ, հրապարակագիր, մանկավարժ, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1940–ից), արքեպիսկոպոս (1992–ից): Սովորել է Բուխարեստի և Սոֆիայի հայկ. դպրոցներում, Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում (1933–39), ավարտել Հռոմի Գրիգորյան համալսարանի փիլ-յան և աստվածաբանության դասընթացները (1947): 1948–52-ին՝ *«Մխիթարեան ընտանիք»* ամսագրի, 1957–79-ին (ընդհատումներով)՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր: 1964–76 և 1982–86-ին եղել է միաբանության ընդհանուր քարտուղար, 1976–86-ին, միաժամանակ՝ ձեռագրատան տնօրեն, 1991–2005-ին՝ Վրաստանի, Ռուսաստանի և Արլ. Եվրոպայի հայ կաթոլիկ համայնքների առաջնորդ (առաջնորդ. աթոռը Գյումրիում՝ 1994-ից):

Հրատարակել է Առաքել Մյունեցու «Դրախտագիրք» (1956, առաջաբ., ծնթգր. և բառարանը՝ Տ-Ն-ի), Մխիթար Սեբաստացու «Մտածութիւնք ի վերայ բանից Քրկչին» (1969, առաջաբ.՝ Տ-Ն-ի) երկերը:

ՀԱԳ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (1994):

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ Սիրարփի Միհրանի (5.9.1896, Կ. Պոլիս–5.7.1989, Փարիզ), արվեստաբան, բյուզանդագետ, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1936), պրոֆ. (1946), ՀԽՍՀ ԳԱ արտասահմ. անդամ (1966): Ավարտել է Կ. Պոլսի Եսայան վարժարանը, Ժնևի քոլեջը (1917) և համալսարանը (1919), սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանում: Տ-Ն. «Հայկական նկարազարդ Սաղմոսարան»-ով (ֆրանս.,1929, համահեղ.՝ Գ. Միլլեն), *«Էջմիածնի Աւետարանի»* մանրանկարների արվեստաբան. վերլուծություններով սահմանազատել է հայկ., սիրիական, բյուզ. մանրանկարչության առանձնահատկությունները, ապացուցել, որ այդ մանրանկարները հայ նկարիչների գործեր են:


Լույս են տեսել Տ-Ն-ի «Բարեղամի և Հովասափի վեպի նկարազարդումները», «Վենետիկի Մխիթարյան հայրերի մատենադարանի XII, XIII և XIV դարերի հայկական պատկերազարդ ձեռագրերը» (երկուսն էլ՝ ֆրանս.,1937), «Հայաստանը և Բյուզանդական կայսրությունը» (1945), «Աղթամար. Ս. Խաչ եկեղեցի» (1965) աշխատությունները, Դուբլինի Չեսթեր Բիթթի գրադարանի (հ. 1–2, 1958), Վաշինգտոնի Ֆրիր (1963), Բալթիմորի Ուոլտերս (1973, բոլորը՝ անգլ.) արվ-ի պատկերասրահների հայկ. ձեռագրերի գրացուցակները, «Բյուզանդագիտական և հայկական ուսումնասիրություններ» (1973) անգլ. և ֆրանս. հոդվածների ժող-ը, «Հայաստանի արվեստը» (ֆրանս., 1977), «Տասներկուսից տասնչորսերորդ դարերի Կիլիկիայի հայկական թագավորության մանրանկարչությունը» (անգլ., 1993), «Հին երկրներ և ժողովուրդներ» մատենաշարով՝ «Հայեր» (անգլ., 1969) ուսումնասիրությունները:

Անգլիայի Հնագետների միության ոսկե (1960), ՀԽՍՀ ԳԱ «Անանիա Շիրակացի» (1981) մեդալներ, Ֆրանսիայի Արձանագրությունների ու գեղ. գրակ-յան ակադ-ի Գ. Շլյումբերժեի անվ. (1963) և այլ մրց-ներ:

Երկ. Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975: L'art byzantin art européen, Athènes, 1964; L'illustration des Psautiers Grecs du Moyen Age, v. 2, P., 1970; Армения: Быт, религия, культура, М., 2007.

Գրկ. **Զաքարյան Լ.**, *Սիրարփի Տեր-Ներսեսյան, «ՊՀՀ», 1976, № 4:* **Ազարյան Լ.**, *Սիրարփի Տեր-Ներսեսյան, «ԼՀԳ», 1977, № 9:* **Stanojevich A.**, *Sirarpi Der-Nersessian, L., 1981.*


ՏԵՐՈՅԱՆ (Դերոյան) Վարազդատ Մկրտչի [6.2.1888, Վան–6.2.1938, Սարիինսկ (Ռուսաստան, Նովոսիբիրսկի մարզ, համակենտրոնացման ճամբար, անհատի պաշտամունքի զոհ)], փիլիսոփա, հաս., քաղ. գործիչ, թարգմանիչ, մանկավարժ: Սովորել է Վանի Երամյան դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1905), ավարտել Սորբոնի համալսարանը (1912), մինչև 1914-ը սովորել է նաև Գերմանիայի և Ավստրիայի մի շարք համալսարաններում: 1905 և 1914-ին՝ Վանի Երամյան և Սանդխտյան, 1915-ին՝ Բաքվի հայկ. թաղամասի, 1918-ին՝ Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցների ուսուցիչ (նաև տնօրեն): 1915-ին մասնակցել է Վանի ինքնապաշտպանությանը, 1916–20-ին զբաղվել է հայ գաղթականության հարցերով: 1930–31-ին աշխատել է ՀԽՍՀ գրապալատում՝ որպես միջազգ. գրքափոխանակման բաժ-



Ներսես Տեր-Ներսեսյան




Սիրարփի Տեր-Ներսեսյան



Ս. Տեր-Ներսեսյանի *«Հայաստան. կենցաղը, կրոնը, մշակույթը» (ռուս., 2007, Մոսկվա) գրքի կազմը*



Վարազդատ Տերոյանի *«Գիտական և հրապարակախոսական աշխատություններ» (2006, Ե., ԳԱԱ պատմության ինստ-ի տպ.) գրքի կազմը*



Կարապետ Տեր-Սահակյանի *«Հայ կայսերք Բիւզանդիոնի» (հ. Ա, 1905, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Դրաստամատ Տեր-Սիմոնյան

նի վարիչ, նախաձեռնել է գրապալատի գրադարանի գրացուցակի կազմումը:

Տ–ի թարգմանությամբ (բնագրերից) հրատարակվել են Հ. Տենի «Գեղարվեստի փիլիսոփայությունը» (1936), Ռ. Դեկարտի «Քննախոսություն մեթոդի մասին» (1968), Ի. Կանտի «Ջուտ բանականության քննադատություն» (2010, համեմատել է գերմ. 1–ին և 2–րդ հրատ–ների, ֆրանս. և ռուս. թարգմանությունների հետ) աշխատությունները, Ա. Բարբյուսի «Կրակը» (1935), Ա. Ֆրանսի «Կարմիր շուշան» (1946) վեպերը ևն: Թարգմանել է նաև Գ. Հեգելի, Ա. Բերգսոնի, Բ. Սպինոզայի և ուր. երկերից: Լույս են տեսել Տ–ի «Գիտական և հրապարակախոսական աշխատություններ» (աշխատասիր., առաջաբ. և ծնթգր.՝ Ռ. Սահակյանի, 2006, «Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան» մատենաշար), «Իմպերիալիստական ծիծեռնակներ...» (2008) ժող–ները: Տ–ի անտիպ գործերը պահվում են ՀԱԱ–ում:

Նունիկ Դերոյան

ՏԵՐ–ՄԱՀԱԿՅԱՆ Կարապետ (1882, Մուշ–1915, Մեծ եղեռնի զոհ), պատմաբան, բանասեր, բանաստեղծ, խմբագիր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: 1906–13–ին՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր, 1914–15–ին՝ Տրապիզոնի Մխիթարյան վարժարանի տեսուչ: Ղևոնդ Ալիշանի մահից հետո հրատարակել է նրա «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան» (1904, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը՝ իր մեկնաբանություններով ու լրացումներով:

Լույս են տեսել Տ–Ս–ի «Հայ կայսերք Բիւզանդիոնի» (հ. Ա, Բ, 1905, 1927, Վնտ., Սբ Ղազարի տպ.) պատմագիտ. մենագրությունը, որտեղ ներկայացրել է Բյուզ. կայսրության VI–XII դդ–ի հայազգի 12 կայսրերի, Բյուզանդիայի թագի 6 հայ հավակնորդների (VII–IX դդ.), 8 հայ կայսրուհիների (VIII–XIII դդ.) և «Բանաստեղծութիւններ» (առաջաբ.՝ Մ. Ճանաշյանի, 1965, նույն տպ.) ժող–ը:

ՏԵՐ–ՄԱՐԳՍՅԱՆ Մեխակ Պողոսի [15.3.1935, գ. Գյուլագարակ (այժմ՝ ՀՀ Լոռու մարզում)–21.4.2014, Երևան], գրահրատարակիչ: Ավարտել է Երևանի պոլիգրաֆ. արհեստագործ. ուսումնարանը (1951), Մոսկվայի պոլիգրաֆ. ինստ–ը (1971): 1954–ից աշխատել է գրահրատարակչության ոլորտում, 1971–75–ին՝ ԵՊՀ տպարանի տնօրեն, 1975–84–ին՝ ՀԿԿ ԿԿ–ի հրատ–յան գլխ. ինժեներ–փոխտնօրեն, 1986–91–ին՝ «Պարբերական» արտադրահրատարակչ. միավորման տնօրեն, 1991–2014–ին՝ *«Ոսկան Երևանցի»* տպագրատան հիմնադիր–տնօրեն:

Լույս է տեսել Տ–Ս–ի «Ես էլ եկա.... որ անցնեմ» (2014) ինքնակենսագրական գիրքը:

ՀՀ մշակույթի նախարարության ոսկե (2010), ՀՀ «Մովսես Խորենացի» (2012) մեդալներ:

ՏԵՐ–ՍԻՄՈՆՅԱՆ (Սիմոնյան) Դրաստամատ Ասքանազի [28.7.1895, գ. Համամլու (այժմ՝ ք. Սպիտակ)–1937, անհատի պաշտամունքի զոհ], կուս–պետ. գործիչ, լրագրող, խմբագիր: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1912): 1919–ի վերջին՝ «Պահակ» (Թիֆլիս) թերթի խմբագիր–հրատարակիչ, միաժամանակ, 1920–ին՝ «Գիւղացու ձայն» (Երևան) պարբ–ի խմբագիր: 1921–ին տեղափոխվել է Հայաստան: 1928–ին Փարիզում խմբագրել է *«Երեւան»* թերթը: 1934–ին՝ ՀԳՄ առաջին նախագահ, 1935–ին՝ *«Հայկական խորհրդային հանրագիտարան»*–ի գլխ. խմբագիր (հ. 1, պր. 1):

Լույս են տեսել Տ–Ս–ի «Կարլ Մարքս» (1933), «Միքայել Նալբանդյան» (1933) ուսումնասիրությունները, «Հոդվածներ (հրապարակախոսական և գրականագիտական)» (1961) ժող–ը:

ՏԵՐ–ՍՏԵՓԱՆՅԱՆ Արմեն Գառնիկի (ծ. 14.1.1946, Երևան), բանասեր, աղբյուրագետ, մատենագետ: Բանասիր. գիտ. թեկնածու (1986): Գառնիկ *Ստեփանյանի* որդին, Պերճ *Ստեփանյանի* եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1969): 1969–80–ին աշխատել է ԵՊՀ հայագիտ. կենտրոնում, 1980–ից՝ Մատենադարանի գիտաշխատող, 1985–89–ին միաժամանակ դասավանդել է Գևորգյան ճեմարանում, 1991–95–ին՝ ԵՊՀ–ում: 1992–ից՝ «Աստվածաշնչային մեկնություններ» մատենաշարի գլխ. խմբագիր:

Հրատ–յան է պատրաստել Կորյունի «Վարք Մաշտոցի» (6 լեզվով, 2005) երկը, Հ. Աճառյանի «Բանասիրական ուսումնասիրություններ» (1976, Ա. Մադոյանի հետ) աշխատությունը, կազմել է «Մայր ցուցակ Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի» (ֆրանս., 1998, համահեղ.), «Սբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտությունը» (2002, Ե. Պետրոսյանի հետ): Տ–Ս–ի աշխատասիրությամբ լույս են տեսել Հովհաննես Մուշի Որդու «Մեկնութիւն Եսայեայ» (համահեղ., 2009), «Յովհաննէս եպս. Շահխաթու–նեանց: Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ գաւառացն Արարատայ» (2014) երկերը:

ՏԵՐՎԻՇՅԱՆ Սերովբե, **Սերաֆին** (10.1.1846, Կ. Պոլիս–1.1.1892, Կ. Պոլիս), լեզվաբան, խմբագիր: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1864–ից), վարդապետ (1866–ից): Տիրապետել է հուն–ին, լատ–ին, գերմ–ին, սանսկրիտին, պահլավ–ին և այլ լեզուների: 1887–88–ին՝ ***«Լեզու»*** հայ. առաջին լեզվաբ. հանդեսի հիմնադիր–խմբագիր:


Լույս են տեսել Տ–ի «Էօմրիւ Էվլիա» («Սրբերի վարքը», 1871, հ. 2) հայատառ թուրք., «Հայկականք: Հին հայերենի Ք տառը» (գերմ., 1877), «Հնդեւրոպական նախալեզու» (1885, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.) աշխատությունները, «Այրի մայրն ու միամօր որդեակը» (1871, Վնն., Մխիթարյան տպ.) ողբերգությունը: Ստուգաբանել է հայ. մի շարք բառեր, անդրադարձել Պերսեպոլիսի սեպագիր արձանագրությունների պատմությանը և լեզվին («Պերսեպոլսոյ սեպագիրք», «ՀԱ», 1887–89): Թարգմանել է Ս. Հուստինոսի «Պատասխանատուութիւնք առաջին եւ երկրորդ եւ պատմութիւն նորին վկայութեան» (հ. 1–2, 1872, նույն տպ., գրաբար) կրոնաբարոյախոս. երկը:

Գրկ. **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*



Սերովբե Տերվիշյանի *«Հնդեւրոպական նախալեզու» (1885, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*


ՏԵՐՏԵՐՅԱՆ Արսեն Հարությունի [22.12.1882, գ. Շող (այժմ՝ ԼՂՀ Ասկերանի շրջանում)–6.10.1953, Երևան], գրականագետ–քննադատ: Բանասիր. գիտ. դ–ր, պրոֆ. (1943), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1943): Գիտ. վաստ. գործիչ (1940): Ավարտել է Շուշիի հոգևոր սեմինարիան (1902), Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1905): 1905–07–ին հայ գրակ–յան պատմություն է դասավանդել Շուշիում: Սովորել է Ս. Պետերբուրգի նյարդահոգեբ. ինստ–ում (1907–09): 1909–20–ին եղել է ուսուցիչ Երևանի թեմ. դպրոցում, 1921–ից դասավանդել է ԵՊՀ–ում (1929–53–ին՝ ամբիոնի վարիչ):



Արսեն Տերտերյան

Լույս են տեսել Տ–ի «Վահան Տերյան: Ցնորքի, ծարաւի եւ հաշտութեան երգիչը» (1910, Թ., «Հերմես» տպ.), «Միքայէլ Նալբանդեան: Ազգութեան հրապարակախօսը» (1910, Ալեք–պող, Հակոբ Ղասաբյանի տպ.), «Յովհաննէս Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն» (1911, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Շիրուանզադէ: Հայ ընտանիքի եւ ինտելլիգենտի վիպասանը» (1911, Թ., «Կուլտուրա» տպ.), «Յովհաննէս Յովհաննիսեան: Սիրոյ եւ կարեկցութեան երգիչը» (1912, Ե., «Լույս» տպ.), «Լեւոն Շանթ: Սէռի եւ դասալքութեան երգիչը» (1913, Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Նար–Դոսի ստեղծագործութիւնը» (1913, Թ., Ա. Կերեսելիձեի տպ.), «Մուրացան» (1936–39), «Երվանդ Օտյանի ստեղծագործությունը» (1937), «Րաֆֆու «Սամվել» պատմական վեպը» (1940), «Աբովյանի ստեղծագործությունը» (1941), «Պարոնյանի գեղագիտական հայացքները» (1941), «Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան» (1944), «Հայ կլասիկներ» (1944), «Վ. Գ. Բելինսկի: Ռուս մեծ քննադատ–հրապարակախոսը» (1948), «Պերճ Պռոշյան» (1955), «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը» (1959) աշխատություններն ու մենագրությունները, «Երկերը» (1960, 1980):


Գրկ. **Սարինյան Ս.**, *Արսեն Տերտերյան, «ՊՐՀ», 1982, № 4: Արսեն Հարությունի Տերտերյան, Ե., 1966 (Սովետական Հայաստանի ականավոր գիտնականները, № 11): Արսեն Տերտերյան: Կենսամատենագիտություն, Ե., 1985:*



Ա. Տերտերյանի *«Երկեր»-ի (1980, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը*


ՏԵՐՏԵՐՅԱՆ Եղիշե (Եղիազար), **Եղիվարդ** [1910, գ. Կայամիրան (Ռշտունյաց գավառ)–2.2.1990, Երուսաղեմ], բանաստեղծ, խմբագիր, Երուսաղեմի հայոց պատրիարք (1960–90), արքեպիսկոպոս (1951–ից): Ավարտել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը (1929): 1937–45–ին դասավանդել է վարժարանում, եղել տեսուչ, 1965–90–ին, միաժամանակ՝ ***«Սիոն»*** ամսագրի խմբագիր:

Լույս են տեսել Տ–ի «Սնգդաղինէն մեղրամոմէ» (1941), «Խորտակման գիշերներ» (1943), «Լեռան վրայէն: Երանիներ» (1945, 1988), «Անցորդը» (1946), «Օտարականը» (1966), «Մեղքի շուշաններ» (1995) բանաստեղծությունների,




Եղիշե Տերտերյանի
(Եղիվարդ) «Լեռան վրայէն: Երանիներ» (1988, Երուսաղեմ) գրքի կազմը

«Տիգրան Մեծ»
հրատարակչության տպագրած գրքերից



Հ. Չարխչյանի «Չարենցի կրակոցը» (2010, Ե.) գրքի կազմը



«Հայաստան» (2013, Ե.) հանրագիտարանի կազմը

«Ոսկեմատեան» (2010) քարոզների ժող-ները, «Նարեկը հայ գրականութեան մէջ» (1947), «Սուրբ Մեսրոպ» (1962), «Լուսաւորիչը» (1987) գրականագիտ. աշխատությունները, «Վարդանանք» (1951) հերոսապատում-թատերգությունը, «Ընտիր էջերը» (1973):

ՏԵՐ-ՕՀԱՆՅԱՆ Անդրե (**Ամուրյան**, 1899, Թավրիզ–23.11.1980, Թեհրան), բանասեր, խմբագիր: 1919-ին Թավրիզում աշխատել է «Այգ» և «Արշալոյս» թերթերի խմբագրություններում, 1923–25-ին հետևել է Պրահայի և Սորբոնի համալսարանների իրավաբանության և քաղտնտեսության դասընթացներին, ապա աշխատակցել ՀՅԴ «Դրօշակ», «Յառաջ» պարբ-ներին: 1937–42 և 1974–76-ին՝ ***«Ալիք»***, 1953–69-ին՝ ***«Ասպարէզ»*** օրաթերթերի խմբագիր, 1949–53-ին՝ ***«Արմենուհի»*** հանդեսի արտոնատեր: 1974-ից միաժամանակ դասավանդել է Թեհրանի համալսարանի հայագիտ-յան ամբիոնում: Կալիֆոռնիայի «Հուվըր» ինստ-ում ուսումնասիրել է ցարական «Օխրանա»-ի ծավալուն արխիվը և թարգմանել հայկ. կազմակերպություններին առնչվող նյութերը («Ցարական «Օխրանա»-ի արխիվը», Ա գիրք, Թեհրան, 1978):

Լույս են տեսել Տ-Օ-ի «Սմբատ Բագրատունի» (1946) պոեմը, «Անցած օրերի շղթան» (1949) վեպը, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում» (1950), Տ-Օ-ի խմբագրությամբ և ծանոթագրություններով՝ «Գրական էջեր» (1971), «Յեղափոխական Եփրեմի ոդիսականը» (1972) աշխատությունները, «Հ. Յ. Դաշնակցութիւն, Եփրեմ. Պարսկական սահմանադրութիւն» (հ. 1, 2, 1976, 1979, բոլորը՝ Թեհրան) երկը:

«ՏԻԳՐԱՆ ԵՎ ԱԺԴԱՀԱԿ», հին հայկ. առասպելավիպ. շարքի վեպերից: Ավանդել է Մովսես Խորենացին («Պատմություն Հայոց», Ա, ԻԴ–Լ): «Տ. և Ա.»-ի հիմքում ամպրոպի աստծու (Տիգրան) և վիշապի (Աժդահակ) կռվի առասպելն է, որտեղ դիցաբան. կերպարները պատմականացել են Հայոց Երվանդյան Տիգրան (մ. թ. ա. VI դ.) և Արտաշեսյան Տիգրան Մեծ (մ. թ. ա. I դ..) թագավորների անունների հետ: «Տ. և Ա.» V դ-ում վերամշակվել է (հավանաբար՝ Դավիթ Անհաղթը) բանաստեղծ. ճարտասան. կանոններով:

Գրկ. **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ.1, Ե., 1966, էջ 97–115, 130–139:*

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ», հրատարակչություն: Հիմնադրվել է 1968-ին Երևանում՝ որպես ՀԿԿ ԿԿ հրատարակչություն: 1991-ին դարձել է Կառավարությանն առընթեր «Պարբերական» հրատարակչություն: Սեփականաշնորհվել է 1997-ին և վերանվանվել «Տ. Մ.»: Տպագրում է գեղ. գրքեր, դասագրքեր, ամսագրեր, գովազդային նյութեր, պաստառներ, բուկլետներ, կատարում է տպագր. այլ գործառույթներ:

«Տ. Մ.»-ի վերջին տարիներին տպագրած գրքերից են՝ «Աստվածաշունչ մանուկների համար» (2002), Մ. Սարյանի «Նամակներ» (2002), Մ. Սթոունի, Տ. Գույումջյանի և Հ. Լեմաննի «Հայկական ինագրության ալբոմ» (2002), Հ. Իգիթյանի «Մինասը Ձաջուռից» (ռուս., 2007), Վ. Խաչատուրի «Գույնը Դ–ԺԹ դդ. հայկական ճարտարապետության մեջ» (2008), Գ. Բաղդասարյանի «Երևան» (2009), Շ. Խաչատրյանի «Հովհաննես Այվազովսկի» (2010), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» (2010), Ս. Սարգսյանի «Ոտնամաններս» (2012), Ա. Ազատյանի «Թռչող աֆրիկացին» (2013) ևն, նաև ***«Հայկական հանրագիտարան. հրատարակչության»*** հրատ-ների մեծ մասը: «Տ. Մ.» մասնակցում է Մոսկվայում, Ֆրանկֆուրտում, Լայպցիգում և այլուր տեղի ունեցող գրքի միջազգ. ցուցահանդես-տոնավաճառներին. արժանացել է մի շարք մրց-ների:

Հրատարակչության տնօրեններ են եղել Հակոբ Կարապետյանը, Լևոն Վարդանյանը, Բենիկ Վարդազարյանը, Բենիկ Գանջալյանը, Սոս ***Մովսիսյանը,*** Եղիշե Հովհաննիսյանը, Ալեքսանդր Քյուրքչյանը, Գրիգորի Թորոսյանցը, Վրեժ Սարկոսյանը, Տիգրան Քոթանջյանը (2013-ից):

ՏԻԳՐԱՆՅԱՆ Լևոն Ակոբջանի [19.11(1.12).1842, Երևան–16(29).2.1906, Երևան], բժիշկ, բառարանագիր, խմբագիր-հրատարակիչ: Սովորել է Թիֆլիսում, 1859-ից՝ Ս. Պետերբուրգում (Կարապետ *Եզյանի* մասնավոր պանսիոնում, ապա՝ բժշկավիրաբուժ. ակադ-ում), ավարտել է Դորպատի համալսարանի բժշկ. ֆակ-ը (1875): 1879-ին նշանակվել է Երևան քաղաքի բժիշկ: 1881–84-ին՝ *«Առողջապահական թերթ»* բժշկ. ամսագրի հրատարակիչ-խմբագիր: 1894-ին ընտրվել է Երևանի քաղաքագլուխ:

Լույս են տեսել Տ-ի «Մանկական պարտէզ» (1894, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., 1897, Ե., Էմին Տեր-Գրիգորյանի տպ.) աշխատությունը, «Մարմնակազմական կամ անատօմիական բառարան լատիներէնից եւ ռուսերէնից հայերէն» (1879, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.), «Բառարան բժշկական բոյսերի: Լատիներէնից հայերէն եւ ռուսերէն» (1883, Ե., «Պսակի» տպ.) բառարանները, «Մարդակազմութիւն (անատոմիա)» (1881, նույն տպ.) ուս. ձեռնարկը, «Գերմանական Դորպատ համալսարանը եւ նորա հայ ուսանողները (1830–1892 թթ.)» (1903, «Լումայ», N 5–6) հոդվածը, թարգմանել, լրացումներով և ռուս-հայ. բժշկ. բառարանի հավելվածով հրատարակել է Հ. Պոլի «Բժշկարան» (1892, Թ., Մ. Շարաձեի տպ.) աշխատությունը, թարգմանել Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ» (1900, Ե., Էդելսոնի տպ.) պոեմը, Ն. Գոգոլի «Վերաքննիչ» (1905, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.) կատակերգությունը:

Գրկ. Оганесян Л., *История медицины в Армении, т. 4, Е., 1947, с. 66–69.*

ՏԻԳՐԱՆՅԱՆ Սարգիս Ավետիսի, **Նախիջևանցի** [6(18).6.1812, Նոր Նախիջևան (այժմ՝ ՌԴ Դոնի Ռոստով ք-ի շրջագծում)–28.3(9.4).1875, Եյսկ (այժմ՝ ՌԴ Կրասնոդարի մարզում)], թատերագետ, թարգմանիչ, մանկավարժ: Հայ թատերագիտ-յան հիմնադիրներից: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1821–29), ավարտել է Մոսկվայի համալսարանի բանասիր. գիտ-ների բաժինը (1835): Եղել է ուսուցիչ Նոր Նախիջևանում, Սիմֆերոպոլում, 1865–71-ին՝ Թեոդոսիայի Խալիպյան վարժարանի տեսուչ:

1834-ին Մոսկվայում «Ինչ ինչ զեղերերգութենէ» վերնագրով լույս է տեսել Ժ. Ռասինի «Գոթողիա» (Լազարյան ճեմ. տպ.) ողբերգությունը՝ Տ-ի գրաբար չափածո թարգմանությամբ և ծավալուն առաջաբանով, որտեղ նա անդրադարձել է ողբերգության ու կատակերգության վերաբերյալ Դավիթ Անհաղթի մեկնություններին, նաև Մ. Ա. Պիդուի «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմէի» (բեմ.՝ 1668, Լվով) հայ առաջին սրբախոս. ողբերգությանը:


ՏԻՉԻՆԱ Պավլո (Պավել) Գրիգորևիչ [15(27).1.1891, գ. Պեսկի (այժմ՝ Ուկրաինայի Չեռնիգովի մարզի Բոբրովիցայի շրջանում)–16.9.1967, Կիև], ուկրաինացի բանաստեղծ, պետ. և հաս. գործիչ: ՈւԽՍՀ ԳԱ ակադ. (1929): Ավարտել է Կիևի առևտրի ինստ-ը (1917): Հայտնի է «Ուկրաինայից փչող քամին» (1924), «Մենք խիղճն ենք մարդկության» (1957), «Ծաղկիր չքնաղ աշխարհ» (1960), «Արծաթափայլ գիշերով» (1968) բանաստեղծությունների ժող-ներով:

Տ. ուսումնասիրել է հայոց լեզուն ու գրակ-ը: Թարգմանել է դաս. և ժամանակակից հայ գրողների բազմաթիվ ստեղծագործություններ, եղել «Սասունցի Դավիթ» էպոսի և Խ. Աբովյանի միահատոր-յակի ուկր. հրատ-յան խմբագիրներից ու թարգմանիչներից: Գրել է «Հովհաննես Հովհաննիսյանին», «Հովհաննեսի մանկությունը» (Հ. Թումանյան), «Խաչատուր Աբովյան» բանաստեղծությունները, հոդվածներ ու ակնարկներ Հայաստանի, Երևանի, հայ մշակույթի գործիչների մասին:

Հայ. լույս են տեսել Տ-ի «Իվասիկ-Տելեսիկը» (1941) հեքիաթը, «Հատընտիրը» (1950), «Իմ ժողովրդին» (1973), «Բանաստեղծություններ» (1980) ժող-ները, «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» (համահեղ.՝ Մ. Ռիլսկի, 1973) երկը:

Տ-ի անունով կոչվել է փողոց Երևանում:

ԽՍՀՄ Լենինի (5) և այլ շքանշաններ: ՀԽՍՀ ԳԽ Նախագահության պատվոգիր:




«Աստվածաշունչ մանուկների համար» (2002, Ե., «Տիգրան Մեծ») գրքի կազմը



Լևոն Տիգրանյանի *«Մարդակազմութիւն...» (1881, Ե., «Պսակի» տպ.) գրքի տիտղոսաթերթը*




Պավլո Տիչինայի *«Բանաստեղծություններ» (1980, Ե. «Սովետական գրող», ձևավորող՝ Վ. Մանդակունի) գրքի կազմը*



«Ով ով է: Հայեր» հանրագիտարանի (հ. 1, 2005, Ե., «ՀՀՀ»)



Աստվածաշնչի (1733, Վնտ.)



Սայաթ-Նովայի «Հայերեն խաղերի ժողովածու»-ի (1931, Ե., Հայպետհրատ, ձևավորող՝ Տ. Խաչվանքյան)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ, **անվանաթերթ**, գրքի (ձեռագիր մատյանի) առաջին էջը (կամ էջերը), որտեղ նշվում են հրատ–յան հիմն. մատենագիտ. տվյալները՝ հեղինակի անուն–ազգանունը, գրքի բնույթը (վեպ, ժող., դասագիրք ևն), վերնագիրը և ենթավերնագիրը, հրատարակչության անվանումը, վայրն ու տարեթիվը, նաև գիրքը հրատարակող հաստատության անվանումը, մատենաշարի անվանումը, բազմահատոր հրատ–յան դեպքում՝ հատորի հերթական համարը ևն: Տ–ի դարձերեսին հաճախ զետեղվում են գրքի ***թողարկման տվյալները***: Բազմահատոր և մատենաշարային հրատ–յան դեպքում Տ. հաճախ լինում է կից էջերի բացվածքի վրա. ձախակողմյան էջին (կցատիտղոսաթերթ) նշվում են մատենաշարի ընդհանուր խորագիրը և հարակից տվյալներ (երբեմն նաև օտար լեզվով, թարգման. երկի դեպքում՝ բնագրի լեզվով), իսկ բուն Տ–ին՝ տվյալ հատորի մասին տվյալները:

Պապիրուսե կամ պերգամենտե գալարափաթեթներում Տ–ի դեր է կատարել փաթեթին փակցված պիտակը, իսկ առաջին տպագիր գրքերում Տ–ի նախատիպեր եղել են սկզբնաբառերը և վերջնաբառերը: Առաջին տպագիր Տ. 1463–ին Հռոմի Պիոս II պապի գրքի առանձին էջով տպագրված վերնագիրն է (տպագրիչ՝ Պ. Շեֆեր), իսկ ամբողջականը՝ 1476–ին գերմանացի հրատարակիչ Է. Ռատդոլտի «Kalendarius» գրքի Տ. է:

Հայ. առաջին տպագիր գրքերի Տ–երն առանձնապես չեն տարբերվել տեքստի էջերից: Վերնագիր – Տ–երին հաջորդել են երկարաշունչ՝ գրքի տպագրության ժամանակի տիտղոսավոր անձանց (հատկապես՝ հոգևորականների), բարերարների ու հեղինակի անուններով, վերջում՝ տպագրության վայրի, տարեթվի, տպարանի, տպարանադրոշմի և այլ մանրամասների մասին տեղեկություններ: Պատկերազարդ Տ–երում նկատելի է միջնադարյան ձեռագիր մատյանների ձևավորման արվ–ի ազդեցությունը:

Բարձրարվեստ տիտղոսաթերթեր են ստեղծել հայ նկարիչները՝ Վ. Սուրենյանցը, Հ. Կոջոյանը, Մ. Սարյանը, Մ. Արուտչյանը, Գ. Խանջյանը, ժամանակակից մի շարք նկարիչներ: Տես նաև *Գրքի դիզայն*:

ՏԻՏՂՈՍԱՏ, **շմուցտիտուլ** (<գերմ. Schmutztitel, բառացի՝ կեղտապաշտպան), հնատիպ գրքերում՝ համառոտ վերնագրով էջ՝ ***տիպտղոսաթերթից*** առաջ: Զետեղվել է աջ՝ կենտ երեսին՝ բուն տիտղոսաթերթը աղտոտումից պաշտպանելու համար: Դարձերեսը թողնվել է ազատ: Այժմ դրանք կոչվում են ***նախատիպտղոսաթերթ:***

Ժամանակակից Տ. հրատ–յան մի մասը մյուսից, գլուխը գլխից բաժանող, համառոտ վերնագրով կամ բնաբանով էջ է. որպես կանոն՝ բացվածքի աջ կողմում է, երբեմն՝ ազատ դարձերեսով:

Այժմ խնայողության նկատառումներով Տ–ներն արվում են տեքստային էջի վերևում՝ ընդհանուր վերնագրի տեսքով: Ըստ կատարման եղանակի՝ լինում են շարվածքային, նկարված, գեղազարդ կամ բովանդակային պատկերազարդմամբ:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ [Տեր–Հովհաննիսյան–Մելիք–Մուշկամբարյան Տիգրան, 21.4.1867, գ. Նորշեն (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)–29.3.1956, Նյու Յորք], բանասեր, ձեռագրագետ, մատենագետ, խմբագիր: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Սորբոնի համալսարանը (1910): Եղել է Էջմիածնի միաբանության անդամ (1890), վարդապետ (1916), եպիսկոպոս (1917): 1895–ից՝ Մոսկվայի և Ս. Պետերբուրգի հայկ. եկեղեցիների տեսուչ, 1915–21–ին՝ Էջմիածնի Մայր աթոռի դիվանապետ, 1916–18–ին՝ ***«Արարատ»*** ամսագրի խմբագիր, 1921–28–ին՝ Հս. Ամերիկայի հայոց հոգևոր առաջնորդ:

Տ. Վ. ուսումնասիրել է Արմ. Եվրոպայի գրադարանների հայկ. միջնադարյան ձեռագրերը [«Ցուցակ հայ ձեռագիրների Օքսֆորդի

Բոդլեյան գրատան», «Յուցակ հայ ձեռագիրների Մանչեստրի Ջ. Ռայլանդոլդս գրատան», «Յուցակ հայ ձեռագիրների Բրյուսելի արքայական գրատան» (բոլորն էլ՝ անտիպ, Մատենադարան)]: Հայտնաբերել է Ֆրիկի ստեղծագործությունները և հրատ-յան պատրաստել (1914–18) գիտաքնն. բնագրերը՝ ընդարձակ ուսումնասիրությամբ, հավելվածներով: Երկն արժանացել է Ռուսաստանի ակադ-ի մրց-ին, սակայն Առաջին համաշխ. պատերազմի պատճառով չի հրատարակվել, լույս է տեսել 1952-ին Նյու Յորքում՝ «Ֆրիկ: Դիւան» խորագրով: Մինչ այդ նույն ժող-ի բնագրերի սևագիր օրինակները ներառվել են «Ֆրիկ: Բանաստեղծություններ» (1941, կազմ-ներ՝ Մ. Մկրյան, Ե. Թորոսյան) ժող-ում:

Գրել է պատմ. աշխատություններ («Ուղղումներ Րաֆֆիի «Խամսայի մելիքութիւններ» գրքի», «Հռոմէական պատմութիւնն աղբիւր իւր մշակոյթի», 4 հատորով, անտիպ), բառարան («Գաւառականի բառարան»), որոնց բնագրերի որոշ մասը պահվում է ԳԱԹ-ում:

Տ. Վ. թարգմանել է Ու. Լուիսի («Բէն-Հուր», 1911, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), Ջ. Բայրոնի («Մանֆրէդ», 1913, նույն տպ.), Կ. Յվետկովի («Այց Քէյմբրիջ», 1916, Վաղ-պատ, Մբ Էջմիածնի տպ.) և ուր. ստեղծագործություններից:

ՏԻՐԱՏՈՒՐ ԿԻԼԻԿԵՑԻ, XIV դ-ի մանկավարժ, բարեփոխիչ, գրիչ և մանրանկարիչ: Աշակերտել է ***Եսայի Նչեցուն***: Տ. Կ-ու անունն առաջին անգամ հիշատակվում է 1309-ին՝ իր ընդօրինակած (հավանաբար՝ ուսումնառության տարիներին) ձեռագրի հիշատակարանում՝ «ի մեծ դպրատանս Գալիճոր» (Մատենադարան, ձեռ. № 3393), վերջին անգամ՝ 1349-ին՝ Հերմոնի վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում: 1309-ի Ավետարանում (թուղթ, 263 էջ, բոլորգիր) պահպանվել են 4 ավետարանիչների պատկերները, 4 շքեղազարդ անվանաթերթեր և բազմաթիվ լուսանցազարդեր: Տ. Կ. հետևել է Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի ավանդույթներին, Ավետարանի նրա նկարազարդումն աղերսներ ունի նաև Սմոլկի և Թորոս Տարոնացու մանրանկարչ. արվ-ի հետ: Տ. Կ. աշխատել է Եսայի Նչեցու հետ, որի մահից հետո գլխավորել է Գլաձորի համալսարանը, ապա՝ Վայոց ձորի Հերմոնի վանքի բարձրագույն դպրոցը:

Գրկ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1950, էջ 60, 294, 303–304, 378: **Ավետիսյան Ա.**, *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե., 1971, էջ 83–86:*

ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ Կարապետ Թադևոսի [15(28).11.1911, Ալեքսանդրապոլ–26.1.1975, Երևան], գրաֆիկ, նկարիչ-ձևավորող: Արվ. վաստ. գործիչ (1960): Ժող. նկարիչ (1967): Ավարտել է Լենինականի Ս. Մերկուրովի անվ. նկարչ. դպրոցը (1931), ապա աշակերտել Հակոբ ***Կոջոյանին***: Համագործակցել է Հայպետհրատի հետ, 1960-ական թթ-ին աշխատակցել «Գարուն», «Սովետական Հայաստան» ամսագրերին, «Գրական թերթ», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» (ռուս.) և այլ թերթերի:

Նկարազարդել և ձևավորել է 1000-ից ավելի գրքեր՝ «Մարգարիտներ հայ քնարերգության» (1974, ժող.), Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1939), Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» (1940), Հ. Թումանյանի «Երկերի ժողովածու» (ռուս., 1950), Ա. Իսահակյանի «Երկերի ժողովածու» (1950, Մ. Սարյանի հետ), Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու «Առակներ» (1951, ժող.), Օմար Խայամի «Քառյակներ» (1953), Գ. Զոհրապի «Նովելներ» (1954), Ե. Օտյանի «Երկերի ժողովածու» (1960), Վ. Փափազյանի «Հետադարձ հայացք» (1957), Ծերենցի «Երկեր» (1957), Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» (1964), Սայաթ-Նովայի «Խաղեր» (1969), Ե. Չարենցի «Կոմիտաս» (1969), Գ. Սարյանի «Ընտիր երկեր» (1971), Խ. Գյուլնազարյանի «Չուղարկված նամակներ» (1975) ևն, նաև «ՀՍՀ»-ի կազմը:

Տ-ի «Հայոց գիրը» (1963, 2005) գիրք-ալբոմն ընդգրկում է շուրջ 400 տառատեսակ և տառանմուշ, գրքի ձևավորումներ, նկարազարդումներ: Հեղինակ է նաև պլակատների:



Տիրայր Վարդապետ


Կարապետ Տիրատուրյան



Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1939, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը




«ՀՍՀ»-ի «Սովետական Հայաստան» (1987, Ե., «Հակոբ Մեղապարտ տպագրատուն») հատորի կազմը



Աթանաս Տիրոյանի
«Հանրագրութիւն որ է համազգային գրութեան նոր ոճ մը» (1907, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը



Հակոբ Տիրոյանի
«Ուսումն բնական եւ բնաբանական գիտութեանց» (1915, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը



Սրբուհի Տյուսաբի
«Երկեր»-ի (1981, Ե., «Սովետական գրող») կազմը

ՏԻՐՈՅԱՆ Աթանաս (Սիմոն, 22.1.1857, Կարին–1.9.1926, Վենետիկ), լեզվաբան, խմբագիր: Հակոբ *Տիրոյանի* եղբայրը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1873-ից), քահանա (1878-ից): Եղել է Վենետիկի Սբ Ղազարի տպարանապետ, 1883–88 և 1906-ին՝ *«Բազմավէպ»* հանդեսի խմբագիր:

Լույս են տեսել Տ-ի «Բանալի լուծմանց առաջարկութեանց համառօտ թուաբանութեան...» (1883), «Քերականութիւնք հայ-իտալերէն» (1902) աշխատությունները, «Արուեստ տաղաչափութեան» (1913, 1920) դասագիրքը, «Խաղամոլ» (1895, 1906, 1934), «Ա. Սանդուխտ համբերատար եւ Բ. Նեկտառինէ արդարասէր» (1909) թատերգությունները, «Վարդագոյն նամակը» (1897) զավեշտը: Տ. «Հանրագրութիւն որ է համազգային գրութեան նոր ոճ մը» (1907) արժեքավոր աշխատության մեջ առաջարկել է հանրագրության նոր եղանակ, որով տարբեր ազգերի մարդիկ, առանց հասկանալու միմյանց լեզու, կկարողանան հաղորդակցվել:

Տ. հրատ-յան է պատրաստել «Ծաղկաքաղ առակք յայլ եւ այլ հեղինակաց» (1882, 1893) ժող-ը, համառոտել Ղևոնդ Ալիշանի «Համառօտութիւն Սիսուանայ» (1885) աշխատությունը: Հայ. է թարգմանել Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Եսայեայ մարգարէին» (1887) աշխատությունը, Ռ. Ռուֆֆոյի «Վլաս Կառնիացի կամ Անզգամ մանկասպանն» (1891) վեպը, Տ. Տասսոյի «Ազատումն Երուսաղէմի» (1912) դյուցազներգությունը, Ա. Դանտեի «Արքայութիւնը» (1930) ևն, իտալ.՝ Գրիգոր Նարեկացու ներբողները (1904):

Տ-ի բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում:

Գրկ. **Աճառյան Հ.**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Ե., 1955, էջ 155–158:* **Գասպարյան Գ.**, *Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:*

ՏԻՐՈՅԱՆ Հակոբ (23.4.1863, Կարին–29.7.1933, Բուդապեշտ), բնագետ, մանկավարժ, բանասեր, գրող: Աթանաս *Տիրոյանի* եղբայրը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1884-ից): Բնագիտություն և պատմություն է դասավանդել Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում, Տրապիզոնում, Կ. Պոլսում:

Լույս են տեսել Տ-ի «Համառօտ դասագիրք ընդհանուր պատմութեան» (հ. Ա–Բ, 1897), «Ուսումն բնական եւ բնաբանական գիտութեանց» (1915) դասագրքերը: Կազմել է «Ուսումնական հաւաքածոյք» (1919) ծաղկաքաղքրեստոմատիան՝ հանրաճանաչ բնագետների աշխատություններից, «Հավարուծութիւն» (1916), «Արջառարուծութիւն» (1919), «Ճագարարուծութիւն» (1930) ձեռնարկները (բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.):

ՏՅՈՒՍԱՔ Սրբուհի Սարգսի (օրիորդ. ազգանունը՝ Վահանյան, 1841, Կ. Պոլիս–16.1.1901, Կ. Պոլիս), գրող: Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Միջագյուղի ֆրանս. դպրոցում, բնական գիտ-ներ ու պատմություն է սովորել եղբորից՝ Հովհաննես *Վահանյանից*:

Գրական գործունեության սկզբում Մկրտիչ *Պեշիկթաշլյանի* ազդեցությամբ գրել է գրաբար ու աշխարհաբար ոտանավորներ («Գարուն», 1864, «Բազմավէպ»): «Աշխարհաբառ հայ լեզուն» (1880, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.) գրքույկում պաշտպանել է աշխարհաբարը: 1880–82-ին Կ. Պոլսի և Զմյուռնիայի պարբ-ներում տպագրված «Կանանց դաստիարակութիւնը», «Քանի մը խօսք կանանց անգործութեան մասին», «Կանանց աշխատութեան սկզբունքը», «Հայ ընկերութիւնք» հոդվածներում բողոքել է կնոջ անազատության դեմ, պահանջել կրթության ու աշխատանքի իրավունք:


Լույս են տեսել Տ-ի «Մայտա» (1883, ԿՊ, Գևորգ Զարդարյանի տպ.), «Սիրանոյշ» (1884, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Արաքսիա կամ Վարժուհին» (1887, ԿՊ, «Արևելքի» տպ.) վեպերը, խորհրդային տարիներին՝ «Երկերը» (1959, 1981, Ե.):

Գրկ. **Ալպոյաճեան Ա.**, *Ուսումնասիրութիւն Սրբուհի Տիւսաբի, Վնտ., 1901:* **Շարուրյան Ա.**, *Սրբուհի Տյուսաբ: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1963:*

«ՏՆՏԵՍ», ամսօրյա հանդես ժող. տնտեսագիտ-յան: Լույս է տեսել 1886–88-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիրներ՝ Եղիա *Տեմիրճիպաշյան*, Օվրեստես Հակոբյան: Հրատարակվել է Կ. Պոլսի Արլ. տնտ. միության նախաձեռնությամբ և օգնությամբ: Բացի տնտեսագիտ-յանը վերաբերող նյութերից՝ տպագրել է օգտակար խորհուրդներ,

գեղ. նյութեր, կազմակերպել տնտեսագիտ–յան դասընթացներ, սովորեցրել արհեստներ:

«ՏՆՏԵՍԱԳԵՏ», գիտակրթ., տեղեկատվ., վերլուծ. երկամսյա հանդես (մինչև 2012–ը՝ շաբաթաթերթ, երկշաբաթաթերթ, ամսաթերթ): ՀՊՏՀ պաշտոն. հանդես: Լույս է տեսնում 1977–ից Երևանում: Խմբագիրներ՝ Ռաֆայել Երվանդյան, Սաթենիկ Ալավերդյան, Գոհար Գևորգյան, Արմինե Վարդանյան (2012–ից): Անդրադառնում է բուհին վերաբերող կարևոր և հրատապ խնդիրների, լուսաբանում է սովորողների ուս., մշակութ., մարզ. առօրյան, տպագրում է տնտեսագիտ., հայերենագիտ., մշակութ. թեմաներով հոդվածներ, անվանի գիտնականների, մշակույթի գործիչների, գործարարների, մարզիկների կենսագրականներ, ներկայացնում է բուհի շնորհալի ուսանողներին:



«Տնտեսագետ», 1977–ից, Երևան (№ 3, 2010)


ՏՆՏԵՍՅԱՆ Եղիա [29.3(10.4).1834, Կ. Պոլիս–23.4(5.5).1881, Կ. Պոլիս], երաժիշտ–տեսաբան, հրատարակիչ–խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Օրթագյուղի դպրոցում: 1848–ից աշխատել է «Արապյան» տպարանում, ապա Հովհաննես ***Մյուհենդիսյանի*** ղեկավարությամբ մասնագիտացել հայկ. և եվրոպ. նոտատպության մեջ: 1862–ից դասավանդել է Հաճնում, մասնակցել է «Քնար հայկական» ընկերության միջոցառումներին: Երուսաղեմում և Էջմիածնում ուսումնասիրել է երգվող շարականներն ու դրանց խազագրությունը: Իր հրատարակած «Բովանդակութիւն նուագաց Հայաստանեայցս ս. եկեղեցւոյ» (1864) «տետրում» առաջին անգամ ներկայացրել է շարականների սկսվածքները և հատընտիր շարականներ: 1867–ին՝ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի ուսուցիչ և Սբ Հակոբյանց տպարանի տնօրեն: 1872–ին Կ. Պոլսում հիմնադրել է տպարան և հրատարակել Գ. Սրվանձտյանի, Հ. Պարոնյանի և ուր. գործերից: Տ. 1869–71–ին Շարակնոցն ամբողջությամբ գրառել է հայկ. նոտագրությամբ, կազմել համառոտ ձեռնարկ՝ «Տարերք երաժշտութեան» (հրտ.՝ 1933, 1934, որդու՝ Լևոն Տ–ի աջակցությամբ): 1879–ին՝ ***«Նուագք հայկականք»*** պարբ–ի հրատարակիչ–խմբագիր: «Նոր երգարան հայոց» (1880, ԿՊ, Տ–ի տպ.) ժող–ի (ազատագր. երգեր) կազմումն ու հրատարակումը դարձել է նրա ձերբակալության, նաև մահվան պատճառ:



Եղիա Տնտեսյան

Լույս են տեսել Տ–ի «Պատմութիւն Սուրբ գրոց Հին եւ Նոր կտակարանաց» (1867, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) աշխատությունը, «Նկարագիր երգոց Հայաստանեայցս Սբ եկեղեցւոյ…» (1874, Տ–ի տպ.) հոդվածների ժող–ը:

«ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ...», հնդիկ հեղինակ Պրամանի՝ մարդու պարտականությունների, կրքի, կնոջ, ազգականների և արյունակիցների, մարդկանց տարբերությունների, ընկերության, կրոնի, հիվանդությունների, ախորժակի, բնական աղետների մասին գիրքը: Թարգմ. անգլ–ից՝ Սարգար Շահրիմանյանի: Տպագրվել է 1784–ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Տիտղթ–ին՝ «Տնօրէնութիւն մարդկային կենաց, որ եւ կոչի նոր առակք սողոմոնեան...» (176 էջ, 6º և 8º, 15 x 8,2 սմ):



«Տնօրէնութիւն մարդկային կենաց...» *(Պրաման, 1784, Տրիեստ) գրքի փիփղոսաթերթը*

ՏՈԼԲԱԿՅԱՆ (Դոլբակյան) Եղիա Հովհաննեսի [16.2.1908, Այնթապ (Կիլիկիա)–8.5.1982, Երևան], հրատարակիչ, խմբագիր, թարգմանիչ: Ավարտել է Հալեպի ֆրանս. լիցեյը (1926), Երևանի մանկավարժ. ինստ–ը (1960): 1926–ից՝ ուսուցիչ և տնօրեն Բեյրութի Նուբարյան, Արգարյան, Սահակյան, Սահակ Մեսրոպյան հայկ. վարժարաններում:

1938–ին Բեյրութում հիմնադրել է «Լուսարձակ» տպարանը և հրատարակչությունը. տպագրել է գեղ. գրքեր, դասագրքեր: 1930–ին Տ. լույս է ընծայել «Պատկերազարդ օրագիր» պարբերագիրքը, 1935–ին կազմել, խմբագրել և հրատարակել է «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյցը, 1936», 1937–43–ին՝ որպես վերջինիս շարունակություն՝ ***«Ամէնուն նոր տարեցոյց»***–ը (7 գիրք), 1946–ին՝ «Հայրենական օրացոյցը»: 1946–ին Տ. հայրենադարձել է, շարունակել մանկավարժ. գործունեությունը Երևանում:

Լույս են տեսել Տ–ի «XVIII դարի հայ ազատագրական շարժումները և ռուսական կողմնորոշումը. Պետրոս Ա–ն և հայերը» (2005) աշխատությունը, «Պատմութիւն Սուրիոյ եւ Լիբանանի» (1940, Բ., «Լուսարձակ» տպ.), «Աշխարհագրութիւն Լիբանանի» (1938, Բ., «Արաքս» տպ.) դասագրքերը:


Ֆրանս–ից թարգմանել է Կ. Բերժեի «Նապոլեոնի պատմութիւնը: Կեանքը եւ պատերազմները» (1939), Ժ.–Ժ. Ռուսոյի «Հասարակական դաշինք» (1939) երկերը, Պ. Սալի «Յեղապետներու աղջիկը» (1940, երեքն էլ՝ Բ.) վեպը, Օ. դը Բալզակի «Մնաք բարով», «Անաստվածի պատարագը» (երկուսն էլ՝ 1957) վիպակները, «Մոդեստա Մինիոն» (1960) վեպը:



Եղիա Տոլբակյան

ՏՈՂԱԴԱՐՁ, տողում չտեղավորվող բառի մի մասի տեղափոխումը հաջորդ տող: Տողի վերջում դրվում է Տ–ի (–) նշան՝ ենթամնա: Շարվածքում Տ. կատարվում է քերական. բոլոր կանոնների պահպանումով: Շարվածքի տեխ. կանոններով արգելվում է տողադարձել. 1. միևնույն թվի թվանշանները, 2. ազգանունը՝ անուն–հայրանվան սկզբնատառերից կամ վերջինները՝ միմյանցից, 3. թվերին վերաբերող նշանները՝ №, %, ⁰ ևն՝ համապատասխան թվերից, 4. գծիկներով միմյանց միացած թվերը ևն: Սահմանափակվում է նաև հաջորդաբար (շարունակաբար) արվող Տ–երի թիվը՝ շարվածքի տառաչափից կախված, ևն: Հանձնարարելի չէ կենտ էջն ավարտել Տ–ով և տողը շարունակել զույգ էջում:

ՏՈՂԱՆՋԱՏ, **շպոն** (գերմ.՝ Span, Spon), բարակ թիթեղից պատրաստված բացատանյութ՝ ձուլածո շարվածքում միջտողային հեռավորությունը մեծացնելու համար:



Տողաձուլաշար մեքենա

ՏՈՂԱՁՈՒԼԱՇԱՐ ՄԵՔԵՆԱ, լինոտիպ (<լատ. linea–գիծ և հուն. typos–դրոշմ), ամբողջ տողով շարվածք ձուլող մեքենա: Հայտնագործել է ամերիկացի գյուտարար Օտմար Մերգենթալերը 1884–ին: Առաջին անգամ օգտագործվել է 1886–ին «Ձերալդ Տրիբյուն» (անգլ.) թերթի տպագրության համար: Տ. մ. աշխատեցնում են ստեղնաշարով (ինչպես գրամեքենան):

Հայաստանում առաջին Տ. մ–ները ներդրվել են 1925–ին (գործարկող մասնագետներ՝ Զ. Մարուխյան, Ա. Լալայան): 1965–ին Երևանի № 6 տպարանում պատրաստվել և արտոնագրվել է «Մաշտոց» Տ. մ. (գլխ. ճարտարագետ՝ Գ. Կոլոսարյան):

XX դ–ի վերջերից Տ. մ–ին փոխարինել է լուսաշարվածքը, ապա՝ համակարգչային շարվածքը:

ՏՈՂԱՉԱՓ, ***շարաչափ***, մետաղե կամ ստվարաթղթե քանոն՝ ***շարվածքի*** տողերի և ***կլիշեի*** չափերը որոշելու համար: Տ–ի մեկ կողմն աստիճանավորված է կվադրատներով (48 կչփ), մյուսը՝ սմ–երով:

ՏՈՄՍՈՆ Ալեքսանդր Իվանովիչ [3.6.1860, Լիֆլանդիայի նահանգ (Էստոնիա)–27.11.1935, Օդեսա], ռուս լեզվաբան, հայագետ: Ս. Պետերբուրգի ԳԱ թղթ. անդամ (1910): Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանը (1882): 1897–1932–ին՝ Նովոռոսիյսկյան (Օդեսա) համալսարանի պրոֆ.:

Տ. ուսումնասիրել է Ախալցխայի (1887) և Լեհահայոց (1899) բարբառները: Արժեքավոր է Տ–ի «Թիֆլիս քաղաքի ժամանակակից հայոց լեզվի պատմական քերականություն» (ռուս., 1890, ՍՊը) աշխատությունը, որտեղ քննել է Թիֆլիսի բարբառը, ցույց տվել նրա առնչությունները գրաբարի հետ:



Թադևոս Տոնոյանի *«Երկնքից առաջ» (2010, Ե., «Աղբյուր») գրքի կազմը*

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ Գևորգ (1927, Հալեպ–16.11.1996, Բոստոն), մանկավարժ, խմբագիր: Սովորել է Բեյրութի Նշան Փալանճյան ճեմարանում, ապա՝ Հալեպի ամերիկյան քոլեջում: 1961–67–ին՝ Հալեպի Կարեն Եփփե ազգ. ճեմարանի տնօրեն, 1968–76–ին վարել է ԱՄՆ–ի Արլ. շրջանի ՀՅԴ կենտկոմի քարտուղարությունը, 1976–79–ին՝ ***«Արմինիէն Ուիքլի»*** շաբաթաթերթի վարիչ–տնօրեն, 1979–90 և 1994–96–ին՝ ՀՅԴ ***«Հայրենիք»*** շաբաթաթերթի վարիչ–խմբագիր:

«ՏՈՆԻԿՅԱՆ», գրատուն, տպարան, հրատարակչատուն: Հիմնադրել է Կիրակոս Տոնիկյանը 1922-ին Դամասկոսում, 1924-ին փոխադրել է Բեյրութ: Հրատարակում է հայ գրողների (նաև օտարագիր՝ բնագրով և թագմանաբար) արձակ և չափածո ստեղծագործություններ, գիտ. ուսումնասիրություններ, բառարաններ, հուշագրություններ, երգարաններ, դասագրքեր ևն:

Լույս են ընծայվել Մ. Գույումջյանի «Ընդարձակ բառարան անգլերէն-հայերէն» (1981), Մ. Գուշագճյանի և Տ. Խնդրունու «Անգլերէնէ-հայերէն արդի բառարան» (1970, 1975), Գ. Զոհրապի «Լուռ ցաւեր» (1956), «Խղճմտանքի ձայներ» (1958, 1977), «Կեանքը ինչպէս որ է» (1959, 1983), Ա. Տեր-Խաչատուրյանի, Հ. Գանգրունու և Փ. Տոնիկյանի «Հայոց լեզուի նոր բառարան» (հ. Ա-Բ, 1968, 1992), Կ. Թերզյանի «Պատմագիրք Ստանոզի հայոց» (1969), Բ. Ժամկոչյանի «Հայնի. տեղագրական, ազգագրական, պատմագրական» (1951), Ինտրայի «Ընտիր երկեր» (1974), Մ. Աթմաճյանի «Յաւերժական ուղիներով» (1974), Ա. Ծառուկյանի «Վերջին անմեղը» (1980), «Սէրը եղեռնին մէջ» (1987), Վահե Հայկի «Հայրենի ծխան» (1970), «Լուսաւոր դէմքեր մեր օրերուն վրայ» (1972), Ա. Շիտանյանի «Թափառական հայը» (1956), «Թափառական հայու որդին» (1961), «Թիապարտ կամ վանական» (1981), Վ. Շուշանյանի «Ճերմակ Վարսենիկ» (1983), Ա. Չելեպյանի «Զօրավար Անդրանիկ եւ Հայ յեղափոխական շարժումը» (1986), Ա. Պատմագրյանի «Հայ երգը դարերի միջից» (1977), «Իմ յուշերից» (1978) և այլ գրքեր:

ՏՈՆՈՅԱՆ Թադևոս Վոլոդյայի (ծ. 1.5.1961, Երևան), գրող, գրականագետ, խմբագիր: Բանասիր. գիտ. թեկնածու (1989): Ավարտել է ԵՊՀ (1983): 1984-ից աշխատել է «Պիոներ կանչ» թերթի, «Պիոներ» (1990-ից՝ *«Աղբյուր»*, 1991-ից՝ գլխ. խմբագիր) ամսագրի խմբագրություններում:

Լույս են տեսել Տ-ի «Սերմաստղ» (1994), «Մայրերու հրեշտակներ» (1997), «Երկրից հետո» (2002), «Ծիծաղն ու իր բախտը» (2003), «Երկնքից առաջ» (2010) բանաստեղծությունների ժող-ները, «Ծննդյան հեքիաթ» (2001), «Թևավոր ծաղիկներ» (2004) չափածո լեգենդները, «Եղիշեի ակամա ընդդիմախոս Եղիշեն» (2002), «Կորյունի տեքստը և հայ գրի առեղծվածը» (2005) աշխատությունները:

Սիսակյաթի հայկ. հիմնադրամի «Տարվա լավագույն բանաստեղծություն» մրց. (1999), ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ (2008), ՀՀ վարչապետի հուշամեդալ (2014):

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՀԱՍՏՈՑ, *մամլիչ*, ձեռքով տպագրության հնագույն մեխ. հարմարանք: Եվրոպայում ստեղծել է Յոհան ***Գուտենբերգը*** (1440-ական թթ.)՝ խաղողի փլուզի մամլիչի օրինակով: Գյուտից 50 տարի անց Եվրոպայում գործել են 1100-ից ավելի Տ. հ-ներ: 1568-ին Տ. հ-ի արագագործությունը հասել է ժամում մինչև 240 պատճենի: ***Տպագրական մեքենայի*** գյուտից հետո Տ. հ. օգտագործվել է միայն շարվածքի փոքր արտադրամասերում:


ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ, տես *Սամույլ*:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ, պոլիգրաֆ. սարքավորումների հիմն. տեսակը, որով կատարվում է բուն տպագրությունը՝ տպաձևից:

Առաջին Տ. մ.՝ ***տպագրական հաստրոցը***, հորինել է Յոհան ***Գուտենբերգը*** 1440-ական թթ-ին, որի մեքենայացված տարբերակը՝ տիգելային տպագրության մեքենան, ստեղծել է գերմանացի գյուտարար Ֆրիդրիխ Քյոնիգը (1774-1833) 1803-ին, իսկ 1812-ին նա հորինել է հարթ տպագրության մեքենան: Ժամանակակից Տ. մ-ները կազմված են տպագրության և ներկամատույց ապարատներից, թղթի մատուցման և տպագրված արտադրանքի արտաբերման և այլն մեխանիզմներից: Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ լինում են տիգելային, հարթ տպագրության և ռոտացիոն Տ. մ-ներ:



Տպագրական բազկամամուլ (XV դ., փորագրանկար)



Ֆ. Քյոնիգի գոլորշամխոցային տպագրական մեքենան (1812)



Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի տպարանի տեսուչ-տպագրիչ Մկրտիչ Հայրապետյանը (1940-ական թթ.)




Աբգար Թոխաթեցու (1565, Սաղմոսարան)



Ոսկան Երևանցու (1666, «Քերականութիւն»)



Ղուկաս Վանանդեցու (1716, «Պարկերասէր»)



Հովհաննես Մյուհենփիսյանի (1845, «Դիմառնութիւն ի չարչարանս ...»)

ՏՊԱԳՐԻՉ, տպագր. մեքենայով տպագրող վարպետ (բանվոր): Հնում այսպես են անվանել նաև տպարանատիրոջը, որն ունեցել է տպարան և գիրք է տպագրել: Հայտնի 1-ին տպագրիչը չին Բի Շենն է, Եվրոպայում՝ Յոհան Գուտենբերգը, հայ 1-ին տպագրիչը՝ Հակոբ Մեղապարտը:

ՏՊԱԾՈ, **արտատիպ**. 1. տպագրության միջոցով գրանյութի վրա ստացվող տպվածքը: Լինում է սրբագրական և փորձնական: **Սրբագրական** Տ. տեքստի և պատկերազարդման ***սրբագրության*** համար՝ սյունակներով, էջկապի և համեմատման թերթիկների ձևով տպվածքն է, **փորձնական** Տ.՝ փորձնական տպաձևով տպագրված տպվածքը՝ տպաքանակի ***տպաձևի*** սրբագրման համար:

2. Գրքի կամ ամսագրի առանձին հոդվածի փոքր տպաքանակ՝ **առանձնատիպ**, հիմնականում՝ հեղինակների համար:

ՏՊԱՁԵՎ, **տպագրական կաղապար**, մակերևույթ, որի վրա ձևավորում են տպագրվող նյութի ու բացատային (չտպագրվող) տարրերը և օգտագործում թղթի (այլ գրանյութի) վրա բազմակի տպագրության համար: Տ-ի վրա տպագրվող և չտպագրվող տարրերի փոխդասավորվածությունը կախված է տպագրության եղանակից: Վերջինից, տպագրական մեքենայի և տպաձևի նյութի տեսակից կախված՝ լինում են խոր, հարթ և բարձր տպագրությունների Տ-եր:

Տարբերում են միագույն (սև-սպիտակ) ու գունավոր (4 գույնի բաժանված) պատկերների տպագրության և այլ Տ-եր:

Ներկայում Տ-երը պատրաստվում են «համակարգիչ-տպաձև» տեխնոլոգիայով. Տ-ի վրա պատկերը սևեռվում է համակարգչից ստացված լազերային ճառագայթով, և կատարվում է տպագրություն:

ՏՊԱՏԱՌ, տպագր. շարվածքի ***տառ***. տվյալ լեզվի այբուբենի տառերի և թվերի գրանշանների ու կետադր. նշանների ամբողջական լրակազմ՝ տեքստեր շարելու համար:

Մեխ. շարվածքում Տ.՝ ճակատային նիստին տառի ուռուցիկ հայելային պատկերով մետաղ. (փայտե, պլաստմասսայե ևն) չորսվակ է, համակարգչային շարվածքում՝ նշան էկրանի վրա, որով ստեղծվում է ***տպաձևի*** տպագրատարրը:

Ըստ նշանակության՝ Տ-երը լինում են **տեքստային**՝ բնագրային (շարվածքի համար), **տիտղոսային** (վերնագրերի, տիտղոսաթերթերի և կազմերի վրա շարվածքների համար), **ակցիդենտային** (ձևաթղթերի, պիտակների և այլ մանր նյութերի տպարանային շարվածքի համար) ևն:

Առաջին շարժական տառերը խեցուց պատրաստել են Չինաստանում 1040-ին (Բի Շեն), մետաղականը ձուլել են Կորեայում XIII դ-ում, ապա՝ Գերմանիայում՝ 1440-ական թթ-ին (Յոհան ***Գուտենբերգ***):

Տ-երը դասակարգվում են ***տառատեսակաշարերով***, իսկ նրանց ստեղծման ու զարգացման հարցերով զբաղվում է ***տառարվեստը:***

Հայկ. առաջին Տ-երը պատրաստվել են 1509–11-ին Վենետիկում՝ XIII–XV դդ-ի ձեռագիր բոլորգրի հիման վրա, և մեզ են հասել 1512–13-ին ***Հակոբ Մեղապարտի*** հրատարակած գրքերի միջոցով: Դրանք, ինչպես նաև հետագայում ***Աբգար Թոխաթեցու***՝ Վենետիկում պատրաստած Տ-երը ձեռագրանման են: Առաջին շարվածքային Տ-երն օգտագործվել են Թեզեոս Ամբրոսիոսի հրատարակած գրքում (1538), որոնք որոշակիորեն լատինականացված (կլորացված) տառեր են, բայց տարածում չեն գտել: Այդ Տ-երի հետ աղերսներ ունեն Ճանիկ ***Արամյանի*** պատրաստած Տ-երը (XIX դ.): Առաջին իսկական Տ-երը պատրաստել է ***Սուլթանշահ Աբգարյան Թոխաթեցին*** 1579-ին՝ ֆրանսիացի տառափորագրիչ Ռոբերտ Գրանժոնի (1513–1589/90) հետ: Այդ Տ-երով տպագրված 1-ին գիրքը «Տօմար Գրիգորեան»-ն է (1574, Հռոմ, տպագրիչ՝ Հովհաննես Տերզնցի): Գրանժոն-Սուլթանշահի տառատեսակը երկար տարիներ օգտագործվել և հիմք է ծառայել

տպագիր բոլորգրի վերջնական ձևավորման համար: Դրանց հիմքի վրա են ստեղծվել նաև «Ոսկանյան» հայտնի Տ-երը, որոնք 1658-ին *Սեպրեևոս Ծարևցին* Սովսես Գ Տաթևացի կաթողիկոսից ստացած նախատիպերով պատվիրել էր Էլզևիրների հրատարակչատան հայտնի փորագրիչ Քրիստոֆեր վան Դեյքին (1605–1669): Այդ լրակազմն ամբողջացվել է նախ *Ավետիս Ղլիճենցի* (7 տեսակ՝ խոշոր ու փոքր զարդագրեր, գլխագրեր, բոլորգրեր), ապա՝ *Ոսկան Երևանցու* ջանքերով (նոտրգիր), և պատրաստվել է հայ. Աստվածաշնչի (1666–68, Ամստերդամ) տպագրության համար:

Ոսկան Երևանցու աշակերտ *Սեպրեևոս Վանանդեցին* նույնպես պատրաստել է տվել նոր տառատեսակ՝ հունգար հայտնի փորագրիչ Միկլոշ Կիշին (1650–1702), որոնցով գրքեր են տպագրել ինքը և մյուս վանանդեցիները:

1636-ին Նոր Ջուղայում *Խաչատուր Կեսարացու* ջանքերով ձուլվել են 2 չափի Տ-եր, որոնք, լինելով ինքնահնար, բավական անմշակ էին:

1816-ին Մխիթարյան միաբաններից Հովհաննես *Զոհրապյանը* մշակել է հայ. 16 տարբեր չափերի գլխագիր տառերի կազմման և փորագրության կանոններ («Գաղափար հայկական Մեսրովպեան գրոց, որ այժմ անուանի գլխագիր», 1816, Վնտ., Սբ Ղազարի տպ.):

1847-ից երևան են եկել Հովհաննես *Մյուհենպրեայանի* փորագրած նոր Տ-երը: 1850–60-ական թթ-ին Տ-երի նոր տառաշար են ձուլել և շրջանառության մեջ դրել Վիեննայի Մխիթարյան միաբաններ Ա. Հոֆերը և Արսեն *Այտընյանը*, իսկ 1855–56-ին՝ Գաբրիել Այվազովսկին ու Ճանիկ *Արամյանը* Փարիզում մշակել են լատինականացված ոճի տառեր (տես *«Արամյան»*), որոնք լայնորեն տարածվել և տևականորեն օգտագործվել են տարբեր տպարաններում:

Խորհրդ. առաջին տարիներին մշակվել են ժամանակի պահանջները բավարարող (արագ և էժան)՝ հատած կամ առանց քերթերի «Գրոտեսկ» կոչվող ընտանիքի Տ-երը: 1939-ին Մոսկվայում մշակվել է «Հայկական սովետական» կոչվող տառատեսակաշարը: 1960-ից հայտնի են «Նոր հայկական», «Մնացականյան», «Նորք», «Եղեգնագիր լարային», «Հանրագիտարանային» (հատուկ՝ «ՀՍՀ»-ի համար), «Դպրոցական», «Պարզատումար», «Արմենուհի» և այլ տառատեսակաշարեր:


Համակարգչային շարվածքի անցնելուց հետո (1990-ական թթ.) շարվածքային Տ-երը դուրս են մղվել գործածությունից, մշակվել են համակարգչային (կոչվում են ոչ իրեղեն Տ-եր, ծրագրի տեսքով ներմուծվում են էլեկտրոնային սարքերի հիշողության մեջ) տառատեսակներ (Ռ. Թառումյան, Ա. Մկրտչյան, Է. և Հ. Ղաբուզյաններ և ուր.): Սույն գրքի շարվածքը կատարվել է Է. Ղաբուզյանի «GHEA Narek Serif» տառատեսակով:

Գրկ. Մինասեան Պ., Արուեստագրութիւն, Վնտ., 1834: Թէոդիկ, Տիպ ու տառ, ԿՊ, 1912, Ե., 2012 (նմանահանութոյն): Շահվերդյան Ա., Սամվելյան Խ., Հայերեն տպագրական տառերի բարեփոխման ալբոմ, Ե., 1953: Մկրտչյան Ա., Ղաբուզյան Է., Ղաբուզյան Հ., Հայկական համակարգչային տառատեսակներ, ալբոմ, Ե., 2004:

ՏՊԱՐԱՆԱՆԻՇ, **տպարանադրոշմ**, տպարանի տարբերանշան, որպես կանոն՝ դրոշմվում է տպարանի թողարկած հրատ-ների առաջին կամ վերջին էջում: Գործածվել է հայ գրքի առաջին հրատարակիչ-տպագրիչներից սկսած. հայտնի են *Հակոբ Մեղապարտի, Աբգար Թոխաթեցու,* Միքելանջելո Բարբռնիի, Ջիովաննի Պիացոյի, Ուրբանյան, *Միխիթարյան միաբանության* և այլ տպարանների Տ-ներ: Ներկա մի շարք հրատարակչություններ ու տպարաններ նույնպես ունեն իրենց Տ-ները (տես *Հրատարակչական մակնիշ*):

ՏՊԱՔԱՆԱԿ, **տիրաժ**, հրատ-յան տպագրված օրինակների ընդհանուր քանակը: Տարբերում են տվյալ հրատ-յան և հրատարակչության ընդհանուր Տ-ներ: Տարբերում են տարեկան, լրացուցիչ, փորձնական, մեկանգամյա, միջին և այլ Տ-ներ:

Տպարանանիշ



Հակոբ Մեղապարտի



Աբգար Թոխաթեցու (Կ. Պոլիս)



Ջիովաննի Պիացոյի



Հարություն Շմավոնյանի



«Տրապիզոնի Աւետարան». *«Ավետում», մանրանկար (XI դ–ի 1–ին կես, Վենետիկի մատենադարան, ձեռ. № 1400)*

Տրիեստի հայկական տպագրություն



«Երեք գիրք Սողոմոնի...» (1802) գրքի նախապրիպողոսաթերթը



«Սպասաւորութիւն սրբոյ Պատարագի» (1803) գրքի փիպողոսաթերթը

«ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՒԵՏԱՐԱՆ», XI դ–ի 1–ին կեսի պատկերազարդ, տոնական ձեռագիր մատյան: Հավանաբար ընդօրինակվել է Բագրատունիների վերջին թագավորներից մեկի պատվերով: Գրչության վայրը, գրիչը և ծաղկողը հայտնի չեն: XII դ–ում եղել է մի ազնվականի մոտ: 1803–ին Իգնատիոս Փափազյանը Վենետիկ է բերել Տրապիզոնից (այստեղից էլ՝ անվանումը): Պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում (ձեռ. № 1400, 47,5 x 36,5 սմ, մագաղաթ, 634 թերթ, կաշվե կազմն ավելի ուշ շրջանի է՝ մինչև 1425–ը): Ձեռագիրը Սբ Ղազար վանքի ամենամեծ մատյանն է: «Տ. Ա.»–ից պահպանվել են 10 խորան, 4 ավետարանիչների նկարները, շքեղ նկարազարդված անվանաթերթերը (Մատթեոսի նկարը և անվանաթերթն ավելի ուշ շրջանի աշխատանք են), մի մանրանկարում՝ 4 ավետարանիչների և 7 թեմատիկ տերուն. պատկերները:

«Տ. Ա.» այն հազվագյուտ ձեռագրերից է, որի վրա նկատելիորեն ազդել է բյուզ. գեղանկարչությունը՝ արտահայտված հատկապես խորաններում և անվանաթերթերում, ավետարան. տեսարանների մեծ մասում: Մյուս մանրանկարների ոճն առավելապես աղերսվում է արևելաքրիստ. արվ–ի ավանդույթների հետ: «Տ. Ա.»–ի մանրանկարներում, մասնավորապես՝ գույներում, ձևերի հակիրճ մեկնաբանություններում արտացոլված է որմնանկարչության ազդեցությունը:

Գրկ. Հայկական մանրանկարչութիւն [հ. 1], կազմ.՝ Մ. Ճանաշյան, Վնտ., 1966: Измайлова Т., *Армянская миниатюра XI в., М., 1979;* Weitzmann K., *Die armenische Buch malerei des 10. und 11. Jahrhunderts, Bamberg, 1933;* Der Nersessian S., *Armenia and the Byzantine Empire, Camb., 1947;* Նույնի, *L'art arménien des origines au XVII^e siécle, P., 1977.*

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, պահպանված առաջին ձեռագիրը Չարխափան վանքում 1422–ին գրիչ Ղազար Ղրիմեցու ընդօրինակած «Վարք հարանց»–ն է (Մատենադարան, ձեռ. № 3874): Ղազար Ղրիմեցին և իր աշակերտ Հակոբը մինչև 1455–ը ընդօրինակել են բազմաթիվ ձեռագրեր: 1467–68–ին քաղաքի Սբ Ամենափրկիչ վանքում հիշվում է կազմարար Աբրահամը: Նույն վանքում Առաքել ոսկերչի որդի Ավետիքն ընդօրինակել է Գանձարան (1467), Նիկողայոս գրիչը՝ Ավետարան (1472): Տ. գ. կ–ում բազմաթիվ ձեռագրեր են ընդօրինակվել XVI–XVII դդ–ում: Հայտնի են Հովհաննես, Սրապիոն, Առաքել, Սարգիս, Ամիրաս Երզնկացի, Կիրակոս, Միքայել գրիչները: Ձեռագրերում, որպես պատվիրատուներ և գրչության հովանավորներ, հիշատակվում են Մինաս րաբունապետը, Մարտիրոս Խիզանեցի ուսուցիչը, Ավետիս արքեպիսկոպոսը: Կենտրոնում ձեռագրեր են գրվել և ընդօրինակվել մինչև XIX դ–ի սկիզբը (Մատենադարան, ձեռ. № 1354, 2884, 3226, 3484, 6002, 6283, 8901, 10200):

Գրկ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1, 2, Ե., 1955, 1958:

ՏՐԱՖԱՐԵՏԱՅԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **նախշակաղապարային տպագրություն,** տպագրության եղանակ, երբ պատկերը գրանյութին փոխանցվում է ցանցավոր տպաճևով (տրաֆարետ)՝ տպագրաներկը քերակով ցանցի բջիջներով ներմղելու միջոցով:

Տ. տ. կիրառվում է յուղաներկ գեղանկարների վերատպության, պիտակների, պլակատների, հայտարարությունների, գովազդային ծանուցագրերի, կույրերի համար գրքերի և կազմակողերի վրա տպագրության համար:

ՏՐԻԵՍՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորել են մի խումբ Վենետիկի Մխիթարյաններ՝ Աստվածատուր *Բարիկյանի* գլխավորությամբ, որոնք, թողնելով Վենետիկը, 1773–ին հաստատվել են Տրիեստում (Իտալիա): 1776–ին նրանք հիմնադրել են տպարան և 35 տարվա ընթացքում հրատարակել են ավելի քան 70 անուն գիրք, հիմնականում՝ կրոն. (շուրջ 2 տասնյակը՝ հայատառ–թուրք.)՝ Տոնացույց (1778), Ժամագիրք (1784, 1803), Սաղմոսարան (1787), Մաշտոց (1790),


Պատարագատետր (1803, 1808), Ավետարան (1807, 1809), «Քրիստոնէական վարդապետութիւն» (աշխարհաբար՝ 1776, 1783, հայատառ թուրք.՝ 1788, 1795, 1801, 1807), «Հանդիսարան հոգեւոր երգք եւ մաղթանք» (1777), «Փառք Մարիամու...» (1780), «Նախապատրաստութիւն սրբոյ Պատարագի» (1784, 1797), «Ձեռնադրութեան գիրք» (1787), «Պարտէզ հոգեւոր» (1787), «Տետրակ ամենասուրբ Ռօզարին» (1787), «Երեք գիրք Սողոմոնի» (1802), «Համառօտ կրթութիւն վասն մանկանց» (աշխարհաբար, 1802), «Սպասաւորութիւն սրբոյ Պատարագի» (1803), «Ժամակարգութիւն Աւագ շաբաթուն եւ ութօրէից Զատկին» (1808), «Յովսէփ Գեղեցիկ» (1809), Ներսես Լամբրոնացու «Աղօթք» (1776), Լուդովիկոս Քոմթեանցի «Թուղթք զչինաց» (1783), Հ. Գազայյանի «Խրատք բարւոք քաղաքավարութեան» (1783, 1786), Կ. Ր. Պիլլվարտի «Բովանդակութիւն սրբոյն Թովմայի» (հ. 1–3, 1788), Լ. Հաբերտի «Համառօտութիւն վարդապետութեան հաւատոյ եւ բարոյական աստուածաբանութեան» (1791), Ս. Ավգերյանի «Սուրբ Աստուածածինին մէօհթասէրի վարքը» (հայատառ թուրք., 1810), նաև Եզոպոսի «Առակք» (1784), Գ. Ռոբերտսոնի «Վիպասանութիւն Ամերիկոյ» (հ. 1, 2, 1784, 1786), Բ. Տ. Կրոչեի «Պատմութիւն Ճէնկիզ խանի...» (1788) երկերը, «Այբբենարան» (1776, 1781՝ աշխարհաբար, 1786, 1797), Մ. Գասպարյանցի «Գործ համարողական արհեստի» (1787) դասագիրքը, «Հայնակ եւ նեմեցնակ» (1788) բառարանը ևն:

1811-ին տեղափոխվել են Վիեննա և շարունակել իրենց գրահրատարակչ. գործունեությունը (տես *Վիեննայի հայկական տպագրություն*):

ՏՓՂԻՍԻ (ԹԲԻԼԻՍԻԻ) ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, X դ-ում Ուխտանես եպիսկոպոսի պատվերով վրաց-ից հայ. թարգմանություն է կատարել Կիրակոս քահանան: 1073-ին Մկրտիչ քահանան ընդօրինակել է Շարակնոց: XIII դ-ում օտարներից փրկագնվել, նորոգվել ու լրացվել են մի քանի մատյաններ, այդ թվում՝ *«Վանենու Աւետարանը»* և *Վարդան Արևելցու* «Պատմության» անավարտ բնագիրը: 1300-ին Ավետարան է պատկերազարդել Զաքարիան (Մատենադարան, ձեռ. № 5476), իսկ 1304-ին մեկ այլ Ավետարան է ընդօրինակել Խաչատուր սարկավագը (Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 109): 1363-ին Տփղիսում ընդօրինակված մատյան է ստացել *Հովհան Որոտնեցին* (Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1297): 1444-ին Ավետարան է նորոգել ու կազմել Կաթողիկե եկեղեցու քահանա Սարգիսը: Հիշատակվում են նաև Կարապետ Աղթամարցի, Հովհաննես, Դավիթ, Մկրտիչ, Աստվածատուր գրիչները, մանրանկարիչ Մանուելը, որի մատյաններից 4-ը պահվում են Մատենադարանում (ձեռ. № 5784, 6260, 6806, 7986): Տփղիսում գրչության արվ-ը նոր վերելք է ապրել XVII դ-ում: Մեզ են հասել նորջուղայեցի Մկրտիչ դպիրի և նրա աշակերտներ Միքայելի, Սարգսի, Գրիգորի, Հակոբի ընդօրինակած բազմաթիվ մատյաններ: XVII դ-ում ձեռագրեր են ընդօրինակել և ծաղկել նաև Հովհաննես աբեղան, Բարսեղը, Աղամալ Ջուղայեցին, Միքայելը, Սահակ դպիրը և ուր.: XVIII դ-ում հիշվում են Գրիգոր, Մինաս, Դավիթ դպիր, Մելիքսեթ և այլ գրիչներ: XV–XVIII դդ-ում Տփղիսում ստեղծված մատյաններից շուրջ 25-ը պահվում են Մատենադարանում: Տ. գ. կ. շարունակել է գործել նաև XIX դ-ում, թեև Տփղիսում արդեն զարգանում էր հայկ. տպագրությունը:

Գրկ. Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Լ. Խաչիկյան), մաս 1, 2, Ե., 1955, 1958: **Աբրահամյան Ա.**, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Ե., 1964: Ե-ԺԲ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ.՝ Ա. Սնաթևոսյան), Ե., 1988:*

Տրիեստի հայկական տպագրություն




«Ժամակարգութիւն Աւագ շաբաթուն եւ ութօրէից Զատկին» (1808) գրքի փիփղոսաթերթը



Ս. Ավգերյանի «Սուրբ Աստուածածինին մէօհթասէրի վարքը» (հայատառ թուրք., 1810) գրքի նախափիփղոսաթերթը

Ր



Ր, հայ–ի այբուբենի 32–րդ տառը, անվանումը՝ «րե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ կարճ, լայն, երկար, և 2 նուրբ տարրերից. կարճը երկարի աջ կողմում է՝ ստորին ծայրից ցած, և վերին մասով նուրբով միանում է ստորին ծայրին: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ր, որպես հազարավորների սյան 5–րդ (32–րդ) տառ, նշանակել է հինգ հազար և հինգհազարերորդ, բյուրի նշանով (Ր̄)՝ 50 մլն (50 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով, այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ր–մաս 5000–րդ):

ՐԱՖՖԻ [Մելիք–Հակոբյան Հակոբ Մելիք–Միրզայի, 1835, գ. Փայաջուկ (Պարսկաստանի Սալմաստ գավառ)–25.4.1888, Թիֆլիս, թաղված է Խոջիվանքի պանթեոնում], գրող, հրապարակախոս, հաս. գործիչ: Սկզբն. կրթությունն ստացել է Փայաջուկի ծխական դպրոցում: 1847–ին մեկնել է Թիֆլիս, սովորել Կարապետ Բելախյանցի դպրոցում, 1852–ին ընդունվել է ռուս. պետ. գիմնազիա:

1870–ական թթ–ի սկզբին Ր., Գ. Արծրունու առաջարկությամբ, դարձել է ***«Մշակ»***–ի գլխ. աշխատակիցը. այստեղ տպագրել է «Գեղեցիկ Վարդիկը» (1872), «Անբախտ Հռիփսիմէն» (1872), «Սով» (1872), «Մի օրավար հող» (1873), «Բիբի Շարաբանի» (1876) պատմվածքները, հրապարակախոս. հոդվածներն ու ուղեգրությունները: 1875–77–ին դասավանդել է Թավրիզի Արամյան, 1877–79–ին՝ Ագուլիսի հայկ. դպրոցներում:



Րաֆֆի

Ր. «Խենթը» (1881, Շուշի, Միրզաջան Հակոբյանի տպ.), «Խաչագողի յիշատակարանը» (1869–70, հրտ.՝ 1882–83, 1884, Թ., Կովկասի գլխ. կառավարչության տպ.) և «Կայծեր» (հ. 1, 1883, Թ., Սմվսես Վարդանյանի տպ., հ. 2, 1887, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ.) վեպերում, վերլուծելով ազատագր. շարժման իրական հանգամանքները և ապարդյուն համարելով Հայկ. հարցի լուծման եվրոպ. դիվանագիտության ուղին, առաջադրել է ազգ–ազատագր. պայքարի գաղափարը: Ր. որակ. նոր աստիճանի է բարձրացրել հայ արձակը՝ մերձեցնելով այն համաշխ. գրակ–յան չափանիշներին:

Լույս են տեսել Ր–ու «Փունջ» (հ. 1, «Բանաստեղծութիւններ», հ. 2, «Վիպասանութիւններ», 1874, Թ., Համբարձում Էնֆիաճյանի տպ.) ժող–ը, «Հարեմ» (1874), «Ջալալէդդին» (1878, հրտ.՝ 1884, Մ., Օթոն Հերբեկի տպ.), «Մինը այսպէս, միւսը այնպէս» (1890, Թ., «Արոր» տպ.), «Սալբի» (1911, Վնն., Մխիթարյան տպ.) վիպակները, «Ջահրումար» (1871, հրտ.՝ 1895, Թ., Հ. Մարտիրոսյանի


տպ.), «Ոսկի աքաղաղ» (1870, հրտ.՝ 1883, Թ., Կովկասի գլխ. կառավարչության տպ.) վեպերը, «Դավիթ Բէկ» (1881, նույն տպ.), «Պարոյր Հայկազն» (1899, Թ., Մ. Վարդանյանի տպ.), «Սամուէլ» (1886, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.) պատմավեպերը: Հրատարակվել է նաև Ր–ու «Երկերի ժողովածուն» (հ. 1–10, 1955–59, հ. 1–10, 1962–64, հ. 1–12, 1983–99, 2011, բոլորը՝ Ե.):

Ր. հեղինակ է նաև «Խամսայի մելիքութիւններ» (1882, Թ., Կովկասի գլխ. կառավարչության տպ.) ժամանակագրության, «Պ. Հայկունու կրիտիկան եւ «Կայծերը»» (1883), «Վիպագրութիւնը ռուսահայերի մէջ» (1887) գրական–քննադատ. և հրապարակախոս. հոդվածների, «Ճանապարհորդութիւն Թիֆլիսից մինչեւ Ագուլիս» (1878) ուղեգրության, «Հայ կինը եւ հայ երիտասարդութիւնը» (1890, Թ., «Արոր» տպ.), «Արծիւ Վասպուրականի» (1893, Թ., Հ. Մարտիրոսյանի տպ.), «Տաճկահայք» (1895, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Ով էր մեղաւոր» (1895, Թ., Ա. Մելիք–Շահնազարյանի տպ.) աշխատությունների: Թարգմանել է Պ. Զուբովի, Լ. Սազոխ–Զախերի, Ֆ. Շիլլերի ստեղծագործություններից:

Ր. հանդես է եկել նաև Մելիքզադե, Անանուն, Մել և այլ գրական կեղծանուններով:

Երևանում և այլ քաղաքներում Ր–ու անվամբ կոչվել են փողոցներ, դպրոցներ, կիսանդրին տեղադրված է Երևանում՝ նրա անվան դպրոցի առջև:

Գրկ. **Հայկունի Ա.**, *Րաֆֆիի «Կայծերը», Բաքու, 1884:* **Եսայեան Յ.**, *Րաֆֆի: Նրա կեանքը եւ գրական գործունէութիւնը, Թ., 1903:* **Ավթանդիլեան Ա.**, *Պատկերներ Րաֆֆիի կեանքից, Ալեք–պոլ, 1904:* **Վանանդեցի Գ.**, *Րաֆֆիի վեպերը, Ե., 1928:* **Սարինյան Ս.**, *Րաֆֆի, Ե., 1957:* **Նույնի**, *Րաֆֆի. գաղափարների և կերպարների համակարգը, Ե., 1985:* **Սամվելյան Խ.**, *Րաֆֆու կյանքը, Ե., 1957:* **Պետրոսյան Ե.**, *Րաֆֆի, Ե., 1959:* **Նույնի**, *Րաֆֆի: Կյանքի ստեղծագործական ուղին, Ե., 1987:*



Րաֆֆու *«Երկերի ժողովածու»-ի (հ. 1, 1983, Ե., «Սովետական գրող») կազմը*

«ՐԱՖՖԻ», պատկերազարդ տարեգիրք–օրացույց: Լույս է տեսել 1969, 1970, 1984-ին (3 գիրք) Թեհրանում: Հիմնադիր–խմբագիր՝ Տաճատ *Պողոսյան*: Ներկայացրել է իրանահայության առօրյան, Խորհրդ. Հայաստանի տնտ., քաղ. իրավիճակը, տպագրել երիտասարդ գրողների, արվեստագետների գործեր, անդրադարձել Հայաստան–Իրան միջպետ. հարաբերություններին: Առանձին բաժնով ներկայացրել է Հայ եկեղեցու ազգ–կրոն. և Իրանի պետ–կրոն. տոների ժամանակացույցները: Ունեցել է հավելված՝ «Երազահան»:




Րաֆֆու *«Խենթը» և «Խաչագողի հիշատակարանը» վեպերի (2012, Ե., «Անտարես») մեկ գրքով հրատ-յան կազմը*

ՐԵՍՏԵՆ Միքայել Տեր–Պետրոսյան (Պատկանյան Միքայել Պետրոսի, 1755, Կ. Պոլիս–1844, Կ. Պոլիս), բժիշկ: Սերովբե *Պատկանյանի* եղբայրը: Ավարտել է Պիզայի համալսարանը (1799): 1833-ին հաստատվել է Կ. Պոլսում:

Լույս են տեսել Ռ–ի «Բժշկականութիւն» (հ. 1–2, 1822, լրց. հրտ.՝ 1832, Վնտ., Սբ Ղազարի տպ.) աշխատությունը. 1-ին հատորում ներկայացված են տենդերի դասակարգումը, հայտնի տարբեր հիվանդությունների (հատկապես՝ նյարդային և վններ.) կլինիկ. պատկերը, պատճառները, բուժումը, 2-րդ հատորը բժշկ. տերմինների բացատր. բառարան է. ընդգրկում է 2500 տերմին (օտարները՝ հայատառ), «Կրթութիւն բժշկական արուեստի» (մաս 1–6, 1838–41, ԿՊ, Պողոս Արապյան Ապուչեխցու տպ.), որտեղ քննարկել է տես., մեթոդ. և ընդհանուր ախտաբանության հարցեր, «Հանրամատչելի բժշկարան մարմնի վէրքերի եւ ներքին հիւանդութիւնների» (1914, Թ., «Էսպերանտո» տպ.) ուսումնասիրությունները:

Գրկ. **Վարդանյան Ս.**, *Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 2000:* **Оганесян Л.**, *История медицины в Армении, т. 4, Е., 1947, с. 111–125.*

Ց



Ց, հայ–ի այբուբենի 33–րդ տառը, անվանումը՝ «ցո» («ցոյ»): Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ կարճ, լայն ու երկար, և 3 նուրբ տարրերից (յ տառի կրկնավորն է՝ 1 նուրբի հավելումով). կարճը և լայնը երկարի ձախ կողմում են, կարճի 2 ծայրերը միանում են երկարին նուրբերով՝ վերևից ու մեջտեղից, իսկ լայնը ստորին ծայրից՝ երկարի ստորին ծայրին: Ունի գրչագիր, բոլորգիր, երկաթագիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ց, որպես այբուբենի հազարավորների սյան 6–րդ (33–րդ) տառ, նշանակել է վեց հազար և վեցհազարերորդ, բյուրի նշանով (Ց͂)՝ 60 մլն (60 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով, այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս 33–մաս 6000–րդ):

«ՑԱԽԱԽԵԼ», երգիծ. շաբաթաթերթ: Լույս է տեսել 1915–21–ին Նյու Յորքում, ապա՝ Բոստոնում: Տնօրեն–խմբագիր՝ Սիմեոն Կյուլո (Կյուլոյան): Ներկայացրել է Առաջին համաշխ. պատերազմի (1914–18) ընթացքը, դատապարտել պատերազմող կողմերի զավթող. նկրտումները, թուրքերի բարբարոսություններն Արմ. Հայաստանում:



«Ցախաւել» *1943–58, Թեհրան*

«ՑԱԽԱԽԵԼ», երգիծ. պատկերազարդ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1943–58–ին Թեհրանում: Խմբագիր՝ Երվանդ Բազեն (Միրզայան): 1943–44–ին հրատարակվել է որպես ժող. (8 համար): Խրազանել է իրանահայ կյանքի արատավոր կողմերը:

ՑԱՆԿ, հրատ–յան վերնագրերի, նրանցում օգտագործված հատուկ անունների և այլ տեղեկությունների ցուցակ: Դրվում է գրքի վերջում, երբեմն՝ սկզբում: Տես նաև *Բովանդակություն*:

«ՑԱՆԿ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐԻ» (< լատ. Index Librorum Prohititorum), Հռոմի կաթոլիկ եկեղեցու արգելած (սպառնալիքի տակ)՝ գրքերի ցանկ: Առանձին հրատ–ներ ունեցել են նաև ընթերցանության, վաճառքի և գրաքննության ցուցումներ: Հիմն. նպատակը եղել է հավատի ու բարոյականության դեմ ոտնձգություններից ու աստվածաբան. խոտորումներից պաշտպանելը: Գրաքննություն անցած գրքերը տպագրվել են «Առանց խոչընդոտների» (Nihili obstat), տիտղոսաթերթին՝ «Կարող է տպագրվել» (Imprimatur) գրիֆով: Կաթոլիկ հեղինակներին վերապահվել է իրենց ստեղծագործությունները պաշտպանելու և նոր՝ սրբագրված հրատ–ներ տպագրելու իրավունք:

Առաջին «Ց. ա. գ.» հրատարակել են Նիդեռլանդներում 1529–ին, ապա Վենետիկում՝ 1543–ին, Փարիզում՝ 1551–ին: Առաջին հռոմ. ցու–

ցակը կազմվել է Պողոս IV պապի օրոք, որը Տրիդենտյան ժողովը շատ խիստ է համարել և 1564-ին շրջանառության մեջ է դրել նրա մեղմացված տարբերակը: 1572-ին ձևավորվել է Յուցակի սուրբ միաբանությունը, որը հատուկ զբաղվել է «Ց. ա. գ.»-ի կազմումով, իսկ 1917-ից այդ հարցերով զբաղվել է Սրբազան խորհուրդը: «Ց. ա. գ.» գործել է մինչև 1966-ը, ապա Վատիկանի 2-րդ ժողովն այն լուծարել է:

Տարբեր ժամանակներում արգելվել են Լ. Վալլայի, Է. Ռոտերդամցու, Լ. Ստեռնի, Վոլտերի, Դ. Դեֆոյի, Ջ. Բրունոյի, Ն. Կոպեռնիկոսի, Յ. Կեպլերի, Գ. Գալիլեյի, Օ. դը Բալզակի, Ժ.-Պ. Սարտրի և ուր. որոշ ստեղծագործություններ: Հայտնի է նաև Ոսկան Երևանցու՝ Վատիկանի սրբազան ժողովի ներկայացուցչի հետ հակադրությունը հայ. առաջին Աստվածաշնչի (1666–68) տպագրության ժամանակ:

«ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», գիտ. կիսամյա պարբ.: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ-ի հրատ.: Լույս է տեսնում 2013-ից Երևանում՝ հայ., անգլ.: Գլխ. խմբագիր՝ Հայկ Դեմոյան, պատ. խմբագիր՝ Սուրեն Մանուկյան: Տպագրում է ցեղասպանության պատմության, պատմագրության, ինչպես նաև այդ թեմային առնչվող այլ հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ, հոդվածներ, գիտ. բանավեճեր, անդրադառնում է նաև այլ ժողովուրդների ցեղասպանությունների հարցերին, քննադատում է թուրք. կառավարության ժխտողական ու հակագիտ. քարոզչությունը:

Վլադիմիր Մաղալյան



«Ցեղասպանագիտական հանդես»,
2013-ից, Երևան (№ 1)

ՅԻՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. ցինկե թիթեղից *կլիշե* պատրաստելու լուսամեխ. եղանակ. վերարտադրվող բնագրի սևանկարը պատճենահանվում է լուսազգայուն շերտով պատված ցինկի թիթեղի վրա, ապա խածատվում՝ ռելիեֆային տպագրող տարրեր ստանալու համար:

Հայաստանում Ց. ներդրվել է 1922-ին, առաջին վարպետները՝ Ս. Սողոմոնյանն ու Հ. Մինասյանը, հրավիրվել են Թիֆլիսից:

2. Ց-յան եղանակով կլիշեներ պատրաստող արտադրամասը:

«ՅՈՒՂՔ», պարբերաթերթ: Լույս է տեսել 1979–84-ին Ժնևում՝ հայ. և ֆրանս.: Շվեյցարահայերի միության տեղեկատու: Լուսաբանել է հայկ. համայնքի կյանքը, Խորհրդ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները, տպագրել լուրեր սփյուռքահայ համայնքներից:

«ՅՈՒՊ ՔԱՀԱՆԱՅԻՑ», կրոնաբարոյախրատ. ժող., բժշկարան: Կազմել է Պողոս Կաղզվանցին: Տպագրվել է 1792-ին Կ. Պոլսում՝ Սայր դպրատան տպարանում: Տիտղթ-ին՝ «Ցուպ քահանայից որ ուսուցանէ խոստովանահարց՝ բարւոքապէս….» (352 էջ, 8º, 12,5 x 7,5 սմ):



«Ցուպ քահանայից»
(1792, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը

ՅՈՒՑԻՉ, գրքի տեքստում հանդիպող հասկացությունների, անձնանունների, աշխարհագր. և այլ անունների *ցանկ*: Կազմվում է հիմնականում այբբեն. կարգով և զետեղվում հրատ-յան վերջում: Լինում են առարկայական, անվանական (վերջինս կոչվում է նաև անվանացանկ), տեղանունների և այլ Ց-ներ: Ց-ում զետեղված հասկացության (անվան ևնի) դիմաց նշվում են տեքստի այն էջերը, որտեղ նրանք հանդիպում են (օգտագործված են): Ց-ները, որպես կանոն, շարվում են հիմն. տեքստից 1 *կէփ*-ով փոքր տառերով:

ՅՈՒՅԶԱՎՈՐՈՒՄ, **ինղեքսավորում**, մատյանների, գրքերի, արխիվային գործերի ևնի հաշվառման պայման. համակարգ՝ նրանց որևէ (առավել ընդհանուր) հատկանիշի հիման վրա: Կատարվում է փաստաթղթի խորագրերի, այբբենական-առարկայական ցուցիչների, աղյուսակների, գրադարանային ֆոնդի հիման վրա հրատարակված գրակ-յան համարի՝ ըստ հատուկ-գործառն. նշանակության (տեղեկատու, ուս., գիտ., արդ., գիտաճանաչող. ևն), ըստ տեղեկույթի նշանային ձևի (բառային, գեղ., նոտային, քարտեզագր. ևն)՝ նրանց պահադրման համակարգման և դյուրին օգտագործման համար: Տես նաև *Հրատարակությունների դասակարգում, Հրատարակությունների միջազգային չափորոշիչ համարներ:*

ՈՒ



ՈՒ, հայ. այբուբենի 34–րդ տառը: Տառային առանձին միավոր է դարձել 1922–ի ուղղագր. բարեփոխությամբ՝ որպես ո–ի և ւ–ի հաբադրություն, և այբուբենում զբաղեցրել է ւ–ի [իիւն (հյուն), ւիւն (վյուն)] տեղը: Ի (ւ) ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար, կարճ ու լայն տարրերից և 2 նուրբից. կարճը երկարի ձախ կողմում է, ձգվում է նրա վերին ծայրից դեպի վեր և նուրբով ստորին ծայրով միանում երկարի վերին ծայրին, իսկ լայնը երկարի աջ կողմում է և նուրբով վերին ծայրով միանում է երկարին մեջտեղից: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ի, որպես այբուբենի հազարավորների սյան 7–րդ (34–րդ) տառ, նշանակել է յոթ հազար և յոթհազարերորդ, բյուրի նշանով (Ի֯)՝ 70 մլն (70 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ Ի–ի փոխարեն, որպես դաս. թվական, օգտագործվում է Ու տառը (օր.՝ մաս Ու–մաս 7000–րդ): Տես նաև *Ո* հոդվածը:

ՈՒԴԵՆՌԻՅՆ (Oudenrijn) Մարկ Անտուան վան դեն [25.3.1890, Ուտրեխտ (Նիդեռլանդներ)–15.8.1962, Ֆրայբուրգ (Գերմանիա)], հոլանդացի հայագետ: Աստվածաբանության դ–ր: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: 1922–ից դասավանդել է Հռոմի Մխիթարյան ուսումնարանում: Գրել է մենագրություններ հայ ունիթորների և Վենետիկի Մխիթարյան միաբանության ու նրա անդամների գործունեության մասին: Եվրոպ. մամուլում արձագանքել է հայ գիտ. կյանքի նորություններին, գրել արտերկրում պահվող հայկ. ձեռագրացուցակների, հիշատակարանների ժող–ների, օտար լեզուներով լույս տեսած հայ–ի քերակ–յան ձեռնարկների, բառարանների մասին: Հայ–ից անգլ. է թարգմանել «Յաղագս առաքինութեանց հոգւոյն» (1942) երկը:

Երկ. Eine armenische Insel im Ausland, Venedig, 1940; Linguae Haicanae scriptores Ordinis Praedicatorum..., Bernnae, 1960.

Գրկ. **Ինգլիզեան Վ.,** *Ուսուցչապետ Մ. Ա. վան դեն Ուդենռիյն, «ՀԱ», 1962, № 12:*


COLLECTANEA FRIBURGENSIA

DER TRAKTAT

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՀՈԳՒՈՅՆ

VON DEN TUGENDEN DER SEELE

PRIMA SECUNDAE

DR. MARCUS ANTONIUS VAN DEN OUDENRIJN O. PR.

«Յաղագս առաքինութեանց հոգւոյն» (անգլ., թարգմ.՝ **Մարկ Ուդենռիյնի**, *1942, Ֆրայբուրգ) գրքի փիփղոսաթերթը

ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ, Ուզբեկստանում հայ. գրակ. չի տպագրվել: 1923–24–ին Տաշքենդում լույս է տեսել Թուրքեստանի կոմկուսի ԿԿ և Ազգ. փոքրամասնությունների խորհրդի պաշտոնաթերթ «Կարմիր շող» շաբաթաթերթը (11 համար): 2008–ից այնտեղ լույս է տենում *«Դեպի ապագա»* հանդեսը:

«ՈՒԹ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱՒԵՏԱՐԱՆ», *Կիլիկիայի մանրանկարչության դպրոցի* ձեռագիր մատյան (Մատենադարան, ձեռ. № 7651): Պատկերազարդել են XIII դ–ի վերջին քառորդի նկարիչները (անունները հայտնի չեն), 1320–ին՝ ***Սարգիս Պիծակը***: Գրիչն Ավետիսն է, որի անունով մեզ հասած վերջին աշխատանքն է: Ձեռագիրն ստացող Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսը Օշին արքայի հրամանով բազմատեսակ ձեռագրերից ընտրել է «Ու. մ. Ա.» և պատվիրել Սարգիս Պիծակին՝ ավարտելու պատկերազարդումը: Սարգիս Պիծակն ուրվագծված տերուն. պատկերները գունազարդել է, բաց թողած տեղերը լրացրել մանրանկարներով:

«Ու. մ. Ա.»–ի խորանների պատկերները մեզ չեն հասել (ներկայացված են իբրև համաբարբառի աղյուսակներ), փոխարենը ձեռագրի գրեթե բոլոր էջերն ունեն մանրանկարներ (ավելի քան 250), որոնց հիմքը XI–XII դդ–ի բյուզ. ամենահարուստ պատկերազարդ ձեռագրերից մեկն է (Ֆլորենցիայի Լաուրենցիանա գրադարան, VI, 23) և *«Հեթում Բ թագաւորի Շաշոց»*–ի մի քանի մանրանկար: Հիշյալ բյուզ. ձեռագրից ընդօրինակված է 17 մանրանկար: «Հեթում Բ թագավորի Շաշոց»–ի մանրանկարների ֆոնը ոսկին է կամ շենքերը: Հաջորդ խումբը ոսկու ֆոնի վրա շրջանակված ֆրիզաձև նկարներ են: Մի շարք մանրանկարների գունավորումից երևում է Սարգիս Պիծակի միջամտությունը: Ավետարանիչներին, այլաբանական պատկերներն ու առակները մեծ մասամբ նկարել է Սարգիս Պիծակը:

Գրկ. ***Ղազարյան Վ.****, Յուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դարի վերջ–XIV դարի սկիզբ), Ե., 1984:* **Дрампян Р.***, Из истории армянской миниатюры XIII–XIV вв., «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ.», 1948, № 5:*



«Ութ մանրանկարիչների Աւետարան». *«Մանկանց կոփորածը», մանրանկար (XIII դ–ի վերջ – XIV–ի սկիզբ, Մատենադարան, ձեռ. № 7651)*

ՈՒԹՄԱՋՅԱՆ Հայկարամ Սիւրադի [25.12.1912, գ. Զարա (Սեբաստիայի նահանգ)–13.12.1970, Երևան], պատմաբան, պետ. աշխատող: Պատմ. գիտ. դ–ր (1966), պրոֆ. (1967): Ավարտել է ԵՊՀ (1941): 1948–ից դասավանդել է ԵՊՀ–ում: 1967–70–ին՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից մամուլի պետկոմի նախագահ:

Լույս են տեսել Ու–ի «Սյունիքը IX–X դարերում» (1958), «Հասարակության արտադրողական ուժերի և նյութատեխնիկական բազայի բնութագրման շուրջը» (1964) աշխատությունները:



Բագրատ Ուլուբաբյան

ՈՒԹՈՒՃՅԱՆ, **Յությունյան**, Կարապետ Սիմոնի (1823, Կ. Պոլիս–1904, Կ. Պոլիս), հրատարակիչ, խմբագիր, մանկավարժ, թարգմանիչ: Սովորել է Սկյուտարի ճեմարանում, ավարտել Փարիզի ավետարան. բարձրագույն վարժարանը (1851): 1852–54–ին՝ ***«Մասիս»*** պարբ–ի, 1862–66–ին՝ «Մանրալուրք «Մասիս» լրագրոյ»՝ «Մասիս»–ի հավելվածի, 1876–77–ին՝ հայատառ թուրք. «Ռուզնամեի Մասիս» («Մասիսի լրատու») պարբ–ի հրատարակիչ–խմբագիր, 1877–ին, միաժամանակ՝ ***«Ազազայ»*** օրաթերթի արտոնատեր:


Թարգմանել է Է. Սյուի («Թափառական հրեայ», 1867), Մ. Թոռենի («Երկաթե դիմակով մարդը...», 1870), Է. Աբուի («Ամուսնութիւնք Փարիզի», 1833), Ժ. Վեռնի («Հինգ շաբաթ օդապարիկով», 1887, բոլորը՝ ԿՊ, «Մասիսի» տպ.) և ուր. գործերից:

Գրկ. ***Աասատուր Հ.****, Դիմապատուներներ, ԿՊ, 1921:* **Ղազարյան Հ.***, Արևմտահայերի սոցիալ–տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Ե., 1967:*

ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ Բագրատ Արշակի [9.12.1925, գ. Սուշկապատ (այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում)–19.11.2001, Եղվարդ, թաղված է Երևանում], գրող, պատմաբան, խմբագիր: Պատմ. գիտ. դ–ր (1973): Ավարտել է Շուշիի ուսուցչ. ինստ–ը (1944), Բաքվի մանկավարժ. ինստ–ը (1946): 1949–67–ին՝ ԼՂԻՄ–ի գրողների մարզային բաժանմունքի պատ. քարտուղար, միաժամանակ՝ «Սովետական Ղարաբաղ» (այժմ՝ ***«Ազատ Արցախ»***) թերթի խմբագիր, մշակույթի մարզային վարչության պետ: 1968–ին տեղափոխվել է Երևան, 1969–ից աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստ–ում:



Բ. Ուլուբաբյանի *«Արցախի պատմությունը...» (1994, Ե., «Միքայել Վարանդյան») գրքի կազմը*



Գաբրիելա Ուլուհոճյանի
«Հայոց պատմության նյութերը...» (անգլ., Ե., 2001) գրքի կազմը

Լույս են տեսել Ու–ի «Երգեր աշխատանքի և խաղաղության» (1952), «Այս առավոտ» (1956) բանաստեղծությունների, «Այգեստան» (1960), «Թարթառ» (1963), «Հատիկը չի մահանում» (1967), «Կանթեղ» (1976) պատմվածքների ու վիպակների ժող–ները, «Հայրենի հող» (1959), «Մարդը» (1963), «Սարդարապատ» (1991) վեպերը, «Խաչենի իշխանությունը 10–16–րդ դարերում» (1975), «Դիվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության 5–7–րդ դդ.» (1981), «Գանձասար» (1981), «Զրուցարան: Ծաղկաքաղ Հայոց պատմության» (1991), «Արցախի պատմությունը: Սկզբից մինչև մեր օրերը» (1994), «Արցախյան գոյապայքարը» (1994), «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» (1997), «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» (1998), «Ժամանակի քննությունը» (2006), «Փորձության օրերի խորհուրդը» (2010) պատմագիտ. ուսումնասիրությունները: Աշխարհաբարի է փոխադրել Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» (1982) և Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցը» (առաջաբ. և ծնթգր.՝ Ու–ի, 2003):

ՈՒԼՈՒՀՈՁՅԱՆ Գաբրիելա Լևոնի [ծ. 22.7.1934, Մանտովա (Իտալիա)], լեզվաբան, հայագետ: ՀՀ ԳԱԱ պատվ. դ–ր (1996): Ավարտել է Միլանի կաթոլիկ համալսարանի բանասիր. ֆակ–ը (1958): 1982–ից՝ Բոլոնիայի պետ. համալսարանի հայոց լեզվի և գրակ–յան ամբիոնի վարիչ: Հրատարակել է «Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց»–ի (1994) քնն. բնագիրը, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Աշխարհագրութիւն» (2000) երկը, պատմաբանասիր. հոդվածներ:

Լույս է տեսել Ու–ի «Հայոց պատմության նյութերը Կենտրոնական Եվրոպայի արխիվներում» (անգլ., 2001, Ե.) աշխատությունը:

Ուխտանես



«Պատմութիւն Հայոց»–ի (1871, Էջմիածին) տիտղոսաթերթը

ՈՒԽՏԱՆԵՍ, **Ուխտանես եպիսկոպոս, Ուխտանես պատմագիր, Ուխտանես Սեբաստացի, Ուխտանես Ուռհայեցի** (մոտ 935–1000), պատմագիր, եկեղեց., հաս. գործիչ: Նարեկավանքում աշակերտել է *Անանիա Նարեկացուն*: Հմտացել է մատենագիտ–յան և աստվածաբանության մեջ: Մոտ 970–985–ին՝ Սեբաստիայի, հավանաբար՝ նաև Ուռհայի (985–ից հետո) թեմակալ առաջնորդ: Պայքարել է քաղկեդոնականության դեմ: 980–982–ին Անանիա Նարեկացու հանձնարարությամբ գրել է **«Պատմութիւն Հայոց»** երկասիրությունը, որի 1–ին բաժինը կամ հատվածը (76 գլուխ) վերնագրված է «Պատմութիւն հայրապետաց եւ թագաւորաց Հայոց»: Առաջին (Ա) գլուխն ընծայական է Անանիա Նարեկացուն, որտեղ խոսվում է նաև երկի ընդհանուր կառուցվածքի և քննարկվելիք հարցերի մասին: Բուն պատմության շարադրանքն սկսում է Բ գլխից՝ ընդգրկելով աստվածաշնչյան պատմություններից մինչև Հայոց թագավոր Տրդատ Գ Մեծի գահակալման ժամանակաշրջանը: «Պատմութիւն Հայոց»–ի 2–րդ բաժնում (70 գլուխ)՝ «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Ու. մանրամասնորեն անդրադառնում է VI դ–ի վերջի և VII դ–ի սկզբի հայկ., վրաց. և աղվան. եկեղեցիների փոխհարաբերությունների ու հատկապես Հայ եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման պատմությանը, դավանաբան. խնդիրների: Այս հատվածի շարադրման համար Ու. որպես սկզբնաղբյուր օգտագործել է *«Գիրք թղթոցը», Մովսես Կաղանկատվացու* «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը, դավան. վավերագրեր: Երկի 1–ին և 2–րդ հատվածները մեզ հասել են թերի: «Պատմութիւն Հայոց»–ի 3–րդ բաժինը («Յաղագս մկրտութեանն ազգին այնմիկ Ծադն կոչեցեալ») չի պահպանվել: Ու–ի Պատմության բնագիրը մեզ է հասել 1663–ի ընդօրինակությամբ (Մատենադարան, ձեռ. № 1774), գրչագրված են մյուս 4 ձեռագրերը (պահվում են Երևանի, Վենետիկի մատենադարաններում, Ս. Պետերբուրգի և Փարիզի ձեռագրատներում):



«Հայոց պատմութիւն»–ի (2006, Ե., «Հայաստան») կազմը

«Պատմութիւն Հայոցը» լույս է տեսել 1871–ին (Վաղ–պատ, Սբ Էջմիածնի տպ., վերահրտ. աշխարհաբար՝ 2006, Ե., փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Վ. Առաքելյանի): Տպագրվել է նաև ֆրանս. (1870–71, ՍՊբ, թարգմ.՝ Մ. Բրոսսեի), վրաց.՝ հայ. բնագրին զուգահեռ, երկի միայն 2–րդ հատվածը (1875, Թ., թարգմ.՝ Զ. Ալեքսիձեի), անգլ.՝ նույն հատվածը (1988, թարգմ.՝ Զ. Արզումանյանի):

Գրկ. Ակինեան Ն., *Ուխտանէս եպիսկոպոս պատմագիր, «ՀԱ», 1908, էջ 17–20, 70–74, 112–115:* Նույնի, *Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վնն., 1910:* Ադոնց Ն., *Հայ-ծաթերի ծագման մասին, «ՀԱ», 1912, էջ 257–271:*

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է Լվովում (տես ***Լվովի հայկական տպագրություն***), իսկ մինչ այդ և դրան զուգընթաց Ուկրաինայի հայաշատ վայրերում գործել են գրչության կենտրոններ, մասնավորապես՝ Ղրիմում՝ Կաֆայում (Թեոդոսիա) և Սուրխաթում: Մատենադարանում պահվում են Ղրիմում ստեղծված շուրջ 300 հայ. ձեռագրեր: Ամենափոքր ձեռագիրը, որը կոչվում է «Տոնացոյց», լուցկու տուփից էլ փոքր է և կշռում է 19 գրամ, գրվել է 1434-ին Կաֆայում (տես ***Կաֆայի գրչության կենտրոն, Սուրխաթի գրչության կենտրոն***):

Ուկրաինայում հայկ. պարբ-ներ հրատարակվել են XX դ-ի սկզբից, որոնք հիմնականում կարճ կյանք են ունեցել: Լույս են տեսել ***«Արմյանե ի վոյնա»*** (ռուս.,1916–17) հանդեսը, «Հոսանք» (1918–19), «Աստղ» (1920, երեքն էլ՝ Օդեսա), «Կոմունիստ» (1919, Կիև), «Սոցարշավ» (1933–35, Խարկով) թերթերը: Ղրիմում տարբեր տարիների լույս են տեսել «Դաստիարակ» (1873–74, Թեոդոսիա) պատկերազարդ ամսագիրը, ***«Մասեաց աղաւնի»*** (1855–58, Փարիզ, 1857–64, Թեոդոսիա) հանդեսը, «Հայկական համաշխարհային համագումար» (1995, Սիմֆերոպոլ, 3 համար՝ հայ., ռուս., անգլ.) պարբերաթերթը: Ներկայում Կիևում լույս են տեսնում ***«Արագած»*** (1994-ից), «Կանչ» ամսաթերթերը, Սիմֆերոպոլում՝ ***«Մասյաց աղաւնի»*** (1991-ից), «Սուրբ Խաչ» (1996-ից) պարբ-ները:

Ուկրաինայի հայկական տպագրություն



Աղոթագրքի (1618, Լվով, տպագրիչ՝ Հովհաննես Քարմատպանենց) 1 (70-րդ) էջ


«ՈՒՂՂ ԵՒ ԾՈՒԾ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ», Լուդովիկոս Աբելլիի աստվածաբան. երկը: Թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու: Տպագրվել է 1748-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում (838 էջ, 8º, 12,4 x 7 սմ):

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1. տվյալ լեզվի հնչույթների գրության՝ ընդունված կանոնների համակարգը: 2. Արտահայտության միջոցների ուսմունքի մի բաժինը, որը սահմանում է հնչույթները գրավոր ճիշտ արտահայտելու կանոնները:

Լեզվի զարգացման ընթացքում արտասանությունը հեռանում է գրությունից, և Ու-յան հատուկ սկզբունքներ սահմանելու կարիք է զգացվում: Ու-յան սկզբունքներն են՝ 1. հնչույթային. գրում են այնպես, ինչպես արտասանում են. գիրը համապատասխանում է հնչույթին, 2. ձևաբանական (ստուգաբանական). տվյալ ձևույթը բոլոր դեպքերում գրվում է նույն ձևով՝ անկախ արտասանությունից. բառի գրության հիմքում ընկած է նրա կազմությունը, քերական. կառուցվածքը, 3. ավանդական (պատմական). պահպանվում է նախնիներից ավանդաբար հասած գրությունը, հաշվի չի առնվում նրա համաժամանակյա արտասանությունը:

Ու. սահմանում է՝ 1. ձևույթների ու բառերի կազմում հնչույթների գրավոր ճիշտ արտահայտության, 2. բառերի միացյալ և անջատ գրության, 3. մեծատառի գործածության, 4. տողադարձի, 5. փոխառյալ բառերի տառադարձման կանոնները:

Հայ-ի Ու-յան պատմությունն անցել է զարգացման մի քանի շրջան. 1. V–X դդ., երբ գրության մեջ գործում է հնչույթային սկզբունքը, չկան տողադարձի որոշակի կանոններ և փոքրատառերի գործածություն, ուղղագր. առանձին շեղումները համակարգը չեն խախտում: 2. XI դ-ից մինչև 1922-ը, երբ հնչույթային սկզբունքին զուգահեռ սկսում են գործել ավանդական և ձևաբանական սկզբունքները. ա. **աւ** երկբարբառը օ պարզ հնչույթի փոխվելու հետևանքով գրվում է լատ. **օ** (**աւր**>**օր**, առաջին օրինակը 1046-ից՝ **փափագանօք**), նաև **ո** տառերով, բ. **վ** հնչույթն ունեցել է **վ, ւ, ու** գրությունները (վար, նաւ, հատուած), գ. այբուբենում ավելացել է **ֆ** տառը (առաջին օրինակը 1037-ից՝ **Սու-**



«Ուղղ եւ ծուծ աստուածաբանութեան» *(Լուդովիկոս Աբելլի, 1748, Վնտ.) գրքի փիփղոսաթերթը*



«Ուսանողական գիտական տեղեկագիր», *1940–76, Երևան (№ 13, 1966)*

«Ուսանողի գրադարան» *մատենաշար*



Հոմերոսի «Իլիական»-ի (1987, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը



Խրիմյան Հայրիկի «Երկեր»-ի (1992, Ե., ԵՊՀ հրտ.) կազմը

ֆարզինն), դ. XI–XVII դդ–ում խուլեր նշանակող տառերի փոխարեն գործածվել են ձայնեղներ, և հակառակը (**d – տ, g – կ, b – պ և t – դ, k – գ, p – բ**), ե. սկսած XIII դ–ից՝ բառասկզբի ձայնավորներին և **u, q** բաղաձայններին նախորդող յ–ի փոխարեն հանդիպում է **h** տառը, որ հետևանք է յ>**h** հնչյունափոխության (առաջին օրինակը 1282–ից՝ **hoքնատեսակ**), գ. XIV դ–ից հետո բառասկզբի **n** և **ե** արտասանվում են հիմնականում **վo, յէ**, բայց շարունակվում են գրվել ավանդ. ձևով: 3. 1922–40–ին Հայաստանում (և ԽՍՀՄ տարածքում) հատուկ որոշմամբ հայ–ում գործածության մեջ են դրվում գրության և Ու–յան հետևյալ սկզբունքները. ա. այբուբենից հանվում են **է, օ, ւ** տառերը, **է** հնչույթը բոլոր դիրքերում գրվում է **ե**, իսկ **օ**–ն՝ **ո** տառով, **je** բառասկզբում գրվում է **յե**, **vo**–ն՝ **վո**, բ. **եա, իւ** երկհնչյունները գրվում են **յա, յու** տառակապակցություններով, գ. բառասկզբում **h** արտասանվող յ –ի փոխարեն գրվում է **h**, իսկ բառավերջի համր յ–ն չի գրվում, դ. **վ** հնչույթն ամենուրեք գրվում է **վ** տառով, ե. ձայնավորին հաջորդող **եմ** օժանդակ բայը գրվում է **յեմ (գրելու յեմ)**: 4. 1940–ից մինչև այժմ. 1940–ին կատարված ուղղագր. մասնակի փոփոխությամբ վերականգնվում են այբուբենից հանված **օ** և **ե** տառերը, որոնցով արտահայտվում են համապատասխան հնչույթները. բառասկզբի **vo** գրվում է **ո** տառով, **je**–ն՝ **ե**–ով, **եմ** օժանդակ բայը ձայնավորից հետո նույնպես գրվում է **ե**–ով (**գրելու եմ**): Սփյուռքում շարունակում է գործել դաս. Ու.:

Գրկ. Գյուլբուդաղյան Ս., Հայերենի ողղագրության պատմություն, Ե., 1973: Ջահուկյան Գ., Քերականական և ողղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում V–XV դդ., Ե., 1974:

ՈՒՈՔԸՐ (Wolker) Քրիստոֆեր Ջոզեֆ (ծ. 1942), անգլիացի պատմաբան: Սովորել է Լենսինգ և Բրեյզհաուզ քոլեջներում: 1976–ին Դեյվիդ *Լանգի* հետ հրատարակել է «Հայերը» գրքույկը (հայ. հրտ.՝ 1992, թարգմ.՝ Ջ. Թորոսյանի): 1980–ին լույս է տեսել Ու–ի «Հայաստան. ազգի վերապրումը» աշխատությունը՝ նվիրված հայոց պատմությանը, մասնավորապես՝ Հայկ. հարցում եվրոպ. տերությունների քաղաքականությանը, Հայոց ցեղասպանության խնդիրներին: Գրքի 2–րդ հրատ–յան (1990) մեջ լուսաբանել է նաև Լեռնային Ղարաբաղի պատմությունն ու Արցախյան հիմնախնդիրը:

«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ», գիտ. ժող.: ԵՊՀ հրատ.: Լույս է տեսել 1940–76–ին (17 հատոր, ունեցել է նաև «Ուսանողական գիտական աշխատությունների ժողովածու», «Ուսանողական գիտական աշխատանքներ» և այլ խորագրեր) Երևանում՝ բնագիտ. և հասարակագիտ. պրակներով: Սկզբն. շրջանում տպագրվել է որպես ԵՊՀ ուսանող. գիտ. խմբակների պարբ., 1947–ից, Ուսանող. գիտ. ընկերության հիմնադրումից հետո, դարձել է նրա պաշտոն. հրատ–ը: Տպագրել է գիտ–ների տարբեր բնագավառներում ուսանողների, նաև մի շարք հայտնի գիտնականների՝ ուսանող. տարիներին կատարած հետազոտությունների արդյունքները:

«ՈՒՍԱՆՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ», ԵՊՀ հրատարակչության մատենաշար: Լույս է տեսել 1980–96–ին Երևանում: Նպատակը ՀՀ բուհերի ուս. ծրագրերում ներառված հայ. և օտարազգի (թարգմանաբար) գրողների ստեղծագործությունների տպագրումն էր: Լույս է ընծայվել շուրջ 50 անուն գիրք՝ Կորյունի (1980), Մովսես Խորենացու (1981), Ղազար Փարպեցու (1982), Ագաթանգեղոսի (1983), Թովմա Արծրունու (1985), Փավստոս Բուզանդի (1987), Եղիշեի (1989), Մատթեոս Ուռհայեցու (1991), Հովհաննես Դասխուրանցու (1996) երկերը, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1981) վեպը, Ե. Չարենցի «Պոեմներ և բանաստեղծություններ» (1984) ժող–ը, Սայաթ–Նովայի «Խաղերը» (1987), Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» (1991) աշխատությունը, Խրիմյան Հայրիկի «Երկերը» (1992), Ֆ. Շիլլերի «Պատմական


դրամաները» (1982), Ա. Դանտեի «Աստվածային կատակերգություն» (1983) պոեմը, Յ. Վ. Գյոթեի «Իմ կյանքից: Բանաստեղծություն և ճշմարտություն» (1985) պատմափիլ. վերլուծությունը, Հոմերոսի «Իլիական» (1987) և «Ողիսական» (1988) պոեմները, Շ. Բոդլերի «Չարի ծաղիկները» (1990) քերթվածների շարքը, Վ. Շեքսպիրի «Երկերը» (1991), նաև «Սփյուռքահայ բանաստեղծություն» (1981), «Հին Արևելքի պոեզիա» (1982), «20-րդ դարասկզբի ռուսական բանաստեղծությունը» (1982), «20-րդ դարասկզբի արտասահմանյան դրամատուրգիա» (հ. 1, 2, 1983, 1986), «Ֆրանսիական կլասիցիզմ» (1982), «Վրացական պոեզիա» (1983), «Ֆրանսիական պոեզիա» (1984), «19-րդ դարի գերմանական նովելներ» (1984), «20-րդ դարասկզբի արտասահմանյան արձակ» (1984), «Սփյուռքահայ պատմվածք» (հ. 1, 2, 1984, 1988), «Ռուս սովետական պատմվածք» (հ. 1–2, 1986–87), «Ամերիկյան պատմվածք» (1989), «Օտարալեզու հայ գրողներ» (1989), «Հին հունական ողբերգություններ» (1990) և այլ ժող-ներ:

Վլադիմիր Մաղալյան




«Ուսումնասէր», *1849–53, Սինգապուր*

«ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ», քաղ., առևտր. և գրական կիսամսյա թերթ: Լույս է տեսել 1849–53-ին Սինգապուրում՝ գրաբար: Խմբագիր-հրատարակիչ՝ Գրիգոր Գալստանյան: Մեկնաբանել է քաղ. և ազգ. ընթացիկ հարցեր, տպագրել լուրեր Սինգապուրի, Հնդկաստանի, Պարսկաստանի և այլ երկրների հայկ. գաղթավայրերի առօրյայից, առևտր. տեղեկություններ, հնդկահայերի հոգևոր իշխանությունների հրահանգներն ու շրջաբերականները, ինչպես նաև բանաստեղծություններ, առակներ, հանելուկներ ևն: Արտատպել է նյութեր «Արշալոյս Արարատեան» և «Ազգասէր Արարատեան» պարբ-ներից:



«Ուրախ գնացք», *2009-ից, Երևան (№ 6, 2012)*

«ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ», դպրոց. պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1932–43-ին Պլովդիվում: Տեղի Մխիթարյան վարժարանի հրատ.: Խմբագիրներ՝ Մկրտիչ Կարապետյան, Գրիգոր Հեպոյան, Հ. Եղիայան, Համազասպ *Ոսկյան*: Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանի հրատարակած «Ուսումնարան» (1911–15, խմբագիրներ՝ Անտոն Գոլանկճյան, Գարեգին Գարանֆիլյան) ամսաթերթի շարունակությունն է: Լուսաբանել է վարժարանի, հայկ. կրթ. այլ հաստատությունների ուսումնադաստիարակչ. առօրյան, տպագրել գիտ., հայագիտ., թարգման. հոդվածներ, կենցաղային-առողջապահ. նյութեր, նաև մանկ. գեղ. ստեղծագործություններ: Աշխատակցել են հիմնականում Վիեննայի Մխիթարյան միաբանության ադամները: Տպագրել է նաև ֆրանս., գերմ. նյութեր:



Ուրբաթագրքի
(1512, Վնտ., տպագրիչ՝ Հակոբ Մեղապարտ) ա. դ. էջը

«ՈՒՐԱԽ ԳՆԱՑՔ», մանկ. ճանաչող., ժամանցային պատկերազարդ ամսագիր: *«Էդիթ Պրինտ»*-ի հրատ.: Լույս է տեսնում 2009-ից Երևանում: Խմբագիր՝ Դավիթ *Գյուրջինյան:* Տպագրում է հայ դաս. և ժամանակակից գրողների ստեղծագործություններ, օտարազգի գրողների գործեր՝ թարգմանաբար: Կազմակերպում է «Ուրախ գրիչ», «Ուրախ վրձին» մրցանակաբաշխություններ: «Ու. գ.»-ի որոշ համարներ ունեն ներդիր-նվերներ (ձայնասկավառակ, օրացույց, բլոկնոտ, քանոն ևն):


ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ, հայ. առաջին տպագիր գիրքը: Տպագրիչ՝ *Հակոբ Մեղապարտ*: Անթվակիր է, առանց տպագրության վայրի նշման: Տիտղթ-ին՝ «Անուն գրոցս է սուրբ ուրբաթագիրք»: Կազմված է 8 մամուլից, վերջինը՝ 6 թերթից, 8-ծալ է, տառերով համարակալված են միայն մամուլները և յուրաքանչյուր մամուլի առաջին 3 թերթերը: Բաղկացած է 62 թերթից (124 էջ), շարվ-ը՝ 11 x 6,5 սմ:

Էջերը խորագրերով են՝ պարփակված զարդ-շրջանակներում: Օգտագործված է հաջորդաբար կրկնված նույն ոճի, բայց իրարից տարբեր 8 շրջանակ: Ունի փորագիր 4 պատկեր՝ Ա մամուլի՝ 2-րդ, Գ մամուլի՝ 16-րդ, Զ մամուլի՝ 7-րդ, և Է մամուլի 1-ին էջերում, 2 զարդ՝ «Վասն գանի» կոչվող հատվածի՝ հավելյալ ԳԳ մամուլի 1-ին և 12-րդ

էջերում, զարդագրեր՝ Ա մամուլի՝ 3-րդ, Դ մամուլի՝ 1-ին, 6-րդ, 12-րդ, Ե մամուլի՝ 7-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, Է մամուլի՝ 2-րդ և 9-րդ էջերում:

Բնագրի վերջում կա խաչաձև տպարանանիշ՝ լատ. D. I. Z. A. տառերով [Dei servus (Աստծու ծառա), Jakobus (Հակոբ), Zanni (Ծաննի՝ Հովհաննես(յան), Armenius (Հայ)]: Հիշագրեր չունի: Տպագրությունը մոտ 14 *կէսի*-ի ձեռագրանման բոլորգիր է, օգտագործված են նաև գլխագրեր: Տպագրությունը երկգույն է՝ սև ու կարմիր: Բնագրի սկիզբը և որոշ հատվածներ տպված են կարմիրով:

Ուրբաթագիրք



Գլխազարդով և սկզբնագրով էջ

Ու-ում ամփոփված են առասպելախառն պատմություններ, չափածո աղոթքներ, պահպանակ-գրեր: Ժող-ն Ու. է անվանվել թերևս «Ուրբաթ աւր կամ չորեքշաբթի տանին զհիւանդն ի դուռն եկեղեցոյն…» սկսվածքի պատճառով, իսկ ուրբաթը, ըստ Ղ. Ալիշանի, համարվել է հմայական ազդեցության օր: Գրքում ընդգրկված են աղոթքներ չարի, դևերի, «գազանի» ու կախարդությունների դեմ՝ դրանցից ձերբազատման մաղթանքներ, սաղմոսներ, այդ թվում՝ Գրիգոր Նարեկացուց, ապա՝ «Աղաւթ սրբոյն Կիպրիանոսի. Զոր ասացեալ է վասն դիւաց եւ կախարդաց եւ աղանդաւոց», որի շարունակությունն է «Պատմութիւն Յուստիանէ կուսին»-ը:

Ու. միջնադարյան բժշկարանի տեսակ է, որոշ չափով՝ նաև հմայիլ (թալիսման), որը գրքի տիրոջը պետք է զերծ պահեր չար ոգիներից, կախարդանքներից, չար աչքից. ընդ որում, մաղթանքներում՝ տողերի մեջ (Դ և Ե մամուլներ), կան մի քանի ազատ տեղեր՝ ավելացնելու համար գրքի տիրոջ անունը, որպեսզի դևերը նրան չվնասեն:

Ու-ում կան պատկերներ. մեկում (Գ մամուլ) հոգևորականը՝ հայկ. վեղարը գլխին, ձեռքին՝ գիրք (գուցե բժշկարան), կանգնած է հիվանդի մահճակալի մոտ: Վեղարավոր հոգևորականին ուղեկցում են 2 անմորուս աբեղաներ՝ գլուխները կենտրոնում սափրած. այսինքն՝ կաթոլիկներ են: Հայ հոգևորականի պատկերը հավելում ունի. նրան Հայ եկեղեցու հոգևորականի կերպարանք տվող սև վեղարն ավելացվել է հետագայում՝ պատկերի փորագիր տախտակի վրա. նախապես այդ հոգևորականը նույնպես կաթոլիկ աբեղայի արտաքին է ունեցել:

Զ մամուլի պատկերում Հռոմի պապն է՝ գահին նստած: Է մամուլի վերջում պատկերված է հոգևորական՝ օձը ձեռքին. դա նախորդում է «Գիր աւձահարիւ բաժնին»:



2012 (նմանահանություն, Ե., «Էդիթ Պրինտ»)

Ու-ում կա նաև հավելյալ մամուլ՝ «Վասն գանի» վերնագրով, համարակալված՝ ԳԳ: Գարեգին *Զարդհանապյանը* նկարագրել է Աղթարքը և Ու. (վերջինս՝ «Կիպրիանոս» անունով). Ու-ի մասին գրված է. «Անթուակիր ամենահին տպագրութիւն, առանց նշանակութեան տեղւոյ, քաղաքի եւ հրատարակչի»: Առաջին անգամ 1889-ին Գրիգոր *Գովրիկյանը*, նկարագրելով Հակոբ Մեղապարտի տպագրած Պարզատումարը, տպագրության տարեթիվը համարել է 1512-ը՝ հենվելով բնագրի սկզբում նշված հայկ. օրացուցային 961 թ-ի վրա: Գրիգորիս *Գալեմքյարյանը*, ամփոփելով հնագույն հրատ-ների մասին նյութերը, ամենահին հրատ-ը համարել է Պարզատումարը՝ նկատի ունենալով, որ Ու. սկսվում է զարդագրով, իսկ Պարզատումարը՝ սովորական երկաթագրով:

Հետագայում հայտնաբերվել են Հակոբ Մեղապարտի տպագրած Տաղարանն ու Պատարագատետրը. 2-րդը Մեղապարտի հրատարակած գրքերից միակն է, որ ունի հիշատակարան, որտեղ նշված է գրքի տպագրության թվականը՝ 1513, վայրը՝ Վենետիկ, և տպագրչի անունը՝ Հակոբ: Տրդատ *Պալյանը*, հիմնվելով Գ. Գալեմքյարյանի վերոհիշյալ կարծիքի վրա, 1894-ին կազմել է Հակոբի տպագրած

գրքերի ցուցակը՝ ըստ հրատարակման հերթականության՝ Պարզատումար՝ 1512, Պատարագատետր՝ 1513, այնուհետև Ու.՝ 1513, Տաղարան՝ 1513, Աղթարք՝ 1513: Այս ժամանակագրությունն ընդունվել է և դարձել ավանդական:

1964-ին Ռաֆայել *Իշխանյանը* հիմնավորել է, որ Հակոբ Մեղապարտի հրատ-ներից առաջինը ոչ թե Պարզատումարն է, այլ Ու.: Հնագույն այս հրատ-ներում էջախորագրերի համար օգտագործված է տարբեր ոճերի գծագրության շրջանակների 3 խումբ: Ու-ի մեջ գործածված է շրջանակների միայն այն խումբը, որն առկա է նաև Աղթարքում՝ սակայն մի շարք նկատելի մնասվածքներով: Աղթարքում գործածված է շրջանակների 2 խումբ, որոնք կան նաև Պարզատումարի և Տաղարանի մեջ, ընդ որում, վերջիններում չկան Ու-ի մեջ գործածված շրջանակները: Բացի դրանից՝ Պարզատումարի շրջանակներն անվնաս են Աղթարքում, մասամբ վնասված՝ Պատարագատետրում, և առավել վնասված՝ Տաղարանում: Երուսաղեմի մատենադարանում պահվող Պատարագատետրի ուսումնասիրությունից պարզվել է, որ այդ գրքում, ինչպես և Աղթարքում օգտագործվել են թե՛ Ու-ի 8 և թե՛ Պարզատումարի 16 շրջանակները, ընդ որում, Ու-ի մի քանի շրջանակներ այստեղ ավելի քիչ են վնասված, քան Աղթարքում: Դրանից էլ հետևում է, որ Պատարագատետրը տպագրվել է Աղթարքից առաջ: Ըստ այդմ՝ որոշվել է մեզ հասած հայկ. հնագույն հրատ-ների տպագրման հաջորդականությունը՝ Ու., Պատարագատետր, Աղթարք, Պարզատումար, Տաղարան:



Հայ տպագրության 500-ամյակի կապակցությամբ 2012-ին «Զանգակ» հրատարակչությունը լույս է ընծայել աշխարհաբար Ու.՝ բնօրինակի լուսապատճենի հետ (փոխադր., առաջաբ. և ծնթգր.՝ Լուսինե Ավետիսյանի), «Էդիթ Պրինտ»-ը՝ Ու-ի նմանահանությունը:

Մեզ են հասել նաև ձեռագիր Ու-ի ժող-ներ, որոնց հնագույն (1476) օրինակը պահվում է Մատենադարանում (ձեռ. № 3248):


Գրկ. Հայունի Մ., «Սոսր Ուրբաթագիրք» հայատառ տպագրութեան երախայրիքը՝ հինգհարիւր տարեկան (1512–2012), Բ., 2013:


Ուրբաթագիրք



Բնօրինակի լուսապատճենն ու աշխարհաբար տեքստը (միասին) և կազմը (2012, Ե., «Զանգակ»)

Փ





Հայերեն փակագրի
նմուշներ

Փ, հայ. այբուբենի 35-րդ տառը, անվանումը՝ «փյուր» («փիւր»): Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Կազմված է 3 ուղղաձիգ՝ կարճ, լայն ու երկար, և 2 նուրբ տարրերից. լայնը և կարճը երկարի միջին մասի աջ և ձախ կողմերում երկարին են միանում նուրբերով՝ լայնը՝ աջ կողմից՝ վերին ծայրով, կարճը՝ ձախ կողմից՝ ներքին ծայրով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Փ, որպես այբուբենի հազարավորների սյան 8-րդ (35-րդ) տառ, նշանակել է ութ հազար և ութհազարերորդ, բյուրի նշանով (Փ͂)՝ 80 մլն (80 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Փ–մաս 8000-րդ):

ՓԱԿԱԳԻՐ, ինում տարածված գրի տեսակ, աղագրության ձև, որը կազմվել է 2 կամ ավելի գրերի միացումից (միացյալ տառեր): Հայտնի է նաև կապգիր կամ կպագիր անվանումներով: Կազմվել է մեկ գրի վրա մեկ կամ մի քանի այլ գրերի բնորոշ մասերը ավելացնելով: Ներկայում գործածվող Փ. է «եւ» նշանագիրը, որը կազմված է ե և ւ գրերի միացումից:

ՓԱՅԼԱԹԻԹԵՂ, պոլիգրաֆիայում, ճնշատպման բազմաշերտ թաղանթ. կազմված է թղթի կամ լավսանի հենքի վրա քսած մոմախեժային գունանյութի կամ մետաղի և սոսնձանյութի մակաշերտից: Տպագրության ժամանակ բարձր ջերմաստիճանում ***կլիշեի*** տակ մոմը հալվում է, գունաշերտը պոկվում հիմքից և ճնշման ազդեցությամբ կպչում է կազմանյութին:

Ալյումինե Փ. օգտագործվում է նաև ռոտոպրինտի ***տպաձևեր*** պատրաստելու համար: Թողարկվում է 300–650 մմ լայնության, 2–100 մկմ հաստության ժապավենի փաթթոցի ձևով:

«ՓԱՅԼԱԿ», հաս., քաղ., գրական եռօրյա բոլշևիկյան (սկզբում՝ մենշևիկյան) թերթ: Լույս է տեսել 1915–17-ին Շուշիում: Խմբագիրներ՝ Խաչիկ Սամվելյան, Լևոն Վարդապետյան: Սկզբունքային տարաձայնություններ է ունեցել Շուշիի ՀՅԴ «Ապառաժ» (1917–19) կիսամսյա թերթի հետ: Անդրադարձել է Արմ. Հայաստանի կացությանը, թուրք. կառավարության հայահալած քաղաքականությանը, կոչ արել օգնել երկրամասում ապաստանած հայ գաղթականությանը: «Փ.»-ում տպագրվել են Լեոյի՝ Արցախի մասին պատմաբանասիր. ուսումնասիրությունները:

ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **քսիլոգրաֆիա** (< հուն. xylon – ծառ և գրաֆիա – գրություն), փորագրության հնագույն ձևը, որով տպագրվել են նաև առաջին գրքերի պատկերներն ու *էպիտամները:* Փ–յան արվ–ը ձևավորվել է Չինաստանում VI–VII դդ–ում, իսկ պահպանված ամենահին փայտափորագիր գիրքը (փորագրիչ՝ Վան Չի) չինական «Ալմաստե սուտրան» է (868, Բրիտ. թանգարան): Եվրոպայում առաջին փայտափորագիր պատկերներն ստեղծվել են XIV–XV դդ–ի սահմանագծին: Վերածննդի վարպետների որոնումներն այս ոլորտում ի մի է բերել և ամբողջացրել Ալբրեխտ Դյուրերը:

XVI դ–ում Իտալիայում սկիզբ է առել հատիչափորագրությունը, որով հնարավոր էր կատարել երփնագիր վերատպություն (Մ. Ռայմոնդ):

XVII–XVIII դդ–ում ծաղկել է ճապոն. Փ.: XIX դ–ում գերակշռել է այսպես կոչված գլխանիստային Փ. (համարվում է Թ. Բյուիկի հայտնագործությունը՝ 1780–ական թթ., գերանի երկայնական սղոցվածքով տախտակը փոխարինվել է լայնականով, որն ավելի ամուր ու դիմացկուն էր և ապահովում էր տպագրվող պատկերի առավել հստակություն):

Փ. լայնորեն կիրառվել է նաև հայկ. տպագրության մեջ. ***Հակոբ Մեղապարտի*** տպագրած առաջին գրքերից սկսած՝ պատկերները տպագրվել են Փ–յան միջոցով: Փայտափորագիր բարձրորակ կաղապարների պատրաստումով հայտնի են ***Գրիգոր Մարզվանեցին, Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիները***, Վենետիկում, Հռոմում, Կալկաթայում, Կ. Պոլսում աշխատած փորագրիչ–նկարիչները (վարպետ Հարությունը և ուր.):



Ամենավաղ փայտափորագիր տպագրությունը (չին., «Ալմաստե սուտրա», 868, Բրիտ. թանգարան)

XIX դ–ում Փ–յան ոլորտում ստեղծագործել են արդեն պրոֆեսիոնալ կրթություն ստացած նկարիչներ: XX դարասկզբից Փ–յան տեխնիկայով աշխատել են ու այն զարգացրել Վարդգես ***Սուրենյանցը***, Հարություն Շամշինյանը, Գաբրիել Գյուրջյանը, Հակոբ ***Կոջոյանը***, Զավեն Հովսեփյանը և ուր.:

Փայտափորանկարը տախտակի վրա փորագրվում է ձեռքով, տախտակի՝ գծանկարից դուրս բոլոր մասերը խորացվում են 2–5 մմ–ով. գծանկարը դառնում է հարթ մակերեսից դուրս ցցված՝ ռելիեֆային, ուռուցիկ տպակաղապար (***կլիշե***, տես ***Բարձր տպագրություն***): Վերջինիս վրա ներկ քսելով՝ ճնշմամբ արտատպում են պատկերը: Փայտափորագիր, ինչպես նաև լինոփորագիր տպակաղապարներով կարելի է ստանալ մինչև 15 հզ. տպաժ: Տպագրության սկզբնական փուլում Փ. լայնորեն օգտագործվել է գրքերի և ամսագրերի պատկերազարդումները տպագրելու համար, իսկ XX դ–ից սկսած՝ կիրառվում է սահմանափակ՝ հաստոցային ու գրքի գեղ. փորագրանկարներ ստեղծելու համար:

*Գրկ. **Մամաջանյան Ա.**, Փորագրանկարչություն. տեսակներն ու աշխատաձևերը, Ե., 1986: **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012:*

ՓԱՆՈՍՅԱՆ Ալեքսանդր Գևորգի, **Ալփասլան** (1859, Կ. Պոլիս–28.10.1919, Կ. Պոլիս), բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ: Գրել է նաև ֆրանս.: Փ–ի բանաստեղծությունները տպագրվել են Կ. Պոլսի և Փարիզի պարբ–ներում:

Լույս են տեսել Փ–ի «Շողեր ու ցողեր» (1885, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.) մանկ., «Այգեկութք» (1908, ԿՊ, Միհրան Սարտիրոսյանի տպ.) և «Ազատ քնար: Հայրենաշունչ գրուածքներ» (1908, ԿՊ, Վահրամ և Հրաչյա Տեր–Ներսեսյան տպ.), «Կենսագրական եւ քննական ակնարկ: Հատընտիր բանաստեղծութիւններ» (1919, ԿՊ, Օննիկ Արզումանի տպ.) բանաստեղծությունների ժողովները, «Թեկնածուներ» (1901, ԿՊ, Վ. Մինասյանի տպ.), «Մագնիս» (համահեղ.՝ Սիպիլ, 1909, ԿՊ, Հակոբ Մաթևոսյանի տպ.) կատակերգությունները, «Այբբենարան» (1898, ԿՊ, ա. տպ.) դասագիրքը: Ֆրանս. է թարգմանել Մ. Նալբանդյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Գ. Զոհրապի, Ա. Չոպանյանի, Ե. Տեմիրճիպաշյանի գործերից:

Փայտափորագրություն



«Այբբենարան եւ քրիստոնէական» (1712, Կ. Պոլիս, տպագրիչ՝ Գրիգոր Մարզվանեցի)




Ալեքսանդր Փանոսյանի *«Այգեկութք» (1908, Կ. Պոլիս) գրքի կազմը*



Փանոսյան Կարապետ

Փավստոս Բուզանդ



«Բուզանդարան պատմութիւն» (1730, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



«Պատմութիւն Հայոց» (1832, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը

ՓԱՆՈՍՅԱՆ Կարապետ [1826, Կեսարիա–25.3(7.4).1905, Կ. Պոլիս], հաս–քաղ. գործիչ, խմբագիր, հրապարակախոս, թարգմանիչ: Սովորել է Կ. Պոլսի վարժարաններում: Կ. Պոլսում 1859–63–ին՝ *«Միտնապրհի Էրեհաս»*, 1866–96–ին, միաժամանակ՝ *«Մանզումէի Էֆքեար»*, 1863–70–ին՝ «Վարագայի հաւատիս» («Նորությունների թերթ») հայատառ թուրք. պարբ–ների, 1874–75–ին՝ «Մօտա» նորաձևության թերթի հրատարակիչ–խմբագիր: 1862–ի Զեյթունի ապստամբության օրերին բանտարկվել է. գաղտնի տպագրել և տարածել է թռուցիկներ:

Կ. Պոլսում լույս են տեսել Փ–ի հայատառ թուրք. «Թէէլիֆի էֆքեարը մուխայէրէէ» («Ազատ մտքեր», 1863, ԿՊ, Հովհաննես Սյուհենտիայանի տպ.), «Իսլահաթը մուհիմմէ թէէլիֆի» («Կարևոր բարեփոխումներ ամուսնության վերաբերյալ», 1863, ԿՊ, «Համազգային» տպ.), «Ասարը Գայսէրիյէ» («Կեսարիայի հուշագրությունները», 1864, ԿՊ, Թադեոս Տիվիթճյանի տպ.), «Իմթիհանը պէյաննաամէ» («Քննության հայտարարումը», 1864, ԿՊ, Հ. Սյուհենտիայանի տպ.), «Միւքեաֆաթ» («Հատուցում», 1864, նույն տպ.) երկերը, թարգմանել է Է. Սյուի, Ք. դը Սինթեբենի և ուր. ստեղծագործություններից (տպագրվել են հայատառ թուրք.):

ՓԱՇԻՆՅԱՆ Նիկոլ Վովայի (ծ. 1.6.1975, ք. Իջևան), լրագրող, խմբագիր: Սովորել է ԵՊՀ բանասիր. ֆակ–ում (1991–95): 1993–97–ին աշխատակցել է «Դպրություն» շաբաթաթերթին, «Լրագիր», «Լրագիր–օր», «Մոլորակ» օրաթերթերին, 1995–97–ին՝ «Մոլորակ» օրաթերթի՝ «Եմ, ես, է» ներդիրի, 1998–99–ին՝ «Օրագիր» պարբ–ի խմբագիր, 1999–2012–ին՝ *«Հայկական ժամանակ»* օրաթերթի հիմնադիր–խմբագիր:

«ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ...», 1–էջանոց աղոթք: Տպագրվել է 1728–ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում (31,5 x 26,3 սմ):

«ՓԱՌՔ ՄԱՐԻԱՄՈՒ ՄՕՐՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԱՅ», Տիրամորն ու Սուրբ Հովսեփին փառաբանող երկ: Տպագրվել է 1780–ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում: Ա տիտղթ–ին՝ «Փառք Մարիամու մօրն Աստուծոյ, եւ սուրբ Յովսէփայ Աստուածահօր...», Բ–ին՝ «Le glorie di Maria madre di Dio, e di S. Giuseppe suo sposo...» (85 էջ, 2º, 21,4 x 14 սմ):

ՓԱՍՏԱԹՂԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտություն փաստաթղթի և փաստաթղթահաղորդակց. գործունեության մասին: Փ. փաստաթուղթն ուսումնասիրում է որպես տեղեկատվության աղբյուր և սոցիալ. հաղորդակցության միջոց:

Փ. հիմնադրել է բելգիացի մատենագետ Պոլ Օտլեն (1868–1944)՝ որպես փաստաթղթային գործունեությունն ուսումնասիրող գիտություն. անվանել է մատենաբանություն և նույնականացրել փաստաթղթի հետ: 1990–ական թթ–ից Փ. լայնորեն կիրառվում է մատենագիտ–յան, գրադարանագիտ–յան, գրքագիտ–յան, արխիվագիտ–յան և թանգարանագիտ–յան ոլորտներում՝ յուրաքանչյուրում ունենալով յուրահատուկ իմաստավորում, պատմ. ու մեթոդ. տեսանկյուններից ուսումնասիրում փաստաթղթերի (հրատ–ներ, գրքեր, գործեր) կառուցվածքը, գործառույթները, դասակարգումը, պահպանման, օգտագործման ընդհանուր օրինաչափությունները ևն:

Փ., որպես գիտ. և ուս. առարկա, դասավանդվում է ՀՊՄՀ գրադարանագիտ–յան և մատենագիտ–յան ամբիոնում:

Գագիկ Սուքիասյան

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, V դ–ի պատմիչ, մատենագիր: «Բուզանդ» մականունը մեկնաբանվել է որպես բյուզանդացի կամ Բյուզանդիայում կրթություն ստացած մարդ, իսկ ըստ Ստեփան *Մալխասյանցի*՝ ծագել է պարսկ. բուզանդ՝ ասացող բառից: Փ. Բ–ի վերաբերյալ առաջին տեղեկությունը հաղորդել է *Ղազար Փարպեցին*. «Պատմութիւն Հայոցը» նա համարում է երկրորդը՝ *Ագաթանգեղոսի* երկից հետո: Ըստ Ս. Մալխասյանցի՝ մատենագրի «**Պատմութիւն Հայոց**»–ի իսկական վերնագիրը եղել է «Բուզանդարան պատմութիւնք», որը նա բացատրել է որպես Բուզանդի ավանդազրույցների ժող.:

Փ. Բ–ի երկն ընդգրկում է պատմ. կարճատև ժամանակաշրջան՝ Խոսրով Բ Կոտակից (մոտ 330–338) մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387) Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Պարունակում է կարևոր տեղեկություններ Հայաստանի IV դ–ի քաղ. պատմության, ներքին կյանքի, հաս–քաղ. կառուցվածքի, եկեղեցակրոն. հարցերի, ժողովրդի կենցաղի, սովորույթների, հավատալիքների, պարսկա–բյուզ. հակամարտության մեջ Հայաստանի դերի մասին նև: Պատմագիտ. և բանասիր. մեծ արժեք ունի երկում զետեղված «Պարսից պատերազմը» ժող. ավանդավեպը: Պատմությունը շարադրված է ճոխ ու պատկերավոր լեզվով և հայկ. մատենագրության արժեքավոր երկերից է:

«Պատմութիւն Հայոց»–ն առաջին անգամ տպագրվել է 1730–ին Կ. Պոլսում՝ Մարտիրոս Սարգսյանի տպարանում: Տիտղթ–ին՝ «Բուզանդարան պատմութիւն: Շարագրեալ Բուզանդայ մեծի պատմագրի» (396 էջ, 4º, 16,2 x 10,9 սմ): Տպագրվել է նաև 1832 (Վնտ., Սբ Ղազարի տպ.), 1912–ին (Թ., Նվարդ Աղանյանի տպ.), 1914, 1933–ին (Վնտ., Սբ Ղազարի տպ.)՝ աշխարհաբար (փոխադր., ներած. և ծնթգր.՝ Ս. Մալխասյանցի, 1947, 1968, 1987, Ե.): Լույս է տեսել նաև ֆրանս. (1867, թարգմ.՝ Մ. Էմինի), գերմ. (1879, թարգմ.՝ Մ. Լաուերի):

Գրկ. **Մալխասեանց Ս.**, *Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի Պատմութեան, Վնն., 1896:* **Գելցեր Հ.**, *Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն (թարգմ.՝ Հ. Թորոսյանի), Վնտ., 1896:* **Բաբայան Լ.**, *Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V–VIII դարեր), Ե., 1977:*

ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ (Փարեմուզովա) Մարգարիտա Սերգեյի (ծ. 17.3.1948, Մոսկվա), նկարիչ–ձևավորող: Ավարտել է ԵԳԹԻ (1971): 1985–ից աշխատակցել է «Պիոներ», «Ծիծեռնակ» մանկ. ամսագրերին, 1993–ից՝ «Ոզնի» երգիծ. հանդեսին, «Գոլոս Արմենիի» (ռուս.) և «Ուրարտու» (ռուս.) թերթերին (հիմնականում՝ ծաղրանկարներ), համագործակցել «Լույս», «Ծիծեռնակ», «Լուսակն» հրատարակչությունների հետ:

Նկարազարդել և ձևավորել է Հ. Թումանյանի «Շունն ու կատուն» (2004), Ռ. Նահապետյանի «Անջո–հեծանիվը» (2004), «Անջո–ֆուտբոլի գնդակը» (2005), Ջ. Ռոդարիի «Իտալական երգ» (2004), «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ» (2006), «Անտառի զավակները» (2006, վրաց. հեքիաթներ), Է. Ավագյանի «Փոքրերի մեծ աշխարհը» (2007), Դանիել Երաժշտի «Հրաշամանուկները» (մաս 1, 2, 2007, 2010), «Կարմիր շուշան» (2007, չին. ժող. հեքիաթներ), Հ. Հարյանի «Բերներերան» (2009), Ս. Մուրադյանի «Ծաղկամանի գաղտնիքը» (2010), Ս. Կարապետյանի «Իմ գառնուկը» (2012), Ա. Պարսամյանի «Փիսիկի այցելությունը» (2012), Լ. Սարգսյանի «Ճոճահավ» (2012), Գ. Խաչատրյանի «Հեծանվորդը տակառում» (2013), Մետաքսեի «Ծառ զկոտրենք» (2013), Ն. Գրիգորյանի «Սոնան կրկեսում» (2014) մանկ. գրքերը նև:

«ՓԱՐԻԶ», քաղ., ազգ. և բանասիր. կիսամսյա (սկզբում՝ շաբաթական) թերթ: Լույս է տեսել 1860–63–ին Փարիզում: Խմբագիր–տնօրենն՝ Աբրահամ ***Մուրադյան***: *«Հայրենասէր»* պարբ–ի շարունակությունն է: Անդրադարձել է արևմտահայ հաս., տնտ. և առևտրային կյանքին: Առանձին համարներ է նվիրել Արմ. Հայաստանի ներքին կացությանը, լուսաբանել հայերի ինքնապաշտպան. կռիվները: Տարածվել է Արմ. Հայաստանում և Թուրքիայի խոշոր քաղաքներում, Մերձ. Արևելքում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ–ում և այլ երկրներում:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, 1538–ին Փարիզում ֆրանսիացի արևելագետ Գ. Պոստելը լույս է ընծայել «Բազմալեզվյան քերականություն» լատ. աշխատությունը, որտեղ ամփոփել է տեղեկություններ՝ 1537–ին Մերձ. Արևելքում ծանոթացած 12 լեզուների (նաև հայ–ի) մասին: Գրքում տպագրված են փայտափորագիր մեսրոպյան այբուբենի օրինակ և հայատառ մի հատված: Սա փայտափորագրության հայ. առաջին նմուշն է, իսկ հայոց լեզվին նվիրված հատվածը՝ հայագիտ. առաջին տպագիր հրատ–ը: 1586–ին Փարիզում



Փավստոս Բուզանդի *«Պատմություն Հայոց» (1968, Ե., «Հայաստան») գրքի կազմը*



Մարգարիտա Փարեմուզյան. *Ա. Պարսամյանի «Փիսիկի այցելությունը» (2012, Ե., «Ծիծեռնակ») գրքի կազմը*

Փարիզի հայկական տպագրություն




Ներսես Շնորհալու «Ողք Եդեսեայ» (1827, Դոնդեի Դյուպրեի տպ.) գրքի տիտղոսաթերթը

Փարիզի հայկական տպագրություն



Գ. Այվազովսկու «Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» (1857, Ճահնիկ Արամյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Ս. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» (1859, կարապետ Շահնազարյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը



Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը...» (1910, Կ. Ներսիսյանի տպ.) գրքի փիփղոսաթերթը

լույս է տեսել Բլեզ դը Վիժների «Ձեռնարկ գրերի մասին» աշխատությունը (հին ֆրանս.), որտեղ մի հատված նվիրված է Հայաստանին ու հայոց լեզվին (ընդգրկված է փայտափորագիր հայ. այբուբենի 2 աղյուսակ՝ ըստ Ի. Բարբարոյի):

XVII դ–ում Փարիզում տպագրված առաջին հայ. գործը զետեղվել է Կլոդ Դյուրե Բուրբոնուայի՝ 1613–ին հրատարակած «Գանձ աշխարհի լեզուների պատմության» աշխատության մեջ, որտեղ հայոց լեզվին նվիրված հատվածում դարձյալ զետեղվել է հայ. փայտափորագիր այբուբենն (դարձյալ՝ ըստ Ի. Բարբարոյի): 1633–ին Փարիզի Կայսեր. տպարանում վերահրատարակվել է Ֆրանչիսկոս Ռիվոլայի ***«Բառագիրք հայոց»*** (հայ–լատ.) բառարանը, որը Փարիզում ***շարժական տառերով*** տպագրված հայ. առաջին գիրքն է: 1634–ին այստեղ տպագրվել է լատ–ից հայ. թարգմանված «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» դավանաբան. գիրքը (2–րդ հրտ., թարգմ.՝ Պետրոս Պողոս Քահանայի):

XIX դ–ի 1–ին կեսին հայ. գրքեր են տպագրվել Փարիզի Կայսեր. [Մ. Բելլոդի «Փորձառութիւն հայկական լեզուին» (1812), Հ. Զրպետյանի «Յորդորակ...» (1816), Հ. Զրպետյանի, Դ. Մելիք–Շահնազարյանի և Լ. Լանգլեսի «Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կացութեան թագաւորութեանն Պարսից» (1817–18) աշխատությունները ևն], ֆրանսիացի Դոնդեի Դյուպրեի [Վարդան Այգեկցու «Հատընտիր առակք» (1825), Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսեայ» (1827, 1828), Խոճենց Մարգար Երևանցու «Բարառնական դիմառնութիւն...» (1826), Նոր կտակարան (1828, 2 անգամ) ևն], Ազգային [«Ալփոնսոսի Լամարթինեայ ի կիսանդրին իւր: Քերթուած առ կոմսն տ՚Օռսէ» (1850, հայ. և ֆրանս., թարգմ.՝ Գ. Այվազովսկու, ևն] տպարաններում:

XIX դ–ի 2–րդ կեսին և XX դ–ում Փարիզում հայ. գրքեր ու պարբերներ տպագրվել են և՛ հայերի, և՛ ֆրանսիացիների տպարաններում: 1857–ից գործել է Կարապետ վրդ. ***Շահնազարյանի*** տպարանը, որը հիմնականում հրատարակել է հայ պատմիչների երկերը՝ «Շար հայ պատմագրաց» մատենաշարով [Ղևոնդ Երեցի «Արշաւանք արաբաց ի Հայս» (1857), Ստեփանոս Տարոնացու «Տիեզերական պատմութիւն...» (1859), Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» (1859), Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ–Թամուրայ...» (1860), Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» (հ. 1–2, 1860), նաև Կ. Շահնազարյանի «Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը» (1862) ևն]: 1854–ին Ճանիկ ***Արամյանը***, ֆրանսիացի Վալտերի տպարանում կահավորելով իր արտադրամասը, նախ ստեղծել է հայ. նոր տառատեսակ, որն իր անունով կոչել է «***Արամյան***», և հրատարակել է հայ. գրքեր [Ա. Գալֆայանի «Այբբենարան պատկերազարդ...» (1856), Գ. Այվազովսկու «Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» (1857), Ս. Թեոդորյանի «Պատմութիւն Մուրատեան վարժարանի» (1857), «Գիրք Սաղմոսաց Դաւթի» (1858), Եփրեմ Խուրի Ասորու «Բժշկարան հոգեւոր...» (1858), Միրզայան Սարգիս Վանանդեցու «Սուրբն Ներսէս...» (1858), Հ. Պայյանի «Գիտութիւն մարդկային վարմանց» (1859)], ինչպես նաև Ստեփան Ոսկանի ***«Արեւելք»***, ***«Արեւմուտք»***, Գ. Այվազովսկու ***«Մասեաց աղաւնի»*** պարբերները: 1859–ին Փարիզում նա հիմնադրել է իր տպարանը, որտեղ մինչև 1862–ը հրատարակել է Եղնիկ Կողբացու, Գրիգոր Նարեկացու, Մ. Նալբանդյանի, Ծերենցի, Պ. Դուրյանի, Գ. Սրվանձտյանի երկերը և հայ. այլ գրքեր, նաև իր հեղինակած «Համառօտ բառգրքուկ հայերէն–տաճկերէն–գաղղիերէն»–ը (1860), «Դասարան Հայկազն մանկանց» (1860), Ս. Միքայելյանի «Ընդարձակ թուաբանութիւն» (1861) դասագրքերը ևն: Կ. Ներսեսյանի տպարանում 1900–20–ին լույս են ընծայվել մի շարք հայ. գեղ. գրքեր [Ե. Մեսյայանի «Սըմսարը» (1908),

Ազնիվ Հրաչյայի «Իմ յիշողութիւններս» (1909), Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը...» (1910) և «Հայ էջեր» (1912), Վ. Շեքսպիրի «Անտոնիոս եւ Կլէոպատրա» (1911), Խոսրովի (Արմեն Արտոնց) «Այգեստան» (գիրք Ա, Բ, 1918, 1920), Ռ. Որբերյանի «Ովասիս» (1920) ևն], նաև Ա. Չոպանյանի *«Անահիտ»* հանդեսը:

Հայտնի էին նաև Ֆ. Ճարյանի, Պ. Եղիկյանի, Պ. Միսակի, Տիգրան Տողրամաճյանի, «Մասիս», «Տարոն», «Այգ», Մուրատյան վարժարանի, «Անահիտի», «Բանասերի» և այլ հայկ. տպարաններ: Հայ. գրքեր հրատարակվել են Վիլհելմ Ռեմքեի, Ա. Բուրդիեի, Շառլ Նորլեի, «Մորիս և որդի», Շարդոնի, Շիլլերի, «Է. Թունո և ընկ.» և ֆրանս. այլ տպարաններում: Վերջինում 1857-ին տպագրվել է Մ. Նալբանդյանի «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» երկը:

1970-ական թթ-ին Փարիզում ստեղծվել են հայկ. հրատարակչություններ՝ *«Էրևրունի»* (հիմնադրվել է 1968-ին, մասնաճյուղեր է ունեցել Բեյրութում, Նյու Յորքում), «Գիրք» (տնօրեն՝ Արա Գրիգորյան, հրատարակել է Ս. Թեհլերյանի հուշերն ու դատաքննությունը), «Սևիկ պրես» (տնօրեն՝ Տիգրան Շիրվանյան, հրատարակել է Պ. Տոնապետյանի և Կ. Մութաֆյանի Ղարաբաղի հիմնահարցին վերաբերող աշխատությունները, Հայոց ցեղասպանության մասին բրոշյուրներ), «Աստրիդ» (տնօրեն՝ Ժան-Կլոդ Քեպապճյան, հրատարակել է թարգմանություններ Ե. Չարենցի, Սայաթ-Նովայի գործերից, «Հայաստան, 1900» լուսանկարչական ալբոմը՝ Իվ Տեռնոնի նախաբանով) ևն:

1855-ից լույս են տեսել Փարիզի հայ. առաջին պարբ-ները՝ «Արեւելքը» և «Մասեաց աղաւնին»: Մինչև 1970-ական թթ. այնտեղ հրատարակվել է շուրջ 170 անուն պարբ. (մոտ 120-ը՝ մինչև 1940-ը)՝ «Արեւմուտք», «Փարիզ», «Անահիտ», ***«Հնչակ», «Բանասէր», «Պրո Արմենիա», «Կռունկ», «Ապագայ», «Յառաջ», «Կալոջ», «Զուարթնոց», «Վէմ», «Նոր աշխարհ», «Աշխարհ», «Բիւրակն»*** ևն: Այս պարբ-ների մի մասն ունեցել է իր տպարանը, որտեղ իրականացրել են նաև գրահրատարակչ. գործունեություն, մյուսները լույս են տեսել հայկ. կամ ֆրանս. տարբեր տպարաններում:

Ներկայում Փարիզում հրատարակվում են *«Հայաստան»* (1947-ից) ու *«Կամք»* (1985-ից) պարբերաթերթերը, *«Աշխարհ»* (1960-ից) գրական-հաս. շաբաթաթերթը, *«Նոր յառաջ»* (2009-ից) երկօրյա թերթը, *«Նուվել դ'Արմենի»* (1992-ից) հանդեսը, *«Ռևյու դեզ էթյուդ արմենիեն»* (1964-ից), *«Ռևյու դյու մոնդ արմենիեն...»* (1994-ից), *«Ռևյու դ'իստուար արմենիեն...»* (1995-ից) գիտ. հանդեսները, Հայ կաթողիկե եկեղեցու «Հայ եկեղեցի», Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու «Լրատու» (2011-ից) պաշտոնաթերթերը:

Գրկ. **Թէոդիկ,** *Տիպ ու պատ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համառահանություն):* **Իշխանյան Ռ.,** *Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977:* **Դևրիկյան Վ.,** *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ, Ե., 2014:*

«ՓԱՐՈՍ», բանասիր. տարեգիրք: Լույս է տեսել 1872–76-ին Մոսկվայում (5 գիրք): Խմբագիր-հրատարակիչ՝ Զարմայր *Մներյան*: Տարեգրքում տպագրվել են բանասիր-քննադատ. հոդվածներ, որոնք մեծ մասամբ առնչվում են Մսեր *Մներյանի* գրական ժառանգության հարցերին, ինչպես նաև հրապարակումներ, մատենագիտ. նյութեր, Մ. Մներյանի նամականին՝ ուղղված Խ. Աբովյանին, Ս. Նազարյանին, ժամանակի այլ մտավորականների:

«ՓԱՐՈՍ», ազգ., գրական և քաղ. երկօրյա (սկզբում՝ եռօրյա) լրագիր: Լույս է տեսել 1897–98 և 1901–02-ին Կահիրեում: Խմբագիրներ՝ Հարություն Ալփիար, Տիգրան Արփիարյան: Ներկայացրել է եգիպտահայ գաղութի կյանքը, հետևել ներքին և արտաքին հասքաղ. անցուդարձին:

Փարիզի հայկական տպագրություն



Հ. Ֆերմանյանի «Խօսնակ» (հ. Ա, 1935, Տեր-Հակոբյանի տպ.) գրքի տիտղոսաթերթը



Ն. Ադոնցի «Պատմական ուսումնասիրություններ» (1948, Ա. Ղուկասյանի տպ.) գրքի կազմը



«Փարոս», *1897-1902, Կահիրե*



«Փարոս», *1931–99, Ախալքալաք*



«Փարոս», *1997-ից, Նիկոզիա*



«Փարոս Հայաստանի», *1879–81, Մոսկվա*

«ՓԱՐՈՍ», ազգ., հաս., գրական ամսաթերթ: Պարտիզակի «Երիտասարդաց քրիստոնեից» ընկերության հրատ.: Լույս է տեսել 1910–12-ին Պարտիզակում: Խմբագիրներ՝ Հակոբ Ալոճյան, Գրիգոր Մխալյան, պատ. տնօրեն՝ Միսաք Թաթարյան: Պաշտպանել է արևմտահայության ազգ. խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու գաղափարը:

«ՓԱՐՈՍ», հաս-քաղ. շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: ՌԱԿ-ի հրատ.: Լույս է տեսել 1924–41-ին Սոֆիայում, ապա՝ Պլովդիվում: Խմբագիրներ՝ Տիգրան Մարտիրոսյան, Բ. Մազլումյան, Մ. Գոչունյան, Հակոբ ***Մարթայան***: Լուսաբանել է տեղի հայկ. գաղթավայրի հասքաղ. կյանքը, ներկայացրել Խորհրդ. Հայաստանի տնտ. և մշակութ. ձեռքբերումները: 1937-ին թողարկել է «Փարոսի ծիծաղը» երգիծ. հավելված-շաբաթաթերթը:

«ՓԱՐՈՍ», երկօրյա թերթ, 1990-ական թթ-ից՝ անկանոն պարբերականությամբ, Ախալքալաքի շրջ. վարչության պաշտոնաթերթ (մինչև 1991-ը՝ Վրաստանի ԿԿ Ախալքալաքի շրջկոմի և ժողպատգամավորների շրջ. խորհուրդների պաշտոնաթերթ): Լույս է տեսել 1931–99-ին Ախալքալաքում՝ հայ., 1 էջը՝ վրաց. (1931–36-ին՝ «Սոցիալիստական անասնաբուծություն», 1936–49-ին՝ «Բոլշևիկյան կոլխոզ», 1950–55-ին՝ «Օքթոմբերիս դրոշա», 1956–61-ին՝ «Հոկտեմբերի դրոշով», 1961–64-ին՝ «Կարմիր դրոշ»): Խմբագիրներ՝ Ռուբեն Լուսինյան, Մ. Ազնավուրյան, Հ. Չորանյան, Գ. Երմիշյան, Հակոբ Բլրցյան, Վարդան Վարդանյան, Ռ. Թոփալյան, Մաթևոս Խոցանյան, Մերուժան Շիպակցյան, Հարություն Հայրապետյան, Գրիգոր Վարդիկյան, Նիկոլայ Ալելիաշվիլի (վրաց. էջի խմբագիր): Լուսաբանել է շրջանի տնտ., քաղ., մշակութ. կյանքը, անդրադարձել է ՀՀ-ում, ԼՂՀ-ում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, հայ-վրաց. պատմ. առնչություններին, տպագրել է շրջանի երիտասարդ ստեղծագործողների գործեր, նմուշներ՝ Զավախքի բանահյուսությունից ևն:

«ՓԱՐՈՍ», երգիծ. պատկերազարդ երկշաբաթաթերթ (ապա՝ շաբաթաթերթ): Լույս է տեսել 1951–52-ին Բեյրութում: Խմբագիրներ՝ Բաբկեն Տեր-Գևորգյան, Պետրոս Քիրեճյան: Ծաղրել է գաղթավայրի հոոի բարքերը: Տպագրել է նյութեր՝ նվիրված հայապահպանությանը և հայոց լեզվի անաղարտության հարցերին: Անդրադարձել է նաև Լիբանանի ներքին քաղաքականությանը:

«ՓԱՐՈՍ», անկախ երկշաբաթաթերթ: Լույս է տեսնում 1984-ից Լոս Անջելեսում: Հիմնադիր-խմբագիր՝ Սուրեն Բուրսալյան: Ներկայացնում է նորություններ ՀՀ-ից, Կալիֆոռնիայի համայնքի կյանքից, տպագրում բանասիր., գրական, քաղ., հոգեբ., բժշկ. հոդվածներ:

«ՓԱՐՈՍ», ազգ., հաս., գրական, մշակութ. ամսաթերթ: Լույս է տեսնում 1997-ից Նիկոզիայում (Կիպրոս)՝ հայ., հուն.: Արտոնատեր՝ Մասիս Տեր-Բարթող, խմբագիր՝ Երան ***Կույումճյան***: Լուսաբանում է կիպրահայ համայնքի կյանքը, ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները, տպագրում բանավիճային և վերլուծ. հոդվածներ:

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ», պատմաբանասիր. պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1879–81-ին Մոսկվայում: Խմբագիրներ՝ Զարմայր ***Մներյան***, Սուքիաս Մներյան: ***«Փարոս»*** տարեգրքի շարունակությունն է: Տպագրել է հայագիտ-յանը, գիտ. նորություններին նվիրված նյութեր, Հ. Պարոնյանի մի շարք հոդվածներ, Հ. Այվազովսկուն, Մ. Էմինին, Ֆ. Վոլտերին նվիրված ակնարկներ, Ա. Դոդեի պատմվածքներից հատվածներ, Մ. Մներյանի վաղ շրջանի նամականիից, «Միրզաեան Մանուկ պեյ. պատմութիւն վարուց նորա» մեծածավալ աշխատությունը:

ՓԱՓԱԶՅԱՆ Հակոբ Դավթի (1.9.1919, Թավրիզ–28.10.1997, Երևան), արևելագետ, պատմաբան: Պատմ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1972): Ավարտել է ԵՊՀ (1950): 1954–59-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի ավագ գիտաշխատող: 1959–97-ին՝ Մատենադարանի բաժնի վարիչ: Դասավանդել է ԵՊՀ-ում: Հրատարակել է պարսկ., արաբ., թուրք. պատմ. վավերագրերի բնագրեր և հայ. ու ռուս. թարգմանությունները («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշար. «Հրովարտակներ», պր. 1, 2, 1956, 1959, «Կալվածագրեր», պր. 1, 1968): Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմ. բազմահատորյակի ստեղծման աշխատանքներին:

Լույս է տեսել Փ-ի «Հողային հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI–XVII դարերում» (ռուս., 1972) աշխատությունը:

Երկ. Օգտար փիրապետրությունը Արարատյան երկրում (ԺԵ–ԺԷ դդ.), «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1960, № 7–8, «ԼՀԳ», 1973, № 6, 1977, № 1:

ՓԱՓԱԶՅԱՆ Վրթանես Մեսրոպի (12.4.1864, Վան–26.4.1920, Երևան), գրող, ազգագրագետ, խմբագիր, թարգմանիչ: 1868-ին ծնողների հետ տեղափոխվել է Ագուլիս: Սովորել է Թավրիզի Արամյան դպրոցում (1875–78), Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1878–79), ավարտել Ժնևի համալսարանի գրակ-յան և հաս. գիտ-ների բաժինը (1894): 1894-ին՝ «Կռիւ», 1894–97-ին՝ *«Շաւիղ»*, 1911–12-ին՝ «Ղարաբաղ» թերթերի, 1901-ին՝ *«Վկաւակ»* գրական-բանասիր ժող-ի խմբագիր: 1887–89-ին (Կարինում դասավանդելու տարիներին) ճանապարհորդել է Արմ. Հայաստանում, 1889-ին «Մշակում» հրատարակել է «Նամակներ թուրքաց Հայաստանից» հոդվածաշարը:

Ազատախոհ. գաղափարներ քարոզելու համար ռուս. կառավարությունը հետապնդել է Փ-ին, իսկ ազգ-ազատագր. հայացքների համար Թուրքիայում նրա նկատմամբ հեռակա մահվան վճիռ է կայացվել:

Լույս են տեսել Փ-ի «Պատկերներ թիւրքահայոց կեանքից» (1891, հ. 1, Մ., Մկրտիչ Բարխուդարյանի տպ.), «Պատմուածքներ թիւրքահայերի կեանքից» (1904, Թ., Մովսես Վարդանյանի տպ.) պատմվածք-պատկերների ժող-ները, «Էմմա» (1895, հրտ.՝ 1901, Թ., Կարապետ Մարտիրոսյանի տպ.), «Ասի» (1903, Թ., Մ. Վարդանյանի տպ.), «Ալէմգիր» (1904, Թ., Ա. Քութաթելաձեի տպ.) վեպերը, «Գինեզործի աղջիկը» (1891, Թ., «Արոր» տպ.), «Կորսուած արդարութիւն» (1902, Բաքու, «Արոր» տպ.), «Աբաղայի դաշտում» (1903, նույն տպ.), «Ասպետ» (1903, Թ., Մ. Վարդանյանի տպ.) պատմվածքները, «Լուր-դա-լուր» (1894, հրտ.՝ 1903, Բաքու, «Արոր» տպ.), «Վիշապ» (1903, նույն տպ.) զրույցները, «Ժայռ» (1907, Թ., «Հերմես» տպ.) դրաման, «Հայ-բոշաներ» (1899, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.), «Պատմութիւն հայոց գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն). սկզբից մինչեւ մեր օրերը» (1910, Թ., Նվարդ Աղանյանի տպ.), «Դրւագ հայոց պատմութիւնից» մատենաշարով՝ «Արտաշէս Երկրորդ», «Գագիկ Երկրորդ», «Թորոս իշխան», «Լեւոն Երկրորդ», «Վարդանանց պատերազմը» (1910, Բաքու, «Բաքու» տպ.) ազգագր., պատմագիտ. աշխատությունները: Հայ. է թարգմանել Մ. Սալտիկով-Շչեդրինի, Լ. Տոլստոյի, Մ. Շառլի, Ա. Դոդեի, Ֆ. Նիցշեի և ուր. ստեղծագործություններից:

Տպագրվել են նաև Փ-ի «Ընտիր երկերը» (գիրք 1–2, 1939–40), «Երկերի ժողովածուն» (հ. 1–5, 1958–59, հ. 1–3, 1972–73), «Պատմուածքներ» (1955, Բ.), «Կորսված արդարություն» (1981), «Վանա կատուն: Պատմվածքներ և զրույցներ» (1988) զրույցների, պատմվածքների, վիպակների ժող-ները:

Հանդես է եկել նաև Վարդգես գրական կեղծանունով:

Գրկ. Նանումյան Ռ., Վրթանես Փափազյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1956: **Օհանյան Ա.,** *Վրթանես Փափազյան, Ե., 1976:*

ՓԱՓԱԶՅԱՆ3 (Փափազյան) Ստեփան (Պերճ Պողոս) [14(26).6.1840, Կ. Պոլիս–16(28).3.1888, Կ. Պոլիս], հրապարակախոս, խմբագիր, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսում, ապա՝ Զմյուռնիայում (1854-ից): 1858-ին վերադարձել է Կ. Պոլիս, աշխատել Ղալաթիայի Մայր վարժարանում, եղել է Գում Գափուի Պեզճյան մայր վարժարանի տեսուչ: Հոդվածներ է տպագրել «Օրագիր», «Նոր դար», «Մամուլ», «Հայրենիք», «Մասիս» պարբ-ներում, 1863–67-ին՝ *«Ժամանակ»* կիսամսյա հանդեսի հրատարակիչ: Աշակել է Արմ. Հայաստանի ազգ.



Հակոբ Փափազյանի *«Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը» (պր. 1, 1968, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*



Վրթանես Փափազյան




Վ. Փափազյանի *«Պատմուածքներ» (1955, Բեյրութ) գրքի կազմը*



Ստեփան Փափազյանցի *«Դասագիրք ընթերցանութեան կամ Նոր նախագիտելիք մանկանց» (1869, Երուսաղեմ) գրքի կազմը*



Գրիգոր Փեշտիմալճյանի *«Կրթութիւն քաղաքավարութեան» (1829, Կ. Պոլիս) գրքի կազմը*



«Փիլիսոփայութիւն» *(Անտոն Կովդինի, հ. 1, 1750, Վնտ.) գրքի կազմը*

վարժարանների ընդհանուր կանոնադրությունը («Կանոնադրութիւն ընդհանուր բարեկարգութեան Ազգային վարժարանաց», 1864, ԿՊ, Հովհաննես Սյուհենտիայանի տպ.): ***Մկրտիչ Ա. Վանեցու*** հանձնարարությամբ ու աջակցությամբ կազմել և Ազգ. ժողովին է ներկայացրել «Գաւառահայ հարստահարութիւնների տեղեկագիրը»: Թուրք. կառավարությունից պահանջել է կիրարկել Բեռլինի վեհաժողովի (1878) ընդունած 61-րդ հոդվածը:

Լույս են տեսել Փ-ի «Դասագիրք ազգային պատմութեան» (1862, ԿՊ, Հ. Սյուհենտիայանի տպ.), «Նախնական դասագիրք թուագիտութեան» (1862, ԿՊ, «Արևելյան» տպ.), «Դասագիրք սրբազան պատմութեան Հին եւ Նոր կտակարանաց» (1866, նույն տպ.), «Նոր դասագիրք քերականութեան» (1868, նույն տպ.), «Դասագիրք ընթերցանութեան կամ Նոր նախագիտելիք մանկանց» (1869, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) դասագրքերը, «Կենսագրութիւն Յարութիւն Պէզճեան ազգային ու անզուգական բարերարի» (1864, ԿՊ, Հ. Սյուհենտիայանի տպ.) աշխատությունը:

ՓԵՇՏԻՄԱԼՃՅԱՆ, Փեշտըմալճյան, Գրիգոր (1774, Կ. Պոլիս–24.12.1837, Կ. Պոլիս), բառարանագիր, քերական, փիլիսոփա, մանկավարժ: 1824–26-ին՝ Կ. Պոլսի Սայր եկեղեցուն կից Սայր դպրատան ուսուցիչ, 1828-ից՝ Գում Գափուի «Ընծայարան» ուսումնարանի տնօրեն և գլխ. ուսուցիչ, միաժամանակ, 1830-ին՝ վերաբացված Պեզճյան մայր վարժարանի տնօրեն:

Լույս են տեսել Փ-ի «Քերական լեզուագիտութիւն» (1827), «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1829, 1835, 1845), «Կրթութիւն քաղաքավարութեան» (1829, բոլորը՝ ԿՊ, Պողոս Արապյանի տպ.) ուս. ձեռնարկները, «Դիմառնութիւն ի չարչարանս Քրիստոսի փրկչին մերոյ» (1845, ԿՊ, Հովհաննես Սյուհենտիայանի տպ.), «Լուսաշաւիղ, որ է բացատրութիւն Նիկիական հանգանակին...» (1848, ԿՊ, Պ. Արապյանի տպ.), «Տրամաբանութիւն կամ Արուեստ բանական» (գրաբար, 1854, Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ., քննարկել է տրամաբան. և գոյաբան. հարցեր) աշխատությունները: Փ-ի «Բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, 2, 1844, 1846, ԿՊ, Պ. Արապյանի տպ.) անավարտ աշխատությունը լրացրել և հրատարակել են նրա աշակերտները:

Թարգմանել է «Գիրք Սաղմոսաց Դաւթի. հայերէն եւ տաճկերէն» (1848, ԿՊ, Պ. Արապյանի տպ., 1860, ԿՊ, Հ. Սյուհենտիայանի տպ., 1892, ԿՊ, Հառություն Ասատուրյանի տպ.):

Փ. աշխատությունների մեծ մասը գրել է աշխարհաբարով:

Գրկ. Ծալեան Մ., Գրիգոր պատրուելի Փեշտիմալճեան (1773–1837), Կահիրե, 1912: Ազատեան Թ., Հարիւրամեայ յոբելեան Պեզճեան Սայր վարժարանի (1830–1930), ԿՊ, 1930: Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968: Թևոսյան Ա., Հայ տրամաբանական միտքը XIX դարում, Ե., 1976:

«ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ», Անտոն Կովդինի քառահատոր աշխատությունը: Թարգմ.՝ Վրթանես Ասկերյանի: Տպագրվել է Վենետիկում. 1-ին (562 էջ, 8º, 12,5 x 6,3 սմ), 2-րդ (591 էջ, 8º, 12,5 x 6,8 սմ) և 3-րդ (686 էջ, 8º, 12,6 x 6,4 սմ) հատորները՝ 1750-ին Ստեֆանո Օղանդոյի տպարանում, 4-րդ հատորը (627 էջ, 8º, 12,6 x 6,4 սմ)՝ 1751-ին Անտոնի Բորտոլիի տպարանում: Բոլորի տիտղթ-երին՝ «Փիլիսոփայութիւն ըստ անստերիւր, և անսայթաք...»:

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ, Փիլոն Եբրայեցի (մ. թ. ա. I դ-ի վերջին քառորդ, Ալեքսանդրիա–մ. թ. I դ-ի կես, Ալեքսանդրիա), հրեա աստվածաբան, Ալեքսանդրիայի հրեական-հելլենիստ. փիլ-յան ականավոր ներկայացուցիչ: Գրել և դասավանդել է հուն.:

Փ. Ա-ու փիլ-ն զգալի ազդեցություն է ունեցել միջնադարյան հայ փիլ. մտքի ձևավորման վրա: V դ-ի հունաբան դպրոցի ներկայացուցիչները նրա երկերից 14-ը թարգմանել են հայ., որոնցից 7-ը պահպանվել են շնորհիվ հայ. թարգմանության: Փ. Ա-ու հայացքների մասին մեկնություններ են գրել Դավիթ Քոբայրեցին, Հովհաննես Սարկավագը, Մխիթար Գոշը, Հովհաննես Երզնկացին (Պլուզ), Հովհան Որոտնեցին: Միջնադարում նրա երկերն ընդգրկվել են հայկ. համալսարանների պարտադիր գրակ-յան ցանկերում, դրանց բազմաթիվ ընդօրինակություններ պահվում են Սատենադարանում

և արտերկրի մի շարք ձեռագիր. հավաքածուներում (Երուսաղեմ, Վենետիկ, Վիեննա ևն):

Հայ. լույս են տեսել Թ. Ա–ու «Բանք երեք ձեւ ի լոյս ընծայեալք...» (աշխատասիր.՝ Մ. Ավգերյանի, 1822), «Մնացորդք ի Հայս որ են Մեկնութիւն Ծննդոց եւ Ելից» (աշխատասիր.՝ Մ. Ավգերյանի, 1826), «Ճառք» (1892, բոլորը՝ Վնտ., Սբ Ղազարի տպ.) երկերը:

Գրկ. **Գրիգորյան Գ.**, *Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնաբանությունները, «ԲՄ», № 5, 1960:* **Արևշատյան Ս.**, *Հնագույն հայկական թարգմանություններ և նրանց պատմա-մշակութային նշանակությունը, «ՊԲՀ», 1973, № 1:* **Вардазарян О.**, *Филон Александрийский в восприятий армянского средневековья: К вопросу об истоках традиций, Е., 2006.*

ՓԻՐՊԱԼԵՄՅԱՆ Ղևոնդ (1830, Վան–1891, Երուսաղեմ), բանասեր, ձեռագրագետ, բանաստեղծ, եկեղեց. գործիչ: Սկզբն. կրթությունն ստացել է Վանի Արարաց դպրոցում: 1857-ին Լիմ անապատում ավարտելով ուսումնառությունը՝ նշանակվել է Վարագա ժառանգավորաց վարժարանի ուսուցիչ: 1866-ին կարգվել է Աղթամարի կաթողիկոսի քարտուղար (վարդապետի աստիճանով), 1867-ին՝ Զեյթունի, 1873–78-ին՝ Մանչեստրի հայ համայնքի հոգևոր առաջնորդ: 1886-ին մեկնել է Կ. Պոլիս, ապա բնակվել է Երուսաղեմում:

Լույս են տեսել Փ-ի «Նստարք հայոց» (1823, 1888, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ.), «Ճանապարհորդութիւն ի Սայր աթոռն Արարատեան եւ անտի ի Կ. Պոլիս» (1871, ԿՊ, Գևորգ Զարդարյանի տպ.), «Տաղերգութիւն բարոյական եւ ազգային» (1872, ԿՊ, Հովսեփ Գավաֆյանի տպ.), «Չորս ընկերք որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչև Կոստանդնուպոլիս» (1882, Թ., Հովհաննես Սարտիրոսյանի տպ.) աշխատությունները: Փ-ի ձեռագրերի մեծ մասը՝ «Պատմական նշխարքներ» վերտառությամբ, պահվում է Մատենադարանում:


«ՓԻՒՆԻԿ», ազգ., գրական և քաղ. շաբաթաթերթ, վերջում՝ օրաթերթ: Լույս է տեսել 1899–1900-ին Կահիրեում, 1901–03-ին՝ Ալեքսանդրիայում, 1909-ին՝ Կ. Պոլսում: Խմբագիր՝ Սմբատ *Բյուրատ*: Ազգ–քաղ. հարցերում ունեցել է չափավոր դիրքորոշում: Բողոքել է գաղթավայրերում և Արմ. Հայաստանում հարստահարությունների, կրոն. ներքին տարաձայնությունների դեմ, դատապարտել երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականությունը:

«ՓԻՒՆԻԿ», գրական, գեղ. ամսաթերթ: Ամերիկահայ հրատարակչ. ընկերության հրատ.: Լույս է տեսել 1918–20-ին Բոստոնում: Խմբագիրներ՝ *Շահան Նաթալի*, Նշան Տեստեկյուլ, Երվանդ Մելեքյան, Սահակ Չթճյան, Փիլիպոս Մինասյան: Տպագրել է Կ. Սիտալի, Վահե Հայկի, Կ. Զարյանի, Արսեն Երկաթի, Համաստեղի, Զ. Եսայանի, Սահակ Մեսրոպի և ուր. ստեղծագործություններից, թարգմանություններ, գիտ. ուսումնասիրություններ:

«ՓԻՒՆԻԿ», գրական, գեղ., տեղեկագր. տարեգիրք: Ազգ. Գևորգով վարժարանի հրատ.: Լույս է տեսել 1958–62-ին Ադիս Աբեբայում: Խմբագիրներ՝ Զավեն Արզումանյան, Գ. Կարապետյան: Նպաստել է եթովպահայ գաղութի ազգ. ինքնության պահպանմանը, հայրենիքի հետ կապին: Ներկայացրել է համայնքի հաս. և կրթ. առօրյան, անդրադարձել Եթովպիայի ներքին քաղ. կյանքին, Խորհրդ. Հայաստանի տնտ. և մշակութ. իրադարձություններին:

«ՓՅՈՒՆԻԿ», հաս., քաղ., գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1979–83-ին Թեհրանում: Խմբագիր՝ Ժորժ Համբարչյան: Հանդես է եկել Իրան. հեղափոխությանը հակադիր ուժերի դեմ, մերկացրել ԽՍՀՄ-ի ազգ. քաղաքականության բացաս. կողմերը: «Կռունկ, խաբրիկ մը չունիս» խորագրով ներկայացրել է Խորհրդ. Հայաստանի առօրյան:

ՓՈԼԱՏՅԱՆ Անդրանիկ Լևոնի [1929, ավան Կրըխխան (Թուրքիայի Ալեքսանդրետի սանջակ)–18. 2. 2005, Նյու Ջերսի (ԱՄՆ)], խմբագիր, գրող, հաս. գործիչ: ԹՄՄ հիմնադիրներից: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը (1950), Բեյրութի ամերիկյան համալսարանը (1954): 1954-ից ապրել է ԱՄՆ-ում: *«Պայքար»*, *«Նոր օր»*,



Փիլոն Ալեքսանդրացու *«Մնացորդք ի Հայս...» (1826, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



«Փիւնիկ», *1899–1909, Կահիրե, Ալեքսանդրիա, Կ. Պոլիս*



«Փիւնիկ», *1918–20, Բոստոն*



«Փյունիկ», *1979–83, Թեհրան*



Անդրանիկ Փոլատյանի *«Պատմութիւն հայոց Արաբկիրի» (1969, Նյու Յորք) գրքի կազմը*

«Գերմանիկ», «Յուշարար», 1963–ից՝ *«Յուշարար–Միութին»* պարբ–ների խմբագիր: Եղել է ՀԲՀՄ կրթ. հանձնաժողովի ատենապետը:

Լույս են տեսել Փ–ի «Խրիմեան Հայրիկ» (հայ. և անգլ., 1957), «Պատմութիւն հայոց Արաբկիրի» (1969), «Մարաշ» (1988), «Շահան Շահնուր» (2003) աշխատությունները, «Հերկ եւ բերք» (2002) հոդվածների ժող–ը:

«ՓՈՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ», քաղ., ազգ., բանասիր. և առևտր. օրաթերթ: Լույս է տեսել 1870–73–ին Կ. Պոլսում [1870–71–ին՝ «Փող առաւօտեան» (խմբագիր՝ Հակոբ *Պարոնյան*), 1873–ին՝ «Արեւելեան փող»]: Տնօրեն–խմբագիրներ՝ Կարապետ Մինասս Երզնկանցյան, Գ. Շիշմանյան, Բարթող Սուր: Լուսաբանել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը, Արմ. Հայաստանի իրավիճակը, Կ. Պոլսի հայկ. սահմանադր. մարմինների գործունեությունը: Պաշտպանել է Կ. Պոլսի պատրիարքարանի (պատրիարք՝ Մկրտիչ Խրիմյան) դիրքորոշումը սուլթան. կառավարության հայահալած քաղաքականության դեմ, արծարծել կրոնաբարոյախոս. հարցեր: Տպագրել է նաև հայատառ թուրք. նյութեր:

ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **փորագրարվեստ**, **գրավյուրա** (< ֆրանս. gravure – փորել). 1. տպաձև՝ փորագրված ռելիեֆային պատկերի տեսքով՝ փայտե տախտակի, մետաղե թիթեղի, լինոլեումի, քարի ևնի վրա: Տախտակի մակերևույթին փորագրվող տարրերի փոխդասավորությունից կախված՝ լինում են ուռուցիկ (***բարձր տպագրություն***), խորացված (***խոր տպագրություն***) և հարթ տպաձևեր:

Ամենահին Փ. ***փայտափորագրությունն*** է, որը ձևավորվել է VI–VII դդ–ում Չինաստանում, ապա՝ Ճապոնիայում, իսկ Եվրոպայում XIV դ–ի վերջին՝ Գերմանիայում:

Առաջին փայտափորագիր գրքերը Եվրոպայում պատրաստվել են 1430–ին, որոնց պատկերներն ու տեքստերը փորագրվել են նույն տախտակի վրա, իսկ առաջին շարվածքային գրքերը դարձյալ փայտափորագիր պատկերազարդումով էին, որոնք, սակայն, տպագրվել են առանձին–առանձին: Յոհան ***Գուտենբերգի*** տպագրած գրքերը, ըստ էության, փորագիր էին. շարվել ու բազմացվել են ռելիեֆային ***կլիշեներով:***

XV դ–ի վերջին – XVI–ի սկզբին արդեն հնարավոր էր փայտափորագրության տեխնիկայով տպագրել գունավոր պատկերներ (Վենետիկ, Ուգո դա Կարպի, 1455–1523)՝ հաջորդաբար օգտագործելով մի քանի տախտակ–տպաձև: XV դ–ի վերջին յուրացվել է ***մետաղափորագրության*** տեխնիկան. հատուկ գործիքով՝ հատիչով, մետաղի (հիմնականում՝ պղնձի) թիթեղի վրա են փորագրել պատկերները և տպագրել: Այս եղանակով ստացված պատկերներն ավելի ճշգրիտ ու ճոխ էին՝ նկարչի մտահղացումներին ավելի համապատասխան: Այդ տեխնիկայի հայտնի վարպետներ էին գերմանացիներ Ալբրեխտ Դյուրերը, Մարտին Շոնհաուերը, իտալացիներ Անտոնիո Պոլլայնոլոն և Անդրեա Մանտենեայան:

XVI դ–ում իր կատարելությանը հասած հատիչային Փ–յան հետագա զարգացումը պայմանավորված է ***օֆորտի*** հայտնագործմամբ, երբ մետաղի մակերեսին Փ. կատարել են քիմ. խածատման միջոցով: Այս տեխնիկայի հայտնի վարպետներ են Ռեմբրանդը, Ժակ Կալոն, Կլոդ Լորեն, Ռուբենսը, Անտոնիո վան Դեյքը, իսկ XVIII դ–ում օֆորտի գործեր ստեղծել են գրեթե բոլոր հայտնի նկարիչները:

Այդ շրջանում Փ–յան զարգացմանը նպաստել են գրահրատարակչության աճող պահանջները. այն, ըստ էության, նախորդել և փոխարինել է հետագայի լուսանկարչությանը: Ավելի արագ ու էժան եղանակի փնտրտուքները հանգեցրել են տպագրության նոր եղանակի՝ ***վիմագրության*** հայտնագործմանը (1792, Ալոիզ Զենեֆելդեր)՝ քարից պատրաստված հարթ տպաձևով տպագրությանը (***հարթ տպագրություն***), որը սկզբունքորեն Փ. չէ:

Փորագրություն



Փայտափորագրություն. Գրիգոր Մարզվանեցի, 1706



Լինոփորագրություն. Վահրամ Խաչիկյան, 1962

Փ–յան բոլոր եղանակներն օգտագործվել են նաև XIX–XX դդ–ում՝ կախված տպագրության նպատակահարմարությունից ու տեխնոլոգ. հնարավորությունից: Ներկայում Փ. կատարվում է հիմնականում լազերային տեխնիկայով. որպես հատիչ օգտագործվում է լազերային ճառագայթը:

2. Պատկերի տպածո (թղթի կամ այլ գրանյութի վրա), որը նախապես փորագրված է տպաձևի մակերևույթին:

Փայտափորագիր պատկերներ՝ գլխազարդեր, ծաղկազարդ գլխագրեր ևն, օգտագործվել են ***Հակոբ Մեղապարտի*** տպագրած առաջին հայ. գրքում և հետագայում: Բարձրակարգ փորագրապատկերներով առավել աչքի են ընկնում ***Ոսկան Երևանցու, Մատթեոս*** և ***Ղուկաս Վանանդեցիների***, հետագայում՝ ***Միխթարյան միաբանության, Գրիգոր Մարզվանեցու*** և Կ. Պոլսի այլ հրատ–ներ:

XIX դ–ում Փ–յան բնագավառում ստեղծագործել են արդեն պրոֆեսիոնալ նկարիչներ Հ. Քաթանյանը, Ս. Ներսիսյանը (պղնձափորագրություն), Հ. Շամշինյանը (փայտափորագրություն, օֆորտ) և ուր.: XX դ–ի սկզբին համաշխ. ճանաչման են արժանացել Է. Շահինի և Տ. Պոլադի օֆորտները: Խորհրդ. շրջանի հայկ. կերպարվ–ում ուրույն տեղ ունեն Հ. Կոջոյանի, Մ. Աբեղյանի, Վ. Խաչիկյանի, Ռ. Ադալյանի, Մ. Սոսոյանի, Լ. Խանամիրյանի և ուր. Փ–ները, Վ. Այվազյանի, Ա. Ղարիբյանի, Հ. Մամյանի և ուր. օֆորտները, նաև Փ–յան այլ տեսակներով ստեղծված գործերը:

Գրկ. **Սարգսյան Մ.**, *Սովետական Հայաստանի գրաֆիկան, Ե., 1961:* **Մամաջանյան Ա.**, *Փորագրանկարչություն. տեսակներն ու աշխատաձևերը, Ե., 1986:* **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 2012:*



Վիմագրություն. Ստեփանոս Ներսիսյան, 1860–ական թթ.

ՓՈՐԹՈՒԳԱԼ Միքայել Փաշա (1842, Կ. Պոլիս–18.11.1897, Կ. Պոլիս), հաս. գործիչ, բանասեր–հայագետ: Ավարտել է Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանը (1858): Հրատ–յան է պատրաստել Եղիշեի Պատմության գրաբար բնագիրը՝ իր ծանոթագրություններով (նվիրված են Եղիշեին և նրա պատմության տպագրություններին ու թարգմանություններին, Հայաստանի վիճակին, պարսկ–ին ու պարսից կրոնին), և դստեր՝ Աշխեն Փորթուգալի գրած առաջաբանով («Եղիշէի Վարդապետի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» եւ քննադատութիւնք», 1902, 1903, Վնտ., Սբ Ղազարի տպ.):



Միքայել Փորթուգալ

Գրկ. **Թորոսեան Հ.**, *Յիշատակ Միքայէլ Փորթուգալ Փաշայի կայսերական գանձապետի, Վնտ., 1898:*

ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆ Մկրտիչ Ռափայելի (21.10.1848, Կ. Պոլիս–26.9.1921, Մարսել), ազգ–ազատագր. շարժման գործիչ, հրապարակախոս, խմբագիր և հրատարակիչ: 1863–ին ավարտել է Կ. Պոլսի Սամաթիայի Սբ Սահակյան դպրոցը: 1873–75–ին՝ ***«Ասիա»*** լրագրի տնօրեն–խմբագիր: 1876–ին Կ. Պոլսում Հ. Շիշմանյանի (Ծերենց), Ա. Արփիարյանի և ուր. հետ հիմնադրել է «Արարատյան ընկերություն հայոց» մշակութ. ընկերությունը, 1881–ին Վանում՝ Հայկազյան կեդրոն. վարժարանը: 1885–ի մարտի 15–ին թուրք. կառավարությունը Փ–ին արտաքսել է երկրից: Նույն թվականին հաստատվել է Մարսելում. հիմնադրել է տպարան, 1885–1921–ին՝ ***«Արմէնիա»*** շաբաթաթերթի տնօրեն–խմբագիր: Պարբ–ի գաղափարներին հետևելու պատճառով հայ առաջին քաղ. կուս–ն անվանվել է «Արմենականներ»:



Մկրտիչ Փորթուգալյան

Փ. ֆրանս–ից հայ է թարգմանել Բ. դը Սեն Պիեռի («Հաղկաստանի տնակը», 1874, ԿՊ, Մ. Էքսերճյանի տպ.), Լ. Լուիի («Մի պուլկար հայրենասէր», 1894, Մարսել, Փ–ի տպ.) ստեղծագործությունները:

Գրկ. **Թորոսեան Պ.**, *Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեան, Նյու Յորք, 1912: Քառասուն տարուան աշխատաւորը. Մկրտիչ Փորթուգալեան, ԿՊ, 1914:* **Համբարյան Ա.**, *Հայ հասարակական–քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին. XIX դ. վերջ–XX դ. սկիզբ, Ե., 1990:*



«Փորձ», *1876–81, Թիֆլիս (№ 1, 1876)*



Մորիս Փոցխիշվիլու *«Բացվիր երկինք» (1980, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*

Փոքր Հայքի մանրանկարչության դպրոց



Խորան, 1038-ի Ավետարան (գրիչ՝ Եվարգրիս, Մատենադարան, ձեռ. № 6201)

«ՓՈՐՁ», ազգ., հաս-քաղ., գրական հանդես (եռամսյա, 1879-ից՝ ամսագիր): Լույս է տեսել 1876–81-ին Թիֆլիսում: Խմբագիր՝ Աբգար *Հովհաննիսյան*: Լուսաբանել է ռուս-թուրք. պատերազմի ընթացքը, գավառահայության տնտ. վիճակը Արմ. Հայաստանում, քննարկել բարենորոգումներին վերաբերող հարցեր: Զգալի տեղ է հատկացրել կրթ., լուսավոր. խնդիրներին: Տպագրել է Գ. Քաջբերունու, Մ. Էմինի, Ք. Պատկանյանի, Վ. Բաստամյանի և ուր. ուսումնասիրություններից, Հ. Պարոնյանի «Հոսհոսի ձեռատետրը» շարքի երգիծ. ակնարկները, Պ. Պռոշյանի վեպերից, Րաֆֆու ուղեգրությունները, Ռ. Պատկանյանի «Ազատ երգեր» բանաստեղծությունների ժող-ը, ուղեգր. գրառումները, Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» կատակերգությունը ևն: Համախմբել է ժամանակի հայ մտավորականության ընտրանուն (Գ. Բարխուդարյան, Ա. Երիցյան, Ղ. Աղայան, Ս. Պալասանյան, Ծերենց, Ս. Մանդինյան, Գ. Չմշկյան, Ա. Քիշմիշյան և ուր.):

ՓՈՑԽԻՇՎԻԼԻ Մորիս Թովմայի (11.6.1930, Թիֆլիս–8.7.1993, Թբիլիսի), վրացի բանաստեղծ, թարգմանիչ: Ավարտել է Թբիլիսիի համալսարանի բանասիր. ֆակ-ը (1954):

Փ-ու թարգմանությամբ վրաց. հրատարակվել են Հ. Շիրազի («Աստղերը Սևանում», 1959, Շ. Նիշնիանիձեի հետ) և Վ. Տերյանի («Սիրտ-ծաղիկ», 1983) ժող-ները: Թարգմանել է նաև Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Հ. Սահյանի, Վ. Դավթյանի գործերից:

Լույս են տեսել Փ-ու «Բալենիները անձրևի տակ» (1957), «Սիրտը փնտրում է սիրտ» (1969, հայ. հրտ.՝ 1968), «Երջանկության ծիածանը» (1976), «Բացվիր երկինք» (1976, հայ. հրտ.՝ 1980) և այլ ժող-ներ:

ՀԳՄ Հ. Թումանյանի անվ. մրց. (1982):

Գրկ. Հովնաթան Հ., Մորիս Փոցխիշվիլի. Հոգին հոգու հետ..., Ե., 2013:

ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ, XI դ-ում Մեծ Հայքում և նույն դարի 2-րդ կեսին նաև Փոքր Հայքում ստեղծված ձեռագրերում [Անի-Արշարունիքի և Փոքր Հայքի ու Մալաթիայի (Մելիտենե)] օգտագործվել է *«Մյքէ թագուհու Աւետարանի»* և *«Էջմիածնի Աւետարանի»* պատկերազարդման տիպը: XI դ-ի առաջին հայկ. պատկերազարդ ձեռագիրը *«Ադրիանուպոլսի Աւետարանն»* է, որտեղ ավետարանիչների և «Աստվածամայրը Մանկան հետ» դիմապատկերներն աղոտ հիշեցնում են Սակեդոնիայի XII դ-ի բյուզ. որմնանկարների (Օխրիդ, Կուրբինովո, Ներեզի) ոճը: XI դ-ում Փոքր Հայքում, Հս. Միջագետքում, Բարձր Հայքում, Կապադովկիայում, որտեղ հայերը գրեթե հունացել էին, վերականգնվել է հայկ. աշխույժ կյանքը, երևան են եկել զանազան գրչատներ: Կղոտ գավառի Թալաշա վանքում (Եփրատ գետի ափին) 1018-ին տիկին Ծովուկի պատվերով ընդօրինակվել է մի ձեռագիր՝ պարզունակ խորաններով, թռչնապատկերներով, 4 ավետարանիչների դիմանկարներով, որոնք հիշեցնում են Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու որմնանկարների դեմքերը: X–XI դդ-ի գլուխգործոց է 1038-ի Ավետարանը (գրիչ՝ Եվարգրիս, Մատենադարան, ձեռ. № 6201), որը ոճով մոտ է *«Ծուղրութի Աւետարան»*-ին և *«Վեհափառի Աւետարան»*-ին: 1038-ի մատյանի և «Վեհափառի Աւետարան»-ի մի քանի մանրանկարներում խորանների կառուցվածքը կորցրել է ճարտ. տրամաբանությունը, համակենտրոն կամարները հանգչում են ոչ թե խոյակին, այլ սյան քիվին, պահպանվել է Դուրա-Եվրոպոսի (III դ.) ասորա-պաղեստինյան վաղքրիստ. պարզագույն ոճը: Ասորա-եգիպտ. ազդեցությունը նկատվում է նաև պատկերագրության մեջ (Մարիամը և Հովսեփը ներկայացված են լուսապսակներով՝ դեմ դիմաց, ևն):

Գրաֆիկ-սխեմատիկ այս ուղղությունը շարունակվել է նաև XI դ-ի կեսերին, հիմնականում՝ Փոքր Հայքում ստեղծված ձեռագրերում, որոնք վանական արվ-ի հազվագյուտ նմուշներ են: 1041-ին Սեբաստիայում ընդօրինակված *«Մալաթիայի Աւվետարան»*-ի (Երուսաղեմի

մատենադարան, ձեռ. № 3624) հիշատակարանում նշված են գրիչ Սամուելի, Բյուզանդիայի Միքայել կայսեր և Հայոց Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի անունները: Փոքր Հայքի ձեռագրերի խորանները զարդարված են բուս. ու երկրաչափ. մոտիվներով, թռչնապատկերներով և հուշկապարիկներով: «Սալաթիայի Աւետարանը», նաև 1057-ի ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 3784) ունեն ընդարձակ պատկերաշար: Տերուն. շարքն ավարտվում է 4 ավետարանիչների և Խաչի պատկերներով: Պատկերաշարի վրա նկատելի է բյուզ. ազդեցությունը, որոնք թերևս ոչ թե պատմող. (ինչպես «Վեհափառի Աւետարանը»), այլ ծիս. բնույթի են: Ասոր. ազդեցությամբ ստեղծված «Խորհրդավոր ընթրիքին» հատուկ է կիսաբոլոր սեղանը: Ի հայտ են եկել նաև նոր թեմաներ՝ «Հուդայի համբույրը», «Թաղումը», «Դժոխքի ավերումը»: Մարդկանց և առարկաների պատկերները խիստ պայմանական են և սխեմատիկ, ձեռագրերը հարուստ են շղագիր և բոլորգիր մակագրություններով:

«ՓՈՔՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», դասագիրք: Տպագրվել է 1567-ին Կ. Պոլսում՝ «Ձեռամբ կնքագիր դպրի եւ մերս Յոթորին»: Ըստ Գ. Զարբհանալյանի՝ տպագրել են Աբգար դպիրը և Յոթորը, ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Աբգար դպիրը Կ. Պոլիս տեղափոխվելուց առաջ՝ փայտափորագիր տախտակների միջոցով:


Այլ տվյալներ հայտնի չեն:

«ՓՐԻՆԹԻՆՖՈ», գրահրատարակչ. համալիր: Ստեղծվել է 1996-ին Երևանում: Հիմնադիր-տնօրեն՝ Արամ Մեհրաբյան: Մինչև 2003-ը կատարել է հիմնականում տպագր. պատվերներ և ամսագրերի, գրքերի նկարազարդումներ: 2004-ից համագործակցում է *«Սարգիս Խաչենց»* հրատարակչության հետ:

Լույս է ընծայում համաշխ. փիլ. մտքի, գրակ-յան, երաժշտության, արվ-ի վերաբերյալ գրքեր [Ռ. Ջ. Քոլլինգվուդի «Արվեստի հիմունքները» (2007), Է. Ֆորի «Արվեստի պատմություն» (հ. 1–3, 2000–07), Ֆ. դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» (2008) ևն], նաև Ռ. Գալչյանի «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» (2005), Ա. Ալիքյանի «Հանդիպակաց ափեր» (2009), Կ. Զարյանի «Անցորդը և իր ճամբան» (2010), Ս. Գալստյանի «Կյանքը ափի մեջ» (2011), Գ. Պըլտյանի «Շրջում (պատումներ)» (2012) ևն:

«ՓՈՒՆՋ», եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1866–1907-ին Կ. Պոլսում: Տնօրեն-խմբագիրներ՝ Համբարձում Ալաճաճյան, Սիմոնիկ Ալաճաճյան, Սիմոն Չեռմլեքճյան: Ունեցել է պահպանող. ուղղվածություն, ազգի հարատևման հիմք համարել է լեզուն, կրոնը և պատմությունը: Ներկայացրել է արևմտահայության կյանքը, պատրիարքարանի գործունեությունը, քննադատել թուրք. իշխանությունների քաղաքականությունը և քուրդ վերնախավի դաժանությունները հայերի նկատմամբ: 1880-ական թթ-ի սկզբին, աբդուլհամիդյան գրաքննության խստացման պայմաններում, «Փ.»-ում հաս-քաղ. նյութերի փոխարեն սկսել են տպագրել կենցաղային, կրոն., բարոյախոս. թեմաներով հոդվածներ և թարգմանություններ:

«ՓՈՒՆՋ», պատանեկան գրական պատկերազարդ ամսագիր (մինչև 1940-ը՝ երկշաբաթաթերթ): Լույս է տեսել 1925–46-ին Ալեքսանդրիայում, ապա՝ Կահիրեում: Խմբագիրներ՝ Մելքոն Քարամյան, Լևոն Աճեմյան: Ներկայացրել է հիմնականում արևելահայ դասականներին՝ արևմտահայ-ով, տպագրել թարգմանություններ: Անդրադարձել է Խորհրդ. Հայաստանի տնտ., մշակութ. ձեռքբերումներին, պատմել Երկրորդ համաշխ. պատերազմում (1939–45) հայ մարտիկների սխրանքների մասին:



Է. Ֆորի «Արվեստի պատմություն...» (հ. 3, 2007, ե., **«Փրինթինֆո»***) գրքի կազմը*




«Փունջ», *1866–1907, Կ. Պոլիս*



«Փունջ», *1925–46, Ալեքսանդրիա, Կահիրե*

Ք





Ալեքսանդր Քալանթարի *(Ա. Նամալյան) «Պատրիկեանի նամակները» (1891, Թիֆլիս) գրքի տիտղոսաթերթը*

Ք, հայ. այբուբենի 36-րդ տառը, անվանումը՝ «քե»: Ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ տառակերտման սեփական սկզբունքով: Մաշտոցյան այբուբենի վերջին տառն է: Կազմված է 3 ուղղաձիգ՝ երկար, կարճ ու լայն, և 3 նուրբ տարրերից. կարճն ու լայնը երկարի աջ կողմում են, կարճն ու երկարը միանում են 2 նուրբով՝ վերին ծայրերով և երկարի միջին մասով ու կարճի ներքին ծայրով: Ունի գրչագիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր տառատեսակները՝ իրենց տարբեր ձևերով, որոնց մեջ պահպանվել են նրա բուն գծագր. յուրահատկությունները:

Ք, որպես այբուբենի հազարավորների սյան վերջին՝ 9-րդ (36-րդ) տառ, նշանակել է ինը հազար և իննհազարերորդ, բյուրի նշանով (Ք՝)՝ 90 մլն (90 000 000): Արաբ. թվանշանների ընդունումից հետո օգտագործվել է թվային կարգի արժեքով: Այժմ գործածվում է միայն որպես դաս. թվական (օր.՝ մաս Ք–մաս 9000-րդ):

ՔԱԼԱՆԹԱՐ Ալեքսանդր Հայրապետի [20.9(2.10).1855, գ. Վերին Ագուլիս (Նախիջևանի գավառ)–20.10(2.11).1913, Թիֆլիս], անասնաբույծ, խմբագիր, գրական գործիչ: Գիտ. անասնաբուծության հիմնադիրը Անդրկովկասում: Ավարտել է Մոսկվայի Պետրովյան գյուղատնտ. ակադ-ը (1879): Խմբագրել է «Կովկասի գյուղական տնտեսությունը» (ռուս.) թերթը, 1893-ից եղել է *«Մշակ»*-ի խմբագիր, երբեմն՝ նաև հրատարակիչը: Երկար տարիներ գլխավորել է Թիֆլիսի հայ հրատարակչ. ընկերությունը:

Լույս են տեսել Ք-ի «Տնտես կամ Տնտեսական մի քանի հարկաւոր գիտելիքների, հնարների ու միջոցների ժողովածու» (1874, Բաքու, Ն. Մալաֆյանի տպ.), «Անասնապահության վիճակը Կովկասում» (ռուս., 1893), «Սասուն: Աշխարհագրական քարտէզով» (1895, Թ., Հովհաննես Մարտիրոսյանի տպ., 1904, Թ., «Հերմես» տպ.) աշխատությունները, «Եզիդ աղջիկը», «Ծանր քարը», «Մինասի եզը» (բոլորը՝ 1891, Թ., Մարկիանոս Ռոտինյանի տպ.) պատմվածքները, «Կեանքի գծեր» (1892, նույն տպ.), «Պատրիկեանի նամակները» (1891, 1893, նույն տպ.), «Դարիր մշեցին» (1894, Թ., Մ. Շարաձեի տպ.), «Մանրանկարներ» (հ. 1–2, 1904, Թ., Վրաց. հրատարակչ. ընկ. տպ.) գրքերը: Թարգմանել է Հ. Էլրիխի, Մ. Տվենի, Ֆ. Հոֆմանի և ուր. ստեղծագործություններից:

Հանդես է եկել նաև Նամալյան Ա., Վրձին գրական կեղծանուններով:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Արտաշես Փիրաղայի (16.9.1931, Երևան–23.2.1991, Երևան), արձակագիր, լրագրող, թարգմանիչ: Ավարտել է ԵՊՀ (1954): 1955–57-ին աշխատել է «Սովետական Հայաստան», 1957–62-ին՝ «Երեկոյան Երևան», 1962–69-ին՝ «Գրական թերթ» պարբերների խմբագրություններում: 1970–82-ին՝ Հեռուստառադիոպետկոմի դրամատիկ. հաղորդումների գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ք-ի «Առաջինը» (1958), «Խղճի գիշերային այցը» (1965), «Պատմվածքներ. աշխարհի ճանապարհներին» (1967), «Մի բուռ ծիծաղ» (1984) երգիծ. պատմվածքների, «Բացե՛ք ձեր աչքերը» (1979), «Խոստովանություն» (1987), «Ինչո՞ւ տրորեցիր ծաղիկները» (1988) վիպակների և պատմվածքների ժող-ները, «Մարաթոն» (1969), «Քննություն» (1989), «Իսկ դո՛ւք որտեղ էիք» (1990) վեպերը: Հեղինակ է նաև «Աշխարհի կենտրոնը» (բեմ.՝ 1975), «Քանի դեռ կամ» (բեմ.՝ 1980), «Շատ ժամանակակից սպանություն» (բեմ.՝ 1985) կատակերգ. պիեսների: Թարգմանել է Ի. Իլֆի, Ե. Պետրովի, Յ. Դոլդ-Միխայլիկի և ուր. գործերից:

ՀԳՄ Գ. Սունդուկյանի անվ. մրց. (1984):

Երկ. Իմ փոնը քո փոնն է: Ընտիր երկեր, Ե., 2007: Գոնավոր երազներ, Ե., 2011:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Պետրոս Հովհաննեսի (20.10.1735, Նոր Ջուղա–1825–ից ոչ շուտ), բժիշկ, հայ. առաջին տպագիր «Բժշկարանի» հեղինակը: Տարրական կրթություն ստացել է Նոր Ջուղայում (1748), 1751–ին մեկնել է Աստրախան, 1860–ին՝ Մոսկվա, ապա՝ Ս. Պետերբուրգ: Բարերար Ավետ Խալդարյանի հովանավորությամբ սովորել է լատ., ապա ուսումը շարունակել Ս. Պետերբուրգի հոսպիտալի դպրոցում (1798–ից՝ Ռազմաբժշկ. ակադ.):

1789–ին գրել է **«Բժշկարան համառօտ»** աշխատությունը և նվիրել Հովսեփ Արղությանին: Տպագրվել է 1793–ին Նոր Նախիջևանում՝ Սբ Խաչ վանքի տպարանում (136 էջ, 8º, 17 x 10,5 սմ): Գրքում Ք. անդրադարձել է մի շարք հիվանդությունների ախտաբանությանը, կլինիկ. նկարագրություննն ու բուժմանը, հատուկ ուշադրություն է դարձրել մանկաբուժությանը:

«Բժշկարանի» կարևոր բաղադրիչ է նաև բժշկ. և բուսաբ. տերմինների բառարանը (էջ 87–134), որն էապես նպաստել է հայ. բժշկ. տերմինաբանության զարգացմանը: Ընդգրկում է շուրջ 360 տերմին, հայ. անվանումներին զուգահեռ ներկայացված են նաև ռուս., հուն., պարսկ., արաբ. համարժեքները՝ հայ. տառադարձությամբ և կառուցվածքով, որը հիշեցնում է Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» երկը:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Վարդգես Սարգսի [18.3.1933, գ. Չորաթան (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում)–1.5.1992, Երևան], արձակագիր, հրատարակիչ, խմբագիր: Ավարտել է ՀՊՄԻ (1954): 1954–58–ին դասավանդել է Երևանի տարբեր դպրոցներում, 1966–81–ին՝ *«Պիոներ կանչ»* թերթի խմբագիր, 1981–86–ին՝ «Հայգիրք» վարչության պետ, 1986–91–ին՝ *«Արևիկ»* հրատարակչության հիմնադիր-տնօրեն:


Լույս են տեսել Ք-ի «Ականա ճանապարհորդներ» (1978), «Ծերպերի բնակիչները» (1983), «Նոր Ռոբինզոնները» (1984), «Կորած օրագիրը» (1986), «Հետաքննիչի վերջին գործը» (1987), «Վտանգավոր գործուղում» (1989) մանկապատանեկան վեպերն ու վիպակները (բոլորը՝ Մ. Բաղդասարյանի հետ):

«ՔԱՀԱՆԱՅ ՀԱՄԲԱԿԱԳՈՅՆ», Հովսեփ Կրոնավորի ձեռնարկը նորավարժ քահանաների համար: Թարգմ.՝ Աթանաս Մերասյանի: Տպագրվել է 1748–ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Տիտղթ–ին՝ «Քահանայ համբակագոյն, առ ի յօգուտ մեռանողաց» (133 էջ, 8º, 11,1 x 6,9 սմ):


«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅԱԿԻՑ», հաս–քաղ. կիսամսյա հանդես (սկզբում՝ ամսագիր): Մինչև 1989–ը՝ ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի հրատ.: Լույս է տեսել 1933–91–ին Երևանում (1934–35–ին՝ «Պրոպագանդիստ», 1936–65–ին՝ «Ագիտատորի բլոկնոտ», 1966–71–ին՝ «Ագիտատորի և պրոպագանդիստի բլոկնոտ», 1972–79–ին՝ «Ագիտատոր և պրոպագանդիստ», 1980–89–ին՝ «Կուսակցական խոսք», 1989–ից՝ «Ք. զ.»): Խմբագիրներ՝ Վ. Դաստակյան, Գինո Շաղգամյան, Բալաբեկ Մարտիրոսյան, Դավիթ Հարությունյան, Գրիգոր Սինանյան, Սարգիս Ղևոնդյան, Խաչիկ Իսկանդարյան, Զավեն Գրիգորյան, Սալոմե Արեշյան, Արամ Հայրյան, Արամայիս Մնացականյան, Գուրգեն Հարությունյան, Արտեմ Քոթանջյան, Հակոբ Այվազյան, Ռոբերտ Խաչատրյան, Մուսայել Քոչարյան, Տաճատ Վարժապետյան, Գևորգ Մուրադխանյան, Գրիգոր Պետրոսյան, Վա-



Արտաշես Քալանթարյանի *«Խոստովանություն» (1987, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը*



Պետրոս Քալանթարյանի *«Բժշկարան համառօտ» (1793, Նոր Նախիջևան) գրքի գլխազարդով (3-րդ) էջ*




«Քահանայ համբակագոյն» *(Հովսեփ Կրոնավոր, 1748, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Մանվել Քաջունի



Մ. Քաջունու *«Պարտիզպանութիւն» (1899, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*



Երվանդ Քասունու *«Ռուբէն Գ. իշխանապետ (1175-1187 թթ.) եւ իր կոտակը» (1987, Բեյրութ) գրքի կազմը*

րազդատ Բզնունի, Վաչե Ենգիբարյան, Կամո ***Վարդանյան,*** Խաչիկ ***Հովակիմյան:*** Լուսաբանել է ՀԿԿ գաղափարախոս. աշխատանքը, տպագրել հոդվածներ Խորհրդ. Հայաստանի քաղ., տնտ., մշակութ. և միջազգ. կյանքի վերաբերյալ:

«ՔԱՋ ՆԱՋԱՐ», երգիծ. ամսաթերթ: Լույս է տեսնում 1970-ից Լոս Անջելեսում: Խմբագիր՝ Հովհաննես Բալայան: Քննադատում է ամերիկահայ համայնքում տեղ գտած մերժելի երևույթները, քաղքենի բարքերը, քաղ. որոշ կուս-ների և գործիչների դիրքորոշումը: Տարածվում է նաև Կանադայում, Լիբանանում, Իրանում, Ռուսաստանում: 1997-ից գործում է նաև նույնանուն երգիծ. հեռուստածրագիր (տնօրեն՝ Հ. Բալայան):

ՔԱՋՈՒՆԻ Մանվել [11(23).8.1823, Կ. Պոլիս–1(14).12.1903, Կ. Պոլիս, թաղված է Վենետիկի Սբ Ղազար կղզում], մանկավարժ, բնագետ, փիլիսոփա, խմբագիր-հանրագիտակ: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1843-ից): Ավարտել է Մուրատ-Ռափայելյան վարժարանը: Աշխատել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարաններում՝ որպես ուսուցիչ և տեսուչ, 1848–51-ին՝ *«Բազմավէպի»* խմբագրի տեղակալ, 1883-ից՝ Մուրատ-Ռափայելյան վարժարանի տնօրեն: 1903-ին ընտրվել է Վենետիկի միաբանության թագադիր աբբա:

Լույս են տեսել Ք-ու «Արուեստաբանութիւն կամ Շտեմարան գիտելեաց» (1875) հանրագիտ. ժող-ը, «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց» հանրագիտ. բառարանը (հ. 1–3, 1891–93), «Հնախօսութիւն Հայաստանի» (1855) և «Աշխարհագրութիւն հին եւ նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար» (1857) ուս. ձեռնարկները: Կազմել է մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկիայի, մեխանիկայի դասագրքեր [«Տարրաբանութիւն» (1870), «Բնաբանութիւն տեսական եւ փորձառական» (1871), «Շերամաբանութիւն» (1895), «Մեղուաբուծութիւն» (1895), «Պարտիզպանութիւն» (1899), «Տարերք երկրագործութեան» (1920)]: Առաջարկել է քիմ. նյութերի անվանակարգման իր եղանակը, մշակել և շրջանառության մեջ է դրել բազմաթիվ հայ. գիտ. տերմիններ:

Ք-ու բոլոր գրքերը տպագրվել են Վենետիկի Սբ Ղազարի տպարանում: Իտալիայի Ասպետի խաչ (1897):

Գրկ. **Այվազյան Հ.,** *Գիտական եզրաբանության առաջին մշակողը, «ԲԵՀ», 1993, № 3 (77):* **Այվազյան Հ., Գրիգորյան Ս.,** *Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրները, Ե., 1998:* **Միրզոյան Լ.,** *Երևելի Մխիթարյանները՝ Մանուել Քաջունի, Ե., 2005:*

ՔԱՍՈՒՆԻ Երվանդ Համայակի (ծ. 28.2.1937, Հալեպ), պատմաբան, լեզվաբան, մանկավարժ, խմբագիր: Պատմ. գիտ. դ-ր (1974): Ավարտել է Բեյրութի Հայկազյան համալսարանը, միաժամանակ հետևել Սեն Ժոզեֆ համալսարանի հայագիտ. ամբիոնի դասընթացներին: 1978–94-ին եղել է Հայկազյան քոլեջի հայագիտ-յան, 1994–95-ին՝ ՀԲԸՄ «Երվանդ Հյուսիսյան» հայագիտ. ամբիոնի վարիչ: Բեյրութում խմբագրել է «Սիփան» շաբաթաթերթը, «Դրական կայծեր» պարբերագիրքը: 1970–84-ին՝ ***«Հայկազեան հայագիտական հանդէս»***-ի հիմնադիր-խմբագիր, 1991-ից՝ ***«Պատանեկան արձագանք»*** և ***«Զանազան»*** ամսաթերթերի խմբագիր:

Լույս են տեսել Ք-ու «Ամիդ (Տիարպէքիր) Տիգրանակերտ (Ֆարղին) շփոթը հայ պատմագրութեան մէջ» (1968), «Ռուբէն Ա և Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը» (1972), «Հայեր Կիլիկիոյ մէջ մինչեւ Ռուբինեան իշխանապետութեան հիմնադրութիւնը» (1974), «Ռուբէն Գ. իշխանապետ (1175–1187 թթ.) եւ իր կտակը» (1987) աշխատությունները:

ՔԱՐԱՄՅԱՆ Մարտին Խաչատուրի [25.3.1912, գ. Վարխունո (այժմ՝ Վրաստանի Թելթիծոզարոյի շրջանում)–30.12.1993, Երևան], գրող, թարգմանիչ: Ավարտել է Թբիլիսիի համալսարանը (1941): 1964–74-ին՝ Վրաստանի գրողների միության հայկ. մասնաճյուղի նախագահ:

Թարգմանել է վրաց. գրողներ Ռ. Մարջիանիի («Քնարական», 1967), Ա. Սուլակաուրիի («Ոսկե ձկնիկ», 1980), Ի. Նոնեշվիլիի, Գ. Տաբիձեի և ուր. ստեղծագործություններից, հրատարակել է «Հարազատ ձայներ» (գիրք 1, 2, 1961, 1963, թարգմ.՝ վրաց-ից) ժող-ը: Լույս են տեսել Ք-ի «Յաստան կրակ» (1945), «Մտերիմ խոսքեր» (1952), «Հայրենիքի ճամփաներում» (1961), «Դարի բովում»

(1975), «Ձմեռնամուտի արշալույս» (1982) բանաստեղծությունների ժող–ները, «Աշխարհը Լալվարից» (1972), «Ապրած տարիներ» (1978) պատմվածքների, հուշերի ժող–ները:

«ՔԱՐԱՔԱՇԵԱՆՑ ՔՈՒՅՐԵՐ», 1–էջանոց ընծայագիր: Տպագրվել է 1758–ին Վենետիկում՝ առանց տպարանի հիշատակության: Բովանդակությունը՝ «Գիրքս այս շնորհեալ եղեւ միաբանութեանն Մխիթարեանց ի յերկուց քերց Քարաքաշեանց: Յամի տեառն 1758. յունուարի 10: Ի Վենետիկ» (5,5 x 2,5 սմ): Քույրերը հավանաբար տպագրել են տվել այս ընծայագրի բազմաթիվ օրինակներ՝ փակցնելու համար իրենց նվիրաբերած գրքերի վրա:

«ՔԱՐԹԼԻՍ ՅԽՈՎՐԵՒԱ» («Քարթլիի կյանքը» կամ «Վրաց պատմություն»), պատմ. երկերի ժող.: Ընդգրկում է վրաց ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XVIII դ.: Կազմվել է XII դ–ում, խմբագրվել և լրացվել հետագա 2 դարերում: Տևական ընդմիջումից հետո «Ք. ց.» վերստին մշակվել է XVIII դ–ում և ավելացվել XIV–XVII դդ–ի պատմությունը: Ավանդաբար բաժանվում է Հին (XI–XIV դդ.) և Նոր (XIV–XVII դդ.) մասերի: Հին «Ք. ց.» սկսվում է Լեոնտի Միովելու (XI դ.) «Վրաց թագավորների ու տոհմերի պատմությունը» երկով և ավարտվում 1207–1318–ի իրադարձություններով:



«Քարթլիս ցխովրեբա» *ձեռագիր ժողովածուի բացվածքով էջեր*


Երկը կազմելիս օգտվել են Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»–ից: «Ք. ց.» արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի և հայերի մասին: XII–XIII դդ–ում թարգմանվել է հայ.: Մխիթար Անեցին և հավանաբար Ստեփանոս Օրբելյանը ծանոթ են եղել «Ք. ց.»–ի վրաց. բնագրին, Վարդան Արևելցին ու Մխիթար Այրիվանեցին օգտվել են ժող–ի հայ. թարգմանությունից:

1953–ին Թբիլիսիում լույս է տեսել «Ք. ց.»–ի գրաբար տեքստը և վրաց. թարգմանությունը՝ բառագրքով (հրտ.՝ Իլյա Աբուլաձեի):

Երկի հայոց պատմությանը վերաբերող հատվածները հայ. թարգմանել և հրատարակել է Լևոն Մելիքսեթ–Բեկը «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ժող–ում (1934, էջ 140–184, հ.1, 2013, Ե.):

Գրկ. Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմ. հին վրաց–ից, առաջար. և ծնթգր.՝ Պ. Մուրադյանի, Ե., 1971:

«ՔԱՐՈԶՔ ՀԱՄԱՌՕՏՔ», Քսավերիոս Դոռնեանցի՝ եկեղեց. քարոզների ժող.: Տպագրվել է 1781–ին Վենետիկում՝ Դեմետրիոս Թեոդոսիուի տպարանում: Հատոր Ա, թարգմ.՝ Վրթանես Ասկերյանի: Տիտղթին՝ «Քարոզք համառօտք եօթն կարգեան» (872 էջ, 8º, 16,6 x 9,4 սմ):



«Քարոզք համառօտք...» *(Քսավերիոս Դոռնեանց, հ. Ա, 1781, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գիտություն քարտեզների կազմման մեթոդների և օգտագործման մասին: Զբաղվում է բնական ու հաս. երևույթների քարտեզագր. հետազոտությամբ և պատկերմամբ (քարտեզներ, գլոբուսներ, ատլասներ):

Հայաստանի տարածքում պահպանվել են հազարամյակներ առաջ պատրաստված որմնանկարային քարտեզագր. պատկերներ: Ըստ գրավոր հիշատակությունների՝ հայ. առաջին քարտեզներն ստեղծվել են հայ. առաջին ձեռագրերի հետ մեկտեղ՝ հիմք ունենալով հուն. և հռոմ. Ք.: Միջնադարյան Հայաստանում լայնորեն ճանաչված *«Աշխարհացոյցը»* եղել է քարտեզների ժող., որից մեզ հասել է միայն քարտեզների նկարագրության տեքստը: Մատենադարանում պահպանվող XIII–XIV դդ–ի շրջանաձև ձեռագիր քարտեզը կազմված է միջնադարում տարածված եկեղեց. քարտեզների հիմքի վրա: Այն պատկերում է Եվրոպան Չինաստանին կապող առևտր. ճանապարհները՝ հարակից քաղաքներով:

Եվրոպ. Ք–յան մակարդակով (աշխարհագր. աստիճանացանցով) հայ. առաջին տպագիր քարտեզը *«Համապարած աշխարհացոյցն»*

է (Ամստերդամ, 1695): Հայաստանն ու Մերձ. Արևելքն ընդգրկող, ինչպես նաև առանձին աշխարհամասերի (***«Եւրոպիա»,*** 1786, ***«Ափրիկէ»,*** 1786, ***«Ասիա»***, 1787, ***«Ամերիկա»***, 1787) քարտեզներ են հրատարակվել Մխիթարյան միաբանության կենտրոններում (Վենետիկ, Վիեննա):



Հայաստանը I դարի 1-ին կեսին: Մեծ Հայքի թագավորությունը Արշակունյաց հարստության առաջին գահակալների օրոք

XIX դ-ի կեսերին կազմվել ու հրատարակվել են նաև մեծածավալ (սեղանի) և փոքրածավալ (գրպանի) աշխարհագր. ատլասներ: Առավել արժեքավոր է «Ատլաս Աշխարհացոյց պատկերաց, ըստ արքունի աշխարհագրաց Գաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ եւ Ռուսաց» (Վնտ., 1849) ատլասը՝ բաղկացած տեքստից (46 մեծադիր էջ) և Փարիզում փորագրված 10 տախտակ-քարտեզից (յուրաքանչյուրը՝ 2 էջի վրա՝ 60 x 90 սմ): Առաջին հայ. գլոբուսները պատրաստել են Մխիթարյանները: Արսեն ***Այտընյանը*** կազմել է 60 սմ տրամագծով «Նոր երկրագունդ» գլոբուսը (Վնն., 1850):

Արլ. Հայաստանում Ք-յան զարգացմանը նպաստել են XIX դ-ի կեսերին Այսրկովկասում ռուս. զինվորականության գեոդեզ. ու քարտեզագր. աշխատանքները: Դրանց հիմքի վրա կազմվել և հրատարակվել են Այսրկովկասի և Հայաստանի մի շարք տեղագր. ու ակնարկային հայատառ քարտեզներ (Ա. Խուդաբաշյան, Ք. Պատկանյան և ուր.):


1920-ական թթ-ին Խորհրդ. Հայաստանում հրատարակվել են միջին ու խոշոր մասշտաբների տեղեկատուներ, ճյուղային (հողահանդակների, բնակչության ևն) և ուս. քարտեզներ ու ատլասներ, 1923-ին Երևանում՝ «Հայաստանի ԽՍՀ վարչական ստորաբաժանման սխեմա» (հայ. և ռուս.) քարտեզը (մասշտաբ՝ 1 մատնաչափում՝ 20 վերստ): 1928-ին հրատարակվել է խորհրդահայ առաջին աշխարհագր. ատլասը (Հ. Էլիբեկյան, դպրոց. ուս. ձեռնարկ):



Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII դ-ում

Քարտեզագր. տեխնիկայի մակարդակով և պարունակած տեղեկատվությամբ արժեքավոր են 1932-ին Լենինգրադում հրատարակված «Խորհրդային Հայաստանի քարտեզը» (մասշտաբ՝ 1 : 200 000, հեղինակ՝ Խ. Ավդալբեկյան) և 1938-ին Թբիլիսիում հրատարակված «Հայկական ԽՍՀ ֆիզիկական քարտեզը» (մասշտաբ՝ 1 : 300 000): 1930-ական թթ-ի կեսից ԽՍՀՄ-ում գրաքննության խստացման հետևանքով կրճատվել է քարտեզագր. աշխատանքների ծավալը, ու փոքրացել քարտեզների տեղեկատվ. տարողությունը:

1950-ական թթ-ին սկսվել են հանրապետության աշխարհագր. համալիր ատլասի ստեղծման աշխատանքները. հրատարակվել են «Հայկական ՍՍՀ ատլասը» (1961, հայ. և ռուս., գլխ. գիտ. խմբագիր՝ Անդրանիկ ***Բաղդասարյան***): 1976-ին հրատարակվել է «Հայկական ԽՍՀ աշխարհագրական ատլասը»: Խորհրդ. Հայաստանում թեմատիկ ատլասագրության նվաճում է «Հայկական ԽՍՀ գյուղատնտեսության ատլասը» (1984, ռուս., գլխ. խմբագիր՝ Լեմվել ***Վալեայան***): Դրանց ձևավորման և հրատարակման գործում զգալի մասնակցություն է ունեցել Հ. Գործակալյանը. ձևավորել է Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»» գրքի գունավոր քարտեզը և ստեղծել հատուկ քարտեզագր. տառատեսակներ:



Հայաստանի առաջին հանրապետությունը (1918–20)

Հատուկ օգտագործման համար հրատարակվել են խոշորամասշտաբ թեմատիկ քարտեզներ (բնակչության, երկրբ., երկրաձևաբան., լանդշաֆտային, հողերի, բուս. և կենդ. աշխարհների ևն):

1960–80-ական թթ-ին ստեղծվել են Հայաստանի պատմ. անցյալին վերաբերող բազմաթիվ քարտեզներ (Սուրեն ***Երեմյան***, Թաղևոս ***Հակոբյան***, Բաբկեն ***Հարությունյան*** և ուր.):

Հայ Ք-յան կարևորագույն ձեռքբերում է «Հայաստանի ազգային ատլասը» (հ. 1, 2007, պատ. խմբագիր՝ Լ. Վալեսյան, հ. 2, 2008, պատ. խմբագիր՝ Բ. Հարությունյան): 2009-ին լույս են տեսել «ԼՂՀ ատլասը» (հայ. և ռուս.) և «Երևանի պատմաաշխարհագրական ատլասը»: Արժեքավոր է Բ. Հարությունյանի կազմած ուս. «Հայաստանի պատմության ատլասը» (հ. 1–3, 2004–12): Վերջին տարիներին Արմ. Հայաստանի տարբեր գավառների քարտեզներ են կազմել Գեղամ Բաղալյանը և Սամվել ***Կարապետյանը*** [«Մուշ, Տարոն. 1914», «Սասուն. 1914», «Հարք-Բզնունիք. 1914», «Խնուս», «Էրզրում. 1914» (անգլ.), «Հայոց ձոր», «Մոկս» ևն)]:

Ք. զարգացել է նաև Սփյուռքում: Ֆրանսահայ Ջատիկ ***Խանզադյանը*** կազմել և 1920-ին հրատարակել է «Պատմական Հայաստանի աշխարհագրական միասնութեան ատլասը» (25 քարտեզ), 1920–32-ին՝ Թուրքիայի, Ալժիրի, Պաղեստինի, Մարոկկոյի տնտեսաաշխարհագր. ատլասները, 1960-ին՝ «Հայաստանի պատմական քարտեզագրության ատլասը»:

Հայաստանի պատմ. քարտեզագրության նմուշների հավաքման ու դասակարգման բնագավառում արժեքավոր աշխատանք է կատարում Ռուբեն ***Դալյանը***:

Գրկ. **Խաչատրյան Մ.**, *Քարտեզագրություն, Ե., 1949:* **Ստեփանյան Հ.**, *Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695–1955), Ե., 1957:* **Կարապետյան Գ.**, *Քարտեզագրություն տեղագրության հիմունքներով, Ե., 2008:* **Կարապետյան Գ., Կարապետյան Ա.**, *Հատուկ քարտեզագրություն (սկզբունքները, նպատակները, կիրառման ոլորտները), Ե., 2013:*

ՔԱՐՏԵԶԱՏՊՈՒԹՅՈՒՆ, աշխարհագր., երկրբ., տեղագր. և այլ քարտեզների տպագրությունը: Քարտեզի բնագիրը լուսանկարում են և սևանկարի վրա կատարում գունաբաժանման ռետուշ՝ յուրաքանչյուրի վրա առանձնացնելով 1 գույնով տպվող տարրերը՝ մակագրություններ (բացատրագիր), ջրային տարածքներ, տեղամասերի ռելիեֆ ևն: Ներկայում այդ գործողությունները կատարվում են համակարգչային ծրագրերով: Քարտեզագրության տպաձևերը պատրաստում են լուսամեխ. պատճենահանման եղանակով, որից հետո տպագրում են օֆսեթ կամ վիմագր. մեքենաներով: Քարտեզի մասշտաբից, բարդությունից և նշանակությունից կախված՝ նրա տպագրության համար գործածում են մինչև 12 ներկ (գույն):

ՔԵՇԻՇՅԱՆ Գրիգոր Սամվելի (12.8.1921, ք. Ադանա (Կիլիկիա)–14.1.1980, Երևան), գրող, թարգմանիչ, խմբագիր: Ավարտել է Բեյրութի Սահակյան վարժարանը (1935) և Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը (1941), ԵՊՀ (1951): Հայրենադարձել է 1946-ին: 1970–80-ին աշխատել է Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագրությունում՝ մամուլի և մանկավարժության բաժնի վարիչ:

Լույս են տեսել Ք-ի «Պատմվածքներ» (1954), «Քեզնից հեռու, քեզ հետ» (1962), «Տնակը կոունկի վրա» (1975), «Կտակը» (1981) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Կղզի նման չիք մեր Կիպրիա» (1970) վեպը, «Աշխարհի ապագա չեմպիոնները» (1962), «Երկնքում շատ աստղեր կան» (1977) մանկ. պատմվածքների ժող-ները: Թարգմանել է Վ. Սարոյանի, Մ. Տվենի, Ա. Քամյուի ստեղծագործություններից:


ՔԵՉՅԱՆ Բյուզանդ (Նուրհան) (8.8.1859, Կ. Պոլիս–20.6.1927), խմբագիր, հրապարակախոս, տպարանատեր: 1876-ից աշխատակցել է պոլսահայ մամուլին: Եղել է ***«Մասիս»***, ***«Արեւելք»*** (Կ. Պոլիս), ***«Բիւզանդիոն»***, «Ռահվիրա» (1862), 1876–77-ին՝ «Մամուլ», 1877–85-ին՝ «Թերճըմանը Էֆքեար» («Թարգման մտածումների») հայատառ թուրք. պարբ-ների գլխ. խմբագիր: Զբաղվել է նաև գրահրատարակչ. գործունեությամբ:

Լույս է տեսել Ք-ի «Քսաներորդ դարու ազգ. դիւրեր: Պետրոս Կարապետեան» (1911, ԿՊ, Տիգրան Տողրամաճյանի տպ.) գրքույկը:

Գրկ. **Թէոդիկ**, *Տիպ ու պատ, ԿՊ, 1912, Ե., 2012 (համանահանություն):*



Գրիգոր Քեշիշյան



Գ. Քեշիշյանի
«Կտակը» (1981, Ե., «Սովետական գրող») գրքի կազմը




Բյուզանդ Քեչյան



Պաղտասար Դպիրի «Քերականութիւն» (հ. Ա, 1736, Կ. Պոլիս, Ասփուաճատուր Կոստանդուպոլսեցու տպ.) գրքի փիփղոսաթերթը



Պիեռ Քիյարի *«Նկատառումներ և փաստաթղթեր ի պաշտպանություն հայերի» (ֆրանս., 1902, Փարիզ) գրքի փիփղոսաթերթը*



Էդմոն Քիրազի *«Փոքրիկ դրամաներ» (ֆրանս., 2005, Փարիզ) ալբոմի կազմը*

ՔԵՊԱՊՃՅԱՆ (Քեբաբջյան) Մելքոն Մկրտչի (1880, գ–ք. Ակն–3.10.1949, Երևան), գեղանկարիչ, նկարիչ–ձևավորող: Սովորել է Ակնի Նարեկյան և Ներսեսյան վարժարաններում: 1892–ին տեղափոխվել է Կ. Պոլիս: 1947–ին հայրենադարձել է: Ձևավորել է Մ. Պեշիկթաշլյանի, Վ. Շուշանյանի, Թ. Ազատյանի և ուր. երկերից, նաև «Ամենուն տարեցոյցի», «Անահիտ» հանդեսի համարներից, նկարել ազդագրեր, նորաձևության նմուշներ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գիրք, որի մեջ ամփոփված՝ շարադրված են հայոց և որևէ այլ լեզվի քերակ–յան կանոնները, դասընթացը:

Հայ հնատիպ գրքի շրջանում 1795–ին Կ. Պոլսում՝ Պողոս Հովհաննիսյանի տպարանում տպագրվել է «Քերականութիւն» դասագիրքը: Տիտղթ–ին՝ «Քերական. նորոգ հաւաքեալ հատընտիր գրաբառ բառիւք հանդերձ ռամկօրէն մեկնութեամբ» (48 էջ, 14,5 x 11 սմ):

Տպագրվել են նաև ***Ոսկան Երևանցու*** (1666, Ամստերդամ), ***Խաչատուր Էրզրումցի Առաքելյանի*** (1696, Լիվոռնո), ***Սիմեոն Ջուղայեցու*** (1725, Կ. Պոլիս), ***Պաղտասար Դպիրի*** (հ. Ա–Բ. 1736, 1760, Կ. Պոլիս, հ. 1–2, 1771, Կ. Պոլիս, հ. 1–2, 1791, Մադրաս), ***Մխիթար Սեբաստացու*** (1770, Վնտ.), ***Աթանաս Մերապյանի*** (1774, Վնտ.), ***Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու*** (1675, Հռոմ), Միքայել ***Չամչյանի*** (1774, Վնտ.), Գաբրիել ***Ավետիքյանի*** (1792, Վնտ.) Ք–նեը: Ք–յան բազմաթիվ ձեռնարկներ և դասագրքեր տպագրվել են նաև 1801–ից հետո:

ՔԵՐԹՈՂ, **մատենագիր, բանաստեղծ, քերական, մեկնիչ, թարգմանիչ**, դպրության արվ–ի գաղտնիքները յուրացրած մանագետ: Բառը ծագում է քերթել բայից, որը նախապես նշանակել է կերտել, հորինել, ստեղծել: Ք. գործածվել է իբրև տաղասաց, բանաստեղծ բառերի հոմանիշ: Ք–ից է առաջացել նաև Սիվսես Խորենացու «Քերթողահայր» պատվանունը:

ՔԻՅԱՐ (Quillard) Պիեռ [14.7.1864, ք. Ֆոնտանի (այժմ՝ Կոնդորսե, Ֆրանսիա)–4.2.1912, Փարիզ], ֆրանսիացի լրագրող, բանասեր, բանաստեղծ: Ավարտել է Փարիզի համալսարանը (1885): Տիրապետել է հայ–ին: 1893–96–ին դասավանդել է Կ. Պոլսի Կեդրոն. և Մխիթարյան վարժարաններում: Ականատես է եղել աբդուլհամիդյան հայկ. ջարդերին: Իր հոդվածներում և ելույթներում (1897) դատապարտել է սուլթան. Թուրքիայի պետ. և Ֆրանսիայի կառավարության քաղաքականությունը Հայկ. հարցում: Սերտ կապեր է ունեցել հայ մտավորականների հետ, նպաստել է Եվրոպայում նրանց ստեղծագործությունների հրատարակմանը: 1900–12–ին՝ ***«Պրո Արմենիա»*** պարբ–ի գլխ. խմբագիր:

Լույս են տեսել Ք–ի «Հայկական հարցը և Եվրոպան» (1896), «Նկատառումներ և փաստաթղթեր ի պաշտպանություն հայերի» (1902) աշխատությունները, «Կոնատ աղջիկը» (1886), «Խոսքի փառքը» (1890), «Հերոսական և վշտագին քնար» (1897, բոլորը՝ ֆրանս.) բանաստեղծությունների ժող–ները:

Գրկ. A la mémoire de Pierre Quillard, P., 1912.

ՔԻՐԱԶ (Քիրազյան) Էդմոն (ծ. 25.8.1923, Կահիրե), ծաղրանկարիչ: Աշակերտել է Ալեքսանդր Սարուխանին, որը նրա ծաղրանկարները պարբերաբար տպագրել է իր հրատարակած «Լա Կարավան» (1934–41) հանդեսում: Աշխատակցել է նաև «Ալ Մուսավար» (արաբ., Կահիրե), «Իմաժ», «Լա Ռեֆորմ» (ֆրանս.) թերթերին: 1948–ից հաստատվել է Փարիզում: Աշխատակցել է «Ժուր դը Ֆրանս» (ֆրանս.) ամսագրին, հանդես եկել ամերիկյան և այլ երկրների ամսաթերթերում:

Լույս են տեսել Ք–ի «Գեղեցիկների հուշատետրը» (1959), «Քիրազի կանայք» (1985), «Նա և ես» (2003), «Փոքրիկ դրամաներ» (2005, բոլորը՝ ֆրանս.) երգիծանկարների ալբոմները:

Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշան (2011):

ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ Երեմիա Մարտիրոսի, **Երեմիա Չելեպի, Երեմիա Դպիր** (22.5.1637, Կ. Պոլիս–1695, Կ. Պոլիս), պատմագիր, բանաստեղծ, տպագրիչ: Սկզբն. կրթությունն ստացել է ծննդավայրի Սբ Սարգիս եկեղեցու վարժարանում, այնուհետև հմտացել է մատենագիտ-յան, գրչության արվ-ի, երաժշտության բնագավառներում, տիրապետել հուն-ին, լատ-ին, պարսկ-ին, արաբ-ին և այլ լեզուների: 1676-ին Կ. Պոլսում հիմնադրել է տպարան, 1677-ին տպագրել Ներսես Շնորհալու «Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդւոյ գրոցն» երկը, 1678-ին՝ **«Տեղեաց տնօրինականաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»** (35 էջ) հոգևոր բովանդակությամբ իր ոտանավորների ժող-ը:

Լույս են տեսել նաև Ք-ի «Ստամպօլոյ պատմութիւն» (հ. Ա–Գ, 1913–39, Վնն., Մխիթարյան տպ., թուրք., 1952), «Օրագրութիւն» (հրտ.՝ 1939), «Վասն Էքմէքճի առնաւուտ Տիմոյի ումեմն...» («ԲՄ», № 6, 1962), «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» (2-րդ հրտ., Ե., 1982), «Պատմութիւն հրակիզման Կոստանդնուպոլսոյ (1660 տարւոյ)» (1991, Ստամբուլ) պատմ., տոմարագիտ., կրոն. երկերը: Գրել է «Վիպասանութիւն յառումն Կրետէ կղզւոյ», «Տարեգրական պատմութիւն» (1692–93), «Պատմական բանք իւրոյ ժամանակին», «Համառօտ հարցմունք եւ պատասխանիք», «Վիպասանութիւն յԱպրօ Չէլէպի» (բոլորը՝ անտիպ) աշխատությունները: Ք-ի «Հայոց պատմութիւն» և «Համառօտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի» (հայ. և իտալ.) երկերը չեն պահպանվել, «Աշխարհագրութիւն»-ից պահպանվել է առաջաբանի մի մասը և հայկ. վանքերի տեղագր. քարտեզը:

Ք. հեղինակ է նաև ուղերձների, գանձերի, ողբերի, պոեմների, տաղերի, մշակել է ժող. երգեր, թուրք. է թարգմանել Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, Նոր կտակարանը, Դավթի սաղմոսները, Հայսմավուրքը, «Պատմութիւն մեծին Աղեքսանդրի» երկը, «Պատմութիւն Փարիզու եւ Վէննայի» (1871) պոեմը ևն:

Գրկ. Չամչեան Մ., *Պատմութիւն Հայոց, հ. 3, Վնտ., 1786:* Ակինեան Ն., *Երեմիա Չէլէպի Քէօմուրճեան, Վնն., 1933:* Օշական Հ., *Երեմիա Չէլէպի, «Միտն», 1939–40:* Սահակյան Հ., *Երեմիա Քյոմուրճյան: Կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1964:* Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. 2, Էջմիածին, 2001:*

ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ Կոմիտաս Մարտիրոսի (1656, Կ. Պոլիս–5.11.1707, Կ. Պոլիս), քահանա, թարգմանիչ: Աշակերտել է այնթապցի Մինաս վարդապետին, սովորել քերակ., ճարտասանություն և աստվածաբանություն: 1683-ին Եվդոկիայի առաջնորդ Կիրակոս եպիսկոպոսը Ք-ին ձեռնադրել է քահանա: Պաշտոնավարել է Սամաթիայի Սբ Գևորգ եկեղեցում: Ներքաշվել է Կ. Պոլսի պատրիարք. աթոռի համար կռվի մեջ և ենթարկվել հալածանքների: 1701-ին Երեմ վրդ. Ղափանցին, ընտրվելով պատրիարք, սաստիկ հալածանք է սկսել կաթոլիկ. եկեղեցու համակիրների (այդ թվում՝ Ք-ի) դեմ: Ք. ստիպված մեկնել է Երուսաղեմ, բայց պատշաճ ընդունելության չարժանանալով՝ վերադարձել է Կ. Պոլիս., 9 ամիս թաքնվել է, այդ ընթացքում չափածոյի է վերածել «Գործք առաքելոց»-ը. տպագրվել է 1704-ին Կ. Պոլսում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Տիտղթ-ին՝ «Ոտնաւորք բանք ի գործս առաքելոց» (196 էջ, 8º, 11,6 x 7 սմ):

1798-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում լույս է տեսել Ստեփանոս Ավգերյանցի «Քէօմիւրճեանց տէր Կոմիտաս քահանայնըն վարքը, վէ նահատակութիւնու» հայատառ թուրք. գրքույկը՝ Ք-ի վարքի ու նահատակության մասին: Տիտղթ-ին՝ «Ալլահըն ազիզ Քուլու Քէօմիւրճեանց տէր Կոմիտաս քահանայնըն վարքը, վէ նահատակութիւնու...» (44 էջ, 8º, 13,5 x 8,5 սմ):


Օսմ. կառավարության որոշմամբ Ք-ին գլխատել են, 1929-ին Հռոմի Պիոս ԺԱ պապը նրան կարգել է «երանելիների դասին»:

Գրկ. Մաղարեան Յ., *Համառօտ կենսագրութիւն տեառն Կոմիտասայ քահանայի Քիւմիւրճեանց Կ. Պոլսեցի Հայ-կաթողիկէ վկային, ԿՊ, 1912:*

ՔՅՈՍԵՅԱՆ Հակոբ Հովհաննեսի (ծ. 4.12.1951, Երևան), հայագետ, աստվածաբան: Բանասիր. գիտ. դ-ր (2010): Ավարտել է ԵՊՀ (1981): 1977-ից՝ Մատենադարանի Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց գիտ.




Երեմիա Քյոմուրճյանի *«Ստամպօլոյ պատմութիւն» (հ. Բ, 1932, Վնն.) գրքի փիփղոսաթերթը*



Կոմիտաս Քյոմուրճյանի *«Գործք առաքելոց» (1704, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



Հակոբ Քյոսեյանի *«Եկեղեցու հայրեր, վարդապետներ. IV–VIII դդ.» (2007, Ե. , «Մագաղաթ») գրքի կազմը*



Հարություն Քյուրդյանի *«Թորոս Տարօնեցի: Կեանքն ու իր գործերը» (1943, Նյու Յորք) գրքի կազմը*



«Քնար հայկական», *1861–63, Կ. Պոլիս (հունիս, 1862)*


ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵԳՈՒՅՑՆԵՐԸ
ԳԱՐԵԳԻՆ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵԳՈՒՅՑՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
ԳԱՐԵԳԻՆ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՅԿ

խմբագր. խորհրդի նախագահ, 2006-ից՝ ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգ. ռազմավար. հետազոտությունների ինստ-ի պետ:

Լույս է տեսել Ք-ի «Հայկական երկրաշարժը (կոնֆլիկտաբանական ուրվագծեր)» (1992) հոդվածների ժող-ը, «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները...» (հայ., անգլ., ռուս., 2008), «Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ» (2009), «Հակամարտության էթնոքաղաքագիտություն....» (2010) աշխատությունները:

Երկ. Грани согласия конфликта. Цивилизационные проблемы теоретической и прикладной политологии, М., 1992; Основы военной политики Республики Армения (военно-политический аспект национальной безопасности), Е., 1992.

ՔՈՉԱՐ (Քոչարյան) Երվանդ Սիմոնի [15(27).6.1899, Թիֆլիս–22.1.1979, Երևան], քանդակագործ, գեղանկարիչ, նկարիչ-ձևավորող, տարածական նկարչության հիմնադիրը: ՀԽՍՀ (1965), ԽՍՀՄ (1976) ժող. նկարիչ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1918), միաժամանակ սովորել է Գեղարվ-ը խրախուսող կովկասյան ընկերության նկարչության դպրոցում (1915–18), Մոսկվայի Ազատ գեղարվ-ի արվեստանոցների վերջին կուրսում (1918–19): 1922-ից ապրել է Կ. Պոլսում, ապա՝ Վենետիկում, 1923-ից՝ Փարիզում, 1936-ից՝ Երևանում:

Ք. նկարազարդել է «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյան. ակադեմ. հրատ-ը (1939, ռուս.՝ 1982, բուլղ.՝ 2010): Պատկերազարդել և ձևավորել է Ս. Մելիքսեթյանի «Թատերական ակնարկներ» (1945), Նիզամի Գյանջևիի «Լեյլի ու Մեջնուն» (1947), Հ. Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» (հայ., ռուս., 1956) գրքերը: Հայ գրատպության 500-ամյակին նվիրված «Հայ գրքի սփյուռքը 1512–2012» ցուցահանդեսում (2012, Ամստերդամ) ներկայացվել են Ք-ի «Ոսկան վարդապետ Երևանցի» (1946) գրաֆիկ. աշխատանքը և «Էրեբունի-Երևան» (1968) տարածանկարը:

ՀԽՍՀ Պետ. մրց. (1967):

Երկ. Ես և դուք (ելույթներ, հոդվածներ ու հիշողություններ, պիես), Ե., 2007:

Գրկ. Երվանդ Քոչար. արվեստագործությունների ցուցահանդես, Ե., 1980 (մատենագիտ. ցանկով): **Վալդեմար Ծ.**, *Քոչար եւ նկարչութիւնը փարաձոթեան մէջ, Բ., 1972:* **Աղասյան Ա.**, *Երվանդ Քոչարի փարաձոթյան մեջ, Ե., 2013:* **Пилипосян А.**, *Давид Сасунский в графике и скульптуре Кочара, Е., 1978.*

ՔՈՉԱՐ Հրաչյա [Գաբրիելյան Հրաչյա Քոչարի, 19.1.1910, գ. Գումլուպուճախ (Էրզրումի նահանգի Դիադին գավառ)–2.5.1965, Երևան], գրող, հրապարակախոս, խմբագիր: 1916-ին ապաստանել է Արլ. Հայաստանում: 1929–31-ին սովորել է բանֆակում, աշխատել «Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան» թերթերի խմբագրություններում, 1934-ին՝ ***«Ոյա թազա»*** (քրդ.) թերթի, 1941-ին՝ «Բիբլիոգրաֆիական ամսագրի» (տպագրվել է 1 համար), 1946–51-ին՝ ***«Սովետական գրականություն»***, 1954-ին՝ ***«Ոզնի»*** ամսագրերի գլխ. խմբագիր: 1941–45-ին եղել է ռազմաճակատային թերթերի թղթակից:

Լույս են տեսել Ք-ի «Վահան Վարդյան» (1934), «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» (1937), «Նահապետ» (2008) վիպակները, «Ժամանակներ» (1941), «Հերոսների ծնունդը. նամակներ գործող բանակից» (1942), «Նախօրյակին. նամակներ գործող բանակից» (1943), «Սրբազան ուխտ» (1946), «Բարեկամություն» (1950), «Վիպակներ և պատմվածքներ» (1956, 2014), «Սպիտակ գիրքը» (1965) պատմվածքների և վիպակների ժող-ները, «Մեծ տան զավակները» (հ. 1, 2, 1952, 1959) վեպը, «Երկերի ժողովածուն» (հ. 1–6, 1964–71), «Ստեղծագործությունների ժողովածուն» (2013):

ՀԽՍՀ Պետ. մրց. (1967), «Կարմիր աստղի» շքանշան:

Գրկ. **Նազարյան Շ.**, *Հրաչյա Քոչար, Ե., 1962:*

«21-ՐԴ ԴԱՐ», տեղեկատվ., վերլուծ. հանդես.: «Նորավանք» գիտակրթ. հիմնադրամի հրատ.: Լույս է տեսնում 2003-ից Երևանում՝ հայ. (երկամսյա), անգլ. (կիսամսյա): Հիմնադիր-խմբագիր՝ Գագիկ Հարությունյան: Տպագրում է հոդվածներ ազգ. անվտանգության խնդիրներին, միջազգ. ռազմաքաղ. իրավիճակի, տեղեկատվ. նորությունների, հայկ. նոր պետականության կայացման, Հայկ. հարցի, Հայոց ցեղասպանության, Արցախյան հիմնախնդրի, հայ-ռուս. հարաբերությունների, Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկ. գոր-




Երվանդ Քոչար. *«Էրեբունի-Երևան» (1968, փարաձանկար)*



Հրաչյա Քոչար



Հ. Քոչարի «Վիպակներ և պատմվածքներ» *(1956, Ե., Հայպետհրատ) գրքի կազմը*



«21-րդ դար», *2003-ից, Երևան (№ 2, 2011)*



«Քրիստոնէական զգուշացումն» *(1713, Կ. Պոլիս) գրքի փիփղոսաթերթը*



«Քրիստոնէական վարդապետութիւն» *(1667, Ամստերդամ) գրքի փիփղոսաթերթը*

ծողությունների և այլ խնդիրների վերաբերյալ ներկայացնում է հիմնադրամի գործունեությունը:

ՔՍԵՐՈԳՐԱՖԻԱ (< հուն. xeros–չոր, բառացի չորատպություն)՝ **քսերոքս, պատճենահանություն**: Փաստաթղթերի պատճենահանման ամենատարածված եղանակներից, որտեղ լուսազգայուն նյութի վրա առաջացած ներկափոշային պատկերը թղթին փոխանցվում և ամրապնդվում է տաքացումով՝ ճնշման տակ: Հայտնագործել է ամերիկացի գյուտարար Չ. Կառլսոնը 1938-ին: Կոչվել է առաջինն այդ տեսակի մեքենաներ արտադրող «Քսերոքս» ֆիրմայի անունով:

«ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ», ԵՊՀ հրատարակչության մատենաշար: Լույս է տեսել 1979–87-ին Երևանում: Տպագրել է ՀՀ բուհերի բանասիր. ֆակ-ների ուս. ծրագրերում ներառված տես. ու գործն. նշանակության պարտադիր գրակ-յան ուս. ձեռնարկներ՝ «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծություն» (1979, կազմ.՝ Ա. Սադոյան, Գ. Անանյան), «Հայոց հին և միջնադարյան արձակ» (1981, կազմ.՝ Վ. Ներսիսյան, Ա. Սադոյան), «Հայ ժողովրդի պատմություն» (հ. 1, «Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը», 1981, կազմ.՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Աբրահամյան), «Հայ գրականության քննադատություն» (հ. 1, 2, 1981, 1984, կազմ. և ծնթգր.՝ Ժ. Քալանթարյանի), «Գրականագիտության ներածություն» (1984, կազմ.՝ Ա. Բեքմեզյան, Վ. Նավասարդյան), «Գերմանական դասական գրականություն» (1985, կազմ.՝ Ք. Աղաբեկյան), «Սովետահայ պոեզիա» (1986, կազմ.՝ Հ. Գալստյան,), «Հայոց լեզվի պատմություն» (հ. 1, «Գրաբար և միջին հայերեն», 1987, կազմ.՝ Պ. Շարաբխանյան) և այլ քրեստոմատիաներ: Վլադիմիր Մաղալյան

«ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ», բարեպաշտորեն ապրելու և բարեպաշտորեն մեռնելու մասին գրքույկ: Թարգմ.՝ իտալ-ից: Տպագրվել է 1713-ին Կ. Պոլսում՝ առանց տպարանի հիշատակության: Տիտղթ-ին՝ «Ծաղկաւէտ գրգուկս որ կոչի Քրիստոնէական զգուշացումն յաղագս բարեպէս կելոյ, եւ բարեպէս մեռանելոյ...» (40 էջ, 8º):

«ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ», քրիստ. քարոզգիրք: Տպագրվել է՝

1667-ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության (հայ. և լատ.): Լատ-ից թարգմ.՝ Կարապետ Անդրիանացու: Տիտղթ-ին՝ «Վարդապետութիւն քրիստոնէական. Doctrina christiana armenice, in latinum oerfa, et publicata...» [82 էջ (սկզբի 10-ը՝ չհամարակալված), 12º, 12 x 7սմ]: Ըստ Գ. Զարբհանալյանի և Թեոդիկի՝ ոսկանյան տպագրություն է:

1667-ին Ամստերդամում՝ առանց տպարանի հիշատակության (հայ. և լատ.): Տիտղթ-ին՝ «Վարդապետութիւն քրիստոնէական ըստ Հայոց...»: Նախորդի վերատպությունն է, տարբերվում է միայն տիտղոսաթերթով և չունի սկզբի չհամարակալված 10 էջը:

1670-ին Լիվոռնոյում՝ Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանում: Հեղինակ՝ Ռոբերտոս Բելարմինոս, թարգմ.՝ Բարսեղ Կոստանդնուպոլսեցու, տպագրիչ՝ Ոսկան Երևանցի: Տիտղթ-ին՝ «Վարդապետութիւն քրիստոնէական» (366 էջ, 8º, 10 x 6 սմ):

1680-ին Հռոմում՝ Ուրբանյան տպարանում: Հեղինակ՝ Ռոբերտոս Բելարմինոս, թարգմ.՝ Բարսեղ Կոստանդնուպոլսեցու: Ա տիտղթ-ին՝ «Dichiaratione piu copiosa della dottrina christiana...», Բ-ին՝ «Վարդապետութիւն քրիստոնէական» (453 էջ, 8º, 10,5 x 6,7 սմ):

1715-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Հեղինակներ՝ Պետրոս և Գրիգոր Ձահկեցիներ: Տիտղթ-ին՝ «Համառօտ եւ շահաւէտ քրիստոնէական վարդապետութիւն» (32 էջ, 8º):

1770-ին Վենետիկում՝ Անտոնի Բորտոլիի տպարանում: Հեղինակ՝ Զաքարիա Ալեքսանյան (46 էջ, 12º, 11 x 6,7 սմ):

1776-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ աշխարհաբար (48 էջ, 8º, 12 x 7,3 սմ): 1783-ին նույն տպարանում՝ հայատառ թուրք. (140 էջ, 12,6 x 7,7 սմ): 1788-ին նույն տպարանում՝ հայ. և գերմ. (56 էջ, 8º, 13 x 8 սմ):

1791-ին՝ առանց տպագրության վայրի և տպարանի հիշատակության՝ հայատառ թուրք. (172 էջ, 4º, 11 x 5,5 սմ):

1795-ին Տրիեստում՝ Մխիթարյան տպարանում՝ հայատառ թուրք. (72 էջ, 12º, 11,2 x 5,6 սմ):

Հայ հնատիպ գրքի շրջանում տպագրվել են նաև *Մխիթար Սեբաստացու*, Յակոբ *Վիլյոտի* «Ք. վ.»-ները, ավելի ուշ՝ 1801, 1814, 1823, 1836, 1846, 1847-ին նն:

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ», Մայր աթոռ Սբ Էջմիածնի կրոն., մշակութ., լրատվ. երկշաբաթաթերթ: Լույս է տեսնում 1997-ից Էջմիածնում: Խմբագիրներ՝ Կարեն *Մաթևոսյան*, Աստղիկ Ստամբոլցյան (2000-ից): Տպագրում է կրոն. թեմաներով նյութեր, նաև պատմ., հայագիտ., արվ-ին վերաբերող հոդվածներ, գրական էջեր, Մայր աթոռի տեղեկատվություններ նն:

«ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ» հանրագիտարան, հրատարակել է *«Հայկական հանրագիտարան. հրատարակչությունը»* 2002-ին՝ քրիստոնեությունը Հայաստանում պետ. կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ: Գլխ. խմբագիր՝ Հովհաննես *Այվազյան:* Այբբենական – թեմատիկ հանրագիտարան է. ներկայացնում է Հայ եկեղեցու դավանանքը, դավանաբան. մտքի և եկեղեցու պատմությունը, Հայաստանի տեղը քրիստոնյա աշխարհում, բացահայտում հայ ժողովրդի ավանդը քրիստ. քաղաքակրթության և համաշխ. մշակույթի մեջ, ծանոթացնում է Հայ առաքել. եկեղեցու նվիրապետ. աթոռներին, ականավոր ներկայացուցիչների և այդ ոլորտի հայ գիտնականների կյանքին ու գործունեությանը, եկեղեցու ճարտ. ժառանգությանը, հոգևոր երաժշտությանը, հարուստ տեղեկություններ է պարունակում աստվածաշնչյան սրբերի, քույր եկեղեցիների պատմության վերաբերյալ, ինչպես նաև կրոնական կեղեց. բազմաթիվ հասկացությունների ևնի մասին:




«Քրիստոնյա Հայաստան», *1997-ից, Էջմիածին*

ՔՐԻՍՏՈՍԱՏՈՒՐ, XV դ-ի գրիչ, մանրանկարիչ, կազմարար: Ապրել և ստեղծագործել է Ղրիմում: Ձեռագրեր է ընդօրինակել Քեմճակի վանքում (1417), Կաֆայում (1420, 1423), Կաֆայի մերձակա Անտոնի վանքում (1428–32): Ծաղկել ու կազմել է իր ընդօրինակած մատյանները, որոնցից 3-ը՝ Ավետարանը, Ճաշոցը, Մանրուսումը, պահվում են Մատենադարանում (ձեռ. № 7686, 7434, 2387):

Ք. վերջին անգամ հիշատակվում է 1449-ին՝ որպես Անտոնի վանքի վանահայր:

Գրկ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 1 (կազմ.՝ Լ. Խաչիկյան), Ե., 1955:



«Քրիստոնյա Հայաստան» *(2002, Ե., «ՀՀՀ») հանրագիտարանի կազմը*

«ՔՈՒԼԻՍ», թատեր., գրական-գեղ. երկշաբաթյա պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1946–96-ին Մոսկվայում: Խմբագիր-հրատարակիչ՝ Հակոբ *Այվազ*: Նպաստել է Սփյուռքում հայոց լեզվի, ազգ. ավանդույթների ու սովորույթների պահպանմանը, լուսաբանել մշակույթի և արվ-ի տարբեր բնագավառների անցուդարձը, ներկայացրել հայ ու այլազգի ճանաչված գիտնականների և գրողների, անդրադարձել Հայաստանի մշակութ. կյանքին: Ունեցել է երգիծ. էջեր:




«Քուլիս», *1946–96, Սպրամբուլ (№ 1, 1956)*

«ՔՈՒՐԱ», գրական-գեղ., երգիծ. թերթ, վերջին համարը՝ տարեգիրք: Մոսկվայի հայ պրոլետ. գրողների «Քուրա» խմբակցության հրատ.: Լույս է տեսել 1923 և 1928-ին Մոսկվայում (3 համար): Խմբագիր՝ Գուրգեն *Հայկունի*: Տպագրել է 1920-ական թթ-ի խորհրդահայ գրակ-յան, մշակույթի և արվ-ի ներկայացուցիչների ստեղծագործություններ:

Օ



Սագո Օգնայանի *«Մատենագիտութիւն «Սփիւռք» շաբաթաթերթի. 1958–1978» (1984, Բեյրութ) գրքի կազմը*



«Օգուտ բժշկութեան» *ձեռագրի էջ (1772, Փարիզ, Վ. Թորգոմյանի անհատական հավաքածու)*

Օ, ժամանակակից հայ. այբուբենի 38–րդ տառը, անվանումը՝ «օ»: Այբուբեն է մտցրել Արիստակես Հոետորը XII դ–ի վերջին–XIII դ–ի սկզբին՝ աւ երկբարբառի փոխարեն: Բոլորգրում, մինչև օ–ի մուտքը, աւ–ի վրա դրվել են նշաններ (ա՛ւ, ա՛՛ւ, ա՞ւ): Գրատեսակներում ձևը չի փոխում: 1922–ին Օ հանվել է գործածությունից, իսկ 1940–ի մասնակի բարեփոխված ուղղագրությամբ՝ վերականգնվել: Թվային արժեք չունի:

ՕՔԵՐՏԻՆՍԿԻ Ջձիսլավ Մարիան [1.12.1894, Լվով–12.5.1978, Օտվոցկ (Լեհաստան)], լեհ պատմաբան, հայագետ: Օ–ու աշխատություններից մի մասը վերաբերում է Լեհաստանի և Ուկրաինայի հայկ. գաղթավայրերի պատմությանը, Հայ եկեղեցուն, պատմ. ավանդություններին: Աշխատությունների հավելվածներում հրատարակել է Լեհաստանի և Ուկրաինայի հայկ. գաղթավայրերի պատմությանն առնչվող բազմաթիվ փաստեր: Արժեքավոր են հատկապես «Լեհահայերի Ֆլորենտյան միությունը և նրանց եպիսկոպոսների ցուցակը» (գերմ., 1934), «Լեհահայերը եւ անոնց Անդրէաս արքեպիսկոպոսը Եազլովիցի մէջ» (հայ. հրտ.՝ 1963, Վնն., Մխիթարյան տպ.) մենագրությունները:

ՕԳՆԱՅԱՆ Սագո Հակոբի (ծ. 13.7.1955, Բեյրութ), մատենագետ: Ավարտել է Բեյրութի Հովակիմյան–Մանուկյան վարժարանը (1973), Ամերիկյան համալսարանը (1978): Աշխատակցել է «Երկաթէ շերեփ» (1985–89), «Սփիւռք» (1990–ից) պարբ–ներին:

Լույս են տեսել Օ–ի «Մատենագիտութիւն լիբանանեան եւ օտար մամուլի (հայկական նիւթեր), 1978» (1980), «Մատենագիտութիւն «Սփիւռք» շաբաթաթերթի. 1958–1978» (1984), «Մատենագիտութիւն հայկական ժողովրդային շարժումի «Երկաթէ շերեփ» ամսաթերթին (1985–1989)» (1993), «Մատենագիտութիւն «Հասկ» հայագիտական տարեգրքի. 1948–1994» (հ. 1–7, 1996), «Մատենագիտութիւն «Փիւնիկ» ամսաթերթի (Երևան), 1990–1991» (2002), «Մատենագիտութիւն «Հայկազեան հայագիտական հանդէսի» Ա–Լ հատորներու (1970–2010)» (2010) մատենագիտ. աշխատությունները: Օ–ի աշխատասիրությամբ հրատարակվել է նաև «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ)» (2015) վավերագրությունը:

«ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ», XV դ–ի հայ բժշկապետ ***Ամիրդովլաթ Ամասիացու*** աշխատությունը՝ բժշկության տես. և գործն. հարցերի վերաբերյալ: Գրել է 1466–69–ին Ֆիլիպոպոլսում (այժմ՝ Պլովդիվ, Բուլղարիա): Մեզ են հասել մեծ մասամբ XVII–XVIII դդ–ի գրչագրեր (Մատենադարան, ձեռ. № 414, 453, 5847, 6888, 7731, 7752, 8052): Բաղկացած է առաջաբանից, հիմն. 2 մասից ու ցանկից: Բժշկության տես. հարցերին անդրադարձել է գրքի 1–ին մասում (գլուխ Ա–ԺԵ), որը հեղինակի «Ուսումն բժշկութեան» (1459) երկասիրության վերամշակումն է. շարադրել է 4 տարրերի ուսմունքի և հումորալ ախ–

տաբանության, կազմախոսության, սաղմնաբանության, հիգիենայի, կանխորոշման, ախտորոշագիտ–յան ու դեղագիտ–յան դրույթները: Գրքի 2–րդ՝ «Գիրք բժշկութեան տումարի» (գլուխ ԺԵ–ՄԻԴ) մասում արծարծել է հիվանդությունների կլինիկայի՝ մահճաբուժության հարցեր. ներկայացրել է ուղեղի, նյարդերի, զգայարանների, սրտի, ստամոքսի, լյարդի, միզասեռ. և այլ համակարգերի 200–ից ավելի հիվանդությունների, ինչպես նաև տենդերի, բարորակ ու չարորակ ուռուցքների, այրվածքների, մաշկային հիվանդությունների պատճառագիտությունը, ախտաբանությունը, կլինիկ. պատկերն ու բուժման եղանակները: Ակնաբուժության, հոգեբուժության, ուռուցքաբանության, վարակիչ հիվանդությունների (պալարախտ, դողէրոցք, ժանտախտ ևն) բուժումը հեղինակը հիմնավորել է իր հարուստ փորձով: Գիրքը ընդհանրացնում է միջնադարյան հայ բժիշկների նյութերը՝ սկսած *«Գագիկ–Հեթումյան բժշկարան»*–ից (XI–XIII դդ.) և ***Մխիթար Հերացու*** «Զերմանց մխիթարութիւն»–ից, վկայակոչված են նաև անտիկ ու արաբ. աղբյուրներ: Տպագրվել է 1940–ին Երևանում (քնն. բնագիրը՝ Ս. Մալխասյանցի):

Գրկ. Թորգոմեան Վ., Հայ բժշկական ձեռագիրներ, «Օգուտ բժշկութեան» Ամիրդովլաթի եւ Բունիաթ բժիշկ Սերաստացի, «ՀԱ», 1899, էջ 108–111, 201–202, 377–378:

«ՕԼԻՄՊՈՍ», բժշկ. և գրական ամսաթերթ: Լույս է տեսել 1926–28–ին Սալոնիկում, ապա՝ Աթենքում: Խմբագիր՝ Մ. Մալաքյան: Տպագրել է հանրամատչելի նյութեր առողջապահ. և բնագիտ. թեմաներով: Սատարել է հայապահպանությանը, նպաստել հայրենադարձությանը:

ՕՀԱՆՅԱՆ Արայիկ Զավենի, **Արզօ** (ծ. 19.2.1965, Երևան), գրաֆիկ, ծաղրանկարիչ, նկարիչ–ձևավորող: Ավարտել է ՀՊՄԻ (1991): 1991–ից համագործակցել է «Մեհյան», «Հայ գրող», «Անահիտ», «Վելաս պրինտ», «Տիգրան Մեծ» հրատարակչությունների հետ: 1991–93–ին աշխատել է «Հայ գրող», 1994–98–ին՝ «Հայք», 1999–ից՝ «Հայկական ժամանակ» թերթերի խմբագրություններում: 2004–ից՝ Հայաստանի ծաղրանկարիչների ընկերակցության հիմնադիրներից և փոխնախագահ:

Նկարազարդել և ձևավորել է Ա. Բաղոյանի «Հետո չես գտնի» (1991), Զ. Արմսթրոնգի «Անմահական ջուր» (1992), Վ. Վարդունու «Լուսաթևիկ» (1992) և «Արևի ձնծաղիկը» (1997), Հ. Սարոյանի «Հուշերի կապույտ հովտում» (1995), Ս. Հովհաննիայանի «Գաղտնիքն էլ է... կին» (1997), Ս. Գալոյանի «Սայթաքում գլաքարի վրայով» (2004), Ա. Ավերչենկոյի և Մ. Զոշչենկոյի «Ծիծաղի արքաները» (2004, ժող.), Ա. Ղազինյանի «XX դարի հարյուր նշանավոր հայերը» (ռուս., 2006), Գ. Գարունի «Իմ Շաղատ» (2014) և այլ գրքեր:

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Արտեմ Սեդրակի (ծ. 6.8.1936, Բաքու), կինոռեժիսոր, պատմաբան: 1938–ից բնակվել է Թեհրանում, 1958–ից՝ Վիեննայում: Ավարտել է Վիեննայի երաժշտ. ակադ–ը (1964): Վիեննայի համալսարանի դ–ր (1990), պրոֆ. (2004): ՀՀ ԳԱԱ պատվ. դ–ր (2001): 1967–69–ին դասավանդել է Վիեննայի արվ–ի ակադ–ում: 1992–94–ին՝ Ավստրիայում ՀՀ մշակույթի նախարարության լիազոր–ներկայացուցիչ: «Ֆրանց Վերֆել» կազմակերպության փոխնախագահ (1995–ից): 1996–ից՝ «Օժանդակություն հայոց պատմությանն ու մշակույթին» ընկերության նախագահ, 2001–ից՝ Հայկ. հարցի գծով ՀՀ ԳԱԱ և Ավստրիայի հայկ. եկեղեց. վարչության ներկայացուցիչ: Գրում է գերմ.:

Լույս են տեսել Օ–ի «Հայաստան. թաքուն ցեղասպանություն» (1989), «1915 թվական. անհերքելի վկայություններ» (1989, հայ.՝ 1997, պարսկ.՝ 1999, անգլ.՝ 2004, ռուս.՝ 2005), «Հայկական հարցը և Գերմանիան ու Ավստրո–Հունգարիան» (2001), «Հայկական ճարտարապետություն» (2004), «Հայաստանի ժայռապատկերներ» (2007, երկուսն էլ՝ համահեղ.), «Հայաստան. 1915» (2007, անգլ.՝ 2011) աշխատությունները: Կազմել է «Ավստրիա–Հայաստան» (հ. 1–4, 1988), «Ավստրիա–Հայաստան 1872–1936» (հ. 1–12, 1995, երկուսն էլ՝ նմանահանություն), «Ավստրո–Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.)» (2004) ժող–ները, «Հայերի ցեղասպանությունը» երկհատորյակի 2–րդ հատորը (1988, բոլորը՝ ըստ Ավստրիայի պետ. արխիվների փաստաթղթերի):




«Օգուտ բժշկութեան» *(1940, Ե., ԱրմՖԱՆ) գրքի փիփղոսաթերթը*



Արայիկ Օհանյան. *Ա. Ավերչենկոյի և Մ. Զոշչենկոյի «Ծիծաղի արքաները» (2004, Ե., «Անահիտ») գրքի կազմը*



Արտեմ Օհանջանյանի *«1915 թվական. անհերքելի վկայություններ» (1997, Ե., ԳԱ հրտ.) գրքի կազմը*




Հովակիմ Օղուլլուխյանի *«Նիւթ բժշկական» (1806, Վնտ.) գրքի տիտղոսաթերթը*

Օ. իր սցենարներով ստեղծել է 70 վավերագր. և գեղ. ֆիլմեր՝ մեծ մասը նվիրված Հայկ. հարցին:

Ֆրիտյոֆ Նանսեն միջազգ. հիմնադրամի ոսկե (2003) և ՀՀ վարչապետի (2005) հուշամեդալներ:

ՕՂՈՒԼԼՈՒԽՅԱՆ Հովակիմ (1746/1749, Տրապիզոն–1815/1818, Կ. Պոլիս), բժիշկ, մանկավարժ: Սովորել է Վիեննայի համալսարանում: Ապրել է Կ. Պոլսում և զբաղվել ժող. բժշկությամբ: «Նիւթ բժշկական» բժշկարան-դեղարանում (լատ., 1785, հայ., 1806, Վնտ., Սբ Ղազարի տպ., բաղկացած է առաջաբանից և 30 գլխից) Օ. շարադրել է իր փորձը բժշկության, բնական բուժիչ միջոցների օգտագործման, բուսաբուժության, սննդի հիգիենայի, առողջապահ-յան շրջակա միջավայրի պահպանման, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, հիվանդությունների ախտորոշման և դեղորայքի օգտագործման հարցեր: Հեղինակ է նաև «Ախտաբանություն» (լատ., հ. 1–2, 1783) աշխատության:

Գրկ. Թորգոմեան Վ., Յովակիմ բժիշկ Օղուլուխեան, «ՀԱ», 1896, № 4, 5: **Մեզպուրեան Ա.,** *Հայ և ծագումով հայ բժիշկներ, մաս 1, Սպահան, 1950:*



Հակոբ Օշական

ՕՇԱԿԱՆ (Քյուֆեճյան) Հակոբ Հովհաննեսի [9.12.1883, Բուրսա (Թուրքիա)–17.2.1948, Հալեպ], գրող, գրականագետ, խմբագիր: Վահե *Օշականի* հայրը: Ավարտել է Բուրսայի Գևորգյան ազգ. վարժարանը (1899), սովորել Արմաշի դպրեվանքում (1899–1900): 1914-ին՝ *«Մեհեան»* (Կոստան *Զարյանի*, Գեղամ *Բարսեղյանի* հետ), 1922-ին՝ *«Բարձրավանք»* հանդեսների խմբագիր:

Լույս են տեսել Օ-ի «Խոնարհները» (1920, ԿՊ, «Կիլիկիա» տպ.), «Երբ պատանի են» (1925, ԿՊ, Հովհաննես Սեթյանի տպ.) պատմվածքների, «Խորհուրդներու մեհեանը» (1922, ԿՊ, «Լուսաղբյուր» տպ.) հեքիաթների, արձակ բանաստեղծությունների, «Երբ մեռնիլ գիտենք» (1944), «Օրն օրերուն» (1946), «Երեք թատերախաղեր» (1991) պիեսների ժող-ները, «Մնացորդաց» (հ. 1–3, 1932–34, 1988, 2000), «Սահակ Պարգեւեան» (1985), «Սյուլէյման Էֆէնտի» (1985) վեպերը, «Համապատկեր արևմտահայ գրականութեան» (հ. 1–10, 1945–82), «Սփիւռքը եւ իրաւ բանաստեղծութիւնը» (1945), «Վկայութիւն մը» (1946), «Արեւելահայ բանասիրութիւնը եւ Էջմիածին» (1948), «Երբ հինները կը կարդանք» (1983), «Մեր մատենագիրները» (1987), «Արեւելահայ դէմքեր» (1999), «Զուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեանց» (1999) գրականագիտ., մատենագիտ-բանասիր. աշխատությունները, «Երկերը» (1979, 1998), «Նամականին» (1983): Կազմել է «Հայ գրականութիւն» (1942) դասագիրքը:

Երկ. Հարիւր մէկ տարուան, Ե., 2000:

Գրկ. **Տասնապետեան Շ.,** *Յակոբ Օշականի վէպը, Բ., 1994:* **Տէր-Խաչատուրեան Ա.,** *Վաւերաթուղթեր եւ Հ. Օշականի արխիւ, Անթիլիաս [ա. թ.]:* **Աղաբեկյան Կ.,** *Հակոբ Օշական, Ե., 2010:* **Աբուսեֆյան Մ.,** *Հակոբ Օշականի «Հարյուր մեկ տարվան» առագրությունը, Ե., 2011:*



Հ. Օշականի *«Երկեր»-ի (1979, Ե., «Սովետական գրող») կազմը*

ՕՇԱԿԱՆ Վահե Հակոբի [9.10.1922, Ֆիլիպե (այժմ՝ Պլովդիվ՝ Բուլղարիայում)–4.6.2000, Լոս Անջելես], գրող, խմբագիր, մանկավարժ: Հակոբ *Օշականի* որդին: Ավարտել է Կիպրոսի Մելգոնյան կրթ. հաստատությունը (1933), Երուսաղեմի անգլ. Սեն Ջորջ քոլեջը (1939), Սորբոնի համալսարանը (1951): Դասավանդել է Բեյրութի ամերիկյան միջազգ. քոլեջում (1960–75), միաժամանակ՝ Ամերիկյան համալսարանում (1962–75) և համալսարան. քոլեջում (1969–71), Հայկազյան (1972–75-ին՝ հայագիտ. բաժնի տնօրեն) քոլեջում, Փենսիլվանիայի (1976–82, Ֆիլադելֆիա), Բերկլիի (1985–88, Կալիֆոռնիա) համալսարաններում: *«Բագին»* ամսաթերթի խմբագրակազմի անդամ: 1987–2000-ին՝ *«Ռաֆթ. Ջրռնդլ օֆ Արմինիէն Փոեթրի ընդ Քրիթիսիզմ»* (անգլ.) գրական, քննադատ. տարեգրքի հիմնադիր-խմբագիր:

Լույս են տեսել Օ-ի «Պատուհան» (1956), «Քաղաք» (1963), «Քառուղի» (1971), «Ահազանգ» (1980), «Խուճապ» (1983), «Արուարձաններ» (1991) բանաստեղծությունների, «Փախստականը» (1987), «Թակարդին շուրջ» (1988) պատմվածքների ժող-ները, «Անգլիական ազդեցությունը արևմտահայ գրականության վրա» (անգլ., 1982) մենագրությունը:

Խմբագրել է Ք. Միքայելյանի «Ամբողջական երկեր» (1990) և Հ. Օշականի «Երեք թատերախաղեր» (1991) ժող-ները:

Երկ. Հատընտիր, Բ., 1994: Մերոնդներ, Բ., 1995: Ինքնութիւն, Անթիլիաս, 1996:

«ՕՇԱԿԱՆ», գրական-գեղ. պատկերազարդ կիսամսյա հանդես: Լույս է տեսել 1920–21-ին Փարիզում (7 համար): Տնօրեն-խմբագիր՝ Արտաշես Հովհաննիսյան: Տպագրել է Մ. Չերազի, Ա. Չոպանյանի, Ա. Իսահակյանի, Ռ. Զարդարյանի և ուր. գործերից, նաև գրախոսություններ, թատրոնին ու կերպարվ-ին նվիրված նյութեր:

«ՕՇԱԿԱՆ», կրոն., ազգ., մշակութ. պարբերաթերթ: Հայ եկեղեցու Բերիո թեմի ազգ. առաջնորդարանի հրատ.: Լույս է տեսել 1981–89-ին Հալեպում: Խմբագիր՝ Խաչիկ Շահինյան: Լուսաբանել է թեմի առօրյան, սիրիահայության կյանքը, անդրադարձել է հայ առաքել. եկեղեցու, ինչպես նաև ՀՀ-ում, ԼՂՀ-ում, Սփյուռքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», գիտամեթոդ. հանդես: Հիմնադիր՝ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգ. ինստ.: Լույս է տեսնում 1999-ից Երևանում: Խմբագիր՝ Ելենա Երզնկյան: Տպագրում է հոդվածներ (հայ., ռուս., անգլ. ևն) օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերի վերաբերյալ:

ՕՏՅԱՆ Երվանդ Խաչիկի (19.9.1869, Կ. Պոլիս–3.10.1926, Կահիրե, թաղված է Սարմինա գերեզմանատանը), գրող-երգիծաբան, լրագրող, խմբագիր: Սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում: Արփիար ***Արփիարյանի*** հրավերով 1892–95-ին եղել է ***«Հայրենիք»*** օրաթերթի օգնական-խմբագիր, 1896-ից՝ խմբագիր: Թուրք. իշխանությունների հետապնդումներից խուսափելով՝ 1896-ի օգոստ-ին գաղտնի հեռացել է Կ. Պոլսից: 1896–97-ին՝ «Հաւելուած միութեան» (Աթենք), 1908-ին՝ ***«Արև»*** (Ալեքսանդրիա) պարբ-ների խմբագիր: Երիտթուրք. հեղաշրջումից (1908) հետո վերադարձել է: 1911–12-ին՝ ***«Արեւելք»*** (Կ. Պոլիս) պարբ-ի խմբագիր: Մեծ եղեռնի ժամանակ աքսորվել է Դեյր էզ Զոր: Դիպվածով փրկվելով՝ 1918-ին վերադարձել է Կ. Պոլիս, 1922-ին տեղափոխվել է Բուխարեստ, 1924-ին՝ Տրիպոլի (Լիբանան), 1925-ին՝ Կահիրե:

Օ. հրատարակել և խմբագրել է նաև մի շարք երգիծ. պարբ-ներ. Ալեքսանդրիայում 1901–08-ին՝ ***«Ազատ խօսք»***, 1903–05-ին՝ ***«Ազատ բեմ»***, 1905-ին՝ «Կրակ», Կ. Պոլսում 1909-ին՝ «Խարազան», 1910-ին՝ ***«Կատափնապ»***, 1912-ին՝ «Սեւ կատու», 1913–14-ին՝ ***«Մանանայ»***, 1919–20-ին՝ «Իգնատ աղա», 1921–22-ին՝ «Երգիծական տարեցոյց»:

Լույս են տեսել Օ-ի «Յեղափոխութեան մակաբոյծները» (1898–99), «Պրոպագանդիստը» (1901), «Ճուղուպրիստ եւ ընկ.» (1910), «Պատերազմ եւ խաղաղութիւն» (1911), «Ընկեր Բ. Փանջունի» («Առաքելութիւն մը ի Ծապլուար») (1911, ԿՊ, Նշան Պերպերյանի տպ., 1989, Ե.), «Ընկեր Բ. Փանջունի Վասպուրականի մէջ» և «Իմ աշխարհայեացքները» (1914, ԿՊ, նույն տպ.,), «Ընկեր Բ. Փանջունի տարագրութեան մէջ» (1923) պատմվածքները, վիպակները, երգիծավեպերը, «Վաշխառուն» (1893), «Կաղանդի վիպակ» (1895), «Բարի դաիհմը» (1899), «Համբարձում աղա» (1904), «Ոսկեմոլը» (1905), «Ազգային բարերարը» (1905), «Միքէի սիրարկածը» (1906), «Վաճառականի մը նամակները կամ Կատարեալ մարդ ըլլալու արուեստը» (1914), «Միջնորդ տէր պապան» (1895–1920), «Գործի մարդիկ» (1900–01), «Ընտանիք, պատիւ, բարոյական» (1910), «Ապտիւլ Համիտ եւ Շերլօք Հոլմս» (1911, ԿՊ, Ռոգոս Սագայանի տպ.), «Սալիհա հանըմ կամ Բանակը բռնաւորին դէմ» (1912), «Ես դրսեցի չեմ առներ» (1913), «Թաղականին կնիկը» (1915), «Թիւ 17 խաֆիեն (ժամանակակից պատմական վեպ)» (գիրք 1–3, 2000–01, Ե.) վեպերը, «Անիծեալ տարիներ. 1914–1919: Անձնական յիշատակներ» (2004, Ե., 2005, 2010, Թեհրան) հուշագրությունը: Հրատարակվել են նաև Օ-ի «Երկերի ժողովածուն» (1935, հ. 1–6, 1960–63), «Ընտիր երկերը» (1988), «Նամակները» (1999): Թարգմանել է Լ. Տոլստոյի, Է. Զոլայի, Ֆ. Դոստոևսկու, Մ. Գորկու, Մ. Տվենի և ուր. ստեղծագործություններից:

Գրկ. **Մակարյան Ա.**, *Երվանդ Օտյան, Ե., 1965:* **Նույնի**, *Երվանդ Օտյանի կյանքը և հրապարակախոսական գործունեությունը, Ե., 1977:* **Մանուկյան Ս.**, *Երվանդ Օտյան: Կյանքը, հրապարակախոսությունը, գեղարվեստական վաստակը, Ե., 1997:* **Էլոյան Ռ.**, *Երվանդ Օտյանի քաղաքական երգիծանքը, Ե., 1999:* **Մուրադյան Ս.**, *Երվանդ Օտյան: Կյանքը և գործը, Ե., 2012:*



Վահե Օշականի *«Հայրընտիր»-ի (1994, Բեյրութ) կազմը*



«Օշական», *1981–89, Հալեպ (№ 3–4, 1989)*




Երվանդ Օտյան



Ե. Օտյանի *«Ընկ. Բ. Փանջունի» (1989, Ե., «Հայաստան») գրքի կազմը*


Օրակարգ
Տնտեսության խոշորացումն՝ հոսքային ու մաքսային

«Օրակարգ», *2011-ից, Երևան*



Հովսեփ Օրբելի



Հ. Օրբելու *«Անույշ աւերակները» (1911, Վաղ-պատ) գրքի կազմը*

«ՕՎԱՍԻՍ» («Օազիս»), գրական, գիտ. ամսաթերթ: Լույս է տեսել 1928–29-ին Նիկոզիայում: Խմբագիրներ՝ Սամուել Թումայան, Տիրան Լյուլեճյան: Արծարծել է հայ-ի անաղարտության, ժող. ավանդույթների ու մշակութ. արժեքների պահպանման հարցեր, ներկայացրել է հայ գաղթավայրերի և հայրենիքի կյանքը:

«ՕՐԱԳԻՐ Կ. ՊՈԼՍՈՅ», քաղ., ազգ-առևտր. օրաթերթ: Լույս է տեսել 1868–78-ին Կ. Պոլսում՝ հայ. և հայատառ թուրք. (1868-ին՝ «Օրագիր», 1876-ին՝ «Նորագիր», 1877–78-ին՝ «Նոր դար»): Խմբագիր-տնօրեններ՝ Օգսեն *Խոճասարյան*, Հակոբ Խանճյան: *«Ծիլն Աւարայրի»* (1866–67) և «Օրագիր Ծիլն Աւարայրի» (1868, երկուսն էլ՝ խմբագիր՝ Մարկոս *Աղաբեկյան*) թերթերի շարունակությունն է: Ներկայացրել է արևմտահայության ծանր կացությունը, նրա վիճակի բարվոքումը կապել թուրք. կառավարության բարենորոգիչ ձեռնարկների և երկրագործ. ընկերությունների գործունեության հետ: Անդրադարձել է արևմտահայերի սահմանադր. ժողովների ընթացքին, որի շուրջ բանավիճել է «Մանզումէի Էֆքեարի», «Մեղուի», «Թատրոնի» հետ: Պաշտպանել է Թուրքիայում սահմանադր. միապետություն հաստատելու, ժողովուրդներին սահմանադր. ազատություններ շնորհելու գաղափարը:

«ՕՐԱԿԱՐԳ», տնտ. օրաթերթ: Հիմնադիր-հրատարակիչ՝ «Սիվիլիթաս» հիմնադրամ: Լույս է տեսնում 2011-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Կարեն Հարությունյան: Լուսաբանում է ՀՀ տնտեսության զարգացմանն ու նրա հիմնահարցերին վերաբերող խնդիրներ, անդրադառնում է ՀՀ-ին և հայությանն առնչվող քաղ., սոցիալ., մշակութ. հարցերի:

ՕՐԲԵԼԻ Հովսեփ Աբգարի [8.3.1887, Քութայիս (Վրաստան)–2.2.1961, Լենինգրադ], արևելագետ, հնագետ, խմբագիր, հրատարակիչ, թարգմանիչ: ԽՍՀՄ ԳԱ ակադ. (1935), ՀԽՍՀ ԳԱ ակադ-ի առաջին նախագահը (1943–47): Ս. Պետերբուրգի Ռուս. հնագիտ. ընկերության (1912), Լոնդոնի հնագիտ. ընկերության պատվ. (1944), Իրանի ԳԱ թղթ. (1945) անդամ: Ավարտել է Թիֆլիսի արական 3-րդ գիմնազիան (1904), Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիր. ֆակ-ը (1911): Ուսանող. տարիներից զբաղվել է գիտ. գործունեությամբ, Բրոկհաուզի և Եֆրոնի նոր հանրագիտ. բառարանի համար գրել է հոդվածներ: 1916-ին Վանում պեղումների ժամանակ հայտնաբերել է Մարդուրի Բ-ի մեծածավալ սեպագիր արձանագրությունը: Մասնակցել է Ռուսաստանի նյութ. մշակույթի պատմության (հետագայում՝ պետ.) ակադ-ի հիմնադրմանը, 1919-ին ակադ-ի Հայաստանի և Վրաստանի հնագիտության ու արվ-ի բաժնի վարիչ, 1920-ից՝ ակադ-ի հրատարակչության, 1921–22-ին՝ տպարանի, 1934–51-ին՝ Էրմիտաժի տնօրեն: 1937–38-ին, միաժամանակ՝ ԽՍՀՄ ԳԱ նյութ. մշակույթի պատմության ինստ-ի տնօրեն, 1938-ին՝ ԱրմՖԱՆ-ի նախագահության նախագահ, 1955–56-ին՝ Լենինգրադի պետ. համալսարանի արևելագիտ-յան ֆակ-ի դեկան, 1956-ին, միաժամանակ՝ Մերձ. և Միջին Արևելքի պատմության ամբիոնի վարիչ: 1956-ին հիմնադրել է և ցկյանս ղեկավարել ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտ-յան ինստ-ի Լենինգրադի բաժանմունքը:

Օ. ուսումնասիրել և ռուս. է թարգմանել «Միջնադարյան Հայաստանի առակները» (1956), Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» (1971), Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու երկերը (մեծ մասն անտիպ է):

Լույս են տեսել Օ-ու «Անույշ աւերակները» (1911, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ.), «Սասնայան մետաղը: Գեղարվեստական առարկաներ ոսկուց, արծաթից և բրոնզից» (ռուս., 1935), «Դիվան հայ վիմագրության» (պր. 1, 1966), «Հայագիտական հետազոտություններ» (պր. 1, 1974), «Անի» (2011) աշխատությունները, «Գիտական ուսումնասիրություններ» (2008) ժող-ը: Խմբագրել է «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի համահավաք բնագիրը և ռուս. թարգմանությունը (1939), հրատարակել «Հայկական հերոսական էպոսը» (ռուս. և հայ., 1956) ուսումնասիրությունը: Կազմել է Անիի և շրջակայքի ճարտ. ու հնագիտ. հուշարձանների ուղեցույց: Զբաղվել է հին և միջնադարյան իրան.

արվ–ի պատմությամբ, Կամիլլա Տրևերի հետ ուսումնասիրել է Էրմիտաժում պահվող Սասանյան ժամանակաշրջանի մետաղե անոթները:

Երկ. Избр. труды, Е., 1963; Избр. труды, т. 1–2, М.–Л., 1968; Из истории культуры и искусства Армении X–XIII вв., М., 1968; Фольклор и быт Мокса, М., 1982; Избр. труды, Е., 2002.

Գրկ. **Արզումանյան Ա.**, *Օրբելի եղբայրներ, Ե., 1986:* **Յուզբաշյան Կ.**, *Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, Ե., 1987: Էջեր Օրբելիների ընտանիքի կյանքից: Նամակներ 1894–1931 (կազմ.՝ Մ. Բունիաթյան, Գ. Մկրտչյան), Ե., 2013:* **Иосиф Абгарович Орбели, Е., 1957;** **Мегралидзе И.**, *Иосиф Орбели, Тб., 1987 (Материалы к библиографии ученых СССР).*

«ՕՐԵՐ», ազգ., քաղ., մշակութ. համաեվրոպ. երկամսյա հանդես: Հրատարակիչ՝ Կովկաս–Արևելյան Եվրոպա լրատվ. կենտրոն: Լույս է տեսնում 1999–ից Պրահայում՝ հայ.: Հիմնադիր–խմբագիր՝ Հակոբ *Ասատրյան*: Անդրադառնում է չեխահայության ու Եվրոպայի մյուս երկրների հայկ. համայնքների առօրյային, ՀՀ–ի, ԼՂՀ–ի հաս–քաղ., կրթամշակութ. կյանքին, միջազգ. կարևոր իրադարձություններին, հետևում է Հայոց ցեղասպանության միջազգ. ճանաչման և Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներին: Ծանոթացնում է հայկ. մշակութ. ժառանգությանը: Հրատարակում է բացառիկ համարներ: Տարածվում է Եվրոպայում և ԱՊՀ երկրներում:



«Օրեր», *1999–ից, Պրահա (№ 9, 2011)*

«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», գիտագործն. իրավաբ. երկամսյա (մինչև 2000–ը՝ եռամսյա) հանդես: Հիմնադիր՝ ՀՀ գլխ. դատախազություն: Լույս է տեսնում 1997–ից Երևանում: Գլխ. խմբագիրներ՝ Գուրգեն Ամբարյան, Թամարա Շաքարյան (2014–ից): Տպագրում է դատախազ. գործունեության տես. և գործն. խնդիրների լուսաբանմանը, իրավագիտ–յան տարբեր ճյուղերի վերաբերող գիտ. և վերլուծ. հոդվածներ, բանավիճային նյութեր, փաստաթղթեր:



«Օրինականություն», *1997–ից, Երևան (№ 83, 2014)*

ՕՐՄԱՆՅԱՆ Մաղաքիա [Պողոս, 11(23).2.1841, Կ. Պոլիս–6(19).11.1918, Կ. Պոլիսի, հոգևոր գործիչ, պատմաբան, Կ. Պոլսի հայոց պատրիարք (1896–1908): Իմաստասիրության (1860), աստվածաբանության (1865), փիլ–յան, եկեղեց. իրավագիտ–յան (1868) մագիստրոս: Սովորել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում, 1851–ից՝ Հռոմի Անտոնյանց վանքում, 1858–ից՝ Վատիկանի Սբ Ապոլինար դպրոցում, ընդունել է կաթոլիկություն: Տիրապետել է իտալ–ին, ֆրանս–ին, հուն–ին, լատ–ին, արաբ–ին, թուրք–ին: Խուսափելով պապականության հալածանքներից՝ Անտոնյանց միաբանության մի խումբ անդամների հետ 1870–ին փախել է Կ. Պոլիս: Այդ առիթով գրել է «Արևելյան հայ–կաթողիկե հայերը» (1870), «Ռևերսուրուս կամ Հայք և պապություն» (1872, երկուսն էլ՝ իտալ.), «Արևելյան կաթոլիկների կրոնական ազատությունը և քաղաքացիական իրավունքները» (1872), «Վատիկան և Հայք» (երկուսն էլ՝ ֆրանս., 1873) երկերը, որոնք արգելվել են Հռոմի պապի կոնդակով:

Օ. 1877–ին Կ. Պոլսում հրաժարվել է կաթոլիկությունից, 1879–ին օծվել Հայ առաքել. եկեղեցու ծայրագույն վարդապետ: 1880–ին ընտրվել է Կարինի հոգևոր առաջնորդ, 1886–ին Էջմիածնում ձեռնադրվել եպիսկոպոս: 1888–ին Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդել է աստվածաբանություն: 1889–ին նշանակվել է իր իսկ հիմնադրած Արմաշի դպրեվանքի վերատեսուչ: Օ. պատրիարքության տարիներին վարել է զգույշ և պահպանող. քաղաքականություն՝ առաջացնելով Կ. Պոլսի ազգ. որոշ շրջանակների ու Երուսաղեմի դժգոհությունը, և հանիրավի ամբաստանվել: 1908–ի հուլիսի 16–ին Կ. Պոլսում կազմակերպված բազմամարդ ցույցի մասնակիցների մի խումբ ներխուժել է պատրիարքարան և պահանջել Օ–ի պաշտոնանկությունը:

1913–ի հունվ–ին Կ. Պոլսի Ազգ. ժողովը քննարկել է Օ–ի դեմ ներկայացված ամբաստանությունները և արդարացրել նրան: 1914–ին Ազգ. ժողովի հանձնարարությամբ նա մեկնել է Երուսաղեմ՝ պատրիարքության վեճերը հարթելու: Հաստատվելով Երուսաղեմի Սբ




Մ. Օրմանյանի *«Ազգապատում» (հ. Դ, 2002, Էջմիածին) գրքի կազմը*



Մաղաքիա Օրմանյան



Անաւրոլի Պապայան. «Շարժում» (1971, օֆորտ)



Օֆսեթ տպագրության *տեխնոլոգիական սխեման.*
1. խոնավացնող գլանիկներ
2. ներկող գլանիկներ
3. ջրի փարողություն
4. տպաձևով գլան
5. օֆսեթ գլան
6. թուղթ
7. տպագրող գլան

Հակոբյանց վանքում՝ շարունակել է գրական-պատմագիտ. գործունեությունը: 1918-ին վերադարձել է Կ. Պոլիս:

Լույս են տեսել Օ-ի «Աթոռ Հայաստանեայց» (1886, Վաղ-պատ, Սբ Էջմիածնի տպ., 1972), «Ազգապատում» (մաս 1–3, 1912–27, ԿՊ, Վաիրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան տպ., 1959–61, Բ., 2001, Անթիլիաս, հ. Ա-Դ, 2001–02, Էջմիածին, հարուստ նյութ է պարունակում ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու, այլև հայ ժողովրդի քաղ. և մշակույթի պատմության վերաբերյալ), «Համապատում» (1911, ԿՊ, Վ. և Հ. Տեր-Ներսեսյան տպ., 1953, 1983, 1997, Անթիլիաս, 2002, Էջմիածին, ծառայել է իբրև դասագիրք աստվածաբան. ուս. հաստատությունների համար), «Հայոց եկեղեցին եւ իւր պատմութիւնը...» (1911, ԿՊ, ա. տպ., 1949, Բուենոս Այրես, 1952, Անթիլիաս, 1960, Բ., 1993, Ե., ֆրանս.՝ 1910, անգլ.՝ 1912, ռուս.՝ 1913), «Խոհք եւ խօսք» (1929), «Հայկական Երուսաղեմ» (1931, երկուսն էլ՝ Երուսաղեմ, Սբ Հակոբյանց տպ.) աշխատությունները, «Ծիսական բառարանը» (1957, 1979, Անթիլիաս, 1992, Ե.):

Գրկ. **Պոզապալեան Հ.**, *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի համառօտ կենսագրութիւնը, «Էջմիածին», 1961, № 5:* **Սիրունի Հ.**, *Օրմանեան եւ իր ժամանակը, «Էջմիածին», 1961, № 5–9, 11–12, 1962, № 1–5: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896–1908), «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», հ. ԺԵ, Ե., 2007:* **Սարվազյան Լ.**, *Մաղաքիա Օրմանյան (Ազգային և փիլիսոփայական հայեցակարգը), Ե., 2013:*

ՕՋՐՈՅԱՆՑ Դավիթ Գրիգորի (1874, Թիֆլիս–31.12.1943, Լենինգրադ), նկարիչ: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1893), Ս. Պետերբուրգի գեղարվ-ի ակադ-ին կից բարձրագույն գեղարվ-ի ուսումնարանը (1909, Ի. Ռեպինի և Պ. Չիստյակովի արվեստանոցները), նույն ուսումնարանի մանկավարժ. դասընթացները (1903), միաժամանակ՝ Հնագիտ-յան ինստ-ը (1904): 1892-ից պատկերազարդել է հայկ. («Տարազ», «Աղբյուր»), վրաց. («Կվալի», «Ձեջիլի») և ռուս. ամսագրեր Թիֆլիսում և Ս. Պետերբուրգում՝ Խրյուսսի կեղծանունով: Նկարազարդել և հրատարակել է *«Սափրիչ»* (1906–07, Ս. Պետերբուրգ) երգիծ. ամսագիրը: Ստեղծել է նկարիչների ընկերություններ (1908, 1922), կազմակերպել ցուցահանդեսներ Պյատիգորսկում, Բաքվում, Լոնդոնում (1910) և այլուր, Օդեսայում հիմնադրել է Գեղարվ-ի ակադ-ը (1921, եղել է ռեկտորը):

ՕՖՈՐՏ (ֆրանս.՝ eau forte, բառացի՝ թունդ ջուր, այստեղ՝ ազոտական թթու), *մետաղափորագրության* եղանակներից, ձևավորվել է XVI դ-ում, հաջորդել է հատիչային *փորագրությանը:* Օ-ի *տպաձև* պատրաստելու համար մետաղ. թիթեղի մակերևույթը լաքապատում են, վրան հատուկ գործիքով խազագծում փորագրվող պատկերն ու մշակում ազոտական թթվի լուծույթով: Խազագծված պատկերը թթվով խածատվում, փորագրվում է մետաղի մակերևույթին: Փորագրման խորությունները կարգավորվում են 2–3 անգամ մշակելով:

Առաջին Օ-ի (1501–07) հեղինակը համարվում է աուգսբուրգցի Դանիել Հոպֆերը, որին հաջորդել են շվեյցարացի փորագրիչ Ու. Գրաֆի (1513) և գերմանացի նկարիչ Ա. Դյուրերի (1515–18) Օ-ները:

Հայտնի են Օ-ի տեխնիկայի մի քանի տարատեսակներ՝ աքվատինտա, փափուկ լաք, լավիս ևն:

Հայ նկարիչներից հայտնի են Էդգար *Շահինի*, Տիգրան *Պոլադի, Ժանանեմի*, Մհեր *Աբեղյանի*, Էդուարդ Սարգսյանի, Անատոլի Պապանյանի, Սամվել Համբարձումյանի, Հրաչյա *Ռոսիկյանի* և ուր. Օ-ները:

ՕՖՍԵԹ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ (< անգլ. off -set – առանց տպաձևի հետ շփման), *հարթ տպագրության* եղանակ, որտեղ տպաձևից ներկանյութի փոխանցումը տպագրանյութին կատարվում է ոչ թե անմիջապես, այլ միջնորդ օֆսեթ գլանի միջոցով: Ի տարբերություն տպագրության մյուս եղանակների՝ տպաձևի պատկերը պատրաստվում է ոչ թե հայելային, այլ ուղիղ:

Ֆ

Ֆ, ժամանակակից հայ. այբուբենի վերջինն՝ 39-րդ տառը, անվանումը՝ «ֆե»: Հայոց այբուբեն է ներառվել XI դ-ում: Գրատեսակներում չի փոփոխվել (տես նկ.): Մինչև XI դ., որոշ դեպքերում՝ մինչև XIX դ., փոխառություններում ֆ ինչույթը փոխարինվել է փ-ով (փայտոն, Փիլիպոս ևն): Ժամանակակից մի քանի բարբառների (մասնավորապես՝ Ղարաբաղի) ինչյուն. համակարգերում ֆ տառը բացակայում է (ֆուտբոլ–փուտբոլ, ֆիզիկա–փիզիկա ևն): Թվային արժեք չունի:


«ՖԱՐՄԱ», գիտագործն. եռամսյա հանդես: Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միության հրատ.: Լույս է տեսնում 2011-ից Երևանում: Գլխ. խմբագիր՝ Արամ Ղազարյան, պատ. խմբագիր՝ Պետրոս Ղազարյան: Տպագրում է դեղագործության, գործն. առողջապահության և բժշկագիտ-յան այլ ոլորտների վերաբերյալ գիտ. և գործն. ուսումնասիրություններ՝ հայ., ռուս., անգլ. (ամփոփումներով): Անդրադառնում է նաև առողջապահ. և դեղագործ. նորագույն հայտնագործություններին:


ՖԱՐՄԱՆՅԱՆ Տիգրան Սիմոնի [ծ. 16.5.1953, գ. Դամալա (Վրաստանի Ասպինձայի շրջան)], լրագրող, խմբագիր: Ավարտել է ԵՊՀ (1975): 1976–87-ին թղթակցել է «Երեկոյան Երևան» թերթին. 1986–87-ին՝ բաժնի վարիչ, 1987–90-ին՝ ՀԿԿ Երքաղկոմիտեի գաղափարախոս. բաժնի հրահանգիչ, 1990–95-ին՝ *«Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթի մեկնաբան, գլխ. խմբագրի տեղակալ, «Փետրվար» երիտասարդ. հավելվածի խմբագիր, 1995–2001-ին՝ *«02»* շաբաթաթերթի, 2001-ից՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխ. խմբագիր:

ՀԺՄ՝ «Ոսկե գրիչ» մրց. (1982):

ՖԱՔՍԻՄԻԼԵ (<լատ. fac simile, բառացի՝ արա նմանը), ձեռագրի, ստորագրության կամ պատկերի ճշգրիտ ընդօրինակությունը կամ վերարտադրությունը լուսամեխ. եղանակով: Ֆ-ով հիմնականում վերատպագրվում են անցյալի արժեքավոր հրատ-ները (կոչվում են ֆաքսիմիլային)՝ պահպանելով նրանց չափերը, թղթի տեսակն ու գույնը, տպագրության եղանակն ու կազմը:

ՖԵԼԵՔՅԱՆ Հարություն Հայկի (13.3.1931, Երևան–7.12.2005, Երևան), գրականագետ, հրապարակախոս, խմբագիր, հրատարակիչ: Պատմ. գիտ. դ-ր (1970), պրոֆ. (1971): Վաստ. ժուռնալիստ (1981): Ավարտել է ԵՊՀ միջազգ. հարաբերությունների ֆակ-ը (1953): 1957-ին աշխատել է «Սովետական գրականություն» ամսագրի, 1957–59-ին՝ «Սովետական Հայաստան» օրաթերթի, 1959–61-ին՝ «Գրական թերթի», 1961–65-ին՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրություններում: 1965–70-ին՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստ-ի ավագ






«Ֆարմա», *2011-ից, Երևան (№ 7, 2013)*



Հարություն Ֆելեքյան



Ֆրեդերիկ Ֆեյդիի
«Արեւմտահայերէնի ձեռնարկ» (2010, Հալեպ) գրքի կազմը



Պաուլ Ֆետտերի
«Հայկական աշխատասիրութիւնք...» (1895, Վնն.) գրքի տիտղոսաթերթը

գիտաշխատող, 1970–81-ին՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, 1981–91-ին՝ *«Սովետական գրող»* հրատարակչության տնօրեն, միաժամանակ, 1967–70-ին՝ *«Բանբեր Երևանի համալսարանի»* հանդեսի պատ. քարտուղար, 1970–77-ին՝ գլխ. խմբագրի տեղակալ, 1978–86-ին՝ գլխ. խմբագիր: 1991–2002-ին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության պետ:

Լույս են տեսել Ֆ-ի ««Պրավդա»-ի տրադիցիաներով» (1963), «Ալեքսանդր Ծատուրյան» (1965), «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում» (1970), «Հրապարակախոսություն և գրականություն» (1975) աշխատությունները: Թարգմանել է Ա. Գերցենի «Եղելություն և խոհեր» եռագրության 1-ին հատորը (1981), «Բելոռուսական ժողովրդական հեքիաթները» (1980):

ՖԵՅԴԻ (Feydit) Ֆրեդերիկ Արման (15.4.1908, Փարիզ–1993, Փարիզ), ֆրանսիացի հայագետ: Մխիթարյան միաբանության հայկ. ճեմարանի անդամ (1937): Բանասիր. գիտ. դ-ր (1973), պրոֆ.: Աշակերտել է Ֆրեդերիկ *Մակլերին*, Լուի *Մարիեսին*, Բարձրագույն ուսմանց դպրոցում՝ Անտուան *Մեյեին*: Ավարտել է Սորբոնի համալսարանը (1941): 1949–77-ին՝ Արևելյան կենդանի լեզուների դպրոցի և Սորբոնի համալսարանի արևելյան լեզուների ու քաղաքակրթությունների ինստ-ի հայագիտ-յան ամբիոնի վարիչ: Տիրապետել է արևմտահայ-ին:

Լույս են տեսել Ֆ-ի «Հայոց լեզվի քերականություն. արևմտյան խոսվածք» (1935), «Հայոց լեզվի ձեռնարկ (արդի արևմտահայերեն)» (1948), «Հայ ժողովրդական դյուցազնավեպը» (1957), «Խոհեր ս. Մեսրոպի այբուբենի մասին...» (1964, 2-րդ վերամշ. հրտ.՝ 1982), «Դասական հայերենի բայական համակարգը» (1969), «Դասական հայերենի հոլովական համակարգը» (1976) աշխատությունները: Հայ. հրատարակվել են «Հեթում պատմիչ, հեղինակ ««Ծաղիկ պատմութեանց» Արեւելեան աշխարհի» գրքին» (1939, «Մնահիտ», Փ.) աշխատությունը, «Արևմտահայերէն ձեռնարկ» (2010, Հալեպ, «Կիլիկիա» տպ.) դասագիրքը: Ուշագրավ են Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց»-ին նվիրված ուսումնասիրությունները: Անդրադարձել է նաև Հ. Պարոնյանի, Ե. Օտյանի, Դ. Վարուժանի, Ա. Չոպանյանի գրական գործունեությանը: Ֆրանս. է թարգմանել «Սասունցի Դավիթ» էպոսի (1964) համահավաք ընագիրը, Ե. Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» երգիծավեպի առաջին գիրքը («Ի Ծապլվար», 1961), գրել է «Քրիստոնեական Հայաստանի հմայիլները» (1983) և հայագիտ. բազմաթիվ հոդվածներ, թղթակցել «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Զուարթնոց» (Փարիզ) պարբ-ներին: Բազմիցս այցելել է Հայաստան, կարդացել գիտ. զեկուցումներ (հայ.), մասնակցել է հայերենագիտ. միջազգ. գիտաժողովին (1982, Երևան):

Երկ. La comédie et la satire en Arménie: Baronian et Odian, Venise, 1960; L'état de la langue arménienne au V^e siècle, Venise, 1967.

Գրկ. Դոլուխանյան Ա., Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Ե., 2008:

ՖԵՏՏԵՐ (Vetter) Պաուլ [14.6.1850, գ. Օբերդետինգեն (Գերմանիա)–21.9.1906, Թյուբինգեն], գերմանացի հայագետ: Թյուբինգենի համալսարանի պրոֆ. (1890): Հայկ. իրականության վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում ամփոփված են «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի» (թարգմ. և ծնթգր.՝ Հ. Տաշյանի, 1895, Վնն., Մխիթարյան տպ., «Ազգային մատենադարան» մատենաշար, հ. 17) ժող-ում:

Ֆ. ուսումնասիրել է Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը, հայոց այբուբենի ստեղծման հանգամանքները, անդրադարձել Մովսես Խորենացու գործունեության ժամանակին և նրա «Պատմություն Հայոց»-ին: Հոդվածներ է գրել Կորյունի, Եզնիկ Կողբացու, Ներսես Շնորհալու ստեղծագործությունների մասին:

«ՖԵՐՄԵՐ», գյուղատնտ. ամսաթերթ: Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի հրատ.: Լույս է տեսնում 2000-ից Իջևանում: Խմբագիր՝ Վահան Կարապետյան: Անդրադառնում է մարզի գյուղատնտ. աշխատանքներին, ֆերմերային տնտեսությունների առօրյային ու խնդիրներին, տպագրում է խորհրդատվ., ուսուցող., մասնագիտ. հոդվածներ:

«ՖԻԼՄ», ՀԽՍՀ պետկինոյի և կինեմատոգրաֆիստների միության տանօրյա պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1969–90-ին Երևանում: Խմբագիր՝ Ռոբերտ ***Մաթոսյան***: «Էկրանի նորություններ» (1957–67, Երևան, խմբագիրներ՝ Հրանուշ Սարգսյան, Լաերտ Մովսիսյան) տեղեկատվ., գովազդային ամսագրի շարունակությունն էր: Ներկայացրել է հայ և խորհրդ. կինոյի հաջողությունները համամիութ. ու միջազգ. փառատոներում, հայ նշանավոր կինոգործիչներին, նրանց տեսակետները ժամանակակից կինոյի և նրա զարգացման հեռանկարների մասին:



«Ֆերմեր», *2000-ից, Իջևան*

ՖԻՆԿ (Finck) Ֆրանց Նիկոլաուս [26.6.1867, ք. Կրեֆելդ (Գերմանիա)–3.5.1910, Բեռլին], գերմանացի լեզվաբան, հայագետ: Բանասիր. գիտ. դ-ր (1895), պրոֆ. (1907):

Ֆ. տիրապետել է գրաբարին և աշխարհաբարին, հիմնադրել «Ցայտշրիֆտ ֆյուր արմենիշե Ֆիլոլոգի» («Հայ բանահյուսության ամսագիր», 1901–04) պարբ-ը: Ֆ-ի «Հայերենի նոր գրական լեզվի դասագիրքը» (1902, Ստեփան ***Կանայանի*** հետ) արևելահայ-ի օտարալեզու առաջին ձեռնարկն է: Ֆ. (Աբգար ***Հովհաննիսյանի*** հետ) մանրամասնորեն նկարագրել և հրատարակել է 15 ձեռագիր («Ցուցակ տփխիսեցի Աբգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի», 1903, Լայպցիգ, Նուբար Գաբամաճյանի տպ.) և շարականների 2 ժող. (Հակոբ ***Մանանդյանի*** և Ե. Գյանջեցյանի հետ), կազմել Թյուբինգենի թագավոր. համալսարանի գրադարանի 104 հայ. ձեռագրերի ցուցակը և նկարագրել դրանք («Ցուցակ հայերեն ձեռագրերի», 1903, ա. տ., Ե. Գյանջեցյանի և նրա քրոջ՝ Ա. Գյանջեցյանի հետ): «Ուսումնասիրություն հայկական գնչուերենի մասին» (1907) աշխատության մեջ Ֆ. ցույց է տվել Հայաստանի գնչուների լեզվում հայ-ի և՛ ինչյուն., և՛ բառային, և՛ քերական. զգալի ազդեցությունը: Զբաղվել է նաև հայ հին թարգման. գրակ-յամբ, հնագույն տեքստերի համեմատ. քննությամբ, հին հայ-ի ձևաբանության և ստուգաբանության հարցերով: Գերմ. է թարգմանել հայ գրողների գործերից:

Գրկ. **Ակինեան Ն.**, *Հայերէնագէտ Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ, «ՀԱ», 1910, № 9:* **Աղայան Է.**, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:*



«Ֆիլմ», *1969–90, Երևան*

ՖԻՐԴՈՒՍԻ Աբուլղասիմ [մոտ 940, ք. Թուս (Միջին Ասիա)–1020/1030, ք. Թուս], պարսիկ բանաստեղծ:

Ֆ-ու գլուխգործոցը՝ «Շահնամե» («Գիրք թագավորաց») պոեմը, կազմված է իրան. ժողովուրդների առասպել. ու վիպ. գրույցների և պատմ. ժամանակագրությունների ժող-ներից, որոնք ստեղծվել են III–VI դդ-ում:


957-ին կազմվել է «Շահնամե»-ի պարսկ. (դարի) Աբու-Մանսուրյան արձակ տարբերակը, որը չափածոյի են վերածել բանաստեղծներ Մասուդի Մարվազին (պահպանվել է 3 բեյթ), Դաքիքին (Դաղիղի, պահպանվել է 988 բեյթ) և Ֆ.՝ 976-ից:

Ֆ-ու «Շահնամե»-ում շատ տեղեկություններ կան հայերի մասին. դրանք վերաբերում են VI, մասամբ՝ VII դ-ի իրադարձություններին: Պոեմի առասպել. ու վիպ. որոշ գրույցների հանդիպում ենք հայ մատենագրության վաղ հուշարձաններում: Արտաշիր Պապականի վեպի հայկ. պատումը շարադրել է Ագաթանգեղոսը (պահպանվել է նրա պատմության հուն. թարգմանության լավրենտյան տարբերակում), Ռոստոմի, Բյուրասպի Աժդահակի և Հրուդենի առասպելի մասին՝ Մովսես Խորենացին, իրան. հավատալիքների մասին արժեքավոր մանրամասներ կան Եզնիկ Կողբացու, Խոսրովի և Շիրինի առասպելի մասին՝ Սեբեոսի երկերում, Ռոստամի, Սպանդիարի և Աժդահակի վիպ. գրույցներից հատվածներ է գրառել Գրիգոր Մագիստրոսը:

Հայ գրակ-յան մեջ չափածո «Շահնամեի» մասին առաջին տեղեկությունը հաղորդել է ***Կոստանդին Երզնկացին***. պոեմի ազդեցությամբ՝ մոթաքարեր չափով գրել է ոտանավոր: XVIII դ-ից արդեն Ֆ-ու «Շահնամե»-ի մասին հիշատակություններ կան հայ արևելագիտ. ու գեղարվ. գրակ-յան մեջ:



Ֆիրդուսու *«Շահնամե» (1975, Ե., «Հայաստան», ձևավորող՝ Ա. Գասպարյան) գրքի կազմը*



Անատոլ Ֆրանսի
«Թայիս: Սագաթաթիկներ թագուհու պանդոկը: Նովելներ» (1991, Ե., «Հայաստան») գրքի կազմը



«Ֆրանս-Արմէնի»,
1982-ից, Լիոն (№ 374, 2011)



«Ֆրանսահայ տարեգիրք», *1926–27, Փարիզ (գիրք 2, 1927)*

Հայ. լույս են տեսել «Զոհակ Բիւրասպի աժդահակ», «Սիաւուշ» (երկուսն էլ՝ թարգմ.՝ Ս. Գյուլզատյանի, 1894, Շուշի, Միրզաջան Մահտեսի Հակոբյանի տպ.), «Սիավուշ» (1962), «Շահնամե. էպիկական երկ» (1975, 2012, երկուսն էլ՝ թարգմ.՝ Մ. Ռևմաոյանի), «Շահնամէ: Թագաւորների գիրքը» (2001, Սպահան) երկերը:

Գրկ. Ֆիրդուսի: Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Ե., 1934: **Աբրահամեան Ռ.**, *Ֆիրդուսին եւ իր Շահնամէն, Թեհրան, 1934:* **Սարուխան Ա.**, *Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացին, Վնն., 1936:* **Կոթիկեան Ա.**, *Ֆերդուսի Թուսի եւ իր Շահնամէն, Փ., 1938:* **Չուգասզյան Բ.**, *Հայ-իրանական գրական առնչություններ (5–18-րդ դդ.), Ե., 1963:*

ՖԼՈՐԻՎԱԼ (Florival) Պոլ Էմիլ լը Վայյան (Լըվայյան) դը (1800–1862), ֆրանսիացի հայագետ: Սովորել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում. աշակերտել է Հակոբ Շահան *Զոպկեպյանին*: 1828-ից հայոց լեզու և գրակ. է դասավանդել նույն դպրոցում, 1830-ից ղեկավարել հայագիտ-յան ամբիոնը: Հայագիտ-յան մեջ կատարելագործվելու համար 1834-ին մեկնել է Վենետիկի Մխիթարյան միաբանություն, սովորել ճեմարանում, ընտրվել միաբանության հայկ. ճեմարանի անդամ:

1841-ին հայ-ից ֆրանս. է թարգմանել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը, երկրորդ թարգմանությանը (լույս է տեսել 2 գրքով և հարուստ ծանոթագրություններով) կցել է նաև երկի գրաբար բնագիրը (վերահրտ.՝ 1845): Առաջաբանում հակիրճ ուրվագծել է հայ մատենագրության պատմությունը, նշել նրա դերը համաշխ. գրակ-յան մեջ, բարձր գնահատել Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունը: Գրել է նաև Կ. Պոլսի կաթոլիկ հայերի հալածանքի մասին, համառոտակի շարադրել Մխիթարյան միաբանության պատմությունը, անդրադարձել V դ-ի հայ փիլ. մտքին, թարգմանել Մարգար Խոճենցի (Գեղամյան) «Բարառնական դիմառնութիւն բարոյական. այսինքն՝ Րօման մօրալէ ի դիմաց վարդոյ եւ լուսինկեի, այն է պիլպիլի» վիպակը (ֆրանս.՝ 1832, իտալ.՝ 1879), Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (1853) երկը, Մխիթար Գոշի առակները (թարգմանությունը չի պահպանվել):

Գրկ. **Շրումպֆ Գ. Ա.**, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրևմուտս (ԺԴ–ԺԹ դար), թրգմ. և լրց.՝ Գ. Զարբհանալյանի, Վնտ., 1895:*

ՖՐԱՆՍ (France) Անատոլ [Անատոլ Ֆրանսուա Թիբո (Thibault), 16.4.1844, Փարիզ–12.10.1924, Լուարի Սեն Սիրլ], ֆրանսիացի գրող, հրապարակախոս: Ֆրանսիայի ակադ-ի անդամ (1896): Հայտնի է դարձել «Սիլվեստր Բոննարի ոճիրը» (1881, հայ. հրտ.՝ 1922, 1967) վեպով:

Ֆ. Արշակ *Չոպանյանի* հետ կազմակերպել է հավաքներ՝ ի պաշտպանություն հայերի, ֆրանս. հանրությանը ծանոթացրել է հայոց պատմությանն ու մշակույթին: 1916-ի ապրիլի 9-ին Սորբոնի համալսարանում սգահանդեսի իր ելույթում անդրադարձել է հայկ. ջարդերին, արմ. տերություններին կոչ է արել օգնության ձեռք մեկնել «քույր» Հայաստանին («Արմյանսկի վեստնիկ», ռուս., 1916, № 14–15, «Հորիզոն», 1916, № 90):

Հայ. լույս են տեսել Ֆ-ի «Երեք դար ու կէս հետո: Ծննդեան տօնի ֆանտազիա» [թարգմ.՝ Սալյումյանի (Զալալ Տեր-Գրիգորյան), 1912, Ալեք-պոլ, Աբրահամ Մալխասյանի տպ.], «Սպիտակ քարի վրա: Աստվածները ծարավի են: Հրեշտակների ապստամբությունը» (1959) վիպակների, «Թայիս: Սագաթաթիկներ թագուհու պանդոկը: Նովելներ» (1991) նովելների ժող-ները, «Լիլիթի աղջիկը» (1922), «Կարմիր Շուշան» (1946), «Կրենքըքիլ» (1959), «Սիլվեստր Բոննարի ոճիրը» (1967) վեպերը:

Նոբելյան մրց. (1921):

Գրկ. **Մեսիայեան Ե.**, *Անատոլ Ֆրանս: Մարդը եւ իր գործերը, Բոստոն, 1922:* **Եղիազարյան Լ.**, *Անատոլ Ֆրանսը նովելիստ, Ե., 1961:* **Գասպարյան Ե.**, *Անատոլ Ֆրանսը և հայ ժողովուրդը, Ե., 2003:*

«ՖՐԱՆՍ-ԱՐՄԷՆԻ» («France–Arménie»–«Ֆրանսիա–Հայաստան»), երկշաբաթաթերթ: Հրատարակիչ՝ Հայ դատի պաշտպանության կոմիտե: Լույս է տեսնում 1982-ից Լիոնում՝ ֆրանս., 2002-ից 8 էջ-ը՝ հայ.: Հիմնադիր-տնօրեն՝ Մ. Անթապլյան, տնօրեն՝ Միքայել Ղազարյան, խմբագիրներ՝ Վ. Մուրադյան, Գ. Քեփենեկյան, Ժ. Մարտիրոսյան, Վարուժան Մարտիկյան: Ֆրանս. հանրությանը ծանոթաց-

նում է Հայկ. հարցի պատմությանը, անդրադառնում է Հայ դատին, Հայաստանին և Սփյուռքին առնչվող պատմ. իրադարձություններին, տպագրում գրական, գեղ. մեկնաբանություններ, գրախոսություններ ևն: Ունի սեփական թղթակից ՀՀ-ում:

«ՖՐԱՆՍԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ», լույս է տեսել 1926–27-ին Փարիզում (2 գիրք): Հարուստ նյութ է պարունակում անցյալի հայ-ֆրանս. կապերի, ֆրանսահայ գաղթավայրի կազմավորման վերաբերյալ: Արժեքավոր են Մեծ եղեռնից փրկված և Ֆրանսիայում ապաստանած հայերի մասին հոդվածները, վիճակագր. տվյալները: Անդրադարձել է Խորհրդ. Հայաստանի տնտ. և մշակութ. կյանքին, հայկ. տարբեր գաղթավայրերի առօրյային:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, սկզբնավորվել է Փարիզում 1537-ին (տես ***Փարիզի հայկական տպագրություն***), այնուհետև շարունակվել է նաև Մարսելում, երբ 1672-ին Ոսկան Երևանցին այնտեղ է տեղափոխել Ամստերդամի Սբ Էջմիածնի և Սբ Սարգսի տպարանը (տես ***Մարսելի հայկական տպագրություն***):

Ներկայում, բացի Փարիզից, հայկ. պարբ-ներ են լույս տեսնում Լիոնում՝ ***«Ֆրանս-Արմէնի»*** (1982-ից), Գրենոբլում՝ ***«Ազատ մագազին»*** (1972-ից), Մարսելում՝ ***«Բանբեր»*** (1925-ից), ևն:

ՖՐԻԿ (մոտ 1230-ական թթ.–մոտ 1310-ական թթ.), բանաստեղծ: Հայտնի են միայն հոր (Թագվոշ) և հորեղբոր (Դոդոնա) անունները: Ֆ-ի ստեղծագործության համար առանցքային են ազգ. ու սոցիալ. թեմաները: Մոնղ. տիրապետության շրջանը նա գեղարվեստորեն արտացոլել է «Ընդդէմ ֆալաքին եւ վասն բախտի», «Վասն Արղուն-Ղանին եւ Բուղային», «Բան ի Ֆրիկ գրքոյն» («Գանգատ»), «Վասն դալեհի եւ բրջի» բանքերում: «Ընդդէմ ֆալաքին...» քերթվածում Ֆ. դժգոհում է Աստծուց՝ ընդդիմանալով նրան:

Այս 4 բանքերի շնորհիվ Ֆ. դարձել է ոչ միայն հայ միջնադարյան, այլև համաշխ. գրակ-յան նշանավոր դեմքերից մեկը:

Ֆ-ի բանաստեղծությունների մեծ մասը հայտնաբերել, մնացածները հավաքել և դրանց գիտաքնն. բնագրերը հրատ-յան է պատրաստել ***Տիրայր Վարդապետը:***

Լույս են տեսել Ֆ-ի «Բանաստեղծություններ» (1941), «Դիւան» (1952, Նյու Յորք), «Տաղեր» (1982) ժող-ները:

Գրկ. **Աբեղյան Մ.**, *Երկեր, հ. 4, Ե., 1970, էջ 288–342:* **Հովհաննիսյան Ա.**, *Ֆրիկը պատմաքննական լույսի ներքո, Ե., 1955:* **Ժամկոչյան Հ.**, *Պատմա-բանասիրական դիտողություններ Ֆրիկի և նրա տաղերի մասին, «ՊԲՀ», 1958, № 1:*

«ՖՈՒ-ՖՐՈՒ», ազգ., գրական, երգիծ. պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1908–09-ին Կ. Պոլսում: «Ջիկ-զակ» (1908) երգիծաթերթի շարունակությունն է: Տնօրեն-խմբագիր՝ Վահան Փափազյան (Լիլա): Ծաղրել է արկածախնդիր «հեղափոխական գործիչներին», պոլսահայ բուրժուաառևտր. վերնախավին, աչքի ընկել դիպուկ ծաղրանկարներով:

«ՖՈՒՏԲՈԼ 365», մարզ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 2005-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Գևորգ Բուռնուզյան: Տպագրում է բացառապես ֆուտբոլին առնչվող նյութեր: Ներկայացնում է ՀՀ-ի, Անգլիայի, Իսպանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ֆուտբոլի առաջնությունների վիճակագր. տվյալները, պատմում հայտնի ֆուտբոլիստների մարզ. ուղու մասին: Աշխարհի և Եվրոպայի առաջնությունների ընթացքում լույս է ընծայում օրագույց-հավելվածներ:

«ՖՈՒՏԲՈԼ ՊԼՅՈՒՍ», մարզ. շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1996-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Սուրեն Բաղդասարյան: Ներկայացնում է նորություններ ֆուտբոլի հանրապետ. և միջազգ. առաջնությունների մասին, հայ և այլազգի ճանաչված ֆուտբոլիստներին, մարզիչներին, ֆուտբոլի պատմության հիշարժան դրվագներ: Անդրադառնում է նաև մարզաշխարհի կարևոր այլ նորությունների:

Ֆրանսիայի հայկական տպագրություն



Ա. Այուրմեյանի «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու» (հ. 1, 1950, Փարիզ, «Մաթիկյան» տպ.) գրքի կազմը



Ֆրիկի *«Տաղեր»-ի (1982, Ե., «Սովետական գրող») կազմը*



«Ֆուտբոլ 365», *1992-ից, Երևան*



«Ֆուտբոլ պլյուս», *1996-ից, Երևան*

Հատորում ընդունված հապավումները, համառոտագրությունները և կրճատումները

Հապավումներ

ԱԱՆ – ազգ. անվտանգության նախարարություն
ԱԳՆ – արտաքին գործերի նախարարություն
ԱՂՖՀ – Անդրկովկասյան Դեմոկրատ. Ֆեդերատիվ Հանրապետություն
Ա.ժ – Ազգ. ժողով
Ա.ԺՄ – Արցախի ժուռնալիստների միություն
ԱԻՄ – Ազգ. ինքնորոշում միավորում
ԱԽՖՍՀ – Անդրկովկասյան Խորհրդ. Ֆեդերատիվ Սոց. Հանրապետություն
ԱՀՀ – Ամերիկայի հայկ. համագումար
Ամերկոմ – Ամերիկյան կոմիտե
ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Անդրերկրկոմ – Անդրկովկասի երկրամասային կոմիտե
ԱՊՀ – Անկախ Պետությունների Համագործակցություն
ԱՍԱԼԱ– ՀԱՀԳԲ–ի անգլ. տարբերակը
ԱՎԾ – Ազգ. վիճակագր. ծառայություն
ԱրՊՀ – Արցախի պետ. համալսարան
ԱրմՖԱՆ (ռուս. հապավում) – ԽՍՀՄ գիտ-ների ակադ–ի հայկ. մասնաճյուղ
ԲԳԱ – բժշկ. գիտ-ների ակադ.
ԲԿ – բժշկ. կենտրոն
ԲԸ – բաժնետիր. ընկ.
ԲՈՀ – բարձրագույն որակավորման հանձնաժողով
ԳԱ – Գիտ-ների ակադ.
ԳԱԱ – Գիտ-ների ազգ. ակադ.
ԳԱԹ – Գրակ-յան և արվ-ի թանգարան
ԳԲԿ – գիտարժշկ. կենտրոն
Գլավլիտ (ռուս.) – գրակ-յան և հրատ-ների գործերով գլխ. վարչություն
ԳԽ – Գերագույն խորհուրդ
ԳՀԻ – գիտահետազոտ. ինստ.
ԳՄՊ – գրադարանամատենագիտ. դասակարգում
ԳՊՄԻ – Գյումրիի պետ. մանկավարժ. ինստ.
ԳԾ – Գլխ. շտաբ
գործկոմ – գործադիր կոմիտե
ԳՏԿ – գիտատեղեկատվ. կենտրոն
ԵԱՀԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԱՀԽ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ
ԵԳԹԻ – Երևանի գեղարվեստաթատեր. ինստ.
ԵԳՊԱ – Երևանի գեղարվ-ի պետ. ակադ.
ԵԹԿՊԻ – Երևանի թատրոնի և կինոյի պետ. ինստ.
ԵԺՏԻ – Երևանի ժող. տնտ-յան ինստ.
ԵԽ, Եվրախորհուրդ – Եվրոպ. խորհրդարան

ԵԽԽՎ – Եվրոպ. խորհրդարանի խորհրդարան. վեհաժողով
ԵՀԽ – Եկեղեցիների համաշխ. խորհուրդ
ԵՃՇՊՀ – Երևանի ճարտ-յան և շին-յան պետ. համալսարան
ԵՊԲՀ – Երևանի պետ. բժշկ. համալսարան
ԵՊԹ – Երևանի պատմության թանգարան
ԵՊԼՀ – Երևանի պետ. լեզվաբ. համալսարան
ԵՊՀ – Երևանի պետ. համալսարան
ԵՊՏՀ – Երևանի պետ. տնտեսագիտ. համալսարան
ԵՔՊԹ – Երևան քաղաքի պատմության թանգարան
ԶԼՄ – զանգված. լրատվ. միջոցներ
ՁՈՒ– զինված ուժեր
ԺԿԽ, Ժողկոմխորհ– Ժողովրդական կոմիսարների խորհուրդ
ԻԻՀ – Իրանի Իսլամ. Հանրապետություն
ԼՂ – Լեռնային Ղարաբաղ
ԼՂԻՄ – Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ
ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԽՀԽ – Խաղաղության համաշխ. խորհուրդ
ԽՍՀՄ – Խորհրդ. Սոց. Հանրապետությունների Միություն
ԿԳՀ – կրթ-յան և գիտ-յան նախարարություն
ԿԿ – կենտր. կոմիտե
ԿՎՀ – կենտր. վերահսկիչ հանձնաժողով
ՀԱԱ – Հայաստանի ազգ. արխիվ
ՀԱԱՀ – Հայկ. ազգ. ագրարային համալսարան
ՀԱԳ – Հայաստանի ազգ. գրադարան
ՀԱՀ – Հայկ. ագրարային համալսարան
ՀԱՀԳԲ – Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ
ՀԱԽ – Հայ ազգ. խորհուրդ
Համկ(բ)Կ – Համամիութ. կոմ. (բոլշևիկյան) կուս.
ՀԱՊ – Հայաստանի ազգ. պատկերասրահ
ՀԲԸՄ – Հայկ. բարեգործ. ընդհ. միություն
ՀԳԻ – Հայաստանի գյուղատնտ. ինստ.
ՀԳՄ – Հայաստանի գրողների միություն
ՀԹԳՄ – Հայաստանի թատեր. գործիչների միություն
ՀԺՄ – Հայաստանի ժուռնալիստների միություն
ՀԿ – հաս. կազմակերպություն
ՀԿ(բ)Կ – Հայաստանի կոմ. (բոլշևիկյան) կուս.
ՀԿԿ – Հայաստանի կոմ. կուս.

ՀՀԳ – Հայկ. հեռագր. գործակալություն
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
«ՀՀՀ» – «Հայկական համառոտ հանրագիտարան», «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»
ՀԽՍՀ – Հայկ. Խորհրդ. Սոց. Հանրապետություն
ՀՆՄ – Հայաստանի նկարիչների միություն
ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան
ՀՊՃՀ – Հայաստանի պետ. ճարտարագիտ. համալսարան
ՀՊՄԻ – Հայկ. պետ. մանկավարժ. ինստ.
«ՀՍՀ» – «Հայկական սովետական հանրագիտարան»
Հրատպետկոմ – Հրատարակչություննեբի պետ. կոմիտե
ՀՕԿ – Հայ օգնության կոմիտե
ՀՕՄ – Հայ օգնության միություն
ՀՕՖ – Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԳԱ – Մանկավարժ. գիտ-ների ակադ.
ՄԼԻ – Մարքսիզմ-լենինիզմի ինստ.
ՄՊՀ – Մոսկվայի պետ. համալսարան
ՅՈՒՆԵՍԿՕ – անգլ.՝ UNESCO–Միավորված ազգերի կրթ., գիտ. և մշակութ. կազմակերպություն
ՊՆ – պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ – պետ. ոչ առևտր. կազմակերպություն
ՌԲԳԱ – Ռուսաստանի բնական գիտ-ների ակադ.
ՌԳԱ – Ռուսաստանի գիտ-ների ակադ.
ՌԳՄ – Ռուսաստանի գրողների միություն
ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն
ՌԺՄ – Ռուսաստանի ժուռնալիստների միություն
ՌԽՖՍՀ – Ռուսաստանի Խորհրդ. Ֆեդերատիվ Սոց. Հանրապետություն
ՌԾՈՒ– ռազմածովային ուժեր
ՌՀՄ – Ռուսաստանի հայերի միություն
ՌԿ(բ)Կ – Ռուսաստանի կոմ. (բոլշևիկյան) կուս.
ՌՍԴԲ(բ)Կ – Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ. բանվոր. (բոլշևիկյան) կուս.
ՌՕՈՒ– ռազմաօդային ուժեր
ՍԴ – Սահմանադր. դատարան
ՎԽՍՀ – Վրաց. Խորհրդ. Սոց. Հանրապետություն
ՎՊՄԻ – Վանաձորի պետ. մանկավարժ. ինստ.
SAUU– ռուս.՝ TACC–Телеграфное агенство Советского Союза – Խորհրդային Միության հեռագրական գործակալություն
SS – տեղեկատվ. տեխնոլոգիաներ

Համառոտագրություններ

ազգ. – ազգային
ակադ. – ակադեմիա, ակադեմիկոս
աղ. – աղյուսակ
անվ. – անվան
առողջապահ. – առողջապահական, առողջապահություն
արդ. – արդյունաբերական, արդյունաբերություն
արլ. – արևելյան, արևելք
արմ. – արևմտյան, արևմուտք
արվ. – արվեստ
արտասահմ. – արտասահմանյան
արք. – արքեպիսկոպոս
գ. – գյուղ (փակագծերում)
գաղ. – գաղափարական
գեղ. – գեղարվեստական
գեն. – գեներալ (անվան հետ)
գիտ. – գիտական, գիտություն
գիտ. դ–ր – գիտությունների դոկտոր
գիտ. վաստ. գործիչ – գիտության վաստակավոր գործիչ
գլխ. – գլխավոր
գնդ. (անվան հետ) – գնդապետ
գրակ. – գրականություն
գ–ք. – գյուղաքաղաք
դ., դդ. – դար, դարեր
եպս. – եպիսկոպոս (անվան հետ)
երկար. – երկարություն
երկրբ. – երկրաբանական
թղթ. անդամ – թղթակից անդամ
ժող. – ժողովածու, ժողովրդական
ինստ. – ինստիտուտ
իրավաբ. – իրավաբանական
լայն. – լայնություն
լեզվաբ. – լեզվաբանական
խորհրդ. – խորհրդային
ծ. – ծնվել է
ծ. վրդ. – ծայրագույն վարդապետ (անվան հետ)

ծ. և մ. թթ. անհտ – ծննդյան և մահվան թվականներն անհայտ
Կ. Պոլիս – Կոստանդնուպոլիս
կենտր. – կենտրոնական
կենդ. – կենդանական
կենդր. – կենդանաբանական
կոմ. – կոմունիստական
կուս. – կուսակցական, կուսակցություն
համահեղ. – համահեղինակ
համաշխ. – համաշխարհային
հանք. – հանքային
հաս. – հասարակական
հեղ. – հեղափոխական
հզ. – հազար
հիմն. – հիմնադրվել է
հոգեբ. – հոգեբանական
հս(.) – հյուսիս, հյուսիսային
հս-արլ. – հյուսիս-արևելք, հյուսիսա-րևելյան
հս-արմ. – հյուսիս-արևմուտք, հյուսի-սարևմտյան
հվ(.) – հարավ, հարավային
հվ-արլ. – հարավ-արևելք, հարավա-րևելյան
հվ-արմ. – հարավ-արևմուտք, հարա-վարևմտյան
հրատ. – հրատարակություն
ճարտ. – ճարտարապետ, ճարտարա-պետական, ճարտարապետություն
մ. թ. – մեր թվականության, մահվան թվական
մ. թ. ա. – մեր թվականությունից առաջ
միութ. – միութենական
մրց. – մրցանակ
շարվ. – շարվածք
շին. – շինարարական, շինարարություն
շրջ. – շրջանային
պարբ. – պարբերական (մամուլ)
պատ. – պատասխանատու (խմբագիր, քարտուղար)
պատգմ. – պատգամավոր
պատվ.– պատվավոր
պիլ. – պսիհալավական, պսիհալվերներն
պրոլետ. – պրոլետարական
պրոֆ. – պրոֆեսոր
ռեժ. – ռեժիսոր, ռեժիսորական
սան. – սանիտարական
ս-դ. – սոցիալ-դեմոկրատական
սոց. – սոցիալիստական
վաստ. – վաստակավոր
վրդ. – վարդապետ (անվան հետ)
տիեզ. – տիեզերական
տիտղ. – տիտղոսաթերթ
տնտ. – տնտեսական
ուս. – ուսումնական
փիլ. – փիլիսոփայական, փիլիսոփա-յություն
ք. – քաղաք (փակագծերում)
քաղ. – քաղաքական
քանդ. – քանդակագործ, քանդակա-գործություն
քերակ. – քերականություն
քրիստ. – քրիստոնեական
քտա – քաղաքատիպ ավան
և ուր. – և ուրիշներ
ևն – և այլն
օսմ. – օսմանյան
օր. – օրինակ
ֆակ. – ֆակուլտետ

Համառոտագրված են նաև -ական (օր.՝ գործն., ծիս., հայկ., հրատարակչ. ևն, պետք է կարդալ՝ գործնական, ծի-սական, հայկական, հրատարակչական ևն) և -երեն (օր.՝ հայ., արաբ., անգլ., լատ., էստ. ևն, պետք է կարդալ՝ հայերեն, արաբերեն, անգլերեն, լատիներեն, էս-տոներեն ևն) ածանցներով բազմաթիվ բառեր, ամսանունները (հունվ., փետր., օգոստ., հոկտ., դեկտ. ևն):

Սատենագիտական համառոտագրություններ

Ալեք-պոլ – Ալեքսանդրապոլ
առաջաբ. – առաջաբան
ա. տ. – առանց տեղի
ա. տպ. – առանց տպարանի
ա. թ. – առանց թվականի
«ԱՀ» – «Ազգագրական հանդես»
Բ. – Բնդրութ
«ԲԵՀ»–«Բանբեր Երևանի համալսարանի»
«ԲՀԱ» – «Բանբեր Հայաստանի ար-խիվների»
«ԲՄ» – «Բանբեր Մատենադարանի»
բրփխ. – բարեփոխված
գլ. – գլուխ
գրկ. – գրականություն
Ե. – Երևան
եղբ. – եղբայրներ
ԵԼԺ – Երկերի լիակատար ժողովածու
Երկ. – Երկեր
ընդհ. – ընդհանուր
ընկ. – ընկերություն
Ընտ. երկեր – Ընտիր երկեր
Թ. – Թբիլիսի, Թիֆլիս
թրգմ. – թարգմանություն
«ԼՀԳ» – «Լրաբեր հասարակական գի-տությունների»
լիակտ. – լիակատար
լրամշկ. – լրամշակված
լրց. – լրացված
խմբ.- խմբագրում
ծնթգր. – ծանոթագրություններ
կազմ. – կազմեց, կազմող (ներ)
ԿՊ – Կոստանդնուպոլիս
հ. – հատոր, հատորներ
«ՀԱ» – «Հանդէս ամսօրեայ»
հեղ. հրտ. – հեղինակային հրատարա-կություն
հոդվ. – հոդվածներ
հրտ. – հրատարակություն, հրատա-րակվել է
ձեռ. – ձեռագիր
ճեմ. – ճեմարան
Մ. – Մոսկվա
ներած. – ներածություն
որդ. – որդիք, որդիներ
«ՊԲՀ» – «Պատմաբանասիրական հան-դես»
պր. – պրակ
«ՍՀ» – «Սովետական Հայաստան»
ՍՊր – Սանկտ Պետերբուրգ
Վաղ-պատ – Վաղարշապատ
վերահրտ. – վերահրատարակվել է
վերամշկ. – վերամշակված, վերամշակում
Վնն. – Վիեննա
Վնտ. – Վենետիկ
տպ. – տպարան
Փ. – Փարիզ
փոխադր. – փոխադրություն

Օտար լեզուներով

в. – выпуск	Л. – Ленинград	СПб – Санкт-Петербург	N. Y. – New York	p. – page
т.– том	М. – Москва	с. – страница	P. – Paris	ed. – edit
изд. –издание	произв. –произведе-ние (я)	Тб. – Тбилиси	vol. – volume	
Е. – Ереван	сб. – сборник	Y. – Yerevan	W. – Washington	
избр.– избранные		L. – London	t. – tome	

Անվանափոխված քաղաքներ

Ալեքսանդրապոլ – 1837–1924, Լենինական – 1924–1990, Գյումրի – 1990–ից:
Ղարաքիլիսա – մինչև 1935-ը, Կիրովական – 1935–1992, Վանաձոր – 1992-ից:
Ջալալօղլի – մինչև 1923-ը, Ստեփանավան – 1923-ից:
Ս. Պետերբուրգ – 1703 –1914 և 1991-ից, Պետրոգրադ – 1914–1924, Լենինգրադ – 1924–1991:

Ամիդ / Դիարբեքիր / Տիգրանակերտ	Զմյուռնիա /Իզմիր	Նիկոմեդիա /Իզմիթ
Բիթլիս / Բաղեշ	Կաֆա /Թեոդոսիա	Սեբաստիա / Սվազ
Գանձակ /Կիրովաբադ/ Գյանջա	Ղարասուբազար /Բելոգորսկ	Սուրխաթ /Ստարի Կրիմ

Չափման միավորներ

գ – գրամ
կգ – կիլոգրամ
կչփ – կետաչափ
մ – մետր
մկմ – միկրոմետր
մմ – միլիմետր
սմ – սանտիմետր

Գրքերի նկարագրություններում հանդիպող հետևյալ նշանակում-ները՝ 240 էջ, 8°, 15 x 8,2 սմ, պետք է կարդալ՝ էջերի քանակը՝ 240, ութածալ, էջի բարձրությունը՝ 15 սմ, լայնությունը՝ 8,2 սմ:

Հ 240 ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐՔԱՐՎԵՍՏ. ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ
Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան
(գլխ. խմբագիր) և ուրիշ.–1120 էջ: Նկ.:

ЭНЦИКЛОПЕДИЯ: АРМЯНСКОЕ КНИГОПЕЧАТАНИЕ И ИСКУССТВО КНИГИ
Ред. колл. – О. М. Айвазян (гл. ред.) и др. –
1120 с., илл., на армянском языке

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, Ե., 2015
Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի 15

ИЗДАТЕЛЬСТВО: АРМЯНСКАЯ ЭНЦИКЛОПЕДИЯ, Е., 2015
Ереван 0015, ул. Григора Лусаворича 15

Հանձնված է շարվածքի 01.02.2013: Ստորագրված է տպագրության 23.07.2015:
Չափսը՝ 70x100 1/16, թուղթը՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «GHEA Narek Serif»,
70 տպագր. մամ.: Տպաքանակը՝ 1500: Պատվեր՝ 1354:

Գիրքը տպագրվել է
«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ» տպարանում

Գլխավոր տնօրեն՝ Տ. Լ. Քոթանջյան, գլխավոր տնօրենի տեղակալ՝ Լ.Վ. Հարոյան,
գլխավոր ճարտարագետ՝ Ա. Ս. Գասպարյան, տպագրական արտադրամասի պետ՝ Գ. Գ. Ազատյան,
կազմարարական արտադրամասի պետ՝ Ս. Հ. Դավթյան, տպագրիչ՝ Ա. Ա. Խուրշուդյան